Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1026
1027

208
U-76

2010

220

475-40

2.104

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

208
Ա-76 սց

ՄԱՏԵԱՆ

ՀԱՅԿԵՈՅՂՈՒ-ՂՈՐԾ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԴԱՆԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

ԵՐԱՅԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ ՐՆԱԳՐԻՑ

004
Գ537

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله
۳ شعبان ۹۹ و ۸ حزران ۹۸ نومرو ۳۲۲
مصارف انکلیز بیبل شرکتی طرفندن تسویه اولنه‌رق

2001

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ
ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՍՔ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

ՀԱՅ Լ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР Ш/О Ивная Библиотека
7/XI 1922
имени Мясни и ян
Ա. ՍԱՍ Ի ԱՆՎԱՆ

30186-4-h.

13092-51

ՑԱՆԿ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԳԻՐՔ	ԳԼՈՒԽ	ԵՐԵՍ	ԱԻԵՏԱՐԱՆ	ԳԼՈՒԽ	ԵՐԵՍ
Մննդոց . .	—ից	50	Ըստ Մատթէոսի	—ից	28
Ելից . . .	„	40	Ըստ Մարկոսի .	„	16
Ղեւտացոց .	„	27	Ըստ Ղուկասու .	„	24
Թուոց . .	„	36	Ըստ Յովհաննու .	„	21
Երկրորդ Օրինաց	„	34	Գործք Առաքելոց	„	28
Յեսուայ . .	„	24			
Դատաւորաց .	„	21	**ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ**		
Հռութայ . .	„	4	Առ Հռովմայեցիս	„	16
Ա. Թագաւորաց	„	31	Ա. առ Կորնթացիս	„	16
Բ. Թագաւորաց	„	24	Ա. առ Կորնթացիս Բ.	„	13
Գ. Թագաւորաց	„	22	Առ Գաղատացիս	„	6
Դ. Թագաւորաց	„	25	Առ Եփեսացիս .	„	6
Ա. Մնացորդաց	„	29	Առ Փիլիպեցիս	„	4
Բ. Մնացորդաց	„	36	Առ Կողոսացիս	„	4
Եզրասայ . .	„	10	Ա. առ Թեսաղոնիկեցիս Ա. . .	„	5
Նեեմիայ . .	„	13	Ա. առ Թեսաղոնիկեցիս Բ. . .	„	3
Եսթերայ . .	„	10	Ա. առ Տիմոթէոս Ա.	„	6
Յոբայ . .	„	42	Ա. առ Տիմոթէոս Բ.	„	4
Սաղմոսաց .	„	150	Ա. առ Տիտոս . .	„	3
Առակաց . .	„	31	Ա. առ Փիլիմոն. .	„	1
Ժողովողի . .	„	12	Ա. առ Եբրայեցիս	„	13
Երգ Երգոց .	„	8			
			ԹՈՒՂԹ		
ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ			Կաթուղիկեայց Յակոբոս . .	„	5
Եսայեայ . .	„	66	Կաթուղիկեայց Պետրոսի Ա. . .	„	5
Երեմիայ . .	„	52	Կաթուղիկեայց Պետրոսի Բ. . .	„	3
Ողբք Երեմիայ	„	5	Կաթուղիկեայց Յովհաննու Ա. .	„	5
Եզեկիէլի . .	„	48	Կաթուղիկեայց Յովհաննու Բ. .	„	1
Դանիէլի . .	„	12	Կաթուղիկեայց Յովհաննու Գ. .	„	1
Ովսեայ . .	„	14	Կաթուղիկեայց Յուդայի Առաքելոյ	„	1
Յոէլեայ . .	„	3	Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ	„	22
Ամովսայ . .	„	9			
Աբդիու . .	„	1			
Յովնանու .	„	4			
Միքիայ . .	„	7			
Նաւումայ .	„	3			
Ամբակումայ .	„	3			
Սոփոնիայ .	„	3			
Անգեայ . .	„	2			
Զաքարիայ .	„	14			
Մաղաքիայ .	„	4			

ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկզբում Աստուած ստեղծեց
2 երկինքն և երկիրը: Եւ երկիրն ան-
ձև ու դատարկ էր, և խաւար
էր անդունդի վերայ, և Աստու-
ծոյ Հոգին շրջում էր ջրերի վե-
3 րայ: Եւ Աստուած ասաց. Լոյս
4 լինի. և լոյս եղաւ: Եւ Աստուած
տեսաւ լոյսը, որ բարի է: Եւ
Աստուած բաժանեց լոյսը խա-
5 ւարիցը: Եւ Աստուած լոյսը կո-
չեց Ցերեկ, և խաւարը կոչեց Գի-
շեր. և իրիկուն և առաւօտ եղաւ
առջի օրը:

6 Եւ Աստուած ասաց. Ջրերի մէջ
հաստատութիւն լինի, որ ջրերը
7 ջրերիցը բաժանէ: Եւ Աստուած
շինեց հաստատութիւնը, և բա-
ժանեց հաստատութեան տակի
ջրերը հաստատութեան վերայ ե-
ղող ջրերից: Եւ այնպէս եղաւ:
8 Եւ Աստուած հաստատութիւնը
կոչեց երկինք: Եւ իրիկուն և ա-
ռաւօտ եղաւ՝ երկրորդ օրը:

9 Եւ Աստուած ասաց. Երկնքի
տակի ջրերը մէկ տեղ ժողովուին
և ցամաքը երեւայ: Եւ այնպէս
10 եղաւ: Եւ Աստուած ցամաքը կո-
չեց երկիր, և ջրերի ժողովքը կո-
չեց ծով: Եւ Աստուած տեսաւ,
11 որ բարի է: Եւ ասաց Աստուած.
Երկիրը կանաչ խոտ բուսցնէ՝ սերմ
տուող խոտ և պտղաբեր ծառ,
որ պտուղ տայ իր տեսակի պէս,
որի սերմը իրանում լինի՝ երկրի
12 վերայ: Եւ այնպէս եղաւ: Եւ եր-
կիրը կանաչ խոտ հանեց՝ սերմ
տուող խոտ իր տեսակի պէս և
պտղաբեր ծառ, որի սերմն իրա-
նում է իր տեսակի պէս: Եւ
Աստուած տեսաւ, որ բարի է:
13 Եւ իրիկուն և առաւօտ եղաւ՝
երրորդ օրը:

14 Եւ ասաց Աստուած. Լուսա-
տուներ լինին երկնից հաստատու-
թիւնումը, որ ցերեկը գիշերիցը
բաժանեն, և նշաններ և ժամա-
ծախներ, և օրեր և տարիներ լի-
նին. Եւ լուսատուներ լինին եր- 15
կնքի հաստատութիւնումը, որ
երկրի վերայ լոյս տան: Եւ այն-
պէս եղաւ: Եւ Աստուած երկու 16
մեծ լուսատուները շինեց. մեծ
լուսատուը՝ ցերեկին իշխելու հա-
մար, և փոքր լուսատուը գիշերին
իշխելու համար, և աստղերը:
Եւ Աստուած նորանց երկնքի հաս- 17
տատութիւնումը դրաւ, որ եր-
կրի վերայ լոյս տան, Եւ ցերեկի 18
ու գիշերի վերայ իշխեն, և լոյսը
խաւարիցը բաժանեն: Եւ Աստ-
ուած տեսաւ, որ բարի է: Եւ 19
իրիկուն և առաւօտ եղաւ՝ չոր-
րորդ օրը:

Եւ ասաց Աստուած. Ջրերը ե- 20
ռան կենդանի շունչ ունեցող զե-
ռուններով. և թռչուններ թռչին
երկրի վերայ երկնից հաստատու-
թեան երեսին: Եւ Աստուած ըս- 21
տեղծեց մեծամեծ կէտերը, և բո-
լոր կենդանի շունչ ունեցող ա-
զուններըը, որ ջրերը եռացին նո-
րանցով իրանց տեսակի պէս, և
բոլոր թեւաւոր թռչուններն իրանց
տեսակի պէս: Եւ Աստուած տե-
սաւ, որ բարի է: Եւ Աստուած 22
օրհնեց նորանց ասելով, Աճեցէք
և շատացէք և լցրէք ծովերի մի-
ջի ջրերը. և թռչուններըը շատա-
նան երկրի վերայ: Եւ իրիկուն և 23
առաւօտ եղաւ՝ հինգերորդ օրը:

Եւ ասաց Աստուած. Երկիրը 24
ընչաւոր կենդանի հանէ իր տե-
սակի պէս, անասուններ և սո-
ղուններ և երկրի կենդանիներ իր
տեսակի պէս: Եւ այնպէս եղաւ:
Եւ Աստուած երկրի կենդանիները 25
շինեց իրանց տեսակի պէս, և ա-
նասուններն իրանց տեսակի պէս,
և գետնի բոլոր սողուններըը իրանց
տեսակի պէս: Եւ Աստուած տե-
սաւ, որ բարի է:

Եւ ասաց Աստուած. Մեր պատ- 26
կերով և մեր նմանութեան պէս
մարդ շինենք, որ իշխեն ծովի ձըկ-
ների և երկնից թռչունների, և
անասունների և բոլոր երկրի վե-

բայ, և երկրի վերայ սողացող
27 բոլոր սողունների վերայ։ Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերով. Աստուծոյ պատկերով ստեղծեց նորան. արու և էգ ստեղծեց նորանց։
28 Եւ Աստուած օրհնեց նորանց, և Աստուած ասաց նորանց. Աճեցէք և շատացէք, և լցրէք երկիրը, և տիրեցէք նորան. և իշխեցէք ծովի ձկների, և երկնից թռչունների վերայ, և երկրի վերայ սողացող բոլոր կենդանիների վերայ։
29 Եւ ասաց Աստուած. Ահա ձեզ տուի ամեն խոտը որ սերմ ունի բոլոր երկրի վերայ և ամեն ծառ՝ որի մէջ կայ սերմ տուող ծառի պտուղ, որ ձեզ համար կերակուր
30 լինի. Եւ երկրի բոլոր կենդանիների և երկնից բոլոր թռչունների և երկրի վերայ բոլոր սողունների համար, որոնց մէջ կենդանութեան շունչ կայ, ամեն կանաչ խոտ կերակուրի համար եղաւ։ Եւ այնպէս եղաւ։
31 Եւ Աստուած տեսաւ բոլորն ինչ որ արել էր, և ահա շատ բարի էր։ Եւ իրիկուն և առաւօտ եղաւ՝ վեցերորդ օրը։

ԳԼ. Բ

1 Եւ կատարուեցան երկինքն ու երկիրը և նորանց բոլոր *զարդերը,
2 Եւ Աստուած կատարեց եօթներորդ օրուն իր գործքը որ արաւ. և եօթներորդ օրը հանգաստացաւ
3 իր բոլոր գործքից որ արաւ։ Եւ օրհնեց Աստուած եօթներորդ օրը, և սրբեց նորան, վասն զի նորանում հանգաստացաւ իր բոլոր գործքից, որ Աստուած ստեղծեց և արաւ։
4 Սորանք են երկնից ու երկրի ծնունդները նորանց ստեղծուած ժամանակը, այն օրն որ Եհովայ Աստուածը երկիրն ու երկինքը
5 արաւ։ Եւ դաշտի բոլոր բոյսերը տակաւին երկրի վերայ չկային, և դաշտի բոլոր խոտերը տակաւին չէին բուսած. վասն զի Եհովայ Աստուածը երկրի վերայ անձրև չէր բերել, և մարդ չկար հողը գործելու. Այլ երկրիցը գոլորշի էր դուրս գալիս և բոլոր հողի երեսը ջրում էր. Եւ Եհովայ Աստուածը հողի փոշուցը շինեց մարդը. և նորա անդացը մէջ կենդանութեան շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղաւ։
8 Եւ Եհովայ Աստուածը արևելքի կողմը Եդէմի մէջ մի պարտէզ տնկեց, և իր շինած մարդը դրաւ այնտեղ։ Եւ Եհովայ Աստուածը
9 բուսցրեց երկրիցը ամեն ծառեր՝ տեսանելու համեղի և ուտելու քաղցր, և պարտէզի մէջ տեղը՝ կենաց ծառը, և բարին ու չարը գիտենալու ծառը։ Եւ մի գետ
10 էր դուրս գալիս Եդէմից պարտէզը ջրելու համար, և այնտեղից բաժանւում ու չորս գլուխ էր
11 դառնում։ Մէկի անունը Փիսան է, սա պտտում է Եւիլատի բոլոր երկիրը, ուր որ ոսկին է։
12 Եւ այն երկրի ոսկին ազնիւ է. այն տեղ է *Սուտակը և գահնատակը։
13 Եւ երկրորդ գետի անունը Գեհոն է. սա պտտում է Քուշի բոլոր երկիրը։
14 Եւ երրորդ գետի անունը Տիգրիս է. սա գնում է Ասորեստանի առաջ։ Եւ չորրորդ գետը Եփրատն է։
15 Եւ Եհովայ Աստուածն առաւ մարդը, և դրաւ Եդէմի պարտէզումը, որ նորան մշակէ և պահէ։
16 Եւ Եհովայ Աստուածը պատուիրեց մարդուն ասելով, Պարտէզի ամեն ծառիցը համարձակ կեր.
17 Բայց բարի և չարի գիտութեան ծառիցը մի ուտիր. վասն զի նորանից կերած օրդ մահով պիտի մեռանիս։
18 Եւ Եհովայ Աստուածն ասաց, Լաւ չէ որ մարդը մինակ լինի. նորա նման մի օգնական շինեմ իրան յարմար։
19 Եւ Եհովայ Աստուածը շինեց հողիցը բոլոր դաշտի կենդանիները և երկնից բոլոր թռչունները, և բերաւ †Ադամի մօտ որ տեսանէ Ը նորանց ինչ անուն կ'կոչէ, և ամեն ինչ որ Ադամը շնչաւոր կենդանին կոչեց՝

*Զօրքը։

*Բդելախ †Մարդ

20 նա է նորա անունը: Եւ Ադամ
բոլոր անասուններին, և երկնից
թռչուններին, և դաշտի բոլոր
գազաններին անուններ դրաւ.
բայց Ադամին իր նման մի օգնա-
21 կան չգտանուեցաւ: Եւ Եհովայ
Աստուածը մի խոր քուն բերաւ
Ադամի վերայ, և նա քնեց. և
նորա կողի ոսկորներից մէկին ա-
ռաւ, և նորա տեղը միս լցրեց.
22 Եւ Եհովայ Աստուածն այն կողի
ոսկորն, որ Ադամիցը վեր էր ա-
ռել, մի կին շինեց, և նորան բե-
23 րաւ Ադամի մօտ: Եւ Ադամ ա-
սաց. Սա հիմա ոսկր է իմ ոսկ-
րիցը և մարմին է իմ մարմնիցը.
սորան կ'կոչեն Կին. որովհետև
24 սա մարդուցն առնուեցաւ: Սորա
համար մարդը կ'թողէ իր հօրը
և իր մօրը, և կ'յարի իր կնոջը.
25 և մէկ մարմին կ'լինին: Եւ նո-
րանք երկուսը մերկ էին՝ Ադամը
և իր կինը. և չէին ամաչում:

ԳԼ. Գ

1 Եւ օձը աւելի խորամանգ էր
քան թէ դաշտի բոլոր գազանե-
րը, որ Եհովայ Աստուածն ստեղ-
ծել էր. և կնոջն ասաց. Իրա՞ւ
Աստուած ասաց, որ Պարտէզի
2 ամեն ծառիցը չուտէք: Եւ կինն
ասաց օձին. Պարտէզի ծառերի
3 պտղից ուտում ենք. բայց այն
ծառի պտղիցը որ պարտէզի մէջ-
տեղն է, ասաց Աստուած, Մի
ուտէք նորանից, և նորան մի
4 դպչիք, որ չմեռնիք: Եւ օձը կը-
նոջն ասաց, Բնաւ չէք մեռնիլ:
5 Այլ Աստուած գիտէ, թէ այն
օրը, որ նորանից ուտէք, ձեր
աչքերը կ'բացուին, և Աստուծոյ
պէս կ'լինիք՝ բարին և չարը գի-
տացող:
6 Եւ կինը տեսաւ, որ ծառը լաւ
էր ուտելու համար, և թէ հա-
ճելի էր աչքերին, և փափաքելի
է ծառը նայելու համար, առաւ
նորա պտղիցը և կերաւ, և իր
հետ իր մարդուն էլ տուաւ, և
7 նա կերաւ: Եւ նորանց երկուսի
աչքերը բացուեցան, և գիտացին
թէ մերկ են. և թզենու տերև-
ներ կարեցին, և իրանց համար
ծածկոցներ շինեցին: Եւ Եհովայ 8
Աստուծոյ ձայնը լսեցին, որ օր-
ուայ հով ժամանակին պարտէ-
զումը մեզ էր գալիս. և Ադամ
և իր կինը թաք կացան Եհովայ
Աստուծոյ երեսիցը պարտէզի ծա-
ռերի մէջ: Եւ Եհովայ Աստուա- 9
ծը կանչեց Ադամին, և ասաց
նորան, Ո՞ւր ես. Եւ նա ասաց. 10
Քո ձայնը լսեցի պարտէզումը, և
վախեցայ, վասն զի ես մերկ էի,
և թաք կացայ: Եւ ասաց. Ո՞վ 11
պատմեց քեզ, թէ դու մերկ ես,
արդեօք այն ծառիցը որի համար
քեզ պատուիրեցի որ նորանից
չուտես, կերա՞ր: Եւ Ադամն ա- 12
սաց. Այն կինը, որ ինձ հետ
տուիր, նա տուաւ ինձ այն ծա-
ռիցը, և ես կերայ: Եւ Եհովայ 13
Աստուածն ասաց կնոջը. Դա ի՞նչ
ես արել: Եւ կինն ասաց. Օձն
ինձ խաբեց, և ես կերայ: Եւ Ե- 14
հովայ Աստուածն ասաց օձին.
Որովհետև արիր այս, դու անիծ-
եալ լինիս բոլոր անասուններից
և դաշտի բոլոր կենդանիներից.
փորիդ վերայ գնաս, և հող ու-
տես կենացդ բոլոր օրերումը: Եւ 15
թշնամութիւն եմ դնում քո և
կնոջ մէջտեղը, և քո սերունդի
և նորա սերունդի մէջտեղը. նա
քո գլուխը ջախջախէ, և դու նո-
րա գարշապարը խայթես: Եւ 16
կնոջն ասաց. Պիտի շատ շատա-
ցնեմ քո յղութեան ցաւերը, և
ցաւով զաւակ ծնես, և դէպի
քո մարդը լինի քո փափաքը. և
նա իշխէ քեզ վերայ: Եւ Ադա- 17
մին ասաց. Որովհետև լսեցիր դու
քո կնոջ խօսքին, և կերար այն
ծառիցը, որի համար պատուիրե-
ցի քեզ՝ ասելով. Նորանից չու-
տես, անիծեալ լինի երկիրը քո
պատճառով, նեղութիւնով ու-
տես նորանից կենացդ բոլոր օրե-
րումը: Եւ նա փուշ ու տատասկ 18
բուսցնէ քեզ համար, և դաշտի
խոտն ուտես: Երեսիդ քրտինքովը 19
հաց ուտես, մինչև որ ետ դառնաս
դէպի երկիրը, վասն զի նորանից
առնուեցար. որովհետև հող էիր
դու, և դէպի հողը դառնաս:

20 Եւ Ադամն իր կնոջ անունը Եւա կոչեց. վասն զի նա եղաւ բո-
21 լոր կենդանեաց մայրը։ Եւ Եհովայ Աստուածն Ադամի և նորա կնոջ համար կաշուց հանդերձներ
22 շինեց, և հագցրեց նորանց։ Եւ Եհովայ Աստուածն ասաց. Ահա Ադամն եղաւ իբրև մեզանից մէկը՝ բարին և չարը գիտենալու, և հիմա մի գուցէ իր ձեռքը մեկնէ, և կենաց ծառից էլ առնէ, և
23 ուտէ և յաւիտեան ապրի. Աստի Եհովայ Աստուածը հանեց նորան Եդէմի պարտէզից, որ երկիրը գործէ, որտեղից որ առնուած էր
24 Եւ արտաքսեց Ադամին. և Եդէմի պարտէզի դիմացի կողմից դրաւ Քերովբէներին և ամեն կողմ դարձող բոցեղէն սուրը՝ կենաց ծառի ճանապարհը պահելու համար։

ԳԼ. Գ

1 Եւ Ադամը գիտաց իր կինը՝ Եւան, և նա յղացաւ և ծնեց Կայէնը. և ասաց. Արդ առացայ
2 *Եհովայով։ Եւ դարձեալ ծնեց նորա եղբայր Հաբէլը. և Հաբէլը ոչխարների հովիւ էր, բայց Կայէնը երկրագործ էր։
3 Եւ եղաւ որ օրեր անցկենալուց վերջը՝ Կայէնը երկրի պտղից եհովային
4 ընծայ մատուցրեց։ Եւ Հաբէլն էլ մատուցրեց իր ոչխարների անդրանիկներից և նորանց պարարտներից։ Եւ Եհովան Հաբէլի և նորա ընծային մեկ արաւ։
5 Բայց Կայէնին և նորա ընծային մեկ չարաւ։ Եւ Կայէնը շատ բարկացաւ, և երեսը կախեց։
6 Եւ Եհովան Կայէնին ասաց. Ինչու ես բարկացել, և ինչու ես
7 երեսդ կախել։ Չէ՞ որ եթէ բարի լինես, կ'բարձրանայ. բայց եթէ բարի չլինես, մեղքը դրան մօտ պառկած է. և նա քեզ է փափաքում, բայց դու իշխիր նորա վերայ։
8 Եւ Կայէնն իր Հաբէլ եղբօր հետ խօսեց. և եղաւ որ երբոր նորանք դաշտումն էին, Կայէնը վեր կացաւ իր եղբայր Հաբէլի վերայ և սպանեց նորան։ 9
Եւ Եհովան ասաց Կայէնին. Ո՞ւր է քո եղբայրը Հաբէլ։ Եւ նա ասաց. Չգիտեմ. միթէ ես եղբօրս պահապանն եմ։ 10
Եւ ասաց. Ի՞նչ ես արել. քո եղբօր արիւնի ձայնը երկրիցը բողոքում է դէպի ինձ։ 11
Եւ հիմա դու անիծեալ լինիս այն երկրիցը, որ իր բերանը բացաւ եղբօրդ արիւնը քո ձեռքից ընդունելու։ Երբոր երկիրը գործես, 12
այլ ևս իր արդիւնքը չտայ քեզ. երկրի վերայ աստանդական ու թափառական լինես։ Եւ Կայէնն 13
ասաց Եհովային. Իմ մեղքը մեծ է քան թէ թողութիւն։ Ահա 14
ինձ այսօր երկրի երեսից արտաքսեցիր, և ես քո երեսից պիտի թաք կենամ, և երկրի վերայ աստանդական ու թափառական պիտի լինիմ. և կ'լինի որ ամեն ինձ գտնողը ինձ կ'սպանէ։ Եւ Եհո- 15
վան ասաց նորան. Ուրեմն ով որ Կայէնին սպանէ՝ նորանից եօթնապատիկ վրէժ առնուի։ Եւ Եհովան մի նշան դրաւ Կայէնի վերայ, որ ամեն ով որ նորան գտնէ, չսպանէ նորան։

Եւ Կայէնը Եհովայի երեսի առջից դուրս գնաց և Նայիդ երկրում բնակեց Եդէմի արևելքում։ 16
Եւ Կայէնը գիտաց իր կնոջը. 17
և նա յղացաւ և ծնաւ Ենոքը. և մի քաղաք էր շինում, և այն քաղաքի անունը իր որդու անունն պէս Ենոք դրաւ։ Եւ Ենո- 18
քը ծնաւ Գայիրադը, և Գայիրադ ծնաւ Մաւիէլը, և Մաւիէլ ծնաւ Մաթուսայէլը, և Մաթուսայէլ ծնաւ Ղամէքը։ Եւ Ղամէք 19
երկու կին առաւ իրան. մէկի անունը Ադդա և երկրորդի անունը Սէլլա էր։ Եւ Ադդա ծնաւ Յո- 20
բէլը, որ վրանաբնակների և խաշնարածների հայրն եղաւ։ Եւ նորա 21
եղբօր անունը Յուբալ էր, որ բոլոր քնարահարների և արնգահարների հայրն եղաւ։ Եւ Սէլլան 22
էլ ծնաւ Թուբել-Կայէնը, որ պղինձից ու երկաթից ամեն տեսակ գործիք էր շինում. և Թու-

*կամ Եհովային

բելկայենի քոյրն էր Նաաման։
23 Եւ Ղամէքն իր կանանցը՝ Ադա-
յին և Սիլլային ասաց. Լսեցէք
ձայնս, ով Ղամէքի կանայք, ա-
կանջ դրէք իմ խօսքին, որ մի
մարդ սպանեցի՝ ինձ վէրք, ու մի
երիտասարդ՝ ինձ հարուածք ըն-
24 ը- համար։ Եթէ կայէնի վրէժը
եօթնապատիկ առնուի, ապա
Ղամէքինը՝ եօթանասուն և եօթն
անգամ։
25 Եւ Ադամը դարձեալ գիտաց
իր կնոջը, և նա մի որդի ծնաւ,
և նորա անունը կոչեց Սէթ, ո-
րովհետև — ասաց. Աստուած ինձ մի
ուրիշ սերունդ տուաւ Հաբէլի փո-
խանակ, որին սպանեց Կայէնը։
26 Եւ Սէթին էլ մի որդի ծնուե-
ցաւ, և նորա անունը կոչեց Ե-
նովս. այն ժամանակ սկսուեցաւ
Եհովայի անունը կանչել։

ԳԼ. Ե

1 Սա է Ադամի ծննդոց գիրքը։
Այն օրն որ Աստուած մարդը
ստեղծեց, Աստուծոյ պատկերովն
2 արաւ նորան. Արու և էգ ստեղ-
ծեց նորանց, և օրհնեց նորանց,
և նորանց անունը *Ադամ կոչեց
նորանց ստեղծուելու օրը։
3 Եւ Ադամը հարիւր երեսուն
տարիապրեց, և իր նմանու-
թեամբը իր պատկերի պէս որդի
ծնաւ, և նորա անունը Սէթ կո-
4 չեց։ Եւ Ադամի օրերը՝ Սէթին
ծնելուց յետոյ ութ հարիւր տա-
րի էին, և տղերք և աղջկերք ծը-
5 նաւ։ Եւ Ադամի ապրած բոլոր
օրերը հինը հարիւր երեսուն տարի
եղաւ, և մեռաւ։
6 Եւ Սէթը հարիւր հինգ տարի
7 ապրեց, և ծնաւ Ենոսին։ Եւ
Սէթը Ենոսին ծնելուց յետոյ
ութ հարիւր եօթը տարի ապրեց և
8 տղերք և աղջկերք ծնաւ։ Եւ Սէթի
բոլոր օրերը հինը հարիւր տաս-
նեվեց տարի եղաւ, և մեռաւ։
9 Եւ Ենոսն հինգտասն տարի ապ-
10 րեց, և Կայնանին ծնաւ։ Եւ Ե-
նոսը Կայնանին ծնելուց յետոյ

ութ հարիւր տասնուհինգ տարի
ապրեց, և տղերք և աղջկերք ծը-
նաւ։ Եւ Ենոսի բոլոր օրերը հինը 11
հարիւր հինգ տարի եղաւ, և մե-
ռաւ։
Եւ Կայնանը եօթանասուն տա- 12
րի ապրեց, և ծնաւ Մաղաղիե-
լին։ Եւ Կայնանը Մաղաղիելին 13
ծնելուց յետոյ ութ հարիւր քա-
ռասուն տարի ապրեց, և տղերք
և աղջկերք ծնաւ։ Եւ Կայնանի 14
բոլոր օրերը հինը Հարիւր տասը
տարի եղաւ, և մեռաւ։
Եւ Մաղաղիելը վեթասուն ու 15
հինգ տարի ապրեց, և ծնաւ Յա-
րեդին։ Եւ Մաղաղիելը Յարեդին 16
ծնելուց յետոյ ութ հարիւր ե-
րեսուն տարի ապրեց, և տղերք և
աղջկերք ծնաւ։ Եւ Մաղաղիելի 17
բոլոր օրերը ութ հարիւր իննսուն
ու հինգ տարի եղաւ, և մեռաւ։
Եւ Յարեդը հարիւր վեթասուն 18
ու երկու տարի ապրեց, և ծնաւ
Ենովքին։ Եւ Յարեդը Ենովքին 19
ծնելուց յետոյ ութը հարիւր
տարի ապրեց, և տղերք և աղջ-
կերք ծնաւ։ Եւ Յարեդի բոլոր 20
օրերը հինը հարիւր վեթասուն ու
երկու տարի եղաւ, և մեռաւ։
Եւ Ենովքը վեթասուն ու հինգ 21
տարի ապրեց, և ծնաւ Մաթու-
սաղային։ Եւ Ենովքն Աստուծոյ 22
հետ վարուեցաւ Մաթուսաղային
ծնելուց յետոյ երեք հարիւր տա-
րի, և տղերք և աղջկերք ծնաւ։
Եւ Ենովքի բոլոր օրերը երեք 23
հարիւր վեթասուն ու հինգ տարի
եղաւ։ Եւ Ենովքն Աստուծոյ 24
հետ վարուեցաւ, և չէր գտնուե-
լով, վասն զի Աստուած առաւ նորան։
Եւ Մաթուսաղան հարիւր ութ- 25
սուն ու եօթը տարի ապրեց և
ծնաւ Ղամէքին։ Եւ Մաթու- 26
սաղան Ղամէքին ծնելուց յետոյ
եօթը հարիւր ութսուն ու երկու
տարի ապրեց, և տղերք և աղջ-
կերք ծնաւ։ Եւ Մաթուսաղայի 27
բոլոր օրերը հինը հարիւր վեթ-
սունինը տարի եղաւ, և մեռաւ։
Եւ Ղամէքը հարիւր ութսուն 28
ու երկու տարի ապրեց, և մի
որդի ծնաւ, Եւ նորա անունը 29
Նոյ կոչեց ասելով, Սա մեզ կը

*Արդ

հանգստացնէ մեր գործքերիցը և մեր ձեռքերի ցաւերիցը՝ այն երկրի պատճառով, որին Եհովան անիծեց։ 30 Եւ Ղամէքը Նոյին ծնելուց յետոյ հինգ հարիւր քսան ու հինգ տարի ապրեց, և 31 տղերք և աղջկերք ծնաւ։ Եւ Ղամէքի բոլոր օրերը եօթը հարիւր եօթանասուն ու եօթը տարի եղաւ, և մեռաւ։

32 Եւ Նոյը հինգ հարիւր տարեկան եղաւ, և Նոյ ծնաւ Սէմին, Քամին և Յաբէթին։

ԳԼ. Զ

1 Եւ եղաւ երբոր մարդիկ սկսեցին շատանալ երկրի վերայ, և 2 աղջկերք ծնեցին իրանց. Աստուծոյ որդիքը տեսնելով մարդկանց աղջկերանցը, որ գեղեցիկ էին, ամեն իրանց հաւանածներիցը իրանց համար կանայք էին առնում։ 3 Եւ Եհովան ասաց. Իմ հոգին մարդկան վերայ միշտ չմընայ, այն պատճառով որ նա մարմին է. այլ նորա օրերը հարիւր քսան տարի լինին։ 4 Եւ հրեշտակները կային այն օրերումն երկրի վերայ. և ետքանից յետոյ էլ երբոր Աստուծոյ որդիքը մարդկանց աղջկերանց մօտ էին մըտնում, և նորանք նորանց համար ծնում էին. սորանք այն զօրաւորներն էին, որ վաղուց անուանի մարդիկ էին։ 5 Եւ Եհովան տեսաւ, որ շատացել էր մարդկանց չարութիւնը երկրի վերայ, և նորանց սրտի խորհուրդների բոլոր դաղափարները չար էին ամեն օր։ 6 Այն ժամանակ Եհովան զղջաց, որ երկրի վերայ մարդը ստեղծեց, 7 և իր սրտի մէջ տրտմեց. Եւ Եհովան ասաց. Երկրի երեսիցը ջնջեմ մարդը որ ստեղծեցի, մարդից մինչև անասունը, մինչև սողունը և մինչև երկնից թռչունը, որովհետև զղջում եմ որ նորանց 8 ստեղծել եմ։ Բայց Նոյը Եհովայի աչքի շնորհք գտաւ։

9 Այս է Նոյի ծնունդքը։ Նոյը մի արդար և կատարեալ մարդ էր իր դարումը. Նոյը Աստուծոյ հետ վարուեցաւ։ 10 Եւ Նոյը երեք որդի ծնաւ՝ Սէմը, Քամը և Յաբէթը։ 11 Եւ երկիրը Աստուծոյ առջև ապականուեցաւ, և երկիրը անօրէնութեամբ լցուեցաւ։ 12 Աստուած տեսաւ երկիրը, և ահա ապականուած էր, վասն զի ամեն մարմին իր ճանապարհը ապականել էր երկրի վերայ։ 13 Եւ Աստուած ասաց Նոյին. Բոլոր մարմնի վերջը եկել է իմ առջև, վասն զի երկիրն նորանից պատճառով անիրաւութեամբ լցուած է, և ահա ես նորանց պիտի փչացընեմ երկրի հետ։ 14 Արէ դու քեզ համար մի խիժատեր փայտից մի տապան շինիր, և տապանը խորշերով շինիր, և նորան ծեփիր ներսից և դրսից կուպրով։ 15 Եւ այսպէս պիտի շինես նորան. տապանի երկայնութիւնը երեք հարիւր կանգուն, լայնութիւնը յիսուն կանգուն և բարձրութիւնը երեսուն կանգուն։ 16 Տապանին լուսամուտ շինես, և մինչև մի կանգուն կատարես նորան վերևիցը. և տապանի դուռը կողմիցը դնես. ներքնատնով, միջնատնով և վերնատնով շինես նորան։ 17 Եւ ես ահա երկրի վերայ ջրհեղեղ պիտի բերեմ այն ամեն մարմինը կորցնելու համար, որի վերայ կենդանութեան շունչ կայ երկնքի տակ, և երկրի վերայ ինչ որ կայ պիտի սատկի։ 18 Բայց իմ ուխտը կ'հաստատեմ քեզ հետ, և տապանը կ'մտնես դու և քո որդիքը, և կինդ և որդոց կանայքը քեզ հետ։ 19 Եւ ամեն անասուններիցը և ամեն մարմնից երկու երկու հատ ամենից տապանը բերես, որ քեզ հետ ապրին, արու և էգ լինին։ 20 Թռչուններից իրանց տեսակի պէս, և անասուններից իրանց տեսակի պէս, երկրի բոլոր սողուններից իրանց տեսակի պէս, երկու երկու հատ ամենից քեզ մօտ գան, որ ապրին։ 21 Եւ գու առ քեզ համար ամեն ուտելիքներից որ ուտվում են, և քեզ մօտ հաւաքիր, որ քեզ ու նորանց համար ուտելիք լինին։ 22 Նոյն արաւ բոլորը ինչպէս Աստ-

ուած պատուիրել էր Նոյեան, այնպէս արաւ։

ԳԼ. Է

1 Եւ Եհովան ասաց Նոյին. Մտիր դու և քո բոլոր տունը տապանի մէջ. որովհետև այս դարու մէջ քեզ տեսայ արդար իմ առջև։ 2 Ամեն մաքուր անասուններից քեզ համար եօթը եօթը հատ առնես արու և նորա էգը. իսկ այն անասուններից, որ մաքուր չեն, երկու երկու հատ արու և նորա էգը։ 3 Երկնից թռչուններից էլ եօթը եօթը հատ արու և էգ, բոլոր երկրի վերայ սերունդ ողջ ծնելու համար։ 4 Վասն զի եօթը օրից յետոյ երկրի վերայ քառասուն օր և քառասուն գիշեր անձրև պիտի բերեմ, և ամեն էակ որ արի, երկրի երեսից պիտի ջնջեմ։ 5 Եւ Նոյ արաւ բոլորը ինչպէս Եհովան պատուիրեց նորան։ 6 Եւ Նոյը վեց հարիւր տարեկան էր, երբոր ջրհեղեղը երկրի վերայ եղաւ։ 7 Եւ մտաւ Նոյը և իր որդիքը, և իր կինը և իր որդոց կանայքը իր հետ տապանի մէջ ջրհեղեղի ջրերի պատճառով։ 8 Մաքուր անասուններից, և այն անասուններից որ մաքուր չեն և թռչուններից, և երկրի վերայ ամեն սողացողներից։ 9 Զոյգ զոյգ արու և էգ գնացին Նոյի մօտ տապանի մէջ, ինչպէս որ Աստուած Նոյին պատուիրել էր։ 10 Եւ եղաւ որ եօթն օրից յետոյ ջրհեղեղի ջրերը եկան երկրի վերայ։ 11 Նոյի կեանքից վեցհարիւրերորդ տարում՝ երկրորդ ամսում՝ ամսուայ տասն եօթներորդ օրը. նոյն օրը մեծ անդունդի բոլոր աղբիւրները ճեղքուեցան և երկնից պատուհանները բացուեցան. 12 և անձրևը եղաւ երկրի վերայ քառասուն օր և քառասուն գիշեր։ 13 Հէնց նոյն օրը մտաւ Նոյը և Նոյի որդիները՝ Սէմը և Քամը և Յաբէթը, և Նոյի կինը, և նորա որդոց երեք կանայքը նորանց հետ տապանի մէջ։ 14 Նորանք և բոլոր կենդանիները իրանց տեսակի պէս, և բոլոր անասունները իրանց տեսակի պէս, և երկրի վերայ սողացող բոլոր սողունները իրանց տեսակի պէս, և բոլոր թռչունները իրանց տեսակի պէս, ամեն տեսակ թևաւոր թռչուն. 15 Եւ մտան տապանը Նոյի մօտ զոյգ զոյգ ամեն մարմինից, որի մէջ կենաց շունչ կայ։ 16 Եւ մտնողները արու և էգ մտան ամեն մարմնից, ինչպէս Աստուած նորան պատուիրել էր։ Եւ Եհովան նորա ետևից փակեց։ 17 Եւ ջրհեղեղը քառասուն օր եղաւ երկրի վերայ. և ջրերը շատացան և տապանը վեր հանեցին, և նա երկրից բարձրացաւ։ 18 Եւ ջրերը սաստկանում էին, և շատ շատանում էին երկրի վերայ. և տապանը մտն էր գալիս ջրերի երեսի վերայ։ 19 Եւ ջրերը երկրի վերայ շատ շատ զօրացան, և բոլոր երկնքի տակ լինող բոլոր բարձր լեռները ծածկուեցան։ 20 Ջրերը տասնուհինգ կանգուն վեր բարձրացան, և լեռները ծածկուեցան։ 21 Եւ երկրի վերայ շարժող ամեն մարմին՝ թէ թռչուն, թէ անասուն, թէ գազան և թէ երկրի վերայ սողացող ամեն սողուն, և ամեն մարդ մեռաւ։ 22 Ամենը որի ռնգացը մէջ կենդանութեան շունչ կար, այն բոլորը որ ցամաքի վերայ էր, մեռան։ 23 Եւ ջնջուեցաւ երկրի երեսի վերայ լինող ամեն էակ՝ մարդուց մինչև անասուն, մինչև սողունը և մինչև երկնից թռչունը. և երկրից ջնջուեցան. և միայն Նոյը մնաց և իր հետ տապանում լինողները։ 24 Եւ ջրերը երկրի վերայ հարիւր հիսուն օր բարձրացած մնացին։

ԳԼ. Ը

1 Եւ Աստուած յիշեց Նոյին և բոլոր կենդանիներին և բոլոր անասուններին, որ նորան հետ տապանում էին. և Աստուած երկրի վերայ մի քամի բերաւ, և ջրերը նուազեցան։ 2 Եւ անդուն-

դի աղբիւրները և երկնից պատուհանները փակուեցան, և դադարեց անձրեւը երկնքից։ 3 Եւ ջրերը դնալով երկրի վերայից քաշվում էին, և հարիւր հիսուն օրից 4 յետոյ ջրերը քիչացան։ Եւ եօթներորդ ամսում՝ ամսուայ տասնեւեօթներորդ օրը տապանը Արարատ լեռան վերայ նստեց։ 5 Եւ ջրերը դնալով քիչանում էին մինչև տասներորդ ամիսը. տասներորդ ամսուայ մէկին լեռների գլուխները երեւեցան։

6 Եւ եղաւ որ քառասուն օրից յետոյ Նոյն իր շինած տապանի 7 պատուհանը բացաւ։ Եւ ագռաւն արձակեց, և նա դուրս եկաւ գնում ու գալիս էր մինչև երկրի վերայից ջրերի ցամաքիլը։ 8 Եւ ուղարկեց աղաւնուն իր մօտից, որ տեսնէ, թէ արդեօք ջրերը քիչացել են երկրի երեսի 9 վերայից։ Եւ աղաւնին իր ոտքի հանգստութեան տեղ չգտաւ, և նա դարձաւ նորա մօտ դէպի տապանը. որովհետև բոլոր երկրի երեսի վերայ ջուր կար։ Եւ Նոյն իր ձեռքը մեկնեց և առաւ նորան, և բերաւ իր մօտ տապանի 10 մէջ։ Եւ եօթն օր էլ սպասեց, և դարձեալ արձակեց աղաւնուն 11 տապանիցը։ Եւ իրիկուայ դէմ աղաւնին նորա մօտ եկաւ, և ահա բերանումը մի ձիթենու նոր կտրուած տերև կար. և Նոյը գիտաց որ ջրերը երկրի վերայից 12 քիչացել են։ Եւ եօթն օր էլ սպասեց, և աղաւնուն արձակեց, և նա այլ եւս նորա մօտ եաւ չի դարձաւ։

13 Եւ եղաւ որ վեց հարիւր մէկ տարում՝ առաջի ամսուայ մէկին ջրերը երկրի վերայից ցամաքեցան. և Նոյը տապանի ծածկոցը վեր առաւ և մտիկ տուաւ, և ահա 14 երկրի երեսը ցամաքել էր։ Եւ երկրորդ ամսում՝ ամսուայ քսան և եօթներորդ օրը երկիրը չորացաւ։

15 Եւ Աստուած խօսեց Նոյի հետ 16 և ասաց. Դուրս եկ տապանիցը դու և քո կինը և քո որդիքը և քո որդոց կանայքը քեզ հետ։ 17 Քեզ հետ լինող բոլոր կենդանիները ամեն մարմնից՝ թէ թռչուն, թէ անասուն, և թէ երկրի վերայ սողացող բոլոր սողունները քեզ հետ հանիր, որ երկրի վերայ բազմանան, և երկրի վերայ աճին և շատանան։ Եւ դուրս եկաւ Նոյը և 18 իր որդիքը և իր կինը և իր որդոց կանայքն իր հետ։ Ամեն կենդանի, ամեն սողուն և ամեն թռչուն, երկրի վերայ ամեն շարժողներն իրանց ցեղերով դուրս եկան տապանիցը։ 19

Եւ Նոյը մի սեղան շինեց Եհովայի համար, և առաւ բոլոր մաքուր անասուններից և բոլոր մաքուր թռչուններից, և սեղանի վերայ ողջակէզներ մատուցրեց։ 20 Եւ Եհովան անոյշ հոտը հոտոտաց, և ասաց Եհովան իր սրտումն. Այլ եւս չեմ անիծիլ երկիրը մարդու պատճառով, որովհետև մարդու սրտի խորհուրդը չար է իր մանկութիւնից, և այլ եւս չեմ զարկիլ բնաւ մի կենդանի, ինչպէս արի։ Այսուհետև քանի ժամանակ որ երկիրը կ'մնայ սերմ ու հունձք, և ցուրտ ու տաք, ամառ ու ձմեռ, և ցերեկ ու գիշեր չեն դադարիլ։ 21 22

ԳԼ. Թ

Եւ Աստուած օրհնեց Նոյին և նորա որդիանցը, և ասաց նորանց. Աճեցէք և շատացէք և լցէք երկիրը. Եւ ձեր վախն ու ձեր երկիւղը երկրի բոլոր գազանների վերայ և երկնից բոլոր թռչունների վերայ լինի. Նորանց երկրի վերայ բոլոր շարժողների հետ և ծովի բոլոր ձկների հետ ձեր ձեռքն են տրուած։ Ամեն շարժող կենդանի 3 ձեզ համար կերակուր լինի. բանջարի խոտի պէս տուի ձեզ բոլորը։ Միայն միսը իր կեանքով՝ 4 այսինքն իր արիւնով չուտէք։ Եւ 5 ձեր արիւնն էլ ձեր կեանքի համար կ'պահանջեմ, ամեն կենդանուձեռքից կ'պահանջեմ, և մարդու ձեռքից՝ իր ընկերի ձեռքիցը մարդու կեանքը կ'պահանջեմ։ Ով որ 6 մարդու արիւն թափէ, նորա արիւնը մարդով թափուի. վասն զի

Աստուծոյ պատկերովն ստեղծեց
7 մարդուն։ Եւ դուք աճեցէք ու
շատացէք, երկրի վերայ բազմա-
ցէք և նորանում շատացէք։
8 Եւ Աստուած ասաց Նոյին և
նորա որդոցը նորա հետ՝ ասելով.
9 Եւ ես ահա իմ ուխտս հաստա-
տում եմ ձեզ հետ և ձեզանից
10 յետոյ ձեր սերունդի հետ, Եւ
ձեզ հետ լինող ամեն շնչաւոր
կենդանու հետ, թէ թռչունի,
թէ անասունի և թէ ձեզ հետ
լինող երկրի ամեն գազանի հետ,
տապանիցը ելածների ամենի հետ՝
երկրի բոլոր անասունների հետ։
11 Եւ իմ ուխտը հաստատում եմ
ձեզ հետ, որ այլ ևս ոչ մէկ
մարմին ջրհեղեղի ջրերից չի կոր-
չիլ, և այլ ևս ջրհեղեղ չի լինիլ
12 երկիրը փչացնելու համար։ Եւ
ասաց Աստուած. Սա է այն ուխ-
տի նշանը որ ես դնում եմ իմ
ու ձեր մէջ, և ձեզ հետ լինող
ամեն շնչաւոր կենդանու մէջ յա-
13 ւիտենական դարերի համար. Իմ
աղեղը դրի ամպի մէջ, և նա
ուխտի նշան լինի իմ ու երկրի
14 մէջ։ Եւ լինի որ ես երկրի վերայ
ամպ բերելիս՝ աղեղը ամպի մէջ
15 տեսնուի. Այն ժամանակ ես կ'յի-
շեմ իմ ուխտն որ իմ ու ձեր
մէջ և ամեն մարմնից ամեն շնչ-
չաւոր կենդանու մէջ դրել եմ, և
այլ ևս ջրերը հեղեղ չեն դառ-
նալ ամեն մարմին կորցնելու հա-
16 մար։ Եւ աղեղը ամպի մէջ կ'լի-
նի, և ես նորան կ'տեսնեմ, որ
յիշեմ այն յաւիտենական ուխ-
տը՝ Աստուծոյ ու ամեն մարմնից
լինող բոլոր կենդանի անասունի
17 մէջ, որ երկրի վերայ է։ Եւ Աստ-
ուած Նոյին ասաց. Սա է այն
ուխտի նշանը որ ես հաստատե-
ցի իմ ու երկրի վերայ լինող ա-
մեն մարմնի մէջ։
18 Եւ Նոյի տապանից դուրս ե-
կած որդիքն էին՝ Սէմ, Քամ և
Յաբէթ, և Քամ Քանանի հայրն
19 է։ Այս երեքը Նոյի որդիքն են.
և սորանցից տարածուեցաւ բոլոր
երկիրը։
20 Եւ սկսեց Նոյը հողագործ գոր-
21 ծել, և մի այգի տնկեց։ Եւ գի-
նուցը խմեց և արբեց, և իր վրա-
նի մէջ մերկ էր։ Եւ Քանանի 22
հայրը՝ Քամ տեսաւ իր հօր մեր-
կութիւնը և իր երկու եղբայրնե-
րին պատմեց դրսումը։ Եւ Սէմը 23
և Յաբէթը հանդերձն առին և
իրանց երկուսի ուսերի վերայ դը-
րին ու ետ ետ գնացին իրանց
հօր մերկութիւնը ծածկեցին. և
իրանց երեսները դէպի ետ էր և
իրանց հօր մերկութիւնը չտեսան։
Եւ Նոյն իր գինուցն արթնցաւ և 24
իմացաւ ինչ որ արել էր իրան
իր փոքր որդին։ Եւ ասաց. Ա- 25
նիծեալ լինի Քանանը. ծառա-
նների ծառայ լինի նա իր եղբայր-
ներին։ Էսև ասաց. Օրհնեալ 26
լինի Եհովան՝ Սէմի Աստուածը,
և Քանանը նորա ծառայ լինի։
Աստուած ընդարձակէ Յաբէթին, 27
և Սէմի վրաններումը բնակէ, և
Քանանը ծառայ լինի նորան։
Եւ Նոյը ապրեց ջրհեղեղից յե- 28
տոյ երեք հարիւր յիսուն տարի։
Եւ Նոյի բոլոր օրերը ինը հարիւր 29
յիսուն տարի եղաւ. և մեռաւ։

ԳԼ. Ժ

Եւ սորանք են Նոյի որդոց Սէ- 1
մի, Քամի և Յաբէթի ծնունդքը։
Եւ ջրհեղեղից յետոյ նորանց որ-
դիներ ծնան։ Յաբէթի որդիքը՝ 2
Գոմեր, Մագոգ, Մադայ, Յա-
ւան, Թոբէլ, Մոսոք ու Թիրաս։
Եւ Գոմերի որդիքը՝ Ասքանաս, 3
Րիփաթ և Թորգոմայ։ Եւ Յա- 4
ւանի որդիքը՝ Եղիսայ, Թարսիս,
Կիտացիք և Դոդացիք։ Սորանցից 5
բաժանուեցան ազգաց կղզիները
իրանց երկիրներումը ամեն մէկն իր
լեզուովը իրանց ազգերովը իրանց
տոհմերումն։
Եւ Քամի որդիքը՝ Քուշ, Մեսա- 6
րեմ, Փուտ և Քանան։ Եւ Քու- 7
շի որդիքը՝ Սաբա և Եւիլա և
Րեհմա և Սաբթեքա։ Եւ Րեհ- 8
մայի որդիքը՝ Սաբա և Դիդան։
Եւ Քուշ ծնաւ Ներովթին. սա 8
սկսեց երկրի վերայ զօրաւոր լի-
նել։ Սա Եհովայի առջև մի զօ- 9
րաւոր որսորդ եղաւ. նորա հա-
մար ասւում է՝ Ներովթի պէս

զօրաւոր որսորդ ԵՀովայի առջև։
10 Եւ նորա թագաւորութեան սկիզ-
բը Բաբիլոն և Արեք և Ակքադ և
Քալանէ էր՝ Սենաար երկրումը։
11 Ասի՛ն երկրիցը դուրս եկաւ Ասու-
րը, և շինեց Նինուէ և Քռովթ
12 և Քալան քաղաքը։ Եւ Նինուէի
ու Քալայի մէջտեղը Ռեսէնը.
13 սա մեծ քաղաքն է։ Եւ Մեսրա-
իմը ծնաւ Ղուդացիներին, և
Անամացիներին և Ղաբացիներին
14 և Նեփթուքացիներին, Եւ Պա-
թրուսացիներին, և Քասղուքա-
ցիներին (որտեղից որ Փղշտացիք
դուրս եկան) և Կափթորացինե-
15 րին։ Եւ Քանանը ծնաւ իր անդ-
16 րանիկ Սիդոնին, նաև Քեթին. Յե-
17 բուսացուն, Ամորհացուն, Գեր-
18 գեսացուն, Խեւացուն, Արուկե-
ցուն, Ասենացուն, Արուադա-
ցուն, Սեմարացուն և Ամաթա-
ցուն, և յետոյ տարածուեցան
19 Քանանացոց ցեղերը։ Եւ Քանա-
նացոց սահմանն էր Սիդոնից Գե-
րարով մինչև Գազա, անցնելով
Սոդոմ և Գոմոր, և Ադմա ու
20 Սեբոյիմ մինչև Ղասա։ Սորանք
են Քամի որդիքը իրանց տոհմե-
րով իրանց լեզուներով, իրանց
երկիրներումն ու ազգերումը։
21 Եւ Սեմին էլ որդիներ ծնաւ, որ
Եբերի որդոց հայրն էր և Յաբէ-
22 թի մեծ եղբայրն էր։ Սեմի որ-
դիքը՝ Եղամ, Ասուր, Արփաք-
23 սատ, Ղուդ և Արամ։ Եւ Արա-
մի որդիքը՝ Հուս և Հուլ և Գա-
24 թեր և Մաշ։ Եւ Արփաքսադ
ծնաւ Սաղային և Սաղայ ծնաւ
25 Եբերին։ Եւ Եբերին երկու որդիք
ծնաւ. մէկի անունը Փաղէկ. քան
որում նորա օրերումը բաժանուե-
ցաւ երկիրը. իսկ նորա եղբօր ա-
26 նունը Յեկտան էր։ Եւ Յեկտանը
ծնաւ Էղմոդատին, Սաղափին,
27 Ասարմաթին, Յարոքին, Ադորա-
28 մին, Ուզալին, Պիզղային, Գե-
բալին, Աբիմաէլին, Սաբային,
29 Ոփիրին, Եւիլատին և Յոբաբին։
Սորանք ամենը Յեկտանի որդիքն
30 են։ Եւ սորանց բնակութիւնը ե-
ղաւ Մեսայից մինչև Սուիր ա-
31 բևելեան լեառը։ Սորանք են Ե-
մի որդիքն իրանց տոհմերով, ի-
բանց լեզուներով, իրանց երկիր-
ների մէջ իրանց ազգերով։ Սո- 32
րանք են Նոյի որդոց տոհմերն ի-
րանց ծնունդների և ազգերի հա-
մեմատ։ Եւ սորանցից տարած-
ուեցան ազգերը երկրի վերայ ջըր-
հեղեղից յետոյ։

ԳԼ. ԺԱ.

Եւ բոլոր երկիրը մէկ լեզու և 1
մէկ խօսուածք էր։ Եւ եղաւ երբ 2
որ նորանք արեւելքից չուեցին, Սե-
նաար երկրումը մի դաշտ գտան,
և այնտեղ բնակեցին։ Եւ իրար 3
ասացին. Եկէք պիւտաներ շինենք,
և կրակով այրենք։ Եւ պիւտանե-
րը նորանց համար քարի տեղ ե-
ղան, և կուպրը նորանց համար
եղաւ ցեխի տեղ։ Եւ ասացին. 4
Եկէք մեզ համար մի քաղաք շի-
նենք և մի աշտարակ, և նորա
գլուխը մինչև երկինքը, և մեզ
համար անուն առանանք, որպէս
զի չցրուինք բոլոր երկրի երեսի
վերայ։ Եւ Եհովան իջաւ մար- 5
դոց որդիների շինած քաղաքը և
աշտարակը տեսանելու։ Եւ Եհո- 6
վան ասաց. Ահա մէկ ազգ է և
մէկ լեզու նորանց ամենի համար,
և ահա սկսեցին շինել. և հիմա
նորանց համար դժուար չի լինիլ
ինչ որ խորհեցին շինելու։ Եկէք 7
իջնենք, և այնտեղ նորանց լե-
զուն խառնակենք, որ իրար լե-
զու չհասկանան։ Եւ Եհովան այն- 8
տեղից նորանց ցրուեց բոլոր եր-
կրի երեսի վերայ, և քաղաքը շի-
նելուց դադարեցին։ Վասն որոյ 9
նորա անունը Բաբիլոն կոչուե-
ցաւ, վասն զի Եհովան այն տեղ
խառնակեց բոլոր երկրի լեզուն.
և Եհովան նորանց ցրուեց այն
տեղից բոլոր երկրի երեսի վերայ։

Սեմի ծնունդքը սորանք են. 10
Սեմը հարիւր տարեկան էր և ծը-
նաւ Արփաքսադին՝ ջրհեղեղից եր-
կու տարի յետոյ։ Եւ Սեմը Ար- 11
փաքսադին ծնելուց յետոյ հինգ
հարիւր տարի ապրեց, և տղերք
և աղջկերք ծնաւ։ Եւ Արփաք- 12
սադն երեսուն ու հինգ տարի ապ-
րեց և ծնաւ Սաղային։ Եւ Ար- 13

փաքսադը Սաղային ծնելուց յետոյ չորս հարիւր երեք տարի ապրեց, և տղերք և աղջկերք ծնաւ։
14 Եւ Սաղան երեսուն տարի ապրեց, և ծնաւ Եբերին։ Եւ Սաղան Եբերին ծնելուց յետոյ չորս հարիւր երեսուն տարի ապրեց, և տղերք և աղջկերք ծնաւ։
16 Եւ Եբերը երեսուն ու չորս տարի ապրեց, և ծնաւ Փաղէկին։ Եւ Եբերը Փաղէկին ծնելուց յետոյ չորս հարիւր երեսուն տարի ապրեց և տղերք և աղջկերք ծնաւ։
18 Եւ Փաղէկը երեսուն տարի ապրեց, և ծնաւ Ռագաւին։ Եւ Փաղէկը Ռագաւին ծնելուց յետոյ երկու հարիւր ինը տարի ապրեց, և տղերք և աղջկերք ծնաւ։
20 Եւ Ռագաւը երեսուն ու երկու տարի ապրեց և ծնաւ Սերուգին։
21 Եւ Ռագաւը Սերուգին ծնելուց յետոյ երկու հարիւր եօթը տարի ապրեց, և տղերք և աղջկերք ծնաւ։
22 Եւ Սերուգը երեսուն տարի
23 ապրեց, և ծնաւ Նաքորին։ Եւ Սերուգը Նաքորին ծնելուց յետոյ երկու հարիւր տարի ապրեց
24 և տղերք և աղջկերք ծնաւ։ Եւ Նաքորը քսան ու ինը տարի ապրեց
25 և ծնաւ Թարային։ Եւ Նաքորը Թարային ծնելուց յետոյ հարիւր տասն ու ինը տարի ապրեց և տղերք և աղջկերք ծնաւ։
26 Եւ Թարան եօթանասուն տարի ապրեց, և ծնաւ Աբրամին, Նաքորին և Առանին։
27 Եւ սորանք են Թարայի ծնունդքը. Թարայ ծնաւ Աբրամին, Նաքորին և Առանին, և Առանը
28 ծնաւ Ղովտին։ Եւ Առանը մեռաւ իր հօր Թարայի առջև իր ծննդեան երկրումը Քաղդէացւոց
29 Ուր քաղաքում։ Եւ Աբրամը և Նաքորը իրանց համար կանայք առին. Աբրամի կնոջ անունը Սարայ էր, և Նաքորի կնոջ անունը Մեղքա՝ Առանի աղջիկը, որ Մեղքայի և Յեսքայի հայրն էր։
30 Եւ Սարան ամուլ էր և զաւակ
31 չունէր։ Եւ Թարայ առաւ իր Աբրամին և իր թոռը Առանի որդի Ղովտին և իր որդի Աբրամի կին՝ իր հարսը՝ Սարային, ու նոր

րանց հետ Քաղդէացւոց Ուր քաղաքից դուրս եկաւ Քանանու երկիրը գնալու համար. և եկան մինչև Խառան, և այնտեղ բնակեցին։ Եւ Թարայի օրերը երկու 32
հարիւր հինգ տարի եղան. և Թարան Խառանումը մեռաւ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Եհովան ասաց Աբրամին. Կնա քո երկրիցը, և քո ազգականներիցը, և քո հօր տանից այն երկիրը, որ ես քեզ ցոյց կ'տամ։ Եւ քեզ մեծ ազգ պիտի 2
շինեմ, և քեզ օրհնեմ, և քո անունը մեծացնեմ և դու օրհնեալ կ'լինես։ Եւ քեզ օրհնողներին 3
կ'օրհնեմ և քեզ անիծողներին կ'անիծեմ. և երկրի բոլոր ազգերը քեզանով կ'օրհնուին։ Եւ Աբրամը գնաց ինչպէս Եհովան նորան ասել էր. Ղովտն էլ գնաց նորա հետ. և Աբրամը եօթանասուն ու հինգ տարեկան էր խառանիցը դուրս գալիս։ Եւ Աբրամը վեր առաւ իր կին Սարային, և իր եղբօր որդի Ղովտին, և իրանց բոլոր ունեցած ստացուածքը, և խառանումն իրանց ստացած անձինքը, և գնան գանանու երկիրը. և եկան գանանու երկիրը։ Եւ Աբրամ 6
անցաւ այն երկրով մինչև Սիքեմ տեղը մինչև Մօրէի կաղնին. և այն ժամանակ գանանացիները էին այն երկրումը։ Եւ Եհովան 7
երևեցաւ Աբրամին, և ասաց. Քո սերունդին պիտի տամ այս երկիրը։ Եւ այն տեղ սեղան շինեց Եհովայի համար, որ իրան երևեցաւ։ Եւ այն տեղից չուեց Բե- 8
թէլի դիմացի լեռանը, և իր վրանը բացաւ՝ Բեթէլը ծովի կողմից և Գային արևելեան կողմից, և այն տեղ Եհովայի համար սեղան շինեց, և Եհովայի անունը կանչեց։ Եւ Աբրամը չուելով 9
գնում էր դէպի հարաւ։

Եւ այն երկրումը սով եղաւ. և 10
Աբրամն իջաւ Եգիպտոս այն տեղ պանդխտութեամբ բնակելու համար, վասն զի սովը սաստիկ էր

11 այն երկրում։ Եւ եղաւ երբ որ
Եգիպտոս մտնելու մօտեցաւ, իր
կնոջը Սարային ասաց. Ահա գի-
տեմ որ դու մի գեղեցիկ տեսքով
12 կին ես։ Եւ անպատճառ երբ Ե-
գիպտացիք քեզ տեսանեն, ասելու
են՝ Սա նորա կինն է. և ինձ
կ'սպանեն, բայց քեզ ողջ կ'թող-
13 ուն. Ասիր թէ դու իմ քոյրն ես.
որպէս զի քո պատճառովն ինձ
համար լաւ լինի, և քո պատճա-
14 ռովն իմ անձն ապրի։ Եւ եղաւ
երբոր Աբրամը Եգիպտոս մտաւ,
Եգիպտացիք տեսան այն կինը,
15 որ շատ գեղեցիկ էր։ Եւ փարա-
ւօնի իշխաններն էլ տեսան նորան
և գովեցին նորան փարաւօնի առ-
ջև. և կինը տարուեցաւ փարա-
16 ւօնի տունը։ Եւ նորա պատճա-
ռովը Աբրամին բարիք արաւ. և
նա ունեցաւ ոչխարներ և արջառ-
17 ներ և էգ էշեր և ուղտեր։ Եւ
Եհովան մեծ հարուածներով
պատժեց փարաւօնին և նորա տա-
նը Աբրամի կնոջ Սարայի համար։
18 Եւ փարաւօն կանչեց Աբրամին,
և ասաց. Այս ի՞նչ է որ արիր
ինձ. ինչո՞ւ ինձ չյայտնեցիր, թէ
19 նա քո կինն է։ Ինչո՞ւ համար ա-
սացիր, Թէ իմ քոյրն է. և նորան
ինձ համար կին էի առնում. բայց
հիմա ահա քո կինը, առ և գնա։
20 Եւ փարաւօն մարդկանցը պատ-
ուիրեց նորա մասին, և նորան և
իր կնոջն և իր բոլոր ստացուածքը
ճանապարհ դրին։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Աբրամը վեր գնաց Եգիպտո-
սից ինքն և իր կինը և իր բոլոր
ունեցածները, և Ղովտն էլ իր
2 հետ դէպի հարաւակողմը։ Եւ
Աբրամը հարուստ էր անասուններ-
3 րով, արծաթով և ոսկիով։ Եւ
իր իջևաններով գնաց հարաւա-
յին կողմից մինչև Բեթել, այն
տեղը ուր որ էր առաջ վրանը,
4 Բեթելի և Գայիի միջտեղը. Այն
տեղանի տեղը, ուր որ առաջ շի-
նել էր. և Աբրամն այնտեղ Եհո-
վայի անունը կանչեց։
5 Եւ Ղովտն էլ որ Աբրամի հետ

գնացել էր, ունէր ոչխարներ և
արջառներ և վրաններ։ Եւ այն 6
երկիրը բաւական չէր նորանց մի-
ասին բնակելու համար. որովհե-
տև նորանց ստացուածքը շատ էր
և չէին կարողանում միասին բնա-
կել։ Եւ կռիւ եղաւ Աբրամի ա- 7
նասուններուն հովիւների և Ղովտի
անասուններուն հովիւների մէջ. և
այն ժամանակ Քանանացիները և
Փերեզացիները բնակում էին այն
երկրի մէջ։ Եւ Աբրամն ասաց 8
Ղովտին. Թող իմ ու քո մէջ և
իմ հովիւների ու քո հովիւների
մէջ կռիւ չլինի, քանի որում մենք
եղբայրք ենք։ Չորը երկիրը ա- 9
ջիդ չէ՞. բաժանուիր ինձանից. ե-
թէ դու ձախ կողմը գնաս, ես աջ
կողմը կ'գնամ, և եթէ դու աջ
կողմը, ես ձախ կողմը կ'գնամ։
Եւ Ղովտն իր աչքերը բարձրաց- 10
րեց և տեսաւ Յորդանանու բո-
լոր շրջակայքը, որ բոլորն ջրած
էր, Եհովան Սոդոմը և Գոմորը
կործանելուց առաջ մինչև Ա-
գովր Եհովայի դրախտի պէս՝ Ե-
գիպտոսի երկրի պէս էր։ Եւ Ղով- 11
տը Յորդանանու բոլոր շրջակայքը
ընտրեց իր համար, և Ղովտը
դէպի արևելք գնաց. և միմիան-
ցից բաժանուեցան։ Աբրամը գա- 12
նանու երկրում բնակեց. Ղովտն
էլ դաշտի քաղաքներում բնա-
կեց, և իր վրանը Սոդոմի մօտ
բացաւ։ Եւ Սոդոմի մարդիկը շատ 13
չար ու մեղաւոր էին Եհովային
առջև։

Եւ Եհովան ասաց Աբրամին 14
Ղովտը նորանից բաժանուելուց
յետոյ. Աչքերդ բարձրացրու, և
մնալով տես քո եղած տեղիցը դէ-
պի հիւսիս և հարաւ, և դէպի
արևելք և արևմուտք. Չունն զի 15
այդ բոլոր երկիրը, որ դու տես-
նում ես, քեզ եմ տալու և քո
սերունդին յաւիտեան։ Եւ քո 16
սերունդը երկրի փոշու չափ եմ
անելու. որ եթէ մէկը երկրի փո-
շին կարող է համարել, քո սե-
րունդն էլ կ'համարուի։ Վեր կաց 17
այդ երկրում մեն եկ նորա եր-
կայնութեան և լայնութեան հա-
մեմատ, վասն զի քեզ եմ տալու

18 այն։ Եւ Աբրամը չուեց, և եկաւ և բնակեց Մամբրէի կաղնիների մէջ, որ Քեբրոնումն է. և այն տեղ սեզան շինեց Եհովայի համար։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ Ամենաբի Ամարփադ թագաւորի, Եղլասար Արիովք թագաւորի, Եղամի Քոդողագոմոր թագաւորի, և Գոյիմի Թադգաղ թագաւորի ժամանակները՝
2 բուռը, Որ Սոդոմի հարա թագաւորի հետ, և Գոմորի հարաց թագաւորի հետ, և Աբդայիմի Սիմուրոր թագաւորի հետ, ու հաղայի այսինքն Սեգովրի թագաւորի հետ պատերազմ արին։
3 Սորանք ամենը ժողովուեցան Սիդդիմ ձորուքը, որ է Ալի ծովը։
4 Տասներկու տարի Քոդողագոմորին ծառայութիւն էին արել, և տասներեքերորդ տարին ապստամբ
5 եցան։ Եւ տասնչորսերորդ տարին եկաւ Քոդողագոմոր և իր հետ լինող թագաւորները, և կոտորեցին Աստարովթ-Կառնայիմուքը լինող Ռափայիմներին և Համի մէջ Զուզեցիներին, և Շաւէ Կարիաթեմի մէջ Էմիմներին։
6 Եւ Քոռեցիներին իրանց Սէիր լեառների վերայ մինչև Էլփառանը որ անապատի մօտ է։
7 Եւ դարձան ու եկան Էնմասեփաթ այսինքն Հադէս և յաղթահարեցին Ամաղեկացոց բոլոր նահանգը, և Ասասանթամարի մէջ բնակող Ամորհացիներին էլ։
8 Եւ դուրս եկաւ Սոդոմի թագաւորը, և Գոմորի թագաւորը և Ադմայի թագաւորը, և Սեբոյիմի թագաւորը և Բաղայի այսինքն Սեգովրի թագաւորը, և Սիդդիմ ձորուքը նոցա հետ պատերազմ կազմեցին
9 Քեդողագոմոր Եղամի թագաւորի հետ, և Գոյիմի Թադգաղ թագաւորի հետ, և Ամենաբի Ամարփադ թագաւորի հետ, և Եղլասարի Արիովք թագաւորի հետ՝ չորս թագաւորը հինգի
10 հետ։ Եւ Սիդդիմ ձորը նաւթի հորերով լիքն էր. և Սոդոմի ու Գոմորի թագաւորները փախան, և այնտեղ ընկան, իսկ մնացածները լեառը փախան։
11 Եւ նոքա առին Սոդոմի և Գոմորի բոլոր առացուածքը, և նոցանից բոլոր պաշարը, և գնացին։
12 Եւ Աբրամի եղբօր որդին Ղովթը և սորա բոլոր առացուածքն առին և գնացին, որովհետև նա Սոդոմումն էր բնակվում։
13 Եւ մի ազատուած եկաւ և եբարեցի Աբրամին պատմեց. և նա Եսքողի եղբայր և Աների եղբայր Ամորհացի Մամբրէի կաղնիների մէջ էր բնակում. որովհետև նորանք Աբրամի հետ դաշնակից էին։
14 Եւ երբ Աբրամը լսեց թէ իր եղբայրը գերի տարուեցաւ, իր տանը երեք հարիւր տասնեւթը վարժուած ծառաներին դուրս հանեց ու նոքա Դան մինչև գնաց։
15 Եւ ինքն իր ծառաների հետ գիշերը գունդ գունդ նորանց վերայ յարձակեց և կոտորեց նորանց. և քշեց նորանց մինչև Կովա, որ Դամասկոսի ձախ կողմն է։
16 Եւ բոլոր առացուածքը ետ բերաւ. և իր եղբայր Ղովթին էլ, և նորա առացուածքն էլ ետ բերաւ, և կիներն ու ժողովուրդն էլ։
17 Եւ Սոդոմի թագաւորը դիմաւորեց նորան, երբոր նա Քոդողագոմորի և նորա հետ լինող թագաւորների կատրելուցը ետ էր դառել, դէպի Շաւէ ձորը այսինքն թագաւորի ձորը։
18 Եւ Սաղէմի թագաւորը Մելքիսեդեկ հաց և գինի դուրս բերաւ, և նա Բարձրեալ Աստուծոյ քահանայ էր։
19 Եւ օրհնեց նորան և ասաց. Օրհնեալ լինի Աբրամ երկնքի և երկրի Արարիչ Բարձրեալ Աստուածանից։
20 Եւ օրհնեալ լինի Բարձրեալ Աստուածը, որ քո թշնամիները քո ձեռքը մատնեց։ Եւ նա ամենից բսասնորդ տուաւ նորան։
21 Եւ Սոդոմի թագաւորն ասաց Աբրամին. Մարդիկն ինձ տուր, և առացուածքն դու առ քեզ համար։
22 Եւ Աբրամն ասաց Սոդոմի թագաւորին. Ես բարձրաց-

նում եմ իմ ձեռքը դէպի Եհովայ Բարձրեալ Աստուածը, որ
23 Տէր է երկնքի և երկրի, Որ եթէ մի թելից մինչև կօշկի կապը մէկ բան վեր առնեմ ինչ որ քոնն է, որ չասես թէ Աբրամին ես հարստացրի. Բացի այն որ երիտասարգները կերել են, և այն մարդոց բաժինը որ ինձ հետ գնացել են, Անեռի և Եսքոդի ու Մամբրէի. թող նորանք իրանց բաժինն առնեն:

ԳԼ. ԺԴ

1 Ա յս բաներից յետոյ տեսիլքում Եհովայի խօսքը Աբրամին եղաւ ասելով. Մի՛ վախիր, Աբրամ, ես քեզ համար վահան եմ, քո
2 վարձքը խիստ շատ է: Եւ Աբրամն ասաց. Ով Տէր Եհովայ, ինձ ի՞նչ ես տալիս, քանի որ առանց զաւակի եմ մնացել, և իմ տան տիրոջն այս Դամասկացի
3 Եղիազարն է: Նաև ասաց Աբրամը, Որովհետև ինձ սերունդ չտուիր, այս իմ ընդծինն ինձ
4 ժառանգ կ'լինի: Եւ այս Եհովայի խօսքը եղաւ դէպի նորան ասելով, Նա չի ժառանգիլ քեզ. այլ նա որ քու մէջքիցը դուրս կ'գայ, նա կ'լինի քո ժառանգը:
5 Եւ դուրս հանեց նորան և ասաց. Դէպի երկինքը մտիկ արա, և աստղերը համարիր, եթէ որ կարող ես նորանց համարել. և ասաց նորան. Այսպէս կ'լինի քո
6 սերունդը: Եւ նա հաւատաց Եհովային, և նորա համար արդարութիւն համարեց այս:
7 Եւ ասաց նորան. Ես եմ Եհովան, որ քեզ Քաղդէացոց Ուր Քաղդէայէն հանեցի՝ այս երկիրը քեզ տալու համար:
8 Եւ նա ասաց. Ով Տէր Եհովայ, ինչով գիտենամ թէ ես նորան
9 կ'ժառանգեմ: Եւ ասաց նորան. Ինձ համար մի երեք տարեկան երինջ, և մի երեք տարեկան այծ և մի երեք տարեկան խոյ, և մի տատրակ, և մի աղաւնու ձագ
10 առ: Եւ նա այս բոլորն առաւ նորա համար, և նորանց մէջտեղից կտրեց, և ամեն մէկ կտորը միւս կտորի դէմ ու դէմ դրաւ. բայց թռչուններն չկտրեց:
11 Եւ կտրած դիակի վերայ գիշատիչ թռչուններն իջան, բայց Աբրամը ետ քշեց նորանց:
12 Եւ երբ որ արևը մայր էր մտնում, Աբրամի վերայ մի խոր քուն եկաւ, և ահա նորա վերայ մի մեծ խաւարի սոսկում ընկաւ:
13 Եւ Եհովան ասաց Աբրամին. Ստոյգ գիտենա, որ քո սերունդը մի երկրում, որ իրենցը չէ, պանդուխտ կ'լինի, և ծառայութիւն կ'անեն, և նորանց չորս հարիւր տարի կը չարչարեն:
14 Բայց այն ազգն էլ, որին որպէս կ'ծառայեն, ես կը դատեմ. և նորանցից յետոյ մեծ ստացուածքով դուրս կ'գան:
15 Եւ դու խաղաղութեամբ քո հայրերի մօտ կ'գնաս. լաւ ծերացած կը թաղուիս:
16 Եւ չորրորդ գարուն այս տեղ կ'դառնան, վասն զի Ամօրհացոց անօրէնութիւնը դեռ կատարեալ չէ:
17 Եւ եղաւ երբոր արևը մայր մտաւ, և խաւար եղաւ, ահա մի մեծ ծուխ հնոց և մի կրակի բոց այն կտորների միջովովն անցաւ:
18 Այն օրը Եհովան Աբրամի հետ ուխտ գրաւ ասելով, Քո սերունդին տուի այս երկիրը Եգիպտոսի գետից մինչև մեծ գետը Եփրատ գետը,
19 Կենեցիները, և Կենեզացիները,
20 և Կեդմոնացիները, Եւ Քետացիները, և Փերեզացիները և Ռափայիմները,
21 Եւ Ամօրհացիները, և Քանանացիները, և Գերգեսացիները, և Յեբուսացիները:

ԳԼ. ԺԶ

1 Եւ Աբրամի կինը Սարան չէր ծնում նորա համար, և նա մի Եգիպտացի աղախին ունէր անունը Հագար:
2 Եւ Սարան ասաց Աբրամին. Ահա Եհովան ինձ արգիլեց ծնելուց, ուրեմն աղախնիս մօտ մտիր. գուցէ նորանից որդի առանում: Եւ Աբրամը Սարայի ձայնին լսեց:
3 Եւ Աբրամի կինը Սարան իր Եգիպտացի աղախին Հագարն առաւ, Աբրամը Քանա-

նու երկրում տասը տարի բնակե-
լուց յետոյ, և տուաւ նորան իր
մարդուն Աբրամին որ նորան կին
4 լինէ: Եւ նա մտաւ Հագարի մօտ,
և նա յղացաւ. և երբ տեսաւ
թէ յղի է, իր տիկինը իր աչքի
5 առջև անարգուեցաւ: Եւ Սարան
ասաց Աբրամին. Իմ անիրաւու-
թիւնը քեզ վերայ լինի. ես իմ
աղախինը քո գիրկը տուի, և երբ
որ տեսաւ թէ յղի է, ես նորա
աչքի առջև անարգուեցայ. Ե-
հովան իմ ու քո մէջտեղը դա-
6 տաստան անէ: Եւ Աբրամ ա-
սաց Սարայիին. Ահա քո աղա-
խինը քո ձեռքին է, արա նորան
ինչ որ հաճոյ է քո աչքի առջև
և Սարան նեղեց նորան, և նա
7 փախաւ նորա երեսիցը: Եւ Եհո-
վայի հրեշտակը գտաւ նորան ա-
նապատումը ջրի աղբիւրի մօտ
Սուրի ճանապարհի վերայ լինող
8 աղբիւրի մօտ. Եւ ասաց. Ով
Սարայի աղախին Հագար, ո՞ր
տեղից ես գալիս, և ո՞ւր ես գը-
նում: Եւ նա ասաց. Ես իմ տի-
կին Սարայի երեսիցը փախչում
9 եմ: Եւ Եհովայի հրեշտակն ա-
սաց նորան. Ետ դարձիր քո տիկ-
նոջ մօտ, և նորա ձեռքի տակ
10 խոնարհիր: Եւ Եհովայի հրեշտա-
կըն ասաց նորան. Քո սերունդը
շատ շատացնելու եմ, և շատու-
11 թիւնից չհամարուիլ: Եւ Եհո-
վայի հրեշտակն ասաց նորան.
Ահա դու յղի ես. և որդի կը
ծնիս, և նորա անունը Իսմայել
կ'դնես. վասն զի Եհովան լսեց քո
12 տառապանքը: Եւ նա մի վայրագ
մարդ կ'լինի. նորա ձեռքը ամենի
դէմ, և ամենի ձեռքը նորա դէմ
կ'լինի, և նա իր բոլոր եղբայր-
13 ների առջև կ'բնակէ: Եւ նա իր
հետ խօսող Եհովայի անունը կան-
չեց, Ընդ Դու իմ տեսիլքի Աստ-
ուածն ես. որովհետև ասաց. Ար-
դեօք էլ կ'տեսանե՞մ, այս տեղ իմ
14 տեսիլքից յետոյ: Վասն որոյ
այն ջրհորի անունը Լահոյրոյի
ջրհոր դրուեւ, ահա նա Կադէսի
15 և Բարադի մէջտեղն է: Եւ Հա-
գար մի որդի ծնաւ Աբրամին. և
Աբրամը Հագարի իր համար ծը-

նած որդու անունն Իսմայէլ դը-
րաւ: Եւ Աբրամը ութսունամեայ 16
ու վեց տարեկան էր, երբոր Հա-
գարը Իսմայէլին ծնաւ Աբրամի
համար:

ԳԼ. ԺԷ

Եւ երբոր Աբրամն իննսուն ու ի- 1
նը տարեկան էր, Եհովան երևե-
ցաւ Աբրամին և ասաց նորան.
Ես եմ Ամենակարող Աստուածը.
իմ առջև վարուիր, և կատար-
եալ եղիր: Եւ ես իմ ու քո մէջ 2
տեղը իմ ուխտը կ'դնեմ, և քեզ
խիստ շատ կ'շատացնեմ: Եւ Աբ- 3
րամն իր երեսի վերայ ընկաւ. և
Աստուած նորա հետ խօսեց ա-
սելով. Ահա իմ ուխտը քեզ հետ 4
է, և ազգերի բազմութեան հայր
կ'լինիս. Եւ այսուհետև քո ա- 5
նունը Աբրամ չասուի, այլ քո
անունն Աբրահամ լինի. որովհե-
տև քեզ ազգերի բազմութեան
հայր արի: Եւ քեզ խիստ շատ 6
կ'աճեցնեմ, և քեզ ազգեր կ'շի-
նեմ. և քեզանից թագաւորներ
դուրս կ'գան: Եւ կ'հաստատեմ 7
իմ ուխտը իմ ու քո մէջտեղը, և
քեզանից յետոյ քո սերունդի մէջ
տեղը իրանց դարերի համար որ
յաւիտենական ուխտ լինի, որ
Աստուած լինիմ քեզ համար և
քեզանից յետոյ քո սերունդի հա-
մար: Եւ քեզ և քեզանից յետոյ 8
քո սերունդին տուի քո պանդխ-
տութեան երկիրն, ամենայն Քա-
նանու բոլոր երկիրը՝ յաւիտենա-
կան ստացուածքի համար. և նո-
րանց Աստուած կ'լինիմ: Եւ Աստ- 9
ուած ասաց Աբրահամին. Իսկ
դու պահիր իմ ուխտը՝ դու և
քեզանից յետոյ քո սերունդն ի-
րանց դարերում: Սա է իմ ուխ- 10
տը, որ պիտի պահէք իմ և ձեր
մէջտեղը և քեզանից յետոյ քո
սերունդի մէջտեղը՝ ձեր ամեն ա-
րուն թլփատուի. Ուրեմն թլփ- 11
փատուեցէք ձեր անթլփատու-
թեան մարմինիցը, և սա ուխտի
նշան կ'լինի իմ ու ձեր մէջ: Եւ 12
թլփատուի ձեր ամեն ազգերում
ամեն ութ օրական արուն, ըն-

դոճինը և արծաթով առնուածը
ամեն օտարից որ քո սերունդքեն
13 չէ։ Քո ընդոճինը և քո արծա-
թով առածը անպատճառ պիտի
թլփատուի. և իմ ուխտը ձեր
մարմնումը յաւիտենական ուխտ
14 լինի։ Եւ անթլփատ արուն, որի
անթլփատութեան մարմինը թլը-
փատուած չէ, այն անձն իր ժո-
ղովրդեքեն պիտի կորչի. նա իմ
15 ուխտն անարգել է։ Եւ Աստ-
ուած ասաց Աբրահամին. Քո կը-
նոջ Սարայի անունը Սարա չա-
պահ, այլ Սարրայ է նորա անու-
16 նը։ Եւ նորան կ'օրհնեմ, նաև
նորանից մի որդի կ'տամ քեզ. և
կ'օրհնեմ նորան, և նա ազգեր
կ'լինի. ժողովուրդների թագա-
17 ւորներ կ'լինին նորանից։ Եւ Աբ-
րահամն երեսի վերայ ընկաւ և
ծիծաղեց և իր սրտումն ասաց.
Արդեօք հարիւր տարեկան մարդուն զաւակ կ'լինի՞. և Թէ ինքնա-
ն տարեկան Սարրան կ'ծնէ՞։
18 Եւ Աբրահամն ասաց Աստուծոյն.
Օհ թէ Իսմայէլն ապրէր քո առ-
19 ջև։ Եւ Աստուած ասաց. Այո՛,
քո կինը Սարրան որդի կ'ծնէ քեզ
համար, և նորա անունը Իսա-
հակ կ'դնես. և իմ ուխտը կ'հաս-
տատեմ նորա հետ յաւիտենա-
կան ուխտի համար՝ նորանից յե-
20 տոյ նորա սերունդի համար։ Եւ
Իսմայէլի համար էլ լսեցի քեզ.
ահա օրհնեցի նորան, և կ'աճե-
ցնեմ նորան և խիստ շատ կ'շա-
տացնեմ նորան. նա տասներկու
իշխաններ կ'ծնէ, և մեծ ազգ կը
21 շինեմ նորան։ Բայց իմ ուխտը
կ'հաստատեմ Իսահակի հետ, որ
Սարրան քեզ համար կ'ծնէ միւս
տարի այս ժամանակին։
22 Եւ նորա հետ խօսելը վերջաց-
րեց, և Աստուած Աբրահամի մե-
23 ծութիւը վեր եկաւ։ Եւ Աբրահամ
առաւ իր որդի Իսմայէլին, և իր
բոլոր ընդոճիններին, և իր ըզնոր
արծաթով առնուածներին՝ Աբ-
րահամի բնտանեաց ամեն արու
մարդուն, և հէնց այն օրը նո-
րանց անթլփատութեան մարմի-
նը թլփատեց, ինչպէս Աստուած
24 ասել էր նորան. Եւ Աբրահամն
ինն տասն տարեկան էր, երբ
որ նորա անթլփատութեան մար-
մինը թլփատուեցաւ։ Եւ իր որ- 25
դին Իսմայէլը տասներեք տարե-
կան էր, երբոր նորա անթլփա-
տութեան մարմինը թլփատուե-
ցաւ։ Հէնց նոյն օրը թլփատուե- 26
ցաւ Աբրահամը և իր որդին Իս-
մայէլը, Եւ իր տան բոլոր մար-
դիկը՝ իր ընդոճինը և օտարա-
կաններից արծաթով առնուածը
իր հետ թլփատուեցան։

ԳԼ. ԺԸ

Եւ Եհովան երևեցաւ նորան 1
Մամբրէի կաղնիների մէջ։ Եւ
նա նստել էր օրուայ տաք ժա-
մանակին վրանի դրանը. Եւ իր 2
աչքերը վեր բարձրացրեց և մտիկ
տուաւ. և ահա երեք մարդիկ
կանգնել էին իր մօտ, և երբոր
տեսաւ՝ վրանի դռնից վազեց նո-
րանց առջևը, և մինչև երկիրը
խոնարհութիւն արաւ, Եւ ա- 3
սաց. Տէր, եթէ շնորհք գտայ
քո առջև, աղաչում եմ քեզ քո
ծառայից մի անցնիր, Թող մի 4
քիչ ջուր բերուի, և լուացէք
ձեր ոտքերը, և ծառի տակին
հանգստացէք։ Եւ ես մի պատառ 5
հաց բերեմ, և ձեր սրտերը զո-
րացրէք, յետոյ կ'գնաք. վասն զի
սորա համար ձեր ծառայի մօտ
եկաք։ Եւ նորան ասացին. Ա-
յնպէս արա ինչպէս ասացիր։ Եւ 6
Աբրահամը շտապեց գնաց վրանը
Սարրայի մօտ, և ասաց. Շուտով
արա՝ երեք գրիւ շաղմաղ ալիւր
շաղախէ, և քամոյ շինիր։ Եւ 7
արջառների մօտ վազեց Աբրահա-
մը և մի մատղաշ և լաւ որթ ա-
ռաւ, ու պատանուն տուաւ. նա
էլ շտապեց նորան պատրաստե-
լու։ Եւ կոգի և կաթ և իր պատ- 8
րաստած որթն առաւ. և նորանց
առջև դրաւ. և ինքը ծառի տա-
կին նորանց մօտ կանգնեց, և նո-
րանք կերան։ Եւ ասացին նորան. 9
Ո՞ւր է քո կինը Սարրան։ Եւ նա
ասաց. Ահա վրանումն է։ Եւ ա- 10
սաց. Ետդարձ տարի դարձեալ քեզ
մօտ կ'գամ. և ահա քո կինը

Սարրան մի որդի կ'ունենայ։ Եւ
Սարրա լսում էր վրանի դրանը,
11 որ ետեւին էր ինքը։ Եւ Աբրա-
համն և Սարրան ծերացած էին
և օրերն անցկացրած. և Սար-
բայի համար դադարել էր կա-
12 նանց պէս դնալը։ Եւ Սարրան իր
մտքումը ծիծաղեց ասելով. Ես
պառաւելից յետոյ եմ զուար-
ճութի՞ն ունենալու, և տէրս
13 էլ ծերացած։ Եւ Եհովան ասաց
Աբրահամին. Սարրան ինչո՞ւ ծի-
ծաղեց ասելով, Մի՞թէ ես իրա-
ւ ծնելու եմ, որ պառաւել եմ.
14 Եհովայի համար դժուար բան
կա՞յ արդեօք. այս ժամանակին ե-
կող տարին դարձեալ քեզ մօտ
կ'գամ, և Սարրան մի որդի կ'ու-
15 նենայ։ Եւ Սարրան ուրացաւ և
ասաց. Չեմ ծիծաղել, որովհե-
տև վախեցաւ։ Իսկ նա ասաց.
Չէ, ծիծաղեցիր։
16 Եւ մարդիկը վեր կացան այն
տեղից և ուղղուեցան դէպի Սո-
դոմ. և Աբրահամը նրանց հետ
դնում էր, որ նրանց ճանապարհ
17 դնէ։ Եւ Եհովան ասաց. Մի՞թէ
ես Աբրահամից ծածկող եմ ինչ
18 որ անելու եմ. Քանի որ Աբ-
րահամը մեծ և զօրաւոր ազգ է
լինելու և երկրի բոլոր ազգերը
19 նրանով օրհնուելու են։ Վասն
զի ես ճանաչեցի նրան, որ իր
որդոցը և իրանից յետոյ իր տա-
նը կ'պատուիրէ, և նրանք Եհո-
վայի ճանապարհը կ'պահեն, ար-
դարութիւն և իրաւունք անելու
համար, որպէս զի Եհովան Աբ-
րահամի վերայ բերէ ինչ որ խօ-
20 սել է նրան։ Եւ Եհովան ասաց.
Որովհետև Սոդոմի և Գոմորի աղ-
աղակը շատացաւ, և որովհետև
նրանց մեղքն էլ շատ ծանրա-
21 ցաւ. Ո՞րպէս իջնեմ
թէ ինձ մօտ
արին բոլորը
22 գիտենամ։ Եւ այն մարդիկը այն-
տեղից գնացին դէպի Սոդոմ
գնացին. և Աբրահամը տակաւին
կանգնած էր
23 Եւ Աբրահամը

ասաց. Մի՞թէ ամբարշտի հետ
արդարին էլ կ'կորցնես։ Գուցէ 24
այն քաղաքի մէջ հիսուն արդար
կան, մի՞թէ նորանց կ'կորցնես,
և չես խնայիլ այն տեղին այն հի-
սուն արդարի համար որ նորա-
նում են. Քաւ լինի քեզ այսպիսի 25
բան անելը, որ արդարին ամբա-
րշտի հետ մեռցնես, և արդարն
ամբարշտի պէս լինի. քաւ լինի
քեզ. Մի՞թէ բոլոր երկրի դատա-
ւորը արդարութիւն չի անիլ։ Եւ 26
Եհովան ասաց. Եթէ Սոդոմումը
հիսուն արդար գտնեմ քաղաքի
մէջ, նորանց համար բոլոր տեղին
կ'խնայեմ։ Եւ Աբրահամը պա- 27
տասխանեց և ասաց. Ահա հիմա
սկսեցի Եհովայի հետ խօսել եա՛
որ հող և մոխիր եմ, Գուցէ հի- 28
սուն արդարից հինգը պակաս լի-
նի, այն հինգի համար բոլոր քա-
ղաքը կ'կորցնե՞ս։ Եւ ասաց. Չեմ
կորցնիլ, եթէ այն տեղ քառա-
սուն ու հինգ գտնեմ։ Եւ դար- 29
ձեալ խօսեց նորա հետ և ասաց.
Գուցէ այն տեղ քառասուն գըտ-
նուին։ Եւ ասաց. Աչի քառա-
սունի համար էլ չեմ անիլ։ Եւ ա- 30
սաց. Տէրը չբարկանայ, թող խօ-
սիմ, Գուցէ այն տեղ երեսուն
գտնուին։ Եւ ասաց. Եթէ այնտեղ
երեսուն գտնեմ՝ չեմ անիլ։ Եւ ա- 31
սաց. Ահա սկսեցի խօսել Տէրոջ
հետ, Գուցէ այն տեղ քսան գըտ-
նուին։ Եւ ասաց. Աչի քսանի
համար էլ չեմ կորցնիլ։ Եւ ասաց. 32
Տէրը չբարկանայ, և միայն այս ան-
գամ էլ խօսիմ. Գուցէ այն տեղ
տասը գտնուին։ Եւ ասաց. Աչի
տասնի համար էլ չեմ կորցնիլ։ Եւ 33
Եհովան գնաց երբոր Աբրահամի
հետ խօսքը վերջացրել էր, և Աբ-
րահամ էլ դարձաւ իր տեղը։

ԳԼ. ԺԹ

Եւ այն երկու հրեշտակները Ե- 1
րիկունը Սոդոմ եկան. և Ղովտը
նստած էր Սոդոմի դրանը. և Ղով-
տը տեսնելով վեր կացաւ գնաց նո-
րանց առաջը և իր երեսի վերայ
երկիր խոնարհութիւն ա-
ասաց. Աղէ իմ տէրե- 2

*Ժամանակը որ ողջ ենայ։

13092-58

րըս, եկէք ձեր ծառայի տունը, և գիշերը կացէք, և ձեր ոտքերը լուացէք. և առաւօտուն կանուխ վեր կ'կենաք ու ձեր ճանապարհը կ'գնաք: Եւ նորանք ասացին. Ո՛չ. փողոցումն կ'կենանք 3 գիշերը: Եւ նորանց շատ բռնադատեց, և նորա մօտ դնացին և նորա տունը մտան, և նորանց համար ճաշ պատրաստեց և բաղարջ եփեց, և կերան:

4 Բայց դեռ որ չէին պառկել, և —հ— քաղաքի մարդիկը —յ—ն—ն Սոդոմի մարդիկը տունը պատեցին երիտասարդներից մինչև ծերերը բոլոր ժողովուրդը միասին: 5 Եւ Ղոտին կանչեցին և նորան ասացին. Ո՞ւր են այն մարդիկը, որ այս գիշեր քեզ մօտ եկան: նորանց դուրս բեր մեզ մօտ, և 6 գիտենանք նորանց: Եւ Ղոտը դուռը դուրս եկաւ նորանց մօտ, 7 դուռը փակեց իր եւեթը, Եւ ասաց. Եղբայրնե՛ր, աղաչում եմ ձեզ, չարութիւն մի անէք: 8 Ահա ես երկու աղջիկ ունիմ, որ այր չեն գիտում. թող նորանց ձեզ մօտ դուրս բերեմ, և ձեր աչքին հաճոյ եղածն արէք նորանց. միայն այս մարդկանցը բան մի անէք, վասն զի նորա համար իմ յարկի շուքի տակը մտան: 9 Եւ նորանք ասացին. Վէն դնա. և ասացին. Եկաւ մինակ պանդխտութեան համար, և դատաւոր էլ է անում. հիմա քեզ նորանցից վատ կանենք: Եւ առաւել բռնադատեցին մարդուն այսինքն Ղոտին, և մօտացան որ 10 դուռը կոտրեն: Բայց այն մարդիկն իրանց ձեռքը մեկնեցին, և Ղոտին տան տունը իրանց մօտ 11 և դուռը փակեցին: Եւ այն մարդկանցը, որ տան դրանն էին, կուրութեամբ զարկեցին փոքրից մինչև մեծը, այնպէս որ դուռը գտնելու համար աշխատելով թուլացան:

12 Եւ մարդիկն ասացին Ղոտին. Ահատեղ ուրիշ էլ ո՞վ ունիս. փեսայ և որդիներդ և աղջիկներդ, և քաղաքումը ով որ ունիս այս 13 տեղից հանիր. Վասն զի մենք այս տեղը պէտք է կործանենք, որովհետև նորանց աղաղակը մեծ է Եհովայի առջև. և Եհովան մեզ ուղարկեց, որ նորան կործանենք: 14 Եւ Ղոտը դուրս եկաւ և իր աղջիկներն առնող փեսաներին հետ խօսեց, և ասաց. Վեր կացէք դուրս եկէք այս տեղից, վասն զի Եհովան պէտք է կործանէ այս քաղաքը. բայց նա կատակ անողի պէս էր երևում իր փեսաներին:

15 Եւ երբոր առաւօտ եղաւ հրեշտակները ստիպում էին Ղոտին ասելով, Վեր կաց առ կինդ և այս տեղ գտնուած երկու աղջիկդ որպէս զի չկորչիս քաղաքիս անօրէնութեան հետ: 16 Եւ երբոր նա ուշանում էր, այն մարդիկը բռնեցին նորա ձեռքից և նորա կնոջ ձեռքից և նորա աղջկերանց ձեռքից եղբօրը Եհովան նորան ողորմելով, և դուրս հանեցին նորան և քաղաքի դրսումը դրին: 17 Եւ եղաւ երբոր նորանց դուրս հանեցին, նորանցից մէն մէկ ասաց. Անձդ ազատիր, եւեթ մտիկ մի տար, և բոլոր դաշտումը մի կանգնիր. լեռը փախիր, որպէս զի չկորչիս: 18 Եւ Ղոտն ասաց նորանց. 19 Ո՛չ Տէր, աղաչում եմ, Ահա ծառադ առջեդ շնորհք գտաւ, և մեծ էր քո ողորմութիւնը, որ արիր ինձ՝ իմ կեանքն ապրեցնելով, և ես չեմ կարող լեռը փախչիլ, որպէս զի չարիք չհասնէ ինձ և մեռնիմ: 20 Ահա այս քաղաքը մօտիկ է, այն տեղ փախչելու համար. և նա պզտիկ է, թող այն տեղ փախչիմ, (չէ՞ որ նա պզտիկ է,) և իմ անձն ապրէ: 21 Եւ ասաց նորան. Ահա այդ բանումն էլ քո աղաչանքն ընդունեցի, որ այս քաղաքը չկործանեմ, որի համար խօսեցիր: 22 Շուտ արա այն տեղ փախիր, վասն զի ես մի բան չեմ կարող անել, մինչև դու այն տեղ չհասնիս. նորա համար այն քաղաքի անունը Սեղոր կոչեց: 23 Եւ արևը երկրի վերայ ծագում էր, 24 երբոր Ղոտը Սեղոր մտաւ: Եւ Եհովան Սոդոմի և Գոմորի վերայ ծծումբ և կրակ տեղաց Եհովայի

25 կողմից երկնքից, Եւ կործանեց
այն քաղաքները, և բոլոր դաշ-
տը, և այն քաղաքների բոլոր
բնակիչները, և երկրի բոլոր բոյ-
26 սը։ Եւ նորա կինը ետևին մնիկ
արաւ, և աղի սրձան դարձաւ։
27 Եւ Աբրահամն առաւօտանից
կանուխ վեր կացաւ էր— այն
տեղը, ուր Եհովայի առջև կանգ-
28 նել էր։ Եւ Սոդոմի և Գոմորի և
բոլոր այն դաշտի երկրի վերայ
մնիկ արաւ տեսաւ՝ որ ահա այն
երկրի ծուխը դուրս էր գալիս հը-
նոցի ծուխի պէս։
29 Եւ եղաւ երբոր Աստուած այն
դաշտի քաղաքները կործանում
էր, Աստուած յիշեց Աբրահամին,
և հանեց Ղովտին այն կործա-
նուժի միջիցը, երբոր կործանում
էր այն քաղաքները որոնցում
Ղովտը բնակուած էր։
30 Եւ Ղովտը Սեգովրից վեր գնաց
և լեառնում բնակեց, և իր եր-
կու աղջկերքն իր հետ. որովհետև
վախում էր Սեգովրում բնակե-
լու և բնակեց մի այրում ինքը և
31 իր երկու աղջկերքը։ Եւ մեծն ա-
սաց պզտիկին. Մեր հայրը ծեր է,
և երկրիս մէջ մարդ չկայ մեզ
մօտ գալու համար ինչպէս ամեն
32 երկրի սովորութիւնն է։ Եկ մեր
հօրը գինի խմեցնենք, և նորա
հետ պառկինք, և մեր հօրից
33 սերունդ յարուցանենք։ Եւ այն
գիշերը իրանց հօրը գինի խմեց-
րին, և մեծ աղջիկը գնաց և իր հօր
հետ պառկեց. և Ղովտը չիմա-
ցաւ նորա պառկելը և վեր կենա-
34 լը։ Եւ եղաւ որ միւս օրը մեծ
աղջիկը պզտիկին ասաց. Ահա
երեկ գիշեր հօրս հետ պառկեցի.
այս գիշեր էլ նորան գինի խմե-
ցնենք, և դու գնա հետը պառ-
կիր, և մեր հօրից սերունդ յա-
35 րուցանենք։ Եւ այն գիշերն էլ
իրանց հօրը գինի խմեցրին, և
պզտիկ աղջիկը վեր կացաւ նորա
հետ պառկեց, և Ղովտը չիմացաւ
նորա պառկելը և վեր կենալը։
36 Եւ Ղովտի երկու աղջկերքը իրանց
37 հօրից յղացան։ Եւ մեծը որդի
ծնաւ և անունը Մովաբ դրաւ.
նա է Մովաբացոց հայրը մինչև
այսօր։ Եւ պզտիկն էլ որդի ծը- 38
նաւ, և նորա անունը Բենամմի
դրաւ. սա է Ամմոնի որդոց հայ-
րը մինչև այսօր։

ԳԼ. Ի

Եւ Աբրահամն այն տեղից դէպի 1
հարաւային երկիրը չուեց. և կա-
դէսի և Սուրի մէջ բնակեց, և
Գերարում պանդուխտ եղաւ։
Եւ Աբրահամն իր կնոջ Սարրայի 2
համար ասաց. Նա իմ քոյրն է,
և Գերարի թագաւորը Աբիմելէք
մարդ ուղարկեց և առաւ Սարրա-
յին։
Բայց Աստուած գիշերը երա- 3
զում Աբիմելէքի մօտ եկաւ և ա-
սաց նորան. Ահա պիտի մեռնես
այդ կնոջ պատճառով, որ դու
առիր. վասն զի նա մի մարդի
կին է։ Բայց Աբիմելէքը նորան 4
մօտացած չէր և ասաց. Տէր, մի-
թէ արդար ազգ էլ կ'մեռցնես։
Մի՞թէ ինքը չասաց ինձ, Թէ նա 5
իմ քոյրն է. և հէնց սա ինքն էլ
ասաց. Թէ նա իմ եղբայրն է.
ես ուղիղ սրտով և մաքուր ձեռ-
քերով սրի այս։ Եւ Աստուած 6
նորան ասաց երազում. Ես էլ գի-
տացի որ ուղիղ սրտով արիր
այդ. նաև ես քեզ ինձ դէմ մեղք
գործելուց ետ պահեցի, վասն ո-
րոյ քեզ չթողեցի որ նորան մո-
տենաս։ Եւ արդ կինն իր մար- 7
դուն ետ դարձրու. վասն զի նա
մարգարէ է, և քեզ համար թող
աղօթք անէ որ ապրիս, և եթէ
դու նորան ետ չտաս, գիտեցիր
որ անպատճառ կ'մեռնիս, դու
և ամեն ինչ որ ունիս։
Եւ առաւօտը կանուխ վեր կա- 8
ցաւ Աբիմելէքը, և կանչեց իր
բոլոր ծառաներին, և բոլոր այս
բաները նորանց ականջների ա-
ջև պատմեց, և մարդիկը շատ
վախեցան. Եւ Աբիմելէքը կան- 9
չեց Աբրահամին, և ասաց նո-
րան. Մեզ ի՞նչ ես արել. և ես
քեզ դէմ ի՞նչ յանցանք եմ ա-
րել, որ ինձ վերայ և իմ թագա-
ւորութեան վերայ մեծ մեղք ես
բերել. այնպիսի բաներ ես արել

10 ինձ, որ մարդ չի անել։ Եւ Ա-
բիմելէքն ասաց Աբրահամին.
Ի՞նչ տեսար որ այս բանը արիր։
11 Եւ Աբրահամ ասաց. Ես ասացի
թէ Իրաւ այս տեղ Աստուծոյ վա-
խը չկայ. և ինձ կ'սպանեն կնոջ
12 պատճառովը։ Եւ իրաւ էլ իմ
քոյրն է. հօրս աղջիկն է, բայց
ոչ թէ մօրս աղջիկը. և ինձ կին
13 եղաւ։ Եւ եղաւ երբոր Աստուած
ինձ իմ հօրս տանից պանդխտու-
թիւն անել տուաւ, ասացի դա-
րան. Սա լինի քո ինձ անելու ե-
րախտիքը, որ տեղ որ գնալու լի-
նինք, ինձ համար ասես, թէ եղ-
14 բայրս է։ Եւ Աբիմելէքը ոչխար-
ներ և արջառներ և ծառաներ և
աղախիններ առաւ, և Աբրահա-
մին տուաւ. և Սարրան նորա կնոջն
15 էլ իրան ետ դարձրեց։ Եւ Աբի-
մելէքն ասաց. Ահա իմ երկիրը
քո առջևն է, աչքիդ հաճոյ ե-
16 ղած տեղը բնակիր։ Եւ Սարրային
ասաց. Ահա եղբօրդ հազար ար-
ծաթ տուի. ահա նա քեզ հա-
մար աչքերի ծածկոց լինի այն
բոլորի համար որ քեզ հետ եղ-
և ամենովը յանդիմանուեցար էլ։
17 Եւ Աբրահամն աղօթք արաւ Աս-
տուծոյն. և Աստուած բժշկեց
Աբիմելէքին և նորա կնոջը, և
նորա աղախիններին, և ծնում
18 էին։ Որովհետև եհովան Աբիմե-
լէքի ընտանեաց բոլոր արգանդ-
ները փակել էր Աբրահամի կնոջ
Սարրայի համար։

ԳԼ. ԻԱ

1 Եւ եհովան այցելութիւն արաւ
Սարրային ինչպէս ասել էր, և
եհովան արաւ Սարրային ինչպէս
2 խօսել էր։ Եւ Սարրան յղացաւ,
և մի որդի ծնաւ Աբրահամի իր
ծերութիւնուն, այն որոշեալ
ժամանակին, որ Աստուած ասել
3 էր նորան։ Եւ Աբրահամն իր հա-
մար ծնած որդու անունը, որ
Սարրան իր համար ծնել էր, Ի-
4 սահակ կոչեց։ Եւ Աբրահամը թլ-
փատեց իր որդի Իսահակին, երբ
որ ութ օրեան էր, ինչպէս Աս-
5 տուած իրան պատուիրել էր։ Եւ
Աբրահամը հարիւր տարեկան էր
երբոր իր որդին Իսահակը իր հա-
մար ծնաւեցաւ։ Եւ Սարրան ա- 6
սաց. Աստուած ինձ համար ծի-
ծաղ շինեց. ամեն լսողը իմ մա-
սին ծիծաղելու է։ Նաև ասաց. 7
Ո՞վ կ'ասէր Աբրահամին թէ Սար-
րան որդիք կ'անուցանէ. վասն զի
նորա ծերութիւնուն նորա հա-
մար որդի ծնայ։ Եւ տղան մեծա- 8
ցաւ և կաթից կտրուեցաւ. և
Աբրահամը մեծ խնճոյք արաւ Ի-
սահակի կաթից կտրուած օրը։
Եւ Սարրան տեսաւ, որ եգիպ- 9
տացի Հադարի որդին, որ ծնաւ
Աբրահամի համար, ծաղրող էր։
Եւ ասաց Աբրահամին. Դուրս ա- 10
րա այս աղախնին և իր որդուն,
վասն զի այս աղախնի որդին իմ
որդի Իսահակի հետ ժառանգ
չպիտի լինի։ Եւ այս բանը Աբ- 11
րահամին շատ դժուար երևե-
ցաւ իր որդու պատճառովը։ Եւ 12
Աստուած ասաց Աբրահամին.
Թող աչքիդ դժուար չերևայ քո
տղայի և աղախնի համար. ամեն
ինչ որ Սարրան քեզ ասել է, նո-
րա խօսքը լսիր, որովհետև Իսա-
հակով է քեզ համար սերունդ
կոչուելու։ Եւ աղախնի որդին էլ 13
ազգ կ'շինեմ, վասն զի քո սե-
րունդն է նա։ Եւ Աբրահամն ա- 14
ռաւօտեան կանուխ եղաւ, և հաց
և մէկ տիկ ջուր առաւ, և Հա-
գարին տուաւ և նորա ուսի վե-
րայ դրաւ, և տղային էլ փո—
և արձակեց նորան. և նա գնաց,
և Բերսաբէէի անապատումը մոլո-
րած մնաց էր գալիս։ Եւ տիկը 15
ջուրը վերջացաւ, և մացառների
մէկի տակին ձգեց տղային. Եւ 16
գնաց և դէմ ու դէմը նստեց մի
նետընկեցի չափ, վասն զի ասաց.
Տղան մեռնելիս չտեսանեմ. և դէմ
ու դէմը նստած իր ձայնը բարձ-
րացրեց և լացաւ։ Եւ Աստուած 17
տղայի ձայնը լսեց, և Աստուծոյ
հրեշտակն երկնքիցը կանչեց Հա-
գարին, և նորան ասաց. Հագար,
ի՞նչ է քեզ. մի՛ վախենար, վասն
զի Աստուած լսեց տղայի ձայնը
ուր որ նա է։ Վեր կաց տղային 18
վեր առ, և ձեռքով զօրացուր

նորան, որովհետև մեծ ազգ եմ
19 շինելու նորան: Եւ Աստուած
նորա աչքերը բացաւ, և մի ջրհոր
տեսաւ. և գնաց և տիկը ջրով
20 լցրեց, և տղային խմեցրեց: Եւ
Աստուած տղայի հետ էր, և նա
մեծացաւ և նա անապատումը
բնակեց և աղեղնաւոր դառաւ:
21 Եւ փառանի անապատումն էր
բնակվում. և մայրը նորա համար
մի կին առաւ Եգիպտոսի երկրից:

22 Եւ եղաւ որ այն ժամանակ Ա-
բիմելէքը և իր ապարապետը Փի-
քող խօսեցին Աբրահամի հետ
ասելով, Աստուած քեզ հետ է
ամեն բանում ինչ որ անում ես:
23 Եւ հիմա ինձ երդում արա այս
տեղ Աստուծով, թէ ինձ և իմ
զաւակի, և իմ սերունդի հետ
նենգութեամբ չես վարուիլ. այլ
իմ քեզ արած երախտիքի պես
կ'անես ինձ և այս երկրին, որի
24 մէջ բնակել ես: Եւ Աբրահամն
25 ասաց. ես երդում կ'անեմ, Եւ
Աբրահամը յանդիմանեց Աբիմե-
լէքին մի ջրհորի մասին, որ Ա-
բիմելէքի ծառաները բռնու-
26 թեամբ առել էին: Եւ Աբիմելէ-
քը ասաց. Չեմ գիտում թէ ով
է արել այդ բանը. և դու էլ չի-
մացրիր ինձ, և ես էլ լսած չէի,
27 բայց միայն այսօր: Եւ Աբրահա-
մը ոչխարներ ու արջառներ ա-
ռաւ, և Աբիմելէքին տուաւ, և
28 երկուսը ուխտ արին: Եւ Աբրա-
համը ոչխարներից եօթը հատ
29 էգ գառներ առանձին դրաւ. Եւ
Աբիմելէքն ասաց Աբրահամին.
Ի՞նչ պիտի լինին այդ եօթը գա-
ռինքը, որ դու առանձին դրիր:
30 Եւ նա ասաց. Որպէս զի այս եօթը
էգ գառինքն իմ ձեռքիցն ընդու-
նես, որ ինձ համար վկայութիւն
լինի, թէ ես փորեցի այս հորը:
31 Դորա համար այն տեղի անունը
Բերսաբէ կոչեց. որովհետև եր-
կուսն էլ այն տեղ երդում արին:
32 Եւ Բերսաբէէումը ուխտ արին.
և վեր կացաւ Աբիմելէք ու նորա
ապարապետը Փիքող, և ետ դար-
ձաւ փղշտացոց երկիրը:
33 Եւ Աբրահամը ծառեր տնկեց
Բերսաբէէում և այն տեղ յա-
ւիտենական Աստուած Եհովայի
անունը կանչեց: Եւ Աբրահամ 34
շատ օրեր պանդխտութիւն արաւ
փղշտացոց երկրումը:

ԳԼ. ԻԲ

Եւ եղաւ որ այս բաներից յե- 1
տոյ Աստուած փորձեց Աբրահա-
մին, և ասաց նորան, Աբրահամ.
և նա ասաց, Ահա ես: Եւ նա 2
ասաց. Առ քո սիրած մէկ հա-
տիկ որդիդ Իսահակը, և Մօրեայի
երկիրը գնա, և այն տեղ նորան
ողջակէզ արա այն լեռներից մէ-
կի վերայ որ ես քեզ կ'ասեմ:
Եւ Աբրահամ առաւօտեան կա- 3
նուխ վեր կացաւ և իր էշի հա-
մարը դրաւ, և վեր առաւ իր
հետ երկու ծառաները և իր որ-
դի Իսահակը. և ողջակէզի փայտ
ճղեց, և վեր կացաւ գնաց այն
տեղը, որ Աստուած իրան ասաց:
Եւ երրորդ օրն Աբրահամ իր աչ- 4
քերը բարձրացրեց, և հեռուից
տեսաւ այն տեղը: Եւ Աբրահամն 5
ասաց իր ծառաներին. Նստեք այդ
էշի հետ այս տեղ մնացէք, և
ես և տղան մինչև այն տեղ գը-
նանք, և երկրպագութիւն անենք,
և ձեզ մօտ ես կ'դառնանք: Եւ 6
Աբրահամն առաւ ողջակէզի փայ-
տը, և իր որդու Իսահակի վե-
րայ դրաւ, և ինքն իր ձեռքն ա-
ռաւ կրակն ու դանակը և երկու-
սը միասին գնացին: Եւ Իսա- 7
հակն խօսեց իր հօրը Աբրահամին
և ասաց. Հայր իմ. և նա ասաց.
Ահա ես, որդիս: Եւ նա ասաց.
Ահա կրակը և փայտը, բայց ո՞ւր
է ողջակէզի համար գառը: Եւ 8
Աբրահամն ասաց. Աստուած կը
տեսնէ իր գառը ողջակէզի հա-
մար, որդեակս: Եւ երկուսը մի-
ասին գնացին: Եւ եկան այն տե- 9
ղը, որ Աստուած նորան ասել
էր. և Աբրահամն այն տեղ սե-
ղանը շինեց, և փայտերը շարեց,
և իր որդի Իսահակին կապեց
սեղանի վերայ դրաւ նորան փայ-
տերի վերայից: Եւ Աբրահամն 10
իր ձեռքը մեկնեց, և դանակը ա-

11 ռաւ որ իր որդուն մորթէ։ Եւ
Եհովայի հրեշտակն երկնքից նո-
րան ասաց. Աբրահամ Աբրա-
համ. և նա ասաց, Ահա ես։
12 Եւ ասաց. Չեւ-քդ տղային մի
դպցնիր, և նորան մի բան մի ա-
նիր, որովհետև հիմա գիտացի,
որ դու Աստուածանից վախում
ես. և քո մէկ հատիկ որդին ին-
13 ձանից չխնայեցիր։ Եւ Աբրահամն
իր աչքերը վեր բարձրացրեց և
նայեց, և ահա մի խոյ կար ե-
տևին մացառներումը եղջիւրնե-
րովը բռնուած։ Եւ Աբրահամը
գնաց, և խոյն առաւ, և նորան
իր որդու փոխարէն ողջակէզ
14 մատուցրեց։ Եւ Աբրահամն այն
տեղի անունը Եհովայիրէ կոչեց,
որ այս օր ասվում է, Թէ Այն
լեառնումը ուր Եհովան երե-
15 ւում է։ Եւ Եհովայի հրեշ-
տակն երկրորդ անգամ երկնքիցը
16 Աբրահամին կանչեց, Եւ ասաց.
Ինձանով երդում եմ անում,
ասում է Եհովան, որովհետև այս
բանն արիր, և քո մէկ հատիկ
17 որդին չխնայեցիր, Թեզ օրհնե-
լով կ'օրհնեմ, և քո սերունդը
երկնից աստղերի, և ծովեզեր-
քում լինող աւազի պէս շատա-
ցնելով կ'շատացնեմ. և քո սե-
րունդը իր թշնամիների դուռը
18 կ'ժառանգէ. Եւ երկրի բոլոր ազ-
գերը քո սերունդովը կ'օրհնուին.
նորա համար որ իմ ձայնին ա-
19 կանջ դրիր։ Եւ Աբրահամը ետ
դարձաւ իր ծառաների մօտ, և
վեր կացան և միկտեղ Բեերսաբէէ
գնացին. և Աբրահամը բնակում
էր Բեերսաբէէումն։
20 Եւ եղաւ որ այս բաներից յե-
տոյ Աբրահամին պատմուեցաւ
ասելով. Ահա Մեղքան էլ որ-
դիներ ծնեց քո եղբայր Նաքորի
21 համար. Իր անդրանիկ Հուսին,
և նորա եղբայր Բուզին, և Աբա-
22 մի հայր Կամուէլին, Եւ Քասդ-
դին և Ասաւին, և Փադդասին և
23 Յեսլափին, և Բաթուէլին։ Եւ
Բաթուէլ ծնաւ Ռեբեկային. այս
ութը Մեղքան ծնաւ Աբրահամի
24 եղբայր Նաքորի համար։ Եւ նո-
րա հարճը, որի անունը Ռէումա

էր, նա էլ ծնաւ Տեբաքին և Գա-
ամին և Թաքասին և Մաաքային։

ԳԼ. ԻԳ

Եւ Սարրայի կեանքը հարիւր քը- 1
սան ու եօթը տարի էր. սա է
Սարրայի կենացը տարիքը։ Եւ 2
Սարրան մեռաւ Կարիաթարբա-
յումը, որ է Քեբրոն Քանանում
երկրումը. և Աբրահամն եկաւ,
որ Սարրայի համար սուգ անէ և
ողբայ։ Եւ Աբրահամն իր մեռելի 3
առաջից վեր կացաւ ու Քեթի որ-
դիների հետ խօսեց ասելով, Ես 4
ձեր մէջ օտարական և պանդուխտ
եմ, ձեր մէջ ինձ գերեզմանի բա-
ստցուածք տուէք, որ իմ երեսի
առաջից մեռելս թաղեմ։ Եւ 5
Քեթի որդիքը պատասխանեցին
Աբրահամին, և նորան ասացին.
Տէր իմ, լսիր մեզ, դու մեր մէջ 6
մի իշխան Աստուծոյ ես. մեր գե-
րեզմաններուն ընտրումը թաղիր
քո մեռելը. մեզանից մէկը չի խը-
նայիլ իր գերեզմանը քեզանից քո
մեռելը թաղելու։ Եւ Աբրահամը 7
վեր կացաւ, և խոնարհութիւն
արաւ այն երկրի ժողովրդին Քե-
թի որդիներին. Եւ նորանց հետ 8
խօսեց ասելով, Եթէ ձեր մտքու-
մը կայ որ ես իմ երեսի առաջից
մեռելս թաղեմ, ինձ լսեցէք, և
ինձ համար Սահառի որդի Եփրո-
նի հետ խօսեցէք, Որ ինձ տայ 9
Մաքփելայի այրը, որ նորանն է,
և նորա արտի ծայրումն է. լիքը
գինով ինձ տայ, որ գերեզմանի
ստացուածք առնեմ ձեր մէջ։ Եւ 10
Եփրոնը նստել էր Քեթի որդոց
մէջ։ Եւ Քեթացի Եփրոնը պա-
տասխանեց Աբրահամին Քեթի
որդոց ականջի առջև՝ այն ամեն-
քի առաջին որ դռնովը մտնում
էին, և ասաց. Ոչ, տէր իմ, ինձ 11
լսիր. արտը քեզ տուի և այրն էլ,
որ նորանում է, քեզ տուի այն,
իմ ժողովուրդի որդոց աչքի առ-
ջև քեզ տուի այն. թաղիր քո
մեռելը։ Եւ Աբրահամն այն երկ- 12
րի ժողովրդի առջև խոնարհու-
թիւն արաւ. Եւ Եփրոնի հետ 13
խօսեց այն երկրի ժողովրդի ա-

կանջի առջև և ասաց Ո՞ եթէ դու մէկ ինձ լսէիր. ես արտի փողը տամ. առ ինձանից, և ես 14 մեռելս այն տեղ թաղեմ: Եւ Եփրոնը պատասխանեց Աբրահամին 15 և նորան ասաց. Տէր իմ, ինձ լսիր. տափը չորս հարիւր սիկղ արծաթ է. իմ ու քո մէջ դա ի՞նչ է. ուրեմն թաղիր քո մեռելը: 16 Եւ Աբրահամը լսեց Եփրոնին, և Աբրահամը կշռեց արծաթը Եփրոնին փոքր, ինչպէս նա խօսել էր, որ ականջ չորս հարիւր սիկղ արծաթ՝ վաճառականների մէջ անցնող: 17 Եւ հաստատուեցաւ Եփրոնի արտը, որ Մաքփելայում է Մամբրէի դիմացն է, արտը և այն այրը, որ նորանում է, և շուրջանակի նորա սահմանների մէջ եղած ար- 18 տի միջի բոլոր ծառերը: Աբրահամի վերայ իբրև ստացուածք Քեթի որդոց աչքի առջև, այն ամենի առջև, որ նորա քաղաքի 19 դռնով մտնում էն: Եւ ապրանից յետոյ Աբրահամն իր կին Սարրային թաղեց Մամբրէի դիմացի Մաքփելայի արտի այրումը, որ է Քեբրոն Քանանու երկրումը: 20 Եւ հաստատուեցաւ արտն ու այրը, որ նորանում էր, Աբրահամի վերայ, որ գերեզմանի ըստացուածք լինի, Քեթի որդիներից:

ԳԼ. ԻԴ

1 Եւ Աբրահամ ծեր էր և օրերն անցկացրած, և Եհովան ամեն բանում օրհնել էր Աբրահամին: 2 Եւ Աբրահամն ասաց իր ծառային՝ իր տան երէցին, որ իր բոլոր ունեցածի վերակացուն էր, Թէ Ձեռքդ իմ երանքի տակը 3 դիր. Եւ ես քեզ երդում եմ տալիս Եհովայով երկնից Աստուծով և երկրի Աստուծով, որ իմ որդու համար կին չառնես Քանանացոց աղջիկներիցը, որոնց մէջ 4 ես բնակում եմ: Այլ իմ երկիրն և իմ ազգականների մօտ գնաս, և իմ որդի Իսահակի համար կին 5 առնես: Եւ ծառան ասաց նորան. Գուցէ այն կինը չուզենայ իմ ետևից այս երկիրը գալ. արդեօք քո որդին դարձնեմ տանեմ այն երկիրը, որտեղից դու դուրս ես եկել: Եւ Աբրահամն 6 ասաց նորան. Զգուշացիր որ իմ որդին այն տեղ չդարձնես: Եհո- 7 վան երկնից Աստուածը, որ ինձ իմ հօր տանից և իմ ծննած երկրիցը հանեց, և որ խօսեց ինձ հետ, և որ երդում արաւ ինձ, ասելով, Այս երկիրը քո սերունդին կ'տամ, նա իր հրեշտակը կ'ուղարկէ քո առջև, և դու այն տեղից իմ որդու համար կին կ'առնես: Եւ եթէ կինը քո ետևից 8 գալ չուզէ, այն ժամանակ դու իմ այս երդումիցը անպարտ ես, միայն թէ իմ որդին այն տեղ չդարձնես: Եւ ծառան իր ձեռքը 9 դրաւ իր տիրոջ Աբրահամի երանքի տակ և այս բանի համար երդում արաւ նորան:

Եւ ծառան իր տիրոջ ուղտե- 10 րից տասը ուղտ առաւ ու գնաց, քան որում իր տիրոջ բոլոր բարիքները իր ձեռքին էր. և վեր կացաւ ու գնաց Մեսոպոտամիա Նաքովրի քաղաքը: Եւ քաղաքի 11 դրսումը ուղտերը նստեցրեց մի ջրհորի մօտ իրիկուայ դէմ ջուր քաշող կանանց դուրս եկած ժամանակը, Եւ ասաց. Ով Եհովայ՝ 12 իմ տիրոջ Աբրահամի Աստուած, հանդիպեցրու իմ առջև այսօր, և իմ տիրոջ Աբրահամին բարերարութիւն արա. Ահա ես ջրի 13 աղբիւրի մօտ կ'կանգնեմ. և այս քաղաքի մարդկանց աղջկերքը դուրս են գալիս ջուր հանելու: Եւ լինի՝ այն աղջիկը որին ես ա- 14 սեմ, Սափորդ ցածացրու որ խըմեմ, և նա ասէ Թէ խմիր, և քո ուղտերին էլ կ'խմեցնեմ, նա լինի քո ծառայ Իսահակի համար սահմանած. և սրանով գիտենամ որ իմ տիրոջը բարերարութիւն արիր:

Եւ եղաւ որ նա տակաւին իր 15 խօսքը չէր վերջացրել, և ահա Աբրահամի եղբօր Նաքովրի կնոջ Մեղքայի որդու Բաթուէլի ծըննած Ռեբեկան դուրս եկաւ, ա-

16 փորը ուսին։ Եւ աղջիկը մի շատ գեղեցիկ տեսքով կոյս էր, և մարդ նորան գիտեցած չէր. և նա իջաւ աղբիւրը, և իր սափորը
17 լցրեց ու վեր եկաւ։ Եւ ծառան նորան դիմաւորելու վազեց, և ասաց. Սափորիցդ ինձ մի քիչ
18 ջուր խմեցրու։ Եւ նա ասաց. Խմիր, տէր իմ. և շուտով սափորը իր ձեռքի վերայ իջեցրեց,
19 և խմեցրեց նորան։ Եւ երբոր նորան խմեցրեց պրծաւ, ասաց. Ուղտերիդ էլ ջուր քաշեմ, մինչև
20 որ ամենքը խմեն վերջացնեն։ Եւ շուտով սափորը աւազանի մէջ թափեց, և դարձեալ հորի մօտ վազեց ջուր քաշելու, և նորա բոլոր ուղտերի համար ջուր քա-
21 շեց։ Բայց այն մարդը զարմանալով նորա վերայ լուռ մնռածում էր, թէ արդեօք Եհովան նորա ճանապարհը յաջողել է, թէ ոչ։
22 Եւ երբոր ուղտերը խմելը վերջացրին, մարդը մի ոսկի օղակ առաւ կէս սիկղ ծանր, և նորա ձեռքերի համար երկու ապարանջան հանեց՝ տասը սիկղ ոսկի։
23 Եւ ասաց. Դու ո՞ւմ աղջիկն ես, ասա ինձ. քո հօր տանը մեզ
24 համար իջևանելու տեղ կայ։ Եւ նա ասաց նորան. Ես Մելքայի որդի Բաթուէլի աղջիկն եմ, որ
25 Նաքորի համար ծնաւ։ Նաև ասաց նորան. Մենք յարդ և ճարակ շատ ունինք, և իջևանելու
26 տեղ էլ։ Եւ մարդը խոնարհեց և Եհովային երկրպագութիւն ա-
27 րաւ. Եւ ասաց. Օրհնեալ լինի իմ տիրոջ Աբրահամի Եհովայ Աստուածը, որ իր ողորմութիւնն ու ճշմարտութիւնը իմ տէրից չէ պրկում. ես ճանապարհումը էնէ-լով Եհովան ինձ իմ տիրոջ եղբայրների տունն առաջնորդեց։
28 Եւ աղջիկը վազեց, և այս բաները պատմեց իր մօրը։
29 Եւ Ռեբեկան մի եղբայր ունէր Լաբան անունով. և Լաբանը դուրս վազեց այն մարդու մօտ
30 դէպի աղբիւրը. Վասն զի տեսնելով օղակը, և իր քրոջ ձեռքերին ապարանջանները և լսելով իր քրոջ Ռեբեկայի խօսքերը, որ

ասում էր թէ այն մարդը այսպէս խօսեց ինձ հետ, այն մարդու մօտ եկաւ. և ահա նա կանգնել էր ուղտերի մօտ աղբիւրի
կողմին։ Եւ ասաց. Եկ, ով Եհո- 31
վայի օրհնեալ, ինչո՞ւ ես դուրսը կանգնել. և ես տունը պատրաստել եմ, և ուղտերի համար էլ տեղ։ Եւ մարդը եկաւ տունը. և 32
ուղտերի կապերը լուծեց, և ուղտերին յարդ ու ճարակ տուաւ, և ջուր՝ նորա ոտքերը և նորա հետ եղող մարդկանց ոտքերը լուանալու համար։ Եւ նորա առջև կերա- 33
կուր դրուեցաւ որ ուտէ. բայց նա ասաց. Չեմ ուտել, մինչև որ իմ խօսքերը չխօսիմ. և ասաց. Խօսիր։ Եւ նա ասաց. Ես Աբրահամի 34
ծառան եմ. Եւ Եհովան շատ օրհ- 35
նել է իմ տիրոջը, և նա մի մեծ մարդ է. և նորան հօտեր և արջառներ, և արծաթ և ոսկի, և ծառաներ ու աղախիններ, և ուղտեր ու էշեր է տուել։ Եւ իմ 36
կինը Սարրան իր պառաւութեանը մի որդի ծնաւ իմ տիրոջ համար, որ բոլոր իր ունեցածը նորան է տուել։ Եւ իմ 37
տէրն ինձ երդում անել տուաւ ասելով, Իմ որդու համար կին չառնես Քանանացւոց աղջիկներից, որոնց երկրումը ես բնակում եմ. Այլ իմ հօր տունն ու իմ 38
ազգատոհմի մօտ գնա, և իմ որդու համար կին առ։ Եւ ես ա- 39
սացի իմ տիրոջը. Գուցէ այն կին չգայ իմ ետևիցը։ Եւ նա ա- 40
սաց. Եհովան, որի առջև ես վարւում եմ, իր հրեշտակը քեզ հետ կ'ուղարկէ, և քո ճանապարհը կը յաջողուի, և իմ որդու համար իմ ազգատոհմիցը և իմ հօր տունից կին կառնես։ Իսկ այն ժա- 41
մանակ իմ երդումից անպարտ կը լինիս։ Եւ այսօր աղբիւրի մօտ ե- 42
կայ, և ասացի. Ով Եհովայ՝ իմ տիրոջ Աբրահամի Աստուած, եթէ այս իմ ճանապարհը, որ ես նորանով գնում եմ, դու յաջողում ես, Ահա ես ջրի աղբիւրի 43
մօտ կ'կանգնեմ. և լինի այն աղջիկն, որ ջուր քաշելու գայ, և ես նորան ասեմ թէ Ինձ քո սա-

փորիցը մի քիչ ջուր խմեցրու,
44 եւ նա ինձ ասէ՝ Դու էլ խմիր եւ
ուղտերիդ համար էլ ջուր կ'քաշեմ, նա լինի այն կինը որ Եհովան սահմանել է իմ տիրոջ որ-
45 դու համար։ Եւ ես տակաւին խօսքս չէի վերջացրել սրտումս, եւ ահա Ռեբեկան դուրս եկաւ սափորը ուսին, եւ իջաւ աղբիւրը, եւ ջուր քաշեց. եւ ասացի նորան
46 ինձ ջուր խմեցրու։ Եւ շուտով իր սափորը իր ուսի վերայից իջեցրեց, եւ ասաց. խմիր եւ ուղտերիդ էլ կ'խմեցնեմ. եւ ես խմեցի, եւ ուղ-
47 տերին էլ խմեցրեց։ Եւ հարցրի նորանից եւ ասացի. Դու ո՞ւմ աղջիկն ես. նա էլ ասաց. Մեղքայի Նաքորի համար ծնած որդու Բաթուէլի աղջիկն եմ. այն ժամանակ օղակը նորա քիթը, ապարանջանները նորա ձեռքերն
48 անցրի։ Եւ խոնարհեցի եւ երկրպագութիւն արի, եւ իմ տիրոջ Աբրահամի Եհովայ Աստուածն օրհնեցի, որ ինձ ուղիղ ճանապարհով առաջնորդեց որ իմ տիրոջ եղբօր աղջիկն իր
49 որդու համար առնեմ։ Եւ արդ եթէ իմ տիրոջը շնորհք եւ հաւատարմութիւն էք անելու, ինձ պատմեցէք. եւ եթէ ոչ, ինձ ասացէք. որ ես աջ կամ ձախ
50 դառնամ։ Եւ Լաբանը եւ Բաթուէլը պատասխանեցին եւ ասացին. Այս բանը Եհովայից է դուրս եկել. մենք քեզ վատ կամ
51 լաւ չենք կարող ասել։ Ահա Ռեբեկան քո առջեւն է, առ եւ գնա. եւ թող քո տիրոջ որդու համար կին լինի, ինչպէս Եհովան
52 ասել է։ Եւ եղաւ երբոր Աբրահամի ծառան նորանց խօսքերը լսեց, մինչեւ գետինը երկրպագու-
53 թիւն արաւ Եհովային։ Եւ ծառան արծաթեղէն զարդեր եւ ոսկեղէն զարդեր եւ հանդերձներ հանեց, եւ Ռեբեկային տուաւ. եւ նորա եղբօրը եւ մօրը պատուական բնծաներ տուաւ։ Եւ կերան
54 եւ խմեցին ինքը եւ այն մարդիկը որ նորա հետ էին, եւ գիշերը մնացին. եւ առաւօտանց վեր կացան, եւ նա ասաց. Ինձ ճանա-

պարհ դրէք դէպի իմ տէրը։ Եւ 55
նորա եղբայրը եւ մայրն ասացին. Թող աղջիկը մի քանի օր կամ տասը օր մեզ մօտ կենայ, յետոյ կ'գնայ։ Եւ նա ասաց նորանց. 56
Ինձ մի ուշացնէք, վասն զի Եհովան յաջողել է իմ ճանապարհը. ինձ ճանապարհեցէք, եւ ես իմ տիրոջ մօտ գնամ։ Եւ նորանք ա- 57
սացին. Աղջկանը կանչենք եւ նորա բերանը հարցնենք։ Եւ կան- 58
չեցին Ռեբեկային, ու ասացին նորան. Այս մարդի հետ կ'գնա՞ս, եւ նա ասաց՝ Կ'գնամ։ Եւ ճանա- 59
պարհեցին իրանց քրոջը Ռեբեկային եւ նորա դայեակին, եւ Աբրահամի ծառային եւ նորա մարդկանցը։ Եւ օրհնեցին Ռեբեկային 60
եւ ասացին նորան. Ով մեր քոյր, շատ եւ շատ հազարներ դառնաս եւ քո սերունդն իր թշնամիների դուռը ժառանգէ։ Եւ վեր կա- 61
ցաւ Ռեբեկան եւ իր աղախինները եւ հեծան ուղտերը, եւ այն մարդու ետեւից գնացին. եւ ծառան առաւ Ռեբեկային եւ գնաց։

Եւ Իսահակը ետ դառած գա- 62
լիս էր Լահայ-Ռոյի ջրհորիցը. որովհետեւ հարաւային երկրում էր բնակում։ Եւ Իսահակն իրի- 63
կուայ դէմ դաշտն էր դուրս եկել մտածելու. եւ իր աչքերը բարձրացրեց եւ մտիկ տուաւ, եւ ահա ուղտեր էին գալիս։ Եւ Ռե- 64
բեկան իր աչքերը բարձրացրեց, եւ Իսահակին տեսաւ, եւ ուղտից իջաւ. Եւ ասաց ծառային. Այդ 65
մարդը ո՞վ է, որ դաշտումը մեր առաջն է գալիս։ Եւ ծառան ասաց. Նա իմ տէրն է։ Եւ նա
քող առաւ եւ ծածկուեցաւ։ Եւ 66
ծառան պատմեց Իսահակին բոլոր բանները որ արել էր։ Եւ Ի- 67
սահակը նորան իր մօր Սարրայի վրանը տարաւ, եւ առաւ Ռեբեկային, եւ նա նորա կին եղաւ. եւ նա սիրեց նորան։ Եւ Իսահակ մխիթարուեցաւ իր մօրից յետոյ։

ԳԼ. ԻԵ

Եւ Աբրահամը դարձեալ կին 1
առաւ, եւ նորա անունը Քետու-

2 բա էր։ Եւ նա Զեմրանին և Յեկ-
սանին և Մադանին և Մադիա-
նին և Յեսբոնին և Սովէին ծնաւ
3 նորա Համնար։ Եւ Յեկսանը ծնաւ
Սաբային և Դեդանին. և Դեդա-
նի որդիքն էին Ասուրիմ և Լա-
4 տուսիմ և Լումմիմ։ Եւ Մադի-
անի որդիքը՝ Գեփա և Ափեր և
Ենովք և Աբիդա և Եղդաա էին,
որոնք ամենը Քեատուրայի որ-
դիքն էին։
5 Եւ Աբրահամն իր բոլոր ունե-
6 ցածքը տուաւ Իսահակին. Բայց Աբ-
րահամի հարճերի որդոցը Աբրա-
համ պարգևներ տուաւ, և իր
որդի Իսահակի մնտիցը՝ քանի որ
տակաւին կենդանի էր՝ դէպի ա-
րևելք արևելեան երկիրը արձա-
կեց։
7 Եւ սա է Աբրահամի կենաց
տարիների օրերը որ ինքը ապրեց,
հարիւր եօթանասունհինգ տա-
8 րի։ Եւ Աբրահամը լաւ ծերու-
թեամբ ալևորած և իր օրերիցը
կշտացած աւանդեց իր հոգին և
մեռաւ, և իր ժողովրդին խառ-
9 նուեցաւ։ Եւ իր որդիքը Իսահակ
և Իսմայէլ թաղեցին նորան Մաք-
փելայի այրուն մը, որ Քեատացի Սա-
հառի որդի Եփրոնի արտումը
10 Մամբրէի դիմացն է. Այն արտը
որ Աբրահամը Քեթի որդիներից
ծախու առել էր. այն տեղ թաղ-
ուեցաւ Աբրահամը և իր կինը
Սարրան։
11 Եւ եղաւ որ Աբրահամի մեռ-
նելուց յետոյ Աստուած օրհնեց
նորա որդուն Իսահակին. և Իսա-
հակը Լահայ-բոյի Ջրհորի մօտ եր
բնակուած։
12 Եւ սորանք են Աբրահամի որդի
Իսմայէլի ծնունդքը, որին Սար-
բայի Եգիպտացի աղախինը Հա-
գար ծնաւ Աբրահամի համար։
13 Եւ Իսմայէլի որդոց անուններըը
սորանք են իրանց անուններով և
իրանց ծնունդներով. Իսմայէլի
անդրանիկը Նաբէոթ, յետոյ Կե-
դար և Ադբեէլ և Մաբսամ,
14 Եւ Մասմա և Դումա և Մասէ,
15 Հադադ և Թեմա, Յետուր, Նա-
16 փէս և Կեդմա։ Սորանք են Իս-
մայէլի որդիքը. և սորանք են նո-
րանց անուններն իրանց վրաններ-
ովը և իրանց գեղերովը՝ տասն
երկու իշխաններ էին իրանց ազ-
գերի համեմատ։
17 Եւ սա է Իսմայէլի կենաց օրերը՝ հարիւր ե-
րեսունե եօթը տարի. և նա էր
մեռաւ և մեռաւ, և իր
ժողովրդին խառնուեցաւ։
18 Եւ Իսահակ բնակեցաւ Բերսաբէէ-
չէ Սուր, որ Եգիպտոսի դիմացը
Ասորեստան գնալու ճանապարհի
վերայ է. բոլոր իր եղբայրների
առջև բնակեց։
19 Եւ Աբրահամի որդի Իսահակի
ծնունդները սորանք են. Աբրահա-
մը ծնաւ Իսահակին։
20 Եւ Իսահակը քառասուն տարեկան էր, երբոր
Միջագետից Ասորի Բաթուէլի
աղջիկ Ասորի Լաբանի քոյր Ռե-
բեկային իրան կին առաւ։
21 Եւ Իսահակ աղաչեց Եհովային իր
կնոջ համար որ ամուլ էր. և Ե-
հովան լսեց նորա աղաչանքը. և
նորա կինը Ռեբեկան յղացաւ։
22 Եւ տղերքը խռովում էին նորա
արգանդում. և ասաց. Եթէ այս-
պէս է, ինչո՞ւ եղա ինձ այս. և
գնաց Եհովային հարցնելու։
23 Եւ Եհովան ասաց նորան. Երկու ազ-
գեր կան արգանդիդ մէջ, և եր-
կու ժողովուրդներ կ'բաժանուին
քո որովայնից. և ժողովրդի մէկը
միւսից զօրաւոր կ'լինի, և մեծը
կ'ծառայէ փոքրին։
24 Եւ երբոր նո-
րա օրերը լրացան որ ծնէր, և ա-
հա երկուորեակ էին նորա ար-
գանդում։
25 Եւ առաջինը եղաւ
կարմրագոյն, բոլոր մարմինը մազոտ
վերարկուի պէս էր. և նորա ա-
նունը Եսաւ դրին,
26 Եւ նորանից
յետոյ եղաւ նորա եղբայրը, և
նորա ձեռքը բռնել էր Եսաւի
գարշապարից, և նորա անունը
Յակոբ դրին. և Իսահակը վաթ-
սուն տարեկան էր նորանց ծնա-
նելու ժամանակը,
27 Եւ մանկունքը
մեծացան. և Եսաւը վարպետ որ-
որդ դաշտի մարդ եղաւ. իսկ
Յակոբը հանգստ մարդ էր և բը-
նակում էր վրանների մէջ։
28 Եւ Ի-
սահակը սիրում էր Եսաւին, ո-
րովհետև որս էր ուտում. բայց
Ռեբեկան Յակոբին էր սիրում։

29 Մէ օր Յակոբը թան էր եփած. Եսաւը դաշտից եկաւ և սոված
30 թուլացած էր։ Եւ Եսաւը ասաց Յակոբին. Խնդրեմ՝ այդ շիկա-
թանից թող տուր ուտեմ. վասն զի ես թուլացել եմ. սորա հա-
մար անունը Եդոմ կոչուեցաւ։
31 Եւ Յակոբն ասաց. Ծախիր ինձ
վերայ այս օր քո անդրանկու-
32 թիւնը։ Եւ Եսաւն ասաց. Ահա
ես գնալով մեռնելու եմ, և ի՞նչ
պէտք է ինձ անդրանկութիւն։
33 Եւ Յակոբն ասաց. Այս օր ինձ
երդում արա. և նա երդում ա-
բաւ նորան, և իր անդրանկու-
34 թիւնը ծախեց Յակոբին։ Եւ Յա-
կոբն Եսաւին հաց և ոսպի թան
տուաւ և նա կերաւ և խմեց, և
վեր կացաւ և գնաց. և Եսաւն
անարգեց անդրանկութիւնը։

ԳԼ. ԻԶ

Եւ երկրի մէջ սով եղաւ, բացի
այն առաջի սովից որ Աբրահամի
օրերում եղել էր. և Իսահակը
գնաց Փղշտացոց Աբիմելէք թա-
2 գաւորի մօտ Գերար։ Եւ Եհովան
երեւեցաւ նորան, և ասաց. Ե-
գիպտոս մի իջնիր, բնակիր այն
3 երկրում որ քեզ կ'ասեմ։ Պան-
դուխտ եղիր այս երկրի մէջ, և
ես քեզ հետ կ'լինիմ և քեզ
կ'օրհնեմ. որովհետև քեզ և քո
սերունդին եմ տալու բոլոր այս
երկիրները, և կ'հաստատեմ այն
երդումը որ երդուեցի քո հայր
4 Աբրահամին. Եւ կ'շատացնեմ
քո սերունդը երկնից աստղերի
չափ, և բոլոր այս երկիրները քո
սերունդին կ'տամ. և երկրի բոլոր
ազգերը քո սերունդովը կ'օրհ-
5 նուին։ Նորա համար որ Աբրա-
համ իմ ձայնին լսեց, և պահեց
իմ հրամանները և իմ պատուի-
րանքները և իմ կանոնները ու իմ
օրէնքները։
6 Եւ Իսահակը բնակեց Գերա-
7 րում։ Եւ այն տեղի մարդիկը
հարցրին նորանից նորա կնոջ մա-
սին. և նա ասաց. Իմ քոյրն է
նա. վասն զի վախեցաւ ասելու՝
Իմ կինն է, որ մի գուցե ապա-
նեն ինձ այս տեղի մարդիկը Ռե-
բեկայի պատճառով. որովհետև
տեսքով դեղեցիկ էր նա։ Եւ ե- 8
ղաւ երբոր նա երկար ժամանակ
այն տեղ կացաւ, Փղշտացոց թա-
գաւորը Աբիմելէքը պատուհա-
նից նայեց և տեսաւ, և ահա Ի-
սահակն իր կնոջ Ռեբեկայի հետ
խաղում էր։ Եւ Աբիմելէքը կան- 9
չեց Իսահակին և ասաց. Ահա
հէնց քո կինդ է նա. և ի՞նչպէս
ասացիր՝ Նա իմ քոյրն է. և Ի-
սահակն ասաց նորան. Վասն զի
ասացի Մի գուցէ նորա պատճա-
ռով մեռնեմ։ Եւ Աբիմելէքն ա- 10
ւաց. Սա ինչ է որ մեզ արիր.
քիչ էր մնացել որ ժողովրդից մէ-
կը քո կնոջ հետ պառկեր էր,
և դու մեր վերայ յանցանք բե-
րած կ'լինէիր։ Եւ Աբիմելէքը 11
հրամայեց բոլոր ժողովրդին ասե-
լով, Ով որ այս մարդուն կամ
նորա կնոջ դպչելու լինի, մահով
կ'մեռնի։

Իսահակն այն երկրի մէջ ցանեց 12
և այն տարին հարիւրի չափ ար-
դիւն գտաւ. և Եհովան օրհնեց
նորան։ Եւ մարդը բարձրացաւ և 13
քանի գնաց մեծացաւ, մինչև որ
շատ մեծացաւ։ Եւ ոչխարներ, և 14
արջառներ, և շատ ծառաներ ու-
նեցաւ, և փղշտացիք նախանձե-
ցին նորա վերայ։ Եւ իր հօր Ա- 15
բրահամի օրերում իր հօր ծառա-
ների փորած բոլոր ջրհորները փը-
ղշտացիք գոցեցին, և հողով
լցրին նորանց։ Եւ Աբիմելէքն ա- 16
սաց Իսահակին. Գնա մեզանից,
որովհետև մեզանից շատ աւելի
զօրաւոր եղար։ Եւ Իսահակ գը- 17
նաց այն տեղից և իր վրաններըը
Գերարի ձորումը բացաւ, և այն
տեղ բնակեց։

Եւ Իսահակը դարձեալ այն 18
ջրհորները փորեց, որ իր հօր օրե-
րումը փորել էին և որ փղշտա-
ցիք գոցել էին Աբրահամի մեռ-
նելուց յետոյ. և նորանց այնպէս
անուններ դրաւ, ինչպիսի անուն-
ներ դրել էր իր հայրը։ Եւ Իսա- 19
հակի ծառաները փորեցին ձորու-
մը, և այն տեղ մի կենդանի ջրի
ջրհոր գտան։ Եւ Գերարի հովիւ- 20

ներըդ կռվում էին Իսահակի հովիւների հետ ասելով Մեր ջուրը մերն է. և այն ջրհորի անունը դրաւ *Էսէք, որովհետև իրար 21 հետ կռուեցին։ Եւ մի ուրիշ ջրհոր փորեցին, և նորա վերայ էլ կռուեցին, և նորա անունը 22 դրաւ †Սիթնա։ Եւ այն տեղից գնաց, և մի ուրիշ հոր փորեց, և նորա վերայ չկռուեցին, և նորա անունը դրաւ ‡Ռոհովոթ, և ասաց Թէ հիմա Եհովան մեզ ընդարձակեց, և երկրի մէջ պտղաբեր կ'լինինք։

23 Եւ այն տեղից գնաց Բերսաբէէ։ 24 Եւ Եհովան երևեցաւ նորան այն գիշերը և ասաց. Ես եմ քո հօր Աբրահամի Աստուածը, մի վախենար, վասն զի ես քեզ հետ եմ. և կ'օրհնեմ և կ'շատցնեմ քո սերունդը իմ ծառայի Աբրա- 25 համի պատճառով։ Եւ այն տեղ սեղան շինեց և Եհովայի անունը կանչեց, և այն տեղ բացաւ իր վրանը. և այն տեղ Իսահակի ծառաները ջրհոր քանդեցին։

26 Եւ Աբիմելէքը գնաց նորա մօտ Գերարից, ու նորա բարեկամներից Ախոզաթը և նորա սպարապետը 27 Փիքող։ Եւ Իսահակն ասաց. Ինչո՞ւ համար էք եկել ինձ մօտ, քանի որ դուք ինձ ատում էք, և ինձ ձեր մօտից դուրս արիք։ 28 Եւ նորանք ասացին. Մենք տեսանք որ Եհովան քեզ հետ է, և ասացինք թող երդում լինի մեր մէջ այսինքն մեր ու քո մէջ, 29 և քեզ հետ ուխտ դնենք, Որ մեզ չար բան չանես, ինչպէս որ մենք էլ քեզ չենք դպել, և ինչպէս որ քեզ հետ միայն բարի վարուեցինք, և քեզ խաղաղութեամբ ճանապարհեցինք. դու 30 հիմա Եհովայի օրհնեալն ես։ Եւ նա նորանց համար խնջոյք արաւ, 31 և նորանք կերան ու խմեցին։ Եւ առաւօտեան կանուխ վեր կացան և իրար երդում արին. և Իսահակ նորանց ճանապարհեց, և նորանից գնացին խաղաղութեամբ։

*կամ երդում †Թշնամութիւն ‡Ընդարձակութիւն

Եւ եղաւ այն ժամանակ որ Իսահակի ծառաները եկան և նորան պատմեցին այն ջրհորի մասին որ փորում էին, և ասացին նորան Ոչ ջուր ենք գտել։ Եւ նորա անունը դրաւ *Սաբէէ. սորա համար այն քաղաքի անունը Բերսաբէէ է մինչև այս օր։

Եւ Եսաւ քառասուն տարեկան էր, երբոր Բեէրի աղջիկ Յուդիթին և Բեէոտցի Եղոնի աղջիկ Բասէմաթին կին առաւ։ Եւ սորանք Իսահակի և Ռեբեկայի համար հոգով դառնութիւն եղան։

ԳԼ. ԻԷ

Եւ եղաւ երբոր Իսահակը ծերացաւ, և աչքերը տկարացան տեսնելուց, իր մեծ որդի Եսաւին կանչեց և ասաց նորան. Որդի։ Եւ նա ասաց նորան, Ահա ես։ Եւ ասաց. Ահա ես ծերացել եմ, չեմ գիտում իմ մեռնելու օրը. Եւ հիմա առ դու քո գործիքը՝ քո կապարճը և քո աղեղը, և դուրս ել գնա դաշտը, և ինձ համար մի որս որսա. Եւ ինձ համար խորտիկներ շինիր ինչպէս որ ես սիրում եմ, և բեր ինձ մօտ որ ուտեմ, և նորա համար օրհնէ քեզ իմ հոգին՝ ես տակաւին չմեռած։ Եւ Ռեբեկան լսում էր Իսահակը իր որդի Եսաւի հետ խօսելիս։ Եւ Եսաւը դուրս գնաց դաշտը, որ որս որսա և բերէ։

Եւ Ռեբեկան խօսեց իր որդի Յակոբին ասելով. Ահա լսեցի որ հայրդ խօսում էր քո եղբայր Եսաւի հետ և ասում. Ինձ համար որս բեր, և ինձ համար խորտիկներ շինիր, որ ուտեմ և օրհնեմ քեզ Եհովայի առջև իմ մեռնելուց առաջ։ Եւ հիմա, որդիս, լսիր իմ ձայնին ինչ որ ես քեզ պատուիրում եմ։ Գնա հօտերի մօտ և այն տեղից ինձ համար երկու լաւ այծի ուլեր բեր. և ես նորանցից խորտիկներ շինեմ քո հօր համար ինչպէս որ նա սի-

*երդում

10 բուժ է։ Եւ դու կ'տանես քո հօր
մօտ և կ'ուտէ, և նորա համար
կ'օրհնէ քեզ իր մեռնելուց առաջ։
11 Եւ Յակոբն ասաց իր մայր Ռե-
բեկային. Ահա եղբայրս Եսաւ
մազոտ մարդ է, իսկ ես լերկ
12 մարդ եմ։ Գուցէ իմ հայրն ինձ
շօշափէ, և նորա աչքին զզուելի
լինիմ, և ինձ վերայ անէծք բե-
13 րեմ և ոչ թէ օրհնութիւն։ Եւ
մայրն ասաց նորան. Քո անէծքն
իմ վերայ, որդիս, միայն թէ
լսիր իմ ձայնին, և գնա բեր ինձ
14 համար։ Եւ գնաց, առաւ և բե-
րաւ իր մօր համար. և նորա մայ-
րը խորտիկներ շինեց ինչպէս նո-
15 րա հայրը սիրում էր։ Եւ Ռեբե-
կան առաւ իր մեծ որդի Եսաւի
պնիւս հանդերձներն, որ տանն
իր մօտ էր, առաւ և հագցրեց
16 իր փոքր որդի Յակոբին։ Եւ այ-
ծի ուլերի մորթերն էլ հագցրեց
նորա ձեռքերին և վզի լերկ տե-
17 ղին։ Եւ խորտիկները և այն հացն
էլ, որ շինել էր, տուաւ իր որ-
դի Յակոբի ձեռքը։
18 Եւ նա գնաց իր հօր մօտ և ա-
սաց. Հայր իմ։ Եւ Նա ասաց.
Ահա ես. դու ո՞վ ես, որդիս։
19 Եւ Յակոբն ասաց իր հօրը. Ես
քո անդրանիկն Եսաւն եմ. ես
արի ինչպէս որ ասացիր ինձ. վեր
կաց, նստիր, և կեր իմ որսիցը,
20 որ քո հոգին ինձ օրհնէ։ Եւ Ի-
սահակն ասաց իր որդուն. Ա՛ա
ի՛նչ շուտով գտար, որդիս։ Եւ
նա ասաց. Վասն զի քո Եհովայ
Աստուածը հանդիպեցրեց իմ ա-
21 ջև։ Եւ Իսահակն ասաց Յակո-
բին. Մօտեցիր և թող քեզ շօ-
շափեմ, որդիս, թէ արդե՞օք դու
22 ես իմ որդի Եսաւը, թէ ոչ։ Եւ
Յակոբ մօտեցաւ իր հայր Իսա-
հակին, և նա շօշափեց նորան և
ասաց. Ձայնը Յակոբի ձայնն է,
իսկ ձեռքերը Եսաւի ձեռքերը։
23 Եւ չճանաչեց նորան, որովհետև
ձեռքերը նորա եղբայր Եսաւի
ձեռքերի պէս մազոտ էին. և օրհ-
24 նեց նորան. Եւ ասաց. Սա դո՞ւ
ես, իմ որդի Եսաւ։ Եւ նա ա-
25 սաց. Ես եմ։ Եւ ասաց մօտեցրու
ինձ որ ուտեմ իմ որդու որսերը
որ դորա համար օրհնէ քեզ իմ
հոգին։ Եւ նա մօտեցրեց նորան,
և նա կերաւ, և նորա համար
գինի բերաւ, և նա խմեց։ Եւ 26
նորա հայրը Իսահակն ասաց նո-
րան. Մօտեցիր ինձ և համբուրիր
ինձ, որդիս։ Եւ մօտեցաւ և համ- 27
բուրեց նորան, և նա հոտոտաց
նորա հանդերձների հոտը և օրհ-
նեց նորան, և ասաց. Տես իմ
որդու հոտը՝ այն արտի հոտի
նման է, որն որ օրհնեց Եհովան։
Եւ Աստուած տայ քեզ երկնքի 28
ցօղիցը և երկրի պարարտութի-
նիցը, և ցորենի և գինու առա-
տութիւն։ Ազգեր ծառայեն քեզ 29
և ժողովուրդներ քեզ երկրպա-
գեն. քո եղբօր վերայ իշխան ե-
ղիր. և քո մօր որդիքը քեզ եր-
կրպագեն. քեզ անիծողներն ա-
նիծեալ և քեզ օրհնողներն օրհ-
նեալ լինին։

Եւ եղաւ երբոր Իսահակը Յա- 30
կոբին օրհնեց վերջացրեց, և ե-
ղաւ հէնց որ Յակոբը դուրս եկաւ
իր հօր Իսահակի առջևից, նորա
եղբայրը Եսաւը եկաւ որսիցը։
Նա էլ խորտիկներ շինեց և բե- 31
րաւ իր հօր մօտ, և ասաց հօրը.
Վեր կաց, հայր իմ, և կեր քո
որդու որսիցը, որ քո հոգին ինձ
օրհնէ։ Եւ նորա հայրն Իսահա- 32
կը ասաց նորան. Դու ո՞վ ես։
Եւ նա ասաց. Ես քո անդրանիկ
որդին Եսաւն եմ։ Եւ Իսահակը 33
մեծ սարսափով սաստիկ սարսա-
փեց և ասաց. Ապա նա ո՞վ էր,
որ որս էր որսել և բերել ինձ
համար, և ես ամենիցը կերայ քո
գալուց առաջ և օրհնեցի նորան.
նա օրհնուած էլ կ'մնայ։ Եւ երբ 34
որ Եսաւ լսեց իր հօր խօսքերը
մեծ և դառն ողաղակով սաս-
տիկ լաց եղաւ, և ասաց իր հօ-
րը. Ինձ էլ օրհնիր, հայր իմ,
ինձ էլ։ Եւ նա ասաց. Քո եղ- 35
բայրն եկաւ նենգութեամբ և ա-
ռաւ քո օրհնութիւնը։ Մի՞թէ 36
նորա անունը Յակոբ չեն ասում.
և ահա սա երկու անգամ է որ
ինձ խաբել է. իմ անդրանկու-
թիւնն առաւ, և հիմա էլ ահա
օրհնութիւնս առաւ. և ասաց.

ինձ համար օրհնութիւն չի՞ տա թո-
37 ղել։ Եւ Իսահակը պատասխանեց
և ասաց Եսաւին. Ահա նորան
քեզ վերայ իշխան դրի, և իր բո-
լոր եղբայրները տուի նորան ծա-
ռաներ լինել. և ցորե-
նով ու գինով հաստատեցի նո-
րան. և հիմա քեզ ի՞նչ անեմ,
38 որդիս։ Եւ Եսաւն ասաց իր հօ-
րը. Մի՞թէ մէկ հատ օրհնու-
թիւն ունիս, հայր իմ. ինձ էլ
օրհնիր, հայր իմ։ Եւ Եսաւը բարձ-
39 րացրեց իր ձայնը և լացաւ։ Եւ
նորա հայրն Իսահակը պատաս-
խանեց և ասաց նորան. Ահա
երկրի պարարտութիւնը լինի քո
բնակարանը՝ և երկնքի ցօղից վե-
40 րևից։ Եւ քո սրունքն ապրես. և
քո եղբօրը ծառայես. և կ'լինի
որ երբ դու քաշուիս, նորա լու-
ծը քո վրի վրայից կոտրես։
41 Եւ Եսաւն ատում էր Յակո-
բին այն օրհնութեան համար,
որով հայրը նորան օրհնեց. և
Եսաւն ասում էր իր սրտումը,
իմ հօր համար ապի օրերը մօտե-
նում են. և ես սպանելու եմ իմ
42 եղբայր Յակոբին։ Եւ Ռեբեկային
պատմեցին իր մեծ որդի Եսաւի
բաները, և նա ուղարկեց և կան-
չեց իր փոքր որդին Յակոբին և
ասաց նորան. Ահա քո եղբայրն
Եսաւը քեզանից վրէժխնդիր է,
43 որ քեզ սպանէ։ Եւ հիմա, որ-
դիս, լսիր իմ ձայնին, և փախիր
դէպ իմ եղբայր Լաբանի մօտ
44 Խառան։ Եւ բնակիր նորա մօտ
մի քանի ժամանակ մինչև քո եղ-
բօր բարկութիւնը կը դառնայ։
45 Մինչև քո եղբօր բարկութիւնը
քեզանից անցնի, և մոռանայ ինչ
որ իրան արել ես. և կ'ուղարկեմ
ու կ'առնեմ քեզ այն տեղից.
ինչո՞ւ համար զրկուիմ ձեր եր-
կուսիցդ մէկ օրում։
46 Եւ Ռեբեկան ասաց Իսահակին.
Կեանքիցս զզուել եմ Քեթի աղ-
ջիկների պատճառով. եթէ Յա-
կոբ էլ է այս երկրի աղջիկների
պէս Քեթի աղջիկներից կին ա-
նելու, էլ ինչո՞ւ է ինձ կեանքը
պէտք։

ԳԼ. ԻՀ

Եւ Իսահակը կանչեց Յակոբին 1
և օրհնեց նորան, և պատուիրեց
նորան և ասաց նորան. Քանանա-
ցի աղջիկներից կին չառնես։ Վեր 2
կաց գնա Փադան-արամ (Միջա-
գետ) քո մօր հայր Բաթուէլի
տունը. և այն տեղից քեզ հա-
մար կին առ քո մօր եղբայր Լա-
բանի աղջիկներից։ Եւ ամենակա- 3
րող Աստուածը օրհնէ քեզ, և
քեզ աճեցնէ և քեզ շատացնէ,
և դու ժողովուրդների ժողով լի-
նիս։ Եւ տայ քեզ Աբրահամի 4
օրհնութիւնը և քո սերունդին
քեզ հետ՝ քո պանդխտութեան
երկիրը ստացուածքի համար, որ
Աստուած տուել է Աբրահամին։
Եւ Իսահակը ճանապարհեց Յա- 5
կոբին, և նա գնաց Փադան-ա-
րամ (Միջագետ) Ասորի Բաթու-
էլի որդի Լաբանի մօտ Ռեբեկայի եղ-
բօր մօտ։

Եւ երբոր Եսաւ տեսաւ որ Ի- 6
սահակը օրհնեց Յակոբին, և նո-
րան ուղարկեց Փադան-արամ
(Միջագետ) այն տեղից իրան կին
առնելու համար, և որ նորան
օրհնելիս պատուիրեց նորան ա-
սելով. Քանանու աղջիկներից քեզ
համար կին չառնես, Եւ որ Յա- 7
կոբը հնազանդեց իր հօրը և իր
մօրը, և Փադան-արամ (Միջա-
գետ) գնաց. Նաև տեսաւ Եսա- 8
ւը որ Քանանու աղջիկները իր
հօրը Իսահակին անհաճելի են,
Եսաւը գնաց Իսմայէլի մօտ, Ա- 9
բրահամի որդու Իսմայէլի աղջիկ
Նաբէոթի քոյր Մայէլէթին ի-
րան կին առաւ իր կանանցից ջոկ։
Եւ Յակոբը Բերսաբէէից դուրս 10
եկաւ և գնաց դէպի Խառան. Եւ 11
մի տեղ հասաւ, և գիշերն այն
տեղ մնաց, վասն զի արեգակը
մար էր մտել. և այն տեղի քա-
րերից առաւ, և իր գլխի տակ
դրաւ, և այն տեղ պառկեց։ Եւ 12
երազ տեսաւ, և ահա մի սան-
դուխք երկրի վերայ դրուած, և
նորա գլուխը երկնքին էր դպչում,
և ահա Աստուծոյ հրեշտակները

նորանով երթուէ և իջնուէ էին,
13 Եւ ահա Եհովան կանգնած էր նորա վերայ, և ասաց. Ես եմ Եհովան քո հօր Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը. այդ երկիրը որի վերայ պառկած ես, քեզ եմ տալու և քո սե-
14 րունդին. Եւ քո սերունդը երկրի աւազի չափ կ'լինի և կ'տարածուի դէպի արևմուտք և արևելք, և դէպի հիւսիս և հարաւ. և քեզանով կ'օրհնուին երկրի բոլոր ազգերը և քո սերունդով:
15 Եւ ահա ես քեզ հետ եմ, և ամեն տեղ ուր որ գնաս քեզ կ'պահեմ, և քեզ այս երկիրը կ'դարձընեմ. վասն զի քեզ չեմ թողուլ մինչև որ կատարեմ այն ինչ որ
16 քեզ ասել եմ: Եւ Յակոբը զարթնեց իր քնից և ասաց. Իրաւի Եհովան այս տեղ է, և ես չէի
17 գիտեում: Եւ վախեցաւ ու ասաց. Ինչ ահաւոր է այս տեղը! սա ուրիշ բան չէ, բայց միայն Աստուծոյ տունը, և սա է երկնից
18 դուռը: Եւ Յակոբն առաւօտեան կանուխ եղաւ, և առաւ այն քարը, որ իր գլխի տակ էր դրել, և նորան արձան կանգնեցրեց, և
19 նորա գլխին իւղ ածեց. Եւ այն տեղի անունը Բեթէլ դրաւ. բայց առաջ այն քաղաքի անունը Լուզ
20 էր: Եւ Յակոբը ուխտ արաւ և ասաց. Եթէ Աստուած ինձ հետ լինի, ինձ պահէ այս ճանապարհումը որ ես գնում եմ, և ինձ ուտելու հաց և հագնելու հան-
21 դերձ տայ, Եւ խաղաղութեամբ ես դառնամ իմ հօր տունը, Եհովան ինձ համար Աստուած լի-
22 նի, Եւ այս քարը որ ես արձան կանգնեցրի, Աստուծոյ տուն լինի. և այն ամենից որ ինձ տաս, քեզ տասանորդ տամ:

ԳԼ. ԻԹ

1 Եւ Յակոբը ճանապարհ ընկաւ և գնաց արևելքի որդոց երկիրը:
2 Եւ մտիկ տուաւ, և ահա դաշտումը մի հոր կար, և ահա այն տեղ նորա մօտ ոչխարների երեք հօտ պառկել էին, որ այն հորից

խմեցնում էին հօտերին. և հորի բերանին մի մեծ քար կար. Եւ 3
բոլոր հօտերին այն տեղ էին ժողովում. և հորի բերանի քարը մէկ կողմ էին գլորում, և հօտերին խմեցնում, և քարը դարձեալ իր տեղը հորի բերանին էին դնում: Եւ Յակոբն ասաց նորանց. 4
Եղբայրներս, ո՞ր տեղից էք դուք. և նորանք ասացին. Մենք Խառանից ենք: Եւ ասաց նորանց. 5
Նաքորի որդի Լաբանին ճանաչո՞ւմ էք. և նորանք ասացին ճանաչում ենք: Եւ ասաց նորանց. 6
Առո՞ղջ է. և նորանք ասացին, Առողջ է, և ահա նորա աղջիկը Ռաքէլը ոչխարների հետ գալիս է: Եւ նա ասաց. Ահա տա- 7
կաւին օր շատ կայ և ժամանակ չէ հօտերը ժողովելու, ոչխարներին խմեցրէք, և գնացէք արածեցրէք: Եւ նորանք ասացին. 8
Չենք կարող, մինչև որ բոլոր հօտերը միևտեղ չժողովուին. այն ժամանակ հորի բերանից քարը կ'գլորեն, և ոչխարներին կ'խմեցընենք: Եւ երբոր տակաւին նո- 9
րանց հետ խօսում էր, Ռաքէլն եկաւ իր հօր ոչխարների հետ. վասնզի նա էր նորանց հովիւը: Եւ եղաւ երբոր Յակոբը տեսաւ 10
իր մօրեղբայր Լաբանի աղջիկը Ռաքէլին, և իր մօրեղբայր Լաբանի ոչխարները, այն ժամանակ Յակոբը մօտեցաւ, և քարը հորի բերանից գլորեց, և իր մօրեղբայր Լաբանի ոչխարների խմեցրեց: Եւ 11
Յակոբը համբուրեց Ռաքէլին, և ձայնը բարձրացրեց լաց եղաւ: Եւ 12
Յակոբը պատմեց Ռաքէլին, թէ ինքը նորա հօր ազգական և Ռեբեկայի որդին է. նա էլ վազեց և իր հօրը պատմեց: Եւ երբոր 13
Լաբանն իր քրոջ որդի Յակոբին համբուրէր լսեց, նորան դիմաւորելու վազեց, և գրկեց և համբուրեց նորան, և իր տունը տարաւ, և նա պատմեց Լաբանին բոլոր այս բանները: Եւ Լաբանն 14
ասաց նորան. Իրաւի դու իմ ոսկորն ու իմ մսերիցն ես. և նորա հետ մի ամիսողջ տեղ մնաց:
Եւ Լաբանն ասաց Յակոբին. 15

Մի՛թէ դու, որ իմ եղբայրն ես, պիտի ինձ ձրի՞ ծառայես. ասիր 16 ինձ ի՞նչ է քո վարձքը։ Եւ Լաբանն երկու աղջիկ ունէր. մեծի անունը Լիա և փոքրի անունը 17 Ռաքել։ Եւ Լիայի աչքերը տկար էին, բայց Ռաքելը գեղեցիկ էր 18 տեսքով և գեղեցիկ դէմքով։ Եւ Յակոբը սիրեց Ռաքելին, և ա- սաց. Քո փոքր աղջկան Ռաքելի համար եօթը տարի քեզ ծառա- 19 յեմ։ Եւ Լաբանն ասաց. Աւելի լաւ է որ ես նորան քեզ տամ քան թէ նորան ուրիշ մարդի 20 տամ։ Բնակիր ինձ հետ։ Եւ Յա- կոբը Ռաքելի համար եօթը տարի ծառայեց. և նորա աչքին մի քանի օրերի պէս էր նորան սիրե- լու պատճառով։

21 Եւ Յակոբն ասաց Լաբանին. Տուր կինս. որովհետև օրերս լրա- ցել են, որ ես մտնեմ նորա մօտ։ 22 Եւ Լաբանն այն տեղի բոլոր մարդ- կանցը ժողովեց և խնջոյք արաւ։ 23 Եւ եղաւ որ իրիկունը նա իր Լիա աղջիկն առաւ, և նորա մօտ բե- րաւ. և նա նորա մօտ մտաւ։ 24 Եւ Լաբանն իր աղախին Զեղ- փան իր աղջկանը Լիային աղա- 25 խին տուաւ։ Եւ եղաւ առաւօ- տանց, և ահա նա Լիան էր. և Յ-ի-ճբ Լաբանին ասաց. Ի՞նչ է սա որ դու ինձ արել ես. մի՛թէ ես քեզ Ռաքելի համար չեմ ծա- ռայել. ապա ինչո՞ւ համար ինձ 26 խաբեցիր։ Եւ Լաբանն ասաց. Մեր երկրում այսպէս չեն անիլ, որ փոքրը մեծից առաջ տան։ 27 Լրացրու այս եօթնեակը, և ես տրան էլ կ'տամ քեզ այն ծա- ռայութեան համար որ ինձ ծա- 28 ռայես ուրիշ եօթը տարի էլ։ Եւ Յակոբն այնպէս արաւ, և այն եօթնեակին էլ լրացրեց, և Լա- բանն իր Ռաքել աղջիկը նորան 29 կին տուաւ։ Ու Լաբանն իր ա- ղախին Բաղդան իր աղջկանը Ռա- 30 քելին աղախին տուաւ։ Եւ նա Ռաքելի մօտ էլ մտաւ, և Ռա- քելին Լիայից աւելի սիրեց. և Լաբանին եօթը տարի էլ ծա- ռայեց։

31 Եւ երբոր ԵՀովան տեսաւ որ Լիան ատելի է, նորա արգան- դը բացաւ. բայց Ռաքելը ամուլ էր։ Եւ Լիան յղացաւ, և մի 32 որդի ծնաւ, և նորա անունը Ռու- բէն դրաւ. վասն զի ասաց. ԵՀո- վան իմ տառապանքին նայեց, ուրեմն հիմա իմ մարդն ինձ կ'սի- րէ։ Եւ դարձեալ յղացաւ, և 33 մի որդի ծնաւ, և ասաց. Որով- հետև ԵՀովան լսեց որ ես ատ- ելի եմ, նորա համար ինձ այս որդին էլ տուաւ. և նորա անու- նը Շմաւոն դրաւ։ Եւ դարձեալ 34 յղացաւ, և մի որդի ծնաւ, և ասաց. Հիմա այս անգամ իմ մարդն ինձ հետ կ'միաւորուի. վասն զի երեք որդի ծնայ նորա համար. այս պատճառով նորա անունը Ղեւի դրաւ։ Եւ դարձ- 35 եալ յղացաւ, և մի որդի ծնաւ, և ասաց. Այս անգամ պիտի գոհանամ ԵՀովայից. նորա հա- մար նորա անունը Յուդա դրաւ. և ծնելուց դադարեց։

ԳԼ. Լ

Եւ Ռաքելը տեսաւ որ ինքը Յա- 1 կոբի համար չէ ծնում, նախան- ձեց իր քրոջ Լիայի վերայ, և ասաց Յակոբին. Ինձ որդիներ տուր. եթէ ոչ կ'մեռնիմ։ Եւ 2 Յակոբի բարկութիւնը բորբոքեց Ռաքելի դէմ, և ասաց. Մի՛թէ ես Աստուծոյ փոխանորդն եմ, որ արգանդի պտուղը քեզանից ար- գիլեց։ Եւ նա ասաց. Ահա իմ 3 աղախինը Բաղդան, նորա մօտ մտիր. նա իմ ծունկերի վերայ ծնէ, և ես էլ նորանից որդիներ ստանամ։ Եւ իր Բաղդա աղա- 4 խինը նորան կին տուաւ, և Յա- կոբը նորա մօտ մտաւ։ Եւ Բաղ- 5 դան յղացաւ, և Յակոբի համար մի որդի ծնաւ։ Եւ Ռաքելն ա- 6 սաց. Աստուած ինձ դատաստան արաւ, և իմ ձայնն էլ լսեց, և ինձ որդի տուաւ. նորա համար նորա անունը Դան դրաւ։ Եւ Ռա- 7 քելի աղախինը Բաղդան դարձեալ յղացաւ, և Յակոբի համար երկ- րորդ որդի ծնաւ։ Եւ Ռաքելն ա- 8 սաց. Իմ քրոջ հետ Աստուա-

ծոյին ըմբշամարտութիւնով մարտնչեցի, և յաղթեցի էլ. և նորա անունը Նեփթաղիմ դրաւ։

Եւ Լիան տեսաւ որ ինքը ծնելուց դադարեց, իր աղախին Զեղփային առաւ և նորան Յակոբին 10 կին տուաւ։ Եւ Լիայի աղախինը Զեղփան Յակոբի համար որդի 11 ծնաւ։ Եւ Լիան ասաց. Բաղդս բերաւ. և նորա անունը Գադ 12 դրաւ։ Եւ Լիայի աղախինը Զեղփան մի երկրորդ որդի ծնաւ Յա- 13 կոբի համար։ Եւ Լիան ասաց. Երանելի եմ. վասն զի աղջիկները ինձ պիտի երանեն. և նորա անունը Աշեր դրաւ։

14 Եւ Ռուբէնը գնաց ցորենի հունձքի օրերը, և դաշտումը մանրապտղներ գտաւ, և իր մայր Լիային բերաւ. և Ռաքէլն ասաց Լիային. Խնդրեմ՝ տուր ինձ քո 15 որդու մանրապտղներից։ Եւ նա ասաց նորան. Իմ մարդն առնելն քի՞չ է որ իմ որդու մանրապտղներն էլ առնես. և Ռաքէլն ասաց. Ուրեմն այս գիշեր քեզ հետ պառկի քո որդու մանրապտղների 16 փոխարէն։ Եւ իրիկունը Յակոբը դաշտից գալիս էր. Լիան դուրս եկաւ նորան դիմաւորելու, և ասաց. Ինձ մօտ պիտի մտնես. որովհետև վարձքով առի քեզ իմ որդու մանրապտղներովը. և այն 17 գիշերը նորա հետ պառկեց։ Եւ Աստուած լսեց Լիային. և յղացաւ. և Յակոբի համար հինգե- 18 րորդ որդի ծնաւ։ Եւ Լիան ասաց. Աստուած իմ վարձքը տուաւ, որովհետև աղախինս իմ մարդուն տուի. և նորա անունը 19 Իսաքար դրաւ։ Եւ Լիան դարձեալ յղացաւ, և Յակոբի համար վեցերորդ որդի ծնաւ։ Եւ 20 Լիան ասաց. Աստուած ինձ բարի պարգև պարգևեց. այս անգամ մարդս ինձ հետ պիտի բնակէ, որովհետև նորա համար վեց որդի ծնայ և նորա անունը Զաբուղոն 21 դրաւ։ Եւ յետոյ մի աղջիկ ծնաւ, և նորա անունը Դինա դրաւ։

22 Եւ Աստուած յիշեց Ռաքէլին, և Աստուած լսեց նորան, և նո- 23 րա արգանդը բացաւ. Եւ յղացաւ, և մի որդի ծնաւ, և ա- 24 սաց. Աստուած իմ նախատինքը վեր առաւ. Եւ նորա անունը Յովսէփ դրաւ, և ասաց. Եհովան ինձ մի ուրիշ որդի էլ է աւելացնելու։

Եւ եղաւ երբոր Ռաքէլը Յով- 25 սէփին ծնաւ, Յակոբը ասաց Լաբանին. Թող տուր ինձ որ իմ տեղն և իմ երկիրն գնամ։ Իմ կա- 26 նայքն ու տղերքը, որոնց համար քեզ ծառայեցի, տուր ինձ որ գնամ. որովհետև դու գիտես իմ ծառայութիւնը, որ ես քեզ ծառայել եմ։ Եւ Լաբանն ասաց 27 նորան. Եթէ քո առջև շնորհք գտայ, աղաչում եմ քեզ, փորձով իմացայ որ Եհովան ինձ օրհնում է քո պատճառով. Եւ ա- 28 սաց. Քո վարձքն ինձ իմացրու, և կ'վճարեմ։ Եւ նա ասաց նո- 29 րան. Դու գիտես թէ ես ինչպէս ծառայեցի քեզ, և քո անասուններն ինչպէս էին իմ մօտ. Վ ա ն 30 զի քիչ էր քո ունեցածը իմ գալուց առաջ, և աճեց շատացաւ, և Եհովան քեզ օրհնեց իմ գալովը. և հիմա ես ե՞րբ աշխատիմ իմ տան համար։ Եւ նա ասաց. 31 Քեզ ի՞նչ տամ։ Եւ Յակոբն ասաց. Ինձ ոչ մի բան մի տար. եթէ այս բանն ինձ անես, դարձեալ քո հօտը կ'արածացնեմ կ'պահեմ. Այսօր քո բոլոր հօտերի մէջովն 32 անցնեմ, որ նորանից ամեն պուտակ և խայտախարիւս ոչխարը, և ամեն ևս ոչխարը, և խայտախարիւս պիտակ այծերը գտնեմ, և իմ վարձքս նորանք լինին. Եւ է- 33 տագայ օրն իմ արդարութիւնը քո առջև կ'յայտնուի, երբոր գաս իմ վարձքի վերայ նայելու բոլոր ինձ մօտ գտնուած այծերը որ պուտակ ու խայտախարիւս չլինին, և ոչխարները սև՝ նա գողացած լինի ինձ մօտ։ Եւ Լաբանն ասաց. 34 Թող քո ասածի պէս լինի։ Եւ 35 այն օրը ջոկեց բիծաւոր և խայտախարիւս նոխազները, և բոլոր պիտակ և խայտախարիւս էգ այծերը, և ամեն սպիտակ ունեցողը, և բոլոր սև ոչխարները, և իր որդիների ձեռքը տուաւ։

36 Եւ երեք օրուայ ճանապարհի մի-
ջոց դրաւ իր ու Յակոբի մէջտե-
ղը. և Յակոբը արածացնում էր
Լաբանի մնացած հօտերը։
37 Եւ Յակոբն իր համար դալար
սպիտակ կաղամախի և նուշի և
սօսի գաւազաններ առաւ, և նո-
րանց կեղևները տեղ տեղ քեր-
ծեց սպիտակացրեց, այնպէս որ
գաւազանների վերայ եղած սպի-
38 տակը երեւում էր։ Եւ իր քերած
գաւազանները դրաւ ջուր խմե-
ցընելու աւազանների մէջ, որ երբ
որ հօտերը ջուր խմելու գան, նո-
րանք ոչխարների առջև լինին, և
նորանք տաքանան երբոր խմելու
39 գան։ Եւ ոչխարները տաքանում
էին գաւազանների առջև և ոչ-
խարները բիծաւոր, պիտակ և
խայտախարիւ գառինք էին ծը-
40 նում։ Եւ Յակոբը բաժանում
էր պիտակ գառները, և հօտերի
երեսը Լաբանի հօտերի մէջ ե-
ղած բիծաւոր և ամեն սև ոչ-
խարներին էր դարձնում. և իր
հօտերը առանձին դրաւ, և նո-
րանք Լաբանի հօտերի մօտ չի
41 դրաւ։ Եւ եղաւ որ միշտ զօրա-
ւոր ոչխարները տաքանային, Յա-
կոբը այն գաւազանները ոչխար-
ների աչքին առջև աւազանների
մէջ էր դնում, որ գաւազանների
42 առջև տաքանան։ Բայց տկար
ոչխարներին չէր դնում. և տկար-
ները եղան Լաբանին և զօրաւոր-
43 ները Յակոբին։ Եւ մարդը խիստ
շատ ածեց, և շատ հօտեր, և
աղախիններ, և ծառաներ, և
ուղտեր և էշեր ունեցաւ։

ԳԼ. ԼԱ.

1 Եւ լսեց Լաբանի որդոց խօսքե-
րը, որ ասում էին. Յակոբը մեր
հօր բոլոր ունեցածն առաւ, և
այս բոլոր փառքը մեր հօր առաց-
2 ուածքից առաւ։ Եւ Յակոբը
Լաբանի երեսին մտիկ առաւ,
և ահա նորան հետ երէկուայ և
3 մէկել օրուայ պէս չէր։ Եւ Եհո-
վան ասաց Յակոբին. Դարձիր քո
հայրենիքը, և քո ծննդեան եր-
կիրը, և ես քեզ հետ կ'լինիմ։

Եւ Յակոբ խոտ ուզարկեց, և 4
կանչեց Ռաքելին և Լիային դաշ-
տը իր հօտերի մօտ. Եւ ասաց 5
նորանց. Ես ձեր հօր երեսը տես-
նում եմ, որ ինձ դէմ երէկուայ
և մէկել օրուայ պէս չէ. բայց
իմ հօր Աստուածը ինձ հետ է։
Եւ դուք գիտէք, որ ես իմ 6
բոլոր զօրութեամբը ծառայեցի
ձեր հօրը. Իսկ ձեր հայրն ինձ 7
խաբեց, և իմ վարձքը տասը ան-
գամ փոխեց. բայց Աստուած նո-
րան թոյլ չտուաւ ինձ վնասելու։
Ո՞ւմն էլ եթէ նա այսպէս էր ա- 8
սում, Որ բիծաւոր վարձքը պիտակները
լինին, այն ժամանակ բոլոր ոչ-
խարները պիտակ էին ծնում. և
եթէ այսպէս էր ասում, Որ բի-
ծաւորները վարձքը լինին, այն
ժամանակ բոլոր ոչխարները բի- 9
ծաւոր էին ծնում։ Այսպէս Աստ-
ուած ձեր հօր հօտերն առաւ, և
ինձ տուաւ. Եւ եղաւ որ հօտե- 10
րի տաքացած ժամանակ, աչքերս
բարձրացուցի, և երազում տե-
սայ, և ահա հօտերի հետ զու-
գաւորող խոյերը բիծաւոր խայ-
տախարիւ, և դորշախայտ էին։
Եւ Աստուծոյ հրեշտակն ասաց 11
ինձ երազի մէջ. Յակոբ. և ես
ասացի. Ահա ես։ Եւ ասաց. 12
Աչքերդ բարձրացրու, և հօտերի
հետ զուգաւորող խոյերին նայիր.
բիծաւոր, խայտախարիւ, և դոր-
շապոյն են. վասն զի տեսայ բո-
լորն ինչ որ քեզ արաւ Լաբա-
նը։ Ես եմ Բեթէլի Աստուածը, 13
որ այն տեղ արձան օծեցիր, և
ինձ այն տեղ ուխտ արիր. Հիմա
ելիր գնա այս երկրից, և քո ծը-
նընդեան երկիրը դարձիր։

Եւ Ռաքէլն ու Լիան պատաս- 14
խանեցին և ասացին նորան. Տա-
կաւին մեր հօր տունը մեզ հա-
մար բաժին և ժառանգութիւն
կա՞յ. Մի՞թէ մենք օտարական- 15
ներ չհամարուեցա՞նք նորա հա-
մար. որովհետև մեզ ծախեց, և
կերաւ մեր փողն էլ. Վասնզի այն 16
բոլոր հարստութիւնը որ Աստ-
ուած մեր հօրից առաւ, մերն է և
մեր զաւակներինն է. և հիմա ինչ
որ Աստուած քեզ ասել է, արա։

17 Եւ Յակոբն եղաւ, և իր որդի-
ներին ու կնիկներին ուղտերի վե-
18 րայ հեծցրեց, Եւ քշեց իր բոլոր
անասուններն ու իր բոլոր առց-
ուածքը որ առացաւ, իր առացած
անասունները որ Փադան-արա-
մեայ (Միջագետուայն) առացաւ,
դէպի իր հայհակ հօրը գնալու՝
19 Քանանու երկիրը: Եւ Լաբանը
գնացել էր իր խաշինքը ասրա-
կառուր անելու. և Ռաքէլն իր հօր
20 *թերափիմները գողացաւ: Եւ
Յակոբն Ասորի Լաբանից ծածուկ
փախաւ. վանդի նորան չիմացրեց
21 թէ փախչում է. Այսպէս փա-
խաւ նա և իր բոլոր ունեցածը,
և եղաւ ու Գետից անցաւ, և
իր երեսը դէպի Գաղաատ լեառը
դարձրեց:
22 Եւ երրորդ օրը Լաբանին պատ-
մուեցաւ, թէ Յակոբը փախել է:
23 Եւ նա իր եղբայրներին իր հետ
առաւ, և նորա ետևից եօթը օր-
ուայ ճանապարհ գնաց, և նորան
24 հասաւ Գաղաատ լեառնումը: Եւ
Աստուած գիշերուայ երազում
Ասորի Լաբանի մօտ եկաւ, և ա-
սաց նորան. Զգուշացիր որ Յա-
կոբի հետ ոչ լաւ և ոչ վատ չի
25 խօսիս: Եւ Լաբանը հասաւ Յա-
կոբին. և Յակոբն իր վրանը լեռ-
նումը բացել էր. և Լաբանն իր
եղբայրների հետ Գաղաատ լեռ-
նումը բացաւ:
26 Եւ Լաբանն ասաց Յակոբին.
Սա ի՞նչ արիր որ ինձանից ծա-
ծուկ փախար, և իմ աղջիկները
արով գերի առնուածների պէս
27 քշեցիր: Ինչո՞ւ թաքցրիր և ին-
ձանից ծածուկ փախար, և ինձ
չիմացրիր, որ ես քեզ ճանապարհ
դնէի ուրախութեամբ և երգե-
րով, թմբուկներով և քնարնե-
28 րով: Եւ թոյլ չտուիր ինձ, որ
որդիներս ու աղջիկներս համբու-
րէի. հիմա յիմարութիւն արիր:
29 Իմ ձեռքն այժ ունի ձեզ չարիք
անելու. բայց ձեր հօր Աստուա-
ծը երէկ գիշեր ինձ հետ խօսեց
ասելով. Զգուշացիր որ Յակոբի
30 հետ ոչ լաւ ոչ վատ չխօսիս: Եւ

հիմա գնալը գնում եմ՝ քանի որում
քո հօր տանը փափաքելով փա-
փաքեցիր, բայց ինչո՞ւ համար գո-
ղացար իմ աստուածները: Եւ 31
Յակոբը պատասխանեց և ասաց
Լաբանին. Որովհետև վախեցայ,
վանդի ասացի. Մի գուցե յափշ-
տակես քո աղջիկներին ինձանից:
Բայց քո աստուածները որի մօտ 32
որ գտնես, թող նա չապրի. մեր
եղբայրների առջև որոնիր. ինչ որ
ինձ մօտ լինի՝ առ քեզ համար.
վանդի Յակոբը չգիտէր որ Ռա-
քէլը գողացել էր նորանից: Եւ 33
Լաբանը մտաւ Յակոբի վրանը և
Լիայի վրանը և երկու աղախին-
ների վրանը, բայց չգտաւ, և Լի-
այի վրանից ելաւ, և Ռաքէլի վր-
րանը մտաւ: Եւ Ռաքէլն առաւ 34
կուռքերը և նորանց գրաւ ուղտի
պատատումը, և վերան նստեց.
և Լաբանը բոլոր վրանը որոնեց,
բայց չգտաւ: Եւ նա իր հօրն ա- 35
սաց. Թող իմ տէրը չբարկանայ,
որ չեմ կարող վեր կենալ քո առ-
ջև, վասն զի կանանց սովորու-
թեան մէջ եմ: Եւ որոնեց, բայց
կուռքերը չգտաւ:
Եւ Յակոբը բարկացաւ և վի- 36
ճում էր Լաբանի հետ. և Յակո-
բը պատասխանեց և ասաց Լա-
բանին. Ի՞նչ է իմ յանցանքը,
ի՞նչ է իմ մեղքը, որ ետևիցս
ընկար: Որ իմ բոլոր կարասիքը 37
խառնեցիր. ի՞նչ գտար քո տան
ամեն կարասիքից. այստեղ դիր
իմ եղբայրների և քո եղբայրնե-
րի առջև, և թող նորանք դա-
տեն մեր երկուսի մէջ: Ահա քը- 38
սան տարի է, որ քեզ հետ եմ.
ոչխարներդ ու այծերդ ձագ չվի-
ժեցին. և քո հօտի խոյերը չկե-
րայ. Գոչընչ պատառուածը չի 39
բերի քեզ մօտ. ես էի քաշում
վնասը. ցերեկը գողացուածը և
գիշերը գողացուածը իմ ձեռքից
էիր պահանջում: Այսպես էի. ցե- 40
րեկով տաքը և գիշերով ցուրտն
էր մնաշեցնում ինձ և քունս փա-
խել էր աչքերիցս: Այսպէս քը- 41
սան տարի քո տանը քեզ ծառա-
յեցի, տասնուչորս տարի քո եր-
կու աղջիկների համար, և վեց

* կուռքերը

տարի քո հօտերի համար, և տուն
42 անգամ փոխեցիր իմ վարձքը։ Եթէ իմ հօր Աստուածը, Աբրահամի Աստուածը, և Իսահակի երկիւղը ինձ հետ չլինէր, անպատճառ ինձ հիմա դատարկ էիր ճանապարհ դրել։ Աստուած աւետաւ իմ տառապանքը և իմ ձեռքի աշխատութիւնը, և երէկ պիշեր ես յանդիմանեց։
43 Եւ Լաբանը պատասխանեց, և ասաց Յակոբին. Աղջիկները իմ աղջիկներն են, և այս որդիները իմ որդիներն են, և այս հօտերն իմ հօտերն են, և ամեն ինչ որ դու տեսնում ես, իմն են. և ինչ անեմ այսօր այս իմ աղ-
44 ջիկներին կամ իրանց ծնած զաւակներին։ Բայց հիմա եկ, ես և դու ուխտ անենք, և իմ ու քո
45 մէջտեղը վկայութիւն լինի։ Եւ Յակոբը մի քար առաւ, և ար-
46 ձան կանգնեցրեց նորան։ Եւ Յակոբն իր եղբայրներին ասաց. Քարեր ժողվեցէք. և նորանք քարեր առին և դէզ շինեցին, և այնտեղ այն դէզի վերայ հաց կերան։
47 Եւ Լաբանը նորա անունը Եկար-սահադութա դրաւ, բայց Յակոբը նորա անունը Գաղատդ
48 դրաւ։ Եւ Լաբանն ասաց. Այս դէզը այսօր իմ ու քո մէջտեղը վկայ է. նորա համար նորա ա-
49 նունը Գաղատդ սուեցաւ. Եւ Մասիա էլ. որովհետև ասաց. Եհովան դիտէ իմ ու քո մէջտեղը, երբ մենք իրարից բաժան-
50 ուինք։ Եթէ իմ աղջիկներին վշտացնես, և կամ եթէ իմ աղջիկների վերայ ուրիշ կանայք առնես, մէկը չկայ մեզ հետ. տես իմ ու քո մէջտեղը Աստուած է
51 վկայ։ Եւ Լաբանն ասաց Յակոբին. Ահա այս դէզը, և ահա այն արձանը որ ես կանգնեցրի իմ
52 ու քո մէջտեղը. վկայ է այս դէզը և վկայ է այս արձանը, որ ես այս դէզից չանցնեմ դէպի քեզ, և դու այս դէզից և այս արձանից չանցնես դէպի ինձ, չարիքի
53 համար։ Աբրահամի Աստուածը և Նաքորի Աստուածը, նորանց հայրերի Աստուածը մեր մէջը դատուր լինին։ Եւ Յակոբն իր հայր Իսահակի երկիւղով երդուաւ։

Եւ Յակոբը զոհեր մատուցեց 54
այն լեռան վերայ, և իր եղբայրներին կանչեց հաց ուտելու. և հաց կերան, և գիշերը լեռնումը մնացին։ Եւ Լաբանն առաւօտեան 55
կանուխ եղաւ, և իր որդիներին և իր աղջիկներին համբուրեց, և օրհնեց նորանց. և Լաբան գնաց և իր տեղը դարձաւ։

ԳԼ. ԼԲ

Եւ Յակոբը գնաց իր ճանապար- 1
հը, և Աստուծոյ հրեշտակները նորան պատահեցին։ Եւ Յակոբը երբոր տեսաւ նորանց, ասաց. Սա Աստուծոյ բանակն է, և այնտեղի անունը Մանայիմ դրաւ։
Եւ Յակոբն իր առջև պատ- 3
գամաւորներ ուղարկեց իր եղբայր Եսաւին դէպի Սէիր երկիրը Եդովմի գաւառը։ Եւ պատուիրեց նո- 4
րանց ասելով. Այսպէս ասացէք իմ տիրոջ Եսաւին, քո ծառան Յակոբը այսպէս է ասում. Լաբանի մօտ պանդխտութիւն արի, և մինչև հիմա ուշացայ։ Եւ ու- 5
նիմ արջառներ և էշեր, հօտեր և ծառաներ և աղախիններ. և ուղարկում եմ իմ տիրոջն իմացնելու, որ քո առջև շնորհք գտնեմ։
Եւ պատգամաւորները յետ դար- 6
ձան Յակոբի մօտ և ասացին. Քո եղբօր Եսաւի մօտ գնացինք, և նա էլ չորս հարիւր մարդով գալիս է քեզ դիմաւորելու։
Եւ Յակոբը շատ վախեցաւ և 7
խռովեցաւ, և իր հետ եղած ժողովուրդը, և հօտերը և արջառները, և ուղտերը երկու խումբի բաժանեց, և ասաց. Եթէ Եսաւ 8
մէկ խումբին հասնէ, և նորան զարկելու լինի, միւս խումբը կ'ազատուի։ Եւ Յակոբն ասաց. Ով 9
իմ հօր Աբրահամի Աստուած, և իմ հօր Իսահակի Աստուած, ով Եհովայ, որ ասացիր ինձ. Յետ դարձիր քո երկիրը և քո հայրենիքը, և քեզ բարիք կ'անեմ. Ա- 10
ժանի չեմ այն ամեն ողորմու-

թիւններին և ամեն հաւատարմութեանը, որ քո ծառային արել ես. վասն զի իմ գաւազանովն անցայ այս Յորդանանից, և հիմա երկու խումբի տէր եղայ: Ազատիր հիմա ինձ իմ եղբօր Եսաւի ձեռքից, վասն զի նորանից վախենում եմ, մի գուցէ գայ և զարկէ ինձ և մօրը տղաներովը: 12 Եւ դու ասել ես. Թէ անպատճառ քեզ բարիք կ'անեմ, և քո սերունդը ծովի աւազի չափ կ'անեմ, որ շատութիւնից չի համրուել:

13 Եւ այն գիշերն այն տեղ մնաց. և իր ձեռքին եղածից իր եղբօր Եսաւի համար ընծաներ առաւ. 14 երկու հարիւր այծ և քսան նոխազ, երկու հարիւր էգ ոչխար 15 և քսան խոյ, երեսուն ծիծ առած ուղտ իրանց ձագերովը, քառասուն կով և տասը ցուլ, քսան 16 էգ էշ և տասը աւանակ: Եւ ամեն մէկ հօտը ջոկ ջոկ իր ծառաների ձեռքը յանձնեց, և ասաց իր ծառաներին. Առաջ անցէք, և հօտերի մէջ տեղը միջոց թող- 17 եցէք: Եւ առաջինին պատուիրեց ասելով. Երբոր իմ եղբայրը Եսաւը քեզ պատահէ, և քեզ հարցանէ, ասելով. Դու որի՞ն ես, և ո՞ւր ես գնում, և այս առաջիններդ որի՞ն են. 18 Ան ժամանակ ասիր. Քո ծառայ Յակոբինն է. սա ընծայ է ուղարկուած իմ տիրոջը Եսաւին, և ահա ինքն էլ մեր եաւին է: 19 Եւ այսպէս էլ պատուիրեց երկրորդին, և երրորդին, և հօտերի եաւից բոլոր գընացողներին, և ասաց. Այս խօսքի պէս խօսեցէք Եսաւի հետ, 20 երբոր նորան գտնէք: Եւ ասացէք. Ահա քո ծառայ Յակոբն էլ մեր եաւին է. որովհետև ասում էր, կ'հաշտացնեմ նորա երեսը այս ընծայներով, որ իմ առջև գնում են, և յետոյ կը տեսնեմ նորա երեսը, գուցէ ինձ 21 ընդունէ: Եւ ընծայները նորա առջև գնացին. և նա այն գիշերը 22 այնտեղ մնաց բանակի մէջ: Եւ այն գիշերը եղաւ, և իր երկու կանայքը, և իր երկու աղախիններին, և իր տասնեւմէկ որդիները առաւ, և Յաբոկի անցքից անցաւ: Եւ նորանց առաւ, ու վերակից անցրեց, և իր բոլոր ունեցածն անցրեց: 23

Եւ Յակոբը մենակ մնաց, և մի մարդ գօտեմարտում էր նորա հետ մինչև արշալոյսի ծագելը. Եւ տեսաւ որ չկարողացաւ նորան յաղթել, նորա զաւակի ամոլաջին դիպաւ, և Յակոբի զաւակի ամոլաջիլը թուլացաւ նորա գօտեմարտած ժամանակը: Եւ նա ասաց. Թող տուր ինձ, որովհետև արշալոյսը ծագեց. և Յ-ի-ն ասաց. Չեմ թողիլ քեզ՝ մինչև որ ինձ չօրհնես: Եւ նա ասաց նորան. Ի՞նչ է անունդ. նա էլ ասաց. Յակոբ է: Եւ նա ասաց. Այլ ևս քո անունը Յակոբ չասուի, այլ Իսրայէլ. վասն զի Աստուծոյ հետ և մարդոց հետ մարտնչեցիր, և յաղթեցիր: Եւ Յակոբը հարցրեց և ասաց. Աղաչում եմ՝ անունդ ասիր: Եւ նա ասաց. Ինչո՞ւ ես իմ անունը հարցնում. և օրհնեց նորան այն տեղ: Եւ Յակոբն այնտեղի անունը փանուէլ դրաւ. որովհետև ասաց. Դէմ առ դէմ տեսայ Աստուծոյն, և իմ անձը ողջ մնաց:

Եւ արեգակն ելաւ նորա վերայ, երբոր փանուէլից անցաւ. և իր զաւակ վերայ կաղում էր: Վասն հանար Իսրայէլի որդիքը զաւակ վերայ թուլացած ջիղը չեն ուտում մինչև այսօր, որովհետև Յակոբի զաւակ թուլացած ջիղին դիպաւ:

ԳԼ. ԼԳ

1 Եւ Յակոբն իր աչքերը բարձրացրեց և մարդ տեսաւ, և ահա Եսաւը գալիս էր, և նորա հետ չորս հարիւր մարդ. և զաւակները բաժանեց Լիային և Ռաքէլին և երկու աղախիններին: 2 Եւ աղախիններին իրանց զաւակներովը առաջ դրաւ, և Լիային իր զաւակներովը ետև, և Ռաքէլին ու Յովսէփին ամենից ետև: 3 Եւ ինքն անցաւ նորանց առջև, և մինչև երկիրը եօթն անգամ խոնարհութիւն արաւ մինչև իր

4 եղբօր մօտենալը։ Եսաւ վազեց նորան դիմաւորելու, և գրկեց նորան, և նորա պարանոցին ընկաւ, և համբուրեց նորան. և լացին։
5 Եւ Եսաւ իր աչքերը բարձրացրեց, և տեսաւ կանայքը ու զաւակները, և ասաց. Սորանք քո՞նդն են. և նա ասաց. Այն զաւակներն են, որ Աստուած քո
6 ծառային պարգեւել է։ Եւ աղախիններն ու նորանց զաւակները մօտեցան, և խոնարհութիւն արին։
7 Լիան էլ և իր զաւակները մօտեցան, և խոնարհութիւն արին. և յետոյ Յովսէփ և Ռաքէլ մօտեցան և խոնարհութիւն
8 արին։ Եւ Եսաւ ասաց. Ինչ են այս քո բոլոր խումբը, որին ես պատահեցի. և Յ-ՀՈ ասաց. Իմ տիրոջ առջև շնորհք գտնելու
9 համար է։ Եւ Եսաւն ասաց. Ես շատ ունիմ, եղբայր իմ, քոնը քեզ լինի։
10 Եւ Յակոբն ասաց. Ոչ, խնդրեմ՝ եթէ քո առջև շնորհք գտայ, ընդունիր ընծաս իմ ձեռքից, վասնզի տեսայ քո երեսը Աստուծոյ երեսը տեսնելու
11 պէս, և ինձ համբեցար։ Խնդրեմ՝ ընդունիր քեզ բերած ընծաս. որովհետև Աստուած ողորմեց ինձ, և որովհետև ես ամեն բան ունիմ. և ստիպեց նորան, և նա էլ ընդունեց։
12 Եւ նա ասաց. Վեր կեցնանք գնանք. և ես գնամ քո առջև։
13 Եւ Յ-ՀՈ-Ն ասաց նորան. Իմ տէրը գիտէ որ զաւակները փափուկ են, և իմ հետ եղած հօտերն ու արջառները ձագերով են. և եթէ մի օր աւտիկ քշեն նորանց, բոլոր հօտերը կ'մեռնին։
14 Որովհետև թող իմ տէրն իր ծառայի առջև անցնէ և ես մինակ կամաց կամաց կ'գնամ իմ առջև եղած անասուններուն ոտքովը և որդանների ոտքովը, մինչև որ գամ
15 Սէիր իմ տիրոջ մօտ։ Եւ Եսաւն ասաց. Թող իմ հետ եղող ժողովրդից քեզ մօտ ձգեմ. և նա ասաց. Ինչո՞ւ է պէտք. թող իմ տիրոջ առջև շնորհք գտնեմ։
16 Այսպէս Եսաւ դարձաւ Եսաւն այն օրը իր ճանապարհովը դէպի Սէիր։
17 Եւ Յակոբը Սոկքոթ գնաց,

և իր համար տուն շինեց, և իր հօտերի համար փարախներ շինեց. նորա համար այնտեղի անունը Սոկքոթ տուեց։

18 Եւ Յակոբը Միջագետից գալիս Սիքեմացոց Սաղէմ քաղաքը հասաւ, որ Քանանու երկրումն է, և քաղաքի առջև բնակեց։ 19 Եւ այն արտի կալուածքը, ուր կանգնեցրել էր իր վրանը, Սիքեմի հայր Եմորից ձախտ առել էր հարիւր կէսիթայի*. Եւ այնտեղ 20 մի սեղան շինեց, և անունը էլ-Էլոհէ-Իսրայէլ դրաւ։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Լիայի աղջիկը Դինան, որին նա ծնել էր Յակոբի համար, ելաւ այն երկրի աղջկերանց տեսնելու։ 2 Եւ այն երկրի իշխան Խեւացի Եմորի որդի Սիքեմը տեսաւ նորան, և առաւ ու պառկեց նորա հետ, և պղծեց նորան։
3 Եւ նորա հոգին Յակոբի Դինա աղջկան յօրեց. և սիրեց այն աղջկանը. և աղջկայ հետ քաղցրութեամբ խօսեց։ 4 Եւ Սիքեմ խօսեց իր հօր Եմորի հետ ասելով, Ահա դուստրն ինձ համար կին առ։ 5 Եւ Յակոբը լսեց, որ նա իր Դինա աղջկան պղծեց. բայց նորա որդիները նորա հօտերի հետ դաշտումն էին. և լուեց Յակոբը մինչև նորանց գալը։
6 Եւ Սիքեմի հայր Եմորը դնաց Յակոբի մօտ, նորա հետ խօսելու։ 7 Եւ Յակոբի որդիքը հէնց որ լսեցին՝ եկան դաշտից. և մարդիկը նեղացան և շատ բարկացան, որ Իսրայէլի մէջ անպատմութիւն արաւ Յակոբի աղջկան հետ պառկելով, որ այսպէս լինելու չէր։
8 Եւ Եմորը խօսեց նորանց հետ և ասաց. Իմ Սիքեմ որդու հոգին ձեր աղջկան սիրահարեց. խնդրեմ նորան կին տուէք նորա համար։
9 Եւ մեզ հետ խնամութիւն արէք. ձեր աղջկերքը մեզ տուէք, և մեր աղջկերքը ձեզի համար առէք։
10 Եւ մեզ հետ բնակեցէք, և այս

*փողի անուն է։

երկիրը ձեր առջև կ'լինի. նորա-
նում բնակեցէք և առուտուր ա-
րէք, և նորանում կալուածքներ
11 առացէք: Եւ Սիւքէմն ասաց ողջ-
կայ հօրը և նորա եղբայրներին.
Թող ձեր առջև շնորհք գանեմ,
12 և ինչ որ ինձ ասէք, կ'տամ: Ինձ
վերայ դրէք խիստ շատ օժիտ և
ընծայ, և կտամ ինչպէս որ ինձ
ասէք, միայն թէ աղջկին ինձ
13 կին տուէք: Եւ Յակոբի որդիքը
խաբէութեամբ պատասխանեցին
Սիւքէմին և նորա հօրը Եմոռին,
և ասացին, (որ իրենց Դինա քրո-
14 ջը պղծել էր,) Եւ ասացին նո-
րանց. Մենք չենք կարող այս բա-
նը անել, որ մեր քոյրը տանք մի
մարդու, որ անթլփատ է. քան
որովհետև դա մեզ համար ամօթ բան
15 է. Բայց միայն սորանով կ'հա-
մաձայնենք ձեզ հետ, եթէ մեզ
պէս լինիք՝ ձեզանից ամեն մի ա-
16 րուն թլփատուելով, Այն ժա-
մանակ մեր աղջկերքը ձեզ կը
տանք, և ձեր աղջկերքը մենք
կ'առնենք, և ձեզ հետ կ'բնա-
կենք, ու մէկ ժողովուրդ կ'լի-
17 նինք: Բայց եթէ մեզ ականջ չի
դնէք որ թլփատուիք, այն ժա-
մանակ մենք մեր աղջիկը կ'տա-
18 նենք ու կ'գնանք: Եւ նորանց
խօսքը հաճելի եղաւ Եմոռին, և
19 Եմոռի որդի Սիւքէմին: Եւ այն
պատանին չուշացաւ այս բանը
անելու, որովհետև Յակոբի աղջ-
կան հաւանել էր, և նա իր հօր
տանը մէջ եղողների ամենից պա-
տուականն էր:

20 Եւ Եմոռը և նորա որդի Սի-
քէմը եկան իրանց քաղաքի դու-
ռը, և իրանց քաղաքի մարդ-
21 կանց հետ խօսեցին ասելով, Այս
մարդիկը խաղաղութեամբ են
վարուում մեզ հետ. ուստի թող
նրանք երկրում բնակին և նորա մէջ
առուտուր անեն. և ահա երկիրը
բաւական է նորանց առջև, էէ-
նորանց աղջկերքը մեզ համար կին
առնենք, և մեր աղջկերքը նորանց
22 տանք: Միայն սորանով են այն
մարդիկը մեզ հետ համաձայնում
որ մեզ հետ բնակեն մէկ ժողո-
վուրդ լինելու համար, որ մեզա-
նից ամեն արուն թլփատուի ինչ-
պէս որ նորանք են թլփատուում:
Նորանց հօտերը և նորանց ստաց- 23
ուածքը, և ամեն անասունները
միթէ մերը չեն լինել. միայն թէ
մենք նորանց հետ համաձայնենք,
որ մեզ հետ բնակեն: Եւ լսեցին 24
բին և նորա որդի Սիւքէմին ա-
կանջ դրին նորա քաղաքի դռնից
դուրս եկողների բոլորը. և ամեն
արու որ նորա քաղաքի դռնից
դուրս էր գալիս, թլփատուեցաւ:

Եւ եղաւ երրորդ օրը, երբոր 25
նորանք ցաւի մէջն էին, Յակոբի
երկու որդիքը Շմաւոն ու Ղևի
Դինայի եղբայրները ամեն մէկին
իր սուրն առաւ, և համարձակ
մտան քաղաքը, և սպանեցին
ամեն արուն. Եւ Եմոռին և նո- 26
րա որդի Սիւքէմին սուրի բերա-
նով սպանեցին. և Սիւքէմի տու-
նից առին Դինան և դուրս եկան:
Եւ Յակոբի որդիքը այն սպան- 27
ուածների վերայ եկան, և քա-
ղաքը կողոպտեցին, որ իրանց
քրոջը պղծել էին: Նորանց հօ- 28
տերը և նորանց արջառները և
նորանց էշերը և քաղաքում ե-
ղածը և դաշտում եղածը առին:
Եւ նորանց բոլոր ստացուածքը և
նորանց բոլոր աղերքն ու կանայ- 29
քը գերի առին և կողոպտեցին
ան մէջ բոլոր գոնուածը: Եւ 30
Յակոբն ասաց Շմաւոնին և Ղևի-
ին, Ինձ այս երկրի բնակչաց Քա-
նանացոց և Փերեզացոց մէջ ա-
տելի անելով ինձ փորձանքի մէջ
գցեցիք. և ինձ հետ քիչ մարդիկ
կան, նորանք ինձ վերայ կ'հաւա-
քուին, ինձ կ'զարկեն, կ'կորչեմ
ես և իմ տունը: Եւ նորանք ա- 31
սացին. Ապա բողի պէս պէ՞տք էր
անել մեր քրոջը:

ԳԼ. ԼԵ

Եւ Աստուած ասաց Յակոբին. 1
Վե՛ր կաց, ելիր գէպի Բեթել և
այնտեղ բնակիր, և այնտեղ մի
սեղան շինիր Աստուծոյն որ քեզ
երևեցաւ, քո եղբայր Եսաւի ե-
րեսից փախած ժամանակդ: Եւ 2
Յակոբն ասաց իր ընտանիքին և բո-

լը իր հետ եղողներին. Հեռացրէք օտար աստուածները որ կան ձեր միջում, և մաքրուեցէք, և 3 ձեր հանդերձները փոխեցէք։ Եւ վեր կենանք երթանք վեր դէպի Բեթէլ. և այնտեղ անդան շինեմ այն Աստուծոյն, որ իմ նեղութեան օրը ինձ լսեց, և իմ գնացած ճանապարհումն ինձ հետ էր։ 4 Եւ բոլոր օտար աստուածները, Յակոբին տուին, որ իրանց ձեռքին էր, և իրանց ականջներումն եղած օղերը. և Յակոբը թաղեց նորանց Սիւքէմի մօտ եղած բե- 5 ւեկինս տակ։ Եւ ճանապարհ եղան. և իրանց շուրջը եղած քաղաքների վերայ Աստուծոյ վախը բնակաւ, և Յակոբի որդոց հետեւից չընկան։ 6 Եւ Յակոբն եկաւ Լուզ, որ Քանանու երկրումն է, այսինքն Բեթէլ էր, ինքն և իր 7 հետ եղող բոլոր ժողովուրդը. Եւ այնտեղ մի սեղան շինեց և այնտեղի անունը Էլ-Բեթէլ դրաւ. որովհետև Աստուած այնտեղ իրան երեւացել էր, երբոր իր եղբօր երեսից փախչում էր։

8 Եւ Ռեբեկայի դայեակը Դեբորա մեռաւ, և Բեթէլից ցած կողմը կաղնու տակ թաղուեցաւ. և նորա անունը Ալօն-պախութ դրուեցաւ։

9 Եւ Աստուած դարձեալ երեեցաւ Յակոբին երբոր նա Միջագետից գալիս էր, և օրհնեց նո- 10 րան։ Եւ Աստուած ասաց նորան. Քո անունը Յակոբ է. քո անունը այլեւս Յակոբ չասուի, այլ Իսրայէլ լինի քո անունը. և նորա անունը Իսրայէլ դրաւ։ 11 Եւ Աստուած ասաց նորան. Ես եմ Ամենակարող Աստուածը. աճիր և շատացիր. քեզանից ազգ և ազգերի բազմութիւն լինի, և քո երանքից թագաւորներ դուրս գան 12 Եւ այն երկիրը, որ Աբրահամին և Իսահակին տուի, քեզ կտամ. և քեզանից յետոյ քո սերունդին 13 կ'տամ այն երկիրը։ Եւ Աստուած բարձրացաւ նորանից այն տեղը, ուր որ նորա հետ խօսեց։ 14 Եւ Յակոբը մի արձան կանգնեց- րեց այն տեղը ուր որ Աստուած

իր հետ խօսեց, մի քարի արձան և նորա վերայ թափելու նուէր թափեց, և նորա վերայ իւղ թա- փեց։ Եւ Յակոբն այնտեղի ա- 15 նունը, ուր որ Աստուած իրան հետ խօսեց, Բեթէլ դրաւ։

Եւ Բեթէլից ճանապարհուե- 16 ցան. և մի քիչ ճանապարհ կար մինչև Եփրաթա ուր որ Ռաքէլը ծնաւ, և ծնելիս շատ դժուարու- թիւն քաշեց։ Եւ եղաւ երբոր 17 ծնելիս շատ դժուարութիւն էր քաշում, ծնուցիչն ասաց նորան. Մի վախենար, վասնզի սա էլ քեզ համար տղայ է։ Եւ եղաւ երբոր 18 նորա հոգին դուրս էր գալիս (վա- սընզի մեռաւ,) նորա անունը Բե- նոնի դրաւ. բայց նորա հայրը Բենիամին կոչեց նորան։ Եւ Ռա- 19 քէլը մեռաւ, և թաղուեցաւ Եփ- րաթայի ճանապարհին, որ Բեթ- լէհէմն է։ Եւ Յակոբը նորա գե- 20 բեզմանի վերայ մի արձան կանգ- նեցրեց, որ մինչև այսօր Ռաքէլի գերեզմանի արձանն է։

Եւ Իսրայէլը ճանապարհուե- 21 ցաւ, և իր վրանը բացաւ Միկ- ոտլ-եդերի այն կողմը։ Եւ եղաւ 22 երբոր Իսրայէլ այն երկրումը բը- նակում էր, Ռուբէն գնաց և իր հօր հարճ Բղղայի հետ պառ- կեց. և Իսրայէլ լսեց ։։

Եւ Յակոբի որդիքը տասներկու էին։ Լիայի որդիքը Յակոբին անդ- րանիկը Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար և Զաբուղոն. Ռաքէլի որդիքը՝ Յովսէփ և Բե- նիամին. Եւ Բղղայի ազախին 25 Բղղայի որդիքը՝ Դան և Նեփ- թաղիմ։ Եւ Լիայի ազախին Զէլ- փայի որդիքը՝ Գադ և Ասեր։ Ս- րանք են Յակոբի որդիքը, որ Մի- ջագետում ծնուեցան նորա հա- մար։

Եւ Յակոբը եկաւ իր հայր Ի- 27 սահակի մօտ Մամբրէ Աբրայի քաղաքը՝ այսինքն Քեբրան, ուր որ Աբրահամ և Իսահակ պանդխ- տութեամբ բնակեցին։ Եւ Իսա- 28 հակի օրերը հարիւր ութսուն տա- րի եղան։ Եւ Իսահակը ծերացած 29 և օրերից կշտացած՝ ամանեց հո- գին և մեռաւ, և իր ժողովրդին

խառնուեցաւ. և նորա որդիքը Եաւան ու Յակոբը թաղեցին նորան։

ԳԼ. Լ.Զ

1 Եւ *սորանք են Եաւսի սյսինքն*
2 *Եդոմի ծնունդները։ Եաւս իր կանայքը Քանանու աղջիկներից առաւ, Քեռացի Ելօնի աղջիկը Ադդային, և խեւացի Սեբեգօնի աղջկայ Անայի աղջիկը Ողիբամա-*
3 *յին, և Իսմայէլի աղջիկ Նա-*
4 *բեօթի քոյր Բասեմաթին։ Եւ Ադդան ծնաւ Եաւսի համար Ե-ղիփազին, Բասեմաթը ծնաւ Ռա-*
5 *գուէլին, Եւ Ողիբաման ծնաւ Յեուսին և Յեղղոմին և Կորխին. սորանք են Եաւսի որդիքը, որ ծնուեցան իր համար Քանանու երկրումը։*
6 Եւ Եաւսն առաւ իր կանայքը և տղերքը և աղջկերքը և իր տան բոլոր մարդիկը և իր հօտերն ու իր բոլոր անասուններն և իր բոլոր առացուածքը, որ Քանանու երկրումն առացաւ, և գնաց իր եղբայր Յակոբի երեսից մի երկիր։
7 Վասն զի իրանց առացուածքը շատ էին որ չէին կարող մէկ տեղ բնակել. և երկիրը չէր կարողանում առնել նորանց պանդխտութիւնը նորանց հօտերի պատճառով։ Եւ Եաւսը Սէիր լեռնումը բնակեց. Եաւսը Եդոմն է։
9 Եւ սորանք են Եդոմացոց հայր Եաւսի ծնունդները Սէիր լեռնումը։
10 Եաւսի որդոց անունները սորանք են՝ Եաւսի կնոջ Ադդայի որդին Եղիփազ, Եաւսի Բասեմաթի որդին Ռագուէլ։
11 Եւ Եղիբազի որդիքն էին՝ Թեման, Ո-
12 մար և Զեփոփ և Գոթոմ և Կենէզ։ Եւ Թամնան Եաւսի որդի Եղիփազի հարճն էր, որ Եղիփազի համար Ամաղէկին ծնաւ։ Եաւսի կնոջ
13 Ադդայի որդիքը սորանք էին։ Եւ Ռագուէլի որդիքը սորանք են. Նահաթ, Զարա, Սամմա, ու Մէզա. սորանք էին Եաւսի կնոջ
14 Բասեմաթի որդիքը։ Եւ Եաւսի կնոջ Սէբեգօնի աղջիկ Անայի աղջիկ Ողիբամայի որդիքը սորանք

են. և ծնաւ Եաւսի համար Յեուսին և Յեղղոմին և Կորխին։

Սորանք են Եաւսի որդիների իշ- 15
խանները. Եաւսի անդրանիկ Եղի-բազի որդիներիններ՝ Թեմանի իշխան, Ոմար իշխան, Սեփոլ իշխան, Կե- 16
նէզ իշխան, Կորխ իշխան, Գո-թոմ իշխան, Ամաղէկ իշխան։ Սորանք են Եդոմի երկրում Ե-ղիբազի իշխանները. սորանք Ադ-դայի որդիքն էին։ Եւ Եաւսի որ- 17
դի Ռագուէլի որդիքը սորանք են. Նահաթ իշխան, Զարա իշխան, Սամմա իշխան, Մէզա իշխան։ Սորանք են Եդոմի երկրում Ռա-գուէլի իշխանները. սորանք Եաւ-սի կնոջ Բասեմաթի որդիքն էին։ Եւ սորանք են Եաւսի կնոջ Ողի- 18
բամայի որդիքը. Յեուս իշխան, Յեղղոմ իշխան, Կորխ իշխան. սորանք են Եաւսի կնոջ Անայի աղջիկ Ողիբամայի իշխանները։ Սորանք են Եաւսի սյսինքն Ե- 19
դոմի որդիները, և սորանք են նորանց իշխանները։

Եւ այն երկրում բնակող Քո- 20
ռեցի Սէիրի որդիքը սորանք են. Ղոտան և Սոբագ, և Սեբեգօն և Անա, Եւ Դիսաոն և Եսեր և 21
Դիսան։ Սորանք են Սէիրի որդիք Քառեցոց իշխանները Եդոմի երկ-րում։ Եւ Ղոտանի որդիքն էին 22
Քառի և Հեման, և Ղոտանի քոյ-րը Թամնա։ Եւ Սոբագի որդիքը 23
սորանք են. Գաղուամ, և Մա-նահաթ, և Գեբոգ, Սեփով և Օնամ։ Եւ Սեբեգօնի որդիքը սո- 24
րանք են. Այիա և Անա. սա այն Անան է, որ իր հօր Սեբեգօնի էշերն արածեցնելիս անապատումը ջերմուկներ գտաւ։ Եւ սորանք են 25
Անայի որդիքը՝ Դիսաոն, և Անայի աղջիկը Ողիբաման։ Եւ սորանք են 26
Դիսաոնի որդիքը. Ամադան, և Եա-բան, և Յեհրան և Քառան։ Սո- 27
րանք են Եսերի որդիքը. Բաղդան և Զաւաան և Ական։ Սորանք են 28
Դիսանի որդիքը՝ Հուս և Արան։ Սորանք են Քառեցոց իշխանները։ 29
Ղոտան իշխան, Սոբագ իշխան, Սեբեգօն իշխան, Անա իշխան, 30
Դիսաոն իշխան, Եսեր իշխան, Դի-սան իշխան. սորանք են Քառեցոց

իշխանները Աէսաւի երկրումը իրանց
իշխանութեանը ։——Դէդ Համե-
մատ ։
31 Եւ սորանք են այն թագաւոր-
ները, որ Եդոմի երկրումը թա-
գաւորեցին, Իսրայէլի որդոց վե-
րայ մի թագաւոր թագաւորելուց
32 առաջ ։ Եւ Բէովրի որդին Բա-
ղան թագաւորեց Եդոմմում. և
նորա քաղաքի անունը Դինհաբա
33 էր ։ Եւ Բաղան մեռաւ, և նորա
փոխանակ թագաւորեց Յոբաբը
34 Զարայի որդի Յովաբը ։ Եւ Յո-
վաբը մեռաւ, և նորա փոխանակ
Թեմանացոց երկրից Հուսամը թա-
35 գաւորեց ։ Եւ Հուսամը մեռաւ,
և նորա փոխանակ Բադադի որդի
Ադադը թագաւորեց, Մովաբի
դաշտումը Մադիանացիներին կո-
տորողը. և նորա քաղաքի անու-
38 նը Աւիթ էր ։ Եւ Ադադը մեռաւ,
և նորա փոխանակ Մասրեկացի
37 Սամղան թագաւորեց ։ Եւ Սա-
մղան մեռաւ, և նորա փոխա-
նակ Գետի մօտ լինող Նոբայիթից
38 Սաուղը թագաւորեց ։ Եւ Սա-
ուղը մեռաւ, և նորա փոխանակ
Աքբորի որդի Բաաղանանը թա-
39 գաւորեց ։ Եւ Աքբորի որդի
Բաաղանանը մեռաւ, և նորա
փոխանակ Ադադը թագաւորեց.
և նորա քաղաքի անունը Փոգով
էր. և նորա կնոջ անունը Մե-
տաբեէլ, որ Մէզաաբի աղջկան
Մատրեթին աղջիկն էր ։
40 Եւ սորանք են Եսաւի իշխան-
ների անունները իրանց տոհմերի
և իրանց տեղերի համեմատ ի-
րանց անուններով. Թեմնա իշ-
խան, Գաղուա իշխան, Յեթեթ
41 իշխան, Ողիբամա իշխան, Էլա
42 իշխան, Փինոն իշխան, Կենէզ իշ-
խան, Թեման իշխան, Մաբզար
իշխան, Մագեդիէլ իշխան, Ի-
43 րամ իշխան ։ Սորանք են Եդոմի
իշխանները իրանց բնակութեանը
համեմատ իրանց տոհմատոհմի
երկրումը. այս է Եսաւը Եդո-
մացոց Հայրը ։

ԳԼ. ԼԷ

1 Եւ Յակոբն իր հօր պանդխտա-

ցած երկրումը Քանանու երկրու-
մը բնակեց ։ Սորանք են Յակոբի 2
ծնունդները. Յովսէփ տասնեօ-
թը տարեկան էր իր եղբայրների
հետ հօտերը արածացնում էր, և
պատանի էր իր հօր կանանց Բաղ-
ղայի որդիների հետ և Զելփայի
որդիների հետ. և Յովսէփը նո-
րանց չար լուրը բերում էր իրանց
հօր մօտ ։ Եւ Իսրայէլը իր բոլոր 3
որդիներից աւելի սիրում էր Յով-
սէփին, վասնզի նա իր ծերութեան
որդին էր. և թևքերով պատուա-
ճան շինեց նորա համար ։ Եւ նո- 4
րա եղբայրները տեսան, որ իրանց
հայրը սիրում էր նորան իր բո-
լոր եղբայրներից աւելի, ատեցին
նորան, և խաղաղութեամբ չէին
կարողանում խօսել նորա հետ ։
Եւ Յովսէփը մի երազ տեսաւ, 5
և իր եղբայրներին պատմեց. և
նորանք աւելի ատեցին նորան ։
Եւ ասաց նորանց. Խնդրեմ, ա- 6
կանջ դրէք այս իմ տեսած երա-
զը. Ահա մենք դաշտումը որաներ 7
էինք կապում, և ահա իմ որան
ելաւ, և ուղիղ կանգնեց. և ա-
հա ձեր որաները նորա շուրջը
կանգնեցին, ու իմ որային երկր-
պագութիւն արին ։ Եւ նորա եղ- 8
բայրներն ասացին նորան. Իրա՞ւ
մեր վերայ թագաւորելու ես, կամ
իրաւ մեր վերայ տիրե՞լու ես. և
նորա երազների և խօսքերի հա-
մար աւելի ատեցին նորան ։ Եւ 9
մի ուրիշ երազ էլ տեսաւ, և
իր եղբայրներին պատմեց նորան,
և ասաց. Ահա մի երազ էլ տե-
սայ, և ահա արեգակը և լուսի-
նը և տասնումէկ աստղեր ինձ եր-
կրպագութիւն էին անում ։ Եւ 10
իր հօր ու իր եղբայրներին պատ-
մեց. և իր հայրը յանդիմանեց
նորան, և ասաց նորան. Այս ի՞նչ
երազ է որ տեսել ես. մի՞թէ
ես և քո մայրը և քո եղբայրնե-
րը իրաւ գալու ենք որ մինչև գե-
տին քեզ խոնարհութիւն անենք ։
Եւ եղբայրները նախանձեցին նո- 11
րա վերայ, բայց հայրը պահեց
այս խօսքը ։
Եւ նորա եղբայրները գնացին 12
իրանց հօր հօտերը Սիւքեմում

13 արհամարհել: Եւ Իսրայէլն ա-
սաց Յովսէփին. Զի՞ որ քո եղբայր-
ները Սիւքեմովմ արհամարհեալ
են. ահ քեզ նորանց մօտ ուղար-
14 կեմ. և նա ասաց. Ահա ես: Եւ
ասաց նորան. Գնա տես քո եղ-
բայրներդ առողջ են, և հօտերդ
ողջ են, և ինձ համար լուր բեր:
Եւ նորան ուղարկից Փերբոնի հո-
վիտից. և նա էլ Սիւքեմ եկաւ:
15 Եւ մի մարդ գտաւ նորան, որ
դաշտումը թափառումմ էր. և
այն մարդ հարցրեց նորան ասե-
16 լով. Ի՞նչ ես որոնում: Եւ նա
ասաց. Իմ եղբայրներին եմ ո-
րոնում. խնդրեմ ասիր ինձ, նո-
րանք որտեղ են արհամարհեալ:
17 Եւ այն մարդն ասաց. Այստե-
ղից չուեցին. որովհետև լսեցի որ
ասում էին՝ Գնանք Դոթայիմ:
Եւ Յովսէփն իր եղբայրների ե-
տևից գնաց և նորանց Դոթայի-
18 մի մէջ գտաւ: Եւ երբոր նորան
հեռուանց տեսան, դեռ ինքը նո-
րանց չմօտեցած, դաւաճանու-
թիւն արին՝ նորան սպանելու.
19 Եւ իրար ասացին. Ահա այն ե-
20 րազ տեսնողը գալիս է. Եւ հի-
մա եկէք սպանենք նորան, և գու-
բերի մէկի մէջ գցենք նորան.
և ասենք՝ թէ մի չար գազան կե-
րել է նորան. և տեսնենք նորա
21 երազները ինչ կ'լինին: Եւ Ռու-
բէնը լսեց և նորանց ձեռքիցն ա-
զատեց նորան, ասելով. Չ'սպա-
22 նենք նորան: Եւ Ռուբէնն ասաց
նորանց. Արիւն մի թափէք. նո-
րան այս գուբը գցեցէք որ անա-
պատում է, և նորան ձեռք մի
զարկէք. որպէսզի ազատէր նո-
րան նորանց ձեռքիցը որ իր հօ-
րը դարձնէր:
23 Եւ եղաւ հէնց որ Յովսէփն իր
եղբայրների մօտ եկաւ, մերկացը-
րին Յովսէփին իր պատմուճանի-
ցը, այսինքն իր վերայի թևքե-
24 րով պատմուճանից, Եւ առին
նորան և գուբը գցեցին. և գու-
բը դատարկ էր, ջուր չկար:
25 Եւ նստան հաց ուտելու. և ի-
րանց աչքերը բարձրացրին և տե-
սան, և ահա Իսմայէլացիների
մէկ կարաւանը գալիս էր Գա-
ղաադից, և իրանց ուղտերը հա-
մեմունքով և բալասանով և զը-
մուռսով բեռնած գնում էին, որ
տանեն ցած Եգիպտոս: Եւ Յու- 26
դան ասաց իր եղբայրներին. Ի՞նչ
օգուտ՝ եթէ մեր եղբօրը սպա-
նենք, և նորա արիւնը ծածկենք.
Եկէք Իսմայէլացիներին ծախենք 27
նորան, և մեր ձեռքը նորան չի
դպչի. վասնզի նա մեր եղբայրը՝
մեր մարմինն է. և նորա եղբայր-
ները լսեցին: Եւ Մադիանացի 28
վաճառականները անցնում էին.
և Յովսէփին գուբիցը քաշեցին ու
դուրս հանեցին, և Իսմայէլացի-
ներին ծախեցին Յովսէփին քսան
արծաթի. նորանք էլ Յովսէփին
տարին Եգիպտոս: Եւ Ռուբէնը 29
դարձաւ դէպի գուբը, և ահա
Յովսէփը գուբումը չէր. և իր հան-
դերձները պատառեց, Եւ դար- 30
ձաւ իր եղբայրներին և ասաց.
Տղան չկայ, և ես ո՞ւր գնամ:
Եւ առին Յովսէփի պատմու- 31
ճանը, և այծերից մի նոխազ մոր-
թեցին, և պատմուճանը արիւնի
մէջ թաթախեցին: Եւ ուղար- 32
կեցին թևքերով պատմուճանը,
ու բերին իրանց հօր մօտ, և ա-
սացին. Սա գտել ենք, հիմա ճա-
նաչիր թէ սա քո որդու պատ-
մուճա՞նն է, թէ ոչ: Եւ նա ճա- 33
նաչեց նորան, և ասաց. Իմ որ-
դու պատմուճանն է, մի չար գա-
զան կերել է նորան. Յովսէփն
անպատճառ պատառուել է: Եւ 34
Յակոբը պատառեց իր հանդերձ-
ները, և քուրձ հագաւ իր մէջքի
վերայ և իր որդու համար շատ
օրեր սուգ արաւ: Եւ նորա բո- 35
լոր որդիները և նորա բոլոր աղջ-
կերքը վեր կացան նորան մխիթա-
բելու, բայց նա մերժում էր մխի-
թարուիլը, և ասաց. Ես սուգով
կ'իջնեմ գերեզմանը իմ որդու
մօտ: Եւ նորա հայրը լացաւ նո-
րա համար: Եւ Մադիանացիները 36
ծախեցին նորան Եգիպտոսում
Փարաւոնի ներքինի՝ պետափրէս
գահճապետին:

ԳԼ. ԼՀ

Եւ եղաւ որ այն ժամանակ Յու- 1

դան իր եղբայրների մօտից ելաւ,
և գնաց մի Ոդողամացի մարդու
2 մօտ, անունը Իրաս։ Եւ Յուդան
Շաւա անուանով մի Քանանացու
աղջկան տեսաւ, և առաւ նորան,
3 և մտաւ նորա մօտ։ Եւ նա յղա-
ցաւ և որդի ծնաւ և նորա անունը
4 Եր դրաւ։ Եւ դարձեալ յղացաւ և
որդի ծնաւ, և նորա անունը Օ-
5 նան դրաւ։ Եւ դարձեալ մի որ-
դի ծնաւ, և նորա անունը Սելօմ
դրաւ. և Յուդա Քեզիբաւմն էր
նորան ծնելիս։

6 Եւ Յուդան իր առաջինեկ տղայ
Երի համար կին առաւ, անունը
7 Թամար։ Եւ Յուդայի առաջինե-
կը Եր չար էր Եհովայի առջև.
8 և Եհովան սպանեց նորան։ Եւ
Յուդան ասաց Օնանին. Մտիր
քո եղբօր կնոջ մօտ, և տպրու-
թեան պարտքը կատարիր նորա
համար, և քո եղբօր համար սե-
9 րունդ հանիր։ Եւ Օնան գիտաց,
որ սերունդը իրանը չի լինելու. նո-
րա համար երբոր իր եղբօր կնոջ
մօտ էր մտնում, ՝երբմ գետինն էր
Թափում, որ իր եղբօրը սերունդ
10 չտայ։ Եւ չար երևեցաւ այս բա-
նը Եհովայի առջև որ նա արաւ,
11 և նորան էլ սպանեց։ Եւ Յու-
դան իր հարս Թամարին ասաց.
Որևայրի նստիր քո հօր տունը
մինչև որ իմ Սելօմ որդին մեծա-
նայ. վասն զի ասաց. Մի գուցե
նա էլ իր եղբայրների պէս մեռ-
նի. և Թամար գնաց ու իր հօր
տունը նստեց։

12 Եւ շատ օրերից յետոյ մեռաւ
Շուայի աղջիկը՝ Յուդայի կինը. և
Յուդան մխիթարուել էր, և գնաց
Թամնա իր Հօտերը ոտրակուսր
անողների մօտ ինքը և իր բարե-
13 կամը Ոդողամացի Իրաս։ Եւ
պատմեցին Թամարին ասելով. Ա-
հա քո սկեսրայրը դէպի Թամնա
է գուրս եկել իր ոչխարները ա-
14 րածկուսր անելու։ Նա էլ իր որև-
այրութեան հանդերձները հա-
նեց իր վերայից, և քողով ծած-
կուեցաւ և փաթաթուեցաւ, և
Թամնայի ճանապարհումը եղող
Ենայիմի մուտքումը նստեց. վասն
զի տեսաւ որ Սելօմը մեծացել էր,
բայց իրան նորա համար կին չի
տուին։ Եւ Յուդան տեսաւ նո- 15
րան և բոզ կարծեց, վասն զի
երեսը ծածկել էր։ Եւ ճանա- 16
պարհին դէպի նորան դարձաւ և
ասաց. Խնդրեմ, թող քեզ մօտ
մտնեմ. որովհետև չէր գիտում
թէ նա իր հարսն էր։ Եւ նա ա-
սաց. Ի՞նչ կ՚տաս ինձ որ ինձ մօտ
մտնես։ Նա էլ ասաց. Ես մի ոչ- 17
խի ուլ կ՚ուղարկեմ հօտերիցը.
նա ասաց. Եթէ գրաւ տաս մին-
չև ուղարկելդ։ Եւ Յուդան ա- 18
սաց. Ինչ գրաւ տամ քեզ. և
նա ասաց. Քո կնիքը և ժապա-
ւէնը և գաւազանը. նա էլ տուա
նորան, և մտաւ նորա մօտ, և
Թամարը յղի մնաց նորանից։ Եւ 19
վեր կացաւ գնաց, և իր վերայից
քողը հանեց, և իր որևայրու-
թեան հանդերձները հագաւ. Եւ 20
Յուդան ոչխի ուլն ուղարկեց իր
բարեկամ Ոդողամացու ձեռքով,
որ այն կնոջ ձեռքից գրաւն առ-
նէ. բայց նա չգտաւ նորան։ Եւ 21
այնտեղի մարդկանցից հարցրեց
ասելով. Ո՞ւր է այն բոզը որ Ե-
նայիմում ճանապարհի վերայ էր.
և նորանք ասացին. Այս տեղ
բոզ չկար։ Եւ դարձաւ Յուդայի 22
մօտ, և ասաց. Չգտայ նորան,
և այն տեղի մարդիկն էլ ասացին
Թէ Այստեղ բոզ չկար։ Եւ Յու- 23
դան ասաց. Թող նրան լինի, մի-
այն Թէ խայտառակ չլինինք, ա-
հա ես այս ուլը ուղարկեցի, և
դու չգտար նորան։ Եւ եղաւ որ 24
երեք ամսից յետոյ Յուդային
պատմեցաւ՝ ասելով. Քո հարս
Թամարը պոռնկացել է, նաև ա-
հա պոռնկութիւնից յղի է. և
Յուդան ասաց. Հանեցէք նորան,
և պէտք է սրուի։ Երբոր նորան 25
դուրս էին հանում, նա ՝ր՚ա՚՚ը
իր սկեսրայրին ուղարկից ասելով.
Ես այս բաների տէրոջից եմ յղի.
նաև ասաց. Խնդրեմ՝ ճանաչիր
Թէ որուն է այս կնիքը և ժա-
պաւէնը և գաւազանը։ Եւ Յու- 26
դան ճանաչեց և ասաց. Նա ին-
ձանից արդար է. վասն զի նորան
իմ որդի Սելօմին չտուի. և այլ
ևս չգիտաց նորան։

27 Եւ եղաւ որ նորա ծնած ժա-
ամանակն սկա նորա արգանդումը
28 երկուորեակ էին։ Եւ եղաւ որ
ծնանելիս, ձեռքը մեկնեց.
և մանկաբարձն առաւ և նորա
ձեռքն վերայ կարմիր դերձան կա-
պեց ասելով. Առաջ այս ելաւ։
29 Եւ նա հէնց որ իր ձեռքը ետ
քաշեց, սկա նորա եղբայրը ե-
լաւ. և մանկաբարձն ասաց. Ինչո՞ւ
պատռեցիր ցանկը. պատռտու-
մը քեզ վերայ. նորա համար նո-
րա անունը փարէս դրուեցաւ.
Եւ յետոյ ձեռքին կարմիր դեր-
ձան ունեցող եղբայրը ելաւ, և
նորա անունը Զարա դրուեցաւ։

ԳԼ. ԼԹ

1 Եւ Յովսէփին իջեցրին Եգիպ-
տոս. և փարաւօնի ներքինին Ե-
գիպտացի Պետափրէս գահճապե-
տը ծախու առաւ նորան Իսմայե-
լացիների ձեռքից, որոնք նորան
2 այնտեղ իջեցրին։ Եւ Եհովան
Յովսէփի հետ էր, և նա յաջողակ
մարդ էր. և իր Եգիպտացի տի-
3 րոջ տանն էր։ Եւ նորա տէրը
տեսաւ որ Եհովան նորա հետ էր,
և թէ ինչ որ անում էր, Եհո-
վան յաջողում էր նորա ձեռքը-
4 վը։ Եւ Յովսէփը շնորհք գտաւ
նորա առջև, և ծառայում էր
նորան, և նա իր տան վերայ վե-
րակացու արաւ նորան, և իր բո-
լոր ունեցածը նորա ձեռքը յանձ-
5 նեց։ Եւ եղաւ որ նորան իր տան
և իր բոլոր ունեցածի վերայ վե-
րակացու արած ժամանակից յե-
տոյ, Եհովան Եգիպտացու տու-
նը օրհնեց Յովսէփի պատճառով.
և Եհովայի օրհնութիւնը լինում
էր թէ տանը և թէ դաշտումը
6 նորա բոլոր ունեցածի վերայ։ Եւ
իր բոլոր ունեցածը Յովսէփի ձեռ-
քին թողեց. և նորա մօտ եղած
մէկ բանից տեղեկութիւն չունէր,
բացի իր կերած հացից։ Եւ Յով-
սէփը գեղեցիկ էր դէմքով և գե-
ղեցիկ տեսքով։
7 Եւ եղաւ այս բաներից յետոյ
որ նորա տիրոջը կինը աչք բարձ-
րացրեց Յովսէփի վերայ, և ասաց.
8 Պառկիր ինձ հետ։ Բայց նա մեր-
ժեց, և իր տիրոջ կնոջն ասաց.
Ահա իմ տէրը տանը մէջ ինձ
մօտ ինչ որ կայ չգիտէ. և իր
9 բոլոր ունեցածն իմ ձեռքն է
յանձնել։ Այս տան մէջ ինձա-
նից մեծը չկայ. և ինձանից մի
բան չարգիլեց, բացի քեզանից,
ըստ որում դու նորա կինն ես.
ուրեմն ես ի՞նչպէս գործեմ այս
մեծ չարութիւնը, և Աստծոյ
10 դէմ մեղանչեմ։ Եւ եղաւ քանի
որ նա օրէց օր Յովսէփին ասում
էր, և նա չէր լսում նորան, որ
նորա հետ պառկէ կամ նորա հետ
11 լինի։ Եւ եղաւ որ մի օր իր գոր-
ծը կատարելու համար տուն ե-
կաւ. և այնտեղ տան մէջ տա-
12 նը մարդիկներից մէկը չկար. Եւ
բռնեց նորա հանդերձից ա-
սելով, Պառկիր ինձ հետ. և նա
իր հանդերձը թողեց նորա ձեռ-
քին, և փախաւ գուրս գնաց։
13 Եւ եղաւ երբոր տեսաւ որ իր
հանդերձը նորա ձեռքին թողեց,
14 և գուրս փախաւ, իր տան մարդ-
կանցը կանչեց, և պատմեց նո-
րանց ասելով. Տեսէք, մեզ հա-
մար մի Եբրայեցի բերաւ մեզ
խայտառակ անելու համար. նա
ինձ մօտ եկաւ, որ ինձ հետ պառ-
կէ, ու ես բարձր ձայնով աղա-
15 ղակեցի. Եւ եղաւ երբոր լսեց թէ
իմ ձայնը բարձրացրի և աղաղա-
կեցի, իր հանդերձը ինձ մօտ թո-
ղեց, և փախաւ և գուրս գնաց։
16 Եւ կինը նորա հանդերձը իր մօտ
պահեց, մինչև որ նորա տէրը
17 տուն եկաւ։ Եւ խօսեց նորա հետ
այս խօսքերի պէս ասելով, Ինձ
մօտ եկաւ այն Եբրայեցի ծառան,
որ դու մեզ համար բերիր, որ
18 ինձ խայտառակ անէ։ Եւ եղաւ
երբոր իմ ձայնը բարձրացրի և
աղաղակեցի, իր հանդերձը ինձ
մօտ թողեց, և գուրսը փախաւ։
19 Եւ եղաւ երբոր նորա տէրը լը-
սեց իր կնոջ խօսքերը, որ պատ-
մեց իրան ասելով, Քո ծառան
ինձ այսպիսի բաներ արաւ, նո-
20 րա բարկութիւնը բորբոքեց։ Եւ
Յովսէփի տէրը առաւ նորան և
բանտը դրաւ՝ այն տեղը ուր որ

թագաւորի բանտարկեալները կապուած էին. և այնտեղ բան-
21 տուեմն էր: Բայց ԵՀովան Յովսէփի հետ էր, և ողորմութիւն ցոյց
տուաւ նորան, և բանտապետի առջև շնորհք գտնել տուաւ նո-
22 րան: Եւ բանտապետը Յովսէփի ձեռքը յանձնեց բանտումը եղած
բոլոր բանտարկեալներին. և ա-
մեն ինչ որ այնտեղ անում էին,
23 անողը նա էր: Բանտապետը նո-
րա ձեռքին եղած ոչ մէկ բանին
չէր նայում. վասնզի ԵՀովան նո-
րա հետ էր. և նորա ամեն արած-
ները ԵՀովան յաջողում էր:

ԳԼ. Խ

1 Եւ եղաւ որ այս բաներից յետոյ
յանցանք գործեցին Եգիպտոսի
թագաւորի մատուռակը և հա-
ցապործը իրանց տիրոջ՝ Եգիպտո-
2 ացի թագաւորի դէմ: Եւ փարա-
ւօնը բարկացաւ իր երկու նէրբի-
նիների՝ պաինքն մատուռակապե-
ան և հացապործապետի վերայ.
3 եւ նորանց դահճապետի տան
բանտի մէջ բանտարկեց, ուր որ
4 Յովսէփը բանտարկուած էր: Եւ
դահճապետը Յովսէփին վերակա-
ցու նշանակեց նորանց համար, և
նա ծառայում էր նորանց. և նո-
րանք մի որ ժամանակ մնացին
բանտումը:

5 Եւ երկուսն էլ երազ տեսան՝
ամեն մէկին իր երազը մէկ գիշեր՝
ամեն մէկին իր երազի նշանակու-
թեամբը՝ Եգիպտոսի թագաւորի
մատուռակը և հացապործը, ո-
րոնք բանտումը կապուած էին,
6 Եւ Յովսէփն առաւօտանց նորանց
մօտ եկաւ, և տեսաւ նորանց,
7 որ տրտում էին: Եւ հարցրեց
փարաւօնի նէրբինիներին, որ իր
տիրոջ տանը իր հետ բանտարկ-
ուած էին ասելով, Ինչու համար
ձեր երեսները այսօր տխուր են:
8 Եւ նորանք ասացին նորան. Ե-
րազ ենք տեսել, և նորան մեկ-
նող չկայ: Եւ Յովսէփն ասաց նո-
րանց. Չէ՞ որ Աստուծոյն են մե-
կնութիւնները. խնդ-
րեմ, պատմեցէք ինձ:

9 Եւ մատուռակապետը պատ-
մեց իր երազը Յովսէփին, և ա-
սաց նորան. Երազումս տեսայ,
10 որ առջևս մի որթ կար. Եւ այն
որթի վերայ երեք ուռ կ'այլին, և
հէնց որ բողբոջեց ծաղիկ էլաւ,
և նորա ողկոյզները խաղող հա-
11 ցրին. Եւ փարաւօնի բաժակը իմ
ձեռքին էր. և խաղողներն առի,
և փարաւօնի բաժակի մէջ ճմլե-
ցի, և գաւաթը փարաւօնի ձեռ-
քը տուի: Եւ Յովսէփ նորան ա-
12 սաց. Սա է դորա մեկնութիւնը.
երեք ուռը երեք օր է. Երեք օրից
13 յետոյ փարաւօնը քո գլուխը կը
բարձրացնէ, և քեզ դարձեալ
քո պաշտօնի վերայ կ'դնէ. և փա-
րաւօնի բաժակը նորա ձեռքը կը
տաս այն առաջի սովորութեան
պէս, երբոր նորա մատուռակն
էիր: Բայց ինձ միտքդ բեր, երբ
14 որ քեզ բարիք կ'լինի, և խնդրեմ
ինձ բարեբարութիւն արա, և ինձ
յիշիր փարաւօնի առջև և ինձ
հանիր այս տունից. Վասն զի ի-
15 րաւ գողացուեցայ Եբրայեցոց
երկրից. և այս տեղ էլ ոչ բան
չեմ արել որ ինձ այս գուբը նե-
ուեն:

16 Եւ հացապործապետը տեսաւ
որ լաւ մեկնեց, ասաց Յովսէփին.
Ես էլ երազումս տեսայ, որ գլե-
խիս վերայ երեք նաշխի ասկա-
17 ուներ. Եւ ամենի վերայի ասկա-
ռի մէջ կար փարաւօնի ամեն կե-
րակուրներից, որ հացապործը
շինում է, և թռչուները ու-
տում էին նորանց գլխիս վերայի
18 ասկաուից: Եւ Յովսէփը պատաս-
խանեց, և ասաց. Սա է դորա
մեկնութիւնը. երեք ասկաը ե-
19 րեք օր է. Երեք օրից յետոյ փա-
րաւօնը քո վերայից վեր կ'առնէ
քո գլուխը, և քեզ մի ծառից կը
կախէ. և թռչուները քո վերա-
յից կ'ուտեն քո մարմինը:

20 Եւ եղաւ երրորդ օրը, որ փա-
րաւօնի ծննդեան օրն էր, և իր
բոլոր ծառաների համար խնջոյք
արաւ. և իր ծառաների մէջ մատ-
ռուռակապետի և հացապործապե-
տի գլուխները վեր հանեց: Եւ 21
դարձրեց մատուռակապետին իր

պաշտօնին, և նա բաժակը փա-
22 րաւօնի ձեռքը տուաւ։ Բայց հա-
ցագործապետին կախել տուաւ,
ինչպէս Յովսէփը մեկնել էր նո-
23 րանց։ Բայց մատուռապետը
չյիշեց Յովսէփին, և մոռացաւ
նորան։

ԳԼ. ԽԱ.

1 Եւ եղաւ երկու տարուց յետոյ
փարաւօնը երազ տեսաւ, և ահա
2 կանգնել էր գետի եզերքին։ Եւ
ահա գետից գեղեցիկ տեսքով
և պարարտ մարմնով եօթը երինջ-
ներ ելան և արածում էին պըր-
3 տուների մէջ։ Եւ ահա նորանց
ետևից ուրիշ եօթը երինջներ ե-
լան գետից՝ զազիր տեսքով և
վատ մարմնով, և կանգնեցին այն
երինջների մօտ գետի եզերքում։
4 Եւ զազիր տեսքով և վատ մարմ-
նով երինջները կերան այն եօթը
գեղեցիկ տեսքով ու պարարտ ե-
րինջներին։ Եւ փարաւօն զարթ-
5 նեց։ Եւ քնեց, և երկրորդ ան-
գամ երազ տեսաւ, և ահա մէկ
փուռջի վերայ եօթը պարարտ և
լաւ հասկեր էին դուրս գալիս։
6 Եւ ահա նորանց ետևից եօթը
վատ և խորշակահար հասկեր է-
7 ին բուսնում. Եւ այն վատ հաս-
կերը կուլ տուին այն եօթը պա-
րարտ և լիքը հասկերին։ Եւ փա-
րաւօնը զարթնեց և ահա երազ
8 էր։ Եւ եղաւ որ առաւօտանց
նորա հոգին խռովեցաւ, և կան-
չել տուաւ Եգիպտոսի բոլոր մո-
գերին, և նորա բոլոր խնամատուն-
ներին. և փարաւօնը պատմեց նո-
րանց իր երազները, բայց մէկը չը
կար, որ մեկնէր նորանք փարա-
օնի համար։
9 Եւ մատուռապետը խօսեց
փարաւօնի հետ ասելով. Ես այս-
օր յիշում եմ իմ յանցանքները։
10 Փարաւօնը բարկացաւ իր ծառա-
ների վերայ, և ինձ դահճապետի
տան բանտը դրաւ՝ ինձ և հացա-
11 գործապետին։ Եւ ես ու նա մէկ
գիշեր երազ տեսանք. մեզանից
ամեն մէկը իր երազի նշանակու-
12 թեան պէս երազ տեսանք։ Եւ
այն տեղ մեզ հետ մի երիտասեղ
պատանի կար՝ դահճապետի ծա-
ռան, և մենք պատմեցինք նո-
րան, և նա մեկնեց մեզ մեր ե-
րազները. ամեն մէկին իր երազի
պէս մեկնեց։ Եւ ինչպէս որ նա 13
մեկնեց, այնպէս եղաւ. ինձ իմ
պաշտօնիս դարձրեց, և նորան
կախեց։
Եւ փարաւօնը մարդ ուղարկեց 14
և կանչեց Յովսէփին, և շուտով
բանտից հանեցին նորան և ա-
ծիլուեցաւ, և իր հանդերձները
փոխեց, և եկաւ փարաւօնի մօտ։
Եւ փարաւօնը ասաց Յովսէփին. 15
Երազ տեսայ, և մէկը չկայ որ
մեկնէ նորան. և ես քեզ համար
լսեցի որ ասում են. երազ ես լը-
սում և մեկնում։ Եւ Յովսէփը 16
պատասխանեց փարաւօնին և ա-
սաց. Ոչ թէ ես. Աստուած կը
տայ խաղաղութեան պատասխան
փարաւօնին։
Եւ փարաւօնն ասաց Յովսէփին. 17
Երազումս ահա գետի եզերքում
կանգնել էի. Եւ ահա գետից եօ- 18
թը երինջներ ելան պարարտ և
գեղեցիկ տեսքով, և պրաստների
մէջ արածում էին։ Եւ ահա նո- 19
րանց ետևից ուրիշ եօթը երինջ-
ներ ելան նիհար ու շատ զազիր
տեսքով և վատ մարմնով, որ նո-
րանց պէս զազիր չեմ տեսել Ե-
գիպտոսի բոլոր երկրում։ Եւ այն 20
վատ և զազիր երինջները կերան
առաջի եօթը պարարտ երինջնե-
րին։ Եւ նորանց փորը գնաց, 21
և չէր գիտացվում, թէ նորանք
նորանց փորն են գնացել. այլ նո-
րանց տեսքը զազիր էր ինչպէս ա-
ռաջ։ Զարթնեցի։ Եւ ե- 22
րազումս տեսայ, և ահա մէկ
փուռջի վերայ եօթը լիքը և լաւ
հասկեր էին բրնում. Եւ ահա նո- 23
րանց ետևից եօթը չոր, նիհար
խորշակահար հասկեր էին բուս-
նում. Եւ նիհար հասկերը կուլ 24
տուին այն եօթը լաւ հասկերին։
Եւ պատմեցի մոգերին, բայց մէ-
կը չկայ որ ինձ մեկնէ։
Եւ Յովսէփն ասաց փարաւօ- 25
նին. փարաւօնի երազը մէկ է.
Աստուած իր անելիքը յայտնեց

26 փարաւոնին։ Ահն եօթը լաւ ե-
րինջները եօթը տարի են, և ա-
խն եօթը լաւ հասկերը եօթը տարի
27 են. երազը մէկ է։ Եւ ա-
խն եօթը
վատ և գազիր երինջները, որ ե-
տևից եկան, եօթը տարի
են, և ա-
խն եօթը դատարկ խոր-
շակահար հասկերը եօթը տարի
28 սով են նշանակում։ Ա-
յս է իմ
խօսքը որ ասում եմ փարաւոնին.
Թէ Աստուած իր անելիքը փա-
29 րաւոնին ցոյց է տուել։ Ահա ե-
օթը տարի են գալու, որ բոլոր
Եգիպտոսի երկրում մեծ առա-
30 տութիւն կ'լինի։ Եւ նրանից ե-
տևից եօթը տարի սով կ'գայ, և
Եգիպտոսի երկրի մէջ բոլոր առա-
տութիւնը կ'մոռացուի. և սովը
31 կ'ապառէ երկիրը. Եւ չի իմաց-
ուիլ երկրի մէջ առատութիւնը
այն սովի պատճառով, որ նրա-
նից յետոյ կ'գայ, վասնզի շատ
32 ստասիկ կ'լինի։ Եւ երազը երկու
անգամ փարաւոնի համար կրկին-
նուելու պատճառը այս է, որ այս
բանը Աստուածանից հաստատ
ուած է, և Աստուած շուտով ա-
33 նելու է այս։ Եւ հիմա թող փա-
րաւոնը հանճարեղ և իմաստուն
մարդ գտնէ, և նրան Եգիպտա-
34 ցի երկրի վերայ դնէ։ Թող փա-
րաւոնը այդպէս անէ, և երկրի վե-
րայ գործակալներ նշանակէ, և
Եգիպտոսի երկրի արմատներից
առատութեան եօթը տարինե-
35 րում հինգից մէկին առնէ։ Եւ այն
եկող լաւ տարիների բոլոր պա-
շարը ժողովեն. և փարաւոնի ձեռ-
քի տակ ցորեն դիզեն, և քա-
36 ղաքներում պաշար պահեն։ Եւ
կերակուրը պաշար լինի երկրին
համար այն եօթը տարուայ սովի
դէմ, որ Եգիպտոսի երկրում լի-
նելու է, որ երկիրը սովից չկորչի։
37 Եւ այս բանը լաւ երևեցաւ
փարաւոնի աչքին և նրա բոլոր
38 ծառաների աչքին։ Եւ փարաւոնն
ասաց իր ծառաներին. Կարո՞ղ
ենք գտնել ասա պէս մի մարդ,
որի մէջ լինի Աստուծոյ Հոգին,
39 Եւ փարաւոնն ասաց Յովսէփին.
Որովհետև Աստուած այս ամենը
քեզ իմացրեց, քեզ պէս հանճա-
րեղ և իմաստուն չկայ։ Դու իմ 40
տունն վերայ կ'լինիս, և իմ բոլոր ժո-
ղովուրդս քո բերանին հնազան-
դին. Ես միայն աթոռով քեզա-
նից մեծ լինիմ։ Եւ փարաւոն ա- 41
սաց Յովսէփին. Ահա քեզ Եգիպ-
տոսի բոլոր երկրի վերայ դրի։
Եւ փարաւոնն իր ձեռքից մատա- 42
նին հանեց, և Յովսէփի ձեռքն
անցրեց, և նորան բեհեզեայ հան-
դերձներ հագցրեց, և նորա պա-
րանոցին ոսկի մանեակ դրաւ։ Եւ 43
իր երկրորդ կառքի վերայ հեծց-
րեց, և գոչում էին նորա առ-
ջև. Ծունր դրէք. և Եգիպտոսի
բոլոր երկրի վերայ նշանակեց նո-
րան։ Եւ փարաւոն ասաց Յով- 44
սէփին. Ես փարաւոն եմ, և ա-
ռանց քեզ մէկն իր ձեռքը կամ
իր ոտքը չդարձրացնէ Եգիպտոսի
բոլոր երկրի մէջ։ Եւ փարաւոնը 45
Յովսէփի անունը փռոմիթոմիա-
նէ դրաւ, և Արեգ քաղաքի Պե-
տափրեայ քուրմի աղջիկ Ասան-
թը նորա կին տուաւ. և Յովսէ-
փը ելաւ որ Եգիպտոսի երկիրը
մաշ գայ։

Եւ Յովսէփը երեսուն տարե- 46
կան էր, երբոր Եգիպտոսի փա-
րաւոն թագաւորի առջև կանգ-
նեց և Յովսէփը փարաւոնի ա-
ջևից դուրս եկաւ, և Եգիպտոսի
բոլոր երկիրը մտան եկաւ։ Եւ ա- 47
ռատութեան եօթը տարիները-
մը երկիրը խիստ շատ արդիւնք
տուաւ։ Եւ եօթը տարիներ բո- 48
լոր պաշարը ժողովեց, որ Եգիպ-
տոսի երկրումը եղաւ, և քաղաք-
ներումը դրաւ պաշարը. այն քա-
ղաքի շուրջի արտերի պաշարը նոյն
քաղաքի մէջ դրաւ։ Եւ Յովսէփը 49
ծովու աւազի չափ խիստ շատ
ցորեն դիզեց՝ այնչափ որ թուելը
ձգեցին, որովհետև անթիւ էր։

Եւ Յովսէփի համար երկու որ- 50
դի ծնուեցան սովի տարիները գա-
լուց առաջ, որ Արեգ քաղաքի
Պետափրեայ քուրմի աղջիկ Ասա-
նէթը ծնաւ նորա համար։ Եւ 51
Յովսէփը առաջինեկի անունը Մա-
նասէ դրաւ, վասն զի ասաց.
Աստուած ինձ մոռացրեց իմ բո-
լոր վիշտերը, և իմ հօր բոլոր

տունը ; եւ երկրորդի անունը Եփրեմ դրաւ . վասն զի ասաց . Աստուած իմ տառապանաց երկրումն աճեցրեց ինձ ։
53 Եւ Եգիպտոսի երկրում առատութեան եօթը տարին անցաւ ։
54 Եւ Յովսէփի ասածի պէս սկսեցին գալ սովի եօթը տարին . և բոլոր երկիրներում սով եղաւ , բայց Եգիպտոսի երկրի մէջ հաց կար ։
55 Եւ երբոր Եգիպտոսի բոլոր երկիրը անօթեցաւ , ժողովուրդը հացի համար դէպի փարաւօնն աղաղակեց . և փարաւօնն ասաց բոլոր Եգիպտացիներին . Գնացէք Յովսէփի մօտ , ինչ որ ձեզ ասէ արէք ։
56 Եւ սով երկրի բոլոր երեսի վերայ եղաւ . և Յովսէփը բացաւ բոլոր չէմարանները , որոնց մէջ պաշար կար և Եգիպտացիներին պաշար ծախեց . և սովը սաստկացաւ Եգիպտոսի երկրումը ։
57 Եւ բոլոր աշխարհ գալիս էին Եգիպտոս Յովսէփից պաշար ծախու առնելու . վասն զի ամեն երկրի մէջ սովը սաստկացաւ ։

ԳԼ. ԽԲ

1 Եւ Յակոբը տեսաւ , որ Եգիպտոսում պաշար կայ , և Յակոբն ասաց իր որդիներին . Ինչո՞ւ էք իրար մոխիկ տալիս ։
2 Եւ ասաց . Ահա լսել եմ որ Եգիպտոսում պաշար կայ , այն տեղ իջէք և այն տեղից մեզ համար ծախու առէք որ ողջ մնանք և չմեռնինք ։
3 Եւ Յովսէփի տասը եղբայրներն իջան Եգիպտոսից ցորեն ծախու առնելու ։
4 Բայց Յակոբը Յովսէփի եղբայր Բենիամինին նորա եղբայրների հետ չուղարկեց . վասն զի ասաց . Մի գուցէ փորձանք պատահէ նորան ։
5 Եւ Իսրայէլի որդիները եկան այնտեղ գնացողների հետ պաշար ծախու առնելու . վասն զի Քանանու երկրումն սով կար ։
6 Եւ Յովսէփն այն երկրի իշխանն էր . և ինքը երկրի բոլոր ժողովրդին պաշար էր ծախում . Յովսէփի եղբայրները եկան , և իրանց երեսները մինչև գետինը խոնարհու-

թիւն արին նորան ։ Եւ հէնց որ 7
Յովսէփն իր եղբայրներին տեսաւ՝ ճանաչեց նորանց , բայց իրան նորանց չճանաչացրեց , և նորանց հետ խստութեամբ խօսեց , և նորանց ասաց . Ո՞ր տեղից էք եկել . և նորանք ասացին . Քանանու երկրից՝ կերակուր ծախու առնելու ։ Եւ Յովսէփն իր եղբայրներին ճանաչեց , բայց նորանք չճանաչեցին նորան ։ Եւ Յովսէփը յիշեց այն երազները , որ նորանց վերայ տեսել էր , և ասաց նորանց . Դուք լրտեսներ էք . եկել էք երկրի բացութիւնը տեսնելու ։ Եւ ասացին նորան . Ոչ , տէր իմ , այլ քո ծառաները եկել են կերակուր ծախու առնելու ։ Մենք ամենքս մէկ մարդու որդիներ ենք . մենք ուղիղ ենք . ծառաներդ լրտեսներ չեն ։ Եւ նա ասաց նորանց . Ոչ , այլ եկել էք երկրի բացութիւնը տեսնելու ։ Եւ նորանք ասացին . Մենք տասներկու ծառաներդ Քանանու երկրումը մէկ մարդու որդիք ենք՝ եղբայրներ . և ահա կրտսերը այսօր մեր հօր մօտ է , և մէկը չկայ ։ Եւ Յովսէփն ասաց նորանց . Սա է որ ձեզ հետ խօսեցի ասելով . թէ լրտեսներ էք . Սրանով պէտք է փորձուիք . Փարաւօնի կեանքը վկայ է , որ դուք այստեղից չէք դուրս գալ , եթէ ձեր կրտսեր եղբայրը այստեղ չգայ ։ Ձեզանից մէկին ուղարկեցէք ձեր եղբօրը բերելու , և դուք կ'բանտարկուիք , որ ձեր խօսքերը փորձուին , թէ արդեօք ձեզանում ճշմարտութիւն կա՞յ . և եթէ ոչ , փարաւօնի կեանքը վկայ է որ դուք լրտեսներ էք ։ Եւ երեք օր բանտ դրաւ նորանց ։

Եւ երրորդ օրը Յովսէփն ասաց նորանց . Սա արէք որ ողջ մնաք , ես Աստուածանից վախեցող եմ ։ Եթէ դուք ուղիղ էք , ձեր եղբայրներից մէկը ձեր բանտարկուած տան մէջ արգիլուի . և դուք գնացէք , ձեր տան սովածութեան համար պաշար տարէք ։ Եւ ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ բերէք , որ ձեր խօսքերը ճշմարտանան , և

չէք մեռնիլ։ Եւ այնպէս ասին։
21 Եւ նորանք իրար առաջ էին. Ի-
րաւ մենք մեր եղբօր վրայով
յանցաւոր ենք, վասն զի տեսանք
նորա հոգու նեղութիւնը երբոր
նա մեզ աղաչում էր, և չլսեցինք.
նորա համար գալիս է այս նեղու-
22 թիւնը մեր վերայ։ Եւ Ռուբէնը
պատասխանեց նորանց ասելով.
Ես չէ՞ի ասում, թէ Այդ տղայի
դէմ մեղք մի գործէք, և դուք
ականջ չդրիք. և ահա հիմա նո-
23 րա արիւնը պահանջվում է։ Եւ
նորանք չէին գիտում, որ Յովսէ-
փը հասկանում էր. վասն զի
թարգմանով էր խօսում իրանց
24 հետ։ Եւ նորանց բաժանուեցաւ
և լացաւ. և դարձաւ դէպի նո-
րանց, և խօսեց նորանց հետ. և
նորանցից Շմաւոնին առաւ, և
նորանց աչքի առջև կապեց նո-
25 րան։ Եւ Յովսէփ հրամայեց, որ
նորանց անօթները ցորենով լցնեն
և ամեն մէկի փողը իր քսակի
մէջ դնեն, և նորանց պաշար տան
ճանապարհի համար։ Եւ նորանց
26 այսպէս արաւ։ Եւ նորանք ի-
րանց էշերի վերայ բեռնեցին ի-
րանց ցորենը, և այնտեղից գնա-
27 ցին։ Եւ նորանցից մէկը բացաւ
իջևանուածն իր քսակը իր էշին
դարման տալու համար, և տե-
սաւ իր փողը, որ ահա իր քսակի
28 բերանումն էր։ Եւ իր եղբայրնե-
րին ասաց. Փողս էտ է եկել, և
ահա այստեղ իմ քսակի մէջ է.
և նորանց սիրտը խռովեցաւ, և
վախենալով իրար ասացին. Սա
ի՞նչ է որ Աստուած արաւ մեզ։
29 Եւ եկան Քանանու երկիրը իրանց
հայր Յակոբի մօտ, և բոլոր ի-
րանց պատահածները պատմեցին
30 նորան ասելով. Այն երկրի Տէրը
եղող մարդը մեզ հետ խստու-
եամբ խօսեց, և մեզ երկիրը լըր-
31 տեսողների տեղ դրաւ։ Եւ ասա-
ցինք նորան. Մենք ուղիղ ենք.
32 լրտեսներ չենք. Մենք տասներ-
կուսս եղբայրներ ենք մեր հօր որ-
դիքը. մէկը չկայ, և կրտսերը
Քանանու երկրումը մեր հօր մօտ
33 է այսօր։ Եւ այն երկրի տէրը ե-
ղող մարդը ասաց մեզ. Սորանով
կիմանամ թէ դուք ուղիղ էք.
ձեր եղբայրներից մէկին ինձ մօտ
ձգեցէք. և ձեր տան սովածու-
թեան համար պէտք առէք, և
գնացէք։ Եւ ձեր կրտսեր եղբօրն 34
ինձ մօտ բերէք, որ գիտենամ թէ
դուք լրտեսներ չէք, այլ ուղիղ
էք. ձեր եղբայրը ձեզ կ'տամ, և
այս երկրումս առուտուր կանէք։
Եւ եղաւ որ նորանք իրանց քը- 35
սակները դատարկելիս, ահա ա-
մեն մէկի փողի ծրարը իր քը-
սակումն էր. և իրանք ու իրանց
հայրը տեսան փողի ծրարները և
վախեցան։ Եւ նորանց հայրը՝ 36
Յակոբն ասաց նորանց. Ինձ անօր-
դի թողեցիք. Յովսէփը չկայ, Շը-
մաւոնը չկայ, Բենիամինն էլ էք
առնում. ասրանց ամենը ինձ վե-
րայ եկաւ։ Եւ Ռուբէնը խօսեց 37
իր հօրը հետ և ասաց. Իմ երկու
որդիներուս սպանիր, եթէ ես նո-
րան քեզ մօտ չբերեմ. նորան իմ
ձեռքը յանձնիր, և ես էտ կ'բե-
րեմ նորան քեզ համար։ Բայց 38
Յակոբ ասաց. Իմ որդին ձեզ հետ
չի իջնիլ, վասն զի նորա եղբայրը
մեռած է, և նա է մնացել մե-
նակ. և եթէ ձեր գնալու ճանա-
պարհին նորան մի փորձանք պա-
տահելու լինի, իմ ապրուստ մա-
զերը սրտմուտքիւնով գերեզմանը
կ'իջեցնէք։

ԳԼ. ԽԳ

Եւ սովը սաստկացաւ այն երկրի 1
մէջ։ Եւ եղաւ երբոր Եգիպտոսից 2
բերած պաշարը կերան վերջաց-
րին, նորանց հայրը ասաց նորանց.
Գնացէք դարձեալ մեզ համար
մի քիչ ուտելիք ծախու ա-
ռէք։ Եւ Յուդան խօսեց նորա 3
հետ ասելով. Այն մարդը մեզ
հետ հաստատ վկայութեամբ խո-
սեց ասելով. Իմ երեսը չտեսնէք,
եթէ ձեր եղբայրը ձեզ հետ չլինի։
Եթէ մեր եղբայրը մեզ հետ ու- 4
ղարկես, կիջնենք և քեզ համար
ուտելիք ծախու կ'առնենք։ Բայց 5
եթէ չուղարկես, չենք իջնիլ,
վասն զի այն մարդն ասաց մեզ.
Իմ երեսը չտեսնէք, եթէ ձեր

6 եղբայրը ձեզ հետ չլինի ։ Եւ խա-
րսէլն ասաց . Ինչո՞ւ համար չա-
րութիւն արիք ինձ այն մարդուն
իմացնելով , թէ ուրիշ եղբայր
7 ունիք ։ Եւ նորանք ասացին . Այն
մարդը մեզ համար և մեր ազգա-
կանների համար հարց ու փորձ
արաւ ասելով . Ձեր հայրը ո՞ղջ
է , էլ եղբայր ունի՞ք . և մենք
այս խօսքերի համեմատ պատաս-
խանեցինք նորան . մի՞թէ մենք
կարող էինք գիտենալ , որ նա
կ՚ասէ թէ ձեր եղբայրը իջեցրէք ։
8 Եւ Յուդան իր հօրը Իսրայէլին
ասաց . Տղան ինձ հետ ուղարկիր ,
և մեր կենանք գնանք , որ ողջ
մնանք և չմեռնինք , մենք էլ , դու
9 էլ , մեր երեխերքն էլ ։ Ես երաշ-
խաւոր կ՚լինիմ նորա համար . իմ
ձեռքից պահանջիր նորան . եթէ
նորան քեզ մօտ չբերեմ , և քո
առջև չկանգնեցնեմ , յաւիտեան
10 քեզ յանցաւոր լինիմ ։ Վասն զի
եթէ չյապաղէինք , հիմա երկ-
րորդ անգամ դարձած կ՚լինէինք ։
11 Եւ նորանց հայրն Իսրայէլն ասաց
նորանց . Եթէ այդպէս է , հիմա
այս արէք , ձեր ամաններուն
այս երկրի ընտիր պտուղներից ա-
ռէք , և այն մարդու համար ընծայ
տարէք , մի քիչ բալասան ,
մի քիչ մեղր , համեմներ և ըղ-
12 մուռա , պիստակ և նուշ ։ Եւ ձեր
ձեռքը կրկնապատիկ փող առէք ,
և ձեր քսակների բերանում եղած
եկած փողը , ձեռքի տոհմ եղած
տարէք , գուցէ սխալմունք եղած
13 է ։ Եւ ձեր եղբայրն էլ առէք ,
և ելէք դարձեալ այն մարդու մօտ
14 գնացէք . Եւ Ամենակարող Աստ-
ուածը ձեզ ընդհէք կ՚տայ այն
մարդու առջև , և նա կ՚արձակէ
ձեզ համար ձեր միւս եղբօրը և
Բենիամինին , և ես եթէ անզաւակ
եմ լինելու , անզաւակ լինիմ ։
15 Եւ մարդիկն առին այս ընծայ-
ները , և իրանց ձեռքը կրկնապա-
տիկ փող առին , նաև Բենիամի-
նին , և վեր կացին իջան Եգիպ-
տոս , և Յովսէփի առջև կանգ-
16 նեցին ։ Եւ Յովսէփը Բենիամինին
նորանց հետ տեսաւ , և իր տան
վերակացուին ասաց . Տուն տար
այս մարդիկը , և ընդունելիք մոր-
թիր , և պատրաստիր . որովհետև
այս մարդիկը կէս օրին ինձ հետ
պիտի ճաշեն ։ Եւ այն մարդը Յով- 17
սէփի ասածի պէս արաւ , և այն
մարդը Յովսէփի տունը տարաւ
այն մարդկանց ։ Եւ մարդիկը 18
վախեցան , որ Յովսէփի տունը
տարուեցան , և ասացին . Առաջի
անգամին մեր քսակներումը եւս
դարձած փողի համար ենք տար-
վում , որ մեր վերայ յարձակուի
և մեզ վերայ ընկնի , և մեզ ծա-
ռաներ առնի և մեր էշերը ։ Եւ 19
մօտեցան Յովսէփի տան վերակա-
ցու մարդին , և խօսեցին նորա
հետ տանը դռնումը , Եւ ասա- 20
ցին . Ո՜հ տէր , մենք սորանից ա-
ռաջ եկել էինք կերակուր ծախու
առնելու , Եւ եղաւ երբոր իջևա- 21
նը եկանք , և մեր քսակները բա-
ցինք , ահա ամեն մէկի փողը իր
քսակի բերանումն էր , մեր փողը
իր կշռով . և ետ ենք բերել
նորան մեր ձեռքով . Եւ մեր 22
ձեռքերին ուրիշ փող ենք բերել
կերակուր ծախու առնելու հա-
մար , չգիտենք թէ ով դրաւ մեր
փողը մեր քսակներումը ։ Եւ նա 23
ասաց . Խաղաղութիւն է ձեզ հա-
մար , մի վախենաք . ձեր Աստ-
ուածը և ձեր հօր Աստուածը ձեզ
գանձ է տուել ձեր քսակներումը .
ձեր փողը եկաւ ինձ ։ Եւ շմա-
ւոնին դուրս հանեց նորանց մօտ ։
Եւ այն մարդը Յովսէփի տունը 24
տարաւ այն մարդկանց , և ջուր
տուաւ , և իրանց ոտքերը լուա-
ցին , և նորանց էշերին դարման
տուաւ ։ Եւ նորանք ընծաները 25
պատրաստեցին մինչև Յովսէփի
կէս օրուան գալը . վասն զի իմա-
ցան որ այնտեղ էին հաց ուտե-
լու ։ Եւ Յովսէփն եկաւ տուն , և 26
նորանք իրանց ձեռքերի ընծաները
նորան մատուցին տանը , և մին-
չև գետինը ծռելով նորան խոնար-
հութիւն արին ։ Եւ նորանց ողջ- 27
ջութիւնը հարցրեց ասելով . Ձեր
այն ծեր հայրը ո՞ղջ է , որուն հա-
մար խօսել էիք , տակաւին կեն-
դանի՞ է ։ Եւ ասացին . Քո ծա- 28
ռան մեր հայրը ողջ է , տակաւին

կենդանի է. և ծռեցին և խոնարհուեցան արքին։ 29 Եւ իր աչքերը բարձրացրեց, և տեսաւ իր մօր որդին իր եղբայր Բենիամինը, և ասաց. Սա՞ է ձեր կրտսեր եղբայրը, որի համար ինձ հետ խօսել էիք, և ասաց Բենիամինին. Աստուած ողորմէ քեզ, որդեակ իմ։ 30 Եւ յովսէփը շուտով ելաւ. վասն զի իր աղիքը գալարեցին իր եղբօր վերայ, և տեղ էր որոնում որ լայ. և ներքին սենեակը մտաւ 31 և այն տեղ լացաւ։ Եւ լուաց իր երեսը, և դուրս եկաւ. և զսպեց իրան, և ասաց՝ Հաց բերէք։ 32 Եւ իրան առանձին բերին, և նորանց առանձին, և այն եգիպտացիներուն համար որ իր հետ ուտում էին առանձին դրին. վասն զի եգիպտացիները եբրայեցւոց հետ հաց չէին կարողանում ուտել, որովհետև եգիպտացիների համար պիղծ էին։ 33 Եւ նստեցին նորա առջև, անդրանիկը իր անդրանկութեան համեմատ, և փոքրը իր փոքրութեան համեմատ. և մարդիկն իրար նայելով զարմանում էին։ 34 Եւ նա իր առաջից բաժիններ ուղարկեց նորանց համար. բայց Բենիամինի բաժինը միւսների բաժնից հինգ անգամ աւելի էր. և խմեցին և նորա հետ միասին գինով եղան։

ԳԼ. ԽԴ

1 Եւ իր տանը վերակացուին հրամայեց ասելով, Այս մարդկանց քսակները լցրու ուտելիքով որքան որ կարողանան տանել, և ամեն մէկի փողը իր քսակի բերանում դիր։ 2 Եւ իմ բաժակը՝ արծաթի բաժակը դիր փոքրի քսակի բերանումը և իր պաշարի փողն էլ։ Եւ նա այդ խօսքի համեմատ արաւ, որ Յովսէփն ասաց իրան։ 3 Եւ առաւօտը լուացաւ, և մարդիկը ճանապարհուեցան, իրանք 4 և իրանց էշերը։ Նորանք քաղաքից դուրս եկած դեռ չէին հեռացել, որ Յովսէփ իր տան վերակացուին ասաց. Վեր կաց այն մարդկանց ետևից վազիր, և նորանց հասիր, և ասա նորանց. Ինչո՞ւ չար հատուցրիք բարիի փոխարէն. Սա այն չէ՞, որով իմ տէրը խմում է, և հմայում է նորանով. չարութիւն արիք ձեր այսպէս անելով։ 6 Եւ նա հասաւ նորանց, և ասաց նորանց այն խօսքերը։ 7 Եւ ասացին նորան. Ինչո՞ւ է իմ տէրը այսպիսի խօսքեր խօսում. քաւ լինի որ քո ծառաները այդպիսի բան անեն։ 8 Ահա այն փողը, որ գտել էինք մեր քսակների բերանում, բանաձեռքիցդ քեզ ետ դարձրինք. և ի՞նչպէս կ'գողանանք քո տիրոջ տունից արծաթ կամ ոսկի։ 9 Քո ծառաներից որի մօտ որ գտնուի, թող նա մեռնի, և մենք էլ տիրոջ ծառաները լինինք։ 10 Եւ նա ասաց. Հիմա հէնց թող ձեր ասածի պէս լինի. որի մօտ որ գըտնուի, նա ինձ ծառայ լինի, իսկ դուք անպարտ լինիք։ 11 Առաջ ամեն մէկը շուտով իր քսակը գետինը իջեցրեց, և ամեն մէկն իր քսակը բացաւ։ 12 Եւ նա մեծից սկսեց որոնել, և մինչև փոքրը նայեց վերջացրեց, և բաժակը Բենիամինի քսակի մէջ գտնուեցաւ։

13 Այն ժամանակ իրանց հանդերձները պատռեցին. և ամեն մէկն իր էշը բեռցրեց, և ետ դարձան քաղաքը։ 14 Եւ Յուդան և նորա եղբայրները Յովսէփի տունը եկան, և նա տակաւին այն տեղ էր, և նորա առջև գետինը ընկան։ 15 Եւ Յովսէփն ասաց նորանց. Ահա ի՞նչ բան է որ արիք. չէ՞ք գիտում թէ ինձ պէս մի մարդ անպատճառ կ'հմայէ։ 16 Եւ Յուդան ասաց. Ի՞նչ ասենք իմ տիրոջը, ի՞նչ խօսենք կամ ի՞նչպէս արդարացնենք մեզ. Աստուած բռնել է քո ծառաների յանցանքը. ահա մենք մեր տիրոջ ծառաներն ենք, մենք էլ նա էլ՝ որի մօտ բաժակը գտնուել է։ 17 Եւ նա ասաց. Քաւ լինի որ ես այդպէս անեմ. հապա այն մարդը, որի մօտ բաժակը գտնուել է, նա ինձ ծառայ լինի, և դուք խաղաղութեամբ ձեր հօր մօտ ելէք։

18 Այն ժամանակ Յուդան մօտե-

ցաւ նորան և ասաց. Ոհ, տէր իմ, խնդրեմ՝ թող քո ծառան մի խօսք խօսէ իմ տիրոջ ականջներին, և ծառայիդ վերայ քո բարկութիւնը չբորբոքէ, վասն զի
19 դու փարաւոնի պէս ես։ Իմ տէրն իր ծառաներին հարցրեց ասելով.
20 Հայր կամ եղբայր ունի՞ք։ Եւ մենք ասացինք մեր տիրոջը, Թէ մի ծեր հայր ունինք, և նորա ծերութեան մի պզտիկ որդին, և նորա եղբայրը մեռած է, և միայն նա է մնացել իր մօրից, և նորա հայրը
21 սիրում է նորան։ Եւ քո ծառաներին ասացիր. Ինձ մօտ իջեցրէք նորան, որ աչքովս տեսնեմ նո-
22 րան։ Եւ իմ տիրոջն ասացինք. Տղան չի կարող ձգել իր հօրը, վասն զի եթէ իր հօրը ձգելու լի-
23 նի, նա կ'մեռնի։ Եւ դու քո ծառաներին ասացիր. Եթէ ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չիջնէ, իմ երեսը էլ միւսանգամ չտեսնէք։
24 Եւ եղաւ երբոր քո ծառայ իմ հօրը եկանք, իմ տիրոջ խօսքերը
25 պատմեցինք նորան։ Եւ մեր հայրն ասաց. Գնացէք դարձեալ, մեզ համար մի քիչ կերակուր ծախու-
26 տէք։ Եւ մենք ասացինք. Չենք կարող իջնել. եթէ մեր կրտսեր եղբայրը մեր հետ լինի, այն ժամանակ կ'իջնենք. որովհետև չենք կարող տեսնել այն մարդի երեսը, եթէ որ մեր կրտսեր եղբայրը մեր
27 հետ չինի։ Եւ քո ծառայ իմ հայրն ասաց մեզ. Դուք գիտէք որ իմ կինը երկու որդի ծնաւ ինձ
28 համար։ Եւ մէկը մօտից եկաւ, և ես ասացի. Անպատճառ գազանէն պատառուել է, և մինչև հի-
29 մա չտեսայ նորան։ Եւ սորան էլ էք առնում իմ առջևից, և նորան մի փորձանք կ'պատահի, և իմ ալիտակ մազերը տրտմութիւնով գերեզմանը կ'իջեցնէք։
30 Եւ արդ երբոր քո ծառայ իմ հօր մօտ երթամ և տղան մեր հետ չինի, և քան որում նորա հոգին այդ տղու հոգուն հետ կապուած
31 է, Անպատճառ հէնց որ տեսաւ թէ տղան չկայ, կ'մեռնէ. և ծառաներդ քո ծառայի մեր հօր պիտակ մազերը ցաւով գերեզմանը կ'իջեցնենք։ Որովհետև ծառայ 32
այդ տղու համար իմ հօրը երաշխաւոր եղայ ասելով. Եթէ ես նորան քեզ մօտ չբերեմ, իմ հօրը յաւիտեան յանցաւոր լինիմ։ Եւ 33
հիմա աղաչեմ, թող ծառայ այդ տղու փոխարէն իմ տիրոջը ծառայ ինայ, և տղան իր եղբայրների հետ ելլէ. Վասն զի ի՞նչ- 34
պէս երթեմ իմ հօր մօտ, եթէ տղան ինձ հետ չինի. մի գուցէ տեսնեմ այն չարիքը որ պատահելու է իմ հօրը։

ԳԼ. ԽԵ

Եւ Յովսէփը չկարողացաւ զսպել 1
իրան բոլոր իր մօտ կանգնողների առջև, և աղաղակեց, Դուրս հանեցէք բոլոր այդ մարդիկը իմ մօտից. և մօտը մարդ չկար երբ որ Յովսէփն իրան ճանաչեցրեց իր եղբայրներին։ Եւ ձայնը լացի տը- 2
ուաւ. և Եգիպտացիք լսեցին և փարաւոնի տունը լսեց։ Եւ Յով- 3
սէփն ասաց իր եղբայրներին. Ես Յովսէփն եմ. իմ հայրը տակաւին ո՞ղջ է. և եղբայրները չէին կարողանում պատասխան տալ նորան, որովհետև նորա առջև ապշել ճնացել էին։ Եւ Յովսէփն ա- 4
սաց իր եղբայրներին. Ինձ մօտ եկէք նորանք էլ մօտ եկան. և ասաց. Ես ձեր եղբայրն Յովսէփն եմ, որ ինձ ծախեցիք Եգիպտոս։
Եւ հիմա մի վշտանաք և մի նեղ- 5
ուիք որ ինձ ծախեցիք այստեղ. վասն զի Աստուած ուղարկեց ինձ ձեր առջև կեանք պահելու համար։ Վասն զի երկրիս վերայ ա- 6
վի երկրորդ տարին է այս. և տակաւին հինգ տարի կայ որ վարուցան, և հունձք չի լինիլ։ Եւ 7
Աստուած ինձ ձեր առջև ուղարկեց որ երկրի վերայ ձեզ համար սերունդ պահէ, և ձեզ ապրեցնէ մեծ ազատութիւնով։ Եւ արդ 8
ոչ թէ դուք ուղարկեցիք ինձ այս տեղ, այլ Աստուած. և ինձ փարաւոնին հայր և իր բոլոր տանը տէր և Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրաւ։ Շուտով իմ հօր 9
մօտ ելէք, և ասացէք նորան.

Ահայսպէս է ասում քո որդին Յովսէփը, Աստուած բոլոր Եգիպտոսին տէր արաւ ինձ. ինձ մօտ իջիր, մի կանգնիր։ Եւ Գեսեմի երկրում կ'բնակես, որ ինձանից մօտիկ կ'լինես, դու և քո որդիքը և քո որդոց որդիքը և հօտերդ և արջառներդ և քո բոլոր ունեցածը. Եւ ես քեզ կ'անուցանեմ այնտեղ. որովհետև տակաւին հինգ տարի սով կայ. մի՛ գուցե չքաւորութիւն քաշես դու և քո տունը և քո բոլոր ունեցածը. Եւ ահա ձեր աչքերը և իմ եղբայր Բենիամինի աչքերը տեսնում են, որ իմ բերանն է ձեզ հետ խօսողը։ Եւ Եգիպտոսի մէջ իմ ունեցած բոլոր փառքը, և ձեր բոլոր տեսածը պատմեցէք իմ հօրը, և շուտով իմ հօրը այս տեղ իջեցրէք։ Եւ իր եղբօր Բենիամինի պարանոցովը ընկաւ և լացաւ. Բենիամինն էլ նորա պարանոցի վերայ լացաւ։ Եւ իր բոլոր եղբայրներին համբուրեց և նորանց վերայ լացաւ. և ետքից յետոյ իր եղբայրները իր հետ խօսեցան։

Եւ այս լուրը փարաւոնի տանը լսուեցաւ, թէ Յովսէփի եղբայրները եկել են. և փարաւոնին և նորա ծառաներին հաճելի եղաւ։ Եւ փարաւոնն ասաց Յովսէփին. Քո եղբայրներին ասիր, Սա արէք. բեռնեցէք ձեր անասունները, և գնացէք. Եւ ձեր հայրն ու ձեր ընտանիքներն առէք, և ինձ մօտ եկէք. և Եգիպտոսի երկրի լաւ տեղը ձեզ կը տամ, և երկրի պարարտութիւնը կ'ուտէք։ Եւ քեզ հրաման եղաւ. Սա արէք, ձեր երեխաների համար և ձեր կանանց համար Եգիպտոսի երկրից կառքեր առէք, և ձեր հայրը բերէք, և եկէք։ Եւ ձեր աչքը ձեր կարասիքի վերայ չմնայ. վասն զի բոլոր Եգիպտոսի երկրի բարիքը ձերն է։

Եւ Իսրայէլի որդիները այնպէս արին. և Յովսէփը նորանց կառքեր տուաւ փարաւոնի խօսքի պէս, և ճանապարհի համար պաշար տուաւ նորանց։ Նորանց ամեն մէկին նորանոր հանդերձներ տուաւ, բայց Բենիամինին երեք հարիւր կտոր արծաթ և հինգ ձեռք նորանոր հանդերձներ տուաւ։ Եւ իր հօր համար այսպիսի բաներ ուղարկեց. տասը էշ Եգիպտոսի բարիքներով բեռնած և տասը էգ էշ ցորենով և հացով և ուտելիքներով բեռնած իր հօր ճանապարհորդութեան համար։ Եւ իր եղբայրներին ուղարկեց, և գնացին. և ասաց նորանց. Ճանապարհին չկռուիք։

Եւ նորանք Եգիպտոսից ելան, և գէպի Քանանու երկիրն իրանց հօր Յակոբի մօտ գնացին. Եւ նորան պատմեցին ասելով. Յովսէփը տակաւին ողջ է, և նա իշխում է Եգիպտոսի բոլոր երկրին. Եւ նորա սիրտը նուաղեց, վասն զի չհաւատաց նորանց։ Եւ նորան պատմեցին Յովսէփի բոլոր խօսքերը որ իրանց ասել էր, և երբոր տեսաւ Յովսէփի ուղարկած կառքերը որ իր տան են, այն ժամանակ իրանց հօր Յակոբի հոգին կենդանացաւ։ Եւ Իսրայէլն ասաց. Բաւական է, իմ որդին Յովսէփը տակաւին կենդանի է. գնամ և մեռնելից առաջ տեսնեմ նորան։

ԳԼ. ԽԶ

Եւ Իսրայէլն իր բոլոր ունեցածովը ճանապարհ ելաւ, և Բերսաբէէ եկաւ, և իր հօր Իսահակի Աստուծոյն զոհեր մատուցրեց։ Եւ Աստուած գիշերուայ տեսիլքի մէջ խօսեց Իսրայէլի հետ և ասաց. Յակո՛ր Յակո՛ր. և նա ասաց. Ահա ես։ Եւ ասաց. Ես եմ Աստուածը՝ քո հօր Աստուածը, մի՛ վախենար Եգիպտոս իջնելու. վասն զի ես քեզ այնտեղ մեծ ազգ եմ շինելու. Ես քեզ հետ Եգիպտոս կ'իջնեմ, նաև անպատճառ կ'հանեմ, և Յովսէփը կ'դնէ իր ձեռքը քո աչքերի վերայ։ Եւ Յակոբն ելաւ Բերսաբէէից. և Իսրայէլի որդիները տարին իրանց հայր Յակոբին և իրանց երեխաներին և իրանց կա-

նանցը այն կառքերովը, որ փարաւօնն ուղարկել էր նորան տանելու համար: 6 Եւ առին իրանց անասուններըը և իրանց ստացուածքը որ Քանանու երկրումն ստացել էին, Յակոբը և իր բոլոր սերունդը իր հետ: 7 Իր որդիները և իր որդոց որդիները իր հետ, իր աղջկերքը և իր որդոց աղջկերքը և իր բոլոր սերունդը իր հետ Եգիպտոս բերաւ:

8 Եւ սորանք են Իսրայէլի որդոց անուններըը, որ Եգիպտոս եկան, Յակոբը և նորա որդիքը. Յակոբի 9 անդրանիկը Ռուբէն. Եւ Ռուբէնի որդիքը Հնոկ, և Փաղղուս, 10 և Եսրոն և Քարմի: Եւ Շմաւոնի որդիքը Յամուէլ, և Յամին, և Ոհադ, և Յաքին, և Սահաւ, և Քանանացի կնոջ որդին Սաուղ: 11 Եւ Ղևիի որդիքը՝ Գերսոն, 12 Կահաթ և Մերարի: Եւ Յուդայի որդիքը՝ Էր, ու Օնան, և Սելոմ, և Փարէս և Զարա. բայց Էր և Օնան Քանանու երկրումը մեռան, և Փարէսի որդիքը՝ Եսրոն և Համուլ: 13 Եւ Իսաքարի որդիքը՝ Թովղա, և Փուա, և Յոբ 14 և Սամրոն: Եւ Զաբուղոնի որդիքը՝ Սարէդ և Ելոն և Յաղել: 14 Սորանք են Լիայի որդիքը, որոնք միջագետում ծնաւ Յակոբի համար, և նորա Դինա աղջիկը. նորա բոլոր որդիները և աղջկերքը 16 երեսուն երեք հոգի էին: Եւ Գադի որդիքը Սափոն, և Անդի, Սուղի, և Եսրոն, Էրի և Արոտի և 17 Արելի: Եւ Ասերի որդիքը՝ Յեմնա և Յեսուա, և Յեսուի, և Բարիա, և նորանց քոյրը՝ Սարա, և Բարիայի որդիքը՝ Բաբեր և 18 Մաղքիել: Սորանք են Զեղփայի որդիքը՝ որ Լաբանն իր Լիա աղջկանը տուաւ, և նա ծնաւ սորանց Յակոբի համար՝ տասնուվեց հոգի: 19 Յակոբի կին Ռաքելի որդիքը՝ Յովսէփ և Բենիամին: 20 Եւ Յովսէփի համար Եգիպտոսի երկրումն Մանասէ և Եփրեմ ծնան, որոնց Արեգ քահանայի քուրմ Պետափրայի աղջիկը՝ Ասանէթ 21 ծնաւ նորա համար: Եւ Բենիամինի որդիքը՝ Բաղա և Բաքոր, և Ասբել, Գերա, և Նեեման, Էհի, և Ռոսվ, Մուփիմ, և Ռոփիմ և Արեդ: 22 Սորանք են Ռաքելի որդիքը՝ որոնք ծնան Յակոբի համար, ամենը տասնուչորս հոգի: 23 Եւ Դանի որդիքը Հուսիմ: 24 Եւ Նեփթաղիմի որդիքը՝ Յասիել, և Գունի, և Յասեր և Սիլլեմ: 25 Սորանք են Բաղղայի որդիքը, որ Լաբանն իր աղջկանը տուաւ. և նա Յակոբի համար ծնաւ սորանց, ամենը եօթը հոգի: 26 Յակոբի հետ Եգիպտոս եկող բոլոր հոգիները, որ նորա երանքից ելած էին բացի Յակոբի որդոց կանանցից ամենը վաթսունվեց հոգի էին: 27 Եւ Յովսէփի որդիքը՝ որ Եգիպտոսի մէջ նորա համար ծնան, երկու հոգի էին. Յակոբի տան բոլոր հոգիները, որ Եգիպտոս գնացին, եօթանասուն էին:

28 Եւ Յուդային ուղարկեց իր առջև Յովսէփի մօտ, որ Գեսեմը ցոյց տայ նորան. և նորանք եկան Գեսեմի երկիրը: 29 Եւ Յովսէփն իր կառքը պատրաստեց, և ելաւ իր հայր՝ Իսրայէլին դիմաւորելու համար Գեսեմ քաղաքը. և երբոր նորան երևեցաւ, նորա պարանոցին ընկաւ, և նորա պարանոցի վերայ բաւական լացաւ: 30 Եւ Իսրայէլն ասաց Յովսէփին. Հիմա թող մեռնիմ քո երեսը տեսնելուս յետոյ. վասն զի տակաւին կենդանի ես: 31 Եւ Յովսէփն իր եղբայրներին և իր հօր տանն ասաց. Ելնեմ, և փարաւօնին պատմեմ, և ասեմ նորան. Իմ եղբայրներն և իմ հօր ընտանիքը, որ Քանանու երկրումն էին, ինձ մօտ եկան: 32 Եւ այն մարդիկը հովիւներ են, որովհետև խաշնից տէր են, և իրանց հօտերը և իրանց արջառներն և իրանց բոլոր ունեցածը բերել են: 33 Եւ կ'լինի որ, երբ փարաւօնը ձեզ կանչէ, և ասէ. Թէ ի՞նչ է ձեր արհեստը, ասացէք. 34 Ծառաներդ մեր մանկութիւնից մինչև հիմա՝ մենք էլ, մեր հայրերն էլ, խաշնից տէր ենք. որ Գեսեմի երկրում բնակէք. վասն զի ամեն հովիւ եգիպտացոց առջև գարշելի է:

ԳԼ. ԽԱ

1 Եւ Յովսէփն եկաւ և պատմեց
Փարաւոնին և ասաց. Իմ Հայրն
ու եղբայրները և նոցանց Հօտե-
րըն ու արջառները, և նոցանց
բոլոր ունեցածը եկել են Քանա-
նու երկրից, և ահա Գեսեմի երկ-
2 րումն են, Եւ իր եղբայրներէն մի-
ջից հինգ մարդ առաւ, և նոցանց
Փարաւոնի առջև ներկայացրեց:
3 Եւ Փարաւոնն ասաց նոցա եղ-
բայրներին. Ի՞նչ է ձեր գործը.
և նոքանք Փարաւոնին ասացին.
Քո ծառաները Հովիւներ ենք,
4 մենք էլ մեր Հայրերն էլ: Նաև
ասացին Փարաւոնին, Եկել ենք
այս երկրումս պանդխտանալու.
վասն զի քո ծառաներէն Հօտերէն
Համար արօտ չկայ, Քանանու
երկրումս սովը սաստկանալու պատ-
ճառով. մենք Հիմա խնդրում
ենք, թող ծառաներդ Գեսեմի
5 երկրումը բնակին: Եւ Փարաւոնը
խօսեց Յովսէփի Հետ ասելով. Քո
Հայրն ու եղբայրները քեզ մօտ
6 են եկել: Եգիպտոսի երկիրը ա-
ջեդ է. քո Հօրն ու եղբայրներին
երկրի ամենալաւ տեղը բնակեց-
րու. Գեսեմի երկրի մէջ թող բը-
նակին. և եթէ դիտես, թէ նո-
րանց մէջ ժիր մարդիկ կան, իմ
Հօտերի վերայ վերակացու շինիր
նոքանց:
7 Եւ Յովսէփն իր Հօր Յակոբին
բերաւ, և Փարաւոնի առջև ներ-
կայացրեց. և Յակոբն օրհնեց Փա-
8 րաւոնին: Եւ Փարաւոնն ասաց
Յակոբին. Ո՞րքան է քո կենաց
9 տարիների օրերը: Եւ Յակոբն ա-
սաց Փարաւոնին. Իմ պանդխտու-
թեան տարիների օրերը Հարիւր
երեսուն տարի են. իմ կենաց
տարիների օրերը քիչ և ցաւալի
եղան, և չեն Հասնիլ իմ Հայրերի
կենաց տարիների օրերին իրանց
10 պանդխտութեան օրերումը: Եւ
Յակոբն օրհնեց Փարաւոնին, և
դուրս եկաւ Փարաւոնի առջևից:
11 Եւ Յովսէփը բնակեցրեց իր Հօ-
րն ու եղբայրներին և նոքանց
տուգուածքը Եգիպտոսի երկրի
ամենալաւ տեղը՝ Ռամեսէի երկ-
րում, ինչպէս որ Փարաւոնը Հր-
12 ամայել էր: Եւ Յովսէփը անու-
ցանում էր իր Հօրն և իր եղբայր-
ներին և իր Հօր բոլոր տանը՝ Հաց
տալով ընտանիքներին:
13 Եւ բոլոր երկրի մէջ Հաց չկար. որովհետև սովը շատ սաստկա-
ցաւ. և Եգիպտոսի երկիրը և Քա-
նանու երկիրը սովի պատճառով
նուաղեց: 14 Եւ Յովսէփը Հաւաքեց
Եգիպտոսի երկրի մէջ և Քանա-
նու երկրի մէջ գտնուած բոլոր
փողը այն ծախած պաշարովը, որ
նոքանք առնում էին. և Յովսէփը
փողը Փարաւոնի տունը տարաւ:
15 Եւ Եգիպտոսի երկրից և Քանա-
նու երկրից փողը վերջացաւ, և
բոլոր Եգիպտացիները եկան Յով-
սէփի մօտ և ասացին. Մեզ Հաց
տուր. վասն զի ինչո՞ւ մեռնինք
քո առջև, թէ փող չկայ: 16 Եւ
Յովսէփն ասաց. Ձեր անասուն-
ները բերէք, և ձեր անասուննե-
րի փոխարէն տամ ձեզ, եթէ
փող չկայ: 17 Եւ նոքանք իրանց ա-
նասունները Յովսէփի մօտ բերին,
և Յովսէփը Հաց տուաւ նոքանց
ձիերի փոխարէն, և ոչխարների
փոխարէն, և արջառների փոխա-
րէն, և էշերի փոխարէն. և այն
տարին նոքանց Հացով կերակրեց
իրանց բոլոր անասունների փո-
խարէն:
18 Եւ լրացաւ այն տարին, և Հե-
տևեալ տարին նորա մօտ եկան
և ասացին նորան. Մենք չենք
ծածկել մեր տէրիցը, որ փողը
վերջացել է, և ձեր անասուններն
էլ մեր տիրոջը եղան, էլ մի բան
չմնաց մեր տիրոջ առջև, բացի
մեր անձերից և մեր երկրից: 19 Ին-
չո՞ւ Համար քո աչքի առջև մեռ-
նինք՝ մենք էլ մեր երկիրն էլ. մեզ
ու մեր երկիրը Հացով ծախու առ,
և մենք ու մեր երկիրը փարաւո-
նին ծառաներ լինինք. և սերմ
տուր որ ապրինք և չմեռնինք, և
երկիրը չանապատանայ: 20 Եւ Յով-
սէփը բոլոր Եգիպտոսի երկիրը
ծախու առաւ Փարաւոնի Համար.
վասն զի Եգիպտացիք ծախում
էին՝ ամեն մէկն իր արտը, որով-
Հետև սովը սաստիկ էր նոքանց

վերայ և երկիրը փարաւօնինը ե-
21 ղաւ։ Եւ ժողովրդին էլ բերել-
տուաւ քաղաքներն ի մէջ Եգիպ-
տոսի սահմանի մէկ ծայրից մին-
22 չև միւս ծայրը։ Միայն քուրմե-
րի երկիրը ծախու չառաւ, վասն
զի քուրմերը փարաւօնից մի որո-
ւած մաս ունէին, և ուտում
էին իրանց որոշուածը, որ փա-
րաւօնը տալիս էր նորանց, նորա
համար իրանց երկիրը չծախեցին։
23 Եւ Յովսէփն ասաց ժողովրդին.
Ահա այսօր ծախու առի ձեզ և
ձեր երկիրը փարաւօնի համար.
ահա ձեզ սերմ, և սերմանեցէք
24 երկիրը. Եւ արդիւնքի ժամանակ
հինգից մէկը փարաւօնին պիտի
տաք, և չորս մասը ձերը պիտի
լինի. որ արտի համար սերմ և
ձեզ համար և ձեր տանը եղող-
ների և ձեր երեխաների համար
25 ուտելիք լինի։ Եւ ասացին. Մեզ
ապրեցիր, թող մեր տիրոջը աչ-
քին շնորհք գտնենք, և փարաւօ-
26 նին ծառաներ լինինք։ Եւ Յով-
սէփն այս օրէնքը հաստատեց Ե-
գիպտոսի երկրում մինչև այսօր,
որ հինգից մէկը փարաւօնինը լի-
նի. բացի քուրմերի երկրից, որ
փարաւօնինը չեղաւ։
27 Եւ Իսրայէլը բնակուեցաւ Ե-
գիպտոսի երկրում Գեսեմի երկ-
րում, և այնտեղ կալուածք բա-
տացան, և աճեցին և խիստ շա-
տացան։
28 Եւ Յակոբը Եգիպտոսի երկրում
տասնեւեօթը տարի ապրեց. և
Յակոբի կենաց տարիների օրերը
հարիւր քառասունեւեօթը տարի
29 եղան։ Եւ Իսրայէլի մեռնելու օ-
րերը մօտեցան, և կանչեց իր որ-
դի Յովսէփին, և ասաց նորան.
Եթէ հիմա քո աչքին շնորհք գը-
տայ, աղաչում եմ՝ ձեռքդ իմ
երանքի տակը դիր, և ինձ մար-
դասիրութիւն և հաւատարմու-
թիւն արա. աղաչում եմ՝ ինձ
30 Եգիպտոսի մէջ մի թաղիր։ Այլ
թող իմ հայրերի հետ ննջեմ, և
դու ինձ Եգիպտոսից վեր առ, և
ինձ նորանց դերեզմանումը թա-
ղիր։ Եւ նա ասաց. Ես քո ա-
31 սածի պէս կ'անեմ։ Եւ նա ա-

սաց. Ինձ երդուեա՛ սրա. Նա էլ
երդուեցաւ նորան։ Եւ Իսրա-
յէլը *գաւազանի գլխի վերայ եր-
կրպագութիւն արաւ։

ԳԼ. ԽԸ

Եւ եղաւ այս բաներից յետոյ 1
Յովսէփին ասացին. Ահա քո հայ-
րը հիւանդ է. և նա առաւ իր
երկու որդիքը՝ Մանասէն և Եփ-
րեմը իր հետ։ Եւ Յակոբին պատ- 2
մեցին և ասացին. Ահա քո որդի
Յովսէփը քեզ մօտ է գալիս. և
Իսրայէլը ուժովացաւ և անկող-
նի վերայ նստեց։ Եւ Յակոբն ա- 3
սաց Յովսէփին. Ամենակարող
Աստուածը Քանանու երկրում
Լուզի մէջ երեւեցաւ ինձ, և ինձ
օրհնեց։ Եւ ասաց ինձ. Ահա 4
քեզ կ'աճեցնեմ և կ'շատացնեմ.
և քեզ ազգերի ժողով կ'շինեմ.
և այս երկիրը քեզանից յետոյ
քո սերունդին կ'տամ յաւիտենա-
կան կալուածք։ Եւ հիմա քո եր- 5
կու որդիքը, որ ծնան քեզ հա-
մար Եգիպտոսի երկրում իմ Ե-
գիպտոս գալուց առաջ, նորանք
իմն են, Եփրեմը և Մանասէն՝
Ռուբէնի և Շմաւոնի պէս իմն են։
Եւ նորանցից յետոյ քո ծնած որ- 6
դիքը քեզ լինին, իրանց ժառան-
գութեան մէջ իրան եղբայրների
անուններովը կանչուին։ Եւ ես 7
Միջագետից գալիս՝ Ռաքէլ մե-
ռաւ ինձ մօտ Քանանու երկրու-
մը այն ճանապարհին, որ տակա-
ւին քիչ է մնում Եփրաթա գա-
լուս, և նորան այնտեղ Եփրաթա
յի այնկէն Բեթղեհեմի ճանա-
պարհում թաղեցի։

Եւ Իսրայէլը տեսաւ Յովսէփի 8
որդիներին, և ասաց. Ո՞վ են ա-
րանք։ Եւ Յովսէփն ասաց իր հօ- 9
րը. Իմ որդիներն են որ Աստ-
ուած այստեղ ինձ տուաւ, և նա
ասաց. Խնդրեմ՝ ինձ մօտ բեր
նորանց որ օրհնեմ։ Եւ Իսրայէլի 10
աչքերը ծերութիւնից ծանրացել
էին, չէր կարողանում տեսնել.
և նորանց մօտեցրեց նորան, և

*ոմանք անկողնի

նա համբուրեց նորանց և գրկեց
11 նորանց ։ Եւ խօսեցաւ Յակոբ
ասաց . Ես քո երեսը տեսնելու
յոյս չունէի , և ահա Աստուած
ինձ քո սերունդն էլ ցոյց տուաւ ։
12 Եւ Յակոբը հանեց նորանց նորա
ծունկերից , և իր երեսով մինչև
գետինը խոնարհութիւն արաւ ։
13 Եւ Յակոբին տուաւ նորանց եր-
կուսն էլ՝ Եփրեմին իր աջ ձեռ-
քով դէպի Իսրայէլի ձախ կողմը
և Մանասէին իր ձախ ձեռքով
դէպի Իսրայէլի աջ կողմը , և մո-
14 տեցրեց նորան ։ Եւ Իսրայէլն իր
աջ ձեռքը մեկնեց , և Եփրեմի
գլխին դրաւ , որ փոքրն էր , և
իր ձախ ձեռքը Մանասէի գլու-
խին . դիտմամբ փոխեց իր ձեռ-
քերը , վասն զի Մանասէն անդ-
15 րանիկն էր ։ Եւ օրհնեց Յակոբին
և ասաց . Աի՛ն Աստուածը՝ որի
առջև գնացին իմ հայրերը՝ Ա-
բրահամը և Իսահակը , այն Աս-
տուածը , որ ինձ խնամում է քա-
16 նի որ կամ մինչև այսօր . Աի՛ն
Հրեշտակը , որ ինձ ամեն չարիք-
ներից ազատեց , օրհնէ այս տը-
ղաներին , և իմ անունը և իմ
հայրերի Աբրահամի և Իսահակի
անունը սորանց վերայ կանչուի ,
և երկրի մէջ խիտ շատանան ։
17 Եւ Յակոբը տեսաւ որ հայրն իր
աջ ձեռքը դրել է Եփրեմի գլխի
վերայ , իրան դժուարը եկաւ . և
իր հօր ձեռքը բռնեց , որ նորան
Եփրեմի գլխի վերայից Մանասէի
18 գլխի վերայ քաշէ ։ Եւ Յակոբին
ասաց իր հօրը . Այդպէս չէ , հայր
իմ , վասն զի անդրանիկը սա է .
19 աջ ձեռքդ սորա գլխին դիր ։ Եւ
հայրը չուզեց և ասաց . Գիտեմ ,
որդեակ իմ , գիտեմ . նա էլ ժո-
ղովուրդ կ'լինի , և նա էլ մեծ կը
լինի . բայց նորա փոքը եղբայրը
նորանից աւելի մեծ կ'լինի , և
նորա սերունդը ազգերի բազմու-
20 թիւն կ'լինի ։ Եւ այն օրը օրհնեց
նորանց և ասաց . Իսրայէլը քե-
զանով պիտի օրհնէ , "Աստուած
քեզ Եփրեմի պէս և Մանասէի
պէս անէ" ասելով . և Եփրեմին
Մանասէից առաջ դրաւ ։
21 Եւ Իսրայէլն ասաց Յակոբին .
Ահա ես մեռանում եմ , և Աս-
տուած ձեզ հետ կ'լինի , և ձեզ
ձեր հայրերի երկիրը կ'դարձնէ ։
22 Եւ ես քո եղբայրներից մի կտոր
երկիր աւելի տուի քեզ , որ Ա-
մորհացիների ձեռքից իմ սրով և
իմ աղեղով առի ։

ԳԼ. ԽԹ

1 Եւ Յակոբն կանչեց իր որդինե-
րին և ասաց . Ժողովուեցէք որ
պատմեմ ձեզ ինչ որ պատահելու
2 է ձեզ վերջի օրերը ։ Ժողովուե-
ցէք և լսեցէք , ով Յակոբի որդի-
ներ . և լսեցէք ձեր հօրը Իսրա-
յէլին ։
3 Ով Ռուբէն , իմ անդրանիկը ,
Դու իմ ոյժն ու իմ զօրութեան
սկիզբը՝
Գերազանց յարգութեամբ և գե-
րազանց կարողութեամբ ։
4 Ջրի պէս եռացիր .
Գերազանց չես լինիլ .
Վասն զի վեր եկար քո հօր ան-
կողինը ,
Աի՛ն ժամանակ պղծեցիր ։
Անկողի՛նս եկաւ ։
5 Շիմեան և Ղևի եղբայրներ ,
Անիրաւութեան գործիքներ են
նորանց սուրերը ։
6 Նորանց խորհուրդների մէջ չմտնէ
իմ հոգին ,
Նորանց ժողովքի հետ չմիանայ
իմ պատիւը .
Վասն զի իրանց բարկութեամբը
մարդ սպանեցին ,
Եւ իրանց կամնապաշտութեամբը
ցուլ ջիղ կտրեցին ։
7 Անիծեալ լինի նորանց բարկու-
թիւնը , քանի որ խիտ էր ,
Եւ նորանց սրտմտութիւնը , քանի
որ սաստիկ էր .
Կ'բաժանեմ նորանց Յակոբի մէջ ,
Եւ կ'ցրուեմ Իսրայէլի մէջ ։
8 Ով Յուդա , քեզ կ'գովեն քո
եղբայրները .
Ձեռքդ քո թշնամիների պարա-
նոցի վերայ լինի .
Երկրպագութիւն անեն քեզ քո
հօր որդիքը ։
9 Առիւծի ձագ է Յուդան .
Որդեակ իմ , կողոպուտից եկար ։

Ծունկ կրկնեց՝ պառկեց առիւծի պէս և մատակ առիւծի պէս.
Ո՞վ կ'զարթնեցնէ նորան։
10 Չպակասէ իշխողութիւնը Յուդայէն,
եւ օրէնսդիրը, նորա ոտքերի մէջ տեղից.
Մինչև որ Սելովը գայ.
Եւ նորանն է ժողովուրդների հնազանդութիւնը։
11 Նա իր աւանակը որթին կ'կապէ,
եւ ագնիւ որթին՝ իր էգ իշի ձագը.
Գինով կ'լուանայ իր պատմուճանը,
եւ խաղողի արիւնով իր հանդերձը
12 Իր աչքերը գինուց կարմիր՝
Եւ իր ատամները կաթից սպիտակ կ'լինին։
13 Զաբուղանը ծովի եզերքում կը բնակէ,
եւ նա նաւերի եզերքում կ'լինի,
եւ նորա սահմանը մինչև Սիդոն։
14 Իսաքարը մի ամրապինդ էշ է,
Պառկում է գոմերի մէջտեղը.
15 Եւ տեսաւ որ հանգստութիւնը լաւ է,
եւ երկիրը որ գեղեցիկ է.
Իր ուսը ծռեց բեռ կրելու,
եւ հարկատու ծառայ եղաւ։
16 Դանը կ'դատէ իր ժողովրդին,
Իսրայէլի ցեղերի մէկի պէս։
17 Դանը մի օձ կ'լինի ճանապարհի վերայ,
Մի իժ շաւիղի վերայ
Կծում է ձիան գարշապարը.
Եւ վայր է ընկնում հեծեալը ետևին։
18 Քո փրկութեանն եմ սպասում Եհովայ։
19 Գադը՝ մի գունդ կ'յարձակէ նորա վերայ,
Բայց ինքը կ'յարձակէ ետևից։
20 Ասերի համար հացը պարարտ է.
Եւ ինքը կ'տայ թագաւորի համադամ կերակուրներ։
21 Նեփթաղիմը մի ազատ եղջերէ է.
Որ գեղեցիկ խօսքեր է տալիս։
22 Մի պտղատու ոստ է Յովսէփը,
Մի պտղաբեր ոստ՝ աղբիւրի վերայ,
Բողբոջները տարածվում են պատի վերայ։
23 Եւ վշտացրին նորան,
Եւ նետաձիգ արին,
Եւ ատեցին նորան ազեղնաւորները.
Բայց նորա ազեղը զօրաւոր մնաց, 24
Եւ ջլացած են նորա ձեռաց բազուկները,
Յակոբի հզօրի ձեռքերով.
Անտեղից է հովիւը Իսրայէլի վէմը։
Քո հօր Աստուածանից որ քեզ 25
կ'օգնէ,
Եւ Ամենակարողից որ քեզ կ'օրհնէ,
Երկնից օրհնութիւններով՝ վերևից,
Խորութեան օրհնութիւններով՝ որ պառկած է ցածում.
Ծիծերի և արգանդի օրհնութիւններով։
Քո հօր օրհնութիւնները որ զօ- 26
բացան մշանջենաւոր լեռանց օրհնութիւններից՝
Յաւիտենական բլուրների վայելչութիւնից բարձր, Յովսէփի գլխի վերայ լինին.
Եւ իր եղբայրներից գերազանց լինողի գագաթի վերայ։
Բենիամինը պատառող գայլ է, 27
Առաւօտանց որսը կ'ուտէ,
Եւ իրիկունը կողոպուտը կ'բաժանէ։
Բոլոր այս Իսրայէլի ցեղերը 28
տասներկու են. և այս է որ նորանց հայրը խօսեց նորանց հետ,
և օրհնեց նորանց. ամեն մէկի օրհնութեանը պէս օրհնեց նորանց։
Եւ պատուիրեց նորանց և ասաց 29
նորանց. Ես իմ ժողովրդի հետ պիտի խառնուիմ. իմ հայրերի հետ այն այրի մէջ թաղեցէք ինձ,
որ Քեթացի Եփրոնի արտումն է.
Այն այրի մէջ, որ Քանանու երկրում Մամբրէի դիմաց եղող Մաքփելայի արտումն է, որ Աբրահամը ծախու առաւ այն արտի հետ միասին գերեզմանի կալուածքի համար Քեթացի Եփրոնից։ Այնտեղ թաղեցին Աբրահամին և նորա կնոջ Սարրային. այնտեղ թաղեցին Իսահակին և նորա կնոջը Ռեբեկային. և ես էլ այնտեղ թաղեցի Լիային։ Այն արտը և այնտեղ եղած այրը Քեթի որդիներից ծախու առնուեցան։ Եւ

Յակոբը վերջացրեց իր որդոց պատուեր տալը, իր ոտքերը անկողնի մէջ ժողովեց, և հոգին ետուն դեց, և իր ժողովրդի հետ խառնուեցաւ։

ԳԼ. Ծ

1 Եւ Յովսէփն իր հօր երեսի վերայ ընկաւ, և լացաւ նորա վերայ, և համբուրեց նորան։ Եւ
2 Յովսէփն իր բժիշկ ծառաներին հրամայեց որ իր հօրը զմռսեն. և բժիշկները զմռսեցին Իսրայէլին։
3 Եւ նորա քառասուն օրը լրացան. վասն զի այսպէս էին լրանում զմռսուածների օրերը, և Եգիպտացիք նորա համար եօթանասուն օր սուգ արին։ Եւ երբ նորա
4 սուգի օրերն անցան, Յովսէփը խօսեց փարաւօնի տան հետ ասելով. Թէ որ հնար ձեր առջև շնորհք գտայ, խնդրեմ փարաւօնի ականջին խօսեցէք և ասացէք. Իմ հայրն ինձ երդում
5 առնել տուաւ ասելով. Ահա ես մեռանում եմ, իմ գերեզմանի մէջ որ ես ինձ համար փանտուխտը փորեցի, ինձ այնտեղ թաղես, և հիմա թող երթամ՝ իմ հօրը թաղեմ, և ետ դառնամ։
6 Եւ փարաւօնն ասաց. Ելիր և թաղիր քո հօրը ինչպէս որ նա քեզ երդում առնել տուաւ։
7 Եւ Յովսէփն ելաւ իր հօրը թաղելու, և նորա հետ ելան փարաւօնի բոլոր ծառաները, նորա տան ծերերը և Եգիպտոսի երկրի
8 բոլոր ծերերը։ Նաև Յովսէփի բոլոր տունը և նորա եղբայրները և նորա հօր տունը. միայն նորանց երեխաները, և նորանց հօտերը, և նորանց արջառները գեաղի երկրումը թողեցին։ Եւ նո-
9 րա հետ կառքեր և ձիաւորներ ելան, և մի շատ մեծ բանակ եղաւ։
10 Եւ եկան Ատադի կալը, որ Յորդանանու միւս կողմն է, այն տեղ մեծ և խիստ սաստիկ լացով ողբացին, և իր հօր համար եօ-
11 թը օր սուգ արաւ։ Եւ այն երկրի բնակիչ Քանանացիները երբոր տեսան Ատադի կալի մէջի սուգը, ասացին. Սա մի մեծ սուգ է Եգիպտացիների, նորա համար նորա անունը Աբելմիսրաիմ դրին, որ Յորդանանու միւս կողմն է։ Եւ նորա որդիքն արին նորան
12 ինչպէս որ պատուիրել էր։ Եւ
13 նորա որդիքը Քանանու երկիրը տարին նորան, և թաղեցին նորան Մաքփելայի արտի այրումը, որ Աբրահամը գերեզմանի կալուածքի համար ծախու առաւ արտի հետ Մկատեզ Քեսացի Եփրոնից Մամբրէի դիմացը։ Եւ Յով-
14 սէփը ետ դարձաւ Եգիպտոս իր հօրը թաղելուց յետոյ, ինքը և իր եղբայրները և այն ամենը որ իր հետ եկան իր հօրը թաղելու։

Եւ Յովսէփի եղբայրները տե-
15 սան որ իրենց հայրը մեռաւ, ասացին. Գուցէ Յովսէփը ոխ ունենայ մեզ հետ և հատուցանէ մեզ այն ամեն չարիքը, որ մենք արինք իրան։ Եւ Յովսէփին պատ-
16 գամաւոր ուղարկեցին ասելով. Քո հայրը մեռնելուց առաջ պատուիրեց և ասաց. Այսպէս ասեցէք Յովսէփին. Հիմա շնորհք ա-
17 րա քո եղբայրների յանցանքն ու նորանց մեղքը ներիր, վասն զի քեզ չարութիւն արին. և հիմա աղաչում ենք՝ ներիր քո հօր Աստուծոյ ծառաների յանցանքը։ Եւ Յովսէփը լացաւ նորանց այս խօսքերի համար, որ ասացին իրան։ Եւ նորա եղբայրներն էլ
18 գնացին, և նորա առջև ընկան, և ասացին. Ահա մենք քո ծառաներն ենք։ Եւ Յովսէփն ասաց
19 նորանց. Մի վախենաք, միթէ ես Աստուծոյ փոխանորդն եմ։
20 Եւ թէպէտ դուք ինձ դէմ չարութիւն խորհեցիք, բայց Աստուած այն լաւի դարձնել խորհեց, որ անէր այս օրուայ եղածի պէս, այնպէս որ շատ ժողովուրդ ապրեցնէր։ Եւ հիմա մի վախենաք.
21 ես ձեզ և ձեր երեխաներին պիտի կերակրեմ։ Եւ միխիթարեց նորանց և քաղցրութեամբ խօսեց։

Եւ Յովսէփը Եգիպտոսում բնա-
22 կեց, ինքը և իր հօր տունը, և Յովսէփը հարիւր տասը տարի ապրեց։ Եւ Յովսէփը Եփրեմի երրորդ
23

սերնդեան որդիները տեսաւ, և Մանասէի որդի Մաքիրի որդիները էլ Յովսէփի ծունկերի վերայ
24 ծնան: Եւ Յովսէփն իր եղբայրներին ասաց. Ահա ես մեռանում եմ, և Աստուած անպատճառ ձեզ այցելութիւն է անելու, և ձեզ այս երկրից հանելու է դէպի այն երկիրը, որի համար ինքը երդում արաւ Աբրահամին, Իսահակին և Յակոբին: Եւ Յովսէփն 25
Իսրայէլի որդոցը երդում անել տուաւ ասելով. Աստուած անպատճառ ձեզ այցելութիւն է անելու, և իմ ոսկորներն այստեղից հանեցէք: Եւ Յովսէփը մեռաւ 26
հարիւր տասը տարեկան, և զմուսեցին նորան, դրին մի տապանի մէջ Եգիպտոսում:

ԳԻՐՔ ԵԼԻՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ սորանք են Իսրայէլի որդոց անուննները որ Եգիպտոս գնացին, ամեն մէկը իր անուամբ Յակոբի հետ
2 գնաց: Ռուբէն, Շմաւոն, Ղեւի
3 և Յուդա, Իսաքար, Զաբուղոն
4 և Բենիամին, Դան ու Նեփթաղիմ, Գադ ու Ասեր: Եւ Յակոբի
5 երանքից եղած բոլոր հոգիները եօթանասուն հոգի էին. Յովսէփն
6 էլ Եգիպտոսումն էր: Եւ մեռաւ Յովսէփը և նորա բոլոր եղբայրները և բոլոր այն ազգը: Եւ Իսրայէլի որդիքը աճեցին և բազմացան և շատացան և խիստ զօրացան, և այն երկիրը նորանցով լցուեցաւ:

8 Արդ Եգիպտոսի վերայ մի նոր թագաւոր եղաւ, որ Յովսէփին
9 չէր ճանաչում: Եւ նա ասաց իր ժողովրդին. Ահա Իսրայէլի որդոց ժողովուրդը մեզանից շատ և զօ-
10 րաւոր են. եկէք խնամութեամբ վարուինք նորա դէմ, մի գուցէ շատանան, և լինի որ երբ պատերազմ պատահէ, և նորանք էլ մեր թշնամիների հետ միանան, և մեզ դէմ պատերազմեն, և այս
11 երկրից գնան: Նորա համար դարձապետներ դրին նորանց վերայ, որ չարչարեն նորանց իրանց ծանր գործքերովը. և շէնմարանի քաղաքներ շինեցին փարաւօնի համար՝ փիթօմը և Ռամսէսը: Եւ
12 որչափ որ չարչարում էին նորանց, այնչափ էլ աւելի շատանում էին և աճում էին. և նորանք Իսրայէլի որդիներից երկիւղ կրեցին: Եւ Եգիպտացիք բռնու- 13
թեամբ ծառայեցնում էին Իսրայէլի որդիներին: Եւ նորանց 14
կեանքը դառնացնում էին ծանր ծառայութեամբ՝ կաւով և աղիւսներով և դաշտի ամեն գործերովը. ինչ ծառայութեան էլ որ նորանց անել տային բռնութեամբ էր լինում:

Եւ Եգիպտոսի թագաւորը խո- 15
սեց Եբրայեցոց մանկաբարձների հետ, որոնց մէկի անունը Սեփրա և միւսի անունը Փուա էր, Եւ 16
ասաց. Եբրայեցի կանանց ծնեցնելիս նստարանների վերայ նայէք, եթէ տղայ է՝ մեռցրէք նորան, և եթէ աղջիկ է՝ թող ապրէ: Բայց մանկաբարձները 17
Աստուածանից վախեցան, և չարին ինչպէս ասել էր նորանց Եգիպտոսի թագաւորը. այլ արուներին ողջ էին թողում: Եւ Եգիպտոսի թագաւորը կանչեց մանկաբարձներին, և ասաց նորանց. 18
Ինչո՞ւ արիք այս բանը և արուներին ողջ թողեցիք: Եւ մանկա- 19
բարձներն ասացին Փարաւօնին. Որովհետև որ Եբրայեցի կանայքը Եգիպտացի կանանց պէս չեն. վասն զի նորանք առոյգ են. մանկաբարձը դեռ նորանց մօտ չգնացած՝ ծնում են: Եւ Աստուած 20
մանկաբարձներին բարիք արաւ. և ժողովուրդը շատացաւ, և խիստ զօրացան: Եւ եղաւ որ մանկա- 21

բարձներին Աստուածոյ վախենում էին, և նորանց տուներ
22 չինեց: Եւ Փարաւօնը հրամայեց իր ժողովրդին ասելով. Ամեն ծնած տղային գետը գցեցէք, և ամեն աղջիկը ողջ թողեցէք:

ԳԼ. Բ

1 Եւ Ղևիի տունից մէկը գնաց,
2 ու Ղևիի ձէն աղջկին առաւ: Եւ կինը յղացաւ, և մի որդի ծնաւ. և տեսաւ որ նա գեղեցիկ էր, ե-
3 րեք ամիս թաքցրեց նորան: Եւ երբ այլ ևս չկարողացաւ թաքցընել նորան, մի պրտուի տապանակ առաւ նորա համար, և կուպրով ու ձիւթով ծեփեց, և տղան նորա մէջ դրաւ, և դրաւ գետի եղերքում եղած շամբի մէջ:
4 Եւ նորա քոյրը կանգնեց հեռուանց, որ տեսնէ թէ ինչ կ'պատահէ նորան:
5 Եւ Փարաւօնի աղջիկն իջաւ գետը լուացուելու, և նորա աղախինները գետի եղերքին մեան էին գալիս. և տեսաւ տապանակը շամբի մէջտեղը, և իր աղախնին ուղարկեց, որ առ-
6 նաւ նորան. Եւ բացաւ և տեսաւ տղան, և ահա տղան լացում էր. և խղճաց նորա վերայ, և ասաց. Սա եբրայեցի տղաներից է: Յետոյ նորա քոյրն ասաց
7 Փարաւօնի աղջկանը. Գնամ և քեզ համար եբրայեցիներից մի ծիծ տուող կնիկ կանչե՞մ, որ տը-
8 զային ծիծ տայ քեզ համար: Եւ Փարաւօնի աղջիկն ասաց նորան. Գնա, և աղջիկը գնաց, և այն
9 տղայի մօրը կանչեց: Եւ Փարաւօնի աղջիկն ասաց նորան. Տար այս տղային և ծիծ տուր ինձ համար, և ես քո վարձքը կ'տամ. և կնիկն առաւ տղային, և ծիծ
10 տուաւ նորան: Եւ տղան մեծացաւ և Փարաւօնի աղջկան մօտ բերաւ նորան, և նորան որդի եղաւ, և նորա անունը Մովսէս դրաւ, և ասաց. Վասն զի ջրից հանեցի նորան:
11 Եւ եղաւ այն օրերում որ Մովսէսը մեծացաւ, և ելաւ իր եղբայրների մօտ, և նորանց ծանր

գործքերը տեսաւ. և տեսաւ մի Եգիպտացի, որ իր եբրայեցի եղբայրներին մէկին ծեծում էր: Եւ 12
այս կողմ ու այն կողմ մտիկ արաւ և տեսաւ որ մարդ չկայ, և մեռցրեց Եգիպտացուն, և ա-
ւազումը թաղեց նորան: Եւ հե- 13
տևեալ օրը ելաւ, և ահա երկու եբրայեցի մարդիկ կռւում էին իրար հետ, և ասաց յանցաւորին. Ինչո՞ւ ես քո ընկերին ծեծում: Եւ նա ասաց. Ո՞վ քեզ մեր վե- 14
րայ իշխան կամ դատաւոր դրաւ. միթէ դու մեռցնելու միտք ունիս, ինչպէս որ Եգիպտացուն մեռցրիր: Եւ Մովսէսը վախեցաւ և ասաց՝ Անշուշտ այս բանը իմացուած է:
Եւ Փարաւօնը լսեց այս բանը, 15
և ուզում էր Մովսէսին մեռցնել. բայց Մովսէսը փախաւ, և Մադիամու երկրումը բնակեց, և մի
հօրի մօտ նստեց: Եւ Մադիամու 16
քուրմը եօթը աղջիկ ունէր, և նորանք եկան և ջուր քաշեցին, և իրենց հօրը հօտը խմեցնելու
համար տապանները լցրին: Եւ 17
հովիւները եկան և քշեցին նորանց. և Մովսէսն ելաւ ու օգնեց նորանց, և նորանց հօտին
ջուր խմեցրեց: Եւ նորանք իրանց 18
հօրը Ռագուէլի մօտ եկան, և նա ասաց. Ինչո՞ւ շուտ եկաք այսօր:
Եւ ասացին. Մէկ Եգիպտացի 19
մեզ հովիւների ձեռքից ազատեց, և մեզ համար ջուր էլ քաշեց և խմեցրեց: Նա էլ ասաց իր աղ- 20
կերանցը. Եւ ո՞ւր է, ինչո՞ւ այն մարդուն այդպէս թող տուիք. կանչեցէք նորան որ հաց ուտէ:
Եւ Մովսէսը հաճեց այն մարդու 21
հետ բնակիլ, և նա իր Սեպփօրա աղջիկը Մովսէսին տուաւ: Եւ 22
նա մի որդի ծնաւ, և նա նորա անունը Գերսամ դրաւ. որովհետև ասաց. Պանդուխտ եղայ օտար երկրում:
Եւ եղաւ որ այն շատ օրերում 23
Եգիպտոսի թագաւորը մեռաւ, և Իսրայէլի որդիքը ծառայութեան պատճառով հառաչեցին և աղաղակեցին. և ծառայութեան համար նորանց աղաղակը Աստուծոյ մօտ բարձրացաւ: Եւ 24

Աստուած նորանց հնծութիւնը լսեց. և Աստուած յիշեց իր ուխտը որ Աբրահամի, Իսահակի և 25 Յակոբի հետ դրել էր: Եւ Աստուած նայեց Իսրայէլի որդոց վերայ, և Աստուած գիտեցաւ նորանց վիճակը:

ԳԼ. Գ

1 Եւ Մովսէսը Մադիամու քուրմի իր աներոջ Յոթորի հօտը արածեցնում էր. և հօտը անապատի ետևը քշելով Աստուծոյ 2 Քորեբ լեռը եկաւ: Եւ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երևեցաւ նորան մորենու մէջից. և նա տեսաւ որ այդ մորենին կրակով վառվում էր, բայց մորենին չէր 3 ապառվում: Եւ Մովսէս ասաց՝ Մէկ դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը, թէ ինչո՞ւ հա- 4 մար չէ այրվում մորենին: Եւ Եհովան տեսաւ, որ նա դարձաւ տեսնելու, և Աստուած մորենու մէջից կանչեց նորան և ասաց. Մովսէս Մովսէս. և նա ասաց. 5 Ահա ես: Եւ ասաց. Այս տեղին մի մօտենար. կօշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետև այն տեղը, որի վերայ դու կանգնել ես սուրբ 6 երկիր է: Նաև ասաց. Ես եմ քո հօր Աստուածը՝ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը և Յակոբի Աստուածը. և Մովսէս իր երեսը ծածկեց. վասընզի վախեց Աստուծոյն մօրից տալու:

7 Եւ Եհովան ասաց. Իրաւ տեսայ իմ ժողովրդի չարչարանքը, որ Եգիպտոսումն է, և գործավարների պատճառով նորանց աղաղակը լսեցի. որովհետև նորանց նեղութիւնները գիտեմ. 8 Եւ իջայ նորանց Եգիպտացոց ձեռքից ազատելու, և նորանց այն երկրից մէկ լաւ ու լայնատարածակ երկիր՝ մի կաթ ու մեղր բղխող երկիր՝ Քանանացոց և Քեւացոց և Ամորհացոց և Փերեզացոց և Խեւացոց և Յեբուսացոց տեղը հանելու: 9 Եւ ահա հիմա Իսրայէլի որդոց աղաղակը ինձ մօտ է հասել. և տեսայ էլ այն հարստահարութիւնն, որ Եգիպտացիներն անում են նորանց: 10 Ուստի եկ հիմա քեզ փարաւօնի մօտ ուղարկեմ, և հանիր իմ ժողովուրդը՝ Իսրայէլի որդիքը Եգիպտոսից: 11 Եւ Մովսէսն ասաց Աստուծոյն. Ես ո՞վ եմ որ փարաւօնի մօտ գնամ, և Իսրայէլի որդիքը Եգիպտոսից հանեմ: 12 Եւ ասաց. Թէ ես քեզ հետ կ'լինիմ, և սա քեզ համար նշան կ'լինի, որ ես եմ քեզ ուղարկել. երբոր ժողովուրդը Եգիպտոսից հանես, այս լեռան վերայ կ'պաշտէք Աստուծոյն:

13 Եւ Մովսէսն ասաց Աստուծոյն. Ահա ես գնում եմ Իսրայէլի որդոց մօտ, և կ'ասեմ նորանց. Ձեր հայրերի Աստուածն ինձ ձեզ մօտ է ուղարկել. և երբոր ինձ ասեն. Թէ ի՞նչ է նորա անունը, ի՞նչ ասեմ նորանց: 14 Եւ Աստուած ասաց Մովսէսին. Ես եմ ՈՐ ԵՄ. և ասաց. Այսպէս ասիր Իսրայէլի որդոցը. Ես եմ ինձ ուղարկեց ձեզ մօտ: 15 Նաև Աստուած ասաց Մովսէսին. Այսպէս ասիր Իսրայէլի որդոցը. Ձեր հայրերի Եհովայ Աստուածը՝ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը և Յակոբի Աստուածը ինձ ձեզ մօտ ուղարկեց, այս է իմ անունը յաւիտեան, և այս է իմ յիշատակը ազգից ազգ: 16 Գնա Իսրայէլի ծերերին ժողով արա, և ասիր նորանց. Ձեր հայրերի Եհովայ Աստուածը, Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը երևեցաւ ինձ ասելով. Արդարև այցելութիւն արի ձեզ, և Եգիպտոսի մէջ ձեր քաշածը տեսայ: 17 Եւ ասացի՝ Հանեմ ձեզ Եգիպտոսի չարչարանքից դէպի Քանանացոց և Քեւացոց և Ամորհացոց և Փերեզացոց և Խեւացոց և Յեբուսացոց երկիրը՝ կաթ և մեղր բղխող երկիրը: 18 Եւ նորանք քո ձայնին կ'լսեն. և դու և Իսրայէլի ծերերը Եգիպտոսի թագաւորի մօտ կ'մտնէք, և կ'ասէք նորան. Եբրայեցոց Աստուածը Եհովան մեզ հանդիպեց. և հի-

մա թող երեք օրուայ ճանապարհ
գնանք դէպի անապատը, որ մեր
Եհովայ Աստուծոյն զոհ մատու-
19 ցանենք։ Եւ ես գիտեմ, որ Ե-
գիպտոսի թագաւորը ձեզ թող
չի տալու. որ գնաք և ոչ էլ
20 զօրաւոր ձեռքով։ Եւ ես իմ
ձեռքը կ'երկայնացնեմ, կ'զարկեմ
Եգիպտոսը իմ ամեն հրաշքնե-
րովը, որ նորա մէջ պիտի անեմ.
և նորանից յետոյ ձեզ կ'թողէ։
21 Եւ այս ժողովրդին շնորհք կ'տամ
Եգիպտացոց առջև. և երբոր ել-
22 նէք՝ դատարկ չէք ելնել։ Այլ
ամեն կնիկ իր դրացուց և իր
տանը բնակող կնոջից արծաթէ-
ղէն զարդեր և ոսկեղէն զարդեր
և հանդերձներ կ'խնդրէ, և կր
դնէք ձեր որդիների և աղջիկների
վերայ. և Եգիպտոսին կ'կողոպ-
տէք։

ԳԼ. Դ

4 1 Եւ Մովսէսը պատասխանեց և
ասաց. Բայց տես նորանք ինձ
չեն հաւատալու, ոչ էլ իմ ձայ-
նին լսելու են. վասն զի ասելու
են թէ Եհովան քեզ չէ երևա-
2 ցել։ Եւ Եհովան ասաց նորան.
Այդ ի՞նչ է քո ձեռքինը. և նա
3 ասաց՝ գաւազան։ Եւ ասաց.
գետինը դիր զա. և նա գետինը
դրեց, և օձ եղաւ, և Մովսէսը
4 նորա առջևից փախաւ։ Եւ Եհո-
վան ասաց Մովսէսին. Ձեռքդ
մեկնիր և պոչը բռնիր. և նա
իր ձեռքը մեկնեց և նորան բռա-
նեց, և գաւազան եղաւ նորա
5 ձեռքումը. Որ հաւատան թէ
քեզ երևեցաւ իրանց հայրերի Ե-
հովայ Աստուածը, Աբրահամի
Աստուածը, Իսահակի Աստուա-
ծը և Յակոբի Աստուածը։
6 Եւ Եհովան դարձեալ ասաց
նորան. Հիմա ձեռքդ տար ծոցդ.
և նա ձեռքը ծոցը տարաւ, և
դուրս հանեց, և տես ձեռքը
7 ձիւնի պէս բորոտ եղաւ։ Եւ ա-
սաց. ձեռքդ դարձեալ ծոցդ տար.
և նա դարձեալ ձեռքը ծոցը տա-
րաւ, և ծոցիցը հանեց, և տես
8 իր մարմնի պէս էր եղել։ Եւ էցէ

թէ քեզ չհաւատան, և առաջի
նշանի ձայնին չլսեն, այն ժամանակ
երկրի նշանի ձայնին կ'հաւատան։
9 Իսկ էցէ թէ այս երկու նշաննե-
րին էլ չհաւատան, և քո ձայնին
էլ չլսեն, գետի ջրից վեր առ,
և ցամաքի վերայ թափիր, և այն
ջուրը, որ գետից վեր առիր, ցա-
մաքի վերայ արիւն կ'դառնայ։
10 Եւ Մովսէսն ասաց Եհովային.
Ո՛հ, Տէր իմ, ես ճարտարախօս
չեմ, ոչ երէկուանից ու մէկ'էլ օր-
ուանից. ոչ էլ ծառայիդ հետ
խօսելուցդ յետոյ, այլ ես ծան-
րախօս և ծանրալեզու եմ։ 11 Եւ Ե-
հովան ասաց նորան. Ո՞վ է մար-
դուն բերան տուել. կամ ո՛վ է
անում համրը կամ խուլը կամ
աչք ունեցողը կամ կոյրը, չէ՞ որ
ես Եհովա։ 12 Եւ հիմա գնա, և
ես քո բերանի հետ կ'լինիմ, և
քեզ կ'սովորեցնեմ ինչ որ պիտի
խօսես։ 13 Եւ նա ասաց. Ո՛հ, Տէր
իմ, աղաչեմ՝ ուղարկիր որի ձեռ-
քով որ ուզում ես ուղարկել։ 14 Եւ
Եհովայի բարկութիւնը բորբոքեց
Մովսէսի դէմ, և ասաց. Մի՞թէ
ես քո Ահարոն եղբօրը՝Ղեւտա-
ցուն չեմ ճանաչում որ ճարտա-
րախօս է. նաև ահա նա դուրս է
գալիս քեզ դիմաւորելու, և քեզ
տեսածի պէս իր սրտումը պիտի
ուրախանայ։ 15 Եւ դու խօսիր նորա
հետ, և խօսքեր դիր նորա բերա-
նումը. և ես քո բերանի և նորա
բերանի հետ կ'լինիմ, և ձեզ կը
սովորեցնեմ ինչ որ պիտի անէք։
16 Եւ քո տեղ նա կ'խօսէ ժողովրդի
հետ. և նա քեզ համար բերանի
տեղ կ'լինի, ու դու նորա համար
Աստուծոյ տեղ կ'լինիս։ 17 Եւ այս
գաւազանն առ քո ձեռքը, որ նո-
րանով անես նշանները։

18 Եւ Մովսէսը գնաց, և իր աներ
Յոթորի մօտ դարձաւ, և ասաց
նորան. Թող գնամ, և Եգիպտո-
սում լինող եղբայրներիս մօտ էս
դառնամ, և տեսնեմ թէ տակա-
ւին ա՞ղջ են. և Յոթորն ասաց
Մովսէսին. Գնա խաղաղութեամբ։
19 Եւ Եհովան Մադիամի մէջ ասաց
Մովսէսին. Գնա էս դարձիր Ե-
գիպտոս, վասն զի մեռան այն

ամեն մարդիկը, որ քո կեանքը
20 որոնում էին։ Եւ Մովսէսն իր
կինն ու որդիները առաւ, և
էշի վերայ հեծցրեց նորանց, և
եւ դարձաւ Եգիպտոսի երկիրը.
և Մովսէսն առաւ Աստուծոյ գա-
21 ւազանը իր ձեռքը։ Եւ Եհովան
ասաց Մովսէսին. Երբոր եւ դառ-
նաս գնաս Եգիպտոս, նայիր որ
փարաւոնի առջև անես բոլոր այն
հրաշքները, որոնք քո ձեռքը
դրի, և ես նորա սիրտը կ'խստա-
ցնեմ, և ժողովրդին թող չի տալ։
22 Եւ ասիր փարաւոնին, Եհովան
այսպէս է ասում. Իսրայէլն իմ
23 որդին՝ իմ անդրանիկն է։ Եւ քեզ
ասում եմ. Թող տուր իմ որդին
որ ինձ պաշտէ. բայց եթէ նորան
թող տալ չուզես, ահա ես քո
որդին՝ քո անդրանիկը կ'սպանեմ։
24 Եւ եղաւ ճանապարհին մի ի-
ջևանում, որ Եհովան նորան պա-
տահեց, և ուզեց սպանել նորան։
25 Եւ Սեպփորա մի սուր քար ա-
ռաւ, և իր որդու անթլփատու-
թիւնը թլփատեց, և նորա ոտ-
քերի մօտ դցեց, և ասաց. Թէ
Դու ինձ համար մի արիւնոտ փե-
26 սայ ես։ Այսպէս թող տուաւ
նորան, այն ժամանակ ասաց.
Թլփատութեան համար արիւնոտ
փեսայ։
27 Եւ Եհովան ասաց Ահարոնին.
Գնա անապատը Մովսէսին դի-
մաւորելու. և նա գնաց, և պա-
տահեց նորան Աստուծոյ լեռան
28 վերայ, և համբուրեց նորան։ Եւ
Մովսէսը պատմեց Ահարոնին Ե-
հովայի բոլոր խօսքերը որ ուղար-
կեց իրան, և այն բոլոր նշաննե-
րը, որ իրան պատուիրեց։
29 Եւ Մովսէսն ու Ահարոնը գնա-
ցին, և Իսրայէլի որդոց բոլոր
30 ծերերին ժողովեցին։ Եւ Ահարո-
նը Եհովայի Մովսէսին ասած բո-
լոր խօսքերը պատմեց. և նշաննե-
31 րըն արաւ ժողովրդի առջև։ Եւ
ժողովուրդը հաւատաց. և լսե-
ցին, թէ Եհովան այցելութիւն
է արել Իսրայէլի որդոցը, և թէ
նորանց նեղութիւնները տեսել
է, և խոնարհեցին և երկրպագու-
թիւն արին։

ԳԼ. Ե

1 Եւ յետոյ Մովսէսն ու Ահարո-
նը եկան և ասացին փարաւոնին.
Այսպէս է ասում Իսրայէլի Եհո-
վայ Աստուածը, իմ ժողովուրդը
թող տուր, որ անապատումն ինձ
2 տօն կատարեն։ Եւ փարաւոնն
ասաց. Եհովան ո՞վ է, որ նորա
խօսքին լսեմ, և Իսրայէլին թող
տամ. Եհովան չեմ ճանաչում, և
3 Իսրայէլն էլ թող չեմ տալիս։ Եւ
նորանք ասացին. Եբրայեցոց Աստ-
ուածը մեզ հանդիպեց. հրաման
տուր որ երեք օրուայ ճանապարհ
գնանք անապատը, և մեր Եհո-
վայ Աստուծոյն զոհ մատուցա-
նենք, որ մի գուցէ ժանտախտով
կամ սրով մեզ վերայ յարձակէ։
4 Եւ Եգիպտոսի թագաւորն ասաց
նորանց. Ով Մովսէս և Ահարոն,
ինչո՞ւ համար ժողովրդին իրանց
գործքերից եւ էք թողում, գը-
նացէք ձեր աշխատանքին։
5 Եւ փարաւոնն ասաց. Ահա հիմա երկ-
րի ժողովուրդը շատ է, և դուք
դադարեցնում էք նորանց իրանց
գործքերից։

6 Եւ փարաւոնն այն օրը ժողո-
վրդի գործավարներին և նորանց
վերակացուներին հրամայեց ասե-
7 լով. Երեկուայ և ժէկէլ օրուայ
պէս այլ եւս ժողովրդին յարդ
մի տաք աղիւս շինելու համար,
թող իրանք գնան իրանց համար
8 յարդ ժողովեն։ Եւ աղիւսների
հաշիւը ինչպէս որ երէկ և ժէկէլ
օրը շինում էին՝ նորանց վերայ դը-
րէք, նորանից մի պակասացնէք.
վասն զի ծոյլ են, նորա համար են
նորանք աղաղակում՝ ասելով. Գը-
նանք մեր Աստուծոյն զոհ մատու-
ցանենք։ 9 Թող գործը այս մարդոց
վերայ ծանրանայ, որ նորանով
գործեն, և դատարկ խօսքերի մտիկ
չանեն։ 10 Եւ ժողովրդի գործավար-
ներն ու վերակացուները ելան, և
ժողովրդի հետ խօսեցին ասելով.
11 Այսպէս է ասում փարաւոնը. Ես
ձեզ յարդ չեմ տալ, դուք գնա-
ցէք ձեզ համար յարդ առէք
ուր որ գտնէք, սակայն ձեր գոր-
ծից մի բան պիտի չպակասէ։ 12 Եւ

ԳԼ. Զ

Եւ եհաման տաց Մովսէսին, 1
Հիմա կ'տեսնես թէ փարաւօնին
ինչ կ'անեմ. որ հզօր ձեռքով
թող կ'տայ նորանց, և հզօր
ձեռքով դուրս կ'անէ նորանց իր
երկրէնցը: Եւ Աստուած խօսեց 2
Մովսէսի հետ և ասաց նորան.
Ես եմ Եհովան: Եւ երևեցայ 3
Աբրահամին, Իսահակին և Յա-
կոբին Ամենակարող Աստուծոյ
անուամբ, բայց իմ Եհովայ ա-
նունովը նորանց չյայտնուեցայ:
Նաև նորանց հետ իմ ուխտը 4
հաստատեցի, որ նորանց տամ
Քանանու երկիրը, նորանց պան-
դխտութեան երկիրը ուր որ պան-
դխտացան: Եւ լսեցի էլ Իսրայէլի 5
որդոց հառաչանքը, որ եգիպտա-
ցիները ծառայեցնում են նորանց.
և յիշեցի իմ ուխտը: Նորա հա- 6
մար Իսրայէլի որդոցն ասիր. Ես
եմ Եհովան. և ես ձեզ եգիպ-
տացոց ծանր գործքերի տակից կը
հանեմ, և ձեզ նորանց ծառայու-
թիւնից կ'ազատեմ, և կ'փրկեմ
ձեզ մեկնած բազուկով և մեծ
դատաստաններով: Եւ ձեզ ինձ 7
համար ժողովուրդ վեր կառնեմ,
և ձեզ համար Աստուած կ'լինիմ.
և պիտի դիտենաք որ ես եմ Եհո-
վան ձեր Աստուածը՝ ձեզ եգիպ-
տացոց ծանր գործքերի տակից
հանողը: Եւ ձեզ այն երկիրը կը 8
տանեմ, որի համար իմ ձեռքը
բարձրացրի որ տամ Աբրահամին,
Իսահակին և Յակոբին, և ձեզ
կ'տամ նո ժառանգութիւն լինե-
լու ես՝ Եհովա: Եւ Մովսէս խո- 9
սեցաւ Իսրայէլի որդոց հետ այսպէս խօսեց.
բայց նորանք հոգու նեղութիւնից
և գործի ծանրութիւնից չլսեցին
Մովսէսին:

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 10
հետ ասելով. Մտիր խօսիր եգիպ- 11
տոսի փարաւօն թագաւորի հետ,
որ Իսրայէլի որդիքն իր երկրից
արձակէ. Եւ Մովսէս խօսեց Ե- 12
հովայի առջև ասելով. Ահա Իս-
րայէլի որդիքը ինձ չեն լսում,
ապա փարաւօնը ինձ ի՞նչպէս կը
լսէ. որ ես ծանրալեզու եմ: Եւ 13

ժողովուրդը եգիպտոսի բոլոր երկ-
րի մէջ ցրուեցաւ յարդի տեղ
13 խոզան ժողովելու համար: Եւ
գործավարները սաստիկ էին ա-
ռելով. Ձեր օրական բանը իր օրը
լրացրէք, ինչպէս յարդ եղած
14 ժամանակը: Եւ փարաւօնի գոր-
ծավարները Իսրայէլի որդոց վե-
րայ դրած վերակացուներին ծե-
ծում էին և ասում. Ինչո՞ւ հա-
մար չլրացրիք ձեր վերայ դրած
պիւտանների հաշիւը երէկ էլ այ-
սօր էլ ինչպէս երէկ ու մէկել օրը:
15 Եւ Իսրայէլի որդոց վերակա-
ցուները եկան և բողոքեցին փա-
րաւօնին ասելով. Ինչո՞ւ ես այդ-
16 պէս անում քո ծառաներին: Քո
ծառաներին յարդ չեն տալիս,
բայց մեզ ասում են, թէ Պիւտա-
նները շինեցէք. և ահա քո ծա-
ռաները ծեծուեցան. և յանցան-
17 քը քո ժողովրդինն է: Եւ նա
ասաց. Ծոյլ էք դուք՝ ծոյլ. նո-
րա համար ասում էք թէ Գնանք
Եհովային զոհ մատուցանենք:
18 Ուստի գնացէք հիմա ծառայե-
ցէք, և ձեզ յարդ չի տրուելու,
բայց պիւտանների հաշիւը պէտք է
19 տաք: Եւ Իսրայէլի որդոցը վե-
րակացուները իրանց չարիքի մէջ
տեսան, երբ որ ասուեցաւ թէ
Ձեր պիւտանների թիւից չպակասա-
ցնէք. օրական բանը իր օրը
20 տուէք: Եւ հանդիպեցին Մով-
սէսին և Ահարոնին, որ իրանց
դիմաւորելու էին կանգնած, փա-
21 րաւօնի մօտից դուրս գալիս: Եւ
ասացին նորանց. Եհովան ձեզ
վերայ նայէ և դատէ, որ մեր
հոտը փարաւօնի առջև, և նորա
ծառաների առջև գարշելի արիք,
մեզ ապանելու համար նորանց
ձեռքը սուր տալով:
22 Եւ Մովսէսը դարձաւ Ե-
հովայի մօտ և ասաց. Ով Եհո-
վայ ինչո՞ւ համար այս ժողովուր-
դը չարիքի մէջ դցեցիր, և ին-
չո՞ւ համար ինձ ուղարկեցիր:
23 Վասնզի այն ժամանակից որ
եկել եմ փարաւօնի մօտ քո ա-
նունովը խօսելու, այս ժողովր-
դին չարութիւն է անում, և
դու էլ չփրկեցիր քո ժողովրդին:

Եհովան խօսեց Մովսէսի և Ահարոնի հետ, և հրաման տուաւ նորանց Իսրայէլի որդոց և Եգիպտոսի փարաւօն թագաւորի մասին՝ Իսրայէլի որդիքը Եգիպտոսի երկրից հանելու համար։

14 Սորանք են նորանց հայրերի տների գլուխները. Իսրայէլի անդրանիկ Ռուբէնի որդիքը՝ Ենովք, Փաղղուս, Եսրոն և Քարմի. սորանք են Ռուբէնի տոհմերը։ 15 Եւ Շմաւոնի որդիքը՝ Յամուէլ, և Յամին և Ոհադ և Յաքին և Սահաւ, և Քանանացի կնոջ որդին՝ Սաւուղ. սորանք են Շմաւոնի տոհմերը։ 16 Եւ սորանք են Ղևիի որդոց անուանները իրանց ծնունդների համեմատ՝ Գերսոն և Կահաթ և Մերարի։ Եւ Ղևիի կեանց տարիները հարիւր երեսունու եօթը տարի եղան։ 17 Գերսոնի որդիքը իրանց տոհմերի համեմատ՝ Ղոբնի և Սեմէի էին։ 18 Եւ Կահաթի որդիքը՝ Ամրամ և Իսհար և Քեբրոն ու Ոզիէլ։ Եւ Կահաթի կեանց տարիները հարիւր երեսունուերեք տարի եղան։ 19 Եւ Մերարիի որդիքը՝ Մոողի և Մուսի. սորանք են Ղևիի տոհմերը իրանց ծնունդների համեմատ։ 20 Եւ Ամրամ իր հօրաքոյր Յոքաբեսին իրան կին առաւ, և նա ծնաւ նորա համար Ահարոնին և Մովսէսին։ Եւ Ամրամի կեանց տարիները հարիւր երեսունուեօթը տարի եղան։ 21 Եւ Իսհարի որդիքը՝ Կորխ և Նափեկ և Զեքրի։ 22 Եւ Ոզիէլի որդիքը՝ Միսայէլ և Եղիսափան և Սեթրի։ 23 Եւ Ահարոն իր համար կին առաւ Ամինադաբի աղջիկ Նաասոնի քոյր Եղիսաբեթին, և նա ծնաւ նորա համար Նադաբին և Աբիուդին, Եղիազարին և Իթամարին։ 24 Եւ Կորխի որդիքը՝ Ասիր և Եղկանա և Աբիասափ. սորանք են Կորխեցոց տոհմերը։ 25 Եւ Ահարոնի որդին Եղիազար Փուտիէլի աղջիկներից իր համար կին առաւ. և նա ծնաւ նորա համար Փենեհէսին, սորանք են Ղևտացոց հայրերի գլուխները իրանց տոհմերի համեմատ։

26 Սորանք են Ահարոնը և Մովսէսը, որոնց Եհովան ասաց. Հանեցէք Իսրայէլի որդիքն իրանց զօրքերովը Եգիպտոսի երկրից։ 27 Սորանք են Իսրայէլի որդիքը Եգիպտոսից հանելու համար Եգիպտոսի փարաւօն թագաւորի հետ խօսողները, այս Մովսէսը և Ահարոնը։ 28 Եւ եղաւ այն օրը որ Եհովան խօսեց Մովսէսի հետ Եգիպտոսի երկրումը, 29 Այն ժամանակ Եհովան Մովսէսի հետ խօսեց ասելով. Ես եմ Եհովան, խօսիր Եգիպտոսի փարաւօն թագաւորի հետ, ամեն ինչ որ քեզ ասում եմ։ 30 Եւ Մովսէսը Եհովայի առջև ասաց. Ահա ես ծանրաբեռու եմ, և փարաւօնն ինչպէս կ'լսէ ինձ։

ԳԼ. Զ

1 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Տես քեզ փարաւօնին Աստուած արի, և քո եղբայր Ահարոնը քո մարգարէն կ'լինի. 2 Դու խօսիր այն ամենը ինչ որ քեզ կ'հրամայեմ, և քո եղբայր Ահարոնը թող խօսէ փարաւօնի հետ, որ Իսրայէլի որդիքը իր երկրից արձակէ։ 3 Եւ ես փարաւօնի սիրտը կ'խստացնեմ, և իմ նշանները և հրաշքները Եգիպտոսի երկրումը կ'շատացնեմ։ 4 Եւ փարաւօնը ձեզ չի լսիլ. և ես իմ ձեռքը Եգիպտոսի վերայ կ'ձգեմ, և իմ զօրքերը՝ իմ ժողովուրդը Իսրայէլի որդիքը կը հանեմ Եգիպտոսի երկրից մեծ դատաստաններով։ 5 Եւ Եգիպտացիք կ'իմանան, որ ես եմ Եհովան երբոր իմ ձեռքը Եգիպտոսի վերայ երկայնացնեմ և Իսրայէլի որդիքը նորանց միջից հանեմ, 6 Մովսէսն ու Ահարոնը Եհովայի իրանց պատուիրածի պէս արին, այնպէս արին։ 7 Եւ Մովսէսն ութսուն տարեկան էր, և Ահարոնը ութսունուերեք տարեկան էր, փարաւօնի հետ խօսելիս։

8 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և Ահարոնի հետ ասելով. 9 Երբոր փարաւօնը ձեզ հետ խօսէ և ասէ. Ձեզ համար հրաշք ցոյց տուէք.

ոյն ժամանակ ասիր Ահարոնին. Վեր առ գաւազանդ և գցիր փարաւոնին առջև. նա վիշապ կը
10 դառնայ: Եւ Մովսէսն ու Ահարոնը մնան փարաւոնի մօտ և Եհովայի պատուիրածի պէս արին. և Ահարոնն իր գաւազանը գցեց փարաւոնի առջև և նորա ծառաների առջև, և վիշապ եղաւ:
11 Փարաւոնն էլ իմաստուններին և կախարդներին կանչեց. և եգիպտոսի մոգերն էլ իրանց կախար-
12 դութիւններով այնպէս արին. Եւ ամեն մէկն իր գաւազանը գցում էր, և վիշապներ էին դառնում. բայց Ահարոնի գաւազանը նորանց
13 գաւազաններին կուլ տուաւ: Եւ փարաւոնի սիրտը կարծրացաւ, և նորանց չլսեց, ինչպէս որ Եհովան ասել էր:

14 Եւ Եհովան ասաց Մովսէսին. փարաւոնի սիրտը խստացաւ, չէ
15 ուզում ժողովրդին արձակել: Առաւօտանց փարաւոնի մօտ գնա. ահա նա դէպի ջուրն է դուրս գալիս, և դու գետի եզերքում նորա դիմացը կանգնիր, և այն օձ դարձած գաւազանը ձեռքդ
16 առ. Եւ ասիր նորան. Երբայեցոց Եհովայ Աստուածը ինձ քեզ մօտ ուղարկեց ասելով. Արձակիր իմ ժողովուրդը որ անապատումը ինձ պաշտեն, և ահա մինչև հիմա չը
17 լսեցիր: Այսպէս է ասում Եհովան. սորանով գիտենաս որ ես եմ Եհովան. Ահա ես իմ ձեռքի գաւազանը գետի միջի ջրին կը զարկեմ, և արիւն կ'դառնան:
18 Եւ գետի մէջ եղած ձկները կը մեռնին, և գետը կ'հոտէ, և եգիպտացիք կ'զզուին գետից ջուր խմելու:

19 Եհովան ասաց Մովսէսին, Ասիր Ահարոնին. Գաւազանդ առ, և ձեռքդ մեկնիր եգիպտացոց ջրերի վերայ, նորանց առուների վերայ, նորանց գետերի վերայ, և նորանց լճերի վերայ, նորանց բոլոր ջրակուտակների վերայ, և արիւն կ'դառնան, և եգիպտոսի բոլոր երկրումը փայտի և քարի անօթներէ միջի ջրերը արիւն կ'դառ-
20 նան: Եւ Մովսէսն ու Ահարոնը

եհովայի պատուիրածի պէս արին, և գաւազանը բարձրացրեց, և փարաւոնի առջև և նորա ծառաների առջև գետի միջի ջրերին զարկեց, և գետի միջի բոլոր ջրերը արիւն դառան: Եւ գետի 21
մէջ եղած ձկները մեռան, և գետը հոտեց, և եգիպտացիք չէին կարողանում գետից ջուր խմել. և եգիպտոսի բոլոր երկրի մէջ արիւն կար: Եւ եգիպտոսի մո- 22
գերն էլ իրանց կախարդութիւններով այնպէս արին. և փարաւոնի սիրտը կարծրացաւ, և եհովայի ասածի պէս նորանց չլսեց: Եւ փարաւոնը դարձաւ և իր տունը 23
նը եկաւ, ու սա էլ չդրեց նորա սրտին: Եւ բոլոր եգիպտացիք 24
գետի շուրջը փորեցին խմելու ջրի համար. որովհետև գետի ջրից չէին կարողանում խմել: Եւ եհո- 25
վան գետը զարկելուց յետոյ եօթը օրը լրացաւ:

ԳԼ. Ը

Եւ Եհովան ասաց Մովսէսին. 1
Փարաւոնի մօտ գնա, և ասիր նորան. Եհովան այսպէս է ասում. Արձակիր իմ ժողովուրդը որ պաշտեն ինձ: Եւ եթէ արձակել չու- 2
զես, ահա ես քո բոլոր սահմանները գորտերով պիտի զարկեմ:
Եւ գետը շատ գորտեր կ'հանէ, 3
և նորանք վեր կելնեն, և քո տան մէջ և անկողնի սենեակի մէջ և քո անկողնի մէջ և քո ծառաների տուների մէջ և քո ժողովրդի մէջ և քո թոնիրների մէջ և խմորի տաշտերի մէջ կ'մտնեն:
Եւ գորտերը քեզ վերայ և քո 4
ժողովրդի վերայ և քո բոլոր ծառաների վերայ վեր կ'ելնեն:

Եւ Եհովան ասաց Մովսէսին. 5
Այսպէս ասիր Ահարոնին. Ձեռքդ մեկնիր քո գաւազանով առուների վերայ, գետերի և լճերի վերայ, և եգիպտոսի երկրի վերայ գորտեր հանիր: Եւ Ահարոնը 6
մեկնեց իր ձեռքը եգիպտոսի ջրերի վերայ. և գորտերը ելան և եգիպտոսի երկիրը ծածկեցին: Եւ 7
մոգերն էլ այնպէս արին իրանց

կախարդութիւններովը, և Եգիպտոսի երկրի վերայ գորտեր հանեցին։
8 Եւ փարաւօնը կանչեց Մովսէսին և Ահարոնին և ասաց. Աղաչեցէք ԵՀովային որ ինձանից և իմ ժողովրդից վեր առնէ գորտերին, ժողովրդին կ'արձակեմ որ ԵՀովային զոհ մատուցանեն։
9 Եւ Մովսէսն ասաց փարաւօնին. Ժամանակ որոշիր ինձ համար. Թէ երբ քեզ համար և քո ծառաների համար և ժողովրդիդ համար աղաչեմ, որ քեզանից և քո տներից գորտերը կորչեն, և
10 միայն գետի մէջ մնան։ Եւ նա ասաց. Էգուց։ Եւ ինքն ասաց. Քո խօսքի պէս լինի, որ գիտենաս Թէ չկայ մեր ԵՀովայ Աստուծոյ
11 նմանը։ Եւ քեզանից և քո տներից և քո ծառաներից և քո ժողովրդից գորտերը կ'հեռանան. միայն գետի մէջ կ'մնան։
12 Եւ Մովսէսն ու Ահարոնը փարաւօնի մօտից դուրս գնացին. և Մովսէսը ԵՀովային աղաղակեց այն գորտերի համար, որ փարաւօնի
13 վերայ բերել էր։ Եւ ԵՀովան Մովսէսի ասածին պէս արաւ. և տներից, բակերից և արտերից
14 գորտերը մեռան։ Եւ դէզ դէզ ժողովեցին նորանց, և երկիրը
15 հոտեց։ Բայց երբոր փարաւօնը տեսաւ որ դիւրութիւն եղաւ, իր սիրտը խստացրեց, և նորանց չլսեց ԵՀովայի ասածին պէս։
16 Եւ ԵՀովան ասաց Մովսէսին. Ասիր Ահարոնին. Գաւազանդ մեկնիր, և երկրի հողին զարկ, որ Եգիպտոսի բոլոր երկրի վերայ
17 մուն լինի։ Եւ այնպէս արին. վանդի Ահարոն իր ձեռքը մեկնեց իր գաւազանովը և երկրի հողին զարկեց, և մուն եղաւ մարդոց վերայ և անասուններին վերայ. Եգիպտոսի բոլոր երկրի վերայ երկրի բոլոր հողը մուն եղաւ։
18 Եւ մոգերն էլ իրանց կախարդութիւններովը այնպէս արին որ մուներ հանեն, բայց չը կարողացան. և այսպէս մարդոց և անասուններին վերայ մուն եղաւ։
19 Եւ մոգերն ասացին փարաւօնին. Սա Աստուծոյ մատն է. բայց փարաւօնի սիրտը կարծրացաւ, և նորանից չլսեց ԵՀովայի ասածին պէս։
20 Եւ ԵՀովան ասաց Մովսէսին. Առաւօտանից կանուխ վերկաց, և փարաւօնի առջև կանգնիր. (ահա դէպի ջուրն է դուրս գնում.) և ասիր նորան. ԵՀովան այսպէս է ասում. Արձակիր իմ ժողովուրդը որ ինձ պաշտեն. Բայց եթէ իմ
21 ժողովուրդը չարձակես, ահա ես քեզ վերայ և քո ծառաների վերայ և քո ժողովրդի վերայ և քո տների վերայ շանաճանճ կուղարկեմ, և Եգիպտացոց տները շանաճանճով կ'լեցնուին, նաև այն գետինը որի վերայ նորանք կան։
22 Եւ այն օրը իմ ժողովրդի բնակած Գեսէմի երկիրը կ'որոշեմ, և այն տեղ շանաճանճ չի լինիլ. որ գիտենաս Թէ ես եմ ԵՀովան
23 երկրի միջումը։ Եւ իմ ժողովրդի և քո ժողովրդի մէջ խարութիւն կ'դնեմ. էգուց կ'լինի այս
24 նշանը։ Եւ ԵՀովան այնպէս արաւ. և շատ շանաճանճ եկաւ փարաւօնի տան և նորա ծառաների տների և Եգիպտոսի բոլոր երկրի վերայ. և շանաճանճի պատճառով երկիրը փչացաւ։
25 Եւ փարաւօնը կանչեց Մովսէսին և Ահարոնին և ասաց. Գնացէք ձեր Աստուծոյն զոհ մատուցէք երկրիս մէջ։
26 Եւ Մովսէսն ասաց. Կարելի չէ այդպէս անել. ըստ որում եգիպտացոց համար գարշելին ենք զոհում ԵՀովային մեր Աստուծոյն. եթէ եգիպտացոց համար գարշելին իրանց աչքի առջև զոհենք, մեզ չե՞ն քարկոծել։
27 Երեք օրուայ ճանապարհ դնանք անապատը, և զոհ մատուցանենք մեր ԵՀովայ Աստուծոյն, ինչպէս որ ինքը մեզ ասէ։
28 Եւ փարաւօնն ասաց. Ես ձեզ թող կ'տամ որ գնաք անապատում ձեր ԵՀովայ Աստուծոյն զոհ մատուցանէք, միայն Թէ հեռու չգնաք. ինձ համար աղաչեցէք։
29 Եւ Մովսէսն ասաց. Ահա ես քո մօտից դուրս կ'գնամ և ԵՀովային կ'աղաչեմ որ էգուց փարա-

ւծնից, նորա ծառաներից և նորա ժողովրդից չանհաճանքը գնայ. բայց փարաւօնը այլ ևս չխաբէ ժողովրդին թող չտալով որ ե-
30 հովային զոհ մատուցանեն։ Եւ Մովսէսը փարաւօնի մօտից գնաց
31 դուրս, և ետ հովային աղաչեց։ Եւ Տէր արաւ Մովսէսի խօսքին պէս արաւ, և վեր առաւ չանհաճանքը փարաւօնից, նորա ծառաներից նորա ժողովրդից, մէկ հատ էլ
32 չմնաց։ Եւ փարաւօնը այն անգամին էլ խստացրեց իր սիրտը, և ժողովրդին չարձակեց։

ԳԼ. Թ

1 Եւ ետ հովան ասաց Մովսէսին. փարաւօնի մօտ գնա, և խօսիր նորա հետ, թէ ետրայեցոց ետհովայ Աստուածը այսպէս է ասում. Արձակիր իմ ժողովուրդը որ ինձ
2 պաշտեն. Վասն զի եթէ չուզես արձակել, և տակաւին պինդ
3 բռնես նորանց, Ահա ետհովայի ձեռքը կ'գայ քո դաշտումը եղած հօտերի վերայ, ձիերի, էշերի, ուղտերի, արջառների և ոչխարների վերայ, շատ սաստիկ
4 կատաղած կ'լինի։ Եւ ետհովան իսրայէլի հօտերի և եգիպտոսի հօտերի միջտեղը կ'որոշէ, և իսրայէլի որդոց մէկ ոչտոչը չի
5 մեռնիլ։ Եւ ետհովան ժամանակ որոշեց ասելով. Էգուց կ'անէ ետհովան այս բանը երկրի վերայ։
6 Եւ հետեւեալ օրը ետհովան այս բանը արաւ, այնինքն եգիպտացոց բոլոր հօտերը մեռան, բայց իսրայէլի որդոց հօտերիցը մէկ
7 հատ չմեռաւ։ Եւ փարաւօնը մարդ ուղարկեց, և ահա իսրայէլի հօտերից մէկն էլ չէր մեռել. և փարաւօնի սիրտը խրաւացաւ, և ժողովրդին չարձա-
8 կեց, Եւ ետհովան ասաց Մովսէսին և Ահարոնին. Ձեր ձեռքերը լիքը հնոցի մոխիր առէք, և Մովսէսը նորան դէպի երկինքը ցրիւ
9 տայ փարաւօնի առջև։ Եւ եգիպտոսի բոլոր երկրի վերայ փոշի կ'լինի, և եգիպտոսի բոլոր երկրի մարդկանց և անասուններն վերայ

խաղաւարտներ հանող ուռեցքներ կ'լինին։ Եւ հնոցի մոխիրն առին և փարաւօնի առջև կանգնեցին. և Մովսէսը նորան դէպի երկինքը ցրիւ տուաւ, և մարդկանց և անասուններն վերայ խաղաւարտներ հանող ուռեցքներ եղաւ։ Եւ մոգերը չկարողացան կանգնել Մովսէսի առջև ուռեցքների պատճառով, վասն զի ուռեցքները մոգերի վերայ էլ և բոլոր եգիպտացոց վերայ էլ եղաւ։
10
11
12 Եւ ետհովան կարծրացրեց փարաւօնի սիրտը, և նորանց չլսեց, ինչպէս որ ետհովան Մովսէսին ասել էր։

13 Եւ ետհովան ասաց Մովսէսին. Առաւօտեան կանուխ վեր կաց, և փարաւօնի առջև կանգնիր, և նորան ասիր. Այսպէս է ասում ետրայեցոց ետհովայ Աստուածը. Արձակիր իմ ժողովրդին որ ինձ
14 պաշտեն. Վասն զի այս անգամ իմ բոլոր հարուածները պիտի ուղարկեմ քո սրտի վերայ և քո ծառաների և քո ժողովրդի վերայ, որպէս զի գիտենաս թէ բոլոր երկրի մէջ ինձ նմանը չկայ։
15 Վասն զի հիմա իմ ձեռքը կ'մեկնեմ և կ'զարկեմ քեզ և քո ժողովրդին ժանտախտով, և կ'կորչես երկրիցը։ Եւ հէնց սորա հա-
16 մար քեզ վեր կացրի, որ իմ զօրութիւնը քեզանով ցոյց տամ, և բոլոր երկրի մէջ իմ անունը պատմուի։
17 Դու տակաւին իմ ժողովրդի դէմ ես կենում որ չարձակես նորանց։
18 Ահա ես էգուց այս ժամանակ շատ սաստիկ կարկուտ կ'տեղամ, որի պէս եգիպտոսում եղած չէ նորա հաստատուած օրից մինչև հիմա։
19 Եւ հիմա ղրկ ուղարկիր, և ժողովիր հօտերդ, և ինչ որ ունես դաշտումը. վասն զի ամեն մարդ և անասուն որ դաշտումը գտնուի և տների մէջ չժողովուին, նորանց վերայ կարկուտ է իջնելու, և պիտի մեռնին։
20
21 Փարաւօնի ծառաներից ով որ ետհովայի խօսքից վախենում էր իր ծառաներին և հօտերին տների մէջ ժողովեց. Եւ ով որ ետհովայի խօսքին ուշադրու-

թխեն չարաւ, իր ծառաները և իր հօտերը թողեց դաշտումը։
22 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Ձեռքդ դէպի երկինքը մեկնիր, և Եգիպտոսի բոլոր երկրի վրայ մարդկանց և անասուններուն վերայ և Եգիպտոսի երկրում եղած արտերի բոլոր խոտի վերայ կարկուտ
23 պիտի գայ։ Եւ Մովսէս իր գաւազանը դէպի երկինքը մեկնեց և Եհովան որոտում և կարկուտ ուղարկեց, և երկրի վերայ կրակ էր վազում. և Եհովան Եգիպտոսի
24 երկրի վերայ կարկուտ տեղաց։ Եւ կարկուտ եղաւ և կարկտի հետ միասին խառնուած կրակ եկաւ. շատ սաստիկ էր, այնպէս որ Եգիպտոսի բոլոր երկրում նորա նմանը եղած չէր, քանի որ նա
25 ազգ էր եղել։ Եւ կարկուտը զարկեց Եգիպտոսի բոլոր երկրի մէջ դաշտումը եղածի ամենը՝ մարդից մինչև անասուն. և դաշտի բոլոր խոտը զարկեց կարկուտը և դաշտի բոլոր ծառերը կոտրատեց։
26 Միայն Գեսէմի երկրի մէջ, ուր որ Իսրայէլի որդիքն էին, կարկուտ չեղաւ։
27 Եւ փարաւոնը խրկտ ուղարկեց, և կանչեց Մովսէսին և Ահարոնին և ասաց նորանց. Այս անգամ մեղանչեցի. Եհովան արդար է, իսկ ես և իմ ժողովուրդը յանցաւոր ենք։
28 Աղաչեցէք Եհովային որ Աստուծոյ որոտումները և կարկուտը բաւական է. և ձեզ կ'արձակեմ, և այլ ևս չէք մնալ։
29 Եւ Մովսէս ասաց նորան. Երբ քաղաքիցը դուրս գամ՝ ձեռքերս դէպի Եհովային կ'տարածեմ, և որոտումները կ'դադարին, և այլ ևս կարկուտ չի լինիլ, որ գիտենաս թէ երկիրը Եհովայինն է։
30 Բայց ես գիտեմ, որ դու և քո ծառաները տակաւին Եհովայ Աստուծմանից չէք վախենում։
31 Եւ կտաւատն ու գարին ջարդուեցան. վասն զի գարին հասած էր, և կտաւատը ծերմ բրտնած էր։
32 Բայց ցորենը և հաճարը չջարդուեցան. վասն զի նորանք ուշ են բուսանում։
33 Եւ Մովսէսը փարաւոնի մօտից քաղաքից դուրս ելաւ, և ձեռքերը դէպի Եհովային տարածեց, և որոտումներն ու կարկուտը դադարեց, և երկրի վերայ անձրև չի կաթեց։ 34
Եւ փարաւոնը երբոր անձրևի և կարկտի և որոտումի դադարելը տեսաւ, դարձեալ մեղանչեց, և սիրտը խստացրեց՝ ինքն և իր ծառաները։ 35
Եւ փարաւոնի սիրտը կարծրացաւ, և Իսրայէլի որդիներին չարձակեց, ինչպէս որ Եհովան Մովսէսին ասել էր։

ԳԼ. Ժ

1 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Գնա փարաւոնի մօտ, վասն զի ես խստացրի նորան սիրտը և նորա ծառաների սիրտը, որ այս իմ նշաններն անեմ նորանց մէջ։ 2
Եւ որ պատմես քո որդու և որդուդ որդու ականջներին՝ ինչ որ արի Եգիպտացոց մէջ, և իմ նշանները որ նորանց մէջ ցոյց տուի, որ գիտենաք թէ ես եմ Եհովան։
3 Եւ Մովսէսն ու Ահարոնը գնացին փարաւոնի մօտ և ասացին նորան. Երբայեցոց Եհովայ Աստուածն այսպէս է ասում. Մինչև ե՞րբ չես ուզելու խոնարհել իմ առջև. արձակիր իմ ժողովրդին որ ինձ պաշտեն, վասն զի եթէ 4
իմ ժողովրդին արձակել չուզես, ահա էգուց քո սահմանների վերայ մարախ կ'ուղարկեմ. Եւ երկրի երեսը կ'ծածկէ, և ոչ ոք 5
կարող պատուած ձեզ համար մնացածը կ'ուտէ, և արտի մէջ բուսած ձեր բոլոր ծառերը կ'ուտէ։ Եւ կ'լցուին քո տները և քո 6
բոլոր ծառաների տները՝ և բոլոր Եգիպտացոց տները, որ ոչ քո հայրերը և ոչ քո հայրերի հայրերն են տեսել իրանց երկրի վերայ եղած օրից մինչև այսօր։ Եւ դարձաւ ու փարաւոնի մօտից դուրս ելաւ։
Եւ փարաւոնի ծառաները ա- 7
սացին նորան. Մինչև ե՞րբ սա մեզ համար որոգայթ պիտի լինի. արձակիր այս մարդիկը որ իրանց

Եհովայ Աստուծոյն պաշտեն. մի՞ թէ տակաւին չգիտես թէ Եգիպտոսը փչացաւ։ 8 Եւ Մովսէսին ու Ահարոնին փարաւօնի մօտ դարձրին, և նա ասաց նորանց. Գնացէք պաշտեցէք ձեր Եհովայ Աստուծոյն. ո՛վքեր են գնացողները։ 9 Եւ Մովսէս ասաց. Մեր երիտասարդներովը և մեր ծերերովին ենք գնալու, մեր տղերքովին ու մեր աղջկերքովը, մեր հօտերովը և մեր արջառներովին ենք գնալու. վասն զի Եհովայի տօն է մեզ համար։ 10 Եւ ասաց նորանց. Ողջմն Եհովան ձեզ հետ լինի, ինչպէս որ ես ձեզ և ձեր երեխաներին կ'արձակեմ։ Զգուշացէք, բաս 11 որում չարիք կան ձեր առջև։ Ոչ այդպէս, այլ դուք մարդիկներդ գնացէք և Եհովային պաշտեցէք. վասն զի դուք այդ էիք ուզում։ Եւ փարաւօնի առջևից դուրս արին նորանց։

12 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Ձեռդ մեկնիր Եգիպտոսի երկրի վերայ մարախների համար, որ Եգիպտոսի երկրի վերայ գային, և ուտեն երկրի բոլոր խոտը՝ բոլորն 13 ինչ որ թողել է կարկուտը։ Եւ Մովսէսը մեկնեց իր գաւազանը Եգիպտոսի երկրի վերայ. և Եհովան երկրի վերայ արևելեան հով փչել տուաւ այն բոլոր օրը և բոլոր գիշերը. և երբոր առաւօտ եղաւ, արևելեան հովը մարախը 14 բերաւ։ Եւ մարախը Եգիպտոսի բոլոր երկրի վերայ եկաւ, և Եգիպտոսի բոլոր սահմանների վերայ նստաւ, շատ սաստիկ էր. նորանից առաջ այնպիսի մարախ չէր եղած, նորանից յետոյ էլ այնպէս 15 չէ եղել։ Եւ բոլոր երկրի երեսը ծածկեց, և երկիրը մթնեց և երկրի բոլոր խոտը՝ և կարկուտից մնացած ծառերի բոլոր պտուղները կերան. և եղած ծառերի վերայ և արտի խոտերի վերայ բնաւ կանաչեղէն չմնաց Եգիպտոսի բոլոր երկրումը։

16 Եւ փարաւօնը շուտով կանչեց Մովսէսին ու Ահարոնին, և ասաց. Մեղանչեցի ձեր Եհովայ 17 Աստուծոյ դէմ և ձեզ դէմ. Եւ հիմա խնդրեմ՝ միայն այս անգամ ներեցէք իմ յանցանքը. և ձեր Եհովայ Աստուծոյն աղաչեցէք, որ իմ վերայից այս մահը միայն վեր առնէ։ 18 Եւ նա փարաւօնի մօտից դուրս եկաւ, և Եհովային աղաչեց։ 19 Եւ Եհովան մի խիստ աստիկ արևմտեան հով ուղարկեց, որ մարախը վեր առաւ ու Կարմիր ծովը քշեց նորանց. Եգիպտոսի բոլոր սահմաններում մէկ մարախ չմնաց։ Բայց Եհովան կարծացրեց 20 փարաւօնի սիրտը, և նա Իսրայէլի որդիանց չարձակեց։ 21 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Ձեռդ դէպի երկինքը մեկնիր, որ Եգիպտոսի երկրի վերայ խաւար լինի, և շօշափելի խաւար։ 22 Եւ Մովսէսն իր ձեռքը դէպի երկինքը մեկնեց և Եգիպտոսի բոլոր երկրի մէջ թանձր խաւար եղաւ երեք օր. 23 Մարդ մարդու չէր տեսանում, և երեք օր մէկն իր տեղիցը վեր չկացաւ, բայց Իսրայէլի բոլոր որդոց համար լոյս կար իրանց բնակութիւններումը։ 24 Եւ փարաւօնը կանչեց Մովսէսին և ասաց. Գնացէք և պաշտեցէք Եհովային. միայն ձեր հօտերն ու արջառները մնան. ձեր ընտանիքներն էլ թող ձեզ հետ գնան։ Եւ Մովսէս ասաց. 25 Դու պէտք է մեր ձեռքը զոհեր ու ողջակէզներ էլ տաս, որ մեր Եհովայ Աստուծոյն մատուցանենք։ 26 Եւ մեր հօտերն էլ գնան մեր հետը. նորանցից մէկ կճղակ էլ պիտի չմնայ. վասն զի նորանցից ենք առնելու մեր Եհովայ Աստուծոյն պաշտելու համար, և մենք չենք գիտում թէ ինչով պիտի պաշտենք Եհովային մինչև որ այնտեղ գնանք։ 27 Եւ Եհովան կարծացրեց փարաւօնի սիրտը, որ 28 չուզեց արձակել նորանց։ Եւ փարաւօնն ասաց նորան. Գնա իմ մօտից. զգուշացիր քո անձի համար, որ էլ իմ երեսը չտեսանես. վասն զի այն օրը որ իմ երեսը տեսնես, պիտի մեռնես։ 29 Եւ Մովսէսն ասաց Լաւ ես ասում, էլ քո երեսը չեմ տեսանել։

ԳԼ· ԺԲ

Ե֊ ԵՀովան խօսեց Մովսէսի և
Ա֊Հարոնի հետ Եգիպտոսի երկ-
րում՝ ասելով. Ա֊յս ամիսը ձեզ 2
համար ամիսներու սկիզբ լինի,
ձեզ համար տարուայ ամիսների
առաջինը լինի նա։ Իսրայէլի բո- 3
լոր ժողովքի հետ խօսեցէք, ա-
սելով. Ա֊յս ամսի տասնին ամեն
մէկին իր համար մի գառն առնէ՝
էւ֊ից հայրերի տան համեմատ՝
տունը մէկ գառն։ Ե֊ եթէ մէկ 4
տունը մէկ գառնի համար քիչ
լինի, թող նա իր տան մօտ եղած
դրացու հետ՝ հոգինել թուոյն
համեմատ առնէ. ամեն մէկին իր
կերածի չափ հաշիւ անէք գառ-
նի վերայ։ Ձեր գառը անարատ՝ 5
արու՝ մէկ տարեկան լինի. ոչխար-
ներից կամ այծերից առնէք։ Ե֊ 6
պահէք ձեզ համար մինչև ամսի
չորեքտասաներորդ օրը, և Իսրա-
էլի ժողովքի բոլոր բազմութիւ-
նը մորթեն նորան իրիկուայ դէմ։
Ե֊ արիւնից առնեն և տների եր- 7
կու կողմի գրանդեացը և վերի
սեմին քաեն, ուր որ նորան պիտի
ուտեն։ Ե֊ միան այն գիշերն ու- 8
տեն. նորան կրակի վերայ խորո-
ված՝ և բաղարջ ուտեն լեղի խո-
տերով. Նորանից հում կամ ջրի 9
մէջ եփած չուտէք, այլ կրակի
վերայ խորոված, նորա գլուխը
ոտքերովը և փորոտիքովը մէկ տեղ
ուտէք։ Ե֊ նորանից մի բան չը 10
թողէք մինչև առաւօտ. և նո-
րանից մինչև առաւօտ մնացածը՝
կրակով այրեցէք։ Ե֊ այսպէս 11
ուտէք նորան. ձեր գօտիները ձեր
մէջքին՝ և ձեր կոշիկները ձեր ո-
քերին՝ և ձեր ցուպերը ձեր ձեռ-
քին լինելով, և նորան շտապելով
ուտէք. Նա զատիկ է Ե֊հովային։
Ե֊ այն գիշերը Եգիպտոսի երկրո- 12
վը պիտի անցնեմ, և զարկեմ Ե-
գիպտոսի երկրումը ամեն առա-
ջինեկը մարդուց մինչև անասուն.
և Եգիպտոսի բոլոր աստուածների
վերայ դատաստան պիտի անեմ՝
ես Ե֊հովա։ Ե֊ արիւնը ձեզ 13
համար նշան լինի ձեր եզած տների
վերայ, և երբոր արիւնը տեսնեմ,

ԳԼ· ԺԱ

1 Ե֊ Ե֊հովան ասաց Մովսէսին.
Փարաւոնի վերայ և Եգիպտոսի
վերայ մէկ հարուած էլ եմ բերե-
լու. ետքէն նորանից ձեզ այստե-
ղից կ'արձակէ. և հէնց որ ար-
ձակէ, ձեզ այս տեղից շուտով
2 դուրս պիտի անէ։ Հիմա խօսիր
ժողովրդի ականջներին, և ամեն
մարդ իր դրացուց և ամեն կնիկ
իր դրացուց արծաթեղէն զարդեր
3 և ոսկեղէն զարդեր խնդրեն։ Ե֊
Ե֊հովան շնորհք տուաւ ժողովուր-
դին Եգիպտացոց առջև. և Մով-
սէսն էլ Եգիպտոսի երկրի մէջ
փարաւոնի ծառաների առջև և
ժողովրդի առջև շատ մեծ մարդ էր։
4 Ե֊ Մովսէսն ասաց. Ե֊հովան
այսպէս է ասում, կէս գիշերին
ես դուրս կ'գամ Եգիպտոսի մէջ։
5 Ե֊ ամեն առաջինեկը կ'մեռնի
Եգիպտոսի երկրումը՝ իր աթոռի
վերայ նստող փարաւոնի առաջի-
նեկից մինչև երկանքի եռևին ե-
ղող աղախնի առաջինեկը, և բո-
6 լոր անասունների առջինեկը։ Ե֊
Եգիպտոսի բոլոր երկրումը մեծ
աղաղակ կ'լինի որ նորա նմանը
7 եղած չէ, ոչ էլ կ'լինի. Ե֊ Իս-
րայէլի որդոց ոչ մէկի դէմ մար-
դուց մինչև անասուն, մի շուն
էլ չի շարժիլ իր լեզուն. որ գի-
տենաք թէ Ե֊հովան Եգիպտացոց
և Իսրայէլի մէջտեղը տարբերու-
8 թիւն է անում։ Ե֊ քո այս բո-
լոր ծառաները ինձ մօտ իջնեն,
և ինձ խոնարհութիւն անեն ա-
սելով. Դուրս գնա դու և բոլոր
քեզ հետևող ժողովուրդը. և նո-
րանից յետոյ դուրս կ'գնամ։ Ե֊
Մովսէսը դուրս եկաւ փարաւոնի
մօտից բարկութեամբ։
9 Ե֊ Ե֊հովան ասաց Մովսէսին.
Փարաւոնը ձեզ չի լսելու, որպես
զի իմ հրաշքները շատացնեմ Ե-
10 գիպտոսի երկրումը։ Ե֊ Մովսէսն
ու Ա֊Հարոնն արին այս ամեն հր-
աշքները փարաւոնի առջև, և
Ե֊հովան կարծացրեց փարաւոնի
սիրտը, և չարձակեց Իսրայէլի
որդիքը իր երկրից։

ձեր վերայից պիտի անցնեմ. և հարուածը ձեր վերայ պիտի չդայ ձեզ կորցնելու համար, երբոր Եգիպտոսի երկիրը պարկեմ։ 14 և այն օրը ձեզ յիշատակի համար լինի, և տոնեցէք նորան տօն Եհովայի համար. ձեր սերունդների մէջ յաւիտենական կանոնով տո- 15 նեցէք նորան։ եօթը օր բաղարջ կերէք հէնց առաջին օրը ձեր տուներից դուրս գցէք խմորը, վասն զի առաջի օրից մինչև եօթներորդ օրը խմորեալ ուտող անձը 16 Իսրայէլից կորչէ։ և առաջին օրը սուրբ ժողով լինի, և եօթներորդ օրն էլ ձեզ համար սուրբ ժողով լինի. այն օրերը բնաւ մի գործ չգործուի, բացի ամեն մէկի ուտելիքը, այն միայն պատրաստէք։ 17 և բաղարջների տօնը պահէք. վասն զի հէնց նոյն օրում մէջ ձեր զօրքերը Եգիպտոսի երկրից հանեցի. ուրեմն ձեր սերունդների մէջ յաւիտենական կանո- 18 նով այն օրը պահէք։ Առաջին ամսում չորեքտասաներորդ օրում իրիկունից բաղարջ պիտի ուտէք մինչև ամսում քսանու- 19 մէկերորդ օրում իրիկունը։ եօթը օր ձեր տներում խմոր չգտնուի. վասն զի խմորեալ հաց ուտող անձը Իսրայէլի ժողովքից պիտի կորչէ՝ թէ օտարական և 20 թէ երկրի բնակ։ Ոչ մի խմորեալ բան պիտի չուտէք ձեր բոլոր բնակութեանց մէջ բաղարջ ուտէք։

21 Եւ Մովսէսը կանչեց Իսրայէլի բոլոր ծերերին և ասաց նորանց. Ընտրեցէք, և առէք, ձեր ընտանեաց համեմատ ձեզ համար գառն, և զատիկը մորթեցէք։ 22 և զոպայի փունջ առէք, և կոնքի մէջ եղած արիւնով թոթախեցէք և քսեցէք դրան վերայի սեմին և երկու դրանդեաց կոնքի մէջ եղած արիւնից, և մինչև առաւօտ ձեղանից մէկը իր 23 տան դռնից դուրս չգայ։ Եւ Եհովան եգիպտացիներին զարկելու համար պիտի անցնէ, և երբ դրան վերայ սեմի և երկու դրանդեացը վերայ արիւն տեսնէ, այն ժամանակ Եհովան այն դրան վերայից կ'անցնէ, և չի թողել սատակչին, որ ձեր տները մտնէ ձեզ զարկելու համար։ և այս 24 բանը քեզ և քո որդոց համար կանոն պահէք մինչև յաւիտեան։ և երբոր կ'լինի որ այն երկիրը 25 գաք՝ որ Եհովան ձեզ պիտի տայ իր ասածի պէս, այն ժամանակ այս պաշտօնը պահէք։ և երբոր 26 կ'լինի որ ձեր որդիքը ձեզ կ'ասեն. Ի՞նչ է ձեր այս պաշտօնը, Ա.յն 27 ժամանակ ասէք, որ սա զատկի զոհն է Եհովայի համար, որ ե-գիպտոսի մէջ Իսրայէլի որդոց տների վերայից անցաւ Եգիպտացիներին զարկելիս, և մեր տները ազատեց։ Եւ ժողովուրդը խոնարհեց և երկրպագութիւն արաւ։ Եւ Իսրայէլի որդիքը գնացին, և 28 արին ինչպէս Եհովան Մովսէսին և Ահարոնին պատուիրել էր. այնպէս արին։ Եւ եղաւ որ կէս գիշերին 29 Եհովան Եգիպտոսի երկրում ամեն առաջնեկին զարկեց, իր աթոռի վերայ նստող փարաւոնի առաջնեկից մինչև բանտում եղած գերիի առաջնեկը՝ և ամեն անասունի առաջնեկը։ Եւ փարաւոնը գի- 30 շերը վեր կացաւ և նորա բոլոր ծառաները՝ և բոլոր Եգիպտացիք, և Եգիպտոսի մէջ մեծ աղաղակ կար, որովհետև տուն չկար որ նորա մէջ մեռեալ չլինէր։

Եւ գիշերը կանչեց Մովսէսին 31 և Ահարոնին և ասաց. Վեր կացէք դուրս եկէք իմ ժողովրդի միջից դուք էլ և Իսրայէլի որդիքն էլ, և գնացէք պաշտեցէք Եհովային ինչպէս որ ասացիք։ Ձեր հօտերն էլ և ձեր արջառներն 32 էլ առէք՝ ինչպէս որ ասացիք, և գնացէք և ինձ էլ օրհնեցէք։ Եւ Եգիպտացիք բռնադատեցին 33 ժողովրդին, որ շուտով այն երկրից դուրս ուղարկեն նորանց, վասն զի ասացին. Ամենքս էլ կը մեռնինք։ Եւ ժողովուրդն իրանց 34 զանգուածը դեռ չխմորած՝ իրանց խմորի տաշտերը իրանց կօտունեերով փաթաթած իրանց ուսերի վերայ վեր առին։ Եւ Իսրայէլի 35 որդիքը Մովսէսի խօսքի պէս ա-

րին, և Եգիպտացիներից ար-
ծաթեղէն զարդեր և ոսկեղէն զար-
36 դեր և հանդերձներ ուզեցին։ Եւ
Եհովան ժողովրդին շնորհք տը-
ուաւ Եգիպտացոց առջև և ե-
փեղոջ նորանց ուզածը տուին,
և կողոպտեցին Եգիպտացիներին։
37 Եւ Իսրայէլի որդիքը Ռամեսից
դէպի Սոկքովթ չուեցին. բացի
ընտանիքներից վեց հարիւր հա-
զարի չափ հետևակ մարդիկ էին։
38 Եւ նորանց հետ խառն բազմու-
թիւն էլ ելաւ. և ոչխարներն ու
արջառները շատ մեծ հօտ էին։
39 Եւ Եգիպտոսից իրանց հանած
զանգուածից անխմոր շօթեր ե-
փեցին, վասն զի խմորեալ չէր. ո-
րովհետև Եգիպտոսից քշուեցան,
և չէին կարողանում ուշանալ. և
իրանց համար պաշար էլ չէին շի-
նել։
40 Եւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որ-
դոց բնակած ժամանակը չորս
41 հարիւր երեսուն տարի էր։ Եւ
եղաւ որ չորս հարիւր երեսուն
տարիների վերջին հէնց նոյն օրը
Եհովայի բոլոր զօրքերը Եգիպտո-
42 ացի երկրից ելան։ Սա Եհովայի
համար պահելու մի գիշեր է, որ
նորանց Եգիպտոսի երկրից հա-
նեց. սա այն գիշերն է Եհովայի
համար Իսրայէլի բոլոր որդինե-
րից իրանց ազգերի մէջ պահելու
համար։
43 Եւ Եհովան ասաց Մովսէսին
և Ահարոնին. Ահա է զատկի կա-
նոնը. ոչ մի օտարական նորանից
44 պիտի չուտէ։ Եւ ամեն մարդու
ստակով ծախու առած ծառան՝
երբոր նորան թլփատել ես, այն
ժամանակ թող ուտէ նորանից։
45 Օտարականն ու վարձկանը նորա-
46 նից պիտի չուտէ։ Մէկ տան մէջ
պիտի ուտուի. տնից դուրս չհա-
նես այն միսից, և նորա մէկ ոս-
47 կորը չկոտրէք։ Իսրայէլի բոլոր
48 ժողովքը անէ այն։ Եւ երբոր մի
օտարական քեզ մօտ պանդխտա-
նալու լինի, և Եհովայի զատիկն
անելու լինի, նորա ամեն արուն
թող թլփատուի, և այն ժամա-
նակ մօտենայ կատարելու համար
և ինքը երկրի բնակի պէս լինի.
վասն զի ոչ մէկ անթլփատ նորա-
նից պիտի չուտէ։ Երկրացու և 49
ձեր մէջ բնակող օտարականի հա-
մար մէկ օրէնք լինի։ Եւ Իսրա- 50
յէլի բոլոր որդիքն այնպէս ա-
րին, ինչպէս որ Եհովան Մովսէսին և Ահարո-
նին պատուիրել էր, այնպէս ա-
րին։ Եւ եղաւ որ հէնց այն օրը 51
Եհովան Եգիպտոսի երկրից հա-
նեց Իսրայէլի որդիքը իրանց զօր-
քերովը։

ԳԼ. ԺԳ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Սրբիր ինձ համար ամեն 2
անդրանիկը՝ Իսրայէլի որդոց մէջ
ամեն արգանդ բացողը, թէ մարդ
թէ անասուն. այն իմն է։ Եւ 3
Մովսէսն ասաց ժողովրդին. Յի-
շեցէք այս օրը որ Եգիպտոսից ծա-
ռայութեան տնից դուրս եկաք.
վասն զի Եհովան ձեզ այստեղից
զօրաւոր ձեռքով հանեց, և խը-
մորեալ չուտուի։ Դուք այսօր էք 4
դուրս եկել, Ապիբ ամսում։ Եւ 5
կ'լինի որ երբ Եհովան քեզ տա-
նելու լինի Քանանացոց և Քեւտա-
ցոց և Ամորհացոց և Խևացոց և
Յեբուսացոց երկիրը՝ որ քեզ տա-
լու համար քո հայրերին երդում
արաւ, այն կաթ ու մեղր բղխող
երկիրը, այս ամսում պիտի կա-
տարես այս պաշտօնը։ Եօթը օր 6
բաղարջ պիտի ուտես, և եօթն-
երորդ օրը տօն լինի Եհովայի հա-
մար։ Այն եօթը օրերումը բա- 7
զարջ պիտի ուտուի, և քեզ մօտ
խմորեալ հաց պիտի չտեսնուի. ոչ
էլ քեզ մօտ խմոր պիտի տեսնուի
քո բոլոր սահմաններումը։ Եւ այն 8
օրը քո որդուն պիտի պատմես՝
ասելով. Ահա նորա համար է որ
Եհովան արաւ ինձ՝ ես Եգիպտո-
սից դուրս գալիս։ Եւ սա քեզ 9
համար նշան պիտի լինի ձեռքիդ
վերայ, և յիշատակ՝ աչքերիդ մէջ
տեղը, որ Եհովայի օրէնքը քո բե-
րանումը լինի, վասն զի Եհովան
քեզ զօրաւոր ձեռքով հանեց Ե-
գիպտոսից։ Եւ գու այս կանոնը 10
տարուց տարի իր ժամանակին
պիտի պահես։ Եւ կ'լինի որ՝ երբ 11

Եհովան քեզ փառանցոց երկիրը տանէ, ինչպէս որ քեզ և քո հայրերին երդում արաւ, որ նորան քեզ տայ։ 12 Եւ այն ամենը որ արդանդ կ'բանայ, Եհովային ներկայացուս. և քո ունեցած անասնի ամեն առաջինեակ արուները Եհովային լինին։ 13 Եւ էշի ամեն առաջինեակը մի ոչխարով փրկես, և եթէ չփրկես, նորա վիզը կոտրիր. և քո որդոց մէջ մարդոց ամեն 14 անդրանիկը պիտի փրկես։ Եւ կը լինի որ քո որդին էգուց քեզ կը հարցնէ ասելով. Սա ի՞նչ է. նորան պիտի ասես թէ՝ Եհովան մեզ եգիպտոսից ծառայութեան տունից զօրաւոր ձեռքով հա- 15 նեց. Եւ եղաւ երբ փարաւոնը խստացաւ և մեզ արձակել չուզէր, Եհովան եգիպտոսի երկրում ամեն առաջինեակը՝ մարդի առաջինեակից մինչև անասունի առաջինեակը մեռցրեց. նորա համար ես ամեն արգանդ բացող արուն Եհովային զոհում եմ, և իմ որդոց ամեն առաջինեակը փրկում 16 եմ։ Եւ սա քո ձեռքի վերայ նշան և աչքերիդ միջտեղը ճակատնոց լինի, վասն զի Եհովան մեզ եգիպտոսից զօրաւոր ձեռքով հանեց։

17 Եւ եղաւ երբ փարաւոնը ժողովրդին արձակեց, այն ժամանակ Աստուած նորանց փղշտացոց երկրի ճանապարհովը չտարաւ, թէև նա մօտ էր, վասն զի Աստուած ասաց. Մի գուցէ ժողովուրդը զղջայ պատերազմը տեսնելիս և ետ դառնայ եգիպտոս։ 18 Այլ Աստուած ժողովրդին կարմիր ծովի անապատի ճանապարհովը պտոյտ անել տուաւ և իսրայէլի որդիքը զօտեպնդուած ե- 19 լան եգիպտոսի երկրից։ Եւ Մովսէսը՝ Յովսէփի ոսկորները իր հետ առաւ. վասն զի Իսրայէլի որդոցը խստատա երդում էր ունել տուել ասելով. Անպատճառ Աստուած ձեզ այցելութիւն է անելու, և իմ ոսկորները այս տեղից ձեզ հետ հանեցէք։

20 Եւ Սոկքովթից չուեցին և Եթամի մէջ անապատի ծայրումը իջևան արին։ Եւ Եհովան գնում էր նորանց առջև ցերեկը ամպի սիւնով նորանց ճանապարհ ցոյց տալու համար, և գիշերը կրակի սիւնով, որ նորանց լոյս տայ, որ ցերեկ և գիշեր գնան։ 22 Ցերեկը ամպի սիւնը՝ և գիշերը կրակի սիւնը՝ ժողովրդի առջևից չպակասեցրեց։

ԳԼ. ԺԴ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով. խօսիր Իսրայէլի որդոց հետ որ ետ դառնան և փիհիրոթի առջև Մագդոլի և ծովի մէջ տեղը բանակ տան Բէելզեփոնին առջևը, նորա դիմացը ծովի մօտ բանակ տուէք։ Եւ փարաւոնը Իսրայէլի որդոց համար պիտի ասէ. Թէ երկրի մէջ մոլորած են, անապատը նորանց պատել է։ Եւ փարաւոնի սիրտը կ'կարծրացնեմ, և նորանց ետևից կ'ընկնէ. և ես փարաւոնի վերայ և նորա բոլոր զօրքերի վերայ կ'փառաւորուիմ, և եգիպտացիք կ'գիտենան թէ ես եմ Եհովան։ Եւ նոյնպէս արին։

Եւ եգիպտոսի թագաւորին պատմուեցաւ, թէ ժողովուրդը փախան. և փարաւոնի և նորա ծառաների սիրտը ժողովրդի դէմ փոխուեցաւ, և ասացին. Սա ի՞նչ արինք մենք, որ Իսրայէլին մեզ ծառայութիւնից թող տուինք։ Եւ իր կառքը պատրաստեց, և իր ժողովուրդն իր հետ առաւ։ Եւ վեց հարիւր ընտիր կառքեր, և եգիպտոսի բոլոր կառքերը՝ և նորանց ամեն վերայ սպիսկաններ։ Եւ Եհովան եգիպտոսի փարաւոն թագաւորի սիրտը կարծրացրեց, և նա իսրայէլի որդոց ետևից ընկաւ, և Իսրայէլի որդիքը բարձր ձեռքով էին։ Եւ եգիպտացիք նորանց ետևից ընկան. և հասան նորանց ծովի մօտ բանակ տուած փարաւոնի ամեն ձիերը, կառքերը՝ և նորա ձիաւորները և զօրքերը՝ փիհիրոթի մօտ Բէելզեփոնին առջև։

Եւ փարաւոնը մօտեցաւ և իս-

բայէլի որդիքն իրանց աչքերը բարձրացրին, և ահա եգիպտացիք գալիս էին իրանց ետևից, և շատ վախեցան. և Իսրայէլի որդիքն աղաղակեցին Եհովային, և 11
ասացին Մովսէսին. Մի՞թէ եգիպտոսում գերեզմաններ չկային, որ մեզ բերիր անապատի մէջ մեռնելու. սա ի՞նչ է որ մեզ արիր, որ մեզ եգիպտոսից հանեցիր: 12
Սա այն խօսքը չէ՞ որ քեզ ասում էինք եգիպտոսում. Թէ թող տուր մեզ՝ որ եգիպտացիներին ծառայութիւն անենք. վասն զի աւելի լաւ է մեզ համար եգիպտացիներին ծառայութիւն անել, քան թէ անապատումը մեռնել: 13
Եւ Մովսէս ասաց ժողովրդին. Մի վախենաք, կանգնեցէք, և տեսէք Եհովայի փրկութիւնը՝ որ այսօր կ'անէ ձեզ համար, որովհետև ձեր այսօրուայ տեսած եգիպտացիներին այլ ևս պիտի չտեսնէք յաւիտեան: 14
Եհովան ձեզ համար պիտի պատերազմէ, և դուք լուռ կացէք:
Եւ Եհովան ասաց Մովսէսին. 15
Ինչո՞ւ ես ինձ աղաղակում. ասիր Իսրայէլի որդոցը, որ չուեն. 16
Եւ դու գաւազանդ բարձրացրու, և ձեռքդ մեկնիր ծովի վերայ, և ճեղքիր նորան. և Իսրայէլի որդիքը ծովի միջից ցամաքով գնան: 17
Եւ ես ահա եգիպտացոց սիրտը պիտի կարծրացնեմ, և նորանց ետևից պիտի գնան. և ես փառաւորնի և նորա բոլոր զօրքերի վերայ՝ նորա կառքերի և նորա ձիաւորների վերայ պիտի փառաւորուիմ: 18
Եւ եգիպտացիք կ'գիտենան, թէ ես եմ Եհովան, երբոր ես փառաւորնի և նորա կառքերի, և նորա ձիաւորների վերայ փառաւորուիմ: 19
Եւ Աստուծոյ հրեշտակը՝ որ Իսրայէլի բանակի առջև գնում էր, ելաւ և նորանց ետևից գնաց. և ամպի սիւնը ելաւ նորանց առջևից և նորանց ետքին կանգնեց: 20
Եւ եգիպտացոց բանակի և Իսրայէլի բանակի մէջ տեղը եկաւ, ու ամպ ու խաւար եղաւ, բայց գիշերը լոյս էր տալիս, և բոլոր գիշերը միմեանց չմօտեցան:
Եւ Մովսէսը մեկնեց իր ձեռքը ծովի վերայ, և Եհովան սաստիկ արևելեան հովով քշեց ծովը բոլոր գիշերը, և ծովը ցամաքացրեց, և ջրերը ճեղքուեցան: 21 22
Եւ Իսրայէլի որդիքը ծովի միջից ցամաքով գնացին. և ջրերը նորանց աջ կողմից և ձախ կողմից պարիսպ եղան:
Եւ եգիպտացիք նորանց ետևից 23
ընկան. և փարաւոնի բոլոր ձիերը՝ կառքերը և ձիաւորները նորանց ետևից ծովի միջտեղը գնացին:
Եւ եղաւ առաւօտեան պահին, 24
որ Եհովան եգիպտացոց բանակին նայեց կրակի ու ամպի սիւնից, և եգիպտացոց բանակը խառնաթեան մէջ գցեց. Եւ նորանց 25
կառքերի անիւները հանեց, որ դժուարութեամբ էին առաջ գնում. այնպէս որ եգիպտացիք ասում էին. Փախչենք Իսրայէլի երեսից, վասն զի Եհովան նորանց համար պատերազմում է եգիպտացոց հետ:
Եւ Եհովան ասաց Մովսէսին. 26
Ձեռքդ մեկնիր ծովի վերայ, որ ջրերը ետ դառնան եգիպտացոց վերայ՝ նորանց կառքերի և նորանց ձիաւորների վերայ: Եւ Մովսէսը 27
մեկնեց ձեռքը ծովի վերայ, և առաւօտեան դէմ ծովն իր ընթացքին դարձաւ, և եգիպտացիք նորա դիմացից փախան. և Եհովան թօթափեց եգիպտացիներին ծովի մէջը: Եւ ջրերը դար- 28
ձան, և ծածկեցին փարաւոնի կառքերը և ձիաւորները և բոլոր զօրքերը, որոնք նորանց ետևից ծովի մէջ մտան. և նորանցից մէկն էլ չմնաց: Բայց Իսրայէլի 29
որդիքը ծովի միջից ցամաքով գնում էին, և ջրերը նորանց աջ կողմից և ձախ կողմից պարիսպ էին նորանց համար: Եւ Եհովան 30
այն օրը եգիպտացոց ձեռքից ազատեց Իսրայէլին. և Իսրայէլը մեռած տեսաւ եգիպտացիներին ծովի եզերքում: Եւ Իսրայէլը 31
տեսաւ այն մեծ ձեռքը, որ Եհովան ցոյց տուաւ եգիպտացոց

վերայ . և ժողովուրդը վախեցաւ
Եհովայից , և հաւատացՙ Եհովա-
յին և նորա ծառային Մովսէսին :

ԳԼ· ԺԵ

1 Ա՚յն ժամանակ երգեց Մովսէսը
և Իսրայէլի որդիքը այս երգը Եհո-
վայի համար , և խօսեցին ասելով .
Երգեմ եմ Եհովային , վասն զի
փառքով փառաւորեալ է .
Ձին և ձիաւորը ծովը գցեց .
2 Եհովան է իմ զօրութիւնն ու իմ
գովեստիւնը ,
Եւ իմ փրկութիւնը եղաւ .
Նա է իմ Աստուածը . և ես կը
փառաւորեմ նորան .
Իմ հօր Աստուածն է , և ես կը
բարձրացնեմ նորան :
3 Եհովան հզօր պատերազմող է .
Անունը ԵՀՈՎԱՅ է :
4 Փարաւոնի կառքերն ու նորա
զօրքերը գցեց ծովը ,
Եւ նորա ընտիր կառա-մարտիկ-
ները կարմիր ծովի մէջ ընկղմուեցան :
5 Անդունդները ծածկեցին նորանց .
Ինչպէս խորերը ընկան քար :
6 Քո աջ ձեռքն , ով Եհովայ ,
փառաւորեալ է զօրութեամբ .
Քո աջ ձեռքը , ով Եհովայ , խոր-
տակեց թշնամուն :
7 Եւ քո փառաց մեծութեամբը
խորտակում ես քեզ դէմ վեր
կացողներին .
Ուղարկում ես քո բարկութիւնը և
ուտում է նորանց , յարդի պէս :
8 Եւ քո շունչի փչելովը ջրերը
ժողովուեցան .
Հեղեղները կանգնեցին դէզի պէս .
Անդունդները պաղեցին ծովի մի-
ջումը :
9 Թշնամին ասաց . Հալածեմ՝ հաս-
նեմ ,
Աւար բաժանեմ .
Անձս նորանցից կշտանայ .
Քաշեմ սուրս .
Ձեռքս նորանց յափշտակէ :
10 Փչեցիր քո քամիովը . ծովը ծած-
կեց նորանց .
Կապարի պէս ընկղմուեցան զո-
րաւոր ջրերի մէջ :
11 Ո՞վ է աստուածների մէջ քեզ
պէս , ով Եհովայ .
Ո՞վ քեզ պէս՝ սրբութեան մէջ
փառաւորեալ օրհնութիւն-
ներով սքանչելի ,
Հրաշքներ անող :
12 Մեկնեցիր քո աջ ձեռքը .
Երկիրը կլանեց նորանց :
13 Քո ողորմութեամբն առաջնորդե-
ցիր այս ժողովրդին , որին
դու փրկեցիր .
Քո զօրութեամբը տարիր նորանց
քո սուրբ բնակարանը :
14 Ժողովուրդները լսեմ են և կը
սարսափեն .
Յաւ է բռնելու Փղշտացի բնա-
կիչներին :
15 Այն ժամանակ Եդովմի իշխաննե-
րը կ՚սոպնապին .
Մովաբի զօրաւորներին դող կը
բռնէ .
Կ՚հալուին Քանանու բոլոր բնա-
կիչները :
16 Նորանց վերայ վախ ու դող կ՚ընկնէ ,
Քո բազուկի մեծութիւնից կը
սառչեն քարի պէս .
Մինչև որ անցնէ ժողովուրդդ ,
ով Եհովայ ,
Մինչև որ անցնէ այս ժողովուր-
դը , որ դու առացար :
17 Դու կ՚բերես նորանց և կ՚տնկես
նորանց քո ժառանգութեան
լեռան վերայ ,
Այն տեղը , ուր քո բնակութեան
համար շինեցիր , Եհովայ .
Այն սրբարանը , Տէր , ուր քո
ձեռքերը շինեցին :
18 Եհովան պիտի թագաւորէ յա-
ւիտեան յաւիտենից :
19 Վասն զի փարաւոնի ձիերն նո-
րա կառքերովն ու ձիաւորներովը
ծովը մտան , և Եհովան ծովի
ջրերը նորանց վերայ ածեց . բայց
Իսրայէլի որդիքը ցամաքով գնա-
ցին ծովի մէջից :
20 Եւ Ահարոնի քոյր՝ Մարիամ
մարգարէուհին թմբուկը ձեռքն
առաւ . և բոլոր կանայքը թմբ-
կահարներով և պարերով նորա ե-
տևից էլան : 21 Եւ Մարիամը պա-
տասխանեց նորանց .
Երգեցէք Եհովային , վասն զի
փառքով փառաւորեալ է .
Ձին ու ձիաւորը ծովը գցեց :

22 Եւ Մովսէսը կարմիր ծովից
ճանապարհ հանեց Իսրայէլին, և
Սուրի անապատը ելան, և երեք
օրուայ ճանապարհ գնացին ա-
23 նապատումը, և ջուր չգտան։ Եւ
եկան Մեռայ, և չէին կարողա-
նում խմել Մեռայի ջրերից, ո-
րովհետև դառն էին. վասն որոյ
նորա անունը Մեռայ կոչուեցաւ։
24 Եւ ժողովուրդը տրտնջաց Մով-
սէսի դէմ ասելով. Ի՞նչ խմենք։
25 Եւ նա եհովային աղաղակեց. և
եհովան նորան մի փայտ ցոյց տը-
ուաւ, և նա գցեց ջրերի մէջ, և
ջրերը անուշացան։ Այն տեղ նո-
րանց կանոն և դատաստան դը-
րաւ, և այնտեղ փորձեց նորանց,
26 Եւ ասաց. Եթէ իրաւ լսես քո
եհովայ Աստուծոյ ձայնին, և
ինչ որ նորա աչաց առջև ուղիղ
է՝ անես, և նորա պատուիրանք-
ներին ականջ դնես, և նորա բո-
լոր կանոնները պահես, այն ախ-
տերից ոչ մէկը քեզ վերայ չեմ
բերել, որոնք եգիպտացոց վերայ
բերի. վասն զի ես եմ եհովան քո
բժիշկը։
27 Եւ եկան Եղիմ, և այնտեղ
տասներկու ջրի աղբիւրներ և ե-
թանոսաւն արմաւենիներ կային.
և այն տեղ ջրերի մօտ բանակ
տուին։

ԳԼ. ԺԶ

1 Եւ չուեցին Եղիմից, և Իսրա-
յէլի որդոց բոլոր ժողովքը եկան
Սին անապատը՝ որ Եղիմի ու Սի-
նայի մէջտեղն է, նորանց Եգիպ-
տոսի երկրից դուրս գալու երկ-
րորդ ամսուայ տասն ու հինգերորդ
2 օրը։ Եւ Իսրայէլի որդոց բոլոր
ժողովքը անապատումը Մովսէսի
և Ահարոնի դէմ տրտնջ արին.
3 Եւ Իսրայէլի որդիքն ասացին նո-
րանց. Երանի թէ եհովայի ձեռ-
քովը մեռած լինէինք Եգիպտոսի
երկրումը, երբոր մսի կաթսաների
մօտ նստած էինք, և կուշտ հաց
էինք ուտում, վասն զի մեզ այս
անապատը հանեցիք, որ բոլոր
այս ժողովքը սովածութիւնից
մեռցնէք։

Եւ եհովան ասաց Մովսէսին. 4
Ահա ես ձեզ երկնքից հաց պիտի
տեղամ, և ժողովուրդը ելնէ՝ և
օրուայ պէտք եղածը նոյն օրը
ժողովէ, որ փորձեմ նորանից թէ
իմ օրէնքի համեմատ պիտի գնան՝
թէ ոչ։ Եւ լինի որ վեցերորդ օ- 5
րը, երբոր իրանց բերածը պատ-
րաստեն, նա նորանից աւելն օր-
ուայ ժողովածների կրկինը լինի։
Եւ Մովսէս ու Ահարոն ա- 6
սացին Իսրայէլի բոլոր որդոցը.
Այս իրիկուն կ'գիտենաք, որ ձեզ
եգիպտոսի երկրից հանողը եհո-
վան է։ Եւ առաւօտը կ'տեսնէք 7
եհովայի փառքը, վասն զի եհո-
վայի դէմ ձեր արած տրտունջը
ինքը լսեց. և մենք ո՞վ ենք՝ որ
մեզ դէմ տրտնջում էք։ Եւ Մով- 8
սէս ասաց. Եհովան ձեզ իրի-
կունը ուտելու միս և առաւօտը
կշտանալու չափ հաց տալիս՝ ե-
հովան լսած է իր դէմ ձեր արած
տրտունջը. և մենք ո՞վ ենք. ձեր
տրտունջը մեզ դէմ չէ, այլ ե-
հովայի դէմ։ Եւ Մովսէս ասաց
Ահարոնին. Իսրայէլի որդոց բո-
լոր ժողովքին ասիր, եհովայի
առջև մօտեցէք. վասն զի ձեր
տրտունջը լսեց։
Եւ եղաւ որ Ահարոնը Իսրայէլի 10
որդոց բոլոր ժողովքի հետ խօսե-
լիս, դէպի անապատը նայեցան,
և ահա եհովայի փառքը ամպի
մէջ երեւեցաւ։ Եւ եհովան խո- 11
սեց Մովսէսի հետ ասելով. Ի- 12
սրայէլի որդոց տրտունջը լսեցի.
խօսիր նորանց հետ ասելով. Ի-
րիկուայ դէմ միս պիտի ուտէք,
և առաւօտանց հացով պիտի
կշտանաք. և կ'գիտենաք թէ ես
եմ եհովայ՝ ձեր Աստուածը։
Եւ եղաւ իրիկունը, որ լոր- 13
մարգիներ եկան և բանակը ծած-
կեցին և առաւօտանց բանակի
շուրջը ցօղ իջաւ։ Եւ երբոր ի- 14
ջած ցօղը վերացաւ, ահա անա-
պատի երեսի վերայ մանր թեփա-
ձև մի բան կար՝ եղեամի պէս
մանր գետնի վերայ։ Եւ Իսրայէ- 15
լի որդիքը տեսան, և իրար ա-
սացին. Ինչ է սա. վասն զի չէին
գիտում թէ ինչ էր. և Մովսէս

ասաց Նորանց. Սա այն հացն է, որ Եհովան տուաւ ձեզ ուտելու։
16 Եհովային պատուիրած բանը այս է. ժողովեցէք Նորանցից ամեն մէկն իր կերածի չափ, մարդագլուխ մէկ օմէր ամեն մէկին իր վրանի մէջ եղողների համար՝ ձեր
17 հոգիների թուին նայելով։ Եւ Իսրայէլի որդիքն այնպէս արին. և որը շատ, և որը քիչ ժողովեց։
18 Եւ օմէրով չափում էին, շատ ունեցողինը չաւելացաւ, և քիչ ունեցողինը չպակասեց. ամեն մէկն իր կերածի չափ ժողովեց։
19 Եւ Մովսէսն ասաց Նորանց. Ոչ մէկը Նորանից մինչև առաւօտը չպահէ։
20 Բայց չլսեցին Մովսէսին, այլ ոմանք թողեցին Նորանից մինչև առաւօտ, և որդնոտեց և հոտեց. և Մովսէսը
21 բարկացաւ Նորանց վերայ։ Եւ ամեն առաւօտ ժողովում էին Նորանցից ամեն մէկն իր կերածի չափ. ու արևը տաքանալիս հալւում էր։
22 Եւ եղաւ որ, վեցերորդ օրը կրկնապատիկ ուտելիք՝ այսինքն ամեն մէկի համար երկու օմէր ժողովեցին, և ժողովքի բոլոր իշխանները եկան և պատմեցին
23 Մովսէսին։ Եւ Նա ասաց Նորանց. Այս է Եհովայի ասածը, էգուց հանգստութեան սուրբ շաբաթն է Եհովայի համար, ինչ որ եփելու էք՝ եփեցէք, և ինչ որ եռացնելու էք՝ եռացրէք, և ինչ որ կ'աւելնայ՝ ձեզ համար առաւօտեան պահելու թո-
24 ղեցէք։ Եւ Նորան առաւօտեան թողուցին՝ Մովսէսի հրամայածի պէս և չհոտեց, ոչ էլ մէջը
25 որդ եղաւ։ Եւ Մովսէսն ասաց. Այսօր կերէք, վասն զի այսօր շաբաթ է Եհովայի համար. այս օր դաշտի մէջ Նորանից չէք
26 գտնիլ։ Վեց օր պիտի ժողովէք Նորան. բայց եօթներորդ օրը՝ որ
27 շաբաթ է, պիտի չգտնուի։ Եւ եղաւ որ եօթներորդ օրը ժողովրդից ոմանք ժողովելու դնացին, բայց չգտան։
28 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Մինչև ե՞րբ չէք ուզում պահել իմ պատուիրանքներն ու օրէնքները։
29 Տե՛ս որ Եհովան տուաւ ձեզ շաբաթը, Նորա համար վեցերորդ օրը ինքը ձեզ երկու օրուայ հաց է տալիս. ամեն մէկն իր տեղը թող նստէ. ոչ մէկն իր տեղից
30 չելնէ եօթներորդ օրը. Եւ ժողովուրդը հանգստացաւ եօթներորդ
31 օրը։ Եւ Իսրայէլի տունը Նորա անունը Ման դրին. և Նա դինձի սերմի պէս սպիտակ և Նորա համը մեղրով չիաւ-ի պէս էր։
32 Եւ Մովսէս ասաց. Այս է Եհովայի հրամայած բանը. Նորանից մի օմէր լցրէք, որ ձեր սերունդների համար պահուի, որ տեսնեն այն հացը՝ որ ձեզ անապատումը եգիպտոսի երկրից հանելիս։
33 Եւ Մովսէսն ասաց Ահարոնին. Մի սափոր առ, և Նորա մէջը մի օմէր լիքը մանանայ դիր. և Եհովայի առջև դիր որ պահուի ձեր սերունդների համար։
34 Ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրեց, այնպէս էլ Ահարոնը վկայութեան առջև դրաւ Նորան որ պահուի։
35 Եւ Իսրայէլի որդիքը քառասուն տարի կերան մանանան, մինչև որ չէն երկիրն եկան՝ մանանան կերան՝ մինչև որ Քանանու երկրի
36 սահմանն եկան։ Եւ օմէրը արդուի տասանորդ մասն է։

ԳԼ. ԺԷ

1 Եւ չուեցին Իսրայէլի որդոց բոլոր ժողովքը Եհովայի խօսքին պէս Իրանց գնացքի համեմատ Սին անապատից, և Ռափիդիմ ում բանակ տուին. և ժողովրդի համար խմելու ջուր չկար։
2 Եւ ժողովուրդը Մովսէսի հետ վիճեց ու ասաց. Մեզ ջուր տուէք, որ խմենք. և Մովսէսն ասաց Նորանց. Ինչ էք ինձ հետ վիճում, ինչո՞ւ էք փորձում Եհովային։
3 Եւ ժողովուրդն այն տեղ ջրի համար ծարաւեց, և ժողովուրդը Մովսէսի դէմ տրտնջաց և ասաց. Ինչո՞ւ համար մեզ եգիպտոսից հանեցիր, որ մեզ ու մեր որդի-

ներին և մեր հօտերին ծարաւ մեռցնես։
4 Եւ Մովսէսը Եհովային աղաղակեց՝ ասելով. Ի՞նչ անեմ այս ժողովրդին. քիչ է մնացել որ ինձ
5 քարկոծեն։ Եւ Եհովան ասաց Մովսէսին. Ժողովրդի առջևն անցիր, և Իսրայէլի ծերերից քեզ հետ առ, և քո գաւազանը՝ որով գետը զարկիր, ձեռքդ առ
6 և գնա։ Ահա Քորեբումը այն ժայռի վերայ՝ այնտեղ քո առջև կ'կանգնեմ, և ժայռին զարկ և նորանից ջուր կ'ելնէ, և ժողովուրդը թող խմէ։ Եւ Մովսէսն այնպէս արաւ Իսրայէլի ծերերի
7 առջև։ Եւ այնտեղի անունը Մասա և Մերիբա դրաւ, Իսրայէլի որդոց այնտեղ վիճելու, և Եհովային փորձելու համար, որ ասացին. Արդեօք Եհովան մեր մէ՞ջ է՝ թէ ոչ։
8 Եւ Ամաղէկն եկաւ, և Ռափիդիմումն Իսրայէլի հետ պա-
9 տերազմեց։ Եւ Մովսէսն ասաց Յեսուին. Մեզ համար մարդիկ ընտրիր և Ամաղէկի հետ պատերազմելու ելիր. էգուց ես բլրի գլխին կ'կանգնեմ Աստուծոյ գա-
10 ւազանը ձեռքիս։ Եւ Յեսուն Մովսէսի ասածին պէս արաւ, և Ամաղէկի հետ պատերազմեց. և Մովսէսը՝ Ահարոնը և Ովրը բլու-
11 րի գլուխն ելան։ Եւ լինում էր որ՝ երբոր Մովսէս իր ձեռքերը վեր էր բարձրացնում, Իսրայէլն էր յաղթում. և հէնց որ իր ձեռքերը իջեցնում էր, Ամաղէկն էր
12 յաղթում։ Եւ Մովսէսի ձեռքերը ծանրանալիս մի քար առին և նորա տակը դրին, և ինքը նորա վերայ նստեց. և Ահարոնը և Ովրը մէկը այս կողմից և միւսն այն կողմից նորա ձեռքերը վեր բռնեցին, և մինչև արեգակի մայր մտնելը նորա ձեռքերը հաստատուն մնացին։
13 Եւ Յեսուն զարկեց սուրի բերանով Ամաղէկին
14 և նորա ժողովրդին։ Եւ Եհովան ասաց Մովսէսին. Սա գրիր գրքում յիշատակի համար, և Յեսուի ականջը գցիր՝ որ Ամաղէկի յիշատակը երկնքի տակից բոլորովին պիտի ջնջեմ։ Եւ Մովսէսը
15 սեղան շինեց և նորա անունը Եհովանիսի դրաւ. Եւ ասաց. Քանի
16 որ Եհովան՝ ձեռքը աթոռի վերայ է, Եհովան պատերազմ ունի Ամաղէկի դէմ ազգից ազգ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Մովսէսի աներ՝ Մադիամու քուրմը Յոթորը լսեց այն ամենը որ Աստուած արաւ Մովսէսին և իր Իսրայէլ ժողովրդին, և թէ Եհովան Եգիպտոսից հանեց Իսրայէլին. Եւ Մովսէսի աները՝ Յո-
2 թոր առաւ Մովսէսի կնիկ Սեպփորային, նորան ետ ուղարկելուց յետոյ. Եւ նորա երկու որդիքը՝
3 որոնց մէկին անունը Գերսամ էր, վասն զի ասել էր, Պանդուխտ եղայ օտար երկրում. Եւ միւսի
4 անունը Եղիազար էր, վասն զի ասել էր, Իմ հօր Աստուածը իմ օգնականն էր, և ինձ փարաւօնի սուրից ազատեց։ Եւ Մովսէսի
5 աներ՝ Յոթորը նորա որդիներով և նորա կնոջով եկաւ Մովսէսի մօտ դէպի անապատը՝ ուր որ նա բանակ էր տուել Աստուծոյ լեռը։ Եւ ասաց Մովսէսին. Ես՝ քո
6 աները՝ Յոթոր քեզ մօտ եմ գալիս, նաև քո կինը և նորա երկու որդիքն նորա հետ։ Եւ Մովսէսն իր
7 աներին դիմաւորելու ելաւ, և խոնարհութիւն արաւ, և համբուրեց նորան. և իրար ողջոյնը հարցրին՝ և վրանը մտան։ Եւ
8 Մովսէսն իր աներին պատմեց այն ամենը՝ որ Եհովան արաւ փարաւօնին և Եգիպտացիներին՝ Իսրայէլի պատճառով, այն բոլոր աշխատութիւնը որ ճանապարհին քաշել էին, և Եհովան նորանից ազատել էր։ Եւ Յոթորն ուրախա-
9 ցաւ այն բոլոր բարութիւնների համար՝ որ Եհովան արել էր Իսրայէլին, որ փրկել էր նորան Եգիպտացոց ձեռքից։ Եւ Յոթորն
10 ասաց. Օրհնեալ լինի Եհովան՝ որ ազատեց ձեզ Եգիպտացոց ձեռքից և փարաւօնի ձեռքից, վասն զի ազատեց ժողովրդին Եգիպտացոց ձեռքի տակից։ Հիմա գիտեմ
11

որ ԵՀովան բոլոր աստուածներից մեծ է՝ Հէնց այն բանում, որով Եգիպտացիք հպարտանում էին նրանց դէմ։ 12 Եւ Մովսէսի աներ Յոթորը ողջակէզ և պոհեր բերաւ Աստուծոյն, և Ահարոն ու Իսրայէլի բոլոր ծերերը Մովսէսի հետ եկան Աստուծոյ առջև հաց ուտելու։

13 Եւ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէս նստեց ժողովրդը դատելու, և ժողովուրդը առաւօտից մինչև իրիկուն Մովսէսի մօտ 14 կանգնած էր։ Եւ Մովսէսի սկեսրը տեսաւ ամէն ինչ որ անում էր Մովսէսը ժողովրդին, և ասաց. Ի՞նչ է այս բանը՝ որ դու անում ես ժողովրդին. ինչո՞ւ ես դու մենակ նստում, և բոլոր ժողովուրդը կանգնում է առաւօտից 15 մինչև իրիկուն քեզ մօտ։ Եւ Մովսէս ասաց իր սկեսրին. Քանի ժողովուրդը գալիս է ինձ մօտ Աստուածանից դատաստան հարցնելու։ 16 Երբոր նրանք մի բան են ունենում գալիս են ինձ մօտ, և ես նրանց մէջ տեղը դատաստան եմ անում և Աստուծոյ կանոնները և նրա օրէնքները 17 ըր նրանց հասկացնում։ Եւ Մովսէսի սկեսրն ասաց նրան. 18 Քո արածը լաւ բան չէ։ Այդ պէս անպատճառ դու էլ կ'մնաչ ուխս, և քեզ հետ եղած այս ժողովուրդն էլ. վասն զի այս բանը քեզ համար շատ ծանր է. դու միայն չես կարող անել այս։ 19 Հիմա լսիր իմ խօսքին. ես քեզ խրատ եմ տալիս, և Աստուած քեզ հետ կ'լինի։ Ժողովրդի համար Աստուծոյ առջև դու գնա. և դատերը դու ներկայացրու Աս- 20 տուծոյն. Եւ սորվեցրու նրա կանոնները ու օրէնքները. և հասկացրու նրանց իրանց գնալու ճանապարհը, և իրանց անելու 21 գործը։ Եւ դու բոլոր ժողովրդից կարող մարդիկ՝ Աստուածանից վախեցող՝ հաւատարիմ՝ ագահութիւնը ատող մարդիկ ընտրիր, և հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ և տասնապետներ դիր նրանց վերայ։

Եւ ամեն ժամանակ թող նրանք 22 դատեն ժողովրդին. և ամեն մեծ բան որ լինի քեզ ներկայացնեն, և ամեն փոքր բանը նրանք դատեն. և քո վերայից բեռը թեթեւացրու և նրանք քեզ հետ թող կրեն։ Եթէ այս անես, և 23 Աստուած էլ քեզ պատուիրէ, այն ժամանակ կարող կ'լինես կանգնել, և բոլոր այս ժողովուրդն էլ խաղաղութեամբ իրանց տեղը կ'գնան։

Եւ Մովսէսն իր սկեսրին 24 լսեց, և նորա բոլոր ասածն արաւ։ Եւ Մովսէս բոլոր Իսրայէլից 25 կարող մարդիկ ընտրեց, և նրանց ժողովրդի վերայ գլխաւորներ՝ հազարապետներ՝ հարիւրապետներ՝ յիսնապետներ և տասնապետներ կարգեց։ Եւ ամեն ժա- 26 մանակ նրանք էին դատում ժողովրդին. դժուար բանը Մովսէսին էին բերում, բայց ամեն փոքր բանը իրանք էին դատում։ Եւ Մովսէսն իր սկեսրին ճանապարհ դրաւ և նա իր երկիրը գնաց։

ԳԼ. ԺԹ

Երրորդ ամսում Իսրայէլի որ- 1 դոց Եգիպտոսի երկրից դուրս գալուց յետոյ նոյն օրը Սինայի անապատն եկան։ Այսինքն Ռա- 2 փիդիմից չուեցին, և Սինայի անապատն եկան, և անապատում բանակ առին. և Իսրայէլն այն տեղ լեռան դիմացը բանակ արաւ։ Եւ Մովսէսն Աստուծոյ 3 մօտ եկաւ. և Եհովան կանչեց նրան լեռնիցն՝ ասելով. Այս պէս ասիր Յակոբի տանը և խոստացրու Իսրայէլի որդոցը։ Դուք 4 տեսաք ինչ որ արի Եգիպտացոց, և ձեզ արծիւի թեւերի վերայ տարի և ինձ մօտ բերի։ Եւ հի- 5 մա եթէ իրաւ իմ ձայնին լսէք և իմ ուխտը պահէք, այն ժամանակ դուք ինձ համար սեպհական ժողովուրդ կ'լինիք ամեն ազգերից, վասն զի ինն է բոլոր երկիրը։ Եւ դուք ինձ համար քա- 6 հանաների թագաւորութիւն և սուրբ ազգ կ'լինիք։ Սրանք են

այն խօսքերը որ Իսրայէլի որդոցը պէտք է ասես։
7 Եւ Մովսէս եկաւ և ժողովրդի ծերերին կանչեց և նորանց առջև դրաւ այս բոլոր խօսքերը, որոնք Եհովան պատուիրեց իրան։
8 Եւ բոլոր ժողովուրդը միասին պատասխանեցին և ասացին. Եհովայի բոլոր ասածները կ'անենք։ Եւ Մովսէսը ժողովրդի խօսքերը Եհովային դարձրեց։
9 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Ահա ես քեզ մօտ կ'գամ թանձր ամպի մէջ, որ ժողովուրդը լսէ ես քեզ հետ խօսելիս, և քեզ էլ հաւատայ յաւիտեան։ Եւ Մովսէսը ժողովրդին խօսքերը Եհովային պատմեց։
10 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Գնա ժողովրդի մօտ և սրբիր նորանց այսօր և էգուց, և թող իրանց հանդերձները լուանան.
11 Եւ երրորդ օրուայ համար պատրաստ լինին. վասն զի երրորդ օրը Եհովան բոլոր ժողովրդի աչքի առջև Սինայ լեռան
12 վերայ պիտի իջնէ։ Եւ դու ժողովրդի շուրջը սահման դնես՝ ասելով. Զգուշացէք լեռը վեր ելնելուց կամ նորա ծայրին դպչելուց. ով որ լեռան դպչի անպատճառ պիտի մեռցուի։
13 Նորան ձեռք չդպչի. դպչողը անպատճառ պիտի քարկոծուի, կամ նետով ձգուի. թէ անասուն և թէ մարդ՝ պիտի չապրէ. փողի ձայնը հնչուելիս նորանք լեռը վեր ելնեն։
14 Եւ Մովսէսը լեռներից դէպի ժողովուրդն իջաւ, և սրբեց ժողովրդին. և նորանք իրանց հանդերձները լուացին։
15 Եւ նա ասաց ժողովրդին. Երրորդ օրուայ համար պատրաստ եղէք, կնոջ մի մերձենաք։
16 Եւ եղաւ երրորդ օրը՝ առաւօտը ծագելիս որոտումներ ու կայծակներ էին լինում, և մի թանձր ամպ կար լեռան վերայ, և շատ սաստիկ փողի ձայն, և բանակի մէջ եղած բոլոր ժողովուրդը
17 դարհուրեց։ Եւ Մովսէսը դուրս հանեց ժողովրդին բանակից Աստուծոյ առջևը. և նորանք լեռան տակ կանգնեցին։
18 Եւ Սինայ լեռը բոլորովին ծխում էր, վասն զի Եհովան նորա վերայ իջաւ կրակով, և նորա ծուխը հնոցի ծուխի պէս էր ելնում, և բոլոր լեռը սաստիկ դողում էր։
19 Եւ փողի ձայնը գնալով շատ սաստկանում էր. Մովսէսը խօսում էր, և Աստուած ձայնով նորան պատասխան էր տալիս։
20 Եւ Եհովան Սինայ լեռան վերայ՝ լեռան գլուխն իջաւ. և Եհովան կանչեց Մովսէսին լեռան գլուխը, և Մովսէսը ելաւ։
21 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Իջիր՝ ժողովրդին պատուիրիր, մի գուցէ սահմանից անցնեն Եհովային տեսնելու համար և նորանցից շատերը կորչեն։
22 Եւ Եհովային մօտեցող քահանաներն էլ սրբուին, որ մի գուցէ Եհովան նորանց վերայ յարձակէ։
23 Եւ Մովսէսը ասաց Եհովային. Ժողովուրդը չէ կարող ելնել Սինայ լեռը. վասն զի դու մեզ պատուիրեցիր՝ ասելով. Սահման դիր լեռան, և սրբիր նորան։
24 Եւ Եհովան ասաց նորան. Գնա՝ վայր իջիր. և Ահարոնի հետ մէկ տեղ ելիր. բայց քահանաներն ու ժողովուրդը Եհովայի մօտ ելնելու համար սահմանիցը չանցնեն, որ մի գուցէ նորանց վերայ յարձակէ։
25 Մովսէսը ժողովուրդի մօտ իջաւ, և խօսեց նորանց հետ։

ԳԼ. Ի

1 Եւ Աստուած այս բոլոր խօսքերը խօսեց ասելով։
2 Ես եմ Եհովայ քո Աստուածը՝ որ քեզ Եգիպտոսի երկրից ծառայութեան տունից հանեցի։
3 Բացի ինձանից ուրիշ աստուածներ չունենաս։
4 Քեզ համար կուռք չշինես, և ոչ վերը երկնքումը՝ կամ ցածը երկրի վերայ՝ կամ երկրի տակի ջրերումը եղած բաների մէկ նմանութիւնը.
5 Նորանց երկրպագութիւն չանես, և նորանց չպաշտես. վասն զի ես քո Եհովայ Աստուածը նախանձոտ Աստուած եմ, որ կ'հատու-

ցանեմ հայրերի անօրէնութիւնը որդոց վերայ՝ մինչև նորանց երբորդ ու չորրորդ ազգը՝ որ ատում են ինձ։ 6 Եւ կ՚ողորմեմ նորանց մինչև հազար ազգը, որ սիրում են ինձ և իմ պատուիրանքները պահում։

7 Քո Եհովայ Աստուծոյ անունը դատարկ տեղը չարտասանես, վասն զի Եհովան՝ իր անունը դատարկ տեղն արտասանողին անպատիժ չթողիլ։

8 Յիշիր հանգստութեան օրը նո-
9 րան սուրբ պահելու համար. վեց օր աշխատիր, և քո բոլոր գործն
10 արա. Բայց եօթներորդ օրը՝ քո Եհովայ Աստուծոյ հանգստութեան օր է. ոչ մի գործ չգործես, ոչ դու, ոչ քո որդին՝ ոչ քո աղջիկը, ոչ քո ծառան ու աղախինը՝ ոչ քո անասունը՝ ոչ
11 էլ քո դրան օտարականը։ Վասն զի Եհովան վեց օրուայ մէջ արաւ երկինքն ու երկիրը՝ ծովն ու բոլոր նորանց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. նորա համար Եհովան օրհնեց հանգստութեան օրը և սրբեց նորան։

12 Պատուիր քո հօրը և քո մօրը, որ քո օրերը երկարանան այն երկրի վերայ՝ որ քո Եհովայ Աստուածը կ՚տայ քեզ։

13 Սպանութիւն մի անիր։
14 Շնութիւն մի անիր։
15 Գողութիւն մի անիր։
16 Քո դրացու դէմ սուտ վկայութիւն մի անիր։

17 Մի ցանկանար քո դրացու տանը, քո դրացու կնոջը կամ նորա ծառային՝ կամ նորա աղախնին՝ կամ նորա եղին՝ կամ նորա էշին և քո դրացու ոչ մէկ բանին։

18 Եւ բոլոր ժողովուրդը տեսանում էին որոտումները՝ և կայծակները՝ և փողի ձայնը և լեռան ծխելը։ Եւ ժողովուրդը տեսաւ, և ետ քաշուեցաւ ու հեռու կանգնեց.
19 Եւ ասաց Մովսէսին. Դու խօսիր մեզ հետ, և մենք կ՚լսենք. բայց Աստուած թող չխօսէ մեզ հետ՝
20 որ չմեռնենք։ Եւ Մովսէս ասաց ժողովրդին. Մի վախենաք, վասն զի Աստուած ձեզ փորձելու համար է եկել, այնպէս որ նորա վախը ձեր առջև լինի, որ չմեղանչէք։ 21 Եւ ժողովուրդը հեռու կանգնեց, և Մովսէսը մօտեցաւ այն թանձր խաւարին՝ ուր որ Աստուած էր։

22 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Այսպէս ասա Իսրայէլի որդոցը. Դուք տեսաք որ երկնքից խօսեցի ձեզ հետ. 23 ինձ հետ հաւասար ծամի աստուածներ չունէք, ոչ էլ ոսկի աստուածներ չունէք ձեզ համար։ 24 Ինձ համար հողի սեղան շինիր, և նորա վերայ մատուցրու քո ողջակէզները և քո խաղաղութեան զոհերը՝ քո ոչխարները և քո արջառները. Ե՛ ամեն տեղ ուր որ իմ անունը յիշել կ՚տամ, քեզ մօտ պիտի գամ, և քեզ պիտի օրհնեմ։ 25 Եւ եթէ ինձ համար քարի սեղան շինելու լինես, տաշած քարից չշինես. վասն զի եթէ նորա վերայ երկաթի գործիքդ բարձրացրիր, կ՚պղծես նորան։ 26 Եւ աստիճաններով վեր չերթես իմ սեղանը, որ քո մերկութիւնը չերեւի նորայ վերայ։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ սորանք են այն դատաստանները, որ պիտի դնես նորանց առջև։ 2 Եթէ եբրայեցի ծառայ ծախու առնելու լինես, վեց տարի պիտի ծառայէ, և եօթներորդ տարին ազատ պիտի երթայ ձրի։ 3 Եթէ նա մենակ է մտել, մենակ պիտի երթայ. եթէ կին ունեցող մարդ էր, կինն էլ իր հետ պիտի երթայ։ 4 Եթէ նորա տէրն է իրան կին տուել, և նա իր համար որդիներ կամ աղջիկներ է ծնել, կինն ու նորա որդիքը տէրոջը կը լինին, և ինքը մենակ կ՚երթայ։ 5 Բայց եթէ ծառան յայտնի աւելու լինի, թէ ես սիրել եմ իմ տէրոջը, իմ կնոջը և իմ որդիներին, չեմ ուզում ազատ դուրս դնալ։ 6 Այն ժամանակ նորա տէրը տանէ նորան դատաւորների մօտ և նորան մօտեցնէ դրանը կամ դրանդեացը. և նորա տէրը նորա ականջը հերիւնով ծակէ,

և նա յաւխտեան ծառայ լինի
նորան։
7 Եւ եթէ մէկն իր աղջիկը ծա-
խէ աղախնութեան, նա ծառա-
8 ների երթալու պէս չելնէ։ Եթէ
նա տհաճելի է իր տիրոջ աչքին՝
որ նորան չէ նշանուած, թող փըր-
կել տայ նորան, օտար ազգի
ծախելու իշխանութիւն չունի,
վասն զի խարէութիւն արաւ նո-
9 րան։ Եւ եթէ նորան իր որդու
համար նշանէ, աղջկանց օրէնքի
10 համեմատ անէ նորա համար։ Ե-
թէ իր համար ուրիշն առնէ, նո-
րա ուտելիքը՝ հանդերձը և մեր-
11 ձաւորութիւնը պիտի չկտրէ։ Եւ
եթէ նորան այս երեք բանը չանէ,
այն ժամանակ նա առանց փողի
ձրի դուրս գայ։
12 Մարդ զարկող մեռցնողը ան-
13 պատճառ պիտի մեռցնուի։ Իսկ
եթէ դիտմամբ չարաւ, այլ Աստ-
ուած դցեց նորա ձեռքը. ես
քեզ համար մի տեղ պիտի սահ-
մանեմ, որ նա փախչէ այն տեղ։
14 Բայց եթէ մէկն իր դրացուն ոխ
ունենայ, և նորան նենգութեամբ մեռցնէ, իմ սեղանիցն
15 էլ առ նորան որ մեռնի։ Եւ իր
հօրը կամ մօրը զարկողը ան-
պատճառ պիտի մեռցնուի։
16 Եւ մարդ գողանողը՝ և նորան
ծախողը, և եթէ իր ձեռքին
գտնուի, անպատճառ պիտի մեռց-
նուի։
17 Եւ իր հօրը կամ մօրը անիծողը՝
անպատճառ պիտի մեռցնուի։
18 Եւ եթէ մարդիկ իրար հետ վի-
ճեն և մէկը միւսին քարով կամ
բռունցքով զարկէ, և նա չմեռ-
19 նի, այլ անկողինը ընկնի, եթէ
վեր կենայ ցուպով մարդ գայ,
զարկողը անպատիժ լինի, միայն
նորա դադարելու ժամանակը տայ,
և բոլորովին առողջացնէ։
20 Եւ եթէ մէկը գաւազանով իր
ծառային՝ կամ իր աղախնին զար-
կէ, և նա նորա ձեռքի տակ
մեռնի, անպատճառ վրէժ պիտի
21 առնուի նորանից. Բայց եթէ մի
օր կամ երկու օր ապրի, վրէժ
չառնուի նորանից. վասն զի նա
իր փողն է։

22 Եւ եթէ մարդիկ կռուեն, և
յղի կնոջ զարկելով նորա տղան
անցնել տան, և մի վնաս չլինի,
նա անպատճառ այն կնոջ մարդ-
ու նորա վերայ դրած տոյժը
քաշէ, և վճարէ դատաւորների
ձեռօք։ Բայց եթէ մի վնաս լինի, 23
անձի տեղ՝ անձ պիտի տաս, Աչ- 24
քի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ա-
տամ, ձեռքի տեղ՝ ձեռք, ոտ-
քի տեղ՝ ոտք, խարանի տեղ՝ 25
խարան, վէրքի տեղ՝ վէրք, հար-
ուածի տեղ՝ հարուած։
Եւ եթէ մէկը զարկէ իր ծա- 26
ռայի աչքին կամ իր աղախնի
աչքին ու կուրացնէ, նորա աչ-
քի փոխարէն ազատ պիտի ար-
ձակէ նորան։ Եւ եթէ իր ծա- 27
ռայի ատամը՝ կամ իր աղախնի
ատամը վայր գցէ, նորա ատամի
փոխարէն ազատ պիտի արձակէ
նորան։
Եւ եթէ մի եզ՝ մարդ կամ 28
կնիկ հարէ, որ մեռնէ, եզը ան-
պատճառ պիտի քարկոծուի, և
նորա միսը պիտի չուտուի. բայց
եզի տէրը անպատիժ լինի։ Բայց 29
եթէ եզը երէկուանից՝ կամ մէկէ-
օրուանից հարող է, և նորա տի-
րոջն էլ բողոքուած է, և նա նո-
րան չէ պահել, եթէ մարդ կամ
կնիկ մեռցնելու լինի, եզը պիտի
քարկոծուի, և նորա տէրն էլ
պիտի մեռցնուի։ Եթէ փրկանք 30
դրուի նորա վերայ, նա իր անձի
ազատութեան համար՝ ինչ որ իր
վերայ դրուի, պիտի վճարէ։ Ե- 31
թէ տղայ և թէ աղջիկ հարէ եզը,
այս դատաստանի պէս լինի նո-
րան։ Եթէ եզը ծառայ կամ ա- 32
զախին հարէ, նորանց տիրոջ ե-
րեսուն սիկղ արծաթ պիտի տայ,
և եզը պիտի քարկոծուի։
Եւ եթէ մէկը հոր բանայ, կամ 33
մէկը փոս փորէ՝ և չծածկէ, և
այն տեղ եզ կամ էշ ընկնէ, Փո- 34
սի տէրը տուժէ, և նորանց տի-
րոջը փող պիտի տայ, և մեռածը
իրանը պիտի լինի։
Եւ եթէ մէկի եզն իր դրացու 35
եզին հարէ որ մեռնէ, ողջ եզը
ծախեն, և նորա փողը բաժա-
նեն, և մեռածն էլ բաժանեն։

36 Ա.յլ եթէ գիտացուածէ, որ ե-
զը երէկուանից յամ մէկէլ օրուա-
նից հարող էր, և նորա տէրը նո-
րան չէ պահել, անպատճառ եզի
տեղ եզ հատուցանէ և մեռածը
իրանը լինի։

ԳԼ. ԻԲ

1 Եթէ մէկն արջառ կամ ոչխար
գողանայ՝ և մորթէ կամ ծախէ
նորան, մէկ արջառի տեղ հինգ
արջառ՝ և մէկ ոչխարի տեղ չորս
2 ոչխար հատուցանէ։ Եթէ գողը
փոս ծակելիս գտնուի և զարկուի
որ մեռնէ, նորա համար արիւն
3 չկայ։ Եթէ նորա վերայ արևը
ծագել էր, նորա արիւնը նորա
վերայ։ Բոլորը հատուցանէ, եթէ
բան չունի այն ժամանակ իր գո-
ղացած բանի համար ծախուի։
4 Եթէ գողացածը իր ձեռքին ողջ
գտնուի, թէ եզ լինի՝ թէ էշ և
թէ ոչխար կրկինը հատուցանէ։
5 Եթէ մէկն արտ կամ այգի ա-
րածացնէ, թող տալով իր ան-
տունին ուրիշի արտումը արածե-
լու, իր արտի ամենալաւից և
իր այգու ամենալաւից հատու-
6 ցանէ։ Եթէ կրակ դուրս գայ և
փշերին փակչէ և դիզուած որա-
նները՝ կամ չհնձուած ցորենը՝ կամ
արտը այրէ, կրակը գցողը այրա-
ծը հատուցանէ։
7 Եթէ մէկն իր դրացուն փող
կամ կարասիք պահ տայ, և այն
մարդու տնից գողանայ, և-
թէ գողը գտնուի, նա կրկինը
8 հատուցանէ. Եթէ գողը չգտնը-
ուի, տանուտէրը դատաւորների
մօտ տարուի, թէ արդեօք նա իր
ձեռքը իր դրացու ստացուածքին
9 չէ դպցրել։ Ամեն կերպ անիրա-
ւութեան համար, թէ եզի՝ թէ
էշի՝ թէ ոչխարի՝ թէ հանդերձի
համար, ամեն կերպ կորուած
բանի համար՝ որ ձէն առէ թէ ի-
րանն է, երկուսի դատը դատա-
ւորների առջև տարուի. և դա-
տաւորները որի վերայ վճռելու լի-
նին, նա կրկինը հատուցանէ իր
դրացուն։
10 Եթէ մէկն իր դրացուն էշ կամ
եզ կամ ոչխար կամ ինչևիցե ա-
նասուն պահ տայ, և նա մեռնի՝
կամ ճկատուի՝ կամ յափշտակուի
և տեսողը չլինի, Ա.յն ժամանակ 11
երկուսի միջտեղը Եհովայի եր-
դումը լինի՝ իր գրացու ստաց-
ուածքին ձեռք չդպցնելու հա-
մար. և նորա տէրը ընդունէ եր-
դումը, և նա չհատուցանէ։ Եւ 12
եթէ իրաւ իր մօտից գողացուել
է, ինքը նորա տէրոջը հատուցա-
նէ։ Եթէ գիշէից պատառուել 13
է, թող վկայութիւն բերէ, և
պատառուածը չհատուցանէ։
Եւ եթէ մէկն իր դրացուց ան- 14
ասուն փոխ առնէ, և նա ճկատուե-
լու կամ մեռնելու լինի նորա տէ-
րը հետը չլինելով, ինքը անպատ-
ճառ հատուցանէ։ Բայց եթէ նո- 15
րա տէրը հետն էր, չհատուցանէ,
եթէ վարձքով առնուած էր,
վարձքի տեղն անցնէ։
Եթէ մէկը չնշանուած աղջիկ 16
խաբէ և նորա հետ պառկէ, ան-
պատճառ նորա օժիտը տայ և
նորան իր համար կին առնէ։ Եթէ 17
նորա հայրը բնաւ չուզէ նորան
տալ, կոյսերի օժիտի չափ փող
պիտի վճարէ։
Կախարդը չապրեցնես։ 18
Ամեն ով որ անասունի հետ 19
պառկէ, անպատճառ մեռցնուի։
Բացի միայն Եհովայից՝ էլ 20
աստուածների զոհ անողը պիտի
կորուի։
Եւ օտարականին մի չարչարիր, 21
և նորան մի նեղիր, վասն զի
դուք էլ Եգիպտոսի երկրում օ-
տարական էիք։ Ոչ մի որևայրի 22
և որբ բնաւ մի չարչարէք։ Եթէ 23
նորան չարչարես, նա ինձ բողոքէ,
անպատճառ պիտի լսեմ նորան
աղաղակը. Եւ իմ բարկութիւնը 24
կ'բորբոքէ և. ձեզ սրով կ'մեռց-
նեմ. և ձեր կանայքը որևայրի
և ձեր որդիները որբ կ'լինին։
Եթէ իմ ժողովրդիցը քեզ 25
մօտ եղած մէկ աղքատի փող
փոխ տաս, վաշխառուի պէս մի
լինիր նորա համար, և նորա վե-
րայ վաշխ մի դնիր։ Եթէ քո 26
դրացու հանդերձը գրաւ առնես,
մինչև արևը մայր մտնելը նրան

27 եա դարձրու։ Վասն զի այն է միայն նորա ծածկոցը, իր մարմ-
նի հանդերձն է այն. ինչո՞վ պիտի պառկէ. և կ'լինի որ երբոր ինձ աղաղակէ, կ'լսեմ, վասն զի ես ողորմած եմ.
28 Դատաւորներին մի հայհոյիր, և քո ժողովրդի իշխանին մի անիծիր։
29 Քո արմտիքներուն և հեղանիւթներուն երախայրիները մի ուշացներ. քո որդոց անդրանիկներն ինձ
30 պիտի տաս։ Քո եզին և ոչխարին Էլ այսպէս անես. եօթը օր մօրը հետ լինի, և ութերորդ օրը՝ նոյն ինձ տաս։
31 Եւ դուք սուրբ մարդիկ պիտի լինիք ինձ համար. և դաշտումը պատառուածի միսը պիտի չուտէք. շներին պիտի գցէք նորան։

ԳԼ. ԻԳ

1 Սուտ լուր չտարածես. անօրէնի հետ ձեռքդ չդնես որ անիրաւ
2 վկայ դառնաս։ Զարութիւն անելու համար՝ բազմութեանը չհետևես. և չխօսես դատաստանի մէջ էջ-ուդէը ծռելու համար
3 շատերի ետևից խոտորելով։ Եւ աղքատին աչառութիւն չանես նորա դատումը։
4 Եթէ քո թշնամու մոլորած եզին կամ էշին հանդիպելու լինես, անպատճառ իրան դարձնես
5 նորան։ Եթէ տեսնես քեզ ատող էշը իր բեռի տակ ընկած, և չկամենաս նորան ազատել, անպատճառ նորա հետ էլ ազատես։
6 Քո աղքատի իրաւունքը չծռես
7 նորա հետ դատելիս։ Սուտ խօսքից հեռու կաց, և անմեղին ու արդարին մի մեռցնիր. վասն զի ես չարին չեմ արդարացնիլ։
8 Եւ կաշառ չառնես, որովհետև կաշառը կուրացնում է աչքաբացներին, և շուռ է տալիս արդարների բանը։
9 Եւ օտարականին մի նեղիր. դուք էլ գիտէք օտարականի սիրտը. որովհետև Եգիպտոսի երկրումը օտարական էիք։
10 Եւ երկերդ վեց տարի ցանիր, և նորա արդիւնքը ժողովիր. բայց եօթներորդումը պարապ թող և ձգիր նորան, որ քո ժողովրդի աղքատներն ուտեն, և նորանց մնացածը դաշտի անասուններն ուտեն. քո այգուն ևս ձիթատանին Էլ այսպէս անես։
11 Վեց օր քո գործը գործիր, և 12
եօթներորդ օրը հանգստացիր, որ քո եզն ու էշը հանգստանայ, և քո աղախնի որդին ու օտարականը շունչ առնէ։ Եւ բոլոր ձեզ 13
ասածներս պահեցէք, և ուրիշ աստուածների անունը չյիշէք. բերանիցդ չլսուի։
Տարին երեք անգամ ինձ հա- 14
մար տօն պահիր։ Բաղարջակերաց 15
տօնը պահիր. եօթն օր անխմոր հաց կեր՝ քեզ պատուիրածիս պէս Աւիւ ամսուայ սահմանուած ժամանակին. վասն զի այն ամսումն Եգիպտոսից ելար և մէկը դատարկ չերևայ իմ առջև։ Եւ 16
արտի վէջ ցանելու բանիդ երախայրիքը հնձելու տօնը. և տարուայ վերջին ժողովելու տօնը դէզ արտիցը քո բաները ժողովելիս։ Տարին երեք անգամ քո ա- 17
մէն արուները Տէր Եհովայի առջև պիտի երևան։
Իմ զոհի արիւնը խմորեալ հա- 18
ցով չմատուցանես, և իմ տօնի ճարպը մինչև առաւօտը չմնայ։ Քո 19
երկրի առաջի երախայրիները քո Եհովայ Աստուծոյ տունը տանես։
Ուլը իր մօր կաթի մէջ չեփես։
Ահա քո առջև մի հրեշտակ 20
կուղարկեմ, որ քեզ ճանապարհին պահպանէ, և քեզ տանէ իմ պատրաստած տեղը։ Զգուշացիր 21
նորա առջև, և նորա խօսքին լսիր, նորա դէմ մի յամառիր. որովհետև նա ձեր յանցանքը չի ներիլ, վասն զի իմ անունը նորանումն է։
Բայց եթէ լսես նորա խօսքին, և 22
իմ բոլոր ասածն անես, այն ժամանակ քո թշնամիներին թշնամի կ'լինիմ, և քո հակառակորդներին՝ հակառակորդ։ Վասն զի իմ 23
հրեշտակը քո առջև կ'գնայ, և քեզ Ամորհացոց և Քեթացոց և Փերեզացոց և Քանանացոց, և Խեւացոց և Յերուսացոց մօտ պիտի

տանէ, և ես պիտի ջարդեմ նո-
24 բանց։ Ընդանց առաւածներին
երկրպագութիւն կամ ծառայու-
թիւն չանես, և նորանց արածի
պէս չանես. այլ բոլորովին կոր-
ծանես նորանց և նորանց կուռքե-
25 րը բոլորովին կոտրտաս։ Եւ ձեր
Եհովայ Աստուծոյն պաշտէք. և
նա կ'օրհնէ քո հացը և քո ջու-
րը, և քո միջից հիւանդութիւնը
26 կ'դարձնեմ։ Քո երկրի մէջ վիժող
և ամուլ չի լինի, քո օրերի թի-
27 վը պիտի լցնեմ։ Իմ երկիւղը
կ'ուղարկեմ քո առջև, և կ'շփո-
թեցնեմ այն բոլոր ժողովուրդը,
որոնց մէջ դու գնում ես, և քո
բոլոր թշնամիների մէջքը քեզ
28 կ'դարձնեմ. Եւ քո առջև իշա-
մեղուն կ'ուղարկեմ, և նա կ'քշէ
Խևացիներին, Քանանացիներին
29 և Քեւացիներին քո առջև։ Ո-
րանք քո առջև մէկ տարուայ
մէջ պիտի չքշեմ, որ մի գուցէ
երկիրը ամայի դառնայ, և քեզ
վերայ դաշտի գազանները շատա-
30 նան։ Որանք քո առջևից կա-
մաց կամաց պիտի քշեմ, մինչև
որ դու բազմանաս և երկիրը ժա-
31 ռանգես. Եւ ես դնեմ քո սահ-
մանները Կարմիր ծովից մինչև
Փղշտացւոց ծովը և անապատից
մինչև Եփրատ գետը. վանդի այն
երկրի բնակիչները քո ձեռքը պի-
տի տամ. և պիտի քշես քո առ-
32 ջևից։ Նորանց հետ և նորանց
աստուածների հետ դաշինք չդը-
33 նես։ Քո երկրի մէջ չբնակեն, որ
քեզ մեղք գործել չտան ինձ դէմ,
վանդի եթէ նորանց աստուած-
ները պաշտես, անպատճառ նո
քեզ համար որոգայթ կ'դառնայ։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Մովսէսին ասաց. Ելիր Ե-
հովայի մօտ դու և Ահարոնը՝ Նա-
դաբը և Աբիուդը և Իսրայէլի
ծերերից եօթանասուն հոգի, և
հեռուից երկրպագութիւն արէք։
2 Եւ միայն Մովսէսը մօտենայ Ե-
հովային, իսկ նորանք չմօտենան,
և ժողովուրդը նորա հետ չելնէ։
3 Եւ Մովսէսը եկաւ, Եւ Եհո-
վայի բոլոր խօսքերը և բոլոր դա-
տաստանները պատմեց ժողովըր-
դին. և բոլոր ժողովուրդը միա-
ձայն պատասխան տուին և ասա-
ցին. Եհովայի բոլոր խօսքերը,
որ խօսել է, կ'անենք։ Եւ Մով- 4
սէսը Եհովայի բոլոր խօսքերը
գրեց, և առաւօտը վեր կացաւ,
և լեռան տակին սեղան շինեց. և
Իսրայէլի տասներկու ցեղերի հա-
մեմատ տասներկու արձան կանգ-
նեցրեց։ Եւ Իսրայէլի որդոց պա- 5
տանիներին ուղարկեց, և նորանք
ողջակէզներ մատուցրին և խա-
ղաղութեան զոհերի համար զուա-
րակներ զոհեցին Եհովային։ Եւ 6
Մովսէսն արիւնի կէսն առաւ, և
կոնքերի մէջ դրաւ. և արիւնի
կէսն այն սեղանի վերայ սրսկեց։
Եւ առաւ ուխտի գիրքը՝ և ժո- 7
ղովրդի ականջների առջև կար-
դաց. և նորանք ասացին. Ե-
հովայի բոլոր ասածը կ'անենք և կը
լսենք։ Եւ Մովսէսն առաւ արիւնը, 8
և ժողովրդի վերայ սրսկեց, և ա-
սաց. Ահա այն ուխտի արիւնը,
որ Եհովան արաւ ձեզ հետ այս
բոլոր խօսքերի համեմատ։

Այն ժամանակ Մովսէսն ու 9
Ահարոնը՝ Նադաբը և Աբիուդը՝
և Իսրայէլի ծերերից եօթանասուն
հոգի ելան. Եւ Իսրայէլի Աստու- 10
ծոյն տեսան. և նորա ոտքերի
տակը շափիւզոյ աղիւսով յա-
տակածի պէս և բուն երկնքի
պէս պայծառ էր։ Եւ Իսրայէլի 11
որդոց ընտրեալների վերայ իր
ձեռքը չձգեց. և Աստուծոյն տե-
սան և կերան և խմեցին։

Եւ Եհովան ասաց Մովսէսին. 12
Լեռը ելիր ինձ մօտ և այնտեղ
կանգնիր. և քարէ տախտակները
և իմ գրած օրէնքը և պատուի-
րանքները քեզ կ'տամ որ նորանց
սովորեցնես։ Եւ Մովսէսն ու նո- 13
րա պաշտօնեան՝ Յեսուն վեր կա-
ցին, և Մովսէսն Աստուծոյ լեա-
ռը ելաւ. Եւ ծերերին ասաց. 14
Դուք այստեղ մեզ սպասեցէք,
մինչև ձեզ մօտ դառնանք. և ա-
հա Ահարոնը և Ովրը ձեզ հետ
են. ով որ դատ ունենայ, թող
նորանց մօտ գնայ։

15 Եւ Մովսէսը լեռնէն եկաւ,
16 և ամպը ծածկեց լեռը։ Եւ Եհովայի փառքը Սինայ լեռան վերայ հանգչեց, և ամպը ծածկեց նորան վեց օր. և եօթներորդ օրը ամպի մէջէն կանչեց
17 Մովսէսին. Եւ Եհովայի փառաց տեսիլքը լեռան գագաթի վերայ մաշող կրակի պէս էր Իսրա-
18 յէլի որդոց աչքի առջև։ Եւ Մովսէսն ամպի մէջը մտաւ, և լեռը ելաւ, և Մովսէսը քառասուն օր և քառասուն գիշեր լեռնումն էր։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոց հետ, որ ինձ ընծայ բերեն. ամեն մարդից որ սիրտը յօժար է, ա-
3 ռէք իմ ընծան։ Եւ այս է այն ընծան որ նորանցից պիտի առ-
նէք. ոսկի՝ և արծաթ՝ և պղինձ,
4 Եւ կապուտակ՝ և ծիրանեգոյն՝ և կրկնակի կարմիր՝ և բարակ քը-
5 թան՝ և այծի մազ, Եւ կարմիր ներկուած խոյի մորթեր, և թէ-
հաշի մորթեր, և Սատիմի փայ-
6 տեր, Լուսոյ համար իւղ՝ օծման իւղի համար և անուշահոտ խունկի համեմունքներ,
7 Եւ եփուդի և լանջապանակի վերայ անցնելու քարեր։
8 Եւ ինձ համար մի սրբարան շինեն՝ որ իրանց մէջ բնակեմ։
9 Բոլոր ինչպէս որ քեզ ցոյց տուի խորանի օրինակը և նորա բոլոր կարասիքի օրինակը՝ այնպէս պիտի շինէք։
10 Եւ Սատիմի փայտից մի տապանակ շինեն, նորա երկայնութիւնը երկու կանգուն ու կէս, և նորա լայնութիւնը մէկ կանգուն ու կէս, և նորա բարձրութիւնը
11 մէկ կանգուն ու կէս։ Եւ մաքուր ոսկով պատես նորան՝ ներսից ու դուրսից պատես նորան, և նորա վերայ շուրջանակի մի ոսկի շրջա-
12 նակ շինես։ Եւ նորա համար չորս ոսկի օղակ ձուլես, և նորա չորս անկիւններին դնես, որ նորա մէկ կողմին երկու օղակ և միւս կող-

մին երկու օղակ լինի։ Եւ Սատի- 13
մի փայտից ձողեր շինես, և նո-
րանց ոսկով պատես։ Եւ ձողերը 14
տապանակի կողքերին եղած օ-
ղակներին անցկացնես, որ տա-
պանակը նորանցով վեր առնուի։
Ձողերը տապանակի օղակների մէջ 15
լինեն. նորանից չհանուին։ Եւ 16
տապանակի մէջ դնես այն վկա-
յութիւնը, որ ես քեզ պիտի
տամ։

Եւ մաքուր ոսկուց մի քաւու- 17
թիւն շինես. նորա երկայնութիւ-
նը երկու կանգուն ու կէս՝ և նորա
լայնութիւնը մէկ կանգուն ու կէս։
Եւ երկու ոսկի քերովբէներ շինես 18
քաւութիւնի երկու ծայրի վերայ,
կռածոյ շինես նորանց. Եւ մէկ 19
քերովբէն այս ծայրին և միւս քե-
րովբէն այն ծայրին շինես. քե-
րովբէները քաւութիւնիցը պիտի
շինես նորա երկու ծայրերի վե-
րայ։ Եւ քերովբէները տարա- 20
ծուած լինեն թևերը վերևից՝ ի-
րանց թևերով քաւութիւնը ծած-
կելով. և նորանց երեսները դէպի
իրար լինեն. քերովբէների երես-
ները դէպի քաւութիւնը լինեն։
Եւ քաւութիւնը տապանակի վե- 21
րայ պիտի դնես վերևից և տա-
պանակի մէջ դնես այն վկայու-
թիւնը՝ որ քեզ պիտի տամ։ Եւ 22
ես կ'հանդիպեմ այն տեղ և կ'խօ-
սեմ քեզ հետ, քաւութեան վե-
րայից վկայութեան տապանակի
վերայ եղած երկու քերովբէների
մէջտեղից ամեն ինչ որ պիտի
պատուիրեմ քեզ Իսրայէլի որդոց
համար։

Եւ Սատիմի փայտից մի սեղան 23
շինես. նորա երկայնութիւնը եր-
կու կանգուն՝ և նորա լայնու-
թիւնը մէկ կանգուն՝ և նորա
բարձրութիւնը մէկ կանգուն ու
կէս պիտի լինի։ Եւ մաքուր ո- 24
սկով պատես. և նորա շուրջը մի
ոսկի շրջանակ շինես։ Եւ նորան 25
շուրջանակի մէկ թիզ ոլորտ շի-
նես. և ոլորտին շուրջանակի մի
ոսկի շրջանակ շինես։ Եւ նորան 26
չորս ոսկի օղակ շինես, և այն օ-
ղակները դնես անկիւնին նորա
չորս ոտքի մօտ։ Օղակները ոլոր- 27

տին ցողերի տեղերը կցուած պիտի
լինին, որ սեղանը վեր առնուի։
28 Եւ ձողերը Սատիմի փայտից շի-
նես, և նորանց ոսկով պատես.
և սեղանը նորանցով պիտի վեր
29 առնուի. Եւ շինիր նորա սկու-
տեղները՝ և նորա խնկամաններն
և բաժակները ու սկաւառակնե-
րը, որ նորանցով թափելու նուէր
մատուցուի. նորանց մաքուր ա-
30 կուց շինես։ Եւ սեղանի վերայ
առաջաւորութեան հացը դնես
միշտ իմ առջև։
31 Եւ մաքուր ոսկուց մի աշտա-
նակ շինես. Ճախարակեայ պիտի
շինուի աշտանակը, նորա բունը՝
ճիւղերը՝ սկահներն՝ գնդակները
32 և ծաղիկները իրանից լինին։ Եւ
նորա կողերից վեց ճիւղեր դուրս
գան. երեք ճիւղը աշտանակի մէկ
կողմից, և երեք ճիւղը աշտա-
33 նակի միւս կողմից. Երեք նշաձև
սկահ մէկ ճիւղի վերայ գնդա-
կով և ծաղիկով, և երեք նշաձև
սկահ միւս ճիւղի վերայ գնդա-
կով և ծաղիկով, այսպէս լինին
աշտանակից ելած վեց ճիւղերը։
34 Եւ աշտանակի վերայ չորս նշաձև
սկահ ընդ իրանց գնդակներովին
35 ու ծաղիկներովը. Եւ երկու ճիւ-
ղի տակը իրանից մէկ գնդակ և
երկու ճիւղի տակը իրանից
մէկ գնդակ և երրորդ երկու ճիւ-
ղի տակը իրանից մէկ գնդակ.
այսպէս այն վեց ճիւղերին որ
դուրս են գալիս աշտանակից։
36 Նորանց գնդակներն ու ճիւղերը
իրանց լինին, ամենը ճախարակ-
եայ լինի մէկ կտոր մաքուր ոս-
37 կուց։ Եւ նորա ճրագները եօթը
շինես. և նորա ճրագները վերան
դնեն, և լոյս տայ դէպի առջևի
38 կողմը։ Եւ նորա մխելիները և
նորա բաղմոցկալները մաքուր ոս-
39 կուց պիտի լինին։ Մէկ տաղանդ
մաքուր ոսկուց պիտի շինուի նո-
40 րան բոլոր այս գործիքներովը։ Եւ նա-
յիր որ լեռան մէջ քեզ ցոյց տր-
ուած օրինակի պէս շինես։

ԳԼ. ԻԶ

1 Եւ խորանը շինես տասը վերա-
գոյրներով մանուած բուրակ քթա-
նից և կապուտակից և ծիրանե-
գոյնից և կրկնակի կարմիրից.
Ճարտար աստղնագործ շինես նո-
րանց քերովբէներով։ Մէկ վերա- 2
գոյրի երկայնութիւնը քսանութը
կանգուն՝ և մէկ վերագոյրի լայ-
նութիւնը չորս կանգուն լինի.
մէկ չափ լինի բոլոր վերագոյրնե-
րի համար։ Հինգ վերագոյրները 3
իրար կցուած, և հ— հինգ վա-
րագոյրները իրար կցուած։ Եւ 4
կապուտակեայ օղակներ շինես.
մէկ վերագոյրի եզերքի վերայ կըց-
ուածքի ծայրի մօտ ծայրի վերա-
գոյրի եզերքին. և այսպէս անես
երկրորդ կցուածքին։ Հիսուն օ- 5
ղակ շինես մէկ վերագոյրի վերայ,
և հիսուն օղակ շինես միւս կըց-
ուածքի մօտ եղած վերագոյրի
ծայրին. օղակները իրար դէմ ու
դէմ լինին։ Եւ հիսուն ոսկի ճար- 6
մանդներ շինես. և վերագոյրները
ճարմանդներովը կոճակես, որ մէկ
խորան դառնայ։
Եւ վրանի համար այծի մազի 7
վերագոյրներ շինես խորանի վե-
րայ. տասն ու մէկ վերագոյր շի-
նես նորանց։ Մէկ վերագոյրի 8
երկայնութիւնը երեսուն կանգուն՝
և մէկ վերագոյրի լայնութիւնը
չորս կանգուն. մէկ չափ լինի տասն
ու մէկ վերագոյրների համար։ Եւ 9
հինգ վերագոյրները առանձին կը-
ցիր, և վեց վերագոյրները առան-
ձին. և վեցերորդ վերագոյրը խո-
րանի առջևի կողմից երկապատիկ
անես։ Եւ հիսուն օղակներ շի- 10
նես մէկ վերագոյրի եզերքի վե-
րայ կցուածքի ծայրի մօտ և հի-
սուն օղակներ միւս կցուածքի
մօտ եղած վերագոյրի եզերքի վե-
րայ։ Եւ պղնձի հիսուն ճարմանդ- 11
ներ շինես, և ճարմանդները օ-
ղակներին անցնես, և վրանը կո-
ճակես, որ մէկ լինի։ Եւ վրանի 12
վերագոյրներից աւելորդ մնացա-
ծը՝ այն վերագոյրի աւելցած
կէսը՝ խորանի ետևիցը կախուի։
Եւ մէկ կանգունը այս կողմից և 13
մէկ կանգունը միւս կողմից վրանի
վերագոյրների երկայնութիւնից
աւելցածը՝ խորանի կողքերովը

կախուած մնայ՝ նորան այս կողմից և այն կողմից ծածկելու հա-
14 մար. Եւ վրանի համար կարմիր ներկուած խոյի մորթերից ծած-
կոց շինես, և թէհաշի մորթերից մի ծածկոց էլ նորա վերայով:
15 Եւ խորանի համար տախտակ-
ները Սատիմի փայտից շինես՝
16 կանգնաւոր: Մէկ տախտակի եր-
կայնութիւնը տասը կանգուն՝ և
մէկ տախտակի լայնութիւնը մէկ
17 ու կէս կանգուն: Ամեն մէկ
տախտակին երկու սփռիչ լինին
իրար ագուցիկ. խորանի բոլոր
տախտակներին այսպէս շինես:
18 Եւ խորանի տախտակները շինես.
դէպի հարաւ՝ հարաւային կողմին
19 քսան տախտակ: Եւ քառասուն
արծաթի խարիսխ շինես քսան
տախտակների տակ. մէկ տախ-
տակի տակ երկու խարիսխ իր եր-
կու սփռիչների համար և միւս
տախտակի տակ երկու խարիսխ
20 իր երկու սփռիչների համար: Եւ
խորանի միւս կողմի համար հիւ-
սիսային կողմին՝ քսան տախտակ,
21 Եւ նորանց քառասուն արծաթի
խարիսխները, մէկ տախտակի
տակ երկու խարիսխ՝ և միւս տախ-
22 տակի տակ երկու խարիսխ: Եւ
խորանի ետևի կողմին դէպի ա-
րևմուտքը վեց տախտակ շինես:
23 Եւ խորանի անկիւններին՝ ետևի
կողմին երկու տախտակ շինես:
24 Եւ տակի կողմից զոյգ լինին և
վերևումը բոլորովին միացած լի-
նին մէկ օղակով. երկուսն էլ այս-
պէս լինին. նորանք երկու ան-
25 կիւնների համար լինին. Եւ ութը
տախտակ լինին, և նորանց ար-
ծաթի խարիսխները տասնուվեց
խարիսխ. մէկ տախտակի տակ
երկու խարիսխ՝ և միւս տախտա-
26 կի տակ երկու խարիսխ լինի: Եւ
Սատիմի փայտից նիգեր շինես.
խորանի մէկ կողմի տախտակների
27 համար հինգ, Եւ խորանի միւս
կողմի տախտակների համար հինգ
նիգ, և դէպի արևմուտք խորանի
ետևի կողմին տախտակների հա-
28 մար հինգ նիգ. Եւ միջի նիգը,
այսինքն տախտակների միջինը մէկ
ծայրից միւս ծայրը պիտի անցնէ:

Եւ տախտակները ոսկով պատես, 29
և նորանց օղակները՝ այսինքն նի-
գերի անցնելու տեղերը ոսկուց
շինես, և նիգերը ոսկով պատես:
Եւ կանգնեցնես խորանը իր ձե- 30
ւի համեմատ, ինչպէս որ լեռան
վերայ քեզ ցոյց տրուեցաւ:
Եւ կապուտակից և ծիրանեգոյ- 31
նից՝ և կրկնակի կարմիրից և ման-
ուած բարակ քթանից մի վա-
րագոյր շինես. նա ճարտար ոս-
տայնագործ շինուի քերովբէնե-
րով: Եւ նորան Սատիմի փայտից 32
չորս ոսկեպատ սիւների վերայ
դնես. նորանց բևեռները ոսկի լի-
նին. չորս արծաթի խարիսխների
վերայ: Եւ վարագոյրը ճարմանդ- 33
ների տակից կախես, և այնտեղ
վարագոյրի ներսի կողմը տանես
վկայութեան տապանակը. և վա-
րագոյրը ձեզ համար բաժանէ սրբ-
բութիւնի և սրբութեանց սրբու-
թիւնի մէջտեղը: Եւ քաւութիւ- 34
նը վկայութեան տապանակի վե-
րայ՝ սրբութեանց սրբութիւնումը
դնես: Եւ վարագոյրի դուրսի կող- 35
մումը սեղանը, և սեղանի դիմա-
ցը խորանի հարաւային կողմում
աշտանակը դնես, և սեղանը հիւ-
սիսային կողմումը դնես:
Եւ վրանի դրան համար մի սր- 36
բահակ շինես կապուտակից և ծի-
րանեգոյնից և կրկնակի կարմիրից
և մանուած բարակ քթանից՝
նկարագործ: Եւ դրան սրահակի 37
համար Սատիմի փայտից հինգ
սիւն շինես, և նորանց ոսկով պա-
տես, նորանց բևեռները ոսկի լի-
նին. և նորանց համար հինգ պղ-
ղինձի խարիսխ ձուլես:

ԳԼ. ԻԷ

Եւ զոհի սեղանը Սատիմի փայ- 1
տից շինես, երկայնութիւնը հինգ
կանգուն և լայնութիւնը հինգ
կանգուն, սեղանը քառակուսի
լինի, և նորա բարձրութիւնը ե-
րեք կանգուն: Եւ նորա եղջիւր- 2
ները նորա չորս անկիւնների վե-
րայ շինես. նորա եղջիւրներն իրա-
նից լինին. և նորան պղնձով պա-
տես: Եւ նորա մոխիրը ժողովելու 3

համար նորա թաղարները՝ և նորա թիակները՝ և նորա կանքերը՝ և նորա մսահանները՝ և նորա կրակարանները շինես. նորա բոլոր գործիքները պղնձից շինես։ 4 Եւ նորա մի ցանցակերպ գոհատարակ շինես պղնձից. և ցանցի վերայ չորս պղնձի օղակ շինես՝ նորա 5 չորս անկիւնների վերայ։ Եւ նորան դնես սեղանի շրջանակի տակ ներքևիցը, որ ցանցը մինչև սեղանի կէսը լինի։ 6 Եւ սեղանի համար ցողեր շինես, ձողերը Սատիմի փայտից. և նորանց պղնձով պատես։ 7 Եւ նորա ձողերը օղակների մէջ պիտի անցնուին. և ձողերը սեղանի երկու կողքերին լինին՝ նորան վեր առնելու համար։ 8 Մէջը դարատակ և տախտակներից շինես նորան. ինչպէս որ լեառնումը քեզ ցոյց տուաւ, այնպէս պիտի շինեն։ 9 Եւ խորանի սրահը շինես հարաւային կողմի համար, սրահի տատպատները մանուածք բարակ քթանից մէկ կողմի երկայնութիւնը հարիւր կանգուն։ 10 Եւ նորա քսան սիւները և նորանց քսան խարիսխները պղնձից, և սիւների բևեռները և նորանց ճանկերը արծաթից լինին։ 11 Նոյնպէս հիւսիսային կողմի համար երկայնութեամբը տատպատները հարիւր կանգուն երկայն. և նորա քսան սիւները և նորանց քսան խարիսխները պղնձից, սիւների բևեռները և նորանց ճանկերը արծաթի լինին։ 12 Եւ սրահի լայնութեամբը արևմտեան կողմին տատպատները չորս կանգուն նորանց սիւները տասը՝ և նորանց խարիսխները տասը լինին։ 13 Եւ սրահի լայնութեամբը արևելեան կողմին դէպի արևելք չորս կանգուն։ 14 Եւ մէկ կողքի տատպատները տասնհինգ կանգուն. նորանց սիւները երեք՝ և նորանց խարիսխները երեք։ 15 Եւ միւս կողքին տատպատները տասնհինգ կանգուն. նորանց սիւները երեք՝ 16 և նորանց խարիսխները երեք։ Եւ սրահի դրան համար մի նկարագործ վարագոյր կապուտակից՝ և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից և մանած բարակ քթանից քանի կանգուն, նորանց սիւները չորս՝ և նորանց խարիսխները չորս։ Սրահի շուրջանակի եզած 17 բոլոր սիւները արծաթի կարթերով և նորանց բևեռները արծաթից՝ և նորանց խարիսխները պղնձից լինին։ Սրահի երկայնութիւնը հարիւր կանգուն՝ և լայնութիւնը հարիւր կանգուն՝ և բարձրութիւնը հինգ կանգուն. — — և պատնէշը մանած բարակ քթանից և նորանց խարիսխները պղնձից լինին։ Խորանի բոլոր գործիքները իր ամեն պաշտօնի համար՝ և նորա բոլոր ցիցերը՝ և սրահի բոլոր ցիցերը պղնձից լինին։

Եւ դու պատուիրիր Իսրայէլի որդոցը որ քեզ մօտ մաքուր ձեթ ուած ձիթապտղի իւղ բերեն լուսոյ համար, որ միշտ ճրագ վառուի։ Ահարոնը և նորա որդիները ժողովքի խորանումը վկայութեան առջև վարագոյրի դրսի կողմում իրիկուանից մինչև առաւօտ Եհովայի առջև վառէ — կարգադրեն նորան. — նորանց համար յաւիտենական կանոն ըլէ իրանց ազգերի մէջ Իսրայէլի որդոց կողմանէ։

ԳԼ. ԻԸ

Եւ դու քեզ մօտ մօտեցրու քո եղբայր Ահարոնին՝ և նորա որդիները նորա հետ՝ Իսրայէլի որդոց միջից, որ ինձ քահանայութիւն անեն, Ահարոնին՝ և Ահարոնի որդիները՝ Նադաբին և Աբիուդին՝ Եղիազարին և Իթամարին։ Եւ քո եղբայր Ահարոնի համար սուրբ զգեստներ շինես պատուոյ և փառաց համար։ Եւ դու խօսիր բոլոր իմաստուն միտք ունեցողների հետ, որոնց ես իմաստութեան հոգի լցուցի, որ Ահարոնի համար զգեստները շինեն՝ նորան սրբելու համար՝ որ ինձ քահանայութիւն անէ։ Եւ սորանք են այն զգեստները, որ պիտի շինեն. բանջապանակ, և եփուդ և պատմուճան և նկարագործ շապիկ, խոյր և գօտի, և սուրբ ըզ-

գեաներ շինեն քո եղբայր Ահարոնի և նորա որդիների համար, որ ինձ քահանութիւն անեն։
5 Եւ նորանք առնեն ոսկին և կապուտակը և ծիրանեգոյնը և կրկնակի կամիրը և բարակ քթանը.
6 Եւ շինեն եփուդը ոսկի թելից կապուտակից և ծիրանեգոյնից, կրկնակի կարմիրից և մանած բարակ քթանից ճարտար ատաղձագործ։
7 Նորա երկու թիկունքները կցուած պիտի լինին նորա երկու ծայրերին, որ կոճակուին։
8 Եւ եփուդի վերայ եղած ժապաւէնը՝ նորա շինուածքի պէս նոյն բանից լինի. ոսկուց, կապուտակից և ծիրանեգոյնից, և կրկնակի կարմիրից և մանած բարակ քթանից։
9 Եւ երկու եղինդաքարեր առնես, և նորանց վերայ փորագրես Իսրայէլի որդոց անունները։
10 Նորանց անունների վեցը մէկ քարի վերայ՝ և մնացած վեց անունները միւս քարի վերայ՝ և նորանց ծնունդների համեմատ.
11 Ակնագործի արուեստով կնիք քանդակողի պէս փորագրես այն երկու քարերի վերայ Իսրայէլի որդոց անունները, շրջապատած ոսկի խորշերի մէջ
12 դնես նորանց։ Եւ այն երկու քարերը եփուդի թիկունքների վերայ դնես, որ Իսրայէլի որդոց համար յիշատակ քարեր լինին. և Ահարոն նորանց անունները յիշատակի համար իր երկու ուսերի
13 վերայ կրէ Եհովայի առջև։ Եւ
14 ոսկուց խորշեր շինես։ Եւ մաքուր ոսկուց երկու շղթաներ շինիր, ոլորած հիւսակէն գործ շինես, և հիւսուած շղթաները խորշերին անցկացնես։
15 Եւ դատաստանի լանջապանակը ճարտար ատաղձագործ շինես՝ եփուդին շինուածքի պէս շինես, ոսկուց կապուտակից և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից և մանած բարակ քթանից շինես
16 նորան։ Քառակուսի լինի երկուտակ ծալուած. նորա երկայնութիւնը մէկ թիւ՝ և նորա լայնութիւնը մէկ թիւ։
17 Եւ ընդելուզիր նորա վէջ ակունքների ընդելուզուածքի համեմատ՝ չորս կարգ քարեր. սարդիոնի, տոպազիոնի և զմրուխտի կարգը՝ առաջին կարգը լինի։ Եւ երկրորդ կարգը՝ 18
կարկեհան, շափուղայ և անդամանդ. Եւ երրորդ կարգը գոճազմ, 19
ակատ և սուսակ. Եւ չորրորդ 20
կարգը՝ ոսկեքար, եղինդաքար, և յասպիս. ոսկի խորշերի մէջ լինին ընդելուզուած։ Եւ քարերը 21
Իսրայէլի որդոց անունների պէս տասներկու լինին, նորանց անունների համեմատ. քանդակուած կնիքի պէս ամեն մէկը իր անունովը տասներկու ցեղին համեմատ։ Եւ լանջապանակի վերայ 22
ոլորուած շղթաներ շինիր՝ հիւսակէն գործ՝ մաքուր ոսկուց։ Եւ 23
լանջապանակի վերայ երկու ոսկի օղակներ շինիր և այն երկու օղակները լանջապանակի երկու ծայրերի վերայ դնես։ Եւ այն եր- 24
կու հիւսուած ոսկի շղթաները՝ լանջապանակի ծայրերին եղած երկու օղակներին անձկացնես. Եւ այն երկու հիւսուած շղթա- 25
ների միւս երկու ծայրերը՝ այն երկու խորշերին անցկացնես. և եփուդի թիկունքների վերայ դնես առջևի կողմից։ Եւ եր- 26
կու ոսկի օղակներ շինես, և լանջապանակի ներսի կողմից՝ եփուդի կցուած եզերքի երկու ծայրերին դնես նորանց։ Եւ երկու ոսկի 27
օղակներ Էլ շինես, և նորանց դնես եփուդի երկու ուսերին տակից, նորա առջևի կողմի կցուածքի մօտ՝ եփուդի ժապաւէնի վերայից անցկացնես։ Եւ լանջապա- 28
նակը կապեն իր օղակներից՝ կապուտակից ընտիր լարով եփուդի օղակներին, որ եփուդի ժապաւէնի վերայ լինի, և լանջապանակը եփուդից չդժուարանայ։
Եւ Ահարոնը Իսրայէլի որդոց ա- 29
նունները դատաստանի լանջապանակով միշտ իր սրտի վերայ կրէ, երբոր մտնէ սրբարանը, նորանց Եհովայի առջև յիշելու համար։
Եւ դատաստանի լանջապանակի 30
մէջ Ուրիմը ու Թումիմը դնես. և Ահարոնի սրտի վերայ լինին, երբոր Եհովայի առջև գնայ. և Ահարոնը միշտ իր սրտի վերայ կրէ

Իսրայէլի որդոց պատասխանը ԵՀովայի առջև.

31 Եւ եփուդի պատմուճանը բալո-
32 րովին կապուտակից շինես։ Եւ
նորա մէջտեղը լինի նորա գլուխ
անցնելու ճեղքուածքը. ճեղք-
ուածքի շուրջը մի օձիք լինի գը-
րած ճեղքուածքի պէս հիւս-
33 ուած, որ չպատառուի։ Եւ նորա
քղանցքների վերայ կապուտակից
և ծրանեղոյնից և կրկնակի կար-
միրից նուռներ շինես՝ քղանց-քների
վերայ շուրջանակի. և նորանց
մէջտեղը շուրջանակի ոսկի զան-
34 գակներ։ Պատմուճանի քղանց-քի
վերայ շուրջանակի մի ոսկի զան-
գակ և մի նուռ, մի ոսկի զան-
35 գակ և մի նուռ լինի։ Եւ Ա.Հա-
րոնի վերայ լինի պաշտօնի հա-
մար. և նորա ձայնը լսուի ԵՀո-
վայի առջև մտնելիս և ելնելիս,
որ չմեռնէ։

36 Եւ մաքուր ոսկուց մի թիթեղ
շինես, և նորա վերայ կնիք քան-
դակողի պէս փորագրես *ԴՕՂԵՇ
37 ԼԷ ԵՀովայ։ Եւ նորան անցկացնես
մի կապուտակ ժապաւէնի վերայ,
որ խոյրի վերայ դրուի. խոյրի վե-
38 րևի առջևի կողմին լինի։ Եւ Ա-
հարոնի ճակատի վերայ լինի, որ
Ա.Հարոնը կրէ. Իսրայէլի որդոց
նուիրած բոլոր սուրբ ընծաների
անօրէնութիւնը միշտ իր ճակատ
վերայ լինի, որ նորանք ընդունե-
լի լինին ԵՀովայի առջև։

39 Եւ շապիկը բարակ քթանից,
և խոյրը բարակ քթանից շինես և
գօտին հիւսակէն գործ շինես։

40 Եւ Ա.Հարոնի որդոց համար շա-
պիկներ շինես, և նորանց համար
գօտիներ շինես. և պատուոյ և
փառաց համար նորանց սպասուո-
41 ներ շինես։ Եւ նորանք քո եղ-
բայր Ա.Հարոնին՝ և նորա հետ նո-
րա որդոցը հագցնես. և նորանց
օծես, և նորանց ձեռքերը լցնես,
և սրբես նորանց՝ որ ինձ քահա-
42 նայութիւն անեն։ Եւ նորանց
համար կտաւից անդրավարտիներ
շինես մարմնոյ մերկութիւնը ծած-
կելու համար. մէջքից մինչև ծնն-

*սուրբ ԵՀովային։

կերը լինին։ Եւ Ա.Հարոնի և նորա 43
որդոց վերայ լինին երբոր ժողով-
քի խորանը մտնեն, կամ երբոր
սեղանին մօտենան սրբարանու-
մը պաշտելու համար, և անօ-
րէնութիւն չկրեն որ չմեռնեն.
սա յաւիտենական կանոն լինի
նորա համար և նորանից յետոյ
նորա սերունդի համար։

ԳԼ. ԻԹ

Եւ սա է այն բանը որ նորանց 1
պիտի անես, որ նորանց սրբես
ինձ համար քահանայ լինելու.
արջառներից մէկ զուարակ և եր-
կու անարատ խոյ առ, Եւ ան- 2
խմոր հաց՝ և իւղով զանգուած
անխմոր շօթեր՝ և իւղով օծուած
անխմոր լաւաշներ. ցորենի բա-
րակ ալիւրից շինես սորանց։ Եւ 3
մի սակառի մէջ դնես և մատու-
ցանես նորանց սակառի մէջ, և
զուարակն ու երկու խոյերը։ Եւ 4
Ա.Հարոնին և նորա որդիներին ժո-
ղովքի խորանին դրանը մօտեցնես,
և նորանց ջրով լուանաս։ Եւ ըզ- 5
գեստները առնես և հագցնես Ա-
հարոնին շապիկը և եփուդի պատ-
մուճանը և եփուդը և լանջապա-
նակը. և եփուդի ժապաւէնով
գօտևորես նորան։ Եւ խոյրը նո- 6
րա գլխին դնես, և խոյրի վերայ
սուրբ պսակը դնես։ Եւ օծման 7
իւղը առնես. և նորա գլխի վե-
րայ թափես և օծես նորան։ Եւ 8
նորա որդիները մօտեցնես, և նո-
րանց շապիկներ հագցնես. Եւ 9
գօտիներով գօտևորես նորանց այ-
սինքն Ա.Հարոնին և նորա որդի-
ներին, և նորանց գլխներին ա-
պարօշներ փաթաթես. և քահա-
նայութիւնը նորանցը լինի յաւի-
տենական կանոնով։ Եւ այսպէս
լցրու Ա.Հարոնի ձեռքը և նորա
որդիների ձեռքը։

Եւ զուարակը ժողովքի խորա- 10
նի առջև մօտեցնես, և Ա.Հարոնն
և նորա որդիներն իրանց ձեռքը
զուարակի գլխին դնեն։ Եւ մոր- 11
թես զուարակը ժողովքի խորանի
դրանը ԵՀովայի առջև։ Եւ զուա- 12
րակի արիւնից առնես և մատու-

վըդ սեղանի եղջիւրներին քսես.
և ճաշ-ի բոլոր արիւնը սեղանի
13 տակին թափես: Եւ առնես այն
ամեն ճարպը, որ ծածկում է փո-
րոտիքը և լեարդի վերայի թա-
ղանթը՝ և երկու երիկամունքը և
նորանց վերայի եղած ճարպը և
14 սեղանի վերայ սրբես: Բայց դու-
րսի կաշին և միսը, և նորա մորթը՝ և
նորա աղբը՝ բանակից դուրս կը-
րակով սրբես. մեղքի պատարա-
գէ է սա:

15 Եւ խոյերի մէկն առնես, և Ա-
հարոնը և նորա որդիքը իրանց
16 ձեռքերը խոյի գլխին դնեն: Եւ
այն խոյը մորթես, և նորա ար-
իւնն առնես, և սեղանի վերայ
17 շուրջանակի սրսկես: Եւ խոյը կը-
տոր կտոր անես, և լուանաս նո-
րան փորոտիքը և նորա ոտքերը,
և նորանց նորա կտորների և գլխի
18 վերայ դնես: Եւ բոլոր խոյը սո-
րես սեղանի վերայ. սա ողջակէզ
է Եհովայի համար. անուշահոտ
պատարագ է Եհովային:

19 Եւ միւս խոյն առնես. և Ա-
հարոնը և նորա որդիքը իրանց ձեռ-
20 քերը խոյի գլխին դնեն: Եւ խոյը
մորթես, և նորա արիւնից առ-
նես, և քսես Ահարոնի ականջի
ցլիկին՝ և նորա որդոց աջ
ականջների ցլիկին և նորանց
աջ ձեռքի մեծ մատին և նորանց
աջ ոտքի մեծ մատին, և ճաշ-ի
արիւնը սեղանի վերայ շուրջա-
21 նակի սրսկես: Եւ սեղանի վերայ
եղած արիւնից և օծման իւղից
առնես, և Ահարոնի վերայ և նո-
րա պգեստների վերայ և նորա
հետ իր որդոց վերայ՝ և իր որդոց
պգեստների վերայ սրսկես. և նա
ու նորա պգեստները և նորա հետ
իր որդիները և իր որդոց պգեստ-
22 ները սուրբ կ'լինին: Եւ խոյից
առնես ճարպը և դմակը՝ և փո-
րոտիքը ծածկող ճարպը՝ և լեար-
դի վերայի թաղանթը՝ և երկու ե-
րիկամունքը և նորանց վերայի
ճարպը, և աջ ղիւաը, (վասն զի
23 սա ձեռք լցնելու խոյն է:) Եւ
մէկ պան հացի և մէկ իւղով
հացի շօթ և մէկ լաւաշ ա-ն-ե-ա
այն անխմոր հացի սակաւից որ
եհովայի առջևն է, և ամենը Ա- 24
հարոնի ձեռքին և նորա որդոց
ձեռքին դնես, և նորանից եհո-
վայի առջև երերացնելու ընծայ
երերացնես: Եւ նորանց ձեռքից 25
առնես նորանց և սեղանի վերայի
ողջակէզի վերայ սրբես եհովայի
առջև անոյշ հոտի համար. սա
պատարագ է եհովային: Եւ Ա- 26
հարոնի ի-ե-ւ-ը լցնելու խոյից՝ եր-
բուծն առնես, և նորան եհովայի
առջև երերացնելու ընծայ մատուց-
ցանես. և դա քո բաժինը լինի:
Եւ Ահարոնի համար և նորա որ- 27
դոց համար ի-ե-ւ լցնելու խոյից
երերացնելու երբուծը և բարձրաց-
նելու ղիւաը սրբես: Եւ յաւիտե- 28
նական կանոն գառնայ Ահարոնի
և նորա որդոց համար Իսրայէլի
որդոց կողմանէ. վասն զի սա
բարձրացնելու ընծայ է, և բարձ-
րացնելու ընծայ պիտի լինի Իս-
րայէլի որդոց կողմանէ իրանց խա-
զաղութեան զոհերից բուն իրանց
բարձրացնելու ընծան եհովայի
համար:

Եւ Ահարոնի սուրբ զգեստները 29
իրանից յետոյ իր որդոցը լինին
նորանցով օծուելու և նորանցով
ձեռք լցուելու համար: Եօթը օր 30
հագնէ նորանց իր որդիներից իր
փոխարէնը լինող քահանան, որ
արքատրանի մէջ պաշտօն կատարե-
լու համար ժողովքի խորանը կը
մտնէ: Եւ ձեռք լցնելու խոյը 31
առնես՝ և նորա միսը եփես սուրբ
տեղ. Եւ Ահարոնը և նորա որ- 32
դիքը ժողովքի խորանի դրանը ու-
տեն խոյի միսը՝ և սակաւի մէջի
հացը: Եւ նորանք ուտեն այն 33
բաները՝ որ իրանց ձեռք լցնելու
— սրբուելու համար նորանցով
քաւութիւն եղաւ, և օտարա-
կան պիտի չուտէ. վասն զի նո-
րանք սուրբ են: Եւ եթէ ի-ե-ւ 34
լցնելու մսից և հացից մինչև
առաւօտը մնայ, այս աւելցածը
կրակով սրբես. նա պիտի չուտուի
վասն զի սուրբ է:

Եւ Ահարոնին և նորա որդոցը 35
այսպէս անես, ինչպէս որ բոլորը
քեզ պատուիրել եմ. եօթը օր-
ուան մէջ նորանց ձեռքերը լցնես:

36 Եւ օրը մէկ զուարակ մեղքի պա-
տարագ անես քաւութեան հա-
մար. և սեղանի համար քաւու-
թիւն անես նորան մաքրելով և
37 նորան օծես սրբելու համար։ Եօ-
թը օր քաւութիւն անես սեղանի
համար, և նորան սրբես, որ սե-
ղանը սրբութիւնը լինի ամեն
ինչ որ սեղանին դպչի սուրբ պի-
տի լինի։
38 Եւ սա է որ սեղանի վերայ պի-
տի անես. միշտ ամեն օր մէկ
39 տարեկան երկու գառինք. Մէկ
գառը առաւօտանց մատուցա-
նես, և միւս գառը իրիկուայ
40 դէմ մատուցանես։ Եւ մէկ տա-
սանորդ բարակ ալիւր հիմնի
քառորդ ձեթուած ձեթով զան-
դուած, և մէկ հիմնի քառորդ
գինի թափելու նուէր մատուցա-
41 նես մէկ գառի հետ։ Եւ միւս
գառը իրիկուայ դէմ զոհես. ա-
ռաւօտեան հացի ընծայի պէս՝ և
նորա թափելու նուէրի պէս ա-
նես նորան՝ անուշահոտ պատա-
42 րագ Եհովայի համար։ Սա ձեր
ազգերի մէջ միշտանջենաւոր ողջա-
կէզ լինի Եհովայի առջև մուտքի
դրանը, ուր ձեզ կը
հանդիպեմ՝ քեզ հետ խօսե-
43 լու։ Եւ այն տեղ կ'հանդիպեմ
Իսրայէլի որդոցը, և խորանը իմ
44 փառքովը սուրբ կ'լինի։ Եւ ժո-
ղովքի խորանն ու սեղանը կ'սրբեմ.
Ա.Հարոնին և նորա որդիներին էլ
կ'սրբեմ, որ ինձ քահանայութիւն
45 անեն։ Եւ Իսրայէլի որդոց մէջ
կ'բնակեմ, և նորանց Աստուած
46 կ'լինեմ։ Եւ կ'գիտենան, թէ ես
եմ նորանց Եհովայ Աստուածը,
որ Եգիպտոսի երկրից հանեցի
նորանց, որ նորանց մէջ բնակեմ
ես նորանց Եհովայ Աստուածը։

ԳԼ. Լ

1 Եւ խունկ ծխելու սեղան շինես.
սաւիսի փայտից շինես նորան.
2 Նորա երկայնութիւնը մէկ կանգ-
ուն և նորա լայնութիւնը մէկ
կանգուն, քառակուսի լինի, և
նորա բարձրութիւնը երկու կանգ-
ուն. նորա եղջիւրները նրանից
լինին։ Եւ նորան մաքուր ոսկով 3
պատես նորա մակարդակը նորա
պատերը շուրջանակի և նորա եղ-
ջիւրները և շուրջանակի ոսկի պը-
սակ շինես նորա համար։ Եւ նո- 4
րա համար երկու ոսկի օղակներ
շինես. պսակի տակից նորա եր-
կու կողքերին երկու կողմերին վե-
րայ շինես, որ նորանցով նորա
վեր առնելու համար ձողերի տե-
ղեր լինեն։ Եւ ձողե- 5
րը Սատիմի փայտից շինես, և
նորանց ոսկով պատես, Եւ նո- 6
րան դնես այն վարագոյրի առջև,
որ վկայութեան տապանակի դէմ
է վկայութեան վերայի քաւու-
թիւնի դիմացը այն տեղ ուր ես
քեզ կ'հանդիպեմ։ Եւ Ա.Հարոնը 7
նորա վերայ անուշահոտ խունկ
ծխէ. ամեն առաւօտ ճրագները
պատրաստելիս խունկ ծխէ։ Եւ 8
Ա.Հարոնը իրիկուայ դէմ ճրագնե-
րը վառելիս խունկ ծխէ, որ Եհո-
վայի առջև միշտանջենաւոր խունկ
լինի ձեր ազգերի մէջ։ Նորա վե- 9
րայ օտար խունկ, կամ ողջակէզ,
կամ հացի ընծայ չմատուցանէք,
ոչ էլ նորա վերայ նուէր թափէք։
Եւ Ա.Հարոնը տարին մէկ անգամ 10
նորա եղջիւրների վերայ քաւու-
թիւն անէ, քաւութիւնների մեղ-
քի պատարագի արիւնով տարին
մէկ անգամ նորա վերայ քաւու-
թիւն անէ ձեր ազգերի մէջ. սա
սրբութիւնների սրբութիւն է
Եհովայի համար։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 11
հետ ասելով. Երբոր Իսրայէլի որ- 12
դոց դումարը առնելու լինես՝ ի-
րանց թուոյն նայելով, այն ժա-
մանակ նորանց ամեն մէկն իր ան-
ձի փրկանքը տայ Եհովային դա-
տելիս, որ նորանց
մէջ հարուած չլինի նորանց հաշ-
ուելիս։ Այս պիտի տան հաշուի 13
տակ ամեն մէկ անցնողը՝ կէս
սիկղ —չ—ի սրբարանի սիկղի հա-
մեմատ. մէկ սիկղը քսան կերաս
է. Եհովայի ընծան կէս սիկղ լի-
նի։ Ամեն հաշուի տակ անցնող 14
քսան տարեկանը և էլ աւելին
տայ Եհովայի ընծան։ Ոչ հարուս- 15
տը աւելի՝ և ոչ աղքատը պակաս
պիտի տայ կէս սիկղից ձեր ան-

ձերի համար քաւութիւն անելու համար Եհովային ընծայ տալիս։
16 Եւ առնես Իսրայէլի որդիներից քաւութեան արծաթը և ժողովքի խորանի պաշտօնին տաս այն, որ Եհովայի առջև յիշատակ լինի Իսրայէլի որդոցը՝ ձեր անձերին քաւութիւն անելու համար։
17 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
18 հետ ասելով. Դարձ մի պղնձի աւազան շինես լուացման համար, և նորա խարիսխն էլ պղնձի լինի. և ժողովքի խորանի և սեղանի միջտեղը դնես այն, և նորա մէջը
19 ջուր լցնես։ Եւ Ահարոնն ու նորա որդիքը իրանից ձեռքերն ու
20 ոտքերը լուանան նորանից։ Ժողովքի խորանը մտնելիս ջրով լուացուին որ չմեռնեն կամ սեղանին մօտենալիս, որ պաշտօն կատարեն և կրակով Եհովային
21 զոհ մատուցանեն։ Այսպէս իրանց ձեռքերն ու ոտքերը լուանան որ չմեռնեն. և սա իրանց համար յաւիտենական կանոն լինի, թէ իր համար և թէ իր սերունդի համար իրանց ազգերի
22 մէջ։ Եւ Եհովան խօսեց Մովսէսի
23 հետ ասելով. Առ քեզ մօտ գլխաւոր համեմներ, զուտ զմուռս հինգ հարիւր սիկղ, և նորա կէսի չափ՝ այսինքն երկու հարիւր յիսուն սիկղ անուշահոտ կինամոն, և երկու հարիւր յիսուն սիկղ ա-
24 նուշահոտ խունկեղէգն, և հինգ հարիւր սիկղ կասիայ արբատանի սիկղի համեմատ, և ձէթ հինգ
25 ձէթի իւղ. Եւ սուրբ օծման իւղ շինես այն իւղապօծի արհեստով բաղադրուած. նա սուրբ օծման
26 իւղ լինի։ Եւ նորանով օծես ժողովքի խորանը. վկայութեան տապանակը, Եւ սեղանը նորա ամեն անօթներըը. և աշտանակը և նորա գործիքները. և խունկի սեղանը,
28 Եւ ողջակէզի սեղանը իր ամեն գործիքների հետ միկ տեղ, և աւազանը և նորա խարիսխը։ Եւ
29 սրբես նորանց, որ ամենասուրբ լինեն. ինչ որ նորանց դպչէ՝ սուրբ
30 պիտի լինի։ Եւ Ահարոնին և նորա որդիներին օծես, և սուրբ անես նորանց որ ինձ համար քա-

հանութիւն անեն։ Եւ խօսա- 31
յէլի որդոց հետ խօսես՝ ասելով. Սա ինձ համար սուրբ օծման իւղ պիտի լինի ձեր ազգերի մէջ։ Մար- 32
դու մարմնի վերայ պիտի չթափուի նա, և նորա բաղադրութեան պէս նորա նմանը չշինէք. սա սուրբ է, ձեզ համար էլ սուրբ պիտի լինի։ Ով որ նորա նմանը 33
շինէ, կամ ով որ նորանից օտարականի վերայ դնէ, իր ժողովրդից պիտի կորչէ։

Եւ Եհովան ասաց Մովսէսին. 34
Առ քեզ համար անուշահոտ համեմներ, ոսկինքն ստակտէ ու եղունդն և քաղբան, այս անուշահոտ համեմները և մաքուր կրնդրուկ. ամեն համասար կշռով լինին։ Եւ նորանից խառնուրդ պի- 35
տի շինես աղուամազ մաքուր սուրբ։ Եւ նո- 36
րանից մի փոշ ձեծես շատ բարակ, և դնես ժողովքի խորանի մէջ վկայութեանը առջև, ուր ես քեզ կ'հանդիպեմ, նա ձեզ համար ամենասուրբը լինի։ Եւ այն 37
խունկը, որ շինելու ես իրան բաղադրութեան համեմատ, դուք ձեզ համար չշինէք, նա քեզ համար սուրբ պիտի լինի Եհովայի համար։ Ով որ հոտոտելու համար 38
նորա նմանը շինելու լինի, նա իր ժողովրդից պիտի կորչէ։

ԳԼ. ԼԱ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Ահա կանչեցի անունով 2
Ուրի որդի Ուրիի որդի Ղևսելին Յուդայի ցեղից։ Եւ լցրի նորան 3
Աստուծոյ Հոգով՝ իմաստութեանով և հանճարով և գիտութեանով և ամեն ճարտարութիւնով, Որ վարպետի գործեր հնարէ՝ ոսկով և արծաթով և պղնձով գործելու համար. Եւ քարեր 5
քանդակել ընդելուզանելու համար և փայտեր քանդակել՝ ամեն կերպ արհեստով գործելու համար։ Եւ ես ահա նորա հետ տուի 6
Ահիսամայի որդի Ողիաբը Դանի ցեղից. և ամեն իմաստուն սիրտ ունեցողի սրտի մէջ իմաստութիւն

դրի, որ բոլոր քեզ պատուիրածս
7 անեն. ժողովքի խորանը և վկայութեան տապանակը և նորա վերայի քաւութիւնը՝ և խորանի
8 բոլոր կարասիները, և սեղանը և նորա անօթները՝ և մաքուր աշտանակը և նորա բոլոր գործիք-
9 ները՝ և խունկի սեղանը, և ողջակիզի սեղանը և նորա բոլոր գործիքները՝ և աւազանը ու նորա
10 խարխափը, և պաշտօնի պղեստները՝ և Ահարոն քահանայի սուրբ պղեստները՝ և նորա որդոց պղեստները՝ քահանայութիւն անելու
11 համար, և օծման իւղը՝ և սրբարարանի համար անուշահոտ խունկը՝ բոլոր քեզ պատուիրածիս պէս կանեն։

12 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
13 հետ, և ասաց. Եւ դու խօսիր Իսրայէլի որդոց հետ ասելով. Անպատճառ իմ շաբաթներս պահէք. վասն զի սա մի նշան է իմ և ձեր մէջտեղը ձեր ազգերի մէջ, որ գիտենաք, թէ ես եմ Եհովան
14 ձեզ սուրբ անողը։ Ուրեմն շաբաթը պահեցէք. վասն զի նա ձեզ համար սուրբ է. ով որ նորան պղծէ անպատճառ պիտի մեռցնուի. վասն զի ամեն ով որ այն օրը մի գործ գործէ, այն անձը իր
15 ժողովրդի միջից կորչէ։ Վեց օր գործ գործուի, բայց եօթներորդ օրը հանգստութեան շաբաթը սուրբ պիտի լինի Եհովայի համար. ով որ շաբաթ օրը մի գործ գործէ, անպատճառ պիտի մեռցնուի։
16 Եւ Իսրայէլի որդիքը պիտի պահեն շաբաթը, որ շաբաթը իրանց ազգերի մէջ յաւիտենական
17 ուխտ անեն։ Նա յաւիտենական նշան է իմ և Իսրայէլի որդոց մէջ տեղը. վասն զի Եհովան վեց օրուայ մէջ առեղծից երկինքն ու երկիրը, և եօթներորդ օրը դադարեց և հանգստացաւ։

18 Եւ երբոր Մովսէս լեռան վերայ Սինա խօսելը վերջացրեց, վկայութեան երկու տախտակները տուաւ նորան՝ քարի տախտակներ Աստուծոյ մատովը գրուած։

ԳԼ. ԼԲ

Եւ ժողովուրդը տեսաւ, որ Մովսէս ուշացաւ լեռնիցն իջնելու և Ահարոնի մօտ ժողովուեցաւ ժողովուրդը և ասացին նորան. Վեր կաց մեզ համար աստուածներ շինիր որ մեր առջև գնան. վասն զի այդ Մովսէս մարդը, որ մեզ Եգիպտոսի երկրից հանեց, չգիտենք թէ ինչ եղաւ նորան։ Եւ Ահարոն ասաց նորան. Ձեր կանանց, ձեր որդոց և ձեր աղջկերանց ականջներին եղած ոսկի օղերը հանեցէք, և ինձ մօտ բերէք։ Եւ բոլոր ժողովուրդն իրանց ականջներին եղած ոսկի օղերը հանեցին և Ահարոնի մօտ բերին։ Եւ առաւ նորանց ձեռքից և քանդակագործիով ձևակերպեց նորան և շինեց մի ձուլածոյ որթ։ Եւ ասացին. Սորանք են քո աստուածները՝ Ով Իսրայէլ, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին։ Եւ Ահարոն տեսանելով նորա առջև սեղան շինեց. և Ահարոն կանչել տուաւ՝ ասելով. Էգուց մօն է Եհովայի համար։ Եւ չհետևեալ առաւօտեան կանուխ եղան, և ողջակէզներ մատուցին, և խաղաղութեան պոհեր բերին. և ժողովուրդը նստեց ուտելու և խմելու և վեր կացան խաղալու։

Եւ Եհովան ասաց Մովսէսին. Գնա իջիր. վասն զի ապականուեցաւ քո ժողովուրդը՝ որ Եգիպտոսի երկրից հանեցիր. Շուտով խոտորեցին այն ճանապարհից, որ իրանց պատուիրեցի, իրանց համար ձուլածոյ որթ շինեցին, և նորա երկրպագութիւն արին, և նորան պոհեր մատուցին, և ասացին. Սորանք են քո աստուածները, ով Իսրայէլ, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին։ Եւ Եհովան ասաց Մովսէսին. Այս ժողովուրդը տեսայ, և ահա խստասրտանոց ժողովուրդ է նա։ Եւ հիմա թող տուր ինձ որ իմ բարկութիւնը նորանց վերայ բորբոքէ և վչացնեմ նորանց. և քեզ մեծ ազգ շինեմ։ Եւ Մովսէս իր Եհովայ Աստուծոյ առջև աղաչեց,

և ասաց . Ով Եհովայ , ինչո՞ւ քո
բարկութիւնը բորբոքէ քո ժողո-
վրդի վերայ , որ Եգիպտոսի երկ-
րէն հանեցիր մեծ զօրութիւնով
12 և զօրաւոր ձեռքով . Ինչո՞ւ հա-
մար Եգիպտացիք խօսին և ասեն .
թէ Չարութեան համար հանեց
նորանց , որ լեռներուն մէջ սպա-
նէ նորանց և երկրի երեսէն փշաց-
նէ նորանց . դարձիր քո սաստիկ
բարկութիւնէդ , և եղո աս այս
չարիքը քո ժողովրդի վերայից :
13 Յիշիր քո ծառաները՝ Աբրահա-
մին , Իսահակին և Իսրայէլին ,
որոնց դու երդուար սրբիր քո ան-
ձովը , և ասացիր նորանց . Զեր
սերունդը երկնից աստղերի պէս
պիտի շատացնեմ , և բոլոր այս
երկիրը՝ որի վերայ խօսեցի , ձեր
սերունդին պիտի տամ , ու պիտի
14 ժառանգեն յաւիտեան : Եւ Ե-
հովան եղաւ առաջ այն չարիքը ,
որ ասել էր , թէ իր ժողովրդին
պիտի անէր :
15 Եւ Մովսէսը դարձաւ և լեռա-
նէն իջաւ , և վկայութեան եր-
կու տախտակները ձեռքին էին .
տախտակները որ իրանց երկու կող-
մերէն գրուած էին . այս կողմից
և այն կողմից գրուած էին նո-
16 րանք : Եւ տախտակները Աստու-
ծոյ գործք էին , և գրուածքն Ա-
ստուծոյ գրուածք էր տախտակ-
17 ների վերայ փորագրուած : Եւ
Յեսուն լսեց ժողովրդի ձայնը գո-
ռալիս , և ասաց Մովսէսին . Պա-
տերազմի ձայն կայ բանակումը :
18 Եւ նա ասաց . Այս յաղթութեան
աղաղակի ձայն չէ , և պարտու-
թեան աղաղակի ձայն չէ . այլ
19 խաղի ձայն եմ լսում ես : Եւ ե-
ղաւ երբոր բանակին մօտեցաւ և
տեսաւ որթը և պարելը , Մովսէսի
բարկութիւնը բորբոքեց , և տախ-
տակները իր ձեռքիցը շպրտեց . և
կոտրատեց նորանց լեռան տակին :
20 Եւ առաւ նորանց շինած որթը ,
և կրակով այրեց , և մանրեց մին-
չև որ փոշի արաւ , և ջրի վերայ
ցանեց , և խմեցրեց Իսրայէլի որ-
դոց :
21 Եւ Մովսէսն ասաց Ահարոնին .
Ա՛ս ժողովուրդը ի՞նչ արաւ քեզ ,
որ նորանց վերայ բերիր այս մեծ
մեղքը : Եւ Ահարոն ասաց . Թող 22
իմ տիրոջ բարկութիւնը չբորբո-
քէ . դու գիտես այս ժողովրդին՝
որ չարին հակամէտ են . Եւ ինձ 23
ասացին . Ե՛ Մեզ համար աստ-
ուածներ շինիր որ մեր առջևը
գնան , վասն զի այս մարդը Մով-
սէսը՝ մեզ Եգիպտոսի երկրից հա-
նողը՝ չգիտենք թէ նորան ինչ ե-
ղաւ : Եւ ես ասացի նորանց . Ով 24
որ ոսկի ունի , թող հանէ . և բե-
րեն ինձ մօտ . և ես կրակը գցեցի
այն և դուրս եկաւ այս որթը :
Եւ Մովսէսը տեսաւ ժողովուր- 25
դին որ անզսպուած է , (վասն զի Ա-
հարոն անզսպուած էր արել նորանց
իրանց թշնամիների մէջ խայտա-
ռակ լինելու համար .) Եւ Մովսէ- 26
սը բանակի դրանը կանգնեց , և
ասաց . Ով որ Եհովայինն է՝ ինձ
մօտ գա . և Ղևիի բոլոր որդիքը
նորա մօտ ժողովուեցան : Եւ ա- 27
սաց նորանց . Այսպէս է ասում
Իսրայէլի Եհովայ Աստուածը .
Այնն մարդ իր սուրը թող մէջքը
կապէ , և բանակի մէջ դառնէ դուռ
անցէք գարձէք , և ամեն մարդ
իր եղբօրը , և ամեն մարդ իր ըն-
կերին . ամեն մարդ իր դրացուն
սպանէ : Եւ Ղևիի որդիքը Մով- 28
սէսի խօսքին պէս արին . և այն
օրը ժողովրդից երեք հազար մար-
դու չափ ընկան : Վասն զի Մով- 29
սէսը ասաց . Այսօր ձեր ձեռքը
լցրէք Եհովայի համար հէնց ա-
մեն մէկին իր որդու վերայ և իր
եղբօր վերայ , որ ձեր վերայ օրհ-
նութիւն տայ այսօր :
Եւ հետևեալ օրը , որ 30
Մովսէսն ասաց ժողովրդին . Դուք
մեծ մեղք գործեցիք . և հիմա ե-
հովայի մօտ պիտի ելնեմ , գուցէ
քաւութիւն անեմ ձեր մեղքի
համար : Եւ Մովսէսը եաւ դար- 31
ձաւ Եհովայի մօտ և ասաց . Ո՜հ ,
այս ժողովուրդը մեծ մեղք գոր-
ծեց , և իրենց համար ոսկի աստ-
ուածներ շինեցին : Բայց հիմա ե- 32
թէ նորանց մեղքերը ներես՝ նէ՛րէր ,
եթէ ոչ՝ աղաչում եմ ջնջիր ինձ
քո գրած գրքիցը : Եւ Եհովան 33
ասաց Մովսէսին . Ով որ ինձ դէմ

մեղանչել է, ես նորան կ'ջնջեմ
34 իմ գրքիցը։ Իսկ հիմա գնա, ժո-
ղովրդին տար այնտեղ, որ քեզ
ասացի. ահա իմ հրեշտակը կը
գնայ քո առջև. բայց այցելու-
թիւն անելու օրս՝ նորանց մեղքը
35 իրանց վերայ պիտի բերեմ։ Եւ
Եհովան զարկեց ժողովրդին, այն
իրանց շինած որթի համար որ
Ահարոնը շինեց։

ԳԼ. ԼԲ

1 Եւ Եհովան ասաց Մովսէսին.
Ելիր այստեղից դու և այն ժողո-
վուրդն որ Եգիպտոսի երկրից հա-
նեցիր, և գնա այն երկիրը՝ որի
համար երդուայ արի Աբրահամին,
Իսահակին և Յակոբին՝ ասելով.
Քո սերունդին պիտի տամ նո-
2 րան։ Եւ քո առջև մէկ հրեշտակ
կուղարկեմ. և դուրս կանեմ Քա-
նանացին, Ամորհացին, Քեւտա-
ցին, Փերեզացին, Խևացին և Յե-
3 բուսացին. Կաթ ու մեղր բղխող
երկիրը. վասն զի ես ձեր մէջը
չեմ ելնել, որովհետև դու մի
խստապարանոց ժողովուրդ ես.
մի գուցե քեզ ճանապարհումը
բնաջինջ անեմ։

4 Եւ ժողովուրդը լսեց այս վատ
խօսքը և սուգ արին. և ոչ մէկին
5 իր զարդն իր վերայ չդրաւ. Վասն
զի Եհովան ասել էր Մովսէսին.
Ասիր Իսրայէլի որդոցը. Դուք
մի խստապարանոց ժողովուրդ
էք. եթէ մէկ րոպէ ձեր մէջը ել-
նելու լինիմ, ձեզ բնաջինջ կ'ա-
նեմ. և հիմա ձեր վերայից ձեր
զարդերը վեր առէք, որ գիտե-
նամ, թէ ձեզ ինչ պիտի անեմ։
6 Եւ Իսրայէլի որդիքն իրանց զար-
դերը հանեցին Քորեբ լեռան մօտ։
7 Եւ Մովսէսն առնէ խորանը, և
բանակից դուրս բանակիցը հեռու
կանդնեցնէ նորան և նորա անու-
նը՝ ժողովքի խորան դնէ. և լինի
ամեն ով որ Եհովային խնդրէ,
բանակից դուրս գնայ ժողովքի
խորանի մօտ, որ բանակից դուրս
8 կ'լինի։ Եւ լինի որ Մովսէսը խո-
րանը գնաիս բոլոր ժողովուրդը
վեր կենայ և ամեն մէկն իր վրա-
նի դրանը կանգնէ, և Մովսէսի
ետևից մտիկ տայ նորան. մինչև
որ նա խորանը մտնէ։ Եւ կ'լինի 9
հէնց որ Մովսէսը խորանը մտաւ՝
ամպի սիւնը կ'իջնէ. և խորանի
դրանը կ'կանգնէ, և Եհովան Մով-
սէսի հետ կ'խօսէ։ Եւ բոլոր ժո- 10
ղովուրդը կ'տեսնէ ամպի սիւնը
խորանի դրանը կանգնած. և բո-
լոր ժողովուրդը վեր կ'կենայ, և
ամեն մէկն իր վրանի դրան եր-
կրպագութիւն կ'անէ։ Եւ Եհո- 11
վան կ'խօսէ Մովսէսի հետ դէմ
առ դէմ, ինչպէս մի մարդ իր բա-
րեկամի հետ կ'խօսէ. և Մ-ՎԷՍ-Ը
բանակը կ'դառնայ. բայց նորա
ծառան Ցեսէի որդի Յեսու պա-
տանին խորանի միջից պիտի չհե-
ռանայ։

Եւ Մովսէսն ասաց Եհովային. 12
Նայիր՝ դու ասում ես ինձ. Հա-
նիր այս ժողովուրդը. բայց դու
ինձ չիմացրիր, թէ ում հետ ես ինձ
հետ ուղարկելու. և դու ասա-
ցիր. Քեզ ճանաչում եմ քո ա-
նունովը, և իմ առջևը շնորհք
գտար։ Եւ հիմա ապաշում եմ, 13
եթէ քո առջև շնորհք գտայ
խնդրեմ ինձ իմացրու քո ճանա-
պարհները՝ որ ճանաչեմ քեզ, որ
քո առջև շնորհք գտնեմ. և տես
որ այս ազգը քո ժողովուրդն է։
Եւ նա ասաց. Իմ երեսը պիտի 14
գնայ, և քեզ կ'հանգստացնեմ։
Եւ Մ-ՎԷՍ-Ն ասաց նորան. Եթէ 15
քո երեսը ձեզ հետ չգնայ, մեզ այս
տեղից մի հանիր։ Եւ ինչո՞վ պի- 16
տի պիտացուի, թէ շնորհք գտայ
քո առջև ես և քո ժողովուրդը.
չէ՞ որ քո մեզ հետ գնալովը. և
այսպէս ես և քո ժողովուրդը երկ-
րի երեսի վերայ եղած բոլոր ժո-
ղովուրդներից կ'զերազանցենք։

Եւ Եհովան ասաց Մովսէսին. 17
Այս բանն էլ կ'անեմ որ ասա-
ցիր, վասն զի իմ առջև շնորհք
գտար. և ես քեզ ճանաչում եմ
քո անունովը։ Եւ նա ասաց. Ա- 18
զաչում եմ՝ քո փառքը ցոյց
տուր ինձ։ Եւ Եհովան ասաց. 19
Իմ բոլոր բարութիւնը քո առջե-
ւից պիտի անցկացնեմ, և Եհո-
վայի անունը քո առջև պիտի

կանչեմ, և որին որ ողորմեմ կ'ողորմեմ, և որի վերայ որ գթամ
20 կ'գթամ: Եւ ասաց. Դու իմ երեսը չես կարող տեսանել. վասն
զի մարդ չէ կարող ինձ տեսանել
21 և ապրել: Եւ Եհովան ասաց.
Ահա ինձ մօտ մի տեղ կայ. և
22 այդ ժայռի վերայ կանգնիր. Եւ
կ'լինի որ իմ փառքն անցկենալս, քեզ ժայռի խոռոչի մէջ կը
դնեմ, և քեզ իմ ձեռքովը կը
ծածկեմ, մինչև որ ես անցնեմ.
23 Յետոյ իմ ձեռքը վեր կառնեմ,
և իմ հետևը կ'տեսանես, բայց իմ
երեսը չի տեսանուիլ:

ԳԼ. ԼԴ

1 Եւ Եհովան ասաց Մովսէսին.
Քեզ համար երկու քարի տախտակներ կոփիր առաջիններուն պէս.
և այն տախտակներուն վերայ պիտի գրեմ այն խօսքերը, որ առաջի
տախտակներուն վերայ էին, որոնք
2 դու կոտրատեցիր: Եւ առաւօտուայ համար պատրաստ եղիր, և
առաւօտուն Սինայ լեռը ելիր
և այնտեղ լեռան գլխին իմ առ-
3 ջևը կանգնիր: Եւ ոչ մէկը վեր
ելնէ քեզ հետ, և ոչ մէկը չերևնուի բոլոր լեռան վերայ, և
ոչ էլ մի ոչխար կամ արջառ արածէ այդ լեռան առորուտը:
4 Եւ երկու քարի տախտակներ
կոփեց առաջիններուն պէս, և
Մովսէս առաւօտուն կանուխ
վեր կացաւ, և վեր ելաւ Սինայ
լեռը ինչպէս որ Եհովան իրան
պատուիրել էր. և երկու քարի
տախտակներն իր ձեռքն առաւ:
5 Եւ Եհովան ամպով իջաւ, և այն-
տեղ նորա մօտ կանգնեց. և Ե-
6 հովայի անունը կանչեց: Եւ Ե-
հովան նորա առջևէն անցաւ,
և կանչեց. Եհովայ Եհովայ Աստուած ողորմած և գթած՝ երկայնամիտ և առատ ողորմութիւնով
7 և ճշմարտութիւնով, Որ հազարների ողորմութիւն ես անում,
որ անօրէնութիւն՝ յանցանք և
մեղք ես ներում, բայց յանցաւորը բնաւ անպատիժ չես թողում,
որ հայրերի անօրէնութիւնը հա-
տուցանում ես որդիների վերայ
և որդոց որդիների վերայ՝ մինչև
երրորդ և չորրորդ ազգը: Եւ Մով- 8
սէսը շուտպելով մինչև գետինը
խոնարհեց և երկրպագութիւն ա-
րաւ, Եւ ասաց. Ով Տէր, աղա- 9
չում եմ եթէ քո առջև շնորհք
գտայ, խնդրեմ թող իմ Տէրը
մեզ հետ գնայ, որովհետև սա մի
խստապարանոց ազգ է. և ներիր
մեր անօրէնութիւնը և մեր մեղքերը, և մեզ քո ժառանգութիւնը շինիր:

Եւ Եհովան ասաց. Ահա ես 10
ուխտ եմ դնում. քո բոլոր ժողովրդի առջև այնպիսի սքանչելիքներ պիտի անեմ, որ բոլոր երկրի
վերայ և բոլոր ազգաց մէջ չեն
եղած. և բոլոր ժողովուրդը՝ որի
մէջ դու կաս, պիտի տեսանեն Եհովայի գործը. վասն զի հիանալի է այն բանը՝ որ քեզանով պիտի անեմ: Միայն պահիր ինչ 11
որ ես քեզ պատուիրում եմ այսօր. ահա պիտի քշեմ քո առջևից Ամօրհացին՝ Քանանացին՝ և
Փերեզացին և Փերեզացին՝ և Խևացին և Յեբուսացին: Զգուշացիր, 12
մի գուցե քո գնալու երկրի բնակչաց հետ ուխտ դնես, որ նա քո
մէջ որոգայթ չդառնայ. Այլ նո- 13
րանց բագիններըը կործանէք, և
նորանց կուռքերը փշրէք, և նորանց Աստարովթներըը կտրատէք: Որովհետև ուրիշ Աստու- 14
ծոյ երկրպագութիւն պիտի չանես. վասն զի Եհովայի անունը
նախանձոտ է, նախանձոտ Աստուած է նա: Մի գուցե այն երկ- 15
րի բնակչաց հետ ուխտ դնես, և
նորանք իրանց աստուածներուն ետևից գնալով պոռնկութիւն անելիս և իրանց աստուածներուն
զոհ անելիս քեզ կանչեն, և դու
նորանց զոհից ուտես. Եւ աս- 16
նես նորանց աղջիկներից քո որդիներին, և նորանց աղջիկներն իրանց աստուածներուն ետևից գնալով՝ պոռնկութիւն անելիս քո
որդիներին պոռնկութիւն անել
տան՝ իրանց աստուածներուն ետևից գնալ տալով: Ձուլածոյ աս- 17
ուածներ չշինես քեզ համար:

18 Բաղարջակերաց ծոմը պահես. եօթը օր բաղարջ ուտես ինչպէս որ պատուիրել եմ քեզ Աբիբ ամսուայ որոշ ժամանակին, վասն զի Աբիբ ամսուն Եգիպտոսից դուրս եկար։

19 Ամեն մօր արգանդը բացողը ինձ է. և քո անասուններուն մէջ ամեն արու առաջինեակն էլ թէ արջառ լինի և թէ ոչխար, էհա է։ Բայց էշի առաջինեակը գառնով փրկես. և եթէ չփրկես, այն ժամանակ նորա վիզը կոտրես։ Քո որդոց ամեն առաջինեակը փրկես. և իմ առջև ձեռնունայն չերևան։

21 Վեց օր պիտի գործես, և եօթներորդ օրը հանգստանաս. վարուցանին և հունձքին հանգըստանաս։

22 Եւ շաբաթներուն՝ այսինքն ցորենի հունձքի երախայրիներուն ծոմը. և տարուայ վերջը՝ ժողովելու ծոմը կատարես։

23 Տարին երեք անգամ քո ամեն արու զաւակը Իսրայէլի Աստուած՝ Տէր Եհովայի առջև երեւայ։

24 Վասն զի քո առջևից ազգերը պիտի քշեմ, և քո սահմանները պիտի ընդարձակեմ. ոչ ոք քո երկրին պիտի չցանկանայ, տարին երեք անգամ քո Եհովայ Աստուծոյ առջև երևալու վեր ելած ժամանակդ։

25 Իմ զոհի արիւնը խմորեալ հացի վերայ չթափես, և զատկի ծոմի զոհը մինչև առաւօտ չմընայ։

26 Քո երկրի երախայրիներուն առաջինները քո Եհովայ Աստուծոյ տունը բերես։

Ուլն իր մօր կաթի մէջ չեփես։

27 Եւ Եհովան ասաց Մովսէսին. Այս խօսքերը գրիր քեզ համար. վասն զի այս խօսքերի համեմատ ուխտ դրի քեզ հետ և Իսրայէլի հետ։

28 Եւ նա այնտեղ Տեառ Եհովայի հետ քառասուն օր և քառասուն գիշեր, հաց չկերաւ և ջուր չխըմեց. և տախտակներուն վերայ գրեց ուխտի խօսքերը՝ այսինքն տասը պատուիրանքները։

29 Եւ եղաւ երբոր Մովսէսը Սինայ լեռնէն իջնում էր, վկայութեան երկու տախտակները Մովսէսի ձեռքին էին լեռնէնիցը իջնելիս. և Մովսէսը չգիտեր թէ իր երեսի մորթը լուսափայլ էր Եհովան իր հետ խօսելիս։ Եւ Ահարոն ու Իսրայէլի բոլոր որդիքը տեսան Մովսէսին, և ահա նորա երեսի մորթը լուսափայլ էր, և վախեցան նորան մօտենալու։ Եւ Մովսէսը կանչեց նորան, և Ահարոնը և ժողովքի բոլոր իշխանները նորա մօտ դարձան, և Մովսէսը խօսեց նորանց հետ։ Եւ ետքէն Իսրայէլի բոլոր որդիքը մօտեցան. և պատուիրեց նորանց ամեն ինչ որ Եհովան խօսել էր իր հետ Սինայ լեռնումը։ Եւ Մովսէսը վերջացրեց նորանց հետ խօսելը և իր երեսին քող էր դրել։ Բայց Մովսէսը Եհովայի առջև նորա հետ խօսելու մտնելիս մինչև դուրս գալը քողը վեր էր առնում և դուրս էր գալիս ու իրան պատուիրուածը ասում էր Իսրայէլի որդոցը։ Եւ Իսրայէլի որդիքը Մովսէսի երեսը տեսնում էին, որ Մովսէսի երեսի մորթը լուսափայլ էր. և Մովսէսն իր երեսը քողով ծածկում էր՝ մինչև նորա հետ խօսելու մտնելը։

ԳԼ. Լ Ե

Եւ Մովսէսը ժողովեց Իսրայէլի որդոց բոլոր ժողովքը, և ասաց նորանց. Սորանք են այն բանները որ Եհովան պատուիրեց որ անէք նորանց։ Վեց օր գործ գործուի, բայց եօթներորդ օրը սուրբ լինի ձեզ համար՝ այսինքն հանգստութեան շաբաթ Եհովայի համար. այն օրը գործ գործողը պիտի մեռցնուի. շաբաթ օրը ձեր բոլոր բնակարաններուդ մէջ կրակ չվառէք։

Եւ Մովսէսը խօսեց Իսրայէլի որդոց բոլոր ժողովքի հետ ասելով. Սա է այն բանը որ Եհովան պատուիրեց ասելով. Ձեր միջից ընծայ առէք Եհովայի համար. ով որ սրտով կ'յօժարէ՝ թող Եհովային ընծան բերէ, ոսկի և արծաթ և պղինձ, և կապու-

տակ և ծխրանեզդին և կրկնակի կարմիր և բարակ քթան և այծի
7 մազ, Եւ կարմիր ներկուած խոյի մորթեր, և թէհաշի մորթեր և
8 Սաաիմի փայտեր, Եւ լուծ համար իւղ, և համեմներ օծման իւղի համար և անուշահոտ խունկի
9 համար, Եւ եղինդաքարեր և ընդելուզանելու քարեր եփուդի համար և լանջապանակի համար:
10 Եւ ձեզանում ամեն արուով իմաստուն եղողները թող գան, և շինեն Եհովայի բոլոր պատուի-
11 րած բաները, խորանը, նորա վրանը, և նորա ծածկոցը, նորա ճարմանդները, և նորա տախտակները, նորա նիգերը, նորա
12 սիւները և նորա խարիսխները, Տապանակը և նորա ձողերը, քաւութիւնը, և ծածկող վարագոյրը,
13 Եւ սեղանը և նորա ձողերը և նորա բոլոր անօթները, և առաջաւորութեան հացը, Եւ լուսոյ աշտանակը և նորա գործիքները և նորա
15 ճրագները և լուսոյ իւղը, Եւ խունկի սեղանը և նորա ձողերը, և օծման իւղը, և անուշահոտ խունկը, և խորանի դրան արահակը,
16 Ողջակէզի սեղանը և նորա պղնձի ցանցավէղ գահաւորակը, նորա ձողերը և նորա բոլոր գործիքները, աւազանը և նորա խարխափը,
17 Արահի առագաստները, նորա սիւները և խարիսխները և արահի
18 դրան վարագոյրը, խորանի ցիցերը և արահի ցիցերը և նոցանց
19 չուաններըը, Պաշտօնի զգեստները՝ սրբատրաստելու պաշտելու համար, և Ահարոն քահանայի սուրբ զգեստները և նորա որդոց զգեստները, որ քահանայութիւն անեն:
20 Եւ Իսրայէլի որդոց բոլոր ժողովը Մովսէսի առջեւը գնացին:
21 Եւ ամեն յօժարասիրտ եղողը և ամեն բոլոր հոգով կամեցողը եկան, և ժողովքի խորանի գործի համար՝ և նորա բոլոր պաշտօնի համար՝ և սուրբ զգեստների հա-
22 մար եկան մարդիկ և կանայք՝ ամեն ով որ սրտով կամեցող էր, և բերին դինդեր և օղեր և մատանիներ և կշռատանակներ ամեն

տեսակ ոսկի զարդեր և ամեն ով որ ոսկի ընծայ ընծայից Եհովային: Եւ ամեն ով, որի մօտ որ 23
գտնվում էր կապուտակ և ծխրանեզդին և կրկնակի կարմիր և բարակ քթան և այծի մազ և կարմիր ներկուած խոյի մորթեր և թէհաշի մորթեր, բերին: Ամեն 24
արծաթի և պղինձ ընծայ առողը՝ Եհովային ընծան բերաւ, և ամեն ով, որի մօտ գտնվում էր պաշտօնի ամեն գործի համար Սաատիմի փայտեր, բերին: Եւ ամեն արր- 25
տով իմաստուն եղող կանայքն իրանց ձեռքերով մանեցին, և իրանց մանած կապուտակը, ծխրանեզդինը, կրկնակի կարմիրը և բարակ քթանը բերին: Եւ բոլոր 26
արտով փափաքող և յաջողակութիւն ունեցող կանայքը այծի մազ մանեցին: Եւ իշխանները՝ 27
եղինդաքարեր, և եփուդի և լանջապանակի համար ընդելուզանելու քարեր բերին: Նաև լուսոյ 28
համար՝ և օծման իւղի համար՝ և անուշահոտ խունկի համար՝ համեմներ և իւղ: Ամեն մարդ և 29
կին՝ որոնք յօժարութիւն ունէին բերելու ամեն ելլող գործի համար՝ որ Մովսէսի ձեռքով պատուիրեց որ շինուի, Իսրայէլի որդիքը յօժարակամ ընծայ բերին Եհովային:

Եւ Մովսէս ասաց Իսրայէլի 30
որդոցը. Տեսէք, Եհովան Ովրի որդի Ուրիի որդի Բեսաղիէլին կանչեց Յուդայի ցեղից անունով:
Եւ լցրեց նորան Աստուծոյ Հոգով՝ 31
իմաստութիւնով՝ հանճարով՝ և գիտութիւնով՝ և ամեն ելլող ճարտարութիւնով, Որ վարպետ 32
գործեր հնարելով՝ ոսկու և արծաթի և պղնձի վերայ գործէ.
Եւ ընդելուզանելու համար քա- 33
րեր քանդակէ. և փայտեր քանդակէ և ամեն կերպ վարպետի գործ գործէ: Եւ նորա սրտի մէջ 34
դրաւ որ սովորեցնէ էլ, նորա էլ՝ և Դանի ցեղից Ախիսամախի որդի Ողիսաբին էլ: Սրտի իմաստու- 35
թիւնով լցրեց նորանց որ ամեն տեսակ գործ գործող և հնարքներ հնարող քանդակագործի և ար-

ուեսատեսրի գործը՝ նաև կապուտակի և ծիրանեգոյնի՝ և կրկնակի կարմիրի՝ և բարակ քթանի վերայ նկարագործողի և ասեղնանկի գործ անեն։

ԳԼ. ԼԶ

1 Եւ արին Բեսաղիլ ու Ողիաբ և ամեն արուեստ իմաստուն եղողը որոնց Եհովան իմաստութիւն և հանճար տուաւ որ գիտենան սրբարանի պաշտօնի ամեն կերպ գործքերը անելու, Եհովայի բո-
2 լոր պատուիրածին պէս։ Եւ Մովսէսը կանչեց Բեսաղիլին և Ողիաբին և ամեն արուեստ իմաստուն եղողին՝ որի սրտի մէջ Եհովան իմաստութիւն դրաւ, այսինքն այն ամենը որի սիրտը փափաքեցաւ էր գործի մօտենալ որ գործէ նո-
3 րան։ Եւ առին Մովսէսից բոլոր ընծաները՝ որ Իսրայէլի որդիքը բերին սրբարանի պաշտօնի գործը անելու համար։ Եւ նորանք առաւօտեան ամեն առաւօտ կամաւոր ընծաներ էին բերում նորա մօտ։
4 Եւ սրբարանի ամեն գործը արող բոլոր իմաստուն մարդիկը՝ ամեն մէկին եկաւ իր գործից որ
5 անում էր. Եւ խօսեցին Մովսէսի հետ ասելով, ժողովուրդը աւելի է բերում քան թէ պէտք էր այն գործի համար որ Եհովան
6 պատուիրել է շինել։ Եւ Մովսէսը պատուիրեց քարոզ կարդալ բանակի մէջ՝ ասելով. Այլ ևս ոչ մարդ՝ ոչ կին մի գործ չգործեն սրբարանի ընծայի համար։ Եւ ժողովուրդը բերելուց դադա-
7 րեց։ Եւ նիւթը բաւական էր այն բոլոր գործը շինելու համար, և աւելացաւ։
8 Եւ խորանի գործն անողներից բոլոր արուեստ իմաստուն եղողները տասը վարագոյր շինեցին մանուած բարակ քթանից և կապուտակից և ծիրանեգոյնից և կրկնակի կարմիրից ճարտարապետուած քերուբէներով շինեցին նորանից.
9 Մէկ վարագոյրի երկայնութիւնը քսանութը կանդուն՝ և մէկ վարագոյրի լայնութիւնը չորս կանդուն. ամեն վարագոյրների համար չափը մէկ էր։ Եւ հինգ վարագոյրը իրար կցեց, և հինգ վարագոյրն էլ իրար կցեց։ Եւ կապուտակից օղակներ շինեց. մի կողմի ծայրի վարագոյրի եզերքի վերայ կապուտակից օղակներ շինեց. մի կողմի ծայրի վարագոյրի եզերքն էլ այն պէս արաւ։ Մէկ վարագոյրի վերայ հիսուն օղակ շինեց. և մի կողմի վերջի եղած վարագոյրի ծայրին էլ հիսուն օղակ շինեց. օղակները դէմ դէմ էին։ Եւ հիսուն ոսկի ճարմանդներ շինեց. և վարագոյրները ճարմանդներով իրար հետ կոճակեց. ու խորանը մէկ դառաւ։
Եւ վրանի համար այծի մազից վարագոյրներ շինեց նորան վերայ, տասնումէկ վարագոյր շինեց նորանց։ Մէկ վարագոյրի երկայնութիւնը երեսուն կանդուն՝ և մէկ վարագոյրի լայնութիւնը չորս կանդուն, տասնումէկ վարագոյրի չափը մէկ էր։ Եւ հինգ վարագոյրները առանձին և վեց վարագոյրները առանձին կցեց։ Եւ հիսուն օղակներ շինեց մէկ վարագոյրի եզերքի վերայ կցուածքի մօտ, և հիսուն օղակ միւս կրցուածքի մօտ եղած վարագոյրի եզերքի վերայ։ Եւ պղնձի հիսուն ճարմանդներ շինեց, որ վրանը կոճակէ, և մէկ լինի։ Եւ վրանի համար մի ծածկոց շինեց կարմիր ներկուած խոյի մորթերից, և թէհաշի մորթերից մի ծածկոց էլ նորա վերայով։
Եւ խորանի համար Սատիմի փայտից կանգնաւոր տախտակներ շինեց։ Մէկ տախտակի երկայնութիւնը տասը կանդուն՝ և մէկ տախտակի լայնութիւնը մէկուկէս կանդուն։ Այնն մէկ տախտակը երկու սեռիչ ունէր իրար ապուցիկ, այնպէս շինեց խորանին բոլոր տախտակների համար։ Եւ խորանի տախտակները շինեց. դէպի հարաւ՝ հարաւային կողմին քսան տախտակ։ Քառասուն արծաթի խարիսխ շինեց քսան տախտակների տակ, մէկ տախտակի տակ իր երկու սփռիչների համար երկու խարիսխ՝ և միւս տախտա-

կի տակ երկու խարիսխ իր երկու
25 սիւնիչների համար։ Եւ խորանի
միւս կողմի համար դէպի հիւսիս
26 քան տախտակ շինեց. Եւ նո-
րանց քառասուն արծաթի խա-
րիսխներ, մէկ տախտակի տակ
երկու խարիսխ՝ և միւս տախտա-
27 կի տակ երկու խարիսխ։ Եւ խո-
րանի եւեթ կողմին դէպի արև-
28 մուտք՝ վեց տախտակ շինեց. Եւ
խորանի եւեթ կողմին անկիւննե-
29 րին երկու տախտակ շինեց։ Եւ
նորանք տակի կողմից զոյգ էին,
և վերևումն բոլորովին միացած
էին մէկ օղակով. երկուսին էլ
երկու անկիւններումն այսպէս ա-
30 րաւ։ Եւ ութը տախտակ էին.
և նորանց արծաթի խարիսխները
տասնուվեց խարիսխ էին, ամեն
մէկ տախտակի տակը երկերկու
31 խարիսխ էին։ Եւ Սատիմի փայ-
տից նիգեր շինեց. խորանի մէկ
կողմի տախտակների համար հինգ
32 նէգ, Եւ խորանի միւս կողմի տախ-
տակների համար հինգ նիգ. և
դէպի արևմուտք՝ խորանի եւեթ
կողմի տախտանների համար հինգ
33 նիգ։ Եւ մէջտեղի նիգը շինեց,
որ անց կենայ տախտակների մէջ
տեղից մէկ ծայրից մինչև միւս
34 ծայրը։ Եւ տախտակները ոսկով
պատեց և նորանց օղակները ոս-
կուց շինեց՝ այսինքն նիգերի հա-
մար անցնելու տեղեր, և նիգերը
պատեց ոսկով։

35 Եւ վարագոյրը շինեց կապու-
տակից և ծիրանեգոյնից և կրկ-
նակի կարմիրից և մանած բա-
րակ քթանից Ճարտար ատապնա-
գործ քերովբէներով շինեց նորան։
36 Եւ Սատիմից չորս սիւն շինեց
նորա համար և ոսկով պատեց,
նորանց բևեռները ոսկի էին. և
նորանց չորս արծաթի խարիսխ
37 ձուլեց։ Եւ խորանի դրան համար
մի նկարագործ արահակ շինեց
կապուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից և մանած բա-
38 րակ քթանից. Եւ նորա հինգ
սիւները և նորանց բևեռները. և
նորանց խոյակներն ու նորանց կա-
պերը ոսկով պատեց, և նորանց
հինգ խարիսխները պղնձի էին։

ԳԼ. ԼԷ

Եւ Բեսելիել Ուրիի փայտից 1
շինեց տապանակը. Նորա երկայ-
նութիւնը երկու ու կէս կանգուն՝
և նորա լայնութիւնը մէկ ու կէս
կանգուն՝ և նորա բարձրութիւնը
մէկ ու կէս կանգուն։ Եւ մաքուր 2
ոսկով պատեց նորան ներսից և
դրսից. և նորա շուրջը մի ոսկի
շրջանակ շինեց։ Եւ նորա չորս 3
անկիւնների համար չորս ոսկի օ-
ղակներ ձուլեց, այսինքն նորա
մէկ կողմից երկու օղակ՝ և միւս
կողմից երկու օղակ։ Եւ Սատի- 4
մի փայտից ձողեր շինեց, և ոս-
կով պատեց նորանց։ Եւ ձողե- 5
րը տապանակի կողքերին եղած
օղակներին անցկացրեց, որ տա-
պանակը նորանցով վեր առնուի։

Եւ քաւութիւնը մաքուր ոս- 6
կուց շինեց. Նորա երկայնութիւ-
նը երկու ու կէս կանգուն՝ և նորա
լայնութիւնը մէկ ու կէս կանգուն։
Եւ երկու ոսկի քերովբէներ շի- 7
նեց. կռածոյ շինեց նորանց քա-
ւութիւնի երկու ծայրերից. Մէկ 8
քերովբէն այս կողմի ծայրից՝ և
միւս քերովբէն միւս կողմի ծայ-
րից, քաւութիւնից շինեց քե-
րովբէները՝ նորա երկու ծայրերի-
ց։ Եւ քերովբէները տարածում 9
էին էրեց թևերը վերից իրանց
թևերով քաւութիւնը ծածկե-
լով և նորանց երեսները դէպի ի-
րար էին, քաւութիւնի վերայ է-
ին քերովբէների երեսները։

Եւ սեղանը Սատիմի փայտից 10
շինեց. Նորա երկայնութիւնը եր-
կու կանգուն, և լայնութիւնը
մէկ կանգուն. և բարձրութիւնը
մէկ ու կէս կանգուն։ Եւ մաքուր 11
ոսկով պատեց նորան և նորա շուր-
ջը մի ոսկի շրջանակ շինեց։ Եւ 12
նորան շուրջանակի մի թիզ ոլորա
շինեց և այն ոլորտի շուրջը մի
ոսկի շրջանակ։ Եւ չորս ոսկի օ- 13
ղակ ձուլեց նորա համար, և այն
օղակները դրաւ այն չորս անկիւն-
ներին որ նորա չորս ոտքերի մօտ
էին։ Օղակները ոլորտի հետ կըց- 14
ուած էին՝ ձողերի տեղեր՝ սեղա-
նը վեր առնելու համար։ Եւ ձո- 15

ղերը Սաոխմի փայտից շինեց. և նորանց ոսկով պատեց սեղանը
16 վեր առնելու համար: Եւ շինեց սեղանի վերայ եղած անօթները, նորա սկուտեղները և նորա խընկամանները և սկուտաւակները և բաժակները, որոնցով նուէր է մատուցանելու մաքուր ոսկուց:
17 Եւ աշտանակը մաքուր ոսկուց շինեց. ճախարակեայ շինեց աշտանակը. նորա բունը և նորա ճիւղերը, նորա սկահները, գընդակները և ծաղիկները իրանից
18 էին: Եւ նորա կողերից վեց ճիւղեր էին դուրս գալիս. աշտանակի երեք ճիւղը մէկ կողից և աշտանակի երեք ճիւղը միւս կողից.
19 Մէկ ճիւղի վերայ երեք նշանձև սկահ գնդակով և ծաղիկով. և միւս ճիւղի վերայ երեք նշանձև սկահ գնդակով և ծաղիկով. այս պէս էին աշտանակից ելած վեց
20 ճիւղերը: Եւ աշտանակի վերայ չորս նշանձև սկահ իր գնդակներովն ու ծաղիկներով:
21 Եւ երկու ճիւղի տակը իրանից մէկ գնդակ և միւս երկու ճիւղի տակը իրանից մէկ գնդակ և երրորդ երկու ճիւղի տակը իրանից մէկ գնդակ, այսպէս այն վեց ճիւղերին, որ
22 դուրս էին գալիս նորանից: Նորանց գնդակներն ու ճիւղերը իրանից էին ամեն ճախարակեայ՝
23 մէկ կտոր՝ մաքուր ոսկուց: Եւ նորան եօթը ճրագներն և անելիները և նորա բուղմակալները
24 մաքուր ոսկուց էին: Մէկ տալանդ մաքուր ոսկուց շինեց նորան և նորա բոլոր գործիքները:
25 Եւ խունկի սեղանը Սաոխմի փայտից շինեց. նորա երկայնութիւնը մէկ կանգուն և նորա լայնութիւնը մէկ կանգուն՝ քառակուսի, և նորա բարձրութիւնը երկու կանգուն, նորա եղջիւրները իրանից էին:
26 Եւ մաքուր ոսկով պատեց նորա մակերդակը և նորա պատերը շուրջանակի և նորա եղջիւրները. և շուրջանակի մի ոսկի պսակ շինեց նորա հա-
27 մար. Եւ նորա համար երկու ոսկի օղակներ շինեց նորան պսակի տակից՝ նորա երկու կողքերին երկու կողմերի վերայ, որ նորանցով նորան վեր առնելու համար ձողերի անցկացնելու տեղերը լինին:
28 Եւ ձողերը Սաոխմի փայտից շինեց, և ոսկով պատեց նորանց:
29 Եւ սուրբ օծման իւղը և մաքուր անուշահոտ խունկը շինեց իւղագործի արհեստով:

ԳԼ. ԼՐ

1 Եւ ողջակէզի սեղանը Սաոխմի փայտից շինեց. նորա երկայնութիւնը հինգ կանգուն՝ և նորա լայնութիւնը հինգ կանգուն քառակուսի, և նորա բարձրութիւնը երեք կանգուն:
2 Եւ նորա եղջիւրները նորա չորս անկիւններին շինեց, նորա եղջիւրներն իրանից էին. և պղինձով պատեց նորան:
3 Եւ սեղանի բոլոր գործիքները՝ սինքն թաղարները և թիակները և կոնքերը և մսագանները ու կրակի ամանները շինեց. նորա բոլոր գործիքները պղինձից շինեց:
4 Եւ սեղանի համար՝ մի ցանցակերպ գահաւորակ շինեց պղինձից նորա շրջանակի տակ ներքևից մինչև նորա կէսը:
5 Եւ այն պղնձի գահաւորակի չորս անկիւններին չորս օղակներ ձուլեց ձողերին տեղեր լինելու համար:
6 Եւ ձողերը Սաոխմի փայտից շինեց և պղնձով պատեց նորանց:
7 Եւ ձողերը սեղանի մօտ եղած օղակներին անցկացրեց, որ նա նորանցով վեր առնուի մէջը դատարկ և տախտակներից շինեց նորան:
8 Եւ պղնձի ատպանը և նորա պղնձի խարիսխը շինեց ժողովքի խորանի դրանը խումբերով ժողովող կանանց հայելիներից:
9 Եւ սրահը շինեց. հարաւային կողմի համար դէպի հարաւ սրահի տատպատները մանուած բարակ քթանից հարիւր կանգուն.
10 Եւ նորանց սիւները քսան՝ և նորանց պղնձի խարիսխները քսան. սիւների բևեռները և նորանց ճանկերը արծաթի էին:
11 Եւ հիւսիսային կողմի համար հարիւր կանգուն, սիւները քսան և նորանց խարիսխները քսան՝ պղնձից. սիւների բե-

ւեռները և նորանց ճանկերը արծաթի էին։ Եւ արևմտեան կողմի 12
համար՝ առագաստները ժիտան կանգուն. նորանց սիւները տասը՝ և նորանց խարիսխները տասն էին. սիւների բևեռները և նորանց ճանկերը արծաթի էին։ Եւ 13
արևելեան կողմի համար դէպի արևելք ժիտան կանգուն։ Մէկ 14
կողմի առագաստները տասն ու հինգ կանգուն՝ նորանց սիւները երեք՝ ու նորանց խարիսխները երեք։ Եւ միւս կողմի համար էլ՝ 15
այսինքն սրահի դրանը այս կողմից և միւս կողմից առագաստները տասնուհինգ կանգուն՝ նորանց սիւները երեք՝ և նորանց խարիսխները երեք էին։ Սրահի բոլոր առա- 16
գաստները շուրջանակի մանած բարակ քթանից էին։ Եւ սիւների 17
խարիսխները պղնձից՝ սիւների բեւեռները և նորանց ճանկերը արծաթի՝ և նորանց խոյակները արծաթապատ՝ և սրահի բոլոր սիւներն 18
էլ արծաթի կարթերով էին։ Եւ սրահի դրան վարագոյրը նկարատարած էր, կապուտակից և ծիրանեգոյնից՝ և կրկնակի կարմիրից՝ ու մանած բարակ քթանից. երկայնութիւնը քսան կանգուն՝ և լայնութեան միջի բարձրութիւնը հինգ կանգուն էր սրահի վարա- 19
գոյրների համեմատ։ Եւ նորանց սիւները չորս՝ և նորանց պղնձի խարիսխները չորս, նորանց բևեռները արծաթի՝ և նորանց խոյակները արծաթապատ և կարթերը 20
արծաթի էին։ Եւ խորանի ու շուրջանակի սրահի բոլոր ցիցերը պղնձի էին։
Ասա է խորանի՝ այսինքն վկա- 21
յութեան խորանի հաշիւը. որ Մովսէսի պատուիրածին պէս՝ Ղևտացոց պաշտօնի համար Ի-
թամարի քահանայի որդի Եթամարի ձեռքով հաշուեցաւ։ Եւ Ով- 22
րի որդի Ուրիի որդի Բեսելիէլն Յուդայի ցեղից, արաւ այն ամենը՝ որ Եհովան Մովսէսին պատուիրեց։ Եւ նորա հետ Դանի ցե- 23
ղից Ահիսամախի որդի Ողիաբ քանդակագործը և ճարտարապետը՝ կապուտակով և ծիրանեգոյնով և կրկնակի կարմիրով ու բարակ քթանով նկարագործողը։
Բոլոր ոսկին որ այս շինուածքի 24
համար գործածուեցաւ, այսինքն սրբարանի բոլոր շինուածքի համար նուիրուած ոսկին քսանինը տաղանդ և եօթը հարիւր երեսուն սիկղ էր սրբարանի սիկղի համեմատ։ Եւ ժողովքի 25
ուողների արծաթը՝ հարիւր տաղանդ և հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղ էր սրբարանի սիկղի համեմատ։ Մարդ 26
գլուխ կէս սիկղ, այսինքն սիկղի կէսը սրբարանի սիկղի համեմատ՝ ամեն մէկից որ անցնում էր համարուելով քսան տարեկանը և նորանից վեր. այնպէս վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր հոգի եղան։ Եւ նորանց 27
հարիւր տաղանդ արծաթը սրբարանի խարիսխները և վարագոյրի խարիսխները ձուլելու համար հարիւր տաղանդից հարիւր խարիսխ՝ մէկ տաղանդը մէկ խարիսխի։ Եւ այն հազար եօթը հար- 28
եւ եօթանասունհինգ սիկղից շինեց սիւների բևեռները, և նորանց խոյակները պատեց, և կարթեց նորանց։ Եւ նուիրուած 29
պղինձը եօթանասուն տաղանդ և երկու հազար չորս հարիւր սիկղ էր։ Եւ նորանից շինեց ժողովքի 30
խորանի դրան խարիսխները և պղնձի սեղանը և նորա պղնձի գահաւորակը և սեղանի բոլոր գործիքները, Եւ շուրջանակի սրահի 31
խարիսխները և սրահի դրան խարիսխները և խորանի բոլոր ցիցերը և շուրջանակի սրահի բոլոր ցիցերը։

ԳԼ. ԼԹ

Եւ կապուտակից և ծիրանեգոյ- 1
նից և կրկնակի կարմիրից շինեցին պաշտօնի հանդերձները՝ սրբարանի մէջ պաշտօն կատարելու համար. և Ահարոնի համար սուրբ զգեստները շինեցին ինչպէս Եհովան Մովսէսին պատուիրել էր։
Ու եփուդը շինեց ոսկուց, կա- 2
պուտակից և ծիրանեգոյնից և

կրկնակի կարմիրից և մանած բա-
3 րակ քիթանից։ Եւ ոսկի թիլիզ-
նեըը ձեձեցին, և թել թել կըտ-
րեցին, որ կապուտակի, ծիրա-
նեգոյնի և կրկնակի կարմիրի և
բարակ քիթանի հետ ճարտար ա-
4 տպնագործ բանեցնեն։ Ապուցիկ
թիկունքներ շինեցին նորան, եր-
5 կու ծայրիցը կոճակվում էր։ Եւ
եփուդի վերայ եղած ժապաւէնը
հենց իրանից էր՝ նորա գործի
համեմատ, ոսկուց, կապուտակից
և ծիրանեգոյնից և կրկնակի կար-
միրից և մանած բարակ քիթանից
ինչպես Եհովան Մովսէսին պատ-
ուիրել էր։

6 Եւ շինեցին եղինգնաքարերը ոս-
կի խորշերի մէջ բնդելուզուած և
փորագրուած կնիքի քանդակողնե-
րի արհեստի համեմատ Իսրայէլի
7 որդոց անուններով։ Եւ դրաւ
նորանց եփուդի թիկունքների վե-
րայ, իբրև յիշատակի քարեր Իս-
րայէլի որդոց համար, ինչպես Ե-
հովան Մովսէսին պատուիրել էր։

8 Եւ լանջապանակը շինեց ճար-
տար ատպնագործ եփուդի գոր-
ծի պէս ոսկուց, կապուտակից և
ծիրանեգոյնից և կրկնակի կարմի-
րից և մանած բարակ քիթանից։

9 Քառակուսի՝ երկու տակ ծալուած
շինեցին լանջապանակը. մէկ մէտ
նորա երկայնութիւնը և մէկ մէտ
լայնութիւնը՝ երկու տակ ծալ-
10 ուած։ Եւ նորա վերայ ընդելու-
զեցին չորս կարգ քարեր. սար-
դիոնի, տպազիոնի և զմրուխտի
11 կարգը առաջին կարգն էր։ Եւ
երկրորդ կարգը՝ կարկեհան, շա-
12 փիւղայ և ադամանդ էր։ Եւ եր-
րորդ կարգն էր՝ գոճազի, ակա-
13 նի և աստակ։ Եւ չորրորդ կարգը
ոսկեքար, եղինգնաքար և յասպիս.
ոսկի խորշերի մէջ ընդելուզուած
14 էին։ Եւ քարերը՝ Իսրայէլի որդոց
անուններով համեմատ, նորանց
անունների պէս տասներկու էին
քանդակուած կնիքի պէս՝ ամեն
մէկին իր անունովը տասներկու
15 ցեղերի համեմատ։ Եւ լանջապա-
նակի վերայ մաքուր ոսկուց որո-
ւած հիւսուած շղթաներ շինե-
16 ցին։ Եւ երկու ոսկի խորշ և եր-
կու ոսկի օղակ շինեցին, և երկու
օղակները լանջապանակի երկու
ծայրերին դրին։ Եւ այն երկու 17
հիւսուած ոսկի շղթաները լան-
ջապանակի ծայրերին եղած երկու
օղակներին անցկացրին։ Եւ այն 18
երկու հիւսուած շղթաների ե-
րկու ծայրերը այն երկու խորշե-
րին անցկացրին. և եփուդի թի-
կունքների վերայ դրին նորանց նա-
րա առջև։ Եւ երկու ոսկի օղակ- 19
ներ էլ շինեցին, և լանջապանա-
կի ներսի կողմից եփուդին կըց-
ուած եզերքի երկու ծայրերին
դրին։ Եւ երկու ոսկի օղակ- 20
ներ շինեցին, և դրին նորանց ե-
փուդի երկու թիկունքների տա-
կիցը՝ և նորա առջևի կողմի կըց-
ուածքի մօտ՝ եփուդի ժապաւէնի
վերայից։ Եւ լանջապանակը կա- 21
պեցին իր օղակներիցը՝ կապուտա-
կից ճոպանով՝ եփուդի օղակ-
ներին, որ եփուդի ժապաւէնի
վերայ լինի. և լանջապանակը ե-
փուդի վերայից չդժուռնայ՝ ինչ-
պես որ Եհովան Մովսէսին պատ-
ուիրել էր։

Եւ եփուդի պատմուճանը ո- 22
տպնանկագործ շինեց բոլորովին
կապուտակից. Եւ պատմուճանի 23
ճեղքուածքը նորա մէջտեղը պրա-
հի ճեղքուածքի պէս. և ճեղք-
ուածքի շուրջը մի օձիք կար, որ
չպատռուի։ Եւ պատմուճանի 24
քղանցքներին նռներ շինեցին կա-
պուտակից և ծիրանեգոյնից և
կրկնակի կարմիրից՝ մանուած։
Եւ մաքուր ոսկուց զանգակներ 25
շինեցին, և զանգակները դրին
նռների մէջտեղերը պատմուճանի
քղանցքների վերայ շուրջանակի
նռների մէջտեղերը. Մէկ զանգակ 26
և մէկ նռան՝ մէկ զանգակ և մէկ
նռան պատմուճանի քղանցքների
վերայ շուրջանակի պաշտօնի հա-
մար, ինչպես Եհովան Մովսէսին
պատուիրել էր։

Եւ շապիկները բարակ քի- 27
թանից հիւսակէն գործ շինեցին Ա-
րոնի և նորա որդոց համար. Եւ 28
խոյրը բարակ քիթանից՝ և գլխար-
կի ապարօշները բարակ քիթանից
և կտաւեղէն անդրավարտիկները

29 մանած բարակ քթանից, եւ զօ-
ձեն մանած բարակ քթանից եւ
կապուտակից եւ ծիրանեգոյնից եւ
կրկնակի կարմիրից նկարագործ,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր:
30 Եւ սուրբ պաակի թիթեղը մա-
քուր ոսկուց շինեցին, եւ նո-
րա վերայ փորագրեցին կնիք
քանդակողի պէս *գօդել լե Եհո-
31 վայ. Եւ նորան անցկացրին մի
կապուտակ ժապաւէնի վերայ,
որ վերեից խոյրի վերայ դրուի,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր:
32 Եւ վերջացաւ խորանի այսինքն
ժողովքի վրանի բոլոր գործը. և
Իսրայէլի որդիքն արին բոլորը
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր. այնպէս արին:
33 Եւ խորանը Մովսէսի մօտ բերին,
վրանը և նորա բոլոր գործիքները,
նորա ճարմանդները, նորա տախ-
տակները, նորա նիգերը և նորա
34 սիւները ու խարիսխները, Եւ
կարմիր ներկուած խոյի մորթերից
ծածկոցը, և թէհաշի մորթերից
եղած ծածկոցը, և ծածկող վա-
35 րագոյրը, Վկայութեան տապա-
նակը և նորա ձողերը, և քաւու-
36 թիւնը, Սեղանը և նորա բոլոր ա-
նօթները և առաջաւորութեան
37 հացը, Մաքուր աշտանակը իր ճր-
պագներով, այսինքն կարգաւ դրը-
ուած ճրագներով և իր բոլոր ճր-
38 պագներով. և լուսոյ իւղը, Եւ
ոսկի սեղանը. և օծման իւղը, և
անուշահոտ խունկը, և խորանի
39 արտաքին մուտքի վարագոյրը,
Պղնձի սեղանը և նո-
րա պղնձի գամաւորակը, նորա
ձողերը և նորա բոլոր գործիքնե-
րը, տաշտը և նորա խարիսխը,
40 Արտաքին աւազաններն, նորա
սիւները և խարիսխները, և արտա-
քին դրան վարագոյրը, նորա
չուաններն և ցիցերը, և խորանի
սպասքին ժողովքի վրանի պաշտօ-
նի համար եղած բոլոր կարասի-
41 քը. Սրբարանի մէջ պաշտելու
համար՝ պաշտօնի հանդերձները,
և Ահարոն քահանայի համար

*սուրբ Եհովային

սուրբ զգեստները և նորա որդոց
զգեստները, որ քահանայութեան
անեն: Ինչպէս որ Եհովան բոլորը 42
Մովսէսին պատուիրել էր, այնպէս
արին Իսրայէլի որդիքը բոլոր գործը:
Եւ Մովսէսը նայեց բոլոր շին- 43
ուածքին. և ահա արել էին նո-
րան ինչպէս որ Եհովան պատուի-
րել էր, այնպէս էին արել. և
Մովսէսը օրհնեց նորանց:

ԳԼ. Խ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
ասելով. Առաջին ամսուայ առա- 2
ջին օրը կանգնեցրու խորանը՝ յա-
ջողի ժողովքի վրանը: Եւ նորա 3
մէջ դնես վկայութեան տապա-
նակը, և վարագոյրով ծածկես
տապանակը: Եւ սեղանը ներս 4
բերես, և նորա վերայ շարուելու
հացերը շարես. և աշտանակը ներս
բերես, և նորա ճրագները վա-
ռես: Եւ վկայութեան տապա- 5
նակի առջև դնես խունկի ոսկի
սեղանը. և խորանի դրանը արտա-
քին մուտքի վարագոյրը: Եւ 6
ողջակէզի սեղանը դնես ժողովքի վրանի դրանը առջև դը-
նես ողջակէզի սեղանը: Եւ աւա- 7
զանը դնես ժողովքի վրանի և սե-
ղանի մէջտեղը և նորա մէջ ջուր
ածես: Եւ շուրջանակի արտա- 8
կանդնեցնես, և արտաքի դրանը վա-
րագոյրը դնես: Եւ օծման իւղը 9
առնես, և խորանը և նորա մէջ
եղած բոլոր բաները օծես. և սրբես
նորան և նորա բոլոր անօթները,
որ սուրբ լինին: Եւ օծես ողջակէ- 10
զի սեղանը և նորա բոլոր գործիք-
ները, և սրբես սեղանը. և սեղանը
սրբութիւն լինի: Եւ օծես աւա- 11
զանը և նորա խարիսխը և սրբես
նորան: Եւ Ահարոնին և նորա 12
որդոցը մօտեցնես ժողովքի խորա-
նի դրանը, և ջրով լուանաս նո-
րանց: Եւ Ահարոնին հագցնես 13
սուրբ զգեստները, և օծես նորան
և սրբես նորան, որ ինձ քահա-
նայութիւն անէ: Եւ նորա որդի- 14
ցըն էլ մօտեցնես, և շապիկներ
հագցնես նորանց: Եւ նորանց էլ 15
օծես ինչպէս որ օծեցիր նորանց
հօրը. որ ինձ քահանայութիւն

անեն, և նորանց օծումը իրանց
ազգերի մէջ յաւիտենական քա-
հանայութեան համար լինի։
16 Եւ Մովսէս արաւ բոլորովին
ինչպէս որ Եհովան իրան պատ-
17 ուիրել էր. այնպէս արաւ։ Եւ
եղաւ որ երկրորդ տարին ա-
ռաջին ամսուայ առաջին օրը խորանը
18 կանգնուեցաւ։ Եւ Մովսէս կանգ-
նեցրեց խորանը, և նորա խա-
րիսխները դրաւ, և կանգնեցրեց
նորա տախտակները, և նորա նի-
գերը անցկացրեց, և սիւները
19 կանգնեցրեց։ Եւ խորանի վերայ
տարածեց վրանը, և վրանի ծած-
կոցը նորա վերայ դրաւ վերևից,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
20 պատուիրել էր։ Եւ առաւ վկա-
յութիւնը դրաւ տապանակի մէջ
և ձողերը տապանակին անցկաց-
րեց, և քաւութիւնը դրաւ տա-
21 պանակի վերայ վերևից։ Եւ տա-
պանակը խորանի մէջը բերաւ, և
ծածկող վարագոյրը դրաւ, և վր-
կայութեան տապանակը ծածկեց,
ինչպէս որ Եհովան Մովսէսին պատ-
22 ուիրել էր։ Եւ սեղանը դր-
աւ ժողովքի վրանի մէջ խոր-
անի հիւսիսային կողմից վարագոյ-
23 րից դուրս։ Եւ նորա վերայ շար-
ուածք հացերը շարեց Եհովայի
առջև, ինչպէս որ Եհովան Մով-
24 սէսին պատուիրել էր։ Եւ աշ-
տանակը դրաւ ժողովքի վրանի
մէջ սեղանի դիմացը խորանի հա-
25 րաւային կողմին։ Եւ Եհովայի
առջևի ճրագները վառեց, ինչ-
պէս որ Եհովան Մովսէսին պատ-
26 ուիրել էր։ Եւ ոսկի սեղանը դր-
աւ ժողովքի վրանի մէջ վարա-
27 գոյրի առջև։ Եւ նորա վերայ ա-
նուշահոտ խունկ ծխեց, ինչպէս
որ Եհովան Մովսէսին պատուի-
րել էր։ Եւ խորանի դրանը դրաւ 28
արտհակը։ Եւ խորանի՝ այն-
ժողովքի վրանի դրան մօտ դրաւ 29
ողջակիզի սեղանը և նորա վերայ
ողջակէզն ու հացի ընծան մա-
ուցրեց, ինչպէս որ Եհովան
Մովսէսին պատուիրել էր։ Եւ ա- 30
ւազանը դրաւ ժողովքի վրանի և
սեղանի միջտեղը, և նորա մէջը
լուացուելու համար ջուր ածեց։
Եւ նորանից լուանում էին Մով- 31
սէսը և Ահարոնը և նորա որդիքը
իրանց ձեռքերը և ոտքերը. ժո- 32
ղովքի վրանը մտնելիս, և սեղա-
նին մօտենալիս լուանում էին,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրել էր։ Եւ խորանի ու 33
սեղանի շուրջը արտհը կանգնեց-
րեց, և արտհի դրանը վարագոյրը
դրաւ։ Այսպէս Մովսէսը ետ
գործը վերջացրեց։
Եւ մի ամպ ծածկեց ժողովքի 34
վրանը, և Եհովայի փառքը լց-
րեց խորանը։ Եւ Մովսէսը չէր 35
կարողանում մտնել ժողովքի
վրանը, վասն զի ամպը նորա վե-
րայ նստել էր, և Եհովայի փառ-
քը լցրել էր խորանը։ Եւ ամպը 36
խորանի վերայից վերանալիս Իս-
րայէլի որդիքը չուում էին իրանց
բոլոր ճանապարհորդութեանց
մէջ։ Եւ եթէ ամպը չէր վեր- 37
նում, չէին չուում մինչև նորա
վերանալու օրը։ Վասն զի Եհովայի 38
ամպը ցերեկը խորանի վերայ էր,
և գիշերը նորա վերայ կրակ կար,
Իսրայէլի բոլոր ժողովրդի առջև
իրանց բոլոր ճանապարհորդու-
թեանց մէջ։

ԳԻՐՔ ՂԵՒՏԱՑԻՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ կանչեց Մովսէսին, ու խօ-
սեց նորա հետ Եհովան ժողովքի
2 խորանից ասելով. Խօսիր Իսրա-
յէլի որդոցը հետ, և ասիր նո-
րանց. Եթէ ձեզանից մէկ մարդ
պի մատուցանելու լինի Եհովա-
յին, ձեր պոհը արջառներից կամ
հօտերից մատուցանէք։
Եթէ նորա պոհը ողջակէզ է 3
արջառներից, արու անարատ մա-

տուցանէ նորան. և ժողովքի խորանի դրան մօտ մատուցանէ նորան Եհովայի առջև ընդունելի
4 լինելու համար: Եւ իր ձեռքը ոջխակէգի գլխին դնէ, որ ընդունելի նորան լինի իրան քաւութիւն լինելու համար: Եւ զուարակը մորթէ Եհովայի առջև. և Ահարոնի
6 որդիքը՝ քահանաները մատուցանեն արիւնը, ու սրակեն արիւնը ժողովքի խորանի դրան մօտ եզած սեղանի վերայ շուրջանակի:
6 Եւ ոջխակէգը մաշկէ, և յօշոտէ
7 նորան կտոր կտոր: Եւ Ահարոն քահանայի որդիքը կրակ դնեն սեղանի վերայ, և փայտեր շարեն այն կրակի վերայ: Եւ Ահա-
8 րոնի որդիքը՝ քահանաները շարեն կտորները, գլուխը և ճարպը սեղանի վերայ եզած կրակի վերայ
9 փայտերի վերայ: Բայց նորա փորոտիքը և ոտքերը ջրով լուանայ, և քահանան այրէ ամենը սեղանի վերայ՝ իբրև ողջակէզ Եհովային անուշահոտ պատարագ լինելու համար:
10 Եւ եթէ նորա ոչխարներից՝ այսինքն ոչխարներից կամ այծերից է ողջակէզի համար, արու
11 անարատ մատուցանէ նորան: Եւ մորթէ նորան սեղանի մօտ հիւսիսային կողմումը Եհովայի առջև. և Ահարոնի որդիքը քահանաները սրակեն նորա արիւնը սե-
12 ղանի վերայ շուրջանակի: Եւ յօշոտեն նորան կտոր կտոր և գլուխը և ճարպը. և քահանան շարէ նորանց սեղանի վերայ եզած կրա-
13 կի վերայ՝ փայտերի վերայ: Եւ փորոտիքն ու ոտքերը ջրով պիտի լուանայ. և քահանան ամենը բերէ՝ և սեղանի վերայ այրէ. սա ողջակէզ է անուշահոտ պատարագ Եհովայի համար:
14 Եւ եթէ թռչուններից է նորա ողջակէզ գոհը Եհովայի համար, այն ժամանակ նա իրան գոհը տատրակներից կամ պատուական ձա-
15 դերից մատուցանէ: Եւ քահանան սեղանի մօտ բերէ նորան՝ և նորա գլուխը պոկէ, և սեղանի վերայ այրէ, և նորա արիւնը սե-
16 ղանի կողքին քամուի: Եւ նորա

կռնակն իր ապրովը հանէ, և դնէ դրէ նորան սեղանի արևելեան կողմում եզած մոխրանոցի մէջ:
Եւ պատառէ նորան թևերից 17
առանց բաժանելու. և քահանան այրէ նորան սեղանի վերայ՝ կրակի վերայ փայտերի վերայ. սա ողջակէզ է՝ անուշահոտ պատարագ Եհովայի համար:

Գլ. Զ

Եւ երբոր մէկ անձ հացի նուէր 1
պատարագ մատուցանելու լինի Եհովային, նորա պատարագը բարակ ալիւրից լինի. և նորա վերայ իւղ թափէ, և կնդրուկ դնէ
նորա վերայ. Եւ Ահարոնի որդո- 2
ցը՝ քահանաների մօտ բերէ նորան, և քահանան նորանից իր բուռը լիքն նորա բարակ ալիւրից և իւղից առնէ բոլոր կնդրուկի հետ միասին, և քահանան նորա յիշատակի համար սեղանի վերայ այրէ՝ Եհովային անուշահոտ պատարագ լինելու համար. Եւ հա- 3
ցի նուէրից մնացածը Ահարոնինն և նորա որդոցը լինի՝ ամենասուրբ պատարագ Եհովայի համար:
Եւ եթէ թոնիրում թխած հա- 4
ցի նուէր պատարագ մատուցանելու լինիս, բարակ ալիւրից իւղով զանգուած անխմոր շօթեր՝ կամ իւղով օծուած անխմոր լաւաշներ լինի:
Եւ եթէ քո պատարագը տա- 5
պակի վերայ Խ---ի հացի նուէր է, բարակ ալիւրից իւղով զանգուած անխմոր լինի: Կտոր կտոր 6
նորան կտրես, և վերան իւղ թափես. սա հացի նուէր է:
Եւ եթէ քո պատարագը կա- 7
րասի ՃՀ Խ---ի հացի ընծայ է, բարակ ալիւրից իւղով շինուի:
Եւ որանցից շինուած հացի նը- 8
ուէրը բերես Եհովայի մօտ, և քահանային ներկայացնես, և նա սեղանին մօտեցնէ նորան: Եւ 9
քահանան առնէ նուէրից նորա յիշատակը, և սեղանի վերայ այրէ՝ Եհովային անուշահոտ պատարագ լինելու համար: Եւ նուէ- 10
րից մնացածը Ահարոնինը ու նո-

բա որդոցը լինի. աա ամենատուրը պատարագ է Եհովային։

11 *Ոչ մի հացի նուէր որ դուք Եհովային մատուցանէք, խմորեալ չլինուի, վասն զի ոչ խմոր և ոչ մեղր պիտի իբրև պատարագ չայրէք Եհովայ համար։ Իբրև ե-*
12 *րէք Եհովայ համար։ Իբրև երախայրեաց պատարագ մատուցէք նորանց Եհովային. բայց սեղանի վերայ պիտի չայրուին ա-*
13 *նուշահոտութեան համար։ Եւ քո բոլոր հացի նուէրը աղով աղես, և քո հացի նուէրից քո Աստուծոյ ուխտի աղը պակաս չանես. քո բոլոր պատարագովը աղ էլ մատուցանես։*

14 *Եւ եթէ առաջի արմտեաց նուէր մատուցանելու լինիս Եհովային, կրակով հնդի արած հասկերից ճեղուած ցորեն մատուցանես քո առաջի արմտեաց նո-*
15 *ւէրը, Եւ նորա վերայ իւղ թափես և կնդրուկ դնես վրան. աա*
16 *հացի նուէր է։ Եւ քահանան այրէ նորա յիշատակը նորա ճեղուած ցորենից և նորա իւղից նորա բոլոր կնդրուկովը՝ Եհովային պատարագ լինելու համար։*

ԳԼ. Գ

1 *Եւ եթէ նորա պատարագը խաղաղութեան զոհ է, երբոր նա արջառներից է մատուցանում, թէ արու լինի թէ էգ, Եհովայի առջև անարատը մատուցանէ։*
2 *Եւ իր ձեռքը իր պատարագի գլխին դնէ, և ժողովքի խորանի դրանը մորթէ նորան. և Ահարոնի որդիքը՝ քահանաները սեղանի վերայ շուրջանակի արակեն արիւ-*
3 *նը։ Եւ խաղաղութեան զոհից պատարագ մատուցանէ Եհովային, այսինքն փորոտիքը ծածկող ճարպը՝ և փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը,*
4 *Եւ երկու երիկամունքը՝ և նորանց վերայ և մատնոց վերայ եղած ճարպը՝ և լեարդի թաղանթը երիկամունքներովը մէկտեղ հանէ։*
5 *Եւ Ահարոնի որդիքն այրեն սեղանի վերայ այն ողջակէզի հետ որ կրակի վերայի փայտերի վերայ է, Եհո-*

վայի անուշահոտ պատարագ լինելու համար։

6 *Եւ եթէ հօտերից է նորա խաղաղութեան զոհի համար Եհովային մատուցանէ պատարագը, թէ արու լինի և թէ էգ՝ անարատը մատուցանէ։*
7 *Եթէ նա իր ընծան գառն է մատուցանում, Եհովայի առջև մատուցանէ նո-*
8 *րան։ Եւ ձեռքն իր ընծայի գլխին դնէ, և ժողովքի խորանի առջև մորթէ նորան. և Ահարոնի որդիքը սեղանի վերայ շուրջանակի արակեն նորա արիւնը։*
9 *Եւ խաղաղութեան զոհից պատարագ մատուցանէ Եհովային, այսինքն նորա ճարպը և բոլոր գմակը ողնահարի մօտից կտրելով, և փորոտիքը ծածկող ճարպը՝ և փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը,*
10 *Եւ երկու երիկամունքը՝ և նորանց վերայ և մատնոց վերայ եղած ճարպը՝ և լեարդի թաղանթը երիկամունքներովը մէկտեղ հանէ։*
11 *Եւ քահանան սեղանի վերայ այրէ սա՝ Եհովային պատարագի հաց լինելու համար։*

12 *Եւ եթէ նորա պատարագը այծ է, Եհովայի առջև բերէ նորան.*
13 *Եւ իր ձեռքը նորա գլխին դնէ, և ժողովքի խորանի առջև մորթէ նորան. և Ահարոնի որդիքը սեղանի վերայ շուրջանակի արակեն նորա արիւնը։*
14 *Եւ նա պատարագ մատուցանէ նորանից իր պատարագը Եհովային, այսինքն փորոտիքը ծածկող ճարպը՝ և փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը,*
15 *Եւ երկու երիկամունքը՝ և նորանց վերայ և մատնոց վերայ եղած ճարպը՝ և լեարդի թաղանթը երիկամունքներով մէկտեղ հանէ։*
16 *Եւ քահանան սեղանի վերայ այրէ նորանց, անուշահոտ հոգի պատարագ լինելու համար. ամեն ճարպը Եհովայինն է։*
17 *Զեր սպգերուայի ձեր բոլոր բնակարանների մէջ յաւիտենական կանոն լինի, որ բնաւ ոչ ճարպ ուտէք՝ ոչ էլ արիւն։*

ԴԼ. Դ

1 *Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ*

2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդւոցը
հետ և ասիր. Եթէ մէկ անձ ա-
խալմամբ մեղանչէ, և Եհովայի
բոլոր այն պատուէրներէն դէմ, որ
պիտի չանուին, և նորանցից մէկին
3 անէ, Եթէ օծուած քահանան
մեղանչէ ժողովուրդը յանցաւոր
անելով, նա իր գործած մեղքի
համար արջառներից մի անարատ
զուարակ մատուցանէ Եհովային
4 մեղքի պատարագ. Եւ զուարակը
բերէ ժողովքի խորանի դուռը Ե-
հովայի առջև, և իր ձեռքը
զուարակի գլխին դնէ, և Եհո-
վայի առջև մորթէ զուարակը:
5 Եւ օծուած քահանան զուարակի
արիւնից առնէ և ժողովքի խո-
6 րանը բերէ: Եւ քահանան իր
մատը արիւնին թաթախէ, և ար-
իւնից սրսկէ եօթը անգամ Եհո-
վայի առջև սրբարանի վարագու-
7 րի դիմացը: Եւ քահանան արիւ-
նից քսէ Եհովայի առջև անու-
շահոտ խունկի սեղանի եղջիւր-
ների վերայ, որ ժողովքի խորա-
նումն է. և զուարակի ամբողջ բո-
լոր արիւնը թափէ ժողովքի խո-
րանի դրան մօտ եղած ողջակէզի
8 սեղանի յատակի վերայ: Եւ մեղ-
քի պատարագ եղած զուարակի
բոլոր ճարպը վեր առնէ նորանից,
այսինքն փորոտիքը ծածկող ճար-
պը՝ և փորոտիքի վերայ եղած
9 բոլոր ճարպը: Եւ երկու երիկա-
մունքը՝ և նորանց վերայ և մաս-
նանց վերայ եղած ճարպը՝ և
լեարդի վերայի թաղանթը երի-
կամունքներովը միկտեղ հանէ,
10 Ինչպէս որ հանուած է խաղաղու-
թեան զոհի արջառից. և քահա-
նան ողջակէզի սեղանի վերայ այ-
11 րէ նորանց: Եւ զուարակի մոր-
թը՝ և նորա բոլոր միսը՝ գլխո-
վը և ոտքերովը, և նորա փորո-
12 տիքը և աղբը, Այսինքն բոլոր
զուարակը բանակից դուրս մի
մաքուր տեղ՝ մոխիր թափուած
տեղը հանէ, և այրէ նորան փայ-
տերի վերայ կրակով. մոխիր
թափուած տեղը այրուի:
13 Եւ եթէ Իսրայէլի բոլոր ժողով-
քը սխալուի, և բանը ծածուկ
մնայ ժողովքի աչքից, և անեն

Եհովայի բոլոր պատուէրներից
մէկին, որ պիտի չանուի, այն յա-
նցաւոր լինին: Եւ իմաց- 14
նուի նորանց այն սրած մեղքը,
ժողովքը արջառներից մի զուա-
րակ մատուցանեն մեղքի պատա-
րագ և նորան բերեն ժողովքի խո-
րանի առջև: Եւ ժողովքի ծերե- 15
րըն իրանց ձեռքերը զուարակի
գլխին դնեն Եհովայի առջև, և
զուարակը մորթեն Եհովայի առ-
ջև: Եւ օծուած քահանան զուա- 16
րակի արիւնից բերէ ժողովքի խո-
րանը: Եւ քահանան իր մատը 17
արիւնին թաթախէ, և եօթն ան-
գամ սրսկէ Եհովայի առջև՝ վա-
րագոյրի դիմացը: Եւ արիւնից 18
քսէ ժողովքի խորանի մէջ Եհո-
վայի առջև եղած սեղանի եղջիւր-
ներին. և ամբողջ բոլոր արիւնը
թափէ ժողովքի խորանի դրան մօտ
եղած ողջակէզի սեղանի յատակի
վերայ: Եւ նորա բոլոր ճարպը վեր 19
առնէ նորանից, և սեղանի վերայ
այրէ: Եւ այս զուարակին այն- 20
պէս անէ ինչպէս որ արաւ մեղքի
պատարագ եղած զուարակին: Եւ
քահանան նորանց համար քաւու-
թիւն անէ, և նորանց թողու-
թիւն լինի: Եւ բանակից դուրս 21
հանէ զուարակը, և այրէ նորան
ինչպէս որ առաջի զուարակն այ-
րեց. ժողովքի համար մեղքի պա-
տարագ է այս:

Երբոր մի իշխան մեղք գործե- 22
լու լինի, և անէ սխալմամբ իր
Եհովայ Աստուծոյն պատուէրնե-
րից մէկը, որ պիտի չանուի, այն
ժամանակ յանցաւոր լինի, Եթէ 23
իր արած մեղքն իրան իմացնուի,
իր համար այծերից մի արու ա-
նարատ նոխազ պատարագ բերէ.
Եւ իր ձեռքը նոխազի գլխին դնէ, 24
և մորթէ նորան Եհովայի առջև
ողջակէզի մորթուելու տեղը. մեղ-
քի պատարագ է այս: Եւ քահա- 25
նան մեղքի պատարագի արիւնից
իր մատովն առնէ, և քսէ ողջա-
կէզի սեղանի եղջիւրներին, և նո-
րա Հոգւոյ արիւնը թափէ ողջա-
կէզի սեղանի յատակի վերայ:
Եւ նորա բոլոր ճարպը՝ սեղանի 26
վերայ այրէ խաղաղութեան զոհի

ճարպի պէս. և քահանան նորա
մեղքի համար քաւութիւն անէ,
և թողութիւն լինի նորան։
27 Եւ եթէ երկրի ժողովրդից մէ-
կը մեղանչէ՝ անելով ենովայի
պատուէրների մէկին, որ պիտի
չանուի, այն ժամանակ յանցա-
28 ւոր լինի, եթէ նորա արած մեղ-
քըն իրան իմացուի, իր արած
մեղքի համար իր պատարագը
այծերից մի անարատ էգ այծ
29 բերէ, և իր ձեռքը մեղքի պա-
տարագի գլխին դնէ, և մեղքի
պատարագը մորթէ ողջակէզի
30 տեղը։ Եւ քահանան իր մատա-
վը նորա արիւնից առնէ, և քսէ
ողջակէզի սեղանի եղջիւրներին,
և ճաչ բոլոր արիւնը թափէ
31 սեղանի յատակի վերայ։ Եւ նո-
րա բոլոր ճարպը հանէ ինչպէս որ
հանվում է խաղաղութեան զոհի
ճարպը. և քահանան այրէ նորան
սեղանի վերայ անուշ հոտի հա-
մար եհովայի առջև. և քահա-
նան նորա համար քաւութիւն
անէ, և նորան թողութիւն լինի։
32 Եւ եթէ գառն մատուցանելու
լինի մեղքի պատարագ, մի ան-
33 բաւ էգը բերէ. Եւ իր ձեռքը
մեղքի պատարագի գլխին դնէ,
և մորթէ նորան մեղքի պատա-
րագ՝ ուր որ ողջակէզները մոր-
34 թում են մեղքի պատարագ։ Եւ
քահանան իր մատովը մեղքի պա-
տարագի արիւնից առնէ, և քսէ
ողջակէզի սեղանի եղջիւրներին.
և ճաչ բոլոր արիւնը թափէ
35 սեղանի յատակի վերայ։ Եւ բո-
լոր ճարպը հանէ ինչպէս որ խա-
ղաղութեան զոհից գառի ճարպը
հանվում է. և քահանան այրէ
նորան սեղանի վերայ եհովայի
պատարագների հետ. և քահա-
նան նորա արած մեղքի համար
քաւութիւն անէ, և թողութիւն
լինի նորան։

ԳԼ. Ե

1 Եւ եթէ մի անձ մեղանչէ, և
երդումի ձայնը լսէ և վկայ լինի,
կամ բանը տեսել է կամ գիտէ,
եթէ չիմացնէ, այն ժամանակ իր
յանցանքը կրէ. 2 կամ մի անձ ան-
մաքուր բանի կամ անմաքուր գա-
զանի դիակին կամ անմաքուր ա-
նասունի դիակին՝ կամ անմաքուր
սողունի դիակին դպչելու լինի,
թէև յայտնի չէր իրան, այն ժա-
մանակ նա անմաքուր և յանցաւոր
է։ 3 կամ դպչելու լինի մարդու ան-
մաքրութեան՝ որևիցէ անմաքուր
անող անմաքրութեան թէև յայտ-
նի չէր իրան, բայց յետոյ իմա-
նայ նայ լինքը, այն ժամանակ յան-
ցաւոր լինի. 4 կամ մի անձ եր-
դում անելու լինի չարիք կամ
բարիք անելու համար բերանովը
դատարկախօսութեամբ, (ինչպէս
որ մարդս երդումով դարուակ կ'խօ-
սէ.) և իրան յայտնի չէր. բայց ին-
քը յետոյ իմանայ, այն ժամանակ
սորանց պէս մէկ բանի մէջ յան-
ցաւոր լինի։ 5 Եւ եթէ այսպիսի
բաներից մէկում յանցաւոր լինի.
խոստովանէ այն ինչ որ մեղք գոր-
ծեց. 6 Եւ բերէ իր արած մեղքի
համար իր յանցանքի պատարա-
գը եհովային հօտերից մի էգ,
այսինքն մի էգ գառն կամ այծե-
րից մի էգ ուլ մեղքի պատարագի
համար. և քահանան քաւու-
թիւն անէ նորան՝ նորա մեղքի
համար։

7 Եւ եթէ նորա ձեռքը չհասնէ
ոչխար կամ այծ բերելու, իր ա-
րած յանցանքի համար երկու
տատրակ կամ աղաւնու երկու
ձագեր բերէ եհովային, մէկը մեղ-
քի պատարագ, և միւսը ողջա-
կէզ։ 8 Եւ քահանային մօտ բերէ
նորանց, և նախ մատուցանէ այն
որ մեղքի պատարագ է, և նորա
գլուխը վզից ոլորէ բայց չպոկէ.
9 Եւ մեղքի պատարագի արիւնից
սեղանի կողմին սրսկէ, և մնա-
ցած արիւնը սեղանի յատակի
վերայ քամուի. սա մեղքի պա-
տարագ է. 10 Եւ միւսը բաւ օրինի
ողջակէզ անէ. և քահանան նո-
րան քաւութիւն անէ նորա ա-
րած մեղքի համար, և նորան
թողութիւն լինի։

11 Եւ եթէ նորա ձեռքը չհասնէ
երկու տատրակ կամ աղաւնու
երկու ձագեր բերելու, այն ժա-

մանակ մեղք գործողը իր ընծայի համար արդուի տաներորդ մասը բարակ ալիւր բերէ մեղքի պատարագի համար. ոչ նորա վերայ իւղ դնէ՝ ոչ էլ վերան կնդրուկ դնէ. վասն զի մեղքի պատարագ է այն։ 12 Եւ քահանայի մօտ բերէ այն, և քահանան նորանից իր ձեռքը լիքը նորա յիշատակի համար առնէ, և սեղանի վերայ այրէ Եհովայի պատարագների հետ. մեղքի պատարագ է այն։ 13 Եւ քահանան քաւութիւն անէ նորան այսպիսի բաների մէկում արած մեղքի համար, և նորան թողութիւն լինի. և ճաշը հացի ընծայի պէս քահանայինը լինի։

14 Եւ Եհովան խօսեց Մովսէսի 15 հետ ասելով. Եթէ մի անձ յանցանք անէ՝ և սխալմամբ Եհովայի սուրբ բաների մէջ մեղք գործէ, իր յանցանքի պատարագի համար արբարանի սիկղի համեմատ՝ որ արժեցրածի չափ սիկղի արծաթով հօտերից մի անարատ 16 խոյ բերէ Եհովայի համար։ Եւ սուրբ բաների մէջ իր արած վնասը հատուցանէ, և նորա վերայ հինգերորդ մասը աւելացնէ, և քահանային տայ այն, և քահանան յանցանքի պատարագի խոյով քաւութիւն անէ նորան, և թողութիւն լինի նորան։

17 Եւ եթէ մի անձ մեղանչէ, և անէ Եհովայի բոլոր այն պատուէրների դէմ որ պիտի չանուին, թէև անգիտութեամբ, յանցաւոր է, և իր անօրէնութիւնը կրէ. 18 Եւ քո արժեցրածի պէս՝ յանցանքի պատարագի համար հօտերից մի անարատ խոյ բերէ քահանայի մօտ. և քահանան նորա համար քաւութիւն անէ՝ նորա անգիտութեամբ սխալուելու համար. և նորան թողութիւն լինի։ 19 Ահա՝ յանցանքի պատարագ է. նա անպատճառ յանցաւոր է Եհովայի առջև։

ԳԼ. Զ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով. Եթէ մի անձ մեղանչէ, 2 և Եհովայի դէմ յանցանք անէ, և իր դրացուն սուտ թիւն խօսէ մի աւանդի համար՝ կամ իր ձեռքը յանձնուած մի բանի համար՝ և կամ մի յափշտակուած բանի համար, կամ իր դրացուն խարդախութիւն անելու լինի, կամ 3 մի կորած բան գտնէ, և ուրանայ ու սուտ երդուի անէ, բոլոր այս բաների մէկում՝ որ մարդ կարող է անել, մեղանչելով նորանով։ 4 Ան ժամանակ՝ քանի որ մեղք է գործել ու յանցանք արել, ետ տայ յափշտակածը որ յափշտակել է կամ խարդախութեամբ առածը կամ իրան յանձնուած աւանդը՝ կամ գտած կորուստը. 5 կամ ամեն բան՝ որի համար սուտ երդուի է արել, բոլորովին հատուցանէ նորան, և նորա հինգերորդ մասը աւելացնէ վերան, որինը որ էր նորան տայ իր յանցանքի պատարագի օրը։ 6 Եւ իր յանցանքի պատարագը բերէ Եհովային, այսինքն հօտերից մի անարատ խոյ քո արժեցրածի համեմատ, իբրև յանցանքի պատարագ քահանայի մօտ։ 7 Եւ քահանան նորա համար քաւութիւն անէ Եհովայի առջև. և թողութիւն լինի նորան ինչ բանի համար որ յանցանք է գործել։

8 Եւ Եհովան խօսեց Մովսէսի 9 հետ ասելով. Պատուիրիր Ահարոնին և նորա որդոցը և ասիր. Ահա է ողջակէզի օրէնքը. ողջակէզը սեղանի վերայ եղած կրակի վերայ պիտի լինի բոլոր գիշերը մինչև առաւօտ, և սեղանի կրակը նորա մէջ վառած պիտի մնայ։ 10 Եւ քահանան քթանի պատմուճանը հագնէ, և քթանի վարտիքը մարմնին վերայով հագնէ, և կրակով այրուած ողջակէզի մոխիրը սեղանի վերայից վեր առնէ և սեղանի մօտ դնէ։ 11 Եւ իր զգեստները հանէ, և ուրիշ զգեստներ հագնէ. և մոխիրը բանակից դուրս մի մաքուր տեղ տանէ։ 12 Եւ սեղանի վերայի կրակը նորա մէջ վառած պիտի լինի, պիտի չմարի-

էէ. և քահանան ամեն առաւօտ նորա վերայ փայտեր այրէ, և ողջակէզը նորա վերայ շարէ և այրէ նորա վերայ խաղաղութեան զո-
13 հերի ճարպը։ Կրակը սեղանի վերայ միշտ վառած լինի, պիտի չհանգչէ։
14 Եւ այդ է հացի ընծայի օրէնքը. Ահարոնի որդիքը մատուցանեն նորան Եհովայի առջև սեղա-
15 նի դիմացը։ Եւ վեր առնէ նորանից իր ձեռքը լիքն այսինքն հացի ընծայի բարակ ալիւրից և նորա իւղից և հացի ընծայի վերայ եղած բոլոր կնդրուկը, և այրէ նորա յիշատակը սեղանի վերայ անոյշ հոտի համար Եհո-
16 վային։ Եւ նորանից մնացածն ուտեն Ահարոնը և նորա որդիքը. նա անխմոր ուտուի սուրբ տեղը, ժողովքի խորանի սրահի մէջ ու-
17 տեն նորան։ Խմորով չ'եփուի. իրանց համար բաժին տուի այն իմ պատարագներից. սա մեղքի ու յանցանքի պատարագների պէս
18 ամենասուրբ է։ Ահարոնի որդոց բոլոր արուները ուտեն այն. Եհովայի պատարագներից՝ ձեր ազգերումը յաւիտենական կանոն լինի այս. ամեն նորանց դպչողը սուրբ լինի։
19 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
20 ասելով. Այս է Ահարոնի և նորա որդոց պատարագը, որ Եհովային պիտի մատուցանեն նորա օծուելու օրը. արդուի տասներորդ մասը բարակ ալիւր ամեն օր հացի նուէրի համար, կէսը առաւօտին և կէ-
21 սը իրիկունը։ Տապակի մէջ իւղով շինուի, *հունցուած բերես այն հացի նուէրի եփած կտորները առնուս հոտի համար Եհովային մատուցանես։
22 Եւ նորա որդիներից նորա տեղը օծուելու քահանան մատուցանէ այն. սա Եհովային յաւիտենական կանոն է. բոլորո-
23 վին պիտի այրուի։ Եւ քահանայի ամեն հացի նուէրը բոլորովին պիտի այրուի, պիտի չուտուի։
24 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
25 ասելով. Խօսիր Ահարոնի և նորա որդոց հետ և ասիր. Այս է մեղքի պատարագի օրէնքը. ողջակէզի մորթուած տեղը պիտի մորթուի մեղքի պատարագը Եհովայի առջև. այս ամենասուրբ է։ Այն 26
քահանան որ մատուցանում է մեղքի պատարագը, նա ուտէ այն. սուրբ տեղը ուտուի ժողովքի խորանի սրահումը. Ամեն ինչ 27
որ նորա մսին դպչի՝ սուրբ պիտի լինի. և եթէ նորա արիւնից հանդերձով տայ, սուրբ տեղը լուանաս այն որով որ էր-ը տարուել է։ Եւ հողի ամանը որի մէջ 28
եռ է ածուել -ը-ը, պիտի կոտրուի. և եթէ պղնձի ամանի մէջ է եռացուած, պիտի շփուի և ջրով լուացուի։ Քահանայից բո- 29
լոր արուները պիտի ուտեն այն. այս ամենասուրբ է։ Եւ ամեն մեղ- 30
քի պատարագը՝ որի արիւնից ժողովքի խորանը բերուի սուրբ տեղի մէջ քաւութիւն անելու համար, պիտի չուտուի, կրակով պիտի այրուի։

ԳԼ. Է

Եւ այս է յանցանքի պատարա- 1
գի օրէնքը. այս ամենասուրբ է։
Ողջակէզը մորթած տեղը մորթեն 2
յանցանքի պատարագը, և նորա արիւնը արակէ սեղանի վերայ շուրջանակի. Եւ նորանից մատուցա- 3
նէ բոլոր ճարպը՝ այսինքն գմակը և փորոտիքը ծածկող ճարպը. Եւ երկու երիկամունքը և նորանց 4
վերայ և մէանաց վերայ եղած ճարպը և լեարդի վերայի թաղանթը երիկամունքներովը մէկ տեղ հանէ. Եւ քահանան այրէ 5
սրանց սեղանի վերայ Եհովային պատարագ լինելու. սա յանցանքի պատարագ է։ Քահանայից 6
ամեն արուն ուտէ այն. սուրբ տեղը ուտուի. սա ամենասուրբ է։ Ինչպէս է մեղքի պատարագը 7
այնպէս է և յանցանքի պատարագը, նորանց օրէնքը մէկ է. նորանով քաւութիւն անող քա- 8
հանայինը լինի այն։ Եւ մի քահանայ որ մատուցանում է մէկի ողջակէզը, այն ողջակէզի մորթը

*կամ կտոր կտոր եղած։

այն քահանային լինի որ մատուց-
9 բեց։ Եւ բոլոր թոնիրի մէջ եփ-
ուած՝ և բոլոր կաթսայի մէջ
և տապակի վերայ շինուած հացի
նուէրը, նորա մատուցանող քա-
10 հանային լինի։ Եւ ամեն իւղով
զանգուած՝ կամ չոր հացի նուէ-
րը՝ Ահարոնի բոլոր որդոցը լինի.
իւրար հաւասարին։
11 Եւ այս է Եհովային մատուցա-
նելու խաղաղութեան զոհի օրէն-
12 քը. Եթէ շնորհակալութեան հա-
մար մատուցանէ նորան, թող
մատուցանէ շնորհակալութեան
զոհի հետ իւղով զանգուած ան-
խմոր շօթեր և իւղով օծուած
անխմոր լաւաշներ և բարակ ա-
լիւրից իւղով զանգուած՝ հունց-
13 ուած շօթեր։ Շօթերի հետ խո-
մրեալ հացի նուէր մատուցանէ՝
շնորհակալութեան համար եղած
իր խաղաղութեան զոհի հետ։
14 Եւ նորանից այսինքն ամեն ըն-
ծաներից մէկ հատ բարձրացնելու
ընծայ մատուցանէ Եհովային. և
սա խաղաղութեան զոհի արիւնը
15 սրսկող քահանային լինի։ Եւ
նորա շնորհակալութեան համար
եղած խաղաղութեան զոհի միսը
ուտուի մատուցուած օրը. նո-
րանից մինչև առաւօտ չմնայ։
16 Եւ եթէ նորա պատարագը ուխ-
տի համար է կամ կամաւոր զոհ
է, զոհը մատուցած օրը ուտուի
և մնացածը հետևեալ օրը ուտ-
17 ուի։ Եւ զոհի միսից երրորդ օր-
ուայ մնացածը կրակով այրուի։
18 Եւ եթէ իր խաղաղութեան զոհի
միսից երրորդ օրն ուտուելու լի-
նի, ընդունելի պիտի չլինի, նորա
մատուցանողին պիտի չհամարուի,
պղծութիւն լինի, և նորանից
ուտող անձը իր անօրէնութիւնը
19 կրէ։ Եւ ամեն անմաքուր բանի
դպած միսը պիտի չուտուի, կր-
բակով պիտի այրուի. սակայն
20 ամեն մաքուրը ուտէ միսը։ Բայց
այն անձը՝ որ Եհովայի խաղաղու-
թեան զոհից միս ուտէ և ինքն
անմաքուր է, այն անձը իր ժողո-
21 վրդից պիտի կորչէ։ Եւ ամեն
անմաքուր բանի դպչող անձը թէ
մարդու անմաքրութեան՝ թէ ան-
մաքուր անասունի և թէ ամեն
կերպ անմաքուր *պիղծ բանի
դպչէ, եթէ Եհովայի խաղաղու-
թեան զոհի մսից ուտելու լինի,
այն անձն իր ժողովրդից պիտի
կորչէ։
22 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
23 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոցը
հետ և ասիր. Եզ և ոչխարի կամ
այծի ճարպ չուտէք։
24 Եւ մեռած անասունի ճարպը՝ և
պատառուածի ճարպը՝ ամեն գոր-
ծի մէջ գործածուի, բայց բնաւ
25 պիտի չուտէք նորանից։ Վասն
զի ով որ ուտելու լինի այն ա-
նասունի ճարպից, որ պատա-
րագ է մատուցուել Եհովային,
այն ուտող անձը իր ժողովրդից
26 պիտի կորչէ։ Եւ ձեր ամեն բնա-
կարաններուքը բնաւ արիւն պի-
տի չուտէք, թէ թռչունի լինի
27 և թէ անասունի։ Ամեն անձ որ
ինչ և իցէ արիւն ուտէ, այն ան-
ձը իր ժողովրդից պիտի կորչէ։
28 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
29 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոցը
հետ և ասիր. Իր խաղաղութեան
զոհը Եհովային մատուցանողը՝ իր
խաղաղութեան զոհից պատա-
30 րագ բերէ Եհովային։ Եհովայի
պատարագները իր ձեռքով բերէ.
ճարպը երբուծով բերէ, որ եր-
բուծը երերացնելու պատարագի
համար երերացնուի Եհովայի առ-
31 ջև։ Եւ քահանան ճարպը այրէ
սեղանի վերայ. բայց երբուծը Ա-
32 հարոնինը և նորա որդոցը լինի։ Եւ
աջ զիստը քահանային պիտի
տաք՝ բարձրացնելու պատարագի
համար ձեր խաղաղութեան զոհե-
րից։ Ահարոնի որդիներից ով որ
33 խաղաղութեան զոհի արիւնը և
ճարպը մատուցանէ, աջ զիստը
34 նորա բաժինը լինի։ Վասն զի նո-
րանց խաղաղութեան զոհերից ե-
րերացնելու երբուծը և բարձրաց-
նելու զիստը Իսրայէլի որդիներից
վեր առի, և յաւիտենական կա-
նոնով Իսրայէլի որդիներից՝ Ահա-
րոն քահանային և նորա որդոցը
35 տուի նորանց։ Սա Եհովայի պա-

---

*կամ սղունի

տարագներից Ահարոնի և նորա որդոց օծման համար է՝ նորանց Եհովային քահանայութիւն ա-
36 նելու մատեցրած օրը։ Որ Եհովան պատուիրեց տալ նորանց՝ իրանց օծուած օրը՝ Իսրայէլի որդիներից իրանց ցեղերի մէջ յաւիտենական կանոնով։

37 Այս է ողջակէզի՝ հացի նուէրի և մեղքի պատարագի և յանցանքի պատարագի և ձեռք լցնելու և խաղաղութեան զոհի օ-
38 րէնքը, Որ Եհովան պատուիրեց Մովսէսին Սինայ լեառնումը, այն օրը որ նա Իսրայէլի որդոցը պատուիրեց իրանց պատարագները Եհովային մատուցանելու Սինայի անապատումը։

ԳԼ. Ը

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Առ Ահարոնն և նորա որդիքը նորա հետ, և զգեստները և օծման իւղը և մեղքի պատարագի զուարակը և երկու խոյերը
3 և անխմոր հացի սակառը. Եւ բոլոր ժողովքը ժողովիր ժողովքի
4 խորանի դուռը։ Եւ Մովսէս արաւ Եհովայի իրան պատուիրածին պէս. և ժողովքը ժողովեցաւ ժողովքի խորանի դուռը։
5 Եւ Մովսէս ասաց ժողովքին. Սա է այն բանը որ Եհովան պատուիրեց անելու։
6 Եւ Մովսէսը մօտեցրեց Ահարոնին և նորա որդոցը և ջրով լուացաւ նորանց։
7 Եւ հագցրեց նորան շապիկը, և նորա մէջքը կապեց գօտին, և պատմուճանը հագցրեց նորան և էփուդը նորա վերայ դրեց, և էփուդի ժապաւէնովը գօտեպնդեց նորան, և նորանով զգեստաւորեց նորան։
8 Եւ լանջապանակը նորա վերայ դրաւ, և լանջապանակին անդկացրեց Ուրիմը և Թումիմը։
9 Եւ խոյրը նորա գլխին դրաւ, և խոյրի վերայ դրաւ նորա առաջի կողմից ոսկի թիթեղը՝ սրբինքն սուրբ պսակը, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։
10 Եւ Մովսէսն առաւ օծման իւղը, և օծեց խորանը և բոլոր նորա մէջի եղածները, և սրբեց նորանց։ Եւ արեց նորանից եօթն անգամ. և օծեց սեղանը և նորա բոլոր գործիքները՝ և աւազանը և նորա խարիսխը, նորանց սրբելու համար։ Եւ թափեց օծման իւղիցը Ահարոնի գլխի վերայ և օծեց նորան սրբելու համար։ Եւ Մովսէս մօտեցրեց Ահարոնի որդիներին, և շապիկներ հագցրեց նորանց, և նորանց մէջքներին գօտի կապեց, և նորանց գլխէն սպասքներ փաթաթեց, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։

Եւ մեղքի պատարագի զուարակը մօտեցրեց. և Ահարոն ու նորա որդիքը իրանց ձեռքերը մեղքի պատարագի զուարակի գլխին դրին։ Եւ մորթեց. և Մովսէսն առաւ արիւնը, և իր մատովը սեղանի եղջիւրներին քսեց շուրջանակի, և մաքրեց սեղանը. և արիւնը սեղանի յատակի վերայ թափեց, և նորա վերայ քաւութիւն անելու համար՝ սրբեց նորան։ Եւ առաւ փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը, և լեարդի թաղանթը, և երկու երիկամունքը, և նորանց ճարպը, և Մովսէսն այրեց սեղանի վերայ։ Բայց զուարակը, մաշկն նորա մորթը և միսը և նորա աղբը, բանակից դուրս կրակով այրեց, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։

Եւ ողջակէզի խոյը մօտեցրեց. և Ահարոն ու նորա որդիքը իրանց ձեռքերը խոյի գլխին դրին։ Եւ մորթեց. և Մովսէսը շուրջանակի սեղանի վերայ արակեց արիւնը։ Եւ խոյին կտոր կտոր արաւ. և Մովսէսն այրեց գլուխը և կտորները և ճարպը։ Եւ փորոտիքն ու ոտքերը ջրով լուացաւ. և Մովսէսն այրեց բոլոր խոյը սեղանի վերայ. սա ողջակէզ՝ անուշահոտ պատարագ էր Եհովայի համար, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։

Եւ մօտեցրեց միւս խոյը, սրբինքն լցնելու խոյը. և Ահարոն ու նորա որդիքը իրանց

ձեռքերը խոյի գլխի վերայ դրին.
23 եւ մորթեց. և Մովսէսը նորա արիւնից առաւ, և քսեց Ահարոնի աջ ականջի բլթակին, և նորա աջ ձեռքի մեծ մատին, և
24 նորա աջ ոտքի մեծ մատին: Եւ մատեցրեց Ահարոնի որդիքը, և Մովսէսը այն արիւնից քսեց նորանց աջ ականջների բլթակներին, և նորանց աջ ձեռքերի մեծ մատերին, և նորանց աջ ոտքերի մեծ մատերին. և շուրջ արիւնը Մովսէսը սեղանի վերայ շուրջ-
25 նակի սրսկեց: Եւ առաւ ճարպը, դմակը, և փորոտիքի վերայ եղած բոլոր ճարպը, և լեարդի թաղանթը, և երկու երիկամունքը, և նորանց ճարպը, և աջ զիստը.
26 եւ Եհովայի առջեւի անխմոր հացի սակառից մի անխմոր շօթ, մի խեղով հացի շօթ, և մի լաւաշ առաւ, և ճարպերի վերայ
27 և աջ զօտի վերայ դրաւ: Եւ առնելը դրաւ Ահարոնի և նորա որդոց ձեռք և երերացրեց նորանց Եհովայի առջեւ երերացնելու պա-
28 պատարագ: Եւ Մովսէսը նորանց ձեռքից առաւ նորանց, և սեղանումն եղած ողջակէզի վերայ սրբեց. որանք յե-ից լցնելու համար անուշահոտ պատարագ էին
29 Եհովայի համար: Եւ Մովսէսն առաւ երրուժը և Եհովայի առջեւ երերացնելու պատարագ երերացրեց. սա յե-ից լցնելու խոյիցը Մովսէսի բաժինը եղաւ, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուի-
30 րել էր: Եւ Մովսէսն օծմանի իւղից ու սեղանի վերայ եղած արիւնից առաւ և սրսկեց Ահարոնի վերայ և նորա հանդերձների վերայ՝ և նորա հետ նորա որդոց վերայ և նորա որդոց հանդերձների վերայ. և սրբեց Ահարոնին, նորա հանդերձները՝ և նորա հետ նորա որդիներին և նորա որդոց հանդերձները:
31 Եւ Մովսէսն ասաց Ահարոնին և նորա որդոցը. Միսը ժողովքի խորանի դրանը եփեցէք, և այնտեղ կերէք այն և ձեռք լցնելու սակառի մէջի հացերը, ինչպէս որ ես պատուիրուեցայ ասելով

թէ Ահարոնն ու նորա որդիքը ուտեն նորանից: Եւ մնիցն ու հացից աւելցածը կրակով այրեցէք: Եւ եօթը օր ժողովքի խորանի դռնից դուրս մի գաք, մինչև ձեր ձեռք լցնելու օրերի վերջի օրը. վասն զի ձեր ձեռքերը եօթը օր կ'լցնեն: Ինչպէս որ այսօր արին, Եհովան պատուիրեց ձեզ համար քաւութիւն անելու:
35 Եւ ժողովքի խորանի դրանը նստեցէք ցերեկը և գիշերը եօթը օր, և Եհովայի պահպանութիւնը արէք՝ որ չմեռնէք. որովհետև ինձ այսպէս է պատուիրուած:
36 Եւ արաւ Ահարոնը ու նորա որդիքը այն բոլոր բաները որ Եհովան Մովսէսին պատուիրել էր:

ԳԼ. Թ

1 Եւ եղաւ ութերորդ օրը որ Մովսէսը կանչեց Ահարոնին և նորա
2 որդոցը և Իսրայէլի ծերերին. Եւ ասաց Ահարոնին. Առ դու մեղքի պատարագի համար արջառներից մի զուարակ, և ողջակէզի համար մի խոյ. անարատ լինին. և Եհովայի առջեւ մատեցրու:
3 Եւ Իսրայէլի որդոցը հետ խօսիր՝ ասելով. Առէք մեղքի պատարագի համար այծերից մի նոխազ և ողջակէզի համար մի զուարակ և մի գառն մէկ տարեկան՝ անարատ լինին:
4 Նաև մի ցուլ և մի խոյ իրր խաղաղութեան զոհ Եհովայի առջեւ զոհելու համար, և իւղով զանգուած հացի նուէր. վասն զի այսօր Եհովան ձեզ պիտի երեւայ:
5 Եւ Մովսէսի պատուիրածն առին բերին ժողովքի խորանի առջեւ. և բոլոր ժողովքը մօտեցան և կանգնեցին Եհովայի առջեւ:
6 Եւ Մովսէսն ասաց. Այս է Եհովայի պատուիրած բանը. այս արէք, և Եհովայի փառքը ձեզ կերեւայ:
7 Եւ Մովսէսն ասաց Ահարոնին. Մօտեցիր սեղանին, և արա քո մեղքի պատարագը և ողջակէզը, և քաւութիւն արա քեզ համար և ժողովրդի համար. և արա ժողովրդի պատարագը և նո-

բանց համար քաւութիւն արա՝ ինչպէս որ Եհովան պատուիրել էր
8 Եւ Ահարոնը մօտեցաւ սեղանին, և մոլթեց իր համար եղած մեղքի պատարագի զուարակը։
9 Եւ Ահարոնի որդիքը արիւնը մօտեցրին նորան. և նա իր մատը արիւնին թաթախեց, և սեղանի եղջիւրներին քսեց. և ճաթած արիւնը թափեց սեղանի յատակի
10 վերայ. բայց մեղքի պատարագից ճարպը և երիկամունքները և լեարդի թաղանթը սեղանի վերայ այրեց, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։
11 Եւ միսն ու մոլթը բանակից դուրս կրակով այրեց։
12 Եւ ողջակէզը մորթեց. և Ահարոնի որդիքը արիւնը նորան ներկայացրին, և սրսկեց նորան սեղանի վերայ շուրջանակի։
13 Եւ ներկայացրին նորան ողջակէզը կտորներով և գլուխը,
14 և այրեց սեղանի վերայ։ Եւ փորոտիքն ու ոտքերը լուացաւ, և այրեց սեղանի վերայի ողջակէզի վերայ։
15 Եւ մօտեցրեց ժողովրդի ընծան, և առաւ ժողովրդի համար մեղքի պատարագի նոխազը, և մորթեց նորան, և մեղքի պատարագ արաւ առաջինի պէս։
16 Եւ ողջակէզը մօտեցրեց, և ըստ օրինի մատուցրեց։
17 Եւ հացի ընծան մօտեցրեց, և ձեռքը լցրեց նորանից և այրեց սեղանի վերայ, բացի առաւօտեան ողջակէզից։
18 Եւ ժողովրդի խաղաղութեան զոհի արջառն ու խոյը մորթեց. և Ահարոնի որդիքը արիւնը նորան ներկայացրին, և սեղանի վերայ
19 շուրջանակի սրսկեց այն։ Եւ արջառից՝ ճարպերը և խոյից՝ գմակը և փորոտիքը ծածկող ճարպը, և երիկամունքները և լեարդի թաղանթը.
20 Եւ ճարպերը երկուծներբի վերայ դրին, և այրեց ճարպերը սեղանի վերայ։
21 Եւ Ահարոնը՝ երկուծները ու աջ գիսատ երերացրեց Եհովայի առջև երերացնելու պատարագ, ինչպէս որ Մովսէսը պատուիրել էր։
22 Եւ Ահարոն իր ձեռքերը ժողովրդի վերայ բարձրացրեց, և օրհնեց նորանց. և մեղքի պատարագն ու ողջակէզը և խաղաղութեան զոհերը մատուցանելուց
23 յետոյ իջաւ։ Եւ Մովսէսն ու Ահարոն ժողովքի խորանը մտան, և դուրս գալիս ժողովրդին օրհնեցին. և Եհովայի փառքը բոլոր ժողովրդին երևեցաւ։
24 Եւ Եհովայի առջևից կրակ ելաւ, և այրեց սեղանի վերայի ողջակէզը և ճարպերը. և բոլոր ժողովուրդը տեսնելով՝ աղաղակեցին, և իրանց երեսների վերայ ընկան։

ԳԼ. Ժ

1 Եւ Ահարոնի որդիքն՝ Նադաբն ու Աբիուդը ամեն մէկն իր բուրվառն առաւ, և նորանց մէջը կրակ դրին, և վերան խունկ դրին, և Եհովայի առջև օտար կրակ մատուցրին, որ ինքը չէր պատուիրել նորանց։
2 Եւ Եհովայի առջևից կրակ ելաւ, և սպառեց նորանց, և Եհովայի առջևը մեռան։
3 Եւ Մովսէսն ասաց Ահարոնին. Սա այն է որ Եհովան խօսեց ասելով. Ինձ մօտեցողներովը պիտի սրբուիմ, և բոլոր ժողովրդի առջև պիտի փառաւորուիմ. և Ահարոնը լռեց։
4 Եւ Մովսէսը կանչեց Ահարոնի հօրեղբայր՝ Ոզիէլի որդիք Միսայէլին և Եղիսափանին, և ասաց նորանց. Մօտեցէք, ձեր եղբայրներին սրբարանի առջևից բանակիցը դուրս տարէք։
5 Եւ նորանք մօտեցան և տարին նորանց իրանց շապիկներովը բանակից դուրս։
6 Եւ Մովսէսն ասաց Ահարոնին՝ և նորա որդկանցը՝ Եղիազարին և Իթամարին. Ձեր գլուխները մի բանաք, և ձեր հանդերձները մի պատառէք, որ չմեռնէք, և բոլոր ժողովրդի վերայ բարկութիւն չգայ. բայց ձեր եղբայրները՝ Իսրայէլի բոլոր տունը՝ թող Եհովայի արած այրուձի վերայ լացլինեն։
7 Եւ դուք ժողովքի խորանի դռնիցը դուրս մի ելնէք, որ չմեռնէք. վասն զի Եհովայի օծման իւղը ձեր վերայ է. և նորանք Մովսէսի խօսքի պէս արին։

8 Եւ Եհովան խօսեց Ահարոնի
9 հետ ասելով. Եհովայի ժողովքի
խորանը մտնելիս գինի և օղի չը
խմէք, թէ դու և թէ քո որդիքը
քեզ հետ, որ չմեռնէք. սա ձեր
ազգերի մէջ յաւիտենական կա-
10 նոն լինի, Սուրբի և անսուրբի
մէջտեղը, և անմաքուրի ու մա-
քուրի մէջտեղը տարբերելու հա-
11 մար. և Իսրայէլի որդոցը այն
բոլոր կանոնները սովորեցնելու
համար, որ Եհովան Մովսէսի
ձեռքով խօսել է նորանց հետ:
12 Եւ Մովսէսը խօսեց Ահարոնի
հետ և նորա մնացած որդիքը Ե-
ղիազարի ու Իթամարի հետ, Ե-
հովայի պատարագներից ասելա-
ցած հացի նուէրն առէք, և սե-
ղանի մօտ բաղարջ կերէք. վասն
13 զի նա ամենասուրբ է: Սուրբ
տեղը կերէք նորան. վասն զի Ե-
հովայի պատարագներից քո ի-
րաւունքն ու քո որդոց իրաւունքն
է. որովհետև ինձ այսպես է պատ-
14 ուիրուած: Եւ երերացնելու եր-
բուծը և բարձրացնելու զիստը
դու և քո որդիքը և քո աղջիկ-
ները քեզ հետ մի մաքուր տեղ
պիտի ուտէք. վասն զի Իսրայէլի
որդոց խաղաղութեան զոհերից
տրւում է իրեւ քո իրաւունք և
15 քո որդոց իրաւունք: Բարձրաց-
նելու զիստը և երերացնելու եր-
բուծը ճարպի պատարագներով
Եհովայի առջև բերեն երերացնե-
լու համար. և քոնը և քեզ հետ
քո որդոցը լինի յաւիտենական
կանոնով. ինչպես որ Եհովան
պատուիրել է:
16 Եւ Մովսէսը մեղքի պատարա-
գի նոխազը զգուշութեամբ որո-
նեց, և ահա այրուած էր. և Ա-
հարոնի մնացած որդիք՝ Եղիազա-
րի և Իթամարի վերայ բարկացա-
17 ասելով. Ինչո՞ւ մեղքի պատարա-
գը սուրբ տեղումը չկերաք. քան-
զի սա ամենասուրբը է, և Եհո-
վան այն տուաւ ձեզ որ ժողովքի ա-
նօրէնութիւնը վեր առնէք Եհո-
վայի առջև նորանց համար քա-
18 ւութիւն անելով: Ահա նորա
արիւնը սրբարանի մէջը չբերուե-
ցաւ. դուք պիտի ուտէիք այն
իմ պատուիրածի պէս սուրբ տե-
ղը: Եւ Ահարոն ասաց Մովսե- 19
սին. Ահա այսօր իրանց մեղքի
պատարագն ու ողջակէզը Եհովա-
յի առջև մատուցին, և ինձ այս-
պիսի բաներ պատահեցին, և Ե՞թէ
այսօր մեղքի պատարագն ուտէի,
Եհովայի առջև հաճոյ կ'լինէր
արդեօ՞ք: Եւ Մովսէսը լսեց, և 20
հաւանեց:

ԳԼ. ԺԱ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 1
Ահարոնի հետ ասելով նորանց.
խօսեցէք Իսրայէլի որդոց հետ և 2
ասացէք. Սոյս են այն անա-
սունները որ կարող էք ուտել
երկրի վերայ եղած բոլոր անա-
սուններից. Ամեն կճղակաւոր և 3
կճղակը ճեղքուած որոճացող ա-
նասունը ուտէք: Բայց որոճա- 4
ցողներից, և կճղակաւորներից
որանց պիտի չուտէք. ուղտը,
որովհետև նա որոճում է, բայց
կճղակաբաշխ չէ, նա անմաքուր
լինի ձեզ համար: Եւ ճապարը, 5
քանզի որոճում է, բայց կըճ-
ղակաբաշխ չէ, նա անմաքուր լի-
նի ձեզ համար: Եւ նապաստակը, 6
քանզի որոճում է, բայց կըճ-
ղակաբաշխ չէ, նա անմաքուր լի-
նի ձեզ համար: Եւ խոզը, քանզի 7
որում կճղակաւոր է և ճեղքուած
կճղակ ունի, բայց չէ որոճում,
նա անմաքուր լինի ձեզ համար:
Նորանց մսից չուտէք, և դիակ- 8
ներին չդպչէք. նորանք անմաքուր
են ձեզ համար:
Ջրերի մէջ բոլոր եղածներից 9
սորանց ուտէք. Ջրերի մէջ այ-
սինքն ծովերի մէջ և գետերի մէջ.
ամեն թև և թեփ ունեցողը ու-
տէք: Բայց չուտէք այն ամենը 10
որ թև և թեփ չունին ծովերի
մէջ և գետերի մէջ ջրերի բոլոր
սողուններից և ջրերի մէջ եղած
բոլոր շնչաւոր կենդանիներից
պիղծ լինին ձեզ համար: Եւ 11
պիղծ լինին նորանք ձեզ համար.
նորանց մսից պիտի չուտէք,
և նորանց դիերից պիտի զգուէք:
Ջրերի մէջ եղած բոլոր անթև և 12

անթեվի եղաձները պիղծ լինին
ձեզ համար։
13 Եւ թռչուններէն մէջ սորանցից
զզուեցէք. նորանք չուտուին,
պիղծ են. արծիւը, և պաշուճը,
14 և գետարծիւը, Եւ անգղը, և
15 ցինը իր տեսակի պէս, Ամեն ագ-
16 ռաւը իր տեսակի պէս, Եւ ջայ-
լամը, և բուն, և որորը, և բա-
17 զէն իր տեսակի պէս, Եւ հա-
պաւիրը, և հողամտղը, և քա-
18 ջահաւը, Եւ կարապը, և հաւա-
19 լուսը, և սև անգղը, Եւ արա-
գիլը, քարտզրը իր տեսակի պէս,
և յոպոպը, և չիղջը։
20 Ամեն չորս ոտքի վերայ գնա-
ցող թռչող զեռուն պիղծ լինի
21 ձեզ համար։ Իսկ սորանց ուտէք.
բոլոր չորս ոտքի վերայ գնացող
թռչող զեռուններէց՝ երկրի վե-
րայ ոտտատելու համար իրանց
ոտքերի վերայ ազդր ունեցողնե-
22 րը։ Նորանցից սորանց ուտէք՝
մարեխն իր տեսակի պէս, և ջո-
եաւին իր տեսակի պէս, և խա-
րատզուլը իր տեսակի պէս, և օ-
23 ձամորան իր տեսակի պէս։ Բայց
ձաւցած բոլոր չորս ոտքով թռչող
զեռունները պիղծ լինին ձեզ հա-
24 մար. Եւ նորանցով դուք անմա-
քուր կ՚լինիք. ամեն նորանց դի-
ակներին դպչողը մինչև իրիկուն
25 անմաքուր լինի։ Եւ ամեն նորանց
դիակները վեր առնողը իր հան-
դերձները լուանայ, և մինչև իրի-
26 կուն անմաքուր լինի։ Բոլոր անա-
սուններէն որոնք կճղակաւոր են,
բայց կճղակը ճեղքուած չէ, և
չեն որճաւմ, անմաքուր են ձեզ
համար. ամեն նորանց դպչողը
անմաքուր լինի։
27 Եւ բոլոր չորս ոտքի վերայ գը-
նացող անասուններէն իրանց թա-
թերի վերայ գնացողներէն ամենը
անմաքուր լինի ձեզ համար. ամեն
նորանց դիակներին դպչողը մինչև
28 իրիկուն անմաքուր լինի։ Եւ նո-
րանց դիակները վեր առնողը իր
հանդերձները լուանայ, և մինչև իրի-
կուն անմաքուր լինի. նորանք անմաքուր են ձեզ համար։
29 Եւ երկրի վերայ սողացող սողուն-
ներէն մէջ սորանք անմաքուր լինին
ձեզ համար. արքիսը՝ և մուկը՝ և
30 տխտեռը իր տեսակի պէս, Եւ
անտկան և քոյրը՝ և լեզատան՝ և
խամէլեօնը՝ և գետնատիւծը։ Բոլոր
31 սողացողներէն մէջ ձեզ համար ան-
մաքուրները սորանք են. ամեն
ով որ նորանց մեռածին դպչի, մինչև իրիկուն անմաքուր լի-
նի։ Եւ ամեն բան ինչ բանի վերայ որ
32 նորանց մէկ մեռածը ընկնի, թէ
փայտի անօն լինի կամ հանդերձ՝
կամ մորթ կամ քուրձ, ինչ տե-
սակ գործածական անօն որ լինի՝
անմաքուր պիտի լինի. ջուրը պի-
տի գցուի այն, և մինչև իրիկուն
անմաքուր լինի, և յետոյ մաքուր
33 է։ Եւ ամեն ինչ հողի անօնի մէջ
որ նորանցից ընկնելու լինի, ամեն
ինչ որ նորա մէջ է անմաքուր
պիտի լինի, և այն տունը պիտի
34 կոտրէք։ Ամեն ուտելու կերա-
կուրը որի վերայ այն ջրից գայ,
անմաքուր պիտի լինի, նոյնպէս
ամեն այնպիսի անօնի մէջ եղած
բոլոր խմելու խմելիքը անմա-
35 քուր պիտի լինի։ Եւ ամեն բան՝
որի վերայ սորանց դիակը ընկնի,
անմաքուր պիտի լինի. Ե՛ թոնիր
և թէ վառարան՝ պիտի քան-
դուի. սորանք անմաքուր են, և
անմաքուր պիտի լինեն ձեզ հա-
մար։ Բայց ակրիւրը և հորը՝ և
36 ջրակոյտը, մաքուր պիտի լինի.
սակայն նորանց դիակներին դպչո-
ղը անմաքուր լինի։ Եւ եթէ նո-
37 րանց դիակը ցանուելու սերմի
վերայ ընկնի՝ նա մաքուր է։ Բայց
38 եթէ սերմի վերայ ջուր դրուած լինի
և նորա վերայ ընկնի նորանց դիա-
կը, նա ձեզ անմաքուր պիտի լինի։
Եւ եթէ ձեր ուտելու կենդա-
39 նիներից մէկը մեռնի, նորա դիա-
կին դպչողը մինչև իրիկուն ան-
մաքուր պիտի լինի։ Եւ նորա
40 դիակից ուտողը իր հանդերձնե-
րը պիտի լուանայ, և մինչև իրի-
կուն անմաքուր լինի. և նորա դի-
ակը վեր առնողը իր հանդերձնե-
րը պիտի լուանայ, և մինչև իրի-
կուն անմաքուր լինի։
Եւ երկրի վերայ սողացող ամեն
41 սողունը պիղծ է, պիտի չուտուի։
Երկրի վերայ բոլոր սողացող ո-
42

ղուններից ամեն իր փորի վերայ գնացողը՝ կամ ամեն չորս ոտքի վերայ գնացողը՝ մինչև ամեն բազմատանին պիտի չուտէք, վասն
43 զի նորանք պիղծ են։ Ձեր անձերը չպղծէք. ոչ մի սողացող ողունով. և նորանցով չպղծուիք և անմաքուր չդառնաք նորանցով։
44 Վասն զի ես եմ ձեր Եհովայ Աստուածը. ուրճին սրբեցէք ձեր անձերը և սուրբ եղէք, քանի որում ես սուրբ եմ. և չպղծէք ձեր անձերը երկրի վերայ ոչ մի սողացող
45 սողունով։ Վասն զի ես եմ Եհովան՝ որ ձեզ Եգիպտոսի երկրից հանեցի որ ձեզ համար Աստուած լինեմ և դուք սուրբ լինէք, վասն զի ես սուրբ եմ։
46 Այս է չորքոտանիների և թռչունների և ջրերի մէջ շարժող բոլոր շնչաւոր կենդանիների՝ և երկրի վերայ սողացող ամեն կենդա-
47 նիների օրէնքը. Անմաքուրի և մաքուրի մէջ և ուտուելու անասունի և չուտուելու անասունի մէջ տարբերութիւն անելու համար։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. խօսիր Իսրայէլի որդոցը հետ և ասիր. Եթէ մի կնիկ սերմ ընդունէ և արու զաւակ ծնէ, եօթն օր անմաքուր պիտի լինի. նորա դաշտանի զատուելու օրերի համեմատ անմաքուր պիտի լինի։
3 Եւ ութերորդ օրը անթլփատուե-
4 թեան մարմինը թլփատուի։ Եւ երեսուն երեք օր նա իր մաքրուելու արիւնովը նստէ. և բնաւ մի սուրբ բանի պիտի չդպչէ, ոչ էլ սրբարանը մտնէ մինչև իր մաքրուելու օրերի լրանալը։
5 Բայց եթէ աղջիկ ծնելու լինի, երկու շաբաթ անմաքուր պիտի լինի իր դաշտանի պէս, և վաթսունուվեց օր նստէ իր մաքրուելու արիւնովը։
6 Եւ տղայ կամ աղջիկ զաւակի համար իր մաքրուելու օրերը լրանալուց յետոյ, մի տարեկան գառն բերէ ողջակէզի համար և մեղքի պատարագի համար՝ մի աղաւնու ձագ կամ մի տատրակ ժողովքի խորանի դուռը քահանային մօտ։ Եւ նա մատուցանէ
7 նորան Եհովայի առջև և քաւութիւն անէ նորա համար, և նա իր արեանը աղբիւրից մաքրուի։ Արու կամ էգ զաւակ ծնողի օ-
8 րէնքը այս է։ Եւ եթէ նորա ձեռքը չհասնէ գառն բերելու, այն ժամանակ երկու տատրակ կամ աղաւնու երկու ձագ առնէ, մէկը ողջակէզի՝ և միւսը մեղքի պատարագի համար, և քահանան քաւութիւն անէ նորա համար, և նա մաքրուի։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
2 Ահարոնի հետ ասելով. Եթէ մի մարդու մարմնի մորթուքը ուռեցք կամ քոս կամ պայծառ լինի և նորա մարմնի մորթուքը բորոտութեան պատ դառնայ, այն ժամանակ նա Ահարոն քահանայի կամ նորա որդոց՝ քահանաներից մէկի մօտ տարուի։ Եւ
3 քահանան նայէ մարմնի մորթուքի եղած պատին. և եթէ պատի մազերը սպիտակի է փոխուել, և պատը մարմնի մորթուքից խոր է երեւում, բորոտութեան պատ է այն. և քահանան պիտի նայէ նորան՝ և անմաքուր հրատարակէ
4 նորան։ Իսկ եթէ նորա մարմնի մորթի մէջ պայծառը սպիտակ է՝ և մորթուքը խոր չէ երեւում, և մազն էլ սպիտակի չէ փոխուել, այն ժամանակ քահանան եօթը օր արգելուած պահէ նորան։ Եւ
5 քահանան եօթներորդ օրը նայէ նորան, և եթէ պատը իր կերպովը մնում է, և մորթի մէջ չէ տարածուել, այն ժամանակ քահանան եօթն օր էլ
6 արգելուած պահէ նորան։ Եւ քահանան եօթներորդ օրը դարձեալ նայէ նորան, և եթէ պատը շլացած լինի, և մորթի մէջ տարածուած չլինի, քահանան նորան մաքուր հրատարակէ. դա քոս է, և նա իր հանդերձները
7 լուանայ, և մաքուր է։ Բայց եթէ քոսը տարածուելու լինի մոր-

թուամբ նորա մաքրուելու համար քահանայից նայուելուց յետոյ, քահանային դարձեալ պիտի եւ
8 բևայ։ Եւ քահանան նայէ, և եթէ քոսը մորթումը տարածուել է, քահանան նորան անմաքուր հրատարակէ. բորոտութիւն է։
9 Երբոր մի մարդու վերայ բորոտութեան սխալը լինի, նա քա-
10 հանային մօտ պիտի տարուի։ Եւ քահանան պիտի նայէ. և եթէ մորթի մէջ սպիտակ ուռեցք կայ՝ և սպիտակի է փոխուել մազը՝ և ուռեցքի մէջ ողջ մսի կտոր կայ,
11 Սա նորա մարմնի մորթումը հնացած բորոտութիւն է, և քահանան նորան անմաքուր հրատարակէ, արգելուած չպահէ նորան, վասն զի անմաքուր է նա։
12 Եւ եթէ բորոտութիւնը տարածուել է մորթի մէջ, և սխտակների բոլոր մորթը գլխից մինչև ոտքը, այսինքն քահանային աչքերի բոլոր տեսած տեղը բորո-
13 տութիւնը պատել է, Եւ քահանան տեսնէ որ բորոտութիւնը նորա բոլոր մարմինը պատել է, այն ժամանակ սխտակներին մաքուր հրատարակէ. բոլորովին սպիտակի է փոխուել. նա մաքուր է։
14 Բայց այն օրը որ նորա վերայ ողջ միս տեսնուի, նա անմաքուր լի-
15 նի։ Եւ քահանան պիտի տեսնէ ողջ միսը, և նորան անմաքուր հրատարակէ. ողջ միսը անմա-
16 քուր է. բորոտութիւն է։ Իսկ եթէ ողջ միսը դարձեալ սպիտակի փոխուի, այն ժամանակ քա-
17 հանային մօտ պիտի գայ։ Եւ քահանան պիտի տեսնէ նորան. և եթէ սխալը սպիտակի է փոխուել, այն ժամանակ քահանան սխտակներին մաքուր հրատարակէ. նա մաքուր է։
18 Եւ եթէ մարմնի մորթի մէջ
19 պալար լինի և առողջանայ, Եւ պալարի տեղը սպիտակ ուռեցք՝ կամ մի քիչ կարմրած սպիտակ պաղպաջ լինի, քահանային պիտի
20 երևայ։ Եւ քահանան տեսնէ. և եթէ մորթից ցած երևայ, և մազը սպիտակի է փոխուել, քահանան նորան անմաքուր հրատարակէ, նա բորոտութեան սխտ է՝ պալարից տարածուած։ Եւ եթէ 21
քահանան տեսնէ որ սպիտակ մազ չկայ նորա մէջ, և մորթից ցած չէ՝ այլ շլացած է, այն ժամանակ քահանան եօթն օր արգելուած պահէ նորան։ Եւ եթէ 22
մորթի մէջ տարածուի, այն ժամանակ քահանան նորան անմաքուր հրատարակէ. սխտ է նա։ Բայց եթէ պաղպաջը իր տե- 23
ղը կեցայ՝ չէ տարածուել, նա պալարի սպին է. և քահանան նորան մաքուր հրատարակէ։
Իսկ եթէ մարմնի մորթի մէջ 24
կրակի այրած լինի, և այրածի հարուածը մի քիչ կարմրած սպիտակ՝ կամ սպիտակ պաղպաջ լինի, Եւ քահանան նորան նայէ, 25
եթէ պաղպաջի մէջ մազը սպիտակի է փոխուած, և մորթից խոր է երևում, նա բորոտութիւն է՝ այրածից տարածուած, և քահանան նորան անմաքուր հրատարակէ. դա բորոտութեան սխտ է։ Բայց եթէ քահանան նայէ, 26
որ պաղպաջի մէջ սպիտակ մազ չկայ, և մորթից ցած չէ, և շլացել է, այն ժամանակ քահանան եօթն օր արգելուած պահէ նորան։ Եւ եօթներորդ օրը քա- 27
հանան նայէ նորան. եթէ մորթի մէջ տարածուել է, քահանան նորան անմաքուր հրատարակէ. դա բորոտութեան սխտ է։ Եւ 28
եթէ պաղպաջը իր տեղը կեցայ՝ և մորթի մէջ չտարածուի, և շլացել է, դա այրածի ուռեցքն է. և քահանան նորան մաքուր հրատարակէ. վասն զի այրածի սպին է։
Եւ եթէ մի մարդու կամ կնո- 29
կան գլխին կամ ծնօտին սխտ լինի, Քահանան պիտի տեսնէ այն 30
սխտը. և եթէ մորթից խոր երևայ, և նորա մէջ բարակ դեղին մազ լինի, այն ժամանակ քահանան նորան անմաքուր հրատարակէ. դա գանգրութիւն է, գլխի կամ ծնօտի բորոտութիւն է։ Եւ 31
եթէ քահանան գանգրութեան սխտը տեսնէ՝ որ մորթից խոր չէ երևում, և նորա մէջ սև մազ

չկայ, այն ժամանակ քահանան
գոնջութեամբ ախտացածին եօթն
32 օր արգելուած պահէ։ Եւ եօթներորդ օրը քահանան ախտակիրին նայէ, և եթէ գոնջութիւնը չէ տարածուել, և նորա մէջ դեղին մազ չկայ, և գոնջութիւնը
33 մորթիցը խոր չէ երեւում, նա ածիլուի, բայց գոնջութիւնը չածիլէ. և քահանան կրկին եօթն
34 օր արգելուած պահէ գոնջութիւն ունեցողին։ Եւ եօթներորդ օրը քահանան գոնջութիւն ունեցողին նայէ. և եթէ գոնջութիւնը մորթի մէջ չէ տարածուել, և մորթիցը խոր չէ երեւում, այն
35 ժամանակ քահանան նորան մաքուր հրատարակէ. և նա իր հանդերձները պիտի լուանայ, և
36 մաքուր լինի։ Բայց եթէ իր մաքրուելուց յետոյ գոնջութիւնը մորթի մէջ տարածուի, Եւ քահանան նայէ նորան. և եթէ գոնջութիւնը մորթի մէջ տարածուել է, այն ժամանակ քահանան դեղին մազ չորոնէ, նա ան-
37 մաքուր է։ Բայց եթէ գոնջութիւնը իր կերպովը կեցած, և նորա մէջ սեւ մազ է բուսել, գոնջութիւնը բժշկուած է. նա մաքուր է, և քահանան նորան մաքուր հրատարակէ։

38 Եւ եթէ մի մարդ կամ կնիկ իր մարմնի մորթի մէջ պղպջներ՝
39 այսինքն սպիտակ պղպջներ ունենայ, Եւ քահանան նայէ, և եթէ նորանց մարմիններուն մորթի մէջի պղպջները շլացած սպիտակ լինեն, դա մորթի մէջ գոյացած պիսակ է, նա մաքուր է։

40 Եւ եթէ մի մարդու գլխի մազը թափուի, նա կուստ է. մաքուր
41 է։ Եւ եթէ նորա երեսի կողմիցը թափուի նորա գլխի մազերը, դա
42 ճեղ է. մաքուր է։ Բայց եթէ կնտուխեան կամ ճեղուխեան մէջ մի քիչ կարմրած սպիտակ վէրք լինի, նա նորա կնտուխեան կամ ճեղուխեան մէջ գոյացած
43 բորոտուխիւն է։ Այն ժամանակ քահանան նայէ նորան. և եթէ նորա կնտուխեան կամ ճեղուխեան մէջ վէրքի ուռեցքը մի քիչ կարմրած սպիտակ լինի մարմնի մորթի մէջ եղած բորոտուխեան երեւոյթի պէս, Ա-
44 յն մարդը բորոտ է, անմաքուր է. քահանան անպատճառ նորան անմաքուր հրատարակէ. նորա ախտը նորա գլուխին է։

Եւ ախտ ունեցող բորոտի հան-
45 դերձը պատռուած պիտի լինի, և նորա գլուխը մերկ, և նորա շրթունքները ծածկուած պիտի լինին, և "Անմաքուր անմաքուր"
46 պիտի կանչէ։ Ախտը նորա վերան եղած բոլոր օրերը անմաքուր պիտի լինի. նա անմաքուր է, մենակ նստէ. նորա բնակուխիւնը բանակիցը դուրս պիտի լինի։

Եւ այն հանդերձը՝ որի մէջը
47 բորոտուխեան ախտ կայ, թէ բրդի հանդերձ և թէ քթանի
48 հանդերձ, քթանեղէնի կամ բրդեղէնի, աւէշի կամ թեզանի մէջ՝ կամ մորթի մէջ և կամ մորթից շինուած ամեն բանի մէջ,
49 Այսինքն՝ եթէ հանդերձի կամ մորթի մէջ կամ աւէշի կամ թեզանի մէջ կամ մորթից շինուած ամեն իւղոտ բանի մէջ մի քիչ կանաչ կամ կարմրած ախտի նշան լինի, բորոտուխեան ախտ է, և
50 քահանային պիտի երեւայ։ Եւ քահանան նայէ ախտին՝ և եօթն օր արգելուած պահէ ախտացեալ
51 բանը։ Եւ եօթներորդ օրը ախտացեալ բանին նայէ. եթէ ախտը տարածուել է հանդերձի մէջ, կամ աւէշի կամ թեզանի մէջ, կամ մորթի մէջ, և կամ գործածուխեան համար մորթից շինուած ամեն բանի մէջ, այս ախտը բորբոքող բորոտուխիւն է. անմաքուր է։
52 Այն ժամանակ նա այրէ բրդեղէն կամ քթանեղէն հանդերձը՝ կամ աւէշը կամ թեզանը կամ ամեն կերպ մորթից շինուած բանը, որի մէջ այն ախտը կայ. վասն զի բորբոքած բորոտուխիւն է այն, կրակով պիտի այրուի։
53 Եւ եթէ քահանան տեսնէ, որ ախտը չէ տարածուել հանդերձի մէջ, կամ աւէշի կամ թեզանի մէջ կամ մորթից շինուած ամեն իւղոտ բանի մէջ,
54 Այն ժա-

մանակ քահանան հրամայէ, որ այն սխտացեալ բանը լուանան. և կրկին եօթն օր արգելուած
55 պահէ նորան։ Եւ սխտացեալ բանը լուացուելոյ յետոյ քահանան առնէ, եթէ սխտը իր կերպը չէ փոխել, և սխտը չէ տարածուել, նա անմաքուր է. կրակով այրես նորան. նորա տաատին կամ երեսին փտութիւն
56 կայ։ Եւ եթէ քահանան առնէ, որ նորա լուացուելոյ յետոյ սխտը շլացել է, այն ժամանակ պատառէ նորան այն հանդերձիցը կամ մորթիցը կամ առէջիցը և
57 կամ թելազանիցը։ Եւ եթէ այն հանդերձի մէջ, կամ առէջի կամ թելազանի մէջ, կամ մորթից շինուած բանի մէջ դարձեալ երեւալու լինի, նա տարածուած բծաբուխ է. իր վերայ սխտ ունեցող բանը կրակով այ-
58 բես։ Եւ այն հանդերձը, կամ առէջը կամ թելազանը, կամ մորթից շինուած բանը, որ լուացուելոյց յետոյ սխտը նորանից գնացել է, դարձեալ պի-
59 տի լուացուի, և մաքուր է։ Ըդդի կամ քթուանի հանդերձի մէջ, կամ առէջի կամ թելազանի մէջ, կամ մորթից շինուած ամեն բանի մէջ եղուցած բորոտութեան սխտի օրէնքը այս է, նորան մաքուր կամ անմաքուր հրատարակելու համար։

ԳԼ. ԺԴ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Սա լինի բորոտի օրէնքը իր մաքրուելու օրը. նա քահա-
3 նայի մօտ պիտի տարուի. Եւ քահանան բանակից դուրս պիտի ելնէ, և քահանան պիտի նայէ. և եթէ բորոտից բորոտութեան
4 սխտը բժշկուել է, Ահն ժամանակ քահանան հրամայէ, որ մաքրուելու համար երկու ողջ և մաքուր թռչուն և եղեւնափայտ և կրկնակի կարմիր և
5 ոսպայ առնուի։ Եւ քահանան հրամայէ, որ թռչնի մէկը մորթուի ճենճեղ ամանի մէջ կենդանի

ջրի վերայ։ Իսկ ողջ թռչունն ու եղեւնափայտը և կրկնակի կարմիրը և ոսպան առնէ, և ողջ թռչունի հետ կենդանի ջրի վերայ մորթուած թռչունի արիւնը պիտի թաթախէ։ Եւ բորոտութիւնից մաքրուելու մարդու վերայ եօթն անգամ սրսկէ, և մաքրէ նորան. և ողջ թռչունը դէպի դաշտն արձակէ։ Եւ մաքրուելու մարդն իր հանդերձները լուանայ, և իր բոլոր մազերն ածիլէ, և ջրով լուացուի. և մաքուր է, նորանից յետոյ բանակը մտնէ և եօթն օր իր վրանի դրսում կենայ։ Եւ եօթներորդ օրն իր բոլոր մազերը ածիլէ, իր գլուխն ու մօրուքը և յօնքերը՝ այսինքն իր բոլոր մազերը ածիլէ. և իր հանդերձները լուանայ, և իր մարմինը ջրով լուանայ, և մաքուր է։

Եւ ութերորդ օրը երկու անարատ գառն, և մէկ տարեկան մի անարատ էգ գառն, և հացի նուէրի համար եռդով զանազան երեք տասներորդ բարակ ալիւր, և մէկ *լոգ իւղ պիտի առնէ։ Եւ մաքրող քահանան մաքրուելու մարդուն արարողով Եհովայի առջև ժողովքի խորանի դրանը կանգնեցնէ։ Եւ քահանան այն արու գառն մէկն առնէ և մեռցնէ նորան յանցանքի պատարագի համար, և իւղի լոգին էլ. և նորանք Եհովայի առջև բերելու պատարագ երերացնէ։ Եւ գառը մորթէ մեղքի պատարագի և ողջակէզի մորթուած տեղը՝ սուրբ տեղը. վասն զի մեղքի պատարագի պէս յանցանքի պատարագն էլ քահանայինն է. սա ամենասուրբ է։ Եւ քահանան յանցանքի պատարագի արիւնից առնէ և քահանան քէ մաքրուելու մարդու աջ ականջի բլթակին և նորա աջ ձեռքի մեծ մատին և նորա աջ ոտքի մեծ մատին։ Եւ քահանան իւղի լոգիցն առնէ, և իր ձախ ձեռքի մէջ ածէ։ Եւ քահանան իր աջ մատը իր ձախ ձեռքի մէջ եղած իւղին թաթա-

*կշռ. է

խէ , և սրսկէ այն իւղովը իր մա-
տամբ Եհովայի առջև եօթն ան-
17 անգամ։ Եւ քահանան իր ձեռքի
մէջ մնացած իւղովը քսէ մաք-
րուելու մարդու ականջի լրլ-
թակին և նորա աջ ձեռքի մեծ
մատին և նորա աջ ոտքի մեծ
մատին յանցանքի պատարագի
18 արիւնի վերայից։ Եւ քահանան
իր ձեռքի մէջ մնացած իւղը մաք-
րուելու մարդու գլխին քսէ. և
նորա համար քաւութիւն անէ
19 Եհովայի առջև։ Եւ քահանան
մեղքի պատարագը մատուցանէ,
և իր անմաքրութիւնից մաքրուե-
լու մարդու համար քաւութիւն
անէ, և նորանից յետոյ ողջա-
20 կէզը մորթէ։ Եւ քահանան ող-
ջակէզն ու հացի նուէրը սեղանի
վերայ մատուցանէ, և նորա հա-
մար քաւութիւն անէ. և նա մաք-
րուր է։

21 Եւ եթէ նա աղքատ է և այս-
չափին նորա ձեռքը չհասնէ, այն
ժամնամակ նորա քաւութիւն ա-
նելու համար երերացնելու յան-
ցանքի պատարագի համար մի
գառն, և հացի նուէրի համար
իւղով զանգուած մի տասանորդ
բարակ ալիւր և մի լոգ իւղ առ-
22 նէ. Եւ երկու տատրակ կամ ա-
պառնու երկու ձագ, որին որ
ձեռքը հասնէ, և մէկը մեղքի
պատարագ՝ և միւսը ողջակէզ
23 լինի։ Եւ ութերորդ օրը իր մաք-
րուելու համար նորանք քահա-
նային մօտ բերէ ժողովքի խորանի
24 դուռը Եհովայի առջև։ Եւ քա-
հանան առնէ յանցանքի պատա-
րագի գառնը և իւղի լոգը, և
նորանց Եհովայի առջև երերաց-
25 նելու պատարագ երերացնէ։ Եւ
յանցանքի պատարագի գառնը
մորթէ, և առնէ քահանան յան-
ցանքի պատարագի արիւնից, և
քսէ մաքրուելու մարդու աջ ա-
կանջի լրլթակին և նորա աջ ձեռ-
քի մեծ մատին և նորա աջ ոտքի
26 մեծ մատին. Եւ քահանան իւ-
ղից աճէ իր ձախ ձեռքի մէջը,
27 Եւ քահանան սրսկէ իր աջ մա-
տովը իր ձախ ձեռքի մէջ եղած
իւղից Եհովայի առջև եօթն ան-
դամ։ Եւ քահանան քսէ իր ձեռ- 28
քի մէջ եղած իւղից մաքրուելու
մարդու աջ ականջի լրլթակին և
նորա աջ ձեռքի մեծ մատին և
նորա աջ ոտքի մեծ մատին յան-
ցանքի պատարագի արեան տեղի
վերայ։ Եւ քահանան իր ձեռքի 29
մէջ մնացած իւղը քսէ մաքրուե-
լու մարդու գլխին Եհովայի առ-
ջև նորա համար քաւութիւն ա-
նելով։ Եւ տատրակներից կամ 30
ապառնու ձագերից մէկը, որին
որ ձեռքը հասնէ. Այսինքն որին 31
որ ձեռքը հասել է, մէկը մեղքի
պատարագի համար՝ և միւսը ող-
ջակէզի համար՝ հացի նուէրի հետ
մէկտեղ մատուցանէ. և քահա-
նան մաքրուելու մարդու համար
քաւութիւն անէ Եհովայի առ-
ջև։ Ծորտութեան ախտ ունեցո- 32
ղի և իր մաքրուելու համար ձեռք
չհասնողի օրէնքը սա է։

Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 33
Ահարոնի հետ ասելով. Երբոր 34
քանանու երկիրը մտնէք՝ որ ես
տալիս եմ ձեզ ստացուածք լինե-
լու համար, և ես ձեր ստաց-
ուածքը եղած երկրի մէկ տանը
ծորտութեան հարուածը տալու
լինեմ, Այն տան տէրը պիտի 35
գայ, և իմացնէ քահանային՝ ա-
սելով. Ինձ երևում է թէ իմ
տանը ախտ կայ։ Եւ քահանան 36
հրամայէ, որ տունը դատարկեն,
դեռ ինքը տեսնելու ներս չմտած,
որպէս զի տանը եղած բաներից
մէկը անմաքուր չլինի. և յետոյ
քահանան մտնէ տունը տեսնե-
լու. Եւ ախտին նայէ, և եթէ 37
ախտը տան պատերի վերայ կայ՝
մի քիչ կանանչած կամ կարմրած
փոս տեղերով, և նորանք պատի
երեսից խոր են երևում, Այն 38
ժամնամակ քահանան տնից դուրս
գայ տանը դուռը, և եօթը օր
տունը կղպէ։ Եւ եօթներորդ օրը 39
քահանան դարձեալ գայ և նայէ.
և եթէ ախտը տանը պատերի վե-
րայ տարածուել է, Այն ժամա- 40
նակ քահանան հրամայէ, որ հա-
նեն այն քարերը որոնց վերայ կայ
ախտը, և քաղաքից դուրս մի
անմաքուր տեղ գցեն նորանց։ Եւ 41

տունը ներսից շուրջանակի քերել տայ, և նորանց քերած հողը քաղաքից դուրս մի անմաքուր տեղ
42 թափեն։ Եւ ուրիշ քարեր առնեն և այն քարերի տեղը դնեն, և ուրիշ հող առնեն, և տունը
43 ծեփեն։ Եւ եթէ քարերը հանելուց յետոյ՝ և տունը քերելուց և ծեփելուց յետոյ՝ ախտը դարձեալ գայ և տանը մէջ երևայ,
44 Ա֊յն ժամանակ քահանան գայ և նայէ. և եթէ ախտը տանը մէջ տարածուել է, դա այն տան մէջ բորբոքած բորոտութիւն է.
45 անմաքուր է այն։ Եւ տունը, այսինքն նորա քարերն ու փայտերը, և տան բոլոր հողը քանդէ, և քաղաքից դուրս մի անմաքուր տեղ տանէ։
46 Եւ ամեն ով որ այն տունը մտնէ նորա ամեն կղպուած օրերը, մինչև իրիկուն
47 անմաքուր լինի։ Եւ այն տանը պառկողը իր հանդերձները լուանայ, և այն տանը հաց ուտողը
48 իր հանդերձները լուանայ։ Եւ եթէ քահանան գայ և նայէ, որ տունը ծեփուելուց յետոյ ախտը տանը մէջ չէ տարածուել, այն ժամանակ քահանան այն տունը մաքուր հրամայէ. վասն զի
49 ախտը բժշկուած է։ Եւ այն տան մաքրութեան համար երկու թռչուն և եղևնափայտ և կրկնակի
50 կարմիր և զոպայ առնէ։ Եւ մորթէ թռչունի մէկը հողի ամանի
51 մէջ կենդանի ջրի վերայ։ Եւ եղևնափայտն և զոպան և կրկնակի կարմիրն և ողջ թռչունը առնէ, և մորթուած թռչնի արեանը և այն կենդանի ջրին թաթխէ, և եօթն անգամ տանը վերայ սրսկէ.
52 Եւ տունը մաքրէ թռչնի արիւնովը և այն կենդանի ջրով և այն ողջ թռչնով և եղևնափայտով և զոպայով և կրկնակի կարմրով.
53 Իսկ ողջ թռչունը քաղաքից դուրս դէպի դաշտը արձակէ, և այն տան համար քաւութիւն անէ, և նա մաքուր է։
54 Բոլոր բորոտութեան ախտի և
55 գոնջութեան,
56 բորոտութեան, Եւ հանդերձի կամ
ևւ ուռեցքի և քոսի և պղպջակի օրէնքը այս

է. Որոշելու համար թէ երբ է անմաքուր ու երբ մաքուր։ Բորոտութեան օրէնքը այս է։

ԳԼ. ԺԴ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
1 Ահարոնի հետ ասելով. Խօսեցէք
2 Իսրայէլի որդոց հետ և ասացէք նորանց. Երբոր մի մարդու մարմնից ծորում լինի, նորա ծորումը անմաքուր է։ Եւ սա լինի նորա
3 ծորումի ժամանակին նորա անմաքրութիւնը. Թէ նորա մարմնից ծորումը նորա ծորումը ծորէ, կամ նորա մարմինը իր ծորումից գոցուի, սա նորա անմաքրութիւնն է։ Ամեն անկողին՝ որի վերայ ծո-
4 րում ունեցողը պառկէ, անմաքուր է. և ամեն բան որի վերայ նա նստէ անմաքուր լինի։ Եւ
5 նորա անկողնին դպչող մարդը իր հանդերձները լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ
6 ծորում ունեցողի նստած բանի վերայ նըստողը իր հանդերձները պիտի լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ ծորում ունեցողի մարմնին
7 դպչողը իր հանդերձները պիտի լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ եթէ ծորում ունեցողը մի մար-
8 քուր մարդու վերայ թքելու լինի, նա իր հանդերձները պիտի լուանայ, և ինքը ջրով պիտի լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ ամեն թամբ,
9 որի վերայ ծորում ունեցողը հեծնէ, անմաքուր պիտի լինի։ Եւ
10 ամեն նորա տակին եղած բանին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի լինի. և նորանց վեր առնողը իր հանդերձները պիտի լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ ծորում ունեցողը իր ձեռքը
11 ջրով չողոցած որին որ դպչելու լինի, նա իր հանդերձները պիտի լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ ծորում ունեցողի դպած հողի ամանը պիտի
12

կոտրուի, և ամեն փայտի աման
13 ջրով պիտի ողողուի։ Եւ երբ ծո-
րուամ ունեցողն իր ծորումիցը
մաքրուի, իր մաքրուելու հա-
մար եօթն օր պիտի համարէ
իր համար, և իր հանդերձները
լուանայ, և իր մարմինը կենդանի
ջրի մէջ լուանայ. և մաքուր է.
14 Եւ ութերորդ օրը՝ երկու տատ-
րակ կամ ազաւնու երկու ձագ
պիտի առնէ իր համար, և ե՛կո-
ւին առջև ժողովքի խորանի
դուռը գայ, և նորանց քահանա-
15 յին տայ։ Եւ քահանան նորանց
մէկը մեղքի պատարագ՝ և միւսը
ողջակէզ անէ, և քահանան Ե-
հովայի առջև քաւութիւն անէ
նորա համար նորա ծորումիցը։
16 Եւ եթէ մի մարդու զուգաւո-
րութեան սերմը իրանից դուրս
գալու լինի, նա իր բոլոր մարմի-
նը ջրով պիտի լուանայ, և մին-
17 չև իրիկուն անմաքուր լինի։ Եւ
ամեն հանդերձ և ամեն մորթ՝ ո-
րի վերայ զուգաւորութեան սերմ
կայ, ջրով պիտի լուացուի, և
18 մինչև իրիկուն անմաքուր լինի։ Եւ
երբոր մի մարդ կնոջը հետ պառ-
կէ սերմի զուգաւորութեան հա-
մար, նորանք ջրով պիտի լուաց-
ուին, և մինչև իրիկուն անմա-
քուր լինեն։
19 Եւ եթէ մի կնիկ ծորում ու-
նենայ, և նորա մարմնի ծորումը
արիւն է, եօթն օր իր դաշտա-
նումը կինայ. և ամեն նորա դպը-
չողը մինչև իրիկուն անմաքուր
20 լինի։ Եւ նորա դաշտանի ժամա-
նակ ամեն ինչ բանի վերայ որ
պառկէ, այն բանը անմաքուր
պիտի լինի. և ինչ բանի վերայ
որ նստէ, այն բանը պիտի անմա-
21 քուր լինի։ Եւ ամեն նորա ան-
կողնին դպչողը իր հանդերձները
պիտի լուանայ, և ինքը ջրով
լուացուի, և մինչև իրիկուն ան-
22 մաքուր լինի։ Եւ ով որ դպչէ մի
բանի որի վերայ նա նստեց, իր
հանդերձները պիտի լուանայ, և
ինքը ջրով լուացուի, և մինչև ի-
23 րիկուն անմաքուր լինի։ Եւ նորա
անկողնին կամ մէկ բանին, որի
վերայ նա նստէ, դպչելիս մինչև
իրիկուն անմաքուր պիտի լինի։
Եւ եթէ մի մարդ նորա հետ ը-
24 ննայ՝ և նորա պղծութիւնը նորան
վրան պառկէ, և նորա պըղ-
ծութիւնը նորան դպչէ. այն մա-
րդը եօթն օր անմաքուր լինի, և
ամեն անկողին՝ որի վերայ նա
պառկէ՝ անմաքուր լինի։
25 Եւ մի կնիկ՝ եթէ տառանց դաշ-
տանի ժամանակը լինելու, իր
արեան ծորումը շատ օրեր ծորէ.
կամ իր դաշտանիցն աւելի ծորե-
լու լինի, իր անմաքրութեան ծո-
րումի բոլոր օրերը՝ իր դաշտանի
օրերի պէս պիտի լինի. նա ան-
մաքուր է։
26 Ամեն անկողին՝ որի վերայ նա պառկէ իր ծորումի բո-
լոր օրերը, իր դաշտանի անկողնի
պէս պիտի լինի իր համար, և ա-
մեն ինչ բանի վերայ որ նստէ,
իր դաշտանի անմաքրութեան պէս
անմաքուր պիտի լինի։
27 Եւ ամեն նորանց դպչողը անմաքուր պիտի
լինի, և իր հանդերձները պիտի
լուանայ, և ինքը ջրով լուացուի,
և մինչև իրիկուն անմաքուր լինի։
28 Եւ եթէ իր ծորումիցը մաքրուի,
այն ժամանակ եօթն օր պիտի
համարէ իր համար, և յետոյ
մաքուր է։
29 Եւ ութերորդ օրը՝ եր-
կու տատրակ կամ ազաւնու եր-
կու ձագ առնէ իր համար, և
նորանց բերէ ժողովքի խորանի
դուռը քահանային մօտ։
30 Եւ քա-
հանան՝ մէկը մեղքի պատարագ
և միւսը ողջակէզ անէ. և քա-
հանան Եհովայի առջև քաւու-
թիւն անէ նորա համար նորա
մաքրութեան ծորումից։
31 Այսպէս Իսրայէլի որդիքն ի-
րանց անմաքրութիւնից զգու-
շացնէք, որ իրանց մէջ եղած իմ
խորանը պղծելով՝ իրանց անմաք-
րութեան պատճառով չմեռնեն։
32 Ծորում ունեցողի և իրանից զու-
գաւորութեան սերմը դուրս գա-
լով անմաքուր եղողի,
33 Եւ իր դաշ-
տանովը հիւանդ եղող կնկան և
ծորում ունեցող մարդու կամ
կնկան՝ և անմաքուր կնկան հետ
պառկող մարդու օրէնքը սա է։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ,

Ա.Հարոնի երկու որդոց մեռնելուց յետոյ, որոնք ԵՀովային առջև
2 մատեցան և մեռան. ԵՀովան ասաց Մովսէսին. խօսիր քո եղբայր Ա.Հարոնի հետ, որ ամեն ժամանակ սուրբ տեղը չմտնէ՝ վարագուրի ներսը տապանակի վերայ եղած քաւութեան առջև, որ չմեռնէ. վասն զի ամպի մէջ պիտի երևամ քաւութեան
3 վերայ։ Ա.Հարոնն այս բաները մտնէ սրբարանը. մի զուարակով՝ մեղքի պատարագի համար, և մի
4 խոյով՝ ողջակէզի համար։ Կտաւի սուրբ շապիկ հագնէ, և իր մարմնոյ վերայ կտաւի վարտիք ունենայ, և իր մէջքը կտաւի գօտի կապէ, և իր գլխին կտաւի խոյր դնէ. սորանք սուրբ զգեստներ են. և իր մարմինը ջրով պիտի լուանայ, և յետոյ հագնէ նորանց։
5 Եւ Իսրայէլի որդոց ժողովքից այծերից երկու նոխազ առնէ մեղքի պատարագի համար, և մէկ
6 խոյ ողջակէզի համար։ Եւ Ահարոնը մատուցանէ այն մեղքի պատարագի զուարակը, որ իր համար է, և քաւութիւն անէ իր
7 համար և իր տան համար։ Եւ երկու նոխազը առնէ և ԵՀովային առջև ժողովքի խորանի դրանը
8 կանդնեցնէ։ Եւ Ա.Հարոնն այն երկու նոխազների վերայ վիճակներ ձգէ. մէկ վիճակը ԵՀովային համար, և միւս վիճակը ապատարձակուող նոխազի համար։
9 Եւ Ա.Հարոնը մօտեցնէ այն նոխազը որի վերայ ԵՀովային վիճակը ելաւ, և մեղքի պատարագ անէ
10 նորան։ Եւ այն նոխազը որի վերայ ապատարձակուող նոխազի վիճակը ելաւ, ԵՀովային առջև ողջ կանդնեցնէ՝ որ նորան համար քաւութիւն անէ, որ բաց թողնէ նորան իբրև ապատարձակուող նոխազ դէպի անապատը։

11 Եւ Ա.Հարոնը մատուցանէ այն մեղքի պատարագի զուարակը, որ իր համար է, և քաւութիւն անէ իր համար և իր տան համար, և մորթէ իր մեղքի պատարագի
12 զուարակը։ Եւ ԵՀովային առջև եղած սեղանի վերայից բուրվա-

ռը լիքը կրակի կայծեր առնէ, և բարակ ձեծուած անուշահոտ խնկից իր ձեռքերը լցնէ, և վարագուրի ներսը տանէ։ Եւ խունկը 13
այն կրակի վերայ դնէ ԵՀովային առջև, և խնկի ամպը վկայութեան վերայի քաւութիւնը ծածկէ, և նա չի մեռնիլ։ Եւ այն 14
զուարակի արիւնից առնէ, և իր մատովը քաւութեան վերայ արևելեան կողմը սրսկէ, և իր մատովը արիւնից քաւութեան առջև եօթն անգամ սրսկէ։

Եւ մորթէ մեղքի պատարագի 15
նոխազը որ ժողովրդի համար է, և նորա արիւնը վարագուրի ներսը տանէ. և նորա արիւնն անէ ինչպէս որ արաւ զուարակի արիւնովը, այսինքն քաւութեան վերայ և քաւութեան առջև սրսկէ այն։ Եւ սրբարանի համար քա- 16
ւութիւն անէ՝ Իսրայէլի որդոց անմաքրութիւններից և նորանց բոլոր մեղքերի յանցանքներից, և այսպէս անէ ժողովքի խորանի համար, որ նորանց հետ է լինում նորանց անմաքրութիւնների մէջ։ Եւ 17
ոչ մի մարդ ժողովքի խորանում պիտի չլինի քաւութիւն անելու համար սրբարանը մտած ժամանակ, մինչև նորա դուրս գալը որ իր համար և իր տան համար և Իսրայէլի բոլոր ժողովքի համար քաւութիւն անէ։ Յետոյ երթէ ԵՀո- 18
վային առջև եղած սեղանը, և նորա համար քաւութիւն անէ. և առնէ զուարակի արիւնից և նոխազի արիւնից, և քսէ սեղանի եղջիւրների վերայ շուրջանակի։ Եւ արիւնից իր մատովը 19
եօթն անգամ նորա վերայ սրսկէ. և Իսրայէլի որդոց անմաքրութիւններից մաքրէ նորան, և սուրբ անէ նորան։

Եւ վերջացնէ սրբարանի և ժո- 20
ղովքի խորանի և սեղանի համար քաւութիւն անելը, և յետոյ ողջ նոխազը մօտեցնէ. Եւ Ա.Հարոնն 21
իր երկու ձեռքերը ողջ նոխազի գլխին դնէ, և խոստովանէ նորա վերայ Իսրայէլի որդոց բոլոր անօրէնութիւնները և նորանց բոլոր յանցանքները իրանց բոլոր

մեղքերովը. և նորանց դնէ նոխազի գլխին և մի պատրաստ մարդու ձեռքով ուղարկէ անապատ։ 22 Եւ նոխազն նորանց բոլոր անօրէնութիւնները իր վերայ մի անբնակ երկիր տանէ. և նա անապատումը թող տայ նոխազին։

23 Եւ Ահարոնը մտնէ ժողովքի խորանը, և սրբարանը մտնելու ժամանակին հանէ հագած կտաւի հանդերձները, և նորանց այնտեղ դնէ։ 24 Եւ իր մարմինը ջրով լուանայ տեղը, և իր հանդերձները հագնէ և ելնէ իր ողջակէզն և ժողովրդի ողջակէզը մատուցանէ, և իր համար և ժողովրդի համար քաւութիւն անէ։ 25 Եւ մեղքի պատարագի ճարպը սեղանի վերայ այրէ։

26 Եւ այն նոխազն իբրև ազատ արձակուելու նոխազ տանողը իր հանդերձները լուանայ, և իր մարմինը ջրով լուանայ, և այնուհետև բանակը մտնէ։

27 Եւ այն մեղքի պատարագի ցուրտակը և մեղքի պատարագի նոխազը՝ որոնց արիւնը քաւութիւն անելու համար սուրբը տեղը բերուեցաւ, բանակից դուրս հանեն, և նորանց մորթերն և նորանց մսերը և նորանց աղբը կրակով այրեն։ 28 Եւ նորանց այրողն իր հանդերձները պիտի լուանայ, և մարմինը ջրով լուանայ, և այնուհետև բանակը մտնէ։

29 Եւ սա ձեզ համար յաւիտենական կանոն լինի, որ եօթներորդ ամսուն ամսուայ տասներորդին ձեր անձերը պիտի խոնարհեցնէք, և ընաւ մի գործ չգործէք, թէ երկրացին և թէ ձեր մէջ պանդխտացող օտարականը։ 30 Վասն զի այն օրը քահանան ձեզ համար քաւութիւն պիտի անէ ձեզ մաքրելու համար, որ ձեր բոլոր մեղքերից մաքրուիք եհովայի առջև։ 31 Նա ձեզ համար հանգստութեան շաբաթ պիտի լինի, և յաւիտենական կանոնով պիտի խոնարհեցնէք ձեր անձները։ 32 Եւ քաւութիւնը անէ այն օծուած և իր հօր տեղը քահանայութիւն անելու համար ձեռք լցուած քահանան, և հագնէ կտաւի հանդերձները՝ սուրբ հանդերձները. 33 և ամենասուրբ տեղի համար քաւութիւն անէ, և ժողովքի խորանի համար և սեղանի համար քաւութիւն անէ, և քահանաների և ժողովքի բոլոր ժողովրդի համար քաւութիւն անէ։ 34 Եւ սա ձեզ համար յաւիտենական կանոն լինի Իսրայէլի որդոց համար իրանց բոլոր մեղքերին քաւութիւն անելու տարին մի անգամ։ Եւ նա արաւ ինչպէս որ եհովան Մովսէսին պատուիրել էր։

ԳԼ. ԺԷ

1 Եւ եհովան խօսեց Մովսէսի հետ 2 ասելով. խօսիր Ահարոնի և նորա որդոց՝ և Իսրայէլի բոլոր որդոց հետ, և ասիր նորանց. Այս է այն բանը որ եհովան պատուիրեց ասելով. 3 Իսրայէլի տանից ով որ արջառ կամ ոչխար և կամ այծ բանակի մէջ մորթէ, կամ 4 բանակից դուրս մորթէ, և չի բերէ եհովայի խորանի առաջը եհովային զոհ մատուցանելու համար ժողովքի խորանի դուռը, պարսիւն պիտի համարուի այն մարդու համար. նա արիւն է թափել, և այն մարդն իր ժողովրդի միջից պիտի կորչէ։ 5 Որպէս զի Իսրայէլի որդիքը այն զոհերը որ դաշտի մէջ մորթուում են, եհովային բերեն ժողովքի խորանի դուռը քահանայի մօտ, և զոհեն իբրև խաղաղութեան զոհեր եհովային։ 6 Եւ քահանան պիտի արիւնը ժողովքի խորանի դրանը եհովայի սեղանի վերայ, և ճարպն այրէ անոյշ հոտի համար եհովայի առջև։ 7 Եւ իրանց զոհերն՝ այլ ևս չզոհեն †դևերին, որոնց ետևից էրնուվ պոռնկութիւն են անում. սա նորանց համար յաւիտենական կանոն լինի իրանց ազգերի մէջ։ 8 Եւ նորանց ասա. եթէ Իսրայէլի տանից

*արաւ, †այծերին

կամ նորանց մէջ պանդխտացող օտարականներից մէկ մարդ ողջակէզ կամ զոհ մատուցանելու
9 լինի, եւ նորան չբերէ Եհովային մատուցանելու համար ժողովքի խորանի դուռը, այն մարդն իր ժողովրդի միջից պիտի կորչէ։
10 Եւ եթէ Իսրայէլի տանից կամ նորանց մէջ պանդխտացող օտարականներից մէկ մարդ ինչ և իցէ արիւն ուտելու լինի, իմ երեսն այն արիւն ուտող անձի վերայ պիտի դարձնեմ և կորցնեմ նո-
11 րան իր ժողովրդի միջից. վասն զի մարմնի հոգին արիւնումն է. և ես ձեզ տուի այն, որ սեղանի վերայ ձեր հոգիների համար քաւութիւն անէք. վասն զի արիւնն է որ քաւութիւն է անում իրա-
12 նում եղող հոգիով։ Ընդ այս համար Իսրայէլի որդոցն ասացի. Ձեղանից ոչ մէկն արիւն չուտէ. և ձեր մէջ պանդխտացող օտա-
13 րականն էլ արիւն չուտէ։ Եւ Իսրայէլի որդիներից կամ նորանց մէջ պանդխտացող օտարականից մէկը՝ երբ ուտուելու անասունի կամ թռչունի որս որսալու լինի, նորա արիւնը պիտի թափէ, և
14 հողով ծածկէ նորան։ Վասն զի ամեն մարմնի հոգին իր արիւնն է իր հոգովը. և Իսրայէլի որդոցն ասացի. Բնաւ մի մարմնի արիւն պիտի չուտէք, վասն զի ամեն մարմնի հոգին իր արիւնն է. ով որ ուտէ այն պիտի կորչէ։
15 Եւ ամեն անձն որ դիակ կամ պատառուած ուտէ երկրացինից կամ օտարականներից՝ իր հանդերձները պիտի լուանայ, և ինքը ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր լինի, յետոյ
16 մաքուր է։ Բայց եթէ չլուայ, և իր մարմինը չլուայ, այն ժամանակ իր անօրէնութիւնը պիտի կրէ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոց հետ և ասիր նորանց. Ես եմ Ե-
3 հովան ձեր Աստուածը։ Ա՛յն ձեր

կան նորանց օրէնքներին պէս չանէք. և ինչպէս երկրի գործքին պէս չանէք՝ ուր որ ձեզ պիտի տանեմ, չանէք, ու նորանց կանոնների համեմատ չգնաք։ Իմ դատաստանները արէք, 4
և իմ կանոնները պահեցէք, որ նորանցով գնաք։ Ես եմ Եհովան ձեր Աստուածը։ Եւ պահեցէք 5
իմ կանոնները և իմ դատաստանները, որ մարդը որ նորանց կատարէ, նորանցով կապրէ. Ես եմ Եհովան։

Ոչ մէկն իր արիւնակից ազգա- 6
կանին չմօտենայ նորա մերկութիւնը բանալու համար. Ես եմ Եհովան։ Քո հօր մերկութիւնը կամ 7
քո մօր մերկութիւնը չբանաս. նա քո մայրն է. նորա մերկութիւնը չբանաս։ Քո հօր կնոջ մերկու- 8
թիւնը չբանաս. նա քո հօր մերկութիւնն է։ Քո հօր աղջկայ 9
կամ քո մօր աղջկայ՝ քո քրոջ մերկութիւնը, թէ տանը ծնած լինի թէ դուրսը ծնած, նորանց մերկութիւնը չբանաս։ Քո որդու 10
աղջկայ կամ աղջկանդ աղջկայ մերկութիւնը՝ նորանց մերկութիւնը չբանաս, քանի որ քոնն է։ Քո հօր 11
կնոջ աղջկայ մերկութիւնը՝ որ քո հօրից ծնած քո քոյրը եղողն է՝ նորա մերկութիւնը չբանաս։ Քո 12
հօր քրոջ մերկութիւնը չբանաս. նա քո հօր արիւնակիցն է։ Քո 13
մօր քրոջ մերկութիւնը չբանաս. որովհետև նա քո մօր ազգականն է։ Քո հօր եղբօր մերկութիւնը 14
չբանաս, նորա քրոջ չմօտենաս. նա քո հօր եղբօր կինն է։ Քո 15
հարսի մերկութիւնը չբանաս նա քո որդու կինն է, նորա մերկութիւնը չբանաս։ Քո եղբօր կնոջ 16
մերկութիւնը չբանաս. նա քո եղբօր մերկութիւնն է։ Մի կնիկան 17
և նորա աղջկայ մերկութիւնը չբանաս. և նորա որդու աղջիկը կամ նորա աղջկայ աղջիկը չառնես՝ նորանց մերկութիւնը բանալու համար. նորանք նորա ազգականներն են. պղծութիւն է այդ։
Եւ մի կնիկ իր քրոջ հետ չառնես 18
նորա կենդանութեան ժամանակ

վշտացնելով նորա մերկութիւնը
բանալու համար։
19 Եւ կնկան նորա անմաքրու-
թեան դաշտանի ժամանակ չմո-
տենաս՝ նորա մերկութիւնը բա-
20 նալու։ Եւ քո դրացու կնոջ հետ
զուգաւորութեան համար չպաս-
21 կես, նորա հետ պղծուելով։ Քո
սերունդից Մողոքի համար էզ-
էչ անցնելու չթողես, և քո Ա-
ստուծոյ անունը չպղծես. ես եմ Ե-
22 հովան։ Եւ արուի հետ՝ կնկան հետ
պառկելու պէս չպառկես. պղծու-
23 թիւն է այդ։ Եւ ոչ մի անասնի
հետ չզուգաւորուիս նորա հետ
պղծուելով. և բնաւ մի կնիկ անաս-
նի առջև չկանգնէ՝ նորա հետ զու-
գաւորուելու. գարշութիւն է այդ։
24 Սորանց ոչ մէկովը չպղծուիք,
որովհետև սորանց բոլորովը պըղ-
ծուեցան այն ազգերը՝ որ ձեր
25 առջևից պիտի քշեմ։ Եւ այն եր-
կիրը պղծուեցաւ՝ և ես նորա ա-
նօրէնութիւնը նորա վերայ պիտի
հաստուցանեմ, և այն երկիրն իր
26 բնակիչներին պիտի փսխէ։ Իսկ
դուք իմ կանոններն ու դատաս-
տանները պահէք, և այս պղծու-
թիւններից ոչ մէկը չանէք, ոչ
երկրացին, ոչ ձեր մէջ պանդխտաց-
27 ցող օտարականը. վասն զի ձե-
զանից առաջ եղած այն երկրի
մարդիկն արին այս բոլոր պղծու-
թիւնները, և երկիրը պղծուե-
28 ցաւ. Որ այն երկիրը ձեզ էլ
դուրս չփսխէ՝ երբոր դուք նորան
պղծէք, ինչպէս որ ձեզանից ա-
29 ռաջ եղած ազգերին փսխեց։ Վա-
սն զի ամեն ով որ այս բոլոր
պղծութիւններից մէկն անելու
լինի, այն անող անձինքն իրանց
ժողովրդի միջից պիտի կորչեն։
30 Եւ իմ հրամանները պահէք, որ
ձեզանից առաջ գործուած պիղծ
սովորութիւններից չանէք, և
նորանցով չպղծուիք. ես եմ Ե-
հովան ձեր Աստուածը։

ԳԼ. ԺԹ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. խօսիր Իսրայէլի որդոց
բոլոր ժողովքի հետ և ասիր նո-
րանց. Դուք սուրբ եղէք, վասն
զի ես ձեր Եհովայ Աստուածը
սուրբ եմ։
3 Ձեր ամեն մէկն իր մօրից և
իր հօրից վախեցայ. և իմ շա-
բաթները պահէք. ես եմ Եհովան
ձեր Աստուածը։
4 Կուռքերի մի դառնաք, և ձեզ
համար ձուլածոյ աստուածներ մի
շինէք. ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը։
5 Եւ եթէ խաղաղութեան զոհ
մատուցանէք Եհովային ձեր ըն-
դունելութեան համար մատու-
ցէք։ 6 Ձեր զոհ մատուցած օրը
և հետևեալ օրը պիտի ուտուի.
և երրորդ օրուայ ճնացածը կրա-
կով պիտի այրուի։ 7 Եւ եթէ նո-
րանից երրորդ օրը ուտուելու լի-
նի, նա պիղծ է, պիտի չընդունե-
ուի։ 8 Եւ նորան ուտողը իր անօ-
րէնութիւնը պիտի կրէ, վասն զի
Եհովայի սուրբ բանը պղծեց, և
այն անձն իր ժողովրդից պիտի
կորչէ։
9 Եւ ձեր երկրի հունձքը հնձելիս
քո արտի եզերքը մինչև վերջը չի
հնձես, և քո հունձքից ընկած
հասկերը չժողովես։ 10 Եւ քո այգին
ճռաքաղ չանես, այսինքն քո այ-
գու մէջ մնացած ողկոյզները չը
քաղես. նորանք աղքատին և օ-
տարականին թողես. ես եմ Եհո-
վան ձեր Աստուածը։
11 Գողութիւն մի անէք. սուտ
մի խօսէք. և իրար մի խաբէք։
12 Եւ իմ անունովը զուր տեղը եր-
դում մի անէք. և ձեր Աստու-
ծոյ անունը մի պղծէք. ես եմ
Եհովան։ 13 Քո դրացուն զրկանք մի
անիր, և յափշտակութիւն մի
անիր. քեզ համար վարձքով բա-
նողի օրուան վարձքը մէկ գիշեր
մինչև առաւօտ քեզ մօտ չմնայ։
14 Խուլին մի հայհոյիր. և կոյրի
առջև գայթակղութիւն մի դնիր,
այլ քո Աստուածանից վախեցիր.
ես եմ Եհովան։
15 Դատաստանի մէջ անիրաւու-
թիւն մի անէք. աղքատին երես-
պաշտութիւն մի անիր, և մեծին
մի շողոքորթիր. քո դրացուն ար-
դարութիւնով դատիր։

16 Քո ժողովրդի մէջ չարախօսու-
թիւն անելու մտն չդաս. քո ըն-
կերի արիւնը չմոնես. ես եմ Ե-
17 հովան: Քո եղբօրը սրտումդ չա-
տես. քո դրացուն անպատճառ
յանդիմանես, որ նորա համար
18 մեղք չկրես: Վրէժ չառնես, և
քո ժողովրդի որդիներին ոխ չպա-
հես, այլ քո ընկերին սիրես քո
անձի պէս. ես եմ ԵՀովան:
19 Իմ կանոնները պահէք. քո ա-
նասունի մէկ տեսակը միւս տե-
սակի հետ զուգաւորել չտաս. քո
արտումը զանազան սերմ չվարես.
և երկու նիւթից գործուած սղ-
լախատն հանդերձ չհագնես:
20 Եւ եթէ մէկը մի կնկան հետ
պառկելով զուգաւորութիւն ա-
նէ, և նա մէկի նշանուած աղա-
խինն է, և փրկուած չէ, կամ
նորան ազատութիւնը տրուած
չէ, նորանք պիտի պատժուին.
նորանք պիտի չմեռնին, վասն զի
21 կնիկն ազատ չէր: Եւ մարդն իր
յանցանքի պատարագը պիտի բե-
րէ ԵՀովային ժողովքի խորանի
դուռը, մի խոյ յանցանքի պա-
22 տարագի համար: Եւ քահանան
քաւութիւն անէ նորա համար
յանցանքի պատարագի խոյովը
ԵՀովայի առջև նորա արած մեղ-
քի համար. և նորա արած մեղքը
ներուի նորան:
23 Եւ երբոր այն երկիրը մտնէք,
և ամեն տեսակ ծառեր տնկէք՝
ուտելու համար, այն ժամանակ
նորա պտուղը չթլփատուած ան-
թլփատութիւն համարէք. ձեզ
համար երեք տարի անթլփատու-
24 թիւն լինի՝ պիտի չուտուի: Եւ
չորրորդ տարին նորա բոլոր պը-
տուղը ԵՀովային փառաւորելու
25 համար սուրբ պիտի լինի: Եւ
հինգերորդ տարին ուտէք նորա
պտուղը, որ իր արդիւնքը ձեզ
համար աւելացնէ. ես եմ ԵՀո-
26 վան ձեր Աստուածը: Մէսը ար-
իւնովը չուտէք. չհմայէք, և
27 գուշակութիւն չանէք: Ձեր գլխ-
ների եզերքի մազերը կլոր չկտրէք
և մօրուքիդ եզերքը չապականես:
28 Եւ մէկի համար ձեր մարմնոյ վե-
րայ վէրեր չհնէք, և ձեր վերան
կոկուած գիր չդնէք. ես եմ Ե-
հովան:
29 Աղջիկդ պոռնիկ անելով մի պղ-
ծիր, որ երկիրը պոռնկութեան
մէջ չընկնի, և երկիրը գարշու-
թիւնով չլցուի:
30 Իմ շաբաթներըը պահէք և իմ
սրբարանը յարգէք. ես եմ ԵՀո-
վան: Վ հուէներին մի նայէք, և
31 հմայողներից մի հարցնէք, որ նո-
րանցով չպղծուիք. ես եմ ԵՀո-
վան ձեր Աստուածը:
32 Մազը ապիտակածի առջև վեր
կաց, և ծերին պատուիր, և քո
Աստուածանից վախեցիր. ես եմ
ԵՀովան:
33 Եւ եթէ մի օտարական ձեր
երկրի մէջ ձեզ մօտ պանդխտա-
նալու լինի, չնեղէք նորան: Ձեզ
34 մօտ պանդխտացող օտարականը
ձեր երկրի բնակի պէս լինի ձեզ
համար, և քո անձի պէս սիրես
նորան, վասն զի Եգիպտոսի երկ-
րի մէջ օտարական էիք, ես եմ
ԵՀովան ձեր Աստուածը:
35 Դատաստանի մէջ անիրաւու-
թիւն չանէք. Ե ալ կանդունի
մէջ կշռքի մէջ և չափի մէջ: Ձեր
36 կշիռքն ուղիղ, ձեր էֆ-էֆ քարն
ուղիղ, ձեր արդուն ուղիղ և հի-
ինն ուղիղ պիտի լինի. ձեզ Ե-
գիպտոսի երկրից հանող ԵՀովան
37 ձեր Աստուածը ես եմ: Եւ իմ
բոլոր կանոնները և իմ բոլոր դա-
տաստանները պահէք, և անէք
նորանք. ես եմ ԵՀովան:

Գլ. Ի

1 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Ասա Իսրայէլի որդոցն
ասես. Իսրայէլի որդիներից և
Իսրայէլի մէջ պանդխտացող օ-
տարականներից ով որ իր զաւակ-
ներից Մողոքին տայ, անպատ-
ճառ պիտի մեռցուի. այն երկ-
րի ժողովուրդը քարերով քարկո-
ծեն նորան: Եւ ես իմ երեսն այն
3 մարդու վերայ պիտի դարձնեմ,
և նորան իր ժողովրդի միջից պի-
տի կորցնեմ, վասն զի նա իր զա-
ւակներից Մողոքին է տուել
իմ սրբարանը պղծելու և իմ սուրբ

4 անունը անարգելու համար։ Եւ
եթէ այն մարդն իր զաւակներից
ը Մողոքին տալիս այն երկրի
ժողովուրդը աչքերը խփէ, որ նո-
5 րան չմեռցնեն, Ա՛յն ժամանակ
ես իմ երեսը պիտի դարձնեմ այն
մարդու վերայ և նորա ընտանիքի
վերայ, և պիտի կորցնեմ նորան
և Մողոքի հետ պոռնկութիւն
անելու համար այն մարդու ե-
տևից բոլոր գնացողներին իրանց
6 ժողովրդի միջից։ Եւ այն անձն
էլ որ վհուկների և համպոզների
դառնայ նորանցով պոռնկանալու
համար՝ իմ երեսը պիտի նորա
վերայ դարձնեմ, և նորան կորց-
7 նեմ իր ժողովրդի միջից։ Ուրեմն
սրբեցէք ձեր անձերը, ու սուրբ
եղէք, քան որում ես եմ Եհո-
8 վան ձեր Աստուածը։ Եւ իմ կա-
նոնները պահեցէք, ու արէք նո-
րանց. ես եմ Եհովան որ ձեզ
սրբում եմ։

9 Ով որ իր հօրը կամ իր մօրն ա-
նիծէ, անպատճառ պիտի մեռց-
նուի. նա իր հօրը կամ իր մօրը
անիծել է, նորա արիւնը իր վե-
10 րայ լինի։ Եւ ով որ մի ուրիշ մար-
դու կնոջ հետ շնութիւն անէ, իր
դրացու կնոջ հետ շնութիւն ա-
նողը անպատճառ պիտի մեռց-
նուի. շնացող մարդն էլ շնացեալ
11 կինն էլ։ Եւ ով որ իր հօր կնոջ
հետ պառկէ, իր հօր մերկութիւնը
բացել է. անպատճառ երկուսն
էլ պիտի մեռցնուին. նորանց
12 արիւնը իրանց վերայ լինի։ Եւ
եթէ մի մարդ իր հարսի հետ
պառկէ, անպատճառ երկուսն էլ
պիտի մեռցնուին. գարշութիւն
են արել. նորանց արիւնը իրանց
13 վերայ լինի։ Եւ եթէ մի մարդ
կնկան հետ պառկելու պէս մի
արուի հետ պառկէ, երկուսն էլ
պղծութիւն արին. անպատճառ
պիտի մեռցնուին. նորանց արիւ-
14 նը իրանց վերայ լինի։ Եւ եթէ
մի մարդ մի կնիկ և նորա մայրն
էլ առնէ, անօրէնութիւն է. նո-
րան էլ նորանց էլ կրակով այրեն,
որ ձեր մէջը անօրէնութիւն չմի-
15 նի։ Եւ եթէ մի մարդ անասնի
հետ պառկէ, անպատճառ պիտի
մեռցնուի, և անասունը սպանէք։
16 Եւ եթէ մի կնիկ որ և իցէ ա-
նասնի հետ զուգաւորուելու հա-
մար նորան մօտենայ, կնիկն էլ
անասունն էլ պիտի սպանես. նո-
րանք անպատճառ պիտի մեռց-
նուին. նորանց արիւնը իրանց
17 վերայ լինի։ Եւ եթէ մի մարդ իր
քրոջն առնէ՝ այրենի իր հօր աղ-
ջիկը կամ իր մօր աղջիկը, և նո-
րա մերկութիւնը տեսնէ, և աղ-
ջիկն էլ նորա մերկութիւնը տես-
նէ, չարութիւն է. նորանք իրանց
ժողովրդի աչքի առջևից պիտի
կորչեն. նա իր քրոջ մերկութի-
նը բացաւ. իր անօրէնութիւնը
18 պիտի կրէ։ Եւ եթէ մի մարդ մի
կնկան հետ պառկէ որ իր դաշ-
տանուն է, և նորա մերկութի-
նը բանայ, նա նորա աղբիւրը բա-
ցաւ, կնիկն էլ իր արեան աղբիւ-
րը բացաւ. երկուսն էլ իրանց
ժողովրդի միջից պիտի կորչեն։
19 Եւ քո մօր քրոջ կամ քո հօր
քրոջ մերկութիւնը չբանաս. վա-
րն զի իր ազգականի մերկու-
թիւնն է բանում, իրանց անօրէ-
20 նութիւնը պիտի կրեն։ Եւ եթէ
մի մարդ իր հօր եղբօր կնոջ հետ
պառկէ, իր հօր եղբօր մերկու-
թիւնը բացաւ. նորանք իրանց
մեղքը պիտի կրեն. անզաւակ
21 պիտի մեռնեն։ Եւ եթէ մի մարդ
իր եղբօր կինն առնէ, պղծութիւն
է նա. նա իր եղբօր մերկութիւնն
է բանում. անզաւակ պիտի լինեն։

22 Եւ իմ բոլոր կանոնները և իմ
բոլոր դատաստանները պահէք,
և անէք նորանց որ դուրս չփըս-
խէ ձեզ այն երկիրն ուր որ ձեզ
պիտի տանեմ այնտեղ բնակելու։
23 Եւ պիտի չգնաք այն ազգերի սո-
վորութիւններովը, որոնք ես ձեր
առջևից պիտի քշեմ. վասն զի
այս բոլոր բաները արին նորանք,
24 և ես զզուեցի նորանցից. Եւ
ասացի ձեզ. Նորանց երկիրը
դուք պիտի ժառանգէք, և ես
այն ձեզ պիտի տամ առացուածք
լինելու համար՝ մի երկիր որ կաթ
և մեղր է բղխում. ես եմ Եհո-
վան ձեր Աստուածը, որ որոշեցի
25 ձեզ ազգերից։ Ուստի տարբե-

բութիւն արէք մաքուր և անմաքուր անասուններուն միջեւեղը՝ և անմաքուր ու մաքուր թռչուններուն միջեւեղը, և ձեր անձերը չը պղծէք անասուններով կամ թռչուններով կամ գետնի վերայի բոլոր սողուններով, որոնք ես ո-
26 րոշեցի ձեզ համար իբրև անմաքուր։ Եւ դուք սուրբ պիտի լինէք ինձ համար, վասն զի ես Եհովա սուրբ եմ և ձեզ որոշեցի ազգերէն որ իմը լինէք։
27 Արու կամ կնիկ, որ վհուկ կամ հմայող լինի, անպատճառ պիտի մեռցնուի. քարերով քարկոծեն նորանց. նոցա արիւնը իրանց վերայ լինի։

ԳԼ. ԻԱ

1 Եւ Եհովան ասաց Մովսէսին, խօսիր Ահարոնի որդոց՝ քահանաների հետ և ասիր նորանց. Մէ հոգի մի անձի համար անմաքուր
2 չլինի իր ժողովուրդի մէջ. բայց միայն իր մօտ ազգականի համար, այսինքն իր մօր և իր հօր և իր որդու և իր աղջկան և իր եղբօր
3 համար, Եւ իր կոյս քրոջ համար որ մօտ է իրան՝ մարդի տրուած չէ, նորա համար թող անմաքուր
4 լինի։ Նա իր ժողովրդի մէջ գլխաւոր լինելով անմաքուր պիտի
5 չդառնայ իրան պղծելով։ Իրանց գլխներին գերծելով կնաւթիւն չանեն, և իրանց մօրուքի եղերքը չածիլեն, և իրանց մարմնի վե-
6 րայ վէտեր չանեն. Սուրբ պիտի լինեն իրանց Աստուծոյն. և իրանց Աստուծոյ անունը չպղծեն. վասն զի Եհովայի պատրաստներն իրանց Աստուծոյ հացն են մատուցանում. ուրեմն սուրբ լինեն։
7 Պոռնիկ կամ պղծուած կնիկ չառնեն, և իր մարդուն արձակուած կնիկ չառնեն. վասն զի +հառնի
8 սուրբ է իր Աստուծոյն. Եւ պիտի սրբես նորան. վասն զի նա քո Աստուծոյ հացն է մատուցանում. նա սուրբ պիտի լինի քեզ համար, վասն զի ես Եհովա որ ձեզ սրբում եմ, սուրբ եմ։
9 Եւ եթէ մի քահանայի աղջիկը պոռնկութիւն անելով պղծուելով լինի, նա պղծում է իր հօրը. նա կրակով պիտի այրուի։

10 Եւ իր եղբայրներիցը մեծ եղող քահանան՝ որի գլխին թափուել է օծման իւղը և ձեռքը լցուել է որ զգեստները հագնէ, իր գլուխը պիտի չքանայ, և իր հանդերձները չպատառէ, Եւ մի մեռած մարդու մօտ չգնայ, ոչ էլ
11 իր հօր կամ իր մօր համար անմաքուր լինի։ Եւ սրբարանիցը
12 դուրս չելնէ և իր Աստուծոյ սրբարանը չպղծէ. վասն զի իր Աստուծոյ օծման իւղին պսակը իր
13 վերայ է. ես եմ Եհովան։ Եւ նա
14 մի կոյս պիտի կնիկ առնէ։ Որը և այրի կամ արձակուած կամ պղծուած՝ բոզ՝ սորանցից չառնէ. այլ իր ժողովրդից մի կոյս առնէ
15 կնիկ, Որ իր սերունդը չպղծէ իր ժողովրդի մէջ, վասն զի ես եմ Եհովան որ սրբում եմ նորան։
16 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
17 հետ ասելով. Խօսիր Ահարոնին և ասիր. Քո սերունդիցն իրանց ազգերի մէջ ով որ իր վերայ արատ ունենայ, թող չմօտենայ իր
18 Աստուծոյ հացը մատուցանելու. Վասն զի ոչ մի մարդ որ արատ ունենայ պիտի չմօտենայ. կոյրը կամ կաղը՝ կամ կարճունչը՝ կամ
19 սկանջատը, կամ ոտքը կոտրած
20 կամ ձեռքը կոտրած մարդը, կամ սպիտուտը կամ բարակացած կամ աչքը հատ ընկած՝ կամ քոսոտը՝ կամ որքինոտը կամ փոշտանակը. Ահարոն քահանայի
21 սերունդիցն արատ ունեցող մի մարդ չմօտենայ Եհովայի պատրաստները մատուցանելու. նա արատաւոր է. իր Աստուծոյ հացը
22 մատուցանելու չմօտենայ, Նա իր Աստուծոյ հացն ուտէ՝ ամենասուրբ բաներիցը և սուրբ բաներիցը.
23 Միայն վարագոյրի մօտ չը մտնէ և սեղանին չմօտենայ, քանի որում արատ ունի. և իմ սուրբ բաները չպղծէ, վասն զի նորանց
24 սրբող Եհովան ես եմ։ Եւ Մովսէս խօսեց Ահարոնի հետ և նորա որդոց հետ և Իսրայէլի բոլոր որդիների հետ։

ԳԼ. ԻԲ

1 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Ահարոնի և նորա որդոց հետ, որ Իսրայէլի որդոց սուրբ բաներից գգոյշ կենան, և իմ սուրբ անունը չպղծեն՝ ինչ բաներով որ ինձ համար սրբում
3 են. ես եմ ԵՀովան։ Ասիր նոցանից. Ձեր բոլոր սերունդից ձեր ազգերի մէջ ով որ իր անմաքրութիւնը իր վերայ ունենալով մօտենայ այն սուրբ բաներին, որ Իսրայէլի որդիքը սրբում են ԵՀովայի համար, այն անձն իմ առջևից պիտի կորչէ. ես եմ ԵՀովան։
4 Ով որ Ահարոնի ցեղից բորոտ լինի կամ ծորում ունենայ, սուրբ բաներից պիտի չուտէ մինչև որ մաքրուի. և ով որ մեռելից պղծուած մի բանի դպչէ, կամ մի մարդ որի զուգաւորութեան սերմը իրանից ելած է,
5 կամ ով որ դպչէ որ և իցէ սողունի, որով կարող էր անմաքուր լինել, կամ մի մարդու որից նա կարող էր անմաքուր լինել, որ և իցէ անմաքրութիւն
6 որ նա ունենայ. Որանից դպչող մարդը մինչև իրիկուն անմաքուր լինի, և սուրբ բաներից չուտէ, այլ իր մարմինը ջրով լուանայ.
7 Եւ երբ արեգակը մայր մտնէ, մաքուր լինի, և յետոյ սուրբ բաներից ուտէ, վասն զի նա իր
8 հացն է։ Մեռածը կամ գազանաբեկը չուտէ, որ նորանով չը
9 պղծուի. ես եմ ԵՀովան։ Եւ իմ կարգադրութիւնը պիտի պահեն, որ նորա համար մեղք չկրեն, և չմեռնեն նորա համար որ պղծուել են. ես եմ ԵՀովան որ նոցանից սրբում եմ։
10 Եւ ոչ մի օտարական չուտէ սուրբ բանից. քահանայի հիւրը կամ վարձկանը սուրբ բանից
11 չուտէ։ Բայց քահանայի իր փողով ծախու առած անձը և իր տանը ծնածը նորանից ուտէ. նոքանք նորա կերակրից ուտեն։
12 Եթէ քահանայի աղջիկը մի օտարականի հետ ամուսնանայ, այն սուրբ բաներից պիտի չուտէ։
13 Բայց եթէ քահանայի աղջիկը որբ և այրի կամ արձակուած լինի և զաւակ չունենայ, և ետ դառնայ իր հօր տունը, ինչ ժամանակ իր աղջկութեան ժամանակի պէս իր հօր հացից ուտէ. սակայն ոչ մի օտարական նորանից չուտէ։
14 Եւ եթէ մի մարդ սխալմամբ մի սուրբ բանից ուտէ, նորա հինգերորդ մասը վերան աւելացնէ, և սուրբ բանը քահանային տայ։
15 Եւ Իսրայէլի որդոցը ԵՀովային նուիրած սուրբ բանները չպղծեն.
16 Եւ իրանց վերայ յանցանքի անօրէնութիւն չբերեն, նորանց սուրբ բաներն ուտելով. վասն զի ես եմ ԵՀովան որ սրբում եմ նոցանց։
17 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի
18 հետ ասելով. Խօսիր Ահարոնի և նորա որդոց՝ և Իսրայէլի բոլոր որդոց հետ, և ասիր նորանց. Իսրայէլի տանից՝ կամ Իսրայէլի մէջ եղող օտարականներից՝ ամեն մէկը որ իր պատարագը մատուցանում է իրանց որ և իցէ ուխտերից և որ և իցէ կամաւոր ընծաներից, որ մատուցանում են ԵՀովային իբրև ողջ.
19 Որ ձեզ համար ընդունելի լինի, պիտի անարատ և արու լինի, արջառներից՝ ոչխարներից՝ կամ այծերից։
20 Ոչ մի արատ ունեցողը պիտի չմատուցանէք, վասն զի ձեզ համար ընդունելի չի լինիլ։
21 Եւ ով որ արջառներից կամ ոչխարներից ԵՀովային խաղաղութեան զոհ մատուցանելու լինի, ուխտ կատարելու համար՝ կամ կամաւոր ընծայի համար՝ անարատ պիտի լինի, որ ընդունուի. ոչ մի արատ
22 պիտի չլինի նորա վերայ։ Կոյրը՝ կամ կոտրածը՝ կամ վիրաւորուածը՝ կամ խաղաւարտ ունեցողը՝ կամ քոսոտը՝ կամ որքինոտը՝ այսպէսիները ԵՀովային պիտի չը մատուցանէք, ոչ էլ սորանից
23 ԵՀովայի համար պատարագ պիտի դնէք սեղանի վերայ։ Բայց ականջատ և կրճատ զուարակը՝ կամ ոչխարը կամաւոր ընծայի համար մատուցանես. բայց ուխ-

ոչ պատարագի համար ընդունելի
24 չէ, Ահ-ցյ-ը կրտածը կամ ճմլը-
ուածը կամ պոկուածը կամ կըտ-
րուածը չմատուցանէք Եհովային,
և ձեր երկրումը չանէք այս բան-
25 ը։ Եւ օտարականի ձեռքից էլ՝
ամեն սրտանցից ձեր Աստուծոյն
*պատարագ չմատուցանէք, վասն
զի նորանց մէջ խեղաթիւրն և ա-
րատ կայ. նորանք ձեզ համար
ընդունելի չեն։
26 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
27 հետ ասելով. Երբոր զուարակ
կամ ոչխար կամ այծ ծնուի, եօթն
օր իր մօր տակը ձնայ. և ութե-
րորդ օրը՝ և նորանից յետոյ Եհո-
վային ընդունելի լինի պատարա-
28 գի նուէրի համար։ Եւ կով կամ
ոչխարն իր ձագովը մէկաեղ մէկ
օրուայ մէջ չմորթէք։
29 Եւ երբոր գոհութեան զոհ մա-
տուցանէք Եհովային, այնպէս մա-
տուցանէք որ ձեզ համար ընդու-
30 նելի լինի։ Նոյն օրը ուտուի. մին-
չև առաւօտ չթողէք նորանից.
ես եմ Եհովան։
31 Եւ իմ պատուիրանքները պա-
հէք և անէք նորանց. ես եմ Ե-
32 հովան։ Եւ իմ սուրբ անունը չը
պղծէք, որ ես սրբուիմ Իսրայէ-
լի որդոց մէջ. ես եմ Եհովան որ
33 ձեզ սրբում եմ. Որ ձեզ համար
Աստուած լինելու համար՝ ձեզ
եգիպտոսի երկրից հանեցի. ես
եմ Եհովան։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոց
հետ և ասիր նորանց. Եհովայի
տօներըը, որ դուք սուրբ ժողով
պիտի կոչէք, իմ տօներըը սորանք
3 են. Վեց օր գործ գործուի, բայց
եօթներորդ օրը հանգստութեան
շաբաթ է՝ սուրբ ժողով է. ոչ
մի գործ պիտի չգործէք. Եհո-
վայի համար շաբաթ է նա ձեր
բոլոր բնակութեանց մէջ։
4 Սորանք են Եհովայի տօներըը,
որ իրանց ժամանակի համեմատ

սուրբ ժողովներ պիտի հրատա-
րակէք։ Առաջի ամսուայ տասն 5
ու չորսին երիկուայ դէմ՝ զատիկ
է Եհովայի համար։ Եւ նոյն ամ- 6
սուայ հնգետասաներորդ օրը բա-
զարջակերաց տօնն է Եհովայի
համար. եօթն օր բազարջ պիտի
ուտէք։ Առաջի օրը սուրբ ժողով 7
լինի ձեզ համար. ոչ մի ծառա-
յութեան գործ չգործէք։ Եւ եօ- 8
թըն օր Եհովային պատարագ մա-
տուցանէք. եօթներորդ օրը սուրբ
ժողով լինի. ոչ մի ծառայու-
թեան գործ չգործէք։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 9
հետ ասելով. խօսիր Իսրայէլի որ- 10
դոց հետ և ասիր նորանց. Երբ
որ մտնէք այն երկիրը որ ձեզ
պիտի տամ, և հնձէք նորա հունձ-
քը, ձեր հունձքից մի երախայրի
որայ բերէք քահանայի մօտ. Եւ 11
նա Եհովայի առջև երերացնելով՝
մատուցանէ որպէս, որ ձեզ հա-
մար ընդունելի լինի. քահանան
շաբաթի հետևեալ օրը երերաց-
նելով մատուցանէ այն։ Եւ ձեր 12
որպէս մատուցած օրը ոդջակէզի
համար մէկ տարեկան անարատ
գառն մատուցանէք Եհովային.
Եւ նորա հացի նուէրը իւղով 13
զանգուած երկու տասանորդ բա-
րակ ալիւր լինի. անուշահոտ պա-
տարագ է Եհովայի համար և նո-
րա թափելու նուէրը՝ հինգին չո-
րորդ մասը գինի լինի։ Եւ մինչև 14
այն օրը՝ որ ձեր Աստուծոյն մա-
տուցանէք ձեր պատարագը, հաց՝
կամ հեղի՝ կամ թարմ հասկեր
չուտէք. ձեր ազգերի մէջ ձեր
բոլոր բնակարաններումը սա յա-
ւիտենական կանոն լինի։
Եւ շաբաթի հետևեալ օրից՝ 15
որ դուք նուիրման որպէս բերիք,
կատարեալ եօթը շաբաթ հա-
մարեցէք ձեզ համար. Մինչև 16
եօթներորդ շաբաթի հետևեալ
օրը, յիսուն օր համարէք և նոր
հացի նուէր մատուցանէք Եհո-
վային։ Ձեր բնակարաններից ե- 17
րերացնելու պատարագի համար՝
երկու հաց բերէք, որ երկու տա-
սանորդ բարակ ալիւրից լինեն
խմորեալ եփուած, սա երախայ-

*Երբ. հաց

18 րի է Եհովայի համար։ Եւ այն
հացի հետ՝ եօթը հատ մէկ տա-
րեկան անարատ գառներ, և ար-
ջառներից մէկ զուարակ, և եր-
կու խոյ մատուցանէք Եհովային,
որ հացի նուէրների և թափելու
նուէրների հետ ողջակէզ անու-
շահոտ պատարագ լինեն Եհով-
19 այի համար։ Եւ մեղքի պատա-
րագի համար այծերից մէկ նա-
խագ, և խաղաղութեան զոհի
համար մէկ տարեկան երկու գա-
20 ներ մատուցանէք։ Եւ քահանան
երախայրի հացի հետ երերացնե-
լու պատարագի համար՝ երկու
գառները մատուցանէ Եհովայի
առջև. նորանք սուրբ լինեն Ե-
հովայի համար, և քահանայինն
21 են։ Եւ հէնց այն օրը քարոզէք,
ձեզ համար սուրբ ժողով լինի.
ոչ մի ծառայութեան գործ չգոր-
ծէք. սա յաւիտենական կանոն
լինի ձեր բոլոր բնակարաններում
ձեր ազգերի մէջ։
22 Եւ երբոր ձեր երկրի հունձքը
հնձէք, հնձելիս քո արտի եզերքը
մինչև վերջը չհնձես, և հունձքից
ընկած հասկերը չժողովես. նո-
րանք աղքատին և օտարականին
թողես. ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը։
23 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
24 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդոց հետ և ասիր. Եօթներորդ
ամսուայ ամսի մէկին ձեզ հա-
մար հանգստութեան օր՝ փող
հնչեցնելու յիշատակ՝ սուրբ ժո-
25 ղով լինի։ Ոչ մի ծառայութեան
գործ չգործէք, այլ պատարագ
մատուցանէք Եհովային։
26 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
27 հետ ասելով. Նաև այս եօթնե-
րորդ ամսուայ տասնին քաւու-
թեան օրն է, սուրբ ժողով լինի
ձեզ համար. և պիտի խոնարհե-
ցնէք ձեր անձները և պատարագ
28 մատուցանէք Եհովային։ Եւ այն
օրում ոչ մի գործ չգործէք, քան
որում այդ քաւութեան օր է,
ձեզ համար ձեր Եհովայ Աստու-
ծոյ առջև քաւութիւն անելու
29 համար։ Քանզի ով որ այն օրու-
մը չխոնարհուի՝ իր ժողովրդի մի-
ջից պիտի կորչէ. Եւ ով որ այն 30
օրում մի որևիցէ գործ գործէ,
այն անձը իր ժողովրդի միջից
պիտի կորցնեմ։ Ոչ մի գործ պիտի 31
չգործէք. սա ձեր ազգերի մէջ
ձեր բոլոր բնակարաններում յա-
ւիտենական կանոն լինի։ Այս 32
ձեզ համար հանգստութեան շա-
բաթ լինի, ու ձեր անձները պիտի
խոնարհեցնէք. ամսուայ տնի ի-
րիկունը ձեր շաբաթը պահէք՝ ի-
րիկունից մինչև իրիկուն։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 33
հետ ասելով. Խօսիր Իսրայէլի որ- 34
դոց հետ և ասիր. Այս եօթնե-
րորդ ամսուայ հնգետասաներորդ
օրը եօթն օր տաղաւարահարաց
տօն է Եհովայի համար։ Առա- 35
ջին օրը սուրբ ժողով պիտի լինի.
ոչ մի ծառայութեան գործ պի-
տի չգործէք։ Եօթն օր պատա- 36
րագ մատուցանէք Եհովային. ու-
թերորդ օրը սուրբ ժողով պիտի
լինի ձեզ համար, և պատարագ
մատուցանէք Եհովային. տօնա-
խմբութեան օր է այն. ոչ մի
ծառայութեան գործ չգործէք։
Սորանք են Եհովայի տօները ո- 37
րոնց պիտի սուրբ ժողովներ կո-
չէք Եհովայի պատարագ՝ ողջա-
կէզ և հացի նուէր զոհ և թա-
փելու նուէրներ մատուցանէք ա-
մեն օրում պէտք եղածը մատու-
ցանելու համար, բաց ի Եհովայի 38
շաբաթներից, և բաց ի ձեր ըն-
ծաներից, և բաց ի ձեր բոլոր ու-
խտերից, և բաց ի ձեր բոլոր Եհո-
վային տալու կամաւոր ընծանե-
րից։ Նաև եօթներորդ ամսուայ 39
հնգետասաներորդ օրը, դուք
երկրի արդիւնքը ժողովելիս, եօթն
օր տօն պիտի պահէք Եհովայի
համար. առաջին օրը հանգստու-
թեան օր և ութերորդ օրը հան-
գստութեան օր էր։ Եւ առա- 40
ջին օրը ձեզ համար գեղեցիկ ծա-
ռերի պտուղ, արմաւենու ոս-
տեր՝ և տերևախիտ ծառերի ոս-
տեր՝ և ձորի ուռիների «ոտքե-
առնէք, և ձեր Եհովայ Աստու-
ծոյ առջև եօթն օր ուրախանաք։
Եւ այս տօնը կատարեցէք Եհո- 41
վայի համար. տարին եօթն օր

ձեր ազգերի մէջ յաւիտենական
կանոն լինի. եօթնեւրորդ ամսում
42 կատարէք այն։ Եօթն օր տաղա-
ւարներում պիտի բնակէք. Իս-
րայէլի բոլոր բնակիները տաղա-
43 ւարներում բնակեն։ Որպէս զի
ձեր սերունդները գիտենան, թէ
Իսրայէլի որդիներին Եգիպտոսի
երկրից հանելիս տաղաւարնե-
րում բնակեցրի նորանց. ես եմ
44 Եհովան ձեր Աստուածը։ Եւ
Մովսէս Իսրայէլի որդոցը պատ-
մեց Եհովայի տօները։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Պատուիրիր Իսրայէլի
որդոցը՝ որ ձեթած մաքուր ձէթ
բերեն քեզ մօտ լուսոյ համար,
3 որ միշտ ճրագ վառուի։ Ժողով-
քի խորանի մէջ վկայութեան վա-
րագոյրից դուրս միշտ Ահարոնը
պատրաստէ այն՝ իրիկուանից մին-
չեւ առաւօտ Եհովայի առջեւ. սա
ձեր ազգերի մէջ յաւիտենական
4 կանոն լինի։ Ճրագները մաքուր
աշտանակի վերայ Եհովայի առ-
ջեւ միշտ պատրաստէ։

5 Եւ բարակ ալիւր առնես, և
նորանով տասներկու հօթ թխես.
ամեն մէկ հօթը երկու տասանոր-
6 դից պիտի լինի։ Եւ նորանք դնես
Եհովայի առջեւ մաքուր սեղանի
վերայ՝ երկու կարգով դնես՝ կար-
7 դը վեց հատ։ Եւ ամէն մի կարգի
վերայ զուտ կնդրուկ դնես, որ
հացի վերայ պատարագի յիշա-
8 տակ լինի Եհովայի համար։ Ամեն
շաբաթ օր պատրաստէ նորան
միշտ Եհովայի առջեւ Իսրայէլի
որդոց կողմանէ յաւիտենական
9 ուխտով։ Եւ նա Ահարոնինը և
նորա որդիներինը լինի, և սուրբ
տեղը ուտեն նորան. վասն զի նա
ամենասուրբ է նորա համար Ե-
հովայի պատարագներից յաւիտե-
նական կանոնով։

10 Եւ մի Իսրայէլացի կնկան որդի
ելաւ, որի հայրը եգիպտացի էր
Իսրայէլի որդոց մէջ, և կռուե-
ցին բանակումը. այն Իսրայէլացի
կնկան որդին և մի Իսրայէլացի
մարդ. Եւ այն Իսրայէլացի կնկան 11
որդին հայհոյեց Եհովային և անու-
անը՝ և անիծեց և Մովսէսի
մօտ բերին նորան. և նորա մօր
անունը Սաղոմիթ էր, Դանի ցե-
ղից՝ Դաբրիի աղջիկը։ Եւ բան- 12
տարկեցին նորան, մինչև որ Եհո-
վայի հրամանը յայտնուի իրանց,
Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 13
ասելով. Ա՛ն հայհոյողին բանա- 14
կից դուրս հանիր, և բոլոր լսող-
ները իրանց ձեռքերը դնեն նորա
գլխին, և բոլոր ժողովքը քար-
կոծեն նորան։ Եւ Իսրայէլի որ- 15
դոց հետ խօսես ասելով. Ամեն-
ով որ իր Աստուծոյն անիծէ, ի-
րան մեղքը պիտի կրէ։ Եւ Եհո- 16
վայի անունը հայհոյողը անպատ-
ճառ պիտի մեռցնուի. բոլոր ժո-
ղովքը անպատճառ քարկոծեն նո-
րան. ինչպէս օտարականը նոյն-
պէս և երկրացին, Եհովայի անու-
նը հայհոյողը պիտի մեռցնուի։

Եւ այն մարդը, որ մարդ սպա- 17
նէ, անպատճառ պիտի մեռցնուի։
Եւ նա որ անասուն սպանէ, պի- 18
տի հատուցանէ նոյնի տեղ նոյնը.
Եւ եթէ մի մարդ իր դրացուն մի 19
խեղութիւն պատճառէ, ինչպէս
որ արել է՝ իրան էլ այնպէս ա-
նեն. Կոտրելու տեղ կոտրել, 20
աչքի տեղ աչք, ատամի տեղ ա-
տամ, ինչպէս որ նա այն մար-
դուն խեղութիւն է պատճառել,
այնպէս էլ պիտի լինի իրան։ Եւ 21
անասուն սպանողը պիտի հատու-
ցանէ այն. բայց մարդ սպանողը
պիտի մեռցնուի։ Օտարականին էլ 22
երկրացու պէս՝ ձեր օրէնքը մէկ
պիտի լինի. վասն զի ես եմ Եհո-
վան ձեր Աստուածը։

Եւ Մովսէսը խօսեց Իսրայէլի 23
որդոց հետ. և այն անիծող մար-
դուն բանակից դուրս հանեցին
և քարերով քարկոծեցին նորան.
և Իսրայէլի որդիքն արին ինչպէս
որ Եհովան Մովսէսին պատուի-
րել էր։

ԳԼ. ԻԵ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 1
Սինա լեռանումը ասելով. Խօսիր 2

Իսրայէլի որդոց հետ և ասիր նո-
րանց. Երբոր այն երկիրը մանէք՝
որ ես ձեզ պիտի տամ, թող
այն երկիրը հանգստութեան շա-
բաթ պահէ Եհովայի համար։
3 Վեց տարի քո արտը վարես, և
քո այգին վեց տարի յօտես, և
4 նորա արդիւնքը ժողովես. Բայց
եօթներորդ տարին երկրի համար
հանգստութեան շաբաթ, այսինքն
Եհովայի համար շաբաթ լինի.
քո արտը պիտի չվարես, և քո
5 այգին չյօտես։ Քո հունձքի ինք-
նակը պիտի չհնձես, և քո չյո-
տած այգու խաղողները չժողո-
վես. հանգստութեան տարի լինի
6 այն երկրի համար։ Եւ երկրի շա-
բաթը ձեզ համար կերակուր լի-
նի, քեզ համար և քո ծառայի
համար և քո աղախնի համար և
քո վարձկանի համար, և քեզ
մօտ պանդխտացող օտարականի
7 համար։ Եւ քո անասունների և
քո երկրի մէջ եղած կենդանինե-
րի համար կերակուր լինի նորա
բոլոր արդիւնքը։
8 Եւ դու քեզ համար տարիների
եօթը շաբաթ համարես, այսինքն
եօթն անգամ եօթը տարի. և
տարիների եօթը շաբաթների ժա-
մանակը քառասունինը տարի պի-
9 տի լինեն քեզ համար։ Եւ փողի
բարբառ հնչեցնես եօթներորդ
ամսուայ տասնին, քաւութեան
օրը ձեր բոլոր երկրումը հնչեցնէք
10 փողը։ Եւ յիսներորդ տարին սրբե-
ցէք, և երկրի վերայ նորա բոլոր
բնակիչների համար ազատութիւն
հրատարակեցէք. սա ձեզ համար
Յոբելեան լինի և ձեզանից ամեն
մէկն իր տացուտածքին դառնայ,
և ձեզանից ամեն մէկն իր ազգա-
11 տոհմին դառնայ։ Այս յիսներ-
որդ տարին Յոբելեան տարի լի-
նի ձեզ համար, ոչ ցանէք ոչ
էլ ինքնիկ բուսածը յօտէք, և
12 ձեր չյօտածից չժողովէք։ Վասն
զի Յոբելեան է, նա ձեզ համար
սուրբ լինի. արտից նորա ար-
13 դիւնքը ուտէք։ Այս Յոբելեան
տարին ձեզանից ամեն մէկը իր
տացուտածքին դառնայ։
14 Եւ եթէ քո դրացուն մի բան
ծախելու լինես, կամ քո դրացու
ձեռքից ծախու առնելու լինես,
ձեզանից մէկն իր ընկերին անի-
րաւութիւն չանէ. Յոբելեանից 15
յետոյ եղած տարիների հաշիւո-
վը ծախու առնես քո դրացուդը.
արդիւնքի տարիների հաշիւովը
պիտի ծախէ քեզ վերայ։ Տարի- 16
ների շատութեան համեմատ պի-
տի աւելացնես նորա գինը, և
տարիների քիչութեան համեմատ
պիտի պակասեցնես նորա գինը.
վասն զի նա արդիւնքի հաշիւովն
է ծախում քեզ վերայ։ Եւ իրար 17
անիրաւութիւն չանէք, և քո
Աստուածանից պիտի վախենաս.
վասն զի ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը։
Եւ իմ կանոնները անէք, և 18
իմ դատաստանները պահէք և
անէք նորանց. և այն երկրի մէջ
ապահովութեամբ կ'բնակէք։ Եւ 19
երկիրն իր արդիւնքը կ'տայ, և
մինչև ձեր կշտանալը կ'ուտէք.
և նորա մէջ ապահովութեամբ
կ'բնակէք։ Եւ եթէ ասէք. Թէ 20
եօթներորդ տարին ի՞նչ կ'ուտենք.
ահա պիտի չվարենք և մեր ար-
դիւնքները պիտի չժողովենք. Սա- 21
կայն ես կ'հրամայեմ իմ օրհնու-
թեանը ձեզ համար վեցերորդ
տարին, և երեք տարուայ ար-
դիւնք կ'տայ։ Եւ ութերորդ տա- 22
րին վար կ'անէք, և հին արդիւն-
քից կ'ուտէք մինչև իններորդ
տարին. մինչև նորա արդիւնքի
հասնելը՝ հինից պիտի ուտէք։
Եւ երկիրը պիտի չծախուի մշ- 23
տընջենապէս. վասն զի երկիրը
իմն է, և դուք ինձ մօտ պան-
դուխտներ և հիւրեր էք։ Եւ ձեր 24
կալուածքի բոլոր երկրումը փրկ-
կանք պիտի տաք երկրի համար։
Եթէ քո եղբայրն աղքատանայ՝ 25
և իր տացուտածքից ծախէ, և
նորա մօտիկ ազգականը նորա մօտ
գայ, նա իր եղբօր ծախածը փրկէ։
Եւ եթէ մի մարդ փրկող չունի, 26
և իր ձեռքը չէ հասնում այն
փրկելու, Այն ժամանակ իր ծա- 27
խելուցը հաշիւ անէ տարիները,
և աւելորդըետ տայ այն մարդուն՝ որի վերայ ծախել էր, և

դարձեալ իր առացուածքը լինի ։
28 Բայց եթէ ձեռքը չհասանէ նորան
եւ տալու, այն ժամանակ իր
ծախած բանը ծախու առնողի
ձեռին ձնայ մինչև Յոբելեան տա-
րին, և Յոբելեանովմը դուրս ել-
նէ, և իր առացուածքը դառնայ ։
29 Եւ եթէ մէկը պարսպաւոր քա-
ղաքի մէջ մի բնակելու տուն ծա-
խէ, նորան ծախելուցը մինչև մի
կատարեալ տարի լինի նորա փրկե-
լը, նորա փրկելը մէկ տարուայ
30 մէջ լինի ։ Եւ եթէ այն բոլոր
տարուայ լրանալովմը նա չփրը-
կուի, այն ժամանակ պարսպա-
քաղաքումն եղած տունը միշտ
ծախու առնողինը պիտի ձնայ իր
ազգերի մէջ. Յոբելեան փոխ-ը
31 պիտի եւ չդառնայ ։ Բայց շուրջը
պարսպաւոր չեղած գիւղաքա-
ղաքներուն տները երկրի արտերի
պէս պիտի համարուին. նորանց
համար փրկուիլ լինի, և Յոբել-
եան փոխն պիտի եւ դառնան ։
32 Իսկ Ղեւտացոց քաղաքներուն մէջ
իրանց կալուածքի քաղաքներուն
տները Ղեւտացիները միշտ կարող
33 լինին փրկել ։ Եւ եթէ մէկը Ղե-
ւտացիներէն ծախու առնելու լի-
նի, այն ժամանակ ծախուած
տունը իր կալուածքը եղող քա-
ղաքի մէջ Յոբելեան փոխն պիտի
եւ դառնայ. վասն զի Իսրայէլի
որդոց մէջ Ղեւտացոց քաղաքնե-
րուն տներն իրանց կալուածքն են ։
34 Բայց իրանց քաղաքներուն անդե-
րի արտերը պիտի չծախուին, վա-
սն զի նորանց յաւիտենական
35 կալուածքն է այն ։ Եւ եթէ քո
եղբայրը աղքատանայ՝ և նորա ձեռ-
քը քեզ մօտ տկտրանայ, նորան
պիտի օգնես իբր օտարական և
պանդուխտ որ քեզ մօտ ապրէ ։
36 Վաշխ և տոկոսիք չառնես նորա-
նից, այլ վախեցիր քո Աստու-
ծանից, որ եղբայրդ քեզ մօտ
37 ապրէ ։ Փողդ վաշխով պիտի չտաս
նորան, և կերակուրդ տոկոսիքով
38 չտաս ։ Ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը, որ ձեզ Եգիպտոսի երկ-
րէն հանեցի՝ Քանանու երկիրը
ձեզ տալու համար, և ձեզ Աստ-
ուած լինելու համար ։

39 Եւ եթէ եղբայրդ քեզ մօտ աղ-
քատանայ, և իրան ծախէ քեզ
վերայ, նորան չծառայեցնես ծա-
ռայի ծառայութիւնով. վարձ-
40 կանի կամ պանդուխտի պէս լինի
նա քեզ մօտ. մինչև Յոբելեան
տարին ծառայէ քեզ. ե- յետոյ
41 քո մօտիցը ելնէ, ինքն և իր որ-
դիքն իր հետ, և իր ազգատոհմի
մօտ եւ դառնայ, և իր հայրերի
կալուածքի մօտ եւ դառնայ ։
42 Վասն զի նորանք իմ ծառաներն
են, որ Եգիպտոսի երկրէն հան-
ի. նորանք ծառայի ծախուելու
պէս չծախուին ։ խստութեամբ
43 չիշխես նորա վերայ, այլ քո Աստ-
ուածանից վախեցիր ։ Եւ քո ծա-
44 ռան և աղախինը, որ պիտի ու-
նենաս, ձեր շուրջը եղած ազգե-
րէն լինեն. ծառայ և աղախին
նորանցից ծախու առէք ։ Նաև
45 ձեզ մօտ բնակող օտարականներէն
զաւակներից, նորանցից ծախու
առէք և ձեզ մօտ եղող նորանց
ընտանիքներէն որ ձեր երկրումը
ծնուած են, և ձեր սեպհականը
լինեն. Եւ ձեզանից յետոյ ձեր
46 որդոց ժառանգութեան սեպ-
հական լինելու համար թողէք
նորանց, և միշտ գործածեցէք
իրեւ ձեր ծառաները. բայց ձեր
եղբարց՝ Իսրայէլի որդոց մէնէն
իրար վերայ խստութեամբ պիտի
չիշխէք ։
47 Եւ եթէ քեզ մօտ եղող օտա-
րականը կամ պանդուխտը հարըս-
տանայ, բայց նորա մօտ եղ-ը քո
եղբայրը աղքատանայ, և իրան
ծախելու լինի քեզ մօտ պան-
դրխատացող օտարականի, կամ
այն օտարականի ընտանեաց ցե-
48 ղականի վերայ, նորա ծախ-
ուելուց յետոյ նա կարող է փրը-
կուիլ. իր եղբայրներէն մէկը
49 փրկէ նորան. Նորա հօրեղբայրը
կամ հօրեղբօրորդին փրկէ նորան,
կամ իր ազգատոհմի մէջ իր մօ-
տիկ ազգականներէն մէկը փրկէ
նորան. կամ եթէ նորա ձեռքը
հասնէ թող ինքն իրան փրկէ ։
50 Եւ հաշիւ անէ իրան ծախու առ-
նողի հետ՝ նորա վերայ ծախուած
տարուցը մինչև Յոբելեան տա-

բին, և իրան փրկուելու փոդը տարինների հաշիւով լինի. նորա ժամանակը վարձկանի ժամանակի պէս հաշուի. եթէ տակաւին շատ տարի կայ, նորանց համեմատ իրան ծախուած դնիցը իր փրկանքը տայ. եւ եթէ քիչ տարի է մնացել մինչև Յոբելեան տարին նորա հետ հաշիւ անէ, և իր տարինների համեմատ իր փրկանքը տայ: Տարեկան վարձկանի պէս պիտի համարուի նորա մօտ. խստութեամբ չիշխէ նորա վերայ քո առջև: Եւ եթէ այս կերպով չփրկուի, Յոբելեան տարուամբ ելնէ ինքը և իր որդիքը իր հետ. վասն զի Իսրայէլի որդիքը իմ ծառաներն են. Եգիպտոսի երկրից իմ հանած ծառաներն են նորանք. ես եմ Եհովան ձեր Աստուածը:

ԳԼ. ԻԶ

1 Դուք ձեզ համար չաստուածներ և կուռքեր չընէք, և ձեզ համար արձաններ չկանգնեցնէք, և պատկերաւոր կոթող չդնէք ձեր երկրի մէջ նորան երկրպագութիւն անելու համար. վասն զի ես եմ Եհովան ձեր Աստուածը:

2 Իմ շաբաթները պահէք, և իմ սրբարանը յարգէք. ես եմ Եհովան:

3 Եթէ իմ կանոններովը գնաք, և իմ պատուիրանքները պահէք
4 և նորանց գործ դնէք, ես էլ ձեր անձրևները կ'տամ իրանց ժամանակին, և երկիրն իր արդիւնքը կ'տայ, և դաշտի ծառերն իրանց
5 պտուղը կ'տայ. Եւ ձեր կալը կ'հասնէ մինչև այգեկութը, և այգեկութը մինչև վարելու ժամանակը կ'հասնէ. և ձեր հացը կուշտ կուտէք, և ձեր երկրի մէջ ապահովութեամբ կ'բնակէք: Եւ խաղաղութիւն կ'տամ երկրին, և հանգիստ կ'պառկէք, և մի վախեցնող չի լինիլ. և կ'վերջացնեմ երկրիցը չար գազաններին, և ձեր երկրիցը սուր չի անցնիլ: Եւ ձեր թշնամիներին կ'հալածէք, և նորանք
8 սրով կընկնեն ձեր առջևը: Եւ ձեզանից հինգը հարիւրին պիտի հալածէ, և ձեզանից հարիւրը բիւրին պիտի հալածէ, և ձեր թշնամիները սրով պիտի ընկնեն ձեր առջևը:
9 Եւ ձեզ վերայ կը նայեմ, և ձեզ կ'աճեցնեմ և կը շատացնեմ, և ձեզ հետ կ'հաստատեմ իմ ուխտը:
10 Եւ հին պաշար կ'ուտէք, և հինը էլ նորի առջևից դուրս կ'հանէք:
11 Եւ իմ խորանը ձեր մէջ կ'դնեմ, և իմ հոգին ձեզանից չի զզուիլ.
12 Եւ ձեր մէջը մտն կ'գամ, և ձեզ համար Աստուած կ'լինեմ, և դուք ինձ համար ժողովուրդ կ'լինէք:
13 Ես եմ Եհովան ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտացոց երկրից հանեցի, որ նորանց ծառայ չլինէք, և ձեր լուծի կապերը փշրեցի, և ձեզ բարձրագլուխ մտն ածեցի:
14 Բայց եթէ ինձ չլսէք և այս բոլոր պատուիրանքները չկատարէք,
15 Եւ իմ կանոնները անարգէք, և ձեր հոգին իմ դատաստաններից զզուի, որ իմ բոլոր պատուիրանքները չանէք, և իմ ուխտը դրժէք,
16 ես էլ սա կանեմ ձեզ, ձեր վերայ կ'ուղարկեմ տագնապ և ծիւրական ախտը և տենդը՝ որ աչք են փչացնում և հոգի մաշում, և ձեր սերմը դատարկ տեղը կ'սերմանէք. վասն զի ձեր
17 թշնամիները կուտեն նորան, Եւ իմ երեսը ձեզ վերայ կ'դարձնեմ, և ձեր թշնամիների առջև կ'բապանուիք. և ձեզ ատողները կ'իշխեն ձեզ վերայ, և կ'փախչէք
18 առանց մէկը ձեզ հալածելու: Եւ եթէ մինչև այսքանը ինձ չլսէք, այն ժամանակ ձեր մեղքերի համար ձեզ եօթնապատիկ կ'պատժեմ.
19 Եւ ձեր զօրութեան հպարտութիւնը կ'կոտրեմ, և ձեր երկինքը երկաթի պէս՝ և ձեր երկիրը պղնձի պէս կանեմ:
20 Եւ ձեր ոյժը դատարկ տեղը կ'վերջանայ, և ձեր երկիրն իր արդիւնքը չի տալ, և երկրի ծառերն իրանց պտուղը չեն տալ:
21 Եւ եթէ դուք ինձ հետ խոտորնակ վարուիք, և չուզէք ինձ լսել, այն ժամանակ ձեր մեղքերի հա-

ՄԵՄԱՆ ԵՕԹՆԱՊԱՏԻԿ ՀԱՐՈՒԱԾՔ
22 Կ'ԱՒԵԼՑՆԵՄ ՁԵԶ ՎԵՐՍՅ ։ ԵՒ ՁԵՐ
ՎԵՐՍՅ Կ'ՈՒՂԱՐԿԵՄ ԴԱՇՏԻ ԴԱ-
ՂԱՆՆԵՐԸ, ԵՒ ՁԵԶ ԱՆԶԱՒԱԿ ԿԱ-
ՆՆԵՆ, ԵՒ ՁԵՐ ԱՆԱՍՆՆԵՐԸ Կ'ՋԱՐ-
ԴԵՆ, ԵՒ ՁԵԶ Կ'ԸՔԻՉԱՑՆԵՆ. ԵՒ ՁԵՐ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԱՆԱՊԱՏ ԿԸ
23 ԴԱՌՆԱՆ ։ ԵՒ ԵԹԷ ԱՏՐԱՆՑՈՎ ԷԼ
ՉԽՐԱՏՈՒԵՔ ԻՆՁԱՆԻՑ ԵՒ ԻՆՁ ՀԱԿԱ
24 ԽՈՏՈՐՆԱԿ ՎԱՐՈՒԵՔ, ԱՀՆ ԺԱ-
ՄԱՆԱԿ ԵՍ ԷԼ ՁԵԶ ՀԱԿԱ ԽՈՏՈՐ-
ՆԱԿ Կ'ՎԱՐՈՒԻՄ, ԵՒ ԵՍ ԷԼ ՁԵՐ
ՄԵՂՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՕԹՆԱՊԱՏԻԿ ԿԸ
25 ՊԱՏԺԵՄ ՁԵԶ ։ ԵՒ ՁԵԶ ՎԵՐՍՅ
Կ'ՈՒՂԱՐԿԵՄ ԻՄ ՈՒԽՏԻ ՎՐԷԺՆ
ԱՌՆՈՂ ՍՈՒԲԸ, ԵՒ ՁԵՐ ՔԱՂԱՔՆԵ-
ՐԻ ՄԷՋ Կ'ԺՈՂՈՎՈՒԻՔ, ԵՒ ՁԵՐ ՄԷՋԸ
ԺԱՆՈՒԱԽԱ Կ'ՈՒՂԱՐԿԵՄ, ԵՒ ԹԸՇ-
26 ՆԱՄՈՒ ՁԵՌՔԸ Կ'ՄՈՒՆՈՒԻՔ ։ ԵՍ
ՁԵՐ ՀԱՑԻ ՑՈՒՊԸ ԿՈՏՐԻԼԻԱ, ՈՎ-
ԱՐ ԿՆԻԿ ՄԷԿ ԹՈՆԻՐՈՒԻ Կ'ԹԽԵՆ
ՁԵՐ ՀԱՑԸ, ԵՒ ՁԵՐ ՀԱՑԸ ԿՇՈՒԱ
ԵՒ Կ'ՈՐՈՒԻ ՁԵԶ. ԵՒ Կ'ՈՒՏԷՔ ՈՒ
ՉԷՔ ԿՇԱՌՆԱԼ ։
27 ԵՒ ԵԹԷ ԱՏՐԱՆՑՈՎ ԷԼ ԻՆՁ
ՉԼՍԷՔ, ԱՅԼ ԽՈՏՈՐՆԱԿ ՎԱՐՈՒԻՔ
28 ԻՆՁ ՀԱԿԱ, ԱՀՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՍ ԷԼ
ՁԵԶ ՀԱԿԱ ԽՈՏՈՐՆԱԿ ԲԱՐԿՈՒ-
ԹԵԱՄԲ Կ'ՎԱՐՈՒԻՄ, ԵՒ ՁԵՐ ՄԵՂ-
ՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՕԹՆԱՊԱՏԻԿ ԿԸ
29 ՊԱՏԺԵՄ ՁԵԶ. ԵՒ ՁԵՐ ՄԱՐԴԱԿԱՑ
ՄԻԱՐ Կ'ՈՒՏԷՔ, ԵՒ ՁԵՐ ԱՂՋԿԱՆՑ
30 ՄԻԱՐ Կ'ՈՒՏԷՔ ։ ԵՒ ՁԵՐ ԲԱՐՁՐ
ՏԵՂԵՐԸ Կ'ՔԱՆԴԵՄ ԵՒ ՁԵՐ ԱՐԵ-
ԳԱԿԱՆ ԿՈՒԼՔԵՐԸ Կ'ՓՇԱՑՆԵՄ, ԵՒ
ՁԵՐ ԴԻԱԿՆԵՐԸ ՁԵՐ ԿՈՒԼՔԵՐԻ ԴԻ-
ԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՅ Կ'ԴՆԵՄ, ԵՒ ԻՄ ԱՆ-
31 ՁԸ ՁԵԶԱՆԻՑ ՊԻՏԻ ԳԱՐԱԻ ։ ԵՒ ՁԵՐ
ՔԱՂԱՔՆԵՐԸ ԱՒԵՐԱԿ ՝ ԵՒ ՁԵՐ ՍՈՒՐԲ
ՏԵՂԵՐԸ ԱՄԱՅԻ Կ'ԱՆԵՄ, ԵՒ ՁԵՐ
32 ԱՆՈՒՇ ՀՈՏԸ ՉԵՄ ՀՈՏՈՏԱԼ ։ ԵՒ
ԵՐԿԻՐԸ ԱՄԱՅԻ Կ'ԱՆԵՄ, ԵՒ ՍՊԻ
ՏԵՂ ԲՆԱԿՈՂ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ
33 Կ'ԶԱՐՄԱՆԱՆ ՆՈՐԱ ՎԵՐՍՅ ։ ԵՒ
ՁԵԶ ՍՊԱԿԵՐԻ ՄԷՋ Կ'ՑՐՈՒԵՄ, ԵՒ
ՁԵՐ ԵՐԿԻՐԸ ԱՄԱՅԻ Կ'ԼԻՆԻ, ԵՒ ՁԵՐ ՔԱ-
ՂԱՔՆԵՐԸ ԱՒԵՐԱԿ Կ'ԼԻՆԻՆ ։ ԱՀՆ
34 ԺԱՄԱՆԱԿ ԵՐԿԻՐՆ ԻՐ ԱՄԱՅՈՒԹԵԱՆ
ԲՈԼՈՐ ՕՐԵՐԸ ԻՐ ՇԱԲԱԹՆԵՐԸ Կ'ՎԱ-
ՅԵԼԷ, ԵՒ ԴՈՒՔ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
ԵՐԿՐՈՒՄԸ Կ'ԼԻՆԻՔ. ԵՐԿԻՐԸ ՍՊԻ ԺԱ-
ՄԱՆԱԿ ՀԱՆԳԻՍՏ ԼԻՆԵԼՈՎ՝ ԻՐ ՇԱ-
ԲԱԹՆԵՐԸ Կ'ՀԱՃԵՑՆԷ. ԻՐԱՆ ԱՄԱ- 35
ՅՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՕՐԵՐԸ ՊԻՏԻ ՀԱՆ-
ԳԻՍՏԱՆԱՅ. ՎԱՍՆ ՊԻ ՁԵՐ ՇԱԲԱԹ-
ՆԵՐՈՒՄԸ ՉԷ ՀԱՆԳԱՍՑԵԼ, ԵՐԲՈՐ
ՆՈՐԱ ՎԵՐՍՅ ԲՆԱԿՈՒԱԾ ԷԻՔ ։ ԵՒ ԱՁ- 36
ՊԱՆԻՑ ՄԱՑԱԾԱՅՆԵՐԻ ԱՐՏԻՆ ՊՈ-
ՂՈՒԱԾ Կ'ԲԵՐԵՄ ԻՐԱՆՑ ԹՇՆԱՄԵԱՑ
ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄԸ, ԵՒ ԽՈՀՈՑ ՇԱՐԺ-
ՈՒԱԾ ԱՒԵԼԻ ՃԱՅՆԸ ՊԻՏԻ ՀԱ-
ԼԱԾԷ ՆՈՐԱՆՑ, ԵՒ ՍՈՒՐԻ ԲԵՐՈՒԵՑ
ՓԱԽՉԵԼՈՒ ՊԷՍ՝ ՊԻՏԻ ՓԱԽՉԵՆ
ՆՈՐԱՆՔ, ԵՒ ՀԱԼԱԾՈՂ ՉԵՂԱԾ՝ ՊԻ-
ՏԻ ԸՆԿՆԵՆ ։ ԵՒ ՍՈՒՐԻ ԵՐԵՍԵՑ 37
ԽՆՁԼԸ ՊԷՍ ԻՐԱՐ ՎԵՐՍՅ ՊԻՏԻ
ԸՆԿՆԵՆ՝ ՀԱԼԱԾՈՂ ՉԵՂԱԾ, ԵՒ ՊԻ-
ՏԻ ՉԻՐԱԽՈՂԱՆԱՔ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
ՄԷՋԸ ԿԱՆԳՆԵԼ ։ ԵՒ ՍՊԱԿԻՐԻ ՄԷՋ 38
ՊԻՏԻ ԿՈՐՉԷՔ, ԵՒ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵ-
ՐԻ ԵՐԿԻՐԸ ՁԵԶ ՊԻՏԻ ՄՆԱՑԷ ։ ԵՒ 39
ՁԵԶԱՆԻՑ ՄՈՑԱԾԱՅՆԵՐՆ ԻՐԱՆՑ ԱՆ-
ՕՐԷՆՈՒԹԻՒՆՈՎ ՊԻՏԻ ՀԱՐՈՒԻՆ
ՁԵՐ ԹՇՆԱՄԵԱՑ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄԸ.
ՆԱԵ ԻՐԱՆՑ ՀԱՐԱՆՑ ԱՆՕՐԷՆՈՒ-
ԹԻՒՆՆԵՐՈՒՄԸ ՄԷԿԱՌԵՑ ՊԻՏԻ ՀԱԼ-
ՈՒԻՆ ։
ԵՒ ԵԹԷ ԽՈՏՈՒԱՆԵՆ ԻՐԱՆՑ 40
ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՆՑ ՀԱՅՐԵ-
ՐԻ ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ՝ ԻՐԱՆՑ ԻՆՁ
ԴԷՄ ԳՈՐԾԱԾ ՅԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՀԱ-
ՄԱՐ, ԵՒ ՆԱԵ ԹԷ ԻՆՁ ՀԱԿԱ ԽՈ-
ՏՈՐՆԱԿ ՎԱՐՈՒԵՑԻՆ, ԵՒ ՆԱԵ ԵՍ 41
ՆՈՐԱՆՑ ՀԱԿԱ ԽՈՏՈՐՆԱԿ ՎԱՐՈՒԵՑԻ,
ԵՒ ՆՈՐԱՆՑ ԻՐԱՆՑ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԵՐ-
ԿԻՐԸ ՍՏԱՐԻ. ԵԹԷ ՊԻ ԺԱՄԱՆԱԿ
ՆՈՐԱՆՑ ԱՆԹԼՓԱՏ ՍԻՐՏԸ ԽՈՒՏԱ-
ՀՈՒԻ ԵՒ ԻՐԱՆՑ ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆԸ
ՊԱՏԺԻՆ ԶՕԺԱՐԵՆ, ԱՀՆ ԺԱՄԱ- 42
ՆԱԿ Կ'ՅԻՇԵՄ ՅԱԿՈԲԻ ՀԱԿԱ ՍՐԱԾ
ԻՄ ՈՒԽՏԸ, ՆԱԵ ԻՍԱՀԱԿԻ ՀԱԿԱ
ՍՐԱԾ ԻՄ ՈՒԽՏԸ, ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻ
ՀԱԿԱ ՍՐԱԾ ԻՄ ՈՒԽՏԸ Կ'ՅԻՇԵՄ,
ԵՒ ՍՊԻ ԵՐԿԻՐՆ ԷԼ Կ'ՅԻՇԵՄ ։
ԵՒ ՍՊԻ ԵՐԿԻՐԸ ՊԻՏԻ ԹՈՂՈՒԻ 43
ՆՈՐԱՆՑԻՑ, ԵՒ ԻՐ ՇԱԲԱԹՆԵՐԸ ՀԱ-
ՃԵՑՆԷ, ՆՈՐԱՆՑԻՑ ԱՄԱՅԻ ՄՆԱՑԻՍ.
ԵՒ ՆՈՐԱՆՔ ԻՐԱՆՑ ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆԸ
ՊԱՏԺԻՆ ՊԻՏԻ ՉՕԺԱՐԵՆ. ՀԷՆՑ
ԲՈՒՆ ՆՈՐԱ ՀԱՄԱՐ ՈՐ ԻՄ ԴԱ-
ՍԱՏԱՍՏԱՆՆԵՐՆ ԱՆԱՐԳԵՑԻՆ, ԵՒ ՆՈ-
ՐԱՆՑ ՀՈԳԻՆԵՐՆ ԻՄ ԿԱՆՈՆՆԵՐԻՑԸ
ԳՂՈՒԵՑԻՆ ։ ԲԱՅՑ ԵՒ ՍՊԱՌ ԱՄԲ- 44
ՆԱՅԻՆԻ ԵՐԲՈՐ ԻՐԱՆՑ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
ԵՐԿՐՈՒՄԸ ԼԻՆԵՆ, ՆՈՐԱՆՑ ՉԻՄ ՄԵՌ-

ժել, և նորանցից չեմ զզուիլ նորանց բոլորովին կորցնելու՝ և նորանց հետ արած ուխտս ջնջելու չափ. վասն զի ես եմ ԵՀովան
45 նորանց Աստուածը. Բայց նորանց համար պիտի յիշեմ նախնեաց ուխտը, որոնց Եգիպտոսի երկրէն հանեցի՝ ազգաց առջև նորանց Աստուած լինելու համար. ես եմ ԵՀովան:

46 Սորանք են այն կանոնները և դատաստանները և օրէնքները՝ որ ԵՀովան տուաւ իրան և Իսրայէլի որդոց մէջ Սինայ լեառնումը Մովսէսի ձեռքով:

ԳԼ. ԻԷ

1 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոց հետ և ասիր նորանց. Երբոր մէկը ուխտ անելու լինի, անձինքը քո արժեցրածի պէս ԵՀովայինը
3 պիտի լինեն: Եւ քո գնահատելը արու-լինի. եթէ արու է՝ քսան տարեկանից մինչև վաթսուն տարեկան՝ գնահատութիւնդ սրբատեղւոյ սիկղի համեմատ՝ հիսուն
4 սիկղ արծաթ լինի: Եւ եթէ էգ է՝ գնահատութիւնդ երեսուն
5 սիկղ լինի: Եւ եթէ հինգ տարեկանից մինչև քսան տարեկան է, այն ժամանակ արուի համար գնահատութիւնդ քսան սիկղ՝ և էգի համար տասը սիկղ լինի:
6 Եւ եթէ մէկ ամսականից մինչև հինգ տարեկան լինի, այն ժամանակ արուի համար գնահատութիւնդ հինգ սիկղ արծաթ, և էգի համար գնահատութիւնդ
7 երեք սիկղ արծաթ լինի: Եւ եթէ վաթսուն տարեկանից վեր լինի, արուի համար գնահատութիւնդ տասն ու հինգ սիկղ՝ և էգի համար տասը սիկղ լինի:
8 Եւ եթէ քո գնահատութեանը նորա կարողութիւնը չհասնէ, նորան քահանայի առջևը կանգնեցնեն, և քահանան նորան գնահատէ. քահանան ուխտ անողի ձեռնհասութեան համեմատ նորան գնահատէ:

9 Եւ եթէ անասուններից է ե-

հովայի համար նորան մատուցանելու զոհը, ինչ որ նորանից ԵՀովային տայ, սուրբ պիտի լինի:
Պիտի չփոխէ այն, և լաւը վատի 10
հետ՝ կամ վատը լաւի հետ չփոխէ. և եթէ անասունը անասունի հետ երբէք փոխելու լինի, այն ժամանակ այն ընծա-
---ը և նորա փոխանակը սուրբ պիտի լինի: Եւ եթէ մի որևէ ան- 11
մաքուր անասուն է, որ նորանից ԵՀովային զոհ չեն մատուցանել, այն ժամանակ քահանայի առջևը կանգնեցնէ այն անասունը. Եւ 12
քահանան նորա լաւութեան կամ վատութեան համեմատ գնահատէ նորան. քահանան ինչ որ գնահատէ, այնպէս լինի: Իսկ եթէ 13
նորան փրկելու լինի, այն ժամանակ քո գնահատութեան վերայ մի հինգերորդ մաս աւելացնէ:

Եւ երբոր մի մարդ իր տունը 14
ԵՀովային սուրբ լինելու համար ընծայէ, այն ժամանակ քահանան նորա լաւութեան կամ վատութեան համեմատ գնահատէ. քահանան ինչ որ գնահատէ նորան, այնպէս կենայ: Եւ եթէ ընծայողը իր տունը փրկելու լինի, քո գնահատութեան փողի վերայ մի հինգերորդ մաս աւելացնէ, և չորս նորանը լինի:

Եւ եթէ մի մարդ իր կալուածքի արտից ընծայելու լինի ԵՀովային, այն ժամանակ գնահատութիւնդ նորա սերմի համեմատ լինի. մէկ քոռ գարու սերմի համար՝ հիսուն սիկղ արծաթ լինի:
Եթէ իր արտը Յոբելէանի տարուց 17
ը ընծայէ, քո գնահատութեան պէս կենայ: Եւ եթէ իր արտը 18
Յոբելէանից յետոյ ընծայէ, քահանան նորա հետ փողը մինչև Յոբելէանի տարին մնացած տարիների համեմատ հաշիւ անէ, և քո գնահատութիւնից վար իջեցնէ. Իսկ եթէ արտը ընծայողը 19
փրկելու լինի նորան, այն ժամանակ քո գնահատութեան փողի վերայ մի հինգերորդ մաս աւելացնէ, և այն արտը հաստատուի նորա վերայ: Եւ եթէ արտը չը 20
փրկէ, կամ արտը մէկ ուրիշի

ծախած լինի, այլ և պիտի չը
21 փրկուի այն։ Եւ որոք՝ Յորել-
եան տարուն ազատուելիս, նը-
ուիրուած որոի պէս սուրբ պի-
տի լինի Եհովային. նորա կալ-
ուածքը քահանայինը պիտի լինի։
22 Եւ եթէ մէկը Եհովային ընծա-
յէ իր ծախու առած որոը, որ
23 իր կալուածքի որոիցը չէ, Ա-
ժամանակ քահանան նորա հետ
քը գնահատութեան հաշիւն ա-
նէ մինչև Յորելեան տարին, և
այն օրը քը գնահատածը տայ.
նա սուրբ է Եհովայի համար։
24 Յորելեան տարին՝ որոը ծախո-
ղին՝ այսինքն որի որ պատկանում
է դեռևի կալուածքը, նորան պի-
25 տանայ։ Եւ քը բոլոր գնահա-
տութիւնը սրբարանի սիկղի հա-
մեմատ պիտի լինի. սիկղը քսան
կերտա լինի։
26 Միայն թէ անասունների ա-
ռաջինեկը՝ առաջի ծնածը լինե-
լու համար Եհովայինը լինելով,
ոչ մէկը պիտի չընծայէ այն. թէ
արջառ թէ ոչխար, Եհովայինն է։
27 Եւ եթէ անմաքուր անասուննե-
րից է, քը գնահատութեան հա-
մեմատ փրկէ նորան, և նորա
վերայ մի հինգերորդ մաս աւելա-
ցընէ. և եթէ չի փրկուիլ, քը գը-
նահատութեամբը, թող ծախուի։

Բայց որ և իցէ նուէր՝ որ մէկը 28
Եհովային է նուիրել բոլոր ունե-
ցածքից մարդիկներից և անա-
սուններից և իր կալուածքի որ-
ոից, չծախուի և չփրկուի. ա-
մէն նուէր ամենասուրբ է Եհո-
վային։ Մարդիկներից նուիրուած 29
որ և իցէ մի նուէր պիտի չփրկը-
ուի, անպատճառ պիտի մեռ-
նուի։

Եւ երկրի բոլոր տասանորդը՝ 30
երկրի հունտերից և ծառերի
պտուղից՝ Եհովայինն է. նա
սուրբ է Եհովայի համար։ Եւ 31
եթէ մի մարդ իր տասանորդնե-
րից փրկելու լինի, նորա վերայ
մի հինգերորդ մաս պիտի աւե-
լացնէ։ Եւ արջառների և ոչխար- 32
ների ամեն տասանորդը՝ գաւա-
զանի տակից ամեն անցնողի տաս-
ներորդը՝ սուրբ պիտի լինի Եհո-
վային։ Լաւն և վատը մէջտեղը 33
տարբերութիւն պիտի չ'անէ, և
չ'փոխէ այն. և եթէ փոխելու լի-
նի, այն ժամանակ նա էլ նորա
փոխանակին էլ սուրբ պիտի լինի,
պիտի չ'փրկուի։

Սրանք են Եհովայի խորհրդի 34
որդոց համար Սինայ լեռանումը
Մովսէսի պատուիրած պատուի-
րանքները։

ԳԻՐՔ ԹՈՒՀՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
Սինայի անապատումը ժողովքի
խորանի մէջ նորանց Եգիպտոսի
երկրից գնալու երկրորդ տարուայ
2 երկրորդ ամսի մէկին ասելով. Ա-
ռէք խորհրդի որդոց բոլոր ժո-
ղովքի համարը իրանց ազգատոհ-
մերի և իրանց հարանց տների
համեմատ՝ ամեն մէկ արուն ի-
3 րանց անուններին թուով։ Խորհ-
րդի մէջ բոլոր պատերազմի ել-
նողներն քսան տարեկանից վեր
համարեցէք նորանց իրանց գունդ-
դերի համեմատ դու և Ահարոնը։
4 Եւ ձեզ հետ ամեն մէկ ցեղից մէկ
մարդ լինի ազգից ամեն մէկին իր
հօր տան իշխանը լինի։
5 Եւ ձեզ հետ կանգնելու մար-
դոց անուններն սրանք են. Ռու-
բէնից՝ Սեդիւրի որդի Եղիսուրը.
6 Շմաւոնից՝ Սուրիսադայի որդի
7 Սաղամիէլը. Յուդայից՝ Ամինա-
դաբի որդի Նաասոնը. Իսաքա-
8 րից՝ Սուդարի որդի Նաթանայէ-
լը. Զաբուղոնից՝ Քեղոնի որդի Ե-
9 լիաբը. Յովսէփի որդիներից՝ Եփ-
10 րեմից՝ Ամիուդի որդի Եղիսաման,
Մանասէից՝ Փադասուրի որդի

11 Գամաղիէլը. Բենիամինից՝ Գեդէ-
12 ոնի որդի Աբիդանը. Դանից՝ Ա-
13 միսադայի որդի Աքիեզերը. Աս-
14 րից՝ Ենբրանի որդի Փագիէլը. Գա-
դից՝ Դսգուելի որդի Եղիասափը.
15 Նեփթաղիմից՝ Ենանի որդի Ա-
16 քիրէն: Սրանք էին ժողովքի ե-
րևելիները՝ իրանց հարանց ցեղե-
րի իշխանները՝ Իսրայէլի հազա-
րապետները:
17 Եւ Մովսէսն ու Ահարոնն ա-
ռին այս մարդիկը, որ անուննե-
18 րով յիշուեցան. Եւ երկրորդ ամ-
սուայ մէկին բոլոր ժողովքը ժո-
ղովեցին և ազգագրուեցան իրանց
տոհմերի և իրանց հարանց տնե-
րի համեմատ՝ քսան տարեկանից
վեր՝ ամենքը համարուելով էրկ-
19 անունների թուովը: Ինչպէս
Մովսէսին ինչպէս որ պատուի-
րեց, և նա այնպէս համարեց նո-
րանց Սինայի անապատումը:
20 Եւ Իսրայէլի անդրանիկ որդի՝
Ռուբէնի որդիքն իրանց ազգուն-
դովը՝ իրանց տոհմերի և իրանց
հարանց տների համեմատ՝ քսան
տարեկանից վեր բոլոր պատե-
րազմի ելնողները՝ ամեն մէկ ար-
21 էրկանց անունների թուովը. Ռու-
բէնի ցեղից համարուածները՝ քա-
ռասուն ու վեց հազար հինգ հար-
իւր հոգի:
22 Շմաւոնի որդիքն իրանց ազ-
գունդովը՝ իրանց տոհմերի և ի-
րանց հարանց տների համեմատ՝
քսան տարեկանից վեր բոլոր պա-
տերազմի ելնողները՝ ամեն մէկ
արուն էրկանց անունների թուովը:
23 Շմաւոնի ցեղից համարուածները
յիսունուվեց հազար երեք հար-
իւր հոգի:
24 Գադի որդիքը իրանց ազգուն-
դովը՝ իրանց տոհմերի և իրանց
հարանց տների համեմատ՝ քսան
տարեկանից վեր բոլոր պատերազ-
մի ելնողները էրկանց անունների
25 թուովը, Գադի ցեղից համար-
ուածները քառասունուհինգ հա-
զար վեց հարիւր յիսուն հոգի:
26 Յուդայի որդիքն իրանց ազգուն-
դովը՝ իրանց տոհմերի և իրանց
հարանց տների համեմատ՝ քսան
տարեկանից վեր բոլոր պատերազ-
մի ելնողները էրկանց անունների
թուովը, Յուդայի ցեղից համար- 27
ուածները եօթանասուն ու չորս
հազար վեց հարիւր հոգի:
Իսաքարի որդիքն իրանց ազ- 28
գունդովը՝ իրանց տոհմերի և ի-
րանց հարանց տների համեմատ՝
քսան տարեկանից վեր բոլոր պա-
տերազմի ելնողները՝ էրկանց անուն-
ների թուովը, Իսաքարի ցեղից 29
համարուածները յիսուն ու չորս
հազար չորս հարիւր հոգի:
Զաբուղոնի որդիքն իրանց ազ- 30
գունդովը՝ իրանց տոհմերի և ի-
րանց հարանց տների համեմատ՝
քսան տարեկանից վեր բոլոր պա-
տերազմելու կարող եղողները էրկանց
անունների թուովը, Զաբուղոնի 31
ցեղից համարուածները յիսուն ու
եօթը հազար չորս հարիւր հոգի:
Յովսէփի որդիներից Եփրեմի 32
որդիքն իրանց ազգունդովը՝ իրանց
տոհմերի և իրանց հարանց տնե-
րի համեմատ՝ քսան տարեկանից
վեր բոլոր պատերազմի ելնողները՝
էրկանց անունների թուովը, Եփրե- 33
մի ցեղից համարուածները քա-
ռասուն հազար հինգ հարիւր
հոգի:
Մանասէի որդիքն իրանց ազ- 34
գունդովը՝ իրանց տոհմերի և ի-
րանց հարանց տների համեմատ՝
քսան տարեկանից վեր բոլոր պա-
տերազմի ելնողները՝ էրկանց անուն-
ների թուովը, Մանասէի ցեղից 35
համարուածները երեսուն երկու
հազար երկու հարիւր հոգի:
Բենիամինի որդիքն իրանց ազ- 36
գունդովը՝ իրանց տոհմերի և ի-
րանց հարանց տների համեմատ՝
քսան տարեկանից վեր բոլոր պա-
տերազմի ելնողները էրկանց անուն-
ների թուովը, Բենիամինի ցեղից 37
համարուածները երեսունուհինգ
հազար չորս հարիւր հոգի:
Դանի որդիքն իրանց ազգունդո- 38
վը՝ իրանց տոհմերի և իրանց հա-
րանց տների համեմատ՝ քսան տա-
րեկանից վեր բոլոր պատերազմի
ելնողները՝ էրկանց թուովը, Դանի 39
ցեղից համարուածները վեց տաս-
ներկու հազար եօթը հարիւր հոգի:
Ասերի որդիքն իրանց ազգուն- 40

դովք՝ իրանց տոհմերի և իրանց հարանց տների համեմատ՝ քան տարեկանից վեր բոլոր պատերազմի ելնողները՝ էրանց անունների թվով, Ասերի ցեղից համարուածները քառասուն ու մեկ հազար հինգ հարիւր հոգի։

42 Նեփթաղիմի որդիքն իրանց սերունդովք՝ իրանց տոհմերի և իրանց հարանց տների համեմատ՝ քան տարեկանից վեր բոլոր պատերազմի ելնողները էրանց անունների թվով, Նեփթաղիմի ցեղից համարուածները յիսուն երեք հազար չորս հարիւր հոգի։

44 Սորանք են այն համարուածները, որ համարեցին Մովսէսը և Ահարոնը և Իսրայէլի իշխանները, տասներկու մարդիկ, տան մի մի հոգի իրանց տան կողմից էին։ 45 Եւ եղան Իսրայէլի որդոց տունն իրանց հարանց տների համեմատ Իսրայէլի մէջ քան տարեկանից վեր բոլոր պատերազմի ելնողները 46 համարուեցան. Եւ բոլոր համարուածները վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի։

47 Բայց Ղեւտացիները իրանց հայրերի ցեղովը սորանց մէջ չհամարուեցան. 48 Եւ Եհովան խօսել էր Մովսէսի հետ ասելով. 49 Միայն Ղեւտացւոց ցեղը չհամարես և նորանց գումարը չառնես Իսրայէլի որդոց հետ. 50 Բայց դու Ղեւտացիներին կարգիր վկայութեան խորանի և նորա բոլոր կարասիների և նորա վերաբերեալ բոլոր բաների համար. նորանք վեր առնեն խորանը և նորա բոլոր կարասիները, և նորան սպասաւորութիւն անեն. և խորանի շուրջումը բանակեն։ 51 Եւ խորանը չուելիս Ղեւտացիներն իջեցնեն նորան, և խորանն իջևան անելիս Ղեւտացիները կանգնեցնեն նորան. և նոքա մօտեցող օտարականը պիտի մեռցնուի։ 52 Եւ Իսրայէլի որդիքն իրանց գունդերովը սահմանի իրանց բանակի մօտ իջևան պիտի անեն։ 53 Բայց Ղեւտացիները վկայութեան խորանի շուրջումը բանակեն, որ Իսրայէլի որդոց ժողովքի վերայ բարկութիւն չլինի, և Ղեւտացիները վկայութեան խորանի պահպանութիւնը անեն։ 54 Եւ Իսրայէլի որդիքը այն բոլորի պէս արին որ Եհովան Մովսէսին պատուիրել էր, այնպէս արին։

Գլ. Բ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և Ահարոնի հետ ասելով. 2 Իսրայէլի որդոց սահման իրանց հայրերի տան նշանովը իջևան անեն. ժողովքի խորանին չորս կողմանակի իջևան անեն։

3 Եւ արևելի կողմում դէպի արևելք իջևան անողները Յուդայի բանակի դրօշակը լինի իրանց գունդերովը. և Յուդայի որդոց իշխան լինի Ամինադաբի որդի Նահասոնը։ 4 Եւ նորա զօրագունդը և համարուածները եօթանասուն ու չորս հազար վեց հարիւր հոգի։ 5 Եւ նորա մօտը իջևան անողները Իսաքարի ցեղը լինի. և Իսաքարի որդոց իշխան լինի Սուգարի որդի Նաթանայէլը։ 6 Եւ նորա զօրագունդը և համարուածները յիսունչորս հազար չորս հարիւր հոգի։ 7 Եւ Զաբուղոնի ցեղը. և Զաբուղոնի որդոց իշխան լինի Փեղոնի որդի Եղիաբը։ 8 Եւ նորա զօրագունդը և համարուածները յիսուն եօթը հազար չորս հարիւր հոգի։ 9 Յուդայի բանակի մէջ համարուածների ամենն իրանց գունդերի համեմատ՝ հարիւր ութսունվեց հազար չորս հարիւր հոգի։ Առաջ սորանք չուեն։

10 Հարաւային կողմում Ռուբենի բանակի դրօշակը լինի իրանց գունդերովը. և Ռուբենի որդոց իշխան՝ Սեդիւրի որդի Եղիսուրը լինի։ 11 Եւ նորա զօրագունդը և համարուածները քառասունվեց հազար հինգ հարիւր հոգի։ 12 Եւ նորա մօտ իջևան անողները Շմաւոնի ցեղը լինի և Շմաւոնի որդոց իշխան՝ Սուրիսադդայի որդի Սաղամիէլը լինի։ 13 Եւ նորա զօրագունդը և համարուածները յիսուն ինը հազար երեք հարիւր հոգի։ 14 Եւ Գադի ցեղը. և Գադի որդոց իշ-

խան՝ Դադուէլի որդի Եղիասափը լինի։ 15 Եւ նորա զօրագունդը և համարուածները քառասուն ու հինգ հազար վեց հարիւր յիսուն հոգի էին։ 16 Ռուբենի բանակի մէջ համարուածների ամէնն իրանց գունդերի համեմատ՝ հարիւր յիսունհազար չորս հարիւր յիսուն հոգի էին։ Եւ երկրորդը առանք չունեն։

17 Յետոյ չուէ ժողովքի խորանը՝ Ղեւտացւոց բանակը, բանակների մէջտեղը. ինչպէս իջևան են առնում այնպէս էլ չուեն՝ ամեն մարդ իր տեղը իրանց զօրաջոկների համեմատ։

18 Արևմտեան կողմում Եփրեմի բանակի դրօշակը լինի իրանց գունդերով և Եփրեմի որդոց իշխան՝ Ամիհուդի որդի Եղիսաման լինի։ 19 Եւ նորա զօրագունդը և համարուածները քառասուն հազար 20 հինգ հարիւր հոգի էին։ Եւ նորա մօտ Մանասէի ցեղը. և Մանասէի որդոց իշխան՝ Փադասուրի որդի 21 Գամալիէլը լինի։ Եւ նորա զօրագունդը և համարուածները երեսուն երկու հազար երկու հարիւր հոգի էին։ 22 Եւ Բենիամինի ցեղը. և Բենիամինի որդոց իշխան՝ Գեդէոնիի որդի Աբիդանը լինի։ 23 Եւ նորա զօրագունդը և համարուածները երեսունուհինգ հազար չորս հարիւր հոգի էին։ 24 Եփրեմը բանակի մէջ համարուածների ամէնն իրանց գունդերովը հարիւր ութը հազար հարիւր հոգի էին։ Եւ երրորդը առանք չունեն։

25 Հիւսիսային կողմում Դանի բանակի դրօշակը լինի իրանց գունդերով. և Դանի որդոց իշխան՝ Ամիսադայի որդի Աքիեզերը լինի։ 26 Եւ նորա զօրագունդը և համարուածները վեցսուն երկու հազար 27 հարիւր հոգի էին։ Եւ նորա մօտ իջևան անողները Ասերի ցեղը լինի. և Ասերի որդոց իշխան՝ Եքրանի որդի Փագիէլը լինի։ 28 Եւ նորա զօրագունդը և համարուածները քառասուն ու մէկ հազար 29 հինգ հարիւր հոգի էին։ Եւ Նեփթաղիմի ցեղը. և Նեփթաղիմի որդոց իշխան՝ Ենանի որդի Աքիրէն լինի։ Եւ նորա զօրագունդը և 30 համարուածները յիսուն երեք հազար չորս հարիւր հոգի էին։ Դանի 31 բանակի մէջ համարուածների ամենը՝ հարիւր յիսուն եօթը հազար վեց հարիւր հոգի էին։ Սորանք իրանց դրօշակներովն ամենի ետևից չուեն։

Սորանք են Իսրայէլի որդիներից 32 իրանց հայրերի տներովը համարուածները. բանակների մէջ համարուածների ամենն իրանց գունդերովը վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին։ Բայց Ղեւտացիները չհամարուե- 33 ցան Իսրայէլի որդոց հետ, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր։ Եւ Իսրայէլի որդիքն 34 արին ինչպէս որ բոլորը Եհովան Մովսէսին պատուիրել էր՝ այսպէս իրանց դրօշակներովն իջևան էին անում. այսպէս նորանք ամեն մէկն իրանց տոհմերովը իրանց հայրերի տներովը չուում էին։

ԳԼ. Գ

Եւ Ահարոնի և Մովսէսի ազգա- 1 բանութիւնը սա է, այն օրն որ Եհովան Մովսէսի հետ խօսեց Սինայ լեռանումը։ Եւ Ահարոնի որ- 2 դոց անուանները սորանք են. անդրանիկը Նադաբ և Աբիուդ, Եղիազար և Իթամար։ Սորանք էին 3 Ահարոնի որդոց օծուած քահանաների անուանները, որոնց ձեռքը լցրեց քահանայութիւն անելու համար։ Եւ Նադաբն ու 4 Աբիուդը Սինայի անապատում Եհովայի առջև օտար կրակ մատուցանելիս մեռան Եհովայի առջև, և նորանք որդի չունէին. և Եղիազարն ու Իթամարն իրանց հայր Ահարոնի առջև քահանայութիւն արին։

Եւ Եհովան խօսեց Մովսէսի 5 հետ ասելով. Ղևիի ցեղը մօտեցրու, և նորանց կանգնեցրու Ահարոն քահանայի առջև, որ նորան 6 սպասաւորութիւն անեն։ Եւ պա- 7 հեն նորա պահպանութիւնը՝ և բոլոր ժողովքի պահպանութիւնը ժողովքի խորանի առջև խորանի պաշտօնը անելով։ Եւ պահեն ժո- 8

ղովքի խորանի բոլոր կարասիները՝ և Իթայէլի որդոց պահպանութիւնը խորանի պաշտօնը առնելով։ 9 Եւ Ղևացիները Ահարոնին և նորա որդոցը տաս, սորանք բոլորովին նորան են տրուած 10 Իսրայէլի որդիներից։ Եւ Ահարոն ու նորա որդիները կարգեա իրանց քահանայական պաշտօնը կատարելու և մօտեցող օտարականը մեռցնուի։

11 Եւ Եհովան խօսեց Մովսէսի 12 հետ ասելով. Եւ ես ահա Իսրայէլի որդոց միջից Ղևացիներն առի, Իսրայէլի որդոց մէջ ամեն ծոցը արգանդը բացող առաջնեկի տեղը, և Ղևացիները իմը պիտի 13 լինին։ Վասն զի ամեն առաջնեկը իմն է. այն որ Եգիպտոսի երկրումը բոլոր առաջնեկները զարկեցի, Իսրայէլի մէջ բոլոր առաջնեկները մարդուց մինչև անասուն սրբեցի ինձ համար. նորանք իմը պիտի լինին, ես եմ Եհովան։

14 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ Սինայի անապատումը ասելով. 15 Համարիր Ղևիի որդիքն իրանց հարանց անների և իրանց ազգատոհմերի համեմատ. մէկ ամսականից վեր եղող ամեն արու 16 բուն համարեա։ Եւ Մովսէս համարեց նորանց Եհովայի խօսքին համեմատ ինչպէս որ ինքը պատուիրուեցաւ։ 17 Եւ Ղևիի որդիքն իրանց անուններով սորանք էին։ 18 Գերսան և Կահաթ և Մերարի։ Եւ Գերսանի որդոց անունները իրանց տոհմերով սորանք են, Ղոբենի և Սեմէի։ 19 Եւ Կահաթի որդիքն իրանց տոհմերով՝ Ամրամ և Իսահար, Քեբրոն և Ոզիել։ 20 Եւ Մերարի որդիքն իրանց տոհմերով՝ Մոողի և Մուսի. Ղևատացոց տոհմերն իրանց հարանց անների համեմատ սորանք են։

21 Գերսանից Ղոբենեանց տոհմը և Սեմէեանց տոհմը եղաւ. Գերսանեանց տոհմերը սորանք են։ 22 Նորանց համարուածները՝ մէկ ամսականից վեր եղող բոլոր արուների թուոյն համեմատ համարուածները՝ եօթը հազար հինգ հարիւր հոգի։ Գերսանեանց տոհմերը խորանի ետքի կողմումը դէպի արևմուտք իջևան անեն։ 23 24 Գերսանեանց հօր տան իշխանը՝ Լայէլի որդի Եղիասափը լինի։ 25 Եւ ժողովքի խորանի մէջ Գերսանի որդոց պահպանութիւնը. խորանը և վրանը, նորա ծածկոցը և ժողովքի խորանի դրան վարագոյրը, խորանի և սեղանի շուրջը եղած արտի առագաստները, և արտի դրան արահակը և նորա ամեն գործի համար եղած չուաններըը։

26 27

Եւ Կահաթից Ամրամեանց տոհմը՝ և Իսահարեանց տոհմը՝ և Քեբրոնեանց տոհմը՝ և Ոզիելեանց տոհմը. Կահաթեանց տոհմերը սորանք են. 28 Մէկ ամսականից վեր եղող բոլոր արուները իբրև թուոյն համեմատ՝ ութը հազար վեց հարիւր հոգի սրբարանի պահպանութիւնը պահպանող։ 29 Կահաթի որդոց տոհմերը խորանի հարաւային կողմումը իջևան անեն։ 30 Եւ Կահաթեանց տոհմերի հօր տան իշխանը՝ Ոզիելի որդի Եղիափանը լինի։ 31 Եւ նորանց պահպանութիւնը լինի տապանակը՝ սեղանը՝ և աշտանակը և սեղանները՝ և սրբարանի գործիքները, որոնցով պաշտօն են անում, և վարագոյրը՝ և նորա վերաբերեալ ամեն բաները։ 32 Եւ Ղևատցոց իշխանների իշխանը՝ Ահարոն քահանայի որդի Եղիազարն լինի, որ սրբարանի պահպանութիւնն անողների վերայ վերակացու լինի։

33 Մերարիից Մոողեանց տոհմը և Մուսեանց տոհմը, սորանք են Մերարիի տոհմերը։ 34 Եւ նորանց համարուածները՝ մէկ ամսականից վեր եղող բոլոր արուները իբրև թուոյն համեմատ վեց հազար երկու հարիւր հոգի։ 35 Եւ Մերարեանց տոհմերի հօր տան իշխանը՝ Աբիքայէլի որդի Սուրիէլը լինի. սորանք խորանի հիւսիսային կողմումն իջևան անեն։ 36 Եւ Մերարիի որդոց պահպանութեան յանձնուածները լինին խորանի տախտակները՝ և նորա նիգերը և սիւները և խարիսխները՝ և նորա

բոլոր գործիքները՝ և նորա վերա-
37 բերեալ ամեն բաները ։ Եւ շուր-
ջանակի սրահի սիւները՝ և նորանց
խարիսխները՝ և ցից երը՝ և նորանց
չուանները ։
38 Եւ խորանի առջևի կողմամբ այ-
սինքն ժողովքի խորանի առջև
դէպի արևելք իջևան անողները՝
Մովսէսն ու Ահարոնը և նորա
որդիքը լինեն, որ սրբարանի
պահպանութիւնը Իսրայէլի որդոց
պահպանութեան համար պահ-
պանեն. և մօտեցող օտարականը
39 պիտի մեռցնուի ։ Ղևտացոց բո-
լոր համարուածները՝ որ Մովսէսն
և Ահարոնը համարեցին, իրանց
տոհմերովը ԵՀովայի խօսքին հա-
մեմատ՝ մէկ ամսականից վեր ե-
ղող բոլոր արուները քսան երկու
հազար էին ։
40 Եւ ԵՀովան ասաց Մովսէսին.
Իսրայէլի որդոց մէկ ամսականից
վեր բոլոր առաջինեկ արուները
համարիր, և նորանց անուններն
41 թիւն առ ։ Եւ Ղևտացիները առ-
նես ինձ համար ԻՀովայ որդոց
բոլոր առաջինեկների փոխարէն.
ես եմ ԵՀովան. և Ղևտացոց ա-
նասուները՝ Իսրայէլի որդոց ա-
նասունների բոլոր առաջինեկների
42 փոխարէն ։ Եւ Մովսէսը համա-
րեց Իսրայէլի որդոց բոլոր առա-
ջինեկները՝ ինչպէս որ ԵՀովան ի-
43 րան պատուիրեց ։ Եւ բոլոր ա-
ռաջինեկ արուները էրանց անու-
նների թուոյն համեմատ մէկ
ամսականից վեր համարուողները՝
քսան երկու հազար երեք հարիւր
եօթանասուն երեք հոգի ։
44 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի
45 հետ ասելով. Առ Ղևտացինե-
րին, Իսրայէլի որդոցը մէջ ամեն
առաջինեկների փոխարէն, և Ղև-
տացոց անասունները նորանց ա-
նասունների փոխարէն, որ Ղև-
տացիները իմը լինեն, ես եմ Ե-
46 հովան ։ Եւ այն երկու հարիւր
եօթանասուն երեքին փրկանք լի-
նելու համար, որ աւելցան Ղև-
տացիներից Իսրայէլի որդիների-
47 ցը ։ Մարդ գլուխ հինգ սիկղ ա-
ռնես, սրբարանի սիկղի համեմատ
48 առնես. Մէկ սիկղը քսան կերատ
է ։ Եւ նորանց մէջ աւելցածների փրկանքի փողը Ահարոնին և նորա որդոցը տաս ։ Եւ Մով- 49
սէսը՝ Ղևտացիներով փրկուածների աւելցածներից փրկանքի փողն առաւ ։ Իսրայէլի որդոց ա- 50
ռաջինեկներից հազար երեք հարիւր վեթասունհինգ սիկղ արծաթ առաւ սրբարանի սիկղի համեմատ ։ Եւ Մովսէսը ԵՀովայի խօս- 51
քի պէս փրկուածների փողը Ահարոնին ու նորա որդոցը տուաւ, ինչպէս որ ԵՀովան Մովսէսին պատուիրել էր ։

ԳԼ. Դ

Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի և 1
Ահարոնի հետ ասելով. Ա- 2
ռէք Կահաթի որդոց միջից Կահաթի որդոց գումարը իրանց տոհմերի և իրանց հարանց տների համեմատ. երե- 3
սուն տարեկանից վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանի մէջ ծառայութիւն անելու համար գունդի մէջ ամեն մտնողին համարելով ։ ժողովքի խո- 4
րանի մէջ Կահաթի որդոց պաշտօնը այս լինի՝ սրբութիւն սրբութեանցը ։ Եւ բանակը չուելիս 5
գայ Ահարոնը և նորա որդիքը և իջեցնեն ծածկոցի սրահակը և նորանով վկայութեան տապանակը ծածկեն ։ Եւ թէհաշի մորթերից 6
ծածկոցը նորա վերայ դնեն, և նորա վերայ մի բոլորովին կապուտակ ձորձ տարածեն. և նորա ձողերը անցկացնեն ։ Եւ առաջա- 7
ւորութեան սեղանի վերայ մի կապուտակ ձորձ տարածեն և նորա վերայ սկուտեղները և խնկամանները, սկուտուակները և թափելու նուէր մատուցանելու բաժակները դնեն, և հանապազօրեայ հացերը նորա վերայ լինին. Եւ նո- 8
րա վերայ կրկնակի կարմիրից մի ձորձ տարածեն, և թէհաշի մորթերից մի ծածկոցով ծածկեն այն. և նորա ձողերը անցկացնեն ։ Եւ մի կապուտակ ձորձ առնեն 9
և ծածկեն լուսոյ աշտանակը՝ և նորա ճրագները և նորա ունելիները և բաղմակալները՝ և նորա

բոլոր իւղի ամանները՝ որոնցով
10 ծառայում են նորան. Եւ նորան
և նորա ամեն գործիքները թէ-
հաշի մորթերից մի ծածկոցի մէջ
դնեն, և մի լծակի վերայ դնեն
11 այն: Եւ ոսկի սեղանի վերայ մի
կապուտակ ձորձ տարածեն, և
թէհաշի մորթերից ծածկոցով
ծածկեն այն, և նորա ձողերը
12 անցկացնեն: Եւ արծաթեայ մէջ
պաշտօնի համար գործածուած
բոլոր գործիքները առնեն, և մի
կապուտակ ձորձի մէջ փաթա-
թեն, և թէհաշի մորթերից ծած-
կոցով ծածկեն նորան և մի լծա-
13 կի վերայ դնեն: Եւ սեղանի մո-
խիրները կտրելով նորա վերայ մի
14 ծիրանեգոյն ձորձ տարածեն. Եւ
նորա վերայ դնեն պաշտօնի հա-
մար գործածուած նորա բոլոր
գործիքները՝ այսինքն կրակի ա-
մանները՝ մսահանները՝ և թիակ-
ները՝ և կոնքերը՝ ինչ որ սե-
ղանի բոլոր գործիքները՝ և նորա
վերայ թէհաշի մորթերից մի ծած-
կոց տարածեն և նորա ձողերը
15 անցկացնեն: Եւ վերջացնեն Ահա-
րոն և նորա որդիքը սրբարանն
և սրբարանի բոլոր կարասիները
ծածկելը բանակը չուելիս, և յե-
տոյ Կահաթի որդիքը գան վեր
առնելու. բայց սուրբ բաներին
չդիպչեն որ չմեռնեն. Կահաթի
որդոց բեռները սորանք լինին ժո-
ղովքի խորանումը:
16 Եւ Ահարոն քահանայի որդի՝
Եղիազարը լուսոյ իւղի և անու-
շահոտ խունկի և համապատարագեայ
հացի ընծայի և օծման իւղի վե-
րայ վերակացու լինի. և բոլոր
խորանի և նորա միջի ամեն բա-
ների սրբարանի և նորա կարասի-
ների վերայ վերակացու լինի:
17 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
18 Ահարոնի հետ ասելով. Ղևա-
յոց միջից Կահաթեանց տոհմերի
19 ցեղը չի փչացնէք. Բայց նորանց
այսպէս արէք՝ որ ամենասուրբ
բաների մօտենալիս ողջ մնան և
չմեռնեն. Ահարոն ու իր որդիքը
գան, և նորանց ամեն մէկին նո-
շանակեն իր պաշտօնի և իր բեռի
20 վերայ: Եւ երբոր սուրբ բաները
ծածկեն նորանց տեսնելու համար
ներս չմտնեն՝ որ չմեռնեն:
21 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
22 հետ ասելով. Նաև Գերսոնի որ-
դոց գումարն առ՝ իրանց հարանց
տների և իրանց տոհմերի հաշ-
ւում: Երեսուն տարեկանից վեր
23 մինչև հիսուն տարեկանը համա-
րեա նորանց՝ ժողովքի խորանի
մէջ ծառայութիւն անելու հա-
մար գունդի մէջ ամեն մտնողնե-
րը: Սա է Գերսոնեանց տոհմերի
24 ծառայելու և բեռ վեր առնելու
պաշտօնը. Սորանք վեր առնեն
25 խորանի վարագոյրները և ժողով-
քի խորանը, նորա ծածկոցը և
նորա վերայի թէհաշի ծածկոցը,
և ժողովքի խորանի դրան վարա-
գոյրը. Եւ խորանի ու սեղանի
26 շուրջը եղած սրահի առագաս-
տները՝ և սրահը մտնելու դրան վա-
րագոյրը և նորա մեխերը և նորա պարանները և նորանց բոլոր գործիք-
ները և նորանց հարկաւոր եղած
բոլոր սպասաւորութիւնները ա-
նեն: Ահարոնի և նորա որդոց
27 խօսքով լինի Գերսոնեանց որդոց
բոլոր պաշտօնը՝ իրանց ամեն բե-
ռների և իրանց ամեն պաշտօնների
համար և նորանց յանձնէք ի-
րանց բոլոր բեռները պահպանու-
թեան համար: Սա է Գերսո-
28 նեանց որդոց տոհմերի պաշտօնը
ժողովքի խորանի մէջ. և նորանց
պահպանութիւնը Ահարոն քա-
հանայի որդի՝ Իթամարի ձեռքո-
վը լինի:
Մերարիի որդիքն համարեա ի-
29 րանց տոհմերի և իրանց հարանց
տների համեմատ. Երեսուն տա-
30 րեկանից և վեր մինչև հիսուն
տարեկանը՝ ժողովքի խորանի ծա-
ռայութիւնը անելու համար գունդի մէջ ամեն մտնողները համա-
րեա: Եւ սա է ժողովքի խորանի
31 մէջ նորանց ամեն պաշտօնների
համեմատ՝ նորանց յանձնուած
բեռները՝ խորանի տախտակները,
և նորա նիգերը և նորա սիւները
և խարիսխները, Եւ շուրջանակի
32 սրահի սիւները և նորանց խա-
րիսխները և ցիցերը և չուաններըն
նորանց ամեն գործիքներովը և

նորանց ամեն պաշտօնովը, նորանց պահպանութեանը բեռներուն եղած գործիքներն անուններով յանձնէք նոցա։ 33 Այս է Մերարիի որդոց տոհմերուն պաշտօնը ժողովքի խորանի մէջ իրանց բոլոր պաշտօններուն համեմատ Ահարոն քահանայի որդի Իթամարի ձեռքով։ 34 Եւ Մովսէսն ու Ահարոնը և ժողովքի իշխանները համարեցին Կահաթեանց որդիներուն նորանց տոհմերուն և նորանց հարանց տըներուն համեմատ, 35 երեսուն տարեկանէց վեր մինչև հիսուն տարեկանը՝ ժողովքի խորանի մէջ ծառայութիւն անելու համար գունդի մէջ ամեն մնողները. 36 և նորանց համարուածներն իրանց տոհմերով երկու հազար եօթը հարիւր հիսուն հոգի էին։ 37 Սորանք են ժողովքի խորանի բոլոր ծառայութիւն անող Կահաթեանց տոհմերուն համարուածները, որ Մովսէսն ու Ահարոնը համարեցին Մովսէսի ձեռքով Եհովայի խօսքին համեմատ։

38 Եւ Գերսոնի որդոց համարուածներն իրանց տոհմերուն և իրանց հարանց տներուն համեմատ, 39 երեսուն տարեկանէց վեր մինչև հիսուն տարեկանը՝ ժողովքի խորանի մէջ ծառայութիւն անելու համար գունդի մէջ ամեն մնողները. 40 և նորանց համարուածներն իրանց տոհմերուն և իրանց հարանց տներուն համեմատ երկու հազար վեց հարիւր երեսուն հոգի էին։ 41 Սորանք են ժողովքի խորանի մէջ բոլոր ծառայութիւն անող Գերսոնի որդոց տոհմերէն համարուածները, որ Մովսէսն ու Ահարոնը համարեցին Եհովայի խօսքի պէս։

42 Եւ Մերարիի որդոց տոհմերուն համարուածներն իրանց տոհմերուն և իրանց հարանց տներուն համեմատ, 43 երեսուն տարեկանէց վեր մինչև հիսուն տարեկանը՝ ժողովքի խորանի մէջ ծառայութիւն անելու համար գունդի մէջ ամեն մնողները. 44 և նորանց համարուածներն իրանց տոհմերովն երեք հազար երկու հարիւր հոգի էին։ 45 Սորանք են Մերարիի որդոց տոհմերուն համարուածները, որ Մովսէսն ու Ահարոնը համարեցին Եհովայի խօսքի համեմատ Մովսէսի ձեռքով։

46 Ղևտացոց բոլոր համարուածները՝ որ Մովսէսն ու Ահարոնը և Իսրայէլի իշխանները համարեցին իրանց տոհմերուն և իրանց հարանց տներուն համեմատ, 47 երեսուն տարեկանէց վեր մինչև հիսուն տարեկանը՝ ժողովքի խորանի մէջ պաշտօն կատարելու և բեռներն ծառայելու ամեն մնողները, 48 Այսինքն նորանց համարուածները ութը հազար հինգ հարիւր ութսուն հոգի էին. 49 պատուիրածին պէս համարուեցան Մովսէսի ձեռքովը, ամեն մէկն իր պաշտօնին և իր բեռին նայելով. այսպէս համարուեցան նորանք ինչպէս որ Եհովան պատուիրեց Մովսէսին։

ԳԼ. Ե

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ 2 ասելով. Հրամայիր Իսրայէլի որդոց, որ բանակէց դուրս գցեն ամեն բորոտին և ամեն ծորում ունեցողին և մեռելէց ամեն անմաքուր եղողին. 3 Արուն էլ էդն էլ՝ բանակէցը դուրս գցեցէք նորանց, որ չպղծեն իրանց բանակները՝ որոնց մէջ ես բնակուում եմ։ 4 Եւ Իսրայէլի որդիքն այնպէս արին, և բանակէցը դուրս գցեցին նորանց ինչպէս որ Եհովան Մովսէսին հետ խօսել էր այնպէս արին Իսրայէլի որդիքը։

5 Եւ Եհովան խօսեց Մովսէսի 6 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի որդոց հետ. Երբոր մի մարդ կամ մի կնիկ մարդոց ամեն մեղքերէց մէկը գործելով Եհովայի դէմ մեղանչէ և այդ անձը յանցաւոր լինի, 7 Ան ժամանակ իր արած մեղքը խոստովանէ և իր արած վնասը նորա գումարովը հատուցանէ, և նորա վերայ հինգերորդ մասը աւելացնէ, և վճարէ վնասը քաշողին։ 8 Եւ եթէ այն մարդուն մէկ ազգականը չլինի, որին այս

ՓԱՍԱԼ Հատուցանուի, Թող ե-
ղած փնասը Եհովային Հատուցան-
ուելով՝ քահանային լինի բացի
քաւութեան խոյիցը, որով նորա
Համար քաւութիւն պիտի լինի։
9 Եւ Իսրայէլի որդոց բոլոր սուրբ
բաների ամեն նուէրը որ բերում
են քահանային, նորանը լինի։
10 Եւ ամեն մէկի սուրբ բաները նո-
րանը լինի. ամեն մարդ ինչ որ
տայ քահանային նորանը լինի։
11 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
12 Հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդոց Հետ և ասիր նորանց. Եթէ
մի մարդու կինը խոտորելու լինի
և նորան անհաւատարմութիւն ա-
13 նէ, Եւ մէկը նորա Հետ պառկելով
զուգաւորէ և նորա մարդու աչ-
քից այդ գաղտուկ մնայ, և գաղ-
տուկ եղած լինի որ նա պղծուել է,
և վկայ չէ եղել, և կնիկը չբռա-
14 նուի, Եւ խռպո- վերայ նախան-
ձաւորութեան ոգի գալով՝ իր
կնոջ պղծուելու Համար նախան-
ձէ, կամ խռպո- վերայ նախան-
ձաւորութեան ոգի գայ՝ և նա-
խանձէ, բայց կինը պղծուած չէ.
15 Այն ժամանակ այն մարդն իր կը-
նոջը քահանայի մօտ բերէ, և
նորա մասին բերէ իր պատարագը
գարի ալուրից արդուի տասնե-
րորդ բաժինը, իւղ չթափէ նորա
վերայ, ոչ էլ կնդրուկ դնէ վե-
րան, վասն զի նախանձաւորու-
թեան նուէր է այն՝ յիշատակի
նուէր, որ մեղք է յիշատա-
16 կում։ Եւ քահանան կինը մօտեց-
նէ և Եհովայի առջև կանգնեցնէ։
17 Եւ քահանան հողի ամանով
սուրբ ջուր առնէ, և քահանան
խորանի յատակի հողիցը առնէ
18 և ջրի մէջը դնէ։ Եւ քահանան
Եհովայի առջև կանգնեցնէ կինը,
և կնոջ գլուխը բանայ, և յիշա-
տակի նուէրը՝ նախանձաւորու-
թեան նուէրը նորա ձեռքին դնէ
և անէծքի լեղի ջուրը քահանան
19 իր ձեռքին ունենայ, Եւ քահա-
նան նորան երդում տայ և ասէ
կնոջը. Եթէ մի մարդ քեզ Հետ
չպառկեց, և եթէ չպղծուեցար
քո մարդուն անհաւատարմու-
թիւն անելով, անէծքի այս լեղի
ջուրը քեզ ճնաս չանէ. Բայց ե- 20
թէ քո մարդուն անհաւատար-
մութիւն անելով պղծուեցար, և
բացի քո մարդուցը ուրիշ մարդ
քեզ Հետ պառկեց, (Այն ժա- 21
մանակ քահանան այն կնոջը ա-
նէծքի երդում տայ, ու քահա-
նան կնոջն ասէ,) Եհովան քեզ
քո ժողովրդի մէջ անէծքի ու եր-
դումի առարկայ դնէ, Եհովան
քո ճիտը փտեցնելով և քո փո-
րը ուռեցնելով. Եւ այս անէծքի 22
ջուրը քո աղիքների մէջ գնայ,
որ փորդ ուռեցնէ, և ճիտդ փը-
տեցնէ. և կնիկն ասէ. Ամէն ա-
մէն։ Եւ քահանան այս անէծքները 23
մի գրքի մէջ գրէ, և այն լեղի
ջրովը ջնջէ։ Եւ անէծքի լեղի 24
ջուրն այն կնոջը խմեցնէ. և ա-
նէծքի ջուրը նորա մէջը գնայ լե-
ղի լինելու Համար։ Եւ քահանան 25
այն կնոջ ձեռքիցը նախանձաւո-
րութեան նուէրն առնէ, և Եհո-
վայի առջև երերացնէ նուէրը, և
սեղանին մօտեցնէ այն։ Եւ քա- 26
հանան նուէրիցն իր ձեռքը լցնէ
յիշատակի Համար, և սեղանի
վերայ այրէ այն, և յետոյ այն
ջուրը այն կնոջ խմեցնէ։ Եւ ջու- 27
րը նորան խմեցնելուց յետոյ՝ ե-
թէ նա պղծուած է, և իր մարդուն անհաւատարմութիւն ա-
րած է, այն անէծքի ջուրը լեղի
լինելով մտնէ նորա մէջը և նորա
փորը ուռենայ, և նորա ճիտը
փտէ, և կնիկը իր ժողովրդի մէջ
անիծեալ պիտի լինի։ Իսկ եթէ 28
կինիկը պղծուած չէ և մաքուր է,
պատիժ չի կրիլ, և զաւակ կ'ծնէ։
Այս է նախանձաւորութեան օ- 29
րէնքը երբոր մի կնիկ իր մարդուն
անհաւատարմութիւն անէ և պղծուի, կամ երբոր մի մարդու 30
վերայ նախանձաւորութեան ոգի
գայ՝ և իր կնոջ վերայ նախանձէ
և Եհովայի առջև կանգնեցնէ կինը, և քահանան կատարէ այս
բոլոր օրէնքը նորա վերայ. Եւ 31
այն մարդը ազատ լինի յանցան-
քից և կինն իր յանցանքը կրէ։

ԳԼ. Զ

Եւ Եհովան խօսեց Մովսէսի Հետ 1

2 ասելով. խօսիր Իսրայէլի որդոց
հետ և ասիր նորանց. Եթէ մի
մարդ կամ մի կին ուխտաւորի
ուխտ անէ իր անձը Եհովային
3 ուխտելու համար, Նա գինուց և
ցքուց պիտի զգուշանայ. գինու
քացախ չխմէ, և բնաւ խաղողի
օշարակ չխմէ, և խաղող կամ
4 չամիչ չուտէ: Իր ուխտի բոլոր
օրերը որթից եղած ոչ մի բան
չուտէ, կուտերից մինչև կեղևը:
5 Նորան ուխտի բոլոր օրերը՝ նորա
գլխին մկեղ չդպչէ. մինչև իր
անձը Եհովայի նուիրած օրերի
վերջանալը՝ սուրբ լինի. իր գլխի
մազերի վարսքը թող տայ աճի:
6 Իր անձը Եհովային նուիրած բո-
լոր օրերը՝ մեռած մարմնի չմօտե-
7 նայ. Իր հօր համար կամ մօր
համար՝ իր եղբօր կամ իր քրոջ
համար՝ իրան պիտի չպղծէ նորանք
մեռած ժամանակ, վասն զի իր
Աստուծոյ ուխտը իր գլխի վերայ
8 է: Իր ուխտի բոլոր օրերը նա
9 սուրբ է Եհովային: Եւ եթէ իր
մօտ յանկարծ մի մարդ մեռնէ,
և իր ուխտուած գլուխը պղծուի,
իր մաքրուելու օրն գլուխը ածի-
լէ. եօթներորդ օրն ածիլէ այն.
10 Եւ ութերորդ օրը ժողովքի խո-
րանի դուռը երկու տատրակ կամ
աղաւնու երկու ձագ բերէ քա-
11 հանայի մօտ: Եւ քահանան մէկը
մեղքի պատարագ՝ և միւսը ող-
ջակէզ մատուցանէ, և մեռելի
պատճառով եղած մեղքի մասին
քաւութիւն անէ նորա համար,
և նոյն օրը սրբէ նորա գլուխը:
12 Եւ իր ուխտի օրերը Եհովային
նուիրէ, և յանցանքի պատարա-
գի համար մէկ տարեկան գառն
բերէ. և առաջի օրերը պիտի դուրս
ձգուին, վասն զի իր ուխտը պղծ-
ծուեցաւ:

13 Եւ սա է ուխտաւորի օրէնքը.
իր ուխտի օրերը լրացած օրը՝ նո-
րան բերեն ժողովքի խորանի դու-
14 ռը. Եւ նա մատուցանէ իր զոհը
Եհովային, մէկ տարեկան անա-
րատ արու գառն ողջակէզի հա-
մար, և մէկ տարեկան անարատ
էգ գառն մեղքի պատարագի հա-
մար, և մէկ անարատ խոյ խա-
15 ղաղութեան զոհի համար. Եւ մի
սակառ բարակ ալիւրից խմորով
զանգուած անխմոր շօթեր և իւ-
ղով օծուած անխմոր լաւաշներ,
և նորանց հացի նուէրը և թա-
16 փելու նուէրը: Եւ քահանան մո-
տեցնէ Եհովայի առջև, և կա-
տարէ նորա մեղքի պատարագը
17 և նորա ողջակէզը: Եւ խոյը խա-
ղաղութեան զոհ մատուցանէ Ե-
հովայի համար անխմոր հացի սա-
կառով. և քահանան նորա հա-
ցի նուէրը և թափելու նուէրը
18 մատուցանէ: Եւ ուխտաւորն իր
ուխտած գլուխը ածիլէ ժողովքի
խորանի դրանը և իր ուխտած
գլխի մազն առնէ՝ և խաղաղու-
թեան զոհի տակին եղած կրակի
19 մէջը դնէ: Եւ քահանան առնէ
խոյիցը եփած բազուկը, և սա-
կառից մէկ անխմոր շօթ և մէկ
անխմոր լաւաշ և դնէ ուխտա-
ւորի ձեռքերի վերայ՝ իր ուխտի
20 մազերը ածիլուելուց յետոյ. Եւ
քահանան երերացնելու ընծայ ե-
րերացնէ նորանց Եհովայի առջև.
սորանք երերացնելու երբուծով՝
ու բարձրացնելու զիսաով՝ քա-
հանայի համար սուրբ են. և նո-
րանից յետոյ ուխտաւորը գինի
21 խմէ: Այս է ուխտաւորի օրէնքը
որ իր նուէրը խոստանում է Ե-
հովային իր ուխտի համար բացի
իր ձեռքը հասածից նա իր արած
խոստմունքի համեմատ անէ իր
ուխտի օրէնքով:

22 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
23 հետ ասելով. խօսիր Ահարոնի և
նորա որդոց հետ և ասիր. Այս-
պէս օրհնէք Իսրայէլի որդիներին՝
24 ասելով նորանց. Եհովան օրհնէ
25 քեզ, և պահէ քեզ. Եհովան պայ-
ծառացնէ իր երեսը քեզ վերայ
26 և ողորմէ քեզ. Եհովան բարձրաց-
նէ իր երեսը քեզ վերայ, և խա-
37 ղաղութիւն տայ քեզ: Եւ իմ
անունը Իսրայէլի որդոց վերայ
պիտի դնեն, և ես կօրհնեմ նո-
րանց:

Գլ. Է

1 Եւ եղաւ այն օրը որ Մովսէսը

վերջացրեց խորանը կանդնեցնելը,
և օծեց նորան և սրբեց նորան և
նորա բոլոր անօթները, և սեղա-
նը և նորա բոլոր գործիքները օ-
2 ծեց և նորանց սրբեց, Ահն ժա-
մանակ ընծաներ մատուցրին իս-
րայէլի իշխաններն իրանց հարանց
տանը գլուխները՝ այսինքն հա-
մարուողներուն վերայ վերակացու-
3 եղող ցեղերի իշխանները, Եւ բե-
րին իրանց ընծաները Եհովայի
առջև, վեց ծածկուած սայլեր և
տասներկու եզներ, երկու իշխան-
ները մէկ սայլ, և ամեն մէկը մէկ
եզ. և մօտեցրին նորանց խորանի
4 առջևը: Եւ Եհովան խօսեց Մով-
5 սէսի հետ ասելով. Ա՛ռ դորան-
ցից որ ժողովքի խորանի պաշտօ-
նին ծառայեն, և տուր նորանց
Ղևտացիներին ամեն մէկին իր
6 պաշտօնին համեմատ: Եւ Մով-
սէսն առաւ սայլերն ու եզները
և տուաւ նորանց Ղևտացիներին:
7 Երկու սայլը և չորս եզը Գերսոնի
որդոցը տուաւ՝ նորանց պաշտօնի
8 համեմատ. Եւ չորս սայլը և ու-
թը եզը Մերարիի որդոցը տուաւ
նորանց պաշտօնի համեմատ Ա-
հարոն քահանայի որդի Իթամա-
9 րի ձեռքովը: Բայց Կահաթի որ-
դոցը չտուաւ. վասն զի սրբարա-
նի պաշտօնը նորանց վերայ է, ու-
սերով են վեր առնում:
10 Եւ իշխանները սեղանի նուա-
կատեաց ընծաները մատուցրին
սեղանի օծուած օրը. և իշխան-
ներն իրանց ընծաները սեղանի
11 առջև մատուցրին: Եւ Եհովան
ասաց Մովսէսին. Սեղանի նուա-
կատեաց համար՝ ամեն մէկ իշ-
խան մէկ օր իրանց ընծաները մա-
տուցանեն:
12 Եւ առաջին օրն իր ընծան մա-
տուցանողը՝ Ամինադաբի որդի
13 Նաասոնն էր Յուդայի ցեղից: Եւ
այս էր նորա ընծան՝ մէկ արծա-
թի սկուտեղ հարիւր երեսուն
սիկղից, մէկ արծաթի կոնք եօ-
թանասուն սիկղից սրբարանի
սիկղի համեմատ՝ երկուսն էլ լի-
քը հացի ընծայի համար խառն-
14 ուած իւղով, Տասը ոսկուց մէկ տուփ խունկով լիքը. Մէկ զուարակ, մէկ խոյ, 15
մէկ տարեկան գառն ողջակէզի
համար, Այծերից մէկ նոխազ 16
մեղքի պատարագի համար, Եւ 17
խաղաղութեան զոհի համար եր-
կու արջառ՝ հինգ խոյ, հինգ նո-
խազ, հինգ հատ մէկ տարեկան
գառինք. Ամինադաբի որդի Նա-
ասոնի մատուցրած ընծան այս էր:
Երկրորդ օրը մատուցրեց Իսա- 18
քարի իշխան՝ Սոգովրի որդի Նա-
թանայէլը. Նորա մատուցած ըն- 19
ծան այս էր, մէկ արծաթի սկու-
տեղ եօթանասուն սիկղից, մէկ
արծաթի կոնք հարիւր երեսուն
սիկղից սրբարանի սիկղին համե-
մատ, երկուսն էլ լիքը հացի ընծա-
յի համար իւղով զանգուած բա-
րակ ալիւրով, Տասը ոսկուց 20
մէկ տուփ խունկով լիքը. Մէկ 21
զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան
գառն ողջակէզի համար, Այծե- 22
րից մէկ նոխազ մեղքի պատա-
րագի համար, Եւ խաղաղութեան 23
զոհի համար երկու արջառ, հինգ
խոյ, հինգ նոխազ, հինգ հատ
մէկ տարեկան գառինք. Սոգովրի
որդի Նաթանայէլի մատուցրած
ընծան այս էր:
Երրորդ օրը՝ Զաբուղոնի որդոց 24
իշխան Փելոնի որդի Եղիաբը մա-
տուցրեց: Նորա ընծան այս էր. 25
մէկ արծաթի սկուտեղ հարիւր
երեսուն սիկղից. մէկ արծաթի
կոնք եօթանասուն սիկղից սրբա-
րանի սիկղի համեմատ երկուսն
էլ լիքը հացի ընծայի համար խա-
ռած իւղով զանգուած բարակ ալիւրով,
Տասը ոսկուց մէկ տուփ խուն- 26
կով լիքը. Մէկ զուարակ, մէկ 27
խոյ, մէկ տարեկան գառն ողջա-
կէզի համար, Այծերից մէկ նո- 28
խազ մեղքի պատարագի համար,
Եւ խաղաղութեան զոհի համար 29
երկու արջառ, հինգ խոյ, հինգ
նոխազ, հինգ հատ մէկ տարեկան
գառինք. Փելոնի որդի Եղիաբի
մատուցրած ընծան այս էր:
Չորրորդ օրը՝ Ռուբենի որդոց 30
իշխան Սեդիւրի որդի Եղիսուրը
մատուցրեց: Նորա ընծան այս 31
էր. մէկ արծաթի սկուտեղ հա-
րիւր երեսուն սիկղից, մէկ ար-

ծամի կոնք եօթանասուն սիկղից արբարանի սիկղի համեմատ երկուան էլ լիքը հացի ընծայի համար իւղով զանգուած բարակ ալիւրով, Տասը-էնէ ոսկից մէկ տուփ խունկով լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան գառն ողջակէզի համար, Այծերից մէկ նոխազ մեղքի պատարագի համար, Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ, հինգ հատ մէկ տարեկան գառներ. Սեդիւրի որդի Նդիասուրի մատուցրած ընծան այս էր:

Հինգերորդ օրը՝ Շմաւոնի որդոց իշխան Սուրիսադայի որդի Սաղամիէլը մատուցրեց: Նորա ընծան այս էր. մէկ արծաթի սկուտեղ հարիւր երեսուն սիկղից մէկ արծաթի կոնք եօթանասուն սիկղից արբարանի սիկղի համեմատ՝ երկուան էլ լիքը հացի ընծայի համար իւղով զանգուած բարակ ալիւրով, Տասը-էնէ ոսկուց մէկ տուփ խունկով լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան գառն ողջակէզի համար, Այծերից մէկ նոխազ մեղքի պատարագի համար, Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ, հինգ հատ մէկ տարեկան գառներ. Սուրիսադայի որդի Սաղամիէլի մատուցրած ընծան այս էր:

Վեցերորդ օրը՝ Գադի որդոց իշխան Գադուէլի որդի Եղիասափը մատուցրեց: Նորա ընծան այս էր. մէկ արծաթի սկուտեղ հարիւր երեսուն սիկղից, մէկ արծաթի կոնք եօթանասուն սիկղից արբարանի սիկղի համեմատ՝ երկուան էլ լիքը հացի ընծայի համար իւղով զանգուած բարակ ալիւրով, Տասը-էնէ ոսկուց մէկ տուփ խունկով լիքը. Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան գառն ողջակէզի համար, Այծերից մէկ նոխազ մեղքի պատարագի համար, Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ, հինգ հատ մէկ տարեկան գառներ. Գադի որդի Եղիասափի մատուցրած ընծան այս էր:

Եօթներորդ օրը՝ Եփրեմի որդոց իշխան Ամիուդի որդի Եղիսաման մատուցրեց: Նորա ընծան այս էր. մէկ արծաթի սկուտեղ հարիւր երեսուն սիկղից, մէկ արծաթի կոնք եօթանասուն սիկղից արբարանի սիկղի համեմատ՝ երկուան էլ լիքը հացի ընծայի համար իւղով զանգուած բարակ ալիւրով, Տասը-էնէ ոսկուց մէկ տուփ խունկով լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան գառն ողջակէզի համար, Այծերից մէկ նոխազ մեղքի պատարագի համար, Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ, հինգ հատ մէկ տարեկան գառներ. Ամիուդի որդի Եղիսամայի մատուցրած ընծան այս էր:

Ութերորդ օրը՝ Մանասէի որդոց իշխան՝ Փադասուրի որդի Գամալիէլը մատուցրեց: Նորա ընծան այս էր. մէկ արծաթի սկուտեղ հարիւր երեսուն սիկղից, մէկ արծաթի կոնք եօթանասուն սիկղից, արբարանի սիկղի համեմատ, երկուան էլ լիքը հացի ընծայի համար իւղով զանգուած բարակ ալիւրով, Տասը-էնէ ոսկուց մէկ տուփ խունկով լիքը, Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան գառն ողջակէզի համար, Այծերից մէկ նոխազ մեղքի պատարագի համար, Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ, հինգ հատ մէկ տարեկան գառներ. Փադասուրի որդի Գամալիէլի մատուցրած ընծան այս էր:

Իններորդ օրը՝ Բենիամինի որդոց իշխան՝ Գեդէօնիի որդի Աբիդանը մատուցրեց: Նորա ընծան այս էր. մէկ արծաթի սկուտեղ հարիւր երեսուն սիկղից, մէկ արծաթի կոնք եօթանասուն սիկղից արբարանի սիկղի համեմատ, երկուան էլ լիքը հացի ընծայի համար իւղով զանգուած բարակ ալիւրով, Տասը-էնէ ոսկուց մէկ տուփ խունկով լիքը,

63 Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ
տարեկան գառն ողջակէզի հա-
64 մար, Աւծերից մէկ նոխազ մեղ-
65 քի պատարագի համար, եւ խա-
զաղութեան զոհի համար երկու
արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ,
հինգ հատ մէկ տարեկան գա-
ռինք. Գեդէոնիի որդի Աբիդանի
մատուցրած ընծան այս էր:
66 Տասներորդ օրը Դանի որդոց
իշխան՝ Ամիսադայի որդի Աքիե-
67 զերը մատուցրեց: Նորա ընծան
այս էր. մէկ արծաթի սկուտեղ
հարիւր երեսուն սիկղից, մէկ ար-
ծաթի կոնք եօթանասուն սիկղից
արբատանի սիկղի համեմատ, եր-
կուսն էլ լիքը հացի ընծայի հա-
մար խառով զանգուած բարակ ա-
68 լիւրով, Տասը ոսկուց մէկ
69 տուփ խունկով լիքը, Մէկ զուա-
րակ, մէկ խոյ, մէկ տարեկան
70 գառն ողջակէզի համար, Աւծե-
րից մէկ նոխազ մեղքի պատա-
71 րագի համար, եւ խաղաղութեան
զոհի համար երկու արջառ, հինգ
խոյ, հինգ նոխազ, հինգ հատ
մէկ տարեկան գառինք. Ամիսա-
դայի որդի Աքիեզերի մատուց-
րած ընծան այս էր:
72 Վեցերորդ օրը Ասերի
որդոց իշխան Եքրանի որդի Փա-
73 գիէլը մատուցրեց: Նորա ընծան
այս էր, մէկ արծաթի սկուտեղ
հարիւր երեսուն սիկղից, մէկ ար-
ծաթի կոնք եօթանասուն սիկղից
արբատանի սիկղի համեմատ՝ եր-
կուսն էլ լիքը հացի ընծայի հա-
մար խառով զանգուած բարակ
74 ալիւրով, Տասը ոսկուց մէկ
75 տուփ խնկով լիքը, Մէկ զուա-
րակ, մէկ խոյ, մէկ տարեկան
76 գառն ողջակէզի համար, Աւծե-
րից մէկ նոխազ մեղքի պատա-
77 րագի համար. եւ խաղաղութեան
զոհի համար երկու արջառ, հինգ
խոյ, հինգ նոխազ, հինգ հատ
մէկ տարեկան գառինք. Եքրանի
որդի Փագիէլի մատուցրած ընծան
այս էր:
78 Երկոտասաներորդ օրը Նեփթա-
ղիմի որդոց իշխան՝ Ենանի որդի
79 Աքիրէը մատուցրեց: Նորա ըն-
ծան այս էր. մէկ արծաթի սկու-
տեղ հարիւր երեսուն սիկղից,
մէկ արծաթի կոնք եօթանասուն
սիկղից արբատանի սիկղի համե-
մատ. երկուսն էլ լիքը հացի ըն-
ծայի համար խառով զանգուած
բարակ ալիւրով, Տասը ոսկ- 80
ուց մէկ տուփ խունկով լիքը,
Մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ 81
տարեկան գառն ողջակէզի հա-
մար, Աւծերից մէկ նոխազ մեղ- 82
քի պատարագի համար, եւ խա- 83
զաղութեան զոհի համար երկու
արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ,
հինգ հատ մէկ տարեկան գառինք.
Ենանի որդի Աքիրէի մատուցրած
ընծան այս էր:
Եօթներորդ օրը՝ Նեփթա- 84
ղիմացոց համար Իսրայէլի իշ-
խաններից Նաէքսոնը տորանք էին.
տասներկու արծաթի սկուտեղ՝
տասներկու արծաթի կոնք, տաս-
ներկու ոսկի տուփ, Աժեն մէկ 85
արծաթի սկուտեղը հարիւր երե-
սուն սիկղից և ամեն մէկ կոնքը եօ-
թանասուն սիկղից, ամանների բո-
լոր արծաթը երկու հազար չորս
հարիւր սիկղի համեմատ. Տասներկու ոսկի տուփը 86
խունկով լիքը, ամեն մէկ իննսա-
մանը արբատանի սիկղի համեմատ՝
տասը սիկղ տուփերի բոլոր ոսկին
հարիւր քսան սիկղ: Ողջակէզի հա- 87
մար բոլոր արջառները տասներկու
զուարակ, խոյերը տասներկու,
մէկ տարեկան գառինքը տասներ-
կու, իրանց հացի նուէրով, և
մեղքի պատարագի համար այծե-
րից նոխազները տասներկու, Եւ 88
խաղաղութեան զոհի համար բո-
լոր արջառները քսանուչորս զուա-
րակ, խոյերը վաթսուն, նոխազ-
ները վաթսուն, մէկ տարեկան
գառինքը վաթսուն: Այս էր ա-
զանի նաւակատիքը նորա օծուե-
լուց յետոյ:
Եւ երրորդ Մովսէսը ժողովքի 89
խորանն էր մտնում, Նորա հետ
խօսելու, այն ժամանակ նա լը-
սում էր իր հետ խօսողի ձայնը
վկայութեան տապանակի վերայ
եղած քաւութեան վերայից՝ եր-
կու քերովբէների մէջ ասեղից և
ինքը Նորա հետ խօսում էր:

ԳԼ. Ը

1 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Ահարոնի հետ և
ասիր նորան. Երբոր ճրագները
վառես, եօթը ճրագները աշտա-
նակի առջևի կողմից լոյս տան:
3 Եւ Ահարոն այնպէս արաւ. նո-
քա ճրագները աշտանակի առջևի
կողմին վառեց, ինչպէս որ ԵՀո-
վան Մովսէսին պատուիրել էր:
4 Եւ աշտանակի շինուածքն այս-
պէս էր. ճախարակեայ ոսկի էր.
նորա բունից մինչև նորա ծա-
ղիկները ճախարակեայ էր այն
գաղափարի պէս որ ԵՀովան Մով-
սէսին ցոյց էր տուել, այնպէս
շինեց աշտանակը:
5 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի
6 հետ ասելով. Առ Իսրայէլի որդոց
միջից Ղեւտացիներին և մաքրիր
7 նորանից: Եւ նորանց մաքրելու
համար այսպէս անես նորանց.
ցեղասպանիչ ջուր սրսկեց նորանց
վերայ, և ածելիով ածիլես նո-
րանց բոլոր մարմինները և նորանց
հանդերձները լուան և մաքրուին:
8 Յետոյ մի զուարակ առնեն և նո-
րա հացի նուէրի համար իւղով
զանգուած բարակ ալիւր. և մի
զուարակ առնես մեղքի պատա-
9 րագի համար: Եւ Ղեւտացիներին
ժողովքի խորանի առջև մօտեց-
նես, և Իսրայէլի որդոց բոլոր
10 ժողովքը ժողովես: Եւ Ղեւտա-
ցիներին ԵՀովայի առջև մօտեց-
նես, և Իսրայէլի որդիքն իրանց
ձեռքերը Ղեւտացոց վերայ դնեն:
11 Եւ Ահարոնը Ղեւտացիներին Ե-
Հովայի առջև երերացնելու պա-
տարագ մատուցանէ Իսրայէլի որ-
դոցը կողմից՝ և նորանք ԵՀովայի
պաշտօնը կատարելու համար լի-
12 նին: Եւ Ղեւտացիք իրանց ձեռ-
քերն այն զուարակների գլխին
դնեն. և մատուցրու ԵՀովային
մէկը մեղքի պատարագ՝ և միւսը
ողջակէզ Ղեւտացոց համար քա-
13 ւութիւն անելու: Եւ Ղեւտացի-
ներին կանգնեցնես Ահարոնի և
նորա որդոց առջև և նորանց ե-
րերացնելու պատարագ մատու-
14 ցանես ԵՀովային: Այսպէս բա-

ժանես Ղեւտացիներին Իսրայէլի
որդոց միջից, և Ղեւտացիները ի-
մը լինին: Եւ նորանից յետոյ 15
Ղեւտացիները մտնեն ժողովքի խո-
րանի գործը անելու: Մաքրես նո-
րանց և նորանց երերացնե-
լու պատարագ մատուցանես:
Վասն զի նորանք բոլորովին ինձ 16
են տրուած Իսրայէլի որդոց մի-
ջից. Իսրայէլի որդոցը ամէն
արգանդ բացող բոլոր անդրա-
նիների փոխարէն ինձ համար վեր
առի նորանց: Իսրայէլի որդոց 17
բոլոր անդրանիկները՝ թէ մարդու
և թէ անասունի լինի՝ իմն են.
Եգիպտոսի երկրում բոլոր անդ-
րանիկներին զարկած օրից նո-
րանց սրբեցի ինձ համար: Եւ 18
Իսրայէլի որդոց բոլոր անդրանիկնե-
րի փոխարէն Ղեւտացիներին վեր
առի: Եւ Ղեւտացիներին բոլորո- 19
վին Ահարոնին և նորա որդոց
տուի Իսրայէլի որդոց միջից, որ
ժողովքի խորանի մէջ Իսրայէլի
որդոցը պաշտօնը անեն, և խորա-
յէլի որդոց համար քաւութիւն
անեն, որ Իսրայէլի որդոց վերայ
հարուած չգայ՝ Իսրայէլի որդիքը
սրբատանին մօտենալիս:
Եւ Մովսէսն ու Ահարոնը և 20
Իսրայէլի որդոց բոլոր ժողովքը
արին Ղեւտացիներին ինչպէս որ
ԵՀովան Մովսէսին բոլորը պատ-
ուիրել էր Ղեւտացիների մասին.
Իսրայէլի որդիքն այնպէս արին
նորանց: Եւ Ղեւտացիները մաք- 21
րուեցան, և իրանց հանդերձները
լուացին. և Ահարոնը երերացնե-
լու պատարագ մատուցրեց նորանց
ԵՀովայի առջև. և Ահարոնը նո-
րանց համար քաւութիւն արաւ,
որ նորանց մաքրէ: Եւ նորանից 22
յետոյ Ղեւտացիները ժողովքի
խորանը մտան՝ Ահարոնի և նորա
որդոց առջև իրանց պաշտօնը ա-
նելու համար. ինչպէս որ ԵՀո-
վան Մովսէսին պատուիրել էր
Ղեւտացոց մասին, այնպէս արին
նորանց:
Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի 23
հետ ասելով. Սա լինի Ղեւտացոց 24
համար. քառասնհինգ տարեկանից
վեր եղողները ժողովքի խորանի

պաշտօնը անելու դուռնդի մէջ
25 մնանեն. Եւ յիսուն տարեկան լի-
նելուց յետոյ պաշտօնի դուռնդիցը
յետ քաշուին, և այլ ևս չեն
26 ծառայելու. Սակայն ժողովքի
խորանի մէջ պահպանութիւնը
պահելու պիտի օգնեն իրանց եղ-
բայրներին, բայց ծառայութիւն
պիտի չանեն. այսպէս անես Ղե-
ւտացիներին՝ իրանց պահպանու-
թիւնների համար։

ԳԼ. Թ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
Սինայի անապատումը նորանից ե-
գիպտոսի երկրից ելնելու երկրորդ
տարուայ առաջի ամսումն առ-
2 լով. Իսրայէլի որդիքը զատիկը
անեն իր որոշուած ժամանակին։
3 Այս ամսուայ չորեքտասաներորդ
օրը իրիկուայ դէմ անէք այն իր
որոշուած ժամանակին. նորա բո-
լոր կանոնների և նորա բոլոր կար-
գադրութիւնների համեմատ ա-
4 նէք այն։ Եւ Մովսէսը խօսեց Իս-
րայէլի որդոց հետ որ զատիկն ա-
5 նեն։ Եւ զատիկն արին առաջի
ամսուայ չորեքտասաներորդ օրը
իրիկուայ դէմ Սինայի անապա-
տումը բոլորն այնպէս ինչպէս որ
Եհովան Մովսէսին պատուիրել
էր, Իսրայէլի որդիքն այնպէս ա-
րին։
6 Եւ կային մարդիք՝ որ մեռեալ
մարդուց պղծուած էին, և չկա-
րողացան այն օրը զատիկն անել.
և այն օրը Մովսէսի և Ահարոնի
7 առջևը եկան. Եւ այն մարդիկն
ասացին նորան. Մենք մեռեալ
մարդուց պղծուած ենք, ի՞նչու
համար մենք պիտի արգելուինք
որ Եհովայի պատարագն իր ո-
րոշուած ժամանակին չմատուցա-
8 նենք Իսրայէլի որդոց մէջ։ Եւ
Մովսէսն ասաց նորանց. Կացէք,
լսեմ թէ Եհովան ինչ կ'պատ-
ուիրէ ձեր մասին։
9 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
10 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդոցը հետ և ասիր. Եթէ ձե-
ղանից կամ ձեր սերունդից մէկը
մեռած մարմնից պղծուի, կամ
հեռաւոր ճանապարհորդութեան
մէջ լինի, նա անէ զատիկը Եհո-
վայի համար. Երկրորդ ամսուայ 11
չորեքտասաներորդ օրը իրիկուայ
դէմ անեն այն. բաղարջով և լե-
ղի խոտերով ուտեն այն. Նորա- 12
նից մինչև առաւօտ մի բան չմո-
ղեն, և նորա մի ոսկորը չկոտրեն,
և զատկի բոլոր կանոնների հա-
մեմատ անեն այն։ Բայց եթէ մա- 13
քուր եղող և ճանապարհորդու-
թեան մէջ չեղող մարդը զատիկն
անելն զանց անէ, այն անձն իր
ժողովրդի միջից պիտի կորչէ.
վասն զի Եհովայի պատարագն իր
որոշուած ժամանակին չմատուց-
րեց. այն մարդն իր մեղքը կրէ։
Եւ եթէ մի օտարական ձեր մէջը 14
պանդխտանայ, և զատիկն անե-
լու լինի Եհովայի համար զատկի
կանոնի և նորա կարգադրութեա-
նը համեմատ անէ. թէ օտարա-
կանի և թէ երկրի բնակի համար
մէկ կանոն ունենաք։

Եւ այն օրը՝ որ խորանը կանգ- 15
նուեցաւ, վկայութեան վրանի
վերայով ամպը ծածկեց խորանը.
և իրիկուանից մինչև առաւօտ
միւս էր խորանի վերայ կրակի
երևոյթով։ Միշտ այսպէս էր. 16
ցերեկն ամպն էր ծածկում նո-
րան, և գիշերը՝ կրակի երևոյթը։
Եւ երբոր ամպը խորանից վերա- 17
նում էր, այնուհետև Իսրայէլի
որդիքը չուում էին. և ուր որ ամ-
պը կենում էր, այնտեղ Իսրայէլի
որդիքը իջևան էին անում։ Եհո- 18
վայի հրամանովն Իսրայէլի որդի-
քը չուում և Եհովայի հրամանովն
իջևան էին անում, ամպը խորա-
նի վերայ օրչափ ժամանակ որ
կենում էր, նորանք միւս էին
բանակ տուած։ Եւ երբոր ամպը 19
միւս էր շատ օրեր խորանի վե-
րայ՝ Իսրայէլի որդիքը Եհովայի
պահպանութիւնը պահում էին,
ու չէին չուում։ Եւ լինում էր որ 20
երբոր ամպը խորանի վերայ քիչ
օր էր միւս, Եհովայի հրամանի
համեմատ չուում էին։ Նոյնպէս 21
էլ լինում էր, երբոր ամպը իրիկ-
ուանից մինչև առաւօտ միւս
էր առանց ամպի վերանալից չը-

ւում էին. թէ ցերեկ լինէր և թէ գիշեր՝ ամպը վերանալիս չը-
22 ւում էին։ Կամ երկու օր՝ կամ մէկ ամիս՝ և կամ մէկ տարի, որ ամպը խորանի վերայ կենալով մը-
նում էր, Իսրայէլի որդիքը իջևան էին անում, և չէին չուում. բայց նա վերանալիս չուում էին։
23 Եհովայի հրամանին համեմատ ի-
ջևան էին անում, և Եհովայի հրամանին համեմատ չուում էին, Եհովայի պահպանութիւնը պա-
հում էին, Եհովայի Մովսէսի ձեռքով տրուած հրամանին հա-
մեմատ։

ԳԼ. Ժ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Քեզ համար երկու հաս արծաթի փող շինէ. ճախարակ-
եայ շինես նորանից, որ ժողովքը կանչելու համար և բանակների չուելու համար լինին քեզ հա-
3 մար։ Եւ երբոր նորանք երկուսը հնչեցնեն, բոլոր ժողովքը քեզ մօտ ժողովուին ժողովքի խորանի
4 դուռը։ Եւ եթէ մէկը հնչեցնեն, իշխանները՝ Իսրայէլի հազարա-
պետները քեզ մօտ պիտի ժողով-
5 ուին։ Եւ երբոր ազդարարու-
թեան համար հնչեցնէք, արե-
ւելքում իջևան անող բանակ-
6 ները չուեն։ Եւ երբոր երկրորդ անգամ ազդարարութիւն հնչեց-
նէք, հարաւային կողմում իջե-
ւան անող բանակները չուեն. նո-
րանց չուելու համար ազդարա-
7 րութիւն հնչեցնեն։ Եւ ժողո-
վուրդը ժողովելիս պիտի հնչեց-
նէք, բայց ազդարարութիւն չա-
8 նէք։ Ահարոնի որդիքը՝ քահա-
նաները հնչեցնեն փողերը, և սա ձեր ազգերի մէջ յաւիտենական
9 կանոն լինի ձեզ համար։ Եւ ե-
թէ պատերազմի գնաք ձեր երկրի մէջ ձեզ նեղութիւն տուող թըշ-
նամու դէմ, փողերով ազդարա-
րութիւն անէք և կ'յիշուիք ձեր Եհովայ Աստուծոյ առջև, և ձեր
10 թշնամիներից կ'ազատուիք։ Եւ ձեր ուրախութեան օրը՝ և ձեր տօներին և ձեր ամսագլուխների
փողերը հնչեցնէք ձեր ողջակէզնե-
րի վերայ, և ձեր խաղաղութեան զոհերի վերայ, որ ձեզ համար յիշատակ լինին ձեր Աստուծոյ առջև. ես եմ Եհովան ձեր Աստուածը։

11 Եւ եղաւ երկրորդ տարին երկ-
րորդ ամսի քսանին որ վկայու-
թեան խորանի վերայից ամպը վե-
րացաւ։ 12 Եւ Իսրայէլի որդիքն ի-
րանց ճնաց ճամբի համեմատ չուեցին Սինայի անապատից. և ամպը կանգնեց փառանի անապատում։
13 Եւ առաջին անգամը չուեցին Մով-
սէսի ձեռքով տրուած Եհովայի
14 հրամանին համեմատ։ Եւ առաջ չուեց Յուդայի որդոց բանակի դրօշակը իրանց գունդերովը և նորա գունդի վերայ Ամինադաբի
15 որդի Նահասոնն էր։ Եւ Իսաքարի որդոց ցեղի գունդի վերայ Սովա-
16 րի որդի Նաթանայէլն էր։ Եւ Զաբուղոնի որդոց ցեղի գունդի վերայ Քէղոնի որդի Եղիաբն էր։
17 Եւ խորանը իջեցրին, և չուեցին խորանը վեր առնող Գերսոնի որ-
18 դիքը և Մերարիի որդիքը։ Եւ չուեց Ռուբենի բանակի դրօշակը իրանց գունդերովը, և նորա գուն-
դի վերայ Սեդիուրի որդին Եղի-
19 սուրն էր։ Եւ Շմաւոնի որդոց ցեղի գունդի վերայ Սուրիսադայի
20 որդի Սաղամիէլն էր։ Եւ Գադի որդոց ցեղի գունդի վերայ Գա-
21 գուէլի որդի Եղիասափն էր։ Եւ չուեցին սրբարանը վեր առնող Կահաթացիները և խորանը կանգ-
նեցնում էին մինչև նորանց գա-
լը։ Եւ չուեց Եփրեմի որդոց բա-
22 նակի դրօշակը իրանց գունդերովը և նորա գունդի վերայ Ամիուդի
23 որդի Եղիսաման էր։ Եւ Մանա-
սէի որդոց ցեղի գունդի վերայ Փադասուրի որդի Գամալիէլն էր։
24 Եւ Բենիամինի որդոց ցեղի գուն-
դի վերայ Գեդէոնիի որդի Աբի-
25 դանն էր։ Եւ չուեց Դանի որդոց բանակի դրօշակը իրենց գունդե-
րովը բոլոր բանակների ետևից և նորա գունդի վերայ Ամիսադայի
26 որդի Աքիեզրն էր։ Եւ Ասերի որդոց ցեղի գունդի վերայ Եքրա-
27 նի որդի Փագիէլն էր։ Եւ Նեփ-

Թաղիմի որդոց ցեղի գունդի վե-
րայ Ենանի որդի Աբիրէն էր։
28 Ահա էր Իսրայէլի որդոց չուելը
իրանց գունդերովը, և չուեցին։
29 Եւ Մովսէս ասաց Յոբաբին
այսինքն Մադիանացի Ռագուէլի
որդոյն, որ Մովսէսի աներն էր.
Մենք չուում ենք այնտեղը՝ որի
համար Եհովան ասաց թէ Ձեզ
եմ տալու այն. մեզ հետ էկ և
բարիք կանենք քեզ. վասն զի Ե-
հովան Իսրայէլի հետ բարիք խո-
30 սեց։ Եւ նա ասաց նորան. Ձեմ
գալ, այլ կ'գնամ իմ երկիրը և
31 իմ ազգականների մօտ։ Եւ նա
ասաց. Խնդրեմ մեզ մի թողիր.
որովհետև անապատի մէջ մեր ի-
նչևան անելու տեղերը գիտես, և
32 մեզ համար աչք եղիր։ Եւ եթէ
մեզ հետ գնալու լինիս՝ ինչ բա-
րութիւն որ Եհովան մեզ բարիք
անէ, մենք էլ քեզ նոյն բարու-
թիւնը կանենք։
33 Եւ նորանք Եհովայի լեռնիցը
երեք օրուայ ճանապարհ չուե-
ցին. և Եհովայի ուխտի տապա-
նակը երեք օրուայ ճանապարհ
չուեց նորանց առջև նորանց հա-
մար հանգստութեան տեղ գտնե-
34 լու։ Եւ Եհովայի ամպը նորանց
վերայ էր ցերեկները երբ բանակից
չուում էին։
35 Եւ տապանակը չուելիս Մով-
սէս ասում էր. Վեր կաց, Եհո-
վայ, և ցրուին քո թշնամիները
և փախչին քեզ ատողները քո
36 առջևից։ Իսկ նա մնալիս՝ ասում
էր. Դարձիր, Եհովայ, դէպի
Իսրայէլի հազարաց բիւրաւոր-
ները։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ ժողովուրդը չարաչար տըր-
տունջ էր անում Եհովայի ա-
կանջներն առջև, և Եհովան լը-
սեց, և բարկութիւնը բորբոքեց
և նորանց մէջ Եհովայի կրակը
վառուեցաւ, և բանակի ծայրը
2 վչացրեց։ Եւ ժողովուրդը աղա-
ղակեց դէպի Մովսէսը. և Մով-
սէսը աղօթեց Եհովային, և կր-
3 բակը դադարեց։ Եւ այն տեղի ա-
նունը *Տաբերա դրաւ ըստ որում
Եհովայի կրակը այրեց նորանց
մէջ։ Եւ նորանց միջի խառնիճա- 4
ղանճ բազմութիւնը շատ ցանկա-
ցան. և Իսրայէլի որդիքն էլ դար-
ձեալ լացին, և ասացին. Ո՞վ
մեզ միս կ'տայ ուտելու։ Մենք 5
յիշում ենք Եգիպտոսի մէջ մեր
ձրի կերած ձկները, վարունգները
և սեխերը և պրասները և սոխե-
րը և սխտորները. Եւ հիմա մեր 6
անձը չորացել է. ամենևին մի
բան չկայ. միայն այդ մանանայի
վերայ են մեր աչքերը։ Եւ մա- 7
նանան գինձի սերմի պէս՝ և նորա
գոյնը սուտակի գոյնի պէս էր։
Ժողովուրդը մտան էր գալիս և ժո- 8
ղովում էր, և աղում էին երկ-
անքով, կամ անգանի մէջ ծե-
ծում էին. և պատկիներում ե-
փում էին, և նորանից շօթեր է-
ին շինում. և նորա համը իւղոտ
գաթաների համի պէս էր։ Եւ 9
գիշերը բանակի վերայ ցօղ իջնե-
լիս, մանանան իջնում էր նորա
վերայ։

Եւ Մովսէսը լսեց որ ժողովուր- 10
դը իրանց տոհմերումն ամեն մէկն
իր վրանի դրանը լացում էին, և
Եհովայի բարկութիւնը խիստ
բորբոքեց, և Մովսէսի աչքին սա
վատ երևեցաւ։ Եւ Մովսէսն ա- 11
սաց Եհովային. Ինչո՞ւ քո ծա-
ռային չարչարեցիր, և ինչո՞ւ քո
առջև շնորհք չգտայ, որ այս
բոլոր ժողովրդի բեռն իմ վերայ
դրիր։ Մի՞թէ ես եմ յղացել այս 12
բոլորը, կամ ե՞ս եմ ծնել ա-
նոնց որ ինձ ասում ես. Գիրկդ
առ նորանց, ինչպէս որ դայեակն
է առնում կաթնակեր տղային,
մինչև այն երկիրը որ նորանց հայ-
րերին երդում արիր։ Ինձ որ տե- 13
ղի՞ց է միսը, որ այս բոլոր ժողո-
վրդին տամ, վասն զի ինձ դէմ
լացում են և ասում. Միս տուր
մեզ ուտենք։ Ես մենակ չեմ կա- 14
րող կրել այս բոլոր ժողովուրդը,
այս ինձ համար շատ ծանր է։
Եւ եթէ ինձ այսպէս պիտի ա- 15
նես, խնդրեմ սպանիր մեռցրու-

---

*այսինքն հրկիզութիւն։

ինձ, եթէ շնորհք գտայ քո առ-
16 ջևը, որ իմ ջարիքը չտեսանեմ։ Եւ
ԵՀովան ասաց Մովսէսին. Ինձ
համար Իսրայէլի ծերերից եօթա-
նասուն հոգի ժողովիր, որոնք որ
դու գիտես թէ ժողովրդի ծերերն
ու դիխաւորներն են, և նորանց
վեր առ ժողովքի խորանը բե՛ր,
և այնտեղ քեզ հետ կանգնեն.
17 Եւ ես այնտեղ կ'իջնեմ և կ'խո-
սեմ քեզ հետ. և քեզ վերայ
եղած հոգուցը կ'առնեմ, և նո-
րանց վերայ կ'դնեմ և ժողովրդի
բեռը վեր կառնեն քեզ հետ, և
18 դու մենակ չես վեր առնել։ Եւ
ասիր ժողովրդին, էգուցուայ հա-
մար, սրբուեցէք որ միս էք ու-
տելու, վասն զի ԵՀովայի ականջ-
ներին լացիք՝ ասելով. Ո՞վ մեզ
միս կ'տայ ուտելու. վասն զի ե-
գիպտոսում լաւ էր մեզ համար.
և ԵՀովան ձեզ միս կ'տայ, և դուք
19 կուտէք։ Ոչ թէ մենակ մէկ օր
պիտի ուտէք, և ոչ երկու օր՝ ոչ
հինգ օր՝ ոչ տասը օր՝ ոչ էլ քսան
20 օր՝ Այլ մինչև մէկ ամիս ժամա-
նակ, մինչև որ ձեր քթերից դուրս
գայ և ձեզ համար զզուանք լինի.
որովհետև ձեր մէջտեղը եղող Ե-
հովային արհամարհեցիք, և նորա
առջև լացիք՝ ասելով. Ինչո՞ւ մենք
Եգիպտոսից դուրս եկանք։
21 Եւ Մովսէսն ասաց. Այս ժո-
ղովուրդը՝ որոնց մէջ ես կամ,
վեց հարիւր հազար հետևակ հո-
գի են, և դու ասացիր. Ես նորանց
միս կ'տամ՝ որ մէկ ամիս ժամա-
22 նակ ուտեն. Մի թէ նորանց հա-
մար ոչխարներն ու արջառները
մորթուի՞ն որ բաւական լինեն
նորանց համար՝ կամ նորանց բա-
ւական լինելու համար՝ ծովի բո-
լոր ձկները մէկ տեղ հաւաքուի՞ն
23 Եւ ԵՀովան ասաց Մովսէսին.
Մի՞թէ կարճ է ԵՀովայի ձեռքը.
հիմա կ'տեսնես թէ քեզ ասա-
24 ծիս պէս կ'լինի՞, թէ ոչ։ Եւ Մով-
սէս ելաւ և ԵՀովայի խօսքերը
խօսեց ժողովրդին. և ժողովրդի
ծերերից եօթանասուն հոգի ժո-
ղովեց, և կանգնեցրեց նորանց
25 խորանի շուրջը։ Եւ ԵՀովան ի-
ջաւ մի ամպով, և նորա հետ
խօսեց, և նորա վերայ եղած հո-
գուցն առաւ, և այն եօթանա-
սուն ծերերի վերայ դրաւ. և ե-
ղաւ՝ հէնց որ Հոգին նորանց վե-
րայ հանդչեց՝ մարգարէութիւն
արին և չդադարեցին։ Եւ երկու 26
հոգի մնացել էին բանակի մէջ՝
մէկի անունը Ելդադ և միւսի ա-
նունը Մովդադ, և Հոգին հանդ-
չեց նորանց վերայ, և նորանք այն
գրուածներից էին, բայց խորանը
չէին եկել. և բանակումը մար-
գարէութիւն էին անում։ Եւ մի 27
պատանի վազեց և պատմեց Մով-
սէսին և ասաց. Ելդադը և Մով-
դադը մարգարէութիւն են անում
բանակումը։ Եւ Նաւէի որդի Յե- 28
սուն Մովսէսի ընտրեալ ծառան
պատասխանեց և ասաց. Տէր իմ
Մովսէս, արգելիր նորանց։ Եւ 29
Մովսէսն ասաց նորան. Ի՞նձ հա-
մար ես նախանձում. երանի՛ թէ
ԵՀովայի բոլոր ժողովուրդը մար-
գարէներ լինէին, և ԵՀովան իր
Հոգին նորանց վերայ դնէր։ Եւ 30
Մովսէսը բանակը քաշուեցաւ
ինքն և Իսրայէլի ծերերը։

Եւ ԵՀովայի կողմանէ մի հոգմ 31
վեր կացաւ և ծովի կողմից լորա-
մարգիներ բերաւ և բանակի վե-
րայ մէկ օրուայ ճանապարհ մէկ
կողմից՝ և մէկ օրուայ ճանապարհ
միւս կողմից բանակի շուրջը տա-
րածեց, երկրի երեսի վերայից եր-
կու կանգունի չափ բարձր։ Եւ 32
ժողովուրդը այն բոլոր օրը և բո-
լոր գիշերը և հետևեալ բոլոր օ-
րը վեր կացաւ լորամարգիներ ժո-
ղովեցին. քիչ ժողովողը տասը
քոռ ժողովեց. և իրանց համար
բանակի շուրջը փռեցին, որ չո-
րանայ։ Դեռ միսն իրանց առաջ 33
նների վերայ էր՝ առաւելն չծամ-
ուած, որ ԵՀովայի բարկութիւնը
ժողովրդի վերայ բորբոքեց և Ե-
հովան խիստ մեծ հարուածով
զարկեց ժողովրդին։ Եւ այն տե- 34
ղի անունը *Կիբրօթ–հաթթաւայ
դրուեցաւ, վասն զի այնտեղ թա-
ղեցին ցանկացող ժողովրդին։

---

*այսինքն ցանկութեան գերեզ-
մաններ.

35 Ակբօթ–Հաթհաւայից Աաբրովթ
ջուեց ժողովուրդը, և Աաբրովթի
մէջ էին։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Մարիամն ու Ահարոնը Մով-
սէսի դէմ խօսեցին՝ նորա առած
եթէովպացի կնոջ պատճառով
քան որում եթէովպացի կին էր
2 առել. եւ ասացին. Մի՞թէ Եհո-
վան միայն Մովսէսի ձեռքով
խօսեց. չէ՞ որ մեր ձեռքովն էլ
3 խօսեց. և Եհովան լսեց։ Եւ Մով-
սէս մարդը շատ հեզ էր երկրի
վերայ եղած բոլոր մարդկանցից
4 աւելի։ Եւ իսկոյն Եհովան ա-
սաց Մովսէսին և Ահարոնին և
Մարիամին. Դուք երեքդ էլ
դուրս եկէք ժողովքի խո-
րանը. և երեքն էլ դուրս եկան։
5 Եւ Եհովան իջաւ ամպի սիւնով
և խորանի դրանը կանգնեց. և
Ահարոնին և Մարիամին կանչեց.
6 և երկուսն էլ դուրս եկան։ Եւ
ասաց. Հիմա իմ խօսքը լսեցէք,
եթէ ձեզանից մէկը մարգարէ լի-
նի ես Եհովաս ինձ տեսիլքի մէջ
կ'ճանաչացնեմ նորան, կամ երա-
7 զով կ'խօսեմ նորա հետ։ Այն-
պէս չէ իմ ծառան Մովսէսը,
որ իմ բոլոր տան մէջ հաւատա-
8 րիմ է. Նորա հետ բերանէ բե-
րան եմ խօսում և յայտնապէս,
և ոչ թէ առակով, և նա Եհո-
վայի կերպարանքը տեսնում է,
ինչո՞ւ չվախեցիք իմ ծառայ Մով-
9 սէսի դէմ խօսելու։ Եւ Եհովայի
բարկութիւնը նորանց վերայ բոր-
10 բոքեց և գնաց։ Եւ ամպը վերա-
ցաւ խորանի վերայից և ահա
Մարիամը ձիւնի պէս բորոտ ե-
ղաւ. և Ահարոնը Մարիամին
11 նայեց, և ահա բորոտ էր։ Եւ
Ահարոնն ասաց Մովսէսին. Ո՜հ,
տէր իմ, աղաչեմ մեր վերայ
մեղք մի դներ. վասն զի յիմա-
րութիւն արինք, և մեղք գոր-
12 ծեցինք. Թող չնմանէ այն մեռա-
ծին որ իր մօր արգանդիցը դուրս
գալիս մարմնոյն կէսը ապականած
13 է։ Եւ Մովսէսն աղաղակեց Ե-
հովային ասելով. Խնդրեմ, ով

Աստուած, խնդրեմ բժշկիր նո-
րան։ Եւ Եհովան ասաց Մովսէ- 14
սին. Եթէ նորա հայրը միայն նո-
րա երեսին թք քնելու լինէր, մի՞թէ
եօթն օր չէր ամաչիլ. թող եօթն
օր բանակիցը դուրս արգիլուած
պահուի և յետոյ ընդունուի։ Եւ 15
Մարիամը բանակից դուրս եօթն
օր արգիլուած մնաց. և ժողովուր-
դը չի չուեց մինչև Մարիամի ըն-
դունուիլը։

ԳԼ. ԺԳ

Եւ յետոյ ժողովուրդը Աաբրով- 1
թից չուեցին, և Փառանի անա- 2
պատումը իջևան արին։ Եւ Եհո- 3
վան խօսեց Մովսէսի հետ ասե-
լով. Մարդիկ ուղարկիր որ լրտե-
սեն Քանանու երկիրը, որ ես ի-
րայէլի որդոց պիտի տամ. իրանց
հայրերի ցեղի համեմ մէկ մէկ
մարդ ուղարկէք՝ ամեն էլ
իշխան նորանց մէջ։ Եւ Մովսէսը 4
Եհովայի հրամանին համեմատ նո-
րանց ուղարկեց Փառանի անա-
պատից. բոլոր այն մարդիկը ի-
րայէլի որդոց գլխաւորներն էին. 5
Եւ այս է նորանց անունները. 6
Ռուբենի ցեղից՝ Զաքուրի որդի
Սամուան, Շմաւոնի ցեղից՝ Փառի
որդի Սափատը, Յուդայի ցեղից՝ 7
Յեփոնէի որդի Քաղէբը, Իսաքարի 8
ցեղից՝ Յովսէփի որդի Իգաղը,
Եփրեմի ցեղից՝ Նաւէի որդի Օ- 9
սէսը, Բենիամինի ցեղից՝ Ռափու 10
որդի Փալտին, Զաբուղոնի ցե- 11
ղից՝ Սուդիի որդի Գեդդիէլը, Յով- 12
սէփի ցեղից՝ այսինքն Մանասէի
ցեղից՝ Սուսիի որդի Գադդին,
Դանի ցեղից՝ Գամալիի որդի Ա- 13
միէլը, Ասերի ցեղից՝ Միքայէլի 14
որդի Սաթուրը, Նեփթաղիմի ցե- 15
ղից՝ Վափսիի որդի Նաբին, Գա- 16
դի ցեղից՝ Մաքքիի որդի Գուէլը։
Սորանք են այն մարդկանց ա- 17
նուանները, որոնց Մովսէսն ուղար-
կեց այն երկիրը լրտեսելու. և
Մովսէսը Նաւէի որդի Օսէսի ա-
նունը Յեսու դրաւ։ Եւ Մովսէսն 18
ուղարկեց նորանց Քանանու եր-
կիրը լրտեսելու, և ասաց նորանց.
Ա՛յս հարաւային կողմից դէպի

19 վեր դնալով վեր ելէք լեառը. Եւ տեսէք այն երկիրը թէ ինչպէս է, և այնտեղ բնակող ժողովուրդը զօրաւո՞ր են թէ տկար. քի՞չ
20 են թէ շատ. Եւ ի՞նչպէս է այն երկիրը ուր որ նորանք բնակուած են՝ լա՞ւ է թէ վատ, և ի՞նչպէս են այն քաղաքները ուր որ նորանք բնակուած են, վրաններո՞ւմ
21 են թէ բերդերուա՞մ են. Եւ թէ երկիրը ի՞նչպէս է, պարո՞ւրտ է՝ թէ տկար, մէջը ծառեր կա՞ն թէ ոչ: Եւ ժիր եղէք, և այն երկրի պտուղներէն առէք: Եւ այն օրերը խաղողի նոր դուրս եկած օրերն
22 էին: Եւ վեր ելան և լրտեսեցին այն երկիրը Սին անապատից դէ-
23 պի Եմաթ մինչև Րոով: Եւ հարաւային կողմից ելան, և եկան Քեբրոն և այնտեղ էին Ենակի որդիքը՝ Աքիմանը, Սեսին և Թոլմին, և Քեբրոն Եգիպտոսի Տանիս քաղաքից եօթը տարի աւելի էր շինուած:
24 Եւ եկան մինչև Եսքոդի ձորը և այնտեղից խաղողի մի ողկոյզ կարեցին ուռովը մէկտեղ, և երկու հոգի լծակով վեր առին նորան, և նռներից և
25 թուզերից էլ: Այն ողկոյզի համար, որ Իսրայէլի որդիքն այնտեղից կտրել էին, այնտեղի անունը Եսքոդի ձոր դրուեցաւ:
26 Եւ այն երկիրը լրտեսելուց ետ դարձան քառասուն օրից յետոյ.
27 Եւ եկան հասան Մովսէսին և Ահարոնին և Իսրայէլի որդոց բոլոր ժողովքին՝ Փառանի անապատի մէջ Կադէսում. և նորանց հասան և բոլոր ժողովքի համար լուր բերին. և երկրի պտուղը
28 ցոյց տուին նորանց: Եւ պատմեցին նորան և ասացին. Մեզ ուղարկած երկիրդ գնացինք. և իրաւ որ կաթ ու մեղր է բղխում
29 նա, և նորա պտուղը սա է: Միայն թէ այն երկրի մէջ բնակող ժողովուրդը զօրաւոր է, և քաղաքները պարսպաւոր և խիստ մեծ են. նաև այնտեղ Ենակի
30 որդիքը տեսանք: Ամաղեկացիք բնակուում են այն երկրի հարաւային կողմումը, և Քեւտացիք և Յեբուսացիք և Ամորհացիք բնա-

կուում են լեռներումը, և Քանանացիք բնակուում են ծովի մօտ և Յորդանանու եզերքումը:
31 Եւ Քաղէբ լռեցրեց ժողովրդին Մովսէսի առջև, և ասաց. Ադէ՛ երթանք, և ժառանգենք այն, վասն զի մենք անպատճառ կարող ենք նորան տիրել: Բայց նորա հետ երթող մարդիկն ասացին. Մենք չենք կարող
32 այն ժողովրդի վերայ երթալ, վասն զի նորանք մեզանից զօրաւոր են:
33 Եւ իրանց լրտեսած երկրի վատ լուրը բերին Իսրայէլի որդոց համար ասելով. Այն երկիրը որի միջովն անցանք՝ նորան լրտեսելու համար, իր բնակիչներին ուտող երկիր է. և նորա միջի բոլոր ժողովուրդը, որ մենք տեսանք, երկայնահասակ մարդիկ են,
34 Եւ այնտեղ տեսանք հսկաներին՝ Ենակի որդիներին որ հսկայներից են. այնպէս որ մենք մեր աչքին մարախի պէս էինք, և այնպէս էլ էինք նորանց աչքին:

ԳԼ. ԺԴ

1 Եւ բոլոր ժողովքը ձայնը բարձրացրեց և աղաղակեց. և ժող-
2 ովուրդը լացաւ այն գիշերը: Եւ տրտնջեցին Իսրայէլի բոլոր որդիքը Մովսէսի և Ահարոնի դէմ. և բոլոր ժողովքն ասաց նորանց. Երանի թէ Եգիպտոսի երկրումը մեռած լինէինք. կամ երանի թէ այս անապատի մէջ մեռած լի-
3 նէինք: Եւ ինչո՞ւ համար Եհովան մեզ այս երկիրը բերաւ, որ սրով ընկնենք, և մեր կանայքն ու մեր որդիքը յափշտակուին. լաւ չէ՞ մեզ համար որ Եգիպտոս
4 դառնանք: Եւ իրար ասացին. Եկէք մէկ զօրագլուխ ընտրենք և Եգիպտոս դառնանք:
5 Եւ Մովսէսն ու Ահարոնն իրանց երեսի վերայ ընկան Իսրայէլի որդոց բոլոր
6 ժողովուած ժողովքի առջև: Եւ երկիրը լրտեսողներից Նաւէի որդի Յեսուն և Յեփոնէի որդի Քաղէբն իրանց հանդերձները պատառեցին.
7 Եւ Իսրայէլի որդոց բոլոր ժողովքի հետ խօսեցին ասելով. Այն երկիրը, որի միջովը

անցանք նորան լրտեսելու համար,
8 շատ շատ բարի երկիր է։ Եթէ
Եհովան մեզ վերայ հաճէ, մեզ
այն երկիրը կ'առնէ և այն մեզ
կ'տայ, որ կաթ ու մեղր բղխող
9 երկիր է։ Միայն թէ Եհովայի
դէմ մի ապստամբէք, և այն երկ-
րին ժողովրդեցը մի վախենաք,
վասն զի նորանք մեր կերակուրն
են, նորանց պաշտպանութիւնը
գնացել է իրանց վերայից, ու Ե-
հովան մեզ հետ է. նորանցից մի
10 վախենաք։ Եւ բոլոր ժողովքը ա-
սացին թէ՝ քարերով քարկոծեն
նորանց. բայց Եհովայի փառքը
ժողովքի խորանի մէջ բոլոր Իս-
11 րայէլի որդոցը երևեցաւ։ Եւ Ե-
հովան ասաց Մովսէսին. Ա՛յս
ժողովուրդը մինչև ե՞րբ պիտի
արհամարհէ, ու մինչև ե՞րբ պիտի
չհաւատան ինձ իրանց մէջ արած
12 բոլոր հրաշքներովս էլ։ Եւ զար-
կեմ նորանց ժանտախտով և կոր-
նեմ նորանց. և քեզ նորանցից մեծ
13 և զօրաւոր ազգ շինեմ։ Եւ Մով-
սէսն ասաց Եհովային. Ա՛յն ժա-
մանակ Եգիպտացիք կ'լսեն. (վա-
սն զի դու քո կարողութեամբն
այս ժողովրդին հանեցիր նորանց
14 միջիցը.) Եւ կ'ասեն այս երկրի
բնակիչներըն. վասն զի լսել են որ
դու, ով Եհովայ, այս ժողովրդի
մէջ ես, որ դու, ով Եհովայ,
դէմ առ դէմ տեսանվում ես, և
որ քո ամպը նորանց վերայ կանգ-
նում է, և որ ցերեկը ամպի սիւ-
նով՝ և գիշերը կրակի սիւնով
15 գնում ես նորանց առջև։ Եւ ե-
թէ այս ժողովրդին մէկ մարդու
պէս մեռցնելու լինիս, քո համ-
բաւը լսող ազգերը կ'խօսեն՝ ա-
16 սելով. Եհովան չկարողացաւ տա-
նել նորանց երդումով խոստա-
ցած երկիրը նորա համար անա-
17 պատի մէջ մեռցրեց նորանց։ Եւ
հիմա թող իմ Տիրոջ կարողու-
թիւնը մեծանայ, ինչպէս որ խօ-
18 սեցիր ասելով. Եհովան երկայ-
նամիտ է, և առատ ողորմութիւ-
նով, անօրէնութիւնը և յան-
ցանքը ներող. բայց յանցաւորին
ամենևին անպատիժ չի թողիլ,
հայրերի անօրէնութիւնը որդինե-
րի վերայ՝ մինչև երրորդ և չորրորդ
ազգը հատուցանելով։ Աղաչում 19
եմ ներիր այս ժողովրդին քո մեծ
ողորմութեան համեմատ, ինչպէս
որ ներեցիր այս ժողովրդին Եգիպ-
տոսից մինչև այստեղ։ Եւ Եհո- 20
վան ասաց. Ներեցի քո խօսքի
պէս. Բայց կենդանի եմ ես, որ 21
բոլոր երկիրը Եհովայի փառքով
պիտի լցուի. Վասն զի բոլոր այն 22
մարդիկը, որ Եգիպտոսումն ու
անապատումն իմ փառքը ու իմ
արած հրաշքները տեսան, և ինձ
ահա տասը անգամ փորձեցին,
և իմ խօսքին չլսեցին, Չեն տես- 23
նիլ այն երկիրը՝ որ իրանց հայրե-
րին երդում արի, և ինձ արհա-
մարհողներից մէկն էլ չի տեսանիլ
այն. Բայց որովհետև իմ ծառայ 24
Քաղեբուս ուրիշ հոգի կար և
բոլորովին հնազանդեց ինձ, ես
էլ նորան այն երկիրը կ'տանեմ,
ուր որ գնացել էր, և նորա սե-
րունդը կ'ժառանգէ այն։ Եւ Ա- 25
մաղեկացիք ու Քանանացիք ձո-
րերումն են բնակում. էգուց գար-
ձէք և դէպի անապատը կարմիր
ծովի ճանապարհով չուեցէք։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի և 26
Ահարոնի հետ ասելով. Մինչև 27
ե՞րբ այս չար ժողովքին հմբէրեմ,
որ ինձ դէմ տրտնջում են. ես
լսեցի Իսրայէլի որդոց տրտունջը՝
որ ինձ դէմ տրտնջում են։ Ասիր 28
նորանց. Ես կենդանի եմ, ասում
է Եհովան, որ ինչպէս դուք իմ
ականջների առջև խօսեցիք, այն-
պէս էլ կանեմ ձեզ. Ա՛յս անա- 29
պատի մէջ կ'ընկնեն ձեր դիակնե-
րը. և ձեր բոլոր հաշուի համե-
մատ՝ ձեզանից ամեն հնամարսած-
ները քսան տարեկանից վեր եղող-
ները՝ որ դուք ինձ դէմ տրտն-
ջեցիք, Բնաւ պիտի չմտնէք այն 30
երկիրը, որի համար երդում արի
ձեզ նորանում բնակեցնելու,
բացի Յեփոնէի որդի Քաղեբից և
և Նաւէի որդի Յեսուից։ Բայց 31
ձեր որդիքը՝ որոնց համար ասա-
ցիք, թէ պիտի յափշտակուին,
նորանց կ'տանեմ և նորանք ձեր
չհաւանած երկիրը կիմանան։
Բայց ձեր դիակները այս անապա- 32

33 տում կ'ընկնեն։ Եւ ձեր որդիքը
անապատումը քառասուն տարի
հովիւ կ'լինեն և կ'կրեն ձեր պոռն-
կութիւնները մինչև որ ձեր դիակ-
ները անապատումը սպառուին։
34 Ա.յս օրերի հաշուովը որ երկիրը
քառասուն օր լրտեսեցիք, այն-
պէս ամեն մէկ օրուայ տեղ մէկ
տարի՝ այսինքն քառասուն տարի
պիտի կրէք ձեր անօրէնութիւն-
ները, և ճանաչէք իմ մերժումը։
35 Ես ԵՀովա ասացի, որ անպատ-
ճառ պիտի անեմ այս բոլոր չար ժողովքին որ ժո-
ղովուել են ինձ դէմ. նորանք այս
անապատի մէջ պիտի վերջանան
36 և այստեղ մեռնեն։ Եւ այն մարդիկն՝ որ Մովսէսն ուղարկեց այն
երկիրը լրտեսելու, որոնք ետ
դարձան և այն երկրի վերայ վատ
լուր հանելով՝ բոլոր ժողովքը նորա
37 դէմ տրտնջեցրին, Ա.յն մարդիկն,
որ այն երկրի վերայ վատ լուր
հանեցին, հարուածով մեռան
38 ԵՀովայի առջև։ Բայց Նաւէի
որդի Յեսուն և Յեփոնէի որդի
Քաղէբը, որ երկիրը լրտեսելու
գնացող մարդկանցից էին, ողջ
39 մնացին։ Եւ Մովսէսը խօսեց այս
խօսքերը Իսրայէլի բոլոր որդոցը
հետ, և ժողովուրդը մեծ սուգ
40 արաւ։ Եւ առաւօտանց կանուխ
վեր եկան լեռան գլուխն ասելով.
Ա.հա մենք, եկէք վեր երթանք այն
տեղը որ ԵՀովան ասել է. վասն
41 զի մեղք գործեցինք։ Եւ Մով-
սէսն ասաց. Ինչո՞ւ էք այդպէս
ԵՀովայի հրամանից դուրս գալիս.
42 այդ բանը չի յաջողուիլ։ Վեր
մի երթէք (վասն զի ԵՀովան ձեր
միջումը չէ) որպէս զի ձեր թշնա-
43 միների առջև չջարդուիք. Վասն
զի Ամաղեկացիք և Քանանացիք
այնտեղ ձեր առջևն են, և սրով
պիտի բնկնէք որովհետև դուք
ԵՀովայից ետ էք դարձել. ԵՀո-
44 վան ձեզ հետ պիտի չլինի։ Բայց
նորանք յանդգնեցին լեռան գլու-
խը վեր երթալու, սակայն ԵՀովայի
ուխտի տապանակը և Մովսէսը
բանակի միջից չշարժուեցան։
45 Ա.յն ժամանակ այն լեռան վերայ
բնակող Ամաղեկացիք և Քանա-
նացիք իջան և զարկեցին նորանց
և հալածեցին մինչև Հորմա։

ԳԼ. ԺԵ

1 Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Խօսիր Իսրայէլի որդոց
հետ և ասիր նորանց. Երբոր մըտ-
նէք ձեր բնակութեան երկիրը,
3 որն ես ձեզ պիտի տամ, Եւ պա-
տարագ մատուցանէք ԵՀովային
ողջակէզ կամ զոհ մէկ ուխտ կա-
տարելու կամ կամաւոր ընծայի
համար կամ ձեր տօներին որ Ե-
հովային անոյշ հոտ նուիրէք ար-
4 ջառներից կամ ոչխարներից։ Ա.յն
ժամանակ մատուցանողը մատու-
ցանէ իր պատարագը ԵՀովային
հացի նուէրի համար հիմնի չոր-
րորդ մասը իւղով զանգուած մէկ
5 տասանորդ բարակ ալիւր։ Եւ հի-
մնի չորրորդ մասը գինի թափե-
լու նուէր անես ողջակէզի կամ
զոհի հետ մէկ գառի համար.
6 Կամ մի խոյի համար՝ հացի նը-
ուէր անես երրորդ մասը իւղով
զանգուած երկու տասանորդ բա-
7 րակ ալիւր. Եւ թափելու նուէրի
համար հիմնի երրորդ մասը գինի
մատուցանես անոյշ հոտ ԵՀովայի
8 համար։ Եւ երբոր ԵՀովային զը-
ուարակ մատուցանես իբրև ողջա-
կէզ կամ զոհ ուխտ կատարելու
համար՝ կամ խաղաղութեան պա-
9 տարագի համար, Ա.յն ժամանակ
զուարակի հետ կես հիմնի իւղով
զանգուած երեք տասանորդ բա-
րակ ալիւրից հացի նուէր մատու-
10 ցանես. Եւ գինի մատուցանես
թափելու նուէրի համար կես հի-
մնի. սա ԵՀովայի համար անու-
11 շահոտ պատարագ է։ Ամեն մէկ
հատ զուարակի կամ խոյի հա-
մար՝ կամ ոչխարի կամ այծի հա-
12 մար այսպէս լինի։ Ձեր պատրաս-
տելու թուոյն համեմատ նորանց
թուոյն համեմատ ամեն մէկին
13 այնպէս անէք։ Երկրի ամեն բնա-
կը այս բաներն այնպէս անէ, Ե-
հովային անուշահոտ պատարագ
14 մատուցանելու համար։ Եւ եթէ
ձեզ մօտ պանդխտացած օտարա-
կանը՝ կամ ձեր ազգերի մէջ ձեր

մէջ Բնակուղ՝ Եհովայի համար ա-
նուշահոտ պատարագ անելու լի-
նի, ձեր արածի պէս նա էլ այն-
15 պէս անէ։ Ով ժողովք, ձեզ հա-
մար և պանդխատացած օտարա-
կանի համար մէկ կանոն լինի, ձեր
ազգերի մէջ յաւիտենական կա-
նոնով, ինչպէս դուք՝ այնպէս
լինի օտարականն էլ Եհովայի
16 առջև։ Ձեզ համար և ձեզ մօտ
պանդխատացած օտարականի հա-
մար՝ մէկ օրէնք մէկ կարգադրու-
թիւն լինի։
17 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
18 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի
որդոց հետ և ասիր նորանց. Երբ
որ այն երկիրը մտնէք, ուր որ
19 ես ձեզ պիտի տանեմ. Եւ լինի
որ երբ այն երկրի հացից ուտէք՝
բարձրացնելու ընծայ մատուցա-
20 նէք Եհովային. Ձեր առաջի խը-
մորից մի շօթ բարձրացնելու
պատարագ մատուցանէք. կալի
բարձրացնելու պատարագի պէս
21 սա էլ բարձրացնէք։ Ձեր առա-
ջի խմորից բարձրացնելու պա-
տարագ մատուցանէք Եհովային
ձեր ազգերի մէջ։
22 Իսկ եթէ սխալուիք և չանէք
այս բոլոր պատուիրանքները՝ որ
23 Եհովան ասաց Մովսէսին. Որ ա-
մենը ձեզ պատուիրեց Եհովան
Մովսէսի ձեռքով այն օրից որ
Եհովան պատուիրեց և այնուհե-
24 տև մինչև ձեր ազգերը. Եւ լինի
որ եթէ ժողովքը չխմանալով սը-
խալմամբ յանցանք գործէ, այն
ժամանակ բոլոր ժողովքը Եհո-
վայի համար իբր անուշահոտ ող-
ջակէզ մէկ զուարակ մատուցա-
նէ և նորա հացի նուէրը և թա-
փելու նուէրը ըստ օրինի և իբր
մեղքի պատարագ այծերից մէկ
25 նոխազ։ Եւ քահանան քաւու-
թիւն անէ Իսրայէլի որդոց բոլոր
ժողովքի համար, և թողութիւն
լինի նորանց, վասն զի սխալմունք
էր, և նորանք իրանց պատարա-
գը Եհովային պատարագ բերին
և իրանց մեղքի պատարագը Ե-
հովայի առջև, իրանց սխալմունքի
26 համար։ Եւ Իսրայէլի որդոց բո-
լոր ժողովքի և նորանց մէջը պան-
դխատացած օտարականներին թո-
ղութիւն կ'լինի, վասն զի բոլոր
ժողովրդի համար սխալմունք էր։
27 Եւ եթէ մի անձ սխալմամբ
մեղք գործէ, այն ժամանակ մեղ-
քի պատարագի համար մէկ տա-
28 րեկան էգ այծ բերէ։ Եւ քահա-
նան քաւութիւն անէ սխալմամբ
մեղք գործող անձի համար, Ե-
հովայի առջև սխալմամբ մեղք
գործելիս նորա համար քաւու-
29 թիւն անէ և նորան թողութիւն
կ'լինի։ Իսրայէլի որդոց միջի բնա-
կի համար, և նորանց մէջ պան-
դխատացած օտարականի համար
մէկ օրէնք պիտի ունենաք սխալ-
մամբ մեղք գործողի համար։
30 Բայց այն անձը որ բարձրացած
ձեռքով չէշ գործէ՝ թէ երկրի
բնակը լինի թէ օտարական՝ նա
Եհովային է նախատում, այն ան-
ձը իր ժողովրդի միջից պիտի կոր-
չէ։ Վասն զի Եհովայի խօսքը ար-
31 համարհեց և նորա պատուիրան-
քը զանց արաւ. այն անձը ան-
պատճառ պիտի կորչէ. նորա ա-
նօրէնութիւնը իր վերայ լինի։
32 Եւ երբ Իսրայէլի որդիքը անա-
պատումն էին, մի մարդ գտան՝
շաբաթ օրը փայտ ժողովելիս։
33 Եւ այն փայտ ժողովողին գտնո-
ղները նորան բերին Մովսէսի և Ա-
հարոնի և բոլոր ժողովքի մօտ։
34 Եւ բանտարկեցին նորան, վասն
զի վճռուած չէր, թէ ինչ պէտք
35 է անուէր նորան։ Եւ Եհովան
ասաց Մովսէսին. Այն մարդը
անպատճառ պիտի մեռցնուի,
բոլոր ժողովքը բանակից դուրս
36 քարերով քարկոծեն նորան։ Եւ
բոլոր ժողովքը բանակից դուրս
հանեցին նորան և քարերով քար-
կոծեցին նորան, և մեռաւ, ինչ-
պէս որ Եհովան Մովսէսին պատ-
ուիրել էր։
37 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
38 հետ ասելով. Խօսիր Իսրայէլի որ-
դոց հետ և ասիր նորանց, որ ի-
րանց համար ծոպեր շինեն իրանց
հանդերձների քղանցքների վերայ
իրանց ազգերի մէջ. և քղանցքի
ծոպերի վերայ մի կապոյտ ժա-
39 պաւէն դնեն. Եւ այն ձեզ հա-

մար ծոպ լինի, որ դուք տեսնէք
այն և ԵՀովայի բոլոր պատուի-
րանքները ձեր միտքը բերէք և
անէք նորանց ու չհետևէք ձեր
սրտերին և ձեր աչքերին, որոնց
40 ետևից դուք մոլորվում էք. Որ-
պէս զի ձեր միտքը բերէք և ա-
նէք իմ բոլոր պատուիրանքները
և սուրբ լինէք ձեր Աստուծոյ
41 համար: Ես եմ ձեր ԵՀովայ Աստ-
ուածը, որ ձեզ Եգիպտոսի երկ-
րից հանեցի, որ ձեզ համար
Աստուած լինեմ. ես եմ ԵՀովան
ձեր Աստուածը:

ԳԼ. ԺԶ

1 Եւ առաւ Ղևի որդու Կահաթի
որդու Իսահառի որդի Կորխը՝ և
Ռուբենի որդիներից Եղիաբի որդիք
Դաթան և Աբիրոն՝ և փաղեթի
2 որդի Ովն, Եւ կանգնեցին Մովսէսի
առջև և Իսրայէլի որդիներից եր-
կու հարիւր յիսուն հոգի ժողովքի
խորհրդական գլխաւորներ՝ ան-
3 ուանի մարդիկ. Եւ ժողովուե-
ցան Մովսէսի և Ահարոնի վերայ,
և ասացին նորանց. Էլ բաւական
է ձեզ, որովհետև բոլոր ժողովքը
ամենքն էլ սուրբ են, և ԵՀովան
նորանց մէջ է. և ինչո՞ւ էք ձեզ
բարձրացնում ԵՀովայի ժողովրդի
4 վերայ: Եւ Մովսէսը լսեց և
իր երեսի վերայ վայր ընկաւ.
5 Եւ խօսեց Կորխի և նորա բոլոր
ժողովքի հետ ասելով. Ընդուց
ԵՀովան ցոյց կ'տայ թէ որն է ի-
րանը, և որն է սուրբը և նրան
իրան կ'մօտեցնէ, և որին որ ինքը
6 ընտրէ, իրան կ'մօտեցնէ: Այս
արէք. առէք ձեզ համար բուր-
վառներ, դուք Կորխ և նորա բո-
7 լոր ժողովքը. Եւ նորանց մէջ
կրակ դրէք, և ԵՀովայի առջև
նորանց վերայ խունկ դրէք էղուց.
և լինի որ այն մարդը, որին որ
ԵՀովան ընտրէ, նա է սուրբը.
բաւական է ձեզ, ով Ղևիի որ-
8 դիք: Եւ Մովսէսն ասաց Կորխին.
9 Լսեցէք, ով Ղևիի որդիք, Փո՞քր
բան է երևում ձեզ որ Իսրայէլի

Աստուածը ձեզ իրան մօտեցնե-
լու համար՝ Իսրայէլի ժողովքից
բաժանեց ձեզ, որ ԵՀովայի խո-
րանի պաշտօնը անէք և ժողովքի
առջև կանգնէք՝ նորանց սպասա-
ւորութիւնը անելու համար. Եւ 10
քեզ, և քեզ հետ քո բոլոր եղ-
բայրներին՝ Ղևիի որդիներին էօ-
մօտեցրեց, և դուք քահանայու-
թիւն էլ էք ուզում: Ուրեմն 11
դու և քո բոլոր ժողովքը ԵՀո-
վայի դէմ էք ժողովուել, և Ա-
հարոնն ո՞վ է՝ որ նորա դէմ տըր-
տունջ էք անում: Եւ Մովսէսն ու 12
ղարկեց Եղիաբին որդիքը Դաթա-
նին և Աբիրոնին կանչելու համար.
նորանք ասացին. Մենք վեր չենք
գալ: Փոքր բա՞ն է որ մեզ անա- 13
պատից մէջ մեռցնելու համար՝
կաթ ու մեղր բղխող երկրից մեզ
հանեցիր, որ մեր վերայ տիրա-
պետել էլ ես ուզում: Եւ ապա- 14
քէն մեզ կաթ ու մեղր բղխող
երկիր էլ չտարիր, և ոչ էլ մեզ
արտ և այգու ժառանգութիւն
տուիր. այս մարդկանց աչքերը
հանելո՞ւ ես. մենք վեր չենք գա-
լիս: Եւ Մովսէսը շատ բարկա- 15
ցաւ, և ասաց ԵՀովային. Մի
հայիր նորանց նուէրներին. Ո-
րանցից մի էշ էլ չեմ առել, և
նորանց մէկին չարիք չեմ արել:
Եւ Մովսէսն ասաց Կորխին. Դուս 16
և քո բոլոր ժողովուրդը էգուց
ԵՀովայի առջև ներկայանաք, դուս
և նորանք և Ահարոնը. Եւ առէք 17
ձեր ամեն մէկը ձեր բուրվառնե-
րը, և նորանց մէջ խունկ դրէք
և մօտեցրէք ԵՀովայի առջև ա-
մեն մէկը իր բուրվառը, այսինքն
երկու հարիւր յիսուն բուրվառ-
ներ, և դուս էլ և Ահարոնը, ա-
մեն մէկն իր բուրվառը: Եւ ա- 18
մեն մէկն իր բուրվառն առին և
նորանց մէջ կրակ դրին, և նո-
րանց վերայ խունկ դրին և ժողով-
քի խորանի դրանը կանգնեցին և
Մովսէսն ու Ահարոնն էլ: Եւ 19
Կորխ ժողովից նորանց դէմ բոլոր
ժողովքը ժողովքի խորանի դու-
ռը. և ԵՀովայի փառքը բոլոր
ժողովքին երևեցաւ:
Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի և 20

*Եբր. պատնկութիւն էք անում:

21 Ա.Հարոնի հետ ասելով. Ա՛յդ ժո-
ղովքի միջից բաժանուեցէք, որ
22 իսկոյն ապառնեմ դորանց: Բայց
նորանք իրանց երեսներին վերայ
ընկան՝ և ասացին. Ով Աստուած,
բոլոր մարմնոց հոգիներուն Աստու-
ծը, մէկ մարդ կ՚մեղանչէ՝ և բո-
լոր ժողովքի՞ վերայ կ՚բարկանաս:
23 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
24 հետ ասելով. Խօսիր այդ ժողով-
քին հետ և ասիր. Հեռացէք կոր-
խի, Դաթանի և Աբիրոնի բնա-
25 կութեան չորս կողմերից: Եւ Մով-
սէսն եղաւ, և Դաթանի և Աբի-
րոնի մօտ գնաց, և Իսրայէլի ծե-
26 րերը նորա ետևիցը գնացին: Եւ
խօսեց ժողովքին հետ ասելով.
Այդ չար մարդկանց վրաններին
մօտից հեռ քաշուեցէք, և նորանց
մէկ բանին մի դպչիք, որ նորանց
27 բոլոր մեղքերովը չկորչէք: Այս-
պէս նորանք կորխի, Դաթանի և
Աբիրոնի բնակութեան չորս կող-
մերից հեռացան. և Դաթան և
Աբիրոն դուրս եկան կանգնեցին
իրանց վրաններին դրանը և նորանց
կնիկները և նորանց որդիքը և բո-
28 լոր մանիքը: Եւ Մովսէսն ասաց.
Սորանով կ՚գիտենաք թէ Եհո-
վան է ինձ ուղարկել բոլոր այս
գործերն անելու, և ոչ թէ իմ
29 անձիցն է այս. Այսինքն՝ եթէ ա-
րանք ամեն մարդու մեռնելու պէս
մեռնեն, և եթէ ամեն մարդու
պատժուածովը որոնք էլ պատ-
ժուին, այն ժամանակ Եհովան չէ
30 ինձ ուղարկել: Բայց եթէ Եհովան
մի հրաշք անէ, և երկիրն իր բեր-
նը բանայ, և նորանց և նորանց
բոլոր ունեցածը կուլ տայ և նո-
րանք ողջ ողջ դժոխքն իջնեն,
այն ժամանակ կ՚գիտենաք որ այս
մարդիկը Եհովային անարգեցին:
31 Եւ եղաւ հէնց որ այս բոլոր խօս-
քերը խօսելը վերջացրեց, իսկոյն
գետինը պատռուեցաւ, որ նո-
32 րանց տակին էր. Եւ երկիրն իր
բերանը բացաւ և նորանց և նո-
րանց տներըը և Կորխի ունեցած
բոլոր մարդկանցը և բոլոր ինչքը
33 կուլ տուաւ: Եւ նորանք և բո-
լոր ինչ որ նորանցն էր ողջ ողջ
իջան դժոխքը, և երկիրը ծած-
կեց նորանց վերայով, և ժողով-
քի միջից կորան: Եւ բոլոր Իս- 34
րայէլը, որ նորանց շուրջն էր,
նորանց ձայնիցը փախան, վասն
զի ասում էին մի գուցէ երկիրը
մեզ կուլ տայ: Եւ Եհովայից 35
կրակ դուրս եկաւ, և խունկ մա-
տուցանող երկու հարիւր յիսուն
հոգիներին ապառնեց:
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 36
հետ ասելով. Խօսիր Ա.Հարոն քա- 37
հանայի որդի Եղիազարի հետ,
որ բուրվառներն այն այրուածքի
միջից վեր առնէ, և դու կրակը
դէն ցրուիր, վասն զի նորանք
սուրբ եղան: Այդ իրանց հոգի- 38
ների դէմ մեղք գործողների բուր-
վառներից թիթեղներ շինեն՝ ա-
զդանը պատելու համար. վասն զի
նորանք Եհովայի առջև մատու-
ցանելով՝ սուրբ են դառել և
Իսրայէլի որդոց համար նշան լի-
նին: Եւ Եղիազար քահանան այն 39
այրուած մարդկանց մատուցած
պղնձի բուրվառներն առաւ, և
ազդանը պատելու համար թիթեղ-
ներ շինեցին նորանց. (Իսրայէլի 40
որդոց համար յիշատակ՝ նորա
համար որ Ա.Հարոնի սերունդիցը
չեղող մէկ օտարը Եհովայի առ-
ջև խունկ մատուցանելու չմօտե-
նայ, և Կորխի և նորա ժողովքի
պէս չլինի) ինչպէս որ Եհովան
ասաց նորան՝ Մովսէսի ձեռքովը:
Եւ հետևեալ օրը Իսրայէլի որ- 41
դոց բոլոր ժողովքը Մովսէսի դէմ
և Ա.Հարոնի դէմ տրտունջ ա-
րին՝ ասելով. Դուք Եհովայի ժո-
ղովուրդը մեռցրիք: Եւ եղաւ որ 42
երբ ժողովքը Մովսէսի և Ա.Հա-
րոնի դէմ ժողովուած էին, դէպի
ժողովքի խորանը նայեցան, և ա-
հա ամպը ծածկեց նորան, ու Ե-
հովայի փառքը երևեցաւ: Եւ 43
Մովսէսն ու Ա.Հարոնը ժողովքի
խորանի առջև եկան: Եւ Եհո- 44
վան խօսեց Մովսէսի հետ ասե-
լով. Այդ ժողովքի միջից ե- 45
լէք, որ իսկոյն ապառնեմ նորանց.
և սորանք իրանց երեսներին վերայ
ընկան: Եւ Մովսէսն ասաց Ա.Հա- 46
րոնին. Բուրվառն առ և մէջը ա-
զդանի վերայից կրակ դիր, և խունկ

դիր, և շուտով ժողովքը գնա, և նորանց համար քաւութիւն արա. վասն զի եհովայի կողմից բարկութիւն եկաւ՝ ժանտախտը
47 սկսեց: Եւ առաւ Ահարոնը Մովսէսի ասածի պէս՝ ու ժողովքի մէջը վազեց, և ահա ժանտախտը սկսել էր ժողովրդի մէջ, և խունկը դրաւ, և ժողովրդի հա-
48 մար քաւութիւն արաւ. Եւ մեռելների և ողջերի մէջտեղը կանգնեց, և ժանտախտը դադարեց:
49 Եւ ժանտախտով մեռածները տասնուչորս հազար եօթը հարիւր հոգի էին, բացի Կորխի բանի հա-
50 մար մեռածներից: Եւ Ահարոնը եաւ դարձաւ դէպի Մովսէսը ժողովքի խորանի դրան մօտ. և ժանտախտը դադարեց:

ԳԼ. ԺԷ

1 Եւ եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. խօսիր Իսրայէլի որդոց հետ և առ նորանցից էրես հարանց տների համեմատ մէկ մէկ գաւազան՝ այսինքն իրանց հարանց տների բոլոր իշխաններից տասներկու գաւազան. ամեն մարդու անունը իր գաւազանի վերայ
3 գրիր: Եւ Ահարոնի անունը գրիր Ղևիի գաւազանի վերայ. վասն զի նորանց հայրերի տան իշխանի համար մէկ գաւազան պիտի լի-
4 նի. Եւ նորանց դնես ժողովքի խորանումը վկայութեան առջև, ուր որ ձեզ պիտի հանդիպեմ:
5 Եւ կ'լինի այն մարդու գաւազանը, որին որ ես ընտրել եմ, կը ծաղկէ և կ'դադարեցնեմ ինձանից Իսրայէլի որդոց տրտունջը, որոնք տրտնջում են ձեզ վերայ:
6 Եւ Մովսէսը խօսեց Իսրայէլի որդոց հետ, և նորանց բոլոր իշխաններն իրանց հարանց տների համեմատ՝ տասներկու գաւազան տուին նորան, ամեն մէկ իշխանի համար մէկ մէկ գաւազան, և Ահարոնի գաւազանը նորանց գա-
7 ւազանների մէջ էր: Եւ Մովսէսը դրաւ գաւազանները եհովայի առջև վկայութեան խորանումը:
8 Եւ եղաւ որ հետևեալ օրը Մովսէսը վկայութեան խորանը մտաւ. և ահա Ղևիի տան կողմից բողբոջած Ահարոնի գաւազանը ծաղկել էր, և ծլեց և ծաղկեց և նուշեր հասցրեց: Եւ Մովսէսը բոլոր գաւա- 9
զանները եհովայի առջևից դուրս հանեց Իսրայէլի բոլոր որդոց առջև և նորանք տեսան. և ամեն մէկն իր գաւազանն առաւ: Եւ 10
եհովան ասաց Մովսէսին. Ետ դարձրու Ահարոնի գաւազանը վկայութեան առջևը որ ապստամբների համար էրես նշան պահ-
ուի, և նորանց տրտունջը ինձանից վեր առնես որ չմեռնեն: Եւ 11
Մովսէսն արաւ ինչպէս որ եհովան իրան պատուիրել էր, այնպէս արաւ: Եւ Իսրայէլի որդիքը 12
խօսեցին Մովսէսի հետ ասելով. Ահա մեռնում ենք, կորչում ենք. մենք ամենքս կորչում ենք. Ամեն 13
ով եհովայի խորանին մօտենայ մեռնում է. միթէ ամենքս էլ մեռնե՞նք:

ԳԼ. ԺԸ

1 Եւ եհովան ասաց Ահարոնին. Դու և քո որդիքը և քո հօր տունը քեզ հետ սրբարանի անօրէնութիւնը պիտի կրէք. և դու և քո որդիքը քեզ հետ ձեր քահանայութեան անօրէնութիւնը պիտի
2 կրէք: Եւ քո հօր ցեղից այսինքն Ղևիի ցեղից եղող քո եղբայրներին մօտեցնես, որ քեզ հետ միանան, և քեզ սպասաւորութիւն անեն. և դու և քո որդիքը քեզ հետ վկայութեան խորանին առջև պիտի լի-
3 նէք. Եւ պահեն քո պահպանութիւնը և բոլոր խորանի պահպանութիւնը, միայն թէ սրբարանի անօթների և սեղանին չմօտենան, որ ոչ նորանք մեռնեն՝ և ոչ էլ
4 դուք: Եւ նորանք քեզ հետ միանան, և ժողովքի խորանի պահպանութիւնը պահեն՝ խորանի ամեն պաշտօնի համեմատ. և մի
5 օտար պիտի չմօտենայ ձեզ: Եւ պահեցէք սրբարանի պահպանութիւնը և սեղանի պահպանութիւնը, որ այլ ևս Իսրայէլի որ-

դոց վերայ բարկութիւն չլինեմ։
6 Եւ ահա ես Իսրայէլի որդոց միջից ձեր եղբայրներին՝ Ղեւտացիներին առի իբրև ձեզ համար ընծային պարգև տրուած, որ ժողովքի խորանի պաշտօնն անեն։
7 Եւ դու և քեզ հետ քո որդիքը պահեցէք ձեր քահանայութիւնը սեղանի բոլոր բաների համար և վարագոյրի ներսի կողմի համար, և պաշտօնը կատարեցէք. ձեր քահանայութիւնը իբրև պարգև պաշտօն տուի, և մօտեցող օտարականը պիտի մեռցնուի։
8 Եւ Եհովան խօսեց Ահարոնի հետ. Եւ ահա ես քեզ տուի իմ ընծաների պահպանութիւնը Իսրայէլի որդոց բոլոր սուրբ բաներից, նորանք քեզ տուի օծման համար և քո որդոց՝ յաւիտենական կանոնով։
9 Սորանք քոնը լինին ամենասուրբ բաներից՝ կրակից, նորանց ամեն հացի նուէրների, նորանց ամեն մեղքի պատարագների և նորանց ամեն յանցանքի պատարագների բոլոր պատարագները որ ինձ կ'հատուցանեն, ամենասուրբը են քեզ և
10 քո որդոց համար։ Ամենասուրբ տեղումը ուտես այն, ամեն արու ուտէ այն. նա սուրբ է քեզ հա-
11 մար։ Այս էլ քոնը լինի նորանց պարգևների բարձրացնելու պատարագը Իսրայէլի որդոց բոլոր երերացնելու ընծաներից. քեզ տուի նորանց և քեզ հետ քո որդոցը և քո աղջկերանցը յաւիտենական կանոնով, քո տան մէջ ամեն մաքուրն ուտէ այն։
12 Ամենից լաւ իւղի և ամենից լաւ գինու և ցորենի բոլոր երախայրիները՝ որ Եհովային են մատուցանում, քեզ տուի։
13 Նորանց երկրի մէջ եղած բոլորի երախայրիները՝ որ բերում են Եհովայի համար, քոնը լինի. քո տան մէջ ամեն մաքուրը ուտէ նորանից։
14 Իսրայէլի մէջ ամեն նուիրուած-
15 ը քոնը լինի։ Ամեն մարմնի առաջնեկ արգանդ բացողը, որ մատուցանում են Եհովային, թէ մարդ և թէ անասուն՝ քոնը լինի. միայն թէ մարդու առաջնեկը անպատճառ փրկես. և անմաքուր անասունի առաջինեկն էլ փրկես։ Եւ փրկուողին մէկ ամսական փրկես, արծաթի սիկղի համեմատ՝ հինգ սիկղ արծաթի *գնով պիտի փրկես. *Էնդը քսան կերատ է։ Բայց կովի առաջինեկը 17
և ոչխարի առաջինեկը կամ այծի առաջինեկը չփրկես. նորանք սուրբ են. նորանց արիւնը սեղանի վերայ սրսկես և նորանց ճարպը այրես իբրև անուշահոտ պատարագ Եհովայի համար. Եւ նորանց մի- 18
սը քոնը լինի ինչպէս երերացնելու երբուծը և աջ զիստը՝ քոնը լինի։
Սուրբ բաներից ամեն բարձրա- 19
ցնելու պատարագները, որ Իսրայէլի որդիքը Եհովային մատուցանում են, քեզ և քեզ հետ քո տղայոցը և աղջկերանցը տուի յաւիտենական կանոնով, նա քո սերունդի համար աղի ուխտ է յաւիտեան Եհովայի առջև քեզ և քեզ հետ քո սերունդի համար։ Եւ Եհովան ասաց Ահարո- 20
նին. Նորանց երկրի մէջ դու ժառանգութիւն չունենաս. և նորանց միջտեղը բաժին չունենաս. ես եմ քո բաժինը և ժառանգութիւնը Իսրայէլի որդոց մէջ։
Եւ ահա Իսրայէլի բոլոր տա- 21
սանորդը տուի Ղեւիի որդոց ժառանգութեան համար՝ իրանց այս պաշտօնի փոխարէն, որ պաշտօնով ծառայում են ժողովքի խորանին։ Եւ Իսրայէլի 22
որդիքն այլ ևս ժողովքի խորանին չմօտենան, որ մեղք չկրեն և չի մեռանեն։ Եւ ժողովքի խորանի 23
պաշտօնը Ղեւին անէ, և իրանց անօրէնութիւնը իրանք կրեն. սա ձեր ազգերի մէջ յաւիտենական կանոն լինի. որ նորանք Իսրայէլի որդոց մէջ ժառանգութիւն չունենան։ Վասն զի Իսրայէլի որդոց 24
տասանորդը՝ որոնք Եհովային ընծայում են, Ղեւտացիներին ժառանգութիւն տուի. այս պատճառով նորանց համար ասացի, որ Իսրայէլի որդոց մէջ ժառանգութիւն չունենան։

---

*Եբր. արժեցրածովդ

25 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
26 հետ ասելով. Այսպէս խօսիր Ղե-
տացիների հետ և ասիր նորանց.
Երբոր Իսրայէլի որդիներից տա-
ասանորդը առնէք, որ նորանց կոզ-
մանէ ձեզ տուի ժառանգութեան
համար, այն ժամանակ նորանից
տասանորդի տասներորդը բարձ-
րացնելու պատարագ մատուցա-
27 նէք Եհովայի համար: Եւ ձեզ
համար ձեր բարձրացնելու պա-
տարագը համարուի կալի ցորենի
28 պէս և հնձանի բերքի պէս: Այս-
պէս դուք էլ բարձրացնելու պա-
տարագ մատուցանէք Եհովային
այն բոլոր տասանորդներից, որ
դուք առնէք Իսրայէլի որդինե-
րից, և նորանցից Եհովայի բարձ-
րացնելու պատարագը Ահարոն
29 քահանային տաք: Բոլոր ձեզ
տրուած պատարագներից Եհովա-
յին մատուցանէք ամեն բարձրա-
ցնելու պատարագը բոլորովին նո-
րա ամենալաւը՝ նորա սուրբ
30 մասը մատուցանէք: Եւ ասա
նորանց. Երբոր նորա ամենալաւը
մատուցանէք, այն ժամանակ ը-
նծայածը կալի արդիւնքի պէս և
հնձանի արդիւնքի պէս համարու-
31 ւի Ղեւտացիների համար: Եւ
ամեն տեղ ուտէք այն, դուք
և ձեր ընտանիքները. վասն զի
ժողովքի խորանի մէջ ձեր պաշ-
տօնի փոխարէն ձեր վարձքը նա
32 է: Եւ նորա համար մեղք չէք
կրիլ նորանից ամենալաւը մա-
տուցանելուց յետոյ և Իսրայէլի
որդոց սուրբ բաները չպղծէք որ
չմեռնէք:

ԳԼ. ԺԹ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի և
2 Ահարոնի հետ ասելով. Այս է օ-
րէնքի կանոնը որ Եհովան պատ-
ուիրեց ասելով. Խօսիր Իսրայէլի
որդոց հետ որ քեզ մօտ մի կար-
միր երինջ բերեն անարատ, որ
մի բիծ չունենայ, որի վերայ լուծ
3 դրուած չլինի: Եւ այն տաք Ե-
ղիազար քահանային, և նա բա-
նակիցը դուրս հանէ նորան, և
4 նորա առջև մորթեն նորան: Եւ

Եղիազար քահանան իր մատովը
նորա արիւնիցը առնէ և դէպի
ժողովքի խորանի առաջի կողմը
եօթն անգամ սրսկէ նորա արիւ-
նիցը: Եւ իր աչքի առջև այրեն 5
երինջը, նորա մորթը և նորա մի-
սը, և նորա արիւնը աղբովը մէկ-
տեղ այրեն: Եւ քահանան առ- 6
նէ եղեւնի փայտ, զոպայ և կըրկ-
նակի կարմիր, և երինջի այրուած
կրակի մէջ դնէ: Եւ քահանան 7
իր հանդերձները ջրով ողողէ և
իր մարմինը ջրով լուանայ, և
յետոյ բանակը մտնէ. և քահա-
նան մինչև իրիկուն անմաքուր
լինի: Եւ նորան այրողն իր հան- 8
դերձները ջրով ողողէ և իր մար-
մինը ջրով լուանայ, և մինչև ի-
րիկուն անմաքուր լինի: Եւ մի 9
մաքուր մարդ երինջի մոխիրը ժո-
ղովէ և բանակից դուրս մի մա-
քուր տեղ դնէ. և Իսրայէլի որ-
դոց ժողովքի համար լինի պահ-
ուած, մեղաց համար մաքրու-
թեան ջուր է նա: Եւ երինջի մո- 10
խիրը ժողովողը իր հանդերձները
ողողէ ջրով, և մինչև իրիկուն
անմաքուր լինի, և սա Իսրայէլի
որդոց համար և նորանց մէջ պան-
դխտացող օտարականի համար
յաւիտենական կանոն լինի:

Ով որ մեռած մարդու մարմնի 11
դպչէ, եօթը օր անմաքուր լինի:
Նա երրորդ օրը նորանով մաքր- 12
ուի, և եօթներորդ օրը մաքուր
լինի, բայց եթէ չմաքրուի եր-
րորդ օրը, եօթներորդ օրն էլ մա-
քուր չի լինիլ: Ով որ մեռած 13
մարդու մարմնի դպչէ և չմաքրուի,
նա Եհովայի խորանը պղծում է.
և այն անձը Իսրայէլից կորչէ, ո-
րովհետև նորա վերայ մաքրու-
թեան ջուր չսրսկուեցաւ, նա
անմաքուր լինի. իր անմաքրու-
թիւնը տակաւին իր վերայ է:
Այս է վրանի մէջ մեռնող մարդու 14
համար օրէնքը. այն վրանի մէջն
ամեն մտնողը և այն վրանումն ա-
մեն եղողը եօթն օր անմաքուր լի-
նի: Եւ ամեն բաց անօն, որի 15
վերան կապով խուփ չկայ, ան-
մաքուր լինի: Եւ ով որ դպչէ 16
դաշտի վերայ սրով սպանուածի

կամ մեռածի, կամ մարդու ոսկորի և կամ գերեզմանի, եօթն
17 օր անմաքուր լինի։ Եւ առնեն անմաքուր եղողի համար՝ այն մեզից համար այրուած էջնջի մոխրից և նորա վերայ կենդանի ջուր
18 ածեն մի ամանի մէջ. Եւ մի մաքուր մարդ զոպայ առնէ, և այն ջրով թրջէ, և սրսկէ այն վրանի վերայ և բոլոր ամանների վերայ և այնտեղ եղած մարդոց վերայ, և ոսկորի կամ սպանուածի կամ մեռածի և կամ գերեզմանի դըպ-
19 չողի վերայ։ Եւ մաքուրը սրսկէ անմաքուրի վերայ երրորդ օրը և եօթներորդ օրը, և եօթներորդ օրը նորան մաքրէ, և նա իր հանդերձները ողողէ և ջրով լուացուի և իրիկունը մաքուր լինի։
20 Բայց այն մարդը որ անմաքուր է և չմաքրուի, այն անձը ժողովքի միջից կորչէ, վասն զի Եհովայի սրբարանը պղծեց. նորա վերայ մաքրութեան ջուրը չսրսկուեցաւ,
21 նա անմաքուր է։ Եւ նորանց համար յաւիտենական կանոն լինի, որ մաքրութեան ջուրը սրսկողն իր հանդերձները ողողէ, և մաքրութեան ջրին դպչողը մինչև իրիկուն անմաքուր լինի։
22 Եւ անմաքուր անձը ամեն ինչի որ դպչի, նա էլ անմաքուր լինի. և նորա դպչող մարդը մինչև իրիկուն անմաքուր լինի։

ԳԼ. Ի

1 Եւ Իսրայէլի որդոց բոլոր ժողովքը Սին անապատը եկան առաջի ամսուն, և ժողովուրդը Կադեսի մէջ բանակ առաւ. և Մարիամը մեռաւ այնտեղ, և
2 թաղուեցաւ այնտեղ։ Եւ ժողովքը ջուր չունէր, և Մովսէսի և Ահարոնի վերայ հաւաքուեցան,
3 Եւ ժողովուրդը Մովսէսի հետ վիճելով խօսեցին և ասացին. Երանի թէ մենք էլ մեռնէինք երբ որ մեր եղբայրները մեռան Եհո-
4 վայի առջև. Եւ ինչո՞ւ բերիք Եհովայի ժողովուրդը այս անապատը, որ մենք և մեր անասուն-
5 ները այս տեղ մեռնենք։ Եւ ին-

չո՞ւ մեզ Եգիպտոսից հանեցիք մեզ այս վատ տեղը բերելու համար. ոչ սերմի տեղ է, ոչ էլ թզենիների և այգիների և նռնենիների, և ջուր անգամ չկայ խըմելու։ Եւ Մովսէսն ու Ահարոնը ժողովքի առաջից գնացին ժողովքի խորանի դուռը և իրանց երեսի վերայ ընկան. և Եհովայի փառքը նորանց երեւեցաւ։

Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով. Ա. զաւազանը, և ժողովքը ժողովիր, դու և քո եղբայրը՝ Ահարոնը և խօսեցէք ապառաժին նորանց աչքերի առջև, նա կ'տայ իր ջուրը, և դու ապառաժից ջուր կ'հանես նորանց համար և կ'խմեցնես ժողովքին և անասուններին։ Եւ Մովսէսն առաւ զաւազանը Եհովայի առջևից, ինչպէս որ իրան պատուիրեց։ Եւ Մովսէսն ու Ահարոնը ժողովեցին ժողովքը ապառաժի առջև, և ասաց նորանց. Լսեցէք հիմա, ով ապստամբներ, այս ապառաժից ջուր հանե՞նք ձեզ համար։ Եւ Մովսէսն իր ձեռքը բարձրեցրեց, և զաւազանով երկու անգամ ապառաժին զարկեց. և շատ ջուր դուրս եկաւ, և ժողովքը և նորանց անասունները խմեցին։

Եւ Եհովան խօսեց Մովսէսի և Ահարոնի հետ. Որովհետև ինձ չհաւատացիք ինձ Իսրայէլի որդոց աչքերի առջև *փառաւորելու, նորա համար այս ժողովուրդը դուք պիտի չտանէք այն երկիրը՝ որ նորանց տուի։ Մերիբայի ջուրը այս է, որի վերայ Իսրայէլի որդիքը Եհովայի դէմ վիճեցին, և Նա փառաւորուեցաւ նորանց մէջ։

Եւ Մովսէսը Կադեսից դեսպաններ ուղարկեց Եդոմի թագաւորի մօտ թէ. Ա.յսպէս է ասում քո եղբայրը Իսրայէլ. Գիտես մեզ պատահած բոլոր նեղութիւնը. Որ մեր հայրերը իջան Եգիպտոս, և բնակեցինք Եգիպտոսում շատ ժամանակ, և Եգիպտացիք չար-

*Եբր. սրբելու

չարեցին մեզ և մեր հայրերին։
16 Եւ մենք դէպի ԵՀովան աղաղա-
կեցինք, և նա լսեց մեր ձայնը,
և հրեշտակ ուղարկեց, և մեզ
Եգիպտոսից հանեց. և ահա մենք
քո սահմանի ծայրի Կադես քա-
17 ղաքումն ենք. խնդրեմ թող անց-
նենք քո երկրովը, չենք անցնիլ
արտով և այգիներով, և հորե-
րից ջուր չենք խմել. արքունի
ճանապարհովը կ'գնանք, ալ կամ
ձախ կողմը չենք խոտորիլ մինչև
18 որ քո սահմանիցն անցնենք։ Եւ
Եդովմն ասաց նորան. Իմ միջովը
չես անցնիլ, եթէ ոչ՝ սրով քեզ
19 դէմ կ'գամ։ Եւ Իսրայէլի որդիքը
ասացին նորան. Մենք մեծ ճա-
նապարհովը կ'անցնինք, և եթէ
ես և իմ անասուններդը քո ջրից
խմենք, նորա գինը կ'հատուցա-
նեմ. առանց մի որ և է բանի
20 իմ ոտքերովը կանցնեմ։ Եւ նա
ասաց. Չես անցնիլ. և Եդովմը
մեծ բազմութիւնով և հզօր ձեռ-
քով նորանց դէմ դուրս եկաւ։
21 Այսպէս Եդովմն արգելից իր
սահմանից Իսրայէլին ճանապարհ
տալ. և Իսրայէլը դարձաւ նո-
րանից։
22 Եւ կադեսից չուեցին, և Իս-
րայէլի որդոց բոլոր ժողովքը ե-
23 կան Հոր լեառը։ Եւ ԵՀովան
խօսեց Մովսէսի և Ահարոնի հետ
Հոր լեառնումը Եդովմի երկրի
24 սահմանի մօտ ասելով. Ահարոն
իր ժողովրդի վերայ աւելանայ.
վասն զի նա չի մտնելու այն եր-
կիրը՝ որ Իսրայէլի որդոց տուի
Մերիբայի ջրի մօտ իմ հրամանի
դէմ ձեր ապստամբութիւն անելու
25 համար։ Վէր առ Ահարոնին և
նորա որդի Եղիազարին և վեր
29 հանիր նորանց Հոր լեառը. Եւ
Ահարոնին իր զգեստներիցը մեր-
կացրու և նորա որդի Եղիազա-
րին հագցրու նորանց. և Ահարոնն
էր ժողվուէ վերայ կաւելանայ, և
27 այնտեղ կ'մեռնէ։ Եւ Մովսէսը
ԵՀովայի պատուիրածին պէս ա-
րաւ. և բոլոր ժողովքի աչքի առ-
28 ջև վեր ելաւ Հոր լեառը։ Եւ
Մովսէսը մերկացրեց Ահարոնին
նորա զգեստներիցը, և նորա որ-
դի Եղիազարին հագցրեց նորանց.
և Ահարոն մեռաւ այնտեղ լե-
ռան գլխին. և Մովսէսը և Եղի-
ազարը լեռնից իջան։ Եւ երբ 29
բոլոր ժողովքը տեսան որ Ահա-
րոնը մեռաւ, Իսրայէլի բոլոր
տունը Ահարոնի համար երեսուն
օր լացան։

ԳԼ. ԻԱ

Եւ Հարաւային կողմում բնակող 1
Քանանացի Արադի թագաւորը
լսեց, որ Իսրայէլ Աթարիմի ճա-
նապարհովը գալիս է, և Իսրայէլի
հետ պատերազմեց. և նորանցից
գերիներ առաւ։ Եւ Իսրայէլն 2
ուխտ արաւ ԵՀովային և ասաց.
Եթէ այս ժողովուրդն իմ ձեռ-
քը մատնես, նորանց քաղաքները
կ'նզովեմ։ Եւ ԵՀովան Իսրայէլի 3
ձայնը լսեց, և Քանանացին նո-
ցա յետ տուաւ. և նա նզովեց նո-
րանց և նորանց քաղաքները, և
այն տեղի անունը *Հորմա դրաւ։
Եւ Հոր լեռնից Կարմիր ծովի 4
ճանապարհով չուեցին որ Եդով-
մի երկրովը պտոյտ տան. և ժո-
ղովրդի սիրտը նեղացաւ ճանա-
պարհին։ Եւ ժողովուրդը Աստու- 5
ծոյ դէմ և Մովսէսի դէմ խօսե-
ցին. Ինչո՞ւ մեզ Եգիպտոսից հա-
նեցիք՝ որ անապատումը մեռնենք.
վասն զի հաց չկայ, ջուր չկայ. և այս
հնչին հացիցը մեր սիրտը զզուել է։ 6
Եւ ԵՀովան ժողովրդի վերայ կիզող
օձեր ուղարկեց, և կծեցին ժո-
ղովրդին, այնպէս որ Իսրայէլից
շատ ժողովուրդ մեռաւ։ Եւ ժո- 7
ղովուրդը եկաւ Մովսէսի մօտ և
ասացին. Մենք մեղանչեցինք Ե-
հովայի դէմ և քեզ դէմ խօսե-
լով. աղօթք արա ԵՀովային որ
մեր վերայից օձերը վեր առնէ.
և Մովսէսն աղաչեց ժողովրդի
համար։ Եւ ԵՀովան ասաց Մով- 8
սէսին. Քեզ համար մի կիզող
օձ շինիր և նորան դիր մի ձողի
վերայ. և կ'լինի՝ ամեն ով որ
կծուի, նորան մտիկ տայ և կ'ապ-

*այսինքն նզովք կամ խափա-
նումն։

9 բէ ։ Եւ Մովսէսը մի պղնձի օձ
շինեց, և ձողի վերայ դրաւ այն.
և եղաւ որ օձը երբոր մարդու
կծում էր, նա մտիկ էր անում
պղնձի օձին և առողջանում էր ։
10 Եւ Իսրայէլի որդիքը չուեցին,
11 և Ովոթի մէջ իջևան արին ։ Եւ
Ովոթից չուեցին, և Իյէ-աբա-
րիմի մէջ դէպի արևելեան կողմը
Մովաբի դէմի անապատումը ի-
12 ջևան արին ։ Անտեղից էլ չուե-
ցին՝ և Զարեդ ձորումը իջևան
արին ։
13 Անտեղից չուեցին, և իջևան
արին Առնոնի միւս կողմի այն
անապատումը, որ Ամորհացոց
սահմանից է ելնում. վասն զի
Առնոնը Մովաբացոց սահման է,
Մովաբացոց և Ամորհացոց մէջ-
14 տեղը ։ Ընդ այս համար ՅՀովայի պա-
տերազմների գրքումը ասվում է.
Վահէբը Սուֆայումը,
Եւ Առնոնի գետերը,
Եւ գետերին յորձանքը.
15 Որ դառնում է դէպի Արի բնա-
կարանը.
Եւ թեքվում է դէպի Մովաբի
սահմանը ։
16 Եւ այն տեղից եկան Ջրհորը.
սա այն Ջրհորն է, որի համար
ՅՀովան ասել էր Մովսէսին. ժո-
ղովրդին ժողովիր, և ես նրանց
17 ջուր կ'տամ։ Այն ժամանակ Իս-
րայէլն այս երգը երգեց.
Հոր, բղխիր. երգեցէք նրա հա-
մար.
18 Հորը, որ իշխանները փորեցին,
ժողովրդի ազնուականները քան-
դեցին.
Գաւազանով և իրանց ցուպերով ։
19 Եւ անապատից Մաթանա, և
Մաթանայից Նաալիէլ, և Նա-
20 լիէլից Բամոթ, և Բամոթից Մո-
վաբի դաշտը դէպի Եսիմոն նա-
յող փսգայի գագաթի հովիտը ։
21 Եւ Իսրայէլը դեսպաններ ու-
ղարկեց Ամորհացոց Սեհոն թա-
22 գաւորին՝ ասելով. Քո երկրումը
անցնենք. արտի կամ այգու մէջ
չենք խոտորիլ. հորի ջրից չենք
խմիլ. արքունական ճանապար-
հով կ'գնանք մինչև որ քո սահ-
մանից անցնենք ։ Եւ Սեհոն իր 23
սահմանով ճանապարհ չտուաւ
Իսրայէլին. այլ Սեհոն իր բոլոր
ժողովուրդը ժողովեց, և դուրս
եկաւ Իսրայէլին դէմ անապա-
տը, և Յասաս եկաւ, և Իսրա-
յէլի հետ պատերազմեց ։ Եւ Իս- 24
րայէլը սուրի բերանից անցկացրեց
նորան, և տիրեց նորա երկրին՝
Առնոնից մինչև Յաբոկ՝ մինչև
Ամմոնի որդոց երկիրը. վասն զի
Ամմոնի որդոց սահմանը պինդ
էր ։ Եւ Իսրայէլն առաւ այս բո- 25
լոր քաղաքները. և Իսրայէլն Ա-
մորհացոց բոլոր քաղաքներումը
բնակեց՝ Եսեբոնում և նորա բո-
լոր գեղերումը. վասն զի Եսե- 26
բոնը Ամորհացոց Սեհոն թագա-
ւորի քաղաքն էր. և նա Մովաբի
առաջի թագաւորի հետ պատե-
րազմելով առել էր նորա ձեռ-
քից բոլոր երկիրը մինչև Առնոն ։
Նորա համար առակախօսները 27
ասում են ։
Եսեբոն եկէք
Շինուի և պատրաստուի Սեհոնի
քաղաքը.
Վասն զի կրակ դուրս եկաւ Է- 28
սեբոնից.
Բոց Սեհոնի քաղաքից.
Այրեց Մովաբի Արը.
Առնոնի բարձր տեղերի տէրերը.
Վա՛յ քեզ, Մովաբ, 29
Կորար, ով Քամոսի ժողովուրդ.
Փախստական արաւ իր որդիքը,
և գերի իր աղջիկները.
Ամորհացոց Սեհոն թագաւորի
համար ։
Բայց նետահարեցինք նորանց. 30
Եսեբոն կորաւ մինչև Դեբոն.
Եւ աւերեցինք նորանց մինչև Նո-
փա ։
*Որ մինչև Մեդեբայ է ։
Այսպէս Իսրայէլը Ամորհացոց 31
երկրումը բնակեց ։ Եւ Մովսէսը 32
խրկ ուղարկեց Յազերը լրտեսելու
և նորա գեղերն առին. և այն-
տեղի Ամորհացիներին դուրս ա-
րին ։
Եւ դարձան և բռնեցին ճանա- 33

---

*Հրով մինչև Մեդեբայ ։

պարհովը եկան. և Բաղաքի Ովգ
Թագաւորը՝ ինքն ու իր բոլոր ժո-
ղովուրդը դուրս եկան նորանց
31 դեմ Եդրայէլ պատերազմը: Եւ
Եհուան ասաց Մովսէսին. Նորա-
նից մի վախենար. վասն զի քո
ձեռքը մատնեցի նորան և նորա
բոլոր ժողովուրդը, և նորա եր-
կիրը. և դու նորան կանես ինչ-
պէս որ արիր Եսեբոնում բնակող
Ամորհացոց Սեհոն թագաւորին:
35 Այսպէս զարկեցին նորան և նորա
որդիներին և նորա բոլոր ժողո-
վրդին՝ այնպէս որ մէկ մնացորդ
էլ չթողեցին, և նորա երկրին
տիրեցին:

ԳԼ. ԻԲ

1 Եւ Իսրայէլի որդիքը չուեցին և
Մովաբի դաշտերի մէջ Յորդա-
նանու միւս կողմումը Երիքովի
մօտ իջևան արին:
2 Եւ Սեպփորի որդի Բաղակ տե-
սաւ այն ամենը ինչ որ Իսրայէլ
3 արաւ Ամորհացիներին: Եւ Մո-
վաբը շատ վախեցաւ ժողովրդից,
վասն զի շատ էին. և տագնա-
պում էր Մովաբ Իսրայէլի որդոց
4 երեսից: Եւ Մովաբը Մադիամու
ծերերին ասաց. Հիմա այս ժողո-
վուրդը լիզելու են մեր շուրջը ե-
զած ամենը, ինչպէս որ արջառն
է դաշտի խոտը լիզում: Եւ Սեպ-
փորի որդի Բաղակը՝ Մովաբի թա-
5 գաւորն էր այն ժամանակ: Եւ
դեսպաններ ղրկեց Բէովրի որդի
Բաղաամի մօտ Փաթուր Ամաւին,
որ Եփրատ գետի եզերքումն էր,
նորա ժողովրդի որդոց երկիրը՝
նորան կանչելու և ասելու. Ահա
Եգիպտոսից մի ժողովուրդ դուրս
եկաւ, ահա երկրի երեսը ծած-
կել է, և նստել է իմ դիմացը.
6 Եւ հիմա ազաչում եմ, եկ, ինձ
համար անիծիր այս ժողովուրդը.
վասն զի նա ինձանից զօրաւոր է.
գուցե կարող լինեմ նորան զար-
կել, և իմ երեսից դուրս քշեմ
նորան. վասն զի գիտեմ որին որ
դու օրհնես՝ օրհնեալ է, և որին
որ դու անիծես՝ անիծեալ է:
7 Եւ Մովաբի ծերերն և Մադի-
ամու ծերերն գնացին՝ իրանց հը-
մայութեան վարձքերն ձեռքերին,
և եկան Բաղաամի մօտ ու Բա-
ղակի խօսքերն ասացին նորան:
8 Եւ նա ասաց նորանց. Այս գի-
շեր այստեղ մնացէք և ես պա-
տասխան կ'տամ ձեզ ինչպէս որ
Տէրը ինձ հետ խօսելու լինի. և
Մովաբի իշխանները Բաղաամի
9 մօտ մնացին: Եւ Աստուած Բա-
ղաամի մօտ եկաւ և ասաց. Ով են
այդ մարդիկը քեզ մօտ. 10
Եւ Բաղաամ ասաց Աստուծոյն. Սեպփոր-
եան Բաղակ Մովաբի թագաւորն
է ուղարկել ինձ մօտ. 11
Թէ ահա Եգիպտոսից դուրս եկած ժողո-
վուրդը երկրի երեսը ծածկել է.
հիմայ եկ անիծիր նորան ինձ հա-
մար, գուցէ կարող լինեմ նորան
յաղթել և նորան դուրս անել:
12 Եւ Աստուած ասաց Բաղաամին.
Դորանց հետ չգնաս. ժողովրդին
չանիծես. վասն զի նա օրհնեալ
13 է: Եւ Բաղաամ առաւօտեան
վեր կացաւ և ասաց Բաղակի իշ-
խաններին. Գնացէք ձեր երկիրը,
վասն զի Եհուան ինձ արգելում
է ձեզ հետ գնալու: 14
Եւ Մովաբի իշխանները վեր կացան և Բաղակի
մօտ եկան և ասացին. Բաղաամ
չուզեց մեզ հետ գալ:
15 Եւ Բաղակը դարձեալ նորանից աւելի շատ և աւելի պատ-
ուաւոր իշխաններ ուղարկեց: 16
Եւ նորանք Բաղաամի մօտ եկան և
ասացին նորան. Սեպփորի որդի
Բաղակը այսպէս է ասում. Աղա-
չում եմ ինձ մօտ գալուցը մի
17 հրաժարուիր. Վասն զի քեզ շատ
պատիւ կանեմ և ինձ ամեն ինչ
որ ասես՝ կ'անեմ, և ազաչում
եմ ել անիծիր այս ժողովրդին
18 ինձ համար: Եւ Բաղաամ պա-
տասխանեց և ասաց Բաղակի ծա-
ռաներին. Եթէ Բաղակ իր տունը
լիքն ինձ արծաթ ու ոսկի տայ,
իմ Եհովայ Աստուծոյ խօսքիցը
չեմ կարող անցկենալ՝ մի փոքր
19 կամ մի մեծ բան անելու: Եւ
հիմայ ազաչում եմ՝ այս գիշեր
դուք էլ այստեղ մնացէք, որ
գիտենամ թէ Եհովան ուրիշ ինչ
20 պիտի ասէ ինձ: Եւ Աստուած

գնչերը Բաղաամի մօտ եկաւ և ասաց նորան. Եթէ մարդիկը քեզ կանչելու գան, վեր կաց նորանց հետ գնայ. բայց ինչ որ քեզ հետ խօսեմ միայն այն արա։
21 Եւ Բաղաամ առաւօտանց վեր կացաւ, և իր էշի համերը դրաւ, և Մովաբի իշխանների հետ
22 գնաց։ Եւ գնալու համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեց և Եհովայի հրեշտակը ճանապարհի վերայ կանգնեց նորան հակառակելու համար, և նա իր էշի վերայ հեծած էր և նորա երկու
23 ծառաներն իր հետ։ Եւ էշը տեսաւ Եհովայի հրեշտակին, որ ճանապարհին կանգնած էր, և իր սուրը հանած ձեռքին. և էշը ճանապարհից դուրս գնաց արտը, և Բաղաամ էշին ծեծեց, որ ճանապարհը դարձնէ նորան։
24 Եւ Եհովայի հրեշտակը այգիների նեղ ճանապարհումը կանգնեց՝ մէկ կողմից պատ և մեւս կողմից
25 պատ կար։ Եւ երբոր էշը Եհովայի հրեշտակին տեսաւ, այն պատի մօտ քաշուեցաւ, և Բաղաամի ոտքը այն պատի մօտ ճզմեց. և նա դարձեալ ծեծեց նո-
26 րան։ Եւ Եհովայի հրեշտակը դարձեալ առաջ գնաց և մի նեղ տեղ կանգնեց, ուր աջ կամ ձախ կողմը խոտորելու ճանա-
27 պարհ չկար։ Եւ երբոր էշը Եհովայի հրեշտակին տեսաւ, Բաղաամի տակին նստեց, և Բաղաամի բարկութիւնը բորբոքեց, և գա-
28 ւազանով ծեծեց էշին։ Եւ Եհովան էշի բերանը բացաւ, և նա Բաղաամին ասաց. Ես ի՞նչ եմ արել քեզ որ այսպէս երեք ան-
29 գամ ինձ ծեծեցիր։ Եւ Բաղաամն ասաց էշին. Ինձ ծաղր անելուդ համար. երանի թէ ձեռքիս սուր լինէր որ հիմայ քեզ մեռցնէի։
30 Եւ էշն ասաց Բաղաամին. Ես այն քո էշը չե՞մ, որի վերայ հեծնում էիր վաղուց մինչև այսօր. միթէ իմ սովորութիւնն էր քեզ այսպէս անել. և նա ասաց. Ոչ։
31 Այն ժամանակ Եհովան բացաւ Բաղաամի աչքերը. և նա տեսաւ Եհովայի հրեշտակին ճանապարհին կանգնած և իր սուրը հանած ձեռքին, իր երեսի վերայ ընկաւ և երկրպագութիւն արաւ։
32 Եւ Եհովայի հրեշտակն ասաց նորան. Ինչո՞ւ ծեծեցիր քո էշին այս երեք անգամը, ահա ես դուրս եկայ հակառակելու, վասն զի այդ ճանապարհը ուղիղ չէ իմ առջևը։
33 Եւ էշն ինձ տեսաւ, և այս երեք անգամն է որ իմ առջևից քաշուեցաւ. եթէ իմ առջևից չքաշուէր, հիմա ես քեզ մեռցրել էի և նորան ողջ թողել։
34 Եւ Բաղաամն ասաց Եհովայի հրեշտակին. Մեղք գործեցի, քանզի որում չիմացայ որ դու էիր ճանապարհին ինձ դէմ կանգնել. և արդ եթէ աս վատ է երեսում քեզ, ետ դառնամ։
35 Եւ Եհովայի հրեշտակն ասաց Բաղաամին. Գնա այդ մարդոց հետ, բայց միայն այն խօսքը որ քեզ հետ կ'խօսեմ՝ այն կ'խօսես. և Բաղաամը գնաց Բաղակի իշխանների հետ։
36 Եւ Բաղակը լսեց, որ Բաղաամը գալիս է, դուրս եկաւ նորան դիմաւորելու դէպի Մովաբացոց մէկ քաղաքը Առնոնի սահմանի մօտ և որ սահմանի ծայրումն է։
37 Եւ Բաղակն ասաց Բաղաամին. Միթէ քեզ կանչելու համար մարդ չուղարկեցի, ինչո՞ւ չեկար ինձ մօտ. իրա՞ւ որ քեզ չէի կարող պատիւ անել։
38 Եւ Բաղաամն ասաց Բաղակին. Ահա եկել եմ քեզ մօտ, բայց ես բնաւ զօրութիւն ունի՞մ մի բան ասելու. Աստուած իմ բերանս ինչ խօսք որ դնէ այն պիտի խօսեմ։
39 Եւ Բաղաամ Բաղակի հետ գնաց, և եկան
40 Կարիսաթ-Հուսովթ։ Եւ Բաղակն արջառներ և ոչխարներ մորթեց և ուղարկեց Բաղաամի և նորա հետ եղող իշխանների համար։
41 Եւ երբոր առաւօտ եղաւ, Բաղակն առաւ Բաղաամին և Բահաղի բարձր տեղերը հանեց նորան, և այնտեղից տեսաւ ժողովրդի ծայրը։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Բաղաամն ասաց Բաղակին

այստեղ ինձ համար եօթը սեղան շինիր և այստեղ ինձ համար եօթը զուարակ և եօթը խոյ պատրաստիր։ 2 Եւ Բաղակը Բաղաամի առաջին պէս արաւ. և Բաղակ ու Բաղաամ ամեն մէկ սեղանի վերայ մէկ զուարակ ու մէկ խոյ 3 մատուցրին։ Եւ Բաղաամն ասաց Բաղակին. Դու քո ողջակէզի մօտ կանգնիր, և ես գնամ, գուցէ ԵՀովան իմ առջևը դուրս գայ, և ինչ բան որ ինձ ցոյց տայ՝ քեզ կասեմ. և գնաց բլրատափը։ 4 Եւ Աստուած Բաղաամին հանդիպեց, և նա ասաց նորան. եօթը սեղան պատրաստեցի, և ամեն մէկ սեղանի վերայ մէկ զուարակ և մէկ խոյ մատուցրի։ 5 Եւ ԵՀովան Բաղաամի բերանը խօսք դրաւ և ասաց. Դարձիր Բաղակի մօտ և այսպէս խօսիր։ 6 Եւ նա դարձաւ նորա մօտ. և ահա իր ողջակէզի մօտ կանգնել էր՝ ինքն և Մովաբի բոլոր իշխանները։ 7 Եւ իր առակը սկսեց և ասաց.

Արամից բերաւ ինձ Բաղակ Մովաբի թագաւորը
Արևելեան լեռներից.
Թէ եկ անիծիր Յակոբին ինձ համար,
Եւ եկ նզովիր Իսրայէլին։
8 Ի՞նչպէս անիծեմ, որ Աստուած չէ անիծում,
Եւ ի՞նչպէս նզովեմ որ ԵՀովան չէ նզովում.
9 Վասն զի ապառաժների գլխից տեսնում եմ նորան,
Եւ բլուրներից նայում եմ նորան։
Ահա այս ժողովուրդը առանձին պիտի բնակէ,
Եւ ազգերի հետ պիտի չհաշուի։
10 Ո՞վ կ'համարէ Յակոբի փոշին,
Եւ կ'հաշուէ՞ Իսրայէլի քառորդը.
Իմ անձը արդարների մահովը մեռնէ,
Եւ իմ վախճանը լինի նորանցին պէս։
11 Եւ Բաղակն ասաց Բաղաամին. Ի՞նչ ես անում ինձ, իմ թշնամիներին անիծելու համար բերի քեզ և ահա դու բոլորովին օրհնո՞ւմ ես։ 12 Եւ նա պատասխանեց և ասաց. Միթէ ի՞նչ որ ԵՀովան իմ բերանն է դնում չզգուշանամ այն խօսելու։

13 Եւ Բաղակն ասաց նորան. Ա-ղաչում եմ՝ ինձ հետ մի ուրիշ տեղ եկ որ այնտեղից տեսնես նորանց, նորանց մէկ ծայրը կ'տեսնես, և նորանց ամենը չես տեսնել. և այնտեղից անիծիր նորանց ինձ համար։ 14 Եւ տարաւ նորան Սոփիմի արտը Փասգայի գլուխը, և եօթը սեղան շինեց, և ամեն մէկ սեղանի վերայ մէկ զուարակ և մէկ խոյ մատուցրեց։ 15 Եւ ասաց Բաղակին. Դու այստեղ քո ողջակէզի մօտ կանգնիր, և ես այնտեղ ԵՀովային դիմաւորեմ։ 16 Եւ ԵՀովան Բաղաամի առջևը դուրս եկաւ, և նորա բերանը խօսք դրաւ և ասաց. Բաղակի մօտ դարձիր և այսպէս ասիր։ 17 Եւ երբոր եկաւ նորա մօտ, ահա նա իր ողջակէզի մօտ կանգնել էր, և Մովաբի իշխանները նորա հետ. և Բաղակն ասաց նորան. ԵՀովան ի՞նչ խօսեց։ 18 Եւ նա իր առակն սկսեց և ասաց.

Վեր կաց, ով Բաղակ, և լսիր.
Ինձ ականջ դիր, ով Սեպփորի որդի։
Աստուած մարդ չէ, որ սուտ խօսէ, 19
Ոչ էլ մարդու որդի, որ զղջայ.
Մի՞թէ կասէ, և չի՞ անիլ
Կամ կ'խօսէ, և չի՞ կանգնեցնել։
Ահա հրաման առի օրհնելու, և 20
Ինքը օրհնեց,
Եւ ես ետ չեմ դարձնել։
Յակոբի վերայ անօրէնութիւն չը 21
Նշնեց,
Ոչ էլ անզգամութիւն տեսաւ Իսրայէլի վերայ.
Նորա ԵՀովայ Աստուածն իր հետն է.
Եւ նորա մէջ թագաւորի ցնծութեան ձայն կայ։
Աստուած է Եգիպտոսից նորանց 22
Հանողը.
Միեղջերուի պէս արագութիւն ունի նա։
Քանզի Յակոբի դէմ կախարդութիւն չի լինիլ,
Եւ Իսրայէլի դէմ՝ դիւթութիւն.
Յակոբին և Իսրայէլին կասուի ժամանակին

թէ Աստուած ինչ՛ը արաւ։
24 Ահա այս ժողովուրդը մեծաւ ազգ մի պիտի լինի, եւ մեծ ազգ մի պիտի բարձրանայ։
Զի պատկիլ մինչեւ որ որսը ուտէ, եւ ապտուածներուն արիւնը խմէ։
25 Եւ Բաղաամ ասաց Բաղադամին. Ոչ անէծք տուր նորանից, ոչ էլ
26 օրհնութիւն։ Եւ Բաղադամը պատասխանեց Բաղակին եւ ասաց. Մի՞թէ ես քեզ հետ չխօսեցի ասելով. Ինչ որ Եհովան խօսէ այն կանեմ։
27 Եւ Բաղակն ասաց Բաղադամին. Եկ մի ուրիշ տեղ տանեմ քեզ. գուցէ Աստուած հաճէ որ այնտեղից անիծես նորանց ինձ համար։
28 Ուստի Բաղակը տարաւ Բաղադամին փոգորի գագաթը, որ
29 դէպի Եսիմն է մտիկ տալիս։ Եւ Բաղադամն ասաց Բաղակին. Այստեղ ինձ համար եօթը սեղան շինիր եւ այստեղ ինձ համար եօթը զուարակ եւ եօթը խոյ պատրաստիր։
30 Եւ Բաղակը Բաղադամի ասածին պէս արաւ, եւ ամեն մէկ սեղանի վերայ մէկ զուարակ եւ մէկ խոյ մատուցրեց։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Բաղադամը տեսաւ որ Եհովան հաճեց օրհնել Իսրայէլին, մեւս անգամների պէս հմայքներ որոնելու չգնաց, այլ իր երեսը
2 դէպի անապատը դարձրեց։ Եւ Բաղադամն իր աչքերը բարձրացրեց եւ տեսաւ Իսրայէլին իրանց ցեղերով բանակ տուած. եւ Աստուծոյ Հոգին նորա վերայ եկաւ.
3 Եւ իր առակն սկսեց եւ ասաց.

Բէովրի որդի Բաղադամի խօսքը,
Եւ աչքը բաց մարդու խօսքը,
4 Աստուծոյ խօսքերը լսողի,
Եւ Ամենակարողի տեսիլքը տեսնողի,
Գետինը ընկնողի,
Եւ աչքերը բաց եղողի խօսքը.
5 Ի՜նչ գեղեցիկ են քո վրաններըը, ով Յակոբ.
Եւ քո խորաններըը, ով Իսրայէլ։
6 Ձորերի պէս տարածուեցան,
Գետերի մօտ եղող պարտէզների պէս,
Եհովայի տնկած հալուէի ծառերի՝
Ջրի եզերքում եղող եղևնիների պէս են։
Նորա դոյլերից ջուր է վազում, 7
Եւ նորա սերմը առատ ջրերի մէջ է։
Նորա թագաւորը Ագագից աւելի կ՛բարձրանայ,
Եւ նորա թագաւորութիւնը կ՛աճէ։
Աստուած է Եգիպտոսից նորան 8
հանողը.
Միեղջերուի պէս արագութիւն ունի նա.
Իր թշնամի եղող ազգերին ուտում է
Եւ նորանց ոսկորները կոտրում է, և իր նետերովը զարկում է նորանից։
Առիւծի պէս նստեց պառկեց, և 9
մատակ առիւծի պէս.
Ո՞վ կ՛զարթնեցնէ նորան։
Քեզ օրհնողները օրհնեալ են,
Եւ քեզ անիծողները անիծեալ։
Այն ժամանակ Բաղակը շատ 10
բարկացաւ Բաղադամի վերայ, և ձեռքերն իրար խփեց. և Բաղակն ասաց Բաղադամին. Ես իմ թշնամիներին անիծելու կանչեցի քեզ. և ահա այս երեք անգամ է որ օրհնեցիր։ Եւ հիմայ փախիր 11
քո տեղը. ես ասացի քեզ շատ պատիւ անեմ՝ բայց ահա Եհովան քեզ պատուից զրկեց։ Եւ Բաղա- 12
ադամն ասաց Բաղակին. Մի՞թէ ես քո ուղարկած դեսպաններին հետ էլ չ՛խօսեցի՞ ասելով. Եթէ Բա- 13
ղակը ինձ իր տունը լիքն արծաթ և ոսկի տայ, ես Եհովայի խօսքից չեմ կարող անցնել, որ մի լաւ կամ վատ բան անեմ ինձանից. Եհովան ինչ որ ասէ՝ այն պիտի խօսեմ։ Եւ ահա ես հիմա իմ հայ- 14
բենիքն եմ գնում. եկ քեզ հասկացնեմ թէ այս ժողովուրդը ինչ է անելու քո ժողովրդին ետքի օրերում. Եւ իր առակն սկսեց և 15
ասաց.

Բէովրի որդի Բաղադամի խօսքը,
Եւ աչքը բաց մարդու խօսքը,

16 Աստուծոյ խօսքերը լսողի,
Եւ Բարձրելոյն գիտութիւնը գիտացողի,
Եւ Ամենակարողի տեսիլքը տեսնողի,
Գետինը ընկնողի
Եւ աչքը բաց եղողի խօսքը.
17 Տեսնում եմ նորան, բայց ոչ հիմայ,
Ջննում եմ նորան, բայց ոչ մօտ.
Յակոբից մէկ աստղ է ծագում,
Եւ Իսրայէլից մի գաւազան բարձրանում.
Եւ Մովաբի կողքերը զարկում,
Եւ Սէթի բոլոր որդիներին քնաջինջ անում։
18 Նաև Եդովմ նրա նուաճութիւնը կ'լինի
Իր թշնամիների էւէրը Սէիրը կը լինի նորա նուաճութիւնը,
Եւ Իսրայէլը քաջութիւն կանէ.
19 Եւ Յակոբից եղողը կ'իշխէ,
Եւ քաղաքի մէջ մնացորդին կը կորցնէ։
20 Եւ Ամաղեկին տեսաւ, և իր առակն սկսեց և ասաց.
Ամաղէկ ազգերի գլուխն է,
Բայց նորան վերջը կորստեան է պատրաստ։
21 Ու Կենեցուն տեսաւ և իր առակն սկսեց և ասաց.
Քո նստած տեղն ամուր է,
Եւ ապառաժի վերայ եա դրել քո բոյնը.
22 Բայց Կենեցին աւերակ պիտի դառնայ.
Մինչև ե՞րբ Ասուրը քեզ գերի պիտի տանէ։
23 Եւ իր առակը սկսեց և ասաց.
Ո՜վ, ո՞վ պիտի կենայ երբոր Աստուած անէ այս։
24 Ու նաւեր կ'գան Կիտացոց եզերքներից
Եւ կ'չարչարեն Ասուրին, և կ'չարչարեն Եբերին.
Բայց նա էլ է նուէրած կորստեան։
25 Յետոյ Բաղաամը վեր կացաւ գնաց, և դարձաւ իր տեղը. և Բաղաակն էլ գնաց իր ճանապարհը։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Իսրայէլը Սատիմումը քնա-

նակեց, և ժողովուրդն սկսեց Մովաբի աղջկերանց հետ պոռնկութիւն անել։ Եւ նորանք ժողովրդին հրաւիրեցին իրանց աստուածների զոհերին. և ժողովուրդը կերաւ և նորանց աստուածներին երկրպագութիւն արաւ։ Եւ Իսրայէլը Բեղփեգովրին յարեց. և Եհովայի բարկութիւնը Իսրայէլի վերայ բորբոքեց։ Եւ Եհովան Մովսէսին ասաց. Առ ժողովրդի բոլոր իշխաններին և կախիր նորանց Եհովայի առջև արևի դէմ, որ Եհովայի սաստիկ բարկութիւնը Իսրայէլից դառնայ։ Եւ Մովսէսն ասաց Իսրայէլի դատաւորներին. Մեռցրէք ամեն մէկդ ձեր մարդկանց, որ Բեղփեգովրին յարեցին։ Եւ ահա Իսրայէլի որդիներից մի մարդ եկաւ և իր եղբայրներին մի Մադիանացի կնիկ բերաւ՝ Մովսէսի աչքի առջև, և Իսրայէլի որդոց բոլոր ժողովքի աչքի առջև, երբոր նորանք ժողովքի խորանի դրանը լացում էին։ Եւ Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդին՝ Փենեհէսը տեսաւ, ժողովքի միջից վեր կացաւ և ձեռքը մի գեղարդ առաւ, Եւ Իսրայէլացի մարդու ետևից սենեակը մտաւ, և երկուսին էլ այսինքն Իսրայէլացի մարդուն և կնկան փորից խոցեց և Հարուածը Իսրայէլի որդիներից դադարեց։ Եւ Հարուածից մեռածները քսանուչորս հազար հոգի էին։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ ասելով. Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդին Փենեհէսն իմ բարկութիւնը Իսրայէլի որդիներից դարձրեց՝ ինձ համար նախանձ ունենալով նորանց մէջ. և ես իմ նախանձովս Իսրայէլի որդիներին բնաջինջ չ'արի։ Սորա համար ասիր որ Ահա ես նորան տալիս եմ իմ խաղաղութեան ուխտը. Եւ նորա և նորանից յետոյ նորա սերունդի համար յաւիտենական քահանայութեան ուխտ կ'լինի. որովհետև իր Աստուծոյ նախանձը ունեցաւ և Իսրայէլի որդոց համար քաւութիւն արաւ։ Եւ Մադիանացի կնկան

հետ զարկուողՙ Իսրայէլացի մարդոյ անունը Զամբրի էր, Սաղուի որդին, որ Շմաւոնեանց մէկ տոհմի իշխանը։ Եւ զարկուողՙ Մադիանացի կնկան անունը Քազբի էր՝ Սուրի աղջիկը, որ Մադիամու մէջ ազգատոհմի իշխան էր։

16 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
17 հետ ասելով. Մադիանացոց թշնամութիւն արէք և նորանց զար-
18 կէք. Վասն զի նորանք ձեր արած նենգութիւններովը ձեզ թշնամութիւն արին փոգովրի գործոյն՝ իրանց քոյր Մադիանացի իշխանի աղջիկ Քազբիի դործոյնը, որ հարուածի օրուն զարկուեցաւ փոգովրի համար։

ԳԼ. ԻԶ

1 Եւ հարուածէն յետոյ Եհովան Մովսէսի և Ահարոնի որդի Եղիազար քահանայի հետ խօսեց ա-
2 սելով. Իսրայէլի որդոց բոլոր ժողովքի գումարն առէք քանի տարեկանէն վեր եղողներին նորանց հարանց տներուն համեմատ, այսինքն Իսրայէլի մէջ բոլոր պա-
3 տերազմի ելնողներին։ Եւ Մովսէս ու Եղիազար քահանան խօսեցին նորանց հետ Մովաբի դաշտերուն մէջ Երիքովի դէմ Յորդանանու մօտ ասելով.
4 Հասն տարեկանէն վեր եղողներին համաձայն, ինչպէս որ Եհովան Մովսէսին և Եգիպտոսի երկրէն ելած Իսրայէլի որդիներին հրամայեց։
5 Ռուբէն Իսրայէլի անդրանիկը, և Ռուբենի որդիքը. Ենովքէն Ենովքեանց տոհմը, Փաղղուսէն
6 Փաղղուսեանց տոհմը, Եսրոնէն Եսրոնեանց տոհմը, Քարմիէն Քարմիանց տոհմը.
7 Ռուբենեանց տոհմերը որանք են. և նորանց համարուածներըը քառասուն երեք հազար եօթը հարիւր երեսուն
8 հոգի։ Եւ Փաղղուսի որդին Եղիաբն էր։
9 Եւ Եղիաբի որդիքը՝ Նամուէլ, Դաթան և Աբիրոն էին. այս Դաթանը և Աբիրոնը ժողովքի մէջ երեւելիներ էին, որ Մովսէսին և Ահարոնին հակառակեցին Եհովայի դէմ կեղծող խումբի

ժողովքումը։ Եւ երկիրը բացաւ 10
իր բերանը և կլանեց նորանց և Կորխին էլ, այն ժողովքը մեռնելու երբոր կրակը այն երկու հարիւր հատ մարդկանցը կերաւ, և նորանք օրինակ եղան։ Բայց 11
Կորխի որդիքը չմեռան։

Շմաւոնի որդիքն իրանց տոհմե- 12
րովը. Նամուէլից Նամուէլեանց տոհմը, Յամինից Յամինեանց տոհմը, Յաքինից Յաքինեանց տոհմը, Զարայից Զարայեանց տոհմը, Սա- 13
ուղից Սաուղեանց տոհմը։ Շըմաւոնեանց տոհմերը սորանք են, 14
քսան երկու հազար երկու հարիւր հոգի։

Գադի որդիքն իրանց տոհմերո- 15
վը. Սափոնից Սափոնեանց տոհմը, Անգիից Անգեանց տոհմը, Սունիից Սունեանց տոհմը, Ազե- 16
նիից Ազենեանց տոհմը, Երիից Երեանց տոհմը, Արոդիից Արոդ- 17
եանց տոհմը, Արելիից Արելեանց տոհմը։ Գադի որդոց տոհմերը 18
սորանք են, և նորանց համարուածներըը քառասուն հազար հինգ հարիւր հոգի։

Յուդայի որդիքը՝ Էր և Օնան 19
էին, բայց Էր և Օնան Քանանու երկրումը մեռան։ Եւ Յուդայի 20
որդիքն իրանց տոհմերովը սորանք էին. Սելոմից Սելոմեանց տոհմը, Փարեսից Փարեսեանց տոհմը, Զարայից Զարայեանց տոհմը։ Եւ 21
Փարեսի որդիքը սորանք էին. Եսրոնից Եսրոնեանց տոհմը, Յամուելից Յամուելեանց տոհմը։ Յուդայի 22
տոհմերը սորանք են. նորանց համարուածներըը եօթանասուներկու հազար հինգ հարիւր հոգի։

Իսաքարի որդիքն իրանց տոհմե- 23
րովը. Թովղայից Թովղայեանց տոհմը, Փուայից Փուայեանց տոհմը, Յասուբից Յասուբեանց տոհ- 24
մը, Սամրոնից Սամրոնեանց տոհմը։ Իսաքարի տոհմերը սորանք 25
են. նորանց համարուածներըը վաթսուն ու չորս հազար երեք հարիւր հոգի։

Զաբուղոնի որդիքն իրանց տոհ- 26
մերովը. Սարեդից Սարեդեանց տոհմը, Ելոնից Ելոնեանց տոհմը, Յաղելից Յաղելեանց տոհմը։ Զա- 27

բոցոյն տոհմերը սորանք են. Նո-
բանց համարուածները վաթսուն
սուն հազար հինգ հարիւր հոգի։
28 Յովսէփի որդիքն իրանց տոհմե-
րովը Մանասէ և Եփրեմ էին։
29 Մանասէի որդիքը. Մաքիրից Մա-
քիրեանց տոհմը. և Մաքիր ծնաւ
Գաղաադին, Գաղաադից Գա-
30 ղաադեանց տոհմը։ Գաղաադի
որդիքը սորանք են. Իեզերից Իե-
31 զերեանց տոհմը, Փելեգից Փե-
լեգեանց տոհմը, և Ասրիելից
Ասրիելեանց տոհմը, եւ Սիքեմից
32 Սիքեմեանց տոհմը, եւ Սեմի-
դայից Սեմիդաեանց տոհմը, և Ո-
33 փերից Ոփերեանց տոհմը, եւ Ո-
փերի որդին Սալպաադը տղերք
չունէր այլ աղջիկներ. և Սալ-
պաադի աղջիկներուն անունները
Մաալա, Նոա, Եգղա, Մեղքա
34 և Թերսա էին։ Մանասէի տոհ-
մերը սորանք են, և նորանց հա-
մարուածները յիսուն երկու հա-
զար եօթը հարիւր հոգի։
35 Եփրեմի որդիքն իրանց տոհմե-
րովը սորանք են. Սուտաղայից
Սուտաղայեանց տոհմը, Բեքերից
Բեքերեանց տոհմը, Թաանից Թա-
36 անեանց տոհմը։ Եւ Սուտաղայի
որդիքը սորանք են՝ Էրանից Է-
37 րանեանց տոհմը։ Եփրեմի որդոց
տոհմերը սորանք են. նորանց հա-
մարուածները երեսուն երկու հա-
զար հինգ հարիւր հոգի։ Յովսէփի
որդիքն իրանց տոհմերովը սո-
րանք են։
38 Բենիամինի որդիքն իրանց տոհ-
մերովը. Բաղայից Բաղայեանց
տոհմը, Ասբելից Ասբելեանց տոհ-
մը, Աքիրամից Աքիրամեանց
39 տոհմը, Սուփամից Սուփամեանց
տոհմը, Ոփիմից Ոփիմեանց տոհ-
40 մը։ Եւ Բաղայի որդիքը Արեդ և
Նեեման էին. Արեդեանց
տոհմը, Նեեմանից Նեեմանեանց
41 տոհմը։ Բենիամինի որդիքն իրանց
տոհմերովը սորանք են, և նորանց
համարուածները քառասուն ու
հինգ հազար վեց հարիւր հոգի։
42 Դանի որդիքն իրանց տոհմե-
րովը սորանք են. Սուհամից Սու-
համեանց տոհմը, Դանի տոհմերն
իրանց տոհմերովը սորանք են։

Սուհամեանց բոլոր տոհմերի հա- 43
մարուածները վաթսուն ու չորս
հազար չորս հարիւր հոգի։
Աշերի որդիքն իրանց տոհմե- 44
րովը, Յեմնայից Յեմնայեանց տոհ-
մը, Յեսուից Յեսուեանց տոհմը,
Բարիայից Բարիայեանց տոհմը։
Բարիայի որդիներից՝ Փաբերից 45
Փաբերեանց տոհմը, Մեղքիէլից
Մեղքիէլեանց տոհմը։ Եւ Աշերի 46
աղջկան անունը Սարա էր։ Աշե- 47
րի որդոց տոհմերը սորանք են.
նորանց համարուածները յիսուն
երեք հազար չորս հարիւր հոգի։
Նեփթաղիմի որդիքն իրանց 48
տոհմերովը. Յասիելից Յասիել-
եանց տոհմը, Գունիից Գունեանց
տոհմը, Յասերից Յասերեանց 49
տոհմը, Սիլլեմից Սիլլեմեանց տոհ-
մը։ Նեփթաղիմի տոհմերն իրանց 50
տոհմերովը սորանք են. և նորանց
համարուածները քառասուն ու
հինգ հազար չորս հարիւր հոգի։
Այս է Իսրայէլի որդոց գումա- 51
րը, վեց հարիւր և մէկ հազար
եօթը հարիւր երեսուն հոգի։
Եւ Եհովան խօսեց Մովսէսի 52
հետ ասելով. Սորանց բաժանուի 53
այն երկիրը ժառանգութեան հա-
մար էրանց անունների թուոյն հա-
մեմատ։ Շատին ժառանգութիւ- 54
նը շատ տաս, և քիչին ժառան-
գութիւնը քիչ տաս. ամեն մէկին իր
համարի համեմատ ժառանգու-
թիւն տուր։ Բայց երկիրը վիճա- 55
կով բաժանուի, և իրանց նա-
հապետաց ցեղերի անունների հա-
մեմատ ժառանգեն։ Ժառանգու- 56
թիւնը շատի և քիչի մէջ վիճա-
կով բաժանուի։
Եւ Ղեւտացոց համարուածներն 57
իրանց տոհմերովը սորանք են.
Գերսոնից Գերսոնեանց տոհմը,
Կահաթից Կահաթեանց տոհմը,
Մերարիից Մերարեանց տոհմը։
Ղեւտացոց տոհմերը սորանք են՝ 58
Ղոբենեանց տոհմը, Փերսոնեանց
տոհմը, Մոողեանց տոհմը, Մու-
շեանց տոհմը, Կորխեանց տոհմը։
Եւ Կահաթ ծնաւ Ամրամին, եւ 59
Ամրամի կնոջ անունը Յոքաբեթ
էր Ղեւի աղջիկը, որին Եգիպ-
տոսի մէջ ծնաւ Ղեւի համար,

և նա Ամրամի համար ծնաւ Ա-
հարոնին և Մովսէսին և նորանց
60 քոյր Մարիամին։ Եւ Ահարոնի
համար ծնան Նադաբը և Աբիու-
61 դը, Եղիազարը և Իթամարը։ Բայց
Նադաբն և Աբիուդը Եհովայի
առջև օտար կրակ մատուցանե-
62 լիս մեռան։ Եւ սորանց համար-
ուածները քսան երեք հազար հո-
գի էին ամէկ ամսականից վեր ե-
րոք բոլոր արուները. վասն զի
նորանք Իսրայէլի որդոց հետ չը
համարուեցան, որովհետև Իսրա-
յէլի որդոց մէջ նորանց ժառան-
գութիւն չտրուեցաւ։

63 Սորանք են Մովսէսի և Եղիա-
զար քահանայի համարները, որ
համարեցին Իսրայէլի որդիներին
Մովաբի դաշտերումը Երիքովի
64 դէմ Յորդանանու մօտ։ Եւ սո-
րանց մէջ բնաւ մէկ մարդ չկար
Իսրայէլի որդոց այն համարուած-
ներիցը, որոնց Մովսէսն և Ահա-
րոն քահանան Սինայի անապա-
65 տումը համարեցին։ Վասն զի Ե-
հովան ասել էր նորանց. Անպատ-
ճառ կ'մեռնեն անապատումը, և
նորանցից մի մարդ չմնաց, բացի
Յեփոնեան Քաղեբից և Նաւեան
Յեսուից։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Յովսէփի որդի Մանասէի
տոհմերից Մանասէի որդի Մա-
քիրի որդի Գաղաատի որդի Ո-
փերի որդի Սալպաադի աղջիկնե-
րը մօտեցան. և նորա աղջկերանց
անուննները սորանք են. Մաալա,
Նոա, Եգղա, Մեղքա և Թերց-
2 ա. Սորանք Մովսէսի և Եղիա-
զար քահանայի և իշխաններին և
բոլոր ժողովքի առջև կանգնեցին
ժողովքի խորանի դրանը և ասա-
3 ցին. Մեր հայրը անապատումը
մեռաւ, և նա Եհովայի դէմ ժո-
ղովուածների ժողովք՝ Կորխի ժո-
ղովումը չէր, այլ նա իր մեղքո-
4 վը մեռաւ և տղայք չունէր։ Ի՛նչ-
ու համար մեր հօրը անունը իր
տոհմի միջիցը վերանայ, որ տղայ
չունի. մեզ կալուածք տուէք
5 մեր հօր եղբարց մէջ։ Եւ Մով-

աէսը նորանց դատը Եհովայի առ-
ջևը տարաւ, Եւ Եհովան խօսեց 6
Մովսէսի հետ ասելով. Ուղիղ են 7
խօսում Սալպաադի աղջկերքը.
անպատճառ նորանց ժառանգու-
թեան կալուածք տաս իրանց հօր
եղբարց մէջ և նորանց հօր ժա-
ռանգութիւնը դարձնես իրանց
վերայ. Եւ Իսրայէլի որդոց հետ 8
խօսես և ասես. Եթէ մի մարդ
մեռնէ և տղայ չունենայ, նորա
ժառանգութիւնը նորա աղջկան
վերայ դարձնէք։ Եւ եթէ նա աղ- 9
ջիկ էլ չունենայ, այն ժամանակ
նորա ժառանգութիւնը նորա եղ-
բայրներին տաք։ Եւ եթէ եղբայր- 10
ներ էլ չունենայ, այն ժամանակ
նորա ժառանգութիւնը նորա հօր-
եղբայրներին տաք։ Եւ եթէ հօր- 11
եղբայրներ էլ չունենայ, նորա
ժառանգութիւնը նորա տոհմի
մէջ նորան ամենից մօտ ազգա-
կանին տաք, և նա լինի նորա ժա-
ռանգը. և սա Իսրայէլի որդոց
համար դատաստանի կանոն լինի,
ինչպէս որ Եհովան Մովսէսին
պատուիրեց։

Եւ Եհովան Մովսէսին ասաց. 12
Վեր ելիր այս Աբարիմի լեռը,
և տես այն երկիրը որ Իսրայէլի
որդոցը պիտի տամ. Եւ նորան կը 13
տեսնես, և յետոյ դու էլ քո
ժողովրդի հետ կ'ժողովուես ինչ-
պէս որ քո եղբայր Ահարոնը ա-
ւելացաւ. Որովհետև դուք իմ 14
հրամանի դէմ ապստամբութիւն
արիք Սին անապատումը ժողովքի
հակառակութիւն արած ժամա-
նակը և նորանց առջև ինձ չսբր-
բեցիք այն ջրի մօտ։ (Այս է կա-
դեսի Մերիբայի ջուրը Սին ան-
պատումը։)

Եւ Մովսէսը խօսեց Եհովայի 15
հետ և ասաց. Եհովայ բոլոր 16
մարմնի հոգիների Աստուածը այս
ժողովրդի վերայ մի մարդ նշանա-
կէ, Որ նորանց առջևը դուրս գայ 17
և նորանց առջևը մտնէ, և նո-
րանց հանէ և նորանց մուցնէ, և
Եհովայի ժողովքը չլինի ոչխար-
ների պէս որ հովիւ չունին։

Եւ Եհովան ասաց Մովսէսին. 18
Առ քեզ մօտ Նաւէի որդի Յե-

սուին, որի վերայ Հոգի կայ, և
19 ձեռքդ դիր նորա վերայ. Եւ նո-
րան Եղիազար քահանայի և բո-
լոր ժողովքի առջև կանգնեցրու
և նորանց աչքի առջև նորան
20 պատուէր տուր. Եւ քո փառ-
քիցը դիր նորա վերայ, որպէս զի
Իսրայէլի որդոց բոլոր ժողովքը
նորա հնազանդութիւն անեն:
21 Եւ Եղիազար քահանայի առջև
կանգնէ որ Ուրիմի կանանովը նո-
րան հարցնէ Եհովայի առջև.
նորա խօսքովը դուրս գան և նո-
րա խօսքովը մտնեն, ինքը և իր
հետ բոլոր Իսրայէլի որդիքը և
22 բոլոր ժողովքը: Եւ Մովսէսն այն-
պէս արաւ, ինչպէս որ Եհովան
նորան պատուիրել էր. առաւ
Յեսուին և նորան Եղիազար քա-
հանայի և բոլոր ժողովքի առջև
23 կանգնեցրեց: Եւ իր ձեռքը նորա
վերայ դրաւ և նորան պատուէր
տուաւ, ինչպէս որ Եհովան Մով-
սէսի ձեռքովը խօսել էր:

ԳԼ. ԻԸ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Պատուիրիր Իսրայէլի
որդոցը և նորանց ասիր. Իմ պա-
տարագները, իմ հացը, իմ նը-
ւէրների համար իրրև իմ անու-
շահոտ պատարագները գգուշա-
ցէք ինձ մատուցանելու՝ իր ժա-
3 մանակին: Եւ նորանց ասես. Ա-
յս է այն պատարագը որ Եհովային
պիտի մատուցանէք. Օրը երկու
հատ մէկ տարեկան անարատ
գառներ մշանջենաւոր ողջակէզի
4 համար. Մէկ գառը առաւօտանց
մատուցանես և միւս գառը ի-
5 րիկուան մատուցանես: Եւ մէկ
ասղու տասներորդ մասը բարակ
ալիւրով հացի նուէր զանգուած
հինի մի քառորդ ձեծուած իւ-
6 ղով: Սա Սինայ լեռան վերայ ա-
նելիք մշանջենաւոր ողջակէզն է,
Եհովայի համար իրրև անուշա-
7 հոտ պատարագ: Եւ նորա թա-
փելու նուէրը մէկ գառի համար՝
հինի չորրորդ մասը լինի. ցքին
սուրբ տեղումը թափելու նուէր
8 անես Եհովայի համար: Եւ միւս

գառը իրիկուան դէմ մատուցա-
նես. իրրև առաւօտեան հացի
ընծայ և իրրև նորա թափելու
նուէրը մատուցանես Եհովայի
համար իրրև անուշահոտ պատա-
րագ:

9 Բայց շաբաթ օրը՝ մէկ տարե-
կան երկու անարատ գառներ և
իւղով զանգուած երկու տասա-
նորդ բարակ ալիւր իրրև հացի
նուէր և նորա թափելու նուէրը:
10 Սա բացի մշանջենաւոր ողջակէզից
և նորա թափելու նուէրից ամեն
շաբաթ օր՝՝՝ ողջակէզը լինի:
11 Եւ ձեր ամսագլուխներում Ե-
հովայի համար ողջակէզ մատու-
ցանէք, երկու զուարակ, մէկ
խոյ, եօթը հատ մէկ տարեկան
12 անարատ գառներ. Եւ ամեն մէկ
զուարակի համար իւղով զանգ-
ուած երեք տասանորդ բարակ ա-
լիւր հացի նուէր, և մէկ խոյի
համար իւղով զանգուած երկու
տասանորդ բարակ ալիւր հացի
13 նուէր. Եւ ամեն մէկ գառի հա-
մար իւղով զանգուած մէկ մէկ
տասանորդ բարակ ալիւր հացի
նուէր, Եհովայի համար ողջակէզ
14 իրրև անուշահոտ պատարագ: Եւ
նորանց թափելու նուէրները՝ ա-
մեն մէկ զուարակի համար կէս
հինէն և մէկ խոյի համար հինի
երրորդ մասը և ամեն մէկ գառի
համար հինի չորրորդ մասը գի-
նի լինի. սա տարուայ ամիսների
համար ամեն մէկ ամսի ողջակէզն
15 է. Եւ բացի մշանջենաւոր ողջա-
կէզից իրրև մեղքի պատարագ
այծերից մի նոխազ մատուցան-
ուի Եհովային և իր թափելու
նուէրը մատուցանուի Եհովային:
16 Եւ առաջի ամսուայ չորեքտաս-
աներորդ օրը զատիկ է Եհովայի
17 համար. Եւ այն ամսուայ հնգե-
տասաներորդ օրը տօն է. եօթն
18 օր բաղարջ ուտուի: Առաջի օրը
սուրբ ժողով լինի. ոչ մի ծա-
19 ռայական գործ չանէք. Եւ Եհո-
վայի համար ողջակէզ պատարագ
մատուցանէք, երկու զուարակ
մէկ խոյ ու եօթը հատ մէկ տա-
րեկան գառներ, նորանք անարատ
20 լինին ձեզ համար. Եւ նորանց

Հացի նուէրը իւղով զանգուած
բարակ ալիւր լինի. ամեն մէկ
զուարակի համար երեք տասա-
նորդ, և մէկ խոյի համար երկու
21 տասանորդ մատուցանէք. եօթը
գառներից ամեն մէկ գառի հա-
մար մէկ տասանորդ մատուցա-
22 նէք. Եւ ձեզ համար քաւու-
թիւն անելու համար մէկ նո-
23 խազ մեղքի պատարագ, Սորանք
մատուցրէք բացի միջանկեալ
ողջակէզ եղող առաւօտեան ող-
24 ջակէզից: Այսպէս մատուցրէք
այն եօթը օրերի ամեն մէկ օրը
Եհովայի համար անուշահոտ պա-
տարագ՝ հաց. բացի միջանկեա-
լոր ողջակէզից մատուցանուի
այս, սորա թափելու նուէրը:
25 Եւ եօթներորդ օրը սուրբ ժողով
լինի ձեզ համար, ոչ մի ծառա-
յական գործ չանէք:
26 Եւ երախայրիների օրը՝ երբոր
ձեր շաբաթների համեմատ Եհո-
վային նոր հացի նուէր մատու-
ցանէք, սուրբ ժողով լինի ձեզ
համար. ոչ մի ծառայական
27 գործ չանէք. Եւ Եհովայի հա-
մար իբրև անուշահոտ ողջակէզ
երկու զուարակ, մէկ խոյ, մէկ
տարեկան եօթը հատ գառներ
28 մատուցանէք. Եւ նորանց հացի
նուէրը ամեն մէկ զուարակի հա-
մար երեք տասանորդ, մէկ խոյի
29 համար երկու տասանորդ, եօթը
գառներից ամեն մէկ գառի հա-
մար մէկ տասանորդ իւղով զան-
30 գուած բարակ ալիւր. Ե- ձեզ
համար քաւութիւն անելու հա-
31 մար այծերից մէկ նոխազ, բացի
միջանկեալ ողջակէզից և նորա
հացի նուէրից մատուցանէք, ա-
նարատ լինին ձեզ համար. և ի-
րանց թափելու նուէրները:

ԳԼ. ԻԹ

1 Եւ եօթներորդ ամսուայ ամսի
մէկին սուրբ ժողով լինի ձեզ
համար. ոչ մի ծառայական գործ
չանէք. փող հնչեցնելու օր լինի
2 ձեզ համար: Եւ մատուցրէք Ե-
հովայի համար իբրև անուշահոտ
ողջակէզ մէկ զուարակ, մէկ
խոյ, եօթը հատ մէկ տարեկան
անարատ գառներ. Եւ նորանց 3
հացի նուէրը իւղով զանգուած
բարակ ալիւր մէկ զուարակի հա-
մար երկու տասանորդ, Եւ եօթը 4
գառներից ամեն մէկ գառի հա-
մար մէկ տասանորդ. Եւ ձեզ 5
համար քաւութիւն անելու հա-
մար այծերից մէկ նոխազ մեղքի
պատարագ. Բացի ամսամուտի 6
ողջակէզից և նորա հացի նուէ-
րից, և միջանկեալ ողջակէզից
և նորա հացի նուէրից և իրանց
թափելու նուէրներից իրանց կա-
նոնով, մատուցանէք անուշա-
հոտ պատարագ Եհովայի համար:
Եւ այս եօթներորդ ամսի տա- 7
սին սուրբ ժողով լինի ձեզ հա-
մար, և ձեր անձերը խոնարհեց-
նէք, ոչ մի գործ չանէք: Եւ 8
մատուցրէք Եհովայի համար իբ-
րև անուշահոտ ողջակէզ մէկ զ-
ուարակ, մէկ խոյ, եօթը հատ մէկ
տարեկան գառներ. Նորանք ձեզ
համար անարատ լինին. Եւ նո- 9
րանց հացի նուէրը իւղով զան-
գուած բարակ ալիւր մէկ զուա-
րակի համար երեք տասանորդ,
մէկ խոյի համար երկու տասա-
նորդ, եօթը գառներից ամեն 10
մէկ գառնի համար մէկ տասա-
նորդ. Եւ այծերից մէկ նոխազ 11
մեղքի պատարագ բացի քաւու-
թեան մեղքի պատարագից և մշ-
տընջենաւոր ողջակէզից և նորա
հացի նուէրից և նորանց թափե-
լու նուէրներից:
Եւ եօթներորդ ամսի հնգեւա- 12
սաներորդ օրը սուրբ ժողով լինի
ձեզ համար. ոչ մի ծառայական
գործ չանէք. և եօթը օր Եհո-
վայի համար տօն կատարէք: Եւ 13
Եհովայի համար ողջակէզ անու-
շահոտ պատարագ մատուցանէք
տասներեք զուարակ, երկու խոյ,
մէկ տարեկան տասնուչորս գա-
ռներ. անարատ լինին. Եւ նորանց 14
հացի նուէրը իւղով զանգուած
բարակ ալիւր տասներեք զուա-
րակներից ամեն մէկ զուարակի
համար երեք տասանորդ, և եր-
կու խոյերից ամեն մէկ խոյի հա-
մար երկու տասանորդ. Եւ տասն 15

ու չորս գառներից ամեն մէկ գա-
16 ռի համար մէկ տասանորդ ։ Եւ այծերից մէկ նոխազ մեղքի պատարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և թափելու նուէրից ։
17 Եւ երկրորդ օրը տասներկու զուարակ, երկու խոյ, մէկ տարեկան տասնուչորս անարատ
18 գառներ. Եւ նորանց հացի նուէրը և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թուոյն համեմատ
19 ըստ օրինի լինին. Եւ այծերից մէկ նոխազ մեղքի պատարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և թափելու նուէրներից ։
20 Եւ երրորդ օրը տասնումէկ զուարակ, երկու խոյ, մէկ տարեկան տասնուչորս անարատ գառ-
21 ներ. Եւ նորանց հացի ընծան և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թուոյն համեմատ ըստ օ-
22 րինի լինին. Եւ մէկ նոխազ մեղքի պատարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և թափելու նուէրից ։
23 Եւ չորրորդ օրը տասը զուարակ, երկու խոյ, մէկ տարեկան տասնուչորս անարատ գառներ.
24 Նորանց հացի նուէրը և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թուոյն համեմատ՝ ըստ օրինի լի-
25 նին. Եւ այծերից մէկ նոխազ մեղքի պատարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
26 Եւ հինգերորդ օրը ինը զուարակ երկու խոյ, մէկ տարեկան տասնուչորս անարատ գառներ.
27 Եւ նորանց հացի նուէրը և թափելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թուոյն համեմատ ըստ օրի-
28 նի լինին. Եւ մէկ նոխազ մեղքի պատարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
29 Եւ վեցերորդ օրը ութը զուարակ, երկու խոյ, մէկ տարեկան
տասնուչորս անարատ գառներ.
Եւ նորանց հացի նուէրը և թա- 30
փելու նուէրները՝ զուարակների, խոյերի և գառների համար, իրանց թուոյն համեմատ ըստ օրինի լինին. Եւ մէկ նոխազ մեղքի 31
պատարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրներից ։
Եւ ութերորդ օրը ձեզ համար ժո- 32
ղովարան լինի, ոչ մի ծառայական գործ չանէք ։ Եւ ետ- 36
վայի համար մատուցանէք ողջակէզ իբրև անուշահոտ պատարագ մէկ զուարակ, մէկ խոյ, մէկ տարեկան ութը անարատ գառներ. Եւ 37
նորանց հացի նուէրը և նորանց թափելու նուէրները՝ զուարակի խոյի և գառների համար, իրանց թուոյն համեմատ՝ ըստ օրինի լինին ։ Եւ մէկ նոխազ մեղքի պա- 38
տարագ բացի մշտնջենաւոր ողջակէզից և նորա հացի նուէրից և նորա թափելու նուէրից ։
Ահա մատուցանէք ետվային 39
ձեր տօներում բացի ձեր ուխտերի և ձեր կամաւոր ընծաների ողջակէզներից, հացի նուէրներից և թափելու նուէրներից և խաղաղութեան զոհերից ։
Եւ Մովսէս ասաց իսրայէլի 40
որդոց այն ամենը ինչ որ ետվան Մովսէսին պատուիրել էր ։

ԳԼ. Լ

Եւ Մովսէս իսրայէլի որդոց ցե- 1
ղերի իշխաններին հետ խօսեց ասելով. Ահա է ետվայի պատուի- 2
րած բանը. Եթէ մէկ մարդ ետվային ուխտ անէ, կամ երդում անէ իր անձը կապելու համար

իր խօսքը դարտակ չանէ. բոլոր իր բերանէց դուրս եկածին պէս անէ։

3 Եւ եթէ մէկ կին Եհովային ուխտ անէ, և իր մանկութեան ժամանակին իր հօր տանը ուխ-
4 տով իրան կապէ, Եւ նորա հայրը լսէ նորա ուխտը և իր անձի վերայ կապած կապը, և նորա հայրը լռէ նորա մասին, այն ժամանակ նորա բոլոր ուխտերը հաստատուին և նորա անձի վերայ կապած բոլոր կապերն հաստատ-
5 ուին. Բայց եթէ նորա հայրը նորան արգելէ իր լսած օրը, այն ժամանակ նորա բոլոր ուխտերը և նորա անձի վերայ կապած կապերը անվաւեր լինին. և Եհովան նորան թողութիւն կ'տայ. վասն զի նորա հայրը նորան արգելեց։

6 Եւ եթէ նա ամուսնացաւ, և իր ուխտն կամ այն իր շրթունքներէց դուրս եկած իր անձը կապող անխորհուրդ խօսքը իր վե-
7 րայ է. Եւ նորա այրը լսէ, և լսած օրը լռէ նորա մասին, այն ժամանակ նորա ուխտերը հաստատուին, և իր անձի վերայ կապած կապերն հաստատ են։

8 Բայց եթէ նորա այրը իր լսած օրը նորան արգելէ, այն ժամանակ նորա վերայ եղած ուխտը և նորա շրթունքներէց դուրս եկած անխորհուրդ խօսքը որով իր անձը կապել էր՝ անվաւեր է անոնց. և Եհովան նորան թողութիւն կ'տայ։

9 Բայց որևէայրու կամ արձակուած կնոջ ուխտը իր անձի վերայ կապած ամեն ինչ և իցէ կապը
10 իր վերայ հաստատ ձգայ։ Եւ եթէ իր մարդու տանն է ուխտ արել կամ երդումով իր անձի
11 վերայ կապ կապել, Եւ նորա մարդը լսել է և լռել է նորա մասին և նորան չէ արգելել, այն ժամանակ նորա բոլոր ուխտերը հաստատուին և իր անձի վերայ կապած կապերը հաստատ լինին։
12 Բայց եթէ նորա այրը իր լսած օրը նորանց խափանեց, այն ժամանակ ուխտ անելու և իր անձը կապելու համար նորա բերանէց դուրս եկած բոլոր խօսքերը անվաւեր լինին. նորա այրը խափանեց նորանց և Եհովան նորան թողութիւն կ'տայ։ 13 Կնոջ ամեն ուխտը և անձը խոնարհեցնելու համար արած կապող երդումը նորա այրը կարող է հաստատել, և նորա այրը կարող է խափանել։ 14 Եւ եթէ նորա այրը օրէց օր լռել է նորա մասին, այն ժամանակ նորա ամեն ուխտերը և իր վերայ եղած ամեն կապերը հաստատուած է. նա հաստատած է նորանց, քանի որում լռել է նորան մասին իր լսած օրը, 15 Բայց եթէ լսելուց յետոյ խափանէ նորանց, այն ժամանակ ինքը կրէ նորա անօրէնութիւնը։

16 Սորանք են այն կանոնները որ Եհովան պատուիրեց Մովսէսին մարդու և կնոջ մէջ, հօր և նորա մանկութեան ժամանակ իր հօր տանը բնակող աղջկան մէջ։

ԳԼ. ԼԱ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Իսրայէլի որդոց վրէժը առնես Մադիանացիներէց և յետոյ ժողովուիս քո ժողովրդի
3 հետ։ Եւ Մովսէսը խօսեց այն ժողովրդի հետ և ասաց. Զեզանից մարդիկ պատրաստեցէք պատերազմի համար, և գնան մադիամեա վերայ, որ Մադիամիցը առնեն Եհովայի վրէժը։ 4 Իսրայէլի բոլոր ցեղերի ամեն մէկից մէկ հազար մարդ պատերազմի ուղարկեցէք։ 5 Եւ Իսրայէլի հազարաւորներից ամեն մէկ ցեղից մէկ հազար մարդ ընտրուեցաւ. այսինքն տասներկու հազար հոգի պատերազմի համար պատրաստուած։ 6 Եւ Մովսէսը պատերազմի ուղարկեց նորանց, ամեն մէկ ցեղից մէկ հազար մարդ՝ նորանց հետ և նոցա եղիազար քահանային որդի փենհէսին պատերազմի սրբոցը, և սուրբ անօթները ու ազդարարութեան փողերը նորա ձեռքին։ 7 Եւ Մադիանացոց դէմ պատերազմեցան, ինչպէս

որ ԵՀովան Մովսէսին պատուիրել էր, և բոլոր արուներին
8 մեռցրին. Եւ նորանց ապանուածների հետ Մադիամու թագաւորներին էլ՝ Եւիին, Րոկոմին, Սուրին, Ուրին և Ռոբէին Մադիամու հինգ թագաւորներին սպանեցին, և Բէաւրի որդի Բաղաամին սրով մեռցրին։ Եւ Իսրայէլի որդիքը Մադիանացոց կանայքը ու տղայքը գերի առին, և նորանց բոլոր անասուները և հօտերը և ստացուածքը աւար առին։ Եւ նորանց բոլոր քաղաքները իրանց բնակարաններովը և բոլոր գիւղերը կրակով այրեցին։ Եւ բոլոր աւարը և բոլոր կողոպուտը առին՝ թէ մարդ և թէ անասուն։ Եւ բերին Մովսէսի, Եղիազար քահանայի և Իսրայէլի որդոց ժողովքին բանակը, գերիներին և կողոպուտը և աւարը, որ Երիքովի դէմ Յորդանանու մօտ՝ Մովաբի դաշտերումն է։

13 Եւ Մովսէսը և Եղիազար քահանան և ժողովքի բոլոր իշխանները դուրս եկան բանակից նորանց դիմաւորելու։ Եւ Մովսէսը բարկացաւ զօրաց իշխանների հազարապետների վերայ, որ պատերազմից գալիս էին. Եւ Մովսէսը նորանց ասաց. Մի՞թէ բոլոր կանանց ողջ թողեցիք։ Ահա նորանք Բաղաամի խօսքովը պատճառ եղան Իսրայէլի որդոց մեղանչելուն ԵՀովայի դէմ Փոգովրի գործովը, և այն հարուածը եկաւ ԵՀովայի ժողովքի վերայ։ Եւ հիմայ երեխաներից ամեն արուն մեռցրէք, բոլոր կանայքը մարդ են գիտացել արուի հետ պառկելով՝ մեռցրէք, Եւ կանանցից այն բոլոր մանկահասակ աղջիկներին, որոնք չեն գիտացել արուի հետ պառկելով՝ ձեզ համար ողջ թողեցէք։ Եւ դուք եօթն օր բանակից դուրս մնացէք. և ամեն ով որ մարդ է մեռցրել և ամեն ով որ մեռածի դպել է, երրորդ օրը և եօթներորդ օրը մաքրուի՝ թէ դուք և թէ ձեր գերիները։ Եւ ամեն հանդերձ և ամեն մորթի անօթ և այծի մազից շինուած ամեն բան և ամեն փայտի աման մաքրեցէք։

Եւ Եղիազար քահանան ասաց պատերազմի գնացող զօրքերին. Այս է այն օրէնքի կանոնը, որ ԵՀովան Մովսէսին պատուիրեց։ Միայն ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը, անագը և կապարը, Ամեն կրակը մտնելու բանը կրակից անցկացրէք, և մաքուր կը լինի, բայց մաքրութեան ջրով մեղքից մաքրուի, սակայն կրակը չմտնող ամեն բան ջրից անցկացնէք։ Եւ եօթներորդ օր ձեր հանդերձները լուանաք և մաքրուիք, և յետոյ բանակը մտնէք։

Եւ ԵՀովան խօսեց Մովսէսի հետ ասելով. Դու Եղիազար քահանայի և ժողովքի նահապետութեանց իշխանների հետ առնուած կողոպուտի գումարը՝ թէ մարդի և թէ անասունի. Եւ այն կողոպուտը պատերազմի գնացող պատերազմողներին և բոլոր ժողովքին հաւասարապէս բաժանես։ Եւ պատերազմի գնացող պատերազմողներից ԵՀովայի հարկ առնես, հինգ հարիւրից մէկը՝ թէ մարդկանցից, թէ արջառներից, թէ էշերից և թէ ոչխարներից։ Նորանց հաւասար բաժնիցը առնես, և Եղիազար քահանային տաս իբրև ԵՀովայի բաժակ։ Եւ Իսրայէլի որդոց հաւասար բաժինիցը յիսունից մէկը առնես, թէ մարդկանցից, թէ արջառներից, թէ էշերից, թէ ոչխարներից և ամեն անասուններից, և նորանք ԵՀովայի տաս՝ խորանի պահպանութիւնը անող Ղեւտացիներին։ Եւ արաւ Մովսէսը և Եղիազար քահանան ինչպէս որ ԵՀովան Մովսէսին հրամայել էր։ Եւ կողոպուտը՝ այսինքն պատերազմող զօրքի առած աւարի *գումարը այս էր. վեց հարիւր եօթանասուն հինգ հազար ոչխար, Եօթանասուն երկու հազար արջառ, Եւ վաթսունուերկու հազար էշ. Եւ կնիկ մարդիկներ, որ արուի հետ պառկե-

*Կամ մնացորդը

լով չին դիտեցած ումինը երեսուն երկու հազար հոգի էին ։
36 Եւ պատերազմի գնացողներուն հաւասար բաժինը այս էր. ոչխարներուն թիւը՝ երեք հարիւր երեսուն եօթը հազար հինգ հարիւր.
37 եւ ոչխարներէն Եհովային հասը եղաւ՝ վեց հարիւր եօթանասունհինգ.
38 եւ արջառները՝ երեսունուվեց հազար, իսկ նոցանից հասը Եհովային եօթանասուն երկու.
39 էշերը՝ երեսուն հազար հինգ հարիւր, իսկ նոցանից հասը Եհովային վաթսունուերկու.
40 եւ մարդիկը տասնուվեց հազար հոգի, իսկ նոցանից հասը Եհովային երեսուն երկու հոգի ։
41 Եւ Մովսէսը Եհովային նուիրուած հասը եղիազար քահանային տուաւ, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր ։
42 Եւ Իսրայէլի որդոց հաւասար բաժնից էր, որ Մովսէսը պատերազմողներից բաժանել էր ։
43 ժողովքի կէս բաժինը եղաւ երեք հարիւր երեսուն եօթը հազար հինգ հարիւր ոչխար,
44 երեսունուվեց հազար արջառ,
45 երեսուն հազար հինգ հարիւր էշ,
46 եւ տասն ու վեց հազար հոգի ։
47 Եւ Մովսէսը տուաւ Իսրայէլի որդոց հաւասար բաժնից, յիսուններից մէկը, թէ մարդից, թէ անասուններից, և նոցանից տուաւ Եհովայի խորանի պահապանութիւնը անող Ղեւտացիներին, ինչպէս որ Եհովան Մովսէսին պատուիրել էր ։
48 Եւ Մովսէսին մօտեցան զօրքի հազարապետները՝ այսինքն հազարապետները և հարիւրապետները. եւ ասացին Մովսէսին.
49 Քո ծառաները մեր ձեռքի տակ եղող պատերազմողների գումարն առինք, և մեզանից մի մարդ պակաս չէ ։
50 Եւ մատուցանենք Եհովայի ընծան՝ մեզանից ամեն մէկը ինչ որ գտանք՝ ոսկի զարդեր, շղթաներ, ապարանջաններ, մատանիներ, օղեր և փողշուկներ, որ Եհովայի առջև մեր հոգիների համար քաւութիւն անենք ։
51 Եւ Մովսէսն ու եղիազար քահանան նոցանից առին ոսկին՝ ամեն էլ բանուած զարդեր ։
52 Եւ հազարապետներից ու հարիւրապետներից Եհովայի համար մատուցրուած ընծայի բոլոր ոսկին տասնուվեց հազար եօթը հարիւր չիսուն սիկղ էր ։
53 Պատերազմողների ամեն մէկն իր համար կողոպուտ էր առել ։
54 Եւ Մովսէսն ու եղիազար քահանան հազարապետներից և հարիւրապետներից ոսկին առին և ժողովքի խորանը բերին, իբրև Իսրայէլի որդոց յիշատակ Եհովայի առջև ։

ԳԼ. ԼԲ

1 Եւ Ռուբենի որդիքը ու Գադի որդիքը խիստ շատ անասուններ ունէին. և տեսան Յազերի երկիրը և Գաղաադու երկիրը, որ ահա այն տեղը անասունի տեղ էր. 2
Եւ Գադի որդիքը և Ռուբենի որդիքը գնացին և Մովսէսի, եղիազար քահանայի և ժողովքի իշխանների հետ խօսելով ասացին. 3
Ադարովդ, Դիբոն, Յազեր, Համբրա, Եսբոն, եղէազէ, Սեբամա, Նաբաս և Բէան, 4
այնքան այն երկիրը որ Եհովան Իսրայէլի ժողովքի առջև զարկեց անասունի երկիր է, և քո ծառաները անասուններ ունին. 5
ասացին՝ եթէ մեզ քո առջև շնորհք գտանք, այս երկիրն քո ծառաներին տուր կալուածքի համար. մեզ Յորդանանից մի անցկացնիր ։
6 Եւ Մովսէսը Գադի որդոց և Ռուբենի որդոցն ասաց. Մի՞թէ ձեր եղբայրները պատերազմի գընան, և դուք այստեղ նստի՞ք ։
7 Եւ ինչո՞ւ համար էք Իսրայէլի որդոց սիրտը թուլացնում, որ չանցնեն այն երկիրը, որ Եհովան տուել է նոցանից ։
8 Ձեր հայրերն էլ այսպէս արին, երբոր նոցանից Կադես Բառնեայից ուղարկեցի երկիրը լրտեսելու համար ։
9 Վասն զի նոցանք մինչև Եսքողի ձորը վեր գնացին և երկիրը տեսան, և Իսրայէլի որդոց սիրտը թուլացրին, որ չմտնեն այն երկիրը

որը Եհովան տուել էր նորանց ։
10 Եւ այն օրը Եհովայի բարկու-
թիւնը բորբոքեց և երդում ա-
11 րաւ ասելով. Թէ Եգիպտոսից
դուրս եկած մարդիկը՝ քսան տա-
րեկանից և վեր եղողները չեն
տեսնել այն երկիրը, որի համար
երդում արի Աբրահամին, Իսա-
հակին և Յակոբին, որովհետև
12 լրիւ չհետևեցին. բացի Կենեզեան
Յեփոնէի որդի Քաղեբից և Նա-
ւէի որդի Յեսուից, որոնք կա-
տարեալապէս Եհովային հետևե-
13 ցին ։ Եւ Եհովայի բարկութիւնը
Իսրայէլի վերայ բորբոքեց, և նո-
րանց մէն ածեց անապատումը
քառասուն տարի, մինչև որ Ե-
հովայի աչաց առջև չարութիւն
անող ազգը բոլորովին ապառուե-
14 ցաւ ։ Եւ ահա դուք ձեր հայրե-
րի տեղն էք կանգնել մեղաւոր
մարդկանց զաւակների պէս, որ
Եհովայի սաստիկ բարկութիւնը
Իսրայէլի վերայ կրկին աւելաց-
15 նէք ։ Վասն զի եթէ դուք նո-
րանից խոտորէք, նա էլ կրկին
այս ժողովուրդը անապատումը կը
ձգէ և դուք այս բոլոր ժողովուր-
դի կորստեան պատճառ կ'լինէք ։
16 Եւ մօտեցան նորան և ասացին.
Մենք այստեղ մեր անասուննե-
րի համար փարախներ և մեր ըն-
տանեաց համար քաղաքներ շի-
17 նենք. Բայց մենք շուտով պատ-
րաստուինք Իսրայէլի որդոց առ-
ջև, մինչև որ նորանք իրանց տե-
ղերը տանենք. և մեր ընտանիքը
պարսպաւոր քաղաքներում բնա-
կեն այս երկրի բնակչաց դէմ ։
18 Մենք մեր տները չդառնանք,
մինչև որ Իսրայէլի որդոց ամեն
մէկին իր ժառանգութիւնը ժա-
19 ռանգէ ։ Որովհետև մենք Յորդա-
նանու այս կողմումի և էլ հետու
նորանց հետ ժառանգել չենք ու-
զում, քան որում մեր ժառան-
գութիւնը Յորդանանու այս կող-
մումը դէպի արևելք մեզ հասել
20 է ։ Եւ Մովսէսն ասաց նորանց.
Եթէ այս բանն անէք, եթէ Ե-
հովայի առջև պատրաստուէք պա-
21 տերազմի համար ։ Եւ Եհովայի
առջև դուք ամենքդ էլ պատ-
րաստուած Յորդանանու անցնէք,
մինչև որ նա իր թշնամիներին
իր առջևից քշէ. Եւ այն երկի- 22
րը Եհովայի առջև նուաճուի և
յետոյ եա դառնաք, այն ժամա-
նակ Եհովայի առջև և Իսրայէլի
առջև անմեղ էք, և այս երկի-
րը Եհովայի առջև ձեր կալուած-
քը լինի ։ Բայց եթէ այսպէս չա- 23
նէք, ահա Եհովայի դէմ մեղք
գործեցիք, և գիտացէք որ ձեր
մեղքը ձեզ կ'գտնէ ։ Ձեր ընտան- 24
եաց համար քաղաքներ, և ձեր
հօտերի համար փարախներ շինե-
ցէք, և ձեր բերանից դուրս ե-
կածն արէք ։ Եւ Գադի որդիքը 25
և Ռուբինի որդիքը խօսեցին Մով-
սէսի հետ ասելով. Ծառաներդ
կանեն ինչպէս որ մեր Եհովան
պատուիրում է ։ Մեր զաւակնե- 26
րը, մեր կանայքը, հօտերը և մեր
բոլոր անասուններըը այստեղ կը
լինին Գաղաադու քաղաքներու-
մը. Բայց ծառաներդ ամենքս 27
պատրաստուած զունդով կ'անց-
նենք պատերազմի համար ինչպէս
որ մեր տէրն ասում է ։ Եւ Մով- 28
սէսը նորանց մասին պատուիրեց
Եղիազար քահանային և Նաւէի
որդի Յեսուին և Իսրայէլի որդոց
ցեղերի նահապետութեանց իշ-
խաններին. Եւ Մովսէսն ասաց 29
նորանց. Եթէ Գադի որդիքը և
Ռուբինի որդիքը ամենքն էլ պա-
տերազմի համար պատրաստուած
ձեզ հետ Յորդանանուն անցնեն
Եհովայի առջև և այն երկիրը
ձեր առջև նուաճուի, այն ժա-
մանակ Գաղաադու երկիրը նո-
րանց կալուածք տաք. Բայց եթէ 30
պատրաստուած ձեզ հետ չանց-
նեն, նորանք կալուածք առանձն
ձեզ հետ Քանանու երկրումը ։
Իսկ Գադի որդիքը և Ռուբինի 31
որդիքը պատասխանեցին և ասա-
ցին. Եհովան ինչպէս որ պատու-
իրեց քո ծառաներին այնպէս կա-
նենք ։ Մենք պատրաստուած Ե- 32
հովայի առջև Քանանու երկիրը
կ'անցնենք. բայց մեր ժառանգու-
թեան կալուածքը Յորդանանու
կողմումը կ'լինի ։ Եւ Մովսէսը նո- 33
րանց՝ այսինքն Գադի որդոցը և

Ռուբենի որդոցը և Յովէլփեան Մանասէի կէս ցեղին, տուաւ Ամօրհացւոց Սեհան թագաւորի թագաւորութիւնը և Բասանի Ովգ թագաւորին թագաւորութիւնը, երկիրն իր քաղաքներով՝ երկրի քաղաքների շուրջը եւ զած սահմաններով։ Եւ Գադի որդիքը չինեցին Դեբոնը, Ադաբովթը և Աբոէրը, Եւ Ատրոթ-ափիանը, Յազերը, և Յոգբէհան, Եւ Բեթնամրան և Բեթ-արանը պարսպաւոր քաղաքներ և Հօտէրի փարախներ։ Ռուբենի որդիքն էլ Եսեբոնը, Եղէալէն և Կաբիաթեմը շինեցին. Եւ Նաբուբ Բէելմոնը (որոց անուններըը փոխեցին.) և Սեբաման, և իրանց շինած քաղաքներին անուններ դրին։ Եւ Մանասեան Մաքիրին որդիքը Գաղաադ գնացին և առին նորան, և նորա միջի Ամորհացիներին քշեցին։ Եւ Մովսէսը Գաղաադը տուաւ Մանասեան Մաքիրին, որ այնտեղ բնակեց։ Եւ Մանասեան Յայիր գնաց նորանց գիւղաքաղաքներն առաւ և նորանց Հաւօթ-Յայիր անուանեց։ Եւ Նոբահ գնաց, և Կենաթն և նորա գիւղերն առաւ և նորան իր անունովը Նոբահ կոչեց։

ԳԼ. ԼԳ

Սորանք են Իսրայէլի որդոց իշխանները, որ Մովսէսն և Ահարոնի ձեռքով եգիպտոսի երկրին իրանց զօրքերովը դուրս եկան։ Եւ Մովսէսը գրեց եհովայի հրամանովը նորանց իջևանների համեմատ նորանց գնացքները. և սորանք են նորանց գնացքների համեմատ նորանց իջևանները։ Եւ չուեցին Ռամեսեից առաջի ամսում տասն ևհինգն առաջին ամսի հնձեւտաւաներորդ օրը՝ զատկի հետևեալ օրը Իսրայէլի որդիքը բարձր ձեռքով դուրս եկան բոլոր եգիպտացոց աչքի առջև. Եւ եգիպտացիք թաղում էին այն բոլոր անդրանիկներին, որ եհովան նորանց մէջ կարդեց. և եհովան նորանց աստուածներին վրայ դատաստան արաւ։ Եւ Իսրայէլի որդիքը չուեցին Ռամեսեից և իջևան արին Սոկքովթում։ Եւ Սոկքովթից չուեցին և իջևան արին անապատի ծայրին եզած Ովթոմում։ Եւ Ովթոմից չուելով՝ դէպի Փիհահիրոթ դարձան, որ Բէեղզեփոնի դիմացն է, և իջևան արին Մագդողի առջև։ Եւ փիհահիրոթից չուեցին և ծովի միջովն անցնելով՝ երեք անապատ, և Ովթոմի անապատումը երեք օրուայ ճանապարհ գնացին և իջևան արին Մեռայում։ Եւ չուեցին Մեռայից և եկան Եղիմ. և Եղիմում տասներկու ջրի աղբիւր և եօթանասուն արմաւենի կային. և այն տեղ իջևան արին։ Եւ չուեցին Եղիմից և կարմիր ծովի մօտ իջևան արին։ Եւ կարմիր ծովից չուեցին և իջևան արին Սինի անապատումը։ Եւ Սինի անապատից չուեցին և իջևան արին Դափկայ։ Եւ Դափկայից չուեցին և իջևան արին Եղուսում։ Եւ Եղուսից չուեցին և իջևան արին Ռափիդիմ և այն տեղ ժողովրդի համար խմելու ջուր չկար։ Եւ Ռափիդիմից չուեցին և իջևան արին Սինայի անապատումը։ Եւ Սինայի անապատից չուեցին և իջևան արին Կիբրոթ-Հաթթաաւա։ Եւ Կիբրոթ-Հաթթաաւայից չուեցին և իջևան արին Ասերովթում։ Եւ Ասերովթից չուեցին և իջևան արին Ռաթմամոյում։ Եւ Ռաթմամոյից չուեցին և իջևան արին Ռեմոն-փարես։ Եւ Ռեմոն-փարեսից չուեցին և իջևան արին Լեբնայում։ Եւ Լեբնայից չուեցին և իջևան արին Ռեսսայում։ Եւ Ռեսսայից չուեցին և իջևան արին Կեհելաթայում։ Եւ Կեհելաթայից չուեցին և իջևան արին Սափար լեառնում։ Եւ Սափար լեռնիցը չուեցին և իջևան արին Քարադայում։ Եւ Քարադայից չուեցին և իջևան արին Մակհելոթում։ Եւ Մակհելոթից չուեցին և իջևան արին Թահաթում։ Եւ Թահաթից չուեցին և իջևան արին Թարայում։ Եւ Թարայից չուեցին

և իջևան արին Մատեկայում։
29 Եւ Մատեկայից չուեցին և իջե-
30 ան արին Համմոնայում։ Եւ
Համմոնայից չուեցին և իջևան
31 արին Մոսերոթում։ Եւ Մոսերո-
թից չուեցին և իջևան արին Բա-
32 նե-յականում։ Եւ Բանե-յակա-
նից չուեցին և իջևան արին Հոր-
33 գադգադում։ Եւ Հորգադգադից
չուեցին և իջևան արին Եոտեբա-
34 թայում։ Եւ Եոտեբաթայից չուե-
ցին և իջևան արին Եբրոնայում։
35 Եւ Եբրոնայից չուեցին և իջևան
36 արին Գասիոն-գաբերում։ Եւ
Գասիոն-գաբերից չուեցին և ի-
ջևան արին Սին անապատումն
սահինքն կադեսում։
37 Եւ Կադեսից չուեցին և իջևան
արին Հոր լեառնումը, որ Եդո-
38 մի երկրի ծայրումն է։ Եւ Ահա-
րոն քահանան Եհովայի հրամա-
նով Հոր լեառը վեր ելաւ, և
այնտեղ մեռաւ, Իսրայէլի որդոց
Եգիպտոսի երկրից դուրս գալու
քառասներորդ տարուայ հինգե-
39 րորդ ամսի մէկին։ Եւ Ահարոնը
Հոր լեառան վերայ մեռած ժա-
մանակ հարիւր քսան երկք տարե-
կան էր։
40 Եւ Քանանու երկրի հարաւային
կողմումը բնակող Արադի Քանա-
նին թագաւորը լսեց Իսրայէլի որ-
41 դոց գալը։ Եւ Հոր լեռնից չուե-
ցին և իջևան արին Սելմոնայում։
42 Եւ Սելմոնայից չուեցին և իջևան
43 արին Փունոնում։ Եւ Փունոնից
չուեցին և իջևան արին Ովո-
44 թում։ Եւ Ովոթից չուեցին և
իջևան արին Մովաբի սահման-
ներումն եղող Իյէ-աբարիմում։
45 Եւ Իյէ-աբարիմից չուեցին և ի-
46 ջևան արին Դիբոնդադում։ Եւ
Դիբոնգադից չուեցին և իջևան
47 արին Գելմոն-դիբլաթէմում։ Եւ
Գելմոն-դիբլաթէմից չուեցին և
իջևան արին Նաբաւի առջևի Ա-
48 բարիմի լեռներում։ Եւ Աբա-
րիմի լեռներից չուեցին և իջևան
արին Երիքովի դէմ Յորդանանու
49 մօտ Մովաբի դաշտերումը։ Եւ
նորանք իջևան արին Յորդանանու
մօտ Մովաբի դաշտերումը, Բե-
թեսիմոթից մինչև Աբէլսատիմ։

50 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
Մովաբի դաշտերումը Երիքովի
դէմ Յորդանանու մօտ՝ ասելով.
51 Իսրայէլի որդոց հետ խօսիր և նո-
րանց ասիր. Երբոր Յորդանանից
վանանցով երկիրն անցնէք.
52 Այն ժամանակ այն երկրի բոլոր
բնակիչներին ձեր առջևից քշէք
և նորանց բոլոր պատկերաւոր
նշանները կործանէք և նորանց բո-
լոր թափծու կուռքերը կործա-
նէք. և նորանց բոլոր բարձր տե-
ղերը քանդէք։
53 Եւ այն երկիրը
ձեր իշխանութեանը տակ առնէք
և նորա մէջ բնակէք. վասն զի
այն երկիրը ձեզ տուի, որ ժա-
ռանգէք նորան։
54 Եւ այն երկիրը
վիճակով ժառանգէք ձեր տոհ-
մերի համեմատ. շատին ժառան-
գութիւնը շատ տաք, և քիչին
ժառանգութիւնը քիչ տաք, որ
տեղի վիճակը՝ որին որ դուրս գայ
նորանը լինի. ձեր հարանց ցեղե-
րի համեմատ ժառանգէք։
55 Բայց
եթէ այն երկրի բնակիչներին ձեր
առջևից չքշէք, այն ժամանակ
որին որ նորանցից ողջ էք թո-
ղել, ձեր աչքերի համար փուշեր՝
և ձեր կողերի համար տատասկ-
ներ կ'լինին և ձեզ կ'նեղեն ձեր
բնակած երկրումը։
56 Եւ անպատ-
ճառ լինի որ մտածել էի նորանց
անելու նոյնը ձեզ կանեմ։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ
2 ասելով. Իսրայէլի որդոցը պատ-
ուիրիր և նորանց ասիր. Երբոր
դուք Քանանու երկիրը մտնէք,
այս է այն երկիրը որ ձեզ ժա-
ռանգութիւն է բնակելու, Քա-
նանու երկիրը իր սահմաններով.
3 Եւ ձեր հարաւային սահմանը լի-
նի Սին անապատից մինչև Եդոմ
և ձեր հարաւային սահմանը լինի
արևելքից Աղի ծովի ծայրիցը.
4 Եւ ձեր հարաւային սահմանը Ակ-
րաբիմի բարձրով պտոյտ տալով
մինչև Սին հասնէ և ելքերը
դուրս գալով Կադես-բառնեայի
հարաւային կողմովը և դնայ Ա-
սար-ադդար և հասնէ Ասեման.

5 եւ պաղտ տայ Աւեմինից դէպի
Եգիպտոսի Հեղեզատը մինչեւ որ
դուրս գայ ծովը։
6 Եւ ձեր արեւմտեան սահմանը
մեծ ծովը լինի. ձեզ համար ա-
րեւմտեան սահման սա լինի։
7 Եւ ձեր հիւսիսային կողմի սահ-
մանը սա լինի՝ մեծ ծովից մինչեւ
8 Հոր լեառը նշան անէք, Հոր
լեռնիցը մինչեւ Եմաթ նշան ա-
նէք եւ պիտակից դուրս գնայ
9 մինչեւ Սեդադ. Եւ դուրս գայ
մինչեւ Զեփրան եւ հասնէ Աս-
էնանի մէջ. ձեր հիւսիսային սահ-
մանը սա լինի։
10 Եւ ձեր արեւելեան սահմանը
նշան անէք Աս-էնանից մինչեւ
11 Սեփամ. Եւ այս սահմանը Ա-խի-
նի արեւելեան կողմից՝ Սեփամից
Ռիբղա իջնէ. եւ այս սահմանը
արեւելքի կողմից իջնելով գնէ-
12 բէի ծովի եզերքով քաշէ. Եւ
այս սահմանը իջնէ Յորդանան,
եւ Աղի ծովի մէջ վերջանայ։ Եր-
կիրը իր շրջակայ սահմաններով
ձեզ համար այս լինի։
13 Եւ Մովսէսն Իսրայէլի որդոցը
պատուիրեց եւ ասաց. Սա է այն
երկիրը որ դուք վիճակով պիտի
ժառանգէք, ինչպէս որ Եհովան
պատուիրել է տալ ինն ու կէս
14 ցեղին. Վասն զի Ռուբենի որդոց
ցեղը իրանց հարանց տների հա-
մեմատ և Գադի որդոց ցեղը ի-
րանց հարանց տների համեմատ
և Մանասէի կէս ցեղը առին ի-
15 րանց ժառանգութիւնը. Այս եր-
կու ցեղերը և կէս ցեղը առել
են իրանց ժառանգութիւնը Երի-
քովի դէմ Յորդանանու այս կող-
մին դէպի արեւելք։
16 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
17 հետ ասելով. Սորանք են այն
մարդկանց անունները, որոնք ձեր
մէջ պիտի բաժանեն երկիրը ժա-
ռանգութեան համար. Եղիազար
քահանան և Նաւէի որդի Յե-
18 սուն. Եւ ամեն մէկ ցեղից մէկ
իշխան առնէք, այն երկիրը ժա-
19 ռանգութեան բաժանելու։ Եւ
այն մարդկանց անունները սո-
րանք են. Յուդայի ցեղից Յեփո-
20 ննէի որդի Քաղէբը, Շմաւոնի որ-
դոց ցեղիցը Ամիուդի որդի Սա-
մուէլը, Բենիամինի ցեղից Քաս- 21
ղօնի որդի Եղիադը, Դանի որդոց 22
ցեղիցը իշխան՝ Եղղիի որդի Բոկ-
կին, Յովսէփի որդիներից Մանա- 23
սէի որդոց ցեղից իշխան՝ Եփօտի
որդի Անիէլը, եւ Եփրեմի որդոց 24
ցեղից իշխան՝ Սափտանի որդի
Կամուէլը, եւ Զաբուղոնի որդոց 25
ցեղից իշխան՝ Փաղնակի որդի Ե-
ղիսափանը, եւ Իսաքարի որդոց 26
ցեղից իշխան՝ Ազանի որդի Փաղ-
տիէլը, եւ Աշերի որդոց ցեղից 27
իշխան՝ Սելոմիի որդի Աքիուդը,
եւ Նեփթաղիմի որդոց ցեղից իշ- 28
խան՝ Ամիուդի որդի Փադայէլը։
Սորանք են՝ որոնց Եհովան հրա- 29
մայեց, որ բաժանեն երկիրը Քա-
նանի երկրում Իսրայէլի որդոցը ժառանգութեան
բաժանեն։

ԳԼ. ԼԵ

Եւ Եհովան Մովսէսի դաշտերու- 1
մը Երիքովի դէմ Յորդանանու
մօտ խօսեց Մովաբի հետ ասելով.
Պատուիրիր Իսրայէլի որդոցը, որ 2
իրանց ժառանգութեան կալուած-
քից Ղեւտացիներին բնակելու քա-
ղաքներ տան. նաեւ քաղաքների
շուրջեւմը եղած արուարձանները
Ղեւտացիներին տաք։ Եւ քաղաք- 3
ները բնակութեան համար լինին
նորանց համար եւ արուարձանները
նորանց արջառների համար, նո-
րանց հօտերի եւ նորանց անասուն-
ների համար։ Եւ քաղաքների ար- 4
ուարձանները, որ Ղեւտացիներին
էք տալու, քաղաքի պարսպիցը
դուրս շուրջանակի հազար կանգուն
լինին։ Եւ քաղաքի դուրս նորանց 5
չափէք, արեւելեան կողմից երկու
հազար կանգուն, հարաւային
կողմից երկու հազար կանգուն,
արեւմտեան կողմից երկու հազար
կանգուն, և հիւսիսային կողմից
երկու հազար կանգուն, և քա-
ղաքը մէջտեղը լինի, նորանց քա-
ղաքների արուարձանները սա լի-
նին։ Եւ այն քաղաքները որ Ղե- 6
ւտացիներին էք տալու այն վեց
ապաստանի քաղաքները որոշէք,
որ ապանողը այնտեղ փախչէ, և

բացի սորանցից քառասուն եր-
7 կու քաղաք տաք։ Բոլոր քա-
ղաքները որ Ղևտացիներին էք
տալու՝ քառասուն ութը քա-
ղաք լինի. նորանք իրանց ար-
8 ուարձաններովը տաք։ Եւ այն քա-
ղաքները որ Իսրայէլի որդոց կալ-
ուածքից պիտի տաք, շատից
շատ և քիչից քիչ առնէք. ա-
մեն մէկն իր առած ժառանգու-
թեան չափովը իր քաղաքներից
9 Ղևտացիներին տայ։
10 Եւ Եհովան խօսեց Մովսէսի
հետ ասելով. Իսրայէլի որդոց
հետ խօսիր և նորանց ասիր.
Երբոր Յորդանանից Քանանա-
11 երկիրն անցկենաք, Ա՛յն ժամա-
նակ ձեզ համար քաղաքներ ո-
րոշէք, որոնք ապաստանի քա-
ղաքներ լինեն ձեզ համար, որ
այնտեղ փախչէ սխալմամբ մարդ
12 զարկող սպանողը։ Եւ այն քա-
ղաքները ձեզ համար ապաստա-
նարան լինեն վրէժխնդիրից. և
սպանողը դատաստանի համար
ժողովի առջև չերևացած չմե-
13 նէ։ Եւ այն քաղաքները, որ պի-
տի տաք, վեց ապաստանի քա-
14 ղաքներ լինեն ձեզ համար։ Քա-
ղաքների երեքը Յորդանանու այս
կողմանը տաք, և քաղաքների
երեքը Քանանու երկրումը տաք,
նորանք ապաստանի քաղաքներ
15 լինեն։ Ա՛յս վեց քաղաքները Իս-
րայէլի որդոց համար և օտարա-
կանի և ձեր միջի պանդխտի հա-
մար ապաստանարան լինեն, որ
այնտեղ փախչէ ամեն ով որ սը-
խալմամբ մարդ սպանէ։
16 Եւ եթէ երկաթի գործիքով
մէկին զարկէ որ մեռնի, նա
մարդասպան է. մարդասպանը
անպատճառ պիտի մեռցնուի։
17 Կամ եթէ մի մեհաւոր քրա-
նքարով մէկին զարկէ որ
մեռնի, նա մարդասպան է. մար-
դասպանը անպատճառ պիտի
18 մեռցնուի։ Կամ եթէ ձեռքով
գործածուելու փայտեղէն մեհա-
ւոր գործիքով զարկէ՝ որ մեռ-
նէ, նա մարդասպան է. մար-
դասպանը անպատճառ պիտի
19 մեռցնուի։ Արեան վրէժխնդիրը

մեռցնէ մարդասպանին, երբ որ
նորան հանդիպի թող մեռցնէ
նորան։ Եւ եթէ թշնամութեամբ 20
հրէ նորան կամ նենգութեամբ
նորան վերայ մի բան ձգելով նո-
րան մեռցնելու լինի, կամ եթէ 21
թշնամութեան պատճառով ձեռ-
քովը զարկէ նորան, որ մեռնէ.
զարկողը անպատճառ մեռցնուի,
նա մարդասպան է. արեան վրէժ-
խընդիրը նորան մեռցնէ երբոր
մարդասպանին հանդիպի։
Բայց եթէ յանկարծ առանց 22
թշնամութեան հրէ նորան, կամ
թէ առանց նենգութեան նորա
վերայ մէկ գործիք ձգէ, կամ 23
թէ նորա վերայ ինչևիցէ մահա-
ռիթ քար ձգէ առանց տեսնելու
որ մեռնէ, և նա նորա թշնամի
չէ և նորա չարիքը չէր ուզում,
Ա՛յն ժամանակ ժողովքը սպանո- 24
ղին և արեան վրէժխնդրին մէջ
տեղը այս օրէնքների համեմատ
դատաստան անէ. Եւ ժողովքը ա- 25
զատէ սպանողին արեան վրէժ-
խնդրի ձեռքից, և ժողովքը նորան
դարձնէ իր ապաւինած ապաստա-
նի քաղաքը, և նա այնտեղ բնակէ,
մինչև որ սուրբ իւղով օծուած
քահանայապետը մեռնի։ Բայց 26
եթէ սպանողը իր ապաւինած ա-
պաստանի քաղաքի սահմանից
երբէք դուրս գայ. Եւ արեան 27
վրէժխնդիրը նորան իր ապաստա-
նի քաղաքի սահմանից դուրս
գտնէ և արեան վրէժխնդիրը սպանողին մեռցնելու լինի, մահա-
պարտ չհամարուի. Վասն զի նա 28
պէտք է իր ապաստանի քաղա-
քումը նստէր մինչև որ քահա-
նայապետը մեռնէր. և քահանա-
յապետի մեռնելուց յետոյ սպա-
նողը իր կալուածքի երկիրը դառ-
նայ։ Սորանք ձեզ համար դա- 29
տաստանի կանոններ լինեն ձեր
ազգերումը ձեր բոլոր բնակու-
թեանց մէջ։
Ով որ մարդ մեռցնէ, սպանո- 30
ղը վկաների բերանով մեռցնուի,
բայց միայն մէկ մարդ չվկայէ մի
անձի դէմ նորան մեռցնելու հա-
մար։ Եւ մահապարտ սպանողի 31
կենացը համար փրկանք չառնէք.

քանզի նա պիտի անպատճառ
32 մեռցնուի : Եւ ապաստանի քա-
ղաքը փախչողի համար փրկանք
չառնէք , որ նա եւս դառնայ իր
քաղաքը և նստէ քահանայապե-
33 տի մահուին առաջ : Եւ ձեր բնա-
կած երկիրը չպղծէք , վասն զի
արիւնը պղծում է երկիրը և նո-
րա մէջ թափուած արեան հա-
մար երկրին քաւութիւն չի լինիլ ,
բայց միայն նորան թափողի ար-
34 եանովը : Ուրեմն ձեր բնակած եր-
կիրը չպղծէք , որի մէջ ես պիտի
բնակեմ . քանզի ես Եհովա բը-
նակում եմ Իսրայէլի որդոց մէջ :

ԳԼ . ԼԶ

1 Եւ Յովսէփի որդոց տոհմերից
Մանասէի որդի Մաքիրի որդի
Գաղաադի որդոց տոհմի իշխան-
ները մօտեցան , և Մովսէսի առ-
ջև և Իսրայէլի որդոց նահապե-
տութեանց իշխանների առջև խո-
2 սեցին , եւ ասացին . Եհովան մեր
տիրոջը հրամայեց , որ երկիրը Իս-
րայէլի որդիներին վիճակով ժա-
ռանգութիւն տայ , և մեր տէրը
Եհովայից հրաման առաւ որ մեր
եղբայր Սալպաադի ժառանգու-
թիւնը նորա աղջկերանցը տայ .
3 Եւ եթէ նորանք Իսրայէլի որդոց
մի ցեղի որդիանցը կին լինին ,
նորանց ժառանգութիւնը մեր
հայրերի ժառանգութենից պա-
կաս վերանայ , և այն ցեղի ժա-
ռանգութեան վերայ պիտի աւե-
լանայ որոնց որ կին են դառել :
Մեր ժառանգութեան վիճակից
4 պիտի վերանայ : Եւ Իսրայէլի որ-
դոց Յոբելեանը գալիս նորանց
ժառանգութիւնը այն ցեղի ժա-
ռանգութեան վերայ պիտի ա-
ւելանայ , որոնց որ կին եղան , և
նորանց ժառանգութիւնը մեր
հայրերի ցեղի ժառանգութենից
կ'վերանայ :

Եւ Մովսէսը պատուիրեց Եհո- 5
վայի խօսքով Իսրայէլի որդոց և
ասաց . Յովսէփի որդոց ցեղը ուղիղ
են խօսում : Սալպաադի աղջկե- 6
րանց մասին Եհովայի հրամայած
խօսքը սա է որ ասաց . Որոնց որ
կը հաճին՝ թող նորանց կին լինեն ,
միայն թէ իրանց հօր ցեղից և-
ղողներին կին լինեն . Եւ Իսրայէլի 7
որդոց ժառանգութիւնը մէկ ցե-
ղից ուրիշ ցեղի չանցնէ . վասն
զի Իսրայէլի որդոց ամենքն էլ
իրանց հայրերի ցեղի ժառանգու-
թեանը պիտի յարին : Եւ ամեն 8
աղջիկ՝ որ Իսրայէլի որդոց ցեղե-
րի մէջ մէկ կալուածքի ժառանգ
լինի , իր հօր ցեղից եղող մէկին
կին դառնայ , որ Իսրայէլի որդոց
ամեն մէկն իր հայրերի ժառան-
գութիւնը ժառանգէ : Եւ ժա- 9
ռանգութիւնը մէկ ցեղից ուրիշ
ցեղի չանցնէ , բայց Իսրայէլի որ-
դոց ցեղերի ամեն մէկն իր ժա-
ռանգութեանը յարի :

Ինչպէս որ Եհովան Մովսէսին 10
պատուիրեց , Սալպաադի աղջիկ-
ները այնպէս արին . վասն զի 11
Սալպաադի աղջիկները՝ Մաալա ,
Թերսա , Եգղա , Մեղքա և Նուա
իրանց հօր եղբօրորդոց հետ ա-
մուսնացան : Յովսէփեան Մանա- 12
սէի որդոց տոհմերից եղողներին
կին եղան , և նորանց ժառան-
գութիւնը իրանց հօր ցեղի ազ-
գատոհմի մէջ մնաց :

Սորանք են այն պատուիրանք- 13
ները և դատաստանները որ Եհո-
վան պատուիրեց Մովսէսի ձեռ-
քով Իսրայէլի որդոցը Մովաբի
դաշտերումը Երիքովի դէմ Յոր-
դանանու մօտ :

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սորանք են այն խօսքերը որ Մովսէսը բոլոր Իսրայէլին ասաց Յորդանանու այս կողմումը անապատի մէջ, որ Սուփի դիմացի դաշտումը՝ Փառանի, Տոփելի, Ղաբանի, Ասերովթի և Տիզահաբի
2 մէջտեղն է: (Գորեբից մինչև Կադէս-բառնեայ տասնըմէկ օր է
3 Սէիր լեռան ճանապարհով:) Եւ եղաւ քառասներորդ տարուայ մեռտասներորդ ամսի մէկին, որ Մովսէս ասաց Իսրայէլի որդիներին՝ ինչպէս որ Եհովան բոլորը նորան պատուիրել էր նորանց
4 համար, Եսեբոնում բնակող Ամորհացոց Սեհոն թագաւորին և Աստարովթի — Եդրայիում բնակող Բասանի Ովգ թագաւորին զարկելուց յետոյ. Յորդանանու այս կողմումը Մովաբի
5 երկրի մէջ Մովսէսը սկսեց այս օրէնքը բացատրել, ասելով.
6 Մեր Եհովայ Աստուածը խօսեց մեզ հետ Գորեբի վերայ և ասաց. Հերիք է ձեզ՝ այս լեռ-
7 նումը մնալը. Դարձէք և չուեցէք ու գնացէք դուք Ամորհացոց լեռը, և նորա բոլոր բնակոցների մօտ, դաշտումը, լեռնումը, ու հովիտումը, և հարաւային կողմումը, և ծովեզերքումը, Քանանացոց երկրումը և Լիբանումը, մինչև մեծ գետ՝ Եփ-
8 րատ գետը: Ահա այն երկիրը ձեզ եմ տուել. գնացէք և ժառանգեցէք այն երկիրը, որը Եհովան ձեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին և Յակոբին երդում արաւ, որ տայ նորանց և նորանցից յետոյ նորանց զաւակներին:
9 Եւ այն ժամանակը ես ձեզ հետ խօսեցի և ասացի. Ես մենակ չեմ
10 կարող ձեզ տանել. Ձեր Եհովայ Աստուածը ձեզ շատացրել, և ահա դուք այսօր երկնից աստղերի չափ շատ էք, Ձեր հայրերի
11 Եհովայ Աստուածը աւելացնէ ձեզ վերայ հազարապատիկ, և ձեզ օրհնէ ինչպէս որ ձեզ ասել է: Ես մենակ ինչպէս տա-
12 նեմ ձեր նեղութիւնը, ձեր բեռը և ձեր վէճը: Դուք ձեր ցեղերից
13 իմաստուն և հանճարեղ և անուանի մարդիկ տուէք, և ես նորանց ձեզ վերայ իշխաններ դնեմ: Իսկ դուք ինձ պատասխանեցիք և ասացիք. Լաւ է անել
14 այդ խօսքը որ ասացիր: Եւ ես առի ձեր ցեղերի գլխաւորներին իմաստուն և անուանի մարդիկ, և նորանց ձեզ վերայ իշխաններ կարգեցի, հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ և տասնապետներ և ոստիկաններ ձեր ցեղերի համեմատ:
16 Եւ այն ժամանակ պատուիրեցի ձեր դատաւորներին ասելով. Ձեր եղբայրների միջի գործերը լսեցէք, և արդարութեամբ դատեցէք այն մարդու դատը՝ թէ իր եղբօր հետ և թէ օտարականի հետ:
17 Դատաստանի մէջ աչառութիւն չանէք, փոքրին մեծի պէս լսէք, բնաւ չվախենաք մարդու երեսից. վասն զի դատաստանը Աստուծոյն է. և այն բանը, որ ձեզ համար գժուար լինի, ինձ ներկայացնէք, և ես կ'լսեմ այն:
18 Եւ այն ժամանակը ձեզ պատուիրեցի ձեր ամեն անելու բաները:
19 Յետոյ Գորեբից չուեցինք, և գնացինք այն ձեր առաջ բոլոր մեծ և սոսկալի անապատումը, Ամորհացոց լեռան ճանապարհով՝ ինչպէս որ մեր Եհովայ Աստուածը մեզ պատուիրել էր, և եկանք մինչև Կադէս-բառնեայ:
20 Եւ ձեզ ասացի. Դուք Ամորհացոց լեռը եկաք, որ մեր Եհովայ Աստուածը տալիս է մեզ:
21 Տես քո Եհովայ Աստուածը այդ երկիրը քեզ է տուել. վեր ելիր, ժառանգիր, ինչպէս որ քո հայրերի Եհովայ Աստուածը քեզ ա-

ասց . Մի վախենար և մի զարհուրիր ։
22 Եւ դուք ամէնքդ ինձ մօտ եկայք , և ինձ ասացիք . Մեր առջևը մարդիկ ուղարկենք , որ երկիրը լրտեսեն մեզ համար , և մեզ լուր բերեն այն ճանապարհի համար , որով պիտի վեր ելնենք , և այն քաղաքների համար , որոնց
23 մէջ պիտի մտնենք ։ Եւ այս խօսքը ինձ համոյ թուեցաւ , և ձեզանից տասներկու մարդ առի , 24 ամեն մէկ ցեղից մէկ մարդ ։ Եւ նորանք գնացին՝ վեր ելան լեառը , և մինչև Եսքողի ձորը հասան , և
25 այն երկիրը լրտեսեցին ։ Եւ այն երկրի պտղից իրանց ձեռքն առին և մեզ մօտ բերին , և մեզ լուր բերին ասելով . Լաւ է այն երկիրը որ մեր Եհովայ Աստուածը մեզ
26 ձգ տալիս է մեզ ։ Բայց դուք չուզեցիք վեր երթել , և ձեր Եհովայ Աստուծոյ հրամանին հա-
27 կառակեցիք . Եւ ձեր վրաններին մէջ տրտնջալով ասացիք . Եհովան մեզ ատելով Եգիպտոսի երկրից մեզ դուրս հանեց , որ մեզ Ամորհացոց ձեռքը մատնէ ,
28 մեզ կորցնելու համար ։ Ո՞ւր վեր ելնենք . մեր եղբայրները մեր սիրտերը թուլացրին , որովհետև ասացին . Նա մեզանից մեծ և բարձրահասակ ազգ է , քաղաքները մեծ և պարսպաւոր են մինչև երկինքը , և նաև Ենակի որդիք տեսանք այնտեղ ։
29 Եւ ձեզ ասացի . Մի զարհուրիք և մի վախենաք
30 նորանցից . Ձեր Եհովայ Աստուածը որ ձեր առջևին գնում է , նա ձեզ համար պիտի պատերազմէ , ինչպէս որ Եգիպտոսում ձեր աչքերի առջև ձեզ արաւ ։
31 Եւ անապատումն էլ որ տեսար , թէ քեզ քո Եհովայ Աստուածը տարաւ ինչպէս մի մարդ իր զաւակին տանում է , այն բոլոր ճանապարհներում , որ գնացիք մինչև ձեր այս տեղը գալը ։ Եւ սրանով էլ ձեր Եհովայ Աստուածին չհաւատացիք ,
33 Որ ձեր առջև գնում էր ձեր ճանապարհումը , որ ձեզ համար իջևանելու տեղ որոնէ , գիշերը կրակի մէջ որ ձեր գնալու ճանապարհը ձեզ ցոյց տայ , և ցերեկն էլ ամպի մէջ ։ Եւ Եհովան ձեր խօսքերի ձայնը լսեց և բարկացաւ , և երդում արաւ ասելով . Այս մարդկանցից՝ այս չար ազգիցը ոչ մի մարդ պիտի չտեսնէ այն բարի երկիրը , որ երդում արի ձեր հայրերին տալու . Բացի Յեփոնէի որդի Քաղէբից , նա կ'տեսնէ այն , և նորան կ'տամ իր կոխած երկիրը՝ և իր որդիներին , որովհետև նա կատարելապէս հետևեց Եհովային ։ Ինձ վերայ էլ բարկացաւ Եհովան ձեր պատճառով և ասաց . Դու էլ պիտի չմտնես այնտեղ . Նաւէի որդի Յեսուն քո առջև կանգնողը նա կ'մտնէ այնտեղ . զօրացրու նորան . վասն զի նա պիտի ժառանգեցնէ Իսրայէլին ։ Եւ այն ձեր երեխաները , որոնց համար ասում էիք թէ աւար կ'դառնան , և այն ձեր որդիները որ այսօր լուր և վատ չեն գիտում , նորանք կ'մտնեն այնտեղ . և նորանց պիտի տամ այն երկիրը , և նորանք կ'ժառանգեն այն ։ Բայց դուք ետ դարձէք , և չուեցէք կարմիր ծովի ճանապարհով դէպի անապատը ։
Եւ դուք պատասխանեցիք և ինձ ասացիք . Եհովայի առջև մեղք գործեցինք . մենք վեր ելնենք պատերազմենք , ինչպէս որ մեր Եհովայ Աստուածը մեզ բոլորը պատուիրեց . և ամեն մէկն իր պատերազմական զէնքն առնելով , թեթևամտութեամբ ուզեցիք լեառը վեր երթել ։ Եւ Եհովան ինձ ասաց . Ասիր նորանց . Մի երթէք և մի պատերազմիք , վասն զի ես ձեր միջումը չեմ . մի դուցէ ձեր թշնամիների առջև ջարդուիք ։ Ես էլ ձեզ հետ խօսեցի , բայց դուք չլսեցիք , այլ Եհովայի հրամանին հակառակեցիք , և յամառութիւն արիք ու լեառը վեր եկաք ։ Եւ այն լեռնումը բնակող Ամորհացիները ձեր դէմը դուրս եկան ու ձեզ հալածեցին ինչպէս որ մեղուները են անում , և Սէիրումը ձեզ զարկեցին մինչև Հորմա ։ Եւ ետ դար-

ձաք և Եհովայի առջև լացիք, սակայն Եհովան ձեր ձայնին չը
46 լսեց և ձեզ ականջ չդրաւ։ Եւ Կադեսի մէջ շատ օրեր կեցաք, որչափ օրեր որ կեցաք։

ԳԼ. Բ

1 Եւ ետ դարձանք ու Կարմիր Ծովի ճանապարհով դէպի անապատը չուեցինք, ինչպէս որ Եհովան ինձ ասել էր, և շատ օրեր Սէիր լեռան շուրջը պտոյտ տուինք։
2 Եւ Եհովան ինձ հետ խօսեց և
3 ասաց. Հերիք է ձեզ այդ լեռան շուրջը պտոյտ տալը. դարձէք
4 դէպի հիւսիսային կողմը։ Եւ ժողովրդին պատուիրիր և ասիր. Դուք հիմայ անցէք կենում Սէիրում բնակող ձեր եղբարց՝ Եսաւի որդոց սահմանից, նոքանք ձեզանից պիտի վախենան, բայց
5 դուք մեծապէս զգուշացէք. Նոքանց հետ մի ծեծուիք. վասն զի ես ձեզ նոքանց երկրից մէկ ոտնաթաթ տեղ էլ ձեզ չեմ տալու, որովհետև Սէիր լեռը Եսաւին եմ տուել իբրև ժառան-
6 գութիւն։ Կերակուրը փողով ծախու առնէք նոքանցից և ուտէք, և ջուրն էլ փողով ծախու
7 առնէք նոքանցից և խմէք. Վասն զի քո Եհովայ Աստուածը օրհնեց քեզ քո ձեռքի ամեն գործքերի մէջ. նա գիտէ քո գընացքը այս մեծ անապատումը, ահա քառասուն տարի է քո Եհովայ Աստուածը քեզ հետ է, և մի բանի պակասութիւն չքաշեցիր։
8 Եւ մենք անցանք մեր եղբարց՝ Եսաւի որդոց մօտովը, որոնք Սէիրում բնակում էին, դաշտի ճանապարհովը՝ Ելաթից և Գասիոն-գաբերից. և դառնալով Մովաբի անապատի ճանապարհովը անցանք։ 9 Եւ Եհովան ինձ ասաց. Մովաբացիներին թշնամութիւն մի անիր, և նոքանց հետ պատերազմ մի անիր. վասն զի նոքանց երկրից քեզ ժառանգութիւն չեմ տալու, որովհետև Արը Լովտի որդոցը տուի իբրև ժառանգութիւն։ (Էմիմներն էին առաջուց այնտեղ բնակում, որոնք մեծ և բազմաթիւ և Ենակիմների պէս երկայնահասակ ազգ էին։ Նորանք էլ Ենակիմների պէս Հրեանների համարվում. և Մովաբացիք նորանց Էմիմ էին կոչում։ Եւ Սէիրում առաջուց Քոռեցիք էին բնակում, բայց Եսաւ որդիքը նորանց քշեցին և նորանց տեղը բնակեցին. ինչպէս որ Իսրայէլացիք արին իրանց ժառանգութեան երկրին, որ Եհովան տուաւ նորանց։) Հիմայ վեր կացէք Զարեդ ձորովն անցէք. և մենք անցանք Զարեդ ձորովը։

Եւ այն օրերը՝ որ գնացինք Կադես-բառնեայից մինչև որ Զարեդ ձորովն անցանք՝ երեսուն ութը տարի է. մինչև որ բանակի միջից պատերազմող մարդկանց այն բոլոր ազգը վերջացաւ, ինչպէս որ Եհովան նորանց երդուեց որ լինէ։ Եւ Եհովայի ձեռքն էլ նորանց վերայ էր, նորանց բանակի միջիցը բնաջինջ անելու համար՝ մինչև որ վերջանան։

Եւ երբոր բոլոր պատերազմող մարդիկը ժողովրդի միջից մեռան վերջացան, Եհովան խօսեց ինձ հետ ասելով. Դու այսօր Մովաբի սահման Արովը անցես կենում, և մօտենում ես դէպի Ամմոնի որդիներին. նորանց հետ թշնամութիւն մի անիր, և նորանց հետ մի ծեծուիր. վասն զի Ամմոնի որդոց երկրիցը քեզ ժառանգութիւն չեմ տալու, որովհետև այն Ղովտի որդիներին տուի իբրև ժառանգութիւն։ (Նա էլ էր հսկաների երկիր համարվում. առաջուց այնտեղ հսկաներ էին բնակում. և Ամմոնացիք նորանց Զամզումիմ էին կոչում. Ենակիմների պէս մեծ և բազմաթիւ և երկայնահասակ ազգ էին. բայց Եհովան նորանց բնաջինջ արաւ նորանց առջև որ քշեցին նորանց և նորանց տեղը բնակեցին. Ինչպէս որ Սէիրում բնակող Եսաւի որդիների համար արաւ, երբոր

Բոռեցիներին բնակչինչ արաւ նո-
րանց առջև. և նորանց քշեցին,
և նորանց տեղը բնակեցին մինչև
23 այս օրը։ Եւ Աւացիները՝ որ մին-
չև Գազա գիւղաքաղաքներուն
էին բնակուն Կափթորից դուրս
եկող կափթորացիք կորցրին նո-
րանց, և նորանց տեղը բնակե-
24 ցին։) Ձեր կացէք չուեցէք և
Աւնան ձորովն անցէք. ահա քո
ձեռքը տուի Եսեբոնի թագաւոր՝
Ամօրհացի Սեհոնին և նորա եր-
կիրը. սկսիր՝ տիրիր, և նորա հետ
25 պատերազմ արա։ Այսօր կսկսեմ
քո վախը և սոսկումը բոլոր երկ-
նից տակ եղող ազգերի վերայ
դնել, որ քո համբաւը լսելով քո
երեսից դողան և տագնապեն։
26 Եւ դեսպաններ ուղարկեցի կա-
դեմոթի անապատից Եսեբոնի
Սեհոն թագաւորի մօտ խաղաղու-
27 թեան խօսքերով ասելով. Թող
անցնեմ քո երկրովը. միշտ ճա-
նապարհով կ'գնամ, աջ կամ
28 ձախ կողմը չեմ խոտորիլ։ Կերա-
կուրը փողով ծախիր ինձ որ ու-
տեմ, և ջուրը փողով տուր ինձ
որ խմեմ. միայն թէ ոտքերովս
29 անցնեմ. ինչպէս որ Սէիրում բը-
նակող Եսաւի որդիքը և Արում
բնակող Մովաբացիք ինձ արին.
մինչև որ Յորդանանէն անց-
նեմ դէպի այն երկիրը, որ մեր
Եհովայ Աստուածը տալիս է մեզ։
30 Բայց Եսեբոնի Սեհոն թագաւո-
րը չուզից, որ մենք նորանով
անցնենք. որովհետև քո Եհովայ
Աստուածը նորա հոգին խստաց-
րել և սիրտը կարծրացրել էր,
որ նորան քո ձեռքը տայ, ինչ-
31 պէս որ այսօր է։ Եւ Եհովան
ինձ ասաց. Ահա սկսեցի քեզ
տալ Սեհոնն և նորա երկիրը.
սկսիր, տիրիր, որ նորա երկիրը
ժառանգես։
32 Եւ Սեհոն՝ ինքը իր բոլոր ժո-
ղովրդովը Յասայի մէջ մեզ դէմ
դուրս եկաւ պատերազմի համար։
33 Եւ մեր Եհովայ Աստուածը նո-
րան մեր ձեռքը մատնեց, և մենք
նորան և նորա որդիներին և նո-
րա բոլոր ժողովրդին զարկեցինք.
34 Եւ այն ժամանակը նորա բոլոր
քաղաքներն առինք, և բոլոր քա-
ղաքները, մարդիկը, կանայքը և
տղայքը նզովեցինք. մէկն էլ չը
35 թողուցինք ողջ. Միայն անա-
սունները աւար առինք և մեր ա-
ռած քաղաքների կողոպուտը։
36 Աւնան ձորի եզերքի Արոերից՝ և
ձորի մէջ եղած քաղաքից մինչև
Գաղաադը մի քաղաք չեղաւ որ
մեզ դէմ կեցաւ. մեր Եհովայ
Աստուածը ամենն էլ մեր ձեռքը
37 մատնեց։ Միայն թէ չմօտեցար
Ամմոնի որդոց երկրին, և բոլոր
Յաբոկ ձորի կողմերին և լեռնային
քաղաքներին, և այն ամենին մին չ
որ մեր Եհովայ Աստուածը մեզ
արգելել էր։

Գլ. Գ

Եւ դարձանք և վեր ելանք Բա- 1
սանի ճանապարհով, և Բասանի
Ովգ թագաւորը դուրս եկաւ մեզ
դէմ ինքը և իր բոլոր ժողովուր-
դը պատերազմի Եդրայի։ Եւ Ե- 2
հովան ինձ ասաց. Նորանից մի
վախենար, վասն զի քո ձեռքն
եմ յանձնել նորան և նորա բոլոր
ժողովուրդը և երկիրը. և նորան
կանես, ինչպէս որ արիր Եսեբո-
նում բնակող Ամօրհացոց Սեհոն
թագաւորին։ Եւ մեր Եհովայ Ա- 3
ստուածը մեր ձեռքը տուաւ Բա-
սանի Ովգ թագաւորին էլ և նորա
բոլոր ժողովուրդը. և մենք զար-
կեցինք նորանց, մինչև որ նորան-
ցից մէկն էլ ողջ չմնաց։ Եւ նոյն 4
ժամանակը նորա բոլոր քաղաք-
ներն առինք. քաղաք չմնաց, որ
առած չվնէինք նորանցից. վաթ-
սուն քաղաք՝ այսինքն բոլոր Ար-
գովբի գաւառը՝ Ովգի թագաւո-
րութիւնը Բասանի մէջ։ Սորանց 5
ամենն էլ բարձր պարիսպներով,
դռներով և դռնափակներով ամ-
րացած քաղաքներ էին, բացի
անպարիսպ քաղաքներից, որ խիստ
շատ էին։ Եւ նորանց նզովեցինք, 6
ինչպէս որ Եսեբոնի Սեհոն թա-
գաւորին արինք, ամեն քաղաք-
ներում մարդկանցը, կանայքն
ու տղայքը փչացնելով. Սակայն 7
բոլոր անասուններն ու քաղաք-

ների աւարները մեզ համար առնունք։ Եւ այն ժամանակը Յորդանանու այն կողմին Ամորհացոց երկու թագաւորներուն ձեռքէն առնունք երկիրը՝ Առնոն ձորէն մինչև Հերմոն լեառը։ (Միդոնացիք Հերմոնին Սարիոն էին կոչում, բայց Ամորհացիք նորան Սանիր էին կոչում.) Բոլոր դաշտի քաղաքները՝ բոլոր Գաղաադը և բոլոր Բասանը մինչև Սելքա և Եդրայի, Բասանում եղած Ովգի թագաւորութեանը քաղաքները։ Վասն զի հսկաներէն միայն Բասանի Ովգ թագաւորն էր մնացել. ահա նորա մահիճը՝ երկաթի մահիճ է. միթէ Ամմոնի որդոց Ռաբբայում չէ. երկայնութիւնը՝ իննը կանգուն է, և լայնութիւնը չորս կանգուն՝ մարդու կանգունով։

Եւ նոյն ժամանակը այս երկիրը առնունք՝ Առնոն ձորի վերայ եղող Արոերից մինչև Գաղաադ լեռան կէսը. և նորա քաղաքները Ռուբենեանց և Գադեանց տուի։ Եւ Գաղաադի մնացորդը և բոլոր Բասան՝ Ովգի թագաւորութիւնը Մանասէի կէս ցեղին տուի, Արգովբի բոլոր գաւառը՝ բոլոր Բասանի հետ, որ հսկայից երկիր էր կոչվում։ Մանասեան Յայիրը առաւ Արգովբի բոլոր գաւառը մինչև Գեսուրացոց և Մաքաթացոց սահմանը, և նորանց իր անունովը մինչև այսօր Բասան–Հաւօթ–յայիր կոչեց։ Եւ Գաղաադը Մաքիրին տուի։ Եւ Ռուբենեանց և Գադեանց տուի Գաղաադից մինչև Առնոն ձորը, ձորի մէջտեղը և սահմանը և մինչև Յաբոկ ձորը, որ Ամմոնի որդոց սահմանն է, նաև դաշտը և Յորդանանը և սահմանը Քենեռեթից մինչև դաշտի ծովը, այսինքն մինչև Աղի ծովը, Ասեդոթ–փասգայի տակ արևելեան կողմում։

Եւ այն ժամանակը ձեզ պատուիրեցի և ասացի. Ձեր Եհովայ Աստուածը այս երկիրը ձեզ տուաւ իրրև ժառանգութիւն. պատրաստուած ձեր եղբայրներ Իսրայէլի որդոց առջև դնացէք, ով բոլոր քաջերդ. բայց ձեր կանայքը, ձեր որդիները և ձեր անասունները, (գիտեմ որ ձեր անասունները շատ են) թող մնան ձեր քաղաքներուդ մէջ, որոնք ես ձեզ տուի, Մինչև որ Եհովան ձեր եղբայրներին էլ ձեզ պէս հանգըստացնէ, և մինչև որ նորանք էլ ժառանգեն այն երկիրը՝ որ ձեր Եհովայ Աստուածը Յորդանանու այն կողմին նորանց պիտի տայ. և յետոյ ձեր ամեն մէկը դառնայ իր ժառանգութեանը՝ որ ես ձեզ տուի։

Այն ժամանակ Յեսուին պատուիրեցի ասելով. Աչքերդ տեսան ինչ որ ձեր Եհովայ Աստուածը այս երկու թագաւորներին արաւ. այնպէս էլ անելու է Եհովան այն ամեն թագաւորութիւններին, որոնցով դու պիտի անցնես. նորանցից չվախենաք. վասն զի ձեր Եհովայ Աստուածը ինքը կը պատերազմէ ձեզ համար։ Եւ այն ժամանակ Եհովային աղաչեցի և ասացի. Ով Տէր Եհովայ, դու սկսեցիր քո մեծութիւնը և քո զօրաւոր ձեռքը քո ծառային ցոյց տալու. վասն զի երկնից մէջ կամ երկրի վերայ ո՞վ է այն աստուածը, որ քո գործքերի և քո զօրութեան պէս անէ. Աղաչում եմ՝ թող անցնեմ, և Յորդանանու այն կողմի բարի երկիրը. այն բարի լեառը և Լիբանանը տեսնեմ։ Բայց Եհովան բարկացաւ ինձ վերայ ձեր պատճառովը և ինձ չլսեց. և Եհովան ինձ ասաց. Հերիք է քեզ. այլ ևս այդ բանը ինձ չասես. Վեր ելիր Փասգայի գագաթը, աչքերդ բարձրացրու և դէպի արևմուտք, հիւսիս, հարաւ և արևելք, և քո աչքերովը տես. վասն զի դու այս Յորդանանից պիտի անց չկենաս. Եւ Յեսուին պատուիրիր և նորան զօրացրու, և նորան սիրտ տուր. վասն զի նա կանցնէ այս ժողովրդի առջև և կ'ժառանգեցնէ նորանց այն երկիրը որ տեսանում ես։ Եւ մնինք Հովիտի մէջ Բեթփեղովրի դէմ նստեցինք.

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29

ԳԼ. Դ

1 Եւ հիմա, ով Խրայէլ, լսիր այն կանոնները և դատաստանները որ ես ձեզ սովորեցնում եմ որ անէք, որպէս զի ողջ մնաք, և մանէք ժառանգէք այն երկիրը որ ձեր Հայրերի Եհովայ Աստուածը տալիս է ձեզ։ 2 Չաւելացնէք այն խօսքի վերայ, որ ես ձեզ պատուիրում եմ և նորանից չպակասացնէք, որ ձեր Եհովայ Աստուծոյ պատուիրանքները պահէք, որոնք ես ձեզ պատուիրում եմ։ 3 Ձեր աչքերը տեսան ինչ որ Եհովան Բեղփեգովրին արաւ, վասն զի Բեղփեգովրի ետևից գնացող բոլոր մարդկանցը քո Եհովայ Աստուածը քո միջից փչացրեց։ 4 Բայց դուք, որ ձեր Եհովայ Աստուածին յարեցաք, 5 ամենքդ այսօր ողջ էք։ Ահա սովորեցրի ձեզ կանոններ և դատաստաններ, ինչպէս որ իմ Եհովայ Աստուածը պատուիրեց ինձ, որ այնպէս անէք այն երկրում, ուր որ պիտի մանէք նորան ժառանգելու համար։ 6 Հիմա պահեցէք և արէք. վասն զի նա է ձեր իմաստութիւնը և հանճարը ազգաց առջև, որոնք այս բոլոր կանոնները լսելով պիտի ասեն. Իրաւ այս մեծ ազգը մի իմաստուն և հանճարեղ ժողովուրդ է։ 7 Վասն զի ո՞րն է այն մեծ ազգը, որ իր աստուածները իր մօտ լինին ինչպէս մեր Եհովայ Աստուածը ամեն բանում, 8 որ նորանից խնդրում ենք։ Եւ ո՞րն է այն մեծ ազգը, որ արդար կանոններ ու դատաստաններ ունենայ իմ այսօր ձեր առջև դրած 9 այս բոլոր օրէնքի նման։ Միայն զգոյշ եղիր և քո հոգուդին շատ զգուշութիւն արա, որ մի գուցէ մոռանաս այն բաները որ քո աչքերը տեսան, և մի գուցէ սրտիցդ դուրս գան քո կենաց բոլոր օրերում, այլ քո որդիներին և որդոց որդիներին սովորեցրնես։ 10 Այն օրը որ դու Քորեբում կանգնել էիր քո Եհովայ Աստուծոյ առջև, Եհովան ինձ ասաց. ժողովրդին ինձ մօտ ժողովիր, և իմ խօսքերը լսել տամ նորանց, որպէս զի սովորին ինձանից վախենալը բոլոր այն օրերը որ երկրի վերայ ապրին, և իրանց որդիներին էլ սովորեցնեն։ 11 Եւ դուք մօտեցաք և կանգնեցիք այն լեռան տակ. և լեռը մինչև բուն երկինքը կրակով բորբոքել էր, խաւարով ամպով, և մառախուղով։ 12 Եւ Եհովան խօսեց ձեզ հետ կրակի միջից. խօսքերի ձայնը դուք լսեցիք. բայց մի նմանութիւն չտեսաք, բայց միայն ձայն։ 13 Եւ իմացրեց ձեզ իր ուխտը որ պատուիրեց ձեզ անել տասը պատուիրանքները. և նորանց գրեց երկու հատ քարի տախտակների վերայ։ 14 Եւ այն ժամանակ Եհովան ինձ պատուիրեց, որ ձեզ կանոններ և դատաստաններ սովորեցնեմ, որ դուք նորանց գործադրէք այն երկրում, ուր որ կ'մանէք նորան ժառանգելու համար։

15 Եւ ձեր հոգիներին շատ զգուշութիւն արէք. որովհետև ոչ մի նմանութիւն չտեսաք այն օրը որ Եհովան Քորեբում կրակի միջից ձեզ հետ խօսեց, 16 Մի գուցէ անօրինաբար, և ձեզ համար կուռք՝ մի որ և իցէ կերպարանքի պատկեր՝ արուի և կամ էգի նմանութիւնը, 17 Երկրի վերայ եղող անասունի նմանութիւնը, օդի մէջ թռչող թեւաւոր թռչնի նմանութիւնը, 18 Երկրի վերայ սողոսկող նմանութիւնը, ևմ երկրի տակ ջրերում եղող ձկան նմանութիւնը շինէք. 19 Եւ մի գուցէ աչքերդ դէպի երկինքը բարձրացնես, և տեսնես արեգակը կամ լուսինը կամ աստղերը՝ երկնից բոլոր զօրքը և խաբուես, և նրանց երկրպագութիւն անես, և նորանց պաշտես, որոնք քո Եհովայ Աստուածը բոլոր երկնից տակին եղող ազգերի համար նշանակեց։ 20 Բայց Եհովան ձեզ առաւ, և ձեզ երկաթի հնոցիցը՝ եգիպտոսիցը հանեց, որ իր *սեպհա-

---

*Եբր. ժառանգութեան

կան ժողովուրդ լինիք, այս օրուայ պէս։
21 Եւ եհովան ձեր պատճառով բարկացաւ ինձ վերայ և երդում արաւ որ Յորդանանիցը չանցնեմ, և չմտնեմ այն բարի երկիրը՝ որ քո եհովայ Աստուածը քեզ է տալիս իբրև ժառանգութիւն.
22 Վասն զի ես այս երկրումը կը մեռնեմ, և Յորդանանիցը չեմ անցնիլ. բայց դուք կանցնէք և այն բարի երկիրը կ'ժառանգէք։
Զգոյշ կացէք, մի դուցե ձեր եհովայ Աստուծոյ ձեզ հետ արած ուխտը մոռանաք, և ձեզ համար կուռք՝ մի որ և իցէ բանի նմանութիւնը շինէք, որ քո եհովայ Աստուածը քեզ արգելից։
24 Վասն զի քո եհովայ Աստուածը մաշող կրակ է. նա նախանձոտ Աստուած է։
25 Երբոր դուք որդիներ և որդոց որդիներ ծնելու լինիք, և այն երկրի մէջ բնակելու լինիք, և անբիծանաք, և կուռք՝ մի որ և իցէ բանի նմանութիւն շինէք, և ձեր եհովայ Աստուծոյ առջև այս չարութիւնը անէք որ նորան բարկացնէք.
26 Ահա այսօր երկինքն ու երկիրը ձեզ համար վկայ եմ կանչում, որ դուք անպատճառ շուտով բնաջինջ կ'լինիք այն երկրիցը, որ Յորդանանովն անցկենալով կ'ժառանգէք. այնտեղ ձեր կեանքը երկար չեն լինել, այլ բոլորովին կ'փչանաք։
27 Եւ եհովան ձեզ կ'ցրուէ ազգերի մէջ, և սակաւաթիւ կ'մնաք այն ազգերի մէջ, ուր որ եհովան
28 ձեզ կ'քշէ։ Եւ այնտեղ աստուածներ կ'պաշտէք, որ մարդու ձեռաց գործք են՝ քար և փայտ որոնք ոչ տեսնում են, և ոչ լսում, ոչ ուտում են և ոչ հոտոտում։
29 Եւ այնտեղից կորնչես քո եհովայ Աստուծոյն. և կը գտնես, եթէ բոլոր սրտովդ և բոլոր հոգովդ նորան խնդրես։
30 Երբոր նեղութիւն ունենաս և այս բոլոր բանները վերջի օրերը քեզ պատահեն, և դու քո եհովայ Աստուծոյն դառնաս և
31 նորա ձայնին լսես, քանի որում քո եհովայ Աստուածը ողորմած Աստուած է, քեզ չի թողիլ, և քեզ չի փչացնիլ. և քո հայրերին երդում արած ուխտը չի մոռանալ։
32 Որեմն հարցրու քեզանից առաջ եղած առաջի օրերի մասին՝ այսինքն Աստուած մարդուս երկրի վերայ ստեղծած օրից հետէ երկնից մէկ ծայրից մինչև միւս ծայրը, թէ արդեօք սորա պէս մի մեծ բան եղե՞լ է, և սորա պէս
33 մի բան լսե՞լ է։ Արդեօք մէկ ազգ լսե՞լ է Աստուծոյ ձայն, որ խօսէ կրակի միջից ինչպէս որ դու լսեցիր և ողջ մնացած լինի.
34 Կամ թէ Աստուած փորձե՞լ է որ գայ մի ազգը մի ազգի միջից իր համար առնէ փորձերով, նշաններով հրաշքներով, պատերազմով, զօրաւոր ձեռքով և բարձր բազուկով և մեծ սոսկութիւններով, ինչպէս որ ձեր եհովայ Աստուածը եգիպտոսումը ձեզ համար այս բոլոր բաները արաւ
35 ձեր աչքերի առջև։ Սա քեզ ցոյց տրուեցաւ, որ գիտենաս թէ եհովան է Աստուած. չկայ մի ուրիշը բացի նորանից։
36 Երկնքից լսել տուաւ քեզ իր ձայնը, որ քեզ խրատէ, և երկրի վերայ իւր մեծ կրակը քեզ ցոյց տուաւ, և նորա խօսքերը կրակի միջից լսեցիր։
37 Եւ քո հայրերին սիրելու համար նորանցից յետոյ նորանց սերունդը ընտրեց, և իր երեսաւը մեծ զօրութիւնով քեզ եգիպտոսից հանեց.
38 Որպէս զի քեզանից մեծ և զօրաւոր ազգեր քո առջևիցը քշէ, և քեզ տանէ նորանց երկիրը քեզ ժառանգութիւն տալու համար, ինչպէս որ այսօր։
39 Եւ այսօր գիտացիր և սրտիդ մէջը դիր, որ եհովան է Աստուած վերը երկնից մէջ և ցածը երկրիս վերայ. ուրիշը չկայ։
40 Եւ պահես նորա կանոններն ու պատուիրանքները, որոնք ես այսօր քեզ պատուիրում եմ, որ քեզ համար և քեզանից յետոյ քո որդոցը համար բարի լինի, և քո օրերը երկար լինին այն երկրի վերայ՝ որ քո եհովայ Աստուածը

տալիս է քեզ ամեն ժամանակի
համար։
41 Ահն ժամանակ Մովսէսը երեք
քաղաք ջոկեց Յորդանանու այս
42 կողմումը դէպի արևելք. Որպէս
զի այնտեղ փախչէ մարդասպա-
նը, որ անգիտութեամբ սպանել
է իր դրացուն առանց նորա դէմ
երէկուանից և միւս օրուանից ա-
տելութիւն ունենալու. և այս
քաղաքներին մէկի մէջ փախչէ և
43 ողջ մնայ։ Դաշտային երկրի վե-
րայ անապատի միջի Բոսորը Ռու-
բենեանց համար, և Գաղաադու
միջի Ռամովթը Գադեանց հա-
մար, և Բասանի մէջ Գովղանը
Մանասէանց համար։
44 Սա է այն օրէնքը որ Մովսէան
45 Իսրայէլի որդոց առջև դրաւ։ Սա-
բանք են այն վկայութիւնները,
կանոնները և դատաստանները,
որոնք Մովսէան Իսրայէլի որդոց
հետ խօսեց՝ նորանք Եգիպտոսից
46 դուրս գալու ժամանակին, Յոր-
դանանու այս կողմումը փեթփե-
գովրի դիմացի հովտի մէջ, Եսե-
բոնումը բնակող Ամորհացոց Սե-
հոն թագաւորի երկրումը, որին
Մովսէսը և Իսրայէլի որդիքը
զարկեցին երանց Եգիպտոսից
47 դուրս գալու ժամանակին։ Եւ
առին նորա երկիրը և Բասանի
Ովգ թագաւորի երկիրը՝ այսինքն
Ամորհացոց երկու թագաւորների
երկիրը՝ որ Յորդանանու այս արե-
48 ւելեան կողմումն էին, Առնոն
ձորի եզերքի Արոերից մինչև Սիոն
49 լեառը որ Հերմոնն է, Եւ Յոր-
դանանու այս արևելեան կողմում
եղած բոլոր դաշտը մինչև դաշտի
ծովը որ Աւազով-փոսագոյն ցա-
ծումն է։

ԳԼ. Ե

1 Եւ Մովսէսը կանչեց բոլոր Իս-
րայէլին և նորանց ասաց. Լսիր,
ով Իսրայէլ, այս կանոնները և
դատաստանները, որոնք ես այսօր
ձեր ականջներին ասում եմ. ա-
մփոփեցէք նորանց և գգուշա-
2 թեամբ գործադրեցէք։ Մեր Ե-
հովայ Աստուածը Հորեբի վերայ
մեզ հետ ուխտ արաւ։ Եհովան
3 այս ուխտը մեր հայրերի հետ չա-
րաւ, այլ մեզ հետ, որոնք ա-
մենքս այսօր այստեղ ողջ ենք։
4 Դէմ առ դէմ խօսեց Եհովան
ձեզ հետ լեառնումը կրակի մի-
ջից. (Ես այն ժամանակ Եհո- 5
վայի և ձեր միջը կանգնած էի,
որ Եհովայի խօսքերը ձեզ պատ-
մեմ. վասն զի դուք կրակից վա-
խենալով վեր չելաք լեառը) և
ասաց.
6 Ես եմ Եհովան քո Աստուածը՝
որ քեզ Եգիպտոսի երկրից՝ ծա-
ռայութեան տանից հանեցի։
7 Ուրիշ Աստուածներ չունենաս
իմ առջևը։
8 Քեզ համար կուռք չշինես,
ոչ մի բանի նմանութիւն վերև
առմ երկնից մէջ կամ ցածը երկ-
րի վերայ՝ կամ երկրի տակի ջրե-
րի մէջ. Երկրպագութիւն չանես 9
նորանց, և նորանց չպաշտես.
վասն զի ես քո Եհովայ Աստու-
ծը՝ նախանձոտ Աստուած եմ,
որ կ'հատուցանեմ հայրերի անօ-
րէնութիւնը որդոց վերայ՝ մինչև
նորանց երրորդ և չորրորդ ազգը՝
որ ատում են ինձ. Եւ ողորմու- 10
թիւն կանեմ նորանց մինչև հա-
զար ազգը՝ որ սիրում են ինձ և
պահում իմ պատուիրանքները։
11 Քո Եհովայ Աստուծոյ անունը
զուր տեղը չյիշես. վասն զի Ե-
հովան անպատիժ չթողիլ իր ա-
նունը զուր տեղը յիշողին։
12 Զգուշացիր հանգստութեան օ-
րը սուրբ պահելու, ինչպէս որ
քո Եհովայ Աստուածը քեզ
13 պատուիրեց։ Վեց օր աշխատես
14 և բոլոր գործդ անես. Բայց եօթ-
ներորդ օրը՝ քո Եհովայ Աստու-
ծոյ հանգստութեան օրն է. ոչ
մի գործ չգործես, ոչ դու, ոչ
քո որդին, ոչ քո աղջիկը, ոչ
քո ծառան, ոչ քո աղախինը,
ոչ քո եզը, ոչ քո էշը, և ոչ
քո ամեն անասունը, և ոչ քո
տան եղած օտարականը, որ քո
ծառան և աղախինն էլ քեզ պէս
հանգստանայ. Եւ յիշիր որ դու 15
ծառայ էիր Եգիպտոսի երկրումը,
և քո Եհովայ Աստուածը զօրա-

ուր ձեռքով և բարձր բազուկով քեզ հանեց այնտեղից. նորա համար քո Եհովայ Աստուածը քեզ պատուիրեց որ հանգստութեան օրը պահես։

16 Պատուիր քո հօրը և քո մօրը, ինչպէս որ քո Եհովայ Աստուածը քեզ պատուիրեց, որ քո օրերը երկար լինին, և քեզ համար բարի լինի այն երկրի վերայ որ քո Եհովայ Աստուածը քեզ տալիս է։

17 Մի սպաներ։

18 Եւ մի շնար։

19 Եւ մի գողանար։

20 Եւ քո դրացու դէմ սուտ մի վկայեր։

21 Եւ քո դրացու կնոջը մի ցանկանար։ Եւ մի ցանկանար քո դրացու տանը՝ ոչ նորա արտին՝ ոչ նորա ծառային՝ ոչ նորա աղախնին՝ ոչ նորա եզին՝ կամ նորա էշին՝ և քո դրացու ոչ մէկ բանին։

22 Եհովան այս խօսքերը խօսեց այն լեռան վերայ, կրակի, ամպի և մառախուղի միջից բարձր ձայնով ձեր բոլոր ժողովքի հետ, և ոչինչ չաւելացրեց. և երկու հատ քարի տախտակների վերայ 23 գրեց նորանց, և ինձ տուաւ։ Եւ եղաւ երբոր լսեցիք այն ձայնը խաւարի միջից, լեռը կրակով վառուած ժամանակը, ինձ մօտ եկաք դուք, այսինքն ձեր ցեղերի բոլոր դիւանագրները և ձեր ծերերը, և ասացիք. Ահա մեր Եհովայ Աստուածը մեզ ցոյց է տուել իր փառքը և մեծութիւնը, և նորա ձայնը լսում ենք կրակի միջից. այս օրը տեսանք որ Աստուած մարդու հետ խօսեց, և 25 մարդը ողջ մնաց։ Եւ հիմայ ի՞նչու մեռնենք. (վասն զի այս մեծ կրակը մեզ ապառելու է.) եթէ մենք մեր Եհովայ Աստուծոյ ձայնը կրկին լսելու լինինք կ'մեռնենք։ 26 Վասն զի ամեն մարմնից ո՞վ է նա որ կրակի միջից խօսող կենդանի Աստուծոյ ձայնը մեզ 27 պէս լսեց և ողջ մնաց։ Դու մօտացիր և լսիր ամենը ինչ որ մեր Եհովայ Աստուածն ասում է, և դու ասիր մեզ ինչ որ մեր Եհովայ Աստուածը քեզ հետ խօսէ, մենք կ'լսենք և կ'կատարենք։ 28 Եւ Եհովան ձեր խօսքերի ձայնը լսեց, երբոր դուք ինձ հետ խօսում էիք, և Եհովան ինձ ասաց. Այս ժողովրդի քեզ ասած խօսքերի ձայնը լսեցի. նորանց ամեն ասածը լաւ է։ Երանի թէ 29 նորանց սիրտն էլ այնպէս լինէր, որ ինձանից վախենալով իմ բոլոր պատուիրանքները պահէին ամեն ժամանակ, որպէս զի իրանց համար բարի լինէր և իրանց որդոցն էլ յաւիտեան։ Գնա նո- 30 րանց ասիր. Ետ դարձէք դուք ձեր վրաններըն։ Բայց դու այստեղ 31 ինձ հետ կանգնիր, և ասեմ քեզ բոլոր պատուիրանքը, կանոնները և դատաստանները, որ պիտի սովորեցնես նորանց, որ կատարեն այն երկրում՝ որ ես նորանց տալիս եմ ժառանգութեան համար։

Եւ զգոյշ եղէք որ անէք ինչպէս 32 որ ձեր Եհովայ Աստուածը ձեզ պատուիրել է, և աջ կամ ձախ չխոտորէք։ Ձեր Եհովայ Աստու- 33 ծոյ ձեզ պատուիրած բոլոր ճանապարհներով գնացէք, որպէս զի ապրէք, և ձեզ համար բարի լինի, և ձեր ժառանգելու երկրում ձեր կեանց օրերը երկար լինին։

Գլ. Զ

Եւ սորանք են այն պատուի- 1 րանքները, կանոնները և դատաստանները, որ ձեր Եհովայ Աստուածը պատուիրեց՝ ձեզ սովորեցնելու համար, որ անէք այն երկրում ուր որ մտնելու էք նո- 2 րան ժառանգելու համար, որպէս զի քո Եհովայ Աստուածից վախենաս, և պահես նորա ամեն կանոններն ու պատուիրանքները՝ որ ես քեզ պատուիրում եմ՝ թէ դու, թէ քո որդին և թէ քո որդու որդին, քո կենաց բոլոր օրերում, որ քո օրերը երկար լինին։ Արդ, ով Իս- 3 րայէլ, լսիր, և զգուշութիւն արա կատարելու, որ քեզ համար բարի լինի, և դուք շատ բազ-

մանաք կաթ ու մեղր բղխող երկրումը, ինչպես որ քո հայրերի Եհովայ Աստուածը քեզ խոստացաւ։

4 Լսիր, ով Իսրայէլ, մեր Եհովայ Աստուածը Եհովան մէկ է։
5 Եւ սիրիր քո Եհովայ Աստուծոյն բոլոր սրտովդ, բոլոր հոգովդ և
6 բոլոր զօրութիւնովդ։ Եւ այս խօսքերը որ ես այսօր քեզ պատուիրեցի, քո սրտի մէջ լինին։
7 Եւ կրկնիր նորանք քո որդոցը՝ խօսիր նորանց վերայ, քո տան մէջ նստած ժամանակդ և ճանապարհ գնացած ժամանակդ, և պառկելս և վեր կենալիս.
8 և նորանց կապիր նշանի համար ձեռքիդ վերայ, ճակատանոց լինին աչքերիդ մէջտեղը։
9 Նաև քո տան դրանդեացը վերայ և դռներիդ վերայ դրիր նորանց։
10 Եւ երբոր քո Եհովայ Աստուածը քեզ տանէ այն երկիրը՝ որի համար քո հայրերին՝ Աբրահամին, Իսահակին և Յակոբին երդում արաւ, որ քեզ տայ՝ մեծ և գեղեցիկ քաղաքներ, որոնք դու չես շինել,
11 բարիքներով լիքը տներ որոնք դու չես լցրել, և փորած ջրհորներ որոնք դու չես փորել, այգիներ և ձիթենիներ, որոնք դու չես տնկել. և երբոր ուտես և
12 կշտանաս, Զգոյշ կաց, մի գուցէ մոռանաս Եհովային որ քեզ Եգիպտոսի երկրից՝ ծառայութեան տունից հանեց։
13 Քո Եհովայ Աստուածդմէ վախեցիր, և նորան պաշտիր և նորա անունով երդում արա։
14 Զդնաք օտար աստուածներէ՝ ձեր շուրջը եղող ժողովրդոց աստուածներէ հետ-
15 ևից. վասն զի նախանձոտ Աստուած է քո մէջ է, մի գուցէ քո Եհովայ Աստուծոյ բարկութիւնը քեզ վերայ բորբոքէ, և քեզ երկրի երեսից բնաջինջ անէ։
16 Ձեր Եհովայ Աստուածդն չփորձէք, ինչպէս որ Մասսայի մէջ
17 փորձեցիք։ Զգուշութեամբ պահեցէք ձեր Եհովայ Աստուծոյ պատուիրանքները, և նորա վկայութիւնները և կանոնները որ պատուիրել է ձեզ։
18 Եւ անես ինչ որ Եհովայի աչքը ուղիղ և հաճելի է, որ քեզ համար բարի լինի, և մտնես ժառանգես այն բարի երկիրը՝ որ Եհովան երդում արաւ քո հայրերին,
19 Որ քո ամեն թշնամիներին քո առջևից հալածես, ինչպես որ Եհովան ասաց։
20 Երբոր հարցնէ քեզ քո որդին հարցնէ և ասէ՝ Ի՞նչ են այս վկայութիւնները, կանոնները և դատաստանները, որոնք մեր Եհովայ Աստուածը ձեզ պատուիրեց.
21 Ասէս. Մենք եգիպտոսումը փարաւոնին ծառայ էինք, և Եհովան մեզ հանեց զօրաւոր ձեռքով.
22 Նաև Եհովան մեծ և աստկալի նշաններ և հրաշքներ արաւ. Եգիպտոսի վերայ, փարաւոնի վերայ և նորա բոլոր տան վերայ մեր աչքերի առջև.
23 Եւ մեզ հանեց այնտեղից, որ մեզ տանէ որ մեր հայրերին երդումով խոստացած երկիրը տայ մեզ։
24 Եւ Եհովան մեզ պատուիրեց, որ այս բոլոր կանոնները կատարենք, և մեր Եհովայ Աստուածանից վախենանք, որ մեզ համար բարի լինի ամեն ժամանակ, որ մեզ ողջ պահէ ինչպէս որ այսօր։
25 Եւ մեզ համար արդարութիւն լինի, եթէ մեր Եհովայ Աստուծոյ առջև այս բոլոր պատուիրանքները կատարելու զգուշանանք ինչպէս որ մեզ պատուիրեց։

ԳԼ. Ե

1 Երբոր քո Եհովայ Աստուածը տանէ քեզ այն երկիրը, ուր որ գնում ես ժառանգելու համար, և քո առջևից շատ ազգեր հալածէ, այսինքն Քետացիներին, Գերգեսացիներին, Ամորհացիներին, Քանանացիներին, Փերեզացիներին, Եւեսացիներին, և Յեբուսացիներին, այս եօթը ազգերին որոնք քեզանից բազմաթիւ և զօրաւոր են, և քո Եհովայ Աստուածը նորանց քո ձեռքը տայ, և դու նորանց զար-

կեա, այն ժամանակ նորանց անապատճառ նզովեա. նորանց հետ ուխտ չանեա և նորանց չողորմեա.
3 Եւ նորանց հետ խնամութիւն չանեա, աղջիկդ նորա տղին չը տաս, և նորա աղջիկը քո տղին
4 չառնեա. Վ՚ասն զի քո որդիանդը իմ ծառայութիւնից կ՚դարձնեն, և նորանք օտար աստուածներ կը պաշտեն. և Եհովայի բարկութիւնը ձեզ վերայ կ՚բորբոքէ և
5 ձեզ շուտով կ՚փչացնէ: Այլ նորանց այսպէս արէք. նորանց սեղանները կործանեցէք, նորանց արձանները խորտակեցէք, նորանց Աստարովթները կտրեցէք, և նորանց քանդակուած կուռքերը կրակով այրեցէք:
6 Վ՚ասն զի դու սուրբ ժողովուրդ ես քո Եհովայ Աստուծոյ համար. քո Եհովայ Աստուածը քեզ ընտրեց, որ դու նորա համար սեփհական ժողովուրդ լինիս, երկրի երեսի վերայ եղող բոլոր ազգերի միջից:
7 Ոչ թէ ձեր ամեն ազգերից շատ լինելուն համար Եհովան ձեզ սիրեց և ձեզ ընտրեց, վասն զի դուք ամեն ազգերից քիչ էիք.
8 Այլ Եհովան ձեզ սիրելու համար և ձեր հայրերին արած երդումը պահելու համար, Եհովան ձեզ զօրաւոր ձեռքով ծառայութեան տունից հանեց, եգիպտացոց փարաւոն թագաւորի
9 ձեռքից ազատեց: Եւ գիտացիր որ քո Եհովայ Աստուածն է Աստուած, հաւատարիմ Աստուածը, որ իրան սիրողների և իր պատուիրանքները պահողների համար մինչև հազար ազգը ուխտ
10 ու ողորմութիւն է պահում: Եւ պատժում է իրան ատողներին իրանց երեսին՝ նորանց կորցնելով. իրան ատողին պարտը չուշացնում նորա երեսին է տալիս:
11 Որեմն պահիր այն պատուիրանքները, կանոնները և դատաստանները՝ որոնք ես այսօր քեզ պատուիրում եմ, որ նորանց անես:
12 Եւ պիտի լինի փոխանակ նորա, որ այս դատաստանները լսելով նորանց պահես կատարես, քո Եհովայ Աստուածն էլ քեզ հա-

մար քո հայրերին երդում արած ուխտը և ողորմութիւնը կը
պահէ. Եւ քեզ կ՚սիրէ և քեզ 13
կօրհնէ և քեզ կ՚շատացնէ. և կ՚օրհնէ քո որովայնի պտուղը, քո երկրի պտուղը, քո ցորենը, քո գինին, քո եղը, կովերիդ ծնունդը և ոչխարներիդ հօտերը այն երկրի վրայ՝ որ քո հայրերին երդում արաւ քեզ տալու համար:
Ամեն ազգերից աւելի օրհնեալ 14
կ՚լինիս. և քո մէջը և քո անասուններդի մէջ արու և էգ ամուլ չի լինիլ: Եւ Եհովան վեր կաս- 15
նէ քեզանից ամեն հիւանդութիւնները. և եգիպտացոց այն չար ցաւերը՝ որոնք գիտես, քեզ վերայ չի բերիլ, այլ նորանք քո բոլոր թշնամիների վերայ կուզարկէ: Եւ դու կ՚փչացնես այն 16
բոլոր ազգերին, որոնք քո Եհովայ Աստուածը քո ձեռքը կը տայ. քո աչքը նորանց չխնայէ, և նորանց աստուածներին չպաշտես, վասն զի այն քեզ համար որոգայթ կ՚դառնայ: Եթէ սր- 17
տումդ ասես թէ՝ Այն ազգերը ինձանից շատ են, ես ի՞նչպէս կարող եմ նորանց հալածել. Ն- 18
րանցից մի վախենար. յիշելով յիշիր ինչ որ քո Եհովայ Աստուածն արաւ փարաւոնին և բոլոր եգիպտացիներին, Այն մե- 19
ծամեծ փորձերը որ քո աչքերը տեսան և այն նշաններն ու հրաշքները, և այն զօրաւոր ձեռքը և բարձր բազուկը, որովքը քո Եհովայ Աստուածը քեզ հանեց. քո Եհովայ Աստուածը այնպէս պիտի անէ այն բոլոր ազգերին, որոնցից դու վախում ես:
Ու նաև քո Եհովայ Աստուածը 20
նորանց վերայ իշամեղուն պիտի ուղարկէ, որ ճնացածները և քո երեսից թաք կացածները կորչեն:
Մի սարսափիր նորանց երեսից. 21
վասն զի քո Եհովայ Աստուածը՝ այն զօրաւոր և ահարկու Աստուածը ձեր մէջն է: Եւ քո Եհո- 22
վայ Աստուածը կ՚քշէ այն ազգերը քո առջևիցը քիչ քիչ. դու չես կարող նորանց վերջացնել շուտով, որ մի գուցէ դաշտի

գոգաններըը քեզ վերայ շաոա-
23 նան։ Եւ քո Եհովայ Աստուածը
նորանց քո ձեռքը կ'մատնէ, և
նորանց մեծ կործանումով կ'կոր-
ծանէ, մինչև որ բնաջինջ լինեն։
24 Եւ նորանց թագաւորներին քո
ձեռքը կ'տայ, և նորանց անուն-
ները երկնից տակից կ'ոչնչացնես.
ոչ մի մարդ չի կարողանայ քեզ
դէմ կենալ, մինչև որ նորանց
25 բնաջինջ անես։ Նորանց աստ-
ուածներն քանդակուած կուա-
քերը կրակով այրես. չցանկա-
նաս նորանց վերայ եղած ոսկուն
և արծաթին, և չառնես քեզ
համար որ նորանով որոգայթի մէջ
չընուես. վասն զի նորանք քո
Եհովայ Աստուծոյ առջև գարշե-
26 լի են. Եւ մի գարշելի բան տաս-
նըդ մի տանիր, որ դու էլ նորա
պէս նզովուած չլինես. բոլորովին
զզուիր նորանից, և շատ գարշե-
լի համարիր նորան, վասն զի նը-
զովուած է այն։

ԳԼ. Ը

1 Ամն բոլոր պատուիրանքները որ
ես այսօր պատուիրում եմ քեզ՝
զգոյշ եղէք որ անէք, որպէս զի
ապրիք և շատանաք և մտնէք
ժառանգէք այն երկիրը, որ Ե-
հովան ձեր հայրերին երդնումով
2 խոստացաւ։ Եւ յիշիր այն բոլոր
ճանապարհը որ քո Եհովայ Աստ-
ուածը այս քառասուն տարին
քեզ մանն ածից անապատումը,
որ քեզ խոնարհեցնէ, քեզ փոր-
ձելու և սրտիդ միջինը իմանալու
համար, թէ արդեօք նորա պատ-
ուիրանքները կ'պահես թէ ոչ։
3 Եւ քեզ խոնարհեցրեց, և սոված
պահեց, և մանանայ ուտեցրեց,
որ ոչ դու էիր ճանաչում և ոչ
քո հայրերը, որ քեզ իմացնէ թէ
ոչ միայն հացով կապրէ մարդ,
այլ մարդը Եհովայի բերանից
դուրս եկած ամեն բանով կապրէ։
4 Քո վերայ հանդերձդ չհինացաւ,
և ոտքերդ չուռեցան այս քառա-
սուն տարին։
5 Եւ իմացիր սրտիդ մէջ որ ին-
պէս մի մարդ կ'խրատէ իր որ-

դուն, քո Եհովայ Աստուածն է
քեզ խրատում։ Որպէս քո Եհո- 6
վայ Աստուծոյ պատուիրանները
պահես, որ նորա ճանապարհնե-
րում գնաս և նորանից վախե-
նաս։ Վասն զի քո Եհովայ Աս- 7
ուածը քեզ առնում է մէկ լա-
ւերկիր, մի երկիր՝ —— գետերի
և լեռներից բղխող գետերով,
աղբիւրներով և խոր ջրերով. Մի 8
երկիր՝ —— ցորենով, գարով,
այգիներով, թզենիներով և նռ-
նիներով. իւղ ուտող ձիթե-
նիների և մեղրի երկիր. Մի եր- 9
կիր՝ որի մէջ չքաւորութեամբ
չես ուտիլ հացը, և որի մէջ բը-
նաւ մի բան պակաս չես ունե-
նալ. մի երկիր որի քարերը եր-
կաթ են և որի լեռներից պղինձ
կ'հանես։

Եւ երբոր ուտես և կշտանաս, 10
քո Եհովայ Աստուծոյն օրհնես
այն լաւ երկրումը որ նա քեզ կը
տայ։ Քո անձին զգուշութիւն ա- 11
րա, մի գուցէ քո Եհովայ Աս-
ուածոյն մոռանաս, որ չպահես
նորա պատուիրանքները, գատաս-
տանները և կանոնները, որոնք
ես այսօր քեզ պատուիրում եմ։
Մի գուցէ ուտես և կշտանաս, 12
և գեղեցիկ տներ շինես և բնա-
կես, Եւ արջառներդ ու հօտերդ 13
շատանան, և արծաթդ ու ոս-
կիդ շատանայ, և ամեն ունեցա-
ծըդ շատանայ, Եւ յետոյ սիրտդ 14
հպարտանայ, և քո Եհովայ Աս-
ուածոյն մոռանաս, որ քեզ հա-
նեց Եգիպտացոց երկրից՝ ծառա-
յութեան տանից, Որ քեզ մանն 15
ածից այն մեծ և ահագին, և կի-
զող օձերով և կարիճներով լիքը,
չոր ու անջուր անապատումը, և
քեզ համար ապառաժ քարից
ջուր հանից. Որ անապատումը 16
քեզ մանն ուտեցրեց որ քո հայ-
րերը չէին ճանաչում, որ քեզ
խոնարհեցնէ քեզ փորձելու հա-
մար, և վերջը քեզ բարիք անէ.
Եւ սրտումդ ասես՝ թէ Ա.յս հա- 17
րստութիւնը իմ կարողութեամ-
բը և իմ ձեռքի ուժովը վաստա-
կեցի. Այլ յիշիր քո Եհովայ Աս- 18
ուածոյն. որովհետև նա է հարըս-

տաւթիւն առանալու համար քեզ պիտ տուողը, որ քո հայրերի հետիր երդումով սրած ուխտը հաստատե, ինչպէս որ պատ։

19 Եւ եթէ քո Եհովայ Աստուծոյն մոռանալով ուրիշ աստուածներու ետևից գնաս, և նոցա պաշտես և նոցանից երկրպագութիւն անես, ես պատ ձեզ վկայում եմ որ անպատճառ պիտի կորչիք. Ա՛ն ազգերի պէս որ 20 Եհովան ձեր առջևից կորցնում է, այնպէս կ՚կորչիք, վասն զի ձեր Եհովայ Աստուծոյ խօսքին չէ լսեցիք։

ԳԼ. Թ

1 Լսիր, Իսրայէլ. Դու պիտ Յորդանանովն անցնես կենում, որ գրնաս ժառանգես քեզանից մեծ և զօրաւոր ազգեր, և մինչև երկինքը պարսպաւոր մեծ քաղաքներ, 2 Ա՛ն մեծ և երկայնահասակ ազգը Ենակիմների որդիներին, որոնց դու ճանաչում ես, և լսել ես թէ ո՞վ կ՚դիմանայ Ենակի որդոց։ 3 Եւ պատ պիտացիր որ քո Եհովայ Աստուածն քո առջևը գնացողը էրէ մաշող կրակ է, նորանց պիտի կորցնէ, և քո առջևիցը նորանց պիտի նուաճէ, և դու նորանց կ՚հալածես և շուտով բնաջինջ կանես, ինչպէս որ Եհովան քեզ ասաց։ Սրտիդ մէջ չասես երբոր քո Եհովայ Աստուածը նորանց քո առջևիցը հալածէ, թէ Եհովան իմ արդարութեան համար ինձ բերաւ որ այս երկիրը ժառանգեմ. բայց Եհովան այս ազգերի անօրէնութեան համար է հալածում նորանց քո առջևից։ Ոչ թէ քո արդարութեան և քո սրտի ուղղութեան համար ես մտնում դու նորանց երկիրը ժառանգելու. այլ այն ազգերի անօրէնութեան համար քո Եհովայ Աստուածը նորանց քո առջևիցը քշում է, և նորա համար որ հաստատէ այն խօսքը՝ որ քո հայրերին Աբրահամին, Իսահակին և Յակոբին երդում արաւ։ Եւ գիտացիր որ քո

արդարութեան համար չէ որ քո Եհովայ Աստուածը այս բարի երկիրը քեզ է տալիս, որ նորան ժառանգես. որովհետև դու մի խստապարանոց ժողովուրդ ես։

Յիշիր, մի մոռնար որ քո Եհո- 7
վայ Աստուծոյն անապատումը բարկացրիր. Եգիպտոսի երկրից դուրս եկած օրից մինչև այստեղ գալդ անդադար ընդդիմացել էք Եհովային, և Փարիսում էլ բար- 8
կացրիք Եհովային. և Եհովան բարկացաւ որ ձեզ կորցնէ, երբ 9
որ ես վեր ելայ լեռը, որ առնեմ քարէ տախտակները այն ուխտի տախտակները որ Եհովան արաւ ձեզ հետ, և լեռնումը մնացի քառասուն օր և քառասուն գիշեր. ոչ հաց կերայ և ոչ ջուր խմեցի. և Եհովան տուաւ 10
ինձ այն երկու քարէ տախտակները Աստուծոյ մատովը գրուած և նորանից վերայ էր—ի բոլոր այն խօսքերը, որ Եհովան ասաց ձեզ լեռնումը կրակի միջից ժողովքի օրը։ Եւ քառասուն օրից և 11
քառասուն գիշերից յետոյ Եհովան տուաւ ինձ այն երկու քարէ տախտակները՝ ուխտին տախտակները։ Եւ Եհովան ինձ ասաց. 12
Վեր կաց շուտով իջիր այստեղից վասն զի ապականեց քո ժողովուրդը՝ որ Եգիպտոսի երկրից հանեցիր. շուտով խոտորեցին այն ճանապարհից որ պատուիրեցի նորանց, իրանց ձուլածոյ կուռք շինեցին։ Ու նաև Եհովան ինձ 13
հետ խօսելով ասաց. Ես տեսայ այս ժողովրդին, և ահա մի խստապարանոց ժողովուրդ է այն. թող տուր ինձ որ նորանց կորցնեմ, և նորանց անունը երկնքի 14
տակից բնաջինջ անեմ, և քեզ նորանցից զօրաւոր և բազմութիւ ազգ շինեմ։

Եւ ես դարձայ, և վայր իջայ լեռնիցը. և լեռը կրակով այրվում էր. և ուխտի երկու տախտակները իմ երկու ձեռքերի վերայ էին։ Եւ նայեցի և ա- 16
հա ձեր Եհովայ Աստուծոյ դէմ մեղք էիք գործել ձեզ համար ձուլածոյ ոտք էիք շինել, շու-

տով խոտորել էիք այն ճանա-
պարհէյդ որ Եհովան պատուիրել
17 էր ձեզ. Եւ ես այն երկու տախ-
տակները բռնեցի, և գցեցի իմ
երկու ձեռքերի վերայից, և կոտ-
րատեցի նորանց ձեր աչքերի առ-
18 ջև։ Եւ առաջինի պէս վայր ըն-
կայ Եհովայի առջև քառասուն
օր և քառասուն գիշեր, ոչ հաց
կերայ և ոչ ջուր խմեցի, ձեր
գործած բոլոր մեղքի համար, որ
չարութիւն արիք Եհովայի առջև
19 նորան բարկացնելու համար. Վա-
խէն զի վախեցի այն սոսկալի բար-
կութիւնից՝ որով Եհովան ձեզ
վերայ բարկացաւ ձեզ կորցնելու
համար. սակայն Եհովան այն ան-
20 գամին էլ լսեց ինձ։ Եւ Եհովան
Ահարոնի վերայ շատ բարկացաւ,
որ նորան կորցնէր. բայց Ահարո-
21 նի համար էլ աղօթք արի։ Եւ
ձեր արած մեղքը՝ պատինքն այն
որթը առի, և կրակով այրեցի
նորան. և ծեծելով լաւ փշրեցի
նորան, մինչև որ մանր փոշի ե-
ղաւ. և այն փոշին լեռնիցը իջ-
նող առուի մէջ գցեցի։
22 Նաև Տաբերայում, Մասա-
յում և Կիբրօթ-Հաթթաւայում
23 Եհովային բարկացրիք։ Եւ երբոր
Եհովան ձեզ Կադէս-Բառնեայից
ուզարկեց, և ասաց. Վեր ելէք
և ժառանգեցէք այն երկիրը որ
ես ձեզ տուի, այն ժամանակ
ձեր Եհովայ Աստուծոյ հրամանին
անհնազանդութիւն արիք, և նո-
րան չհաւատացիք և նորա խօս-
24 քին մտիկ չարիք։ Որ օրից ան-
հնազանդութիւն էք անում Եհով-
այի՝ ձեզ ճանաչած օրից։
25 Եւ ես այն քառասուն օրը և
այն քառասուն գիշերը վայր ըն-
կայ Եհովայի առջև և աղաչեցի,
որովհետև Եհովան ասաց որ ձեզ
26 կորցնէ։ Եւ ես Եհովային աղա-
չեցի և ասացի. Ով Տէր Եհովայ,
մի կորցնիր քո ժողովուրդը և
ժառանգութիւնը, որ քո մեծու-
թեամբը ազատեցիր, և զօրաւոր
ձեռքով եգիպտոսից հանեցիր։
27 Յիշիր քո ծառաներին Աբրահա-
մին, Իսահակին և Յակոբին, և
ուշ մի դարձնիր այս ժողովրդի
խստութեանը, անօրէնութեանը
28 ու մեղքին։ Մի գուցե այն եր-
կիրը, որտեղից մեզ հանեցիր,
ասեն թէ Եհովան չկարողանալով
նորանց տանելու այն երկիրը որ
նորանց խոստացել էր, կամ նո-
րանց ատելով, հանեց նորանց
29 որ անապատումը մեռցնէ։ Եւ
սակայն նորանք քո ժողովուրդը
և ժառանգութիւնն են, որոնք
դու քո մեծ զօրութեամբը և
բարձր բազուկով հանեցիր։

ԳԼ. Ժ

1 Այն ժամանակ Եհովան ինձ ա-
սաց. Կոփիր քեզ համար առա-
ջիններէն պէս երկու հատ քարէ
տախտակներ, և վեր ելիր լեռը
ինձ մօտ, և քեզ համար մէկ
2 փայտէ տապանակ շինիր. Եւ ես
տախտակների վերայ գրեմ այն
խօսքերը, որ էին առաջի տախ-
տակներիդ վերայ, որոնք դու
կոտրատեցիր, և նորանց դնես
3 տապանակի մէջը։ Եւ ես Սատի-
մի փայտից մի տապանակ շինեցի,
և առաջիններէն պէս երկու հատ
քարէ տախտակներ կոփեցի, և
վեր ելայ լեռը այն երկու տախ-
4 տակները ձեռքս։ Եւ այն տախ-
տակների վերայ առաջի գրուած-
քի պէս գրեց այն տասը խօսքե-
րը, որոնք Եհովան ձեզ հետ խօ-
սեց լեռան վերայ կրակի միջից
ժողովքի օրը, և Եհովան նորանց
5 ինձ տուաւ։ Եւ դառնալով լեռ-
նից իջայ, և տախտակները դրի
այն տապանակի մէջ որ շինել էի,
և այնտեղ էին ինչպէս որ Եհո-
վան ինձ պատուիրել էր։
6 Եւ Իսրայէլի որդիքը Բնէրօթ-
բանէ-յականից Մոսէրա չուեցին.
այնտեղ մեռաւ Ահարոնը և թա-
ղուեցաւ այնտեղ, և նորա որդի
Եղիազարը նորա տեղը քահանայ
եղաւ։ 7 Այնտեղից չուեցին Գադ-
գադ, և Գադգադից Յրի առու-
ների երկիրը՝ Եոթբաթա։
8 Այն ժամանակին Եհովան Ղե-
ւիի ցեղը ջոկեց, որ Եհովայի
ուխտի տապանակը կրէ, Եհովայի
առջև կանգնելու համար, որ նո-

բան ծառայութիւն անէ, և նո-
բա անուանովը օրհնէ մինչև այս
9 օրը: Այս պատճառով ղևին իր
եղբարց հետ բաժին ու ժառան-
գութիւն չունեցաւ. նորա ժա-
ռանգութիւնը Եհովան է, ինչ-
պէս քո Եհովայ Աստուածը նո-
րան ասաց:
10 Եւ ես առաջի օրերի պէս կանգ-
նեցի լեառնումը քառասուն օր
և քառասուն գիշեր, և Եհովան
ինձ լսեց այս անգամին էլ չու-
զեց քեզ կորցնել: 11 Եւ Եհովան
ինձ ասաց. Վեր կաց և ժողո-
վրդի առջև չուիր, որ մտնեն
և ժառանգեն այն երկիրը՝ որ նո-
րանց հայրերին երդում արի նո-
րանց տալու համար:
12 Եւ հիմա, ով Իսրայէլ, ի՞նչ
է պահանջում քեզանից քո Ե-
հովայ Աստուածը. բայց միայն
որ քո Եհովայ Աստուածից
վախենաս, նորա ամեն ճանա-
պարհներումը գնաս և նորան սի-
րես, և պաշտես քո Եհովայ Աս-
տուածդ բոլոր սրտովդ և բոլոր
13 հոգովդ, Որ Եհովայի պատուի-
րանքները և կանոնները պահես,
որոնք ես այսօր քեզ պատուի-
րում եմ, որ քեզ համար լաւ
14 լինի: Ահա քո Եհովայ Աստու-
ծոյնն է երկինքը և երկնից երկին-
քը, երկիրը և բոլոր նորա միջի
15 եղածը: Միայն թէ Եհովան քո
հայրերին հաւանեց որ նորանց
սիրէ, և ընտրեց նորանցից յե-
տոյ ձեզ՝ նորանց զաւակները բո-
լոր ազգերից, ինչպէս որ այսօր
16 է: Ուրեմն ձեր սրտերի անթլը-
փատութիւնը թլփատեցէք, և
ձեր պարանոցները այլ եւս մի
17 խստացնէք. Վասն զի ձեր Եհո-
վայ Աստուածը աստուածների
Աստուածն է և տէրերի Տէրը,
այն մեծ, հզօր և ահեղ Աստ-
ուածն է, որ աչառութիւն չի
18 անիլ և կաշառք չի առնիլ. Ո՛ր
որբին և որբևայրիին իրաւունք է
անում, և պանդուխտին սիրում
է՝ նորան հաց և հանդերձ տա-
19 լով: Ուրեմն պանդուխտին սիրե-
ցէք. քանի որում դուք Եգիպ-
տացոց երկրումը պանդուխտ էիք:
20 Քո Եհովայ Աստուածից վա-
խեցիր, նորան պաշտիր, և նո-
րան յարիր, և նորա անունովը
երդուիր անիր: 21 Քո պարծանքը
նա է, և քո Աստուածը նա է,
որ քեզ համար այս մեծ և ա-
քանչելի բաներն արաւ, որոնք
քո աչքերը տեսան: 22 Քո հայրերը
եօթանասուն հոգիով Եգիպտոս
իջան. և հիմա քո Եհովայ Աստ-
ուածը քեզ երկնից աստղերի պէս
շատացրեց:

ԳԼ. ԺԱ

1 Ուրեմն սիրիր քո Եհովայ Աս-
տուածդ և նորա պատուիրած
բաները, կանոնները, դատաս-
տանները և պատուիրանքները
պահիր ամեն ժամանակ: 2 Եւ այս
օր գիտացէք, որ ձեր որդոց հետ
չէ խօսում, որոնք չեն գիտում,
և չեն տեսել ձեր Եհովայ Աս-
տուածդ խրատը, նորա մեծու-
թիւնը, նորա զօրաւոր ձեռքը և
բարձր բազուկը, 3 Եւ նորա նշան-
ները և նորա գործերը որ Եգիպ-
տոսի մէջ Եգիպտացոց փարաւոն
թագաւորին և նորա բոլոր երկրի
վերայ արաւ. 4 Եւ ինչ որ արաւ
Եգիպտացոց զօրքերին, նորա ձի-
երին և կառքերին, կարմիր ծովի
ջրերը նորանց վերայ թափեց,
երբ որ նորանք ձեզ հալածում
էին, և Եհովան նորանց կորցրեց
մինչև այս օրը. 5 Եւ ինչ որ արաւ
ձեզ անապատումը մինչև ձեր
այստեղ գալը. 6 Եւ ինչ որ արաւ
Ռուբենեան Եղիաբի որդիք՝ Դա-
թանին և Աբիրոնին որ երկիրը իր
բերանը բացաւ և կուլ տուաւ
նորանց և նոցա ընտանիքները,
նոցա վրանները և ամեն ինչ որ
կար նորանց մօտ բոլոր Իսրայէլին
միջիցը: 7 Վասն զի Եհովայի ա-
րած բոլոր մեծ գործքերը ձեր աչ-
քերը տեսել են: 8 Ուրեմն պահե-
ցէք այն ամեն պատուիրանքները,
որ ես այսօր ձեզ պատուիրում
եմ, որպէս զի զօրանաք, և մտնէք
ժառանգէք այն երկիրը, ուր որ
գնում էք նորան ժառանգելու
համար. 9 Եւ որ ձեր կեանց օրերը եր-

կար ընկեր այն երկրի վերայ, որ Աշտեան Ազգ Տաճկաստան անուանեալ է, ընդունելով զայն ուրախութեամբ, մի երկիր որ կամ ես ունիմ և դուքա՛ն։

10 *Ասեն ցայն երկիրն՝ ոչ որ ունի զոչ ինձ՝ և ոչ ես ունիմ զոչ ինձ, Աղեքսանդր ասեն, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
11 *ունիմ ինձ՝ և ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
12 *ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
13 *ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
14 *ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
15 *ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
16 *ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*
17 *ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ ինքն չէ՝ տասնից զոչ ինձ և ոչ ես ունիմ զոչ ինձ՝ և ինձ ընդունի զայն ուրախութեամբ, մի երկիր որ*

18 *Եւ այս եւ՛ խոսքեր Աստ ասեն և Տուս մէջ գրէք, և նորոգ դուռն Տանիք Աստ Աստ գերի վրայ կոպիցէք, և Կոհոսանդոց տեղն Աստ ոչխարի մէջտեղը. Եւ Աստ ասցէ սոսկալիքն նորոգ, որ նորոգիցէ խոսն ասոր նոսոց Աստ անձնական, և Կոհոսանդոց գնացած Աստ անձնական և ասուկիս և*

մեր կնոջս Աստ Տաճկաստան անուանեալ։ Եւ 20 գրէք նորոգ զոր ասեն գրածնիս զոր մեր նորոգ և գոնեկեր մեր։ Եւ 21 սկսա գրածնիս զոր գրէք և զոր ասեն գրած զոր գրէք մեր երկիր որ Տաճկաստան Աստ Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, երկիր երկիր մեր։

Ասեն գրէք նորոգ գոր ասեն 22 գոնեկեր ես նորոգ գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։ Եւ 23 գոր ասեն գրածնիս և գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։ Եւ 24 գոր ասեն գրածնիս և գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։ Եւ 25 գոր ասեն գրածնիս և գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։

Եւ Աստ եւ՛ խոսքեր Աստ 26 նորոգ գոր ասեն գրածնիս և գոնեկեր մեր։ Եւ 27 գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։ Եւ 28 գոր ասեն գրածնիս և գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։ Եւ 29 գոր ասեն գրածնիս և գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։

Եւ Աստ եւ՛ խոսքեր Աստ 30 նորոգ գոր ասեն գրածնիս և գոնեկեր մեր։ Եւ 31 գոր ասեն գրածնիս գոր գրէք և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք, և գոնեկեր մեր Տաճկաստան անուանեալ է նորոգ ասեն Տանիք։

զէր որ սէր երկերք՝ որ Աբր Աշտոյ Աստուածդ տայցէ ձեզ, և կր ժառանգէք զերկիր նորա մինչ կ՚բնակէք ։ Եւ եթէ դարձցիք որ մնէք որ ազգ ազգս կռապաշտիցն և դուռնասուսեցելոցն՝ որոց են աչքն հետ՝ գնասցէ՛։

ԳԼՈՒԽ ԺԱ

1 Ուրուք են որ կռապաշտիցն և դուռնասուսեցելոցն՝ որոց դուք էք սէր սուրբ և մնէք սէր երկիր միրգ, որ Աբր Աշտոյ Աստուածդ ձեզ կ՚տայ ժառանգել զերկիր միրգ, որպէս ասացեալ է ձեզ, զորս ժառանգեսցէք զերկիր միրգ, 2 Ուրուքեան կռապաշտիցն զոր ոչ տեսեալ ունիցիք, և որ որ զձեր ազգիդ ոչ գիտեալ կ՚ժառանգէք զերկիր միրգ զոր ոչ տեսեալ ունիցիք, 3 Ոչ ամե կռապաշտիցն զերկիր միրգ, և կռապաշտիցն զերկիր միրգ, և զերկիր միրգ Աստուածդ ձեզ կ՚տայ ժառանգել, զերկիր միրգ զոր ոչ տեսեալ ունիցիք

գանեցան ի նոսա Աստուածն, և
ապրեցուցանէր զնոսա Տէրն Աստուած
19 ընծիւք ի բոլոր Ասորեստան
գաւառէ միայն, զի
ապաշխարեսցեն անտուն անձինք,
և կենդանի բոլոր տունքն ի նոսա
մեռան։

20 Արդ զնոսա Աստուած
ձգեաց ի տանջանսն զորովիկ ի-
նչպէս զի մահ մահ է, և ա-
նուն՝ Ինձ առնուլ, ասաց ցի-
րանսն ի նոսա, որպէս
ապրեցուցանէր զնոսա ի նոսա
21 մեռանել։ Եւ ի բոլոր ժամանակսն
ձգեաց զնոսա ի տանջանսն զոր-
ովիկ ի Տէրն Աստուած
ի ձեռն Եսայեայ մարգարէին
Տեառնէ, զի ասասցեն ցի-
րանսն ի նոսա
զի ես եմ Տէրն Աստուած
22 գործեալ զերկինս և զերկիր, և
զամենայն զոր ինչ ինչ ի նոսա է,
ոչ ոք ի նոսա
23 առնուլ։ Ոչ ոք ի նոսա
ասասցէ, զի ես եմ Տէրն Աստուած
ձեր, և ոչ ոք ի նոսա
24 զիս է, և ոչ ոք ինձ նման,
ապրեցուցանէր,
որպէս ես ապրեցուցանէր
25 զնոսա։ Ապրեցի ես ամե-
նեքին զնոսա ի նոսա
ոչ ոք ի նոսա Տէրն Աստուած
ձեր և գիտեցին ի-
նչ զի ես եմ Տէրն Աստուած
ձեր ի ձեռն Եսայեայ մարգարէին
26 Ոչ ոք ի նոսա զանձինս և
զանուանս, և գիտեցին
27 ասեցի ոչ Աստուած գիտել, Ա-
նուանեցի զանուն՝ Տէրն Աստուած
և ապրեցի ի նոսա Աստուած
ասասցէ Տէրն Աստուած,
ոչ ոք ի նոսա
ասեցի։

28 Զգոյշ եղիր և լսեր այս բոլոր
բանիցդ, որպէս ես գիտ ա-
նուանեալ եմ՝ զի ասես գիտ
ես գիտեցի և գիտեցին ի-
նչ զի ես եմ Տէրն Աստուած
ձեր ի ձեռն Եսայեայ մարգարէին
29 Արդ զնոսա Աստուած
ոչ ոք ի նոսա ոչ ոք ի նոսա
ես, որպէս ասեցի ես

ոչ ոք ի նոսա Աստուած
ձեր և ոչ ոք ի նոսա
ես, և ոչ ոք ի նոսա
ես եմ Տէրն Աստուած
ձեր

ասելիք ոչ նորա մէջ գնաց. և
չարաչարեաց ձեր մեջտեղ գերեզ-
մէջ։

6 Եթէ մեր տեղ գայր՝ ոչ հարցանէր,
կամ՝ ոչ տեղն կամ՝ տգիտէր,
կամ՝ ծոյլ կիներ, և կամ՝ ոչ բա-
րեկամի ոչ անձին տէր տիրամայր է,
բեզ մեղադրել ոչ գիտեմ ես
ձանձրանալ ոչ գիտեմ ես ձա-
ռանալ։ Գնացէք և ասացէք ասա-
ւածին զայդ, պատճէն և ասացէք
10 ձեզ. Գալովք գայրանայր նո-
րան և նա ձեզնէ, ասաւ ոչ
գիր բեզ տգիտանալոյ ոչ ի-
նոյ Աստուածոյ, որ քեզ
11 ինքնասէր կերպիւ ձանձրա-
նալ տայցէ, և ոչ ձեր մէջ ոչա-
րեաց գտանի։

12 Եթէ ոչ ոչ ցաղգացիդ մէ-
նակ բան, ոչ ոչ Աստուծոյ Աս-
տուածդ բնակութեան Տանդ բեզ
13 կ'ասէ, ոչ ասեն թէ Ձեր մէջեղ
մի ցանէ "ոչ մեղադիր" են ոչ ոս-
կեր, և իրանց ցաղգացի բնակիչ-
ներեն ոչատուականք' են, ա-
կով։ Գնացէք ձեր չհաճոյանան ա-
ստոր աստուածներն ոչատուն,
14 Այլ ձանձրանալ չձեռն և ոչ
Տոյնոյ ձեռք տան, և երդոր անա-
նեն ոչ ոչ ցաղգ ձեզնէ Հեռանայ
և՝ ոչ ձեր ցաղգի ցանր բնակած'
15 եղած է։ Այլ ցաղգացի բնակիչ-
ներեն անոգութեան ոտի բեր-
նէք անկանիլ, նորան և նորա
մէջ եղած բոլոր բանիքը նոցան-
յոյ։ անասուններն էլ ոտի բե-
16 բանիք անկանիլ։ Այ նորա բո-

ոչ ատոր նորա վրայ գնաց, և
նորա բոլոր ատոր գրաստներն
վրայ ձգեցին, և այն քաղաքը և
նորա բոլոր ատոր գո Աստուծոյ
Աստուծդ Տանիլ բոլորովին կո-
րուսով սրբեցին, և բոլոր անա-
սունքն էլ սրեցին։ Եւ այն ձգեցած ձեռ 17
քեզ մի բան չմտիկ, որպէս գի
Աստուծոյ նա ատոր բոլոր
ձեզնէ գատուի և քեզ ողոր-
մի ու գթասիրէ ուել, և
քեզ չատցէ, ինչպէս որ ոս 18
Տոյնոյ Աստուծդ քեզ
ոչ Աստուծդ Աստուծոյ ձեռքը
նորա այն բոլոր գործոցդ մէջ
պատի, որ դու նա ոչ ատոր
գործես։ Եւ ոչ ձեր ոչ ոչ
Տոյնոյ Աստուծդ բոլորովին կո-
րուսով սրբեցին, ինչպէս որ
պատի նա ոչ ձեզ հրամայեց
ոչ ատոր Աստուծդ Աստուծոյ
նորա այն բոլոր պատուիրանքը
պահես, որ նա ոչատոր քեզ
պատուիրեց։

ԻԱ. ՅԻ

Եթէ ձեր ոչ Տոյնոյ Աստուծդ 1
պրծիցն ձեզ, մեռնիք ձեր
մէջեղ գիպիցիք մեռոր չգիտէք, և
ձեր ոչխարի մէջեղ մեռոր չգիտէք, և
գտնիք։ Ասէ այ դու ոչ ոչ Տո-
Տոյնոյ Աստուծդ Տանիլ ոչ
ատոր ընտրեց ես։ և Տոյնոյ ձեզ
բնութիւն երկրի մէջեղ ոչ ոչ ցա-
ղգացիդ երկրի մէջեղ, ոչ ոչ Տո-
նորա ոչ ոչ ցաղգ ոչ ոչ ոչ
նեն։

Ոչ ոչ Ձեր ոչ ոչ ոչ ոչ 3
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ 4
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ 5
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ 6
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ 7
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ 8
ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ ոչ

*Ինչպէս որպէսզի

9 Ջրհեղեղն բոլոր երկրի վրայ քառասուն տարի մնաց. ջուրերը շատացան 10 ու տապանը վերացրին երկրի երեսից, ու տապանը ջրի երեսով գնում էր: 11 Ջրերը զորացան ու շատ շատացան երկրի վրայ, և տապանը գնում էր ջրի երեսով: 12 Եւ ահագին ջրհեղեղը բոլոր երկրի վրայ եղավ. հարյուր քառասուն օր ու գիշեր անդադար տեղաց: 13 Եւ հենց այդ օրը Նոյն, և Սեմը, և Քամը, և Յաբեթը, Նոյի որդիները, և Նոյի կինը, և նրա որդիների երեք կանայք նրանց հետ տապանի մեջ մտան, 14 Ու ամեն տեսակ գազան իր տեսակի հետ, և բոլոր անասունները իրանց տեսակի հետ, և բոլոր սողունները, որ սողում են երկրի վրայ, իրանց տեսակի հետ, և բոլոր թռչունները, ամեն տեսակ թռչուն, 15 բոլոր թևավորները մտան Նոյի մոտ տապանի մեջ, երկու երկու, մարմնավոր բոլոր էակներից, որոնց մեջ կյանքի շունչ կար: 16 Եւ արուներ ու էգեր մտան բոլոր մարմնավոր էակներից, ինչպես Աստված պատվիրել էր նրան: Եւ Տէրը գոցեց տապանի դուռը նրա հետևից: 17 Եւ ջրհեղեղը քառասուն օր երկրի վրայ էր, և ջրերը շատացան ու տապանը վեր բարձրացրին երկրի երեսից, և տապանը գնում էր ջրի երեսով: 18 Եւ ջրերը զորացան ու շատ շատացան երկրի վրայ, և տապանը գնում էր ջրի երեսով: 19 Եւ ջրերը շատ ու շատ զորացան երկրի վրայ, ու բոլոր բարձր լեռները ծածկվեցին ամբողջ երկրի երեսով: 20 Հնգետասան կանգուն բարձր եղան ջրերը, ու լեռները ծածկվեցին: 21 Եւ մեռավ բոլոր մարմնավոր էակը, որ սողում էր երկրի երեսով, թռչուններ, անասուններ, գազաններ, և բոլոր սողունները, որ սողում էին երկրի վրայ, և բոլոր մարդիկ: 22 Ամեն ինչ, որ ցամաքի վրա էր, մեռավ, որովհետև նրանց քթերի մեջ կենդանի շունչ կար: 23 Եւ ոչնչացրեց Աստված ամեն կենդանի էակ, որ կար երկրի երեսին, մարդուց մինչև անասուն, և սողուններ, և թռչուններ երկնքի, և ոչնչացան երկրի վրայից, և մնաց միայն Նոյն և նրա հետ տապանի մեջ եղողները: 24 Եւ ջրերը զորացան երկրի վրա հարյուր հիսուն օր:

Գլուխ Ը

1 Եւ Աստված հիշեց Նոյին և բոլոր գազանները և անասունները, որ տապանի մեջ էին նրա հետ, և Աստված քամի բերեց երկրի վրա, և ջրերը դադարեցին: 2 Եւ փակվեցին անդունդների աղբյուրները և երկնքի պատուհանները, և անձրևը դադարեց երկնքից: 3 Եւ ջրերը հետզհետե նահանջեցին երկրի վրայից, և ջրերը պակասեցին հարյուր հիսուն օրվա վերջում: 4 Եւ տապանը հանգավ յոթերորդ ամսի տասնյոթերորդ օրը Արարատ լեռների վրա: 5 Եւ ջրերը գնալով պակասում էին մինչև տասներորդ ամիսը. տասներորդ ամսի առաջին օրը լեռների գագաթները երևացին: 6 Եւ եղավ քառասուն օր վերջանալուց հետո, որ Նոյը բացեց տապանի պատուհանը, որ նա շինել էր, 7 և արձակեց ագռավին, որ նա դուրս թռավ, գնում էր և դառնում, մինչև որ ցամաքեցին ջրերը երկրի երեսից: 8 Եւ նա արձակեց աղավնին իրանից հետո, որ տեսնի, թե ջրերը պակասե՞լ են երկրի երեսից: 9 Բայց աղավնին չգտավ հանգստարան իր ոտի համար, և դարձավ նրա մոտ տապանի մեջ, որովհետև ջուր կար ամբողջ երկրի երեսին: Եւ նա ձեռքը մեկնեց, և առավ նրան, և իր մոտ տապանի մեջ առավ: 10 Եւ սպասեց նա ուրիշ յոթ օր, և նորից արձակեց աղավնին տապանից: 11 Եւ աղավնին եկավ նրա մոտ երեկոյան ժամանակ, և ահա ձիթենու թարմ տերև էր նրա բերանում. և Նոյը հասկացավ, որ ջրերը պակասել են երկրի երեսից: 12 Եւ սպասեց նա ուրիշ յոթ օր, և արձակեց աղավնին, և նա այլևս չդարձավ նրա մոտ: 13 Եւ եղավ հարյուր մեկերորդ տարում, առաջին ամսի առաջին օրը, ջրերը չորացան երկրի երեսից, և Նոյը բացեց տապանի ծածկոցը, և նայեց, և ահա երկրի երեսը չորացել էր: 14 Եւ երկրորդ ամսի քսանյոթերորդ օրը երկիրը բոլորովին չորացավ: 15 Եւ Աստված խոսեց Նոյի հետ և ասաց նրան. 16 Դուրս արի տապանից դու և քո կինը, և քո որդիները և նրանց կանայք քեզ հետ: 17 Եւ բոլոր գազանները, որ քեզ հետ են, բոլոր մարմնավոր էակներից, թռչուններից, անասուններից և սողուններից, որ սողում են երկրի վրայ, հանիր քեզ հետ, և նրանք թող երկրի վրա շատանան, և պտղաբերեն, և բազմանան երկրի վրա: 18 Եւ Նոյը դուրս եկավ, և նրա հետ նրա որդիները, և կինը, և որդիների կանայք նրա հետ: 19 Բոլոր գազանները, բոլոր սողունները, բոլոր թռչունները, ամեն ինչ, որ սողում է երկրի վրայ, ըստ իրանց տեսակների դուրս եկան տապանից: 20 Եւ Նոյը շինեց Տիրոջ համար սեղան, և առավ բոլոր մաքուր անասուններից և բոլոր մաքուր թռչուններից, և ողջակեզներ մատուցեց սեղանի վրա: 21 Եւ Տէրը հոտ առավ հաճելի հոտը, և Տէրը ասաց իր սրտում. Այլևս չեմ անիծի երկիրը մարդու համար, որովհետև մարդու սրտի խորհուրդները չարից են նրա մանկությունից ի վեր, և այլևս չեմ կոտորի ամեն կենդանի էակ, ինչպես որ արեցի: 22 Մինչև երկրի օրերը կան, սերմնացանությունը և հունձքը, ցուրտը և տաքը, ամառը և ձմեռը, ցերեկը և գիշերը չեն դադարի:

Գլուխ Թ

1 Եւ օրհնեց Աստված Նոյին և նրա որդիները, և ասաց նրանց. Պտղաբերեցեք և բազմացեք և լցրեք երկիրը: 2 Եւ ձեր վախը և ձեր սարսափը թող լինի բոլոր երկրի գազանների վրա, և երկնքի բոլոր թռչունների վրա, և ամեն ինչի վրա, որ սողում է երկրի վրա, և բոլոր ձկների վրա ծովի, ձեր ձեռքը թող լինի նրանց վրա: 3 Ամեն շարժվող էակ, որ կենդանի է, թող ձեզ համար կերակուր լինի. ինչպես կանաչ խոտը, ամեն ինչ տվի ձեզ: 4 Միայն մարմինը նրա հոգու հետ, որ նրա արյունն է, մի կերեք: 5 Եւ ձեր արյունը, որ ձեր հոգիների համար է, պահանջելու եմ ամեն գազանի ձեռքից, և մարդու ձեռքից, ամեն մարդու ձեռքից, որ նրա եղբոր հոգին է: 6 Ով որ մարդու արյունը թափի, նրա արյունը մարդու միջոցով թող թափվի, որովհետև Աստծու պատկերով արարեց մարդուն: 7 Եւ դուք պտղաբերեցեք և բազմացեք, աճեցեք երկրի վրա և բազմացեք նրա վրա: 8 Եւ Աստված խոսեց Նոյի հետ և նրա որդիների հետ, որ նրա հետ էին, և ասաց. 9 Ահա ես իմ ուխտն եմ դնում ձեզ հետ և ձեր սերունդների հետ, որ ձեզանից հետո կան: 10 Եւ ամեն կենդանի էակների հետ, որ ձեզ հետ են, թռչունների, անասունների և երկրի բոլոր գազանների հետ, որ ձեզ հետ են, ամեն ինչի հետ, որ դուրս եկավ տապանից, ամեն կենդանի էակների հետ երկրի վրա: 11 Եւ ուխտ եմ դնում ձեզ հետ, որ այլևս ամեն մարմին ջրհեղեղի ջրերով չի կորչի, և այլևս ջրհեղեղ չի լինի, որ երկիրը կործանի: 12 Եւ Աստված ասաց. Ահա նշանը այն ուխտի, որ ես դնում եմ ձեզ հետ և ամեն կենդանի էակների հետ, որ ձեզ հետ են, հավիտենական սերունդների համար: 13 Իմ աղեղը ամպերի մեջ դրի, և նա նշան կլինի ուխտի, որ ես դնում եմ երկրի հետ: 14 Եւ եղավ, երբ ամպեր բերեմ երկրի վրա, աղեղը կերևա ամպերի մեջ: 15 Եւ ես կհիշեմ ուխտը, որ դրել եմ ձեզ հետ և ամեն կենդանի էակների հետ, ամեն մարմնավոր էակների հետ, և ջրերը այլևս ջրհեղեղ չեն լինի, որ ամեն մարմին կործանի: 16 Եւ աղեղը ամպերի մեջ կլինի, և ես կնայեմ նրան, որ հիշեմ հավիտենական ուխտը Աստծու և ամեն կենդանի էակների հետ, ամեն մարմնավոր էակների հետ երկրի վրա: 17 Եւ Աստված ասաց Նոյին. Ահա նշանը ուխտի, որ ես դնում եմ իմ և ամեն մարմնավոր էակների հետ երկրի վրա: 18 Եւ Նոյի որդիները, որ դուրս եկան տապանից, Սեմը, և Քամը, և Յաբեթը, Քանանի հայրը Քամն էր: 19 Այս երեքը Նոյի որդիներն էին, և նրանցից բազմացավ ամբողջ երկիրը: 20 Եւ Նոյը սկսեց հողագործ լինել, և խաղող տնկեց: 21 Եւ գինի խմեց, և հարբեցավ, և մերկացավ իր վրանի մեջ: 22 Եւ Քամը, Քանանի հայրը, տեսավ իր հոր մերկությունը, և դուրս եկավ, և պատմեց իր երկու եղբայրներին: 23 Եւ Սեմը և Յաբեթը վերցրին հագուստը, և դրին իրանց ուսերի վրա, և գնացին հետ դարձի, և ծածկեցին իրանց հոր մերկությունը, և իրանց երեսները հետ դարձրած էին, և հոր մերկությունը չտեսան: 24 Եւ Նոյը արթնացավ գինու իր քնից, և գիտեցավ, թե ինչ արեց նրան իր կրտսեր որդին: 25 Եւ ասաց. Անիծյալ լինի Քանանը, ծառաների ծառա թող լինի իր եղբայրների համար: 26 Եւ ասաց. Օրհնյալ թող լինի Տէր Աստված Սեմի, և Քանանը թող նրա ծառան լինի: 27 Աստված թող ընդարձակի Յաբեթին, և նա թող բնակվի Սեմի վրանների մեջ, և Քանանը թող նրա ծառան լինի: 28 Եւ ապրեց Նոյը ջրհեղեղից հետո երեք հարյուր հիսուն տարի: 29 Եւ եղան Նոյի բոլոր օրերը ինը հարյուր հիսուն տարի, և մեռավ:

Գլուխ Ժ

1 Եւ սերունդներն են Նոյի որդիների՝ Սեմի, Քամի և Յաբեթի, որոնց ծնվեցան որդիներ ջրհեղեղից հետո: 2 Յաբեթի որդիները՝ Գոմեր, և Մագոգ, և Մադայ, և Յավան, և Թուբաղ, և Մոսոք, և Թիրաս: 3 Եւ Գոմերի որդիները՝ Ասքանազ, և Ռիփաթ, և Թորգոմ: 4 Եւ Յավանի որդիները՝ Եղիսա, և Թարսիս, Կիտացիներ, և Դոդանացիներ: 5 Նրանցից բաժանվեցան ծովերի կղզիները իրանց ազգերի համար, իրանց լեզուների համար, իրանց ցեղերի համար, իրանց ազգերի մեջ: 6 Եւ Քամի որդիները՝ Քուշ, և Մեսրայիմ, և Փուտ, և Քանան: 7 Եւ Քուշի որդիները՝ Սաբա, և Հավիլա, և Սաբաթա, և Ռեգմա, և Սաբաթեքա: Եւ Ռեգմայի որդիները՝ Շեբա, և Դեդան: 8 Եւ Քուշը ծնեց Նեբրովթին. նա սկսեց հզոր լինել երկրի վրա: 9 Նա հզոր որսորդ էր Տիրոջ առաջ. այդ պատճառով ասվում է. Նեբրովթի պես հզոր որսորդ Տիրոջ առաջ: 10 Եւ նրա թագավորության սկիզբը եղավ Բաբելոնը, Էրեքը, Աքքադը և Քալանեն, Սենաարի երկրում: 11 Այդ երկրից դուրս եկավ Ասորեստանը, և շինեց Նինվեն, և Քալահը, և Ռեսենը Նինվեի և Քալահի միջև. այդ մեծ քաղաք է: 12 Եւ Մեսրայիմը ծնեց Լուդիմներին, և Ենամիմներին, և Լեհաբիմներին, և Նեփթուխիմներին, 13 և Պաթրուսիմներին, և Քասլուխիմներին, որոնցից դուրս եկան Փղշտացիները, և Կափտորիմներին: 14 Եւ Փուտը ծնեց Ուփսին, և Սիրիան, և Ասորեստանը, և Ասորեստանի որդիները՝ Ասքանազ, և Ռիփաթ, և Թորգոմ: 15 Եւ Քանանը ծնեց Սիդոնին, նրա անդրանիկ որդին, և Քետին, 16 և Հեբուսացիներին, և Ամորհացիներին, և Գերգեսացիներին, 17 և Եվացիներին, և Արքեցիներին, և Սինացիներին, 18 և Արվադացիներին, և Զեմարացիներին, և Եմաթացիներին: Եւ հետո տարածվեցան Քանանացիների ցեղերը: 19 Եւ Քանանացիների սահմանը եղավ Սիդոնից մինչև Գերար, մինչև Ասա, մինչև Սոդոմ, և Գոմոր, և Ադամա, և Սեբոիմ, մինչև Լասա: 20 Սրանք են Քամի որդիները՝ ըստ իրանց ցեղերի, ըստ իրանց լեզուների, իրանց երկրների մեջ, իրանց ազգերի մեջ: 21 Եւ Սեմին էլ, որ Յաբեթի մեծ եղբայրն էր, ծնվեցան որդիներ, և նա էր Եբերի բոլոր որդիների հայրը: 22 Սեմի որդիները՝ Ելամ, և Ասուր, և Արփաքսադ, և Լուդ, և Արամ: 23 Եւ Արամի որդիները՝ Ուս, և Ուլ, և Գեթեր, և Մաշ: 24 Եւ Արփաքսադը ծնեց Սալային, և Սալան ծնեց Եբերին: 25 Եւ Եբերին ծնվեցան երկու որդիներ. մեկի անունը Փեղեգ էր, որովհետև նրա օրերում բաժանվեցավ երկիրը, և նրա եղբոր անունը Յոկտան էր: 26 Եւ Յոկտանը ծնեց Ալմոդադին, և Սաղեփին, և Ասարմաթին, և Յարային, 27 և Ադորամին, և Ուզալին, և Դեկղային, 28 և Ովբաղին, և Աբիմայելին, և Սաբային, 29 և Ոփիրին, և Եվիղային, և Յոբաբին: Սրանք բոլորը Յոկտանի որդիներն էին: 30 Եւ նրանց բնակության տեղը եղավ Մեսան, մինչև որ գնում ես Սեփար, արևելյան լեռները: 31 Սրանք են Սեմի որդիները՝ ըստ իրանց ցեղերի, ըստ իրանց լեզուների, իրանց երկրների մեջ, իրանց ազգերի մեջ: 32 Սրանք են Նոյի որդիների ցեղերը՝ ըստ իրանց սերունդների, իրանց ազգերի մեջ: Եւ նրանցից բաժանվեցան ազգերը երկրի վրա ջրհեղեղից հետո:

Գլուխ ԺԱ

1 Եւ ամբողջ երկիրը մի լեզու էր, և մի խոսք ունեին: 2 Եւ եղավ, երբ արևելքից գնում էին, գտան մի դաշտ Սենաար երկրում, և բնակվեցան այնտեղ: 3 Եւ ասացին միմյանց. Եկեք աղյուսներ շինենք, և լավ թխենք կրակի մեջ: Եւ աղյուսները քարի տեղ նրանց համար ծառայեցին, և կրաքարը կավի տեղ ծառայեցրին: 4 Եւ ասացին. Եկեք մեզ համար քաղաք շինենք, և աշտարակ, որի գագաթը երկնքի հասնի, և մեզ համար անուն շինենք, որ չցրվենք ամբողջ երկրի երեսին: 5 Եւ իջավ Տէրը, որ տեսնի քաղաքը և աշտարակը, որ շինում էին մարդկանց որդիները: 6 Եւ ասաց Տէրը. Ահա մի ազգ են, և մի լեզու ունեն բոլորը, և այս է նրանց սկսածը անել, և այլևս նրանց համար անհնար չի լինի ամեն բան անել, որ միտք անեն անել: 7 Եկեք իջնենք, և խառնենք նրանց լեզուն, որ մեկը մյուսի լեզուն չհասկանա: 8 Եւ ցրեց նրանց Տէրը այնտեղից ամբողջ երկրի երեսին, և դադարեցրին քաղաքը շինելուց: 9 Այդ պատճառով կոչվեցավ նրա անունը Բաբել, որովհետև այնտեղ խառնեց Տէրը ամբողջ երկրի լեզուն, և այնտեղից ցրեց նրանց Տէրը ամբողջ երկրի երեսին: 10 Սրանք են Սեմի սերունդները: Սեմը հարյուր տարեկան էր, երբ ծնեց Արփաքսադին, երկու տարի հետո ջրհեղեղից: 11 Եւ Սեմը ապրեց Արփաքսադը ծնելուց հետո հինգ հարյուր տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 12 Եւ Արփաքսադը երեսուն և հինգ տարեկան էր, երբ ծնեց Սալային: 13 Եւ Արփաքսադը ապրեց Սալան ծնելուց հետո չորս հարյուր երեք տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 14 Եւ Սալան երեսուն տարեկան էր, երբ ծնեց Եբերին: 15 Եւ Սալան ապրեց Եբերը ծնելուց հետո չորս հարյուր երեք տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 16 Եւ Եբերը երեսունչորս տարեկան էր, երբ ծնեց Փեղեգին: 17 Եւ Եբերը ապրեց Փեղեգը ծնելուց հետո չորս հարյուր երեսուն տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 18 Եւ Փեղեգը երեսուն տարեկան էր, երբ ծնեց Սերուգին: 19 Եւ Փեղեգը ապրեց Սերուգը ծնելուց հետո երկու հարյուր ինը տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 20 Եւ Սերուգը երեսուն տարեկան էր, երբ ծնեց Նաքորին: 21 Եւ Սերուգը ապրեց Նաքորը ծնելուց հետո երկու հարյուր տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 22 Եւ Նաքորը քսանինը տարեկան էր, երբ ծնեց Թարային: 23 Եւ Նաքորը ապրեց Թարան ծնելուց հետո հարյուր տասնինը տարի, և ծնեց որդիներ և դուստրեր: 24 Եւ Թարան յոթանասուն տարեկան էր, երբ ծնեց Աբրամին, Նաքորին և Արանին: 25 Եւ Թարայի ծնունդները՝ Թարան ծնեց Աբրամին, Նաքորին և Արանին, և Արանը ծնեց Ղովտին: 26 Եւ Արանը մեռավ իր ծննդավայրում, Քաղդեացիների Ուր քաղաքում, իր հոր Թարայի առաջ: 27 Եւ առան Աբրամը և Նաքորը կանայք իրանց համար. Աբրամի կնոջ անունը Սառա էր, և Նաքորի կնոջ անունը Մեղքա էր, որ Արանի դուստրն էր, Մեղքայի և Յեսքայի հայրը: 28 Եւ Սառան ամուլ էր, զավակ չուներ: 29 Եւ Թարան առավ իր որդի Աբրամին, և իր թոռնիկ Ղովտին, Արանի որդին, և իր հարս Սառային, Աբրամի կնոջը, և դուրս եկան նրանք Քաղդեացիների Ուր քաղաքից, որ գնան Քանանացիների երկիրը: Եւ եկան մինչև Քարան, և բնակվեցան այնտեղ: 30 Եւ եղան Թարայի օրերը երկու հարյուր հինգ տարի, և մեռավ Թարան Քարանում: 31 Եւ Աբրամը կոչ արեց Տիրոջ, և ասաց. Ես քեզ կանչեցի, որ ինձ հետ գաս, և ես քեզ մեծ ազգ կանեմ, և կօրհնեմ քեզ, և քո անունը մեծ կանեմ, և դու օրհնություն կլինես: 32 Եւ օրհնեցի նրանց, որ քեզ անիծեն, և անիծեցի նրանց, որ քեզ նախատեն, և քեզանով կօրհնվեն երկրի բոլոր ցեղերը: 33 Եւ գնաց Աբրամը, ինչպես որ Տէրը նրան ասաց, և գնաց նրա հետ Ղովտը: Եւ Աբրամը յոթանասունհինգ տարեկան էր, երբ դուրս եկավ Քարանից: 34 Եւ առավ Աբրամը Սառային, իր կնոջը, և Ղովտին, իր եղբորորդուն, և ամբողջ ունեցվածքը, որ ձեռք էին բերել, և հոգիները, որ ձեռք էին բերել Քարանում, և դուրս եկան, որ գնան Քանանացիների երկիրը: Եւ եկան Քանանացիների երկիրը: 35 Եւ անցավ Աբրամը երկրի միջով մինչև Սիքեմի տեղը, մինչև Մորեի կաղնին: Եւ Քանանացին այն ժամանակ երկրում էր: 36 Եւ երևաց Տէրը Աբրամին, և ասաց. Քո սերունդներին կտամ այս երկիրը: Եւ շինեց նա այնտեղ սեղան Տիրոջ համար, որ երևացել էր նրան: 37 Եւ այնտեղից գնաց դեպի լեռը, որ արևելք է Բեթելից, և վրանը խփեց, Բեթելը արևմուտքում ունենալով, և Հայը արևելքում ունենալով: Եւ շինեց նա այնտեղ սեղան Տիրոջ համար, և կանչեց Տիրոջ անունը: 38 Եւ գնաց Աբրամը գնալով և գնալով դեպի հարավ: 39 Եւ սով եղավ երկրում, և իջավ Աբրամը Եգիպտոս, որ այնտեղ բնակվի, որովհետև սաստիկ սով էր երկրում: 40 Եւ եղավ, երբ մոտեցավ Եգիպտոսին, ասաց Սառային, իր կնոջը. Ահա գիտեմ, որ գեղեցիկ կին ես դու: 41 Եւ եղավ, երբ եգիպտացիները քեզ տեսնեն, կասեն. Նրա կինն է սա: Եւ ինձ կսպանեն, իսկ քեզ կկենդանացնեն: 42 Ասա, խնդրեմ, որ քույրս ես դու, որ ինձ համար լավ վարվեն, և ես քո պատճառով կապրեմ: 43 Եւ եղավ, երբ Աբրամը Եգիպտոս մտավ, եգիպտացիները տեսան կինը, որ շատ գեղեցիկ էր: 44 Եւ տեսան նրան փարավոնի իշխանները, և գովեցին նրան փարավոնի առաջ, և կինը տարան փարավոնի տունը: 45 Եւ Աբրամի համար լավ վարվեցին նրա պատճառով, և եղան նրան ոչխարներ, և եզներ, և էշեր, և արուներ, և էգեր, և էշուհիներ, և ուղտեր: 46 Եւ Տէրը պատուհասեց փարավոնին և նրա տունը մեծ պատուհասներով Աբրամի կնոջ Սառայի պատճառով: 47 Եւ կանչեց փարավոնը Աբրամին, և ասաց. Ինչ է, որ արեցիր ինձ հետ: Ինչո՞ւ չասացիր, որ կինն է քո: 48 Ինչո՞ւ ասացիր, որ քույրն է քո, որ ես նրան կին առնեի: Եւ հիմա ահա կինդ, առ և գնա: 49 Եւ հրամայեց փարավոնը իր մարդկանց, և ուղարկեցին նրան, և կինը, և ամեն ինչ, որ ունեցել էր:

Գլուխ ԺԲ

1 Եւ ելավ Աբրամը Եգիպտոսից, նա և կինը, և ամեն ինչ, որ ունեցել էր, և Ղովտը նրա հետ, դեպի հարավ: 2 Եւ Աբրամը շատ հարուստ էր անասուններով, արծաթով և ոսկով: 3 Եւ գնաց նա ճամփաներով, որոնցով եկել էր հարավից մինչև Բեթել, մինչև այն տեղը, որ վրանը խփել էր նա սկզբում, Բեթելի և Հայի միջև, 4 այն տեղը, որ սեղան էր շինել նա սկզբում, և կանչեց նա այնտեղ Տիրոջ անունը: 5 Եւ Ղովտը, որ գնում էր Աբրամի հետ, ոչխարներ ուներ, և եզներ, և վրաններ: 6 Եւ չէր տանում նրանց երկիրը, որ միասին բնակվեն, որովհետև շատ էր նրանց ունեցվածքը, և չէին կարող միասին բնակվել: 7 Եւ կռիվ եղավ Աբրամի անասունների հովիվների և Ղովտի անասունների հովիվների միջև: Եւ Քանանացին և Փերեզացին այն ժամանակ երկրում էին: 8 Եւ ասաց Աբրամը Ղովտին. Խնդրեմ, թող կռիվ չլինի ինձ և քեզ միջև, և իմ հովիվների և քո հովիվների միջև, որովհետև եղբայրներ ենք մենք: 9 Ահա ամբողջ երկիրը քո առաջ է. խնդրեմ, հեռացիր ինձանից: Եթե ձախ կողմը գնաս, ես աջ կգնամ, և եթե աջ կողմը գնաս, ես ձախ կգնամ: 10 Եւ վերացրեց Ղովտը իր աչքերը, և տեսավ Հորդանանի ամբողջ դաշտը, որ ամենայն կողմից ջրառատ էր, մինչև որ գնում ես Սոդոմ, Տիրոջ պարտեզի պես, Եգիպտոսի երկրի պես, մինչև որ գնում ես Սոար: 11 Եւ ընտրեց Ղովտը իրան Հորդանանի ամբողջ դաշտը, և գնաց Ղովտը արևելք, և բաժանվեցան եղբայրները միմյանցից: 12 Աբրամը բնակվեց Քանանացիների երկրում, և Ղովտը բնակվեց դաշտի քաղաքներում, և վրանը խփեց մինչև Սոդոմ: 13 Եւ Սոդոմի մարդիկ չար էին, և մեծ մեղանչողներ էին Տիրոջ առաջ: 14 Եւ Տէրը ասաց Աբրամին, Ղովտի հեռանալուց հետո. Վերացրու հիմա քո աչքերը, և նայիր այն տեղից, ուր որ դու կաս, հյուսիսային կողմը և հարավային կողմը, և արևելյան կողմը և արևմտյան կողմը: 15 Որովհետև ամբողջ երկիրը, որ դու տեսնում ես, քեզ կտամ և քո սերունդներին մինչև հավիտենական ժամանակներ: 16 Եւ քո սերունդները կանեմ երկրի փոշու պես, որ եթե մարդ կարողանա երկրի փոշին հաշվել, քո սերունդները նույնպես կհաշվվեն: 17 Վեր կաց, գնա երկրի երկայնությամբ և լայնությամբ, որովհետև քեզ կտամ նրան: 18 Եւ վրանը խփեց Աբրամը, և եկավ բնակվեց Քանանացիների Մամբրե դաշտում, որ Քեբրոնում է, և շինեց այնտեղ սեղան Տիրոջ համար:

Գլուխ ԺԳ

1 Եւ եղավ այդ օրերում, որ Ամրափելը, Սենաարի թագավորը, Արիովքը, Ելլասարի թագավորը, Քադորղոմորը, Ելամի թագավորը, և Թադալը, Ազգաց թագավորը, 2 պատերազմ արին Բերայի, Սոդոմի թագավորի դեմ, և Բիրսայի, Գոմորի թագավորի դեմ, Սենաբի, Ադամայի թագավորի դեմ, և Սեմեբերի, Սեբոիմի թագավորի դեմ, և Բելայի, որ Սոար է: 3 Սրանք բոլորը միացան Սիդդիմի ձորում, որ Ծովի ձոր է: 4 Տասներկու տարի ծառայեցին Քադորղոմորին, և տասներեքերորդ տարում ապստամբեցան: 5 Եւ տասնչորսերորդ տարում եկավ Քադորղոմորը և նրա հետ եղած թագավորները, և հարվածեցին Ռափայիմներին Աստարովթ Կարնայիմում, և Զուզիներին Համում, և Եմիներին Սավե Կարիաթայիմում, 6 և Քորրացիներին իրանց լեռան վրա Սեիր, մինչև Փարան, որ անապատի մոտ է: 7 Եւ դարձան և եկան Ենգադի, որ Ասասոն Թամար է, և հարվածեցին Ամաղեկացիների ամբողջ երկրին, և նաև Ամորհացիներին, որ բնակվում էին Ասասոն Թամարում: 8 Եւ ելավ Սոդոմի թագավորը, և Գոմորի թագավորը, և Ադամայի թագավորը, և Սեբոիմի թագավորը, և Բելայի թագավորը, որ Սոար է, և պատերազմ արին նրանց դեմ Սիդդիմի ձորում, 9 Քադորղոմորի, Ելամի թագավորի դեմ, և Թադալի, Ազգաց թագավորի դեմ, և Ամրափելի, Սենաարի թագավորի դեմ, և Արիովքի, Ելլասարի թագավորի դեմ, չորս թագավորներ հինգի դեմ: 10 Եւ Սիդդիմի ձորը լի էր ասֆալտի փոսերով, և Սոդոմի և Գոմորի թագավորները փախան, և ընկան այնտեղ, և մնացորդները լեռը փախան: 11 Եւ առան ամբողջ ունեցվածքը Սոդոմի և Գոմորի, և ամբողջ կերակուրը նրանց, և գնացին: 12 Եւ առան Ղովտին, Աբրամի եղբորորդուն, և նրա ունեցվածքը, և գնացին, որովհետև Սոդոմում էր նա բնակվում: 13 Եւ եկավ մեկը, որ ազատվել էր, և պատմեց Աբրամ Եբրայեցուն, որ Մամբրե Ամորհացու կաղնիների մոտ էր բնակվում, որ եղբայր էր Եսքոլին և Ավնանին, որոնք Աբրամի դաշնակիցներն էին: 14 Եւ լսեց Աբրամը, որ գերի են տարել իր եղբորորդուն, և զինեց իր տանը ծնված երեք հարյուր տասնութ մարդկանց, և հետապնդեցին մինչև Դան: 15 Եւ բաժանվեցավ նրանց վրա գիշերով, նա և իր ծառաները, և հարվածեց նրանց, և հալածեց նրանց մինչև Քովբա, որ Դամասկոսի ձախ կողմն է: 16 Եւ դարձրեց ամբողջ ունեցվածքը, և իր եղբորորդի Ղովտին և նրա ունեցվածքը դարձրեց, և կանանց և ժողովրդին: 17 Եւ գնաց Սոդոմի թագավորը նրան ընդառաջ, Քադորղոմորին հարվածելուց հետո, և նրա հետ եղած թագավորները, Սավե դաշտում, որ Թագավորի դաշտ է: 18 Եւ Մելքիսեդեկ, Սալեմի թագավորը, հաց և գինի դուրս բերեց, և նա Քահանայապետ էր Բարձրյալ Աստծու: 19 Եւ օրհնեց նրան, և ասաց. Օրհնյալ թող լինի Աբրամը Բարձրյալ Աստծուց, որ երկինքը և երկիրը ստեղծեց: 20 Եւ օրհնյալ թող լինի Բարձրյալ Աստված, որ քո թշնամիներին քո ձեռքը մատնեց: Եւ նա տասանորդ տվեց նրան ամեն ինչից: 21 Եւ ասաց Սոդոմի թագավորը Աբրամին. Ինձ տուր մարդկանց, և ունեցվածքը առ քեզ համար: 22 Եւ ասաց Աբրամը Սոդոմի թագավորին. Ձեռքս բարձրացրի Տեր Աստծու առաջ Բարձրյալ, որ երկինքը և երկիրը ստեղծեց, 23 որ ոչ թել, ոչ կոշկի կապ, ոչ էլ որևէ բան, որ քոնը լինի, չեմ առնի, որ չասես, թե ես հարստացրի Աբրամին: 24 Բացի այն, որ ուտեցին երիտասարդները, և այն մարդկանց բաժինը, որ գնացին ինձ հետ, Ավնանին, Եսքոլին և Մամբրեին, նրանք թող իրանց բաժինը առնեն:

Գլուխ ԺԴ

1 Այս բաները եղան հետո, Տիրոջ խոսքը եղավ Աբրամի հետ տեսիլքի մեջ, և ասաց. Մի վախենա, Աբրամ, ես քո վահանն եմ, քո վարձը շատ մեծ կլինի: 2 Եւ ասաց Աբրամը. Տեր Աստված, ի՞նչ կտաս ինձ, որովհետև անորդի եմ գնում, և իմ տան տերը Դամասկոսի Եղիազեր Հայրենասերն է: 3 Եւ ասաց Աբրամը. Ահա ինձ զավակ չտվիր, և ահա տանս ծնվածը կլինի իմ ժառանգը: 4 Եւ ահա Տիրոջ խոսքը եղավ նրա հետ, ասելով. Նա քո ժառանգը չի լինի, այլ որ քո որովայնից դուրս կգա, նա կլինի քո ժառանգը: 5 Եւ դուրս բերեց նրան դուրս, և ասաց. Նայիր հիմա երկնքին, և հաշվիր աստղերը, եթե կարող ես հաշվել նրանց: Եւ ասաց նրան. Այդպես կլինի քո սերունդը: 6 Եւ հավատաց Աբրամը Տիրոջ, և նա արդարություն համարեց նրան: 7 Եւ ասաց նրան. Ես եմ Տէր Աստված, որ հանեցի քեզ Քաղդեացիների Ուր քաղաքից, որ քեզ տամ այս երկիրը, որ ժառանգես: 8 Եւ ասաց Աբրամը. Տեր Աստված, ինչպե՞ս կիմանամ, որ ժառանգելու եմ նրան: 9 Եւ ասաց նրան. Ինձ համար առ երեք տարեկան կով, և երեք տարեկան այծ, և երեք տարեկան խոյ, և մի տատրակ, և մի աղավնի: 10 Եւ առավ նա այդ բոլորը նրա համար, և կիսեց նրանց մեջտեղից, և դրեց իրարու դեմ իրանց կտրած մասերը, բայց թռչունները չկիսեց: 11 Եւ իջան գիշատիչ թռչունները դիակների վրա, և Աբրամը քշեց նրանց: 12 Եւ եղավ, երբ արևը մայր մտավ, քուն պատեց Աբրամին, և ահա սարսափ և մեծ խավարչտին պատեց նրան: 13 Եւ ասաց Աբրամին. Գիտցիր, որ քո սերունդները պանդուխտ կլինեն մի երկրում, որ իրանց չէ, և ծառայության կմատնվեն, և չարչարանքի կենթարկվեն չորս հարյուր տարի: 14 Եւ այն ազգին, որ ծառայության են մատնելու, ես կդատեմ, և դրանից հետո կդուրս գան շատ ունեցվածքով: 15 Եւ դու խաղաղությամբ կգնաս քո հայրերի մոտ, և խաղաղությամբ կթաղվես լավ ծերության մեջ: 16 Եւ չորրորդ սերունդը կդառնա այստեղ, որովհետև մինչև հիմա չի լրացել Ամորհացիների մեղքերի չափը: 17 Եւ եղավ, երբ արևը մայր մտավ, և մթնեց, ահա ծխացող վառարան և կրակի ջահ անցավ այն կտրած մասերի միջով: 18 Այդ օրը Տէրը ուխտ դրեց Աբրամի հետ, ասելով. Քո սերունդներին կտամ այս երկիրը, Եգիպտոսի գետից մինչև մեծ գետը, Եփրատ գետը: 19 Կենացիներին, և Կենեզացիներին, և Կադմոնացիներին, 20 և Քետացիներին, և Փերեզացիներին, և Հռեփայիմներին, 21 և Ամորհացիներին, և Քանանացիներին, և Գերգեսացիներին, և Հեբուսացիներին:

Գլուխ ԺԵ

1 Եւ Սառան, Աբրամի կինը, զավակ չէր ունենում նրան: Եւ նա ուներ մի եգիպտացի աղախին, որի անունը Հագար էր: 2 Եւ ասաց Սառան Աբրամին. Ահա Տէրը զավակ չտվեց ինձ, մտիր, խնդրեմ, իմ աղախնի մոտ, գուցե նրանից շինվեմ: Եւ լսեց Աբրամը Սառայի խոսքը: 3 Եւ առավ Սառան, Աբրամի կինը, Հագարին, իր եգիպտացի աղախնին, Աբրամի կնության տվեց նրան, որ տասը տարի էր, որ Աբրամը բնակվում էր Քանանացիների երկրում: 4 Եւ մտավ Աբրամը Հագարի մոտ, և նա հղիացավ: Եւ տեսավ նա,

քեզ առած երկրումը քո քաղաքներն ելիցուն՝ եղբայրներիդ
ելիր ապրում լինի, մերթ չը խոստանիս և ձեռդ չխփես քո
8 ապրած երկրիցդ. Այլ անպատճառ ձեռ ձեռդ բռնաս նորա հասնիս, և նորա կորուսեալն լինելոյ չափ փոխ առնուն
9 նորան։ Չգութասցիր, մի գուցէ սրտիդ մէջը չար խորհուրդ ելանէ, ասելով. Մօտեցաւորդ տարին՝ եօթներորդ տարին մօտ է, և ապրած երկրիդ մէջը չար աչքով նայիս և նորան չտաս, և նա էլ քեզ դէմ Աստուծոյն պագանէ,
10 և քո գանգատ լինիս։ Անպատճառ առա՛ր նորան, և նորան առած մերթ չնեղանիս. վասն զի քո Աստուած պարգևատրէ քեզ գործերումդ և քո ամեն ձեռնարկութեանդ մէջ։
11 Վասնզի երկրի մէջից պակաս պակաս չի լինիլ, նորա համար քեզ պատուիրում եմ ու ասում՝ Ձեռ բաց քո եղբօրումն եղած աղքատիդ և չքաւորիդ։
12 Եթէ քո եղբայրներիցդ մի Եբրայեցի մարդ կամ Եբրայեցի կնիկ քեզ վերայ ծախուի, և քեզ վեց տարի ծառայէ, և նա վեցերորդ տարին ազատութիւն առնէ, այն ժամանակ հօթներորդ տարին նորան քո մօտիցդ պարապ արձակիս։
13 Եւ երբոր քո մօտիցն արձակես լինիս՝ նորան պարապ չարձակիս.
14 պարտկի չարձակիս. Պարգևատրես նորան քո ոչխարներիցդ, քո կալիցդ և քո հնձանիցդ. քո Տէր Աստուծոյ որ քեզ օրհնեց, տաս նորան։ Եւ յիշիր որ դու էլ ծառայ էիր Եգիպտոսի երկրումը, և քո Տէր Աստուածդ քեզ փրկեց. այս պատճառով այսօր քեզ պատուիրում եմ այս բանը։
16 Բայց եթէ քեզ ասէ՝ Ես քեզմէ չեմ գնայ, քանզի նա քեզ և քո տանդ սիրել է, որովհետև նորան
17 Տէրը քո է քեզ մօտ, Ապա ժամանակ հերծիր առնես և նորա ականջը դրան վերայ ծակես, և նա քեզ յաւիտեան ծառայ լինի. աղախնիդ էլ այսպէս ա-

նես։ Դարման քո մեռելդ տարակուսանքդ աչքիդ դժուար չերեւայ. վասն զի քեզ վեց տարի ծառայութիւն է տալ, ապա վերադիմեալ վարձքի կրկնապատիկն է. և քո Տէր Աստուածդ քո ամեն գործերումը քեզ կ՚օրհնէ։
19 Քո արջառներից և ոչխարից ծնած ամեն արու առաջիններդ քո Տէր Աստուածդ նուիրես. արջառներիդ առաջիններովը չը գործես, և առաջին ոչխարներիդ
20 բեղ բուրդը չխուզես։ Տարի տարի քո և քո Տէր Աստուածդ առաջի՝ դու և քո տունդ պիտի ուտէք զնոսա այն տեղը որ Տէրը ընտրէ։
21 Բայց եթէ նորանիցդ արատ լինի, կոյր կամ կղզի լինի, ինչ և իցէ մի վատ արատ, նորանիր քո Տէր Աստուածդի չզոհես. Քո դրանդումը ուտես.
22 անկողտուրը և մկղտուրը հաւասար ապեր այծեամի և եղջերուի պէս։
23 Միայն նորա արիւնը չուտես, ջրի պէս գետինը թափես այն։

Գ.Լ. Ժ.Գ.

1 Պարը ամեն պտուղներիդ սերմի՝ հոր, և զատիկն անես քո Տէր Աստուածդ Տանիր. վասն զի քո Տէր Աստուածդ Պարը ամառուայ պիղծով Տանից քեզ Աստուածդ պիտի ընտրէ՝ որ քո Տէր Աստուածդ անունը նորա հաստատէ։
2 Զատիկի Տանիր քո Տէր Աստուածդի ոչխարներ ու արջառներ մերթ պիտի ընտրէ՝ որ Տէրն անունը նորա հաստատէ։
3 խմորեալ հաց չուտես, եօթն օր նեղութեան անխմոր հաց ուտես նորա հետ, վասն զի նեղութեան երկրից ապադասով դուրս ելար. որպէս զի քո կենաց բոլոր օրերումը Եգիպտոսի երկրից դուրս ելած օրդ յիշես։
4 Եւ քո բոլոր սահմանումդ եօթն օր բնաւ խմոր չերեւայ քեզ մօտ. և առաջի օրուայ իրիկունը մնացած միսդ մինչև առաւօտ չմնայ։
5 Դուրս չես կարող քո Տէր Աստուածդ քեզ տուած գոներդ մէջ զատիկ անել.
6 միայն որ քո Տէր Աստուածդ անունը որ քո Տէր Աստուածդ

կթնուլ իր անուան ընակութեան
տանիք, որպէսզի մերթեւն ա-
տիկը իրեն տէր՝ տեսակը
մեծնայ, Աստուծոյ գաւա-
7 կան մտանելով։ Եւ որ Աստուծ
Աստուծոյ ընտրած տեղը նե-
ռան ու տանի, և առաջը գաղթա-
8 կրած գնաս։ Ահեղ ու բարկա-
ռան, և նախանձոտ տէր է Ա-
տուծ Աստուծոյ տանը տանու-
թիւնով մեռնի եւ կամ։ գործ չա-
նես։

9 Որ մեր տանը նոխը չա-
րանի տանիս, տանիդ մէջ
մեծնայ տեսակը տեսակ տանե-
10 լոյ նոխը չարանի, եւ որ Աստ-
ծոյ Աստուծոյ տանիդ
նոխ ուռն տանի, որ Աստուծ
Աստուծոյ գեղ տուած տե-
ղիս տանիս Աստուծոյ տանիդ մեռ-
նի։ Ահա գեղ նոխ
11 տանիս ու նոխ տան, եւ ուրա-
րանի ուռն Աստուծոյ Աստուծոյ
առջեւ ու նոխ տան, եւ ուրա-
րանի ուռն Աստուծոյ առջեւ
և առջեւը, և ձեր մեծնայ տեսակը
ի տանիս, որ ձեր տանիս
և առջեւը, և ձեր մեծնայ տեսակը
ի տանիս, որ ձեր տանիս
12 տանիս ընտրած տեղը, եւ
տեղը ու որ ձեր նոխ տան
տանիս, և որ ձեր տանիս
ուռն տանիս։

13 Նոխն ու տանիս տանիս
տանը տանիս ու նոխ և տանիս
14 տանիս տեղ, տեղ։ Եւ տանիդ
մէջ ուրարանի տանիս, որ և
ու տանիս և առջեւը, ու ձեր տանիս
և տանիս և տանիս մէջ նոխ
Աստուծոյ տանիս, տանիս, տեղ
15 և տանիս։ Որ Աստուծ Աս-
տուծոյ տանիս նոխն ու տանիս
Աստուծոյ տանիս և տանիս
տանիս, ձեր տանիս և տանիս
16 Տանիս նոխ տանիս՝ տանիս
տանիսներուն տանիս, տանիս-
նիս տանիս և տանիս տանիս
տանիս՝ ու տանիս տանիս
ու Աստուծոյ տանիս և-

տանիս տանիս տանիս տանիս
և տանիս տանիս տանիս տանիս
տանիս տանիս տանիս տանիս
տանիս տանիս տանիս տանիս

զսուր կամ կնդրկ քաղիւով քաղ-
6 կածս, և մատոյ։ Աստղատեսրդ
երկու կամ երիք վիզոյն բնդոսով
մատոյ։ մէկ վիզոյն բնդոսով չէ
7 մատոյ։ Աստղ վիզոյնէրն Աստ քէ
լինի նորա վիզոյ նորան մատչին-
ցուս Հաւանի, և ընդդէմ յոգնելի
Աստ քէ նորանից չիտոյ։ և չա-
րաչարն Աստ սիրելոյ վիզոյնէրս,
8 Ալեկ մի ոսկ քեզ չատ գնալ տա
երկոյ գոտեկս ասլուսն և ասլուսն
մէջ, գոտի և գոտի մէջ, վիզոյ
և վիզոյ մէջ ազնիւն վիճակ քա-
նիցէ ես գոնելոյ, այլ մատոյ
մատ Աստուծոյ բնդոսով անդր,
9 Եւ գնաս Աստուծոյ քաղաքէրն
մատ և այլ մատչելի գոտեկս
մատ և Հարկէրն։ և նորանից
քեզ մատ գոտեկս գոտեկս մատ-
10 գր, Եւ ոսկեր այլ մատ Հան-
մատ գր քեզ գոտեկս Աստուծոյ
բնդոսով անդրէ, և ասլի ինչ գր
քեզ ասլուսնէրն գոտեկս մատ-
11 կածս։ Աստ գոտեկս Հան-
մատ գր նորանից քեզ ասլուսնէրն
ես և այլ գոտեկս Հանմատ
մատ գր քեզ ասլ ես կածս
բեր, նորանից քեզ Հարկէրն նո-
րա մատ գոտեկս Հանմատ
12 քեզ մէջ ես Հաւանի։ Ասլուս
այլ մատոյ գր Հարկէրն ասլուս
ասլուսով չէ այլ Հարկէրն,
գր կածսնէրն և գր Աստուծոյ
գոտեկս գոտեկս գոտեկս, կամ
գոտեկս գոտեկս, այլ մատոյ մատ,
և չարաչարն Աստուծոյ մատ-
13 բեզ։ Եւ բոլոր մատոյ գոտեկս
ասլուսով մատոյ, և այլ և Հան-
գոտեկս Հարկէրն չէ։
14 Աստուծոյ մատոյ այլ ասլուսնէրն գր
գր Աստուծոյ Աստուածոյ քեզ կր
ասլ, և նորանից կ'ասլուսն և նորա-
նում կ'ասլուսն, և ասլուս։ Եւ
վիզոյ Հաւանի գր գոտեկս մատ
ասլուսով չէ գոտեկս մատ գոտեկս
15 Աստուածոյ գր Աստուծոյ Աստու-
ծոյ բնդոսով Հարկէրն վիզոյ
Հաւանի գոտեկս, գր վիզոյ վիզոյ
բեզ քեզ վիզոյ Հաւանի գոտեկս
նոյն, գր չես կասլ քեզ վիզոյ
Հաւանի գոտեկս մատ վիզոյ ասլուսնէրն
16 գր գր և Հարկէրն չէ։ Ասկոյն նոյ
գոտեկս չատ Հին չասլնալ, և

գոտեկս կամ կնդրկ քաղիւով քաղ-
կածս, և մատոյ։ Աստղատեսրդ
երկու կամ երիք վիզոյն բնդոսով
մատոյ։ մէկ վիզոյն բնդոսով չէ
մատոյ։ Աստ վիզոյնէրն Աստ քէ
լինի նորա վիզոյ նորան մատչին-
ցուս Հաւանի, և ընդդէմ յոգնելի
Աստ քէ նորանից չիտոյ։ և չա-
րաչարն Աստ սիրելոյ վիզոյնէրս,
Ալեկ մի ոսկ քեզ չատ գնալ տա
երկոյ գոտեկս ասլուսն և ասլուսն
մէջ, գոտի և գոտի մէջ, վիզոյ
և վիզոյ մէջ ազնիւն վիճակ քա-
նիցէ ես գոնելոյ, այլ մատոյ
մատ Աստուծոյ բնդոսով անդր,
Եւ գնաս Աստուծոյ քաղաքէրն
մատ և այլ մատչելի գոտեկս
մատ և Հարկէրն։ և նորանից
քեզ մատ գոտեկս գոտեկս մատ-
գր, Եւ ոսկեր այլ մատ Հան-
մատ գր քեզ գոտեկս Աստուծոյ
բնդոսով անդրէ, և ասլի ինչ գր
քեզ ասլուսնէրն գոտեկս մատ-
կածս։ Աստ գոտեկս Հան-
մատ գր նորանից քեզ ասլուսնէրն
ես և այլ գոտեկս Հանմատ
մատ գր քեզ ասլ ես կածս
բեր, նորանից քեզ Հարկէրն նո-
րա մատ գոտեկս Հանմատ
քեզ մէջ ես Հաւանի։ Ասլուս
այլ մատոյ գր Հարկէրն ասլուս
ասլուսով չէ այլ Հարկէրն,
գր կածսնէրն և գր Աստուծոյ
գոտեկս գոտեկս գոտեկս, կամ
գոտեկս գոտեկս, այլ մատոյ մատ,
և չարաչարն Աստուծոյ մատ-
բեզ։ Եւ բոլոր մատոյ գոտեկս
ասլուսով մատոյ, և այլ և Հան-
գոտեկս Հարկէրն չէ։
Աստուծոյ մատոյ այլ ասլուսնէրն գր
գր Աստուծոյ Աստուածոյ քեզ կր
ասլ, և նորանից կ'ասլուսն և նորա-
նում կ'ասլուսն, և ասլուս։ Եւ
վիզոյ Հաւանի գր գոտեկս մատ
ասլուսով չէ գոտեկս մատ գոտեկս
Աստուածոյ գր Աստուծոյ Աստու-
ծոյ բնդոսով Հարկէրն վիզոյ
Հաւանի գոտեկս, գր վիզոյ վիզոյ
բեզ քեզ վիզոյ Հաւանի գոտեկս
նոյն, գր չես կասլ քեզ վիզոյ
Հաւանի գոտեկս մատ վիզոյ ասլուսնէրն
գր գր և Հարկէրն չէ։ Ասկոյն նոյ
գոտեկս չատ Հին չասլնալ, և

գլ. ժգ.

Գ Աստուծոյ քաղաքէրն Գ քեզ 1
գոտեկս գոտեկս Հանմատ գոտեկս Հին գոտեկս
և մատ գոտեկս գոտեկս Հանմատ։ Ա-
գոտեկս գոտեկս գոտեկս գոտեկս 2
մատ։ գոտեկս Աստուծոյ Աստ մա-
մատ գր գոտեկս գոտեկս Աստ, գոտեկս
գոտեկս գոտեկս Հանմատ, գոտեկս մա-
գոտեկս գոտեկս գոտեկս Աստուծոյ գոտեկս,
գոտեկս գոտեկս։
Ա գոտեկս գոտեկս գոտեկս Հանմատ 3
մատ գոտեկս գոտեկս գոտեկս, գոտեկս
գոտեկս գոտեկս գոտեկս, գոտեկս
գոտեկս գոտեկս գոտեկս գոտեկս

յԵլի մէջ իր պանդխտացած տեղը դարձ գայ, և իր արմատը փախստեայ Հոսիոյէլ բնադրած տեղը դայ, Աւր ժամանակ իր Հոսիոյ Աստուծոյ անունովը ծառայութեան անէ իր բոլոր Վեսացի եղբայրներուն պէս որ այնտեղ կանգնած են Հոսիոյէլ առջև։ Հաճիր իրաց կիսամեռ բաներն չտես բացի իր Հայրենական տոհմէն Դանիկաց։

9 Երբոր իր Հոսիոյ Աստուծոյ քով տասը երիցիր մնացին, այն տղերքը գարշելի գործերը մէջտեղէն 10 առեր գայ, Ան ժամանակ իր Հոսիոյ Աստուծոյ անունովը ծառայութեան անէ իր բոլոր Վեսացի եղբայրներուն պէս որ այնտեղ կանգնած են Հոսիոյէլ առջև։ Հաճիր իրաց կիսամեռ բաներն չտես բացի իր Հայրենական տոհմէն Դանիկաց։

9 Երբոր իր Հոսիոյ Աստուծոյ քով տասը երիցիր մնացին, այն տղերքը գարշելի գործերը մէջտեղէն 10 առեր գայ, Ան ժամանակ իր Հոսիոյ Աստուծոյ անունովը ծառայութեան անէ իր բոլոր Վեսացի եղբայրներուն պէս որ այնտեղ կանգնած են Հոսիոյէլ առջև։ Հաճիր իրաց կիսամեռ բաներն չտես բացի իր Հայրենական տոհմէն Դանիկաց։

Իսկ այն մարդուն որ չուզէ 20
լսել իմ անունովը խօսքս խօսել,
այն բանը որ ես չեմ պատուիրել
և կամ օտար աստուածներու անունով մը բան խօսի, այն մարդուն պիտի մեռցուի։ Եւ եթէ 21
քու սրտի մէջ ասես, Թէ Տէրոջ պիտի ճանչնանք այն խօսքը որ Հոսիոյ չէ խօսեր։ Եթէ այն մարդուն 22
Հոսիոյ անունովը մը բան ասէ,
և այն բանը չկատարուի, ոչ այն է Հոսիոյ խօսքը որ Հոսիոյ չատած խօսքը մարդուն չխաբեմ և ոչ ալ ստեմ։

ԳԼՈՒԽ ԺԸ

Երբոր քու Հոսիոյ Աստուածդ բնաջինջ ընէ այն ազգերը, որոնց երկիրը քու Հոսիոյ Աստուածդ քեզ կու տայ, և դուն 2
անոնց երկիրը ժառանգես և անոնց քաղաքներուն ու անոնց տուներուն մէջ բնակիս, Քեզ համար երեք քաղաք կտրէ քու երկրիդ մէջ որ քու Հոսիոյ Աստուածդ քեզ կու տայ ժառանգելու համար։ Ճամբայ շինէ քեզ համար, և քու 3
Հոսիոյ Աստուածդ որ քեզ կու տայ երկիրը երեք մասի բաժնէ։ Եւ այս է սպանողին կանոնը որ պիտի փախչի և կեանք ունենայ։ Ան որ պատահմամբ ու առանց 4
ատելութեան իր ընկերը կսպանէ, Կամ որ իր ընկերոջ մօտ կերթայ անտառ մը փայտ կտրելու համար, և ձեռքը կուգայ կացինը ծառը հարկելու, և երկաթը կսահի ծառէն և կգտնէ ընկերը որ կմեռնի, Ան 5
մարդը թող փախչի այս քաղաքներէն մէկուն մէջ և ապրի, Որպէս զի վրէժխնդիրը սրտի տաքութեամբ ետևէն չհալածէ մարդասպանը և չհասնի անոր, որովհետև ճամբան երկար է, և անոր համար մեռցնէ զայն, որ մահուան արժանի չէ, քանի որ ատելութիւն չունէր անոր հանդէպ երէկ ու նախընթաց օրը։ Այս պատճառաւ 6
քեզ կպատուիրեմ ու կըսեմ, Երեք քաղաք կտրէ քեզ համար։ Եթէ քու Հոսիոյ Աստուածդ քու 7
սահմանդ ընդարձակէ, ինչպէս որ երդում ըրաւ քու հարցդ, և քեզ կու տայ այն ամբողջ երկիրը զոր խոստացաւ տալ քու հարցդ, Եթէ միայն 8
պատուիրանքներուս որ այսօր քեզ կպատուիրեմ հետևիս, սիրես քու Հոսիոյ Աստուածդ և միշտ անոր ճամբաները երթաս, Ան ժամանակ քեզ համար երեք քաղաք ևս աւելցուր այս երեքին վրայ, Որպէս զի անպատճառ 9
արիւն չհեղուի քու երկրիդ մէջ որ քու Հոսիոյ Աստուածդ քեզ ժառանգութիւն կու տայ, և արիւնի յանցանք քու վրադ չգայ։ Բայց եթէ մարդ մը իր ընկերոջ դէմ 10
դարանակալի, և ելլայ անոր վրայ և զայն հարուածով մեռցնէ, և այս քաղաքներէն մէկուն մէջ փախչի, Ան ժամանակ անոր քաղաքին երէցները 11
մարդ ղրկեն և անկէ առնեն զայն և մեռցնեն մահուան արժանի, և անոր ձեռքը մեռնի, Ան մարդուն 12
վրայ աչք մի ունենար, Այլ Իսրայէլէն արիւնի յանցանքը հանէ, որպէս զի քեզի բարի ըլլայ։ Քու Հոսիոյ Աստուածդ քեզ ժառանգութիւն կու տայ երկիրը չշարժես քու ընկերիդ սահմանը զոր հները սահմանեցին քու ժառանգութեանդ մէջ որ քու Հոսիոյ Աստուածդ քեզ կու տայ ժառանգելու համար։ Մէկ վկայ մարդ մը 15
մեղքի կամ յանցանքի համար որ գործէ, որ և է մեղք որ գործէ, երկու վկայի կամ երեք վկայի բերանովը հաստատուի գործը։ Եթէ անիրաւ վկայ մը 16
ելլայ մարդու մը դէմ ու անոր վրայ սուտ վկայութիւն տայ, Ան ժամանակ այն երկու մարդիկը որ դատը ունին Հոսիոյ առջև, քահանաներուն և դատաւորներուն առջև որ այն օրերը պիտի ըլլան, Դատաստան ընեն, և 17
եթէ վկաները սուտ վկայ գտնուին, սուտ վկայութիւն տուեր է իր ընկերոջ դէմ, Ան ժամանակ անոր 18
ընելիքը ինչ որ իր ընկերոջ ընել մտադրեր էր, Այսպէս չարը քու մէջդ կորսնցուր։ Ուրիշները 19
լսելով վախնան ու այլևս չեն ըներ այդպիսի չար բան քու մէջդ։ Ու քու աչքդ չխնայէ, Հոգի հոգիի համար, աչք աչքի համար, ատամ ատամի համար, ձեռք ձեռքի համար, ոտք ոտքի համար։

ակ եմ ի շնութենէն չառնէր երէկ-
7 ուանէց և միւս օրուանէց ։ Որպ-
էսի առնէր ես քեզ պատրաստ
եմ և ասեմ՝ որ քեզ էսպիսր
երեք բաղաք ջոկես ։
8 Եւ եթէ քո Տէրոջ Աստուա-
ծը բնդարձակէ քո սահմանը ինչ-
պէս որ քո հայրերին երդում է
արել, և Տէրոջ քեզ տայ այն
բոլոր երկիրը որ խոստացաւ քո
9 հայրերին տալ, եթէ պահես այս
բոլոր պատուիրանքը որ ես այսօր
քեզ պատուիրում եմ, որ քո Տ-
էրոջ Աստուծոյն սիրես և նորա
ճանապարհներումն միշտ
գնաս, ապա այս երեք քա-
ղաքի միոյ ուրիշ երեք քաղաք
10 էլ աւելացրու, Եւ որ անմեղ
արիւն չհեղուի քո երկրի մէջ
որ քո Տէրոջ Աստուածդ քեզ
ժառանգութիւն կ'տայ, և որ
դու արիւնապարտ չլինիս ։
11 Բայց եթէ մէկ մարդ իր դրա-
ցած ոխ առնելոյ և նորան պա-
տահարուս տայ, և մեռ կեան-
նէ նորան պէտ է նորան տալէ, և
նա մեռնի, և մի քաղաք կենայ
12 տակը, Ապ ժամանակ այն երկա-
քաղաքին՝ որդոց մէջ ուղարկեն
ազգակիցը, և նորանք մի ա-
ղեն նորան սրինգից, և ան-
նորան արիւնը վրէժխնդրի Տէր-
13 ը մեռնի, Քո աչքը նորան չը
խնայէ, և Իսրայէլի միջից անմեղ
արիւնը վերացրու, որ քեզ Տ-
էրոջ բարի լինի ։
14 Քո դրացու սահմանը որ նա-
խնիներդ Տաւսանակերտի չտեսնես
քո կալուածքի մէջ որ քո Տ-
էրոջ Աստուծդ քեզ ժառանգ-
ութիւն տալիս երկրումդ կ'ժառան-
գես ։
15 Մէկ վկայ չկանգնի մի մարդու
դէմ որևիցէ անօրէնութեան և
մեղքի Տաւսար՝ ինչ և է մեղքի
մասին որ մեղանչէ է, այլ երկու
կամ երեք վկաների բերանով
Տաւաստուած բանը ։
16 Եթէ մէկ մարդու դէմ մի սուտ
վկայ վեր կենայ, և նորա վերա-
յով անօրէնութեան Տաւսար վ-
17 կայէ, Ապ ժամանակ այն երկու
մարդիկը՝ որոնց մէջ այդ Տակա-
ռակութիւնը կայ, կանգնեն Տ-
էրոջ առջև այն ժամանակի
քահանաների և դատաւորների
առջև. և դատաւորները լաւ 18
քննեն, և եթէ տեսնեն որ այն
վկան սուտ վկայ է՝ իր եղբօրը
դէմ սուտ վկայութիւն է արել,
Ապ ժամանակ նորան անէք ինչ- 19
պէս որ նա խորհեց իր եղբօրն ա-
նելու, և չարութիւնը դու միջից
վերացնես. և ձայնականները կը 20
վախենան և ի'նչպէս, և այլ ևս դո
միջ այսպիսի չար բան չեն անիլ,
Եւ աչքը չխնայէ, անձի տեղ 21
անձ, աչքի տեղ աչք, ատամի
տեղ ատամ, ձեռքի տեղ ձեռք,
և ոտքի տեղ ոտք ։

ԳԼ. Ի

Երբոր դու պատերազմի 1
դուրս գաս թշնամիների դէմ
նրանց ձիերը և կառքերը բազմից
շատ մի ժողովուրդ, նրանցից
չվախենաս, ապա պէտ է որ Տէ-
րոջ Աստուածդ քեզ հետ է որ քեզ
Եգիպտացոց երկրից հանեց, Եւ 2
երբոր պատերազմի մօտենաք,
քահանան գայ և խօսի ժո-
ղովրդի հետ, Եւ նրանց ասի, 3
Լսեր, Իսրայէլ, դուք այսօր մո-
տեցել եք պատերազմի ձեր թշ-
նամիների դէմ. ձեր սրտերը չը
ծանրանան, մի վախենաք, մի
զարհուրիք, և նրանց երեսից
մի դողաք. Ապ պէտ է որ Տէ- 4
րոջ Աստուածդ գնում է ձեզ
հետ, որ ձեր Տամար ձեր թշ-
նամիների դէմ պատերազմի և ձեզ
ազատէ։

Եւ պատկառները խօսեն ժո- 5
ղովրդի հետ ասելով, Ով է այն
մարդը որ նոր տուն է շինել և
նորա նուագարանը չէ սրբել,
թող գնայ նա գաղթայ իր տու-
նը, մի գուցէ պատերազմնի մէջ
մեռնի, և մի ուրիշ մարդ տան
նուագարանը. Եւ ով է այն 6
մարդը որ այգի է տնկել և նո-
րան չէ վայելել, թող գնայ նա
գաղթայ իր տունը մի գուցէ պա-
տերազմնի մէջ մեռնի, և մի ուրիշ
մարդ վայելէ նորան։ Եւ ով է 7

այն մարդը որ կին է նշանել և նորան չէ առել, թող գնայ ետ գառնայ իր տունը. մի գուցէ պատերազմումը մեռանէ, և մէկ 8 ուրիշ մարդ առնէ նորան։ Ետ աստիկանները շարունակեն իրանց խօսքը և ասեն ժողովրդին. Ով է այն մարդը որ վախկոտ և թուլասիրտ է, թող գնայ ետ գառնայ իր տունը, որ չթուլացնէ իր եղբայրներուն սիրտն էլ իր սրտին 9 պէս։ Ետ երբոր աստիկանները ժողովրդին առջև իրանց խօսքը վերջացուցին, այն ժամանակ ժողովրդին վերայ զօրապետներ կարգին։ 10 Երբոր մի քաղաքի մօտենաս նորա հետ պատերազմելու, նորան խաղաղութեան հրաւիրէ։ 11 Ետ եթէ քեզ խաղաղութեան պատասխան տայ, և դռները քեզ համար բանայ այն ժամանակ նորանում գտնուած բոլոր ժողովուրդը քեզ հարկատու լինեն, և քեզ ծառայութիւն անեն։ 12 Բայց եթէ չուզէ քեզ հետ խաղաղութիւն անել, և քեզ հետ պատերազմ անէ, այն ժամանակ 13 նորան պաշարիս. Ետ որ Եհովայ Աստուածդ նորան որ ձեռքը կը մատնէ և դու նորա բոլոր արուները սուրի բերանից անցկացնես. 14 Բայց կանայքը, տղայքը և անասունները և ինչ որ կայ այն քաղաքումը, նորա բոլոր աւարը առնես քեզ համար. և ուտես որ թշնամիներից աւարը որ որ Եհովայ Աստուածդ քեզ մատ- 15 նել է։ Այսպէս պիտի անես այն ամեն քաղաքներին, որ քեզանից շատ հեռու են, որ այս ազգերի 16 քաղաքներից չեն։ Սակայն այս ազգերի քաղաքներից, որ որ Եհովայ Աստուածդ քեզ ժառանգութիւն է տալիս, ոչ մի շունչ 17 ունեցողին ողջ չթողես. Այլ նրանց Ամորհացիներին, Քանանացիներին, Փերեզացիներին, Խեւացիներին և Յեբուսացիներին, ինչպէս որ որ Եհովայ Աստուածդ 18 քեզ պատուիրել է. Որպէս զի ձեզ չսովորեցնեն իրանց բոլոր գարշութիւններն որ նորանում անել որ անում էին իրանց աստուածներին, և որ դուք ձեր Եհովայ Աստուածի առջև մեղք չ գործէք.

Երբոր մի քաղաք երկար ժա- 19 մանակ պաշարես նորա հետ պատերազմելու, և նորան առնելու համար, նորա ծառերը չփշացնես կացինով նորանից գարկելով, քանի որ նորանից պտուղ կարող ես ուտես, ու- բեմն նորանից չկտրես. որովհետև մի՞թէ գաշտի ծառը մարդ է որ քո երեսից պաշարման մէջ մտնէ։ Բայց այն ծառերը որոնք 20 ճանաչում ես թէ ուտելու պտուղ չեն բերում, նորանից փչացնես և կտրես, և նրանով պատնէշ շինես քեզ հետ պատերազմող քաղաքի դէմ, մինչև որ նուաճուի։

ԳԼ. ԻԱ.

Եթէ մի սպանուած գտնուի քո 1 Եհովայ Աստուածդ քեզ ժառանգութիւն տալիս երկրումը գաշտի վերայ ընկած, և չգիտցուի թէ ով է նորան գարկողը. Այն 2 ժամանակ քո ծերերը և դատաւորները դուրս գան և չափեն մինչև այն քաղաքները, որ սպանուածի շրջակայքումն են. Ետ քո 3 սպանուածից մօտ եղող քաղաքի ծերերը առնեն արջառներից մի երինջ, որ չէ գործածուած այլ- 4 ևլն լուծի տակ չէ մտած. Ետ այն քաղաքի ծերերը իջեցնեն երինջը մի չհերկուած և չցանուած ապառաժ ձոր, և այնտեղ այն ձորումը երինջի վիզը կոտրեն։ Ետ 5 Ղևիի որդիքը՝ քահանաները մօտենան. վասն զի քո Եհովայ Աստուածդ նորանց ընտրել իրան ծառայութիւն անելու, և Եհովայ անունով օրհնելու համար. և ամեն վէճ և ամեն վէրք նորանց 6 խօսքով դատուի։ Ետ այն քաղաքի բոլոր ծերերը, որ սպանուածից մօտիկ են, իրանց ձեռքերը լուանան այն ձորումը վիզը կտրած երինջի վերայ. Ետ պատաս- 7 խանեն և ասեն՝ Մեր ձեռքերը չթափեցին այս արիւնը, և մեր

8 աչքերը չառնան. Քառիր քո խա-
րույկել ժողովուրդը, որ գու փըր-
կեցիր, ով Եհովայ. և անմիջ
արիւն մի գցիր քո խարույկել ժո-
ղովրդի վերայ, այսպէս այն ար-
9 իւնը կ'քաւուի նորանցից. Իսկ
գու անմիջ արիւնը քեզանից վե-
րացնես Եհովայի առջև ուղիղն
անելով։
10 Երբոր գուրս գաս պատերազմի
քո թշնամիների դէմ, և քո Ե-
հովայ Աստուածը նորանց քո
ձեռքը տայ, և նորանցից գերի-
11 ներ առնես, Եւ գերիների մէջ
գեղեցիկ տեսքով կին տեսնես,
և նորան սիրես և քեզ համար
12 կին առնես, Նորան քո տունը
տանես, և նա իր գլուխը ածիլէ
13 և իր բղնգները կարէ. Եւ իր վե-
րայից գերութեան հանդերձները
հանէ և քո տանը նստէ, և մի
ամբողջ ամիս իր հօր և մօր հա-
մար լայ. և նորանից յետոյ նո-
րան մտանես, և գու նորա պըրը
լինես, և նա էլ քո կինը լինի։
14 Եւ եթէ նորան չհաւանիս, նո-
րան ազատ արձակես իր համար.
բայց փողով բնաւ չծախես նո-
րան, ոչ էլ արկածանես, որով-
հետև լկեցիր նորան։
15 Եթէ մէկ մարդ երկու կին ու-
նենայ, մէկը սիրելի և միւսը ա-
տելի. սիրելին էլ ատելին էլ նո-
րա համար զաւակներ ծնած են,
և եթէ անդրանիկ զաւակը ատե-
16 լի կնոջը լինի, Որ ստացուածքը
որդիներին բաժանելու օրը կա-
րող չէ սիրելի կնոջ զաւակը
անդրանկացնելու, ատելոյն որ-
դոյ՝ անդրանկից առաջ դնե-
17 Այլ ատելոյն զաւակին անդրա-
նիկ ճանաչէ, և բոլոր իր մօտ
գտնուածքից երկու բաժին տայ
նորան. վասն զի նա է նորա զո-
րութեան սկսիլը. անդրանկու-
թեան իրաւունքը նորանն է։
18 Եթէ մէկ մարդ մի անզգամ
և անհնազանդ տղայ ունենայ,
որ իր հօր և իր մօր խօսքին չէ
լսում, և երբոր նորան խրատում
19 են նորանց մտիկ չէ անում. Այն
ժամանակ նորա հայրը և մայրը
նորան բռնեն, և նորան գուրս

տանեն քաղաքի ծերերի մօտ և
նորա դռնից ելած տեղի դուռը. Եւ 20
քաղաքի ծերերին ասեն Մեր այս
տղան անզգամ և անհնազանդ
է, մեր ձայնին չէ լսում, լափող
և խմող է. Այն ժամանակ նո- 21
րա քաղաքի բոլոր մարդիկը քա-
րերով քարկոծեն նորան որ մեռ-
նի. և չարութիւնը քո միջից
վերացնես. և բոլոր Իսրայէլը լսեն
և վախենան։
Եւ երբոր մի մարդ մահու ար- 22
ժանի մեղք գործէ, և նա մեռց-
նուի, և գու նորան ծառից կա-
խես, Նորա մարմինը ծառի վը- 23
րայ գիշեր չմնայ, այլ նոյն օրը
անպատճառ թաղես նորան. վա-
սն զի կախուածը Աստուծոյ ա-
նիծածն է. և չպղծես այն քո եր-
կիրը՝ որ քո Եհովայ Աստուածը
քեզ կ'տայ ժառանգելու համար։

Գ.Լ. ԻԲ

Երբոր տեսնես քո եղբօր եղ 1
կամ ոչխարը մոլորուած, նորանց
անտես չանես. անպատճառ քո
եղբօր մօտ դարձնես նորանց։ Բայց 2
եթէ քո եղբայրը քեզանից մօտիկ
չէ, կամ նորան չես ճանաչում,
այն ժամանակ քո տունն առնես
նորան, և քեզ մօտ մնայ մինչև
քո եղբայրը նորան որոնէ. յետոյ
նորան դարձնես այն։ Եւ այսպէս 3
անես նորա էշին, և այսպէս էլ
անես նորա պղեստին. նոյն եղ-
բօրդ տանի կորած բանին, որ
դու կ'գտնես, այսպէս անես. նո-
րանից չես կարող անտես անել։
Երբոր տեսնես քո եղբօր էշը 4
կամ եղը ճանապարհի վերայ ըն-
կած, նորանից անտես չանես՝ ան-
պատճառ նորա հետ վեր կանգ-
նեցնես։
Մի կնոջ վերայ այր մարդու 5
հագուստ չլինի, և մարդը կնոջ
հագուստ չհագնի. վասն զի քո
Եհովայ Աստուծոյ առջև պիղծ
է ամեն ով որ այս բաները անէ։
Եթէ ճանապարհին մի ծառի 6
վերայ կամ գետնի վերայ ձագե-
րով կամ ձուերով թռչնի բոյն
հանդիպես քո առջև, և մայրը

ձագերի կամ ձուերի վերայ նըս-
տած լինի, մերն իր ձագերովը
7 մէկտեղ չառնես։ Անպատճառ
մերն արձակես, և ձագերը տա-
նես քեզ համար. որպէս զի բա-
րի լինի քեզ համար, և կեանքդ
երկայն լինի։
8 Եթէ նոր տուն շինես, տանի-
քիդ շրջանակ շինիր, որ քո տան
վերայ արիւն չբերես, երբոր մէկը
այնտեղից վայր ընկնէ։
9 Ա՛յգուդի այլ և այլ սերմեր չը
ցանես, որ նզովք չանես ցանած
սերմիդ արդիւնքը և այգուդ բեր-
10 քը։ Էշը և եզը մէկտեղ վարելու
չդործածես։
11 Բուրդով և քթանով գործը-
ուած այլևայլան հանդերձ չհա-
գնես։
12 Ձագած հանդերձիդ չորս ծայ-
րը ծոպեր շինես։
13 Եթէ մէկ մարդ կին առնէ, և
նորա մօտ մտնէ և յետոյ նորան
14 ատէ, Եւ նորա վերայ զրպարտու-
թեան խօսքեր դնէ և նորա
վերայ վատ անուն հանէ, և ասէ.
Ես այս կնոջ առի, բայց երբոր
նորան մօտեցայ, նորա վերայ կու-
15 սութիւն չգտայ։ Ա՛յն ժամանակ
աղջկան հօրը և մօրը աղջկան
կուսութեան նշանը առնեն և
դուրս տանեն դուռը քաղաքի
16 ծերերի առջև. Եւ աղջկան հօրը
ծերերին ասէ. Իմ աղջիկը այս
մարդուն կին տուի, բայց նա ա-
17 տեմ է նորան, Ահա զրպարտու-
թեան խօսքեր է դնում ա-
սելով. Թէ Ես քո աղջկան վերայ
կուսութիւն չգտայ. բայց ահա
իմ աղջկան կուսութեան նշանը.
և հանդերձը փռեն քաղաքի ծե-
18 րերի առջև։ Եւ այն քաղաքի
ծերերն այն մարդուն առնեն և
19 նորան խրատեն, Եւ նորա վերայ
տուգանք դնեն հարիւր արծա-
թէ և տան աղջկան հօրը, ո-
րովհետև վատ անուն հանեց Իս-
րայէլացի կոյսի վերայ. և նա նո-
րա կին լինի. և իր բոլոր օրերու-
մը կարող չլինի նորան արձակե-
20 լու։ Բայց եթէ այս բանը ստոյգ
լինի, և աղջկան վերայ կուսու-
21 թիւն չէ գտնուել, Ա՛յն ժամա-
նակ աղջկանը իր հօր տան դուռը
դուրս հանեն, և նորա քաղաքի
մարդիկը քարերով քարկոծեն
նորան որ մեռնէ. որովհետև Իս-
րայէլի մէջ անպատմութիւն ա-
րաւ իր հօր տանը պոռնկութիւն
անելով. և այս կերպով չարու-
թիւնը քո միջիցը վերացնես։
22 Եթէ մէկը այր ունեցող մի կը-
նոջ հետ պառկած գտնուի, այն
ժամանակ երկուսն էլ մեռնեն,
այն կինջ հետ պառկող մարդը և
այն կինը. և Իսրայէլից չարու-
թիւնը վերացնես։
23 Եթէ մէկ կոյս աղջիկ մի մար-
դու նշանած լինի, և մէկ մարդ
գտնէ նորան քաղաքի մէջ և նո-
րա հետ պառկէ, Ա՛յն ժամա-
24 նակ երկուսին էլ դուրս հանէք
այն քաղաքի դուռը, և նորանց
քարերով քարկոծէք որ մեռնեն.
աղջկանը նորա համար՝ որ չաղա-
ղակեց քաղաքումը. և մարդուն
նորա համար որ իր գրացու կնո-
ջը ակեց. և չարութիւնը քո մի-
ջիցը վերացնես։
25 Բայց եթէ մէկ մարդ մի նշա-
նած աղջիկ դաշտի մէջ գտնէ,
և նորան բռնադատելով նորա
հետ պառկէ, այն ժամանակ նո-
րա հետ պառկող մարդը միայն
26 մեռնէ։ Եւ աղջկանը մի բան չա-
նես. աղջկան մօտ մահու յան-
ցանք չկայ. վասն զի ինչպէս որ
մէկը իր գրացու վերայ կ՚յարձա-
կէ և կ՚սպանէ նորան, այս գիպ-
27 ուածն էլ այնպէս է։ Զանզի
դաշտումը գտաւ նորան. նշանած
աղջիկը աղաղակել է, բայց նորան
մէկ ապաստող չէ եղել։
28 Եթէ մէկ մարդ մի չնշանուած
կոյս աղջիկ գտնէ, և նորան բռնա-
դատելով նորա հետ պառկէ,
29 և նորանք գտնուին. Ա՛յն ժամա-
նակ նորա հետ պառկող մարդը
աղջկան հօրը հիսուն սիկղ արծաթ
տայ, և նա իր կինը լինի. որով-
հետև լակեց նորան, իր բոլոր օ-
րերումը կարող չլինի նորան ար-
ձակելու։
30 Մէկ մարդ իր հօրը կինը չառ-
նէ, և իր հօր քղանցքը չծանայ։

ԳԼ. ԻԳ

Ամօթձկքը ջարդուածը կամ անդամը կրճատուածը ԵՀովայի ժողովքը չմտնէ։
2 Պոռնկորդին ԵՀովայի ժողովքը չմտնէ, և նորա տասներորդ ազգն էլ ԵՀովայի ժողովքը չմտնէ։
3 Ամմոնացին և Մովաբացին ԵՀովայի ժողովքը չմտնէ, և նոցանց տասներորդ ազգն էլ ԵՀովայի ժողովքը չմտնէ յաւիտեան.
4 նորա համար որ ձեզ չդիմաւորեցին հացով ու ջրով ճանապարհումը երբոր դուք Եգիպտոսից դուրս էիք եկել, և որ Միջագետի Փաթուրից Բէովրի որդի Բաղաամին վարձքով բերել տուաւ, որ քեզ անիծէ.
5 բայց քո ԵՀովայ Աստուածը չուզեց Բաղաամին լսել այլ քո ԵՀովայ Աստուածը անէծքը քեզ համար օրհնութեան դարձրեց, որովհետև քո ԵՀովայ Աստուածը քեզ սիրեց։
6 Նորանց խաղաղութիւնը և լաւութիւնը չորոնես քո բոլոր օրերումը յաւիտեան։
7 Եդովմայեցուն չատես, վասն զի նա քո եղբայրն է։ Եգիպտացուն չատես, վասն զի նորա երկրումը պանդուխտ էիր։
8 Նորանց համար ծնուած զաւակների երրորդ ազգը թող ԵՀովայի ժողովքը մտնեն։
9 Երբոր բանակով գնաս թշնամիներիդ դէմ, ամեն չար բանից զգուշանաս։
10 Եթէ քո մէջը մէկ մարդ լինի որ երազափորձութեան պատճառով մաքուր չէ, թող բանակից դուրս գնայ, և բանակի մէջ չմտնէ.
11 եւ իրիկուայ դէմ ջրով լուացուի, և արեգակը մտնելիս բանակը մտնէ։
12 Եաև բանակից դուրս մէկ կողմ ունենաս, որ այնտեղ դուրս գնաս.
13 եւ քո գործիքներումը մի բահ ունենաս, որ երբոր դուրսը նստելու լինիս՝ նորանով փորես, և դարձեալ քո ապրը ծածկես։
14 Վասն զի քո ԵՀովայ Աստուածը մէջ է գալիս քո բանակի մէջ, որ քեզ ազատէ և քո թշնամիները քո ձեռքդ մատնէ, ուրեմն քո բանակը մաքուր լինի, որ նա քեզ վերայ ոչ աղտեղութիւն տեսնելով քեզանից չդառնայ։
15 Ծառան իր տիրոջ ձեռքը չէ մատնես, որ տիրոջից դէպի քեզ մօտ ապաստանուել է, թող քեզ հետ բնակէ իր հաւանած տեղը քո դռների մէկումն ուր որ իր համար լաւ կ'լինի. նորան չէ նեղես։
16 Իսրայէլի աղջիկներից բող չէ լինի, և Իսրայէլի տղերքից բագեակ չլինի։
17 Բոզի վարձքը կամ շունի գինը քո ԵՀովայ Աստուծոյ տունը չտանես որ և իցէ ուխտի համար. վասն զի քո ԵՀովայ Աստուծոյ առջև երկուսն էլ պիղծ են։
18 Քո եղբօրից շահ չառնես՝ փող շահ կամ ուտելիքի շահ և կամ որ և իցէ բանի որ շահով տրուում է. Օտարականից շահ առնես, բայց քո եղբօրից շահ չառնես, որ քո ԵՀովայ Աստուածը քո ամեն ձեռնարկած գործքերումը քեզ օրհնէ այն երկրի վերայ, ուր որ կ'մտնես նորան ժառանգելու համար։
19 Երբոր քո ԵՀովայ Աստուածդին մի ուխտ ուխտես, տացից ուշացնելու կատարես. վասն զի քո ԵՀովայ Աստուածը անպատճառ քեզանից կ'պահանջէ այն, և դու մեղքի տէր կ'դառնաս. 20
22 Բայց եթէ ուխտ անել չուզես, այդ քեզ համար մեղք չի լինիլ։ 23
23 Շրթունքիդ դուրս եկածը զգուշութեամբ կատարես ինչպէս որ ԵՀովայ Աստուածդին ազատ կամքով ուխտել ես, որ ասել ես քո շրթունքովը։
24 Երբոր քո դրացու այգին մտնես, ուզածիդ չափ խաղող ուտես և կշտանաս, բայց ամանիդ մէջ չդնես. 25
25 Երբոր քո դրացու հունձքը մտնես, ձեռքովդ հասկերը պոկես, բայց դրացուդ հունձքին մանգաղ չզարկես։

ԳԼ. ԻԴ

1 Երբոր մէկը կին առնէ և նորա

այրը դառնայ, և լինի որ նորա վերայ մի անարգութեան բան գտնէ և նա իր աչքին հաճոյ չը լինի, այն ժամանակ նորա համար արձակման թուղթ գրէ և նորա ձեռքը տայ, և իր տանից
2 արձակէ։ Եւ երբոր նա նորա տանից գուրս գայ, և գնայ ու-
3 րիշ մարդու լինի, Եթէ այն մեռա այրն էլ նորան առէ, թող արձակման թուղթ գրէ, և նորա ձեռքը տայ և իր տանից արձակէ, կամ եթէ մեռա այրը մեռնի որ նորան իր համար կին առաւ,
4 Այն առաջի այրը, որ նորան արձակել է, կարող չէ նորան դարձեալ իր համար կին առնել՝ նորա պղծուելուց յետոյ. քանզի Եհովայի առջև պղծութիւն է այս բանը. և մեղքով չը լեցնես այն երկիրը՝ որ քո Եհո-
5 վայ Աստուածը քեզ կ'տայ ժառանգութիւն։ Նոր ամուսնացած մարդը պատերազմի չգնայ, և նորան ոչ մի պաշտօն չտրուի, մէկ տարի իր տանը ազատ լինի, և ուրախացնէ իր առած կնոջը։
6 Ոչ ով գրաւ չառնէ աղօրիքը կամ նորա վերի քարը. վասն զի կեանքն է գրաւ առած լինում։
7 Եթէ մի մարդ գտնուի, որ իր եղբայրներէն՝ այսինքն Իսրայէլի որդոց մէկին գողանալով՝ նորան ծառայեցրել է կամ ծախել է, այն գողը թող մեռնի. և քո մէջէդ չարութիւնը վերացնես։
8 Բորոտութեան սխտի մասին զգուշութիւն արէք, որ զգուշանաք և անէք այն բոլորի համեմատ ինչ որ Ղեւտացի քահանաները ձեզ սովորեցնեն. ինչպէս որ ես նորանց պատուիրել եմ զգուշացէք որ անէք։
9 Յիշիր ինչ որ քո Եհովայ Աստուածը Մարիամին արաւ ճանապարհին եգիպտոսից ելած ժամանակը։
10 Երբոր քո դրացուն մէկ բան փոխ տաս, նորա տունը չմտնես
11 գրաւն առնելու համար. Դուրսը կանգնես և փոխ առնող մարդը գրաւը դուրս բերէ քեզ մօտ։
12 Եւ եթէ նա աղքատ մարդ է,
13 նորա գրաւովը չպառկիս. Նորա

գրաւը անպատճառ ետ տուս արեգակը մտնելիս, որ նա իր հանդերձովը պառկէ և քեզ օրհնէ. և քեզ համար արդարութիւն լինի քո Եհովայ Աստուծոյ առջև։
Աղքատ և կարօտ վարձկանին 14
զրկանք չանես, թէ քո եղբայրներից և թէ քո երկրի մէջ քո դռներուդ գտնուող օտարականներից լինի։ Նոյն օրը նորա վարձ- 15
քը հատուցանես արեգակը չմտնուած, վասն զի նա աղքատ է, և նա սրտանց փափաքում է նորան. չլինի որ քեզ համար Եհովային բողոքէ, և դու մեղքի տէր դառնաս։
Հայրերը չմեռցնուին որդոց 16
պատճառով, և որդիքը չմեռցնուին հայրերի մասին. ամեն մարդ իր յանցանքի համար պիտի մեռցնուի։
Օտարականի և որբի իրաւունքը չծռես, և որբևայրիի հան- 17
դերձը գրաւ չառնես։ Եւ յիշիր 18
որ եգիպտոսումը ծառայ էիր, և քո Եհովայ Աստուածը քեզ այնտեղից ազատեց. Նորա համար ես քեզ պատուիրում եմ որ այս բանն անես։
Երբոր քո արտի մէջ հունձքդ 19
հնձես, և արտի մէջ մէկ որայ մոռացած լինես, ետ չդառնաս նորան առնելու համար, օտարականի, որբի և որբևայրիի համար թող լինի. որպէս զի քո Եհովայ Աստուածը քեզ օրհնէ քո ձեռքերի ամեն գործքումը։
Երբոր ձիթենիդ թօթափես, մէկ 20
մէկ պտղաքաղ չանես յետոյ. օտարականի, որբի և որբևայրիի համար թող լինի։ Երբոր այգուդ 21
խաղողները ժողովես յետոյ ճաքաք չանես. օտարականի, որբի և որբևայրիի համար թող լինի։
Եւ յիշիր որ Եգիպտոսի երկրում 22
ծառայ էիր. Նորա համար ես քեզ պատուիրում եմ որ այս բանն անես։

ԳԼ. ԻԵ

Երբոր մարդոց մէջ վէճ լինի և 1
դատաստանի գնան. Նորանց գա-

տեն, արդարին արդարացնեն և յանցաւորին յանցաւոր Հանեն։
2 Եւ եթէ յանցաւորը ծեծի արժանի է, դատաւորը նորան վայր գցել տայ, և նորա յանցանքի համեմատ իր առջեւը նորան թըւով ծեծել տայ. Քառասուն ձեռամ զարկէ և չաւելացնէ, մի գուցէ սորանից աւելի ծեծելով եղբայրդ քո աչքի առջեւ անարգուի։
4 Եզի դունչը չկապես կալ կաթելիս։
5 Երբոր եղբարք միասին բնակեն, և նորանցից մէկը առանց զաւակի մեռնէ, մեռնողի կինը դուրսը օտար մարդու չդնայ. նորա տագրը նորան մօտենայ և նորան իր համար կին առնէ, և տագրութեան պարտաւորութիւնը նորան հատուցանէ.
6 Եւ այն առաջինեակը, որ նա ծնէ, նորա մեռնող եղբօր անունով կանգնէ, և նորա անունը Իսրայէլից չջնջուի։
7 Եւ եթէ այն մարդը չհաճէ իր հարսին առնել, այն ժամանակ նորա հարսը դուռը դուրս գայ ծերերի մօտ և ասէ. Իմ տագրը հրաժարւում է Իսրայէլի մէջ իր եղբօր անունը հաստատելուց. տագրութեան պարտաւորութիւնը ինձ չէ ուզում հատուցանել։
8 Այն ժամանակ նորա քաղաքի ծերերը նորան կանչեն, և նորա հետ խօսեն. և եթէ նա կանգնէ և ասէ. Ես չեմ ուզում նորան առնել,
9 Այն ժամանակ հարսը նորա մօտ գայ ծերերի առջեւ, և նորա ոտքիցը կօշիկը հանէ, և նորա երեսին թքէ, և պատասխանելով ասէ. Այսպէս անում է այն մարդուն որ իր եղբօր տունը
10 չէ շինում։ Եւ նորա անունը Իսրայէլի մէջ կօշիկը հանուած մարդու տուն, ասուի։
11 Երբոր մարդիկ իրար հետ կռուեն, և մէկի կինը մօտենայ իր մարդուն ազատելու նորան զարկողի ձեռքիցը, և ձեռքը երկարացնելով նորա
12 ամօթոյքը բռնէ, Այն ժամանակ նորա ձեռքը կտրես, և աչքդ բնաւ չխնայէ։
13 Մախաղումդ տեսակ տեսակ

քարեր չլինի՝ մեծ և պզտիկ։
14 Տանդ տեսակ տեսակ արդուներ չլինի մեծ և պզտիկ։
15 Կշռքիդ քարը կատարեալ և արդար լինի, արդուդ կատարեալ և արդար լինի. որ օրերդ երկար լինին այն երկրի վերայ որ քո Եհովայ Աստուածը քեզ կ'տայ։
16 Վասն զի քո Եհովայ Աստուածդ գէշ է ամեն այս բաներն անողը՝ ամեն անիրաւութիւն անողը։
17 Յիշիր թէ ինչ արաւ քեզ Ամաղէկը ճանապարհին երբոր դուք
18 Եգիպտոսից դուրս էիք եկել. Որ ճանապարհին քեզ դիմաւորեց, և քո եաւեից բոլոր տկարներին կոտորեց, երբոր դու յոգնած և աշխատած էիր, և Աստուածից չվախեց։
19 Եւ երբոր քո Եհովայ Աստուածը քո բոլոր շրջակայ թշնամիներից քեզ հանգըստացնէ այն երկրի մէջ, որ քո Եհովայ Աստուածը քեզ կ'տայ ժառանգութիւն որ նորան տիրես, այն ժամանակ ջնջես Ամաղէկի յիշատակը երկնքի տակից. չմոռանաս։

ԳԼ. ԻԶ

1 Երբոր մտնես այն երկիրը որ քո Եհովայ Աստուածը քեզ կ'տայ իրրև ժառանգութիւն, և նորան ժառանգես և այնտեղ բնակես,
2 Այն ժամանակ երկրի ամեն պտուղներից երախայրիներից առնես, որոնք կ'ժողովես քո Եհովայ Աստուծոյ քեզ տուած երկրիցը և դնես մէկ կողովի մէջ և գնաս այնտեղը՝ որ քո Եհովայ Աստուածը կընտրէ իր անունը
3 այնտեղ դնելու համար. Եւ գնաս այն օրերը եղող քահանայի մօտ և ասես. Ես այսօր քո Եհովայ Աստուծոյն յայտնում եմ որ ես մտայ այն երկիրը, որի համար Եհովան մեր հայրերին երդում
4 էր արել որ մեզ տայ։ Եւ քահանան կողովը քո ձեռքիցն առնէ՝ և նորան քո Եհովայ Աստուծոյ սեղանի առջեւ դնէ.
5 Եւ դու պատասխան տաս և ասես քո Եհովայ Աստուծոյ առջեւ. Իմ հայ-

րա մի թափառական Աստի էր, և
ինչա նկիսաստա, և այնտեղ քիչ
հոգիներով պանդխտութիւն ա-
րաւ և մեկ մեծ, զօրաւոր և բազ-
6 մամարդ ազգ դարձաւ. և նկիսա-
ստացիքը մեզ չարչարեցին, մեզ
նեղեցին և մեզ վերայ ծանր ծա-
7 ռայութիւններ դրին. և մենք
գնացի մեր հայրերի Եհովայ Աս-
տուծն աղաղակեցինք. և Եհո-
վան մեր ձայնը լսեց և տեսաւ
մեր նեղութիւնը, աշխատութիւ-
8 նը և մեր պրկանքը. և Եհովան
մեզ հանեց Եգիպտոսից զօրաւոր
ձեռքով և բարձր բազուկով,
մեծ սոսկալութիւններով, նշան-
9 ներով և հրաշքներով. և մեզ
այստեղը բերաւ, և մեզ տուաւ
այս երկիրը՝ կաթ ու մեղր բղ-
10 խող երկիրը. և արդ ինձ տուած
երկրիդ պտուղների երախայրիքնե-
րը բերած եմ, օվ Եհովայ. և
նորանից քո Եհովայ Աստուծոյ
առջև դնելով՝ Եհովայ Աստու-
ծոյդ առջև երկրպագութիւն ա-
11 նես. և քո Եհովայ Աստուծոյ
քեզ և քո տանը տուած բոլոր
բարիքներովը ուրախանաս ա-
նես, դու և Ղեւացին և ձեր
միջ եղող օտարականը.
12 Երբոր տասանորդի տարի՝ ե-
րորդ տարին քո արդիւնքների բո-
լոր տասանորդները տաս վերջաց-
նես, և նորանց Ղեւացուն, օտա-
րականին, որբին և այրեաց-
տաս և նորանք քո դռներումը
13 ուտեն և կշտանան, Աչի ժամի-
նակ քո Եհովայ Աստուծոյ առ-
ջևն ասես. Սուրբ եղած բանը
բոլորովին տանիցս հանեցի, և
քո բոլոր ինձ հրամայած պատ-
ուիրանքներից հասկնում՝ Ղեւաց-
ցուն, օտարականին, որբին և
այրեաց տուի, քո պատուի-
րանքները դանց չարի և չմոռա-
14 ցայ. Սուգիս օրերումը նորանից չը
կերայ, և անմաքուր բանի չդոր-
ծածեցի, և նորանից մեռելի հա-
մար չտուի. էմ Եհովայ Աստու-
ծոյ խօսքին լսեցի. բոլոր ինձ
պատուիրածիդ հասկնում արի.
15 Նայիր երկնքից՝ քո սուրբ բնա-
կարանիցը, և օրհնիր քո ժո-
ղովուրդը Իսրայէլ և այն երկիրը
որ տուիր մեզ, ինչպէս որ մեր
հայրերին երդում էիր ասել, մի
երկիր որ կաթ և մեղր է բղխում:

Այսօր քո Եհովայ Աստուածը 16
քեզ պատուիրում է, որ այս
կանոնները և դատաստանները
կատարես, և նորանց պահես և
կատարես բոլոր սրտով և բոլոր
հոգով: Դու այսօր Եհովային 17
խոսք ես տուիր, որ նա քեզ հա-
մար Աստուած լինի, և դու նո-
րա ճանապարհներումը գնաս, և
նորա կանոնները, պատուիրան-
ները և դատաստանները պահես,
և նորա ձայնին լսես. Եհովան 18
էլ այսօր քեզ խոսք է տուիր,
որ դու իր համար սեպհական ժո-
ղովուրդ լինիս, ինչպէս որ քեզ
ասել է, որ նորա բոլոր պատ-
ուիրանքները պահես. և քեզ 19
բոլոր իր ստեղծած ազգերից գե-
րազանց անէ իրեն գովեստի
համբաւի, և փառքի, որ սուրբ
ժողովուրդ լինիս քո Եհովայ Աս-
տուծոյ համար, ինչպէս որ ա-
սել է:

ԳԼՈՒԽ ԺԶ

Ես Աբիւռ ամսուն ծերերի 1
հետ պատուիրեց ժողովրդին ա-
սելով. Պահեցէք այն բոլոր պատ-
ուիրանքները որոնք ես այսօր ձեզ
պատուիրում եմ: Եւ այն օրը 2
երբոր Յորդանանից անցնիս դե-
պի քո Եհովայ Աստուծոյ քեզ տը-
ուած երկիրը քեզ համար մեծ
քարեր կանգնեցնես, և նորանց 3
կիրով ծեփես. Եւ այս օրէնքի
բոլոր խօսքերը գրես նորանց վե-
րայ, երբոր անցկենաս որ մտնես
այն երկիրը՝ որ քո Եհովայ Աս-
տուածը քեզ կ'տայ, մի երկիր որ
կաթ ու մեղր է բղխում, ինչպէս
որ քո հայրերի Եհովայ Աստու-
ծը քեզ ասել է: Երբոր 4
Յորդանանից անցկենաս, այսօր-
ուայ քեզ պատուիրածիս պէս՝
այս քարերը Գերզիմ լեռան վե-
րայ կանգնեցնես, և նորանց կիր
ծեփես: Եւ այնտեղ քո Ե- 5
հովայ Աստուծոյ համար մեկ ա-

ման շինեսցէ քարէ սեղան. զորանոց
6 վերայ երկաթէ չկարծրացնես. Ա՛մբողջ քարերից շինես զսեղան Տեառն
Աստուծոյ սեղանը, և նորա վերայ ողջակէզներ մատուցանես քո
7 Տեառն Աստուծոյ. և խաղաղութեան զոհեր մատուցանես և ուտիցես անդ, և քո Տեառն
Աստուծոյ առջև ուրախանաս.
8 և այս օրէնքի բոլոր խօսքերը պարզ այդ քարերի վերայ լաւ փո-
րագրուած։

9 Եւ Մովսէս և Ղեւտացի քահանաները խօսեցին բոլոր Իսրա-
յէլի հետ ասելով. Լուռ կաց և լսիր, ով Իսրայէլ. Դու այսօր
10 քո Տեառն Աստուծոյ համար ժողովուրդ եղար. Պիտի լսիր քո Տեառն Աստուծոյ ձայնին և
կատարիր նորա պատուիրանները և կանոնները, որոնք ես այսօր
քեզ պատուիրում եմ։

11 Եւ նոյն օրը Մովսէս ժողովրդին պատուիրեց ասելով.
12 Երբոր Յորդանանից անցնէք, տոմար կանգնեն Գարիզիմ լեռան վերայ ժողովուրդն օրհնելու՝ Շմաւոն,
Ղեւի, Յուդա, Իսաքար, Յովսէփ
13 ու Բենիամին. և տոմար կանգնեն անէծքի համար Գերազ լեռան վերայ՝ Ռուբէն, Գադ, Ա-
սեր, Զաբուղոն, Դան և Նեփթաղիմ։

14 Եւ Ղեւտացիք պատասխանեն և ասեն Իսրայէլի բոլոր մարդոցը
ձեռ բարձր ձայնով.

15 Անիծեալ է այն մարդը, որ փորուած կամ ձուլածոյ կուռք
շինէ Տեառն աստիճ պիղծ արուեստագործ ձեռագործ, և մի
ծածուկ տեղ դնէ. և բոլոր ժո-
ղովուրդը պատասխանեն և ասեն.
Ամէն։

16 Անիծեալ է իր հօրը կամ մօրը անարգողը. և բոլոր ժողովուրդը
ասէ Ամէն։

17 Անիծեալ է իր դրացու սահմանը փոխողը. և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

18 Անիծեալ է կոյրին ճանապարհից մոլորեցնողը. և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

19 Անիծեալ է պանդուխտի, որբի և այրեալի իրաւունքը ծռողը, և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է իր հօր կնոջ հետ 20
պառկողը, վասն զի իր հօր քրոջը բանում է, և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է որ և իցէ անասնո- 21
ւի հետ պառկողը, և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է իր հօր աղջիկը կամ 22
իր մօր աղջիկն եղող իր քրոջ հետ պառկողը. և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է իր սկսանչի հետ 23
պառկողը. և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է իր դրացուն ծա- 24
ծուկ մեղցողը. և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է անմեղ մարդ մեղ- 25
նելու համար կաշառք առնողը, և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

Անիծեալ է նա որ չկենայ այս 26
օրէնքի ամեն խօսքերի մէջ որ
նորանց կատարէ. և բոլոր ժողովուրդն ասէ Ամէն։

ԳԼ. ԻԸ

Եւ եթէ քո Տեառն Աստուծոյ 1
ձայնին ուշադրութեամբ լսես որ զգուշութեամբ կատարես նորա
բոլոր պատուիրանները, որոնք և այսօր քեզ պատուիրում եմ, քո Տեառն Աստուածն էլ քեզ
երկրիս բոլոր ազգերից վերա-
նից կանէ. Եւ այս բոլոր օրհ- 2
նութիւնները քեզ վերայ կ'գան քեզ կ'հասնեն, եթէ քո Տեառն
Աստուծոյ ձայնին լսես։ Դու քա- 3
ղաքի մէջ օրհնեալ, և դաշտի մէջ օրհնեալ կ'լինիս. Օրհնեալ 4
կ'լինի քո որովայնի պտուղը, և քո երկրի պտուղը, և քո անասունների պտուղը, կովերիդ ծնունդը և ոչխարներիդ հօտերը. Օրհնեալ կ'լինի քո կողովը և քո 5
առաջը. Դու օրհնեալ կ'լինիս 6
մտնելիս և օրհնեալ կ'լինիս դուրս գալիս. Տէրն քո առջև ջար- 7
դել կ'տայ քեզ վերայ ելած թշնամիներիդ. նորանք քեզ

ելմ՝ ակն ճանապարհով գոր ցուցի
8 ճանապարհով կ՚երթան։ Ոչ
ոմն արհամարհէ զոր գործէ քան
զանօրէնութիւնն և զանձն
ձեր ձանձրացուցանէ։ Եւ
9 ձայն բոց առաքեալ։ Ընչա-
պէս որ բոց երգում է ասել,
եթէ զո՞ր Աստուածդ Իս-
րայէլ՝ որ ընտրեցար Աստուածդ
10 Իսրայէլ գնաս, Եւ երկիր ոսկի ձո-
գոյն պղինձ կ՚ունենան, որ Ես-
փոյթ անուանդ կոչում է բոց ե-
11 րոյ, և բնակիչ կ՚երեւիմք։ Եւ
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար զո՞ր ընտրեցար, զո՞ր
արուեստից պատրաստեալ զո-
ւար ընտրեցար, զո՞ր ոսկեզօծ
զուարն և զոր երկիր ոսկի
ընտրեցար, որ Ես ոսկի բոց
12 առաքեալ եմ ասել։ Ես-
փոյթ զո՞ր ընտրեցար զանձն
ձեր երկիր երկնից, որ
ոսկի և կապարճ, Եւ չեմա-
րեալ ոչի երկիր խաղացիցէ, որ
և առաքեալ բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
13 գոյ ձայն չեն ունել։ Եւ Ես-
փոյթ զոր ընտրեցար, և ոչ եմ
ասել։ զո՞ր մերձ բոց ձեզ
լինիս, և ցաւագոյ չեն լինել, և-
ես եմ Աստուած Իսրայէլ զոր
առաքեալ զոր ընտրեցար ձեզ
14 ասել և կատարել, Եւ չեմա-
րեալ ոչի բոց խաղացիցէ, որ
և առաքեալ բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
15 գոյ ձայն չեն ունել։ Եւ
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
16 գոյ ձայն չեն ունել։ Եւ
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
17 գոյ ձայն չեն ունել։ Եւ

ելմ՝ ակն ճանապարհով գոր ցուցի 18
և ես ուղղեմ զոսկի, և ես երկի-
ր ոսկի, կոպիրդ ձեռացդ և
աչխարհիդ ձեռացդ։ Եւ Ես եմ 19
կ՚ելնեմ ձեռամ ձեռացդ և ա-
ղեխարհիդ ձեռացդ, և ես եկամ ձեռացդ,
Եւ Ես ոսկի բոց առաքեալ եմ 20
զոսկի ձեռացդ, որ ես եկամ ձեռացդ,
զոսկի ձեռացդ և ես ոսկի բոց
Եւ Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 21
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 22
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 23
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 24
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 25
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 26
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 27
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 28
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 29
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-
բոց ոսկի եմ ասել՝ ոչ
գոյ Աստուած առաքեալ ձեր
ընտրել երկիր գնացուցանել, զո-
ւար Աստուածդ Իսրայէլ՝ ոչ
գոյ ձայն չեն ունել։ Եւ 30
Ես ոսկի բոց առաքեալ եմ զո-
ւար ընտրեցար, և չեմարեալ և
չունեն ներբո բոց առաքեալ
ներբ և կանանձերբ, որ և առա-

Տեսու մէջ չես բնակիլ, այլ կը
անկիս, նորա խաղողք չես ժո-
31 ղովիր, նոր աշխոյժ առջև կ'ունի-
նաս, բայց գու նորանէց չես ու-
սիլ, էշդ քու առջևէդ կ'յափշ-
տակեն, և քեզ նա չի տրուիր.
Ցոնէրդ քու թշնամիներուն կ'մնա-
32 նին, և քեզ Ցոնէր ոչխարներ
չի լինիր, Քու որդիքդ ու աղջիկներդ
ժո ուրիշ ժողովրդի կ'տրուին,
և աչքերդ կ'տեսնեն, և ամեն
օր նորանց Ցոնէրդ կ'նայիս,
33 Քու երկիրը ոսիդներ և քու բոլոր
աշխատութիւնդ ժո ժողովրդի
կ'ուտէ, որին գու չես ճանչնար.
և անիծ ու ճնշուած միշտ
34 ճնշուած կ'լինիս. Ու կ'խելագա-
րուիս աչքերդ տեսածէդ որ ոչե-
35 ոսի տեսնես. Ցոնէր կ'զարնէ քու
ծունկերդ ու սրունքներդ չար
գրգռութիւնով որ չկրնաս բժշ-
կուիլ ոտքի տակէն մինչև գլուխ
36 Ցոնէր կ'ուզէ քեզ և քու ին-
քնիշխանդ որ կանգնեցուցիր քեզ
համար ուրիշ ազգի մը մօտ որ
չես գիտեր, և հոն ուրիշ աստուած-
ներու պիտի ծառայես փայտի և
37 քարի՝ որոնք ոչ կը տեսնեն և ոչ
կը լսեն և ոչ կը ճանչնան, Ու ոչ
ալ հանգիստ կ'առնես ազգիդ մէջ
և քու ոտքիդ տեղ չի մնար, հոն
Ցոնէր քեզի սիրտ մը դողդոջուն
38 տայ և աչքեր որ հալին և հոգի
տրտում, և քու կեանքդ քեզի կա-
39 խուած կ'լինի և գիշեր ու ցե-
րեկ կ'վախնաս և քու կեանքիդ
վրայ չես հաստատիր, Առտուն
կ'ըսես, Երեկոյ ըլլար, և երե-
կոյին կ'ըսես, Առտու ըլլար, սրտիդ
վախէն որ կը վախնաս և աչքե-
40 րուդ տեսածէն, Ցոնէր քեզ նո-
րէն Եգիպտոս պիտի դարձնէ
նաւերով, այն ճամբան որուն վրայ
ես ըսի քեզի որ նորան ալ չես
տեսնար, հոն ձեզ ինքզինքնիդ
41 ծախու պիտի հանէք, Ոչոխար
և աղջիկներ կ'ծնանիս, բայց քու
չեն լինիր, այլ գերութեան կը
42 գնան, Քու բոլոր ծառերդ ու երկրիդ
պտուղները խլուռներ կ'պատէ,
43 Ու մէջդ օտարականը քեզմէ վեր
կերպարանք կ'առնէ, և քեզմէ վար
շատ կ'իջնաս, և նա քեզի կ'տա-
44 ջարտուղայ, բայց գու նորան չես
տար, նա գլուխ կ'լինի և գու պոչ
կ'մնաս, Ու քեզ նորան

Տեսու մէջ չես բնակիլ, այլ կը
անկիս, նորա խաղողք չես ժո-
31 ղովիր, նոր աշխոյժ առջև կ'ունի-
նաս, բայց գու նորանէց չես ու-
սիլ, էշդ քու առջևէդ կ'յափշ-
տակեն, և քեզ նա չի տրուիր.
Ցոնէրդ քու թշնամիներուն կ'մնա-
32 նին, և քեզ Ցոնէր ոչխարներ
չի լինիր, Քու որդիքդ ու աղջիկներդ
ժո ուրիշ ժողովրդի կ'տրուին,
և աչքերդ կ'տեսնեն, և ամեն
օր նորանց Ցոնէրդ կ'նայիս,
33 Քու երկիրը ոսիդներ և քու բոլոր
աշխատութիւնդ ժո ժողովրդի
կ'ուտէ, որին գու չես ճանչնար.
և անիծ ու ճնշուած միշտ
34 ճնշուած կ'լինիս. Ու կ'խելագա-
րուիս աչքերդ տեսածէդ որ ոչե-
35 ոսի տեսնես. Ցոնէր կ'զարնէ քու
ծունկերդ ու սրունքներդ չար
գրգռութիւնով որ չկրնաս բժշ-
կուիլ ոտքի տակէն մինչև գլուխ
36 Ցոնէր կ'ուզէ քեզ և քու ին-
քնիշխանդ որ կանգնեցուցիր քեզ
համար ուրիշ ազգի մը մօտ որ
չես գիտեր, և հոն ուրիշ աստուած-
ներու պիտի ծառայես փայտի և
37 քարի՝ որոնք ոչ կը տեսնեն և ոչ
կը լսեն և ոչ կը ճանչնան, Ու ոչ
ալ հանգիստ կ'առնես ազգիդ մէջ
և քու ոտքիդ տեղ չի մնար, հոն
Ցոնէր քեզի սիրտ մը դողդոջուն
38 տայ և աչքեր որ հալին և հոգի
տրտում, և քու կեանքդ քեզի կա-
39 խուած կ'լինի և գիշեր ու ցե-
րեկ կ'վախնաս և քու կեանքիդ
վրայ չես հաստատիր, Առտուն
կ'ըսես, Երեկոյ ըլլար, և երե-
կոյին կ'ըսես, Առտու ըլլար, սրտիդ
վախէն որ կը վախնաս և աչքե-
40 րուդ տեսածէն, Ցոնէր քեզ նո-
րէն Եգիպտոս պիտի դարձնէ
նաւերով, այն ճամբան որուն վրայ
ես ըսի քեզի որ նորան ալ չես
տեսնար, հոն ձեզ ինքզինքնիդ
41 ծախու պիտի հանէք, Ոչոխար
և աղջիկներ կ'ծնանիս, բայց քու
չեն լինիր, այլ գերութեան կը
42 գնան, Քու բոլոր ծառերդ ու երկրիդ
պտուղները խլուռներ կ'պատէ,
43 Ու մէջդ օտարականը քեզմէ վեր
կերպարանք կ'առնէ, և քեզմէ վար
շատ կ'իջնաս, և նա քեզի կ'տա-
44 ջարտուղայ, բայց գու նորան չես
տար, նա գլուխ կ'լինի և գու պոչ
կ'մնաս, Ու քեզ

Տեսու մէջ չես բնակիլ, այլ կը
անկիս, նորա խաղողք չես ժո-
31 ղովիր, նոր աշխոյժ առջև կ'ունի-
նաս, բայց գու նորանէց չես ու-
սիլ, էշդ քու առջևէդ կ'յափշ-
տակեն, և քեզ նա չի տրուիր.
Ցոնէրդ քու թշնամիներուն կ'մնա-
32 նին, և քեզ Ցոնէր ոչխարներ
չի լինիր, Քու որդիքդ ու աղջիկներդ
ժո ուրիշ ժողովրդի կ'տրուին,
և աչքերդ կ'տեսնեն, և ամեն
օր նորանց Ցոնէրդ կ'նայիս,
33 Քու երկիրը ոսիդներ և քու բոլոր
աշխատութիւնդ ժո ժողովրդի
կ'ուտէ, որին գու չես ճանչնար.
և անիծ ու ճնշուած միշտ
34 ճնշուած կ'լինիս. Ու կ'խելագա-
րուիս աչքերդ տեսածէդ որ ոչե-
35 ոսի տեսնես. Ցոնէր կ'զարնէ քու
ծունկերդ ու սրունքներդ չար
գրգռութիւնով որ չկրնաս բժշ-
կուիլ ոտքի տակէն մինչև գլուխ
36 Ցոնէր կ'ուզէ քեզ և քու ին-
քնիշխանդ որ կանգնեցուցիր քեզ
համար ուրիշ ազգի մը մօտ որ
չես գիտեր, և հոն ուրիշ աստուած-
ներու պիտի ծառայես փայտի և
37 քարի՝ որոնք ոչ կը տեսնեն և ոչ
կը լսեն և ոչ կը ճանչնան, Ու ոչ
ալ հանգիստ կ'առնես ազգիդ մէջ
և քու ոտքիդ տեղ չի մնար, հոն
Ցոնէր քեզի սիրտ մը դողդոջուն
38 տայ և աչքեր որ հալին և հոգի
տրտում, և քու կեանքդ քեզի կա-
39 խուած կ'լինի և գիշեր ու ցե-
րեկ կ'վախնաս և քու կեանքիդ
վրայ չես հաստատիր, Առտուն
կ'ըսես, Երեկոյ ըլլար, և երե-
կոյին կ'ըսես, Առտու ըլլար, սրտիդ
վախէն որ կը վախնաս և աչքե-
40 րուդ տեսածէն, Ցոնէր քեզ նո-
րէն Եգիպտոս պիտի դարձնէ
նաւերով, այն ճամբան որուն վրայ
ես ըսի քեզի որ նորան ալ չես
տեսնար, հոն ձեզ ինքզինքնիդ
41 ծախու պիտի հանէք, Ոչոխար
և աղջիկներ կ'ծնանիս, բայց քու
չեն լինիր, այլ գերութեան կը
42 գնան, Քու բոլոր ծառերդ ու երկրիդ
պտուղները խլուռներ կ'պատէ,
43 Ու մէջդ օտարականը քեզմէ վեր
կերպարանք կ'առնէ, և քեզմէ վար
շատ կ'իջնաս, և նա քեզի կ'տա-
44 ջարտուղայ, բայց գու նորան չես
տար, նա գլուխ կ'լինի և գու պոչ
կ'մնաս, Ու քեզ

Տեսու մէջ չես բնակիլ, այլ կը
անկիս, նորա խաղողք չես ժո-
31 ղովիր, նոր աշխոյժ առջև կ'ունի-
նաս, բայց գու նորանէց չես ու-
սիլ, էշդ քու առջևէդ կ'յափշ-
տակեն, և քեզ նա չի տրուիր.
Ցոնէրդ քու թշնամիներուն կ'մնա-
32 նին, և քեզ Ցոնէր ոչխարներ
չի լինիր, Քու որդիքդ ու աղջիկներդ
ժո ուրիշ ժողովրդի կ'տրուին,
և աչքերդ կ'տեսնեն, և ամեն
օր նորանց Ցոնէրդ կ'նայիս,
33 Քու երկիրը ոսիդներ և քու բոլոր
աշխատութիւնդ ժո ժողովրդի
կ'ուտէ, որին գու չես ճանչնար.
և անիծ ու ճնշուած միշտ
34 ճնշուած կ'լինիս. Ու կ'խելագա-
րուիս աչքերդ տեսածէդ որ ոչե-
35 ոսի տեսնես. Ցոնէր կ'զարնէ քու
ծունկերդ ու սրունքներդ չար
գրգռութիւնով որ չկրնաս բժշ-
կուիլ ոտքի տակէն մինչև գլուխ
36 Ցոնէր կ'ուզէ քեզ և քու ին-
քնիշխանդ որ կանգնեցուցիր քեզ
համար ուրիշ ազգի մը մօտ որ
չես գիտեր, և հոն ուրիշ աստուած-
ներու պիտի ծառայես փայտի և
37 քարի՝ որոնք ոչ կը տեսնեն և ոչ
կը լսեն և ոչ կը ճանչնան, Ու ոչ
ալ հանգիստ կ'առնես ազգիդ մէջ
և քու ոտքիդ տեղ չի մնար, հոն
Ցոնէր քեզի սիրտ մը դողդոջուն
38 տայ և աչքեր որ հալին և հոգի
տրտում, և քու կեանքդ քեզի կա-
39 խուած կ'լինի և գիշեր ու ցե-
րեկ կ'վախնաս և քու կեանքիդ
վրայ չես հաստատիր, Առտուն
կ'ըսես, Երեկոյ ըլլար, և երե-
կոյին կ'ըսես, Առտու ըլլար, սրտիդ
վախէն որ կը վախնաս և աչքե-
40 րուդ տեսածէն, Ցոնէր քեզ նո-
րէն Եգիպտոս պիտի դարձնէ
նաւերով, այն ճամբան որուն վրայ
ես ըսի քեզի որ նորան ալ չես
տեսնար, հոն ձեզ ինքզինքնիդ
41 ծախու պիտի հանէք, Ոչոխար
և աղջիկներ կ'ծնանիս, բայց քու
չեն լինիր, այլ գերութեան կը
42 գնան, Քու բոլոր ծառերդ ու երկրիդ
պտուղները խլուռներ կ'պատէ,
43 Ու մէջդ օտարականը քեզմէ վեր
կերպարանք կ'առնէ, և քեզմէ վար
շատ կ'իջնաս, և նա քեզի կ'տա-
44 ջարտուղայ, բայց գու նորան չես
տար, նա գլուխ կ'լինի և գու պոչ
կ'մնաս, Ու քեզ

պէս մի նորանցից մէկին չասէ իր
որդոց մնելը, որ ուսում է,
քան որում պաշտպանեն ժամանա-
կը և քո թշնամին ամեն դռնե-
րումդ քեզ նեղը գցած ժամա-
նակը մի բան չի մնալ նորան։
36 Քո մէջի քնքուշ և փափուկ կի-
նը, որ իր փափկութիւնից և
քնքշութիւնից ոտքը տափի վե-
րայ կոխելու սովորած չէր, ծուա-
աչքով պիտի նայէ իր ծոցի մար-
դուն, իր տղուն, իր աղջկանը,
37 Եւ իր ոտքերի մէջ ածղից դուրս
եկած տղու բնկերին, և իր ծը-
նած զաւակներին. վասն մի պա-
շտպանի ժամանակը և քո թշը-
նամիներին քո դռներումդ քեզ
նեղը գցած ժամանակը ամեն բա-
նի պակասելու համար ծածկա-
բար կուտէ նորանց։
38 Եթէ այս գրքի մէջ գրուած
այս օրէնքի ամեն խօսքերը զգու-
շութեամբ չկատարես, որ վախե-
նաս այն պատուական և սքանչ
անունից՝ ՔՈ ԵՀՈՎԱՅ ԱՍՏ-
39 ՈՒԱԾԱՆԻՑԸ, Եհովան էլ կը
զարկէ քեզ և քո սերունդին ան-
սովոր հարուածներով, մեծ և
երկարատև հարուածներով, չար
և երկայն հիւանդութիւններով.
60 Եւ քեզ վերայ կ'դարձնէ Եգիպ-
տոսի բոլոր հիւանդութիւնները՝
որոնցից դու վախենում ես, և
61 քեզ կ'փակչեն։ Նաև ամեն հի-
ւանդութիւն և ամեն հարուած,
որ այս օրինաց գրքի մէջ գրուած
չէ, Եհովան քեզ վերայ կ'բերէ,
մինչև որ դու բնաջինջ լինիս.
62 Եւ սակաւութիւն մնաք դուք, որ
շատութեամբ երկինից աստղերի
պէս էիք, քո Եհովայ Աստուծոյ
63 խօսքին չլսելուդ համար։ Եւ ինչ-
պէս որ Եհովան ուրախացաւ ձեզ
վերայ ձեզ բարութիւն անելով
և ձեզ շատացնելով, այնպէս էլ
կուրախանայ Եհովան ձեզ վերայ
ձեզ կորցնելով և բնաջինջ անե-
լով, և կ'ջնջուիք այն երկրի վերա-
յից, ուր որ հիմայ գնում ես
64 նորան ժառանգելու։ Եւ Եհովան
քեզ պիտի ցրուէ բոլոր ազգերի
մէջ երկրիս մէկ ծայրից մինչև
միւս ծայրը, և այնտեղ ծառա-
յութիւն կանես օտար աստուած-
ների՝ փայտի և քարի որոնք չէիր
ճանաչել՝ ոչ դու ոչ քո հայրե-
րը. Եւ այն ազգերի մէջ հան- 65
գրստութիւն չես գտնել, և ոտ-
քիդ թաթին հանգչելու տեղ չի
լինիլ. և Եհովան քեզ այնտեղ
դողացող սիրտ կ'տայ, աչքի նը-
ուազում ու հոգու տրտմութիւն.
Եւ կեանքդ տչքեդ կախման մէջ 66
կ'լինի, և գիշեր ցերեկ կ'վախե-
նաս, և կեանքումդ ապահով
չես լինիլ. Առաւօտը կասես. Ե- 67
րանի թէ իրիկուն լինէր, և իրի-
կունը կասես. Երանի թէ առա-
ւօտ լինէր, սրտիդ ահ ու դողից
և աչքերիդ տեսած բաներից։
Եւ Եհովան քեզ նաւ կ'դարձնէ 68
նաւերով Եգիպտոս այն ճանա-
պարհով, որի համար քեզ ասա-
ցի թէ այլ ևս նորան չտեսանես.
և կ'ծախուիք այնտեղ ծառաներ
ու աղախիններ լինելու ձեր թշ-
նամիներին, և ծախու առնող չի
լինիլ։

ԳԼ. ԻԹ

Սրանք են այն ուխտի խօսքերը 1
որ Եհովան Մովսէսին հրամայեց
խարտիւլի որդոց հետ անելու Մո-
վաբի երկրումը, բացի այն ուխ-
տից որ Նորանց հետ Քորէբի վե-
րայ արաւ։
Եւ Մովսէսը բոլոր Իսրայէլին 2
կանչեց և նորանց ասաց. Դուք
տեսաք այն ամենը ինչ որ Եհո-
վան արաւ ձեր աչքերի առջև Ե-
գիպտոսի երկրումն փարաւոնին, և
նորա բոլոր ծառաներին, և նորա
բոլոր երկրին. Այն մեծ 3
փորձութիւնները, որոնք քո աչ-
քերը տեսան՝ այն նշաններն և մեծ
հրաշքները. Եւ Եհովան չտուաւ 4
ձեզ մի սիրտ որ իմանաք,
և աչքեր՝ որ տեսնէք, և ականջ-
ներ՝ որ լսէք մինչև այսօր։ Եւ ես 5
քառասուն տարի անապատումը
ձեզ տարի տվի. ձեր վերայից չհի-
նացան ձեր հագուստները և ոտքե-
րից կօշիկները չմաշուեցան. Հաց 6
չկերաք և գինի ու ցբի չխմեցիք,
որ գիտենաք թէ ես ձեր Եհովայ

7 Աստուածն եմ։ Եւ երբոր այս-
տեղ եկաք, Եսերանի Սհոն թա-
գաւորը եւ Բասանի Ովգ թագա-
ւորը ձեր առջեւը դուրս եկան
ձեզ հետ պատերազմելու, եւ
8 ձեզ զարկեցինք նորանց. Եւ ա-
ռինք նորանց երկիրը եւ տուինք
այն Ռուբենեանց, Գադեանց եւ
Մանասէի կէս ցեղին իժառան-
9 գութիւն։ Ուրեմն այս ուխտի
խօսքերը պահէք եւ կատարէք,
որ յաջողուիք ձեր ամեն գործի
մէջ։
10 Այսօր դուք ամենդ ձեր Եհո-
վայ Աստուծոյ առջեւը կանգնած
էք. ձեր իշխանները, ձեր ցեղե-
րը, ձեր ծերերը, ձեր ատենիկան-
ները՝ բոլոր Իսրայէլի մարդիկը,
11 Ձեր տղայքը, ձեր կանայքը, և
քո բանակի մէջ եղող օտարա-
կանդ, քո փայտ կտրողից մինչև
12 ջրկիրը. Որ մտնես քո Եհովայ
Աստուծոյ ուխտը և նորա երդու-
մը, որ այսօր քո Եհովայ Աստ-
13 ուածը քեզ հետ անում է. Որ-
պէս զի քեզ այսօր իր համար
ժողովուրդ կանգնեցնէ, և ինքը
քեզ համար Աստուած լինի ինչ-
պէս որ քեզ ասաց, և ինչպէս
որ քո հայրերին՝ Աբրահամին,
Իսահակին և Յակոբին երդուաւ
14 որա։ Եւ ոչ միայն ձեզ հետ
եմ անում ես այս ուխտը և այս
15 երդումը, Այլ այսօր մեզ հետ
մեր Եհովայ Աստուծոյ առջև
այստեղ կանգնողների հետ, և
նորանց հետ որ այսօր մեզ հետ
16 այստեղ չեն. Վասն զի դուք
գիտէք, թէ ինչպէս բնակեցինք
Եգիպտոսի երկրում, և ինչպէս
անցանք այն ազգերի միջից, որ
17 դուք անցաք. Եւ տեսաք նորանց
գարշելի բանները, և նորանց փայ-
տէ, քարէ, արծաթէ և ոսկի
կուռքերը, որ նորանց մօտ էին,
18 Մի գուցէ ձեզանում մի մարդ
կամ մի կին կամ մի ազգատոհմ
կամ մի ցեղ դառնայ, որ իր սիր-
տն այսօր մեր Եհովայ Աստուա-
ծանից խոտորեցնէ, որ գնայ այն
ազգաց աստուածներին ծառա-
յութիւն անէ. մի գուցէ ձեզա-
նում մի արմատ գտնուի որ թոյն
ու դառնութիւն բերէ. Եւ երբ 19
որ այս անէծքի խօսքերը լսէ և իր
սրտի մէջ երան օրհնելով ասէ.
Ինձ համար խաղաղութիւն կ'լի-
նի, եթէ իմ սրտի յամառու-
թիւնով գնամ, որ կորչէ խմած
կշտացածը ծարաւի հետ։ Եհո- 20
վան չի հաճիլ նորան խնայելու,
այլ այն ժամանակ Եհովայի բար-
կութիւնը և նախանձը կ'բորբոքէ
այն մարդու վերայ, և կ'իջնէ այս
գրքի մէջ գրուած ամեն անէծքը
նորա վերայ, և Եհովան կ'ջնջէ
նորա անունը երկնից տակից.
Եւ Եհովան կ'բաժանէ նորան Իս- 21
րայէլի բոլոր ցեղերից չարիքի հա-
մար այս օրինաց գրքի մէջ գրու-
ած ուխտի ամեն անէծքների
համեմատ, Եւ կ'ասէ յետագայ 22
ազգը՝ այսինքն ձեզանից յետոյ
ձեր վեր կենող զաւակները, և
հեռու երկրից եկող օտարականը,
երբոր տեսանեն այն երկրի հար-
ուածները և նորա հիւանդութիւննե-
րը, որոնցով Եհովան նորան պի-
տի հիւանդ. Նորա բոլոր երկիրը ծը- 23
ծումբ, աղ և այրուած կ'լինի, ուր
մի բան չի ցանուիլ, և մի բան
չի բուսանիլ, և մի խոտ չի բարձ-
րանալ. Սոդոմի, Գոմորի, Ադ-
մայի և Սեբոյիմի խորտակման
պէս, որոնց խորտակեց Եհովան
իր բարկութեամբը և սրտմտու-
թեամբը. Նաև ամեն ազգերը 24
կ'ասեն. Ինչո՞ւ համար Եհովան
այս երկրին այսպէս արաւ. ի՞նչ
է այս մեծ սրտմտութիւնն ու
բարկութիւնը։ Եւ կ'ասեն. Որով- 25
հետև նորանք մերժեցին իրանց
հարանց Եհովայ Աստուծոյ ուխ-
տը, որ նորանց հետ արել էր
նորանց Եգիպտոսի երկրից հանած
ժամանակ, Եւ գնացին ծառայե- 26
ցին ուրիշ աստուածներին, և նո-
րանց երկրպագութիւն արին,
աստուածներ՝ որ բնաւ չէին ճա-
նաչած, և որ Եհովան չէր արոշել
նորանց համար։ Եւ Եհովայի բար- 27
կութիւնը այն երկրի դէմ բոր-
բոքեց, որ այս գրքի մէջ գրուած
ամեն անէծքները նորա վերայ բե-
րէ. Եւ Եհովան նորանց արմա- 28
տից խլեց իրանց երկրի վերա-

յից բարկութեամբ, սրտմտութեամբ և մեծ պղծութեամբ և գից մէկ ուրիշ երկիր ինչպէս
29 *որ պատր։ Զոաձուկ բաները մեր Եհովայ Աստուծոյ համար է, բայց յայտնած բաները մեզ և մեր որդոց համար յաւիտեան, որ այս օրէնքի ամեն խօսքերը կատարենք։*

ԳԼ. Լ.

1 *Եւ երբոր քեզ վերոյ գան այս բոլոր բաները՝ թէ անէծքը և թէ օրհնութիւնը, որ քո առջև դրի, և դու քո սրտի մէջ առնես այն բոլոր ազգերի մէջ, ուր որ քո Եհովայ Աստուածը*
2 *քեզ պիտի քշէ, Եւ քո Եհովայ Աստուծոյն դառնաս, և նորա խօսքին լսես, ինչպէս որ ես այս օր քեզ պատուիրեցի, դու և քո որդիքը և բոլոր սրտով և բոլոր*
3 *հոգով, Քո Եհովայ Աստուածն էլ քեզ գերութիւնից կ'դարձնէ և քեզ կ'ողորմէ, և դարձեալ կը ժողովէ քեզ այն ամեն ազգերից, ուր որ քո Եհովայ Աստուածը*
4 *քեզ ցրուել էր։ Եթէ մինչև երկինից ծայրը քշուած էլ լինէիր, քո Եհովայ Աստուածը քեզ այնտեղից էլ կ'ժողովէ, և այնտեղ*
5 *էլ կ'առնէ քեզ։ Եւ քո Եհովայ Աստուածը կ'բերէ քեզ քո հայրերի ժառանգած երկիրը, և կը ժառանգես նորան, և քեզ բարութիւն կ'անէ և քո հայրերից*
6 *աւելի կ'շատացնէ քեզ։ Եւ քո Եհովայ Աստուածը կ'թլփատէ քո սիրտը և քո որդոց սիրտը, որ քո Եհովայ Աստուծոյն բոլոր սրտով և բոլոր հոգով սիրես,*
7 *որ ապրես։ Եւ քո Եհովայ Աստուածն այս բոլոր անէծքները կը բերէ քո թշնամիների վերայ՝ քեզ ատողների և հալածողների վերայ,*
8 *Եւ դու կ'դառնաս և կ'լսես Եհովայի խօսքին, կ'կատարես նորա բոլոր պատուիրանքները, որոնք ես այսօր քեզ պատուիրում եմ։*
9 *Եւ քո Եհովայ Աստուածը կ'առատացնէ քո ձեռագործ բոլոր գործերը, արտիղնիդ պտուղը, անասունների պտուղը և երկրիդ պտուղը բարեաց համար. վասն զի Եհովան դարձեալ կ'ուրախանայ քեզ վերայ բարեաց համար, ինչպէս որ քո հայրերի վերայ ուրախացաւ, Երբոր դու քո Եհովայ Աստուծոյ ձայնին հնազանդես, և այս օրինաց գրքի մէջ գրուած Աստուծոյ պատուիրանքները և կանոնները պահես, և բոլոր սրտով և բոլոր հոգով քո Եհովայ Աստուծոյն դառնաս։*

10

11 *Վասն զի այս պատուիրանքը, որ ես այսօր քեզ պատուիրում եմ, քեզ համար անհնարին չէ, և հեռու չէ, Նա երկինքում չէ*
12 *որ ասես թէ՝ Ո՞վ վեր կելնէ մեզ երկինքը, և կ'բերէ նորան մեզ համար, որ լսենք նորան և անենք. Եւ ծովի այն կողմնում էլ*
13 *չէ, որ ասես թէ՝ Ո՞վ կանցնէ մեզ համար ծովի այն կողմը, և կը բերէ մեզ համար, որ լսենք նորան և անենք. Վասն զի խօսքը*
14 *քեզանից շատ մօտ է, բերնումդ և սրտումդ է, որ դու նորան կատարես։*

15 *Տես, ես այսօր դնում եմ քո առջեւ կեանքը և բարին, մահը և չարը. Որ ես այսօր քեզ պատուիրում եմ, որ քո Եհովայ Աստուծոյն սիրես, նորա ճանապարհներում գնաս, և նորա պատուիրանքները, կանոնները և դատաստանները պահես, որ ապրես և շատանաս, և քո Եհովայ Աստուածը քեզ օրհնէ այն երկրում,*
16 *ուր որ գնում եմ նորան ժառանգելու համար։ Բայց եթէ քո*
17 *սիրտը դառնայ, և չլսես, այլ մոլորեցնէ ուրիշ աստուածների երկրպագութիւն անես և նորանց պաշտես, Ես ձեզ այսօր ծանուցանում եմ, որ անպատճառ պիտի կորչէք, երկար կեանք պիտի չունենաք այն երկրի վերայ, ուր որ Յորդանանն անցնելով գնում եմ նորան ժառանգելու համար։*
18 *Այսօր երկինքն և երկիրը վկայ եմ կանչում ձեզ վերայ, որ*
19 *կեանքը և մահը, օրհնութիւնը և անէծքը ձեր առջեւ դրի, ու-րեմն կեանքը ընտրիր որ ապրես*

20 գոլ և քո սերունդը. Որ քո ես Հովսէ Աստուծոյն սիրեա՝ նորա ձայնին լսես, և նորան յարես, զնա պի նա է քո կեանքը և օրերիդ երկայնութիւնը, որ բնակես այն երկրի վերայ, որ երդուաւ Տէրն քո հարցդ Աբրահամին, Իսահակին և Յակոբին երդում տուաւ նոցանց տալու։

ԳԼ. Լ.Ա

1 Եւ Մովսէս գնաց և խօսեցաւ այս խօսքերը բոլոր Իսրայէլի հետ, 2 եւ նոցանց ասաց. Ես այսօր հարիւր քսան տարեկան եմ, այլ և ոչ զուրս գալու և մտնելու կարողութիւն չունիմ. և Տէրն ինձ ասաց. Դու այս Յորդանանովը 3 չես անց կենալ. Քո Հովսէ Աստուածն ինքը քո առջև կ'անցնէ, և նա կ'կորչի այս ազգերը քո առջևիցը, և դու նոցանց կ'տիրես. Յեսուն կանցնէ քո առջևը 4 ինչպէս որ Տէրն ասել է. Եւ Տէրն նոցանց այնպէս կանէ, ինչպէս որ արաւ Ամորհացոց Սեհոն և Ովգ թագաւորներին և նոցանց երկրին, որ նոցանց չնա- 5 ջինջ արաւ։ Եւ Տէրն նոցանց ձեր ձեռքը կ'տայ, և նոցանց առնէք այն ամեն պատուիրանքի պէս որ ես ձեզ պատուիրեցի։ 6 Ուժովցէք և քաջ եղէք, մի վախենաք և նոցանց երեսից մի զարհուրիք. զնա պի քո Հովսէ Աստուածն ինքն է քեզ հետ գնում. քեզ չի թողիլ և քեզ չի ձգիլ։

7 Եւ Մովսէս Յեսուին կանչեց, և ասաց նորան բոլոր Իսրայէլի առջև. Ուժովցիր և քաջ եղիր. որովհետև դու այս ժողովուրդը տանելու ես այն երկիրը, որ Տէրն նոցանց հարցերին երդում արաւ որ նոցանց տայ. և դու նոցանց ժառանգեցնելու ես այն։ 8 Եւ քո առջևից գնացողը նոյն ինքն Տէրն է, նա քեզ հետ է լինելու, նա քեզ չի թողիլ և քեզ չի ձգիլ. մի վախենար և մի զարհուրիր։

9 Եւ Մովսէս գրեց այս օրէնքը, և տուաւ այն Ղևիի որդի քահանաներին, որ Տէրոջ ուխտի տապանակը վեր են առնում, և Իսրայէլի բոլոր ծերերին. 10 Մովսէս նոցանից պատուիրեց և ասաց. Ամեն եօթներորդ տարին թողութեան տարուայ ժամանակին տաղաւարահարաց տօնին, 11 երբոր բոլոր Իսրայէլ կ'գայ քո Տէրոջ Աստուծոյ առջևը երևալու նորա ընտրած տեղը, այս օրէնքը կարդաս բոլոր Իսրայէլի առջև, որ լսեն, ժողովիր ժողովուրդը՝ մարդիկը և կանայքն, և 12 տղայքը և քո օտարականը, որ քո դռներուն է, որ լսեն, և որ սովրին և ձեր Տէր Հովսէ Աստուածնից վախենան, և այս օրէնքի բոլոր խօսքերը պահեն և կատարեն. Եւ նոցանց տղայքը, որ չեն 13 գիտեր, կ'լսեն և կ'սովրին ձեր Տէր Հովսէ Աստուածնից վախենալը, բոլոր այն օրերուն որ կոպրկը այն երկրի վերայ՝ որ Յորդանանովն անցնում էք այնտեղ նոցան ժառանգելու։

Եւ Տէրն Մովսէսին ասաց. 14 Ահա օրերդ մօտեցան որ մեռնիս. Յեսուին կանչիր, և ժողովրդի խորանի մէջ ներկայացէք, որ նորան պատուիրեմ։ Եւ Մովսէս և Յեսուն գնացին և ժողովրդի խորանի մէջ ներկայացան։ Եւ Տէրն 15 Հովսէն ամպի սիւնով խորանումն երևեցաւ, և ամպի սիւնը խորանի դրան վերայ կանգնեց։ Եւ Տէրն 16 Մովսէսին ասաց. Ահա դու քո հարցերի հետ կ'ննջես, և այս ժողովուրդը վեր կ'կենայ, և շնութիւն կանէ օտար աստուածներին հետից ուր որ գնում է, և ինձ կ'թողէ, և կ'խափանէ իր հետ արած ուխտս։ Եւ այն օրը իմ 17 բարկութիւնը նոցանից վերայ կը բորբոքէ և ես կ'ձգեմ նոցանից և երեսս կ'ծածկեմ նոցանիցից, և բնաջինջ կ'լինին. և շատ չարիքներ ու նեղութիւններ կ'հանդիպեն և կ'ասեն այն օրը. Մի՞թէ ձեր Աստուածը իմ մէջ չլինելու համար չէ, որ այս չարիքները ինձ հանդիպել են. Եւ այն օրը ես 18 իմ երեսը բոլորովին կ'ծածկեմ

նորանց արած բոլոր չարութեան համար՝ որովհետև զԷգի ուրիշ
19 աստուածներըն զարձան։ Եւ հինգ այս երգը գրեցէք ձեզ համար, և այն սովորեցրու Իսրայէլի որդոցը, նորանց բերանում դիր այն, որպէս զի այս երգը Իսրայէլի որդոց մէջ ինձ համար վկայութիւն լինի։
20 Վասն զի նորանց պիտի տանեմ այն կաթ և մեղր բղխող երկիրը, որի համար երդուայ նորանց հայրերին երդում ար-
րի. և կուտեն և կ'կշտանան և կ'գերանան. և Էգի ուրիշ աստուածներըն կ'զառնան և նորանց ծառայութիւն կ'անեն և ինձ կ'արհամարհեն և իմ ուխտը
21 կ'խախտանեն։ Եւ երբոր նորանք շատ չարիքներըն և նեղութիւններըն հանդիպեն, այս երգը նորանց առջև վկայութիւն տայ. որովհետև պիտի չմոռացուի նորանց զաւակներըն բերանից. վասն զի գիտեմ նորանց խորհուրդը՝ որ այսօր անում են, քանի որ գեռ չեմ տարել նորանց իմ երդում
22 ինդ խոստացած երկիրը։ Եւ Մովսէս նոյն օրը այս երգը գրեց, և Իսրայէլի որդոցը սովորեցրեց այն։
23 Եւ Նաւէի որդի Յեսուին պատուիրեց և ասաց. Զօրացիր և քաջ եղիր. վասն զի դու պիտի տանես Իսրայէլի որդիքը այն երկիրը, որի համար նորանց երդում արի. և ես քեզ հետ կ'լինիմ։
24 Եւ երբոր Մովսէս այս օրէնքի բոլոր խօսքերը մէկ գրքի մէջ գրեց վերջացրեց մինչև վերջը.
25 պատուիրեց Մեմռէսը Եհովայի տապանակը վեր առնող
26 Ղեւտացիներին ասելով. Առէք այս օրէնքի գիրքը, և դրէք նորան ձեր Եհովայ Աստուծոյ տապանակի մօտ, որ նա քեզ դէմ վկայութիւն լինի այնտեղ.
27 Վասն զի ես քո ապստամբութիւնը և քո խիստ պարանոցը գիտեմ. ահա այսօր մինչև ես ձեզ հետ ողջ եմ՝ դուք Եհովայի դէմ ապստամբութիւն էիք անում. և ո՛րչափ աւելի իմ
28 մեռնելուց յետոյ։ Ձեր ցեղերի

բոլոր ծերերին և ձեր սատիկանները ժողովեցէք իմ առջև, որ նորանց ականջները խօսեմ այս խօսքերը. և երկինքն ու երկիրը վկայ կանչեմ նորանց վերայ.
29 Վասն զի գիտեմ, որ իմ մեռնելուց յետոյ դուք անպատճառ անօրէնութիւն կանէք, և կ'խոտորէք իմ ձեզ պատուիրած ճանապարհիցը, և եղբի օրերը չարիքներն կ'հանդիպեն ձեզ, որովհետև դուք չարութիւն կանէք, և ձեր ձեռքերի գործքերովը նորան կ'բարկացնէք։
30 Եւ Մովսէս այս երգի խօսքերը խօսեց Իսրայէլի բոլոր ժողովքի ականջներին մինչև վերջը։

ԳԼ. ԼԲ

1 Ականջ դրէք, ով երկինք, որ խօսեմ.
Եւ երկիրը լսէ իմ բերանի խօսքերը։
2 Անձրեւի պէս կաթէ իմ խրատը. Ցօղի պէս իջնէ իմ խօսքը.
Անձրեւի պէս կանանչեցնէն վերայ,
Եւ առատ անձրեւների պէս խոտի վերայ.
3 Վասն զի Եհովայի անունն եմ կանչում.
Պատիւ տուէք մեր Աստուծոյն։
4 Աստուծոյ գործը կատարեալ է. Վասն զի նորա ամեն ճանապարհները իրաւունք են.
Աստուած հաւատարիմ է և անբծութիւն չունի.
Արդար և ուղիղ է նա։
5 Ապականեցան նորա զէմ. նորա որդիքը չեն. իրանցն է արատը.
Մէկ խոտորած և ծռած ազգ է։
6 Եհովային արած ձեր հատուցումը դա՞ է.
Ով յիմար և անմիտ ժողովուրդ. Նա չէ՞ քո Հայրը, քեզ առնողը։
Նա քեզ առեղծեց, և քեզ հաստատեց։
7 Յիշիր հին օրերը,
Մտածիր անցած գարերի տարիները.
Քո հօրդ հարցրու, և նա քեզ կ'պատմէ.

եւ քո ձերբերին, և նորանք քեզ կաանեն.
8 Երբոր Բարձրեալը ազգերին ժառանգութիւն բաժանեց,
եւ տարածեց Ադամի որդիքը,
Ազգերի սահմանները դրաւ
Իսրայէլի որդոց թուովը.
9 Վասն զի Եհովայի բաժինն իր ժողովուրդն է,
Յակոբը նորա ժառանգութեան վիճակն է։
10 Նորան գտաւ ամայի երկրի մէջ,
Վայրի ոռնացող անապատումը.
Նորան շրջապատեց, նորան խրատեց,
Պահպանեց նորան իր աչքի բիբին պէս։
11 Ինչպէս որ արծիւը քրքրում է իր բոյնը,
Շաւում է ապիս իր ձագերի վերայ,
Տարածում է իր թեւերը, վեր առնում նորանց,
Տանում է նորանց իր թեւերի վերայ,
12 Այնպէս Եհովան միայն մեն ածեց նորան,
եւ նորա հետ օտար աստուած չկար։
13 Նորան վեր հանեց երկրիս բարձր տեղերը,
Որ ուտէ արտերի պտուղը.
եւ նորան ծծել տուաւ վէմից մեղր,
եւ ապառաժ ժայռից իւղ.
14 Կովերի իւղ և ոչխարների կաթ,
Գառների և Բասանի խոյերի և նոխազների ճարպով,
եւ ցորենի երիկամանց ճարպովը
եւ խաղողի արիւնը՝ խմելիք գինի։
15 Եւ գիրացաւ Յեսուրուն և ապրեցաւ.
(Գիրացար, հաստացար, իւղ կապեցիր.)
եւ թողեց իր Արարիչ Աստուածդին,
եւ արհամարհեց իր փրկութեան վէմը։
16 Օտար աստուածներով նորան նախանձեցրին,
Գարշելի բաներով նորան բարկացրին։
17 Չոհեցին դեւերին, որ ոչ են Աստուած,

Աստուածների որ չէին ճանաչել.
Նորեր որ մօտերից եկան.
Որոնցից ձեր հայրերը չվախեցան.
18 Դու քեզ ծնանող վէմը թողեցիր,
եւ քեզ սնեցող Աստուածդին մոռացար։
19 Եւ Եհովան տեսաւ և զզուեց,
Բարկութիւնով իր որդիքներից և աղջիկներից.
20 եւ ասաց. Երեսս ծածկեմ նորանցից,
Տեսնեմ ինչ կ'լինի նորանց վերջը.
Վասն զի նորանք մի ծուռ ազգ են,
Որդիք՝ որոնց մէջ հաւատ չկայ։
21 Նորանք զրգռեցին իմ նախանձս
Ով չաստուածով
Ինձ բարկացրին իրանց սնոտի բաներովը.
Եւ ես էլ կ'զրգռեմ նորանց նախանձը մի ժողովուրդ չեղողով,
Մի անմիտ ազգով կ'բարկացնեմ նորանց.
22 Վասն զի կրակ վառուեցաւ իմ բարկութիւնովը,
Եւ կայրէ մինչև գժոխքի ներքին տեղերը.
Եւ կուտէ երկիրը և նորա արմտիքը,
Եւ կ'բորբոքեցնէ լեռների հիմունքը։
23 Նորանց վերայ չարիքներ կ'դիզեմ,
Իմ նետերը կ'վերջացնեմ նորանց վերայ։
24 Կ'մաշուին սովով,
Եւ կ'ապառուին տենդով և լեղի ժանտախտով,
Եւ գազանների ժանիք կ'ուղարկեմ նորանց վերայ
Գետնի վերայ սողացողների թոյնի հետ։
25 Դրսից սուրը պիտի անորդի անէ և սենեակներից՝ երկիւղը.
Երիտասարդներին և կոյս աղջիկներին,
Կաթնակերին ալեւոր ձերի հետ։
26 Ասացի Ցրեմ նորանց,
Նորանց յիշատակը մարդոց միջից վերացնեմ,
27 Միայն թէ թշնամու բարկութիւնովը վախեցի.

Մի գուցէ ուրանան նորանց հա-
կառակորդներն.
Մի գուցէ ասեն՝ Մեր ձեռքն է
բարձր,
եւ ոչ թէ Եհովան արաւ այս
բոլոր բաները։
28 Վասն զի նորանք մի խորհրդակո-
րոյս ազգ են,
եւ իմաստութիւն չկայ նորանց
մէջ։
29 Երանի թէ իմաստուն լինէին
այս բանը հասկանային,
Իրանց վախճանը մտածէին։
30 Մէկ մարդն ի՞նչպէս կ'հալածէր
Հազարին.
եւ երկու մարդը ինչպէս կ'փախց-
նէր տասը Հազարին,
եթէ նորանց Վէմը նորանց չծա-
խէր,
եւ Եհովան նորանց չմատնէր։
31 Վասն զի մեր Վէմի պէս չէ նո-
րանց վէմը.
եւ մեր թշնամիները թող դա-
տաւոր լինին։
32 Վասն զի Սոդոմի որդիցն է նո-
րանց որթը,
եւ Գոմորի արտիցը.
Նորանց խաղողները թունաւոր
խաղողներ են,
Նորանց ողկոյզները դառն են.
33 Նորանց գինին վիշապների թոյն է
եւ իժերին սատակիչ մահաղե-
ղն է։
34 Մի՞թէ սա ծածկուած չէ ինձ
մօտ,
Կնքուած չէ՞ իմ շտեմարաննե-
րումը։
35 Իմն է վրէժխնդրութիւնը եւ հա-
տուցումը.
Ժամանակին կ'գլորուի նորանց
ոտքը,
Վասն զի մօտ է նորանց կորստ-
եան օրը։
եւ շտապում է նորանց համար
պատրաստուածը։
36 Վասն զի Եհովան կ'դատէ իր
ժողովրդին,
եւ կ'դթայ իր ծառաների վերայ,
Որովհետեւ կ'տեսնէ որ նորանց
ձեռքը տկար է,
Եւ չկայ կապուածը եւ ազատը.
37 Եւ կասէ. Ո՞ւր են նորանց աստ-
ուածները,
Այն վէմը՝ որի վերայ յոյս էին
դրել,
Որոնք նորանց զոհերի ճարպը ու- 38
տում էին,
Խմում էին նորանց թափելու նը-
ւէրները։ Թող վեր կենան և ձեզ օգնեն,
Ձեզ վերայ պաշտպան լինին։
Հիմա նայեցէք, որ ես՝ ես եմ եմ, 39
եւ ինձ հետ միասին էլ աստուած
չկայ.
Ես կ'մեռցնեմ և կ'ապրեցնեմ.
եւ կ'զարկեմ և կ'բժշկեմ,
եւ իմ ձեռքիցն ազատող չկայ։
Վասն զի իմ ձեռքն դէպի երկին- 40
քըն եմ բարձրացնում
եւ ասում՝ ես յաւիտեան կեն-
դանի եմ,
եթէ կայծակի սուրս սրեմ, 41
եւ ձեռքս դատաստանը բռնէ,
իմ թշնամիներին վրէժխնդրու-
թիւն կ'առնեմ,
եւ ինձ ատողներին հատուցում
կ'առնեմ։
իմ նետերն արիւնով կ'արբեցնեմ, 42
եւ իմ սուրը միս կուտէ,
Սպանուածների և գերիների ար-
իւնից։
Թշնամուց իշխանների գլխից։
Ով ազգեր, նորա ժողովրդին 43
օրհնեցէք,
Վասն զի նա իր ծառաների արեան
վրէժը խնդրում է.
եւ իր թշնամիներից վրէժ է առ-
նում,
եւ քաւում է իր երկիրը — իր
ժողովուրդը։
Եւ Մովսէսը եկաւ, և այս ե- 44
զի խօսքերը ժողովրդի ա-
կանջներին խօսեց, և Յեսուն որ-
դին Նաւեայ։ եւ երբոր Մովսէ- 45
սն այս ամեն խօսքերը բոլոր Իս-
րայէլի հետ խօսեց վերջացրեց,
Նորանց ասաց. Ձեր ուշը դարձ- 46
րէք այն ամեն խօսքերին, որոնք
այսօր ձեզ համար վկայութիւն
բերի, որ նորանց ձեր տղայոցը
պատուիրէք, որ այս օրէնքի ա-
մեն խօսքերը պահեն և կատա-
րեն։ Վասն զի սա ձեզ համար 47
դատարկ բան չէ. որովհետեւ ձեր
կեանքն է, և այս բանով երկայ-
նակեաց կ'լինէք այն երկրի վե-

բայ, որի համար Յորդանանովն անցնում էք նորան ժառանգելու համար։
48 Եւ Եհովան նոյն օրը խօսեց
49 Մովաբի հետ ասելով. Վեր ելիր այդ Աբարիմ լեառը՝ Նեբաու լեառը, որ Մովաբի երկրումն է Երիքովի դիմացը, և տես Քանանու երկիրը, որ ես տալիս եմ Իսրայէլի որդւոցը էբև կալուածք.
50 Եւ մեռիր քո վեր ելած լեառն վերայ, և քո ժողովրդի վերայ ասելացիր, ինչպէս որ քո եղբայրըն՝ Ահարոն Հոր լեառն վերայ մեռաւ, և իր ժողովրդի վերայ
51 ասելացաւ. Որովհետև ինձ դէմ անհնազանդ եղաք Իսրայէլի որդւոց մէջ Մին անապատումը Կադեսի հակառակութեան ջրերի վերայ. քանզի Իսրայէլի որդւոց
52 մէջ ինձ չսրբեցիք։ Վասն զի այն երկիրը հեռուից կ'տեսանես, բայց այնտեղ չես մտնիլ, այն երկիրը որ ես Իսրայէլի որդւոցը կը տամ։

ԳԼ. ԼԳ

1 Եւ սա է այն օրհնութիւնը՝ որով օրհնեց Աստուծոյ մարդ՝ Մովսէսն իր մեռնելուց առաջ Իսրայէլի որդիներին.
2 Եւ ասաց.
Եհովան Սինայից եկաւ,
Եւ Սէիրից երևեցաւ նորանց,
Փայլեցաւ Փառանի լեռնիցը,
Եւ եկաւ բիւրաւոր սուրբերով.
Նորա աջ ձեռքիցը օրինաց կրակը նորանց համար։
3 Այո, նա սիրում է ժողովուրդները.
Նորա բոլոր սուրբերը քո ձեռքին են.
Եւ նորանք նստում են քո ոտքերի մօտ
Քո խօսքերիցն ընդունելու համար։
4 Մովսէսը մեզ օրէնքը պատուիրեց.
Յակոբի ժողովքի ժառանգութիւնը։
5 Եւ Յեսուրունի մէջ իշխան եղաւ, ժողովրդի գլխաւորները ժողովուեցին
Իսրայէլի ցեղերի հետ միևնոյն,
Ռուբէնը ապրէ և չմեռնի,
Եւ նորա ժողովուրդը բազմաթիւ լինի։
7 Եւ սա Յուդայի համար, և ասաց.
Լսիր, ով Եհովայ, Յուդայի ձայնը,
Եւ իր ժողովրդի մօտ տար նորան.
Նորա ձեռքերն իրան բաւական են,
Եւ նորա թշնամեաց դէմ օգնական եղիր։
8 Եւ Ղևիի համար ասաց.
Թումիմդ ու Ուրիմդ քո սուրբ մարդունը լինի,
Որին փորձեցիր Մասսայի մէջ,
Եւ Մերիբայի ջրի վերայ նորա հետ վիճեցիր։
9 Այն որ իր հօրն ու մօրը համար ասաց՝ Նորան չտեսայ
Եւ իր եղբայրներին չճանաչեց,
Եւ իր որդիներին չգիտաց.
Վասն զի նորանք քո խօսքին ըզգուշութիւն արին,
Եւ քո ուխտը պահեցին։
10 Քո դատաստանները սովորեցնում են Յակոբին՝
Եւ քո օրէնքը Իսրայէլին.
Քո առջևը խունկ կ'մատուցանեն,
Եւ քո սեղանի վերայ ողջակէզ։
11 Եհովայ, օրհնիր նորա զօրութիւնը,
Եւ նորա ձեռաց գործքը ընդունիր,
Փշրիր նորա հակառակորդների մէջքը,
Եւ նորա ատողներին, որ այլևս վեր չկենան։
12 Բենիամինի համար ասաց.
Եհովայի սիրելին ապահով բնակէ նորա մօտ.
Միշտ պաշտպանում է նորան,
Եւ նորա ուսերի մէջ է բնակում։
13 Եւ Յովսէփի համար ասաց.
Նորա երկիրը Եհովայից օրհնեալ լինի
Երկնից ընտիր պարգևներով, ցօղով
Եւ ցածումը պառկող անդունդներով,
14 Եւ արեգակից յառաջ եկած ընտիր բերքերով,

և ամիսների ընտիր արդիւնքներովը,
15 և վազեմի լեառների *ընտիր պտուղներովը,
և մշանջենաւոր բլուրների ընտիր պարգևներովը,
16 և երկրիս և նորա առատութեան ընտիր պարգևներովը,
Ու մօրենուէմը բնակողի բարեհաճութեամբը.
Գան Յովսէփի գլխի վերայ,
և իր եղբարց մէջ երևելի եղողի գագաթի վերայ։
17 Իր ցուլի առաջինեկի պէս գեղեցկութիւն ունի նա,
և նորա եղջիւրները միեղջերուի եղջիւրներ են,
Նորանցով կ'զարկէ ժողովուրդներին միասին,
Մինչև երկրի ծայրերը.
և սորանք են Եփրեմի բիւրաւորները
և Մանասէի հազարաւորները։
18 և Զաբուղոնի համար ասաց.
Ուրախացիր, Զաբուղոն, քո դուրս գալու ժամանակին,
և դո, Իսաքար, քո վրաններուդ։
19 Ժողովուրդներին լեառն են հրաւիրում՝
Անտեղ արդարութեան զոհեր են մատուցանում։
Վասն զի նորանք կ'ծծեն ծովերի առատութիւնը
և ամպի ծածուկ գանձերը։
20 և Գադի համար ասաց.
Օրհնեալ է Գադին ընդարձակողը.
Առատակ առիւծի պէս է նստել,
և զիշատում է թևերը նաև գլուխը.
21 և առաւ առջևի մասն իրան չոբմոբ.
Վասն զի այնտեղ օրէնսդրի փեշի բաժինը պրոշուեցաւ,
և ժողովրդի գլխաւորների հետ եկաւ,
Եհովայի արդարութիւնը գործեց
և նորա դատաստանները Իսրայէլի հետ։
22 և Դանի համար ասաց.

Դանը առիւծի ձագ է.
Բասանից է դուրս թռչում.
23 և Նեփթաղիմի համար ասաց.
Նեփթաղիմ շնորհքով կշտացած,
և Եհովայի օրհնութիւնով լեցուած,
Արևմուտքն ու հարաւը կ'ժառանգէ։
24 և Ասերի համար ասաց.
Ասերը որդիներից օրհնուած է.
Նա իր եղբայրներին հաճոյ լինի.
և ոտքը իւղի մէջ թաթախէ։
25 Քո փականքը երկաթ և պղինձ լինեն,
և քո հանգստութիւնը քո օրերի չափ լինի։
26 Յեսուրունի Աստուծոյն պէսը չկայ.
Որ նստած է երկնքումը քեզ օգնութիւն անելու համար
և իր մեծ վայելչութեամբը ամպերի վերայ։
27 Յաւիտենական Աստուածը ապաւէն է,
և ցածումը յաւ առնէ նորա յաւիտենական բազուկները.
և նա կ'քշէ թշնամիներիդ քո առջևից,
և կ'ասէ՝ փչացրու։
28 և Իսրայէլն ապահովութեամբ առանձին կ'բնակէ.
Յակոբին ազբիւրը առանձին
Յորենի և գինու երկրումը,
և նորա երկնքից ցօղ կ'կաթէ։
29 Երանի քեզ, Իսրայէլ, ով է քեզ պէս
Եհովայի ձեռքով փրկուած ժողովուրդ.
Որ նա է քո օգնութեան ասպարը
և քո յաղթութեան սուրը.
և քո թշնամիները քեզ պիտի շողոքորթեն,
և նորանց բարձր տեղերը պիտի կոխես։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Մովսէս վեր եկաւ Մովաբի դաշտերից Նաբաւ լեառը երթալով դէմ Փասգայի գագաթը.
և Եհովան նորան ցոյց տուաւ բոլոր Գաղաադու երկիրը մինչև Դան, նաև բոլոր Նեփթաղիմը 2

*Եբր. գլխովը

և Եփրեմի և Մանասէի երկիրը,
և Յուդայի բոլոր երկիրը մինչև
3 արևմտեան ծովը, Եւ հարաւա-
յին կողմը և Երիքովի հովտի
դաշտը՝ Աբմաւենեաց քաղաքը
4 մինչև Սեգովր։ Եւ Եհովան նո-
րան ասաց. Սա է այն երկիրը՝
որի համար Աբրահամին, Իսա-
հակին և Յակոբին երդում արի
ասելով. Քո սերունդին եմ տա-
լու այն. ահա քո աչքերովը քեզ
տեսանել տուի, բայց դու այն-
տեղ չես անցնիլ։
5 Եւ մեռաւ այնտեղ Եհովայի
ծառան Մովսէսը Մովաբի երկ-
րումը Տէրոջ խօսքին համե-
6 ձատ. Եւ նորան թաղեց Մովա-
բի երկրի ձորումը Բեթփեգորի
դէմ, և մի մարդ չգիտաց նորա
7 գերեզմանը մինչև այսօր։ Եւ Մով-
սէսը հարիւր քսան տարեկան էր
մեռնելիս, նորա աչքը չսկարա-
8 ցաւ, և նորա ոյժը չդնաց։ Եւ
Իսրայէլի որդիքը Մովաբի դաշ-
տերումը Մովսէսի համար երե-
սուն օր լացին. և Մովսէսի հա-
մար սուգի լացի օրերը վերջացան։
9 Եւ Նաւէի որդի Յեսուն իմաս-
տութեան հոգով լիքն էր, որով-
հետև Մովսէսն իր ձեռքերը նո-
րա վերայ էր դրել. և Իսրայէլի
որդիքը նորան լսում էին, և ա-
նում էին ինչպէս որ Եհովան
Մովսէսին պատուիրել էր։
10 Եւ այլ ևս վեր չկեցաւ Իսրա-
յէլում մի մարգարէ Մովսէսի
պէս՝ որին Եհովան ճանաչէր ե-
րես առ երես։ Ամէն բոլոր նշան-
11 ներովը ու հրաշքներովը, որ Եհո-
վան ուղարկեց նորան Եգիպտոսի
երկրումն անելու փարաւոնին և
նորա ամեն ծառաներին և նորա
բոլոր երկրին, Եւ այն բոլոր զո-
12 րաւոր ձեռքովը և բոլոր մեծ
սոսկումովը՝ որ Մովսէսն արա-
բոլոր Իսրայէլի աչքի առջև։

ԳԻՐՔ ՅԵՍՈՒԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղաւ որ Տէրոջ ծառայի՝
Մովսէսի մեռնելուց յետոյ Տէ-
րը խօսեց Մովսէսի սպասաւոր
Նաւէի որդի Յեսուի հետ ասե-
2 լով. Իմ ծառան Մովսէսը մե-
ռաւ. և հիմա վեր կաց անցիր
այդ Յորդանանովը դու և այս բո-
լոր ժողովուրդը այն երկիրը, որ
ես տալիս եմ Իսրայէլի որդիսան-
3 ցը, Բոլոր տեղերը, որ կոխեն
ձեր ոտքի թաթերը, ձեզ պիտի
տամ, ինչպէս որ Մովսէսին ա-
4 սել եմ. Անապատից և այս Լի-
բանանից մինչև Մեծ գետը այ-
սինքն Եփրատ գետը, Քեթացոց
բոլոր երկիրը մինչև արևմտեան
կողմի մեծ ծովը լինի ձեր սահ-
5 մանը։ Ոչ մի մարդ չկարողանայ
քեզ քո կենաց բոլոր օրերումը
դէմ կանգնել. ինչպէս որ Մով-
սէսի հետ էի, քեզ հետ կ'լի-
նիմ. քեզ չեմ թողիլ և քեզ
անտես չեմ անիլ։ Զօրացիր և 6
քաջ եղիր. վասն զի այս ժողո-
վըրդին դու պիտի ժառանգեցնես
այն երկիրը, որի համար սրտանց
հայրերին երդում արի սրտանց 7
տալու համար։ Միայն թէ զօրա-
ցիր և շատ քաջ եղիր, որ պա-
հես և անես այն ամեն օրէնքի
պէս, որ իմ ծառայ Մովսէսը
քեզ պատուիրել է, նորանից չը
խոտորես աջ կամ ձախ, որ ա-
մենուր էլ խելամուտ լինես ուր
որ գնում ես։ Այս օրինաց գիր- 8
քը քո բերանիցը չհեռանայ, այլ
գիշեր և ցերեկ նորա վերայ մտա-
ծես, որ պահես և կատարես բո-
լոր նորա միջի գրուածի պէս.
վասն զի այն ժամանակ ճանա-
պարհները յաջողակ կանես, և
այն ժամանակ խելամուտ կ'լինիս։
Ահա քեզ պատուիրում եմ, զօ- 9
րացիր և քաջ եղիր, մի վախե-
նար և մի զարհուրիր. վասն զի
քո Տէր Աստուածը քեզ հետ է

ամեն բեղուր որ գնաս։
10 Եւ Յեսուն ժողովրդի ատեանն պատուիրելով ասաց.
11 Բանակի միջոցէն անցկացէք, և պատուիրեցէք ժողովրդին ասելով. Ձեզ համար պաշար պատրաստեցէք. վասն զի երեք օրից յետոյ դուք այս Յորդանանովը կանցնէք, որ դնաք ժառանգէք այն երկիրը, որ ձեր Տէր Աստուածը ձեզ տալիս է իբրև ժառանգութիւն։
12 Եւ Ռուբենեանց ու Գադեանց և Մանասէի կէս ցեղին հետ Յեսուն խօսեց և ասաց.
13 Յիշեցէք այն խօսքը, որ Տիրոջ ծառան Մովսէսը ձեզ պատուիրեց ասելով. Ձեր Տէր Աստուածը ձեզ հանգստացրեց, և այս երկիրը
14 ձեզ տուաւ։ Ձեր կանայքը, ձեր տղայքը և ձեր անասուններըը թող բնակուին այն երկրամբ, որ Մովսէսը ձեզ տուաւ Յորդանանու այս կողմին. բայց դուք ըստ պատերազմական ձեր եղբայրների առջեւն անցէք՝ ամենքդ էլ զօրաւոր մարդիկ՝ և նորանց օգնութիւն արէք,
15 մինչև որ Տէրը ձեր եղբայրներին էլ ձեզ պէս հանգստացնէ, և նորանք էլ ժառանգեն այն երկիրը, որ ձեր Տէր Աստուածը կ'տայ նորանց, և նո՛ւ դարձէք ձեր ժառանգութեան երկիրը, և ժառանգեցէք այն, որ Տիրոջ ծառան Մովսէսը ձեզ տուաւ Յորդանանու այս կողմին դէպի արեւելք։
16 Եւ Յեսուին պատասխանեցին և ասացին. Ամեն ինչ որ պատուիրեցիր կանենք, և ուր որ մեզ
17 ուղարկես՝ կ'գնանք։ Ինչպէս որ Մովսէսին էինք լսում, այնպէս էլ քեզ կ'լսենք. միայն թէ քո Տէր Աստուածը քեզ հետ լինի, ինչպէս որ Մովսէսի հետ
18 էր։ Ամեն ով որ քո հրամանին ընդդիմանայ և չլսէ քո ամեն խօսքերին, որ մեզ պատուիրես, պիտի մեռցնուի, միայն թէ զօրացիր և քաջ եղիր։

ԳԼ. Բ

1 Եւ Նաւէի որդին Յեսուն Սատիմից երկու մարդ ուղարկեց ծածկաբար երկիրը լրտեսելու համար, և ասաց. Գնացէք տեսէք այն երկիրը և Երիքովը. և գնացին և եկան Ռահաբ անունով մի պառնիկ կնոջ տունը, և այնտեղ պառկեցին։ 2 Եւ Երիքովի թագաւորին ասուեցաւ թէ՝ Ահա այս գիշեր այստեղ մարդիկ են եկել Իսրայէլի որդիներից երկիրը լրտեսելու համար։ 3 Եւ Երիքովի թագաւորը խոր ուղարկեց Ռահաբի մօտ ասելով. Քեզ մօտ եկող և տունդ մտնող մարդիկը դուրս հանիր. որովհետև եկել են այս բոլոր երկիրը լրտեսելու համար։ 4 Եւ կինն առաւ այն երկու մարդկանցը և թաքցրեց, և ասաց. Իրաւ այն մարդիկը եկան ինձ մօտ, բայց չիմացայ թէ որտեղից են նորանք. 5 և դռների փակելու ժամանակը մութ էր՝ այն մարդիկը դուրս եկան. և չը գիտեմ այն մարդիկը ու՛ր գնացին. շուտով նորանց հետևիցը ընկէք, որ նորանց հասնէք։ 6 Իսկ ինքը նորանց վեր էր հանել կտուրը և թաքցրել քթանի եղէգներումը որ իր կտրի վերայ շարել էր։ 7 Եւ մարդիկը Յորդանանու ճանապարհով մինչև անցքերը նորանց հետևից ընկան, և դուռը փակեցին նորանց հետևից ընկողնները դուրս գալուց յետոյ։

8 Եւ երբոր նորանք դեռ չէին պառկել, կինը վեր եկաւ կտուրը 9 նորանց մօտ, և ասաց այն մարդկանցը. Ես գիտեմ որ Տէրը այս երկիրը ձեզ է տուել, և որ ձեր վախը մեր վերայ է ընկել, և որ ձեր պատճառով այս երկրի բոլոր բնակիչները հալուել են. 10 Վասն զի մենք լսեցինք, թէ ինչպէս Տէրը Կարմիր ծովի ջրերը ձեր առջևից ցամաքեցրեց ձեր Եգիպտոսից դուրս գալուց յետոյ, և նաև ինչ որ դուք արիք Յորդանանու այն կողմին Ամովհացոց երկու թագաւորներին՝ Սեհոնին և Ովգին, որ նզովեցիք նորանց։ 11 Եւ մենք լսել ենք, և մեր սրտերը հալուել են, և ձեր երե-

սիցը մէկ մարդում համարձակու-
թիւն չէ մնացել. վասն զի ձեր
Եհովայ Աստուածն է Աստուած
վերևում՝ երկնից մէջ և ցածում՝
12 երկրիս վերայ: Եւ հիմա աղա-
չում եմ, Տէրով երդում ա-
րէք ինձ, որ ես ձեզ ողորմու-
թիւն եմ արել, և դուք էլ ո-
ղորմութիւն կանէք իմ հօր տա-
նը. և ինձ մի ճշմարիտ նշան տու-
13 ուէք, Որ իմ հօրը, մօրը, իմ
եղբայրներին, քոյրերին և բոլոր
նորանց վերաբերեալներին ողջ կը
թողէք, և մեր անձը մահից կա-
14 պատէք: Եւ այն մարդիկը նորան
ասացին. Եթէ այս մեր բանը չը
յայտնէք, ա՛ն ժամանակ երբ
տէրը մեր անձինքը մեռնեն, և
երբոր Տէրն այս երկիրը մեզ
տայ, քեզ ողորմութիւն և հա-
15 ւատարմութիւն կանենք: Եւ նո-
րանց մէկ չուանով պատուհա-
նից վայր իջեցրեց. վասն զի իր
տունը բերդի պարսպի վերայ էր,
և ինքը պարսպի վերայ էր բնա-
16 կում. Եւ նորանց ասաց. Գնա-
ցէք լեռը, մի գուցե հալածող-
ները ձեզ հանդիպեն, և այնտեղ
երեք օր թաք կացէք, մինչև որ
հալածողները ետ դառնան, և
յետոյ ձեր ճանապարհը գնացէք:
17 Եւ այն մարդիկը նորան ասացին.
Մենք անպարտ կ'լինինք քո այդ
երդումիցը որ մեզ անել տուիր.
18 Երբոր մենք այս երկիրը մտնենք,
դու այս կարմիր դերձանի չուա-
նը այն պատուհանի վերայ կա-
պեա, որ տեղից որ մեզ իջեցրիր.
և քո հայրը, մայրը, եղբայրները
և քո հօր բոլոր տունը քեզ մօտ
19 այս տունը ժողովեա. Եւ ով որ
քո տան դռնիցը դուրս գայ, նո-
րա արիւնը իր գլխին. մենք ան-
պարտ ենք. բայց քեզ մօտ այս
տանը բոլոր եղողների արիւնը մեր
գլխին, եթէ նորանց մէկ ձեռք
20 դպչէ: Եւ եթէ մեր այս բանը
յայտնես, այն ժամանակ մենք
անպարտ ենք քո մեզ անել տը-
21 ուած երդումիցը: Եւ նա ասաց.
Ձեր խօսքերին պէս լինի. և թո-
ղեց նորանց, և նորանք գնացին.
և այն կարմիր չուանը կապեց
պատուհանի վերայ:

22 Եւ նորանք գնացին և եկան
դէպի լեռը, և այնտեղ երեք
օր նստեցին, մինչև որ հալածող-
ները ետ դարձան. և հալածող-
ները նորանց ամեն ճանապար-
հում որոնեցին, բայց չգտան:
23 Այն ժամանակ այն երկու մար-
դիկը ետ դարձան և վայր իջան
լեռնիցը, և անցնելով նաւէ
որդի Յեսուի մօտ գնացին, և
պատմեցին նորան իրանց պատա-
հած բոլոր բանները. Եւ Յեսուին 24
ասացին. Իրաւ Տէրը այն բո-
լոր երկիրը մեր ձեռքն է տուել,
և այն երկրի բոլոր բնակիչները
մեր երեսից հալուել են:

Գլ. Գ

1 Եւ Յեսուն առաւօտանց կա-
նուխ վեր կացաւ, և ինքը և բո-
լոր Իսրայէլի որդիքը Սատիմից
չուեցին, և եկան մինչև Յորդա-
նան. և անցնելուց առաջ այն-
տեղ իջևան արին: Եւ երեք օրից 2
յետոյ ոստիկանները բանակի մի-
ջովն անցան: Եւ ժողովրդին պատ- 3
ուիրեցին ասելով. Երբոր տեսնէք
ձեր Տէր Աստուծոյ ուխտի տա-
պանակը, և Ղեւտացի քահա-
նաներին նորան տանելիս, դուք
էլ ձեր տեղերից չուեցէք, և նո-
րա ետևից գնացէք. Բայց մի հե- 4
ռաւորութիւն լինի ձեր և նորա
միջտեղը երկու հազար կանգունի
չափ. նորան չմօտենաք, որպէս
զի գիտենաք ձեր գնալու ճանա-
պարհը. վասն զի այս ճանապար-
հովն անցած չէք երէկուանից և
միւս օրուանից: Եւ Յեսուն ա- 5
ռաց ժողովրդին. Սրբեցէք ձեր
անձերը. վասն զի Տէրը էգուց
ձեր միջը հրաշքներ է անելու:
Եւ Յեսուն ասաց քահանաներին. 6
Թէ վեր առէք ուխտի տապա-
նակը, և անցէք ժողովրդի առ-
ջև: և նորանք վեր առին ուխտի
տապանակը, և գնացին ժողովրդի
առջևիցը:

Եւ Տէրն ասաց Յեսուին. 7
Այսօր կ'սկսեմ քեզ բոլոր Իս-
րայէլի աչքի առջև մեծացնելու,

որ գիտենան թէ ինչպէս որ Մովսէսի հետ էի, քեզ հետ կ'լինիմ։ 8 Եւ հիմա դու ուխտի տապանակը վեր առնող քահանաներին պատուիրիր ասելով. Երբ որ Յորդանանի ջրի եզերքին հասնէք, Յորդանանումը կանգնեցէք։ 9 Եւ Յեսուն ասաց Իսրայէլի որդիքանց. Մօտեցէք այստեղ, և ձեր Տէր Աստուծոյ խօսքերը լսեցէք։ 10 Եւ Յեսուն ասաց. Սորանով կ'գիտենաք, որ կենդանի Աստուածը ձեր մէջն է, և ձեր առջևից հալածելով հալածելու է Քանանացիներին, Փերեզացիներին, Խևացիներին, Փերեզացիներին, Գերգեսացիներին, Ամորհացիներին և Յեբուսացիներին։ 11 Ահա բոլոր երկրի Տիրոջ ուխտի տապանակը ձեր առջև 12 կ'անցնէ Յորդանանի մէջ. Եւ հիմա դու Իսրայէլի ցեղերից տասն երկու մարդ առէք, ամեն մէկ 13 ցեղից մէկ մարդ. Եւ երբոր բոլոր երկրի Եհովայ Տիրոջ տապանակը վեր առնող քահանաների ոտքերը Յորդանանի ջրի մէջ մտնեն, Յորդանանի ջրերը կ'կտրուին, վերևից իջնող ջրերը կարկառակոյտի պէս կը կանգնեն։

14 Եւ երբոր ժողովուրդը Յորդանանումն անցնելու համար իրանց վրաններից չուեցին, ուխտի տապանակը վեր առնող քահանա- 15 ները ժողովրդի առջևն էին. Եւ հէնց որ տապանակը վեր առնողները մինչև Յորդանան հասան և տապանակը վեր առնող քահանաների ոտքերը ջրի եզերքի մէջ մտուեցան, (որովհետև հունձքի բոլոր ժամանակը Յորդանանը լիքն է լինում իր բոլոր եզերքների վերայ,) 16 մի վերայ, Ա֊ին ժամանակը վերևից իջնող ջրերը կանգնեցին, և Սարթանի մօտ եղող Ադամ քաղաքից շատ հեռու մի կարկառակոյտի պէս բարձրացաւ. և դաշտի ծովը այսինքն Ադի ծովը իջնող ջրերը վերջացան կտրուեցան. և ժողովուրդը Երիքովի 17 դէմ անց կացաւ։ Եւ Տիրոջ ուխտի տապանակը վեր առնող քահանաները Յորդանանու մէջ ցամաքի վերայ հաստատ կանգնեցին. և բոլոր Իսրայէլը ցամաքով անց կացաւ, մինչև որ բոլոր ժողովուրդը Յորդանանումն անցնելը վերջացրեց։

ԳԼ. Դ

Եւ երբոր բոլոր ժողովուրդը Յորդանանումն անցնելը վերջացրին, Տէրը խօսեց Յեսուի հետ և ասաց. 2 Ժողովրդից դու քսան երկու մարդ առէք, ամեն մէկ ցեղից մէկ մարդ, 3 Եւ նորանց պատուիրեցէք ասելով. Այստեղից Յորդանանի միջից քահանայից ոտքերի պինդ կացած տեղից ձեզ համար տասներկու քար վեր առէք, և ձեզ հետ տարէք նորանց, և դրէք այն իջևանումը ուր որ այս գիշեր իջևան էք անելու։ 4 Եւ Յեսու Իսրայէլի որդիներից իր որոշած տասն երկու մարդկանցը կանչեց, ամեն մէկ ցեղից մէկ մարդ. 5 Եւ Յեսուն նորանց ասաց. Ձեր Տէր Աստուծոյ տապանակի առջևն անցէք Յորդանանի մէջ, և ամեն մէկդ ձեր ուսերի վերայ մէկ քար վեր առէք Իսրայէլի որդւոց 6 թուոյն համեմատ. Որ սա ձեր մէջ նշան լինի. որ երբոր էգուց ձեր որդիքը հարցնելու լինին և ասեն. Թէ Ա֊յս քարերը ի՞նչ են ձեզ համար. 7 Եւ նորանց ասէք. Վասն զի Տիրոջ ուխտի տապանակի առջևից Յորդանանի ջրերը կտրուեցան. երբոր նա Յորդանանումն անցնում էր Յորդանանի ջուրը կտրուեցաւ. և այս քարերը Իսրայէլի որդւոց մէջ յիշատակի համար լինեն յաւիտեան։ 8 Եւ Իսրայէլի որդիքն այնպէս արին ինչպէս որ Յեսուն պատուիրել էր. և Յորդանանի միջից տասներկու քար վեր առին, ինչպէս որ Տէրը Յեսուին ասել էր, Իսրայէլի որդւոց ցեղերի թուոյն համեմատ. և իրանց հետ իջևանի տեղը տարին նորանց և այնտեղ դրին։ 9 Եւ Յեսուն ուրիշ տասներկու քարեր

կանգնեցրեց Յորդանանի մէջ, ուխտի տապանակը վեր առնող քահանայից ոտքերի կացած տեղը, և մինչև այս օրը այնտեղ
10 են։ Եւ տապանակը վեր առնող քահանաները կանգնեցին Յորդանանի մէջ մինչև որ վերջացաւ այն բոլոր խօսքը, որ Տէրը Յեսուին պատուիրեց ժողովրդին ասելու, ինչպէս որ բոլորը Մովսէս
11 պատուիրել էր Յեսուին. և ժողովուրդը շտապելով անցաւ։ Եւ երբոր բոլոր ժողովուրդը անցնելը վերջացրեց, այն ժամանակ Տիրոջ տապանակը և քահանաները ժողովրդի առջեւն անցան։
12 Եւ Ռուբենի որդիքը և Գադի որդիքը և Մանասէի կէս ցեղը սպառազինեալ Իսրայէլի որդոց առջեւն անցան, ինչպէս որ Մով-
13 սէան ասել էր նորանց։ Քառասուն հազարի չափ պատրաստուած զօրք Տիրոջ առջեւն անցան պատերազմի համար Երիքովի դաշտը։
14 Նոյն օրը Տէրը մեծացրեց Յեսուին Իսրայէլի աչաց առջեւ, և նորանից վախենում էին ինչպէս վախեցել էին Մովսէսից,
15 նորա կենաց բոլոր օրերումը։ Եւ Տէրը խօսեց Յեսուի հետ ա-
16 սելով. Պատուիրիր վկայութեան տապանակը վեր առնող քահանաներին, որ Յորդանանիցը դուրս
17 գային։ Եւ Յեսուն քահանաներին հրամայեց և ասաց. Յորդանանիցը վեր գնացէք։
18 Եւ երբոր Տիրոջ ուխտի տապանակը վեր առնող քահանաները Յորդանանի միջից վեր եկան, և քահանայից ոտքերի թաթերը ցամաքի վերայ կոխեցին, Յորդանանի ջրերը իրանց տեղը դարձան, և նախկուայ ու միւս օրուայ պէս իրանց բոլոր եզերքների վերայ գնացին։
19 Եւ առաջի ամսի տասնին ժողովուրդը Յորդանանիցն դուրս եկաւ, և բանակ տուաւ Գաղգաղայի մէջ Երիքովի արեւելեան
20 կողմին։ Եւ այն տասներկու քարը որ վեր առին Յորդանանից, Յեսուն Գաղգաղայի մէջ կանգ-
21 նեցրեց, Եւ ասաց Իսրայէլի որդ-

կանցը. Թէ երբոր էդուց ձեր որդիքը իրանց հայրերիցը հարցնելու լինին և ասեն. Սա ինչ քարեր են. Ձեր տղայոցը իմացնէք 22
ասելով. Իսրայէլ այս Յորդանանից ցամաքով անց կացաւ. Որ- 23
բովհետեւ ձեր Տէր Աստուածը ձեր առջեւից Յորդանանի ջրերը ցամքեցրեց մինչև որ դուք անցաք, ինչպէս որ ձեր Տէր Աստուածը Կարմիր ծովուն էլ արաւ, որ ցամաքեցրեց մեր առջեւից մինչև որ մենք անցանք։ Որ- 24
պէս զի երկրի բոլոր ազգերը գիտենան որ Տիրոջ ձեռքը զօրաւոր է, և դուք ձեր Տէր Աստուածից միշտ վախենաք։

ԳԼ. Ե

Եւ երբոր լսեցին Ամորհացոց բո- 1
լոր թագաւորները, որոնք Յորդանանու այս արեւմտեան կողմերն էին, և Քանանացոց բոլոր թագաւորները, որոնք ծովեզերքի մօտ էին, թէ Տէրը ցամաքեցրեց Յորդանանի ջրերը Իսրայէլի որդոց առջեւից մինչև նորանց անցնելը. այն ժամանակ նորանց սիրտը հալուեցաւ, և նորանցում հոգի չմնաց Իսրայէլի որդկանց դիմացը։

Այս ժամանակին Տէրը Յե- 2
սուին ասաց. Քեզ համար սուր դանակներ շինիր, և դարձիր Իսրայէլի որդկանցը կրկին թլփատիր։ Եւ Յեսուն իր համար սուր 3
դանակներ շինեց և Իսրայէլի որդկանցը թլփատեց *Գիբեաթ-Հաարալովթում։ Եւ այս է պատճառը, 4
որի համար Յեսուն թլփատեց նորանց. Եգիպտոսից դուրս եկած բոլոր ժողովրդի արուները ամեն պատերազմող մարդիկը Եգիպտոսից դուրս գալուց յետոյ անապատումը ճանապարհին մեռան։ Եւ բոլոր դուրս եկած ժողովուրդը թլփատուած էր. բայց Եգիպտոսից դուրս գալուց յետոյ անապատումը ճանապարհին ծնուած բոլոր ժողովրդին չթլփա-

---

*Բլուր անթլփատից։

6 ասեցին, Վասն զի Իսրայէլի որդիքը քառասուն տարի անապատումը շրջեցին, մինչև որ բոլոր ազգը այսինքն Եգիպտոսից դուրս եկող պատերազմական մարդիկը սպառուեցան. որ Տիրոջ խօսքին չէին լսել, որովհետև Տէրը նորանց երդում արաւ, որ նորանց քնաւ ցոյց չտայ այն երկիրը, որ Տէրը նորանց հայրերին երդում էր արել մեզ տալու՝ մի երկիր որ կաթ և մեղր
7 է բղխում։ Եւ նորանց տեղ նորանց զաւակներին կանդնեցրեց, և Յեսուն թլփատեց նորանց. վասն զի անթլփատ էին, որովհետև ճանապարհին չէին թլփատել նորանց։
8 Եւ երբոր բոլոր ժողովրդի թլփատութիւնը վերջացաւ, մնացին բանակումն իրենց տեղը
9 մինչև որ առողջացան։ Եւ Տէրը Յեսուին ասաց. Այսօր *վեր առի Եգիպտոսի նախատինքը ձեր վերայից. և այնտեղի անունը մինչև այսօր Գաղգաղա կոչեցին։
10 Եւ Իսրայէլի որդիքը բանակեցան Գաղգաղայումը, և զատիկն արին ամսի չորեքտասաներորդ օրը իրիկուայ դէմ Երիքովի դաշտե-
11 րումը։ Եւ զատկի հետևեալ օրն այն երկրի պտղից բաղարջ և հեղի կերան, հէնց նոյն օրը։
12 Եւ հետևեալ օրը երբոր այն երկրի պտղից կերան, մանանան դադարեց, և նորանից յետոյ Իսրայէլի որդիքից համար այլ և մանանայ չկար. և այն տարին Քանանու երկրի արդիւնքից կերան։
13 Եւ երբոր Յեսուն Երիքով էր, իր աչքերը բարձրացրեց և տեսաւ, որ ահա իր դիմացը մէկ մարդ էր կանգնել, և նորա ձեռքին մի մերկ սուր. և Յեսուն նորան մօտեցաւ և նորան ասաց. Մեզանի՞ց ես դու, թէ մեր թշնամիների՞ց.
14 Եւ նա ասաց. Ոչ, այլ ես Տիրոջ զօրավարն եմ, և հիմա եկայ։ Եւ Յեսուն իր երեսի վերայ գետինն ընկաւ և երկրպագութիւն արաւ, և նորան ասաց. Ի՞նչ է հրամայում իմ Տէրն իր ծառային։ Եւ Տիրոջ 15
զօրավարը Յեսուին ասաց. Ոտքերիդ կօշիկներդ հանիր, վասն զի կանգնած տեղդ սուրբ է. և Յեսուն այնպէս արաւ։

ԳԼ. Զ

Եւ Երիքովը Իսրայէլի որդոց 1
սուղև ամուր կերպով փակուած էր. դուրս եկող և մտնող չկար։
Եւ Տէրը Յեսուին ասաց. Նա- 2
յիր՝ ես քո ձեռքն եմ տուել Երիքովը և նորա թագաւորին՝ զօրաւոր քաջերին։ Եւ դուք ամեն 3
պատերազմական մարդիկդ քաղաքը շրջապատեցէք մէկ անգամ քաղաքի շուրջը պտոյտ տալով. վեց օր այսպէս անես։ Եւ եօթը 4
քահանաներ եօթը Յոբելեան փողերն առնեն տապանակի առջև. և եօթներորդ օրը քաղաքի շուրջը եօթն անգամ պտոյտ տաք, և քահանաները փողերը հնչեցնեն։ Եւ երբոր Յոբելեան եղջիւրներն 5
ձայնը լսէք, բոլոր ժողովուրդը մեծ աղաղակով աղաղակէ. և քաղաքի պարիսպները վայր կ'ընկնեն. և ժողովուրդը վեր գնայ ամեն մէկն ուղիղ իր առջևը։
Եւ Նաւէի որդի Յեսուն քահա- 6
նաներին կանչեց և նորանց ասաց. Վեր առէք ուխտի տապանակը, և եօթը քահանայ եօթը Յոբելեան փողեր առնեն Տիրոջ տապանակի առջև։ Եւ ժողովուր- 7
դին ասաց. Անցէք և քաղաքը շրջապատեցէք, և զինուորները Տիրոջ տապանակի առջևն անցնեն։ Եւ երբոր Յեսուն ժողովուր- 8
դին ասաց. Եօթը քահանաները որ եօթը Յոբելեան փողերն ունէին, Տիրոջ առջևն անցնելով փողերն հնչեցրին, և Տիրոջ ուխտի տապանակը գնում էր նորանց ետևից։
Եւ զինուորները գնում էին 9
փողերը հնչեցնող քահանաների առջևից, բայց վերջապահները տապանակի ետևից. և գնում ու փողերը հնչեցնում էին։ Եւ 10

*գլուխ 6

Յեսուն ժողովրդին պատուիրեց
ասելով. Աղաղակ մի հանէք, և
ձեր ձայնը չլսուի, և ձեր բերա-
նից մի խօսք դուրս չգայ, մինչև
այն օրը որ ես ձեզ ասեմ. թէ
Աղաղակեցէք. այն ժամանակ ա-
11 ղաղակեցէք: Եւ Տէրոջ տա-
պանակը քաղաքը շրջապատեց
մէկ անգամ պատյտ տալով, և
եկան բանակը. և գիշերը բանա-
կումը մնացին:
12 Եւ Յեսուն առաւօտանց կա-
նուխ վեր կացաւ, և քահանանե-
րը վեր առին Տէրոջ տապա-
13 նակը: Եւ այն եօթը Յոբելեան
փողերը կրող եօթը քահանանե-
րը գնում էին Տէրոջ տապա-
նակի առջև փողերը հնչեցնելով.
և զինուորները նրանց առջև
գնում էին, և վերջապահները
Տէրոջ տապանակի ետևից գը-
նում, ու փողերը փողերը հըն-
14 չեցնում էին: Եւ երկրորդ օրն էլ
քաղաքի շուրջը մէկ անգամ պը-
տյտ տուին և ետ դարձան բա-
15 նակը. վեց օր այսպէս արին: Եւ
եօթներորդ օրը կանուխ վեր կա-
ցան արշալոյսը ծագելիս, և քա-
ղաքի շուրջը եօթն անգամ պը-
տյտ տուին նոյն կերպով. միայն
թէ այն օրը քաղաքի շուրջը եօ-
16 թըն անգամ պտյտ տուին: Եւ
եօթներորդ անգամին եղաւ երբ
որ քահանաները փողերը հնչեց-
րին, Յեսուն ժողովրդին ասաց.
Աղաղակեցէք. վասն զի Տէրը
17 այս քաղաքը ձեզ է տուել: Եւ
քաղաքը և բոլոր նորանում ե-
ղածը Տիրոջ համար նզովուած
լինի, միայն Ռախաբ պոռնիկը
ողջ մնայ. ինքը և իր հետ իր
տան մէջ բոլոր եղողները, քան
որում մեր ուղարկած լրտեանե-
18 րին թաքցրեց: Բայց դուք զգու-
շանաք նզովուածից. մի գուցէ
որ նզովէք, և նզովուածից առ-
նէք, և Իսրայէլի բանակը նզով-
քի մէջ գցելով նորանց փորձան-
19 քի հանդիպեցնէք: Եւ բոլոր ար-
ծաթն ու ոսկին և պղնձի ու եր-
կաթի ամանները Տիրոջ հա-
մար սուրբ լինին. Տիրոջ գան-
ձը մտնեն:

Եւ ժողովուրդը աղաղակեց, 20
որ փողերը հնչում էին. և երբ
որ ժողովուրդը փողերի ձայնը լը-
սեց, և ժողովուրդը բարձրաձայն
աղաղակեց, պարիսպները վայր
ընկան. և ժողովուրդը վեր ելաւ
քաղաքը ամեն մէկը ուղիղ իր
առջև և քաղաքն առին. Եւ քա- 21
քաղաքումը եղող բոլոր թէ այր
և թէ կին, երիտասարդ և ծեր,
արջառ, ոչխար և էշ սուրի բե-
րանով նզովեցին: Եւ Յեսուն ա- 22
սաց այն երկիրը լրտեսող երկու
մարդկանց. Գնացէք այն պոռնիկ
կնոջ տունը և հանեցէք այնտե-
ղից այն կնոջը և նորա ամեն ու-
նեցածը, ինչպէս որ նորան եր-
դում արիք: Եւ այն լրտես երի- 23
տասարդները գնացին, և հանե-
ցին Ռախաբին և նորա հօրը և
մօրը և եղբայրներին և նորա ա-
մեն ունեցածը, և նորա բոլոր
ազգատոհմն էլ հանեցին. և նո-
րանց կանգնեցրին Իսրայէլի բա-
նակից դուրս: Եւ քաղաքն այ- 24
րեցին կրակով և բոլոր նորա մէջ
եղածը միայն արծաթն ու ոսկին
և պղնձի ու երկաթի ամանները
Տիրոջ տան գանձի մէջ դրին:
Այսպէս Յեսուն ողջ պահեց Ռա- 25
խաբ պոռնկին և նորա հօր տունը
և նորա ամեն ունեցածը, և նա
Իսրայէլի մէջ բնակեց մինչև այս
օր. վասն զի նա թաքցրեց այն
լրտեսներին, որոնց Յեսուն ու-
ղարկել էր Երիքովը լրտեսելու
համար:

Եւ Յեսուն երդում արաւ այն 26
ժամանակ ասելով. Անիծեալ լի-
նի Տիրոջ առջև այն մարդը,
որ վեր կենայ շինէ այս Երիքով
քաղաքը. իր անդրանիկովը նորա
հիմերը դնէ, և իր կրտսերովը նո-
րա դռներն կանգնեցնէ: Եւ Տէ- 27
րը Յեսուին հետ էր. և նորա
համբաւը տարածուեցաւ բոլոր
երկրի մէջ:

ԳԼ. Է

Բայց Իսրայէլի որդիքը յանցանք 1
գործեցին նզովքի վերայ. վասն
զի Յուդայի ցեղից Զարայէլ որ-

դու Զարդիի որդու Քաղմիի որդին Աքարը նզովածին առաւ. և Տիրոջ բարկութիւնը բորբոքեց Իսրայէլի որդւոցանց վերայ։

2 Եւ Յեսուն Երիքովիցը մարդիկ ուղարկեց դէպի Գայի, որ Բեթաւանի մօտ է Բեթէլի արեւելեան կողմին, և ասաց նոցանից. Թէ, Վեր եկէք և այն երկիրը լրտեսեցէք. և այն մարդիկը վեր 3 եկան և Գային լրտեսեցին։ Եւ եկան դարձան Յեսուի մօտ և ասացին նորան. Բոլոր ժողովուրդը վեր չելնէ. դո՜ն երկու կամ երեք հազար մարդու չափ վեր ելնեն, և Գային կ'զարկեն. բոլոր ժողովրդին մի աշխատեցնիր այնտեղ տանելով, վասն զի նորանք 4 քիչ են։ Եւ ժողովրդիցը երեք հազարի չափ մարդ վեր եկան այնտեղ. բայց Գայիի մարդկանց 5 առջևիցը փախան։ Եւ Գայիի մարդիկը նորանցից երեսունուվեց մարդու չափ զարկեցին, և նորանց հալածեցին դրան առջևից մինչև Սեբարիմ և գառիվայրի վերայ նորանց զարկեցին. և ժողովրդի սիրտը հալուեցաւ և ջուր դարձաւ։

6 Եւ Յեսուն իր հանդերձները պատռեց Տիրոջ տապանակի առջև և երեսի վերայ վայր ընկաւ գետնին մինչև իրիկուն, ինքը և Իսրայէլի ծերերը, և իրանց 7 գլխի վերայ հող ցանեցին։ Եւ Յեսուն ասաց. Ո՜հ, Տէր Եհովայ, ինչո՞ւ համար այս ժողովուրդը Յորդանանի այս կողմին անցկացրիր, որ մեզ Ամորհացոց ձեռքը մատնես, և մեզ կորցնես. երանի թէ Յորդանանի այն կողմին 8 գոհ լինելով մնայինք։ Աղաչում եմ Տէր, ես ի՞նչ ասեմ՝ Իսրայէլն իր թշնամիների առջև մէջք 9 դարձնելուց յետոյ։ Որովհետև Քանանացիները և երկրի բոլոր բնակիչները լսելով մեզ կ'պաշարեն, և մեր անունը երկրիս վրայից բոլորովին կ'կտրեն. այն ժամանակ ի՞նչ պիտի անես քո մեծ անունը։

10 Եւ Տէրը Յեսուին ասաց. Վեր կաց ինչո՞ւ համար այսպէս ե- բևիդ վերայ ես ընկել։ Իսրա- 11
յէլը մեղք գործեց և զանց արին իմ ուխտը որ պատուիրեցի նոցանց, վասն զի վեր են առել նզովածիցը, և գողացել են, և սուտ են խօսել, ու նաև իրանց կարասիքներում են դրել։ Եւ 12
Իսրայէլի որդիքը չեն կարող իրանց թշնամիների առջև կանգնել իրանց թշնամիների առջև մէջք կ'դարձնեն, որովհետև նզովք են եղել. և այլ ևս ձեզ հետ չեմ լինիլ, եթէ դուք նզովածը ձեր միջիցը բնաջինջ չանէք։ Վեր կաց ժողովրդին 13
սրբիր և ասիր. Էգուցուայ համար սրբուեցէք. վասն զի Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս է ասում. Ով Իսրայէլ ձեր մէջ նզովք կայ. չես կարող կանգնել քո թշնամիների առջև, մինչև որ նզովքը ձեր միջիցը վեր չառնէք։ Եւ առաւօտանց ձեր ցե- 14
ղերովը մօտեցէք, և Տէրը որ ցեղը որ վիճակով բռնելու լինի, նա մօտենայ իր ազգատոհմերովը. և Տէրը որ ազգատոհմը որ բռնելու լինի, նա մօտենայ իր տուներովը, և Տէրը որ տունը որ բռնելու լինի, նա մօտենայ իր մարդիկներովը։ Եւ ով 15
որ նզովքով բռնուի, կրակով պիտի այրուի, ինքը և իր ամեն ունեցածը. վասն զի Եհովայի ուխտը զանց արաւ և Իսրայէլի մէջ անպատմութիւն գործեց։

Եւ Յեսուն առաւօտանց կա- 16
նուխ վեր կացաւ, և Իսրայէլին մօտեցրեց իր ցեղերովը. և Յու- 17
դայի ցեղը բռնուեցաւ։ Եւ Յուդայի ազգատոհմերը մօտեցրեց, Զարայեանց ազգատոհմը բռնուեցաւ. և Զարայեանց տոհմն իր մարդիկներովը մօտեցրեց, և Զաբդին բռնուեցաւ. Եւ նորա տունն 18
իր մարդիկներովը մօտեցրեց, Յուդայի ցեղից Զարայի որդու Զաբդիի որդու Քարմիի որդին Աքարը բռնուեցաւ։ Եւ Յեսուն Ա- 19
քարին ասաց. Որդիս, հիմա Իսրայէլի Տէր Աստուծոյն փառք տուր, և նորան խոստովանիր, և քո արածը հիմա ինձ յայտնիր,

20 ինձանից մի ծածկիր։ Եւ Աքարը պատասխանեց Յեսուին և ասաց. Ճշմարիտ՝ ես Իսրայէլի Տէր Աստուծոյ դէմ մեղք գործեցի, և 21 այսպէս ու այսպէս արի. Աւսինքն աւարի մէջ մէկ լաւ Սենէարի վերարկու, և երկու հարիւր սիկղ արծաթ, և չիսուն սիկղի ծանրութեամբ մէկ ոսկի լեզու տեսայ, և նորանց ցանկանալով առի. և ահա նորանք իմ վրանի մէջ հողումը թաքցրուած են, և արծաթը նորա տակին է։ 22 Եւ Յեսուն լրաբերներ ուղարկեց. և նորանք վազեցին վրանը. և ահա վրանի մէջ պահուած էր այն, 23 և արծաթը նորա տակին էր։ Եւ նորանք վեր առին վրանի միջից և բերին Յեսուի և բոլոր Իսրայէլի որդիանց մօտ, և Տիրոջ առջև դրին նորանց։

24 Եւ Յեսուն առաւ Զարայեան Աքարին և այն արծաթը և վերարկուն և ոսկի լեզուն և նորա տղայոցը, աղջկերանցը, նորա արջառները, էշերը, ոչխարները, վրանը և նորա ամեն բանը, և բոլոր Իսրայէլը նորա հետ և նորանց Աքորի ձորը հանեցին։ 25 Եւ Յեսուն ասաց. Ինչո՞ւ համար դու մեզ փորձանքի մէջ գցեցիր. Տէրը այսօր քեզ փորձանքի մէջ գցէ. և բոլոր Իսրայէլը նորան քարերով քարկոծեցին և նորանց քարերով քարկոծելուց յետոյ կրակով այրեցին։ 26 Եւ նորա վերայ մէկ մեծ քարակոյտ դիզեցին, որ կայ մինչև այս օրը։ Եւ Տէրը իր սաստիկ բարկութիւնից դադարեց. այս պատճառով այն տեղի անունը Աքորի ձոր անուանեցաւ մինչև այս օրը։

ԳԼ. Ը

1 Եւ Տէրը Յեսուին ասաց. մի վախենար և մի զարհուրիր. առ բոլոր պատերազմող մարդկանց քեզ հետ և վեր կաց երիր դէպի Գայի. ահա Գայիի թագաւորը և նորա ժողովուրդը և նորա քաղաքը և նորա երկիրը քո ձեռքը տուի։ Եւ 2 Գայիին և նորա թագաւորին այնպէս անես ինչպէս որ արիր Երիքովին և նորա թագաւորին, միայն թէ նորա աւարը և անասուններըը ձեզ համար առնէք։ Դաղտաբի եռևի կողմից դարան- 3 ներ պատրաստես։ Եւ Յեսուն և բոլոր պատերազմող մարդիկը վեր կացին, որ Գայիի վերայ գնան, և Յեսուն երեսուն հազար զօրաւոր մարդ ընտրեց, և գիշերով ուղարկեց նորանց։ Եւ նորանց 4 պատուիրեց ասելով. Նայեցէք դուք քաղաքի եռևից այն քաղաքի համար դարանում պիտի նստէք. քաղաքից շատ մի հեռանաք, և ամենքդ պատրաստ կացէք. Եւ ես և իմ հետ եղող 5 բոլոր ժողովուրդը քաղաքին կը մօտենանք. և երբոր նորանք առաջի անգամի պէս մեզ դէմ դուրս գան, նորանց առջևից պիտի փախչենք. Եւ նորանք մեր 6 եռևից դուրս կ'գան, մինչև որ նորանց քաղաքից բաժանենք. որովհետև նորանք ասելու են. թէ Մեր առջևից փախչում են առաջի անգամի պէս. և մենք նորանց առջևից փախչելու ենք։ Բայց դուք դարանից դուրս ե- 7 կէք և քաղաքն առէք, վասն զի ձեր Տէր Աստուածը նորան ձեր ձեռքը կ'տայ։ Եւ երբոր քաղա- 8 քը առնէք, քաղաքը կրակով այրէք. Տիրոջ ասածին պէս անէք. ահա ձեզ պատուիրեցի։ Եւ Յե- 9 սուն նորանց ուղարկեց, և նորանք գնացին դարանում նստեցին Բեթէլի և Գայիի միջտեղը, Գայիի արևմտեան կողմից. և Յեսուն այն գիշերը ժողովրդի մէջ մնաց։

Եւ Յեսուն առաւօտեան կա- 10 նուխ վեր կացաւ և ժողովրդին հանդէս արաւ, և ինքն Իսրայէլի ծերերի հետ ժողովրդի առջևից դէպի Գայի գնաց. Եւ իր հետ 11 եղող բոլոր պատերազմական մարդիկն էլ վեր կացին և մօտենալով գնացին քաղաքի առջևը և բանակեցան Գայիի հիւսիսային կողմումը. և նորանց ու Գայիի միջտեղը ձոր կար։ Եւ հինգ 12 հազարի չափ մարդ առաւ, և

նորանց գործն ի՛ նոսանցմէ
Ներհակ և Աստուծոյ՝ քա-
13 զաքն սպանանեն կոգնէին։ Եւ
ձագանքդ քոյդ քաղաքին
կոգնէին գրեթէ բոլոր բանակդ, և
գործոյդ քոյդով սպանանեն կոգ-
նէին, և Քեռուն այն գիշեր Հոգի
ինչ գնաց։
14 Եւ երբոր Աստուծոյ գործ
այս տեսաւ, յաւուտ կանուխ վեր
կացաւ և գաւթ եղաւ, այլ քա-
զաքն ի գործոյդ ինչ ի ներքս
մտաւ և ի ներքս եղաւ ուրուք
ձագանքդ ոչ ոք ունկնդրեաց։
15 Եւ Աստուծոյ գործ ի ներքս
ի Քեռուն ոչ մտաւ, այլ Քեռուն
դարձաւ ի ներքս ի տունդ իւր
և ի ներքս եղաւ ի տունդ իւր
16 ի վերուստ։ Եւ գործոյդ ինչ
քոյդ ձագանքդ ձագանքեցաւ,
այլ Հոգի ինչ քաղաքին ի ներքս
17 մտաւ։ Եւ Աստուծոյ ոչ
Քեռուն մտաւ ի ներքս, այլ Աս-
տուծոյ ինչ կնոջն չգիտէր, և գա-
զար ինչ ի ներքս ի տունդ ինչ
ի վերուստ չեղեն։
18 Եւ Ելաւ Քեռուն առաւ, Ան-
կոյ ներհակ ինչ ինչ ի կամ Աստ-
ուծոյ այն, և Քեռուն Անկոյն
19 ինչ ի կամ գործոյդ։ Եւ գա-
տուանակոյներն չտաւ ներհակ ան-
գոյդ ինչ կոգնէին, և Հնդոյ այ ներ
ի Անկոյ ինչ ինչ կոյ, գործոյդ
ինչ ի ներքս ինչ և ոչ ներհակ
գործոյդ ինչ կոյ ինչ գործոյդ ինչ
և չտաւ գործոյդ կոյնով գա-
20 ինչ։ Եւ Աստուծոյ գործոյդ
ի կամ կոյ գործոյդ և ինչ,
այ ոչ գործոյդ ձագանքդ ինչ
ի ներքս ինչ ի վերուստ ինչ կոյ,
և ոչ գործոյդ ձագանքդ ինչ
21 Եւ Քեռուն և գործոյդ ներհակ կոյ-
այ ինչ, այ գործոյդ ինչ
գործոյդ ոչ ինչ, և այ գործոյդ
ձագանքդ ինչ կոյ, իրոյդ և
ևս գործոյդ և Աստուծոյ ձագանքդ
22 գործոյդ։ Եւ ներհակ և գա-

գործոյդ գործոյդ ինչ գործ և-
կոյ, և ներհակ ինչ գործ գա-
կոյ և ներհակ ինչ գործոյդ ինչ
այ կոյնով և ներհակ
այ կոյնով, և ներհակ գործոյդ
ինչ ինչ ինչ գործոյդ ինչ
ինչ գործոյդ ինչ ինչ ինչ
ինչ ինչ գործոյդ ինչ ինչ ինչ
ինչ ինչ ինչ ինչ ինչ ինչ
ինչ ինչ ինչ ինչ ինչ ինչ
ինչ ինչ ինչ

33 բեց։ Եւ բոլոր խորշերը եւ նո-
րանց ձերբերը եւ սահմանները եւ
գաւառները կանգնել էին սա-
մարեայ այն եւ այն կողմից Յերով
ափամբ սապատակը մեր առաջ։
Վասպի քաղաքները ամէն, մի
մի սապատակը եւ մի մի բնա-
կը, կէսը Վարխանի բնակա կող-
մին եւ կէսը Վերայ բնակա կող-
մին հինէ ի Յերով գաւառ Ամա-
ղու Վահեւնի սպասաւորեցաւ ըս-
նել, եւ ապրանից գնաց կողմն
Վասպի քաղաքի մեր առաջ։
Վասպի քաղաքացիքն ամէն
բնաւ մի խոր չկային, որ Յեսուի
չկարողաց խորշի բոլոր ձորե-
րը ամէն եւ կանանց եւ ապրոց
եւ նորանց մէջ գնացող առաքե-
լեան ամէն։

ԳԼՈՒԽ Ը

1 Եւ երբոր Արդամանի որդի
բոլոր հաղատարքերը, արեւ բե-
ռան վերայ գաշտի վերայ եւ ան-
ծոլի բոլոր եղերքում մինչեւ Լե-
բանանի գէմ Յեռամ էին, որքեր
գրեր Յեսուէից, Ամորհացից, Քա-
նանացիք, Փերեզացիք, Խեւացիք
2 ու Յերոսացիք լսեցին, Միասու-
նաբերան ժողովեցան, որ Յե-
սուէի եւ Իսրայէլի դէմ պատե-
րազմին։
3 Բայց Գաբաոնի բնակիչները
լսեցին ինչ որ Յեսուէ Երիքովին
4 ու Այիին արել էր, ու իրանք
էլ խորամանկութիւն բանեցրին,
գնացին պատրիկներ պատրաստե-
ցին, ու իրանց էշերի վերայ հին
քուրձներ ու հին պատռատած ու
կապկապատած գինու տիկեր դրին,
5 ու իրանց ոտներին հնացած ու
կարկատած կօշիկներ, ու հին շո-
րեր իրանց վերայ տէր, ու նո-
րանց պատրաստ բոլոր հացը չոր-
6 ցած բորբոսած էր. ու գնացին
բանակը՝ Յեսուէ մօտ Գողգո-
պատ՝ ու ասացին նորան ու Իս-
րայէլի մարդկանցը. Մենք հեռա-
երկրից ենք գալու, ուստի հիմա
ձեզ հետ պայման դրէք։ Ամո- 7
րհացի խորշի մարդիկն ասին
Եւեւացիներին. Գուցէ դուք մեր
մէջ բնակող էք, ու Ձեզ հետ ինչպէս պայման դնենք։ Յեսուէ 8
Եւեւացիներին ասացին. Մենք ձեր ծառաներն ենք. ու Յե-
սուէ նորանց ասաց. Դուք ո՞վ
էք ու որտեղից էք գալու։ Ու 9
նորան ասացին. Ձեր ծառաները
շատ հեռու երկրից ենք գալու
Տեառն Աստուծոյ անունի
համար, ըստի որ նորա համբաւը
ու նորան ամէն ինչ որ նա Եգիպտոսի մէջ բոլոր արա-
րութիւնները արաւ, եւ ամէն 10
որ արաւ Յորդանանի այն կողմին
Ամորհացոց երկու թագաւորներին՝ Եսեբոնի Սեհոն թագաւորին
եւ Աստարովթում Բասանի Ովգ
թագաւորին. Ու մեր ծերերը ու 11
մեր երկրի բոլոր բնակիչները մեզ
ասացին, եմ Ձեր ձեռքը Ճանա-
պարհի համար պատրաստեցէք, եւ
գնացէք նորանց առաջ, ու նո-
րանց ասացէք. Մենք ձեր ծառա-
ներն ենք հիմա մեզ հետ պայման
դրէք։ Այս մեր հացերը տաք է- 12
ին, որ իրեն պատրաստ մեր տներից մեր անելից այն օրը որ դուրս
էինք ձեզ մօտ գալու, ու մեր
հիմա նորանք չորացած ու բորբո-
սած են։ Ու սրա պէս տիկերը 13
նոր էին, երբոր լցրինք, բայց ա-
հա պատռատած են, ու մեր
այս հագուստները ու կօշիկները
Յեսուէ շատ երկարութեան
համար հիմայ։ Ու մարդիկը 14
մեր ուտելի նորանցից այն պատրաստ
պատճառով, ու Տիրոջը չհարցրին։
Ու Յեսուէ նորանց հետ խաղա- 15
ղութիւն դրաւ, ու նորանց մեռ-
նելուց որ նորանց ապրելիք, ու ժո-
ղովրդի իշխանները էլ երդում ե-
ղան նորանց։
Ու նորանց հետ պայման դնե- 16
լուց երեք օր յետոյ լսեցին, որ
նորանք իրանց դրացիներն են, ու
իրանց մէջ են բնակում։ Ու Իս- 17
րայէլի որդիքը չուեցին ու երրորդ
օրը նորանց քաղաքներն եկան,
ու նորանց քաղաքներն էին՝ Գա-
բաոն, Քեփիրա, Բերոթի ու Կի-
րիաթարիմ։ Ու Իսրայէլի որդիքը 18

նորանց չզարկեցին, վասն զի ժողովքի իշխանները Իսրայէլի Տէր Աստուածովը նորանց երդում էին արել. բայց բոլոր ժողովքը իշխաններուն դէմ տրտնջեցին։
19 Եւ ամեն իշխանները բոլոր ժողովքին ասացին. Մենք Իսրայէլի Տէր Աստուածովը նորանց երդում արինք, և հիմա չենք կարող նորանց դպչել։
20 Նորանց այսպէս անենք՝ այսինքն նորանց ողջ թողնենք, որ մեզ վերայ բարկութիւն չգայ այն երդումի համար որ մենք
21 արինք նորանց։ Եւ իշխաններն ասացին նորանց. Թող ողջ մնան, բայց բոլոր ժողովքի համար փայտ կտրողներ և ջրկիրներ լինեն. և ելան՝ ինչպէս որ իշխաններն ասացին նորանց։
22 Եւ Յեսուն նորանց կանչեց, և նորանց հետ խօսեց ասելով. Ինչո՞ւ համար մեզ խաբեցիք և ասացիք. Թէ Զեզանից շատ հեռու ենք. իսկ դուք մեր մէջ էք բը-
23 նակում. Եւ հիմա դուք անիծեալ էք, և ձեզանից փայտ կըտրող և ջրկիր ծառայ չպակսէ
24 իմ Աստուծոյ տանը։ Եւ նորանք Յեսուին պատասխանեցին և ասացին. Որովհետև քո ծառաները աւուրձիւ իմացան, որ քո Տէր Աստուածը իր ծառայ Մովսէսին հրամայել է այս բոլոր երկիրը ձեզ տալու, և այս երկրի բոլոր բնակիչներին ձեր առջևից բնաջինջ անելու, ուստի մենք ձեր պատճառովը մեր անձերի համար շատ վախեցինք և այս բանս ա-
25 րինք։ Եւ ահա հիմա քո ձեռքին ենք. ինչ որ հաճոյ և արդար երևնայ, այն արա մեզ։ Եւ
26 նորանց այնպէս արաւ, և նորանց Իսրայէլի որդիանց ձեռքից ա-
27 զատեց, և նորանց չմեռցրին։ Եւ Յեսուն նոյն օրը փայտ կտորող և ջրկիր արաւ նորանց ժողովքի և Տէրոջ սեղանի համար մինչև այս օրը այն տեղում, որ նա կ՚ընտրէ։

ԳԼ. Ժ

1 Եւ երբոր Երուսաղէմի Ադոնի-
սեդեկ թագաւորը լսեց, թէ Յեսուն գրաւեց առաւ և նորան բոլորովին կործանեց, այնպէս որ Երիքովին և նորա թագաւորին էր արել, այնպէս էլ Գայիին և նորա թագաւորին արաւ, և թէ Գաբաւոնի բնակիչները Իսրայէլացոց հետ հաշտութիւն արին և նորանց մէջ մնացին, Շատ վախեցան, վասն զի 2
Գաբաւոն մեծ քաղաք էր՝ թագաւորանիստ քաղաքներից մէկին պէս, և նա Գայիից մեծ էր, և նորա բոլոր մարդիկը զօրաւոր էին։ Սորա համար Երուսաղէմի 3
Ադոնիսեդեկ թագաւորը մարդ ուղարկեց Քերրոնի Հոհամ թագաւորին, Յերիմութի Փիրամ թագաւորին, և Լաքիսի Յարիէ թագաւորին, և Էգղոնի Դաբիր թագաւորին, ասելով. Վեր ելէք 4
ինձ մօտ և ինձ օգնեցէք, որ Գաբաւոնը զարկենք. վասն զի Յեսուի հետ և Իսրայէլի որդիանց հետ հաշտութիւն արաւ։ Եւ 5
Ամորհացոց հինգ թագաւորները՝ Երուսաղէմի թագաւորը, Քերրոնի թագաւորը, Յերիմութի թագաւորը, Լաքիսի թագաւորը և Էգղոնի թագաւորը ժողովուեցան իրանք և իրանց բոլոր բանակները և վեր ելան, և Գաբաւոնի մօտ բանակ առին և նորա դէմ պատերազմ արին։
Եւ Գաբաւոնի բնակիչները Յե- 6
սուի մօտ մարդ ուղարկեցին Գաղգաղայի բանակը, ասելով. Քո ձեռքը հետ մի քաշիր քո ծառաներիցը, շուտով մեզ մօտ վեր ելիր և մեզ ազատիր ու մեզ օգնիր. վասն զի մեր վերայ են ժողովել Ամորհացոց բոլոր լեռնական թագաւորները։ Եւ 7
Յեսուն վեր ելաւ Գաղգաղայից ինքը և իր հետ բոլոր պատերազմական մարդիկը և զօրքի բոլոր զօրաւորները։ Եւ Տէրը Յեսուին ասաց. 8
Նորանցից մի վախենար, վասն զի նորանց քո ձեռքն եմ տուել. նորանցից ոչ մէկը պիտի չկանգնէ քո առջև։ Եւ Յեսուն Գաղ- 9
գաղայից բոլոր գիշերը վեր գնաւել յանկարծակի նորանց վերայ

10 հասաւ։ Եւ Տէրը խռովեցրեց Նո-
րանց Իսրայէլի առջև, և Նորանց
Գաբաւոնի դէպ մեծ կոտորածով
կոտրեց, և Նորանց հալածեց Բե-
թհորոն վեր ելլելու ճանապարհո-
վը, և Նորանց մինչև Ազեկա ու
11 Մակեդա զարկեց։ Եւ երբոր Նո-
րանք Իսրայէլի առջևից փախ-
չում էին. և Բեթհորոնիցը վայր
էին իջնում, Տէրը Նորանց վերայ
երկնքիցը խոշոր մեծ քարեր գցեց
մինչև Ազեկա, և մեռան. կոր-
կոտ քարերիցը մեռնողները աւե-
լի շատ էին Իսրայէլի որդկանց
12 սրով մեռցրածներից։ Այն ժա-
մանակ Յեսուն Տիրոջ հետ խօսեց
այն օրը, որ Տէրը Ամօրհացինե-
րին Իսրայէլի որդկանց ձեռքը
տուաւ, և Իսրայէլի առջև ա-
սաց. Արեգակ, Գաբաւոնում
կանգնիր, և, Լուսին, Այեղո-
13 նի ձորում կանգնիր։ Եւ արեգա-
կը կանգնեց, և լուսինը իր տեղը
Ջնաց, մինչև որ ժողովուրդը իր
թշնամիներիցը վրէժ առաւ։ Մի՞-
թէ սա Ուղիղի գրքումը գրուած
չէ՞. և արեգակը երկնից մէջտեղը
կանգնեց և չշտապեց մինելու մէկ
14 կատարեալ օրի չափ։ Նորա պէս
օր չեղաւ՝ ոչ առաջ և ոչ յետոյ, որ Տէրը մարդու ձայնին լը-
սեց. վասն զի Տէրը պատերազմեց
Իսրայէլի համար։
15 Եւ Յեսուն և Նորա հետ բոլոր
Իսրայէլը ետ դարձան բանակը
16 Գաղգաղա։ Եւ հինգ թագաւոր-
ները փախան, և Մակեդումը այ-
17 րին մէջ թաք կացան։ Եւ Յե-
սուին պատմուեցաւ ասելով. Այն
հինգ թագաւորները գտնուել են
Մակեդումը այրի մէջ թաք կա-
18 ցած։ Եւ Յեսուն ասաց. Այրի
բերանին մեծ քարեր գլորեցէք,
և Նորա վերայ մարդիկ նշանա-
կեցէք, որ Նորանց պահպանեն։
19 Բայց դուք մի կանգնէք, հալա-
ծեցէք ձեր թշնամիներին և զար-
կեցէք Նորանց ետևիններին, և
Նորանց թող մի տաք որ իրանց
քաղաքները մտնեն. վասն զի ձեր
Տէր Աստուածը Նորանց ձեր ձեռ-
20 քը մատնեց։ Եւ երբոր Յեսուն
Իսրայէլի որդկանց հետ Նորանց
շատ մեծ կոտորածով կոտրեց,
մինչև որ Նորանց ապառեցրեց վեր-
ջացրեց, և Նորանց փախստական-
ները պարսպաւոր քաղաքների մէջ
մտան. Եւ բոլոր ժողովուրդը խա- 21
ղաղութեամբ ետ դարձան Յեսուի
մօտ բանակը Մակեդա Իսրայէլի
որդկանց դէմ բնաւ մէկին իր լե-
զուն չարեց։

Եւ Յեսուն ասաց. Այրի բե- 22
րանը բացէք, և Հանեցէք բերէք
ինձ մօտ այրիցը այն հինգ թա-
գաւորներին։ Եւ այնպէս արին, 23
և այրիցն այն հինգ թագաւորնե-
րին՝ այսինքն Երուսաղեմի թա-
գաւորին, Քեբրոնի թագաւորին,
Յերուսմութի թագաւորին, Լա-
քիսի թագաւորին և Եգղոնի
թագաւորին Հանեցին Նորա մօտ
դուրն։ Եւ երբոր այս թագաւոր- 24
ները Յեսուի մօտ Հանեցին, Յե-
սուն Իսրայէլի բոլոր մարդկանցը
կանչեց, և իր հետ պատերազմո-
ղաց գլխաւորներին ասաց. Մո-
տեցէք ձեր ոտքերը այս թագա-
ւորների պարանոցների վերայ դը-
րէք, և Նորանք մօտեցան ու ի-
րանց ոտքերը Նորանց պարանոց-
ների վերայ դրին։ Եւ Յեսուն ա- 25
սաց Նորանց. Մի վախենաք և մի
զարհուրէք, ուժովացէք և քաջ
եղէք. վասն զի Տէրը այսպէս կ'ա-
նէ ձեր ամեն թշնամիներին, ո-
րանց հետ դուք պատերազմէք։
Եւ սորանից յետոյ Յեսուն Նո- 26
րանց զարկեց մեռցրեց, և Նորանց
հինգ ծառից կախեց, և ծառերի
վերայ մինչև իրիկուն կախուած
մնացին։ Եւ արեգակը մտնելու 27
ժամանակին Յեսուն հրամայեց,
և Նորանց վայր բերին ծառերի
վերայից, և Նորանց գցեցին այն
այրի մէջ ուր որ թաք էին կա-
ցել, և այրի բերանին մեծ քա-
րեր դրին, որ մինչև այսօր կան։

Եւ Յեսուն նոյն օրը Մակեդան 28
էլ առաւ. և սուրի բերանով
զարկեց Նորան, և Նորա թագա-
ւորին և Նորա մէջ գտնուած բո-
լոր հոգիներին նզովեց. և մէկին
ողջ չթողեց. և Մակեդայի թա-
գաւորին էլ այնպէս արաւ ինչպէս
որ Երիքովի թագաւորին էր արել։

29 Եւ Յեսուն և իր հետ բոլոր Իսրայէլը Մակեդայից անցան Լիբնա, և Լիբնայի հետ պատերազմեցին. 30 Տէրը նորանց էլ մատնեց նորա թագաւորովը Իսրայէլի ձեռքը, և նորան և նորա մէջ գտնուած բոլոր հոգիներին սուրի բերանով զարկեց, և մէկին ողջ չթողեց. և նորա թագաւորին այնպէս արաւ ինչպէս որ Երիքովի թագաւորին էր արել:
31 Եւ Յեսուն և իր հետ բոլոր Իսրայէլը Լիբնայից անցան Լաքիս, և նորա դէմ բանակելով 32 նորա հետ պատերազմեցին: Եւ Տէրը Լաքիսը Իսրայէլի ձեռքը մատնեց, և երկրորդ օրը նորան առաւ և նորան ու նորա մէջ գտնուած բոլոր հոգիներին սուրի բերանով զարկեց բոլորովին ինչպէս որ Լիբնային էին արել:
33 Ա՛յն ժամանակ վեր ելաւ Գազերի Հօրամ թագաւորը Լաքիսին օգնելու. և Յեսուն նորան և նորա ժողովրդին կոտրեց այնպէս որ նորանցից մէկը ողջ չմնաց:
34 Եւ Յեսուն և իր հետ բոլոր Իսրայէլը Լաքիսից անցան Եգղոն և նորա մօտ բանակելով նորա 35 դէմ պատերազմեցին. Եւ նոյն օրը նորան առաւ և սուրի բերանով զարկեց, և նոյն օրը նորա մէջ գտնուած բոլոր հոգիներին նզովեց բոլորովին ինչպէս որ Լաքիսին էր արել:
36 Եւ Յեսուն և իր հետ բոլոր Իսրայէլը Եգղոնից վեր ելան Քեբրան, և նորա դէմ պատերազմեցին. 37 Եւ նորան առին և սուրի բերանով զարկեցին նորան և նորա թագաւորին և նորա բոլոր քաղաքներին և նորա մէջ գտնուած բոլոր հոգիներին, և մէկին ողջ չթողեցին, բոլորովին ինչպէս որ Եգղոնին էին արել և նորան ու նորա մէջ գտնուած բոլոր հոգիներին նզովեց:
38 Եւ Յեսուն և իր հետ բոլոր Իսրայէլը Եբրան դարձան Դաբիր, և 39 նորա հետ պատերազմեցին: Եւ առին նորան և նորա թագաւորին և նորանց բոլոր քաղաքները և նորանց սուրի բերանով զարկեցին. և նորա մէջ գտնուած բոլոր հոգիները նզովեցին. և նորա մէկը ողջ չթողեցին. ինչպէս որ Քեբրոնին էր արել, այնպէս էլ Դաբիրին և նորա թագաւորին ու նորա ինչպէս որ Լիբնային և նորա թագաւորին էր արել:
40 Եւ Յեսուն զարկեց բոլոր լեռնային, Հարաւային, դաշտային երկիրները և լեռներուն ստորոտները և նորանց բոլոր թագաւորներին զարկեց, և մէկին ողջ չթողեց, այլ ամեն շնչաւորին մեռցրեց, ինչպէս որ Իսրայէլի Աստուածը Եհովան պատուիրել էր: 41 Եւ Յեսուն զարկեց նորանց Կադէս-Բառնեայից մինչև Գազա և բոլոր Գոսեմի երկիրը մինչև Գաբաւոն: 42 Եւ այս բոլոր թագաւորներին և նորանց երկիրը Յեսուն առաւ մէկ անգամուն. վասն զի Իսրայէլի համար Իսրայէլի Աստուածը Եհովան էր պատերազմ անում: 43 Եւ Յեսուն ու իր հետ բոլոր Իսրայէլը դարձան բանակը Գաղգաղա:

ԳԼ. ԺԱ

1 Եւ երբոր Հասորի Յաբին թագաւորը լսեց, մարդ ուղարկեց Մադոնի Յոբաբ թագաւորի մօտ և Սամրոնի թագաւորի մօտ և Աքսափի թագաւորի մօտ, 2 և այն թագաւորներին մօտ որ հիւսիսային լեռներուն մէջ և Քինէրեթի հարաւային դաշտուն ու հովիտներուն արևմտեան կողմում Նափօթ Դորի մէջ էին, 3 Քանանացիների և արևելեան և արևմտեան Ամորհացիների, Քետացիներուն, Փերեզացիներուն և լեռնային Յեբուսացիներուն մօտ, և Հերմոնի տակ Մասփայի երկրում եղող Խևացիներուն մօտ: 4 Նորանք դուրս եկան իրանց բոլոր բանակներովը՝ շատ ժողովրդով ելան ծովի եզերքին եղող աւազին չափ բազմութիւն, և խիստ շատ ձիեր և կառքեր: 5 Եւ այս բոլոր թագաւորները միանալով գնացին բանակեցան Մաւօնի Ջրի մօտ Իսրայէլի հետ պատերազմելու:

6 Եւ Տէրը Յեսուին ասաց. Նո-
րանց երեսից մի վախեներ, վասն
զի եղուց այս ժամանակին ես նո-
րանց ամենը Իսրայէլի առջև կը
տամ ջարդուած. նորանց ձիերը
ջլատես և նորանց կառքերը կրա-
7 կով այրես։ Եւ Յեսուն և իր
հետ բոլոր պատերազմական ժո-
ղովուրդը յանկարծակի Մաւօնի
ջրի մօտ նորանց դէմ գնացին և
նորանց վերայ յարձակուեցան։
8 Եւ Տէրը նորանց Իսրայէլի ձեռ-
քը տուաւ և նորանք զարկեցին
նորանց, և հալածեցին նորանց
մինչև մեծ Սիդոն և Մասրեփոթ-
մայիմ, և մինչև Մասփայի հո-
վիտը դէպի արևելք, և նորանց
զարկեցին մինչև որ նորանցից մէ-
9 կը չապաւորուեցաւ։ Եւ Յեսուն
նորանց այնպէս արաւ ինչպէս
Տէրն իրան ասել էր. նորանց ձի-
երը ջլատեց և նորանց կառքերը
կրակով այրեց։
10 Եւ Յեսուն այն ժամանակ ետ
դարձաւ, Հասորն առաւ և նորա
թագաւորին սրով մեռցրեց, վա-
սն զի Հասորն առաջուց այս բո-
լոր թագաւորութիւնների գլուխն
11 էր. Եւ նորա մէջ գտնուած բո-
լոր հոգիներին սուրի բերանով
զարկեցին նզովեցին. ոչ մէկ չըն-
չաւոր չմնաց. և Հասորը կրակով
12 այրեց։ Եւ այս թագաւորների
բոլոր քաղաքները և նորանց բո-
լոր թագաւորներին առաւ և նո-
րանց սուրի բերանով զարկելով
նզովեց ինչպէս Տէրոջ ծառան
13 Մովսէսը պատուիրել էր։ Բայց
այն ամեն քաղաքները, որոնք ի-
րանց հողաբլուրներով կենում
էին, Իսրայէլը չայրեց բացի մի-
այն Հասորից որ Յեսուն այրեց։
14 Եւ այս քաղաքների բոլոր ասարը
և անասուները Իսրայէլի որդիքն
իրանց համար կողոպտեցին, բայց
բոլոր մարդկանց սուրի բերանով
զարկեցին, մինչև որ նորանց բնա-
ջինջ արին, ոչ մէկ շնչաւոր չթո-
15 ղեցին։ Ինչպէս Տէրն իր Մովսէս
ծառային պատուիրել էր, այն-
պէս Մովսէս Յեսուին պատուի-
րեց, և Յեսուն էլ այնպէս ա-
րաւ, ոչ մի բան զանց չարաւ
այն ամենից ինչ որ Տէրը Մովսէ-
սին պատուիրել էր։
16 Եւ Յեսուն առաւ այս բոլոր
երկիրը լեռնակողմը և բոլոր հա-
րաւային կողմը և բոլոր Գոսեմի
երկիրը, հովիտը ու դաշտը, և Իս-
րայէլի լեռը և նորա հովիտը,
17 Սէիր վեր ելնող գալակ լեռնից
մինչև Հերմոն լեռան տակի Լի-
բանանի հովտումը եղող Բաալ-
գադ, և նորանց բոլոր թագա-
ւորներին բռնեց և նորանց զար-
կեց մեռցրեց։
18 Յեսուն այս բոլոր թագաւորների հետ շատ օրեր պատերազմ արաւ։
19 Մի քաղաք չկար, որ Իսրայէլի որդոց հետ հաշտութիւն արած լինէր բացի Գաբաւոնի ժէղ բնակող Խևացի-
նեներից. ամենն էլ պատերազմով առին. Վասն զի Տէրից եղաւ
20 նորանց սիրտը կարծրացնելը, որ պատերազմով Իսրայէլի դէմ գը-
նեն որ նորանց ողորմութիւն չը լինելով նորանց նզովէ, որպէս զի բնաջինջ անէ նորանց, ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրել էր։
21 Եւ Յեսուն այն ժամանակ գը-
նաց, և կտրեց Ենակիմներին լեռներից՝ Քեբրոնից, Դաբիրից, Անաբից և Յուդայի բոլոր լեռնե-
րից, և Իսրայէլի բոլոր լեռնե-
րից. Յեսուն նորանց իրանց քա-
ղաքներով մէկտեղ նզովեց։
22 Իսրայէլի որդոց երկրի մէջ Ենա-
կիմներ չմնաց, բայց միայն Գա-
զայի, Գեթի և Ազեդովմի մէջ մնացին։
23 Եւ Յեսուն բոլոր երկիրն ա-
ռաւ, բոլորովին ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրել էր, և Յե-
սուն նորան տուաւ Իսրայէլին իր ժառանգութիւն նորանց ցե-
ղերի բաժինների համեմատ. և եր-
կիրը պատերազմից հանգստացաւ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սորանք են այն երկրի թա-
գաւորները՝ նորանց զարկեցին Իս-
րայէլի որդիքը, և որոնց երկիր-
ները առին, Յորդանանի այն կող-
մում դէպի արևելք, Առնոն ձո-

ըից մինչև Հերմոն լեառը և բոլոր դաշտը դէպի արևելեան կողմը, 2 և Եսեբոնացւոց բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորը, որ սիրուած էր Աստեղ ձորի եզերքաւ եղող Արոերից, և ձորի մէջտեղին, և Գաղաադի կէսին մինչև Ամմոնի որդւոց սահմանը, 3 մին եղած Յաբոկ ձորը, նաև դաշտին մինչև Քենեզեթի ծովը դէպի արևելք և մինչև դաշտի ծովը այսինքն Աղի ծովը դէպի արևելք Բեթեսիմոթի ճանապարհը և հարաւային կողմից Ասեդովթի փոփոչի տակին։ 4 Եւ Բասանի Ովգ թագաւորի սահմանին հսկաներից մնացորդիցը, որ բնակուած էր Աստարովթի և Եդրայիի մէջ, 5 Եւ սիրուած էր Հերմոն լեռան և Սելքային և բոլոր Բասանին մինչև Գեսուրացւոց և Մաքաթացւոց սահմանը, և Գաղաադի կէսին մինչև Եսեբոնի 6 Սեհոն թագաւորի սահմանը։ Տիրոջ ծառան Մովսէսը իսրայէլի որդիքանցը հետ զարկից սորանց, և Տիրոջ ծառան Մովսէսը տուաւ այն Ռուբենեանց, Գադեանց և Մանասէի կէս ցեղին իբրև ժառանգութիւն։

7 Եւ սորանք են երկրի թագաւորները, որ Յեսուն և իսրայէլի որդիքը զարկեցին Յորդանանի այս կողմնումը դէպի արևմուտք, Լիբանանու հովտումը եղող Բաազգադից մինչև Հալակ լեառը, որ վեր է ելնում Սէիր. և Յեսուն տուաւ այն իսրայէլի ցեղերին իբրև ժառանգութիւն իրանց վի- 8 ճակների համեմատ. Լեառների և հովիտների և դաշտերի մէջ և լեառների ստորոտներում և անապատում և հարաւային կողմին Քետացիները, Ամորհացիները, Քանանացիները, Փերեզացիները, Խեւացիները և Յեբուսացիները. Երիքովի թագաւորը՝ մէկ, Բեթելի մօտ եղող Գայի թագաւորը՝ մէկ, Երուսաղեմի թագաւորը՝ մէկ, Քեբրոնի թագաւորը՝ մէկ, Յերիմոթի թագաւորը՝ մէկ, Լաբիսի թագաւորը՝ մէկ, Եգղոնի թագաւորը՝ մէկ, Գազերի թագաւորը՝ մէկ, Դաբերի թագաւորը՝ մէկ, Գադերի թագաւորը՝ մէկ, Հորմայի թագաւորը՝ մէկ, Արադի թագաւորը՝ մէկ, Լեբնայի թագաւորը՝ մէկ, Ոդողոմի թագաւորը՝ մէկ, Մակեդայի թագաւորը՝ մէկ, Բեթելի թագաւորը՝ մէկ, Թափուայի թագաւորը՝ մէկ, Ոփերի թագաւորը՝ մէկ, Ափեկի թագաւորը՝ մէկ, Լասարոնի թագաւորը՝ մէկ, Մադոնի թագաւորը՝ մէկ, Հասորի թագաւորը՝ մէկ, Սիմրոն մեռոնի թագաւորը՝ մէկ, Աքսափի թագաւորը՝ մէկ, Թանաքի թագաւորը՝ մէկ, Մակեդոյի թագաւորը՝ մէկ, Կադեսի թագաւորը՝ մէկ, Կարմելի Յեկնեամի թագաւորը՝ մէկ, Նօփաթ Դովրի Դովր թագաւորը՝ մէկ, Գաղգաղայի Գղիլգի թագաւորը՝ մէկ, Թերսայի թագաւորը՝ մէկ. բոլորը երեսուն ու մէկ թագաւոր։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Յեսուն ծերացել էր և օրերըն անցկացրել։ Եւ Տէրը նորան ասաց. Դու ծերացել ես և օրերդ անցկացրել. և խիստ շատ երկիր է մնացել ժառանգելու։ 2 Մնացած երկիրը սա է. Փղշտացւոց ամեն սահմանները, և բոլոր Գեսուրը. 3 Եգիպտոսի դիմացի Սիհորից մինչև Ակկարոնի սահմանը հիւսիսային կողմին Քանանացւոց համարուի, Փղշտացւոց հինգ նախարարութիւնները, այսինքն Գազացւոցը, Աշդոդացւոցը, Ասկաղոնացւոցը, Գեթացւոցը և Ակկարոնացւոցը. և Աւացւոցը. 4 Հարաւային կողմից Քանանացւոց բոլոր երկիրը՝ և Մեդոնացւոց Մեարան մինչև Ափեկ մինչև Ամորհացւոց սահման. 5 Եւ Գեբալացւոց երկիրը և արևելքի բոլոր Լիբանանը Հերմոն լեառն տակի Բաազգադից մինչև Եմաթի մուտքը, 6 Բոլոր լեռնաբնակները՝ Լիբանանից մինչև Մասրեփոթ մնացիմ, բոլոր Սիդոնացիները. նորանց ես քշելու եմ իսրայէլի որդւոց առջև. միայն թէ դու խա-

բայէլին ժառանգութիւն բաժանիր այն ինչպէս որ քեզ պատուիրեցի։
7 Եւ հիմա այս երկիրը ժառանգութիւն բաժանիր ինը ցեղին,
8 և Մանասէի կէս ցեղին. Ռուբենեանք ու Գադեանք արդէն նորա հետ առել են իրանց ժառանգութիւնը, որ Մովսէսը Յորդանանի այն կողմին դէպի արեւելք նորանից տուաւ, ինչպէս որ
Տիրոջ ծառայ Մովսէսը տուել
9 է նորանց. Առնոն ձորի եզերքի վերայ եղող Արոերից և ձորի մէջ եղող քաղաքը և Մադաբայի բո-
10 լոր դաշտը մինչև Դիբոն. Եւ Եսեբոնի մէջ թագաւորող Ամորհացոց Սեհոն թագաւորի բոլոր քաղաքները մինչև Ամմոնի որդի-
11 կանց սահմանը. Եւ Գաղաադը և Գեսուրացոց ու Մաքաթացոց սահմանը՝ և բոլոր Հերմոն լեառը և բոլոր Բասանը մինչև Սելքա.
12 Բասանի մէջ Ովգի բոլոր թագաւորութիւնը, որ թագաւորում էր Աստարովթի ու Եդրայիի մէջ, նա էր մնացել հսկաների մնացորդից, բայց Մովսէսը նորանց
13 զարկեց և քշեց։ Եւ Իսրայէլի որդիքը Գեսուրացիներին և Մաքաթացիներին չհալածեցին. և Գեսուրացիները ու Մաքաթացիները մինչև այսօր Իսրայէլի մէջ
14 բնակեցին։ Միայն Ղևիի ցեղին ժառանգութիւն չտուաւ. Իսրայէլի Տէր Աստուծոյ պատարագներն են նորա ժառանգութիւնը, ինչպէս որ նորան ասել էր։
15 Եւ Մովսէսը տուաւ Ռուբենի որդիների ցեղին անոնց ազգա-
16 ւորութեանը համեմատ. Եւ նորանց սահմանը եղաւ. Առնոն ձորի եզերքի վերայ եղող Արոերից՝ և ձորի մէջ եղող քաղաքը, Մեդեբայի մօտ եղած բոլոր դաշտը,
17 Եսեբոնը և նորա բոլոր դաշտային քաղաքները, Դիբոն, Բա-
18 մոթ-բահաղ և Բեթբէէլմոն, Եւ Յասսա և Կադեմոթ, և Մեփա-
19 ղաթ, Եւ Կարիաթեմ, և Սեբամա, և Սարեթ-սահար հովտի
20 լեռան վերայ, Եւ Բեթ-փեգոր, և Ասեդովթ-փսգա, և Բեթ-
21 եսիմոթ, Եւ դաշտի ամեն քաղաքները, և Եսեբոնի մէջ թագաւորող Ամորհացոց Սեհոն թագաւորի բոլոր թագաւորութիւնը, որին զարկեց Մովսէս՝ և Մադիամու իշխաններին Եւիին, Րեկոմին, Սուրին, Ուրին և Ռոբին այն երկրում բնակող Սեհոնի նախարարներին։
22 Եւ Բէովրեան Բաղաամ հարցուկին էլ Իսրայէլի որդիքը սրով մեռցրին նորանց սպանուածների հետ։
23 Եւ Ռուբենի որդիների սահմանն էր Յորդանանը և Գէբուլը. այս է Ռուբենի որդոց ազգաւոհմների ժառանգութիւնը. այս քաղաքները և նորանց գիւղերը։
24 Եւ Մովսէսը տուաւ Գադի ցեղին, Գադի որդիների իրանց ազգաւոհմների համեմատ։
25 Եւ նորանց սահմանը եղաւ. Յազեր և բոլոր Գաղաադի քաղաքները, և Ամմոնի որդիների երկրի կէսը՝ մինչև Արոեր, որ Ռաբբայի դիմացն է։
26 Եւ Եսեբոնից մինչև Մասփայի Ռամովթը և Բետանիմ, և Մանայիմից մինչև Դաբիրի սահմանը.
27 Եւ հովիտի մէջ Բեթարամ և Բեթնամրա, Սոկքովթ և Սափոն՝ Եսեբոնի Սեհոն թագաւորի թագաւորութեան մնացորդը, Յորդանանը և Գէբուլը, մինչև Քենեռեթի ծովի եզերքը Յորդանանի այն կողմը դէպի արեւելք։
28 Այս է Գադի որդիների ժառանգութիւնը իրանց ազգաւոհմների համեմատ, այս քաղաքները և նորանց գիւղերը։
29 Եւ Մովսէսը տուաւ Մանասէի կէս ցեղին, որ Մանասէի որդիների կէս ցեղինը եղաւ իրանց ազգաւոհմների համեմատ։
30 Նորանց սահմանը սա եղաւ. Մանայիմից՝ Բասանի Ովգ թագաւորի բոլոր թագաւորութիւնը՝ բոլոր Բասանը, և Բասանի մէջ եղող Յայիրի բոլոր գիւղաքաղաքները վաթսուն քաղաք.
31 Եւ Գաղաադի կէսը՝ և Աստարովթ և Եդրայի՝ Բասանի մէջ Ովգի թագաւորութեան քաղաքները Մանասէի Մաքիրի որդիների՝ Մաքիրի որդիների

կէսինը՝ իրանց ազգատոհմերի համեմատ։
32 Սորանք են, որ Մովսէսը ժառանգութիւն տուաւ Մովաբի դաշտերումը Երիքովի դէմ Յորդանանի այն կողմին դէպի արեւելք։ 33 Բայց Մովսէսը Ղևիի ցեղին ժառանգութիւն չտուաւ, Իսրայէլի Տէր Աստուածն է նորանց ժառանգութիւնը ինչպէս որ նորանց ասաց։

ԳԼ. ԺԴ

1 Եւ սորանք են Քանանու երկրի մէջ Իսրայէլի որդիանց ժառանգածը, որ Եղիազար քահանան և Նաւեան Յեսուն և Իսրայէլի որդիանց ցեղերի նահապետութեան իշխանները ժառանգեցրին 2 նորանց։ Վիճակով եղաւ նորանց ժառանգութիւնը, ինչպէս որ Տէրը Մովսէսի ձեռքովը հրամայել էր այն ինն ու կէս ցեղերին։ 3 Վասն զի Մովսէսը երկու ու կէս ցեղերին ժառանգութիւն տուել էր Յորդանանի այն կողմին. բայց Ղևտացիներին ժառանգութիւն 4 չտուաւ նորանց մէջ. Որովհետև Յովսէփի որդիքը երկու ցեղ էին, Մանասէն և Եփրեմը. և երկրի մէջը Ղևտացոց բաժին չտուին, այլ քաղաքներ՝ բնակելու համար, և նորանց արուարձանները իրանց խաշանց և ստացուածոց համար։ 5 Ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրել էր, Իսրայէլի որդիքը այնպէս արին, և երկիրը բաժանեցին։

6 Եւ Յուդայի որդիքը Գաղգալայումը Յեսուին մօտեցան, և Կենեզեան Յեփոնէի որդի Քաղէբը նորան ասաց. Դու գիտես այն խօսքը, որ Տէրը Կադէս բառնեայումէ խօսեց Աստուծոյ մարդ Մովսէսի հետ իմ և քո մասին։ 7 Եւ քառասուն տարեկան էի երբ որ Տէրոջ ծառայ Մովսէսը ինձ Կադէս բառնեայից ուղարկեց երկիրը լրտեսելու համար, և ես արդիւ մէջ եղածն պէս նորա 8 համար լուր բերի. Սակայն ինձ հետ վեր եկող եղբայրներս ժողովրդի սիրտը թուլացրին. բայց ես բոլորովին իմ Տէր Աստուծոյն հետևեցի։ 9 Եւ այն օրը Մովսէսն երդում արաւ ասելով. Անպատճառ այն երկիրը որ քո ոտքը կոխել է՝ քեզ և քո որդիանցը լինի ժառանգութիւն յաւիտեան, որովհետև իմ Տէր Աստուծոյն բոլորովին հետևեցիր։ 10 Արդ ահա Տէրը ինձ կենդանի է պահել ինչպէս որ խօսել էր այս քառասուն ու հինգ տարին, այն ժամանակից իվեր՝ որ Տէրը այս խօսքը Մովսէսին ասաց. երբոր Իսրայէլը անապատումը ման էր գալիս. և ահա ես այսօր ութսուն ու հինգ տարեկան եմ. 11 Եւ այսօր տակաւին ուժով եմ, ինչպէս որ էի այն օրը երբ Մովսէսն ինձ ուղարկեց. այն ժամանակի զօրութիւնս ինչպէս էր, այժմեան զօրութիւնս էլ այնպէս է՝ պատերազմելու, և դուրս գալու և մտնելու կողմանէ։ 12 Եւ հիմա տուր ինձ այն լեառը, որի համար Տէրը այն օրը խօսեց. վասն զի դու այն օրը լսեցիր, որ այնտեղ կան Ենակիմները և մեծ պարսպատ քաղաքները, գուցէ Տէրն ինձ հետ կ'լինի և ես նորանց կ'հալածեմ, ինչպէս որ Տէրն ասել է։ 13 Եւսուն նորան օրհնեց, Քերբոնը Յեփոնեան Քաղէբին տուաւ իբր ժառանգութիւն։ 14 Սորա համար Քերբոնը Կենեզեան Յեփոնէի որդի Քաղէբինը եղաւ իբրև ժառանգութիւն մինչև այս օրը, որովհետև Իսրայէլի Տէր Աստուծոյն բոլորովին հետևեց։ 15 Եւ Քերբոնի անունը առաջուց Կարիաթ-արբա էր, որ Ենակիմների մէջ մեծ մարդն էր։

Եւ երկիրը պատերազմից հանդրստացաւ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Յուդայի որդիանց ցեղի վիճակը եղաւ իրանց տոհմերի համեմատ մինչև Եդոմայեցոց սահմանը. Հարաւային կողմից Սին անապատը հարաւային ծայրումը։
2 Եւ նորանց հարաւային սահ-

մանը այս եղաւ, Աղի ծովի ծայրից՝ այսինքն հարաւակողմը նա-
3 յող ծոցիցը, Եւ հարաւային կողմից դուրս է գալիս Ակրաբիմի զառ՝ի վերը և անցնում Սին, և վեր ելնում հարաւային կողմից դէպի Կադէս-բառնեայ անցնում Եսրոն, և վեր է ելնում դէպի Ադդար և պտոյտ տալիս դէպի
4 Կարկայի կողմը. Եւ անցնում Ասեմոնից և դուրս գալիս Եգիպտոսի հեղեղատը և այս սահմանը ծովի մէջն է հասնում. սա կ՚լինի ձեր հարաւային սահմանը:
5 Եւ արևելեան սահմանը Աղի ծովն է մինչև Յորդանանի ծայրը:

Եւ հիւսիսային կողմի սահմանը Յորդանանի ծայրումը եղող
6 ծոցից. Եւ վեր է ելնում այս սահմանը մինչև Բեթ-ագղա, և անցնում Բեթ-արաբայի հիւսիսային կողմից. և այս սահմանը վեր է ելնում մինչև Ռուբենեան
7 բանի վէմը. Եւ վեր է ելնում այս սահմանը Աքովրի ձորից Դաբիր, և հիւսիսային կողմից դառնում դէպի Գողգողա, որ այն ձորի հարաւակողմին եղող Էդոմմինի զառ՝ի վերի դիմացն է. և անցնում է այս սահմանը Ենասամիւսի ջրիցը, և հասնում Ռոգելի աղբիւրը.
8 Եւ այս սահմանը վեր է ելնում Ենոմի որդու ձորը՝ հարաւային կողմից Յեբուսի մօտ՝ այսինքն Երուսաղեմի մօտ, և այս սահմանը վեր է ելնում մինչև այն լեռան գլուխը, որ արևմտեան կողմից Ենոմի ձորի դիմացն է, և հիւսիսային կողմից
9 Ռափայնոց ձորի ծայրին է: Եւ այս սահմանը հասնում է լեռան գլխից մինչև Նափթոախայի ջրի աղբիւրը, և դուրս է գալիս Եփրոն լեռան քաղաքները. և այս սահմանը հասնում է մինչև Բաղա այսինքն Կարիաթարիմ.
10 Եւ այս սահմանը շուռ է տալիս Բաղայից արևմուտքի կողմը դէպի Սէիր լեռը, և հիւսիսային կողմից Յարիմ լեռան մօտից անցնում, որ դա Քեսաղօնն է. և իջնում է Բեթ-սամիւս, և անց-
11 նում Թամնա. Եւ այս սահմանը դուրս է գալիս Ակկարոնի մօտ դէպի հիւսիս, և այս սահմանը հասնում է Սաքարօն և անցնում Բաաղա լեռնիցը, ու դուրս գալիս Յաբնէլ. և այս սահմանը վերջանում է ծովումը:

12 Եւ արևմտեան սահմանը մեծ ծովի եզերքն է: Սա է Յուդայի որդոց սահմանը շուրջանակի իրանց տոհմերի համեմատ:

13 Եւ Յեփոնեան Քաղեբին բաժին տուաւ Յուդայի որդկանց մէջ Ենակի հօր Արբայի քաղաքը այսինքն Քեբրոնը, ինչպէս որ Տէրը Յեսուին հրամայել էր: Եւ
14 Քաղեբը հալածեց այնտեղից Ենակի երեք որդիներին՝ Սէսիին և Ախիմանին և Թոլմիին՝ Ենակի որդկանցը. Եւ այնտեղից վեր ելաւ
15 գնաց Դաբիրի բնակչաց վերայ և Դաբիրի անունը առաջուց Կարիաթ-սեփեր էր. Եւ Քաղեբ ա-
16 սաց. Ով որ Կարիաթ-սեփերը զարկէ և առնէ, Ախսա աղջիկս նորան կ՚տամ կնութեան: Եւ
17 Քաղեբի եղբայր Կենեզի որդի Գոթոնիէլը առաւ այն. և Քաղեբ իր Ախսա աղջիկը տուաւ նորա կնութեան: Եւ երբոր գնում էր,
18 յորդորեց նորան որ իր հօրիցը մէկ ագարակ ուղէ. և էշի վերայից վայր իջաւ. և Քաղեբ նորան ասաց. Ի՞նչ կայ քեզ. Եւ աղջիկն
19 ասաց. Ինձ մի օրհնութիւն տուր. որովհետև ինձ մի հարաւային երկիր ես տուել, ինձ ջրի աղբիւրներ էլ տուր. և նորան տուաւ վերի աղբիւրները և ցածի աղբիւրները:

20 Սա է Յուդայի որդկանց ցեղի ժառանգութիւնը իրանց տոհմերի համեմատ:

21 Եւ Եդոմի սահմանի մօտ հարաւային կողմում Յուդայի որդկանց ցեղի ծայրի քաղաքները սորանք են.
22 Կաբեսէէլ, Եդեր, Յագուր, Կի-
23 նա, Դեմոնա, Ադադա, Կադես,
24 Հասոր, Յեթնան, Զիփ, Տելեմ,
25 Բեաղոթ, Հասոր ադաթա, Կա-
26 րիոթ, Եսրոն որ է Հասոր, Ա-
27 մամ, Սամա, Մոլադա, Ասար-
28 գադդա, Եսեմոն, Բեթ-փաղեթ,
Ասեր սուալ, Բերսաբէէ, Բազի-

29 օթխա, Բաաղա, Խիմ, Ասէմ,
30 Էլիհուդաթ, Փէսիլ, Հօրմա,
31 Միկիլակ, Մադմաննա, Սանսան-
32 նա, Լաբաոթ, Սէլէմ, Ասիր
և Ռեմմն. ամենը քսանուհինը քա-
ղաք և նորանց գիւղերը։
33 Դաշտավայրի մէջ Եսիմուդ,
34 Սորաա, Աշնա, Զանոյ, Էնգա-
35 նիմ, Թափուա, Էնայիմ, Յերի-
մութ, Ոդոզամ, Սոքով, Ազեկա,
36 Սահարիմ, Ատիթայիմ և Գա-
դերա (և Գադերոթայիմ.) տասն
ու չորս քաղաք և նորանց գիւ-
37 ղերը։ Սէննան, Ադաաս, Մազ-
38 դադդադ, Դաղաան, Մասիա,
39 Յեկթոէլ, Լաքիս, Բազկաթ,
40 Էգլոն, Քաբբօն, Լաամաս, Քիթ-
41 լիս, Գադերօթ, Բեթդագոն,
Նաամա և Մակեդա. տասն ու
վեց քաղաք և նորանց գիւղերը։
42 Լեբնա, Եթեր, Աշան, (43) Յեփ-
44 թա, Աշնա, Նեսիբ, Կէիլա,
Աքեզիբ և Մարեսա. ինը քա-
45 ղաք և նորանց գիւղերը։ Ակկա-
րոն իր գիւղաքաղաքներով և
46 գիւղերով. Ակկարոնից մինչև
ծովը, Աշդոդի մօտ բոլորը ի-
47 րանց գիւղերով. Աշդոդի իր
գիւղաքաղաքներով և գիւղեր-
ով, Գազա իր գիւղաքաղաքնե-
րով և գիւղերով մինչև Եգիպ-
տոսի հեղեղատը և մեծ ծովը և
սահմանը.
48 Եւ լեռնակողմի վերայ Սամիր,
49 Յաթիր, Սոքով, Դաննա, Կա-
րիաթ սաննա՝ այսինքն Դաբիր,
50 Անաբ, Եսթեմով, Անիմ, (51) Գո-
սեմ, Քօզեն և Գևղոն. տասն ու
մէկ քաղաք և նորանց գիւղերը։
52 Երբը, Դումա, Եսան, (53) Յա-
նում, Բեթթափուա, Ափեկա,
54 Հումթաաա, Կարիաթարբա՝ Քէբ-
րոն և Սիոր. ինը քաղաք և նո-
55 րանց գիւղերը։ Մաոն, Կարմե-
56 ղոս, Զիփ, Յեզրէել, Յեկդաամ,
57 Յեկդաամ, Զանոյ, Կային, Գա-
բաա և Թամնա. տասը քաղաք
58 և նորանց գիւղերը։ Ադուդ, Բեթ-
59 սուր, Գեդոր, Մաարաթ, Բե-
թանոթ և Ելթեկոն. վեց քա-
60 ղաք և նորանց գիւղերը։ Կարի-
աթբաալ՝ այսինքն Կարիաթա-
րիմ և Ռաբբա. երկու քաղաք
և նորանց գիւղերը։ Անապատի 61
մէջ Բեթարաբա, Մադդին, Սե-
քաքա, Նեբսանը, Աղի քաղաքը 62
և Ենգադդի. վեց քաղաք և նո-
րանց գիւղերը։
Բայց Յուդայի որդիքը չկարո- 63
ղացան Երուսաղէմի մէջ բնակող
Յեբուսացիներին հալածել. և
Յեբուսացիները Յուդայի որդիների
հետ բնակուած են Երուսաղէմի
մէջ մինչև այս օրը։

ԳԼ. Ժ.Զ

Եւ Յովսէփի որդիների վիճակը 1
ելաւ՝ Երիքովի դէմ Յորդանանից
Երիքովի ջրի արևելեան կողմից
դէպի անապատը, որ ելնում է ել-
նում Երիքովից դէպի լեռնակող-
մը՝ Բեթէլը, և դուրս է գալիս 2
Բեթելից Լուզ, և Արքի-աւսրօ-
թի սահմանից անցնում, և ա- 3
րևմտեան կողմից Յեփլէթի սահ-
մանը իջնում, մինչև վերի Բե-
թորոնի սահմանը մինչև Գազեր,
և հասնում է ծովը։ Եւ Յովսէ- 4
փի որդիքը՝ Մանասէն ու Եփրեմը
ժառանգութիւն առին։
Եւ այս եղաւ Եփրեմի որդոց 5
սահմանը իրանց տոհմերի հաւե-
մատ. այսինքն նորանց ժառան-
գութեան սահմանը արևելեան
կողմից էր Աւսրօթ-ադար մին-
չև վերի Բեթորոն. Եւ այս սահ- 6
մանը դուրս է գալիս Հիւսիսային
կողմից դէպի Մաքմեթաթ ծովը,
և այս սահմանը պտոյտ է տալիս
արևելեան կողմից մինչև Թէանթ-
սելով, և անցնում է արևելեան
կողմից դէպի Յանոհէ, Եւ Յանո- 7
հէից իջնում է Աւսրովթ և Նա-
արա, և Երիքովին դպչելով դուրս
գալիս Յորդանան. Այս սահման- 8
ը Թափուայից գնում է կանա
հեղեղատը արևմտեան կողմից,
և հասնում ծովը։ Այս է Եփրե-
մի որդիների ցեղի ժառանգու-
թիւնը իրանց տոհմերի համեմատ.
Նաև Եփրեմի որդիների համար 9
ջոկուած քաղաքները Մանասէի
որդիների ժառանգութեան մէջ
են, բոլոր քաղաքները իրանց
գիւղերով։

10 Եւ նորանք Գազերի մէջ բնակող Քանանացիներին չհալածեցին. և Քանանացիները մինչև այս օրը Եփրեմի մէջ բնակելով հարկատու ծառաներ եղան։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Մանասէի ցեղի վիճակը եղաւ սա, որ Յովսէփի անդրանիկին էր. Մանասէի անդրանիկը Մաքիր Գաղաադի հայրը՝ որովհետև մի պատերազմող մարդ էր՝ Գաղաադն ու Բասանը նորանը 2 եղաւ։ Եւ Մանասէի միւս որդկանցն Աբիեզերի որդկանցը, Փեղղէի որդկանցը, Ասրիելի որդկանցը, Սիւքեմի որդկանցը, Ոփերի որդկանցը, և Սեմիդայի որդկանցն իրանց տոհմերի համեմատ ժառանգութիւն եղաւ. Սորանք էին Յովսէփեան Մանասէի արու զաւակներն ի- 3 րանց տոհմերի համեմատ։ Եւ Մանասէի որդու Մաքիրի որդու Գաղաադի որդու Ոփերի որդի Սալպաադը տղայք չունէր, այլ միայն աղջկերք, և նորա աղջկերանց անուններն սորանք են. Մաալա, Նոա, Եգղա, Մեղքա և 4 Թերսա։ Սորանք ներկայացան Եղիազար քահանայի առջև, Նաւեան Յեսուի առջև և իշխանների առջև և ասացին. Տէրը Մովսէսին հրամայեց մեր եղբարց մէջ մեզ ժառանգութիւն տալ։ Եւ Յեսուն Տիրոջ հրամանովը նորանց հօրեղբարց մէջ նորանց ժառան- 5 գութիւն տուաւ։ Եւ Մանասէի համար Յորդանանի այն կողմին տասը բաժին ընկաւ բացի Գա- 6 ղաադի և Բասանի երկրից. վասն զի Մանասէի աղջկերքը նորա որդկանց մէջ ժառանգութիւն առին և Գաղաադու երկիրը Մանասէի միւս որդկանցը եղաւ։

7 Եւ Մանասէի սահմանը եղաւ. Ասերից մինչև Մաքմեթաթ, որ Սիւքեմի դիմացն է, և այս սահմանը գնում է դէպի ա՛ջ կողմը մինչև Թափուայի աղբիւրի բնա- 8 կողները։ Թափուայի երկիրը Մանասէինը եղաւ, և Մանասէի սահմանի վերայ եղող Թափուան Եփրեմի որդկանցը եղաւ։ Եւ այս 9 սահմանը իջնում է կանայ հեղեղատը, դէպի հեղեղատի հարաւային կողմը։ Մանասէի քաղաքներն են. և Մանասէի սահմանը հեղեղատի հիւսիսային կողմից գնալով հասնում է ծովին։ Հա- 10 րաւային կողմը Եփրեմինը, և հիւսիսային կողմը Մանասէինը լինելով նորանց սահմանը ծովը եղաւ. և հիւսիսային կողմից դէպ- չում էին Ասերին, և արևելեան կողմից Իսաքարին։ Եւ Իսաքարի 11 ու Ասերի մէջ Մանասէինն էին Բեթսան և նորա գիւղաքաղաքները, և Ներղամ և նորա գիւղաքաղաքները, և Դովրի բնակիչները և նորա գիւղաքաղաքները, և Ենդովրի բնակիչները և նորա գիւղաքաղաքները, և Թանաքի բնակիչները և նորա գիւղաքաղաքները, Մակեդդովի բնակիչները և նորա գիւղաքաղաքները, այս երեք գաւառը։ Եւ Մանասէի որ- 12 դիքը չկարողացան այս քաղաքներին հալածել. և Քանանացիները կամակորութեամբ բնակեցին այն երկրի մէջ։ Եւ Իսրայէլի 13 որդիքը երբոր ուժովացան, հարկատու արին Քանանացիներին, բայց նորանց բոլորովին չհալածեցին։

Եւ Յովսէփի որդիքը Յեսուի 14 հետ խօսեցին և ասացին. Ինչո՞ւ համար ինձ մէկ վիճակ և մէկ բաժին ժառանգութիւն տուիր, և ես մի բազմութիւ ժողովուրդ եմ. վասն զի Տէրն ինձ մինչև այսչափ օրհնեց։ Եւ Յեսուն նո- 15 րանց ասաց. Եթէ դու բազմութիւ ժողովուրդ ես վեր երիր անտառը և այն տեղ քեզ համար տեղ շինիր, Փերեզացոց և Ռափայնոց երկրումը, որովհետև Եփրեմի լեառը քեզ համար նեղ է։ Եւ Յովսէփի որդիքն ասացին. 16 Լեառը մեզ համար չէ. և երկաթի կառքեր ունին բոլոր Քանանացիները, որ բնակում են հովտի երկրումը՝ Բեթսանի մէջ և նորա գիւղաքաղաքների մէջ, և Յեզրայէլի հովտի մէջ։ Եւ Յե- 17

սուն Յովսէփի տանը՝ այսինքն Եփրեմի և Մանասէի հետ խօսեց և ասաց. Դուք մի բազմաթիւ ժողովուրդ էս, և շատ պժ ունիս, 18 քեզ մէկ վիճակ չբինի. Այլ լեռը քոնը լինի. որովհետև անտառ է, նորան շինիր և քոնը լինի մինչև ծայրը. վասն զի դուք Քանանացիներին այնտեղից պիտի հալածես, թէև նորանք երկաթի կառքեր ունենան և զօրաւոր լինին։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Իսրայէլի որդւոյն բոլոր ժողովքը Սելովուամը ժողովուեցան, և այնտեղ կանգնեցին ժողովքի խորանը, և երկիրը նորանց առջև նուաճուեցաւ։

2 Եւ Իսրայէլի որդւոյն մէջ եօթը ցեղ էր մնացել, որոնք իրանց ժառանգութիւնը չէին առել։

3 Եւ Յեսուն Իսրայէլի որդւոյն ասաց. Մինչև ե՞րբ էք դուք թուլութիւն անելու, որ գնաք ժառանգէք այն երկիրը որ ձեր հայրերի Տէր Աստուածը ձեզ

4 է տուել։ Ա֊ձեր ցեղից երեք մարդ բերէք, և ես նորանց ուղարկեմ որ վեր կենան մեն գան այն երկրի մէջ և գրեն նորան իրանց ժառանգութեան համեմատ, և ինձ

5 մօտ գառնան։ Եւ նորան եօթը մասերի բաժանեն. Յուդան կանգնէ իր սահմանումը հարաւային կողմին, և Յովսէփի տունը իրանց սահմաններում կանգնեն

6 հիւսիսային կողմին։ Եւ դուք երկիրը եօթը բաժին գրեցէք, և ինձ մօտ բերէք այստեղ, և ես ձեզ համար վիճակ ձգեմ այս տեղ մեր Տէր Աստուծոյ առջև։

7 Վասն զի Ղեւտացիները ձեր մէջ բաժին չունին, որովհետև նորանց ժառանգութիւնը Տիրոջ քահանայութիւնն է. և Գադ ու Ռուբէն և Մանասէի կէս ցեղը առին իրանց ժառանգութիւնները Յորդանանի այն կողմին դէպի արևելք, որոնք Տիրոջ ծառան Մովսէսը տուաւ նորանց։

8 Եւ այն մարդիկը վեր կացան գնացին, և Յեսուն հրամայեց այն երկիրը գրելու գնացողներին ասելով. Գնացէք և այն երկրումը մեն մեն եկէք և նորան գրեցէք, և ինձ մօտ դարձէք, որ այստեղ Սելովի մէջ Տիրոջ առջև ձեզ համար վիճակ ձգեմ։ 9 Եւ այն մարդիկը գնացին, և այն երկրի մէջ մեն եկան, և նորան գրեցին էր քաղաքներովը եօթը բաժին ածելի գրքի վերայ, և եկան Յեսուի մօտ բանակը Սելով։ 10 Եւ Յեսուն Սելովի մէջ Տիրոջ առջև նորանց համար վիճակ ձգեց. և Յեսուն այնտեղ երկիրը բաժանեց Իսրայէլի որդւոյն վերայ իրանց բաժիններին համեմատ։

11 Եւ Բենիամինի որդւոյն ցեղի վիճակը ելաւ իրանց տոհմերին համեմատ. և իրանց վիճակի սահմանը ելաւ Յուդայի որդւոյն և Յովսէփի որդւոյն մէջտեղը։ 12 Եւ նորանց սահմանը եղաւ հիւսիսային կողմեմ Յորդանանից, և այս սահմանը վեր է ելնում հիւսիսային կողմից Երիքովի մօտ, և բարձրանում դէպի լեռը արևմուտքում, և վերջը հասնում Բեթաւանի անապատը. 13 Եւ անցնում է սահմանը այնտեղից Լուզ՝ դէպի Լուզ այսինքն Բեթէլի մօտ հարաւային կողմից. և իջնում է այս սահմանը Աստրոթ-ադար այն լեռան վերայ, որ ցածի Բեթորոնի հարաւային կողմումն է։ 14 Եւ գնում է այս սահմանը և պըտոյտ տալիս արևմտեան կողմով դէպի հարաւ այն լեռնից, որ հարաւային կողմից Բեթորոնի դիմացն է, և վերջը հասնում է Կարիաթ-բաալի, որ է Կարիաթարիմ Յուդայի որդւոյն քաղաքը։ Արևմտեան կողմն սա է։ 15 Եւ հարաւային կողմը Կարիաթարիմի ծայրից սկսւում է, սահմանը դուրս է գալիս դէպի արևմուտք, ու գնում Եփթոյեայի ջրի աղբիւրը։ 16 Եւ իջնում է այս սահմանը Ռափայիմց հովիտի մէջ հիւսիսային կողմում եղող Ենովմի որդու Ձորի դիմացի լեռան գլուխը, և Յեբուսի մօտից դէպի հարաւ Ենովմի ձորն է իջնում

17 Ռոմգելի աղբիւրը. եւ գնում է
Հիւսիսային կողմից դուրս գալիս
Ենաամիւս, և գնում է մինչ
Եդովմինի ջաւի վերի դէմ եղող
Գալելովթ, և իջնում Ռուբեն-
18 եան բաանի վէմը, եւ անցնում
Արաբայի դիմացի կողմից դէպի
19 Հիւսիս և իջնում Արաբաթ. Եւ
անցնում է այս սահմանը դէպի
Հիւսիս Բեթագղլայի մօտով և
վերջը հասնում է այս սահմանը
Աղի ծովի հիւսիսային ծոցը՝ Յոր-
դանանի հարաւային ծայրը: Հա-
20 րաւային սահմանը սա է: Եւ Նո-
րա արևելեան կողմի սահմանը
Յորդանանն է: Սա է Բենիամինի
որդւոյ ժառանգութիւնը շուր-
ջանակի իր սահմաններով նո-
21 րանց տոհմերին համեմատ: Եւ
Բենիամինի որդւոյ ցեղի քա-
ղաքներն իրանց տոհմերին համե-
մատ՝ Երիքով, Բեթագղա, Ե-
22 մեկկասիս, Բեթարաբա, Սեմա-
23 րիմ, Բեթէլ, Աւիմ, Փարա,
24 Եփրա, Քեփարամմոնա, Հոփնի
և Գաբա. տասներկու քաղաք և
25 նորանց գիւղերը: Գաբաւոն, Ռա-
26 մա, Բերոթի, Մասփա, Կեփի-
27 րա, Մոսա, Ռեկեմ, Յերփոէլ,
28 Թարալա, Սելա, Էլէփ, Յերուս՝
այսինքն Երուսաղէմ, Գաբաաթ
Կարիաթ. տասնուչորս քաղաք
և նորանց գիւղերը: Սա է Բե-
նիամինի որդւոյ ժառանգու-
թիւնը իրանց տոհմերին համե-
մատ:

ԳԼ. ԺԹ

1 Եւ երկրորդ վիճակը դուրս եկաւ
Շմաւոնին, Շմաւոնի որդւոյ ցեղին իրանց տոհմերի համեմատ.
և նորանց ժառանգութիւնը ե-
ղաւ Յուդայի որդւոյ ժառան-
2 գութեան մէջ: Եւ նորանցը եղաւ
իրանց ժառանգութեան մէջ.
Բերսաբէէ, (Սաբէէ) Մօղադա,
3 Ասեր-սուսաղ, Բազա, Ասէմ,
4 Էլթուղադ, Բաթուլ, Հորմա,
5 Սիկեղակ, Բեթմարքաբովթ, Ա-
6 սեր-սուսա, Բեթլաբաւովթ և
Սարուհէն, տասներեք քաղաք և
7 նորանց գիւղերը: Ային, Ռեմմոն,
Եթեր և Ասան. չորս քաղաք և
նորանց գիւղերը: Եւ այս քա- 8
ղաքների շուրջը եղած բոլոր գիւ-
ղերը՝ մինչև Բաաղեթ-բէէր, և
Հարաւային Ռամման: Սա է Շը-
մաւոնի որդւոյ ցեղի ժառան-
գութիւնը որդւոց ցեղի ժառան- 9
գութիւնը իրանց տոհմերին հա-
մեմատ: Շմաւոնի որդւոյ ժա-
ռանգութիւնը Յուդայի որդւոյ
բաժինից եղաւ, վասն զի Յու-
դայի որդւոյ բաժինը շատ էր
իրանց համար, նորա համար Շը-
մաւոնի որդիքը նորանց ժառան-
գութեան մէջ ժառանգութիւն
առին:

Եւ երրորդ վիճակը եղաւ Զա- 10
բուղոնի որդւոյն իրանց տոհ-
մերին համեմատ. և նորանց ժա-
ռանգութեան սահմանը եղաւ
մինչև Սարիդ. Եւ նորանց սահ- 11
մանը վեր է ելնում դէպի ծովը
և Մարալա. և դպչում է Դա-
բասէթին, և հասնում է Յեկ-
նամի դէմ եղող ձորին, Եւ Սա- 12
րիդից դառնում է դէպի արե-
ւելեան կողմը՝ Քասղովթ-թաբօրի
սահմանը, և գուրս է գալիս Դա-
բարաթից և բարձրանում Յա-
փիէ, Եւ այնտեղից անցնում է 13
դէպի առջևի կողմը արևելք Գեթ-
քոփեր Ինթազասին և գուրս է
գալիս Ռեմոն-մեթօար, Նուան. 14
Եւ պտոյտ է տալիս այս սահ-
մանը հիւսիսային կողմից Ենաթօ-
նով, և Յեփթայէլի ձորումը վեր-
ջանում. Եւ Կատաթ և Նահա- 15
ղոլ, և Սամրօն ու Յագեղա, և
Բեթլեհէմ. տասներկու քաղաք
և նորանց գիւղերը: Սա է Զա- 16
բուղոնի որդւոյց ժառանգու-
թիւնը իրանց տոհմերին համե-
մատ, այս քաղաքները և նորանց
գիւղերը:

Չորրորդ վիճակը ելաւ Իսաքա- 17
րին, Իսաքարի որդւոյն իրանց
տոհմերին համեմատ. Եւ նորանց 18
սահմանը եղաւ՝ Յեզրայէլ, Փա-
սեղովթ, Սունամ, Ափերէմ, Ա- 19
նան, Ռաբբիթ, Կեսի- 20
օն, Աբէս, Ռամաթ, Ենգանիմ, 21
Ենքադդա, և Բեթփասես. Եւ 22
այս սահմանը գպչում է Թաբօ-
րի, Սահիմային և Բեթսամիսին,

և նորանց սահմանը վերջանում
է Յարդանանում, տասնուվեց
23 քաղաք և նորանց գիւղերը : Սա
է Թաքարի որդւոյց ցեղի ժա-
ռանգութիւնը իրանց տոհմերի
համեմատ, այս քաղաքները և
նորանց գիւղերը :
24 Եւ հինգերորդ վիճակը ելաւ Ա-
սերի որդւոյց ցեղին իրանց տո-
25 հմերին համեմատ : Եւ նորանց սահ-
մանը եղաւ . Փեղկաթ, Ալի, Բե-
26 տէն, Աքսափ, Ալամելէք, Ամիդ,
և Մասաղ . և արեւմտեան կողմից
հասնում է Կարմելոսին և Սիո
27 –լբնաթին, Եւ արեւելեան կող-
մից դառնում է դէպի Բեթդա-
գան, և հիւսիսային կողմից հաս-
նում է Զաբուղոնին Յեփթայէլի
ձորումը, Բեթամէկին և Նէիէ-
լին, և դուրս է գալիս ձախ կող-
28 մից Քաբօղ, Եւ Եբրօն, Րոոբ,
Համմօն, և Կանա, մինչև մեծ
29 Սիդոն. Եւ այս սահմանը դառ-
նում է Ռամա մինչև Տիւրոս
ամուր քաղաքը, և այս սահման-
նը դառնում է Ոսա և ծովումը
վերջանում Աքզիբի վիճակի
30 մէջ. Եւ Ումմա, Աֆէկ, և Րոոբ.
քսաներկու քաղաքներ և նորանց
31 գիւղերը : Սա է Ասերի որդւոյց
ցեղի ժառանգութիւնը իրանց
տոհմերին համեմատ, այս քա-
ղաքները և նորանց գիւղերը :
32 Վեցերորդ վիճակը ելաւ Նեփ-
թաղիմի որդւոյցը, այսինքն Նեփ-
թաղիմի որդւոյցը իրանց տո-
33 հմերի համեմատ : Եւ նորանց սահ-
մանը եղաւ, Հելէփից, Ալոնից
մինչև Սաանանիմ, և Ադամի–նո-
գեբ, և Յաբնէլ մինչև Լակում
և վերջանում է Յորդանանի մէջ :
34 Եւ այս սահմանը դառնում է
արեւմտեան կողմից դէպի Ազ-
նոթ–Թաբոր, և այնտեղից դուրս
գալիս Հուկոկ. և հասնում հա-
րաւային կողմից մինչև Զաբու-
ղոն, և արեւմտեան կողմից մին-
չև Ասեր, և արեւելեան կողմից մին-
35 չև Յուդա և Յորդանան. Եւ
պարսպաւոր քաղաքները՝ Ասե-
դիմ, Սէր, Համմաթ, Ռեկկաթ,
36 Քենեռեթ, Ադամա, Ռամա, Հա-
37 սոր, Կադէս, Եդրայի, Ենհա-
38 սոր, Յարօն, Մակդալիէլ, Հա-
րեմ, Բեթանոթ, և Բեթսամիւս.
տասնեվեցը քաղաք և նորանց գիւ-
ղերը : Սա է Նեփթաղիմի որդւոյց
39 կանց ցեղի ժառանգութիւնը ի-
րանց տոհմերին համեմատ, այս
քաղաքները և նորանց գիւղերը :
40 Եօթներորդ վիճակը ելաւ Դա-
նի որդւոյց ցեղին իրանց տոհմե-
41 րին համեմատ : Եւ նորանց ժա-
ռանգութեան սահմանը եղաւ
Սարաա, Եսթաւուղ, Իրսա-
42 մէս, Սաղաբին, Այէղոն, Յեթ-
43 լա, Ելօն, Թամնաթա, Ակկա-
44 րոն, Ելթեկէ, Գաբաթոն, Բա-
45 ալոթ, Եհուդ, Բանէ–բարակ,
46 Գեթրեմոն, Մէարկօն, և Ռակ-
կոն, Յոպպէի դիմացի սահմանի
47 հետ : Եւ Դանի որդւոյց սահ-
մանը իրանց համար փոքր դուրս
եկաւ . ուստի Դանի որդիքը վեր
կացան, և Լէսեմի հետ պատե-
րազմեցին, և նորան առին և նո-
րան սուրի բերանով զարկեցին
և նորան ժառանգեցին, և նորա
մէջ բնակեցին, և Լէսեմը իրանց
հօր Դանի անունովը Դան կոչե-
ցին : Սա է Դանի որդւոյց ցեղի
48 ժառանգութիւնը իրանց տոհմե-
րին համեմատ, այս քաղաքները
և նորանց գիւղերը :
49 Եւ երկիրը իր սահմաններով
բաժանելը վերջացրին, և Իսրայէլի
որդիքը ժառանգութիւն տուին
50 Նաւեան Յեսուին իրանց մէջ. Տի-
րոջ հրամանովը նորա ուզած քա-
ղաքը Թամնաթ–սարան իրան տո-
ւին Եփրեմի լեռան վերայ. և
նա շինեց քաղաքը և բնակեց նո-
րանում :
51 Սորանք են այն ժառանգու-
թիւնները՝ որ եղիազար քահա-
նան և Նաւեան Յեսուն և Իսրա-
յէլի որդւոյց ցեղերի նահապետ-
ները Սիլովի մէջ Տիրոջ առջև՝
ժողովքի խորանի դրան մօտ վի-
ճակով բաժանեցին, և երկիրը
բաժանելը վերջացրին :

ԳԼ. Ի

1 Եւ Տէրը խօսեց Յեսուի հետ ա-
2 սելով. Խօսիր Իսրայէլի որդւոյց

հետ և ասիր. Որոշեցէք ձեզ
համար այն ապաստանի քաղաք-
ները, որ Մովսէսի ձեռքով ձեզ
3 ասել եմ. Որպէս զի այնտեղ
փախչէ սխալմամբ սատանց գիտե-
նալու մարդ զարկող ապանողը.
և նորանք ձեզ համար ապաս-
տանարան լինին արեան վրէժ-
4 խնդրիցը. Եւ փախչէ այն քա-
ղաքներէն մէկին մէջը և քաղաքի
դրանը կանգնէ, և այն քաղաքի
ծերերուն ականջներուն ասէ իր խ-
րատուքը. և նորանք նորան ի-
րանց մօտ քաղաքի մէջ առնե-
լով նորան տեղ տան, որ իրանց
5 հետ բնակէ: Եւ երբոր արեան
վրէժխնդիրը նորա ետևէն ընկնի
ապանողին նորա ձեռքը չտան.
վասն զի նա իր դրացուն անգի-
տութեամբ է սպաներ, և նորա
դէմ թշնամութիւն չունէր երէկ-
6 ուանէ միւս օրէն: Եւ նա այն
քաղաքումը բնակէ, մինչև որ
դատաստանի համար ժողովքի
առջև կանգնի և մինչև որ այն օ-
րերը եղող քահանայապետը մեռ-
նի. այն ժամանակ ապանողը ետ
դառնայ, և գնայ իր քաղաքը և
իր տունը, այսինքն այն քաղաքը,
որտեղից նա փախել էր:
7 Եւ Գալիլեայի մէջ կազէսը ո-
րոշեցին Նեփթաղիմի լեռնակող-
մումը, Սիւքեմը Եփրեմի լեռ-
նակողմնումը, և Կարիաթ-արբան
այսինքն Քեբրոնը Յուդայի լեռ-
8 նակողմնումը: Եւ Երիքովի դէմ
Յորդանանի այն կողմին դէպի ա-
րևելք որոշեցին Ռուբենի ցեղից
անապատի դաշտումը Բոսորը, և
Գադի ցեղից՝ Գաղաադումը Ռա-
մոթը, և Մանասէի ցեղից՝ Բա-
9 սանումը Գովղանը: Բոլոր Իսրա-
յէլի որդւոյն համար և նորանց
մէջ բնակող օտարականի համար
որոշուած քաղաքները, որոնք
են, որ ամեն սխալմամբ մարդ
սպանողը այնտեղ փախչէ, ու
չմեռնէ արեան վրէժխնդրի ձեռ-
քով, մինչև որ ժողովքի առջև
կանգնէ:

ԳԼ. ԻԱ

1 Եւ Ղեւտացոց նահապետները մօ-
տեցան Եղիազար քահանային,
Նաւեան Յեսուին և Իսրայէլի
որդւոյն ցեղերուն նահապետներին,
2 Եւ խօսեցին նորանց հետ Քանա-
նու երկրումը Սեղովի մէջ ասե-
լով. Տէրը Մովսէսի ձեռքովը հր-
ամայեց բնակելու համար ա-
ւաթաններըը տալ մեզ: Եւ Իս-
3 րայէլի որդիքը Տիրոջ հրամանո-
վը իրանց ժառանգութիւններից
այս քաղաքներըը և նորանց ա-
ւաթաններըը տուին Ղեւտացի-
ներուն:
4 Եւ վիճակը ելաւ կահաթեանց
ազգատոհմերուն. և Ղեւտացինե-
րից Ահարոն քահանայի որդինե-
րուն վիճակով տասն երեք քաղաք
ելաւ, Յուդայի ցեղից, Շմաւոնի
5 ցեղից և Բենիամինի ցեղից: Եւ
կահաթի միւս որդիներուն Եփրե-
մի ցեղի ազգատոհմերից, և Դա-
նի ցեղից, և Մանասէի կէս ցե-
6 ղից վիճակով տասը քաղաք: Եւ
Գերսոնի որդիներուն Իսաքարի
ցեղի ազգատոհմերից և Ասերի
ցեղից և Նեփթաղիմի ցեղից և
Բասանի մէջ եղող Մանասէի կէս
ցեղից վիճակով տասն երեք քա-
7 ղաք: Մերարիի որդւոյն համար
իրանց տոհմերին համեմատ Ռու-
բենի ցեղից, Գադի ցեղից և Զա-
բուղոնի ցեղից տասն երկու քա-
8 ղաք: Եւ Իսրայէլի որդիքը այս
քաղաքներըը և նորանց արուար-
ձաններըը վիճակով տուին Ղեւտա-
ցիներուն, ինչպէս որ Տէրը պատ-
ուիրել էր Մովսէսի ձեռքովը:
9 Եւ Յուդայի որդւոյն ցեղից և
Շմաւոնի որդւոյն ցեղից այս քա-
ղաքներըը տուին, որ իրանց անու-
10 նովը յիշուած էին. Եւ Ահարո-
նի որդիներուին եղան, որոնք Ղե-
ւիի որդիներից եղող կահաթե-
անց ազգատոհմերից էին. վա-
11 սն զի առաջի վիճակը նորանցն
էր: Եւ նորանց տուին Յուդայի
լեռան վերայ Արբայի հայր Ենակի
քաղաքը՝ այսինքն Քեբրոնը,
նորա շրջակայ արուարձաննե-
12 րովը. Եւ քաղաքի պարսակներն
ու գիւղերը Յեփոնեան Քաղեբին
13 կալուածք տուին: Եւ Ահարոն
քահանայի որդիներին ապանողի

Համար ապաստանի քաղաք Բեբրոնը տուին իր արուարձաններովը. նաև Լբենան իր արուարձաններովը։ 14 Եւ Յաթիրը իր արուարձաններովը, և Եսթեմովը իր 15 արուարձաններովը, Եւ Քոզոնը իր արուարձաններովը, և Դաբիրը 16 իր արուարձաններովը, Եւ Ային իր արուարձաններովը, և Յեթտան իր արուարձաններովը, և Բեթսամիսը իր արուարձաններովը. այս երկու ցեղիցը ինը 17 քաղաք։ Եւ Բենիամինի ցեղից Գաբաւոնը իր արուարձաններովը, Գաբան իր արուարձաններով- 18 վը, Անաթովթը իր արուարձաններովը, և Գաղմոնը իր արուար- 19 ձաններովը. չորս քաղաք։ Ահարոնի որդիք՝ քահանաների բոլոր քաղաքները տասն երեք քաղաք էին և նորանց արուարձանները։ 20 Եւ Կահաթի որդիներից մնացած Ղևտացի Կահաթեանց ազգատոհմներն էլ Եփրեմի ցեղիցը 21 վիճակով քաղաքներ առին. Եւ նորանց տուին Եփրեմի լեռնակողմանովը՝ ապաստանի համար ապաստանի քաղաք Սիւքեմը իր արուարձաններովը, և Գազերն 22 իր արուարձաններովը, Եւ Կաբսեմը իր արուարձաններովը, և Բեթորոնը իր արուարձաններովը. 23 չորս քաղաք։ Եւ Դանի ցեղից՝ Եղթեկէն իր արուարձաններովը, Գաբաթոնը իր արուարձաններով- 24 վը, Այղեղոնը իր արուարձաններովը, և Գեթրեմմոնը իր արուար- 25 ձաններովը. չորս քաղաք։ Եւ Մանասէի կէս ցեղից՝ Թանաքը իր արուարձաններովը, և Գեթրեմմոնը իր արուարձաններովը. եր- 26 կու քաղաք։ Կահաթի որդիներից մնացած ազգատոհմերի բոլոր քաղաքները տասն էին և նորանց արուարձանները։

27 Եւ Ղևտացոց ազգատոհմերից եղող Գերսոնի որդիներին տուին Մանասէի կէս ցեղից ապաստանի համար ապաստանի քաղաք Բասանումը Գովղոնը իր արուարձաններովը. նաև Բեեստարան իր արուարձաններովը. երկու քա- 28 ղաք։ Եւ Իսաքարի ցեղից՝ Կեսիոնը իր արուարձաններովը, Դաբարաթը իր արուարձաններովը, 29 Յերիմութը իր արուարձաններովը, Ենգանիմը իր արուարձաններովը. չորս քաղաք։ Եւ Ասերի ցեղից՝ Մասադը իր արուարձաններովը, Աբդոնը իր արուարձաններովը, Բեղկաթը իր արուար- 31 ձաններովը, և Բոսրը իր արուարձաններովը. չորս քաղաք։ Եւ 32 Նեփթաղիմի ցեղից ապաստանի համար ապաստանի քաղաք Գալիլեայում Կադէսը իր արուարձաններովը. նաև Եմաթդովը իր արուարձաններովը, և Կարթանը իր արուարձաններովը. երեք քաղաք։ 33 Գերսոնեանց բոլոր քաղաքները նորանց ազգատոհմներին համեմատ տասն երեք քաղաք էին՝ և նորանց արուարձանները։

Եւ մնացած Ղևտացիներին՝ 34 Մերարիի որդիանց ազգատոհմներին տուին Զաբուղոնի ցեղից Յեկնամը իր արուարձաններովը, Կարթան իր արուարձաններովը, 35 Դեմնան իր արուարձաններովը, և Նաղալը իր արուարձաններովը. չորս քաղաք։ Եւ 36 Ռուբենի ցեղից Բոսորը իր արուարձաններովը, Յասան իր ար- 37 ուարձաններովը, Կադեմոթը իր արուարձաններովը, և Մեփաաթը իր արուարձաններովը. չորս քաղաք։ Եւ Գադի ցեղից ապա- 38 նոզի համար ապաստանի քաղաք Գաղաադումը Ռամոթը իր արուարձաններովը. նաև Մանայիմը իր արուարձաններովը, Եսեբոնը 39 իր արուարձաններովը, և Յազերը իր արուարձաններովը. ամենը չորս քաղաք։ Ղևտացոց ազգա- 40 տոհմերից մնացած Մերարիի որդիանց բոլոր քաղաքները՝ իրանց տոհմերին համեմատ իրանց վիճակով տասներկու քաղաք եղաւ։ Իսրայէլի որդիանց կալ- 41 ուածքների մէջ Ղևտացոց բոլոր քաղաքները քառասունութը քաղաք էին՝ և նորանց արուարձանները։ Այս քաղաքների ամեն 42 մէկին իր շրջակայ արուարձաններն էին, այս քաղաքների ամենն էլ այնպէս էր։

43 Եւ Տէրը տուաւ Իսրայէլին այն
բոլոր երկիրը, որ երդում էր արել
նորանց Հայրերին տալու. և նո-
րան ժառանգեցին և նորանում
44 բնակեցին: Եւ Տէրը նորանց ա-
մեն կողմից հանգստացրեց, ինչ-
պէս որ նորանց Հայրերին երդում
էր տրել. և նորանց բոլոր թշնա-
միներից բնաւ մէկը չկարողացաւ
նորանց դէմ կենալ. Տէրը նորանց
ամեն թշնամիներին նորանց ձեռ-
45 քը տուաւ: Ոչ մի բան չպակա-
սեց այն ամեն բարի բաներից, որ
Եհովան Իսրայէլի տան համար
խօսել էր. բոլորը կատարուե-
ցաւ:

ԳԼ. ԻԲ

1 Ա՛յն ժամանակ Յեսուն կանչեց
Ռուբենեաններին, Գադեաններին
2 և Մանասէի կէս ցեղին, Եւ նո-
րանց ասաց. Դուք ամենը պա-
հեցիք ինչ որ Տիրոջ ծառան
Մովսէսը ձեզ հրամայել էր. և
իմ խօսքին լսեցիք ամեն բանի
3 մէջ, որ ձեզ պատուիրեցի: Այս-
չափ շատ օրեր մինչև այս օրը ձեր
եղբայրներին չթողեցիք, և ձեր
Տէր Աստուծոյ պատուիրանքի
4 պահպանութիւնը պահեցիք: Եւ
հիմա ձեր Տէր Աստուածը ձեր
եղբայրներին հանգստացրեց, ինչ-
պէս որ նորանց ասաց. ուրեմն
հիմա եւս դարձէք, և գնացէք
ձեր վրաններըդէպի ձեր կալուա-
ծոյ երկիրը, որ Տիրոջ ծառան
Մովսէսը Յորդանանի այն կող-
5 մում ձեզ տուաւ: Միայն թէ
շատ զգուշութիւն արէք որ գոր-
ծադրէք այն պատուիրանքը և
այն օրէնքը, որ Տիրոջ ծառան
Մովսէսը ձեզ պատուիրեց, որ
ձեր Տէր Աստուծոյն սիրէք, և
նորա ամեն ճանապարհներովը
գնաք, և նորա պատուիրանքները
պահէք, և նորան յարիք, և նո-
րան պաշտէք ձեր բոլոր սրտովը
6 և ձեր բոլոր հոգովը: Եւ Յեսուն
օրհնեց նորանց և արձակեց. և
նորանք գնացին իրանց վրաններըդէպի
7 Եւ Մանասէի կէս ցեղին Մովսէ-
սը տուել էր Բասանի մէջ, և
կէսին էլ Յեսուն նորանց եղբայր-
ների հետ Յորդանանի այս կող-
մում տուաւ դէպի արևմուտք:
Եւ երբոր Յեսուն նորանց իրանց
վրաններըդէպի ուղարկեց, նորանց օրհ-
նեց. Եւ նորանց հետ խօսեց ա- 8
սելով. Շատ հարստութիւնով
դարձէք ձեր վրաններըդէպի և խիստ
շատ անասուններով, արծաթով,
ոսկով, պղնձով, երկաթով և
խիստ շատ հանդերձներով, և ձեր
թշնամեաց աւարը ձեր եղբայրնե-
րի հետ բաժանեցէք:
Եւ եւս դարձան գնացին Ռու- 9
բենի որդիքը, Գադի որդիքը և
Մանասէի կէս ցեղը Քանանու
երկրումդէպի Սելովի մէջ Իս-
րայէլի որդիներից, որ գնան Գ-
րանց ժառանգութեան երկիրը՝
այսինքն Գաղաադու երկիրը, որ
Մովսէսի ձեռքով եղած Տիրոջ
հրամանովը առել էին:
Եւ եկան Յորդանանի կողմերը 10
որ Քանանու երկրումն է և Ռու-
բենի որդիքը, Գադի որդիքը և
Մանասէի կէս ցեղը այնտեղ Յոր-
դանանի մօտ մէկ սեղան շինեցին՝
մի մեծ սեղան երևութով: Եւ 11
Իսրայէլի որդիքը լսեցին, թէ ա-
հա Ռուբենի որդիքը, Գադի որ-
դիքը և Մանասէի կէս ցեղը սե-
ղանը շինել են Քանանու երկրի
դէմ Յորդանանի կողմին Իսրա-
յէլի որդիներից անցքի մօտ. Եւ 12
երբոր Իսրայէլի որդիքը լսեցին,
Իսրայէլի որդիներից բոլոր ժողով-
քը Սելովի մէջ ժողովուեցան, որ
նորանց վերայ գնան պատերազմի:
Եւ Իսրայէլի որդիքը Ռուբենեանց, 13
Գադեանց և Մանասէի կէս ցեղի
մօտ Գաղաադի երկիրը ուղարկե-
ցին Եղիազարի որդի քահանայ
քահանային, Եւ նորա հետ տասը 14
իշխան, այսինքն Իսրայէլի ամեն
ցեղերի ամեն մի նահապետու-
թիւնից մէկ իշխան, որոնց ամեն
մէկը Իսրայէլի հազարաւորների
մի նահապետութեան իշխան էր.
Եւ նորանք գնացին Ռուբենի որդ- 15
կանց, Գադի որդիանց և Մանա-
սէի կէս ցեղի մօտ՝ Գաղաադ, և
նորանց հետ խօսեցին ասելով.
Տիրոջ բոլոր ժողովքը այսպէս են 16

աստւած. Դա ի՞նչ մեղք է որ դուք
Իսրայէլի Աստուծոյ դէմ գործեցիք՝ այսօր Տէրէն խոտորելով,
և այսօր Տիրոջ դէմ ապստամբութիւն անելով ձեզ համար
17 սեղան շինեցիք։ Մի՞թէ Փոգովրի
անօրէնութիւնը քիչ էր մեզ համար, որից մինչև այսօրը չմաքրուեցանք, և Տիրոջ ժողովքի վե-
18 րայ եկաւ այն հարուածը. Եւ
դուք այսօր Տէրից խոտորեցէք,
ուրեմն եթէ դուք այսօր Տէրից ապստամբէք, նա էլ էգուց Իսրայէլի բոլոր ժողովքի վերայ կը
19 բարկանայ։ Սակայն եթէ ձեր
կալուածոց երկիրը անմաքուր է՝ համարում, անց կացէք Տիրոջ կալուածոց երկիրը, ուր կանգնած է Տիրոջ խորանը և մեր մէջ
ժառանգութիւն առէք. և Տիրոջ դէմ մի ապստամբիք և մեզ դէմ էլ մի ապստամբիք մեր Տէր
Աստուծոյ սեղանից զատ ձեզ հա-
20 մար սեղան շինելով։ Զէ՞ որ Զա-
բդեան Ախարը նզովածից մասնեց մեզ մեղք գործեց, և բարկութիւնը Իսրայէլի բոլոր ժողովքի վերայ եկաւ և այն մարդը մեռնակ չմեռաւ իր անօրէնութեան
մէջ։

21 Եւ Ռուբէնի որդիքը, Գադի
որդիքը ու Մանասէի կէս ցեղը պատասխանեցին և ասացին Իս-
22 րայէլի հազարապետներին. Աստուածների Աստուածը Եհովան, աստուածների Աստուածը Եհովան գիտէ. և Իսրայէլը թող գիտենայ, եթէ ապստամբութեամբ կամ Տիրոջ դէմ յանցանք գոր-
23 ծելով (մեզ այսօր չօգնեա). Մեզ համար սեղան շինեցինք Տէրից
եւ դառնալու համար, կամ նորա վերայ ողջակէզ և հացի նուէր մատուցանելու համար, և կամ նորա վերայ խաղաղութեան զոհեր անելու համար, Տէրը ինքը
24 քննութիւն անէ։ Եթէ որ մենք այս մեր վախից չշինեցինք, ասելով. որ էգուց ձեր որդիքը մեր որդիանցը կ'ասեն. Թէ Դուք Իսրայէլի Եհովայ Աստուծոյ հետ
25 ի՞նչ ունիք. Ով Ռուբէնեանք և Գադեանք, Եհովան մեր ու ձեր
մէջ Յորդանանը սահման դրաւ. դուք Տէրից բաժին չունիք. և ձեր որդիքը մեր որդիներից Տիրոջ երկիւղը կ'դադարեցնեն. Ա-յս 26
պատճառով ասացինք. Մեզ համար մէկ սեղան շինենք, ոչ թէ ողջակէզի համար, ոչ էլ զոհի համար, Այլ որ վկայ լինի մեր 27
ու ձեր մէջ, և մեզանից յետոյ մեր սերունդների մէջ, որ մեր ողջակէզներով, մեր պատարագներով և մեր խաղաղութեան զոհերով Տիրոջ ծառայութիւնը նորա առջև անենք, և էգուց ձեր որդիքը չասեն մեր որդիանցը՝ Թէ Դուք բաժին չունիք Տէրից։ Եւ 28
ասացինք. Եթէ մեզ կամ մեր սերունդին էգուց ասելու լինին, մենք կ'ասենք թէ Տեսէք Եհովայի սեղանի օրինակը որ մեր հայրերը շինեցին, ոչ թէ ողջակէզի համար կամ զոհի համար, այլ մեր և ձեր մէջ վկայութիւն լինելու համար։ Վատ լինի մեզ 29
որ մենք Տէրից ապստամբենք, և այս օր Տէրիցետ դառնալով սեղան շինենք ողջակէզի համար, հացի նուէրի համար և զոհի համար բացի մեր Տէր Աստուծոյ սեղանից որ խորանի առջևն է։

Եւ փինէհէս քահանան և նա- 30
րա հետ եղող ժողովքի իշխանները և Իսրայէլի հազարապետները լսեցին այն խօսքերը, որ Ռուբէնի որդիքը, Գադի որդիքը և Մանասէի որդիքը խօսեցին, և իրանց հաճոյ երևեցաւ. Եւ Եղիազարի որդի փինէհէս քահանան Ռուբէնի որդիանցը, Գադի որդիանցը և Մանասէի որդիանցն ասաց. Այս օր գիտացինք որ Տէրը մեր մէջն է, որովհետև դուք Տիրոջ դէմ չգործեցիք այս յանցանքը, և ազատեցիք Իսրայէլի որդիանցը Տիրոջ ձեռքից։ Եւ 32
Եղիազարի որդի փինէհէս քահանան և իշխանները եւ դարձան Ռուբէնի որդիանց և Գադի որդիանց մօտից Գաղաադի երկրից Քանանու երկիրը Իսրայէլի որդիանց մօտ և լուր բերին նորանց։
Եւ այս բանը Իսրայէլի որդիանց 33
հաճոյ երևեցաւ, և Իսրայէլի որ-

դիքը օրհնեցին Աստուծոյն, և
չասեցին որ նորանց վերայ գնան
պատերազմելու, որ կործանեն
Ռուբենի որդւոյանց և Գադի որդ-
31 ւոյանց բնակած երկիրը։ Եւ Ռու-
բենի որդիքը և Գադի որդիքը այն
ազգանին անուն դրին, որովհետև
նա մեր մէջը վկայ է որ Եհովան
է Աստուած։

ԳԼ. ԻԴ.

1 Եւ շատ օրերից յետոյ, որ Տէրը
հանգստացրել էր Իսրայէլին նո-
րա շրջակայքում եղած ամեն
թշնամիներից, և Յեսուն ծերա-
2 ցել էր և օրերն անց կացրել։ Եւ
Յեսուն կանչեց բոլոր Իսրայէլին՝
այսինքն նորա ծերերին, իշխան-
ներին, դատաւորներին և ոստի-
կաններին, և նորանց ասաց. Ես
ծերացել եմ, և օրերս անց եմ
3 կացրել. Եւ դուք տեսաք այն ա-
մենը, ինչ որ ձեր Տէր Աստուա-
ծը ձեր առջև արաւ այս բոլոր
ազգերին. վասն զի ձեր Տէր Աստ-
4 ուածը ինքն էր ձեզ համար պա-
տերազմողը։ Նայեցէք, ես ձեզ
համար բաժանեցի այս մնացած
ազգերը վիճակով իրրև ժառան-
գութիւն ձեր ցեղերին համեմատ,
Յորդանանից, և այն ամեն ազ-
գերը որ ես ջարդեցի, մինչև մեծ
5 ծովը դէպի արեւմուտք։ Եւ ձեր
Տէր Աստուածը ինքը կ'հալածէ
նորանց ձեր առջևից և կ'քշէ,
և նորանց երկիրը դուք կ'ժա-
ռանգէք, ինչպէս որ ձեր Տէր
6 Աստուածը ձեզ ասաց։ Ուրեմն
շատ ժիր եղէք, որ պահէք և ա-
նէք բոլոր ինչ որ գրուած է Մով-
սէսի օրինաց գրքի մէջ, որ նո-
րանից չխոտորէք աջ կամ ձախ.
7 Որպէս զի ձեզ մնացած այս
ազգերի մէջ չմտնէք և նորանց
աստուածների անուններըը չյի-
շէք, և նորանցով երդուամ չա-
նէք և նորանց երկրպագութիւն
8 չանէք. Այլ ձեր Տէր Աստու-
ածին յարէք, ինչպէս որ մինչև
9 այս օրը արէք։ Եւ Տէրը ձեր աս-
ջևից մեծ և զօրաւոր ազգեր քըշ-
եց. և մինչև այս օրը ոչ մէկը
ձեզ դէմ չկեցաւ։ Ձեզանից մէկ 10
մարդ հազարը կ'հալածէ, վասն
զի ձեր Տէր Աստուածը ինքն է
ձեզ համար պատերազմողը, ինչ-
պէս որ ձեզ ասաց։
Ուրեմն ձեր անձերին շատ զգու- 11
շութիւն անէք, որ ձեր Տէր Աս-
տուածին սիրէք։ Բայց եթէ նո- 12
րանից ետ դառնաք, և ձեզ մնա
մնացած այս ազգերի մնացորդին
յարէք, և նորանց հետ խնամու-
թիւն անէք, և դուք նորանց
հետ խառնուէք և նորանք էլ ձեզ
հետ, Ստոյգ գիտացէք, որ ձեր 13
Տէր Աստուածը այլ ևս աս ազ-
գերը ձեր առջևից չի հալածել.
այլ նորանք ձեզ համար որոգայթ
ու գայթակղութիւն կ'դառնան,
և ձեր կողերի համար խթաններ,
և ձեր աչքերի համար փուշեր,
մինչև որ բնաջինջ լինէք այս բա-
րի երկրի վերայից, որ ձեր Տէր
Աստուածը ձեզ տուաւ։ Եւ ա- 14
հա ես այս օր գնում եմ ամեն
երկրի ճանապարհը, և դուք ձեր
բոլոր սրտով և բոլոր հոգով գի-
տէք, որ ձեր Տէր Աստուածը
ձեզ համար որչափ բարի խօսքեր
որ ասել էր, նորանցից մի բան
չպակսեց, ամենն էլ ձեզ վերայ
կատարուեցաւ. նորանցից ոչ մէկ
խօսք գետինը չընկաւ։ Եւ ինչ- 15
պէս որ ձեզ վերայ եկաւ ձեր
Տէր Աստուծոյ ձեզ համար ա-
րած ամեն բարի խօսքերը, նոյն-
պէս էլ Տէրը կ'բերէ ձեզ վերայ
այն ամեն չար խօսքերը, մինչև
որ բնաջինջ անէ ձեզ այս բարի
երկրի վերայից, որ ձեր Տէր Աս-
տուածը ձեզ տուաւ։ Եթէ ձեր 16
Տէր Աստուծոյ ձեզ պատուիրած
ուխտը զանց անէք, և գնաք օ-
տար աստուածներ պաշտէք. և
նորանց երկրպագութիւն անէք,
Տիրոջ բարկութիւնը ձեզ վերայ
կ'բորբոքէ, և այն ձեզ սրտաճ
բարի երկրի վերայից շուտով կը
կորչէք։

ԳԼ. ԻԴ.

Եւ Յեսուն Իսրայէլի բոլոր ցե- 1
ղերը Սիւքեմի մէջ ժողովեց, և

Իսրայէլի ծերերին, իշխաններին, դատաւորներին և ատիկաններին կանչեց, և նորանք կանգնեցին
2 Աստուծոյ առջև։ Եւ Յեսուն ասաց բոլոր ժողովրդին. Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս է ասում. վաղուց ձեր հայրերը՝ Աբրահամի հայրը և Նաքովրին հայրը՝ Թարան գետի այն կողմումն էին բնակում, և օտար աստուածներ
3 էին պաշտում. Եւ ես առի ձեր հայր՝ Աբրահամին գետի այն կողմիցը, և նորան ֆանանու բոլոր երկրի մէջ մանծացրի, և շատացրի նորա սերունդը, և Իսահակին նորան տուի. Եւ Իսահակին տուի Յակոբը և Եսաւը, և Եսաւի տուի Սէիր լեռնը իրրև ժառանգութիւն. և Յակոբը և նորա որդիքը իջան Եգիպտոս։
5 Եւ ուղարկեցի Մովսէսին և Ահարոնին, և պարկեցի Եգիպտոսը, (ինչպէս որ նորա մէջ արի,) և
6 յետոյ ձեզ հանեցի։ Եւ ես ձեր հայրերին Եգիպտոսից հանեցի, և դուք եկաք ծովը, և Եգիպտացիները կառքերով և ձիաւորներով մինչև Կարմիր ծովը
7 ձեր հայրերի ետևից ընկան. Եւ Տիրոջն աղաղակեցին, և նա ձեր ու Եգիպտացոց մէջտեղը խաւար դցեց, և ծովը նորանց վերայ բերաւ նորանց ծածկեց. և ձեր աչքերը տեսան Եգիպտոսի մէջ արած բաները, և շատ ժամանակ
8 բնակեցաք անապատի մէջ։ Եւ ձեզ բերի Յորդանանի այն կողմում բնակող Ամօրհացոց երկիրը, և նորանք ձեզ հետ պատերազմ արին. և նորանց երկիրը ժառանգեցիք. և նորանց ձեր առջևից բնաջինջ արի։ Եւ Մովաբի թագաւոր Սեպփորեան Բաղակը վեր կացաւ, և Իսրայէլի դէմ պատերազմ արաւ, և հարկ ուղարկեց Բէովրեան Բաղաամին
10 կանչելու, որ ձեզ անիծէ. Բայց չուզեցի Բաղաամին լսել, և նա ձեզ բարեաւին օրհնեց, և ձեզ
11 ազատեցի նորա ձեռքից։ Եւ Յորդանանից անցնելով եկաք Երիքով և Երիքովի բնակիչները, Ամօրհացիները, Փերեզացիները,
Քանանացիները, Քետացիները, Գերգեսացիները, Խեւացիները ու Յեբուսացիները ձեզ դէմ պատերազմ արին, և նորանց ձեր ձեռքը տուի. Եւ ձեր առջևից իշամեղուները ուղարկեցի, որ նորանց այսինքն Ամօրհացոց երկու թագաւորներին ձեր առջևից քշեցին. ոչ քո սրովը և ոչ քո աղեղովդ. Եւ ձեզ մէկ երկիր տուի, որի մէջ դուք չաշխատեցիք, և քաղաքներ՝ որ դուք չը շինեցիք, և նորանց մէջ բնակում էք և ուտում էք այն այգիներից և ձիթենիներից, որ դուք չտնկեցիք։

Եւ հիմա դուք Տէրից վախեցէք և նորան հաւատարմութեամբ և ճշմարտութեամբ ծառայութիւն արէք, և գցեցէք այն աստուածները, որոնց ձեր հայրերը գետի այն կողմին և Եգիպտոսի մէջ ծառայութիւն արին, և Տիրոջն պաշտեցէք. Բայց եթէ Տիրոջը ծառայութիւն անելը ձեզ անհաճոյ է, ընտրեցէք այսօր ձեզ համար, թէ ո՞րն էք պաշտելու. գետի այն կողմին ձեր հայրերի պաշտած աստուածները՞ը, թէ Ամօրհացո՞ց աստուածները, որոնց երկրի մէջ դուք բնակում էք. բայց ես և իմ տունը Եհովային ենք պաշտելու։

Եւ ժողովուրդը պատասխանեց և ասաց. Քաւ լիցի որ մենք Եհովային թողնենք և ուրիշ աստուածներ պաշտենք. Վասն զի Եհովան է մեր Աստուածը, նա է մեզ և մեր հայրերին Եգիպտոսի երկրից ծառայութեան տունից հանողը. և նա մեր աչքերի առջև արաւ այս մեծ նշանները, և մեզ պահեց մեր ամեն գնացած ճանապարհի մէջ և ամեն ազգերի մէջ, որոնց միջից որ անցանք։ Եհովան քշեց բոլոր ազգերին և երկրիս մէջ բնակող Ամօրհացիներին մեր առջևից. մենք էլ Եհովային ենք պաշտելու, որովհետև մեր Աստուածը նա է։

Եւ Յեսուն ժողովրդին ասաց. Դուք չէք կարող Եհովային պաշտել. վասն զի նա սուրբ Աստ-

ուած է. նա նախանձոտ Աստուած է ձեր յանցանքներն ու
20 մեղքերը չի ներել։ Վասն զի երբ որ ԵՀովային թողէք և օտար աստուածներ պաշտէք, այն ժամանակ ետ կ'դառնայ, և ձեզ բարիք անելուց յետոյ ձեզ չարչարելով բնաջինջ կ'անէ։
21 Եւ ժողովուրդը Յեսուին ասաց. Ոչ. այլ մենք ԵՀովային կը պաշտենք։
22 Եւ Յեսուն ժողովրդին ասաց. Դուք ձեր վկաներն էք, որ դուք ձեզ համար ԵՀովային էք ընտրել նորան պաշտելու համար, և
23 նորանք ասացին. Վկայ ենք։ Ուրեմն հիմա ձեր մէջ եղած օտար աստուածները դէն դցեցէք, և ձեր սիրտը Իսրայէլի ԵՀովայ Աստուծոյն դարձրէք։
24 Եւ ժողովուրդը Յեսուին ասաց. Մենք մեր ԵՀովայ Աստուծոյն կ'պաշտենք և նորա խօսքին կ'լսենք։
25 Եւ նոյն օրը Յեսուն ժողովրդի հետ ուխտ արաւ, և Սիւքեմի մէջ նորա համար կանոն և
26 դատաստան դրաւ։ Եւ Յեսուն այս խօսքերը գրեց Աստուծոյ օրինաց գրքի մէջ և մէկ մեծ քար առաւ, և նորան կանգնեցրեց Տիրոջ սրբարանի մօտ եղած բևեկնու տակին։
27 Եւ Յեսուն բոլոր ժողովրդին ասաց. Ահա այս քարը մեզ վկայ լինի, վասն զի ամ Տիրոջ մեզ հետ խօսած բոլոր խօսքերը լսեց. ուրեմն սա ձեզ համար վկայ լինի, որ մի գուցէ ձեր Աստուծոյն ուրանաք։ 28
Յետոյ Յեսուն ժողովրդին արձակեց, ամեն մարդ դէպի իր ժառանգութեան։
Եւ այս բաներից յետոյ մեռաւ 29
Տիրոջ ծառան Նաւեան Յեսուն, հարիւր տասը տարեկան. Եւ նորան թաղեցին իր ժառանգութեան սահմանի մէջ. Գասս լեռան հիւսիսային կողմում՝ Եփրեմի լեռան վերայ Թամնաթ-սարայի մէջ։ 30
Եւ Իսրայէլը Տիրոջը պաշտեց 31
Յեսուի բոլոր օրերում և այն ծերերի բոլոր օրերում, որ Յեսուից յետոյ ողջ մնացին և որ Իսրայէլի համար Տիրոջ արած ամեն գործքերը գիտում էին։
Եւ Յովսէփի ոսկորները՝ որ Իսրայէլի որդիքը Եգիպտոսից հանել էին, թաղեցին Սիւքեմի մէջ ադարակի այն մասում, որ Յակոբը Սիւքեմի հօր Եմորի որդիներից հարիւր *կէսիթայի ծախու առել էր. և նա Յովսէփի որդւոցանց ժառանգութիւնը եղաւ։ 32
Ահարանի որդի Եղիազարն էլ 33
մեռաւ. և նորան թաղեցին Եփրեմի լեռանումը նորա որդի Փենէհէսին տրուած բլուրի վերայ։

ԳԻՐՔ ԴԱՏԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ եղաւ որ Յեսուի մեռնելուց յետոյ Իսրայէլի որդիքը Տիրոջը հարցրին և ասացին. Ո՞վ վեր կենայ առաջ մեզ համար Քանանացոց վերայ՝ նորանց հետ պատերազմելու։
2 Եւ Տէրն ասաց. Յուդան թող վեր կենայ. ահա երկիրը նորա ձեռքը տուի։
3 Եւ Յուդան իր եղբայր Շմաւոնին ասաց. Ինձ հետ վեր կաց դէպի իմ վիճակը, և Քանանացոց հետ պատերազմենք, և ես էլ քեզ հետ կ'գնամ քո վիճակը. և Շմաւոն գնաց նորա հետ։ 4
Եւ Յուդան ելաւ, և Տէրը Քանանացիներին և Փերեզացիներին նորանց ձեռքը տուաւ. և նորանցից Բեզեկումը տասը հազար մարդ կոտորեցին։
Եւ Բեզեկի մէջ գտան Ադոնիբեզեկին, և նորա հետ պատերազմեցին, և զարկեցին Քանանացիներին և Փերեզացիներին։ 5 6

*փողի անուն է

դոնիբեզեկը փախաւ. բայց նոքա նորա ետևից ընկնելով նորան բռնեցին, և նորա ձեռքերի և ոտքերի մեծ մատները կտրեցին:
7 Եւ Ադոնիբեզեկն ասաց. Եօթանասուն թագաւորներ, որոնց ձեռքերի և ոտքերի մեծ մատները կտրուած էին, իմ սեղանի տակ փշրանքներ էին ժողովում. ես ինչպէս որ արի, Աստուած էլ ինձ այնպէս հատուցում արաւ: Եւ նորան տարին Երուսաղէմ, և այնտեղ մեռաւ:
8 Եւ Յուդայի որդիքը Երուսաղեմի հետ պատերազմ արին և նորան առին, և սուրի բերանով զարկեցին նորանց քաղաքը կրակով այրեցին:
9 Եւ յետոյ Յուդայի որդիքը իջան, որ լեռնակողմում և հարաւային կողմում և դաշտումը բնակող Քանանացոց դէմ պատերազմեն: 10 Եւ Յուդան գնաց Քեբրոնումը բնակող Քանանացիների վերայ (և Քեբրոնի անունը առաջուց Կարիաթ-արբա էր) և զարկեցին Սեսային, Աքիմանին և Թոլմիին: 11 Եւ այնտեղից գնաց Դաբիրի բնակչացը վերայ. (և Դաբիրի անունը առաջուց Կարիաթ-սեփեր էր.) 12 Եւ Քաղէբ ասաց. Ով որ Կարիաթ-սեփերը զարկէ և առնէ, իմ աղջիկն Աքսան նորան կ'տամ իբրև կին: 13 Եւ Քաղէբի փոքր եղբօր Կենեզի որդի Գոթոնիէլը առաւ նորան, և Քաղէբ իր աղջիկն Աքսան նորան տուաւ իբրև կին: 14 Եւ երբոր գնում էին, նորան յորդորեց որ իր հօրից մի պարտէզ ուզէ, և էշից վայր իջաւ. և Քաղէբ ասաց նորան. Ի՞նչ կայ քեզ: 15 Եւ աղջիկը նորան ասաց. Ինձ օրհնութիւն տուր. որովհետև ինձ մի հարաւային երկիր ես տուել, ինձ ջրի աղբիւրներ էլ տուր: Եւ Քաղէբը նորան տուաւ վերի աղբիւրները և ցածի աղբիւրները:
16 Եւ Մովսէսի աներն Կենեցու որդիքը վեր կացան Յուդայի որդիքից հետ Արմաւենեաց քաղաքից Արադի հարաւային կողմին եղող Յուդայի անապատումը, և գնացին բնակեցին ժողովրդի հետ:
17 Եւ Յուդան իր եղբայր Շմաւոնի հետ գնաց. և Սեփաթումը բնակող Քանանացիներին զարկեցին, և նորան նզովեցին. և այն քաղաքի անունը Հորմա կոչեցին:
18 Եւ Յուդայեանք առին Գազան և նորա սահմանը, և Ասկաղոնը և նորա սահմանը, և Ակկարոնը և նորա սահմանը:
19 Եւ Տէրը Յուդայի հետ էր, և նա տիրեց լեռան, բայց հովիտների բնակիչներին չկարողացաւ հալածել, վասն զի նորանք երկաթի կառքեր ունէին:
20 Եւ Քեբրոնը Քաղեբին տուին, ինչպէս որ Մովսէս ասել էր. և այնտեղից հալածեց Ենակի երեք որդիներին:
21 Եւ Բենիամինի որդիքը չհալածեցին Երուսաղէմում բնակող Յեբուսացիներին. և Յեբուսացիք Բենիամինի որդւոց հետ Երուսաղէմում բնակեցին մինչև այս օրը:
22 Եւ Յովսէփի տունն էլ Բեթէլի վերայ վեր կացին, և Տէրը նորանց հետ էր: 23 Եւ Յովսէփի տունը լրտեսեցին Բեթէլը. (և այն քաղաքի անունը առաջուց Լուզ էր.) 24 և պահապանները մի մարդ տեսան, որ այն քաղաքից դուրս էր գալիս և նորան ասացին. Ա-ղաչում ենք, քաղաքը մտնելու տեղը մեզ ցոյց տուր, և քեզ ողորմութիւն կ'անենք: 25 Եւ նա քաղաքը մտնելու տեղը ցոյց տուաւ նորանց, և քաղաքը սուրի բերանով զարկեցին, բայց այն մարդն և նորա բոլոր ազգատոհմը թող տուին: 26 Եւ այն մարդը Քեթացոց երկիրը գնաց, և մեծ քաղաք շինեց, և նորա անունը Լուզ կոչեց, մինչև այս օրը նորա անունը այս է:
27 Եւ Մանասէն չհալածեց Բեթսանը և նորա գիւղաքաղաքները, Թանաքը և նորա գիւղաքաղաքները, Դովրի բնակիչներին և նորա գիւղաքաղաքները, Յեբղաամի բնակիչներին և նորա գիւղաքաղաքները, Մակեդովի բնակիչներին և նորա գիւղաքաղաքները.

և Քանանացիք կամակորութեամբ
28 բնակեցին այս երկրի մէջ։ Եւ երբ որ Իսրայէլ ուժովացաւ՝ Քանանացիներին հարկատու արաւ, բայց նորանց բոլորովին չհալածեց։
29 Եւ Եփրեմը չհալածեց Գազերում բնակող Քանանացիներին. և Քանանացիք նորա հետ Գազերում բնակեցին։
30 Զաբուղոնը չհալածեց Կեդրոնի բնակիչներին և Նահողոլի բնակիչներին. և Քանանացիք նորանց մէջ բնակեցին և հարկատու եղան։
31 Ասեր չհալածեց Ակքովի բնակիչներին, և Սիդոնի, Աքղապի, Աքեզիբի, Ելփայի, Աֆեկի և
32 Րոոբի բնակիչներին. Այլ Ասերեանք այն երկրում բնակող Քանանացիների մէջ բնակեցին. որովհետև նորանց չհալածեցին։
33 Նեփթաղիմ չհալածեց Բեթսամիսի բնակիչներին, և Բեթանաթի բնակիչներին, այլ այն երկրում բնակող Քանանացոց մէջ բնակեց. և Բեթսամիսի ու Բեթանաթի բնակիչները նորան
34 հարկատու եղան։ Եւ Ամորհացիք Դանի որդիներին նեղեցին լեռան վերայ, վասն զի նորանց թող
35 չտուին որ իջնեն հովիտները. Եւ Ամորհացիք կամակորութեամբ բնակեցին Հարէս լեառնումը Այիզոնի և Սաղաբինի մէջ. բայց երբոր Յովսէփի տան ձեռքը ուժովացաւ, նորանք հարկատու
36 եղան։ Եւ Ամորհացոց սահմանը Ակրաբիմի զառ ի վերուցը Վէմիցը և էլ վեր էր։

ԳԼ. Բ

1 Եւ Տիրոջ հրեշտակը Գողգողայից Բոքիմ եկաւ և ասաց. Ձեզ Եգիպտոսից հանեցի, և ձեզ այն երկիրը բերի, որի համար ձեր հայրերին երդում էի արել. և ասացի. Ձեզ հետ արած ուխտս
2 յաւիտեան չեմ դրժիլ. Եւ այս երկրի բնակչաց հետ դաշնակցութիւն մի անէք, նորանց սեղանները քանդեցէք. բայց դուք իմ ձայնին հնազանդութիւն չարիք. դուք այդ ի՞նչ էք արել։ 3
Ասացի. Նորանց ձեր առջևից չեմ քշիլ, և նորանք ձեզ համար թշնամի, և նորանց աստուածները էլ ձեզ համար որոգայթ կը լինին. Եւ երբոր Տիրոջ հրեշտակը բոլոր Իսրայէլի որդիանց հետ այս խօսքերը խօսեց, ժողովուրդը ձայնը բարձրացնելով լացաւ։ Եւ 4 5
այնտեղի անունը Բոքիմ կոչեցին. և այնտեղ Տիրոջը զոհ մատուցին։

Եւ երբոր Յեսուն ժողովուրդն 6
արձակեց, Իսրայէլի որդիքը ամեն մէկն իր կալուածքը գնաց երկիրը ժառանգելու համար։ Եւ ժող- 7
ովուրդը Տիրոջը պաշտեց Յեսուի բոլոր օրերումը, և Յեսուից յետոյ ողջ մնացող՝ և Իսրայէլի համար Տիրոջ արած ամեն մեծ գործքերը տեսնող ծերերի բոլոր օրերումը։ Եւ Տիրոջ ծառայ Նաւեան Յեսուն մեռաւ հարիւր տասը տարեկան։ Եւ նորան թաղե- 8 9
ցին իր ժառանգութեան սահմանում Գաաս լեռան հիւսիսային կողմին Եփրեմի լեռան Թամնաթ–Հարեսումը։ Եւ այն դարի բո- 10
լոր մարդիկը իրանց հայրերի մօտ ժողովուեցան, և նորանցից յետոյ մեկ ուրիշ ազգ վեր կացաւ, որ չէր ճանաչում ոչ Տիրոջը և ոչ այն գործերը, որ նա արել էր Իսրայէլի համար։

Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջ 11
առջև չարութիւն արին և Բահալիմը պաշտեցին. Եւ թողեցին 12
իրանց հայրերի Տէր Աստուծոյն որ Եգիպտոսի երկրից հանել էր նորանց, և հետևեցին օտար աստուածներին, այսինքն իրանց շուրջը եղող ազգաց մի քանի աստուածներին, և նորանց երկրպագութիւն արին և բարկացրին Տիրոջը։ Եւ Տիրոջը թողեցին և 13
պաշտեցին Բահալ և Աստարովթը։ Եւ Տիրոջ բարկութիւնը Իս- 14
րայէլի վերայ բորբոքեց, և կողոպտիչների ձեռքը մատնեց նորանց, և նորանք կողոպտեցին նորանց. և շրջակայ թշնամիներին ծախեց, և այլևս չէին կարող

Գ.Լ. Գ

Եւ ասացք են այն ազգերը, ա- 1
րանց որ Տէրը թող առաւ, որ
նոցանով փորձէ Իսրայէլին այս-
ինքն այն ամենին որ Քանանացոց
բոլոր պատերազմները չէին գի-
տաւ. (Միայն ասոր համար որ 2
Իսրայէլի սերնդոց ականդը գի-
տենան նորանց պատերազմ ա-
ւրեցնել, մանաւանդ առաջուց
չգիտացողները.) Փղշտացոց հինգ 3
նախարարութիւնները, և բոլոր
Քանանացիները, և Սիդոնացին-
րը, և Խիւացիները Լիբանան լեռնուն բնակող
լեռացիները Բաղհերման լեռնից
մինչև Եմաթի մուտքը: Որոնց- 4
մով պիտի փորձէր Իսրայէլին,
որ գիտենար թէ արդեօք կ'լսեն
Տիրոջ պատուիրանքները, որոնք
Մովսէսի ձեռքովը պատուիրեց
նորանց հայրերին:

Եւ Իսրայէլի որդիքը բնակեցին 5
Քանանացոց, Քետացոց, Ամո-
հացոց, Փերեզացոց, Խեւացոց ու
Յեբուսացոց մէջ. Եւ նորանց ազ- 6
ջիկները իրանց համար կին առին,
և իրանց աղջիկները նորանց որ-
դոյցը տուին, և նորանց աստ-
ուածները պաշտեցին: Եւ Իսրա- 7
յէլի որդիքը արին այս չարութի-
ւնը Տիրոջ առջև, և իրանց Տէր
Աստուծոյն մոռացան և Բահա-
ղիմը և Աստարովթը պաշտեցին:
Եւ Տիրոջ բարկութիւնը Իսրայէ- 8
լի վերայ բորբոքից, և նորանց
Միջագետք Քուսարսաթեմ թա-
գաւորի ձեռքը մատնեց. և Իս-
րայէլի որդիքը ութը տարի ծա-
ռայութիւն արին Քուսարսաթե-
մին:

Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջը ա- 9
ղաղակեցին. և Տէրը Իսրայէլի
որդւոյն համար մի փրկիչ կանգ-
նեցրից, Քաղէբի փոքր եղբայր
Կենազի որդի Գոթոնիէլին, որ
ազատեց նորանց: Եւ Տիրոջ Հո- 10
գին եղաւ նորա վերայ, և Իսրա-
յէլի մէջ դատաւորութիւն էր
անում. և երբոր պատերազմի ե-
լաւ, Տէրը Միջագետք Քուսար-
սաթեմ Թագաւորին նորա ձեռ-
քը տուաւ, և նորա ձեռքը Քու-

նում իրանց Հնձուածքի ժամանակ ա-
15 կանգնել: Աւր որ էլ գնում էին
Տիրոջ ձեռքը նորանց վերայ էր
չարիքի համար, ինչպէս որ Տէրը
ասել էր, և ինչպէս որ նորանց
երդում էր արել. և շատ նեղու-
թեան մէջ էին:

16 Եւ Տէրը դատաւորներ յարուց-
րեց, որոնք կողոպտիչներին ձեռ-
17 քից ազատեցին նորանց: Սակայն
իրանց դատաւորներին էլ չլսե-
ցին, և օտար աստուածներին հա-
ւատալով պոռնկութիւն արին, և
նորանց երկրպագեցին. շատով
խոտորեցին այն ճանապարհից,
որի մէջ իրանց հայրերը գնում
էին, Տիրոջ հրամաններին լսելով
18 նրանց պէս չարին: Եւ երբոր Տէ-
րը նորանց համար դատաւորներ
էր կանգնեցնում, Տէրը այն դա-
տաւորի հետ էր լինում և այն
դատաւորի բոլոր օրերում իրանց
թշնամիների ձեռքից ազատում
էր նորանց, վասն զի Տէրը գթա-
ցում էր նորանց նեղութիւն տը-
ւողների և չարչարողների երե-
սից նորանց հեծութիւնների հա-
19 մար: Եւ երբոր այն դատա-
ւորը մեռնում էր, նորանք դար-
ձեալ իրանց հայրերից աւելի էին
անօրինանում օտար աստուած-
ների հետևելով, և նորանց պաշ-
տելով, և նորանց երկրպագու-
թիւն անելով. իրանց գործ-
երից ու իրանց խստապարանոց
20 գնացքից եաս չէին դառնում: Եւ
Տիրոջ բարկութիւնը Իսրայէլի
վերայ բորբոքեցաւ ասաց. Քան-
հետև այս ազգը դանց է անում
այն ուխտը, որ իրանց հայրերին
պատուիրեցի, և իմ ձայնին չէ
21 լսում, Ես էլ այսուհետև նո-
րանց առջևից ոչ մէկին չեմ հա-
լածել այն ազգերից, որոնց որ
22 Յեսուն մեռնելիս թողեց, Որպէս
զի նորանցով Իսրայէլին փորձեմ,
թէ արդեօք իրանց հայրերի պէս
կզգուշանան Տիրոջ ճանապարհը
23 գնալու, թէ ոչ: Եւ Տէրը այս
ազգերին թող առաւ, և շա-
տով չհալածեց և նորանց Յեսուի
ձեռքը չմատնեց:

11 սարամէեմի դէմ պօրացաւ։ Եւ երկիրը քառասուն տարի հանդրտացաւ և Կենդելան Գոթոնիէլը մեռաւ։

12 Եւ Իսրայէլի որդիքը շարունակեցին Տիրոջ առջև չարութիւն անելու. և Տէրը Մովաբի Էգղոն թագաւորին Իսրայէլի դէմ ուժացրեց, որովհետև Տիրոջ առջև չարութիւն արին. 13 Եւ նա Ամմոնի և Ամաղեկի որդիանցն իր մօտ ժողովեց, և գնաց Իսրայէլին զարկեց և Արմաւենեաց քաղաքին տիրեց։ 14 Եւ Իսրայէլի որդիքը ծառայութիւն արին Մովաբի Էգղոն թագաւորին տասնուեօթ տարի։ 15 Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջը աղաղակեցին, և Տէրը նրանց համար մի փրկիչ կանգնեցրեց, Բենիամինեան Գերայի որդի Աեոդին որ ձախաձեռն էր. և Իսրայէլի որդիքը նրա ձեռքով Մովաբի Էգղոն թագաւորին ընծայ ուղարկեցին։ 16 Եւ Աեոդ մէկ կանգուն երկայնութեամբ երկսայրի սուր շինեց իր համար, և կապեց նրան իր հանդերձների տակից իր աջ ազդրի վերայ։ 17 Եւ ընծան տարաւ Մովաբի Էգղոն թագաւորին (և Էգղոն խիստ գեր մարդ էր.) 18 Եւ երբոր ընծան արաւ վերջացաւ, ընծան կրող մարդկանցը ետ ուղարկեց. 19 Եւ ինքը Գաղգաղայում եղած կուռքերի մօտիցը ետ դարձաւ և ասաց. Ով թագաւոր, քեզ հետ մէկ ծածուկ խօսք ունիմ. և նա ասաց. Լուռ։ Եւ բոլոր նրա մօտ եղողները դուրս ելան։ 20 Եւ Աեոդ նրան մօտեցաւ, և նա նստած էր իր յատկացեալ ամրանոցի վերնատունը, և Աեոդ նրան ասաց. Ես Աստուծոյ խօսք ունիմ քեզ համար. և նա թաթի վերայից վեր կացաւ։ 21 Եւ Աեոդ իր ձախ ձեռքը մեկնեց սուրը իր աջ ազդրի վերայից քաշեց և նրա փորը կոխեց։ 22 Եւ սուրի եռանիցը կոթն էլ ներս մտաւ, և ճարպով ծածկուեցաւ սուրը, որովհետև սուրը նրա փորիցը չհանեց, և աղրը դուրս եկաւ։ 23 Եւ Աեոդ դուրս եկաւ սրահը և վերնատունը դռները եռանիցը փակեց և կղպեց. 24 Եւ ինքը դուրս եկաւ։ Եւ նորա ծառաները գնացին նայեցին, որ ահա վերնատան դռները կղպուած էին. և ասացին. Նա անտարակոյս իր ամառանոցին սենեակի մէջ հարկաւորութեան է գնացել։ 25 Եւ ապասեցին մինչև որ ամաչեցին, բայց ահա վերնատան դռները չէր բանում, և բանալին առին բացին, և ահա իրանց տէրը գետնի վերայ ընկած էր մեռած։ 26 Եւ նորանք քանի որ գեռ ուշանում էին, Աեոդ փախաւ, և կուռքերի մօտից անցնելով ազգ առաջ Սէիրա հասաւ։

27 Եւ երբոր հասաւ, Եփրեմի լեռան վերայ փող հնչեցրեց, և Իսրայէլի որդիքը նորա հետ այն լեռնիցը վայր իջան, և ինքը նրանց առջև։ 28 Եւ նրանց ասաց. Իմ ետևից եկէք, վասն զի Տէրը ձեր թշնամիք՝ Մովաբացիներին ձեր ձեռքը տուաւ. և նորա ետևից իջան և Մովաբի ելից յորդանանի անցքերը բռնեցին, և թող չտուին որ մի մարդ անցնէ։ 29 Եւ այն ժամանակ Մովաբից առը հազարի չափ մարդ զարկեցին ամէնն էլ յողեռանդ և զօրաւոր մարդիկ, և մէկը չազատուեցաւ։ 30 Եւ այն օրը Մովաբ Իսրայէլի ձեռքի տակ նուաճուեցաւ. և երկիրը ութսուն տարի հանդստացաւ։

31 Եւ յետոյ Անաթի որդի Սամեգարը եղաւ, և եզնեղի խթանով վեց հարիւր մարդ զարկեց. սա էլ Իսրայէլին ազատեց։

ԳԼ. Գ

1 Եւ Իսրայէլի որդիքը շարունակեցին Տիրոջ առջև չարութիւն անելու, և Աեոդը մեռած էր։ 2 Եւ Տէրը մատնեց նորանց Քանանացոց Յաբին թագաւորին ձեռքը, որ թագաւորում էր Հասորի մէջ, և նորա զօրագլուխը Սիսարա էր, և բնակում էր ազգաց Արիսոթի մէջ։ 3 Եւ Իսրայէլի որ-

դիքը Տէրոջը ազաղակեցին, վասն
զի նա ինը հարիւր երկաթի կառ-
քեր ունէր, և նա քսան տարի
Իսրայէլի որդիանցը սաստիկ նե-
ղեց։
4 Եւ Դեբովրա մարգարէուհին՝
Ղապիդովթի կինը Իսրայէլի մէջ
դատաւորութիւն էր անում այն
5 ժամանակին։ Եւ բնակում էր
Եփրեմի լեռան վերայ Ռամայի
և Բեթէլի մէջտեղը՝ Դեբովրայի
արմաւենու տակ, և Իսրայէլի
որդիքը վեր էին գնում դատաս-
6 տանի համար նորա մօտ։ Եւ նա
մարդ ուղարկեց, և կանչեց Նեփ-
թաղիմի Կադեսից Աբինոամի
որդի Բարակին և նորան ասաց.
Մի՞թէ Իսրայէլի Տէր Աստու-
ծը չհրամայեց թէ. Գնա վեր ե-
լիր Թաբոր լեռը, և վեր առ
քեզ հետ Նեփթաղիմի որդիան-
ցից և Զաբուղոնի որդիանցից
7 տասը հազար մարդ. Եւ ես կը
բերեմ քո դիմացը Յաբինի զօ-
րապետը Սիսարային և նորա
կառքերը և բազմութիւնը Կիսո՛ն
հեղեղատի մօտ և նորան քո ձեռ-
8 քը կ'մատնեմ։ Եւ Բարակը նո-
րան ասաց. Եթէ ինձ հետ գնաս
կ'գնամ, բայց եթէ ինձ հետ չը
9 գնաս, չեմ գնալ։ Եւ նա ասաց.
Անպատճառ ես քեզ հետ կ'գը-
նամ, սակայն փառքը քոնը չի
լինիլ քո գնացած ճանապարհո-
մը, վասն զի Տէրը Սիսարային
մէկ կնոջ ձեռքը կ'մատնէ։ Եւ
Դեբովրա վեր կացաւ Բարակի հետ
10 գնաց Կադէս։ Եւ Բարակը Զա-
բուղոնին և Նեփթաղիմինը ժո-
ղովեց Կադեսի մէջ, և տասը հա-
զար մարդ վեր կացաւ նորան հե-
տևից. Դեբովրան էլ նորա հետ
վեր կացաւ։
11 (Եւ Կենեցի Բաբերը բաժանել
էր Մովսէսի աներ Յոթորի որդիք
Կենեցիներից և իր վրանը կանգ-
նեցրել էր Կադեսի մօտ Սաան-
նիմի կաղնու մօտ։)
12 Եւ Սիսարային իմացրին, որ
Բինոամի որդի Բարակը վեր է ե-
13 լել Թաբոր լեռը։ Եւ Սիսարա
իր բոլոր կառքերը՝ ինը հարիւր
երկաթի կառքերը՝ և իր հետ ե-
ղող բոլոր ղօրքը ազգաց Աբիսո-
թից ժողովեց Կիսո՛ն հեղեղատը։
14 Եւ Դեբովրա ասաց Բարակին.
Վեր կաց, վասն զի Տէրը այսօր
Սիսարային քո ձեռքը մատնեց.
մի՞թէ Տէրը չէ քո առջև դուրս
գալիս։ Եւ Բարակը Թաբոր լեռ-
նից իջաւ. և իր հետ տասը
հազար մարդ։ Եւ Տէրը խորտա-
15 կեց Սիսարային և բոլոր կառք-
երը և բոլոր բանակը Բարակի առ-
ջև սուրի բերանով. և Սիսարա
կառքերից վայր իջաւ և ոտքով
փախաւ։ Եւ Բարակը հալածեց
16 կառքերը և բանակը մինչև ազ-
գերից Աբիսոթը, և Սիսարայի
բոլոր բանակը սուրի բերանով ըն-
կաւ, և մարդ չմնաց։
17 Եւ Սիսարա ոտքով փախաւ
կենեցի Բաբերի կնոջ Յայելի վր-
անը, վասն զի Հասորի Յաբին
Թագաւորի և Կենեցի Բաբերի
տան միջտեղ խաղաղութիւն կար։
18 Եւ Յայելը Սիսարային դիմաւո-
րելու դուրս եկաւ և նորան ա-
սաց. Տէր իմ, դարձիր, ինձ մօտ
դարձիր, մի վախենար։ Եւ նա
դէպի վրանը դարձաւ նորա, և
կինը նորան ծածկեց գորգով։ Եւ
19 նա ասաց կնոջը. Աղաչում եմ
ինձ մի քիչ ջուր տուր՝ խմեմ,
վասն զի ծարաւ եմ։ Նա էլ կա-
թի տիկը բացաւ, և նորան խմե-
ցրեց. և ծածկեց նորան։ Եւ նա
20 կնոջն ասաց. Վրանի դրանը
կանգնիր, և եթէ մարդ գայ, քեզ
հարցնէ և ասէ թէ Այստեղ
մարդ կա՞յ. ասես Չկայ։ Եւ Բա-
21 բերի կինը Յայելը առաւ վրանի
մէկ ցից, և ուռն էլ բռնեց ձեռ-
քին և կամաց նորա մօտ գնաց,
և ցիցը մխեց նորա ծամելիքին և
գետնին բևեռեց և նա քնել էր
և յոգնած էր, և մեռաւ։ Եւ
22 ահա Բարակը Սիսարային հառիչն
էր ընկել, և Յայելը դուրս եկաւ
նորան դիմաւորելու և նորան ա-
սաց. Եկ ցոյց տամ քեզ քո ո-
րոնած մարդը. և նա այն կնոջ
հետ ներս մտաւ, և ահա Սիսա-
րան մեռած վայր ընկած էր և
ցիցը նորա ծամելիքի մէջ էր։
23 Եւ Աստուած այն օր Քանա-

նացոց Յաբին թագաւորին կո-
բացրեց Իսրայէլի որդւոցն առ-
24 ջև։ Եւ Քանանացոց Յաբին թա-
գաւորի դէմ Իսրայէլի որդւոցն
ձեռքը օրէց օր զօրանում էր մին-
չև որ Քանանացոց Յաբին թա-
գաւորին բնաջինջ արին։

ԳԼ. Ե

1 Եւ այն օրը Դեբօրան և Աբինո-
ամի որդի Բարակը երգեցին և ա-
ասացին,
2 Իսրայէլի զօրաւարներն առաջ-
նորդելիս
ժողովուրդը յօժարակամ լինելիս
Օրհնեցէք Տիրոջը։
3 Լսեցէք, թագաւորներ,
Ականջ դրէք, նախարարներ.
Ես Տիրոջը երգում եմ,
Սաղմոս եմ ասում Իսրայէլի Տէր
Աստուծոյն։
4 Ով Տէր, դու Սէիրից դուրս
գալիս,
Դու Եդոմի դաշտից չուելիս,
Երկիրը շարժեց, երկինքը տեղաց,
Եւ ամպերն ջուր տեղացին։
5 Լեռները հալուեցան Տիրոջ
երեսից՝
Այս Սինան Իսրայէլի Տէր Աս-
տուծոյն երեսից։
6 Անաթի որդի Սամգարի օրե-
րին,
Յայելի օրերին՝
Ուղիները դադարել էին
Եւ ճանապարհորդները խոտորնակ
ուղիներով էին գնում։
7 Իսրայէլի մէջ զօրավարներ չմնա-
ցին, չմնացին.
Մինչև որ վեր կացայ ես Դեբօ-
րա,
Մինչև որ վեր կացայ ես մայրս
Իսրայէլի մէջ։
8 Ընտրեցին նոր աստուածներ
Իսկոյն պատերազմ եղաւ դռնե-
րում.
Արդեօք վահան կամ նիզակ ե-
րևեցաւ
Իսրայէլի քառասուն հազարի
մէջ։
9 Իմ սիրտը դէպի Իսրայէլի իշ-
խաններն է.
Ով ժողովրդի անձնուէրները,
Օրհնեցէք Տիրոջը։
10 Սպիտակ էշերի վերայ հեծնողներ,
Դարդի վերայ նստողներ,
Եւ ճանապարհի վերայ գնացող-
ներ, երգեցէք։
11 Աղեղնաւորների ձայնից ազատ
Ջուր հանելու տեղերի մէջ,
Այն տեղ գովաբանում են Տի-
րոջ արդարութիւնները
Նորա զօրավարացը արդարու-
թիւնները Իսրայէլի մէջ,
Երբոր Տիրոջ ժողովուրդը դուներն
իջան։
12 Արթնացիր, արթնացիր, Դե-
բօրա,
Արթնացիր արթնացիր, երգ ա-
սիր,
Վեր կաց, Բարակ,
Գերութիւնդ գերի արա, ով Ա-
բինոամի որդի։
13 Այն ժամանակ փախատականներն
իջան
Ժողովրդի հզօրների մօտ.
Տէրը ինձ հետ իջաւ
Զօրաւորների հետ։
14 Եփրեմից էին, որոնց արմատը Ա-
մաղեկում է.
Քո եւթից, Բենիամին, քո ժո-
ղովրդի մէջ
Մաքիրից իջան իշխաններ՝
Եւ Զաբուղոնից՝ գրի գրիչ
բռնողներ։
15 Եւ Իսաքարի իշխանները Դեբօ-
րայի հետ,
Եւ Իսաքարը Բարակի պէս
Հովիտը ուղարկուեցաւ նորա ե-
տևից.
Ռուբենի հեղեղատների մէջ
Մեծ յուզմունք կար։
16 Ինչո՞ւ համար փարախների մէջ
Նստար,
Որ հօտերի մայելը լսես։
Ռուբենի հեղեղատներում
Մեծ տարակուսանք կար։
17 Գաղաադը Յորդանանի այն կող-
մին էր բնակում,
Եւ Դանը ինչո՞ւ համար նաւերու-
մը պանդուխտ մնաց։
Ասերը ծովի եղերքում է նստում,
Եւ իր նաւահանգիստների մօտ է
բնակում։
18 Զաբուղոնը մի այնպիսի ժողո-
վուրդ է,

Որ իր կեանքն արհամարհում է
'ի մահ,
Եւ նախիմաստին գաշտի բարձր
տեղերումը զինքը։
19 Թագաւորները եկան, պատե-
րազմեցին.
Ամն ժամանակ պատերազմեցին
Քանանացոց թագաւորները
Թանաքի մէջ Մակեդովի ջրի
մօտ.
Փողի աւար չառին։
20 Երինքիցը պատերազմեցին.
Աստեղերն իրանց շրջաններիցը
Սիսարայի դէմ պատերազմեցին։
21 Կիսան հեղեղատը քշեց նորանց՝
Ամն հին հեղեղատը՝ Կիսանի հե-
ղեղատը։
Ով իմ անձը, զօրութիւնը կո-
խիր։
22 Ամն ժամանակ ձիերի սմբակնե-
րը կատարատեցան վազելուցը՝
Նորա զօրաւորների վազելուցը։
23 Անիծեցէք Մարովզը, ասաց Տի-
րոջ հրեշտակը,
Նորա բնակիչներին սաստիկ անի-
ծեցէք,
Վասնզի Տիրոջ օգնութեանը չե-
կան,
Տիրոջ օգնութեանը՝ զօրաւորնե-
րի դէմ։
24 Օրհնեալ լինի կանանց մէջ Յա-
ւէլը
Կինեցի Քաբերի կինը,
Վրաններուն մէջ կանայքներից օրհ-
նեալ լինի։
25 Ջուր ուզեց, կաթ տուաւ,
Իշխանաց ամանովը կոզի մատու-
ցրեց։
26 Իր ձեռքը գիցին մեկնեց,
Եւ իր աջ ձեռքը հիւսնուառին,
Եւ Սիսարային զարկելով գլուխը
ճեղքեց,
Եւ ջարդեց և մխեց նորա ծոծ-
րակը։
27 Կորացաւ նա, Յայելի ոտքերի
մէջ ընկաւ փռուեցաւ,
Նորա ոտքերի մէջ կորացաւ ըն-
կաւ.
Ուր որ կորացաւ այնտեղ ընկաւ
խոցուած։
28 Պատուհանիցը նայում է և աղա-
ղակում է
Սիսարայի մայրը վանդակի եռեւից.
Ինչո՞ւ համար է ուշանում նորա
կառքը գալու,
Ինչո՞ւ են ետանում նորա կառ-
քերի քայլերը։
Նորա խնամուած տիկիններըը պա- 29
տասխանում են նորան,
Հէնց ինքն էլ իր խօսքերի պա-
պասխանը տալիս է իրան.
Անշուշտ նորանք աւար են գտել, 30
բաժանում են
Մէկ կամ երկու աղջիկ իւրա-
քանչիւր հզօրի համար,
Ի-ն Սիսարայի համար գոյնզգոյն
աւար,
Գոյնզգոյն նկարազարդ աւար,
Երկու կողմից հիւսկէն և պարա-
նոցի համար գոյնզգոյն աւար։
Այսպէս կորչեն քո բոլոր թըշ- 31
նամիները, ով Տէր,
Իսկ նորան սիրողները լինին ինչ-
պէս իր զօրութեամբը ծագող
արեը։
Եւ երկիրը հանգստացաւ քա-
ռասուն տարի։

ԳԼ. Զ

Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջ աչ- 1
քին չարութիւն արին, և Տէրը նո-
րանց եօթը տարի Մադիանացոց
ձեռքը մատնեց։ Եւ Մադիանա- 2
ցոց ձեռքը Իսրայէլի վերայ տռաս-
կացաւ. Իսրայէլի որդիքը Մադի-
անացոց պատճառով իրանց հա-
մար լեռների մէջ խոռոչներ,
քարայրներ և պատնէշներ շինե-
ցին։ Եւ երբոր Իսրայէլացիք սերմ 3
էին ցանում, Մադիանացիք նո-
րանց վերայ էին գալիս. և Ամա-
ղեկացիք և արեւելքի բնակիչներն
էլ էին նորանց վերայ գալիս. Եւ 4
նորանց դէմ բանակ կազմելով
փչացնում էին գետնի բերքը մին-
չև Գազա, և Իսրայէլի մէջ ապ-
րուստ չէին թողում, ոչ ոչխար,
ոչ արջառ և ոչ էշ. Վասն զի 5
նորանք իրանց հօտերովը և վր-
րաններովը վեր էին գնում, և
մորեխի պէս բազմաթիւ գա-
լիս, այնպէս որ նորանց և նո-
րանց ուղտերին թիւ չկար, և
երկիրն էին գալիս նորան փչաց-
նելու համար։ Եւ Իսրայէլը Մա- 6

դիանացոց պատճառալ շատ ազ-
քատացար. և Իսրայէլի որդիքը
Տիրոջը աղաղակեցին։
7 Եւ երբոր Իսրայէլ՝ որդիքը Տի-
րոջը աղաղակեցին Մադիանացոց
8 պատճառալ, Տէրը Իսրայէլի որդ-
կանց Համար մէկ մարդ ու-
ղարկեց. և նա ասաց նոցանից.
Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս
է ասում. Ես ձեզ Եգիպտացիցը
հանեցի, և ձեզ ծառայութեան
9 տունից դուրս բերի, Եւ ազա-
տեցի ձեզ Եգիպտացոց ձեռքից,
և բոլոր ձեզ նեղութիւն տուող-
ների ձեռքիցը ազատեցի, և նո-
րանց ձեր առջև քշեցի, և նորանց
10 երկիրը ձեզ տուի. Եւ ձեզ ա-
սացի. Ես եմ Եհովան ձեր Աստ-
ուածը. մի վախենաք Ամորհացոց
աստուածներիցը, որոնց երկրում ը
բնակում էք, բայց դուք իմ
խօսքին չլսեցիք։
11 Եւ Տիրոջ հրեշտակը եկաւ, և
Աբիեզերեան Յովաշի բնակիւղ
տակին նստեց, որ Եփրայի մէջ
էր, և նորա որդի Գեդէոնը կա-
լու էր գորեն էր ձեռում Մա
դիանացոց երեսից փախցնելու
12 համար։ Եւ Տիրոջ հրեշտակը նո-
րան երևեցաւ, և ասաց. Ով հզ-
13 որ զրաւոր, Տէրը քեզ հետ։ Եւ
Գեդէոն նորան ասաց. Ո՛ն, Տէր
իմ, եթէ Տէրը մեր հետ է, ինչո՞ւ
համար այս բոլոր բաները մեզ
հասան. և ո՞ւր են նորա սքան
հրաշքները, որոնք մեր հայրերը
մեզ պատմում են ասելով. թէ
Տէրը մեզ Եգիպտացոց հանեց.
բայց հիմա Տէրը մեզ մերժել է,
և մեզ Մադիանացոց ձեռքն է
14 մատնել։ Եւ Տէրը նորան նայեց,
և ասաց. Գնա քո այդ զօրու-
թիւնովդ, և ազատիր Իսրայէլին
Մադիանացոց ձեռքիցը. չէ՞ որ
15 ես եմ քեզ ուղարկում։ Եւ նա
նորան ասաց. Ո՛ն, Տէր իմ, ես
ինչո՞վ ազատեմ Իսրայէլին. ա-
հա իմ ազգատոհմը Մանասէի
մէջ ամենն աղքատն է, և ես իմ
16 հօր տան կրտսերն եմ։ Եւ Տէրը
նորան ասաց. Իմ քեզ հետ կը
լինիմ, և Մադիանին մէկ մար-
17 դու պէս կ՚զարկես։ Եւ նա նո-
րան ասաց. Աղաչում եմ, եթէ
ես քո աչքի առջև շնորհք գտայ,
ինձ մի նշան ցոյց տուր, թէ դու
18 ես ինձ հետ խօսողը։ Աղաչում
եմ այս տեղից չգնաս, մի՛ չե՛ որ
ես քեզ մօտ գամ, իմ նուէրը
բերեմ և քո առջև դնեմ։ Եւ
նա ասաց. Ես կ՚մնամ մինչև
19 քո ետ դառնալը։ Եւ Գեդէո-
նը գնաց, այծերից մի ուլ, և
մէկ արդու ալիւրից բաղարջ
պատրաստեց. միսը մի սակառ
մէջ դրաւ, և արդուսին էլ մի
կճուճի մէջ ածեց, և նորա տա-
ջև հանեց այն բնեկիւղ տակ ու
մատուցրեց։ Եւ Աստուծոյ հրեշ-
20 տակը նորան ասաց. Միսը ու բա-
զարջը տար, և այս վէմի վերայ
դիր, և արդուսիկը թափիր։ Եւ
նա այնպէս արաւ։ Եւ Տիրոջ
21 հրեշտակը իր ձեռքի գաւազանի
ծայրը մեկնեց ու միսն և բաղար-
ջին դպաւ, և վէմիցը կրակ ել գուրս
եկաւ միսն ու բաղարջն այրեց,
և Տիրոջ հրեշտակը նորա աչքե-
րի առջևից գնաց։ Եւ Գեդէոնը
22 տեսաւ որ նա Տիրոջ հրեշտակն
է և Գեդէոն ասաց. Ո՛ն, Տէր Ե-
հովայ, որ Տիրոջ հրեշտակին ե-
րես առ երես տեսայ։ Բայց Տէրը
23 նորան ասաց. Խաղաղութիւն քեզ,
մի վախենար. չես մեռնիլ։
Եւ Գեդէոնն այնտեղ Տիրոջ
24 համար մի սեղան շինեց, և նո-
րա անունը Եհովայ-շալոմ կո-
չեց, որ մինչև այս օրը կայ Աբի-
եզերեանց Եփրայի մէջ։
Եւ այն գիշերը Տէրը նորան ա-
25 սաց. Առ քո հօր զուարակը և
եօթը տարեկան երկրորդ զուա-
րակը, և քո հօր ունեցած բա-
ղի սեղանը քանդիր, և նորա
վերայի Աստարովթը կտրիր։ Եւ
26 քո Տէր Աստուծոյ համար մի սե-
ղան շինիր այս ապառաժ քարէ
դիման կարգով, և երկրորդ զուա-
րակին առ, և քո կտրած Աստա-
րովթի փայտերովը ողջակէզ ա-
րա։ Եւ Գեդէոնն իր ծառանե-
27 րիցը տասը մարդ առաւ, և Տի-
րոջ իրան ասածին պէս արաւ,
և իր հօր տանէրը, և քաղաքի
մարդկանցից վախեցաւ ցերեկը ա-

նելու, և գիշերն արաւ։
28 Եւ երբոր քաղաքի մարդիկն առաւօտը կանուխ վեր կացան, տեսան որ ահա Բահաղի սեղանը քանդուած, և նորա վերայի Աստարովթը կտրուած, և երկրորդ զուարակը՝ շինուած սեղանի վե-
29 րայ ողջակէզ եղած։ Եւ իրար ասացին. Այս բանն ո՞վ արաւ. և որոնեցին և քննեցին. և առաւեցաւ, թէ Այս բանը Յովասի որդի Գեդէոնն է արել։
30 Քաղաքի մարդիկը Յովասին ասացին. Որդդ դուրս բեր որ մեռնի, վասընզի Բահաղի սեղանը քանդել է և նորա վերայի Աստարովթը
31 կտրել է։ Եւ Յովաս իր վերայ եկող բոլոր մարդկանցն ասաց. Մի թէ դո՞ւք էք Բահաղին իրաւունքը պաշտպանելու, կամ թէ դո՞ւք էք նորան ազատելու. ով որ նորա իրաւունքը պաշտպանէ թող մեռցնուի մինչև առաւօտը. եթէ նա աստուած է՝ թող ինքն իր իրաւունքը պաշտպանէ նորա դէմ, որովհետև իր սեղանը քան-
32 դել է։ Եւ նոյն օրը նորան Երբոաղ անուանեց, վասնզի ասաց. Թող Բահաղն իր իրաւունքը պաշտպանէ նորա դէմ, որովհետև իր սեղանը քանդել է։
33 Եւ բոլոր Մադիանացիները, Ամաղեկացիները և արևելքի բնակիչները մէկտեղ ժողովուեցան, և Յորդանանէն անցնելով Յեզրաէլէլի Հովիտի մէջ բանակ տուին։
34 Եւ Տէրոջ Հոգին հանդչեց Գեդէոնի վերայ, և նա փող հնչեցրեց, և Աբիեզերեանք նորա ետևից ժողովուեցան։
35 Մանասէին պատգամաւորներ ուղարկեց, նա էլ նորա ետևից ժողովուեցաւ. և Ասերին, Զաբուղոնին և Նեփթաղիմին էլ պատգամաւորներ ուղարկեց, և նորանք գնացին նորանց դիմաւորելու։
36 Եւ Գեդէոնն Աստուծոյն ասաց. Եթէ Իսրայէլին իմ ձեռքովս ես ազատելու ինչպէս որ ասել ես,
37 Ահա ես կալումը բուրդի գզմթ կ'դնեմ. եթէ միայն գզմթի վերայ ցօղ և բոլոր գետնի վերայ չորութիւն լինի, այն ժամանակ կ'գիտենամ որ Իսրայէլին իմ ձեռքովս ես ազատելու ինչպէս որ ասել ես։ Եւ այնպէս եղաւ. վա- 38
սընզի առաւօտը կանուխ վեր կացաւ, և գզմթը քամեց, և գզմթից ցօղը հանեց, որ մի կոնք լիքը ջուր եղաւ։ Եւ Գեդէոնն ա- 39
սաց Աստուծոյն. Քո բարկութիւնը ինձ վերայ չբորբոքէ, և միայն այս անգամ էլ գզմթովը փորձեմ. թող միայն գզմթի վերայ չորութիւն, և բոլոր գետնի վերայ ցօղ լինի։ Եւ այն գիշերը 40
Աստուած այնպէս արաւ. միայն գզմթի վերայ չորութիւն, և բոլոր գետնի վերայ ցօղ եղաւ։

ԳԼ. Է

Եւ Յերոբաաղը այսինքն Գե- 1
դէոնը՝ և նորա հետ եղող բոլոր ժողովուրդը կանուխ վեր կացան և բանակեցան Հարօդի աղբիւրի մօտ. և Մադիանի բանակը նո-
րա հիւսիսային կողմերն էր դէպի Մօրէի բլուրը հովիտի մէջ։ Եւ 2
Տէրն ասաց Գեդէոնին. Քեզ հետ եղող ժողովուրդը շատ է, որ ես Մադիամը նորանց ձեռքը տամ, մի գուցէ Իսրայէլն ինձ դէմ պարծենալով ասելով. Թէ իմ ձեռքն ինձ ազատեց։ Եւ հիմա քարոզ 3
կարդալ տուր ժողովրդի ականջին և ասիր. Ով որ վախկոտ և վատասիրտ է՝ թող ետ դառնայ և Գաղաատ լեռնիցը գնայ. և ժո-
ղովրդիցը քսանուերկու հազար հոգի ետ դարձան և մնացին տա-
սը հազար։ Եւ Տէրն ասաց Գե- 4
դէոնին. Ժողովուրդը տակաւին շատ է. ջրի մօտ իջեցրու նորանց, և այն տեղ քեզ համար նորանց փորձեմ. և որի համար քեզ ա-
սեմ թէ՝ Սա քեզ հետ գնայ՝ նա քեզ հետ թող գնայ. և որի հա-
մար քեզ ասեմ թէ՝ Դա քեզ հետ չգնայ՝ նա թող չգնայ։ Եւ 5
ժողովուրդը ջրի մօտ իջեցրեց. և Տէրը Գեդէոնին ասաց. Ով որ շան լակելու պէս ջուրը լեզուովը լակէ, նորան առանձին կանգնե-

ցնես. և ով որ էլ խմելու հա-
մար իր ծնկերի վերայ կորանայ,
6 և ձեռքը բերանը տանելով լա-
կոշների թիւը երեք հարիւր հո-
գի էր, և բոլոր ճնացած ժողո-
վուրդը իրանց ծունկերի վերայ
կորացան ջուր խմելու համար:
7 Եւ Տէրն ասաց Գեդէոնին. Ա-
րեք հարիւր մարդիկներով ո-
րոնք ջուրը լակեցին, ձեզ պիտի
ազատեմ, և Մադիամը քո ձեռ-
քը պիտի մատնեմ. բայց բոլոր
ժողովուրդը տանն մարդ իր տե-
8 ղը գնայ: Ա՛ռաւորոյ ժողովուրդը
պաշար առին իրանց ձեռքը և ի-
րանց փողերն էլ: Եւ Գեդէոն
Իսրայէլի բոլոր մարդկանց՝ տանն
մէկին իր վրանը ուղարկեց, բայց
այն երեք հարիւր մարդկանցով
պինդ կանգնեց, և Մադիամու բա-
նակը նորա տակին հովիտումն էր:
9 Եւ այն գիշերը եղաւ որ Տէրը
նորան ասաց. Ա՛ռ կաց իջիր բա-
նակը, վասնզի նորանց քո ձեռ-
10 քը մատնեցի: Եւ եթէ դու վա-
խենում ես իջնելու, դու քո ծա-
ռայ Փուրայի հետ իջիր բանակը.
11 Եւ կլսես թէ նորանք ինչ են խօ-
սում. և յետոյ ձեռքերդ կ'ու-
ժանան, և բանակը կիջնես:
Եւ իջաւ ինքը և իր ծառան Փու-
րան բանակի ժէջի գունդերի ծայ-
12 րը: Եւ Մադիամն և Ամաղէկը և
բոլոր արևելցիները պառկոտել
էին հովիտումը մարախների պէս
բազմութեամբ, և նորանց ուղ-
տերին թիւ չկար՝ ծովի եղերքին
13 եղող աւազի չափ շատ էին: Եւ
Գեդէոնը գնաց, և ահա մէկ
մարդ իր ընկերին երազ էր պատ-
մում և ասում. Ես երազ տե-
սայ, և ահա մէկ գարիզէն հաց
գլորւում էր դէպի Մադիամու
բանակը, և եկաւ վրանին հա-
տաւ և նորան այնպէս զարկեց
որ վայր ընկաւ, և գլխիվայր դար-
14 ձրեց. և վրանը վայր ընկաւ: Եւ
նորա ընկերը պատասխան տուաւ
և ասաց. Դա ուրիշ բան չէ,
բայց միայն Իսրայէլացի Յովասի
որդի Գեդէոնի սուրը. Աստուած
Մադիամը և բոլոր բանակը նո-
րա ձեռքն է մատնել:

Եւ երբոր Գեդէոնը լսեց երազի 15
պատմութիւնը և նորա մեկնու-
թիւնը, Տիրոջը երկրպագութիւն
արաւ, և դարձաւ բանակը Իս-
րայէլի մօտ և ասաց. Վե՛ր կա-
ցէք, վասն զի Տէրը Մադիամու
բանակը ձեր ձեռքն է տուել:
Եւ այն երեք հարիւր մարդը ե- 16
րեք գունդի բաժանեց, և ամենի
ձեռքը փողեր և դատարկ սա-
փորներ տուաւ և սափորների մէջ
էլ ջահեր. Եւ նորանց ասաց. 17
Ինձանից տեսէք և այնպէս ա-
րէք. և երբոր բանակի եղերքը
հասնեմ, ես ինչպէս որ անեմ,
դուք էլ այնպէս արէք: Եւ երբ 18
որ ես և բոլոր ինձ հետ եղողները
փողը հնչեցնենք, այն ժամանակ
դուք էլ բոլոր բանակի չորս կող-
մին փողերը հնչեցրէք, և ասա-
ցէք. Տիրոջ և Գեդէոնի սրե՛րը:
Եւ Գեդէոնը և նորա հետ եղող 19
հարիւր մարդը կէս գիշերուայ պա-
հի սկզբին, բանակի եղերքը հա-
սան, և հէնց որ պահապաններին
զարթնեցրին, իսկոյն փողերը հըն-
չեցնելով իրանց ձեռքին եղած
սափորները կոտրատեցին: Եւ այն 20
երեք գունդերն էլ փողերը հըն-
չեցրին և սափորները կոտրատե-
ցին, և ձախ ձեռքով ջահերը,
և աջ ձեռքով փողերը բռնած
հնչեցնելու համար աղաղակում
էին, Տիրոջ և Գեդէոնի սուրը:
Եւ ամեն մարդ իր տեղը կանգ- 21
նել էր բանակի շուրջը, և բոլոր
բանակը վազում և աղաղակում
ու փախչում էին: Եւ երբոր այն 22
երեք հարիւր մարդը փողերը հըն-
չեցրին, Տէրը բոլոր բանակի մէջ
ամեն մարդու սուրը իր ընկերի
վերայ դարձրեց. և զօրքը մինչև
Բեթսեետա դէպի Սարերա, մին-
չև Աբելմեուլայի սահմանը՝ Տա-
բեթ փախաւ:

Եւ Իսրայէլացիք Նեփթաղի- 23
մից, Ասերից և բոլոր Մանասէից
ժողովեցան, և Մադիանացւոց
հալածեցին: Եւ Գեդէոն եփրա- 24
իմի բոլոր լեռնակողմը պատգամա-
ւորներ ուղարկեց, ասելով. Մա-
դիանացիներին դիմաւորելու ի-
ջէք, և նորանց առաջ ջրերը բռ-

Ձեզէք մինչև Բնէթարա, նաև Յորդանանը։ Եւ Եփրեմի բոլոր մարդիկը ժողովեցան և ջրերը բռնեցին մինչև Բնէթարա, նաև Յորդանանը։ Եւ Մոպխամնե եկաւ իշխաններին Օրէբին և Զէբին բռնեցին. Օրէբին սպանեցին Օրէբի վէմի մօտ, և Զէբին սպանեցին Զէբի հնձանի մօտ. և Մոպխանց՝ ինէրին հալածեցին, և Օրէբի և Զէբի գլուխները Գեդէօնին բերին Յորդանանու այն կողմից։

ԳԼ. Ը

1 Ու Եփրեմացիք նորան ասացին. Սա ի՞նչ բան է որ մեզ արիր, որ առանց մեզ կանչելու գնացիր Մոպխամնե դեմ պատերազմելու, և նորա հետ սաստիկ վէճ արին։
2 Եւ նա նորանց ասաց. Ես հիմա ի՞նչ եմ արել ձեզ պէս, միթէ Եփրեմի ճառաքաղութիւնը Աբիեզերի այգեկութիցը լաւագոյն չէ՞։
3 Աստուած Մոպխամնե իշխաններին Օրէբին և Զէբին ձեր ձեռքը տուաւ. ես ի՞նչ կարողացայ անել ձեզ պէս։ Յետոյ նորանից միրաը հանդարտացաւ նորա վերայ հէնց որ նա այս խօսքն ասաց։
4 Եւ Գեդէօնն եկաւ Յորդանան, և անցաւ ինքը և իր հետ եղող երեք հարիւր մարդիկը. թէև նրանք յոգնած էին,
5 բայց հալածում էին։ Եւ ասաց Սոկքովթի մարդկանցը. Աղաչում եմ, եղէք ժողովուրդին հացի նշանակներ տուէք, վասն զի նուաղած են. և ես Մոպխամնե թագաւորներին Զեբէէին և Սալմանային հալածում եմ։
6 Սոկքովթի իշխանները ասացին. Մի՞թէ Զեբէէի ու Սալմանայի ձեռքը արդէն քո ձեռքի մէջ է, որ մենք քո զօրքին հաց տանք։
7 Եւ Գեդէօնն ասաց. Ուրեմն երբոր Տէրը Զեբէէին և Սալմանային իմ ձեռքը տայ, ձեր մարմինները անապատի փուշերովն ու տատասկներովը պիտի ծեծեմ։
8 Եւ այնտեղից վեր գնաց Փանուէլ, և նորանց էլ այնպէս ասաց. բայց Փանուէլի մարդիկը Սոկքովթի մարդկանց պատասխանի պէս պատասխանեցին։ Եւ Փանուէլի մարդկանցն էլ ասաց՝ թէ, երբ որ խաղաղութեամբ եմ դառնում, այդ աշտարակը պիտի քանդեմ։
10 Եւ Զեբէէն ու Սալմանան Կարկոռում էին և նորանց հետ նոր բանց բանակը տասնհինգ հազար մարդ. և ընկած մեռածները հարիւր քսան հազար սուսերամերկ մարդիկ էին։
11 Եւ Գեդէօնը վեր ելաւ նոբահի և Յոգբեհայի արևելեան կողմից վրանաբնակների ճանապարհովը և բանակը զարկեց, վասն զի բանակը անհոգ էր։
12 Եւ Զեբէէ ու Սալմանա փախան. և Գեդէօնը նորանց հալածեց և Մոպխամնե երկու թագաւորներին Զեբէէին և Սալմանային բռնեց, և բոլոր բանակը դղրդեցրեց։
13 Եւ Յովաս որդի Գեդէօնը պատերազմից ետ դարձաւ Արեսի զառի վերից։
14 Եւ Սոկքովթի մարդկանցից մի երիտասարդ բռնեց, և նորան հարցրեց. և նա գրեց նորան Սոկքովթի իշխաններին և ծերերին եօթանասունևեօթը մարդ։
15 Եւ Գեդէօնը Սոկքովթի բնակիչների մօտ եկաւ, և ասաց. Ահա Զեբէէն ու Սալմանան, որոնց համար ինձ նախատեցիք՝ ասելով. Միթէ Զեբէէի ու Սալմանայի ձեռքը արդէն քո ձեռքի մէջ է, որ մենք քո նուաղած մարդկանցը հաց տանք։
16 Եւ քաղաքի ծերերին առաւ, և անապատի փուշերը և տատասկները, և նորանցով Սոկքովթի մարդկանցը պատժեց։
17 Եւ Փանուէլի աշտարակը քանդեց և քաղաքի մարդկանց ժողովից։
18 Եւ Զեբէէին և Սալմանային ասաց. Ինչպէս մարդիկ էին նորանք, որոնց Թաբովրում սպանեցիք։ Եւ նորանք ասացին. Ինչպէս դու ես, նորանք էլ այնպէս էին. ամեն մէկը թագաւորի որդու էր նմանում։
19 Եւ նա ասաց.

Ետրանք իմ եղբարցն՝ ծնօթ
տղայքն էին, Կենդանի է Տէրը,
եթէ դուք նորանց ողջ թողէիք,
20 ես ձեզ չէի մեռցնել։ Եւ իր ան-
բանիկ որդի Յեմիերիան ասաց. Վ՚ր
կաց գորանց մեռցրու։ Բայց պա-
տանին իր սուրը չքաշից. վասն
զի վախեցաւ, որովհետև մանկա-
21 հասակ էր։ Եւ Ջելէէն ու Սաղ-
մանան ասացին. Դու մեր կաց և
մեզ ապանիր, վասն զի մարդուս
պիժը իրան համեմատ կ՚լինի. և
Գեդէօն մեր կացաւ և Ջերէէն
և Սաղմանային մեռցրեց. և նո-
րանց ուղտերի պարանոցի վերայ
եղած մահիճները մեր առաւ։
22 Եւ Իսրայէլի մարդիկը Գեդէօ-
նին ասացին. Մեր վերայ թագա-
ւորիր, դու էլ, քո որդին էլ, քո
որդու որդին էլ, որովհետև
մեզ Մադիամու ձեռքին ազա-
23 տեցիր։ Եւ Գեդէօնը նորանց ա-
սաց. Ես ձեր վերայ չեմ թագա-
ւորիլ, ոչ էլ իմ որդին ձեր վե-
րայ կ՚թագաւորէ. Տէրն թա-
24 գաւորէ ձեզ վերայ։ Յետոյ Գե-
դէօնը նորանց ասաց. Ձեզանից
մի բան խնդրեմ. ամեն մարդ իր
աւար օղերն ինձ տայ. (քանզի
նորանք Իսմայելացի լինելով ա-
25 կի օղեր ունէին։) Եւ նորանք ա-
սացին. Տալիս ենք. և մի հան-
դերձ փռեցին. և ամեն մարդ իր
26 աւարի օղերը այնտեղ գցեց։ Եւ
այն իր ուզած ականի օղերի կշիռ-
քը հազար հօթը հարիւր սկի ա-
կի եղաւ. բացի մանհիկներից,
պինդերից և Մադիամու թագա-
ւորների վերայի ծիրանի պատմու-
ճաններից և բացի նորանից ու-
ղտերի պարանոցի վերայ եղած
27 մանեակներից։ Եւ Գեդէօնը նո-
րանից մաղ. Ձեղանից
մի բան խնդրեմ. ամեն մարդ իր
աւար օղերն ինձ տայ. (քանզի
նորանք Իսմայելացի լինելով ա-
25 կի օղեր ունէին։) Եւ նորանք ա-
սացին. Տալիս ենք. և մի հան-
դերձ փռեցին. և ամեն մարդ իր
26 աւարի օղերը այնտեղ գցեց։ Եւ
այն իր ուզած ականի օղերի կշիռ-
քը հազար հօթը հարիւր սկի ա-
կի եղաւ. բացի մանհիկներից,
պինդերից և Մադիամու թագա-
ւորների վերայի ծիրանի պատմու-
ճաններից և բացի նորանից ու-
ղտերի պարանոցի վերայ եղած
27 մանեակներից։ Եւ Գեդէօնը նո-
րանցով մի եփուդ շինեց, և իր
Եփրա քաղաքի մէջ դրաւ. և բո-
լոր Իսրայէլ այնտեղ նորան հե-
տևելով պոռնկութեցաւ. և Գե-
դէօնի և նորա տան համար որո-
գայթ եղաւ։
28 Այսպէս Մադիամը Իսրայէլի
որդիներից առջև նուաճուեցաւ,
և այլ ևս գլուխ չբարձրացրեց.
և Գեդէօնի օրերին երկիրը քա-
ռասուն տարի հանգստացաւ։

29 Եւ Յոաեսի որդի Յերոբաաղը
30 գնաց և նստեց իր տանը։ Եւ Գե-
դէօնը եօթանասուն տղայ ունէր
իր երանքից ելած վասն զի շատ
31 կանայք ունէր։ Եւ Սիւքեմի մէջ
ունեցած հարճն էլ նորա համար
մի տղայ ծնաւ. և նորա անունը
32 Աբիմելէք դրաւ։ Եւ Յոաեսի որ-
դի Գեդէօնը բարի ծերութեամբ
մեռաւ, և Աբիէզերեանց էվրա-
յի մէջ իր հօր Յոաեսի գերեզմա-
նում թաղուեցաւ։
33 Եւ եղաւ երբոր Գեդէօնը մե-
ռաւ՝ Իսրայէլի որդիքը նո՛ր դար-
ձան, և Բահաղիմի հետևելով
պոռնկուեցան, և Բահաղ-բերի-
թին իրանց աստուած արին։ Եւ
34 Իսրայէլի որդիքը չյիշեցին իրանց
Տէր Աստուծոյն, որ իրանց ազա-
տել էր իրանց շրջակայ ամեն
35 թշնամիների ձեռքից։ Եւ ոչ
բարութիւն (ողորմութիւն Գեդէօնի)
տանը գիտութեան չարին ա-
մեն բարութեան համեմատ, որ
նա արաւ Իսրայէլին։

Գ.Լ. Թ

1 Եւ Յերոբաաղի որդի Աբիմելէք
գնաց Սիւքեմ՝ իր մօր ե-
ղբայրների մօտ. և խօսեց նորանց
հետ և իր մօր հօր բոլոր ազգա-
2 տոհմի հետ, ասելով Աղաչեմ
եմ՝ Սիւքեմի բոլոր ընակիչ ա-
նձնիներին ասացէք թէ՝ Որն է
լաւ ձեզ համար, Յերոբաաղին
բոլոր որդիքը՝ եօթանասուն
մարդիանց ձեզ վերայ թագաւո-
րի՞լը, թէ մէկ մարդու ձեր վե-
րայ թագաւորիլը. և յիշեցէք,
որ ես ձեր ոսկրն ու ձեր մար-
մինն եմ։ Եւ նորա մօր եղբայր-
3 նեքը նորա մասին ամեն այս խօս-
քերը Սիւքեմի բոլոր ընակիչ
անձնիներին ասացին. և նորանց
սիրտը դարձաւ Աբիմելիքին, վա-
րանդի ասացին. թէ Նա մեր ե-
ղբայրն է։ Եւ Բահաղ-բերիթի
4 տանից եօթանասուն կտոր ար-
ծաթ տուին նորան. և Աբիմելէ-
քը նորանցով դատարկամիտ և
արիկայ մարդիկ վարձքով բռնեց,
և նորա ետևից գնացին։ Եւ
5

գնաց Եփրայ իր հօր տունը, և
իր եղբայրներին՝ Յերոբաաղի որդ-
կանցը՝ եօթանասուն հոգի մէկ
քարի վերայ սպանեց. բայց Յե-
րոբաաղին փոքր տղան Յովաթամ
ողջ մնաց ըստ որում թաք էր
6 կացել։ Եւ բոլոր Սիւքեմի բնա-
կիչները և Մելօնի բոլոր տունը
մէկտեղ ժողովուեցան, և գնա-
ցին Աբիմելիքին թագաւոր արին
արձանի կաղնու մօտ որ Սիւքե-
մումն է։
7 Եւ ասին Յովաթամին իմա-
ցրին. և նա գնաց Գարիզին լե-
ռան գլխին կանգնեց, և ձայնը
բարձրացնելով աղաղակեց և նո-
րանց ասաց. Ով Սիւքեմի բնա-
կիչներ, ինձ լսեցէք, և Աստ-
8 ուած ձեզ լսէ։ Ծառերը գնացին
որ իրանց համար մի թագաւոր
օծեն, և ձիթենուն ասացին.
Մեզ վերայ թագաւոր եղիր։
9 Բայց ձիթենին նորանց ասաց.
Իմ պարարտութիւնը թողեմ, որ
ինձանով պատուվում են Աստ-
ուած ու մարդիկը, և գնամ ծա-
10 ռերի վերայ թափառե՞մ։ Եւ
ծառերը թզենուն ասացին. Դու
եկ մեզ վերայ թագաւոր եղիր։
11 Եւ թզենին նորանց ասաց. Իմ
քաղցրութիւնը և իմ լաւ պտու-
ղը թողեմ, և գնամ ծառերի վե-
12 րայ թափառե՞մ։ Ան ժամանակ
ծառերը որթին ասացին. Դու եկ
13 մեզ վերայ թագաւոր եղիր։ Որ-
թին էլ նորանց ասաց. Իմ Աստ-
ուած ու մարդիկ ուրախացնող
գինին թողեմ, և գնամ ծառերի
14 վերայ թափառե՞մ։ Ան ժամա-
նակ ամեն ծառերը գԺնկին ա-
ասացին. Դու եկ մեզ վերայ թա-
15 գաւոր եղիր։ Եւ գԺնիկը ծառե-
րին ասաց. Եթէ դուք իրաւ ինձ
ձեզ վերայ թագաւոր էք օծում,
եկէք իմ հովանու տակին նստե-
ցէք, եթէ ոչ՝ գԺնկիցը կրակ
դուրս գայ և Լիբանանու եղևին-
16 ները սպրէ։ Եւ հիմա եթէ դուք
ճշմարտութեամբ և արդարու-
թեամբ վարուեցիք, և Աբիմելէ-
քին թագաւոր արիք, և եթէ
Յերոբաաղին և նորա տունը բա-
րութիւն արիք, և եթէ նորա ձե-
ռաց գործքերի համեմատ նորան
հատուցում արիք. (Որ իմ հայրը 17
ձեզ համար պատերազմ արաւ,
և իր անձը չխնայեց, և ձեզ Մա-
դիամու ձեռքից ազատեց. Իսկ 18
դուք այսօր իմ հօր տան դէմ
էք կանգնել, և նորա որդիքը՝
եօթանասուն մարդ մէկ քարի վե-
րայ սպանեցիք, և նորա աղախնի
տղան Աբիմելէքը՝ Սիւքեմի բը-
նակչաց վերայ թագաւոր արիք,
քանի որ ձեր եղբայրն էր.) Եւ 19
եթէ այսօր Յերոբաաղի և նորա
տան հետ ճշմարտութեամբ և
արդարութեամբ վարուեցիք, Ա-
բիմելիքի վերայ ուրախացէք, նա
էլ ձեզ վերայ թող ուրախանայ.
Ապա եթէ ոչ՝ թող Աբիմելէքից 20
կրակ դուրս գայ և Սիւքեմի բը-
նակիչներին և Մելօնի տունը սպ-
րէ. և Սիւքեմի բնակիչներից, և
Մելոնի տանիցը կրակ դուրս գայ
և Աբիմելէքին սպրէ։ Եւ Յովա- 21
թամը փախաւ ազատուեցաւ, և
գնաց Բէերը, և իր Աբիմելէք եղ-
բօրից վեհեռացաւ այն տեղ բնակեց։
Եւ Աբիմելէքը Իսրայէլի վերայ 22
երեք տարի իշխեց։ Եւ Աստուած 23
Աբիմելէքի և Սիւքեմի բնակիչնե-
րի միջ չար ոգի ուղարկեց, և
Սիւքեմի բնակիչները Աբիմելէքի
հետ նենգութեամբ վարուեցան.
Որպէս զի Յերոբաաղի եօթանա- 24
սուն որդկանց եղած անիրաւու-
թիւնը գայ՝ և նորանց արիւնը նո-
րանց եղբօր Աբիմելէքի վերայ
հասնէ, որ նորանց սպանել էր,
և Սիւքեմի բնակչաց վերայ՝ ո-
րոնք նորա ձեռքերը զօրացրել
էին իր եղբայրներին սպանելու։
Եւ Սիւքեմի բնակիչները լեռա- 25
ների գլխներին նորա համար դա-
րաններ պատրաստեցին, և կո-
ղոպտում էին իրանց մօտով ա-
ռնող անցնողներին. և այս բանը
իմացրին Աբիմելէքին։ Եւ Ակեդի 26
որդի Գաատը և նորա եղբայրները
եկան՝ Սիւքեմի մէջ մտան, և Սի-
քեմի բնակիչները նորան սպառի-
նեցին. Եւ դուրս եկան դաշտը և 27
իրանց այգիների խաղողները քա-
ղեցին, և կոխելով ուրախութիւն
արին, և իրանց Աստուծոյն տունը

մտան, և կերան ու խմեցին և Ա-
28 բիմելէքին անիծեցին։ Եւ Աբեդ-
եան Գաաղն ասաց. Աբիմելէքն
ո՞վ է, և Սիւքէմն ո՞վ է որ մենք
նորան ծառայենք, չէ՞ որ Յերո-
բաաղի տղան է, և Զեբուղը նո-
րա փոխանորդը։ Սիւքեմի հօր՝
Եմովրի մարդկանցը ծառայու-
թիւն արէք. և մենք ինչո՞ւ հա-
29 մար նորան ծառայենք։ Երանի
թէ այս ժողովուրդը իմ ձեռքն
անցնէր. և ես Աբիմելէքին հե-
ռացնէի. և Աբիմելէքին ասաց.
Զօրքերդ շատացրու և դուրս եկ։
30 Եւ քաղաքի իշխան՝ Զեբուղը
երբոր լսեց Աբեդեան Գաաղի
խօսքերը, բարկութիւնը բորբո-
31 քեց։ Եւ խորամանկ կերպով Ա-
բիմելէքին պատգամաւորներ ու-
ղարկեց, ասելով. Ահա Աբեդեան
Գաաղը և իր եղբայրները եկել
են Սիւքէմ, և ահա նորանք քա-
32 ղաքը քեզ դէմ են հանում։ Եւ
հիմա դու և քեզ հետ լինող
ժողովուրդը գիշերով վեր կաց,
33 և դաշտումը դարան նատիր. Եւ
առաւօտը հէնց որ արեգակը ծա-
գէ կանուխ վեր կաց, ու քաղա-
քի վերայ յարձակուիր, և ահա
նա և նորա հետ եղող ժողովուր-
դը քեզ դէմ են գուրս գալու.
այն ժամանակ ձեռքիցդ եկածը
արա նորան։
34 Եւ Աբիմելէքը և նորա հետ
եղող բոլոր ժողովուրդը գիշերով
վեր կացան, և չորս գունդով
Սիւքեմի դէմ դարանի մէջ նըս-
35 տեցին։ Եւ Աբեդեան Գաաղը
դուրս եկաւ և քաղաքի դրան
առջև կանգնեց. և Աբիմելէքը և
իր հետը եղող ժողովուրդը գուրս
36 եկան դարաններիցը։ Եւ Գաաղը
տեսաւ այն ժողովուրդը և Զե-
բուղին ասաց. Ահա լեռների
գլխիցը ժողովուրդ է իջնում։ Եւ
Զեբուղը նորան ասաց. Դու լեռ-
ների շուքն ես տեսնում մարդ-
37 կանց պէս։ Եւ Գաաղը շարունա-
կեց խօսքը և ասաց. Ահա երկրի
բարձր տեղիցը ժողովուրդ է իջ-
նում, և մէկ գունդ էլ է գալիս
Մէօնենիմի կաղնու ճանապարհո-
38 վը. Եւ Զեբուղը նորան ասաց.
Ո՞ւր է քո այն բերանը, որով
ասում էիր. Թէ Աբիմելէքն ո՞վ
է՝ որ մենք նորան ծառայութիւն
անենք. չէ՞ որ սա այն ժողովուր-
դըն են, որ դու արհամարհեցիր.
հիմա վեր կաց նորա հետ պատե-
րազմիր։ Եւ Գաաղը Սիւքեմի 39
բնակչաց առջև դուրս եկաւ և
Աբիմելէքի հետ պատերազմ ա-
րաւ։ Եւ Աբիմելէքը նորան հա- 40
լածեց և նա նորա առջևիցը փա-
խաւ, և շատերը մեռած ընկան
մինչև դրան առջևը։ Եւ Աբիմե- 41
լէքը Արումայի մէջ բնակեց, և
Զեբուղ՝ Գաաղին և նորա եղբայր-
ներին քշեց Սիւքեմի մէջ բնա-
կելուց։ Եւ հետևեալ օրը ժո- 42
ղովուրդը դուրս եկաւ դաշտը.
և Աբիմելէքին իմացրին, Եւ նա 43
ժողովուրդն առաւ՝ երեք գունդի
բաժանեց, և դաշտի մէջ դարա-
նամուտ եղաւ. և տեսաւ որ ա-
հա ժողովուրդը քաղաքիցը դուրս
է գալիս, և նորանց վերայ յար-
ձակուելով նորանց զարկեց։ Եւ 44
Աբիմելէքը և նորա հետ եղող
գունդը յարձակուեցան՝ քաղաքի
դրան առջև կանգնեցին, և եր-
կու գունդերը բոլոր դաշտի մէջ
եղողների վերայ յարձակուելով
նորանց զարկեցին։ Եւ Աբիմե- 45
լէքն այն բոլոր օրը քաղաքի հետ
պատերազմեց և քաղաքն առաւ,
և այն մարդիկը որ մէջն էին կո-
տորեց, և քաղաքը քանդեց և
աղ ցանեց։ Եւ Սիւքեմի աշտա- 46
րակի բոլոր բնակիչները երբոր լը-
սեցին, Բերիթ աստուծոյ տան
բերդը մտան։ Եւ Աբիմելէքին ի- 47
մացրին, թէ Սիւքեմի աշտարա-
կի բոլոր բնակիչները ժողովուել
են։ Եւ Աբիմելէքը և իր հետ ե- 48
ղող բոլոր ժողովուրդը վեր ելան
Սելմոն լեռը. և Աբիմելէքը տա-
պարը ձեռքն առաւ և մի ծառի
ոստ կտրեց, և նորան վեր առաւ
իր ուսի վերայ դրաւ, և իր հետ
եղող ժողովուրդին ասաց. Ահա
տեսաք ինչ որ ես արի, շուտով
դուք էլ ինձ պէս արէք։ Եւ 49
ժողովուրդի ամէնն էլ մէկ մէկ
ոստ կտրեցին. և Աբիմելէքի ե-
տևից գնացին, և բերդի մօտ դը-

բին, և նորանցով բերդը կրակով այրեցին. այսպես Աբիմելէք աշտարակի բոլոր մարդիկն էլ՝ որքան Հազարի չափ մարդիկ և կանայք էին ժեռան։

50 Եւ Աբիմելէք գնաց Թեբէս, և Թեբէսը պաշարեց, և նորան
51 առաւ։ Եւ քաղ՚քի մէջտեղը մէկ պինդ աշտարակ կար. և քաղաքի բոլոր բնակիչները՝ մարդիկը և կանայքը փախան այնտեղ, և դուռը նորանց համար գոցեցին և վեր
52 եռան աշտարակի կտուրը։ Եւ Աբիմելէք գնաց մինչև աշտարակը և նորա հետ պատերազմ արաւ, և աշտարակի դրանը մօտեցաւ որ նորան կրակով այրէ։
53 Եւ մի կին Աբիմելէքի գլխին երկանաքարի մի կտոր գցեց, և
54 նորա գագաթը կոտրեց։ Եւ նա շուտով իր պէնքերը կրող երիտասարդին կանչեց և նորան ասաց. Սուրդ քաշիր և ինձ մեռցրու, մի գուցէ ինձ համար ասեն. Թէ մէկ կին սպանեց նորան։ Եւ երիտասարդը նորան խոցեց, և նա
55 մեռաւ։ Եւ Իսրայէլի մարդիկը տեսան, որ Աբիմելէքը մեռաւ, և ամեն մարդ իր տեղը գնաց։
56 Այսպէս Աստուած հատուցեց Աբիմելէքի չարութիւնը, որ նա իր հօրն արել էր իր եօթանասուն եղբայրներին սպանելով։
57 Եւ Սիւքեմի մարդկանց բոլոր չարութիւնը Աստուած նորանց գլխին գարձրեց. և Յերոբաալի որդու Յովաթամի անէծքը նորանց վերայ եկաւ։

ԳԼ. Ժ

1 Եւ Աբիմելէքից յետոյ վեր կացաւ Իսրայէլին ազատելու համար Իսաքարեան Դոդոյի որդու Փուայի որդի Թովղան. և նա Եփրեմի լեռնային մէջ Սամիրի մէջ էր
2 բնակուած։ Եւ Իսրայէլի մէջ քսան և երեք տարի դատաւորութիւն արաւ, և մեռաւ և Սամիրի մէջ թաղուեցաւ։
3 Եւ նորանից յետոյ Գաղաադացի Յայիրը վեր կացաւ և Իսրայէլի մէջ քսան և երկու տարի դատաւորութիւն արաւ։ Եւ նա
4 երեսուն որդի ունէր, որոնք երեսուն մատնաւոր էշերի վերայ հեծնում էին. և նորանք Գաղաադացի երկրի մէջ երեսուն քաղաք ունէին. որոնք մինչև այս օրը ասւում են Յայիրի գիւղաքաղաքները։ Եւ
5 Յայիրը մեռաւ և Կամոնի մէջ թաղուեցաւ։
6 Եւ Իսրայէլի որդիքը շարունակեցին Տիրոջ առաջ չարութիւն անելու, և պաշտեցին Բահաղիմը և Աստարովթը, և Ասորց աստուածները, և Սիդոնի աստուածները, և Մովաբի աստուածները, և Ամմոնի որդւոց աստուածները, և Փղշտացոց աստուածները, և Տիրոջ թողեցին և նորան ծառայութիւն չարին։ Եւ Տիրոջ
7 բարկութիւնը Իսրայէլի վերայ բորբոքեց, և նորանց Փղշտացոց ձեռքը և Ամմոնի որդւոց ձեռքը մատնեց։ Եւ նորանք նեղեցին
8 և հարատևողեցին Իսրայէլի որդիներին այն տարուց մինչև տասնութ տարի, այսինքն բոլոր Իսրայէլի որդիներին որոնք Յորդանանի այն կողմին Գաղաադացի էին Ամորհացոց երկրի մէջ։
9 Եւ Ամմոնի որդիքը Յորդանանից անցան, որ Յուդայի հետ, Բենիամինի հետ և Եփրեմի տան հետ պատերազմ անեն. և Իսրայէլը շատ մեծ նեղութեան մէջ էր։
10 Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջը աղաղակեցին և ասացին. Քեզ դէմ մեղք գործեցինք, որովհետև մեր Աստուծոյն թողեցինք և Բահաղիմը պաշտեցինք։ Եւ Տէրը
11 Իսրայէլի որդւոցն ասաց. Չէ՞ որ Եգիպտացիներից, Ամորհացիներից, Ամմոնի որդիներից և Փղշտացիներից. Նաև
12 Սիդոնացիները, Ամաղեկացիները և Մաոնացիները ձեզ նեղում էին, և դուք ինձ աղաղակեցիք, ես ձեզ նորանց ձեռքից ազատեցի։ Բայց դուք ինձ թողեցիք
13 և ուրիշ աստուածների ծառայութիւն արիք. նորա համար ես այլևս ձեզ չեմ ազատելու։ Գնացէք ձեր ընտրած աստուած-

ներին ազատակիցէք. նորանք ձեզ
ազատեն ձեր նեղութեան ժա-
15 մանակին: Եւ Իսրայէլի որդիքը
Տիրոջը ասացին. Մեղք գործե-
ցինք, քո աչքի առջեւ ինչ որ
հաճելի է, այն արա մեզ. բայց
միայն ազատեա՛ մեզ՝ ազատիր
16 մեզ այսօր: Եւ իրանց միջից
օտար աստուածները վեր առին,
և Տիրոջը ծառայութիւն արին.
և նորա սիրտն իջաւ Իսրայէլի
նեղութեան համար:
17 Եւ Ամմոնի որդիքը ժողովե-
ցան, և Գաղաադու մէջ բանա-
կեցին. Իսրայէլի որդիքն էլ ժո-
ղովեցան և Մասփայի մէջ բա-
18 նակեցան: Եւ ժողովուրդը Գա-
ղաադու իշխանները իրար ասա-
ցին. Ով է այն մարդը, որ սկսէ
Ամմոնի որդիկանց հետ պատերազմ
անելու, նա Գաղաադու բոլոր
բնակիչների գլուխը լինի:

ԳԼ. ԺԱ

1 Եւ Գաղաադացի Յեփթայէ հը-
զօր զօրաւոր մարդ էր, և նա մի
պոռնիկ կնոջ զաւակ էր. և Յեփ-
2 թայէի հայրը Գաղաադ էր: Եւ
Գաղաադի կինը նորա համար
զաւակներ ծնաւ. և երբոր այն
կնոջ զաւակները մեծացան՝
Յեփթայէին հալածեցին, և նո-
րան ասացին. Դու մեր հօր տան
մէջ ժառանգութիւն պիտի չու-
նենաս, վասնզի դու մի օտար
3 կնոջ զաւակ ես: Եւ Յեփթայէն
իր եղբարց երեսից փախչելով՝
Տոբի երկրումը բնակեց. և Յեփ-
թայէի մօտ արիակոյ մարդիկ ժո-
ղովեցան և նորա հետ մտնէին
գալիս:
4 Եւ եղաւ որ մի ժամանակից
յետոյ Ամմոնի որդիքը Իսրայէլի
5 հետ պատերազմ արին: Եւ երբ-
որ Ամմոնի որդիքը Իսրայէլի հետ
պատերազմ էին անում, Գա-
ղաադու ծերերը գնացին, որ
Յեփթայէն Տոբի երկրից առ-
6 նեն: Եւ Յեփթայէն ասացին.
Եկ՛ մեզ զօրագլուխ եղիր որ Ամ-
մոնի որդկանց հետ պատերազմ
7 անենք: Եւ Յեփթայէն Գաղաա-

դու ծերերին ասաց. Չէ որ դուք
ինձ ատեցիք և իմ հօր տանիցը
ինձ հալածեցիք, և հիմա ինչո՞ւ
համար էք եկել ինձ մօտ, որ
նեղութեան մէջ էք: Եւ Գա- 8
ղաադու ծերերը Յեփթայէին ա-
սացին. Դորա համար ենք հիմա
քեզի դիմել, որ մեզ հետ գնաս
և Ամմոնի որդկանց դէմ պատե-
րազմ անես, և մեզ՝ Գաղաադու
բոլոր բնակիչներիս գլուխ լինիս:
Եւ Յեփթայէն Գաղաադու ծե- 9
րերին ասաց. Եթէ դուք ինձ
դարձնէք Ամմոնի որդկանց դէմ
պատերազմ անելու համար, և
Տէրը նորանց իմ ձեռքը մատնէ,
ես ձեզ գլուխ լինիմ: Եւ Գա- 10
ղաադու ծերերը Յեփթայէին ա-
սացին. Տէրը մեզ մէջ լսէ, և-
թէ ասածիդ պէս չանենք: Եւ 11
Յեփթայէն Գաղաադու ծերերի
հետ գնաց, և ժողովուրդը նորան
իրանց վերայ գլուխ և զօրապետ
դրին. և Յեփթայէն խօսեց Մաս-
փայում Տիրոջ առջեւ իր բոլոր
խօսքերը:
Եւ Յեփթայէն Ամմոնի որդ- 12
կանց թագաւորին պատգամաւոր-
ներ ուղարկեց, ասելով. Դու ինձ
հետ ինչ բան ունիս, որ ինձ
մօտ եկար իմ երկրումը պատե-
րազմ անելու: Եւ Ամմոնի որդ- 13
կանց թագաւորը Յեփթայէի
պատգամաւորներին ասաց. Եթէ
Իսրայէլ Եգիպտոսից դուրս գա-
լիս՝ Առնոնից մինչև Յոթոկ և
մինչև Յորդանան իմ երկիրն ա-
ռաւ, հիմա խաղաղութեամբ ետ
դարձրու այն: Եւ Յեփթայէն 14
Ամմոնի որդկանց թագաւորին
կրկին պատգամաւորներ ուղար-
կեց, Եւ նորան ասաց. Յեփթա- 15
յէն այսպէս է ասում. Իսրայէլը
չառաւ Մովաբի երկիրը և Ամմո-
նի որդկանց երկիրը. Քանզի Ե- 16
գիպտոսէն դուրս գալիս Իսրայէ-
լը մինչև կարմիր ծովը անապա-
տով գնաց, և եկաւ Կադէս.
Եւ Իսրայէլը Եդովմի թագաւո- 17
րի մօտ դեսպաններ ուղարկեց ա-
սելով. Աղաչում եմ՝ թող քո
երկրովդ անցնեմ. բայց նրա ծով
թագաւորը չլսեց, և Մովաբի

թագաւորի մօտ էլ ուղարկեց, նա էլ թող չտուաւ. և Իսրա-
18 յէլը ձնաց Կադեսի մէջ։ Եւ ա-
նապատէն գնաց, և եղովմի եր-
կրովը և Մովաբի երկրովը պտոյտ
տուաւ, և Մովաբի երկրի արե-
ւելեան կողմիցը գնալով Առնո-
նի այն կողմին բանակ տուաւ.
բայց Մովաբի սահմանը չմտաւ,
վասնզի Մովաբի սահմանը Ա-
19 րնոնն էր։ Եւ Իսրայէլը դեսպան-
ներ ուղարկեց Ամորհացոց Սեհոն
թագաւորի մօտ (որ Եսեբոնի
թագաւորն էր) և Իսրայէլը նո-
րան ասաց. Աղաչում եմ քո եր-
կրովէն անցնեմ, մինչև իմ տեղը։
20 Բայց Սեհոնը Իսրայէլին հաւատք
չընծայեց որ իր սահմանէն անց-
նէ. և Սեհոնը իր բոլոր ժողովր-
դին ժողովեց, և բանակեցան
Յասայի մէջ. և նա Իսրայէլի
21 դէմ պատերազմ արաւ։ Եւ Իս-
րայէլ Տէր Աստուածը Սեհոնին
և նորա բոլոր ժողովուրդը Իսրա-
յէլի ձեռքը մատնեց, և նորանց
զարկեցին և Իսրայէլը այն երկ-
րաւմ բնակող Ամորհացոց բոլոր
22 երկիրն առաւ։ Եւ ժառանգեցին
Ամորհացոց բոլոր սահմանը Ա-
րնոնից մինչև Յաբոկ, և անապա-
23 տից մինչև Յորդանան։ Եւ հի-
մա Իսրայէլի Տէր Աստուածն է
Ամորհացիներին իր Իսրայէլ ժո-
ղովրդի առջև հալածել, դո՞ւ
24 ժառանգես այն. Չէ՞ որ քո աս-
տուածդ՝ Քամոսի քեզ ժառան-
գութիւն տուածը դու կ'ժառան-
գես, մենք էլ մեր Եհովայ Աս-
տուծ մեր առջևից հալածածն ենք
25 ժառանգում։ Եւ հիմա դու Մո-
վաբի թագաւոր Սեպփորեան Բա-
ղակից աւելի լաւ ե՞ս. միթէ նա
վիճեց Իսրայէլի հետ կամ նո-
րանց հետ պատերազմ արա՞ւ,
26 Իսրայէլը Եսեբոնում և նորա
գեղերումը, Արոերում և նորա
գեղերումը, և Առնոնի եզերքի
վերայ եղող բոլոր քաղաքներու-
մը երեք հարիւր տարի է որ բռ-
նակալում է. և ինչու համար այն-
27 քան ժամանակ չազատեցիք։ Եւ
ես քեզ դէմ յանցանք չեմ ա-
րած, և դու ինձ հետ պատերազմ

անելով ինձ չարութիւն ես ա-
նում. այսօր Իսրայէլի որդւոց և
Ամմոնի որդւոց մէջ Դատաւոր
եղող Եհովան դատաստան անէ։
Բայց Ամմոնի որդւոց թագաւորը 28
Յեփթայէի ուղարկած խօսքերին
չլսեց։
Եւ Յեփթայէի վերայ եղաւ Տի- 29
րոջ Հոգին. և նա Գաղաադից
ու Մանասէից անցկացաւ և Գա-
ղաադայ Մասփայից էլ անցաւ,
և Գաղաադայ Մասփայից Ամմո-
նի որդւոց վերայ գնաց։ Եւ 30
Յեփթայէն Տիրոջը ուխտ արաւ
և ասաց. Եթէ Ամմոնի որդիքն
բոլորովին իմ ձեռքը մատնես,
Այն ժամանակ իմ տան դռնից 31
ինձ դիմաւորելու դուրս եկողը,
երբոր ես խաղաղութեամբ ետ
դառնամ Ամմոնի որդիներից, Տի-
րոջը թող լինի, և նորան ողջակէզ
մատուցանեմ։ Եւ Յեփթայէն Ամ- 32
մոնի որդւոց վերայ գնաց նո-
րանց հետ պատերազմելու, և
Տէրը նորանց մատնեց նորա ձեռ-
քը։ Եւ նա զարկեց Արոերից մին- 33
չև Մինիթի՝ քսան քաղաք, և
մինչև Աբէլքերամիմ սաստիկ կո-
տորածով. և Ամմոնի որդիքը Իս-
րայէլի որդւոց առջև նուաճ-
ուեցան։
Եւ Յեփթայէն եկաւ Մասփա 34
իր տունը. և ահա նորա աղջիկը
դուրս էր գալիս թմբուկներով և
պարերով նորան դիմաւորելու.
և նա նորա մէկ հատ զաւակն
էր, և բացի նորանից տղայ կամ
աղջիկ չունէր։ Եւ երբոր նորան 35
տեսաւ, իր հանդերձը պատռեց
և ասաց. Ո՜հ, աղջիկս, դու ինձ
նկուն արիր. և դու ինձ փորձան-
քի մէջ գցեցիր, վասն զի ես բե-
րանս բացի Տիրոջը և չեմ կարող
ետ դարձնել։ Եւ աղջիկը նորան 36
ասաց. Հայր իմ, բերանդ բացել
ես Տիրոջը, ասա ինձ ինչպէս որ
դուրս է եկել բերանիցդ, քա-
նզի Տէրը քեզ համար վրէժ-
խնդրութիւն արաւ քո թշնամի-
ներիցը՝ Ամմոնի որդւոցից։ Եւ 37
իր հօրն ասաց. Միայն այս բանն
արա ինձ. ինձ երկու ամիս թող
տուր որ վեր երթեմ լեռները և

իջնեմ. և իմ ընկերներովն իմ
38 կուսութեան վերայ լամ, եւ նա
ասաց. Գնա. և նորան երկու ա-
միս թող տուաւ. և նա իր ըն-
կերներովը գնաց, և լեառների
վերայ իր կուսութիւնը լացաւ,
39 եւ երկու ամիսը լրանալուց դե-
պի իր հօր մօտ դարձաւ, և նա
իր ասած ուխտը նորա մասին
կատարեց. և նա այր չճանաչեց:
40 Եւ Իսրայէլի մէջ սովորութիւն
եղաւ, որ ժամանակ ժամանակ
Իսրայէլի աղջիկները գնան և գո-
պատպատի Յեփթայէի աղջկան
համար տարին չորս օր լան:

ԳԼ. ԺԲ

1 Եւ Եփրեմի մարդիկը ժողովուե-
ցան, և դէպի հիւսիսային կողմն
անցան. և Յեփթայէին ասացին.
Ընչո՞ւ համար Ամմոնի որդիանց
հետ գնացիր պատերազմելու և
մեզ չկանչեցիր, որ քեզ հետ
գնայինք. տունդ քեզ վերայ կը-
2 րակով այրելու ենք: Եւ Յեփ-
թայէն նորանց ասաց. Ես ու իմ
ժողովուրդը Ամմոնի որդիանց հետ
մեծ կռիւներ ունեցանք. և ձեզ
կանչեցի. բայց դուք ինձ նորանց
ձեռքիցը չազատեցիք: Ես էլ երբ-
որ տեսայ որ դուք ինձ չէք ա-
զատում, հոգիս ձեռքիս մէջ
դրի և գնացի Ամմոնի որդիանց
վերայ, և Տէրը նորանց իմ ձեռ-
քը մատնեց, և ինչո՞ւ համար
դուք այսօր ինձ դէմ եկաք պա-
3 տերազմելու: Եւ Յեփթայէն գո-
պատպատ բոլոր մարդիկանցը ժողո-
վեց Եփրեմի հետ պատերազմ
արաւ, և Գաղաադու մարդիկը
Եփրեմեանները զարկեցին. վասն
զի ասել էին. Թէ՛ Դուք Գո-
պատպատիք Եփրեմի փախստա-
կաններ էք Եփրեմի մէջ և Մա-
4 նասէի մէջ: Եւ Գաղաադացիք
Եփրեմի առջև Յորդանանի անց-
քերը բռնեցին. և երբոր Եփրեմի
մի փախստականը ասում էր. Թող
տուէք անցնեմ. այն ժամանակ
Գաղաադու մարդիկը նորան ա-
սում էին. Եփրեմեա՞ն ես դու.
5 Նա ասում էր՝ ոչ. Եւ նորան ա-
սում էին. Ասա տախը շիբբօլէթ,
և նա ասում էր. Սիբբօլէթ,
(վասն զի չէր կարողանում ու-
ղիղ արտասանել) և նորան բռը-
նում էին, և Յորդանանի անց-
քերում սպանում էին, և այն
ժամանակ Եփրեմից քառասուն
և երկու հազար մարդ ընկաւ:
7 Եւ Յեփթայէն Իսրայէլի մէջ
վեց տարի դատաւորութիւն ա-
րաւ. և Գաղաադացի Յեփթայէն
մեռաւ, և թաղուեցաւ Գաղաա-
դու քաղաքների մէ՛ն-մէ:
8 Եւ նորանից յետոյ Իսրայէլի
մէջ Բեթլէհեմացի Աբեսանը դա-
տաւորութիւն արաւ: 9 Եւ նա ե-
րեսուն տղայ ունէր, և երեսուն
աղջիկ, որոնց դուրս մարդու ար-
ձակեց, և դրսից իր տղայց հա-
մար երեսուն աղջիկ բերաւ, և
ինքը Իսրայէլի մէջ եօթը տարի
դատաւորութիւն արաւ: 10 Եւ Ա-
բեսանը մեռաւ և թաղուեցաւ
Բեթլէհեմում:
11 Եւ նորանից յետոյ Զաբուղո-
նացի Եղօնը եղաւ Իսրայէլի դա-
տաւոր, և Իսրայէլի մէջ տասը
տարի դատաւորութիւն արաւ:
12 Եւ Զաբուղոնացի Եղօնը մեռաւ,
և թաղուեցաւ Զաբուղոնի երկ-
րումը Այեղոնի մէջ:
13 Եւ նորանից յետոյ Փարաթո-
նացի Հէլէլի որդին Աբդօնը ե-
ղաւ Իսրայէլի դատաւոր: 14 Եւ նա
քառասուն տղայ և երեսուն
թոռներ ունէր, որոնք հեծնում
էին եօթանասուն առանձինների
վերայ. և Իսրայէլի մէջ
ութը տարի դատաւորութիւն ա-
րաւ: 15 Եւ Փարաթոնացի Հէլէլի
որդին Աբդօնը մեռաւ, և թաղ-
ուեցաւ Ամաղեկացոց լեռան վե-
րայ Եփրեմի երկրում Փարաթոնի
մէջ:

ԳԼ. ԺԳ

1 Եւ Իսրայէլի որդիքը շարունա-
կեցին Տիրոջ առջև չարութիւն
անելու, և Տէրը նորանց քառա-
սուն տարի Փղշտացոց ձեռքը
մատնեց:
2 Եւ մի Սարաայի մարդ կար

Դանի ցեղից՝ Մանուէ անունով, և նորա կինը ամուլ էր և զաւակ չէր ծնուում։ Եւ Տէրոջ հրեշտակը այս կնոջ երևեցաւ և նորան ասաց. Ահա դու հիմա ամուլ ես և չես ծնուում, բայց կը յղանաս և մի որդի կ'ծնես։ Հիմա գգոյշ կաց, որ գինի կամ ցքի չխմես և ոչ անմաքուր բան ուտես. Քանզի ահա դու կ'յղանաս և մի որդի կ'ծնես, և նորա գլխի վերայ ածելի պիտի չելնէ. վասն զի այն տղան արգանդից՝ Աստուծոյ ուխտաւորը պիտի լինի, և նա կ'սկսէ Իսրայէլին ազատել Փղշտացոց ձեռքից։ Եւ կինը գնաց և իր մարդուն պատմեց ասելով. Աստուծոյ մի մարդ ինձ մօտ եկաւ, և նորա դէմքը Աստուծոյ հրեշտակի դէմքի պէս ահարկու էր. և չհարցրի թէ որտեղից է նա, և իր անունն էլ ինձ չասաց. Եւ ինձ ասաց. Ահա դու կ'յղանաս և մի որդի կ'ծնես, հիմա գինի ու ցքի չխմես, և անմաքուր բան չուտես, վասն զի այն տղան արգանդից մինչև իր մահուան օրը Աստուծոյ ուխտաւորը պիտի լինի։

Եւ Մանուէն Տէրոջը աղաչեց և ասաց. Աղաչում եմ, ով Տէր իմ, այն Աստուծոյ մարդը որին դու ուղարկեցիր՝ թող դարձեալ մեզ մօտ գայ, և մեզ սովորեցնէ, թէ այն ծնուելու տղային ի՞նչ անենք։ Եւ Աստուած Մանուէի ձայնին լսեց, և Աստուծոյ հրեշտակը դարձեալ այն կնոջ մօտ եկաւ՝ երբոր նա արտումը նստել էր. և նորա մարդը Մանուէն հետը չէր։ Եւ կինը շուտով վազեց. և իր մարդուն պատմեց և նորան ասաց. Ահա այն օրն ինձ մօտ եկող մարդը ինձ երևեցել է։ Եւ Մանուէն վեր կացաւ իր կնոջ հետից գնաց, և նորան ասաց. Դու ես այն մարդը որ այս կնոջ հետ խօսել ես. և նա ասաց. Ես եմ։ Եւ Մանուէն ասաց. Երբոր քո խօսքերը կատարուին, ի՞նչ կերպ պէտք է անել տղային, և ի՞նչ է նորա բանը։ Եւ Տէրոջ հրեշտակը Մանուէին ասաց. Ամեն իմ ասածիցը թող կինը զգուշանայ. Որթիցը դուրս եկած ոչ մի բան չուտէ, և գինի և ցքի չխմէ, և անմաքուր բան չուտէ, և իմ ամեն պատուիրածը պահէ։

Եւ Մանուէն Տէրոջ հրեշտակին ասաց. Աղաչում եմ թող քեզ պահինք, և այծեղիցը մի ուլ պատրաստենք քո առջեւ։ Եւ Տէրոջ հրեշտակը Մանուէին ասաց. Թէ և ինձ պահես էլ՝ քո հացիցը չեմ ուտել. բայց եթէ ողջակէզ անես, Տէրոջը պիտի մատուցանես, վասն զի Մանուէն չգիտաց թէ նա Տէրոջ հրեշտակն է։ Եւ Մանուէ Տէրոջ հրեշտակին ասաց. Անունդ ի՞նչ է, որպէս զի երբոր խօսքդ կատարուի՝ քեզ պատուենք։ Եւ Տէրոջ հրեշտակը նորան ասաց. Ա՞ս ինչո՞ւ ես հարցնում իմ անունը, որովհետև նա սքանչելի է։ Եւ Մանուէն առաւ ուլն ու հացի նուէրը, և ապառաժի վերայ Տէրոջ գոհեց. և նա Մանուէի և նորա կնոջ աչքերի առջև մի հրաշք արաւ. Վասն զի երբոր բոցը բարձրանում էր սեղանիցը դէպի երկինքը, Տէրոջ հրեշտակն էլ սեղանի բոցովը վեր ելաւ. և Մանուէն և իր կինը մոխիկ էին անում, և երեսի վերայ գետինը ընկան։ Եւ Տէրոջ հրեշտակը այլ ևս Մանուէին և նորա կնոջը չերևեցաւ, այն ժամանակ Մանուէն հասկացաւ, որ նա Տէրոջ հրեշտակն էր։ Եւ Մանուէն ասաց իր կնոջը. Անպատճառ պիտի մեռնենք, վասն զի Աստուծոյն տեսանք։ Եւ կինը նորան ասաց. Եթէ Տէրը ուզէր մեզ մեռցնել, մեր ձեռքիցը ողջակէզն ու հացի նուէրը չէր ընդունել. և այս բոլոր բաները մեզ չէր ցոյց տալ, և այս ժամանակին այսպիսի բաներ մեզ լսել չէր տալ։

Եւ կինը մի որդի ծնաւ, և նորա անունը Սամփսոն կոչեց, և տղան մեծացաւ, և Տէրը օրհնեց նորան։ Եւ Տէրոջ Հոգին սկսեց նորա վերայ գալ Մարտայի և Եսթաուտի մէջ տեղը Դանի բանակումը։

ԳԼ. ԺԴ

1 Եւ Սամփսոն իջաւ Թամնաթա
և Թամնաթայում փղշտացոց
2 աղջիկներից մի կին տեսաւ, եւ
վեր գնաց, ու իր հօրը և մօրը
պատմեց և ասաց. Թամնաթա-
յում փղշտացոց աղջիկներից մի
կին տեսայ. և հիմա ինձ համար
3 կին առէք նորան։ Եւ նորա հայ-
րըն ու մայրը նորան ասացին.
Մի՞թէ քո եղբարց աղջիկների
մէջ և իմ բոլոր ժողովրդի մէջը
կին չկայ, որ դու գնաս անթլե-
փատ փղշտացիներից կին առնես.
բայց Սամփսոն իր հօրն ասաց.
Նորան առ ինձ համար, վասն զի
4 իմ աչքերին հաճելի է։ Եւ նորա
հայրն ու մայրը չգիտէին, որ այս
բանը Տէրից էր, վասն զի նա
փղշտացիներից մէկ առիթ էր ո-
րոնում. և այն ժամանակը փղշ-
տացիները իշխում էին Իսրայէլի
5 վերայ։ Եւ Սամփսոն իր հօր ու
մօր հետ Թամնաթա իջաւ. և ե-
կան մինչև Թամնաթայի այգինե-
րը և ահա մի առիւծի կորիւն
6 մռնչելով նորան դիմաւորեց։ Եւ
Տիրոջ Հոգին նորա վերայ եկաւ
և նա նորան պատառեց ինչպէս
մի ուլ կ'պատառեն, և ձեռքու-
մը մի բան չկար. և իր հօրը ու
մօրը չպատմեց ինչ որ արել էր։
7 Եւ իջաւ ու այն կնոջ հետ խօ-
սեց. և կինը Սամփսոնի աչքերին
հաճելի էր։
8 Եւ մի ժամանակից յետոյ երբ
որ նա դարձաւ կինը առնելու,
առիւծի դիակը տեսանելու համար
խոտորեց. և ահա առիւծի դիա-
կի մէջ մեղուների գունդ և մեղր
9 կար։ Եւ ձեռքն առաւ այն և
գնում էր ուտելով, և իր հօր ու
մօր մօտը գնաց, և նորանց էլ
տուաւ, և կերան. բայց նորանց
չասաց թէ մեղրը առիւծի դիա-
կից է հանել։
10 Եւ նորա հայրը իջաւ այն կը-
նոջ մօտ, և Սամփսոնը այնտեղ
մի խնջոյք արաւ, վասն զի երի-
տասարդները այսպէս էին անում։
11 Եւ երբոր նորան տեսան՝ երեսուն
ընկեր բերին, որ նորա հետ լի-
նին, և Սամփսոն ասաց նո- 12
րանց. Հիմա ձեզ մէկ հանելուկ
ասեմ, եթէ նորան այս խնջոյքի
եօթը օրուայ մէջ ինձ բացատ-
րէք և գտնէք, ես էլ ձեզ երե-
սուն շապիկ և երեսուն փոխելու
հանդերձ կ'տամ, բայց եթէ չը 13
կարողանաք բացատրել ինձ հա-
մար, այն ժամանակ դուք ինձ
երեսուն շապիկ և երեսուն փո-
խելու հանդերձ տաք, և նորան
ասացին. Հանելուկդ մեզ ասիր
որ լսենք։ Եւ նորանց ասաց. կե- 14
րողից կերակուր դուրս եկաւ և
հզօրից անոյշ ելաւ։ Եւ նորանք
այս հանելուկը երեք օրուայ մէջ
չկարողացան բացատրել։ Եւ 15
եօթներորդ օրը Սամփսոնի կնոջն
ասացին. Մարդիդ խաբիր որ հա-
նելուկը մեզ բացատրէ, որ մի
գուցէ քեզ և քո հօր տունը կը-
րակով այրենք. մեզ կողոպտե-
լու համար կանչեցիք. չէ՞։ Եւ 16
Սամփսոնի կինը լացաւ նորա մօտ
և ասաց. Անպատճառ դու ինձ
ատում ես և ինձ չես սիրում.
դու իմ ժողովուրդի որդւոցը
մի հանելուկ ես ասել. և ինձ չը
բացատրեցիր։ Եւ նա ասաց նո-
րան. Ահա իմ հօրն ու մօրը չը
յայտնեցի. և քե՞զ պիտի յայտ-
նէի։ Եւ իրանց խնջոյքի եօթը օ- 17
րերին նորա մօտ լացաւ. և նա
եօթներորդ օրը նորան բացատ-
րեց, վասն զի նորան նեղութիւն
էր տալիս. նա էլ բացատրեց
հանելուկը իր ժողովուրդի որդ-
կանցը։ Եւ քաղաքի մարդիկը 18
եօթներորդ օրը արեգակը մտնե-
լուց առաջ նորան ասացին. Ի՞նչ
է անուշ մեղրից և ի՞նչ զօրա-
ւոր առիւծից։ Եւ նա ասաց նո-
րանց. Եթէ դուք իմ երինջով
չհերկէիք, իմ հանելուկը չէիք
գտնել։ Եւ Տիրոջ Հոգին նորա 19
վերայ եկաւ, և նա իջաւ Աշկաղոն
և նորանցից երեսուն մարդ մեռց-
րեց, և նորանց հանդերձները ա-
ռաւ և տուաւ հանելուկը բացատ-
րողներին, և բարկութիւնը բորբո-
քեց, և վեր գնաց իր հօր տունը։
Եւ Սամփսոնին կինը մարդու գնաց 20
նորա բարեկամը եղող ընկերին։

ԳԼ. ԺԵ

1 Եւ եղաւ որ մի ժամանակից յետոյ ցորենի հունձի օրերին Սամփսոնը այծերքոյը մի ուլ առաւ, և գնաց իր կնոջը այցելութեան և ասաց. Ներքին սենեակը գնամ կնոջս մօտ, բայց կնոջ հայրը նորան չթողեց որ մտնէ։
2 Եւ նորա հայրն ասաց. Իրաւ կարծեցի՝ որ դու նորան բոլորովին ատեցիր, և նորան քո ընկերին տուի. չէ՞ որ նորա փոքր քոյրը նորանից գեղեցիկ է, հիմա թող նորա տեղ նա լինի քեզ։
3 Եւ Սամփսոնը նորանց ասաց. Այս անգամ փղշտացիներից անպատիժ եմ, եթէ նորանց չարութիւն անեմ։
4 Եւ Սամփսոնը գնաց երեք հարիւր աղուէս բռնեց, և ջահեր առաւ, ու պոչին պոչ դարձրեց, և երկու պոչերի մէջտեղը մէկ ջահ դրաւ։
5 Եւ ջահերը կրակով վառեց, և նորանց քշեց փղշտացոց հունձքերի մէջ, և դիզուած և չկրտրուած հունձքերը և մինչև անդամ այգիները՝ ձիթենիները այրեց։
6 Եւ փղշտացիք ասացին. Այս բանը ո՞վ արաւ։ Եւ ասացին. Թամնացու փեսան Սամփսոնը. վասն զի նա նորա կինը առաւ և նորա ընկերին տուաւ. Եւ փղշտացիք վեր կացան և կնոջն ու
7 նորա հօրը կրակով այրեցին։ Իսկ Սամփսոնը նորանց ասաց. Թէ և դուք այսպէս արիք, բայց ես վրէժ եմ առնելու ձեզանից, և
8 յետոյ կ'դադարեմ։ Եւ նորանց սրունքն ու երանքը մեծ հարուածով զարկեց. և իջաւ եւտամ՝ ապառաժի խոռոչումը բնակեց։
9 Եւ փղշտացիք վեր եկան ու Յուդայի մէջ բանակեցան, ու
10 Լեքիի մէջ տարածուեցան։ Եւ Յուդայեանք ասացին. Ինչո՞ւ համար էք մեզ վերայ եկել։ Նորանք էլ ասացին. Սամփսոնին կապելու ենք վեր եկել, որ նորան մեզ արածի պէս մենք էլ իրան անենք։
11 Եւ Յուդայից երեք հազար մարդ իջան եւտամ ապառաժի խոռոչը և Սամփսոնին ասացին. Չե՞ս գիտում որ փղշտացիք մեզ վերայ իշխում են, և ա՛ս ինչ ես արել մեզ։ Եւ նա նորանց ասաց. Նորանք ինձ ինչպէս որ արին, ես էլ նորանց այնպէս եմ արել։ Եւ նորան ասացին. Մենք 12
իջել ենք որ քեզ կապենք և փղշտացոց ձեռքը տանք։ Եւ Սամփսոնը նորանց ասաց. Ինձ երդում արէք որ դուք ինձ չէք մեռցնիլ։ Եւ նորանք նորա հետ 13
խօսեցին ասելով. Ոչ. բայց քեզ միայն կապենք և նորանց ձեռքը տանք, և քեզ բնաւ չենք մեռցնիլ, և նորան երկու նոր չուանով կապեցին և ապառաժիցը դուրս հանեցին։ Նա եկաւ մինչև 14
Լեքի և փղշտացիք աղաղակելով նորան դիմաւորեցին. և Տիրոջ Հոգին նորա վերայ եկաւ և նորա թևերի վերայ եղող չուաններըկրակով այրուած քթանի պէս եղան, և կապերը ձեռքերիցը լուծուեցան։ Եւ մէկ էշի ծնօտ 15
գտաւ որ դեռ չորացած չէր, և ձեռքը մեկնեց այն առաւ և նորանով հազար մարդ մեռցրեց։
Եւ Սամփսոնն ասաց. Էշի ծնօ- 16
տովմէկ խումբ՝ երկու խումբ՝ էշի ծնօտով հազար մարդ մեռցրի։ Եւ երբոր իր խօսքը վերջացրեց՝ ծնօտը ձեռքիցը ձգեց, և այնտեղի անունը Ռամաթ-Լեքի կոչեց։ 17

Եւ խիստ շատ ծարաւեց և Տի- 18
րոջը աղաղակեց և ասաց. Դու քո ծառայի ձեռքովը յաջողեցիր այս մեծ փրկութիւնը, և հիմա ծարաւով մեռնեմ, և անթլփատներէ ձեռքը ընկնեմ։
Եւ Ատամած Լեքիի մէջ եղած 19
փոսը բացաւ, և նորանից ջուր եկաւ. և նա խմեց, և ոգին իր մօտը դարձաւ, և կենդանացաւ, նորա համար նորա անունը Ենգոբէ ասուեցաւ, որ Լեքիի մէջ է մինչև այս օրը։

Եւ նա փղշտացոց օրերին Իս- 20
րայէլի մէջ քսան տարի դատաւորութիւն արաւ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Սամփսոնը գնաց Գազա, և
այնտեղ մի պոռնիկ կին տեսաւ,
2 և նորա մօտ մտաւ։ Եւ Գազա-
ցիներին ասեցին. Թէ Սամփսոնը
եկել է այստեղ։ Եւ պաշարե-
ցին և բոլոր գիշերը նորան դա-
րանակալ եղան քաղաքի դրան
մօտ, և բոլոր գիշերը լռեցին և
ասացին. Առաւօտը կանուխ
3 մեռցնենք նորան։ Եւ Սամփսոնը
մինչև կէս գիշեր քնեց, և կէս
գիշերին վեր կացաւ, և քաղաքի
դրան փեղկերը երկու սեմերովը
բռնեց, և նորանց նիգովը մէկ-
տեղ պոկեց և ուսերին վերայ
առնելով նորանց Քեբրոնի դի-
մացի լեռան գլուխը հանեց։
4 Եւ նորանից յետոյ մէկ կին
սիրեց Սորեկ հովիտի մօտ, ու
5 նորա անունը Դալիլա էր։ Եւ Փղշ-
տացոց նախարարները այն կնոջ
մօտ գնացին և նորան ասացին.
Նորան խաբիր և տես, թէ նորա
մեծ զօրութիւնը ինչումն է, թէ
ինչով կ'կարողանանք նորան յաղ-
թել, որ նորան յաղթենք և տր-
կատացնենք, և մենք քեզ ամեն
մէկս հազար հարիւր արծաթի կը
6 տանք։ Եւ Դալիլան Սամփսոնին
ասաց. Աղաչում եմ՝ յայտնիր
ինձ, թէ քո մեծ զօրութիւնը
ինչո՞ւմն է, և քեզ տկարացնե-
լու համար ի՞նչ բանով կապել
7 պէտք է։ Եւ Սամփսոնը նորան
ասաց. Եթէ ինձ եօթը հատ չը
չորացած դալար ջիլերով կապեն
կ'տկարանամ, և մարդկանց մէկի
8 պէս կ'դառնամ։ Եւ Փղշտացոց
նախարարները նորա համար եօթը
հատ չչորացած դալար ջիլեր բե-
րին, և նորան կապեց նորանցով։
9 Եւ նորա մօտ ներքին սենեակու-
մը դարանակալներ էին նստել։
Եւ կինը նորան ասաց. Սամփ-
սոն, փղշտացիք քեզ վերայ է-
կան. այն ժամանակ նա ջիլերը
կտրեց ինչպէս կրակի հոտ ա-
ռած խծուծից չինած մի լար կը
կտրուին. և նորա ոյժը չհասկաց-
10 ուեցաւ։ Եւ Դալիլան ասաց
Սամփսոնին. Ահա ինձ խաբեցիր
և ինձ սուտ ասացիր. հիմա ա-
զաչում եմ՝ յայտնիր ինձ թէ
11 ինչո՞վ կ'կապուիս։ Եւ նորան
ասաց. Եթէ ինձ նոր և չգործած-
ուած չուաններով պինդ կապեն՝
այն ժամանակ կ'տկարանամ, և
մարդկանց մէկի պէս կ'դառնամ։
12 Եւ Դալիլան նոր չուաններ ա-
ռաւ, և նորանցով նորան կա-
պեց, և նորան ասաց. Սամփսոն,
փղշտացիք քեզ վերայ էկան. (և
դարանակալները ներքին սենեա-
կումը նստել էին.) այն ժամա-
նակը նորանց իր բազուկներից
13 կտորեց դերձանի պէս։ Եւ Դա-
լիլան ասաց Սամփսոնին. Մինչև
հիմա ինձ խաբեցիր և ինձ սուտ
ասացիր. ասիր ինձ թէ ինչո՞վ
կ'կապուիս։ Եւ նա նորան ասաց.
Եթէ գլխիս եօթը բուժին մազերը
14 ազդով հիւսես։ Եւ նա ցիցովը
պինդացրեց, և նորան ասաց.
Սամփսոն, փղշտացիք քեզ վերայ
էկան։ Եւ նա քնից զարթնեց,
և ատամնի ցիցը և ազդը հանեց։
15 Այն ժամանակ Դալիլան նորան
ասաց. Ինչպէս ես ասում թէ
քեզ սիրում եմ, քանի որ սիրտն
ինձ հետ չէ, հիմա այս երեք ան-
գամն է որ ինձ խաբեցիր, և ինձ
չասացիր՝ թէ քո մեծ զօրութիւ-
16 նը ինչումն է։ Եւ օրավհետև ա-
մեն օր իր խօսքերովը նորան նե-
ղում էր, և նորան բռնադա-
տում էր, այն ժամանակ նորա
սիրտը նեղացաւ մինչև իմանչ,
17 Եւ իր սրտի մէջ բոլոր եղածը
նորան յայտնեց, և ասաց նորան.
Իմ գլխի վերայ ածելի չէ եկած,
վասն զի իմ մօր արգանդիցը ես
Աստուծոյ ուխտաւոր եմ. եթէ
ածիլուիմ, իմ ոյժն ինձանից կը
գնայ և ես կ'տկարանամ, և ա-
մեն մարդկանց պէս կ'դառնամ։
18 Եւ երբոր Դալիլան տեսաւ, որ
նա իր սրտի մէջ բոլոր եղածը ի-
րան յայտնեց, Փղշտացոց նախա-
րարներին կանչել տուաւ և ա-
սաց. Ա՛յս անգամ վեր եկէք.
վասն զի իր սրտի մէջ բոլոր ե-
ղածը ինձ յայտնել է։ Այն ժա-
մանակ Փղշտացոց նախարարները
նորա մօտ եկան. և արծաթն էլ

19 իրանց ձեռքին բերին, եւ Դաւիթ նորան իր ծունկերի վերայ քնացրեց, և մի մարդ կանչեց, և նորա գլխի եօթը բաժին մազերը ածիլել տուաւ, և սկսաւ նորան տկարացնել. և նորա ոյժը
20 իրանից գնացել էր։ Ու կինն ասաց. Սամիսան, փղշտացիք քեզ վերայ եկան. և նա քնից զարթնելով՝ ասաց. Դուրս գամ և առաջի անգամների պէս թօթափուիմ, բայց չգիտեր որ Տէրը ի-
21 րանից գնացել էր։ Եւ փղշտացիք նորան բռնեցին և նորա աչքերը հանեցին, և նորան տարան ցած՝ Գազա, և առնակապերով կապեցին, և բանտումը աղում էր։

22 Եւ նորա գլխի մազը ածիլուե-
23 լուց յետոյ սկսեց բուսանիլ։ Եւ փղշտացոց նախարարները ժողովուեցան, որ իրանց աստուածոյն Դագոնին մեծ զոհ մատուցանեն, և ուրախութիւն անեն. և ասացին. Մեր աստուածը մեր ձեռքը մատնեց մեր թշնամի Սամի-
24 սոնին։ Եւ ժողովուրդը նորան տեսանելով՝ գովեցին իրանց աստուածոյն, վասն զի ասացին. Մեր աստուածը մատնեց մեր թշնամուն՝ մեր երկիրը քանդողին և մեր մեռելները շատացնողին մեր ձեռ-
25 քը։ Եւ երբոր նորանց սիրտն ուրախ էր, ասացին. Սամիսոնին կանչեցէք, որ մեր առջև խաղայ։ Եւ Սամիսոնին կանչեցին բանտից, և նորանց առջևը խաղում էր. և նորան սիւների մէջ
26 տեղը կանդնեցրին։ Եւ Սամիսոնն իր ձեռքից բռնող պատանուն ասաց. Թող տուր ինձ, որ այս տունը կրող սիւները շօշափեմ, և նորանց վերայ կռնեմ։
27 Եւ տունը լիքն էր մարդկանցով և կանանցով. և փղշտացոց բոլոր նախարարները այնտեղ էին. և տանիքի վերայ երեք հազարի չափ մարդիկ և կանայք կային, որոնք Սամիսոնի խաղալին մօտիկ էին
28 տեսին։ Եւ Սամիսոնն աղաղակեց Տիրոջը և ասաց. Ով Տէր Եհովայ, աղաչում եմ՝ յիշիր ինձ, ով Աստուած, և միայն այս անգամ էլ ինձ ուժովացրու որ փղշտացիներից իմ երկու աչքերի վրէժը մէկ անգամով առնեմ։ Եւ Սամիսոնն այն տունը 29
կրող միջի սիւները՝ մէկը աջ ձեռքովը և միւսը ձախ ձեռքովը բռնեց և նորանց վերայ կռնեց. Եւ Սամիսոնն ասաց. Իմ անձն 30
էլ փղշտացիների հետ թող մեռնէ. և ուժովը ծռեց, և տունը վայր ընկաւ նախարարների վերայ և միջումն եղող բոլոր ժողովրդի վերայ. և իր մեռնելովը մեռցրածները իր կենդանութեան ժամանակ մեռցրածներից աւելի էին։ Եւ նորա եղբայրները և նորա 31
հօր բոլոր տունը իջան, և նորան վեր առին, և հանեցին և թաղեցին նորան իր հօր Մանուէի գերեզմանումը Սարայի և Եսթաւուղի մէջտեղը։ Եւ նա Իսրայէլի մէջ քսան տարի դատաւորութիւն արաւ։

ԳԼ. ԺԷ

Եւ Եփրեմի լեռնիցը մի մարդ 1
կար Միքա անունով. Եւ նա իր 2
մօրն ասաց. Այն հազար հարիւր արծաթը՝ որ քեզանից վեր է առուել, որի համար անէծք տուիր և իմ ականջին ասացիր, ահա այն արծաթը ինձ մօտ է, այն ես եմ առել. և մայրը նորան ասաց. Իմ որդեակն օրհնեալ լինի Տէրիցը։ Եւ նա հազար հար- 3
իւր կրկ արծաթը ետ դարձրեց իր մօրը. բայց նորա մայրն ասաց. Ես այն արծաթն իմ ձեռքիցը Տիրոջը նուիրեցի իմ որդւոյ համար, նորանով քանդակած և թափծու կուռք շինելու համար. և հիմա ես այն քեզ եմ դարձնում։ Իսկ նա այն արծաթը 4
իր մօրը դարձրեց. և մայրը երկու հարիւր արծաթ առաւ. և տակերչին տուաւ նորանց. նա էլ նորանցից քանդակած և թափծու կուռք շինեց, և Միքայի տանն էին լինում։ Եւ այդ Միքա մարդը մի աստուածների տուն ունեցաւ, և եփուդ և թերափիմ շինեց, և իր տղայոց մէկին օրհ- 5

նեց և իր համար քահանայ ե-
6 ղաւ։ Ա՛յն օրերը Իսրայէլի մէջ
թագաւոր չկար. ամեն մարդ իր
աչքի հաճելի եղածն անում էր։
7 Եւ Յուդայի ազգատոհմից՝
Յուդայի Բեթլէհեմից մէկ պա-
տանի կար, և նա Ղեւտացի էր,
և այնտեղ էր բնակում պան-
8 դուխտ պէս։ Եւ այս մարդը
Յուդայի Բեթլէհեմ քաղաքից
դուրս եկաւ որ պանդխտութիւն
անէ, ուր որ գտնէ, և ճանա-
պարհորդութիւն անելով եկաւ
մինչև Եփրեմի լեառը մինչև Մի-
9 քայէլ տունը։ Եւ Միքան նորան
ասաց. Որտեղի՞ց ես գալիս։ Եւ
նա նորան ասաց. Ես Ղեւտացի
եմ Յուդայի Բեթլէհեմից, և
գնում եմ պանդխտանալու ուր
10 որ գտնեմ։ Եւ Միքան նորան
ասաց. Ինձ հետ բնակիր, և ինձ
համար հայր և քահանայ եղիր.
և ես քեզ տարուց տարի տասը
արծաթ և հագնելու հանդերձ և
քո ուտելիքը կ'տամ։ Ղեւտացին
11 էլ գնաց։ Եւ Ղեւտացին հաւանեց
այն մարդու հետ բնակել. և այս
պատանին նորա որդկանց մէկին
12 պէս եղաւ նորա համար։ Եւ Մի-
քան Ղեւտացու ձեռքը լցրեց, և
պատանին նորա քահանան ե-
ղաւ, և Միքայի տանն էր բնա-
13 կում։ Եւ Միքան ասաց. Հիմա
գիտեմ որ Տէրն ինձ բարիք է ա-
նելու, վասն զի այս Ղեւտացին
իմ քահանան դառաւ։

ԳԼ. ԺԸ

1 Ա՛յն օրերը Իսրայէլի մէջ թա-
գաւոր չկար. և այն օրերը Դանի
ցեղը իր համար ժառանգութիւն
էր որոնում բնակելու համար,
վասն զի մինչև այն օրը Իսրայէլի
ցեղերի մէջ նորա համար բա-
ժան ժառանգութիւն չէր ընկել։
2 Եւ Դանի որդիքն իրանց ազգա-
տոհմներից իրանց սահմաններից
հինգ զօրաւոր մարդ ուղարկեցին
Սարաայից ու Եսթաւուղից, որ
երկիրը լրտեսեն և քննեն, և նո-
րանց ասացին. Գնացէք երկիրը
քննեցէք. և նորանք գնացին Եփ-
րեմի լեառը մինչև Միքայի տու-
նը, և գիշերը այնտեղ մնացին։
3 Եւ երբոր նորանք Միքայի տան
մօտ էին, այն Ղեւտացի պատա-
նու ձայնը ճանաչեցին, և մտան
այնտեղ և ասացին. Ո՞վ քեզ
բերաւ այստեղ, և դու այստեղ
ի՞նչ ես անում, և այստեղ ի՞նչ
ունիս։ Եւ նա ասաց նորանց.
4 Միքան ինձ այսպէս և այսպէս
արաւ, և ինձ վարձքով բռնեց,
որ նորան քահանայ լինիմ։ Եւ
5 նորան ասացին. Աղաչում ենք՝
Աստուծոյն հարցրու, որ գիտե-
նանք, թէ արդեօք մեր գնացած
6 ճանապարհը կ'յաջողէ։ Եւ քա-
հանան նորանց ասաց. Գնացէք
խաղաղութեամբ, ձեր գնացած
ճանապարհը Տէրոջ առջև է։
7 Ա՛յն ժամանակ այն հինգ մար-
դիկը գնացին Լայիս մտան, և
նորանում բնակող ժողովուրդը
տեսան՝ որ Սիդոնացոց պէս ա-
պահովութեամբ հանդիստ և ա-
պահով բնակում էին, և այն
երկրի մէջ մի ինչաս տուող չկար՝
որ իշխանութիւն ունէր, և Սի-
դոնացիներից հեռու էին և բը-
նաւ մէկ մարդու հետ գործ չու-
8 նէին։ Եւ ա՛յն հինգ մարդիկը Սորաս
և Եսթաւուղ գնացին իրանց եղ-
բայրների մօտ, և նորանց եղ-
բայրները նորանց ասացին. Դուք
9 ի՞նչ եք։ Եւ նորանք ասացին.
Վեր կացէք նորանց վերայ գը-
նանք, վասն զի մենք երկիրը տե-
սանք, և ա՛խ շատ լաւ է, և
դուք թողլ նստո՞ղ էք. անհո-
գութիւն մի անէք գնալու այն
երկիրը ժառանգելու համար։
10 Հէնց որ գնաք, մէկ անհոգ ժո-
ղովրդի և շատ ընդարձակ երկրի
կ'մտնէք, որն որ Աստուած ձեր
ձեռքն է տուել, և մի այնպիսի
տեղ, որ այնտեղ երկրի վերայ
եղող բաներից մէկը պակաս չէ։
11 Եւ այնտեղից Դանի ազգատոհ-
մից, այսինքն Սարաայից և Ես-
թաւուղից վեց հարիւր ապառա-
պինեալ մարդիկ գնացին։ Եւ վեր
12 եկան Յուդայի Կարիաթարիմում
բանակ տուեցին. Նորա համար
այնտեղը մինչև այս օրը աւելմ

է Մահանէ–դան. ահա նա կա-
13 բեմարիմի եառևին է, Եւ այն-
ուհետև անցան Եփրեմի լեառը,
և եկան մինչև Մ/քայէլ տունը,
14 Եւ այն հինգ մարդը որ գնացել
էին Լայխի երկիրը լրտեսելու,
պատասխանեցին և իրանց եղ-
բարցն ասացին. Գիտէ՞ք որ այս
տներումը եփուդ, թերափիմ, և
քանդակած ու թափծու կուռք
կայ. և հիմա իմացէ՛ք թէ ինչ
15 պիտի անէք։ Ահն ժամանակ նո-
րանք դէպի այնտեղը դառնալով
այն Ղևտացի պատանու տունը՝
Միքայէլ տունը գնացին, և նորա
16 ողջոյնները հարցրին։ Եւ Դանի
որդիանցից այն վեց հարիւր զա-
պառազինեալ մարդիկը դրան
17 մուտքումը կանգնեցին։ Եւ երկի-
րը լրտեսելու գնացող այն հինգ
մարդիկը գնացին այնտեղ, և վեր
առին քանդակած կուռքը, ե-
փուդը, թերափիմը ու թափծու
կուռքը. և քահանան կանգնել էր
այն վեց հարիւր սպառազինեալ
մարդկանց հետ դրան մուտքու-
18 մը։ Եւ երբոր նորանք Միքայէլ
տունը մտան, և քանդակած
կուռքը, եփուդը, թերափիմը
ու թափծու կուռքը վեր առին.
քահանան նորանց ասաց. Ինչ
19 է ք անում։ Եւ նորանք ասացին
նորան. Լուռ կաց, ձեռքդ բե-
րանիդ վերայ դիր և մեզ հետ
եկ. և մեզ համար հայր ու քա-
հանայ եղիր. միթէ լաւ է քեզ
համար մէկ մարդու տուր քա-
հանայ լինել, թէ Իսրայէլի մէջ
մէկ ցեղի և մէկ ազգատոհմի քա-
20 հանայ լինելը։ Եւ քահանան
սրտովին ուրախանալով՝ եփուդը,
թերափիմը և քանդակած կուռ-
քերն առաւ և այն ժողովրդի մէջ
21 մտաւ։ Եւ նորանք հետ դարձան
գնացին, և ընտանիքները և ա-
նասուններն ու թանկագին կա-
բասիները իրանց առջև դրին։
22 Երբոր նորանք Միքայէլ տանիցը
հեռացան, Միքայէլ տան մօտ ե-
ղող տներէն մարդիկը ժողովուե-
ցան, և Դանի որդիներին հա-
23 ատան. Եւ Դանի որդիներին կան-
չեցին, և նորանք իրանց երեսը
դարձրին և Միքայէլին ասացին.
Քեզ ի՞նչ կայ, որ այսօրէս ժո-
ղովուել ես։ Եւ նա ասաց. Իմ 24
շինած աստուածներն և քահա-
նային առել էք գնացել, և ինձ
էլ ի՞նչ մնաց. և ինձ ինչո՞ւ հա-
մար էք ասում. Թէ քեզ ի՞նչ
կայ։ Եւ Դանի որդիքը նորան 25
ասացին. Մեր ձէջ քո ձայնը չը
լսուի. մի գուցէ բարկասիրտ
մարդիկ ձեզ վերայ յարձակուին,
և քո կեանքը և քո ընտանեաց
կեանքը կորցնես։ Եւ Դանի որ- 26
դիքը իրանց ճանապարհովը գնա-
ցին. և Միքան տեսնելով որ նո-
րանք իրանից զօրաւոր են, ետ
դարձաւ իր տունը գնաց։
Եւ նորանք Միքայէլ շինածները 27
և նորա քահանային վեր առին
և գնացին Լայխի վերայ՝ այն
հանգիստ և անհոգ ժողովրդի վե-
րայ, և նորանց սուրի բերանով
զարկեցին, և քաղաքը կրակով
այրեցին։ Եւ նորանք Սիդոնիցը 28
հեռու լինելով և մի մարդու հետ
գործ չունենալով, ազատող չը
կար. և Բեթրոոբի հովտի մէջ
էր. և քաղաքը շինեցին և նորա
մէջ բնակեցին։ Եւ քաղաքի ա- 29
նունը իրանց հօր Իսրայէլեան
Դանի անունովը Դան կոչեցին,
բայց քաղաքի անունը առաջուց
Լայխ էր։ Եւ Դանի որդիքը 30
քանդակած կուռքը կանգնեցրին
իրանց համար, և Մանասէի որ-
դու Գերսոնի որդի Յոնաթանը՝
ինքը և իր որդիքը մինչև երկրի
գերութեան օրը Դանի ցեղի քա-
հանաներն էին։ Ուստի նորանք 31
Միքայէլի շինած կուռքը իրանց
համար պահեցին, որչափ ժամա-
նակ որ Աստուծոյ տունը Սեղովի
մէջ էր։

ԳԼ. ԺԹ

Եւ եղաւ որ (այն օրերը որ Ի- 1
սրայէլի մէջ թագաւոր չկար.)
Եփրեմի լեռան կողմերին մէկ
պանդոխտ Ղևտացի էր բնա-
կուած, և նա Յուդայի Բեթլեհե-
միցը մէկ հարճ առաւ իր հա-
մար։ Եւ նորա հարճը նորա դէմ 2

ընութիւն արաւ և գնաց նորա մօտիցը իր հօր տունը՝ Յուդայի
Բեթլէհէմ, և չորս ամսի չափ
3 այնտեղ կացաւ։ Եւ Նորա մարդը վեր կացաւ գնաց Նորա եղբէյրը, որ քաղցրութեամբ խօսէ
Նորա հետ և Նորան ետ բերէ. և իր հետ էին իր ծառան և երկու
էլ. և նա Նորան տարաւ իր հօր տունը. և աղջկան հայրը երբոր
Նորան տեսաւ՝ ուրախութեամբ
4 Նորան դիմաւորեց։ Եւ աղջկան հայրը՝ Նորա աները Նորան պահեց, և երեք օր Նորա մօտ մնաց.
կերան խմեցին և գիշերները այնտեղ մնացին։
5 Եւ չորրորդ օրը երբոր առաւօտը կանուխ վեր կացան, նա
վեր կացաւ որ գնայ. բայց աղջկան հայրն իր փեսային ասաց.
Սիրտդ պնդացրու մի կտոր հացով, և յետոյ կ'գնաք։
6 Եւ նրա-ան և երկուսը մէկտեղ կերան և խմեցին, և աղջկան հայրը այն
մարդուն ասաց. Աղաչում եմ՝ այս գիշեր էլ այստեղ կաց, որ
7 սիրտդ զուարճանայ։ Եւ այն մարդը վեր կացաւ որ գնայ, բայց
Նորա աները Նորան բռնադատեց, և նա ետ դարձաւ գիշերը այն-
8 տեղ մնաց։ Եւ հինգերորդ օրը առաւօտը կանուխ վեր կացաւ
որ գնայ, և աղջկան հայրն ասաց. Աղաչում եմ՝ սիրտդ պնդացրու. և ուշացան մինչև օրուայ թեքուիլը, և երկուսը կե-
9 րան ճաշեցին։ Եւ այն մարդը վեր կացաւ ինքը, իր հարճը և իր ծառան՝ որ գնան. բայց Նորա աները՝ աղջկան հայրն ասաց Նորան. Ահա օրը իրիկուն է լինում. աղաչում եմ՝ գիշերը մնացէք. ահա օրը անցել է, գիշերը այստեղ մնայ, և սիրտդ զուարճանայ, և էգուց կանուխ ճանապարհ բռնէք, և գնա քո
10 վրանը։ Եւ այն մարդը գիշերը մնալ չուզեց, և վեր կացաւ գնաց, և եկաւ մինչև Յեբուսի՝ այսինքն Երուսաղէմի դիմացը. և իր հետ երկու համեռած էշ ունէր, և իր հարճն էլ իր հետն էր։
11 Եւ երբոր Յեբուսին մօտեցան, օրը շատ անցել էր, ծառան իր տիրոջն ասաց. Եկ այս Յեբուսացոց քաղաքը խոտորենք, և գիշերը այնտեղ մնանք։ Բայց տէրը 12
Նորան ասաց. Չխոտորինք օտարազգիների քաղաքը, որ Իսրայէլ որդկանցը չէ, այլ անցնենք մինչև Գաբաա։ Եւ իր ծառային ա- 13
ասաց. Եկ այնտեղերի մէկին մօտենանք, և գիշերը Գաբաայի կամ Դամայի մէջ մնանք։ Եւ անցան գնացին, և երբոր Բենիամինի Գաբաային մօտեցան, արեգակը մտաւ։ Եւ այնտեղ դարձան որ 15
մտնեն Գաբաա և իջևանեն, և գնաց քաղաքի հրապարակի մէջ նստեց, և մի մարդ չեղաւ, որ Նորանց իր տունը առնէր՝ իջևանելու համար։
Եւ ահա իրիկունը արտիցը մէկ 16
ծեր մարդ էր գալիս՝ իր գործիցը. և նա Եփրեմի լեռնիցը էր, և Գաբաայի մէջ պանդուխտ էր. իսկ այնտեղի բնակիչները Բենիամինեանք էին։ Եւ երբոր նա աչ- 17
քերը բարձրացրեց և տեսաւ ճանապարհորդ մարդուն քաղաքի հրապարակումը՝ ծեր մարդն ասաց. Ո՞ւր ես գնում, և ո՞ր տեղից ես գալիս։ Եւ նա ասաց Նո- 18
րան. Մենք Յուդայի Բեթլէհեմիցը մինչև Եփրեմի լեռան կողմերն ենք անցնում. ես այնտեղացի եմ, և մինչև Յուդայի Բեթլէհէմը գնացի, և Տիրոջ տունն եմ գնում. և ինձ իր տունը ընդունող մարդ չկայ. Բայց մեր էշերի համար յարդ և ճարակ կայ. և ինձ համար, քո աղախնի համար և քո ծառաների հետ եղող պատանու համար հաց ու գինի ունիմ, ոչ մէկ բան պակաս չէ։ Եւ այն ծեր մարդն ա- 20
ասաց. Խաղաղութիւն քեզ. քո ամեն պակասութիւնը ինձ վերայ. բայց գիշերը հրապարակումը մի մնար։ Եւ նորան տարաւ իր 21
տունը, և էշերին կեր տուաւ. և նորանք իրանց ոտքերը լուանալուց յետոյ կերան և խմեցին։
Եւ երբոր նորանց սիրտը զուար- 22
ճանում էր, ահա քաղաքի բնա-

ԴԼ. Ի

Ա.յն ժամանակ բոլոր Իսրայէլի 1
որդիքը դուրս եկան, և ժողո-
ւեցաւ ժողովքը մէկ մարդու
պէս Դանից մինչև Բեերսաբէէ և
Գաղաադու երկիրը՝ Մատիայի
մէջ Տիրոջ առջևը։ Եւ ներկա- 2
յացան բոլոր ժողովրդի՝ Իսրայէ-
լի բոլոր ցեղերի գլխաւորը մարդի-
կը՝ չորս հարիւր հազար տուր քա-
շող հետևակ զօրք Աստուծոյ ժո-
ղովրդի ժողովքի մէջ։ Եւ Բենիա- 3
մինի որդիքը լսեցին, որ Իսրայէ-
լի որդիքը վեր են գնացել Մատ-
փա։ Եւ Իսրայէլի որդիքն ասա-
ցին. Պատմեցէք թէ այս չարու-
թիւնը ի՞նչպէս եղաւ։ Եւ այն 4
Վ.ատացի մարդը՝ այն մեռցրուած
կնոջ մարդը պատասխանեց և ա-
սաց. Ես ու իմ հարճը եկանք
Բենիամինի Գաբաան, որ գիշերը
մնանք. Եւ Գաբաայի բնակիչնե- 5
րը ինձ դէմ վեր կացան, և գի-
շերով պաշարեցին տունը ինձ
դէմ, և ինձ ուզում էին սպա-
նել, և իմ հարճին լկեցին, և մե-
ռան. Ես էլ իմ հարճն առի 6
և նորան կոտորեցի, և Իսրայէլի
ժառանգութեանը բոլոր երկրին
ուղարկեցի. վասն զի նորանք Ի-
սրայէլի մէջ մեծ յանցանք և ան-
պատմութիւն արին։ Ահա դուք 7
ամենքդ Իսրայէլի որդիք էք, ձեր
մէջ խօսեցէք և խորհուրդ արէք
այստեղ։ Եւ բոլոր ժողովուրդը 8
մէկ մարդու պէս վեր կացաւ, և
ասաց. Մեզանից ոչ մէկն իր վրա-
նը չգնայ, և ոչ մէկն իր տունը
չդառնայ։ Եւ հիմա այս բանն 9
անենք Գաբաային. նորա վերայ
գնանք վիճակով. Եւ առնենք Ի- 10
սրայէլի ամեն ցեղերից՝ հարիւրի-
ցը տասը, և հազարից հարիւր,
և տասը հազարից հազար մարդ,
որ ժողովրդի համար պաշար տա-
նեն, որ Բենիամինի Գաբաան
մտնելով նորան հատուցանեն Ի-
սրայէլի մէջ նորա արած բոլոր
անպատմութեան պէս։ Եւ այն 11
քաղաքի վերայ ժողովուեցան Ի-
սրայէլի բոլոր մարդիկը մէկ մար-
դու պէս միաբանութեամբ։

կիչներից չար գաւակներ տուն-
պաշարեցին դրան վերայ յար-
ձակուելով, և տան տիրոջ այն
ծեր մարդու հետ խօսեցին և ա-
սացին. Տուն եկող մարդը հա-
23 ներ, որ նորան գիտենանք։ Եւ այն
տանուտէր մարդը նորանց մօտ
դուրս ելաւ, և նորանց ասաց.
Ոչ, եղբայրնե՛ր, ազաչում եմ
չարութիւն մի անէք. այս մար-
դըն իմ տունը մտնելուց յետոյ
այս անպատմութիւնը մի անէք։
24 Ահա իմ կոյս աղջկանը, և այն
մարդու հարճին թող դուրս բե-
րեմ ձեզ մօտ, և նորանց պիե-
ցէք, և ձեր ուզածն արէք նո-
րանից, բայց այս մարդուն այդ
25 անպատմ գործը մի անէք։ Բայց
այն մարդիկը չուզեցին նորա խօս-
քին լսել, և այն մարդն իր հար-
ճին բռնեց դուրս հանեց նորանց
մօտ, և նորանք նորան դիտացին,
և բոլոր գիշերը նորան պիեցին
մինչև առաւօտ, և երբոր արշա-
լոյսը ծագեց, նորան թող տուին
26 որ գնայ։ Եւ այն կինը առաւօտ-
ուայ դէմ գնաց, և բնկաւ այն
մարդու տան դրան առջև, ուր
27 որ իր տէրն էր մինչև լոյսը։ Եւ
նորա տէրը առաւօտը վեր կա-
ցաւ, տան դռները բացաւ, որ
դուրս գայ գնայ իր ճանապարհը.
և ահա կնիկը իր հարճը տան
դրան առջև բնկած էր, և ձեռ-
28 քերը սեմի վերայ էր։ Եւ նորան
ասաց. Վեր կաց գնանք. բայց
պատասխան տուող չկար։ Այն
ժամանակ նորան իր էշի վերայ
դրաւ և մարդը վեր կացաւ իր
29 տեղը գնաց։ Եւ երբոր իր տունը
հասաւ մի դանակ առաւ, և իր
հարճը բռնեց և կոտորեց նորան
ոսկորներովը տասներկու կտոր,
և Իսրայէլի ամեն տահմաններն
30 ուղարկեց։ Եւ ամեն տեսնողները
ասում էին. Թէ Այսպիսի բան
ոչ եղել է, ոչ էլ տեսնուել է
Իսրայէլի որդիանց Եգիպտոսի
երկրից ելած օրից մինչև այս օ-
րը, սորա վերայ մտածեցէք,
խորհուրդ արէք և խօսեցէք։

12 Եւ Իսրայէլի ցեղերը Բենիամինի բոլոր ցեղին մարդիկ ուղարկեցին և ասացին. Այս ի՞նչ չարութիւն է որ ձեր մէջ եղաւ։
13 Եւ հիմա Գաբաայի մէջ եղող այն չար զաւակ մարդիկը տուէք, որ նորանց մեռցնենք, և չարութիւնը Իսրայէլից վեր առնենք։ Բայց Բենիամինեանք չուզեցին լսել իրանց եղբարց՝ Իսրայէլի
14 որդկանց խօսքին։ Եւ Բենիամինի որդիքը ժողովուեցան Իսրայէլի որդկանց դէմ պատերազմ անելու համար՝ էօն քաղաքներից
15 Գաբաայի մէջ։ Եւ այն օրը էօն քաղաքներից էին Բենիամինի որդիքը համարուեցան՝ քսանուվեց հազար սուր քաշող մարդ բացի Գաբաայի բնակիչներից՝ որոնք եօթը հարիւր ընտիր մարդիկ հա-
16 մարուեցան։ Այս բոլոր ժողովրդի մէջ եօթը հարիւր ընտրուած ձախաձեռն մարդիկ կային, որոնց ամէնն էլ պարսատիկով մազի վերայ քար էին գցում ա-
17 ռանց վրիպելու։ Եւ Իսրայէլի մարդիկն էլ համարուեցան՝ բացի Բենիամինից չորս հարիւր հազար սուր քաշող մարդ, սորանք ամէնն էլ պատերազմող մարդիկ էին։
18 Եւ վեր կացան գնացին՝ Բեթէլ. և Իսրայէլի որդիքը Աստուծոյն հարցրին և ասացին. Բենիամինի հետ պատերազմելու համար ո՞վ լինի մեզ առաջնորդ. և Տէրն ասաց. Յուդան լինի ա-
19 ռաջնորդ։ Եւ Իսրայէլի որդիքը առաւօտը վեր կացան և Գա-
20 բաայի դէմ բանակեցան։ Եւ Իսրայէլացիք դուրս եկան Բենիամինի հետ պատերազմ անելու և Իսրայէլացիք Գաբաայի մօտ նորանց դէմ շարուեցան պատե-
21 րազմի համար։ Եւ Բենիամինի որդիքը դուրս եկան Գաբաայից, և այն օրը Իսրայէլից քսաներ-
22 կու հազար մարդ խորտակեցին գետինը։ Եւ ժողովուրդը՝ այսինքն Իսրայէլացիք ուժովացան, և միւսանգամ գնացին շարուեցան նոյն տեղը պատերազմելու համար, որ որ առաջի օրը շարուել
23 էին։ (Եւ Իսրայէլի որդիքը վեր

եկան, և Տիրոջ առջեւը մինչեւ իրիկուն լացին, և Տիրոջը հարցրին ասելով. Մեր եղբօրը՝ Բենիամինի հետ պատերազմելու համար միւսանգամ ելլե՞նք։ Եւ Տէրն ասաց. Նորա դէմ ելէք։
Եւ երկրորդ օրը Իսրայէլի որդիքը Բենիամինի որդկանց մօտեցան։ Եւ երկրորդ օրը Բենիամինեանք Գաբաայից նորանց դէմ դուրս եկան, և Իսրայէլի որդկանց կրկին տասնուեթը հազար մարդ խորտակեցին գետինը. սորանց ամէնն էլ սուր քաշող մարդիկ էին։

Այն ժամանակ բոլոր Իսրայէլի որդիքը՝ այսինքն բոլոր ժողովուրդը վեր եկան Բեթէլ գնացին, և այնտեղ Տիրոջ առջեւ նստեցին լացին, և այն օրը մինչեւ իրիկուն ծոմ պահեցին, և Տիրոջ առջեւ ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցրին։ Եւ Իսրայէլի որդիքը Տիրոջ հարցրին. (և այն օրերը Աստուծոյ ուխտի տապանակն այնտեղ էր. Եւ այն օրերը նորա առջեւ Ահարոնեան Եղիազարի որդի փենէհէան էր կանգնում.) և ասացին. Մեր եղբօրը Բենիամինի որդկանց հետ պատերազմելու համար միւս անգամ էլ ելլե՞նք, թէ դադարենք։ Եւ Տէրն ասաց. Վեր ելէք, վասն զի էգուց ձեր ձեռքը պիտի մատնեմ նորանց։

Եւ Իսրայէլացիք Գաբաայի չորս կողմը դարանակալներ դրին։ Եւ Իսրայէլի որդիքը երրորդ օրը Բենիամինի որդկանց վերայ գնացին, և միւս անգամների պէս Գաբաայի դէմ շարուեցան։ Այն ժամանակ Բենիամինի որդիքը ժողովրդին դիմաւորեցին, և քաղաքից բաժանուեցան և առաջի անգամների պէս սկսեցին ժողովուրդը զարկել, և երեսունի չափ Իսրայէլացի մեռցրին այն ճանապարհների մէջ որոնց մէկը Բեթէլ է ելնում և միւսը դաշտի Գաբաան։ Եւ Բենիամինի որդիքն ասացին. Անհա նորանք մեր առջեւ առաջի անգամների պէս կոտրւում են։ Եւ Իսրայէլի որ-

դէքն ասացին. Փախչենք և նո-
րանց քաղաքիցը դուրս հանենք
33 ճանապարհները, և Իսրայէլի
բոլոր մարդիկը իրանց տեղիցը
վեր կացան, և Բաալթամարի
առջև շարուեցան. և Իսրայէլի
դարանակալները յանկարծ իրանց
տեղից՝ Գաբաայի դաշտիցը դուրս
34 եկան. և եկան Գաբաայի առ-
ջևը բոլոր Իսրայէլիցը տասը հա-
զար ընտրուած մարդ, և պատե-
րազմը սաստկացաւ. և նորանք
չգիտէին որ իրանց վերայ չարիք
35 է հասել. և Տէրը Իսրայէլի առ-
ջևը Բենիամինին զարկեց, և այն
օրը Իսրայէլի որդիքը Բենիամինից
քսան ու հինգ հազար հարիւր
մարդ փչացրին. նորանց ամենն
36 էլ սուր քաշող էին. և Բենի-
ամինի որդիքը տեսան որ իրանք
յաղթուեցան, վասն զի Իսրայե-
լացիք Գաբաայի շրջակայքում
դրած դարանակալներին ապաւի-
նելով՝ Բենիամինեանց տեղ տը-
37 ուին. և դարանակալները շու-
տավ Գաբաային վերայ յարձակ-
ուեցան, և դարանակալները տա-
րածուեցան, և բոլոր քաղաքը
38 սուրի բերանով զարկեցին. և
Իսրայէլացիք դարանակալների
հետ ժամնակ էին արուել, որ
քաղաքիցը մեծ կրակով ծուխ
39 հաներն. Այն ժամնակ Իսրայէլի
մարդիկը պատերազմի մէջ փա-
խուստ ցոյց տուին. և Բենիա-
մինեանք սկսեցին Իսրայէլացիներ-
ին զարկել, և երեսուն մարդ չափ
մեռցրին. վասն զի ասացին.
Թէ Անտարակոյս նորանք մեր
առջև առաջի պատերազմի պէս
40 կտրուած են. Բայց երբոր քա-
ղաքիցը կրակի ծուխը սկսեց սիւ-
նի պէս բարձրանալ, Բենիամին-
եանք ետ դարձան, և ահա քա-
ղաքի հրդեհը երկինքն էր ելնում.
41 և երբոր Իսրայէլացիները ետ
դարձան, Բենիամինեանք ապշե-
ցին մնացին, վասն զի տեսան որ
չարիքը իրանց վերայ հասել էր.
42 և նորանք Իսրայէլացոց առջե-
ւից դէպի անապատի ճանապար-
հը դարձան, բայց պատերազմը
հասաւ նորանց. և քաղաքներիցը

դուրս եկողները նորանց իրանց
ժէջ մեռցրին. Այո՛ Բենիա- 43
մինեաններին պաշարեցին, նորանց
հալածեցին, և նորանց դիւրու-
թեամբ մինչև Գաբաայի դէմ
արևելեան կողմից զարկեցին. և 44
Բենիամինից տասնուեօթ հազար
մարդ ընկաւ. նորանց ամենն էլ
զօրաւոր մարդիկ էին. և հա- 45
յո՛ցքը դարձան դէպի անապա-
տը և դէպի Ռեմմոնի վէմը փա-
խան. նորանցից ճանապարհնե-
րումը հինգ հազար մարդ ճառա-
գաց սրին. և նորանց մինչև
Գեդոմ հալածելով՝ նորանցից եր-
կու հազար մարդ զարկեցին. և 46
Բենիամինից այն օրը բոլոր ըն-
կածները քսան ու հինգ հազար
սուր քաշող մարդ էր. նորանց
ամենն էլ զօրաւոր մարդիկ էին.
և վեց հարիւր մարդ դարձան 47
և դէպի անապատը Ռեմմոնի վէմը
փախան, և Ռեմմոնի վէմումը չորս
ամիս կացին. և Իսրայէլացիք 48
դէպի Բենիամինի որդիները դար-
նալով՝ նորանց սուրի բերանով
զարկեցին, քաղաքներիս մէջի մարդ-
կանցից մինչև անասունները, և
ինչ որ գտնուեցաւ, և բոլոր
գտնուած քաղաքներն էլ կրակով
այրեցին.

ԳԼ. ԻԱ.

Եւ Իսրայէլի մարդիկը Մասփա- 1
յումի երդում էին արել և ա-
սել. Թէ Մեզանից ոչ ոք իր ա-
ղջիկը Բենիամինացու կին չտայ. և 2
ժողովուրդը գնաց Բեթէլ և այն-
տեղ Աստուծոյ առջև մինչև ի-
րիկուն նստեցին, և իրանց ձայնը
բարձրացնելով՝ մեծ լացով լա-
ցին, և ասացին. Ով Իսրայէլի 3
Տէր Աստուած, ինչո՞ւ համար
պատահեց այս բանը Իսրայէլի
ժէջ, որ այսօր Իսրայէլից մէկ
ցեղ պակաս է. և հետևեալ օ- 4
օրը ժողովուրդը կանուխ մեր կա-
ցան, և այնտեղ սեղան շինեցին,
և ողջակէզներ և խաղաղութեան
զոհեր մատուցին.

Եւ Իսրայէլի որդիքն ասացին. 5
Ո՞վ է որ Իսրայէլի ամեն ցեղե-

րիցը վեր չգնայ ժողովքի հետ
Տիրոջ առջևը. վասն զի Տիրոջը
առջևը Մասփա վեր չգնացող
մարդու համար մեծ երդում էին
արել, ասելով թէ՝ Նա անպատ-
6 ճառ պիտի մնայ։ Այն ժամա-
նակ Իսրայէլի որդիքն իրանց եղ-
բօր Բենիամինի համար ցաւելով
ասացին. Այսօր Իսրայէլիցը մէկ
7 ցեղ բնաջինջ եղաւ։ Այս մնա-
ցածներին ի՞նչ անելիք կանանց
մասին. վասն զի մենք Տիրոջ ա-
նունովը երդում արինք որ մեր
աղջիկներից նորանց կին չտանք։
8 Եւ ասացին. Ո՞վ է որ Իսրայէլի
ցեղերից վեր չգնաց Տիրոջ առ-
ջևը Մասփա. և ահա Գաղաադ
ու Յաբիսից ոչ մի մարդ չէր ե-
9 կած բանակը և ժողովքը։ Եւ
ժողովուրդը հանդիսացաւ. և ա-
հա նորանց մէջ Գաղաադու Յա-
բիսի բնակիչներից մարդ չգտնը-
10 ուեցաւ։ Այն ժամանակ ժողով-
քը շատ զօրաւորներից տասներ-
կու հազար մարդ ուղարկեցին
այնտեղ, և նորանց պատուիրե-
լով ասացին. Գնացէք, և Գա-
ղաադու Յաբիսի բնակիչներին
սուրի բերանով զարկեցէք, կա-
11 նանցն էլ տղայոցն էլ։ Եւ այս
է ձեր անելիքը. Ամեն արու և
արուի անկողին գիտացող ամեն
12 կին նզովեցէք։ Եւ Գաղաադու
Յաբիսի բնակիչների մէջ չորս
հարիւր կոյս աղջիկներ գտան,
որոնք արուի հետ պառկած չէ-
ին, և արու չէին գիտում, և նո-
րանց Քանանու երկրի մէջ Սելո-
13 վի բանակը բերին։ Եւ բոլոր ժո-
ղովքը խօսք ուղարկելով, Ռեմոնի
վէմում եղող Բենիամինի որդ-
կանց հետ խօսեցին, և նորանց
14 խաղաղութեան հրաւիրեցին։ Եւ
այն ժամանակ Բենիամինեանք ետ
դարձան. և այն կանայքը տուին
նորանց որ ողջ էին թողել Գա-
ղաադու Յաբիսի կանանցից. բայց
նորանց համար բաւական չեղան։
15 Եւ ժողովուրդը Բենիամինի հա-
մար ցաւեց. որ Տէրը Իսրայէլի
ցեղերի մէջ խռամատութիւն ա-
րաւ։

Եւ ժողովքի ծերերն ասացին. 16
Մնացածներին ի՞նչ անելիք կա-
նանց մասին. որովհետև Բենիա-
մինի կանայքը կորան։ Եւ ասա- 17
ցին. Ողջ մնացող Բենիամինեանց
համար ժառանգութիւն պէտք մը-
նայ. որ Իսրայէլից մի ցեղ բնա- 18
ջինջ չլինի։ Եւ մենք մեր աղջ-
կերքից չենք կարող նորանց կին
տալ. վասն զի Իսրայէլի որդիքը
երդում արին ասելով. Բենիամի-
նին կին տուողը անիծեալ լինի։
Եւ ասացին. Ահա տարուց տարի 19
Տիրոջ տօնախմբութիւն է լինում
Սելովի մէջ, որ Բեթէլի հիւսի-
սային կողմին, և Բեթէլից Սիւ-
քեմ երթող ճանապարհի արևել-
եան կողմին, և Ղեբօնայի հա-
րաւային կողմին է։ Եւ Բենիա- 20
մինի որդկանցը պատուիրելով ա-
սացին. Գնացէք, պտգիներում
թաք կացէք. Եւ երբոր տեսնէք, 21
որ Սելովի աղջկերքը պար բռնած
դուրս են գալիս պարելու, այն
ժամանակ պտգիներից դուրս ե-
կէք, և ձեր ամեն մէկն իր հա-
մար Սելովի աղջկերքից կին յա-
փըշտակեցէք, և Բենիամինի եր-
կիրը գնացէք։ Եւ եթէ նորանց 22
հայրերը կամ եղբայրները դան
մեզ հետ կռուելու, նորանց կա-
սենք թէ Նորանց մեզ շնորհե-
ցէք, վասն զի մենք պատերազ-
մում նորանց ամենի համար կին
չպահեցինք. և հիմա որ դուք չէ
տաք նորանց յանցաւոր կ՚լինիք։
Եւ Բենիամինի որդիքը այնպես 23
արին, և իրանց թուոյն չափ պար
բռնածներից կանայք յափշտա-
կելով՝ առին և գնացին ետ դար-
ձան իրանց ժառանգութիւնը, և
քաղաքներ շինեցին և նորանց մէջ
բնակեցին։ Եւ այն ժամանակ Իս- 24
րայէլի որդիքը այնտեղից ամեն
մարդ իր ցեղի ու իր ազգատոհմի
մօտ գնաց. և ամեն մարդ այն-
տեղից դուրս գնաց դէպի իր ժա-
ռանգութիւնը։ Այն օրերը Իս- 25
րայէլի մէջ թագաւոր չկար. ա-
մեն մարդ իր աչքին հաճելի ե-
ղածն էր անում։

ԳԻՐՔ ՀՌՈՒԹԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Պատահեցաւ կատարելութեան օրերին երկրաւմը սուվ եղաւ. և Յուդայի Բեթլէհեմից մէկ մարդ իր կինովը ու երկու որդիներովը գնաց Մովաբի երկիրը պանդխտանալու. 2 և այն մարդու անունը Ելիմելէք, և կնոջը անունը Նաոմի, և երկու որդոց անունները Մաալոն և Քեղլոն էին, եփրաթացի Յուդայի Բեթլէհեմից. և գնացին Մովաբի երկիրը և 3 մնացեղ էին լինում: Եւ Նաոմիի մարդը Ելիմելէք մեռաւ, և նա 4 մնաց իր երկու որդիներովը, Որոնք իրանց համար Մովաբացի կանայք առին. մէկի անունը Որփա, և մեւսի անունը Հռութ. և նորանք տասը տարու չափ 5 տեղեղ նստեցին: Եւ Մաալոն և Քեղլոն երկուսն էլ մեռան, և կինը իր երկու որդիանցից ու մարդիցը զուրկ մնաց:

6 Եւ նա իր երկու հարսներով վեր կացաւ, որ Մովաբի երկրիցը դառնայ, որովհետև Մովաբի երկրումը լսել էր որ Տէրը իր ժողովրդին այցելութիւն է արել նոցա հաց տալով: 7 Եւ նա իր եղած տեղից դուրս եկաւ իր երկու հարսների հետ, և ճանապարհ բռնեցան Յուդայի երկիրը դառնալու համար: 8 Եւ Նաոմի իր երկու հարսներին ասաց. Գնացէք և ձեզանից ամեն մէկը դարձ իմ արդանդումը ուրիշ տղայք կան, որ ձեզ համար մարդիկ դառնան: Եւ դարձէք, աղջիկներս, գնացէք. վասն զի ես պառաւած եմ, այլևս մարդու չեմ գնալ. եթէ ասէի որ յոյս ունիմ հէնց այս գիշեր, և որդիք էլ ծնեմ, 13 մեծանալը կ'սպասէի՞ք, դուք առանց հարսանիքի կ'սպասէի՞ք, դուք առանց ամուսնանալուց. ոչ, աղջիկներս, վասն զի շատ ցաւում եմ ձեզ համար, որովհետև Տէրոջ ձեռքը ինձ հասաւ: 14 Եւ նորանք իրանց ձայները բարձրացնելով դարձեալ լացին: Եւ Որփան իր սկեսրին համբուրեց. բայց Հռութը նորա մօտ մնաց: 15 Նէոին ասաց. Ահա քո նեղը եաւ դառաւ իր ժողովրդին և իր աստուածներին. դու էլ եաւ դարձիր նեղի եաւից: 16 Եւ Հռութն ասաց. Ինձ մի ստիպիր որ քեզ թողում, և քեզանից եաւ դառնամ. վասն զի ուր որ գնաս գնալու եմ, և ուր որ մնաս՝ մնալու եմ. քո ժողովուրդն իմ ժողովուրդն է, և քո Աստուածն իմ Աստուածն է. 17 Ուր որ մեռնես՝ ես էլ կ'մեռնեմ և այնտեղ կ'թաղուիմ, Տէրը ինձ այսպէս և սորանից աւելի անէ, որ ինձ քեզանից մահը պիտի բաժանէ: 18 Երբոր Նաոմին տեսաւ որ նա հաստատ ուզում է իր հետ գնալու, այլևս չխօսեց նորա հետ:

19 Եւ երկուսը գնացին, մինչև որ Բեթլէհեմ հասան. և երբոր Բեթլէհեմ եկան սորանց պատճառով բոլոր քաղաքը շարժուեցաւ, և ասում էին. Սո՞ է Նաոմին 20 նա նորանց ասաց. Ինձ Նաոմի մի կանչէք, ինձ Մարա կանչեցէք. վասն զի Ամենակարողը դառնութեամբ լեցրեց ինձ. 21 ես գնացի լիքն, բայց Տէրն ինձ դատարկ դարձրեց. ինչո՞ւ էք ինձ Նաոմի ասում, վասն զի Տէրը ինձ խոնարհեցրեց և Ամենակարողը ինձ

22 վշտացրեց։ Աբյապէս Նոեմին ետ դարձաւ իր հարս Մովաբացի Հռութի հետ Մովաբի երկրից. և գարու հնձի սկզբում հասան Բեթլեհեմ։

ԳԼ. Բ

1 Եւ Նոեմի իր մարդու կողմանէ մէկ ազգական ունէր. նա շատ հարուստ մարդ էր Ելիմելեքի ազգատոհմից, և նորա անունը Բոոզ. 2 եւ Մովաբացի Հռութը Նոեմիին ասաց. Գնամ արտերը, և որի աչքի առջև շնորհք գտնեմ, նորա ետևից հասկեր ժողովեմ։ Եւ նա ասաց նորան. 3 Գնա աղջիկս։ Եւ նա գնաց. և մի արտի մէջ մտնելով հնձողների ետևից ժողովում էր. և պատահեց, որ նա հանդիպեց Ելիմելեքի ազգատոհմից եղող Բոոզի արտին։

4 Եւ ահա Բոոզը Բեթլեհեմից եկաւ, և հնձողներին ասաց. Տէրը ձեզ հետ։ Եւ նորանք ասացին. Տէրը քեզ օրհնէ։ Եւ Բոոզը հնձողների վերայ նշանակուած պատանուն ասաց. Որի՞ն է այս 6 աղջիկը։ Եւ հնձողների վերակացու պատանին պատասխանեց և ասաց. Նոեմիի հետ Մովաբի երկրից դարձող Մովաբացի աղ- 7 ջիկն է. Եւ ինձ ասաց. Աղաչում եմ, որ ետևից հասկ քաղեմ և ժողովեմ. և նա առաւօտից կանուխ եկել է և մինչև հիմա մնացել. դոյն Ե հիմա մի քիչ առնը նստեց։ 8 Եւ Բոոզ ասաց Հռութին. Ա- հա, աղջիկս. հասկ ժողովելու համար ուրիշի արտը չգնաս, և այստեղից էլ չդաժանուես, այլ այստեղ իմ աղջկերանց մօտ կե- 9 նաս. Աչքերդ նորանց հնձած արտի վերայ լինի, և նորանց ետևից գնա. ոչ պատանիներին պատուիրել եմ որ քեզ չդիպչին. և երբոր ծարաւ ես՝ անօթ- ների մօտ գնա. և պատանիների 10 քաշած ջուրը խմիր։ Եւ աղջիկը երեսի վերայ ընկաւ, և մինչև գետին երկրպագութիւն անելով նորան ասաց. Ինչից է որ ես քո աչքերի առջև շնորհք գտայ. և դու ինձ ճանաչում ես. քանի որ ես մէկ օտար կին եմ։ 11 Եւ Բոոզը պատասխանեց և նորան ասաց. Քո մարդը մեռնելուց յետոյ դու ինչպէս որ ակեարիդ արել ես բո- լորն էլ պատմել են ինձ, և թէ ինչպէս քո հօրն և մօրը և ծնած երկիրդ թողեցիր, և եկար այն ժողովուրդի մօտ որին առաջ չէ- իր ճանաչում։ 12 Քո գործդի փո- խարէնը Տէրը հատուցանէ, և քո վարձքը Իսրայէլի Տէր Աստուծոյ կողմանէ առատապէս տրուի, վասն զի դու եկար որ նորա թե- ւերի տակ ապաստանարան դրա- նես։ 13 Եւ նա ասաց. Տէր իմ, քո աչքերի առջև շնորհք գտայ, վասն զի դու ինձ մխիթարեցիր, և քո աղախնի հետ քաղցրու- թեամբ խօսեցիր, թէպէտ և ես քո աղախիններէն մէկի պէս էլ չեմ։ 14 Եւ Բոոզը կերակուրի ժա- մանակ նորան ասաց. Մօտեցիր, և հացիցը կեր, և պատառդ քա- ցախին թաթխիր։ Եւ նա հնձող- ների մօտ նստեց. նորա հեղի տը- ուաւ. նա էլ կերաւ կշտացաւ, և աւելացածը պահեց։ 15 Եւ երբոր վեր կոցաւ հասկ ժողովելու, Բոոզ իր պատանիներին պատուի- րեց ասելով. Թող որոնների մէ- ջից էլ ժողովէ, և նորան մի ամօթացնէք. 16 եւ խուրձերից էլ նորա համար գետինը ձգեցէք, և թող առէք որ ժողովէ, և նորան մի յանդիմանէք։ 17 Եւ նա մինչև իրիկուն այն արտի մէջ ժողովեց. և երբոր ժողովածը ծե- ցից, մէկ արդուի չափ գարի ե- ղաւ։ Եւ առաւ և քաղաքը մը- տաւ. և սկեսուրը նորա ժողով- ածը տեսաւ. և Հռութը հանեց 18 այն իր կշտացածից աւելացածը նորան տուաւ։

Եւ սկեսուրը նորան ասաց. Որ 19 տեղ ժողովեցիր այսօր, և ո՞ւր աշխատեցիր. քեզ ճանաչողը օրհ- նեալ լինի։ Այն ժամանակ նո- րան իր սկեսրին իմացրեց, թէ որի մօտ է աշխատել, և ասաց. Այն մարդու անունը, որի մօտ

և այսօր աշխատեցի, բոռս է։
20 Եւ Նոեմի իր հարսին ասաց. Նա
Տէրոջն օրհնեալ լինի, որ կեն-
դանիներից ու մեռածներից իր
ողորմութիւնը չպակասացրեց. և
Նոեմին նորան ասաց. Այն մար-
դը մեր ազգատոհմից է. նա մօտ
21 ազգական է մեզ։ Եւ Մովաբացի
Հռութն ասաց. Նաև ինձ ա-
սաց. Թէ իմ պատանիների մո-
տիցը չդաժանուիս, մինչև որ նո-
րանք իմ բոլոր հունձքը վերջաց-
22 նեն։ Եւ Նոեմին իր հարս Հռու-
թին ասաց. Լաւ է, աղջիկս,
որ դու նորա աղջկերանց հետ
գնաս, և քեզ ուրիշ արտի մէջ
23 չհանդիպին։ Եւ նա բոռոսի աղջ-
կերքից չդաժանուեցաւ, և մին-
չև գարու հունձքը և ցորենի
հունձքը հաւաքուեց, և իր ե-
կեսրոր մօտ էր բնակւում։

Գ Լ. Գ

1 Եւ նորա սկեսուրը Նոեմին նո-
րան ասաց. Աղջիկս էս քեզ հա-
մար հանգստութիւն եմ որո-
նում, որ քեզ համար լաւ լինի։
2 Եւ ահա Բոոսը մեր ազգական-
ներից է, որ դու նորա աղջկե-
րանց մօտ էիր. ահա նա այս գի-
շեր կալումը գարի է կաւում։
3 Եւ դու լուացուիր և իւղ օծ-
ուիր, և հանդերձներդ հագիր և
իջիր կալը, և այն մարդուն մի
յայտնուիր. որ ուտէ և խմէ վեր-
4 ջացնէ։ Եւ երբոր քնանայ նորա
պառկած տեղն իմացիր, և գնա
նորա ոտքերի կողմից ծածկոցը
բաց և պառկիր, և նա քեզ կ'ի-
5 մացնէ թէ ինչ պիտի անես։ Եւ
Հռութը նորան ասաց. Ամեն ինչ
որ ինձ ասել ես կ'անեմ։
6 Եւ իջաւ կալը, և իր սկեսրի
ամեն պատուիրածի պէս արաւ։
7 Եւ Բոոսը կերաւ և խմեց և սիր-
տը զուարճացել էր և գնաց գիշ-
ուած գարու հերթին պառկելու.
և Հռութը կամաց գնաց, և նորա
ոտքերի կողմից ծածկոցը բացաւ
8 և պառկեց։ Եւ կէս գիշերին մար-
դը վախեցաւ, և ծռեց դէսուդէս ու
ահա իր ոտքերի մօտ մի կին է
պառկել։ Եւ ասաց. Դու ո՞վ 9
ես։ Եւ նա ասաց. Ես քո աղա-
խին Հռութն եմ. և քո քղանց-
քը տարածիր քո աղախնի վերայ,
վասն զի դու իմ մօտ ազգակա-
նն ես։ Նա էլ ասաց. Օրհնեալ 10
լինիս դու Տէրից, աղջիկս, քո
հետի լաւութիւնը առաջինից
մեծ է, որովհետև դու ոչ աղ-
քատ և ոչ հարուստ երիտա-
սարդների հետից չգնացիր։ Եւ 11
հիմա, աղջիկս, մի վախենար,
դու ինձ ինչ որ ասես՝ քեզ հա-
մար կ'անեմ, վասն զի քաղաքիս
բոլոր ժողովուրդը՝ գիտէ որ դու
մի առաքինի կին ես։ Եւ հիմա 12
իրաւ ես + ազգականն եմ, բայց
ինձանից մօտ --էլ ազգական
կայ։ Այս գիշեր --յ-ե-ը կաց, 13
և եթէ առաւօտը նա իր ազգա-
կանութեան պարտաւորութիւնը
հատուցանել ուզէ, լաւ, թող
հատուցանէ. բայց եթէ նա չու-
զէ ազգականութեան պարտաւո-
րութիւնը քեզ հատուցանել,
այն ժամանակ ես կ'հատուցա-
նեմ, կենդանի է Տէրը, մինչև
առաւօտ պառկիր --յ-ե-ը։

Եւ նա պառկեց նորա ոտքերի 14
մօտ մինչև առաւօտ, և վեր կա-
ցաւ, երբոր մարդիկ դեռ չէին
կարող մէկմէկ ճանաչել. և Հ-
--ը ասաց. Մի մարդ չգիտենայ
որ կալը կին է եկել։ Նաև ասաց.
Վերայի ծածկոցդ բեր, և նորան
բռնիր։ Եւ Հ---ը բռնեց նորան. 15
և վեց ը-է գարի չափեց, և նորա
վերայ բեռնաւորեց. և նա քա-
ղաքը գնաց։ Եւ Հ---ն իր ե- 16
կեսրի մօտ գարձաւ. և նա ասաց.
Աղջիկս, ի՞նչպէս էս. և նա նո-
րան պատմեց ինչ որ այն մարդն
արել էր իրան. Եւ ասաց. Ինձ 17
տուաւ այս վեց ը-է գարին, ա-
սելով. Դո սկեսրի մօտ դատարկ
չգնաս։ Եւ Նոեմին ասաց. Աղ- 18
ջիկս, նստիր, մինչև որ գիտենաս
--գործը ինչպէս պիտի վերջանայ.
վասն զի այն մարդը մինչև որ
այս գործը այսօր չվերջացնէ՝ չի
հանգստանալ։

ԳԼ. Դ

4 Եւ Բոոսը վեր գնաց դուռը և
այնտեղ նստեց. և ահա անց էր
կենում այն ազգականը որ Բոոսն
ասել էր և Բոոսը նորան ասաց.
Եկ այստեղ նստիր ով այսինչ
մարդ. և նա դարձաւ ու նստեց։
2 Ան ժամանակ նա քաղաքի ծե-
րերից տասը մարդ առաւ, և ա-
սաց. Այստեղ նստեցէք. և նո-
3 րանք նստեցին։ Յետոյ այն ազ-
գականին ասաց. Մեր եղբայր Ե-
լիմելեքի արտի բաժինը ծախում
է Նոեմին որ Մովաբի երկրից է
4 դարձել. Եւ ես մտածեցի որ քեզ
իմացնեմ և ասեմ. Այս նստող-
ների առջև և իմ ժողովրդի ծե-
րերի առջև ծախու առ. եթէ
ուզես ազգականութեան իրա-
ւունքով ծախու առնել, առ.
բայց եթէ ծախու առնել չես
ուզում, ինձ իմացրու որ գիտե-
նամ. վասն զի բացի քեզանից
ազգականութեան իրաւունքը կա-
տարողը չկայ. և քեզանից յետոյ
ես եմ։ Եւ նա ասաց. Ես ազ-
գականութեան իրաւունքը կ'կա-
5 տարեմ։ Եւ Բոոսն ասաց. Դու
Նոեմիի ձեռքից արտը ծախու
առած օրը՝ մեռնողի կնկանից՝
Մովաբացի Հռութից էլ պիտի
ծախու առնես, որ մեռնողի ա-
նունը պահես իր ժառանգու-
6 թեան մէջ։ Եւ ազգականն ասաց.
Ես իմ ազգականութեան իրա-
ւունքը չեմ կարող կատարել.
մի գուցէ իմ ժառանգութիւնը
խանգարեմ, իմ ունեցած ազ-
գականութեան իրաւունքը դու
կատարիր, վասն զի ես չեմ կա-
7 րող կատարել։ Եւ Իսրայելի մէջ
առաջուց սա կար ազգականու-
թեան իրաւունք կատարելու ու
ծախու առնելու գործքերի մէջ
որ ամեն բան հաստատուի, մարդ
իր կօշիկը հանում էր և իր ըն-
կերին էր տալիս. և սա Իսրայելի
8 մէջ վկայութիւն էր լինում։ Եւ
ազգականը Բոոսին ասաց. Դու
ծախու առ. և իր կօշիկը հանեց։
9 Եւ Բոոսն ասաց ծերերին և բո-
լոր ժողովրդին. Դուք այսօր վկայ էք, որ ես Ելիմելեքի բոլոր ստացուածքը, և Քեղիոնի և Մահլոնի բոլոր ստացուածքը Նոեմիի ձեռքից ծախու առի. Եւ Մահլոնի կինը՝ Մովաբացի Հռութին էլ ինձ համար կին առի, որ մեռնողի անունը պահեմ իր ժառանգութեան մէջ, և մեռնողի անունը չվերանայ իր եղբայրներից և իր բնակարանի դռնից. դուք այսօր վկայ էք։ Ան ժամանակ բոլոր ժողովուրդը որ դրսում էր և ծերերը ասացին. Վկայ ենք. Տէրը քո տունը մտնող կնոջը Ռաքելի ու Լիայի պէս անէ, որ այդ երկուսը Իսրայէլի տունը շինեցին. և դու Եփրաթայի մէջ ուժովացիր, և Բեթղեհեմի մէջ անուն շահիր։ Եւ քո տունը Փարեսի տան պէս լինի, որին Թամարը ծնաւ Յուդայի համար այն սերունդով՝ որ Տէրը կ'տայ քեզ այս նորահասակ կնկանից։

Եւ Բոոսն առաւ Հռութին, որ իր կինը եղաւ և նորա մօտ մտաւ. և Տէրը նորան յղութիւն շնորհեց, և որդի ծնաւ։ Եւ կանայք Նոեմիին ասացին. Օրհնեալ լինի Տէրը, որ քեզ առանց մօտ ազգականի չթողեց այսօր, որ նորա անունը Իսրայէլի մէջ յիշուի. Եւ սա լինի քո հոգու մխիթարութիւնը՝ և ծերութեանդ խնամողութիւնը. վասն զի քեզ սիրող հարսդ ծնաւ նորան, որ քեզ համար եօթը որդուց լաւ է։ Եւ Նոեմին առաւ տղան իր գրկումը դրաւ և նորա դայեակը եղաւ։ Եւ դրացի կանայքն նորա անուն դրին, ասելով. Նոեմիին մի որդի է ծնել, և նորա անունը Ովբէդ կոչեցին. սա Դաւթի հօր Յեսսէի հայրն էր։

Եւ փարեսին ծնունդները սորանք են. Փարէսը ծնաւ Եսրոնին, Եւ Եսրոնը ծնաւ Արամին, և Արամը ծնաւ Ամինադաբին, Եւ Ամինադաբը ծնաւ Նասոնին, և Նասոնը ծնաւ Սաղմանին, Եւ Սաղմոնը ծնաւ Բոոսին, և Բոոսը ծնաւ Ովբէդին, Եւ Ովբէդը ծնաւ Յեսսէին, և Յեսսէն ծնաւ Դաւթին։

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ մի մարդ կար Աբիմաղեմ-
ասփիմից Եփրեմի լեռնից՝ անունը
Եղկանա՝ Եփրաթացի Սուփիի
որդու Թովղայի որդու Եղիուա-
2 որդու Յերոամի որդին։ Եւ նա
երկու կին ունէր. մէկի անունը
Աննա, և միւսի անունը Փեննանա.
և Փեննանան զաւակներ ունէր,
3 բայց Աննան զաւակ չունէր։ Եւ
այն մարդը տարուց տարի իր քա-
ղաքից վեր էր գնում, որ Սեղովի
մէջ Զօրաց Տիրոջը երկրպագու-
թիւն և պոհ մատուցանէ, և
այնտեղին Հեղիի երկու որդիքը՝
Ոփնի և Փենեհէս՝ Տիրոջ քահա-
4 նաներն էին։ Եւ Եղկանան իր
պոհ մատուցրած օրը իր կնոջ
Փեննային և նորա տղայոցն և
աղջկերացը բաժիններ տուաւ.
5 իսկ Աննային կրկնապատիկ բա-
ժին տուաւ, վասն զի Աննային
սիրում էր. բայց Տէրը փակել էր
6 նորա արգանդը։ Եւ նորա հա-
կառակորդը Փեննան նորան գրգ-
ռելու համար վշտացրեց. որով-
հետև Տէրը փակել էր նորա ար-
7 գանդը։ Եւ այնպէս էր անում
տարուց տարի Տիրոջ տունը գը-
նալիս. Փեննան էլ նոյնպէս վշտ-
ացնում էր. և նա լաց էր լի-
8 նում և չէր ուտում։ Եւ մարդը՝
Եղկանան նորան ասաց. Աննա,
ինչո՞ւ ես լաց լինում, և ինչո՞ւ
չես ուտում, և ինչո՞ւ համար
սիրտդ այդպէս արտում է. մի՞թէ
ես քեզ համար տասը որդուց
լաւ չեմ։

9 Եւ Աննան վեր կացաւ Սեղովի
մէջ ուտելուց և խմելուց յետոյ.
(և Հեղի քահանան Տիրոջ տա-
ճարին աթոռի մօտ մի ամրոցի վե-
10 րայ նստել էր.) և նա սրտով ա-
բաւ արտմայից հոգով դէպի Տէ-
11 րը և շատ լացաւ։ Եւ ուխտ ա-
բաւ ու ասաց. Ով Տէր Զօրաց,
եթէ դու ազախնի նեղութիւնը
նայես և ինձ յիշես, և քո ա-
զախնին չմոռնալով՝ քո ազախ-
նին արուս զաւակ տաս, ես նո-
րան Տիրոջ կ'նուիրեմ իր կեն-
ցաղոյ բոլոր օրերումը. և նորա գլխին
ածելի չի հպնիլ։ Եւ երբոր նա 12
Տիրոջ առջև շատացրեց իր աղօ-
թելը Հեղին նայում էր նորա բե-
րանին։ Եւ Աննան իր սրտից 13
խօսում էր. միայն նորա շրթունք-
ները շարժում էին, բայց ձայնը
չէր լսվում. նորա համար Հեղին
նորան արբած կարծեց։ Եւ Հե- 14
ղին նորան ասաց. Մինչև ե՞րբ
պիտի արբածութիւն անես. դի-
նովութիւնդ թող։ Եւ Աննան 15
պատասխանեց և ասաց. Ոչ, տէր
իմ, ես վշտացած սրտով մի կին
եմ, և գինի կամ ցգի խմած չեմ,
այլ իմ սիրտն եմ բացել Տիրոջ
առջև։ Քո ազախինը չար կին մի 16
կարծիր, վասն զի իմ վշտաց ու
նեղութեան շատութեան համար
մինչև հիմա խօսեցի։ Այն ժա- 17
մանակ Հեղին պատասխանեց և
ասաց. Գնա խաղաղութեամբ, և
Իսրայէլի Աստուածը տայ քո
խնդրուածքը, ինչ որ նորանից
խնդրեցիր։ Եւ նա ասաց. Քո ա- 18
զախինը թող քո առջև շնորհք
գտնէ. և կինը գնաց իր ճանա-
պարհը, և կերաւ, և երեսը այլ
ևս արտում չէր։

Եւ նորանք առաւօտը կանուխ 19
վեր կացան, և Տիրոջ առջև եր-
կրպագութիւն արին, և ետ
դարձան Ռամա և գնացին իրանց
տունը։ Եւ Եղկանան ճանեցաւ
իր Աննա կնոջը. և Տէրը նորան
յիշեց։ Եւ եղաւ որ տարին դա- 20
նալիս Աննան յղացաւ, և մի տը-
ղայ ծնաւ, և նորա անունը Սա-
մուէլ կոչեց՝ ասելով. Թէ Տէրից
խնդրեցի նորան։ Եւ նորա այրը 21
Եղկանան վեր գնաց իր բոլոր ըն-
տանիքովը, որ մատուցանէ Տի-
րոջ առջև տարեկան պոհը, և իր
ուխտը։ Բայց Աննան չգնաց, վա- 22
սն զի իր մարդուն ասաց. Կը
նստիմ մինչև տղայն կաթից

կարուելը. յետոյ կ'տանեմ նո-
րան որ Տիրոջ առջև երևայ, և
23 միշտ այնտեղ կենայ։ Եւ նորա
այրը Եղկանան նորան ասաց. Ա-
րա ինչ որ աչքերիդ հաճելի է,
նատիր մինչև որ նորան կաթից
կարես. միայն թէ Տէրը հաստա-
ւէ իր խօսքը. և կինը նատեց,
և մինչև իր տղան կաթից կտրե-
լը նորան անուցանում էր։
24 Եւ հէնց որ նորան կաթից կտա-
րեց, իր հետ առաւ նորան, և
երեք զուարակով, մէկ արդու
ալիւրով և մէկ տիկ գինով տա-
րաւ նորան Տիրոջ տունը՝ Սեղով.
25 և տղան փոքր էր։ Եւ զուարակը
մորթեցին, և տղան Հէղիի մօտ
26 տարին։ Եւ Աննան ասաց. Ո՛հ,
տէր իմ, քո անձն կենդանի է,
ես այն կինն եմ, որ այստեղ
քեզ մօտ կանգնեցի Տիրոջը ա-
27 ղօթք անելու համար. ես այս
տղայի համար աղօթք արի, և
Տէրն իմ խնդրուածքն ինձ տուաւ՝
28 ինչ որ նորանից խնդրեցի։ Հիմա
ես էլ նորան փոխ եմ տալիս Տի-
րոջը. իր բոլոր կեանց մէջ Տիրո-
ջը փոխ տրուած լինի. և նա այն-
տեղ Տիրոջը երկրպագութիւն ա-
րաւ։

ԳԼ. Բ

1 Եւ Աննան աղօթք արաւ և ա-
սաց.
Իմ սիրտը ուրախացաւ Տէրոմէն,
Իմ եղջիւրը բարձրացաւ Տէրով.
Բերանս իմ թշնամիների վերայ
լայնացաւ,
Վասն զի քո փրկութիւնովդ ու-
րախացայ։
2 Տիրոջ պէս սուրբ չկայ, վասն զի
քեզանից զատ չկայ,
Եւ մեր Աստուծոյ պէս վէմ չկայ։
3 Այլևս հպարտութիւնով մի
պարծենաք,
Եւ ձեր բերանից մեծամտութիւն
դուրս չգայ,
Վասն զի Տէրը գիտութեանց
Աստուածն է,
Եւ նա կշռում է գործքերը։
4 Զօրաւորներին աղեղները կոտր-
ւում են,

Բայց տկարները ոյժ են հագնում։
Կուշտերը հացի համար վարձկան 5
եղան,
Բայց սովածները դադարեցին սո-
վելուց,
Մինչև որ ամուլը եօթը ծնաւ,
Բայց շատ զաւակ ունեցողը տը-
կարացաւ։
Տէրն է մեռցնողը և ողջացնողը, 6
Գերեզման իջեցնողը և վեր հա-
նողը։
Տէրն է աղքատացնողը և հարս- 7
տացնողը,
Ցածացնողը և բարձրացնողը։
Կանգնեցնում է աղքատին փո- 8
շուց,
Եւ աղբիւրից բարձրացնում է
կարօտին,
Որ իշխանների հետ նստեցնէ,
Եւ փառաց աթոռը նորանց ժա-
ռանգեցնէ,
Վասն զի երկրի հիմերը Տիրոջնն
են,
Եւ աշխարհը նորանց վերայ հաս-
տատեց։
Նա կը պահէ իր սրբերի ոտքերը. 9
Բայց չարագործները մութի մէջ
կ'պապանձեն.
Վասն զի ուժովը չէ յաղթող
մարդը։
Տիրոջ դէմ հակառակողները կը 10
փշրուին.
Երկինքից նորանց վերայ կ'որո-
տայ.
Տէրը կ'դատէ երկրի ծայրերը,
Եւ ոյժ կ'տայ իր թագաւորին,
Եւ իր օծեալի եղջիւրը կ'բարձ-
րացնէ։
Եւ Եղկանան գնաց Ռամա իր 11
տունը. և մանուկը Հէղի քահա-
նայի առջև Տիրոջը ծառայու-
թիւն էր անում։ Եւ Հէղիի որ- 12
դիքը չար զաւակներ էին, Տիրոջը
չէին ճանաչում։ Եւ քահանայից 13
սովորութիւնը այս էր ժողովրդի
մասին, որ երբոր մէկը զոհ մա-
տուցանէր, միսը եփելիս գալիս
էր քահանայի սպասաւորը երեք
ժանի մսահանը ձեռքին. Եւ կո- 14
խում էր այն կաթսայի կամ
սանի կամ եփարանի կամ պատա-
կի մէջ, և մսահանը ինչ որ հա-

նէը, քահանան այն վէր էր առնում իր համար։ Այսպէս էին անում Սէլովի մէջ բոլոր այն տեղ եկող Իսրայէլացիներին։
15 Նաև ճարպը այրելուց առաջ քահանայի սպասաւորը գալիս էր, և ասում էր զոհ անող մարդուն, խորովելու միս տուր քահանայի համար, վասն զի նա քեզանից եփած միս չի առնիլ, այլ
16 հում։ Եւ այն մարդը երբոր ասէր թէ թող հիմա ճարպն այրեն, և յետոյ որքիդ ուզածի չափ առ. այն ժամանակ ասում էր. Ոչ, հիմա տուր, եթէ ոչ բռնի
17 կ'առնեմ։ Եւ այն երիտասարդների մեղքը շատ մեծ էր Տիրոջ առջև. վասն զի այդ մարդիկը արհամարհում էին Տիրոջ զոհը։
18 Եւ Սամուէլ մանուկը քթանի եփուդ հագած ծառայութիւն էր
19 անում Տիրոջ առջև։ Եւ նորա մայրը պզտիկ պատմուճան էր շինում նորա համար և բերում նորա համար տարուց տարի, երբոր իր մարդու հետ վեր էր գալիս
20 տարեկան զոհը անելու։ Եւ Հէլին եղկանային և նորա կնոջը օրհնելով ասաց. Տէրը քեզ այս կնկանից զաւակներ տայ, Տիրոջը փոխ տրուածի փոխարէն. և նո-
21 րանք գնացին իրանց տեղը։ Եւ Տէրը այցելութիւն արաւ Աննային, որ յղացաւ, և երեք տղայ և երկու աղջիկ ծնաւ. Սամուէլ մանուկն էլ մեծացաւ Տիրոջ առջև։

22 Եւ Հէլին շատ ծերացել էր. և լսում էր այն ամէնն ինչ որ նորա որդիքն անում էին բոլոր Իսրայէլին, և ինչպէս նորանք ժողովքի խորանի առջև խումբերով ժողովուած կանանց հետ կը
23 քնէին։ Եւ նորանց ասաց. Ինչո՞ւ համար էք անում այսպիսի բաները. վասն զի ես այս բոլոր ժողովրդի բերանից ձեզ համար չար
24 խօսքեր եմ լսում. Չէ, որդիքս, վասն զի լաւ չէ այն լուրը որ ես լսում եմ ձեր մասին, դուք Տիրոջ ժողովուրդը մոլորացնում
25 էք։ Եթէ մարդ մարդու դէմ մեղք գործէ, նորա դատաստանը Աստուած կ'կարէ. բայց եթէ մարդ Տիրոջ դէմ մեղք գործէ, նորա համար ո՞վ աղաչանք կ'անէ։ Սակայն նորանք իրանց հօր խօսքին մունկ չէին անում, վասն զի Տէրը ուզում էր նորանց մեռցնել։ Եւ Սամուէլ մանուկը օրէց 26 օր մեծանում էր, և հաճելի էր Տիրոջը և թէ մարդկանցը։

Եւ Աստուծոյ մէկ մարդը Հէ- 27 լիի մօտ եկաւ, և նորան ասաց. Տէրը այսպէս է ասում. Քո հօր տանը յայտնապէս երևեցայ, երբ որ նորանք Եգիպտոսի մէջ փարաւոնի տանն էին. Եւ Իսրայէլի 28 բոլոր ցեղերիցը նորան ընտրեցի ինձ համար քահանայ, որ իմ սեղանի վերայ ելնէ, խունկ ծխէ, և իմ առջև եփուդ հագնէ. և Իսրայէլի որդկանց բոլոր պատարագները տուի քո հօր տանը։ Ինչո՞ւ էք անարգում իմ զոհե- 29 րը և ընծաները, որ ես պատուիրեցի իմ տան համար, և քո որդիները ինձանից աւելի ես պատուում, որ ձեզ գիրացնէք իմ ժողովրդին Իսրայէլի ընտիր զոհերովը։ Սորա համար Իսրայէլի 30 Տէր Աստուածն այսպէս է ասում. Իրաւ ասել էի, որ քո տունը և քո հօր տունը գնան իմ առջև յաւիտեան. բայց հիմա Տէրն ասում է. Քաւ լիցի, որովհետև ես ինձ փառաւորողներին կ'փառաւորեմ, և ինձ արհամարհողները կ'անարգուին։ Ա.հա օրեր 31 կ'գան, որ կ'կտրեմ քո թևը և քո հօր տան թևը, որ քո տան մէջ ծեր չլինի։ Եւ դու իմ տան 32 մէջ դժբաղդութիւն կ'տեսանես՝ Իսրայէլն ամեն տեսակ բարութիւն վայելելիս, և քո տան մէջ ծեր չի լինիլ։ Եւ օտար մարդ 33 չեմ պակասեցնիլ իմ սեղանիցը քեզ համար, քո աչքերը նուաղեցնելու և քո սիրտը վշտացնելու համար, և քո տան զարգացածները բոլորը չափահաս կ'մեռնեն։ Եւ սա քեզ նշան լինի՝ ինչ 34 որ պիտի գայ քո երկու որդկանց Ոփնիի և Փենէհէսի վերայ՝ երկուսն էլ մէկ օրում պիտի մեռնեն։ Եւ ինձ համար մէկ հաւա- 35

տարիմ քահանայ պիտի հանեմ, որ բոլոր իմ սրտի և հոգու միջի եղածը կատարէ, և նորա համար տուն պիտի շինեմ. և նա միշտ իմ օծեալի առջև կը
36 գնայ: Եւ քո տունին ալ որ մնայ, մի կտոր արծաթի համար և մի նկանակ հացի համար պիտի գայ նորան երկրպագութիւն անէ, և ասէ. Աղաչում եմ, ինձ մէկ քահանայական պաշտօնի վերայ դիր, որ մի պատառ հաց ուտեմ:

Գլ. Գ

1 Եւ Սամուէլ մանուկը Հեղիի առջև Տիրոջը ծառայութիւն էր անում. և այն օրերը Տիրոջ խօսքը հազուագիւտ էր՝ յայտնի
2 տեսիլք չկար: Եւ այն ժամանակ եղաւ որ Հեղին իր տեղը պառկած էր· (և նորա աչքերը սկսած էին ծանրանալ՝ չէր կարողանում տեսնել·) Եւ Աստուծոյ կանթեղը տակաւին չէր հանգչել, և Սամուէլը քնել էր
3 Տիրոջ տաճարի մէջ, ուր որ Աստուծոյ տապանակն էր: Եւ Տէրը
4 կանչեց Սամուէլին. և նա ասաց.
5 Ահա ես. Եւ Հեղիի մօտ վազելով՝ ասաց. Ահա ես, որովհետև ինձ կանչեցիր: Եւ նա ասաց. Ես չկանչեցի. դարձիր պառկիր: Եւ
6 նա դարձաւ պառկեց: Եւ Տէրը դարձեալ կանչեց՝ Սամուէլ. և Սամուէլը վեր կացաւ Հեղիի մօտ գնաց և ասաց. Ահա ես, որովհետև ինձ կանչեցիր: Եւ նա ասաց. Ես չկանչեցի, որդեակս,
7 դարձիր պառկիր: Եւ Սամուէլը Տիրոջը դեռ չէր ճանաչում, և Տիրոջ խօսքը դեռ նորան յայտնուած չէր:
8 Եւ դարձեալ երրորդ անգամ Տէրը կանչեց, Սամուէլ. և նա վեր կացաւ Հեղիի մօտ գնաց, և ասաց. Ահա ես, որովհետև ինձ կանչեցիր: Եւ Հեղին իմացաւ որ Տէրն է կանչում մանուկին:
9 Եւ Հեղին Սամուէլին ասաց. Գնա պառկիր և եթէ քեզ կանչէ, ասիր. Խօսիր, Տէր, վասն զի քո ծառան լսում է: Եւ Սամուէլը գնաց իր տեղը պառկեց: Եւ Տէրը եկաւ 10
կանգնեց, և առաջի անգամներին պէս կանչեց, Սամուէլ՝ Սամուէլ. և Սամուէլն ասաց. Խօսիր, վասն զի քո ծառան լսում է: Ա- 11
ժամանակ Տէրը Սամուէլին ասաց. Ահա ես Իսրայէլի մէջ մի բան կ'անեմ, որ ամեն նորան լսողի երկու ականջները կ'հնչեցնեն.
Ա- 12
յն օրը Հեղիի վերայ կ'կատարեմ ամեն ինչ որ նորա տան վերայով խօսել եմ. կ'սկսեմ և կը վերջացնեմ: Եւ իրան իմացրել 13
եմ, որ նորա տունը պիտի դատեմ յաւիտեան, իր գիտեցած անօրէնութեան համար. վասն զի նորա որդիքը իրանց վերայ անէծք են բերում, և նա չյանդիմանեց նորանց: Եւ սորա համար եր- 14
դում արի Հեղիի տան համար, որ Հեղիի տան անօրէնութեանը՝ զոհերով և ընծաներով յաւիտեան քաւութիւն չլինի:
Եւ Սամուէլը մինչև առաւօտ 15
պառկեց, և յետոյ Տիրոջ տան դռները բացաւ. և Սամուէլը վախեցաւ այն տեսիլքը Հեղիին պատմելուց: Բայց Հեղին Սամուէլին 16
կանչեց և ասաց. Սամուէլ՝ որդեակս. և նա ասաց. Ահա ես.
Եւ նա ասաց. Ինչ է այն խօսքը, 17
որ քեզ ասաց. ինձանից մի ծածկիր, Աստուած քեզ այսպէս և սորանից աւելի անէ, եթէ ինձանից ծածկես մի խօսք այն ամեն խօսքերիցը որ քեզ հետ խօսել է: Եւ Սամուէլը լսոլոր 18
քերը նորան պատմեց, նորանից չծածկեց: Եւ Հեղին ասաց. Նա Տէրն է, ինչ որ հաճոյ է իր աչքերի առջև թող անէ:
Եւ Սամուէլը մեծացաւ, և Տէ- 19
րը նորա հետ էր, և նորա բոլոր խօսքերից մէկը գետինը չգցեց:
Եւ Դանից մինչև Բերսաբէէ բոլոր 20
Իսրայէլն իմացաւ, որ Սամուէլ հաստատուած է Տիրոջ համար մարգարէ: Եւ Տէրը Սեղոմի մէջ դարձեալ երեւեցաւ. վասն զի Տէրը Սեղոմի մէջ Սամուէլին յայտնուած էր Տիրոջ խօսքով: Եւ բոլոր Իսրայէլի մէջ տարածուած էր Սամուէլի խօսքը:

ԳԼ. Դ

1 Եւ Իսրայէլը դուրս եկաւ պատերազմով փղշտացիների դէմ, և Աբենեզերի մօտ բանակեց. և փղշտացիք Ափեկի մէջ բանակեցին, 2 եւ փղշտացիք Իսրայէլին դէմադէմ շարուեցան, և պատերազմը տարածուեցաւ և Իսրայէլը յաղթուեցաւ փղշտացոց առջև և պատերազմի դաշտումը չորս հազար մարդ զարկեցին։ 3 Եւ ժողովուրդը եկաւ բանակը. և Իսրայէլի ծերերը ասացին. Ինչո՞ւ համար Տէրը մեզ այսօր փղշտացոց առջև կոտրեց. Տիրոջ ուխտի տապանակը Սեղովից մեզ մօտ առնենք, և մեր մէջը գայ, և մեզ ազատէ մեր թշնամիների 4 ձեռքից։ Եւ ժողովուրդը մարդ ուղարկեց Սեղով, և վեր առին այնտեղից քերովբէների վերայ նստող Զօրութեանց Տիրոջ ուխտի տապանակը. և Հեղիի երկու որդիքը Ոփնին և Փենէհէսը այնտեղ էին Աստուծոյ ուխտի տապանակի 5 հետ։ Եւ երբոր Տիրոջ ուխտի տապանակը բանակի մէջ մտաւ, բոլոր Իսրայէլը մեծ ձայնով աղաղակեց, և գետինը դղրդաց։ 6 Եւ փղշտացիք այն աղաղակի ձայնը լսելով՝ ասացին. Սա ի՞նչ բարձրաձայն աղաղակ է Եբրայեցոց բանակի մէջ. և իմացան որ Տիրոջ տապանակն է եկել 7 բանակը։ Եւ փղշտացիք վախեցան, վասն զի ասում էին. Աստուած եկել է բանակի մէջ. նաև ասացին. Վա՛յ մեզ, վասն զի մինչև հիմա այսպիսի բան չէր եղած. 8 Վա՛յ մեզ, այս զօրաւոր Աստուածների ձեռքից ո՞վ պիտի ազատէ մեզ. սորանք այն Աստուածներն են, որ Եգիպտոսին զարկեցին ամեն հարուածներով 9 անապատի մէջ։ Ուժովացէք և քաջ եղէք, ով փղշտացիք, մի գուցէ Եբրայեցիներին ծառայ դառնաք, ինչպէս որ նորանք ձեզ ծառայ եղան. ուստի քաջ եղէք 10 և պատերազմեցէք։ Եւ երբոր փղշտացիք պատերազմեցին, Իսրայէլը յաղթուեցաւ և ամեն մարդ փախաւ իր վրանը, և շատ մեծ կոտորած եղաւ, և Իսրայէլից երեսուն հազար հետևակ զօրք ընկաւ. 11 Նաև Աստուծոյ տապանակը առնուեցաւ. և մեռան Հեղիի երկու որդիքը՝ Ոփնին և Փենէհէսը։

12 Եւ Բենիամինեան մի մարդ բանակիցը վազելով նոյն օրը հասաւ Սեղով, և իր հանդերձները պատռած էին, և իր գլխին հող։ 13 Եւ երբոր հասաւ, ահա Հեղին նստել էր մի աթոռի վերայ ճանապարհին և սպասում էր. վասն զի Աստուծոյ տապանակի համար սիրտը դողում էր։ Եւ երբոր այն մարդը եկաւ որ քաղաքին պատմէ, ողջը քաղաքը աղաղակեց։ 14 Եւ Հեղին այն աղաղակի ձայնը լսելով՝ ասաց. Սա ի՞նչ աղմուկի ձայն է։ Եւ այն մարդը շուտով վազեց եկաւ, և Հեղիին պատմեց։ 15 Եւ Հեղին իննսուն ութը տարեկան էր, և աչքերը դադարել էին, որ չէր կարողանում տեսնել։ 16 Եւ այն մարդը Հեղիին ասաց. Զօրքի միջից եկողը ես եմ, և ես փախայ այսօր պատերազմից. և նա ասաց. Որդեակս, բանը ի՞նչ եղաւ։ 17 Եւ լրտեսը պատասխանեց և ասաց. Իսրայէլը փղշտացոց առջևից փախաւ, և ժողովրդի մէջ էլ մեծ կոտորած եղաւ, և քո երկու որդիքը Ոփնին և Փենէհէսն էլ մեռան, և Աստուծոյ տապանակը առնուեցաւ։ 18 Ու երբոր նա Աստուծոյ տապանակը յիշեց, Հեղին աթոռից քամակի վերայ վայր ընկաւ դրան մօտ, և նորա վզի ոսկորը կոտրուեցաւ և նա մեռաւ, վասն զի ծեր և ծանրացած մարդ էր, և նա Իսրայէլի մէջ քառասուն տարի դատաւորութիւն էր արել։

19 Եւ նորա հարսը՝ Փենէհէսի կինը յղի էր ծնելու մօտ, երբոր Աստուծոյ տապանակի առնուելու և իր սկեսրայրի և մարդու մեռնելու լուրը լսեց, ծնկները թուլացան, և նա ծնաւ, վասն զի ցաւերը նորան բռնեցին։ 20 Եւ երբ որ մեռնում էր, նորա մօտ կանգ-

նոր կանոյքը նորան ասացին. Մի վախենար, որովհետև տղայ ես ծնել. բայց նա չպատասխանեց և ուշադրութիւն չարաւ:
21 Եւ այն տղու անունը Իքաբօդ կոչեց, ասելով. Իսրայէլից փառքը վերացաւ. (վասն զի Աստուծոյ տապանակը առնուեցաւ, և նորա սկեսրայրն ու մարդը չկան:)
22 Նորա համար ասաց. Աստուծոյ տապանակը առնուելու համար Իսրայէլից փառքը վերացաւ:

ԳԼ. Ե

1 Եւ փղշտացիք առին Աստուծոյ տապանակը և տարին նորան Աբենեզերից Ազովտոս:
2 Եւ փղշտացիք Աստուծոյ տապանակն առին ու տարին նորան Դագոնի տունը, և դրին Դագոնի մօտ:
3 Եւ հետևեալ օրը Ազովտացիք առաւօտանց կանուխ վեր կացան, տեսան որ Դագոնը Տիրոջ տապանակի առջև երեսի վերայ գետինն է ընկել. և Դագոնի գլուխն ու ձեռքերի երկու թաթերը կտրատուած՝ սեմի վերայ էին, միայն
5 Դագոնի մարմինը էր մնացել: (Այս պատճառաւ Դագոնի քուրմերը և Դագոնի տունը բոլոր մտնողները մինչև այս օրը Ազովտոսում եղող Դագոնի սեմի վերայ չեն կոխիլ:) Եւ Տիրոջ ձեռքը ծանրացաւ Ազովտացոց վերայ, և նորանց աւերակ արաւ, և նորանց զարկեց Ազովտոսի և նորա սահմանների մէջ թանչքի ուռեցքներով:
7 Եւ Ազովտոսի բնակիչները տեսան որ այսպէս է, և ասացին. Իսրայէլի Աստուծոյ տապանակը մեզ մօտ չկենայ. վասն զի նորա ձեռքը մեզ վերայ և մեր աստուած Դագոնի վերայ ծանրացաւ:
8 Եւ մարդ ուղարկեցին, և Փղշտացոց բոլոր նախարարներին ի-

բանց մօտ ժողովեցին, և ասացին. Ի՞նչ անենք Իսրայէլի Աստուծոյ տապանակին. և ասացին. Թող Իսրայէլի Աստուծոյ տապանակը Գէթ փոխադրեն. և Իսրայէլի Աստուծոյ տապանակը փոխադրեցին: Եւ եղաւ որ նորան փոխադրելուց յետոյ, Տիրոջ ձեռքով այն քաղաքի մէջ մեծ խռովութիւն եղաւ, և քաղաքի մարդկանցը պզտիկից մինչև մեծը զարկեց. և նորանց վերայ թանչքի ուռեցքներ երևեցան:
10 Եւ Աստուծոյ տապանակը Ակկարոն ուղարկեցին. և Հէնց որ Աստուծոյ տապանակը Ակկարոն մտաւ, Ակկարոնացիք աղաղակելով ասացին. Իսրայէլի Աստուծոյ տապանակը մեզ մօտ բերին՝ որ մեզ և մեր ժողովուրդը մեռցնեն:
11 Եւ մարդ ուղարկեցին՝ փղշտացոց բոլոր նախարարներին ժողովեցին, և ասացին. Իսրայէլի Աստուծոյ տապանակը ուղարկեցէք և իր տեղը ետ դառնայ, որ մեզ և մեր ժողովուրդը չմեռցնէ. վասն զի բոլոր քաղաքի մէջ մահաբեր սոսկում կար, Աստուծոյ ձեռքը շատ ծանրացեր էր այնտեղ:
12 Եւ չմեռած մարդիկը թանչքի ուռեցքներով պարկուեցան, և քաղաքի աղաղակը երկինքը վեր ելաւ:

ԳԼ. Զ

1 Եւ Տիրոջ տապանակը մնաց փղշտացոց երկրումը եօթը ամիս:
2 Եւ փղշտացիք կանչեցին քուրմերին և գուշակողներին և ասացին. Ենթովայի տապանակին ի՞նչ անենք. մեզ իմացրէք թէ նորան ինչո՞վ իր տեղն ուղարկենք:
3 Նորանք էլ ասացին. Եթէ Իսրայէլի Աստուծոյ տապանակը ուղարկէք. նորան դատարկ չուղարկէք, այլ անպատճառ յանցանքի պատարագ տուէք նորան, այն ժամանակ կ'բժշկուիք, և ձեզ յայտնի կ'լինի թէ ինչո՛ւ համար նորա ձեռքը ձեզանից չէ հեռանում:
4 Եւ նորանք ասացին. Ո՞րն է այն պատարագը որ նորան մատու-

ցանկնք։ Եւ նորանք ասացին. Փղշտացոց նախաւորներուն թուոյ չափ հինգ ոսկեղէն թանչքի ուռեցքներ և հինգ ոսկի մուկ է. վասն զի մի և նոյնն էր հարուածը ձեր ամենի վերայ՝ և ձեր նախաւորներուն վերայ։ Եւ հիմա ձեր թանչքի ուռեցքներուն պատկերները, և ձեր երկիրը աւերող մկներուն պատկերները շինեցէք, և Իսրայէլի Աստուծոյն փառք տուէք. կարելի է որ իր ձեռքը ձեր, ձեր աստուածներուն, և ձեր երկրի վերայից թեթեւացնէ։ Եւ ինչո՞ւ համար կը ձեր սրտերը խստացնուիմ, ինչպէս որ Եգիպտացիք և փարաւոնը իրանց սրտերը խստացուցին. չէ՞ որ Աստուած նորանց մէջ հրաշալի գործքեր անելուց յետոյ՝ նորանց թող տուին որ գնան։ Հիմա մէկ նոր սայլ շինեցէք, և երկու հատ կաթնատու երինջ առէք, որոնց վերայ բնաւ լուծ դրուած չլինի. և երինջները սայլին լծեցէք, և նորանց հորթերը նորանց քովիկից ետ տարէք տուն. Եւ Եհովայի տապանակն առէք, և նորան սայլի վերայ դրէք, և այն ոսկեղէն անօթները, որ դուք յանցանքի համար նորան ընծայ պիտի տաք, մի պզտիկ արկղով նորա մէկ կողմին դրէք, և նորան ուղարկեցէք որ գնայ. Եւ նայեցէք, եթէ իր սահմանի ճանապարհովը Բեթսամիս է գնում՝ այս մեծ չարիքը մեզ անողը նա է, ապա եթէ ոչ՝ գիտենանք որ նորա ձեռքը չէ մեզ դպել. այս բանը դիպուածով է պատահել մեզ։ Եւ այն մարդիկը այնպէս արին. երկու հատ կաթնատու երինջ առին, և նորանց լծեցին սայլին, և նորանց հորթերը տան մէջ փակեցին։ Եւ Տէրոջ տապանակը, և ոսկի մկները և իրանց թանչքի ուռեցքներուն պատկերներուն պզտիկ արկղը դրին այն սայլի վերայ։ Եւ երինջները ճանապարհ բռնան ուղիղ դէպի Բեթսամիսի ճանապարհը, և մէկ շաւիղով գնալով բառաչում էին, և աջ կամ ձախ կողմը չէին խոտորեցին. և Փղշտացոց նախաւորները գնում էին մինչև Բեթսամիսի սահմանը նորանց ետևից։ Եւ Բեթսամիսացիք հովիտի մէջ ցորենի հունձ էին հնձում, և իրանց աչքերը բարձրացրին և տապանակը տեսան, և ուրախացան որ տեսան։ Եւ սայլը Բեթսամիսացի Յեհուսի արտը մտաւ և այնտեղ կանգնեց, և այնտեղ մէկ մեծ քար կար, և սայլի փայտերը ճեղքեցին, և այն երինջներին ողջակէզ մատուցին Տիրոջը։ Եւ Ղեւտացիք իջեցրին Տիրոջ տապանակը, և նորա հետ եղող ոսկի անօթների պզտիկ արկղը, և դրին այն մեծ քարի վերայ. և այն օրը Բեթսամիսի մարդիկը ողջակէզներ և զոհեր մատուցին Տիրոջը։ Եւ Փղշտացոց հինգ նախաւորները տեսան և ետ դարձան նոյն օրը Ակկարոն։ Եւ այն ոսկեղէն թանչքի ուռեցքները՝ որ Փղշտացիք իբրև յանցանքի ընծայ տուին Տիրոջը, սորանք էին. մէկ հատ Ազոտոսի համար, մէկ հատ Գազայի համար, մէկ հատ Ասկաղոնի համար, մէկ հատ Գեթի համար, մէկ հատ Ակկարոնի համար։ Եւ ոսկի մկները Փղշտացոց հինգ նախաւորութիւնների բոլոր քաղաքների թուոյն էին, պարսպաւոր քաղաքից մինչև անպարիսպ գիւղը, և մինչև այն մեծ քարը՝ որի վերայ Տիրոջ տապանակը դրուեցաւ, որ կայ մինչև այս օրը Բեթսամիսացի Յեհուսի արտումը։ Եւ Տէրը Բեթսամիսի մարդկանցը զարկից, վասն զի նորանք նայեցին Տիրոջ տապանակի մէջ. և ժողովրդից յիսուն հազար հօթանասուն մարդ զարկից, և ժողովուրդը սուգ բռնեց, վասն զի Տէրը ժողովրդի մէջ մեծ կոտորած արաւ։ Եւ Բեթսամիսի մարդիկը ասացին. Ո՞վ կարող է կանգնել այս սուրբ Աստուած Եհովայի առաջ, և ո՞րի մօտ պիտի գնայ մեր մօտից։ Եւ կարիւրիարիմի բնակիչներին մօտ պատգամաւորներ ուղարկեցին՝ ասելով. Փղշտացիք Տիրոջ տապա-

նակը եւս են բերել. ինքէք վեր տարէք նորան ձեզ մօտ։

ԳԼ. Է

1 Եւ Կարիաթ-արիմի մարդիկը դընացին, և վեր տարին Տէրոջ տապանակը. և բերին նորան Աբինադաբի տունը՝ բլրի վերայ. և նորա որդի Եղիազարին որոշեցին որ Տէրոջ տապանակի պահպան
2 նուիրեսցին անէ։ Եւ տապանակը Կարիաթ-արիմ եկած օրից յետոյ շատ օրեր անցան և քսան տարի եղաւ, և Իսրայէլի բոլոր տունը հառաչեցին Տէրոջ եւռևից։
3 Այն ժամանակ Սամուէլն Իսրայէլի բոլոր տան հետ խօսեց ասելով. Եթէ դուք ձեր բոլոր սրտով դարձել էք Տէրոջը, ձեր միջից հեռացրէք օտար աստուածները և Աստարովթը, և ձեր սրտերը պատրաստեցէք Տէրոջ համար, և միայն նորան պաշտեցէք, և նա կ'ազատէ ձեզ փղշ-
4 տացոց ձեռքից։ Եւ Իսրայէլի որդիքը հեռացրին Բահաղիմը ու Աստարովթը, և միայն Տէրոջը
5 պաշտեցին։ Եւ Սամուէլն ասաց. Բոլոր Իսրայէլը Մասփայ ժողովեցէք, և ձեզ համար աղօթք անեմ Տէրոջը։
6 Եւ Մասփայ ժողովեցան, և ջուր քաշեցին և Տէրոջ առջև թափեցին, և այն օրը ծոմ բռնեցին, և այնտեղ ասացին. Տէրոջ դէմ մեզք գործեցինք։ Եւ Սամուէլը Մասփայի մէջ Իսրայէլի որդիքից դատաւորութիւն արաւ։
7 Եւ երբոր փղշտացիք լսեցին որ Իսրայէլի որդիքը Մասփայ են ժողովել, փղշտացոց նախարարները վեր եկան Իսրայէլի դէմ. և Իսրայէլի որդիքը լսեցին՝ և
8 փղշտացոց երեսից վախեցան։ Եւ Իսրայէլի որդիքը Սամուէլին ասացին. Անդադար դէպի մեր Տէր Աստուծոյն աղաղակիր մեզ համար որ մեզ փղշտացոց ձեռքից
9 ազատէ։ Եւ Սամուէլը մէկ կաթնակեր գառնուկ առաւ, և նորան բոլորովին ողջակէզ արաւ Տէրոջ. և Սամուէլը Իսրայէլի համար դէպի Տէրոջ աղաղակեց, և Տէրը նորան պատասխանեց։ 10
Երբոր Սամուէլն ողջակէզը մատուցանում էր, փղշտացիք մօտեցան որ Իսրայէլի դէմ պատերազմ անեն. և Տէրը նոյն օրը փղշտացոց վերայ մեծ ձայնով որոտաց, և նորանց խռովեցրեց. և Իսրայէլի առջև զարկուեցան։ 11
Եւ Իսրայէլի մարդիկը Մասփայից դուրս եկան և փղշտացիներին հալածեցին, և մինչև Բեթ-որի տակ նորանց ջարդեցին։ 12
Եւ Սամուէլը մէկ քար առաւ, և Մասփայի ու Սենի միջտեղը կանգնեցրեց, և նորա անունը Աբենեզեր կոչեց, ասելով. Տէրը մինչև այստեղը օգնեց մեզ։ Եւ փղշտացիք կորտակուած եղան, և այլևս չեկան Իսրայէլի սահմանի մէջ. և Սամուէլի բոլոր օրերը Տէրոջ ձեռքը փղշտացոց վերայ էր։ 13 14
Իսրայէլին եւս դարձրին այն քաղաքները, որ փղշտացիք առել էին Ակկարոնից մինչև Գէթ. և Իսրայէլը նորանց սահմանները ազատեց փղշտացոց ձեռքից, և Իսրայէլի ու Ամորհացոց միջտեղը խաղաղութիւն էր։
Եւ Սամուէլն իր կենաց բոլոր 15
օրերում Իսրայէլի դատաւորն էր։
Եւ տարուց տարի գնում էր Բեթէլ, Գաղգաղա և Մասփա և մին էր գալիս ու դատում էր բոլոր այն տեղերում Իսրայէլին։ 16
Եւ եւս էր դառնում Ռամա, վասն զի իր տունը այնտեղ էր, և այնտեղ դատում էր Իսրայէլին. և այնտեղ սեղան շինեց Տէրոջ համար։ 17

ԳԼ. Ը

Եւ երբոր Սամուէլը ծերացաւ 1
իր որդիներին Իսրայէլի վերայ դատաւոր դրաւ։ Եւ իր անդրանիկ 2
որդու անունը Յովէլ, և երկրորդի անունը Աբիա էր, և Բեերսաբէէի մէջ դատաւորութիւն էին անում։ Եւ նորա որդիքը չգնացին նորա ճանապարհների մէջ, այլ շահասիրութեան եւեից քնկան և կաշառք էին առնում, և

Ա խրատներդ ծառայ էին, և խոսելիքդ բոլոր ձևերդ ծաղկեցան, և գնացին Յովնա Ամաթեայ մի մեռաւ, և նորան ասացին. Ահա դու ծերացել ես, և քո օրերդ չեն գնում քո հայրերուն օրերի մէջ, որ մեզ վերայ թագաւորես քեզ, որ մեզ դառնք ինչպես որ ամեն ազգերը, և որ մեր դատաստանը Յովնա ազգի առաջը որուն Տէրը կ'երթայ նրա Տէր Յովնա ազգի ասաց. Ահա քո որդիքդ քո ճամբան են գնում, որ ես տուի նրանց ձեռքդ, և դու նրանց ետևից ոչխարներ մորթեցիր, որ մեզ դառնան

ասէր կայ, և ոչ մի պատասխան ետուն ասէր և, զի ոչ էր ժամանակ նոցա պատասխանի կ'ընդունել, և ինձ այնուհետև դնէր, զոյգ մի դնելու Եամսապէրի մէջ խնդրել։

7 *Եւ Սաուղ էր երիտասարդին ասաց. Վասն որ դնաւ էր, այլ ասացեալ էր ինձ ասելիք. ահա մի մանկտիքից Տոքր գտանել է, և մի բնաւ չունիմ Սաուղայ ասելոյս ինձ ոչինչ ասելոյս, ինձ*

8 *ոչինչ մէջ ունի։ Եւ երիտասարդն պատասխանեաց զսմանէ Սաուղայ և ասաց. Ահա ինձ գտաւ մէկ քառորդ սիկղ արծաթ կայ. ոչ Սաուղայ ասելոյ կ'ասեմ, որ մէջ Եամսապէրի մէջ խնդրել։*

9 *(Առաջոց խորհէր մէջ մէկ ասէր՝ երբոր Սաուղայ Տոքրեան գնար, այսպէս կ'ասէր. Ոկ տեսանող ձեզ գնար. ասեն զի այսօրուայ ասացեալն առաջոց*

10 *տեսանող էր ասեն՝) Եւ Սաուղ էր երիտասարդին ասաց. Լաւ ասացեր, ոկ գնայ. և գնաց*

Նոյնն Սաուղայ ասելոյս բնակեան քաղաքն, Նորան քաղաքն

11 *կան քաղաքը։ Նորան քաղաքն ասեն զի մէջէն մէջ էին ելեալ և ապիկներ գտան, որ դուրս էին ելել ջուր Տանելու, և նորանց ասացին. Տեսանող այստե՞ղ է։*

12 *Եւ ապիկներ նորանց պատասխանեցին և ասացին. Այո, ահա առաջի է. Տեսիր չուտ արա, ահա զի նա այսօր քաղաքն է եկել, զի ժողովուրդ այսօր այն բարձր տեղի վերայ զոհ*

13 *ունի։ Ձենդ որ քաղաքը մտար, իսկոյն նորան պիտակ կ'գտնէք, քանի որ նա մեր չէ գնացել բարձր տեղը կերակուր ուտելու Տանիք, զի մեր չէ գնացել բարձր տեղը կերակուր ուտել Տանիք, ահա զի հիմի նորա գտանէք, զի իսկոյն կ'ելնէք զնա։*

14 *Եւ նորանք մեր գնացին քաղաքը, երբոր նորանք քաղաքն էին մտնում, ահա Սաուղայ ելել էր նոցա դիմաց, զի*

Սաուղայ Տեսիլն Սամուէլայ։

էր Սաուղայ քաղաքն մէջ որ ասաց, Սամուէլ էլ ելաւ այն տանն 16
նախին Բենիամինի երկրէն քեզ ձեռս մէկ մարդ եմ՝ ազատելու և նորան իշխան ձեռ՝ ժողովրդեան Իսրայէլի վերայ, որ իմ ժողովրդեան Փղշտացոց ձեռս ապրուի. զի ժողովրդեան ցաւեցայ, որովհետև նոցա աղաղակը իմ կողմս Տասաւ։ Եւ երբոր Սա- 17
մուէլ էր նա Տասաւ։ Տէր ասէր Սամուէլ Սաուղայ ասաց. Ահա այն մարդ, զոր ես Տամ Տասնեցի քեզ, նա 18
Սաուղայ դռնեցին մօտեցաւ, և ասաց. Պատմէ՛ իմ ինձ տեղը տեսանողի տունը է։ Սամուէլ էր նա պատասխանեաց Սաուղայ և ասաց. Ես եմ տեսանողը։ Ելիր առաջի իմ բարձր տեղը, որ դուք այսօր ինձ հետ կերակուր կերէք, և ես 19
քեզ կ'արձակեմ, և ամենայն զոր սրտիդ մէջ կայ քեզ կ'պատմեմ։ Եւ էշերդ որ երէկ կորան մի՛ հոգար, զի գտան են։ Եւ ամենայն ցանկալի Իսրայէլի ո՞ր է, ոչ քեզ և ամենայն հարց հօրդ տան։ Սաուղ էր պատասխանեաց և ասաց. Ես Եամինացի եմ, Իսրայէլի ամենէն փոքր ցեղէն, և իմ ազգս Մատրեայ ամենէն պզտիկ ազգն է Բենիամինի ցեղին մէջ, ինչո՞ւ ինձ այսպէս խօսիս։ Եւ Սամուէլ 20
Սաուղայ և նորա ծառան ձեռ՝ սենեակն տարին և նոցա տեղ տուին հրաւիրեալներուն մէջ կոտրէ մօտ երեսուն մարդ։ Եւ խոհարարին ասաց Սամուէլ. Բաժինն զոր քեզ տուի, որ քեզ մօտ դիր, զոր ես ասացի քեզ։ Եւ խոհարարն 21
ազդրն և որ վերայ էր առաւ և դրաւ Սաուղայ առաջ։ Սամուէլ ասաց. Ահա մնացեալն դիր քեզ առաջ, կեր, զի ժամանակին համար քեզ համար պահեալ է, որ ասացի ժողովրդեան հրաւիրեցի։ Եւ Սաուղ էր Սամուէլայ հետ ուտէր և խմէր։ Եւ իջան քաղաքէն տանիքն և 22
Սաուղայ տանիքն խօսեցաւ Սամուէլ։ Եւ կանուխ կանխեցան և ելան։ Եւ եղև ելանելու ատեն Սաուղայ և Սամուէլ արտաքին տանիքն, և նորանք երկուքն դուրս ելան, Սաուղ և Սամուէլ։ Եւ նորանք ելան քաղաքէն դուրս։ Եւ 23
Սաուղայ տանիքն խոնարհեցաւ։ Եւ Սամուէլ ասաց Սաուղայ. Ասա՛ ծառային, որ մեզ առաջ անցնէ, և նա անցաւ, դու ինքդ կանգնեցիր մնա՛ հիմի, զի Տաստատ խօսքը քեզ ասեմ։ Եւ Սամուէլ առաւ 24
իւղի սրուակն և գլխուն վերայ թափեց և համբուրեց զնա և ասաց. Ահա Տէր քեզ օծեց իշխան ձեռ՝ ժողովրդեան իւր Իսրայէլի վերայ, և դու Տէր ժողովրդեան ձեռ՝ պիտի թագաւորես և ազատես զնոսա ձեռ՝ շրջակայ թշնամեաց նոցա։ Եւ սա նշան քեզ Տէր օծեց իշխան ձեռ՝ ժողովրդեան իւր Իսրայէլի վերայ։ Եւ Սաուղայ ասաց Սամուէլ. Ահա ինձ գտաւ մէկ քառորդ սիկղ արծաթ կայ. ոչ Սաուղայ ասելոյ կ'ասեմ, որ մէջ Եամսապէրի մէջ խնդրել։ Եւ Տէր Սաուղայ ասաց

այն օրը Սաւուղը կերաւ Սամուէլի հետ։
25 Եւ բարձր տեղին ի քաղաքը, և նա կարի վերայ խօսեց
26 Սաւուղի հետ։ Եւ առաւօտ կանուխ վեր կացան, և էնց որ լոյսը ծագեց, Սամուէլը Սաւուղին կանչեց կտուրը և ասաց. Վեր կաց որ քեզ ուղարկեմ։ Եւ Սաւուղը վեր կացաւ, և ինքը և Սամուէլը երկուսը միասին դուրս
27 գնացին։ Երբոր նորանք քաղաքի ծայրն էին իջել, Սամուէլը ասաց Սաւուղին. Ասիր երիտասարդին որ մեր առջևն անցնէ. (և նա անցաւ.) և հիմա դու կ'անդնիր որ Աստուծոյ պատգամը քեզ իմացնեմ։

ԳԼ. Ժ

1 Եւ Սամուէլը առաւ իւղի շիշը, և նորա գլխի վերայ ածեց, և նաւան համբուրեց և ասաց. Չէ՞ որ Տէրը քեզ իր ժառանգութեան
2 վերայ իշխան օծեց։ Այսօր իմ մօտից գնալիս Բենիամինի սահմանի վերայ Սելսահի մէջ Րաքէլի գերեզմանի մօտ երկու մարդ կ'գտնես, և քեզ կ'ասեն. Գտնուել են այն էշերը որոնց որոնելու էիր գնացել. և ահա հայրդ էշերի հոգը թողել է, և ձեզ համար է հոգս անում, և կ'ասէ.
3 Տղայիս համար ի՞նչ անեմ։ Եւ երբոր այնտեղից գնաս և Թաբօրի կաղնուն հասնիս, այնտեղ քեզ երեք մարդ կ'հանդիպեն, որոնք գնում են Բեթէլ Աստուծոյ մօտ, մէկը երեք ուլ, մէկը երեք հոցի նկանակ և մէկը
4 մի մեծ գինի է տանում։ Եւ քո ողջոյնները կ'հարցնեն և քեզ երկու հոց կ'տան. դու էլ նո-
5 րանց ձեռքից առնես։ Նորանից յետոյ կ'գնաս Աստուծոյ բլուրը որ Փղշտացոց բերդապահ ղօրքն է. և երբոր այնտեղ քաղաքը մտնես, բարձր տեղից իջնող մարգարէից դասի կ'հանդիպես, որոնք իրանց առջև տաւիղ, թմբուկ, սրինգ և քնար ունեն և որոնք մարգարէութիւն
6 են անում։ Եւ քեզ վերայ կ'գայ Տիրոջ հոգին, և նորանց հետ մարգարէութիւն կ'անես, և դու կ'փոխուես ուրիշ մարդ կ'դառնաս։ Եւ երբոր այս նշանները քեզ
7 վերայ գան՝ ձեռքիդ եկածն արա, վասն զի Աստուած քեզ հետ է։ Եւ ինձանից առաջ Գաղգաղա իջնես. և ահա ես քեզ մօտ պիտի իջնեմ ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցանելու համար. եօթը օր սպասես մինչև որ ես քեզ մօտ գամ, և քո անելու գործը քեզ իմացնեմ։
9 Եւ երբոր նա իր մէջքը դարձրեց՝ Սամուէլի մօտից գնալու համար, Աստուած փոխեց նորան մէկ ուրիշ սիրտ դարձրեց. և նոյն օրը այս բոլոր նշանները կատարուեցան։ Եւ երբոր նորանք այնտեղ 10
բլուրը, ահա մարգարէների մի գունդ նորա առջևը դուրս եկան. և նորա վերայ եկաւ Աստուծոյ Հոգին, և նորանց մէջ մարգա-
11 րէութիւն արաւ։ Եւ ամեն նորանք որ նորան առաջուց ճանաչում էին, երբոր տեսան որ նա մարգարէների հետ մարգարէութիւն է անում, ժողովուրդը իրար ասացին. Սա ի՞նչ է եղել Կիսի որդուն. մի՞թէ Սաւուղն էլ
12 մարգարէների մէջ է։ Եւ այնտեղ մարդկանցից մէկը պատասխանեց և ասաց. Ապա նորանց հայրը ո՞վ է։ Նորա համար առածմէկ առակ եղաւ, Մի՞թէ Սաւուղն էլ մարգարէների մէջ է։
13 Եւ երբոր մարգարէութիւն անելուց դադարեց, բարձր տեղը եկաւ։

14 Եւ Սաւուղի հօրեղբայրը նորան և նորա երիտասարդին ասաց. Ո՞ւր գնացիք։ Եւ նա ասաց. Էշերը որոնելու. և տեսանք որ չը կան, գնացինք Սամուէլի մօտ։
15 Եւ Սաւուղի հօրեղբայրն ասաց. Պատմիր ինձ, Սամուէլը ձեզ ի՞նչ
16 ասաց։ Եւ Սաւուղն իր հօրեղբօրն ասաց. Նա մեզ յայտնապէս իմացրեց էշերի գտնուելը։ Բայց թագաւորութեան մասին Սամուէլի ասած խօսքը նորան չը յայտնեց։

17 Եւ Սամուէլը ժողովրդին ժո-
ղովեց Մասփայի մէջ Տէրոջ առ-
18 ջև։ Եւ Իսրայէլի որդոյն ասաց.
Իսրայէլի Տէր Աստուածն այս-
պէս է ասում. Ես Իսրայէլը Ե-
գիպտոսից հանեցի, և ձեզ Ե-
գիպտացոց ձեռքից՝ և ձեզ նե-
ղութիւն տուող բոլոր թագա-
19 ւորների ձեռքից ազատեցի։ Եւ
դուք այսօր ձեր Աստուծոյն մեր-
ժում էք, որ ձեր ամեն չարիք-
ներից ու նեղութիւններից ձեզ
ազատեց և նորան ասում էք.
Անպատճառ մեզ վերայ մէկ թա-
գաւոր դիր։ Եւ հիմա կանգնե-
ցէք ձեր ցեղերով և հազարա-
20 ւորներով Տէրոջ առջև։ Եւ Սա-
մուէլն Իսրայէլի ամեն ցեղերը
ներկայացրեց, և վիճակը Բենիա-
21 մինի ցեղին ընկաւ։ Եւ Բենիա-
մինի ցեղը ներկայացրեց իր ազ-
գաւոհմերով, և վիճակը Մատ-
րիի ազգաւոհմին ընկաւ, և Կի-
սի որդի Սաւուղին ընկաւ. և նո-
րան որոնեցին բայց չգտուեցաւ։
22 Եւ դարձեալ Տէրոջը հարցրին,
Թէ Արդեօք այն մարդը այստեղ
կ'գա՞յ. և Տէրը ասաց. Ահա նա
թաք է կացել՝ կարասիների մէջ
23 է։ Եւ վազեցին նորան առին
այնտեղից, և նա կանգնեց ժո-
ղովրդի մէջտեղը. և բարձր էր
բոլոր ժողովրդից՝ ուսից վեր։
24 Եւ Սամուէլը բոլոր ժողովրդին
ասաց. Տեսա՞ք Տէրը որին է ընտ-
րել, որ բոլոր ժողովրդի մէջ նո-
րա պէսը չկայ, և բոլոր ժողո-
վուրդը ազաղակեց և ասաց. Կեց-
25 ցէ՛ թագաւորը։ Եւ Սամուէլը
թագաւորութեան իրաւունքը ա-
սաց ժողովրդին, և գրքի մէջ
դրեց, և Տէրոջ առջև դրաւ. և
Սամուէլը բոլոր ժողովուրդը ար-
ձակեց՝ ամեն մարդ իր տունը։
26 Սաւուղն էլ գնաց իր տունը Գա-
բաա, և նորա հետ գնացին մի
խումբ մարդիկ, որոնց սիրտը
27 Աստուած դրդռեց։ Բայց չար
մարդիկ ասացին. Ինչ պիտի ազատէ սա. և նորան անարգեցին, և նորա համար ընծայ չբերին. բայց նա լուեց։

Գլ. Ժ.Ա.

1 Եւ Ամմոնացի Նաասը վեր գնաց, և Գաղաադու Յաբիսի դէմ բանակեց. և Յաբիսի բոլոր բնակիչները Նաասին ասացին. Մեզ հետ դաշինք դիր, և քեզ ծառայենք։ 2 Բայց Ամմոնացի Նաասը նորանց ասաց. Ձեզ հետ այս պայմանով դաշինք կ'դնեմ, որ ձեր ամենի աջ աչքը փորեմ, և այս բանը բոլոր Իսրայէլի վերայ նախատինք դնեմ։ 3 Եւ Յաբիսի ծերերը նորան ասացին. Մեզ եօթն օր ժամանակ տուր, որ Իսրայէլի բոլոր սահմաններըը պատգամաւորներ ուղարկենք, և եթէ մեզ ազատող չլինի՝ այն ժամանակ դուրս կ'գանք քեզ մօտ։

4 Եւ պատգամաւորները գնացին Սաւուղի Գաբաան, և խօսեցին ժողովրդի ականջներին այս խօսքերը. և բոլոր ժողովուրդը իրանց ձայնը բարձրացրին և լացին։ 5 Եւ ահա Սաւուղը գալիս էր եղների ետևից արտից. և Սաւուղն ասաց. Ժողովրդին ի՞նչ կայ որ լաց է լինում, և Յաբիսի բնակչաց խօսքերը պատմեցին նորան։ 6 Եւ Աստուծոյ Հոգին Սաւուղի վերայ եկաւ այս խօսքերը լսելիս, և նորա բարկութիւնը շատ բորբոքեց։ 7 Եւ մի զոյգ եղ առաւ, և նորանց կտորեց, և Իսրայէլի բոլոր սահմաններըը ուղարկեց պատգամաւորների ձեռքով ասելով. Ով որ Սաւուղի ետևից և Սամուէլի ետևից չգայ, նորա եղներին այսպէս կ'անեն։ Եւ ժողովրդի վերայ Տէրոջ սարսափն բնակաւ, և ամենքը մէկ մարդու
8 պէս դուրս եկան։ Եւ Ս---ը Բեզեկի մէջ հանդէս արաւ նորանց, և Իսրայէլի որդիքը երեք հարիւր հազար, և Յուդայի մարդիկը երեսուն հազար էին։ 9 Եւ եկող պատգամաւորներին ասացին. Գաղաադու Յաբիսի բնակիչներին այսպէս ասէք. Էղուց արեգակը տաքանալիս ձեզ համար ազատութիւն է լինելու։ Եւ պատգամաւորները գնացին և Յաբիսի բնակիչներին իմացրին, և

10 Նորանք ուրախացան։ Եւ Յաբեսի
բնակիչներն ասացին Ամմոնացի-
ներին. Ընդունիր ձեզ մեզ հետ
դաշինք. և ձեր ամեն որ մեզ
11 հաճելի լինի՝ այն արէք մեզ։ Եւ
հետևեալ օրը Սաւուղը ժողո-
վուրդը երեք գունդի բաժանեց,
և առաւօտեան պահին բանակի
մէջը մտան, և մինչև որ օրը տա-
քացաւ՝ Ամմոնացիներին զարկե-
ցին. և ճեղքածները այնպէս ցըր-
ուեցան որ նորանցից երկու մարդ
միասին չմնաց։
12 Եւ ժողովուրդն ասաց Սամու-
էլին. Ո՞վ էր այն ասողը՝ թէ
Սաւո՞ւղը մեր վերայ թագաւոր
լինի. տուէք այն մարդիկը որ
13 մեռցնենք։ Եւ Սաւուղն ասաց.
Այսօր մի մարդ չմեռցուի, վա-
սն զի այսօր Տէրը Իսրայէլի հա-
մար փրկութիւն արաւ։
14 Եւ Սամուէլը ժողովրդին ա-
սաց. Եկէք գնանք Գողգոթա,
և թագաւորութիւնը այնտեղ
15 նորոգենք։ Եւ բոլոր ժողովուրդը
Գողգոթա գնացին, և այնտեղ
Գողգոթայի մէջ Տիրոջ առջև
Սաւուղին թագաւոր արին, և
այնտեղ խաղաղութեան պոհեր
մատուցին. և Սաւուղը և բոլոր
Իսրայէլի մարդիկը այնտեղ մեծ
ուրախութիւն արին։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Սամուէլը բոլոր Իսրայէլին
ասաց. Ահա ես ձեր ձայնին լսե-
ցի այն բոլորին, որ դուք ինձ ա-
սացիք, ու ձեզ վերայ թագաւոր
2 դրի։ Եւ ահա հիմա ձեր առջև
թագաւորը կ'գնայ. բայց ես ծե-
րացել եմ և մազերս սպիտակել
են. և ահա իմ որդիքը ձեզ հետ
են. և ես իմ մանկութիւնից մին-
չև այս օրը ձեր առջև գնացի։
3 Ահա ես. Տիրոջ առջև և նորա
օծեալի առջև ինձ համար յայտ-
նապէս ասացէք. թէ ես որի՞ եզն
եմ առել, ու որի՞ էշն եմ ա-
ռել, և որի՞ն եմ զրկանք կամ
անիրաւութիւն արել, և որի՞
ձեռքից կաշառք առել, և նո-
րան աչքերը կուրացրել. ու
ես ձեզ եմ դարձնեմ։ Եւ ասա- 4
ցին. Մեզ զրկանք կամ անիրա-
ւութիւն չես արել, և ոչ մի
մարդու ձեռքից մի բան չես ա-
ռել։ Եւ նա ասաց նորանց. Տէրը 5
և նորա օծեալը ձեզ վկայ լինին
այս օրը, որ դուք իմ ձեռքի
մէջ մի բան չգտաք։ Եւ ասա-
ցին. Վկայ լինին։
Եւ Սամուէլը ժողովրդին ասաց. 6
Հողան որ Մովսէսին և Ահարո-
նին ընտրեց, և ձեր հայրերին Ե-
գիպտոսի երկրից հանեց վե՞ր է։
Եւ հիմա կանգնեցէք, և ես ձեզ 7
հետ դատ անեմ Տիրոջ առջև
այն բոլոր արդարութիւնների մա-
սին՝ որ Տէրը ձեզ և ձեր հայրե-
րին արաւ։ Երբոր Յակոբը գնաց 8
Եգիպտոս, և ձեր հայրերը աղա-
ղակեցին Տիրոջը, և Տէրը ուղար-
կեց Մովսէսին և Ահարոնին, ո-
րոնք ձեր հայրերը դուրս հանե-
ցին Եգիպտոսից, և նորանց այս-
տեղ բնակեցրին։ Բայց նորանք 9
մոռացան իրանց Տէր Աստուծոյն.
և նա էլ Հասորի զօրագլուխ Սի-
սարայի ձեռքը և Փղշտացոց
ձեռքը և Մովաբի թագաւորի
ձեռքը մատնեց նորանց, և նո-
րանց հետ պատերազմ արին։ Եւ 10
Տիրոջը աղաղակեցին և ասացին.
Մենք մեղք գործեցինք, որ Տի-
րոջը թողեցինք, և Բահաղիմի ու
Աստարովթի ծառայութիւն ա-
րինք. և հիմա ազատիր մեզ մեր
թշնամիների ձեռքից. և քեզ կը
ծառայենք։ Եւ Տէրը ուղարկեց 11
Յերոբաաղին, Բեդանին, Յեփ-
թայէին և Սամուէլին, և ձեզ
ազատեց ձեր շրջակայ թշնամի-
ների ձեռքից և ապահով բնա-
կեցիք։ Եւ երբոր տեսաք որ Ամ- 12
մոնացոց թագաւորը՝ Նաասը ձեզ
վերայ է գալիս, ինձ ասացիք.
Ոչ, անպատճառ մեզ վերայ մի
թագաւոր լինի. թէ և ձեր թա-
գաւորը Եհովայ Աստուածն է։
Եւ հիմա ահա այն թագաւորը, 13
որ ընտրեցիք և ուզեցիք. և ահա
Տէրը ձեզ վերայ մի թագաւոր
դրաւ։ Եթէ Տէրից վախենաք և 14
նորան ծառայութիւն անէք, և
նորա ձայնին լսէք, և Տիրոջ

խօսքն դէմ չկենաք, այն ժամանակ թէ դուք և թէ ձեր թագաւորը՝ որ թագաւորած է ձեզ վերայ, ձեր Տէր Աստուծոյն ետևից գոհ-վկ'լինիք։ 15 Բայց եթէ Տիրոջ ձայնին չլսէք, և Տիրոջ հրամանի դէմ կենաք, այն ժամանակ Տիրոջ ձեռքը ձեզ վերայ 16 և ձեր հայրերի վերայ կ'լինի։ Եւ հիմա կանգնեցէք և տեսէք այն մեծ բանը՝ որ Տէրն անում է ձեր 17 աչքերի առջև։ Այսօր ցորենի հունձի ժամանակը չէ՞. ես Տիրոջը կ'աղաղակեմ, և նա որոտամ և անձրև կ'տայ, որ հասկանաք և տեսնէք թէ մեծ է ձեր չարութիւնը որ արիք Տիրոջ առջև ձեզ համար թագաւոր ուզելով։

18 Եւ ժամանակ Սամուէլը Տիրոջը աղաղակեց, և Տէրը նոյն օրը որոտաց և անձրև տուաւ. և բոլոր ժողովուրդը շատ վախեց 19 Տէրից և Սամուէլից։ Եւ բոլոր ժողովուրդը Սամուէլին ասաց. Քո Տէր Աստուծոյն աղօթք արա քո ծառաների համար որ չմեռնենք. վասն զի մեր ամեն մեղքերի վերայ այս չարութիւնն էլ աւելացրինք՝ որ մեզ համար թագաւոր ուզեցինք։ 20 Եւ Սամուէլը ժողովրդին ասաց. Մի վախենաք. դուք այս բոլոր չարութիւնը արիք, սակայն Տէրից մի խոտորիք, և ձեր բոլոր սրտով Տիրոջը ծառայեցէք. 21 և մի խոտորիք. վասն զի ոչինչ բանների ետևից կ'լինէ՛ փնաց որոնք օգուտ չեն և չեն կարող ազատել, որովհետև 22 ոչինչ են նորանք։ Վասն զի Տէրը իր մեծ անուան համար՝ իր ժողովրդին չի թողիլ, որովհետև Տէրը ուզեց ձեզ իր համար ժո- 23 ղովուրդ անել։ Բայց ես՝ քաւլեցի, որ Տիրոջ դէմ մեղք գործեմ, ձեզ համար աղօթք անելուց դադարելով, այլ ես ձեզ կը սովորեցնեմ բարի և ուղիղ ճա- 24 նապարհը։ Միայն թէ Տէրից վախեցէք, և ճշմարտութեամբ — ձեր բոլոր սրտով նորան ծառայեցէք. վասն զի տեսաք որ նա ձեզ համար ինչ մեծ բաներ արաւ։ Իսկ եթէ չարութիւն ա- 25 նէք, դուք էլ ձեր թագաւորն էլ կ'կորչէք։

ԳԼ. ԺԳ

Սաւուղը մէկ տարուայ թագաւոր էր. և երբոր Իսրայէլի վերայ երկու տարի թագաւորութիւն էր արել, Սաւուղն Իսրայէլից ե- 2 րեք հազար մարդ ընտրեց իր համար. երկու հազարը Սաւուղի հետ Մաքմաս ու Բեթէլի լեռնումն էին, և հազարը Յովնաթանին հետ Բենիամինի Գաբաայումն էր. և մնացած ժողովուրդն ուղարկեց ամեն մարդ իր վրանը։

Եւ Յովնաթանը զարկեց Գա- 3 բայի մէջ եղող Փղշտացոց պահապան զօրքերին, և Փղշտացիք լսեցին։ Եւ Սաւուղը բոլոր երկրի մէջ փող հնչեցնել տուաւ, ասելով. Եբրայեցիները թող լսեն։ Եւ բոլոր Իսրայէլը լսեց որ Սա- 4 ւուղը Փղշտացոց պահապան զօրքերին զարկեց, և Իսրայէլը Փղշտացոց առջև ատելի եղաւ. և ժողովուրդը ժողովուեցան Գաղգաղայի մէջ Սաւուղի մօտ։ Եւ 5 Փղշտացիք էլ ժողովուեցան Իսրայէլի դէմ պատերազմ անելու. երեսուն հազար կառք և վեց հազար ձիաւոր, և ժողովուրդը ծովի եղերքին աւազի չափ շատ էր. և վեր ելան՝ և Բեթաւանի արևելեան կողմում Մաք- 6 մասի մէջ բանակեցին։ Եւ Իսրայէլի որդիքը տեսան որ նեղութեան մէջ էին, և որ ժողովուրդը տաղնապուած է, և թաք կացան այրերում, թուփերում, ժայռերում, աշտարակներում և փոսերում։ Եւ Եբրայեցիք Յոր- 7 դանանովն անցան Գադի ու Գաղաադի երկիրը. բայց Սաւուղը դեռ Գաղգաղայի մէջ էր. և բոլոր ժողովուրդը դողալով նորան հետևում էին։

Եւ նա Սամուէլի որոշած ժա- 8 մանակի չափ եօթը օր սպասեց, բայց Սամուէլը Գաղգաղա չեկաւ, և ժողովուրդը նորա մօտից

9 ցրուեցաւ։ Եւ Սաւուղն ասաց. Ողջակէզը և խաղաղութեան զոհը ինձ մօտ բերէք. և ինքը մատուցից ողջակէզը։ Եւ երբոր 10 նա ողջակէզը մատուցանելը վերջացուց, այն ժամանակ եկաւ Սամուէլը. և Սաւուղը դուրս ելաւ նորան դիմաւորելու որ բարեւէ նորան։ Եւ Սամուէլն ասաց. 11 Ի՞նչ ես արել։ Եւ Սաւուղն ասաց. Տեսայ որ ժողովուրդն իմ մօտից ցրւում է, և դու ժ՚ որոշած օրերիդ չեկար. և Փղշտացիք ժողովուած են Միքմասի մէջ։ 12 Եւ ասացի. Փղշտացիք հիմա ինձ վերայ կ՚իջնեն Գաղգաղա, և տակն ես Տէրոջ առջև աղօթք չեմ արել. և ես ինձ ստիպելով 13 ողջակէզը մատուցի։ Եւ Սամուէլն ասաց Սաւուղին. Յիմարութիւն արիր, չպահեցիր քո Տէր Աստուծոյ պատուիրանքը, որ նա քեզ պատուիրել է. վասն զի հիմա Տէրը քո թագաւորութիւնը Իսրայէլի վերայ մինչև յաւիտեան կ՚հաստատեր. 14 բայց հիմա քո թագաւորութիւնը հաստատ չէ լինելու։ Տէրը իր համար իր սրտի համեմատ մի մարդ է որոնում, որին իշխան կ՚նշանակէ Տէրը իր ժողովրդի վերայ. վասն զի դու չպահեցիր ինչ որ Տէրը քեզ պատուիրել էր։

15 Եւ Սամուէլը վեր կացաւ, և Գաղգաղայից Բենիամինի Գաբաան գնաց։ Եւ Սաւուղն իր մօտ գտնուող ժողովուրդը համարեց, և վեց հարիւրի չափ 16 մարդ էին։ Եւ Սաւուղը և նորա որդի Յովնաթանն ու նորանց հետ գտնուող մարդիկը Բենիամինի Գաբաայումն էին բանակում. և Փղշտացոց բանակը Միքմասի մէջ էր։

17 Եւ Փղշտացոց բանակից երեք գունդ ասպատակ դուրս եկաւ. գունդի մէկը դարձաւ դէպի Եփրայի ճանապարհը Սուալի երկիրը. 18 և գունդի մէկը դարձաւ դէպի Բեթ-որոնի ճանապարհը, և գունդի մէկն էլ դարձաւ դէպի անապատը, ուր Սեբոյիմի հովիտն է նայում սահմանի ճանապարհին։

Եւ Իսրայէլի բոլոր երկրումը 19 մէկ դարբին չէր գտնւում, վասն զի Փղշտացիք ասել էին թէ՝ Մի գուցե Եբրայեցիք սուր և նիզակ շինեն։ Եւ բոլոր Իսրայէլացիք իջ- 20 նում էին Փղշտացոց մօտ՝ ամէն մէկն իր ցրիչը, խոփը, տապարը և բահը սրելու համար։ Եւթէ 21 լինում էր որ ցրիչների, խոփերի, եռաժանի զորձիքների և տապարների բերանը փշրւում էր, խթանները սրելու համար խարտոց ունէին։ Եւ այնպէս եղաւ 22 որ պատերազմի օրը՝ Սաւուղի և Յովնաթանի հետ եղող բոլոր ժողովրդի ձեռքին սուր կամ նիզակ չէր գտնւում. միայն Սաւուղի և նորա որդի Յովնաթանի մօտ էր գտնւում։

Եւ Փղշտացոց պահապան զօրքը 23 Միքմասի կիրճը ելան։

ԳԼ. ԺԴ

Եւ եղաւ որ մէկ օր Սաւուղի 1 որդի Յովնաթան իր զէնքերը կրող պատանուն ասաց. Եկ, անցնենք Փղշտացոց պահապան զօրքի մօտ որ այն կողմին է. բայց իր հօրը չյայտնեցրեց։ Եւ Սաւուղը նըս- 2 տել էր Գաբաային գլխին, Մագրոնի մէջ եղող նռնենու տակին, և նորա հետ եղող ժողովուրդը վեց հարիւր մարդու չափ էր։ Եւ 3 Ահղիի որդու Փենէհէսի որդու Եքաբովդի եղբայր Աքիտովբի որդի Աքիան Սեղովի մէջ Տէրոջ քահանան էր, որ եփուդ էր հագնում, և ժողովուրդը չգիտէր թէ Յովնաթան գնաց։ Եւ այն կիր- 4 ճերում, որոնցով Յովնաթան ուզում էր Փղշտացոց պահապան զօրքի մօտ անցնել, մէկ կողմանէ քարաժայռ և միւս կողմանէ մէկ ուրիշ քարաժայռ կար, որոնց մէկի անունը Բոզէս և միւսի անունը Սենա էր։ Այս քարա- 5 ժայռներս մէկը հիւսիսային կողմին Միքմասի դէմ ցցուած էր. և միւսը հարաւային կողմին Գաբայի դէմ։ Եւ Յովնաթան իր 6 զէնքերը կրող պատանուն ասաց. Եկ այս անթլփատների պահա-

պան զօրքի մօտն անցնենք, կա-
բելի է Տէրը մեզի ֆեան անէ.
ուան զի Տիրոջ համար արդելք
չկայ շատով կամ քիչով ազա-
7 տելու։ Եւ իր զէնքերը կրողը նո-
րան ասաց. Բոլոր քո սրտի մէջ
եղածը տրա. յառաջ գնայ. ահա
ես քեզ հետ եմ քո ուզածի
8 պէս։ Եւ Յոնաթանն ասաց. Հի-
մա մենք անցնում ենք այն մարդ-
կանց մօտ. թող նորանց երե-
9 անք. եթէ մեզ այսպէս ասեն.
Կանգնեցէք՝ մինչև որ մենք ձեզ
մօտ գանք, այն ժամանակ մեր
տեղը կանգնենք և վեր չելնենք
10 նորանց մօտ։ Բայց եթէ այսպէս
ասեն. Վեր եկէք մեզ մօտ, այն
ժամանակ ելնենք, ուան զի Տէրը
նորանց մեր ձեռքն է տուած. և
11 սա մեզ համար նշան լինի։ Եւ
երբոր նորանք երկուսը փղշտացոց
պահապան զօրքին երևեցան, փղ-
շտացիք ասացին. Ահա Եբրայեցիք
դուրս են եկել իրանց թաք կա-
12 ցած ծակերից։ Եւ պահապան
զօրքերը Յոնաթանին և նորա
զէնքերը կրողին պատասխանեցին
և ասացին. Վեր եկէք մեզ մօտ,
և ձեզ մէկ բան իմացնենք. և
Յոնաթանն իր զէնքերը կրողին
ասաց. Իմ ետևից վեր ելիր, ու-
րն զի Տէրը նորանց Իսրայէլի
13 ձեռքն է տուել։ Եւ Յոնաթա-
նը ձեռքերովը և ոտքերովը վեր
ելաւ, և նորա զէնքերը կրողն էլ
նորա ետևից. և վայր էին ընկ-
նում Յոնաթանի առջև. նորա
զէնքերը կրողն էլ նորա ետևից
14 էր մեռցնում։ Եւ Յոնաթանն
ու նորա զէնքերը կրողը այս ա-
ռաջի կոտորածի մէջ քսան մար-
դու չափ մեռցրին կէս լծավարի
15 չափ գետնի վերայ։ Եւ բանա-
կումը դաշտի մէջ և բոլոր ժո-
ղովրդի մէջ խռովութիւն եղաւ.
պահապան զօրքերը և աւարա-
առներն էլ զարհուրեցրին, և եր-
կիրը դողաց և վախը Աստուա-
ծանից էր։

16 Եւ Սաուղի դէտերը Բենիա-
մինի Գաբաայից տեսան, որ ա-
հա այն բազմութիւնը հալվում
17 էր, և գնալով ցրվում էր։ Եւ

Սաուղն ասաց իր հետ եղող ժո-
ղովրդին. Նայեցէք, և տեսէք,
ո՞վ է գնացել մեզանից. և նայե-
ցին, և ահա Յոնաթանն ու նորա
զէնքերը կրողը չկար։ Այն ժամա- 18
նակ Սաուղն Աքիային ասաց.
Աստուծոյ տապանակը մօտեցրու,
ուան զի այն ժամանակ Աստուծոյ
տապանակը Իսրայէլի որդիանց
հետ էր։ Եւ երբոր Սաուղը դեռ 19
քահանային հետ խօսում էր, փղշ-
տացոց բանակի միջի աղմուկը
գնալով շատանում էր. և Սա-
ուղն ասաց քահանային. Ձեռքդ
քաշիր։ Եւ Սաուղը և իր հետ 20
եղող բոլոր ժողովուրդը մէկտեղ
ժողովուեցան, և գնացին մինչև
պատերազմը, և ահա սուեն մար-
դու սուրը իր ընկերի դէմ էր, և
շատ մեծ խռովութիւն կար։ Եւ 21
այն Եբրայեցիները որ առաջուց
փղշտացոց հետ էին, և որ շրջա-
կայ երկիրներից նորանց հետ քա-
նակն էին վեր ելել, նորանք էլ
Սաուղի և Յոնաթանի հետ և-
ղող Իսրայէլի հետ միացան։ Եւ 22
Իսրայէլի բոլոր մարդիկը, որ Եփ-
րեմի լեռնուտքը թաք էին կացել,
լսեցին փղշտացոց փախչելը, և նո-
րանք էլ նորանց ետևից պատե-
րազմը մտան։ Եւ այն օրը Տէրը 23
ազատեց Իսրայէլին, և պատե-
րազմը անցաւ Բեթաւեան։

Եւ այն օրը Իսրայէլի մարդիկը 24
տապնստեցին, ուան զի Սաուղը
ժողովրդին երդում էր անել տը-
ուել ասելով. Անիծեալ լինի այն
մարդը որ մինչև իրիկուն հաց ու-
տէ, որպէս զի իմ թշնամիներից
վրէժ առնեմ. և բոլոր ժողո-
վուրդը բերանը հաց չդրաւ։ Եւ 25
բոլոր ժողովուրդը մի անտառի
մէջ մտաւ, և գետնի երեսի վե- 26
րայ մեղր կար։ Եւ երբոր ժողո-
վուրդը անտառը մտաւ, ահա
մեղր ծորում էր. բայց ձեռքը բե-
րանին մօտեցնող չկար, ուան զի
ժողովուրդը երդումից վախեց։
Բայց Յոնաթանը չէր լսել, երբ 27
որ իր հայրը ժողովրդին երդում
էր անել տուել. և իր ձեռքի
գաւազանի ծայրը մեկնեց, մեղրի
խորիսխի մէջ կոխեց այն և իր

ձեռքը բնթանը տարաւ, և աչ-
28 քերը բացուեցան։ Անի ժամա-
նակ ժողովրդից մէկը պատաս-
խանեց և ասաց. Հայրդ ժողո-
վըրդին մեծ երդում առել տը-
ուաւ, առելով. Անխնայ լինի
այն մարդը որ այսօր հաց ուտէ։
29 Եւ ժողովուրդը նուազած էր։ Եւ
Յոնաթանն ասաց. Հայրս ժո-
ղովրդին նեղութեան մէջ է գը-
ցել. նայեցէք աչքերս լոյս առա-
ցան երբոր այս մեղրից մի քիչ
30 կերայ. Ընդ որչափ առաւել եւս
եթէ ժողովուրդը ուտէր այսօր
իր թշնամիներից գտած ուտելը,
վասն զի հիմա Փղշտացոց մէջ
31 մեծ կոտորած չեղաւ։ Եւ այն
օրը Փղշտացիներին զարկեցին
Մաքմասից մինչև Այեղոն. և
32 ժողովուրդը նուաղեցաւ։ Եւ ժո-
ղովուրդը ուտելի վերայ յարձակ-
ուեցաւ, և ոչխարները, արջառ-
ները և հորթերը առին, և գետ-
նի վերայ մորթեցին, և ժողո-
33 վուրդը արիւնովը կերաւ։ Եւ
Սաւուղին իմացրին և ասացին.
Ահա ժողովուրդը Տէրոջ դէմ մե-
ղանչում է, վասն զի արիւնովն է
ուտում։ Եւ նա ասաց. Անօրէ-
նութիւն արիք. հիմա ինձ հա-
34 մար մէկ մեծ քար գլորեցէք։ Եւ
Սաւուղն ասաց. ժողովրդի մէջ
ցրուեցէք և նորանց ասէք. Ա-
մեն մարդ իր արջառը և իր ոչ-
խարը ինձ մօտ բերէ, և այստեղ
մորթէք և ուտէք, և արիւնով
ուտելով Տէրոջ դէմ մեղք չգոր-
ծէք։ Եւ բոլոր ժողովուրդը
ամեն մարդ իր ձեռքովը այն
գիշեր իր արջառը մօտեցրեց և
35 այնտեղ մորթեց։ Եւ Սաու-
ղը Տէրոջ համար սեղան շինեց.
այս էր սկզբի սեղանը որ շի-
36 նեց Տէրոջ համար։ Եւ Սաու-
ղն ասաց. Գիշերով Փղշտացոց
ետևից իջնենք, և մինչև որ ա-
ռաւօտը լուսանայը նորանց կո-
ղոպտենք և նորանցից մի մարդ
չթողնենք. և նորանք ասացին. Ո-
րչափ լինչ որ հաճոյ է, այն
արա. Եւ քահանան ասաց։ Այս-
37 տեղ Աստուծոյն մօտենանք. Եւ
Սաւուղն Աստուծոյն հարցրեց՝

թէ փղշտացոց ետևից իջնե՞մ,
նորանց Իսրայէլի ձեռքը կ'տա՞ս։
Բայց այն օրը չպատասխանեց նո-
րան։ Անի ժամանակ Սաւուղ 38
ասաց. Մօտեցէք այստեղ ժո-
ղովրդի բոլոր իշխանները, և հա-
կացէք և տեսէք թէ այսօր այս
մեղքը որո՞նն է։ Վասն զի 39
Իսրայէլը ապրող Տէրը կենդանի
է, որ թէև իմ որդի Յոնաթա-
նինն էլ լինի, անպատճառ պիտի
մեռնի. և բոլոր ժողովրդի մէջ
նորան պատասխանող չկար։ Անի 40
ժամանակ բոլոր Իսրայէլին ա-
սաց. Դուք մէկ կողմը կանգնե-
ցէք, և ես ու իմ որդի Յոնաթա-
նը մէս կողմը կանգնենք. և
ժողովուրդը Սաւուղին ասաց.
Աչքերիդ հաճոյ եղածը արա։ Եւ 41
Սաւուղն Իսրայէլի Տէր Աստու-
ծոյն ասաց. Ցոյց տուր ճշմար-
տին. և Յոնաթանն ու Սաւուղը
բռնուեցան վիճակով, և ժողովու-
րդը ազատ մնաց։ Եւ Սաւուղն ա- 42
սաց. Ինձ վերայ ու իմ որդի Յով-
նաթանի վերայ վիճակ գցեցէք,
և Յոնաթանը բռնուեցաւ։ Եւ 43
Սաւուղը Յոնաթանին ասաց.
Ինձ յայտնիր թէ ի՞նչ ես արել.
և Յոնաթանը նորան յայտնեց
և ասաց. Ձեռքիս գաւազանի
ծայրովը մի քիչ մեղր եմ կերել.
ահա ես կ'մեռնեմ։ Եւ Սաւուղն 44
ասաց. Աստուած այսպէս և սո-
րանից աւելի անէ՝ որ անպատ-
ճառ պիտի մեռնես, Յոնաթան։
Բայց ժողովուրդը Սաւուղին ա- 45
սաց. Յոնաթա՞նը մեռնի, որ
այսօր Իսրայէլի մէջ արաւ այս
մեծ փրկութիւնը, քաւ լինի,
կենդանի է Տէրը որ նորա գլխի
մէկ մազը գետինը պիտի չընկնի,
վասն զի այսօր Աստուծով գոր-
ծեց։ Այսպէս ժողովուրդը Յով-
նաթանին ազատեց, և չմեռաւ։
Եւ Սաւուղը փղշտացիներից ետ 46
դարձաւ, և փղշտացիք գնացին
իրանց տեղը։

Եւ Սաւուղը սկսեց Իսրայէլի 47
վերայ թագաւորել. և բոլոր շըր-
ջակայ թշնամիների հետ՝ այսինքն
Մովաբի հետ և Ամմոնի որդոց
հետ, Եդոմի հետ, Սուբայի թա-

դաւորներըն հետ, և փղշտացւոց հետ պատերազմ արաւ. և սուին ուր որ դառնար՝ յաղթութիւն էր անում: 48 Ու ղօրք շինեց և Ամաղեկին զարկեց, և ազատեց Իսրայէլին իր կողոպտիչների ձեռքիցը:

49 Եւ Սաւուղի որդիքն էին Յովնաթանը, Յեսուին և Մեղքիսաւնէ, և նորա երկու աղջկերանց անուններըն՝ առաջինի անունը Մերովբ, և փոքրի անունը 50 Մեղքող էր: Եւ Սաւուղի կնոջ անունը Աքինոամ էր՝ Աքիմաասի աղջիկը. և նորա զօրավարի անունը Աբեններ էր՝ Սաւուղի 51 հօրեղբայր՝ Ների որդին: Եւ Կիսը՝ Սաւուղի հայրը, և Աբենների հայրը Ները՝ Աբիելի որդիքն էին: 52 Եւ Սաւուղի բոլոր օրերումը փղշտացոց դէմ սաստիկ պատերազմ կար. և Սաւուղն ամեն տեսած զօրաւոր մարդուն և ամեն ուժի տէր եղողին իր մօտն էր ժողովում:

ԳԼ. ԺԵ

1 Եւ Սամուէլն ասաց Սաւուղին. Տէրն ինձ ուղարկեց քեզ իր ի օծել ժողովրդի վերայ թագաւոր օծելու, և հիմա Տիրոջ խոս- 2 քերի ձայնը լսիր: Զօրաց Տէրն այսպէս է ասում. Ես յիշում եմ ինչ որ Ամաղէկն արաւ Իսրայէլին, որ նորա ճանապարհը կարեց երբոր նա Եգիպտոսից 3 դուրս էր եկել: Հիմա գնա և Ամաղէկին զարկ, և նորա բոլոր ունեցածը նզովեցէք, և նորան չխնայես. և մեռցնես մարդուց մինչև կինը, և տղայից մինչև կաթնակերը, արջառից մինչև ոչխարը, և ուղտից մինչև էշը:

4 Եւ Սաւուղը ժողովրդին կանչեց, և Տեղայիմի մէջ նորանց հանդէս արաւ, որ երկու հարիւր հազար հետեւակ զօրք էին, և Յուդայեանք էլ տասը հազար: 5 Եւ Սաւուղը գնաց մինչև Ամաղեկացոց մէկ քաղաքը, և հեղեղատի մէջ դարանակալ եղաւ: 6 Եւ Սաւուղը Կենեցիներին ասաց. Գնացէք, բաժանուեցէք և Ամաղեկացոց միջից իջէք, մի գուցէ ձեզ նորանց հետ մէկտեղ փըչացնեմ. վասն զի դուք բոլոր Իսրայէլի որդկանց ողորմութիւն արիք՝ նորանք Եգիպտոսից դուրս գալիս: Եւ Կենեցիները Ամաղեկացոց միջից բաժանուեցան: 7 Եւ Սաւուղը զարկեց Ամաղէկին Եւլայից մինչև Եգիպտոսի դիմացի Սուրը. 8 Եւ Ամաղեկի թագաւոր Ագագին ողջ բռնեց, և բոլոր ժողովուրդը սուրի բերանով նզովեց: 9 Բայց Սաւուղը և ժողովուրդը խնայեցին Ագագին, և ոչխարներին և արջառների լաւերին և գէրերին, և գառներին, և ամեն պատուական բաներին, և չուզեցին նորանց նզովել, այլ բոլոր անարգ և անպիտան առարկաները նզովեցին:

10 Եւ Տիրոջ խօսքը Սամուէլին եղաւ՝ ասելով. 11 Զղջացի որ Սաւուղին թագաւոր եմ արել. վասն զի ինձանից ետ դարձաւ, և իմ խօսքերը չկատարեց: Եւ Սամուէլը տրտմեց, ու բոլոր գիշերը Տիրոջը աղաղակեց: 12 Եւ Սամուէլն առաւօտը կանուխ վեր կացաւ, որ Սաւուղին դիմաւորէ. և Սամուէլին իմացուեցաւ ասելով՝ Սաւուղը եկել է Կարմելոս. և ահա իր համար յաղթութեան կոթող կանգնեցրեց, և այնտեղից դառնալով անցաւ, և իջաւ Գաղգաղա:

13 Եւ Սամուէլը Սաւուղի մօտ գնաց, և Սաւուղը նորան ասաց. Տէրից օրհնեալ լինիս, Տիրոջ խօսքը կատարեցի: 14 Եւ Սամուէլն ասաց. Ապա այս ոչխարների ձայնը ի՞նչ է որ գալիս է ականջիս, և արջառների ձա՞յնը՝ որ ես լսում եմ: 15 Եւ Սաւուղն ասաց. Ամաղեկացիներից բերին նորանց վասն զի ժողովուրդը խնայեց լաւ ոչխարներին և արջառներին, որ նորանց քո Տէր Աստուծոյն զոհ մատուցանեն. սակայն մեւաներին նզովեցինք: 16 Այն ժամանակ Սամուէլն ասաց Սաւուղին. Սպասիր որ պատմեմ ինչ որ Տէրը այս գիշեր ինձ հետ խօսեց: Եւ նա

17 Նորան ասաց. Խօսիր։ Եւ Սա-
մուէլն ասաց. Ահա դու որ քո
աչքերին փոքր էիր երեւում, Իս-
րայէլի որդիանց ցեղերին գլուխ
եղար, և Տէրը քեզ Իսրայէլի
18 վերայ թագաւոր օծեց. Եւ Տէրը
քեզ ուղարկեց ճանապարհ ու-
սուցանելով. Գնա, և այն մեղաւոր Ա-
մաղեկացիներին նզովիր, և նորանց
դէմ պատերազմիր, մինչև որ նո-
19 րանց բնաջինջ անես. Եւ ինչո՞ւ
համար չլսեցիր Տիրոջ ձայնին, և
աւարի վերայ յարձակուելով Տի-
20 րոջ աչքի չարութիւն արիր։ Եւ
Սաւուղն ասաց Սամուէլին. Թէ
Տիրոջ ձայնին լսեմ, և Տէրը ինձ
որ ճանապարհ որ ուղարկեց, այն
ճանապարհովը գնացի, և Ամա-
ղեկի թագաւոր Ագագին բերի,
21 և Ամաղեկին նզովեցի։ Սակայն
ժողովուրդը այն աւարից ոչխար-
ներ ու արջառներ վեր առաւ,
նզովածներից շատ լաւերը, որ
Գաղգաղայի մէջ քո Տէր Աստու-
22 ծոյն զոհեն։ Եւ Սամուէլն ա-
սաց. Մի՞թէ Տէրը այնքան հա-
ւանում է ողջակէզների և զոհե-
րի ինչպէս Տիրոջ ձայնին լսելուն.
ահա հնազանդութիւնը զոհից
լաւ է և ականջ դնելը խոյերի
23 ճարպիցը. Վասն զի ապստամբու-
թիւնը կախարդութեան մեղքի
պէս է, և անհնազանդութիւնը կռ-
պաշտութեան պէս է. որով-
հետև դու Տիրոջ խօսքը մերժե-
ցիր, նա էլ քեզ մերժեց՝ որ
թագաւոր չլինիս։
24 Եւ Սաւուղն ասաց Սամուէ-
լին. Մեղք գործեցի՝ որ Տիրոջ
հրամանները և քո խօսքերը զանց
արի. վասն զի ժողովրդից վա-
խեցի, և նորանց խօսքից լսեցի.
25 Եւ հիմա աղաչում եմ ներիր իմ
յանցանքը. և ինձ հետ եւս դար-
ձիր որ Տիրոջը երկրպագութիւն ա-
26 նեմ։ Եւ Սամուէլն ասաց Սաւու-
ղին. Ես քեզ հետ եւս չեմ դար-
նալ. վասն զի դու Տիրոջ խօսքը
մերժեցիր, Տէրն էլ քեզ է մեր-
ժել, որ Իսրայէլի վերայ թագա-
27 ւոր չլինիս։ Եւ Սամուէլն եւս
չդարձաւ որ գնայ, բայց նա նորա
վերարկուի ծայրիցը բռնեց, որ
պատառուեցաւ։ Այն ժամանակ 28
Սամուէլը նորան ասաց. Տէրը այ-
սօր քո վերայից Իսրայէլի թա-
գաւորութիւնը պատառեց և որ-
ուան նորան քեզանից լաւ բնակ-
իր է։ Նաև Իսրայէլի Ամաւէնը 29
սուտ չի խօսիլ և չի զղջալ. վա-
սն զի նա մարդ չէ՝ որ զղջայ։
Եւ Սամուէլն ասաց. Մեղք գոր- 30
ծեցի. սակայն հիմա ժողո-
վրդի ծերերի առջև ու Իսրայէլի
առջև ինձ պատուիր, և ինձ հետ
եւս դարձիր, որ քո Տէր Աստու-
ծոյն երկրպագութիւն անեմ։ Եւ 31
Սամուէլը Սաւուղի հետից եւս
դարձաւ, և Սաւուղը Տիրոջը եր-
կրպագութիւն արաւ։
Եւ Սամուէլն ասաց. Ամաղեկի 32
թագաւոր Ագագին ինձ մօտ բե-
րէք. և Ագագը քնքուշութեամբ
նորան մօտեցաւ, և Ագագն ա-
սաց. Անպատճառ մահուան դա-
տութիւնը անցել է։ Բայց Սա- 33
մուէլն ասաց. Ինչպէս որ քո սա-
բը կանանց անզաւակ թողեց,
նոյնպէս էլ քո մայրը կանանց
մէջ անզաւակ ծնաց։ Եւ Սամուէ-
լը Գաղգաղայի մէջ Տիրոջ առ-
ջև կտոր կտոր արաւ Ագագին։
Եւ Սամուէլը գնաց Ռամա, և 34
Սաւուղը վեր գնաց իր տունը Սա-
ւուղի Գաբաան։ Եւ Սամուէլը 35
մինչև իր մահուան օրը այլ եւս
Սաւուղին չտեսաւ. որովհետև
Սամուէլը Սաւուղի համար սուգ
էր անում. և Տէրը զղջաց որ Սա-
ւուղին Իսրայէլի վերայ թագա-
ւոր էր շինել։

ԳԼ. ԺԶ

Եւ Տէրը Սամուէլին ասաց. Մին- 1
չև ե՞րբ պիտի Սաւուղի համար
սուգ անես. որովհետև ես նորան
մերժեցի որ Իսրայէլի վերայ չթա-
գաւորէ. եղջիւրդ իւղով լեցրու,
և ակ քեզ ուղարկեմ Բեթլեհե-
մացի Յեսսէի մօտ. վասն զի ին-
րա որդիանց մէկին ինձ համար
թագաւոր տեսայ։ Եւ Սամուէլն 2
ասաց. Ի՞նչպէս գնամ. եթէ Սա-
ւուղը լսէ՝ ինձ կ'սպանէ. և Տէ-
րըն ասաց. Հետդ մի կով տա-

և ասիր թէ՝ Եկայ Տէրոջը զոհ
3 անելու. Եւ Յեսսէին հրաւիրիր
զոհին. և ես քո անելու բանը
քեզ կ'հասկացնեմ. և ինձ համար
օծես նորան՝ որին քեզ կ'ասեմ:
4 Եւ արաւ Սամուէլը Տէրոջ ա-
սածը, և գնաց Բեթլեհէմ: Եւ
քաղաքի ծերերը շտապելով դի-
մաւորեցին նորան, և ասացին.
5 Խաղաղութե՞ամբ է գալդ: Եւ
նա ասաց. Խաղաղութեամբ. Տի-
րոջ համար զոհ անելու եկայ.
սրբուեցէք՝ և ինձ հետ զոհի ե-
կէք. և Յեսսէին և նորա որդի-
ներին սրբել տուաւ, և նորանց
6 զոհի հրաւիրեց: Եւ երբոր նո-
րանք եկան, Եղիաբին տեսնելով՝
ասաց. Իրաւ Տէրոջ օծեալը իր
7 առջև է: Բայց Տէրը Սամուէլին ա-
սաց. Նորա երեսոյթին և հասակի
երկայնութեանը մի նայիր, վասն
զի նորան անարգեցի. որովհետև
այն չէ բանը. որ տեսանում է մար-
դը. վասն զի մարդը տեսանում է
աչքի առջևինը, բայց Տէրը սրտին
8 է նայում: Եւ Յեսսէն Աբինադա-
բին կանչեց, և նորան Սամուէլի
առաջումը անցկացրեց, և նա ա-
սաց. Տէրը սորան էլ չընտրեց:
9 Եւ Յեսսէն Սամմային անցկաց-
րեց. և նա ասաց. Տէրը սորան
10 էլ չընտրեց: Եւ Յեսսէն Սամու-
էլի առաջումը իր եօթը որդիներին
անցկացրեց, և Սամուէլը Յեսսէ-
ին ասաց. Տէրը սորանցից չընտ-
11 րեց: Եւ Սամուէլը Յեսսէին ա-
սաց. Տղայքդ ամենն էլ սորա՞նք
են: Եւ նա ասաց. Տակաւին մը-
նացել է կրտսերը, և ահա նա
ոչխարները արածացնում է: Եւ
Սամուէլը Յեսսէին ասաց. Մ-ղ
ուղարկիր և նորան բերել տուր.
վասն զի մինչ ևդրան պիտի չնըս-
տենք մինչև որ նա այստեղ չը
12 գայ: Եւ նա մարդ ուղարկեց, և
նորան բերել տուաւ. և նա կար-
միր էր, և գեղեցիկ աչքերով,
և գէմքով էլ գեղեցիկ: Եւ
Տէրն ասաց. Վեր կաց
13 օծիր զորան, վասն զի սա է: Եւ
Սամուէլը իւղի եղջիւրն առաւ,
և օծեց նորան իրանց եղբարց
մէջ և այն օրից յետոյ Տէրոջ
Հոգին եկաւ Դաւթի վերայ:
և Սամուէլը վեր կացաւ գնաց
Ռամա:

14 Եւ Տէրոջ Հոգին հեռացաւ
Սաւուղից. և Տէրոջ կողմանէ մի
չար ոգի նեղում էր նորան: Եւ
15 Սաւուղի ծառաները նորան ասա-
ցին. Ահա Աստուծոյ կողմանէ մի
չար ոգի քեզ նեղում է. Մեր
16 տէրդ իր առջև եղող ծառաներին
ասիր որ մի լաւ քնարահար ո-
րոնեն, որ երբոր Աստուծոյ կող-
մանէ այն չար ոգին քեզ վերայ
գայ, նա իր ձեռքովը քնարը ա-
ծէ, և դու լաւանաս: Եւ Սա-
17 ւուղն իր ծառաներին ասաց.
Հիմա ինձ համար մէկ լաւ քնա-
րահար գտէք, և նորան ինձ մօտ
բերէք: Եւ ծառաներից մէկը պա-
18 տասխանեց և ասաց. Ահա Բեթ-
լեհեմցի Յեսսէի մէկ տղան տե-
սայ, որ գիտէ նուագել, և
քաջ, զօրաւոր, պատերազմող,
ճարտասան, և գեղեցիկ տեսքով
մարդ է, և Տէրը նորա հետ է:
19 Եւ Սաւուղը Յեսսէին պատգա-
մաւորներ ուղարկեց և ասաց.
Տղադ Դաւթին, որ ոչխարների
մօտն է, ինձ մօտ ուղարկիր: Եւ
20 Յեսսէն մի իշի բեռն հաց, մի
տիկ գինի, և այծերից մի ուլ
առաւ, և իր տղայ Դաւթի ձեռ-
քովը Սաւուղին ուղարկեց: Եւ
21 Դաւիթը Սաւուղի մօտ եկաւ,
և նորա առջև կանգնեց: Եւ Ս-
—ղը նորան շատ սիրեց, և նորա
կապարճակիրը դառաւ:

22 Եւ Սաւուղը Յեսսէին խոստ ու-
ղարկեց ասելով. Դաւիթը թող
իմ առջև կ'անգնէ, վասն զի նա
23 իմ առջև շնորհք գտաւ: Երբոր
Աստուածանից այն ոգին գալիս
էր Սաւուղի վերայ, Դաւիթը առ-
նում էր քնարը, և իր ձեռքովը
ածում. և Սաւուղը հանգստա-
նում և լաւանում էր, և չար ո-
գին նորա վերայից գնում էր:

ԳԼ. ԺԷ

1 Եւ փղշտացիք իրանց զօրագունդ-
երը ժողովեցին պատերազմելու
համար, և Յուդայի Սոքովի մէջ

ժողովեցան. և բանակեցին Սոքովի ու Ազեկայի միջտեղը Ափեսդոմմին։ 2 Եւ Սաւուղը և Իսրայէլի մարդիկը ժողովեցան, Էլայի հովտի մէջ բանակեցին. և կարգաւ շարուեցան փղշտացոց դէմ պատերազմ անելու համար։ 3 Եւ փղշտացիք կանգնել էին լեռան վերայ մէկ կողմանէ, և Իսրայէլացիք կանգնել էին լեռան վերայ միւս կողմանէ, և հովիտը 4 նորանց միջտեղը։ Եւ մի միջնամարտիկ էր դուրս եկել փղշտացոց բանակից՝ անունը Գողիաթ Գեթացի՝ բարձրութիւնը մէկ 5 կանգուն և մէկ թիզ. նորա գլխին կար մի պղնձի սաղաւարտ. և մի հիւսուած զրահ հագած. և նորա զրահի ծանրութիւնը 6 հինգ հազար սիկղ պղինձ։ Եւ նորա սաքերի վերայ պղնձի սրունապանները, և ուսերի միջ պղնձի 7 գեղարդ։ Նորա նիզակի բունը ոստայնանկաց գլանի պէս էր. և նիզակի տէգը վեց հարիւր սիկղ երկաթ. և նորա վահանը կրողը 8 գնում էր նորա առջևից։ Եւ նա կանգնեց, և կանչեց Իսրայէլի գունդերին և նորանց ասաց. Ինչու համար էք դուրս եկել և պատերազմի շարուել. միթէ ես փղշտացի չեմ, և դուք Սաւուղի ծառաներ. ձեր միջից մի մարդ ընտրեցէք, որ իջնէ ինձ մօտ. 9 եթէ կարողանայ ինձ հետ մենամարտել, և ինձ սպանէ, այն ժամանակ մենք ձեր ծառաները լինինք. բայց եթէ ես յաղթեմ և նորան սպանեմ, այն ժամանակ դուք մեր ծառաները 10 լինիք և մեզ ծառայէք։ Եւ այն փղշտացին ասաց. Ես այսօր Իսրայէլի գունդերին նախատեցի. ինձ մէկ մարդ տուէք, որ իրար 11 հետ մենամարտենք։ Եւ երբոր Սաւուղն ու բոլոր Իսրայէլը լսեցին փղշտացու այս խօսքերը, զարհուրեցին և շատ վախեցին։

12 Բայց Դաւիթը այն Եփրաթացի՝ այսինքն Յուդայի Բեթլեհեմացի Յեսսէ անունով մարդու որդին էր, և նա ութ որդի ունէր, և նա Սաւուղի ժամանակ-

ներին մարդկանց մէջ ծեր մարդ էր համարւում։ 13 Եւ Յեսսէի երեք մեծ որդիները դուրս էին եկել՝ Սաւուղի հետից պատերազմի գնացել. և պատերազմի գնացող երեք որդւոց անունները՝ անդրանիկը Եղիաբ, երկրորդինը Աբինադաբ, և երրորդինը Սամմա էր։ 14 Եւ Դաւիթը կրտսերն էր. և երեք մեծերը Սաւուղի հետից գնացին. 15 բայց Դաւիթը Սաւուղի մօտից դուրս էր եկել ետ դարձել Բեթլեհեմ, որ իր հօր ոչխարները արածացնէ։ 16 Եւ այն փղշտացին քառասուն օր առաւօտ ու երեկոյ մօտենում էր և կանգնում։

17 Եւ Յեսսէն իր որդի Դաւթին ասաց. Քո եղբարց համար վեր առ այս մէկ արդու հնդին և այս տասը հացը, և վազիր բանակը եղբարցդ մօտ։ 18 Եւ այս տասը գլուխ կաթնապանիրը տար հազարապետին, և տես եղբայրներդ առո՞ղջ են, և նորանցից ապահովութեան նշան բեր։ 19 Եւ Սաւուղը և նորանք և բոլոր Իսրայէլի մարդիկը Էլայի հովտի մէջ փղշտացոց հետ պատերազմում էին։

20 Եւ Դաւիթն առաւօտը կանուխ վեր կացաւ ոչխարները պահապանին յանձնեց, և վեր առաւ դնաց, ինչպէս որ Յեսսէն իրան հրամայել էր։ Եւ երբոր հասաւ կառքերի տեղը. զօրքերը կարգաւ շարւում էին, ու պատերազմի համար բարձր ձայնով աղաղակում էին։ 21 Եւ Իսրայէլն ու փղշտացիք շարուեցան մեկտեղ մեկտեղ։ 22 Եւ Դաւիթն իր վերտից ամանները յանձնեց ամանների պահապանի ձեռքը, և վազեց գունդը. և գնաց իր եղբայրներին հարցրեց թէ ո՞ղջ են։ 23 Երբոր նա նորանց հետ խօսում էր, ահա այն միջնամարտիկը՝ փղշտացի Գողիաթ անունով՝ որ Գէթից էր, փղշտացի գունդերից դուրս եկաւ, և այն խօսքերի պէս խօսեց. և Դաւիթը լսեց։ 24 Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը երբ որ այն մարդուն տեսան, նորա երեսից վախեցան և շատ վախե-

25 ցին։ Եւ Իսրայէլի մարդիկն ա-
ասացին. Այս գուբս եկած մարդը
տեսա՞ք, որ գուբս է եկել Իս-
րայէլին նախատելու. ով որ նորան
մեռցնէ, թագաւորը մեծ հարս-
տութիւնով հարստացնելու է նո-
րան, և իր աղջիկը նորան է տալու
և նորա հօր տունը Իսրայէլի մէջ
26 ազատ է անելու։ Ու Գաւիթը խօ-
սեց իր մօտեղող մարդկանց հետ և
ասաց. Ի՞նչ կանեն այն մարդուն
որ այս փղշտացուն մեռցնէ և Իս-
րայէլացը նախատինքը վեր առնէ.
վասն զի այս անթլփատ փղշտա-
ցին ո՞վ է՝ որ կենդանի Աստուծոյ
27 զօրքերին նախատէ։ Եւ ժողո-
վուրդը նոյն խօսքերն ասաց նո-
րան. Թէ Այսպէս պիտի լինի
այն մարդուն որ նորան մեռցնէ։
28 Եւ նորա մեծ եղբայրը Եղիաբը,
երբոր լսեց նորա խօսելը այն
մարդկանց հետ, Գաւթի վերայ
Եղիաբի բարկութիւնը բորբոքեց
և ասաց. Դու ինչո՞ւ իջար այս-
տեղ, և այն մի քանի ոչխարները
անապատում որի՞ յանձնեցիր.
ես քո հպարտութիւնը և քո
սրտի չարութիւնը գիտեմ, ան-
տարակոյս դու իջել ես պատե-
29 րազմը տեսնելու։ Եւ Գաւիթն
ասաց. Հիմա ես ի՞նչ եմ արել.
30 ա՛ռ բան չէ՞։ Եւ նորա մօտից մէկ
ուրիշ մարդու դարձաւ, և նոյն
խօսքերն ասաց, և ժողովուրդն
էլ առաջի խօսքերին պէս պա-
31 տասխանեցին նորան։ Եւ լսուե-
ցան այն խօսքերը որ Գաւիթ խո-
սել էր. և երբոր Սաւուղի առ-
ջև պատմեցին, բերել տուա
նորան։

32 Եւ Գաւիթը Սաւուղին ասաց.
Սորա պատճառով ոչ մի մարդու
սիրտը չթուլանայ. ծառադ կը
գնայ, և այն փղշտացու հետ կը
33 մարտնչէ։ Եւ Սաւուղը Գաւթին
ասաց. Դու չես կարող այն փղշ-
տացու վերայ գնալ, և նորա հետ
մարտնչել, վասն զի դու երիտա-
սարդ ես, բայց նա իր մանկու-
թիւնից ի վեր պատերազմի մարդ
34 է։ Եւ Գաւիթն ասաց Սաւու-
ղին. Ծառադ իր հօր ոչխարները
արածացնում էր, և առիւծը
կամ արջը գալիս էր. և հօտե-
րից ոչխար էր տանում, ես նո-
րա ետևից գնում էի նորան
զարկում էի, և նորա բերանից
ազատում էի. և երբոր նա ինձ
վերայ էր վեր կենում, մօրուքից
բռնում էի, զարկում էի և մեռց-
նում էի։ Ծառադ առիւծ էլ է
35 մեռցրել արջ էլ. և այս անթլ-
փատ փղշտացին էլ թող նորանց
մէկի պէս լինի. քանզի կենդանի
Աստուծոյ զօրքերին նախատեց։
36 Եւ Գաւիթն ասաց. Եհովան որ
37 առիւծի և արջի ձեռքից ինձ ա-
զատեց, այս փղշտացու ձեռքից
էլ կ'ազատէ։ Եւ Սաւուղը Գաւ-
թին ասաց. Գնա, և Տէրը քեզ
հետ լինի։ Եւ Սաւուղն իր հան-
38 դերձները հագցրեց Գաւթին, և
նորա գլխին մէկ պղնձի սաղա-
րտ դրաւ, և նորան զրահ էլ
39 հագցրեց։ Եւ Գաւիթը նորա սու-
րը մէջքը կապեց հանդերձների վե-
րայից և սկսեց մեռ գալ, վասն զի
սովոր չէր. և Գաւիթը Սաւուղին
ասաց. Սորանցով չեմ կարող մեռ
գալ, վասն զի սովոր չեմ. և Գա-
ւիթն հանեց նորանից իր վերայից։
40 Եւ իր ցուպը ձեռքն առաւ,
և հեղեղատից իր համար հինգ
հատ գլաքարազ քար ջոկեց, և
նորանց իր հովուական ամանի
պարկին մէջը դրաւ, և պարսը ձեռքին մօտեցաւ փղշտա-
41 ցուն։ Եւ փղշտացին էլ եկաւ և
Գաւթին մօտեցաւ, և նորա վա-
հանը կրող մարդը նորա առջևն
42 էր։ Եւ երբոր փղշտացին նայեց
և Գաւթին տեսաւ, արհամար-
հեց նորան, վասն զի նա կարմիր
գոյնով և գեղեցկադէմ պատանի
43 էր։ Եւ փղշտացին ասաց Գաւ-
թին. Մի՞թէ ես շուն եմ՝ որ ինձ
վերայ ցուպով ես գալիս, և փղ-
շտացին նզովեց Գաւթին իր
44 աստուածներով։ Եւ փղշտացին
ասաց Գաւթին. Ե՛կ ինձ մօտ,
և մարմինդ երկնից թռչուններին
և դաշտի գազաններին տամ։ Եւ
45 Գաւիթն ասաց փղշտացուն. Դու
ինձ վերայ ես գալիս սրով, նի-
զակով և գեղարդով, բայց ես
գալիս եմ քեզ վերայ Տէրու-

թեանց Տէրոջ Իսրայէլի զօրքերի
Աստուծոյն անունով, որին դու
16 նախատեցիր։ Այսօր Տէրը քեզ
իմ ձեռքը կ'մատնէ. ու ես քեզ
կ'մեռցնեմ, և քո վերայից գլու-
խըդ կ'առնեմ. և փղշտացոց բա-
նակի դիակները այսօր երկնից
թռչուններին և երկրի գազան-
ներին կ'տամ. որպէս զի բոլոր
երկիրը գիտենայ որ Իսրայէլը
17 Աստուած ունի. և այս բոլոր ժո-
ղովքը գիտենան՝ որ Տէրը սրով
և նիզակով չէ ազատում. վասն
զի պատերազմը Տիրոջն է, և
նա ձեզ մեր ձեռքը կ'մատնէ։
18 Եւ երբոր փղշտացին վեր կացաւ
և եկաւ դիմաւորելով Դաւթին
մօտեցաւ, Դաւիթ էլ շուտով
վազեց պատերազմի տապարէզը
19 փղշտացուն դիմաւորելու։ Եւ
Դաւիթն իր ձեռքը իր մախաղի
մէջ կոխեց, և այն տեղից մի
քար առաւ, և պարսով շպրտե-
ց, և փղշտացուն ճակատին
զարկեց. և քարը նորա ճակատի
մէջ փորուեցաւ, և նա երեսի
20 վերայ գետին ընկաւ։ Այսպէս
Դաւիթը պարսով և քարով
փղշտացուն յաղթեց. և զարկեց
փղշտացուն և մեռցրեց նորան,
բայց Դաւթի ձեռքին սուր չը
21 կար։ Եւ Դաւիթը վազեց փղշ-
տացու վերայ կանգնեց, և նորա
սուրն առաւ, պատեանիցը հա-
նեց, և նորան մեռցրեց՝ յետոյ
գլուխը նորանով կտրեց։ Եւ երբոր
փղշտացիք իրանց զօրաւոր մար-
դու մեռնելը տեսան, փախան։
22 Այն ժամանակ Իսրայէլի և Յու-
դայի մարդիկը վեր կացան, և ա-
ղաղակներով հալածեցին փղշտա-
ցիներին մինչև Գովիաթ՝ և մինչև
Ակկարոնի դռները՝ և փղշտացոց
սպանուածները ընկան Սագարի-
մի ճանապարհի վերայ և մինչև
23 Գէթ ու Ակկարոն։ Եւ Իսրայէլի
որդիքը փղշտացիներին հալածե-
լուց յետոյ եւ դարձան և նորանց
24 բանակը կողոպտեցին։ Եւ Դաւ-
թը փղշտացու գլուխն առաւ, և
նորան տարաւ Երուսաղէմ. բայց
նորա զէնքերը դրաւ իր վրանի
25 մէջ։ Եւ երբոր Սաւուղը Դաւ-

թին տեսաւ, որ գուրս է գալիս
փղշտացու դէմ, զօրավար Աբեն-
ներին ասաց. Աբեններ, այս պա-
տանին որի՞ տղան է։ Եւ Աբեններն
ասաց. կենդանի է քո անձը, ով
թագաւոր, եթէ գիտեմ լինիմ։
Եւ թագաւորն ասաց. Հարցրու 56
թէ այս պատանին որի՞ տղան է։
Եւ երբոր Դաւիթը փղշտացուն 57
մեռցնելուցետ դարձաւ, Աբեն-
ներն առաւ նորան և Սաւուղի
առջևը տարաւ, և փղշտացու
գլուխը նորա ձեռքին էր։ Եւ 58
Սաւուղն ասաց նորան. Ո՞ւմ որ-
դին ես դու, պատանի։ Եւ Դա-
ւիթն ասաց. Քո ծառայ Բեթլե-
հեմցի Յեսսէի տղան եմ։

ԳԼ. ԺԸ

Եւ երբոր Սաւուղի հետ խօսեց 1
և վերջացրեց, Յովնաթանի սիրտը
կապուեցաւ Դաւթի սրտի հետ.
և Յովնաթանը նորան իր անձի
պէս սիրեց։ Եւ նոյն օրը Սաւու- 2
ղը նորան առաւ, և թող չտը-
ուաւ նորան դառնայ իր հօր տունը։
Եւ Յովնաթանը և Դաւիթ ուխտ 3
արին, վասն զի իր անձի պէս սի-
րում էր նորան։ Եւ Յովնաթանն 4
իր վերարկուն հանեց, և այն ու
իր հանդերձները մինչև իր սուրը,
իր աղեղն և գօտին Դաւթին տը-
ուաւ։ Եւ Դաւիթը գնում էր 5
ամեն տեղ, ուր որ Սաւուղը նո-
րան ուղարկէր. և խելամտու-
թեամբ էր վարվում. և Սաւուղը
նորան պատերազմականմարդկանց
վերայ դրաւ, և բոլոր ժողովրդին
ու Սաւուղի ծառաներին էլ հա-
ճոյ եղաւ։

Եւ երբոր նորանք գալիս էին 6
Դաւիթը փղշտացուն մեռցնե-
լուց ետ էր դառնում Իսրայէլի
բոլոր քաղաքներից կանայք դուրս
եկան երգելով և պար բռնելով
Սաւուղ թագաւորին դիմաւորե-
լու թմբուկներով, ուրախու-
թեամբ և ձնծղաներով։ Եւ պար 7
բռնող կանայքը պատասխան ա-
րելով երգում էին և ասում.
Սաւուղն իր հազարաւորներին
զարկեց,

և Դաւիթն իր բնութեանն։
8 Եւ Սաւուղ շատ բարկացաւ, և
այս խօսքի համար դժուարեցաւ,
և ասաց. Ընութեանները Դա-
թին տուին և ինձ տուին հազա-
րաւորները. և հիմա միայն թագաւորու-
9 թիւնը։ Եւ այն օրից ի վեր Սա-
ւուղը ծուռ աչքով էր նայում
Դաւթին։
10 Եւ հետևեալ օրը Սաւուղի վե-
րայ Աստուածմէից չար ոգի ե-
կաւ, և տան մէջ մարգարէու-
թիւն արաւ և Դաւիթն ուրիշ
ժամերուկներին պէս իր ձեռքով
նուագ էր ածում. և Սաւուղի ձեռ-
11 քին էր նիզակը։ Եւ Սաւուղը
նիզակը շպրտեց՝ ասելով. Դա-
թին զարկում պատին չետեմ.
բայց Դաւիթը նորա երեսից եր-
12 կու անգամ խոյս տուաւ։ Եւ
Սաւուղը Դաւթի երեսից վա-
խենում էր, վասն զի Տէրը նորա
հետ էր. բայց Սաւուղից հե-
13 ռացել էր։ Եւ Սաւուղը նորան
իր մօտից հեռացրեց, և նորան
հազարապետ արաւ. և նա ժո-
ղովրդի առջև դուրս էր գալիս և
14 մտնում էր։ Եւ Դաւիթն իր ա-
մեն ճանապարհների մէջ իմաս-
տութեամբ էր վարվում. և Տէրը
15 նորա հետ էր։ Եւ երբոր Սաւու-
ղը տեսաւ, որ նա իմաստու-
թեամբ է վարվում, նորա երե-
16 սից վախենում էր։ Եւ բոլոր Իս-
րայէլն ու Յուդան Դաւթին սի-
րում էին, վասն զի նորանից առ-
ջև նա էր դուրս գալիս մտնողը։
17 Եւ Սաւուղը Դաւթին ասաց.
Ահա իմ մեծ աղջիկ Մերովբը
քեզ կին կ'առամ. միայն թէ դու
ինձ համար զօրաւոր եղիր, և Տի-
րոջ պատերազմները պատերազ-
միր, վասն զի Սաւուղն ասաց. Իմ
ձեռքը նորա վերայ չլինի, այլ
Փղշտացոց ձեռքը նորա վերայ
18 լինի։ Եւ Դաւիթը Սաւուղին ա-
սաց. Ես ո՞վ եմ, և ինչ է իմ
կեանքը՝ իմ հօր ազգատոհմը Իս-
րայէլի մէջ, որ թագաւորին փե-
19 սայ դառնամ։ Եւ եղաւ երբոր
Սաւուղի աղջիկ Մերովբը պիտի
Դաւթին տրուէր՝ Մաուղացի Եդ-
րիելին կին տրուեցաւ։
20 Եւ Սաւուղի Մեղքոզ աղջիկը
սիրում էր Դաւթին. և երբոր
Սաւուղին իմացրին, այս բանը
նորա աչքերին հաճոյ երևեցաւ։
21 Եւ Սաւուղն ասաց. Ես նա նո-
րան տամ՝ որ նորա համար որո-
գայթ դառնայ, և Փղշտացոց
ձեռքը նորա վերայ լինի։ Եւ Սա-
ւուղը Դաւթին ասաց. Ինձ այս
օր երկրորդ փեսայ եղիր։ Եւ 22
Սաւուղն իր ծառաներին հրամա-
յեց, որ Դաւթին հետ ծածկա-
բար խօսեն և ասեն. Ահա թա-
գաւորը քեզ հաւանել է, ու
նորա բոլոր ծառաները քեզ սի-
րում են. և հիմա թագաւորին
փեսայ եղիր։ Եւ Սաւուղի ծա- 23
ռաները այս խօսքերը Դաւթի ա-
կանջներին ասացին, և Դաւիթն
ասաց. Թագաւորին փեսայ դա-
նալը ձեր աչքին փո՞քր բան է ե-
րևում. վասն զի ես մի աղքատ
և աննշան մարդ եմ։ Եւ Սաւու- 24
ղի ծառաները նորան իմացրին և
ասացին. Դաւիթն այսպէս խո-
սեց. Եւ Սաւուղն ասաց. Դա- 25
թին այսպէս ասացէք. Թագա-
ւորը չէ ուզում, բայց
միայն Փղշտացիների հարիւր ան-
թլփատութիւն, որպէս զի թա-
գաւորի թշնամիներից վրէժ առ-
նուի. (բայց Սաւուղը խորհում
էր Դաւթին Փղշտացոց ձեռքով
սպանել տալ։) Եւ երբոր նո- 26
րա ծառաները այս խօսքերը
Դաւթին իմացրին, այս բանը
Դաւթի աչքերին լաւ երևեցաւ,
որ թագաւորին փեսայ դառնայ։
Եւ օրերը չէին լրացել, Եւ Դա- 27
ւիթը վեր կացաւ և իր մարդկանց
հետ գնաց. և Փղշտացիներից եր-
կու հարիւր մարդ սպանեց. և
Դաւիթը նորանց անթլփատու-
թիւնները բերաւ, և լրիւ թա-
գաւորին տուին, որ թագաւորին
փեսայ դառնայ։ Եւ Սաւուղն իր
աղջիկ Մեղքոզը կնիկ տուաւ նո-
րան։ Եւ Սաւուղը երբոր տեսաւ 28
և հասկացաւ, որ Տէրը Դաւթի
հետ է, և Սաւուղի Մեղքոզ
աղջիկը նորան սիրում է, Սաւու- 29
ղն առաւել ևս վախեց Դա-

թից, և Սաուղը միշտ Դաւթին
30 թշնամութիւն էր անում։ Եւ
փղշտացոց իշխանները դուրս էին
գալիս պատերազմի. երբոր նո-
րանք դուրս էին գալիս, Դաւիթ
Սաուղի բոլոր ծառաներից ա-
ւելի էր խնամութեամբ վար-
ւում. և նորա անունը շատ հըռ-
չակուեցաւ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Սաուղն իր որդի Յովնա-
թանին և իր ամեն ծառաներին
ասաց, որ Դաւթին մեռցնեն։
2 Բայց Սաուղի որդի Յովնաթա-
նը Դաւթին շատ էր սիրում. և
Յովնաթանը Դաւթին իմացրեց և
ասաց. Իմ հայրս Սաուղը ու-
զում է քեզ մեռցնել. ուրեմն
հիմա մինչև առաւօտ զգոյշ կե-
նաս, և մեկ ծածուկ տեղ նըս-
3 տիր և թաք կաց. Եւ ես դուրս
կ'գամ և իմ հօր մօտ կ'կանգ-
նեմ այն դաշտումը ուր որ դու
կ'լինիս, և քեզ համար իմ հօր
հետ կ'խօսեմ, և ինչ որ իմա-
4 նամ՝ քեզ կ'պատմեմ։ Եւ Յով-
նաթանը Դաւթի մասին լաւ խօ-
սեց իր հայր՝ Սաուղի հետ, և
նորան ասաց. Թող թագաւորը՝
իր ծառայ Դաւթի դէմ մեղք
չգործէ. վասնզի նա քեզ դէմ
մեղք չէ արել. և նորա գործքե-
րը քեզ համար շատ լաւ են։
5 Քանզի նա իր հոգին իր
ձեռքի մէջ դրաւ, և Փղշտացուն
զարկեց. և Տէրը բոլոր Իսրայէ-
լին մեծ փրկութիւն շնորհեց. դու
տեսար և ուրախացար, և ինչո՞ւ
համար անմեղ արիւնով մեղան-
չես՝ Դաւթը առանց պատճառի
6 մեռցնելով։ Եւ Սաուղը Յովնա-
թանի խօսքին լսեց, և Սաուղն
երդում արաւ՝ թէ Տէրը կենդա-
նի է որ նա պիտի չմեռցուի։
7 Եւ Յովնաթանը Դաւթին կանչ-
եց. և Յովնաթանը պատմեց նո-
րան այս բոլոր խօսքերը. և Յով-
նաթանը Դաւթին տարաւ Սա-
ուղի մօտ, և նա լինում էր նո-
րա առջև ինչպես երէկ և միւս
օրը։

Եւ դարձեալ պատերազմ է-
8 ղաւ. և Դաւիթը դուրս եկաւ
փղշտացոց հետ պատերազմ ա-
րաւ, և նորանց մէջ մեկ մեծ
կոտորած արաւ. և նորանք նորա
9 առջևից փախան։ Եւ Տէրից չար
ոգի եկաւ Սաուղի վերայ, և նա
իր տանը նստած էր, և նիզակը
ձեռքին. Դաւիթ էլ իր ձեռքո-
վը ածում էր փողը։ Եւ Սաուղն
10 ուզեց որ Դաւթին նիզակով զար-
կէ պատին բևեռէ. բայց նա Սա-
ուղի երեսից իրան շուռ տուաւ,
և նիզակը պատին զարկեց. և
Դաւիթը փախաւ և այն գիշերը
պրծաւ։ Բայց Սաուղը Դաւթի
11 տունը մարդիկ ուղարկեց, որ նո-
րան պահարան, և առաւօտ
մեռցնեն։ Սակայն Դաւթի կինը
Մեղքոլը նորան իմացրեց և ա-
սաց. Եթէ այս գիշեր քո անձը
չապրեցնես, էգուց քեզ պիտի
մեռցնեն։ Եւ Մեղքոլը Դաւթին
12 պատուհանից վայր իջեցրեց. և
նա գնաց՝ փախաւ և պրծաւ։ Եւ
13 Մեղքոլը մէկ արձան առաւ, և
նորան անկողնի մէջ դրաւ, և
նորա գլխի տակ այծի մազի բարձ
դրաւ, և նորան ծածկոցով ծած-
կեց։ Եւ երբոր Սաուղը մարդիկ
14 ուղարկեց Դաւթին բռնելու հա-
մար, նա ասաց. Հիւանդ է։ Եւ
15 Սաուղը մարդիկ ուղարկեց Դա-
թին տեսնելու համար, և ասաց.
Նորան անկողնովը ինձ մօտ բե-
րէք, որ մեռցնեմ։ Եւ այն մար-
16 դիկը եկան. և ահա անկողնի
մէջ մէկ արձան կար. և գլխի
տակ այծի մազի բարձ։ Եւ Սա-
17 ուղը Մեղքոլին ասաց. Ինչո՞ւ
համար այսպէս խաբեցիր ինձ, և
իմ թշնամուն թող թողիր, և նա
պրծաւ։ Եւ Մեղքոլը Սաուղին
ասաց. Նա ինձ ասաց. Ինձ թող
թող, ինչո՞ւ համար քեզ մեռ-
ցնեմ։

Այսպէս փախաւ Դաւիթը և 18
պրծաւ, և գնաց Ռամա Սամուէ-
լի մօտ, և նորան պատմեց այն
ամենը որ Սաուղն իրան արել
էր։ Յետոյ նա Սամուէլի հետ գը-
նաց, և Նայաթի մէջ բնակե-
ցան։ Եւ Սաուղին իմացրին և 19

ասացին . Ահա Դաւթը Ռամա-
20 յի Նաւաթուումն է : Այն ժամա-
նակ Սաուղը մարդիկ ուղարկեց
որ Դաւթին բռնեն , և երբոր նո-
րանք տեսան մարգարէութիւն ա-
նող մարգարէների ժողովքը՝ և
նորանց վերակացու Սամուէլին
կանգնած , Աստուծոյ Հոգին Սա-
ուղի ուղարկած մարդկանց վե-
րայ եկաւ , և նորանք էլ մար-
21 գարէութիւն արին : Եւ երբոր
Սաուղին լսացրին , ուրիշ մար-
դիկ ուղարկեց և նորանք էլ մար-
գարէութիւն արին : Եւ Սաուղ
ը երրորդ անգամ մարդիկ ու-
ղարկեց , և նորանք էլ մարգա-
22 րէութիւն արին : Այն ժամանակ
ինքն էլ գնաց Ռամա , և մինչև
Սոկքովի մեծ ջրհորը գալը , հար-
ցրեց և ասաց . Ո՞ւր են Սամուէլն
ու Դաւիթը . Եւ ասացին . Ահա
նորանք Ռամայի Նաւաթուումն են :
23 Գնաց և Ռամայի Նաւաթը . և
նորա վերայ էլ եկաւ Աստուծոյ
Հոգին , և մինչև Ռամայի Նա-
ւաթը հասնելը գնալով՝ մարգա-
24 րէութիւն էր անում : Եւ նա էլ
իր հանդերձները հանեց , և Սա-
մուէլի առջև էլ մարգարէու-
թիւն էր անում . և այն բոլոր օ-
րը և բոլոր գիշերը մերկ վայր ըն-
կաւ գետինը . նորա համար ասում
են թէ՝ Սաուղն էլ է մարգա-
րէների մէջ :

ԳԼ. Ի

1 Եւ Դաւիթը Ռամայի Նաւաթից
փախաւ , ու գնաց Յովնաթանի
առջև ասաց . Ես ի՞նչ եմ արել ,
ի՞նչ է իմ յանցանքը , և ի՞նչ
մեղք եմ գործել քո հօր առջև ,
որ նա ինձ ուզում է մեռցնել :
2 Եւ Յովնաթանն ասաց նորան .
Հաւ լինի , դու պիտի չմեռնես .
ահա իմ հայրը մեծ կամ փոքր
մի բան չէ անում առանց ինձ
յայտնելու . և իմ հայրն ինչո՞ւ
համար պիտի ծածկէ այդ բանը
ինձանից . այդպիսի բան չկայ :
3 Եւ Դաւիթն երդում էլ արաւ
և ասաց . Քո հայրը լաւ գիտէ ,
որ ես քո առջև շնորհք եմ գը-
տել . նորա համար ասում է թէ
Յովնաթանն այս բանը չգիտենայ ,
մի գուցէ վշտանայ . բայց կենդա-
նի է Տէրն ու կենդանի է քո ան-
ձը , որ իմ ու մահուան մէջտեղը
միայն մէկ քայլ կայ : Եւ Յովնա- 4
թանն ասաց Դաւթին . Ինչ որ
քո սիրտն ինչ ասէ , ես քեզ կ'ա-
նեմ : Եւ Դաւիթն ասաց Յովնա- 5
թանին . Ահա էգուց ամսագլուխ
է . և պէտք է որ ես նստէի թա-
գաւորի հետ կերակուր ուտելու ,
սակայն ինձ թող տուր որ մինչև
երրորդ օրուան իրիկունը դաշտի
մէջ թաք կենամ . Եթէ հայրդ 6
քիս որոնելու լինի , ասես որ՝ Դա-
ւիթն ինձ շատ ազուչից որ շուտ-
պէ իր քաղաքը Բեթղեհէմ , վասն
զի այնտեղ բոլոր ազգատոհմի
տարեկան զոհն է : Եթէ այսպէս 7
ասէ . Լաւ , այն ժամանակ քո
ծառային համար խաղաղութիւն
է , բայց եթէ բարկանայ , գիտաց-
իր որ որոշուած է այդ չարու-
թիւնը նորանից : Եւ ծառայիդ 8
ողորմութիւն արա , վասն զի դու
քո ծառային քեզ հետ Տիրոջ
ուխտը մտցրիր , և եթէ ինձ վե-
րայ մէկ յանցանք կայ . դու մեռց-
րու ինձ , և ինչու համար ինձ քո
հօրը տանես : Եւ Յովնաթանն 9
ասաց . Քու լինի որ ես գիտե-
նալով թէ իմ հօր կողմանէ քեզ
համար չարիք է որոշուած , և
այն քեզ չիմացնեմ : Եւ Դաւիթն 10
ասաց Յովնաթանին . Ո՞վ կ'ի-
մացնէ ինձ , եթէ քո հայրը քեզ
խառնութեամբ պատասխանէ : Եւ 11
Յովնաթանն ասաց Դաւթին . Եկ
դուրս գնանք դաշտը . և երկուսն
էլ գնացին դաշտը :

Եւ Յովնաթանն ասաց Դա- 12
ւթին . Վկայ է Իսրայէլի Տէր Աս-
ուածը . որ այս ժամանակ էգուց՝
միւս օր իմ հօրը քննելով տես-
նեմ թէ Դաւթի համար լաւ է ,
և նոյն ժամանակ մարդ չուղար-
կեմ և քեզ չյայտնեմ , Տէրը 13
Յովնաթանին այսպէս և սորանից
աւելի անէ . բայց եթէ իմ հայ-
րը քեզ չարութիւն անել ուզէ ,
քեզ կ'յայտնեմ , և քեզ կ'արձա-
կեմ , որ խաղաղութեամբ գը-

նաս, և Տէրը քեզ հետ լինի,
14 ինչպէս որ իմ հօր հետ էր. Եւ
ոչ միայն դեռ իմ կենդանու-
թեան ժամանակին դու ինձ Տի-
րոջ ողորմութիւնը արես, դեռ
15 ես չմեռած, Մանաւանդ քո ո-
ղորմութիւնը իմ տանիցը չկըտ-
րես յաւիտեան, ոչ էլ այն ժա-
մանակ երբոր Տէրը Դաւթի բոլոր
թշնամիներին երկրիս վերայից
16 ջնջէ: Եւ Յովնաթանը Դաւթի
տանը հետ դաշնակցութիւն ա-
րաւ և ասաց. Տէրը Դաւթի թըշ-
17 նամիներիցը վրէժ առնէ: Եւ Յով-
նաթանը Դաւթին կրկին երդում
անել տուաւ նորան սիրելու հա-
մար, վասն զի նորան սիրում էր
18 իր անձի պէս: Եւ Յովնաթանը
նորան ասաց. Էգուց ամսագլուխ
է, և քեզ պիտի որոնեն, վասն
զի քո տեղը դատարկ պիտի մը-
19 նայ: Եւ երրորդ օրը շուտով
իջնես, և գաս այնտեղը՝ ուր որ
գործի օրը թաք կացար, և ե-
20 զելի քարի մօտ նստես: Եւ ես
նորա մօտ երեք նետ կ'գցեմ նը-
21 շան զգելու պէս: Եւ ահա տղան
կ'ուղարկեմ՝ ասելով. Գնա նետե-
րը գտիր. և եթէ տղան ասեմ.
Ահա նետերը քեզանից այս կող-
մին են, նորանց վեր առ, այն
ժամանակ գաս, վասն զի քեզ
համար խաղաղութիւն է, և մի
22 բան չկայ Տէրը կենդանի է. Բայց
եթէ տղան այսպէս ասեմ. Ահա
նետերը քեզանից այն կողմին են,
այն ժամանակ գնաս, վասն զի Տէրն
23 է քեզ ուղարկում: Եւ այս խօս-
քի համար որ ես ու դու խոսե-
ցենք՝ ահա Տէրը իմ և քո մէջն
յաւիտեան:
24 Եւ Դաւթը դաշտումը թաք
կացաւ. և երբոր եղաւ ամսա-
գլուխը՝ թագաւորը հացի նստաց
25 կերակուր ուտելու: Եւ թագա-
ւորը իր սովորութեան պէս իր
աթոռի վերայ պատի աթոռի վե-
րայ նստաց. և Յովնաթանը կանգ-
նեց, և Աբեններըը նստել էր Սա-
ւուղի մօտ և Դաւթի տեղը դատ-
26 արկ էր: Եւ Սաւուղն այն օրը
մի բան չխօսեց, վասն զի ասաց.
Նորան մի բան է պատահել. նա
մաքուր չէ, անտարակոյս մա-
քուր չէ: Եւ հետևեալ օրը՝ ամ- 27
սի երկուսին էլ Դաւթի տեղը
դատարկ էր. և Սաւուղն իր որ-
դի Յովնաթանին ասաց. Յեսսէի
որդին ինչո՞ւ համար երէկ ու այս-
օր հացի չեկաւ: Եւ Յովնաթանը 28
Սաւուղին պատասխանեց. Դա-
ւիթն ինձանից հրաման խընդ-
րեց՝ որ Բեթլեհէմ գնայ, Եւ ա- 29
սաց. Աղաչում եմ՝ ինձ արձա-
կիր, վասն զի այն քաղաքումը
մեր ազգատոհմը զոհ ունի. և
իմ եղբայրն ինձ պատուիրել է,
և եթէ հիմա քո աչքերի առջև
շնորհք եմ գտել, աղաչում եմ՝
ինձ թող տուր գնամ և եղբայր-
ներիս տեսնեմ. այս պատճառաւ
թագաւորի սեղանին չեկաւ: Եւ 30
Սաւուղի բարկութիւնը բորբոքեց
Յովնաթանի դէմ, և նորան ա-
սաց. Ով ապստամբ և չար հո-
զաւոր, միթէ ես չգիտեմ որ
դու Յեսսէի որդուն ընտրել ես քո
ամօթի և քո մօր ամօթի և խայ-
տառակութեան համար. Վասն 31
զի քանի որ Յեսսէի որդին երկ-
րիս վերայ ողջ է, դու չես հաս-
տատուիլ, ոչ էլ քո թագաւո-
րութիւնը. և հիմա խրկ ուղար-
կիր և նորան ինձ մօտ բեր, վասն
զի նա մահապարտ է: Եւ Յովնա- 32
թանն իր հօրը՝ Սաւուղին պա-
տասխանեց և ասաց. Ինչո՞ւ հա-
մար պիտի մեռցնուի, ի՞նչ է ա-
րել: Եւ Սաւուղը նիզակը շպրտ- 33
եց նորա վերայ, որ նորան զար-
կէ. այն ժամանակ Յովնաթանն
իմացաւ որ իր հայրը որոշել է
Դաւթին մեռցնել: Եւ Յովնա- 34
թանը սեղանիցը վեր կացաւ բար-
կութիւնը բորբոքած, և ամիս
երկրորդ օրը կերակուր չկերաւ,
վասն զի Դաւթի համար տխրեց,
որովհետև իր հայրը նորան անար-
դեց:

Եւ երբոր առաւօտ եղաւ Յով- 35
նաթան դուրս եկաւ դաշտը,
Դաւթին հետ որոշած ժամանա-
կին, և իր հետ մի փոքր տղայ
կար: Եւ իր տղան ասաց. Վա- 36
զիր դատիր այս նետերը որ ես գը-
ցում եմ. և երբոր տղան վա-

զուամ էր, նա նետը նորանից այն
37 կողմը գցեց։ Եւ երբոր այն տղան
Յովնաթանի գցած նետի տեղը
գնաց, Յովնաթանը այն տղու
ետևից կանչեց և ասաց. Ա՛հա
38 նետը քեզանից այն կողմն է։ Եւ
Յովնաթանը այն տղու ետևից
կանչեց. Շուտ արա, շուտպիր,
մի կանգնիր։ Եւ Յովնաթանի
տղան նետերը ժողովեց, և եկաւ
39 իր տիրոջ մօտ։ Բայց տղան մի
բան չգիտէր. միայն Յովնաթանն
ու Դաւիթն էին գիտում այս
40 բանը։ Եւ Յովնաթանն իր զէն-
ձկքները իր տղուն տուաւ և նո-
րան ասաց. Գնա՛ քաղաքը տար։
41 Եւ տղան գնաց և Դաւիթը հա-
րաւային կողմից դուրս եկաւ, և
գետնին ընկաւ երեսի վերայ և
երեք անգամ երկրպագութիւն
արաւ, և իրար համբուրեցին,
ու իրար վերայ լացին մինչև որ
42 Դաւիթը շատ լացաւ։ Եւ Յով-
նաթանը Դաւթին ասաց. Գնա
խաղաղութեամբ, ինչպէս որ
մենք երկուսս Տիրոջ անունով
երդում արինք և ասացինք. Տէրը
իմ ու քո մէջ և իմ սերունդի
ու քո սերունդի մէջ վա՛յ լինի
43 մինչև յաւիտեան։ Եւ Դաւիթը
վեր կացաւ գնաց, Յովնաթանն
էլ գնաց քաղաքը։

ԳԴ. ԻԱ

1 Եւ Դաւիթը գնաց Նոբ Ախի-
մելէք քահանայի մօտ. և Ախի-
մելէքը զարհուրելով Դաւթին
դիմաւորեց, և նորան ասաց. Ին-
չո՞ւ համար մենակ ես և հետդ
2 մարդ չկայ։ Եւ Դաւիթն Ախի-
մելէք քահանային ասաց. Թա-
գաւորը ինձ մի բան է հրամայել
և ինձ ասել. Ոչ մի մարդ չգի-
տենայ այն բանը որի համար
քեզ ուղարկում եմ, և որ քեզ
հրամայեցի. և ես երիտասարդնե-
րին այս ինչ տեղն եմ որոշել։
3 Հիմա ի՞նչ կայ ձեռքիդ տակ,
ինձ հինգ հաց տուր, կամ ինչ
4 որ կ'գտնուի։ Եւ քահանան Դաւ-
թին պատասխանեց և ասաց.
Ձեռքիս տակ հասարակ հաց չը
կայ, միայն սուրբ հաց կայ. ե-
րիտասարդները գոնէ կանանցից
զգուշացել են երէկ-օրէն։ Եւ 5
Դաւիթը քահանային պատաս-
խանեց և նորան ասաց. Կանայք
մեզանից հեռու են երէկուանից
և միւս օրից երբոր ես դուրս ե-
կայ. և երիտասարդների ամանե-
ները մաքուր են. և սա էլ հա-
սարակի պէս է, մանաւանդ որ
այսօր ամանների մէջ սրբագործ-
ւում է։ Եւ քահանան սուրբ 6
հացը տուաւ նորան. վասն զի այն-
տեղ ուրիշ հաց չկար, բայց մի-
այն առաջաւորութեան հացը,
որ Տիրոջ առջևից վեր էին առ-
նել, և վեր առուած օրը տաք
հաց էր դրւում։ Եւ այն օրը Սա- 7
ուղի ծառաներից մէկը այնտեղ
Տիրոջ առջև արգիլուած էր, և
նորա անունը Եդոմացի Դոէկ
էր. նա Սաուղի հովիւների գլու-
խաւորն էր։ Եւ Դաւիթն Ախի- 8
մելէքին ասաց. Այստեղ ձեռ-
քիդ տակ նիզակ կամ սուր չկա՞յ,
վասն զի սուրս ու զէնքերս հետս
չառի, որովհետև թագաւորի
գործը ստիպողական էր։ Եւ քա- 9
հանան ասաց. Ա՛հա փղշտացի
Գողիաթի սուրը՝ որ նորան Էլայի
հովտումը մեռցրիր, այ՛ն նա է-
փուդի ետև մի հագուստում փա-
թաթուած է. եթէ նորան կ'առ-
նես՝ առ, վասն զի այստեղ նո-
րանից ուրիշը չկայ. և Դաւիթն
ասաց. Նորա նմանը չկայ. նո-
րան ինձ տուր։

Եւ այն օրը Դաւիթը վեր կա- 10
ցաւ և Սաուղի երեսից փախաւ,
գնաց Գեթի Անքուս թագաւորի
մօտ։ Եւ Անքուսի ծառաները նո- 11
րան ասացին. Չէ՞ որ սա է երկրի
թագաւորը՝ Դաւիթը, որա հա-
մար չէ՞ր որ պար բանաստները պա-
տասխանելով երգում էին և ա-
սում.

Սաուղն իր հազարաւորներին
զարկեց,
Եւ Դաւիթն իր բիւրաւորներին։

Եւ Դաւիթն այս խօսքերը դրաւ 12
իր սրտի մէջ, և Գեթի թագա-
որի Անքուսի երեսից շատ վա-
խեց։ Եւ նորանց առջև իր կեր- 13

պարանքը փախեց՝ նորանց ձեռքի տակ իրան խելապար ձևացրեց. դռների փեղկերի վերայ նշաններ էր գծում, և լորձունքները ծորեցնում էր իր մօրուքի վերայ։
14 Եւ Աքիսան իր ծառաներին ասաց. Ահա տեսաք այս մարդուն որ խելապար է, նորան ինչո՞ւ
15 համար ինձ մօտ բերիք։ Մի՞թէ ես խելապարների կարօտ եմ. որ դորան բերիք իմ առջևը դիժութիւն անելու համար. դա իմ տո՞ւնս մտնէ.

ԳԼ. ԻԲ

1 Եւ Դաւիթն այնտեղից դնաց, և փախաւ Ոդողամի քարայրը հասաւ. և իր եղբայրները և իր հօր բոլոր տունը լսեցին, և այնտեղ
2 իջան նորա մօտ։ Եւ նորա մօտ հաւաքուեցան ամեն հարատահարեալ մարդիկ, պարտք ունեցող մարդիկ և ամեն սիրտը վիրաւորուած մարդիկ, և նա նորանց վերայ զօրապետ եղաւ, և նորա հետ չորս հարիւրի չափ մարդ եղան։
3 Եւ Դաւիթն այնտեղից գնաց Մովաբի Մասփան, և Մովաբի թագաւորին ասաց. Աղաչում եմ՝ թող իմ հայրն ու մայրը ձեզ մօտ գան, մինչև որ գիտենամ թէ Աստուած ինձ ինչ պի-
4 տի անէ։ Եւ նորանց Մովաբի թագաւորի առջևը բերել տուաւ, և նորանք նորա մօտ բնակեցին՝ որչափ ժամանակ որ Դաւիթը բերդումն էր։
5 Եւ Գադ մարգարէն Դաւթին ասաց. Բերդումը մի նստիր, և դուրս եկ գնա Յուդայի երկիրը։ Եւ Դաւիթը գնաց Հարեթի անտառը մտաւ։
6 Եւ Սաւուղը լսեց, որ Դաւիթը և նորա հետ եղող մարդիկը իմացուել են, և Սաւուղը Գաբաայի մէջ Ռամայի մեջի ծառի տակին նստել էր, և նիզակը իր ձեռքին, և իր ամեն ծառաներն
7 էլ իր մօտ կանգնել էին։ Եւ Սաւուղն ասաց իր մօտ կանգնող ծառաներին. Լսեցէք, ով որ-

դիք Բենիամինի, Յեսսէի որդին ձեր ամենքիդ էլ արտեր և այգիներ պիտի տայ, ամենքիդ էլ հազարապետներ ու հարիւրապետներ պիտի անէ, Որ ա- 8
մենքդ ինձ դէմ միաբանուել էք, և Յեսսէի որդու իմ որդու հետ արած դաշնակցութիւնը իմ առջևին ասող չկայ. և ձեր մէջ մարդ չկայ որ ինձ համար ցաւէ, և ինձ յայտնէ թէ իմ որդին իմ ծառային ինձ դէմ է վեր կացրել, որ դարանամուտ լինի, ինչպէս որ այսօր է։
Եւ Սաւուղի ծառաների վերա- 9
կացու Եդոմացի Դոէկը պատասխանեց և ասաց. Յեսսէի որդուն տեսայ, որ եկաւ Նոբ Աքիտովբի որդի Աքիմելէքի մօտ. Եւ նա նորա համար Տէրոջը հարցրեց, և նորան պաշար տուաւ, և փղշտացի Գողիաթի սուրը տուաւ նորան։ 10
Այն ժամանակ թագաւորը մարդ ուղարկեց, և Աքիտովբի որդի Աքիմելէք քահանային, և նորա հօր բոլոր տունը՝ Նոբի մէջ եղող քահանաներին կանչեց. և ամենքն էլ եկան թագաւորի մօտ։ Եւ Սաւուղն ասաց. Լսիր, 12
ով որդի Աքիտովբայ. և նա ասաց. Ահա ես, տէր իմ։ Եւ Սաւուղը նորան ասաց. Ինչո՞ւ համար ինձ դէմ միաբանուեցաք դու և Յեսսէի որդին, և դու նորան հաց ու սուր տուիր, և նորա համար Աստուծոյն հարցրիր, որ նա ինձ դէմ վեր կենայ դարանամուտ լինի, ինչպէս որ այսօր է։ Եւ Աքիմելէքը պատասխա- 14
նեց թագաւորին և ասաց. Քո բոլոր ծառաների մէջ ո՞վ կայ Դաւիթ պէս հաւատարիմ, որ թագաւորի փեսայ, հրամանքդ լսող. և քո տան մէջ պատուաւոր է։ Մի՞թէ այսօր եմ սկսել նորա 15
համար Աստուծոյն հարցնելու. քաւ լիցի. թագաւորը իր ծառայի վերայ իմ հօր բոլոր տան վերայ մի բան չդնէ, վասն զի ծառադ այս բոլոր բաներից մի պզտիկ կամ մեծ բան չգիտէր։
Եւ թագաւորն ասաց. Ով Աքի- 16

ելէք, անպատճառ պիտի մեռնես, և քո հօր բոլոր տունը:
17 Եւ թագաւորն իր մօտ կանգնող սուրհանդակներին ասաց. Ետ դարձէք և Տիրոջ քահանաներին մեռցրէք, քանզի նորանց ձեռքն էլ Դաւթի հետ է, որովհետև դիտէին նորա փախչելը՝ և ինձ չը յայտնեցին. բայց թագաւորի ծառաները չուզեցին իրանց ձեռքը ձգել Տիրոջ քահանաներին
18 զարկելու: Եւ թագաւորը Դոեկին ասաց. Դու դարձիր և քահանաներին զարկ: Եւ եդոմացի Դոեկն ետ դարձաւ և քահանաներին զարկեց, և այն օրը նա ութսունհինգ մարդ մեռցրեց, որ քթանի եփուդ էին հագնում: Եւ քահանաների Նոբ քաղաքը սուրի բերանով անցրեց,
19 մարդից մինչև կին, տղայից մինչև կաթնակեր մանուկը, և մինչև արջառը, էշը և ոչխարը սուրի բերանով անցրեց:
20 Եւ Աբիաթարէն Աբիմելէքի մէկ որդին՝ որի անունը Աբիաթար էր, ազատուեցաւ և փախաւ Դաւթի հետևից:
21 Եւ Աբիաթարը Դաւթին պատմեց թէ Սաւուղը Տիրոջ քահանաներին
22 մեռցրեց: Եւ Դաւիթն Աբիաթարին ասաց. Ես այն օրը գիտացի երբոր եդոմացի Դոեկը այնտեղ էր՝ թէ անպատճառ Սաւուղին պատմելու է. քո հօր տան բոլոր հոգիների յանցաւորը
23 ես եմ: Ինձ մօտ նստիր, մի վախենար. վասն զի իմ հոգին որոնողը քո հոգին էլ կ'որոնէ. բայց դու ապահով ես ինձ մօտ:

ԳԼ. ԻԳ

1 Եւ Դաւթին իմացրին ասելով. Ահա փղշտացիք կէիլայի հետ պատերազմ են անում, և կո-
2 լերը կողոպտում են: Եւ Դաւիթը Տիրոջը հարցրեց. Գնամ այս փղշտացիներին զարկե՞մ: Եւ Տէրը Դաւթին ասաց. Գնա փղշտացիներին զարկ և կէիլան ապա-
3 տիր: Եւ Դաւթի մարդիկը նորան ասացին. Ահա մենք այստեղ Յու-

դայի մէջ վախում ենք. էլ որչափ աւելի՝ եթէ կէիլա գնանք փղշտացոց գունդերի դէմ: Եւ 4
Դաւիթը դարձեալ Տիրոջը հարցրեց. և Տէրը նորան պատասխանեց և ասաց. Վեր կաց՝ կէիլա իջիր, վասն զի ես փղշտացիներին քո ձեռքը կ'տամ: Եւ Դաւիթն իր 5
մարդկանցով կէիլա գնաց և փղշտացոց հետ պատերազմ արաւ, և նորանց անասուններն առաւ, և նորանց մեծ հարուածով զարկեց. և Դաւիթը կէիլայի 6
բնակիչներին ազատեց: Եւ Աբիմելէքի որդի Աբիաթարը Դաւթի մօտ կէիլա փախչելիս՝ եփուդը ձեռքին իջաւ:

Եւ երբոր Սաւուղին իմացրին, 7
թէ Դաւիթը կէիլա է եկել, Սաւուղն ասաց. Աստուած նորան իմ՝ ձեռքն է մատնել, վասն զի մտել է դռներ և նիգեր ունեցող քաղաքի մէջ թաք կացել: Եւ Սաւուղը բոլոր ժողովրդին 8
պատերազմի հրաւիրեց, որ կէիլա իջնէ, և Դաւթին և նորա մարդկանցը պաշարէ: Իսկ Դաւիթ- 9
ին իմացաւ որ Սաւուղն իր համար չարութիւն է հնարում, և Աբիաթար քահանային ասաց. Եփուդը մօտեցրու: Եւ Դաւիթն 10
ասաց. Ով Եհովայ Իսրայէլի Աստուած, քո ծառան լսեց որ Սաւուղն ուզում է գալ կէիլայի վերայ, որ փչացնէ քաղաքը իմ պատճառովը. Արդե՞օք կէիլայի 11
բնակիչները ինձ նորա ձեռքը կը մատնեն, ծառայիդ լսածին պէս Սաւուղը կ'իջնէ՞. ով Եհովայ Իսրայէլի Աստուած, ազաչում եմ՝ ծառայիդ յայտնիր: Եւ Տէրն ա-
սաց. Կ'իջնէ: Եւ Դաւիթն ա- 12
սաց. Կէիլայի բնակիչները ինձ և իմ մարդկանցը Սաւուղի ձեռքը կ'մատնե՞ն: Եւ Տէրն ասաց. Կ'մատնեն: Եւ Դաւիթն ու նորա 13
մարդիկը վեր կացան վեց հարիւր մարդու չափ և դուրս եկան կէիլայից և գնացին ուր որ կարող էին գնալ. և երբոր Սաւուղին իմացրին, թէ Դաւիթը կէիլայից փախել է, գնալը ձգեց:
Եւ Դաւիթը բնակուեմ էր ա- 14

նապատի մէջ ամուր տեղեր. և նաեւ Զիփի անապատումը լեռան վերայ: եւ Սաուղն ամեն օր նորան որոնում էր, բայց Աստուած նորա ձեռքը չմատնեց նորան: եւ Դաւիթը տեսաւ որ Սաուղը դուրս է եկել իր անձը որոնելու. և Դաւիթը Զիփի անապատումը մի անտառի մէջ էր:

եւ Սաուղի որդի Յոնաթանը վեր կացաւ անտառը գնաց Դաւթի մօտ, և նորա ձեռքը Աստուծով զօրացրեց. եւ նորան ասաւ. Մի վախենար, քանզի իմ հօր Սաուղի ձեռքը քեզ պիտի չգտնէ, և դու Իսրայէլի վերայ թագաւոր պիտի լինիս, և ես քո երկրորդը կ'լինիմ, և այս բանը, իմ հայրը Սաուղն էլ գիտէ: եւ նորանք երկուսն էլ Տիրոջ առջև ուխտ արին. և Դաւիթը մնաց անտառի մէջ, բայց Յոնաթանը գնաց իր տունը:

եւ Զիփացիք վեր գնացին Գաբաա Սաուղի մօտ, և ասացին. Ահա Դաւիթը մեզ մօտ թաք է կացել անտառի մէջ պինդ տեղեր Եքեղա բլուրի վերայ Եսեմոնի հարաւային կողմումը: Հիմա, ով թագաւոր, քո անձի իջնելու բոլոր փափաքի պէս իջիր, և մեր բանն է նորան թագաւորի ձեռքը մատնելը: եւ Սաուղն ասաց. Օրհնեալ լինիք, որ ինձ ցաւակից եղաք: Երթեք գնացէք աւելի լաւ տուղեցէք, և իմացէք ու տեսէք այնտեղ ուր որ լինի նորա տաքը, և ով է նորան այնտեղ տեսել, վասն զի ինձ ասել են թէ՝ նա շատ խորամանկ է: Ուստի նայեցէք ու իմացէք նորա բոլոր թաք կենալու տեղերը, և տուղած ինձ մօտ գարձէք, որ ձեզ հետ գընամ. և եթէ նա այն երկրումն է, նորան Յուդայի բոլոր հազարաւորների մէջ պիտի որոնեմ: եւ նորանք վեր կացան և Սաուղի առջևից գնացին Զիփ, և Դաւիթն իր մարդկանցովը Մաոնի անապատումն էր դաշտի մէջ Եսիմոնի հարաւային կողմին: եւ Սաուղն իր մարդկանցովը գնաց որոնելու. և երբոր Դաւթին իմացրին, վայր իջաւ վէմը և նստեց Մաոնի անապատի մէջ, և Սաուղը լսեց, և Դաւթին հալածեց Մաոնի անապատումը: եւ Սաուղը լեռան այս կողմին էր գնում, և Դաւիթն էլ իր մարդկանցովը լեռան այն կողմին. և Դաւիթը շտապում էր Սաուղի երեսից փախչել. բայց Սաուղն ու իր մարդիկը Դաւթին ու նորա մարդկանցը չէին տեսնում, որ նորանց բռնեն: եւ մի լուր եկաւ Սաուղի մօտ և ասաց, Շուտով եկ, վասն զի Փղշտացիք երկրի վերայ յարձակուել են: եւ Սաուղը Դաւթին հալածելուց դարձաւ գնաց, որ Փղշտացոց դէմ գնայ. նորա համար այնտեղի տեղը *Սէլա-մահլէգօթ տուեցաւ:

ԳԼ. ԻԴ

եւ այնտեղից վեր եկաւ և Ենգադիի ամուր տեղերումը նստեց: եւ երբոր Սաուղը Փղշտացիներից ետ դարձաւ՝ նորան իմացրին և ասացին. Ահա Դաւիթը Ենգադիի անապատումն է: եւ Սաուղը բոլոր Իսրայէլից երեք հազար ընտիր մարդիկ առաւ, և գնաց, որ Դաւթին և նորա մարդկանցը որոնէ Այծեմանց ժայռերի վերայ: եւ եկաւ ճանապարհի վերայ եղող ոչխարների փարախները, և այնտեղ մէկ քարայր կար. և Սաուղը հարկաւորութեան համար ներս մտաւ. և Դաւիթն իր մարդկանցովը այն քարայրի ներսումը նստել էր: եւ Դաւթի մարդիկը նորան ասացին. Ահա այն օրն է, որի համար Տէրը քեզ ասել է. թէ Ահա, քո թշնամին քո ձեռքը կ'մատնեմ, և քո աչքերին հաճոյ երևեցածը արա նորան: եւ Դաւիթը վեր կացաւ և Սաուղի վերարկուի մի ծայրը ծածուկ կտրեց: եւ յետոյ Դաւթի սիրտը խղճաց, որ Սաուղի վերարկուի ծայրը կտրեց:

---

*Վէմ բաժանման

7 Եւ իր մարդկանց ասաց. Ասուած չանէ որ Տիրոջ օծեալին իմ տիրոջը այս բանը անեմ, որ իմ ձեռքը նորա վերայ մեկնեմ. վասն զի նա Տիրոջ օծեալն է։
8 Եւ Դաւիթն այս խօսքերով իր մարդկանցը զսպեց, և նորանց թող չտուաւ որ Սաւուղի վերայ յարձակուին։ Եւ Սաւուղը քարայրիցը դուրս եկաւ և իր ճանապարհը գնաց։
9 Եւ յետոյ Դաւիթը վեր կացաւ, և քարայրիցը դուրս եկաւ, և Սաւուղի ետևից կանչելով ասաց. Ով տէր՝ իմ թագաւոր։ Եւ երբոր Սաւուղն ետևն նայեց, Դաւիթն երեսի վերայ ծռելով խոնարհութիւն արաւ։ Եւ
10 Դաւիթն ասաց Սաւուղին. Ինչո՞ւ համար մարդկանց խօսքերին ականջ ես դնում, որ ասում են թէ Ահա Դաւիթը քո չարութիւն
11 է որոնում։ Ահա այսօր քո աչքերը տեսնում են, որ Տէրը այսօր քարայրի մէջ քեզ իմ ձեռքն մատնեց. և ասացին որ քեզ մեռցնեմ, բայց ես քեզ խնայեցի, և ասացի. Ես իմ ձեռքը դէպի իմ տիրոջը չեմ մեկնել, վասն զի նա Տիրոջ օծեալն
12 է։ Եւ տես, Հայր իմ, տես, քո վերարկուի ծայրը իմ ձեռքին է. և ես քո վերարկուի ծայրը կտրելով՝ քեզ չմեռցրի. Գտակաց և տես, որ իմ ձեռքին չարութիւն և անօրէնութիւն չկայ, և քեզ դէմ մի յանցանք չեմ արել, բայց դու որոնում ես իմ անձը
13 մեռցնելու։ Տէրը դատաւոր լինի իմ ու քո մէջ, և Տէրը իմ վրէժը քեզանից առնէ. բայց իմ
14 ձեռքը քեզ վերայ չի լինիլ։ Ինչպէս որ վաղեմի առակն ասում է. Անօրէններիցը դուրս կ'գայ անօրէնութիւն, բայց իմ ձեռքը քեզ
15 վերայ չի լինիլ։ Իսրայէլի թագաւորը, որի՞ ետևից է դուրս եկել, և դու որի՞ ետևից ես հալածում. մի մեռած շա՞ն ետևից, մի լու՞ ետևից։
16 Եւ Տէրը դատաւոր լինի, և իմ ու քո մէջ դատաստան առնէ. և տեսնէ ու իմ դատը վարէ, և ինձ քո ձեռքից ազատէ։

17 Եւ երբոր Դաւիթը վերջացրեց այս խօսքերը Սաւուղին ասելը, Սաւուղն ասաց. Սա քո ձա՞յնն է, որդեակ իմ Դաւիթ. և Սաւուղն իր ձայնը բարձրացրեց և լացաւ. Եւ Դաւիթին ասաց. Դու
18 ինձանից արդար ես, վասն զի դու ինձ բարիք հատուցիր, բայց ես քեզ չարիք հատուցի։ Եւ
19 դու այսօր քո ինձ արած բարութիւնը յայտնեցիր, որ Տէրը ինձ քո ձեռքը էր մատնել, բայց դու ինձ չմեռցրիր։ Վասն զի երբ մէկ
20 մարդ իր թշնամուն գտնելու լինի՝ թող կ'տա՞յ որ նա խաղաղութեամբ գնայ, և այսօր քո ինձ արածի փոխարէնը Տէրը քեզ
21 բարիք հատուցանէ։ Եւ հիմա ես հա գիտեմ որ դու անշուշտ թագաւոր պիտի դառնաս, և Իսրայէլի թագաւորութիւնը քո ձեռքումը պիտի հաստատուի։ Եւ
22 հիմա Տէրովն ինձ երդում արա թէ ինձանից յետոյ իմ սերունդը չես մեռցնիլ, և իմ հօր տնից իմ անունը բնաջինջ չես անիլ։ Եւ
23 Դաւիթը Սաւուղին երդում արաւ։ Եւ Սաւուղը գնաց իր տունը, և Դաւիթն իր մարդկանցովը վեր ելաւ պինդ տեղը։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Սամուէլը մեռաւ, և բոլոր Իսրայէլը ժողովուեցան և նորա համար սուգ արին, և նորան թաղեցին իր տունը Ռամայի մէջ։ Եւ Դաւիթը վեր կացաւ և փառանի անապատը։

2 Եւ Մաոնի մէջ մի մարդ կար, և նորա գործը Կարմէղոսի մէջ էր. և նա շատ մեծ մարդ էր, և երեք հազար ոչխար և հազար այծ ունէր, և իր ոչխարները ատրաշտաւր անելու համար Կարմէղոսի մէջ էր լինում։ Եւ այն
3 մարդու անունը Նաբաղ էր, և նորա կնոջ անունը Աբիգեա. և այն կինը խոհեմամիտ և գեղեցկադէմ էր, բայց մարդը խստաբարոյ և չարագործ էր, և նա Քաղեբեան էր։

4 Եւ Դաւիթը լսեց անապատի

մէջ որ Ներսէ իր աչխարհները
3 խուզուեմ է։ Եւ Դաւիթ առաք
երիտասարդ ուղարկեց, և Դա-
ւիթն այն երիտասարդներին ա-
սաց. Վեր ելէք Կարմէղոս և
Ներսէի մօտ գնացէք, և իմ
անունովը նորա ողջոյնները հար-
6 ցրէք։ Եւ այսպէս ասէք. Ողջ
կաց. քեզ և քո տանը և քո բո-
լոր առացուածքին խաղաղութիւն
7 լինի։ Եւ հիմա լսել եմ, որ
աչխարհիդ խուզուեմ ես. հի-
մա քո հօտերը մեզ հետ էին,
նորանց միտս չենք առել, և ո-
րանց մէկ բանը չէ պակասել ո-
չափ ժամանակ որ մնացել են
8 Կարմէղոսումը։ Քո պատանիներ-
բին հարցրու, և քեզ ա-
սեն. և այս երիտասարդները թող
քո աչքերի առջև շնորհք գըտ-
նեն, վասն զի բարի օր եկանք.
շնորհք արա՛ քո ծառաներին և
քո որդի Դաւթին ձեռքիդ ե-
9 կածը տուր։ Եւ Դաւթի երիտա-
սարդները գնացին, և այս բոլոր
խօսքերը Դաւթի անունովը Ներսէի հետ
10 և կանգնեցին։ Եւ Ներսէ Դա-
ւթի ծառաներին պատասխանեց և
ասաց. Դաւիթ ո՞վ է, և Յեսա-
էի որդին ո՞վ է. այս օրերը ի-
րանց տէրերի երեսից փախչող
11 ծառաները շատացել են։ Ես իմ
հացը, իմ ջուրը և խուզողներիս
համար մորթած անասուններս
առնեմ՝ և այն մարդկանց տա՞մ,
12 որ չգիտեմ թէ որտեղից են։ Եւ
Դաւթի երիտասարդները իրանց
ճանապարհը դարձան, և գնացին
այս բոլոր խօսքերը նորան պատ-
13 մեցին։ Եւ Դաւիթն իր մարդ-
կանցն ասաց. Ամեն մարդ իր
սուրը մէջքը կապէ. և ամեն
մարդ իր սուրը մէջքը կապեց,
և Դաւիթն էլ իր սուրը մէջքը
կապեց. և Դաւթի հետից չորս
հարիւրի չափ մարդ դուրս եկաւ.
և երկու հարիւր մարդ մնացին
կապրանների մօտ։
14 Եւ ծառաներից մէկը Նաբալի
կնոջ Աբիգեային իմացրեց և ա-
սաց. Ահա Դաւիթն անապատից
մարդիկ է ուղարկել մեր Տիրոջն
օրհնելու համար, բայց նա նո-
15 րանց դուրս արաւ։ Բայց այն
մարդիկը մեզ հետ շատ լաւ էին,
և մեզ միտս չառին. և մեզանից
մի բան չկորաւ դաշտի մէջ որ-
չափ ժամանակ որ նորանց հետ
16 մեռ եկանք։ Նորանք մեզ հա-
մար պարիսպ էին գիշերն էլ, ցո-
րեկն էլ, որչափ ժամանակ որ ն-
րանց մօտ ոչխարները արածե-
17 նում էինք։ Եւ հիմա իմացիր և
տես թէ ինչ ես անելու, վասն
զի մեր տիրոջ վերայ և նորա բո-
լոր տան վերայ չարիքը հասել է.
որովհետև նա մի այնպիսի չար
մարդ է, որ նորա հետ խօսել չի
լինիլ։
18 Եւ Աբիգեան շուտով երկու
հարիւր հաց, և երկու տիկ գինի,
և հինգ պատրաստուած ոչխար,
և հինգ գրիւ հեղի ցորեն, հար-
իւր ողկոյզ չամիչ, և երկու հար-
իւր շարոց թուզ առաւ և էշերի
վերայ դրաւ նորանց. Եւ իր ծա-
19 ռաներին ասաց. Առաջ անցէք,
ահա ես ձեր ետևից գալիս եմ.
բայց իր մարդուն Նաբալին չի-
մացրեց։ Եւ երբոր այն կինը էշի
20 վերայ հեծած լեռան անխուլ
տեղովը իջնում էր, ահա Դա-
ւիթ և նորա մարդիկը նորա առ-
ջևը իջնում էին. և նա նորանց
հանդիպեց։ Եւ Դաւիթն ասել
21 էր. Արեւն զուր տեղն եմ անա-
պատի մէջ այս մարդի բոլոր ու-
նեցած բանները պահել, և նորա
բոլոր ունեցածից մի բան չկորաւ,
բայց նա ինձ լաւութեան փոխա-
րէն վատութիւն է անում։ Աստ-
22 ուած Դաւթի թշնամիներին այս-
պէս և սրանից աւելի անէ, և-
թէ մինչև էգուց առաւօտ նորա
մարդկանցից մէկ արու մարդ ողջ
թողեմ։
23 Եւ Աբիգեան Դաւթին տեսաւ որ
մեռաւ շտապով էշի վերայից ի-
ջաւ, և Դաւթի առջև երեսի վե-
րայ ընկաւ և մինչև գետինը խո-
նարհութիւն արաւ։ Եւ նորա
24 ոտքն ընկաւ և ասաց. Ով տէր
իմ, յանցանքը ինձ վերայ լինի.
բայց հրամայ աւր՝ որ աղախինդ
քո առջևդ խօսէ, և քո աղախ-

25 նոյ խօսքերը լսեր ։ Աղաչում եմ՝ որ իմ տէրը այս չար մարդ
Նաբալի մասին իր սրտի մէջ մի
բան չդնէ. վասն զի ինչպէս որ
անունն է՝ այնպէս էլ ինքն է.
նորա անունը Նաբալ է, և ան-
զգամութիւնը իր հետն է. բայց
ես քո աղախինն իմ տիրոջ ու-
ղարկած երիտասարդներին չես-
26 այ ։ Եւ հիմա, ով տէր իմ,
Տէրը կենդանի է և քո անձն էլ
կենդանի է, որ Տէրը քեզ չթո-
ղեց որ արեան մէջ մտնես, և
քո վրէժը քո ձեռքովն առնես.
և հիմա քո թշնամիները ու իմ
տիրոջը վատութիւն ուզողները
27 Նաբալի պէս լինին ։ Եւ հիմա
այս ընծան որ քո աղախինը բե-
րաւ իմ տիրոջը, թող իմ տի-
րոջ ետևից եկող երիտասարդ-
28 ներին տրուի ։ Աղաչում եմ՝ քո
աղախնի յանցանքը ներիր, վասն
զի Տէրը իմ տիրոջ համար ան-
պատճառ հաստատ տուն պիտի
շինէ, որովհետև իմ տէրը Տիրոջ
պատերազմները պատերազմեց, և
քո օրերումը քեզ վերայ մի չա-
29 րութիւն չգտնուեցաւ ։ Բայց թէ
և քեզ հալածելու ու քո անձը
որոնելու համար մէկ մարդ վեր է
կացել, իմ տիրոջ հոգին քո Տէր
Աստուծոյ առջև կենաց ծրարի
մէջ ծրարուած պիտի լինի. բայց
քո թշնամիների հոգիները նա կը
շպրտէ պարսատիկի միջից դ-ր-
30 էւ-ձէ դէ- ։ Եւ երբոր Տէրը բոլոր
քեզ համար ասած բարութիւն-
ները իմ տիրոջն անէ, և քեզ
Իսրայէլի վերայ թագաւոր նշա-
31 նակէ, Սա քեզ համար գայ-
թակղութիւն և իմ տիրոջ սրտի
համար խիղճ չլինի, թէ առանց
պատճառի արիւն թափեցիր,
կամ իմ տէրն ինքն իրան օգնեց.
և երբոր Տէրը իմ տիրոջը բարու-
թիւն անէ, այն ժամանակ քո
աղախինը յիշես ։
32 Եւ Դաւիթն ասաց Աբիգեայլին.
Օրհնեալ լինի Իսրայէլի Տէր Աստ-
ուածը, որ այսօր քեզ ուղար-
33 կեց ինձ դիմաւորելու. Եւ օրհ-
նեալ է քո խոհեմութիւնը. և
օրհնեալ ես դու որ այսօր ինձ
արդիւնքիր արեան մէջ մտնելուց,
և որ իմ ձեռքն ինձ օգներ ։ Բայց 34
կենդանի է Իսրայէլի Տէր Աստ-
ուածը՝ որ ինձ արդիւնք քեզ չա-
րութիւն անելուց, որ եթէ դու
շուտով չգայիր և առջևս չելնէ-
իր, մինչև էգուց առաւօտ Նա-
բալի մէկ արու մարդը չէր մնալ ։
Եւ Դաւիթը նորա ձեռքից ա- 35
ռաւ ինչ որ բերել էր նորա հա-
մար և նորան ասաց. Խաղաղու-
թեամբ տուն գնա. ահա խօսքիդ
լսեցի և քո խնդիրքն ընդունեցի ։
Եւ Աբիգեան գնաց Նաբալի 36
մօտ, և ահա նա իր տանը մէջ
թագաւորական խնջոյքի պէս խըն-
ջոյք ուներ. և Նաբալի սիրտը
զուարթացել էր, և նա շատ արբ-
ել էր. և կինը մինչև առաւօտ-
եան լոյսը մի պզտիկ կամ մեծ
բան չպատմեց նորան ։ Եւ առա- 37
ւօտը երբոր Նաբալը գինուցն ըս-
թափուեցաւ, նորա կինը այս
բանները պատմեց նորան. և նորա
սիրտը իր միջումը մեռաւ, և քար
դառաւ ։ Եւ տասը օրի չափ եղաւ 38
Տէրը պարկեց Նաբալին որ մեռաւ ։
Եւ Դաւիթը Նաբալի մեռնելը 39
լսեց՝ ասաց. Օրհնեալ է Տէրը,
որ Նաբալի ձեռքից ։-ձ նախա-
տինքիս դատաստանը ինքը դա-
տեց, և իր ծառային չարութիւ-
նից ետ պահեց. և Տէրը Նաբալի
չարութիւնը նորա գլխին դարձ-
րեց ։ Եւ Դաւիթը մ-ղ-տ ուղար-
կեց՝ և Աբիգեայլի հետ խօսեց,
որ նորան իր համար կին առնէ ։
Եւ Դաւթի ծառաները գնացին 40
Կարմէղոս Աբիգեայլի մօտ, և նո-
րա հետ խօսեցին և ասացին.
Դաւիթը մեզ քեզ մօտ ուղար-
կեց, որ քեզ իրան կին առնէ ։
Եւ նա վեր կացաւ և երեսի վե- 41
րայ մինչև գետինը երկրպագու-
թիւն արաւ, և ասաց. Ահա քո
աղախինը թող ապառաւոր լինի
իմ տիրոջ ծառաների ոտքերը
լուանալու համար ։ Եւ Աբիգեան 42
շուտով կանգնեց՝ էշը հեծաւ ին-
քը և իրան հետևող հինգ աղջիկ-
ները, և Դաւթի պատգամաւոր-
ների ետևից գնաց, և նորա կին
եղաւ ։

43 Դաւիթը յեզրայելից Աքինոամին էլ առաւ, և այս երկուան 44 էլ նորա կանայքը եղան։ Բայց Սաւուղն իր Մեղքող աղջիկը՝ որ Դաւթի կինն էր՝ Գաղղիմացի Լայխի որդի Փաղտիէլին տուաւ։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Զիփացիք գնացին Գաբաա Սաւուղի մօտ և ասացին. Ահա Դաւիթը Եսեմոնի դէմ Եքեղայի 2 բլրի վերայ թաք է կացած։ Եւ Սաւուղը վեր կացաւ և իջաւ Զիփի անապատը Իսրայէլից երեք հազար ընտրուած մարդկանց հետ, որ Զիփի անապատումը Դաւթին 3 որոնէ։ Եւ Սաւուղը Եսեմոնի դէմ Եքեղայի բլրի վերայ ճանապարհին բանակեց։ Դաւիթն էլ նստած էր անապատումը, և երբոր տեսաւ որ Սաւուղն իր ետևից գալիս է անապատը, 4 Դաւիթը լրտեսներ ուղարկեց, և իմացաւ որ Սաւուղը ստոյգ եկել է։

5 Եւ Դաւիթը վեր կացաւ և եկաւ Սաւուղի բանակ տուած տեղը. և Դաւիթը տեսաւ Սաւուղի և Նորա զօրավար՝ Ներեան Աբեններէի պառկած տեղը. բայց Սաւուղը պառկել էր կառքերի մէջտեղը, և ժողովուրդը բանակել էին նորա 6 շուրջը։ Եւ Դաւիթը պատասխանեց և Քեռացի Աքիմելէքի ու Յովաբի եղբայր Շարուհեան Աբեսային ասաց. Ո՞վ ինձ հետ կ'իջնէ բանակը Սաւուղի մօտ։ Եւ Աբեսան ասաց. Ես քեզ 7 հետ կ'իջնեմ։ Եւ Դաւիթը Աբեսայի հետ գիշերը ժողովրդի մէջ մտաւ, և ահա Սաւուղը կառքերի մէջտեղ պառկած քնած էր. նորա նիզակը գլխի մօտ գետինը ցցուած էր, և Աբեններն ու ժողովուրդը նորա շուրջը պառ- 8 կել էին։ Եւ Աբեսան Դաւթին ասաց. Աստուած այսօր քո թշնամին քո ձեռքը մատնեց. և հիմա թող տուր որ նիզակով մէկ անգամուայ գետինը զարկեմ 9 նորան և չկրկնեմ։ Բայց Դաւիթն Աբեսային ասաց. Մի մեռցնիր նորան, վասն զի Տիրոջ օծեալին ո՞վ կարող է ձեռք մեկնել և անպատիժ լինիլ։ Եւ Դաւիթն ասաց. Տէրը կենդանի է որ Տէրը նորան կ'զարնէ, կամ նորա օրը կ'գայ կ'մեռնէ, կամ թէ պատերազմի մէջ կ'մտնէ ու կ'մեռնէ։ Տէրը չանէ որ ես ձեռք մեկնեմ 11 Տիրոջ օծեալի դէմ. միայն թէ հիմա նորա գլխի մօտի նիզակը և ջրի կուժը առ և գնանք։ Եւ Դա- 12 ւիթը Սաւուղի գլխի մօտից նիզակն ու ջրի կուժը առաւ և գնացին, և տեսանող չկար, իմացող չկար և զարթնացող չկար. որովհետև ամենքը գնացել էին, վասն զի Տիրոջ կողմանէ նորանց վերայ խոր քուն էր ընկել։

Եւ Դաւիթն այն կողմն անցաւ, և վեր եկաւ լեռան գլուխը հեռուանց կանգնեց, և նորանց 13 մէջ շատ միջոց կար։ Դաւիթը 14 ժողովրդին և Ներեան Աբեններին կանչեց և ասաց. Ով Աբեններ, պատասխան չե՞ս տալիս. և Աբեններն պատասխանեց և ասաց. Դու ո՞վ ես որ կանչում ես թագաւորին։ Եւ Դաւիթն Աբեննե- 15 րին ասաց. Դու տղամարդ չե՞ս, և քեզ պէս ո՞վ կայ Իսրայէլի մէջ, և ինչո՞ւ համար քո տէր թագաւորին պահպանութիւն չարիր. վասն զի ժողովրդից մէկը եկաւ քո տէր թագաւորին մեռցնելու։ Այդ բանը լաւ չէ որ դու 16 արիր. կենդանի է Տէրը որ դուք մահապարտ էք. վասն զի Տիրոջ օծեալին՝ ձեր տիրոջը պահպանութիւն չարիք. և հիմա նայիր, թագաւորի նիզակը և նորա գլխի մօտի ջրի կուժը ո՞ւր է։ Ա- 17 յն ժամանակ Սաւուղը Դաւթի ձայնը ճանաչեց և ասաց. Դա քո՞ ձայնն է, որդեակ իմ Դաւիթ. և Դաւիթն ասաց. Իմ ձայնն է, ով տէր իմ թագաւոր. Եւ ասաց. 18 Ինչո՞ւ համար իմ տէրը այդպէս իր ծառայի ետևից է ընկել, վասն զի ի՞նչ արի, և իմ ձեռքի մէջ ի՞նչ չարութիւն կայ։ Եւ հիմա իմ տէր թագաւորը իր 19 ծառայի խօսքերը թող լսէ. եթէ Տէրն է քեզ ինձ վերայ վեր կոց-

րել, թող դա ըն՛ծ լինի. բայց եթէ մարդկանց որդիքը, թող նորանք Տիրոջ առջև անիծեալ լինին, վասն զի ինձ այսօր դուրս արին՝ որ Տիրոջ ժառանգութեան հետ չմիանամ, և էն ասացին. Գնա օտար աստուածներուն ծառայութիւն արա։ Եւ հիմա Տիրոջ առջև իմ արիւնը գետինը չընկնէ, վասն զի Իսրայէլի թագաւորը դուրս է եկել մէկ լու որոնելու, ինչպէս որ ձեւը լեռներուն կաքաւ է հալածում։

21 Եւ Սաւուղն ասաց. Մեղք գործեցի. դարձիր, որդեակ իմ Դաւիթ, քեզ դէմ այլ ևս չարիք չեմ գործիլ, որովհետև իմ հոգին այսօր քո աչքերուն պատուական երևեցաւ. ահա յիմարութիւն արի և մեծապէս սխալեցայ։ 22 Եւ Դաւիթը պատասխանեց և ասաց. Ահա թագաւորի նիզակը, թող երիտասարդներէն 23 մէկը գայ և առնէ այն։ Եւ Տէրը ամեն մարդու իր արդարութեան ու իր հաւատարմութեան համեմատ հատուցանէ, որովհետև Տէրը քեզ այսօր իմ ձեռքը տուաւ, բայց ես չուզեցի ձեռքս մեկնել 24 Տիրոջ օծեալին։ Եւ ահա ինչպէս որ քո հոգին այսօր իմ աչքերուն պատուական երևեցաւ, իմ հոգին էլ Տիրոջ առջև այնպէս պատուական երևայ, և ինձ ամեն նեղութիւնից ազատէ։ 25 Եւ Սաւուղը Դաւթին ասաց. Օրհնեալ լինիս դու, որդեակ իմ Դաւիթ, դու գործ ես գործելու և յաջողութիւն ես գտնելու։ Եւ Դաւիթը գնաց իր ճանապարհը, Սաւուղն էլ դարձաւ իրան տեղը։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Դաւիթն իր սրտումն ասաց. Վերջապէս մէկ օր Սաւուղի ձեռքովը կորչելու եմ, ինձ համար փղշտացոց երկիրը փախչելուց լաւը չկայ, որ Սաւուղը ինձանից յոյսը կ՛կտրէ, և ինձ այլ ևս Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ չի որոնիլ. այսպէս նորա ձեռքից կ՛ազատուիմ։ Եւ Դաւիթը վեր 2 կացաւ իր հետ եղող վեց հարիւր մարդովը, և անցաւ, գնաց, Գեթի թագաւորի Մաւովքի որդի Անքուսի մօտ։ Եւ Դաւիթը բը- 3 նակեց ինքը և իր մարդիկը՝ ամեն մարդ իր տնովը, Դաւիթն էլ իր երկու կիներովը՝ Յեզրայելացի Աքինոամի հետ ու Կարմելացի Նաբալի կին Աբիգեայի հետ՝ Անքուսի մօտ Գեթի մէջ։ Եւ երբոր 4 Սաւուղին լսացրին, թէ Դաւիթը փախել է Գէթ, այլևս նորան չորոնեց։

Եւ Դաւիթը Անքուսին ասաց. 5 Աղաչում եմ, եթէ քո առջևը շնորհք գտայ, թող գիւղաքաղաքներէն մէկում ինձ տեղ տան, որ այնտեղ նստեմ. վասն զի ինչո՞ւ համար քո ծառան քեզ հետ թագաւորանիստ քաղաքի մէջ նստէ։ Եւ այն օրը Անքուսը Սիկեղակը նորան տուաւ. այս պատճառով Սիկեղակը մինչև այս օրը Յուդայի թագաւորներինը եղաւ։ Եւ այն օրերի թիւը, որ Դաւիթը փղշտացոց երկրումը բնակեց, մէկ տարի ու չորս ամիս եղաւ։

Եւ Դաւիթը և նորա մարդիկը վեր ելան, և գեսուրացոց, գազերացոց և Ամաղեկացոց վերայ յարձակուեցան. վասն զի նորանք վաղուց ի վեր բնակում էին այն երկրումը, Սուրից մինչև Եգիպտոսի երկիրը։ Եւ Դաւիթն այն 9 երկիրը զարկեց, և ամենևին մարդ կամ կին ողջ չթողեց, և ոչխարներ ու արջառներ և էշեր և ուղտեր ու հանդերձներ առաւ, և դարձաւ եկաւ Անքուսի մօտ։ Եւ Անքուսն ասաց. Այսօր չէ՞ք 10 յարձակուել. և Դաւիթն ասաց. Դէպի Յուդայի հարաւային կողմը, Յերամէլացոց հարաւային կողմը, և Կենեցոց հարաւային կողմը։ Եւ Դաւիթը մարդ կամ 11 կին ողջ չթողեց, որ Գէթ բերէ, վասն զի ասաց. Մի գուցէ մեզ համար պատմեն և ասեն թէ՝ Դաւիթն այսպէս է անում։ Եւ նորա սովորութիւնը այսպէս է լինելու, քանի որ փղշտացոց երկրումը բնակէ։ Եւ Անքուսը 12

Դաւթին հաւատալով՝ ասաց. Ահա Տէրը՝ իր ժողովրդի՝ Իսրայէլի իրան մօտ գարշահոտ է առել. թող ինձ մօտ յաւիտեան ծառայ լինի։

ԳԼ. ԻԸ

1 Եւ այն օրերը փղշտացիք իրանց զօրքերը ժողովեցին պատերազմի որ դուրս գան Իսրայէլի հետ պատերազմեն. և Անքուսը Դաւթին ասաց. Գիտենաս որ դու քո մարդկանցովը ինձ հետ պիտի բա-
2 նակը դուրս գաս։ Եւ Դաւիթն Անքուսին ասաց. Ուրեմն դու կ'իմանաս թէ ծառադ ինչ կ'անէ, և Անքուսը Դաւթին ասաց. Նորա համար քեզ միշտ ինձ անձնապահ եմ անելու։

3 Իսկ Սամուէլը մեռած էր. և բոլոր Իսրայէլը նորա համար սուգ էին արել. և նորան թաղել էին իր քաղաքը Ռամայի մէջ։ Սաուղն էլ վհուկներին և նշանագէտներին երկրից վեր էր
4 առել։ Եւ փղշտացիք ժողովուեցան և եկան Սունեմի մէջ բանակեցին. Սաուղն էլ ժողովեց բոլոր Իսրայէլին և բանակեցան
5 Գեղբուէի մէջ։ Եւ Սաուղը տեսաւ փղշտացոց բանակը՝ և վախեցաւ. և սիրտը շատ դողաց։
6 Եւ Սաուղը Տէրոջը հարցրեց, բայց Տէրը չպատասխանեց նորան՝ ոչ երազներով, ոչ Ուրիմով, և ոչ մարգարէներով։
7 Այն ժամանակ Սաուղն իր ծառաներին ասաց. Ինձ համար մէկ վհուկ կին որոնեցէք, որ գնամ նորան հարցնեմ։ Եւ ծառաները նորան ասացին. Ահա Ենդորի մէջ մէկ վհուկ կին կայ։

8 Եւ Սաուղն իր հանդերձները փոխեց և ուրիշ հանդերձներ հագաւ, և իր հետ եղող երկու մարդով գնաց, և գիշերով այն կնոջ մօտ հասան։ Եւ Սաուղը ասաց. Շնորհք արա, ինձ վհուկի ոգով դիւթութիւն արա, և վեր հանիր ինձ համար որին որ
9 քեզ ասեմ։ Եւ կինը նորան ասաց. Ահա դու գիտես Սաուղի արած բանը, որ վհուկներին և նշանագէտներին երկրից բնաջինջ է արել. ուրեմն ինչո՞ւ համար ինձ մեռցնելու համար իմ անձին որոգայթ ես պատրաստում։ Եւ 10
Սաուղը Տէրովը երդում արաւ նորան և ասաց. Տէրը կենդանի է որ այս բանից քեզ մէկ վնաս չի պատահիլ։ Այն ժամանակ 11
կինը ասաց. Քեզ համար ո՞վ վեր հանեմ. և նա ասաց. Սամուէլին հանիր ինձ համար։

Եւ կինը Սամուէլին տեսնելով՝ 12
մեծ ձայնով աղաղակեց. և կինը Սաուղի հետ խօսեց և ասաց. Ինչո՞ւ ինձ խաբեցիր, վասն զի դու Սաուղն ես։ Եւ թագաւորը նո- 13
րան ասաց. Մի վախենար, բայց ի՞նչ տեսար։ Եւ կինը Սաուղին ասաց. Գետնից դուրս եկող Աստուածներ տեսայ։ Եւ Ս---ը նո- 14
րան ասաց. Նորա կերպարանքը ի՞նչպէս է։ Եւ կինը ասաց. Ա՛հ-մէկ ծեր մարդ է վեր գալիս, և մի վերարկու է հագած։ Եւ Սաուղը հասկացաւ որ նա Սամուէլն է. և երեսի վերայ գետինը ծռելով նորան երկրպագութիւն արաւ։ Եւ Սամուէլն ասաց Սա- 15
ուղին. Ինչո՞ւ համար ինձ նեղութիւն տուիր և ինձ վեր հանեցիր։ Եւ Սաուղն ասաց. Ես մեծ նեղութեան մէջ եմ, որովհետև փղշտացիք ինձ հետ պատերազմ են անում, և Աստուած ինձանից հեռացել է, և ինձ չէ պատասխանում ոչ մարգարէների միջոցով և ոչ երազներով, նորա համար քեզ կանչեցի, որ ինձ իմացնես թէ ինչ անեմ։ Եւ 16
Սամուէլն ասաց. Ինչո՞ւ համար ինձ ես հարցնում, հիմա որ Տէրը քեզանից հեռացել է ու քեզ թշնամի եղաւ։ Եւ Տէրն արաւ 17
ինչպէս որ իմ ձեռովը խօսել էր, և Տէրը քո ձեռքիցը թագաւորութիւնը պատառեց, և քո ընկեր Դաւթին տուաւ այն։ Վասն 18
զի դու Տիրոջ խօսքին չլսեցիր և նորա սաստիկ բարկութիւնը Ամաղեկի վերայ գործ չդրիր նորա համար այսօր Տէրը քեզ արաւ այս բանը։ Եւ Տէրը քեզ հետ 19

Իսրայէլին էլ է մատնելու փղշտացոց ձեռքը. և էգուց դու և քո որդիքն ինձ մօտ կ'լինիք. Տէրը Իսրայէլի բանակին էլ է մատնելու փղշտացոց ձեռքը:

20 Ա.Յն ժամանակ Սաւուղը շուտով վայր բնկաւ բոլոր հասակովը գետնի վերայ, և Սամուէլի խօսքերից շատ վախեցաւ, որ վերան այժ էլ չմնաց. վասն զի բոլոր օրը և բոլոր գիշերը հոգ
21 չէր կերել: Եւ կինը Սաւուղի մօտ գնաց, և տեսաւ նորա չարփաղանց ասկումը և նորան ասաց. Ահա աղախինդ խօսքիդ լսեց. և հոգիս ձեռքիս մէջ դնելով ինձ ասած խօսքերիդ հնազանդեցի: Եւ հիմա աղաչում եմ՝ դու էլ քո աղախնի խօսքին լսիր, և քո առջևը մի պատառ հաց դնեմ, և կեր՝ որ այժ առնես, վասն զի ճանապարհ ես գը-
23 նալու: Բայց նա չուզեց, և ասաց. Չեմ ուտում. սակայն նորա ծառաները և կինն էլ բռնադատեցին նորան, և նորանց խօսքին լսեց. և գետնից վեր կա-
24 ցաւ անկողնի վերայ նստեց: Եւ կինը տան մէջ անուցած մի հորթուն էր, շուտով նորան մորթեց, և ալիւր առաւ հունցեց, և նո-
25 րանով բաղարջ թխեց. Եւ Սաւուղի առջև և նորա ծառաների առջև դրաւ, և կերան, և վեր կացան նոյն գիշերը գնացին:

ԳԼ. ԻԹ

1 Եւ փղշտացիք ժողովեցին իրանց բոլոր բանակները Ափեկի մէջ. և Իսրայէլացիք բանակեցին Յեզրաելի մէջի աղբիւրի մօտ: 2 Եւ փղշտացոց նախարարները անց էին կենում հարիւրաւորներովը և հազարաւորներովը. և Դաւիթն և իր մարդիկը նորանից ետևից անց էին կենում Ակիսի հետ:
3 Եւ փղշտացոց իշխաններն ասացին. Ա.յս Եբրայեցիներն ի՞նչ են: Եւ Ակիսը փղշտացոց իշխաններին ասաց. Սա Իսրայէլի թագաւոր Սաւուղի ծառան Դաւիթը չէ՞, որ այսչափ օրերից՝ կամ մինչև այսօր քանի տարիներից ի վեր ինձ մօտ է. և ոչ բան ընկած օրից մինչև այս օրը նորա վերայ ոչ մի բան չգտայ: Եւ փղշտացոց իշխանները նորա վերայ բարկացան, և փղշտացոց իշխանները նորան ասացին. Ա.յդ մարդը ետ ուղարկիր, և գնայ իր տեղը, ուր որ նորան դրիր, և մեզ հետ չիջնէ պատերազմի, մի գուցէ պատերազմի մէջ մեզ թշնամութիւն անէ. վասն զի նա ինչո՞վ պիտի հաշտուի իր տիրոջ հետ, չէ՞ որ այս մարդկանց գլուխներովը: Սա այն Դաւիթը չէ՞ որի համար կանայք պար բռնելով և պատասխանելով ասում էին.

Սաւուղն իր հազարաւորներին զարկեց,
Եւ Դաւիթն իր բիւրաւորներին:

6 Եւ Ակիսը Դաւթին կանչեց և նորան ասաց. Տէրը կենդանի է որ դու ուղիղ մարդ ես, և ինձ հետ բանակի մէջ մտնելդ ու դուրս գալդ իմ աչքին բարի է երևում, վասն զի ինձ մօտ եկած օրից մինչև այս օրը քեզ վերայ մի չարութիւն չգտայ. բայց նախարարների աչքին դու լաւ չես երևում. Եւ հիմա ետ դարձիր և խաղաղութեամբ գնա, և փղշտացոց նախարարների աչքին վատ երևեցածը մի անիր: Եւ Դաւիթն 8 Ակիսին ասաց. Ես ի՞նչ եմ արել, և քո առջևը կանգնած օրից մինչև այս օրը ծառայիդ վերայ ի՞նչ գտար, որ ես չգնամ և իմ տէր թագաւորի թշնամիների հետ պատերազմ չանեմ: 9 Եւ Ակիսը պատասխանեց և Դաւթին ասաց. Գիտեմ որ դու իմ աչքերի առջև Աստուծոյ հրեշտակի պէս լաւ ես երևում, բայց փղշտացոց իշխաններն ասում են թէ՝ նա մեզ հետ դուրս չգայ պատերազմի: Եւ հիմա ա- 10 ռաւօտը կանուխ վեր կաց՝ դու և քո տիրոջ ծառաները՝ որոնք եկան քեզ հետ, և առաւօտը կանուխ վեր կացած լուսածագին գնացէք: Եւ Դաւիթը ինքը և իր 11

մարդիկը առաւօտը կանուխ վեր կացան որ գնան, և փղշտացոց երկիրը դառնան, իսկ փղշտացիք վեր եկան Յեզրայէլ։

ԳԼ. Լ

1 Եւ երբոր Դաւիթը և իր մարդիկը երրորդ օրը մտան Սիկեղակ, ահա Ամաղեկացիք յարձակուել էին հարաւային երկրի ու Սիկեղակի վերայ. և Սիկեղակը զարկելով՝ նորան կրակով այրել էին. 2 և այնտեղի կանայքը գերի էին առել՝ պզտիկից մինչև մեծը. մէկ մարդ չէին մեռցրել, այլ իրանց հետ առնելով՝ գնացել էին 3 իրանց ճանապարհ։ Եւ երբոր Դաւիթը և իր մարդիկ քաղաքը հասան, ահա կրակով այրուած էր նա. և իրանց կանայքը, որդիքը և աղջկերքը գերի էին 4 տարուած։ Եւ Դաւիթը և իր հետ եղող ժողովուրդը լրանց ձայները բարձրացրին և լացին, մինչև որ նորանց վերայ այժ չմնաց 5 նոց լալու։ Եւ Դաւիթի երկու կանայքը Յեզրայէլացի Աքինոամը և Կարմելացի Նաբալի կինը՝ Աբիգեան էլ էր գերի տարուած։ 6 Եւ Դաւիթը մեծ տագնապի մէջ էր, վասն զի ժողովուրդը նորան ուզում էր քարկոծել, որովհետև բոլոր ժողովրդից ամեն մէկի սիրտը կսկծում էր իր տղայոց ու աղջկանց համար. բայց Դաւիթը զօրացաւ իր Տէր Աստուծով։ 7 Եւ Դաւիթը Աքիմելեքի որդի Աբիաթար քահանային ասաց. Եփուդ մօտեցրու ինձ, և Աբիաթարը եփուդը Դաւթին մօ- 8 տեցրեց։ Եւ Դաւիթը Տիրոջը հարցրեց և ասաց. Այդ գունդի ետևից հալածե՞մ. նորանց կ'հասնե՞մ. ու նորան ասաց. Հալածիր, վասն զի անպատճառ կ'հասնես և բոլորովին կ'ազատես։

9 Եւ Դաւիթը ինքը և իր հետ եղող վեց հարիւր մարդիկը գնացին, և եկան մինչև Բսաոր հեղեղատը, և ետ մնացողները կանգ- 10 նեցին։ Եւ Դաւիթը չորս հարիւր մարդով ընդհատ հալածեց. (ասկոյն երկու հարիւր մարդիկը որ շատ յոգնած էին, մնացին Բսաոր հեղեղատի այս կողմն անցնելու։) Եւ դաշտի մէջ 11 մի եգիպտացի մարդ գտան, և նորան բերին Դաւթի մօտ. և նորան հաց տուին, ու կերաւ, և նորան ջուր խմեցրին. Եւ նորան 12 մի քիչ չոր թուզ և երկու ողկոյզ չամիչ տուին, որ կերաւ և ոգին վերան եկաւ. վասն զի երեք օր և երեք գիշեր հաց չէր կերել և ջուր չէր խմել։ Եւ Դա- 13 ւիթը նորան ասաց. Դու ո՞ւմ մարդն ես, և ո՞ր տեղից ես։ Եւ նա ասաց. Ես մի եգիպտացի պատանի եմ, մի Ամաղեկացի մարդու ծառայ. և իմ տէրն ինձ ձգել է, որովհետև հիմա երեք օր է որ հիւանդ եմ։ Մենք Քե- 14 րեթի հարաւային կողմի Յուդայի կողմերի և Քաղեբի հարաւային կողմերի վերայ յարձակուեցանք, և Սիկեղակը կրակով այրեցինք։ Եւ Դաւիթը նորան ասաց. Ինձ 15 այն գունդին մօտ կ'առնե՞ս։ Եւ նա ասաց. Դու ինձ Աստուծով երդուա՛ որա որ ինձ չես մեռցնիլ, և ինձ իմ տիրոջ ձեռքը չես տալ. ես էլ քեզ այն գունդին կ'առնեմ։

Եւ նա նորան տարաւ. և ահա 16 նորանք բոլոր դեառնի երեսի վերայ ցրուած էին. ուտում էին ու խմում էին, և փղշտացոց երկրից ու Յուդայի երկրից առած այն բոլոր մեծ աւարի համար ուրախութիւն էին անում։ Եւ Դաւիթն արշալոյսից մինչև 17 հետևեալ օրուայ իրիկունը նորանց կարկեց, և նորանցից ոչ մի մարդ չազատուեցաւ, բայց միայն չորս հարիւր երիտասարդներ՝ որոնք ուղտերի վերայ հեծան և փախան։ Եւ Դաւիթն Ամա- 18 ղեկացոց առած բոլոր բաները ազատեց. և Դաւիթն իր երկու կանանցն էլ ազատեց։ Եւ իրանց 19 մէկ բանը պակաս չէր պզտիկից մինչև մեծը, թէ տղայ, թէ աղջիկ, և թէ աւար, ինչ որ նորանք առել տարել էին, Դաւիթն ամեն էլ հետ բերաւ։ Եւ 20

Դաւիթը բոլոր ոչխարներն ու արջառները առաւ, և նորանց հօտերի առջևից տանում էին, և ասում էին՝ Դաւթի աւարը սա է։

21 Եւ Դաւիթն այն երկու հարիւր մարդկանց մօտ եկաւ, որոնք շատ յոգնած էին և չէին կարողացել Դաւթի ետևից գնալ. և նորանց բռատր Հեղեղատի մօտ նստեցրել էր. և նորանք դուրս եկան Դաւթին և նորա հետ եղող ժողովրդին դիմաւորելու. և Դաւիթը երբոր ժողովրդին մօտեցաւ, նորանց ողջունեցինը 22 հարցրեց։ Եւ Դաւթի հետ գնացող մարդկանցից բոլոր չար ու անզգամ մարդիկը պատասխանեցին և ասացին. Քանի որովհետև նորանք մեզ հետ չեն գնացել՝ մենք էլ նորանց մեր ազատած աւարիցը չենք տալ. ամեն մարդ միայն իր կինն ու զաւակն առնէ 23 ու գնայ։ Բայց Դաւիթն ասաց. Այդպէս մի անէք, եղբայրներս, որովհետև Տէրը մեզ տուաւ այս, և ինքը մեզ պահեց և մեզ վերայ եկող գունդը մեր ձեռքը 24 մատնեց. Եւ այս բանի մէջ ո՞վ ձեզ կ'լսէ, վասն զի կարաւանների մօտ նստողների բաժինը պատերազմի գնացողների բաժնի հետ հաւասար պիտի լինի. հաւասարապէս պիտի բաժանեն։ 25 Եւ այն օրից իվեր այսպէս է Իսրայէլի մէջ. կանոն և օրէնք դրաւ այս մինչև այս օրը։

26 Եւ Դաւիթն եկաւ Սիկեղակ, և այն աւարից ուղարկեց Յուդայի ծերերին՝ իր բարեկամներին ասելով. Ահա ձեզ համար Տէրոջ թշնամիների աւարից մէկ 27 ընծայ։ Այսինքն Բեթելի մէջ եղողներին, Հարաւային Ռամովթի մէջ եղողներին, Յաթիրի մէջ 28 եղողներին, Արոերի մէջ եղողներին, Սեփամովթի մէջ եղող- 29 ներին, Եսթեմովի մէջ եղողներին, Րաքալի մէջ եղողներին, Յերամեելացոց քաղաքների մէջ եղողներին, Կենեցոց քաղաքների մէջ 30 եղողներին, Հորմայի մէջ եղողներին, Քորաշանի մէջ եղողներին, Աթաքի մէջ եղողներին, 31 Քեբրոնի մէջ եղողներին, և այն ամեն տեղերը ուր որ Դաւիթն իր մարդկանցովը գնաց էր եկել։

ԳԼ. Լ.Ա.

Եւ փղշտացիք պատերազմ էին անում Իսրայէլի հետ և Իսրայէլացի մարդիկը փախան փղշտացոց առջևից և սպանուած վայր ընկան Գեղբուէի լեռան վերայ։ Եւ փղշտացիք Սաուղին և նորա որդիներին հասան, և փղշտացիք զարկեցին Սաուղի որդկանց Յովնաթանին, Աբինադաբին և Մեղքիսուէին։ Եւ պատերազմը Սաուղի դէմ աստակացաւ, և աղեղնաւորները նորան գտան. և աղեղնաւորներից շատ վիրաւորուեցաւ։ Եւ Սաուղն ասաց իր կապարճակիրին. Սուրդ հանիր և նորանով ինձ խոցիր. մի գուցէ այս անթլփատները գան և ինձ խոցեն, և ինձ ծաղր անեն. բայց նորա կապարճակիրը չուզեց. վասն զի շատ վախեցաւ։ Եւ Սաուղն առաւ սուրը և ընկաւ նորա վերայ։ Եւ երբոր նորա կապարճակիրը տեսաւ որ Սաուղը մեռաւ, նա էլ իր սուրի վերայ ընկաւ, և մեռաւ նորա հետ։ Եւ այսպէս մեռան Սաուղը և նորա երեք որդիքը, և նորա կապարճակիրը, և նորա բոլոր մարդիկը նոյն օրը միասին։

Եւ տեսան Իսրայէլի մարդիկը որ հովտի այն կողմին և Յորդանանու այն կողմին էին, թէ Իսրայէլացիք փախան և թէ մեռան Սաուղը և նորա որդիքը՝ այն ժամանակ թողեցին քաղաքները և փախան. և փղշտացիք եկան ու նորանց մէջ բնակեցին։

Եւ եղաւ հետևեալ օրը, որ փղշտացիք եկան մեռելները մերկացնելու. և գտան Սաուղին և նորա երեք որդիներին Գեղբուէ լեռան վերայ ընկած։ Ան ժամանակ նորա գլուխը կտրեցին, և զէնքերը հանեցին. և փղշտացոց երկրի շրջակայքը մարդ ուղարկեցին որ իրանց կուռատուներին ու

10 ժողովրդին աւետիս տան ։ Եւ նո-
րա զէնքերը դրին Աստարովթի
տանը, և նորա մարմինը կախե-
ցին Բեթսանի պարիսպից ։
11 Եւ երբոր Գաղաադու Յաբիսի
բնակիչները լսեցին ինչ որ Փղշ-
12 տացիք արել էին Սաւուղին, Բո-
լոր քաջ մարդիկը վերկացան, և

բոլոր գիշերը գնացին, և վեր ա-
ռին Սաւուղի մարմինը և նորա
որդկանց մարմինները Բեթսանի
պարսպից, և եկան Յաբիս և նո-
րանց այրեցին այնտեղ, Եւ նորանց 13
ոսկորները առին, և թաղեցին նո-
րանց Յաբիսի մէջ այն ծառի տակ,
և եօթն օր ծոմ պահեցին ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱԻՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Սաւուղի մեռնելուց յետոյ
եղաւ՝ երբոր Դաւիթը ետ դար-
ձաւ Ամաղեկացիներին զարկե-
լուց և երկու օր Սիկեղակի մէջ
2 մնաց. Երրորդ օրը եղաւ որ՝ ա-
հա բանակից՝ Սաւուղի մօտից
մէկը եկաւ, հանդերձները պա-
տառուած և գլխին հող. և երբ
որ նա Դաւթի մօտ եկաւ՝ գե-
տին ընկաւ և երկրպագութիւն
3 արաւ ։ Եւ Դաւիթն ասաց նո-
րան. Ո՞ր տեղից ես գալիս ։ Եւ
նա ասաց նորան. Ես Իսրայէլի
4 բանակից փախայ ։ Եւ Դաւիթն
ասաց նորան. Բանը ի՞նչպէս ե-
ղաւ պատմիր ինձ ։ Եւ նա ա-
սաց. Թէ ժողովուրդը պատե-
րազմից փախաւ, և ժողովրդից
էլ շատ մարդիկ ընկան մեռան.
նաև Սաւուղը և նորա որդի Յով-
5 նաթանը մեռան ։ Եւ Դաւիթն
իրան լուր բերող պատանուն ա-
սաց. Սաւուղի և նորա որդի
Յոնաթանի մեռնելը ի՞նչպէս ի-
6 մացար ։ Եւ նորան լուր բերող
պատանին ասաց. Դիպուածով
Գեղբուէ լեռան վերայ պատահե-
ցի, և ահա Սաւուղը կռնաճ էր
իր նիզակի վերայ, և կառքերն
ու ձիաւորները նորա վերայ էին
7 հասնում ։ Ա՛յն ժամանակ դէպի
ետ դարձաւ և տեսաւ ինձ, և
ինձ կանչեց, ես էլ ասացի. Ա-
8 հա ես ։ Եւ նա ինձ ասաց. Դու
ո՞վ ես ։ Ես էլ նորան ասացի.
9 Թէ Ամաղեկացի եմ ։ Եւ նա ինձ
ասաց. Աղաչեմ եմ ինձ վերայ

կանգնիր ու ինձ մեռցրու, վասն
զի թմրութիւնն ինձ կոխել է,
բայց հոգիս տակաւին վերայս է ։
Եւ ես նորա վերայ կանգնեցի և 10
նորան մեռցրի. վասն զի ես հաս-
կացայ որ՝ նա իր ընկնելուցն յե-
տոյ չի ապրիլ. և նորա գլխի վե-
րայի թագը և նորա բազուկի վե-
րայի ապարանջանը առի, և այս-
տեղ բերի նորանից իմ տիրոջ հա-
մար ։ Ա՛յն ժամանակ Դաւիթն 11
իր հանդերձները բռնեց և պա-
տառեց նորանից, նոյնպէս էլ նո-
րա հետ եղող բոլոր մարդիկը ։
Եւ նորանք Սաւուղի համար, և 12
նորա որդի Յոնաթանի համար
և Տիրոջ ժողովրդի համար, և
Իսրայէլի տան համար սուգ բրա-
նեցին և լացին, և մինչև երեկոյ
ծոմ պահեցին, որ սրով ընկան ։
Եւ Դաւիթն իրան լուր բերող 13
պատանուն ասաց. Դու ո՞ր տեղա-
ցի ես ։ Եւ նա ասաց, Ես մէկ
պանդուխտ Ամաղեկացու որդի
եմ ։ Եւ Դաւիթը նորան ասաց. 14
Ի՞նչպէս չվախեցար՝ ձեռքդ մեկ-
նեցիր և Տիրոջ օծեալին մեռցրիր ։
Եւ Դաւիթը երիտասարդներից մէ- 15
կին կանչեց և ասաց. Մօտեցիր՝
սորան մեռցրու. և նորան զար-
կեց, որ մեռաւ ։ Եւ Դաւիթը նո- 16
րան ասաց. Քո արիւնը քո գլու-
խը, վասն զի քո բերանը քեզ հա-
մար վկայութիւն տուաւ՝ ասե-
լով. Տիրոջ օծեալին ես մեռցրի ։
Եւ Դաւիթը Սաւուղի վերայ 17
և նորա որդի Յոնաթանի վերայ
այս ողբն ողբաց և ասաց. Աղե- 18
ղը Յուդայի որդկանցը սովորեցը-

նէն . ահա նա Ուղիղ գրքումը գրուած է :
19 Փառաւորութիւն, ով Իսրայէլ, քո բարձր տեղերի վերայ խոցուեցաւ .
Ի՞նչպէս վայր ընկան քաջերը :
20 Մի պատմէք Գեթի մէջ, Աւետիս մի տաք Ասկաղոնի ճանապարհներումը .
Մի գուցէ ուրախանան Փղշտացոց աղջկերքը, Մի գուցէ հրճուին անթլփատներ ի աղջկերքը :
21 Ով Գեղբուէի լեռներ . Ոչ ցօղ և ոչ անձրև լինի ձեզ վերայ .
Ոչ էլ երէսչէն ընծաների դաշտաններ .
Վասն զի այնտեղ ձգուեցաւ զօրաւորների վահանը, Սաւուղի վահանը իբրև թէ իղով չօծուած :
22 Խոցուածների արիւնից զօրաւորների ճարպից
Յովնաթանի աղեղը ետ չդարձաւ, Եւ Սաւուղի սուրը ետ չդարձաւ դատարկ :
23 Սաւուղն ու Յովնաթանը, Շատ սիրելի և հաճելի իրանց կենդանութեան ժամանակին, Իրանց մահուան ժամանակին էլ իրարից չդժուարացան . Արծիւներից աւելի թեթև աշարժ Եւ առիւծներից աւելի զօրաւոր :
24 Իսրայէլի աղջկերք, լացէք Սաւուղի համար, Որ ձեզ վայելուչ կարմիրներ էր հագցնում, Եւ ձեր հանդերձների վերայ ոսկի զարդեր էր դնում :
25 Ինչպէ՛ս վայր ընկան քաջերը պատերազմում . Յովնաթանը քո բարձր տեղերի վերայ խոցուեցաւ :
26 Ցաւում եմ քեզ համար, եղբայրս Յովնաթան, Դու ինձ խիստ սիրելի էիր . Բարձր էր ինձ համար քո սէրը կանանց սէրից :
27 Ինչպէ՛ս ընկան քաջերը . Եւ կորան պատերազմի զէնքերը :

ԳԼ. Բ

Եւ ասրանից յետոյ եղաւ որ Դաւիթը Տիրոջը հարցրեց և ասաց . Յուդայի քաղաքներից մէկը վեր գնա՞մ . Եւ Տէրը նորան ասաց . Վեր գնա : Եւ Դաւիթն ասաց . Ո՞ւր վեր գնամ : Եւ նա ասաց . Փեբրան : Եւ Դաւիթը իր երկու կանոջքը՝ Յեզրայելացի Աքինոամին և Կարմելացի Նաբալի կին Աբիգեայի հետ՝ վեր գնաց : Եւ Դաւիթն իր հետ եղող մարդկանցն էլ՝ ամեն մէկին իր ընտանիքովը տարաւ . և Փեբրանի քաղաքներում բնակեցին : Եւ Յուդայի մարդիկը եկան, և Դաւթին այնտեղ Յուդայի տան վերայ թագաւոր օծեցին : Եւ Դաւթին պատմեցին և ասացին . Թէ Գաղաադու Յաբիսի բնակիչները Սաւուղին թաղեցին : Եւ Դաւիթը Գաղաադու Յաբիսի բնակիչների մօտ պատգամաւորներ ուղարկեց, և նորանց ասաց . Դուք Տէրից օրհնեալ լինիք, որ ձեր տիրոջը Սաւուղին արիք այս ողորմութիւնը, և նորան թաղեցիք : Եւ հիմա Տէրը ձեզ ողորմութիւն և ճշմարտութիւն անէ և ես էլ ձեզ կ'հատուցանեմ այս լաւութիւնը, որ դուք արիք այդ բանը : Եւ հիմա ձեր ձեռքը ուժովանայ . և զօրաւոր քաջեր եղէք . վասն զի ձեր տէրը Սաւուղը մեռաւ, և Յուդայի տունը ինձ իրանց վերայ թագաւոր օծեցին :
Իսկ Սաւուղի զօրավար Աբենների Ներուայի որդի Յերոսթէին և նորան տարաւ Մանայիմ, Եւ նորան Գաղաադու վերայ, Աասուրիի վերայ, Յեզրայելի վերայ, Եփրեմի վերայ, Բենիամինի վերայ, և բոլոր Իսրայէլի վերայ թագաւոր արաւ : Երբոր Սաւուղի որդի Յերոսթէն Իսրայէլի վերայ թագաւոր եղաւ, քառասուն տարեկան էր, և երկու տարի թագաւորութիւն արաւ . միայն Յուդայի տունը Դաւթին էր հետևում : Եւ Յուդայի տան վերայ Փեբրանի մէջ Դաւթի թագաւորութիւն արած ժա-

մանակը եօթը տարի և վեց ամիս էր։
12 Եւ Ներեան Աբենները և Սաուղի որդի Յեբուսթէէլի ծառաները Մանայիմից դուրս եկան
13 Գաբաւոն։ Եւ Շարուհեայի որդին Յովաբը և Դաւթի ծառաները փեբրոնից դուրս եկան, և Գաբաւոնի աւազանի մօտ նորանց հանդիպեցին. և սորանք աւազանի մէկ կողմին և նորանք աւազանի միւս կողմին նստեցին,
14 Եւ Աբեններն ասաց Յովաբին. Թող երիտասարդները վեր կենան և մեր առջև խաղան։ Եւ Յովա-
15 բն ասաց. Վեր կենան։ Եւ նորանք վեր կացան թուով անցան Բենիամինից ու Սաուղի որդի Յեբուսթէէի կողմից տասն ու երկու մարդ, և Դաւթի ծառանե-
16 րից տասներկու մարդ։ Եւ ամեն մէկն իր ընկերի գլխից բռնեց, և իր սուրը իր ընկերի կողը մխեց, և մէկտեղ ընկան. և այն տեղի անունը *Փեղկաթ-ասուրիմ տուեցաւ, որ Գաբաւոնի մէջ է։
17 Եւ այն օրը պատերազմը շատ սաստիկ եղաւ. և Աբեններն Իսրայէլի մարդկանց հետ Դաւթի ծառաների առջև յաղթուեցաւ։
18 Եւ Շարուհեայի երեք որդիքը Յովաբը, Աբեսան և Ասայէլն այնտեղ էին. և Ասայէլը դաշտի այծեամի պէս թեթև էր ոտքով։
19 Եւ Ասայէլն Աբենների հետևից Հալածեց, և Աբենների հետևից աջ կամ ձախ կողմը չխոտորեց։
20 Եւ Աբենները ետ դարձաւ և ասաց. Ասայէլ, դո՞ւ ես։ Եւ նա
21 ասաց. Ես եմ։ Եւ Աբենները նորան ասաց. Դէպի աջ կամ ձախ կողմդ խոտորիր, և երիտասարդների մէկին բռնիր, և նորա զէնքերն առ քեզ համար։ Բայց Ասայէլը նորա հետևից հեռանալ
22 չուզեց։ Եւ Աբենները շարունակեց դարձեալ և Ասայէլին ասաց. Հետևից դարձիր. ինչո՞ւ համար քեզ գետինը զարկեմ. այն ժամանակ ես ինչպէս երե-

*ասուրների տրտը

սը բարձրացնեմ դէպի քո եղբայր Յովաբը։ Բայց նա չուզեց 23
ետ դառնալ։ Եւ Աբենները նիզակի հետևի ծայրովը անակուշտը զարկեց նորան և նիզակը նորան հետևից դուրս եկաւ. և այնտեղ վայր ընկաւ և այնտեղը մեռաւ. և ով որ գալիս էր՝ Ասայէլի վայր ընկած և մեռած տեղը կանգնում էր։ Եւ Յովաբը և Ա- 24
բեսան Աբենների հետևից ընկած և հալածում էին. և արեգակը մտաւ երբոր նորանք Գիայի Գաբաւոնի անապատի ճանապարհին եղող Ամմոյի բլուրը եկան։
Եւ Բենիամինի որդիքը Աբեն- 25
նների հետևից ժողովուեցան, մի գունդ եղան, և մէկ բլուրի գլխի կանգնեցին։ Եւ Աբեններն Յով- 26
բին կանչեց և ասաց. Մի՞թէ սուրը յաւիտեան պիտի ուտէ. չգիտե՞ս որ սորա վերջը դառն կը լինի. և մինչև ե՞րբ չես ասելու ժողովրդին, որ իրանց եղբայրներին հալածելուց ետ դառնան։
Եւ Յովաբն ասաց. Կենդանի է 27
Աստուած, եթէ դու խօսած չը լինէիր, ժողովրդի առաւօտից էր ետ դարձել իր եղբայրների հալածելուցը։
Այն ժամանակ Յովաբը փող 28
հնչեցրեց. և բոլոր ժողովուրդը կանգնեց, և այլևս Իսրայէլի հետևից չհալածեցին և այլևս պատերազմ չ'արին։ Եւ Աբեններն 29
և նորա մարդիկը այն բոլոր գիշերը դաշտի միջով գնացին և Յորդանանովն անցան, և բոլոր Բեթրոնը գնալով եկան Մահանայիմ։ Եւ Յովաբը Աբեններից ետ 30
դարձաւ, և բոլոր ժողովրդին ժողովեց, և Դաւթի ծառաներից պակաս էին տասնուհինը մարդ և Ասայէլը. Բայց Դաւթի ծառա- 31
ները Բենիամինից և Աբենների մարդկանցից երեք հարիւր վաթսուն մարդ զարկեցին որ մեռան։
Եւ Ասայէլին վեր առին, և նո- 32
րան Բեթլեհեմի մէջ իր հօր գերեզմանումը թաղեցին։ Եւ Յովաբը և նորա մարդիկը բոլոր գիշերը գնացին, և արշալոյսին Հաբրոն հասան։

ԳԼ. Գ

1 Եւ երկայն պատերազմ եղեւ Սաւուղի տան և Դաւթի տան մէջ. և Դաւիթը գնալով զօրանում էր, և Սաւուղի տունը գըննալով տկարանում էր։

2 Եւ Քեբրոնի մէջ Դաւթին որդիներ ծնան, և նորա անդրանիկն էր Ամնոնը՝ Յեզրայելացի
3 Աքինոամից, և նորա երկրորդը Կարմելացի Նաբալի կին Աբիգեայից Քիլեաբն էր, և երրորդը Գեսուրի թագաւորի Թոլմիի աղջիկ Մաաքայի որդին՝ Աբիսողոմն
4 էր, և չորրորդը Ագգիթի որդի Ադոնիան էր, և հինգերորդը Աբիտալի որդին Սափատիան էր,
5 և վեցերորդը Դաւթի կին Եգղայից ծնած Յեթրաամն էր. Քեբրոնի մէջ Դաւթին որդիներ ծնան։

6 Եւ քանի որ Սաւուղի տան և Դաւթի տան մէջ պատերազմ կար, Աբեններն Սաւուղի տան
7 համար թիկունք էր։ Եւ Սաւուղը մէկ հարճ ունէր անունը Ռեսփա, Այիայի աղջիկը։ Եւ Յեբոսթէն Աբեններին ասաց. Ինչո՞ւ
8 մօտեցար իմ հօր հարճին։ Եւ Աբեններն շատ բարկացաւ Յեբոսթէի խօսքերի համար, և ասաց. Մի՞թէ ես շան գլուխ եմ որ Յուդայի դէմ՝ այսօր ողորմութիւն եմ անում քո հօր Սաւուղի տանը, նորա եղբայրներին և բարեկամներին, և քեզ Դաւթի ձեռքը չմատնեցի, և դու այսօր այս կնկան համար ինձ մեղադ-
9 րո՞ւմ ես։ Աստուած Աբեններին այսպէս և սրանից աւելի անէ, եթէ Դաւթին չանեմ, ինչ որ
10 Տէրը նորան երդում արաւ, Այսինքն թագաւորութիւնը Սաւուղի տանից վեր առնեմ, և Դաւթի աթոռը Իսրայէլի վերայ և Յուդայի վերայ հաստատեմ՝ Դանից
11 մինչև Բեերսաբէէ։ Եւ Յեբոսթէն այլ ևս չկարողացաւ Աբեններին պատասխան տալ՝ նորանից վախենալուց։

12 Եւ Աբեններն իր կողմանէ Դաւթին պատգամաւորներ ուղարկեց ասելով. Այս երկիրը ո՞ւմն է. և նա ասաց. Ինձ հետ դաշնակցութիւն արա, և ահա իմ ձեռքը քեզ հետ կլինի բոլոր Իսրայէլը դէպի քեզ դարձնելու համար։
13 Եւ նա ասաց. Լաւ, ես քեզ հետ դաշնակցութիւն կ'անեմ. բայց քեզանից մէկ բան եմ պահանջում, այսինքն որ իմ երեսը չը տեսնես՝ եթէ առաջ Սաւուղի աղջիկ Մեղքոլին ինձ համար չը բերես, երբոր գաս իմ երեսը տես-
14 նելու։ Եւ Դաւիթը Սաւուղի որդի Յեբոսթէէի մօտ դեսպաններ ուղարկեց՝ ասելով. Իմ կին Մեղքոլը տուր ինձ, որին փղշտացոց հարիւր անթլփատութիւններով եմ ես ամուսնացել։
15 Եւ Յեբոսթէն մարդ ուղարկեց, և նորան առաւ նորա մարդ Պալտիէլից՝ Փաղտիէլից։
16 Եւ նորա մարդը գնաց լալով մինչև Բաուրիմ նորա ետևից։ Եւ Աբեններն նորան ասաց. Գնա ետ դարձիր. և նա ետ դարձաւ։

17 Եւ Աբեններն խօսեց Իսրայէլի ծերերի հետ և ասաց. Երէկ ու մէկէլ օր ուզում էիք որ Դաւիթը ձեզ վերայ թագաւոր լինի.
18 Եւ հիմա արէք, վասն զի Տէրը Դաւթի համար խօսեց ասելով. Իմ ծառայ Դաւթի ձեռքովը պիտի ազատեմ՝ իմ ժողովուրդ Իսրայէլը Փղշտացոց ձեռքից ու նորա բոլոր թշնամիների ձեռքից։
19 Նաև Աբեններն Բենիամինի հետ խօսեց. Նոյնպէս գնաց Աբեններն Քեբրոն, որ Դաւթին էլ պատմէ Իսրայէլի ու Բենիամինի բոլոր տանը համոյ երևեցածը։
20 Եւ Աբեններն եկաւ Քեբրոն Դաւթի մօտ, հետը քսան մարդ։ Եւ Դաւթին Աբեններին և նորա հետ եղող մարդկանցը խնճոյք արաւ։
21 Եւ Աբեններն Դաւթին ասաց. Վեր կենամ գնամ, և բոլոր Իսրայէլը ժողովեմ իմ տէր թագաւորի մօտ, որ քեզ հետ դաշնակցութիւն անեն, և դու սրտիդ բոլոր ուզածի պէս թագաւորութիւն անես։ Եւ Դաւիթն Աբեններին ուղարկեց, և նա գնաց խաղաղութեամբ։

22 Եւ ահա Դաւթի ծառաները և Յովաբը առաքուածութիւնից
եաւ գարձան, և իրանց հետ շատ
աւար բերին. իսկ Աբենները Դա-
ւթի մօտ Քեբրոնում չէր. վասն-
զի Դաւիթն ուզարկել էր նորան
և նա գնացել էր խաղաղու-
23 թեամբ: Եւ երբոր Յովաբը և
նորա հետ եղող բոլոր զօքքը ե-
կան, Յովաբին պատմեցին և ա-
սացին. Ներեան Աբենները ե-
կաւ Թագաւորի մօտ, նա էլ
ուղարկեց նորան, և նա գնաց
24 խաղաղութեամբ: Այն ժամա-
նակ Յովաբը Թագաւորի մօտ գը-
նաց և ասաց. Ի՞նչ ես արել.
ահա Աբենները քեզ մօտ է եկել.
Ի՞նչու համար նորան թող ես
տուել, և նա էլ գնացել է.
25 Դու գիտես, որ Ներեան Աբեն-
ները եկել է քեզ խաբելու, և
քո դուրս գալն ու մտնելն հա-
կանալու, և քո ամէն գործքն ի-
26 մանալու: Եւ Յովաբը Դաւթի
մօտից դուրս եկաւ, և Աբեննե-
րի եաևից պատգամաւորներ ու-
ղարկեց, և նորան Սիրայի ջրհո-
րից եաւ գարձրին. բայց Դաւ-
27 թը չգիտէր: Եւ երբոր Աբենն
րը եաւ գարձաւ Քեբրոն, Յով-
րը նորան քաշեց դրան ներսի
կողմը նորա հետ ծածուկ խօսակ-
ցութիւն անելու համար, և նո-
րան այնտեղ զարկեց նորա սան-
կուշտին իր եղբայր Ասայելի ա-
րեան համար. և նա մեռաւ:
28 Եւ Դաւիթը լսեց նորանից յե-
տոյ և ասաց. Ես ու իմ Թագա-
ւորութիւնը յաւիտեան անպարտ
ենք Տիրոջ առջեւը Ներեան Ա-
29 բենների արիւնից: Յովաբի գլը-
խի վերայ, ու նորա հօր բոլոր
տան վերայ հասնէ, և Յովաբի
տանից պակաս չի լինի սերմա-
նակաթ, բորոտ, ցուպի կռթնող,
սրով ընկնող և հացի կարօտ:
30 Այսպէս Յովաբը և նորա եղբայ-
րը Աբեսան Աբեններին մեռցը-
բին, վասնզի նա նորանց եղբայ-
րը Ասայելին պատերազմի ժամա-
նակ Գաբաւոնի մէջ մեռցրել էր:
31 Եւ Դաւիթը Յովաբին և նորա
հետ եղող բոլոր ժողովրդին ա-
սաց. Ձեր հանդերձը պատռե-
ցէք, և քուրձեր հագէք, և Ա-
բենների առջևից լացէք: Եւ Դա-
ւիթ Թագաւորը դագաղի հետևից
գնաց: Եւ Աբեններին Թաղեցին 32
Քեբրոնում. և Թագաւորը ձայ-
նը բարձրացրեց և Աբենների գե-
բեզմանի վերայ լացաւ. բոլոր ժո-
ղովուրդն էլ լացաւ:
Եւ Թագաւորը Աբենների հա- 33
մար ողբաց և ասաց. Մի՞թէ ա-
նըզգամի մեռնելու պէս մեռաւ
Աբենները. Քո ձեռքերը չէին 34
կապուած, և քո ոտքերը չէին
դրուած կապանքում. Անօրէնն-
րի առաջ ընկնողների պէս ըն-
կար: Եւ բոլոր ժողովուրդը դար-
ձեալ նորա վերայ լացաւ: Եւ 35
բոլոր ժողովուրդը եկաւ որ Դա-
թին հաց ուտեցնեն, քանի որ
դեռ ցերեկ էր, բայց Դաւիթ
երդում արաւ և ասաց. Ա-
ուած ինձ պատէս և աւրանից ա-
ւելի անէ, եթէ արեգակը մտնե-
լուց առաջ հաց կամ ուրիշ բան
ճաշակեմ. Եւ բոլոր ժողովուրդը 36
ուշադրութիւն արաւ, և այ բան
իրանց աչքին հաճոյ երևեցաւ,
ինչպէս որ Թագաւորի ամեն ա-
րածը բոլոր ժողովրդի աչքերին
հաճոյ էր երևում: Եւ այն օրը 37
բոլոր ժողովուրդը և բոլոր Իսրա-
յէլը հասկացաւ, որ Ներեան Ա-
բենների մեռցնուելը Թագաւորից
չէր: Եւ Թագաւորն իր ծա- 38
ռաներին ասաց. Գիտէ՞ք որ այս-
օր Իսրայէլի մէջ մեկ զօրավար
և մեծաւոր ընկաւ. Եւ ես այսօր 39
ակար եմ, թէպէտ և Թագաւոր
եմ օծուած. և այս մարդիկը
Շարուհեայի որդիքը ինձանից ու-
ժալ են. Տէրը չարութիւն անո-
ղին հատուցանէ՝ նորա չարու-
թեան համեմատ:

Գլ. Դ

Եւ երբոր Սաուղի որդին Յե- 1
բոսթէ լսեց Աբենների Քեբրոնի
մէջ մեռնելը, ձեռքերը թուլա-
ցան, և բոլոր Իսրայէլը տագնա-
պեցան: Եւ Սաուղի որդին եր- 2
կու զնդապետ ունէր, մեկի ա-

նունը Բաանա՝ և միւսի անունը Ռեքաբ էր . որոնք Բենիամինի ցեղից Բերոթացի Ռեմմոնի որդիքն էին (վասն զի Բերոթն էլ Բենիամինից էր համարվում, 3 և Բերոթացիները փախան Գեթթայիմ. և մինչև այսօր պանդուխտ պէս այնտեղ բնակեցին :) 4 Եւ Սաուղի որդի Յոնաթանը մի ոտից ունէր՝ ոտքերը կապ, երբոր Սաուղի և Յոնաթանի լուրը Յեզրէելից եկաւ, նա հինգ տարեկան էր . և նորա դայեակը նորան առաւ և փախաւ . և երբ որ շտապում էր փախչելու, գլորվեր վայր ընկաւ՝ և կոտոր դառաւ, և նորա անունը Մեմփիբոսթէ էր : 5 Եւ Բերոթացի Ռեմմոնի որդիքը՝ Ռեքաբը և Բաանան գնացին, և ցերեկուայ տաք ժամանակին Յեբոսթէի տունը մտան, և նա կէս օրուայ ժամանակին անկողնում քնել էր : 6 Եւ նորանք մինչև տան մէջտեղը մտան իբր թե ցորեն առնողներ և նորան անուշութիւնը զարկեցին, և Ռեքաբը և նորա եղբայրը Բաանան փախան : 7 Այս կերպով տունը մտան, և նա նեղսի սենեակում իր անկողինում քնում էր, նորան զարկեցին, մեռցրին, և նորա գլուխը կտրեցին, և գլուխն առին բոլոր գիշերը դաշտի ճանապարհով գնացին : 8 Եւ Յեբոսթէի գլուխը տարին Քերրոն Դաւթի մօտ, և թագաւորին ասացին. Ահա քո թշնամու՝ քո կեանքը որոնող Սաուղի որդի Յեբոսթէի գլուխը . և Տէրը Սաուղից և նորա սերունդից այսօր վրէժխնդրութիւն տուաւ մեր տէր թագաւորին : 9 Եւ Դաւիթը պատասխանեց Բերոթացի Ռեմմոնի որդիք Ռեքաբին և նորա եղբայր Բաանային և նորանց ասաց. Իմ հոգին ամեն նեղութիւնից ազատող Տէրը կենդանի է, 10 Որ նա որ ինձ պատմեց և ասաց. Թէ Ահա Սաուղը մեռաւ և ինքն իր աչքին աւետիս տուող էր երևում, բայց ես նորան բռնեցի և Սիկեղակի մէջ նորան մեռցրին, փոխանակ որ ես նորան աւետիս վարձք տայի : 11 Որչափ աւելի այն չար մարդիկները, որոնք արդար մարդին մեռցրին իր տանը մէջ իր անկողնի վերայ. և հիմա նորա արիւնը անպատճառ ձեր ձեռքից պիտի պահանջեմ, և ձեզ երկրիցը պիտի վերացնեմ : 12 Այն ժամանակ Դաւիթն երիտասարդներին հրամայեց, և նորանք մեռցրին. և նորանց ձեռքերն ու ոտքերը կարեցին, և Քերրոնի ուտապանի վերայ կոխեցին : Իսկ Յեբոսթէի գլուխը առին և թաղեցին Քերրոնի մէջ Աբեններէի գերեզմանում :

ԳԼ. Ե

1 Եւ Իսրայէլի բոլոր ցեղերը եկան Քերրոն Դաւթի մօտ և ասացին. Թէ, Ահա մենք քո ոսկորը և քո մարմինն ենք : 2 Դեռ սրանից առաջ երբոր Սաուղը մեզ վերայ թագաւոր էր դու էիր Իսրայէլի դուրս հանողը և ներս բերողը. և Տէրը քեզ ասաց. Դու հովուում ես իմ ժողովուրդն Իսրայէլը, և դու լինիս իշխան Իսրայէլի վերայ : 3 Եւ Իսրայէլի բոլոր ծերերը եկան թագաւորի մօտ Քերրոն, և Դաւիթ թագաւորը նորանց հետ դաշինք դրաւ Քերրոնի մէջ Տիրոջ առջև և նորանք Դաւթին թագաւոր օծեցին Իսրայէլի վերայ :

4 Դաւիթն երեսուն տարեկան էր՝ երբոր թագաւոր եղաւ և թագաւորութիւն արաւ քառասուն տարի : 5 Քերրոնում Յուդայի վերայ թագաւորութիւն արաւ եօթը տարի և վեց ամիս, և Երուսաղէմի մէջ թագաւորութիւն արաւ բոլոր Իսրայէլի և Յուդայի վերայ երեսուներեք տարի :

6 Եւ թագաւորը իր մարդիկներովը գնաց Երուսաղէմ՝ այն երկրում բնակող Յեբուսացիների վերայ. և Դաւթի հետ խօսեցին ասելով. Թէ այս տեղ չես մըտնել, այլ հէնց կոյրերն ու կաղե-

---

*երէկ էլ մեկել օրն էլ

րը քեզ կ'հեռացնեն. կարծելով
թէ Դաւիթը չի կարենալ այն-
7 տեղ մտնել: Բայց Դաւիթն ա-
ռաւ Սիոնի բերդը, (որ է Դա-
8 վթի քաղաք:) Եւ Դաւիթն այն
օրն ասաց. Ով որ ձեռաւոցի-
ներին զարկէ, և ջրանցքին հաս-
նէ և Դաւթին ատելի եղող կա-
ղերին ու կոյրերին էլ. նորա հա-
մար՝ կոյրն ու կաղը տունը չմըտ-
9 նէ: Եւ Դաւիթը բնակեց այն
բերդի մէջ և նորան Դաւթի
քաղաք անուանեց. և Դաւիթը
նորա շուրջը շինեց Մելօնից դէ-
10 պի ներս: Եւ Դաւիթը գնալով
մեծանում էր, և զօրաց Տէր Ա-
տուածը նորա հետ էր:
11 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւո-
րը դեսպաններ ուղարկեց Դա-
վթի մօտ, նաև եղևնափայտեր և
հիւաններ և որմնադիրներ՝ որոնք
Դաւթի համար տուն շինեցին:
12 Եւ Դաւիթ իմացաւ որ Տէրն ի-
րան թագաւոր հաստատեց Իս-
րայէլի վերայ և որ բարձրացրեց
իր թագաւորութիւնը իր ժողո-
13 վուրդ Իսրայէլի համար: Եւ Դա-
ւիթը Քեբրոնից գալուց յետոյ
Երուսաղէմից ուրիշ էլ հարճեր
և կնիկներ առաւ. և Դաւթին
ուրիշ էլ տղայք և աղջկերք ծը-
14 նան: Եւ սորանք են Երուսաղե-
մում նորան ծնած տղայոց ա-
նուանները. Սամուա, Սովբաբ,
15 Նաթան, Սողոմոն, Յեբուար,
Եղիսուա, Նափեկ, Յափիէ, Ե-
16 ղիսամա, Եղիադա ու Եղիփա-
ղէտ:
17 Եւ փղշտացիք լսեցին, որ Դա-
վթին Իսրայէլի վերայ թագաւոր
են օծել, և բոլոր փղշտացիք վեր
գնացին որ Դաւթին որոնեն. երբ
որ Դաւիթն այս լսեց՝ իջաւ բեր-
18 դը: Եւ փղշտացիք եկան և տա-
րածուեցան Ռափայիմոց հովտի
19 մէջ: Եւ Դաւիթը Տիրոջը հար-
ցրեց և ասաց. Վե՞ր գնամ փլ-
շտացոց դէմ. նորանց իմ ձեռ-
քը պիտի մատնե՞ս: Եւ Տէրը
Դաւթին ասաց. Գնա, վանդի
փղշտացիներին անպատճառ քո
20 ձեռքը պիտի մատնեմ: Այն ժա-
մանակ Դաւիթը Բաալփարասին
գնաց. և Դաւիթը զարկեց նո-
րանց այն տեղ և ասաց. Տէրն
իմ թշնամիներին իմ ձեռքով
պատռեց, ջրերի պատռուածք
պես. նորա համար այն տեղի
անունը Բաալփարասին տուե-
ցաւ: Եւ Փղշտացիք այնտեղ ձգե- 21
ցին իրանց կուռքերը. և Դաւ-
թը և իր մարդիկը առին նորանց:
Եւ Փղշտացիք դարձեալ վեր 22
եկան, և Ռափայիմոց հովտի մէջ
տարածուեցան: Եւ Դաւիթը Տի- 23
րոջը հարցրեց, և նա ասաց. Վե՛ր
չգնաս, այլ դէպի նորանց եաևի
կողմը դարձիր, թթենիների կող-
մից նորանց վերայ գնա: Եւ եր- 24
բոր թթենիների գլխին գնացքի
ձայն լսես, այն ժամանակ շար-
ժիր. վանդի այն ժամանակը Տէ-
րը քո առաջ պիտի դուրս գայ
փղշտացոց բանակը զարկելու հա-
մար: Եւ Դաւիթն այնպէս ա- 25
րաւ, ինչպէս որ Տէրը հրամայեց
իրան. և փղշտացիներին զարկեց՝
Գաբայից մինչև Գազեր:

ԳԼ. Զ

Եւ Դաւիթը դարձեալ ժողովեց 1
Իսրայէլի բոլոր ընտիրները՝ երե-
սուն հազար հոգի: Եւ վեր կա- 2
ցաւ գնաց Դաւիթը և իր հետ
եղող բոլոր ժողովուրդը Յուդայի
Բաալիցը, որ այնտեղից Աստու-
ծոյ տապանակը վեր բերէ, որի
վերայ կոչուած է քերովբէից վե-
րայ նստող Զօրութեանց Տիրոջ
անունը: Եւ դրին Աստուծոյ տա- 3
պանակը մէկ նոր սայլի վերայ, և
նորան վեր առին Աբինադաբի
տանիցը, որ այն բլրի վերայ էր.
և Աբինադաբի որդիքը՝ Ոզան ու
Ախիովը քշում էին այն նոր սայ-
լը: Եւ վեր առին նորան Աստու- 4
ծոյ տապանակի հետ Աբինադա-
բի տանիցը, որ բլրի վերայ էր.
և Ախիով գնում էր տապանակի
առջևից: Եւ Դաւիթը և Իսրա- 5
յէլի բոլոր տունը խաղում էին
Տիրոջ առջև ամեն տեսակ մայրի
փայտերով, քնարներով, տաւիղ-
ներով, թմբուկներով, դափերով
և ծնծղաներով: Եւ երբոր եկան 6

ընտրեալ կալը. Ողան Յեբուսէ մեկնեց Աստուծոյ տապանակին և բռնեց նորան, վասն զի եղները 7 ծռել էին նորան: Եւ Տիրոջ բարկութիւնը բորբոքեց Ողայի դէմ, և Աստուած զարկեց նորան այնտեղ այս յանցանքի համար. և մեռաւ նոյն տեղը Աստուծոյ տապանակի մօտ: Եւ 8 Դաւիթը տրտմեց, որ Տէրը հարուածով հարուածեց Ողային, և այնտեղի անունը մինչև այս օրը 9 Փարէզ-ոզա է ասվում: Եւ Դաւիթը վախեց այն օրը Տէրից, և ասաց. Տիրոջ տապանակը ի՞նչպէս մտնէ ինձ մօտ: Եւ 10 Դաւիթը չուզեց տանել Տիրոջ տապանակը իր մօտ Դաւթի քաղաքը. և Դաւիթը ծռեց նորան տարաւ 11 Գեթացի Աբդեդոմի տունը: Եւ Տիրոջ տապանակը մնաց երեք ամիս Գեթացի Աբդեդոմի տանը, և Տէրը օրհնեց Աբդեդոմին և նորա բոլոր տունը:

12 Եւ Դաւիթ թագաւորին պատմեցին ասելով. Տէրը օրհնեց Աբդեդոմին տունը և նորա ամեն ունեցածը Աստուծոյ տապանակի համար: Եւ Դաւիթը գնաց և վեր առաւ Աստուծոյ տապանակը Աբդեդոմին տանից ուրախութեամբ Դաւթի քաղաքը: 13 Եւ երբոր Տիրոջ տապանակը վեր առնողները վեց քայլ առաջ գնացին, արջառ ու պարարտ գառ- 14 ուարակ զոհեց: Եւ Դաւիթը Տիրոջ առջև պարում էր բոլոր ուժով. և Դաւիթը քթանի եփուդ էր հագել: Եւ Դաւիթը և 15 Իսրայէլի բոլոր տունը առնում էին Տիրոջ տապանակը ուրախութեամբ և փողերի ձայներով: 16 Եւ երբոր Տիրոջ տապանակը եկաւ Դաւթի քաղաքը, Սաուղի աղջիկը՝ Մեղքողը պատուհանից նայելով՝ տեսաւ որ Դաւիթ թագաւորը Տիրոջ առջև կոքաւում և պարում էր, և նորան անարգեց իր սրտումն: 17 Եւ Տիրոջ տապանակը բերին, և նորան իր տեղը դրին այն վրանի մէջ՝ որ Դաւիթը նորա համար կանդնեցրել էր. և Դաւիթը Տիրոջ առջև ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցրեց: 18 Եւ Դաւիթը երբոր ողջակէզներն և խաղաղութեան զոհերը մատուցանելը վերջացրեց, օրհնեց ժողովրդին զօրաց Տիրոջ անունով: 19 Եւ Իսրայէլի բոլոր բազմութեանը՝ մարդուց մինչև կինը, բոլոր ժողովրդին ամեն մէկին՝ մէկ նկանակ, մի կտոր միս և մի կարկանդակ բաշխեց. և բոլոր ժողովուրդը ամեն մէկն իր տունը գնաց:

20 Եւ Դաւիթը եւս դարձաւ իր տունը օրհնելու համար. Եւ Սաուղի աղջիկը Մեղքողը դուրս եկաւ Դաւթին դիմաւորելու, և ասաց. Իսրայէլի թագաւորը այսօր ի՛նչ փառաւոր էր, որ այսօր իր ծառայից աղախիններին առջև ինքզինքը մերկացրեց, ինչպէս որ դատարկ մարդիկներից մէկն իրան կ'մերկացնէ: 21 Եւ Դաւիթը Մեղքողին ասաց. Այն Տիրոջ առջև, որ ինձ քո հօրից և նորա բոլոր տանից ընտրեց, և ինձ Տիրոջ ժողովրդի Իսրայէլի վերայ իշխան դրաւ, այո, ես այն Տիրոջ 22 առջև խաղացի: Եւ դեռ սրանից աւելի ինձ անարգ երևացնելով՝ իմ աչքերի առջև նուաստ պիտի լինիմ. իսկ այն քո տուած աղախիններին պիտի փառաւորուեմ: 23 Եւ Սաուղի աղջիկը Մեղքողը մինչև իր մահուան օրը զաւակ չծնաւ:

Գ Լ. Ե

1 Եւ երբոր թագաւորը իր տանը նստեց, և Տէրը նորան իր շուրջը եղող ամեն թշնամիներից հանգստացրեց. 2 թագաւորը Նաթան մարգարէին ասաց. Ահա ես բնակուում եմ եղևնափայտի տան մէջ, բայց Աստուծոյ տապանակը վրանի մէջ է բնակուում: 3 Եւ Նաթան ասաց թագաւորին. Ամեն ինչ որ սրտիդ մէջ կայ, գնա արա, վասն զի Տէրը քեզ հետ է:

4 Եւ նոյն գիշեր եղաւ Տիրոջ խօսքը Նաթանին ասելով. 5 Գնա, իմ ծառայ Դաւթին ասիր. Տէրը

այսպէս է ասում. Դո՞ւ պիտի
ինձ համար բնակելու տուն շի-
6 նես. Որովհետև Իսրայէլի որդիքը
Եգիպտոսից հանած օրից մին-
չև այս օրը տան մէջ չբնակեցի,
այլ վրաններով ու խորաններով
7 էի մեռն գալիս։ Որչափ տեղ որ
մեռն եկայ Իսրայէլի որդոցից
հետ, մի՞թէ մէկ բան խօսեցի
Իսրայէլի ցեղերի մէկի հետ, որ-
ոնց հրամայեմ եմ տուել իմ ժո-
ղովրդը Իսրայէլին հովուելու,
և ասացի՞. Թէ Ինչո՞ւ համար ինձ
8 եղևնափայտի տուն չշինեցիք։ Եւ
հիմա իմ ծառայ Դաւթին այս-
պէս ասես. Զօրաց Տէրը այսպէս
է ասում. Ես քեզ առի փարա-
խից՝ ոչխարների ետևից, որ իմ
Իսրայէլ ժողովրդի վերայ առաջ-
9 նորդ լինիս. Եւ քեզ հետ էի
ուր որ գնում էիր, և քո ա-
ջևէից բոլոր թշնամիներիդ կոտո-
րեցի, և երկրիս վերայ եղող մե-
ծերի անուան պէս քո անունը
10 մեծացրի։ Եւ իմ ժողովուրդ Իս-
րայէլի համար էլ մէկ տեղ ո-
րոշեցի, և նորան տնկեցի. և իր
տեղը բնակում է, և այլ ևս պի-
տի չշարժուի, և անիրաւութեան
որդիքը առաջուայ պէս այլ ևս
11 պիտի չնեղեն նորան, ինչպէս որ
եղա՝ իմ ժողովուրդ Իսրայէլի
վերայ դատաւորներ դրած օրից
ի վեր. և քեզ պիտի հանգըս-
տացնեմ քո ամեն թշնամիներից։ Եւ Տէրը քեզ իմացնում է
որ Տէրն է քեզ համար տուն
12 շինելու։ Երբոր քո օրերը լրանան
և դու քո հայրերի հետ քնա-
նաս, քեզանից յետոյ քո երան-
քիցը դուրս եկող զաւակիդ պի-
տի բարձրացնեմ, և հաստատեմ
13 նորա թագաւորութիւնը։ Նա
է իմ անուան համար տուն շի-
նելու, և նորա թագաւորութեան
աթոռը կ'հաստատեմ յաւիտե-
14 նան. Ես նորան հայր կ'լինիմ, և
նա ինձ որդի կ'լինի. եթէ նա ա-
նիրաւութիւն անէ, ես նորան
կ'պատժեմ մարդկանց գաւազա-
նով և մարդկանց որդիների հա-
15 րուածներով։ Բայց իմ ողորմու-
թիւնը նորանից չի հեռանալ,
ինչպէս որ Սաուղից հեռացրի,
որին քշեցի քո առջևիցը։ Եւ քո 16
տունը և քո թագաւորութիւնը
քո առջև յաւիտեան ապահով
է, քո աթոռը հաստատ պիտի
մնայ մինչև յաւիտեան։ Եւ ես- 17
թանն այս բոլոր խօսքերը և այս
բոլոր տեսիլքը մի քաո միջէ ա-
սաց Դաւթին։

Եւ Դաւիթ թագաւորը գնաց, 18
Տիրոջ առջև նստեց, և ասաց.
Ով Տէր Եհովայ, ես ո՞վ եմ. և
ո՞վ է իմ տունը, որ ինձ մինչև
այստեղ բերիր. Սակայն այս էլ 19
դեռ քո աչքերին պզտիկ երևե-
ցաւ, ով Տէր Եհովայ, և քո ծա-
ռայի տան վերայով հեռաւոր
ժամանակի համար էլ խօսեցիր,
և սա այն մարդու եղանակն է՝ ո՛
Տէր Եհովայ է։ Եւ Դաւիթն էլ 20
քեզ ի՞նչ ասէ. վասնզի դու,
ով Տէր Եհովայ, քո ծառային
ճանաչում ես։ Այս բոլոր մեծ 21
բաները քո խօսքի համար՝ և քո
սրտի պէս արիր, որ ծառայիդ ի-
մացնես։ Սորա համար մեծ երե- 22
ւեցար, ով Տէր Աստուած. վա-
րըն ոչ քեզ պէս մէկը չկայ, և
քեզանից զատ Աստուած չկայ՝
մեր ականջներով բոլոր մեր լը-
սածների համեմատ։ Եւ ո՞ր ազգն 23
է երկրիս վերայ քո մէկ հատ ժո-
ղովրդին՝ Իսրայէլին պէս, որի
համար դուն էիր Աստուած եկաս
նրան փրկելու իր համար ժողո-
վուրդ առնելու, և իր համար ա-
նուն աշխատելու և (ձեզ համար)
քո երկրի մէջ այս մեծ ու սոս-
կալի բաները անելու, քեզ հա-
մար Եգիպտոսից ազատուած ժո-
ղովրդիդ առջևից ազգեր և նո-
րանց աստուածները +ջընվ։ Եւ 24
քո ժողովուրդ Իսրայէլին յաւի-
տեան քեզ ժողովուրդ հաստա-
տեցիր, ու դու, ով Տէր, նորանց
Աստուած եղար։ Եւ հիմա, ով 25
Տէր Աստուած, այս խօսքը, որ
ասել ես քո ծառայի համար և
նորա տան համար, յաւիտեան
հաստատիր, և ասածիդ պէս ա-
րա. Եւ քո անունը յաւիտեան 26
մեծ ճանաչուի, և ասեն՝ Թէ՝
Զօրութեանց Տէրը Աստուած է

Իսրայէլի վերայ. և քո ծառայ
Դաւթի տունը քո առջև հաս-
27 տատ ընայ։ Վասնզի դու ով
Տէր զօրութեանց՝ Աստուած Իս-
րայէլի, քո ծառայի ականջներին
յայտնեցիր և ասացիր. Ինձ հա-
մար տուն պիտի շինեմ, ասդր
համար քո ծառան իրանում
սիրտ արաւ այս աղօթքը քեզ
28 անելու։ Եւ հիմա, ով Տէր Ե-
հովայ, այն Աստուածը դու ես,
և քո խօսքերը ճշմարիտ են, և
քո ծառային խոստացար այս
29 բարիքը։ Ուստի հիմա կամք ա-
րա քո ծառայի տունը օրհնելու,
որ յաւիտեան քո առջևը լինի,
վասն զի, ով Տէր Եհովայ, դու
ասացիր և քո օրհնութեամբը
ծառայիդ տունը յաւիտեան օրհ-
նեալ լինի։

ԳԼ. Ը

1 Եւ նորանից յետոյ եղաւ որ
Դաւիթը փղշտացիներին զարկեց
և նուաճեց նորանց. և Դաւիթն
առաւ փղշտացոց ձեռքից Մե-
2 թեկամման. Նաև զարկեց Մո-
վաբը և չափեց նորանց լարով
գետինը պառկեցնելով նորանց,
և երկու լարով չափեց մեռցնե-
լու և մէկ ամբողջ լարով ապ-
րեցնելու. և Մովաբացիք Դա-
թին հարկառու ծառաներ ե-
3 ղան։ Եւ Դաւիթը զարկեց Սու-
բայի թագաւոր Ռուբի որդի Ադ-
րազարին, երբոր գնում էր Եփ-
րատ գետի վերայ իր իշխանու-
4 թիւնը հաստատելու։ Եւ Դաւի-
թը նորանից հազար եօթ հար-
իւր ձիաւոր՝ և քսան հազար հե-
տևակ զօրք բռնեց, և Դաւիթը
բոլոր կառքերի ձիերն ջլատեց,
և նորանցից միայն հարիւր կառ-
5 քի չէ պահեց։ Եւ Դամասկոսի
Ասորիները եկան Սուբայի թա-
գաւոր՝ Ադրազարին օգնութիւն
անելու, և Դաւիթն Ասորիներից
քսան ու երկու հազար մարդ զար-
6 կեց։ Եւ Դաւիթը Դամասկո-
սի Ասորոց մէջ բերդապահ զօր-
քեր դրաւ. և Ասորիները Դա-
թին հարկառու ծառայ եղան.
և ուր որ Դաւիթը գնում էր՝
Տէրը նորան յաջողութիւն էր տա-
լիս։ Եւ Դաւիթն Ադրազարի ծա- 7
ռաների ոսկի վահաններն առաւ,
և երուսաղէմ բերաւ նորանց։
Եւ Դաւիթ թագաւորը Ադրա- 8
զարի քաղաքներից Բեթահից և
Բերոթայից խիստ շատ պղինձ ա-
ռաւ։

Եւ երբոր Եմաթի թագաւորը՝ 9
Թովու լսեց, որ Դաւիթն Ադրա-
զարի բոլոր զօրքերը ջարդեց, Թո- 10
վու իր որդի Յովրամին Դաւիթ
թագաւորի մօտ ուղարկեց, որ
նորան բարև անէ և նորան շնոր-
հաւորէ, քանի որում Ադրազարի
դէմ պատերազմ էր արել և նո-
րան զարկել էր. (վասն զի Ադրա-
զարը Թովուի հետ պատերազմ-
ներ ունէր։) Եւ Յ-վ-ի ձեռքին
կային արծաթի անօթներ, ոսկի
անօթներ և պղնձի անօթներ։
Դաւիթ թագաւորը նորանք էլ 11
Տիրոջը նուիրեց, միւս նուիրած
արծաթի ու ոսկու հետ բոլոր իր
յաղթած ազգերից՝ Ասորիներից,
Մովաբից, Ամմոնի որդիներից, 12
փղշտացիներից, Ամաղեկից, և
Սուբայի թագաւորի Ռուբի որ-
դու Ադրազարի աւարից։ Եւ 13
երբոր Դաւիթն Աղի ձորումը
տասնուվեց հազար Ասորիներին
կոտորեց և ետ դարձաւ, մէջ ա-
նուն հանեց։ Եւ Եդոմի մէջ 14
բերդապահ զօրքեր դրաւ, բոլոր
Եդոմի մէջ բերդապահ զօրքեր
դրաւ, և բոլոր Եդոմացիք Դա-
թին ծառայ եղան, և Տէրը յա-
ջողութիւն էր տալիս Դաւթին
ուր որ էլ գնում էր։

Եւ Դաւիթը բոլոր Իսրայէլի 15
վերայ թագաւորութիւն արաւ.
և Դաւիթն իր բոլոր ժողովրդին
իրաւունք և արդարութիւն էր
անում։ Եւ Շարուհեայի որդի 16
Յովաբը զօրքերի վերայ էր. և Ա-
քիտուդի որդի Յովսափատը յի-
շատակաց դպիր էր. Եւ Աքիտով- 17
բի որդի Սադովկն ու Աբիաթա-
րի որդի Աքիմելէքը քահանա-
ներ էին, և Սարայիան ատենա-
դպիր էր. Եւ Յովիադայի որդի 18
Բանեան փերեթիների ու փելե-

թինների վերայ էր. և Դաւթի որդիքը նախարարներ էին։

ԳԼ. Թ

1 Եւ Դաւթին ասաց. Արդեօք Սաւուղի տանից ճնացած մարդ կա՞յ, որ նորան բարերարութիւն անեմ Յովնաթանի սիրոյն հա-
2 մար։ Եւ Սաւուղի տանից Միրա անուն մի ծառայ կար, և նորան կանչեցին Դաւթի մօտ, և թագաւորը նորան ասաց. Միրա դո՞ւ ես. և նա ասաց. Ծառադ
3 եմ։ Եւ թագաւորն ասաց. Սաւուղի տանից ճնացած մարդ չը կա՞յ, որ նորան Աստուծոյ ողորմութիւնը անեմ։ Եւ Միրան ասաց թագաւորին. Յովնաթանից որդիք կայ մի որդի կաց ոտքերը
4 կաւին։ Եւ թագաւորը նորան ասաց. Ո՞ւր է։ Եւ Միրան ասաց թագաւորին. Ահա նա Լոդաբարի մէջ Ամիելի որդու
5 Մաքիրի տանն է։ Եւ Դաւթի թագաւորը մարդ ուղարկեց, և նորան Լոդաբարից Ամիելի որդու Մաքիրի տանից առաւ։
6 Եւ Սաւուղի որդի Յովնաթանի որդի Մեմփիբոսթէն Դաւթի մօտ եկաւ և երեսի վերայ ընկաւ ու խոնարհութիւն արաւ։ Եւ Դաւիթն ասաց. Ով Մեմփիբոսթէ.
7 և նա ասաց. Ահա ծառադ։ Եւ Դաւիթը նորան ասաց. Մի վախենար, վասն զի քո հօր Յովնաթանի սիրոյն համար քեզ անպատճառ բարերարութիւն պիտի անեմ, և քո հօր Սաւուղի բոլոր արտերը քեզ վերայ պիտի դարձնեմ, և դու պիտի միշտ իմ սե-
8 ղանի վերայ հաց ուտես։ Եւ նա խոնարհութիւն արաւ և ասաց. Ծառադ ո՞վ է որ ինձ պէս մի
9 մեռած շան վերայ նայեցիր։ Յետ թագաւորը Սաւուղի ծառայ Սիբային կանչեց, և նորան ասաց. Սաւուղի և նորա տան բոլոր բազուկքը քո տիրոջ որդուն
10 տուի։ Եւ դու ու քո որդիքը և ծառաներդ նորա համար երկիրը պրծեցէք, և պտուղը էր մօտ բերիս, որ քո տիրոջ որդին ուտելու հաց ունենայ. և քո տիրոջ որդի Մեմփիբոսթէն պիտի միշտ իմ սեղանի վերայ հաց ուտէ։ Եւ Միրան տասնուհինգ որդի և քսան ծառայ ունէր։ Եւ Միրան 11
ասաց թագաւորին. Իմ թագաւոր տէրս քո ծառային ինչ որ հրամայեց, ծառադ այնպէս պիտի անէ։ Բայց Մեմփիբոսթէն, ասաց Դաւէթը. պիտի թագաւորի որդկանց մէկի պէս իմ սեղանի վերայ հաց ուտէ։ Եւ Մե- 12
մփիբոսթէն մէկ պզտիկ ոտայ ունէր, և նորա անունը Միքա էր. և Միրայի տան բոլոր բնակողները Մեմփիբոսթէի ծառաներն էին։ Եւ 13
Մեմփիբոսթէն բնակուեմ էր Երուսաղէմում, վասն զի միշտ թագաւորի սեղանի վերայ հաց էր ուտում, և նա իր երկու ոտքերով կաղ էր։

ԳԼ. Ժ

Եւ նորանից յետոյ եղաւ որ Ամ- 1
մոնի որդկանց թագաւորը մեռաւ, և նորա որդի Անոնը նորան տեղ թագաւոր եղաւ։ Եւ Դա- 2
ւիթն ասաց. Նաասի որդի Անոնին մարդասիրութիւն անեմ, ինչպէս որ նորա հայրը ինձ մարդասիրութիւն արաւ. և Դաւիթն իր ծառաներին նորան մօտ ուղարկեց, որ նորան իր հօր մահին մխիթարեն. և Դաւթի ծառաները գնացին Ամմոնի որդկանց երկիրը։ Եւ Ամմոնի որդկանց իշ- 3
խանները իրանց տէր Անոնին ասացին. Միթէ Դաւիթը քո հօրը քո առջեւ մեծարելո՞ւ համար քեզ մօտ մխիթարիչներ ուղարկեց. չէ՞ որ Դաւիթն իր ծառաներին քեզ մօտ ուղարկեց, որ քաղաքը աչքից անցնեն և լրտեսեն որ նորան կործանէ։ Եւ Ա- 4
նոնը Դաւթի ծառաներին առաւ, և նորանց մօրուքի կէսը ածիլել տուաւ, և նորանց հանդերձների էլ կէսը մինչև նստելու տեղը կտրել տուաւ, և նոնց ուղարկեց նորանց։ Եւ այս բանը Դաւթին 5
պատմեցին, և նա նորանց դիմաւորելու յարդ ուղարկեց, վասն

զի այն մարդիկը շատ անարգուել էին, և Թագաւորն ասաց. Նստեցէք երկրավուրմը մինչև որ ձեր մօրուքը աճէ, և եղբը դարձէք։

6 Եւ երբոր Ամմոնի որդիքը տեսան, որ Դաւթի հետ իրանց բանը վատ է, Ամմոնի որդիքը մարդ ուղարկեցին, և Բեթրոովբի Ասորիներից և Սուբայի Ասորիներից քսան հազար հետևակ, և Մաաքայի Թագաւորից հազար մարդ, և Իստովբից տասն ու երկու հազար մարդ վարձքով 7 բռնեցին։ Եւ երբոր Դաւիթն այս լսեց, Յովաբին և բոլոր զօրաւոր զօրքերին ուղարկեց։ 8 Եւ Ամմոնի որդիքը դուրս եկան, և +պատ+ր դրան առջև կարգաւ պատերազմի շարուեցան, բայց Սուբայի և Րոովբի Ասորիները և Իստովբ ու Մաաքա դաշտի մէջ 9 ջոկ կանգնել էին։ Եւ Յովաբը տեսաւ որ պատերազմը առջևից ու ետևից իր վերայ է հասնում, Իսրայէլի բոլոր ընտրուած մարդկանցից ընտրեց, և Ասորց դէմ 10 պատերազմի շարեց. Եւ մնացած զօրքը յանձնեց իր եղբայր Աբեսային, որ Ամմոնի որդւոց դիմաց շարէ. 11 Եւ ասաց. Եթէ Ասորիները ինձ յաղթելու լինին, ինձ օգնութեան հասնես. և եթէ Ամմոնի որդիքը քեզ յաղթելու լինին, ես քեզ օգնութեան կը 12 հասնեմ. Քաջասիրտ եղիր և քաջանանք մեր ժողովրդի համար և մեր Աստուծոյ քաղաքների համար, և Տէրը իր աչքի հաճոյ եւ 13 բևեցածը թող անէ։ Եւ Յովաբն իր հետ եղող զօրքով Ասորիներին մօտեցաւ, որ նորանից դէմ պատերազմ անէ, և նորանք նրա առջևից փախան։ 14 Եւ Ամմոնի որդիքը Ասորց փախչելը տեսնելով՝ նորանք էլ Աբեսայի առջևից փախան և մտան քաղաքը։ Եւ Յովաբն Ամմոնի որդիներից դարձաւ և եկաւ Երուսաղէմ։

15 Երբոր Ասորիները տեսան, որ իրանք Իսրայէլի առջևը կոտրուեցան՝ ժողովուեցան միևնոյն 16 ժամանակ։ Եւ Ադրազարը մարդ ուղարկեց, և Գետի այն կողմին եղող Ասորիներին ուղ հանեց, և եկան Էլամ. և նորանց առջևից՝ Ադրազարի զօրապետը Սոփրակ։ 17 Եւ երբոր Դաւթի պատմեցին, նա բոլոր Իսրայէլին ժողովելով՝ Յորդանանից անցաւ և Էլամ հասաւ. և Ասորիները Դաւթի դէմ գունդերով շարուեցան, և նորա հետ պատերազմ արին։ 18 Եւ Ասորիները փախան Իսրայէլի առջևից. և Դաւիթն Ասորիներից եօթը հարիւր կառք և քառասուն հազար ձիաւոր կոտորեց, և նորանց զօրապետը՝ Սոփրակին զարկեց, որ այնտեղ մեռաւ։ 19 Եւ Ադրազարին հպատակ եղող բոլոր թագաւորները երբոր տեսան որ Իսրայէլի առջև յաղթուեցան, Իսրայէլի հետ հաշտութիւն արին, և նորան ծառայ եղան. և Ասորիները վախում էին միւսանգամ Ամմոնի որդիանց օգնելու։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղաւ հետևեալ տարին, որ թագաւորները պատերազմի դուրս գալու ժամանակին, Դաւիթը Յովաբին և նորա հետ իր ծառաներին և բոլոր Իսրայէլին ուղարկեց, որոնք Ամմոնացիներին կոտորեցին, և Ռաբբան պաշարեցին. բայց Դաւիթը բնակուում էր Երուսաղէմում։ 2 Եւ մի օր իրիկուայ դէմ Դաւիթն իր անկողինից դուրս գալով պալատի տանիքի վերայ մանէր գալիս, և տանիքի վերայից մի կին տեսաւ, որ լուացվում էր, և այն կինը շատ գեղեցիկ էր տեսքով։ 3 Եւ Դաւիթը մարդ ուղարկեց և հարցուփորձ արաւ այն կնոջ համար. և ասացին. Ահա դա Բերսաբէն է Էլիամի աղջիկը՝ Փեսացի Ուրիայի կինը։ 4 Եւ Դաւիթը պատգամաւորներ ուղարկեց և առաւ նորան, և նա եկաւ նորա մօտ. և Դաւիթը պառկեց նորա հետ. և նա նոր էր մաքրուած իր անմաքրութիւնից. և նա ետ գարձաւ իր տունը։ 5 Եւ կինը յղա-

ցաւ, և նորէ ուղարկեց և իմացրեց Դաւթին ասելով. Ցրի եմ
6 ես։ Եւ Դաւթը նորէ ուղարկեց Յովաբին, Ընդ Բեեսացի Ուբիային ինձ մօտ ուղարկիր։ Եւ
Յովաբը Ուբիային Դաւթի մօտ
7 ուղարկեց։ Եւ Ուբիան եկաւ նորա մօտ. և Դաւիթ հարցրեց Յովաբի ողջութիւնը, և զօրքի ողջութիւնը և պատերազմի վի-
8 ճակը։ Եւ Դաւիթն ասաց Ուբիային. Իջիր տունդ և ոտքերդ լուացիր։ Եւ երբոր Ուբիան թագաւորի պալատիցը դուրս գնաց, նորա ետևից էլ թագաւորի պար-
9 գև գնաց։ Բայց Ուբիան թագաւորի պալատի դրանը քնեց իր տիրոջ բոլոր ծառաների հետ
10 և չիջաւ իր տունը։ Եւ պատմեցին Դաւթին ասելով. Թէ Ուբիան չէ իջել իր տունը. և Դաւիթն ասաց Ուբիային. Չէ՞ որ ճանապարհից ես եկել դու. ինչո՞ւ համար չես իջել քո տունը։
11 Եւ Ուբիան ասաց Դաւթին. Տապանակը և Իսրայէլը և Յուդան վրաններում են բնակում, և իմ տէրը Յովաբը, և իմ տիրոջ ծառաները դաշտի երեսին են բանակում, և ես գնամ իմ տունը ուտելու և խմելու և կնոջս հետ պառկելու. քո կեանքը և քո հոգու կեանքը վկայ է, որ այս
12 բանը չեմ անիլ։ Եւ Դաւիթն ասաց Ուբիային. Այսօր էլ այստեղ մնա, և էգուց քեզ կ'ճանապարհեմ։ Եւ Ուբիան մնաց երուսաղէմ այն օրը և հետևեալ
13 օրը։ Եւ Դաւիթը կանչեց նորան և նա կերաւ նորա առջև և խըմեց. և Դ--էն արբեցրեց նորան. և նա իրիկունը դուրս եկաւ որ իր անկողնումը քնէ իր տիրոջ ծառաների հետ, և չիջաւ
14 իր տունը։ Եւ առաւօտը եղաւ, որ Դաւիթը մի նամակ գրեց Յովաբին և ուղարկեց Ուբիայի ձե-
15 ռօք։ Եւ նամակի մէջ գրեց ասելով. Ուբիային դրէք առաջիկ պատերազմի դիմացը, և դուք ետ քաշուեցէք նորա ետևից, որ
16 նա զարկուի և մեռնի։ Եւ եղաւ երբոր Յովաբը քաղաքը պահապան

էր, Ուբիային դրաւ այնտեղը ուր գիտեր որ զօրաւոր մարդիկ կային։ Եւ այն քաղաքի մարդիկը 17
դուրս եկան և Յովաբի հետ պատերազմեցին. և ընկան զօրքից Դաւթի ծառաներից. և Բեեսացի Ուբիան էլ մեռաւ։ Եւ Յո- 18
վաբը նորէ ուղարկեց և պատմեց Դաւթին պատերազմի բոլոր բաները։ Եւ պատուիրեց պատգա- 19
մաւորին ասելով. Երբոր պատերազմի բոլոր բաները թագաւորին պատմես վերջացնես, եթէ 20
թէ թագաւորի բարկութիւնը բարձրանայ, և քեզ ասէ՝ Ինչո՞ւ մօտեցաք քաղաքին պատերազմելու. չէ՞ք գիտում որ պարսպի վերայից նետ կ'գցեն. Ո՞վ մեռց- 21
րեց Յերոբեսեթի որդի Աբիմելէքին. չէ՞ որ մի կին գցեց նորա վերայ պարսպի վերայից մի երկաթաքարի կտոր, և նա մեռաւ Թեբէսում. ինչո՞ւ մօտեցաք պարսպին. Դու էլ ասես. Քո ծա- 22
ռայ Բեեսացի Ուբիան էլ է մեռել։ Եւ պատգամաւորը գնաց և պատմեց Դաւթին այն ամենը որի համար Յովաբը նորան ուղարկել էր։ Եւ պատգամաւորն 23
ասաց Դաւթին. Թէ երբոր այն մարդիկը ուժովացան մեզ վերայ և դաշտը դուրս եկան մեզ դէմ. մենք նորանց հալածեցինք մինչև քաղաքի դուռը. Եւ աղեղնա- 24
որները նետեր գցեցին քո ծառաների վերայ պարսպի վերայից, և մեռան Թագաւորի ծառաներից, և քո ծառայ Բեեսացի Ուբիան էլ է մեռել։ Եւ Թագա- 25
ւորն ասաց պատգամաւորին. Այսպէս ասա Յովաբին. Այդ բանը քո աչքին չար չերևայ, որովհետև սուրը այսպէս և այնպէս կ'ուտէ. ամրացրու պատերազմդ քաղաքի դէմ և քանդիր նորան. իսկ դու քաջալերիր նորան։ Եւ Ուբիայի կինը լսեց, 26
որ նորա այրը Ուբիան մեռել է, և իր մարդու վերայ սուգ արաւ։ Եւ երբոր սուգը անցաւ, Դաւիթ 27
թը ետ ուղարկեց և նորան ընդունեց իր տունը. և նա նորան կին եղաւ, և նորա համար որդի

ձնեց. բայց այս բանը, որ Դաւիթն արաւ, չար երևեցաւ Տիրոջ աչքին։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Տէրը Նաթանին ուղարկեց Դաւթի մօտ. և նա եկաւ նորա մօտ և ասաց նորան. Երկու մարդ կար մի քաղաքում, մէկը հա-
2 րուստ և միւսը աղքատ։ Հարուստը խիստ շատ հօտեր և ար-
3 ջաներ ունէր։ Իսկ աղքատը բնաւ ոչինչ չունէր բացի մի էգ գառնիկից որ ծախու առել էր և սնուցանում էր. նա մեծացաւ նորա հետ և նորա որդկանց հետ միասին. նորա պատառից ուտում էր, և նորա բաժակից խմում, և նորա ծոցումը քնում էր և նորա համար աղջկան պէս
4 էր։ Եւ այն հարուստ մարդուն մի անցաւոր եկաւ, բայց նա խնայեց իր հօտերից և արջառներից առնելու, որ իր մօտ եկած ճանապարհորդի համար ի-
րենից պատրաստէ, և առաւ այն աղքատ մարդու գառնը և ի-
րենից պատրաստեց իր մօտ եկած մարդու համար։
5 Եւ Դաւիթը շատ բարկացաւ այն մարդու վերայ, և ասաց Նաթանին. Կենդանի է Տէրը որ այդ բանն անող մարդը մահու որդի
6 է. Եւ այն գառնը պէտք է չորեքպատիկ հատուցանէ, որովհետև արել է այդ բանը, և ո-
7 րովհետև գութ չունեցաւ։ Եւ Նաթանն ասաց Դաւթին. Դո՛ւ ես այն մարդը. այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը. Ես քեզ թագաւոր օծեցի Իսրայէլի վերայ, և ես քեզ ազատեցի Սա-
8 ուղի ձեռքից. Եւ քեզ տուի քո տիրոջ տունը և քո ծոցը տէի քո տիրոջ կանայքը, և քեզ տուի Իսրայէլի և Յուդայի տունը. և եթէ քիչ էր, այն ժամանակ այս
9 էլ այն էլ կ'աւելացնէի։ Ինչո՞ւ համար Տիրոջ խօսքն անարգեցիր՝ նորա աչքին այդ չարութիւն անելով. Փղեստացի Ուրիային ձեռքիւը սրով և նորա կինը քեզ համար կին առիր. բայց նորան սպանեցիր Ամմոնի որդկանց սրո-
10 վը։ Եւ ահա սուրը քո տանից չի հեռանալ մինչև յաւիտեան, փոխանակ որ անարգեցիր ինձ և Փեստացի Ուրիայի կինը առիր որ
11 քեզ համար կին լինի։ Այսպէս է ասում Տէրը. Ահա ես քեզ վերայ չարիք եմ յարուցանելու քո տանիցը, և առնելու եմ քո կանայքը քո աչքի առջև և պի-
տի տամ քո ընկերին, և նա կը պառկէ քո կանանց հետ այս ա-
րեգակի աչքի առջև։ Վասն զի
12 դու ծածուկ արիր, բայց ես այս բանը պիտի անեմ բոլոր Իսրա-
յէլի առջև և արեգակի առջև։
13 Եւ Դաւիթն ասաց Նաթանին. Մեղանչեցի Տիրոջ գէմ։ Եւ Նա-
թանն ասաց Դաւթին. Տէրն էլ ներեց քո մեղքը, չես մեռնիլ։
14 Միայն որովհետև Տիրոջ թշնա-
միներին այս բանով առիթ տուր հայհոյութիւն անելու, ա-
պա այն որդին էլ, որ պիտի ծըն-
ուի քեզ համար պէտք է մեռնէ։
15 Եւ Նաթանը գնաց իր տունը։
Եւ Տէրը զարկեց այն մանուկը որ Ուրիայի կինը ծնաւ Դաւթի
16 համար և նա հիւանդացաւ։ Եւ Դաւիթն աղաչեց Աստուծոյն այն տղայի համար. և Դաւիթը ծոմ պահեց, և գնաց գիշերը անց կացրեց գետնի վերայ պառկած։
17 Եւ նորա տան ծերերը գնացին մօտը, որ նորան կանգնեցնեն գետնիցը, բայց նա չուզեց և նո-
18 րանց հետ հաց չկերաւ։ Եւ ե-
րրորդ օրը որ երեխան մեռաւ. և Դաւթի ծառաները վախում էին նորան իմացնելու թէ երեխան մեռել է, որովհետև ասում էին. Թէ Ահա քանի որ երեխան կենդանի էր, մենք նո-
րան ասացինք, բայց նա մեր ձայ-
նին չլսեց, և ի՞նչպէս ասենք նո-
րան՝ երեխան մեռել է, որ մի վատ բան կ'անէ։
19 Եւ Դաւիթը տեսաւ որ իր ծառաները շշնջում են իրար հետ և Դաւիթը հաս-
կացաւ որ երեխան մեռել է. և Դաւիթն ասաց իր ծառաներին. Արդեօք մեռե՞լ է երեխան. և

20 նորանք ասացին. Մեռել է։ Եւ Դաւիթը վեր կացաւ գնաց[1] և լուացուեցաւ և օծուեցաւ և իր հանդերձները փոխեց և գնաց Տիրոջ տունը և երկրպագութիւն արաւ. և գնաց իր տունը, և ուզեց և նորա առջևը հաց դրին, 21 և նա կերաւ։ Եւ նորա ծառաներն ասացին նորան. Սա ի՞նչ բան է որ արիր. քանի որ երեխան կենդանի էր՝ ծոմ էիր պահում և լաց էիր լինում. բայց երբոր մեռաւ երեխան, վեր կացար և հաց կերար։ 22 Եւ նա ասաց. Քանի որ երեխան կենդանի էր, ծոմ էի պահում և լաց էի լինում, վասն զի ասում էի. Ո՛վ գիտէ ողորմէ Տէրը ինձ և երեխան կ'ապրէ։ 23 Բայց հիմա որ մեռել է, ես էլ ինչո՞ւ համար ծոմ պահեմ. կարո՞ղ եմ նորան կրկին դարձնել. ես ինքս եմ նորա մօտ գնալու, բայց նա ինձ մօտ չէ դառնալ։

24 Եւ Դաւիթը մխիթարեց իր Բերսաբէ կնոջը, և մտաւ նորա մօտ և պառկեց նորա հետ, և նա մի որդի ծնաւ և նորա անունը դրաւ Սողոմոն. և Տէրը սիրեց նորան։ 25 Եւ Նաթան մարգարէի ձեռքը հրամայ ուղարկեց, և նորա անունը Յեդիդեա դրաւ Տիրոջ համար։

26 Եւ Յովաբը պատերազմ էր անում Ռաբբայում Ամմոնի որդիների հետ, և առաւ թագաւորանիստ քաղաքը։ 27 Եւ Յովաբը պատգամաւորներ ուղարկեց Դաւթին և ասաց. Ռաբբայի հետ պատերազմ եմ արել և ջրերի 28 քաղաքն էլ առել եմ։ Եւ հիմա ժողովրդի մնացորդը հաւաքիր, և բանակ սուր քաղաքի դէմ և առ նորան, որպէս զի ես չառնեմ քաղաքը և իմ անունը յիշուի նորա վերայ։ 29 Եւ Դաւիթը հաւաքեց բոլոր ժողովրդին և գնաց Ռաբբայ, և պատերազմեց 30 նորա հետ և առաւ նորան։ Եւ նորանից թագաւորի թագն առաւ նորա գլխից, որի ծանրութիւնը մի տալանդ ոսկի էր և պատուական ակունք. և Դաւթի գլխին դրաւեցաւ. և խիստ շատ աւար առաւ այն քաղաքից։ 31 Եւ նորանում եղած ժողովրդին դուրս հանեց և դրաւ սղոցի և երկաթի կայծնասղլերի և երկաթի տապարների տակ և նորանց պիտի փուռով անցկացրեց։ Եւ այսպէս արաւ Ամմոնի որդիների բոլոր քաղաքներին։ Եւ Դաւիթն ու բոլոր ժողովուրդն ետ դարձան Երուսաղէմ։

ԳԼ. ԺԴ

1 Եւ ապրանից յետոյ եղաւ որ Դաւթի որդի Աբիսաղոմը մի գեղեցիկ քոյր ունէր՝ անունը Թամար. և Դաւթի որդի Ամնոնը սիրեց նորան։ 2 Եւ Ամնոնը նեղվում էր մինչև որ հիւանդացաւ իր քոյր Թամարի պատճառով, քանի նա կոյս էր. և դժուար էր երևում Ամնոնի աչքերին նորան մի բան անել։ 3 Բայց Ամնոն մի բնկեր ունէր, և նորա անունը Յովնադաբ էր՝ որի Դաւթի եղբայր Սամմայի. և Յովնադաբը մի շատ իմաստուն մարդ էր։ 4 Եւ նորան ասաց. Ինչո՞ւ ես դու այդպէս օրէցօր մաշվում, ով թագաւորի որդի. մի՞թէ ինձ չես յայտնել։ Եւ Ամնոն ասաց նորան. Ես սիրում եմ եղբայր Աբիսաղոմի քոյր Թամարին։ 5 Եւ Յովնադաբն ասաց նորան. Պառկիր քո անկողնումը և քեզ հիւանդ ձևացրու, և երբոր հայրդ գայ քեզ տեսնելու, դու ասիր նորան. Թող իմ քոյր Թամարը գայ և ինձ հաց ուտեցնէ, և իմ աչքի առջև պատրաստէ կերակուրը, որպէս զի տեսնեմ և ուտեմ նորա ձեռքից։ 6 Եւ Ամնոն պառկեց և իրան հիւանդ ձևացրեց. և թագաւորը եկաւ նորան տեսնելու. և Ամնոն ասաց թագաւորին. Թող իմ քոյր Թամարը գայ և իմ աչքի առջև երկու բլիթ շինէ, և ես ուտեմ նորա ձեռքից։ 7 Եւ Դաւիթը հրով ուղարկեց Թամարին տունը ասելով. Գնա քո եղբայր Ամնոնի տունը և շինիր նորա համար կե-

8 բակուրը։ Եւ Թամարը գնաց իր
եղբայրը Ամնոնի տունը որ պառ-
կել էր, և վեր առաւ խմորը և
թրեց և բլիթներ շինեց նորա
աչքի առջև, և եփեց բլիթները։
9 Եւ առաւ տապակը և թափեց
նորա առջև. բայց նա չուզեց
ուտել. և Ամնոն ասաց. Իմ
մօտիցն ամէն մարդ դուրս հա-
նեցէք. և ամէն մարդ դուրս ե-
10 կաւ նորա մօտիցը։ Եւ Ամնոն
ասաց Թամարին. կերակուրը բեր
ննեակը, որ քո ձեռքիցն ուտեմ.
և Թամարն առաւ իր շինած բլ-
լիթները և տարաւ ննեակը իր
11 եղբայր Ամնոնի մօտ։ Եւ մօտեց-
րեց նորան որ ուտէ. բայց նա
բռնեց նորան և ասաց նորան.
Եկ պառկիր ինձ հետ, քոյրս։
12 Եւ նա ասաց նորան. Ոչ, եղ-
բայրս, ինձ մի բռնաբարիր. քան-
զի Իսրայէլի մէջ այսպէս չեն ա-
նել. այդ անզգամութիւնը մի ա-
13 նիր։ Եւ ես ուր տանեմ իմ նա-
խատինքը, և դու էլ Իսրայէլի
մէջ անզգամներից մէկի պէս կ'լի-
նիս. և հիմա դու խօսիր թագա-
ւորի հետ, և նա ինձ չի արգե-
14 լիլ քեզանից։ Բայց նա չուզեց
նորա ձայնին լսել և բռնեց նո-
րան և բռնաբարեց նորան և պառ-
15 կեց նորա հետ։ Եւ Ամնոն նո-
րան ատեց շատ մեծ ատելու-
թեամբ, այնպէս որ ատելի մեծ
էր ատելութիւնը որով ատում
էր նորան այն սիրուց որով ս-
ր սիրում էր նորան։ Եւ Ամ
նոն ասաց նորան. Վեր կաց
16 գնա։ Եւ Թամար ասաց նորան.
Մի՛ եղիր պատճառ այս մեծ
մեծ չարութեանը քան թէ այն
միւսը որ արիր ինձ՝ դուրս անե-
լով ինձ. բայց նա չուզեց նորան
17 լսել։ Եւ նա իր սպասաւոր ե-
րիտասարդին կանչեց և ասաց.
Դուրս արէ սորան իմ մօտիցը,
և կղպիր դուռը նորա ետևից։
18 Եւ Թամար վերայ թևքերով պատ-
մուճան կար, զի թագա-
ւորի կոյս աղջիկները այսպիսի
պատմուճաններ էին հագնում։
Եւ նորա սպասաւորը նորան
դուրս արաւ և դուռը կղպեց ե-
19 տևիցը։ Եւ Թամարը մոխիր ա-
ռաւ իր գլխին և թևքերով
պատմուճանը, որ իր վերայ էր,
պատառեց և իր ձեռքը իր գլխին
դրած գնում էր և լաց լինում։
20 Եւ նորա եղբայրը Աբիսողոմ ա-
սաց նորան. Արդեօք քո եղբայր
Ամնոնը քեզ հետ եղաւ. հիմա,
քոյրս, լուռ կաց, քո եղբայրն
է նա. այս բանը սրտիդ հոգս մի
շինիր։ Եւ Թամարը նստեց ան-
մխիթար իր եղբայր Աբիսողոմի
տունը։
21 Եւ Դաւիթ թագաւորը
լսեց այս բոլոր բաները և շատ
բարկացաւ։
22 Եւ Աբիսողոմը չէր
խօսում Ամնոնի հետ ոչ վատ և
ոչ լաւ, վասն զի Աբիսողոմն ա-
տում էր Ամնոնին նորա համար
որ իր քոյր Թամարին բռնաբա-
րել էր։
23 Եւ երկու տարի անցնելուց յե-
տոյ եղաւ որ Աբիսողոմի սպասաւորն էր Եփրեմի մօտ ե-
ղած բաղխաստորումը. և Աբիս-
ողոմը կանչեց թագաւորի բոլոր
որդիները։
24 Եւ Աբիսողոմն եկաւ
թագաւորի մօտ և ասաց. Ահա
քո ծառան սպասաւոր ունի.
խնդրեմ՝ որ թագաւորը և իր
ծառաները ծառայիդ հետ գնան։
25 Եւ թագաւորն ասաց Աբիսողո-
մին. Ոչ, որդիս, չգնանք ամենքս
և չծանրանանք քեզ վերայ. և
նա ստիպեց նորան, բայց նա չու-
զեց գնալ և օրհնեց նորան։
26 Եւ Աբիսողոմն ասաց. Եթէ ոչ, թող
գնէ իմ եղբայր Ամնոնը գոյ մեզ
հետ. և թագաւորն ասաց նո-
րան. Ինչո՞ւ համար գնայ քեզ
հետ։ Բայց Աբիսողոմն ստիպեց
27 նորան, և նա ուղարկեց նորա
հետ Ամնոնին և թագաւորի բոլոր
որդիները։
28 Եւ Աբիսողոմը հրա-
մայեց իր երիտասարդներին ա-
սելով. Տեսէք արէք երբոր Ամ-
նոնի սիրտը գինով զուարճանայ և
ես ձեզ ասեմ՝ զարկէք Ամնոնին,
մեռցրէք նորան, մի վախենաք,
չէ՞ որ ես եմ ձեզ հրամայում.
զօրացէք և քաջասիրտ եղէք։
29 Եւ Աբիսողոմի երիտասարդները
արին Ամնոնին ինչպէս որ Աբիս-
ողոմը հրամայել էր, և թագա-

ՈՐԴՈՅ ՈՐԴԻՔԸ վեր կացան հեծան ամեն մարդ իր ջորին և փախան։
30 Եւ նորանք տակաւին ճանապարհին էին, որ լուրը եկաւ Դաւթին ասելով. Թէ Աբիսողոմը զարկեց թագաւորի բոլոր որդիքանցը, և նորանցից մէկն էլ չէ
31 մնացել։ Եւ թագաւորը վեր կացաւ և իր հանդերձները պատառեց և գետինը պառկեց, և նորա բոլոր ծառաները կանգնել էին՝ հանդերձները պատառած։
32 Եւ Դաւթի եղբայր Սամայի որդին Յովնադաբը պատասխանեց ասելով. Իմ տէրը չասէ թէ բոլոր երիտասարդներին՝ թագաւորի որդիանցը սպանեցին, վասն զի միայն Ամնոն է մեռել. վասն զի Աբիսողոմի բերանովը որոշուած էր այն օրից որ նա բռնաբարեց նորա քոյր Թամարին։
33 Եւ հիմա թող թագաւորը հոգս չանէ այս բանի համար ասելով. Թէ թագաւորի բոլոր որդիքը մեռան, վասն զի միայն Ամնոն է
34 մեռել։ Եւ Աբիսողոմը փախաւ։ Եւ երբոր դէտ երիտասարդը իր աչքերը բարձրացրեց և մարդ տեսաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս հանի Ճանապարհովը լեռան կողքովը։ Եւ Յովնադաբն
35 ասաց թագաւորին. Ահա գալիս են թագաւորի որդիքը. ինչպէս որ քո ծառայի խօսքն էր, այնպէս եղաւ։ Եւ եղաւ հէնց որ
36 խօսքը վերջացրեց նա, ահա եկան թագաւորի որդիքը և բարձրացրին իրանց ձայները և լացան, և թագաւորն էլ և նորա բոլոր ծառաները շատ մեծ լացով լացան։
37 Եւ Աբիսողոմը փախաւ և գնաց Գեսուրի թագաւոր Ամիհուդի որդի Թոլմիի մօտ. և Դաւիթը սուգ արաւ իր որդու մասին ամեն օր։
38 Բայց Աբիսողոմը փախաւ և գնաց Գեսուր, և այնտեղ
39 մնաց երեք տարի։ Եւ Դաւիթ թագաւորը փափաքում էր դուրս գնալ Աբիսողոմի մօտ, վասն զի մխիթարուել էր մեռնող Ամնոնի վերայ։

ԳԼ. ԺԴ

1 Եւ Յովաբ Սարուհեան Յովաբն իմացաւ որ թագաւորի սիրտը Աբիսողոմի վերայ էր։ Եւ Յովաբը Թեկուէ ուղարկեց Թեկուէ և այնտեղից մի իմաստուն կին առաւ և ասաց
2 նորան. Խնդրեմ՝ քեզ սգաւոր ձևացրու և սուգի հանդերձ հագիր, իւղով մի օծուիր, և եղիր մի այնպիսի կին որ շատ օրերից ի վեր սգաւոր է մեռելի համար։
3 Եւ գնա թագաւորի մօտ և նորա հետ այս կերպ խօսքեր խօսիր. և Յովաբը խօսքերը նորա բերանը դրաւ։
4 Եւ Թեկուացի կինը խօսեց թագաւորի հետ և ընկաւ իր երեսի վերայ գետինը և երկրպագեց և ասաց. Օգնիր, արքայ։
5 Եւ թագաւորն ասաց նորան. Ի՞նչ ունիս. և նա ասաց. Ո՛հ, ես մի որբևայրի կին եմ, և իմ այրը մեռել է։
6 Եւ քո աղախինը երկու որդիք ունէր. և երկուսը կռիւ արին դաշտումը, և նորանց մէջ հաշտեցնող չկար, և մէկը զարկեց միւսին և մեռցրեց նորան։
7 Եւ ահա բոլոր ազգատոհմը վեր է կացել քո աղախնի վերայ և ասում են՝ տուր այն իր եղբօրը զարկողին որ սպանենք նորան իր եղբօր անձի տեղ, որ նա սպանել է, և ժառանգն էլ կորցնենք, և հանգցնում են իմ այն կայծն էլ որ մնացել է ինձ համար, չթողելով իմ մարդի համար ոչ անուն և ոչ մնացորդ երկրի երեսին։
8 Եւ թագաւորն ասաց կնոջը. Գնա քո տունը և ես կ'պատուիրեմ քո մասին։
9 Եւ Թեկուացի կինը ասաց թագաւորին. Ինձ վերայ, ով Տէր թագաւոր, լինի յանցանքը իմ և իմ հօր տան վերայ, և թագաւորն ու նորա աթոռը անպարտ լինի։
10 Եւ թագաւորն ասաց. Եթէ քեզ հետ խօսող լինի, նորան ինձ մօտ բեր, և այլևս քեզ չի դպչիլ։
11 Եւ կինը ասաց. Թող թագաւորը յիշէ քո Տէր Աստուծոյն, որ չշատանան արեան վրէժխնդիրները սպանելու համար և իմ որդին չմեռցնեն։ Եւ նա ասաց.

կենդանի է Տէրը որ քո որդու
12 մտիցը գեաինը չի ընկինիլ։ Եւ
կինը ասաց. Թող ազախինդ մի
խօսք խօսէ իմ տէր Թագաւորի
13 հետ. և նա ասաց. Խօսիր։ Եւ
կինը ասաց. Ապա ինչո՞ւ հա-
մար ես այսպիսի բան մտածում
Աստուծոյ ժողովրդի վերայ. և
Թագաւորն այս բանը խօսելուց
յանցաւորի նման է լինում, քա-
նի որ Թագաւորն իր աքսորածը
14 ետ չդարձնէ։ Վասն զի մենք ան-
շուշտ պիտի մեռնենք, և գետ-
նը թափուած ջրի նման ենք և
չի ժողովուիլ. և Աստուած հոգի
չէ առնում, այլ խորհուրդներ
է խորհում որ աքսորուածն ի-
15 րանից աքսորէ։ Եւ հիմա եկայ
այս խօսքն իմ տէր Թագաւորի
հետ խօսելու, վասն զի ժողո-
վուրդն ինձ վախեցնում է. և ա-
զախինդ ասաց. Խօսեմ Թագա-
ւորի հետ, գուցէ Թագաւորն
16 անէ իր ազախնի խօսքը։ Որովհե-
տև Թագաւորը լսելու է, որ իր
ազախնին ազատէ այն մարդու
ձեռքից որ ուզում է կորցնել ինձ,
և իմ որդուն միասին Աստուծոյ
17 ժառանգութիւնից։ Եւ քո ա-
զախինը ասաց. Թող իմ տէր
Թագաւորի խօսքը մխիթարու-
թիւն լինի, քանզի իմ տէր Թա-
գաւորը Աստուծոյ հրեշտակի պէս
է՝ որ հասկանայ լաւը և չարը.
և քո Տէր Աստուածը քեզ հետ
18 լինի։ Եւ Թագաւորը պատաս-
խանեց և ասաց այն կնոջը. Ինձ-
անից մի բան մի թաքցնիր, որ
ես քեզանից հարցնում եմ. և
կինն ասաց. Թող իմ տէր Թա-
19 գաւորն ասէ։ Եւ Թագաւորն ա-
սաց. Յովաբի ձեռքը քեզ հետ
է այս բոլոր բաներում. Եւ կի-
նը պատասխանեց և ասաց. Կեն-
դանի է քո անձը, ով տէր իմ
Թագաւոր, որ ոչ ոք չի խոտորիլ
աջ և կամ ձախ իմ տէր Թագա-
ւորի բոլոր ասածից, վասն զի
ծառադ Յովաբն ինքն է ինձ պատ-
ուիրել, և նա է դրել այս բոլոր
խօսքերը քո ազախնի բերանը։
20 Բանի կերպարանքը դարձնելու
նպատակաւ արաւ ծառադ Յո-
վաբն այս բանը, և իմ տէրն ի-
մաստուն է Աստուծոյ հրեշտակի
իմաստութեան պէս, որ երկրիս
վերայի բոլորն իմանայ։

Եւ Թագաւորն ասաց Յովաբին. 21
Ահա այս բանը արի. ուրեմն գնա
ետ դարձրու Աբիսողոմ պատա-
նուն։ Եւ Յովաբն ընկաւ իր երե- 22
սի վերայ գետինը և երկրպագեց
և օրհնեց Թագաւորին, և Յովա-
բն ասաց. Այսօր իմացաւ ք
ծառան որ շնորհք եմ գտել ք
աչքի առջև, ով տէր իմ Ա-
քայ, որ Թագաւորն իր ծառայի
խօսքը կատարեց։ Եւ Յովաբը վեր 23
կացաւ գնաց Գեսուր և Աբիսո-
ղոմին բերաւ Երուսաղէմ։ Եւ 24
Թագաւորն ասաց. Թող դառնայ
իր տունը և իմ երեսը չտեսնէ.
և Աբիսողոմը դարձաւ իր տունը
և Թագաւորի երեսը չտեսաւ։

Եւ Աբիսողոմի պէս գեղեցիկ 25
մարդ չկար բոլոր Իսրայէլի մէջ.
որին շատ գովում էին, ոտքի
թաթիցը մինչև գագաթը նորա-
նում արատ չկար։ Եւ իր գլու- 26
խը խուզելիս (և լինում էր որ
ժամանակից ժամանակ մազերը
խուզում էր, որովհետև ծանր էր
լինում նորա համար և նա խու-
զում էր), և նորա գլխի մազի
ծանրութիւնը երկու հարիւր սիկղ
էր Թագաւորական կշիռքով։ Եւ 27
Աբիսողոմի համար ծնան երեք
որդիք և մէկ աղջիկ՝ անունը
Թամար, որ տեսքով գեղեցիկ
կին էր։

Եւ Աբիսողոմ մնաց երուսա- 28
ղէմ ամբողջ երկու տարի և Թա-
գաւորի երեսը չտեսաւ։ Եւ Աբի- 29
սողոմը խրկեց ուղարկեց Յովաբին,
որ նորան ուղարկէ Թագաւորի
մօտ, բայց նա չուզեց նորա մօտ
գնալ. և նա երկրորդ անգամ ևս
ուղարկեց, և նա չուզեց գալ։
Եւ ասաց իր ծառաներին. Տեսէք 30
Յովաբի արտը որ իմ ձեռքին է.
և նա այնտեղ գարի ունի. գնա-
ցէք կրակով այրեցէք այն. և
Աբիսողոմի ծառաները արտը կը-
րակով այրեցին։ Եւ վեր կացաւ 31
Յովաբը ու գնաց Աբիսողոմի մօտ՝
տունը, և ասաց նորան. Ինչո՞ւ

Համար են քո ծառաները իմ
32 սրտի կրակով սրել։ Եւ Աբիսողոմն ասաց Յովաբին. Ահա քեզ մօտ էր ուղարկեցի ասելով. Այստեղ եկ որ քեզ թագաւորի մօտ ուղարկեմ ասելու Համար. Թէ Ես ինչո՞ւ Համար գեսուրից եկայ, ինձ Համար լաւ կ'լինէր որ դեռ այնտեղ լինէի. և արդ թող թագաւորի երեսը տեսնեմ, և եթէ ինձ վերայ յանցանք կայ, այն ժամնակ ինձ
33 մեռցրու։ Եւ Յովաբը գնաց թագաւորի մօտ և նորան պատմեց, և նա կանչեց Աբիսողոմին և նա եկաւ թագաւորի մօտ, և երկրպագեց նորան մինչև գետին թագաւորի առջև. և թագաւորը Համբուրեց Աբիսողոմին։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ սորանից յետոյ որ Աբիսողոմ իր Համար կառքեր և ձիեր և յիսուն մարդ սուրհանդակ շինեց։
2 Եւ Աբիսողոմը կանուխ վեր էր կենում ու կանգնում դրան ճանապարհի մօտ, և ամեն մարդ որ դատ էր ունենում որ գար թագաւորի մօտ դատաստանի Աբիսողոմը նորան կանչում էր իր մօտ և ասում էր. Դու ո՞ր քաղաքից ես, և նա ասում էր. Իսրայէլի ցեղերի մէ-
3 կից ե ծառադ։ Եւ Աբիսողոմը նորան ասում էր. Տես քո ճանապարհները լաւ և ուղիղ են, բայց դու լսող չունիս թագաւո-
4 րի կողմից։ Եւ Աբիսողոմն ասում էր. Երանի թէ ինձ դատաւոր դնէին այս երկրումը, և ինձ մօտ գար ամեն ով վէճ և դատ ունենար, և ես կարդարացընէի նորան։
5 Եւ երբոր մի մարդ նորան մօտենում էր նորան երկրպագելու, նա իր ձեռքը մեկնում էր և նորան բռնում, և
6 համբուրում էր նորան։ Եւ Աբիսողոմն այսպէս էր անում բոլոր Իսրայէլին որ գալիս էին դատուելու Համար թագաւորի մօտ. և Աբիսողոմը գողացաւ Իսրայէլի մարդկանց սրտերը։

7 Եւ քառասուն տարի անցնելուց յետոյ եղաւ որ Աբիսողոմն ասաց թագաւորին. Թող գնամ իմ ուխտերը կատարեմ որ արել եմ Տէրոջը Համար Քեբրոնում։
8 Վասն զի քո ծառան ուխտ եմ արել, երբոր ես բնակում էի Ասորոց Գեսուրումը, ասելով. Եթէ Տէրն ինձ Երուսաղէմ դարձնէ,
9 ես Տէրոջը եմ ծառայելու։ Եւ թագաւորն ասաց նորան. Գնա խաղաղութեամբ. և նա վեր կացաւ ու գնաց Քեբրոն։
10 Եւ Աբիսողոմը լրտեսներ ուղարկեց Իսրայէլի բոլոր ցեղերի մէջ ասելով. Երբոր փողի ձայնը լսէք, ասացէք՝ Աբիսողոմը թագաւոր եղաւ Քեբրոնում։
11 Եւ Աբիսողոմի հետ երկու Հարիւր մարդ գնաց Երուսաղէմից հրաւիրուած. և նորանք գնացին միամտութեամբ, և ոչինչ չգիտէին։
12 Եւ Աբիսողոմը զոհերը զոհելիս՝ մարդ ուղարկեց Դաւթի խորհրդակից Գեղոնացի Աքիտոփելին — Բէր — նորան քաղաք՝ Գեղոնից։ Եւ դաւաճանութիւնը զօրացաւ. և ժողովուրդը գնալով շատանում էր Աբիսողոմի հետ։

13 Եւ լրտեսը եկաւ Դաւթի մօտ ասելով. Իսրայէլի մարդկանց սիրտը Աբիսողոմի հետ է։
14 Եւ Դաւիթն ասաց իր բոլոր ծառաներին, որ իրան հետ Երուսաղէմումն էին. Վեր կացէք և փախչենք, վասն զի մեզ Համար ազատութիւն չի լինիլ Աբիսողոմի երեսից. շտապեցէք գնալու, մի գուցէ նա շուտով մեզ հասնէ և մեզ վերայ չարիք բերէ և քաղաքը զարկէ սուրի բերանով։
15 Եւ թագաւորի ծառաները ասացին թագաւորին. Ամեն ինչ որ մեր տէր թագաւորը բարեհաճէ, ահա մենք քո ծառաները։

16 Եւ դուրս եկաւ թագաւորը և նորա բոլոր տունը նորա հետից. և թագաւորը տասը հարճ կին թողեց տունը պահելու Համար։
17 Եւ թագաւորը դուրս եկաւ և բոլոր ժողովուրդը նորա հետից և կանգնեցին Բեթ-Համերհոգում։
18 Եւ նորա կողմին անց էին կենում

նորա բոլոր ծառաները, բոլոր գե-
րեզմանները և բոլոր փեղեթինները,
և բոլոր Գեթացիները՝ վեց հար-
իւր մարդ որ եկել էին նորա ե-
տևից Գեթից անցնում էին թա-
19 գաւորի առջևից: Եւ թագաւորն
ասաց Գեթացի Եթթիին. Ինչո՞ւ
համար ես դու էլ գնում մեզ
հետ. եւ դարձիր և մնա թա-
գաւորի մօտ, վասն զի դու օտա-
րական ես և պանդուխտ ես քո
20 տեղումը: Քո գալը երէկ էր, և
այսօր քեզ խոխտե՞մ մեզ հետ
գնալու. և ես թող գնամ՝ ուր
որ գնում եմ. եւ դարձիր և քո
եղբայրներին էլ եւս դարձրու.
քեզ հետ լինի խաղաղութիւն
21 և ճշմարտութիւն: Եւ Եթթիին
պատասխանեց թագաւորին և ա-
սաց. Կենդանի է Տէրը և կեն-
դանի է թագաւորը իմ տէրը որ՝
այնտեղ ուր որ լինի իմ տէր
թագաւորը թէ մնհուան մէջ
թէ կենդանութեան մէջ ծառադ
22 էլ պիտի այնտեղ լինի: Եւ Դա-
ւիթն ասաց Եթթիին. Եկ ան-
ցիր: Եւ Գեթացի Եթթիին ան-
ցաւ իր հետ եղող բոլոր մարդ-
կանցով և բոլոր բնտանիքներով
23 վը: Եւ բոլոր երկիրը լաց էր լի-
նում մեծ ձայնով, և բոլոր ժո-
ղովուրդը անց էր կենում, և թա-
գաւորը անց կացաւ Կեդրոն հե-
ղեղատովը. և բոլոր ժողովուրդը
անց էր կենում ճանապարհի ա-
ռաջովը անապատը:

24 Եւ ահա Սադովկն էլ և բոլոր
Ղեւտացիք նորա հետ տանում
էին Աստուծոյ ուխտի տապանա-
կը. և Աստուծոյ տապանակը
կանգնեցրին. և Աբիաթարը վեր
*ելաւ մինչև որ բոլոր ժողովուր-
դը քաղաքից դուրս գալը վեր-
25 ջացրեց: Եւ թագաւորն ասաց
Սադովկին. Աստուծոյ տապա-
նակը եւս դարձրու քաղաքը. եթէ
ես շնորհք եմ գտել Տիրոջ աչ-
քի առջև, նա ինձ եւս կ'դարձնէ
և ինձ տեսնել կ'տայ իրան և իր
26 բնակարանը: Բայց եթէ նա այս-
պէս ասէ. Թէ Ես քեզ չեմ հա-

---

*ողջակէզ մատուցրեց

ւանում, ահա ես, թող ինձ ա-
նէ ինչպէս որ հաճելի է իր աչ-
քին: Եւ թագաւորն ասաց Սա- 27
դովկ քահանային. Ով դու տե-
սանող, եւս դարձիր քաղաքը
խաղաղութեամբ և քո որդի Ա-
քիմաասը և Աբիաթարի որդի
Յովնաթանը ձեր երկու որդիքը
ձեզ հետ: Տեսէք ես անապատի 28
դաշտերումը ուշանալու եմ, մին-
չև որ ձեզանից խօսք գայ որ ին-
ձանից նշանակեք: Եւ Սադովկն ու Աբի- 29
աթարը Աստուծոյ տապանակը
եւս դարձրին Երուսաղէմ, և մը-
նացին այնտեղ:

Եւ Դաւիթը վեր էր ելնում 30
Ձիթենեաց զառիվերովը, և վեր
ելնելով լաց էր լինում, և իր գը-
լուխը ծածկած և ոտքերը բոլիկ
էր գնում. և նորա հետ եղող
բոլոր ժողովուրդը՝ ամեն մարդ
իր գլուխը ծածկել էր և վեր էին
ելնում լաց լինելով: Եւ Դաւ- 31
թին պատմեցին ասելով. Ա-
քիտոփէլը սպատամբների հետ Ա-
բիսողոմի մօտ է: Եւ Դաւիթն
ասաց. Յիմարացրու Աքիտոփէլի
խորհուրդը, աղաչում եմ, ով
Տէր: Եւ եղաւ երբոր Դաւիթն 32
եկաւ մինչև լուսի գլուխը, ուր
նա երկրպագութիւն արաւ Ա-
ստուծոյ, ահա նորա դիմացը Է-
Արտքացի Քուսին իր պատմու-
ճանը պատռած և հողը գլխին:
Եւ Դաւիթն ասաց նորան. Եթէ 33
ինձ հետ գաս, ինձ վերայ բեռ
կ'լինիս: Եւ եթէ եւս գառնաս 34
քաղաքը և Աբիսողոմին ասես.
Ես քո ծառայ գառնամ, ով թա-
գաւոր, ես առաջուց քո հօր ծա-
ռան էի, և հիմա էլ քո ծառան
եմ. այն ժամանակ դու կ'ցրուես
ինձ համար Աքիտոփէլի խորհուր-
դը: Եւ չէ՞ որ այնտեղ քեզ հետ 35
կան Սադովկ և Աբիաթար քա-
հանաները, և ամեն ինչ որ թա-
գաւորի տանից լսես, իմացրու
Սադովկ և Աբիաթար քահանա-
ներին: Ահա այնտեղ նորանց 36
հետ են նորանց երկու որդիքը՝
Աքիմաաս Սադովկի և Յովնա-
թան Աբիաթարի որդին. և ինձ
մօտ ուղարկեցէք նորանց ձեռքը

37 ամեն ինչ բան որ լսէք։ Եւ Դաւթի բարեկամ Քուսին եկաւ քաղաքը. և Աբիսողոմն եկաւ Երուսաղէմ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Դաւիթը Բէէ գլխից մի քիչ անցել էր, և ահա նորա դիմացը էր՝ Մեմիբոսթէի ծառայ Սիբան երկու էշով և նորանց վերայ բեռնած երկու հարիւր հաց, հարիւր ողկոյզ չամիչ, և հարիւր շաղոց չոր թուզ և մի տիկ
2 գինի։ Եւ թագաւորն ասաց Սիբային. Սա ի՞նչ ունիս. և Սիբան ասաց. Էշերը թագաւորի տան համար են հեծնելու, և հացն ու թուզը պատանիներին ուտելու համար, և գինին անապատումը նուաղածների խմելու
3 համար է։ Եւ Դաւիթը ասաց. Ո՞ւր է քո տիրոջ որդին։ Եւ Սիբան ասաց թագաւորին. Ահա մնացել է Երուսաղէմում, վասն զի ասաց. Այսօր ինձ էտ կ'դարձնէ Իսրայէլի տունը իմ հօր թա-
4 գաւորութիւնը։ Եւ թագաւորն ասաց Սիբային. Ահա քեզ լինի ամեն ինչ որ Մեմիբոսթէինն է. և Սիբան ասաց. *Ընդհակառակ եմ, թող շնորհք գտնեմ քո աչքի առջև, ով տէր իմ թագաւոր։
5 Եւ Դաւիթ թագաւորը եկաւ մինչև Բաւուրիմ, և ահա այնտեղից մի մարդ դուրս եկաւ՝ Սաւուղի ազգականներից՝ անունը Սեմէի որդի Գերայի. դուրս գալով անիծում էր։
6 Եւ քարեր էր գցում Դաւթին և Դաւիթ թագաւորի բոլոր ծառաներին, և բոլոր ժողովուրդն ու բոլոր զօրաւորները նորա աջ և նորա
7 ձախ կողմին էին։ Եւ Սեմէին այսպէս էր ասում իր անէծքումը. Դուրս եկ, դուրս եկ, ով արիւնահեղ մարդ, ով անօրէն
8 մարդ։ Տէրը քեզ վերայ դարձրեց Սաւուղի տան բոլոր արիւնները, որի փոխարէն դու թագաւոր եղար. և Տէրը թագաւորութիւնը տուաւ քո որդի Աբիսողոմի ձեռքը. և ահա դու քո չարիքի մէջ ես, վասն զի դու մի արիւնահեղ մարդ ես։ 9
Եւ Շարուհեայի որդի Աբեսան ասաց թագաւորին. Ինչո՞ւ համար է անիծում այս սատկած շունը իմ տէր թագաւորին. թող անցնեմ ու գլուխը կտրեմ։ Եւ թա- 10
գաւորն ասաց. Դուք ինձ հետ ի՞նչ բան ունիք, ով Շարուհեայ որդիք. թող անիծէ. վասն զի Տէրն է ասել նորան՝ Անիծիր Դաւթին. և ո՞վ կ'ասէ նորան. Ինչո՞ւ համար ես այսպէս անում։
Եւ Դաւիթն ասաց Աբեսային 11
և իր բոլոր ծառաներին. Ահա իմ որդին որ իմ երանքիցն է դուրս եկել, որոնում է իմ անձը, ո՞ւր մնաց հիմա Բենեամինեանը. թող տուէք նորան որ անիծէ, վասն զի Տէրն է ասել նորան։ Գուցէ Տէրը նայէ իմ 12
նեղութեանը և Տէրը ինձ բարիք հատուցանէ այսօր նորա անէծքի փոխարէն։ Եւ Դաւիթն ու իր 13
մարդիկը գնացին ճանապարհը. բայց Սեմէին գնում էր լեռան կողքովը նորա մօտից, գնում էր և անիծում, և քարեր էր գցում նորա մօտից և հող էր ցանում
նորա վերայ։ Եւ եկաւ թագաւորը 14
և նորա հետ եղող բոլոր ժողովուրդը յոգնած, և այնտեղ հանգըստացան։

Եւ Աբիսողոմն ու բոլոր ժողո- 15
վուրդը՝ ամեն Իսրայէլացիք եկան Երուսաղէմ, և Աքիտոփէլը նորանց հետ։ Եւ եղաւ որ երբ Ա- 16
րքացի Քուսին՝ Դաւթի բարեկամը եկաւ Աբիսողոմի մօտ, Քուսին ասաց Աբիսողոմին. Կեցցէ արքայ, կեցցէ արքայ։ Եւ Աբի- 17
սողոմն ասաց Քուսիին. Դա՞ է բարեկամիդ վերայ ունեցած սէրդ, ինչո՞ւ համար չես գնացել քո բարեկամի հետ։ Եւ Քուսին 18
ասաց Աբիսողոմին. Ոչ, այլ որին որ հաւանէ Տէրը և այս ժողովուրդը և Իսրայէլի բոլոր մարդիկը, ես նորանը կ'լինիմ և նորա հետ կ'մնամ։ Եւ երկրորդ՝ ես ո- 19
րի՞ պիտի ծառայեմ, չէ՞ որ նո-

*Ընդարհաւթիւն եմ անում.

բա որդուն, ինչպէս որ ծառայել
եմ քո հօր առջև, այնպէս կը
լինիմ և քո առջև։
20 Եւ Աբիսողոմն ասաց Աքիտո-
փէլին. խորհուրդ տուէք թէ ինչ
21 անենք։ Եւ Աքիտոփէլն ասաց
Աբիսողոմին. Մտիր քո հօր հար-
ճերի մօտ, որոնց նա թողեց տու-
նը պահելու. և բոլոր Իսրայէլը
կ'լսէ որ քո հօրն ատելի ես, և
բոլոր քեզ հետ եղողների ձեռ-
22 քերը կ'ուժեղանան։ Եւ Աբիսողո-
մի համար վրան շինեցին կտուրի
վերայ, և Աբիսողոմը մտաւ իր
հօր հարճերի մօտ բոլոր Իսրայէլի
23 աչքի առջև։ Եւ Աքիտոփէլի
խորհուրդը որ այն օրերը նա տա-
լիս էր, նման էր նորան որ մէկը
Աստուծոյ խօսքը հարցանէր.
այսպէս էր Աքիտոփէլի ամեն
խորհուրդը թէ Դաւթի թէ Աբի-
սողոմի համար։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Աքիտոփէլն ասաց Աբիսո-
ղոմին. Թող տասներկու հազար
մարդ ընտրեմ և վեր կենամ Դաւ-
2 թին հալածեմ այս գիշեր։ Եւ
ես կ'յարձակեմ նորա վերայ քա-
նի որ նա յոգնած և ձեռքերը
թուլացած է, և նորան կ'վա-
խեցնեմ, և նորա հետ եղող բո-
լոր ժողովուրդը կ'փախչէ, և կը
3 զարկեմ միմակ թագաւորին։ Իսկ
բոլոր ժողովուրդը կ'դարձնեմ
քեզ մօտ. բոլորի դարձածին պէս
է այն մարդը որին դու որոնում
ես. բոլոր ժողովուրդը հանդարտ
4 կ'լինի։ Եւ ուղիղ երևեցաւ այս
խօսքը Աբիսողոմի աչքին և Իս-
րայէլի բոլոր ծերերի աչքին։
5 Եւ Աբիսողոմը ասաց. Ար-
քացի Քուսիին էլ կանչեցէք,
որ լսենք թէ նորա բերանու-
6 մն էլ ինչ կայ։ Եւ եկաւ
Քուսին Աբիսողոմի մօտ, և Աբ-
իսողոմն ասաց նորան այսպէս.
Թէ Ահա բանի պէս է ասել Աք-
իտոփէլը. նորա խօսքը անե՞նք
7 թէ ոչ. դու խօսիր։ Եւ Քուսին
ասաց Աբիսողոմին. Աքիտոփէլի
այս անգամ տուած խորհուրդը
լաւ չէ. Եւ Քուսին ասաց. Դու 8
գիտես քո հօրը և նորա մարդ-
կանցը որ զօրաւոր և դառնոպի
են դաշտում ձագերը կորցրած
արջի նման. և քո հայրը պատե-
րազմի մարդ է, և գիշերը չի մը-
նալ ժողովրդի հետ։ Ահա նա 9
հիմա թաք է կացած կամ փո-
սերի մեկում կամ մի ուրիշ տեղ.
և եթէ լինի որ սկզբում նորան-
ցից մէկն ընկնեն, այն ժամանակ
լսողը որ լսէց՝ ասելու է թէ կո-
տրուել է Աբիսողոմի հետևից
գնացող ժողովուրդը։ Եւ ինքը 10
քաջսրտունն էլ՝ որի սիրտը առիւ-
ծի սրտի պէս է, բոլորովին կը
թուլանայ. վասն զի բոլոր Իսրա-
յէլը գիտէ որ քո հայրը զօրաւոր
է և նորա հետ եղողներն էլ ու-
ժով մարդիկ են։ Բայց ես խոր- 11
հուրդ եմ տալիս. ժողովիր քեզ
վերայ Դանից մինչև Բերսաբէէն
ինչպէս որ ծովի եզերքի աւազը
շատ է. և դու էլ անձամբ նորանց
մէջ գնաս։ Այն ժամանակ նորա 12
վերայ կ'գնանք այն տեղերի մէ-
կում, ուր որ կ'գտնուի և բանակ
կը տանք նորա դէմ ինչպէս որ ցօղն
է իջնում երկրի վերայ. և նորա-
նից և նորա հետ եղող մարդկան-
ցից ամենից մէկին էլ չի պրծնիլ։
Բայց եթէ մի քաղաքի մէջ հա- 13
ւաքուելու լինի, այն ժամանակ
բոլոր Իսրայէլը այն քաղաքի վե-
րայ չուաններ կ'տանէ, և նորան
քաշ կ'տանք մինչև հեղեղատը
մինչև որ այնտեղ մի քարի կո-
տոր էլ չգտնուի։ Եւ Աբիսողոմն 14
և Իսրայէլի բոլոր մարդիկն ասա-
ցին. Արքացի Քուսիի խորհուր-
դը լաւ է քան թէ Աքիտոփէլի
խորհուրդը։ Եւ Տէրը հրամայել
էր, որ Աքիտոփէլի լաւ խորհուր-
դը ցրուի, որպէս զի Տէրը Աբի-
սողոմի վերայ չարիք բերէ։

Եւ Քուսին ասաց Սադովկ և 15
Աբիաթար քահանաներին. Թէ
Այսպէս և այսպէս խորհուրդ
տուաւ Աքիտոփէլ Աբիսողոմին
և Իսրայէլի ծերերին, և ես էլ
այսպէս և այսպէս խորհուրդ տը-
ւի։ Եւ հիմա շուտով մարդ ու- 16
ղարկեցէք և իմացրէք Դաւթին,

սաելով թէ՝ Գիշերը անապատի դաշտերուամբ մի մնար, այլ անցից գնա, որ կորուստ չի լինի թագաւորի և նորա հետ եղող
17 բոլոր ժողովրդի համար։ Եւ Յովնաթանն ու Աբիմաասը կանգնել էին Ռոգելի աղբիւրի մօտ. և աղախինը գնաց և նորանց պատմեց, նորանք էլ գնացին և Դաւիթ թագաւորին պատմեցին. վասն զի չէին կարողանում երե-
18 ւալ որ քաղաքը մտնեն։ Եւ մի պատանի տեսաւ նորանց և պատմեց Աբիսողոմին. և նորանք երկուսը շուտով գնացին մտան մի Բահուրեմցի մարդու տունը. և նա մի հոր ունէր իր գաւիթումը, և նորանք այնտեղ իջան։
19 Եւ կինը ծածկոցն առաւ հորի բերանին փռեց և նորա վերայ ձաւար տարածեց, որ մի բան
20 չիմացուեցաւ։ Եւ Աբիսողոմի ծառաները գնացին այն կնոջ մօտ՝ նորա տունը և ասացին. Ո՞ւր են Աքիմաասը և Յովնաթանը. և կինն ասաց նորանց. Անց կացան ջրի առուակովը. իսկ նորանք չգտան և ետ դարձան Եւ-
21 րուսաղէմ։ Եւ եղաւ երբոր նորանք գնացել էին, որանք դուրս եկան հորիցը ու գնացին և պատմեցին Դաւիթ թագաւորին, և ասացին Դաւիթին. Վեր կացէք շուտով ջրովն անց կացէք, վասն զի Աքիտոփէլն այսպէս է խորհուրդ տուել ձեր մասին։
22 Եւ վեր կացաւ Դաւիթ և իր հետ եղող բոլոր ժողովուրդը և անց կացաւ Յորդանանովը. և մինչև առաւօտեան լոյսը մէկը չմնաց որ Յորդանանովը անցած չլինէր։
23 Եւ Աքիտոփէլը տեսաւ որ իր խորհուրդը չկատարուեցաւ, էշը համեցաւ և վեր կացաւ ու գնաց իր տունը իր քաղաքը, և իր տան համար պատուէր տուաւ, ու իրան խեղդեց ու մեռաւ, և թաղուեցաւ իր հօր գերեզմանումը։
24 Իսկ Դաւիթը հասաւ Մանահիմ. և Աբիսողոմն անցաւ Յորդանանովը ինքը և Իսրայէլի ամեն
25 մարդիկը նորա հետ։ Եւ Աբիսաղոմ

զօմն Ամեսային զօրքի վերայ գրաւ Յովաբի փոխանակ, բայց Ամեսայի մի մարդու որդի էր որի անունն էր Եդերայելացի Յոթոր, որն որ առել էր Յովաբի մայր՝ Շարուհեայի քոյր Նաասի աղջիկ Աբիգեայլին։ Եւ Իսրայէլն ու Աբիսա- 26
զոմը բանակեցին Գաղաադի երկրումը։

Եւ եղաւ հէնց որ Դաւիթը հա- 27
սաւ Մանահիմ, Նաասի որդին Սոբի Ամմոնի որդկանց Րաբբաթից, և Ամիէլի որդի Մաքիրը Լոդաբարից, և Գաղաադացի Բերզելին Ռոգելիմից Անկոթին- 28
ներ, կանքեր, բրուտի ամաններ, ցորեն, գարի, ալիւր և հեղի, և բակլայ, ոսպ և հեղի. Եւ մեղր 29
և կարի և ոչխարներ և կովի պանիր բերին Դաւթին և նորա հետ եղող ժողովրդին ուտելու, վասն զի ասում էին. ժողովուրդը անապատի մէջ սոված, յոգնած և ծարաւ կ'լինի։

Գ Լ. Ժ Ը

Եւ Դաւիթը հանդէս արաւ իր 1
հետ եղող ժողովրդին և դրաւ նորանց վերայ հազարապետներ և հարիւրապետներ։ Եւ Դաւիթ 2
զօրքի երրորդ մասը ուղարկեց Յովաբի ձեռքը, մի երրորդը Յովաբի եղբայր Շարուհեայի որդի Աբեսսայի ձեռքը, և մի երրորդը Գեթացի Ելթեի ձեռքը. և թագաւորն ասաց զօրքին. Ես էլ դուրս գամ ձեզ հետ։ Բայց 3
զօրքն ասաց. Դու պիտի դուրս չգաս, վասն զի եթէ մենք փախչելու լինինք, նորանք մեզ համար հոգս չեն անիլ, և եթէ մեր կէսն էլ մեռնելու լինինք, նորանք մեզ համար հոգս չեն անիլ. իսկ դու մեր տասը հազարի պէս ես. արդ լաւ կ'լինի որ դու մեզ օգնես քաղաքիցը։ Եւ թա- 4
գաւորն ասաց նորանց. Ինչ որ հաճելի է ձեր աչքին՝ ես կ'անեմ. և թագաւորը մնաց դրան մօտ, իսկ բոլոր զօրքը դուրս ելաւ հարիւր հարիւր և հազար հազար։ Եւ թագաւորը պատ- 5

ուիրեց Յովաբին, Աբեսային և
Եթթիին ասելով. Խնայեցէք
ինձ համար Աբիսողոմ պատա-
նուն. և բոլոր զօրքը լսեց թա-
գաւորը զօրապետներին Աբիսո-
ղոմի մասին պատուէր տալիս:
6 Եւ ժողովուրդը դուրս եկաւ
դաշտը Իսրայէլին դիմաւորելու.
և պատերազմ եղաւ Եփրեմի ան-
7 տառումը: Եւ այնտեղ կոտրը-
ուեցաւ Իսրայէլի զօրքը Դաւթի
ծառաների առջև. և այնտեղ
շատ մեծ կոտորում եղաւ այն
8 օրը քսան հազար հոգի. Եւ պա-
տերազմը այնտեղ տարածուեցաւ
բոլոր երկրի երեսին. և անտառը
զօրքից աւելի մարդ փչացրեց
այն օրը քան թէ սուրը փչացրեց:
9 Եւ Աբիսողոմը Դաւթի ծառա-
ների դիմացը հանդիպեց. և Ա-
բիսողոմը հեծած էր ջորին. և
ջորին մի մեծ կաղնու թաւ ա-
ռերի տակը մտաւ, և նորա գլ-
լուխը փամթաթուեցաւ կաղնուն,
ու ինքը կախ ընկաւ երկնքի ու
երկրի մէջտեղը, և նորա տակի
10 ջորին գնաց: Եւ մի մարդ տեսել
էր, և ասաց Յովաբին. Ահա ես
տեսայ Աբիսողոմին կաղնուցը
11 կախուած: Եւ Յովաբն ասաց այդ
իրան պատմող մարդուն. Ինչու
որ տեսար, ապա ինչո՞ւ չզարկե-
ցիր նորան այնտեղ գետինը ձգե-
ուէր. և ես կ'տայի քեզ տասը
12 հէնդ արծաթ և մի գօտի: Եւ
այն մարդն ասաց Յովաբին. Եթէ
ես իմ ձեռքին հազար հէնդ ար-
ծաթ կշռէի, իմ ձեռքը չէի
մեկնիլ թագաւորի որդու վերայ,
վասն զի մեր ականջներին պատ-
ուիրեց թագաւորը քեզ, Աբեսա-
յիին և Եթթիին ասելով. Խըն-
նայեցէք ինձ համար Աբիսողոմ
13 պատանուն: Եւ եթէ ես իմ ան-
ձի դէմ դաւաճանութիւն անէի,
և թագաւորից էլ ոչ մի բան
ծածուկ չի մնալ, այն ժամանակ
14 դու էլ դէմ կ'կանգնէիր: Եւ
Յովաբն ասաց. Ես այսպէս չեմ
սպասիլ քո առջև, և վեր ա-
ռաւ երեք գեղարդ իր ձեռքը և
կախեց Աբիսողոմի սիրտը, քանի
որ նա տակաւին կենդանի էր
կաղնու մէջ: Եւ տասը երիտա- 15
սարդներ Յովաբի զինակիրներից
շրջապատեցին և զարկեցին Աբի-
սողոմին և մեռցրին նորան: Եւ 16
Յովաբը փող հնչեցրեց, և զօր-
քը ետ դարձաւ Իսրայէլի հետևից
հալածելուց, վասն զի Յովաբը
զսպեց զօրքին: Եւ Աբիսողոմին 17
առին և անտառի մէջ մի մեծ
փոսի մէջ գցեցին նորան, և նո-
րա վերայ մի շատ մեծ քարա-
կոյտ դիզեցին. և բոլոր Իսրայէլ
փախաւ ամեն մարդ իր վրանը:

Եւ Աբիսողոմն իր կենդանու- 18
թեանը առել իրան հոմար մի
արձան էր կանգնեցրել թագա-
ւորի հովիտումը, վասն զի ասում
էր թէ որդի չունիմ, որ իմ ա-
նունը յիշէ. և այն արձանին
դրել էր իր անունը, և նորան
ասում էին Աբիսողոմի կոթող
մինչև այսօր:

Եւ Սադովկի որդին Աքիմաաս 19
ասաց. Թող վազեմ ու թագա-
ւորին աւետիք տամ, վասն զի
Տէրը նորան իրաւունք արաւ իր
թշնամիների ձեռքից: Եւ Յովա- 20
բըն ասաց նորան. Դու այսօր ա-
ւետիքի մարդ չես, այլ մի ու-
րիշ օր աւետիք կ'տանես, և այս-
օր աւետիք պիտի չտանես, որով-
հետև թագաւորի որդին մեռած
է: Եւ Յովաբն ասաց Քուսիին. 21
Գնա պատմիր թագաւորին ինչ
որ տեսար. և Քուսին երկրպա-
գութիւն արաւ Յովաբին և վա-
զեց: Եւ Սադովկի որդի Աքի- 22
մաասը շարունակեց և ասաց Յո-
վաբին. Ինչ և իցէ՝ թող ես էլ
վազեմ Քուսիի հետևից. և Յո-
վաբն ասաց. Դու ինչո՞ւ համար
պիտի վազես, որդի, որ սա քեզ
համար օգուտ բերող աւետիք չէ:
Եւ ինչ որ իցէ՝ վազեմ. և նա 23
ասաց. Վազիր. և Աքիմաասը
վազեց դաշտի ճանապարհով և
անցաւ Քուսիից առաջ: Եւ Դա- 24
ւիթը նստել էր երկու դռների
մէջտեղը. և դէտը գնաց դէպի
դրան կտուրը՝ դէպի պարիսպը և
իր աչքերը բարձրացրեց ու տե-
սաւ, որ ահա մի մարդ էր գա-
լիս մենակ: Եւ դէտը կանչեց և 25

խնացրեց Թագաւորին. և Թագաւորն ասաց. Եթէ նա մէնակ է, ուրեմն աւետիք կայ նորա բերանումը. և նա քանի գալիս էր՝ մօտենում էր։ 26 Եւ մօտենում էր, ուրիշ մարդ տեսաւ վազելիս, և դէտը կանչեց դռնապանին և ասաց. Ահա մի մարդ վազում է մէնակ. և Թագաւորն ասաց. Նա 27 էլ է աւետաւոր։ Եւ դէտն ասաց. Ես տեսնում եմ առաջինի վազելը իբրև Սադովկի որդի Աքիմաասի վազելը. և Թագաւորն ասաց. Նա բարի մարդ է, և բարի լուրի համար է գալիս։ 28 Եւ Աքիմաասը կանչեց և ասաց Թագաւորին. Խաղաղութիւն, և երեսի վերայ երկրպագեց Թագաւորին դէմ գետնին, և ասաց. Օրհնեալ է քո Տէր Աստուածը որ արգելեց իմ ձեր Թագաւորի վերայ իրանց ձեռքը բարձրացրող մարդկանցը։ 29 Եւ Թագաւորն ասաց. Աբիսողոմ պատանին ո՞ղջ է. և Աքիմաասն ասաց. Ես դէն այն մեծ բազմութիւնը տեսայ, երբոր Յովաբն ուղարկեց Թագաւորի ծառային և ինձ քո ծառային, բայց չիմացայ թէ ինչ էր։ 30 Եւ Թագաւորն ասաց. Դարձիր այսպէս կանգնիր, և նա դարձաւ 31 կանգնեց։ Եւ ահա Քուսին եկաւ և ասաց Քուսին. Իմ ձեր Թագաւորին աւետիք, վասն զի Տէրն այսօր քեզ իրաւունք արաւ բոլոր քեզ վերայ վեր կեր 32 նողների ձեռքից։ Եւ Թագաւորն ասաց Քուսին. Աբիսողոմ պատանին ո՞ղջ է. և Քուսին ասաց. Այդ պատանու նման դառնան իմ ձեր Թագաւորի թշնամիները, և բոլոր չարիքի համար քեզ վերայ վեր կենողները։ 33 Եւ խռովեցաւ Թագաւորը ու վեր ելաւ դրան վերնատունը և լաց եղաւ, և այսպէս էր ասում գընալով. Որդիս Աբիսողոմ, որդիս, որդիս Աբիսողոմ. երանի թէ ես մեռնէի քեզ տեղ, ով Աբիսողոմ որդիս, որդիս։

ԴԼ. ԺԹ

1 Եւ Յովաբին պատմեցին. Ահ՝ Ա-

Ահա Թագաւորը լաց է լինում և Աբիսողոմի վերայ սուգ է անում։ 2 Եւ յաղթութիւնը այն օրը սուգի դարձաւ բոլոր ժողովրդի առջև, վասն զի ժողովուրդը այն օրը լսել էր որ ասում էին թէ Թագաւորը տրտմել է իր որդու մասին։ 3 Եւ այն օրը ժողովուրդը պէս էր մտնում քաղաքը ինչպէս որ գողի պէս քաղաքը կ'մտնէ պատերազմում փախած ամօթահար ժողովուրդը։ 4 Եւ Թագաւորը ծածկեց իր երեսը, և մեծ ձայնով աղաղակեց Թագաւորը. Որդիս Աբիսողոմ, Աբիսողոմ որդիս, որդիս։

5 Եւ Յովաբը ջնջոց մտաւ Թագաւորի մօտ ականակը և ասաց. Դու այսօր ամօթով արիր քո բոլոր ծառաների երեսը, որ քո անձը և քո որդկանց ու աղջկանց անձը, և քո կանանց անձն և քո հարճերի անձը այսօր ազատեցին։ 6 Սիրում ես քեզ ատողներին և ատում ես քեզ սիրողներին, որովհետև այսօր իմացրիր որ քեզի համար ոչինչ են իշխանները և ծառաները. վասն զի ես այսօր հասկացայ որ այսօր Աբիսողոմը կենդանի լինէր և մենք այսօր ամենքս մեռած լինէինք, ապա այն ժամանակ հաճոյ կ'լինէր քո աչքին։ 7 Եւ արդ վեր կաց՝ դուրս եկ և քաղցրութեամբ խօսիր ծառաներիդ հետ. վասն զի երդում եմ անում Տէրով, որ եթէ դուրս չգաս, այս գիշեր քեզ մօտ մարդ չի մնալ, և ապա քեզ համար աւելի չար կ'լինի քան թէ այն ամեն չարիքները, որ քեզ վերայ եկել են քո մանկութենից մինչև հիմա։ 8 Եւ Թագաւորը վեր կացաւ ու նստեց դրանը, և բոլոր ժողովրդին իմացրին ասելով. Ահա Թագաւորը նստել է դրանը, և բոլոր ժողովուրդը եկաւ Թագաւորի առջև. իսկ Իսրայէլը փախաւ ամեն մարդ իր վրանը։

9 Եւ Իսրայէլի ամեն ցեղերում բոլոր ժողովուրդը վիճում էին և ասում. Թագաւորը մեզ փրկեց մեր թշնամիների ձեռքից, և

նա ազատեց մեզ փղշտացոց ձեռքից, և հիմա փախել է երկրից Աբիսողոմի պատճառով;
10 Իսկ Աբիսողոմը, որին մենք օծեցինք մեզ վերայ, մեռաւ պատերազմի մէջ. և հիմա ինչո՞ւ համար էք լուռ կացել թագաւորին ետ բերելուց:
11 Եւ Դաւթի թագաւորը ուղարկեց Սադովկ և Աբիաթար քահանաների մօտ և ասաց. խոսեցէք Յուդայի ծերերի հետ ասելով. Ինչո՞ւ համար դուք վերջինը լինիք թագաւորն իր տունը ետ բերելում. և բոլոր Իսրայէլի խօսքը հասել էր թագաւորին իր
12 տանը: Դուք իմ եղբայրներն էք, իմ ոսկրն ու մարմինն էք դուք, և ինչո՞ւ համար դուք վերջինը լինիք թագաւորը ետ բերելում:
13 Եւ Ամեսայիին ասացէք. Մի՞թէ դու իմ ոսկրն ու մարմինը չես. Աստուած ինձ այսպէս անէ, և էլ աւելացնէ, թէ որ դու իմ առջև ամեն ժամանակ զօրագլուխ չլինիս Յովաբի փոխարէն:
14 Եւ դարձրեց բոլոր Յուդայի մարդկանց սիրտը մէկ մարդու սրտի պէս. և նորանք պատգամ ուղարկեցին թագաւորի մօտ թէ ետ դարձիր դու և քո բոլոր ծա-
15 ռաները: Եւ թագաւորը ետ դարձաւ և եկաւ մինչև Յորդանան. և Յուդան եկաւ մինչև Գաղգաղա, որ թագաւորին դիմաւորեն և անցկացնեն թագաւորին Յորդանանովը:
16 Եւ Բաւուրիմացի՝ Գերայի որդի Բենիամինեան Սեմէին շուտով եկաւ իջաւ Յուդայի մարդկանց հետ Դաւթի թագաւորին դի-
17 մաւորելու: Եւ նորա հետ հազար մարդ կար Բենիամինից. նաև Սաուղի տան ծառայ Սիբան և նորա տասնուհինգ որդիները և քսան ծառաները նորա հետ էին և հասան Յորդանան թա-
18 գաւորի առջև: Եւ մի նաւակ անցաւ թագաւորի տունը անց կացնելու և նորա աչքին հաճոյ երևցածն անելու համար. և Գերայի որդի Սեմէին վայր ընկաւ թագաւորի առջև, երբ նա անց-

նում էր Յորդանանովը. Եւ ա- 19
սաց թագաւորին. Իմ տէրը յանցանք չհամարէ ինձ, և մի յիշիր որ ծառադ անօրէնութիւն գործեց այն օրը, որ իմ տէր թագաւորը դուրս էր եկել Երուսաղէմից, թագաւորը իր սրտումը չդնէ այն: Վասն զի ծառադ գի- 20
տէ, որ ես յանցանք եմ գործել և ահա այսօր առաջինը ես եմ եկել Յովսէփի բոլոր տանից իմ տէր թագաւորին դիմաւորելու
իջնելով: Եւ Շարուհեայի որդի 21
Աբեսան պատասխանեց և ասաց. Մի՞թէ սորա փոխարէն չի պիտի մեռնէ Սեմէի որ Տիրոջ օծեալին անիծեց: Եւ Դաւթին ասաց. 22
Դուք ի՞նչ ունիք ինձ հետ, ով Շարուհեայի որդիք, որ այսօր ինձ համար սատկ էք դառնում. մի՞թէ այսօր մարդ մեռնէ Իսրայէլի մէջ. վասն զի չգիտե՞մ որ ես այսօր թագաւոր եմ Իսրայէլի վերայ: Եւ թագաւորն 23
ասաց Սեմէիին. Պիտի չմեռնես. և թագաւորը նորան երդում ա-
րաւ:
Եւ Սաուղի որդի Մեմփիբոս- 24
թէն իջաւ թագաւորին դիմաւորելու, առանց իր ոտքերը պատրաստելու և առանց իր մօրուքը չինելու, և իր հանդերձները չէր լուացել այն օրից հետէ, որ թագաւորը գնացել էր մինչև այն օրը որ եկաւ խաղաղութեամբ:
Եւ եղաւ երբոր եկաւ Երուսա- 25
ղէմ թագաւորին դիմաւորելու այն ժամանակ թագաւորն ասաց նորան. Ինչո՞ւ համար չեկար ինձ հետ, Մեմփիբոսթէ: Եւ նա ա- 26
սաց. Ով իմ տէր թագաւոր, ծառաս ինձ խաբեց, վասն զի ծառադ ասաց. Ինձ համար հագնեմ էշը և վերան հեծնեմ ու գնամ թագաւորի հետ, որովհետև ծառադ կաղ է: Իսկ նա 27
բամբասել է քո ծառայիցը իմ տէր թագաւորին. բայց իմ տէր թագաւորը Աստուծոյ հրեշտակի պէս է. ուրեմն սրա ինչ որ հաճելի է քո աչքին: Վասն զի իմ հօր 28
բոլոր տունը մի ուրիշ բան չէին բացի մահի արժանի լինելուց իմ

տէր թագաւորի համար. տակոյն ծառայիդ քո սեղանի ուտողների հետ դրիր. և ես այլ ևս ինչ իրաւունք ունիմ որ միւս անգամ աղաղակեմ դէպի թագաւորը:
29 Եւ թագաւորն ասաց նորան. Էլ ինչո՞ւ ես խօսում այդ խօսքերը. ասել եմ՝ Դու և Աիրան բաժանեցէք արտը:
30 Եւ Մեմփիբոսթէն ասաց թագաւորին. Թող նա բոլորն էլ առնէ՝ իմ տէր թագաւորը խաղաղութեամբ իր տունը գալուց յետոյ.
31 Եւ Գաղաադացի Բերզելին իջաւ Ռովգելիմից և անցաւ թագաւորի հետ Յորդանանովը, որ նորան Յորդանանովը ճանապարհ դնէ:
32 Եւ Բերզելի շատ ծեր էր՝ ութսուն տարեկան. և նա կերակրեց թագաւորին քանի որ նա Մանայիմի մէջ էր կենում, վասն զի նա մի շատ մեծ մարդ էր:
33 Եւ թագաւորն ասաց Բերզելիին. Դու եկ ինձ հետ, և ես քեզ կերակրեմ ինձ հետ Երուսաղէմում:
34 Եւ Բերզելին ասաց թագաւորին. Ո՞րքան են իմ կենաց տարիների օրերը, որ ես թագաւորի հետ
35 վեր գնամ Երուսաղէմ: Ես այսօր ութսուն տարեկան մարդ եմ. միթէ կարող եմ լաւը վատից ջոկել. կամ ծառադ կերածից խմածից համ կ'առնեմ. կամ էլ կ'լսե՞մ երգիչների և երգչուհիների ձայնը, և էլ ինչո՞ւ համար ծառադ իմ տէր թագաւորին բեռ դառնայ:
36 Մի քիչ անց է կենում ծառադ Յորդանանովը թագաւորի հետ, և ինչո՞ւ համար թագաւորը ինձ մի այսպիսի
37 մեծ վարձք հատուցանէ: Ծառադ եմ դառնում ու մեռնեմ իմ քաղաքումը իմ հօր ու իմ մօր գերեզմանումը. ահա թող Քամհամ ծառադ անցնէ իմ տէր թագաւորի հետ. և նորան արա
38 ինչ որ բարի է քո աչքին: Եւ թագաւորն ասաց. Թող Քամհամը անցնէ ինձ հետ, և ես կ'անեմ նորան ինչ որ բարի է քո աչքին. և ամեն ինչ որ դու ինձանից ուզես՝ կանեմ քեզ:
39 Եւ բոլոր ժողովուրդն անցաւ Յորդանանովը, և թագաւորն էլ անցաւ և համբուրեց թագաւորը Բերզելիին և օրհնեց նորան, և նա էտ դարձաւ իր տեղը:
40 Եւ թագաւորն անցաւ Գաղգաղա, և Քամհամն անցաւ նորա հետ. և Յուդայի բոլոր ժողովուրդը անց կացրեց թագաւորին, նոյնպէս և Իսրայէլի կէս ժողովուրդը:
41 Եւ ահա ամեն Իսրայէլացի մարդիկը գալիս էին թագաւորի մօտ և ասում էին թագաւորին. Ինչո՞ւ համար քեզ գողացան մեր Յուդայեան եղբայրները և թագաւորին ու նորա տունը անց կացրին Յորդանանովը և Դաւթի ամեն մարդիկն իրան հետ:
42 Եւ ամեն մի Յուդայեան պատասխանում էր Իսրայէլացուն. Թէ թագաւորը ինձ մօտ է, և դու ինչու համար էս այդպէս բարկանում այս բանի մասին. միթէ մենք թագաւորից կերակրուեցանք կամ նա մեզ ընծաներ ընծայից:
43 Եւ Իսրայէլացին պատասխանում էր Յուդայեանին. Ես թագաւորի վերայ տասը բաժին ունիմ, և ես աւելի մօտ եմ Դաւթին քան թէ դու. և ինչո՞ւ համար ինձ անարգեցիր և առաջ իմ խօսքը չեղաւ իմ թագաւորին անց կացնելում. և Յուդայեանի խօսքը Իսրայէլացու խօսքից աւելի խիստ էր լինում:

ԳԼ. Ի

1 Եւ այնտեղ մի անօրէն մարդ պատահեց՝ անունը Սաբէէ Բոքորի որդի Բենիամինի ցեղից. և նա փող հնչեցրեց և ասաց. Մենք Դաւթի մօտ բաժին չունինք և ոչ ժառանգութիւն ունինք Յեսսէի որդու մօտ. ամեն մարդ իր վրանը, ով Իսրայէլ:
2 Եւ ամեն Իսրայէլացիք էտ քաշուեցան Դաւթից և հետևեցին Բոքորի որդի Սաբէէի. բայց Յուդայեանք յարեցին իրանց թագաւորին՝ Յորդանանից մինչև Երուսաղէմ:
3 Եւ Դաւիթն եկաւ իր տունը Երուսաղէմ, և թագաւորն առաւ

այն տասը հարճ կանայքը որ թողել էր տունը պահելու ու դրաւ մի պահեստի տան մէջ և նորանց կերակրեց, և նորանց մօտ չգնաց. և նորանք պահուած մնացին մինչև իրանց մեռնելու օրը էէր որբևայրիներ ապրելով:

4 Եւ թագաւորն Ամեսայիին ասաց. Ինձ մօտ կանչիր Յուդայի մարդկանցը երեք օրուայ. և դու 5 էլ այստեղ ներկայացիր: Եւ Ամեսայի գնաց Յուդայեաններին կանչելու, և ուշացաւ նորա դրած ժամանակիցը: 6 Եւ Դաւիթն ասաց Աբեսային. Հիմա Բոքորի որդի Սաբէէն աւելի չար եղաւ մեզ համար Աբիսողոմից. տո՛ւր քո տիրոջ ծառաներըը և նորա ետևից ընկիր, մի գուցե իրան համար պարսպապատ քաղաքներ 7 գտնէ և մեր աչքից պրծնէ: Եւ նորա ետևից դուրս եկան Յովաբի մարդիկը, և Քերեթիք ու Փելեթիք և բոլոր զօրաւորները. և դուրս եկան Երուսաղէմից Բոքորի որդի Սաբէէին հալածելու ետևից:

8 Նորանք գտնուում էին մեծ քարի մօտն էին, որ Ամեսայի նորանց դիմացը եկաւ. և Յովաբը հագել էր իր զգեստը՝ իր հանդերձը և նորա վերայից գօտեորուած էր սրով, որ կապուած էր մէջքին իր պատեհանովը, որ դուրս եկաւ և վայր ընկաւ:

9 Եւ Յովաբն ասաց Ամեսային. Առո՞ղջ ես, եղբայրս, և Յովաբն աջ ձեռքովը բռնեց Ամեսայիի մօրուքից համբուրելու համար:

10 Բայց Ամեսայի չզգուշացաւ Յովաբի ձեռքի սուրիցը, և նա նորանով զարկեց նորան փորին և թափեց փորոտիքը գետինը, և չը կրկնեց, ու նա մեռաւ. իսկ Յովաբը և նորա եղբայր Աբեսան ընկան Բոքորի որդի Սաբէէի ետևից: 11 Եւ նորա վերայ Յովաբի պատանիներից մէկը կանգնել էր և ասում էր. Ով որ Յովաբին է սիրում, և ով որ Դաւթինն է, 12 Յովաբի ետևից գնայ: Իսկ Ամեսայի թաւալվում էր ճանապարհին արեան մէջ. և երբոր այն մարդը տեսաւ որ բոլոր ժողովուրդը կանգնեց, Ամեսայիին ճանապարհիցը վեր առաւ՝ արտը գցեց և նորա վերայ մի շոր ծածկեց. 13 Հէնց որ տեսաւ թէ ամեն եկողը նորա վերայ կանգնում էր: Հէնց որ նա ճանապարհիցը վեր առնուեցաւ, ամեն մարդ գնաց Յովաբի ետևից Բոքորի որդի Սաբէէին հալածելու համար: 14 Իսկ նա անցել էր Իսրայէլի բոլոր ցեղերովը մինչև Աբէլայ և Բէթմաաքա և բոլոր Բերիմով. և նորանք ժողովուել էին և ընկել էլ նորա ետևից: 15 Եւ եկան ու պաշարեցին Աբէլայում Բէթմաաքան և հողաբլուր շինեցին քաղաքի առջև, որ կանգնեց պարսպի դէմ. և բոլոր զօրքը, որ Յովաբի հետ էր, քանդում էին որ պարիսպը վայր գցեն:

16 Եւ այն քաղաքից մի իմաստուն կին աղաղակեց. Լսեցէք, լսեցէք, մէկ ասացէք Յովաբին, մօտեցիր մինչև այստեղ որ խօսեմ քեզ հետ: 17 Նա էլ մօտեցաւ նորան, և կինն ասաց. Յովաբը դո՞ւ ես. և նա ասաց. Ես եմ. և նա ասաց նորան՝ Լսիր աղախնիդ խօսքերը. և նա ասաց. Լսում եմ: 18 Եւ նա ասաց այսպէս՝ Առաջ այսպիսի խօսքեր էին խօսում թէ՝ Աբէլումը թող հարցնեն և այնուհետև վերջացնեն: 19 Ես Իսրայէլի խաղաղասիրներից ու հաւատարիմներից եմ. դու ուզում ես Իսրայէլի մէջ մի մայրաքաղաք փչացնել. ինչո՞ւ համար բնաջինջ լինի Տիրոջ ժառանգութիւնը: 20 Եւ Յովաբը պատասխանեց և ասաց. Քաւ լիցի, քաւ լիցի ինձ, եթէ ես ընաջինջ անեմ կամ թէ քանդեմ: 21 Բանը այդպէս չէ. այլ Եփրեմի լեռնիցը մի մարդ՝ անունը Սաբէէ որդի Բոքորի՝ իր ձեռքը բարձրացրել է Դաւթի թագաւորի դէմ. տո՛ւէք միայն նորան և կ'գնամ այդ քաղաքի վերայից. և այն կինը ասաց Յովաբին. Ահա նորա գլուխը քեզ մօտ կ'գցուի պարսպի այն կողմից: 22 Եւ այն կինը գնաց իր իմաստութեամբը բոլոր

ժողովրդի մօտ. և կարեցին Բաքորի որդի Սալէէլի գլուխը և գցեցին Յովաբի մօտ. և նա փողը հնչեցրեց, և այն քաղաքի վերայից ցրուեցան ամեն մարդ իր վրանը, իսկ Յովաբը եւս դարձաւ Երուսաղէմ թագաւորի մօտ:

23 Եւ Յովաբը Իսրայէլի բոլոր զօրքերի վերայ էր. և Յովիադայի որդի Բանեայ Քերեթհիների և Փելեթհիների վերայ: 24 Եւ Ադորամը հարկերի վերայ. և Աքիլուդի որդի Յովսափատը յիշատակաց 25 տարբեր էր: Եւ Սուսան տեսնագիրը և Սադովկը ու Աբիաթարը քահանաներ էին. և Յայիրացի Իրանն էլ էր Դաւթին *նախարար:

ԳԼ. ԻԱ

1 Եւ Դաւթի օրերում սով եղաւ երեք տարի իրար եւեթից. և Դաւիթ խնդրեց Տիրոջ երեսը. և Տէրն ասաց. Սա Սաւուղի և նորա արիւնահեղ տան համար է, որ 2 Գաբաւնացիներին կոտորեց: Եւ թագաւորը կանչեց Գաբաւնացիներին և ասաց նորանց. (բայց այս Գաբաւնացիք Իսրայէլի որդիներից չեն, այլ Ամորհացոց մնացորդից. և Իսրայէլի որդիքը նորանց երդում էին արել. իսկ Սաւուղն ուզում էր նորանց կոտորել Իսրայէլի և Յուդայի որդ- 3 կանց համար նախանձելով:) Եւ Դաւթին ասաց Գաբաւնացիներին. Ես ձեզ ի՞նչ անեմ և ինչո՞վ քաւեմ, որ օրհնէք Տիրոջ 4 ժառանգութիւնը: Եւ Գաբաւնացիները նրան ասացին նորան. Մենք արծաթի և ոսկի չունինք Սաւուղի և նորա տան մօտ, և Իսրայէլում մի մարդ չունինք սպանութիւն. և նա ասաց. Ապա ի՞նչ էք 5 ասում որ անեմ ձեզ: Եւ նորանք ասացին թագաւորին. Այն մարդը որ մեզ ջարդեց և նա որ մեզ համար մտածեց որ բնաջինջ լինինք և չգտնուինք ամենևին 6 Իսրայէլի սահմաններում. Նորա որդիներից մեզ եօթը մարդ տուին, որ նորանց կախենք Տիրոջ ընտրեալ Սաւուղի Գաբաւոյում Տիրոջ համար: Եւ թագաւորն ասաց. Ես կ'տամ:

Իսկ թագաւորը խնայեց Մեմփիբոսթէին՝ Սաւուղի որդի Յովնաթանի որդուն Տիրոջ երդման համար, որ նորանց միջեւ Դաւթի և Սաւուղի որդի Յովնաթանի մէջ եղել էր: Եւ թագաւորը առաւ 8 Այիայի աղջկան Ռեսափայի երկու որդիներին, որոնց ծնել էր Սաւուղի համար, Արմոնիին և Մեմփիբոսթէին, և Սաւուղի աղջիկ Մեղքոլի հինգ որդիներին, որ նա ծնել էր Մաուլացի Բերզելիի որդի Եդրիէլի համար. Եւ տուաւ նո- 9 րանց Գաբաւնացիների ձեռքը. և նորանք կախեցին նորանց լեռան վերայ Տիրոջ առջև. և եօթն էլ միասին ընկան. և նորանք մեռցուեցան հունձի առաջի օրերին գարու հունձի սկզբում:

Եւ Այիայի աղջիկ Ռեսափան առաւ 10 քուրձը և նորան փռեց իրան համար ապառաժի վերայ հունձի սկզբից մինչև նորանց վերայ երկնքից անձրև գալը. և նորանց վերայ ցերեկը երկնքի թռչուններին հանգչելու թոյլ չէր տալիս, և ոչ գաշտի կենդանիներին գիշերը: Եւ Դաւթին ի- 11 մացրին թէ ի՞նչ է արել Սաւուղի հարճ Այիայի աղջիկն Ռեսափան: Եւ Դաւիթը գնաց ու առ- 12 աւ Սաւուղի ոսկորները և նորա որդի Յովնաթանի ոսկորները Գաղաադու Եաբեսի բնակիչներից որ Բեթսանի հրապարակից նորանց գողացել էին, որոնք փղշտացիք այնտեղ կախել էին, երբոր փղշտացիք Գեղբուէի վերայ Սաւուղին զարկել էին: Եւ վեր տա- 13 լով այնտեղից Սաւուղի ոսկորները և նորա որդի Յովնաթանի ոսկորները, և հաւաքեցին այն կախուածների էլ ոսկորները. Եւ թաղե- 14 ցին Սաւուղի և նորա որդի Յովնաթանի ոսկորները Բենիամինի երկրում Հայր Կիսի գերեզմանում Սելայի մէջ և արին ամենը ինչ որ թագաւորն հրամայել էր, և Աստուած նորանից

*Եբր. քահանայ

յետոյ ընդունեց երկրի համար եղած աղօթքը։
15 Եւ փղշտացիք տակաւին պատերազմ ունէին Իսրայէլի հետ, և Դաւիթն իջաւ և իր ծառաներն իր հետ և պատերազմեցին փղշտացւոց հետ. և Դաւիթը
16 յոգնեց։ Եւ Եսբիբենոբը որ Ռափայի որդիներէն էր (նորա նիզակը երեք հարիւր սիկղ ծանր էր), և ինքը նոր ---ը էր կապել մէջքին և ուզում էր Դաւթին
17 սպանել։ Բայց Շարուհեան Աբեսան նորան օգնեց և զարկեց փղշտացուն ու սպանեց նորան։ Այն ժամանակ երդում արին Դաւթի մարդիկը նորան ասելով. Այլևս պիտի մեզ հետ պատերազմի դուրս չգաս. որ չհանգցընես Իսրայէլի ճրագը։
18 Եւ սորանից յետոյ եղաւ որ փղշտացւոց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ. այն ժամանակ Ովսացի Սովբաքը սպանեց Սոփին որ Ռափայի որդիներէն էր։
19 Եւ դարձեալ պատերազմ եղաւ Գովբի մէջ փղշտացւոց հետ, և Բեթլեհեմցի Աբիէորգիմի որդի Էլհանան սպանեց Գեթացի Գողիաթին, որի նիզակի բունը ոստայնանկների գլանի պէս էր։
20 Եւ դարձեալ պատերազմ եղաւ Գեթում. և մի երկայնահասակ մարդ կար, և նորա ձեռքերի ու ոտքերի մատները վեց վեց էին, քսան ու չորս հատ մատ --ներ. նա էլ էր Ռափայից
21 ծնուած. Եւ նա նախատեց Իսրայէլին. բայց Դաւթի եղբայր Սամայի որդի Յովնաթան սպանեց նորան։ Այս չորսը ծնուել էին Գեթում Ռափայից. և բապանուեցան Դաւթի ձեռքով և Դաւթի ծառաների ձեռքով։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Դաւիթն ասաց Տիրոջը այս երգի խօսքերը այն օրը, երբոր Տէրը նորան ազատել էր իր բոլոր թշնամիների ձեռքից և Սաուղի ձեռքից։
2 Տէրը իմ վէմն ու իմ բերդն ու իմ փրկիչն է։
3 Աստուած իմ ժայռն է, որին յուսացած եմ
իմ վահանը և իմ փրկութեան եղջիւրը, իմ բարձրութիւնն ու ապաստանը,
իմ ազատիչը. անիրաւութիւնից ազատում ես ինձ։
4 Օրհնեալն եմ կանչում՝ Եհովան, և կազատուիմ իմ թշնամիներից.
5 Վասն զի մահուան ալիքներն ինձ պաշարեցին,
կորստեան վտակները ինձ տապնապեցրին։
6 Դժոխքի լարերը պատեցին ինձ. Մահուան որոգայթները իմ առջևն առին.
7 Իմ նեղութեան մէջ Տիրոջը կանչեցի,
եւ իմ Աստուծոյն աղաղակեցի.
Եւ նա լսեց իր տաճարից իմ ձայնը.
Եւ իմ աղաղակը նորա ականջին հասաւ։
8 Այն ժամանակ երկիրն սասանեց ու դողաց
երկնքի հիմունքը սոսկացին,
Եւ սասանեցին, քանզի նա բարկացաւ։
9 Նորա քթից ծուխ ելաւ,
Եւ նորա բերանից մաշող կրակ.
Կայծակներ փայլատակեցին նորանից։
10 Եւ խոնարհեցրեց երկինքն ու իջաւ.
Եւ մէգ էր նորա ոտների տակ։
11 Եւ նա հեծաւ քերովբէի վերայ և թռաւ,
Եւ երևեցաւ հողմի թևերի վերայ։
12 Խաւարն իրան շուրջը վարագոյր դրաւ՝
Ջրերը՝ օդերէն ամպերը։
13 Նորա առջևի ճառագայթից
Կրակի կայծակներ բորբոքեցին։
14 Երկնքից որոտաց Տէրը,
Եւ բարձրեալը տուաւ իր ձայնը։
15 Եւ ուղարկեց նետեր ու նորանց ցրուեց,
Կայծակներ՝ ու նորանց խռովեցրեց։
16 Եւ երևեցան ծովի յատակները,
Յայտնուեցան երկրի հիմունքը,

Տիրոջ յանդիմանութիւնովը,
Նորա բարկութեան հողմի փչե-
լուցը։
17 Բարձրից ուղարկեց՝ ինձ բըռ-
նեց.
Ինձ դուրս քաշեց շատ ջրերից։
18 Ինձ ազատեց զօրաւոր թշնամու-
ցըս,
Ինձ ատողներից որ ինձանից ու-
ժեղ են.
19 Իմ առաջն առին իմ դժբաղ-
դութեան օրը.
Բայց Տէրն ինձ նեցուկ եղաւ։
20 Եւ ինձ հանեց լայնարձակ տեղ.
Ինձ փրկեց, վասն զի ինձ հաւա-
նեց։
21 Ինձ վարձատրեց Տէրն իմ ար-
դարութեան համեմատ,
Իմ ձեռաց մաքրութեան պէս
հատուցրեց ինձ։
22 Վասն զի ես պահեցի Տիրոջ ճա-
նապարհները,
Եւ իմ Աստուծոյն դէմ ամբա-
րըշտութիւն չարի։
23 Վասն զի նորա բոլոր իրաւունք-
ներն իմ առջև են.
Եւ նորա օրէնքներիցը չհեռացայ։
24 Եւ նորա առջև կատարեալ եղայ.
Ու զգուշացայ իմ անօրէնութի-
նիցը։
25 Եւ ինձ հատուցրեց Տէրը իմ ար-
դարութեան պէս,
Իմ մաքրութեան պէս նորա ա-
չաց առջև։
26 Սուրբի հետ սուրբ ես,
Կատարեալ մարդու հետ կատար-
եալ ես։
27 Մաքուրի հետ մաքուր ես,
Եւ ծուռի հետ ծռմռում ես։
28 Եւ վշտացած ժողովրդին փրկում
ես.
Եւ աչքերդ բարձրերի վերայ՝ որ
կործանես։
29 Վասն զի դու ես իմ ճրագը ով
Տէր.
Եւ Տէրը լուսաւորելու է իմ խա-
ւարը։
30 Վասն զի քեզանով կ'վազեմ
գունդի վերայ.
Իմ Աստուծով պարսպով կ'անց-
նեմ։
31 Աստուծոյ ճանապարհը կատար-
եալ է.
Տիրոջ խօսքը զտուած է.
Նա վահան է բոլոր իրան յու-
սացողներին։
32 Վասն զի ո՞վ է Աստուած բացի
Եհովան.
Ու ո՞վ է վէմ բացի մեր Աս-
ուածը։
33 Աստուած է իմ զօրաւոր բերդը.
Ու կատարելին տանում է իր
ճանապարհովը։
34 Հաստատեց իմ ոտքերն ինչպէս
եղջերուինը,
Եւ իմ բարձր տեղերի վերայ կանգ-
նեցրեց ինձ։
35 Սովորեցնում է ձեռքերս պատե-
րազմի
Ու լարում են պղնձի աղեղ իմ
բազուկները։
36 Եւ տուիր ինձ քո փրկութեան
վահանը,
Ու քո պատասխանելը մեծացրեց
ինձ։
37 Լայնացրիր իմ դնացքն իմ տակ
տակին
Ու իմ սրունքները չդողդողացին։
38 Իմ թշնամիներին հալածեցի ու
փշացրի նորանց.
Ու ետ չդարձայ մինչև որ վերջա-
ցան։
39 Ես ջնջեցի նորանց ու խորտակեցի
նորանց որ չկանգնեն,
Որ վայր ընկնեն իմ ոտների տակը։
40 Դու ինձ զօրութեամբ գօտեորե-
ցիր պատերազմի
Ու ինձ դէմ եղնողներին իմ տակը
գցեցիր։
41 Իմ թշնամիների մէջքը դէպի ինձ
տուիր,
Ինձ ատողներին՝ որ ես ջարդեմ
նորանց։
42 Նայեցին, բայց փրկող չկար.
Դէպի Տէրը, բայց չպատասխա-
նեց նորանց։
43 Իսկ ես նորանց կ'փշրեմ երկրի
փոշուն պէս.
Ճանապարհի ցեխին պէս կ'մանր-
եմ՝ կոխ կ'տամ նորանց։
44 Բայց դու ինձ ազատեցիր իմ ժո-
ղովրդի հակառակութիւնիցը.
Ինձ պահեցիր ազգերի գլուխ է-
նէլու.
Իմ չճանաչած ազգը ծառայում
է ինձ։

45 Օտարաց որդիքն ինձ խոնարհութիւն արին.
Ականջով լսելով ինձ հնազանդեցին։
46 Օտարաց որդիքը թուլացան.
Ու կաղալով գո՜ւբս եկա՜ն իրանց ապաստանարաններիցը։
47 Կենդանի է Եհովան, և օրհնեալ է իմ վէմը
Եւ բարձրեալ լինի Աստուած իմ փրկութեան վէմը։
48 Աի՛ն Աստուածը, որ ինձ համար վրէժխնդիր է լինում,
Ու ազգերն իմ տակը իջեցնում։
49 Եւ որ ինձ իմ թշնամիներիցը պրծացնում է,
Եւ իմ հակառակորդներից ինձ աւելի բարձր ես անում,
Բռնաւոր մարդից ինձ ազատում ես։
50 Սրա համար, ով Տէր, քեզ պիտի գովեմ ազգերի մէջ,
Եւ պիտի Սաղմոս երգեմ քո անունին.
51 Որ իր թագաւորի համար փրկութիւններ մեծացնում է,
Եւ ողորմութիւն է անում յաւիտեան,
Իր օծեալին՝ Դաւթին և նորա զաւակին մինչև յաւիտեան։

ԳԼ. ԻԳ

1 Եւ սրանք են Դաւթի վերջին խօսքերը։
Յեսսէի որդի Դաւթի խօսքը,
Եւ այն մարդու խօսքը, որ վեր բարձրացաւ.
Յակոբի Աստուծոյ օծեալը,
Իսրայէլի վայելուչ երգերը ըսո՞ղը։
2 Տիրոջ Հոգին խօսեց ինձանով,
Եւ նորա խօսքն իմ լեզուի վերայ էր։
3 Իսրայէլի Աստուածն ասաց.
Իսրայէլի վէմը խօսեց ինձ հետ.
Թէ մարդկանց վերայ իշխողը արդար լինի,
Աստուծոյ երկիւղովն իշխէ։
4 Նա նման է առաւօտեան լուսոյն,
երբոր արեգակը ծագում է,
Մի առաւօտ՝ որ ամպեր չկան՝
Ձառագայթից՝ անձրևից յետոյ
Գետնից դալար է բուսնում։

Ապա իմ տունը այսպէս չէ՞ Աստուծոյ մօտ.
Վասն զի յաւիտենական ուխտ է արել ինձ հետ.
Հաստատուած ամեն բանի մէջ և պահուած։
Ապա իմ բոլոր փրկութիւնն ու բոլոր բաղձանքը նա չի՞ ծաղկեցնել։
Իսկ բոլոր անօրէնները դուրս գցուած փուշի պէս են.
Որը ձեռքով չեն բռնել։
Եւ նորանից դիպչող մարդը
Զինուորուի երկաթով և նիզակի փայտով։
Եւ վառած կրակով պիտի վառուին նոյն տեղը։
Սորանք են Դաւթի զօրաւորների անունները, Յոսէբ-բասեբեթ Թահքեմոնացին՝ զօրաւորների գլխաւորը. նա է Ասոնացի Ադինոն, որ ութ հարիւր մարդ մէկ անգամ մեռցրեց։
Նորանից յետոյ Ախոհացի որդի Դովգայի որդի Եղիազարը, որ Դաւթի հետ եղող երեք զօրավարներից էր, երբոր նախատեցին այնտեղ պատերազմի համար ժողովուած փղշտացիներին, և Իսրայէլի մարդիկը վեր փախան։
Նա վեր կացաւ և զարկեց փղշտացիներին մինչև որ ձեռքը յոգնեց և ձեռքն իր սուրին փակաւ, և Տէրն այն օրը մեծ փրկութիւն արաւ, և ժողովուրդը նորանից դարձաւ, որ միայն կողոպուտն անէ։
Եւ նորանից յետոյ Աբարացի Ագէի որդի Սամման էր. երբոր փղշտացիք մի խումբ կազմեցին, և այնտեղ մի կտոր ագարակ կար ոսպով լիքը, և ժողովուրդը փղշտացոց երեսից փախաւ, Այն ժամանակ նա գէմ կացաւ ագարակի մէջ ու նորան պաշտպանեց և զարկեց փղշտացիներին, և Տէրը մեծ փրկութիւն արաւ։
Եւ այն երեսուն զօրավարներից երեքը գնացին հունձի ժամանակին Դաւթի մօտ Ոդոդոմի քարայրը, և փղշտացոց մէկ գունդը բանակել էր Ռափայիմ հովտի մէջ։ Եւ այն ժամանակ Դաւիթը

բերդուն էր. և փղշտացոց մի զօրախումբը այն ժամանակ Բեթ-
15 լէհեմուն էր: Եւ Դաւիթը փա-
փաքեց և ասաց. Ո՞վ կ՚բերէ ինձ
հանար խմելու ջուր Բեթլէհեմի
16 ջրհորիցը, որ դրան մօտ է: Եւ
այս երեք զօրաւորները փղշտացոց
բանակը ճեղքեցին, և ջուր քա-
շեցին Բեթլէհեմի ջրհորիցը որ
դրան մօտ է և բերին տուին Դաւ-
թին. իսկ նա չուզեց խմել այն,
17 և թափեց Տիրոջ համար. Եւ ա-
սաց. Հաւ լինի ինձ, ով Տէր,
որ ես անեմ այս բանը, իրանց
կեանքը վտանգի մէջ դնող մարդ-
կանց արիւնը՞ Ես. և չկամեցաւ
խմել այն. այս բանն արին այն
երեք զօրաւորները:
18 Եւ Շարուհեան Յովաբի եղբայր
Աբեսան այն երեքի գլխաւորն
էր. և նա բարձրացրեց իր նիզա-
կը երեք հարիւր սպանուածների
վերայ. և նա անուանի էր այն
19 երեքի հետ: Թէև այն երեքից ա-
ւելի պատուաւոր էր և նորանց
գլխաւորն էր, բայց այն երեքին
նա չէր հասնիլ:
20 Եւ Յովիադային որդին Բանեան՝
մի ժիր և գործունեայ մարդու
որդի՝ Կաբսեելացի՝ զարկեց Մո-
վաբի երկու զօրաւոր մարդկանց.
և նա իջաւ ու զարկեց առիւծին
21 գուբի մէջ ձիւնի ժամանակ: Եւ
նա զարկեց մի Եգիպտացի մարդ,
որ տեսքով էր, և այդ Եգիպ-
տացու ձեռին մի նիզակ կար.
իսկ նա գնաց նորա վերայ մէկ
ցուպով ու յափշտակեց նիզակը
Եգիպտացու ձեռքից ու սպանեց
22 նորան իր նիզակով: Այս բանե-
րըն արաւ Յովիադայի որդի Բանե-
եան. և նա անուանի էր այն ե-
23 րեք զօրաւորների մէջ: Երեսու-
նից աւելի պատուաւոր էր, բայց
այն երեքին չէր հասնիլ. և Դա-
ւիթը նորան իր առաջնին վերա-
կացու դրաւ:
24 Յովաբի եղբայրն Ասայէլն երե-
սունից էր. Բեթլեհեմացի Դոդ-
25 դայի որդին՝ Բեթլէհեմացին, Շա-
մոթացի Սամման, Հարոդացի Ե-
26 ղիկան. Փելլտացի Հեղղէսը,
Թեկուացի Եկդեսի որդին Իրա-
սը. Անաթովթացի Աբիեզերը, 27
Ովսացի Մեբունան. Աքուքացի 28
Սեղմոնը, Նետոփաթացի Մահա-
րան, Նետոփաթացի Բանեայի որ- 29
դի Ելդը. Բենիամինի որդւոցից
Գաբայից՝ Ռիփայի որդին Եթթին.
Փարաթոնացի Բանեան, Գահաշ 30
ձորերից Ադդային. Արբաթացի 31
Աբիելբոնը, Բարհումացի Ազմա-
թը. Սաղաբինացի Եղիահբան, Յա- 32
սենի որդիներից Յոնաթանը. Հա- 33
բարացի Սամման, Արարացի Սա-
բարի որդի Աքիամը. Մաաքա- 34
թիի որդու Ահասբայի որդի Եղի-
փաղետը, Գեղոնացի Աքիտոփելի
որդի Եղիամը. Քարմելացի Հասա- 35
բէն, Արբացի Փաարան. Սուբա- 36
ցի Նաթանի որդի Իգալը, Գա-
դացի Բանին. Ամմոնացի Սելեկը, 37
Շարուհեան Յովաբի կապարճա-
կիրը Բերոթացի Նահարան. Յե- 38
թերացի Իրասը, Յեթերացի Գա-
բեբը. Քեսացի Ուրիան. ամենը 39
երեսունուհոթը:

ԳԼ. ԻԴ

Եւ դարձեալ բորբոքեց Տիրոջ 1
բարկութիւնը Իսրայէլի վերայ.
և Դաւթին դրդեց նորանց դէմ՝
ասելով. Գնա հաշուիր Իսրայէլն
և Յուդան: Եւ թագաւորն ա- 2
սաց Յովաբին՝ իր հետ եղող զօ-
րապետին. Շրջիր Իսրայէլի բոլոր
ցեղերի մէջ Դանից մինչև Բեր-
սաբէէ և համարեցէք ժողովուր-
դը որ ժողովրդի թիւն իմանամ:
Եւ Յովաբն ասաց թագաւորին. 3
Քո Տէր Աստուածը աւելցնէ
ժողովրդի վերայ այսչափ և այս-
չափ հարիւրապատիկ, և իմ
տէր թագաւորի աչքերը տեսանեն.
բայց իմ տէր թագաւորը ինչո՞ւ
համար է փափաքում այդ բա-
նը: Սակայն թագաւորի խօս- 4
քը աստուածաշունչ Յովաբի և զօ-
րավարների վերայ, և Յովաբը և
զօրավարները դուրս եկան թա-
գաւորի առջևից Իսրայէլ ժո-
ղովուրդը համարելու: Եւ անց 5
կացան Յորդանանով և բանա-
կեցին Արոերում՝ գետ ձորում
եղող քաղաքի աջ կողմին ու-
դէպի Յազեր: Եւ եկան Գաղա- 6

ար և թահթիմադատէի երկիրը, յետոյ եկան Դանաեատն և Միդոնի շրջակայքը։ 7 Յետոյ եկան Տիրոսի ամրոցը ու Խևացոց և Քանանացոց բոլոր քաղաքները. յետոյ դուրս եկան դէպի Յուդայի հարաւը Բեերսաբէէ։ 8 Եւ շրջեցին բոլոր երկիրը. և ինը ամսից ու քսան օրից յետոյ եկան Երուսաղէմ։ 9 Եւ Յովաբը ժողովրդի համարների թիւը տուաւ թագաւորին, և Իսրայէլն էր ութը հարիւր հազար պատերազմի սուր քաշող մարդ, բայց Յուդայեանք հինգ հարիւր հազար մարդ։

10 Եւ Դաւթի խղճմտանքը իրան ծակեց, երբոր ժողովուրդը համարել էր. և Դաւթին ասաց Տիրոջը. Շատ մեղանչեցի որ ասարի. հիմա, ով Տէր, աղաչում եմ՝ ներիր ծառայիդ մեղքը. վասն զի շատ յիմարութիւն արի։ 11 Եւ Դաւթին առաւօտը վեր էր կացել. և Տիրոջ խօսքը եղաւ Գադ մարգարէին՝ Դաւթի տեսանողին ասելով. 12 Գնա և ասիր Դաւթին. Այսպէս է ասում Տէրը՝ երեք բան եմ դնում քո առջև, ընտրիր քեզ համար նորանցից մէկը որ քեզ համար անեմ։ 13 Եւ Գադը եկաւ Դաւթի մօտ և պատմեց նորան և ասաց նորան. Արդեօք քո երկրի մէջ եօթը տարի սով գայ, կամ երեք ամիս դու փախչես քո թշնամիների առջևից և նորանք քեզ հալածե՞ն, կամ թէ երեք օր ժանտախտ լինի քո երկրումը. հիմա խնայիր ու տես՝ ինչ խօսք տանեմ ինձ 14 ուղարկողին։ Եւ Դաւթին ասաց Գադին. Ես շատ նեղութեան մէջ եմ, թող Տիրոջ ձեռքն ընկնենք, վասն զի շատ է նորա ողորմութիւնը. ես մարդու ձեռք չեմ ընկնիլ։

15 Եւ Տէրը ժանտախտ ուղարկեց Իսրայէլի մէջ առաւօտից մինչև որոշեալ ժամանակը. և ժողովրդից մեռաւ Դանից մինչև Բեերսաբէէ եօթանասուն հազար մարդ։ 16 Եւ հրեշտակն իր ձեռքը մեկնեց Երուսաղէմի վերայ որ փչացնէ նորան, և Տէրը ապշացաւ այս չարիքի վերայ, և ասաց հրեշտակին որ փչացնում էր ժողովրդին. Բաւական է. հիմա ձեռքդ եա քաշիր։ Եւ Տիրոջ հրեշտակը Երուսացի Ոռնայի կալին մօտ էր։ 17 Եւ Դաւթին ասաց Տիրոջը երբոր տեսաւ որ հրեշտակը կոտորում է ժողովրդին. Ահա ես եմ մեղանչել և ես եմ յանցանք գործել, իսկ այս ոչխարներն ինչ են արել. աղաչում եմ թող ձեռքդ ինձ վերայ և իմ հօր տան վերայ լինի։

18 Եւ նոյն օրը Գադը գնաց Դաւթի մօտ և ասաց նորան. Վեր գնա, Տիրոջ համար սեղան շինիր Երուսացի Ոռնայի կալումը։ 19 Եւ Դաւթը գնաց Գադի խօսքի համեմատ ինչպէս որ Տէրը հրամայել էր։ 20 Եւ Ոռնան նայեց ու տեսաւ թագաւորին և նորա ծառաներին, որ գալիս էին իր մօտը. և Ոռնան դուրս ելաւ ու երկրպագեց թագաւորին իր երեսի վերայ մինչև գետինը։ 21 Եւ Ոռնան ասաց. Ինչո՞ւ համար է եկել իմ տէր թագաւորը իր ծառայի մօտ. և Դաւթին ասաց. Որ կալը քեզանից ծախու առնեմ Տիրոջը սեղան շինելու համար, որ հարուածը դադարէ ժողովրդից։ 22 Եւ Ոռնան ասաց Դաւթին. Թող վեր առնէ և զոհ մատուցանէ թագաւորը ինչ որ հաճոյ է իր աչքին. ահա եզները ողջակէզի համար, և կամնատայլերն և եզների գործիքը փայտի համար։ 23 Այս բոլորը Ոռնան թագաւորին տուաւ թագաւորապար. և Ոռնան ասաց թագաւորին. Քո Տէր Աստուածը քեզ ընդունէ։ 24 Եւ թագաւորն ասաց Ոռնային. Ոչ, այլ քեզանից պիտի ծախու առնեմ, և զոհ պիտի չը մատուցանեմ Տէր Աստուծոյն ձրի. և Դաւթը ծախու առաւ կալը և եզները յիսուն արծաթիկղի։ 25 Եւ Դաւթն այնտեղ սեղան շինեց Տիրոջ համար և ողջակէզ ու խաղաղութեան զոհեր մատուցրեց. և Տէրը աղօթքը լսեց երկրի մասին, և հարուածը դադարեց Իսրայէլի վերայից։

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Դաւիթ թագաւորը ծերացել ու օրերը անց էր կացրել. և նորան հանդերձներով ծածկում էին, բայց չէր տաքանում։
2 Եւ նորա ծառաները ասացին նորան. Թող մեր տէր թագաւորի համար մի կոյս աղջիկ որոնեն, որ կանգնէ թագաւորի առջև, և նորան դարմանէ, ու քո ծոցումը պառկէ, որ մեր տէր թագաւորը տաքանայ։
3 Եւ մի գեղեցիկ աղջիկ որոնեցին Իսրայէլի բոլոր սահմանումը և գտան Սունամացի Աբիսագը, և նորան բերին
4 թագաւորի մօտ։ Եւ աղջիկը շատ գեղեցիկ էր. և թագաւորին դարմանում ու ծառայում էր. և թագաւորը նորան չգիտաց։
5 Եւ Ադոնիա որդի Ագգիթի հպարտացաւ ասելով. Ես թագաւոր լինեմ. և իրան համար կառքեր և ձիաւորներ պատրաստեց և հիսուն մարդ սուրհանդակ իր առջև։
6 Եւ նորա հայրը նորան իր օրերումը չէր յանդիմանել ասելով Դու ինչո՞ւ ես այդպէս անում. և նա էլ տեսքով շատ գեղեցիկ էր, որ ծնուել էր Աբիսողոմից յետոյ։
7 Եւ նա խօսք կապեց Շարուհեան Յովաբի և Աբիաթար քահանայի հետ, որոնք Ադոնիային հետևելով օգնում էին նորան։
8 Բայց Սադոկ քահանան և Յոյիադայի որդի Բանեան և Նաթան մարգարէն և Սեմէի ու Ռէի և Դաւթի զօրաւորները Ադոնիայի հետ չէին։
9 Եւ Ադոնիան ոչխարներ ու եզներ և գէր անասուններ մօթեց Զոուղեթի քարի մօտ, որ Ռոգելի աղբիւրի կշտին է, և կանչեց իր ամեն եղբայրներին թագաւորի որդիքանց և Յուդայի ամեն մարդիկանց որ թագաւորի
10 ծառաներն էին։ Բայց Նաթան մարգարէն և Բանեան և զօրաւորները և իր եղբայր Սողոմոնին չկանչեց։
11 Եւ Նաթան ասաց Բերսաբէին Սողոմոնի մօրը թէ. Չե՞ս լսել որ Ադգիթի որդի Ադոնիան թագաւոր է դառել, և մեր տէր Դաւիթ չգիտէ։
12 Եւ արդ՝ եկ քեզ մի խրատ տամ. որ ազատես քո կեանքը և քո որդի Սողոմոնի կեանքը։
13 Գնա մտիր Դաւիթ թագաւորի մօտ և ասիր նորան. Չէ՞ որ դու ինքդ, իմ տէր թագաւոր, երդում արիր քո աղախնին ասելով թէ՝ Քո որդին Սողոմոնը պիտի թագաւոր լինի ինձանից յետոյ, և նա պիտի նստէ իմ աթոռի վերայ. ապա ինչո՞ւ համար է Ադոնիան թագաւոր
14 եղել։ Ահա դու այնտեղ թագաւորի հետ տակաւին խօսելիս ես էլ ներս կ'մտնեմ քո ետևից և կը հաստատեմ քո խօսքը։
15 Եւ Բերսաբէն գնաց թագաւորի մօտ նորա սենեակը. և թագաւորը շատ ծեր էր, և Սունամացի Աբիսագը ծառայում էր
16 թագաւորին։ Եւ Բերսաբէն գլուխ տալով երկրպագեց թագաւորին. և թագաւորն ասաց. Ի՞նչ
17 ունիս։ Եւ նա ասաց նորան. Դու քո Տէր Աստուծով երդում արիր քո աղախնին, ասելով. Թէ՝ Քո որդի Սողոմոնը պիտի թագաւոր լինի ինձանից յետոյ, և նա պիտի
18 նստի իմ աթոռի վերայ։ Իսկ հիմա, ահա Ադոնիան է թագաւոր դառել. և դու, իմ տէր
19 թագաւոր, չգիտես։ Եւ շատ արջառներ ու գէր ոչխարներ է մորթել և կանչել թագաւորի ամեն որդիքանցը և Աբիաթար քահանային և զօրապետ Յովաբին, բայց քո ծառայ Սողոմոնին չէ
20 կանչել։ Եւ արդ, ով իմ տէր թագաւոր, բոլոր Իսրայէլի աչքերը քեզ վերայ է, որ իմացնես նորանց թէ ո՞վ պիտի իմ տէր թագաւորի աթոռի վերայ նստէ

21 իրանից յետոյ։ Եւ անպատ-
ճառ կէնց որ իմ տէր թագաւորը
նընջեց իր հայրերի հետ, այն ժա-
մանակ ես և իմ որդի Սողոմոնը
յանցաւոր կնք լինելու։
22 Եւ ահա նա տակաւին թա-
գաւորի հետ խօսելիս, ներս մը-
23 տաւ Նաթան մարգարէն։ Եւ
թագաւորին պատմեցին ասելով՝
Ահա Նաթան մարգարէն. և նա
եկաւ թագաւորի առջև և եր-
կրպագեց թագաւորին իր երեսի
24 վերայ մինչև գետինը։ Եւ Նա-
թան ասաց. Ով իմ տէր արքայ. դու ասե՞լ ես թէ Ադոնիա
ան պիտի թագաւոր լինի ինձա-
նից յետոյ, և նա պիտի նստէ
25 իմ աթոռի վերայ։ Որովհետև
նա այսօր իջել՝ շատ արջառներ
ու գեր ոչխարներ է մորթել և
կանչել է թագաւորի ամեն որդ-
կանցը և զօրավարներին և Աբի-
աթար քահանային, և ահա ու-
տում ու խմում են նորա առջև
և ասում՝ կեցցէ Ադոնիա ար-
26 քայ։ Եւ ինձ քո ծառային և
Սադովկ քահանային և Յովիա-
դայի որդի Բանեային և քո ծա-
27 ռայ Սողոմոնին չէ կանչել. Արդ-
ե՞օք այս բանը իմ տէր թագա-
ւորից է եղել, բայց դու քո ծա-
ռային չես իմացրել, թէ ո՞վ պի-
տի նստէ իմ տէր թագաւորի
աթոռի վերայ նորանից յետոյ։
28 Եւ Դաւիթ թագաւորը պա-
տասխանեց և ասաց. Ինձ մօտ
կանչեցէք Բերսաբէին. և նա ե-
կաւ թագաւորի առջևը և կանգ-
29 նեց թագաւորի առջև։ Եւ թա-
գաւորը երդում արաւ և ասաց.
Կենդանի է Տէրը որ իմ կեանքն
30 ազատեց ամեն նեղութիւնից. Որ
ինչպէս որ քեզ երդում եմ ա-
րել Իսրայէլի Աստուած Տէրով,
ասելով որ՝ Քո որդի Սողոմոնը
պիտի թագաւոր լինի ինձանից
յետոյ և նա պիտի նստէ իմ ա-
թոռի վերայ իմ տեղ. ահա այսօր
31 պիտի անեմ։ Եւ Բերսաբէն գը-
լուխ տուաւ երեսը մինչև գետի-
նը և երկրպագեց թագաւորին և
ասաց. Կեցցէ իմ տէր արքան
Դաւիթ յաւիտեան։

Եւ ասաց Դաւիթ թագաւորը. 32
կանչեցէք ինձ մօտ Սադովկ քա-
հանան և Նաթան մարգարէն և
Յովիադայի որդի Բանեան. և նո-
րանք եկան թագաւորի առջև։
Եւ թագաւորն ասաց նորանց. 33
Առէք ձեզ հետ ձեր տիրոջ ծա-
ռաներին և հեծացրէք իմ որդի
Սողոմոնին իմ ջորիի վերայ և ի-
ջեցրէք նորան Գեհոն։ Եւ այն- 34
տեղ նորան Իսրայէլի վերայ թա-
գաւոր օծեն Սադովկ քահանան
և Նաթան մարգարէն. և փողը
հնչեցրէք ու ասացէք. Կեցցէ
Սողոմոն արքայ։ Եւ նորա ետևից 35
վեր եկէք, և նա գայ ու նստէ
իմ աթոռի վերայ և նա թագա-
ւոր լինի իմ տեղ. և ես հրաման
տուի նորան, որ իշխան լինի Ի-
սրայէլի և Յուդայի վերայ։ Եւ 36
Յովիադայի որդի Բանեան թա-
գաւորին պատասխանեց և ասաց.
Ամէն, այսպէս ասէ իմ տէր թա-
գաւորի Տէր Աստուածը։ Ինչպէս 37
որ Տէրը եղել է իմ տէր թա-
գաւորի հետ, այնպէս լինի Նա-
Սողոմոնի հետ, և մեծացնէ նո-
րա աթոռը իմ տէր թագաւորի
Դաւիթի աթոռից։ Եւ Սադովկ 38
քահանան և Նաթան մարգարէն
և Յովիադայի որդի Բանեան և
Քերեթիք ու Փելեթիք իջան և հե-
ծացրին Սողոմոնին Դաւիթ թա-
գաւորի ջորիի վերայ, և տարին
նորան Գեհոն։ Եւ Սադովկ քահա- 39
նան առաւ իւղի եղջիւրը խորա-
նից և օծեց Սողոմոնին, և փողը
հնչեցրին ու բոլոր ժողովուրդն
ասացին. Կեցցէ Սողոմոն արքայ։
Եւ բոլոր ժողովուրդը վեր էին 40
գալիս նորա ետևից և ժողովուր-
դը սրինգներ հնչեցնելով մեծ ու-
րախութեամբ ուրախանում էին.
և երկիրը դղրդում էր նորանց
ձայնովը։

Եւ լսեց Ադոնիան և նորա բո- 41
լոր բազմականները. նորանք կե-
րել վերջացել էին, և Յովաբը
լսեց փողի ձայնը և ասաց. Ին-
չո՞ւ է լինում այդ դղրդման ձայ-
նը քաղաքում։ Նա տակաւին 42
խօսում էր և ահա Աբիաթար
քահանայի որդի Յովնաթանը ե-

կաւ, և Ադոնիան ասաց. Եկ, վասն զի դու մի զօրաւոր մարդ
43 ես և լաւ աւետաւոր։ Եւ Յովնաթանը պատասխանեց և ասաց Ադոնիային. Ապաքէն մեր տէր թագաւոր Դաւիթը թագաւոր
44 արաւ Սողոմոնին։ Եւ թագաւորը նորա հետ ուղարկեց Սադովկ քահանային և Նաթան մարգարէին և Յովիադային որդի Բանեայիին և Քերեթհինեերին ու Փելեթհինեերին և նորան հեծցրին թա-
45 գաւորի Ջորիի վերայ։ Եւ Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն նորան թագաւոր օծեցին Գեհոնում և այնտեղից վեր գնացին ուրախանալով և քաղաքը դղրդաց. սա այն ձայնն է որ լը-
46 սեցիք։ Նաև Սողոմոնը նստեց թագաւորութեան աթոռի վե-
47 րայ։ Եւ թագաւորի ծառաներն էլ եկան ընդհաւորելու մեր տէր թագաւոր Դաւթին ասելով. Ձո Աստուածը Սողոմոնի անունը քո անունից աւելի մեծացնէ և նորա աթոռը քո աթոռից աւելի բարձրացնէ. և թագաւորը երկրպագութիւն արաւ իր անկողնի մէջ։
48 Ու նաև այսպէս ասաց թագաւորը. Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որ այսօր իմ աթոռի վերայ մէկին նստել տուաւ որին իմ աչքերը տեսնում են։
49 Եւ զարհուրեցին և վեր կացան Ադոնիայի բոլոր կոչնականները, և ամեն մարդ գնաց իր ճանապարհը։
50 Բայց Ադոնիան վախում էր Սողոմոնի երեսից. վասն որոյ վեր կացաւ ու գնաց և բռնեց սեղանի եղջիւրներից։
51 Եւ Սողոմոնին իմացրին ասելով. Ահա Ադոնիան վախում է Սողոմոն թագաւորից, և ահա բռնել է սեղանի եղջիւրներից ասելով. Թող հէնց այսօր երդում անէ ինձ Սողոմոն թագաւորը, որ իր ծառային սրով
52 չի սպանիլ։ Եւ Սողոմոնն ասաց. Եթէ առաքինի լինի նորա մազից մէկը վայր չընկնիլ դեռինը, իսկ եթէ չարութիւն գտնուի նորա վերայ, այն ժամանակ պիտի մեռ-
53 նէ։ Եւ Սողոմոն թագաւորը մարդ

ուղարկեց և նորան վայր իջեցրին սեղանիցը, և եկաւ ու երկրպագեց Սողոմոն թագաւորին. և Սողոմոնն ասաց նորան. Գնա քո տունը քեզ համար։

ԳԼ. Բ

Եւ Դաւթի մեռնելու օրերը մո- 1
տեցան, և պատուիրեց իր Սողո-
մոն որդուն ասելով. Ես գնում 2
եմ ամեն երկրի ճանապարհը.
բայց դու քաջացիր և արի եղիր։
Եւ պահիր քո Տէր Աստուծոյ 3
պահպանութիւնը որ գնաս նորա
ճանապարհներովը, որ պահես
նորա պատուիրանքները, հրաման-
ները, իրաւունքները և վկայու-
թիւնները, ինչպէս որ գրուած է
Մովսէսի օրէնքումը, որպէս զի
յաջողես ամեն արած բանումդ
և ամեն ուր որ դառնաս։ Որպէս 4
զի Տէրը հաստատէ այն խօսքը
որ ասաց իմ մասին ասելով. Ե-
թէ քո որդիքը պահեն իրանց
ճանապարհները, որ իմ առջև
գնան հաւատարմութեամբ իրանց
բոլոր սրտովը ու բոլոր հոգովը,
ասաց. Պակաս չի լինիլ քեզա-
նից մի մարդ Իսրայէլի աթոռի
վերայ։ Ու նաև գիտես դու Շա- 5
րուհեան Յովաբի ինձ արածը, որ
արաւ Իսրայէլի երկու զօրագը-
լուխներին՝ Ներեան Աբենեերին
և Յեթերեան Ամեսայիին, որ նո-
րանց սպանեց, և պատերազմի
արիւն թափեց խաղաղ ժամա-
նակում. և պատերազմի արիւն
ածեց իր մէջքի գօտու և իր ոտ-
քի կօշիկի վերայ։ Եւ քո իմաս- 6
տութեան համեմատ անէս որ
նորա ալեւորութիւնը խաղաղու-
թեամբ գերեզման չիջեցնես։ Բայց 7
Գաղաատացի Բերզելլի որդիան-
ցը ողորմութիւն անես, որ քո
սեղանի վերայ ուտողների հետ
լինին, վասն զի ինձ այնպէս մո-
տեցան քո եղբայր Աբիսողոմի ե-
րեսից փախչելիս։ Եւ ահա քո- 8
ւորիմացի Բենիամինեան Գերա-
յի որդի Սեմէին քեզ մօտ է. նա
ինձ սաստիկ անէծքով անիծել
է, երբոր ես Մանայիմ էի գը-

նում, և նա ինձ Յորդանան ինձ դիմաւորելու ու ես երդում արի նորան Տէրով թէ քեզ սրով 9 չեմ սպանիլ։ Եւ հիմա դու նորան անմեղ չհամարես, որովհետև դու իմաստուն մարդ ես և գիտես թէ նորան ինչ պիտի անես, որ նորա ալեւորութիւնը արիւնով գերեզման իջեցնես։

10 Եւ Դաւիթը հանգչեց իր հայրերի հետ և թաղուեցաւ Դաւթի քա-
11 ղաքում։ Եւ Դաւթի Իսրայէլի վերայ թագաւորութիւն արած օրերը քառասուն տարի էին. Քեբրոնում թագաւորութիւն էր արել եօթը տարի և Երուսաղէմում թագաւորութիւն արաւ երեսունուերեք տարի։

12 Եւ Սողոմոնը նստաւ իր հօր Դաւթի աթոռի վերայ, և նորա թագաւորութիւնը շատ հաստատուեցաւ։

13 Եւ Ագգիթի որդի Ադոնիան եկաւ Սողոմոնի մօր Բերսաբէի մօտ և նա ասաց՝ խաղաղութի՞ամբ է քո գալուստը. նա էլ
14 ասաց՝ խաղաղութեամբ։ Եւ ասաց. Ես մի խօսք ունիմ քեզ —ես— , և Բերսաբէն ասաց՝ Ասիր։
15 Նա էլ ասաց. Դու գիտես որ թագաւորութիւնը իմն էր դառնել, և բոլոր Իսրայէլն իրանց երեսը դէպի ինձ էին դարձրել որ ես թագաւոր եմ, բայց թագաւորութիւնը շուռ տուաւ և դառաւ իմ եղբօրը. վասն զի Տէրից էդաւ նորան։
16 Եւ հիմա ես քեզանից միայն մէկ խնդիրք եմ խընդրում. ինձ անտես մի անիր. և
17 նա ասաց նորան՝ Ասիր։ Եւ Ադոնիան ասաց. Ասիր Սողոմոն թագաւորին՝ քանզի նա քեզ անտես չի անել, որ ինձ կին տայ
18 Սունամացի Աբիսակը։ Եւ Բերսաբէն ասաց. Լաւ, ես կ'խօսեմ քո մասին թագաւորի հետ։
19 Եւ Բերսաբէն գնաց Սողոմոն թագաւորի մօտ Ադոնիայի մասին նորա հետ խօսելու, և թագաւորը վեր կացաւ նորան դիմաւորելու և երկրպագեց նորան և նստեց իր աթոռի վերայ, և թագաւորի մօր համար աթոռ

դրին, և նա նստեց ընտրեալ աջ կողմին։ Եւ Բերսաբէն ասաց. Ես 20 քեզանից մի փոքր խնդիրք եմ խնդրում, ինձ անտես մի անիր. և թագաւորն ասաց նորան. Խընդրիր, մայր իմ, վասն զի ես քեզ անտես չեմ անիլ։ Բերսաբէն էլ 21 ասաց. Թող Սունամացի Աբիսակը տրուի քո եղբայր Ադոնիային կին լինելու։ Եւ Սողոման 22 թագաւորը պատասխանեց և ասաց իր մօրը. Էլ ինչո՞ւ համար ես միայն Սունամացի Աբիսակը խնդրում Ադոնիայի համար, ուրեմն նորա համար թագաւորութիւնն էլ խնդրիր, վասն զի նա իմ եղբայրն է՝ ինձանից մեծ, նորա համար և Աբիաթար քահանայի համար և Շարուհեան Յովաբի համար։ Եւ Սողոմոն թա- 23 գաւորը երդում արաւ Տէրովն՝ ասելով. Աստուած ինձ այսպէս անէ և էլ աւելի անէ, որ Ադոնիան այդ խօսքը իր կեանքի դէմ է խօսել։ Եւ արդ կենդանի է 24 Տէրը որ ինձ հաստատեց ու նստեցրեց իմ հօր՝ Դաւթի աթոռի վերայ և որ ինձ համար տուն շինեց ինչպէս որ ասել էր, որ այսօր պիտի մեռնէ Ադոնիան։ Եւ 25 Սողոմոն թագաւորը ուղարկեց Յովիադայի որդի Բանեայինն, որ զարկեց նորան, և նա մեռաւ նորա ձեռօքը։

Եւ Աբիաթար քահանային ա- 26 սաց թագաւորը. Գնա Անաթովթ քո արտերը, վասն զի մահու արժանի ես դու, և ես այսօր քեզ չեմ մեռցնիլ, որովհետև Տէր Եհովայի տապանակը կրել ես իմ հօր Դաւթի առջև, և որովհետև դու էլ նեղութիւն քաշեցիր այն ամեն բանի մէջ, ուր որ իմ հայրը նեղութիւն քաշեց։ Եւ Սո- 27 ղոմոնը դուրս արաւ Աբիաթարին Տիրոջ քահանայութիւնից, որ կատարուի Տիրոջ խօսքը որ ասել էր Հեզիի տան վերայ Սելովումը։

Եւ այս լուրը հասաւ Յովա- 28 բին. թէև Յովաբը հետևել էր Ադոնիային, բայց Աբիսողոմին չէր հետևել, և Յովաբը փախաւ

Տիրոջ վրանը և բռնեց սեղանի
29 եղջիւրներից։ Եւ Սողոմոն թա-
գաւորին պատմեցին. Թէ Յովա-
բը փախել է Տիրոջ վրանը և ա-
հա սեղանի կշտին է. և Սողոմո-
նը Յովիադայի որդի Բանեային
ուղարկեց ասելով. Գնա նորան
30 սպանիր։ Եւ եկաւ Բանեան Տի-
րոջ վրանը և ասաց նորան. Այս-
պէս է ասում թագաւորը՝ դուրս
եկ. իսկ նա ասաց՝ Ոչ, ես այս-
տեղ եմ մեռնելու. և Բանեան
եաւ դարձրեց այս խօսքը թագա-
ւորին՝ ասելով. Թէ Յովաբն այս-
պէս ասաց և ինձ այսպէս պա-
31 տասխանեց։ Եւ թագաւորն ա-
սաց նորան՝ Արա ինչպէս որ ա-
սել է, և սպանիր նորան ու թա-
ղիր. և հեռացրու ինձանից և
իմ հօր տանից այն անմեղ սր-
32 իւնը որ Յովաբը թափել է։ Եւ
Տէրը նորա արիւնը նորա գլխին
դարձնէ, որ իրանից արդար և
լաւ մարդկանց զարկեց ու սպա-
նեց սրով առանց իմ հօր գի-
տութեան՝ Ներեան Աբեներին և
Յուդայի զօրագլուխ Յեթերեան
33 Ամեսայիին։ Եւ նորանց արիւնը
դառնայ Յովաբի գլխին և նորա
սերունդի գլխին յաւիտեան. իսկ
Դաւթին ու նորա սերունդին և
նորա տանն ու աթոռին խաղա-
ղութիւն լինի Տէրից յաւիտեան։
34 Եւ Յովիադայի որդի Բանեան վեր
գնաց ու զարկեց նորան սպանեց,
և նա թաղուեցաւ իր տանը՝ անա-
35 պատում։ Եւ Յովիադայի որդի
Բանեային նորա տեղը զօրքի վե-
րայ կարգեց, և Սադովկ քահա-
նային դրաւ թագաւորը Աբիա-
թարի տեղ։
36 Եւ թագաւորը ղրկեց ու կանչեց Սեմէիին և ասաց նո-
րան. Քեզ համար Երուսաղէմու-
մը մի տուն շինիր և այնտեղ բը-
նակիր. և այնտեղից դուրս չգաս
37 այս կամ այն կողմ։ Եւ այն օրը
որ դուրս եկար և կեդրան հեղե-
ղատուիը անցար, հաստատ իմա-
ցիր, որ անպատճառ պիտի մեռ-
38 նես, քո արիւնը քո գլուխը լինի։
Եւ Սեմէի ասաց թագաւորին.
Այդ խօսքը բարի է. ինչպէս որ
ասաց իմ տէր թագաւորը, այն-
պէս պիտի անէ ծառադ. և Սե-
մէի շատ ժամանակ բնակեց Ե-
րուսաղէմ։
Եւ եղաւ որ երեք տարուց յե- 39
տոյ Սեմէիի երկու ծառաները
փախան Գեթի թագաւոր Մաա-
քայի որդի Ականեսի մօտ. և Սե-
մէիին իմացրին. Թէ Ահա քո
ծառաները Գեթումն են։ Եւ Սե- 40
մէի վեր կացաւ և հասեցրց իր
էշը և գնաց Գեթ՝ Ականեսի մօտ
իր ծառաները որոնելու. և Սե-
մէի գնաց ու իր ծառաներին բե-
րաւ Գեթից։ Եւ իմացրին Սողո- 41
մոնին, Թէ Սեմէի Երուսաղէմից
գնացել է Գեթ և ետ դարձել։
Եւ թագաւորը յղեց ուղարկեց 42
ու կանչեց Սեմէիին և ասաց նո-
րան. Չէ՞ որ քեզ երդում տը-
ուի Տէրով և վկայեցի քեզ ա-
սելով. Ընդ Այն օրը դուրս եկար
և այս կամ այն կողմը գնացիր,
իմանաս որ անպատճառ պիտի
մեռնես. և դու ինձ ասացիր՝
Այդ խօսքը բարի է որ լսեցի։
Ուրեմն ինչո՞ւ համար չպահեցիր 43
Տիրոջ երդումը և այն պատուէ-
րը, որ ես քեզ պատուիրեցի։
Եւ թագաւորն ասաց Սեմէիին. 44
Հիմա գիտենաս, որ քո սրտի գի-
տեցած բոլոր չարութիւնը, որ
իմ հօր Դաւթին արել ես, Տէ-
րը քո չարութիւնը քո գլխին է
դարձնում։ Եւ օրհնեալ է Սո- 45
ղոմոն թագաւորը, և Դաւթի
աթոռը հաստատ է Տիրոջ առջև
յաւիտեան։ Եւ թագաւորը հր- 46
ամայեց Յովիադայի որդի Բա-
նեային, և նա գնաց ու զարկեց
նորան, և նա մեռաւ. և թա-
գաւորութիւնը հաստատուեցաւ
Սողոմոնի ձեռքը։

ԳԼ. Գ

Եւ Սողոմոն խնամութիւն ա- 1
րաւ Եգիպտոսի Փարաւոն թա-
գաւորի հետ, և առաւ Փարա-
ւոնի աղջիկը ու բերաւ նորան
Դաւթի քաղաքը մինչև որ շինեց
վերջացրեց իր տունը և Տիրոջ

տաճարը և Երուսաղէմի պարիսպը
2 շուրջանակի։ Միայն թէ ժողո-
վուրդը զոհում էր բարձր տեղերի
վերայ, վասն զի մինչև այն օրե-
րը Տէրոջ անուան համար տուն
չէր շինուած։
3 Եւ Սողոմոնը սիրեց Տէրոջը, որ
գնայ իր հօր Դաւթի պատուէր-
ներովը, միայն թէ զոհում և
խնկարկում էր բարձր տեղերի
4 վերայ։ Եւ թագաւորը գնաց Գա-
բաոն, որ այնտեղ զոհ մատու-
ցանէ, վասն զի նա մի մեծ
բարձր տեղ էր. Սողոմոնը այն
տեղանի վերայ հազար ողջակէզ
5 զոհեց։ Գաբաոնի մէջ Տէրը ե-
րևեցաւ Սողոմոնին գիշերը երա-
զում, և ասաց Աստուած. Խնդ-
6 րիր ինչ որ քեզ պիտի տամ։ Եւ
Սողոմոն ասաց. Դու մեծ ողոր-
մութիւն արիր իմ հօր Դաւթին
քո ծառային, ինչպէս որ նա գնաց
քո առջև հաւատարմութեամբ
և արդարութեամբ և սրտի ու-
ղղութեամբ քեզ հետ. և նորա
համար պահեցիր այդ մեծ ողոր-
մութիւնը և նորան մի որդի տը-
ւիր՝ նստող նորա աթոռի վե-
7 րայ ինչպէս որ այսօր կայ. Եւ
արդ, ով Տէր իմ Աստուած,
դու թագաւորեցրիր ծառայիդ
իմ հօր Դաւթի տեղ, իսկ ես մի
փոքր տղայ եմ՝ չգիտեմ ելնել
8 ու մտնելը։ Եւ ծառադ քո ընտ-
րած ժողովրդի մէջ է՝ մի մեծ
ժողովրդի որ շատութիւնից չի
9 հաշվուիլ և չի համարուիլ։ Ու-
րեմն տուր քո ծառային *իմաս-
տութիւն սիրտ քո ժողովուրդը դա-
տելու, բարին ու չարի մէջտեղը
ջոկելու. վասն զի ո՞վ է կարող
քո այս մեծ ժողովրդին դատել։
10 Եւ այս խօսքը, որ Սողոմոնն այս
բանը խնդրեց, հաճոյ երևեցաւ
11 Տէրոջ աչքին։ Եւ Աստուած ա-
սաց նորան. Որովհետև դու այդ
բանը խնդրեցիր և քեզ համար
չխնդրեցիր շատ օրեր, և քեզ
համար չխնդրեցիր հարստութիւն
և չխնդրեցիր քո թշնամիների
կեանքը, այլ քեզ համար դատ

*լսող, ականջը բաց.

լսելու իմաստութիւն խնդրեցիր,
12 Ահա քո խօսքին պէս պիտի ա-
նեմ, ահա ես քեզ իմաստուն
և հանճարեղ սիրտ տուի, որ
քեզանից առաջ քեզ նմանը ե-
ղած չէ, և քեզանից յետոյ էլ
13 քեզ նմանը վեր չի կենայ։ Ու-
նաև քո չուզածն էլ տուի քեզ,
հարստութիւն էլ, փառք էլ, որ
քեզ նման մի մարդ չի լինիլ թա-
գաւորների մէջ քո բոլոր օրերու-
14 մը։ Եւ եթէ կ'գնաս իմ ճանա-
պարհներումը, որ իմ պատուի-
րանքներն ու հրամանները պահես
ինչպէս որ գնաց քո հայրը Դա-
ւիթը, այն ժամանակ քո օրերը
15 կ'երկայնացնեմ։ Եւ զարթնեց
Սողոմոնը, և ահա երազ էր. և
նկատ Երուսաղէմ և կանգնեց
Տէրոջ ուխտի տապանակի առջև,
և ողջակէզներ մատուցրեց և խա-
ղաղութեան զոհեր արաւ. և իր
բոլոր ծառաների համար կոչունք
արաւ։

16 Այն ժամանակ երկու պոռնիկ
կանայք եկան թագաւորի մօտ և
17 կանգնեցին նորա երեսի առջև։
Եւ կնիկներից մէկն ասաց. Ո՛
տէր իմ, ես և այս կինը մէկ տան
18 մէջ բնակում. և ես նորա մօտ
ծնայ այն տանը։ Եւ եղաւ
իմ ծնանելու երրորդ օրը որ այս
կինն էլ ծնաւ. և մենք մէնակ
ենք, այն տանը օտար չկայ մեզ
հետ. մէնակ մենք երկուքս ենք
19 այն տան մէջ։ Եւ այս կնոջ որդին
մեռնում է գիշերը, վասն զի սա
նորա վերայ պառկած է լինում.
20 Եւ սա կէս գիշերին վեր է կե-
նում առնում իմ որդուն իմ
կշտիցը, և աղախինդ քնած է լի-
նում, և նորան պառկեցնում է
իր ծոցումը, իսկ այն իր մեռած
որդան պառկեցնում է իմ ծոցու-
մը։ Եւ ես առաւօտը վեր եմ կե- 21
նում որ տղայիս ծիծ տամ, և
ահա մեռած էր, և ցերեկին նո-
րա վերայ մտադրութեամբ նայե-
ցի, և ահա նա իմ ծնած տղան
չէր։ Եւ այն միւս կինը ասում 22
էր. Ոչ, այլ թէ իմ տղան է
կենդանին, և քո տղան է մեռա-
ծը. և միւսն էլ ասում էր. Ոչ,

ալ քո տղան է մեռածը, և իմ տղան է կենդանին. և ասէ-
խօսում էին թագաւորի առջև։
23 Եւ թագաւորն ասաց. Սա ա-
սում է. Սա ողջը իմ տղան է,
և քո տղան մեռածն է. իսկ նա
ասում է. Ոչ, ալ քո տղան
մեռածն է ու իմ տղան ողջն է։
24 Եւ թագաւորն ասաց. Սուր բե-
րէք ինձ մօտ. և սուրը բերին
25 թագաւորի առջևը։ Եւ թագա-
ւորն ասաց. Կարեցէք այդ ողջ
երեխային երկու կտոր ա՛ր+. և
տուէք կէսը մէկին և կէսը մի-
26 սին։ Եւ այն կինը, որի տղան էր
կենդանին, ասաց թագաւորին.
վասն զի նորա սիրքը գալարեցին
իր տղու վերայ, և ասաց. Ո՛հ,
տէր իմ, ողջ երեխային նորան
տուէք, բայց մի սպանէք նորան.
իսկ միւսն ասում էր. Ոչ ինձ
27 լինի, ոչ քեզ, թող կարեն։ Եւ
թագաւորը պատասխանեց և ա-
սաց. Նորան տուէք ողջ երե-
խան և մի սպանէք նորան. նա
28 նորա մայրն է։ Եւ բոլոր Իսրա-
էլը լսեցին դատաստանը որ վճռ-
ուեց թագաւորը, և թագաւորի
երեսից վախեցան, վասն զի տե-
սան որ նորա մէջ դատաստան
անելու համար Աստուծոյ իմաս-
տութիւնը կար։

ԳԼ. Դ

4 Եւ Սողոմոն թագաւորը թա-
գաւոր էր բոլոր Իսրայէլի վերայ։
2 Եւ սորանք են նորա իշխանները.
Սադովկի որդի Ազարիան քահա-
3 նայ. Սիսայի որդիքը՝ Եղիքորեփը
և Աքիան՝ առենադպիրներ. Ա-
քիուդի որդի Յովսափատը՝ մի-
4 շտականց դպիր. Յովիադայի որ-
դի Բանեան՝ զօրագլուխ. և Սա-
դովկն ու Աբիաթարը՝ քահա-
5 նայք. Եւ Նաթանի որդի Ազար-
եան՝ գործակալների վերակացու.
և Նաթան քահանայի որդի Զա-
6 բուդը՝ թագաւորի բարեկամ. Եւ
Աքիսարը՝ պալատի հրամանա-
տար, և Աբդայի որդի Ադոնիրա-
մը՝ հարկերի տեսուչ։
7 Եւ Սողոմոնը տասներկու գոր-

ծակալներ ունէր բոլոր Իսրայէլի
վերայ, որոնք կերակուր էին տա-
լիս թագաւորին և նորա տանը.
տարին մէկ ամիս մէկին էր մի-
նուէմ կերակուրը տալը։ Եւ սո- 8
րանք են նորանց անունները, Եփ-
րեմի լեռնումը Բենհուրը. Մա- 9
քասում և Սաղաբիմում և Բեթ-
սամիսում, և Եղօն-բեթհանա-
նում՝ Բենդակերը. Արտուխիում՝ 10
Բենհեսեդը, նորանն էր Սոքոսը և
բոլոր Ոփերի երկիրը. Բոլոր Դով- 11
րի դաւառում՝ Բենաբինադաբը.
Սողոմոնի աղջիկը Տափաթը տուա
կինն էր։ Աքիլուդի որդի Բաա- 12
նան՝ Թանաքը և Մակեդդովը և
բոլոր Բեթսանը որ Սարթանի մօտ
է Յեզրէելի տակից, Բեթսանից
մինչև Աբելմեուլայ մինչև Յեկ-
մամի միւս կողմը։ Բենգաբերը՝ 13
Ռամոթ-գաղաադում. նորանն
էին Գաղաադում եղող Մանաս-
եան Յայրերի գիւղաքաղաքները.
նորանն էին Բասանում եղող Ար-
գոբի գաւառը՝ վեցտասն մեծ
պարսպաւոր և պղնձեայ փա-
ղաքներով։ Ադդովի որդի Աքինա- 14
դաբը՝ Մանայիմում. Աքիմաաս՝ 15
Նեփթաղիմում. սա էլ առել էր
իր կին Սողոմոնի աղջիկ Բասեմա-
թին։ Փառուի որդի Բաանան՝ Ա- 16
սերի և Բաալոթի մէջ։ Փարուա- 17
հի որդի Յովսափատը՝ Իսաքարի
մէջ։ Էլայի որդի Սեմէին՝ Բենիա- 18
մինի մէջ։ Ուրիի որդի Գաբերը՝ 19
Գաղաադի երկրում՝ Ամորհացոց
Սեհոն թագաւորի և Բասանի Ովգ
թագաւորի երկրումը. և մէկ գոր-
ծակալ էր այդ երկրում լինողը։

Եւ Յուդան ու Իսրայէլը շատ 20
էին ինչպէս որ ծովի եղերքին շատ
է աւազը. և ուտում ու խմում
ու ուրախանում էին։ Եւ Սողո- *21
մոնն իշխում էր բոլոր թագաւո-
րութիւններին Եփրատ գետից՝ փղ-
շտացոց երկրի վերայ մինչև Ե-
գիպտոսի սահմանը, որոնք ընծ-
ան էին բերում և ծառայում
Սողոմոնին նորա կենաց բոլոր օ-
րերը։

Եւ Սողոմոնի մէկ օրուայ ու- 22

---

*Եր. ԳԼ. Ե. 1.

ճիկն էր՝ երեսուն քոռ նաչիհ և
23 վաթսուն քոռ ալիւր։ Տասը գէր արջառ և քսան արօտական արջառ և հարիւր ոչխար բացի եղջերուներից, այծեամներից և վիթերից և գիրացրած հաւերից։
24 Վասն զի նա իշխում էր գետի այս կողմի բոլորին Թափսայից մինչև Գազա, գետի այս կողմի բոլոր թագաւորների վերայ, և խաղաղութիւն ունէր բոլոր իր
25 շուրջը եղող ժառանգներից։ Եւ Յուդան և Իսրայէլը ապահով բնակում էին ամէն մարդ իր որթի և իր թզենու տակ՝ Դանից մինչև Բերսաբէէն Սողոմոնի բոլոր օրերում։
26 Եւ Սողոմոնը քառասուն հազար ախոռ ունէր իր կառքի ձիերի համար, և տասներկու հազար
27 ձիաւոր։ Եւ այս գործակալները կերակուր էին տալիս Սողոմոն թագաւորին և Սողոմոն թագաւորի սեղանին ամէն մօտեցողներին՝ իւրաքանչիւրն իր ամսին առանց մի բան պակասեցնելու։
28 Եւ գարին ու դարմանը ձիերի և երիվարների համար բերում էին նորանց եղած տեղը իւրաքանչիւրն իր կանոնով։
29 Եւ Աստուած Սողոմոնին իմաստութիւն և խիստ շատ հանճար տուաւ և սրտի լայնութիւն
30 ծովի եզերքի աւազին պէս։ Եւ Սողոմոնի իմաստութիւնը բոլոր արևելցիների իմաստութիւնից և բոլոր Եգիպտոսի իմաստու-
31 թիւնից շատ էր։ Եւ նա ամէն մարդուց իմաստուն էր, Եզրահեցի Եթանից, Մաւուղ որդիք՝ Եմանից, Քալքոլից և Դարդայից. և նորա անունը դուրս եկաւ բոլոր
32 շրջակայ ազգերի մէջ։ Եւ նա երեք հազար առակ խօսեց, և նորա երգերն էին հազար ու հինգ։
33 Եւ խօսեց ծառերի վերայ՝ Լիբանանի եղևնիից մինչև պատի վերայ դուրս եկող զոպան, նաև խօսեց կենդանիների և թռչունների և զեռուններն ու ձկների վերայ։ Եւ ամէն ազգերից գալիս էին Սողոմոնի իմաստութիւնը լսելու, երկրիս ամէն թագաւորներից որ լսում էին նորա իմաստութիւնը։

*Գլ. Ե

1 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորն ուղարկեց իր ծառաներն Սողոմոնի մօտ, վասն զի Քիրամն ամէն ժամանակ սիրում էր Դաւթին։
2 Եւ Սողոմոնը խրկեց ուղարկեց Քի-
3 րամին ասելով. Դու գիտես, որ իմ հայր Դաւիթը չկարողացաւ իր Տէր Աստուծոյ անուանը մի տուն շինել այն պատերազմների պատճառով, որ նորան պատել էին, մինչև որ Տէրը նորանց դրաւ նորա ոտքի թաթերի տակը։
4 Եւ հիմա իմ Տէր Աստուածն ինձ հանգստութիւն է տուել իմ շրջակայքից, ոչ մի հակառակորդ կայ և ոչ մի ձախորդ պատահար կայ։
5 Եւ ահա ես ասում եմ, որ մի տուն շինեմ իմ Տէր Աստուծոյ անուան համար, ինչպէս որ Տէրը խօսել է իմ հօր Դաւթի հետ՝ ասելով. Քո այն որդին, որին ես կ'նստեցնեմ քո տեղը քո աթոռի վերայ, նա կ'շինէ տունը
6 իմ անուան համար։ Արդ հրամայ տուր, որ Լիբանանից եղևիններ կտրեն ինձ համար, և իմ ծառաները քո ծառաների հետ լինին, և քո ծառաների վարձքը քեզ կ'տամ բոլորովին քո ասածի պէս. վասն զի դու գիտես, որ մեզանում մարդ չկայ, որ Սիդոնացոց պէս փայտ կտրել գիտենայ։
7 Եւ եղաւ երբոր Քիրամը Սողոմոնի խօսքերը լսեց շատ ուրախացաւ և ասաց. Օրհնեալ է այսօր Տէրը, որ Դաւթին մի իմաստուն որդի տուաւ այս շատ ժողովրդի
8 վերայ։ Եւ Քիրամը խրկեց ուղարկեց Սողոմոնի մօտ ասելով. Լսեցի որ խրկեց ես ուղարկել ինձ մօտ. ես
9 բոլոր քեզ հաճոյ եղածը կ'անեմ եղևնափայտի և մայր փայտի մասին։ Իմ ծառաները Լիբանանից կ'իջեցնեն ծովը, և ես լաստեր կ'շինեմ նորանց ծովի վրէ, և

*Երր. Գլ. Է. 15.

կ'ուղարկեմ այն տեղը որ ինձ ցոյց կ'տաս, և ես այնտեղ կը քանդեմ նորանց, և դու վեր կ'առնես. իսկ դու կատարես իմ կամքը, որ իմ տանը հոգ տաս:
10 Եւ Փիրաամը Սողոմոնին եղևնափայտեր ու մայրի փայտեր էր տալիս բոլորովին նորա կամքի
11 պէս: Եւ Սողոմոնը Փիրաամին տուաւ քսան հազար քոռ ցորեն նորա տան համար պաշար և քսան քոռ ծեծուած իւղ. այսպէս Սողոմոնը տալիս էր Փիրաամին
12 տարուց տարի: Եւ Տէրը իմաստութիւն տուաւ Սողոմոնին, ինչպէս որ ասել էր նորան. և խաղաղութիւն էր Փիրաամի և Սողոմոնի միջտեղ, և նոքա երկուքը դաշինք կապեցին:
13 Եւ Սողոմոն թագաւորը բոլոր Իսրայէլից մարդահարկ վերցրեց, և մարդահարկը եղաւ երեսուն
14 հազար մարդ: Եւ նորանից ուղարկեց Լիբանան յաջորդաբար ամիսը տասը հազար. մէկ ամիս լինում էին Լիբանան՝ երկու ամիս տանը. և Ադոնիրամը այդ հարկի վերայ
15 էր: Եւ Սողոմոնը եօթանասուն հազար բեռնակիր ունէր. և լեռնումը ութսուն հազար փայտ
16 կտրող: Բացի գործակալների իշխաններից, որ գործի վերայ էին դրուած Սողոմոնից՝ երեք հազար երեք հարիւր որ գործն անող ժողովրդի վերայ էին:
17 Եւ հրամայեց թագաւորը, որ մեծ քարեր կարեն՝ պատուական քարեր տանը հիմը տաշած քարերով դնելու համար:
18 Եւ Սողոմոնի վարպետները և Փիրաամի վարպետները և Գեբատացիք տաշում և պատրաստում էին փայտերը և քարերը տան շինութեան համար:

ԳԼ. Զ

1 Եւ եղաւ Իսրայէլի որդիանց Եգիպտոսի երկրից դուրս գալուց չորս հարիւր ութսուներորդ տարին, Սողոմոնի Իսրայէլի վերայ թագաւորելու չորրորդ տարին Զիվ ամսի՝ այսինքն երկրորդ ամսի մէջ հիմնարկեց Տիրոջ տունը:
2 Եւ Սողոմոն թագաւորի՝ Տիրոջ համար շինած տան երկայնութիւնը վաթսուն կանգուն և լայնութիւնը քսան և բարձրութիւնը երեսուն կանգուն էր:
3 Եւ տան տաճարի առջևի սրահը քսան կանգուն երկայն էր տան լայնութեան համեմատ. տասը կանգուն լայն էր տան համեմատ:
4 Եւ տանը կամարաւոր վանդակապատ պատուհաններ շինեց.
5 Եւ տան պատի վերայ պատուար շինեց շուրջանակի, տան պատերի վերայ շուրջանակի, տաճարին էլ դարիրին էլ. և խուցեր շինեց շուրջանակի:
6 Ներքի պատուարի լայնութիւնը հինգ կանգուն, և միջինի լայնութիւնը վեց կանգուն, և երրորդինի լայնութիւնը եօթը կանգուն. վասն զի տանը միջոցներ թողեց շուրջանակի դուրսինը, որպէս զի տանը պատերին չդիպչեն:
7 Եւ տունը շինուելիս քարահանքի արդասուղ քարերովն էր շինվում, և տանը մէջ նորա շինուելու ժամանակին ոչ մուրճի ոչ տապարի և բնաւ մի պղնձի գործիքի ձայն չէր լսվում:
8 Միջին խուցերի դուռը դէպի տան աջ կողմն էր, և ոլորուն սանդուղքով վեր էին ելնում միջին կարգը. և միջինից երրորդը:
9 Եւ տունը շինեց ու վերջացրեց նորան. և տան ձեղունը ծածկեց տախտակամածով և յարկերը եղևնափայտով:
10 պատուարը շինեց բոլոր տան վերայով հինգ կանգուն բարձրութեամբ. և շաղկապեց տան հետ եղևնափայտերով:
11 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Սողոմոնին ասելով.
12 Այս տունը դու շինում ես. եթէ դու գնաս իմ պատուիրանքներովը և իմ իրաւունքը կատարես և պահես իմ ամեն հրամանները որ նորանցում գնաս, այն ժամանակ ես կ'հաստատեմ իմ խօսքը քեզ հետ, որ քո հօր Դաւթի հետ խօսել եմ,
13 և կ'բնակեմ Իսրայէլի որդիանց մէջ, և Իսրայէլ ժողովրդիս չեմ թողիլ:

14 Եւ Սողոմոնը շինեց տունը և
15 վերջացրեց նորան։ Եւ տան պա-
տերը ներսեանից եղևնափայտի
տախտակներով շինեց տան յա-
տակից մինչև ցեղունի պատերը
ծածկեց ներսեանից փայտով. և
տան յատակը ծածկեց մայրի
16 տախտակներով։ Եւ տան եւթ
կողմից քսան կանգունը շինեց
եղևնափայտի տախտակներով
յատակից մինչև պատերը, և
նորան շինեց ներսեանից իբրև
դարիր ս֊ի֊ն֊ի֊ն իբրև սրբութիւն
17 սրբութեանց։ Եւ տունը քառա-
սուն կանգուն էր, այսինքն տա-
18 ճևի տաճարը։ Եւ տաճարի միջի
եղևնափայտերը կոճակների և
բացուող ծաղիկների պէս դրօշ-
ուած էին. բոլորը եղևնափայտ
19 էր. բնաւ քար չէր երևում։ Եւ
դարիրը պատրաստեց տանը մէջ
ներսեանից, որ այնտեղ դնէ Տի-
20 րոջ ուխտի տապանակը։ Եւ դա-
րիրը՝ առաջը քսան կանգուն եր-
կայն և քսան կանգուն լայն և
քսան կանգուն բարձր էր. և նո-
րան ձուլեց մաքուր ոսկով. և
սեղանը պատեց եղևնափայտով։
21 Եւ Սողոմոնը պատեց տունը ներ-
սեանից մաքուր ոսկով, և ոսկի
շղթաներ անցկացրեց դարիրի առ-
ջևով, և նորանց ոսկով պատեց։
22 Եւ բոլոր տունը պատեց ոսկով
մինչև որ բոլոր տունը վերջացու-
և բոլոր սեղանը, որ դարիրումն
էր, պատեց ոսկով։
23 Եւ դարիրումը երկու քերով-
բէք շինեց ձիթափայտից՝ բարձ-
24 րութիւնը տասը կանգուն. Եւ
մէկ քերովբէի թևը հինգ կան-
գուն, և միւս քերովբէի թևը
հինգ կանգուն, տրա թևերի
ծայրերից մինչև նորա թևերի
25 ծայրերը տասը կանգուն։ Եւ երկ-
րորդ քերովբէն տասը կանգուն
էր. երկու քերովբէների չափը և
26 ձևը մէկ էր։ Մէկ քերովբէի
բարձրութիւնը տասը կանգուն
էր. նոյնպէս էր և երկրորդ քե-
27 րովբէն։ Եւ քերովբէները դրաւ
ներսի տան մէջ, և քերովբէների
թևերը տարածեցին, և մէկի
թևը դիպչում էր պատին, և
երկրորդ քերովբէի թևն էլ դիպ-
չում էր միւս պատին, և նո-
րանց տան միջի թևերը դիպչում
էին թև թևի։ Եւ քերովբէները 28
պատեց ոսկով։
Եւ տան բոլոր պատերի վերայ 29
շուրջանակի դրօշից քանդակա-
գործ դրօշուած քերովբէներ և
արմաւենիներ և բացուող ծաղիկ-
ներ ներսեանից ու դրսեանից։ Եւ 30
տան յատակը պատեց ոսկով ներ-
սեանից և դրսեանից։
Եւ դարիրի դրանը ձիթափայ- 31
տի փեղկեր շինեց՝ դրանդիների
շրջանակներովը՝ հինգերորդ մասը։ Եւ դռան երկու փեղ- 32
կերը ձիթափայտից, և դրօշից
նորանց վերայ դրօշուած քերով-
բէներ և արմաւենիներ և բաց-
ուող ծաղիկներ, և պատեց ոս-
կով. և տարածեց ոսկին քերով-
բէների և արմաւենիների վերայ։
Եւ այսպէս արաւ տաճարի դր- 33
բանդիքը ձիթափայտից՝ չորրորդ
մասից (դռան)։ Եւ երկու փեղ- 34
կերը մայր փայտից. դրան երկու
տախտակները ծալուող էին, և
միւս դրան երկու տախտակները
ծալուող էին։ Եւ դրօշից քերով- 35
բէներով և արմաւենիներով և
բացուող ծաղիկներով. և հար-
թեցրած ոսկով պատեց յօրին-
ուածի վերայով։
Եւ շինեց ներսի դաւիթը երեք 36
կարգ արկաղաշ քարով և մէկ
կարգ եղևնափայտի կոճղերով։
Տիրոջ տան հիմը դրուեցաւ 37
չորրորդ տարուայ Զիվ ամսում։
Եւ ութերորդ տարուայ 38
ութներորդ ամսում այսինքն Բուլ
ամսում վերջացաւ տաճարը իր
բոլոր բաներովը և բոլոր պատ-
շաճութեամբը. և նորան շինեցին
եօթը տարում։

ԳԼ. Ի

Եւ Սողոմոն իր տունն շինեց 1
տասն երեք տարի ու վերջացրեց
բոլորովին։
Եւ շինեց նաև Լիբանանի ան- 2
տառի տունը. հարիւր կանգուն
երկայն, և հինգ կանգուն լայն և

եբեսուն կանգուն բարձր, չորս
կարգ եղևնափայտ սիւների վե-
րայ, և եղևնափայտի կոճղեր
3 սիւների վերայ։ Եւ վերևից քա-
ռասուն և հինգ սիւների վերայ
եղող սեներականների վերայով ծած-
կուած էր եղևնափայտով, տասն
4 ու հինգ կ–ն էր մէկ կարգ։ Եւ ե-
րեք կարգ կամարներ կային, և
պատուհան պատուհանի դէմ ե-
5 րեք անգամ։ Եւ բոլոր դռները և
դրանդիքը քառակուսի էին կա-
մարակապ. և մի պատուհան
միւս պատուհանի դէմ ու դէմ
երեք անգամ։

6 Եւ սիւների սրահը շինեց, եր-
կայնութիւնը հիսուն կանգուն և
երեսուն կանգուն լայնութիւնը,
և (մի) սրահ նորանց առջևը՝ և
սիւներ և մի սեամ՝ նորանց առ-
7 ջևը։ Նաև աթոռի սրահը շինեց
ուր որ դատաստան էր անում,
առեանի սրահը. և նա ծածկը-
ուած էր եղևնափայտով յատա-
կից մինչև յատակ։

8 Եւ նորա տունը, ուր որ նա
բնակւում էր միւս գաւթում սր-
բահի ներսումը, այս շէնքի նման
էր. և այս սրահի պէս մի տուն
շինեց փարաւոնի աղջկան համար
9 որ Սողոմոն առել էր։ Սորանք
ամենքը պատուական քարերից
էին չափած, որոնք չափով տաշ-
ուած՝ սղոցով սղոցուած ներսե-
ւից ու դրսևանից հիմնիցը մինչև
առաստաղը և դրսից մինչև մեծ
10 գաւիթը։ Եւ հիմը պատուական
քարերից՝ մեծ մեծ քարերից էր,
տասը կանգուն քարերից և ութ
11 կանգուն քարերից։ Եւ նորա վե-
րևից պատուական քարեր տա-
շած քարերի չափովը՝ և եղևնա-
12 փայտ։ Եւ մեծ գաւիթը շուրջա-
նակի երեք կարգ տաշած քարե-
րից էր, և մէկ կարգ եղևնափայ-
տի կոճղեր. նոյնպէս և էր Տիրոջ
տան ներսի գաւիթը և տան սր-
բահը։

13 Եւ Սողոմոն թագաւորը մարդ
ուղարկեց ու բերաւ Փիրամին
14 Տիւրոսից։ Նա նեփթալիմի ցե-
ղից մի որբևայրի կնոջ որդի էր,
և նորա հայրը մի Տիւրացի պղնձ-
ագործ էր. և լիքն էր իմաստու-
թիւնով և հանճարով և գիտու-
թիւնով պղնձի ամեն տեսակ
գործքերը գործելու համար. և
նա եկաւ Սողոմոն թագաւորի
մօտ և կատարեց նորա բոլոր գոր-
ծերը։ 15 Եւ նա ձուլեց սյն երկու
պղնձի սիւները. մէկ սիւնի բարձ-
րութիւնը տասնևութ կանգուն.
և մի տասներկու կանգունանոց
թել շրջապատում էր միւս սիւ-
նը. 16 Եւ երկու խոյակ շինեց սիւ-
ների գլխին դնելու համար՝ ձու-
լածոյ պղնձից. մէկ խոյակի բարձ-
րութիւնը հինգ կանգուն, և միւս
խոյակի բարձրութիւնը հինգ
կանգուն։ 17 Ցանցակերպ ցանցեր և
շղթայագործ հիւսուածքներ էին
սիւների գլխին եղող խոյակների
համար. եօթը մէկ խոյակի հա-
մար, և եօթը միւս խոյակի հա-
մար։ 18 Եւ շինեց սիւները, և եր-
կու կարգերը շուրջանակի մէկ
ցանցի վերայ որ ծածկէ խոյակ-
ները որ նռների վերայ էին. նոյն-
պէս էլ արաւ միւս խոյակին։ 19 Եւ
խոյակները, որ սիւների գլխին
էին, շուշանագործ էին՝ սրահու-
մի՝ չորս կանգուն։ 20 Եւ երկու սիւ-
ների վերայի խոյակները ճիշդ վե-
րը ցցուածքի վերայ էին որ ցան-
ցի մօտ էր. և շուրջանակի երկու
հարիւր կարգ նռներ միւս սիւ-
նի վերայ։ 21 Եւ սիւները կանգնեց-
րեց տաճարի սրահումը. և կանգ-
նեցրեց աջի սիւնը, և նորա ա-
նունը դրաւ *Յաքին. և կանգ-
նեցրեց ձախի սիւնը, և նորա ա-
նունը դրաւ †Բոոզ։ 22 Եւ սիւների
գլուխների վերայ շուշանաձև գործ
կար. այսպէս վերջացաւ սիւների
գործը։

23 Նոյնպէս շինեց ձուլածոյ ծովը՝
տասը կանգուն այս շրթունքից
մինչև միւս շրթունքը՝ բոլորաձև
շուրջանակի. և հինգ կանգուն
բարձրութիւնը, և մի երեսուն
կանգունանոց գերձան նորան շր-
ջապատում էր շուրջանակի։ 24 Եւ
շուրջանակի նորա շրթունքի տա-

---

*Նա հաստատում է։
†Ա. ոյգ.

կամք պատուէր էին նորան կո-
ճակներ՝ տասը՝ մէկ կանգուն մէ,
որ շուրջանակի պատուէր էին
ծովը, երկու կարգ կոճակներ
ձուլուած նորա ձուլուելու ժա-
25 մանակ։ Նա կեցած էր տասն
երկու եզների վերայ՝ երեքը նա-
յած էին հիւսիս, և երեքը նա-
յած էին արեւմուտք, և երեքը
նայած էին հարաւ և երեքը նա-
յած էին դէպի արեւելք. և ծո-
վը վերևից նորանց վերայ էր. և
նորանց ամենի ետևի կողմերը
26 դէպի ներս էր։ Եւ նորա հաս-
տութիւնը ձեռքի չափ, և նորա
շրթունքը բաժակի շրթունքի
գործ էր իբրև շուշան ծաղիկ։
Երկու հազար մար էր տանում։
27 Եւ տասը պղնձի մեքենայքնե-
րը շինեց, չորս կանգուն իւրա-
քանչիւր մեքենայքի երկարու-
թիւնը և չորս կանգուն լայնու-
թիւնը, և երեք կանգուն բարձ-
28 րութիւնը։ Եւ սա էր մեքենայքի
գործը, նորանք սպառուածներ
ունէին, և սպառուածները ան-
կիւնների յօդուածների միջտեղն
29 էին. Եւ անկիւնների յօդուած-
ների միջտեղը եղող սպառուած-
ների վերայ առիւծներ, եզներ և
քերովբէներ կային. անկիւնների
յօդուածների վերայ էլ նոյնպէս
վերևից, և առիւծների և եզների
30 տակից կախուած պսակներ։ Եւ
իւրաքանչիւր մեքենայքի չորս պը-
ղնձի անիւ և պղնձի առանցքներ
ունէր. և չորս անկիւններին ուսեր
ունէին, ուսերի տակին ուսե-
րը ձուլածոյ էին իւրաքանչիւր
31 կախուած ջուրէ կշռին։ Եւ նորա
բերանը խոյակի նման և դէպի
վեր մէկ կանգուն, և նորա բե-
րանը բոլորակ էր խորխոռի գործ,
մէկ ու կէս կանգուն. նոյնպէս էլ
բերանքի վերայ քանդակուածներ
և սպառուածներ քառակուսի և
ոչ բոլորակաձև։
32 Եւ չորս անիւները սպառուած-
ների տակին, և անիւների ա-
ռանցքները մեքենայքումն էին.
և իւրաքանչիւր անիւի բարձրու-
թիւնը մէկ ու կէս կանգուն էր։
33 Եւ անիւների գործը կառքի ա-

նիւի գործ էր. նորանց առանց-
ները, պարանոցները, շառաւիղ-
ները և դունեները բոլորը ձուլա-
ծոյ էին։ Եւ իւրաքանչիւր մեքե- 34
նայքի չորս անկեան վերայ չորս
ուսեր, ուսերը մեքենայքից։ Եւ 35
մեքենայքի գլխին կէս կանգուն
բարձրութեամբ բոլորակ կար շուր-
ջանակի. և մեքենայքի գլխի վե-
րայ նորա ունկերը և սպառուած-
ները իրանից էին։ Եւ նորա ուն- 36
կերի տախտակների վերայ և նո-
րա սպառուածների վերայ բերով-
բէներ, առիւծներ և արմաւենի-
ներ քանդակեց իւրաքանչիւրի
չարմարութեամբը, և շուրջանա-
կի կախուած ջուրէ։ Այսպէս 37
շինեց այն տասը մեքենայքները,
ամենի ձուլուածքը, չափը, ձևը
մէկ էր։
Եւ տասը հատ պղնձի աւա- 38
զաններ շինեց. իւրաքանչիւր ա-
ւազան քառասուն մար էր տա-
նում, իւրաքանչիւր աւազանը
չորս կանգուն էր. ամեն մի ա-
ւազան մէկ մեքենայքի վերայ էր,
այն տասը մեքենայքների վերայ։
Եւ հինգ մեքենայքը դրաւ տա- 39
ճարի աջ կողմի ծայրին, և հին-
գը ձախ կողմի ծայրին, և ծովը
դրաւ տաճարի աջ կողմին արև-
ելքում դէպի հարաւ։
Եւ Փիրամը շինեց աւազանն- 40
երը և թիակները և կոնքերը. և
Փիրամը վերջացրեց այն բոլոր
գործերը որ արաւ Սողոմոն թա-
գաւորի համար Տիրոջ տանը։
Սիւներն երկու սիւները, և գունդ 41
խոյակները, որ այն երկու սիւ-
ների գլուխներին էին, ծածկե-
լու համար։ Եւ չորս հարիւր 42
նուռները այն երկու ցանցերի հա-
մար՝ երկու կարգ նուռներ մէկ
ցանցի համար, որ ծածկէր այն
երկու գունդ խոյակները, որ սիւ-
ների դէմ են. Եւ տասը մեքե- 43
նայքները և տասը աւազանները
մեքենայքների վերայ։ Եւ մէկ 44
ծովը, և տասներկու եզերը ծովի
տակին։ Եւ սաւերը և թիակները 45
և կոնքերը և այս բոլոր կարասի-
քը, որ Փիրամը շինեց Սողոմոն
թագաւորի համար Տիրոջ տանը

16 փայլուն պղնձից։ Յորդանանի
դաշտումը թանձր հողի վերայ
նորանց ձուլել տուաւ թագաւո-
րը Սոկքովթի և Սարթանի մէջ
17 տեղ։ Եւ Սողոմոնը տեղաւորեց
այս բոլոր կարասիքը. խիստ շատ
շատութեան համար պղնձի չափը
չորշռուեցաւ։
18 Եւ Սողոմոնը շինեց բոլոր այն
կարասիքը, որ Տիրոջ տանն էին,
այսինքն ոսկի սեղանը և այն սե-
ղանը որի վերայ լինում էին ա-
ռաջաւորութեան հացը՝ ոսկուց։
19 Եւ ճրագակալները՝ հինգը աջ
կողմից և հինգը ձախ կողմից
դարբերի առջևի մօքուր ոսկուց,
և ծաղիկները և ճրագները և ու-
20 նելիները՝ ոսկուց։ Եւ գաւաթ-
ները, բազմոցակալները, կոնքերը,
խնկամանները և բուրվառները
մօքուր ոսկուց, և ներքին տան
այսինքն սրբութեանց սրբութի-
ւն դռների, տանը՝ այսինքն տա-
ճարի դռների, ոսկի ծխնիները։
21 Եւ այսպէս կատարուեցաւ ա-
մէն գործ, որ Սողոմոն թագա-
ւորն արաւ Տիրոջ տանը. և Սո-
ղոմոնը տարաւ իր հօր Դաւթի
նուիրած արծաթը ոսկին և կա-
րասիքը դրաւ Տիրոջ տան գան-
ձարանում։

ԳԼ. Ը

1 Այն ժամանակ Սողոմոնը ժողո-
վեց բոլոր Իսրայէլի ծերերին և
ցեղերի ամէն գլխաւորներին, Ի-
սրայէլի որդիանց նահապետներին
Սողոմոն թագաւորի մօտ Երու-
սաղէմ, որ Տիրոջ ուխտի տա-
պանակը վեր տանեն Դաւթի քա-
2 ղաքից որ է Սիօն։ Եւ Սողոմոն
թագաւորի մօտ ժողովուեցան
բոլոր Իսրայէլացիք եօթներորդ
ամսի տօնին Անթանի ամսի
3 տօնին։ Եւ Իսրայէլի բոլոր ծե-
րերը եկան, և քահանաները վեր
4 առին տապանակը։ Եւ տարին Տի-
րոջ տապանակը և վկայութեան
խորանը և խորանում եղած բոլոր
սուրբ կարասիքը, և վեր տարին
նորանց քահանաները և Ղեւտա-
5 ցիք։ Եւ Սողոմոն թագաւորը և

Իսրայէլի բոլոր ժողովքը որ ժո-
ղովուել էին նորա մօտ, նորա
հետ տապանակի առջև էին ան-
թիւ և անհամար շատ ոչխարներ
ու եզներ զոհելով։ Եւ քահանա- 6
ները բերին Տիրոջ ուխտի տա-
պանակը իր տեղը տան դարբերը
սրբութեանց սրբութեան մէջ քե-
րովբէների թեւերի տակ։ Որովհե- 7
տև քերովբէները իրանց թեւերը
տարածում էին տապանակի տե-
ղի վերայ, և քերովբէները ծած-
կում էին տապանակը և նորա
ձողերը վերևից։ Եւ ձողերը եր- 8
կարացրին, և երևեցան ձողերի
գլուխները սրբութիւնից դարբերի
առջև, բայց դուրս չէին երևում.
և նորանք այնտեղ են մինչև այս-
օր։ Տապանակում բացի երկու 9
քարէզէն տախտակներից, որ
Մովսէս այնտեղ դրաւ Քորեբում,
որ Տէրը ուխտեց Իսրայէլի
որդիանց հետ նորանց Եգիպտա-
ցի երկրից դուրս գալու ժամա-
նակը։ Եւ եղաւ երբոր քահանա- 10
ները սրբարանից դուրս եկան,
ամպը լցրեց Տիրոջ տունը։ Եւ 11
քահանաները ամպի պատճառ-
ով չկարողացան կանգնել ծառա-
յելու, վասն զի Տիրոջ փառքը
լցրել էր Տիրոջ տունը։
Այն ժամանակ Սողոմոն ասաց. 12
Տէրն ասել է թէ մուտախուղում
է բնակուելու։ Ես քեզ համար բր- 13
նակելու տուն շինեցի, մի տեղ
որ դու յաւիտեան բնակես։ Եւ 14
թագաւորն իր երեսը դարձրեց և
օրհնեց Իսրայէլի բոլոր ժողովքը.
և Իսրայէլի բոլոր ժողովքը կանգ-
նել էր։ Եւ նա ասաց. Օրհնեալ 15
լինի Իսրայէլի Տէր Աստուածը,
որ իր բերանով խօսեց իմ հօր
Դաւթի հետ, և իր ձեռքով կա-
տարեց, ասելով. Այն օրից ի վեր 16
որ իմ ժողովուրդն Իսրայէլը Ե-
գիպտոսից հանեցի Իսրայէլի բո-
լոր ցեղերից մի քաղաք չընտրեցի
տուն շինելու համար, որ իմ ա-
նունը այնտեղ լինի, այլ հատա-
նեցի Դաւթին որ իմ Իսրայէլ
ժողովրդի վերայ լինի։ Եւ իմ 17
հայրը Դաւթի սրտում դրել
էր Իսրայէլի Տէր Աստուծոյ ան-

18 աման համար տուն շինելու. Եւ
Տէրն ասաց իմ Հօր Դաւթին.
Որովհետեւ դու քո սրտումդ դր-
բել էիր իմ անուան համար մի
տուն շինելու, լաւ ես արել որ
19 այս բանը դրել ես սրտումդ. Մի-
այն թէ դու պիտի չշինես տունը
իմ անուան համար, այլ քո ե-
րանքից ելող որդիդ՝ նա պիտի
տուն շինէ իմ անուան համար։
20 Եւ Տէրը հաստատեց իր ասած
խօսքը. և ես կանգնեցի իմ Հօր
Դաւթի տեղ և նստեցի Իսրայէ-
լի աթոռի վերայ, ինչպէս որ
Տէրը ասաց. և շինեցի տունը
Իսրայէլի Տէր Աստուծոյ անուան
21 համար։ Եւ այնտեղ տապանակի
համար մէկ տեղ պատրաստեցի,
ուր որ Տիրոջ ուխտն է, որ նա
կապեց մեր Հայրերի հետ երբոր
նորանց դուրս հանեց Եգիպտոսի
երկրից։

22 Եւ Սողոմոնը կանգնեց Տիրոջ
սեղանի առջեւ Իսրայէլի բոլոր
ժողովքի դիմացը և իր ձեռքերը
23 տարածեց դէպի երկինք. Եւ ա-
սաց. Ով Տէր Իսրայէլի Աս-
տուած՝ քեզ պէս Աստուած չկայ
վերև երկնքումը, և ցածը երկրի
վերայ, որ ուխտ և ողորմութիւն
ես պահում քո առջև բոլոր
սրտանց գնացող ծառաներիդ
24 համար. Որ պահեցիր ծառայիդ՝
իմ Հօր Դաւթի համար այն, որ
նորան ասացիր. որ ասել էիր քո
բերանովը և քո ձեռքը կատա-
25 րեցիր՝ ինչպէս այսօր։ Եւ հիմա
Ով Տէր Աստուած Իսրայէլի,
պահիր քո ծառայ՝ իմ Հօր Դաւ-
թի համար այն ինչ որ նորա հետ
խօսեցիր ասելով. Քեզ համար
մարդ չի պակասիլ իմ առջև Իս-
րայէլի աթոռի վերայ նստող. մի-
այն եթէ քո որդիքը պահեն ի-
րանց ճանապարհը, որ իմ առջև
գնան, ինչպէս որ դու գնացիր։
26 Եւ արդ, ով Իսրայէլի Աս-
տուած, թող հաստատուի քո
խօսքը, որ ծառայ իմ Հօր Դաւ-
թի հետ խօսեցիր։

27 Բայց իրա՞ւ Աստուած կ'բնակէ
երկրիս վերայ. ահա երկինքը և
երկնից երկինքը չեն կարող քեզ
պարունակել, ո՛րբ ինչ իմ այս
շինած տունը։ Սակայն, ով Տէր 28
իմ Աստուած, նայիր քո ծառա-
յի աղօթքին և նորա աղերսան-
քին, որ լսես այս պաղատանքը
և աղօթքը, որ ծառայ այսօր
քո առջեւ մատուցանում է։ Որ 29
քո աչքերը այս տան վերայ բաց
լինին գիշեր ու ցերեկ այստեղի
վերայ, որի համար ասացիր. Թէ
իմ անունը այնտեղ պիտի լինի,
որ լսես այն աղօթքը, որ ծառայ
այստեղը աղօթում է։ Եւ լսես 30
ծառայիդ և քո Իսրայէլ ժողո-
վրդի աղերսանքին, որ մատու-
ցանում են այստեղ. և դու լսիր
դու քո բնակելու տեղից՝ երկնի-
քից, և լսելով ներիր։

Երբոր մէկը իր ընկերի դէմ մե- 31
ղանչէ, և նա նորան երդում ա-
ռաջարկէ նորան երդմնցնելու հա-
մար, և երդումը գայ քո սեղա-
նի առաջ այս տունը. Այն ժա- 32
մանակ դու լսիր երկնքումը և կա-
տարիր, և դատիր քո ծառանե-
րին դատապարտելին դատապար-
տելով, որ նորա ճանապարհը նո-
րա գլխին բերես, և արդարին
արդարացնես, որ նորան հատու-
ցանես իր արդարութեան համե-
մատ։

Եթէ քո ժողովուրդն Իսրայէլը 33
քեզ դէմ մեղանչելու համար ի-
րանց թշնամիների առջև յաղ-
թուին, և դէպի քեզ դառնան
և քո անուանը փառք տան, և
աղօթեն և աղերսեն դէպի քեզ
այս տանը. Այն ժամանակ դու 34
լսիր երկնքումը և ներիր քո Ի-
սրայէլ ժողովրդի մեղքը և եա
դարձրու նորանց այն երկիրը, որ
տուիր և նորանց Հայրերին։

Եթէ երկինքը գոցուի և անձ- 35
րեւ չինի նորանց քեզ դէմ մե-
ղանչելու համար, և աղօթք ա-
նեն այստեղ և փառք տան քո
անուանը և եա դառնան իրանց
մեղքերից քո նորանց նեղելու
պատճառով. Այն ժամանակ 36
դու լսիր երկնքումը և ներիր քո
ծառաների և քո ժողովուրդ Իս-
րայէլի մեղքը, որ նորանց ուսու-
ցանես իրանց գնալու բարի ճա-

նապարհը, և անձրև տաս քո երկրի վերայ, որ տուել ես քո ժողովրդին իբրև ժառանգութիւն։

37 Երբոր երկրի վերայ սով լինի, ժանտախտ լինի, կամ խարշակահարութիւն, կամ դալուկ, մրրիկ, թրթուր, կամ նորանց թշնամիները նորանց նեղէ իրանց դաշների երկրումը, կամ որ և է 38 հարուած կամ հիւանդութիւն լինի. ինչ բոլոր Իսրայէլ ժողովրդից մի որ և է մարդ ինչ և է աղօթք և աղերսանք ճոխացնելը լինի, և ամեն մարդ, որ իր սրտի ցաւը գիտէ, իր ձեռքերը տարածէ 39 դէպի այս տունը. Ա՛ն ժամանակ դու լսիր երկինքումը՝ քո բնակելու տեղումը և ներիր, և կատարիր, և տուր այն մարդին իր բոլոր ճանապարհներին համեմատ, որ գիտես նորա սիրտը, վասնզի դու միայն գիտես բոլոր 40 մարդկանց որդիների սիրտը. Որպէսզի քեզանից վախենան իրանց բոլոր օրերումը այն երկրի վերայ որ տուել ես մեր հայրերին։

41 Եւ նաև օտարականը, որ քո Իսրայէլ ժողովրդից չէ, եթէ նա գայ հեռու երկրից քո անուան համար, 42 վասնզի լսելու են քո մեծ անունը և քո հզօր ձեռքը և երկայնացրած բազուկը, եթէ նա գայ և աղօթք անէ 43 այս տունը. Ա՛ն ժամանակ դու լսիր երկինքումը՝ քո բնակելու տեղումը և արա այն օտարականի դէպի քեզ կանչածի բոլորին համեմատ, որպէսզի երկրի բոլոր ազգերն իմանան քո անունը, որ քեզանից վախենան քո Իսրայէլ ժողովրդի պէս, որ իմանան քո անունը կանչուել է այս տան վերայ որ ես շինեցի։

44 Երբոր քո ժողովուրդը պատերազմի դնայ իր թշնամու վերայ այն ճանապարհով որով դու նորանց կ՚ուղարկես, և նորանք աղօթք անեն Տիրոջը քո ընտրած քաղաքի և այս իմ քո անուան համար շինած տան ճանապար- 45 հով. Ա՛ն ժամանակ լսիր երկրից քումը նորանց աղօթքը, և նորանց ապերասանքը և նորանց իրաւունք արա։

Երբոր քեզ դէմ մեղանչեն. 46 վասն զի մարդ չկայ որ չմեղանչէ, և դու նորանց վերայ բարկանաս, և նորանց մատնես թշնամու առջև, և նորանց գերեվարները նորանց գերի տանեն թշնամու հեռու կամ մօտ երկիրը. և- 47 թէ զղջան իրանց սրտովը այն երկրումը ուր գերի են տարուել, և ետ դառնան ու դէպի քեզ աղերսեն իրանց գերութեան երկրումն ասելով. Մեզք գործեցինք, անօրէնութիւն և անիրաւութիւն արինք. և դէպի քեզ դառնան 48 իրանց բոլոր սրտովը և իրանց բոլոր հոգովը իրանց թշնամիների երկրումը, ուր որ գերի են տարել նորանց, և դէպի քեզ աղօթք անեն այն երկրի ճանապարհովը, որ դու նորանց հայրերին տուիր, և դէպի այն քաղաքը որ բին դու հաւանեցիր և դէպի այս տունը որ ես շինեցի քո անուան համար, Ա՛ն ժամանակ լսիր երկինքումը քո բնակելու տեղումը 49 նորանց աղօթքը և աղերսանքը և նորանց իրաւունքը կատարիր, և 50 ներիր քո քեզ դէմ մեղանչած ժողովրդին և նորանց քեզ դէմ արած յանցանքները բոլոր, և այնպէս անես որ նորանց գերեվարները նորանց վերայ գթան և նորանց ողորմութիւն անեն. 51 վասն զի նորանք քո ժողովուրդը և քո ժառանգութիւն են, որ ես գիպատակից՝ երկաթի փուռն միջից հանեցիր. և քո աչքերը բաց 52 լինին քո ծառայի աղերսանքի և քո Իսրայէլ ժողովրդի աղերսանքի վերայ, որ նորանց ամեն դէպի քեզ աղաղակելու ժամանակ նորանց լսես։ Վասն զի դու նո- 53 րանց քեզ համար ժառանգութիւն ջոկեցիր երկրի ամեն ազգերից, ինչպէս որ ասացիր քո Մովսէս ծառայի ձեռքովը, երբոր դու, ով Տէր Եհովայ, եգիպտոսից մեր հայրերին դուրս բերիր։

Եւ եղաւ երբոր Սողոմոնը վեր- 54 ջացրեց այս բոլոր աղօթքը և աղերսանքը՝ Տիրոջը աղօթելը, վեր

կացաւ Տիրոջ սեղանին առջևից
ուր որ ծուխերը կրկնել և ձեռ-
քերը դէպի երկինքը տարածել
55 էր. Ա՛յն ժամանակ կանգնեց և
և օրհնեց նա Իսրայէլի բոլոր ժո-
ղովքը մեծ ձայնով և ասաց.
56 Օրհնեալ լինի Տէրը որ հանգըս-
տութիւն է տուել իր Իսրայէլ
ժողովրդին բոլոր իր ասածին
պէս. բնաւ մի բան չէ պակասել
այն ամեն բարի բաներից, որ իր
ծառայ Մովսէսի ձեռօքը խօսել
57 է. Մեր Տէր Աստուածը մեզ հետ
լինի ինչպէս որ մեր հայրերի հետ
էր. մեզ չթողէ և մեզ անտես
58 չանէ. Եւ մեր սիրտը դէպի ի-
րան դարձնէ, որ գնանք նորա
բոլոր ճանապարհներումը և պա-
հենք նորա պատուէրները և հր-
տամանները ու իրաւունքները, որ
59 հրամայեց մեր հայրերին: Եւ իմ
այս խօսքերը, որ ես պաղատեցի
Տիրոջ առջև, գիշեր ու ցերեկ
մօտենան մեր Տէր Աստուծոյն որ
իրաւունք անէ իր ծառային և իր
Իսրայէլ ժողովրդին օր ըստ օրէ:
60 Որպէս զի երկրի բոլոր ազգերը
գիտենան որ Եհովան է Աստ-
61 ուած և ուրիշը չկայ: Եւ ձեր
սիրտը մեր Տէր Աստուծոյ հետ
ուղիղ լինի, որ գնանք նորա օ-
րէնքներումը և պահէք նորա հր-
տամանները ինչպէս որ այսօր:
62 Եւ թագաւորը և բոլոր Իսրա-
յէլը միասին Տիրոջ առջևը զո-
63 հեր էին մատուցանում: Եւ Սո-
ղոմոնը զոհ արաւ Տիրոջը արած
խաղաղութեան զոհը՝ քսաներկու
հազար արջառ և հարիւր քսան
հազար ոչխար. և թագաւորն ու
բոլոր Իսրայէլի որդիքը Տիրոջ
64 տան նաւակատիքն արին: Ա՛յն օ-
րը թագաւորը սրբեց Տիրոջ տան
առջև գաւիթի մէջտեղը, վասն զի
այնտեղ մատուցրեց ողջակէզնե-
րը, հացի նուէրը, և խաղաղու-
թեան զոհերի ճարպը, որովհե-
տև պղնձի սեղանը, որ Տիրոջ
առջևն է, ողջակէզները և հացի
նուէրն ու խաղաղութեան զոհե-
րի ճարպն պարունակելու համար
փոքր էր:
65 Եւ այն ժամանակ Սողոմոնը ու

բոլոր Իսրայէլը նորա հետ կա-
տարեցին տօնը մեծ ժողովքով՝
Եմաթից մինչև Եգիպտոսի հե-
ղեղատը մեր Տէր Աստուծոյ առ-
ջև եօթը օր և դարձեալ եօթը օր՝
այսինքն տասնուչորս օր: Ութե- 66
րորդ օրը ժողովրդին արձակեց,
և նորանք օրհնեցին թագաւորին
և գնացին իրանց վրաններըը ու-
րախանալով ու զուարթ սրտով
այն բոլոր բարիքների համար որ
Տէրը արել էր իր Դաւիթ ծա-
ռային և իր Իսրայէլ ժողովրդին:

ԳԼ. Թ

Եւ եղաւ երբոր Սողոմոնը շինեց 1
վերջացրեց Տիրոջ տունը և թա-
գաւորի տունը և Սողոմոնի ու-
զածը, որ փափագեց անելու.
Ա՛յն ժամանակ Տէրը երկրորդ ան- 2
գամ երևեցաւ Սողոմոնին ինչպէս
որ նորան երևեցել էր Գաբաւո-
նումը, Եւ Տէրն ասաց նորան. 3
Լսեցի իմ առջև արած աղօթքդ
ու աղաչանքդ, սրբեցի այս տու-
նը որ դու շինեցիր իմ անունը
յաւիտեան այնտեղ դնելու հա-
մար, և իմ աչքերն ու իմ սիր-
տը այնտեղ պիտի լինին ամեն
ժամանակ: Եւ արդ եթէ իմ 4
առջև գնաս, ինչպէս որ գնաց
քո հայրը Դաւիթը, կատարեալ
սրտով և ուղղութիւնով որ բո-
լոր իմ քեզ հրամայածները կա-
տարես և իմ պատուիրանքներն
ու իրաւունքները պահես: Ա՛յն 5
ժամանակ կ'հաստատեմ քո թա-
գաւորութեան աթոռը Իսրայէլի
վերայ յաւիտեան ինչպէս որ ա-
սացի քո հօրը՝ Դաւթին ասելով.
Թէ քեզ համար մարդ պակաս
չի լինիլ Իսրայէլի աթոռի վերա-
յից: Եթէ դուք կամ ձեր որդի- 6
քը ինձ հետևելուց ետ դառնաք,
և չպահէք իմ հրամանները ու
պատուիրանքները, որ ես դրել
եմ ձեր առջև և գնաք ծառայէք
ուրիշ աստուածների և նորանց
երկրպագութիւն անէք. Ա՛յն 7
ժամանակ ես բնաջինջ կանեմ
Իսրայէլին այն երկրի երեսից,
որ ես տուել եմ նորանց, և այս

տունը, որ արկեցի իմ անուան
Համար, իմ երեսիցը կ'գցեմ և
Իսրայէլը բոլոր ազգերի մէջ ա-
8 ռակ և կատակ կ'լինի։ Եւ այս
բարձր եղող տան մօտավ ամեն
անցնողը պիտի զարմանայ և սու-
լէ և պիտի ասէն. Ինչո՞ւ Համար
է Տէրն այսպէս արել այս երկրին
9 և այս տանը։ Եւ պիտի ասեն.
Որովհետև թողեցին իրանց Տէր
Աստուածը, որ իրանց հայրերին
Հանել էր Եգիպտոսի երկրից, և
յարեցին ուրիշ աստուածների,
և երկրպագութիւն արին նորանց
ու ծառայեցին նորանց. Նորա
Համար Տէրը նորանց վերայ բե-
րաւ այս բոլոր չարիքը։
10 Եւ եղաւ երբոր Սողոմոնը քա-
ռասուներկու միջոցում այն եր-
կու տները՝ այսինքն Տիրոջ տա-
նը և թագաւորի տունը շինել
11 էր, Տիւրոսի Քիրամ թագաւորը
Սողոմոնին եղևնափայտեր և մայր
փայտեր և ոսկի ու ամեն նորա
փափաքածը նորան ընծայելու
փոխարէն, այն ժամանակ Սողո-
մոն թագաւորը Քիրամին քսան
քաղաք տուաւ Գալիլեայի երկ-
12 րում։ Եւ Քիրամը գնաց եկաւ
Տիւրոսից Սողոմոնի նորան տուած
քաղաքները տեսնելու, բայց հա-
13 ճոյ չերևեցան նորա աչքին։ Եւ
նա ասաց. Սա ինչ քաղաքներ
են որ տուել ես ինձ, եղբայրս.
և նորանց անունը դրաւ *Քաբօղ
երկիր, մինչև այսօր։
14 Եւ Քիրամն ուղարկեց թագաւո-
րի Համար հարիւր և քսան տա-
ղանդ ոսկի։
15 Եւ այս էր Սողոմոն թագաւո-
րի դրած հարկի կարգադրութիւ-
նը, որ շինէ Տիրոջ և իր տունը
ու Մելօնը և Երուսաղէմի պա-
րիսպը, Հասորը, Մակէդդոն և
16 Գազերը։ Վերէն էգիպտոսի
փարաւոն թագաւորը վեր էր գր-
նացել և առել Գազերը և նո-
րան կրակով այրել, և այն քա-
ղաքում բնակող Քանանացինե-
րին սպանել և նորանից իրրև օ-
ժիտ տուել էր իր աղջկան, որ

* անհաճոյ

Սողոմոնի կինն էր։ Եւ Սողոմոնը 17
շինեց Գազերը և ցածի Բեթ-որո-
նը։ Նաև Բաղաղեթը և Թադմորը 18
անապատում երկրի մէջ։ Եւ Սո- 19
ղոմոնի բոլոր շտեմարանների քա-
ղաքները, և կառքերի քաղաքնե-
րը և ձիաւորների քաղաքները,
և Սողոմոնի բոլոր ուզածները,
որ ուզեց շինել Երուսաղէմում
և Լիբանանում և նորա բոլոր
թագաւորութեան երկրում։
Ամն բոլոր ժողովուրդները, որ 20
մնացել էին Ամորհացիներից, Քե-
տացիներից, Փերեզացիներից,
Եւեացիներից և Յերուսացիներից,
և Իսրայէլի որդիներից չէին,
Ամսինքն նորանց որդիքը, որ նո- 21
րանցից յետոյ մնացել էին այն
երկրում, որոնց չէին կարողացել
Իսրայէլի որդիքը ջնջել, Սողո-
մոնը նորանց հարկատու ծառայ
արաւ մինչև այսօր։ Բայց Իսրա- 22
յէլի որդիներից Սողոմոնը ծա-
ռայ չշինեց, վասն զի նորանք պա-
տերազմի մարդիկ էին, և նորա
ծառաները, նորա իշխանները նո-
րա զօրավարները, և նորա կառ-
քերի ու ձիաւորների վերակացու-
ներն էին լինում։ Սորանք են Սո- 23
ղոմոնի գործի վերայ եղող վերա-
կացուների գլխաւորները՝ հինգ
հարիւր յիսուն, որոնք իշխում
էին գործը կատարող ժողովրդի
վերայ։
Եւ փարաւոնի աղջիկը վեր գը- 24
նաց Դաւթի քաղաքից այն տու-
նը որ Սողոմոնը շինեց նորա հա-
մար Մելօնը շինելիս։
Եւ Սողոմոնը տարին երեք ան- 25
գամ ողջակէզներ և խաղաղու-
թեան զոհեր էր մատուցանում
Տիրոջ Համար շինած սեղանի վե-
րայ, և խունկ էր ծխում նորա
մօտ Տիրոջ առջև։ Եւ տունը վերջացրեց։
Եւ Սողոմոն թագաւորը նա- 26
ւեր շինեց Եզեոնի երկրում Կար-
միր ծովի եզերքին Եղաթի մօտ
եղող Գաստոնգաբերում։ Եւ Քի- 27
րամն իր ծառաներին, որ նաւա-
վար մարդիկ և ծովի հմուտ էին,
նաւով ուղարկեց Սողոմոնի ծա-
ռաների հետ։ Եւ նորանք գնա- 28

ցին Ոփիր, և այնտեղից վեր առնին չորս հարիւր քսան տաղանդ ոսկի և բերին Սողոմոն թագաւորի մօտ։

ԳԼ. Ժ

1 Եւ Սաբայի թագուհին Սողոմոնի համբաւը Տիրոջ անուան մասին լսելով, եկաւ նորան խրթին
2 հարցմունքներով փորձելու։ Եւ եկաւ Երուսաղէմ շատ մեծ փառքով՝ խունկեր և խիստ շատ ոսկի և պատուական քարեր բեռնած ուղտերով. և գնաց Սողոմոնի մօտ և խօսեց նորա հետ իր
3 սրտումը եղած բոլոր բաները։ Եւ Սողոմոնը մեկնեց նորա համար նորա ամեն խօսքերը. թագաւորի համար մէկ գաղտնի բան չկար,
4 որ նա չմեկնէր նորան։ Եւ Սաբայի թագուհին տեսաւ Սողոմոնի բոլոր իմաստութիւնը և նորա
5 շինած տունը. նորա սեղանի կերակուրը, և նորա ծառաների նստելը և նորա պաշտաւորների վեր կենալը, և նորանց հագուստները և նորա մատուռակները և նորա այն աստիճանը որով վեր էր գնում Տիրոջ տունը, և էլ
6 ուշ չմնաց նորանում։ Եւ ասաց թագաւորին. Ճշմարիտ է եղել այն խօսքը, որ լսեցի իմ երկրումը քո խօսքերի և քո իմաստութեան համար։
7 Եւ չէի հաւատում այն խօսքերին մինչև որ եկայ և իմ աչքերը տեսան, և ահա ինձ կէսը չէին պատմել. դու աւելի ունիս իմաստութիւն և
8 բարիք իմ լսած համբաւիցը։ Երանի քո այս մարդկանցը, քո այս ծառաներին, որ միշտ քո առջև կանգնած են, և լսում
9 են քո իմաստութիւնը։ Քո Եհովայ Աստուածը օրհնեալ լինի, որ քեզ հաճեց քեզ Իսրայէլի աթոռի վերայ դնելու. Եհովան Իսրայէլին յաւիտեան սիրելով քեզ թագաւոր է դրել, որ իրաւունք և արդարութիւն անես։
10 Եւ թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի և խիստ շատ խունկ և պատուական քարեր տուաւ. այնչափ շատ խունկ որչափ որ Սաբայի թագուհին տուաւ Սողոմոնին, այլ ևս չեկաւ։

11 Եւ Փիրամի նաւերը որ Ոփիրից ոսկի էին բերում, Ոփիրից մեծագին փայտեր էլ բերին խիստ շատ, և
12 պատուական քարեր էլ։ Եւ թագաւորը մեծագին փայտերից շինեց Տիրոջ տան համար և թագաւորի տան համար, և քնարներ ու տաւիղներ երգեցողների համար. այսպիսի մեծագին փայտեր էլ չեկան և չտեսնուեցաւ մինչև այսօր։

13 Եւ Սողոմոն թագաւորը Սաբայի թագուհուն տուաւ բոլոր նորա փափագածը որ ուզեց, բացի այն որ Սողոմոն թագաւորն ինքն իր ձեռքը տուաւ. և նա դարձաւ գնաց իր երկիրը ինքը և իր ծառաները։

14 Եւ մէկ տարուայ միջոցին Սողոմոնի համար եկած ոսկու կշիռն էր վեց հարիւր վաթսուն և
15 վեց տաղանդ ոսկի, բացի վաճառականներից և առուտրականներից և *Արաբիոյ թագաւորներից և երկրի նախարարներից էր։

16 Եւ Սողոմոն թագաւորը երկու հարիւր վահան շինեց կռածոյ ոսկուց. վեց հարիւր մէկ ոսկի գնաց իւրաքանչիւր վահանի հա-
17 մար։ Եւ երեք հարիւր ասպար կռածոյ ոսկուց. իւրաքանչիւր ասպարին երեք մնան ոսկի գնաց. և թագաւորը դրանց դրաւ Լիբանոնու անտառի տանը։

18 Եւ թագաւորը մի փղոսկրեայ մեծ աթոռ շինեց և մաքուր ոսկով պատեց նորան։ Աթոռը վեց
19 աստիճան ունէր, և աթոռի գլուխը բոլորակ էր ետևիցը. և նստելու տեղը այս կողմից և այն կողմից յենարաններ ունէր. և երկու առիւծներ կային այդ յենարանների մօտը։ Եւ տասն եր-
20 կու առիւծներ էին կանգնած այն վեց աստիճանների վերայ այս կողմից և այն կողմից. այսպիսի բան չէր շինուած ոչ մի թագաւորութիւնում։

---

*Բառն Ժողովրդների

21 Եւ Սողոմոն թագաւորի բոլոր
խմելիքի անօթները ոսկի էին, և
Լիբանանի անտառի տան բոլոր
անօթները մաքուր ոսկուց էին,
արծաթից չէին. Սողոմոնի օրե-
րում նա մի բան չէր համար-
22 վում։ Վասն զի թագաւորը Թար-
սիսի նաւեր ունէր ծովումը Փի-
րամի նաւերի հետ. երեք տարին
մէկ անգամ գալիս էին Թարսիսի
նաւերը բեռնած ոսկով և ար-
ծաթով փղոսկրով և կապիկնե-
րով ու սիրամարգներով։
23 Եւ մեծացաւ Սողոմոն թագա-
ւորը երկրի բոլոր թագաւորնե-
րից հարստութիւնով և իմաս-
24 տութիւնով։ Եւ բոլոր երկիրը
փափաքում էր Սողոմոնի երեսին,
որ լսէ նորա այն իմաստութիւնը,
որ Աստուած տուել էր նորա
25 սրտին։ Եւ նորանց ամեն մէկը
բերում էր իր ընծան՝ արծաթի
անօթներ և ոսկի անօթներ, հան-
դերձներ, զէնքեր, խնկեղէններ,
ձիեր և ջորիներ տարուց տարի։
26 Եւ Սողոմոն կառքեր և ձիա-
ւորներ ժողովեց, և ունէր հա-
զար չորս հարիւր կառք և տաս-
ներկու հազար ձիաւոր. և նո-
րանց տեղաւորեց կառքերի քա-
ղաքներում և Երուսաղէմ թա-
27 գաւորի մօտ։ Եւ թագաւորը
արծաթը Երուսաղէմում քարի
նման հասարակ բան շինեց, և է-
ղևնափայտը դաշտի մոլեմի զեղե-
28 ներու պէս շատ տուաւ։ Եւ Սո-
ղոմոնի համար ձիերը բերում է-
ին Եգիպտոսից, և թագաւորի
վաճառականների կարաւանը ձե-
րը երամակով էին ծախու առ-
29 նում։ Եւ Եգիպտոսից մի կառ-
քը վեր էր գալիս և դուրս ել-
նում վեց հարիւր արծաթով,
իսկ ձին մէկ հարիւր յիսունով.
և այսպէս հանում էին բոլոր
Քեւացոց թագաւորների և Ա-
սորոց թագաւորների համար նո-
րանց ձեռօքը։

ԳԼ. ԺԱ

1 Եւ Սողոմոն թագաւորը շատ օ-
տարազգի կանայք սիրեց, նաև

փարաւոնի աղջկանը, այսինքն
Մովաբացի, Ամմոնացի, Եդո-
մացի, Սիդոնացի, Քեւացիներ։
Ա՛յն ազգերից որոնց համար Տէրն 2
ասել էր Իսրայէլի որդիանց՝ նո-
րանց մօտ մի մտնէք, և նորանք
էլ ձեզ մօտ չմտնեն, որ ձեր սր-
տերը չդարձնեն իրանց աստուած-
ների ետևից. Սողոմոնը սիրով
նորանց յարեց։ Եւ եօթը հարիւր 3
տիկին կանոյք և երեք հարիւր
հարճուներ, և նորա սիրտը դար-
ձրին իր կանոյքը։ Եւ եղաւ Սո- 4
ղոմոնի ծերութեան ժամանակին
որ նորա կանոյքը դարձրին նո-
րա սիրտը ուրիշ աստուածների
ետևից, և նորա սիրտը ուղիղ
չէր իր Տէր Աստուծոյ հետ ինչ-
պէս իր հօր Դաւթի սիրտը։ Եւ 5
Սողոմոնը գնաց Սիդոնացոց Աս-
տարովթ աստուծոյ ետևից և Ա-
մմոնացոց գարշելի Մեղքոմի ետե-
ւից։ Եւ Սողոմոնը չարութիւն 6
արաւ Տիրոջ առջև և չհետևեց
Տիրոջը իր հօր Դաւթի պէս։ Ա՛յն 7
ժամանակ Սողոմոնը մի բարձրա-
նդակ շինեց Մովաբացոց գար-
շելի Քամոսի համար երուսաղէ-
մի դիմացի լեռան վերայ, նոյն-
պէս և Ամմոնի որդիանց գարշե-
լի Մողոքի համար։ Եւ այսպէս 8
էլ արաւ իր բոլոր օտարազգի կա-
նանց համար, որ իրանց աստ-
ուածներին խունկ էին ծխում և
զոհ մատուցանում։
Եւ Տէրը բարկացաւ Սողոմոնի 9
վերայ, որ իր սիրտը ծռեց Իս-
րայէլի Տէր Աստուածոնից, որ
երկու անգամ իրան երևեցել էր։
Եւ նորան այս բանի համար պա- 10
ատուիրել էր որ ուրիշ աստուած-
ների ետևից չդնայ. բայց նա չ
պահեց ինչ որ Տէրը նորան հրա-
մայել էր։ Եւ Տէրն ասաց Սո- 11
ղոմոնին. Որովհետև այս բաները
լինում են քեզ մօտ, և դու չ
պահեցիր իմ ուխտը և իմ քեզ
հրամայած պատուէրները, ես
անշուշտ պիտի քեզանից պատա-
ռեմ թագաւորութիւնը, և քո
ծառային պիտի տամ այն։ Մի- 12
այն թէ քո օրերումը չեմ անե-
լու քո հօր Դաւթի պատճառով,

քո որդու ձեռքից եմ նորան պա-
13 տառելու։ Սակայն բոլոր թա-
գաւորութիւնը չեմ պատառե-
լու, մէկ ցեղը պիտի տամ քո
որդուն իմ ծառայ Դաւթի պատ-
ճառով, և իմ ընտրած Երուսա-
ղէմի պատճառով։
14 Եւ Տէրը Սողոմոնի համար մի
հակառակորդ վերկացրեց այսին-
քըն Եդոմի թագաւորի սերնդից
15 Եդոմացի Ադադին. վասն զի
Դաւիթը Եդոմում եղած ժա-
մանակը երբոր Յովաբ զօրագլու-
խը վեր գնաց, որ սպանուածնե-
րին թաղէ և Եդոմում կոտորեց
16 բոլոր արուներին, Որովհետև Յո-
վաբը և բոլոր Իսրայէլը վեց ա-
միս բնակեցին այնտեղ մինչև որ
Եդոմում բոլոր արուներին բը-
17 նաջինջ արաւ. Այն ժամանակ
Ադադն ինքը և իր հօր ծառա-
ներից Եդոմացի մարդիկ իր հետ
փախան գնացին Եգիպտոս. և
18 Ադադը փոքր երեխայ էր։ Եւ
նորանք Մարիամից վեր կացան
ու եկան Փառան, և իրանց հետ
մարդիկ վեր առին Փառանից ու
գնացին Եգիպտոս Եգիպտոսի
թագաւոր Փարաւոնի մօտ. և
նա նորան տուն և հաց տուաւ,
19 և նորան երկիր շնորհեց։ Եւ Ա-
դադը շատ շնորհք գտաւ Փարա-
ւոնի աչքին, և իր կնոջ քոյրը
նորան կին տուաւ թահփենէս
20 թագուհու քոյրը։ Եւ թահփե-
նէսի քոյրը նորա համար ծնաւ
Գանեբաթէն, և թահփենէսը
նորան մեծացրեց Փարաւոնի տան
մէջ. և Գանեբաթը լինում էր
Փարաւոնի տանը Փարաւոնի որդ-
21 կանց մէջ։ Եւ Ադադը լսեց Եգ-
իպտոսում, թէ Դաւիթը հանգել
է իր հարանց հետ, և թէ մե-
ռել է Յովաբ զօրագլուխը, և
Ադադը ասաց Փարաւոնին. Ինձ
արձակիր որ իմ երկիրը գնամ։
22 Եւ Փարաւոնն ասաց նորան.
Ի՞նչ է պակաս ինձ մօտ, որ
հիմա ուզում ես քո երկիրը գը-
նալ. բայց նա ասաց. Ոչ, այլ
ինձ անպատճառ արձակիր։
23 Եւ Աստուած նորա դէմ մի
ուրիշ հակառակորդ վեր կացրեց՝

Եղիադայի որդի Ռասոնին, որ
փախել էր իր տիրոջից՝ Սուբայի
Ադրազար թագաւորից։ Եւ նա 24
իր մօտ մարդիկ հաւաքեց և գըն-
դապետ եղաւ. և երբոր Դաւ-
թը նորանց կոտորեց, գնացին
Դամասկոս և բնակեցին այնտեղ
և Դամասկոսում թագաւորու-
թիւն արին։ Եւ նա Իսրայէլին 25
հակառակորդ էր Սողոմոնի բո-
լոր օրերում. բացի Ադադի ա-
րած չարութիւնից, նա նեղում
էր Իսրայէլին. և թագաւորեց
Ասորոց վերայ։
Եւ Սողոմոնի ծառան Սորե- 26
դայից Եփրաթացի Նաբատի որ-
դի Յերոբովամը, որի մօր անունը
Սարուա էր՝ մի արքայրի կին,
սա էլ ձեռք բարձրացրեց թա-
գաւորի դէմ։ Եւ սա է նորա 27
թագաւորի վերայ ձեռք բարձ-
րացնելու պատմութիւնը. Սող-
ոմոնը Մելոնը շինել էր և իր հօր
Դաւթի քաղաքի քանդուածը
պնդացրեց. Եւ Յերոբովամը մի 28
քաջազուն մարդ էր. և երբոր
Սողոմոնը նկատեց, որ նա մի գոր-
ծունեայ տղամարդ է, նորան վե-
րակացու դրաւ Յովսէփի տան
բոլոր բեռների վերայ։ Եւ եղաւ 29
այն ժամանակ որ Յերոբովամը
դուրս էլաւ Երուսաղէմից. և նո-
րան գտաւ Շաւնացարկին Սիլո-
նացի Աքիա մարգարէն. և նա
մի նոր վերարկու էր հագել. և
նորանք երկուսն էլ մենակ էին
դաշտումը։ Եւ Աքիան նորա վե- 30
րայի նոր վերարկուից բռնեց և
ճղռտեց տասներկու կտոր —ը—
նորան։ Եւ Յերոբովամին ասաց. 31
Քեզ համար տասը կտորը վեր
առ. վասն զի այսպէս է ասում
Իսրայէլի Տէր Աստուածը. Ահա
ես պիտի պատառեմ թագաւո-
րութիւնը Սողոմոնի ձեռքից և
քեզ տամ տասը ցեղը. իսկ մէկ 32
ցեղը նորան կ'լինի իմ ծառայ
Դաւթի պատճառով և Իսրայէլի
բոլոր ցեղերից իմ ընտրած Երու-
սաղէմ քաղաքի պատճառով.
Որովհետև ինձ թողեցին և եր- 33
կրպագութիւն արին Աշտոնաց-
Աստարովթ աստուծոյն և Մո-

վարի Քաղվա տատուծոյն, և Ամմոնի որդկանց Մեղքոմ տատուծոյն, և չգնացին իմ ճանապարհներովը, որ իմ աչքին ուղիղը և իմ պատուէրներըը ու իրաւունքները կատարէին ինչպէս նորա 31 Հայր Դաւիթը։ Բայց բոլոր թագաւորութիւնը չեմ առնելու նորա ձեռից, վասն զի նորան իշխան կ'դնեմ նորա կենաց բոլոր օրերում իմ ծառայ Դաւթի պատճառով, որին ես ընտրել եմ, որ իմ հրամաններն ու իմ 35 պատուէրները պահել է։ Սակայն պիտի առնեմ թագաւորութիւնը նորա որդու ձեռից և քեզ տամ 36 այն, տասինքն տոհմը ցեղերը։ Եւ նորա որդուն պիտի տամ մէկ ցեղը, որ իմ ծառան Դաւիթը միշտ մէկ ճրագ ունենայ իմ առջև Երուսաղէմում այն քաղաքում որը ես ընտրել եմ որ 37 իմ անունը դնեմ այնտեղ։ Եւ ես քեզ վեր եմ առնում, և դու կ'թագաւորես բոլոր սրտիդ ուզածին պէս և թագաւոր պիտի 38 լինես Իսրայէլի վերայ։ Եւ կ'լինի որ եթէ լսես բոլոր իմ քեզ հրամայածին և գնաս իմ ճանապարհներովս և անես իմ աչքին ուղիղը, որ պահես իմ պատուէրներըը և հրամաններըը ինչպէս որ անում էր իմ Դաւիթ ծառան, այն ժամանակ ես քեզ հետ կ'լինեմ և քեզ համար հաստատուն տուն կ'շինեմ, ինչպէս որ շինել եմ Դաւթի համար, և 39 Իսրայէլը քեզ կ'տամ։ Եւ պիտի խոնարհեցնեմ Դաւթի սերունդը այս պատճառով, բայց ոչ թէ 40 միշտ։ Եւ Սողոմոն աշխատում էր Յերոբովամին սպանելու. բայց Յերոբովամը վեր կացաւ և փախաւ Եգիպտոս՝ Սիսակ Եգիպտոսի թագաւորի մօտ, և մնաց Եգիպտոսում մինչև Սողոմոնի 41 մեռնելը։ Եւ Սողոմոնի գործքերի մնացորդը, և նորա բոլոր արածը և նորա իմաստութիւնը, ահա նորանք գրուած են Սողոմոնի 42 գործքերի գրքումը։ Եւ Սողոմոնի բոլոր Իսրայէլի վերայ երուսաղէմում արած թագաւորութեան ժամանակն էր քառասուն տարի։ 43 Եւ Սողոմոնը քնեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր հօր Դաւթի քաղաքում, և նորա որդին Ռոբովամը թագաւորեց նորա տեղ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Ռոբովամը գնաց Սիւքեմ, վասն զի բոլոր Իսրայէլը գնացել էր Սիւքեմ նորան թագաւոր անելու համար։ 2 Եւ եղաւ երբոր Նաբատեան Յերոբովամը, որ Սողոմոն թագաւորի երեսից փախել էր և տակաւին Եգիպտոսումն էր, (վասն զի Յերոբովամը Եգիպտոսումն էր,) այս լսեց, և հոգ 3 ուղարկեցին ու նորան կանչեցին, և եկան Յերոբովամը և Իսրայէլի բոլոր ժողովքը և խօսեցին Ռոբովամի հետ ասելով. Հայրդ մեր 4 լուծը ծանրացրել էր. բայց դու հիմա թեթևացրու քո հօր խիստ ծառայութիւնը և նորա մեր վերայ դրած ծանր լուծը, այն ժամանակ քեզ ծառայութիւն կ'անենք։ Եւ նա նորանց ասաց. 5 Գնացէք և երեք օրից յետոյ դարձեալ ինձ մօտ եկէք, և ժողովուրդը գնաց։

Եւ Ռոբովամ թագաւորը խոր- 6 հուրդ արաւ այն ծերերի հետ, որ կանգնում էին նորա հօր Սողոմոնի առջև նորա կենդանութեանը, և ասաց. Ի՞նչպէս էք դուք ինձ խորհուրդ տալիս, որ այս ժողովրդին ես պատասխան տամ։ Եւ նորան ասացին այս 7 խօսքը. Եթէ դու այսօր այս ժողովրդին ծառայ լինես և նորանց ծառայես, և նորանց պատասխանատու ու նորանց քաղցր խօսքեր ասես, այն ժամանակ նորանք միշտ քո ծառաները կ'լինեն։ Իսկ 8 նա մերժեց ծերերի խրատը որ նորան տուին, և խորհուրդ հարցրեց այն երիտասարդներից, որ իր հետ էին մեծացել և նորա առջևը կանգնած էին։ Եւ ասաց 9 նորանց. Դո՞ւք ինչ խորհուրդ էք տալիս որ այս ժողովրդին պատասխան տամ, որ ինձ հետ

խօսեցին ասելով. Թէ Աւի՛ն լուծը թեթեւացրու որ քո հայրը մեր վերայ է դրել։ Եւ նորա հետ մեծացած երիտասարդները խօսեցին նորա հետ ասելով՝ Այսպէս ասիր այն ժողովրդին, որ քեզ հետ խօսել են՝ ասելով. Քո հայրը մեր լուծը ծանրացրել էր, իսկ դու թեթեւացրու մեր վերայից. այսպէս խօսիր նորանց հետ. Իմ ծծիկը հաստ է իմ հօր մէջքից. Եւ արդ իմ հայրը ձեզ վերայ ծանր լուծ էր դրել, բայց ես աւելացնելու եմ ձեր լուծի վերայ. իմ հայրը ձեզ խարազաններով էր խրատում, բայց ես ձեզ կարիճներով եմ խրատելու։

Եւ Յերոբովամն ու բոլոր ժողովուրդը եկան Ռոբովամի մօտ երրորդ օրը, ինչպէս որ թագաւորը խօսել էր ասելով. Երրորդ օրը դարձեալ ինձ մօտ եկէք։ Եւ թագաւորը խիստ պատասխանեց ժողովրդին, և մերժեց ծերերի խորհուրդը, որ տուել էին իրան։ Եւ նորանց հետ խօսեց այն երիտասարդների խորհրդի պէս ասելով. Իմ հայրը ձեր լուծը ծանրացրել էր, բայց ես աւելացնելու եմ ձեր լուծի վերայ. իմ հայրը ձեզ խարազաններով էր խրատում, բայց ես ձեզ կարիճներով եմ խրատելու։ Եւ թագաւորը ժողովրդին չլսեց, որովհետև Տէրոջ կողմից այսպէս էր դարձուած, որպէս զի հաստատէ իր այն խօսքը որ Տէրն ասել էր Աքիայի Սելոնացի Ադոնիայի ձեռօքը Նաբատեան Յերոբովամին։ Եւ երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ, որ թագաւորը նորանց չլսեց, այն ժամանակ ժողովուրդը պատասխանեց թագաւորին ասելով. Մենք ի՞նչ բաժին ունինք Դաւթի մօտ. և ձեռաւէի որդու մօտ ժառանգութիւն չունինք. քո վրաններդ փա՛ռ, ով Իսրայէլ. հիմա դու հոգացիր քո տունը, ով Դաւիթ. և Իսրայէլը գնաց իր վրանները։ Եւ Իսրայէլի որդիանց վերայ որ բնակուած էին Յուդայի քաղաքներումը, թագաւոր եղաւ Ռոբովամը։ Եւ Ռոբովամ թագաւորը հարկերի տեսուչ Ադորամին ուղարկեց, բայց բոլոր Իսրայէլը նորան քարկոծեցին քարերով, և նա մեռաւ. և Ռոբովամ թագաւորը շտապեց, որ կառքը հեծնէ և փախչէ Երուսաղէմ։ Այսպէս Իսրայէլը ապստամբեց Դաւթի տանից մինչև այսօր։

Եւ երբոր լսեց բոլոր Իսրայէլը, որ Յերոբովամը եկած է դարձել, այն ժամանակ մարդ ուղարկեցին և նորան կանչեցին ժողովքը ու նորան թագաւոր արին բոլոր Իսրայէլի վերայ, և Դաւթի տան հետևող չկար բացի միմիայն Յուդայի ցեղը։ Եւ Ռոբովամն եկաւ Երուսաղէմ և ժողովեց բոլոր Յուդայի տունը և Բենիամինի ցեղը հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմողներ, որ Իսրայէլի տան հետ պատերազմէ, թագաւորութիւնը Սողոմոնի որդի Ռոբովամին դարձնելու համար։

Եւ Աստուծոյ խօսքը եղաւ Աստուծոյ մարդ Սեմայիային ասելով. Ասիր Յուդայի թագաւոր Սողոմոնեան Ռոբովամին և բոլոր Յուդայի և Բենիամինի տանը և ժողովրդի մնացորդին ասելով. Այսպէս է ասում Տէրը. Վեր մի գնաք և պատերազմ մի անէք ձեր եղբարց՝ Իսրայէլի որդիանց հետ. ետ դարձէք ամեն մարդ իր տունը. վասն զի ինձանից է եղած այս բանը։ Եւ նորանք լսեցին Տէրոջ խօսքին և ետ դարձան գնացին Տէրոջ խօսքին համեմատ։

Եւ Յերոբովամը նփրեմի լեռան վերայ շինեց Սիւքեմը և բնակեց այնտեղ. և այնտեղից դուրս եկաւ ու շինեց Փանուէլը։ Եւ Յերոբովամն ասաց իր սրտումը. Հիմա պիտի թագաւորութիւնը ետ դառնայ Դաւթի տանը։ Եթէ այս ժողովուրդը վեր գնայ Երուսաղէմում Տէրոջ տանը զոհ մատուցանելու համար, այն ժամանակ այս ժողովրդի սիրտը պիտի դառնայ դէպի իրանց տէրը՝ Յուդայի թագաւոր Ռոբովամին, և

ինձ պիտի սպանեն ու ես դառնամ Յուդայի թագաւոր Նորա-
28 վամին։ Եւ թագաւորը խորհուրդ արաւ, և երկու սակի որթ շինեց և ասաց Նորանց. Բաւական է ձեզ Երուսաղէմ գնալը, ահա քո աստուածները, Իսրայէլ, որ քեզ վեր հանեցին Եգիպտոսի
29 երկրից։ Եւ մէկը դրաւ Բեթէլ
30 և մէկը դրաւ Դան։ Եւ այս բանը մեղքի պատճառ դառաւ, և ժողովուրդը գնում էր մէկի առ-
31 ջեը մինչև Դան։ Նաև շինեց մինչև բարձրաւանդակների տունը, և քահանաներ շինեց ժողովրդի այն մասերից որ Ղեւիի որդիներից չէին։
32 Եւ Յերոբոամը ամն կատարից ութերորդ ամսի տասնուհնգին Յուդայում եղող տօնին պէս, և վեր եկաւ սեղանը. այսպէս արաւ Բեթէլում, որ զոհէ իր շինած որթերին. և Բեթէլում դրաւ իր շինած բարձրաւանդակների
33 քահանաները։ Եւ վեր եկաւ իր Բեթէլում շինած սեղանի վերայ, իր սրտի հնարած ամսի այսինքն ութերորդ ամսի տասնուհնգին, և տօն տօնեց Իսրայէլի որդիների համար, և վեր եկաւ սեղանի վերայ և խունկ ծխեց։

ԳԼ. ԺԳ

1 Եւ ահա մի Աստուծոյ մարդ եկաւ Յուդայից Տիրոջ խօսքով դէպի Բեթէլ, և Յերոբոամը կանգնած էր սեղանի վերայ խունկ
2 ծխելու համար։ Եւ կանչեց Տիրոջ խօսքով դէպի սեղանը և ասաց. Ով սեղան, սեղան, Տէրն այսպէս է ասում. Ահա մի որդի կ'ծնուի Դաւթի տան համար՝ անունը Յոսիա, և նա քեզ վերայ կ'զոհէ բարձրաւանդակների քահանաներին, որ քեզ վերայ խունկ են ծխում, և մարդու ոսկորներ կայրեն քեզ վերայ։
3 Եւ այն օրը մի նշան տուաւ ասելով. Սա է այն նշանը, որ ասել է. Ահա սեղանը կ'պատռուի, և նորա վերայի մոխիրը կ'թափուի։

Եւ եղաւ երբոր թագաւորը լսեց Աստուծոյ մարդու այն խօսքը, որ կանչեց Բեթէլում եղած սեղանի վերայ, այն ժամանակ Յերոբոամը մեկնեց իր ձեռքը սեղանի վերայից ասելով. Բռնեցէք գորան. բայց չորացաւ նորա ձեռը, որ մեկնել էր նորա վերայ, և չկարողացաւ նորան հաս
5 քաշել դէպի իրան։ Եւ սեղանը պատռուեցաւ և մոխիրը թափուեցաւ սեղանից իբրև նշան, որ Աստուծոյ մարդը Տիրոջ խօս-
6 քով տուել էր։ Եւ թագաւորը պատասխանեց և ասաց Աստուծոյ մարդուն. Գո Տէր Աստուծոյն աղօթք արա և խնդրիր ինձ համար, որ իմ ձեռը հաս դառնայ դէպի ինձ. և Աստուծոյ մարդը Տիրոջը աղօթք արաւ, և թագաւորի ձեռը հաս դարձաւ
7 դէպի իրան և առաջուան պէս եղաւ։ Եւ թագաւորը ասաց Աստուծոյ մարդուն. Ինձ հետ եկ տուն, և ճաշիր, և ես քեզ պարգևներ տամ։ Բայց Աստուծոյ
8 մարդն ասաց թագաւորին. Եթէ ինձ քո տան կէսն էլ տալու լինիս, քեզ հետ չեմ ուտիլ և ջուր չեմ խմիլ այս տեղում։
9 Վասն զի ինձ այսպէս հրամայուեցաւ Տիրոջ խօսքով ասելով. Հաց չուտես և ջուր չխմես և այն ճանապարհով հաս չդառնաս որով գնացիր։ Այլ ուրիշ ճանա-
10 պարհով գնաց, և հաս չդարձաւ այն ճանապարհով, որով գնացել էր Բեթէլ։

Եւ մի ծեր մարգարէ էր բնա-
11 կում Բեթէլում և նորա որդին եկաւ և իրան պատմեց այն բոլոր բաները, որ Աստուծոյ մարդը այն օրը արել էր Բեթէլում, և այն խօսքերը, որ ասել էր թագաւորին, պատմեցին իրանց հօրը։
12 Եւ իրանց հայրն ասաց նորանց. Ո՞ր ճանապարհով գնաց։ Եւ ցոյց տուին որդիքը այն ճանապարհը, որով այն Աստուծոյ մարդը գնացել էր, որ եկաւ Յուդայից։
13 Եւ նա ասաց իր որդիներին. Էշը պատրաստեցէք ինձ համար. և էշը պատրաստեցին նորա համար,

14 և նա հեծաւ նորան։ Եւ գնաց Աստուծոյ մարդու ետևից և գըտաւ նորան մի բևեկինու տակին նստած, և ասաց նորան. Դո՞ւ ես այն Աստուծոյ մարդը, որ եկար Յուդայից, և նա ասաց. Ես
15 եմ։ Եւ նորան ասաց. Ինձ հետ
16 եկ էմ տունը և հաց կեր։ Եւ նա ասաց. Չեմ կարող քեզ հետ ետ դառնալ և քեզ հետ գնալ և հաց չեմ ուտիլ ու ջուր չեմ
17 խմիլ քեզ հետ այստեղ։ Վասն զի Տիրոջ խօսքովն ինձ խօսք եղաւ. Թէ Հաց չուտես. և այն տեղ ջուր չխմես. ետ չդառնաս գնալու այն ճանապարհովը, որով
18 դու գնացիր։ Եւ նա ասաց նորան. Ես էլ մարգարէ եմ քեզ պէս և մի հրեշտակ խօսեց ինձ հետ Տիրոջ խօսքովն ասելով. Նորան ետ դարձրու քեզ հետ քո տունը և թող հաց ուտէ և ջուր խմէ. Բայց սուտ ասաց նորան։

19 Եւ նա ետ դարձաւ նորա հետ և հաց կերաւ նորա տանը և
20 ջուր խմեց։ Եւ նորանք սեղանի նստած էին, և Տիրոջ խօսքը եղաւ նորան դարձնող մարգարէին.
21 Եւ նա կանչեց Յուդայից եկած Աստուծոյ մարդուն՝ ասելով. Այսպէս է ասում Տէրը. Որովհետև դու անհնազանդութիւն արիր Տիրոջ խօսքին և չպահեցիր քո Տէր Աստուծոյ քեզ պատ-
22 ուիրած պատուէրը. Եւ ետ դարձար և հաց կերար ու ջուր խմեցիր այնտեղը, ուր որ քեզ ասաց. Հաց չուտես և ջուր չխըմես. ահա քո դիակը չմտնէ քո հայրերի գերեզմանը։

23 Եւ երբոր նա հաց էր կերել և ջուր էր խմել, նա պատրաստեց այն իր ետ դարձրած մարգարէի
24 էշը։ Եւ նա գնաց. բայց ճանապարհին մի առիւծ գտաւ նորան և մեռցրեց նորան, և նորա դիակը ընկած էր ճանապարհումը և էշը կշտին կանգնած. և առիւծն էլ կանգնել էր դիակի կշտին։
25 Եւ ահա այն ճանապարհովը անցնողներ կային, որ տեսան դիակը ճանապարհումն ընկած և առիւծը կանգնած դիակի կշտին, և եկան ու ասացին քաղաքումը, ուր որ այն ծեր մարգարէն բնակում էր։ Եւ սա լսեց նորան իր 26
ճանապարհից ետ դարձնող մարգարէն և ասաց. Նա այն Աստուծոյ մարդն է, որ Տիրոջ խօսքին անհնազանդութիւն է արել. և Տէրը նորան մատնել է առիւծին, որ նորան փշրէ և մեռցնէ Տիրոջ նորան ասած խօսքին պէս։ Եւ 27
իր որդկանցը հետ խօսեց ասելով. Էշը պատրաստեցէք ինձ համար. և նորանք պատրաստեցին նորան։
Եւ նա գնաց ու գտաւ նորա դի- 28
ակը ճանապարհումը ինկած, և էշն ու առիւծը կանգնած դիակի կշտին. առիւծը չէր ուտում դիակը և չէր պատառել էշին։ Եւ 29
մարգարէն վեր առաւ Աստուծոյ մարդու դիակը և դրաւ էշի վերայ և ետ բերաւ նորան. և ծեր մարգարէն մտաւ քաղաքը, որ 30
սուգ անէ և նորան թաղէ։ Եւ
նորա դիակը դրաւ իր գերեզմանի մէջ և սուգ արաւ նորա վերայ, Վա՛յ եղբայր։ Եւ եղաւ որ 31
նորան թաղելուց յետոյ, խօսեց իր որդկանց հետ ասելով. Երբ մեռած ժամանակ՝ ինձ այն գերեզմանում թաղեցէք, որի մէջ թաղուած է այդ Աստուծոյ մարդը, նորա ոսկորների կշտին դրէք իմ ոսկորները։ Վասն զի 32
անպատճառ պիտի կատարուի այն խօսքը որ Տիրոջ խօսքովը խօսեց Բեթէլում եղող սեղանի և այն բարձրաւանդակների տների վերայ որ Սամարիայի քաղաքներումն են։

Այս բանից յետոյ էլ Յերոբո- 33
վամը ետ չդարձաւ իր չար ճանապարհից, և դարձեալ ժողովրդի մասերից բարձրաւանդակների համար քահանաներ չինեց, ուզողին *ձեռքերը կ'լցնէր, և
նորանք լինում էին բարձրաւանդակների քահանաներ։ Եւ այս 34
բանով էր եղաւ Յերոբովամի տան մեղք անելուն, որ կորչէ և բնաջինջ լինի երկրիս երեսից։

---

*կ'ձեռնադրէր

ԳԼ. ԺԴ

1 Ա.յդ ժամանակին Հիւանդացաւ
2 Յերոբովամի որդին Աբիան։ Եւ Յերոբովամն ասաց իր կնոջը. Վեր կաց, կերպարանքդ փոխիր որ քեզ չճանաչեն, թէ դու Յերոբովամի կինն ես, և գնա Սեղով. ահա այն տեղ է Աքիա մարգարէն, նա ինձ համար ասաց. թէ թագաւոր կ'լինիմ այս ժողովրդի
3 վերայ։ Եւ ձեռք առ տասը հաց, րլիթներ և մի փարչ մեղր և գնա նորա մօտ, և նա քեզ կ'իմացնէ թէ ինչ պիտի լինի երեխային։
4 Եւ Յերոբովամի կինը այսպէս արաւ, և վեր կացաւ գնաց Սեղով ու մտաւ Աքիայի տունը. բայց Աքիան չէր կարողանում տեսանել, վասն զի աչքերը դադարել էին ծերութիւնից։
5 Եւ Տէրն ասաց Աքիային. Ահա Յերոբովամի կինը եկել է քեզանից բան հարցնելու իր որդու համար, որ ահա հիւանդ է. այսպէս և այսպէս ասես նորան. և ՚Ի՞նչ եկած ժամանակ իրան օ-
6 տար է ձևացնելու։ Եւ եղաւ հէնց որ Աքիան լսեց նորա ոտքերի ձայնը, որ դռնովը մտնում էր, ասաց. Եկ, ով Յերոբովամի կին, ինչո՞ւ համար ես քեզ օտար ձևացնում. և ես ուղարկուեցայ քեզ խիստ բան հասցնելու։
7 Գնա, Յերոբովամին ասիր. Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. Որովհետև ես քեզ բարձրացրի ժողովրդի միջից և քեզ իմ ժողովուրդ Իսրայէլի
8 վերայ իշխան դրի. Եւ պատառեցի թագաւորութիւն Դաւթի տանից և քեզ տուի, և դու չեղար իմ Դաւիթ ծառայի պէս որ պահում էր իմ պատուիրանքները և բոլոր սրտով ինձ հետևում որ միայն իմ աչքին ուղիղ
9 երևեցաւն անէ. Եւ քեզանից առաջ եղածների ամենից աւելի չարութիւն գործեցիր, և գնացիր քեզ համար ուրիշ աստուածներ և կուռքեր շինեցիր ինձ բարկացնելու համար, և ինձ քո
10 եանը գցեցիր։ Ահա ես էլ չարիք պիտի բերեմ Յերոբովամի տան վերայ և պիտի բնաջինջ անեմ Յերոբովամի համար որմի վերայ միզողը, Իսրայէլի մէջ կապուածը և արձակուածը, և պիտի աւերեմ Յերոբովամի տան եանեվրը, ինչպէս որ տղան են աւերում մինչև որ վերջանայ։ Յերոբովամից քաղաքում մեռնողին շները պիտի ուտեն, և դաշտի մէջ մեռածին երկնքի թռչունները պիտի ուտեն. վասն զի Տէրն է ասում։ Եւ դու վեր կաց գնա քո տունը. քո ոտքերը քաղաքը մտնելիս երեխան պիտի մեռնի։ Եւ բոլոր Իսրայէլը նորա համար սուգ կ'անէ, և կ'թաղեն նորան, վասն զի Յերոբովամից միայն նա է մտնելու գերեզման, որովհետև Յերոբովամի տանը դէմ նորա վերայ մի բարի բան գտնուեցաւ Իսրայէլի Տէր Աստուծոյ առջևը։ Եւ Տէրը իր համար Իսրայէլի վերայ մէկ թագաւոր վեր կ'կացնէ որ բնաջինջ կ'անէ Յերոբովամի տունը նոյն օրը, և այն էլ ինչ որ է՛ հիմա։ Եւ Տէրը պիտի զարկէ Իսրայէլին ինչպէս որ եղէգը շարժում է ջրերի մէջ, և պիտի խլէ Իսրայէլին այս բարի երկրից, որ տուել է իրանց հայրերին, և պիտի ցրուէ նորանց գետի միւս կողմը, որովհետև իրանց համար կուռքի անտառներ շինեցին Տիրոջը բարկացնելով։ Եւ Իսրայէլին պիտի մատնէ, այն մեղքերի համար որ Յերոբովամն արաւ, և որ Իսրայէլին մեղանչել տուաւ։

Եւ Յերոբովամի կինը վեր կացաւ և գնաց հասաւ Թերսա. և նա տան շէմքովը մտաւ երեխան մեռաւ։ Եւ նորան թաղեցին և բոլոր Իսրայէլը սուգ արաւ նորա վերայ Տիրոջ խօսքին համեմատ, որ խօսեց իր ծառայ Աքիա մարգարէի ձեռովը։

Եւ Յերոբովամի գործերի մնացորդը, թէ պատերազմելը և թագաւորելը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակաց գրքումը։ Եւ Յե-

բոբովամի թագաւորութիւն ա-
րած օրերը քսանևերկու տարի էր.
և նա ննջեց իր հայրերի հետ, և
նորա որդի Նադաբը թագաւորեց
նորա տեղ։
21 Եւ Սողոմոնի որդին Ռոբովամը
թագաւորեց Յուդայի մէջ. Ռո-
բովամը քառասուն ու մէկ տա-
րեկան էր երբոր թագաւոր եղաւ
և տասնուեօթը տարի թագաւո-
րութիւն արաւ Երուսաղէմում՝
այն քաղաքումը, որ Տէրը ընտ-
րել էր Իսրայէլի բոլոր ցեղերից
իր անունը այնտեղ դնելու հա-
մար. և նորա մօր անունն էր
22 Նաամա՝ Ամմոնացի։ Եւ Յու-
դայեանք չարութիւն արին Տիրոջ
աչքին. և նորան աւելի բար-
կացրին իրանց արած մեղքերովը
23 քան թէ իրանց հայրերը։ Նորանք
էլ իրանց համար բարձրաւան-
դակներ և սրճաններ և անտառի
[illegible]եր շինեցին ամեն բարձր բլ-
լուրների վերայ և ամեն կանաչ
24 ծառի տակ։ Եւ իգացողներ էլ
կային այն երկրում, որ անում
էին այն ազգերի բոլոր գարշու-
թիւնների պէս, որոնց քշել էր
Տէրը Իսրայէլի որդիների առջևից։
25 Եւ Ռոբովամ թագաւորի հին-
գերորդ տարին եղաւ, որ Եգիպ-
տոսի Սիսակ թագաւորը եկաւ
26 Երուսաղէմի վերայ։ Եւ վեր ա-
ռաւ Տիրոջ տան գանձերը և թա-
գաւորի տան գանձերը և բոլորը
վեր առաւ, և վեր առաւ բոլոր
ոսկի վահանները որ Սողոմոնը շի-
27 նել էր։ Եւ Ռոբովամ թագա-
ւորը նորանց փոխարէն պղնձի
վահաններ շինեց և յանձնեց աւե-
տհանդակների գլխաւորների ձեռ-
քը, որ թագաւորի տան պահ-
28 պանութիւնը անում էին։ Եւ երբ
որ թագաւորը Տիրոջ տունն էր
գնում, աւետհանդակները նորանց
տանում և նո՛ւ էին բերում աւե-
տհանդակների խուցը։
29 Եւ Ռոբովամի գործքերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը ա՞խ
նորանք գրուած են Յուդայի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
30 Եւ միշտ պատերազմ կար Ռոբո-
31 վամի և Յերոբովամի մէջ։ Եւ

Ռոբովամը ննջեց իր հայրերի հետ
և թաղուեցաւ իր հայրերի հետ
Դաւթի քաղաքումը, և նորա
մօր անունն էր Նաամա Ամմոնա-
ցի. և նորա *Աբիամ որդին թա-
գաւորեց նորա տեղ։

ԳԼ. ԺԵ

Եւ Նաբատեան Յերոբովամի թա- 1
գաւորութեան տասն և ութերորդ
տարին Աբիամը թագաւորեց Յու-
դայի վերայ։ Երեք տարի թագա- 2
ւորութիւն արաւ Երուսաղէմու-
մը, և նորա մօր անունն էր Մա-
աքա՝ դուստր Աբիսողոմի։ Եւ 3
նա գնաց իր հօր բոլոր մեղքե-
րումը, որ արել էր իրանից ա-
ռաջ, և նորա սիրտը ուղիղ չէր
իր Տէր Աստուծոյ առջևը ինչպէս
իր հօր Դաւթի սիրտը։ Վասն 4
դի Դաւթի համար նորա Տէր
Աստուածն իրան մէկ ճրագ էր
տուել Երուսաղէմումը, որ նո-
րա որդուն յաստատէ իրանից
յետոյ և յաստատ պահէ Երու-
սաղէմումը։ Որովհետև Դաւիթն 5
ուղղութիւն արաւ Տիրոջ առջևը
և չխոտորեց այն ամենից նորա ի-
րան պատուիրածից իր կենաց
բոլոր օրերումը բացի Ուբիայի Հետացի
Ուրիայի բանումը։ Եւ պատե- 6
րազմ կար Ռոբովամի և Յերոբո-
վամի մէջ նորա կենաց բոլոր օ-
րերումը։

Եւ Աբիամի գործերի մնացորդը 7
և նորա բոլոր արածը, ա՞խ նո-
րանք գրուած են Յուդայի թա-
գաւորների յիշատակաց գրքումը.
և պատերազմ կար Աբիամի և
Յերոբովամի մէջ։ Եւ Աբիամը 8
ննջեց իր հայրերի հետ, և նորան
թաղեցին Դաւթի քաղաքումը.
և նորա որդին Ասան թագաւո-
րեց նորա տեղ։

Եւ Իսրայէլի Յերոբովամ թա- 9
գաւորի քսաներորդ տարին Ա-
գաւոր եղաւ Ասան Յուդայի վե-
րայ, և քառասուն ու մէկ տա- 10
րի թագաւորեց Երուսաղէմումը.
և նորա մօր անունն էր Մաաքա՝
դուստր Աբիսողոմի։ Եւ Ասան 11

*Աբիա

ուղղութիւն արաւ Տիրոջ աչքին
12 ինչպէս իր հայրը Դաւիթը։ Եւ
դուրս արաւ իգացողները յայն
երկրէ և հեռացրեց իր հայրերի
13 շինած ամեն կուռքերը։ Եւ իր
մայր Մաաքային էլ հեռացրեց
տիկնութիւնից, վասն զի նա ան-
տառի գարշութիւն էր շինել. և
Ասան բնաջինջ արաւ նորա գար-
շութիւնը և այրեց Կեդրան հե-
14 ղեղաւումը։ Բայց բարձրաւան-
դակները վեր չառնուեցան, սա-
կայն Ասայի սիրտը ուղիղ էր Տի-
15 րոջ հետ իր բոլոր օրերումը։ Եւ
իր հօր նուիրածները և իր նուի-
րածները՝ արծաթը, ոսկին և
կարասիքը բերաւ Տիրոջ տունը։
16 Եւ պատերազմ կար Ասայի և
Իսրայէլի Բաասա թագաւորի
17 մէջ նորանց բոլոր օրերը։ Եւ Ի-
սրայէլի Բաասա թագաւորը վեր
գնաց Յուդայի վերայ և շինեց
Ռաման, որ էլք և մուտք չտայ
18 Յուդայի Ասա թագաւորին։ Եւ
Ասան վեր առաւ Տիրոջ տան
գանձումը և թագաւորի տան
գանձումը ճնացած բոլոր արծա-
թը և ոսկին և տուաւ իր ծա-
ռաների ձեռքը և Ասա թագա-
ւորը ուղարկեց նորանց Դամաս-
կուսում բնակող Ասորոց թագա-
ւորին՝ Ենհինի որդի Տաբրեմոնի
19 որդի Բենհադադին ասելով. Դա-
շինք կայ իմ մէջ և քո մէջ, իմ
հօր մէջ և քո հօր մէջ. ահա
քեզ համար արծաթ ու ոսկի
ուղարկեցի ընծայ, քանզի քո
դաշինքը Իսրայէլի Բաասա թա-
գաւորի հետ, որ նա գնայ ին-
20 ձանից։ Եւ Բենհադադը լսեց Ասա
թագաւորին, և իր զօրքերի իշ-
խաններին ուղարկեց Իսրայէլի
քաղաքների վերայ և զարկեց Ի-
յօնը, Դանը, Աբել-բեթ-մաա-
քան և բոլոր Քենեռէթը ու բո-
21 լոր Նեփթաղիմի երկիրը։ Եւ երբ
որ Բաասան լսեց այս բանը, դա-
դարեց Ռաման շինելուց և բնա-
22 կեց Թերսայում։ Եւ Ասա թա-
գաւորը լուր տուաւ բոլոր Յու-
դայեցիներին առանց բացառու-
թեան, և նորանք վեր առին Ռա-
մայի քարերը և փայտերը, որ
շինել էր Բաասան, և Ասա թա-
գաւորը նորանցով շինեց Բենի-
ամինի Գաբան և Մասփան։
Եւ Ասայի բոլոր գործերի մը- 23
նացորդը և նորա բոլոր զօրու-
նը և նորա բոլոր արածը և նորա
շինած քաղաքները, ահա նորանք
գրուած են Յուդայի թագաւոր-
ների յիշատակաց գրքումը. մի-
այն թէ իր ծերութեան ժամա-
նակ ոտքերը ցաւում էին։ Եւ Ա- 24
սան ննջեց իր հայրերի հետ և
թաղուեցաւ իր հայրերի հետ իր
հօր Դաւթի քաղաքում. և նորա
Յովսափատ որդին թագաւորեց
նորա տեղ։
Եւ Յերոբոամի որդին Նադա- 25
բը թագաւոր եղաւ Իսրայէլի վե-
րայ Յուդայի թագաւոր Ասայի
երկրորդ տարումը. և Իսրայէլի
վերայ թագաւորեց երկու տարի։
Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչ- 26
քի առջևը և գնաց իր հօր ճա-
նապարհովը և նորա մեղքերովը,
որոնցով մեղանչել տուաւ Իս-
րայէլին։ Եւ նորա դէմ դաւա- 27
ճանութիւն արաւ Իսաքարայի Ա-
քիայի որդի Բաասան, և Բաա-
սան նորան զարկեց Փղշտացոց
Գաբաթոնում, երբոր Նադաբը
և բոլոր Իսրայէլը պաշարել էին
Գաբաթոն։ Եւ Բաասան մեռ- 28
ցրեց նորան Յուդայի Ասա թա-
գաւորի երրորդ տարումը, և
թագաւորեց նորա տեղ։ Եւ հէնց 29
որ թագաւոր եղաւ զարկեց Յե-
րոբոամի բոլոր տունը, բնաւ մի
հոգի չթողեց Յերոբոամի հա-
մար մինչև որ նորան բնաջինջ
արաւ Տիրոջ այն խօսքին համե-
մատ, որ իր ծառայ Սելովնացի
Աքիա մարգարէի ձեռովը խօսել
էր, Յերոբոամի արած և Իսրա- 30
յէլին մեղանչել տուած մեղքե-
րի համար նորա այն բարկու-
թեան համար, որով բարկացրել
էր Իսրայէլի Տէր Աստուծոյն։
Եւ Նադաբի գործերի մնացոր- 31
դը և նորա բոլոր արածը, ահա
նորանք գրուած են Իսրայէլի
թագաւորների յիշատակաց գըր-
քումը։ Եւ պատերազմ կար Ա- 32
սայի և Իսրայէլի Բաասա թա-

գաւառի միջ նորանց բոլոր օրերը։
33 Յուդայի Ասա թագաւորի երբորդ տարին Աքիայի որդին Բաասան թագաւոր եղաւ բոլոր Իսրայէլի վերայ Թերսայում, և թա-
34 գաւորեց քսանուչորս տարի. Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչքին և գնաց Յերոբովամի ճանապարհովը և նորա մեղքովը, որով մեղանչել տուաւ Իսրայէլին։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Անանիի որդի Յեհուին Բաասայի վերայով
2 ասելով. Որովհետև ես բարձրացրի քեզ փոշուց և քեզ իմ Իսրայէլ ժողովրդի վերայ իշխան դրի, բայց դու Յերոբովամի ճանապարհովը գնացիր և իմ Իսրայէլ ժողովրդին մեղանչել տուիր, նորանց մեղքերովն ինձ
3 բարկացնելու համար. Ահա ես պիտի աւերեմ Բաասայի ետևից և նորա տան ետևից և քո տունը պիտի շինեմ Նաբատեան Յերոբովամի տան պէս։
4 Քաղաքում մեռնողին շները պիտի ուտեն, և նորա դաշտում մեռնողին երկնքի թռչունները պիտի ուտեն։
5 Եւ Բաասայի գործերի ճոցորդը և նորա արածը և նորա զօրութիւնը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների յիշատակաց գրքումը։
6 Եւ Բաասան ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ Թերսայում, և նորա որդին Էլան թագաւոր եղաւ նորա
7 տեղ։ Նաև Անանիի որդի Յեհու մարգարէի ձեռովը եղաւ Տիրոջ խօսքը Բաասային և նորա տանը և այն բոլոր չարութեան համար, որ արաւ Տիրոջ աչքին նորան ձեռքերի գործովը բարկացնելու համար, որ Յերոբովամի տան նմանը դառնայ, և որովհետև նորան սպանել էր։
8 Յուդայի Ասա թագաւորի քսան ու վեց տարում թագաւորեց Բաասայի որդին Էլան Իսրայէլի վերայ Թերսայում՝ երկու
9 տարի։ Եւ նորա դէմ դաւաճանութիւն արաւ նորա ծառան Զամբին՝ կառքերի կէսի վերայ իշխանը, երբոր նա խմել տրբել էր Թերսայում՝ Արսայի տանը, որ Թերսայի տան վերակացուն էր։ Այն ժամանակ
10 եկաւ Զամբին և զարկեց նորան սպանեց Յուդայի Ասա թագաւորի քսան և եօթը տարում, և
11 թագաւոր եղաւ նորա տեղ։ Եւ երբոր թագաւոր եղաւ և իր աթոռի վերայ նստեց, իսկոյն ջարդեց Բաասայի բոլոր տունը և նորա համար որմի վերայ միզող չը թողեց՝ թէ նորա ազգականները թէ նորա բարեկամները։
12 Եւ Զամբին բնաջինջ արաւ Բաասայի բոլոր տունը Տիրոջ այն խօսքին համեմատ, որ խօսել էր Բաասային
13 Յեհու Մարգարէի ձեռով։ Բաասայի բոլոր մեղքերի և նորա որդի Էլայի մեղքերի համեմ, որ մեղանչեցին և մեղանչել տուին Իսրայէլին, որ Իսրայէլի Աստուծոյն բարկացնեին իրանց անօգուտ պաշտութիւններովը։
14 Եւ Էլայի գործերի ճոցորդը և նորա բոլոր արածը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների յիշատակաց գրքումը։
15 Յուդայի Ասա թագաւորի քսան ու եօթներորդ տարին Զամբին Թերսայում եօթն օր թագաւորեց, երբոր ժողովուրդը պաշարել էր Փղշտացոց Գեբաթոնը։
16 Եւ պաշարող ժողովուրդը լսեց որ ասում էին. Թէ Զամբին դաւաճանութիւն է արել և թագաւորին էլ սպանել. և բոլոր Իսրայէլը թագաւոր արաւ Ամրի զօրավարին Իսրայէլի վերայ այն
17 օրը բանակումը։ Եւ Ամրին վեր գնաց Գեբաթոնից և բոլոր Իսրայէլը նորա հետ, և պաշարեցին
18 Թերսան։ Եւ երբոր Զամբին տեսաւ որ քաղաքը առնուեցաւ, մտաւ թագաւորի տան սենեակը և իր վերայ կրակ տուաւ թագաւորի տունը և մեռաւ, իր արած
19 մեղքերի համար, որ չարութիւն էր արել Տիրոջ աչքին Յերոբովամի ճանապարհովը, և նորա Իսրայէլին մեղանչել տուած մեղքերովը գնալովը։

20 Եւ Զամրիի գործերի մնացորդը և նորա սրած գաւազանութիւնը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների ժամանակաց գրքումը։
21 Աին ժամանակ Իսրայէլի ժողովուրդը մասերի բաժանուեցաւ. ժողովրդի մի կէսը գնաց Գինաթի որդի Թամնիի ետևից նորան թագաւոր անելու, և միւս կէսը
22 Ամրիի ետևից։ Եւ Ամրիի ետևից գնացող ժողովուրդը աւելի զօրացաւ Գինաթի որդի Թամնիի ետևից գնացող ժողովրդից. և Թամնին մեռաւ և թագաւորից
23 Ամրին։ Յուդայի Ասա թագաւորի երեսունումէկ տարին թագաւոր եղաւ Ամրին Իսրայէլի վերայ՝ տասներկու տարի Թերսայում թագաւորից
24 վեց տարի։ Եւ նա առաւ Սամերոն լեռը Սամերից երկու տաղանդ արծաթով և շինեց լեռան վերայ, և այն իր շինած քաղաքի անունը Սամերոն լեռան տիրոջ Սամերի անունովը կոչեց։
25 Եւ Ամրին Տիրոջ աչքին չարութիւն գործեց, և իրանից առաջ եղողների ամենից աւելի
26 չար եղաւ։ Եւ գնաց Նաբատեան Յերոբովամի բոլոր ճանապարհներովը և նորա Իսրայէլին մեղանչել տուած մեղքերովը Իսրայէլի Տէր Աստուծոյն իրանց անօտիապաշտութիւններովը բարկացնելու համար։
27 Եւ Ամրիի սրած գործերի մնացորդը, և նորա սրած զօրութիւնը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների ժա-
28 մանակաց գրքումը։ Եւ Ամրին ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ Սամարիայում, և նորա որդին Աքաաբը թագաւորեց նորա տեղ։
29 Եւ Ամրիի որդին Աքաաբը թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ Յուդայի Ասա թագաւորի երեսունևթերորդ տարում. Եւ Ամրիի
30 որդի Աքաաբը չարութիւն արաւ Տիրոջ աչքին իրանից առաջ բոլոր եղածներից աւելի։
31 Եւ դա քիչ էր որ նա գնում էր Նաբատեան Յերոբովամի մեղքերով. Այլ նաև Յեզաբէլ անունով Սիդոնացոց Թագաւոր Եթբաալի աղջիկ Յեզաբէլին էլ իրան համար կին առաւ և գնաց ու պաշտեց Բահաղին և երկրպագութիւն արաւ նորան։ 32
Եւ Բահաղի համար մի սեղան շինեց իր Սամարիայում շինած Բահաղի տանը։ 33
Եւ Աքաաբը մի անտառի կուռք շինեց, և Աքաաբը շարունակեց ոչնչաւոր անել, որ իրանից առաջ եղած Իսրայէլի բոլոր թագաւորներից աւելի բարկացրեց Իսրայէլի Տէր Աստուծոյն.
Նորա օրերին Բեթէլացի Յիէլը 34
շինեց Երիքովը, իր Աբիրոն անդրանիկ որդովը նորա հիմը դրաւ և իր Սեգուբ կրտսեր որդովը կանգնեցրեց նորա դռները Տիրոջ խօսքին համեմատ, որ խօսեց Նաւեան Յեսուի ձեռովը։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Գաղաադի բնակիչներից Թեզբացի Եղիան ասաց Աքաաբին. Կենդանի է Իսրայէլի Տէր Աստուածը, որի առջև կանգնում եմ, որ այս տարիներին ցօղ և անձրև պիտի չլինի, բայց եթէ իմ բերանի խօսքովը։
2 Եւ Տիրոջ խօսքը եղաւ նորան
3 ասելով. Գնա այստեղից և դարձիր դէպի արևելք և թաք կաց Քերիթ հեղեղատի մօտ որ Յորդանանի դիմաց է։
4 Եւ այն հեղեղատից կ'խմես, և ես ագռաւներին հրամայել եմ որ քեզ կերակրեն այնտեղ։
5 Եւ նա գնաց և արաւ Տիրոջ խօսքին համեմատ, և գնաց ու բնակեց Քերիթ հեղեղատի մօտ որ Յորդանանի դիմացն է։
6 Եւ ագռաւները նորա համար հաց և միս էին բերում առաւօտը, և հաց ու միս իրիկունը, և խմում էր հեղեղատից։
7 Եւ եղաւ որ մի քանի ժամանակից յետոյ չորացաւ հեղեղատը, որովհետև երկրում անձրև չկար։
8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ նորան
9 ասելով. Վեր կաց գնա Սիդոնացոց Սարեփթան և այնտեղ նըս-

տիր. ահա ես այնտեղ մի որբևայրի կնոջ հրամայել եմ որ
10 քեզ կերակրէ։ Եւ նա վեր կացաւ գնաց Սարեփթա և հասաւ քաղաքի դուռը, և ահա այնտեղ մի որբևայրի կին փայտ էր ժողովում. և նա կանչեց նորան և
11 ասաց. Խնդրեմ ինձ համար մի քիչ ջուր բեր մի ամանում որ խմեմ։ Եւ երբոր նա գնաց բերելու, նորան կանչեց և ասաց.
12 Խնդրեմ ինձ համար մի պատառ Եւ հաց բեր ձեռիդ։ Եւ նա ասաց. Կենդանի է քո Տէր Աստուածը, որ ես մի նկանակ չունիմ, բացի մի փուռ ալիւր սափորումը և մի քիչ իւղ կուժումը, և ահա մի երկու փայտ եմ ժողովում, որ գնամ և պատրաստեմ այն ինձ համար և իմ
13 որդու համար, որ այն ուտենք և մեռնենք։ Եւ Եղիան ասաց նորան. Մի վախենար, գնա արա քո խօսքին պէս, միայն թէ առաջ ինձ համար մի փոքր շօթ շինիր նորանից և բեր ինձ համար, և յետոյ քեզ և քո որդու հա-
14 մար կ'շինես։ Վասն զի այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. Սափորումը ալիւրը պիտի վերջանայ, և կուժիցը իւղը չը պակասէ, մինչև այն օրը որ Տէրը
15 անձրև տայ երկրի երեսին։ Եւ նա գնաց և արաւ Եղիայի խօսքին պէս, և նա և ինքը և իր տունը կերան բաւական ժամա-
16 նակ։ Եւ սափորիցն ալիւրը չէր վերջանում, և կուժիցը իւղը չէր պակասում Տէրոջ այն խօսքին պէս, որ ասաց Եղիայի ձեռովը։
17 Եւ այս բաներից յետոյ եղաւ որ այն տան տիկինը հիւանդացաւ, և նորա հիւանդութիւնը շատ սաստիկ էր մինչև որ նորանում շունչ չէր մնացել։
18 Եւ ինքը ասաց Եղիային. Դու ի՞նչ բան ունիս ինձ հետ. ով մարդ Աստուծոյ, ինձ մօտ եկար որ իմ մեղքը յիշեցնես և
19 իմ որդին մեռցնես։ Եւ նա ասաց կնոջը. Ինձ տուր տղադ. և առաւ նորան նորա գրկիցը և վեր տարաւ նորան վերնատունը ուր

որ ինքը բնակում էր, և պառկեցրեց նորան իր անկողնի վերայ։
20 Եւ աղաղակեց Տէրոջը և ասաց. Ով իմ Տէր Աստուածը, միթէ այս որբևայրին էլ, որի մօտ ես պանդուխտ եմ, չարիք կանես նորա որդին մեռցնելով։
21 Եւ երեք անգամ իր երկայնութեամբը ընկաւ երեխայի վերայ, և կանչեց Տիրոջը և ասաց. Ով Տէր իմ Աստուած, աղաչում եմ այս երեխայի շունչը նորա մէջը դարձաւ։
22 Եւ Տէրը լսեց Եղիայի ձայնին, և երեխայի շունչը նորա մէջը դարձաւ և նա կենդանացաւ։
23 Եւ Եղիան առաւ երեխային և վայր իջեցրեց վերնատանիցը տուն, և նորան տուաւ իր մօրը, և Եղիան ասաց. Տես որդիդ կենդանի է։
24 Եւ կինը ասաց Եղիային. Ահա հիմա գիտեմ որ դու Աստուծոյ մարդ ես, և բերանիդ միջի Աստուծոյ խօսքը ճշմարիտ է։

ԳԼ. ԺԸ

1 Եւ շատ ժամանակ անցնելուց յետոյ Տիրոջ խօսքը եղաւ Եղիային երրորդ տարին ասելով. Գնա երեւացիր Աքաաբին, և ես անձրև պիտի տամ երկրի երեսին։
2 Եւ գնաց Եղիան Աքաաբին երեւալու համար. և սովը սաստիկ էր Սամարիայում։
3 Եւ Աքաաբը կանչեց էր տան վերակացու Աբդիային, և Աբդիան Տէրիցը շատ երկիւղած էր,
4 Եւ երբոր Յեզաբէլը կոտորում էր Տիրոջ մարգարէներին, այն ժամանակ Աբդիան հարիւր մարգարէ առաւ և նորանցէց յիսուն յիսուն մարդ առաւ քարայրներու վերայ թաքցրեց և նորանց
5 կերակրեց հացով ու ջրով։ Եւ Աքաաբն ասաց Աբդիային. Գնա այս երկրի բոլոր ջրի աղբիւրների և բոլոր հեղեղատների մօտ, գուցէ խոտ գտնենք և մեր ձիանքն ու ջորիքն ապրեցնենք և չզրկուինք անասուններից։
6 Եւ երկիրը բաժանեցին իրանց մէջ, նորա մէջ շրջելու համար. Աքաաբն մէկ ճանապարհով գնաց առան-

ձին, և Աբդիան մէկ ճանապարհով գնաց առանձին։
7 Եւ երբոր Աբդիան ճանապարհին էր, ահա հանդիպեց Նոյեան Եղիան, և նա ճանչեց Նոյեան և բնկաւ իր երեսի վերայ և ասաց. Սա դո՞ւ ես, տէր իմ Եղիա։ 8 Եւ նա ասաց. Ես եմ. գնա ասիր քո տիրոջը. Ե՛ Ահա Եղիան։ 9 Եւ նա ասաց. Ես ի՞նչ եմ մեղանչել, որ դու ծառայիդ Աքաաբի ձեռքն ես տալիս ինձ 10 մեռցնելու համար։ Կենդանի է Եհովան քո Աստուածը, որ չկայ մի ազգ և թագաւորութիւն ուր որ իմ տէրը դեռ ուղարկած չը լինի քեզ որոնելու, բայց ասում են՝ Չկայ. և այն ազգին և այն թագաւորութեանը երդում է տուել թէ քեզ չեն գը- 11 տել։ Եւ հիմա դու ասում ես. Գնա ասիր քո տիրոջը. Թէ՛ Ահա 12 Եղիան։ Եւ կ'լինի որ ես քո մօտից գնամ և Տէրոջ Հոգին քեզ վեր առնէ տանէ մի տեղ, որ ես չեմ գիտում. և ես գնամ Աքաաբին իմացնեմ, և նա քեզ չը գտնէ, այն ժամանակ նա ինձ կ'սպանէ. բայց ծառադ Տէրից երկիւղած եմ իմ մանկութիւ- 13 նից։ Մի՞թէ չեն իմացրել իմ տիրոջը այն որ արի Յեզաբէլը Տէրոջ մարգարէներին սպանելիս, որ Թաքցրի Տէրոջ մարգարէներից հարիւր մարդ՝ հիսուն հիսուն քարայրներում և նրանց 14 կերակրեցի հացով ու ջրով։ Եւ հիմա դու ինձ ասում ես. Գնա ասիր քո տիրոջը, Թէ՛ Ահա Եղիան, որ ինձ սպանէ։ 15 Եւ Եղիան ասաց. Կենդանի է Սաբաւովթ Եհովան, որի առջևը կանգնած եմ, որ այսօր պիտի երևամ Նոյեանին։
16 Եւ Աբդիան գնաց ու Աքաաբին դիմաւորեց և նրան պատմեց, և Աքաաբը գնաց Եղիային 17 դիմաւորելու։ Եւ հէնց որ Աքաաբը Եղիային տեսաւ, իսկոյն ասաց Աքաաբը նրան. Սա դո՞ւ ես, ով Իսրայէլի խանգարողը։ 18 Եւ նա ասաց. Ես չեմ խանգարել Իսրայէլին, այլ դու և քո հօր տունը, որ Թողելով Տիրոջ պատուէրները գնում ես Բահաղների ետևից։ Եւ հիմա ղրկիր ու 19 ժողովիր բոլոր Իսրայէլին ինձ մօտ Կարմէղոս լեռան վերայ. և Բահաղի չորս հարիւր մարգարէներին, և Աստարովթի չորս հարիւր մարգարէներին, որ ուտում են Յեզաբէլի սեղանից։ Եւ Աքաաբը ղրկեց Իսրայէլի 20 բոլոր որդիներին և հաւաքեց բոլոր մարգարէներին Կարմէղոս լեռան վերայ։
Եւ Եղիան մօտեցաւ բոլոր 21 ժողովուրդին և ասաց. Մինչև ե՞րբ պիտի դուք կաղաք երկու կողմի վերայ. եթէ Եհովան է Աստուածը, նորա ետևից գնացէք, և եթէ Բահաղն է, նորա ետևից գնացէք. և ժողովուրդը նորան մի բան պատասխան չը տուաւ։ Եւ Եղիան ասաց ժո- 22 ղովրդին. Մէնակ ես եմ մնացել Եհովայի մարգարէ. իսկ Բահաղի մարգարէները չորս հարիւր հիսուն մարդ են։ Արդ թող մեզ երկու 23 զուարակ տան. և նորանք իրենց համար ընտրեն մէկ զուարակը, նորան կտրեն և դնեն փայտերի վերայ, բայց կրակ չդնեն. և ես էլ առնեմ միւս զուարակը և դնեմ փայտերի վերայ, և կրակ չդնեմ։ Յետոյ դուք կանչեցէք ձեր 24 աստուծոյ անունը, իսկ ես կ'կանչեմ Եհովայի անունը. և կ'լինի՝ այն աստուածը, որ կրակով պատասխան կտայ, նա է Աստուածը. և բոլոր ժողովուրդը պատասխանեց՝ և ասացին. Լաւ խօսք է։
Եւ Եղիան ասաց Բահաղի մար- 25 գարէներին. Ընտրեցէք ձեզ համար մէկ զուարակը, և սկիզբը դուք արէք, վասն զի դուք շատ էք, և կանչեցէք ձեր աստուծոյ անունը, բայց կրակ մի դնէք։ Եւ նորանք առին իրանց տրուած 26 զուարակը և արին և կանչեցին Բահաղի անունը առաւօտից մինչև կէս օր ասելով. Ով Բահաղ, պատասխան տուր մեզ, բայց ոչ ձայն կար, ոչ պատասխանող. և աստուամբ էին իրանց շինած սե-

27 զանի մօտ։ Եւ կէս օր էր դա-
ռել, և եղիան նորանց ծաղր ա-
նելով ասաց. Բարձր ձայնով կան-
չեցէք, վասն զի նա աստուած է,
գուցէ խար մտածութեան մէջ է,
կամ զբաղուած է, և կամ ճա-
նապարհորդութիւն է անում,
գուցէ նա քնած է և զարթնու-
28 նայ։ Եւ նորանք բարձր ձայնով
կանչեցին, և իրանց օրէնքի պէս,
կտրուում էին իրանց մարմիննե-
րը սուրերով և գեղարդներով,
մինչև որ արիւնը թափւում էր
29 նորանց վերայից։ Եւ երբոր կէս
օրն անցաւ, նորանք դեռ եռա-
ցած խօսում էին մինչև երեկո-
ղոհի ժամանակը, բայց ոչ ձայն
կար, ոչ պատասխան տուող և
և ոչ լսող։
30 Աւն ժամանակ եղիան ասաց
բոլոր ժողովրդին. Ինձ մօտ եկէք.
և բոլոր ժողովուրդը եկաւ նորա
մօտ, և նա նորոգեց Տիրոջ սե-
31 ղանը, որ քանդուած էր։ Եւ
Եղիան վեր առաւ տասն երկու
քարեր Յակոբի որդիանց թուոյն
չափ, որին եղաւ Տիրոջ խօսքը
ասելով. Ըե Իսրայէլ լինի քո ա-
32 նունը։ Եւ այն քարերից մի սե-
ղան շինեց Տիրոջ անուամբ, և
սեղանի շուրջը մէկ փոս շինեց,
որ երկու գրիւ սերմ կ'առնէր։
33 Եւ փայտերը շարեց և կտորեց
զառարակը և դրաւ փայտերի վե-
34 րայ. Եւ ասաց. Չորս սափոր ջուր
լցրէք և ածեցէք ողջակէզի և փայ-
տերի վերայ. և ասաց. Կրկին ա-
րէք. և կրկին արին. և ասաց.
Երրորդ անգամ արէք. և երրորդ
35 անգամ արին։ Եւ ջրերը գնում
էին սեղանի շուրջովը, և փոսն էլ
լցուեցաւ ջրով։
36 Եւ երեկոյեան զոհի ժամանա-
կըն էր, երբոր Եղիա մարգարէն
մօտեցաւ և ասաց. Ով Եհո-
վայ Աստուած Աբրահամու, Ի-
սահակայ և Իսրայէլի. թող
այսօր իմացուի, որ դու ես Աս-
տուած Իսրայէլի մէջ, և ես քո
ծառան եմ, և թէ քո խօսքովն
37 եմ արել այս բոլոր բաները։ Պա-
տասխան տուր ինձ, ով Տէր,
պատասխան տուր ինձ որ այս ժո-
ղովուրդն իմանայ, որ դու Տէրդ
ես Աստուած. և դու եաև կ'դար-
ձնես նորանց սրտերը։ Եւ Եհո- 38
վայի կրակը վայր իջաւ և կերաւ
ողջակէզը և փայտերը և քարերը
և հողը, և փոսի միջի ջուրն էլ
լափեց։ Եւ բոլոր ժողովուրդը 39
տեսաւ և վայր ընկան իրանց ե-
րեսների վերայ և ասացին. Եհո-
վան է Աստուած, Եհովան է Աս-
տուած։
Եւ եղիան ասաց նորանց. Բռա- 40
նեցէք Բահաղի մարգարէներին, ո՛ր
նորանցից մէկ մարդ չպրծնի, և
նորանց բռնեցին, և եղիան վայր
իջեցրեց նորանց Կիսոն հեղեղատի
մօտ, և նորանց սպանեց այն տեղ։
Եւ եղիան ասաց Աքաաբին. 41
Վե՛ր գնա կեր ու խմիր. վասն զի
աստիկ ձայն կայ անձրևի։ Եւ 42
Աքաաբը վեր գնաց ուտելու և
խմելու. բայց եղիան վեր ելաւ
Կարմելոս լե՛ռն գլուխը, և ծռե-
ուեցաւ դէպ՛ գետինը և երեսը
դրաւ իր ծնկերի մէջ տեղը, Եւ 43
ասաց իր պատանուն. Վե՛ր գնա
մտիկ արա դէպի ծովակողմը. և
նա վեր գնաց և մտիկ արաւ և
ասաց. Մի բան չկայ. և եղիա
ասաց. Դարձեալ գնա, եօթը ան-
գամ։ Եւ եօթներորդ անգամին 44
ասաց. Ահա մի փոքր ամպ՝ մարդ-
ու ձեռի չափ՝ բարձրանում է
ծովիցը. և նա ասաց. Վե՛ր գնա
ասիր Աքաաբին. Կ՛ծիր և իջիր որ
անձրևը քեզ չրռնէ։ Եւ մինչև 45
այս կողմը այն կողմը դո՛ռնալը եր-
կինք մթնեց ամպերով և հողմով.
և մեծ անձրև եղաւ. և Աքաաբ
հեծաւ և գնաց Յեզրայէլ։ Եւ 46
Տիրոջ ձեռքը եղիայի հետ էր.
և իր մէջքը պնդեց և վազեց Աք-
աաբի առջևից մինչև Յեզրայէլ։

ԳԼ. ԺԹ

Եւ Աքաաբը պատմեց Յեզաբէ- 1
լին բոլոր ինչ որ եղիան արել
էր, և բոլորը որ ամեն մարգա-
րէներին սրով սպանել էր։ Եւ 2
Յեզաբէլը պատգամաւոր ուղար-
կեց եղիայի մօտ ասելով. Աստ-
ուածները այսպէս անեն և սորա-
նից էլ աւելի անեն, եթէ որ է-

գուց այս ժամնուակը քո անձը նորանցից մէկի անձի տեղ չդնեմ։
3 Եւ յոբ բ՚նը տեսանելով վեր կացաւ գնաց իր անձը ւ՚ղ՚բելը՚ համար, և հասաւ Յուդայի Բեերսաբէէն. և իր պատանուն թողեց
4 այնտեղ։ Բայց ինքը մէկ օրուայ ճանապարհ գնաց անապատումը և եկաւ մի Գիհիի տակ նստեց և սրտանց խնդրեց մեռնել և ասաց. Արդէն բաւական է, ով Տէր, իմ հոգին առ, վասն զի
5 ես իմ հայրերիցը լաւ չեմ։ Եւ պառկեց և քնեց մի Գիհիի տակ. և ահա մէկ հրեշտակ նորան դպաւ և ասաց նորան. Վեր կաց
6 կեր։ Եւ եղէն մնիկ տուաւ և ահա նորա գլխի կողմին մի քարի վերայ թխած նկանակ և մի կուժ ջուր կար. և նա կերաւ և խմեց,
7 և դարձեալ քնեց։ Եւ Տիրոջ հրեշտակը դարձեալ եկաւ և նորան դպաւ և ասաց. Վեր կաց կեր, որովհետև ճանապարհդ շատ
8 է քեզ համար։ Եւ նա վեր կացաւ և կերաւ ու խմեց և այն կերակուրի զօրութիւնովը գնաց քառասուն օր և քառասուն գիշեր մինչև Աստուծոյ Քորեբ լեառը։
9 Եւ այնտեղ մտաւ մի քարայրի մէջ և այնտեղ օթևանեց, և ահա Տիրոջ խօսքը եղաւ իրան և նորան ասաց. Ի՞նչ ունիս այս
10 տեղ, Եղիա։ Եւ նա ասաց. Ես մեծ նախանձաւորութիւն ունեցայ Զօրաց Տէր Աստուծոյ համար, որ Իսրայէլի որդիքը թողել են քո ուխտը, քանդել են քո սեղանները, և քո մարգարէները սպանել են սրով. և մենակ ես եմ մնացել, և իմ հոգին են որոնում են սպանելու։ Եւ
11 նա ասաց. Դուրս եկ և կանգնիր լեռան վերայ Տիրոջ առջև, և ահա Տէրը անց կ՚կենայ, և մի մեծ և զօրաւոր հողմ կ՚պատռէ լեռները և կ՚կտրատէ ապառաժները Տիրոջ առջև. բայց Տէրը այն հողմի մէջ չէ։ Եւ հողմից յետոյ կ՚ՙՔէ երկրաշարժ, բայց
12 Տէրը երկրաշարժի մէջ չէ։ Եւ երկրաշարժից յետոյ կ՚ՙՔէ կրակ, բայց Տէրը կրակի մէջ չէ. և կըրակից յետոյ մի մեղմ ու բարակ ձայն կ՚լինի։ Եւ եղաւ երբոր Ե- 13
ղիան լսեց այս բաները, իր երեսը ծածկեց իր վերարկուովը և դուրս եկաւ ու կանգնեց քարայրի դրանը, և ահա մի ձայն եղաւ նորան և ասաց. Ա՚յստեղ ի՞նչ ունիս, Եղիա։ Եւ նա ասաց. 14
Մեծ նախանձաւորութիւն ունեցայ Զօրաց Տէր Աստուծոյ համար, որ Իսրայէլի որդիքը թողել են քո ուխտը, քանդել են քո սեղանները, և քո մարգարէները սրով սպանել են, և մենակ ես եմ մնացել, և իմ հոգին էլ որոնում են սպանելու։ Եւ Տէրն 15
ասաց նորան. Գնա քո ճանապարհովը անապատով Դամասկոս, և երբոր գաս՝ Ազա՚յէլին Ասորոց վերայ թագաւոր օծիր։ Եւ Նամեսսէի որդի Յեուին 16
էլ թագաւոր օծիր Իսրայէլի վերայ, և Աբէլմեուլացի Սափատի որդի Եղիսէին էլ մարգարէ օծիր քո տեղը։ Եւ կ՚լինի որ Ազայէլի 17
սուրից պատառոդին Յեուն կը մեռցնէ, և Յեուի սուրից պատառոդին Եղիսէն կ՚մեռցնէ։ Եւ ինձ 18
համար թողել եմ Իսրայէլի մէջ եօթը հազար հոգի բոլորն էլ այնպիսի մարդիկ որ ծունկ չծռեցին Բահաղին և բոլորն էլ բերանով նորան չհամբուրեցին։

Եւ այն տեղից գնաց և գտաւ 19
Սափատի որդի Եղիսէին, և նա վար էր անում՝ իր առջևը տասն երկու լուծ եզ, և ինքը երկուտասաներորդի հետ էր. և Եղիան անցաւ նորա մօտ և իր վերարկուն գցեց նորա վերայ։ Եւ նա թողեց 20
եզները և վազեց Եղիայի ետևից և ասաց. Թող համբուրեմ հօրս և մօրս և յետոյ քեզ հետևեմ. և նա ասաց նորան. Գնա՝ ետ դարձիր. վասն զի ես քեզ ինչ արի։ Եւ նա ետ դարձաւ 21
նորա ետևից և մի լուծ եզն առաւ և նորան զոհեց, և եզների գործիքներովը եփեց նորանց միսը, և տուաւ ժողովրդին և նորանք կերան այն. և վեր կացաւ գնաց Եղիայի ետևից, և ծառայում էր նորան։

ԳԼ. Ի

1 Եւ Ասորոց թագաւորը բենադադ ժողովեց իր բոլոր զօրքերը, և երեսուն երկու թագաւոր իրան հետ, ձիերով և կառքերով, և վեր գնաց ու պաշարեց Սամարիան և պատերազմ արաւ նորա հետ։
2 Եւ պատգամաւորներ ուղարկեց քաղաքը Իսրայէլի թագաւոր Ա-
3 քաաբի մօտ, Եւ ասաց նորան. Այսպէս է ասում Բենադադ՝ քո արծաթը և քո ոսկին իմն է, և քո կանայքը և քո գեղեցիկ
4 որդիները իմն են։ Եւ Իսրայէլի թագաւորը պատասխանեց և ասաց. Ինչ ասածի պէս լինի, ով իմ տէր թագաւոր, ես և իմ բոլոր ունեցածը քոնն է։
5 Եւ պատգամաւորները եւս դարձան և ասացին. Այսպէս է ասում Բենադադն ասելով. Թէ ես քեզ մօտ մարդ ուղարկեցի և ասացի՝ քո արծաթը և քո ոսկին, քո կանայքը և քո որդիները ինձ տուր.
6 Բայց եղուց իմ ծառաներին քեզ մօտ կ՚ուղարկեմ, որ նորանք յուզեն քո տունը և քո ծառաների տները, և ինչ որ քո աչքիդ հաճելի բան լինի, նորանք պիտի իրանց ձեռքն առնեն։
7 Եւ Իսրայէլի թագաւորը կանչեց երկրի բոլոր ծերերին և ասաց. Խնդրեմ իմացէք և տեսէք, որ նա ահա չարութիւն է ուզում, վասն զի նա մարդ է ուղարկել ինձ մօտ իմ կանանց և որդկանց և իմ արծաթի ու իմ ոսկու համար, և
8 ես նորան չմերժեցի։ Եւ բոլոր ծերերը և բոլոր ժողովուրդը ասացին նորան. Մի լսիր և ձայնիդ
9 մի առնիր։ Եւ նա ասաց Բենադադի պատգամաւորներին. Ասացէք իմ տէր թագաւորին ինչի համար որ ես էիր ուղարկել ծառայիդ մօտ առաջին անգամ, այն կանեմ, բայց այս բանը չեմ կարող անել. և պատգամաւորները գնացին և պատասխանը եւս տարին։
10 Եւ Բենադադը նորա մօտ ես ուղարկեց և ասաց. Աստուածները ինձ այսպէս անեն, և սորանից աւելի անեն, եթէ Սամարիայի հողը բաւականանայ իմ ետևից եկող բոլոր զօրքերի ափերին։ Եւ Իսրայէլի թագաւորը 11
պատասխանեց և ասաց. Ասացէք. թող չպարծենայ գօտին կապողը իրեն լուծողը։ Եւ եղաւ հէնց որ 12
լսեց այս խօսքը, երբոր ինքը և թագաւորները խմում էին վրաններում, հէնց ասաց իր ծառաներին. Շարուեցէք. և նորանք շարուեցան քաղաքի դէմ։
Եւ ահա մէկ մարգարէ մօտե- 13
ցաւ Իսրայէլի Աքաաբ թագաւորին և ասաց. Այսպէս է ասում Տէրը. Տեսա՞ր բոլոր այս մեծ ամբոխը. ահա եսնորան քո ձեռքն եմ յանձնելու այսօր, որ տեղնաս թէ ես եմ Տէրը։ Եւ Ա- 14
քաաբն ասաց. Որի՞ ձեռքով. և նա ասաց. Գաւառաց իշխանների պատանիների ձեռքով. և ասաց. Ո՞վ պիտի սկսէ պատերազմը. նա էլ ասաց. Դու։ Եւ հա- 15
մարեց գաւառաց իշխանների պատանիներին, և էին երկու հարիւր երեսուն երկու, և նորանցից յետոյ համարեց ժողովուրդը բոլոր Իսրայէլի որդիներին՝ եօթը հազար։ Եւ նորանք դուրս 16
եկան կէս օրին. բայց Բենադադը խմած արբած էր վրաններումը ինքը և իրան օգնող երեսուն երկու թագաւորները։ Եւ գաւա- 17
ռաց իշխանների պատանիները առաջ դուրս եկան. և Բենադադը մարդ ուղարկեց, և նորան իմացրին ասելով. Սամարիայից մարդիկ են դուրս գալիս։ Նա էլ 18
ասաց. Եթէ խաղաղութեան համար են դուրս եկել, նորանց ողջ բռնեցէք. և եթէ պատերազմի համար են դուրս եկել, էլ ողջ բռնեցէք նորանց։ Եւ սորանք դուրս 19
եկան քաղաքիցը՝ գաւառաց իշխանների պատանիները և այն զօրքը որ նորանց ետևին էր։ Եւ ա- 20
մեն մարդ զարկեց (*) իր դիմացինին. և Ասորիները փախան, և Իսրայէլը հալածեց նորանց. և Ասորոց թագաւորը Բենադադ պըր-

---

* Իր մարդուն

ծառ ձիան վերայ և ձիաւորնե-
21 րով։ Եւ Իսրայէլի թագաւորը
դուրս եկաւ ու զարկաց ձին էլ
կառքերն էլ. և Ասորց մէջ մեծ
կոտորած արաւ։
22 Եւ մարգարէն մօտեցաւ Իսրա-
յէլի թագաւորին և ասաց նո-
րան. Գնա ուժովացիր, և իմա-
ցիր և տես թէ ինչ պիտի անես,
վասն զի եկող տարի Ասորց թա-
գաւորը վեր է դալու քեզ վերայ։
23 Եւ Ասորց թագաւորի ծա-
ռաներն ասացին նորան. Նորանց
աստուածները լեռների աստուած-
ներ են, նորա համար մեզ յաղ-
թեցին. բայց եթէ նորանց հետ
պատերազմինք դաշտի մէջ, ան-
շուշտ մենք նորանց կ'յաղթենք։
24 Եւ այս բանն արա, թագաւոր-
ներին ամեն մէկին հեռացրու իր
տեղիցը, և նախարարներ դիր նո-
25 րանց տեղ։ Եւ զօրք *ժողովիր
քեզ համար որքան որ քեզանից
կորաւ, և ձիերի չափ ձիեր և
և կառքերի չափ կառքեր, և մենք
պատերազմինք նորանց հետ դաշ-
տումը, և մենք անշուշտ կը յաղ-
թենք նորանց. և նա լսեց նորանց
26 ձայնին և այնպէս արաւ։ Եւ ե-
ղաւ որ եկող տարին Բենադադը
Ասորիներին հանդէս արաւ և վեր
գնաց Ափեկ Իսրայէլի հետ պա-
27 տերազմելու։ Եւ Իսրայէլի որդի-
քն էլ հանդէս արին, և պա-
շար առին ու գնացին նորանց
առջևը. և Իսրայէլի որդիքը բա-
նակ կողմացին նորանց դիմացը
այծերի երկու երամակների պէս.
բայց Ասորիները լցրել էին երկիրը։
28 Եւ Աստուծոյ մարդը մօտեցաւ
և ասաց Իսրայէլի թագաւորին.
Թէ Այսպէս է ասում Տէրը. ո-
րովհետև Ասորիք ասում են. Թէ
Եհովան լեռների Աստուած է և
ոչ թէ հովիտների Աստուած է
նա. վասն որոյ այս մեծ ամբոխը
քո ձեռքն եմ մատնելու, որ դուք
գիտենաք, թէ Եհովան ես եմ։
29 Եւ երեք դէմ բանակ տուաք
կացան եօթն օր. և եօթներորդ
օրը պատերազմ եղաւ. և Իսրա-

յէլի որդիքը ջարդեցին Ասորց
հարիւր հազար հետևակ զօրք մէկ
օրուան մէջ։ Եւ ճեպընդները 30
փախան Ափեկ քաղաքը. և պա-
րիսպը ընկաւ ճնացած քսանու-
եօթը հազար մարդկանց վերայ.
և Բենադադը փախաւ և մտաւ
քաղաքումը մի տան խոր սեն-
եակը։
Եւ նորա ծառաներն ասացին 31
նրան. Ահա մենք լսել ենք, որ
Իսրայէլի տան թագաւորները ո-
զորմած թագաւորներ են. թող
մեր մէջքերին քուրձեր և մեր
գլխներին չուաններ դնենք, և գը-
նանք դուրս Իսրայէլի թագաւորի
մօտ. գուցէ ողջ թողէ քո անձը։
Եւ իրանց մէջքերին քուրձեր և 32
իրանց գլխներին չուաններ կապե-
ցին և գնացին Իսրայէլի թագա-
ւորի մօտ և ասացին. Ծառադ
Բենադադն ասում է. Թող իմ
անձը ապրէ։ Եւ նա ասաց. Մի՞-
թէ նա դեռ ողջ է. է նա իմ եղ-
բայրն է։ Եւ մարդիկը ամ 33
յաջողութիւն համարեցին, և շը-
տապելով առեղկացան թէ նորա-
նի՞ց է արդեօք, և ասացին. Ա-
քո եղբայրը Բենադադ. և նա ա-
ասաց. Գնացէք նորան բերէք։ Եւ
Բենադադը դուրս եկաւ նորա մօտ,
և նա նորան վեր բարձրացրեց
կառքի մէջը։ Եւ ասաց նորան. 34
Ահն քաղաքները որոնք իմ հայրն
առաւ քո հօրից ես եա կ'դար-
ձնեմ. և դու քեզ համար հրա-
պարակներ ունեցիր Դամասկո-
ւում ինչպէս իմ հայրն ունէր
Սամարիայում։ Իսկ ես, ասաց Ա-
հաբը, դաշինքով կ'արձակեմ
քեզ։ Եւ նա դաշինք գրաւ նորա
հետ, և նա էլ արձակեց նորան։
Եւ մարգարէների որդիներից 35
մէկ մարդ ասաց Տիրոջ խօսքով
իր ընկերին. Խնդրեմ՝ ինձ զար-
կիր, բայց այն մարդը չուզեց նո-
րան զարկել։ Նա էլ ասաց նո- 36
րան. Որովհետև դու չլսեցիր Տի-
րոջ խօսքին, ահա ինձանից գը-
նալես առիւծը պիտի քեզ զար-
կէ. և նա գնաց նորա կշտիցը.
բայց մի առիւծ գտաւ նորան և
զարկեց նորան։ Եւ մէկ ուրիշ 37

*Հաւաքիր

մարդ գտաւ և ասաց նորան. Խնդրեմ՝ ինձ զարկիր. և այն մարդը զարկեց նորան ատամիկ և
38 վիրաւորեց: Եւ մարգարէն գնաց և կանգնեց թագաւորի ճանապարհին և աչքերին վերայ մի ծածկոց դնելով իրան ծածկեց:
39 Եւ թագաւորը անց կենալիս՝ նա կանչեց թագաւորին և ասաց. Ծառադ գնացել էր պատերազմի մէջը. և ահա մի եա քաշուող մարդ ինձ մօտ մի մարդ բերաւ և ասաց. Պահպանիր այս մարդը եթէ նա կորչելու լինի, քո անձը պիտի լինի նորա անձի տեղ, կամ մի տաղանդ արծաթ պիտի վճարեա:
40 Եւ երբոր ծառադ այսինչ և այնինչ բանը անում էի, և նա չկար: Եւ Իսրայէլի թագաւորն ասաց նորան. Քո դատաստանն էլ այդպէս. դու ինքդ
41 վճռեցիր: Եւ նա շուտով հեռացրեց ծածկոցը աչքերի վերայից. և Իսրայէլի թագաւորն ճանաչեց նորան որ նա մարգարէներիցն էր:
42 Եւ նա ասաց նորան. Այսպէս է ասում Տէրը. որովհետև դու իմ նզոված մարդուն արձակեցիր ձեռքից, ուրեմն քո անձը պիտի լինի նորա անձի տեղ, և քո ժողովուրդը նորա
43 ժողովրդի տեղ: Եւ Իսրայէլի թագաւորը գնաց իր տունը տխուր և բարկացած, և եկաւ Սամարիա:

ԳԼ. ԻԱ

1 Եւ այս բաներից յետոյ Յեզրաէլացի Նաբովթը մէկ այգի ունէր Յեզրայէլում Սամարիայի թագաւոր Աքաաբի պալատի
2 մօտ: Եւ Աքաաբը խօսեց Նաբովթի հետ և ասաց. Տուր ինձ քո այգին, որ ինձ համար բանջարի պարտէզ լինի, որովհետև նա մօտիկ է իմ տան կշտին, և ես քեզ մի այգի տամ նորա տեղ նորանից լաւ, եթէ հաճելի է քո աչքին, քեզ նորա գինը
3 արծաթ տամ: Եւ Նաբովթն ասաց Աքաաբին. Քաւ լիցի ինձ Տէրից որ ես իմ հայրերի ժառանգութիւնը քեզ տամ:

Եւ Աքաաբը գնաց իր տունը տխուր և բարկացած Յեզրայէլացի Նաբովթի իրան ասած խօսքի համար, որ ասաց. Ես իմ հայրերի ժառանգութիւն քեզ չեմ տալ. և պառկեց իր անկողնի վերայ և երեսը դարձրեց ու հաց չկերաւ: Եւ նորա մօտ եկաւ նորա կինը Յեզաբէլ և ասաց նորան. Ա՞ինչ որ սիրտդ տխուր է, և հաց չես ուտում: Եւ Աքաաբ ասաց նորան. Թէ՛ խօսեցի Յեզրայէլացի Նաբովթի հետ և ասացի նորան՝ Այգիդ փողով տուր ինձ, կամ եթէ դու հաճես՝ ես քեզ նորա տեղ մի այգի տամ. բայց նա ասաց. Ես իմ այգին քեզ չեմ տալ: Եւ նորա կինը Յեզաբէլն ասաց նորան. Դու հիմա այդ՞պէս թագաւորութիւն անում Իսրայէլի վերայ. վեր կաց հաց կեր և սիրտդ զուարճանայ. ես քեզ կ'տամ Յեզրայէլացի Նաբովթի այգին:

Եւ Աքաաբի անունով նամակներ գրեց և կնքեց նորանց նորա կնիքով, և նամակները ուղարկեց նորա քաղաքումը Նաբովթի հետ միասին բնակող ծերերին և ազնուականներին: Եւ գրեց այն նամակներում ասելով. Ծոմ քարոզեցէք և Նաբովթին դրէք ժողովրդի գլխաւոր: Եւ նորա դիմացը երկու անօրէն մարդ նստեցրէք, որոնք նորա դէմ վկայութիւն անեն ասելով. Դու Հայհոյութիւն արիր Աստուծոյ և թագաւորի դէմ. յետոյ նորան դուրս հանեցէք և քարկոծեցէք որ մեռնէ:

Եւ նորա քաղաքի մարդիկը՝ այն ծերերը և ազատականները, որ նորա քաղաքումը բնակում էին, արին այնպէս ինչպէս որ Յեզաբէլը նորանց հրամայեր էր ուղարկել, ինչպէս որ գրել էր իր նորանց ուղարկած նամակներում: Ծոմ քարոզեցին և Նաբովթին նստեցրին ժողովրդի գլխաւոր. Եւ երկու անօրէն մարդիկը եկան ու նստեցին նորա դէմ. և այն երկու անօրէն մարդիկը վկայութիւն տուին Նաբովթի դէմ ժողովրդի

առջև ասելով. Նաբովթը Աստուծոյն և թագաւորին հայհոյեց. և նորանք դուրս հանեցին նորան քաղաքիցը և քարերով քարկոծեցին, և նա մեռաւ:
14 Եւ մարդ ուղարկեցին Յեզաբելի մօտ ասելով. Նաբովթը քարկոծուեցաւ և մեռաւ:
15 Եւ հէնց որ Յեզաբելը լսեց, որ Նաբովթը քարկոծուել և մեռել է, ասաց Յեզաբելը Աքաաբին. վեր կաց ժառանգիր Յեզրայէացի Նաբովթի այգին, որ չէր ուզում փողով քեզ տալ, վասն զի Նաբովթը կենդանի չէ, այլ
16 մեռած է: Եւ հէնց որ Աքաաբը լսեց թէ Նաբովթը մեռած է, վեր կացաւ Աքաաբը, որ իջնէ Յեզրէելացի Նաբովթի այգին նորան ժառանգելու համար:
17 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Թեզբացի Եղիային
18 ասելով. Վեր կաց իջիր դէպ Իսրայէլի Աքաաբ թագաւորի դէմ որ Սամարիայումն է, ահա նա Նաբովթի այգումն է, ուր որ իջել է նորան ժառանգելու համար:
19 Եւ նորա հետ խօսիր և ասիր. Այսպէս է ասում Տէրը. Սպանեցիր. և ժառանգում է՞լ ես. և ասիր նորան թէ այսպէս է ասում Տէրը. Այն տեղը ուր որ շները լակեցին Նաբովթի արիւնը, շները քո արիւնն
20 էլ պիտի լակեն: Եւ Աքաաբն ասաց Եղիային. Ինձ գտա՞ր, ով իմ թշնամին. և նա ասաց. Գտայ, որովհետև դու քեզ ծախել ես, որ Տիրոջ աչքին չարութիւն անես:
21 Ահա ես քեզ վերայ չարիք եմ բերելու և առնելու եմ քո ետևից և բնաջինջ եմ անելու Աքաաբի համար ամեն որմի վերայ միզողին և Իսրայէլի մէջ կապուածին և արձակուածին:
22 Եւ քո տունը պիտի շինեմ Նաբատեան Յերոբովամի տան պէս և Աքիայի որդի Բաասայի տան պէս, այն բարկութեան համար որով բարկացրիր Տիրոջը, և մեղանչել տուիր
23 Իսրայէլին: Նաև Յեզաբէլի համար խօսեց Տէրը ասելով. Շները պիտի ուտեն Յեզաբէլին Յեզրաէլի պարսպի մօտ: Աքաաբից
24 քաղաքումը մեռնողին շները պիտի ուտեն, և դաշտումը մեռնողին երկնքի թռչունները պիտի ուտեն:
25 Բնաւ չէ եղել Աքաաբի պէսը, որ իրան ծախած լինէր Տիրոջ աչքին չարութիւն անելու, որին մոլորեցրեց իր Յեզաբէլ կինը:
26 Եւ նա շատ գարշելի եղաւ կուռքերի ետևից գնալով բոլորովին այն Ամօրհացոց արածին պէս, որոնց Տէրը քշեց Իսրայէլի որդիների առջևից:
27 Եւ հէնց որ Աքաաբը լսեց այս խօսքերը, պատառեց՝ իր հանդերձները և իր մարմնի վերայ քուրձ հագաւ և ծոմ պահեց, և քնում էր քուրձով և կամաց շրջում:
28 Եւ Տիրոջ խօսքը եղաւ
29 Թեզբացի Եղիային ասելով. Տեսնո՞ւմ ես որ Աքաաբը խոնարհեցրեց իրան իմ առջև. որովհետև նա իրան խոնարհեցրեց իմ առջև ես այն չարիքը չեմ բերել նորա օրերումը, այլ նորա որդու օրերումը կ'բերեմ չարիքը նորա տան վերայ:

ԳԼ. ԻԲ

1 Եւ երեք տարի կացան, որ պատերազմ չկար Ասորոց և Իսրայէլի մէջ:
2 Եւ եղաւ երրորդ տարին, որ Յուդայի Յովսափատ թագաւորն իջաւ Իսրայէլի թագաւորի մօտ:
3 Եւ Իսրայէլի թագաւորն ասաց իր ծառաներին. Գիտէ՞ք որ Ռամոթ-գաղաադը մերն է, իսկ մենք հոգ չենք տանում նորան Ասորոց թագաւորի ձեռքից առնելու:
4 Եւ ասաց Յովսափատին. Ինձ հետ կ'գնա՞ս պատերազմի Ռամոթ-գաղաադի վերայ. և Յովսափատն ասաց Իսրայէլի թագաւորին. Ինչպէս դու այնպէս էլ ես. ինչպէս քո ժողովուրդը, այնպէս էլ իմ ժողովուրդը. ինչպէս քո ձիանքը, այնպէս էլ իմ ձիանքը:
5 Եւ Յովսափատն ասաց Իսրայէլի թագաւորին. Խնդրեմ հիմա
6 Տիրոջ խօսքը հարցրու: Եւ Իս-

բայէլի թագաւորը ժողովեց մարգարէներին չորս հազար մարդու չափ, և ասաց նորանց. Ասամովթ-գաղաադ գնա՞մ պատերազմի, թէ չգնամ։ Եւ նորանք ասացին. Գնա, և Տէրը պիտի տայ թագաւորի ձեռքը։ Եւ Յովսափատան ասաց. Ա՛յստեղ էլ Տէրոջ մարգարէ չկա՞յ, որ նորանից հարցրինք։ Եւ Իսրայէլի թագաւորն ասաց Յովսափատին. Մէկ մարդ էլ կայ որով Տէրոջը հարցնել կարելի է. բայց ես ատում եմ նորան, որովհետև ինձ համար բարի չէ մարգարէանում, այլ չար՝ Յեմլայի որդին Միքիան. և Յովսափատան ասաց. Թագաւորը թող այդպէս չխօսէ։

Եւ Իսրայէլի թագաւորը մի ներքինի կանչեց և ասաց. Շուտով բեր Յեմլայի որդի Միքիային։ Եւ Իսրայէլի թագաւորը և Յուդայի Յովսափատ թագաւորը նստել էին իւրաքանչիւրն իր աթոռի վերայ զգեստներ հագած Սամարիայի դրան առջևի կալուածը. և բոլոր մարգարէները մարգարէանում էին նորանց առջև։ Եւ Քանանայի որդին Սեդեկիան իրան համար երկաթի եղջիւրներ շինեց, և ասաց. Այսպէս է ասում Տէրը. Սորանցով կ'հրես Ասորեցիներին մինչև որ նորանց բնաջինջ անես։ Եւ բոլոր մարգարէներն այնպէս էին մարգարէանում ասելով. Գնա Ասամովթ-գաղաադ և կ'յաջողէ. և Տէրը կ'տայ թագաւորի ձեռքը։

Եւ այն պատգամաւորը, որ գնացել էր Միքիային կանչելու, նորան այսպէս ասաց. Ահա մարգարէները միաբերան բարի են խօսում թագաւորի համար. թող քո խօսքերն էլ նորանցից մէկինի պէս լինին և բարի խօսիր։ Բայց Միքիան ասաց. Կենդանի է Տէրը որ ինչ որ ինձ ասէ Տէրը, այն եմ խօսելու։

Եւ նա եկաւ թագաւորի մօտ. և թագաւորն ասաց նորան. Միքիա, Ասամովթ-գաղաադ պատերազմի գնա՞մ թէ չգնամ. և նա ասաց. Գնա, և կ'յաջողէ, և Տէրը կ'տայ թագաւորի ձեռքը։ Եւ թագաւորը նորան ասաց. Քանի անգամ ես քեզ երդուցնեմ եմ տուել որ Տիրոջ անունով ինձ լոկ ճշմարտութիւն խօսես։ Ա՛յն ժամանակ նա ասաց. Ես տեսայ բոլոր Իսրայէլը լեռների վերայ ցրուած ոչխարներ որ հովիւ չունին. և Տէրը ասաց. Սորանք տէրեր չունին. ամեն մարդ իր տունը դառնայ խաղաղութեամբ։ Եւ Իսրայէլի թագաւորն ասաց Յովսափատին. Չէ՞ զ չասացի՞ որ ինձ համար բարի չի մարգարէանալ, այլ չար։ Եւ նա ասաց. Ուրեմն Տիրոջ խօսքը լսիր. Ես տեսայ Տէրը նստած իր աթոռի վերայ և երկնից բոլոր զօրքերը կանգնած նորա առջև, նորա աջ և նորա ձախ կողմին։ Եւ Տէրն ասաց. Ո՞վ կ'խաբէ Աքաաբին, որ վեր գնայ յարձակէ Ասամովթ-գաղաադի վերայ. և մէկը այսպէս և մէնա այնպէս էր ասում։ Եւ մի ոգի դուրս եկաւ և կանգնեց Տիրոջ առջև և ասաց. Ես նորան կ'խաբեմ. և Տէրը նորան ասաց. Ինչո՞վ։ Նա էլ ասաց. Ես դուրս կ'գնամ և նորա բոլոր մարգարէների բերանումը սուտ ոգի կ'լինիմ. և Տէրը ասաց. Դու կ'խաբես և կարող էլ ես. գնա և այդպէս արա։ Եւ արդ Տէրը սուտ ոգի է դրել այս բոլոր մարգարէների բերանում, բայց Տէրը քեզ համար չարիք է խօսել։

Ա՛յն ժամանակ Քանանայի որդի Սեդեկիան մօտեցաւ և զարկեց Միքիային նորա ծնօտին և ասաց. Ի՞նչպէս է անցկացել Տիրոջ Հոգին ինձանից որ քեզ հետ խօսէ։ Միքիան էլ ասաց նորան. Ահա կ'տեսնես այն օրը որ սենեակէ սենեակ կ'մտնես թաքչուելու համար։

Եւ Իսրայէլի թագաւորն ասաց. Առ Միքիային և տար քաղաքապետ Ամմոնի և թագաւորի որդի Յովասի մօտ, և ասիր. Այսպէս է ասում թագաւորը. Սորան դրէք բանտը, և նորան կերակրեցէք նեղութեան հացով և նեղութեան ջրով մինչև իմ

28 խաղաղութեամբ գալը։ Եւ Մի-
քեան ասաց. Եթէ դու խաղա-
ղութեամբ ես դարձար եկար,
ուրեմն Տէրը ինձանով չէ խօսել.
Նաև ասաց. Լսեցէք ով ամեն
ժողովուրդներ։
29 Եւ Իսրայէլի թագաւորն ու
Յուդայի Յովասափատ թագաւորը
վեր գնացին Ռամովթ-գաղաադ։
30 Եւ Իսրայէլի թագաւորն ասաց
Յովասափատին. Ինձ պէտք է կեր-
պարանափոխուիլ և քեզ պա-
տերազմի գնալ, բայց դու հա-
գիր քո հանդերձները. և Իսրա-
յէլի թագաւորը կերպարանա-
փոխուեցաւ և գնաց պատերազ-
31 մի։ Եւ Ասորոց թագաւորը հր-
ամայեց իր երեսուն և երկու
կառապետներին ասելով. Զպա-
տերազմէք ոչ փոքրի և ոչ մեծի
հետ, այլ միայն Իսրայէլի թա-
32 գաւորի հետ։ Եւ հէնց որ կա-
ռապետները Յովասափատին տե-
սան, ասացին. Յիրաւի նա է
Իսրայէլի թագաւորը, և դարձան
դէպի նորան որ նորա հետ պա-
տերազմին. և Յովասափատ ա-
33 ղաղակեց։ Եւ եղաւ երբոր տե-
սան կառապետները, որ նա Իս-
րայէլի թագաւորը չէր. այն ժա-
մանակ ետ դարձան նորա հետևե-
34 ցը։ Եւ մի մարդ *անզգուշութեամբ
քաշեց իր աղեղը և զարկեց Իս-
րայէլի թագաւորին յօդուածնե-
րի և պրտի միջով. և նա ասաց
իր կառավարին. Ձեռք դարձ-
րու և ինձ դուրս տար բանակից
ցը, վասն զի վիրաւորուեցայ։
35 Եւ պատերազմը բարձրացաւ այն
օրը, և թագաւորը կացաւ իր
կառքումը Ասորոց դէմ, և իրի-
կունը մեռաւ. և վէրքից արիւ-
36 նը գնաց կառքի միջ։ Եւ արե-
գակը մտր մտնելու մտնելիք
մտն ելաւ բանակի միջ ասելով.
Ամեն մարդ իր քաղաքը և ամեն
37 մարդ իր երկիրը գնաց։ Եւ թա-
գաւորը մեռաւ և բերուեցաւ
Սամարիա. և թագաւորին թա-
38 ղեցին Սամարիայում։ Եւ կառքը
լուացին Սամարիայի աւազանի

*ուժով

մօտ, և շները լափեցին նորա ար-
իւնը. և բոզերը նորա լուացին
Տէրոջ խօսած խօսքին համեմատ։
39 Եւ Աքաաբի գործերի մնացոր-
դը և նորա բոլոր արարածները, և
նորա փղոսկրով շինած տունը և
նորա շինած բոլոր քաղաքները,
ահա նորանք գրուած են Իսրայէ-
լի թագաւորների ժամանակաց
գրքումը։ 40 Եւ Աքաաբը ննջեց իր
հայրերի հետ. և նորա որդին Ո-
քոզիան թագաւորեց նորա տեղ։
41 Եւ Ասայի որդին Յովասափատը
թագաւոր եղաւ Յուդայի վերայ
Իսրայէլի Աքաաբ թագաւորի
չորրորդ տարին։ 42 Եւ Յովասափատը
երեսուն և հինգ տարեկան էր երբ
որ թագաւոր եղաւ, և քսան ու
հինգ տարի Թագաւորեց Երու-
սաղէմումը, և նորա մօր անունն
էր Ազուբա դուստր Սալհի։ 43 Եւ
նա գնաց բոլորովին իր հօր Աս-
այի ճանապարհումը, նորանից չը
խոտորեց, և արաւ Տէրոջ աչքին
հաճելի եղածը։ Բայց բարձրա-
44 տեղիները չվերացան. ժողո-
վուրդը տակաւին զոհում և խունկ
էր մատուցանում բարձրատե-
ղիների վերայ։ 45 Եւ Յովասափատը
խաղաղութիւն արաւ Իսրայէլի
թագաւորի հետ։
46 Յովասափատի գործերի մնացոր-
դը և նորա արած քաջութիւնը
և պատերազմը, ահա նորանք
գրուած են Յուդայի թագաւոր-
ների ժամանակաց գրքումը։ 47 Եւ
այն մնացած իգացողներին, որ
մնացել էին իր հօր Ասայի օրե-
րումը, բնաջինջ արաւ երկրից։
48 Եւ այն ժամանակ Եդոմումը
թագաւոր չկար, մի փոխարքայ
կար։
49 Յովասափատը Թարսիսի նաւեր
շինեց որ գնան Ոփիր ոսկու հա-
մար, բայց չգնաց. որովհետև նա-
ւերը կոտրատուեցան Գասիոն-
գաբերում։ 50 Այն ժամանակ Աք-
աաբի որդին Ոքոզիան ասաց Յով-
ասափատին. Թող իմ ծառաները
քո ծառաների հետ նաւերով
գնան, բայց Յովասափատը չուզեց։
51 Եւ Յովասափատը ննջեց իր հայրե-
րի հետ և թաղուեցաւ իր հայ-

րերի հետ իր հօր Դաւթի քաղաքումը, և նորա որդին Յովրամը թագաւորեց նորա տեղ։
52 Աքաաբի որդին Ոքոզիան թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ Սամարիայումը Յուդայի թագաւոր Յովսափատի տան և եօթնեներորդ տարին, և թագաւորեց Իսրայէլի
53 վերայ երկու տարի։ Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչքին և գնաց իր հօր ճանապարհովը, իր մօր ճանապարհովը և Իսրայէլին մեղանչել տուող Նաբատեան Յերոբովամի ճանապարհովը։ Եւ 54
պաշտեց Բահաղին և երկրպագութիւն արաւ նորան, և բարկացրեց Իսրայէլի Տէր Աստուածն իսրայէլի Աստուածն իր հօր արածին պէս։

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Աքաաբի մեռնելուց յետոյ ապստամբեց Մովաբը Իսրայէլի դէմ։
2 Եւ Ոքոզիան վայր ընկաւ իր վերնատան վանդակապատից Սամարիայումը և հիւանդացաւ, և պատգամաւորներ ուղարկեց, և նորանց ասաց. Գնացէք հարցրէք Ակկարոնի *Բահաղ-ճանճիկ աստուծոյն, թէ արդեօք կ'առողջանամ այս հիւանդութիւնից։
3 Եւ Տիրոջ հրեշտակն ասաց Թեզբացի Եղիային. Վեր կաց գնա Սամարիայի թագաւորի պատգամաւորներին դիմացը և ասիր նորանց. Մի՞թէ Իսրայէլի մէջ Աստուած չկայ, որ գնում էք Ակկարոնի Բահաղ-ճանճիկ աստու-
4 ծոյն հարցնելու։ Վասն որոյ Տէրը այսպէս է ասում. Քո վերան եղած անկողինից վայր պիտի չիջնես, այլ անպատճառ պիտի մեռնես. և Եղիան գնաց։
5 Եւ պատգամաւորները ետ դարձան նորա մօտ. և նա նորանց ասաց. Դա ինչո՞ւ համար ետ
6 դարձաք։ Եւ նորան ասացին. Մի մարդ դուրս եկաւ մեր դիմացը և մեզ ասաց. Գնացէք ետ դարձէք ձեզ ուղարկող թագաւորի մօտ և ասացէք իրան. Այսպէս է ասում Տէրը. Մի՞թէ Իսրայէլումն Աստուած չկայ, որ դու մարդ ես ուղարկում Ակկարոնի Բահաղ-ճանճիկ աստուծոյն հարցնելու. դորա համար վերան եղած անկողնիցդ վայր պիտի չիջնես, այլ անպատճառ պիտի մեռնես։ 7
Եւ նա ասաց նորանց. Ի՞նչ կերպարանք ունէր այն մարդը, որ ձեր դիմացը եկաւ և ձեզ ասաց այդ խօսքերը։ Նորանք էլ ասացին. Նա մէկ մազոտ մարդ էր, և մի կաշի գօտի մէջքին կապած. և նա ասաց. Նա Թեզբացի Եղիան է։ 8
Եւ նա մի իշանապետ ուղարկեց իր հետն մարդովը. և երբոր նա եկաւ մօտ գնաց, ահա նստել էր լեռան գլխին. և ասաց նորան. Ով մարդ Աստուծոյ, թագաւորն ասում է. Վայր իջիր։ Եւ 9
Եղիան պատասխանեց և ասաց իշանապետին. Եթէ ես Աստուծոյ մարդ եմ, թող երկնքից կրակ իջնէ և ուտէ քեզ և քո հետն մարդկանցը. և երկնքից կրակ իջաւ, և լափեց նորան և նորա հետն մարդկանցը։
Իսկ նա դարձեալ մի ուրիշ իշանապետ իր հետն մարդկան- 11
ցովը ուղարկեց. և նա պատասխանեց և ասաց նորան. Ով մարդ Աստուծոյ, թագաւորն այսպէս է ասում. Շուտով վայր իջիր։ Եւ 12
Եղիան պատասխանեց և ասաց նորանց. Եթէ ես Աստուծոյ մարդ եմ, թող երկնքից կրակ իջնէ և ուտէ քեզ և քո հետն մարդկանցը, և Աստուծոյ կրակ իջաւ երկնքից, և լափեց նորան և նորա հետն մարդկանցը։

*Բէեղզէբուղ

13 Բայց նա դարձեալ մի երրորդ
հիւանդապետ ուղարկեց իր հետն
մարդկանցով. բայց այդ երրորդ
հիւանդապետը վեր ելաւ գնաց և
եղիայի առջև ծունկը կրկնեց և
աղաչեց նորան և ասաց նորան.
Ով մարդ Աստուծոյ, թող իմ
հոգին և այս հետն ծառաների
դ հոգին քո աչքին պատուա-
14 կան համարուին։ Ահա երկնքից
կրակ իջաւ և լափեց այն առաջի
երկու հիւանդապետներին և նորանց
հետն մարդկանցը. բայց հիմա
թող իմ անձը պատուական հա-
մարուի քո աչքին։
15 Եւ Տիրոջ հրեշտակը ասաց ե-
ղիային. Վայր իջիր նորա հետ,
նորա երեսից մի վախենար։ Եւ
նա վեր կացաւ և վայր իջաւ նո-
16 րա հետ թագաւորի մօտը։ Եւ
ասաց նորան. Տէրը այսպէս է
ասում. Որովհետև դու պատ-
գամաւորներ ուղարկեցիր Ակկա-
րոնի Բահատ-Ճանճիկ աստուծոյն
հարցնելու իբր թէ Իսրայէլում
Աստուած չկայ, որ նորանից
բան հարցնէիր, նորա համար
վերան ելած անկողնիցդ վայր պի-
տի չիջնես, այլ անպատճառ պի-
տի մեռնես։
17 Եւ նա մեռաւ Տիրոջ խօսքին
համեմատ, որ ասել էր Եղիան,
և նորա տեղ թագաւոր եղաւ
Յովրամը Յուդայի Յովսափատ-
եան Յովրամ թագաւորի երկ-
րորդ տարին, որովհետև նա որդի
18 չունէր։ Եւ Ոքոզիայի գործերի
մնացորդը, ահա նորանք գրուած
են Իսրայէլի թագաւորների ժա-
մանակաց գրքումը։

ԳԼ. Բ

1 Եւ եղաւ որ Տէրը Եղիային մրրի-
կով երկինքը վեր բարձրացնե-
լու ժամանակին, Եղիան և Եղի-
2 սէն գնացին Գաղգաղայից։ Եւ
Եղիան ասաց Եղիսէին. Դու այս-
տեղ մնա, որովհետև Տէրը ինձ
մինչև Բեթէլ է ուղարկել. և Ե-
ղիսէն ասաց. Կենդանի է Տէրը
և կենդանի է քո հոգին, եթէ
ես քեզ թողեմ. և գնացին Բե-
թէլ։ Եւ Բեթէլացի եղող մար- 3
դարէների որդիքը դուրս եկան
Եղիսէի մօտ և նորան ասացին.
Գիտե՞ս արդեօք որ այսօր Տէրը
վեր է առնելու քո տիրոջը գլխի-
ցդ. և նա ասաց. Ես էլ գի-
տեմ, լռեցէք։ Եւ Եղիան ասաց 4
նորան. Այստեղ մնա, Եղիսէ,
որովհետև Տէրը ինձ Երիքով է
ուղարկել. և նա ասաց. Կենդա-
նի է Տէրը և կենդանի է քո հո-
գին, եթէ ես քեզ թողեմ. և
գնացին Երիքով։ Եւ Երիքովումը 5
լինող մարգարէների որդիքը մո-
տեցան Եղիսէին և ասացին նո-
րան. Գիտե՞ս արդեօք որ այսօր
Տէրը վեր է առնելու քո տիրոջը
գլխիցդ. և նա ասաց. Ես էլ գի- 6
տեմ, լռեցէք։ Եւ Եղիան ասաց
նորան. Այստեղ մնա, որովհե-
տև Տէրը ինձ Յորդանան է ու-
ղարկել. և նա ասաց. Կենդանի
է Տէրը և կենդանի է քո հոգին,
եթէ ես քեզ թողեմ. և երկուսն
էլ գնացին։ Եւ մարգարէների 7
որդիներից հետևում մարդ գնացին
և հեռուից կանգնեցին դիմացը.
իսկ նորանք երկուսը կանգնել է-
ին Յորդանանի մօտ։ Եւ Եղիան 8
առաւ իր վերարկուն, ծալեց և
զարկեց ջրին, և ջուրը բաժան-
ուեցաւ այս կողմը և այն կողմը,
և երկուքն էլ անցան ցամաքով։
Եւ եղաւ երբոր նորանք անց- 9
նում էին, Եղիան ասաց Եղիսե-
ին. Խնդրիր ի՛նչ անեմ քեզ,
քանի որ քեզանից չեմ վեր առ-
նուած։ Եւ Եղիսէն ասաց. Թող
քո ոգին կրկնապատիկ լինի ինձ
վերայ։ Եւ նա ասաց. Դժուար 10
բան խնդրեցիր. եթէ ես քեզանից
վեր առնուելիս դու ինձ տեսար,
քեզ կ'լինի այնպէս. բայց եթէ
ոչ, չի լինիլ։
Եւ եղաւ երբոր նորանք գնում 11
էին և գնալով խօսում էին, ա-
հա մի հրեղէն կառք և հրեղէն
ձիեր, որ նորանց երկուսին բա-
ժանեցին. և Եղիան մրրիկով վեր
եղաւ երկինքը։ Իսկ Եղիսէն մեկ 12
էր տեսիս և կանչում. Հայր իմ,
հայր իմ, Իսրայէլի կառքը և
նորա ձիաւորները. և նորան այլ

և ես չտեսայ, և բռնեց նորա հանդերձներիցը և պատառեց նորանց
13 երկու պատառ արար։ Եւ վեր առաւ Եղիայի վերարկուն որ բնկել էր նորա վերայից, և եկաւ դարձաւ ու կանգնեց Յորդանանի
14 ափին։ Եւ առաւ Եղիայի վերարկուն, որ բնկել էր նորա վերայից, և զարկեց ջրին ու ասաց. Ո՞ւր է Եղիայի Տէր Աստուածը նա ինքը. և զարկեց ջրին, և ջրերը բաժանուեցան այս կողմը և այն կողմը, և Եղիսէն անց կացաւ։

15 Եւ նորան տեսանում էին մարգարէների որդիքը, որ դիմացին էին Երիքովում, և ասում էին Եղիայի ոգին հանգչել է Եղիսէի վերայ. և եկան նորան դիմաւորելու և խոնարհութիւն արին
16 նորա առջև մինչև գետինը։ Եւ ասացին նորան. Ահա ծառանեքիդ հետ յիսուն զօրաւոր մարդիկ կան, թող գնան և որոնեն քո տիրոջը, գուցե Տիրոջ Հոգին նորան վեր է առել և մէկ լեռան վերայ կամ հովիտների մէկի մէջ գցել. և նա ասաց. Մի ու-
17 զարկէք։ Եւ նորանք բանադատեցին նորան մինչև որ ամաչեց և ասաց. Ուղարկեցէք. և նորանք յիսուն մարդ ուղարկեցին, և նորանք որոնեցին երեք օր,
18 բայց նորան չգտան։ Եւ եւս դարձան նորա մօտ, և նա նստած էր Երիքով, և նորանց ասաց. Ես ձեզ չասացի՝ թէ՝ Մի գնաք։

19 Եւ այն քաղաքի մարդիկն ասացին Եղիսէին. Ահա քաղաքիս դիրքը լաւ է ինչպէս որ տէրս տեսանում է, բայց ջուրը վատ է
20 և երկիրը անպտուղ։ Եւ նա ասաց. Ինձ մի նոր կուժ բերէք և մէջը աղ դրէք. և բերին նորա
21 մօտ։ Եւ նա գնաց ջրերի աղբիւրի մօտ և աղ գցեց այնտեղ, և ասաց. Այսպէս է ասում Տէրը. Ես բժշկեցի այս ջրերը. այսուհետև այդտեղից այլևս մահ և
22 անպտղութիւն չլինի։ Եւ այն ջրերը բժշկուեցան մինչև այսօր Եղիսէի խօսած խօսքին պէս։

23 Եւ այնտեղից գնաց Բեթէլ. և նա ճանապարհով վեր էր գնում և փոքր տղաքներ դուրս եկան քաղաքիցը և ծաղր անելով ասում էին նորան. Վեր եկ կլինդակ, վեր եկ կնդոկ։ Եւ յետին 24
դարձաւ. և նորանց տեսաւ և անիծեց նորանց Տիրոջ անունով. և անտառիցը երկու արջ դուրս եկան և նորանցից քառասուն և երկու երեխայ պատառեցին։ Եւ այնտեղից գնաց Կարմել- 25
ղոս լեառը, և այնտեղից եկաւ Սամարիա։

Գ.Լ. Գ

Եւ Աքաաբի որդին Յովրամը 1
թագաւոր եղաւ Իսրայէլի վերայ Յուդայի Յովսափատ թագաւորի տասնուերկրորդ տարում, և թագաւորեց տասն երկու տարի։
Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչքին, միայն ոչ թէ իր հօրը և մօրը պէս, և հեռացրեց իր հօր 2
չինած Բահաղի արձանը։ Սակայն 3
Նաբատեան Յերոբովամի որդի մեղքին հետևեց, որով նա Իսրայէլին մեղանչել տուաւ, նորանից չհեռացաւ։

Եւ Մովաբացոց Մեսա թագաւորը 4
հարուստ էր հօտերով, և նա տալիս էր Իսրայէլի թագաւորին հարիւր հազար գառն և հարիւր հազար գեղմնաւոր խոյեր.
Եւ երբոր Աքաաբ թագաւորը 5
մեռաւ, Մովաբի թագաւորը ապրատամբեց Իսրայէլի թագաւորի դէմ։ Եւ այն ժամանակ Յովրա- 6
մը դուրս եկաւ Սամարիայից և հանդէս արաւ բոլոր Իսրայէլին։
Եւ գնաց տէդ ուղարկեց Յուդայի 7
Յովսափատ թագաւորին ասելով. Մովաբացոց թագաւորը ապրատամբել է ինձ դէմ. ինձ հետ պատերազմելու կ'գնա՞ս Մովաբի վերայ. և նա ասաց. Կ'գնամ. ինչպէս որ դու այնպէս էլ ես, ինչպէս որ քո ժողովուրդը այնպէս էլ իմ ժողովուրդը, ինչպէս որ քո ձիանքն այնպէս էլ իմ ձիանքը։ Եւ նա ասաց. Ո՞ր ճա- 8
նապարհով գնանք. նա էլ ասաց. Եդոմի անապատի ճանա-

9 պարհովը, եւ դնացին Իսրայէլի թագաւորը, Յուդայի թագաւորը եւ Եդովմի թագաւորը եւ եօթը օր պտոյտ տուին, եւ ջուր չկար ոչ բանակի համար եւ ոչ էլ նոյանց հետ եղող անասուններուն համար։

10 Եւ Իսրայէլի թագաւորն ասաց. Ափսո՛ս որ Տէրը կանչել է երեք թագաւորներիս, որ Մովաբի թագաւորի ձեռքը մատնէ։

11 Եւ Յովսափատ ասաց. Այստեղ Տէրոջ մարգարէ չկա՞յ, որ Տէրոջ խօսքը հարցնենք նորանից. եւ Իսրայէլի թագաւորի ծառաներից մէկը պատասխանեց եւ ասաց. Այստեղ է Սափատի որդին Եղիսէն, որ ջուր էր ածում Եղիայի ձեռքերին։

12 Եւ Յովսափատն ասաց. Տէրոջ խօսքը կայ նորա մօտ։ Եւ վայր իջան նորա մօտ Իսրայէլի թագաւորը եւ Յովսափատը եւ Եդովմի թագաւորը։

13 Եւ Եղիսէն ասաց Իսրայէլի թագաւորին. Դու ի՞նչ բան ունես ինձ հետ. գնա քո հօր մարգարէների մօտ եւ քո մօր մարգարէների մօտ։ Եւ Իսրայէլի թագաւորն ասաց. Ո՛չ, վասն զի Տէրն այս երեք թագաւորին կանչել է, որ նորանց տայ Մովաբի թագաւորի ձեռքը։

14 Եւ Եղիսէն ասաց. Կենդանի է Զօրաց Տէրը որի առջեւ կանգնած եմ, եթէ ես չյարգէի Յուդայի Յովսափատ թագաւորին, քեզ մօտիկ չէի տալ եւ քեզ չէի տեսանել։

15 Բայց հիմա ինձ համար մի նուագածու բերէք. եւ երբոր նուագածուն նուագեց, այն ժամանակ նորա վրայ եղաւ Տէրոջ ձեռքը. եւ նա ասաց. Այսպէս է ասում Տէրը. Ահա հեղեղատը փոս փոս արէք.

17 Վասն զի Տէրն այսպէս է ասում. Քամի չէք տեսնիլ, եւ անձրեւ չէք տեսնիլ, բայց այս հեղեղատը ջրով կ'լցուի եւ կ'խմէք դուք եւ ձեր հօտերը եւ ձեր անասուններըը։

18 Բայց սա թեթեւ բան է Տէրոջ աչքին, Մովաբն էլ պիտի յանձնէ ձեր ձեռքը։

19 Եւ պիտի ջարդէք ամեն պարսպաւոր քաղաքները, եւ ամեն ընտիր քաղաքները եւ բոլոր ազնիւ ծառերը պիտի կտրէք, եւ բոլոր ջրի աղբիւրները պիտի խցկէք, եւ բոլոր ընտիր արտերը քարերով պիտի փչացնէք։

20 Եւ առաւօտեան զոհը մատուցանելիս, ահա ջրերը էին գալիս Եդովմի կողմից եւ երկիրը լցուեցաւ ջրով։

21 Եւ բոլոր Մովաբացիք լսեցին, որ թագաւորները եկել են նոյանց հետ պատերազմելու, եւ բոլոր զօսի կապողները եւ նոյնից էլ մեծերը ժողովուեցան եւ կանգնեցին սահմանի վերայ։

22 Առաւօտը կանուխ վեր կացան, եւ երբոր արեգակը ծագեց ջրերի վերայ, այն ժամանակ Մովաբացիք հեռուանց մտիկ արին կարմիր ջրերին իբրեւ արիւնի։

23 Եւ ասում էին. Սա արիւն է. թագաւորները կռուել են իրար հետ եւ իրար ջարդել. եւ արդ, ով Մովաբացիք. աւարի՛ գնանք։

24 Եւ եկան Իսրայէլի բանակը, բայց Իսրայէլացիք վեր կացան ու ջարդեցին Մովաբացիներին, եւ նոյանք փախան նորանց առջեւից. բայց նորանք մտան նորա մէջը (այսինքն Մովաբացոց երկիրը) եւ ջարդեցին Մովաբացիներին։

25 Եւ քաղաքները քանդեցին, եւ ամեն լաւ արտի մէջ գցեց ամեն մարդ իր քարը եւ նորան լցրին եւ խցկեցին բոլոր ջրի աղբիւրները, եւ կտրեցին ամեն ազնիւ ծառերը, այնպէս որ Կերհարեսեթում միայն քարերը մնացին. եւ պարսպաւորները պաշարեցին նորան եւ ջարդեցին։

26 Եւ երբոր Մովաբի թագաւորը տեսաւ, որ պատերազմը իր վերայ աստիճացաւ, եօթը հարիւր սուսերամերկ զօրք առաւ իր հետը, որ ճչեն անցնէն մինչեւ Եդովմի թագաւորը, բայց չկարողացան։

27 Եւ վեր առաւ իր անդրանիկ որդին, որ պիտի թագաւորէր իր տեղը եւ նորան ողջակէզ մատուցրեց պարսպի վերայ. եւ Իսրայէլացոց դէմ մեծ բարկութիւն եղաւ. եւ նորանք հեռացան նորանից եւ հետ դարձան էրեց երկիրը։

ԳԼ. Դ

1 Եւ մարգարէներէն որդւկանց կա-
նայքներից մէկը աղաղակեց դէպ
ի Եղիսէն ասելով. Ծառադ իմ
մարդը մեռեալ է. և դու գիտես
որ ծառադ երկիւղած էր Տէրից.
և պարտատէրը եկել է իմ եր-
կու երեխաներքին իրան համար ծա-
2 ռաներ առնելու: Եւ Եղիսէն ա-
սաց նորան. Ես քեզ ի՞նչ անեմ.
ասա ինձ. ի՞նչ ունիս տանդ: Եւ
նա ասաց. Աղախինդ իր տանը
ամենևին ոչինչ չունի, բացի մի
3 իւղի սրուակ: Եւ նա ասաց. Գնա
դրսից՝ քո բոլոր դրացիներից
դատարկ սրուակներ ուղիր. քիչ
4 չհատուածես: Եւ փակ մնիր ու
դուռը քո եաևից և քո որդւկանց
եաևից կղպիր, և էաղը ածիր այն
5 բոլոր սրուակների մէջ. և լցուած-
ները վեր առ: Եւ ինքը գնաց նո-
րա կշտից, և դուռը կղպեց իր
եաևից և իր որդւկանց եաևից:
Նորանք իրան էին տալիս, և նա
6 ածում էր: Եւ երբոր սրուակները
լցուեցան, ասաց իր տղուն. Ինձ
էլ սրուակ տուր, և նորան ասաց.
Էլ սրուակ չկայ. և իւղը դադա-
7 րեց: Եւ ինքը եկաւ ու պատմեց
Աստուծոյ մարդուն. նա էլ ասաց.
Գնա իւղը ծախիր և պարտքդ
վճարիր, և մնացածովը ապրիր
դու և տղաքդ:
8 Եւ մէկ օր Եղիսէն անց էր կե-
նում Սունամով, և այն տեղ մի
հարուստ կին կար. և նա նորան
ստիպեց հաց ուտելու. և քանի
անգամ որ այն կողմով անց էր կե-
նում, գնում էր այն տեղ հաց
9 ուտելու: Եւ նա ասաց իր մար-
գուն. Ահա գիտեմ որ այդ Աս-
տուծոյ մարդը սուրբ է, որը միշտ
10 անցնում է մեր մօտովը: Թող մի
փոքր վերնատուն շինենք պատի
վերայ, և նորա համար այն տեղ
անկողին, սեղան, աթոռ և աշ-
տանակ դնենք որ մեզ մօտ գա-
11 լիս այն տեղ գնայ: Եւ եղաւ
մէկ օր որ նա եկաւ այն տեղ և
գնաց վերնատունը և այն տեղ
12 պառկեց: Եւ իր ծառայ Գեհազի-
ին ասաց. Ահդ Սունամացի կնոջը
կանչիր. և նա նորան կանչեց. և
13 ինքը կանգնեց նորա առջև: Եւ
ասաց. Ասա նորան, ա-
հա մեզ համար այս բոլոր աշ-
խատանքը քաշեցիր, հիմա ի՞նչ
պէտք է անել քեզ. թագաւորի
մօտ մի բան ունի՞ս, կամ զօրա-
գլխի մօտ. բայց ինքն ասաց. Ես
իմ ժողովրդի մէջ եմ բնակում:
14 Եւ նա ասաց. Ուրեմն ի՞նչ պէտք
է նորա համար անել. և Գեհազին
ասաց. Ցիրաւի ինքը որդի չունի,
և ծեր էլ է մարդը: Եւ ասաց.
15 Կանչիր նորան. և նա կանչեց նո-
րան. և ինքը կանգնեց դրանը: Եւ
16 Եղիսէ ասաց. Եկող տարի հէնց
այս ժամանակին մի որդի կ'գըր-
կես: Եւ կինը ասաց. Ոչ, ով իմ
տէր՝ մարդ Աստուծոյ, պատիր
ստում մի ասիր: Սակայն կինը յղ-
17 ացաւ և մի որդի ծնաւ եկող
տարուայ նոյն ժամանակին, որ
նորան ասել էր Եղիսէն:
18 Եւ երեխան մեծացաւ, և մէկ
օր գնաց հնձողներին իր հօր մօտ:
19 Եւ ասաց իր հօրը. Գլո՛խս, գլո՛խս. և նա ծառային ասաց.
Նորան տար իր մօրը: Եւ նորան
20 վեր առաւ տարաւ նորա մօրը,
և նա մնաց նորա ծնկների վերայ
մինչև կէս օր և մեռաւ: Եւ նա
21 վեր գնաց և նորան պառկեցրեց
Աստուծոյ մարդու անկողնի վե-
րայ և եաևից կղպեց ու գնաց:
22 Եւ իր մարդուն կանչեց և ասաց.
Ծառաներից մէկին ինձ մօտ ու-
ղարկիր և էշերից մէկը, որ շու-
տով գնամ մինչև Աստուծոյ մար-
23 գուն և ետ դառնամ: Եւ մարդն
ասաց. Ինչո՞ւ համար ես դու այս
օր նորա մօտ գնում, ոչ ամսա-
գլուխ է ոչ շաբաթ. նա էլ ա-
սաց. Հանգիստ եղիր: Եւ էշը
24 պատրաստեց և ասաց ծառային.
Քշիր և գնա. և չկանգնեցնես
մինչև որ քեզ ասեմ: Եւ գնաց
25 ու հասաւ Աստուծոյ մարդուն
Կարմելոսում. և երբոր Աստու-
ծոյ մարդն նորան տեսաւ իր դի-
մացին, այն ժամանակ ասաց
իր ծառայ Գեհազիին. Ահա սա
26 այն Սունամացի կինն է: Արդ վա-
զիր նորան դիմաւորելու և ա-

աս նորան. Ողջ առո՞ղջ ես, ողջ
առո՞ղջ է մարդդ, ողջ առո՞ղջ
է երեխադ. և նա ասաց. Ողջ
27 առողջ։ Եւ կինը գնաց լեառը Ա-
ստուծոյ մարդու մօտը և բռնեց
նորա ոտքերը. և Գեհազին մօտե-
ցաւ որ նորան հան քաշէ. բայց
Աստուծոյ մարդն ասաց. Թող
առ որան, վասն զի սիրտը
ցաւած է, և Տէրը ծածկել է
28 ինձանից և ինձ չէ յայտնել։ Եւ
նա ասաց. Ես իմ տէրից որդի
խնդրեցի՞. չասացի՞ թէ ինձ մի
29 խաբիր։ Եւ նա Գեհազին ասաց.
Մէջքդ գօտի կապիր և առ իմ
գաւազանը ձեռքդ և գնա. եթէ
մի մարդու հանդիպես, նորան
բարև մի տար. և եթէ քեզ մէ-
կը բարև տայ, նորան պատաս-
խան մի տար. և իմ գաւազանը
30 դիր երեխայի երեսին։ Բայց
երեխայի մայրն ասաց. Կենդանի
է Տէրը և կենդանի է քո հոգին,
եթէ ես քեզ թողեմ. և նա վեր
կացաւ գնաց այն կնոջ ետևից։
31 Եւ Գեհազին գնացել էր նորանց
առջևից, և գաւազանը երեխա-
յի երեսին դրել, բայց ոչ ձայն
կար, ոչ էլ լսել. և ետ դարձաւ
նորան դիմաւորից և նորան պատ-
մեց ասելով. Որ երեխան չզարթե-
32 նեց։ Եւ Եղիսէն մտաւ տունը,
և ահա տղան մեռած էր նորա
33 անկողնի վերայ պառկած։ Եւ
նա ներս մտաւ և դուռը կղպեց
իրանց երկուսի ետևից և աղօթք
34 արաւ Տիրոջը։ Եւ վեր կացաւ
պառկեց երեխայի վերայ, և դը-
րաւ իր բերանը նորա բերանի վե-
րայ, և իր աչքերը նորա աչքերի
վերայ և իր ձեռքերը նորա ձե-
ռքերի վերայ և կռացաւ նորա
վերայ, և երեխայի մարմինը տա-
քացաւ։ 35 Եւ ետ դարձաւ տան
մէջը մէկ այս կողմը մէկ այն կող-
մը գնաց, և վեր կացաւ կռացաւ
նորա վերայ, և երեխան եօթն
անգամ փռշտաց և երեխան իր
36 աչքերը բացաւ։ Եւ նա կանչեց
Գեհազին. կանչեր այդ Սունամի-
ցի կնոջ. և նա նորան կանչեց.
և ինն էլ եկաւ նորա մօտ. և
37 նա ասաց. Առ երեխադ։ Եւ ինը
եկաւ ու ընկաւ նորա ոտքերը և
մինչև երկիրը խոնարհութիւն ա-
րաւ, և իր որդին առաւ և գը-
նաց։

38 Եւ Եղիսէն ետ դարձաւ Գաղ-
գաղա։ Եւ սով
կար. և մարգարէների որդիքը նո-
րա առջև նստել էին. և նա ա-
սաց իր ծառային. Մեծ կաթսան
դիր, և ապուր եփիր մարգարէ-
39 ների որդիանց համար։ Եւ դուրս
ինչ մէկը դուրս եկաւ դաշտը բան-
ջար ժողովելու, և վայրի որթ
գտաւ և նորանից քաղեց վայրի
վարունգ շալակը լիքը. և եկաւ
ու փրթեց ապուրի կաթսայի մէ-
ջը, որովհետև չէին գիտում։ Եւ
40 ածեցին մարդկանց համար որ ու-
տեն. և երբոր այն ապուրիցը կե-
րան, գոռալով ասացին. Կաթ-
սայումը մահ կայ, ով մարդ Ա-
ստուծոյ, և չկարողացան ուտել։
41 Եւ նա ասաց. Ալիւր բերէք. և
գցեց անդ, և ասաց.
Ածիր մարդկանցը համար, թող
ուտեն. և կաթսայում այլ ևս
վատ բան չկար։

42 Եւ մի մարդ եկաւ Բահաղ-սա-
լիսայից և բերաւ Աստուծոյ մարդ-
ու համար երեսփոխիների հաց՝
քսան հատ գարեղէն հաց և
թարմ հասկեր իր պարկումը, և
ասաց. Տուր ժողովրդիդ որ ու-
տեն։ Եւ նորա ծառան ասաց. 43
Ինչ դնեմ սա հարիւր մարդ-
կանց առջև. բայց նա ասաց.
Տուր մարդկանցը որ ուտեն, վա-
սն զի այսպէս է ասում Տէրը.
Կ'ուտեն և կ'ուելանայ էլ։ Եւ 44
նա դրաւ նորանց առջև, և նո-
քանք կերան, և ուելացաւ էլ
Տէրոջ խօսքին համեմատ։

Գլ. Ե

Եւ Ասորոց թագաւորի զօրավար- 1
լուխը Նեեման մի մեծ և յարգե-
լի մարդ էր իր տիրոջ առջև,
վասն զի Տէրը նորա միջոցով
փրկութիւն էր տուել Ասորոց.
և այս մարդը քաջ զօրաւոր էր,
բայց բորոտ էր։ Ասորիք մի ան- 2
գամ գունդերով էին եկել և խա-

բայէլի երկրից մի փոքր աղջիկ
գերի տարել, որ լինում էր Նե-
3 եմանի կնոջ առջև։ Եւ սա ա-
սաց իր տիկնոջ. Երանի թէ իմ
տէրը Սամարիայում եղող մար-
գարէի առջև լիներ. այն ժամա-
նակ նա նորան կ'բժշկէր իր բորո-
4 տութիւնից։ Եւ Նեեմանը գնաց
և պատմեց իր տիրոջն ասելով.
Այսպէս և այսպէս է խօսել այն
Իսրայէլի երկրից եղող աղջիկը։
5 Եւ Ասորոց թագաւորն ասաց.
Ձանապարհուիր գնա. և ես նա-
մակ կ'ուղարկեմ Իսրայէլի թա-
գաւորին։ Եւ նա գնաց և իրան
հետը վեր առաւ տասը տաղանդ
արծաթ և վեց հազար ոսկի, և
6 տասը փոխնորդ հանդերձներ։ Եւ
նամակը բերաւ ի ---- Իսրայէլի
թագաւորին՝ ասելով. Եւ որդ
այս նամակը քեզ հասնելու հետ,
ահա ուղարկում եմ քեզ մօտ
իմ Նեեման ծառային, որ դու
բժշկես նորան իր բորոտութիւնի-
7 ցը։ Եւ երբոր Իսրայէլի թագա-
ւորը կարդաց նամակը, պատա-
ռեց իր հանդերձները և ասաց.
Մի՞թէ ես Աստուած եմ որ մեռց-
նեմ կամ ապրեցնեմ, որ սա ինձ
մօտ է ուղարկում մարդուն իր բո-
րոտութիւնից բժշկելու. սակայն
դուք իմացէք և տեսէք որ նա
պատճառ է որոնում ինձանից։
8 Եւ երբոր Ասուծոյ մարդը Ե-
լիսէն լսեց, որ Իսրայէլի թա-
գաւորը պատռել է իր հան-
դերձը, այն ժամնամակ մարդ ու-
ղարկեց թագաւորին ասելով. Ին-
չո՞ւ համար պատռեցիր հան-
դերձդ. թող նա ինձ մօտ գայ
և իմանայ որ մարգարէ կայ Ի-
9 սրայէլի մէջ։ Եւ Նեեմանը գնաց
իր ձիերովն ու կառքովը և կանգ-
10 նեց Եղիսէի տան դրան մօտ։ Եւ
Եղիսէն պատգամաւոր ուղարկեց
նորա մօտ ասելով. Գնա և լուաց-
ուիր եօթը անգամ Յորդանանու-
մը, և մարմինդ քեզ մօտ կը
11 դառնայ և կ'մաքրուիս։ Բայց
Նեեմանը բարկացաւ և գնաց՝ ա-
սելով. Ահա ես կարծում էի
թէ անպատճառ ինձ մօտ դուրս
կ'գայ և կ'կանգնէ ու իր Եհովայ
Աստուծոյ անունը կ'կանչէ, և
ձեռքը կ'դնէ այն տեղի վերայ,
և այն ժամնամակ բորոտութիւնը
կ'բժշկէ։ Մի՞թէ Դամասկոսի Ա- 12
բանա և փարփար գետերը Իսրա-
յէլի բոլոր ջրերից լաւ չեն. մի՞-
թէ նորանցում չէի լուացուիլ և
մաքրուիլ։ Եւ նա դարձաւ գնաց
բարկութեամբ։ Բայց նորա ծա- 13
ռաները մօտեցան և խօսեցին նո-
րա հետ և ասացին. Ով հայր,
էթէ մարգարէն քեզ մի մեծ բան
ասած լիներ, չէ՞իր անիլ. ո՞ւր
ևնաց որ քեզ ասաց. Լուացուիր
և կ'մաքրուիս։ Եւ նա վայր իջաւ 14
և եօթն անգամ թաղուեցաւ
Յորդանանի մէջ Ասուծոյ մար-
գու խօսքին համեմատ. և նորա
մարմինը եւս դարձաւ իրրև մի
փոքր տղայի մարմին, և նա մաք-
րուեցաւ։

Եւ նա եւս դարձաւ իր բոլոր 15
բանակովը Ասուծոյ մարդու
մօտ և եկաւ կանգնեց նորա առ-
ջև և ասաց. Ահա իմացայ որ
բոլոր երկրիս վերայ Աստուած չը
կայ բայց միայն Իսրայէլումը. և
հիմա խնդրեմ՝ ծառայիդ մի ըն- 16
ծայ ընդունիր։ Բայց նա ասաց.
Կենդանի է Տէրը, որի առջև կանգ-
նած եմ, եթէ ես ընդունեմ. և
նա ստիպեց նորան, բայց նա մեր-
ժեց։ Եւ Նեեմանն ասաց. Հիմա 17
որ ոչ, թող ծառայիդ երկու ջո-
րիի բեռ հող տրուի, վասն զի
ծառայ այլևս բացի Եհովայից
ուրիշ աստուածների ողջակէզ
կամ զոհ չի անելու։ Այս բանը 18
միայն Տէրը ներէ Եհովան քո ծա-
ռային, երբոր իմ տէրը
Ռեմմոնի տունը մտնէ այնտեղ եր-
կրպագութիւն անելու համար,
և նա կռնէ իմ ձեռքին և ես
կռանամ Ռեմմոնի տանը, այն ժա-
մնամակ այս բանի համար՝ այսինքն
Ռեմմոնի տանը իմ կռանալու հա-
մար թող Տէրը ներէ քո ծառա-
յին։ Եւ նա ասաց նորան. Գնա 19
խաղաղութեամբ. և նա գնաց
նորա մօտից բաւական տեղ։

Եւ Գէեզին՝ Ասուծոյ մարդ 20
Եղիսէի ծառան ասաց. Ահա իմ
տէրը խնայեց այս Ասորի Նեեմա-

նին նորա բերածը ձեռքիցը առնելու. կենդանի է Տէրը, եթէ ես չվազեմ նորա ետևից և նորանից մի բան չառնեմ։ Եւ Գեեզին վազեց Նէեմանի ետևիցը. և Նէեմանը տեսաւ մէկը ետևիցը վազ էր տալիս. և նա վայր թռաւ կառքիցը նորան դիմաւորելու և ասաց. Խաղաղութի՞ւն է. և նա ասաց. Խաղաղութիւն. իմ տէրն ինձ ուղարկեց ասելով. Ահա հիմա ինձ մօտ եկան երկու պատանիներ Եփրեմի լեռնիցը մարգարէների որդիանցիցը, խնդրեմ նորանց համար մի տաղանդ արծաթ և երկու փոխնորդ հանդերձ տուր։ Եւ Նէեմանն ասաց. Բարեհաճիր՝ երկու տաղանդ առ, և ստիպեց նորան, և ծրարեց երկու տաղանդ արծաթը երկու պարկի մէջ և երկու փոխնորդ հանդերձը և տուաւ իր երկու ծառաներին, որ տարին նորա առջևիցը։ Եւ երբոր բլրին հասան, առաւ նորանց ձեռքիցը և թաքցրեց տան մէջ. բայց մարդկանցը ճանապարհ դրաւ, և նորանք գնացին։ Իսկ ինքը եկաւ ու կանգնեց իր տիրոջ առջև. և ասաց նորան Եղիսէն. Ո՞րտեղից, Գեեզի. և նա ասաց. Ծառադ չէ գնացել այս կամ այն կողմը։ Եւ Եղիսէն նորան ասաց. Չէ՞ որ իմ հոգին գնացել էր երբոր մարդը ետ դարձաւ իր կառքիցը քեզ դիմաւորելու. ժամանա՞կն է արծաթ առնելու և հանդերձներ, ձիթենիներ, ոչխարներ, սիգիներ, հօտեր, արջառներ և ծառաներ ու աղախիններ առնելու։ Ուստի Նէեմանի բորոտութիւնը քեզ և քո սերունդին փակչէ յաւիտեան. և նա դուրս եկաւ նորա առջևիցը ձիւնի պէս բորոտեալ։

Գլ. Ը

1 Եւ մարգարէի որդիքն ասացին Եղիսէին. Ահա այստեղը՝ ուր որ մենք բնակուած ենք քո առջև, 2 մեզ համար նեղ է։ Թող գնանք մինչև Յորդանան, և ամեն մէկս վեր առնենք այնտեղից մէկ գե-

բան, և այնտեղ մեզ համար տեղ շինենք այնտեղ բնակելու. և նա ասաց. Գնացէք։ 3 Եւ նորանցից մէկն ասաց. Բարեհաճիր, դու էլ գնա ծառաներիդ հետ. և նա ասաց. Ես կ'գամ։ 4 Եւ գնաց նորանց հետ, և եկան Յորդանան և ծառերը կտրում էին։ Եւ մէկը գերանը կտրելիս փոսը 5 երկաթն ընկաւ ջուրը, և նա գոչելով ասաց. Վա՜յ, տէր իմ, նա և փոխ առուած էր։ Եւ Աստուծոյ 6 ծոյ մարդն ասաց. Ո՞ւր ընկաւ. և նա տեղը նորան ցոյց տուաւ. նա էլ մի փայտ կտրեց և գցեց այնտեղ, և երկաթին լողալ տուաւ։ Եւ ասաց. Դա վեր առ. 7 նա էլ ձեռքը մեկնեց ու վեր առաւ նորան։

Եւ Ասորոց թագաւորը պատերազմում էր Իսրայէլի դէմ, և իր ծառաների հետ խորհուրդ արաւ ասելով. Այսինչ կամ այնինչ տեղը բանակ դնեմ։ Բայց 9 Աստուծոյ մարդը Իսրայէլի թագաւորին լուր ուղարկեց ասելով. Զգուշացիր այստեղով անցկենալուց, վասն զի Ասորիք այնտեղ բանակ են տուած։ Եւ Իսրայէլի 10 թագաւորը մարդ էր ուղարկում այնտեղը որի համար Աստուծոյ մարդն ասում էր և նորան զգուշացնում. և նա զգուշացաւ այն տեղիցը ոչ թէ մէկ և ոչ թէ երկու անգամ։ Եւ խռովեց Ասորոց 11 թագաւորի սիրտը այս բանի վերայ և իր ծառաներին կանչեց ու ասաց նորանց. Չէ՞ք իմացնել ինձ թէ մեր մէջտեղումն ով է որ Իսրայէլի թագաւորի հետ չորբէբէ՞ն է։ Եւ նորա ծառա- 12 ներից մէկն ասաց. Ոչ, ով իմ տէր թագաւոր, այլ Իսրայէլում եղող Եղիսէ մարգարէն է իմացնում Իսրայէլի թագաւորին այն բաները, որ դու խօսում ես քո անկողնի սենեակում։ Եւ նա ա- 13 սաց. Գնացէք և տեսէք, նա ուր է, որ ես մարդ ուղարկեմ ու բռնել տամ. և նորան իմացրին ասելով. Ահա Դոթայիմումն է։

Եւ այնտեղ ձիեր և կառքեր 14 և մեծ զօրք ուղարկեց, և սորանք

գիշերը եկան ու քաղաքը պաշա-
15 բեցին։ Եւ Աստուծոյ մարդու
ծառան առաւօտուն կանուխ
վեր կացաւ և դուրսը գնաց և ա-
հա զօրքը պատել էր քաղաքը
նաև ձիերն ու կառքերը. և նո-
րա ծառան ասաց նորան. Վա՛յ,
16 տէր իմ, ի՞նչ անենք։ Նա էլ
ասաց. Մի վախենար, վասն զի
մեզ հետ եղողները շատ են քան
17 թէ նորանց հետ եղողները։ Եւ
Եղիսէն աղօթք արաւ և ասաց.
Ով Տէր, բաց նորա աչքերը որ
տեսնէ. և Տէրը բացաւ ծառային
աչքերը և նա տեսաւ, և ահա
լեառը լիքն էր հրեղէն ձիերով և
18 կառքերով Եղիսէի շուրջը։ Եւ
նորանք իջան նորա մօտ. բայց
Եղիսէն աղօթք արաւ Տիրոջը և
ասաց. Աղաչում եմ՝ զարկիր
այս ժողովրդին կուրութեամբ։
Եւ նորանց զարկեց կուրութեամբ
19 Եղիսէի խօսքին համեմատ։ Եւ
Եղիսէն ասաց նորանց. Ճանա-
պարհը սա չէ. և քաղաքը սա
չէ. իմ եաւէիցը եկէք և ձեզ կը
տանեմ այն մարդու մօտ, որին
դուք որոնում էք, և նորանց
20 տարաւ Սամարիա։ Եւ երբոր ե-
կան Սամարիա, այն ժամանակ
Եղիսէն ասաց. Ով Տէր, սորանց
աչքերը բաց որ տեսանեն. և Տէրը
բացաւ նորանց աչքերը և նորանք
տեսան, և ահա Սամարիայի մէջ
21 էին։ Եւ Իսրայէլի թագաւորն
ասաց Եղիսէին երբոր նորանց
տեսաւ. Զարկե՞մ, զարկե՞մ, հայր
22 իմ։ Եւ նա ասաց. Մի զարկիր.
մի՞թէ դու ապանում ես նորանց
որ քո սուրովը և աղեղովը գերի
արիր. հաց ու ջուր դիր նորանց
առջեւ որ ուտեն և խմեն և չեփոյ
23 գնան իրանց տիրոջ մօտ։ Եւ նո-
րանց համար մի մեծ հացկերոյթ
պատրաստեց, և նորանք կերան
ու խմեցին. և չեփոյ նորանց ար-
ձակեց և նորանք գնացին իրանց
տիրոջ մօտ, և Ասորոց գունդերը
այլեւս չեկան Իսրայէլի երկիրը։
24 Եւ սորանից յետոյ ժողովեց
Ասորոց Բենհադադ թագաւորը իր
ողոր բանակը և վեր գնաց ու
25 պաշարեց Սամարիան։ Եւ մեծ
սով եղաւ Սամարիայումը, վասն
զի պաշարել էին նորան, մինչեւ
որ մէկ էշի գլուխը ութսուն-էին
արծաթի և մէկ կապճի չորրորդ
մասը *աղաւնու աղբը հինգ-էին
արծաթի եղաւ։ Եւ երբոր Իսրա- 26
յէլի թագաւորը պարսպի վերան
անցնում էր, մի կին դէպի նո-
րան գոչեց ասելով. Օգնիր ինձ,
ով իմ տէր թագաւոր։ Եւ նա 27
ասաց. Եթէ Տէրը քեզ չօգնէ,
ես ո՞րտեղից օգնեմ քեզ. կա՞լը-
ցը թէ հնձա՞նիցը։ Եւ թագաւո- 28
րը նորան ասաց. Ի՞նչ ունիս.
նա էլ ասաց։ Այս կինը ինձ ա-
սաց՝ Տուր որդդ այսօր ուտենք,
իմ որդն էլ էգուց կ'ուտենք։
Մենք էլ եփեցինք որդս և կե- 29
րանք նորան, և ես ասում եմ
իրան միւս օրը. Տուր որդդ որ
ուտենք. բայց դա թաքցրել է
իր որդն։ Եւ երբոր թագաւորը 30
լսեց այն կնոջ խօսքերը, պատա-
ռեց հանդերձը պարսպի վերայով
գնալիս, և ժողովուրդը տեսաւ
որ ահա ներսեանից քուրձը նորա
մարմնոյ վերայ էր։ Եւ նա ասաց. 31
Ասուած ինձ այսպէս անէ և
սորանից աւելի անէ, եթէ Սա-
փատեան Եղիսէի գլուխը այսօր
նորա վերայ ճնալու լինի։ Եւ Ե- 32
ղիսէն նստել էր իր տանը և ծե-
րերն էլ նստել էին նորա հետ.
և [illegible]ը մարդ ուղարկեց իր
առջեւից. բայց պատգամաւորը
դեռ չէր եկել նորա մօտ, որ նա
ասաց ծերերին. Տեսնո՞ւմ էք որ
այս մարդասպանի որդին մարդ է
ուղարկել իմ գլուխը կտրելու.
տեսէք, հէնց որ պատգամաւո-
րը եկաւ՝ դուռը կղպեցէք և
նորան սեղմեցէք դրանը. չէ՞ որ
նորա տիրոջ ոտքերի ձայնը նորա
ետեւիցն է։ Նա տակաւին նորանց 33
հետ խօսելիս ահա պատգամաւո-
րը իջաւ նորա մօտ և ասաց. Ա-
հա սա չարիք է Տիրոջ կողմիցը,
այլեւս ի՞նչ սպասեմ Տէրիցը։

ԳԼ. Է

Եւ Եղիսէն ասաց. Լսեցէք Տի- 1

*Մի տեսակ ուտելիք կ'կարծուի.

բոջ խօսքը, այսպէս է ասում Տէրը. Երբոյ այս ժամանակին մէկ գրիւ շարմող ալիւրը մէկ սիկղ, և երկու գրիւ գարին մէկ սիկղ կ'լինի Սամարիայի դրանը:
2 Եւ պատասխանեց այն նախարարը, որի ձեռքի վերայ կռնում էր թագաւորը, Աստուծոյ մարդուն և ասաց. Ահա եթէ Տէրը երկնքումը պատուհաններ էլ շինէր, կ'լինի՞ այդ բանը. բայց նա ասաց. Ահա կ'տեսնես քո աչքերովը, սակայն ինքդ նորանից չես ուտել:
3 Եւ քաղաքի դրանը չորս բորոտ մարդ կար և իրար ասացին. Մենք ի՞նչ ենք այստեղ նստում մինչև
4 որ մեռնենք: Եթէ ասենք՝ գնանք քաղաքը, սով կայ քաղաքումը և այնտեղ կ'մեռնենք. և եթէ այստեղ մնանք, կ'մեռնենք. ուրեմն հիմա եկէք ընկնենք Ասորց բանակը. եթէ մեզ ողջ թողնեն, կ'ապրենք. բայց եթէ մեզ
5 մեռցրեն, կ'մեռնենք: Եւ մութ ժամանակին վեր կացան որ գնան Ասորց բանակը, և եկան մինչև Ասորց բանակի ծայրը. և ահա
6 այնտեղ մարդ չկար: Քանզի Տէրը Ասորց բանակի մէջ կառքերի ձայն և ձիերի ձայն և մեծ զօրքի ձայն լսել տուաւ, որ իրար ասացին. Ահա Իսրայէլի թագաւորը վարձել է մեզ դէմ Քետացոց թագաւորներին ու Եգիպտոսի թագաւորներին, որ գան
7 մեզ վերայ: Եւ վեր կացան ու փախան մութ ժամանակին, և թողեցին իրանց վրանները, իրանց ձիերը և իրանց էշերն ու բանակը, ինչպէս որ էր, և փախան
8 իրանց անձինքը պրծեցնելով: Եւ այն բորոտները եկան մինչև բանակի ծայրը և մտան մի վրանի մէջ և կերան ու խմեցին և արծաթ ու ոսկի ու հանդերձներ առին գնացին և թաքցրին. և եւս դարձան ու մտան մի ուրիշ վրանի մէջ, և այնտեղից էլ վեր
9 առին ու գնացին թաքցրին: Եւ իրար ասացին. Մենք այսպէս չէինք անելու. այս օրը աւետիքի օր է, և մենք լռել ենք և մնում ենք մինչև առաւօտեան լոյսը, այն ժամանակ մենք յանցաւոր կ'գտնուինք. և արդ եկէք գնանք և յայտնենք թագաւորի տունը:
10 Եւ նորանք եկան և կանչեցին քաղաքի դռնապանին և պատմեցին նորանց ասելով. Մենք գնացինք Ասորց բանակը, և ահա այնտեղ ոչ մարդ կայ և ոչ մարդու ձայն, այլ կապած ձիեր և կապած էշեր և վրանները ինչպէս որ կան: Եւ դռնապանները կան-
11 չեցին ու յայտնեցին թագաւորի տանը՝ ներսումը:
12 Եւ թագաւորը վեր կացաւ գիշերը և ասաց իր ծառաներին. Թողէք ձեզ պատմեմ Ասորց մեզ արածը. նորանք գիտեն որ մենք սոված ենք, և դուրս են գնացել բանակից դաշտումը թաքնուելու ասելով թէ. Երբոր քաղաքից դուրս գան, մենք նորանց ողջ ողջ կ'բռնենք, և քաղաքը կ'մտնենք:
13 Բայց նորա ծառաներից մէկը պատասխան տուաւ և ասաց. Նորանում ձիերից հինգը թող առնեն (ահա ինչպէս որ է բոլոր Իսրայէլի բազմութիւնը որ նորանում մնացել է, ահա նմանապէս է և բոլոր Իսրայէլի բազմութիւնը որ փչացել է) թող ուղարկենք և տեսնենք:
14 Եւ երկու կառք առին ձիերովը. և թագաւորը ղրկեց Ասորց բանակի ետևից ասելով. Գնացէք և տեսէք:
15 Եւ նորանք գնացին նորանց ետևից մինչև Յորդանան, և ահա բոլոր ճանապարհը լիքն էր հանդերձներով և անօթներով որ Ասորիք շտապելով դէն էին գցել, և պատգամաւորները ետ դարձան ու պատմեցին թագաւորին:
16 Եւ ժողովուրդը դուրս գնաց, և կողոպտեցին Ասորց բանակը. և մէկ գրիւ շարմող ալիւրը դառաւ մէկ սիկղ և երկու գրիւ գարին մէկ սիկղ՝ Տիրոջ խօսքին համեմատ:
17 Եւ թագաւորը դրան վերակացու դրաւ այն նախարարին, որի ձեռքի վերայ կռնում էր, և ժողովուրդը նորան կոխ

տուաւ դրան մէջ և նա մեռաւ,
ինչպէս Աստուծոյ մարդը խօսել
էր որ առաջ թագաւորը նորա
18 մօտ իջնելիս։ Եւ երբոր Աստու-
ծոյ մարդը թագաւորի հետ խո-
սեց առլով. երկու գրիւ գարին
մէկ սիկղ և մէկ գրիւ շարմաղ
ալիւրը մէկ սիկղ կ'դառնայ է-
գուց այս ժամնակին Սամարիայի
19 դրանը, և այն նախատրողը պա-
տասխանել էր Աստուծոյ մար-
դուն և ասել. Ահա եթէ Տէրը
երկնքումը պատուհաններ էլ շի-
նէր, կ'լինի՞ այդ բանը. նա էլ
ասել էր տես կ'տեսանես քո աչ-
քերովը, սակայն ինքդ նորանից
20 չես ուտել։ Եւ նորան այնպէս էլ
եղաւ. և ժողովուրդը նորան կոխ
տուաւ դրան մէջ և նա մեռաւ։

ԳԼ. Ը

1 Եւ Եղիսէն խօսեց այն կնոջ հետ
որի որդուն ողջացրել էր, ասե-
լով. Վեր կաց և գնա դու և քո
տունը և պանդխտեա եղիր ուր որ
կարող ես, վասն զի Տէրը կանչել
է սովը, և նա էլ գալու է այս
2 երկիրը եօթը տարի։ Եւ վեր կա-
ցաւ այն կինը և արաւ Աստու-
ծոյ մարդու խօսքին պէս, և գնաց
նա և իր տունը և պանդխտեաց
եղաւ Փղշտացոց երկրումը եօթը
տարի։
3 Եւ եօթը տարի անցնելուց յե-
տոյ այն կինը եկաւ դարձաւ Փղշ-
տացոց երկրից և գնաց իր տան
և իր արտի համար թագաւորին
բողոքելու։
4 Եւ թագաւորը խօսում էր Աս-
տուծոյ մարդու ծառայ Գէեզիի
հետ ասելով. Ինձ պատմիր այն
ամեն մեծամեծ բաները որ Եղի-
5 սէն արել է. Եւ երբոր նա թա-
գաւորին պատմում էր, թէ ինչ-
պէս ողջացրեց մեռելին, ահա այն
կինը որի որդուն առողջացրել էր,
բողոքում էր թագաւորին իր տան
և իր արտի համար. և Գէեզին
ասաց. Ով իմ տէր թագաւոր,
սա այն կինն է և սա նորա որ-
դին է որին ողջացրեց Եղիսէն։
6 Եւ թագաւորը հարցրեց այն կնոջ,
նա էլ պատմեց նորան. և թա-
գաւորը նորան մի նեղքինի տուաւ
ասելով. Ետ դարձրու դորա բո-
լոր ստացուածքը և արտի բոլոր
արդիւնքը նորա այս երկիրը թո-
ղած օրից մինչև հիմա։
7 Եւ Եղիսէն գնաց Դամասկոս.
և Ասորց Բենհադադ թագաւորը
հիւանդ էր և նորան իմացրին ա-
սելով. Աստուծոյ մարդը եկել է
մինչև այստեղ։ 8 Եւ թագաւորն
ասաց Ազայէլին. Ձեռքդ բնծայ
առ և գնա Աստուծոյ մարդուն
դիմաւորելու, և նորանով հարց-
րու Եհովային ասելով. Թէ Արդ-
եօք պիտի առողջանա՞մ այս հի-
ւանդութիւնից։ 9 Եւ Ազայէլը գը-
նաց, նորան դիմաւորեց, և իր
ձեռքը բնծայ առաւ, և Դամաս-
կոսի բոլոր բարիքներից չորս
ուղտի բեռ, և եկաւ ու կանգ-
նեց նորա առջև և ասաց. Քո
որդին Բենհադադ Ասորց թագա-
ւորը ինձ քեզ մօտ ուղարկեց ա-
սելով. Թէ Արդեօք պիտի առող-
ջանա՞մ այս հիւանդութիւնից։
10 Եւ Եղիսէն ասաց նորան. Գնա
ասիր նորան Թէ առողջանալու
ես. բայց Տէրը ինձ ցոյց տուաւ
որ նա պիտի մեռնի։ 11 Եւ նա է-
րեսը դարձրեց նորան ու կանգ-
նեց շատ երկար, և Աստուծոյ
մարդը լացաւ։ 12 Եւ Ազայէլն ա-
սաց. Ինչո՞ւ համար է իմ տէրը
լաց լինում. Նա էլ ասաց. Վա-
սն զի գիտեմ Թէ ինչ չարիք
պիտի անես Իսրայէլի որդւոցը,
նորանց բերդերը պիտի կրակով
այրես, և նորանց տղամարդնե-
րին պիտի սրով սպանես, և նո-
րանց մանուկներին քարովը պիտի
տաս, և նորանց յղիներին պիտի
ճղես։ 13 Եւ Ազայէլն ասաց. Ի՞նչ
է քո ծառան՝ այս շունը, որ այս
մեծ բանն անէ. բայց Եղիսէն ա-
սաց նորան. Տէրը քեզ ցոյց տը-
ուաւ ինձ իբրև Ասորց վերայ
թագաւոր։ 14 Եւ նա գնաց Եղիսէի
մօտիցը և եկաւ իր տիրոջ մօտ,
և նա ասաց նորան. Եղիսէն քեզ
ի՞նչ է ասել. և նա ասաց. Ա-
սել է Թէ առողջանալու ես։ 15 Եւ
հետևեալ օրը առաւ վերմակը և

կոխեց ջուրը, և ձգեց երեսին վերայ և նա մեռաւ. և Ազարէլը թագաւոր եղաւ նորա տեղը։
16 Եւ Յորամէլի թագաւոր Աքաաբեան Յովրամի հինգերորդ տարում, Յուդայի Յովսափատ թագաւորից յետոյ թագաւորեց Յուդայի թագաւոր Յովսափատի
17 որդին Յովրամը։ Երեսուն և երկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և ութ տարի թա-
18 գաւորեց Երուսաղէմում։ Եւ դնաց Իսրայէլի թագաւորների ճանապարհով, ինչպէս որ արել էր Աքաաբի տունը, վասն զի Աքաաբի աղջիկը նորա կինն էր, և չարութիւն արաւ Տիրոջ աչքին։
19 Եւ Տէրը չուզեց ջնջել Յուդային իր Դաւիթ ծառայի համար, ինչպէս որ ասել էր նորան թէ մի ճրագ պիտի տայ նորան նորա որդիների յամենայնժամ։
20 Նորա օրերին ապստամբեց Եդոմը Յուդայից, և իրանց վերայ մի թագաւոր դրին։ Եւ Յով-
21 րամն անցաւ Սայիր և բոլոր կառքերը իր հետը։ Եւ եղաւ որ նա գիշերը վեր կացաւ և ջարդեց Եդոմացիներին, որ իրան պաշարել էին, և կառքերի իշխաններին, և ժողովուրդը փախաւ իր
22 վրաններըը։ Բայց Եդոմն ապստամբեց Յուդայից մինչև այսօր։ Այն ժամանակ Լիբնան էլ ապստամբեց։
23 Եւ Յովրամի գործերի մնացորդը և նորա բոլոր արածը, ահա նորանք գրուած են Յուդայի թագաւորների յիշատակաց գրքումը։
24 Եւ Յովրամ ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր հայրերի հետ Դաւթի քաղաքումը, և նորա որդին *Ոքոզիա թագաւոր եղաւ նորա տեղը։
25 Իսրայէլի թագաւոր Աքաաբեան Յովրամի երկուտասաներորդ տարումը թագաւոր եղաւ Յուդայի վերայ Յովրամի որդին Ոքոզիա։
26 Քսան երկու տարեկան էր Ոքոզիան երբոր թագաւոր եղաւ

և մէկ տարի թագաւորեց Երուսաղէմումը, և նորա մօր անունն էր Գոթոդիա՝ Իսրայէլի Ամրի թագաւորի դուստրը։ Եւ նա գնաց 27
նաց Աքաաբի տան ճանապարհովը և չարութիւն արաւ Տիրոջ աչքին Աքաաբի տան պէս, վասն զի Աքաաբի տան փեսան էր։
Եւ Աքաաբեան Յովրամի հետ 28
գնաց Ռամոթ–գաղաադ Ասորց թագաւոր Ազայէլի հետ պատերազմելու. բայց Ասորիք յաղթեցին Յովրամին։ Եւ Յովրամ թա- 29
գաւորը եաւ դարձաւ որ Յեզրաելեում բժշկուի այն վէրքերից, որ Ասորեցիք տուել էին նորան Ռամոթի մէջ Ասորց Ազայէլ թագաւորի հետ պատերազմ անելու ժամանակին։ Եւ Յուդայի թագաւորը՝ Յովրամեան Ոքոզիան իջաւ Յեզրաելէլ Աքաաբեան Յովրամին տեսանելու, որովհետև հիւանդ էր։

Գ.Լ. Թ

Եւ Եղիսէ մարգարէն կանչեց 1
մարգարէներից որդիներից մէկին
և ասաց նորան. Գօտիդ մէջդ կապիր և այս իւղի ամանը ձեռքդ առ և գնա Ռամոթ–գաղաադ։ Եւ երբոր այնտեղ հա- 2
ասար, աչք ածիր այնտեղ Եհուաեան Յովսափատի որդի Յեհուին, և գնա ու վեր առ նորան իր եղբարց միջից և նորան ասր մի
ներսի սենեակ։ Եւ իւղի ամանը 3
առ և ածիր նորա գլխին և ասիր. Այսպէս է ասում Տէրը. Ես քեզ թագաւոր օծեցի Իսրայէլի վերայ. յետոյ դուռը բաց ու փախիր և մի սպասիր։ Եւ այն երի- 4
տասարդը՝ մարգարէի ծառան Ռամոթ–գաղաադ գնաց։
Եւ եկաւ. և ահա զօրաց իշխան- 5
ները նստել էին. և նա ասաց. Ես մի խօսք ունիմ քեզ հետ, ով զօրագլուխ. և Յեհուն ասաց. Մեր ամենիցը որի՞ հետ. և նա ասաց. Քեզ հետ, ով զօրագլուխ։
Նա էլ վեր կացաւ գնաց տունը· 6
և նա իւղը թափեց նորա գլխին և նորան ասաց. Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը.

*Ազարիա

Եւ քեզ Թագաւոր օծեցի Տիրոջ ժողովրդի՝ Իսրայէլի վերայ։ 7 Եւ դու ջարդիր քո տիրոջ Աքաաբի տունը, որ Յեզաբելի ձեռքից առնեմ իմ մարգարէ ծառաների և Տիրոջ ամեն ծառաների արիւնների վրէժը։ 8 Եւ Աքաաբի բոլոր տունը պիտի փչանայ, և պիտի ջնջեմ Աքաաբի համար արմի վերայ միզողին և կապուածին ու արձակուածին 9 Իսրայէլի մէջ։ Եւ Աքաաբի տունը պիտի նմանեան Յերոբովամի տան պէս և Աքիայի որդի 10 Բաասայի տան պէս անեմ։ Եւ Յեզաբելին էլ պիտի շներն ուտեն Յեզրայելի ագարակումը, և թաղող պիտի չլինի։ Եւ դուռը բացաւ ու փախաւ։

11 Եւ Յեհուն դուրս ելաւ գնաց իր տիրոջ ծառաների մօտ. և նորան ասացին. խաղաղութի՞ւն է. ինչո՞ւ համար էր եկել այդ ցնորուածը քեզ մօտ. և նա ասաց նորանց. Դուք գիտէք այն մարդն էլ նորա խօսքն էլ։ 12 Բայց նորանք ասացին. Սխալ է, մեզ պատմիր. և նա ասաց. Այսպէս և այսպէս ասաց ինձ ասելով. Թէ Ես հոսման այսպէս է ասում. Ես քեզ Թագաւոր օծեցի Իսրայէլի վերայ։ 13 Եւ նորանք շուտով ամեն մէկն իր հանդերձներն առին և գցեցին նորա տակը բուն սանդճանների վերայ և փողը հնչեցրին ու ասացին. Յեհուն է Թագաւոր։ 14 Եւ Նամեսեան Յովսափատի որդին Յեհուն դաւաճանութիւն արաւ Յովրամի դէմ։ Բայց Յովրամը պահպանութիւն էր անում Ռամովթ-գաղաադում ինքը և բոլոր Իսրայէլը Ասորոց 15 Ասայել Թագաւորի երեսից։ Եւ Յովրամ Թագաւորը դարձած էր, որ առողջանայ Յեզրայէլում Ասորեցիների նորան առած վերքերից, երբոր նա պատերազմ ունէր Ասորոց Ասայել Թագաւորի հետ։ Եւ Յեհուն ասաց. Եթէ հաճութիւն ունիք, մի փախըստական դուրս չելնէ այս քաղաքից, որ գնայ և իմացնէ Յեզրայէլում։

16 Եւ Յեհուն հեծաւ և գնաց Յեզրայէլ, որովհետև Յովրամն այնտեղ պառկած էր, և Յուդայի Ազոզիա Թագաւորը իջել էր այնտեղ Յովրամին տեսանելու։ 17 Եւ դէտը կանգնել էր Յեզրայէլի աշտարակի վերայ, և տեսաւ Յեհուի բազմութիւնը գալիս, և ասաց. Մի բազմութիւն եմ տեսանում գալիս. և Յովրամն ասաց. Մի ձիաւոր առ և ուղարկիր նորանց դէմ, որ ասէ՝ խաղաղութի՞ւն է։ 18 Եւ ձիաւորը գնաց նորան դիմաւորելու, և ասաց. Այսպէս է ասում Թագաւորը՝ խաղաղութի՞ւն է։ Եւ Յեհուն ասաց Նորան. Դու ի՞նչ բան ունիս խաղաղութեան հետ, յետևս անցիր։ Եւ դէտը պատմեց և ասաց. Պատգամաւորը գնաց մինչև նորանց և ետ չդարձաւ։ 19 Եւ մի երկրորդ ձիաւոր ուղարկեց, և նա գնաց նորանց մօտ, և ասաց. Այսպէս է ասում Թագաւորը. խաղաղութի՞ւն է։ Եւ Յեհուն ասաց Նորան. Դու ի՞նչ բան ունիս խաղաղութեան հետ. յետևս անցիր։ 20 Եւ դէտը պատմեց և ասաց. Գնաց մինչև նորանց և ետ չդարձաւ. և ընթացքը Նամեսեան Յեհուի ընթացքին նման է, վասն զի կատաղարար է քշում։

21 Եւ Յովրամն ասաց. Լծիր. և նա լծեց նորա կառքը, և դուրս եկաւ Իսրայէլի Յովրամ Թագաւորը և Յուդայի Ազոզիա Թագաւորը ամեն մէկն իր կառքով Յեհուին դիմաւորելու, և նորան գտան Յեզրայէլացի Նաբովթի ագարակումը։ 22 Եւ եղաւ երբոր Յեհուին տեսաւ Յովրամը, ասաց. խաղաղութի՞ւն է, Յե՛ու. և նա ասաց. Ի՞նչ է խաղաղութիւնը, մինչև որ եղած քո մօր՝ Յեզաբելի պոռնկութիւնները և նորա շատ կախարդութիւնները։ 23 Եւ Յովրամը դարձրեց իր ձեռքերը ու փախաւ. և Ազոզիային ասաց. Դաւաճանութիւն է, Ազոզիա։ 24 Եւ Յեհուն պինդ քաշից աղեղը և զարկեց Յովրամին նորա ուսերի միջոցից, և նետը անցաւ սրտին միջովը, և նա կծկուեցաւ իր

25 կատքուամբ ։ Եւ Յեհ-ն ասաց իր զօրապետ Բադեկարին . Վեր առ գիր դորան Յեզրայէլացի Նաբովթի կալուածքի ագարակը, վասն զի յիշատ ենք՝ ես և դու, երբոր նորա Հայր Աքաաբի հետևից հեծած զոյգ գնում էինք, և Տէրը այդ վճիռը ասում դորան ։
26 Իրաւի անոյշ երէկ Նաբովթի արիւնը և նորա որդւոցն արիւնը, ասում է Տէրը, և պիտի հատուցանեմ քեզ այս ագարակումը, ասում է Տէրը. և արդ՝ վեր առ գիր դորան ագարակը՝ Տէրոջ խօսքին համեմատ ։
27 Եւ երբոր Յուդայի Թագաւորը Ոքոզիան տեսաւ, փախաւ պարտէզի տան ճանապարհով. և Յեհն հալածեց նորան և ասաց. Դորան էլ սպանեցէք այդ կառքի վերայ. և վէրաբեջն նորա Յեբղաամի մօտ եղող Գուր բլուրի վերայ. նա էլ փախաւ Մակեդով, և մեռաւ այնտեղ ։ Եւ
28 նորա ծառաները նորան կառքով տարին Երուսաղէմ և թաղեցին նորան իր գերեզմանումը իր հայրերի հետ Դաւթի քաղաքումը ։
29 Եւ Ոքոզիան թագաւոր եղաւ Յուդայի վերայ Աքաաբի որդի Յոլրամի տասնմէներորդ տարին ։
30 Եւ Յեհն եկաւ Յեզրայէլ ։ Եւ երբոր Յեզաբէլը լսեց, ծարոյր դրաւ աչքերին և զարդարեց իր գլուխը և պատուհանովը դուրս
31 էր նայում ։ Եւ Յեհն մտաւ քաղաքի դուռը. և Յէզաբէլն ասաց. Մի՞թէ խաղաղութիւն է տէրոջն սպանող Զամբրին ։
32 Նա իր երեսը վեր բարձրացրեց դէպի պատուհանը և ասաց. Ո՞վ է ինձ հետ, ո՞վ. և երկու երեք ներքինիներ մօտիկ տուին իրան ։
33 Եւ ասաց. Դորան վայր գցեցէք. և նորանք վայր գցեցին նորան. և նորա արիւնը պատով և ձիերուվը տաւաւ. և նորան կոխ տուին ։
34 Յետոյ եկաւ և կերաւ ու խմեց և ասաց. Գտէք այդ անիծածին և թաղեցէք դորան, վասն զի թագաւորի աղջիկ է ։ Եւ
35 գնացին նորան թաղելու, բայց նորա վերայ բան չգտան բացի գագաթից և ոտներից և ձեռքերի թաթերից ։ Եւ եկա դարձան նորան 36
իմացրին. և նա ասաց. Դա Տէրոջ խօսքն է որ խօսել է իր ծառայ Թեզբացի Եղիայի ձեռքով ասելով. Յեզրայէլի ագարակումը շները պիտի ուտեն Յեզաբէլի միսը. Եւ Յեզաբէլի դիակը պղծի 37
պէս պիտի լինի Յեզրայէլի ագարակի վերայ այնպէս որ չասեն. Սա Յեզաբէլն է ։

ԳԼ Ը

Եւ Աքաաբը եօթանասուն որդիք ունէր Սամարիայում ։ Եւ Յեհն նամակներ գրեց ու Սամարիա ուղարկեց Յեզրայէլի իշխաններին և ծերերին և Աքաաբի հոգաբարձուներին, ասելով. Արդ երբոր այս նամակը 2
ձեզ հասնի, և դուք, որ ձեզ մօտ են ձեր տիրոջ որդիքը և ձեզ մօտ են կառքերը և ձիերը, և պարսպաւոր քաղաքն ու զէնքերը, Տեսէք թէ ո՞րն է ձեր տիրոջ որդիներից լաւը և յարմարը, 3
և նորան դրէք իր հօր աթոռի վերայ, և ձեր տիրոջ տան համար պատերազմ արէք ։ Նոյց 4
նորանք շատ ու շատ վախեցան և ասացին. Ահա երկու թագաւորներ նորա առջևը չկանգնեցին, ուրեմն մե՞նք ինչպէս պիտի կանգնենք ։ Եւ պալատի տեսուչը և 5
քաղաքապետն ու ծերերը և հոգաբարձուները մէտ ուղարկեցին Յեհի մօտ ասելով. Մենք քո ծառաներն ենք, և ամեն ինչ որ մեզ ասես՝ կ'անենք. մենք ոչ մէկին թագաւոր չենք դնիլ. ինչ որ քո աչքին հաճելի է, արա ։

Եւ նորանից մի երկրորդ նամակ 6
գրեց ասելով. Եթէ դուք իմ կողմն էք ու իմ խօսքին լսում էք, վեր առէք ձեր տիրոջ որդիների մարդկանց գլուխները և եկուց այս ժամանակին եկէք Յեզրայէլ. և թագաւորի որդիները եօթանասուն հոգի էին քաղաքի մեծամեծների մօտ որ նորանց մեծացնում էին ։ Եւ երբոր 7
նամակը հասաւ նորանց, առին

թագաւորի որդւոցն եւ կառավե-
ցին այն եօթանասուն հոգիները,
և նորանց գլուխները դրին կո-
ղովների մէջ և ուղարկեցին նո-
8 րա մօտ Յեզրաէլ։ Եւ պատ-
գամաւորը եկաւ նորա մօտ և
ասաց. Թագաւորի որդւոց գլ-
ուխները բերել են. նա էլ ա-
սաց. Դորանցից երկու դէզ ին-
ձ+ դրէք քաղաքի դրանը մին-
9 քի մօտ մինչև առաւօտը։ Եւ
երբոր առաւօտ եղաւ, նա դուրս
եկաւ ու կանգնեց և ասաց բոլոր
ժողովրդին. Դուք արդար էք,
ահա ես ապստամբեցի իմ տիրոջ
դէմ և նորան սպանեցի, բայց
10 ո՞վ կատարեց այս ամենին։ Արդ
իմացէք, որ Տիրոջ խօսքից ոչ
բան գետնին չընկնիլ, որ Տէրը
խօսել է Աքաաբի տան մասին,
և Տէրը պիտի անէ, ինչ որ ա-
սել է իր Եղիա ծառայի ձեռ-
11 քով։ Եւ Յեհու կատարեց Աքա-
աբի տան բոլոր ճնշողները Յեզ-
րաելում, և նորա բոլոր մեծա-
մեծներին, նորա ծանօթներին և
քահանաներին, մինչև որ մէկ
սրձնող չմնաց։
12 Եւ վերկացաւ եկաւ հասաւ
Սամարիա. ճանապարհին հովիւ-
13 ների բեթակեդէմն էր. Եւ յո-
դեղ Յեհու գտաւ Յուդայի Ոքո-
զիա թագաւորի եղբայրներին, և
ասաց. Դուք ո՞վ էք. և նորանք
ասացին. Մենք Ոքոզիայի եղ-
բայրներն ենք, և իջնում ենք
թագաւորի որդիներին և թա-
14 գուհու որդիներին բարևելու. Եւ
նա ասաց. Ողջ բռնեցէք դո-
րանց. և ողջ բռնեցին նորանց.
և սպանեցին նորանց բեթակեդի
ջրհորի մօտ՝ քառասուն ու երկու
հոգի. և նորանցից մէկ հոգի չը
թողեց։
15 Եւ այնտեղից գնաց ու գտաւ
Ռեքաբի որդի Յովնադաբին իրան
դիմացը և նորան բարև տուաւ
ու ասաց նորան. Միրտդ ուղի՞ղ
է, ինչպէս որ իմ սիրտը քո սրտի
հետ. և Յովնադաբն ասաց.
Այո։ Թէ որ այո, ուրեմն ձեռ-
քըդ տուր. և նա ձեռքը տուաւ.
և նա նորան վեր հանեց կառքը

իր մօտ։ Եւ ասաց. Եկ ինձ հետ 16
և տես իմ նախանձաւորութիւնը
Տիրոջ համար. և նորան հեծցրին
նորա կառքը։ Եւ նա եկաւ Սա- 17
մարիա և կատարեց Աքաաբի բո-
լոր մնացածներին Սամարիայում,
մինչև որ բնաջինջ արաւ նորան
Տիրոջ խօսքին համեմատ, որ խո-
սել էր Եղիայի հետ։
Եւ Յեհու ժողովեց բոլոր ժո- 18
ղովրդին և ասաց նորանց. Աքա-
աբը քիչ է ծառայել Բահաղին,
Յեհու նորան շատ պիտի ծառա-
յէ։ Եւ արդ՝ ինձ մօտ կանչեցէք 19
Բահաղի բոլոր մարգարէներին,
նորա բոլոր պաշտօնեաներին և
նորա բոլոր քահանաներին, մէկ
մարդ պակաս չի լինի. վասն զի
ես մեծ զոհ ունիմ Բահաղի հա-
մար. ով որ չգտնուի, պիտի ողջ
չմնայ. բայց Յեհու խորամանկու-
թեամբ արաւ որպէս զի Բահաղի
պաշտօնեաներին փչացնէ։ Եւ 20
Յեհու ասաց. Սուրբ ժողովուրդ
թիւն որոշեցէք Բահաղի համար.
և նորանք ծանուցում արին։ Եւ 21
Յեհու մարդ ուղարկեց բոլոր Իս-
րայէլին, և Բահաղի բոլոր պաշ-
տօնեաները եկան, և մէկ մարդ
չմնաց չեկած. և գնացին Բահա-
ղի տունը, և Բահաղի տունը լը-
ցուեցաւ ծայրէ ի ծայր։ Եւ Յե- 22
ասաց հանդերձատանապետին.
Հանդերձ հանիր Բահաղի բոլոր
ծառաների համար. և նորանց
համար հանդերձը հանեց։ Եւ Յե- 23
ուն ու Ռեքաբի որդի Յովնադա-
բը եկան Բահաղի տունը, և ա-
սաց Բահաղի պաշտօնեաներին.
Որոնեցէք ու տեսէք, մի գուցէ
ենթայի ծառաներից մէկ լինի
պատեղ ձեզ հետ, այլ լինին
միմիայն Բահաղի պաշտօնեաները։
Եւ եկան զոհեր և ողջակէզներ 24
մատուցանելու. և Յեհու իրան
համար դրսումը ութսուն մարդ
դրաւ և ասաց. Այն մարդը, որ
չէ՞ որ ազատուի այս իմ ձեր
ձեռքը տրուած մարդկանցից մէ-
կը, նորա անձը պէտք է լինի
նորա անձին փոխարէն անձի տեղ։
Եւ երբոր նորանք վերջացրել էին 25
ողջակէզը, այն ժամանակ Յեհու

ատաց սուրհանդակներին և զօրապետներին. գնացէք նորանից ջարդեցէք, մի մարդ դուրս չելնէ. և նորանք ջարդեցին նորանց սուրի բերանով, և սուրհանդակներն ու զօրապետները նորանից դէն գրցեցին, և գնացին մինչև Բահատի տան քաղաքը։ 26 Եւ դուրս հանեցին Բահատի տան արձանները և այրեցին նորանց։ 27 Եւ քանդեցին Բահատի արձանը, և կործանեցին Բահատի տունը և ապրանոց շինեցին նորան մինչև այսօր։ 28 Եւ Յէուն Բահատին բնաջինջ արաւ Իսրայէլից։ 29 Սակայն թէ նաև Յերոբոամի մեղքը, որ Իսրայէլին մեղանչել տուաւ, այսինքն Բեթելում և Դանում լինող ոսկի որթերի եռևիցը Յէուն չհեռացաւ։

30 Եւ Տէրն ասաց Յէուին. Որովհետև դու լաւ արիր որ իմ աչքին հաճելի եղածը բոլորովին իմ սրտի մէջ եղածի պէս կատարեցիր Աքաաբի տանը, քո որդիքը մինչև չորրորդ սերունդը պիտի նստեն քեզ համար Իսրայէլի աթոռի վերայ։ 31 Բայց Յէուն չզգուշացաւ Իսրայէլի Տէր Աստուծոյ օրէնքի մէջ գնալու իր բոլոր սրտով. չհեռացաւ Յերոբոամի մեղքերից, որ Իսրայէլին մեղանչել տուաւ։

32 Այն ժամանակներին Տէրը սկսաւ Իսրայէլից կտրել. և Ազայէլը զարկաւ նորանց Իսրայէլի բոլոր սահմաններում, 33 Յորդանանից արևելեան կողմում Գաղաադի բոլոր երկիրը, Գադեանացիներին, Ռուբենեանացիներին և Մանասեանացիներին Արոեր Առնոն ձորի վերայ եղող Արոերից մինչև Գաղաադ և Բասան։

34 Եւ Յէուի գործերի մնացորդը և նորա բոլոր արածը և նորա բոլոր զօրութիւնը, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների յիշատակաց գրքումը։ Եւ Յէուն ննջեց իր հայրերի հետ, և նորան թաղեցին Սամարիայում. և նորա որդին Յովաքազը թագաւոր եղաւ նորա տեղ։ 36 Եւ Յէուի Իսրայէլի վերայ արած թա-

գաւորութեան ժամանակն էր քսան և ութ տարի Սամարիայում։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ երբոր Ոքոզիայի մայրը Գոթողիան տեսաւ, որ իր որդին մեռաւ, վեր կացաւ բոլոր թագաւորական սերունդը բնաջինջ արաւ։ 2 Բայց Յովրամ թագաւորի աղջիկը՝ Ոքոզիայի քոյրը Յովսաբէէն առաւ Ոքոզիայի որդի Յովասին ու գողացաւ նորան թագաւորի սպանուած որդկանց միջից և նորա դայեակին անկողիններն սենեակումը, և նորան թաքցրին Գոթողիայի երեսից, և նա չմեռցուեցաւ։ 3 Եւ նորա հետ Տիրոջ տանն էր թաքցուած վեց տարի. և Գոթողիան թագաւորում էր երկրի վերայ։

4 Եւ եօթներորդ տարին Յովիադան մարդ ուղարկեց և առաւ թիկնապահների և սուրհանդակների հարիւրապետներին և նորանց տարաւ իրան մօտ Տիրոջ տունը, և նորանց հետ դաշինք կապեց, և նորանից երդում տուաւ Տիրոջ տանը, և նորանց ցոյց տուաւ թագաւորի որդուն։ 5 Եւ նորանց պատուիրեց ասելով. Սա է ձեր անելու բանը. ձեր երրորդ մասը, որ գալիս են շաբաթ օրը, թագաւորի պալատի պահապանութիւնն անեն։ 6 Եւ երրորդ մասը՝ սուրի դրանը, և երրորդ մասը՝ սուրհանդակների ետևի դրանը. այսպէս տանը պահապանութիւնը արէք փոփոխակի։ 7 Եւ ձեզանից երկու դունդ՝ ամենքը որ շաբաթ օրը պիտի դուրս գան, Տիրոջ տան պահապանութիւնն անեն թագաւորի համար։ 8 Եւ թագաւորին շրջապատեցէք շուրջանակի ամեն մարդ զէնքը ձեռքին. և կարգերի միջը մտնողը սպանուի. և թագաւորի հետը լինէք՝ նա դուրս գալիս և մտնելիս։

9 Եւ հարիւրապետները արին ամեն ինչ, որ Յովիադա քահանան պատուիրել էր, և իւրաքանչիւ-

րըն առաւ իր մարդկանցը, որ գային են շաբաթ օրը, շաբաթ օրուայ գնացողներուն հետ և եկան Յովիադա քահանային մօտ։ Եւ քահանան տուաւ հարիւրապետներուն Դաւիթ թագաւորի նիզակները և վահանները, որ Տիրոջ տանն էին։ Եւ սուրհանդակները իրարքանչիւրն իր վէնքերը ձեռքին կանգնեցին տան աջ կողմէն մինչև տան ձախ կողմը սեղանի մօտ և տան մօտ թագաւորի շուրջը։ Յետոյ դուրս հանեց թագաւորի որդուն, և նորա վերայ դրաւ թագը և վկայութիւնը, և նորան թագաւոր շինեցին և օծեցին նորան, և ծափ տուին և ասացին. Կեցցէ արքայ։

Եւ Գոթողիան լսեց վազող ժողովրդի ձայնը և գնաց դէպի ժողովուրդը՝ Տիրոջ տունը։ Եւ մարիկ տեսաւ, որ ահա թագաւորը կանգնած էր սիւնի մօտ սովորութեան պէս, և զօրապետներն ու փողերը թագաւորի մօտ, և երկրի բոլոր ժողովուրդը ուրախանում էր և փողերը հնչեցնում. և Գոթողիան պատառեց իր հանդերձները և աղաղակեց. Դաւաճանութիւն դաւաճանութիւն։ Եւ Յովիադա քահանան հրամայեց հարիւրապետներին, որ նշանակուած էին զօրքերի վերայ և ասաց նորանց. Նորան դուրս հանեցէք կարգերի միջից, և նորա հետից գնացողին սրով սպանեցէք. վասն զի քահանան ասել էր, որ Տիրոջ տան մէջ չսպանուի։ Եւ իրանց ձեռքերը ձգեցին նորա վերայ. և երբոր նա թագաւորի պալատը մտնող ձիերի ճանապարհով գնում էր, այնտեղ սպանուեցաւ։ Եւ Յովիադան ուխտ դրաւ Տիրոջ և թագաւորի մէջ և ժողովրդի մէջ, որ Տիրոջ ժողովուրդը լինի, նաև թագաւորի և ժողովրդի մէջ։ Եւ երկրի բոլոր ժողովուրդը եկաւ Բահաղի տունը և քանդեցին նորա սեղանները և նորա պատկերները լաւ փշրեցին, և Բահաղի քուրմը՝ Մատթանին սպանեցին սեղանների առջև. և քահանան ստիկաններ դրաւ Տիրոջ տան վերայ։ Եւ վերառաւ հարիւրապետներին և գիկնապահներին ու սուրհանդակներին և երկրի բոլոր ժողովրդին, և իջեցրին թագաւորին Տիրոջ տանից և սուրհանդակների դրան ճամբով եկան թագաւորի պալատը. և նա նստեց թագաւորական աթոռի վերայ։ Եւ երկրի ամեն ժողովուրդը ուրախացաւ, և քաղաքը խաղաղացաւ։ Եւ Գոթողիային սպանեցին սրով թագաւորի տանը։ Եւ Յովաս եօթը տարեկան էր երբոր թագաւոր եղաւ։

ԳԼ. ԺԲ

Եւ եօթներորդ տարին Յովաս թագաւոր եղաւ, և քառասուն տարի թագաւորեց Երուսաղէմումը և նորա մօր անունն էր Սարիա՝ Բեերսաբէէից. Եւ Յովաս ուղղութիւն արաւ Տիրոջ աչքին իր բոլոր օրերումը, քանի որ Յովիադա քահանան նորան սովորեցնում էր։ Միայն թէ բարձրաւանդակները չվերացան. ժողովուրդը տակաւին զոհում և խունկ էր ծխում բարձրաւանդակների վերայ։

Եւ Յովաս ասաց քահանաներին. Նուէրքի բոլոր փողը որ բերվում է Տիրոջ տունը՝ անց կեցնող փողը, իւրաքանչիւր մարդու անձանց գնահատութեան փողը՝ այն ամեն փողը, որ ամեն մարդ իր յօժար կամքը նուիրում է որ Տիրոջ տունը բերէ. թող քահանաները իրանց համար վեր առնեն ամեն մարդ իր ծանօթից և նորանով նորոգեն տան վնասուած տեղերը ամեն ուր որ վնաս գտնուի։

Եւ եղաւ Յովաս թագաւորի քսան ու երեքերորդ տարին, որ քահանաները տան վնասուած տեղերը չէին նորոգել։ Եւ Յովաս թագաւորը կանչեց Յովիադա քահանային և քահանաներին և ասաց նորանց. Ինչո՞ւ համար չէք

նորոգում ասն փեսասուած տեղե-
րը, սրնեն հիմա էլ փող չատ-
նէք ձեր ծանօթներից, այլ ասն
փեսասուածի համար տուէք սյն։
8 Եւ հաճութիւն տուին քահա-
նաները, որ ժողովրդից փող չատ-
նեն, և ասն փեսասուածը չնորո-
9 գեն։ Եւ Յովհոյադա քահանան մի
արկղ առաւ և նորա խուփի վե-
րայ մի ծակ փորեց, և նորան
դրաւ սեղանի կշտին Տիրոջ տու-
նը եկող մարդկանց աջ կողմին.
և դրան պահպանութիւն անող
քահանաները այն տեղ էին դը-
նում ամեն փող, որ բերվում էր
Տիրոջ տունը։
10 Եւ եղաւ երբոր տեսնում էին
որ արկղումը փողը շատ էր, սյն
ժամանակ գալիս էր թագաւորի
գրագիրը և քահանայապետը և
ծրարում էին և համրում Տի-
11 րոջ տանը գտնուած փողը. Եւ
հաշուած փողը տալիս էին Տիրոջ
տան վերայ նշանակուած գոր-
ծաւորների ձեռքը. և նորանք
վճարում էին հիւանդերին և Տի-
12 րոջ տունը շինող գործաւորնե-
րին, Եւ որմնադիրներին ու քա-
րակոփներին. և որ փայտեր և տա-
շած քարեր առնեն Տիրոջ տան
փեսասուած տեղերը նորոգելու, և
սյն ամեն բանի համար, որ ծախք
կ'լինի տանը նորոգելու համար։
13 Միայն չէին շինում Տիրոջ տան
համար արծաթի բաժակներ, բազ-
մոցկներ, կոնքեր, փողեր և ա-
մեն տեսակ ոսկի անօթներ և ար-
ծաթի անօթներ Տիրոջ տան մէջ
14 եկած փողից։ Այլ տալիս էին
գործաւորներին և նորանով նո-
15 րոգում էին Տիրոջ տունը։ Եւ
հաշիւ չէին ուզում սյն մարդ-
կանցից, որանց ձեռքն էր տըր-
ւում փողը, որ գործաւորներին
տային, վասն զի հաւատարմու-
16 թեամբ էին աշխատում։ Յան-
ցանքի փողը և մեղքի փողը Տի-
րոջ տունը չէր բերվում, քահա-
նաներինն էր լինում։
17 Այն ժամանակ վեր եկաւ Ա-
սորց Ազայէլ թագաւորը և պա-
տերազմեց Գեթի դէմ ու յաղ-
թեց նորան. և Ազայէլը դարձրեց
իր երեսը, որ վեր գնաց Երուսա-
ղէմ։ Եւ Յուդայի Յովաս թագա- 18
ւորն առաւ բոլոր նուէրները, որ
նուիրել էին նորա հայրերը Յով-
սափատը և Յովրամը և Ա.քազիան
Յուդայի թագաւորները, և իր
նուէրները և թագաւորի ասն և
Տիրոջ ասն գանձարաններում
գտնուող բոլոր ոսկին և ուղար-
կեց Ասորց Ազայէլ թագաւորին,
և նա գնաց Երուսաղէմի վերայից։
Եւ Յովասի գործերի մնացորդը 19
և նորա բոլոր արածը, սյս նո-
րանք գրուած են Յուդայի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
Եւ նորա ծառաները վեր կացան 20
և դաւաճանութիւն արին և բա-
նեցին Յովասին Մելլոյի տան
մէջ Սիլլայի գաս 'ի վայրումը։
Եւ Յովզաքարը՝ Սամեթի որդին 21
և Յովզաբադը՝ Սոմերի որդին՝ նո-
րա ծառաները, զարկեցին նո-
րան, և նա մեռաւ. և նորան
թաղեցին իր հայրերի հետ Դաւ-
թի քաղաքումը, և նորա տեղը
թագաւոր եղաւ նորա որդին Ա-
մասիան։

ԳԼ. ԺԴ

Յուդայի թագաւոր՝ Ա.քազիայի 1
որդի Յովասի քառասներեքերորդ
տարին թագաւոր եղաւ Ամասիան
վերայ Յեուի որդին Յովաքազը
Սամարիայում տասնեօթը տարի
Ե֊Ե֊Ր֊Ե֊Լ֊Վ։ Եւ չարութիւն ա- 2
րաւ Տիրոջ աչքին, և դնաց Դ.ա-
ւթեան Յեհոադամի մեղքի ե-
ղանից, որ խարշէլին մեղանչել
տուաւ. նորանից չհեռացաւ։ Եւ 3
Տիրոջ բարկութիւնը բորբոքեց
Իսրայէլի դէմ, և նորանց մատ-
նեց Ասորց թագաւոր Ազայէլի
և Ազայէլի որդի Բենհադադի ձեռ-
քը շարունակ։
Եւ Յովաքազն աղօթք արաւ 4
դէպի Տիրոջ երեսը, և Տէրը լսեց
նորան, վասն զի տեսաւ Իսրա-
յէլի նեղութիւնը, որով Ասորց
թագաւորը նորանց նեղացնում
էր։ Եւ Տէրը Իսրայէլին մէկ փըր- 5
կիչ տուաւ, և նորանք դուրս ե-
կան Ասորց ձեռքի տակից, և

Իսրայէլի որդիքը բնակուեմ էին
իրանց վրաններուն մէջ մինչեւ երկ
6 և միւս օրը։ Միայն թէ չհետա-
ցան Յերոբովամի տան մեղքերը,
որ մեղանչել տուաւ Իսրայէլին.
նորանով գնացին. նաև կուռքի
անտառը կենալ էր Սամարիա-
7 յում։ Վասն զի Յովաքազի հա-
մար զօրք չթողեց բացի յիսուն
ձիաւոր և տասը կառք և տասը
հազար հետեւակ զօրք, որովհետեւ
Ասորոց թագաւորը զորանց բնա-
ջինջ էր արել, և նորանց շինել
էր իրեն կոխ տրուելու հող։
8 Եւ Յովաքազի գործերի մնացոր-
դը և նորա բոլոր արածը և նորա
զօրութիւնը, ահա նորանք գրու-
ած են Իսրայէլի թագաւորնե-
9 րի յիշատակաց գրքումը։ Եւ Յո-
վաքազը հանգչեց իր հայրերի հետ
և նորան թաղեցին Սամարիայում,
և նորա տեղ թագաւոր եղաւ
նորա որդին Յովաս։
10 Յուդայի Յովաս թագաւորի ե-
րեսունեւեօթներորդ տարին թա-
գաւոր եղաւ Իսրայէլի վերայ Յո-
վաքազի որդին Յովաս Սամա-
րիայում՝ տասնուվեց տարի թա-
11 գաւորեց։ Եւ չարութիւն արաւ
Տիրոջ աչքին. չհետացաւ նո-
բատեան Յերոբովամի բոլոր մեղ-
քերից, որ Իսրայէլին մեղանչել
տուաւ. նորանով գնաց։
12 Եւ Յովասի գործերի մնացորդը
և նորա բոլոր արածը և նորա
զօրութիւնը, որ Յուդայի Ամա-
սիա թագաւորի հետ պատերազմ
արաւ, ահա նորանք գրուած են
Իսրայէլի թագաւորների յիշա-
13 տակաց գրքումը։ Եւ Յովասը
հանգչեց իր հայրերի հետ, և նորա
աթոռի վերայ նստեց Յերոբովա-
մը. և Յովասը թաղուեցաւ Իս-
րայէլի թագաւորների հետ Սա-
մարիայում։
14 Եւ Եղիսէն հիւանդացաւ իր
հիւանդութիւնով որով մեռաւ.
և Իսրայէլի Յովաս թագաւորը
իջաւ նորա մօտ և լացաւ նորա
երեսին և ասաց. Հայր իմ, հայր
իմ, Իսրայէլի կառքերը և նորա
15 ձիաւորները։ Եւ Եղիսէն ասաց
նորան. Վէր առ մի աղեղ և
նետեր. և նա առաւ մի աղեղ
և նետեր։ Եւ ասաց Իսրայէլի 16
թագաւորին. Ձեռքդ պնդացրուս
աղեղիդ վերայ, և նա ձեռքը
պնդացրեց. և Եղիսէն իր ձեռքը
թագաւորի ձեռքի վերայ դրաւ,
և ասաց. Բաց արա պատու- 17
հանը դէպի արեւելք. և նա բաց
արաւ. և Եղիսէն ասաց, Նետը
դիր, և նա գցեց. Եղբ-էն էլ ա-
սաց. Տիրոջ փրկութեան նետը,
և Ասորոց դէմ փրկութեան նե-
տը, և դու պիտի յաղթես Ա-
սորոց Ափեկումը մինչև որ վեր-
ջանան։ Եւ ասաց. Առ նետերը. 18
և նա առաւ. և ասաց Իսրայէլի
թագաւորին. Զետինը զարկիր.
և նա զարկեց երեք անգամ ու
կանգնեց։ Եւ Աստուծոյ մարդը 19
բարկացաւ նորա վերայ և ասաց.
Հինգ կամ վեց անգամ պէտք էր
զարկել, այն ժամանակ կ'զարկէ-
իր Ասորոց մինչև որ վերջանային,
բայց հիմա միայն երեք անգամ
ես զարկելու։
Եւ Եղիսէն մեռաւ և նորան 20
թաղեցին. և Մովաբացոց գուն-
դերը եկան երկրի վերայ միւս
տարին։ Եւ նորանք մի մարդ էին 21
թաղում, և ահա տեսան մի
գունդ, և այն մարդը գցեցին Ե-
ղիսէի գերեզմանի մէջ. և մարդը
գնաց դիպաւ Եղիսէի ոսկորնե-
րին, ու կենդանացաւ կանգնեց
իր ոտքերի վերայ։
Եւ Ասորոց Ազայէլ թագաւո- 22
րը նեղում էր Իսրայէլին Յովա-
քազի բոլոր օրերումը. Բայց Տէ- 23
րը նորանց ողորմեց և գթացաւ
նորանց և դէպի նորանց դարձաւ
Աբրահամի, Իսահակի և Յակոբի
հետ ունեցած ուխտի համար. և
չուզեց նորանց կորցնել, և նո-
րանց չձգեց իր երեսից մինչև
հիմա։
Եւ Ասորոց Ազայէլ թագաւո- 24
րը մեռաւ, և նորա որդին Բե-
նադադը թագաւորեց նորա տե-
ղը։ Եւ Յովասի որդին Յովաս 25
դարձեալ առաւ Ազայէլի որ-
դի Բենադադի ձեռքից այն քա-
ղաքները որ առել էր նա իր հօր
Յովաքազի ձեռքից պատերազմի

մէջ. երեք անգամ Յովսաբ յաղթեց նորան, և ետ գարձրեց Իսրայէլի քաղաքները.

ԳԼ. ԺԴ

1 Իսրայէլի Յովաքազի որդի Յովաս թագաւորի երկրորդ տարին թագաւորեց Յուդայի Յովաս թագաւորի որդին Ամասիան։ 2 Քսան և հինգ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և քսան ու ինը տարի թագաւորեց Երուսաղէմում. և նորա մօր անունն էր 3 Յովադան Երուսաղէմից։ Եւ ուղղութիւն արաւ Տիրոջ աչքին, բայց ոչ թէ իր Հօրը Դաւթի պէս. բոլոր իր Հօր Յովսաի արած 4 ձին պէս արաւ նա։ Միայն թէ բարձրաւանդակները չհեռացան. ժողովուրդը տակաւին զոհում և խունկ էր ծխում բարձրաւանդակների վերայ։ 5 Եւ երբոր թագաւորութիւնը հաստատուեցաւ նորա ձեռքումը, սպանեց իր ծառաներին որ իր Հօրը թագաւորին սպանել էին։ 6 Բայց ապաստողների որդիանցը չմեռցրեց, ինչպէս որ գրուած է Մովսէսի օրինաց գրքումը, որ Տէրը հրամայեց ասելով. Հայրերը որդիանց տեղ չմեռցնուին, և որդիքը Հայրերի տեղ չմեռցնուին, այլ ամեն մարդ իր յանցանքի համար մեռցնուի։ 7 Նա զարկեց Եդոմացիներին Աղի ձորումը տասը հազար հոգի, և վէմն առաւ պատերազմով. և անունը Յեկթոսէլ դրաւ մինչև այսօր։

8 Այն ժամանակ Ամասիան պատգամաւորներ ուղարկեց Յեհուի որդու Յովաքազի որդի Յովասի մօտ ասելով. Եկ՝ մէկ իրար երես տեսնենք։ 9 Բայց Իսրայէլի Յովաս թագաւորը հրէշտ ուղարկեց Յուդայի Ամասիա թագաւորին ասելով. Լիբանանի փուշը ըսաւ ուղարկեց Լիբանանի եղևնափայտին ասելով. Աղջիկդ իմ որդուն կին տուր, բայց Լիբանանի վայրի գազանը անցկացաւ և փուշը կոխոտեց։ 10 Արդարև յաղթեցիր Եդոմին, և սիրտդ քեզ հպարտացուցրել է. ծանր կաց և տանդ նստիր. և ինչո՞ւ համար ես գըրգռում չարութիւնով, որ ինկնես դու և Յուդան էլ քեզ հետ։ 11 Բայց Ամասիան չլսեց. և Իսրայէլի Յովաս թագաւորը վեր գընաց և իրար երես տեսան նա և Յուդայի Ամասիա թագաւորը Յուդայի Բեթսամիւսում։ 12 Յուդան յաղթուեցաւ Իսրայէլի առջև, և ամեն մարդ փախաւ իր վրանը։ 13 Եւ Ոքոզիայի որդու Յովասի որդի՝ Յուդայի թագաւոր Ամասիային բռնեց Իսրայէլի Յովաս թագաւորը Բեթսամիւսում, և եկաւ Երուսաղէմ և քանդեց Երուսաղէմի պարիսպը Եփրեմի դռնից մինչև Անկեան դուռը չորս հարիւր կանգուն։ 14 Եւ վեր առաւ բոլոր ոսկին և արծաթը և այն բոլոր անօթները, որ գտնվում էին Տիրոջ տանը և թագաւորի տան գանձարաններումը, և պատանդներ ու յետ դարձաւ Սամարիա։

15 Եւ Յովասի գործերի մնացորդը, որ նա արաւ, և նորա զօրութիւնը և նորա պատերազմը, որ արաւ Յուդայի Ամասիա թագաւորի հետ, ահա նորանք գրուած են Իսրայէլի թագաւորների յիշատակաց գրքումը։ 16 Եւ Յովասը ննջեց իր Հայրերի հետ և թաղուեցաւ Սամարիայում Իսրայէլի թագաւորների հետ, և նորա որդին Յերոբովամը թագաւորեց նորա տեղ։

17 Եւ Յուդայի Յովասեան Ամասիա թագաւորը Իսրայէլի թագաւոր Յովաքազեան Յովասի մեռնելուց յետոյ տասն ու հինգ տարի։ 18 Եւ Ամասիայի գործերի մնացորդը, ահա նորանք գրուած են Յուդայի թագաւորների յիշատակաց գրքումը։ 19 Եւ նորա դէմ սպառամբութիւն արին Երուսաղէմում, և նա փախաւ Լաքիս. և հրէշտ ուղարկեցին նորա ետևից և նորան մեռցրին այնտեղ։ 20 Եւ նորան բերին ձիերով, և թաղուեցաւ Երուսաղէմում իր Հայրերի հետ Դաւթի քաղաքումը։ 21 Եւ Յուդայի բոլոր

ժողովուրդը առաւ *Ազարիային
տասանուվեց տարեկան, և նորան
թագաւոր շինեցին իր հօր Ամա-
22 սիայի տեղ։ Սա շինեց Ելաթը
և թագաւորը եւս դարձրեց նո-
րան Յուդային իր հայրերի հետ
ննջելուց յետոյ։
23 Յուդայի թագաւոր Յովասեան
Ամասիայի տասնուհինգերորդ
տարին, թագաւոր եղաւ Իսրա-
յէլի թագաւոր Յովասի որդին
Յերոբովամը Սամարիայում քա-
ռասնուեւմէկ տարի թ—ֆ—ր—բ—ե—վ։
24 Եւ չարութիւն արաւ Տէրոջ աչ-
քին, Նաբատեան Յերոբովամի
մեղքից, որ նա Իսրայէլին մե-
25 ղանչել տուաւ, չհեռացաւ։ Նա
եւս դարձրեց Իսրայէլի սահմանը
Եմաթից սկսած մինչև դաշտի ծո-
վը Իսրայէլի Տէր Աստուծոյ խօս-
քին համեմատ, որ խօսել էր իր
ծառայ Գեթքոփերացի Ամաթ-
եան Յոփեան մարգարէի ձեռով։
26 Վասն զի Տէրը տեսաւ Իսրայէլի
շատ դառն տառապանքը, որ ոչ
կապուած կար և ոչ արձակուած
կար. և Իսրայէլին օգնող չկար։
27 Եւ Տէրը չէր խօսել Իսրայէլի ա-
նունը երկնքի տակից ջնջելու հա-
մար. և նորանից փրկեց Յովասի
որդի Յերոբովամի ձեռքով։
28 Եւ Յերոբովամի գործերի մը-
նացորդը, և նորա բոլոր արածը
և նորա զօրութիւնը, որ պա-
տերազմեց, և որ եւս դարձրեց
Դամասկոսը և Եմաթը Յուդային
Իսրայէլով, ահա նորանք գրուած
են Իսրայէլի թագաւորների ժա-
29 մանակագրքումը։ Եւ Յերոբո-
վամը ննջեց իր հայրերի հետ՝ Իս-
րայէլի թագաւորների հետ. և
նորա որդին Զաքարիան թագա-
ւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԺԵ

1 Իսրայէլի թագաւոր Յերոբովամի
քսանուեօթներորդ տարին թա-
գաւոր եղաւ Յուդայի թագաւոր
Ամասիայի որդին Ազարիան։
2 Տասն ու վեց տարեկան էր երբոր
թագաւոր եղաւ, և հիսուներկու
տարի թագաւորեց Երուսաղէ-
մում, և նորա մօր անունն էր
3 Յեքելիա՝ Երուսաղէմից։ Եւ ու-
ղղութիւն արաւ Տէրոջ առջև բո-
լորովին այնպէս, ինչպէս որ ա-
րաւ իր հայրը Ամասիան։ Միայն
4 թէ բարձրաւանդակները չհեռա-
ցան. ժողովուրդը տակաւին զո-
հում և խունկ էր ծխում բարձ-
րաւանդակների վերայ։ Եւ Տէրը
5 զարկեց թագաւորին, և նա բո-
րոտ էր մինչև իր մահուան օրը,
և նա հիւանդանոցում էր կե-
նում. իսկ թագաւորի որդի Յո-
վաթամը՝ տան վերաւորը դա-
ւում էր երկրի ժողովրդին։
6 Եւ Ազարիայի գործերի մնացոր-
դը և նորա բոլոր արածը, ահա
նորանք գրուած են Յուդայի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
7 Եւ Ազարիան ննջեց իր հայրերի
հետ, և նորան թաղեցին իր հայ-
րերի հետ Դաւթի քաղաքումը.
և նորա որդին Յովաթամը թա-
գաւոր եղաւ նորա տեղ։
8 Յուդայի թագաւոր Ազարիայի
երեսունեւթերորդ տարին թագա-
ւորեց Իսրայէլի վերայ Յերոբո-
վամի որդին Զաքարիան Սամա-
րիայում վեց ամիս թ—ֆ—ր—բ—ե—վ։
9 Եւ չարութիւն արաւ Տէրոջ աչ-
քին, ինչպէս որ իր հայրերն էին
արել. չհեռացաւ Նաբատեան
Յերոբովամի մեղքից, որ Իսրա-
յէլին մեղանչել տուաւ։ Եւ նո-
10 րա դէմ ապստամբեց Յաբիսի
որդին Սեղղումը, և նորան զար-
կեց ժողովրդի առջև և սպանեց
նորան, և թագաւոր եղաւ նորա
տեղ։
11 Եւ Զաքարիայի գործերի մնա-
ցորդը, ահա գրուած են Իսրայէ-
լի թագաւորների յիշատակաց
12 գրքումը։ Սա Տէրոջ այն խօսքն
է, որ խօսեց Յեհուի հետ ասելով.
Քո որդիքը մինչև չորրորդ սերուն-
դը կ'նստեն քեզ համար Իսրայէ-
լի աթոռի վերայ, և այնպէս ե-
ղաւ։
13 Յաբիսի որդին Սեղղումը թա-
գաւոր եղաւ Յուդայի Ոզիա թա-
գաւորի երեսունեւիններորդ տա-

*կամ Ոզիա

բին, և թագաւորութիւն արաւ
մէկ ամիս ժամանակ Սամարիա-
14 յումն։ Եւ վեր եկաւ Գադդայի
որդի Մանայեմը Թերսայից. և
եկաւ Սամարիա և զարկաւ Յա-
բիսի որդի Սեղղումին Սամարիա-
յում և սպանաւ նորան ու թա-
գաւորեաց նորա տեղ։
15 Եւ Սեղղումի գործերի ճա-
ցորդը. և նորա սրած ապստամ-
բութիւնը, ահա նորանք գրուած
են Իսրայէլի թագաւորների ժա-
16 մանակաց գրքումը։ Այն ժամա-
նակ զարկաւ Մանայեմը Թափ-
սան և բոլոր նորանում եղողնե-
րին և նորա սահմաններըը Թեր-
սայից սկսած, որովհետև չէր դի-
րը չբացաւ, նա էլ չարդեց. ին-
րա բոլոր յղիներին ճղռտեց։
17 Յուդայի թագաւոր Ազարիայի
երեսունուհինգերորդ տարին թա-
գաւոր եղաւ Գադդէի որդին
Մանայեմը Իսրայէլի վերայ տա-
սը տարի Սամարիայումը։
18 Եւ չարութիւն արաւ
Տիրոջ աչքին. Նաբատեան Յե-
րոբոամի մեղքերից, որ Իսրա-
յէլին մեղանչել տուաւ, չհեռա-
ցաւ իր բոլոր օրերումը։
19 Երկրի վերայ եկաւ Ասորեստա-
նի թագաւորը՝ Փուղը, և Մա-
նայեմը Փուղին հազար տաղանդ
արծաթ տուաւ որ նորա ձեռքը
իր հետ լինիր, որ թագաւո-
րութիւնը հաստատէ իր ձեռքին։
20 Եւ Մանայեմը հարկ դրաւ այս
արծաթը Իսրայէլի բոլոր հա-
րուստների վերայ Ասորեստանի
թագաւորին տալու համար՝ իւ-
րաքանչիւր անձին քսանական
սիկղ արծաթ. և Ասորեստանի
թագաւորը ետ դարձաւ և այն-
տեղ չմնաց այն երկրումը։
21 Եւ Մանայեմի գործերի ճա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Իսրայէլի
թագաւորների ժամանակաց գրք-
22 քումը. Եւ Մանայեմը ննջեց իր
հայրերի հետ, և նորա որդին
Փակէիան թագաւոր եղաւ նորա
տեղ։
23 Յուդայի Ազարիա թագաւորի
ժամանակին երեսունհոգերորդ տարին թագաւոր
եղաւ Մանայեմի որդին Փակէի-
ան Իսրայէլի վերայ Սամարիա-
յումն երկու տարի թ-ա-ր-ե-լ-ա-վ։
24 Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչ-
քին, չհեռացաւ Նաբատեան Յե-
րոբոամի մեղքերից որ Իսրայէ-
լին մեղանչել տուաւ։
25 Եւ նորա դէմ դաւաճանութիւն արաւ իր
զօրապետը Ռոմելեայի որդին Փա-
կէէ, և զարկաւ նորան Սամարի-
այումը թագաւորի պալատի դահ-
լիճումը Արգովբի և Արիէի հետ,
և նորա հետ կային Գաղաադացիներից յիսուն հոգի. և նորան
սպանեց և թագաւոր եղաւ նորա
տեղը։
26 Եւ Փակէիայի գործերի ճա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Իսրայէլի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
27 Յուդայի Ազարիա թագաւորի
հիսունուերկրորդ տարին, թա-
գաւոր եղաւ Ռոմելեայի որդին
Փակէէն Իսրայէլի վերայ Սամա-
րիայումը քսան տարի թ-ա-ր-ե-լ-ա-վ։
28 Եւ չարութիւն արաւ Տիրոջ
աչքին. չհեռացաւ Նաբատեան
Յերոբոամի մեղքերից, որ Իսրա-
յէլին մեղանչել տուաւ։
29 Իսրայէլի Փակէէի օրերումը եկաւ Ա-
սորեստանի թագաւոր-փուղասար
թագաւորը և առաւ Իյոնը, Ա-
բել-բեթմաաքան, Յանովէն,
Կադէսը, Հասորը, Գաղաադը և
Գալիլեան՝ Նեփթաղիմի բոլոր եր-
կիրը, և նորանց գերի տարաւ
Ասորեստան։
30 Եւ Էլայի որդի Ոսէէն դաւաճանութիւն արաւ
Ռոմելեայի որդի Փակէէի դէմ,
և զարկաւ նորան ու սպանեց և
թագաւոր եղաւ նորա տեղ Ոզիայի որդի Յոթամի քսանե-
րորդ տարին։
31 Եւ Փակէէի գործերի ճա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
հա նորանք գրուած են Իսրայէլի թա-
գաւորների յիշատակաց գրքումը։
32 Իսրայէլի թագաւոր Ռոմելեայի
որդի Փակէէի երկրորդ տարին
թագաւոր եղաւ Յոթամ՝ Յու-
դայի թագաւոր Ոզիայի որդին։
33 Քսան և հինգ տարեկան էր, երբ
որ թագաւոր եղաւ, և տասն ու

վեց տարի թագաւորեց Երուսաղէմում, և նորա մօր անունն էր
31 Յերուսա՝ դուստր Սադովկի։ Եւ Տէրոջ աչքին ուղղութիւն արաւ,
բոլորովին իր հօր Ոզիայի արա-
33 ծին պէս արաւ. Միայն թէ բարձրաւանդակները չհեռացան.
ժողովուրդը տակաւին զոհում
և խունկ էր ծխում բարձրաւան-
դակների վերայ. նա շինեց Տէրոջ
տան բարձր դուռը։

36 Եւ Յովաթամի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը, ա-
Հա նորանք գրուած են Յուդայի
թագաւորների յիշատակաց գըր-
37 քումը։ Ա՛յն օրերումը Տէրը սկը-
սեց Յուդայի վերայ ուղարկել
Ասորոց Ռասին թագաւորին և
38 Ռոմմելայի որդի Փակէէին։ Եւ
Յովաթամը ննջեց իր հայրերի
հետ և թաղուեցաւ իր հայրերի
հետ իր հօր Դաւթի քաղաքու-
մը, և նորա որդին Աքազը թա-
գաւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԺԶ

1 Ռոմմելայի որդի Փակէէի տասն
եօթներորդ տարին Թագաւոր ե-
ղաւ Աքազը՝ Յուդայի Յովաթամ
2 թագաւորի որդին։ Աքազը քսան
տարեկան էր երբոր թագաւոր
եղաւ և տասնուվեց տարի Թա-
գաւորեց Երուսաղէմումը. և ուղ-
ղութիւն չարաւ իր հօր Դաւթի
3 Տէր Աստուծոյ աչքին։ Եւ գնաց
Իսրայէլի թագաւորների ճանա-
պարհովը, նաև իր որդին անց-
կացրեց կրակով այն ազգերի գար-
շելութեան պէս, որոնց Տէրը քշեց
4 Իսրայէլի որդկանց առջևից։ Եւ
զոհեր էր մատուցանում և խունկ
էր ծխում բարձրաւանդակների և
բլուրների վերայ և ամեն կանաչ
ծառի տակ։

5 Ա՛յն ժամանակ վեր եկան Ասո-
րոց Ռասին թագաւորը և Իսրայէ-
լի թագաւորը Ռոմմելայի որդին
Փակէէն Երուսաղէմի վերայ պա-
տերազմի, և պաշարեցին Աքազին
և չկարողացան նորա յաղթել։
6 Ա՛յն ժամանակ Ասորոց Ռասին
թագաւորը եաւ դարձրեց Ելաթը
Ասորեստանցիներին և Յուդա-
եանների դուրս արաւ Ելաթից,
և *Ասորիք եկան Ելաթ և բնա-
կեցին այնտեղ մինչև այսօր։ Եւ 7
Աքազը պատգամաւորներ ուղար-
կեց Ասորեստանի Թագլաթ-փա-
ղասար թագաւորի մօտ ասելով.
Ես քո ծառան և քո որդին եմ,
ել և ինձ ազատիր Ասորոց թա-
գաւորի ձեռից և Իսրայէլի թա-
գաւորի ձեռից, որ վեր են կացել
ինձ վերայ։ Եւ Աքազը վեր ա- 8
ռաւ այն արծաթը և այն ոսկին,
որ գտնվում էր Տէրոջ տանը և
թագաւորի տան գանձարանները-
րումը, և ընծայ ուղարկեց Ա-
սորեստանի թագաւորի համար։
Եւ Ասորեստանի թագաւորը նո- 9
րան լսեց, և Ասորեստանի թա-
գաւորը վեր գնաց Դամասկոսի
վերայ, և նորան առաւ և նորան
գերի տարաւ Կիր, և Ռասինին
մեռցրեց։

Եւ Աքազ թագաւորը գնաց 10
Թագլաթ-փաղասարին դիմաւո-
րելու Դամասկոս և տեսաւ Դա-
մասկոսի սեղանը. և Աքազ թա-
գաւորը ուղարկեց Ուրիա քահա-
նային սեղանի օրինակը և նորա
ձևը նորա բոլոր շինուածքին հա-
մեմատ։ Եւ Ուրիա քահանան 11
շինեց սեղանը բոլորովին Աքազ
թագաւորի Դամասկոսից ուղար-
կածին պէս, այնպէս շինեց Ու-
րիա քահանան մինչև Աքազ
թագաւորի Դամասկոսից գալը։
Եւ թագաւորը եկաւ Դամասկո- 12
սից, և թագաւորը տեսաւ սե-
ղանը, և թագաւորը մօտեցաւ
սեղանին, և նորա վերայ ողջա-
կէզ մատուցրեց։ Եւ այրեց իր 13
ողջակէզը և իր նուէրը, և թա-
փեց իր թափելու նուէրը, և
սրսկեց իր խաղաղութեան զոհի
արիւնը սեղանի վերայ։ Եւ այն 14
պղնձի սեղանը, որ Տէրոջ առջև
է տեղափոխեց տան առաջից նո-
սեղանի և Տէրոջ տան միջտեղի-
ցը, և նորան դրաւ նոր սեղանի
մօտ դէպի հիւսիս։ Եւ Աքազ 15
թագաւորը հրամայեց Ուրիա քա-

---

*Եղովմացիք

Հանդերձին ասելով. Այդ մեծ սեղանի վերայ այրիր առաւօտեան ողջակէզները և երեկոյեան զոհը և թագաւորի ողջակէզը և նորա զոհը. և երկրի բոլոր ժողովրդի ողջակէզը և նորանց զոհը, և նորանց թափելու նուէրը, և ողջակէզների բոլոր արիւնը և զոհերի բոլոր արիւնը նորա վերայ սրսկիր, իսկ այն պղնձի սեղանը ինձ համար լինի, 16 նեմ։ Եւ Ուրիա քահանան բոլորովին այնպէս արաւ ինչպէս որ Աքազ թագաւորը հրամայեց։ 17 Եւ Աքազ թագաւորը կտրատեց մեքենովճիների սպասուածները և վեր առաւ նորանց վերայից աւազանները, և վայր առաւ ծովը պղնձի եզների վերայից որ նորա տակին էին և դրաւ 18 նորան մի քարայատակի վերայ։ Եւ շաբաթի ծածկոցատար ճանապարհը, որ շինել էին տաճարի համար, և թագաւորի դուրսի ճանապարհը դարձրեց դէպի Տէրոջ տունը Ասորեստանի թագաւորի պատճառով։

19 Եւ Աքազի գործերի մնացորդը որ արել է ահա նորանք գրուած են Յուդայի թագաւորների ժամանակաց գրքումը։ 20 Եւ Աքազը ննջեց իր հայրերի հետ և թաղուեցաւ իր հայրերի հետ Դաւթի քաղաքումը, և նորա տեղ թագաւոր եղաւ նորա որդին Եզեկիան։

ԳԼ. ԺԹ

1 Յուդայի թագաւոր Աքազի երկոտասաներորդ տարին թագաւոր եղաւ Էլայի որդին Ովսէէն Սամարիայումը Իսրայէլի վերայ ինը 2 տարի թոփ-ուբէլով։ Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ աչքին, միայն թէ Իսրայէլի այն թագաւորներին պէս չէ, որ իրանից առաջ 3 կային։ Նորա դէմ վեր ելաւ Ասորեստանի Սաղմանասար թագաւորը, և Ովսէէն նորան ծառայ եղաւ. և նորան հարկ էր 4 տալիս։ Եւ Ասորեստանի թագաւորը Ովսէէի վերայ նենգութիւն գտաւ, որ նա դեսպաններ էր ուղարկել Եգիպտոսի Սուա թագաւորի մօտ, և ամեն տարուան պէս հարկ չէր ուղարկել Ասորեստանի թագաւորին. և Ասորեստանի թագաւորը բռնեց նորան և բանտարկեց նորան։ 5 Եւ Ասորեստանի թագաւորը գնաց բոլոր երկրովը ու եկաւ Սամարիա և պաշարեց նորան երեք տարի։

6 Ովսէէի իններորդ տարին Ասորեստանի թագաւորը առաւ Սամարիան, և Իսրայէլին գերի տարաւ Ասորեստան, և նորանց բնակեցրեց Քաղդէայում և Գովզանի Քաբովր գետի մօտ և Մարաց քաղաքներումը։ 7 Երբոր Իսրայէլի որդիքը մեղանչում էին իրանց Տէր Աստուծոյ դէմ, որ նորանց հանել էր Եգիպտոսի երկրից Եգիպտոսի Փարաւոն թագաւորի ձեռքի տակից, և վախենում էին ուրիշ աստուածներից։ 8 Եւ գնում էին այն ազգերի կանոններովը, որոնց Տէրը քշել էր Իսրայէլի որդիների առջևից, և Իսրայէլի թագաւորների շինած կանոնովը։ 9 Եւ Իսրայէլի որդիքը գործեր էին գործում գաղտնի, որ ուղիղ չէր իրանց Տէր Աստուծոյ մօտ. և իրանց համար բարձրատեղիներ էին շինում իրանց ամեն քաղաքներումը՝ պահապանոց աշտարակից մինչև պարսպաւոր քաղաք։ 10 Եւ իրանց համար արձաններ էին դնում և խոփ անտառներ ամեն բարձր բլուրի վերայ և ամեն կանաչ ծառի տակ։ 11 Եւ այնտեղ խունկ էին ծխում ամեն բարձրատեղիների վերայ այն ազգերի պէս, որոնց Տէրն իրանց առջևից դուրս էր արել և չար բաներ էին անում Տիրոջը բարկացնելու համար։ 12 Եւ ծառայում էին կուռքերին, որոնց մասին Տէրն ասել էր իրանց. Ըե Այդ բանը չանէք։

13 Այն ժամանակ Տէրը վկայութիւն էր տալիս Իսրայէլի և Յուդայի դէմ իր բոլոր մարգարէների և բոլոր տեսանողների ձեռովը ասելով. Ետ դարձէք ձեր

ջար ճանապարհներիցը և պահեցէք իմ հրամանները և իմ կանոնները բոլոր այն օրէնքին պէս, որ հրամայել եմ ձեր հայրերին և որ ուղարկել եմ ձեզ մօտ իմ ծառաներին մարգարէներին
14 ձեռով։ Բայց նորանք չլսեցին և խստացրին իրանց պարանոցը ինչպէս իրանց հայրերի պարանոցը, որ չէին հաւատում իրանց Տէր
15 Աստուծոյն. Եւ արհամարհեցին նորա կանոնները և նորա ուխտը, որ արել էր իրանց հայրերի հետ, և նորա վկայութիւնները, որ վկայել էր նորանց դէմ, և գնացին անպատշաճութեան ետևից և իրանք էլ անպատշաճ եղան, և այն ազգերի ետևից, որ նորանց շրջակայքումն էին, որոնց մասին Տէրը իրանց հրամայել էր, որ
16 նորանց նման չանեն։ Եւ թողեցին իրանց Տէր Աստուծոյ հրամանները և իրանց համար երկու ձուլածոյ որթ շինեցին և [illegible] անտառներ շինեցին երկնից բոլոր զօրքերի համար և Բահաղին ծա-
17 ռայեցին։ Եւ իրանց տղաքներին և աղջիկներին անցկացրին կրակով և կախարդութիւններ ու հմայութիւն արին և իրանց ծախեցին, որ չարութիւն անեն Տիրոջ առջև նորան բարկացնելու
18 համար։ Եւ Տէրը շատ բարկացաւ Իսրայէլի վերայ և մերժեց նորանց իր երեսից, [illegible] չմնաց բայց միայն Յուդայի ցեղը։
19 Յուդան էլ չպահեց իրանց Տէր Աստուծոյ պատուէրները և գնացին Իսրայէլի կանոններով,
20 որ նորանք շինել էին։ Եւ Տէրը մերժեց Իսրայէլի բոլոր սերունդը և նորանց խոնարհեցրեց և նորանց մատնեց յափշտակողների ձեռքը մինչև որ նորանց դէն
21 գցեց իր երեսի առջեից։ Վասն զի Իսրայէլը պատառուեցաւ Դաւթի տանից և թագաւոր արին Նաբատեան Յերոբովամին. բայց Յերոբովամը դէն քշեց Իսրայէլին Տիրոջ ետևից և նորանց մեծ մեղք
22 գործել տուաւ։ Եւ Իսրայէլի որդիքը գնացին Յերոբովամի բոլոր մեղքերով, որ նա արաւ, նորանից չհեռացան։ Մինչև որ 23
Տէրը նորանց մերժեց իր երեսից ինչպէս որ ասել էր իր ծառաների՝ մարգարէների ձեռով. և այսպէս Իսրայէլը գերի գնաց իր երկրից Ասորեստան մինչև այսօր։

Եւ Ասորեստանի թագաւորը 24
մղեց բերաւ Բաբիլոնից, Քութից, Աւայից, Եմաթից և Սեփարուէմից, և բնակեցրեց Սամարիայի քաղաքներումը Իսրայէլի որդիների տեղը, և նորանք ժառանգեցին Սամարիան և բնակեցին նորա քաղաքներումը։ Եւ 25
նորանք իրանց այնտեղ բնակելու սկզբումը Տէրից չէին վախենում, և Տէրը նորանց վերայ առիւծներ ուղարկեց, որ նորանց սպանում էին։ Եւ Ասորեստանի թագաւորին 26
ասել տուին. այն ազգերը որոնց դու տեղափոխել Սամարիայի քաղաքներումը բնակեցրիր, այն երկրի Աստուծոյ օրէնքը չգիտեն, և նա նորանց վերայ առիւծներ է ուղարկել, որ նորանք մեռցնում են նորանց, որովհետև այն երկրի Աստուծոյ օրէնքը չգիտեն։ Եւ Ասորեստանի 27
թագաւորը հրամայեց ասելով. Ուղարկեցէք այնտեղ այն քահանաներից մէկին, որոնց ես գերի փոխադրեցի այնտեղից. և գընան ու այնտեղ բնակեն և նորանց սովորեցնեն այն երկրի Աստուծոյ օրէնքը։ Եւ եկաւ այն 28
քահանաներից մէկը, որոնց գերի էին փոխադրել Սամարիայից, և բնակեց Բեթէլում, և սովորեցնում էր նորանց, թէ ինչպէս պիտի վախենային Տէրից։ Բայց 29
պէս ամեն մի ազգ իր աստուածներն էր շինում և դնում բարձրաւանդակների տանը, որ շինել էին Սամարացիք, ամեն մի ազգ իր քաղաքներումը, ուր որ իրանք բնակում էին։ Եւ Բաբիլոնի մարդիկը շինեցին Սոքքովթ-բանովթը, և Քութի մարդիկը շինեցին Ներգալը, և Եմաթի մարդիկը շինեցին Ասիմաթը. Եւ 31
Աւացիք շինեցին Նիբհազը և Թարթակը. և Սեփարուէմացիք այ-

բում էին իրանց որդկանցը կրակով Մեփոռեսիմի աստուածներ Ադրամելէքի և Անամելէքի համար։ Բայց Տէրից էլ էին վախենում, և իրանց համան քահանաներ էին շինում բարձրաւանդակների համար ժողովրդի միջից, և նորանց գնում էին բարձրաւանդակների տանը։ Տէրին էլ էին վախենում, և իրանց աստուածներին էլ էին ծառայում այն ազգերի սովորութեան պէս, որոնց փոխադրեց այնտեղից։

Մինչև այսօր էլ նորանք առաջի սովորութիւններին պէս են անում. Տէրից չեն վախենում և չեն անում նորա պատուէրներին և իրաւունքներին պէս. և այն օրէնքին և այն հրամանին պէս, որ Տէրը հրամայեց Յակոբի որդկանցը, որի անունը Իսրայէլ դրաւ։ Եւ Տէրը նորանց հետ ուխտ արաւ և նորանց հրամայեց ասելով. Ուրիշ աստուածներից մի վախենաք, և նորանց մի ծառայէք, և նորանց մի զոհէք։ Այլ միայն Տէրից, որ ձեզ դուրս բերաւ Եգիպտոսի երկրից մեծ զօրով և մեկնած բազուկով, նորանից վախեցէք, և նորան երկրպագեցէք, և նորան զոհ մատուցրէք։ Եւ այն կանոնները և իրաւունքները և օրէնքը ու հրամանը որ գրել է ձեզ համար պահեցէք ամեն ժամանակ անելու համար, և ուրիշ աստուածներից մի վախենաք։ Եւ այն ուխտը, որ ձեզ հետ արել եմ, մի մոռանաք, և ուրիշ աստուածներից մի վախենաք, Այլ ձեր Տէր Աստուածանից վախեցէք, որ նա է ձեզ փրկել ձեր բոլոր թշնամիների ձեռքից։ Բայց նորանք չլսեցին, այլ իրանց առաջի սովորութեան պէս արին։ Եւ այս ազգերը Տէրից էլ էին վախենում և իրանց կուռքերին էլ էին ծառայում, իրանց որդիքն էլ և իրանց որդկանց որդիքն էլ. ինչպէս որ իրանց հայրերն էին անում, իրանք էլ այնպէս են անում մինչև այսօր։

ԳԼ. ԺԸ

Եւ Իսրայէլի թագաւոր Էլայի որդի Ովսէէի երրորդ տարին թագաւոր եղաւ Յուդայի Աքազի որդին Եզեկիան։ Քսան ու հինգ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ և քսանուինը տարի թագաւորեց Երուսաղէմում, և նորա մօր անունն էր Աբի՝ դուստր Զաքարիայի։ Եւ նա ուղղութիւն արաւ Տիրոջ աչքին բոլորովին ինչպէս որ արել էր իր հայրը Դաւիթը։ Նա վերցրեց բարձրաւանդակները և կոտրատեց արձանները և քանդեց կուռքի անտառը, և փշրեց այն օձի պղինձը, որ Մովսէսը շինել էր, վասն մինչև այն օրերը Իսրայէլի որդիքը խունկ էին ծխում նորան, և նորա անունը դրաւ *Նեհեսթան. Իսրայէլի Տէր Աստուծոյն յուսացաւ, և նորանից յետոյ չեղաւ նորա նմանը Յուդայի բոլոր թագաւորների մէջ, և նորանից առաջ էին եղել որոնք նորանից առաջ էին եղել։ Եւ Տիրոջը յարեց, նորա հետևիցը չդարձաւ, և պահեց նորա պատուէրները, որ պատուիրել էր Տէրը Մովսէսին։ Եւ Տէրը նորա հետ էր, և ամեն ուր որ գնում էր՝ յաջողվում էր. և ապստամբեց Ասորեստանի թագաւորի դէմ և նորան չծառայեց։ Նա կարգեց Փղշտացիներին մինչև Գազա և նորա սահմանները, պահապանից աշտարակից մինչև պարսպաւոր քաղաքը։

Եւ Եզեկիայի չորրորդ տարին որ Իսրայէլի թագաւոր Էլայի որդի Ովսէէի եօթներորդ տարին էր Ասորեստանի Սաղմանասար թագաւորը եկաւ Սամարիայի վերայ, և նորան պաշարեց. Եւ երեք տարուց յետոյ առաւ նորան Եզեկիայի վեցերորդ տարում, որ Իսրայէլի Ովսէէ թագաւորի իններորդ տարին էր. այն ժամանակ Սամարիան առնուեցաւ։ Եւ Ասո-

*Պղնձի կոտոր։

բեսաանի թագաւորը Իսրայէլը փախաղրեց Ասորեստան, և նըստոյց զրա՛ս Քաղայում, և Գովզանի Քաբովր գետի մօտ և Մադոց քաղաքներում։ 12 Նորա համար որ չէին լսել իրանց Տէր Աստուծոյ ձայնին, և զանց էին արել նորա ուխտը՝ այն ամենը ինչ որ Տիրոջ ծառան Մովսէսը հրամայել էր. ոչ լսեցին և ոչ արին։

13 Եւ Եզեկիա թագաւորի չորեքտասաներորդ տարին եկաւ Ասրեաանի Սեննեքերիմ թագաւորը Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքների վերայ և առաւ նորանց։ 14 Եւ Յուդայի Եզեկիա թագաւորը հրէտ ուղարկեց Լաքիս Ասորեստանի թագաւորի մօտ ասելով. Յանցանք եմ արել, իմ վերայից գնա՛ և որ բան որ ինձ վերայ դնես՝ կ'հատուցանեմ։ Եւ Ասրեաանի թագաւորը Յուդայի Եզեկիա թագաւորի վերայ երեսուն տալանդ արծաթ և երեսուն տալանդ ոսկի հրէից դրաւ։ 15 Եւ Եզեկիան տուաւ Տիրոջ տանը և թագաւորի տան գանձերում 16 գտնուած բոլոր արծաթը։ Ա՛յն ժամանակ Եզեկիան քանդեց Տիրոջ տաճարի դռների և դրանդիների վերայ եղած ոսկին, որ ինքը Յուդայի Եզեկիա թագաւորը նորանց պատել էր, և տուաւ Ասրեստանի թագաւորին։

17 Եւ Ասրեաանի թագաւորն ուղարկեց Տարթանին, Րաբսարիսին և Րաբսակին Լաքիսից Երուսաղէմ Եզեկիա թագաւորի մօտ շատ զօրքով. և նորանք վեր եկան Երուսաղէմ և այն տեղ հասնելով եկան կանգնեցին Թափչի ագարակի ճանապարհին եղող վերի աւազանի ջրմուղին 18 վերայ։ Եւ թագաւորին կանչեցին. և նորանց մօտ դուրս եկան Քնդկեայի որդին Եղիակիմ պալատի հազարապետը և Սերնան ատենադպիրը և յիշատակաց դպիրը Ասափի որդին Յովաքը։

19 Եւ Րաբսակը նորանց ասաց. Եզեկիային ասացէք. Այսպէս է ասում մեծ թագաւորը՝ Ասրեսանի թագաւորը. Ի՞նչ է այդ յոյսը՝ որի վերայ դու ապաւինել ես. 20 Դու միայն շրթունքի խօսքեր ես խօսում, Ե՛ խորհուրդ ու զօրութիւն՝ պատերազմի համար. Հիմա ո՞ւմ ապաւինեցիր, որ ինձանից ապստամբեցիր։ Ահա 21 դու հիմա ապաւինել ես այն ջախջախած եղէգի ցուպին Եգիպտոսին, որ եթէ մէկ մարդ նորա վերայ կռնէ, ձեռքը պիտի մտնէ և նորան պիտի ծակէ. այսպէս է Եգիպտոսի փարաւոն թագաւորը բոլոր իրան ապաւինողների համար։ 22 Բայց եթէ ինձ ասէք. Թէ մենք մեր Եհովայ Աստուծոյն ենք ապաւինել. մի՞թէ դա այն չէ՞, որի բարձրաւանդակները և սեղանները Եզեկիան վերցրեց, և Յուդային և Երուսաղէմին ասաց. Մէ՛ն այս սեղանի առջև երուսաղէմում երկրպագութիւն արէք։ 23 Արդ ուրեմն մրցիր իմ տիրոջ Ասորեստանի թագաւորի հետ. և ես քեզ երկու հազար ձի տամ, եթէ որ դու կարող ես նորանց վերայ հեծնողներ դնել. 24 Ապա ի՞նչպէս ես կարող դէմ կենալ իմ տիրոջ փոքրիկ ծառաներից մէկ կառավարին, որ դու կառքերի և ձիերի համար Եգիպտոսին ես ապաւինում։ 25 Մի՞ թէ առանց Եհովայի եմ եկել այդ տե՞ղը այս երկրի վերայ նորան աւերելու համար. Եհովան ինձ ասաց. Գնա՛ այն երկրի վերայ և նորան աւերիր։

26 Եւ Քնդկեայի որդին Եղիակիմը և Սերնան ու Յովաքը ասացին Րաբսակին. Խնդրենք՝ ծառաներիդ հետ *Ասորերէն խօսիր, վասն զի մենք հասկանում ենք, և մեզ հետ Երրայեցերէն մի խօսիր պարսպի վերայ եղող ժողովրդի ականջի առջև, Բայց Րաբ- 27 սակն ասաց նորանց. Մի՞թէ քո տիրոջ և քեզ մօտ է ուղարկել ինձ իմ տէրը այս խօսքերը խօսելու համար. չէ՞ որ այս մարդկանց համար, որոնք պարսպի վերայ նստած են ձեզ հետ իրանց

*Բաղդէարէն

ազգը ուտելու և իրանց մեզը խըմելու։
28 Եւ Աբիսագը կանգնեց և մեծ ձայնով աղաղակեց երեսփոխացերէն և խօսեց տալով. Լսեցէք մեծ թագաւորի՝ Ասորեստանի թա-
29 գաւորի խօսքը. թագաւորը այսպէս է ասում. Եզեկիան ձեզ չխաբէ. վասն զի նա չի կարող
30 ձեզ նորա ձեռքից ազատել։ Եւ Եզեկիան ձեզ Եհովային չյուսացնէ՝ տալով. Եհովան մեզ անպատճառ ազատելու է, և այս քաղաքը պիտի չտրուի Ասորեստանի թագաւորին ձեռքը։
31 Եզեկիային մի լսէք, վասն զի Ասորեստանի թագաւորը այսպէս է ասում. Ինձ հետ հաշտութիւն արէք, և ինձ մօտ դուրս եկէք և ամեն մարդ իր որթիցը և ամեն մարդ իր թզենուցն ուտէ, և ամեն մարդ իր ջրհորի ջրիցը
32 խմէ, Մինչև որ ես գամ և ձեզ տանեմ ձեր երկրի պէս մի երկիր, ցորենի և գինու երկիր, հացի և այգիների երկիր, իւղ ուտող ձիթենիների և մեղրի երկիր, որ ապրէք և չմեռնէք. և Եզեկիային մի լսէք, որովհետև ձեզ խաբում է տալով. Թէ Ե-
33 հովան մեզ ազատելու է, Մի՞թէ իրկեցին այն ազգերի աստուածներն՝ ամեն մէկն իր երկիրը Ասորեստանի թագաւորի ձեռքից։
34 Ո՞ւր են Եմաթի և Արփադի աստուածները, ո՞ւր են Սեփարուիմի, Անայի և Աւայի աստուածները, որ ազատէին Սամարիան իմ ձե-
35 ռից։ Ո՞րն է այդ երկիրների բոլոր աստուածներից, որ ազատած լինի իրանց երկիրը իմ ձեռից, որ Եհովան էլ ազատէր Երուսաղէմը իմ ձեռքից։
36 Եւ ժողովուրդը լուեց և նորան ոչինչ պատասխան չտուին, որովհետև թագաւորը հրաման էր արել տալով. Նորան չպատասխանէք։
37 Եւ Քեղկիայի որդին Եղիակիմ պալատի հազարապետը, և Սեբնա տաճնապիրը և Ասափի որդին Յովաք՝ յիշատակաց դպիրը գնացին Հանդերձները պատռե-

լով եզեկիայի մօտ և նորան պատմեցին Աբսիսակի խօսքերը։

ԳԼ. ԺԹ

Եւ երբոր եզեկիա թագաւորը 1
լսեց, պատռեց իր հանդերձները և քուրձ հագաւ և գնաց Տիրոջ տունը։ Եւ պալատի հսպա- 2
տակաւոր Եղիակիմին և տաճնադպիր Սեբնային և քահանաների ծերերին քուրձեր հագած ուղարկեց Ամոսի որդի Եսայի մարգարէի մօտ։ Եւ նորանք ասացին 3
նորան. Այսպէս է ասում Եզեկիան. Նեղութեան և կշտամբանաց և նախատանաց օր է այս օրը, վասն զի երեխաները հասել են ծննդեան կէտին, բայց ոյժ չը կայ ծնանելու։ Թերևս լսէ քո 4
Տէր Աստուածը Աբսիսակի բոլոր խօսքերը, որին իր տէրը՝ Ասորեստանի թագաւորն ուղարկեց կենդանի Աստուծոյն նախատելու և այնպիսի խօսքերով կշտամբելու, որոնք լսել է քո Տէր Աստուածը։ Որովհետև աղօթք արա գանաւոր մնացորդի համար։ Եւ 5
Եզեկիա թագաւորի ծառաները եկան Եսայիի մօտ։ Եւ Եսայիան 6
ասաց նորանց. Այսպէս ասացէք ձեր Տիրոջը. Տէրը այսպէս է ասում. Մի վախենար այն խօսքերից, որ լսեցիր, որով հայհոյեցին ինձ Ասորեստանի թագաւորի ծառաները։ Ահա ես նորա վերայ 7
մի ոգի կ'ուղարկեմ, և նա մի լուր կ'լսէ, և դէպ կ'դառնայ իր երկիրը, և սրով կ'ընկնէ իր երկրումը։
Եւ Աբսիսակը դարձաւ և 8
գտաւ Ասորեստանի թագաւորին Լիբնային հետ պատերազմելիս, վասն զի լսել էր թէ չուել է Լաքիսից։ Եւ նա լուր լսեց Ե- 9
թովպացոց թագաւոր Թարտակայի մասին ասելով. Ահա գալիս է քեզ հետ պատերազմելու, և դարձեալ դեսպաններ ուղարկեց Եզեկիայի մօտ ասելով. Այսպէս 10
ասացէք Եզեկիային Յուդայի թագաւորին ասելով. Թող քո Աստուածը քեզ չխաբէ որին դու ապաւինել ես ասելով. Ե-

բուսապէսմը պիտի չտրուի Ասո-
11 րեատանի թագաւորի ձեռքը։ Ա-
հա դու լսեցիր, թէ ինչ են ա-
րել Ասորեատանի թագաւորները
բոլոր երկիրներին՝ նորանց բնա-
ջինջ անելով. և դու պիտի ա-
12 զատուի՞ս։ Մի՞թէ ազգերի աստ-
ուածները ազատեցին նորանց,
որոնց փչացրին իմ հայրերը՝ Գով-
զանը, Խառանը, Ռեսեփը և Թե-
լասարեմ եղող Եդեմի որդիան-
13 ցը։ Ո՞ւր է Եմաթի թագաւորը,
Արփաթի թագաւորը, Սեփա-
րուիմ քաղաքի, Անայի և Ա-
յի թագաւորը։
14 Եւ Եզեկիան առաւ նամակնե-
րը դեսպանների ձեռքից և կար-
դաց նորանց, և վեր գնաց Տիրոջ
տունը և տարածեց նորանց Եզե-
15 կիան Տիրոջ առջևը։ Եւ աղա-
չեց Եզեկիա Տիրոջ առջևը և
ասաց. Ով Տէր Աստուած Իս-
րայէլի որ նստած ես քերովբէնե-
րի վերայ, դու ես միայն Աստ-
ուածը երկրի բոլոր թագաւոր-
թիւնների համար. դու ես առեղ-
16 ծել երկինքն ու երկիրը։ Ով Տէր,
խոնարհեցրու քո ականջը և լսիր.
ով Տէր, բաց քո աչքերը և տես
և լսիր Սենեքերիմի խօսքերը, որ
էր ղրկեցեր ուղարկեց կենդանի
17 Աստուծոյն նախատելու։ Արդա-
րև, ով Տէր, աւերել են Աս-
րեատանի թագաւորները այն ազ-
18 գերին և նորանց երկիրները. Եւ
այրել են նորանց աստուածները
կրակով, վասն զի նորանք աստ-
ուածներ չեն, այլ մարդու ձեռ-
քի գործ՝ փայտ և քար, ուրեմն
19 նորանց փչացրին էլ։ Բայց արդ,
ով տէր մեր Աստուած, մեզ ա-
զատիր նորա ձեռքից, որ երկրի
ամեն թագաւորութիւնները ի-
մանան, որ դու Եհովա ես մի-
այն Աստուած։
20 Եւ Ամովսի որդի Եսայիան
ղրկեց ուղարկեց Եզեկիայի մօտ
ասելով. Այսպէս է ասում Իս-
րայէլի Տէր Աստուածը. Այն որ
աղաչեցիր ինձ Ասորեատանի Սե-
նեքերիմ թագաւորի մասին, լսե-
21 ցի։ Սա է այն խօսքը որ Տէրը ա-
սում է նորա մասին.

փեզ անարգեց, քեզ ծաղրեց
Սիոնի կոյս աղջիկը.
Քո ետևից գլուխը շարժեց Երու-
սաղէմի աղջիկը։
Ո՞ւմ նախատեցիր, և հայհոյե- 22
ցիր.
Եւ ո՞ւմ վերայ ձայն բարձրացրիր,
Եւ աչքերդ վեր հանեցիր. Իսրա-
յէլի Սուրբի վերայ։
Քո դեսպանների ձեռովը նախա- 23
տեցիր Տիրոջը և ասացիր.
Իմ կառքերի շատութիւնով ե-
կայ լեռների բարձրութեան
վերայ
Լիբանանու կողմերը.
Եւ կտրում եմ նորա բարձր ե-
ղևիններըը,
Եւ նորա ընտիր մայրերը.
Եւ մտնում եմ նորա ծայրի օ-
թևանը
Նորա Կարմեղոսի անտառը։
Եւ փորեցի և օտար ջրերը խմեցի, 24
Եւ իմ ոտքերի թաթերովը կ'չո-
րացնեմ
Եգիպտոսի բոլոր գետերը։
Մի՞թէ չես լսել, որ ես եմ վա- 25
ղուց արել այդ,
Եւ հին օրերից դարան ձևակեր-
պեցի.
Հիմա բերի այդ,
Որ աւերակների հաղակոյտների
դարձնես պարսպաւոր քա-
ղաքները։
Եւ նորանց բնակիչների ձեռքը 26
կարճ է,
Վա՜ն ուժ զարհուրեցին և ամա-
չեցին,
Եւ եղան դաշտի խոտ
Եւ կանաչ բանջար
Տանիքի խոտ
Եւ հասկը քշելուց առաջ խոր-
շակահար եղած արտ,
Բայց ես գիտեմ քո բնակութիւ- 27
նը, քո ելքն ու քո մուտքը,
Եւ քո բարկութիւնը ինձ դէմ։
Քո ինձ դէմ ունեցած բարկու- 28
թեանը համար,
Եւ քանի որում քո ամբարտաւա-
նութիւնը հասել է իմ ա-
կանջներին.
Ես էլ դնում եմ իմ կարթը քո
քթին
Եւ իմ սանձը՝ քո բերանին,

և քեզ եւս եմ դարձուցեալ քո
եկած ճանապարհովը։
29 և սա լինի քեզ նշանը.
կերէք այս տարի թափուածից
բուսածը
և երկրորդ տարին ինքնիրան բու-
սածը
յետ երրորդ տարին սերմեցէք ու
հնձեցէք,
և այգիներ անկեցէք ու նորանց
պտուղը կերէք։
30 և Յուդայի տան ազատուած
մնացորդը
արմատ կ'արձակէ դէպ ի
ցած
և պտուղ կ'տայ վերևումը։
31 Վասն զի Երուսաղէմից դուրս կը
գայ մնացորդ
և փրկուածներ՝ Սիօն լեռնիցը։
Սա Զօրաց Տէրոջ նախանձն է ա-
նելու։
32 Սորա համար այսպէս է ասում
Տէրը Ասորեստանի թագաւորի
մասին.
Նա չի մտնել այս քաղաքը,
և չի գցել այնտեղ մի նետ.
և նորա առջևը չի գալ վահանով
և նորա դէմ պատնէշ չի կանգ-
նեցնել։
33 Իր եկած ճանապարհովը եւս պի-
տի դառնայ.
և այս քաղաքի մէջ չի մտնել.
Ասում է Տէրը։
34 և պիտի պաշտպանեմ այդ քա-
ղաքը, որ ազատեմ,
ինձ համար և իմ ծառայ Դաւ-
թի համար։
35 Եւ եղաւ որ այն գիշերը դուրս
եկաւ Տէրոջ հրեշտակը և զար-
կեց Ասորեստանցոց բանակումը
հարիւր ութսունհինգ հազար.
և երբոր առաւօտը վեր կացան,
և ահա բոլորը մեռած դիակներ
36 էին։ Եւ Ասորեստանի Սենեքերիմ
թագաւորը չուեց գնաց դարձեալ,
37 ու նստաց Նինուէ։ Եւ երբոր նա
երկրպագում էր իր աստուածոյն
Նեսրոքի տանը, նորա որդիքը
Ադրամելէք և Սարասար սպան-
ցին նորան սրով և իրանք փախան
Արարատի երկիրը. և նորա որդին
Ասորդանը թագաւոր եղաւ նորա
տեղ։

ԳԼ. Ի

1 Այն օրերը հիւանդացաւ Եզե-
կիան մերձ ի մահ. և Ամովսի
որդի Եսայիա մարգարէն եկաւ
նորա մօտ և նորան ասաց. Այս-
պէս է ասում Տէրը. Կտակ արա
քո տան մասին, վասն զի դու
պիտի մեռնես ու չապրես։ 2 Եւ նա
իր երեսը դարձրեց դէպի պատը և
աղօթք արաւ Տիրոջը ասելով.
3 Աղաչում եմ, ով Տէր, յիշիր
հիմա որ քո առջևը գնացի հա-
ւատարմութեամբ ու կատարեալ
սրտով, որ քո աչքերին հաճելի
եղածն արի։ Եւ Եզեկիան մեծ
լացով լացաւ։
4 Եւ Եսայիան դեռ չէր դուրս
եկել միջի քաղաքից, և Տի-
րոջ խօսքը եղաւ նորան ասե-
լով. 5 Դարձիր և ասիր իմ ժո-
ղովրդի իշխան Եզեկիային. Այս-
պէս է ասում Տէրը՝ քո հօր
Դաւթի Աստուածը. Լսեցի քո
աղօթքը, տեսայ քո արտասու-
քը. ահա քեզ պիտի բժշկեմ. Ե-
րրորդ օրը վեր պիտի գնաս Տի-
րոջ տունը։ 6 Եւ պիտի աւելց-
նեմ քո օրերի վերայ տասնուհինգ
տարի. և պիտի ազատեմ Ասո-
րեստանի թագաւորի ձեռքից
քեզ և այս քաղաքը. և այս
քաղաքը պիտի պաշտպանեմ ինձ
համար և իմ ծառայ Դաւթի
համար։ 7 Եւ Եսայիան ասաց.
Զօրացրած թուզ առէք. և ա-
ռին ու դրին վէրքի վերայ, և
նա առողջացաւ։
8 Եւ Եզեկիան ասաց Եսայիա-
յին. Ո՞րն է նշան թէ Տէրը ինձ
բժշկելու է, և որ ես երրորդ օ-
րը գնալու եմ Տիրոջ տունը։ 9 Եւ
Եսայիան ասաց. Սա քեզ նշան
լինի Տէրից, որ Տէրը անելու է
իր ասած խօսքը. Սաւերը տաս
աստիճան առաջ գնայ կամ թէ
տասը աստիճան ետ դառնայ։ 10 Եւ
Եզեկիան ասաց. Թեթև է բա-
ւերի համար տասը աստիճան
առաջ գնալը, ոչ, այլ սաւերը
տասը աստիճան դէպի ետ դա-
նայ։ 11 Եւ Եսայիա մարգարէն Տի-
րոջը աղաղակեց և սաւերը ետ

դարձրեց տասը ատոխման այն ատոխմաններով, որ իջել էր Ա-քսդի ատոխմաններովը։

12 Այն ժամանակ ուղարկեց Բա-
զապանի որդի *Մարովդաք-բա-
զապան՝ Բաբելոնի թագաւորը
նամակներ և ընծայ եզեկիայի
մօտ, վասն զի լսել էր թէ հի-
13 ւանդացել է եզեկիան։ Եւ ե-
զեկիան լսեց նորանց, և ցոյց
տուեց նորանց իր թանգագին
բաներուն տունը, արծաթը, ոսկին
և խունկերը և պատուական իւ-
ղը, և իր զէնքերուն բոլոր տունը
և բոլորը ինչ որ գտնուեցաւ էր իր
գանձարաններուումը. մի բան չկար
որ եզեկիան նորանց ցոյց տուած
չլիներ իր տանը և իր բոլոր տէ-
րութեան մէջ։

14 Եւ Եսայիա մարգարէն եկաւ
եզեկիայի մօտ և ասաց նորան.
Ի՞նչ ասացին քեզ այս մարդիկը
և ո՞րտեղից են եկել քեզ մօտ։
Եւ եզեկիան ասաց. Հեռու երկ-
15 րից են եկել՝ Բաբելոնից։ Եւ ա-
սաց. Ի՞նչ են տեսել քո տանը.
և եզեկիան ասաց. Ամեն ինչ որ
կայ իմ տանը՝ տեսել են. մի
բան չկար որ ես ցոյց տուած չը
լինիմ նորանց իմ գանձարանն-
16 րուումը։ Եւ Եսայիան ասաց եզե-
17 կիային. Լսիր Տիրոջ խօսքը. Ա-
հա օրեր են գալիս, որ ամեն ինչ
որ կայ քո տանը և ինչ որ էլ
քո հայրերը հաւաքել են մինչև
այս օրը, կ'տարուի Բաբիլոն. մէկ
բան չի մնալ, ասում է Տէրը։
18 Եւ քո որդիներից, որ պիտի քե-
զանից յառաջ գան, որ դու կը
ծնես, կ'առնեն, և նորանք Բա-
բելոնի թագաւորի պալատումը
19 ներքինիներ կ'լինեն։ Եւ եզեկիան
ասաց Եսայիային. Բարի է Տի-
րոջ խօսքը որ դու ասացիր. և
ասաց. Չէ՞ որ, եթէ իմ օրերին
պիտի խաղաղութիւն և ապահո-
վութիւն լինի։

20 Եւ եզեկիայի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր զօրութիւնը,
և նորա շինած աւազանը և ջր-
մուղը, և որ ջուրը քաղաքը բե-

*Բաբովդակ

բաւ, ահա նորանք գրուած են
Յուդայի թագաւորների յիշա-
տակաց գրքումը։ Եւ եզեկիան 21
հնջեց իր հայրերի հետ, և նորա
որդին՝ Մանասէն թագաւոր ե-
ղաւ նորա տեղ։

ԳԼ. ԻԱ

Տաներկու տարեկան էր Մանա- 1
սէն երբոր թագաւոր եղաւ, ու
յիսունուհինգ տարի թագաւորեց
Երուսաղէմումը. և նորա մօր ա-
նունն էր Եփսիբայ։ Եւ չարու- 2
թիւն արաւ Տիրոջ աչքին այն
ազգերի գարշութեանց պէս, ո-
րոնց Տէրը քշեց Իսրայէլի որդ-
կանց առջևից։ Նա կրկին շինեց 3
այն բարձրաւանդակները որոնք
քանդել էր իր հայրը եզեկիան,
և Բահաղի համար սեղաններ
կանգնեցրեց, և [illegible] անտառ-
ներ շինեց ինչպէս որ շինել էր Ի-
սրայէլի Աքաաբ թագաւորը, և
երկրպագութիւն արաւ երկնքի
ամեն զօրքերին և ծառայեց նո-
րանց։ Եւ Տիրոջ տանը սեղան- 4
ներ շինեց որի համար Տէրն ա-
սել էր, Երուսաղէմումը պի-
տի դնեմ իմ անունը։ Եւ սե- 5
ղաններ շինեց երկնքի բոլոր զօր-
քերի համար Տիրոջ տան երկու
գաւիթներումը։ Եւ իր որդուն 6
կրակով անցկացրեց, և գուշա-
կութիւն և հմայութիւն էր ա-
նում, և շինեց մեռելահարցուկ-
ներին և նշանագէտներին. նա
շատ չարութիւն արաւ Տիրոջ
աչքին որ բարկացնէ։ Եւ իր շի- 7
նած անտառի կուռքը դրաւ այն
տանը, որի համար Տէրը ասել
էր Դաւթին և նորա որդի Սողո-
մոնին. Այս տանը և Երուսաղէ-
մումը որ ես ընտրել եմ Իսրայէ-
լի բոլոր ցեղերիցը, իմ անունը
պիտի դնեմ յաւիտեան։ Եւ Իս- 8
րայէլի ոտը այլև պիտի չշար-
ժեցնեմ այն երկրիցը որ տուել
եմ իրանց հայրերին, միայն եթէ
զգուշանան անելու բոլոր իմ ի-
րանց պատուիրածին պէս և այն
բոլոր օրէնքին պէս որ իմ ծա-
ռան Մովսէսը իրանց հրամայել

9 է ։ Բայց նորանք չլսեցին , և Մա-
նասէն նորանց մոլորեցրեց , որ
այն ազգերից աւելի չարութիւն
գործեն , որոնց Տէրը փչացրեց Իս-
րայէլի առջևից ։
10 Եւ Տէրը խօսել էր իր ծառա-
ների՝ մարգարէների ձեռովը ա-
11 սելով . Որովհետև Յուդայի Մա-
նասէ թագաւորը արել է այդ
գարշութիւնները , իրանից առաջ
եղող Ամորհացիների բոլոր ա-
րածներից աւելի չարութիւն գոր-
ծել և Յուդային էլ մեղանչել
12 տուել իր կուռքերովը . Նորա
համար այսպէս է ասում Իսրա-
յէլի Տէր Աստուածը . Ահա ես
չարիք պիտի բերեմ Երուսաղէմի
և Յուդայի վերայ , որ ամեն ով
լսէ այն , նորա երկու ականջները
13 հնչեն ։ Եւ պիտի ձգեմ Երուսա-
ղէմի վերայ Սամարիայի լարը և
Աքաաբի տան գնոտակը , և պիտի
արեմ Երուսաղէմը ինչպես որ
ամանն են արրում , և արրում ու
դարձնում են նորա երեսի վերայ ։
14 Եւ պիտի մերժեմ իմ ժառան-
գութեան մնացորդը , և տամ
նորանց իրանց թշնամիների ձեռ-
քը , և նորանք պիտի սար և
յափշտակութիւն լինին իրանց
15 բոլոր թշնամիների համար ։ Որով-
հետև իմ աչքին չարութիւն ա-
րին և ինձ բարկացնում էին այն
օրից որ իրանց Հայրերը դուրս
եկան Եգիպտոսից մինչև այս օ-
16 րը ։ Նաև անմեղ արիւն թափեց
Մանասէն այնքան խիստ շատ ,
որ լցրեց Երուսաղէմը ծայրէ 'ի
ծայր բացի իր մեղքից , որ Յու-
դային մեղանչել տուաւ Տիրոջ
աչքին չարութիւն գործելու .
17 Եւ Մանասէի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը և
նորա գործած մեղքը , ահա նո-
րանք գրուած են Յուդայի թա-
գաւորների յիշատակաց գրքումը ։
18 Եւ Մանասէն ննջեց իր Հայրերի
հետ և թաղուեցաւ իր տան
պարտէզումը՝ Ոզայի պարտէզու-
մը . և նորա որդին Ամոնը թա-
գաւոր եղաւ նորա տեղ ։
19 Ամոնը քսաներկու տարեկան
էր , երբոր թագաւոր եղաւ , և
երկու տարի թագաւորեց Երու-
սաղէմումը , և նորա մօր անունն
էր Մեսողամիթ՝ դուստր Եոտ-
բայի Արուսի ։ Եւ չարութիւն 20
արաւ Տիրոջ աչքին , ինչպէս որ
արել էր իր Հայրը Մանասէն ։
Եւ գնաց նորա ամենայն ճանապարհովը 21
որով գնացել էր իր Հայրը , և ծառայեց այն կուռքերին
որոնց ծառայել էր իր Հայրը և
երկրպագեց նորանց ։ Եւ ձգեց 22
իր Հայրերի Տէր Աստուածին , և
չգնաց Տիրոջ ճանապարհովը ։
Եւ Ամոնի ծառաները դաւա- 23
ճանութիւն արին նորա դէմ և
սպանեցին թագաւորին իր տանը ։
Բայց երկրի ժողովուրդը ջարդեց 24
Ամոն թագաւորի դէմ բոլոր դա-
ւաճանողներին , և երկրի ժողո-
վուրդը թագաւոր արաւ նորա
որդի Յովսիային նորա տեղ ։ Եւ 25
Ամոնի գործերի մնացորդը , որ
արաւ , ահա նորանք գրուած են
Յուդայի թագաւորների յիշատա-
կաց գրքումը ։ Եւ նորան թաղե- 26
ցին իր գերեզմանումը Ոզայի պար-
տէզումը . և նորա որդին Յովսի-
ան թագաւոր եղաւ նորա տեղ ։

ԳԼ· ԻԲ

Ութ տարեկան էր Յովսիան երբ 1
որ թագաւոր եղաւ , և երեսուն
ու մէկ տարի թագաւորեց Երու-
սաղէմումը , և նորա մօր անունն
էր Յեդիդա՝ դուստր Բոզկաթացի
Ադայիայի ։ Եւ Տիրոջ աչքին 2
ուղղութիւն արաւ , և գնաց իր
հօր դաւթի բոլոր ճանապարհովը
և չխոտորեց աջ կամ ձախ ։
Եւ Յովսիա թագաւորի տասն 3
ութերորդ տարին թագաւորը ու-
ղարկեց Մեսուղամի որդի Եսել-
յայի որդուն Սափան դպրին Տիրոջ
տունը՝ ասելով . Գնա Քեղկիա 4
քահանայապետի մօտ , որ հանէ
Տիրոջ տան ներս եկած արծաթը
որ դրան պահապանները ժողովե-
ցին ժողովրդից . Եւ տան գոր- 5
ծաւորների ձեռքը , որ Տիրոջ
տան վերայ նշանակուած են , և
տան գործը անողներին , որ Տի-
րոջ տանն են , տան ճեղաւուածը

6 նորոգելու Տաճար, Հիւսերին,
շինողներին և որմնադիրներին,
նաև փայտ ու տաշած քարեր
առնեն տունը նորոգելու Տաճար։
7 Բայց Հաշիւ չուզեն նորանց ձեռ-
քը տրուած արծաթի համար,
վասն զի նորանք հաւատարմու-
8 թեամբ գործողներ են։ Եւ Բեղ-
կիա քահանայապետն ասաց Սա-
փան դպրին. Մի օրինաց գիրք
եմ գտել Տիրոջ տանը. և Բեղ-
կիան տուաւ այն գիրքը Սափա-
9 նին, և նա կարդաց նորան։ Եւ
Սափան դպիրը եկաւ թագաւորին
մօտ և պատասխան բերաւ թա-
գաւորի համար և ասաց. Ծա-
ռաներդ թափեցին տանը գտնը-
ւած արծաթը և տուին այն
գործաւորների ձեռքը, որ նշա-
10 նակուած են Տիրոջ տանը։ Եւ
Սափան դպիրը պատմեց թագա-
ւորին ասելով. Թէ Բեղկիա քա-
հանան ինձ մի գիրք է տուել, և
Սափանը կարդաց նորան թագա-
11 ւորի առջև։ Եւ երբոր թագա-
ւորը լսեց օրինաց գրքի խօսքերը,
12 պատառեց իր հանդերձները։ Եւ
հրամայեց թագաւորը Բեղկիա
քահանային և Սափանի որդի Ա-
քիկամին և Միքայէլ որդի Աքո-
բորին և Սափան դպրին և Թա-
գաւորի ծառային Ասայիային ա-
13 սելով. Գնացէք հարցրէք Տիրո-
ջը ինձ համար, ժողովրդի հա-
մար և բոլոր Յուդայի համար
այս գտնուած գրքի խօսքերին հա-
մեմատ, որովհետև մեծ է Տիրոջ
բարկութիւնը որ բորբոքել է
մեզ դէմ, նորա համար որ մեր
հայրերը չեն լսել այս գրքի խօս-
քերին, որ կատարեն բոլոր մեր
մասին գրուածը։
14 Եւ Բեղկիա քահանան, և Ա-
քիկամը և Աքբորը և Սափանն
ու Ասայիան գնացին Ամասի որ-
դի Թեկուայէի որդու՝ Սեղղում
հանդերձապետի կնոջ՝ Ողդա մար-
գարէի մօտ, որ բնակուած էր Ե-
րուսաղէմում Մասենայի մէջ և
15 խօսեցին նորա հետ։ Նա էլ ա-
սաց նորանց. Այսպէս է ասում
Իսրայէլի Տէր Աստուածը. Ասա-
ցէք այն մարդուն, որ ձեզ ինձ
մօտ ուղարկեց. Այսպէս է ասում 16
Տէրը. Ահա ես չարիք պիտի բե-
րեմ այստեղի վերայ և նորա բը-
նակիչների վերայ այն գրքի բոլոր
խօսքերը, որ կարդացել է Յու-
դայի թագաւորը. Նորա համար 17
որ ինձ թողել են և խունկ ծխել
ուրիշ աստուածների ինձ բար-
կացնելու համար իրանց ձեռքերի
բոլոր գործքերովը. և իմ բարկու-
թիւնը պիտի բորբոքէ այստեղի
վերայ և չհանդչէ։ Եւ Յուդայի 18
թագաւորին, որ ձեզ ուղարկել
է Տիրոջը հարցնելու համար, այս-
պէս ասացէք նորան. Այսպէս է
ասում Իսրայէլի Տէր Աստուա-
ծը այն խօսքերի համար, որ լսել
ես. Որովհետև քո սիրտը կակ- 19
ղեց և դու խոնարհուեցար Տի-
րոջ առջև լսելով այն ինչ որ ես
ասել եմ այս տեղի համար և
նորա բնակիչների համար, թէ
պիտի աւերում և անէծք լինի,
և պատռեցիր քո հանդերձները
և լացիր իմ առջևը. ես էլ լսե-
ցի, ասում է Տէրը։ Այդ պատ- 20
ճառով ահա ես քեզ կ'ժողո-
վեմ քո հայրերի հետ, և դու
կ'դրուես խաղաղութեամբ քո գե-
րեզմանի մէջ, և քո աչքերը չեն
տեսանիլ այս ամեն չարիքը որ ես
բերելու եմ այս երկրի վերայ։
Եւ նորանք պատասխանը տարին
թագաւորին։

ԳԼ. ԻԳ

Եւ թագաւորը մարդ ուղարկեց, 1
և նորա մօտ ժողովեցին Յուդայի
և Երուսաղէմի բոլոր ծերերին։
Եւ թագաւորը վեր գնաց Տիրոջ 2
տունը և նորա հետ Երուսաղէմի
բոլոր բնակիչները և քահանանե-
րը և մարգարէները և բոլոր ժո-
ղովուրդը փոքրիցը մինչև մեծը,
և կարդաց նորանց ականջին ու-
խտի գրքի բոլոր խօսքերը, որ գըտ-
նուել էր Տիրոջ տանը։ Եւ թա- 3
գաւորը կանգնել էր սիւնի մօտ
և ուխտ արաւ Տիրոջ առջևը Տի-
րոջը հետևելու, և նորա հրա-
մանները և վկայութիւնները ու
կանոնները բոլոր սրտով և բոլոր

Յուդայի թագաւորները նուիրել էին արեգակին Տիրոջ տան մուտքին որ Նաթանմելէք ներքինապետն էր մօտ էին, փարուրիմում, և արեգակի կառքերը սրբեց կրակով։ Եւ զայն սեղանները, 12
որ Աքազի վերնատան տանիքի վերայ էին, որ շինել էին Յուդայի թագաւորները և Մանասէի Տիրոջ տան երկու գաւթերուն շինած սեղանները քանդեց և այնտեղից բնաջինջ արաւ և նետեց փոշին Թափեց Կեդրոնի հեղեղատը։ Եւ զայն բարձրաւան- 13
դակները որ Երուսաղէմի դիմացը ապականութեան լեռան մէջ կողմին էին որ շինեց Իսրայէլի թագաւորը Սողոմոն Աշտոթայ գարշելի Աստարովթին և Մովաբացոց գարշելի Քամովսին և Ամմոնի որդւոցն գարշելի Մելքոմին, պղծեց թագաւորը։ Եւ արձան- 14
ները փշրեց և Աշերէն անտառները կտրատեց և նորանց տեղերը լցրեց մարդու ոսկորներով։

Նաև այն սեղանը որ Բեթէլու- 15
մին է և այն բարձրաւանդակը որ շինել էր Նաբատեան Յերոբովամը որ Իսրայէլին մեղանչել տուաւ, այն սեղանն ու բարձրաւանդակն էլ քանդեց և այրեց բարձրաւանդակը, մանրեց փոշի ա՛ր՛ա՛ և Աստարովթին էլ այրեց։
Եւ Յովսիան դարձրեց երեսը և 16
տեսաւ այն գերեզմանները, որ այնտեղ լեռան վերայ էին, և մարդ ուղարկեց ու առաւ այն ոսկորները գերեզմաններից և այրեց սեղանի վերայ ու պղծեց նորան Տիրոջ այն խօսքին համեմատ, որ աղաղակեց Աստուծոյ մարդը այն խօսքերը աղաղակելով։ Եւ ըսաւ ուսոց. Սա 17
ի՞նչ կոթող է որ ես տեսնում եմ. և այն քաղաքի մարդիկն ասացին. Դա այն Աստուծոյ մարդու գերեզմանն է, որ Յուդայից եկաւ ու աղաղակեց Բեթէլի սեղանի վերայ այն խօսքերը որ դու արիր։ Եւ ըսաւ ուսոց. 18
Չանգիստ թողէք նորան, ոչ ոք նորա ոսկորները չշարժեցնէ. և պահեցին նորա ոսկորները Սա-

Հոգով պահելու, որ Տատոտէ այս ուխտի խօսքերը որ գրուած են այս գրքում. և բոլոր ժողովուրդը կանգնեց ուխտի մէջ։
4 Եւ թագաւորը հրամայեց քահանայապետին Քեղկիա քահանաներին և երկրորդ քահանաներին և դրան պահապաններին, որ դուրս հանեն Տիրոջ տաճարից Բահաղի և Աստարովթի համար և երկնքի բոլոր զօրքերի համար շինուած բոլոր գործիքները, և նորանց այրեց Երուսաղէմից դուրս Կեդրոնի դաշտավայրում, և նորանց մոխիրը
5 տարաւ Բեթէլ։ Եւ դադարեցրեց այն քուրմերին, որ դրել էին Յուդայի թագաւորները և որ խունկ էին ծխում Յուդայի քաղաքներում և Երուսաղէմի շուրջի բարձրաւանդակների վերայ, և որ խունկ էին ծխում Բահաղին, արեգակին ու լուսնին և աստղատներին և երկնքի բոլոր
6 զօրքերին։ Եւ հանեց Աստարովթը Տիրոջ տնից — — Երուսաղէմից դուրս Կեդրոնի հեղեղատի մօտ և այրեց նորան Կեդրոնի հեղեղատի մօտ, և փշրեց մոխիրը ուրա և ցանեց նորա մոխիրը ժողովրդի որդւոց գերեզմանների
7 վերայ։ Եւ քանդեց իպացողների տները, որ Տիրոջ տան մէջ էին, ուր որ կանայք Աստարովթի համար վրաններ էին գործում։ Եւ
8 տարաւ բոլոր քահանաներին Յուդայի քաղաքներից, և պղծեց այն բարձրաւանդակները, ուր որ քահանաները խունկ էին ծխում Գաբայից մինչև Բերսաբէէ, և քանդեց դռների բարձրաւանդակները, որ քաղաքի իշխան Յեսուի դրան մուտքի մօտ են, որ քաղաքի դրան ձախ կողմին է։
9 Միայն թէ բարձրաւանդակների քահանաները Երուսաղէմում չդող Տիրոջ սեղանի վերայ չէին վեր գնում, բայց բաղարջներն ուտում էին իրանց եղբարց մէջ,
10 Եւ նա պղծեց Տոփեթը որ Ենոմի որդու ձորումն է որ ոչ ոք իր որդուն կամ իր աղջկանը կրակով
11 չանցկացնէ Մողոքի համար։ Եւ դադարեցրեց այն ձիերին, որ

մարիայից եկող մարգարէի ա-
19 կորների հետ։ Եւ Սամարիայի
քաղաքների միջի բարձրաւան-
դակների տները էլ, որ Իսրայէլի
թագաւորները շինել էին Տէր-ը
բարկացնելու համար, վերցրեց
Յովսիան, և նորանց էլ արաւ
բոլոր այն սրածների պէս, որ ա-
20 րաւ Բեթէլում։ Եւ այնտեղի
բարձրաւանդակների բոլոր քա-
հանաներին մորթեց այն սեղան-
ների վերայ և մարդու ոսկորներ
այրեց նորանց վերայ և ետ դար-
ձաւ Երուսաղէմ։
21 Եւ թագաւորը հրամայեց բո-
լոր ժողովրդին ասելով. Զեր Տէր
Աստուծոյ համար պատիկ կա-
տարեցէք ինչպէս որ գրուած է
22 այս ուխտի գրքումը։ Վասն զի
այս պատկի պէս չէր կատարուած
Իսրայէլին դատող դատաւորների
օրերից հետէ, և Իսրայէլի թա-
գաւորների և Յուդայի թագա-
23 ւորների օրերումը։ Այլ Յովսիա
թագաւորի տասնուութերորդ տա-
րին կատարուեցաւ այս պատիկը
Տիրոջ համար Երուսաղէմում։
24 Նաև վհուկներին ու նշանա-
գէտներին, թերափիմներին և
կուռքերին և բոլոր գարշելիութ-
իւնները, որ երեւում էին Յուդայի
երկրումը և Երուսաղէմում, ոչն-
չեց Յովսիան, որպէս զի հաստա-
տէ այն գրքի մէջ գրուած օրէնքի
խօսքերը որ Քեղկիա քահանան
25 գտել էր Տիրոջ տանը։ Եւ նո-
րանից առաջ նորան պէս թա-
գաւոր չէր եղած, որ բոլոր սրտով
և բոլոր հոգով և բոլոր
զօրութիւնով Տիրոջը դարձած
լիներ Մովսէսի բոլոր օրէնքին հա-
մեմատ, և նորանից յետոյ նո-
26 րան նմանը վեր չկացաւ։ Սակայն
Տէրը ետ չդարձաւ իր մեծ բար-
կոտած բարկութիւնից, որ բար-
կոտել էր Յուդայի դէմ, այն բո-
լոր պատճառած բարկութիւննե-
րի համար, որ Մանասէն նորան
27 բարկացրել էր։ Եւ Տէրն ասաց.
Յուդային էլ պիտի վերժեմ իմ
երեսիցը, ինչպէս որ վերժեցի Իս-
րայէլին, և պիտի դէն գցեմ այս
քաղաքը իմ ընտրած Երուսաղէ-
մը և այս տունը, որի մասին ա-
սացի թէ՝ Իմ անունը պիտի լի-
նի այնտեղ։
28 Եւ Յովսիայի գործերի մնացոր-
դը և նորա բոլոր արածը, ահա
նորանք գրուած են Յուդայի թա-
գաւորների ժամանակաց գրքումը։
29 Նորա օրերին գնաց Եգիպտոսի
Նեքաւով փարաւոն թագաւորը
Ասորեստանի Եփրատ գետի վե-
րայ. և Յովսիա թագաւորը գնաց
նորա առջևը. բայց նա մեռցրեց
Յովսիային Մակեդովում հէնց
որ նորան տեսաւ։
30 Եւ նորա ծա-
ռաները նորան մեռած դրին կառ-
քի մէջը և բերին նորան Երուսա-
ղէմ և թաղեցին իր գերեզմա-
նումը. և երկրի ժողովուրդն ա-
ռաւ Յովսիայի որդուն Յովաքա-
զին և նորան օծեցին ու թագա-
ւոր արին իր հօր տեղ։
31 Քսան ու երեք տարեկան էր Յո-
վաքազը երբոր թագաւոր եղաւ,
և երեք ամիս Երուսաղէմում թագաւորեց
և նորա մօր անունն
էր Ամիտաղ դուստր Լեբնացի
Երեմիայի։ 32 Եւ Տիրոջ աչքին չա-
րութիւն արաւ բոլորովին իր հայ-
րերի արածին պէս։ 33 Եւ Նեքաւով
փարաւոնը նորան բանտարկեց Ե-
մաթի երկրում Ռեբղայի մէջ որ
չթագաւորէ Երուսաղէմումը, և
երկրի վերայ տուգանք դրաւ հար-
իւր տաղանդ արծաթ և մի տա-
ղանդ ոսկի։ 34 Եւ Նեքաւով փա-
րաւոնը Յովսիայի որդուն Եղիա-
կիմին թագաւոր դրաւ նորա հօր
Յովսիայի տեղ և նորա անունը
փոխեց Յովակիմ, իսկ Յովաքա-
զին առաւ ու տարաւ Եգիպտոս,
և նա մեռաւ այնտեղ։ 35 Եւ Յովա-
կիմը տուաւ արծաթն ու ոսկին
փարաւոնին, բայց հարկ դրաւ
երկրի վերայ որ փարաւոնի խօս-
քին պէս տայ արծաթը, իւրա-
քանչիւր մարդուց իր բաժնի չափ
պահանջեց արծաթը և ոսկին երկ-
րի ժողովրդիցը Նեքաւով փա-
րաւոնին տալու համար։
36 Քսանուհինգ տարեկան էր Յո-
վակիմը, երբոր թագաւոր եղաւ
և տասնումէկ տարի թագաւորեց
Երուսաղէմումը, և նորա մօր ա-

նուն էր Զաբիդա՝ դուստր Նու-
37 մացի փաղոյիայի։ Եւ չարու-
թիւն արաւ Տիրոջ աչքին բոլո-
րովին իր հայրերուն արածին պէս։

ԳԼԻՒ ԻԴ

1 Ետքը օրերուն Բաբիլոնի Նա-
բուգոդոնոսոր թագաւորը վեր
եկաւ. և Յովակիմը ծառայ ե-
ղաւ նորան երեք տարի, և դար-
2 ձեալ նորանից ապստամբեց։ Եւ
Տէրը նորա վերայ ուղարկեց Քաղ-
դէացիների գունդերը, և Ասորոց
գունդերը, և Մովաբացոց գուն-
դերը և Ամմոնի որդւոց գուն-
դերը, և նորանց ուղարկեց Յու-
դայի վերայ, որ նորան փչացնէ
Տիրոջ այն խօսքին համեմատ,
որ խօսել էր իր ծառաներուն մար-
3 գարէների ձեռով։ Սակայն Տիրոջ
պատուէրի համեմատ եղաւ սա
Յուդայի դէմ, որ նորա մերժէ
իր առաջից Մանասէի մեղքերի
համար այն բոլորի համար, որ
4 արել էր։ Նաև անմեղ արիւն
էր թափել և Երուսաղէմը լցրել
էր անմեղ արիւնով. և Տէրը չու-
զեց ներել։
5 Եւ Յովակիմի գործերի մնա-
ցորդը և նորա բոլոր արածը,
ահա նորանք բոլորը գրուած են
Յուդայի թագաւորների յիշա-
6 տակաց գրքումը։ Եւ Յովակիմը
ննջեց իր հայրերի հետ, և նորա
որդին *Յովաքինը թագաւոր ե-
ղաւ նորա տեղ։
7 Եգիպտոսի թագաւորը այլ ևս
դուրս չեկաւ իր երկրից, վասն
զի Բաբիլոնի թագաւորը Եգիպ-
տոսի հեղեղատից մինչև Եփրատ
գետը առաւ բոլորը, ինչ որ Ե-
գիպտոսի թագաւորինն էր։
8 Տասնութ տարեկան էր Յովա-
քինը, երբոր թագաւոր եղաւ և
երեք ամիս թագաւորեց Երու-
սաղէմումը, և նորա մօր անունն
էր Նեհուսթա՝ դուստր Երուսա-
9 ղէմացի Եղնաթանի։ Եւ չարու-
թիւն արաւ Տիրոջ աչքին բոլո-
րովին իր հայրերի արածին պէս։

Ա՛յն ժամանակը Բաբիլոնի Նա- 10
բուգոդոնոսոր թագաւորի ծա-
ռաները վեր եկան Երուսաղէմ,
և քաղաքը պաշարման մէջ ըն-
կաւ։ Եւ Բաբիլոնի Նաբուգոդո- 11
նոսոր թագաւորը եկաւ քաղաքի
վերայ, և նորա ծառաները նո-
րան պաշարել էին։ Եւ Յուդայի 12
Յովաքին թագաւորը դուրս եկաւ
Բաբիլոնի թագաւորի դէմ իր
մօրը և իր ծառաների և իշխան-
ների և իր ներքինիների հետ, և
նորան բռնեց Բաբիլոնի թագա-
ւորը իր թագաւորութեան ութ-
երորդ տարին։ Եւ այնտեղից 13
հանեց Տիրոջ տան բոլոր գանձե-
րը և թագաւորի տան գանձերը,
և կտրատեց այն բոլոր ոսկի ա-
նօթները, որ Իսրայէլի Սողոմոն
թագաւորը շինել էր Տիրոջ տա-
ճարումը, ինչպէս որ Տէրը ասել
էր։ Եւ գերի փոխադրեց բոլոր 14
Երուսաղէմին և բոլոր իշխաննե-
րին և բոլոր քաջազուններին տա-
րաւ հազար գերի և բոլոր հիւսե-
րին և դարբիններին, ուղղակի չմնաց
բացի ժողովրդի աղքատները։ Եւ 15
գերի փոխադրեց Յովաքինին Բա-
բիլոն, և թագաւորի մօրը և թա-
գաւորի կիներին և նորա ներ-
քինիներին և երկրի զօրաւորներին
գերի տարաւ Երուսաղէմից Բա-
բիլոն։ Եւ բոլոր զինուորներին 16
եօթը հազար և հիւսերին և դար-
բիններին՝ հազար, բոլոր քաջերին
պատերազմ անողներին Բաբիլոնի
թագաւորը գերի տարաւ Բաբի-
լոն։ Եւ Բաբիլոնի թագաւորը 17
նորա հօրեղբօրը՝ Մաթանիայի
թագաւոր արաւ նորա տեղ, և
նորա անունը փոխեց Սեդեկիա։
Քսանումէկ տարեկան էր Սե- 18
դեկիան, երբոր թագաւոր եղաւ
և տասնումէկ տարի թագաւորեց
Երուսաղէմումը, և նորա մօր ա-
նունն էր Ամիտաղ՝ դուստր Լիբ-
նացի Երեմիայի։ Եւ չարութիւն 19
արաւ Տիրոջ աչքին բոլորովին
Յովակիմի արածին պէս։ Վասն 20
զի Տիրոջ բարկութիւնը Երու-
սաղէմի և Յուդայի դէմ էր,
մինչև որ նորանց մերժէ իր եր-
ես առջևից։ Եւ ապստամբեց

*Յեքոնիա

Սեդեկիան Բաբելոնի թագաւորի դէմ։

Գլ. ԻԵ

1 Եւ իր թագաւորութեան իններորդ տարուայ տասներորդ ամսի տասնին եկաւ Բաբելոնի թագաւորը Նաբուգոդոնոսորն ինքը և իր բոլոր զօրքը Երուսաղէմի վրայ, և բանակ տուաւ նորա դէմ՝ պատնէշներ շինեց շուրջանակի։ 2 Նակի։ Եւ քաղաքը մտաւ պաշարման մէջ մինչև Սեդեկիա թագաւորի մեռասանիերորդ տարին։ 3 րին։ Եւ ամսի իններին սով ասաստկացաւ քաղաքումը, և հաց չը կար երկրի ժողովրդի համար։ 4 Եւ խրամատուեցաւ քաղաքը. և բոլոր պատերազմողները է-էն գիշերը դրան ճանապարհով երկու պարիսպների միջովը, որ դէպի թագաւորի պարտէզն է. բայց Քաղդէացիք քաղաքը շրջապատել էին. և ը-ա-ը-ը գնաց ա- 5 նապատի ճանապարհով։ Եւ Քաղդէացոց զօրքերը ընկան թագաւորի ետևից և հասան նորան Երիքով։ դաշտերումը, և նորա բոլոր զօրքը փախաւ նորա մօտից։ 6 ցը։ Եւ բռնեցին թագաւորին և նորան վեր տարին Բաբելոնի թագաւորի մօտ Ռեբղա. և նորա 7 դատաստանը արին։ Եւ Սեդեկիայի որդիանցը մորթեցին նորա աչքի առջևը, և Սեդեկիայի աչքերը կուրացրեց և պղնձի շղթաներով կապեցին և տարին նորան Բաբելոն։

8 Եւ Բաբելոնի թագաւոր՝ Նաբուգոդոնոսոր թագաւորի տասներորդ տարուայ հինգերորդ ամսի եօթին եկաւ Բաբելոնի թագաւորի ծառան Նաբուզարդան 9 դահճապետը Երուսաղէմ, Եւ այրեց Տիրոջ տունը և թագաւորի տունը և Երուսաղէմի բոլոր տները և ամեն մի մեծ տուն 10 այրեց կրակով։ Եւ Քաղդէացոց բոլոր զօրքերը, որ դահճապետի հետ էին քանդեցին Երուսաղէմի պարիսպը շուրջանակի։ 11 Եւ քաղաքումը մնացած ժողովրդի մնացորդին և փախստականներին, որ անձնատուր եղան Բաբելոնի թագաւորին և մնացած բազմութիւնը գերի տարաւ Նաբուզարդան դահճապետը։ Բայց 12 երկրի աղքատներից թողց դահճապետը մնան իրրև այգեգործներ և երկրագործներ։

Եւ Տիրոջ տան եղող պղնձի 13 սիւները և մեքենաները և պղնձի ծովը, որ Տիրոջ տանն էր, Քաղդէացիք կտրատեցին և նորանց պղինձը տարին Բաբելոն։ Եւ թա- 14 ղարները, թիակները և բազմակալները և տուփերը և բոլոր պղնձի անօթները, որոնցով պաշտօն էին կատարում, առին։ Եւ 15 բուրվառները ու կոնքերը, որը ոսկի էր ոսկին և որը արծաթի էր արծաթին առաւ դահճապետը։ Այն սիւները՝ երկու, ծովը՝ մէկ 16 և մեքենաները որ Սողոմոնը շինել էր Տիրոջ տան համար, այս բոլոր անօթների պղնձին կըշիռը չկար։ Տասնութը կանգուն 17 բարձր էր մէկ սիւնը. և նորա վերայ մի պղնձի խոյակ. և խոյակի բարձրութիւնը երեք կանգուն, և ցանցեր ու նռներ խոյակի վերայ շուրջանակի՝ բոլորը պղնձի. և սրանց նման էր միւս սիւնը ցանցերի նկատմամբ։

Եւ դահճապետն առաւ առա- 18 ջին քահանայ Սարայիային և երկրորդ քահանայ Սոփոնիային և երեք դռնապաններին. Եւ քաղա- 19 քից մի ներքինի առաւ, որ պատերազմող մարդկանց վերակացու էր, և հինգ մարդ թագաւորի առջև կանգնողներից, որ գտնուեցան քաղաքումը, և դպրապետ զօրագլուխը որ երկրի ժողովրդին զինուորագրողն էր և երկրի ժողովրդից, որ գտնուեցան քաղաքումը, վաթսուն մարդ, Եւ 20 առաւ նորանց Նաբուզարդան դահճապետը և ուղարկեց նորանց Ռեբղա Բաբելոնի թագաւորի մօտ։ Եւ Բաբելոնի թագաւորը 21 զարկեց ու սպանեց նորանց Եմաթի երկրումը Ռեբղայումը։ Եւ Յուդայականք գերի գնացին իրանց երկրից։ Եւ այն ժողովրդի վե- 22

բայ, որ ծնացել էր Յուդայի երկրամբ, որին թողել էր Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը, նշանակեց Սափանեան Աքիկամի որդի Գոդոդիային։

23 Եւ զօրաց բոլոր իշխանները և նորանց մարդիկը երբոր լսեցին, որ Բաբիլոնի թագաւորը Գոդոդիային իշխան նշանակեց, եկան Մեսպա Գոդոդիայի մօտ՝ այսինքն Նաթանիայի որդի Իսմայէլը, Կարէին որդին Յօհանանը, և Թանհումեթի որդին Նետոփաթացի Սարայիան, և Մաքաթիի որդին Յեզոնիան, նորանք և նորանց
24 մարդիկը։ Եւ Գոդոդիան երդում արաւ նորանց և նորանց մարդկանցը և ասաց նորանց. Մի վախենաք Քաղդէացիներին ծառայներ լինելու. կացէք այս երկրում և ծառայեցէք Բաբիլոնի թագաւորին, և ձեզ համար լաւ կը լինի։

25 Եւ եօթներորդ ամիսը եղաւ, որ եկաւ թագաւորական Եղիսամայի որդու Նաթանիայի որդին Իսմայէլը և տասը մարդ իր հետը և պարկեցին Գոդոդիային և

նա մեռաւ. նոյնպէս էլ այն հրէաներին և Քաղդէացիներին, որ նորա հետ Մասփայում էին։

26 Եւ բոլոր ժողովուրդը ամէնից մինչև փոքրը և զօրաց իշխանները վեր կացան գնացին Եգիպտոս, վասն որ վախեցան Քաղդէացոց երեսից։

27 Եւ եղաւ Յուդայի թագաւոր Յեքոնիայի գերութեան երեսուն եօթներորդ տարուայ տասներկուերորդ ամսի քսանեօթին Բաբիլոնի Իլմերոդաք թագաւորը իր թագաւոր եղած օրը բարձացրեց Յուդայի Յեքոնիա թագաւորի գլուխը՝ նրան բանտից հանելով։

28 Եւ նորա հետ քաղցրութեամբ խօսեց, և նորա աթոռը դրաւ այն թագաւորների աթոռից վեր, որ նորա հետ Բաբիլոնում էին։

29 Եւ նորա բանտի հանդերձները փոխեց, և միշտ նորա առջևն էր հաց ուտում իր կենաց բոլոր օրերում։

30 Եւ նորա առճիկը միշտական առճիկ լինելով թագաւորի կողմանէ օր պատ օրէ տրւում էր նորան՝ նորա կենաց բոլոր օրերում։

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Ադամ, Սէթ, Ենոս, (2) Կայ-
3 նան, Մախաղիէլ, Յարէդ, Ենոք, Մաթուսաղա, Ղամէք,
4 Նոյ, Սէմ, Քամ և Յաբեթ։
5 Յաբեթի որդիքը՝ Գոմէր, Մագոգ, Մադայ, Յաւան, Թուբէլ,
6 Մոսոք և Թիրաս։ Եւ Գոմէրի որդիքը՝ Աշքանազ, Ռիփաթ և
7 Թորգոմա։ Եւ Յաւանի որդիքը՝ Եղիսայ, Թարսիս, Կիտացիք և Ռոդացիք։

8 Քամի որդիքը՝ Քուշ և Մեսրէմ, Փուտ և Քանան։ Եւ Քուշի
9 որդիքը՝ Սաբա, Եւիլա, Սաբաթա, Ռեգմա և Սաբթեքա. և Ռեգմայի որդիքը՝ Սաբա և Դե-
10 դան։ Եւ Քուշը ծնաւ Նեբրոմէ-

թին. սա սկսեց զօրաւոր լինել երկրի վերայ։ Եւ Մեսրէմը ծնաւ Լուդացիներին, Անամացիներին, Լեհացիներին, Նեփթուքացիներին, Պաթրուսացիներին և Քասլուքացիներին (որանցից որ դուրս եկան Փղշտացիք) և Կափթորացիներին։ Եւ Քանանը ծնաւ իր անդրանիկ Սիդոնին և Քեթին, Յեբուսացուն, Ամորհացուն և Գերգեսացուն, Խեւացուն, Արուկեցուն, Ասինացուն, Արուադացուն, Սամարացուն և Ամեթացուն։

Սեմի որդիքը՝ Եղամ, Ասուր, Արփաքսադ, Ղուդ, Արամ, Հուս, Հուլ, Գաթեր և Մոսոք։ Եւ Արփաքսադը ծնաւ Սաղային, և Սաղայ ծնաւ Եբերին։ Եւ Ե-

բերին Ծնուեցան երկու որդիք՝ մէկի անունը Փաղէկ, վասն զի նորա օրերին երկիրը բաժանուեցաւ, իսկ նորա եղբօր անունը
20 Յեկտան։ Եւ Յեկտանը ծնաւ Ելմոդադին և Սաղափին և Ա-
21 սարմաւթին և Յարաքին, Եւ Յադորամին, Ուզալին, Դեկլային,
22 Եւ Գեբաղին, Աբիմիէլին և Սա-
23 բային, Եւ Ոփիրին, Եւիլային, և Յոբաբին. սորանք ամենք Յեկտանի որդիքն են։

24 Սէմ, Արփաքսադ, Սաղայ,
25 Եբեր, Փաղէկ, Ռագաւ, (26) Սե-
27 րուգ, Նաքովր, Թարայ, Աբրամ, որ նա ինքն է Աբրահամ։

28 Աբրահամի որդիքը՝ Իսահակ և
29 Իսմայէլ։ Սորանք են նորանց ծնունդները. Իսմայէլի անդրանիկը Նաբէոթ, և Կեդար, և Ադբեէլ,
30 Մաբսամ, Մասմա, Դումա,
31 Մասէ, Հոդադ, Թեմա, Յետուր, Նափէս և Կեդմա. սորանք Իսմայէլի որդիքն են։

32 Եւ Աբրահամի հարճի Քետուրայի որդիքը. նա ծնաւ Զեմրանին, Յեկտանին, Մադանին, Մադիանին, Յեսբոկին և Սուէին։ Եւ Յեկտանի որդիքը՝ Սաբա և
33 Դիդան։ Եւ Մադիանի որդիքը՝ Գեփա, Ափեր, Ենովք, Աբիդա և Եղդադա. սորանք ամենքը Քետուրայի որդիքն են։

34 Եւ Աբրահամը ծնաւ Իսահակին։ Իսահակի որդիքը՝ Եսաւ և
35 Իսրայէլ։ Եսաւի որդիքը՝ Եղիփազ, Ռագուէլ, Յեուս, Յեղոմ և Կորխ։ Եւ Եղիփազի որդիքը՝ Թեման, Օմար, Սեփո, Գոթոմ, Կենէզ, Թամնա և Ա-
37 մաղէկ։ Ռագուէլի որդիքը՝ Նահաթ, Զարա, Սամմա և Մեզա։
38 Եւ Սէիրի որդիքը՝ Ղոտան, Սոբաղ, Սեբեկեան, Անա, Դիսան,
39 Եսեր և Դիսան։ Եւ Ղոտանի որդիքը՝ Քոռի և Հեմամ. և Ղո-
40 տանի քոյրը՝ Թամնա։ Սոբաղի որդիքը՝ Գաղուման, Մանոքաթ, Գեբաղ, Սեփո և Օնամ։ Եւ Սեբեգեանի որդիքը՝ Այիա և Անա։
41 Անայի որդին՝ Դիսան. և Դիսանի որդիքը՝ Ամրան, Եսբան, Յեթրան և Քառան։ Եսերի որդիքը՝
42 Բաղղան, Զաաւան և Յաական։ Դիսանի որդիքը՝ Հուս և Առան։

43 Եւ սորանք են այն թագաւորները, որ թագաւորեցին Եդոմի երկրումը Իսրայէլի որդւոցից վերայ մի թագաւոր թագաւորելուց առաջ. Բէովրի որդին Բաղա, և նորա քաղաքի անունն էր Դենհաբա։ Եւ Բաղան մեռաւ, և
44 նորա տեղը թագաւոր եղաւ Բոսրացի Զարայի որդին Յոբաբը։
45 Եւ Յոբաբը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Թեմանացոց երկրից Հուսամը։ Եւ Հուսամը
46 մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Բադադի որդին Ադադը, որ Մովաբի դաշտումը կոտորեց Մադիանացիներին, և նորա քաղաքի անունն էր Աւիթ։ Եւ Ա-
47 դադը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Մասրեկացի Սամղաղան։ Եւ Սամղաղան մեռաւ,
48 և նորա տեղ թագաւոր եղաւ Գետի Ռոբովթացի Սաւուղը։ Եւ
49 Սաւուղը մեռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Աքբորի որդին Բաաղանանը։ Եւ Բաաղանան մե-
50 ռաւ, և նորա տեղը թագաւոր եղաւ Ադադը և նորա քաղաքի անունն էր Փոքով, և նորա կնոջ անունն էր Մեհետաբէէլ դուստր Մեզաոբի ազգիկ Մատրեթի։

51 Եւ Ադադը մեռաւ։ Եւ եղովմի իշխանները էին՝ Թամնա իշխան, Գաղաւա իշխան, Յեթաթ
52 իշխան. Ողիբամա իշխան. Ելա
53 իշխան, Փինօն իշխան։ Կենէզ իշխան, Թեման իշխան, Մաբզար իշխան. Մագդիէլ իշխան, Իրամ իշխան։ Սորանք են եղովմի իշխանները։

ԳԼ. Բ

1 Սորանք են Իսրայէլի որդիքը. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յու-
2 դա, Իսաքար, Զաբուղոն, Դան, Յովսէփ, Բենիամին, Նեփթաղիմ, Գադ և Ասեր։
3 Յուդայի որդիքը էր, Օնան և Սելա. այս երիքը ծնուեցան նորա Շուայ Քանանացուցը. և Յուդայի ան-

դրանիկը էր չար էր Տիրոջը աչ-
4 քին, և նորան մեռցրեց։ Եւ նո-
րա հարսը Թամար ծնեց նորա
Համար Փարեսին և Զարային.
Յուդայի բոլոր որդիքը հինգ էին։
5 Փարեսի որդիքը՝ Եսրոն և Հա-
6 մուլ։ Զարայի որդիքը՝ Զամբրի,
Եթան, Եման, Քալքոլ և Դա-
7 րա. բոլորը հինգ։ Եւ Քարմիի
որդին՝ Աքար՝ Իսրայէլին խան-
գարիչը, որ անօրէնութիւն գոր-
8 ծեց նզովածով։ Եւ Եթանի որ-
9 դին՝ Ազարիա։ Եւ Եսրոնի որդի-
քը, որ ծնուեցան նորա Համար,
Յերամիէլ, Արամ և Քեղուբայ։
10 Եւ Արամը ծնաւ Ամինադա-
բին, և Ամինադաբը ծնաւ Նա-
ասոնին՝ Յուդայի որդւոցն իշ-
11 խանին։ Եւ Նասոնը ծնաւ Սաղ-
մոնին, և Սաղմոնը ծնաւ Բոոսին։
12 Եւ Բոոսը ծնաւ Ովբէդին, և Ով-
13 բէդը ծնաւ Յեսսէին։ Եւ Յեսսէն
ծնաւ իր անդրանիկը Եղիաբին,
և երկրորդը՝ Ամինադաբին և եր-
14 րորդը Սամմային. Չորրորդը՝
Նաթնայէլին, հինգերորդը՝ Հռա-
15 դային։ Վեցերորդը Ասոմին և
16 եօթներորդը՝ Դաւթին. Եւ նո-
րանց քոյրերը՝ Շարուհեային և
Աբիգեային։ Եւ Շարուհեայի որ-
դիքը՝ Աբեսսա, Յոաբ և Ասա-
17 հէլ՝ չորս երիքը։ Եւ Աբիգեան
ծնաւ Ամեսային. և Ամեսայի
հայրը Իսմայէլացի Յեթերն էր։
18 Եւ Եսրոնի որդին Քաղէբը որ-
դիներ ծնաւ էր կինը Ազուբայից և
Յերիոթից, և սորանք են նորա որ-
դիքը՝ Յասեր, Սոբաբ և Արդոն։
19 Եւ Ազուբան մեռաւ. Եւ Քա-
ղէբն իր Համար առաւ Եփրա-
թին, որ նորա Համար ծնաւ Ով-
20 րին։ Եւ Ովրը ծնաւ Ուրիին, և
Ուրին ծնաւ Բեսաղիէլին։
21 Եւ յետոյ Եսրոնը մտաւ Գա-
ղաադի Հօր Մաքիրի աղջկան
մօտ. և նա առաւ նորան. և ին-
քը վաթսուն տարեկան էր. և
նա ծնաւ նորա Համար Սեգու-
22 բին, Եւ Սեգուբը ծնաւ Յայի-
րին. և նա Գաղաադի երկրումը
23 քսան երեք քաղաք ունէր։ Եւ
առաւ Գեսուր և Արամ՝ Յայերի
գիւղաքաղաքները նորանցից, Կա-
նաթը և նորա գիւղերը վաթսուն
քաղաք. այս ամենը Գաղաադի
Հօր Մաքիրի որդիներին էր։ Եւ 24
Եսրոն Քաղէբ—Եփրաթայում
մեռնելուց յետոյ, Եսրոնի կինը
Աբիա ծնաւ նորա Համար Թե-
կուէի Հայր՝ Ասքուրին։
Եւ Եսրոնի անդրանիկ Յերամէ- 25
լի որդիքն էին՝ անդրանիկը Հռամ,
Բաանա, Օրէն, Ասամ, և Աքիա։
Եւ Յերամէլը մի ուրիշ կին ու- 26
նէր, և նորա անունը Ատարա
էր. նա Օնամի մայրն էր։ Եւ 27
Յերամէլի անդրանիկը՝ Հռամի որ-
դիքն էին՝ Մաաս, Յամին և Ա-
կոր։ Եւ Օնամի որդիքն էին՝ Սա- 28
մայի և Յադայ. և Սամայիի որ-
դիքը՝ Նադաբ և Աբիսուր։ Եւ 29
Աբիսուրի կնոջ անունն էր Աբի-
հայիլ, և ծնաւ նորա Համար
Աքբանին և Մոլոիդին։ Եւ Նա- 30
դաբի որդիքը՝ Սաղադ և Ափփիմ.
և Սաղադ մեռաւ անորդի։ Եւ 31
Ափփիմի որդին՝ Յեսսի. և Յես-
սիի որդին՝ Սեսան. և Սեսանի
որդին՝ Աղայի։ Եւ Սամայիի եղ- 32
բայր Յադայի որդիքը՝ Յեթեր և
Յոնաթան. և Յեթեր մեռաւ
անորդի։ Եւ Յոնաթանի որդիքը՝ 33
Փաղէթ և Զազա. սորանք Յերա-
մէլի որդիքն էին։
Եւ Սեսան որդիք չունէր, այլ 34
միայն աղջիկներ. և Սեսան մի Ե-
գիպտացի ծառայ ունէր՝ անունը
Յարքա։ Եւ Սեսան իր աղջիկը 35
կին տուաւ իր Յարքա ծառային.
և նա ծնաւ նորա Համար Եթ-
թիին։ Եւ Եթթին ծնաւ Նա- 36
թանին. և Նաթանը ծնաւ Զա-
բադին։ Եւ Զաբադը ծնաւ Ոփ- 37
ղալին. և Ոփղալը ծնաւ Ովբէ-
դին։ Եւ Ովբէդը ծնաւ Յեուին. 38
և Յեուն ծնաւ Ազարիային։ Եւ 39
Ազարիան ծնաւ Քելեսին. և Քե-
ղեղը ծնաւ Եղեասային։ Եւ Եղ- 40
եասան ծնաւ Սոսամէին. և Սո-
սամէն ծնաւ Սեղղումին։ Եւ Սեղ- 41
ղումը ծնաւ Յեկամիային. և Յե-
կամիան ծնաւ Եղիսամային։
Եւ Յերամէլի եղբօր Քաղէբի 42
որդիքը՝ նորա անդրանիկը Մեսա,
որ Զիփի և Քեբրոնի Հայրը և
Մարեսայի որդւոցանց Հայրն է։

43 Եւ Բեերոնի որդիքը՝ Կորխ, Թա-
44 փուա, Ռոկոմ և Սեմայի։ Եւ
Սեմային ծնաւ Հռաւմին՝ Յար-
կաւմի հօրը. և Ռոկոմը ծնաւ
45 Սամայիին։ Եւ Սամայիի որդին
էր Մաան. և Մաանը Բեթսուրի
46 հայրն էր։ Եւ Քաղեբի հարճը
Գեփան ծնաւ Առանին, Մոսա-
նին, և Գազեզին. և Առան ծնաւ
47 Գազեզին։ Եւ Յադայիի որդիքը՝
Հռագեմ, Յովաթամ, Գեսան,
48 Փաղէտ, Գեփա և Սագափ։ Եւ
Քաղէբի հարճը Մաաքան ծնաւ
49 Սեբերին և Թարանայիին։ Եւ ծնաւ
Մադմանայի հայր Սագափին,
Մաքաբենայի հայր և Գաբաայի
հայր Շավայիին. և Քաղէբի աղ-
ջիկն էր Աքսա։

50 Եփրաթի անդրանիկը՝ Ովրի որ-
դու Քաղէբի որդիքը՝ Կարիաթա-
51 րիմի հայրը Սոփաղ, Բեթլեհեմի
հայրը Սաղման, Բեթգեդարի հայ-
52 րը Նարեփ։ Եւ Կարիաթարիմի
հօր՝ Սոբագի որդիքը՝ Հարօէ.
53 Ամի-Համենուքովթ։ Եւ Կարիա-
թարիմի տոհմերը՝ Յեթերացիք,
փութացիք, Սամաթացիք և Մա-
սարացիք։ Սրանցից դուրս եկան
Սարատացիք և Եսթաուղացիք։
54 Սաղմանի որդիքը՝ Բեթլեհէմ,
Նետոփաթացիք, Ատարովթ,
Յովաբի տունը, և Ամի-Համենաք-
55 թացիք՝ Սարացիք։ Եւ Գաբէսի
մէջ բնակող դպիրների տոհմերը՝
Թարգաթացիք, Սամաթացիք,
Սուկաթացիք. սրանք Ռեքաբի
տան հօրից՝ Եմաթիցն յառաջ
եկող կենեցիքն էին։

ԳԼ Գ

1 Եւ սրանք էին Դաւթի որդիքը,
որոնք ծնուեցան նորա համար
Քեբրոնի մէջ, անդրանիկը Ամնոն՝
Յեզրայէլացի Աքինաամից, երկ-
րորդը՝ Դանիէլ Կարմելացի Ա-
2 բիգեայից. երրորդը՝ Աբիսողոմ
Գեսուրի թագաւոր Թոլմիի աղջ-
կան Մաաքայի որդին. չորրորդը՝
3 Ադոնիա Ագգիթի որդին։ Հինգե-
րորդը՝ Սափատիա Աբիտալից,
վեցերորդը՝ Յեթրամ իր Եգլա
4 կնոջից։ Այս վեցը ծնուեցան նո-

բա համար Քեբրոնում. և այն-
տեղ թագաւորութիւն արաւ
եօթը տարի և վեց ամիս. և ե-
րեսուն երեք տարի թագաւորեց
Երուսաղէմում։

Եւ սրանք ծնուեցան նորա 5
համար Երուսաղէմում՝ Սամաա,
Սովբաբ, Նաթան և Սողոմոն.
չորսը Ամիէլի աղջիկ Բեերսա-
բէէից։ Եւ Յարսաար, Եղիսամա 6
ու Եղիփաղէտ։ Եւ Նոքա, Նա- 7
փեկ և Յափիէ։ Եւ Եղիսամա, 8
Եղիադա և Եղիփաղէտ. չորս հինգ։
Աժէնքը Դաւթի որդիքն էին բացի 9
հարճերի որդիքներից և նորանց
քոյր Թամարից։

Եւ Սողոմոնի որդին՝ Ռոբովամ. 10
Նորա որդին՝ Աբիա. Նորա որդին՝
Ասա, Նորա որդին՝ Յովսափատ.
Նորա որդին՝ Յովրամ, Նորա որ- 11
դին՝ Ոքոզիա, Նորա որդին՝ Յո-
վաս, Նորա որդին՝ Ամասիա, 12
Նորա որդին՝ Ազարիա, Նորա որ-
դին՝ Յովաթամ, Նորա որդին՝ 13
Աքազ, Նորա որդին՝ Եզեկիա,
Նորա որդին՝ Մանասէ, Նորա որ- 14
դին՝ Ամոն, Նորա որդին՝ Յովսիա,
Եւ Յովսիայի որդիքը՝ անդրանիկը 15
Յոհանան, երկրորդը Յովակիմ,
երրորդը Սեդեկիա, չորրորդը Սել-
ղում։ Եւ Յովակիմի որդիքը՝ Նա- 16
բա որդին՝ Յեքոնիա, Նորա որ-
դին՝ Սեդեկիա։ Եւ Յեքոնիայի 17
որդիքը՝ Ասիր, Նորա որդին՝ Սա-
ղաթիէլ. Մաղքիրամ, փադայիա, 18
Սանէսար, Յեկամիա, Ովսամա
և Նադաբիա։ Եւ փադայիայի 19
որդիքը՝ Զօրաբաբէլ և Սիմէի.
և Զօրաբաբէլի որդիքը՝ Մեսու-
ղամ և Անանիա, և նորանց քոյրը
Սողոմիթ։ Եւ Ասուբա և Ոհող, 20
Բարաքիա, Ասադիա, Յովսաբ-
հեսեդ. չորս հինգը։ Եւ Անանիայի 21
որդիքը՝ փաղատիա և Եսայիա.
Հռափայիայի որդիքը, Ռափայի
որդիքը, Արդիայի որդիքը, Սե-
քենիայի որդիքը. Եւ Սեքենիայի 22
որդիքը՝ Սեմայիա, և Սեմայիայի
որդիքը՝ Քեատուս և Իգաղ և Բե-
բիա և Նաարիա ու Սափատ,
չորս վեցը։ Եւ Նաարիայի որդիքը՝ 23
Եղիովէնայի, Եզեկիա, Եզրիկամ,
սրա երեքը։ Եւ Եղիովէնայի որ-

դեքը՝ Ովդուխա, Եղիասիբ, Փաղայիա, Ակկուբ, Յօհանան, Դաղայիա և Անանի, այս եօթը։

ԳԼ. Գ

1 Յուդայի որդիքը՝ Փարէս, Եսրոն, Քարմի, Ովր և Սոբոդ։ Եւ
2 Սոբոդի որդին Ռէայիան ծնաւ Յեթին. և Յեթը ծնաւ Աքիմայիլին և Ղաադին. Սորանք են Սո-
3 բամեացոց տոհմերը։ Սորանք են Աբիեթամինը՝ Յեզրայէլ. Յեսմա և Յեզբաա. և նորանց քրոջ ա-
4 նունը եսելելփօն։ Եւ Գեդովրի հայրը փանուէլ, և Ովսայի հայրը Եզեր. սորանք են Բեթլեհեմի հօր՝ Եփրաթի անդրանկի Ովրի որդիքը։
5 Եւ Թեկուէի հայրը Աքսուր երկու կնիկ ունէր՝ Եղաա և Նաա-
6 րա։ Եւ Նաարան ծնաւ նորա համար Աքուզամին, Ոփերին, Թեմանին և Ահաստարիին. սորանք
7 են Նաարայի որդիքը։ Եւ Եղաայի որդիքը՝ Սարեթ, Սահառ և
8 Եթնան։ Եւ Կոսը ծնաւ Էնովբին և Սոբեբային և Հարումի որդի Ահարհելի տոհմերը։
9 Եւ Գաբէսը փառաւոր էր իր եղբայրներից, և նորա մայրը նորա անունը Գաբէս դրաւ, ասե-
10 լով. Թէ յաւել ծնայ։ Եւ Գաբէսը կանչեց Իսրայէլի Աստուծոյն ասելով. Ո՜հ եթէ ինձ օրհնէիր և իմ տոհմանը մեծացնէիր և ձեռքդ ինձ հետ լիներ, և էդ չարիցն ազատէիր որ ինձ տրտմութեան չլինէր։ Եւ Աստուած բերաւ նորա խնդրածը։
11 Եւ Սոհայի եղբայրը Քեղուբը ծնաւ Մաքարին որ Եսթոնի հայ-
12 րը էր։ Եւ Եսթօնը ծնաւ Բեթռափային, Փասէին և Իրնահաի հօրը՝ Թռանային. սորանք են Հռեքայի մարդիկը։
13 Եւ Կենեզի որդիքը՝ Գոթոնիէլ և Սարայիա. և Գոթոնիէլի որդին՝ Աթաթ.
14 Եւ Մաոնաթայի ծնաւ Եփրանին և Սարայիա ծնաւ *Գէ-քարաշիի

*Հիւանդի հոգին.

հօրը՝ Յովաբին. վասն զի հիւանդ էին։ Եւ Յեփոնեան Քաղէբի որդիքը՝ Իրու, Էլա և Նաամ. և Էլայի որդին՝ Կենէզ։ Եւ Յաղելելի որդիքը՝ Զիփ, Զիփա, Թիրիա և Ասարէլ։ Եւ Եզրայի որդիքը՝ Յեթեր, Մօրադ, Ափեր և Յաղօն. և նա ծնաւ Մարիամին, Սամմայիին և Եսեթամմի հօրը Յեսբանին։
18 Եւ նորա կինը Յուդիան ծնաւ Գեդովրի հօրը Յարեդին, Սոքոի հօրը Փարեբին և Զանոաի հօրը Յեքթիէլին. և Մօրադի առաջ Փարաւոնի աղջկան՝ Բեթիայի որդիքը սորանք են։
19 Եւ նայեմի քրոջ Ովդիա կնոջ որդիքը՝ Գարմին Կէիլայի հայրը, և Մաքաթացի Եսթեմոյի։
20 Եւ Սիմոնի որդիքը՝ Ամնոն, Հռինա, Բենանան և Թիղոն. և Յեսիի որդիքը՝ Զոհեթ և Բենզոհեթ։
21 Եւ Յուդայի որդու Սելայի որդիքը՝ Ղեքայի հայրը էր, Մարեսայի հայրը Ղաադա և Ասբայի տան՝ բեհեզագործների տոհմերը։
22 Նաև Յոկիմ և Քոզեբայի մարդիկը և Յոաս ու Սարափ, որ Մոաբում տուգսաժք ունէին, և Յասուբի-Լեհեմ։ Բայց այս բաները հին են։
23 Սորանք բրուտներ էին և բնակում էին Նէթայիմում և Գադերայում. թագաւորի հետ նորա գործերում էին բնակում այնտեղ։
24 Շմաւոնի որդիքը՝ Նամուէլ, Յամին, Յարիբ, Զարա, Սաւուղ.
25 Նորա որդին՝ Սեղղում, նորա որդին՝ Մարսամ, նորա որդին՝ Մասմա։
26 Եւ Մասմայի որդիքը. նորա որդին՝ Ամուէլ, նորա որդին Զաքուր, նորա որդին Սեմէի։
27 Եւ Սեմէի տասնուվեց տղայ և վեց աղջիկ ունէր. բայց նորա եղբայրները շատ տղաքներ չունէին. և նորանց բոլոր տոհմը Յուդայի որդիքանց չափ չշատացան։
28 Եւ նորանք բնակում էին Բեերսաբէեում, Մողադայում, Ասար-սուսդում,
29 Բադդայում, Ասբեմում,
30 Թուղադում, Բեթուէլում, Հորմայում,
31 Սիկեղակում, Բեթմարքաբովթում, Ասեր-սու-

սիմաւմ, Բեթ–բարէխաւմ, և Սա-
գարիմաւմ. ասրանք էին նորանց
քաղաքները մինչև Դաւթի թա-
32 գաւորելը: Եւ նորանց գիւղերը՝
Եթամ, Աւրին, Ռեմմոն, Թոքան
33 և Ասան. հինգ քաղաք: Եւ նո-
րանց բոլոր գիւղերը, որ այս քա-
զաքներուն չուրջն են մինչև Բաալ:
Ասրանք են նորանց բնակութիւն-
ները և ազգաբանութիւնները:
34 Եւ Մոսոբաբ, Յամլէք, և Ա-
35 մասիայի որդին Յովաս. Եւ Յո-
էլ և Ասիէլի որդու Սարայիայի
որդու Յոսաբիայի որդին Յէու.
36 Եւ Եղիովէնայի, Յեկեբայ, Յաս-
ուբիա, Ասայիա, Ադիէլ, Յեսի-
37 միէլ և Բաանեա, Եւ Սեմայիայի
որդու Սամմարիի որդու Յեդայիայի
որդու Ասրնի որդու Սեփէթիի որ-
38 դին Զիզա: Ասյս էրանց անուննե-
րով իշխաններ էին
իրանց տոհմերուն, և նորանց
հայրերի տուներըը շատ տարած-
39 ուած էին: Եւ գնացին մինչև
Գեդորի մուտքը մինչև ձորի ա-
րևելքի կողմը իրանց խաշիներուն
40 արօտ որոնելու համար. Եւ տուտ
ու լաւ արօտ գտան. և այն եր-
կիրը ընդարձակ էր խաղաղ և
հանդարտ. վասն զի առաջ այն-
տեղ Քամից եղողներն էին բնա-
41 կուած: Եւ այս էրանց անուններով
գրուածները գնացին Յուդայի Ե-
զեկիա թագաւորի օրերուն և
ջարդեցին նորանց վրաններըը և
նորանց այնտեղ գտնուած բնա-
կարաններըը և նորանց նզովեցին
մինչև այսօր և բնակեցին նորանց
տեղ, վասն զի այնտեղ արօտ կար
42 նորանց խաշիներուն համար: Եւ
նորանցից այ–ինք՝ Շմաւոնի որդի-
ներից հինգ հարիւր մարդ գնա-
ցին Սէիր լեռանը. և Յեսիի որ-
դիքը՝ Փալատիա, Նեարիա,
Հռափայիա և Ոզիէլ նորանց գլխ-
43 աւորներն էին: Եւ ջարդեցին
Ամաղեկի մնացորդ փախստական-
ներին, և այնտեղ բնակեցին մին-
չև այսօր:

ԳԼ. Ե

1 Եւ Իսրայէլի անդրանիկը Ռու-
բենի որդիքը. (վասն զի անդրա-
նիկը նա էր, բայց իր հօր անկո-
ղինը պղծելու համար նորա ան-
դրանկութիւնը Իսրայէլի որդի
Յովսէփի որդիանցը տրուեցաւ.
և իրրև անդրանիկ չգրուեցաւ
ազգահամարի մէջ: Բայց Յուդա 2
զօրաւոր եղաւ իր եղբարց մէջ
և իշխանը նորանից էր լինելու, և
և անդրանկութիւնը Յովսեփինը
եղաւ:) Եւ Իսրայէլի անդրանիկը 3
Ռուբենի որդիքը՝ Ենովք, Փալ-
ղուս, Եսրոն և Քարմի: Յովելի 4
որդիքը՝ նորա որդին Սեմայիա,
նորա որդին Գոգ, նորա որդին
Սեմէի, Նորա որդին Միքա, նո- 5
րա որդին Ռեայիա, նորա որդին
Բաաղ: Նորա որդին Բէէրա, ո- 6
րին գերի տարաւ Թագղաթ–փա-
զանսար Թագաւորը, նա իշխան
էր Ռուբենեանց: Եւ նորա եղ- 7
բայրները իրանց տոհմերով ազ-
գահամարի մէջ գրուելու՝ գլխա-
ւորն էր Յեհիէլ և Զաքարիա, Եւ 8
Յովելի որդու Սեմայի որդու Ա-
զազի որդին Բաղա. սա բնակուած
էր Արոէերուամ և մինչև Նեբաւ
և Բէէլմեն. Եւ արևելեան կող- 9
մամբ բնակեց Եփրատ գետիցը
մինչև անապատը, վասն զի նո-
րանց անասուններըը շատացել է-
ին Գաղաադի երկրումը: Եւ Սա- 10
ուղի օրերումը նորանք պատե-
րազմ արին Հագարացոց հետ,
որոնք իրանց ձեռքն ընկան. և
բնակեցին նորանց վրաններումը
Գաղաադի բոլոր արևելեան կող-
մերին:
Եւ Գադի որդիքը բնակեցին 11
անոնց առաջակողմին Բասանի
երկրումը մինչև Սելքա, Գլխա- 12
ւորը Յովէլ, և երկրորդը Սափամ,
և Յանայի և Սափատ՝ Բասանու-
մը: Եւ նորանց եղբայրները ի- 13
րանց ազգատոհմերի համեմատ՝
Միքայէլ, Մեսուղամ, Սոբէ,
Յովրէ, Յաքան, Զիա և Եբեր.
–յ եօթը: Ասրանք Բուզի որդու 14
Յաքդովի որդու Յեսիսայի որդու
Միքայէլի որդու Գաղաադի որ-
դու Յարոայի որդու Հուրիի որ-
դի Աբիքեէլի որդիքն էին: Գու- 15
նիի որդու Աբդիէլի որդին Աք-

նորանց ազգատոհմի գլխաւորն էր։ 16 Եւ նորանք բնակեցին Գաղաադումը, Բասանումը և նորա գիւղաքաղաքներումը և Սարոնի արուարձաններումը մինչև նորանց 17 սահմանները։ Սրանք ամենքը ազգահամարի մէջ գրուեցան Յուդայի Յովաքիմ թագաւորի օրերին և Իսրայէլի Յերոբովամ թագաւորի օրերին։

18 Ռուբենի որդիքը և Գադեանք և Մանասէի կէս ցեղը զօրաւոր, վահան ու սուր կրող, և աղեղ ձգող, և պատերազմ սովորած պատերազմի գնացող քառասուն ու չորս հազար եօթը հարիւր 19 վեցեաւն մարդիկ էին։ Եւ նորանք պատերազմ արին Հագարացոց, Յետուրացոց, Նեփեսացոց և 20 Նոդաբացոց հետ, եւ նորանց յաղթեցին. և Հագարացիք և բոլոր նորանց հետ եղողները նորանց ձեռքը տրուեցան, վասն զի նորանք պատերազմի մէջ Աստուծոյն աղաղակեցին, և նորանց աղօթքը լսեց, վասն զի 21 նորան էին ապաւինել. եւ գերի արին նորանց անասուններըն նորանց ուղտերը, հիսուն հազար, ոչխար երկու հարիւր հիսուն հազար, և էշ երկու հազար, և մարդիկ հարիւր հազար հոգի։ 22 Վասն զի շատերը մեռած ընկան. որովհետև այս պատերազմը Աստուածանից էր. և նորանց տեղ բնակեցին մինչև գերութիւնը։

23 Եւ Մանասէի որդւկանց կէս ցեղը բնակեցին այն երկրումը Բասանից մինչև Բաղհերմոն, Սանիր և Հերմոն լեռը. որոնք շատոնք էին։ 24 Եւ սրանք էին նորանց ազգատոհմներուն իշխանները՝ Ափեր, Յեսաի, Եզրիել, Երեմիա, Ովդուխ և Յոքդիել, որ քաջասուն և անուանի մարդիկ էին իրանց ազգատոհմներուն գլխաւորներ։

25 Եւ ապստամբեցին իրանց հայրերուն Աստուծոյն դէմ, և այն երկրի ազգաց աստուածներուն հետևելով պոռնկութիւն արին, որոնց բնաջինջ էր արել Աստուած 26 նորանց առջևից։ Եւ Իսրայէլի Աստուածը գրգռեց Ասորեստանի փուղ թագաւորի հոգին և Ասորեստանի Թագղաթ-փաղասար թագաւորի հոգին, և նա գերի տարաւ Ռուբենեանները, Գադեանները և Մանասէի կէս ցեղին և տարաւ նորանց Քալա, Քաբաւր և Հարա ու Գոզանի գետը մինչև այս օրը։

ԳԼ. Զ

1 Ղևիի որդիքը՝ Գերսոն, Կահաթ և Մերարի։ 2 Եւ Կահաթի որդիքը՝ Ամրամ, Իսահար, Քեբրոն և Ոզիէլ։ 3 Եւ Ամրամի որդիքը՝ Ահարան և Մովսէս, և Մարիամ։ Եւ Ահարանի որդիքը՝ Նադաբ, Աբիուդ, Եղիազար և Իթամար։ 4 Եղիազարը ծնաւ Փենեհէսին. Փենեհէսը ծնաւ Աբիսուային։ 5 Եւ Աբիսուան ծնաւ Բոկկիին, և Բոկկին ծնաւ Ոզիին։ 6 Եւ Ոզին ծնաւ Զարհիային, և Զարհիան ծնաւ Մարիոթին։ 7 Մարիոթը ծնաւ Ամարիային, և Ամարիան ծնաւ Աքիտոբին. 8 Եւ Աքիտոբը ծնաւ Սադոկին, և Սադոկը ծնաւ Աքիմաասին։ 9 Եւ Աքիմաասը ծնաւ Ազարիային, և Ազարիան ծնաւ Յոհանանին։ 10 Եւ Յոհանանը ծնաւ Ազարիային, սա այն է որ քահանայութիւն արաւ Սողոմոնի երուսաղէմաշէն տանը։ 11 Եւ Ազարիան ծնաւ Ամարիային, և Ամարիան ծնաւ Աքիտոբին։ 12 Եւ Աքիտոբը ծնաւ Սադոկին, և Սադոկը ծնաւ Սեղղումին։ 13 Եւ Սեղղումը ծնաւ Քեղկիային, և Քեղկիան ծնաւ Ազարիային։ Եւ Ազարիան ծնաւ Սարայիային, և Սարայիան ծնաւ Յովսեդեկին։ 15 Եւ Յովսեդեկը գնաց ֆէբէ, երբոր Տէրը Յուդան և երուսաղէմը գերի փոխադրեց Նաբուգոդոնոսորի ձեռովը։

16 Դաւթի որդիքը՝ Գերսոն, Կահաթ և Մերարի։ 17 Եւ սրանք էին Գերսոնի որդկանց անունները՝ Ղոբենի և Սեմէի։ 18 Եւ Կահաթի որդիքը՝ Ամրամ, Իսահար, Քեբրոն և Ոզիէլ։ 19 Մերարիի որդիքը՝ Մոողի և Մուսի. և սրանք են

Ղևատացոց տոհմերը իրանց հայրերի համեմատ։
20 Գերսանէնը՝ Ղոբենի, Նորա որդին Յեթ, Նորա որդին Զամմա,
21 Նորա որդին Յովաք, Նորա որդին Ադդով, Նորա որդին Զարա, Նորա որդին Յաթրի։
22 Կահաթի որդիքը՝ Ամինադաբ, Նորա որդին Կորխ, Նորա որդին
23 Ասիր, Նորա որդին Եղկանա, Նորա որդին Աբիասափ, Նորա որդին Ասիր.
24 Նորա որդին Թահաթ, Նորա որդին Ուրիէլ, Նորա որդին Ոզիա և Նորա որդին Սաւուղ։
25 Եւ Եղկանայի որդիքը՝ Ամեսայի,
26 Աքիմոթ և Եղկանա. Եղկանայի որդիքը՝ Նորա որդին Սոփի, Նորա
27 որդին Նահաթ, Նորա որդին Եղիսաբ, Նորա որդին Յերոամ, Նորա որդին Եղկանա։ Եւ Սամուէլի որդիքը՝ Նորա անդրանիկը Յ-ովէլ և երկրորդը Աբիա։
29 Մերարիի որդիքը՝ Մոողի, Նորա որդին Ղոբենի, Նորա որդին
30 Ամմէի, Նորա որդին Ոզա. Նորա որդին Սամաա, Նորա որդին Անդիա, Նորա որդին Ասայրա։
31 Եւ սորանք են, որոնց դրաւ Դաւիթ երգեցողութեան վերայ Տիրոջ տանը տապանակը Նորա-
32 նում դնելուց յետոյ։ Եւ Նորանք ծառայում էին ժողովքի խորանի առջև երգեցողութեամբ մինչև որ Սողոման շինեց Տիրոջ տունը Երուսաղէմում, և իրանց կարգին համեմատ կենում էին իրանց պաշ-
33 տօնումը։ Եւ սորանք են կենողները և Նորանց որդիքը՝ կահաթեանների երգիչ Եմանը՝ որդի
34 Յովէլի, որդի Սամուէլի, Որդի Եղկանայի, որդի Յերոամի, որդի
35 Եղիէլի, որդի Թովայի, Որդի Սուփի, որդի Եղկանայի, որդի
36 Մահաթի, որդի Ամեսայի, Որդի Եղկանայի, որդի Յովէլի, որդի Ազարիայի, որդի Սոփոնիայի,
37 Որդի Թահաթի, որդի Ասիրի, որդի Աբիասափի, որդի Կորխի,
38 Որդի Իսհարի, որդի Կահաթի,
39 որդի Ղևիի, որդի Իսրայէլի։ Եւ Նորա եղբայրն Ասափ Նորա աջ կողմին կանգնողն էր. Ասափ որդի Բարաքիայի, որդի Սամայայի,
Որդի Միքայէլի, որդի Բաա- 40
սիայի, որդի Մելքիայի, Որդի 41
Աթանէի, որդի Զարայի, որդի
Ադայիայի, Որդի Եթանի, որդի 42
Զամմայի, որդի Սեմէիի, Որդի 43
Յեթի, որդի Գերսանի, որդի
Ղևիի։ Եւ Նորանց եղբայրները՝ 44
Մերարիի որդիքը ձախ կողմին
Եթան, որդի Կիսիի, որդի Աբդիի, որդի Մալուքի, Որդի Ա- 45
սաբիայի, որդի Ամասիայի, որդի
Քեղկիայի, Որդի Ամասիի, որդի 46
Բանիի, որդի Սամերի, Որդի 47
Մոողիի, որդի Մուսիի, որդի
Մերարիի, որդի Ղևիի։ Եւ Նո- 48
րանց եղբայրները՝ Ղևատացիք նըւիրուած էին Աստուծոյ տան ամեն ծառայութեանը։
Բայց Ահարոնը և Նորա որդիքը 49
պրում էին ողջակէզի սեղանի վերայ և խունկի սեղանի վերայ, սրբութեանց սրբութեան ամեն գործի համար և Իսրայէլին այն ամենի համեմատ քաւելու համար, որ հրամայել էր Աստուծոյ ծառան Մովսէսը։ Եւ Ահա- 50
րոնի որդիքը սորանք են. Նորա որդին Եղիազար, Նորա որդին Փենեհէս, Նորա որդին Աբիսուա.
Նորա որդին Բոկկի, Նորա որ- 51
դին Ոզի, Նորա որդին Զարիա.
Նորա որդին Մարիոթ, Նորա որ- 52
դին Ամարիա, Նորա որդին Աքիտուբ, Նորա որդին Սադոկ, Նո- 53
րա որդին Աքիմաաս։
Եւ սորանք են Նորանց բնա- 54
կութիւնները իրանց գիւղերով իրանց սահմաններում. Ահարոնի որդիներին՝ կահաթի տոհմին, որովհետև վիճակը Նորանց ընկաւ, Քեբրոնը Նորանց տուին 55
Յուդայի երկրում, և Նորա շրջակայքում։ Բայց այն քաղաքի արտերը 56
և Նորա գիւղերը տուին Յեփոնեան Քալէբին։ Եւ Ահարոնի 57
որդկանցը տուին ապաստանի քաղաքներ՝ Քեբրոնը, Լբնան և Նորա արուարձանները, և Յաթիրը և Եսթեմոան իր արուարձաններով։ Եւ Քիլէնը իր արուարձան- 58
ներով և Դաբիրը իր արուարձաններով, Եւ Աստանը իր ար- 59

ուարձաններովը, և Բենիամիւսը
60 իր արուարձաններովը. Եւ Բենի-
ամինի ցեղից Գաբան իր արուար-
ձաններովը, և Գազեմէթը իր ար-
ուարձաններովը, և Անաթովթը
իր արուարձաններովը. Նորանց
բոլոր քաղաքները տասներեք քա-
ղաք էին իրանց տոհմերուն.
61 Եւ կահաթի որդկանցը՝ այս
ցեղի մնացածներին փրա-եց- Մա-
նասէի կէս ցեղի բաժնից վիճա-
կով տասը քաղաք:
62 Եւ Գերսոնի որդկանցը իրանց
ցեղերի համեմատ Իսաքարի ցե-
ղից և Ասերի ցեղից և Նեփ-
թաղիմի ցեղից և Մանասէի ցե-
ղից որ Բասանումն է փրա-եց-
տասներեք քաղաք:
63 Մերարիի որդկանցը իրանց տոհ-
մերի համեմատ Ռուբենի ցեղից
և Գադի ցեղից և Զաբուղոնի
ցեղից վիճակով տասներկու քա-
ղաք փրա-եց-:
64 Եւ Իսրայէլի որդիքը Ղեւտացի-
ներին տուին այս քաղաքները և
65 նորանց արուարձանները: Եւ վի-
ճակով տուին Յուդայի որդկանց
ցեղից և Շմաւոնի որդկանց ցե-
ղից և Բենիամինի որդկանց ցե-
ղից այս քաղաքները, որոնց ան-
66 ունները կոչին: Եւ կահաթի
որդկանց ազգատոհմի քաղաք-
67 ները Եփրեմի ցեղից էին, Եւ
տուին նորանց ապաստանի քա-
ղաքներից Սիւքեմը և նորա ար-
ուարձանները Եփրեմի լեռան վե-
րայ, և Գազերը իր արուարձանն-
68 երովը. Եւ Յեկմեամը իր արուարձան-
ներովը, և Բեթորոնը իր արուար-
69 ձաններովը. Եւ Աիյեղոնը իր ար-
ուարձաններովը, և Գեթրեմոնը
70 իր արուարձաններովը, Եւ Մանա-
սէի կէս ցեղից Անէրը իր ար-
ուարձաններովը և Յերղամը իր
արուարձաններովը փրա-էն կահա-
թի որդկանց մնացած տոհմին:
71 Գերսոնի որդկանցը փրա-էն Մա-
նասէի կէս ցեղի տոհմից Բասա-
նի միջի Գովղանը իր արուար-
ձաններովը և Աստարովթը իր
72 արուարձաններովը. Եւ Իսաքարի
ցեղից Կադէսը իր արուարձան-
ներովը, Դաբրաթը իր արուար-
ձաններովը, Եւ Յարմութը իր արուարձաններովը, Եւ Ենգանիմը իր արուարձաններովը: 73
Եւ Ասերի ցեղից Մասալը իր արուարձաններովը. Եւ Աբդոնը իր արուարձաններովը, Եւ Յուկոքը իր արուարձաններովը և Բաթը իր արուարձաններովը. Եւ Նեփթաղիմի ցեղից Գալիլեայի միջի Կադէսը իր արուարձաններովը, և Համմոնը իր արուարձաններովը և Կարիաթեմը իր արուարձաններովը:
Մերարիի մնացած որդկանցը փրա-էն Զաբուղոնի ցեղից Ռեմոնը իր արուարձաններովը, Թաբորը իր արուարձաններովը, Յորդանանի այն կողմին Երիքովի մօտ Յորդանանից դէպի արևելք Ռուբենի ցեղից անապատի միջի Բասորը իր արուարձաններովը և Յասան իր արուարձաններովը, Եւ կադեմոթը իր արուարձաններովը, և Մեփաաթը իր արուարձաններովը: Եւ Գադի ցեղից Գաղաադի միջի Ռամոթը իր արուարձաններովը, և Մանայիմը իր արուարձաններովը, Եւ Եսբոնը իր արուարձաններովը, և Յազերը իր արուարձաններովը:

ԳԼ. Ե

Եւ Իսաքարի որդիքը՝ Թովղա, 1
Փուա, Յասուբ և Սամրոն, չորսը: Եւ Թովղայի որդիքը՝ Ոզի, 2
Հռեփայեա, Յերիէլ, Յեմայի, Յերսամ և Սամուէլ՝ իրանց հօր Թովղայի տան գլխաւորները և իրանց ազգի քաջազունները. Նորանց թիւը Դաւթի օրերին քսան երկու հազար վեց հարիւր էր:
Եւ Ոզիի որդիքը՝ Յեզերիա, և 3
Յեզերիայի որդիքը՝ Միքայէլ, Աբդիա, Յոէլ և Յեսիա, հինգը բոլորն էլ գլխաւորներ էին: Եւ նորանց հետ իրանց հայ- 4
րերի տոհմերիցը իրանց ազգով պատերազմի զօրքի դասդասը երեսուն վեց հազար, վասն զի շատ էին նորանց կա-
նայք և որդիքը: Եւ նորանց եղ- 5
բայրները Իսաքարի բոլոր ցեղե-

բուժմը քաջազունները լինելով ուժաւն ու եօթը հազար էին ամենքը իրանց ազգահամարովը։
6 Բենիամինը՝ Բաղա, Բոքոր և
7 Յեդիէլ, այս երեքը։ Եւ Բաղայի որդիքը՝ Եսբոն, Ոզի, Ոզիէլ, Յերիմոթ և Իրի, այս հինգը իրանց ազգաւոհմի գլխաւորները և քաջազունները, և նորանց ազգահամարը քսաներկու հազար
8 երեսունուչորս։ Եւ Բոքորի որդիքը՝ Զամիրա, Յովաս, Եղիազար, Եղիովենայի, Ամրի, Յերիմոթ, Աբիա, Անաթոթ և Գազամէթ. սորանք ամենքը Բոքորի
9 որդիքն էին. Եւ իրանց ազգաւոհմներովը իրանց ազգահամարուն իրանց ցեղերի մէջ գլխաւորներ էին քաջազունները քսան
10 հազար երկու հարիւր։ Եւ Յեդիէլի որդին Բաղղան, և Բաղղանի որդիքը՝ Յեուս, Բենիամին, Ահոթ, Քանանա, Զեթան, Թարսիս և Աքիսար. Սորանք ամենքը
11 Յեդիէլի որդիքն էին իրանց տոհմերի գլխաւորները քաջազունները՝ տասնեօթը հազար երկու հարիւր պատերազմի դուրս ելող մարդիկ։
12 Եւ Սուփիմ և Ոփիմ Իրի որդիքըն էին, Հուսիմ՝ Աքերի որդին։
13 Նեփթաղիմի որդիքը՝ Յասիէլ, Գունի, Յասեր և Սեղղում՝ Բաղղայի որդիքը։
14 Մանասէի որդիքը՝ Ասրիէլ, որին ծնաւ նորա հարճը, նա ծնաւ նաև Գաղաադի հօրը Մաքիրին։
15 Եւ Մաքիր կին առաւ Ոփիմի և Սուփիմի քրոջը, և նորանց քրոջ անունն էր Մաաքա, և երկրորդը Սալպաադ. և Սալպաադին եղան դ–ն աղջիկներ։
16 Եւ Մաքիրի կինը Մաաքա մի որդի ծնաւ, և նորա անունը կոչեց Փարէս, և նորա եղբօր անունը Սարէս. և նորա որդիները Ուղամ
17 և Բոկամ։ Եւ Ուղամի որդին էր Բեդան. սորանք էին Մանասէի որդու Մաքիրի որդու Գաղաադի
18 որդիքը։ Եւ նորա քոյրը Մողեքեթ ծնաւ Իսուդին, Աբիեզերին
19 և Մաալային։ Եւ Սիմիդայի որդիքն էին Աքիան, Սիւքեմ, Ղաղկէի և Անիամ։

20 Եւ Եփրեմի որդիքը՝ Սուտաղա, և նորա որդին Բարադ, և նորա որդին Թաաթ, և նորա որդին Եղիադա, և նորա որդին
21 Թաաթ։ Եւ նորա որդին Զաբադ, և նորա որդին Սուտաղա, և Եզեր ու Եղիադ։ Եւ նորանց սպանեցին այն երկրում ծնուածք Գեթացիք, վասն զի իջան նորանց անասուններն առնելու։
22 Եւ նորանց հայրը Եփրեմ շատ օրեր սուգ արաւ, և նորա եղբայրները եկան նորան մխիթարելու։
23 Եւ նա մտաւ իր կնոջ մօտ, և նա յղանալով ծնաւ մի որդի, և նորա անունը կոչեց *Բարիա, վասն զի նորա տունը չարիք էր եղել։
24 Եւ նորա աղջիկը Սէերան էր, և սա շինեց ցածի և վերի Բեթորոնը և
25 Ոզան-Սէերան։ Եւ նորա որդին Հռափէ և Հռասէփ, նորա որդին
26 Թոան, Նորա որդին Ղասդան, նորա որդին Ամիուդ, նորա որդին Եղիսամա, Նորա որդին Նաւէ, նորա որդին Յեսու։
27
28
29 Եւ նորանց կալուածքն ու բնակութիւնները՝ Բեթէլ իր գիւղերովը, և արևելեան կողմից Նաարան, և արևմտեան կողմից Գազեր իր գիւղերովը, և Սիւքեմը իր գիւղերովը մինչև Գազա և նորա գիւղերը։ Եւ Մանասէի որդիքանց կողմերին բնակուած էին Բեթսան իր գիւղերովը, Թանաք իր գիւղերովը, Մակեդդով իր գիւղերովը, Դովր իր գիւղերովը. սորանցուած էին բնակուած Իսրայէլի որդի Յովսէփի որդիքը։
30 Ասերի որդիքը՝ Յեմնա, Յեսուա, Յեսուի և Բարիա, և նորանց քոյրը Սարա։ Եւ Բարիայի որդիքը՝ Փաբեր և Մեղքիէլ, որ Բարայղիթի հայրն էր։ Եւ Փաբերը ծնաւ Յափլեթին, Սոմերին և Փովիամին, և նորանց քոյր Սոմղանին։ Եւ Յափլեթի
33 որդիքը՝ Փասաք, Բամհալ և Ասուաթ. սորանք են Յափլեթի որդիքը։ Եւ Սոմերի որդիքը՝ Ա-
34 քի, Հռոգա, Որա և Արամ։
35 Եւ նորա եղբայր Հելեմի որդիքը՝

*Այսինքն չարիքի մէջ

Սոփա, Յամնոա, Սելէա և Ա-
36 մազ։ Սոփայի որդիքը՝ Սուա,
Առնափար, Սուագ, Բարի, Յեմ-
37 բա, Բաասար, Ովդ, Սամմա, Սա-
38 լիսա, Յեթրան և Բէէրա։ Եւ
Յեթերի որդիքը՝ Յեփոնէ, Փաս-
39 փասա և Արա, Եւ Ովղայի որդի-
քը՝ Արահ, Հանիէլ և Հռասիա։
40 Սորանք ամենը Ասերի որդիքն է-
ին՝ ազգատոհմերի գլխաւորներ
ընտիր քաջազուններ և գլխաւոր
իշխաններ. և նորանց ազգա-
տարը պատերազմի զօրքի մէջ նո-
րանց թուով քսանուվեց հազար
մարդ։

ԳԼ. Ը

4 Եւ Բենիամին ծնաւ Բաղային
իր անդրանիկը, երկրորդ՝ Ասբե-
2 լին, երրորդ՝ Սարային, Չորրորդ՝
Նովային և հինգերորդ՝ Ռափա-
3 լին։ Եւ Բաղայի որդիքը՝ Ադար,
4 Գերա, և Աբիուդ, Աբիսուա,
5 Նէեման, Աքուք, Գերա, Սու-
6 փան և Փիերամ։ Եւ սորանք են
Աքուդի որդիքը՝ որոնք ազգա-
տոհմերի գլխաւորներ էին Գա-
բայի բնակիչներուն համար, և նո-
րանց փոխադրեցին Մանսքաթի։
7 Եւ Նէեման ու Աքիա և Գերա
որ նորանց փոխադրեց, և ծնաւ
8 Ոզային և Ախիուդին։ Եւ Սահա-
րիմ ուղիւ ծնաւ Մոաբի դաշ-
տումը նորանց ուղարկելուց յե-
տոյ. Հուսիմ և Բաառա նորա
9 կանայքն էին։ Եւ իր կինը Գո-
դէսից ծնաւ Յորաբին, Սոբիա-
10 յին, Մեսային, Մելգամին, Յե-
ուսին, Սեքիային և Մարմային.
սորանք են նորա ազգատոհմերի
11 գլխաւոր որդիները։ Եւ Հուսիմից
ծնաւ Աբիտոբին և Եղբաալին։
12 Եւ Եղբաալի որդիքը՝ Եբեր, Մի-
սաամ և Սամեր, որ շինեց Ով-
նոնոն, Ղոդը և նորա գիւղերը.
13 Եւ Բարիա ու Սեմա, սորանք
ազգատոհմերի գլխաւորներ էին
Աիալոնում բնակողներուն համար,
սորանք քշեցին Գէթի բնակիչնե-
14 րին։ Եւ Ախիով, Սոփակ, Յերի-
15 մոթ, Զաբադիա, Արադ, Ե-
16 դեր, Միքայէլ, Յեսպա և Յովքա

բարիայի որդիքը։ Եւ Զաբադիա, 17
Մեսուղամ, Ազակի, Փաբեր, Յե- 18
ամնարի, Յեզղիա և Յոբաբ եղ-
բայրի որդիքը։ Եւ Յակիմ, Չեք- 19
րի, Զաբդի, Եղիենայի, Սաղ- 20
թի, Եղիէլ, Ադայիա, Բարեա 21
և Սամարաթ՝ Սեմէիի որդիքը։
Եւ Յեսպան, Եբեր, Եղիէլ, 22
Աբդոն, Չիքրի, Անան, (23) Ա- 24
նանիա, Եղամ, Անթոթիա,
Յեփեդիա և Փանուէլ՝ Սուսակի 25
որդիքը։ Եւ Սամսարի, Սաարիա, 26
Գոթողիա, Յարեսիա, Եղիա և 27
Չիքրի՝ Յերոհամի որդիքը։ Սորանք 28
ազգատոհմերի գլխաւորներ էին՝
իրանց ցեղերի առաջիններըը. սո-
րանք բնակուած էին Երուսաղէ-
մում։

Եւ Գաբաւոնում բնակուած է- 29
ին՝ Գաբաւոնի հայրը, և նորա
կնոջ անունը Մաոքա. Եւ նորա 30
անդրանիկ որդին Աբդոն, և Սուր,
Կիս, Բաաղ, Նադաբ, Գեդոր, 31
Աքիով և Զաքար։ Եւ Մակելո- 32
թը ծնաւ Սամեային, և հէնց
դորանք էլ բնակեցին իրանց եղ-
բայրների դիմացը Երուսաղէմում,
իրանց եղբայրների հետ։

Եւ Ները ծնաւ Կիսին, և Կիսը 33
ծնաւ Սաուղին, և Սաուղը ծը-
նաւ Յոնաթանին, Մեղքիսու-
էին, Աբինադաբին և Եսբաալին։
Եւ Յոնաթանի որդին՝ Մերի- 34
բաալ. և Մերիբաալը ծնաւ Մի-
քայէլին։ Եւ Միքայէլի որդիքը՝ Փի- 35
թոն, Մելէք, Թարէա և Ախազ։
Եւ Ախազը ծնաւ Յովադային, 36
և Յովադան ծնաւ Գաղեմաթին,
Ազմաւթին և Զամբրիին. և Զամբ-
րին ծնաւ Մոսային. Եւ Մոսան 37
ծնաւ Բանոսային, նորա որդին
Ռափա, նորա որդին Եղեասա,
նորա որդին Եսէլ։ Եւ Եսելը վեց 38
որդի ունէր, և սորանք են անուն-
ները՝ Եզրիկամ, Բոքերու, Իսմա-
յէլ, Սաարիա Աբդիա և Անան.
սորանք ամենքը Եսելի որդիքն է-
ին։ Եւ նորա եղբայր Եսեկի որ- 39
դիքը՝ անդրանիկը Ուզամ, երկ-
րորդը Յեուս և երրորդը Եղիփա-
ղետ։ Եւ Ուզամի որդիքը քաջա- 40
զուն մարդիկ էին ազեղնաւոր, և
նորանք շատ որդիք և որդկանց

որդիք ունէին Հարիւր յիսուն. որոնք ամենքը Բենիամինի որդիկանցից են։

ԳԼ. Թ

1 Եւ բոլոր Իսրայէլը արձանագրուեցան, և ահա նորանք գրուած են Իսրայէլի և Յուդայի թագաւորաց գրքումը. իրանց անօրէնութեանը համար գերի տարուեցան Բաբիլոն։

2 Եւ առաջի բնակիչները՝ որ Երուսաղէմ էին իրանց կալուածքների միջի իրանց քաղաքներումը, էին Իսրայէլացիք, քահանաներ, Ղեւտացիներ և Նաթանայիմներ։

3 Եւ Երուսաղէմումը բնակուած էին Յուդայի որդիկանցից, Բենիամինի որդիկանցից, Եփրեմի և Մանասէի որդիկանցից.

4 Եւ Յուդայի որդու Փարեսի որդիներից Բանիի որդու Իմրիի որդու Ամրիի որդու

5 Ամիուդի որդին Ոթայի։ Եւ Սելոնեանցներից՝ նորա անդրանիկը

6 Ասայիա և նորա որդիքը։ Եւ Զարայի որդիներից՝ Յեհիէլ և նորանց եղբայրները վեց հարիւր հիսուն։

7 Եւ Բենիամինի որդիներից՝ Ասանուայի որդու Ովդուիայի որդու Մեսուղամի որդին Սալլու։

8 Եւ Յերոամի որդին Յեբնիա, և Ամբրիի որդու Ոզնի որդին Իլա, Յեբնիայի որդու Ռագուէլի որդու Սափատիայի որդին Մեսուղամ.

9 Եւ նորանց եղբայրները իրանց ցեղերին համեմատ՝ ինը հարիւր հիսուն և վեց մարդ. այս բոլոր մարդիկը իրանց տոհմերի գլխաւորներն էին։

10 Եւ քահանաներից Յեդայիա,

11 Յոյարիբ և Յաքին. Եւ Ազարիա Ծդ տան վերակացու Ախիտոբի որդու Մարիովթի որդու Սադովկի որդու Մեսուղամի որդու Փեղկիայի որդին Ազարիա.

12 Եւ Մեղքիայի որդու փաշուրի որդու Յերոամի որդին Ադայիա, և Եմմերի որդու Մեսեղամովթի որդու Մեսուղամի որդու Եզերայի որդու

13 Ադիէլի որդին Մասէ։ Եւ նորանց եղբայրները իրանց ազգատոհմների գլխաւորներն էին. հսկայ եօթը հարիւր վեթասուն քաջազուններ Ազատուածդ տան ծառայութեան գործումը։

14 Եւ Ղեւտացիներից՝ Մերարիի որդիկանցից Ազարիայի որդու Եղբիկամի որդու Ազուբի որդին Սեմայիա,

15 Եւ Բակբակար, Արէս, Գալալ, և Ազափի որդու Զեքրիի որդու Միքիայի որդին Մաթանիա,

16 Եւ Եդիթունի որդու Գալալի որդու Սեմայիայի որդին Աբդիա, և Եղկանայի որդու Ասայի որդին Բարաքիա, որ բնակուած էր Նետոփաթացոց գեղերումը։

17 Եւ դռնապանները՝ Սեղղում, Ակկուբ, Տեղմոն և Ախիման. և նորանց եղբայրները՝ Սեղղումը գլխաւոր։

18 Եւ մինչև հիմա թագաւորի դրան վերայ դէպի արևելք նորանք են դռնապանները Ղեւիի որդիկանց բանակներից։

19 Եւ Կորխի որդու Աբիասափի որդի Կովրէի որդին Սեղղումը և նորա եղբայրները իր հօր տանից՝ Կորխեաններն ծառայութեան գործի վերայ խորանի դրան պահապաններն էին. և նորանց հայրերը Տէրոջ բանակումը մուտքի պահապաններ էին։

20 Եւ Եղիազարի որդին Փենեհէսը առաջ նորանց վերայ իշխան էր, և Տէրը նորա հետ էր։

21 Մասեղամիայի որդին Զաքարիան խորանի դրան մուտքի դռնապան էր։

22 Դռների համար դռնապաններ ընտրուածներն ամենքը երկու հարիւր տասն երկու հոգի էին. որոնք իրանց գիւղերումը ազգատոհմարի մէջ գրուեցան. Դաւիթը և Սամուէլ տեսանողը նորանց հաստատեցին իրանց հաւատարմութեան համար։

23 Եւ նորանք ու նորանց որդիքը Տէրոջ տան այսինքն խորանի տան դռների պահապանութիւնումն էին։

24 Դռնապանները չորս կողմին էին լինում՝ դէպի արևելք, արևմուտք հիւսիս և հարաւ։

25 Եւ նորանց գիւղերի եղբայրները եօթը օրուան համար ժամանակ ժամանակ գալիս էին որանց հետ.

26 Վասն զի նորանք այն չորս գլխաւոր Ղեւտացիքը էրանց հաւատացուած պաշտօնի

ժէջ էին և Աստուծոյ տան սենեակների ու գանձերի վերայ էին,
27 եւ գիշերը կենում էին Աստուծոյ տան շուրջը, վասն զի պահապանութիւնը նորանց վերայ էր, և նորանք էին դուռը բանում ամեն առաւօտ։ եւ նո-
28 րանցից «Հաւ+ պաշտօնի անօթների վերայ էին լինում, որովհետև նորանց թուով ներս էին տանում և նորանց թուով դուրս
29 էին բերում։ եւ նորանցից էին որոնք նշանակուած էին դռա անօթների և սրբարանի անօթների և նաշխէ և գինու և իւղի և խնկրուկի և համեմների վերայ։
30 եւ քահանաները որդեկանցից էին խնկեղէնների բաղադրութիւն-
31 քը բաղադրողները։ եւ Ղևտացիներից Մատաթիան, որ Կորխացի Սեղդումի անդրանիկն էր, 32 տապակի գործքի վերայ էր։ եւ նորանց եղբայրից՝ Կահաթեանների էին առաջաւորութեան հացի վերակացու, որ պատրաստեն ամեն շաբաթ։
33 Բայց երգիչները, որ Ղևտացոց տղատոհմներուն գլխաւորներ էին, սենեակներուն էին լինում ազատ, վասն զի ցերեկ ու գիշեր նորանք պիտի իրանց գործումը
34 լինէին։ Սորանք են Ղևտացոց տղատոհմների գլխաւորները, որ իրանց ցեղերում գլխաւորներ էին. սորանք բնակում էին Երուսաղէմում։
35 Եւ Գաբաւոնում բնակում էին Գաբաւոնի հայրը՝ Յէհիէլ, և նորա կնոջ անունը Մաաքա,
36 եւ նորա անդրանիկ որդին Աբդոն, և Սուր, Կիս, Բաալ, Ներ,
37 Նադաբ, Գեդոր, Աքիով, Զաքարիա և Մակելոթ։ եւ Մա-
38 կելոթը ծնաւ Սամաային. և սորանք էլ նոցա իրանց եղբարց դիմացին էին բնակում Երուսաղէմում իրանց եղբարց հետ։
39 Եւ Ները ծնաւ Կիսին, և Կիսը ծնաւ Սաւուղին, և Սաւուղը ծնաւ Յոնաթանին, Մեղքիսուէին, Աբինադաբին և Եսբաղին։
40 Յոնաթանի որդին Մերիբբաալ, և Մերիբբաալը ծնաւ

Միքայէլին։ եւ Միքայէլի որդիքը՝ 41
Փիթոն, Մելէք, Թարէ և Ախազ։
եւ Ախազը ծնաւ Յահարային, և 42
Յահարան ծնաւ Գազեմէթին, Ազմաւէթին և Զամբրիին, և Զամբրին ծնաւ Մոսային. եւ Մոսան 43
ծնաւ Բանային, նորա որդին Ռափայիա, նորա որդին Եղիասա, նորա որդին Եսէլ։ եւ Եսէլ 44
վեց որդի ունէր, որոնց անուններըը սորանք են, Եզրիկամ, Բոքերու, Իսմայէլ, Սաարիա, Աբդիա և Անան. սորանք էին Եսէլի որդիքը։

ԳԼ. Ժ

Եւ փղշտացիք պատերազմեցին 1
Իսրայէլի հետ, և Իսրայէլացին փախաւ փղշտացոց առջևից, և սպանուած վայր ընկան Գեղբուէլի լեռան վերայ։ եւ փղշտացիք հա- 2
ռան Սաւուղին և նորա որդիներին, և փղշտացիք զարկեցին Սաւուղի որդիք՝ Յոնաթանին, Աբինադաբին և Մեղքիսուէին։
եւ պատերազմը սաստկացաւ Սա- 3
ւուղի վերայ, և աղեղնաւորմարդիկը գտան նորան, և վիրաւորուեցաւ աղեղնաւորներից։ եւ 4
Սաւուղն ասաց իր կապարճակիրին. Սուրդ հանիր և նորանով ինձ խոցիր. մի գուցէ այս անթլփատները գան և ինձ ծաղր անեն. բայց նորա կապարճակիրը չուզեց, վասն զի շատ վախեցաւ։
Եւ Սաւուղն առաւ սուրը և ընկաւ նորա վերայ։ եւ երբոր նո- 5
րա կապարճակիրը տեսաւ, որ Սաւուղը մեռաւ, նա էլ իր սուրի վերայ ընկաւ և մեռաւ։ եւ 6
մեռաւ Սաւուղը և նորա երկու որդիքը, և նորա բոլոր տունը միասին մեռան։
Եւ երբոր տեսան բոլոր Իսրա- 7
յէլացիք որ հովտումն էին, որ նորանք փախան, և որ Սաւուղը և նորա որդիքը մեռան, այն ժամանակ թողեցին իրանց քաղաքները և փախան, և փղշտացիք եկան և բնակեցին նորանցում։
Եւ եղաւ հետևեալ օրը, որ 8
փղշտացիք եկան մեռելները մեր-

կացնելու, և գան Սաուղին և նորա որդկանցը ընկած Գեղբուէի
9 լեռան վերայ։ Եւ նորան վերկացրին և վեր առին նորա գլուխը և նորա զէնքերը, և մարդ ուղարկեցին շուրջանակի փղշտացոց երկրի մէջ, որ իրանց կռոտաններին և ժողովրդին ուրախ
10 առան։ Եւ նորա զէնքերը դրին իրանց աստուծոյ տանը, և նորա գագաթը կախեցին Դագոնի տաճարը։

11 Եւ երբոր լսեցին Գաղաադի Յաբիսի բոլոր բնակիչները այն ամենը, որ փղշտացիք արել էին
12 Սաուղին, բոլոր քաջ մարդիկը վեր կացան և վեր առին Սաուղի դիակը և նորա որդկանց դիակը և բերին նոցանից Յաբիս, և թաղեցին նորանց ոսկորները Յաբիսում բևեկինի տակին և եօթն օր ծոմ պահեցին։

13 Այսպէս մեռաւ Սաուղն իր այն ապստամբութեան համար, որ ապստամբեց Տիրոջ դէմ Տիրոջ խօսքի պատճառով, որ չը պահեց, և վնուկ ուզեց որ բաժ
14 հարցնէ։ Բայց Տիրոջը չհարցրեց, և նա նորան մեռցրեց և թագաւորութիւնը դարձրեց Յեսսէի որդի Դաւթին։

Գ Ե Ր Ա Կ

1 Եւ բոլոր Իսրայէլը ժողովուեցան Դաւթի մօտ Քեբրոն ասելով. Ահա մենք քո ոսկորը և քո
2 մարմինն ենք. Դեռ սորանից առաջ երբոր Սաուղը մեզ վերայ թագաւոր էր դու էիր Իսրայէլին դուրս հանում և ներս բերում, և քո Տէր Աստուածն ասաց քեզ. Դու հովուելս իմ ժողովուրդը Իսրայէլին և դու լինիս իշխան իմ ժողովուրդ Իսրայէլի
3 վերայ։ Եւ Իսրայէլի բոլոր ծերերը եկան թագաւորի մօտը Քեբրոն. և Դաւթիը նորանց հետ դաշինք դրաւ Քեբրոնում Տիրոջ առջև, և նորանք Դաւթին թագաւոր օծեցին Իսրայէլի վերայ Տիրոջ խօսքին համեմատ որ էօ-ե Սամուէլի ձեռով։

4 Եւ Դաւթիը գնաց բոլոր Իսրայէլի հետ Երուսաղէմ, որ է Յեբուս, և այնտեղ էին Յեբուսացիք այն երկրի բնակիչները։ Եւ Յեբուսի բնակիչները ասացին Դաւթին. Այստեղ պիտի չմտնես. բայց Դաւթին առաւ Սիոնի բերդը, որ է Դաւթի քաղաքը։ Եւ Դաւթիը ասաց. Ով որ Յեբուսացիներին առաջ զարկէ, նա կ'լինի գլխաւոր և զօրապետ. և առաջ Շարուհեայի որդի Յովաբը վեր ելաւ, և նա զօրապետ եղաւ։ Եւ Դաւթիը բնակեց այն բերդում, նորա համար նորան Դաւթի քաղաք են կոչում։ Եւ քաղաքը շինեց շուրջանակի Մելոնից մինչև նորա շրջակայքը. և Յովաբը նորոգեց քաղաքի մնացորդը։ Եւ Դաւթիը գնալով մեծանում էր, և զօրաց Տէրը նորա հետ էր։

Եւ սորանք են Դաւթի քաջերի գլխաւորները, որոնք նորան օգնեցին նորա թագաւորութիւնում բոլոր Իսրայէլի հետ, որ նորան թագաւոր անեն Տիրոջ խօսքին համեմատ Իսրայէլի վերայ։ Եւ սա է Դաւթի քաջերի թիւը. Հաքեմանիի որդին Յեսբաամ՝ երեսունի գլխաւորը. սա իր նիզակը վեր խազացրեց երեք հարիւր մարդկանց վերայ մէկ անգամում մեռցնելով։

Եւ նորանից յետոյ Աքուքացի Դոդոյի որդին Եղիազար, սա այն երեք զօրաւորների հետ էր։ Սա Դաւթի հետ էր Աբեզդոմմիմում, և այնտեղ ժողովուել էին փղշտացիք պատերազմելու համար, և այնտեղ արտ մէկ մասը լիքն էր գարիով, և ժողովուրդը փախաւ փղշտացոց առջևից։ Եւ սորանք կանգնեցին ագարակի մէջ, և նորան ազատեցին, և զարկեցին փղշտացիներին. և Տէրը փրկեց մեծ փրկութիւնով։

Եւ այն երեսուն զօրավարներից երեքը իջան վէմը Դաւթի մօտ Ադոզամի քարայրը և փղշտացոց բանակը բանակ էր առել Ռափայիմի հովտի մէջ։ Եւ այն ժամանակ Դաւթիը բերդումն էր, և փղշտացիներից մի զօրագունդ

17 Բեթլէհեմուձն էր։ Եւ Դաւիթը փափաքելով ասաց. Ո՞վ կ՚ըմբէ ինձ հանոյր խմելու ջուր Բեթլէհեմի ջրհորիցը, որ դրան մօտ է։
18 Եւ այն երիքը ճեղքեցին փղշտացոց բանակը և ջուր քաշեցին Բեթլէհեմի ջրհորիցը, որ դրան մօտ է, և բերին տուին Դաւթին, իսկ Դաւիթը չուզեց խմել այն, և թափեց նորան Տէրոջ
19 համար։ Եւ ասաց. Քաւ լիցի ինձ, ով իմ Աստուած, որ առնեմ այս բանը. այս մարդկանց արիւնը խմե՞մ ես իրանց կեանքի տեղ, վասն զի իրանց կեանքը վտանգէ դնելով բերին այն. և չուզեց խմել նորան. այս բանն արին այն երեք զօրաւորները։
20 Եւ Յովաբի եղբայրը Աբեսան որ այն երիքի գլխաւորն էր. և նա խաղացրեց իր նիզակը երիք հարիւրի վերայ նոցանից ապանելով. և նա այն երիքի մօտ անուանի
21 էր։ Այն երիքից երկուսի մօտ յարգուած էր, և նորանց իշխան եղաւ, բայց այն դա՛ս երիքին չէր հասնիլ։
22 Եւ Յովիադայի որդին Բանեան՝ մի ժիր և գործունեայ մարդու որդի Կաբսեէլացի՝ գործեց Մովաբի երկու զօրաւոր մարդկանցը և նա իջաւ ու զարկեց առիւծին
23 գուբի մէջ ձիւնի ժամանակ։ Եւ նա զարկեց այն Եգիպտացի մարդուն՝ այն հինգ կանգուն երկար մարդուն. և Եգիպտացու ձեռին մի նիզակ կար ոտայնանկաց գըլանին չափ. և նա իջաւ նորա մօտ մի ցուպով և յափշտակեց նիզակը Եգիպտացու ձեռքից և սպանեց նորան իր նիզակով։
24 Այս բաներն արաւ Յովիադայի որդին Բանեան՝ և նա անուանի էր այն երիք զօրաւորների մէջ։
25 Ահա նա այն երեսունիցը աւելի պատուաւոր էր, բայց այն երիքին չէր հասնիլ. և Դաւիթը նորան իր առեանին վերակացու դրաւ։
26 Եւ քաջագունք. Յովաբի եղբայրն Ասայէլ, Ելհանան Դովդոյի որդին Բեթլէհեմից,
27 Շարոդացի Սամմա, Փելոնացի Փելո-

զէս. Թեկուացի Եկդեսի որդին Իրաս, Անաթովթացի Աբիեզէր.
28 Ովսացի Սովքայ, Աքուքացի Ե-
29 դի. Նետոփաթացի Մաասեայ,
30 Նետոփաթացի Բաանայի որդին
31 Ալտդ. Բենիամինի որդւոցանց Գաբայից Ռիբայի որդին Եթթի,
32 Փարաթոնացի Բանեա, Գաասի ձորերից Հուրայ, Աբատաթացի
33 Աբիէլ. Բարումացի Ազմաթ,
34 Սաղաբինացի Եղիաբա. Գեղոնացի Հասեմի որդիները՝ Աբարացի
35 Սագէի որդին Յոնաթան. Աբարացի Սաքարի որդին Աքիամ,
36 Ովրի որդին Եղիփաղ. Մեքուբաթացի Ոփեր, Փելոնացի Աքիա.
37 Կարմէլացի Ասարէ, Ազբայի
38 որդին Նաարայ, Նաթանի եղբայրն Յոէլ, Ագարայի որդին
39 Մարար, Ամմոնացի Սելեկ, Շաբուհեան Յովաբի կապարճակիրը
40 Բերովթացի Նաարայ. Յեթերացի Իրաս, Յեթերացի Գարեբ.
41 Փեղացի Ուրիա, Ազլայի որդին
42 Զաբադ. Ռուբենեանց գլուխը Ռուբենեան Սիզայի որդին Ադինա, որ նորա հետ երեսուն մարդ
43 կար. Մաաքայի որդին Անան,
44 Մաթանացի Յովսափատ, Աստարովթացի Ովիա, Արոերացի Փութեմացի որդիքը՝ Սամա և Յեհիէլ,
45 Սամմրիի որդին Յեդիէլ, և նորա
46 եղբայրը Թիսացի Յովքա, Մահուացի Եղիէլ, Եղնաամի որդիքը՝ Յարիբայի և Յոսաբիա, Մովաբացի Յեթեման, Եղիէլ, Ովեդ,
47 և Մեսոբացի Յեհիէլ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սորանք են որ եկան Դաւթի մօտ Սիկեղակ, քանի որ նա դեռ Կիսեան Սաուղի երեսից թաքչուած էր, և սորանք քաջեր էին՝ պատերազմում օգնողներ։
2 Աղեղնաւորներ էին, պարսով քարեր էին ձգում աջով և ձախով և աղեղով նետեր, Սաուղի եղբայրներից Բենիամինից։
3 Գլխաւորը՝ Աքիեզէր, յետոյ Յովաս՝ Գաբաացի Սեմայայի որդիքը. և Յեզիէլ ու Փաղէտ Ազմաթի որդիքը, և Բարաքա ու Անաթով-

4 թոցի Յէու. եւ Գաբաւոնացի Խամայիան՝ այն երեսունից մէկ զօրաւոր և այն երեսունի վերայ, և Երեմիա, Յազիէլ, Յօհանան
5 և Գադերացի Յովզաբադ, Եղիազայ, Յերիմովթ, Բաալիա, Սամարիա և Յարուփացի Սափատիա,
6 Եղկանա, Յեսիա, Ազարիէլ, Յովեղեր և Յեսբաամ՝
7 Կորխացիք, եւ Գեդովրացի Յերոամի որդիքը՝ Յովելա և Զաբադիա
8 եւ Գադեաններից բաժանուեցան փնաչին Դաւթի մօտ անապատի միջի բերդը քաջագունդ մարդիկ պատերազմի զինուորներ վահան և նիզակ գործածող, նրանց երեսը առիւծի երես էր և լեռների վերայի այծեամների պէս
9 արագաշարժ էին։ Գլխաւորը Եզեր, երկրորդը Աբդիա, երրորդը
10 Եղիաբ, Չորրորդը Մասմանա,
11 Հինգերորդը Երեմիա, Վեցերորդը Եթթի, Եօթներորդը Եղիէլ,
12 Ութերորդը Յօհանան, Իններորդը
13 Եղզաբադ, Տասներորդը Երեմիա, Մետասաներորդը Մաքբաննայ։ Սորանք Գադի որդիքից զօրքի գլխաւորներ էին. մէկ փոքրը հարիւրի վերայ, իսկ մեծը
15 հազարի վերայ։ Սորանք են, որ Յորդանանից անց կոցան առաջի ամսուայ, երբոր նա լցուել էր իր բոլոր ափերը և բոլոր հովիտներում բնակողներին փախցրին դէպի արեւելք և դէպի արեւմուտք։
16 Եւ Բենիամինի որդիքից և Յուդայից էլ եկան բերդը Դաւթի մօտ։
17 Եւ Դաւիթը նորանից առջևը դուրս եկաւ և պատասխան տուաւ ու ասաց նորանց. Եթէ խաղաղութեամբ էք եկել ինձ մօտ ինձ օգնելու, իմ սիրտը ձեզ հետ մէկ կ'լինի. բայց եթէ խարէութեամբ ինձ իմ թշնամուց մատնելու, իմ ձեռքերումը անօրէնութիւն չլինելով, այն ժամանակ մեր հայրերի Աստուածը տեսնէ և յանդիմանէ։
18 Եւ Հոգին պատեց իշխանների գլուխ Ամեսայիին, և նա ասաց.
Քեզ, ով Դաւիթ, և քեզ հետ ով Յեսսէի որդի,
Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն քո օգնականներին.
Քանզի քո օգնականը քո Աստուածն է։
Եւ Դաւիթը նորանց ընդունեց և նորանց գունդի գլխաւորներ դրաւ։
19 Մանասէից էլ անցան Դաւթի մօտ, երբոր նա Փղշտացոց հետ Սաւուղի վերայ գնաց պատերազմելու, բայց նորանց չօգնեցին, վասն զի Փղշտացոց իշխանները խորհրդով նորանց եւ ուղարկեցին ասելով. Մեր գլխաւորների հետ իր Տիրոջ Սաւուղի կողմը
20 կանցնէ։ Նա Սիկեղակ գնալիս նորա կողմն անցան Մանասէից Մանասէի հազարապետները՝ Եզնա, Յովզաբադ, Յեդիէլ, Միքայէլ, Յովզաբադ, Եղիուա և
21 Սաղթի։ Եւ սորանք օգնեցին Դաւթին՝ գունդերի դէմ, վասն զի ամենքն էլ քաջագունդներ էին և զօրքին գլխաւորներ եղան։
22 Վասն զի այն ժամանակ օր ըստ օրէ գալիս էին Դաւթի մօտ նորան օգնելու, մինչև որ նորանք մի մեծ բանակ եղան Աստուծոյ բանակին պէս։
23 Եւ սորանք են այն ազատապինդների գլուխների թիւը, որոնք եկան Քեբրոն Դաւթի մօտ, որ թագաւորութիւնը նորան դարձնեն Տիրոջ խօսքին համեմատ։
24 Յուդայի որդիքից վահան և նիզակ կրող վեց հազար ութը հարիւր ազատապինդներ զօրքեր։
25 Շմաւոնի որդիքից քաջագունդ զօրքեր եօթը հազար հարիւր։
26 Ղևիի որդիքից չորս հազար
27 վեց հարիւր։ Եւ Յովիադան Ահարոնեանների առաջնորդ, և նորա հետ երեք հազար եօթը
28 հարիւր։ Եւ տղամարդ քաջագունդը Սադովկ, և նորա հօր տանից քսաներկու իշխաններ։
29 Եւ Բենիամինի որդիքից՝ Սաւուղի եղբայրներից երեք հազար. և մինչև այն ժամանակ նորանցից շատերը Սաւուղի տան պահապանութիւնն էին անում։
30 Եւ Եփրեմի որդիներից քսան հազար ութը հարիւր քաջագունդ իրանց

31 ազգատոհմերուժ անուանին։ Եւ
Մանասէի կէս ցեղից տասնութը
հազար՝ որ իրանց անուններովը
որոշուած էին, որ գնան Դաւ-
32 թին թագաւոր անեն։ Եւ Իսա-
քարի որդկանցից, որ ժամանակի
գիտութիւնը ունէին և հասկա-
նում էին թէ Իսրայէլը ինչ պէտք
է անէ, նորանց երկու հարիւր
գլխաւորները, և նորանց բոլոր
եղբայրները նորանց հետ հանա-
33 ձայն էին։ Զաբուղոնից գինուոր
դուրս եկող պատերազմական ա-
ռնն գործիքներով պատերազմ
անողներ հիսուն հազար մարդիկ
որ պատերազմում էին ոչ այլ և
34 այլ սրտերով։ Եւ Նեփթաղիմից
հազար իշխաններ, և նորանց հետ
երեսունեօթը հազար վահանաւոր
35 և նիզակաւոր։ Եւ Դանից պա-
տերազմ անող քառնութը հա-
36 զար վեց հարիւր։ Եւ Աշերից
գինուոր դուրս եկող և պատե-
րազմ անող քառասուն հազար։
37 Եւ Յորդանանի այն կողմից՝ Ռու-
բինից, Գադից և Մանասէի կէս
ցեղից պատերազմի զօրքերի բո-
լոր գործիքներով հարիւր քսան
38 հազար։ Սրանք ամենքը պատե-
րազմի մարդիկ էին ուղիղ սրտով
Քանաանացիների կողմից, եկան
Քեբրան Դաւթին բոլոր Իսրայէլի
վերայ թագաւոր անելու. նաև
բոլոր մնացած Իսրայէլացիք հա-
մաիտ էին Դաւթին թագաւոր
39 անելուն։ Եւ այնտեղ ուտում
և խմում էին Դաւթի հետ ե-
րեք օր, վասն զի իրանց եղբայր-
ները պատրաստել էին իրանց
40 համար։ Նաև նորանցից մօտիկ
եղողները, մինչև Իսաքար, Զա-
բուղոն և Նեփթաղիմ հաց բե-
րին էշերով, ուղտերով, ջորինե-
րով և եզներով և ուտելիքներ
համար ալիւր, չոր թուզ, չամիչ,
գինի, իւղ, արջառներ և ոչխար-
ներ շատութեամբ. որովհետև
ուրախութիւն կար Իսրայէլի մէջ։

ԳԼ ԺԳ

1 Եւ Դաւթը խորհուրդ արաւ
հազարապետների և հարիւրա-
պետների և բոլոր իշխանների
հետ։ Եւ Դաւիթն ասաց բոլոր 2
Իսրայէլի ժողովքին. Եթէ ձեզ
հաճոյ է, և այս բանը մեր Տէր
Աստուածմանից է, ընդհանրապէս
դրկենք ուղարկենք Իսրայէլի բոլոր
երկիրների մէջ մնացած մեր եղ-
բայրներին և նորանց հետ քա-
հանաներին և Ղեւտացիներին ի-
րանց քաղաքները և արուարձան-
ները, որ մեզ մօտ ժողովեն։
Եւ մեր Աստուծոյ տապանակը 3
մեզ մօտ փոխադրենք, վասն զի
Սաուղի օրերումը նորան չդրնե-
ցինք։ Եւ բոլոր ժողովքն ասաց. 4
Որ այնպէս անեն, որովհետև այս
խօսքը բոլոր ժողովրդի աչքում ու-
ղիղ երևեցաւ։ Եւ Դաւիթը բո- 5
լոր Իսրայէլին ժողովեց Եգիպտոսի
Սիհորից մինչև Եմաթի մուտքը,
Աստուծոյ տապանակը Կարիա-
թարիմից բերելու համար։ Եւ 6
Դաւիթը վեր գնաց բոլոր Իսրա-
յէլի հետ Բաալ այսինքն Յու-
դայի Կարիաթարիմը, որ այնտե-
ղից վեր բերէ քերովբէից վրա
նստող Եհովայ Աստուծոյ տապա-
նակը, որի անունը կանչվում է։
Եւ Աստուծոյ տապանակը դրին 7
մի նոր սայլի վերայ Աբինադաբի
տունից. և Ոզան ու Ախիոն
քշում էին սայլը։ Եւ Դաւիթն 8
ու բոլոր Իսրայէլը խաղում էին
բոլոր ուժով Աստուծոյ առջև
օրհնութիւններով, քնարներով,
տաւիղներով, թմբուկներով,
ձնծղաներով և փողերով։
Եւ եկան մինչև Քիդոնի կալը. 9
և Ոզան իր ձեռքը մեկնեց որ
տապանակը բռնէ, վասն զի եզ-
ները ծռել էին։ Եւ Տէրոջ բար- 10
կութիւնը բորբոքեց Ոզայի դէմ.
և զարկից նորան, որովհետև
ձեռքը մեկնել էր տապանակին.
և նա մեռաւ այնտեղ Աստուծոյ
առջև։ Եւ Դաւիթը տրտմեց, 11
վասն զի Տէրը հարուածով հար-
ուածեց Ոզային. և այնտեղի ա-
նունը մինչև այսօր *Փարէս-ոզա
է տալում։ Եւ Դաւիթը վախեց 12
այն օրը Աստուածմանից ասելով.

---

*Ոզայի խրամատութիւնը,

Եւ ինչպէ՞ս տանեմ Աստուծոյ
13 տապանակը ինձ մօտ։ Եւ Դաւիթը չտարաւ տապանակը իր մօտ Դաւթի քաղաքը, և ծռեց զայն Գէթացի Աբդեդոմի տունը։
14 Եւ Աստուծոյ տապանակը մնաց Աբդեդոմի ընտանեաց հետ նորա տանը երեք ամիս. և Տէրը օրհնեց Աբդեդոմի տունը և նորա ամենայն ունեցածը։

ԳԼ ԺԴ

1 Եւ Տիւրոսի Փիրամ թագաւորը դեսպաններ ուղարկեց Դաւթի մօտ, և եղևնափայտեր և որմնադիրներ և հիւսներ, որ նորա համար տուն շինեն։ 2 Եւ Դաւիթն իմացաւ, որ Տէրը նորան թագաւոր հաստատեց Իսրայէլի վերայ, վասն զի նորա թագաւորութիւնը բարձրացաւ իր ժողովրդի Իսրայէլի պատճառով։
3 Եւ Դաւիթն էլ ուրիշ կանայք առաւ Երուսաղէմում. և Դաւիթը էլ տղաներ և աղջիկներ
4 ծնաւ։ Եւ սորանք են Երուսաղէմում նորան ծնած տղոց անունները. Սամուա, Սովբաբ,
5 Նաթան, Սողոմոն, Յերսար,
6 Եղիսուա, Եղիփաղէտ, Նոգա,
7 Նափեկ, Յափիէ, Եղիսամա, Բաղիադա և Եղիփաղէտ։
8 Եւ փղշտացիք լսեցին, որ Դաւիթը թագաւոր է օծուել բոլոր Իսրայէլի վերայ, և բոլոր փղշտացիք վեր գնացին որ Դաւթին որոնեն, և Դաւիթը լսեց ու
9 դուրս եկաւ նորանց առջևը։ Եւ փղշտացիք եկան և փռուեցան
10 Ռափայնոց հովտումը։ Եւ Դաւիթը հարցրեց Աստուծոյն ասելով. Վեր գնա՞մ փղշտացոց վերայ, և դու նորանց իմ ձեռքը պիտի մատնե՞ս։ Եւ Տէրն ասաց նորան. Գնա, և նորանց քո
11 ձեռքը պիտի մատնեմ։ Այն ժամանակ գնացին Բաղփարասին, և Դաւիթը նորանց այնտեղ յաղթեց, և Դաւիթն ասաց. Աստուած իմ թշնամիներին իր ձեռով պատառեց ջրերի պատառուածքի պէս. նորա համար այն
տեղի անունը Բաղփարասին առեցաւ։ Եւ նորանք այնտեղ 12
ձգեցին իրանց աստուածները. և Դաւիթը հրամայեց, և նորանք այրեցին կրակով։
Եւ փղշտացիք դարձեալ եկան 13
և փռուեցան հովտումը։ Եւ Դա- 14
ւիթը դարձեալ հարցրեց Աստուծոյն, և Աստուած ասաց նորան. Վեր մի գնար նորանց ետևից, դարձիր նորանց ետևից, և նորանց վերայ գնա թթենիների կողմից։ Եւ երբոր թթենիների գլխին գնացքի ձայնը լսես, այն ժամանակ դուրս կ պատերազմի, վասն զի Աստուած պիտի դուրս գայ քո առջևից փղշտացոց բանակը զարկելու համար։ Եւ Դաւիթն այնպէս արաւ ինչպէս որ Տէրը հրամայեց իրան, և զարկեցին փղշտացոց բանակը Գաբաւոնից մինչև Գազեր։ Եւ Դաւթի անունը հռչակուեցաւ ամեն երկիրներում, և Տէրը նորա վախը գցեց ամեն ազգերի վերայ։

ԳԼ ԺԵ

Եւ նա իր համար Դաւթի քա- 1
ղաքումը տներ շինեց, և Աստուծոյ տապանակի համար տեղ պատրաստեց, և նորա համար մի վրան գցեց։ Այն ժամանակ Դա- 2
ւիթն ասաց. Ոչ-ոք վեր չառնէ Աստուծոյ տապանակը բացի Ղեւտացիներից. վասն զի Տէրը նորանց ընտրեց որ կրեն Աստուծոյ տապանակը և նորան ծառայեն յաւիտեան։
Եւ Դաւիթը ժողովեց բոլոր Իս- 3
րայէլը Երուսաղէմ, որ Տիրոջ տապանակը վեր տանեն իր տեղը, որ նորա համար պատրաստեց։
Եւ Դաւիթը ժողովեց Ահարոնի 4
որդիներին և Ղեւտացիներին. Կա- 5
հաթի որդկանցից՝ Ուրիէլ իշխանին և նորա եղբայրներին հարիւր քսան։ Մերարիի որդկանցից՝ Ա- 6
սայիա իշխանին և նորա եղբայրներին երկու հարիւր քսան։ Գեր- 7
սոնի որդկանցից՝ Յոէլ իշխանին և նորա եղբայրներին հարիւր երեսուն։ Եղիսափանի որդկանցից՝ 8

Սեմայիա իշխանին և նորա եղ-
9 բայրներին երկու հարիւր ։ Քնե-
բանի որդկանցից՝ Եղիել իշխանին
և նորա եղբայրներին ութսուն ։
10 Ովիելի որդկանցից՝ Ամինադաբ
իշխանին և նորա եղբայրներին
հարիւր տասն երկու ։
11 Եւ Դաւիթը կանչեց Սադովկ
և Աբիաթար քահանաներին և
Ղևտացիներից՝ Ուրիելին, Ասա-
յիային, Յոելին, Սեմայիային,
12 Եղիելին և Ամինադաբին, Եւ
նորանց ասաց. Դուք էք Ղև-
տացոց տոհմերի գլխաւորները.
սրբեցէք ձեր անձերը դուք և
ձեր եղբայրքը, որ Իսրայէլի Տէր
Աստուծոյ տապանակը վեր տա-
նէք նորա համար իմ պատրաս-
13 տած տեղը ։ Վասն զի սկզբում
դուք չէիք նորա համար՝ մեր Տէր
Աստուածը մեզ հարուած տուաւ,
որովհետև նորան չխնդրեցինք ինչ-
14 պէս որ կարգն է ։ Եւ քահանա-
յները և Ղևտացիք սրբեցին իրանց
անձերը Իսրայէլի Տէր Աստուծոյ
տապանակը վեր տանելու համար ։
15 Եւ Ղևտացոց որդիները վեր ա-
րին Աստուծոյ տապանակը՝ ինչ-
պէս որ Մովսէս Տիրոջ խօսքին
համեմատ հրամայել էր՝ իրանց
ուսերի վերայ ձողերով նորանց
վերայ ։
16 Եւ Դաւիթը պատուիրեց Ղև-
տացիների իշխաններին, որ ի-
րանց եղբայրներից կանգնեցնեն
երգիչներ երգեցողութեան գոր-
ծիքներով՝ տաւիղներով, քնար-
ներով և ձնծղաներով, որ լսել-
նեն ձայնը բարձրացնելով ուրա-
17 խութեան համար ։ Եւ Ղևտա-
ցիները կանգնեցրին Յոելի որդի
Եհեմանին, և նորա եղբայրներից
Բարաքիայի որդի Ասափին, և
նորանց եղբայրք՝ Մերարիի որդ-
կանցից Կուսայի որդի Եթանին ։
18 Եւ նորանց հետ նորանց երկրորդ
դասակարգի եղբայրներին՝ Զա-
քարիային, Բենին, Յազիելին,
Սեմիրամովթին, Յեհիելին, Ո-
ննիին, Եղիաբին, Բանեային, Մա-
սեային, Մատթիային, Եղե-
փադէին, Մաղկիային, Ովդե-
դոմին և Յեիելին որ դռնապան-
ներ էին ։ Եւ Եհման, Ասափ և 19
Եթան երգիչները պղնձի ձնծղա-
ները հնչեցնելու համար ։ Եւ Զա- 20
քարիա, Ազիել, Սեմիրամովթ,
Յեհիել, Ունի, Եղիաբ, Մաս-
սէա և Բանեա Ալամոթի վերայ
տաւիղներով նուագելու համար ։
Եւ Մատթիա, Եղիփադէ, Մա- 21
կինիա, Ովդեդոմ, Յեիել և Ա-
զազիա քնարներով Շեմինիթով
առաջնորդելով ։ Եւ Ղևտացոց 22
քեռնակների իշխան Քոնոնիան
ստեղծեցնում էր կրելը, որովհե-
տև նա հանճարեղ էր ։ Եւ Բա- 23
րաքիան և Եղկանան տապանակի
դռնապաններն էին ։ Եւ Սեբա- 24
նիա, Յովսափատ, Նաթանայէլ,
Ամասայի, Զաքարիա, Բանեա և
Եղիեզեր քահանաները փողերն
էին հնչեցնում Աստուծոյ տա-
պանակի առջևը. և Ովբեդոմ
ու Յեհիա տապանակի դռնապան-
ներն էին ։
Եւ այսպէս Դաւիթը և Իսրա- 25
յէլի ծերերը և հազարապետները
գնացին Տիրոջ ուխտի տապան-
ակը Ովբեդոմի տանից ուրախու-
թեամբ վեր տանելու ։ Եւ երբոր 26
Աստուած Տիրոջ ուխտի տապա-
նակը կրող Ղևտացիներին օգնեց,
այն ժամանակ եօթը զուարակ և
եօթը խոյ զոհ արին ։ Եւ Դաւի- 27
թը բեհեզի պատմուճան էր հա-
գել, նոյնպէս և բոլոր Ղևտացի-
ները որ կրում էին տապանակը,
և երգիչները, և բեռնակիրների
գլխաւորը Քոնոնիա և երգիչնե-
րը. և Դաւիթի վերայ քէթանի ե-
փուդ կար ։ Եւ բոլոր Իսրայէլը 28
վեր էր տանում Տիրոջ ուխտի
տապանակը ուրախութեան ազա-
ղակներով, շեփորի ձայնով, փո-
ղերով և հնչեցնող ձնծղանե-
րով, տաւիղներով և քնարնե-
րով ։ Եւ երբոր Տիրոջ ուխտի 29
տապանակը եկաւ մինչև Դաւիթի
քաղաքը, այն ժամանակ Սաու-
ղի աղջիկը Մեղքոզը մոխիկ սը-
ուաւ պատուհանից ու տեսաւ
որ Դաւիթ թագաւորը կոքա-
ւում և զուարճանում էր, և
նորան անարգեց իր սրտումը ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Աստուծոյ տապանակը բերին
և դրին Նոյան այն վրանի մէջը,
որ Դաւիթը կանգնեցրել էր Նո-
ր համար. և ողջակէզներ ու
խաղաղութեան զոհեր մատուցրին
2 Աստուծոյ առջեւ: Եւ երբոր
Դաւիթը վերջացրեց ողջակէզները
և խաղաղութեան զոհերը մա-
տուցանելը, այն ժամանակ օրհ-
նեց ժողովրդին Եհովայի անու-
3 նով: Եւ բաշխեց Իսրայէլի բոլոր
մարդկանցը՝ մարդից մինչև կինը
իւրաքանչիւրին մէկ նկանակ հաց
և մի կտոր միս և մէկ կարկան-
դակ:

4 Եւ Տէրոջ տապանակի առջեւը
Ղեւտացիներից պաշտօնեաներ
դրաւ Իսրայէլի Տէր Աստուծոյն
յիշելու, օրհնելու և փառաւո-
5 րելու համար: Գլխաւորը Ասափ,
և նորա երկրորդը Զաքարիա,
Յեիէլ, Սեմիրամովթ, Յեքիէլ,
Մատաթիա, Եղիաբ, Բանեա,
Աբդեդոմ և Յեիէլ առաքինների
և քնարների նուագարաններով.
և Ասափը հնչեցնող ձնծղանե-
6 րով: Եւ Բանեա ու Յազիէլ քա-
հանաները միաւորապէս փողերով
Աստուծոյ ուխտի տապանակի
առջեւը:

7 Այն ժամանակ առաջին անգ-
ամ Դաւիթը Տիրոջը օրհնելու
յանձնարարութիւնը արաւ Ա-
սափին և նորա եղբայրցը.

8 Գոհացէք Տէրից, կանչեցէք
նորա անունը.
Իմացրէք ժողովուրդների մէջ նորա
գործերը:
9 Երգեցէք նորան, սաղմոսեցէք
նորան,
Մտածեցէք նորա ամեն սքան-
չելեաց վերայ:
10 Պարծեցէք նորա սուրբ անունո-
վը.
Տիրոջը խնդրողների սիրտն ուրա-
խանայ:
11 Տիրոջը խնդրեցէք և նորա զօրու-
թիւնը.
Միշտ նորա երեսը որոնեցէք:
12 Յիշեցէք նորա հրաշքները որ
արաւ,
Նորա նշանները և նորա բերանի
իրաւունքը:
13 Ով նորա խարտեալ ծառայի զա-
ւակներ,
Նորա ընտրեալք՝ Յակոբի որդիք.
14 Ինքը Եհովան է մեր Աստուածը,
Նորա իրաւունքները ամեն երկ-
րում կան:
15 Յիշեցէք յաւիտեան նորա ուխ-
տը,
Իր պատուիրած խօսքը մինչև հա-
զար ազգ,
16 Այն որ ուխտեց Աբրահամի հետ
Եւ իր երդումը՝ Իսահակի հետ.
17 Եւ հաստատեց, որ Յակոբի հա-
մար օրէնք
Եւ Իսրայէլի համար յաւիտեան-
կան ուխտ լինի.
18 Ասելով. Քեզ կ'տամ Քանանու
երկիրը,
Ձեր ժառանգութեան վիճակը.
19 Երբոր դուք սակաւաթիւ էիք
Եւ քիչ ու պանդուխտ նորանում,
20 Եւ ազգից ազգ էին գնում
Եւ մէկ թագաւորութիւնից ու-
րիշ ժողովրդի մօտ.
21 Նա մի մարդու թոյլ չտուաւ,
որ նորանց նեղացնէն,
Եւ թագաւորներ պատժեց նո-
րանց համար.
22 Մի մօտեցէք իմ օծեալնե-
րին,
Եւ իմ մարգարէներին չար մի
արէք:
23 Երգեցէք Տիրոջը, ով բոլոր
երկիր,
Քարոզեցէք օրէ օր նորա փրկու-
թիւնը.
24 Պատմեցէք ազգերի մէջ նորա
փառքը,
Ամեն ժողովուրդների մէջ նորա
հրաշքները:
25 Քանզի Տէրը մեծ է և շատ օրհ-
նուած,
Եւ ահաւոր է նա ամեն աստ-
ուածների վերայ:
26 Վասն զի ազգերի բոլոր աստ-
ուածները կուռքեր են,
Բայց Եհովան արաւ երկինքը:
27 Փառք և մեծութիւն կայ նորա
առջեւը,
Զօրութիւն և ուրախութիւն նո-
րա բնակարանում.

28 Տիրոջը տուէք, ով ազգերի ցեղեր,
Տիրոջը տուէք փառք և զօրութիւն։
29 Տիրոջը տուէք նորա անուան փառքը,
Ընծայ բերէք և մտէք նորա առաջը,
Երկրպագեցէք Տիրոջը սուրբ զարդարանքով։
30 Վախեցէք նորա երեսից, ով ամեն երկիրներ,
Եւ աշխարհքը հաստատ է առանց սասանման։
31 Երկինքը թող ուրախանայ և երկիրը ցնծայ
Եւ ասեն ազգերի մէջ Տէրն է թագաւոր.
32 Ծովը գոռգոռայ իր լիութիւնով
Ուրախանայ դաշտը և բոլոր նորա մէջ եղածը։
33 Այն ժամանակ ցնծան անտառի ծառերը
Տիրոջ առջեւը, վասն զի գալիս է երկիրը դատելու։
34 Գոհացէք Տէրից՝ վասն զի բարի է,
Վասն զի նորա ողորմութիւնը յաւիտեան է։
35 Եւ ասացէք. Փրկիր մեզ, ով մեր փրկութեան Աստուածը,
Եւ մեզ ժողովիր և մեզ ազատիր ազգերից,
Որ գոհանանք քո սուրբ անունից
Եւ պարծենանք քո օրհնութիւնով։
36 Օրհնեալ է Եհովան Իսրայէլի Աստուածը
Յաւիտենից մինչև յաւիտեան։
Եւ բոլոր ժողովուրդն ասաց՝ Ամէն, և օրհնեց Տիրոջը։
37 Եւ այնուհետև թողից Տիրոջ ուխտի տապանակի առջեւը Ասափին և նորա եղբայրներին միշտ տապանակի առջեւը պաշտօն կատարելու օր քան օր։ 38 Եւ Աբդեդոմին և նորա եղբայրներին վաթսուն և ութ հոգի, և Իդիթունի որդի Աբդեդոմին և Ոսային դռնապաններ արար։ 39 Եւ Սադոկ քահանային և նորա եղբայրներին՝ քահանաներ Տիրոջ բնակարանի առաջին

բանի առջեւը Գաբաւոնում է։ 40 Որ Տիրոջ ողջակէզներ մատուցանեն ողջակէզի սեղանի վերայ միշտ առաւօտ և իրիկուն, և ինչ-որ Տիրոջ օրէնքումը գրուած այն ամենը, որ հրամայեց Իսրայէլին։ 41 Եւ նորանց հետ Եմանին և Իդիթունին և ուրիշներին և ճնացեալ ընտրեալներին, որ անուանի էին, որ Տէրից գոհանան, վասն զի նորա ողորմութիւնը յաւիտեան է. 42 եւ նորանց հետ Եմանը և Իդիթունը փողերով և ծնծղաներով հնչեցնելու համար, և Աստուծոյ նուագարաններով. իսկ Իդիթունի որդիանցը դռներուն վերայ։ 43 Եւ բոլոր ժողովուրդը գնաց ամեն մէկն իր տունը. և Դաւիթը ետ դարձաւ իր տունն օրհնելու։

ԳԼ. ԺԶ

1 Եւ երբոր Դաւիթը բնակեց իր տանը, այն ժամանակ Դաւիթն ասաց Նաթան մարգարէին. Ահա ես բնակուած եմ եղևնափայտեան մէջ և Տիրոջ ուխտի տապանակը վրանի տակ է։ 2 Եւ Նաթան ասաց Դաւթին. Բոլոր սրտումդ եղածը արա, որովհետև Աստուած քեզ հետ է։ 3 Եւ նոյն գիշերը եղաւ Տիրոջ խօսքը Նաթանին՝ ասելով. 4 Գնա և ասիր իմ Դաւիթ ծառային. Տէրն այսպէս է ասում. Դու չես շինիլ ինձ համար բնակելու տուն. 5 որովհետև Իսրայէլի որդիքը Եգիպտոսէն հանած օրից մինչև այս օրը տան մէջ չբնակեցի, այլ փոխել եմ վրանից վրան և խորանից խորան։ 6 Որչափ տեղ որ մեան եկայ Իսրայէլի բոլոր որդիքանց հետ՝ միթէ մէկ բան խօսեցի Իսրայէլի դատաւորներին մէկին հետ, որոնց հրամայել եմ իմ ժողովուրդ Իսրայէլն հովուել, ասելով. Թէ Ինչու համար ինձ եղևնափայտեան տուն չշինեցիք։ 7 Եւ հիմա այսպէս ասիր իմ ծառայ Դաւթին. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Ես քեզ առի փարա-

խլեցը ոչխարներին եաքիցը որ իմ
Իսրայէլ ժողովրդի վերայ առաջ-
8 նորդ լինիս։ Եւ քեզ հետ էի
ուր որ գնաս էիր և քո առ-
ջևիցը բոլոր թշնամիներիդ կո-
տորեցի, և երկրիս վերայ եղող
մեծերին անուան պէս քո անունը
9 մեծացրի։ Եւ իմ Իսրայէլ ժո-
ղովրդի համար մէկ տեղ որոշեցի
և նորան տնկեցի, և իր տեղը
բնակուած է, և այլ ևս պիտի
չշարժուի. և անիրաւութեան որ-
դիքը առաջուայ պէս այլ ևս պի-
10 տի չտանջեն. ինչպէս որ եղա- իմ
ժողովուրդ Իսրայէլի վերայ դա-
տաւորներ դրած օրից՝ ի վեր. և
ես նուաճելու եմ քո բոլոր թըշ-
նամիներին, և քեզ իմացնում
եմ, թէ Տէրն է քեզ համար
11 տուն շինելու։ Եւ երբոր քո օ-
րերը կ՚լրանան որ գնաս քո հայ-
րերի հետ, այն ժամանակ քե-
զանից յետոյ քո սերունդին որ
քո որդիներիցը կ՚լինի կ՚յարձրաց-
նեմ և կ՚հաստատեմ նորա թա-
12 գաւորութիւնը։ Նա կ՚շինէ ինձ
համար տուն, և նորա աթոռը
պիտի հաստատեմ մինչև յա-
13 ւիտեան։ Ես նորան հայր կ՚լի-
նեմ, և նա ինձ որդի կ՚լինի. և
իմ ողորմութիւնը ետ չեմ քա-
շիլ նորանից, ինչպէս որ նորա-
նից ետ քաշեցի որ քեզանից ա-
14 ռաջ էր։ Եւ նորան պիտի հաս-
տատեմ իմ տանը և իմ թա-
գաւորութեան մէջ մինչև յա-
ւիտեան. և նորա աթոռը յա-
15 ւիտեան պիտի լինի։ Եւ Նաթանն
այս բոլոր խօսքերը և բոլոր այս
տեսիլքը այսպէս ասաց Դաւթին։
16 Եւ Դաւիթ թագաւորը գնաց՝
Տիրոջ առջևը նստեց և ասաց.
Ես ո՞վ եմ, ով Տէր Աստուած,
և ո՞վ է իմ տունը, որ ինձ բե-
17 րիր մինչև այստեղ։ Սակայն այս
էլ պզտիկ երևեցաւ քո աչքե-
րին, ով Աստուած, և քո ծա-
ռայի տան վերայով հեռաւոր
ժամանակի համար խօսեցիր. և
ինձ մարդու եղանակով ու
18 Տէր Աստուած է։ Էլ ի՞նչ աւե-
լացնէ Դաւիթը քեզ վերայ ծա-

ռայ պատուելու համար. և դու
ճանաչում ես քո ծառային։ Ով 19
Տէր, այս բոլոր մեծ բաները քո
ծառայի համար և քո սրտի հա-
մեմատ արիր, որ իմացնես այս
բոլոր մեծամեծ բաները։ Ով Տէր, 20
չկայ քեզ նման ձեւ, և քեզա-
նից զոկ Աստուած չկայ՝ մեր ա-
կանջներովը բոլոր մեր լսածին
պէս։ Եւ ո՞ր ազգն է երկրիս վե- 21
րայ քո մէկ հատ ժողովրդին Ի-
սրայէլին պէս, որի համար ինքն
Աստուած գնաց իր համար ժո-
ղովուրդ փրկելու, որ քեզ հա-
մար մեծամեծ և զարհուրելի
գործքերով անուն հաստատես՝
քո ժողովրդի առջևից ազգեր
քշելով որին փրկեցիր Եգիպտո-
սից։ Եւ քո ժողովուրդ Իսրայէ- 22
լին քեզ համար ժողովուրդ շի-
նեցիր յաւիտեան. և դու, ով
Տէր, նորանց Աստուած եղար։
Եւ հիմա, ով Տէր. թող այս 23
խօսքը, որ ասել ես քո ծառայի
համար և նորա տան համար,
հաստատուի յաւիտեան. և որա-
պէս որ ասել ես։ Որ քո ա- 24
նունը հաստատ և մեծ լինի յա-
ւիտեան, որ ասեն. Զօրաց Տէրը
Իսրայէլի Աստուածը Իսրայէլին
Աստուած է, և քո ծառայի
Դաւթի տունը քեզ առջև։
Վասն զի դու, ով Աստուած, 25
քո ծառայի ականջներին յայտ-
նեցիր, թէ իր համար տուն պի-
տի շինես, սորա համար քո ծա-
ռան սիրտ այս աղօթքը
քեզ անելու։ Եւ հիմա, ով 26
Տէր, դու ես այն Աստուածը,
որ խօսեցիր քո ծառայի համար
այս բարիքը։ Եւ հիմա բարեհա- 27
ճիր քո ծառայի տունը օրհնելու,
որ յաւիտեան քո առջև լինի.
վասն զի դու օրհնեցիր, ով Տէր,
և նա օրհնեալ է յաւիտեան։

ԳԼ. ԺԸ

Եւ նորանից յետոյ եղաւ որ 1
Դաւիթը զարկեց փղշտացիներին
և նուաճեց նորանց և առաւ
փղշտացոց ձեռքից Գէթը և նո-
րա գիւղերը։ Նաև զարկեց Մո- 2

վաբին. և Մովաբացիք հարկատու ծառաներ եղան Դաւթին։
3 Եւ եհար Դաւիթը Սուբայի թագաւոր Ադրազարին Եմաթեայ, երբոր գնում էր իր իշխանութիւնը Եփրատ գետի վերայ հաստատելու։
4 Եւ Դաւիթը նորանից հազար կառք և եօթը հազար ձիաւոր և քսան հազար հետևակ զօրք բռնեց. և Դաւիթը ջարդեց բոլոր կառքերը, և նորանցից թողեց հարիւր կառք։
5 Եւ Դամասկոսի Ասորիները եկան Սուբայի թագաւոր Ադրազարին օգնութիւն անելու. և Դաւիթն Ասորիներից քսան երկու հազար մարդ զարկեց։
6 Եւ Դաւիթը պահապաններ դրաւ Դամասկոսի Ասորիքում, և Ասորիքը Դաւթին եղաւ իրրև հարկատու ծառաներ. և Տէրը օգնում էր Դաւթին, ամեն ուր որ նա գնար։
7 Եւ Դաւիթն առաւ Ադրազարի ծառաների վերայ եղած ոսկի վահանները և երուսաղէմ բերաւ
8 նորանց։ Եւ Ադրազարի քաղաքներից՝ Տեբաթից և Քունից Դաւիթը խիստ շատ պղինձ առաւ, որից Սողոմոն շինեց պղնձի ծովը, և սիւները և պղնձի անօթները։
9 Եւ երբոր Եմաթի թագաւոր Թովու լսեց, թէ Դաւիթը ջարդեց Սուբայի թագաւոր Ադրազարի բոլոր զօրքերին,
10 Ասի ժամանակ իր որդի Ադորամին ուղարկեց Դաւիթ թագաւորի մօտ, որ նորա առողջութիւնը հարցնէ և նորան շնորհաւորէ, որ Ադրազարի հետ պատերազմեց և նորան յաղթեց, վասն զի Ադրազարի հետ պատերազմներ էր ունեցել Թովու. և ամեն բեռ ոսկի, արծաթի և պղնձի անօթներ ուղարկեց։
11 Դաւիթ թագաւորը սորանից էլ նուիրեց Տիրոջը այն արծաթի և ոսկու հետ որ առել էր բոլոր ազգերից՝ Եդոմից, Մովաբից, Ամմոնի որդիկանցից, Փղշտացիներից և Ամաղեկից։
12 Եւ Շարուհեայի որդին Աբեսան Աղի ձորումը տասն ութը հազար մարդ ջարդեց Եդոմացիներից։
13 Եւ Եդոմի մէջ պահապաններ դրաւ, և բոլոր Եդոմացիք Դաւթին ծառայ եղան։ Եւ Տէրը օգնում էր Դաւթին, ամեն ուր որ նա գնար։
14 Եւ Դաւիթը թագաւորութիւն արաւ բոլոր Իսրայէլի վերայ. և իրաւունք ու արդարութիւն էր անում իր բոլոր ժողովրդին։
15 Եւ Շարուհեան Յովաբը զօրքերի վերայ էր, և Աքիղուդի որդին Յովսափատը յիշատակաց գրի էր։
16 Եւ Աքիտոբի որդին Սադովկը և Աբիաթարի որդին Աբիմելէքը քահանաներ էին, և Սուսան ատենադպիր էր.
17 Եւ Յովիադայի որդին Բանեա Քերեթիների և Փելեթիների վերայ էր. և Դաւթի որդիքը նախարարներ էին թագաւորի կշռին։

ԳԼ ԺԹ

1 Եւ նորանից յետոյ եղաւ որ Ամմոնի որդկանց թագաւորը Նաասը մեռաւ, և նորա որդին թագաւոր եղաւ նորա տեղ։
2 Եւ Դաւիթն ասաց. Նաասի որդի Անոնին մարդասիրութիւն անեմ, որովհետև նորա հայրը ինձ մարդասիրութիւն արաւ. և Դաւիթը դեսպաններ ուղարկեց որ նորան մխիթարեն իր հօր մասին. և Դաւթի ծառաները գնացին Ամմոնի որդկանց երկիրը Անոնի մօտ նորան մխիթարելու։
3 Եւ Ամմոնի որդկանց իշխանները ասացին Անոնին. Մի՞թէ Դաւիթը վեհարում է քո հօրը քո աչքի առջև, որ քեզ համար մխիթարիչներ է ուղարկել. չէ՞ որ Դաւիթն իր ծառաներին քեզ մօտ ուղարկեց այս երկիրը քննելու, տակն ի վերայ անելու և լրտեսելու։
4 Եւ Անոնն առաւ Դաւթի ծառաներին և նորանց ածիլեց և կտրեց նորանց հանդերձների կէսը մինչև նստելատեղը և արձակեց նորանց։
5 Եւ գնացին ու պատմեցին Դաւթին այն մարդկանց մասին, և նա շատ ուղարկեց նորանց դիմաւորելու, վասն զի այն մարդիկը շատ անարգուել էին.

և թագաւորն ասաց . Մնացէք երիքով մինչև որ ձեր մօրուքը աճէ և յետոյ դարձէք :
6 Եւ Ամմանի որդիքը տեսան , որ Դաւթի հետ իրանց բանը վատ է . և Անանն ու Ամմանի որդիքը հազար տաղանդ արծաթ ուղարկեցին Միջագետաց Ասորիներից և Մաաքայի Ասորիներից և Սուբայից կառքեր և ձիաւորներ վարձելու :
7 Եւ նորանք իրանց համար վարձեցին երեսուներկու հազար կառք և Մաաքայի թագաւորին ու նորա ժողովրդին , և եկան բանակեցին Մեդաբայի առաջև . և Ամմանի որդիքն էլ իրանց քաղաքներից ժողովուեցան և եկան պատերազմի :
8 Եւ երբոր Դաւթիը լսեց , Յովաբին և բոլոր քաջազուն զօրքերին ուղարկեց :
9 Ամմանի որդիքն էլ դուրս եկան և քաղաքի մուտքին մօտ պատերազմի շարուեցան . իսկ այն եկող թագաւորները առանձին էին դաշտումը :
10 Եւ Յովաբը տեսաւ որ պատերազմը առաջից ու ետևից իր վերայ է հասնում , Իսրայէլի ընտիրներից ընտրեց և Ասորց դէմ պատերազմի շարեց :
11 Իսկ մնացած զօրքը իր եղբօրը՝ Աբեսային յանձնեց . և նորանք շարուեցան Ամմանի որդկանց դէմ .
12 Եւ ասաց . Եթէ Ասորիք ինձ յաղթելու լինին , ինձ օգնութեան հասնես . իսկ եթէ Ամմանի որդիքը քեզ յաղթելու լինին ,
13 ես քեզ կ'օգնեմ : Քաջասիրտ եղիր և քաջանանք մեր ժողովրդի համար և մեր Աստուծոյ քաղաքների համար . իսկ Տէրն անէ
14 իր աչքին հաճոյ եղածը : Եւ Յովաբն իր հետ եղող զօրքովը Ասորիներին մօտեցաւ պատերազմով , և նորանք փախան նորա առջևից :
15 Եւ երբոր Ամմանի որդիքը տեսան , որ Ասորիք փախան , նորանք էլ փախան նորա եղբօր Աբեսայի առջևից և մտան քաղաքը : Եւ Յովաբն եկաւ Երուսաղէմ :
16 Եւ երբոր Ասորիները տեսան , որ իրանք Իսրայէլի առջև կոտրուեցան , դեսպաններ ուղարկեցին և Գետի այն կողմին եղող Ասորիներին ուղք հանեցին , և նորանց առջևիցը Ադրազարի զօրագլուխը՝ Շովբակ : Եւ երբոր Դաւթին պատմեցին , այն ժամանակ ժողովեց բոլոր Իսրայէլին , Յորդանանից անցաւ , եկաւ նորանց հասաւ և շարուեցան նորանց դէմ . և Դաւիթն Ասորիների դէմ պատերազմ կազմեց և պատերազմեց նորանց հետ :
18 Եւ Ասորիները փախան Իսրայէլի առջևից . և Դաւիթը փչացրեց Ասորիներից եօթը հազար կառքեր և քառասուն հազար հետևակ զօրք . և զօրագլուխ Սովբակին սպանեց :
19 Եւ երբոր Ադրազարի ծառաները տեսան , որ կոտրուեցան Իսրայէլի առջև , այն ժամանակ խաղաղութիւն արին Դաւթի հետ և նորան ծառայ եղան : Եւ Ասորիք չուզեցին Ամմանի որդկանց այլ և օգնել :

ԳԼ Ի

1 Եւ եղաւ հետևեալ տարին , որ թագաւորները պատերազմի դուրս գալու ժամանակին , Յովաբը դուրս հանեց զինուորաց զօրքը և ուրիշ որոշ Ամմանի որդկանց երկիրը , և եկաւ պաշարեց Րաբբան . Դաւիթն էլ բնակուած էր Երուսաղէմում : Եւ Յովաբը զարկեց Րաբբան և նորան կործանեց :
2 Եւ Դաւիթն առաւ նորանց թագաւորի թագը նորա գլխիցը , և գտաւ որ ծանրութեամբ մի տալանդ ոսկի էր նա , և նորումն պատուական ակունք կային , և դրուեցաւ Դաւթի գլխին . և խիստ շատ ուրիշ առաւ այն քաղաքից :
3 Եւ նորանում եղած ժողովրդին դուրս հանեց և սղոցեց սղոցով , երկաթի կամեռաներով և տապարներով . և Դաւիթն այսպէս արաւ Ամմանի որդկանց բոլոր քաղաքներին : Եւ Դաւիթն ու բոլոր ժողովուրդը բնակեցին Երուսաղէմում :
4 Եւ սրանից յետոյ եղաւ որ պատերազմ եղաւ Գազերում

փղշտացոց հետ. այն ժամանակ Ովսացի Սամփսոնը զարկաց Ոտափայի արգկանցից եղող Սեփիտային և նորանց նուաճեց։
3 Եւ կրկին պատերազմ եղաւ փղշտացոց հետ. և Յոյնրի որդին Ելէանանը զարկաց Գէթացի Գողիաթի եղբօր Լաէմիին, որի նիզակի բունը ոստայնանկաց գլանին պէս էր։
6 Եւ կրկին պատերազմ եղաւ Գէթաւմ, ու մի երկայնահասակ մարդ կար, որի մատերը վեց վեց լինելով՝ քսանուչորս էին, նա
7 էլ էր Ոտափայի ծնունդից։ Եւ նա նախատեց Իսրայէլին, բայց նորան զարկաց Դաւթի եղբօր Սամմայի որդին Յովնաթանը։
8 Սրանք ծնուել էին Ոտափայից Գէթաւմը, և վայր ընկան Դաւթի և նորա ծառանների ձեռովը։

ԳԼ. ԻԸ.

1 Եւ ասաւնան Իսրայէլի դէմ կանգնեց և պրպռեց Դաւթին, որ
2 Իսրայէլին համարէ։ Եւ Դաւիթն ասաց Յովաբին և ժողովրդի իշխաններին. Գնացէք համարեցէք Իսրայէլացիներին Բեերսաբէէից մինչև Դան, և հաւաքեցէք ինձ մօտ բերէք որ իմանամ նորանց թիւը։
3 Եւ Յովաբն ասաց. Տէրը աւելցնէ իր ժողովրդի վերայ նորանց չափ հարիւրապատիկ. չէ՞ որ, ով աեր իմ թագաւոր, նորանք ամենքը իմ տիրոջ ծառաներն են. ինչո՞ւ համար է իմ աերը փափաքում այդ. ինչո՞ւ
4 համար այս բանը Իսրայէլի համար յանցանք դառնայ։ Սակայն թագաւորի խօսքը ստոակոցաւ Յովաբի վերայ. և Յովաբը դուրս եկաւ և շուրջ եկաւ բոլոր Իսրայէլի մէջ և եկաւ Երուսաղէմ։
5 Եւ Յովաբը ժողովրդի համարման թիւը տուաւ Դաւթին. և բոլոր Իսրայէլն էր հազար անգամ հազար և հարիւր հազար սուր քաշող մարդ. և Յուդան էրա հարիւր հիսուն հազար
6 սուր քաշող մարդ. Եւ Ղեւտացիներին ու Բենիամինեանները չէր համարել նորանց մէջ, վասն զի թագաւորի այս հրամանը զզուելի էր Յովաբին։
7 Եւ այս բանը վատ երևեցաւ Աստուծոյ աչքին, և պատուհասեց Իսրայէլին։ Եւ Դաւիթն ա-
8 սաց Աստուծոյն. Ես շատ մեղանչեցի որ այս բանն արի. և հիմա աղաչեմ՝ ներիր քո ծառայի յանցանքը. քանզի մեծ յիմարութիւն արի։
9 Եւ Տէրը խօսեց Դաւթի տեսանողՙ Գադի հետ ասելով.
10 խօսիր Դաւթի հետ ասելով. Այսպէս է ասում Տէրը. Երեք բան եմ դնում առջեդ, ընտրիր քեզ համար նորանցից մէկը, որ քեզ համար անեմ։ Եւ Գադը եկաւ
11 Դաւթի մօտ և ասաց նորան. Այսպէս է ասում Տէրը. Ընտրիր
12 քեզ համար, կամ երեք տարի աով, կամ երեք ամիս թշնամիներիդ առջև ջարդուիլ, և քո թշնամիների սուրը քեզ հասնէ, և կամ երեք ամիս Տիրոջ սուրը այսինքն ժանտախտ երկրի վրայ, որ Տիրոջ հրեշտակը փչացնէ Իսրայէլի բոլոր սահմաններում. և հիմա տես, ըե ինչ պատասխան տանեմ ինձ ուղարկողին։
13 Եւ Դաւիթն ասաց Գադին. Ես շատ նեղութեան մէջ եմ. թող Տիրոջ ձեռքն ընկնեմ, վասն զի նորա ողորմութիւնը խիստ շատ է. և ես մարդու ձեռք չեմ ընկնել։ Եւ Տէրը ժանտախտ ուղար-
14 կեց Իսրայէլի մէջ, և Իսրայէլից ընկաւ եօթանասուն հազար մարդ։
15 Եւ Աստուած մի հրեշտակ ուղարկեց Երուսաղէմ, նորան փչացնելու համար. և նա փչացնելու Տէրը տեսաւ և ապշեցաւ այս չարիքի վերայ և ասաց կործանող հրեշտակին. Բաւական է՝ հիմա ձեռքդ հետ քաշիր։ Եւ Տիրոջ հրեշտակը կանգ-
16 նել էր Յեբուսացի Ոռնայի կալին մօտ։ Եւ Դաւիթը բարձրացրեց իր աչքերը և տեսաւ Տիրոջ հրեշտակին կանգնած երկրի և երկնքի մէջտեղը և իր սուրը քաշած իր ձեռին մեկնած Երուսաղէմի վերայ. այն ժամանակ վայր

ընկան իրանց երեսի վերայ Դաւիթը և ծերերը քուրձ հագած։
17 Եւ Դաւիթն ասաց Աստուծոյն. Ահա ես եմ հրամայել, որ ժողովուրդը համարեն, և ես եմ որ մեղանչեցի և չարութիւն գործեցի. իսկ այս ոչխարները ի՞նչ են արել. ողորմած եմ թող ձեռքդ ինձ վերայ և իմ հօր տան վերայ լինի. և ոչ թէ քո ժողովրդի վերայ նուաճ բնաջինջ անելու։
18 Եւ Տիրոջ հրեշտակն ասաց Գադին, որ Դաւթին ասէ. Որպէս զի նա վեր գնայ և Տիրոջ համար մի սեղան կանգնեցնէ Յեբուսացի Որնայի կալումը։
19 Եւ Դաւիթը վեր գնաց Գադի խօսքովը որ նա խօսեց Տիրոջ անունովը։
20 Եւ Որնան ետ դարձաւ և տեսաւ հրեշտակը. բայց նորա չորս որդիքը նորա հետ թաք կացան. և Որնան ցորեն էր
21 կաւում։ Եւ Դաւիթն եկաւ Որնայի մօտ, և Որնան նայեց ու տեսաւ Դաւթին և դուրս եկաւ կալից և երկրպագեց Դաւթին իր երեսի վերայ մինչև գետին։
22 Եւ Դաւիթն ասաց Որնային. Այս կալի տեղը ինձ տուր, որ նորանով մի սեղան շինեմ Տիրոջ համար. լիքը գնով տուր ինձ այն. և հարուածը կը
23 դադարէ ժողովրդից։ Եւ Որնան ասաց Դաւթին. Վեր առ քեզ համար, և թող իմ տէր թագաւորը անէ իր աչքին հաճելին. տես տուի եզները ողջակէզի համար և կայմեասայլերը փայտի համար և ցորենը հացի նուէրի համար, բոլորն էլ տուի։
24 Բայց Դաւիթ թագաւորն ասաց Որնային. Ոչ՝ այլ լիքը գնով առնել ծախու պիտի առնեմ. վասն զի ես քո ստացուածքը Տիրոջը չեմ մատուցանել և ձրի ողջակէզ չեմ մատուցանել։
25 Եւ Դաւիթը տուաւ Որնային այն տեղի համար կշռոքով վեց հարիւր սկի սիկղ։
26 Եւ Դաւիթն այնտեղ սեղան շինեց Տիրոջ համար և ողջակէզ ու խաղաղութեան զոհեր մատուցրեց, և կանչեց Տիրոջը, և նա նորան պատասխան տուաւ երկնքիցը ողջակէզի սեղանի վերայ ուղարկած կրակով։ Եւ Տէրն 27
ասաց հրեշտակին, և հրեշտակն ետ դարձրեց իր սուրը պատեանի մէջը։

Այն ժամանակ երբոր Դաւիթը 28
տեսաւ, որ Տէրը նորան պատասխան տուաւ Յեբուսացի Որնայի կալումը, այնտեղ զոհ մատուցրեց։ Բայց Տիրոջ խորանը, որ 29
Մովսէսը շինել էր անապատումը, և ողջակէզի սեղանը Գաբաւոնի բարձրաւանդակումն էին։
Սակայն Դաւիթը չկարողացաւ 30
գնալ նորա առջեւը Աստուծոյն հարցնելու համար, վասն զի զարհուրած էր Տիրոջ հրեշտակի սուրի երեսից։

ԳԼ. ԻՒ

Եւ Դաւիթն ասաց. Սա է Տէր 1
Աստուծոյ տունը, և սա է Իսրայէլի համար ողջակէզի սեղանը։ Եւ Դաւիթը հրամայեց ժո- 2
ղովել այն օտարազգիներին, որ Իսրայէլի երկրումն էին. և քարհատներ դրաւ տաշած քարեր կտրելու Աստուծոյ տունը շինելու համար։ Եւ Դաւիթը շատ 3
երկաթ պատրաստեց դռների փեղկերի բևեռների համար և ճանկերի համար, և շատ պղինձ որ կշիռ չունէր։ Եւ եղևնափայտեր 4
որ թիւ չունէին, վասն զի Սիդոնացիք և Տիւրացիք Դաւթի համար շատ եղևնափայտեր էին բերում։

Եւ Դաւիթն ասաց. Իմ որդին 5
Սողոմոնը երեխայ է և փափուկ է. և այն տունը, որ պէտք է շինել Տիրոջ համար, պիտի մեծացնել մինչև բարձրը որ անուանի և փառաւոր լինի ամեն երկիրներին մէջ. հիմա ես նորա համար նախապատրաստեմ. և Դաւիթը շատ նախապատրաստեց իր մեռնելուց առաջ։ Եւ 6
կանչեց իր որդի Սողոմոնին և պատուիրեց նորան որ մի տուն շինէ Իսրայէլի Տէր Աստուծոյն համար։

Եւ Դաւիթն ասաց Սողոմոնին. 7

Որդեակ իմ, ես սրտումս ունէ-
ցայ, որ մի տուն շինեմ իմ Տէր
8 Աստուծոյ անուան համար։ Բայց
Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով.
Դու շատ արիւն ես թափել և
մեծ մեծ պատերազմներ ես ա-
րել, դու պիտի տուն չշինես իմ
անուան համար, վասն զի դու
9 շատ արիւններ ես թափել գե-
տինը իմ առջև։ Ահա քեզ մի
որդի կ'ծնի, նա հանգստութեան
մարդ կ'լինի, և ես նորան պիտի
հանգստացնեմ իր բոլոր թշնա-
միներից շուրջանակի. որովհետև
նորա անունը Սողոմոն կ'լինի, և
ես խաղաղութիւն և հանդար-
տութիւն պիտի տամ Իսրայէլին
10 նորա օրերին։ Նա կ'շինէ մէկ
տուն իմ անուան համար, և նա
ինձ համար որդի կ'լինի, և ես
պիտի հաստատեմ նորա աթոռը
Իսրայէլի վերայ միշտեւ յաւիտ-
11 եան։ Հիմա, իմ որդեակ, Տէրը
քեզ հետ լինի, և յաջողութիւն
գտնես և շինես քո Տէր Աստու-
ծոյ տունը, ինչպէս որ նա ասել
12 է քեզ համար։ Միայն թէ Տէրը
քեզ հանճար և իմաստութիւն
տայ, և քեզ հաստատէ Իսրայէլի
վերայ, որ դու պահես քո Տէր Ա-
13 ստուծոյ օրէնքը։ Այն ժամանակ
յաջողութիւն կ'գտնես, եթէ ըզ-
գուշանաս պահել այն կանոննե-
րըն ու իրաւունքները պահելու,
որ Տէրը պատուիրել է Մովսէ-
սին Իսրայէլի համար. քաջ եղիր
և զօրացիր, մի վախենար և մի
14 զարհուրիր։ Եւ ահա իմ նեղու-
թիւնովը Տիրոջ տան համար
պատրաստել եմ հարիւր հազար
տաղանդ ոսկի, և հազար ան-
գամ հազար տաղանդ արծաթ,
իսկ պղնձին ու երկաթին կշիռ
չկայ որովհետև շատ է. նաև
փայտեր և քարեր եմ պատրաս-
տել. բայց դու աւելացրու նո-
15 րանց վերայ։ Եւ քեզ մօտ կան
շատ գործաւորներ, քարտաշ-
ներ, որմնադիրներ, հիւսներ և
ամեն տեսակ գործի համար ամեն
16 տեսակ ճարտար մարդիկ։ Ոսկուն,

Եւ Դաւիթը հրամայեց արա- 17
Իսրայէլի բոլոր իշխաններին, որ
օգնեն իր որդի Սողոմոնին։ Ե- 18
ասաց. Ահա ձեր Տէր Աստուածը
ձեզ հետ է, և նա ձեզ հանգըս-
տացրել է շուրջանակի. որովհե-
տև իմ ձեռքը մատնեց այս երկ-
րի բնակիչներին, և երկիրը նը-
ուաճեցաւ Տիրոջ առջև և նո-
րա ժողովրդի առջևը։ Հիմա ձեր 19
սիրտն ու ձեր հոգին այդ բանն
տուէք որ ձեր Տէր Աստուածը
որոնէք. և վեր կացէք ու շինե-
ցէք Տէր Աստուծոյ սրբարանը,
որ Տիրոջ ուխտի տապանակը և
Աստուծոյ սուրբ անօթները տա-
նէք Տիրոջ անուան համար շին-
ուած տունը։

ԳԼ. ԻԳ.

Եւ Դաւիթը ծերացել ու օր- 1
րով կշտացել էր, և իր որդի
Սողոմոնին թագաւոր արաւ Իս-
րայէլի վերայ։ Եւ ժողովեց Իս- 2
րայէլի բոլոր իշխաններին և քա-
հանաներին և Ղեւտացիներին։
Եւ համրուեցան Ղեւտացիք սա- 3
կաւն երեսուն տարեկանից և վեր
ևնողները, և նորանց թիւը ե-
գաւ ամեն մարդ իր գլխովը՝ երե-
սունութ հազար հոգի։ Սորանցից 4
Տիրոջ տան գործին առաջնոր-
դելու համար՝ քառասուն հա-
զար, իսկ գրագիրներ և դատա-
ւորներ վեց հազար։ Եւ չորս հա- 5
զարը դռնապաններ, և չորս հա-
զարը Տիրոջը օրհնեն այն գործիք-
ներովը, որ ես շինել եմ օրհնե-
լու համար։ Եւ Դաւիթը բաժա- 6
նեց նորանց դասակարգների Ղե-
ւիի որդիքանցը՝ Գերսոնին, Կա-
հաթին և Մերարիին։

Գերսոնեաններից Ղադան և 7
Սեմէի. Ղադանի որդիքը՝ գլխա- 8
ւորը՝ Յեքիէլ, Զեթամ և Յոէլ,
երեք։ Սեմէի որդիքը՝ Սողոմոթ, 9
Ազիէլ ու Արան, երեք. սորանք
են Ղադանի տոհմերի գլխաւորնե-
րը։ Եւ Սեմէիի որդիքը՝ Յեթ, Զի 10

*խաղաղարար

զա, Յեուս և Բարիա. Սորանք են
41 Ամմէլի որդիքը, չորս։ Եւ գլխաւորը Յեթէն էր, իսկ երկրորդը Զիզա. իսկ Յեուսը և Բարիան շատ որդիք չունէին և մէկ հատ տոհմ կազմեցին հաշվուելիս։
42 Կահաթի որդիքը՝ Ամրամ, Իսհար, Քեբրան և Ոզիէլ, չորս։
43 Ամրամի որդիքը՝ Ահարոն և Մովսէս. և Ահարոնը որոշուեցաւ որ նորան սրբեն սրբութեանց սրբութեան համար՝ ինքը և իր որդիքը մինչև յաւիտեան, Տիրոջ առջև խունկ ծխելու, նորան ծառայելու և նորա անունովը օրհնելու մինչև յաւիտեան։
44 Եւ Աստուծոյ մարդ Մովսէսի որդիքը Ղևիի ցեղի հետ համարուեցան։
45 Մովսէսի որդիքը՝ Գերսամ և Եղիազար։
46 Գերսամի որդիքը՝ առաջինը Սուբայէլ։
47 Եւ Եղիազարի որդիքը՝ առաջինը Հռաբիա. և Եղիազար ուրիշ որդիք չունէր, բայց Հռաբիայի որդիքը խիստ շատացան։
48 Իսհարի որդիքը՝ առաջինը Սաղոմէթ, Քեբրոնի որդիքը՝ առաջինը Յերիա, երկրորդը Ամարիա, երրորդը Յազիէլ,
49 չորրորդը Յեկամամ։ Ոզիէլի որդիքը՝ առաջինը Միքա, երկրորդը Յեսիա։
50 Մերարիի որդիքը՝ Մոողի և Մուսի. Մոողի որդիքը՝ Եղիազար
51 և Կիս։ Եւ Եղիազարը մեռաւ, բայց որդիք չունէր այլ աղջիկներ. և նորանց աւրն իրանց եղբարքը՝
52 Կիսի որդիքը։ Մուսիի որդիքը՝ Մոողի, Եդեր ու Յերիմոթ, երեք։
53 Սորանք են Ղևիի որդիքը իրանց ազգաւոհմերի համեմատ տոհմերի գլխաւորները իրանց համրանքի համեմատ, իւրաքանչիւր գլուխ իր անուան թուովը, որ գործ էին կատարում Տիրոջ տան պաշտօնի համեմատ քսան տարեկանից և վեր։
54 Վասն զի Դաւիթն ասել էր. Թէ Իսրայէլի Տէր Աստուածը հանգստութիւն է տալու իր ժողովրդին, և Երուսաղէմումն է բնակելու մինչև
55 յաւիտեան. Եւ Ղևտացիներն էլ պիտի չկրեն խորանը և նորա բոլոր անօթները որ նորան պաշտօն

մատուցանեն։ Որովհետև Դաւթի 27
վերջին խօսքին համեմատ, նորանք էին Ղևիի որդիանց թիւը այսինքն քսան տարեկանից և վերը. Վասն զի նորանց պաշտօ- 28
նը կ'լինի Ահարոնի որդիանց ձեռքին, որ Տիրոջ տանը ծառայեն գաւիթների վերայ և սենեակների վերայ և բոլոր սուրբ բաներէն մաքրութեան վերայ լինելով, և Աստուծոյ տան պաշտօնը կատարել, Եւ առաջաւորութեան հա- 29
ցի, և հացի նուէրի նաշխի և անխմոր լաւաշների, և տապակի մէջ եփածի և տապկուածի և ամեն խոր ու երկար չափերի վերայ լինէր, Եւ ամեն առաւօտ վեր կե- 30
նան Տիրոջը գովելու և օրհնելու, նմանապէս և իրիկունը։ Եւ շա- 31
բաթի օրերը, ամսագլուխներին և ամեն օրերին Տիրոջը մատուցանեն բոլոր ողջակէզները նորանից թուով և կանոնով միշտ Տիրոջ առջև. Եւ պահեն ժողովքի խորանի 32
պահապանութիւնը և սրբարանի պահապանութիւնը և իրանց եղբարց Ահարոնի որդիանց պահապանութիւնը Տիրոջ տան պաշտօնի համար։

ԳԼ. ԻԴ

Եւ սորանք են Ահարոնի որդ- 1
կանց դասակարգութիւնները. Ահարոնի որդիքը՝ Նադաբ, Աբիուդ, Եղիազար և Իթամար։ Եւ 2
Նադաբն ու Աբիուդը մեռան իրանց հօրից առջևը և որդիք չունեցան. և քահանայութիւն էին անում Եղիազար և Իթամար։
Եւ Դաւիթը, և Եղիազարի որդ- 3
կանցից Սադովկը և Իթամարի որդկանցից Աքիմելէքը դասակարգեցին նորանց իրանց համրանքներովը իրանց պաշտօնում։
Եւ գտնուեցաւ, որ Եղիազարի 4
որդկանց գլխաւոր մարդիկը աւելի շատ էին Իթամարի որդկանցից. և նորանց դասակարգեցին Եղիազարի որդկանց համար ազգաւոհմերի իշխաններ տասնուվեց. և Իթամարի որդկանց համար իրանց ազգաւոհմերի համեմատ ութ

5 էլաւն ։ Եւ նորանց դասակարգե-
ցին վիճակով միմեանց հետ, վա-
սըն որ սրբարանի իշխաններըը և
Աստուծոյ իշխաններըը եղիազարի
որդիանցից և Իթամարի որդիան-
6 ցից էին ։ Եւ նորանց գրեց Նա-
թանայէլի որդի Սեմայիա դպիրը
Ղևտացին թագաւորի և իշխան-
ների, Սադովկ քահանայի և Ա-
բիաթարի որդի Աքիմելէքի և
քահանայից և Ղևտացոց տոհ-
մերի գլխաւորների առջևը. մէկ
սպգաւոհմը վճռով առնվում էր
եղիազարի տեղը և յետոյ առ-
նըվում էր կարգաւ Իթամարի
տեղը ։
7 Եւ առաջին վիճակը Յովարի-
բին դուրս եկաւ, երկրորդը Յե-
8 դայիային. Երրորդը Յարեմին,
9 չորրորդը Սէուրինին. Հինգերոր-
դը Մեղքիային, վեցերորդը Մի-
10 ամինին. Եօթներորդը Ակկուսին,
11 ութերորդը Աբիային. Իննեռոր-
դը Յեսուին, տասներորդը Սեքե-
12 նիային. Մեռասաներորդը Եղիա-
սիբին, երկոտասաներորդը Յակի-
13 մին. Երեքտասաներորդը Ոփփա-
յին, չորեքտասաներորդը Յեսբէ-
14 աբին, Հինգետասաներորդը Բեղ-
գային, վեշտասաներորդը Իմմե-
15 րին, Եօթնուտասաներորդը Եզի-
րին, ութուտասաներորդը Ափեսե-
16 սին. Իննուտասաներորդը Փեթա-
հիային, քսաներորդը Եզեկիէլին.
17 Քսանումէկերորդը Յաքինին, քը-
18 սաներկուերորդը Գամուլին. Քը-
սաներեքերորդը Դաղայիային,
քսանուչորսերորդը Մասպիային,
19 Այս է նորանց համարը նորանց
պաշտամանց համեմատ Տէրոջ
տունը մտնելու համար իրանց
կանոնովը, որ տրուած էր նորանց
իրանց հայր Ահարոնի ձեռովը,
ինչպէս որ Իսրայէլի Տէր Աստ-
ուածը նորան հրամայել էր ։
20 Եւ Ղևիի որդւանց մնացած-
ները. Ամրամի որդիներից՝ Սու-
բայէլ. Սուբայէլի որդիներից՝ Յա-
21 դդիա. Հռաբիայից՝ Հռաբիայի
22 որդիներից առաջինը Յեսիա. Ի-
սահառի որդիներից՝ Սաղոմոթ.
23 Սաղոմոթի որդիներից՝ Յեթ. Եւ
Փեբրոնի որդիներից՝ Յերիա, երկ-
րորդը՝ Ամարիա, երրորդը Յազի-
էլ, չորրորդը Յեկամամ. Ոզիէլի 24
որդիներից՝ Միքա. Միքայի որդի-
ներից՝ Սամիր։ Միքայի եղբայրը՝ 25
Յեսիա. Յեսիայի որդիներից՝ Զա-
քարիա։ Մերարիի որդիները՝ Մա- 26
ողի և Մուսի. Յազիայի որդին՝
Բենով. Մերարիի որդիները Յա- 27
զիայից Բենով, Սոհամ, Զաքուր
և Երբի։ Մաողիից՝ Եղիազար. 28
իսկ սա որդիք չունեցաւ։ Կիսից՝ 29
Կիսի որդիներից՝ Յերամէլ։ Մու- 30
սիի որդիները՝ Մաողի, Եդեր և
Յերիմովթ։ Սորանք են Ղևտա-
ցոց որդիքը իրանց ազգաւոհմե-
րով։ Սորանք էլ վիճակ դցեցին 31
իրանց եղբարց՝ Ահարոնի որդւանց
հաւասար Դաւիթ թագաւորի,
Սադովկի, Աքիմելէքի և քահա-
նայից և Ղևտացոց ազգաւոհմե-
րի գլխաւորների առջև՝ աոհմա-
պետները իրանց փոքր եղբօր հա-
ւասար։

ԳԼ. ԻԵ

Եւ Դաւիթն ու զօրքի իշխանները 1
որոշեցին պաշտաման համար
Ասափի, Եմանի և Իդիթունի
որդւանցը, որ մարգարէանում
էին քնարներով, տաւիղներով
և ծնծղաներով. և այս պաշտօնը
կատարող մարդկանց թիւը իրանց
պաշտամունքի համեմատ սա էր.
Ասափի որդիներից՝ Զաքուր, Յով- 2
սէփ, Նաթանիա և Ասարէլա՝
Ասափի որդիքը, որ կինում էին
թագաւորի մօտ մարգարէացող
Ասափի մօտ. Իդիթունից՝ Իդի- 3
թունի որդիքը Գոդոդիա, Եզրի,
Եսայի, *Սեմեէ, Ասաբիա ու Մա-
տաթիա, վեց. իրանց հօր Իդի-
թունի մօտ էին, որ քնարով
մարգարէանում էր Տիրոջը գո-
հութիւն և օրհնութիւն երգե-
լով։ Եմանից՝ Եմանի որդիքը՝ 4
Բոկքիա, Մաթանիա, Ոզիէլ,
Սուբայէլ, Յերիմովթ, Անանիա,
Անանի, Եղիաթա, Գեթոդաթի,
Ռոմամթիեզեր, Յեսբակասա,
Մեղեթի, Յոթբր, Մազիոթ։

*Տես համար 9—31

5 Սորանք ամենքը Եմանի որդիքն էին, որ թագաւորի տեսանողն էր, Աստուծոյ խօսքովը եղջիւր բարձրացնելու համար. և Աստուած Եմանին տասնեչորս տղայ
6 և երեք աղջիկ էր տուել։ Սորանք ամենքը իրանց հօր ձեռքի տակին էին Տիրոջ տան երգերը ձնծղաներով, տաւիղներով և քնարներով էրէե֊վ Աստուծոյ տանը թագաւորի, Ասափի, Իդիթունի
7 և Եմանի ձեռքի տակ։ Եւ նորանց թիւը իրանց եղբայրների հետ որ երգ էին սովորած Տիրոջ համար՝ բոլոր բանիմացները երկու հարիւր ութասունութը։
8 Եւ վիճակ գցեցին պաշտամանն կարգի համար փոքրին ու մեծին և վարպետին ու աշակերտին հա-
9 ւասարապէս։ Եւ առաջին վիճակը ելաւ Ասափին Յովսէփի համար, երկրորդը Գոթոզիասին. նա ինքը և իր եղբայրներն ու իր որ-
10 դիները տասներկու հոգի։ Երրորդը Զաքուրին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հո-
11 գի։ Չորրորդը Եզրիին, իր որդիներն ու եղբայրները տասներկու
12 հոգի։ Հինգերորդը Նաթանիային, իր որդիներն ու եղբայրնե-
13 րը տասներկու հոգի։ Վեցերորդը Բոկքիային, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։
14 Եօթներորդը Յեսարէլային, իր որդիներն ու եղբայրները տաս-
15 ներկու հոգի։ Ութերորդը Եսայիին, իր որդիներն ու եղբայր-
16 ները տասներկու հոգի։ Իններորդը Մաթանիային, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։
17 Տասներորդը Սեմէիին, իր որդիներն ու եղբայրները տասներկու
18 հոգի։ Մետասաներորդը Ազարիէլին, իր որդիներն ու եղբայրնե-
19 ները տասներկու հոգի։ Երկոտասաներորդը Ասաբիային, իր որդիներն ու եղբայրները տասներ-
20 կու հոգի։ Երեքտասաներորդը Սուբայէլին, իր որդիներն ու եղ-
21 բայրները տասներկու հոգի։ Զորեքտասաներորդը Մատաթիային, իր որդիներն ու եղբայրնե-
22 րը տասներկու հոգի։ Հնգետասաներորդը Յերիմովթին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Վեչտասաներորդը Անանիային, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Եօթնուտասաներորդը Յեսբակասային, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Ութուտասաներորդը Անանիին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Իննուտասաներորդը Մեղեթիին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Քսաներորդը Եղիաթային, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Քսանուերորդը Ոզիէլին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Քսաներկուերորդը Գեդոզաթիին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Քսաներեքերորդը Մազիովթին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։ Քսանուչորսերորդը Ոսմաթիեզերին, իր որդիներն ու եղբայրները տասներկու հոգի։

ԳԼ. ԻԶ

Դռնապանների դասակարգութիւնները. Կորխեաններից՝ Կովրէի որդին Մասեզամիա Ասափի որդիներից։ Եւ Մասեզամիայի որդիքը՝ անդրանիկը Զաքարիա, երկրորդը Յեդիէլ, երրորդը Զաբադիա, չորրորդը Յաթնիէլ, հինգերորդը Եղամ, վեցերորդը Յոհանան, եօթներորդը Եղիովենայի։ Եւ Աբդեդոմի որդիքը՝ անդրանիկը Սեմայիա, երկրորդը Յովզաբատ, երրորդը Յովաք, չորրորդը Սաքար, հինգերորդը Նաթանայէլ, վեցերորդը Ամիէլ, եօթներորդը Իսաքար, ութերորդը Փեղաթի. վասն զի Աստուած նորան օրհնել էր։ Եւ նորա որդի Սեմայիային որդիք ծնան, որոնք իշխաններ եղան իրանց հօր տանը. վասն զի նորանք զօրաւոր մարդիկ էին։ Սեմայիայի որդիքը՝ Ոթնի, Ռափայէլ, Ովբէդ, Եղզաթ, Ախիով, Բենհայիլ, Եղիսա և Սամաքիա։ Սորանք ա-

ՀՆՔԸ Աբդեդոմի որդիներից էին. իրանք, իրանց որդիքը և իրանց եղբարքը ուժով զօրաւոր մարդիկ էին ծառայութեան համար. Աբդեդոմից վաթսուն երկու 9 հոգի։ Եւ Մասեղամիա տասն ութը զօրաւոր որդիներ և եղ- 10 բայրներ ունէր։ Եւ Մերարիի որդիներից Ուսա որդիներ ունէր. գլխաւորը Սամարի էր. վասն զի թէև նա անդրանիկ չէր, բայց նորա հայրը նորան գլխաւոր դր- 11 րաւ։ Երկրորդը Քեղկիա, երրորդը Տաբաղիա, չորրորդը Զաքարիա. Ուսայի բոլոր որդիներն ու 12 եղբայրները տասներեք էին։ Սորանցն էին դռնապանների դասակարգութիւնները իրև գլխաւոր մարդկանց, ծառայութիւնով հաւասար իրանց եղբարցը Տիրոջ տանը ծառայելու համար։ 13 Եւ փոքրն ու մեծը հաւասար վիճակ գցեցին իրանց հարց առաջի Համեմատ իւրաքանչիւր դրան 14 համար։ Եւ արևելեան կողմն վիճակը ընկաւ Սեղեմիային, և նորա խելօք խորհրդատու որդի Զաքարիայի համար վիճակ գցեցին, և նորա վիճակը դուրս եկաւ հիւ- 15 սիս։ Աբդեդոմին՝ հարաւային կողմը, և նորա որդիներին՝ շտեմարանները։ Սուփիմին և Ուսային՝ արևմտեան կողմը Սալեքեթի դրան մօտ ելը գնացող ճանապարհի վերայ. մի պահապանութիւն մեւս պահապանութեան դէմ ու 17 դէմ։ Արևելեան կողմին Ղևտացիներից վեց, հիւսիսում օրը չորս, հարաւում օրը չորս. իսկ շտեմարանների վերայ երկու երկու։ 18 Փարպարի կողմին դէպի արևմուտքը չորսը ճանապարհին, և 19 երկուքը փարպարի համար։ Սորանք են դռնապանների դասակարգութիւնները։

20 Եւ Ղևտացիներից՝ Ախիան Աստուծոյ տան գանձերի և նուիրական գանձերի վերայ էր։ Գերսոնացի Ղադանի որդիներից՝ Յեհիէլ 22 նի որդիանցից՝ Յեքիէլ։ Յեքիէլի որդիքը՝ Զեթամ և նորա եղբայրը Յովէլ Տիրոջ տան գանձերի վերայ էին։ Ամրամեաններից, Յսհաւեաններից, Քերբոնեաններից, Ողիէլեաններից Սուբայէլ էլ՝ Մովսէսի որդի Գերսոմի որդին՝ գանձերի իշխանն էր։ Եւ նորա եղբայրները Եղիապարի՝ Ռեհաբիա. նորա որդին Հռաբիա, նորա որդին Եսայի, նորա որդին Յովրամ, նորա որդին Զիքրի և նորա որդին Սաղոմոթ։ Այս Սաղոմոթ և նորա եղբայրները այն բոլոր նուիրած գանձերի վերայ էին, որ նուիրել էին Դաւիթ թագաւորը, տոհմապետները, հազարապետները և հարիւրապետները և զօրաց իշխանները, Որ նուիրել էին պատերազմներից և աւարից Տիրոջ տունը հաստատելու համար, Եւ ամեն ինչ որ նուիրել էին Սամուէլ տեսանողը, Կիսեան Սաւուղը, Ներեան Աբենէրը և Շարուհեան Յովաբը. բոլոր նուէրները Սաղոմոթի և նորա եղբայրների ձեռքին էր։

Իսահաւեաններից՝ Քոնենիա և նորա եղբայրները դրսի գործերի համար Իսրայէլի վերայ տասիկաններ և դատաւորներ էին։ Քերբոնեաններից՝ Ասարիա և նորա եղբայրները հազար եօթը հարիւր քաջ մարդիկ Իսրայէլի վերայ վերակացու էին Յորդանանի այս կողմին դէպի արևմուտք Տիրոջ բոլոր գործի համար և թագաւորի ծառայութեան համար։ Քերբոնեաններից՝ գլխաւորը Յեհիա Քերբոնեանների սերունդներում և տոհմերում. սորանք համարուեցան Դաւթի թագաւորութեան քառասներորդ տարին, և գտաւ նորա Յազերում նորանցից դանուեցան քաջ մարդիկ։ Եւ նորա եղբայրները երկու հազար եօթը հարիւր քաջ մարդիկ էին տոհմապետներ։ Եւ Դաւիթ թագաւորը նորանց նշանակեց Ռուբինեանց, Գադեանց և Մանասեանց կէս ցեղի վերայ Աստուծոյ և թագաւորի ամեն գործի համար։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Իսրայէլի որդիքն ածէին իրանց համարանքովը տոհմապետները, հազարապետները և հարիւրապետները. և նորանց ատիկանները, ծառայում էին թագաւորին դատակարգութեան ամեն գործումը. և տարուայ ամեն ամիաներին ամիս ամիս մտնողների և ելնողների ամեն մէկ դասը քսան
2 հազար մարդ։ Առաջի դատակարգութեան համար առաջին ամիսը Զաբդիէլի որդին Յեսբաամը, և նորա դատակարգումը կար քսան հազար
3 մարդ. Նա փարէսի որդիներից էր՝ գլխաւոր ամեն զօրավարների
4 համար առաջին ամիսը։ Եւ երկրորդ ամսի դատակարգի վերայ էր Աքուքացի Դովդան. և Մակեղոթ նորա դատակարգի իշխանը. և նորա դատակարգումը քսան
5 հազար մարդ։ Երրորդ զօրավարը երրորդ ամսի համար էր Յովիադայ քահանայի որդին Բանեա գլխաւորը. և նորա դատակարգումը քսան հազար
6 մարդ։ Ա՛յս Բանեան այն երեսուների զօրաւորն էր և երեսունի վերան էր. և նորա դատակարգումն էր իր որդին Ամիզաբատ։
7 Չորրորդ ամսի համար չորրորդ զօրավարը Յովաբի եղբայրը Ասայէլը. և նորանից յետոյ նորա որդին Զաբադիան. և նորա դատակարգումը քսան հազար
8 մարդ։ Հինգերորդ ամսի համար հինգերորդ զօրավարը Յեզրացի Սամհութը. և նորա դատակարգումը քսան հազար մարդ։
9 Վեցերորդ ամսի համար վեցերորդ զօրավարը Թեկուացի Իկկէսի որդին Իրասը. և նորա դատակարգումը քսան հազար մարդ։
10 Եօթներորդ ամսի համար եօթներորդ զօրավարը Փելօնացի Քեղղէսը Եփրեմի որդիներից. և նորա դատակարգումը քսան
11 հազար մարդ։ Ութերորդ ամսի համար ութերորդ զօրավարը Զարայեանց Ովսացի Սիբքէքայը. և նորա դատակարգումը քսան
12 հազար մարդ։ Իններորդ ամսի համար իններորդ զօրավարը Անաթովթացի Աբիեզերը Բենիամինեաններից. և նորա դատակարգումը քսան հազար մարդ։
13 Տասներորդ ամսի համար տասներորդ զօրավարը Զարայեանց Նետոփաթացի Մահրան. և նորա դատակարգումը քսան հազար մարդ։
14 Մետասաներորդ ամսի համար մետասաներորդ զօրավարը Փրաթոնացի Բանեան Եփրեմի որդիներից. և նորա դատակարգումը քսան հազար մարդ։
15 Երկոտասաներորդ ամսի համար երկոտասաներորդ զօրավարը Գոթոնիէլեան Նետոփաթացի Ալդը. և նորա դատակարգումը քսան հազար մարդ։

16 Եւ Իսրայէլի ցեղերի վերայ էին. Ռուբենեանների իշխան՝ Զիքրիի որդին Եղիազարը. Շմաւոնեաններինը՝ Մաաքայի որդին Սափատիան. Ղեւիեաններինը՝ Կամուէլի որդին Ասաբիան, Ահարոնեանցինը՝ Սադովկը. Յուդայի
18 նը՝ Դաւթի եղբայրներից *Եղիուսը, Իսաքարինը՝ Միքայէլի որդին Ամրին. Զաբուղոնինը՝ Աբդիայի որդին Իսմայիա, Նեփթաղիմինը՝ Եզրիէլի որդին Յերիմովթ.
20 Եփրեմի որդիներինը՝ Ազազիայի որդին Ովսէէն, Մանասէի կէս
21 ցեղինը՝ Փադայիայի որդին Յովէլը. Գաղաադի Մանասէի կէսի
22 նը՝ Զաքարիայի որդին Յեդդովը. Բենիամինինինը՝ Աբենների որդին Յեասիէլը. Դանինը՝ Յերոամի որդին Ազարիէլը։ Սորանք էին Իսրայէլի ցեղերի իշխանները։

23 Եւ Դաւիթը չառաւ նորանց համարանքը, որ քսան տարեկանից և ցած էին. վասն զի Տէրն ասել էր, որ կ'շատացնէ Իսրայէլին երկնից աստղերին չափ։
24 Յովաբ Շարուհեայի որդին սկսեց համարել բայց չվերջացրեց, և սորա համար բարկութիւն եկաւ Իսրայէլի վերայ. և այն համարանքը չմտաւ Դաւիթ թագաւորի Քրոնիկաց պատմութեան մէջ։

---

*Եղիսե ա Թագ. ԺԹ. 6

25 Եւ թագաւորի դանձերի վերան էր Ադիէլի որդին Ազմաւթը. և գաշտումը քաղաքներում և գիւղերում ու աշտարակներում եղող դանձերի վերան էր Ոզիայի
26 որդին Յոնաթան. Եւ գաշտումը երկրագործութեամբ զբաղուածների վերայ՝ Քեղուբի որդին Եզրի. Եւ այգիների վերայ՝ Աբիմաթացի Սեմէին. և այգիներում
27 եղած ձէթի և գինու շտեմարանների վերայ՝ Սեփամացի Զաբդին.
28 Եւ հովտումը եղող ձիթենիների և մոլաթզենիների վերայ՝ Գադերացի Բաաղանանը. և իւղի շտե-
29 մարանների վերայ՝ Յովասը. Եւ Սարօնում արածող արջառների վերայ՝ Սետրան. և ձորերում եղող արջառների վերայ՝ Ադղիի
30 որդին Սափատը. Եւ ուղտերի վերայ՝ Իսմայէլացի Ովիլը. և էշերի վերայ՝ Մերոնոթացի Յադեայի
31 որդին. Եւ հօտերի վերայ՝ Հագարացի Յազիզը. սրանք ամենքը Դաւիթ թագաւորի սեպհական-քի վերակացուներն էին։
32 Եւ Դաւթի հօրեղբայրը՝ Յովնաթանը խորհրդական էր. նա բանիմաց և գրագէտ մարդ էր. և Յաքեմոնի որդին Յէհիէլը թա-
33 գաւորի որդիքանց հետ էր։ Եւ Աքիտոփէլը թագաւորի խորհրդականն էր. և Արաքացի Քուսին՝ թագաւորի բարեկամը.
34 Եւ Աքիտոփէլից յետոյ Բանիայի որդին Յովիադան և Աբիաթարն էին. և թագաւորի զօրագլուխը Յովաբն էր։

ԳԼ. ԻԸ

1 Եւ Դաւիթը ժողովեց Իսրայէլի բոլոր իշխաններին, ցեղերի իշխաններին և թագաւորին ծառայութիւն անող դասակարգերի իշխաններին, և հազարապետներին և հարիւրապետներին, և թագաւորի ու նորա որդիանց բոլոր սեպհականց ու ընչից վերակացուներին, ներքինիներին, զօրաւորներին և բոլոր քաջազուն-
2 ներին Երուսաղէմ։ Եւ Դաւիթ թագաւորը ոտքի վերայ կանգնեց և ասաց. Լսեցէք ինձ, ով իմ եղբայրներ և իմ ժողովուրդ. ես իմ սրտումն ունէի որ մի հանգըստանալու տուն շինեմ Տիրոջ ուխտի տապանակի և մեր Աստուծոյ ոտքի պատուանդանի համար. և պատրաստութիւն արի շինելու. Բայց Աստուած ինձ ա- 3
սաց. Դու տուն չես շինելու իմ անուան համար, վասն զի դու պատերազմների մարդ ես և արիւններ ես թափել։ Եւ Իսրայէլի 4
Տէր Աստուածը իմ հօր բոլոր տանից ինձ ընտրեց, որ յաւիտեան Իսրայէլի վերայ թագաւոր լինիմ. վասն զի Յուդայից ընտրեց առաջնորդը, և Յուդայի տանից իմ հօր տունը, և իմ հօր որդիներից ինձ հաւանեց, որ ինձ թագաւոր անէ բոլոր Իսրայէլի վերայ։ Եւ իմ բոլոր որ- 5
դիներից (որովհետև շատ են այն որդիները որոնց Տէրը ինձ տուել է) իմ որդի Սողոմոնին ընտրեց, որ Տիրոջ թագաւորութեան աթոռի վերայ նստէ Իսրայէլի վերայ։ Եւ ինձ ասաց. Թէ Քո Սո- 6
ղոմոն որդին ինքը է շինելու իմ տունը և սրահները, վասն զի ես նորան ընտրել եմ ինձ որդի, և ես էլ նորան հայր եմ լինելու. Եւ կ'հաստատեմ նորա թագա- 7
ւորութիւնը մինչև յաւիտեան, եթէ նա հաստատ կենայ իմ պատուէրներն ու իմ իրաւունքները կատարելու ինչպէս այսօր։ Եւ հիմա բոլոր Իսրայէլի Տիրոջ 8
ժողովքի աչքի առջև և իր Աստուծոյ ականջի առջև ----ս էմ. Պահեցէք և քննեցէք ձեր Տէր Աստուծոյ բոլոր պատուէրները, որպէս զի ժառանգէք այս բարի երկիրը, և ժառանգեցնէք ձեր որդիանց ձեզանից յետոյ մինչև յաւիտեան։

Եւ դու, որդեակ իմ Սողոմոն, 9
ճանաչիր քո հօր Աստուծոյն և ծառայիր նորան կատարեալ սրտով և յօժար կամօք. վասն զի Տէրը քննում է բոլոր սրտերը և գիտէ խորհուրդների բոլոր միտքը. եթէ նորան որոնես, նա կ'գտնուի քեզանից, իսկ եթէ

նորան թողես, նա էլ քեզ կը
10 թողէ յաւիտեան։ Հիմա տես
որ Տէրը քեզ ընտրեց սրբարանի
համար տուն շինելու. զօրացիր
և կատարիր։
11 Եւ Դաւիթը տուաւ իր որդի
Սողոմոնին սրահի և նորա սե-
նեակների և նորա գանձարանների
և նորա վերնատանների և նորա
ներքին շեմարանների և քաւու-
12 թեան գաղափարը, Եւ այն ա-
ժենի գաղափարը, որ նա ունէր
իր մտքումը՝ Տիրոջ տան գաւիթ-
ների համար և բոլոր սենեակնե-
րի համար շուրջանակի, Աստու-
ծոյ տան շեմարանների և նուէր-
13 ների շեմարանների համար. Կա-
և հրա— քահանաների և
Ղեւտացիների դասակարգութիւն-
ների համար և Տիրոջ տան պաշ-
տաման բոլոր գործի համար և
Տիրոջ տան պաշտաման բոլոր ա-
14 նօթների համար. Ամեն պաշտօն-
ների ամեն տակի անօթների կշի-
ռը, ամեն արծաթի անօթների
կշիռը և ամեն պաշտօնների ա-
15 նօթներին էլ. Ոսկի աշտանակ-
ների և նորանց ոսկի ճրագների
կշիռը, և իւրաքանչիւր աշտա-
նակների և նորանց ոսկի ճրագ-
ների կշիռը. Նոյնպէս և արծա-
թի աշտանակների՝ աշտանակի
և նորա ճրագների կշիռը իւրա-
քանչիւր աշտանակի պաշտօնի
16 համեմատ. Եւ սեղանների հա-
մար՝ իւրաքանչիւր սեղանի համար. և
արծաթի սեղանների հա-
17 մար. Եւ մաքուր ոսկուց մսա-
հանների և կոնքերի և բաժակ-
ների և ոսկի տաշտերի համար
իւրաքանչիւր տաշտի կշիռը. և
արծաթի տաշտերի համար իւ-
18 րաքանչիւր տաշտի կշիռը. Եւ
խունկի սեղանի համար մաքուր
ոսկի կշռովով. և էրա— Քերովբէից
տարածող և Տիրոջ ուխտի տա-
պանակը ծածկող քերովբէից
19 կառքի գաղափարը. Ամեն այս
այս գաղափարի բոլոր գործքերը
ինձ հասկացրեց Տէրը էր ձեռքի
գրովը, ասաց Դա—էին։
20 Եւ Դաւիթն ասաց իր որդի

Սողոմոնին. Զօրացիր և կատա-
րիր. մի վախենար և մի զարհու-
րիր, որովհետև իմ Աստուած
Եհովայ Աստուածը քեզ հետ է.
նա քեզ չի թողել և քեզ չի
ձգել, մինչև Տիրոջ տան ծառա-
յութեան բոլոր գործերը լրացնե-
լը։ Եւ ահա քահանայից և Ղև- 21
տացոց դասակարգերը Աստուծոյ
տան բոլոր ծառայութեան հա-
մար. և քեզ մօտ կան ամեն գոր-
ծի համար բոլոր յօժարութեամբ
ամեն ծառայութեան մէջ հան-
ճարեղ մարդիկ. և իշխանները ու
բոլոր ժողովուրդը քո ամեն հրա-
մաններին կ'հնազանդին։

Գլ. ԻԹ

Եւ Դաւիթ թագաւորն ասաց 1
բոլոր ժողովքին. Իմ որդին Սո-
ղոմոնը որին միայն ընտրեց Աստ-
ուած, երեխայ է և փափուկ է.
իսկ այդ գործը մեծ է. վասն զի
այս պալատը մարդու համար չէ
այլ Աստուծոյ։ Եւ ես բոլոր կա- 2
րողութեամբս պատրաստել եմ
Աստուծոյ տան համար ոսկեղէն-
ների համար ոսկի, արծաթեղէն-
ների համար արծաթ, պղնձեղէն-
ների համար պղինձ, երկաթեղէն-
ների համար երկաթ և փայտեղէն-
ների համար փայտ, եղինձնաքա-
րեր և ընդելուզանելու քարեր,
գեղեցիկ և գոյնզգոյն քարեր, և
ամեն տեսակ պատուական քա-
րեր և մարմարիոն քարեր առա-
տօրէն. Եւ դեռ Աստուծոյս տա- 3
նը վերայ ունեցած սիրոյս հա-
մար՝ այն իմ ունեցած ոսկու և
արծաթի գանձը ես տալիս եմ
Աստուծոյ տան համար բացի
այն ամենից, որ սրբարանի տան
համար պատրաստել եմ, Երեք 4
հազար տաղանդ ոսկի Ոփիրի ոս-
կուց և եօթը հազար տաղանդ
մաքուր արծաթ տների պատերը
պատելու համար. Ամեն մէկ ոս- 5
կեղէն և ամեն մէկ արծաթեղէն
բանի համար և ամեն տեսակ
արուեստական ձեռագործի հա-
մար։ Եւ էլ ո՞վ է յօժար այսօր
Տիրոջը նուէր մատուցանելու։

6 Այն ժամանակ յօժարեցին ղե-
ւեղեա-տոհմից իշխանները, Յու-
դէլի ցեղերի իշխանները և Քա-
զարապետանքն ու Տարխատապետա-
նները և Թագաւորի գործի իշ-
7 խանները. Եւ Աստուծոյ տան
ծառայութեան համար տուին
հինգ հազար տաղանդ ոսկի և
տասը հազար դահեկան, և տա-
սը հազար տաղանդ արծաթ և
տասնուվեց հազար տաղանդ պղ-
ինձ և հարիւր հազար տաղանդ
8 երկաթ։ Եւ որի մօտ քարեր էր
գտնուում, տուին Տիրոջ տան
գանձանակին Գերսոնացի Յէքիէ-
9 լի ձեռքը. Եւ ժողովուրդն ու-
րախացաւ նորանց յօժար կամքը
ընծայելու վերայ, վասն զի կա-
տարեալ սրտով կամաւոր ընծա-
ներ տուին Տիրոջը. և Դաւիթ
թագաւորն էլ մեծ ուրախու-
թեամբ ուրախացաւ։

10 Եւ Դաւիթն օրհնեց Տիրոջը
բոլոր ժողովքի աչքի առջև, և
Դաւիթն ասաց. Օրհնեալ ես
դու, ով մեր հօր Իսրայէլի Տէր
Աստուածը, յաւիտենից մինչև
11 յաւիտեան քոնն է, ով Տէր,
մեծութիւնը և զօրութիւնը և
փառքը և յաղթութիւնը և
պայծառութիւնը, և բոլոր եր-
կինքում ու երկրում եղածը.
քոնն է, ով Տէր, թագաւորու-
թիւնը, և դու բարձրացեալ ես
ամենից վեր իբրև գերիշխան։
12 Եւ հարստութիւնն ու պատիւը
քո երեսից է, և դու ես ամենի
վերայ տիրողը, և քո ձեռքին է
զօրութիւնն ու կարողութիւնը.
և քո ձեռքին է ամենի մեծաց-
13 նելը և ուժեղացնելը. Եւ հիմա
ով մեր Աստուած, մենք փառա-
բանում ենք քեզ և օրհներգում
ենք քո փառաւորեալ անունը.
14 Վասն զի ես ո՞վ եմ, և ո՞վ է
իմ ժողովուրդը, որ կարողու-
թիւն ունենանք այսպէս ընծայ
մատուցանելու. վասն զի ամեն
բան քեզանից է, և քո ձեռքից
15 ստացանք տուինք քեզ։ Որովհետև
մենք պանդուխտներ ենք քո առ-
ջև և ուժգնհներ մեր բոլոր հայ-
րերի պէս. աւուրն նման են
մեր օրերը երկրի վերայ. և չկայ
հաստատութիւն։ Ով Տէր մեր 16
Աստուած, բոլոր այս առատու-
թիւնը որ մենք պատրաստեցինք
քեզ մի տուն շինելու քո սուրբ
անուան համար, քո ձեռքից է
դա, և բոլորը քոնն է։ Եւ գի- 17
տեմ, ով իմ Աստուած, որ դու
փորձում ես սիրտը և սիրում
ես ուղղութիւն. ես իմ սրտի
ուղղութեամբը ընծայեցի այս ա-
մենը, և հիմա քո այստեղ գըտ-
նուող ժողովուրդը տեսայ ու-
րախութեամբ քեզ կամաւոր ըն-
ծայ մատուցանելիս։ Ով Տէր 18
մեր հայրերի Աբրահամի, Իսա-
հակի և Իսրայէլի Աստուածը,
պահիր սա յաւիտեան քո ժո-
ղովրդի սրտի խորհուրդների այս
միտքը, և նորանց սիրտը հաս-
տատիր քեզ վերայ։ Եւ իմ որ- 19
դի Սողոմոնին կատարեալ սիրտ
տուր, որ պահէ քո պատուի-
րանքները, քո վկայութիւնները
և քո կանոնները, և որ այս բո-
լորը կատարէ և շինէ այն պա-
լատը, որի պատրաստութիւնը
ես արել եմ։

Եւ Դաւիթն ասաց բոլոր ժո- 20
ղովքին. Հիմա օրհնեցէք ձեր Տէր
Աստուծոյն. և բոլոր ժողովքն
օրհնեցին իրանց հայրերի Տէր
Աստուծոյն, և խոնարհելով եր-
կրպագութիւն արին Տիրոջը և
թագաւորին։ Եւ զոհեր ու ողջա- 21
կէզներ մատուցրին Տիրոջը այն
աւուր հետևեալ օրը հազար զե-
ւտրուկ, հազար խոյ, հազար
գառն, և նորանց թափելու նը-
ւէրները, և շատ զոհեր բոլոր
Իսրայէլի համար։ Եւ այն օրը 22
կերան և խմեցին Տիրոջ առջևը
մեծ ուրախութեամբ. և երկ-
րորդ անգամ թագաւոր արին
Դաւիթ որդի Սողոմոնին և օծե-
ցին թագաւոր Տիրոջ համար,
և Սադովկին քահանայ։ Եւ Սո- 23
ղոմոն նստեց Տիրոջ աթոռի վե-
րայ թագաւոր իր հօր Դաւիթ
տեղը, և յաջողութիւն գտաւ.
և բոլոր Իսրայէլը լսում էր նո-
րան։ Եւ ամեն իշխանները ու 24
զօրաւորները, նաև Դաւիթ թա-

թագաւորի բոլոր որդիները հըպատակուեցան Սողոման թագաւորին. 25 Եւ Տէրը մեծացրեց Սողոմանին շատ բարձր բոլոր Իսրայէլի աչքի առջեւ, և նորա վերայ մի թագաւորութեան փառք դրաւ, որ նորանից առաջ Իսրայէլի վերայ եղող ոչ մի թագաւոր չէր ունեցել։

26 Աւսպէս Յեսսէի որդին Դաւիթը թագաւորեց բոլոր Իսրա-
27 յէլի վերայ. Եւ Իսրայէլի վերայ նորա տուած թագաւորութեան օրերը քառասուն տարի էին. Քեբրոնում թագաւորեց եօթը տարի, իսկ Երուսաղէմում թագաւորեց երեսուն և երեք տարի։

Եւ մեռաւ բարի ծերութեամբ, 28 կշտացած՝ օրերով, հարստութեամբ և փառքով. և նորա որդին Սողոմանը թագաւորեց նորա տեղ։ Եւ Դաւիթի թագաւորի 29 առաջին և վերջին գործերը, ահա նորանք գրուած են տեսանող Սամուէլի յիշատակարանումը և Նաթան մարգարէի յիշատակարանումը, նաև Գադ տեսանողի յիշատակարանումը, նորա բոլոր 30 թագաւորութեան և զօրութեան հետ. նաև այն ժամանակները որ անց կացան նորա վերայ և Իսրայէլի վերայ և երկրի բոլոր թագաւորութիւնների վերայ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Դաւթի որդին Սողոմոնը զօրացաւ իր թագաւորութիւնումը. և իր Տէր Աստուածը իր հետն էր, և նորան մեծացրեց
2 բարձրացնելով։ Եւ Սողոմոն խօսեց բոլոր Իսրայէլին՝ հազարապետներին, հարիւրապետներին, դատաւորներին և բոլոր Իսրայէլի
3 ամեն տոհմապետներին։ Եւ Սողոմոն ու բոլոր ժողովքը նորա հետ գնացին Գաբաւոնի բարձրաւանդակը, վասն զի Աստուծոյ ժողովքի խորանը, որ Տիրոջ ծառան Մովսէսը շինել էր անապատումը, այնտեղ էր։
4 Միայն թէ Դաւիթը վեր էր տարել Աստուծոյ տապանակը Կարիաթարիմից նորա համար պատրաստած տեղը, վասն զի նորա համար Երուսաղէմում մի վրան
5 էր կանգնեցրել։ Եւ այն պղնձի սեղանը, որ շինել էր Ուրիի որդի Բեսելիէլ, այնտեղ էր Տիրոջ խորանի առջեւը. և նորան այցելեցին Սողոմոնը և ժո-
6 ղովքը։ Եւ Սողոմոնը վեր եկաւ այնտեղ պղնձի սեղանի վերայ Տիրոջ առջեւը, որ ժողովքի խո-

րանում էր, և նորա վերայ հազար ողջակէզ մատուցրեց։

Այն գիշերը Աստուած երևե- 7 ցաւ Սողոմոնին և նորան ասաց. խնդրիր ինչ որ քեզ պիտի տամ։
Եւ Սողոմոն ասաց Աստուծոյն. 8 Դու մեծ ողորմութիւն արիր իմ հօր Դաւթին, և ինձ թագաւոր արիր նորա տեղը։ Արդ, ով Տէր 9 Աստուած, թող հաստատ մնայ իմ հօրը քո՝ խօսքդ, որովհետև դու ինձ թագաւոր արիր երկրիս հողին չափ մի ժողովրդի վերայ։ Ուրեմն ինձ իմաստութիւն 10 և գիտութիւն տուր, որ այս ժողովրդի առջեւը դուրս գամ և մտնեմ, վասն զի ո՞վ պիտի դատէ քո այս մեծ ժողովուրդը։ Եւ 11 Աստուած ասաց Սողոմոնին. Որովհետև սա եղաւ քո սրտումը, և չխնդրեցիր հարստութիւն, ստացուածք և փառք, և քո թշնամեաց կեանքը, նաև երկար օրեր չխնդրեցիր, բայց քեզ համար խնդրեցիր իմաստութիւն և գիտութիւն, որ դատես իմ ժողովուրդը, որի վերայ ես քեզ թագաւոր արի, իմաստութիւն 12 և գիտութիւն տրվում է քեզ, բայց հարստութիւն և ստաց-

ուածք և փառք էլ պիտի տամ քեզ, այնպէս որ քեզանից առաջ եղած թագաւորներին նմանը չէ եղած և քեզանից յետոյ էլ նը-
13 մանը չի լինիլ։ Եւ Սողոմոնը գընաց Գաբաւոնի բարձրաւանդակից՝ ժողովքի խորանի առաջից Երուսաղէմ, և թագաւորեց Իսրայէլի վերայ։
14 Եւ Սողոմոնը կառքեր և ձիաւորներ ժողովեց. և նա հազար չորս հարիւր կառք և տասներկու հազար ձիաւորներ ունէր, և նորանց դրաւ կառքի քաղաքներում և թագաւորի մօտին Ե-
15 րուսաղէմում։ Եւ թագաւորը արծաթին ու ոսկին Երուսաղէմում քարերի պէս արաւ, և եղևնափայտերը դաշտի մէջի մեղմաթզենիների չափ արաւ շատու-
16 թեամբ։ Եւ Սողոմոնի ձիերը բերվում էին Եգիպտոսից. և թագաւորի վաճառականների կարաւանը երամներով բերում էին
17 ծախու տալ։ Եւ Եգիպտոսից վեր էին բերում և դուրս հանում մէկ կառքը վեց հարիւր արծաթով, իսկ ձին՝ հարիւր և հիսուն սիկղ. և Քետացոց բո-
18 լոր թագաւորների համար Եւ Ասորց բոլոր թագաւորների համար այսպէս նորանց ձեռովն էին դուրս բերում։

ԳԼ. Բ

1 Եւ Սողոմոնը հրամայեց, որ Տիրոջ անուան համար մի տուն շինեն և մի տուն իր թագաւորութեան համար։
2 Եւ Սողոմոնը հաշմարեց եօթանասուն հազար բեռնակիր և ութսուն հազար մարդ քար կրող լեռնումը, և նորանց վերայ վերակացուներ երեք հազար վեց հարիւր։
3 Եւ Սողոմոնը խոսք ուղարկեց Տիրոսի թագաւոր Քիրամին ասելով. Ինչպէս որ արիր իմ հօր Դաւթի հետ և նորա համար եղևնափայտեր ուղարկեցիր, որ մի տուն շինէ նորանում կենալու
4 համար. Ահա ես մի տուն եմ շինում իմ Տէր Աստուծոյ անուան համար նորան նուիրելու, նորա առջև անուշահոտ խունկ ծխելու, միշտ առաջաւորութեան հացը դրուելու, և առաւօտ ու իրիկուն, շաբաթներին ու ամսակներին և մեր Տէր Աստուծոյ ողջակէզներ մատուցանելու. սա յաւիտեան պարտ է Իսրայէլի վերայ. Եւ այն տունը, 5
որ ես շինում եմ, մեծ է. վասն զի մեծ է մեր Աստուածը ամեն աստուածներից։ Եւ ո՞վ է կարող 6
նորա համար տուն շինել, որովհետև երկինքն ու երկնից երկինքը նորան չեն պարունակել. և ո՞վ եմ ես, որ նորա համար տուն շինեմ, բայց միայն մի խունկ ծխելու տեղ նորա առջևը։ Եւ արդ՝ ինձ համար մէկ իմաստուն մարդ ուղարկիր որ գործէ ոսկով, արծաթով, պղնձով, երկաթով, ծիրանեգոյնով և կարմիր ու կապուտակով, և իմանար քանդակներ քանդակել այն իմաստուններին հետ, որոնք ինձ մօտ են Յուդայի երկրում և Երուսաղէմում, որոնց իմ հայրը Դաւիթ պատրաստել է։ Եւ ինձ 8
համար եղևնափայտեր և մայր փայտեր և ալմուկ փայտեր ուղարկիր Լիբանանից, որովհետև ես գիտեմ որ քո ծառաները Լիբանանի փայտերը կտրելը գիտեն. և ահա իմ ծառաները քո ծառաների հետ թող լինին։ Եւ 9
ինձ համար շատ փայտ պատրաստեն, վասն զի այն տունը որ ես շինում եմ, մեծ է և հրաշալի։ Եւ ահա այն փայտահատներին, 10
որ փայտերը կ'կտրեն, տալիս եմ քո ծառաներին ծեծած ցորեն քսան հազար քոռ, և գարի քսան հազար քոռ, և գինի՝ քսան հազար մետր, և իւղ՝ քսան հազար մետր։

Եւ պատասխանեց Տիրոսի 11
թագաւորը Քիրամ նամակով և դարձ ուղարկեց Սողոմոնին. Տէրը իր ժողովուրդը սիրելով քեզ նորանց վերայ թագաւոր է դրել։
Եւ Քիրամը ասաց. Օրհնեալ է 12
Իսրայէլի Տէր Աստուածը, որ առեղծել է երկինքը և երկիրը,

որ Դաւիթ թագաւորին մի իմաստուն որդի է տուել, որ գիտէ հանճար և գիտութիւն, որ պիտի մի տուն շինէ Տիրոջ համար և մի տուն իր թագաւորութեան համար։ 13 Եւ արդ ուղարկեցի մէկ իմաստուն մարդ հանճար գիտացող Քիրամ-Աբիին։ 14 Նա Դանի աղջիկներից եղող մի կնոջ տղայ էր, և նորա հայրը մի Տիւրացի էր, որ գիտէր գործել ոսկով, արծաթով, պղնձով, երկաթով, քարերով և փայտերով, ծիրանեգոյնով, կապուտակով, բեհեզով և կարմիրով, և ամեն տեսակ քանդակներ քանդակել, և մտածէ ամեն մտածմունք, որ իրան կ'յանձնուի, քո իմաստուններին հետ և քո հօր Դաւթի՝ իմ Տիրոջ իմաստուններին հետ։ 15 Եւ հիմա այն ցորենը, գարին, իւղը և գինին, որ իմ տէրն ասել է, թող ուղարկէ իր ծառաներին. 16 իսկ մենք կարենք Լիբանանից բոլոր քեզ պէտք եղող փայտերը, և լաստերով նորանց բերենք քեզ համար ծովով Յոպպէ. և դու վեր տար նորանց Երուսաղէմ։ 17 Եւ Սողոմոնը համարեց Իսրայէլի երկրումը եղող բոլոր օտարազգի մարդկանցը այն համարեւրց յետոյ, որ նորա հայրը Դաւիթ համարել էր, և գտնուեցան հարիւր յիսուն երեք հազար 18 վեց հարիւր մարդ։ Եւ նորանցից եօթանասուն հազար բեռնակիր արաւ, և ութսուն հազար լեռնումը կտրող, և վեց հազար վերակացուներ, որ ժողովուրդը բանեցնեն։

ԳԼ. Գ

1 Եւ Սողոմոն սկսեց շինել Տիրոջ տունը Երուսաղէմում Մօրիա լեռան վերայ, ուր որ երևեցաւ նորա Հօրը Դաւթին այն տեղի վերայ, որ Դաւիթ պատրաստել էր Յեբուսացի Ոռնոյի 2 կալումը. Եւ սկսեց շինել իր թագաւորութեան չորրորդ տարուայ երկրորդ ամսի երկուսին։ 3 Եւ այս է Սողոմոնի դրած հիմը

Աստուծոյ տունը շինելու համար. երկայնութիւնը նախնի չափով վաթսուն կանգուն, և լայնութիւնը քսան կանգուն։ 4 Եւ առջևի սրահի երկայնութիւնը տան լայնութեան համեմատ քսան կանգուն էր, և բարձրութիւնը՝ հարիւր քսան. և նորան պատեց ներսիցը մաքուր ոսկով։ 5 Եւ մեծ տունը ծածկեց մայր փայտերով, և նորան պատեց լաւ ոսկով, և նորա վերայ հանեց արմաւենիներ և շղթաներ։ 6 Եւ տունը պատեց պատուական ակունքներով շքեղութեան համար. և ոսկին Փարուիմի ոսկի էր։ 7 Եւ պատեց տան դերանները, սեմերը, նորա պատերը և նորա դռները ոսկով, և քերովբէներ քանդակեց պատերի վերայ։

8 Եւ սրբութեանց սրբութիւնի տունը շինեց. նորա երկայնութիւնը տան լայնութեան համեմատ քսան կանգուն, և նորա լայնութիւնը քսան կանգուն. և նորան պատեց վեց հարիւր տալանդ մաքուր ոսկով։ 9 Եւ բեհեզների կշիռը մինչև հիսուն սիկղ ոսկի էր. և վերնատուները պատեց ոսկով։ 10 Եւ սրբութեանց սրբութիւնում երկու քանդակագործ քերովբէներ շինեց, և նորանց պատեց ոսկով։ 11 Եւ քերովբէների թևերի երկայնութիւնը քսան կանգուն էր. մէկ թևը հինգ կանգուն էր որ դիպչում էր տան պատին. և միւս թևը հինգ կանգուն էր որ դիպչում էր միւս քերովբէի թևին։ 12 Եւ քերովբէի մէկ թևը հինգ կանգուն էր, որ դիպչում էր տան պատին, և միւս թևը՝ հինգ կանգուն, որ կցուած էր միւս քերովբէի թևին։ 13 Այս քերովբէների տարածուած թևերը քսան կանգուն էին, որ կանգնած էին իրանց ոտքերի վերայ, և նորանց երեսը դէպի տունն էր։

14 Եւ վարագոյրը շինեց կապուտակից, ծիրանեգոյնից, կարմիրից և բեհեզից, նորա վերայ քերովբէներ գործեց։

15 Եւ տան առջև երկու սիւն շի-

նեց՝ երեսունուհինգ կանգուն երկայնութեամբ, և ամեն մէկի
16 գլխի խոյակը հինգ կանգուն։ Եւ դարիրի միջի դե- շղթաներ շինեց և դրաւ սիւների գլխներին, և հարիւր նուռ շինեց և անցրեց
17 շղթաներին. Եւ սիւները կանգնեցրեց տաճարի առջևը՝ մէկը աջ կողմին միւսը ձախ կողմին, և աջինի անունը դրաւ Յաքին և ձախինի անունը Բոազ։

ԳԼ. Ը

1 Եւ ամէն պղնձի սեղան շինեց, երկայնութիւնը քսան կանգուն և լայնութիւնը քսան կանգուն և բարձրութիւնը տասը կանգուն։
2 Եւ ձուլածոյ ծովը շինեց, նորա մէկ շրթունքից մինչև միւս շրթունքը տասը կանգուն էր, բոլորաձև էր շուրջանակի, և հինգ կանգուն բարձրութիւնը, և մի երեսուն կանգունանոց գերձան շրջապատում էր նորան շուր-
3 ջանակի. Եւ *եզների նմանութիւններ կային նորա տակին, որ շուրջանակի նորան շրջապատում էին, և յոճ-նիերը տասը մէկ կանդուն պատում էին ծովը շուրջանակի. երկու կարգ *եզներ ձուլուած նորա ձուլուելու ժա-
4 մանակ։ Նա կանգնած էր տասն երկու եզների վերայ՝ երեքը նայում էին հիւսիս, և երեքը նայում էին արևմուտք, երեքը նայում էին հարաւ և երեքը նայում էին դէպի արևելք, և ծովը վերևից նորանց վերայ էր. և նորանց ամենի ետևի կողմերը դէպի ներս
5 էր։ Եւ նորա հաստութիւնը ձեռքի չափ էր, և նորա շրթունքը բաժակի շրթունքի գործ էր իբրև շուշան ծաղիկ։ Պարունակութիւնը երեք հազար մեր էր տանում։
6 Եւ տասը աւազան շինեց, և հինգը դրաւ աջ կողմին և հինգը ձախ կողմին նորանց մէջ լուացուելու համար. ողջակէզի բանները նորանցում էին լուանում.

*կոճակները գ Թագ. Ե. 24

իսկ ծովը որ քահանաները լուացուէին նորանում։
Եւ տասը ոսկի աշտանակը շի- 7
նեց իրան գաղտփարին համեմատ և դրաւ տաճարում՝ հինգը աջ կողմին և հինգը ձախ կողմին։
Եւ տասը սեղան շինեց և դրաւ 8
տաճարում՝ հինգը աջ կողմին և հինգը ձախ կողմին. և հարիւր ոսկի կոնքեր շինեց։
Եւ շինեց քահանայից սրահը, 9
մեծ սրահը և սրահի դռները. և նորանց դռները պղնձով։
Եւ ծովը դրաւ աջ կողմին դէպի 10
արևելք հարաւի կողմանը։
Եւ (Փիրամը) շինեց կաթսա- 11
ները, թիակները և կոնքերը։ Եւ Փիրամը վերջացրեց այն բոլոր գործը, որ արաւ Սողոմոն թագաւորի համար Աստուծոյ տանը. երկու սիւները, և գունտ խոյակ- 12
ները այն երկու սիւների գլուխներին, և երկու ցանցերը այն երկու գունտ խոյակների, որ սիւների գլխներին էին, ծածկելու համար, և չորս հարիւր նռները 13
այն երկու ցանցերի համար՝ երկու կարգ նռներ մէկ ցանցի համար, որ ծածկէ այն երկու գունտ խոյակները, որ սիւների դէմ են.
Եւ *շինեց մեքենովթները, և *շի- 14
նեց աւազանները մեքենովթների վերայ։ Մէկ ծովը, և տասներկու 15
եզները նորա տակին. Եւ կաթ- 16
սանները, թիակները և մսահանները, և նորանց բոլոր գործիքները շինեց Փիրամ-Աբի Սողոմոն թագաւորի համար Տիրոջ տան համար փայլուն պղնձից։ Յորդանան դաշտումը թանձր հողի վերայ նորանց ձուլել տուաւ թագաւորը Սոկքովթի և Սարեդայի մէջ. Եւ Սողոմոնը շինեց այս 18
բոլոր գործիքները խիստ շատ, այնպէս որ չորշուեցաւ պղնձի կշիռը։ Եւ Սողոմոնը շինեց Աստուծոյ տանն բոլոր գործիքները, ոսկի սեղանը և սեղանները, որոնց վերայ [ե]՞մ էին առաջաւորութեան հացը. Եւ աշտանակները ու նո- 20
րանց ճրագները, որ նորանց վա-

*տասը գ Թագ. Ե. 43

ուեն ըստ կարգին դաբլրի տուջե-
21 ւը՝ մաքուր ոսկուց. Նաև ծա-
ղիկները և ճրագները և ունելի-
նները՝ ոսկուց՝ բոլորովին ոսկուց.
22 Եւ բազմակալները, տաշտերը,
տուփերը և բուրվառները՝ մա-
քուր ոսկուց. և տան դռները՝
արբուժեանց արբուժիւնի ներսի
դրան փեղկերը և տաճարի տան
դռները՝ ոսկուց:

ԳԼ. Ե

1 Եւ յորժե վերջացաւ այն ամեն
գործը, որ Սողոմոնը արաւ Տի-
րոջ տան համար. և Սողոմոնը
բերաւ իր հօր Դաւթի նուէրնե-
րը՝ արծաթը, ոսկին և բոլոր գոր-
ծիքները դրաւ Աստուծոյ տան
գանձերի մէջ:
2 Այն ժամանակ Սողոմոնը ժո-
ղովեց Իսրայէլի ծերերին, ցեղե-
րի բոլոր իշխաններին, Իսրայէլի
որդւոց տոհմապետներին Երու-
սաղէմ՝ որ Տիրոջ ուխտի տա-
պանակը վեր տանեն Դաւթի քա-
3 ղաքից՝ որ է Սիոն: Եւ ժողով-
ուեցան Թագաւորի մօտ բոլոր
Իսրայէլացիք տօնին որ է եօթնե-
4 երորդ ամսին: Եւ Իսրայէլի բո-
լոր ծերերը եկան և Ղեւտացիք
5 վեր առին տապանակը. Եւ տա-
պանակը և ժողովքի խորանը և
խորանում եղած բոլոր սուրբ կա-
րասիքը վեր տարին. քահանա-
ները և Ղեւտացիները վեր տարին
6 նորանից: Եւ Սողոմոն Թագաւորը
և Իսրայէլի բոլոր ժողովքը, որ
ժողովուել էին նորա մօտ, տա-
պանակի առջեւը անթիւ և ան-
համար շատ ոչխարներ ու եզներ
7 էին զոհում. Եւ քահանաները
բերին Տիրոջ ուխտի տապանակը
իր տեղը տան դաբլրը սրբու-
թեանց սրբութեան մէջ քերով-
8 բէների թեւերի տակ: Եւ քերով-
բէները իրանց թեւերը տարածում
էին տապանակի տեղի վերայ, և
քերովբէները ծածկում էին տա-
պանակը և նորա ձողերը վերեւից:
9 Եւ ձողերը երկարացրին, և ե-
րեւցան ձողերի գլուխները *տա-

*սրբութիւնից

պանակից դաբլրի տուջը, բայց
դրսում չէին երեւում. և նորանք
այնտեղ են մինչև այսօր: Տա- 10
պանակում բացի երկու քարեղէն
տախտակներից, որ Մովսէս սը-
ուաւ Քորէբում, որ Տէրը ուխ-
տեց Իսրայէլի որդիների հետ՝ նո-
րանք Եգիպտոսից դուրս գալիս:
Եւ եղաւ երբոր քահանաները 11
սրբարանից դուրս եկան, որով-
հետեւ բոլոր գտնուած քահանա-
ները իրանց սրբել էին առանց
էջեր դասակարգութիւնը պահե-
լու. Եւ երգիչ Ղեւտացիների ա- 12
ժեները՝ Ասափը, Եմանը, Իդիթու-
նը և նորանց որդիները ու նորանց
եղբայրները բեհեզներ հագած
ձնծղաներով, տաւիղներով և
քնարներով կանգնած էին ա-
ղանի արեւելեան կողմին, և նո-
րանց հետ հարիւր քսան քահա- 13
նոյ փողեր էին հնչեցնում. Եւ
էր ինչպէս մէկ՝ փող հնչեցնող-
ները և երգողները՝ մէկ ձայն էր
լսելի Տիրոջը օրհնելիս և գովելիս.
և հէնց որ փողերի և ձնծղաների
և նուագարանների ձայնը բարձ-
րացրին Տիրոջը օրհնելով, թէ՝
Վասն զի բարի է, վասն զի նորա
ողորմութիւնը յաւիտեան է. այն
ժամանակ Տիրոջ տունը լցուեց
ամպը. Եւ քահանաները չկարո- 14
ղացան կանգնել ծառայելու ամ-
պի պատճառով, վասն զի Տիրոջ
փառքը լցրել էր Աստուծոյ տունը:

ԳԼ. Զ

Այն ժամանակ Սողոմոն ասաց. 1
Տէրն ասաց թէ մառախուղում
է բնակում. Եւ ես քեզ համար 2
բնակելու տուն շինեցի, այսինքն
մի տեղ որ դու յաւիտեան բնա-
կես. Եւ Թագաւորն իր երեսը 3
դարձրեց և օրհնեց Իսրայէլի բո-
լոր ժողովքը. և Իսրայէլի բոլոր
ժողովքը կանգնել էր: Եւ նա ա- 4
սաց. Օրհնեալ լինի Իսրայէլի Տէր
Աստուածը, որ իր բերանով խո-
սեց իմ հօր Դաւթի հետ, և իր
ձեռքով կատարեց, ասելով. Այն 5
օրից՝ ի վեր որ իմ ժողովուրդն
Եգիպտոսից հանեցի, Իսրայէլի

բոլոր ցեղերից մի քաղաք ընտրեցի տուն շինելու համար որ իմ անունն այնտեղ լինի, և մի մարդու չհաւանեցի, որ իմ Իսրայէլ ժողովրդի վերայ առաջնորդ լինի.
6 Այլ երուսաղէմը ընտրեցի, որ իմ անունն այնտեղ լինի, և Դաւթին հաւանեցի, որ իմ Իսրայէլ ժողովրդի վերայ լինի:
7 Եւ իմ հայրը Դաւթի սրտումը դրել էր Իսրայէլի Տէր Աստուծոյ անուան համար տուն շինելու.
8 Եւ Տէրն ասաց իմ հօր Դաւթին. Որովհետև դու քո սրտումը դրել էիր իմ անուան համար մի տուն շինելու, լաւ ես արել որ այս բանը դրել ես սրտումդ.
9 Միայն թէ դու պիտի չշինես տունը, այլ քո երանքից ելլող որդիդ՝ նա պիտի տուն շինէ իմ անուան համար:
10 Եւ Տէրը հաստատեց իր ասած խօսքը, և ես կանգնեցի իմ հօր Դաւթի տեղ և նստեցի Իսրայէլի աթոռի վերայ ինչպէս որ Տէրը ասաց, և շինեցի տունը Իսրայէլի Տէր Աստուծոյ անուան
11 համար: Եւ այնտեղ դրի տապանակը, ուր որ է Տիրոջ ուխտն, որ նա ուխտեց Իսրայէլի որդիքանց հետ:
12 Եւ նա կանգնեց Տիրոջ սեղանի առջևը բոլոր Իսրայէլի ժողովքի դիմացը, և իր ձեռքերը տարածեց.
13 (Որովհետև Սողոմոնը մի պղնձի ամբիոն էր շինել և նստրան դրել դաւթի մէջտեղը. նորա երկայնութիւնը հինգ կանդուն, և հինգ կանդուն նորա լայնութիւնը և երեք կանդուն նորա բարձրութիւնը. և ինքը կանգնեց նորա վերայ, և իր ծունկերը կրկնեց Իսրայէլի բոլոր ժողովքի առջևը, և իր ձեռքերը տարածեց դէպի երկինք.)
14 Եւ ասաց. Ով Տէր Աստուած Իսրայէլի, քեզ պէս Աստուած չկայ երկինքումը և երկրումն, որ ուխտ և ողորմութիւն ես պահում քո առջևը բոլոր սրտանց
15 գնացող ծառաներիդ համար. Որ պահեցիր ծառայիդ՝ իմ հօր Դաւթի համար որ նորան ասացիր, որ ասել էիր քո բերանովը և քո ձեռքովը կատարեցիր՝ ինչպէս այսօր:
16 Եւ հիմա, ով Տէր Աստուած Իսրայէլի, պահիր ծառայիդ իմ հօր Դաւթի համար այն ինչ որ նորա հետ խօսեցիր ասելով. Քեզանից մարդ չի պակասիլ իմ առջև Իսրայէլի աթոռի վերայ նստող, միայն եթէ քո որդիքը պահեն իրանց ճանապարհը որ իմ օրէնքովը գնան, ինչպէս որ դու գնացիր իմ առջև:
17 Եւ արդ, ով Տէր Աստուած Իսրայէլի, թող հաստատուի քո խօսքը, որ քո ծառայ իմ հայր Դաւթի հետ խօսեցիր:
18 Բայց իրա՞ւ Աստուած կ'բնակէ մարդկանց հետ երկրի վերայ. ահա երկինքն ու երկնից երկինքը չեն կարող քեզ պարունակել, ո՛ւր մնաց իմ այս շինած տունը:
19 Սակայն նայիր քո ծառայի աղօթքին և նորա աղերսանքին, ով իմ Տէր Աստուած, որ լսես այս պաղատանքը և այս աղօթքը, որ ծառայ աղօթում է քո առջև.
20 Որ քո աչքերը բաց լինին այս տան վերայ՝ գիշեր և ցերեկ այս տեղի վերայ, որի համար ասացիր թէ քո անունը այնտեղ պիտի լինի. որ լսես այն աղօթքը որ ծառայ աղօթում է այս տեղը.
21 Որ լսես ծառայիդ և քո Իսրայէլ ժողովրդի աղերսանքը, որ մատուցանում են այս տեղը. և դու լսիր քո բնակելու տեղից՝ երկնքիցը, և լսելով ներիր:
22 Եթէ մէկը իր ընկերի դէմ մեղանչէ, և նա նորան երդում առնիլ տայ երդմնեցնելու համար, և երդումը գայ քո սեղանի առջև այս տունը.
23 Ժամանակ դու լսիր երկնքիցը և կատարիր, և դատիր քո ծառաներին, որ չարին հատուցում առնս և նորա ճանապարհը նորա գլուխը բերես, և արդարին արդարացնես, որ նորան հատուցանես իր արդարութեան համեմատ:
24 Եւ եթէ քո ժողովուրդն Իսրայէլ քեզ դէմ մեղանչելու համար էշ թշնամու առջև յաղթուի, և դէպի քեզ դառնան

և քո անուանը փառք տան և աղօթեն ու աղերսեն քո առջև
25 այս տանը. Ա՛ն ժամանակ դու լսիր երկնքիցը և ներիր քո ժո-
ղովրդի մեղքը, և նո-
րանց ետ դարձրու այն երկիրը,
որ տուել ես նորանց և նոցա
հայրերին:
26 Եւ երբոր երկինքը գոցուի և
անձրև չլինի նորանց քեզ դէմ
մեղանչելու համար, և նորանք
աղօթք անեն այստեղ և փառք
տան քո անուանը, և ետ դա-
նան իրանց մեղքերիցը քո նորանց
27 նեղելու պատճառով. Ա՛ն ժա-
մանակ դու լսիր երկնքումը և ներ-
իր քո ծառաների և քո ժողո-
վուրդ Իսրայէլի մեղքը, որ նո-
րանց ուսուցանես իրանց գնալու
բարի ճանապարհը, և անձրև տաս
քո երկրի վերայ, որ տուել ես
քո ժողովրդին իբրև ժառանգու-
թիւն:
28 Երբոր երկրի վերայ սով լինի,
ժանտախտ լինի, կամ խորշակա-
հարութիւն, կամ դալուկ, մա-
րախ կամ թրթուր, կամ երբոր
նորանց թշնամիները նորանց նե-
ղեն իրանց դռներին երկրումը,
կամ որևէ հարուած կամ հի-
29 ւանդութիւն լինի. Քո բոլոր Իս-
րայէլ ժողովրդից մի որևէ մարդ
ինչ և է աղօթք և աղերսանք ը-
ստ-ցանէ- լինի, և ամեն մարդ
որ իր ցաւը և սխալը գիտէ և իր
ձեռքերը տարածէ դէպի այս
30 տունը. Ա՛ն ժամանակ դու լսիր
երկնքիցը՝ քո բնակելու տեղիցը
և ներիր. և տուր այն մարդուն
իր բոլոր ճանապարհների համե-
մատ, որ գիտացել ես նորա սիր-
տը, վասն զի դու միայն գիտես
31 մարդկանց որդիների սիրտը: Որ-
պէս զի քեզանից վախենան որ
դնան քո ճանապարհներումը բո-
լոր այն օրերը որ նորանք կապ-
րեն այս երկրի երեսին, որ դու
տուիր մեր հայրերին:
32 Եւ օտարականն էլ, որ քո ի-
սրայէլ ժողովրդիցը չէ, որ հեռու
երկրից գայ քո մեծ անուան և
քո զօրաւոր ձեռքի և քո մեկ-
նած բազուկի համար, և գայ և
աղօթք անէ այս տանը. Ա՛ն 33
ժամանակ դու լսիր երկնքիցը՝ քո
բնակելու տեղիցը, և արա այն
օտարականի դէպի քեզ կանչա-
ծի բոլորին համեմատ, որպէս զի
իմանան երկրի բոլոր ազգերը քո
անունը և քեզանից վախենան քո
ժողովրդի պէս, որ իմա-
նան թէ քո անունը կանչուել է
այս տան վերայ, որ շինեցի:
Երբոր քո ժողովուրդը պատե- 34
րազմի դնայ իր թշնամիների դէմ
այն ճանապարհով որով դու նո-
րանց կ'ուղարկես, և նորանք ա-
ղօթք անեն դէպի քեզ այս քո
ընտրած քաղաքի և իմ քո ա-
ուան համար շինած տան ճանա-
պարհով. Ա՛ն ժամանակ լսիր 35
երկնքիցը նորանց աղօթքը և նո-
րանց աղերսանքը և նորանց իրա-
ւունք արա:
Երբոր քեզ դէմ մեղանչեն, 36
(վասն զի չկայ մարդ որ չմեղան-
չէ.) և դու նորանց վերայ բար-
կանաս և նորանց մատնես թշնա-
մու ձեռքը, և նորանց գերեվար-
ներ նորանց հեռու կամ մօտ եր-
կիր գերի տանեն. Եւ զղջան ի- 37
րանց սրտով այն երկրումը, ուր
որ գերի են տարուել, և դարձ
գան և դէպի քեզ աղերսեն ի-
րանց գերութեան երկրումը տես-
լով՝ Մեղք գործեցինք անօրէնու-
թիւն և անիրաւութիւն արինք.
Եւ դէպի քեզ դառնան իրանց 38
բոլոր սրտով և իրանց բոլոր հո-
գով իրանց գերութեան երկրու-
մը ուր որ նորանց գերի են տա-
րել, և նորանք աղօթք անեն այն
երկրի ճանապարհով որ դու տը-
ուել ես նորանց հայրերին, և
դէպի այն քաղաքը որին դու հա-
ւանեցիր, և դէպի այս տունը որ
ես շինեցի քո անուան համար.
Ա՛ն ժամանակ լսիր երկնքիցը՝ 39
քո բնակելու տեղիցը նորանց ա-
ղօթքը և նորանց աղերսանքը և
նորանց իրաւունք արա, և ներիր
քո ժողովրդին որ քեզ մեղան-
չել է: Հիմա, ով իմ Աստուած, 40
թող քո աչքերը բաց լինին և
քո ականջները մտիկ անեն այս
տեղի աղօթքին: Եւ արդ, ով 41

Տէր Աստուած, վէր ելիր քո հանդստեան տեղը, դու և քո զօրութեան տապանակը. քո քահանաները, ով Տէր Աստուած, փրկութիւն հագնեն, և քո սուրբերն ուրախանան բարութիւնով։
42 Ով Տէր Աստուած, քո օծեալի երեսը մի մերժիր. յիշիր քո ծառայ Դաւթին խոստացած ողորմութիւններդ։

ԳԼ. Է

1 Եւ երբոր Սողոմոնը վերջացրեց աղօթքը, կրակը իջաւ երկնքից և ապուեց ողջակէզներն ու զոհերը. և Տիրոջ փառքը լցրեց
2 տաճարը։ Եւ քահանաները չկարողացան մտնել Տիրոջ տաճարը, վասն զի Տիրոջ փառքը լցրել
3 էր Տիրոջ տաճարը։ Եւ բոլոր Իսրայէլի որդիքը տեսնում էին կրակը իջնելիս, և Տիրոջ փառքը տան վերայ էր. և ընկան երեսի վերայ գետինը քարայատակի վերայ և երկրպագութիւն արին Տիրոջը էլ օրհնելով, թէ բարի է թէ նորա ողորմութիւնը յաւիտեան է։
4 Եւ թագաւորն ու բոլոր ժողովուրդը զոհեր էին մատուցանում Տիրոջ առջեւը։
5 Եւ Սողոմոն թագաւորը քսան երկու հազար արջառ և հարիւր քսան հազար ոչխար զոհ արաւ, այսպէս թագաւորն ու բոլոր ժողովուրդը Աստուծոյ տան նաւակատիքն արին։
6 Եւ քահանաները կանգնած էին իրանց պաշտօնումը, և Ղեւտացիները՝ Տիրոջ նուագարաններով, որ Դաւիթ թագաւորը շինել էր Տիրոջը գովելու, որ նորա ողորմութիւնը յաւիտեան է, Դաւթի օրհնեցութիւնը նորանց ձեռքը լինելով, և քահանաները փողերը հնչեցնում էին նորանց առջեւ. և բոլոր Իսրայէլը կանգնած էր։
7 Եւ Սողոմոնը սրբեց Տիրոջ տան առջեւ գաւթի մէջտեղը, վասն զի այնտեղ մատուցրեց ողջակէզները և խաղաղութեան պահելի ճարպը, որովհետեւ պղնձի սեղանը, որ Սողոմոնը շինել էր, չկարողացաւ պարունակել ողջակէզները և հացի նուէրը և ճարպը։ 8
Եւ այն ժամանակ Սողոմոնը և բոլոր Իսրայէլը նորա հետ կատարեցին տօնը եօթը օր շատ մեծ ժողովքով Եմաթից մինչեւ Եգիպտոսի հեղեղատը։ 9
Եւ ութերորդ օր մեծ ժողովք արին, վասն զի եօթն օր սեղանի նաւակատիքն արին և եօթն օր՝ տօնը։ 10
Եւ եօթներորդ ամսի քսաներեքերորդին Աստուած արձակեց ժողովրդին իրանց վրանները ուրախացած և զուարթ սրտով այն բարիքների համար, որ Տէրն արել էր Դաւթին, Սողոմոնին և նորա բոլոր ժողովրդին։

Եւ Սողոմոնը վերջացրեց Տիրոջ 11
տաճարը և թագաւորի տաճարը, և ամեն ինչ որ եկել էր Սողոմոնի սիրտը, որ անէր Տիրոջ տանը և իր տանը՝ յաջողեց։

Եւ Տէրը երեւեցաւ գիշերը Սո- 12
ղոմոնին և ասաց նորան. Քո աղօթքը լսեցի և այս տեղը ընտրեցի ինձ համար իրրեւ զոհի տուն։
Եթէ ես կապեմ երկինքը և անձրեւ չլինի, և եթէ մարախին պատուիրեմ որ երկիրն ուտէ, և եթէ ժանտախտ ուղարկեմ իմ ժողովրդի մէջ. Եւ իմ ժողովուրդը, 14
որի վերայ կոչուած է իմ անունը, խոնարհուին և աղօթք անեն և իմ երեսը խնդրեն և իրանց չար ճանապարհներից ետ դառնան, այն ժամանակ ես կ'լսեմ երկնքից և կ'ներեմ նորանց մեղքը և կ'բժշկեմ նորանց երկիրը։
Արդ իմ աչքերը բաց և իմ ա- 15
կանջները մտիկ անող պիտի լինին այս տեղի աղօթքին։ Արդ 16
ընտրեցի և սրբեցի այս տունը, որ իմ անունը յաւիտեան այնտեղ լինի. և իմ աչքերն ու իմ սիրտն ամեն ժամանակ այնտեղ լինին։ Եւ դու էլ՝ եթէ իմ ա- 17
ջեւ գնաս ինչպէս որ գնաց քո հայրը Դաւիթը և բոլոր քեզ պատուիրածիս պէս անես և իմ կանոնները ու իրաւունքները պահես. Այն ժամանակ քո թա- 18
գաւորութեան աթոռը հաստատ կ'պահեմ, ինչպէս որ ուխտեցի

քո հօրը Դաւթին ասելով. Բեզա-
նից մարդ չի պակասիլ Իսրայէլի
19 վերայ նստող։ Բայց եթէ եւս դառ-
նաք դուք և թողէք իմ կանո-
նաց ու պատուէրները որ ես
տուել եմ ձեր առջև և գնաք
ուրիշ աստուածներ պաշտէք և
նոցանից երկրպագութիւն անէք.
20 Այն ժամանակ ես նորանց (Իս-
րայէլացիներին) պիտի պոկեմ այն
երկրից, որ ես տուել եմ իրանց,
և այս տունը որ ես սրբել եմ
իմ անուան համար պիտի դէն
գցեմ և նորան պիտի առակ ու
խայտառակ անեմ բոլոր ազգերի
21 մէջ։ Եւ այս բարձր տան մասին
պիտի ամեն նորա մօտով անց-
նողը զարմանայ և ասէ. Ինչո՞ւ
համար Տէրը այսպէս արաւ այս
22 երկրին և այս տանը. Եւ պիտի
ասեն. Որովհետև թողեցին ի-
րանց հայրերի Տէր Աստուծոյն,
որ նորանց հանել էր Եգիպտոսի
երկրից և բռնեցին ուրիշ աստ-
ուածներ և երկրպագութիւն ա-
րին նորանց և ծառայեցին նո-
րանց, նորա համար այս բոլոր
չարիքը բերաւ նորանց վերայ։

ԳԼ. Ը

4 Եւ եղաւ որ քանի տարուց յե-
տոյ, որ Սողոմոնը շինեց Տէրոջ
2 տունը և իր տունը, և այն քա-
ղաքները էլ, որ Քիրամը տուել
էր Սողոմոնին, շինեց նորանց Սո-
ղոմոնը և այնտեղ բնակեցրեց Իս-
3 րայէլի որդիներին։ Գնաց Սողո-
մոնը Սուբայի Եմաթը, և տիրեց
4 նորան։ Եւ շինեց անապատի մէջի
Թադմորը. և այն բոլոր շտեմա-
նների քաղաքները որ շինեց
5 Եմաթում. Եւ վերի Բեթորոնը
և ցածի Բեթորոնը շինեց՝ պա-
րիսպներով, դռներով ու նիգե-
6 րով ամրացրած քաղաքներ։ Եւ
Բաալեթը և Սողոմոնի բոլոր ըշ-
տեմարանների քաղաքները, և
կառքերի բոլոր քաղաքները և
ձիաւորների քաղաքները և Սո-
ղոմոնի բոլոր փափաքածը, որ
փափաքեց շինելու Երուսաղէմում
և Լիբանանում և իր տէրու-
թեան բոլոր երկրում։

Այն բոլոր ժողովուրդները որ 7
մնացել էին Քետացիներից, Ա-
մորհացիներից, Փերեզեցիներից,
Խևացիներից և Յեբուսացինե-
րից, որոնք Իսրայէլից չէին. Այս- 8
ինքն նորանց որդիներից, որ
մնացել էին նորանցից յետոյ այն
երկրում, որոնց Իսրայէլի որդիքը
չէին փչացրել, Սողոմոնը նորանց
հարկատու արաւ մինչև այսօր։
Բայց նորանք որ Իսրայէլի որդի- 9
ներից էին՝ Սողոմոնը ծառաներ
չշինեց իր գործի համար, վասն
զի նորանք պատերազմի մարդիկ
էին, և նորա զօրավարների իշ-
խանները և նորա կառքերի ու
նորա ձիաւորների իշխաններն էին։
Եւ սորանք էին Սողոմոնի գլխա- 10
ւոր իշխանները երկու հարիւր յի-
սուն՝ որոնք իշխում էին ժողո-
վրդի վերայ։
Եւ Սողոմոնը վեր տարաւ փա- 11
րաւոնի աղջկան Դաւթի քաղա-
քից՝ այն տունը որ շինել էր նո-
րա համար. վասն զի ասաց. Ի-
կին պէտք է չդնակէ ինձ մօտ Իս-
րայէլի թագաւոր Դաւթի տանը,
որովհետև նորանք սուրբ են, ուր
որ մտել էր Տիրոջ տապանակը։
Այն ժամանակ Սողոմոնը Տի- 12
րոջը ողջակէզներ մատուցրեց Տի-
րոջ սեղանի վերայ որ շինել էր
սրահի առջևը, Որ իւրաքանչիւր 13
օրուայ համար ողջակէզ մատուց-
ուի Մովսէսի պատուիրածին հա-
մեմատ շաբաթներին, ամսագը-
լուխներին և հանդիսաւոր տօնե-
րին տարին երեք անգամ՝ բաղար-
ջակերաց տօնին, շաբաթների տօ-
նին և տաղաւարահարաց տօնին։
Եւ նա դրաւ իր հօր Դաւթի կա- 14
նոնով քահանայից դասակարգե-
րը իրանց պաշտամունքի վերայ,
և Ղեւտացիներին իրանց պահպա-
նութեանց վերայ, որ օրհներգին
և ծառայեն քահանաների առջև
իւրաքանչիւր օրուայ բանին չափ,
և դռնապաններին իրանց դաս-
կարգերովը ամեն մէկ դրան, ո-
րովհետև այսպէս էր Աստուծոյ
մարդու Դաւթի հրամանը։ Եւ 15
չխոտորեցին թագաւորի հրամա-
նից, որ տուել էր քահանաների

և Ղևտացիների նկատմամբ, ոչ մի բանի մասին և ոչ գանձա-
16 բանների մասին։ Եւ այսպես պատ-
րաստուեցաւ Սողոմոնի բոլոր գործքը մինչև այսօր՝ Տիրոջ տան հիմը դնելուց մինչև նորա վեր-
ջացնելը. Տիրոջ տունը կատարուեցաւ։

17 Այն ժամանակ գնաց Սողոմո-
նը Գասիոնգաբեր և Ելաթ ծովի
18 եզրին Եդոմի երկրումը։ Եւ Փի-
րամը նորա հասնար իր ծառանե-
րի ձեռով նաւեր և ծովագէտ ծառաներ ուղարկեց, և նորանք գնացին Սողոմոնի ծառաների հետ Ոփիր, և այնտեղից չորս հարիւր յիսուն տաղանդ ոսկի առին և բերին Սողոմոն թագաւորի համար։

Գլ. Թ

1 Եւ Սաբայի թագուհին Սողո-
մոնի համբաւը լսելով՝ նորան խրթին հարցմունքներով փորձե-
լու համար Երուսաղէմ եկաւ խիստ մեծ հանդէսով՝ խունկեր և շատ ոսկի և պատուական քա-
րեր բեռնած ուղտերով, և գնաց Սողոմոնի մօտ, և նորա հետ խո-
սեց իր սրտումը եղած բոլոր բա-
2 ները։ Եւ Սողոմոն մեկնեց նորա համար նորա ամեն խօսքերը. և Սողոմոնի համար մէկ դաշտի բան չկար, որ նա չմեկնէր նորա
3 համար։ Եւ Սաբայի թագուհին տեսաւ Սողոմոնի իմաստութիւ-
4 նը և նորա շինած տունը. Եւ նորա սեղանի կերակուրը, նորա ծառաների նստելը և նորա սպա-
սաւորների վեր կենալը, և նո-
րանց հագուստները և նորա մատ-
րաւակները, և նորանց հագուստ-
ները, և նորա այն առնպուխքը, որով վեր էր գնում Տիրոջ տու-
նը, և ուշը գլխից էլ գնաց։
5 Եւ ասաց թագաւորին. ճշմարիտ է այն խօսքը որ ես լսել եմ իմ երկրումը քո խօսքերի և քո ի-
6 մաստութեան համար։ Եւ չէի հաւատում նորանց խօսքերին, մինչև որ եկայ և իմ աչքերը տեսան. և ահա ինձ չէ պատ-
մուել քո շատ իմաստութեան կէսը. դու գերազանց ես այն համբաւը, որ ես լսել եմ։ Երա- 7
նի քո այս մարդկանցը և երանի քո այս ծառաներին որ միշտ քո առջև կանգնած են և լսում են քո իմաստութիւնը։ Եհովայ քո 8
Աստուածը օրհնեալ լինի, որ քեզ հաւանեց, որ քեզ թագա-
ւոր դնէ իր սթոռի վերայ քո Եհովայ Աստուծոյ համար. քո Աստուածը Իսրայէլին սիրելով որ նորան յաւիտեան հաստատէ, քեզ նորանց վերայ թագաւոր դրաւ իրաւունք և արդարութիւն անելու։ Եւ թագաւորին հարիւր 9
քսան տաղանդ ոսկի և խիստ շատ խունկ և պատուական քարեր տուաւ. և այնպիսի խունկ որ Սաբայի թագուհին տուաւ Սո-
ղոմոն թագաւորին, չէ եղած։

Եւ Փիրամի ծառաները և Սո- 10
ղոմոնի ծառաները էլ, որ Ոփի-
րից ոսկի էին բերում, ալմուգ փայտեր և պատուական քարեր էլ բերին։ Եւ թագաւորը այն 11
ալմուգ փայտերից Տիրոջ տան համար և թագաւորի տան համար աստիճաններ շինեց, և երգիչների համար քնարներ և տաւիղներ, և նորանց պէս նորանից առաջ չէր տեսուած Յուդայի երկրումը։

Եւ Սողոմոն թագաւորը տուաւ 12
Սաբայի թագուհուն բոլոր նորա փափաքածը, որ ուզեց բացի այն որ ինքը բերել էր թագաւորի համար. և նա դարձաւ գնաց իր երկիրը ինքը և իր ծառաները։

Եւ մէկ տարուայ միջոցին Սող- 13
ոմոնի համար եկած ոսկու կշիռը էր վեց հարիւր վաթսուն և վեց տաղանդ ոսկի։ Բացի այն որ առ- 14
եւտուր անողների և վաճառականների բերում էին, և բոլոր այն ոսկուց և արծաթից որ Արաբաց-
ոց թագաւորները և երկրի նա-
խարարները բերում էին Սողոմո-
նի համար։

Եւ Սողոմոն թագաւորը երկու 15
հարիւր վահան շինեց կռածոյ ո-
սկուց. վեց հարիւր դրամ կռածոյ ոսկի գնաց իւրաքանչիւր վահանի համար։ Եւ երեք հարիւր տապար 16

կռածոյ ոսկուց. երեք հարիւր
-եղ ոսկի գնաց իւրաքանչիւր ա-
պարի համար. և թագաւորը դը-
րաւ զորանց Լիբանանի անտառի
տանը:
17 Եւ թագաւորը մի փղոսկրեայ
մեծ աթոռ շինեց, և նորան պա-
18 տեց մաքուր ոսկով: Եւ աթոռն
վեց աստիճան և մէկ ոսկի պատ-
ուանդան ունէր աթոռին կըց-
ուած. և նստելու տեղը այս և
այն կողմից յենարաններ ունէր.
և երկու առիւծներ կային այդ
19 յենարանների մօտ: Եւ տասն
երկու առիւծներ էին կանգնած
այնտեղ վեց աստիճանների վե-
րայ այս և այն կողմից. այսպիսի
բան չէր շինուած ոչ մի թագա-
ւորութիւնում:
20 Եւ Սողոմոն թագաւորի բոլոր
խմելիքի անօթները և Լիբանանի
անտառի տան անօթները մաքուր
ոսկուց էին, արծաթից չէին,
Սողոմոնի օրերին նա մի բան չէր
21 համարւում: Վասն զի թագա-
ւորը նաւեր ունէր, որ գնում էին
Թարսիս Խիրամի ծառաների
հետ. երեք տարին մէկ անգամ
գալիս էին Թարսիսի նաւերը՝
բեռնած ոսկով և արծաթով,
փղոսկրով, կապիկներով և սի-
րամարգներով:
22 Եւ մեծացաւ Սողոմոն թագա-
ւորը երկրի բոլոր թագաւորներից
հարստութեամբ և իմաստու-
23 թեամբ: Եւ երկրի բոլոր թագա-
ւորները փափաքում էին Սողո-
մոնի երեսին, որ լսեն նորա այն
իմաստութիւնը որ տուել էր նո-
24 րա աստին: Եւ նորանց ամեն մէ-
կը բերում էր իր ընծան՝ արծա-
թի անօթներ և ոսկի անօթներ,
հանդերձներ, զէնք և խնկեղէն-
ներ, ձիեր և ջորիներ տարուց
տարի:
25 Եւ Սողոմոնը չորս հազար ա-
խոռ ձիեր և կառքեր, և տասն
երկու հազար ձիաւոր ունէր. և
նա նորանց գրաւ կառքերի քա-
ղաքներում և թագաւորի մօտ
26 Երուսաղէմում: Եւ թագաւո-
րում էր բոլոր թագաւորների վե-
րայ Եփրատ գետից մինչև Փղշ-
տացոց երկիրը, և մինչև Եգիպ-
տոսի սահմանը: Եւ թագաւորը 27
արծաթը Երուսաղէմում քարի
նման հասցրեց, և եղևնափայտը դաշտի մոլախոտերու պէս շատ արաւ: Եւ Սողոմոնի 28
համար ձիեր էին բերում Եգիպ-
տոսից և ամեն երկիրներից:
Եւ Սողոմոնի առաջին ու վեր- 29
ջին գործքերի մասին, ահա
նորանք գրուած են Նաթան մար-
գարէի պատմութիւնում, և Ա-
խիայ Սիլովնացի մարգարէութի-
նում, և Ադդով տեսանողի Նա-
բատեան Յերոբովամի վերայ հա-
տեսիլքներում: Եւ Սողոմոնը 30
թագաւորութիւն արաւ Երու-
սաղէմում բոլոր Իսրայէլի վերայ
քառասուն տարի: Եւ Սողոմոնը 31
ննջեց իր հայրերի հետ, և նորան
թաղեցին իր հօր Դաւթի քա-
ղաքում. և նորա որդին Ռոբո-
վամը թագաւոր եղաւ նորա տեղ:

ԳԼ. Ժ

Եւ Ռոբովամը գնաց Սիւքէմ, 1
վասն զի բոլոր Իսրայէլ գնացել
էր այնտեղ նորան թագաւոր ա-
նելու համար: Եւ եղաւ երբոր 2
լսեց Նաբատեան Յերոբովամը,
որ Սողոմոն թագաւորի երեսից
փախել Եգիպտոսումն էր, այն
ժամանակ ետ դարձաւ Յերոբո-
վամը Եգիպտոսից. Եւ հղօ ու- 3
ղարկեցին ու նորան կանչեցին,
և եկաւ Յերոբովամը և բոլոր Իս-
րայէլ և խօսեցին Ռոբովամի հետ
ասելով. Հայրդ մեր լուծը ծան- 4
րացրել էր, բայց դու հիմա թե-
թևացրու քո հօր խիստ ծառա-
յութիւնը և նորա մեր վերայ
դրած ծանր լուծը, այն ժամա-
նակ քեզ ծառայութիւն կ'ա-
նենք: Եւ նա նորանց ասաց. 5
Գնացէք և երեք օրից յետոյ
դարձեալ ինձ մօտ եկէք. և ժո-
ղովուրդը գնաց: Եւ Ռոբովամ 6
թագաւորը խորհուրդ արաւ այն
ծերերի հետ, որ կանգնում էին
նորա հօր Սողոմոնի առջև նորա
կենդանութեանը, և ասաց. Ի՞նչ-
պես էք դուք ինձ խորհուրդ տա-

լիս, որ այս ժողովրդին ես պա-
7 տասխան տամ։ Եւ Նորա հետ խօսեցին ասելով. Եթէ դու այս ժողովրդին քաղցը լինիս և Նորանց համճոյանաս, և Նորանց հետ բարի խօսքեր խօսիս, այն ժամանակ Նորանք միշտ քո ծառաները կ'լի-
8 նին։ Իսկ Նա մերժեց ծերերի խրատը, որ Նորան տուին, և խորհուրդ հարցրեց այն երիտասարդներից, որ իր հետ էին մեծացել և Նորա առջև կանդնել
9 էին։ Եւ ասաց Նորանց. Ո՞ւր ինչ խորհուրդ էք տալիս որ այս ժողովրդին պատասխան տամ, որ ինձ հետ խօսեցին ասելով. Թէ այն լուծը թեթևացրու, որ քո
10 հայրը մեր վերայ դրել է։ Եւ Նորա հետ մեծացած երիտասարդները խօսեցին Նորա հետ ասելով. Այսպէս ասիր այն ժողովրդին որ քեզ հետ խօսել և ասել է. Թէ քո հայրը մեր լուծը ծանրացրել էր, իսկ դու թեթևացրու մեր վերայից. այսպէս խօսիր Նորանց հետ. Իմ ճկոյքը
11 հաստ է իմ հօր մէջքից։ Եւ արդ՝ իմ հայրը ձեզ վերայ ծանր լուծ էր դրել, բայց ես աւելացնելու եմ ձեր լուծի վերայ, իմ հայրը ձեզ խարազաններով էր խրատում, իսկ ես՝ կարիճներով։
12 Եւ Յերոբոամը ու բոլոր ժողովուրդը եկան Ռոբովամի մօտ երրորդ օրը ինչպէս որ թագաւորը խօսել էր ասելով. Երրորդ օրը
13 դարձեալ ինձ մօտ եկէք։ Եւ թագաւորը խիստ պատասխանեց ժողովրդին, և մերժեց ծերերի
14 խորհուրդը։ Եւ Նորանց հետ խօսեց այն երիտասարդների խորհրդի յորմար ասելով. Իմ հայրը ձեր լուծը ծանրացրել էր, բայց ես աւելացնելու եմ Նորա վերայ. իմ հայրը ձեզ խարազաններով էր խրատում, բայց ես կարիճ-
15 ներով։ Եւ թագաւորը չլսեց ժողովրդին, որովհետև Աստուծոյ կողմից այսպէս էր դարձուած, որպէս զի Տէրը հաստատէ իր այն խօսքը, որ խօսել էր Սիլօնացի Աքիայի ձեռօքը Նաբատեան Յերոբոամի մասին։
16 Եւ երբոր բո-

լոր Իսրայէլը տեսաւ որ թագաւորը չլսեց Նորանց, այն ժամանակ ժողովուրդը պատասխանեց թագաւորին ասելով. Մենք ի՞նչ բաժին ունինք Դաւթի մօտ, և ձեռքի որդու մօտ ժառանգութիւն չունինք. ամեն մարդ իր վրանը գնաց, ով Իսրայէլացիք. հիմա դու քո տունը հոգացիր, ով Դաւիթ. և բոլոր Իսրայէլ գնաց իր վրաններըն։ Եւ Իսրայէ- 17
լի որդիանց վերայ, որ բնակում էին Յուդայի քաղաքներումը, թագաւոր եղաւ Ռոբովամ։ Եւ 18
Ռոբովամ թագաւորը ուղարկեց հարկերի տեսուչ Ադորամին, բայց բոլոր Իսրայէլը Նորան քարկոծեցին քարերով, և Նա մեռաւ. և Ռոբովամ թագաւորը շտապեց, որ կառքը հեծնէ ու փախչէ Երուսաղէմ։ Այսպէս Իսրայէլը 19
ապստամբեց Դաւթի տունից մինչև այսօր։

ԳԼ. ԺԲ.

Եւ Ռոբովամը եկաւ Երուսաղէմ 1
և ժողովեց Յուդայի և Բենիամինի տանից Հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմիկներ, որ Իսրայէլի հետ պատերազմ անեն և թագաւորութիւնը Նա դարձնեն Ռոբովամին։ Եւ Տէրոջ խօսքը 2
եղաւ Սամուէլ մարդ Սեմայիային, ասելով. Ասիր Յուդայի 3
թագաւոր Սողոմոնեան Ռոբովամին և Յուդայի ու Բենիամինի մէջ եղող բոլոր Իսրայէլացիներին, ասելով. Այսպէս է ասում 4
Տէրը. Վեր մի գնաք, և պատերազմ մի անէք ձեր եղբարց հետ, ետ դարձէք ամեն մարդ իր տունը. վասն զի ինձանից է եղած այս բանը։ Եւ Նորանք լսեցին Տէրոջ խօսքին և ետ քաշուեցան Յերոբոամի վերայ գնալուց։
Եւ Ռոբովամը բնակեց Երու- 5
սաղէմում, և պարսպաւոր քաղաքներ շինեց Յուդայի մէջ։ Այժինքն շինեց Բեթլէհէմը, Էտամը, 6
Թեկուէն. Բեթսուրը, Սոքովը, 7
Ոդողամը. Գէթը, Մարեսան, Զիփը, Ադորայիմը, Լաքիսը, Ազէ- 8 9

10 կան, Սաարան, Ալեզոնը և Քեբրոնը, որոնք Յուդայի և Բենիամինի
11 մէջ պարսպաւոր քաղաքներ էին։ Եւ պարիսպները ամրացրեց և նոր
րանց մէջ զօրապետներ դրաւ, և կերակուրն ու խունկ և գինու ըն-
12 ծեմարաններ. Եւ իւրաքանչիւր քաղաքում վահաններ և նիզակներ. և նորանց խիստ շատ ամրացրեց. և Յուդան ու Բենիամինը նորան եղան։

13 Եւ բոլոր Իսրայէլի մէջ եղող քահանաներն ու Ղեւտացիները ժողովեցան նորա մօտ բոլոր
14 սահմաններից. Ղեւտացիք թողում էին իրանց արուարձանները և իրանց կալուածքները և գնում էին Յուդա և Երուսաղէմ, որովհետև Յերոբոամը և նորա որդիքը նորանց գուրս էին անում Տիրոջ քահանայութիւ-
15 նից։ Եւ իրան համար քահանաներ դրաւ բարձրաւանդակների և դիւաց համար և իր շինած որ-
16 թերի համար։ Եւ նորանցից, որ Իսրայէլի բոլոր ցեղերից իրանց սրտերը Իսրայէլի Տէր Աստուծոյն խնդրելու տուող էին եկան Երուսաղէմ իրանց հայրերի Տէր Աստուծոյն զոհ անելու
17 համար։ Եւ ուժովացրին Յուդայի թագաւորութիւնը, և զօրացրին Սողոմոնեան Ռոբոամին երեք տարի, վասն զի գնում էին Դաւթի և Սողոմոնի ճանապարհով երեք տարին։

18 Եւ Ռոբոամն իրան համար կին առաւ Դաւթի որդի Յերիմոթի աղջիկ Մահալէթին, և Յեսսէի որդի Եղիաբի աղջիկ Աբիքէլին.
19 Եւ նորա համար որդիք ծնաւ՝ Յեւսին, Սամարիային և Զաամին։
20 Եւ նորանից յետոյ առաւ Աբիսողոմի աղջիկ Մաաքային, որ նորա համար ծնաւ Աբիային, Ըթթիին, Զիզային և Սաղոմիթին։
21 Եւ Ռոբոամն Աբիսողոմի աղջիկ Մաաքային աւելի էր սիրում իր բոլոր կիներից և հարճերից, վասն զի նա ունէր տասն ութը կին և վաթսուն հարճ, և քսանութը տղայ և վաթսուն
22 աղջիկ. Եւ Ռոբոամը գլխաւոր դրաւ Մաաքայի որդի Աբիային իբրև իշխան իր եղբարց մէջ, որովհետև ուզում էր նորան թագաւոր անել։ Եւ խելքաւորութիւն 23
արաւ և իր որդիներին Յուդայի և Բենիամինի ամեն երկիրների մէջ ցրուեց ամեն պարսպաւոր քաղաքներում. և նորանց առատ ապրուստ տուաւ. և շատ կանայք ուզեց։

ԳԼ. ԺԲ

Եւ եղաւ երբ որ Ռոբոամի թա- 1
գաւորութիւնը հաստատուեցաւ և ինքը զօրացաւ, այն ժամանակ թողեց Տիրոջ օրէնքը և բոլոր Իսրայէլը նորա հետ։

Եւ եղաւ Ռոբոամ թագաւո- 2
րի հինգերորդ տարին որ Եգիպտոսի Սիսակ թագաւորը եկաւ Երուսաղէմի վերայ, վասն զի պատմուել էին Տիրոջ դէմ, Հազար երկու հարիւր կառքով և վեց- 3
հարիւր հազար ձիաւորով. և նորա հետ Եգիպտոսից եկած ժողովրդին թիւ չկար՝ Լիբէացիք, Սուկիացիք և Եթէոպացիք. Եւ 4
առաւ Յուդայի պարսպաւոր քաղաքները, և եկաւ մինչև Երուսաղէմ։ Եւ Սեմայիա մարգարէն 5
եկաւ Ռոբոամի և Յուդայի իշխանների մօտ, որոնք Սիսակի երեսից ժողովուել էին Երուսաղէմ, և ասաց նորանց. Այսպէս է ասում Տէրը. Դուք ինձ թողեցիք, ուրեմն ես էլ թողեցի ձեզ Սիսակի ձեռքին։ Եւ խո- 6
նարհեցին Իսրայէլի իշխանները և թագաւորը, և ասացին. Տէրը արդար է։ Եւ երբոր Տէրը տեսաւ 7
նորանց խոնարհելը, Տիրոջ խօսքը եղաւ Սեմայիային ասելով. Նորանք խոնարհեցին. նորանց չեմ կորցնիլ, և նորանց շուտով ազատութիւն կ'տամ, և իմ բարկութիւնը չի թափուիլ Երուսաղէմի վերայ Սիսակի ձեռօք։ Բայց 8
նորան ծառաներ կ'լինին, և կը հասկանան իմ ծառայութիւնը և երկրաւոր թագաւորների ծա- 9
ռայութիւնը։ Եւ Եգիպտոսի Սիսակ թագաւորը եկաւ Երուսա-

ղէմի վերայ և առաւ Տիրոջ տան դանձերը և թագաւորի տան դանձերը՝ բոլորը առաւ. Սողոմոնի շինած ոսկի ապարանքն էլ առաւ: Եւ Ռոբովամ թագաւորը նորանց փոխարէն պղնձի ապարանք շինեց, և յանձնեց թագաւորի տան մուտքը պահպանող սուրհանդակաց գլխաւորներին: Եւ երբոր թագաւորը Տիրոջ տունն էր մտնում, գալիս էին սուրհանդակները և կրում էին նորանց, և նո՛ւ էին տանում նորանց սուրհանդակների տունը: Եւ նա որ խոնարհեց, նո՛ւ դարձաւ նորանից Տիրոջ բարկութիւնը, և նորա բոլորովին չկորցրեց. և Յուդայի մէջ լաւ բաներ էլ կային:

Եւ Ռոբովամ թագաւորը զօրացաւ Երուսաղէմում և թագաւորութիւն էր անում. որովհետև քառասուն և մէկ տարեկան էր Ռոբովամը երբոր թագաւոր եղաւ, և տասն եօթը տարի թագաւորութիւն արաւ Երուսաղէմում, այսինքն այն քաղաքում որ Տէրը ընտրեց նորան Իսրայէլի բոլոր ցեղերից իր անունը այնտեղ դնելու համար: Եւ նորա մօր անունն էր Նաամա՝ Ամմոնացի: Եւ նա չարութիւն արաւ, վասն զի իր սիրտը չուղղեց, որ Տիրոջը խնդրէր: Եւ Ռոբովամի առաջին և վերջին գործերը, ահա նորանք գրուած են Սեմայիա մարգարէի պատմութեանց մէջ և Ադդով տեսանողի տոհմաբանութեանց մէջ: Եւ Ռոբովամն ու Յերոբոամը միշտ ժամանակ պատերազմներ ունեցան: Եւ Ռոբովամ հանգչեցաւ նոքա հետ և թաղուեցաւ Դաւթի քաղաքում, և նորա որդին Աբիան թագաւոր եղաւ նորա տեղ:

ԳԼ. ԺԳ

Յերոբոամ թագաւորի տասնութերորդ տարին Թագաւոր եղաւ Աբիան Յուդայի վերայ: Երեք տարի թագաւորեց Երուսաղէմում, և նորա մօր անունն էր Միքայիա՝ Գաբաացի Ուրիէլի դուստր: Եւ պատերազմ կար Աբիայի և Յերոբոամի մէջ: Եւ Աբիան պատերազմ կազմեց զօրաւոր և պատերազմող մարդիկներով՝ չորս հարիւր հազար ընտիր մարդով. և Յերոբոամը պատերազմ սարքեց նորա հետ ութ հարիւր հազար ընտիր քաջազուն մարդիկներով:

Եւ Աբիան կանգնեց Սեմարիմ լեռան վերայ, որ Եփրեմի լեռնակողմին էր, և ասաց. Լո՛ւն ինձ լսեցէք, ով Յերոբոամ և բոլոր Իսրայէլ: Մի՞թէ ձեզ յայտնի չէ որ Իսրայէլի Տէր Աստուածը Իսրայէլի վերայ թագաւորելը սրտեց է Դաւթին յաւիտեան նորան և նորա որդկանցը աղի ուխտով: Եւ Դաւթի որդի Սողոմոնի ծառան Նաբատեան Յերոբոամը կանգնեց և ապստամբեց իր տիրոջ դէմ: Եւ նորա մօտ ժողովուեցան դատարկ և անօրէն մարդիկ և ընդդիմացան Սողոմոնեան Ռոբովամի դէմ, բայց Ռոբովամը երեխայ և փափկասիրտ էր, և նորանց դէմ չկացաւ: Եւ հիմա դուք կարծո՞ւմ էք դէմ կենալ Տիրոջ թագաւորութեան առջև, որ Դաւթի ձեռքին էր, վասն զի դուք մեծ բազմութիւն էք և ձեզ հետ են ոսկի որթերը, որ Յերոբոամը ձեզ համար առաւածներ է շինել: Մի՞թէ դուք դուրս չարկիք Տիրոջ քահանաներին՝ Ահարոնի որդկանցը և Ղեւտացիներին և ձեզ համար քահանաներ շինեցիք՝ երկիրների ժողովրդների պէս: Ձեռք լցուելու համար ամեն մէկը որ գալիս էր մէկ զուարակով և եօթը խոյերով՝ քահանայ էր լինում չաստուածների համար: Բայց մեր Աստուածը Եհովան է, և մենք նորան չթողեցինք. և Տիրոջը ծառայող քահանաները Ահարոնի որդիքն են, և Ղեւտացիք իրենց գործումն: Եւ Տիրոջ ողջակէզներ են զոհում ամեն առաւօտ և ամեն իրիկուն, և անուշահոտ խունկ են ծխում, և մաքուր սեղանի վերայ շուրջառ առաջաւորութեան հացը, և պատ-

թօռքերը գրուած են Ադդով մարգարէի յիշատակարանի մէջ։

ԳԼ. ԺԴ.

Եւ Աբիան ննջեց իր հայրերի հետ, և նորան թաղեցին Դաւիթի քաղաքում. և նորա որդին Ասան թագաւոր եղաւ նորա տեղ։ Սորա օրերին հանգստացաւ երկիրը տասը տարի։ Եւ Ասան բարութիւն և ուղղութիւն արաւ իր Տէր Աստուծոյ աչքի առջև։ Եւ վերցրեց օտար սեղանները և բարձրաւանդակները, և կտրատեց սրճանները, և Աստարոթները կտորեց։ Եւ հրամայեց Յուդային որ իրանց հայրերի Տէր Աստուծոյն խնդրեն, և որ օրէնքն ու պատուիրանքը կատարեն։ Եւ վերցրեց Յուդայի բոլոր քաղաքներից բարձրաւանդակները և արեգական կուռքերը, և թագաւորութիւնը հանգստացաւ նորա առջև։ Եւ Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ շինեց, վասն զի երկիրը հանգիստ էր, և նորա հետ պատերազմ չկար այն տարիները, վասն զի Տէրը նորան հանգստութիւն տուաւ։ Եւ Ասա Յուդային ասաց. Այս քաղաքները շինենք, և նորանց շրջապատենք պարիսպներով, աշտարակներով, դռներով և նիգերով, քանի որ երկիրը մեր առջևն է, վասն զի մենք խնդրեցինք մեր Տէր Աստուծոյն, մենք խնդրեցինք, և նա մեզ հանգստութիւն տուաւ շուրջանակի. և շինեցին ու յաջողեցին։ Եւ Ասան ունէր Յուդայից վահան և նիզակ կրող երեք հարիւր հոգւոյ զօրք, և Բենիամինից տապար կրող ու ազեղ քաշող երկու հարիւր ութսուն հոգւոյ, սորանք ամենքը քաջ զօրաւորներ էին։

Եւ Եթովպացի Զարան հոլոր մոգամ հոլոր զօրքով և երեք հարիւր կառքով դուրս եկաւ նորանց վերայ, և եկաւ մինչև Մարեսա։ Եւ Ասան նորա առաջը դուրս եկաւ, և պատերազմ կազմեցին Մարեսայի Սեփաթա

փառ ոսկի աշտանակը և նորա ճրագները ամեն իրիկուն վառելու համար. վասն զի մենք պահում ենք մեր Տէր Աստուծոյ պահպանութիւնը, իսկ դուք նորան թողել էք։ Եւ ահա Աստուած մեզ հետ է իրրև գլխաւոր. և նորա քահանաները և ազդարարութեան փողերը, որ ազդարարեն ձեզ դէմ. Իսրայէլի որդիք, մի պատերազմիք ձեր հայրերի Տէր Աստուծոյ հետ, վասն զի յաջողութիւն չէք գտնել։ Բայց Յերոբոամը դարձրեց դարանակալներին, որ գան նորանց եռևից. և իրանք լինին Յուդայեանների առջևից, իսկ դարանակալները նորանց եռևից։ Եւ Յուդայեանք մեկ առին, և ահա պատերազմը առջևից և եռևից էր, և ազաղակեցին Տէրոջը, և քահանաները հնչեցրին փողերը։ Եւ Յուդայի մարդիկը աղաղակեցին. և եղաւ որ Յուդայեանք աղաղակելիս, Աստուած հարուած տուաւ Յերոբոամին և բոլոր Իսրայէլին Աբիայի և Յուդայի առջև։ Եւ Իսրայէլի որդիքը փախան Յուդայի առջևից, և Աստուած նորանց մատնեց նորանց ձեռքը։ Եւ Աբիան ու նորա ժողովուրդը մեծ կոտորած արին նորանց մէջ. և Իսրայէլից հինգ հարիւր հազար ընտիր մարդիկ ընկան կոտորուած։ Այն ժամանակում նուաճուեցան Իսրայէլի որդիքը, և Յուդայի որդիքը զօրացան որովհետև ապաւինեցին իրանց հայրերի Տէր Աստուծոյ վերայ։ Եւ Աբիան հալածեց Յերոբոամին և նորանից քաղաքներ առաւ՝ Բեթէլը և նորա գիւղերը, Յեսանան և նորա գիւղերը, և Եփրոնն ու նորա գիւղերը։ Եւ Յերոբոամն այլևս ոյժ չգտաւ Աբիայի օրերում. և Տէրը նորան զարկեց, և նա մեռաւ։

Եւ Աբիան ուժովացաւ, և իրան համար տասնուչորս կին առաւ, և ծնաւ քսաներկու տղայ և տասնուվեց աղջիկ. և մեռաւ։ Եւ Աբիայի մնացորդ պատմութիւնը, և նորա ընթացքն ու

11 ձորումը։ Եւ Աման ոտքատակեց իր Տէր Աստուծոյն և ասաց. Ով Տէր, քեզ համար մի բան չէ՛ թէ շատին թէ սակաւին օգնել. մեզ օգնիր, ով մեր Տէր Աստուածը, վասն զի քեզ ենք ապաւինել, և քո անունովը ենք եկել այս բազմութեան վերայ. ով Տէր, դու ես մեր Աստուածը, թող մարդը քեզանից զո-
12 րաւոր չլինի։ Եւ Տէրը զարկեց ետ-ոպացիներին Ասայի և Յուդայի առջևը, և ետ-ոպացիք փախան։
13 Եւ Աման ու նորա հետ եղող ժողովուրդը հալածեցին նորանց մինչև Գերարա. և ընկան ետ-ոպացիներից մինչև որ նորանցից կենդանի հոգի չեղաւ. վասն զի Տիրոջ առջև և նորա բանակի առջև ջարդուեցան, և շատ մեծ
14 աւար արին։ Եւ զարկեց Գերարայի շուրջի քաղաքները, վասն զի Տիրոջ վախը նորանց վերայ էր, և բոլոր քաղաքները կողոպտեցին, որովհետև շատ աւար
15 կար նորանց մէջ։ Հովիւների վրանները էլ զարկեցին, և շատ ոչխար և ուղտ քշեցին, և ետ դարձան Երուսաղէմ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Ովեդի որդի Ազարիայի վե-
2 րայ եկաւ Աստուծոյ Հոգին. Եւ նա դուրս գնաց Ասայի առջև և նորան ասաց. Լսեցէք ինձ, ով Աս և բոլոր Յուդայ և Բենիամին. Տէրը ձեզ հետ կ'լինի, քանի որ դուք նորա հետ էք. և եթէ դուք նորան որոնէք, կը գտնէք նորան, իսկ եթէ նորան
3 ձգէք, նա էլ ձեզ կ'ձգէ։ Եւ շատ օրեր Իսրայէլը կ'լինէ առանց ճշմարիտ Աստուծոյ, առանց ուսուցանող քահանայի, և առանց
4 օրէնքի։ Եւ երբոր նա իր նեղութեան մէջ դառնայ դէպի Իսրայէլի Տէր Աստուածը և նորան որոնէ, այն ժամանակ կ'գտնէ
5 նորան։ Եւ այն ժամանակները երթողի ու մտնողի համար ապահովութիւն չի լինիլ, վասն զի երկրից բոլոր բնակիչների մէջ շատ խռովութիւններ կ'լինին։ 6
կ'զարկուին ազգ ազգի հետ և քաղաք քաղաքի հետ, վասն զի Աստուած ամեն նեղութիւնով կ'զարհուրեցնէ նորանց։ 7
Բայց դուք զօրացէք, և ձեր ձեռքերը չթուլանան, վասն զի վարձք կայ ձեր գործին։

Եւ Ասա Ովեդի մարգարէութիւնը 8
այս խօսքերը և մարգարէութիւնը լսելով, զօրացաւ և դէն ածեց պղծութիւնները Յուդայի և Բենիամինի բոլոր երկրից և Եփրեմի լեռնից իր առած քաղաքներից, և Տիրոջ սեղանը, որ Տիրոջ սրահի առջև էր, նորոգեց։
Եւ ժողովեց բոլոր Յուդան և 9
Բենիամինը և նորանց հետ եղող պանդուխտներին Եփրեմից, Մանասէից և Շմաւոնից, վասն զի Իսրայէլից շատ մարդիկ անցան նորա կողմը, տեսնելով որ նորա Տէր Աստուածը նորա հետ էր։
Եւ նորանք Երուսաղէմ ժողով- 10
ուեցան Ասայի թագաւորութեան տասնուհինգերորդ տարում երրորդ ամսում, Եւ այն օրը պոհ 11
արին Տիրոջ համար իրանց բերած աւարից եօթը հարիւր արջառ և եօթը հազար ոչխար։ Եւ 12
ուխտ արին որ իրանց հայրերի Տէր Աստուծոյն բոլոր սրտով և բոլոր հոգով խնդրեն։ Եւ ամեն 13
ով որ չխնդրէ Իսրայէլի Տէր Աստուծոյն՝ մեռցնուի՝ փոքրիցը մինչև մեծը, թէ այր թէ կին։ Եւ 14
երդում արին Տիրոջը բարձր ձայնով և աղաղակով, փողերով և շեփորներով։ Եւ բոլոր Յուդան 15
ուրախացաւ այն երդումի վերայ, վասն զի իրանց բոլոր սրտով երդում արին, և իրանց բոլոր յօժարութեամբը խնդրեցին նորան, և գտան նորան. և Տէրը հանգստութիւն տուաւ նորանց ամեն կողմանէ։

Եւ Աման թագաւորի մեր Մա- 16
սպային էլ հեռացրեց տիկնութիւնից, որովհետև անտառի կուռք էր շինել նա. և Աման կտրատեց նորա կուռքը և փըշրեց և այրեց Կեդրոն հեղեղատու-

17 մը : Սակայն բարձրաւանդակները չհեռացան Իսրայէլից , միայն թէ Ասայի սիրտը ուղիղ էր իր բոլոր
18 օրերում : Եւ իր հօր նուէրները և իր նուէրները՝ արծաթը , ոսկին և անօթները տարաւ Աստուծոյ տունը :
19 Պատերազմ չեղաւ մինչև Ասայի թագաւորութեան երեսունհինգերորդ տարին :

ԳԼ· ԺԶ

1 Ասայի թագաւորութեան երեսուն ու վեցերորդ տարին Իսրայէլի Բաասա թագաւորը եկաւ Յուդայի վերայ և շինեց Ռաման , որ
2 չթողու ու մտնող չթողէ Յուդայի Ասա թագաւորի համար : Եւ Ասան արծաթ և ոսկի հանեց Տիրոջ տան և թագաւորի տան գանձերից և ուղարկեց Ասորոց
3 Բենհադադ թագաւորին , որ բնակում էր Դամասկոսում , ասելով . Դաշինք կայ իմ ու քո մէջ , և իմ հօր ու քո հօր մէջ , ահա քեզ համար արծաթ և ոսկի եմ ուղարկում , եկ քանդիր Իսրայէլի թագաւոր Բաասայի հետ քո դաշինքը , որ իմ վերայից հետ
4 քաշուի : Եւ Բենհադադը լսեց Ասա թագաւորին , և իր զօրքերի իշխաններին ուղարկեց Իսրայէլի քաղաքները , և նորանք զարկեցին Իյօնը , Դանը , Աբէլմայիմը և Նեփթալիմի բոլոր շտեմարանի քաղաքները :
5 Եւ եղաւ երբոր Բաասան լսեց , դադարեց Ռաման շինելուց , և իր գործը ձգեց :
6 Եւ Ասա թագաւորն առաւ բոլոր Յուդան , և վեր առին Բաասայի շինած Ռամայի քարերը և նորա փայտերը , և նորանցով շինեց Գաբան և Մասփան :
7 Եւ այն ժամանակ եկաւ Անանի առաջատրը Յուդայի թագաւոր Ասայի մօտ և ասաց նորան . Որովհետև դու ապաւինեցիր Ասորոց թագաւորին , և չապաւինեցիր քո Տէր Աստուծոյն , նորա համար Ասորոց թագաւորի զօրքը ազատուեցաւ քո ձեռքից :
8 Մի՞թէ Եթէովպացիք և Լիբեա-

ցիք խիստ շատ կառքերով և ձիաւորներով բազմաթիւ զօրք չէին . բայց որովհետև դու Տիրոջը ապաւինեցիր , նորանց քո ձեռքը մատնեց : Վասն զի Տիրոջ 9
աչքերը դիտում են բոլոր երկիրը , որ զօրացնէ նորանից , որոնց սիրտը ուղիղ է նորա հետ . դու անմտութիւն արիր սորանում . վասն զի սորանից յետոյ պատերազմներ եա ունենալու : Եւ Ասան 10
բարկացաւ այս տեսանողի վերայ , և նորան բանտը դրաւ . վասն զի այս բանի համար նորա վերայ զայրացաւ . և այն ժամանակ Ասան ժողովրդից մի քանիսին հարբտահարեց :

Եւ Ասայի առաջին ու վերջին 11
պատմութիւնը , ահա նորանք գրուած են Յուդայի և Իսրայէլի թագաւորների գրքումը :
Եւ Ասան հիւանդացաւ իր թա- 12
գաւորութեան երեսունիններորդ տարին իր ոտքերով . մինչև բարձրը հ---- նորա հիւանդութիւնը . բայց իր հիւանդութիւնում էլ չհնդրեց Տիրոջը , այլ բժիշկներ որոնեց : Եւ Ասան ննջեց իր հայ- 13
րերի հետ և մեռաւ իր թագաւորութեան քառասուն ու մէկերորդ տարին : Եւ նորան թաղե- 14
ցին Դաւթի քաղաքում այն գերեզմանի մէջ , որ ինքը փորել էր . և նորան պառկեցրին մի անկողնի վերայ որ լցրել էին խունկերով և զանազան արուեստագործ բադրութիւններով , և նորա համար մի շատ մեծ այրելի (խունկ) այրեցին :

ԳԼ· ԺԷ

Եւ նորա որդին Յովսափատ 1
թագաւոր եղաւ նորա տեղ . և զօրացաւ Իսրայէլի դէմ : Եւ Յու- 2
դայի ամեն պարսպաւոր քաղաքներումը զօրքեր դրաւ , և պահապան զօրքեր դրաւ Յուդայի երկրումը և Եփրեմի քաղաքներումը , որ նորա հայրն Ասան առել էր :
Եւ Տէրը Յովսափատի հետ էր , 3
վասն զի իր հօր Դաւթի առաջի ճանապարհներումն էր գնում , և

4 բահաղներ չորանեց։ Ամէ իր հօր Ասատուծոյն խնդրեց և նորա պատուիրանքներուն վարուեցաւ, և ոչ թէ Իսրայէլի արածին պէս։
5 Եւ Տէրը հաստատեց թագաւորութիւնը նորա ձեռքումը. և բոլոր Յուդան ընծաներ էր տուին Յովսափատին, և նորա հարստութիւնն ու փառքը շատացաւ։
6 Եւ նորա սիրտը բարձրացաւ Տիրոջ ճանապարհներուն, և նա վերցուց Յուդայէն բարձրաբանդակները և Աստարովթի կուռքերը։
7 Եւ իր թագաւորութեան երրորդ տարումը ուղարկեց իր իշխաններին՝ Բենհայիլին, Աբդիասին, Զաքարիային, Նաթանայէլին և Միքիային, որ Յուդայի քաղաքների մէջ ուսուցանեն.
8 Եւ նորանց հետ էին Ղեւտացիք՝ Սեմայիա, Նաթանիա, Զաբադիա, Ասայէլ, Սեմիրամովթ, Յոնաթան, Ադոնիա, Տոբիա և Տոբադոնիա Ղեւտացիները, և նորանց հետ էին Եղիսամա և Յորամ քահանաները։
9 Եւ ուսուցանեցնում էին Յուդայի մէջ, և նորանց հետ Տիրոջ օրէնքի մէկ գիրքը կար. և շրջեցին Յուդայի բոլոր քաղաքները. և ուսուցանում էին ժողովրդին։
10 Եւ Տիրոջ վախը եղաւ Յուդայի շրջակայքում եղող բոլոր երկիրների թագաւորութեանց վրայ, և Յովսափատի հետ պատերազմ չարին։
11 Եւ փղշտացիներից էլ ընծաներ և հարկի փող էին բերում Յովսափատի համար. նաև Արաբացիներն էլ էին բերում նորա համար հօտերից՝ եօթը հազար եօթը հարիւր խոյ և եօթը հազար եօթը հարիւր նոխազ։
12 Եւ Յովսափատը գնալով մեծացաւ շատ բարձր. և Յուդայի մէջ բերդեր և շտեմարաններու քաղաքներ շինեց։
13 Եւ նա շատ գործքեր ունէր Յուդայի քաղաքներումը. և Երուսաղէմի մէջ քաջ զօրաւորներ՝ պատերազմող մարդիկ էին։
14 Եւ սա է նորանց համարը իրանց տղայոցհների համեմատ. Յուդայի հազարապետներից՝ Եդնա իշխանը, և նորա հետ երեք հարիւր հազար քաջ զօրաւորներ։
15 Եւ նորանից յետոյ՝ Յոհանան իշխանը, և նորա հետ երկու հարիւր ութսուն հազար։
16 Եւ նորանից յետոյ՝ Զէքրիի որդին Ամասիա, որ պինքն ախտել էր Տիրոջը, և նորա հետ երկու հարիւր հազար քաջ զօրաւորներ։
17 Եւ Բենիամինից քաջ զօրաւոր Եղիադան, և նորա հետ երկու հարիւր հազար աղեղնաւոր և ասպարաւոր մարդիկ։
18 Եւ նորանից յետոյ Յովզաբադ, և նորա հետ հարիւր ութսուն հազար պատերազմիկներ։
19 Սրանք էին թագաւորին ծառայութիւն անողները բացի նորանցից, որոնց թագաւորը դրաւ պարսպաւոր քաղաքներումը բոլոր Յուդայի մէջ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Յովսափատը խիստ շատ փառք և հարստութիւն ունէր. և խնամութիւն արաւ Աքաաբի հետ։
2 Եւ մի քանի տարուց յետոյ իջաւ Սամարիա Աքաաբի մօտ. և Աքաաբը նորա համար և նորա հետ եղող ժողովրդի համար շատ ոչխարներ և արջառներ մորթեց, և նորան համոզեց որ վեր գնայ Ռամոթ-գաղաադ։
3 Եւ Իսրայէլի Աքաաբ թագաւորն ասաց Յովսափատին. Ինձ հետ կ'գնա՞ս Ռամոթ-գաղաադ. և նա նորան ասաց. Ինչպէս դու այնպէս էլ ես, և ինչպէս քո ժողովուրդը այնպէս էլ իմ ժողովուրդը. և քեզ հետ կը գնամ պատերազմի։
4 Եւ Յովսափատն ասաց Իսրայէլի թագաւորին. Բայց հիմա եկ Տիրոջ խօսքը խնդրիր։
5 Եւ Իսրայէլի թագաւորը ժողովեց մարգարէներին՝ չորս հարիւր հոգի, և նորանց ասաց. Ռամոթ-գաղաադի վերայ պատերազմի գընա՞նք թէ ետ կենամ. և նորանք ասացին. Գնա վերան. և Տէրը թագաւորի ձեռքն է տալու։
6 Եւ Յովսափատն ասաց. Այստեղ էլ

ուրիշ մարդարէ չկա՞յ Տէրոջը, 7 նորանից հարցնէինք։ Եւ Իսրայէլի թագաւորն ասաց Յովսափատին. Դեռ մէկ ուրիշ մարդ էլ կայ, նորա միջոցով Տէրոջը հարցնելու. բայց ես նորան ատում եմ, վասն զի ինձ համար մարգարէութիւն չէ անում դէպի բարին, այլ ամեն ժամանակ դէպի չարը. դա Յեմլայի որդին Միքիան է։ Եւ Յովսափատան ասաց. 8 Թող թագաւորն այդպէս չխօսէ։ Եւ Իսրայէլի թագաւորը մի ներքինի կանչեց և ասաց. Շուտով արա Յեմլայի որդի Միքիային ինչ-որ կայ այստեղ բեր։ 9 Եւ Իսրայէլի թագաւորը և Յուդայի Յովսափատ թագաւորը նստել էին իւրաքանչիւրն իր աթոռի վերայ զգեստներ հագած նստած կալատի Սամարիայի դրան առջև. և բոլոր մարգարէները մարգարէանում էին նրանց առջև։ 10 Եւ Քանանայի որդի Սեդեկիան իրան համար երկաթի եղջիւրներ շինեց և ասաց. Այսպէս է ասում Տէրը. Սորանցով կ'հրես Ասորեցիներին մինչև որ նորանց բնաջինջ անես։ 11 Եւ բոլոր մարգարէները այնպէս էին մարգարէանում ասելով. Գնա Ռամոթ-գաղաադ և կ'յաջողէ. և Տէրը կ'տայ թագաւորի ձեռքը։ 12 Եւ այն պատգամաւորը, որ գնացել էր Միքիային կանչելու, նորան ասաց. Ահա մարգարէները միաբերան բարի են խօսում թագաւորի համար, ուրեմն թող քո խօսքն էլ նորանցից մէկի պէս լինի, և բարի խօսիր։ 13 Բայց Միքիան ասաց. Կենդանի է Տէրը, որ իմ Աստուածն ինչ որ ինձ ասէ, այն եմ խօսելու։

14 Եւ եկաւ թագաւորի մօտ, և թագաւորն ասաց նորան. Միքիա, Ռամոթ-գաղաադ գնա՞նք պատերազմի, թէ ետ կենամ. և նա ասաց. Գնացէք և կ'յաջողէք, և նորանք ձեր ձեռքը կը 15 արուին։ Եւ թագաւորը նորան ասաց. Քանի՛ անգամ ես քեզ երդուեցնեմ եմ ասել որ Տէրոջ անունով ինձ բացի ճշմարտութիւն 16 նից ոչինչ չասես։ Այն ժամանակ նա ասաց. Ես տեսայ բոլոր Իսրայէլը ցրուած լեռների վերայ իբրև ոչխարներ որ հովիւ չունին, և Տէրն ասաց. Սորանք տէր չունին. ամեն մարդ իր տունը դառնայ խաղաղութեամբ։ 17 Եւ Իսրայէլի թագաւորն ասաց Յովսափատին. Չէ՞ որ քեզ չասացի՛, որ ինձ համար բարի բան չի մարգարէանում, այլ չար։ Եւ նա ասաց. 18 Ուրեմն լսեցէք Տէրոջ խօսքը, ես տեսայ Տէրոջը նստած իր աթոռի վերայ և երկնից բոլոր զօրքերը կանգնած նորա աջ և նորա ձախ կողմին։ Եւ Տէրն ասաց. Ո՞վ կը 19 խաբէ Իսրայէլի Աքաաբ թագաւորին, որ գնայ յարձակէ Ռամոթ-գաղաադի վերայ. և մէկը այսպէս էր ասում, և միւսն այնպէս էր ասում։ Եւ մի ոգի դուրս 20 եկաւ և կանգնեց Տէրոջ առջև և ասաց. Ես նորան կ'խաբեմ. և Տէրը նորան ասաց. Ինչո՞վ։ Նա 21 էլ ասաց. Ես դուրս կ'գնամ և նորա բոլոր մարգարէների բերանում սուտ ոգի կ'լինեմ. և Տէրն ասաց. Դու կ'խաբես, և կարող էլ ես. գնա և այդպէս արա։ Եւ արդ՝ Տէրը սուտ ոգի է դրել 22 քո այդ մարգարէների բերանում. բայց Տէրն քեզ համար չարիք է խօսել։

Այն ժամանակ Քանանայի որ- 23 դի Սեդեկիան մօտեցաւ և զարկեց Միքիայի ծնօտին և ասաց. Ո՞ր ճանապարհով է անցկացել Տէրոջ հոգին ինձանից, որ քեզ հետ խօսէ։ Միքիան էլ ասաց. 24 Ահա կ'տեսնես այն օրը որ սենեակէ սենեակ կ'մտնես թաքչելու համար։

Եւ Իսրայէլի թագաւորն ասաց. 25 Առէք Միքիային և տարէք քաղաքապետ Ամմոնի և թագաւորի որդի Յովասի մօտ. Եւ ասացէք. 26 Այսպէս է ասում թագաւորը. Սորան բանտը դրէք, և նորան կերակրեցէք նեղութեան հացով և նեղութեան ջրով մինչև իմ խաղաղութեամբ գալը։ Եւ Մի- 27 քիան ասաց. Եթէ դու խաղաղութեամբ ետ դարձար եկար, Տէրը ինձանով չէ խօսել, նաև

ատաց . լսեցէք , ով ամեն ժողովուրդներ ։
28 Եւ Իսրայէլի Թագաւորն ու Յուդայի Յովսափատ Թագաւորը գնացին Ռամոթ–գաղաադի վրայ ։ 29 Եւ Իսրայէլի Թագաւորն ասաց Յովսափատին . Պէտք է կերպարանափոխուիլ և յետոյ պատերազմի գնալ . բայց դու հագիր քո հանդերձները . և Իսրայէլի Թագաւորը կերպարանափոխուեցաւ և գնաց պատերազմը ։ 30 Եւ Ասորոց Թագաւորը իր հետ եղող կառապետներին ասաց . Զպատերազմէք ոչ փոքրի և ոչ մեծի հետ , այլ միայն Իսրայէլի Թագաւորի հետ ։ 31 Եւ եղաւ երբոր կառապետները տեսան Յովսափատին , նորանք ասացին . Իսրայէլի Թագաւորը նա է , և դարձան դէպի նորան որ նորա հետ պատերազմեն . և Յովսափատը աղաղակեց , և Տէրը նորան օգնութիւն արաւ . և Աստուած նորանց ետ քաշեց նորանից ։ 32 Եւ երբոր կառապետները տեսան , որ նա Իսրայէլի Թագաւորը չէ , այն ժամանակ ետ դարձան նորանից ։ 33 Եւ մի մարդ *իր անմեղութեամբը քաշեց աղեղը և զարկեց Իսրայէլի Թագաւորին յօդուածների և զրահի մէջտեղը . և նա ասաց կառավարին . Ձեռքդ դարձրու և ինձ դուրս տար բանակիցը , վասն զի վիրաւորուեցայ ։ 34 Եւ պատերազմը բարձրացաւ այն օրը . և Իսրայէլի Թագաւորը կանգնած էր կառքումը Ասորոց դէմ , և մեռաւ արեգակը մար մտնելու ժամանակին ։

ԳԼ· ԺԹ

1 Եւ Յուդայի Յովսափատ Թագաւորը խաղաղութեամբ ետ դարձաւ իր տունը Երուսաղէմ ։ 2 Եւ Անանիի որդին Ցեհու տեսանողը դուրս ելաւ նորա առջև և ասաց Յովսափատ Թագաւորին . Պէ՞տք էր չարին օգնել , և որ Տիրոջը ատողներին սիրէիր . և սորա համար քեզ վերայ բարկութիւն կայ Տիրոջ երեսից ։ 3 Բայց քեզ վերայ բարի բաներ են գտնվում , որովհետև բնաջինջ արիր Աստարովթի կուռքերը երկրից , և սիրտդ պատրաստեցիր Աստուծոյն խնդրելու ։
4 Եւ Յովսափատը բնակում էր Երուսաղէմում . և դարձեալ դուրս ելաւ ժողովրդի մէջ Բեերսաբէից մինչև Եփրեմի լեռը , և նորանց դարձրեց իրանց Տէր Աստուծոյն ։ 5 Եւ դատաւորներ դրաւ երկրումը Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքներում՝ ամեն մէկ քաղաքի մէջ ։ 6 Եւ դատաւորներին ասաց . Տեսէք թէ դուք ինչ էք անում , վասն զի դուք մարդու համար չէք տեսնում դատաստանը , այլ Տիրոջ համար , և նա ձեզ հետ է դատաստանի գործումը ։ 7 Արդեն Տիրոջ վախը ձեզ վերայ լինի , զգուշութեամբ գործեցէք , վասն զի մեր Տէր Աստուծոյ մօտ անիրաւութիւն , աչառութիւն և կաշառք առնել չկայ ։
8 Եւ Յովսափատը Երուսաղէմում էլ դրաւ Ղեւտացիներից և քահանաներից և Իսրայէլի տոհմապետներից Տիրոջ իրաւունքի համար և դատելու համար , երբոր ետ էին դարձել Երուսաղէմ ։ 9 Եւ նորանց պատուիրեց ասելով . Այսպէս անէք Տիրոջ վախով հաւատարմութեամբ և կատարեալ սրտով . 10 և ամեն մի դատ , որ գայ ձեզ մօտ ձեր եղբայրներից որ բնակում են իրանց քաղաքներում՝ թէ արիւնների համար թէ օրէնքի , թէ պատուիրանքի , թէ կանոնների և թէ իրաւունքների համար լինի , նորանց լուսաւորեցէք որ Տիրոջ դէմ յանցանք չգործեն , և որ բարկութիւն չգայ ձեզ վերայ և ձեր եղբարց վերայ . այսպէս արէք , և յանցաւոր չէք լինիլ ։ 11 Եւ ահա Ամարիա մեծ քահանան ձեզ վերայ է Տիրոջ ամեն գործքումը , իսկ Յուդայի տան իշխան Իսմայէլի որդին Զաբադիան թագաւորի ամեն գործքումը . և ատիկաննե-

*իր ուժովը

րը՝ Ղևտացիներն ձեր առջևից.
զօրացէք և դործեցէք, և Տէրը
բարին հետ կ'լինի։

ԳԼ. Ի

1 Եւ եղաւ սրանից յետոյ, որ
Մովսէսի որդիքը և Ամմանի որ-
դիքը և նրանց հետ Մաոնացի-
ներից էլ եկան Յովսափատի վե-
2 րայ պատերազմելու։ Եւ մարդ ե-
կան ու Յովսափատին պատմեցին
և ասացին. Ծով վերայ մեծ բազ-
մութիւն է գալիս ծովի այն կող-
մից Ասորց ժէջից. և ահա նո-
րանք Ասասան-Թամարումն են,
3 որ է Ենգադի։ Եւ Յովսափատը
վախեցաւ և երեսն ուղղեց Տիրո-
ջը խնդրելու, և ծոմապահութիւն
4 քարոզեց բոլոր Յուդայի ժէջ։ Եւ
Յուդայեանք ժողովուեցան Տէրի-
5 ջը օգնութիւն խնդրելու։ Եւ
Յովսափատը կանգնեց Յուդայի և
Երուսաղէմի ժողովքի ժէջ Տիրոջ
6 տանը նոր սրահի առջև. Եւ ա-
սաց. Ով մեր հայրերի Տէր Աստ-
ուածը, դու չէ՞ս այն երկնքում
բնակող Աստուածը և ազգաց բո-
լոր թագաւորութիւնների վերայ
տիրողը, և քո ձեռքին է զօրու-
թիւնը և ոյժը և մէկը չէ կարող
7 քեզ դէմ կենալ։ Չէ՞ որ դու,
ով մեր Աստուած, քշեցիր այս
երկրի բնակիչներին քո ԻսրայէԼ
ժողովրդի առջևից և տուիր այն
յաւիտեան քո սիրելի Աբրահամի
8 սերունդին։ Եւ նորանք բնակե-
ցին այնտեղ և նորանում քո
անուան համար սրբարան շինե-
9 ցին և ասացին. Եթէ մեզ վերայ
գայ չարիք, սուր, պատուհաս,
և ժանտախտ կամ սով, մենք
կանգնենք այս տան առջևը քո
դիմացը, որովհետև քո անունը
այս տան վերայ է, և դէպի քեզ
աղաղակենք մեր նեղութեան մէ-
ջից, այն ժամանակ լսես և ա-
10 զատես. Եւ հիմա՝ ահա Ամմանի
և Մովսէսի որդիքը և Սէիր լե-
ռան բնակիչները, որոնց մէջը մըտ-
նելու հրամանն չտուիր Իսրայէլա-
ցոց երբոր նորանք դուրս էին ե-
կել Եգիպտոսից. այլ նորանցից
քաշուեցան, և նորանց չփչաց-
րին։ Բայց ահա նորանք հատու- 11
ցանում են մեզ մեր վերայ գա-
լով, որ մեզ դուրս անեն քո ժա-
ռանգութիւնից, որ մեզ ժա-
ռանգութիւն տուիր։ Ով մեր 12
Աստուած, մի՞թէ նորանց չես
դատիլ, վասն զի մենք զօրու-
թիւն չունինք այս մեծ բազմու-
թեան դէմ որ եկել է մեզ վե-
րայ, և մենք չենք գիտում թէ
ինչ անենք, վասն զի մեր աչք-
երը քեզ վերայ է։ Եւ բոլոր Յու- 13
դան կանգնած էր Տիրոջ առջևը,
նաև նորանց երեխայքը, նորանց
կանայքը և որդիքը։

Եւ Ասափի որդիներից Ղևտա- 14
ցի Մատթանիայի որդու Յեհիել
որդու Բանիայի որդու Զաքարիա-
յի որդու Յապիէլի վերայ եկաւ
Տիրոջ հոգին ժողովքի մէջտեղում։
Եւ նա ասաց. Ականջ դրէք, ով 15
բոլոր Յուդա և Երուսաղէմի բը-
նակիչներ և ով Յովսափատ թա-
գաւոր, Տէրը ձեզ այսպէս է ա-
սում. Դուք մի վախենաք և մի
զարհուրիք այս մեծ բազմութեան
երեսից, վասն զի պատերազմը
ձերը չէ այլ Աստուծոյնն է։ Ե- 16
գուց իջէք նորանց վերայ. ահա
նորանք վեր են գալում Ասիսի
զառիվերովը, և դուք նորանց կը
գտնէք Հեղեղատի ծայրումը Յե-
րուէլի անապատի առջև։ Դուք 17
չէք պատերազմելու այս անգամ.
դուք կացէք, կանգնեցէք և կը
տեսնէք Տիրոջ փրկութիւնը ձեզ
հետ, ով Յուդա և Երուսաղէմ.
մի վախենաք և մի զարհուրէք.
էգուց նորանց դիմացը դուրս ե-
կէք, և Տէրը ձեզ հետ է լինե-
լու։ Եւ Յովսափատը խոնարհուե- 18
ցաւ երեսովը մինչև գետինը, և
բոլոր Յուդան և Երուսաղէմի բը-
նակիչները ընկան Տիրոջ առջևը
որ Տիրոջը երկրպագութիւն ա-
նեն։ Եւ Կահաթեանց որդիներից 19
և Կորխեանց որդիներից եղող
Ղևտացիք վեր կացան Իսրայէլի
Տէր Աստուծոյն շատ բարձր ձայ-
նով օրհնելու։

Եւ առաւօտը կանուխ վեր կա- 20
ցան և գնացին Թեկուէի անա-

պատը. և նորանց գնալու ժամա-
նակին Յովսափատը կանգնեց և
ասաց. Ինձ լսեցէք, ով Յուդա
և Երուսաղէմի բնակիչներ. Հա-
ւատացէք ձեր Տէր Աստուծոյն
և հաստատ կ'ինաք. հաւատա-
ցէք նորա մարգարէներին, և յա-
21 ջողութիւն կունենաք։ Եւ խոր-
հուրդ արաւ ժողովրդի հետ, և
դրաւ Տիրոջ համար երգիչներ և
սուրբ փառքը օրհնողներ
սպառազինեալների առջևից դուրս
գալով և ասելով. Գոհացէք Ե-
հովայից վասն զի նորա ողորմու-
թիւնը յաւիտեան է։
22 Եւ երբոր նորանք ցնծութեան
երգն ու օրհնութիւնը սկսեցին,
Տէրը դարանակալներ հանեց Ամ-
մոնի և Մովաբի որդիների և Սէ-
իր լեռան բնակիչների դէմ, որ ե-
կել էին Յուդայի վերայ, և նո-
23 րանք կոտորուեցան։ Վասն զի Ամ-
մոնի և Մովաբի որդիքը վեր կա-
ցան Սէիր լեռան բնակիչների վե-
րայ ջարդելու և բնաջինջ անե-
լու. և երբոր վերջացրին Սէիրի
բնակիչներին, իրար օգնեցին միմ-
24 եանց ջարդելու։ Եւ Յուդայեանք
եկան անապատի միջի դիտանոցը
և նայեցին այն բազմութեան վե-
րայ, և ահա նորանց դիները փռա-
ւած էին երկրի վերայ, և մէկ
25 ազատուած չկար։ Այն ժամա-
նակ Յովսափատը և նորա ժողո-
վուրդը եկան նորանց աւարը ա-
նելու և նորանց մէջ գտան շատ
ապրանք էլ, մարմիններ էլ, պատ-
ուական անօթներ էլ, և իրանց
համար կողոպտեցին, որ չէին
կարողանում տանել. երեք օր ա-
նաց կողոպտեցին որովհետև շատ
էր։
26 Եւ չորրորդ օրը ժողովեցան
Օրհնութեան հովտումը, վասն
զի այնտեղ օրհնեցին Տիրոջը,
նորա համար այնտեղի անունը
կոչեցին Օրհնութեան հովիտ մին-
27 չև այս օր։ Եւ ետ դարձան բո-
լոր Յուդայի և Երուսաղէմի մար-
դիկը և Յովսափատը իրրև նո-
րանց պարագլուխ, որ յետ դառ-
նան Երուսաղէմ ուրախութեամբ,
վասն զի Տէրը նորանց ուրախաց-
րել էր իրանց թշնամիներից։
28 Եւ մտան Երուսաղէմ
տաւխիներով, քնարներով և փո-
ղերով Տիրոջ տունը։ Եւ Ա-
29 ստուծոյ երկիւղը եղաւ երկրից
թագաւորութիւնների վերայ լսե-
լով. թէ Տէրը պատերազմեց Իս-
րայէլի թշնամիների հետ։ Եւ
30 Յովսափատի թագաւորութիւնը
հանգաւոյց, և Աստուած նո-
րան հանդարտութիւն տուաւ
շուրջանակի։
31 Եւ Յովսափատը թագաւորեց
Յուդայի վերայ. երեսունուհինգ
տարեկան էր թագաւոր դառնա-
լիս և քսանուհինգ տարի թագա-
ւորեց Երուսաղէմում. և նորա
մօր անունն էր Ազուբա՝ դուստր
Սաղիի։ Եւ գնաց իր հօր Ասայի
32 ճանապարհումը, և նորանից չը
խոտորեց, որ ուղղութիւն էր ա-
նում Տիրոջ աչքի առաջ։ Մի-
33 այն թէ բարձրատեղիները վեր
չառնուեցան, և ժողովուրդն էլ
տակաւին չէր պատրաստել իր
սիրտը դէպի իրանց հայրերի Աստ-
ուածը։ Եւ Յովսափատի գործե-
34 րի մնացորդը՝ առաջիններն և վեր-
ջիններն, ահա նորանք գրուած
են Անանիի որդի Յեհուի պատմու-
թեանց մէջ, որոնք անցել են Իս-
րայէլի թագաւորների գրքի մէջ։
35 Եւ սորանից յետոյ բնկերացաւ
Յուդայի Յովսափատ թագաւորը
Իսրայէլի Ոքոզիա թագաւորի
հետ, որ չարութիւն էր գոր-
ծում. Եւ նորա հետ բնկերացաւ, 36
որ նաւեր շինեն Թարսիս գնալու
համար. և նաւեր շինեցին Գա-
սիոնգաբերում։ Եւ Մարեսայի 37
Դօդիայի որդի Եղիեզերը մար-
գարէացաւ Յովսափատի մասին
ասելով. Որովհետև դու Ոքոզիա-
յի հետ բնկերացար, Տէրը քան-
դել է քո գործքը։ Եւ նաւերը
կոտրտուեցան և չկարողացան
Թարսիս գնալ։

ԳԼ. ԻԱ

1 Եւ Յովսափատը ննջեց իր հայ-
րերի հետ և թաղուեցաւ իր հայ-
րերի հետ Դաւթի քաղաքում.

և նորա որդին Յովրամը թագա-
2 ւոր եղաւ նորա տեղ։ Եւ նորա եղբայրները՝ Յովսափատի որդիքը՝ Ազարիա, Յեքիէլ, Զաքարիա, Ազարիւ, Միքայէլ և Սափատիա. սորանք ամենքը Իսրայէլի թագա-
3 ւոր Յովսափատի որդիքն էին։ Եւ նորանց հայրը տուաւ նորանց շատ պարգևներ՝ ոսկի և արծաթ և պատուական բաներ Յուդայի վիճի պարսպաւոր քաղաքներով, մեղ. բայց թագաւորութիւնը տուաւ Յովրամին, որովհետև նա
4 էր անդրանիկը։ Եւ երբոր Յովրամը մնաւ իր հօր թագաւորութիւնը և հաստատուեցաւ, այն ժամանակ սպանեց իր բոլոր եղբայրներին սրով, նաև Իսրայէլի իշխաններից ոմանց։
5 Յովրամը երեսուն և երկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և ութ տարի թագաւորութիւն
6 արաւ Երուսաղէմում։ Եւ գնաց Իսրայէլի թագաւորների ճանապարհով, ինչպէս որ Աքաաբի տունն էր անում, վասն զի Աքաաբի աղջիկը նորա կինն էր, և չարութիւն արաւ Տիրոջ առ-
7 ջևը։ Բայց Տէրը չուզեց Դաւթի տունը կորցնել այն ուխտի համար, որ արել էր Դաւթի հետ, և ինչպէս որ նորան խոստացել էր նորան և նորա որդկանցը մեկ ճրագ տալ ամեն ժամանակ։
8 Նորա օրերին ապստամբեց Եդոմը Յուդայի ձեռքի տակից, և իրանց վերայ մեկ թագաւոր
9 դրին։ Եւ Յովրամը գնաց իր իշխաններով և բոլոր կառքերով, և գիշերը վեր կացաւ զարկեց Եդոմացիներին, որ իրան շրջապատում էին, և կառքերի իշ-
10 խաններին։ Եւ Եդոմացիք ապստամբեցին Յուդայի ձեռքի տակից մինչև այս օրը. այն ժամանակ Լեբնան էլ ապստամբեց նորա ձեռքի տակից, որովհետև թողեց իրան Տէր Աստուծոյն։
11 Նա բարձրաւանդակներ էլ շինեց Յուդայի լեռների վերայ, և Երուսաղէմի բնակիչներին պոռնկութիւն անել տուաւ և մոլորեցրեց Յուդային։

Եւ նորան թուղթ եկաւ Եղիա 12
մարգարէից ասելով. Այսպէս է ասում քո հօր Դաւթի Տէր Աստուածը. Որովհետև չգնացիր քո հօր Յովսափատի ճանապարհներով և Յուդայի Ասա թագաւորի ճանապարհներով. Այլ գնա- 13
ցիր Իսրայէլի թագաւորների ճանապարհով և պոռնկութիւն անել տուիր Յուդային և Երուսաղէմի բնակիչներին Աքաաբի տան պոռնկութիւնների պէս, նաև քո հօր տան եղբայրներիդ՝ որ քեզնից լաւ էին, սպանեցիր, Ահա 14
Տէրը մեծ հարուածով պիտի հարուածէ քո ժողովրդին, քո որդիներին, քո կիներին և քո բոլոր ստացուածքին. Եւ քեզ մեծ 15
հիւանդութիւններով՝ փորի հիւանդութիւնով, մինչև որ քո փորոքիքը դուրս թափուի հիւանդութիւնից օրէ օր։

Եւ Տէրը գրգռեց Յովրամի դէմ 16
Փղշտացիների և Արաբացիների ո-
դին, որ բնակուած էին Եթովպացոց կողմերին. Եւ նորանք գնացին 17
Յուդայի վերայ և ճեղքեցին նորան և գերի արին թագաւորի տանը գտնուած բոլոր ստացուածքը. նաև նորա որդիներին և նորա կիներին. և նորա համար մի որդի չմնաց բացի նորա որդիներից ամենափոքրը՝ Յովաքազը։

Եւ այս ամենից յետոյ զարկեց 18
նորան Տէրը փորոքիքի հիւանդութեամբ, որ անբուժելի էր։
Եւ մի քանի ժամանակներից յե- 19
տոյ, երբոր երկու տարուայ չափ ժամանակ էր անցել վերջացել, նորա փորոքիքը թափուեցաւ իր հիւանդութիւնից, և նա մեռաւ չարաչար հիւանդութիւնով։ Եւ նորա ժողովուրդը նորա համար խունկ չծխեցին ինչպէս որ նորա հայրերի վերայ էին ծխել։ Նա ե- 20
րեսուն և երկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և ութ տարի թագաւորեց Երուսաղէմում, և գնաց առանց փափաքուած լինելու, և նորան թաղեցին Դաւթի քաղաքում, բայց ոչ թէ թագաւորաց գերեզմանները։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Երուսաղէմի բնակիչները թագաւոր արին նորա տեղ նորա փոքր որդի Ազոզիային, վասն զի բոլոր մեծերին սպանել էին այն գունդերը, որ բանակն էին եկել Արաբացիների հետ։ Եւ թագաւոր եղաւ Յուդայի Յովրամ թագաւորի որդին Ազոզիան։ Ազո-
2 զիան քառասուներկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ և մէկ տարի թագաւորեց Երուսաղէմում, և նորա մօր անունն էր Գո-
3 թողիա դուստր Ամրիի։ Սա էլ գնաց Աքաաբի տան ճանապարհներովը, վասն զի նորա մայրը նորան խրատում էր չարութիւն
4 անելու։ Եւ նա չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջ Աքաաբի տան պէս, վասն զի նորանք էին նորա խրատ տուողները իր հօր մահից յետոյ նորան փչացնելու
5 համար։ Նաև նորանց խորհուրդներովն էր գնում, և Իսրայէլի թագաւոր Աքաաբի որդի Յովրամի հետ գնաց պատերազմ Ասորոց թագաւոր Ազայէլի վերայ Ռամովթ-գաղաադ։ Բայց Ասո-
6 րիք յաղթեցին Յովրամին։ Եւ նա էտ դարձաւ, որ բժշկուի Յեզրայէլում այն վէրքերից, որ նորան տուին Ռամայում, երբոր պատերազմում էր Ասորոց Ազայէլ թագաւորի հետ։ Եւ Յուդայի թագաւոր Յովրամեան *Ազարիան իջաւ Յեզրայէլ Աքաաբի որդի Յովրամին տեսանելու որ
7 հիւանդ էր։ Եւ Աստուածանից էր Ազոզիայի կործանումը, որ Յովրամի մօտ գնար. վասն զի երբոր եկաւ Յովրամի հետ դուրս եկաւ Նամեսեան Յեհուին տալջևը, որին օծել էր Տէրը Աքաաբի տունը բնաջինջ անելու հա-
8 մար։ Եւ եղաւ երբոր Յեհու Աքաաբի տան վերայ դատաստանը դրած էր գնում, այն ժամանակ գտաւ, որ Յուդայի իշխանները և Ազոզիայի եղբօրորդիները ծառայում էին Ազոզիային, և նո-

*Ազոզիա

րանց սպանեց։ Եւ որոնեց Ազո- 9
զիային, և նորան բռնեցին երբ նա թաք էր կացել Սամարիայում, և նորան բերին Յեհուի մօտ, և նորան սպանեց. և նորան թաղեցին. որովհետև ասացին. Սա այն Յովսափատի որդին է, որ Տիրոջը խնդրում էր իր բոլոր սրտովը։ Եւ Ազոզիայի տանը մէկը չկար որ կարողանար թագաւորել։

Բայց Ազոզիայի մայրը Գոթո- 10
ղիան, երբոր տեսաւ թէ որդին մեռաւ, վեր կացաւ և փչացրեց Յուդայի տան բոլոր թագաւորական սերունդը։ Բայց թագաւո- 11
րի աղջիկը Յոսաբէէն առաւ Ազոզիայի որդի Յովասին և նորան գողացաւ թագաւորի սպանուած որդիանց միջից, և նորան դրաւ նորա դայեակի հետ անկողիններին աննեակում, և Գոթողիա Յովրամ թագաւորի աղջիկը Յոսաբէէն Յովիադա քահանայի կին՝ որովհետև Ազոզիայի քոյրն էր, նորան թաքցրեց Գոթողիայի երեսից, որ նորան չսպանեց։ Եւ նորանց 12
հետ եղաւ Աստուծոյ տունը թաք կացած վեց տարի, և Գոթողիա թագաւորութիւն էր անում երկրի վերայ։

ԳԼ. ԻԳ

Եւ եօթներորդ տարին զօրացաւ 1
Յովիադան և առաւ իրան հետ դաշինքի մէջ հարիւրապետ Յեհոհանի որդի Ազարիային, Յօհանանի որդի Իսմայէլին, Ովբեդի որդի Ազարիային, Ադայիայի որդի Մաասիային և Զիքրիի որդի Եղիսափատին։ Եւ նորանք շրջեցին Յուդայի մէջ և ժողովեցին Ղեւտացիներին Յուդայի ամեն քաղաքներից և Իսրայէլի տոհմապետներին, և եկան Երուսաղէմ։ Եւ բոլոր ժողովքը դաշինք արաւ թագաւորի հետ Աստուծոյ տանը. և Յեհոյադա ասաց նորանց. Ահա թագաւորի որդին պիտի թագաւորէ, ինչպէս որ Տէրն ասել է Դաւթի որդիների մասին։ Սա է ձեր անելու բանը, ձեր երրորդ մասը որ գալիս են շաբաթ օրը

քահանաներից և Ղևտացիներից
5 դռների դռնապաններ լինէր. եւ
մէկ երրորդը լինէ թագաւորի տա-
նը, և երրորդ մասը եսոդի դրա-
նը լինէ. իսկ բոլոր ժողովուրդը
6 Տիրոջ տան գաւիթում։ Եւ ոչ
ով չմտնէ Տիրոջ տունը բացի
քահանաներից և Ղևտացի ծա-
ռայողներից, նորանք մտնեն,
վասն զի նորանք սուրբ են. և
բոլոր ժողովուրդը պահէ Տիրոջ
7 պահպանութիւնը։ Եւ Ղևտացիք
շուրջանակի շրջապատեն թագա-
ւորին ամեն մարդ իր զէնքերը
ձեռքին. և տունը մտնողը մեռց-
նուի. և թագաւորի հետ լինիք
նորա մտած և դուրս եկած ժա-
8 մանակը։ Եւ Ղևտացիք և բոլոր
Յուդա բոլորովին Յովիադա քա-
հանայի պատուիրածին պէս ա-
րին, և ամեն մարդ առաւ իր
մարդկանցը որ գալիս էին շաբաթ
օրը. վասն զի Յովիադա քահա-
նան չարձակեց դասակարգու-
9 թիւնները։ Եւ Յովիադա քահա-
նան տուաւ հարիւրապետներին
Դաւթի թագաւորի նիզակները,
ասպարները և վահանները, որ
10 Աստուծոյ տանն էին։ Եւ կանգ-
նեցրեց բոլոր ժողովրդին՝ ամեն
մէկին իր զէնքը ձեռքին տան աջ
կողմից մինչև տան ձախ կողմը
սեղանի և տան մօտ թագաւորի
11 շուրջը. Եւ դուրս հանեցին թա-
գաւորի որդուն, և նորա վերայ
դրին թագը և վկայութիւնը, և
նորան թագաւոր արին. և նորան
օծեցին Յովիադան և նորա որ-
դիքը. և ասացին. Կեցցէ՛ արքայ։
12 Եւ Գոթոդիան լսեց վազող և
թագաւորին ընդհատօրող ժողո-
վրդի ձայնը, և գնաց ժողովրդի
13 մօտ Տիրոջ տունը. Եւ մտիկ
տուաւ, և ահա թագաւորը
կանգնած էր իր սիւնի մօտ մուտ-
քի կշտին, և զօրապետներն ու
փողերը թագաւորի մօտ. և երկրի
բոլոր ժողովուրդը ուրախանում
և փողերը հնչեցնում էին, և
երգիչները նուագարաններով և
երաժիշտները օրհներգում, այն
ժամանակ Գոթոդիան պատա-
ռեց իր հանդերձները և ասաց.

Դաւաճանութիւն դաւաճանու-
թիւն։ Եւ Յովիադա քահանան 14
հրամայեց հարիւրապետներին,որ
նշանակուած էին զօրքի վերայ և
ասաց նորանց. Դուրս հանեցէք
դորան կարգերի միջից, և նորա
ետևից գնացողը սրով սպանուի,
վասն զի քահանան ասել էր.
Թէ նորան չսպանէք տիրոջ տա-
նը։ Եւ իրանց ձեռքերը ձգեցին 15
նորա վերայ. և երբոր նա թագա-
ւորի պալատը մտնող ձիերի
դրան մուտքն էր մտել, այնտեղ
նորան սպանեցին։

Եւ Յովիադան ուխտ դրաւ իր 16
մէջ և բոլոր ժողովրդի մէջ և
թագաւորի մէջ, որ Տիրոջ ժո-
ղովուրդը լինին։ Եւ բոլոր ժողո- 17
վուրդը գնաց Բահաղի տունը և
քանդեցին նորա սեղանները, և
նորա պատկերները փշրեցին, և
Բահաղի քուրմ Մատթանին ա-
պանեցին սեղանների առջև։ Եւ 18
Յովիադան ատիկաններ դրաւ Տի-
րոջ տան վերայ այն Ղևտացի
քահանաների ձեռովը, որոնց ո-
րոշել էր Դաւիթ Տիրոջ տան
համար՝ Տիրոջը ողջակէզներ մա-
տուցանելու համար, ինչպէս գըր-
ուած է Մովսէսի օրէնքումը՝ ու-
րախութիւնով և երգով Դաւ-
թի սահմանածին համեմատ։ Եւ 19
դռնապաններին դրաւ Տիրոջը
տան դռների վերայ, որ ոչ մի
բանով անմաքուր եղողը չմտնէ։
Եւ վեր առաւ հարիւրապետնե- 20
րին և ազնուականներին և ժողո-
վրդի իշխաններին և երկրի բոլոր
ժողովրդին, և իջեցրեց թագաւո-
րին Տիրոջ տանից, և վերի դրան
միջով մտան թագաւորի տունը,
և նստեցրին թագաւորին թագա-
ւորութեան աթոռի վերայ։ Եւ 21
երկրի ամեն ժողովուրդը ուրա-
խացաւ, և քաղաքը խաղաղա-
ցաւ։ Իսկ Գոթոդիային սրով ը-
պանեցին։

ԳԼ. ԻԴ

Յովասը եօթը տարեկան էր երբ- 1
որ թագաւոր եղաւ. և քառա-
սուն տարի թագաւորութիւն ա-

բաւ Երուսաղէմաւմ. և նորա մօր անունն էր Սարիա Բեերսաբէէցի։
2 Եւ Յովաան ուղղութիւն արաւ Տիրոջ աչքի առջեւ Յովիադա
3 քահանայի բոլոր օրերին։ Եւ Յովիադան նորա համար երկու կին առաւ, և նա որդիներ և աղջիկներ ծնաւ։
4 Եւ ապրանից յետոյ Յովաան միտն ուզեց, որ Տիրոջ տունը
5 նորոգէ։ Եւ ժողովեց քահանաներին և Ղեւտացիներին և ասաց նորանց. Դուրս եկէք գնացէք Յուդայի քաղաքները և բոլոր Իսրայէլից փող հաւաքեցէք ձեր Աստուծոյ տունը նորոգելու տարուց տարի, և դուք շուտով արէք այս գործը. սակայն Ղեւտացիք շուտով չարին։
6 Եւ կանչեց թագաւորը Յովիադա իշխանին և ասաց նորան. Ինչո՞ւ համար չես պահանջում Ղեւտացիներից, որ բերեն Յուդայից և Երուսաղէմից Տիրոջ ծառայ Մովսէսի և Իսրայէլի ժողովքի դրած տուրքը վկայութեան խորանի համար։
7 Վասն զի անօրէն Գոթողիան և նորա որդիքը քանդել են Աստուծոյ տունը և Տիրոջ տան բոլոր նուէրները գործ են ածել Բահաղիմի համար։
8 Եւ թագաւորը հրամայեց և մէկ արկղ շինեցին և դրին նորան Տիրոջ տան դրանը
9 դուրսում։ Եւ մունետիկ կանչել տուին Յուդայում և Երուսաղէմում, որ բերեն Տիրոջ համար Աստուծոյ ծառայ Մովսէսի Իսրայէլի վերայ անապատումը դրած
10 տուրքը։ Եւ բոլոր իշխանները և բոլոր ժողովուրդը ուրախացան, և բերում ու գցում էին արկղի
11 մէջ մինչև որ լցուեցաւ։ Եւ այն ժամանակ երբոր բերում էին արկղը Ղեւտացիների ձեռով թագաւորի վերակացուի մօտ, և երբոր տեսնում էին, որ փողը շատացել է, այն ժամանակ գալիս էր թագաւորի գրագիրը և քահանայապետի վերակացուն, և դատարկում էին արկղը, յետոյ տանում էին դարձեալ իր տեղը. այսպէս էին անում օր ըստ օրէ. և շատ փող հաւաքեցին։ 12 Եւ թագաւորն ու Յովիադան տալիս էին այն գործ տանողներին, և քարահատներ և հիւսներ էին վարձում Տիրոջ տունը նորոգելու համար, նաև դեղ էին երկաթագործներին և պղնձագործներին Տիրոջ տունը ամրացնելու համար։ 13 Եւ գործաւորները գործում էին, և նորոգութեան գործը կատարուեցաւ նորանց ձեռով. և Աստուծոյ տունը վերականգնեցին իր չափով և նորան պնդացրին։ 14 Եւ գործը վերջացնելուց յետոյ փողի մնացածը բերում էին թագաւորի և Յովիադայի առջև. և նորանք Տիրոջ տան համար անօթներ էին շինում, պաշտամունի և ողջակէզների համար անօթներ և խնկատուփեր և ոսկի ու արծաթի անոթներ. և ողջակէզներ էին մատուցանում միշտ Տիրոջ տանը Յովիադայի բոլոր օրերում։
15 Եւ Յովիադան ծերացաւ և օրերով կշտացաւ, և մեռաւ, և մեռնելիս հարիւր երեսուն տարեկան էր։ 16 Եւ նորան թաղեցին Դաւթի քաղաքում թագաւորների հետ, վասն զի նա բարութիւն արաւ Իսրայէլին և Աստուծոյ և նորա տան համար։
17 Եւ Յովիադայի մեռնելուց յետոյ եկան Յուդայի իշխանները և խոնարհութիւն արին թագաւորին. այն ժամանակը թագաւորը նորանց էր լսում։ 18 Եւ թողեցին իրանց հայրերի Տիրոջ Աստուծոյ տունը, և ծառայեցին Աստարովթներին և կուռքերին. և Յուդայի ու Երուսաղէմի վերայ բարկութիւն եկաւ նորանց այս յանցանքի համար։ 19 Եւ նորանց մօտ մարգարէներ էր ուղարկում, որ նորանց դարձնեն դէպի Տէրը. և նորանք վկայութիւն արին նորանց դէմ, բայց նորանք ականջ չդրին։
20 Եւ Աստուծոյ Հոգին եկաւ Յովիադա քահանայի որդի Զաքարիայի վերայ, և նա կանգնեց ժողովրդի առջև մի բարձր տեղ և նորանց ասաց. Այսպէս է ասում

Աստուած . ինչո՞ւ համար էք դուք անցնում Տիրոջ պատուիրանքով . ուրեմն յաջողութիւն չէք ունենալ , որովհետև դուք թողել էք Տիրոջը , նա էլ կ՚թողէ
21 ձեզ : Եւ նորանք յարձակուեցան նորա վերայ և նորան քարկոծ արին թագաւորի հրամանով Տիրոջ տան սրտհուպը :
22 Եւ Յովսա թագաւորը չյիշեց այն ողորմութիւնը , որ նորա հայրը Յովիադան արել էր նորան , և սպանեց նորա որդուն . և մեռնելիս ասաց . Տէրը տեսնէ և պահանջէ :
23 Եւ հետևեալ տարին եկաւ նորա վերայ Ասորոց զօրքը , և եկան Յուդայի և Երուսաղէմի վերայ և փչացրին ժողովրդից ժողովրդի բոլոր իշխաններին և նորանց բոլոր աւարը ուղարկեցին
24 Դամասկոս թագաւորին : Թէև քիչ մարդկանցով եկան Ասորոց զօրքերը , բայց Տէրը նորանք ձեռքը մատնեց մի շատ մեծ զօրք , որովհետև թողել էին նորանց հայրերի Տէր Աստուծոյն : Եւ այսպէս Յովսի դատաստանն արին :
25 Եւ երբոր նորանք գնացին այնտեղից , նորան մեծ հիւանդութիւնների մէջ թողելով , նորա դէմ դաւաճանութիւն արին նորա ծառաները Յովիադա քահանայի որդկանց արեան համար , և նորան սպանեցին իր անկողնի վերայ . և նա մեռաւ . և նորան թաղեցին Դաւթի քաղաքումը , բայց չթաղեցին թագաւորաց գե-
26 րեզմանատունը : Եւ սորանք են նորա դէմ դաւաճանութիւն արածները՝ Ամմոնացի կնոջ Սամեթի որդին Զաբատ , և Մովաբացի կնոջ Սամարիթի որդին
27 Յովզաբատ : Եւ նորա որդկանց համար , և նորա դէմ եղած շատ պատգամների մասին , և Աստուծոյ տան շինութեան մասին , ահա դորանք գրուած են թագաւորաց գրքի յիշատակարանումը : Եւ նորա որդին Ամասիա թագաւոր եղաւ նորա տեղ :

ԳԼ· ԻԵ

Ամասիան քսանուհինգ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ , և քսանուինը տարի թագաւորեց Երուսաղէմում , և նորա մօր անունն էր Յովադան Երուսաղէմացի : Եւ ուղղութիւն արաւ Տիրոջ աչքի առջև , միայն ոչ կատարեալ սրտով :
Եւ երբոր թագաւորութիւնը նորա վերայ հաստատուեցաւ , սպանեց իր թագաւոր հօրը զարկող ծառաներին : Բայց նորանց որդիներին չսպանեց , վասն զի Մովսէսի գրքումը՝ օրէնքումը գրուած է , որ Տէրը պատուիրում է ասելով . Թէ Հայրերը տղաների պատճառով , և տղաքը հայրերի պատճառով չմեռցնուին , այլ ամեն մարդ իր յանցանքի համար պիտի մեռնէ :
Եւ Ամասիան ժողովեց Յուդային և նորանց դրաւ ազգատոհմերի համեմատ հազարապետների և հարիւրապետների տակ բոլոր Յուդային և Բենիամինին . և նորանց համարեց քսան տարեկանից և վեր եղողներին , և նորանց գտաւ երեք հարիւր հազար ընտիր պատերազմի գնացող և նիզակ ու վահան կրող մարդ :
Եւ Իսրայէլից հարիւր հազար քաջ զօրքեր վարձեց հարիւր տաղանդ արծաթով : Եւ մի Աստուծոյ մարդ եկաւ նորա մօտ և ասաց . Ով թագաւոր , Իսրայէլի զօրքը քեզ հետ չգնայ . վասն զի Տէրը Իսրայէլի հետ չէ , այսինքն բոլոր Եփրեմի որդկանց հետ չէ :
Այլ դու ինքդ գնայ , գործիր , զօրացիր պատերազմում . —ապ— թէ —չ , Աստուած քեզ կ՚կործանէ թշնամու առջևը . քանզի Աստուած զօրաւոր է օգնելու և կործանելու :
Եւ Ամասիան ասաց Աստուծոյ մարդուն . Բայց այն հարիւր տաղանդը ինչպէ՞ս անել , որ տուել եմ Իսրայէլի գունդերին : Եւ Աստուծոյ մարդն ասաց . Տէրը կարող է քեզ նորանից աւելի տալ :
Եւ Ամասիան ջոկեց Եփրեմից իր մօտ եկող գունդե-

րը, որ գնան իրանց տեղը. բայց նորանց բարկութիւնը շատ բորբոքեց Յուդայի դէմ, և ետ դարձան իրանց տեղը բորբոքած բարկութիւնով,

11 Եւ Ամասիան ուժովացաւ, և հանեց իր զօրքը և գնաց Աղի ձորը, և կոտրեց Սէիրի որդիները
12 րին տասը հազար մարդ. Եւ տասը հազար կենդանի մարդկանց գերի արին Յուդայի որդիքը և տարին նորանց քարաժայռի գլուխը, և նորանց վայր գցեցին քարաժայռի գլխիցը, և նորանք ամենքն էլ կտոր կտոր եղան։
13 Բայց այն գունդերի մարդիկը, որոնց Ամասիան ետ ուղարկեց, որ նորա հետ պատերազմի չգնան, Յուդայի քաղաքների վերայ յարձակուեցան Սամարիայից մինչև Բեթորոն, և նորանցից երեք հազար զոր զարկեցին, և մեծ աւար արին։
14 Եւ երբոր Ամասիան ետ էր դարձել Եդոմացիներին ջարդելուցը, բերաւ Սէիրի որդկանց աստուածները և նորանց կանգնեցրեց իրան համար աստուածներ լինելու, և երկրպագութիւն էր անում և նորանց խունկ ծխում։
15 Եւ Տիրոջ բարկութիւնը բորբոքեց Ամասիայի դէմ և նորա մօտ մի մարգարէ ուղարկեց, և նա ասաց նորան. Ինչո՞ւ համար ես դու խնդրում այն ազգի աստուածները, որոնք չկարողացան իրանց ժողովուրդը ազատել
16 քո ձեռքիցը։ Եւ եղաւ որ նա այս նորան խօսելիս, թագաւորն ասաց նորան. Մի՞թէ քեզ խորհրդական են դրել թագաւորին. լուր, որ քեզ չսպանեն։ Եւ մարգարէն լուեց, բայց ասաց. Գիտեմ որ Աստուած որոշել է քեզ փչացնելու, որովհետև այս բանն արիր և չլսեցիր իմ խրատին։
17 Եւ Յուդայի Ամասիա թագաւորը խորհուրդ արաւ և մարդ ուղարկեց Յէուի որդի Յովաքազի որդի՝ Իսրայէլի թագաւոր Յովասի մօտ՝ ասելով. Եկ՝ մեկ իրար
18 երես տեսանենք։ Բայց Իսրայէլի Յովաս թագաւորը մարդ ուղարկեց Յուդայի Ամասիա թագաւորին ասելով. Լիբանանի փուշը մարդ ուղարկեց Լիբանանի եղեւնափայտին ասելով. Աղջիկդ իմ որդուն կին տուր. բայց Լիբանանի վայրի գազանը անց կացաւ և կոխ տուաւ փուշին։ Դու ասում ես. Ահա ես յաղթեցի Եդոմին և քո սիրտը բարձրացել է հպարտութեամբ. հիմա տանդ նստիր. ինչո՞ւ համար ես գրգռում չարութիւնով, որ քնկնես դու և Յուդան էլ քեզ հետ։ Բայց Ամասիան չլսեց, վասն զի Աստուածմանից էր, որ նորան մատնէ ընծա՝ ձեռքը, որովհետև խնդրել էին Եդոմի աստուածները։ Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը վեր գնաց, և իրար երես տեսան, նա և Յուդայի Ամասիա թագաւորը Յուդայի Բեթսամիւսում։ Բայց Յուդան յաղթուեցաւ Իսրայէլի առջևը, և ամեն մարդ փախաւ իր վրանը։
19 Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը բռնեց Բեթսամիւսում Յովաքազի որդի Յովասի որդի՝ Յուդայի թագաւոր Ամասիային, և նորան տարաւ Երուսաղէմ, և քանդեց Երուսաղէմի պարսպիցը Եփրեմի դռնից մինչև Անկեան դուռը չորս հարիւր կանգուն։ Եւ
20 բոլոր ոսկին և արծաթը և Աստուծոյ տանը գտնուած Աբդեդոմի մօտի բոլոր սպասները և թագաւորի տան գանձերը, և պատանդներ առաւ, և ետ դարձաւ Սամարիա։
21 Յուդայի թագաւորը՝ Յովասի
22 որդին Ամասիան ապրեց Իսրայէլի թագաւոր Յովաքազի որդի Յովասի մեռնելուց յետոյ տասն և հինգ տարի։ Եւ Ամասիայի մնացորդ պատմութիւնը՝ առաջիններն
23 ը և վերջիններն, ահա գրուած են Յուդայի և Իսրայէլի թագաւորների գրքումը։ Եւ այն
24 ժամանակից, որ Ամասիան խոտորեց Տիրոջը հետևելուց, նորա դէմ դաւաճանութիւն հնարեցին Երուսաղէմում, և նա փախաւ Լաքիս, բայց նորա ետևից մարդ

ուղարկեցին Լաքիս, և նորան
28 այնտեղ մեռցրին։ Եւ նորան ձիերի վերայ բերին, և նորան թաղեցին իր հայրերի հետ Յուդայի Բեթղեհէմում։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Յուդայի բոլոր ժողովուրդը առաւ Ողիային որ հազ ամաւոյ տասնուվեց տարեկան էր, և նորան թագաւոր արին նորա հօր
2 Ամասիայի տեղ։ Սա շինեց Ելաթը, և նորան ետ դարձրեց Յուդային երբոր թագաւորը իր հայրերի հետ ննջել էր արդէն։ Ողիան տասնուվեց տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և յիսուն երկու տարի թագաւորեց Երուսաղէմում. և նորա մօր անունն
4 էր Յեքելիա՝ Երուսաղէմից։ Եւ նա ուղղութիւն արաւ Տիրոջ աչքի առջև, բոլորովին ինչպէս որ իր հայրը Ամասիան արել էր։
5 Եւ խնդրում էր Աստուծոյն Զաքարիայի օրերումը, որ Աստուծոյ տեսիլքներին հմուտ էր. և քանի ժամանակ որ նա խնդրում էր Տիրոջը, Աստուած նորան յա-
6 ջողութիւն էր տալիս։ Եւ նա դուրս եկաւ փղշտացոց հետ պատերազմ արաւ և քանդեց Գեթի պարիսպը, Յաբնէի պարիսպը. և Ազովտի ու փղշտացոց երկրումը քաղաքներ շինեց։ Եւ Աս-
7 ուած նորան օգնեց փղշտացոց դէմ, Գուր-բահաղում բնակող Արաբացոց դէմ և Մաոնացոց
8 դէմ։ Եւ Ամմոնացիք ընծաներ էին տալիս Ողիային, և նորա անունը տարածուեցաւ մինչև Եգիպտոս, վասն զի նա շատ ուժովացաւ։
9 Եւ Ողիա աշտարակներ շինեց Երուսաղէմում Անկեան դրան վերայ, և Ձորի դրան վերայ և անկիւնումը, և նորանց ամրացրեց։
10 Եւ աշտարակներ շինեց անապատումը, և շատ ջրհորներ փորեց, որովհետև շատ անասուններ ունէր հովտումը և դաշտումը. երկրագործներ և այգեգործներ՝ լեռներումը և Կարմէղոսում, վասն զի երկրագործութիւն սիրող էր։

11 Եւ Ողիան գունդերով պատերազմող զօրք ունէր ըստ բազմի դուրս եկող պատերազմի ոգող զօրքեր ունէր Յեհիել դպրապետի և Մաասիա ոստիկանի ձեռքով ընդ համարանքի թըւոյն հասմեան թագաւորի իշխաններից Անանիայի ձեռքին
12 տակ. բոլոր քաջազուն տոհմապետների թիւը երկու հազար վեց
13 հարիւր էր։ Եւ նորանց ձեռքի տակ երեք հարիւր եօթը հազար հինգ հարիւր զինուոր կար՝ զինուորի զօրութեամբ պատերազմողներ, որ թագաւորին օգնում էին թշնամու դէմ։ Եւ Ողիա պատ-
14 րաստեց ամեն զօրքի համար վահաններ, նիզակներ, սաղաւարտներ, զրահներ, աղեղներ և քարերի պարաւոր։ Եւ երուսաղէ-
15 մումը արուեստաւոր ճարտարութեամբ մեքենաներ շինեց, որ աշտարակների և անկիւնների վերայ կենան նետեր և մեծ մեծ քարեր ձգելու համար. և նորա համբաւը մինչև հեռու տեղերը գնաց, որովհետև զարմանալի կերպով օգնութիւն գտաւ մինչև
16 որ ուժովացաւ։ Բայց երբոր զօրացաւ, այն ժամանակ սիրտը հպարտացաւ մինչև չարութիւն գործելու, և յանցանք գործեց իր Տէր Աստուծոյ դէմ, և մտաւ Տիրոջ տաճարը որ խունկի սեղանի վերայ խունկ ծխէ։
17 Եւ նորա հետևից Ազարիա քահանան մտաւ, և նորա հետ Տիրոջ ութսուն քահանաները որ զօրաւոր մարդիկ էին։
18 Եւ նորանք Ողիա թագաւորին դէմ կանգնեցին և ասացին նորան. Քեզ չի վայելիլ, օվ Ողիա, որ Տիրոջ խունկ ծխես, այլ Ահարոնի որդիք քահանաներին որոնք սրբուած են խունկ ծխելու. դուրս ել սրբատեղիցը, վասն զի յանցանք գործեցիր և այդ քեզ համար պատիւ չէ Տէր Աստուածանից։
19 Եւ Ողիան բարկացաւ, և ձեռքին էր բուրվառը խունկ ծխելու համար. և նա քահանաների վերայ բարկանալիս բորոտութիւնը երևեցաւ նորա ճակատին քահանաների առջևը Տիրոջ տանը խունկ ծխելու սե-

20 դանի մօտ։ Եւ դարձան դէպի նորան Ազարիա քահանայապետը և բոլոր քահանաները, և ահա բորոտած էր նա իր ճակատումը, և նորան շուտով այնտեղից դուրս հանեցին. և հէնց ինքն էլ շտապում էր դուրս գալու, որովհետև Տէրը նորան զարկել էր։
21 Եւ Ոզիա թագաւորը բորոտ էր մինչև իր մահուան օրը, և մի առանձին տան էր բնակում բորոտած, վասն զի արգիլուած էր Տիրոջ տանից. իսկ նորա որդին Յովաթամը որ թագաւորի տան վերայ էր, դատում էր երկրի ժողովրդին։
22 Եւ Ոզիայի մնացորդ պատմութիւնը՝ առաջինը և վերջինը՝ գրեց Ամովսի որդի Եսայի մարգարէն։
23 Եւ Ոզիան ննջեց իր հայրերի հետ, և նորան թաղեցին նորա հայրերի հետ թագաւորաց գերեզմանների դաշտումը, վասն զի ասացին թէ նա բորոտ է։ Եւ նորա որդին Յովաթամը թագաւորեց նորա տեղ։

ԳԼ. ԻԷ

1 Յովաթամը քառասուհինգ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և տասնուվեց տարի թագաւորեց Երուսաղէմում. և նորա մօր անունն էր Յերուսա՝ դուստր Սադոկի։
2 Եւ ուղղութիւն արաւ Տիրոջ աչքի առջև բոլորովին ինչպէս որ արել էր իր հայրը Ոզիան. միայն որ Տիրոջ տաճարը չմտաւ. բայց ժողովուրդը տակաւին ապականուած էր։
3 Դա շինեց Տիրոջ տան վերի դուռը, և Ոփլայի պարսպի վերայ շատ բաներ շինեց։
4 Քաղաքներ շինեց Յուդայի լեռնումը, և անտառներումը բերդեր և աշտարակներ շինեց։
5 Նա պատերազմ արաւ Ամմոնի որդիների թագաւորի հետ, և յաղթեց նորանց. և Ամմոնի որդիքը այն տարին նորան հարիւր տաղանդ արծաթ, և տասը հազար քոռ ցորեն, և տասը հազար ՚ի՚ գարի տուին. այսպէս արին նորան Ամմոնի որդիքը երկրորդ տարին էլ և երրորդին էլ։
6 Եւ Յովաթամը զօրացաւ, վասն զի ուղղեց իր ճանապարհները իր Տէր Աստուծոյ առջև։
7 Եւ Յովաթամի մնացորդ պատմութիւնը, և նորա բոլոր պատերազմները, ահա գրուած են Իսրայէլի և Յուդայի թագաւորաց գրքումը։
8 Քսան և հինգ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ և տասնուվեց տարի թագաւորեց Երուսաղէմում։
9 Եւ Յովաթամը ննջեց իր հայրերի հետ. և նորան թաղեցին Դաւթի քաղաքումը, և նորա որդին Ահազը թագաւորեց նորա տեղ։

ԳԼ. ԻԸ

1 Ահազ քսան տարեկան էր, երբոր թագաւոր եղաւ, և տասնուվեց տարի թագաւորեց Երուսաղէմում. և ուղղութիւն չարաւ Տիրոջ աչքի առջև ինչպէս իր հայրը Դաւիթը։
2 Եւ գնաց Իսրայէլի թագաւորաց ճանապարհներով, և Բահաղիմների համար ձուլածոյ կուռքեր էլ շինեց։
3 Եւ Ենոմի որդու ձորումը խունկ էր ծխում, և իր որդիներին կրակով այրեց այն ազգերի գարշութեանց պէս, որոնց Տէրը Իսրայէլի որդիների առջևից քշել էր։
4 Եւ զոհ էր մատուցանում և խունկ ծխում բարձրաւանդակների վերայ և բլուրների վերայ և ամեն կանաչ ծառի տակ։
5 Եւ նորա Տէր Աստուածը նորան մատնեց Ասորոց թագաւորի ձեռքը. և նորանք զարկեցին նորան, և նորանից շատ գերիներ առին, և տարան Դամասկոս. նաև Իսրայէլի թագաւորի ձեռքն բնկաւ, և նա սորան մեծ հարուածով զարկեց։
6 Եւ Ռոմելիայի որդին Փակէէն մէկ օրուան մէջ Յուդայում հարիւր քսան հազար հզօր սպանեց՝ ամենն էլ քաջ զօրաւորներ, որովհետև թողեցին իրանց հայրերի Տէր Աստուածին։
7 Եւ Ենիեամի զօրաւորը Զէքրին սպանեց թագաւորի որդի Մաա-

ասյին, և պալատի հաղարապետ եղբիկամին, և թագաւորի
8 փոխանորդ եղկանասյին։ Եւ Յոսաբեթ որդիքը իրանց եղբայրներից երկու հարիւր հազար կին, տղայ և աղջիկ գերի արին, նաև շատ աւար յափշտակեցին նորանցից, և աւարը բերին Սամարիա։
9 Եւ այնտեղ Տիրոջ մէկ մարգարէն կար Ովդեդ անունով, որ դուրս եկաւ Սամարիա մտնող զօրքի առջևը և նորանց ասաց. Ահա ձեր Տէր Աստուածը Յուդայի վերայ բարկանալով նորանց ձեր ձեռքը մատնեց, և նորանց սպանեցիք մի բարկութեամբ, որ մինչև երկինքը հասաւ։
10 Եւ հիմա մտածում էք Յուդայի և Երուսաղէմի որդիանց ձեզ համար ծառաներ և աղախիններ անել։ Մի՞թէ հէնց ձեզ վերայ յանցանքներ
11 չկան Տէր Աստուծոյ առջև։ Եւ հիմա ինձ լսեցէք և եւս դարձրէք այդ գերիներին որանց դուք գերի էք արել ձեր եղբայրներից, վասն զի Տիրոջ սաստիկ բարկութիւնը
12 ձեզ վերայ է։ Եւ Եփրեմի որդիանց իշխաններից վեր կացան այս մարդիկը՝ Յոհանանի որդին Ազարիան, Մեսեղեմոթի որդին Բարաքիան, Սեղղումի որդին Եզեկիան և Ադդիայի որդին Ամասային պատերազմից եկողների դէմ.
13 Եւ ասացին նորանց. Այդ գերիներին այստեղ մի բերէք, վասն զի դուք մտածում էք, որ Տիրոջ առջև մեզ յանցաւոր լինելով, մեր մեղքերի և յանցանքների վերայ աւելացնէք, որովհետև մեր յանցանքը շատ է, և սաստիկ բարկութիւն կայ Իսրայէլի վերայ։
14 Այն ժամանակ զինուորականները բաց թողին գերիներին և աւարը իշխանների և
15 բոլոր ժողովքի առջև։ Եւ այն մարդիկը վեր կացան որոնք անուանով յիշուած էին, և առին գերիներին և նորանց բոլոր մերկերին հագցրին աւարիցը, և նորանց հանդերձներ և կօշիկներ հագցրին, և նորանց կերցրին և խմեցրին և իւղով օծեցին նո-
բանց, և նորանց բոլոր տկարներին հեծցրին էշերի վերայ և տարան երկրով Արմաւենեաց քաղաքը նորանց եղբայրների մօտ. և ետ դարձան Սամարիա։
16 Այն ժամանակ Աքազ թագաւորը պատգամ ուղարկեց Ասորեստանի թագաւորներին, որ իրան օգնեն։
17 Վասն զի եդոմեացիք դարձեալ եկել էին, և Յուդային պարկել և գերիներ էին գերի առել։
18 Եւ փղշտացիներ էլ յարձակուեցան դաշտի և Յուդայի Հարաւակողմի քաղաքների վերայ և առին Բեթսամիսը, Այեղոնը, Գադերովթը, Սոքովը և նորա գիւղերը և Թամնան և նորա գիւղերը, և Գամզովը և նորա գիւղերը, և բնակուում էին այնտեղ։
19 Վասն զի Տէրը նկուն արաւ Յուդային Իսրայէլի թագաւոր Աքազի պատճառով, որովհետև նա անօրէնացաւ Յուդայի մէջ և ապստամբեց Տիրոջ դէմ։
20 Եւ նորա վերայ եկաւ Ասորեստանի Թագաթ-փաղնասար թագաւորը, և նորան նեղից և ոչ թէ
21 օգնութիւն արաւ։ Վասն զի թէ և Աքազը կողոպտեց Տիրոջ տունը և թագաւորի տունը և իշխաններին և տուաւ Ասորեստանի թագաւորին, բայց նա նորան օգնութիւն չարաւ։
22 Եւ այն ժամանակ էլ որ նեղութեան մէջ էր, շարունակ մեղք էր գործում Տիրոջ դէմ դարձեալ այդ Աքազ թագաւորը։
23 Եւ զոհեր էր մատուցանում Դամասկոսի աստուածներին որ իրան ջարդել էին, և ասում էր թէ Ասորոց թագաւորների աստուածները օգնում են իրանց. ես նորանց զոհեր մատուցանեմ որ ինձ օգնեն. բայց նորանք իրան և բոլոր Իսրայէլին անկման պատճառ եղան։
24 Եւ Աքազը ժողովեց Աստուծոյ տան անօթները, և կոտրատեց Աստուծոյ տան անօթները, և գոցեց Տիրոջ տան դուռը. և Երուսաղէմի բոլոր անկիւններում սեղաններ շինեց։
25 Եւ Յուդայի ամեն մէկ քաղաքի մէջ բարձրաւանդակներ շինեց

ուրիշ ասուածներուն խունկ ծըխելու համար. և բարկացրեց իրան Տէր Աստուածը։
26 Եւ նորա ձեռագործ գործքերը և նորա բոլոր ճանապարհները՝ առաջիններուն և վերջիններուն, ահա նորանք գրուած են Յուդայի և Իսրայէլի թագաւորաց գիրքումը։
27 Եւ Աբիազը հանգչեց իր հայրերուն հետ, և նորան թաղեցին Երուսաղէմ քաղաքումը. բայց նորան չտարին Իսրայէլի թագաւորաց գերեզմաններուը. և նորա որդին Եզեկիա թագաւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԻԹ

1 Եզեկիան թագաւոր եղաւ քսան ու հինգ տարեկան, և քսանուինը տարի թագաւորեց Երուսաղէմում. և նորա մօր անունն էր
2 Աբիա՝ դստեր Զաքարիայի։ Եւ նա ուղղութիւն արաւ Տիրոջ աչքին՝ ըստ ամենայնի որպէս էր նորա հայրը Դաւիթ։
3 Ան իր թագաւորութեան առաջին տարուայ առաջի ամիսը Տիրոջ տան դռները բացաւ, և
4 նորոգեց նորանց։ Եւ բերաւ քահանաներին և Ղեւտացիներին, և նորանց ժողովեց արեւելեան հրապարակումը։
5 Եւ նորանց ասաց. Լսեցէք ինձ Ղեւտացիներ, հիմա սրբուեցէք, և սրբեցէք ձեր հայրերուն Տէր Աստուծոյ տունը, և դուրս հանեցէք պղծութիւնը սրբարանէն։
6 Վասն զի մեր հայրերը ապստամբեցին և չարութիւն արին մեր Տէր Աստուծոյ աչքին, և նորան թողեցին, և շրջեցին իրանց երեսը Տիրոջ
7 խորանէն և արհամարհեցին։ Գրաստի դռները էլ գոցեցին, ճրագները հանդցրին, և խունկ չը ծխեցին, և արբանեակը ողջակէզ չմատուցին Իսրայէլի Աստուծոյն։
8 Տիրոջ բարկութիւնն էլ եկաւ Յուդայի և Երուսաղէմի վերայ. և նա նորանց մատնեց խռովութեան, աւերման և խայտառակութեան, ինչպէս որ դուք
9 աչքերովը կ՚անառամ էք ձեր աչքերովը։ Եւ

որա համար մեր հայրերը սրով ընկան, և մեր տղայքն ու մեր աղջիկները և կնիկները գերութեան մէջ են։ Հիմա իմ սրտինը պէս է, որ ուխտ անենք Իսրայէլի Տէր Աստուծոյ հետ, որպէս զի նորա բարկութեան բորբոքումը ետ դառնայ մեզանից։
10
11 Արդ, որդեակք իմ, անհապաղեցէք մի անէք, վասն զի Տէրը ձեզ ընտրեց, որ նորա առջեւ կանգնէք նորան ծառայելու համար և նորան սպասաւորներ լինէք և խունկ ծխէք։
12 Եւ վեր կացան Ղեւտացիները՝ Ամասայի որդին Մաաթը, Ազարիայի որդին Յոէլը, Կահաթեացիներէն, և Մերարեան Աբդիի որդին Կիսը և Յալելէլի որդին Ազարիան, և Գերսոնեան Զամմայի որդին Յովաքը և Յովաքի որդին Եդէնը,
13 Եւ Եղիսափանեան Սամմարին և Յեհիէլը, և Ասափեան Զաքարիան և Մաթթանիան,
14 Եւ Եմանեան Յեքիէլը և Սեմէին, և Իդիթունեան Սեմայիան և Ոզիէլը,
15 Եւ ժողովեցին իրանց եղբայրները և սրբուեցան, և թագաւորի հրամանին համեմատ Տիրոջ խօսքովը զնացին Տիրոջ տունը մաքրելու համար։
16 Եւ քահանաները մտան Տիրոջ տան ներսի կողմը մաքրելու համար, և դուրս հանեցին բոլոր պղծութիւնը, որ գտան Տիրոջ տաճարումը, Տիրոջ տան գաւիթը. և Ղեւտացիք վեր առին, որ տանեն դուրս կեդրոն
17 հեղեղատը։ Եւ սկսեցին սրբել առաջի ամսի մէկին, և ամսի ութերորդ օրը եկան Տիրոջ սրահը. և Տիրոջ տունը սրբեցին ութ
18 օրում. և առաջի ամսի տասնուվեցերորդ օրը վերջացրին։ Եւ ներս գնացին Եզեկիա թագաւորի մօտ և նորան ասացին. Սրբեալ ենք Տիրոջ բոլոր տունը, և ողջակէզի սեղանը, և նորա բոլոր անօթները, և առաջաւորութեան հացերի սեղանը և նորա բոլոր
19 անօթները։ Եւ այն բոլոր անօթները, որոնք Աքազ թագաւորը իր թագաւորութեան և ապըս-

տաճարաց ժամանակին պըղծել էր, պատրաստեցինք և արբեցինք. և ահա նորանք Տիրոջ սեղանի առջև են։
20 Եւ Եղեկիա թագաւորը առաւօտ կանուխ վեր կացաւ և ժողովեց քաղաքի իշխանները և
21 դնաց Տիրոջ տունը։ Եւ բերին եօթը զուարակ, եօթը խոյ, եօթը գառն և եօթը նոխազ իբրև մեղքի պատարագ թագաւորութեան և սրբատեղի և Յուդայի համար. և ասաց Ահարոնի որդիներին՝ քահանաներին, որ ողջակէզ մատուցանեն Տիրոջ սե-
22 ղանի վերայ։ Եւ նորանք մորթեցին զուարակները, և քահանաները վեր առին արիւնը և սրսկեցին զէպի սեղանը, և խոյերն էլ մորթեցին և արիւնը սրսկեցին զէպի սեղանը, և գառներն էլ մորթեցին և արիւնը սրսկեցին
23 զէպի սեղանը։ Իսկ մեղքի պատարագի այծերը մօտ բերին թագաւորի և ժողովքի առջևը. և իրանց ձեռքերը նորանց վերայ
24 դրին։ Եւ քահանաները մորթեցին նորանց, և նորանց արիւնը սրսկեցին իբրև մեղքի պատարագ զէպի սեղանը բոլոր Իսրայէլին քաւելու համար, վասն զի թագաւորն ասել էր որ բոլոր Իսրայէլի համար է ողջակէզը և
25 մեղքի պատարագը։ Եւ Ղեւտացիներին կանգնեցրեց Տիրոջ տունը ձնծղաներով, տաւիղներով, քնարներով Դաւթի և թագաւորի տեսանող Գադի և Նաթան մարգարէի պատուէրին պէս. որովհետև Տիրոջ կողմից էր այս պատուէրը իր մարգարէների ձեռով։
26 Եւ Ղեւտացիները կանգնեցին Դաւթի գործիքներով, և քահանաները՝ փողերով։
27 Եւ Եղեկիան հրամայեց որ ողջակէզը մատուցանեն սեղանի վերայ. և ողջակէզը սկսելիս սկսեց Տիրոջ երգը և փողերը և Դաւթի գործիքները Իսրայէլի թագաւոր Դաւթի գոր-
28 ծիքներով։ Եւ բոլոր ժողովը երկրպագութիւն էր անում, և երգը երգում էր, և փողերը հնչեցնում էին, բոլորը մինչև որ ողջակէզը վերջացրին, թագաւորը 29
և բոլոր նորա հետ գտնուողները ծռելով երկրպագութիւն արին։
Եւ Եղեկիա թագաւորը և իշխանները ասացին Ղեւտացիներին որ օրհնեցին Տիրոջը՝ Դաւթի և Ասափ տեսանողի խօսքերով. և նորանք երգեցին ուրախութեամբ, և խոնարհուելով երկրպագութիւն արին։ 30
Եւ Եղեկիան պատասխան ար- 31
ար և ասաց. Հիմա լցրէք ձեր ձեռքերը Տիրոջ համար, մօտեցէք և զոհեր և օրհնութեան բնծաներ բերէք Տիրոջ տունը։ Եւ ժողովը զոհեր և օրհնութեան բնծաներ բերաւ, և յօժարութիւն ունեցողը՝ ողջակէզներ։ Եւ 32
ժողովի բերած ողջակէզների թիւն էր՝ եօթանասուն արջառ, հարիւր խոյ, երկու հարիւր գառն. այս բոլորը իբրև ողջակէզ Տիրոջ համար։ Եւ նուէրները՝ 33
վեց հարիւր արջառ և երեք հազար ոչխար։ Միայն թէ քիչ էին 34
քահանաները և չկարողացան բոլոր ողջակէզների մորթերը հանել. և իրանց օգնեցին իրանց Ղեւտացի եղբայրները մինչև գործը վերջացաւ և մինչև որ քահանաները սրբուեցան, վասն զի Ղեւտացիք աւելի յօժարամիտ էին սրբուելու քան թէ քահանաները։
Եւ ողջակէզներն էլ շատ էին խա- 35
ղաղութեան զոհերի ճարպով և ողջակէզների թափելու նուէրներով մէկտեղ։ Եւ այսպէս վերահաստատուեցաւ Տիրոջ տան պաշտօնը։ Եւ ուրախացան Եզե- 36
կիան և բոլոր ժողովուրդը նորա վերայ, ինչ որ Աստուած պատրաստել էր ժողովրդի համար, վասն զի յանկարծ եղաւ այս բանը։

ԳԼ. Լ.

Եւ Եղեկիան խօսք ուղարկեց բո- 1
լոր Իսրայէլին և Յուդային, և նամակներ էլ գրեց Եփրեմին և Մանասէին որ գան Երուսաղէմ Տիրոջ տունը Իսրայէլի Տէր Աստուծոյ համար զատիկ անելու

2 Համար։ Եւ Թագաւորը և նորա
իշխանները և բոլոր ժողովքը
Խորհուրդ արին Երուսաղէմում
որ զատիկը երկրորդ ամսումն ա-
3 նեն։ Վասն զի չէին կարող այն
ժամանակին անել. վասն զի քա-
հանաները չէին սրբուած, և ժողովուրդը չէր ժո-
4 ղովուած Երուսաղէմ։ Եւ այս
բանը հաճոյ եղեւ Թագաւորի աչքին և բոլոր ժողովքի աչ-
5 քին։ Եւ որոշեցին, որ լուր ա-
ռնեն բոլոր Իսրայէլի մէջ Բեր-
սաբէէից մինչև Դան, որ գան
զատիկ անեն Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյն Երուսաղէմում. վասն
զի շատուց չէին արել ինչպէս որ
գրուած էր։

6 Եւ սուրհանդակները գնացին
Թագաւորի և իշխանների նա-
մակներով բոլոր Իսրայէլի և Յու-
դայի մէջ, և Թագաւորի հրամա-
նին համեմատ ասացին. Ով Ի-
սրայէլի որդիք, դարձէք Եհովային
Աբրահամի, Իսահակի և Իսրայէ-
լի Տէր Աստուծոյն, և նա էլ կը
դառնայ այն ազատուածներին,
որ մնացել էք Ասորեստանի Թա-
7 գաւորների ձեռքից։ Եւ մի լի-
նէք ձեր հայրերի և ձեր եղբայր-
ների նման, որ իրանց հայրերի
Տէր Աստուծոյ դէմ ապստամբե-
ցին. որոնց նա մատնել է աւեր-
ման ինչպէս որ դուք տեսնում
8 էք։ Արդ մի խստացնէք ձեր պա-
րանոցը ձեր հայրերի պէս. Տէրո-
ջը ձեռք տուէք և եկէք նորա
սրբարանը, որ սրբել է յաւիտե-
նան, և ծառայեցէք ձեր Տէր
Աստուծոյն, և նորա բարկութիւ-
նը կ'դառնայ ձեզա-
9 նից։ Վասն զի եթէ դուք դառ-
նաք Տէրոջը, ձեր եղբայրները ու
ձեր որդիքը գթութիւն կ'գտնան
իրանց գերեվարների առջև, և
այս երկիրը կ'դառնան, վասն զի
ձեր Տէր Աստուածը ողորմած և
գթած է, և ձեզանից իր երեսը
չի դարձնիլ եթէ դառնաք նո-
րան։

10 Եւ սուրհանդակները քաղաքից
քաղաք էին անցնում Եփրեմի և
Մանասէի երկրում մինչև Զա-
բուլոն. բայց նորանք ծաղր էին
անում նորանից վերայ և արհա-
մարհում էին նորանից։ Միայն 11
Ասերից, Մանասէից և Զաբու-
ղոնից խոնարհութեան ոմանք և
եկան Երուսաղէմ։ Յուդայի վը- 12
րայ էլ էր Աստուծոյ ձեռքը նո-
րանց միաբերան անելու համար,
որ թագաւորի և իշխանների պատ-
ուէրը Տիրոջ բանի մէջ կատարեն։

Եւ բազմաթիւ ժողովուրդ հա- 13
ւաքուեցաւ Երուսաղէմ՝ երկ-
րորդ ամսումը բազարջակերաց
ածը կատարելու. խիստ մեծ ժո-
ղովք էր։ Եւ վեր կացան ու հե- 14
ռացրին Երուսաղէմի միջի սեղան-
ները, և բոլոր խունկի սեղանն-
երը հեռացրին, և գցեցին կեդրո-
նի հեղեղատը։ Եւ զատիկը մոր- 15
թեցին երկրորդ ամսի տասն ու
չորսին. և քահանաներն ու Ղե-
ւտացիները ամաչեցին ու սրբուե-
ցան և ողջակէզներ մատուցրին
Տիրոջ տանը։ Եւ կանգնեցին ի- 16
րանց տեղը իրանց կարգին Ա-
ստուծոյ մարդ՝ Մովսէսի օրէնքին
համեմատ. քահանաները սրսկում
էին արիւնը Ղեւտացիների ձեռ-
քից։ Որովհետև շատեր 17
կային ժողովքի մէջ, որ չէին
սրբուած, նորա համար Ղեւտա-
ցիներն էին մորթում զատկի գառ-
ները ամեն մի անմաքուրի հա-
մար, որ սրբեն Տիրոջ համար։
Վասն զի ժողովրդից շատերը՝ 18
Եփրեմից, Մանասէից, Իսաքա-
րից և Զաբուղոնից եւ-ընէէ շա-
տերը չէին մաքրուել. այլ պատ-
կը կերան գրուածին անհամա-
ձայն. բայց Եզեկիան աղօթք ա-
րաւ նորանց համար ասելով. Բա-
րերար Տէրը նորան 19
Որ իր սիրտը պատրաստեց իր
հայրերի Աստուած՝ Տէր Աստու-
ծոյն խնդրելու, թէև չմաքրուած
սրբութեան մ-ա-ր-ի-ն համե-
մատ։ Եւ Տէրը լսեց Եզեկիային, 20
և ժողովրդին *նորանց։

Եւ Երուսաղէմում գտնուող 21
Իսրայէլի որդիքը կատարեցին բա-
զարջակերաց ածը եօթը օր մեծ

---

*լժշկեց

ուրախութեամբ. և օրհնում էին Տիրոջը Ղեւտացիները ու քահանաները ամեն օր Տիրոջ գործիքներով։
22 Եզեկիա քաջալերութեամբ խօսեց բոլոր Ղեւտացիների հետ, որ գիտէին Տիրոջ բարի ընթացքը։
23 Եօթը օր խաղաղութեան զոհեր զոհելով, և իրանց հայրերի Տէր Աստուծոյն գովաբանելով։ Եւ բոլոր ժողովքը խորհուրդ արին, որ ուրիշ եօթն օր էլ ուրախ-
24 թիւն արին։ Վասն զի Յուդայի Եզեկիա թագաւորը ընծայեց ժողովքին հազար զուարակ և եօթը հազար ոչխար, և իշխանները ընծայեցին ժողովքին հազար զուարակ և տասը հազար ոչխար. և
25 շատ քահանաներ սրբուեցան։ Եւ ուրախացան բոլոր Յուդայի ժողովքը, քահանաները, Ղեւտացիները և բոլոր ժողովքը, որ եկել էին Իսրայէլից, և Իսրայէլի երկրից եկող և Յուդայում բնակող պանդուխտները։
26 Եւ եղաւ մեծ ուրախութիւն Երուսաղէմում, վասն զի Իսրայէլի թագաւոր Դաւթի որդի Սողոմոնի օրերից հետէ այսպիսին եղած չէր։
27 Եւ վեր կացան Ղեւտացի քահանաները և օրհնեցին ժողովուրդը, և նորանց ձայնը լսուեցաւ, և նորանց աղօթքը հասաւ երկինքը նորա սուրբ բնակարանը։

ԳԼ. ԼԱ.

1 Եւ երբոր այս ամենը վերջացաւ, դարս եկան ամէն Իսրայէլացիք դէպի Յուդայի քաղաքները, և կոտրատեցին արձանները, և Աստարովթները կտրեցին, և քանդեցին բարձրաւանդակները և սեղանները բոլոր Յուդայից, Բենիամինից, Եփրեմից ու Մանասէից մինչև որ վերջացրին։ Եւ Իսրայէլի բոլոր որդիքը դարձան ամէն մէկն իր կալուածքը իրանց քաղաքները։
2 Եւ Եզեկիան հաստատեց քահանաների և Ղեւտացիների դասակարգերի համեմատ ամեն մէկին իր պաշտօնին համեմատ, թէ քահանաներին թէ Ղեւտացիներին ողջակէզների և խաղաղութեան զոհերի համար, որ Տիրոջ բանակի դռներում ծառայեն, գոհանան և օրհնաբանեն։ 3
Եւ թագաւորի բաժինը իր ստացուածքից ողջակէզների համար՝ առաւօտեան և երեկոյեան ողջակէզների համար, և շաբաթների, ամիսների և տօների ողջակէզների համար, ինչպէս որ գրուած է Տիրոջ օրէնքում։ 4
Եւ հրամայեց Երուսաղէմում բնակող ժողովրդին, որ տան քահանաների և Ղեւտացիների բաժինը, որպէս զի հաստատ մնան Տիրոջ օրէնքում։ 5
Եւ երբոր այս բանը տարածուեցաւ, այն ժամանակ Իսրայէլի որդիքը առատօրէն բերին ցորենի, գինու, իւղի, մեղրի և բոլոր անդաստանից բերքերի երախայրիքը, և ամեն բանի առատութեամբ տուին։ 6
Եւ Յուդայի քաղաքներում բնակող Իսրայէլի և Յուդայի որդիքը նորանք էլ արջառների և ոչխարների տասանորդները և իրանց Տէր Աստծոյն նուիրած սուրբ բաների տասանորդները բերին և կուտակ կուտակ արին։ 7
Երրորդ ամսում սկսեցին դնել կուտակները և եօթներորդ ամսում վերջացրին։ 8
Եւ Եզեկիան և այն իշխանները եկան և տեսան կուտակները, և օրհնեցին Տիրոջը և նորա Իսրայէլ ժողովրդին։ 9
Եւ Եզեկիան հարցրեց քահանաներից և Ղեւտացիներից կուտակների մասին։ 10
Եւ Սադովկի տունից եղող քահանայապետ Ազարիան նորան պատասխանեց և ասաց. Այն ժամանակից որ սկսել են ընծաները բերել Տիրոջ տունը, կերել և կշտացել ենք, և խիստ շատ մնացել է, վասն զի Տէրը օրհնել է իր ժողովրդին. և մնացորդը այս առատութիւնն է։
Եզեկիա հրամայեց Տիրոջ տանը շտեմարաններ պատրաստել. և պատրաստեցին։ 11 12

րին ընծան, տասանորդը և նուէրները ճշդութեամբ. և նոցանց վերակացուն էր Ղևատացի Փանուէան, և նորա եղբայրը Սեմէի՝ փոխանորդ։ Եւ Յեքբէլը, Ազգիան, Նահաթը, Ասայէլը, Յերիմովթը, Յովզաբադը, Եղիէլը, Յեամնքիան, Մաամթը և Բանեան վերակացուներ էին Փանուէայի և նորա եղբայր Սեմէիի ձեռքի տակին, Եղկիա թագաւորի և Ասուածոյ տան առաջնորդ Ազարիայի հրամանով։ Եւ Ղևատացի Յեմնայի որդին Կաղբէն արևելեան կողմի դռնապանն էր Ասուածոյ կամաւոր ընծաների վերայ, որ տար Տիրոջ բարձրացնելու ընծան և ամենասուրբ բաները։ Եւ նորա մօտ էին Եղենը, Մենիամինը, Յեսուն, Սեմայիան, Ամարիան և Սեքենիան քահանայից քաղաքներուն համար տարմանութեամբ ցուցակելը, որ տային իրանց եղբայրներին ըստ կարգին թէ մեծին թէ փոքրին. Բացի ազգահամարուն դրուած երեք տասեկանից և վեր եղող արուներից, այն բոլորից որ գալիս են Տիրոջ տունը ամեն օրեայ գործով իրանց պաշտօնի համար, իրանց ծառայութիւններով իրանց դասակարգութեան համեմատ. Եւ ազգահամարուն դրուած քահանաներին իրանց ազգատոհմերի համեմատ և քսան տասեկանից և վեր եղող Ղևատցիներին իրանց պահպանութեան և դասակարգութեան համեմատ. Եւ ազգահամարուն դրուած նորանց ամեն ընտանիքներին կանանցը, տղայոցը և աղջկանցը բոլոր ժողովքին, վասն զի իրանց հաւատարմութեամբը սրբութեան սրբութեան համար։ Եւ նորանց քաղաքների տասանձանաց տասերուն եղող Ահարոնի որդիք քահանաների համար ամեն մէկ քաղաքներուն իրանց անուններով յիշուած մարդիկ էին դանուելոյ, որ բաժիններ տային քահանայից մէջ տասներին և Ղևատցիներին ազգահամարուն դրուածներին։ Եւ այսպէս տուաւ Եղկիա բոլոր Յուդայի մէջ, և իր Տէր Ասուածոյ առջև բարի, ուղիղ և ճշմարիտ եղածն արաւ։

Եւ իր ամեն գործքերուն, որ սկսաւ, թէ Ասուածոյ տան ծառայութեան վերաբերմամբ, և թէ օրէնքի և պատուիրանքի նկատմամբ, իր Ասուածոյն խնդրելով իր բոլոր սրտովը արաւ և յաջողեց։

ԴԼ· ԼՐ

Ահա գործերից և հաւատարմութիւնից յետոյ եկաւ Ասորեստանի Սեննեքերիմ թագաւորը և մտաւ Յուդա, և բանակեց պատրաստուր քաղաքների վերայ և մտածում էր առնել նորանց։ Եւ երբոր Եղկիան տեսաւ որ Սեննեքերիմը եկել է, և դիտաւորութիւնն է պատերազմել Երուսաղէմի հետ։ Այն ժամանակ խորհուրդ արաւ իր իշխանների և զօրաւորների հետ, որ գոցէ քաղաքի դրսումը եղող աղբիւրների ջրերը. և նորանք օգնեցին նորան։ Եւ շատ ժողովուրդ ժողովեցաւ, և գոցեցին բոլոր աղբիւրները և երկրի միջովն անցնող հեղեզատը, ասելով. Ինչո՞ւ համար գան Ասորեստանի թագաւորները և շատ ջուր գտնան։ Եւ ուժովացաւ Եզեկիա, և շինեց բոլոր քանդուած պարիսպները և աշտարակները բարձրացրեց, և դրսից մէկ ուրիշ պարիսպ շինեց և նորոգեց Դաւթի քաղաքում եղող Մելօնը, և շատ զէնքեր և ասպարներ շինեց։ Եւ պատերազմի զօրապետներ դրաւ ժողովրդի վերայ, և նորանց ժողովեց քաղաքի դրան հրապարակը իր մօտ և քաջալերութեամբ խօսեց նորանց հետ ասելով. Զօրացէք և քաջացէք, մի վախենար և մի զարհուրիք Ասորեստանի թագաւորի երեսից և նորա հետ եղող բոլոր բազմութեան երեսից, որովհետև մեզ հետ եղողները աւելի շատ են նորա հետ եղողներից։ Նորա հետ կայ մարմնեղէն

բազուկ, իսկ մեզ հետ է մեր Աստուածը եհովան մեզ օգնելու համար և մեր պատերազմները պատերազմելու համար. և ժողովուրդը վստահացաւ Յուդայի թագաւոր Եզեկիայի խօսքերի վերայ:

9 Սորանից յետոյ Ասորեստանի թագաւորը՝ Սեններիմն ուղարկեց իր ծառաներին Երուսաղէմ, երբոր ինքը և իր բոլոր զօրքը Լաքիսի դիմացն էր, Յուդայի Եզեկիա թագաւորի և Երուսաղէմում եղող բոլոր Յու-
10 դայի մօտ ասելով. Այսպէս է ասում Ասորեստանի Սեններիմ թագաւորը. Ո՞ւր ինչի՞ էք ապաւինել և նստել Երուսաղէմ
11 բերդում: Չէ՞ որ Եզեկիան ձեզ մոլորեցնում է, որ ձեզ սովի և ծարաւութեան մահի մատնէ ասելով. Թէ Մեր Աստուածը եհովան մեզ ազատելու է Ասորեստանի թագաւորի ձեռքից:
12 Չէ՞ որ նա ինքը Եզեկիան հեռացրեց նորա բարձրաւանդակները և սեղանները և ասաց Յուդային ու Երուսաղէմին. Թէ Մէկ սեղանի առջև երկրպագութիւն արէք, և նորա վերայ խունկ ծխեցէք:
13 Չէ՞ք գիտում թէ ի՛նչ արինք ես և իմ հայրերը երկիրների ժողովուրդներին. միթէ կարողացան այն երկիրների ազգաց աստուածները նորանց ե-
14 կիրն ազատել իմ ձեռքից: Իմ հայրերի բնաջինջ արած ազգերի բոլոր աստուածների ո՞րն է որ կարողացաւ իր ժողովուրդը ազատել իմ ձեռքից, որ ձեր Աստուածը կարողանայ ձեզ ա-
15 զատել իմ ձեռքից: Ապա ուրեմն թող Եզեկիան ձեզ չխաբէ և ձեզ չմոլորեցնէ այդպէս. և նորան մի հաւատաք, որովհետև ոչ մի ազգի և թագաւորութեան ոչ մի աստուածը չէ կարող իր ժողովուրդն ազատել իմ ձեռքից և իմ հայրերի ձեռքից, ուր ճնաց ձեր Աստուածն, որ ձեզ չի
16 ազատիլ իմ ձեռքից: Եւ դեռ—եւ խօսեցին նորա ծառաները Տէր Աստուծոյ մասին և նորա ծառայ Եզեկիայի մասին: Եւ Աե-
17 նեէրիմ նամակներ գրեց Իսրայէլի Տէր Աստուծոյն հայհոյելով և ասելով նորա մասին այսպէս. Ինչպէս որ երկիրների ազգաց աստուածները իրանց ժողովուրդը չազատեցին իմ ձեռքից, այսպէս էլ Եզեկիայի Աստուածը չի ազատիլ իր ժողովուրդին իմ ձեռքից: Եւ մեծ ձայ-
18 նով կանչեցին Երուսաղէմի ժողովուրդը, որ պարսպի վերայ էր, նորանց վախեցնելու և շփոթեցնելու համար, որ քաղաքը առնեն: Եւ Երուսա-
19 ղէմի Աստուծոյ վերայ խօսեցին ինչպէս երկրի ժողովուրդների աստուածների մասին, որոնք մարդու ձեռաց գործ են.

Եւ աղօթք արին Եզեկիա թա-
20 գաւորը և Ամոսի որդի Եսայի մարգարէն այս բանի համար և աղաղակեցին դէպի երկինք: Եւ
21 եհովան մի հրեշտակ ուղարկեց և բնաջինջ արաւ ամեն քաջ զօրաւորին, զօրավարին և իշխանին Ասորեստանի թագաւորի բանակում. և ամօթով եաւ դարձաւ իր երկիրը. և մտաւ իր աստուածոյ տունը, և նորա երանքից եղած որդիները նորան այնտեղ սպանեցին: Այսպէս ազատեց եհո-
22 վան Եզեկիայից և Երուսաղէմի բնակիչներին Ասորեստանի Սեններիմ թագաւորի և ամեն ձեռքից, և նորանց պաշտպանեց ամեն կողմանէ: Եւ շատերը բե-
23 ծաներ էին բերում Երուսաղէմ Տիրոջ համար, և պատուական բաներ՝ Յուդայի Եզեկիա թագաւորի համար. և բարձրացաւ բոլոր ազգերի աչքում ասրանից յետոյ:

Այն ժամանակները Եզեկիան
24 հիւանդացաւ մեռնելու չափ, և աղօթք արաւ Տիրոջը. և նա խօսեց նորա հետ և մի նշան տուաւ նորան: Բայց Եզեկիան իր վերայ
25 եղած բարերարութեան համեմատ չհատուցրեց, վասն զի սիրտը հպարտացաւ: և բարկութիւն եկաւ նորա վերայ, Յուդայի և Երուսաղէմի վերայ: Սակայն խո-
26

նաբհուեցաւ Եղեկիան իր արտի հպարտութեան համար՝ ինքը և Երուսաղէմի բնակիչները. վասն որոյ և Տիրոջ բարկութիւնը չեկաւ նորանց վերայ Եղեկիայի օրերին։

27 Եւ Եղեկիան խիստ շատ հարստութիւն և փառք ունեցաւ, և իր համար գանձարաններ շինեց արծաթի, ոսկու, պատուական քարերի, խնկեղէնների, ասպարների և ամեն տեսակ ցանկալի
28 անօթների համար. Եւ շտեմարաններ ցորենի, գինու և իւղի բերքերի համար, և մսուռներ ամեն տեսակ անասունների համար, և փարախներ հօտերի հա-
29 մար։ Եւ իր համար քաղաքներ շինեց. և շատ ոչխարներ ու արջառներ ունէր. վասն զի Աստուած նորան խիստ շատ ստաց-
30 ուածք էր տուել։ Եւ այս Եղեկիան խցկեց Գեհոնի վերի ջրանցքը, և նորան ուղղեց դէպի Դաւթի քաղաքի արեւմտեան ցած կողմը։ Եւ Եղեկիան յաջողութիւն գտաւ իր բոլոր գործքում։
31 Եւ այսպէս Բաբելոնի իշխանաց դեսպանների մօտ, որ ուղարկել էին նորա մօտ այն նշանի համար հարցնելու որ երկրի մէջ եղել էր, Աստուած նորան թողուաւ նորան փորձելու համար, որ նորա սրտինը բոլորը իմանայ։
32 Եւ Եղեկիայի գործերի ճշտորդը և նորա առաքինութիւնները, ահա գրուած են Ամովսի որդի Եսայի մարգարէի տեսլեանների գրքում, և Յուդայի և Իսրայէլի թագաւորների գրքում։
33 Եւ Եղեկիան ննջեց իր հայրերի հետ և նորան թաղեցին Դաւթի որդիանց գերեզմաններում. և պատիւ արին նորան նորա մահուան ժամանակին բոլոր Յուդան և Երուսաղէմի բնակիչները։ Եւ նորա որդին Մանասէն թագաւոր եղաւ նորա տեղ։

ԳԼ. ԼԳ

1 Մանասէ տասներկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և յիսունհինգ տարի թագաւորեց Երուսաղէմում։ Եւ չարու- 2
թիւն արաւ Տիրոջ աչքի առաջից՝ այն ազգերի գարշութեանց պէս, որոնց քշել էր Եհովան Իսրայէլի որդիանց առջևից։ Եւ դարձեալ 3
շինեց այն բարձրաւանդակները, որ քանդել էր նորա հայրը Եզեկիան. և Բահաղիմի համար սեղաններ կանգնեցրեց, և Աստարովթներ շինեց, և երկնից բոլոր զօրքերին երկրպագութիւն արաւ, և նորանց ծառայեց։ Եւ 4
սեղաններ շինեց Տիրոջ տանը, որի համար Տէրն ասել էր Թէ Իմ անունը Երուսաղէմում լինի յաւիտեան։ Եւ սեղաններ շինեց 5
երկնից բոլոր զօրքերի համար Տիրոջ տան երկու գաւիթներում։ Եւ նա իր որդիներին անց կաց- 6
րեց կրակով Ենոմի որդու ձորում, և գուշակութիւն, հմայութիւն և դիւթութիւն էր անում, և շինեց մեռելահարցուկներին և նշանագէտներին. նա շատ չարութիւն արաւ Տիրոջ աչքի առաջը, և նորան բարկացրեց։ Եւ իր շինած քանդակեալ 7
կուռքը դրաւ Աստուծոյ տանը, որի համար Աստուած ասել էր Դաւթին և նորա որդի Սողոմոնին. Այս տանը և Երուսաղէմում, որ ես ընտրել եմ Իսրայէլի բոլոր ցեղերից, իմ անունը պիտի դնեմ յաւիտեան։ Եւ 8
Իսրայէլի ոտը այլևս պիտի չշարժեցնեմ այն երկրից, որի մէջ հաստատեցի ձեր հայրերին, միայն եթէ զգուշանան անելու բոլոր իմ հրամանց պատուիրածը այն բոլոր օրէնքը և պատուիրանքը և իրաւունքները Մովսէսի ձեռքով։ Եւ մոլորեցրեց 9
Մանասէն Յուդային և Երուսաղէմի բնակիչներին, որ այն ազգերից աւելի չարութիւն անեն, որոնց փչացրեց Տէրը Իսրայէլի որդիանց առջև։ Եւ Տէրը խօսեց 10
Մանասէի և նորա ժողովրդի հետ. բայց նորանք ականջ չդրին։

Եւ Տէրը նորանց վերայ բերաւ 11
Ասորեստանի թագաւորի զօրա-

գլուխներին, և նորանք բռնեցին Մանասէին կարթերով, և նորան կապեցին զոյգ առնակապերով և տարան Բաբիլոն: 12 Եւ երբոր նեղութեան մէջ էր, խնդրեց իր Տէր Աստուծոյ երեսը, և շատ խոնարհուեցաւ իր հայրերի Աստուծոյ առջևը: 13 Եւ աղօթք արաւ նորան, և նա նորա աղօթքը ընդունեց և նորա աղաչանքը լսեց, և նորան եւ դարձրեց Երուսաղէմ իր թագաւորութեան մէջ. և Մանասէն խմացաւ, որ 14 Եհովան է Աստուած: Եւ ասոնից յետոյ մի պարիսպ շինեց Դաւթի քաղաքից դուրս Գեհոնի արևմտեան կողմամբ հեղեղատումը, և մինչև Ձկանց դրան մուտքը, և Ոփղը շրջապատելով նորան շատ բարձրացրեց. և զօրք զոյն բոլոր պարսպատուր քաղաքներուն մէջ զօրքի իշխաններ դրաւ: 15 Եւ հեռացրեց օտար աստուածներին և կուռքը Տիրոջ տանից, և բոլոր այն սեղանները, որ շինել էր Տիրոջ տան լեռան վերայ և Երուսաղէմում. և նորանց 16 քաղաքից դուրս գցեց: Եւ շինեց Տիրոջ սեղանը և նորա վերայ զոհեց խաղաղութեան և շնորհակալութեան զոհեր. և պատուիրեց Յուդային, որ Իսրայէլի Տէր Աստուծոյն ծառայեն: 17 Սակայն ժողովուրդը տակաւին զոհում էր բարձրաւանդակների վերայ, թէև իրանց Տէր Աստուծոյ համար:

18 Եւ Մանասէի գործքերի մնացորդը և նորա աղօթքը առ Աստուած, և Իսրայէլի Տէր Աստուծոյ անունով նորա հետ խօսող տեսանողների խօսքերը, տես նորանք Իսրայէլի թագաւորաց 19 պատմութեան մէջ են: Եւ նորա աղօթքը, և նորա ընդունելը, և նորա բոլոր մեղքը և անօրէնութիւնը, և այն տեղերը, ուր որ բարձրաւանդակներ էր շինել և Աստարովթներ ու կուռքեր կանգնեցրել իր խոնարհուելուցն առաջ, տես գրուած են 20 Հոզայի յիշատակարանում: Եւ Մանասէն ննջեց իր հայրերի հետ, և նորան թաղեցին իր տանը, և նորա որդին Ամմոն թագաւոր եղաւ նորա տեղ:

21 Ամմոն քսան երկու տարեկան էր երբոր թագաւոր եղաւ, և երկու տարի թագաւորեց Երուսաղէմում: 22 Եւ չարութիւն արաւ Տիրոջ աչքի առջև, ինչպէս որ արել էր իր հայրը Մանասէն, և այն ամեն կուռքերին, որոնք իր հայրը Մանասէն շինել էր, Ամմոն զոհեր մատուցրեց և նոցանց ծառայեց: 23 Եւ չխոնարհուեցաւ Տիրոջ առջև, ինչպէս որ իր հայրը Մանասէն էր խոնարհուել, այլ այս Ամմոն յանցանքը աւելացրեց. 24 Եւ նորա ծառաները դաւաճանութիւն արին նորա դէմ և նորան սպանեցին իր տանը: 25 Եւ երկրի ժողովուրդը զարկեց Ամմոն թագաւորի դէմ դաւաճանողներին, և երկրի ժողովուրդը թագաւոր արաւ նորա որդի Յոսիային նորա տեղ:

ԳԼ. ԼԴ

1 Ութ տարեկան էր Յոսիան երբոր թագաւոր եղաւ, և երեսուն ու մէկ տարի թագաւորեց Երուսաղէմում: 2 Եւ Տիրոջ աչքի առջև ուղղութիւն արաւ, և գնաց իր հօր Դաւթի ճանապարհներովը, և չխոտորեց ոչ կամ ձախ:

3 Եւ իր թագաւորութեան ութերորդ տարին, որ ինքը դեռ պատանի էր, սկսեց խնդրել իր հօր Դաւթի Աստուծոյն, և երկոտասաներորդ տարին սկսեց մաքրել Յուդան և Երուսաղէմը բարձրաւանդակներից, Աստարովթի կուռքերից և քանդակած ու ձուլածոյ կուռքերից: 4 Եւ քանդեցին նորա առջև Բահաղիմի սեղանները, և նորանց վերայի արեգական կուռքերը կոտրատեց, և Աստարովթի կուռքերն ու ձուլածոյ կուռքերը փշրեց և մանրեց, և ցրուեց նորանց զոհողների գերեզմանների վերայ: 5 Եւ քուրմերի ոսկորները սրբեց նորանց սեղանների վերայ, և մաքրեց Յուդան և Երուսաղէմը:

6 Եւ Մանասէի, Եփրեմի և Շմուէլի քաղաքներուն, և մինչև Նեփթաղիմ՝ շուրջանակի նահանգ
7 աւերակներուն՝ Կոծանից սեղանները և Աստարովթի կուռքերը, և քանդակած կուռքերը փշրեց և մանրեց, և բոլոր արձական կուռքերը կատարեց Իսրայէլի բոլոր երկրին, և դարձաւ Երուսաղէմ։
8 Եւ իր թագաւորութեան տասներորդ տարին, երբոր երկիրը և տունը մաքրեց ուղարկեց Սաբելոյի որդի Սափանին, և քաղաքի իշխան Մասէային և Յովքազի որդի Յովաք յիշատակաց դպրին, որ իր Տէր Աստուծոյ
9 տունը նորոգեն։ Եւ նոքա եկան Քեղկիա քահանայապետի մօտ, և տուին այն փողը, որ եկել էր Աստուծոյ տունը, այն որ ժողովել էին դրան պահապան Ղեւտացիները Մանասէի և Եփրեմի ձեռքից և Իսրայէլի բոլոր մնացորդից և բոլոր Յուդայից և Բենիամինից և Երուսաղէմի բնա-
10 կիչներից։ Այսինքն տուին այն գործաւորների ձեռքը որ նշանակուած էին Տիրոջ տան վերայ, և նոքանք էլ տուին այն գործաւորների ձեռքը, որ գործում էին Տիրոջ տանը՝ տունը կարկատելու և նորոգելու հա-
11 մար։ Եւ տուին հիւսներին և շինողներին, և տաշած քարեր և երանների համար փայտեր տանելու այն տների համար, որոնց քանդել էին Յուդայի թագա-
12 աորները։ Եւ այն մարդիկը հաւատարմութեամբ էին գործում գործը, և նոցանից վերայ նշանակուած էին՝ Մերարիի որդիներից Ղեւտացի Յեթը և Աբդիան, և Կոհաթեանց որդիներից Զաքարիան և Մեսուղամը իրրև վերակացուներ. և Ղեւտացիները՝ ամեն մի նուագարանով երգել
13 հասկացողը։ Բեռնակիրների վերայ էլ, ամեն տեսակ գործեր կատարողների վերայ էլ վերակացուներ էին. նմանպէս Ղեւտացիներից էին դպիրները, տասնապետները և դռնապանները։

14 Եւ երբոր Տիրոջ տունը բերուած փողը հանում էին, Քեղկիա քահանան գտաւ Մովսէսի ձեռքով եղած Տիրոջ օրինաց
15 գիրքը։ Եւ Քեղկիան պատասխանեց և ասաց Սափան գրին. Օրինաց գիրքը գտայ Տիրոջ տունը. և Քեղկիան այն գիրքը տուաւ Սափան գրին։ Եւ Սա-
16 փանն այն գիրքը բերաւ թագաւորին, և պատասխան բերաւ թագաւորին ասելով. Ամեն ինչ որ յանձնած է քո ծառաների ձեռքը՝ նոքանք կատարում են։
17 Եւ Տիրոջ տան մէջ գտնուած փողը թափեցին և տուին նոքան վերակացուների ձեռքը և գործաւորների ձեռքը։
18 Եւ Սափան գրիրը պատմեց թագաւորին ասելով. Քեղկիա քահանան ինձ մէկ գիրք է տուել. և Սափանը նորա մէջից կարդաց թագաւորի
19 առջև։ Եւ թագաւորը լսելով օրէնքի խօսքերը՝ պատռեց իր հանդերձները։
20 Եւ թագաւորը հրամայեց Քեղկիային, և Սափան որդի Աբիկամին, և Միքիայի որդի Աբդոնին և Սափան գրին և թագաւորի ծառայ Ասայիային, և ասաց.
21 Գնացէք հինձ համար և Իսրայէլի ու Յուդայի մնացորդների համար այս գտնուած գրքի խօսքերի մասին հարցրէք Տիրոջը, վասն զի մեծ է Տիրոջ մեզ վերայ թափուած բարկութիւնը, որովհետև մեր հայրերը չպահեցին Տիրոջ խօսքը որ անէին բոլոր այս գրքում
22 գրուածին համեմատ։ Եւ Քեղկիան և թագաւորի մարդիկը գնացին Ասայի որդի Թեկուայի որդի Սեղեմ հանդերձապետի կնոջ Ողդա մարգարէուհու մօտ, և նա բնակում էր Երուսաղէմ Մասենայում. և նորա հետ խօսեցին այնպէս։

23 Եւ նա ասաց նոցանից. Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. Ասացէք այն մարդուն, որ
24 ձեզ ինձ մօտ է ուղարկել. Տէրը այսպէս է ասում. Ահա ես այս տեղի և նորա բնակիչների վերայ չարիք եմ բերելու՝ այն բոլոր

անէծքները որ գրուած են այն
գրքի մէջ որ կարդացել են Յու-
25 դայի թագաւորի առջևը։ Նորա
համար որ ինձ թողած ուրիշ
աստուածներուն խունկ ծխեցին,
որ բարկացնեն իրանց ձեռքերի
բոլոր գործքերովը. և իմ բար-
կութիւնը պիտի թափուի այս
տեղի վերայ և պիտի չհանգչի։
26 Եւ Յուդայի թագաւորին, որ
ձեզ ուղարկել է Տիրոջը հարց-
նելու, այսպէս ասէք նորան.
Այսպէս է ասում Իսրայէլի Տէր
Աստուածը այն քո լսած խօսքե-
27 րի համար. Որովհետև քո սիրտը
կակղացաւ և խոնարհուեցար Ա-
ստուծոյ առջևը այս տեղի և նորա
բնակիչների մասին երբ խօսքերը
լսելով, և խոնարհուեցար իմ
առջևը, և պատառեցիր քո հան-
դերձները, և լացիր իմ առջևը,
ուրեմն ես էլ լսեցի, ասում
28 է Եհովան։ Ահա ես քեզ կ'ժո-
ղովեմ քո հայրերի մօտ, և կը
դրուիս քո գերեզմանների մէջ
խաղաղութեամբ, և քո աչքերը
չեն տեսանել այն բոլոր չարիքը,
որ ես պիտի բերեմ այստեղի վե-
րայ և նորա բնակիչների վերայ։
Եւ նորանք պատասխանը բերին
թագաւորին։
29 Եւ թագաւորը մարդ ուղարկեց
և ժողովեց Յուդայի և Երուսա-
30 ղէմի բոլոր ծերերին։ Եւ թագա-
ւորը և Յուդայի բոլոր մարդիկը
և Երուսաղէմի բնակիչները և
քահանաները ու Ղեւտացիները
և բոլոր ժողովուրդը մեծից մինչև
փոքրը վեր գնացին Տիրոջ տունը,
և նորանց ականջին կարդացին
Տիրոջ տանը գտնուած ուխտի
31 գրքի բոլոր խօսքերը։ Եւ թագա-
ւորը կանգնած էր իր տեղը, և
ուխտ արաւ Տիրոջ առջև, որ
գնայ Տիրոջ ետևից և պահէ նո-
րա պատուէրները, վկայութիւն-
ները և կանոնները իր բոլոր սըր-
տովը և իր բոլոր հոգովը, որ
կատարէ այս գրքի մէջ գրուած
32 ուխտի խօսքերը։ Եւ կանգնեցրեց
բոլոր Երուսաղէմում և Բենիա-
մինում գտնուողներին. և Երու-
սաղէմի բնակիչները արին Աստու-
ծոյ իրանց հայրերի Աստուծոյ
ուխտին համեմատ։ Եւ Յոսիան 33
հեռացրեց բոլոր գարշութիւննե-
րը Իսրայէլի որդիանց բոլոր եր-
կիրներից. և Իսրայէլի մէջ բո-
լոր գտնուողներին ծառայութիւն
անել տուաւ իրանց Տէր Աստու-
ծոյ ծառայութիւնը. և նորա բո-
լոր օրերումը չհեռացան իրանց
հայրերի Տէր Աստուծոյ ետևից։

ԳԼ. ԼԵ

Եւ Յոսիան երուսաղէմում զա- 1
տիկ արաւ Տիրոջ համար, և
զատիկը մորթեցին առաջի ամի
տաճարում։ Եւ կանգնեցրեց 2
քահանաներին իրանց պահպա-
նութեանց վերայ, և նորանց քա-
ջալերեց Տիրոջ տան ծառայու-
թիւնն անել։ Եւ ասաց բոլոր 3
Իսրայէլին սովորեցնող Տիրոջը
նուիրուած Ղեւտացիներին. Սուրբ
տապանակը դրէք այն տանը, որ
շինեց Իսրայէլի թագաւոր Դա-
ւիթ որդի Սողոմոնը. ձեզ պէտք
չէ, որ նա ուսի վերայ բեռ լի-
նի. հիմա դուք ծառայեցէք ձեր
Տէր Աստուծոյն և նորա Իսրայէլ
ժողովրդին. Եւ պատրաստ եղէք 4
ձեր ազգատոհմերովը ձեր դա-
սակարգութեանց համեմատ Իս-
րայէլի թագաւոր Դաւթի գրու-
ածին և նորա որդի Սողոմոնի գրա-
ծին պէս. Եւ կանգնեցէք սրբա- 5
րանումը ազգատոհմերի բաժան-
մունքների համեմատ ձեր եղբայր-
ների՝ ժողովրդի որդիանց համար
և Ղեւտացոց ազգատոհմերի դա-
սակարգների համեմատ. Եւ մոր- 6
թեցէք զատիկը և սրբուեցէք,
և պատրաստեցէք ձեր եղբայր-
ների համար, որ Մովսէսի ձեռ-
քով խօսուած Աստուծոյ խօսքին
պէս անէք։ Եւ Յոսիան պար- 7
գևեց բոլոր այնտեղ գտնուող
ժողովրդի որդիներին համարով
հօտերից երեսուն հազար գառն
և այծի ձագ՝ բոլորը պատկի հա-
մար, և երեք հազար արջառ.
սրանք թագաւորի առոգաւած-
քից էին։ Եւ իր իշխանները 8
պարգևեցին յօժարութեամբ ժո-

զովրդին, քահանաներին և Ղևտացիներին. Աստուծոյ տան իշխանները՝ Բնդկիան, Զաքարիան և Յեքիէլը տուին քահանաներին զատկի համար երկու հազար վեց հարիւր ոչխար և երիք հարիւր տա-
9 ջառ։ Եւ Քոնոնիան ու նորա եղբայրները Սեմայիան և Նաթանայէլը և Ղևտացոց իշխանները՝ Ասաբիան, Յեհիէլը և Յովզաբադը պարգևեցին Ղևտացիներին զատկի համար հինգ հազար դառն, և հինգ հարիւր արջառ։
10 Եւ պաշտօնը պատրաստուեցաւ. և քահանաները կանգնեցին իրանց կանգնելու տեղը և Ղևտացիներն իրանց դասակարգութեանց համեմատ՝ թագաւորի
11 պատուէրին պէս։ Եւ մորթեցին զատիկը, և քահանաները սրսկում էին նորանց ձեռքիցը, իսկ
12 Ղևտացիները մաշկում էին։ Եւ ջնկում էին ողջակէզացուները, որ տան ժողովրդի որդիանցը պատանիներին բաժանմանց համեմատ Տիրոջը մատուցանելու համար ինչպէս որ գրուած է Մովսէսի գրքումը. և այսպէս էլ
13 արջառներին։ Եւ զատիկը խորովեցին կրակով բատկանին, բայց նուէրները եփեցին կոթոռաներում, սաներում և տապակներում, և շուտով հասցրին ժողովրդի բո-
14 լոր որդիանցը։ Եւ յետոյ պատրաստեցին իրանց համար և քահանայից համար, վասն զի Ահարոնի որդիքը քահանաները մինչև գիշերը ողջակէզներն ու ճարպերն էին մատուցանում. իսկ Ղևտացիք պատրաստեցին իրանց համար և Ահարոնի որդիանց՝ քա-
15 հանայից համար։ Եւ Ասափի որդիանց երգեցողները կանգնել էին իրանց կանգնելու տեղը Դաւթի, Ասափի, Եդիմանի և թագաւորական տեառնից հրեշտաներ պատուէրին համեմատ, և դռնապաններն էլ ամեն մէկ դրան վերայ. նորանց պէտք չէր որ իրանց պաշտօնից հեռանային, վասն զի իրանց եղբայրները Ղևտացիք պատրաստում էին նորանց համար։
16 Այսպէս պատրաստուեցաւ այն

օրը Տիրոջ բոլոր պաշտօնը զատիկը կատարելու և ողջակէզներ մատուցանելու Տիրոջ սեղանի վերայ՝ Յովսիա թագաւորի պատուէրին պէս։ Եւ այնպէս գտնուող 17
Իսրայէլի որդիքը այն ժամանակին կատարեցին զատիկը և բազարջակերաց տօնը եօթը օր։ Եւ 18
Իսրայէլում նորա նման զատիկ չէր կատարուել Սամուէլ մարգարէի օրերից հետէ. և Իսրայէլի բոլոր թագաւորները այնպիսի զատիկ չէին արել, ինչպէս արին Յովսիան, և քահանաները, Ղևտացիները և բոլոր այնտեղ գտնուող Յուդան և Իսրայէլը և Երուսաղէմի բնակիչները։ Յովսիայի թագաւորութեան տասնուութերորդ տարին կատարուեցաւ այս զատիկը։
Այս ամենից յետոյ որ Յովսիա 20
սիան կարգադրեց Աստուծոյ տունը, վեր եկաւ Եգիպտոսի Նեքաւով թագաւորը Եփրատի մօտ եղող Քարքամիսի դէմ պատերազմելու. և Յովսիան գնաց ե-
կաւ նորա առջեւը ելլելու։ Բայց 21
նա պատգամաւորներ ուղարկեց նորա մօտ ասելով. Ո՞ւ ինձ հետ ինչ գործ ունիս, ով Յուդայի թագաւոր. քեզ դէմ չեմ եկած այսօր, այլ ինձ հետ պատերազմողի տան հետ. և Աստուած հրամայել է ինձ շտապել. եկ քաշուիր ինձ հետ եղող Աստուածանից, որ քեզ չկործանէ։
Սակայն Յովսիան երեսը նորանից 22
չդարձրեց, այլ նորա հետ պատերազմելու համար հագուստը փոխեց, և չլսեց Աստուծոյ բերանից գո՛ւբ եւ՛ն նեքաւովի խոսքին, և գնաց Մակեդովի հովիտը պատերազմելու։ Եւ ազեղ- 23
նաւորները նետով զարկեցին Յովսիա թագաւորին. և թագաւորն ասաց իր ծառաներին. Ինձ տարէք, վասն զի սաստիկ վիրաւորուած եմ։ Եւ նորա ծառաները 24
նորան տարին կառքիցը և նորան հեծեցրին նորա երկրորդ կառքի վերայ և նորան բերին Երուսաղէմ, և նա մեռաւ, և թագուեցաւ իր հայրերի դերեզմանա-

տան. և բոլոր Յուդան և Երուսաղէմը սուգ արին Յովսիայի վերայ: Եւ Երեմիան ողբ ասաց Յովսիայի վերայ. և բոլոր երգիչներն ու երգչուհիները յիշում են Յովսիային իրանց ողբերումը մինչև այսօր. և նորանից սովորութիւն շինեցին Իսրայէլի համար. և ահա նորանք գրուած են ողբերումը:

Եւ Յովսիայի ճնացորդ պատմութիւնը և նորա բարեգործութիւնները, ը-ը-- Տիրոջ օրէնքումը գրուածին համեմատ, Եւ նորա առաջին և վերջին պատմութիւնը, ահա գրուած են Իսրայէլի և Յուդայի թագաւորների գրքումը:

ԳԼ. ԼԶ

Եւ երկրի ժողովուրդը առին Յովհայի որդի Յովաքազին և նորան թագաւոր արին իր հօր տեղ Երուսաղէմում: Քսանեքեք տարեկան էր Յովաքազը երբոր թագաւոր եղաւ, և երեք ամիս թագաւորեց Երուսաղէմում: Եւ նորան հեռացրեց -ֆ-ե Եգիպտոսի թագաւորը Երուսաղէմում, և հարկ դրաւ երկրի վերայ հարիւր տաղանդ արծաթ և մէկ տաղանդ ոսկի: Եւ Եգիպտոսի թագաւորը նորա եղբայր Եղիակիմին թագաւոր դրաւ Յուդայի և Երուսաղէմի վերայ, և նորա անունը փոխեց Յովակիմ. իսկ նորա եղբայր Յովակիմին առաւ Նեքաւով և տարաւ Եգիպտոս:

Յովակիմը քսանուհինգ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ և տասնումէկ տարի թագաւորեց Երուսաղէմում. և չարութիւն արաւ իր Տէր Աստուծոյ աչքի -ը-ը: Նորա վերայ եկաւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը և նորան կապեց կրկին ոտնակապերով, որ նորան տանէ Բաբելոն: Եւ Տիրոջ տան անօթներից Նաբուգոդոնոսոր տարաւ Բաբելոն, և դրաւ նորանց Բաբելոնում իր տաճարի մէջ: Եւ Յովակիմի ճնացորդ պատմութիւնը և նորա արած գարշութիւնները և նորա վերայ գտնուածը, ահա նորանք գրուած են Իսրայէլի և Յուդայի թագաւորների գրքումը. և նորա որդին Յովաքին թագաւոր եղաւ նորա տեղ:

Տ-ը-նեւթը տասերեքն էր Յովաքինը երբոր թագաւոր եղաւ, և երեք ամիս ու տասն օր թագաւորեց Երուսաղէմում, և չարութիւն արաւ Տիրոջ աչքի -ը-ը: Եւ հետևեալ տարին Նաբուգոդոնոսոր թագաւորը ղրկեց, և նորան առնել տուաւ Տիրոջ տան պատուական անօթներովը մէկաւեղ Բաբելոն. և նորա հօր եղբայր Սեդեկիային թագաւոր դրաւ Յուդայի և Երուսաղէմի վերայ:

Քսան և մէկ տարեկան էր Սեդեկիան երբոր թագաւոր եղաւ, և տասնումէկ տարի թագաւորեց Երուսաղէմում: Եւ չարութիւն արաւ իր Տէր Աստուծոյ աչքի -ը-ը՝ Տիրոջ բերանից Երեմիա մարգարէի առջև չխոնարհուեցաւ: Եւ Նաբուգոդոնոսոր թագաւորի դէմ էլ ապստամբեց, որ իրան երդում էր տուել Աստուծով, և իր պարանոցը խստացրեց, և իր սիրտը պնդացրեց, որ Իսրայէլի Տէր Աստուծոյն չդառնայ: Քահանաների բոլոր իշխանները ու ժողովուրդն էլ խիստ շատ անօրէնութիւններ արին -ը-էր ազգաց բոլոր գարշութիւնների պէս, և պղծեցին Տիրոջ տունը, որ նա սրբել էր Երուսաղէմում: Եւ նորանց հայրերի Տէր Աստուածը ուղարկում էր նորանց իր պատգամաւորներովը ձեռքով առաւօտից կանուխ էր պատ-ճ-էրը, վասն զի խղճում էր իր ժողովրդին ու իր բնակարանին. Բայց նորանք ծաղրում էին Աստուծոյ պատգամաւորներին, և արհամարհում էին նորա խօսքերը և ծաղրում էին նորա մարգարէներին, մինչև որ բարձրացաւ Տիրոջ բարկութիւնը իր ժողովրդի վերայ այնպէս որ բժշկութիւն չմնաց: Եւ նորանց վերայ բերաւ Քաղդէա-

ցոց Թագաւորին, որ նա էլ սրով
սպանեց նորանց երիտասարդները-
բին իրանց սրբատանդ տանը, և
չխնայեց երիտասարդին, կոյսին,
ծերին և ալևորին. բոլորը նորա
18 ձեռքը մատնեց: Եւ Աստուծոյ
տան բոլոր անօթները՝ մեծերը և
փոքրերը և Տիրոջ տան գանձերը և
թագաւորի և նորա իշխանների
գանձերը՝ բոլորը տարաւ Բաբիլոն:
19 Եւ սրեցին Աստուծոյ տունը, և
քանդեցին Երուսաղէմի պարիսպը,
և նորա ամեն պալատները կրակով
սրեցին, և նորա բոլոր ազնիւ
20 բանները փչացրին: Իսկ սուրից
ձեռացածներին գերի տարաւ Բա-
բիլոն, և նորա ու նորա որդիանը
ցը ծառաներ եղան մինչև Պարս-
ից թագաւորութեան թագա-
21 ւորելը, Որպէս թէ Երեմիայի բե-
րանով ասաց Տիրոջ խօսքը կա-
տարուի, մինչև որ երկիրը վայելէ
իր շաբաթները. աւերման բոլոր
օրերը նա շաբաթ պահեց, մինչև
եօթանասուն տարին լրանալը:
22 Եւ Պարսից Կիւրոս թագաւո-
րի առաջին տարին, Երեմիայի
բերանով ասաց Տիրոջ խօսքը
կատարուելով, Տէրը գրգռեց
րեց Պարսից Կիւրոս թագաւորի
հոգին, և նա իր բոլոր թագա-
ւորութեան մէջ, մանաւանդ կան-
չել տուաւ, նաև գրաւոյ հր-
տարակեց ասելով.
23 Այսպէս է ասում Պարսից Կիւ-
րոս թագաւորը. Երկնից Եհովայ
Աստուածը տուել է ինձ երկրի
բոլոր թագաւորութիւնները, և
նա ինձ պատուիրել է նորա հա-
մար մի տուն շինել Երուսաղէ-
մում որ Յուդայումն է: Ձեզա-
նից ամեն ով որ նորա ժողովր-
դից է, նորա Եհովայ Աստուած
իր հետ լինի, և թող գնայ:

ԳԻՐՔ ԵԶՐԱՍԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Պարսից Կիւրոս թագաւորի
առաջին տարին՝ Երեմիայի բե-
րանով ասած Տիրոջ խօսքը կա-
տարուելու համար, Տէրը գրգռե-
ցրեց Պարսից Կիւրոս թագա-
ւորի հոգին, և նա պատուէր ու-
ղարկեց իր բոլոր թագաւորու-
թեան մէջ նաև հրատարակով
հրաւիրելով ասելով.
2 Այսպէս է ասում Կիւրոս Պար-
սից թագաւորը. Երկրի բոլոր
թագաւորութիւնները ինձ է տը-
ուել Երկնից Աստուածը Եհո-
վան, և նա ինձ պատուիրեց, որ
Յուդայի Երուսաղէմում նորա
3 համար մի տուն շինեմ: Ամեն
ով որ ձեզանից նորա ժողովր-
դից է, իր Աստուածն իր հետը
լինի, թող վեր գնայ Երուսա-
ղէմ որ Յուդայումն է, և շինէ
Իսրայէլի Աստուծոյ՝ Եհովայի
տունը. նա է Աստուած, որ Ե-
4 րուսաղէմումն է: Եւ ամեն Հա-
ցորդը իրանց ամեն տեղերից,
ուր որ էլ պանդուխտ լինէ նա,
նորան օգնեն նորա տեղի մարդի-
կը արծաթով և ոսկով և ստաց-
ուածքով և անասուններով՝ Ե-
րուսաղէմում եղող Աստուծոյ
տան համար կամաւոր ընծաների
հետ:
5 Այն ժամանակ վեր կացին Յու-
դայի և Բենիամինի տոհմապետ-
ները և քահանաները և Ղեւտա-
ցիները՝ ամենքը որի հոգին զարթ-
նեցրեց Աստուած որ վեր գնայ
շինէ Երուսաղէմում եղող Ա-
6 ստուծոյ տունը: Եւ նորանց շուր-
ջը եղողները բոլորը օգնեցին նո-
րանց արծաթի անօթներով, ոս-
կով, ստացուածքով և անասուն-
ներով և թանկագին բաներով
բացի այն բոլորից որ կամաւ ըն-
ծայեցին:
7 Եւ Կիւրոս թագաւորը դուրս
հանեց Տիրոջ տան անօթները,
որ Նաբուգոդոնոսորը դուրս էր
տարել Երուսաղէմից և դրել էր

8 նորանց իր սառուծոյ տանը : Եւ
Պարսից Կիւրոս թագաւորը դուրս
հանեց նորանց Միթրիդատ գան-
ձապետի ձեռովը, և համրեց
նորանց Ե յաղնէց Յուդայի իշ-
9 խան Սանբասարին : Եւ սա է
նորանց թիւը . երեսուն ոսկի
կոնք , հազար արծաթի կոնք ,
10 քառնասինը դանակ . երեսուն սա-
կի տաշտ , չորս հարիւր տասը
արծաթի տաշտ երկրորդ կարգից ,
11 և հազար ուրիշ անօթներ : Բո-
լոր ոսկի և արծաթի անօթները
հինգ հազար չորս հարիւր էին :
Սանբասարը բոլորը վեր տարա-
գերութիւնը Բաբիլոնից Երուսա-
ղէմ վեր տանելիս :

ԳԼ. Բ

1 Եւ սորանք են Յ--ր--չ գաւա-
ռացիները , որոնք եան դարձան
տարած գերութիւնից , որոնց Նա-
բուգոդոնոսոր թագա-
ւորը Բաբիլոն էր տարել և որոնք
եան դարձան Երուսաղէմ և Յու-
դայ՝ ամեն մարդ իր քաղաքը .
2 Որոնք եկան Զօրաբաբէլի , Յէ-
սուի , Նէեմիայի , Սարայիայի ,
Հռէելիայի , Մուրթքէի , Բաղա-
նանի , Մասփարի , Բագաւէի ,
Հռեհումի , Բաանայի հետ : Իս-
րայէլի ժողովրդի մարդկանց թի-
3 ւը՝ Փարոսի որդիքը երկու հա-
զար հարիւր հօթանասունևերկու .
4 Սափատիայի որդիքը երեք
հարիւր հօթանասունևերկու .
5 Արահի որդիքը հօթը հարիւր հո-
6 թանասունևհինգ . Փահաթ-Մո-
վաբի որդիքը՝ Յէսուի և Յովաբի
որդիներից , երկու հազար ու թ
7 հարիւր տասնևերկու . Եղամի որ-
դիքը հազար երկու հարիւր յի-
8 սունևչորս . Զաթուի որդիքը ինը
9 հարիւր քառասունևհինգ . Զաք-
քայի որդիքը հօթը հարիւր վաթ-
10 սուն . Բանիի որդիքը վեց հարիւր
11 քառասունևերկու . Բեբայիի որ-
դիքը վեց հարիւր քսանևերեք .
12 Ազգադի որդիքը հազար երկու
13 հարիւր քսանևերկու . Ադոնի-
կամի որդիքը վեց հարիւր վաթ-
14 սունևվեց . Բագուէի որդիքը եր-
կու հազար յիսունևվեց . Ադինի 15
որդիքը չորս հարիւր յիսունևմե-
չորս . Ատերի որդիքը Եզեկիայից 16
իննսունևութը . Բեսայէի որդիքը 17
երեք հարիւր քսանևերեք . Յո- 18
րայի որդիքը հարիւր տասնևերկու .
Հասումի որդիքը երկու հարիւր 19
քսանևութը . Գաբերի որդիքը 20
իննսունևհինգ . Բեթլեհեմի որ- 21
դիքը հարիւր քսանևերեք . Նե- 22
տոփայի մարդիկը յիսունևվեց .
Անաթոթի մարդիկը հարիւր 23
քսանևութը . Ազմաթի որդիքը 24
քառասունևերկու . Կարիաթ-ա-
րիմի , Քեփիրայի ու Բերոթի որ- 25
դիքը եօթը հարիւր քառասուն
ևերեք . Ռամայի և Գաբայի որ- 26
դիքը վեց հարիւր քսանևմէկ .
Մաքմասի մարդիկը հարիւր քսան- 27
ևերկու . Բեթէլի և Գայիի մար- 28
դիկը երկու հարիւր քսանևերեք .
Նաբաւի որդիքը յիսունևերկու . 29
Մագբիսի որդիքը հարիւր յի- 30
սունևվեց . Միւս Եղամի որդիքը 31
հազար երկու հարիւր յիսունև-
չորս . Հարիմի որդիքը երեք հար- 32
իւր քսան . Ղոմդի , Ադիդի ու 33
Ովնոյի որդիքը եօթը հարիւր քս-
սունևհինգ . Երիքովի որդիքը ե- 34
րեք հարիւր քառասունևհինգ .
Սենայի որդիքը երեք հազար 35
վեց հարիւր երեսուն :

Քահանաները՝ Յեսուի տանից 36
Յեդայիայի որդիքը ինը հարիւր
եօթանասունևերեք . Եմմերի որ- 37
դիքը հազար յիսունև երկու .
Փասուրի որդիքը հազար երկու 38
հարիւր քառասունևեօթը . Հա- 39
րիմի որդիքը հազար տասնևե-
թը :

Ղեւտացիները՝ Ովդուիայի որ- 40
դիներից՝ Յեսուի և Կադմիելի որ-
դիքը եօթանասունևչորս :

Երգիչները՝ Ասափի որդիքը 41
հարիւր քսանևութը :

Դռնապանների որդիքը՝ Սել- 42
դումի որդիքը , Ատերի որդիքը ,
Տելմոնի որդիքը , Ակկուբի որդի-
քը , Ատիտայի որդիքը , Սուբայի
որդիքը , ամեն հարիւր երեսունև
ութը :

Նաթանայիմները՝ Սիայի որդի- 43
քը , Ասուփայի որդիքը , Տաբա-

44 ովիթ որդիքը. Կերսաի որդիքը,
Ախահայի որդիքը, Փագոնի որդի-
45 քը, Ղատանայի որդիքը, Ադա-
բայի որդիքը, Ակկուբի որդիքը,
46 Ագաբի որդիքը, Սաղամէի որդի-
47 քը, Անանի որդիքը, Գեդդելի որ-
դիքը, Գահարի որդիքը, Ռեայիայի
48 որդիքը, Ռասինի որդիքը, Նեկո-
դայի որդիքը, Գազամի որդիքը,
49 Ոզայի որդիքը, Փասէի որդիքը,
50 Բասիի որդիքը, Ասենայի որդի-
քը, Մաանիմի որդիքը, Նեփու-
51 սիմի որդիքը, Բակբակի որդիքը,
Ակուփայի որդիքը, Արուրի որ-
52 դիքը, Բասաղոթի որդիքը, Մէի-
դայի որդիքը, Արսայի որդիքը,
53 Բարկոսի որդիքը, Սիսարայի որ-
54 դիքը, Թեմնայի որդիքը, Նեփու-
սի որդիքը, Ասեփայի որդիքը.
55 Սողոմոնի ծառաներէ որդիքը՝ Սո-
ֆերէթի որդիքը, Սափերաթի որդի-
56 քը, Փարեդայի որդիքը, Յեղայի
որդիքը, Դերկոնի որդիքը, Գեդ-
57 դելի որդիքը, Սափատիայի որդի-
քը, Ատտիլի որդիքը, Փոքարեթ
-Սաբայիմի որդիքը, Ամիի որ-
58 դիքը. Բոլոր Նաթանայիմներն և
Սողոմոնի ծառաներէ որդիքը ե-
րեք հարիւր ինսունհ ու երկու։
59 Եւ սորանք էին որ վեր գնացին
Թելմելայից, Թելհարսայից, Քե-
րուբից, Ադդանից, Եմմերից, և
չկարողացան ցոյց տալ իրանց
հայրերի տունը և իրանց սերունդը, Թէ Իսրայէլացի են իրանք.
60 Դալիայի որդիքը, Տուբիայի որ-
դիքը, Նեկոդայի որդիքը՝ վեց
հարիւր չորսհսուն ու երկու հոգի։
61 Եւ քահանայից որդիներից Աբի-
այի որդիքը. Ակկուսի որդիքը,
Բերզելէի որդիքը, որ Գաղաադա-
ցի Բերզելէի աղջիկներից կին առ-
նելով նորանց անունով կոչուե-
62 ցաւ։ Սորանք որոնեցին իրանց
ազգաբանութեան գիրքը, բայց
չգտան, վասն որոյ լուծեցին նո-
63 րանց քահանայութենից։ Եւ
*Աթորսաթան ասաց նորանց,
Ամենասուրբ բաներից չուտեն
մինչև որ մի քահանայ վեր կե-
նայ Ուրիմով և Թումիմով։

Բոլոր ժողովուրդը միասին քա- 64
ռասունհսուերկու հազար երեք հար-
իւր վեցհսուն էին. Բացի նորանց 65
ծառաներից և աղախիններից, ո-
րոնք եօթը հազար երեք հարիւր
երեսուն և եօթն էին. և նորանց
հետ երկու հարիւր երգիչներ և
երգչուհիք կային։ Նորանց ձիե- 66
րը՝ եօթը հարիւր երեսունհսուից.
նորանց ջորիքը՝ երկու հարիւր
քառասուն և հինգ. Նորանց ու- 67
ղտերը՝ չորս հարիւր երեսուն և
հինգ. Էշերը՝ վեց հազար եօթը
հարիւր քսան։

Եւ տոհմապետներից միոմ, 68
երբոր Երուսաղէմում գտոց Տի-
րոջ տունը գնացին, կամաւոր
ընծաներ տուին Աստուծոյ տանը
նորան իր տեղումը վերականգնե-
լու համար։ Իրանց կարողութեան 69
չափ տուին գործի գանձին՝ վեց-
սուն և մէկ հազար սակի, և հինգ
հազար մնաս արծաթ, և հարիւր
քահանայական պատմուճան։ Եւ 70
-յոոե- բնակեցին քահանաները
և Ղեւտացիները և ժողովրդից
եղողները և երգիչներն ու դռնա-
պաններն ու Նաթանայիմները ի-
րանց քաղաքներումը, և բոլոր
Իսրայէլը իրանց քաղաքներումը։

ԳԼ. Գ

Եւ երբոր եօթներորդ ամիսը 1
հասաւ և Իսրայէլի որդիքն էրան
քաղաքներումն էին, ժողովուրդը
ժողովուեցաւ Երուսաղէմ մէկ
մարդու պէս։ Այն ժամանակ 2
վեր կացաւ Յովսեդեկեան Յեսուն
և նորա քահանայ եղբայրները,
և Շէալթիէլի Աստուծոյ
սեղանը, նորա վերայ ողջակէզներ
մատուցանելու համար, ինչպէս
որ գրուած է Աստուծոյ մարդու 3
Մովսէսի գրքումը։ Եւ սեղանը
վերականգնեցին իր տեղը, վասն
զի վախենում էին այն երկիրների
ժողովուրդներից, և նորա վերայ
ողջակէզներ մատուցին Տիրոջը
առաւօտեան և երեկոյեան ող-
ջակէզները։ Եւ կատարեցին տա- 4
ղաւարտհարց տօնը գրուածին
պէս. և ամեն օրուան ողջակէզ-

*Կ՚ենհատաը

նելը իր թուով բան կանանին որ
5 բան օրէ հրամայուածը. Եւ ա-
րանից յետոյ մշանջենաւոր ող-
ջակէզը և ամսագլուխներին և
Տիրոջ ամեն սուրբ ասներին, և
Տիրոջ բոլոր կամաւոր ընծայ ըն-
6 ծայողին: Եօթներորդ ամսի ա-
ռաջի օրից սկսեցին ողջակէզներ
մատուցանել Տիրոջը. բայց Տի-
րոջ տաճարի հիմը չէր դրուած:
7 Եւ փող տուին քարտաշներին
և հիւսներին, և ուտելիք ու խը-
մելիք և իւղ՝ Սիդոնացիներին և
Տիւրացիներին, որ Լիբանանից
ծովով եղեւնափայտեր բերին Յոպ-
պէ ինչպէս որ Պարսից Կիւրոս
թագաւորը արտօնութիւն էր տը-
ուել նորանից:
8 Եւ նորանց երկրորդ տարին՝ Ա-
ռաջի տունը գալուս երկրորդ
տարուայ երկրորդ ամսումը սկը-
սեցին Փոչիք Սողոմիէլեան Զօ-
րաբաբէլը և Յեսսեդեկեան Յե-
շուան և նորանց մնաց եղբայրները
քահանաները և Ղեւտացիները և
գերութիւնից երկրագալէմ եկող-
ների ամենը, և քսան տարեկա-
նից վեր եղող Ղեւտացիներին վե-
րակացու դրին Տիրոջ տան գործ-
9 քի վերայ: Եւ Յեսուն, նորա որ-
դիքն ու եղբայրները, Կադմիէլն
ու նորա որդիքը՝ Յուդայի որդիքը
վեր կացան մէկ մտքո՝ պէս իրրև
վերակացու Աստուծոյ տան գործը
անելու համար, Հենադադի որդիքը, նորանց որդիքը և
նորանց եղբայրները՝ Ղեւտացիք:
10 Եւ երբոր ճարտարապետները
Տիրոջ տաճարի հիմը դրին, այն
ժամանակ կանգնեցրին քահանա-
ներին զգեստաւորուած՝ փող-
րով, և Ղեւտացիներին՝ Ասափի
որդիանցը ձնծղաներով Տիրոջը
օրհնելու համար Իսրայէլի Դա-
ւիթ թագաւորի կարգադրու-
11 թեան համեմատ. Եւ փոխադարձ
երգում էին Տիրոջը օրհնելով և
գովելով թէ բարի է, թէ նորա
ողորմութիւնը յաւիտեան է Իս-
րայէլի վերայ. և բոլոր ժողովուր-
դը մեծաձայն ազաղակում էին
Տիրոջը օրհնելով Տիրոջ տան
հիմը գրուելու համար:

12 Եւ քահանաներից և Ղեւտա-
ցիներից և տոհմապետներից ու
ծերերից շատերը, որոնք տեսել
էին այն առաջի տունը, այս
տունը նորանց աչքի առջև հիմ
նարկուելիս՝ բարձր ձայնով լաց
էին լինում, իսկ շատերը ազա-
ղակելով ուրախանալով էին ձայն
բարձրացնում: 13 Եւ ժողովուրդը
չէր ճանաչում ուրախութեան
ազաղակի ձայնը ժողովրդի լացի
ձայնից, վասն զի ժողովուրդը
մեծ ազաղակ էր բարձրացրել և
ձայնը հեռուից էր լսւում:

ԳԼ. Գ

1 Եւ երբոր Յուդայի և Բենիա-
մինի թշնամիները լսեցին, որ գե-
րութիւնից եկողները Իսրայէլի
Տէր Աստուծոյ համար տաճար են
շինում. 2 Մօտեցան Զօրաբաբէլին
և տոհմապետներին և ասացին
նորանց. Մենք էլ շինենք ձեզ
հետ, որովհետև մենք էլ ձեզ
պէս ձեր Աստուծոյն ենք խնդ-
րում, և նորան ենք մենք զոհ
մատուցանում Ասորեստանի Ա-
սորդան թագաւորի օրերից՝ ի-
վեր, որ մեզ այստեղ բերաւ:
3 Եւ նորանց ասացին Զօրաբաբէլը
և Յեսուն և Իսրայէլի միւս տոհ-
մապետները. Ձեզ և մեզ միա-
սին չի վայելիլ տունն շինել մեր
Աստուծոյ տունը այլ մենք մի-
նակ պիտի շինենք Իսրայէլի Տէր
Աստուծոյ համար ինչպէս որ մեզ
պատուիրել է Պարսից թագա-
ւոր՝ Կիւրոս թագաւորը: 4 Եւ
այն երկրի ժողովուրդը թուլաց-
նում էր Յուդայի ժողովրդի ձեռ-
քերը և խափանում էր նորանց
շինելուց: 5 Եւ նորանց դէմ խոր-
հրդականներ էին վարձում նո-
րանց խորհուրդը խափանելու հա-
մար Պարսից Կիւրոս թագաւորի
բոլոր օրերում և մինչև Պարսից
Դարեհ թագաւորի թագաւորելը:
6 Եւ Աստերոսի թագաւորութեան
ժամանակին՝ նորա թագաւորու-
թեան սկզբում ամբաստանու-
թեան գիր գրեցին Յուդայի և
Երուսաղէմի բնակչաց դէմ:

7 Եւ Աբտաշէսի օրերումն բնակեցաւ Մխիթիդատը, Տարէելը և միւս բնակիչները գրեցին Պարսից Աբտաշէս թագաւորին, և նամակի գիրը Ասորերէն և մեկնեալ էր Ասորերէն։ 8 Ռեհթիմն էլ Ասորերէն էր։ Հրամայէաց խարհրդապետը և Սամսայ առենադպիրը և նորանց միւս բնակիչները՝ Դինայիք, Ափարսաթաքացիք, Տարփողեցիք, Ափերսացիք, Աբքուեցիք, Հարիլոնացիք, Շուշանացիք, Դաւեցիք, 10 Եղամացիք, Եւ մնացած ազգերը որոնց փոխադրեց մեծ և պատուական Ասենափարը և բնակեցրեց Սամարիայի քաղաքումը, և միւսները որ Գետի այս 11 կողմին են և այլն. Ա՛հա այն նամակի պատճէնը որ ուղարկեցին նորան.

Աբտաշէս թագաւորիդ, քո ծառաները՝ Գետի այս կողմի մարդիկ և այլն. թագաւորիդ յայտնի լինի, որ այն Հրէաները որ քո մօտից դուրս եկան, եկել են մեզ մօ՝ Երուսաղէմ, շինում են այդ ապստամբ և զրգուելի քաղաքը, և նորա պարիսպները նորոգում են, և հիմ- 13 ները դրել են։ Հիմա յայտնի լինի թագաւորիդ, որ եթէ քաղաքը շինուի և նորա պարիսպները նորոգուին, նորանք հարկ, տուրք և մնաքս չեն տալ, և վերջը միաս կ՚բերէ թագաւորներին։ 14 Արդ որովհետև ամենքս պալատիցն ենք ուտում՝ մեր *ապրուստը, և մեզ չի վայելիլ թագաւորիդ միտը տեսնել, վասն որոյ ուղարկում և յայտնում ենք 15 թագաւորիդ, Որ որոնեն քո հայրերի յիշատակից գրքերումը և կիմանաս որ այս քաղաքը մի ապստամբ քաղաք է եղել՝ և թագաւորին ու գաւառներին վնասակար, և դաւաճանութիւն է եղած նորանում հին ժամանակներից, և դորա համար այդ քաղաքը աւերակ է դարձել։ Մենք 16 իմացնում ենք թագաւորիդ, որ եթէ այս քաղաքը շինուի և նորա պարիսպները նորոգուին, այս պատճառով քեզ բաժին չի լինիլ գետի այս կողմին։

Պատգամ ուղարկեց թագաւորը Հռէում խարհրդապետին և Սամսայ առենադպրին և նորանց միւս բնակիչներին որ բնակում էին Սամարիայում, և գետի այն կողմին եղած մնացածներին.

Ողջոյն և այլն. Նամակը, որ 18 մեզ ուղարկել էիք, յայտնապէս կարդացուեցաւ իմ առջև. Եւ ես 19 հրաման արի, և որոնեցին և գտան, որ այդ քաղաքը հին ժամանակներից թագաւորների դէմ է կացել, և դորա մէջ ապստամբութիւն և դաւաճանութիւն է եղել. Եւ զօրաւոր թագաւորներ 20 են եղել Երուսաղէմում, որ տիրել են գետի բոլոր այդ կողմին. և հարկ, տուրք և մնաքս է տրուել նորանց։

Հիմա հրաման արէք, որ այն 21 մարդկանց արգելին, և այդ քաղաքը չշինուի մինչև որ իմ կողմանէ հրաման տրուի։ Եւ զգոյշ 22 եղէք որ այս մասին անհոգ չլինիք։ Ինչո՞ւ չարիքը մեծանայ թագաւորներին վնասելու համար։

Երբոր Աբտաշէս թագաւորի 23 նամակի պատճէնը կարդացուեցաւ Հռէումի և Սամսայ առենադպրի և նորանց բնակիչների առջև, իսկոյն շտապելով գնացին Երուսաղէմ Հրէից մօտ և խափանեցին նորանց բանութեամբ և ուժով։ Այն ժամանակ խա- 24 փանուեցաւ Երուսաղէմում եղող Աստուծոյ տան գործը, և խափանումը մնաց մինչև Պարսից Դարեհ թագաւորի թագաւորութեան երկրորդ տարին։

Գ.Ե

Եւ Անդէ մարգարէն ու Աղդովի որդին Զաքարիա՝ մարգարէները մարգարէութիւն արին Հրէաս-

*տղը

տանում և Երուսաղէմում եղող Հրէաներին, Իսրայէլի Աստուծոյ
2 անունով: Այն ժամանակ վեր կացան Սաղաթիէլեան Զօրաբաբէլը և Յովսեդեկեան Յեսուն և սկսեցին շինել Երուսաղէմում եղող Աստուծոյ տունը, և Աստուծոյ մարգարէները նորանց հետ օգնում էին նորանց:
3 Այն ժամանակը եկան նորանց մօտ Գետին այս կողմի իշխան Թաթանայն և Սաթրաբուզանը և նորանց ընկերները և այսպէս ասացին նորանց. Ո՞վ է ձեզ հրամայել այս տունը շինելու և այս պարիսպները նորոգելու:
4 Այն ժամանակ այսպէս ասացինք նորանց, թէ որոնք են այն մարդկանց անունները որ շինում են այս տունը:
5 Եւ նորանց Աստուծոյ աչքը Հրէից ծերերի վերայ էր, և նորանց չորցրին մինչև որ բանը հասնէ Դարեհին, և նորանք այն ժամանակ սորա համար հրաման առն:
6 Այս այն նամակի պատճէնը, որ ուղարկեցին Գետի այս կողմի իշխանը Թաթանայն և Սաթրաբուզանը և Գետի այս կողմին եղող նորանց ընկերները Ափարսաքացիք՝ Դարեհ թագաւորին:
7 Այն պատգամը որ ուղարկեցին նորան, և այսպէս էր գրուած նորանում:

Դարեհ թագաւորին՝ խաղաղութիւն բոլում.
8 թագաւորիդ յայտնի լինի, որ գնացինք Հրէաստանի գաւառը մեծ Աստուծոյ տունը. և նորան շինում են մեծ քարերով, և փայտ են դնում պատերում, և այս գործը արագութեամբ շինվում է և նորանց ձեռքին յաջողվում է:
9 Յետոյ մենք հարցրինք այն ծերերից՝ նորանց այսպէս ասելով. Ո՞վ է ձեզ հրաման տուել այս տունը շինելու և այս պարիսպները նորոգելու:
10 Նաև նորանց անունները հարցրինք նորանցից, քեզ յայտնելու համար, որ գրեմ այն մարդկանց անունները որ նորանց գլխաւորներն են:
11 Եւ նորանք այսպէս պատասխանեցին մեզ ասելով. Մենք երկնից և երկրի Աստուծոյ ծառաներն ենք, և շինում ենք այն տունը որ շինուած էր շատ տարիներից առաջ, որ Իսրայէլի մի մեծ թագաւորը շինել և լրացրել էր:
12 Բայց որովհետև մեր հայրերը բարկացրին երկնից Աստուծոյն, նորանց մատնեց Բաբելոնի Քաղդէացի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը. և նա քանդեց այս տունը և ժողովուրդը գերի տարաւ Բաբելոն:
13 Բայց Բաբելոնի Կիւրոս թագաւորի առաջին տարին Կիւրոս թագաւորը հրաման տուաւ շինել այս Աստուծոյ տունը:
14 Եւ այն Աստուծոյ ան անօթները՝ ոսկեղէն և արծաթեղէն, որ Նաբուգոդոնոսորը հանել էր Երուսաղէմի տաճարից և տարել նորանց Բաբելոնի տաճարը, նորանց հանեց Կիւրոս թագաւորը Բաբելոնի տաճարից և տուաւ Սասբասար անունով անձին, որին նախարար դրաւ,
15 Եւ նորան ասաց. Առ այս անօթները, գնա, տար նորանց Երուսաղէմի տաճարը, և Աստուծոյ տունը շինուի իր տեղը:
16 Այն ժամանակ այն Սասբասարը եկաւ և ձգեց Երուսաղէմում եղող Աստուծոյ տան հիմը. և այն ժամանակից մինչև հիմա շինվում է, և չէ վերջացել:
17 Եւ արդ եթէ թագաւորին հաճելի է, թող որոնեն այդտեղ Բաբելոնի թագաւորական գանձարանը, թէ արդեօք Կիւրոս թագաւորից հրաման է տուել որ շինուի այս Աստուծոյ տունը Երուսաղէմում. և թագաւորի կամքը այս բանի մասին թող ուղարկեն մեզ:

ԳԼ. Զ

1 Այն ժամանակ Դարեհ թագաւորը հրաման տուաւ, և որոնեցին դիւանատունը, ուր որ գանձերը դնում էին Բաբելոնում:
2 Եւ գտնուեցաւ Մարաց գաւառի *Եկբատանայում պալատում մէկ

*Ախմեթա

ման, և այսպէս էր գրուած նա-
րանում՝ յիշատակարան.
3 Ախրա թագաւորի առաջին
տարին Ախրա թագաւորը հրա-
ման արաւ երուսաղէմում եղող
Աստուծոյ տան մասին, այն տու-
նը շինուի իրեւ տեղի ուր որ զո-
հեր են մատուցանում, և նորա
հիմունքը հաստատուին. նորա
բարձրութիւնը վաթսուն կան-
գուն, նորա լայնութիւնը վաթ-
4 սուն կանգուն. Մեծ քարերից՝
երեք կարգ, և փայտից մէկ կարգ.
և ծախքը արքունիքից տրուի։
5 Նաև Աստուծոյ տան ոսկեղէն և
արծաթեղէն անօթները, որ Նա-
բուգոդոնոսր հանել էր երու-
սաղէմում եղող տաճարից և
բերել Բաբելոն, նա տրուին և
գնան երուսաղէմի տաճարը՝ ի-
րանց տեղը, և դրուին Աստուծոյ
տանը։
6 Արեմն գեռ այն կողմի իշ-
խան Թաթնայն, Սաթրաբու-
զան, և գեռ այն կողմին եղող
նորանց ընկերները Ափարսաք-
7 ցիք, հեռանան այդ տեղից. Թող
տուէք այդ Աստուծոյ տան գոր-
ծը. Հրէից նախարարը և Հրէից
ծերերը շինեն այդ Աստուծոյ տու-
8 նը իր տեղը։ Եւ ինձանից հրա-
ման է տրւում, թէ ինչ պէտք
է անէք Հրէից ծերերին այդ Ա-
ստուծոյ տունը, այսինքն արքունի
կալուածքից՝ գեռ այն կողմի
տուրքից շուտով տրուին ծախ-
քերը այն մարդկանցը որ արդելք
9 չինի։ Եւ ինչ որ պէտք է թէ
զուարակներ թէ խոյեր և թէ
գառներ երկնից Աստուծոյն ող-
ջակէզի համար, հաց ցորեն, աղ,
գինի և իւղ, ինչպէս որ ասեն
երուսաղէմում եղող քահանա-
ները, նորանց տրուի օր քան օրէ
10 անպակաս։ Որ երկնից Աստու-
ծոյն անուշահոտ պահեր մատու-
ցանեն, և աղօթեն թագաւորի
և նորա որդկանց կենաց համար։
11 Եւ ինձանից հրաման է տրւում,
թէ ով որ փոխէ այս պատգամը,
նորա տանիցը մի փայտ հանեն,
և նա վեր հանուելով նորա վե-
րայ բևեռուի, և նորա տու-
նը աղբանոց շինուի այդ պատ-
ճառով։ Եւ այն Աստուածը, որի
անունը բնակում է այնտեղ,
կործանէ ամեն թագաւորի և ժո-
ղովրդի, որոնք իրանց ձեռքը
մեկնեն փոխելու այս Աստուծոյ
տունը աւերելու որ երուսաղէ-
մումն է։ Ես Դարեհ տուի այս
հրամանը. շուտով կատարուի։
13 Այն ժամանակ Գեհան այս կող-
մի իշխանը Թաթնայն, Սաթ-
րաբուզանը և նորանց ընկերները
ինչպէս որ Դարեհ թագաւորը
հրաման էր ուղարկել, շուտով
այնպէս արին։ Եւ Հրէից ծերերը
շինում էին և յաջողում Անգէ
մարգարէի և Աղդովի որդի Զա-
քարիայի մարգարէութիւնով, և
շինեցին ու վերջացրին Իսրայէլի
Աստուծոյ հրամանով և Պարսից
Կիւրոս, Դարեհ և Արտաշէս թա-
գաւորի հրամանով։ Եւ լրացու-
ցին այս տունը Ադար ամսուայ եր-
րորդ օրը, որ Դարեհ թագաւո-
րի թագաւորութեան վեցերորդ
տարին էր։
16 Եւ Իսրայէլի որդիքը՝ քահա-
նաները և Ղեւտացիները և միւս
գերութիւնից եկողները այս Ա-
ստուծոյ տան նուիրատրիքն արին
17 ուրախութեամբ։ Եւ Աստուծոյ
տան նուիրատրիքի համար զոհե-
ցին հարիւր զուարակ, երկու
հարիւր խոյ, չորս հարիւր գառն
և բոլոր Իսրայէլի համար իրեւ
մեղքի պատարագ Իսրայէլի ցե-
ղերի թուով այծերից տասներ-
18 կու նախատ։ Եւ քահանաներին
իրանց կարգերովը և Ղեւտացի-
ներին իրանց դասերովը դրին Ե-
րուսաղէմում եղող Աստուծոյ
պաշտօնի վերայ ինչպէս որ գրու-
ած է Մովսէսի գրքումն։
19 Եւ գերութիւնից եկողները զա-
տիկը կատարեցին առաջին ամ-
20 սուայ տասնչորսին, վասն զի
քահանաներն ու Ղեւտացիները
միասին սրբուեցան. ամենքը մա-
քուր էին, և մորթեցին զատիկը
բոլոր գերութիւնից եկողների հա-
մար և իրանց եղբարց համար
քահանաների և իրանց համար։
21 Եւ գերութիւնից ետ դարձած

Իսրայէլացիք և այն երկրի ազգերի պղծութիւնից ամեն ով որ բաժանուել եկել էր նորանց մօտ Իսրայէլի Տէր Աստուծոյն խնդրելու համար, կերան, և եօթն օր 22
բաղարջակերաց տօնը կատարեցին ուրախութեամբ, վասն զի Տէրը նորանց ուրախացնել էր, և Ասորեստանի թագաւորի սիրտը դարձրեց դէպի նորանց՝ նորանց ձեռքը Աստուծոյ տան գործքումը ուժովացնելու համար:

ԳԼ. Է

1 Եւ այս բաներից յետոյ Պարսից թագաւոր Արտաշէսի թագաւորութեան ժամանակին Եզրաս որդի Սարայիայի, որդի Ազարիայի, որդի Քեղկիայի, Որդի Մեզդուի, որդի Սադոմկի, որդի Ա-
3 քիտոփէլ, Որդի Ամարիայի, որդի Ազարիայի, որդի Մարիովթի,
4 Որդի Զարիայի, որդի Ոզիի, որ-
5 դի Բոկկիի, Որդի Աբիսուայի, որդի Բենէհէսի, որդի Եղիազարի, որդի քահանայապետ Ահարոնի:
6 Այս Եզրաս վեր եկաւ Բաբիլոնից, և նա ժիր դպիր էր Մովսէսի օրէնքումը, որ Իսրայէլի Տէր Աստուածը տուել էր նո-
7 րան: Եւ բոլոր նորա խնդրածը: Եւ Իսրայէլի որդիքանցից և քահանաներից և երգիչներից և դռնապաններից և նեթինիմներից եւս վեր գնացին Երուսաղէմ Արտաշէս թագաւորի եօթներորդ տարին:
8 Եւ նա Երուսաղէմ եկաւ հինգերորդ ամսուայ մէջ, թագաւորի եօթներորդ տարում:
9 Որովհետև առաջին ամսի մէկին սկսեց Բաբիլոնից գալ դառնալը, և հինգերորդ ամսի մէկին եկաւ Երուսաղէմ, վասն զի իր Աստուծոյ բարի ձեռքն իր հետն էր:
10 Վասն զի Եզրաս պատրաստել էր իր սիրտը որ Տիրոջ օրէնքը խնդրէ և կատարէ, և Իսրայէլի մէջ ասէրացնէ օրէնք և դատաստան:
11 Եւ սա այն նամակի պատճէնը, որ Արտաշէս թագաւորը տուաւ Եզրաս քահանայ դպրին, որ դպիր էր Տիրոջ Իսրայէլի մասին պատուիրանքներուն և նորա օրէնքումը:
12 Թագաւորաց թագաւոր Արտաշէսէ՝ Եզրաս քահանային երկնից Աստուծոյ օրինաց կատարեալ դպրին, և այլն. Ինձանից հրա-
13 ման է տրւում, որ իմ թագաւորութիւնում եղող Իսրայէլի ժողովրդից և նորա քահանայից և Ղեւտացիներից ամեն ով որ կամէ Երուսաղէմ գնալ քեզ հետ գնայ:
14 Վասն զի դու ուղարկւում ես թագաւորի և նորա եօթը խորհրդականների կողմից, որ քննես Յուդան և Երուսաղէմը քո Աստուծոյ օրէնքով որ քո ձեռքին է.
15 Եւ տանես այն արծաթն ու ոսկին որ յոժարակամ տուին թագաւորը և նորա խորհրդականները Իսրայէլի Աստուծոյն որի բնակութիւնը Երուսաղէմումն է,
16 Եւ այն ամեն արծաթն ու ոսկին որ գտար Բաբելոնի բոլոր գաւառումը, այն կամաւոր ընծաների հետ որ ժողովրդն ու քահանաները նուիրում են իրանց Աստուծոյ տան
17 համար որ Երուսաղէմումն է, Որպէս զի շուտով այն փողով զուարակներ, խոյեր, գառներ, և նորանց հացի նուէրները և թափելու նուէրները գնես, և նորանց մատուցանես ձեր Աստուծոյ տան սեղանի վերայ որ Երու-
18 սաղէմումն է: Եւ ինչ որ քեզ և քո եղբայրներին հաճելի լինի, մնացած արծաթով ու ոսկով անել ձեր Աստուծոյ կամացն համեմատ արէք:
19 Եւ այն անօթներ-
20 ը որ քեզ տրուեցան քո Աստուծոյ տան պաշտօնի համար, յանձնիր Երուսաղէմում Աստուծոյ առջևը: Եւ ուրիշ ինչ որ քո Աստուծոյ տան համար պէտք լինի, որ քեզ վայել է տալ, տուր
21 թագաւորի գանձատունից: Եւ ինձանից՝ Արտաշէս թագաւորիցս հրաման է տրւում բոլոր գանձապետներին որ Գետի այդ կողմին էք, որ ամեն ինչ որ Եզրաս քահանան՝ երկնից Աստուծոյ օրինաց դպիրը ձեզանից ուղէ, շու-

22 տալ կատարեսի. Մինչև հարիւր
տաղանդ արծաթ, մինչև հարիւր
քոռ ցորեն, և մինչև հարիւր
սաղ իւղ և ազ՝ առանց գրելու։
23 Ամեն ինչ որ երկնից Աստուածը
հրամայել է, ճիշդ կատարեսի
երկնից Աստուծոյ տան համար,
որ բարկութիւնը չգայ թագաւո-
րութեանը, թագաւորի և նորա
24 որդւոցն վերայ։ Եւ ձեզ իմաց-
նում ենք, որ քահանաներից և
Ղեւտացիներից, երգեցողներից,
դռնապաններից, Նաթանայիմ-
ներից և այս Աստուծոյ տան ըս-
պասաւորներից ոչ մէկի վերայ
իրաւունք չկայ հարկ, տուրք և
25 մաքս դնելու։ Եւ դու, ով Եզ-
րաս, քո Աստուծոյ իմաստու-
թեամբը, որ քեզանում է,
դատաւորներ և իշխաններ դիր,
որ դատեն Գետի այն կողմին ե-
ղող ժողովրդին այսինքն քո Ա-
ստուծոյ օրէնքը գիտացողներին.
և ով որ չգիտէ, նորան սով-
26 րեցրէք։ Բայց ամեն ով որ չէ
կատարում քո Աստուծոյ օրէնքը
և թագաւորի օրէնքը, խոկոյն
նորան դատաստան անուի կամ
մահով, կամ աքսորով, կամ
տուգանքով և կամ բանտար-
կութեամբ։

27 Օրհնեալ լինի մեր հայրերի
Տէր Աստուածը, որ այսպիսի
միտք դրաւ թագաւորի սրտումը
Երուսաղէմում եղող Տիրոջ տու-
28 նը փառաւորելու. Եւ ինձ վերայ
դարձրեց թագաւորի և նորա
խորհրդականների և թագաւորի
բոլոր զօրաւոր իշխանների շնոր-
հը։ Եւ ես զօրացայ, որովհետև
իմ Տէր Աստուծոյ ձեռքը ինձ
վերայ էր, և Իսրայէլից իշխան-
ներ հաւաքեցի ինձ հետ գնալու
համար։

Գ Լ Ը

1 Եւ սրանք են նորանց տոհմա-
պետները և նորանց ազգատոհմու-
թիւնը, որ վեր էրան ինձ հետ Բաբի-
լոնի Արտաշէս թագաւորի թա-
2 գաւորութեան ժամանակին. Փե-
նեհեսի որդիներից Գերսոնը, Ի-
թամարի որդիներից Դանիէլը,
Դաւթի որդիներից Հատուսը.
Սեքենիայի որդիներից՝ Փարոսի 3
որդիներից Զաքարիան և նորա
հետ հարիւր հիսուն այր համար-
ուեցան. Փահաթ-Մովաբի որդի- 4
ներից՝ Զարհայի որդի Եղհովէնա-
յին, և նորա հետ երկու հարիւր
այր. Սեքենիայի որդիներից՝ Յա- 5
զիէլի որդին և նորա հետ երեք
հարիւր այր. Եւ Ադինի որդի- 6
ներից՝ Յովնաթանի որդին Աբեդը
և նորա հետ հիսուն այր. Եւ 7
Եղամի որդիներից՝ Գոթոդիայի
որդին Եսային և նորա հետ ե-
թանասուն այր. Եւ Սափատիայի 8
որդիներից՝ Միքայէլի որդին Զա-
բադիան և նորա հետ ութսուն
այր. Յովաբի որդիներից Յեհիէլի 9
որդին Աբդիան և նորա հետ ե-
րկու հարիւր տասնուվեց այր.
Եւ Սաղոմիթի որդիներից Յոսէ- 10
փիայի որդին, և նորա հետ հար-
իւր վեհասուն այր. Եւ Բեբայի 11
որդիներից՝ Բեբայի որդին Զա-
քարիան, և նորա հետ քսանու-
ութը այր. Եւ Ազգադի որդիներ- 12
ից՝ Ակատանի որդին Յոհանանը
և նորա հետ հարիւր տասը այր.
Եւ Ադոնիկամի որդիներից՝ վեր- 13
ջինները, որանց անունները սո-
րանք են՝ Եղիփաղէտ, Յեհիէլ ու
Սեմայիա, և նորանց հետ վեհա-
սուն այր. Եւ Բագուէի որդիներ- 14
ից Ութայն և Զաբուդը, և
նորանց հետ եօթանասուն այր։

Եւ սորանց հաւաքեցի Ահաւա 15
գնացող գետի եղերքը, և այն-
տեղ մնացինք երեք օր. և մտիկ
արի ժողովրդին և քահանանե-
րին, բայց Ղեւի որդիներից հա՛ս
չգտայ։ Եւ կանչեցի Եղիեզեր, 16
Արիէլ, Սեմայիա, Եղնաթան,
Յարիբ, Եղնաթան, Նաթան,
Զաքարիա և Մեսուղամ իշխան-
ներին, և Յովարիբ ու Եղնաթան
իմաստուններին, Եւ նորանց 17
պատուէր տուի գնալ Ադդոյ իշ-
խանի մօտ՝ Քասփիա տեղում
տեղը, և նորանց բերանը խօսքեր
դրի որ ասեն Ադդոյին և նորա
եղբորըն Նաթանայիմներին Քա-
սփիա տեղումը, որ մեզ հա-

մար պաշտօնեաներ բերին մեր
18 Աստուծոյ տան համար։ Եւ մեր
Աստուծոյ բարի ձեռքը մեզ վե-
րայ լինելու համար բերին մեզ
մօտ Իսրայէլեան Ղևիի որդի Մա-
ղիի որդիներից մի հանճարեղ
մարդ՝ այրինքն Սարաբիային և
նորա որդիքն ու նորա եղբօրքը
19 տասնեւութը հոգի։ Եւ Ասաբիա-
յին և նորա հետ Մեսարիմ որ-
դիներից Եսայիին և նորա եղ-
բօրքը և նորանց որդիքը քսան
20 հոգի։ Եւ Նաթինայիմներից, ո-
րոնց Դաւիթ և իշխանները տուել
էին Ղևացոց ծառայութեան
համար՝ երկու հարիւր քսան Նա-
թինայիմներ՝ ամենքը անունով
յիշուած։

21 Եւ ես այնտեղ Ահաւայի գե-
տի մօտ ծոմապահութիւն քա-
րոզեցի մեր Աստուծոյ առջեւ խո-
նարհուելու համար, որ նորա-
նից յաջող ճանապարհորդութիւն
խնդրենք մեզ և մեր ընտանեաց
և մեր բոլոր ստացուածքի հա-
22 մար։ Վասն զի ամաչում էի թա-
գաւորից՝ մեզ ճանապարհին թշ-
նամուց օգնելու համար զօրք և
ձիաւորներ ուզելու, որովհետև
թագաւորին ասել էինք թէ մեր
Աստուծոյ ձեռքը բոլոր նորան
խնդրողների վերայ է բարութեան
համար, իսկ նորա զօրութիւնը
և բարկութիւնը այն ամենի վե-
23 րայ, որ թողում է նորան։ Եւ
ծոմ պահեցինք և խնդրեցինք այս
մասին մեր Աստուծոյն, և նա
ընդունեց մեր խնդրուածքը։

24 Եւ քահանայից իշխաններից
տասներկու մարդ ջոկեցի՝ Սարա-
բիային, Ասաբիային և նորանց
հետ իրանց եղբայրներից տասը
25 մարդ։ Եւ կշռեցի նորանց
այն արծաթն ու ոսկին և անօթ-
ները իրեւ մեր Աստուծոյ տան
համար ընծայ, որ ընծայել էին
թագաւորը և նորա խորհրդակա-
նները և նորա իշխանները և ա-
ռեղ գտնուող Իսրայէլացոց բո-
26 լորը։ Եւ կշռեցի նորանց
ձեռքը վեց հարիւր հիսուն տա-
ղանդ արծաթ և հարիւր տա-
ղանդ արծաթի անօթներ, հար-
իւր տաղանդ ոսկի։ Եւ քսան 27
ոսկի տաշտ՝ հազար դրամ,
և երկու հատ մաքուր և փայլուն
պղնձի անօթ՝ ոսկու պէս պատ-
ուական։ Եւ նորանց տացի։ 28
Դուք նուիրուած էք Տէրոջը,
այս անօթներն էլ են նուիրուած,
և արծաթն ու ոսկին կամաւոր
ընծայ է ձեր հայրերի Տէր Ա-
ստուծոյ համար։ Արթուն կացէք 29
և պահպանեցէք մինչև որ կըշ-
ռէք քահանայից և Ղևացոց իշխաններին և Իսրայէլի տոհ-
մապետներին Երուսաղէմում Տի-
րոջ տան սենեակներում։ Եւ քա- 30
հանաները ու Ղևացիները ըն-
դունեցին կշռով արծաթն ու ոս-
կին և անօթները, որ տանեն Ե-
րուսաղէմ մեր Աստուծոյ տունը։

Եւ ճանապարհուեցանք Ա- 31
հաւայի գետից առաջին ամսի տաս-
երկուսին որ գնանք Երուսաղէմ,
և մեր Աստուծոյ ձեռքը մեզ
հետ էր, և նա մեզ պատսպ
ճանապարհին թշնամու և դարա-
նակալի ձեռքից։ Եւ եկանք Ե- 32
րուսաղէմ, և այնտեղ նստեցինք
երեք օր։ Եւ չորրորդ օրը կշռե- 33
ցինք արծաթն ու ոսկին և անօթ-
ները մեր Աստուծոյ տանը Ուրիա քահանայի որդի Մե-
րեմոթի ձեռքը, և նորա հետ
կար Փինէհէսի որդին Եղիազարը,
և նորանց հետ Յեսուի որդին
Յովզաբադը և Բանուհի որդին
Նովադիա Ղևացիները։ Ամենը 34
թուով և կշռով։ և բոլոր կշիռը
գրուեցաւ նոյն ժամանակը։

Եւ գերութիւնից եկած գերի- 35
նները Իսրայէլի Աստուծոյն ողջա-
կէզներ մատուցին՝ բոլոր Իսրա-
էլի համար տասներկու զուա-
րակ, իննսուն և վեց խոյ, եօթա-
նասուն և եօթը գառն, մեղքի
պատարագի համար տասներկու
նոխազ։ բոլորը ողջակէզ Տիրոջ
համար։ Եւ թագաւորի հրամա- 36
նագիրները տուին թագաւորի
հուսակալներին և գետի այն կող-
մի իշխաններին։ և նորանք օգ-
նում էին ժողովրդին և Աստու-
ծոյ տանը։

ԳԼ. Թ

1 Եւ երբոր ասրանք վերջացան, իշխանները ինձ մօտեցան և ասացին. Իսրայէլի ժողովուրդը և քահանաները և Ղեւտացիները չեն ջոկուել այս երկիրների ազգերից, այլ Քանանացոց, Քետացոց, Ամորհացոց, Փերեզացոց, Յեբուսացոց, Ամմոնացոց, Մովաբացոց, Եգիպտացոց և Ամորհացոց պղծութիւնների պէս են անում.
2 վասն զի առել են նորանց աղջիկներից իրանց համար և իրանց որդիների համար, և սուրբ սերունդը խառնուել է այս երկիրների ժողովրդոց հետ. նաև իշխանների ու առաջնորդները այս անօրէնութեան մէջ առաջին էին:
3 Եւ հէնց որ լսեցի այս բանը, պատռեցի իմ հանդերձն և վերարկուն, և փետեցի գլխից և մօրուքից մազերը և նստեցի ապշած:
4 Եւ ինձ մօտ ժողովեցան Իսրայէլի Աստուծոյ խօսքից վախեցողների ամէնքը գերութիւնից դարձածների յանցանքի համար, իսկ ես ապշած նստած էի մինչև երեկոյեան զոհը:
5 Եւ երեկոյեան զոհին վեր կացայ իմ տառապանքիցը և իմ պատառուած հանդերձն ու վերարկուով ծունկի վրայ իջայ և ձեռքերս տարածեցի դէպի իմ Տէր Աստուածը.
6 Եւ ասացի. Ով իմ Աստուած, ամաչում եմ և չեմ համարձակուում երեսս դէպի քեզ բարձրացնելու, ով իմ Աստուած, վասն զի մեր անօրէնութիւնները մեր գլխից վեր բարձրացան, և մեր յանցանքը մեծ է մինչև երկինքը:
7 Մեր հայրերի օրերից ի վեր մենք մեծ մեղքի մէջ ենք մինչև այսօր. և մեր անօրէնութիւնների համար մենք, մեր թագաւորները, մեր քահանաները մատնուեցանք երկիրների թագաւորաց, սրբի, գերութեան, յափշտակութեան և աներեսութեան ձեռքը ինչպէս որ այսօր է:
8 Եւ արդ մի փոքր ժամկետ ողորմութիւն եղաւ մեր Տէր Աստուածանից, որ մեզ համար փրկուած մնացինք, կաւածներ են ձեռացել, և մեզ հաստատել տուաւ իր սրբութեան տեղում, որ մեր աչքերը լուսաւորել է մեր Աստուածը, և մեզ մի փոքր կենդանութիւն է տուել մեր ծառայութեան մէջ: Վասն զի մենք ծառաներ 9
ենք, բայց մեր ծառայութեան մէջ էլ չձգեց մեզ մեր Աստուածը, և պարսից թագաւորների ընծրհքը մեզ վերայ գարձրեց, որ մեզ հանգստութիւն տան մեր Աստուծոյ տունը կանգնեցնելու և նորա աւերակները վերականգնելու և Յուդայում ու Երուսաղէմում մեզ մի պարսպատեղ տալու համար: Եւ արդ ինչ 10
ասենք, ով մեր Աստուած, այս բաներից յետոյ, որ մենք թողել ենք քո պատուիրանները, Որ 11
քո ծառայ մարգարէների ձեռովը պատուիրեցիր ասելով. Այն երկիրը, ուր որ գնում էք նորան ժառանգելու համար, պղծուած երկիր է երկիրների ազգաց գարշելի պղծութիւններովը և նորանց պղծութիւններովը, որոնցով լցրել են նորան ծայրէ՛ ի ծայր իրանց անմաքրութեամբը: Որպէս ձեր աղ- 12
ջիկները չտաք նորանց որդիքը, և նորանց աղջիկները չառնէք ձեր որդիքից համար, և չուզէք նորանց խաղաղութիւնը և բարութիւնը յաւիտեան, որպէս զի զօրանաք և ուտէք երկրի բարիքը, և ձեր որդիքից համար յաւիտեան ժառանգութիւն թողէք նոքա: Եւ այս բոլորը մեր չար 13
գործքերի և մեր մեծ յանցանքի պատճառով մեզ վերայ գալոց եղաւ (թէպէտ և դու, ով մեր Աստուած, մեզ խնայել ես մեր անօրէնութիւնից շատ և մեզ այսպէս փրկուածներ ես տուել), Արդեօք կրկին քո պատուիրան- 14
ները զանց անենք, և այս գարշելի ազգերի հետ խնամութիւն անենք. միթէ չես բարկանալ մեզ վերայ որ մեզ ոչնչեա մինչև որ մնացորդ և փրկուած չլինի: Ով Տէր Աստուած Իսրայէ- 15
լի, դու արդար ես, վասն զի մենք մինչև այսօր փրկուած մնացինք.

ահա մենք քո առջև ենք մեր յանցանքովը, թէև այս պատճառաւ քո առջև կանգնել չի լինիլ։

ԳԼ. Ժ

1 Երբոր եզրաը լացով և Ասուծոյ առն առջևը քնկած աղօթք էր անում և խոստովանում, նորա մօտ ժողովուեցաւ Իսրայէլից մի շատ մեծ բազմութիւն մարդիկ և կանայք և եղեխայք, վասն զի ժողովուրդն էլ
2 էր շատ լաց լինում։ Եւ Եղամի որդիներից՝ Յեքիէլի որդին Սեքենիան պատասխան տուաւ Եզրային և ասաց. Մենք մեղք գործեցինք մեր Ասուծոյ դէմ երկրիս ժողովուրդներից օտար կիներ առնելով. բայց և այնպէս
յոյս կայ Իսրայէլի համար այս
3 *բանի մէջ։* Արդ ուխտ անենք մեր Ասուծոյ առջևը, որ դուրս անենք բոլոր կիներըև նորանցից ծնուածները՝ իմ տիրոջ և մեր Ասուծոյ պատուիրանքներից վախեցողների խորհրդովը. և թող
4 *օրէնքին պէս կատարուի։* Վեր կաց, վասն զի այս գործը քեզ վերայ է, և մենք էլ քեզ հետ ենք. զօրացիր և արա։
5 Եւ Եզրաը վեր կացաւ և երդմնեցրեց քահանաների և Ղեւտացիների գլխաւորներին և բոլոր Իսրայէլին, թէ այս բանի պէս կանեն. և նորանք երդուեցան։
6 Եւ Եզրաը վեր կացաւ Ասուծոյ առն առջևից և գնաց Եղիասիբի որդի Յովհանանի սենեակը, և այնտեղ գնալով հաց չկերաւ և ջուր չխմեց, որովհետև տրտում էր գերութիւնից գործածների անօրէնութեան վերայ։
7 Եւ մուռնետիկ կանչել տուին Յուդայի և Երուսաղէմի մէջ բոլոր գերեզմարձներին որ ժողովուին
8 Երուսաղէմ. Եւ ամեն ով որ իշխանների և ծերերի խորհրդին համեմատ երեք օրուայ մէջ չգայ, նորա բոլոր առացուածքը պէտք է նզովուի և նա պէտք է ջոկուի գերեզմարձների ժողովքից։
9 Եւ Յուդայի և Բենիամինի բոլոր մարդիկը ժողովուեցան Երուսաղէմ երեք օրուայ մէջ. այսինքն իններորդ ամսում և ամսի քսանին, և բոլոր ժողովուրդը նստեց Աստուծոյ առն տան հրապարակում դողալով այն բանի մասին և անձրևներից։
10 Եւ վեր կացաւ Եզրաս քահանան և ասաց նորանց. Դուք անօրէնութիւն էք գործել և օտար կիներ էք առել Իսրայէլի յանցանքը աւելացնելու համար։
11 Բայց հիմա խոստովանեցէք ձեր հայրերի Տէր Ասուծոյ առջև և նորան հաճելին արէք, և ջոկուեցէք երկրիս ազգերից և օտար կիներից։
12 Եւ բոլոր ժողովքը պատասխանեց և ասացին մեծ ձայնով. Այդպէս, քո խօսքին համեմատ մեր պարտքն է անել։
13 Մեծ ժողովուրդը շատ է և ժամանակս էլ անձրևային, և կարելի չէ դրսում կանգնել, և այդ գործը մէկ օրուայ և երկու օրուայ բան չէ, որովհետև շատերս յանցաւոր ենք այդ բանում։ Հիմա մեր իշխանները կանգնեն բոլոր ժողովքի տեղ, և ամեն ով որ մեր քաղքներում օտար կիներ է առել թող որոշեալ ժամանակներին գայ, և նորանց հետ իւրաքանչիւր քաղաքի ծերերը և նորա դատաւորները, մինչև որ մեր Ասուծոյ բարկութեան բորբոքումը մեզանից հետ դարձնեն այս բանի մասին։
15 Մանուանդ Ասայէլի որդին Յովնաթանը և Թեկուայի որդին Յազիան կանգնեցին սորա վերայ, և Մեսուղամը ու Ղեւտացի Սաբբեթան նորանց օգնեցին։
16 Եւ գերեզմարձներն այնպէս արին. և ընտրուեցան Եզրաս քահանան և տոհմապետ մարդիկ իրանց տոհմերին համեմատ (և ամենքն էլ անուանի էին). և նիսան ուենցան տասներորդ ամսուայ առաջին օրը այս բանը քննելու համար.
17 և վերջացրին բոլոր մարդկանց գործը որ օտար կիներ էին առել մինչև առաջին ամսուայ առաջին օրը։
18 Եւ քահանայից որդիներից ...

բան+ գանուեցան որոնք օտար կա-
նայք էին առել, Յովսեդեկեան
Յեսուի որդիներից և եղբայրնե-
րից՝ Մաասիան, Եղիազարը, Յա-
49 րիբը և Գոդոդիան. Եւ իրանց
ձեռքը տուին իրանց կիներին
արձակելու, և իրանց յանցանքի
համար մէկ խոյ յանցանքի պոհ
20 մատուցին: Եւ Եմմերի որդիկան-
21 ցից՝ Անանին և Զաբադիան, Եւ
Հարիմի որդկանցից՝ Մաասիան,
Եղիան, Սեմայիան, Յեքիէլը և Ո-
22 զիան. Եւ Փաշուրի որդկանցից՝
Եղիոէնային, Մաասիան, Իս-
մայէլը, Նաթանայէլը, Յովզա-
23 բադը, և Եղեասան. Եւ Ղևտա-
ցիներից՝ Յովզաբադը, Սեմէին,
Կոմփիան, այսինքն Կոմփիասան,
Փեթայիան, Յուդան և Եղիազա-
24 րը. Եւ երգեցողներից՝ Եղիասիբը.
և դռնապաններից՝ Սեղղումը,
25 Տէլէմը և Ուրին. Եւ Իսրայէլից՝
Փաբոսի որդկանցից՝ Ռամիան,
Յեզիան, Մելքիան, Միամինը,
Եղիապաբը, Մելքիան և Բանա-
26 եան. Եւ Եղամի որդիներից՝ Մա-
թթանիան, Զաքարիան, Յեքիէլը,
Աբդին, Յերիմոթը և Եղիան.
27 Եւ Զաթուի որդկանցից՝ Եղիո-
էնային, Եղիասիբը, Մաթա-
նիան, Յերիմոթը, Զաբադը և
28 Ազիզան. Եւ Բեբայիի որդկան-
ցից՝ Յոհանանը, Անանիան, Զաբ-
բան, Ամմաղին. Եւ Բանիի որդ- 29
կանցից՝ Մեսուղամը, Մալուքը,
Ադայիան, Յասուբը, Սասդը և
Ռամոթը. Եւ Փահաթ-Մովաբի 30
որդկանցից՝ Եդնան, Քաղելը,
Բանեան, Մաասիան, Մաթա-
նիան, Բեսաղիելը, Բանուին և
Մանասէն. Եւ Հարիմի որդկան- 31
ցից՝ Եղիազարը, Յեսիան, Մել-
քիան, Սեմայիան, Շեմաւոնը,
Բենհամինը, Մալուքը, և Սա- 32
մարիան. Հասումի որդկանցից՝ 33
Մաթթանան, Զաբադը, Եղիփա-
ղետը, Յերեմին, Մանասէն և
Սեմէին. Բանիի որդկանցից՝ Մա- 34
ադան, Ամրամը, Ուէլը, Բան- 35
եան, Բադայիան, Քեղուհան,
Ուանիան, Մերամոթը, Եղիասի- 36
բը, Մաթթանիան, Մաթթանան, 37
Յասաւն, Բանին, Բարեբին, Սե- 38
մէին, Սեղեմիան, Նաթանը, Ա- 39
դայիան, Մաքնադբան, Սասան, 40
Սարան, Ազարիէլը, Սեղեմիան, 41
Սամարիան, Սեղղումը, Ամարի- 42
ան և Յովսէփը. Նաբասի որդկան- 43
ցից՝ Յէհիէլը, Մատաթիան, Զա-
բադը, Զեբինան, Յադաւին, Յո-
վելը և Բանեան: Սորանք ամենքը 44
օտար կիներ էին առել. և նո-
րանցից կային մանուկ որ
զաւակներ էին բերել:

ԳԻՐՔ ՆԷԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Ա.քսազիայի որդի Նէեմիայի խօս-
քերը:

Եւ եղաւ Քասղև ամսուն Ա.-
տոլէս Թոփսուի քաղաքում տա-
բին, որ ես Շուշան մայրաքաղա-
2 քում էի: Եւ իմ եղբայրներից
մէկը՝ Անանին և Յուդայից մի
քանի մարդիկ եկան. և ես նո-
րանց հարցրի այն ազատուած
Հրէաների մասին, որ մնացել էին
գերութիւնից, և Երուսաղէմի
3 մասին: Եւ ինձ ասացին. Այն
մնացորդները, որ մնացին գերու-
թիւնից, այնտեղ գաւառում
մեծ նեղութեան և անարգու-
թեան մէջ են, և Երուսաղէմի
պարիսպները քանդուած և նորա
դռները կրակով այրուած են:

4 Եւ երբոր ես այս խօսքերը լսե-
ցի, նստեցի և լացի և սուգ արի
մի քանի օրեր. և ծոմ պահեցի
ու աղօթք էի անում երկնից Ա-
5 տուծոյ առջև, Եւ ասում էի.
Ով Տէր Աստուած երկնից, մեծ
և սքանչելի Աստուած, որ ուխտ և
ողորմութիւն ես պահում քեզ
սիրողներին և քո պատուիրանք-
6 ները պահողներին. Ազաչում եմ՝

ականջ դիր և աչքերդ բաց լինին ծառայիդ աղօթքը լսելու, որ ես հիմա աղօթում եմ քո առջև ցերեկ և գիշեր քո Իսրայէլի որդիք՝ ծառաներիդ համար, և խոստովանում եմ Իսրայէլի որդկանց մեղքերը որ քեզ դէմ մեղանչեցինք, ես էլ և իմ հօր տունն էլ մեղանչել ենք։ 7 Իրաւ յանցաւոր ենք քեզ դէմ, և չենք պահել այն պատուիրանքները և կանոնները ու իրաւունքները, որ պատուիրեցիր քո Մովսէս ծառային։ 8 Սակայն յիշիր այն խօսքը որ պատուիրեցիր Մովսէս ծառային՝ ասելով. Եթէ դուք յանցանք գործէք, ես ձեզ 9 կցրուեմ ազգերի մէջ։ Եւ եթէ ետ դառնաք դէպի ինձ և պահէք իմ պատուիրանքները և կատարէք նորանց, թէ որ ձեր աքսորուածները երկնքի ծայրումն էլ լինին, այնտեղից կ'ժողովեմ և նորանց կ'բերեմ այն տեղը որ ես ընտրել եմ իմ անունն այնտեղ բնակեցնելու։ 10 Եւ սոյա նորանք քո ծառաներն ու քո ժողովուրդն են, որ ազատեցիր քո մեծ ուժով և քո զօրաւոր բազկով։ 11 Ո՜հ Տէր, ականջ դիր ծառայիդ աղօթքին և ծառաներիդ աղօթքին, որ սիրում են քո անունից վախենալը. և յաջողութիւն տուր այսօր քո ծառային, և ինձ ողորմութիւն գտնել տուր այս մարդու առջև։ Եւ ես թագաւորի մատուռակն էի։

ԳԼ. Բ

1 Եւ եղաւ Նիսան ամսում՝ Արտաշէս թագաւորի քսաներորդ տարին, որ դինի կար նորա առջև. և ես առի դինին և տուի թագաւորին. և նորա առջևը 2 տրտում եղած չէի։ Եւ թագաւորն ասաց ինձ. Ինչո՞ւ համար է երեսդ տրտում, և դու հիւանդ չես. սա ուրիշ ոչինչ չէ եթէ ոչ սրտի ցաւ. և ես խիստ շատ 3 վախեցայ. Եւ ասացի թագաւորին. Արքայ, յաւիտեան կաց. ինչո՞ւ համար չտրտմէ իմ երեսը, որ իմ հայրերի գերեզմանատան քաղաքը աւերակ է և նորա դռները կրակով այրուել են։ Եւ 4 թագաւորն ինձ ասաց. Ի՞նչ է քո ուզածը. և ես աղօթք արի երկնից Աստուծոյն։ Եւ ես ասացի թագաւորին. Եթէ թագաւորին հաճելի է, և եթէ ծառադ հաճելի է քո առջև, որ ինձ ուղարկես Հրէաստան իմ հայրերի գերեզմանատան քաղաքը, որ ես շինեմ նորան։ 6 Եւ ինձ ասաց թագաւորը (և թագուհին նստել էր նորա կշտին), մինչև ե՞րբ կ'տևէ քո գնալը, և ե՞րբ կ'դառնաս։ Եւ հաճելի եղաւ թագաւորի առջև որ ինձ ուղարկէ, և ես նորան ժամանակ որոշեցի։ Եւ ասացի թագաւորին. 7 Եթէ հաճելի է թագաւորին, թող ինձ նամակներ տրուին գետի այն կողմի իշխանների վերայ, որ ինձ անցկացնեն մինչև որ հասնեմ Հրէաստան, Եւ մի նամակ 8 թագաւորական պարտէզի տեսուչ Ասափի վերայ, որ ինձ փայտ տայ Աստուծոյ տան աշտարակի դռները և քաղաքի պարիսպների դռները ծածկելու համար և այն տան համար ուր որ ես պիտի գնամ. և թագաւորը տուաւ ինձ, որովհետև Աստուծոյ բարի ձեռքը ինձ վերայ էր։

Եւ ես եկայ գետի այս կողմի 9 իշխանների մօտ և տուի նորանց թագաւորի նամակները. և թագաւորն ինձ հետ զօրապետներ և ձիաւորներ ուղարկեց։ Եւ երբոր 10 Սանաբաղատ Որոնացին և Ամմոնացի ծառան Տուբիան լսեցին, խիստ շատ նեղացան, որ մի մարդ է եկել Իսրայէլի որդկանց բարիքը ուզելու։ Եւ ես եկայ Երու- 11 սաղէմ, և այնտեղ ծնացի երեք օր։

Եւ ես վեր կացայ գիշերը և մի 12 քիչ մարդիկ ինձ հետ, և ոչ մի մարդու չպատմեցի թէ իմ Աստուածն ինչ է դրել իմ սրտումը Երուսաղէմին անելու համար, և մէկ անասուն չկար ինձ հետ բացի իմ հեծած անասունից։ Եւ 13 ես դուրս ելայ Ձորի դռնովը գի-

շերով և փո-ջե դեպի Վիշապի ապրիւր և դեպի Ադրի դուռը, և զննեցի Երուսաղէմի քանդուած պարիսպները և նորա կրակով այրուած դռները։ Եւ անց կացայ Ադրիւրի դուռը և Թագաւորի աւազանը. և տակից անասնի համար տեղ չկար անցնելու։ Եւ վեր դնացի հեղեղատով դիշերը և զննեցի պարիսպը. և ետ դարձայ ու մտայ Ձորի դռնով և ետ դարձայ։ Եւ ատիկաններդը չիմացան թէ ուր գընացի և թէ ես ինչ եմ անում. և Հրեաներին և քահանաներին ու ազնուականներին ու ատիկաններին և միւս գործը կատարողներին մինչև այն ժամանակ չէի խմացրել։

Եւ նորանց ասացի. Դուք տեսանում էք այս թշուառութիւնը, որի մէջ մենք կանք, որ Երուսաղէմն աւերակ և նորա դռները կրակով այրուած են. եկէք Երուսաղէմի պարիսպը շինենք, որ այլ ևս նախատինք չը լինինք։ Եւ նորանց պատմեցի Աստուծոյ ձեռքը ինձ վերայ բարեյաջող լինելը, և մանաւանդ թագաւորի խօսքերը որ ինձ ասել էր. և նորանք ասացին. Վեր կենանք և շինենք, և իրանց ձեռքերը ուժովացրին այս բարի գործի համար։

Եւ Որոնցի Սանբղատը ու Ամմոնացի ծառայ Տուբիան և Արաբացի Գեսամը լսելով մեզ ծաղր արին և մեզ արհամարհեցին և ասացին. Սա ի՞նչ բան է որ անում էք. մի՞թէ թագաւորի դէմ ապստամբում էք։ Բայց ես նորանց պատասխան տուի և ասացի նորանց. Երկնից Աստուածն ինքը մեզ յաջողութիւն է տալու, և մենք նորա ծառաներս վեր ենք կենալու որ շինենք. իսկ դուք բաժին, իրաւունք և յիշատակ չունէք Երուսաղէմում։

ԳԼ. Գ

Եւ վեր կացան Եղիասիբ մեծ քահանան և նորա եղբարք քահանաները և շինեցին Ոչխարաց դուռը, նորան նուիրեցին նորանք և նորա դռները կանգնեցրին և նուիրեցին մինչև Մէային աշտարակը՝ մինչև Անանոսէլի աշտարակը։ Եւ նորա մօտ շինեցին Երիքովի մարդիկը, և նորա մօտ շինեց Իմրիի որդի Զաքուրը։ Եւ Ձկանց դուռը շինեցին Սենասի որդիքը, նորանք ծածկեցին նորան և կանգնեցրին նորա դռները, կղպանքները և նիգերը։ Եւ նորանց մօտ նորոգեց Ակկուսի որդու Ուրիայի որդին Մերամոթը, և նորանց մօտ նորոգեց Մասիզբէլի որդու Բարաքիայի որդին Մեսուզամը. և նորանց մօտ նորոգեց Բաանայի որդին Սադոկը։ Եւ նորանց մօտ նորոգեցին Թեկուացիք. բայց նորանց երեւելիները իրանց վզերը չտուին իրանց Տիրոջ ծառայութեանը։ Եւ Հին դուռը նորոգեցին Փասէի որդի Յոյիադան և Բեսոդեայի որդին Մեսուզամը. նորանք ծածկեցին նորան և կանգնեցրին նորա դռները, կղպանքները և նիգերը։ Եւ նորանց մօտ նորոգեցին Գաբաւոնացի Մելատեան և Մերոնոթացի Յադոնը և Գաբաւոնի ու Մասփայի մարդիկը մինչև Գահի այս կողմի իշխանի աթոռը։ Նորա մօտ նորոգեց ոսկերիչներից Հարհայայի որդին Ոզիէլը, և նորա մօտ նորոգեց դեղագործների որդին Անանիան, և Երուսաղէմին բոց թողեցին մինչև լայն պարիսպը։ Եւ նորանց մօտ նորոգեց Ովրի որդի Հռափայեան Երուսաղէմի կէս բաժնի իշխանը։ Եւ նորանց մօտ նորոգեց Հարումափի որդին Յեդայեան՝ նաև իր տան դիմացը. և նորա մօտ նորոգեց Ասաբանեայի որդին Փեդայեան։ Միւս մասը նորոգեցին Հարիմի որդին Մեղքիան և Փասէա-մովաբի որդին Ասուբը՝ նաև փուռերի աշտարակը։ Եւ նորա մօտ նորոգեցին Ալոհեսի որդին Սեղղումը՝ Երուսաղէմի կէս բաժնի իշխանը՝ ինքը և իր աղջիկները։ Զորի դուռը նորոգեցին Անոնը և Զանովի բնակիչները, նորանք շի-

նեցին նորան և կանգնեցրին նորա դառները, կղպաքները և նիգերը, նաև պարսպիցը Հապար կանգառն մինչև Ադրից դուռը: 14 Եւ Ադրից դուռը նորոգեց Բեթ աքարմայի բաժնի իշխան Ռեքաբի որդին Մեղքիան. նա շինեց նորան և կանգնեցրեց նորա դառները, կղպաքները և նիգերը: 15 Եւ Ադբուքի դուռը նորոգեց Մասփայի բաժնի իշխան Քողոզէի որդին Սեղդումը, նա շինեց նորան և ծածկեց, և կանգնեցրեց նորա դառները, կղպաքները և նիգերը, նաև Սիլովայի ուսազանի պարիսպը թագաւորի պարտէզի մօտից մինչև Դաւթի քաղաքից իջնող աստիճանները: 16 Նորանից յետոյ նորոգեց Ազբուքի որդին Նէեմիան՝ Բեթ աւրի կէս բաժնի իշխանը մինչև Դաւթի գերեզմանների դիմացը և մինչև շինուած ջրամբարը և մինչև Հակայից տունը: 17 Նորանից յետոյ նորոգեցին Ղևտացիք՝ Բանիի որդին Հռեհումը. նորա մօտ նորոգեց Կէիլայի կէս բաժնի իշխանը՝ Ասափիան իր բաժնի չափ: 18 Նորանից յետոյ նորոգեցին նորա եղբայրքը՝ Ենադադի որդին Բաւայիան՝ Կէիլայի կէս բաժնի իշխանը: 19 Եւ նորա մօտ նորոգեց Յեսուի որդին Եզերը՝ Մասփայի իշխանը միւս մասը՝ դինարանը ելնելու ճանապարհի դիմացը անկիւնուամբ: 20 Նորանից յետոյ փութալ նորոգեց Զաբբայի որդին Բարուքը միւս մասը անկիւնից մինչև մեծ քահանայ Եղիասիբի տան մուտքը: 21 Նորանից յետոյ նորոգեց Ակկուսի որդու Ուրիայի որդին Մերամոթը միւս մասը Եղիասիբի տան մուտքից մինչև Եղիասիբի տան վերջը: 22 Եւ նորանից յետոյ նորոգեցին քահանաները՝ դաշտի բնակիչները: 23 Նորանից յետոյ նորոգեցին Բենիամինը և Ասուբը իրանց տների առջևը. նորանից յետոյ նորոգեց Անանիայի որդու Մասասիայի որդին Ազարիան իր տան կուշտը: 24 Նորանից յետոյ նորոգեց Ենադադի որդին Բանուին միւս մասը՝ Ազարիայի տանից մինչև անկիւնը և դարձուածքը: 25 Ողայի որդին Փաղաղը՝ անկիւնի և աշտարակի դիմացը, որ դուրս է գալիս թագաւորի վերի տանից բանտի գաւթին մօտ. նորանից յետոյ Փարոսի որդին Փադայիան: 26 Եւ Նաթանայիմները, որ բնակում էին Ոփաղում, մինչև Ջուրի դրան դիմացը դէպի արևելք, և դուրս եկած աշտարակը: 27 Նորանից յետոյ նորոգեցին Թեկուացիք միւս մասը դուրս եկած մեծ աշտարակի դիմացը մինչև Ոփաղի պարիսպը: 28 Ձիերի դռնից վեր նորոգեցին քահանաները՝ ամեն մարդ իր տան դիմացը: 29 Նորանից յետոյ նորոգեց Եմմերի որդին Սադովկը իր տան դիմացը. և նորանից յետոյ նորոգեց Սեքենիայի որդին Սեմայիան՝ արևելեան դրան պահապանը: 30 Նորանից յետոյ նորոգեցին Սելեմիայի որդին Անանիան և Սեղեփի վեցերորդ որդին Անանը միւս մասը. նորանից յետոյ նորոգեց Բարաքիայի որդին Մեսուղամը իր աւանակի դիմացը: 31 Նորանից յետոյ նորոգեց ոսկերչի որդին Մեղքիան մինչև Նաթանայիմների և վաճառականաց տունը մինչև Հանդէսի դրան դիմացը և մինչև անկեան վերնատունը: 32 Եւ անկեան վերնատան ու Ոչխարաց դրան մէջտեղ նորոգեցին ոսկերիչները և վաճառականները:

ԳԼ. Դ

1 Եւ երբոր Սանաբաղատը լսեց որ մենք շինում ենք պարիսպը, բարկացաւ և շատ զայրացաւ և ծաղր արաւ Հրէաներին. 2 և ասաց իր եղբարց և Սամարիայի զօրքի առջև և խօսեց. Թէ Ա՛յս թշուառ Հրէաները ի՞նչ են շինում. մի՞թէ թոյլ կ'տան նորանց. մի՞թէ զոհ են մատուցանելու. մի՞թէ այսօր վերջացնելու են. մի՞թէ կենդանացնելու են քարերը փոշու դէզերից քանի որ նորանք այրուած են: 3 Եւ Ամմոնացի Տուբիան նորա կշտին էր և

ասաց. Նորանց շինածի վերայ էլ եթէ մի աղուէս վեր ելնէ, նորանց քարի պատն էլ կ՚քանդուի։

4 Լսիր, ով մեր Աստուած, վասն զի նախատուեցանք, և նորանց նախատինքը դարձրու նորանց գլխին և նորանց մասնիր աւար լինելու գերութեան երկրում. 5 և մի ծածկեր նորանց անօրէնութիւնը, և նորանց մեղքը չջնջուի քո առջեւը, որովհետև բարկացրին շինողների առջեւ։

6 Եւ պարիսպը շինեցինք, և բոլոր պարիսպը շրջափակուեցաւ մինչև կէսը. և ժողովուրդը սիրտ արաւ գործելու։

7 Եւ երբոր լսեցին Սանաբաղատը և Տուբիան և Արաբացիք և Ամմինացիք և Ազոտացիք, որ Երուսաղէմի պարիսպները վերանորոգւում են և քանդուած տեղերը սկսուել են կարկատուիլ, 8 շատ բարկացան։ Եւ ամենքը միաբանուեցան միասին, որ գան Երուսաղէմի դէմ պատերազմեն և 9 նորան ջնաս տան։ Բայց մենք աղօթք արինք մեր Աստուծոյն, և պահապաններ դրինք նորանց պատճառով նորանց դէմ ցերեկ 10 և գիշեր։ Եւ Հրէայք ասացին. Բեռնակիրների ոյժը թուլացել է, և հողը շատ է. և մենք չենք կարողանում պարիսպը շինել։ 11 Բայց մեր թշնամիքն ասում էին. Ո՛ չիմանան և չտեսնեն մինչև որ մտնենք նորանց մէջ և նորանց սպանենք և գործը խափանենք։ 12 Եւ երբոր նորանց մօտակայքում բնակող Հրէայքը չորս տեղ եկան և ասան մեզ ասացին ամեն տեղերից, թէ ետ դարձէք էլէ՛ մեզ մօտ.

13 Այն ժամանակ դրի ես ցած տեղերում պարսպի ետքին չոր տեղերը, պահեցի կանգնեցրի ժողովուրդը տոհմերի համեմատ իրանց սուրերով, նիզակներով և աղեղներով։ 14 Եւ նայեցի ու վեր կացայ և ասացի իշխաններին և տարիքաններին ու միւսացած ժողովրդին. Նորանց երեսից մի վախենաք, յիշեցէք մեծ և սքանչելի Տիրոջը, և պատերազմեցէք ձեր եղբայրների, ձեր որդիների ու ձեր աղջկանց, կանանց և ձեր տների համար։

15 Եւ երբոր մեր թշնամիքը լսեցին, որ մենք իմացել ենք, և թէ Աստուած ցրուել է նորանց խորհուրդը, մենք ամենքս ետ դարձանք դէպի պարիսպը ամեն մարդ իր գործին։ 16 Եւ այն օրից մի վեր իմ մարդկանց կէսը գործն էր գործում, և նորանց կէսը նիզակներն ու սպարներն ու աղեղները և զրահներն էին բռնում. և իշխանները Հրէաստանի բոլոր տան հետևին կանգնել էին։ 17 Պարիսպը շինողները և բեռնակիրները, որ իրանց վերայ էին բեռնում, մէկ ձեռքով գործն էին գործում, իսկ միւս ձեռքը զէնքն էր բռնած։ 18 Եւ շինողների ամեն մէկը սուրը մէջքին կապած էր անում, և փողհարն իմ կշտին էր։ 19 Եւ ես ասացի իշխաններին և տարիքաններին ու միւսացած ժողովրդին. Այս գործը մեծ և ընդարձակ է, և մենք ցրուած ենք պարսպի վերայ միմիանցից հեռու։ 20 Ո՛ր տեղ որ լսէք փողի ձայնը, այնտեղ ժողովուեցէք մեզ մօտ, մեր Աստուածը պատերազմելու է մեզ համար։ 21 Եւ այսպէս մենք գործը գործում էինք. և կէսը նիզակները բռնած արշալոյսը ծագելուց մինչև աստղերի երևալը։ 22 Այն ժամանակին ես էլ ասացի ժողովրդին. Որ ամեն մարդ իր ծառայի հետ գիշերը Երուսաղէմում մնայ, որ գիշերները մեզ համար պահապանութիւն անեն և ցերեկը գործեն։ Եւ ես ու իմ եղբայրները և իմ ծառաները և իմ հետևից եկող պահապան մարդիկը՝ ամենքս մեր հանդերձները չէինք հանում, բացի ամեն մարդ ջուրը ուզարկելուց։

ԳԼ. Ե

1 Եւ ժողովրդի ու նորանց կանանց աղաղակը մեծ էր իրանց

2 Հրէայ եղբարց դէմ՝ եւ կային
ասողներ, թէ Մենք մեր տղեր-
քովն ու աղջկերքովը շատ ենք,
և ուտելիք ծախու կառնենք և
3 կուտենք ու կապրենք: Եւ ասող-
ներ էլ կային, թէ Մեր արտերը,
այգիները և տները գրաւ ենք
դնում որ ուտելիք առնենք սովի
4 ժամանակ: Եւ ասողներ էլ կա-
յին, թէ Մենք փող ենք պարտք
առում թագաւորի հարկի համար
մեր արտերովը և մեր այգիներով-
5 վը: Եւ արդ մեր մարմինը մեր
եղբարց մարմնոյ պէս է, մեր որ-
դիքը նորանց որդկանց պէս, և
ահա մենք մեր որդիքն ու աղջ-
կերքը ծառայութեան ենք հպա-
տակացնում, և մեր աղջիկներից
ոմանք հպատակուած են. և մեր
ձեռքին կարողութիւն չկայ, ո-
րովհետև մեր արտերն ու այգի-
ները ուրիշներին են:
6 Եւ ես շատ դժուարացայ,
երբոր նորանց աղաղակը և այս
7 խօսքերը լսեցի. Եւ իմ սրտումը
խորհեցի և յանդիմանեցի իշխան-
ներին և սատիկաններին և ասացի
նորանց. Վաշխ էք առնում դուք
ամեն մէկդ ձեր եղբայրներից. և
նորանց դէմ մեծ ժողովք կազ-
8 մեցի. Եւ նորանց ասացի. Մենք
ծախու առել ենք մեր Հրէայ եղ-
բայրներին, որ ծախուած էին
հեթանոսներին, որքան որ կա-
րող էինք, բայց դուք ծախում
էք ձեր եղբայրները. և նորանք
մե՞զ վերայ ծախուին: Լսկ նո-
րանք լսեցին և պատասխան չը-
9 գտան: Եւ ասացի. Լաւ չէ այս
բանը որ դուք անում էք. մի՞թէ
պիտի մեր Աստուծոյ երկիւղովը
չդնաք, որ մեր թշնամի ազգերի
10 առջև խայտառակ չլինինք: Եւ ես
էլ, եղբայրներս ու ծառաներս էլ
նորանց փող և ցորեն ենք փոխ
առել. եկէք այս պարտքը նո-
11 րանց ընորհենք: Խնդրում եմ՝
ետ դարձրէք նորանց այսօր նո-
րանց արտերը, նորանց այգինե-
րը, ձիթենիները ու տները, և
Հարիւրից մէկը նորանցից ձեզ
հասնելի արծաթը, ցորենը, գի-
12 նին և իւղը: Եւ նորանք ասա-
ցին. Ետ կենք դարձնում, նորան-
ցից չենք ուզիլ. այնպէս կա-
նենք ինչպէս որ դուս ասում ես:
Եւ ես կանչեցի քահանաներին,
և նորանց երդում տալ տուի որ
այսպէս անեն: Եւ ես թափ տը- 13
ուի իմ ծոցը և ասացի. Աստ-
ուած այսպէս թափ տայ ամեն
մարդուն իր տանից ու իր աշ-
խատանքից, ով որ այս խօսքը
չպահէ, և նա այսպէս թափ տըր-
ուած և դատարկ լինի: Եւ բո-
լոր ժողովքն ասացին. Ամէն. և
օրհնեցին Տէրոջը. և ժողովուրդն
այսպէս արաւ:
Նաև այն օրից, որ ինձ հրա- 14
մայեց Ը-ֆ---ը նորանց իշխանը
լինել Հրէաստանում Արտաշէս
թագաւորի քսաներորդ տարուց
մինչև երեսունուերկրորդ տարին
տասներկու տարի ես և իմ եղ-
բայրքը իշխանական հացը չկե-
րանք: Եւ նախորդ իշխանները, 15
որոնք ինձանից առաջ եղել էին,
ժողովրդին ծանրութիւն էին տը-
ուել, և նորանցից հաց և գինի
էին առնում բացի քառասուն
սիկղ արծաթը. նաև նորանց
ծառաները տիրում էին ժողո-
վրդի վերայ. բայց ես այդպէս
չարի Աստուածանից վախենալով:
Նաև այս պարսպի գործումը ես 16
ջանացի. և արտ ծախու չառինք,
և իմ ամեն ծառաները ժողով-
ուած էին այնտեղ այն գործի
վերայ: Եւ Հարիւր հիսուն Հրէայ 17
և սատիկան և մեր շրջակայքում
եղող ազգերից մեզ մօտ եկողներ
լինում էին իմ սեղանի վերայ:
Եւ ահա ինչ էր պատրաստվում 18
մէկ օրը՝ մէկ արջառ, վեց ընտիր
ոչխար, և թռչուններ էին պատ-
րաստվում ինձ համար. և տասն
օրուայ մէջ ամեն տեսակ գինի
առատութեամբ. և այսու ամե-
նայնիւ իշխանական հացը չուզե-
ցի, վասն զի ծառայութիւնը
ծանր էր այս ժողովրդի վերայ:
Յիշիր ինձ Ա՛ստուած, ով իմ 19
Աստուած, ամեն ինչ որ արի
այս ժողովրդի համար:

ԳԼ. Զ

1 Եւ երբոր Սանաբատացատը, Տոբ-
իան և Աբրատացի Գաբաամը և մեր
մեւս թշնամիքը լսեցին, որ ես
պարիսպը շինեցի, և նորանուամ
քանդուած տեղ չէ մնացել (թէ
և մինչև այն ժամանակ դռների
2 փեղկերը չէի կանգնեցրել), Սի-
ժամանակ Սանաբատացատը և Գա-
աամը մարդ ուղարկեցին ինձ մօտ
և ասացին. Եկ միասին տեսակ-
ցուինք Ոնոի դաշտումը դիւղե-
րումը. բայց նորանք մտածում
3 էին ինձ չարութիւն անել, Եւ
ես նորանց մօտ պատգամաւորներ
ուղարկեցի ասելով. Ես մեծ գոր-
ծով պրաղուած եմ, և չեմ կա-
րող իջնել. ինչո՞ւ համար գործը
դադարէ երբոր ես ձգեմ նորան
4 և իջնեմ ձեզ մօտ։ Բայց նո-
րանք ինձ մօտ ուղարկեցին այս
բանովը չորս անգամ, և ես նո-
րանց նոյն խօսքը պատասխանե-
5 ցի։ Եւ Սանաբատացատը այս բա-
նովը հինգերորդ անգամ իր ծա-
ռային ինձ մօտ ուղարկեց, և մի
6 բաց նամակ նորա ձեռքին, Ո-
րանումը գրուած էր՝ Ազգաց մէջ
լսւում է և Գաաամն ասում է.
Որ դու և Հրէաները խորհում
էք ապստամբել. նորա համար
ես դու պարիսպը շինում. և դու
ուզում ես նորանց թագաւոր
լինիլ. այսպիսի խօսքերի պէս։
7 Նաև մարգարէներ ես դրել որ
քո մասին քարոզեն Երուսաղէ-
մումն ասելով. Թագաւոր Հրէ-
աստանում. և արդ այսպիսի
խօսքեր պիտի հասնեն թագաւո-
րին. ուրեմն եկ միասին տեսակ-
8 ցուինք։ Եւ ես մարդ ուղարկեցի
նորա մօտ և ասացի. Այդպիսի
բաներ չկայ որ դու ասում ես.
այլ դու քո սրտիցն ես հնարել
9 դրանս։ Վասն զի նորանք ամեն-
քը մեզ վախեցնում էին, կար-
ծելով՝ նորանց ձեռքերը կ'թու-
լանայ այդ գործիցը և չի կա-
տարուիլ։ Բայց դու, ով Ա-
ստուած, զօրացրու իմ ձեռքերը։
10 Եւ ես եկայ Մեետաբէլի որդու
Դաղայեայի որդի Սեմայեայի տու-
նը, որ խիստ կզպուել էր. և նա
ասաց. Գնանք միասին Աստուծոյ
տունը տաճարի մէջ և տաճարի
դռները կապենք, վասն զի գալիս
են քեզ սպանելն, և գիշերով
գալու են քեզ սպանելն։ Եւ ես
ասացի. Մի՞թէ ինձ նման մարդը
կ'վախենայ. և ինձ նման ո՞րը կը
գնայ տաճարը որ ողջ մնայ. ես
չեմ գնալ։ Եւ ես դիտեցի, որ
ահա Աստուած չէր նորան ու-
ղարկել. այլ այս մարգարէու-
թիւնը խօսեց ինձ վերայ, որով-
հետև Տոբիան և Սանաբատա-
տը նորան վարձել էին։ Ընտա
համար էր նա վարձուել, որպէս
զի ես վախենամ, և այնպէս ա-
նեմ ու յանցաւոր լինիմ. և սա
նորանց համար անէր լինի իմ ա-
նունը վատաբանելու որ ինձ նա-
խատեն։ Յիշիր, ով իմ Աստ-
ուած, Տոբիային և Սանաբատա-
տին իրանց այս գործոց համե-
մատ. նաև Նոադիա մարգարէ-
ուհուն և մեւս մարգարէներին
որ ինձ վախեցնում էին։

Եւ պարիսպը լրացաւ Ելուլի
քսանուհինգին՝ հիսուն և երկու
օրուայ մէջ։ Եւ երբոր մեր բոլոր
թշնամիքը լսեցին, վախեցան մեր
շուրջը գտնուող բոլոր ազգերը.
և շատ ցածացան իրանց աչքերի
առջև և իմացան, որ մեր Աստ-
ուածանից եղաւ այս բանը։

Նաև այն օրերը Յուդայի ազ-
նուականները շատ նամակներ էին
գրում որ գնում էին Տոբիային.
և Տոբիայինները գալիս էին նո-
րանց։ Վասն զի շատերը էին
Յուդայում որ նորա հետ երդում
մով կապուած էին, որովհետև
նա Արահի որդի Սեքենիայի փե-
սան էր. և նորա որդին Յոհա-
նան առել էր Բարաքիայի որդի
Մեսուդամի աղջիկը։ Նաև նորա
լաւութիւնները ասում էին իմ
առջև, և իմ խօսքերը տանում
էին նորան. Տոբիան նամակներ
էր ուղարկում ինձ վախեցնելու։

ԳԼ. Է

Եւ եղաւ երբոր պարիսպը շին-

ուեցաւ, և ես դռները կանդնեցրի,
և դռնապանները ու երգեցողները
2 և Ղևտացիները դրուեցան. Եւ
իմ եղբայր Անանիին և աշտա-
րակի իշխան Անանիային, որ հա-
ւատարիմ մարդ է և Աստուա-
ծանից երկիւղած աւելի քան թէ
շատերը, պատուիրեցի Երուսա-
3 ղէմի մասին, Եւ ասացի նորանց.
Երուսաղէմի դռները չբացուին
մինչև արեգակի տաքանալը, և
դեռ իրանք ոչխէղ կանգնած
դռները կապեն և կղպեն. և պա-
հապաններ դնեն Երուսաղէմի բը-
նակիչներին ամեն մարդ իր պա-
հապանութիւնով և ամեն մարդ
իր տան դիմացը:
4 Եւ քաղաքը ընդարձակ և մեծ
էր, բայց մէջի ժողովուրդը քիչ
5 էր. և տուներ շինուած չէր: Եւ
իմ Աստուածն իմ սիրտը գցեց,
որ ժողովեմ իշխաններին, ա-
տիկաններին և ժողովրդին որ
արձանագրուին, և մի ազգաբա-
նութեան գիրք գտայ առաջի ան-
գամ ՓԷԼԷԴԷԼՓԷԱԻ եկողների մա-
սին, և նորանում գրուած գտայ.
6 Սրանք են գաւառի բնակիչ-
ները որ Բաբելոնի Նաբուգոդո-
նոսոր թագաւորի տարած գերու-
թիւնից եկել են, և ետ են դար-
ձել Երուսաղէմ և Հրէաստան՝
7 ամեն մարդ իր քաղաքը, Որ ե-
կան Զօրաբաբէլի, Յեսուի, Նէե-
միայի, Ազարիայի, Ռաամիայի,
Նահմանիի, Մուրթքէի, Բաղա-
սանի, Մասփարաթի, Բագաւէի,
Նահումի և Բաանայի հետ: Իս-
րայէլի ժողովրդի մարդկանց թիւը
8 — է. Փարոսի որդիքը երկու հա-
զար հարիւր եօթանասունհինգ եր-
9 կու. Սափատիայի որդիքը երեք
հարիւր եօթանասուն և երկու.
10 Արահի որդիքը վեց հարիւր յի-
11 սուն և երկու. Փահաթ-մովաբի
որդիքը՝ Յեսուի և Յովաբի որդի-
ներից երկու հազար ութ հարիւր
12 տասն և ութը. Եղամի որդիքը
հազար երկու հարիւր յիսունու-
13 չորս. Զաթուի որդիքը ութը
14 հարիւր քառասունհինգ. Զաք-
քայի որդիքը եօթը հարիւր վաթ-
15 սուն. Բանիի որդիքը վեց հարիւր
քառասունհինգ. Բեբայիի որ- 16
դիքը վեց հարիւր քսանեւութը.
Ազգատի որդիքը երկու հազար 17
երեք հարիւր քսանուերկու. Ա- 18
դոնիկամի որդիքը վեց հարիւր
վաթսունեւօթը. Բագուէի որ- 19
դիքը երկու հազար վաթսունե
օթը. Ադինի որդիքը վեց հարիւր 20
յիսունեհինգ. Ատերի որդիքը՝ 21
Եզեկիայից իննսունեւութը. Նա- 22
սումի որդիքը երեք հարիւր քսան
եւութը. Բեսայէի որդիքը երեք 23
հարիւր քսաներկու. Արիփի որ- 24
դիքը հարիւր տասներկու. Գա- 25
բաւնի որդիքը իննսունուհինգ.
Բեթլեհեմի ու Ներտոփայի մար- 26
դիկը հարիւր ութսունեւութը.
Անաթովթի մարդիկը հարիւր 27
քսաներեւութը. Ազմաւթի տան 28
մարդիկը քառասունեւերկու. Կա- 29
րիաթարիմի, Կեփիրայի ու Բեերո-
թի մարդիկը եօթը հարիւր քա-
ռասունուերեք. Ռամայի և Գա- 30
բայի մարդիկը վեց հարիւր քսան
և մէկ. Մաքմասի մարդիկը հար- 31
իւր քսաներկու. Բեթէլի և 32
Գայիի մարդիկը հարիւր քսան և
երեք. Միւս Նաբաւի մարդիկը 33
յիսունեւերկու. Միւս Եղամի որ- 34
դիքը հազար երկու հարիւր յի-
սունուչորս. Նարիմի որդիքը ե- 35
րեք հարիւր քսան. Երիքովի որ- 36
դիքը երեք հարիւր քառասունու-
հինգ. Ղոդի, Ադիդի և Ոփե- 37
վի որդիքը եօթը հարիւր քսան և
մէկ. Սենասայի որդիքը երեք հա- 38
զար ինը հարիւր երեսուն:
Քահանաները՝ Յեսուի տունից՝ 39
Յեդայիայի որդիքը ինը հարիւր
եօթանասունուերեք. Եմմերի որ- 40
դիքը հազար յիսուն և երկու.
Փասուրի որդիքը հազար երկու 41
հարիւր քառասունեւեօթը. Նա- 42
րիմի որդիքը հազար տասնուեօ-
թը:
Ղևտացիները՝ Ովդուիայի որդ- 43
կանցից Յեսուի և Կադմիէլի որ-
դիքը եօթանասունուչորս:
Երգեցողները՝ Ասափի որդիքը 44
հարիւր քառասունեւութը:
Դռնապանները՝ Սեղղումի որ- 45
դիքը, Ատերի որդիքը, Տեղմոնի
որդիքը, Ակկուբի որդիքը, Ատի-

տայի որդիքը, Սուբայի որդիքը
Հարիւր երեսունեւեւթը։
46 Նամանայիմներքը՝ Միայի որ-
դիքը, Ասուփայի որդիքը, Տա-
47 բաւոթի որդիքը. Կերոսի որդի-
քը, Սիայի որդիքը, Փադոնի որ-
48 դիքը, Ղաբանայի որդիքը, Ա-
գաբայի որդիքը, Սաղամէի որ-
49 դիքը, Անանի որդիքը, Գեդդելի
50 որդիքը, Գահարի որդիքը, Ռէա-
յիայի որդիքը, Ռասինի որդիքը,
51 Նեկոդայի որդիքը, Գազամի որ-
դիքը, Ողայի որդիքը, Փասէի որ-
52 դիքը, Բասիի որդիքը, Մաւանիմի
որդիքը, Նեփուսիմի որդիքը,
53 Բակբակի որդիքը, Ակուփայի որ-
54 դիքը, Արուրի որդիքը, Բասա-
ղոթի որդիքը, Մէիդայի որդիքը,
55 Արսայի որդիքը, Բարկոսի որդի-
քը, Սիսարայի որդիքը, Թամայի
56 որդիքը, Նեսիայի որդիքը, Ատե-
57 փայի որդիքը, Սողոմոնի ծառա-
նեերի որդիքը՝ Սոսէի որդիքը, Սո-
փերեթի որդիքը, Փարեդայի որ-
58 դիքը. Յեզայի որդիքը, Դերկոնի
59 որդիքը, Գեդդելի որդիքը, Սա-
փատիայի որդիքը, Ատտիլի որ-
դիքը, Փաքարեթ-ասեբայիմի որ-
60 դիքը, Ամոնի որդիքը. Բոլոր Նա-
թանայիմները և Սողոմոնի ծա-
ռաներուն որդիքը երեք հարիւր ին-
սուն և երկու։
61 Եւ սորանք են Թեղմեղայից,
Թեղարսայից, Քերուբից, Ադդո-
նից և Եմմերից դարձ եկողները,
և չկարցացան ցոյց տալ իրանց
հայրերի տունը և իրանց սերուն-
դը թէ Իսրայէլից են իրանք.
62 Դալայիայի որդիքը, Տուբիայի
որդիքը, Նեկոդայի որդիքը վեց
հարիւր քառասուն և երկու հոգի։
63 Եւ քահանաներից՝ Աբայիայի որ-
դիքը, Ակկոսի որդիքը, Բերզե-
լիի որդիքը, որ Գաղաադացի
Բերզելիի աղջիկներից կին առնե-
լով նորանց անունով կոչուե-
64 ցաւ։ Սորանք որոնեցին իրանց
ազգաբանութեան դիքը, բայց
չգտան. վասն որոյ և լուծեցին
65 նորանց քահանայութիւնից։ Եւ
վեհափառն ասաց նորանց. որ
ամենասուրբ բաներից չուտեն
մինչև որ մի քահանայ վեր կե-
նայ Ուրիմով և Թումիմով։
66 Բոլոր ժողովքը միահաւոր քա-
ռասուներկու հազար երեք հար-
67 իւր վեցհարիւր և հ-ից էր։ Բացի նո-
րանց ծառաներից և աղախիննե-
րից, որոնք եօթը հազար երեք
հարիւր երեսուն և եօթը հ-ից
էր. և նորանց հետ երկու հարիւր
քառասուն և հինգ երգիչներ և
68 երգչուհիք կային։ Նորանց ձիերը՝
եօթը հարիւր երեսուն և վեց.
նորանց ջորիները՝ երկու հարիւր
քառասունևհինգ. Նորանց ու-
69 ղտերը՝ չորս հարիւր երեսուն և
հինգ. եզները վեց հազար եօթը
հարիւր քսան։
Եւ բոլոր տոհմապետներից ո-
70 ր-ից գործի համար տուին. վե-
հափառը տուաւ գանձին հազար
ոսկի դրամ, չիտուն ակառատակ,
հինգ հարիւր երեսուն քահանա-
յական պատմուճան. Եւ տոհ-
71 մապետներից ո-ր-ից գործի գան-
ձին տուին՝ քսան հազար ոսկի
դրամ, երկու հազար երկու հար-
իւր մնաս արծաթ։ Եւ մնացած
72 ժողովրդի տուածը՝ քսան հազար
ոսկի դրամ և երկու հազար մի-
նաս արծաթ, և վեցհարիւր եօ-
թը քահանայական պատմուճան։
73 Եւ քահանաները, Ղեւտացիները,
դռնապանները, երգեցողները, և
ոմանք ժողովրդից, ու Նաթա-
նայիմները և բոլոր Իսրայէլը բը-
նակուեմ էին իրանց քաղաքնե-
րումը, և երբոր եօթնեւրորդ ա-
միսը հասաւ, Իսրայէլի որդիքն
իրանց քաղաքներումն էին։

ԳԼ. Ը

1 Եւ բոլոր ժողովուրդը ժողովուե-
ցաւ մէկ մարդու պէս այն հրա-
պարակը որ Ջրի դրան առջև է,
և ասացին Եզրաս դպրին, որ
Մովսէսի օրինաց գիրքը բերէ,
որ Տէրը հրամայեց Իսրայէլին։
2 Եւ Եզրաս քահանան բերաւ օ-
րէնքը ժողովքի առջևը, ու ի-ց
և-ց-ից էր մարդից մինչև կին և
ամեն հասկանալու կարողութիւն
ունեցողներից՝ եօթնեւրորդ ամը-
ուայ առաջին օրը։ Եւ կարդաց 3

նորանից այն հրապարակում որ Ջրի դրան առջև է, առաւօտից մինչև կէս օր մարդկանց, կանանց և հասկացողների առջև. և բոլոր ժողովրդի ականջը դէպ ի օրինաց գրքին։ Եւ Եզրաս դպիրը կանգնած էր մի փայտէ բեմի վերայ որ շինել էին այս բանի համար և նորա մօտ կանգնել էին Մատաթիան, Սեմեան, Անանիան, Ուրիան, Փեդկիան և Մասէա աջ կողմին. և նորա ձախ կողմին՝ Փադայիան, Միսայէլը, Մեղքիան, Նասումը, Ասբադանան, Զաքարիան և Մեսուղամը։ Եւ Եզրասը բացաւ գիրքը բոլոր ժողովրդի աչքի առջև, որովհետև ինքը բոլոր ժողովրդից վեր էր, և երբոր բացաւ բոլոր ժողովուրդը կանգնեց։ Եւ Եզրասն օրհնեց Եհովայ մեծ Աստուծոյն. և բոլոր ժողովուրդը պատասխանեցին. Ամէն, Ամէն, իրանց ձեռքերը բարձրացնելով, և խոնարհուելով երկրպագութիւն արին Տիրոջը երեսի վերայ մինչև գետինը։ Եւ Յեսուն, Բանին, Սարբիան, Յամինը, Ակկուբը, Սաբեթան, Ոդիան, Մասեիան, Կովղիտան, Ազարիան, Յովզաբադը, Անանը, Բաղպիան և Ղեւտացիք հասկացնում էին օրէնքը ժողովրդին. և ժողովուրդը կանգնած էր տեղը։ Եւ կարդում էին Աստուծոյ օրինաց գրքումը յստակ, և բացատրութիւն տալով հասկացնում էին կարդացածը։ Եւ Նէեմիան, որ է վեհափառը, և Եզրաս քահանան և դպիրը և Ղեւտացիք որ ժողովրդին հասկացնում էին, ասացին բոլոր ժողովրդին. Այս օրը սուրբ է ձեր Տէր Աստուծոյ համար, սուգ մի անէք և մի լաք, վասն զի բոլոր ժողովուրդը լաց էին լինում երբոր լսում էին օրինաց խօսքերը։ Եւ նորանց ասաց. Գնացէք պարարտ բաներ կերէք և անոյշ բաներ խմեցէք, և բաժիններ ուղարկեցէք պատրաստութիւն չունեցողին, վասն զի այս օրը սուրբ է մեր Տիրոջ համար. և մի տրտմէք, վասն զի Տիրոջ ուրախութիւնը ձեր զօրութիւնն է։ Եւ Ղեւտացիք լռեցրին բոլոր ժողովրդին՝ ասելով. Լռեցէք, վասն զի այս օրը սուրբ է, և մի տրտմէք։ Եւ բոլոր ժողովուրդը գնաց ուտելու, խմելու և բաժիններ ուղարկելու և մեծ ուրախութիւն անելու, վասն զի հասկանում էին այն խօսքերը որ նորանց իմացնում էին։

Եւ երկրորդ օրը բոլոր ժողովրդի տոհմապետները, քահանաները և Ղեւտացիները ժողովուեցան Եզրաս դպրի մօտ, օրինաց խօսքերը էլի հասկնալու համար։ Եւ գտան օրէնքումը գրուած, որ Տէրը պատուիրել էր Մովսէսի ձեռովը, թէ Իսրայէլի որդիքը պիտի եօթներորդ ամսին տաղաւարներում բնակուին. Եւ լսուած և մունետիկ կանչել տան նորանց բոլոր քաղաքներումը և Երուսաղէմում ասելով. Վեր եկէք լեռը, և ձիթենու ոստեր, և իւղի ծառի ոստեր, և մրտենու ոստեր և արմաւենու ոստեր և տերևախիտ ծառերի ոստեր բերէք որ տաղաւարներ շինէք ինչպէս որ գրուած է։ Եւ գնացին ու բերանց համար տաղաւարներ շինեցին ամեն մարդ իր կտուրի վերայ և իրանց գաւիթներումը և Աստուծոյ տան գաւիթներումը, և Ջրի դրան հրապարակումը և Եփրեմի դրան հրապարակումը։ Եւ գերութիւնից դարձողները բոլոր ժողովքը տաղաւարներ շինեցին և տաղաւարներումը բնակեցին, վասն զի Իսրայէլի որդիքը Նաւեան Ցեսուէ օրերից մինչև այն օրը այնպէս չէին արած. և շատ մեծ ուրախութիւն եղաւ։ Եւ կարդում էին Աստուծոյ օրինաց գրքումը ամեն օր՝ առաջի օրից մինչև վերջի օրը, և եօթը օր տօն կատարեցին, և ութերորդ օրը հանդիսաւոր ժողով էր ըստ կանանին։

Գլ. Թ

Եւ այս ամսի քսանուչորսերորդ օրը ժողովուեցան Իսրայէլի որդիքը ծոմով, քուրձերով և իրանց

2 վերայ հող. Եւ ջոկուեցան Իսրա-
յէլի սերունդ եղբայրք բոլոր օ-
տարազգիներէն, և կանգնած
խոստովանութիւն էին իրանց մեղ-
քերը և իրանց հայրերի անօրէ-
3 նութիւնները. Եւ կանգնել էին
իրանց տեղը, և կարդացին իրանց
Եհովայ Աստուծոյ օրէնքի գրքին
օրուայ քառորդը, և մի քառոր-
դը խոստովանութիւն էին անում իրանց Տէր Աս-
տուծոյն։

4 Եւ բարձր տեղի վերայ կանգ-
նել էին Յեսուն, Բանին, Կադ-
միէլը, Սեբանիան, Բունին, Սե-
բարիան, Բանին և Քենանին
Ղեւտացիները, և մեծ ձայնով
աղաղակում էին դէպի իրանց
5 Տէր Աստուածը։ Եւ Յեսուն,
Կադմիէլը, Բանին, Հասաբնիան
Սերեբիան, Ովդիան, Սեքանիան
և Փեթահիան՝ Ղեւտացիները ա-
ասացին. Վեր կացէք օրհնեցէք
ձեր Տէր Աստուծոյն յաւիտենից։

Օրհնեալ լինի քո փառաւոր
եալ անունը, որ ամեն օրհնու-
թիւնից և փառաբանութիւնից
6 բարձրեալ է։ Միայն դու կաս,
ով Եհովայ, դու ստեղծեցիր եր-
կինքը, երկնից երկինքը և երկրի
բոլոր զօրքերը, և բոլոր նորա վե-
րայ եղածը, ծովերը և բոլոր նո-
րանց մէջ եղածը և դու ես նո-
րանց բոլորին կենդանութիւն տը-
ուողը, և երկնից զօրքերը քեզ
7 երկրպագութիւն են անում։ Դու
ես Եհովայ Աստուածը, որ ընտ-
րեցիր Աբրամին և նորան հանե-
ցիր Քաղդէացոց Ուրից և նորա
8 անունը Աբրահամ դրիր։ Եւ նո-
րա սիրտը հաւատարիմ գտար
քո առջեւը, և նորա հետ տալու
համար ուխտ արիր, որ տաս նո-
րա սերունդին Քանանացոց, Հե-
տացոց, Ամորհացոց, Փերեզա-
ցոց, Եբուսացոց և Գերգեսացոց
երկիրը. և քո խօսքը հաստատե-
ցիր, վասն զի դու արդար ես։

9 Եւ տեսար մեր հայրերի նեղու-
թիւնը Եգիպտոսում, և նորանց
աղաղակը լսեցիր Կարմիր ծովի
10 մօտ։ Եւ նշաններ ու հրաշքներ
արիր փարաւոնի վերայ և նորա
բոլոր ծառաների և նորա երկրի
բոլոր ժողովրդի վերայ, վասն զի
դիտացիր որ ամբարտաւան եղան
նորանց դէմ, և քեզ համար ա-
նուն հանեցիր՝ ինչպէս որ այսօր
է։ 11 Եւ ծովը ճղեցիր նորանց առ-
ջև, և նորանք անց կացան ծովի
միջովը ցամաքութիւնով, և նորանց
հալածողներին խորերը խորտա-
կեցիր՝ ինչպէս քար մեծ ջրերի
մէջ։ 12 Եւ ամպի սիւնով առաջ-
նորդեցիր նորանց, և կրակի սիւ-
նով գիշերը որ լուսաւորէիր նո-
րանց գնալու ճանապարհը։

13 Եւ վայր իջար Սինայ լեռան
վերայ և խօսեցիր նորանց հետ եր-
կնքիցը, և նորանց տուիր ու-
ղիղ իրաւունքներ և ճշմարիտ օ-
րէնքներ, բարի կանոններ և պատ-
ուիրանքներ։ 14 Եւ քո սուրբ շա-
բաթը հռակացրիր նորանց, և
նորանց կանոններ և օրէնք պատ-
ուիրեցիր Մովսէս ծառայիդ ձե-
ռով։ 15 Եւ երկնքից հաց տուիր
նորանց՝ նորանք սովածանային,
և նորանց համար ջուր հանեցիր
ապառաժից՝ նորանք ծարաւե-
լիս. և նորանց ասացիր որ մըտ-
նեն և ժառանգեն այն երկիրը,
որը նորանց տալու համար ձեռ-
քըդ բարձրացրել էիր։

16 Բայց նորանք և մեր հայրերը
ամբարտաւանացան և խստացրին
իրանց պարանոցը և չլսեցին քո
պատուիրանքներին։ 17 Եւ չուզեցին
լսել և չյիշեցին քո հրաշքները,
որ արել էիր նորանց մէջ, և
խստացրին իրանց պարանոցը. և
իրանց ապստամբութեամբը գլ-
ուխ նշանակեցին որ եւս դառ-
նան իրանց ծառայութեան մէջ.
բայց դու ներող, ողորմած, գթ-
ած, երկայնամիտ և բազում-
ողորմ Աստուած էիր և նորանց
չձգեցիր։ 18 Մանաւանդ երբոր իր-
անց համար ձուլածոյ որթ շի-
նեցին և ասացին. Սա է քո աստ-
ուածը, որ քեզ Եգիպտոսից հա-
նել է. և մեծ անարգանք գոր-
ծեցին։ 19 Եւ դու քո մեծ ողորմու-
թեամբը նորանց չձգեցիր անա-
պատումը. ամպի սիւնը չհեռա-
ցաւ նորանց վերայից ցերեկը նո-

րանց առաջնորդելով ճանապարհին, և կրակի սիւնը գիշերը որ նորանց լոյս տայ և ը------ել այն
20 ճանապարհը որ գնալ էին։ Եւ քո բարի Հոգին տուիր նորանց խնամատուն անելու համար. և քո մանանան չարգիլեցիր նորանց բերանից, և ջուր տուիր նորանց՝
21 նորանք ծարաւելիս։ Եւ քառասուն տարի նորանց կերակրեցիր անապատումը. նորանք պակասութիւն չունեցան. նորանց հանդերձները չմաշեցան, և նորանց
22 ոտքերը չուռեցան։ Եւ նորանց տուիր թագաւորութիւններ և ազգեր, և նորանց բաժիններ տուիր սահմաններով, և նորանք ժառանգեցին Սեհոնի երկիրը և Եսերոն թագաւորի երկիրը, և Բասանի Ովգ թագաւորի երկիրը։
23 Եւ նորանց որդիանցը շատացրիր երկնից աստղերի պէս, և նորանց բերիր այս երկիրը, որի համար ասել էիր նորանց հայրերին որ
24 գան և ժառանգեն։ Եւ նորանց որդիքը եկան և ժառանգեցին այս երկիրը, և դու նուաճեցրիր նորանց առջև այս երկրի բնակիչներին Քանանացիներին, և նորանց ձեռքը մատնեցիր նորանց և նոցա թագաւորներին և երկրի ազգերին որ իրանց հաճութեան
25 պէս անէին նորանց։ Եւ նորանք ամուր քաղաքներ և պարարտ երկիր գրաւեցին, և ժառանգեցին ամեն բարիքով լիքը տներ, փորուած ջրհորներ, այգիներ, ձիթենիներ, և պտղաբեր ծառեր առատօրէն. և նորանք կերան, կշտացան և պարարտացան, և զուարճացան քո մեծամեծ բարիքներովդ։
26 Սակայն նորանք անհնազանդութիւն արին և ապստամբեցան քեզ դէմ, և քո օրէնքը իրանց ետևը գցեցին, և սպանեցին քո մարգարէներին որ նորանց դէմ վկայում էին, որ դէպի քեզ դառնան, և մեծամեծ անարգանքներ արին։ Եւ դու նորանց
27 մատնեցիր իրանց թշնամիների ձեռքը, և նորանք նեղացրին նորանց. և իրանց նեղութեան ժամանակին դէպի քեզ աղաղակեցին, և դու լսեցիր երկնքից, և դու քո շատ ողորմութեան համեմատ նորանց ազատիչներ տուիր, և նորանք ազատեցին նորանց իրանց թշնամեաց ձեռքից։
28 Բայց երբոր հանգստութիւն ունեցան, դարձեալ չարութիւն արին քո առջև, և դու նորանց թողեցիր իրանց թշնամեաց ձեռքին, և նորանք տիրեցին նորանց վերայ. և դարձեալ դէպի քեզ աղաղակեցին, և դու երկնքից լսեցիր և նորանց ազատեցիր շատ անգամ քո ողորմութեան համեմատ։
29 Եւ դու նորանց վկայեցիր, որ նորանց դարձնես դէպի քո օրէնքը, բայց նորանք ամբարտաւանացան և չլսեցին քո պատուէրներին և քո իրաւունքների դէմ մեղանչեցին, որոնց կատարող մարդը նորանցով կապրէ. և իրանց ուսերը անհնազանդեցրին և իրանց վիզը խստացրին, և չլսեցին։
30 Եւ դու երկայնամիտ եղար նորանց վերայ շատ տարիներ, և վկայեցիր նորանց դէմ քո Հոգովը մարգարէից ձեռովը, բայց նորանք ականջ չդրին. և դու մատնեցիր նորանց երկիրների ազգաց ձեռքը։
31 Սակայն դու քո մեծ ողորմութեամբը նորանց վերջ չտուիր և նորանց չձգեցիր, վասն զի դու զթած և ողորմած Աստուած ես։
32 Եւ արդ, ով մեր Աստուած, մեծ, զօրաւոր և ահեղ՝ ուխտ ու ողորմութիւն պահող Աստուած, թող քո առջև քիչ չերևնան այն ամեն նեղութիւնները, որ պատահեցին մեզ, մեր թագաւորներին, մեր իշխաններին, մեր քահանաներին, մեր մարգարէներին, մեր հայրերին և քո բոլոր ժողովրդին Ասորեստանի թագաւորի ժամանակից մինչև այսօր։
33 Բայց դու արդար ես մեզ վերայ եկած բոլոր բաներումը, վասն զի դու ճշմարտութեամբ արիր, և մենք անօրէնութիւն արինք։
34 Եւ մեր թագաւորները, մեր իշխանները և մեր հայրերը չ'արին քո օրէնքը

և ականջ չդրին քո պատուիրանքներին և քո վկայութիւններին, որ նորանց դէմ վկայեցին. 35 Եւ նորանք իրանց թագաւորելու ժամանակին, և քո նորանց արած շատ բարիքներ արած ժամանակին և այն ընդարձակ և պարարտ երկրումը, որ տուել էիր նորանց, քեզ չծառայեցին և ետ չդարձան իրանց չար գործքերիցը: 36 Ահա մենք այսօր ծառաներ ենք, և ահա այն երկրումը, որ տուիր մեր հայրերին նորա պտուղը և բարիքը վայելելու, 37 մենք ծառաներ ենք: Եւ նորա առատ արդիւնքը այն թագաւորներին է, որոնց դրել ես մեզ վերայ մեր մեղաց պատճառով. և նորանք տիրում են մեր մարմինների վերայ և մեր անասունների վերայ իրանց հաճութեան պէս. և մենք մեծ նեղութեան 38 մէջ ենք: Եւ այս ամենի համար հաստատ ուխտեցինք և գրեցինք, և կնքուածի վերայ էին մեր իշխանները, Ղեւտացիները և քահանաները:

ԳԼ. Ժ

1 Եւ կնքողներն էին՝ Աքսղիայի որդին Նէեմիա վեհափառը, Սեդեկիան, 2 Սարայիան, Ազարիան, 3 Երեմիան, Փաշուրը, Ամարիան, 4 Մելքիան, Հեառուսը, Սարա- 5 նիան, Մալուքը, Հարիմը, Մեռեմոթը, Աբդիան, Դանիէլը, 7 Կանաթօնը, Բարուքը, Մեսուղամը, Աբիան, Միամինը, Մաազիան, Բելգան և Սեմայիան. 9 սորանք քահանաներն էին: Եւ Ղեւտացիք՝ Ազանիայի որդին Յեսուան, Բանուն Ե Ենադադի որդիներից Կոդմիէլը. 10 եղբայրները Սարանիան, Ովդիան, Կոլիտան, Փաղայիան, Ան- 11 նանը, Միքան, Բոորը. Ասարիա- 12 ն, Զաքուրը, Սարաբիան, Սեբանիան, 13 Ովդիան, Բանուն Ե Բանինուն: 14 Ժողովրդի գլխաւորները՝ Փարոսը, Փահաթ-Մովաբը, 15 Եղամը, Զաթուն, Բանին, Բու- 16 նին, Ազգադը, Բեբայն, Ադոնիան, Բագուէն, Ադինը, Ատեր- 17 ը, Եզեկիան, Ազուրը, Ովդիան, 18 Հասումը, Բեսայն, Արիփը, Անաթովթը, Նոբայ, Մագպիասը, 20 Մեսուղամը, Եզիրը, Մասիզեբելը, Սադոկը, Յադդուան, Փաղատիան, Անանը, Անանիան, 22 Ովսէէն, Անանիան, Ասուբը, 23 (24) Ալոհեսը, Պիլան, Սոբէկը, Հորէումը, Ասափնան, Մասիան, Զքիան, Անանը, Օնանը, 26 Մալուքը, Հարիմը Ե Բաանան: 27

Եւ մնացած ժողովուրդը՝ քահանաները, Ղեւտացիները, դռնապանները, երգեցողները, Նաթանոփիմները, և այն ամենքը որ ջոկուել էին այն երկիրների ժողովուրդներից դէպի Աստուծոյ օրէնքը, նորանց կանայքը, որդիքը և աղջկերքը՝ ամեն հասկանալ կարողացողը, 29 Մխացան իրանց գործուոր եղբայրների հետ և անէծքով երդուեցան որ գնան Աստուծոյ օրէնքովը որ տուաւ Աստուծոյ ծառայ Մովսէսի ձեռովը, և որ պահեն ու կատարեն մեր Տէրոջ Եհովայի բոլոր պատուէրները, իրաւունքները և կանոնները. 30 Եւ որ չտանք մեր աղջիկները երկրի ազգերին, և նորանց աղջիկները չառնենք մեր որդիանց համար. 31 Եւ երկրի ժողովուրդներից, որոնք ապրանքներ և ամեն տեսակ ուտելիք են բերում շաբաթ օրը ծախելու, չառնենք շաբաթ և սուրբ օրը. և եօթներորդ տարին էրկրը և ամեն ձեռաց պարտքերը թողնենք: 32 Եւ մեզ վերայ պատուէր դրինք՝ որ մեզ վերայ պարտք հանեինք տարին մի երրորդ սիկղ Ե-բէլ մեր Աստուծոյ տան պաշտօնի համար, 33 Առաջաւորութեան հացի համար, մշտնջենաւոր հացի ընծայի համար, մշտնջենաւոր ողջակէզի համար, շաբաթներին, ամսագլուխներին, տօներին, և սուրբ բաների համար և խորտակելի քաւութեան մասին մեղաց պատարագների համար, և մեր Աստուծոյ տան բոլոր գործի համար: 34 Եւ վիճակ գցեցինք քահանաների, Ղեւտացիների, ժողովրդի

Ղևտացիները և ժողովուրդը, որ բերենք մեր Աստուծոյ տունը մեր տոհմերին համեմատ իր որոշեալ ժամանակներին տարուց տարի, մեր Տէր Աստուծոյ սեղանի վերայ վառելու համար ինչպէս որ 35 գրուած է օրէնքումը։ Եւ որ տանենք մեր երկրի երախայրիքը և ամեն պտղատու ծառի երախայրիքը տարուց տարի Տիրոջ տունը, 36 եւ մեր որդւոցն անդրանիկները և մեր անասուններին՝ ինչպէս որ գրուած է օրէնքումը, և մեր արջառների և ոչխարների անդրանիկները տանենք մեր Աստուծոյ տունը քահանաներին, որ ծառայում են մեր Աստուծոյ 37 տանը. Եւ մեր խմորների երախայրիները, և մեր ընծաները և ամեն ծառի պտուղը՝ գինին ու ձէթը տանենք քահանաներին մեր Աստուծոյ տան սենեակները, և մեր երկրի տասանորդը Ղևտացիներին տանք, և Ղևտացիք իրանք ջրելիս տասանորդ առնեն մեր ծառայութեան բոլոր քաղաքնե- 38 րումը։ Եւ Ահարոնի որդին՝ քահանան լինի Ղևտացոց հետ Ղևտացիք տասանորդը առնելիս. և Ղևտացիք տասանորդի տասանորդը վեր տանեն մեր Աստուծոյ տունը գանձատան սենեակները. 39 Վասն զի այն սենեակները պիտի տանեն Իսրայէլի որդիքը և Ղևիի որդիքը ցորենի, գինու և ձէթի ընծաները, ուր են որբատանի սրճոմները, և պաշտօնեայ քահանաներն ու դռնապանները և երգեցողները. և մեր Աստուծոյ տունը չձգենք։

ԳԼ. ԺԱ

1 Եւ բնակեցին ժողովրդի իշխանները Երուսաղէմումը. իսկ մնացած ժողովուրդը վիճակ դնեցին, որ ժողովրդի մի տասներորդը բերեն Երուսաղէմ սուրբ քաղաքումը բնակելու, բայց մնացեալ 2 ինը մասը թողն քաղաքներում։ Եւ ժողովուրդն օրհնեց այն ամեն մարդկանց, որ յօժարութեամբ համաձայնեցին բնակել Երուսաղէմում։ Եւ սորանք են այն գա- 3 ւառի գլխաւորները, որ բնակեցին Երուսաղէմումը. բայց Յուդայի քաղաքներում բնակում էր ամեն մարդ իր սեփական քաղաքներումը՝ Իսրայէլը, քահանաները, Ղևտացիները, Նաթանայիմները և Սողոմոնի ծառաների որդիքը. Եւ Երուսաղէմումը բնակեցին 4 Յուդայի որդիքից և Բենիամինի որդիքից՝

Յուդայեանք՝ Աթայիան՝ որդի Ոզիայի, որդի Զաքարիայի, որդի Ամարիայի, որդի Սափատիայի, որդի Մաղալիէլի, Փարէսի որդիքից։ Եւ Մաասիան՝ որ- 5 դի Բարուքի, որդի Քոլոզէի, որդի Ազայիայի, որդի Ադայիայի, որդի Յոյարիբի, որդի Զաքարիայի, որդի Սիլոնիի։ Փարէսի 6 որդիքից Երուսաղէմում բնակողների բոլորը չորս հարիւր վեթասուն և ութ քաջ մարդիկ էին։

Եւ սորանք են Բենիամինեան- 7 ները՝ Սալլուն որդի Մեսուղամի, որդի Յովադի, որդի Փադայիայի, որդի Կոլոիայի, որդի Մաասիայի, որդի Իթիէլի, որդի Եսայիայի. Եւ նորանից յե- 8 տոյ Գաբբէին, Սալլէին, ե՛ննը՝ բոլը հարիւր քսան և ութը հոգի։ Եւ 9 նորանց վերայ իշխան էր Զիքրիի որդին Յոէլը. և Սենուայի որդին Յուդան քաղաքի վերայ տեղակալ էր։

Քահանաներից՝ Յովարիբի որ- 10 դին Յեդայիան, Յաքինը, Սարա- 11 յիան՝ որդի Քեղկիայի, որդի Մեսուղամի, որդի Սադովկի, որդի Մարիովթի, որդի Աքիտովբի, Աստուծոյ տան վերակացուն. Եւ 12 նորանց եղբայրները, որ տաճարի գործը կատարում էին, ութը հարիւր քսան և երկու էին։ Եւ Ադայիան՝ որդի Յերոամի, որդի Փաղալիայի, որդի Ամսիի, որդի Զաքարիայի, որդի Փաշուրի, որդի Մեղքիայի, Եւ նորա եղ- 13 բայրները՝ տոհմապետներ՝ երկու հարիւր քառասուն և երկու էին։ Եւ Ամեսային՝ որդի Ազարիէլի, որդի Ահզայի, որդի Մեսաղամո-

14 Թէ, որդի Եմմերի, եւ նորանց
եղբայրները՝ քաջազուններ՝ հար-
իւր քսան եւ ութը էին. եւ նո-
րանց վերայ իշխան Ագեդողեմի
որդի Զաբդիէլն էր։
15 Եւ Ղեւտացիներից՝ Սեմոյիան՝
որդի Հասուբի, որդի Ազրիկամի,
որդի Ասաբիայի, որդի Բունիի,
16 Նաեւ Սաբեթան եւ Յովզաբադը
Ղեւտացոց գլխաւորներից, որ Ա-
ստուծոյ տան արտաքին գործի
17 վերայ էին։ Եւ Մաթանիան՝ որ-
դի Միքիայի, որդի Զաբդիի, որ-
դի Ասափի՝ գլխաւոր առաջնոր-
դը օրհնաբանութեան ազօթքի
ժամանակին. և Բակբուկիան երկ-
րորդն էր իր եղբայրներից. և Ա-
բդան՝ որդի Սամուայի, որդի Գա-
18 ղալի, որդի Յդիթունի։ Բոլոր
Ղեւտացիները սուրբ քաղաքում
երկու հարիւր ութսուն և չորս
էին։
19 Եւ դռնապանները Ակկուբը,
Տեղմոնը և նորանց եղբայրները
որ պահապանում էին դռները,
հարիւր եօթանասուն և երկու
էին։
20 Եւ մնացեալ Իսրայէլացիք՝ քա-
հանաները և Ղեւտացիները Յու-
դայի բոլոր քաղաքներումն էին
ամեն մարդ իր ժառանգութիւ-
21 նումը։ Բայց Նաթանայիմները
բնակում էին Ոփազում, և Սի-
հան ու Գիսպան Նաթանայիմնե-
22 րի վերայ էին։ Եւ Երուսաղէմի
Ղեւտացիների իշխանը էր Ոզին՝
որդի Բանիի, որդի Ասաբիայի,
որդի Մաթանիայի, որդի Միքայի,
Ասափի որդիանցից՝ երգեցողնե-
րից, որ Աստուծոյ տան գործի
23 վերայ էին։ Վասն զի թագաւորը
նորանց համար հրաման էր տուել,
և ամեն երգեցողներին իւրաքանչիւր օրուայ համար։
24 Եւ Յուդայեան Զարայի որդիանցից Մաթսիկեբէլի որդին Փեթա-
հիան թագաւորի կշռին էր ժո-
ղովրդի բոլոր գործերի մասին։
25 Եւ գրսի գաւառների ու նո-
րանց դաշտերի նկատմամբ՝ Յու-
դայի որդիանցից բնակում էին
Կարիաթ-արբայում և նորա գիւ-
ղերում, Դիբոնում և նորա գիւ-
ղերում, Կաբսէելում և նորա
դաշտերում, Եւ Յեսուայում, 26
Մօլադայում և Բեթ-փաղեթում,
Ասեր-սուսղում, Բերսաբէէում 27
և նորա գիւղերում, Սիկեղակում, 28
Մեքոնայում և նորա գիւղերում,
Են-Հեմմոր, Սարայում, Յե- 29
րիմոթում, Զանոահում, Ոդոդ- 30
մում և նորանց դաշտերում,
Լաքիսում և նորա արտերում,
Ազեկայում և նորա գիւղերում,
և սկզբնաւորեցան Բերսաբէէից
մինչև Հենոմի ձորը։
Եւ Բենիամինի որդիքը՝ Գաբա- 31
այից Մաքմաս, Այէա, Բեթէլ
և նորա գիւղերը, Անաթովթ, 32
Նոբ, Անանիա, Հասոր, Ռա- 33
մա, Գեթթայիմ, Հադիդ, Սե- 34
բոյիմ, Նեբալատ, Ղոդ, Ով- 35
նոմ, և Գէքարասիմ։
Եւ Ղեւտացիներից Յուդայի 36
բաժինը [illegible] էր Բենիամինում։

ԳԼ. ԺԲ

Եւ սորանք են այն քահանանե- 1
րը և Ղեւտացիները որ Սաղաթի-
էլեան Զօրաբաբէլի և Յեսուի
հետ դուրս եկան՝ Սարայիան, Ե-
րեմիան, Եզրաս, Ամարիան, 2
Մալուքը, Հատուս. Սեքենի- 3
ան, Հարեւմը, Մերամոթը, Ա- 4
դդոն, Կանեթոնը, Գբիան, Մի- 5
ամինը, Մաադիան, Բեղգան,
Սեմայիան, Յովարիբը, Յեդայի- 6
ան, Սալլուն, Ամոկը, Բեղկիան, 7
Յեդայիան. սորանք էին քահա-
նայից գլխաւորները իրանց եղ-
բայրներովը Յեսուի օրերին։
Եւ Ղեւտացիք՝ Յեսուն, Բանու- 8
ին, Կադմիելը, Սարաբիան, Յու-
դան, Մաթանիան. սա օրհնու-
թեանց վերայ էր իր եղբայրնե-
րովը։ Եւ նորանց եղբայրը՝ Բակ- 9
բակիան և Ունին նորանց առջև
իրանց կարգովը։
Եւ Յեսուն ծնաւ Յովակիմին, 10
և Յովակիմը ծնաւ Եղիասիբին,
և Եղիասիբը ծնաւ Յովիադային,
Եւ Յովիադան ծնաւ Յոնաթա- 11
նին, և Յոնաթանը ծնաւ Յադ-
դուային։
Եւ Յովակիմի օրերին առաջնա- 12

պետ քահանաներն էին՝ Սարա-
ելեայից՝ Մարայեան, Երեմեայից՝
13 Անանեան. Եզրասից՝ Մեսուղամը,
14 Ամարեայից՝ Յովհանան. Մալու-
քից՝ Յովնաթանը, Սարանեայից՝
15 Յովսեբը, Շարիմից՝ Եղնան, Մա-
16 լուքից՝ Փեղկան, Ադդայից՝ Զա-
քարեան, Կանաթոնից՝ Մեսու-
17 ղամը, Ափեայից՝ Զխբրին, Մի-
նեամինից, Մովադեայից՝ Փել-
18 աին. Ենդոյից՝ Սամուան, Մե-
19 մայեայից՝ Յովնաթանը, Յովսեբ-
ելից՝ Մաթանան, Յեզոյեայից՝ Ո-
20 զին, Սելլայից՝ Կելլան, Ամոկից՝
21 Եղերը, Փեղկեայից՝ Ասարեան,
Յեզոյեայից՝ Նաթանայելը։
22 Ղեւտացիք՝ առհասարակ
գրուեցան Եղեսարեի, Յովհա-
դայի, Յօհանանի և Յադդուայի
օրերին, և քահանաները գրուեց
23 Պարեհի Ե–ֆ––ր––Ն–ն–վ։ Ղե-
ւտացի առհասարակ գրուեցան
ժամանակագրութեան գրքում
մինչև Եղեսարեի որդի Յօհանանի
24 օրերը։ Եւ Ղեւտացոց իշխանները
Ասարեան, Սարաբեան և Կադ-
միելի որդին Յեսուան էին, և նո-
րանց եղբայրները նորանց առջև,
որ օրհնեն և գոլին Աստուծոյ
մարդ Դաւթի հրամանին հա-
25 մաս դաս դասի դէմ։ Մաթա-
նեան, Բակբակիան, Ադդան,
Մեսուղամը, Տեղմոնը և Ակկուբը
դրան շտեմարանների վերայ պա-
26 հապանութիւն էին անում։ Սո-
րանք էին Յովսեդեկեան Յեսուի
որդի Յովակիմին օրերին, և Ներե-
միա կուսակալի և Եզրաս քա-
հանայ գպրի օրերին։
27 Եւ Երուսաղէմի պարսպի նո-
ւակոտիքին օրհնեցին Ղեւտացի-
ներին իրանց բոլոր տեղերից, որ
նորանց բերեն Երուսաղէմ գո-
հութիւններով, երգով, ծնծղա-
ներով, տաւիղներով և քնար-
ներով նուագարանք և ուրախու-
28 թիւն անելու համար։ Եւ ժողո-
ւեցան երգեցողների որդիքը Ե-
րուսաղէմի շրջակայ կողմերից և
29 Նետոփաթացոց գիւղերից, Եւ
Բեթգադգադայից և Գաբայի և
Ազմաւէթի դաշտերից. վասն զի
երգեցողները իրանց համար գիւ-
ղեր էին շինել Երուսաղէմի շր-
ջակայքում։ Եւ քահանաներն 30
ու Ղեւտացիները սրբուեցան, և
սրբեցին ժողովրդին և դռները և
պարիսպը։
Եւ վեր հանեցի Յուդայի իշ- 31
խաններին պարսպի վերայ և եր-
կու մեծ դաս գոհութիւն երգող-
ներ կարգեցի. Աջ պարսպի վե-
րայ ում կողմին Աղրից գրան
դռան. Եւ նորա եաթից գնում 32
էին Ովսէիան և Յուդայի իշխան-
ների կէսը. Եւ Ազարիան, Եզ- 33
րասը, Մեսուղամը, Յուդան, 34
Բենիամինը, Սեմայիան և Երե-
միան։ Եւ քահանաների որդինե- 35
րից փողերով Զաքարիան՝ որդի
Յովնաթանի, որդի Սեմայիայի,
որդի Մաթանիայի, որդի Մի-
քայիայի, որդի Զաքուրի, որդի
Ասափի. Եւ նորա եղբայրները 36
Սեմայիան, Ազարիելը, Միլա-
լան, Գիլալան, Մաան, Նաթա-
նայելը, Յուդան և Անանին Ա-
ստուծոյ մարդ Դաւթի նուագա-
րաններով. և եզրաս գպիրը նո-
րանց առջև։ Եւ Աղբիւրի դրա- 37
նովը և նորանց դիմացը վեր ելան
Դաւթի քաղաքի սանդխաններից
վերայ պարսպի սանդխանով վեր
դէպի Դաւթի տունը մինչև Ջրի
դուռը դէպի արևելք։
Եւ միւս երգողաց դասը գը- 38
նում էին դէմ առ դէմ, և ես նո-
րա եաթից, և ժողովրդի կէսը
պարսպի վերայ Փուռերի աշտա-
րակից վեր մինչև լայն պարիսպը։
Եւ Եփրեմի դրան վերայից Հին 39
դրան մօտով և Ձկանց դրան մօ-
տով, և Անանեայելի աշտարակի
և Մէայի աշտարակի մօտով մին-
չև Ոչխարաց դուռը, և կանգնե-
ցին Բանտի դրան։ Յետոյ երգո- 40
ղաց երկու դասերը կանգնեցին
Աստուծոյ տանը, ես էլ և ա-
խիկանների կէսը ինձ հետ։ Եւ 41
քահանայք՝ Եղեակիմը, Մաա-
սիան, Մեննամինը, Միքիան,
Եղիովէնին, Զաքարիան, Անա-
նիան փողերով։ Եւ Մաասիան, 42
Սեմայիան, Եղիազարը, Ոզին,
Յօհանանը, Մեզքիան, Եղամը
և Եզերը, և երգեցողները մեծա-

ձայն երգեցին. և Յեղերիան վե-
43 րակացուն էր։ Եւ այն օրը մեծ-
ամեծ զոհեր մատուցին և ու-
րախացան, վասն զի Աստուած
ուրախացուցեց նոցանց մեծ ուրա-
խութեամբ, նաև կիներն ու երե-
խաներն էլ էին ուրախանում. և
Երուսաղէմի ուրախութիւնը հե-
ռուից էր լսվում։

44 Եւ այն օրը մարդիկ սրոշե-
ցան շաբաթարանների անեակների
վերայ բնակութեան, երեխայրենների
և տաճարների համար, որ
նորանց մէջ ժողովեն քաղաքների
ազգերից քահանաների և
Ղեւտացիների օրինաւոր բաժին-
ները, վասն զի Յուդան ուրա-
խութիւն ունէր քահանայից և
Ղեւտացոց վերայ որ կանգնել է-
45 ին։ Եւ պահում էին իրանց Աս-
տուծոյ պահապանութիւնը և
մաքուր պահապանութիւնը, նոյն-
պէս և երգեցողները և դռնա-
պանները Դաւթի հրամանին պէս
46 որի սրտին է Սողոմոնը։ Վասն
զի վաղուց Դաւթի և Ասափի օ-
րերին երգեցողների գլխաւոր
կար և Աստուծոյն օրհնելու և
47 գովելու երգեր. Եւ բոլոր Իսրա-
յէլը Զօրաբաբէլի օրերին և Ներ-
եմիայի օրերին տալիս էին երգե-
ցողների և դռնապանների ամեն
օրուայ բաժինները. և սուրբ բա-
ները տալիս էին Ղեւտացիներին,
և Ղեւտացիք էլ սուրբ բանները
տալիս էին Ահարոնի որդիանցը։

ԳԼ. ԺԹ

1 Այն օրը կարդացուեցաւ Մով-
սէսի գրքից ժողովրդի ականջ-
ներին, և նորանում գրուած
գտնուեցաւ, որ յաւիտեան պի-
տի Ամմոնացի և Մովաբացի չը
մտնէ Աստուծոյ ժողովքի մէջ.
2 վասն զի չհիմնաւորեցին Իսրա-
յէլի որդիանցը հացով և ջրով,
այլ Բաղաամին վարձեցին նորա
դէմ որ նորան անիծէ, բայց մեր
Աստուածը անէծքը դարձրեց
3 օրհնութեան։ Եւ երբոր օրէնքը
լսեցին, Իսրայէլից բաժանեցին
ամեն խառնուրդը։

Եւ սորանից առաջ մեր Ա- 4
ստուծոյ տան սենեակի վերակա-
կացու Եղիասիբը քահանան Տո-
բիայի ազգականը, Նորա համար 5
մի մեծ սենեակ էր շինել, ուր որ
առաջ դնում էին հացի նուէր-
ները, խնդրաւկը և անօթները,
և ցորենի, գինու և ձէթի տա-
սանորդները Ղեւտացիների, եր-
գեցողների և դռնապանների բա-
ժինը, նաև քահանաների ընծա- 6
ները։ Այս ամենի ժամանակ ես
Երուսաղէմում չէի, վասն զի ես
Բաբելոնի Արտաշէս թագաւորի
երեսունեւերկրորդ տարին գնացել
էի թագաւորի մօտ, և ի վեր քանի
ժամանակից յետոյ էին հրաման
առի թագաւորից, Եւ ևկայ Ե- 7
րուսաղէմ ու խնդացայ Եղիասիբի
արած չարութիւնը Տոբիայի նը-
կատմամբ, որ նորա համար մի
սենեակ էր շինել Աստուծոյ տան
գաւիթում. Եւ ես շատ զայրա- 8
ցայ, և դուրս տուի Տոբիայի
տան բոլոր կահաւկը այն սեն-
եակից, Եւ հրամայեցի որ մաք- 9
րեն սենեակները, և դարձեալ
այնտեղ տարի Աստուծոյ տան
անօթները և հացի ընծան ու
խնդրաւկը։ Նաև իմացայ, որ 10
Ղեւտացոց բաժինները չէին տըր-
ուել, և որ Ղեւտացիք և սպա-
սաւորութիւնն անող երգեցող-
ները փախել էին իրանց ագա-
րակները։ Եւ ես վիճեցի տաի- 11
կանների հետ և ասացի. Ինչո՞ւ
է Աստուծոյ տունը թողուած.
և ես Ղեւտացիներին ժողովեցի և
նորանց հաստատեցի իրանց տե-
ղը։ Եւ բոլոր Յուդան բերաւ ցո- 12
րենի, գինու և ձէթի տասանոր-
դը գանձատունը։ Եւ ես գանձա- 13
տանց վերայ գանձապետ նշանա-
կեցի Սելեմիա քահանային և
Սադովկ գպրին և Ղեւտացիներից
Փեդայիային, և նորանց օգնա-
կան՝ Մաթանիայի որդու Զաքու-
րի որդին Անանին, վասն զի ն-
րանք հաւատարիմ էին համար-
ուում, և նորանց գործն էր իրանց
եղբայրներին բաժին տալ։ Ով 14
Աստուած իմ, յիշիր ինձ սորա
համար, և մի ջնջեր իմ բարե-

գործութիւնքը որ արի իմ Աստուծոյ տանը և նորա ծառայութիւնումը։

15 Այն օրերը տեսայ որ Հրէաստանումէ շաբաթ օրը խաղող էին կոխում և խուրձերը բերում և էշերին բեռնում էին, նաև գինի, խաղող և թուզ և ամեն տեսակ բեռ, և բերում էին Երուսաղէմ շաբաթ օրը. և ես յանդիմանեցի նոցանից իրանց ու-
16 տելիք ծախած օրը։ Եւ նորա մէջ բնակող Տիւրացիք ձուկ և ամեն տեսակ ապրանք էին բերում և շաբաթ օրը ծախում Յուդայի որդիներին և Երուսաղէմում։
17 Եւ ես կռիւ արի Յուդայի ազնուականների հետ և ասացի նոցանից. Սա ի՞նչ չար բան է որ դուք անում էք և շաբաթ օրը պղծում էք։
18 Չէ՞ որ ձեր Հայրերն էլ այդպէս արին, և մեր Աստուածը մեզ վերայ և այս քաղաքի վերայ բերաւ այս բոլոր չարիքը, և դուք բարկութիւն էք աւելացնում Իսրայէլի վերայ շա-
19 բաթը պղծելով։ Եւ երբոր մթնում էր Երուսաղէմի դռներում մի՝ շաբաթից առաջ, այն ժամանակ հրամայեցի, որ դռները կապեն, և հրամայեցի որ նորանց չբանան մինչև շաբաթ օրուայ վերջը. և իմ ծառաներից դրի դռների վերայ, որ բեռ չմտնէ
20 շաբաթ օրը։ Եւ վաճառականները և ամեն տեսակ ապրանք ծախողները մէկ և երկու անգամ գիշերը Երուսաղէմի դրսումը մնացին։
21 Եւ ես նորանց յանդիմանեցի ասելով. Դուք ինչո՞ւ համար էք գիշերը պարսպի առջևը մնում. եթէ մէկ անգամ էլ այդպէս անէք, ես ձեռք կ'բարձրացնեմ ձեզ վերայ. այն ժամանակից հետէ շաբաթ օրն այլ
22 ևս չեկան։ Եւ այն Ղևտացիներին որ սրբվում ու գալիս դռներումը պահապանութիւն էին անում, հրամայեցի շաբաթ օրը սրբել. սա էլ յիշիր ինձ համար, ով իմ Աստուած, և ինձ ողորմիր քո մեծ ողորմութեան համեմատ։

23 Նաև այն օրերը տեսայ որ Հրէաներըը Ազովտացի, Ամմոնացի, Մովաբացի կիներ էին առել. և
24 նորանց որդիքանցից կէսը խոսում էր Ազովտացոց լեզուն, և Հրէարէն խոսել չէին գիտում. և ըստ էության այս և այն ազգի
25 լեզուովը։ Եւ ես նորանց հետ կռիւ արի և նորանց նզովեցի, և նորանցից մի քանի մարդկանց էլ ծեծեցի և նորանց մազերը փետեցի, և նորանց երդում տուի Աստուծով, թէ Ձեր աղջիկները նորանց որդիանցը չառաք, և նորանց աղջիկներից չառնէք ձեր որդկանց համար և ձեզ համար։
26 Չէ՞ որ սորանով մեղանչեց Իսրայէլի Սողոմոն թագաւորը, թէև շատ ազգերում նորա նման թագաւոր չկար, և սիրելի էր իր Աստուծոյն, և Աստուած նորան բոլոր Իսրայէլի վերայ թագաւոր էր շինել, սակայն օտարազգի կիները նորան էլ մեղանչել տուին։
27 Եւ ձեզ նկատմամբ — լսուելու բան է՞, որ այս մեծ չարութիւնը անէք և Աստուծոյ դէմ ապստամբէք օտարազգի կիներ առնելով։
28 Եւ մեծ քահանայ Եղիասիբի որդի Յովիադայի որդկանցից մէկը Որոնացի Սանբաղատի փեսան էր. և նորան դուրս արի իմ կշտից։
29 Ով իմ Աստուած, նորանց յիշիր, որ պղծեցին քահանայութիւնը և քահանայութեան և Ղևտացոց ուխտը։
30 Եւ այսպէս նորանց մաքրեցի բոլոր օտարազգիներից, և քահանաների ու Ղևտացիների համար պաշտօնները նշանակեցի՝ ամեն մարդու համար իր գործը.
31 Նաև փայտի բնծան էր որոշուած ժամանակներին և երախայրիքը։ Ով Աստուած իմ յիշիր ինձ ի բարին։

ԳԻՐՔ ԵՍԹԵՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Ասուերոսի՝ այսինքն Հընդկաստանից մինչև Եթովպիոյ Հարիւր քսան և եօթը գաւառի վերայ թագաւորող Ասուերոսի, օ-
2 րերին եղաւ, Որ այն օրերում երբոր Ասուերոս թագաւորը նստած էր իր աթոռի վերայ, որ
3 Շուշան մայրաքաղաքումն է. Իր թագաւորութեան երրորդ տարում խնջոյք արաւ իր իշխաններին և ծառաների Համար, երրոր Պարսից և Մարաց զօրքը, նախարարները և գաւառաց իշխան-
4 ները նորա առջևն էին, Ցոյց տալով իր թագաւորութեան մեծ Հարստութիւնը և իր մեծութեան փառաւոր շքեղութիւնը շատ օրեր՝ այսինքն Հարիւր ութսուն օր։
5 Եւ երբոր այն օրերը լրացան, այն ժամանակ թագաւորը Շուշան մայրաքաղաքում գտնուող բոլոր ժողովրդի Համար մեծից մինչև փոքրի Համար խնջոյք արաւ եօթն օր թագաւորական պալատի պարտէզի դաւիթում.
6 Սպիտակ բեհեզներից և կերպասից ու կապուտակից վարագոյրներ՝ պատրաստած բարակ քթանի և ծիրանեգոյնի լարերով, արծաթի օղակներով մարմարիոնի սիւներից, ասկի և արծաթի նստարաններ հաստատ գմբիթաւորի և բա-
պիտակ մարմարիոնի, ալաբաստրի և սև մարմարիոնի սալայատակի վերայ։
7 Եւ խմելիքները տրւում էին ոսկի անօթներով, և անօթները միմիանցից տարբեր էին, և թագաւորի գինին առատ էր ինչպէս որ թագաւորին կը վայելէ։
8 Եւ խմելը կանոնաւոր էր, բռնադատող չկար. վասն զի թագաւորն այսպէս էր հրամայել իր տան բոլոր վերակացուներին, որ ամեն մէկի ուզածին պէս անեն։
9 Վաշթի թագուհին էլ կանանց

խնջոյք արաւ Ասուերոս թագաւորի պալատումը։
10 Եօթներորդ օրը՝ երբոր թագաւորի սիրտը գինով զուարթացել էր, ասաց այն եօթը ներքինիներին՝ Մէհուման, Բիզթայն, Աբդոնային, Բիզթային, Աբագթային, Զեթարին և Քարքասին,
11 որ ծառայում էին Ասուերոս թագաւորի առջևը, Որ բերեն Վաշթի թագուհուն արքայական թագով թագաւորի առջևը, որ ժողովուրդներն ու իշխանները տեսանեն նորա գեղեցկութիւնը, վասն զի տեսքով գեղեցիկ էր։
12 Բայց Վաշթի թագուհին մերժեց գնալ թագաւորի խօսքով, որ ներքինիների ձեռքով ասել էր. և թագաւորը շատ բարկացաւ, և նորա բորբոքումը վառուեցաւ նորանում։
13 Եւ թագաւորն ասաց ժամանակագէտ իմաստուններին. (վասն զի այսպէս են թագաւորի գործերը, որ Բերա՜մ էր ամեն օրէնք և իրաւունք գիտացողների առջև. Եւ նորա մերձաւորներն էին
14 Կարսենան, Սեթարը, Ադմաթան, Թարսիսը, Մերեսը, Մարսենան և Մեմուքանը, Պարսից և Մարաց եօթը իշխանները, որոնք առանձամ էին թագաւորի երեսը և նստում էին թագաւորութեան առաջին աստիճանում.)
15 Օրէնքին Համեմատ ինչ պէտք է անել Վաշթի թագուհուն, որովհետև Ասուերոս թագաւորի հրամանը չկատարեց, որ ներքինիների ձեռքով։
16 Եւ Մեմուքան ասաց թագաւորի և իշխանների առջև. Վաշթի թագուհին ոչ թէ միայն թագաւորի դէմ է յանցանք գործել, այլ բոլոր իշխանների և այն բոլոր ազգերի դէմ, որ Ասուերոս թագաւորի բոլոր գաւառներում են։ Վասն զի թագուհու
17 արարքը կ'տարածուի բոլոր կա-

նանց մէջ, և նորանք կանարգեն իրանց մարդկանցը՝ ասելով. Թէ Ահասուերոս թագաւորը հրամայեց Վաշթի թագուհուն բերել իր առջևը, բայց նա չգնաց։ Եւ այսօր Պարսից և Մարաց տիկինները, որ լսեն թագուհու արարքը, նոյնը պիտի ասեն թագաւորի ամեն իշխաններին. և շատ անարգանք և խռովութիւն պիտի լինի։ Եթէ թագաւորին հաճելի է, թող նորա կողմից հրովարտակ հրատարակուի և գրուի Պարսից և Մարաց օրէնքումը որ ետ չգառնայ, Թէ Վաշթին Ահասուերոս թագաւորի առջևը չը գայ, և թագաւորը նորա թագուհութիւնը նորանից մի առնէ տայ ուրիշին։ Եւ երբոր լսուի թագաւորի պատգամը, որ հրամայած է նորա ընդարձակ բոլոր թագաւորութեան մէջ, այն ժամանակ բոլոր կիները պատիւ կ'տան իրանց մարդկանցը մինչև փոքրը։

Եւ այս խօսքը հաճելի եղաւ թագաւորին և իշխաններին, և թագաւորը Մեմուքանի խօսքին համեմատ արաւ։ Եւ թագաւորը նամակներ ուղարկից բոլոր գաւառներին՝ ամեն մէկ գաւառին իր գրովը և ամեն մէկ ազգին իր լեզուովը, որ ամեն մարդ իր տան մէջ տէր լինի, և իր ժողովրդի լեզուովը խօսէ։

ԳԼ. Բ

1 Այս բաներից յետոյ, երբոր Ահասուերոս թագաւորի բարկութիւնը նաւել էր, յիշեց Վաշթին և նորա արածը և նորա 2 դէմ եղած վճիռը։ Եւ թագաւորին ապատաւորող ծառաները ասացին. Թագաւորի համար գեղեցկադէմ կոյս ազջիկներ թող 3 որոնեն. Եւ թագաւորը թող իր թագաւորութեան բոլոր գաւառներումը վերակացուներ դնէ, որ ամեն գեղեցկադէմ կոյս ազջիկ բերեն Շուշան մայրաքաղաքը կանանց պալատը կանանց պահապան Թագաւորի նեղբինի Հեգէի ձեռքի տակ ժողովեն, և տան նորանց մազրուխները։ Եւ այն ազջիկը որ թագաւորի 4 աչքին հաճելի լինի, թագուհի դառնայ Վաշթիի փոխարէն։ Եւ այս բանը հաճելի երևեցաւ թագաւորին, և նա այնպէս արաւ։

Մէկ Հրէայ մարդ կար Շուշան 5 մայրաքաղաքում, և նորա անունն էր Մուրթքէ որդի Յայիրի, որդի Սեմէիի, որդի Կիսի. Որ գերի էր տարուած Երուսաղէմից այն գերիների հետ, 6 որ Յուդայի Յեքոնիա թագաւորի հետ գերի տարուեցան, որոնց գերի տարաւ Նաբխոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը։ Եւ նա 7 անուցանում էր իր Հօրեղբօր աղջիկը Ադասային այսինքն Եսթերին, վասն զի սա հայր և մայր չունէր. և այդ աղջիկը գեղեցիկ էր կերպարանքով և գեղեցիկ դէմքով. և նորա հայրն ու մայրը մեռնելիս՝ Մուրթքէն նորան աղջիկ էր առել իր համար։

Եւ երբոր թագաւորի հրամանը 8 և հրովարտակը լսուեցաւ, և շատ աղջիկներ էին ժողովում Շուշան մայրաքաղաքը Հեգէիի ձեռքի տակ, Եսթերն էլ տարուեցաւ թագաւորի պալատը կանանց պահապան Հեգէիի ձեռքի տակ։ Եւ աղջիկը հաճելի եղաւ 9 նորա աչքին, և շնորհք գտաւ նորա առջևը և շուտով տուաւ նորան մազրուխները և շատ ուրիշ պատրաստութիւնները որ նշանակուած էին նորան տալուելու թագաւորական պալատից. և փոխադրեց նորան և նորա աղախիններին կանանց պալատի լաւագոյն տեղը։ Եսթեր չյայտնեց իր ազգը և իր 10 ծննդեան տեղը, վասն զի Մուրթքէն նորան պատուիրել էր թէ չյայտնէ։ Եւ ամեն օր Մուրթքէն 11 մտնում էր գալիս կանանց պալատի գաւիթի առջև, որ իմանար Եսթերի առողջութիւնը, և թէ նորան ինչ է լինելու։

Եւ երբոր իւրաքանչիւր աղջ- 12 կան կարգը գալիս էր Ահասուերոս թագաւորի մօտ գնալու համար

կանանց սովորութեան պէս տասն-
երկու ամիսը լրանալուց յետոյ,
(որովհետև այսպէս էին լրանում
նորանց մաքրութիւնքը՝ վեց ամիս
զմռսի իւղով, և վեց ամիս ա-
նուշահոտ խառնկերով և կանանց
13 մաքրութեանց պէտքերով.) Ա՛ր ին
ժամանակ աղջիկը գնում էր թա-
գաւորի մօտ. ամեն ինչ որ նա
պահանջէր, տրվում էր նորան
որ նորա հետ գնար կանանց պա-
լատից թագաւորի պալատը:
14 Իրիկունը գնում էր և առաւօտը
եան էր դառնում կանանց մեա
տունը թագաւորի ներքինի՝ Խ
հարճերի պահապան Սաասգազի
ձեռքի տակ. նա միւսանգամ
թագաւորի մօտ չէր գալ, բայց
միայն եթէ թագաւորը նորան հա-
ւանէր և նորան կանչէր անունով:
15 Եւ երբոր կարգը եկաւ
Մուրթքէի հօրեղբայր Աբիքէլի
աղջիկ Եսթերին, որին Մ-ընդ-էն
իրան աղջիկ վեր էր առել, որ
գնար թագաւորի մօտ, ոչինչ
չպահանջեց բացի նորանից որ
ասաց թագաւորի ներքինի կա-
նանց պահապանը հրեց. և Ես-
թերը շնորհք գտաւ բոլոր իրան
16 տեսնողների առջև: Եւ Եսթերն
առնուեցաւ Ասուերոս թագա-
ւորի մօտ նորա թագաւորու-
թեան տունը տասներորդ ամի
այսինքն Թեբեթ ամսումը նո-
րա թագաւորութեան եօթներորդ
17 տարումը: Եւ Եսթերին թագա-
ւորը բոլոր կիներից աւելի սիրեց,
և նա բոլոր աղջիկներից աւելի
սէր և շնորհք գտաւ նորա առ-
ջև, և թագաւորական թագը
դրաւ նորա գլխին, և նորան թա-
գուհի շինեց Վաշթիի փոխարէն:
18 Եւ թագաւորը մեծ խնջոյք ա-
րաւ իր բոլոր իշխաններին և ծա-
ռաներին այսինքն Եսթերի խըն-
ջոյքը, և հանգստութիւն շնոր-
հեց գաւառներին և թագաւորի
վայելուչ պարգևներ տուաւ:
19 Եւ երբոր երկրորդ անգամ աղ-
ջիկներ ժողովեցին, այն ժամանակ
Մուրթքէն նստում էր թագա-
20 ւորի դրան: Եսթերը չէր յայտ-
նել իր ծնունդը և իր ազգը ինչ-
պէս որ Մուրթքէն նորան պատ-
ուիրել էր. և Եսթեր անում
էր Մուրթքէի հրամանը այնպէս
ինչպէս նորա մօտ անանուխլու
ժամանակին:
21 Ա՛յն օրերը երբոր Մուրթքէն
թագաւորի դրանը կենում էր,
բարկացան Բիգթան և Թարէս՝
թագաւորի երկու ներքինիները որ
դրան պահապաններից էին, որ
ձեռք երկարացնեն Ասուերոս
թագաւորի դէմ: 22 Եւ Մուրթքէին
յայտնի եղաւ այս բանը, և
նա իմացրեց Եսթեր թագուհուն.
եւ Եսթեր ասաց թագաւորին
Մուրթքէի անունով: 23 Եւ այս
բանը քննուեցաւ ու ստուգուե-
ցաւ. և նորանք երկուքը կախ-
ուեցան փայտից. և — գրուե-
ցաւ ժամանակագրութեան գըր-
քումը թագաւորի առջև:

Գ.Լ. Գ

1 Ա՛յս բաներից յետոյ Ասուերոս
թագաւորը մեծացրեց Ագագացի
Ամադաթայի որդի Համանին և
բարձրացրեց նորան, և նորա ա-
թոռը իր հետ եղող բոլոր իշ-
2 խաններից վեր դրաւ: Եւ թագա-
ւորի բոլոր ծառաները որ թագա-
ւորի դրանն էին խոնարհում և
երկրպագում էին Համանին, վա-
սն զի թագաւորը այսպէս էր
պատուիրել նորա մասին, բայց
Մուրթքէն նորա առջև չխոնարհ-
ուեցաւ և չերկրպագեց նորան:
3 Եւ թագաւորի դրան եղող թա-
գաւորի ծառաները ասացին նո-
րան. Դու ինչո՞ւ համար ես զանց
անում թագաւորի պատուէրը:
4 Եւ երբոր նորանք ամեն օր ա-
սում էին նորան, և նա նորանց
չէր լսում, այն ժամանակ յայտ-
նեցին Համանին, որ տեսանեն թէ
Համանին խօսքերը կ'հաստատ-
ուին, վասն զի նա նորանց ասել
5 էր թէ Հրէայ է: Եւ երբոր Հա-
մանը տեսաւ որ Մուրթքէն չէ
ծռում նորան երկրպագում, այն
ժամանակ Համանը շատ բարկա-
ցաւ: 6 Եւ մի նուաստ բան երե-
ւեցաւ նորա աչքին որ ձեռք եր-

կարացնէր մէնակ Մուրթքէի
դէմ, որովհետև յայտնել էին
նորան Մուրթքէի ազգը. վասն
որոյ խորհեց Համանը կորցնել
Մուրթքէի ազգը՝ բոլոր Հրէա-
ներին որ Ասուերոսի բոլոր թա-
գաւորութեան մէջ էին:
7 Առաջին ամսին՝ այսինքն Նի-
սան ամսին, Ասուերոս թագա-
ւորի երկոտասաներորդ տարին
փուր՝ այսինքն վիճակ ձգեցին
Համանի առջև օրէ ցօր և ամէ
ցամիս մինչև տասներկուսը՝ այս-
ինքն Ադար ամիս:
8 Եւ Համանն ասաց Ասուերոս
թագաւորին. Մէկ ազգ կայ ցրու-
ած և տարածուած ազգերի
մէջ քո թագաւորութեան բոլոր
գաւառներուն. և նորանց օրէն-
քը ամեն ժողովուրդներէն տար-
բեր է, և թագաւորի օրէնքը չեն
կատարեր, և թագաւորին չէ
9 վայելում նորանց թոյլ տալ: Ե-
թէ թագաւորին հաճելի է, թող
գրուի որ նորանց փչաց-
նեն. և ես տասը հազար տա-
ղանդ արծաթ կշռած կ'տամ
գործակատարներուն ձեռով, որ
10 տանեն արքունի գանձատունը: Ե-
թագաւորը հանեց մատանին իր
ձեռին և նորան յանձնեց Համա-
նի Ագագացի Ամմադաթայի
11 որդի Հրէից թշնամի. Եւ թագաւորն
ասաց Համանին. Արծաթը քեզ
է տրուում և ժողովուրդն էլ, որ
ինչ որ հաճելի է քո աչքին ա-
նես:
12 Եւ առաջին ամսի երեքտա-
սաներորդ օրը կանչուեցան թագ-
աւորի գրագիրները, և գրուե-
ցաւ բոլորովին այնպէս, ինչպէս
որ Համան պատուիրեց, թագա-
ւորի նախարարներին, և ամեն
գաւառների վերայ եղող կառա-
վարիչներին, և իւրաքանչիւր գա-
ւառի և իւրաքանչիւր ազգի իշ-
խաններին իրանց գրովը, և ի-
րաքանչիւր ազգի իր լեզուովը.
Ասուերոս թագաւորի անունովը
գրուեցաւ և կնքուեցաւ թագ-
աւորի մատանիով:
13 Եւ հրովարտակ-
ներ ուղարկուեցան սուրհանդակ-
ների ձեռքով թագաւորի բոլոր
գաւառները, որ կորցնեն, սպա-
նեն և փչացնեն բոլոր Հրէաները
երեխից մինչև ծերը՝ տղաներին
և կիներին մէկ օրում՝ երկոտա-
սաներորդ ամսի այսինքն Ադար
ամսի տասներեքին, և նորանց
ստացուածքը յափշտակեն. Այս գրի 14
պատճէնը պէտք էր տրուէր իւ-
րաքանչիւր գաւառում իբրև օ-
րէնք՝ ամեն ազգերի հրատարակ-
ուած, որ նոյն օրուայ համար
պատրաստ լինին: Սուրհանդակ- 15
ները դուրս ելան շտապելով թա-
գաւորի խօսքով. և հրամանը
տրուեցաւ Շուշան մայրաքաղա-
քում: Եւ թագաւորն ու Հա-
մանը նստեցին խմելու, և Շու-
շան քաղաքը շփոթած էր:

Գ.Լ. Գ

1 Եւ Մուրթքէն իմացաւ այս բո-
լոր եղածները, և Մուրթքէն պա-
տառեց իր հանդերձները և քուրձ
հագաւ ու մոխիր ցաւեց էր վեր-
և գնաց քաղաքի մէջ և մեծ ու
ողբալի ձայնով աղաղակեց.
2 Եւ եկաւ մինչև թագաւորի դր-
ան մուտքը, վասն զի էր
չկար թագաւորի դրան լինել
քուրձ հագած: 3 Եւ ամեն գա-
ւառներում —ի ուր, ուր որ
թագաւորի խօսքը և հրամանը
հասնում էր, Հրէաները մեծ
սուգ էին ունենում, և ծոմ էին
կենում, և լաց ու ողբ անում.
և շատերը պառկում էին քուր-
ձով և մոխրի վերայ:
4 Եւ Էսթերի աղախինները և
ներքինիները եկան և պատմեցին
նորան, և թագուհին շատ ա-
յլայլուեցաւ, և հանդերձներ ու-
դարկեց Մուրթքէին հագցնելու
համար և նորա քուրձը նորանից
վեր առնելու համար. բայց նա
չընդունեց: 5 Եւ Էսթերը կանչեց
Հաթաքին որ թագաւորի ներքի-
նիներից էր, որին տուել էր
ընծայութիւն նորան, և նորան հրա-
մայեց Մուրթքէի մասին որ ի-
մանայ, թէ սա ի՞նչ է և ինչո՞ւ
համար է սա. 6 Եւ Հաթաքը գը-
նաց Մուրթքէի մօտ քաղաքի

Հրապարակը, որ Թագաւորի դրան դիմացին էր։ Եւ Մուրթքէն պատմեց նորան ամեն ինչ որ նորան պատահել էր և այն որչ գումար արծաթը, որ Համանը ասել էր թէ կշռուլ պիտի տար Թագաւորի գանձատունին Հրէաների համար նորանից փչացնելով։ Եւ այն հրապարակի պատճէնը, որ Շուշանում արուել էր նորանց փչացնելու համար, տուաւ նորան, որ Եսթերին ցոյց տայ և նորան իմացնէ և նորան պատուիրէ, որ Թագաւորի մօտ գնայ և նորան աղաչէ և նորա առջեւը խնդրուածք մատուցանէ իր ազգի համար։ Եւ Հաթաքը գնաց և պատմեց Եսթերին Մուրթքէի խօսքերը։ Եւ Եսթեր ասաց Հաթաքին և նորան պատուիրեց Մուրթքէի մօտ դնալ և ասել. Թագաւորի բոլոր ծառաները և Թագաւորի գաւառների ժողովուրդը գիտեն, որ ամեն մարդ կամ կին, որ ջանչառած մտնէ Թագաւորի մօտ ներքին գաւիթը, մէկ հատ օրէնք կայ նորան պատնէշ բացի նորանից, որին Թագաւորը մեկնէ ոսկի գաւազանը, նա կապրէ. բայց ես այս երեսուն օր է չեմ կանչուել Թագաւորի մօտ դնալ։ Եւ Մուրթքէին պատմեցին Եսթերի խօսքերը։ Եւ Մուրթքէն պատասխան ետ ուղարկեց Եսթերին ասելով. Մի խորհիր քո մտքումդ թէ դու կազատուես Թագաւորի տան բոլոր Հրէաներից. Եւ եթէ այս միջոցին լռես, մի ուրիշ տեղից Հրէաների համար ազատութիւն և փրկութիւն վեր կ'կենայ, բայց դու և քո հօր տունը կ'կորչէք, և ո՞վ գիտէ դուցէ մի այսպիսի ժամանակի համար էս դու Թագուհութեան հասել։

Եւ Եսթերը պատասխան ուղարկեց Մուրթքէին ասելով. Գնա ժողովը Շուշանում գտնուող բոլոր Հրէաներին, և ծոմ պահեցէք ինձ համար, և երեք օր գիշեր և ցերեկ ոչ կերէք և ոչ խմեցէք. ես էլ իմ աղախին-

Հրապարակը, որ Թագաւորի դրան դիմացին էր։ Եւ Մուրթքէն պատմեց նորան ամեն ինչ որ նորան պատահել էր և այն որչ գումար արծաթը, որ Համանը ասել էր թէ կշռուլ պիտի տար Թագաւորի գանձատունին Հրէաների համար նորանից փչացնելով։ Եւ այն հրապարակի պատճէնը, որ Շուշանում արուել էր նորանց փչացնելու համար, տուաւ նորան, որ Եսթերին ցոյց տայ և նորան իմացնէ և նորան պատուիրէ, որ Թագաւորի մօտ գնայ և նորան աղաչէ և նորա առջեւը խնդրուածք մատուցանէ իր ազգի համար։ Եւ Հաթաքը գնաց և պատմեց Եսթերին Մուրթքէի խօսքերը։ Եւ Եսթեր ասաց Հաթաքին և նորան պատուիրեց Մուրթքէին ասելով. Մի խորհիր քո մտքումդ թէ դու կազատուես Թագաւորի տան բոլոր Հրէաներից. Եւ եթէ այս միջոցին լռես, մի ուրիշ տեղից Հրէաների համար ազատութիւն և փրկութիւն վեր կ'կենայ, բայց դու և քո հօր տունը կ'կորչէք, և ո՞վ գիտէ դուցէ մի այսպիսի ժամանակի համար էս դու Թագուհութեան հասել։

Եւ Եսթերը պատասխան ուղարկեց Մուրթքէին ասելով. Գնա ժողովը Շուշանում գտնուող բոլոր Հրէաներին, և ծոմ պահեցէք ինձ համար, և երեք օր գիշեր և ցերեկ ոչ կերէք և ոչ խմեցէք. ես էլ իմ աղախին-

ԳԼ. Ե

Եւ եղաւ որ երրորդ օրը Եսթեր հագուեցաւ թագուհու կերպով և կանգնեց Թագաւորի տան ներքին դատխուձը Թագաւորի պալատի դիմացը, և Թագաւորը նստել էր իր Թագաւորական աթոռի վերայ Թագաւորի պալատումը պալատի դրան դիմացը։ Եւ երբոր Թագաւորը տեսաւ Եսթեր թագուհուն դատխուձը կանգնած, նա շնորհք գտաւ նորա աչքի առջեւ, և Թագաւորը մեկնեց դէպի Եսթերին իր ձեռքի ոսկի գաւազանը. և Եսթերը մօտեցաւ և դպաւ գաւազանի ծայրին։ Եւ Թագաւորն ասաց նորան. Ի՞նչ ունիս, ով Եսթեր Թագուհի, և ի՞նչ է ուզածդ. մինչև իմ Թագաւորութեան կէսն էլ քեզ տրուի։ Եւ Եսթեր ասաց. Եթէ հաճելի է Թագաւորին, գայ Թագաւորը Համանի հետ այսօր այն խնջոյքին, որ պատրաստել եմ իր համար։ Եւ Թագաւորն ասաց. Շուտով բերէք Համանին, որ Եսթերի ասածը կատարէ. և Թագաւորը գնաց Համանի հետ Եսթերի պատած խնջոյքին։

Եւ Թագաւորն ասաց Եսթերին գինու խմելիս. Ի՞նչ է քո խնդիրքը, քեզ պիտի տրուի. և ի՞նչ է քո ուզածը մինչև Թագաւորութեան կէսը, պիտի կատարուի։ Եւ Եսթերը պատասխանեց և ասաց. Իմ խնդիրքը և իմ ուզածը, եթէ ես շնորհք եմ գտել Թագաւորի աչքի առջեւ և եթէ հաճելի է Թագաւորին իմ խնդիրքը տալ և իմ ուզածը կատարելու, Թող գայ Թագաւորը Համանի հետ այն

խնջոյքին որ ես անելու եմ, և
էգուց կանեմ Թագաւորի խօս-
քին համեմատ։
9 Եւ Համանը այն օրը դուրս ե-
կաւ ուրախ և սրտով զուարթ։
Բայց երբոր Համանը տեսաւ
Մուրթքէին Թագաւորի դրանը,
որ ոչ վեր կացաւ և ոչ նորանից
դողաց, Համանը Մուրթքէի վե-
րայ բարկութեամբ լցուեցաւ։
10 Սակայն Համանն իրան զսպեց և
գնաց իր տունը, և մարդ ուղար-
կեց բերել տալու իր բարեկամ-
11 ներին և իր կնոջ Զեբէսին։ Եւ
Համանը պատմեց նորանց իր հա-
րստութեան շատութիւնը և
որդիանցը բազմութիւնը, և այն
ամենը որ Թագաւորը նորան մե-
ծացրել է և որ նորան բարձրաց-
րել է Թագաւորի ծառայ իշ-
12 խաններից։ Եւ ասաց Համանը.
Ապաքէն եսիմ եր Թագուհին Ես-
թէրն ներս չառաւ Թագաւորի
հետ իր արած խնջոյքին բացի
ինձանից. և նոյն իսկ էգուց հրա-
ւիրուած եմ ես նորա մօտ Թա-
13 գաւորի հետ։ Եւ այս ամենը ինձ
յարմար չէ քանի որ ամեն ժա-
մանակ երբոր Հրէայ Մուրթքէին
տեսանում եմ Թագաւորի դրանը
14 նստած։ Եւ նորա կինը Զեբէսը
ասաց նորան և նորա բոլոր բա-
րեկամները. Թող մի բարձր փայտ
շինեն, յիսուն կանգուն, և առա-
ւօտեան ասա Թագաւորին, որ
Մուրթքէին կախեն նորա վերայ,
յետոյ ուրախանալով գնայ խրն-
ջոյքին Թագաւորի հետ։ Եւ այս
խօսքը հաճելի եղաւ Համանին,
և փայտը շինեց։

ԳԼ. Զ

1 Այն գիշերը Թագաւորի քունը
փախաւ և հրամայեց որ ժա-
մանակագրութեան յիշատակաց
մատեանը բերեն. և Թագաւորի
2 առջև կարդացուեցաւ։ Եւ գրու-
ած գտնուեցաւ, որ Մուրթքէ
խոսցրել էր Թագաւորի երկու
ներքինիք՝ Բնգէթանի և Թարեսի
մասին որ դրան պահապաններից
էին, որոնք ուզել էին Ասուերոս
Թագաւորի վերայ ձեռք երկարա-
3 ցնել։ Եւ Թագաւորն ասաց. Ի՞նչ
փառք կամ ազնուութիւն արուե-
ցաւ Մուրթքէին սորա փոխարէն.
և Թագաւորի սպասաւոր ծառա-
ներն ասացին. Նորան ոչինչ
4 չեն արել։ Եւ Թագաւորն ասաց.
Ով կայ գաւթում, և Համանը
եկել էր Թագաւորի պալատի
դրսի գաւթը Թագաւորին ասե-
լու որ Մուրթքէին կախէին այն
փայտի վերայ որ պատրաստել
5 էր նորա Համար։ Եւ Թագաւորի
ծառաները ասացին նորան. Ահա
Համանը կանգնած է գաւթում.
և Թագաւորն ասաց. Ներս
գայ։
6 Եւ Համանը ներս մտաւ, և
Թագաւորը նորան ասաց. Ինչ
պէտք է անել այն մարդուն, ո-
րին Թագաւորը բարեհաճէ պատ-
ուել։ Եւ Համանը ասում էր իր
սրտումը. Թագաւորը որի՞ն պի-
տի բարեհաճէր պատիւ անելու
7 բացի ինձանից։ Եւ Համանն ա-
սաց Թագաւորին. Այն մարդուն
որին Թագաւորը բարեհաճում է
8 պատուել, Թող բերին Թագա-
ւորի հագած Թագաւորական զգ-
եստը, և Թագաւորի հեծած
ձին, և այն Թագաւորական Թա-
գը որ դրւում է նորա գլխին.
9 Եւ այն զգեստը և ձին տուէք
Թագաւորի պատուաւոր իշխան-
ներից մէկի ձեռքը, և հագցնեն
այն մարդուն որին Թագաւորը
բարեհաճել է պատուելու, և նո-
րան հեծցնեն այն ձիուն վերայ
քաղաքի հրապարակումը և կան-
չեն նորա առջևից. Այսպէս է
լինում այն մարդուն որին Թագ-
10 աւորը բարեհաճէ պատուել։ Եւ
Թագաւորն ասաց Համանին. Շու-
տով վեր առ զգեստը և ձին
ինչպէս որ ասացիր և այդպէս
արա Մուրթքէ Հրէային որ նստ-
ում է Թագաւորի դրանը, մէկ
բան չպակասէ քո բոլոր առա-
ջինից։
11 Եւ Համանն առաւ զգեստը և
ձին և հագցրեց Մուրթքէին, և
հեծցրեց քաղաքի հրապարակու-
մը և կանչեց նորա առջևից.

Այսպէս է լինում այն մարդուն որին թագաւորը բարեհաճէ պատուել։ եւ Մուրթքէն եաս գարձաւ թագաւորի դուռը. բայց Համանը շտապից իր տունը որ-
13 տում եւ գլուխը ծռած։ եւ Համանը պատմից իր կնոջ Զերեսին եւ իր բոլոր բարեկամներին ամեն ինչ որ պատահել էր իրան. եւ նորա իմաստուններն եւ նորա կինը Զերեսը ասացին նորան. Եթէ Մուրթքէն Հրեաներից սերունդից է, որի առջեւ սկսել եաս խոնարհուիլ, նորան չես կարող յաղթ գալ անել, այլ բոլորովին վայր
14 ես ընկնելու նորա առջեւ։ Նորանք տակաւին խօսում էին նորա հետ որ թագաւորի ներքինի-ները հասան նորան որ շուտով նորան տանեն Եսթերի շինած խնջոյքին։

ԳԼ. Է

1 Եւ թագաւորը Համանի հետ գնաց խնջոյքի Եսթեր թագուհու
2 մօտ։ Եւ թագաւորն ասաց Եսթերին երկրորդ օրն էլ գինին խըմելիս. Ի՞նչ է, Եսթեր թագուհի քո խնդիրքը, և պիտի տրուի քեզ. և ի՞նչ է քո ուզածը և մինչեւ թագաւորութեան կէսը, և պիտի կատարուի։
3 Եւ Եսթեր թագուհին պատասխանեց և ասաց. Ես շնորհք եմ գտել քո աչաց առջեւ, ով թագաւոր, և եթէ հաճելի է թագաւորին, թող իմ խնդիրքովիս իմ անձը և իմ ազգանքովիս իմ
4 ազգն ինձ տրուի։ Վասն զի ես և իմ ազգը ծախուել ենք փըճացնուելու, սպանուելու և կոր-
չելու. եթէ իբրև ծառաներ և աղախիններ ծախուէինք, կ'լռէի, վասն զի թշնամին արժէք չունի թագաւորի վշտին չափ։
5 Եւ Ասուերոս թագաւորն խօսեց, և Եսթեր թագուհուն ասաց. Ո՞վ է նա և ո՞ւր է նա որ համարձակել է այդպէս անել։
6 Եւ Եսթերն ասաց. Այն հակառակորդը և թշնամին այս չար Համանն է. բայց Համան դող-
ուժ էր թագաւորի և թագուհու առջեւ։

Եւ թագաւորը վեր կացաւ գինի խմելուց իր բարկութեամբը և պարտէզը. բայց Համանը մնաց որ իր անձի համար աղաչէ Եսթեր թագուհուն, վասն զի տեսաւ որ չարիքը հասել էր իր վերայ թագաւորից։

Եւ թագաւորը եաս գարձաւ պալատի պարտէզից գինու խրնջոյքի աւնեակը, և Համան ընկել էր Եսթերի բազմոցի վերայ. և թագաւորն ասաց. Մի՞թէ բռնաբարե էլ թագուհուն ինձ մօտ պալատումը. և խօսքը դուրս էր եկել թագաւորի բերանիցը, և երեսները ծածկեցին Համանի երեսը։ Այն ժամանակ ասաց Թագաւորի առջեւ եղող ներքինիներից մէկը Աբռնա. Ահա այն փայտն կանգնացաց Համան պատրաստեց Մուրթքէի համար որ բարի է խօսել թագաւորի մասին, Համանի տունը սրնկած է։ Եւ թագաւորն ասաց. Նորան կախեցէք նորա վերայ։
10 Եւ կախեցին Համանին այն փայտի վերայ, որ նա պատրաստել էր Մուրթքէի համար. և թագաւորի բարկութիւնը իջաւ։

ԳԼ. Ը

Այն ժամանակին Ասուերոս 1
թագաւորը Եսթեր թագուհուն տուաւ Հրէից թշնամի Համանի տունը, և Մուրթքէն եկաւ թագաւորի առջեւը, վասն զի Եսթերը նորան իմացրել էր, թէ նա նորան ինչն էր։ Եւ թագաւորն 2
առաւ իր մատանին, որ հանել էր Համանից, և նորան տուաւ Մուրթքէին. և Եսթերը Մուրթքէին դրաւ Համանի տան վերայ։
Եւ Եսթերը դարձեալ խօսեց 3
թագաւորի առջեւը և ընկաւ նորա ոտքի առջեւը, և լացաւ ու աղաչեց նորան, որ Ագագացի Համանի չարութիւնը և այն հնարքը, որ հնարել էր Հրէից դէմ, խափանէ։ Եւ թագաւորը 4
մեկնեց դէպի Եսթերին ոսկի գա-

ազանը. և Եսթերը վեր կացաւ
5 կանգնեց թագաւորի առջևը. Եւ
ասաց. Եթէ հաճելի է թագա-
ւորին, և եթէ ես շնորհք եմ
գտել նորա առջև, և եթէ այս
բանը ուղիղ է թագաւորի առ-
ջևը և ես հաճելի եմ նորա աչ-
քին, թող հրաման գրուի, որ ետ
դարձնեն Ագագացի Ամադաթայի
որդի Համանի հնարքի գրութիւն-
ները, որ գրել է թագաւորի բո-
լոր գաւառներուն եղող Հրէա-
6 ներին փչացնելու համար: Վասն
զի ինչպէս կարող եմ տեսանել
իմ ազգին պատահող չարիքը,
և ինչպէս կարող եմ տեսանել
իմ ազգականներուն կորուստը:
7 Եւ Ասուերոս թագաւորն ասաց
Եսթեր թագուհուն և Հրէայ
Մուրթքէին. Ահա Համանի տու-
նը տուի Եսթերին, և նորան
կախեցին փայտի վերայ նորա
համար որ իր ձեռքը երկարաց-
8 րել էր Հրէից վերայ: Դուք էլ
գրեցէք Հրէից մասին ինչ որ հա-
ճելի է ձեր աչքին՝ թագաւորի
անունովը և կնքեցէք թագաւորի
կնիքովը, վասն զի այն գիրը, որ
գրուեցաւ թագաւորի անունով
և կնքուեցաւ թագաւորի կնիքո-
վը, ետ չեն դարձնիլ:
9 Եւ այն ժամանակ թագաւորի
գրագիրները կանչուեցան երրորդ
ամսի այսինքն Սիվան ամսի քը-
սաներեքին, և գրուեցաւ բոլո-
րովին այնպես ինչպէս որ պատ-
ուիրեց Մուրթքէն, և առ Հրէա-
ները և նախարարները
բին ու կուսակալները և գա-
ւառապետները Հնդկաստանից
մինչև Եթովպիա՝ հարիւր քսան
և եօթը գաւառների իւրաքանչ-
իւր գաւառին իր գրովը և ամեն
մէկ ազգին իր լեզուովը և Հրէա-
ներին իրանց գրովն ու իրանց լե-
10 զուովը: Եւ գրեց Ասուերոս թա-
գաւորի անունովը և կնքեց թա-
գաւորի կնիքովը և հրովարտակ-
ներն ուղարկեց ձիաւոր սուրհան-
դակներով որ հեծած էին արքունի
նժոյգների ձիաքուռակների վե-
11 րայ, թէ թագաւորը հրաման է
է տուել ամեն մէկ քաղաքում
եղող Հրէաներին, որ հաւաքուին
և դէմ կենան իրանց անձերի հա-
մար, որ փչացնեն, սպանեն և
կոտորեն ժողովրդի և գաւառի
զօրաւորներին, որ թշնամութիւն
կ'անեն նորանց, նորանց որդիկան-
ցը և կանանցը, և նորանց ստա-
ըը յափշտակեն Մէկ օրում Ա- 12
ստուերոս թագաւորի բոլոր գա-
ւառներուն երկոտասաներորդ
ամսի՝ այսինքն Ադար ամսի տաս-
երեքին: Այս գրի պատճէնը պէտք 13
էր տրուէր իրրև օրէնք իւրաքանչ-
իւր գաւառում ամեն ազգերի
հրատարակուած, որ Հրէայքը
նոյն օրուայ համար պատրաստ
լինին իրանց վրէժը իրանց թըշ-
նամիներից առնելու համար. Թա- 14
գաւորական նժոյգների ձիաքու-
առակներին հեծած սուրհանդակ-
ները, որ թագաւորի խօսքովը բա-
տիպուելով շտապում էին գուրս
ելան. և այս օրէնքը հրատա-
րակուեցաւ Շուշան մայրաքաղա-
քում:
Եւ Մուրթքէն դուրս ելաւ 15
թագաւորի առջևից թագաւորա-
կան կապուտակ և սպիտակ հա-
գուստով և մեծ ոսկի թագով,
և բեհեզեայ ու ծիրանի պատմու-
ճանով. և Շուշան քաղաքը ցըն-
ծաց և ուրախացաւ: Հրէաները 16
լոյս և ուրախութիւն, ցնծու-
թիւն և պատիւ ունեցան: Եւ 17
բոլոր գաւառներում ու բոլոր
քաղաքներում որտեղ որ հա-
նում էր թագաւորի խօսքը և
հրամանը, ուրախութիւն և ցըն-
ծութիւն էր լինում Հրէից հա-
մար, խնջոյքի և տօնախմբու-
թեան օր. և այն երկրի ժողովր-
դից շատերը Հրէայ էին գա-
նում, վասն զի Հրէից վախն ըն-
կել էր նորանց վերայ:

Գ.Լ. Թ

Եւ երկոտասաներորդ ամսի, այս- 1
ինքն Ադար ամսի տասներեք-
երորդ օրը, երբոր հասաւ թագա-
ւորի խօսքը և հրամանը որ կատար-
ուէր, այն օրը որ Հրէից թշնա-
միները յոյս ունէին նորանց վե-

բոյ տիրելու, ներհակը պատահեց, որ Հրեաները իրանք տիրեցին իրանց տաղնապի վերայ. Աստերա Թագաւորի բոլոր գաւառներումը Հրեաները ժողովեցան իրանց քաղաքներումը, որ ձեռք երկարացնեն իրանց չարչին ուզողների վերայ. և նորանց առջև ոչ ոք չէր դիմանում, վասն զի նորանց վախն ընկել էր բոլոր ազգաց վերայ: Եւ բոլոր գաւառապետները, կառավարները, և իշխանները և Թագաւորի գործակալները օգնում էին Հրեաներին, վասն զի Մուրթքէի վախն ընկել էր նորանց վերայ: Վասն զի Մուրթքէն մեծ էր Թագաւորի պալատումը, և նորա համբաւը տարածուել էր ամեն գաւառներում, վասն զի այդ Մուրթքէ մարդը գնալով մեծանում էր: Եւ Հրեաները զարկ տուին իրանց բոլոր թշնամիներին սրով զարկելով, սպանելով և փչացնելով, և իրանց տաղնապին իրանց ուզածին պէս արին: Եւ Հրեաները Շուշան մայրաքաղաքումը սպանեցին փչացրին հինգ հարիւր մարդ: Նաև Փարսանդաթային, Դալփոնին, Ասփաթային, Փորաթային, Ադալիային, Արիդաթային, Փարմաշթային, Արիսային, Արիդային, և Վայեզաթային. Հրեից թշնամի Ամադաթայի որդի Համանի տասը որդիները սպանեցին, բայց ասարին ձեռք չերկարացրին: Այն օրը Շուշան մայրաքաղաքումն սպանուածների թիւը եկաւ Թագաւորի առջևը:

Եւ Թագաւորն ասաց Եսթեր Թագուհուն. Շուշան մայրաքաղաքում Հրեայք սպանել և փչացրել են հինգ հարիւր մարդ և Համանի տասն որդիները. ապա Թագաւորի միւս գաւառներումն ինչե՞ր են արել. դարձեալ ինչ է քո խնդիրքը, և պիտի արուի քեզ, և դեռ ինչ է քո ուզածը, պիտի կատարուի: Եւ Եսթեր Թագուհուն ասաց. Եթէ հաճոյ է Թագաւորին, թող էգուց էլ Շուշանում եղող Հրեաներին արուի որ այսօրուայ օրէնքի համեմատ անեն Համանի տասն որդիները կախեն փայտից. Եւ Թագաւորն ասաց որ այնպէս կատարուի, և հրամանը հրատարակուեցաւ Շուշանում, և Համանի տասն որդիները կախեցին: Եւ Շուշանում եղող Հրեայք Ադար ամսի չորեքտասաներորդ օրն էլ ժողովեցան և Շուշանի մէջ երեք հարիւր մարդ սպանեցին, բայց աւարին ձեռք չերկարացրին: Եւ Թագաւորի գաւառներում եղող Հրեայք ժողովեցան և դէմ կացին իրանց անձանց համար և հանգստացան իրանց թշնամիներից և սպանեցին իրանց տասներից եօթանասուն և հինգ հազար մարդ, բայց աւարին ձեռք չերկարացրին, Ադար ամսի տասներեքին, և հանգրստացան նոյն ամսի տասնչորսին, և նորան խնջոյքի և ուրախութեան օր արին: Եւ Շուշանում եղող Հրեաները ժողովեցան այն ամսի տասներեքին և տասնչորսին և հանգստացան տասնհինգին, և նորան խնջոյքի ու ուրախութեան օր արին: Սորա համար դիւղացի Հրեայք որ բնակւում են դաշտաքաղաքներում, ատում են Ադար ամսի տասնչորսերորդ օրը ուրախութեամբ և խնջոյքով տօնախմբութեան օր, և իրար ընծաներ են ուղարկում:

Եւ Մուրթքէն գրեց այս բաները և նամակներ ուղարկեց Ասուերա Թագաւորի բոլոր գաւառներում եղող մօտ և հեռու Հրեաներին, Որ իրանց վերայ դնեն Ադար ամսի տասնչորսերորդ օրը և տասնհինգերորդ օրը տարեց տարի: Իբրև այն օրերը որոնցում Հրեաները հանգստացան իրանց թշնամիներից և իրեւ այնպիսի ամիս որ նորանց համար տրտմութիւնը ուրախութեան և սուգը տօնախմբութեան փոխուեցաւ. որ նորանց տօնեն իրեւ խնջոյքի և ուրախութեան օրեր և իրար ընծաներ ուղարկեն և աղքատներին պար-

23 գևնեը . Եւ Հրէայքն ընդունեցին
ինչ որ սկսել էին անել և ինչ
որ Մուրթքէն նոցանց գրել էր .
24 Վասն զի բոլոր Հրէից թշնամի
Ագագացի Ամադաթայ որդին
Համանը խորհեց Հրէաներին կոր-
նել և փոր՝ այսինքն վիճակ էր
գցել նոցանց բնաջինջ անելու և
25 կորցնելու : Բայց երբոր ե-ԲԷԸ
գնաց թագաւորի առջևը, ր-ա-
-ՐԸ հրամայեց հրովարտակով,
որ Համանի չար հնարքը որ հնա-
րել էր Հրէաներին մասին նոցա
գլխին դառնայ . և նորան և նո-
ցա որդիքը կախեցին փայտի
26 վերայ : Սորա համար այս օրերին
Փուրիմ են ասում՝ Փուրի ան-
ուան պատճառով . սորա համար
այս թղթի բոլոր խօսքերի պատ-
ճառովը և ինչ որ իրանք տեսան
սորան վերաբերմամբ և ինչ որ
27 իրանց պատահեցաւ . Հրէայք ո-
րոշեցին և ընդունեցին իրանց վե-
րայ և իրանց զաւակներին վերայ
և բոլոր իրանց հետ միացողների
վերայ և զանց չանեն այս երկու
օրերը ամեն նոցանց գրաւածքին
և նոցանց ժամանակին համեմատ
28 իւրաքանչիւր տարի : Եւ այս օ-
րերը պէտք է յիշուին և ամեն
ազն գաւերաւմ, ամեն ազգա-
տոհմներում, ամեն գաւառնե-
րում և ամեն քաղաքներում . և
այս Փուրիմ օրերը Հրէից միջից
պակաս չլինին և նոցանց յիշա-
տակը չվերանայ նոցանց սերուն-
դից :
29 Եւ Աբիքէլի աղջիկ Եսթեր թա-
գուհին և Հրէայ Մուրթքէն բո-
լոր առատութեամբ գրեցին այս
երկրորդ թուղթը փուրիմը հաս-
տատելու համար . Եւ նամակներ 30
ուղարկեց բոլոր Հրէաներին, Ա-
սուերոսի թագաւորութեան հա-
րիւր քսան և եօթը գաւառները
խաղաղութեան և ճշմարտու-
թեան խօսքերով . Որ պահեն այս 31
փուրիմի օրերը իրանց ժամանակ-
ներին ինչպէս որ նոցանց վերայ
դրին Հրէայ Մուրթքէն և Եսթեր
թագուհին, և ինչպէս որ նորանք
դրին իրանց անձանց վերայ և ի-
րանց սերունդի վերայ ծոմապա-
հութեան և իրանց աղաղակի
մասին : Եւ Եսթերի հրամանը 32
հաստատեց այս փուրիմի բանե-
րը, և գրուեցաւ գրքի մէջ :

ԳԼ. Ժ

Եւ Ասուերոս թագաւորը հարկ 1
դրաւ երկրի վերայ և ծովի կղզ-
ինների վերայ : Եւ նորա զօրու- 2
թեան և ոյժի բոլոր գործերը, և
Մուրթքէի մեծութեան մանրա-
մասն պատմութիւնը, որով թա-
գաւորը նորան մեծացրեց, ահա
նորանք գրուած են Մարաց և
Պարսից թագաւորների ժամա-
նակագրութեան գրքումը : Վասն 3
զի Հրէայ Մուրթքէն Ասուերոս
թագաւորի երկրորդն էր, և Հրէ-
այց մէջ մեծ և իր եղբայրների
շատերին սիրելի էր, իր ազգի
համար բարիք էր որոնում, և
խաղաղութիւն էր խօսում իր
բոլոր սերունդի համար :

ԳԻՐՔ ՅՈՒԴԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Մէկ մարդ կար Հուս երկրումը՝
անունը Յոբ . և այն մարդը կա-
տարեալ և ուղիղ և աստուածա-
վախ էր, և հեռանում էր չա-
2 րութիւնից : Եւ ծնուեցան նորա
համար եօթը որդիք և երեք աղ-
3 ջիկ : Եւ նորա խաշինքն էին՝ եօ-
թը հազար ոչխար, երեք հազար
ուղտ, հինգ հարիւր լուծ եզ և
հինգ հարիւր մատակ էշ և խիտ
շատ ծառաներ . և այդ մարդը
բոլոր արևելցիներից մեծ էր :
4 Եւ նորա որդիքը գնում և
խնջոյք էին անում տանը ամեն

մէկն իր օրին. և Տէրդ էին ու-
զարկում և կանչում իրանց ե-
րեք քոյրերին, որ իրանց հետ
5 ուտեն և խմեն։ Եւ երբոր խըն-
ջոյքի օրերը լրանում էին, այն
ժամանակ Յոբն ուղարկում՝ նո-
րանց արթում էր. և առաւօ-
տանց վեր էր կենում և ողջա-
կէզներ էր մատուցանում նորանց
ամենի թուովը. վասն զի Յոբն
ասում էր. Գուցէ որդիքս մեղան-
չել են և Աստուծոյն հայհոյել
իրանց սրտում. այսպէս էր ա-
նում Յոբն ամեն ժամանակ։
6 Եւ եղաւ մէկ օր, որ Աստու-
ծոյ որդիքը եկան Տիրոջ առջև
կանգնելու. և սատանան էլ ե-
7 կաւ նորանց միջումը։ Եւ Տէրն
ասաց սատանային. Ո՞րտեղից ես
գալիս. և սատանան պատասխա-
նեց Տիրոջը և ասաց. Երկրի վե-
րայ շրջելուց և նորանում մտն
8 գալուց։ Եւ Տէրն ասաց սատա-
նային. Ուշադրութիւնդ դարձրի՞ր
իմ ծառայ Յոբի վերայ, որ նորա
նմանը չկայ երկրի վերայ կատար-
եալ և ուղիղ մարդ, աստուա-
ծավախ և չարութիւնից հեռա-
9 ցող։ Եւ սատանան պատասխա-
նեց Տիրոջը և ասաց. Մի՞թէ Յո-
10 բը ձրի է աստուածավախ։ Չէ՞ որ
դու նորան, նորա տունը և նորա
բոլոր ստացուածքը ցանկով շրջ-
ապատել ես, նորա ձեռաց
գործքը օրհնել ես, և նորա հօ-
տերը տարածուել են երկրի վե-
11 րայ։ Բայց հիմա մեկնիր ձեռքդ
և դիպչիր նորա ամեն ստացուած-
քին. թէ որ քո երեսին քեզ չը
12 հայհոյէ՞։ Եւ Տէրն ասաց սատա-
նային. Ահա նորա բոլոր ստաց-
ուածքը քո ձեռքին լինէ, միայն
թէ նորա վերայ չերկարացնես
ձեռքդ։ Եւ սատանան դուրս ե-
լաւ Տիրոջ երեսի առջևից։
13 Եւ եղաւ, որ մի օր նորա որ-
դիքն ու նորա աղջկերքը ուտում
էին և գինի խմում իրանց անդ-
14 րանիկ եղբօր տանը։ Եւ մէկ
պատգամաբեր եկաւ Յոբի մօտ
և ասաց. Եզները հերկելիս և
մատակ էշերը նորանց կողքին ա-
15 բածելիս, Սաբայեցիք յարձակ-
ուեցան և նորանց առին և ծա-
ռաներին զարկեցին սուրի բերա-
նով. և ինձանակ ես եմ ազատ-
ուել որ քեզ իմացնում եմ։
16 Սա դեռ խօսում էր որ ահա ձե-
նէ եկաւ և ասաց. Աստուծոյ կր-
ակը թափուեցաւ երկնքից և
այրեց հօտերին ու ծառաներին
և նորանց ապառեց. ու ինձանակ
ես եմ ազատուել որ քեզ իմաց-
17 նում եմ։ Սա դեռ խօսում էր
որ ահա ձիէ եկաւ և ասաց.
Քաղդէացիք երեք գունդ շինուած
յարձակուեցան ուղտերի վերայ
և նորանց առին և ծառաներին
զարկեցին սուրի բերանով, և ին-
ձանակ ես եմ ազատուել որ քեզ
18 իմացնում եմ։ Սա դեռ խօսում
էր որ ահա ձէնէ եկաւ և ասաց.
Որդիքդ և աղջկերքդ ուտում էին
և գինի խմում իրանց անդրանիկ
19 եղբօր տանը. Եւ ահա մի մեծ
հովմ եկաւ անապատի այն կող-
մից և դիպաւ տան չորս անկեա-
նը, և վայր ընկաւ տղայ վերայ,
և նորանք մեռան. և ինձանակ ես
եմ ազատուել որ քեզ իմաց-
նում եմ։
20 Եւ Յոբը վեր կացաւ և պատա-
ռեց իր վերարկուն և խուզեց իր
գլուխը, և վայր ընկաւ գետնի
վերայ և երկրպագութիւն արաւ,
21 Եւ ասաց. Մերկ եկայ իմ մօր
արգանդիցը, և մերկ պիտի գնա-
նում այնտեղ. Տէրը տուաւ և
Տէրն առաւ. Տիրոջ անունը օրհ-
22 նեալ լինի։ Այս ամենի մէջ Յո-
բը չմեղանչեց և Աստուծոյն ան-
պատշաճութիւն չտուաւ։

ԳԼ. Բ

1 Եւ մի օր եղաւ, որ Աստուծոյ
որդիքը եկան Տիրոջ առջև կանգ-
նելու, և սատանան էլ եկաւ նո-
րանց միջումը Տիրոջ առջև կանգ-
2 նելու։ Եւ Տէրն ասաց սատա-
նային. Ո՞րտեղից ես գալիս. և
սատանան պատասխանեց Տիրոջը
և ասաց. Երկրի վերայ շրջելուց
3 և նորանում մտն գալուց։ Եւ
Տէրն ասաց սատանային. Ուշադ-
րութիւն դարձրի՞ր իմ ծառայ

Յոբի վերայ, որ նորա նմանը չը
կայ երկրի վերայ՝ կատարեալ և
ուղիղ մարդ, աստուածավախ
և չարութիւնից հեռացող, և
տակաւին բռնած է իր կատարե-
լութիւնը, թէպէտ և ինձ հա-
մոզում էիր, նորան զուր տեղը
4 կորցնելու։ Եւ աստանան պա-
տասխանեց Տիրոջը և ասաց. Մոր-
թի տեղ մորթի, նաև մարդս իր
բոլոր ստացուածքն իր անձի տեղ
5 կ'ասայ։ Բայց հիմա մեկնիր ձեռ-
քըդ և դիպչիր նորա ոսկորին և
նորա մարմնին, թէ որ քո երե-
6 սին քեզ չհայհոյէ՞։ Եւ Տէրն ա-
սաց աստանային. Ահա նա քո
ձեռքին մէջ, միայն թէ նորա
կեանքը պահիր։
7 Եւ աստանան դուրս եկաւ Տիրոջ
երեսի առջևից և զարկեց Յոբին
չարաչար պղպջներով նորա ոտքի
8 թաթից մինչև նորա գագաթը։ Եւ
նա մի խեցի առած քերվում էր նո-
րանով, և նստած էր մոխրի մէջ։
9 Եւ նորա կինը ասաց նորան.
Դեռ բռնե՞լ ես քո կատարելու-
թիւնը, հայհոյիր Աստուծոյն և
10 մեռիր։ Եւ նա նորան ասաց. Յի-
մար կանանց մէկի խօսածին պէս
ես խօսում. ուրեմն միայն բարի-
քը ընդունենք Աստուածանից,
և չարիքը չընդունե՞նք։ Ահա ա-
մենի մէջ Յոբը չմեղանչեց իր
շրթունքովը։
11 Եւ Յոբի երեք բարեկամները լսե-
ցին այս բոլոր չարիքը, որ եկաւ
նորա վերայ, և եկան ամեն մէկն
իր տեղից՝ Եղիփազ Թեմանա-
ցին, Բաղդատ Սօքեցին և Սոփար
Նաամացին. և համաձայնեցան
միասին, որ գնան նորան ցաւա-
կից լինին և նորան մխիթարեն։
12 Եւ հեռուից բարձրացրին ի-
րանց աչքերը և նորան չճանա-
չեցին, և իրանց ձայնը բարձրաց-
նելով լացան. և ամեն մէկն իր
պատմուճանը պատառելով և
հող ցանեցին իրանց գլխներին
13 դէպի երկինքը։ Եւ նորա հետ
նստեցին հողի վերայ եօթն օր և
եօթը գիշեր, և նորա հետ մի
խօսք չէին խօսում, վասն զի տե-
սան որ ցաւը շատ սաստիկ էր։

ԳԼ. Գ

Ետոյ Յոբը բացաւ
իր բերանը և անիծեց իր օրը։
2 Եւ Յոբը պատասխանելով ա-
սաց.
3 Կորչէ այն օր որ ես ծնայ, և
այն գիշերը՝ որ ասաց. Թէ՝ Արու
զաւակ գոյացաւ։
4 Այն օրը խաւար լինի, Աստ-
ուած նորան չորանէ վերևից, և
նորա վերայ լոյս չծագէ։
5 Խաւարն ու մահուան ստուերը
նորան սեփհականեն. ամպը նստէ
նորա վերայ. օրուան մէգը նորան
զարհուրեցնէ։
6 Այն գիշերը՝ մութ աղը տա-
նէ նորան. չուրախանայ նա տար-
ւայ օրերի հետ. ամիսների թը-
ւին մէջ չմտնէ։
7 Ահա այն գիշերը ամայի մնայ.
ուրախութիւն չմտնէ նորա մէջը։
8 Նորան անիծեն օրն անիծողնե-
րը, որոնք պատրաստ են Լեւիա-
թանին զարթեցնելու։
9 Նորա արշալոյսի աստղերը խա-
ւարին, լուսի ապաս, և չլինի.
Եւ չտեսնէ արևագալի թարթիչ-
ները.
10 Վասն զի չգոցեց իմ ծնողի ար-
գանդի դռները, և չծածկեց տա-
ռապանքը իմ աչքերից։
11 Ինչո՞ւ համար ծնողիս արգան-
դին չմեռայ. որովայնից ելայ և
չվախճանուեցայ։
12 Ինչո՞ւ համար ծունկերն ինձ
դիմաւորեցին, և ինչո՞ւ ծիները,
որ ես ծծեմ։
13 Վասն զի հիմա պառկած էի
և կ'հանգչէի, կ'քնանայի, ուրե-
մէն հանգիստ կ'լինէի,
14 Թագաւորների և երկրի խոր-
հրդականների հետ, որոնք ա-
ւերակներ շինեցին իրանց հա-
մար.
15 Կամ ոսկի ունեցող իշխանների
հետ. որոնք իրանց տները լցրին
արծաթով.
16 Կամ՝ թաղուած վիժածի նման
չէի լինիլ, այն մանուկների նը-
ման, որոնք լոյս չտեսան։
17 Անհետ ամբարիշտները դա-
դարում են չարութիւնից, և այն-

տեղ հանգչում են ուժից ընկածները.
18 կապուտածները հանգստանում են մեռածին, Հարկահանի ձայնը չեն լսում.
19 փոքրը և մեծը այնտեղ են, ծառան էլ ազատ է իր տիրոջից։
20 Ինա ինչո՞ւ համար է թշուառին լույս տալիս, և դառնաֆներին կե՞նք.
21 Որոնք ազահում են մահուան, և նա չէ գալիս. և պտրտում են նորան գանձերից աւելի։
22 Որոնք ուրախանում են հրճուանքի, և գուարճանում են, որ գերեզման են գտել։
23 Այնպիսի մարդու, որի ճանապարհը կապուած է, և Աստուած փակել է նորա շրջապատը։
24 Վասն զի հացիս փոխարէն հառաչանք է գալիս, և ջրերի պէս հոսում հեծեծանքս։
25 Որովհետև այն երկիւղալի բանից որ վախենում էի, ինձ հանդիպեց, և ինչից որ սարսում էի, հասաւ ինձ։
26 Ոչ խաղաղութիւն ունիմ, ոչ հանգստութիւն, և ոչ հանգստութիւն. և վրդովումն է եկել։

ԳԼ. Դ

1 Այն ժամանակ Եղիփազ Թեմանցին պատասխանելով ասաց.
2 Թէ որ փորձենք քեզ մէկ խօսք—ով, կ'դժուարանա՞ս. և ինչն իրան զսպել որ չխօսէ՞ ո՞վ է կարող։
3 Ահա դու շատերին ես խրատել, և տկար ձեռքերը զօրացրել։
4 Սասանողին կանգնեցրել են քո խօսքերը, և ծառ ծունկերը կոպտրել ես։
5 Բայց հիմա որ քեզ է պատահել, դժուարանում ես. քեզ դիպաւ, և դու վրդովում ես։
6 Մի՞թէ քո երկիւղածութիւնը չէ քո յոյսը, և քո ճանապարհների կատարելութիւնը քո ակնկալութի՞նը։
7 Յիշիր, թէ ո՞ր անմեղն է կորել. և ո՞րտեղ են արդարները բնաջինջ եղել։
Ինչպէս որ տեսայ, անօրէնութիւն հերկողները և անիրաւութիւն սերմնողները նոյնն են հնձում։
Աստուծոյ շունչից կորչում 9
են, և նորա բարկութեան ոգուց փչանում։
Առիւծին մռնչիւնը և գոռա- 10
ցող —ի—ի ձայնը կտր—է—, և կորիւնների ատամները կոտրուն։
Առիւծը կորչում է առանց որ- 11
սի, և մատակ առիւծի լակոտները ցրուում են։
Եւ գազանոցի մէկ խօսք ա- 12
ռեցաւ ինձ, և իմ ականջը նրանից մի շշուկ առաւ։
Գիշերուայ երևակայութեանց 13
մտածութիւնների ժամանակին, մարդկանց վերայ խոր քուն ընկնելիս։
Երկիւղ պատահեց ինձ և դո- 14
ղաց, և շարժեց իմ բոլոր ոսկորը.
Ասաջուս մի ոգի էլ անցաւ, 15
մարմնոյս մազերը քամահեցան։
Նա կանգնեց, և ես չճանաչե- 16
ցի նորա կերպարանքը, մի երևոյթ կար աչքիս առջև, ասաւ փնւն էղ— և մի ձայն լսեցի, Ե
Մի՞թէ մարդը Աստուածմանից 17
արդար է, կամ մի այր՝ իր Արարչից մաքո՞ւր։
Ահա, նա իր ծառաներին չէ 18
հաւատում, և իր հրեշտակից վերայ պակասութիւն է գտնում.
Ո՛ր մեռոցին կաւեղէն տներում 19
բնակողները, որոնց հիմունքը փոշու մէջ է, և որոնց ջարդում են ցեցի նման։
Առաւօտից մինչև երեկոյ փշրում 20
ւում են, առանց մէկի ուշադրութեան կորչում են յաւիտեան։
Ահա նորանց յորը կ'կտրուի, 21
և նորանք կ'մեռնին, այն էլ ոչ իմաստութեամբ։

ԳԼ. Ե

Ասէ կանչիր, արդեօք քեզ պա- 1
տասխանող կա՞յ. և սուրբերից դէպի որի՞ն պիտի դառնաս։
Որով չիմարին սպանում է 2
բարկութիւնը. և նախանձը մեռցնում է անմիտին.

3 Ես տեսել եմ յիմնարին ար-
մատացած, բայց շուտով անի-
ծել եմ նորա բնակութիւնը։
4 Շեռու էին նորա որդիքը փըր-
կութիւնից, և ջարդուեցան դը-
բան մէջ և փրկող չկար.
5 Որի հունձքը սովածն է ու-
տում, և փուշերի միջից էլ յա-
փրշտակում նորան, և ծարա-
ւները կլանում են նորանց ստաց-
ուածքը։
6 Վասն զի հողից չարիք չի դուրս
գալ, և գետնից թշուառութիւն
չի բղխել։
7 Ապա մարդս թշուառութեան
համար է ծնուած, ինչպես որ կը-
րակի կայծերն են բարձրանում
թռչելով։
8 Սակայն ես Աստուծոյ մօտ կը
դառնայի, և Աստուծոյն կ'յանձ-
նէի իմ գործը,
9 Որ գործում է մեծամեծ բաներ
և անքննելի սքանչելիքներ, որոնց
թիւ չկայ։
10 Նա անձրև է տալիս երկրի երե-
սին, և դաշտերի վերայ ջուրեր
ուղարկում,
11 Ցածերին բարձրութեան մէջ
դնելու համար, որպէս զի պա-
ւորները բարձրանան ապաւէն։
12 Նա խափանում է խորամանդ-
ների հնարները, և նորանց ձեռ-
քերը մի յաջողակ բան չեն ա-
նում։
13 Նա բռնում է իմաստուններին
իրանց խորագիտութեանց մէջ և
նենգաւորների խորհուրդն շտա-
պելով խափանվում է։
14 Ցերեկով մութ են հանդի-
պում, և ինչպէս թէ գիշերով
խարխափում են կէս օրին։
15 Նա ապաւում է սուրից՝ նո-
րանց բերանից և հզօրի ձեռքից
աղքատին։
16 Եւ այսպէս խեղճին յոյս է լի-
նում. և անօրէնութիւնը խփում
է իր բերանը։
17 Ահա երանելի է այն մարդը,
որին Աստուած խրատում է, և
Ամենակարողի խրատը մի մերժեր։
18 Վասն զի նա խոցում է, և
փաթաթում էլ է. նա զարկում
է, և նորա ձեռքը բժշկում է։
19 Վէց նեղութիւններից քեզ
կ'ազատէ, և եօթներորդում
քեզ չարիք չի դիպչիլ։
20 Սովի ժամանակին քեզ կազա-
տէ մահից, և պատերազմի մէջ
սուրի ձեռքից։
21 Լեզուի խարազանից կ'ծած-
կուիս, և չես վախենալ այն կոր-
ծանումից որ գալու է։
22 Կործանման ու սովի վերայ կը
ծիծաղես, և երկրի գազաններից
չես վախենալ։
23 Վասն զի դաշտի քարերի հետ
կ'լինի քո դաշինքը, և դաշտի
գազանները կ'խաղաղանան քեզ
համար։
24 Եւ կ'գիտենաս որ խաղաղու-
թիւնը քո վրանն է, և կ'այցելես
քո բնակարանը, և պակասու-
թիւն չես գտնիլ։
25 Եւ կ'գիտենաս որ քո զաւակ-
ները շատ են, և քո սերունդը՝
երկրի խոտերին պէս։
26 Ալևորած կ'գնաս գերեզմանը,
ինչպէս որ խուրձը դիզվում է իր
ժամանակին։
27 Ահա այս քննել ենք, այսպէս
է. մտիկ արա սորան, և ինքդ
հասկացիր քեզ համար։

ԳԼ. Զ

1 Եւ Յոբը պատասխանելով ասաց.
2 Ո՛հ եթէ կշռով կշռուէր իմ
տրտմութիւնը, և իմ ցաւերը
միանգամայն կշռքի մէջ դրուէր.
3 Վասն զի հիմա ծովերի աւա-
զից ծանր է. նորա համար իմ
խօսքերը բարբանջանք են.
4 Վասն զի Ամենակարողի նետե-
րը ինձանում են, նորանց բոր-
բոքը ծծում է իմ հոգուն, Աս-
տուծոյ արհաւիրքները շարուել
են ինձ դէմ։
5 Մի՞թէ ցիռը կ'զռայ խոտի կըշ-
տին. կամ եզը կ'բառաչէ՞ իր կե-
րակրի մօտին։
6 Մի՞թէ անհամ բանը կ'ուտուի
առանց աղի, կամ հա՞մ կայ
ձուի սպիտակուցի մէջ։
7 Ինն որ սիրտս չէր ուզում
դիպչել, նա է եղել իմ զզուելի
ուտելիքը։

8 Երանի թէ ուզածս կատարուէր. և իմ ակնկալածը տա՛ր Աստուած.
9 Եւ հաւանէր Աստուած ինձ ջարդելու, և ձեռքն արձակէր ու ինձ կտրէր։
10 Աչն ժամանակ դեռ մխիթարութիւն կ'ունենայի, և կ'ոստոստէի անխնայ ցաւի մէջ, որ չեմ ուրացել Սուրբի խօսքերը։
11 Ի՞նչ է իմ ոյժը որ դիմանամ. և ի՞նչ է իմ վերջը, որ երկայնամիտ լինիմ։
12 Կամ քարերի՞ զօրութիւնն է իմ զօրութիւնը. կամ իմ մարմինը պղի՞նձ է։
13 Կամ չէ՞ որ մեծիս օգնութիւն չկայ. և յաջողութիւնը հեռացած է ինձանից։
14 Հալումաշ եղողին ողորմութիւն է ցՏէր+ իր բարեկամից, թէև Ամենակարողի վախն էլ թողած լինէր նա։
15 Իմ եղբայրները խաբուած են հեղեղատի պէս, ձորի պէս, որով հեղեղները են անցել։
16 Որոնք պղտորած են սառից, նորանցում ձիւն է ծածկուած.
17 Տաքանալիս՝ դադարում են, շոգ ժամանակին իրանց տեղերից ցամաքում են։
18 Նորանց ճանապարհների դնացքը պտոյտ է տալիս, հասնում են անապատին և կորչում են։
19 Թեմայի կարաւանները նայեցին, Սաբայի ճանապարհորդները նորանց յուսացին.
20 Ամաչեցին, որ յուսացել էին, մինչև այնտեղ գնացին, և ամօթահար եղան։
21 Այսպէս հիմա դուք ոչինչ էք. տեսաք սոսկալի բան և սարսափեցիք։
22 Արդեօք ասե՛լ եմ, ընե ինձ համար բերէք, և ձեր առատաձեռնութիւնը ընծայ տուէք ինձ համար.
23 Եւ ինձ ազատեցէք իմ թշնամու ձեռքից, և բռնաւորների ձեռքից ինձ փրկեցէք։
24 Սովորեցրէք ինձ և ես կ'լռեմ. և ինչ որ սխալուել եմ, հասկացրէք ինձ։
25 Ո՛նչ թափանցիկ են ուղիղ խօսքերը. բայց ի՞նչ է յանդիմանութիւնը ձեզանից եկած յանդիմանութիւնը։
26 Արդեօք մտածո՞ւմ էք խօսքեր յանդիմանել. յուսահատի խօսքերը քամուն են։
27 Նոյն իսկ որբի վերայ վիճո՛ւ կը գցէիք. և ձեր բարեկամին կ'վաճառէիք։
28 Բայց հիմա համեցէք ինձ նայել, և ձեր երեսին մի՛թէ սուտ կ'ասեմ.
29 Կրկնեցէք խնդրեմ, որ անիրաւութիւն չլինի. դարձեալ կրկնեցէք, ես+ ոչ իմ արդարութիւնը նորանում է։
30 Մի՛թէ իմ լեզուի վերայ անիրաւութիւն կայ. մի՛թէ իմ քիմքը չէ զանազանում չար բաները։

ԳԼ Խ

1 Չէ՞ որ մարդս պինդ պատերազմ ունի երկրի վերայ. և նորա օրերը վարձկանի օրերի պէս են։
2 Ինչպէս որ ծառան է շուքի ծարաւում, և ինչպէս վարձկանն է իր վարձին սպասում.
3 Այսպէս էլ իմ բաժինը եղան ունայնութեան ամիսներ. և թշուառութեան գիշերներ որոշուեցան ինձ համար։
4 Պառկելիս ասում եմ. թէ ե՞րբ եմ վեր կենալու, և իրիկունը երկարանում է, և ես կշտացած եմ լինում մինչև առաւօտ պատան պարան անելուց։
5 Մարմինս հագել է որդեր և հողի կոշտեր, մարմս ճեղքւում է և հալւում։
6 Օրերս վազում են մատղից շուտ, և վերջանում են առանց յուսոյ։
7 Յիշիր որ կեանքս քամի է, աչքս միւսանգամ բարիք չէ տեսնելու։
8 Ինձ տեսանողի աչքը այլևս ինձ չէ տեսնելու, աչքդ ինձ մօիկ ասլ, և ես այլևս չկամ։
9 Ամպը անցնում է գնում, այնպէս էլ գժոխք իջնողը վեր չի գալ.

10 Մխւսանգամ ետ չի դառնալ
իր տունը, և նորան չի ճանաչիլ
նորա տեղը։
11 Ես էլ չեմ զսպելու իմ բեր-
նը, խօսելու եմ հոգուս նեղու-
թեան ժամանակին, գանգատե-
լու եմ արտիս դառնութեան ժա-
մանակին։
11 Ծո՞վ եմ ես միթէ, կամ վի-
շա՞պ, որ դու վերաս պահապան
ես դրել։
13 Երբոր ասում եմ, թէ անկո-
ղինս ինձ մխիթարելու է, մահի-
ճըս կ'առնէ իմ գանգատը.
14 Այն ժամանակ վախեցնում ես
ինձ երազներով, և ցնորքներով
զարհուրեցնում ես ինձ.
15 Որ իմ հոգին ընտրում է խեղ-
դուիլը, և մահը՝ քան թէ այս
ոսկորներս։
16 Ես ձանձրացել եմ, յաւիտ-
եան չեմ ապրելու, հեռացիր
ինձանից, վասն զի օրերս ունայ-
նութիւն են։
17 Ի՞նչ է մարդը, որ դու նորան
մեծարես. և որ ուշադրութիւնդ
նորան դարձնես։
18 Եւ նորան այցելես առաւ-
օտ, ամեն վայրկեան նորան փոր-
ձես։
19 Մինչև ե՞րբ չես ետ կենալու ին-
ձանից, չես թող տալու որ թու-
քըս կուլ տամ։
20 Մեղանչել եմ. ի՞նչ եմ արել
քեզ, ով մարդիկ Դիտող. ինչո՞ւ
ես ինձ քեզ համար նշան դրել,
որ ես ինձ վերայ բեռ եմ դա-
ռել։
21 Եւ ինչո՞ւ չես ներում իմ մեղ-
քը, և իմ անօրէնութիւնը չես
թողում. որովհետև հիմա պիտի
հողումը պառկեմ, վաղը կորնչես
ինձ, և չկամ։

ԳԼ. Ը

1 Այն ժամանակ Բաղդատ Սոքե-
ցին պատասխանելով ասաց.
2 Մինչև ե՞րբ պիտի այդ խօսես.
մինչդեռ մեծ քամի են քո բերնի
խօսքերը։
3 Մի՞թէ Աստուած կ'դարձնէ
դատաստանը, կամ Ամենակա-
լողը արդարութի՞ւնը կ'դարձնէ։
4 Եթէ որդիքդ նորա դէմ մե-
ղանչել են, նա էլ նորանց մատ-
նել է իրանց յանցանքի ձեռքը։
5 Եթէ դու կանուխ դէպի Աս-
ուած դառնաս, և Ամենակարո-
ղին աղաչես,
6 Եթէ դու մաքուր և ուղիղ լի-
նիս, այն ժամանակ անպատճառ
կ'զարթնէ քեզ համար, և կա-
պահովացնէ քո արդարութեան
բնակարանը.
7 Թէպէտ և քո սկիզբը պզտիկ
լինի, քո վերջը շատ կ'մեծանայ.
8 Բայց ա՛զէ հարցրու առաջի
սերունդից, և ուշ դարձրու նո-
րանց հայրերի քննութեանը,
9 Վասն զի մենք երէկուանն ենք
և չենք հասկանում, որովհետև
ստուեր են մեր օրերը երկրի վե-
րայ,
10 Ա՛հա նորանք քեզ կ'սովրեցնեն
և քեզ կ'ասեն, և իրանց սրտից
խօսքեր կ'արտասանեն։
11 Մի՞թէ պուռուն կ'բուսանէ ա-
ռանց տղմի. կնիւնը կ'աճէ՞ ա-
ռանց ջրի.
12 Նա դեռ իր դալարութեան
մէջ չկտրուած, ամեն խոտից ա-
ռաջ կ'չորանայ.
13 Այսպէս են բոլոր Աստուծոյն
մոռացողների ճանապարհները.
և կեղծաւորի յոյսը պիտի կորչէ.
14 Վասն զի նորա վստահութիւնը
պիտի կտրուի, և նորա յոյսը
սարդի *տանայն է։
15 Նա կ'կռնէ իր տանը վերայ,
և նա չի դիմանալ, նա կ'բռնէ
նորանից, բայց նա չի կենալ։
16 Նա դալար է արեգակի առ-
ջև, և նորա ճիւղերը նորա պար-
տէզից վեր.
17 Նորա արմատները քարակոյ-
տին են փաթաթվում, քարերի
դէզի մէջն է մտնում.
18 Բայց երբոր նորան խլում են
իր տեղից, պետք ուրանում է
նորան, թէ քեզ չեմ տեսել։
19 Ա՛հա սա է նորա ուրախ ճա-
նապարհը, և հողից ուրիշներն
են բուսանում։

---

*տուն

20 Տես Աստուած չէ մերժում արդարին, և չէ բռնում չարերի ձեռքից.
21 Մինչև որ բերանդ լցնէ ծիծաղով, և շրթունքներդ ցնծութեան ձայնով։
22 Քեզ ատողները ամօթով պիտի ծածկուին, և ամբարիշտների վրանը կ'չքանայ։

ԳԼ. Թ

1 Եւ Յոբը պատասխանելով ասաց.
2 Իրաւ գիտեմ որ այդպէս է, և մարդ ինչպէ՞ս կ'արդարանայ Աստուծոյ մօտ։
3 Եթէ նա ուզէ նորա հետ վիճել, հազարիցը մէկին պատասխան չէ կարող տալ.
4 Սրտով իմաստուն և ուժով զօրեղ է նա. ո՞վ է դէմ կացել նորան, և ողջ մնացել։
5 Նա որ տեղափոխում է լեռները, և նորանք չգիտեն, որ նորանց տապալում է իր բարկութեան ժամանակին.
6 Որ շարժում է երկրին իր տեղիցը, և նորա սիւները դողդողում են.
7 Որ արևին հրամայում է, և նա չէ ծագում, և աստղերը կընքում է.
8 Որ երկինքը տարածում է մինակ, և գնում է ծովի կուտակների վերայ.
9 Որ արաւ Արջը, Հայկը և Բազմաստեղը, և Հարաւի շտեմարանները.
10 Որ մեծամեծ բաներ է անում՝ անքննելի, և սքանչելիքներ՝ անթիւ։
11 Տես՝ նա ինձանով կ'անցնէ, և ես չեմ տեսնիլ. և անց կ'կենայ և ես չեմ իմանալ։
12 Տես՝ եթէ նա յափշտակէ, ո՞վ նորան ետ կ'պահէ. ո՞վ կ'ասէ նորան. Թէ ի՞նչ ես անում։
13 Աստուած իր բարկութիւնը ետ չի դարձնիլ, նորա տակին կ'խոնարհուին Ռաքաբի օգնականները։
14 Ապա ո՞ւր մնաց որ ես նորան պատասխանեմ. և խօսքերս ընտրեմ նորա հետ վիճելու։
15 Որովհետև արդար էլ լինիմ, պատասխան չեմ տալ. իմ Դատաւորին պիտի աղաչեմ.
16 Եթէ ես կանչէի, և նա պատասխաներ, չեմ հաւատալ, թէ նա իմ ձայնս կ'լսէ։
17 Որ ինձ փոթորիկով կ'փշրէ, և զուր տեղը կ'շատացնէ իմ վէրքերը.
18 Թող չի տալ ինձ որ շունչ առնեմ, վասն զի ինձ դառնութիւններով կ'կշտացնէ։
19 Եթէ բանը զօրաւորի ուժումն է, ահա նա. իսկ եթէ իրաւունքում, ով կ'կանչէ ինձ։
20 Եթէ ես արդար լինիմ, բերան նրա ինձ կ'դատապարտէր, եթէ ես կատարեալ լինիմ, նա ինձ յանցաւոր կ'անէ։
21 Եթէ ես կատարեալ լինիմ, իմ անձը չեմ ճանաչել, կեանքս կ'արհամարհեմ։
22 Մէկ է. նորա համար ասում եմ. Թէ կատարեալին և ամբարիշտին կորցնում է նա։
23 Եթէ հարուածը յանկարծ մեռցընէ, նա կ'ծիծաղէ անմեղի փորձանքի վերայ։
24 Երկիրը չարագործի ձեռքն է յանձնուել, նորա դատաւորների երեսը ծածկում է նա, եթէ ոչ, ապա ո՞վ է այն անողը։
25 Եւ օրերս փախան աւրհանդակից արագ. վազեցին՝ բարիք չտեսան։
26 Անցան սէգից շինուած նաւերի պէս, որպէս վերայ յարձակող արծիւի պէս։
27 Եթէ ասելու լինիմ՝ Մոռանում եմ դանդաղս, երեսիս փչրուելը թողում եմ և զուարթանում.
28 Ամէն ժամանակ սարսափում եմ բոլոր ցաւերիցս. գիտեմ որ ինձ անմեղ չես համարիլ։
29 Ես պիտի ամբարիշտ լինիմ, ուրեմն ինչո՞ւ համար զուր տեղը տանջուիմ։
30 Եթէ ձիւնի ջրի մէջ լուացուիմ, և մխիթարով մաքրեմ ձեռքերս.
31 Ամէն ժամանակ էլ ինձ փոսի մէջ կ'կոխէիր, և իմ հանդերձը կ'զզուէին ինձանից։

32 Վասն զի նա մարդ չէ ինձ նըման, որ պատասխանէի իրան, միասին դատաստան գնայինք։
33 Մեր միջնորդը միջնորդ դատաւոր չի լինիլ, որ ձեռքը մեր երկուսի վերայ դնէր։
34 Թող հեռացնէ վերայից իր գաւազանը, և նորա սարսափն ինձ չզարհուրեցնէ.
35 Ապա ժամանակ կ'խօսէի, և չեմ վախենալ. որովհետև այսպէս՝ իմն չեմ։

ԳԼ. Ժ

1 Զզուել է հոգիս կեանքիցս, թաց թողեմ ինձ համար գանգատս. խօսեմ հոգուս դառնութեան ժամանակին.
2 Ասեմ Աստուծոյն. Ինձ մի դատապարտեր, յայտնիր ինձ թէ ինչի համար ես վիճաւմ ինձ հետ։
3 Մի՞թէ քեզ հաճելի է, որ հարստահարես, որ արհամարհես քո ձեռքի աշխատանքը, և չարերի խորհրդին լոյս տաս։
4 Մի՞թէ քո աչքերը մարմնաւոր են. կամ թէ մարդու տեսածի՞ն պէս կ'տեսանես.
5 Մի՞թէ մարդու օրերի պէս են քո օրերը. կամ թէ քո տարիքը մարդո՞ւ օրերի պէս.
6 Որ իմ յանցանքն ես որոնում, և իմ մեղքը քննում։
7 Քեզ յայտնի է որ յանցաւոր չեմ, և քո ձեռքից փրկող չկայ։
8 Քո ձեռքերն են ինձ կազմել և առեղծել բոլորովին շուրջանակի, և դու ինձ խորտակո՞ւմ ես։
9 Մէկ յիշիր որ ինձ կաւի պէս շինեցիր. և ինձ հո՞ղ ես դարձնելու։
10 Դու չէ՞ որ ինձ կաթի պէս, և պանրի պէս թանձրացրիր.
11 Մորթով և մսով հագցրիր ինձ, և ոսկրներով ու ջիղերով հինեցիր ինձ։
12 Կեանք և ողորմութիւն շնորհեցիր ինձ, և քո խնամքը պահից իմ հոգուն։
13 Եւ սրտից պահեցիր քո սրտումդ. գիտեմ որ սրտիդ քեզ մօտ էին.
14 Որ եթէ մեղանչեմ, դու ինձ պահպանես, և իմ մեղքիցը ինձ չարդարացնես։
15 Եթէ ամբարշտութիւն անեմ, վա՛յ ինձ. արդար էլ լինիմ գլուխս չեմ կարող բարձրացնել. յագուած եմ անարգանօք. և տես թշուառութիւնս։
16 Բարձրանայ էլ, առիւծի պէս ինձ կ'որսաս, և զարձեալ կ'յաղթահարես ինձ.
17 Վկաներդ կ'նորոգես իմ առջև, և բարկութիւնդ ինձ դէմ կ'շատացնես, փոփոխութիւններ և պատերազմ է հետս։
18 Ուրեմն ինչո՞ւ համար ինձ հանեցիր արգանդից. էրա՛ր ըն մեռած լինէի և աչք ինձ չտեսներ,
19 Որ չեղածի պէս լինէի, ծոր արգանդիցը գերեզմանը տարուէի։
20 Փոքր չի՞ն իմ օրերը. դադարիր և ետ կաց ինձանից, որ մի քիչ հանգչեմ,
21 Այնտեղ գնալուցս առաջ, որ ետ չեմ դառնալու, խաւարի և մահուան առուերի երկիրը.
22 Մառախուղի երկիրը, որ մահուան առուերի խաւարին է նմանում, և կարգ չկայ, և լոյսը մթին խաւարին նման է։

ԳԼ. ԺԱ

1 Ապա ժամանակ Սոփար Նաամացին պատասխանելով ասաց.
2 Մի՞թէ շատ խօսքերին պատասխան չի լինիլ, կամ լեզուանի մարդը պիտի արդա՞ր դուրս գայ.
3 Քո բարբաջանքնե՞րը պիտի մարդկանց լռեցնեն, և դու ծաղրես, և յանդիմանող չլինի՞։
4 Որ ասում ես. Իմ խրատը մաքուր է. և խաւսկ եմ քո աչքի առջև։
5 Սակայն երանի՛ թէ Աստուած խօսէր, և իր շրթունքը բանար քեզ հետ.
6 Եւ քեզ յայտներ իմաստութեան գաղտնիքը, որ կրկնապատիկ էր վայելուչը. ուրեմն իմացիր որ Աստուած մոռանում է քո անօրէնութեան մէկ մասը։
7 Կարո՞ղ ես Աստուծոյ խորհուր-

դը գանել. կամ Ամենակարողի
էութեանը հասնիլ։
8 Նա երկնից բարձրութիւնն ու-
նի, ի՞նչ կ'անես դու. դժոխքից
խոր է նա, ի՞նչ կ'հասկանաս։
9 Նորա չափը երկրից երկայն է,
և լայն է ծովիցը։
10 Եթէ նա անց կենայ և բռնէ,
և դատէ ժողովէ. ո՞վ նորան ետ
կ'պահէ.
11 Վասն զի նա ճանաչում է խա-
բեայ մարդկանց, և տեսնում է
անօրէնութիւն, և ուշը չէ դարձ-
նում։
12 Բայց փուճ մարդը մտածում է
դէդ դէդ, և մի վայրի էշի ձագն
էլ իրեև մարդ է ծնվում։
13 Եթէ դու ուղղես քո սիրտը,
և ձեռքերդ դէպի նորան տարա-
ծես,
14 Թէ որ ձեռքումդ անօրէնու-
թիւն կայ, նորան հեռացրու,
և քո վրաններումը անզգամու-
թիւն թող չբնակէ։
15 Ահա այն ժամանակ կ'բարձ-
րացնես երեսդ անարատ և հաս-
տատ կ'լինիս և չես վախենալ։
16 Որովհետև թշուառութիւնը կը
մոռանաս, անցած ջրերի պէս
միտքդ կ'գայ.
17 Եւ կեանքը կէսօրից ալ-
կանգնէ, խաւարուի էլ առա-
ւօտեան պէս պիտի լինի։
18 Եւ դու ապահով կ'լինիս, վա-
րըն դի յոյս կայ. և խորը կ'մըտ-
նես ապահով կ'քնես.
19 Եւ կ'պառկես, ու վախեցնող
չի լինիլ. և շատերը քեզ կ'ա-
ղաչեն։
20 Բայց ամբարիշտների աչքերը
պիտի նուաղին, և ապաստանը
պիտի կորչէ նորանցից, և նո-
րանց յոյսը հոգեվարքի է։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յոբը պատասխանելով ասաց.
2 Արդարև դուք էք ձեզ ժողո-
վուրդ, և ձեզ հետ մեռնելու է
իմաստութիւնը։
3 Ես էլ ձեզ պէս խելք ունիմ,
ես ձեզանից պակաս չեմ. և այս-
պիսի բաներ ո՞վ չգիտէ։
4 Իր բարեկամին ծաղր եղող եմ
դառել ես, որ Աստուծոյն կան-
չեցի, և նա պատասխանեց. ծաղ-
բվում է արդարը՝ կատարեալը։
5 Թշուառին արհամարհանք է
վայելում ապահովի կարծեաց հա-
մեմատ, որ պատրաստ է ոտքը
սահողի համար։
6 Ապահով են աւազակների վր-
րաններըը, և հանդարտ Աստու-
ծոյն բարկացնողներինը, որ ի-
ջեւ ընէ Աստուծոյն տանում է իր
ձեռքին։
7 Բայց աղէ հարցրու անասուն-
ներին, որ քեզ սովորեցնեն, և
երկնքի թռչուններին, որ քեզ
իմացնեն։
8 Կամ խոսիր երկրի հետ, և նա
քեզ կ'սովորեցնէ, և քեզ կ'պատ-
մեն ծովի ձկները։
9 Ո՞վ չի հասկանում այս բոլոր
բաներովը, որ Տիրոջ ձեռքն է
արել այս բաները,
10 Որ նորա ձեռքին է բոլոր կեն-
դանիի կեանքը, և բոլոր մարդ-
կային մարմնոյ հոգին։
11 Մի՞թէ ականջը չէ որոշում
խոսքերը, և ուտող քի՞մքը համն
առնում։
12 Ալևորներումն է իմաստութի-
նը, և երկայն օրերում՝ գիտու-
թիւնը։
13 Նորանում է իմաստութիւնը
և զօրութիւնը. խորհուրդը և
գիտութիւնը նորանն է։
14 Տես՝ նա կ'քանդէ, ու չի շին-
ուիլ, մէկի վերայ կ'կղպէ, ու չի
բացուիլ։
15 Տես՝ նա կապում է ջուրերը, և
նորանք չորանում են, և բաց է
թողում նորանց, ու երկիրը տակն
ու վերայ են անում։
16 Զօրութիւնն ու հանճարը նորա
մօտ է, նորանն են մոլորեցնողն
ու մոլորեալը։
17 Նա մեռն է տանում խորհրդա-
կաններին կողոպտուած, և դա-
տաւորներին յիմարացած։
18 Նա է թագաւորների կապերը
լուծում, և նա է նորանց մէջքին
գօտի կապում։
19 Նա մեռն է տանում քահանա-
ներին կողոպտուած, և զօրաւոր-
ներին կործանում է։

20 Անձնապատանիներից առնում է լեզուանիութիւնը, և ծերերի խելքը խլում։
21 Աղնուականների վերայ անարգանք է թափում, և զօրաւորների կապը թուլացնում է։
22 Պարզում է խորերը խաւարից, և մահուան ստուերը դուրս է բերում լուսոյ մէջ։
23 Ազգերին յաջողութիւն է տալիս, և նորանց կորցնում է, փըռում է ազգերը և նորանց հաւաքում է։
24 Առնում է երկրի ժողովրդոց գլխաւորների խելքը, և մոլորեցնում է նորանց անճանապարհ անապատում։
25 Նորանք խարխափում են խաւարում, և լոյս չունին. և նա նորանց մոլորեցնում է արբածների պէս։

ԳԼ. ԺԳ

1 Տես՝ այդ ամենը տեսել է իմ աչքը, ականջս լսել է և հասկացել է։
2 Ձեր գիտեցածի չափ ես էլ գիտեմ, ես ձեզանից պակաս չեմ։
3 Բայց ես ձեզ հետ պէտք է Ամենակարողի հետ խօսել, և կ'փափաքէի Աստուծոյ մօտ դատ վարել։
4 Սակայն դուք ստուեր հնարողներ էք, փուճ բժիշկներ էք դուք ամենքդ։
5 Երանի թէ բոլորովին լռէիք, և դա ձեզ համար իմաստութիւն կ'լինէր։
6 Լսեցէք՝ խնդրեմ՝ իմ խրատը, և իմ շրթունքների փաստերին ականջ դրէք։
7 Աստուծո՞յ համար էք անիրաւութիւն խօսում, և նորա՞ համար խօսում նենգութիւն։
8 Մի՞թէ նորան էք երեսպաշտութիւն անում, կամ Աստուծո՞յ համար էք փաստաբանում։
9 Լա՞ւ է որ նա ձեզ քննէ, կամ նորան խաբելո՞ւ էք ինչպէս մարդս խաբում են։
10 Անպատճառ նա ձեզ կ'յանդիմանէ, եթէ ծածուկ էլ երեսպաշտութիւն անէք։

Մի՞թէ նորա վեհութիւնը ձեզ 11
չի զարհուրեցնելու և նորա երկիւղը ձեզ վերայ չընկնելո՞ւ։
Ձեր խրատները մոխրի առակներ են. ձեր պատնէշներ՝ ձեր 12
պատնէշները։
Լռեցէք ինձ մօտ, որ խօսեմ 13
ես, և ինձ վերայ թող գայ ինչ որ լինի։
Ինչո՞ւ համար մարմինս առում 14
ներովս կրեմ, և կեանքս ափիս մէջը դնեմ.
Տես՝ թէ որ ինձ սպանէ, ես 15
նորան եմ յուսալու, միայն իմ ճանապարհները նորա առջևը պաշտպանեմ։
Նաև նա է իմ փրկութիւնը, 16
որ կեղծաւորը նորա առջևը չի գալ։
Լաւ լսեցէք իմ խօսքը, և իմ 17
բացատրութիւնը ձեր ականջները հասնէ։
Ահա ես դատս կարգի եմ դրել, 18
գիտեմ, որ արդար եմ լինելու։
Ո՞վ է որ ինձ հետ վիճէ. որ 19
հիմա լռէի և մեռնէի։
Միայն այս երկու բանը մի ա- 20
նիր ինձ, այն ժամանակ չեմ թաքչիլ քո երեսից.
Ձեռքդ ինձանից հեռացրու, 21
և քո երկիւղը ինձ չզարհուրեցնէ։
Յետոյ կանչիր, և ես պատաս- 22
խանեմ, կամ ես խօսեմ, և դու պատասխան տուր։
Ո՞րչափ են իմ անօրէնութիւն- 23
ներն ու մեղքերը, իմ յանցանքն ու մեղքը իմացրու ինձ։
Ինչո՞ւ համար ես երեսդ ծած- 24
կում, և ինձ թշնամի համարում քեզ։
Մի՞թէ տերևին 25
ես վախեցնում, կամ թէ չոր մղեղին ես հալածո՞ւմ։
Վասն զի դու ինձ դառնու- 26
թեան վճիռ ես տալիս, և ինձ ժառանգութիւն ես տալիս իմ երիտասարդութեան անօրէնութիւնները։
Ես ոտքերս դնում ես կոճ- 27
դում, և դիտում ես իմ բոլոր ճանապարհները, ոտքիս շուրջը ներին գծեր ես փորում։

28 Որն որ փառածի պէս վայր է ընկնում, ինչպէս ցեց կերած հագուստ է։

ԳԼ. ԺԹ

1 Կնոջից ծնուած մարդը կարճ կեանք ունի և լիքն է ցաւով։
2 Ծաղկի պէս ծլում է և թօթափւում է և փախչում է քառուերի պէս չէ կանգնում.
3 Առանուանդ ալ այսպիսու վրայ էլ բանում ես աչքերդ և ինձ առնում ես դատաստանի քեզ հետ։
4 Կերանի թէ մէկ մաքուրը յառաջ գար անմաքուրից. բայց ոչ մէկին էլ չկայ։
5 Որովհետև նորա օրերը որոշուած են, նորա ամիսների թիւը քեզ մօտ է, առհմուն ես դրել նորա համար և չի անցնիլ.
6 Ուրեմն երեսդ դարձրու նորանից որ հանգչէ, մինչև որ վարձկանի պէս լրացնէ իր օրը։
7 Վասն զի ծառն էլ տակաւին յոյս ունի, եթէ կտրուի, դարձեալ կ'ծլի, և նորա ճիւղերը չեն պակասիլ։
8 Թէև նորա արմատը հողումը ծերացած լինի, և նորա բունը մեռած լինի փոշու մէջ.
9 Ջա ջրի հոտիցը էլի կ'ծաղկէ և ճիւղեր կ'արձակէ նոր տնկուած ծի պէս։
10 Բայց մարդս մեռնում է ընկնում, և մարդս վախճանւում է, և ո՞ւր է։
11 Ջուրերը ծովակիցը հատում են, և գետը ցամաքում չորանում է.
12 Այնպէս էլ մարդս պառկում է և վեր չէ կենում. մինչև երկինքն էլ չլինի, վեր չեն կենալ, և իրանց քնից չեն արթնանալ։
13 Կերանի թէ ինձ դժոխքումը ծածկէիր, թաքցնէիր մինչև քո բարկութեան անցնիլը, ինձ առհմուն որոշէիր և յետոյ ինձ յիշէիր։
14 Եթէ մարդս մեռաւ, մի՞թէ կ'կենդանանայ. պատերազմիս բոլոր օրերը սպասելու եմ, մինչև որ իմ նորոգութիւն գայ։
15 Դու մէկ կանչէիր, և ես քեզ պատասխան տայի, և դու կ'ձեռք քո ձեռաց գործին։
16 Վասն զի դու հիմա հաշւում ես իմ քայլերը, և հեղ չես պահում իմ մեղքի համար։
17 Կնքուած է ծրարի մէջ իմ մեղքը, և դու ասելացրել ես ձեղ իմ մեղքի վերայ։
18 Եւ մինչև անգամ լեռը քնկնում փշրւում է, և ապառաժը փոխւում է իր տեղից,
19 Ջուրերը մաշեցնում են քարերը, նորա հոսանքները ողողում են երկրի հողը. բայց դու մարդուս յոյսը փչացնում ես։
20 Դու նորան յաղթահարում ես խապտա, և նա գնում է, նորա դէմքը փոխելով, բաց ես թողում նորան։
21 Նորա որդիքը պատիւ ունին նա չգիտէ. կամ անարգ են նա նորանից չէ դիտում։
22 Միայն նորա վերայի մարմինն է ցաւում, և նորա հոգին նորա նում սգումէ։

ԳԼ. Ի

1 Այն ժամանակ Եղիփազ Թեմանացին պատասխանելով ասաց.
2 Մի՞թէ մէկ իմաստուն օգտնման դիտութիւն կ'պատասխանէ, և իր փորը արևելեան քամով կ'լեցնէ.
3 Անպիտան բաներով փաստաբանելով. և անօգուտ խօսքերով։
4 Մանաւանդ որ երկիւղածութիւնը խափանում ես, և արգելում ես աղօթքը առ Աստուած։
5 Որովհետև այդպէս է սովորեցնում անօրէնութիւնդ բերանիդ, և դու ընտրեցիր նենգաւորների լեզուն։
6 Քեզ քո բերանն է դատապարտում, և ոչ թէ ես, և քո շրթունքը վկայում են քեզ դէմ։
7 Մո՞ւ ես ծնուել իրրև առաջին մարդը, և բլուրներից առաջ ես ստեղծուել։
8 Աստուծոյ խորհրդո՞ւն էիր ականջ դնում, թէ իմաստութիւնը քեզ մնո՞ւ ես հաւաքել։

9 Ի՞նչ ես գիտեմ դու, որ մենք չգիտենք, և հասկանամ, որ մենք չունենայինք։
10 Ծեր էլ կայ մեզ մեծ ալևոր էլ, որ քո հայրերից ծերօք են։
11 Մի՞թե քեզ քիչ են երևում Աստուծոյ մխիթարութիւնները, և քեզ հետ խօսած մեղմ խօսքերը։
12 Ո՞ւր է տանում քեզ քո սիրտը, և ի՞նչ են ակնարկում քո աչքերը.
13 Որ հոգիդ Աստուծոյ դէմ ես դարձրել, և բերան ես հանում բերանից։
14 Մարդս ի՞նչ է՝ որ մաքուր լինի, և կնոջից ծնուածը՝ որ արդարանայ։
15 Ահա՝ նա իր սրբերին էլ չէ հաւատում, և երկինքն էլ մաքուր չէ նորա աչքին։
16 Որչափ մանաւանդ գարշելի ու պիղծ է մարդս, որ անօրէնութիւնը ջրի պէս է խմում։
17 Ես քեզ խնդրեմ, ինձ լսիր. և իմ տեսածը քեզ պատմեմ.
18 Ինչ որ իմաստունները յայտնեցին, և չծածկեցին իրանց հայրերից՝
19 Երկիրը մենակ նորանց տրուեցաւ, և նորանց մէջ մէկ օտարական չանցաւ,
20 Չարը տանջուում է իր բոլոր օրերում, և քիչ տարիք են պահուած բռնաւորի համար։
21 Սարսափների ձայն կայ նորա ականջներում, խաղաղութեան ժամանակին աւերիչը գալիս է նորա վերայ։
22 Նա չէ հաւատում թէ խաւարից կ'ազատուի, և նա պահուած է սուրի համար։
23 Նա թափառում է հացի համար, ասելով՝ ո՞ւր է, գիտէ որ խաւար օրը կշտին պատրաստ է։
24 Նորան զարհուրեցնում են նեղութիւնն ու տագնապը, յաղթահարում են նորան պատերազմի պատրաստ թագաւորի պէս։
25 Վասն զի նա իր ձեռքը մեկնեց Աստուծոյ դէմ, և ամենակարողի դէմ հպարտացաւ։
26 Յարձակուեցաւ նորա վերայ բարձակուռեցաւ իր ասպարների թանձր գմբեթներով։
27 Որովհետև ծածկեց իր երեսը ճարպով, և իւղ կապեց երիկամունքների վերայ։
28 Եւ նա բնակեց աւերակ քաղաքներում այնպիսի տներում, որոնց մէջ բնակող չկայ, որ պատրաստուած են քարակոյտներ դառնալու։
29 Նա պիտի չհարստանայ, և նորա ստացուածքը հաստատ պիտի չմնայ, և նորանց ապրանքը պիտի չտարածուի երկրի վերայ։
30 Մութիցը չի հեռանալու նա, նորա ճիւղերը կ'չորացնէ բոցն, և նա պիտի ոչնչանայ իր բերանի շունչով։
31 Թող ունայնութեան չհաւատայ, ինքն իրան է խաբում, վասն զի ունայնութիւն է նորա փոխարէնը։
32 Դեռ օրը չէ, նա վախճանվում է, և նորա ճառերը չեն կանաչիլ։
33 Նա դէն է գցում ինչպէս որթն իր ազոխը, կամ ինչպէս ձիթենին թօթափում է իր ծաղիկները։
34 Վասն զի կեղծաւորների ժողովքը ամայի պիտի լինի, և կրակը պիտի լափէ կաշառառողների վրաններըը։
35 Նորանք թշուառութիւնով յղի են և անօրէնութիւն են ծնելու, և նորանց ներսը խաբէութիւն է պատրաստում։

Գլ. ԺԶ

1 Եւ Յոբը պատասխանեցաւ ասաց.
2 Ես սրանից նման շատ բաներ եմ լսել, ձանձրացուցիչ մխիթարողներ էք դուք ամենքդ։
3 Մի՞թէ վերջ կայ դատարկ խօսքերին, կամ թէ քեզ ի՞նչ է գրգռում որ պատասխանես։
4 Ես էլ ձեզ նման կ'խօսէի, եթէ ձեր հոգին իմ հոգու տեղը լինէր, ձեզ դէմ խօսքեր կ'շարադրէի, և գլուխս կ'շարժէի ձեզ վերայ.
5 Զեզ կ'քաջալերէի իմ բերանովը, և իմ շրթունքների շարժումը կ'ափսիէր։

6 Թէ խօսեմ էլ՝ ցաւս չի փա-
րատուիլ. և լռեմ էլ՝ ի՞նչ կը-
գնայ ինձանից։
7 Բայց հիմա ինձ հոգնեցրել է,
դու ամայի ես արել իմ բոլոր
ընտանիքը։
8 Դու ինձ խորշոմեցրել ես, —
վկայութիւն է դառել. և իմ նի-
հարութիւնն ինձ դէմ վեր է կա-
ցել, երեսիս յանդիմանում է
ինձ։
9 Նորա բարկութիւնը պատա-
ռում է և թշնամանում ինձ
դէմ, նա կրճատում է ինձ վերայ
իր ատամներովը, իբրև իմ թըշ-
նամի աչքերը սրել է ինձ դէմ։
10 Իրանց բերանը բացել են ինձ
վերայ. նախատինքով խփում են
ծնօտներիս, մեկտեղ ժողովուել
են ինձ դէմ։
11 Աստուած ինձ մատնել է ան-
զգամին և ինձ ձգել է չարերի
ձեռքը։
12 Հանգիստ էի ես, բայց նա ինձ
փշուր փշուր արաւ, և բռնեց
վիզս ու ջախջախեց ինձ, և ինձ
նշան շինեց իրան համար։
13 Ինձ շրջապատեցին նորա ա-
ղեղնաւորները, նա ճղռտում է
իմ երիկամունքներն ու չէ խնա-
յում. լեղիս գետին է թափում։
14 Ինձ ինձ պատառում՝ պատառ
պատառ է անում, ինձ վերայ է
յարձակում քաջազունի պէս։
15 Կուրձ փակցրի ես իմ մորթի
վերայ, և ազատեցի հողով իմ
եղջիւրը։
16 Երես կարմրատել է լալուցս,
և արտևանունքիս վերայ մահ-
ուան ստուեր կայ,
17 Թէև ձեռքերումն անօրէնու-
թիւն չկայ, և աղօթքս մաքուր
է։
18 Երկիր, մի ծածկիր իմ արիւ-
նը, և թող տեղ չլինի իմ ա-
ղաղակին։
19 Հէնց հիմա էլ ահա երկնքումն
է իմ վկան, և իմ փաստաբանը
բարձրերումն է։
20 Ինձ ծաղրանոցներըը իմ բարե-
կամներն են. իմ աչքն արտաս-
վում է դէպի Աստուած.
21 Որ վճռէր մարդուս համար Ա-
ստուծոյ դէմ, և մարդոյ որդուն
իր ընկերի դէմ։
22 Որովհետև այս մի քանի տա-
րիները կ'վերջանան, և ես կ'գը-
նամ այն ճանապարհը, որով ետ
չեմ դառնալ։

ԳԼ. ԺԷ

1 Ես ունչս նուազել է, օրերս հանգ-
ջում են, գերեզմաններն են պա-
տրաստ ինձ համար։
2 Եթէ ծաղրածուներն ինձ մօտ
չլինէին, նորանց հակառակու-
թիւններումն էլ հանգիստ կ'լի-
նէր աչքս։
3 Ապահովիր, իմ երաշխաւորը
եղիր քեզ մօտ. ո՞վ կայ որ ձեռ-
քիցս բռնէ։
4 Վասն զի դու ծածկեցիր իմ-
մտաւութիւնը նորանց սրտիցը,
դորա համար չես բարձրացնել
նորանց։
5 Ով որ կաղապատելու մատնէ
իր ընկերներին, նորա որդւոյն
աչքերը պիտի նուազին։
6 Եւ նա ինձ առակ է շինել ժո-
ղովուրդներին, և զզուանք եմ
դառել նորանց առջևը։
7 Նաև պղտորել է աչքս տրտո-
մութիւնից, և բոլոր անդամներս
ստուերի պէս են։
8 Ուղիղները սոսկում են սորա
վերայ, և անմեղը գրգռւում է
կեղծաւորի պատճառովը։
9 Իսկ արդարը պինդ կ'բռնէ իր
ճանապարհը, և մաքուր ձեռք
ունեցողը քանի գնայ կ'զօրանայ։
10 Բայց դուք ամենքդ էլ դարձ-
եալ եկէք, և ձեզանում իմաս-
տուն չեմ գտնում։
11 Օրերս անց են կացել, խափան-
ուել են իմ դիտաւորութիւննե-
րը՝ իմ սրտի խորհուրդները։
12 Գիշերը փոխում են ցերեկի, 12
էջ ՃԲ լոյսը մօտ է՝ խաւարի ա-
ջև։
13 Թէև սպասեմ, դժոխքն է իմ 13
տունը. խաւարումը պիտի ձգեմ
իմ անկողինը։
14 Ապականութեանը կանչեցի՝ 14
Դու իմ հայրն ես. որդերին իմ
մայրն ու քոյրն ես։

15 Եւ հիմա ո՞ւր է իմ յոյսը. և
իմ յոյսը ո՞վ է տեսնելու։
16 Դժոխքի նիգերն մօտ պիտի
իջնէ, երբոր միասին կ'հանգըս-
տանանք հողի վերայ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Բաղդատ Սոքեցին պատաս-
խանելով ասաց.
2 Ընդ պիտի վերջ տուք այդ խօս-
քերին, հասկացէք, և նորանից
յետոյ խօսինք։
3 Ինչո՞ւ համար անասնի պէս հա-
մարուինք, և յիմար լինինք ձեր
աչքին։
4 Ով իր անձն իրան բարկութիւ-
նովը պատառող, մի՞թէ քո պատ-
ճառով պիտի երկիրը ձգուի. և
ապառաժը փոխադրուի՞ իր տե-
ղից։
5 Անշուշտ պիտի հանգչէ ամբա-
րշտի լոյսը, և նորա կրակի բոցը
լոյս պիտի չտայ։
6 Լոյսը պիտի խաւարէ նորա վր-
րանովը, և նորա ճրագը պիտի
հանգչէ նորա վերայ։
7 Նորա զօրութեան քայլերը պի-
տի նեղուին, և նորան պիտի ձը-
գէ իր խորհուրդը։
8 Վասն զի նա իր ոտքերովը
ընկել է ուռկանը, և ցանցի վե-
րայ է գնում։
9 Գարշապարը բռնել է վարմը,
լարը զօրացել է նորա վերայ։
10 Նորա թակարդը թաքցրուած
է հողումը, և նորա որոգայթը՝
ճանապարհի վերայ։
11 Շուրջանակի զարհուրեցնում
են նորան արհաւիրք, և նորան
աստանդական են անում նորա
քայլափոխներումը։
12 Նորա զօրութիւնը պիտի սո-
վածանայ, և կորուստը պատ-
րաստ է նորա կշտին։
13 Պիտի ուտէ նորա մորթի կա-
պերը, նորա կապերը պիտի մահ-
ուան անդրանիկն ուտէ։
14 Պիտի կորուի նորա վրանից իր
վստահութիւնը, և սա նորան
պիտի քշէ զարհուրանաց թագա-
ւորի մօտ։
15 Նորա վրանում պիտի բնակէ,
որովհետև նորանը
չէ, նորա բնակարանի վերայ ծը-
ծումբ պիտի սերմուի։
16 Տակից պիտի չորանան նորա
արմատները, և վերևից պիտի
թոռոմեն նորա ճիւղերը։
17 Նորա յիշատակը պիտի կորչէ
երկրից, և նորա անունը պիտի
չլինի հրապարակների վերայ։
18 Նորան պիտի քշեն լուսից
խաւարի մէջ, և աշխարհից
պիտի հալածեն նորան։
19 Ոչ զաւակ ոչ թոռն պիտի լի-
նի նորան իր ազգումը, և մի մը-
նացորդ չպիտի լինի նորա բնա-
կարաններումը։
20 Նորա օրուան վերայ պիտի
զարմանան ետինները, և առա-
ջինները պիտի դողով բռնուին։
21 Իրաւ որ սա պիտի լինի ամ-
բարշտի բնակարանները, և սա
է Աստուած չճանաչողի տեղը։

ԳԼ. ԺԹ

1 Եւ Յոբը պատասխանելով ա-
սաց.
2 Մինչև ե՞րբ պիտի վշտացնէք
իմ հոգին, և ինձ փշրէք խօսք-
րով։
3 Ահա տասն անգամ ինձ մե-
ղադրեցիք, չէ՞ք ամաչում՝ ինձ
ապշացնում էք։
4 Եւ եթէ ես իրաւ սխալուել
եմ, ինձ մօտ կ'մնայ իմ սխալ-
մունքը։
5 Կամ յիրաւի ուզում էք ամ-
բարտաւանել ինձ վերայ, և յան-
դիմանում էք ինձ իմ մի յան-
ցանքի համար։
6 Իմացէք ուրեմն, որ Աստուած
է ինձ կործանել. և իր ցանցովը
ինձ պատել։
7 Ահա ես աղաղակում եմ՝ վըր-
կա՛նք, և պատասխան չեմ ըս-
տանում, բողոքում եմ, բայց
իրաւունք չկայ։
8 Ճանապարհս կապել է նա, և
չեմ կարողանում անցնել, և իմ
շաւիղների վերայ խաւար է դրել։
9 Փառքս հանել է ինձանից, և
թագը վեր առել գլխիցս։
10 Ինձ քանդել է շուրջանակի,

որ ես գնամ, և ծառի նման պո-
կել է իմ յոյսը։
11 Նա վառել է իր բարկութիւ-
նըն ինձ դէմ, և ինձ իր թշնա-
միներին նման է համարում։
12 Նորա գունդերը միասին եկան,
և կապեցին ինձ դէմ իրանց ճա-
նապարհները, և բանակեցան իմ
վրանի շուրջը։
13 Իմ եղբայրներին հեռացրել է
ինձանից, և իմ ծանօթներն էլ
են օտարացել ինձանից։
14 Ինձ ձգել են իմ ազգականնե-
րը, և իմ ճանաչները մոռացել
են ինձ։
15 Իմ տան բնակիչներն ու իմ
աղախինները օտար համարեցին
ինձ, ես օտարական եմ դառել
նորանց աչքին։
16 Ծառային կանչում եմ, և նա
չէ պատասխանում, իմ բերանո-
վըն պիտի աղաչեմ նորան։
17 Շունչս բնդդէմ է գալիս իմ
կնոջը, և իմ խնդիրքը՝ իմ մօր ո-
րովայնի որդիանցը։
18 Փոքր տղայքն անգամ անար-
գում են ինձ, ես վեր կենալիս
նորանք խօսում են վրաս։
19 Ինձանից զզվում են իմ մեծ-
րիմ բարեկամները, և իմ սի-
րածներըը ընդդիմանում են ինձ։
20 Մարթիս և մսերովս են փա-
կել ոսկորներս, և ձեռ՝ատամ-
ներիս կաշիովն եմ պրծել։
21 Ողորմեցէք ինձ, ողորմեցէք
ինձ, ով իմ բարեկամներ, վասն զի
Աստուծոյ ձեռքը դիպել է ինձ։
22 Ինչո՞ւ էք ինձ հալածում դուք
էլ Աստուծոյ նման, և չէ՞ք կըշ-
տանում իմ մսերովս։
23 Ո՜հ երանի՛ թէ գրուէին խօս-
քերս, երանի՛ թէ քանդակուէին
մի գրքի մէջ,
24 Երկաթի գրիչով և կապարով,
փորագրուէին քարի վերայ յա-
ւիտեան։
25 Իսկ ես գիտեմ որ փրկիչս կեն-
դանի է, և վերջը պիտի կանգնէ
Հողի վերայ։
26 Եւ իմ մարթը այսպէս թափ-
ուելուց յետոյ, այն ժամանակ
իմ մարմնովըս տեսանելու եմ Ա-
ստուծոյն։

Որին որ ես ինքս եմ տեսանե- 27
լու, և իմ աչքերն են միայն տա-
լու նորան, և ոչ թէ ուրիշը.
հալվում են իմ երիկամունքներըը
իմ ներսումը։
Որ պիտի ասէիք. Ի՞նչ ենք հա- 28
լածում նորան, և ինձ վերայ է
գտնվում բանի արմատը։
Վախեցէք դուք սուրի երեսի- 29
ցը. վասն զի անիրաւութեանց
դէմ բարկացող է սուրը որ գի-
տենաք թէ դատաստան կայ։

ԳԼ. Ի

Եւ Սոփար Նաամացին պատաս- 1
խանելով ասաց.
Սորա համար իմ խորհրդա- 2
ծութիւնները ինձ պատասխանել
են տալիս, և այդ պատճառով
շտապում եմ ինձանում։
Ինձ խայտառակող խրատ եմ 3
լսում, բայց հոգին իմ գիտու-
թիւնից ինձ պատասխանել է տա-
լիս։
Սա գիտե՞ս դու, որ յաւիտե- 4
նից՝ի վեր է, մարդ երկրիս վե-
րայ դրուելուց՝ի վեր,
Որ անզգամների ցնծութիւնը 5
կարճ կ՚լինի, և կեղծաւորի ու-
րախութիւն մէկ վայրկեան։
Թէև նորա փառքը մինչև եր- 6
կինքը բարձրանայ, և նորա գլու-
խը դպչէ ամպին.
Իր աղբին պէս պիտի յաւիտ- 7
եան ոչնչանայ, նորան տեսանողնե-
րը պիտի ասեն. Ո՞ւր է նա։
Երազի պէս պիտի թռչի, և չի 8
գտնուիլ. և պիտի քշուի գիշեր-
ուան ցնորքի պէս։
Նորան տեսանող աչքը այլևս 9
նորան չի տեսանիլ, և նորա տեղը
նորան չի նայիլ միւսանգամ։
Նորա որդիքը պիտի ազքատ- 10
նէրին խնդրեն, և նորա ձեռքերը
ետ պիտի տան նորա կարողու-
թիւնը։
Նորա ոսկորները լիքը էլ լինին 11
երիտասարդութեամբը, դարձեալ
նորա հետ միասին պիտի հողու-
մը պառկին։
Եթէ չարութիւնը քաղցր է նո- 12
րա բերանումը, էրէ նա թաքցրեց
իր լեզուի տակին,

13 Եթէ նորան խնայեց և թող չը տուաւ, և իր քիմքովը եւս պահեց նորան.
14 Կերակուրը կ'փոխուի նորա աղիքներուն, քարերի լեղի կայ նորա ներսումը։
15 Նա հարստութիւն կուլ տուած էլ լինի, պիտի եւս փսխէ, նորա փորէն Աստուած պիտի հանէ այն։
16 Նա քարերի թոյնը պիտի ծծէ, իժի լեզուն պիտի սպանէ նորան։
17 Նա պիտի չտեսնէ վտակները, մեղրի ու կոգիի հեղեղներէն գետերը։
18 Աշխատածը նա եւս պիտի դարձնէ, և պիտի կուլ չտայ. հարստութեանը չափ կ'լինի նորա վճարածը, և չի ուրախանալ։
19 Որովհետև ճնշեց թողեց աղքատներին, տունը յափշտակեց, բայց պիտի չշինէ նորան։
20 Վասն զի նա իր ներսումը խաղաղութիւնը չէր ճանչցուեր, երբեք իր ցանկացածովը պիտի չազատի։
21 Նորա ուտելուէն բան չկրծաւ, դորա համար նորա առողջութիւնը պիտի չտևէ։
22 Աստուածեան լիքը ժանտակը նա պիտի ներսէն, սուին թրչուտի ձեռքը պիտի դայ նորա վերայ։
23 Պիտի լինի որ նա իր փորը կըշտացրած ժանտակը՝ նա իր բարկութիւնը կուզարկէ նորա վերայ, և անձրևի պէս կ'թափէ նորա վերայ՝ նա ուտելիս։
24 Նա կ'փախչէ երկաթի զէնքէն, բայց պղնձի աղեղը նորան կ'խոցէ։
25 Կ'քաշէ զէնքը, և դուրս կ'գայ նորա մարմնէն, և փայլուն սեղը նորա մարմնէն, և փայլուն սեղը նորա մարմնէն, նա պիտի գընայ, արհաւիրքը նորա վերայ։
26 Ամեն խաւար թաքցրուած է նորա խորերուն, կրակը պիտի լափէ նորան առանց փչուելու, չարիք պիտի հասնէ նորա վրանուն մնացորդին։
27 Երկինքը պիտի նորա յանցանքը յայտնէ, և երկիրն էլ պիտի ընդդիմանայ նորան։
28 Նորա տան եկամուտը պիտի գերի գնայ, թափուող ջրերի պէս պիտի լինին նորա բարկութեան օրուն։
29 Սա է ամբարիշտ մարդու բաժինը էր Աստուածանից, և ժառանգութիւնը՝ որ Աստուածանից որոշուած է նորան։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ Յոբը պատասխանելով ասաց.
2 Ականջ դրէք, լսեցէք խօսքս, և սա լինի ձեր մխիթարութիւնը.
3 Ինձ համբերեցէք, որ ես խօսեմ և իմ խօսելուց յետոյ, ծաղրիր։
4 Ես որ կամ՝ մի թէ մարդու հետ է իմ վէճը, և ինչո՞ւ համար սիրտս չնեղանայ.
5 Ինձ մտիք արէք, և ապշեցէք, և ձեռքներդ դրէք բերաններիդ։
6 Եւ հէնց որ յիշում եմ՝ զարհուրում եմ, և դողը բռնում է մարմինս։
7 Ինչո՞ւ են ապրում ամբարիշտները, ծերանում և զօրանում ոյժով։
8 Նորանց սերունդը հաստատ է նորանց հետ նորանց առջևը, և նորանց զաւակունքը նորանց աչքի դէմ։
9 Նորանց տունը ապահով է երկիւղից, և Աստուծոյ գաւազանը նորանց վերայ չէ։
10 Նորա եզը զուգաւորվում է, և դուրսը չի գցում, նորա կովը ծնում է և չէ վիժում։
11 Նորանք իրանց մանուկներին ոչխարի հօտի պէս են դուրս հանում, և նորանց տղայք ստոստում են։
12 Զ-ձեռը բարձրացնում են թմբուկով և քնարով, և ուրախանում են արնգի ձայնով։
13 Նորանք իրանց օրերը զուարճութիւնով են անցկացնում, և մէկ վայրկեանում գժոխքը կ'իջնեն։
14 Սակայն Աստուծոյն ասում են. Հաշուէր մեզանից, և քո ճանապարհների գիտութիւնը չենք ուզում։

15 Ի՞նչ է Ամենակարողը, որ նորան ծառայենք, և ի՞նչ է մեր օգուտը, որ նորան գիմենք։
16 Տես նորանց բարիքն իրանց ձեռքին չէ, ամբարիշտների խորհուրդը հեռու լինի ինձանից։
17 Ամբարիշտների ճրագը քանի՛ անգամ կ'հանգչի, և նորանց վրայ կ'գայ իրանց տառապանքը. նորանց համար Նա ցաւեր կ'բաժանէ իր բարկութեամբը։
18 Նորանք կ'դառնան ինչպէս յարդ քամու առջև, և ինչպէս մղեղ, որին յափշտակել է մրրիկը։
19 Ա՜ՀՀ՛ Աստուած նորա յանցանքը պահում է նորա որդկանց համար. թող նորան իրան հատուցանէ, որ նա հասկանայ։
20 Թող իր աչքերը տեսանեն իր կորուստը, և թող նա խմէ Ամենակարողի բարկութիւնից.
21 Վասն զի նա ի՞նչ պիտի ըզուարճանայ իր տունովը իրանից յետոյ, երբոր նորա ամիսների թիւը կտրուած է։
22 Մի՞թէ կարելի է Աստուծոյն գիտութիւն ուսուցանել, որ նա է բարձրերին դատում։
23 Մէկը մեռնում է իր կատարելութեան մէջտեղը, բոլորովին հանդարտ և հանգիստ.
24 Նորա անօթները լիքն են կաթով, և նորա ոսկորների ծուծը հիւթալի է։
25 Իսկ միւսը մեռնում է դառն հոգով, և բարիք չէ ճաշակել։
26 Բա՜ց մէկտեղ պառկում են, հողին վերայ, և որդերը ծածկում են նորանց։
27 Ահա գիտեմ ձեր խորհուրդները. և այն նենգութիւնները որ հնարել էք ինձ դէմ։
28 Որ ասում էք. Ո՞ւր է ազնուականի տունը. և ո՞ւր է ամբարիշտների բնակութեանց վրանը։
29 Չէ՞ք հարցրել ճանապարհորդներին, և նորանց նշաններըը չէ՞ք հասկանում.
30 Թէ կորստեան օրը չարը պահպանվում է, բարկութեան օրը նորանք դէն են քշվում։
31 Ո՞վ կ'իմացնէ նորա երեսին նորա ճանապարհը, և նա անելիս՝ ո՞վ կ'հատուցանէ նորան։
32 Եւ նա տարվում է գերեզմանոցը, և նորա տապանի վերայ պահապան են դնում։
33 Քաղցր են նորա համար հովտի կոշտերը, և նորա եւևից հետևում են բոլոր մարդիկը, և նորանից առաջիններին թիւ չկայ։
34 Եւ ի՞նչպէս ինձ մխիթարում էք փուճ բանով, և ձեր պատասխաններում Ճշմարիտ է մնում։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Եղիփազ Թեմանացին պատասխանելով ասաց.
2 Մի՞թէ մարդս Աստուծոյ համար օգտակար է. այլ միտքն իրան է օգտակար խելացին։
3 Ամենակարողին հաճութի՞ւն կը լինի, եթէ արդար լինիս. կամ մէկ շա՞հ, եթէ քո ճանապարհները ուղիղ անես։
4 Մի՞թէ քո վախից քեզ հետ կ'վիճէ, և քեզ հետ դատաստանի կ'գնա՞յ։
5 Չէ՞ որ քո շարութիւնը շատ է. և քո անօրէնութիւններին վերջ չկայ։
6 Որովհետև դու քո եղբօրից գրաւ էիր առնում ի զուր, և մերկերի հանդերձները յափշտակում էիր։
7 Ջուր չէիր խմեցնում ծարաւին. և սովածից խնայում էիր հացը։
8 Եւ այն մարդը որ զօրաւոր բազուկ ունէր, երկիրը նորանն էր. և պատուաւորը բնակում էր նորանում։
9 Որբևայրիներին ճանապարհ էիր դնում դատարկ. և որբերի բազուկները փշրվում էին։
10 Դորա համար քո շուրջը որոգայթներն են պատել, և յանկարծահաս վախը քեզ զարհուրեցրել է։
11 Կամ թէ խաւարից չես տեսնում, և ջրերի շատութիւնը քեզ ծածկել է։
12 Մի՞թէ Աստուած երկնից բարձրում չէ. և մտիկ տուր աստղե-

րի բարձրութեանը, թէ ինչ բարձր են։
13 Բայց դու ասում ես. Ինչ գիտէ Աստուած, մառախուղի ետեւ՞ցը պիտի դատէ։
14 Ամպերը նորա համար ծածկոց են, որ նա չի տեսանիլ. և նա երկնից կամարի վերայ է շրջում։
15 Մի՞թէ վաղեմի ճանապարհն ես պահում, որով գնացին անօրէն մարդիկը։
16 Որոնք ժամանակից առաջ յափրշտակուեցան, գետի պէս հոսեցին նորանց հիմերը։
17 Որ ասում էին Աստուծոյն. Հեռացիր մեզանից, և թէ Ամենակարողը նորանց ի՞նչ է անելու։
18 Սակայն նա նորանց տները լցեց բարիքով, անզգամների խորհուրդը հեռու լինի ինձանից։
19 Արդարները պիտի տեսանեն և ուրախանան, և անմեղները նորանց ծաղր պիտի անեն։
20 Ճշմարիտ որ կորել է մեր թշնամին. և նորանց մնացորդը կրակն է լափել։
21 Աղէ բարեկամացիր նորա հետ և խաղաղութիւն սրա, դորանով բարիք կ'գայ քեզ մօտ։
22 Ընդունիր նորա բերանից օրէնքը, և նորա խօսքերը դիր սրտիդ մէջ։
23 Եթէ Ամենակարողին դառնաս, կ'շինուիս, եթէ անօրէնութիւնը հեռացնես քո վրանից։
24 Եւ ոսկու կտորը դիր հողի վերայ, և Ոփիրի ոսկին հեղեղատների քարերի վերայ,
25 Այն ժամանակ Ամենակարողը կ'լինի քո ոսկու կտորը, և քո փայլուն արծաթը.
26 Վասն զի այն ժամանակ Ամենակարողով կ'ցնծաս, և երեսդ կ'բարձրացնես դէպի Աստուած։
27 Դու նորան կ'աղաչես, և նա քեզ կ'լսէ. և քո ուխտերը կը կատարես.
28 Եւ դիտաւորութիւն կ'ունենաս, և կ'յաջողուի քեզ համար, և քո ճանապարհների վերայ լոյս պիտի ծագէ։
29 Երբոր դէյն ցածացնեն, այն ժամանակ դու կ'ասես. Բարձրութիւն. և աչքերով խոնարհին նա պիտի ազատէ։
Նա կ'ազատէ անմեղ չեղողին 30
եւ, և նա կ'ազատուի քո ձեռքերի մաքրութիւնովը։

ԳԼ. ԻԳ

Եւ Յոբը պատասխանելով ա- 1
սաց.
Այսօր էլ դառն է գանգատս, 2
Հարուածս ծանր է իմ հառաչանքիցը։
Երանի՛ թէ գիտենայի թէ ո- 3
րոն ինչպէս գանեմ, կ'գնայի մինչև նորա աթոռը։
Կ'տարածէի նորա առջև դատս, 4
և բերանս փաստերով կ'լեցնէի։
Կ'գիտենայի այն խօսքերը որ 5
պիտի պատասխաներ, և կ'իմանայի թէ ինձ ինչ կասէր։
Մի՞թէ ոյժի շատութեամբը կը 6
վիճէր ինձ հետ. ոչ. այլ նա ինձ ուշադրութիւն պիտի անէր։
Այնտեղ ուղիղը վիճաբանում 7
է նորա հետ. և ես յաւիտեան կ'ազատուէի իմ Դատաւորիցը։
Ահա գնում եմ դէպի արև- 8
ելք, և նա չկայ. և դէպի արևմուտք՝ և նորան չեմ նշմարում։
Դէպի հիւսիս՝ իր գործողու- 9
թիւնումը, և չեմ դիտում, հարուածն է ծածկում, և ես նորան չեմ տեսանում։
Սակայն նա գիտէ իմ ճանա- 10
պարհը, ինձ փորձելիս՝ ես ոսկու նման դուրս կ'գամ։
Նորա քայլումը պինդ է իմ 11
ոտքը, նորա ճանապարհը պահել եմ և չեմ մոլորուել։
Նորա շրթունքների պատուի- 12
րանքներից չեմ շեղուել, իմ կանոնիցն աւելի պահեցի նորա բերանի խօսքերը։
Բայց նա մէկ մտէ վերայ է, 13
ո՞վ պիտի նորան դարձնէ. և որին ուզածն անում է։
Այսպէս նա կ'կատարէ ինձ 14
համար սահմանուածը. և որանից նման շատ բաներ կան նորա մօտ։
Նորա համար նորա ներկայու- 15
թիւնիցը զարհուրում եմ, մտածելիս վախենում եմ նորանից։

16 Եւ Աստուած թուլացնում է սիրտս, և Ամենակարողը ղարհուրեցնում է ինձ։
17 Որովհետև ես չփչացայ խաւարից առաջ, և իմ առջևից չը ծածկեց մութը։

ԳԼ. ԻԴ

1 Ինչո՞ւ համար՝ ժամանակները Ամենակարողից ծածկուած չլինեն, նորան ճանաչողները չեն տեսնում նրա օրերը։
2 Սահմանները փոխում են, հօտեր են յափշտակում և արածեցնում։
3 Որբերի էշը քշում են տանում, որբևայրիի եզը գրաւ են առնում։
4 Մոլորեցնում են աղքատներին ճանապարհից, ամենեղ թաք են կենում երկրի տնանկները։
5 Ահա նորանք վայրի էշերի պէս դուրս են գալիս իրանց գործին, որ մանգալու առաւօտից, անապատը հաց է տալիս նորանց տղայոց համար։
6 Իրանց չհղած արտը հնձում են, և ամբարշտի այգին են քաղում։
7 Մերկ անց են կացնում գիշերը առանց հանդերձի, և առանց պղեատի են ցրտում։
8 Լեռների առատից անձրևներից թրջվում են, և ապաստան չունենալով ժայռին են կպչում։
9 Պոկում են տնինքից որբին, և աղքատից գրաւ են առնում։
10 Մերկ մնում են գալիս առանց հագուստի, և անօթի ամբաց խուրձ են կրում։
11 Իրանց պատերի մէջտեղը իւղ են հանում, հնձանները են կոխում, բայց ծարաւ մնում։
12 Քաղաքից մարդիկ հեծում են, և վիրաւորուածների հոգին աղաղակում է, և Աստուած անպատմութիւն չէ համարում։
13 Նորանք լուսոյ հակառակորդներ են, նորա ճանապարհները չեն ճանաչում, և չեն կենում նորա շաւիղներում։
14 Արշալուսին է վեր կենում մարդասպանը, սպանում է աղքատին և տնանկին, և գիշերը գողի նման է գառնում։
15 Շնացողի աչքն էլ սպասում է երեկոյին ասելով՝ Ինձ աչք չի տեսանիլ, և երեսին ծածկոց է դնում։
16 Մութով ծակում են այն տները, որոնց ցերեկով նշան են արել. նորանք լոյս չգիտեն։
17 Որովհետև նորանց ամենի համար առաւօտը մահու սաւառ է, վասն զի ճանաչում են մահու սաւառների սոսկումներին։
18 Նա թեթև է ջրի երեսին, նորանց բաժինը անիծեալ է երկրի վերայ, չէ գառնում դէպի այգիների ճանապարհը։
19 Երաշտութիւնն ու տաքութիւնը յափշտակում են ձիւնի ջուրերը, դժոխքը էլ մեղք գործողներին։
20 Որովայնը մոռանայ նորան, որդերը ճաշէին նորան, նա այլևս չյիշուի, և փշրուի նման անիրաւութիւնը ծառի նման.
21 Որ չարչարում է չրերը առնելին, և որևայրուն բարիք չէ անում։
22 Եւ քաշում է զօրաւորներին էլ իր զօրովը, նա վեր կենալիս ոչ ով ապահով չէ իր կեանքի մասին։
23 Բայց նա տալիս է նորան ապահովութեամբ, որ նորան վրատահէ, իսկ նորա աչքերը նորա ճանապարհների վերայ է։
24 Մի քիչ բարձրացան, բայց ոչընչացան, գլորուեցան ամենքի պէս և խորտակուեցան, և հասկի գլխի պէս կտրուեցան։
25 Նթէ այսպէս չէ. ո՞վ է իմ առաջ հանում, և իմ խօսքը ոչընչացնում։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Բաղդատ Սօքեցին պատասխանելով ասաց.
2 Լռեանութիւնն ու վախը նորա մօտն է. նա խաղաղութիւն է անում իր բարձրերում։
3 Մի՞թէ թիւ կայ նորա գունդերին, և որի՞ վերայ չէ ծագում նորա լոյսը։

4 Եւ ի՞նչ կարդարանայ մարդ Աստուծոյ մօտ, կամ ի՞նչ մաքուր կ'լինի կնոջից ծնուածը։
5 Տես՝ մինչև անգամ լուսինն էլ չէ լուսաւոր, և աստղերը մաքուր չեն նորա աչքին։
6 Ո՞ւր ճնաց մարդը, որ մի որդ է, և մարդու որդին, որ մի ճրճիթ է։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Յորը պատասխանելով ասաց.
2 Ո՜հ օգնեցիր տկարին. զօրացրի՛ր այժ չունեցողի բազուկը։
3 Ո՜հ խրատ տուիր իմաստուն չեղողին և մե՛ծ իմաստութիւն առատացրիր։
4 Ո՞ւմ տացիր աչք խօսքերը, և որի՞ շունչը դուրս եկաւ քեզանից։
5 Ուրուականք բռնվում են երկունքից, տակի ջուրերն և նորանց բնակիչներն էլ։
6 Մերկ է դժոխքը նորա առջև, և կորուստը ծածկոց չունի։
7 Նա է տարածում հիւսիսը պարապի վերայ, և երկիրը կախում ոչնչի վերայ.
8 Ծրարում է ջուրերը ամպերի մէջ. և ամպը չէ պատռվում նորանց տակին։
9 Նա բռնել է իր աթոռի երեսը, իր ամպը տարածել նորա վերայ։
10 Սահման է դնել ջրերի երեսին մինչև լուսոյ ծայրը խաւարի հետ։
11 Երկնից սիւները սասանում են, և սարսափում են նորա բարձունքից։
12 Իր զօրութեամբը շփոթում է ծովը և իր գիտութեամբը ջարդում է ամբարտաւանին։
13 Նորա Հոգիով երկինքը զարդարանք է, նորա ձեռքը կազմել է փախչող վիշապին։
14 Ահա սրանք են նորա ճանապարհների ծայրերը, և ի՞նչ չընչին բան է նորա վերայ լսուածը, և ո՞վ կարող է իմանալ նորա զօրութեան որոտումը։

ԳԼ. ԻԷ

1 Եւ Յորը շարունակեց իր առակը յառաջ տանել և ասաց.
2 Կենդանի է իմ իրաւունքը մերժող Աստուածը, և իմ հոգին դառնացնող Ամենակարողը.
3 Որ քանի որ տակաւին շունչս ինձանումս է, և Աստուծոյ հոգին կայ իմ ռնգացը մէջ.
4 Իմ շրթունքները անիրաւութիւն պիտի չխօսեն, և լեզուս պիտի նենգութիւն չխորհէ։
5 Փառ լինի ինձ որ ձեզ արդարացնեմ, մինչև մեռնելս չեմ ձրգելու ինձանից իմ ազնուութիւնը։
6 Արդարութիւնս բռնել եմ պինդ, և ցաց չեմ թողուլ, իմ խիղճն ինձ չէ տանջում օրերից մէկին համար եւ։
7 Ամբարշտի պէս լինի իմ թշնամին, և իմ հակառակորդը անիրաւի պէս։
8 Վասն զի ի՞նչ է կեղծաւորի յոյսը, (թէև հարուստ էլ լինի,) երբոր Աստուած հանէ նորա հոգին։
9 Մի՞թէ նորա աղաղակը կ'լսէ Աստուած, երբոր նորա վերայ նեղութիւն գայ։
10 Կամ թէ նա Ամենակարողովը ուրախանալո՞ւ է. ամեն ժամանակ կարո՞ղ է կանչել Աստուծոյն։
11 Սովորեցնեմ ձեզ Աստուծոյ ձեռքինը. Ամենակարողի մօտ եղածը չեմ ծածկելու։
12 Ահա դուք ամենքդ էլ տեսաք, և ինչո՞ւ այդպէս ունայնութիւն էք անում։
13 Ահաւասիկ անիրաւ մարդու բաժինը Աստուծոյ մօտ, և բռնաւորների ժառանգութիւնը, որ առնում են Ամենակարողից։
14 Եթէ շատանում են նորա որդիքը, սուրի համար է. և նորա զաւակները պիտի չկշտանան հացով։
15 Նորա ճնշողները մահի մէջ պիտի թաղուին, և նորա որբևայրիները չի պիտի լան։
16 Եթէ նա հողի պէս արծաթ

դիզելու լինի, և ցեխին չափ հանդերձ պատրաստէ,
17 Նա կ'պատրաստէ, բայց արդարը կ'հագնէ, և արծաթը անմեղը պիտի առանայ իրրև բաժին։
18 Նա ցեցի պէս շինուած է իր տունը, և այն խրճիթի նման, որ այգեպանն է շինուած,
19 Հարուստ կ'պառկի, բայց այլևս չի անիլ, աչքերը կ'բանայ, և էլ նա չէ։
20 Ջրերի պէս կ'հասնէ նորան արհաւիրքը, գիշերը փոթորիկը պիտի գողանայ նորան։
21 Արևելեան քամին նորան վեր կ'առնէ, որ նա գնայ. և փոթորիկով կ'լծուցնէ նորան իր տեղից։
22 Կ'գցէ նորա վերայ և նորան չի խնայիլ Աստուած, նորա ձեռքից նա կ'փախչէ այստեղ այնտեղ։
23 Նորա վերայ ծափ կ'տան, և կ'սուլեն նորան իր տեղից։

ԳԼ. ԻԸ

1 Արդարև արծաթը երակ ունի, և ոսկին՝ տեղ, ուր որ նորան ջոնում են.
2 Երկաթը հողից է առնւում, և քարը հալւում է պղինձ դառնում։
3 Մարդը վախճան է դնում խաւարին, և նա բոլորովին կատարելապէս քննում է քարը խաւարում և մահի ստուերում։
4 Գանդում է հորը բնակողի կշտին, ոտքից մոռացուած տեղերը, կախ են բնկնում մարդկանցից օրօրւում։
5 Երկիրը՝ որից դուրս է գալիս հաց, իսկ նորա տակը իրր թէ կրակով է քանդուած։
6 Նորա քարերը շափիւղայի տեղն է, և ոսկու աւազ կայ նորանում։
7 Նորան չգիտէ յափշտակող թռչունը, և անդղի աչքը նորան չէ տեսել։
8 Նորան չեն կոխ տուել խրոխտ գազաններըը, առիւծը չէ անց կացել նորա վերայ։
9 Նա ապառաժին է ձեռնամուխ լինում, լեռներն արմատից տապալում.
10 Ժայռերում ջրմուղներ է ճղում, և ամեն թանկագին բան տեսնում է նորա աչքը։
11 Գետերին արգելում է ծորելուց, և գաղտուկը հանում է լոյս-ի-ծով։
12 Բայց իմաստութիւնը ո՞ր տեղից է գտնւում, և ո՞րն է հանճարի տեղը։
13 Մարդս չգիտէ նորա արժէքը, և նա չի գտնուիլ կենդանեաց երկրում։
14 Անդունդն ասում է. Նա ինձանում չէ, և ծովն ասում է. Ինձ մօտ չկայ։
15 Նորա փոխարէն ամենամաքուր ոսկին չի տրուիլ, և արծաթը չի վճարուիլ իրրև նորա գինը։
16 Նա Ոփիրի գանձով չի գնահատուիլ, և պատուական ընդնաքարով ու շափիւղայով։
17 Նորան չարժեն ոսկի ու ակնեղէն, և նա չփոխուիլ ոսկեկուռ անօթների հետ։
18 Բուսան ու բիւրեղը չեն էլ յիշուիլ. և իմաստութեան առաջադրանքը մարգարիտներից առաւել է։
19 Նորան չարժէ Եթէոպիայի տպազիոնը, մաքուր գանձով նա չի գնահատուիլ։
20 Ուրեմն իմաստութիւնը ո՞րտեղից է գալիս, և ո՞րն է հանճարի տեղը։
21 Նա ծածկուած է բոլոր կենդանիների աչքերից էլ, և երկրի թռչուններից էլ թաքցրուած է։
22 Կորուստն ու մահն ասում են, մենք միայն նորա համբաւն ենք լսել ականջներով։
23 Աստուած գիտէ նորա ճանապարհը, և նա է ճանաչում նորա տեղը։
24 Վասն զի նա է մինչև երկրի ծայրերը նայում, բոլոր երկնքի տակը տեսնում է։
25 Քամուն կշիռ դնելիս, և ջուրերը չափով չափելիս,
26 Անձրևի համար օրէնք շինելիս, և ճանապարհ՝ որոտալից կայծակի համար.

27 Ա.ի՛ն ժամանակ նա տեսել ու համարել է նորան, պատրաստել և քննել էլ է նորան։
28 Եւ մարդուն ասել է. Ա.հա Տէրոջ երկիւղն է իմաստութիւնը, և չարութիւնից հեռանալը հանճար է։

ԳԼ. ԻԹ

1 Եւ Յոբը շարունակեց իր առակն առաջ տանիլ և ասաց.
2 Երանի՛ թէ առաջի ամիսների պէս, և այն օրերի պէս լինէի որ Ա.ստուած ինձ պահում էր.
3 երբոր նորա ճրագը լոյս էր տալիս իմ գլխի վերայ, նորա լուսովը գնում էի խաւարում։
4 Երբոր ես իմ աշնան օրերումն էի, և Ա.ստուծոյ մտերմութիւնը իմ վրանի վերայ էր։
5 երբոր տակաւին ինձ հետ էր Ա.մենակարողը. և իմ տղաներն իմ շուրջն էին։
6 երբոր իմ գնացքը կոգիով էր ծփծփում, և ապառաժը մօտիս իւղի աղբիւրներ էր բղխում.
7 երբոր դռնից դուրս էի գալիս քաղաքը, հրապարակումը դնում էի իմ աթոռը,
8 ինձ տեսնում էին երիտասարդները, և ալեւորները վեր էին կենում կանգնում.
9 իշխանները դէմ էին ընկնում խօսելում, և ձեռները դնում էին բերանների.
10 Ա.զնուականների ձայնը կտըրվում էր, և նորանց լեզուն իրանց քիմքին էր կպչում։
11 Որովհետև մի ականջ որ լսում էր. ինձ երանի էր տալիս, և այն աչքը որ տեսնում էր, վկայութիւն էր տալիս ինձ.
12 վ.ասն զի ես ազատում էի աղաղակող անանկին, նաև որբին և անօգնականին։
13 Կորածի օրհնութիւնը ինձ վերայ էր գալիս, և որբևայրու սիրտն ուրախացնում էի.
14 Ա.րդարութիւն էի հագած և հագնում էի, պատմուճան և խոյր էր իմ դատաստանը։
15 Աչքեր էի կոյրին, և ոտքեր էի ես կաղին։
16 Եւ հայր էի աղքատներին, և ինձ անծանօթի դատը քննում էի։
17 Եւ փշրում էի անիրաւի ժանիքը, և նորա ատամներիցը որսը խլում էի։
18 Եւ ասում էի. Բոյնիս կշտին կ'ժեռնեմ, և աւազի չափ կ'շատացնեմ օրերս.
19 Ա.րմատներս ջրին կ'բացուին, և ցօղը կ'օթևանէ իմ ոստերի վերայ.
20 փառքս նոր կ'ծնայ ինձ հետ, և աղեղս ձեռքիս կ'նորոգուի։
21 Ինձ ականջ էին դնում և սպասում, և իմ խորհուրդին լռում էին.
22 Իմ խօսելուց յետոյ չէին կրկնում, և նորանց վերայ կաթում էր իմ ասածը։
23 Ինձ սպասում էին ինչպէս անձրևի, և բերանները բանում էին իբր եարքի անձրևի համար։
24 Ես ծիծաղէի նորանց վերայ, չէին հաւատալ. և իմ երեսի լոյսը նորանք չէին նեղմացնիլ։
25 Ընտրում էի նորանց ճանապարհը և գլխաւոր էի նստում, և բնակում էի ինչպէս թագաւորը զօրքի մէջ, էբէ՛ն մէկը որ սգաւորներ է մխիթարում։

ԳԼ. Լ

1 Բայց հիմա ինձ ծաղր են անում հասակով ինձանից փոքրերը, որոնց հայրերը չէի ուզել դնել իմ խաշանց շների հետ։
2 Եւ ինձ ի՞նչ պէտք էր նորանց ձեռքերի զօրութիւնն էլ, որոնց առոյգութիւնը կորած էր.
3 Զքաւորութիւնից և սովածութիւնից ցամաքած փախչում էին անապատը՝ մթին աւերակ և ամայի տեղերը.
4 Ա.ցաւի վերայի մոլոշն էին քաղում, և գիհիի արմատը իրեն իրանց հաց.
5 Որ ընկերութիւնից դուրս են արվում, և որոնց վերայ իբրև գողի վերայ գոչում են։
6 Սոսկալի ձորերում էին բնակում, գետնի և ապառաժների ծերպերում.

7 Մացառների մէջ բզաւում էին, եղինջների տակին էին վայր թափվում.
8 Ցիմարների որդիք և աննշանների որդիք լինելով՝ դուրս էին քշվում երկրից։
9 Բայց հիմա ես նորանց խաղն եմ դառել, և առակ եմ եղել նորանց համար։
10 Ինձանից զզվում, և հեռանում են ինձանից, և երեսից թուքը չեն խնայում։
11 Որովհետև իմ կապը լուծել և ինձ նեղել է, նորանք էլ ետ բուռանակը բաց են թողել առջևս։
12 Աջ կողմից լակոտներն են կանգնում ոտքերս քաշում, և ինձ համար պատրաստում իրանց կորստեան ճանապարհները։
13 Նորանք քանդում են իմ շաւիղները, և աշխատում են իմ կործանման համար, որ իրանք օգնող չունին։
14 Գալիս են իրրև թէ լայն խրամատով, գլորվում գլորուելով են գալիս։
15 Արհաւիրքները ինձ վերայ դարձան, քամուն պէս հալածում են իմ մեծութիւնը, և ամպի պէս անցաւ իմ ապաւութիւնը։
16 Եւ հիմա հոգիս թափվում է իմ ներսումը, ինձ բռնել են տրտմութեան օրերը։
17 Գիշերը ոսկերքս են ծակոտում ինձ վերայ և կրծողներս չեն դադրում։
18 Մեծ զօրութեամբ են փոխում իմ հանդերձը, պատմուճանիս օձիքին պէս պատում է ինձ։
19 Նա ինձ գցել է ցեխը, և ես նման եմ եղել հողի և մոխրի։
20 Ես քեզ աղաղակում եմ, և դու ինձ չես պատասխանում, կանգնում եմ, և դու ինձ չես մտիկ անում։
21 Դու ինձ համար անգութ ես դառել, ձեռքիդ զօրութեամբը ինձ հետամնութիւն ես անում։
22 Դու ինձ բարձրացրել և ինձ քամուն ես հեծցրել, և փշացնում ես մրրկով։
23 Ստոյգ գիտեմ, թէ ինձ մեռցնես ես տանելու, և բոլոր կենդանիների համար ստեղծուած տունը։
24 Արդարև աղաչանք չկայ նա էլ ձեռքը երկարացնելիս, և աղաղակ նորանց համար՝ նա կորցնելիս։
25 Միթէ ես չեմ լացել օրը դժուարութեամբ անցկացնողի համար, հոգիս չէ՞ նեղացել աղքատի համար։
26 Երբոր ես բարիքի էի սպասում, և չարիք եկաւ. և սպասում էի լոյսի, և եկաւ խաւար։
27 Աղիքներս եռացին և չհանդարտեցին, տրտմութեան օրերը առաջս կտրեցին։
28 Սևացած եմ մեռն գալիս, բայց ոչ թէ արևից, կանգնում եմ ժողովքի մէջ աղաղակում։
29 Ջոգաքներին եղբայր եմ դառել, և ջայլամներին ընկեր։
30 Կաշիս սևացել է ինձ վերայ, և ոսկերքս վառուել են տաքութիւնից։
31 Եւ սուգի է փոխուել իմ քնարը, և իմ արինգը՝ լալկանների ձայնի։

ԳԼ. ԼԱ

1 Ուխտ արի աչքերիս հետ, որ կոյսի վերայ չմտածեմ։
2 Եւ ի՞նչ բաժին կայ Աստուածանից վերևից, և ժառանգութի՞ւն Ամենակարողից բարձրերից։
3 Չէ՞ որ ամբարշտի համար կորուստ կայ. և չարի՞ք անօրէնութիւն գործողների համար։
4 Չէ՞ որ նա տեսանում է իմ ճանապարհները, և համարում իմ բոլոր քայլերը։
5 Եթէ ես սուտութեամբ եմ շրջել, և իմ ոտքը շտապել է նենդութեան,
6 Թող կշռէ ինձ արդարութեան կշռով, և իմանայ Աստուած իմ կատարելութիւնը։
7 Եթէ իմ ոտքը խոտորել է ճանապարհից, և իմ սրտին հետևել իմ աչքը, և իմ ձեռքերին կպել մի սրաո,

8 Թող ես սերմեմ, և ուրիշն ուտէ, և իմ շառաւիղները արմատից խլուին։
9 Եթէ սիրտս մոլորուել է մի կնոջ մասին, և ես դարանամուտ եմ եղել իմ դրացու դրան.
10 իմ կինը ուրիշի համար աղօրիքը դարձնէ, և նորա վերայ ծռեն ուրիշները։
11 Վասն զի դա պղծագործութիւն է, և դատաւորների տոյժ անօրէնութիւն։
12 Որովհետև դա մի կրակ է՝ մինչև տարատարոսը լափող, որ իմ բոլոր արդիւնքն արմատից կը խլէ։
13 Եթէ ես արհամարհել եմ իմ ծառայի կամ աղախնի իրաւունքը, նորանք ինձ հետ վէճ ունեցած ժամանակին.
14 Այն ժամանակ ես ի՞նչ կ'անեմ, երբոր Աստուած վեր կենայ. և երբոր նա քննէ, ես ի՞նչ պատասխան կ'տամ.
15 Չէ՞ որ ինձ որովայնում ստեղծողը է նորան ստեղծել, և մեզ արգանդում պատրաստողը մէկն է։
16 Եթէ աղքատի ուզածը մերժել եմ, և որևայրւի աչքերը հանգցրել եմ.
17 Եթէ պատառս մէնակ եմ կերել, և որբը նորանից չէ կերել,
18 Վասն զի նա իմ մանկութիւնից ի վեր ինձ մօտ մեծացաւ իբրև հօր մօտ, և մօրս արգանդից նորան գլխացել եմ։
19 Եթէ ես մէկ կորած եմ տեսել առանց հագուստի, կամ թէ որ ծածկոց չունի աղքատը.
20 Եթէ ինձ չեն օրհնել նորա բանքները, և նա չէ տաքացել իմ ոչխարների բրդից,
21 Եթէ իմ ձեռքը բարձրացրել որբի վերայ, երբոր ես դրան մէջ տեսայ իմ օգնութիւնը.
22 Թող իմ թևը իմ ուսից վայր ընկնէ, և բազուկս արմունկից կոտրուի։
23 Վասն զի Աստուծոյ կորոնքը վախ էր ինձ վերայ. և նորա մեծափառութիւնից չէի կարող պրծնել։
24 Եթէ ոսկին յոյս էի դրել, կամ զանձին ասել եմ. իմ վստահութիւնս.
25 Եթէ ես ուրախացել եմ, թէ առատաձեռնս շատ է, և ձեռքս առատութիւն է գտել.
26 կամ եթէ նայել եմ արևին, երբոր փայլում էր, և լուսնին, երբոր պայծառութեամբ գնում էր,
27 կամ սիրտս խափել է ծածուկ, և ձեռքս պագել է բերանս.
28 Որ դա էլ դատաւորների տոյժ անօրէնութիւն է, որովհետև ուրացած պիտի լինէի Աստուծոյն ի վերուստ.
29 Եթէ ուրախացել եմ ատողիս կորուստով, կամ զուարճացել եմ որ նորան չարիք է հանդիպել.
30 Այլ նոյն իսկ թող չեմ տուել կոկորդիս մեղանչելու նորա անձի համար անէծք փափաքելով։
31 Եթէ իմ վրանի մարդիկն առած չլինին. Ո՜վ թէ չկշտանային մինչ նորա մսից։
32 (Պանդուխտը չէր օթևանում դրսում, դռներս բաց եմ ճանապարհորդին.)
33 Եթէ յանցանքս ծածկել եմ *Ադամի պէս որ պահէի ծոցումս իմ անօրէնութիւնը,
34 Որովհետև վախեցած լինիմ շատ բազմութիւնից, և ցեղերի անարգանքը գոհունքս արհուրեցրած լինի, և ես լուռ և դուրս ելած չլինիմ.
35 Երանի՛ ինձ, թէ ունկնդիր լիներ ինձ. (ահա իմ փափաքը, որ Ամենակարողն ինձ պատասխանէր,) և մի գիրք գրեր իմ ընդդիմակողմը,
36 Անշուշտ նորան ուսիս վերայ կ'առնէի, և պսակի պէս կ'կապէի ինձ վերայ։
37 Քայլերիս համարանքը նորան կ'իմացնէի իշխանի պէս կ'մօտենայի նորան։
38 Եթէ ինձ դէմ աղաղակել է իմ երկիրը, և նորա հասոյն ակօսները լացել են,
39 Եթէ նորա արդիւնքը կերել

*Մարդու

եմ առանց փողի, և նորա տխրոջ հոգին հանդցրել եմ.
40 Թող ցօրեվի տեղ փուշ դուրս գայ, և գարու տեղ՝ որոմ։ Յոբի խօսքերը վերջացան։

ԳԼ. ԼՒ

1 Եւ այս երեք մարդիկը դադարեցին Յոբին պատասխան տալուց, վասն զի նա իր աչքին արդար էր։ 2 Եւ Ռամի ցեղից Բուզացի Բարաքիէլի որդի Եղիուսի բարկութիւնը բորբոքեց, Յոբի վերայ իր անձն Աստուածանից 3 արդարացնելու համար։ Եւ իր երեք ընկերների դէմ էլ բորբոքեց նորա բարկութիւնը, նորա համար որ պատասխան չգտան, և 4 Յոբին յանցաւոր էին անում։ Եւ Եղիուսն սպասել էր Յոբին խօսելիս, որովհետև նորանք հասակով նորանից ծեր էին։ 5 Բայց երբոր Եղիուսը տեսաւ, որ այն երեք մարդկանց բերանում պատասխան չկար, այն ժամանակ բորբոքեց նորա բարկութիւնը։
6 Եւ Բուզացի Բարաքիէլի որդին Եղիուսը պատասխանելով ասաց. Ես հասակով փոքր եմ, իսկ դուք ալևորներ էք. նորա համար ես ետ կեցայ և վախեցայ իմ գիտութիւնը ձեզ յայտնելու։
7 Ասացի. Թող տարիքը խօսեն, և տարիների շատութիւնը իմաստութիւն հասկացնեն։
8 Բայց հոգի կայ մարդումն, և Ամենակարողի շունչն է նորանց հանճար տալիս։
9 Մեծերը չեն իմաստուն, և ծերերը չեն դատաստան հասկանում։
10 Նորա համար ասացի. Ինձ մի՛ տիկ արա, որ գիտեցածս պատմեմ ես էլ։
11 Ահա ես սպասել եմ ձեր խօսքերին, ականջ եմ դրել ձեր հասկացողութեանը, մինչև որ քննեցիք խօսքերը։
12 Եւ երբոր ուշադրութեամբ ձեզ մտիկ էի անում, ահա Յոբին յանդիմանող չկար ձեզանից, որ պատասխաներ նորա առածներին։
13 Միայն թէ չասէք՝ թէ իմաստութիւն գտանք, Աստուած կը յաղթէ նորան, ոչ թէ մարդ։
14 Եւ նա ինձ դէմ չշարեց իր խօսքերը, ես էլ ձեր խօսքերով չեմ պատասխանելու իրան։
15 Նորանք ապշեցին, այլ ևս չը պատասխանեցին, խօսքերը չհատան նորանցից։
16 Եւ ես սպասել եմ մինչև որ էլ չեն խօսում, մինչև որ կանգնել են և էլ չեն պատասխանում։
17 Ես էլ եմ խօսելու իմ բաժինը, գիտեցածս ասեմ ես էլ։
18 Վասն զի լիքն եմ խօսքերով, ներսիս հոգին նեղում է ինձ։
19 Ահա որովայնս չբացուած գինու նման է, նոր տիկերի պէս, որ տրաքվում են։
20 Ասեմ որ հանգստանամ. շրթունքներս բանամ և պատասխանեմ.
21 Ոչ ոքի երեսպաշտութիւն չանեմ, և ոչ մէկի չշողոքորթեմ.
22 Վասն զի չգիտեմ շողոքորթել. շուտով կ՚վերացներ ինձ իմ Արարիչը։

ԳԼ. ԼԳ

1 Բայց սակայն մէկ լսիր իմ խօսքը, ով Յոբ, և իմ բոլոր ասածներին ականջ դիր։
2 Ահա հիմա բացել եմ բերանս, թող լեզուս խօսէ քիմքումս։
3 Արտիս ուղղութեամբն են խօսքերս. և շրթունքներիս գիտութիւնը մաքուր խօսում են։
4 Աստուծոյ Հոգին է ստեղծել ինձ, և Ամենակարողի շունչը ինձ կեանք տուել։
5 Եթէ կարող ես, պատասխան տուր ինձ, պատրաստուիր առջևս կանգնիր։
6 Ահա ես ասածիդ պէս Աստուծոյ համար մէկ եմ, ես էլ եմ ցեխից կազմուած։
7 Ահա թող իմ երկիւղը քեզ չզարհուրեցնէ, և իմ ճնշումը քեզ վերայ չծանրանայ։

8 Արդարև ասել ես ականջիս, և լսեցի խօսքերի ձայնը.
9 Թէ մաքուր եմ ես առանց յանցանքի, անարատ եմ ես, անօրէնութիւն չունիմ.
10 Ահա նա պատճառանք է դրտնում ինձ վերայ, ինձ թշնամի է համարում իրան։
11 Ոտքերս դրել է կոճղում, դիտում է բոլոր շաւիղներս։
12 Ահա այս բանում արդար չես. ես քեզ պատասխանեմ, վասն զի Աստուած մարդուց մեծ է։
13 Ինչո՞ւ համար ես վիճում նորա հետ, որ իր բոլոր գործքերի համար պատասխան չի տալ։
14 Սակայն մէկ կերպով կ'խօսէ Աստուած, և միւս անգամ, բայց դրա ուշադրութիւն չէ անում,
15 Երազում՝ գիշերի տեսիլքում, մարդկանց վերայ խոր քուն բնկնելիս, անկողնի վերայ քնելիս։
16 Այն ժամանակ բանում է մարդկանց ականջը, և նորանց խրատելով կնքում է,
17 Որ մարդուս հեռացնէ վատ գործից, և ամբարտաւանութիւնը ծածկէ մարդուց։
18 Որ ետ պահէ նորա հոգին կորուստից, և նորա կեանքը սրով անցնելուց։
19 Նա խրատվում էլ է ցաւով իր անկողնի վերայ, և նորա ոսկորների կռիւը աստիկ է լինում։
20 Եւ նորա կեանքը զզվում է հացից, և նորա հոգին ցանկալի կերակուրից։
21 Վերջացնում է նորա մարը, որ էլ չէ երևում, և դուրս են ցցվում նորա ոսկորները, որ առաջ չէին երևում։
22 Եւ նորա անձը մօտենում է կորստեան, և նորա կեանքը՝ քանդողներին։
23 Եթէ նորա համար կայ մի միջնորդող հրեշտակ, հազարից դատապանցող մէկը, որ իմացնէ մարդուս նորա ուղղութիւնը.
24 Այն ժամանակ նա ողորմում է նորան և ասում. Ազատիր նորան կորստեան իջնելուց, ես քաւութիւն եմ գտել։
25 Այն ժամանակ նորա մարմինը փափուկ կ'լինի տղայի մարմինը, ետ կ'դառնայ իր մանկութեան օրերին։
26 Աստուծոյն կ'աղօթէ, և նա նորան կ'ընդունէ, և նա կ'տեսնէ նորա երեսը ուրախութեամբ և այսպէս նա ետ է տալիս մարդուս նորա արդարութիւնը։
27 Նա նայում է մարդկանց վերայ. և եթէ նա ասէ. Մեղք գործեցի, և ուղիղը ծռեցի, և ինձ հատուցում չտրուե նա.
28 Նա ազատել է իմ հոգին կորուստն իջնելուց, և իմ կեանքը լոյսով կ'զուարճանայ։
29 Ահա այս ամենը Աստուած անում է երկու և երեք անգամ մարդուս հետ։
30 Որ նորա հոգին ետ դարձնէ կորստից կենաց լոյսով լուսոյ մէջ։
31 Ականջ դիր, Յոբ, լսիր ինձ, լուռ կաց, և ես խօսեմ։
32 Եթէ խօսք կայ, պատասխանիր ինձ, ասիր, որ փափաքում եմ քեզ արդարացնել։
33 Եթէ չկայ, լսիր ինձ, լուռ կաց, և ես քեզ իմաստութիւն սովորեցնեմ։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Եղիուսը պատասխանելով ասաց.
2 Լսեցէք իմ խօսքը, ով իմաստուններ, և ով գիտուններ, ականջ դրէք ինձ։
3 Վասն զի ականջը կ'որոշէ խօսքերը, և քիմքը կ'տանէ կերակուրի համը։
4 Իրաւունք ընտրենք մեզ համար, իմանանք մեր մէջ, թէ ի՞նչն է բարի։
5 Վասն զի Յոբն ասաց. Արդար եմ, բայց Աստուած մերժեց իմ իրաւունքը։
6 Իրաւունքիս դէմ ստե՞մ, անբուժելի է իմ *վէրքը՝ առանց յանցանքի։
7 Ո՞ր մարդը կայ Յոբի նման, որ

*Նետը՝

հայհոյութիւնը խանում է ջրի պէս,
8 և գնում է ընկերանում չարագործների հետ, և մեռնում ամբարիշտ մարդկանց հետ.
9 Վասն զի ասաց. Օգուտ չունի մարդս, Աստուծոյ հաճութեան մէջ լինելով։
10 Սրա համար, ով խնամատուն մարդիկ, ինձ լսեցէք, քան լիցի որ Աստուած չարութիւն անէ և Ամենակարողը անօրէնութիւն։
11 Վասն զի մարդս անում է, և Ա-ած վճարում է նորան. և մարդուս ճանապարհին համեմատ դառնել է տալիս նորան։
12 Բայց յիրաւի Աստուած անօրէնութիւն չի անիլ, և Ամենակարողը չի ծռիլ իրաւունքը։
13 Ո՞վ յանձնեց նորան երկիրը, և ո՞վ կարգի դրաւ բոլոր աշխարհքը.
14 Եթէ նա իրան վերայ դարձնէ իր սիրտը, իր հոգին և իր շունչը ժողովէ իրան մօտ.
15 Ամեն մարմին միասին կ'մեռնէ, և մարդս հողը կ'դառնայ։
16 Եւ եթէ խելք ունիս, լսիր այս բաները, ականջ դիր իմ խօսքերի ձայնին։
17 Մի՞թէ արդարութիւն ատողը կարող է իշխել. և կամ թէ արդար Հզօրին կարո՞ղ ես յանցաւոր անել.
18 †Նա որ թագաւորին ասում է. Ով անպիտան. ազնուականներին. Ով չար։
19 Ա-ի որ իշխաններին աչառութիւն չի անիլ, և հարուստին աւելի ուշադրութիւն չի անիլ ազքատիցը, վասնզի ամենքն էլ նորա ձեռաց գործն են։
20 Մէկ վայրկեանում կ'մեռնեն, և մի կէս գիշերում մի ժողովուրդ շփոթվում անցնում է, և զօրաւորները անց են կենում՝ առանց ձեռք դէպ՚ը։
21 Վասն զի նորա աչքերը մարդուս ճանապարհների վերան են. և նորա բոլոր քայլերը նա տեսնում է։
22 Ոչ խաւար կայ, և ոչ մահուան

---

†Կարելի՞ է ասել թագաւորին,

ստուերը, որ այնտեղ թաքչուէին չարագործները։
23 Վասն զի մարդուս էլ չէ տրւում, որ Աստուծոյ մօտ գնայ դատի համար։
24 Նա փշրում է մեծամեծներին առանց քննութեան, և ուրիշներին դնում նորանց տեղը։
25 Եւ այսպէս տեղեակ է նորանց գործերից, և տապալում է գիշերը, և ջարդվում են։
26 Որովհետև անզգամ մարդիկ են, ծեծում է նորանց հանդիսատեսների տեղումը.
27 Նորա համար որ նորան հետևելուց հեռացան, և նորա բոլոր ճանապարհներին խելամուտ չեղան։
28 Այնպէս որ նորա մօտ գնաց աղքատի աղաղակը. և նա զբկեալների աղաղակը լսեց։
29 Եւ եթէ նա հանգստացնէ, ո՞վ կարող է նեղել, և եթէ նա երեսը ծածկէ, ո՞վ կարող է նորան տեսանել. թէ մի ազգի համար, թէ մէկ մարդու համար՝ մէկ է.
30 Որպէս զի չթագաւորէ կեղծաւորը, և ժողովրդի որոգայթ չլինի։
31 Վասն զի պէտք է ասել Աստուծոյ, թէ ինձ բարձրացրի, էլ չարութիւն չեմ անիլ.
32 Այն որ չեմ տեսնում, ինձ ուղղիր. եթէ ամբարշտութիւն եմ գործել, չեմ անիլ։
33 Մի՞թէ քո փոխարէն պէս է հատուցանելու, որ դու հակառակում ես. ուրեմն դու պիտի ընտրես և ոչ թէ ես. ինչ որ դիտես՝ ասիր։
34 Իմաստուններն ինձ կ'ասեն, նոյնպէս և գիտուն մարդը որ ինձ լսում է,
35 Թէ Յոբը գիտութիւնով չէ խօսել, և նորա խօսքերը իմաստութեամբ չեն.
36 Ո՛հ եթէ Յոբը փորձուէր մինչև ամբարիշտ մարդկանց պէս ուսած պատասխանների համար։
37 Վասն զի մեղքի վերայ յանցանք աւելացրեց, մեր միջում ծափ է տալիս, և շատացնում է իր խօսքերը Աստուծոյ դէմ։

ԳԼ. ԼԵ

1 Եւ եղիւսը պատասխանելով ասաց.
2 Այո դու իրաւո՞ւնք ես համարում, որ ասում ես. Իմ արդարութիւնն աւելի է Աստուածանից:
3 Վասն զի ասացիր. Թէ ինչ օգուտ ունի, և ինչ աւելի շահ կայ սրանից քան թէ մեղանչելուց.
4 Ես քեզ խօսք կ'պատասխանեմ, և քո ընկերներին քեզ հետ:
5 Նայիր երկինքին և տես, և դիտիր ամպերը որ քեզանից բարձր են.
6 Եթէ դու մեղանչես, նորա դէմ ինչ արած կ'լինիս. և քո անօրէնութիւնները որ շատանան, նորան ինչ կ'անես:
7 Կամ եթէ արդար լինիս, ինչ կ'տաս Նորան. կամ ինչ պիտի առնէ քո ձեռիցը:
8 Քեզ նման մարդուն կ'նէրփ-ըէ քո ամբարշտութիւնը, և մարդու զաւակին քո արդարութիւնը:
9 Հարատահարութիւնների շատութիւնից կ'ողաղակեն, կ'բողոքեն մեծամեծների բազուկից:
10 Բայց ձէնը չէ ասում. Ո՞ւր է ինձ ստեղծող Աստուածը, նա որ գիշերը երգեր է տալիս.
11 Որ մեզ երկրի անասուններից աւելի գիտուն և երկնքի թռչուններից աւելի իմաստուն է անում:
12 Անտեղ ողաղակում են, բայց նա չէ պատասխանում, չարերի հպարտութեան պատճառով:
13 Ճիրաւի Աստուած ունայնութեան չի լսիլ, և Ամենակարողը նորան մտիկ չի անիլ:
14 Թէպէտև դու ասում ես, Թէ Նորան չես տեսնում. սակայն դատաստան կայ Նորա առջևը, յուսա Նորան:
15 Բայց հիմա որ նորա բարկութիւնը մի չնչին բան է արել, և չէ իմացել շատ անօրէնութիւնը.
16 Յորը գարձեալ բանում է զուր տեղն իր բերանը, առանց հաս-

կացողութեան խօսքեր է շատացնում:

ԳԼ. ԼԶ

1 Եւ եղիւսը շարունակելով ասաց.
2 Մի փոքր համբերիր, որ քեզ սովորեցնեմ, որովհետև դեռ էլ խօսք կայ Աստուծոյ համար:
3 Ես իմ գիտութիւնը հեռուից պիտի ակեմ, և իմ Արարչին պիտի արդարութիւն ընծայեմ:
4 Վասն զի իմ խօսքը սուտ չէ, մէկ գիտութեամբ կատարեալը կայ քեզ մօտ:
5 Անա Աստուած հզօր է, բայց չի արհամարհիլ, հզօր է սրտին զօրութեամբը:
6 Նա ամբարշտին չի ապրեցնել, և նեղեալներին իրաւունքը կ'տայ:
7 Նա ետ չդարձել արդարից իր աչքերը, այլ թագաւորների հետ միասին վերայ կ'դնէ էլ նորանց յաւիտեան, և կ'բարձրանան:
8 Եւ եթէ նորանք շղթաներով կապուած լինին, և բռնուին թշուառութեան լարերով.
9 Այն ժամանակ կ'յայտնէ նորանց իրանց գործքը, և իրանց յանցանքը, որ իրանց բարձրացրել էին:
10 Եւ կ'բանայ նորանց ականջը խրատի, և կ'պատուիրէ որ դառնան իրանց ամբարշտութիւնից:
11 Եթէ լսեն և հնազանդեն, իրանց օրերը բարիքով կ'վերջացնեն, և իրանց տարիները՝ զուարճութիւնով:
12 Բայց եթէ չլսեն, սրով կ'անցնեն, և կ'մեռնեն առանց հասկացողութեան:
13 Եւ սրտով կեղծաւորները բարկութիւն կ'դիզեն, չեն աղաղակիլ երբոր նորանց կապէ:
14 Նորանց անձը կ'վախճանուի երիտասարդութիւնում, և նորանց կեանքը՝ իգացողների հետ:
15 Ի-ն աղքատին կ'ազատէ իր թշուառութիւնումը, և բռնութեան միջոցով կ'բանայ նորանց ականջը:
16 Քեզ էլ կ'հանէր նեղութեան

երախեցը մի ընդարձակ տեղ, ուր որ նեղութիւն չկայ, և քո սեղանի վերայ դրուածը պարարտաւէի կ'լինէր։

17 Բայց դու լիքն ես անպտամներէն դատաղութեամբը. դատաստանն ու իրաւունքը բռնելու են ետդ։

18 Որ մի գուցէ բարկութիւնը քեզ հրապուրէ ծաղրելու. այն ժամանակ մեծ փրկանքը քեզ չի ազատիլ։

19 Մի՞թէ նա մի բանի տեղ կ'դնէ քո հարստութիւնը, ոչ ոսկին և ոչ մի զօրաւոր ոյժը։

20 Մի փափաքիր այն գիշերին, որ ժողովուրդներին կ'տեղահանէ։

21 Զգուշացիր, որ չդառնաս դէպի ամբարշտութիւն, վասն զի դու սորան աւելի ընտրեցիր նեղութենէ։

22 Տես Աստուած բարձր է իր զօրութիւնովը, ո՞վ կայ նորան պէս աւետարեցնող։

23 Ո՞վ որոշեց նորա համար նորա ճանապարհը, և ո՞վ կ'համարձակէ ասել. Անիրաւութիւն արիր։

24 Միտք արա, որ մեծարես նորա գործքը, որունք մարդիկ օրհներգել են։

25 Ամեն մարդ նորանով հիանում է, մարդս հեռուանց է նկատում։

26 Ահա Աստուած է, և մենք չը գիտենք, նորա տարիներուն թիւը անքննելի է։

27 Վասն զի նա քաշում է ջուրի կաթիլները, նորունք էլ անձրև են թափում մուխլիցը.

28 Որ տեղում են ամպերը, առատօրէն ածում մարդկանց վերայ։

29 Մանաւանդ եթէ մէկը հասկանա ամպերը տարածուիլը նորա վրաններուն ճարճատմունքը։

30 Ահա տարածում է իր վերայ լոյսը, և ծովի արմատներովը ծածկում է։

31 Վասն զի դորանցով է դատում ազգերին և կերակուր շնորհում առատօրէն։

32 Նա իր ձեռքերում ծածկում է *կայծակը, և պատուիրում է նորան դէպի նշանը։

---

*լոյսը,

Նորա մասին լուր է տալիս նորա շառաչիւնը, խաշինքն անգամ նորա վեր կենալը ցէց։ 33

ԳԼ. ԼԷ

Եւ հէնց սորա համար դողում է սիրտս, և երերում է իր տեղիցը։ 1

Մէկ լսեցէք, նորա ձայնի ոռոմունքը, և նորա բերանից եւսած շառաչիւնը։ 2

Բոլոր երկնքի տակին արձակում է նորան, և նորա լոյսը մինչև երկրի ծայրերը։ 3

Նորա եռեւիցը մի գոռոց է վեր կենում, նա որոտում է իր վեհափառութեան ձայնովը, և չէ ուշացնում երբոր լսվում է ձայնը։ 4

Որոտում է Աստուած իր ձայնովը զարմանալի, մեծամեծ բաներ է անում, և մենք չգիտենք։ 5

Վասն զի նա ձիւնին ասում է. Եղիր երկրի վերայ, նաև ուժեղ անձրևին և իր զօրութեան ուժեղ անձրևին։ 6

Ամեն մարդու ձեռք կնքում է. որ հասկանան նորա ստեղծագործութեան բոլոր մարդիկը։ 7

Եւ գազանները մտնում են որջերը, և բնակում են իրանց բերումը։ 8

Ներքնասենեակիցը գալիս է փոթորիկը, և հիւսիսիցը ցուրտը։ 9

Աստուծոյ շնչելիցը դոյանում են առնամանիք, և ջրերի տարածութիւնը սեղմվում է։ 10

Նաև բեռնում է թումպը իր թացութիւնով, և փռում է իր լուսաւոր ամպերը։ 11

Եւ նորունք շուռ գալով տեղափոխվում են նորա խորհուրդներովը, որ անեն նորա բոլոր իրանց հրամայածը երկրագնդի երեսի վերայ։ 12

Մերթ խրատի համար, մերթ իրրև իր հաճութիւնը, մերթ շնորհքի համար բերում է նա նորանց։ 13

Ով Յոբ լսիր այս բաները, կանգնիր և հասկացիր Աստուծոյ սքանչելիքը։ 14

15 Գիտե՞ս արդեօք, թէ Աստուած ինչպէս է բեռնում նորանից, և փայլեցնում իր ամպի լոյսը։
16 Գիտե՞ս արդեօք ամպերի հաւասարակշռութիւնը, գիտութեամբ կատարեալի հրաշալիքները։
17 Որ հանդերձներդ տաքանում են, երկիրը հարաւից հանգստանալիս,
18 Նորա հետ մէկտեղ տարածե՞ր եթերային երկինքը, որ ամուր է ինչպէս ձուլած հայելի։
19 Սովորեցրու մեզ թէ ինչ ասենք նորան, չենք կարողանում դէ՜ն կարգադրել խաւարի պատճառով։
20 Նորան կ'պատմուի՞ արդեօք, երբոր ես խօսեմ, եթէ մէկ մարդ ասէ, իսկոյն կուլ կ'գնայ։
21 Եւ հիմա չեն տեսնում լոյսը, որ ճառագայթում է երկնից վերայով. բայց քամին անցնում է վերայովը և պայծառացնում նորանից։
22 Հիւսիսից ոսկի է բերվում, Աստուծոյ մօտ ահեղ փառաւորութիւն կայ։
23 Նա Ամենակարող է, չենք հասնիլ նորան՝ զօրութեամբ բարձրացեալ է. և իրաւունքն ու արդարութեան շատութիւնը չի ծռիլ։
24 Նորա համար մարդիկ վախում են նորանից, նա մտիկ չի անիլ, ոչ մի ինքն իրանում իմաստուն եղողին։

ԳԼ. ԼՐ

1 Այն ժամանակ Եհովան պատասխանեց Յոբին փոթորկի միջից և ասաց.
2 Ո՞վ է դա, որ խորհուրդը նեղացնում է անիմաստ խօսքերով։
2 Մէկ գօտևորիր մէջքդ տղամարդի պէս, և ես քեզ հարցնեմ, ու դու ինձ հասկացրու։
4 Ո՞ւր էիր՝ ես երկրի հիմունքը դնելիս, իմացրու ինձ, եթէ իմաստութիւն գիտես։
5 Ո՞վ դրաւ նորա չափերը, եթէ գիտես, կամ թէ ո՞վ քաշեց լարը նորա վերայ։
6 Ինչի՞ վերայ են խրուած նորա խարիսխները, կամ ո՞վ է ձգել նորա անկեան քարը,
7 Առաւօտեան աստղերը միասին ցնծալիս, և Աստուծոյ բոլոր որդիքը երբոր գովաբանում էին։
8 Եւ ո՞վ կապեց ծովը դռներով, երբոր նա յորդահոսելով ելաւ արգանդից։
9 Երբոր ես ամպը նորա համար հանդերձ դրի, և մէգը՝ խանձարուր.
10 Եւ իմ սահմանը հաստատեցի նորա համար և փականք ու դռներ դրի.
11 Եւ ասացի. Մինչև այստեղ գաս, և էլ չանցնես, այստեղ կ'դադարեն քո փառաւոր ալիքները։
12 Քո օրերումը երբէք մէկ առաւօտի հրամայե՞լ ես, ցո՞յց ես տալ արշալուսին իր տեղը.
13 Որ բռնէ երկրի ծայրերը. և թօթափուին անզգամները նորանից։
14 Որ նա փոխուի ինչպէս կնիքի կաւը, և բաները ներկայանան իբրև զգեստաւորուած.
15 Եւ ամբարիշտներից արգելուի իրանց լոյսը և բարձր բազուկը կոտրուի։
16 Արդեօք գնացե՞լ ես մինչև ծովի աղբիւրները, և անդունդի խորքումը մտե՞ն ես եկել.
17 Արդեօք բացուե՞լ են քո առջև մահուան դռները, և մահուան ստուերի մէջ դռները տեսե՞լ ես։
18 Արդեօք հասկացե՞լ ես մինչև երկրի լայնքերը. ասիր եթէ գիտես ամենը։
19 Ո՞րն է ճանապարհը, ուր բնակուում է լոյսը, և ո՞րն է խաւարի տեղը.
20 Որ դու նորան տանէիր իր սահմանը, և գիտենայիր նորա տան շաւիղները։
21 Դու գիտե՞ս, վասն զի այն ժամանակին ծնար, և քո օրերի թիւը շա՜տ է։
22 Արդեօք գնացե՞լ ես ձիւնի ընտեմարանները, և կարկուտի ընտեմարանները տեսե՞լ ես.

23 Որ ես պահել եմ նեղութեան ժամանակի համար, կռիւ և պատերազմի օրուան համար։

24 Աչի՞ ո՛ր ճանապարհն է, որով լոյսը բաժանուած է, տարածուած է արևելեան քամին երկրի վերայ։

25 Ո՞վ է բանում հեղեղների համար անցք, և ճանապարհ ամպրոպից փայլակի համար.

26 Որ անձրևէ անմարդաբնակ երկրի վերայ, անապատումը ուր որ մարդ չկայ։

27 Որ ամայի և ամայացուած տեղերը կշտացնէ, և որ դալար խոտ բուսցնէ։

28 Անձրևն հայր ունի՞ արդեօք կամ ո՞վ է ցօղի կաթիլները ծնողը։

29 Որի՞ արգանդից է դուրս գալիս սառը, և երկնքի եղեամի ծնողն ո՞վ է։

30 Քարի պէս ջուրերը պնդանում են, և անդունդի երեսը սառչում է։

31 Կարո՞ղ ես Բազմաստեղի կապերը կապել կամ Հայկի կշկուռնները բանո՞լ։

32 Կ'հանե՞ս կենդանակերպներն իր ժամանակին, և Արջն իր զաւակների հետ կ'առաջնորդե՞ս.

33 Գիտե՞ս երկնից կանոնները, կամ դո՞ւ ես դնում նորա իշխանութիւնը երկրի վերայ։

34 Կարո՞ղ ես ձայնդ բարձրացնել ամպերին, որ ջրհեղեղ քեզ ծածկէ.

35 Կայծակները ուղարկե՞լ որ գընան, և քեզ ասեն. Ահա այստեղ ենք։

36 Ո՞վ դրաւ երիկամունքներում իմաստութիւն, կամ սրտին ո՞վ տուաւ հանճար։

37 Ո՞վ է համարում ամպերն իմաստութեամբ, և երկնից տիկերն ո՞վ է պառկեցնում,

38 Երբոր փոշին ամբ ձուլածոյ է ձուլվում, և հողի կոշտերը իրար են կպչում։

39 Կարո՞ղ ես առիւծի համար աւար որսալ, և կորիւնների ախորժակը կշտացնե՞լ։

40 Երբոր նորանք կուռ են գալիս սպրելուն և դարան նստում մնացուն։

41 Ո՞վ է պատրաստում ագռաւի համար նորա որսը, երբոր նորա ցպլերն աղաղակում են առ Աստուած, և թափառում առանց ուտելոյ։

ԳԼ. ԼԹ

1 Գիտե՞ս ժայռի այծերի ծնանելու ժամանակը, եղնիկների ծնանելը դիտե՞լ ես։

2 Համարո՞ւմ ես նորանց լրացրած ամիսները, և գիտե՞ս նորա ծնելու ժամանակը,

3 Որ ծռվում ծնում են իրանց ձագերը, և ձգում են իրանց ցաւերը։

4 Զօրանում են նորանց ձագերը և մեծանում դաշտումը, գնում են դուրս, և ետ չեն դառնում նորանց մօտ։

5 Ո՞վ է ազատ բաց թողել ձիու և վայրի էշի կապերն ո՞վ է արձակել,

6 Որի տունը շինեցի անապատը, և աղտոտը նորա բնակարանները.

7 Որ ծիծաղում է քաղաքի ժողովի վերայ, առիւծի աղաղակը չէ լսում.

8 Ման է դալիս լեռներում իր արօտում, և ամեն թեռուչ խոտերը պտրում է։

9 Միեղջերուն կուզէ՞ քեզ ծառայել, կամ թէ կ'օթևանէ՞ քո մսուրի մօտ.

10 Կարո՞ղ ես միեղջերուն ակօսումը կապել իր չուանով, կամ թէ քո ետևից կ'տափանէ՞ խոտ ու բոլտերը։

11 Կ'վստահե՞ս նորան, որովհետև ոյժը շատ է. և գործդ նորան կը յանձնե՞ս։

12 Կ'հաւատաս նորան թէ քո ցանածը կ'բերէ, և քո կալը կ'ժողովէ։

13 Ջայլամի թևերը ուրախ ուրախ ծածանվում է, միթէ արագիլի թևն ու փետուրն է։

14 Ոչ, նա թողում է երկրին իր ձուերը, և հողի վերայ տաքացնում է նորանց։

15 Եւ մոռանում է որ մի ոտք
կ'կոտրէ նորանց, և դաշտի գա-
զանները նորանց ոռնոկոխ կ'ա-
նեն։
16 Նա անգութ է իր ձագերին,
իբր թէ իրանը չեն, իր աշխա-
տանքը դատարկ լինելուն վախ
չունի։
17 Վասն զի Աստուած զրկել է
նորան իմաստութիւնից, և գի-
տութիւնից նորան բաժին չէ
տուել։
18 Իսկ երբոր նա վեր է բարձրա-
նում, ծիծաղում է ձիան և ձիա-
ւորի վերայ։
19 Զիանը դո՞ւ ես տյժ տուել, նո-
րա պարանոցը հագցրե՞լ բաշը.
20 Դո՞ւ ես նորան թռչել տալիս
մարախի նման. նորա փռռալով
վրնջելը երկիւղալի է։
21 Ամբակումը քանդում է հով-
տումը և զուարճանում է զոր-
վը, դուրս է գալիս սպառազէնը
դիմադրելու։
22 Ծիծաղում է երկիւղի վերայ,
և չէ սոսկում, և ետ չէ դառ-
նում սուրի առջևից։
23 Նորա վերայ ճռճռացնում է
կապարճը, պսպղուն նիզակը և
գեղարդը։
24 Ցասումով ու կատաղութեամբ
կուլ է տալիս հողիցը, և չէ դի-
մանում երբոր լսում է շեփորի
ձայնը.
25 Շեփորը հնչեցնելիս ասում է.
Օ՛խ, և հեռուանց առնում է
պատերազմի հոտը, զօրավարների
որոտալը և դղրդիւնը։
26 Քո՞ գիտութիւնից է թռչում
բազէն, և իր թռիչները դէպի
հարաւ տարածում։
27 Կամ քո՞ խօսքովն է սանում
արծիւը, ու բարձրերումը դնում
իր բոյնը։
28 Նա ժայռի վերայ է բնակում
և բոյն դնում ժայռի ժանիքի և
ապառաժի վերայ։
29 Անտեղից է նա պտրում կե-
րակուրը, հեռուանց տեսնում
են նորա աչքերը։
30 Նորա ձագերն էլ արիւն են
ծծում, և ուր որ դիակներ են
լինում, նա այնտեղ է։

31 Եւ Եհովան Յոբին պատասխա-
նելով ասաց.
32 Պիտի կարողանա՞յ վիճել Ամե-
նակարողի հետ խրատողը, Աս-
տուծոյն յանդիմանողը թող պա-
տասխանէ։
33 Եւ Յոբը պատասխանեց Եհո-
վային և ասաց.
34 Ահա ես նուաստ եմ, ի՞նչ պա-
տասխանեմ. ձեռքս բերանիս եմ
դնում։
35 Մէկ խօսել եմ, այլևս չեմ
պատասխանել. և միւսանգամ
էլ, և չեմ կրկնել։

Գլ. Խ

1 Եւ Եհովան պատասխան տուաւ
փոթորկից Յոբին և ասաց.
2 Հիմա մէջքդ գօտեպնդիր քա-
ջասրտի պէս, որ քեզ հարցնեմ,
և դու ինձ իմացրու,
3 Յիրաւի պիտի խափանե՞ս իմ
դատաստանը, ինձ յանցաւո՞ր
անես, որպէս զի դու արդարա-
նաս։
4 Կամ թէ բազո՞ւկ ունիս Աս-
տուծոյ նման, և կարո՞ղ ես ձայ-
նովդ նորա պէս որոտալ։
5 Մէկ զարդարուիր փառքով ու
մեծութիւնով, և պայծառու-
թիւն ու շքեղութիւն հագիր.
6 Թափիր բարկութեանդ եռան-
դը, և մտիկ տուր ամեն հպար-
տին, և խոնարհեցրու նորան.
7 Մտիկ տուր ամեն հպարտին, 7
նուաճիր նորան, և խորտակիր
ամբարիշտներին իրանց տեղը։
8 Թաղիր նորանց միասին հողի 8
մէջը, և նորանց երեսները կա-
պիր ծածկոցով։
9 Այն ժամանակ ես էլ քեզ կը 9
գովեմ, որ քո աջ ձեռքը քեզ
օգնում է։
10 Ահա Բեհեմովթը, որին քեզ 10
հետ ստեղծեցի, խոտը արջառի
պէս է ուտում.
11 Ահա նորա ոյժը իր մէջքումն 11
է, և նորա զօրութիւնը իր փորի
մկանունքումն է։
12 Նա ծառում է իր պին եղևի- 12
նի նման, նորա ազդրերի ջիլերը
հիւսուած են.

13 Նորա ոսկորները պղնձի խողովակներ են, նորա ոսկորները երկաթի նիգեր են։
14 Նա Աստուծոյ *գործերի գլխաւորն է. նորա Արարիչը կ'ժամանեցնէ նորան իր սուրը։
15 Վասն զի լեռները նորա համար կերակուր են բերում, և դաշտի բոլոր գազանները խաղում են այնտեղ.
16 Ստուերախիտ ծառերի տակին է նա պառկում՝ եղէգների շուքումը և ճահիճներում.
17 Որ ան ծածկում են ստուերախիտ ծառերի հովանիները, նորան պատում են հեղեղատների ուռիները։
18 Ահա գետը վարարելիս նա չէ վրդովվում, ապահով է նա եթէ Յորդանանն էլ յորդէ դէպի նորա բերանը։
19 Նորա աչքի առջև նա կ'բռնուի՞, որոգայթի լարերով կարելի՞ է ծակել նորա քիթը։
20 Կարո՞ղ ես լեհյաթանին կարթով բռնել, և չուանով քաշի՞ր նորա լեզուն։
21 Կարո՞ղ ես եղէգ անցկացնել նորա քթովը, և մախաթով ծակե՞լ նորա ծնօտը։
22 Մի՞թէ քեզ շատ աղաչանքներ կանէ նա, կամ կակուղ խօսքեր կ'խօսէ՞ քեզ հետ։
23 Մի՞թէ նա քեզ հետ դաշինք կ'դնէ. կարո՞ղ ես նորան մշտակայ ծառայ շինել։
24 Մի՞թէ կարող ես նորա հետ խաղալ ինչպէս թռչնիկի հետ, և նորան կապե՞լ քո աղջկանց համար։
25 Ձկնորսները կարո՞ղ են նորանով առևտուր անել, և նորան բաժանե՞լ վաճառականների մէջտեղը։
26 Կարո՞ղ ես լցնել նորա մորթին սլաքներով, և ձկնորսի տէգերով նորա գլուխը։
27 Ձեռքդ դիր վերան, և էլ յիշիր պատերազմ, միւսանգամ չես անիլ։

* Ճանապարհների

Գլ. ԽԱ.

1 Տես մարդուս յոյսը դատարկ է ինուամ, արդէն մինչև նորա տեսքովը կործանվում է։
2 Մի՞ ոչնչութիւ յանդուգը չկայ, որ նորան գրգռէ, ուրեմն ո՞վ է նա որ իմ առջևը կանգնէ.
3 Ո՞վ է առաջ ինձ մի բան տուել, որ ես նորան վճարեմ, բոլոր երկնից տակինը իմն է։
4 Ես չեմ լռիլ նորա անդամների մասին, նաև նորա զօրութեան ու դեղեցիկ կարգաւորութեան մասին
5 Ո՞վ կարող է բանալ նորա զգեստի երեսը, նորա զոյգ կզակների մէջը ո՞վ կ'մտնէ։
6 Նորա երեսի դռները ո՞վ կարող է բանալ, նորա ակռաների շուրջը երկիւղ կայ։
7 Նո՛ր վահանների ամրութիւնը էր խրոխտութիւնն է. կապուած են՝ պինդ կնքուած.
8 Այնպէս փակուած է մէկը միւսին, որ քամի էլ չի անցնիլ նորանց միջովը.
9 Մէկմէկու կցուած են, իրար բռնած են և իրարից չեն բաժանուիլ։
10 Նորա փռշտալը փայլում է լուսոյ պէս, նորա աչքերը արշալոյսի արտևանունց նման են։
11 Նորա երախից ջահեր են դուրս դալիս, կրակի կայծեր են թռչտում։
12 Քթածակերից ծուխ է դուրս դալիս, ինչպէս եռացող սան և կաթսայ։
13 Նորա շունչը կայծերն է վառում, և բոց է քլքլում նորա բերանից։
14 Նորա պարանոցումը ոյժ է բնակում, և նորա առջևից փախչում է երկիւղը։
15 Նորա ծալծալուած մսերը փակած են, ձուլուած են նորա վերայ անշարժ։
16 Սիրտը ձուլուած է քարի նման, և կարծես թէ տակի ջաղացքարի պէս ձուլուած է։
17 Նա վեր կենալիս զողում են զօրաւորները, ապրածից շփոթվում են։

18 Նորան հաճոյ սուրը չի դիմանալ, նիզակը, գեղարդը, զրահն էլ։
19 Երկաթը նա յարդ է համարում, պղինձը՝ փտած փայտի պես։
20 Աղեղնաւորը նորան չի փախցնիլ, պարսաքարերը նորա համար մղեղ են դառնում։
21 Թակը դարմանի պէս է համարում, ծաղր է անում տեղի ճօճման վերայ.
22 Նորա տակին սրածայրը խեցիներ կան, կամնասայլ է փռում ցեխի վերայ։
23 Անդունդը եռանցնում է սանի պէս, և ծովը եփող սպեղանիքի է դարձնում։
24 Եռևիցը ճանապարհը լոյսի է տալիս, անդունդը սպիտակած մազի պէս է երևում։
25 Երկրիս վերայ նորա նմանը չը կայ, նա ստեղծուել է աներկիւղ։
26 Բոլոր բարձրութեան վերայ նա նայում է, նա բոլոր հպարտութեան որդկանց վերայ թագաւոր է։

ԳԼ. ԽԲ

1 Եւ Յոբը պատասխանեց Եհովային ու ասաց.
2 Գիտեմ որ ամեն բան կարող ես. եւ քո գիտաւորութիւնը չի արգիլուիլ.
3 Ո՞վ է նա որ խորհուրդը նսեմացնէ անիմաստ խօսքերով։ Ի՛նչ խօսել եմ, բայց չեմ հասկացել, ինձ համար անիմանալի են եղել, և ես չէի գիտում։
4 Աղաչում եմ՝ լսիր որ խօսեմ, քեզ հարցնում եմ, և ինձ իմացրու.
5 Ականջի լսելով ես լսել էի քո մասին, բայց հիմա աչքս տեսնում է քեզ։
6 Վանորոյ նուաստանում եմ և պղջում հողի և մոխրի վերայ։
7 Եւ երբոր Եհովան այս խօսքերը Յոբին ասել էր, յետոյ Եհովան ասաց Եղիփազ Թեմանացուն. իմ բարկութիւնը բորբոքել է քեզ դէմ ու քո երկու ընկերների վերայ, որովհետև իմ մասին ուղիղ չխօսեցիք իմ ծառայ Յոբին նման։ 8
Ուրեմն հիմա ձեզ համար եօթը զուարակ ու եօթը խոյ առէք ու գնացէք իմ ծառայ Յոբի մօտ, և պղջակէզ մատուցէք ձեզ համար, ու իմ ծառայ Յոբը աղօթք անէ ձեզ համար, վասն զի միայն նորան եմ ընդունում, որպէսզի չհատուցնեմ ձեզ ձեր յիմարութիւնը. որովհետև իմ մասին ուղիղ չխօսեցիք իմ ծառայ Յոբին նման։
9 Այն ժամանակ Եղիփազ Թեմանացին, Բաղդատ Սօքեցին ու Սոփար Նաամացին գնացին ու արին ինչպէս որ Եհովան ասել էր բանց. և Եհովան ընդունեց Յոբին։
10 Եւ Եհովան եաս դարձրեց Յոբի գերութիւնը, երբոր նա իր ընկերների համար աղօթեց. նաև Եհովան կրկնապատիկ աւելացրեց Յոբի բոլոր ստացուածքը։ 11
Այն ժամանակ նորա մօտ եկան բոլոր նորա եղբայրներն ու քոյրերը և նորա բոլոր ճանաչները ու նորա հետ հաց կերան նորա տանը, և նորան ցաւակցելով մխիթարում էին նորան այն ամեն փորձանաց համար, որ Եհովան բերել էր նորա վերայ. և իւրաքանչիւրը նորան մի կեսիթա և մի ոսկի օղ տուին։
12 Եւ Եհովան օրհնեց Յոբի վերջը աւելի, և նա ունեցաւ տասնուչորս հազար ոչխար, և վեց հազար ուղտ, և հազար լուծ եզ, և հազար մատակ էշ։ 13
Եւ նորան եղան եօթը որդիք և երեք աղջիկ։ 14
Եւ մէկ աղջկան անունը Եմիմա, և երկրորդի անունը Կասիա, և երրորդի անունը Կերեն-Հափուք։ 15
Եւ Յոբի աղջիկների պէս գեղեցիկ կանայք չէր գտնուել այն երկրում. և նորանց հայրը նորանց ժառանգութիւն տուաւ իրանց եղբարց մէջ։
16 Եւ Յոբն ապրեց սորանից յետոյ քառասուն տարի և տեսաւ իր որդիքն ու որդկանցը որդիքը չորս սերունդ։
17 Եւ Յոբը մեռաւ ծերացած և օրերից կշտացած։

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

ՍԱՂՄՈՍ Ա.

1 Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մէջ չէ գնում, և մեղաւորների ճանապարհի մէջ չէ կանգնում, և ծաղր անողների աթոռի վերայ չէ նստում.

2 Այլ նորա կամքը Տիրոջ օրէնքի մէջ է, և ցերեկ ու գիշեր նորա օրէնքի վերայ է մտածում,

3 Եւ նա ջրերի գնացքում տնկած ծառերի պէս կ'լինի, որ իւր պտուղը տալիս է իրան ժամանակին, և նորա տերեւը չէ թափւում, և ամեն ինչ որ անում է յաջողւում է նորան:

4 Այսպէս չեն ամբարիշտները, այլ ինչպէս դարման մղեղ, որ քամին ցրւում է տալիս:

5 Սորա համար ամբարիշտները չեն կանգնիլ դատաստանի մէջ, և ոչ մեղաւորները արդարների ժողովի մէջ:

6 Քանի Տէրը ճանաչում է արդարների ճանապարհը, բայց ամբարիշտների ճանապարհը կ'կորչի:

ՍԱՂ. Բ.

1 Ինչո՞ւ համար են խռովում հեթանոսները, և ազգերը սնապարծում:

2 Երկրի թագաւորները վեր են կենում, և իշխանները իրար հետ խորհուրդ են անում Տիրոջ դէմ և նորա Օծեալի դէմ.

3 Կտրենք նորանց կապանքները, և դէն դնենք նորանց չուաններըմեզանից:

4 Երկնքումը բնակողը ծիծաղում է, Տէրը ծաղրում է նորանց:

5 Այն ժամանակ կ'խօսի նորանց հետ իրան բարկութիւնով, և իրան սրտմտութիւնով կ'շփոթեցնէ նորանց:

6 Ես Օծեցի իմ թագաւորը իմ սուրբ Սիոն լեռան վերայ:

Կը պատմեմ հրամանը. Տէրն ասաց ինձ. դու իմ որդին ես, ես այսօր ծնայ քեզ.

8 Խնդրիր ինձանից, և հեթանոսները կ'տամ քեզ ժառանգութիւն, և երկրի ծայրերը քեզ սեպհականած:

9 Երկաթի գաւազանով կ'ջարդես նորանց, և փրուտի անօթի պէս կ'փշրես նորանց:

10 Եւ հիմա, ով թագաւորներ, խոհեմացէք, և խրատուեցէք, ով երկրի դատաւորներ:

11 Տիրոջը ծառայեցէք վախով, և ցնծացէք դողալով:

12 Որդուն համբուրեցէք, որ չը բարկանայ, և դուք չ'կորչիք ճանապարհումը. ինչու որ նորա բարկութիւնը շուտով կ'վառուի. երանի այն ամենին որ նորան են յուսացած:

ՍԱՂ. Գ.

Դաւթի սաղմոս, երբ Աբիսաղոմ որդու երեսից փախչելիս:

1 Ով Տէր, ո՞րքան շատացան իմ թշնամիները, շատերը վեր են կենում ինձ վերայ:

2 Շատերն ասում են իմ անձի համար, թէ Սորան փրկութիւն չ'կայ Աստուծոյ մօտ: (Սէլա):

3 Բայց դու, Տէր, իմ ապարն ես, իմ փառքը իմ գլուխը բարձրացնողը:

4 Իմ ձայնովս աղաղակում եմ դէպի Տէրը, և նա պատասխանում է ինձ իրան սուրբ լեռնիցը: (Սէլա):

5 Ես պառկեցի և քնեցի, և արթնացայ, ինչու որ Տէրը պահպանում է ինձ:

6 Ես չեմ վախիլ բիւրաւոր ժողովրդից, որ չորս կողմովս պատել են:

7 Վե՛ր կաց, Տէր, փրկիր ինձ, ով իմ Աստուած. պատճառն որ դու իմ ամեն թշնամիների

թուշին խփուամ էս, և ամբա-
րիշտներըդ բշրուամ էս։
8 Տիրոջն է փրկութիւնը. քո ժո-
ղովրդի վերայ լինի քո օրհնու-
թիւնը։ (Սէլա)։

ՍԱՂՄ. Դ

*Երգողների գլխաւորներին. Նիկինո-
թով։ Սաղմոս Դաւթի։*

1 Երբոր կանչեմ, լսիր ինձ, ով
իմ արդարութեան Աստուած.
դուք ինձ նեղութեան մէջ ազատե-
ցիր ինձ, ողորմիր ինձ ու լսիր իմ
աղօթքը։
2 Ով մարդկանց որդիք, մինչև
ե՞րբ իմ փառքը ամօթ պիտի
դարձնոյ, և ունայն բան պիտի
սիրէք և սուտութիւն պիտի խըն-
րէք։ (Սէլա)։
3 Բայց ճանաչեցէք, որ Տէրը
ընտրել է իրան Սուրբին. Տէրը
լսուամ է, երբոր նորան կանչուամ
եմ։
4 Դողացէք և մի մեղանչէք. խո-
սեցէք ձեր սրտերի հետ ձեր ան-
կողիններուամը և լուռ կացէք,
(Սէլա)։
5 Արդարութեան զոհեր ընծայե-
ցէք, և Տիրոջը յուսացէք։
6 Շատերն ասում են՝ Թէ Բարին
ո՞վ ցոյց կ'տայ մեզ. բարձրացրու
մեզ վերայ քո երեսի լոյսը, Տէր։
7 Դու ուրախութիւն տուիր իմ
սրտին՝ նորանց ցորենի և գինու
շատանալու ժամանակին աւելի։
8 Խաղաղութիւնով կ'պառկիմ
և իսկոյն կ'քնեմ, քանզի դու մի-
այն, ով Տէր, բնակեցնուամ ես
ինձ ապահովութեամբ։

ՍԱՂՄ. Ե

*Երգողների գլխաւորին, Նեհիլոթի
վերայ, Դաւթի սաղմոս։*

1 Տէր, ականջ դիր իմ խօսքերին,
և մխիթար առ իմ սղոսկը։
2 Մխիթար դիր իմ սղոսկի ձայ-
նին, ով իմ Թագաւոր և իմ
Աստուած. ինչու որ դեպի քեզի
եմ աղաչուամ։
3 Տէր, առաւօտուն լսիր իմ
ձայնին, առաւօտուն պատրաստ
կ'լինիմ քեզ համար ու կ'սպա-
սեմ։
4 Քանզի դու անօրէնութեան հա-
ճեցող Աստուած չես. չարը չի
բնակվիլ քեզ մօտ։
5 Ամբարտաւանները չեն կենալ
քո աչաց առջև. դու ատուամ ես
բոլոր անօրէնութիւն գործողնե-
րին։
6 Դու կ'կորցնես սուտ խօսողնե-
րին. Տէրն արիւն թափող և նեն-
գաւոր մարդիցը զզվուամ է։
7 Բայց ես քո շատ ողորմութիւ-
նովը կ'մտնեմ քո տունը, և դէ-
պի քո տաճարը երկրպա-
գութիւն կ'անեմ քեզ երկիւղովը։
8 Տէր, առաջնորդիր ինձ քո ար-
դարութիւնովը իմ թշնամիների
պատճառովը. շիտակ արա քո
ճանապարհն իմ առջև։
9 Քանզի *նորանց բերանումը ճըշ-
մարտութիւն չկայ. նորանց ներ-
սը չարութիւնով լիքն է, նորանց
կոկորդը բաց գերեզման է. և ի-
րանց լեզուովը նենգութիւն են
անուամ։
10 Դատիր նորանց, ով Աստուած,
թող վայր ընկնին իրանց խոր-
հուրդներիցը. իրանց շատ ամբա-
րշտութիւնների համար դէն գը-
ցիր նորանց, որովհետև խռովու-
թիւն են անուամ քեզ դէմ։
11 Բայց թող ուրախ լինին բոլոր
քեզ յուսացողները. թող յա-
ւիտեան ցնծան, քանզի դու պահ-
պանուամ ես նորանց. թող քե-
զանով գուարճանան քո անունը
սիրողները։
12 Քանզի դու օրհնուամ ես ար-
դարին, ով Տէր. դու հաճու-
թիւնով պատուամ ես նորան ինչ-
պես վահանով։

ՍԱՂՄ. Զ

*Երգողների գլխաւորին, Նկինոթով.
ութերորդին վերայ, Դաւթի սաղմոս։*

1 Ով Տէր, մի յանդիմանիր ինձ
քո բարկութիւնովը. և մի խրա-
տիր ինձ քո սրտմտութիւնովը։
2 Ողորմիր ինձ, Տէր, ինչու որ

*Նորան

ակաւ եմ ես. բժշկիր ինձ, Տէր, ինչու որ իմ ոսկերքը սոսկացած են։

3 Եւ իմ անձը շատ սոսկացած է. և դու, ով Տէր, մինչև ե՞րբ։

4 Դարձիր, Տէր, փրկիր իմ անձը, ապրեցրու ինձ քո ողորմութեան համար։

5 Քանզի մահուն մէջ քեզ յիշել չկայ. գերեզմանում ով կ'փառաւորէ քեզ։

6 Ես վատակած եմ իմ հառաչանքներովը. ողջ գիշերը լուանում եմ իմ անկողինը, և արտասուքներովս թրջում եմ իմ մահիճը։

7 Տրտմութիւնից մաշվեցաւ իմ աչքը, հնացաւ իմ նեղացնողների պատճառովը։

8 Հեռացէք ինձանից, ով բոլոր անօրէնութիւն գործողներ, քանզի Տէրն իմ լացի ձայնը լսեց։

9 Տէրը լսեց իմ աղաչանքը. Տէրը ընդունում է իմ աղօթքը։

10 Թող ամաչեն ու շատ զարհուրին իմ ամեն թշնամիները. կեա դառնան և ամաչեն շուտով։

ՍԱՂՄ. Է

Դաւթի Եիկկայեն, որ Տիրոջը երգեց Բենիամինեան Քուշի խօսքերի համար։

1 Ով Տէր՝ իմ Աստուած, քեզ վերայ եմ դրել իմ յոյսը, փրկիր ինձ իմ ամեն հալածողներից և ազատիր ինձ,

2 Որ իմ անձը առիւծի պէս չը յափշտակէ և պատառէ, և ազատող չլինի։

3 Ով Տէր՝ իմ Աստուած, եթէ այս բանը արել եմ, եթէ անիրաւութիւն կայ իմ ձեռքերումը.

4 Եթէ չար եմ հատուցրել ինձ հետ խաղաղ լինողին, և կողոպտել եմ ինձ զուր տեղը նեղացնողին.

5 Ապա թող թշնամին հալածէ իմ անձը և հասնէ նրան. և իմ կեանքը կոխ տայ գետնի վերայ և իմ փառքը հողի մէջ բնակեցնէ։ (Սէլա։)

6 Վեր կաց, ո՛վ Տէր, քո բարկութիւնով, բարձրացիր իմ նեղացնողների կատաղութեանը համար, և արթնացիր ինձ համար դո՛ւ իրաւունք պատուիրեցիր։

7 Եւ ազգերի ժողովքը թող շրջապատէ քեզ, և նորանից վերայ դարձիր դէպի բարձր աեղերը։

8 Տէրը դատաստան է անում ազգերի վերայ. դատիր ինձ, Տէր, իմ արդարութեան պէս և իմ անմեղութեան պէս, որ ինձանումս կայ։

9 Թող վերջանայ ամբարիշտների չարութիւնը, և հաստատիր արդարին. քանզի դու սրտեր ու երիկամներ քննող ես, ով արդար Աստուած։

10 Իմ ապարն Աստուած է, որ փրկում է սրտով ուղիղներին։

11 Աստուած արդար դատաւոր է, և Աստուած ամեն օր բարկանում է ամբարիշտի վերայ,

12 Եթէ նա չկատարի իր աուրը կ'արէ, իր աղեղը լարել և պատրաստել է.

13 Եւ մահու գործիքներ է պատրաստել նորա համար, և իր նետերը բորբոքուած արաւ։

14 Ահա նա անօրէնութեան երկունք է քաշում, յղացած է չարութիւնով և ծնում է խարէութիւն։

15 Հոր բոլոր ու խորացրեց, բայց ինքն ընկաւ այն խորի մէջ որ շինեց։

16 Նորա չարութիւնը կ'դառնայ իր գլխի վերայ. և նորա անիրաւութիւնը վայր կ'գայ իր գագաթի վերայ։

17 Կ'գոհանամ Տէրից իր արդարութեան համար և սաղմոս կ'ասեմ Բարձրեալ Տիրոջ անուանին։

ՍԱՂՄ. Ը

Երգողների գլխաւորին, Կիթթով։ Սաղմոս Դաւթի։

1 Ով Տէր՝ մեր Տէրը, ո՛րչափ հրաշալի է քո անունը բոլոր երկրի վերայ, որ քո փառաւորութիւնը բարձրացնում ես երկինքից վեր։

2 Երեխաների և կաթնակերների բերանից զօրութիւն պատրաստե-

ցիր քո թշնամիներին պատճառը-
վը, որ լուացնես թշնամուն և վր-
էժխնդրութիւն անողին։
3 Երբոր տեսանում եմ քո երկին-
քը, քո մատների գործը՝ լուսինն
ու աստղերը, որ դու հաստա-
տեցիր.
4 Ի՞նչ է մարդը որ դու յիշում
ես նորան, և մարդոյ որդին, որ
դու խնամք ես տանում նորա
Համար։
5 Եւ մին քիչ ցածացրիր նորան
հրեշտակներից, լայց փառքով
ու պատուով պսակեցիր նորան.
6 Դու իշխան կարգեցիր նորան
քո ձեռաց գործքերի վերայ. ա-
մեն բան դրիր նորա ոտքի տակ.
7 Ամեն ոչխարներն ու եզները և
վայրի գազաններն էլ.
8 Երկնքի թռչուններն ու ծովի
ձկները, որ ծովի ճանապարհնե-
րումն մտան են գալիս։
9 Ով Տէր՝ մեր Տէրը, ի՜նչ հրա-
շալի է քո անունը բոլոր երկրի
վերայ։

ՍԱՂՄ. Թ

*Երգողների գլխաւորին, Մութլաբ-
բէնի վերայ։ Սաղմոս Դաւթի։*

1 Կ'գոհանամ քեզանից, Տէր, իմ
բոլոր սրտովը. կ'պատմեմ քո ա-
մեն հրաշքները։
2 Ուրախ կ'լինիմ ու կ'ցնծամ
քեզանով, սաղմոս կ'ասեմ քո
անունին, ով Բարձրեալ։
3 Իմ թշնամիները յետ դառնա-
լիս՝ կործանուեցան և քո երեսի-
ցը կորան։
4 Քանզի դու արիր իմ դատաս-
տանը և իրաւունքը. դու աթո-
ռի վերայ նստեցիր, ով արդար
դատաւոր։
5 Դու սաստեցիր հեթանոսնե-
րին և կորցրիր ամբարշտին. նո-
րանց անունը ջնջեցիր յաւիտե-
ան յաւիտենից։
6 Թշնամիքը վերջացան բոլորո-
վին՝ յաւիտենական աւերակներ
դարձան, և նորանց քաղաքները
քանդեցիր, նորանց յիշատակը
նորանց հետ կորաւ։
7 Բայց Տէրը յաւիտեան կայ.
նա իր աթոռը պատրաստեց դա-
տաստանի Համար։
8 Եւ նա աշխարհքս արդարու- 8
թիւնով կ'դատէ, և ազգերին
ուղղութիւնով իրաւունք կ'անէ։
9 Եւ Տէրը ապաւէն է աղքատին, 9
ապաւէն՝ նեղութեան ժամանակ-
ներում։
10 Եւ քեզ կ'յուսան քո անունը 10
ճանաչողները, քանզի դու չես
թողում քեզ խնդրողներին, Տէր։
11 Սաղմոս ասացէք Տէրոջը, որ 11
բնակվում է Սիոնումը, պատմե-
ցէք նորա գործքերը ժողովրդների
մէջ։
12 Քանզի արեան վրէժխնդիրը յի- 12
շեց նորանց, նա չմոռացաւ նեզ-
վածների աղաղակը։
13 Ողորմիր ինձ, Տէր, և տես իմ 13
նեղութիւնը, որ իմ ատողներից
է, դու՝ որ մահի դռներից բարձ-
րացնում ես ինձ.
14 Որ քո ամեն օրհնութիւնները 14
պատմեմ Սիոնի աղջկան դռներ-
ումը, և քո փրկութիւնով ցըն-
ծամ։
15 Հեթանոսները կոխ գնացին 15
այն հորի մէջ որ շինեցին. և նո-
րանց ոտները փոխանակութեան
այն վարմի մէջ, որ թագցրին։
16 Տէրը յայտնի եղաւ, նա դա- 16
տաստան արաւ. ամբարիշտն իր
ձեռաց գործքերումն բռնուեցաւ։
(Նիկկայոն. Սէլա։)
17 Ամբարիշտները դժոխքի մէջ 17
պիտի յետ դառնան, և ամեն
ազգերը, որ մոռանում են Ա-
ստուծոյն։
18 Քանզի աղքատն խափան չի մը- 18
ռացվիլ, և խեղճի յոյսը յաւիտ-
եան չի կորչիլ։
19 Վեր կաց, Տէր, որ մարդը չը 19
զօրանայ. թող հեթանոսները
դատվին քո առջև.
20 Տէր, սէ ու վախ դիր նորանց 20
վերայ. թող հեթանոսները իմա-
նան որ մարդիկ են։ (Սէլա)։

ՍԱՂՄ. Ժ

1 Ով Տէր, ինչո՞ւ ես հեռու կե- 1
նում, և թագցնում քեզ նեղու-
թեան ժամանակներումը։

2 Ամբարշտի ամբարտաւանութիւնովը այրվում է աղքատը. թող բռնուին այն չար խորհուրդներովը, որ հնարեցին։
3 Քանզի ամբարիշտը պարծենում է իր սրտի ցանկութիւնովը, և ագահն անիծում և անարգում է Տիրոջը։
4 Ամբարիշտն իր երեսի ամբարտաւանութիւնովն —— չէ. Երբեք չի խնդրում, Աստուած չը կայ. նորա բոլոր խորհուրդները — է,
5 Նորա ճանապարհները պինդ են ամեն ժամանակ. քո դատաստանները բարձր են նորա երեսից, իր ամեն թշնամիների վերայ փչվում է։
6 Նա ասում է իր սրտումը. Ես ազգից ազգ չեմ շարժուիլ, չար բան չի գալ ինձ վերայ։
7 Նորա բերանը լիքն է անէծքով, նենգութիւնով և խաբէութիւնով. նորա լեզուի տակին ցաւ և անօրէնութիւն կայ։
8 Նա գիւղերի դարանն է մնում, ծածուկ տեղը ապանում է անմեղին. նորա աչքերը ծածուկ նայում են խեղճի վերայ,
9 Թաղուն տեղը դարանամուտ է լինում ինչպէս առիւծ իր որջին մէջ. դարան է մնում, որ աղքատին յափշտակէ, և յափշտակում է աղքատին՝ նորան իր որոգայթին մէջ գցելով։
10 Նա կուզ է գալիս պառկում. Նա խեղճերը ընկնում են նորա ճանկերի տակ։
11 Նա իր սրտումն ասում է. Աստուած մոռացաւ, իր երեսը թագցրեց. նա չի տեսնիլ յաւետ։
12 Վեր կաց, Տէր՝ ով Աստուած, բարձրացրու քո ձեռքը. մի մոռանար նեղեալներին։
13 Ամբարիշտն ինչո՞ւ հոյհոյէ Աստուծոյն և իր սրտումն ասէ՝ թէ Դու չես խնդրում։
14 Դու տեսնում ես. ինչու որ դու մտիկ ես անում այն ցաւին ու նեղութեանը, որ քո ձեռքովը հատուցանես. աղքատն քեզ է յանձնում. դու ես որբի օգնականը։
15 Կոտրիր ամբարշտի և չարի բազուկը, որ նորա չարութիւնը խնդրես և էլ չգտնես։
16 Տէրն է թագաւոր յաւիտեան յաւիտեան, հեթանոսները պիտի կորչին նորա երկրից։
17 Դու լսում ես աղքատների ցանկութիւնը, Տէր, հաստատիր նորանց սիրտը, և ականջ դիր,
18 Որ դատաստան անես որբին և խեղճին, որ մարդու այլև չը հալածեն երկրից։

ՍԱՂՄ. Ժ.Ա

Սրգոյների գլխաւորին Դաւթի (սաղմոս)

1 Տիրոջը յուսացայ. էլ ինչպէս էք ասում իմ անձին՝ Թէ փախիր ձեր լեռանները ինչո՞ւ թռչուն։
2 Քանզի ահա ամբարիշտները աղեղ են լարում, և իրանց նետերը պատրաստում են չուանի վերայ, որ խաւարումը գցեն նորանց որ ուղիղ են սրտով։
3 Թէ որ հիմունքը քանդուին, արդարն ինչ անէ։
4 Տէրն իր սուրբ տաճարումն է. Տիրոջ աթոռը երկնքումն է. նորա աչքերը տեսանում են. նորա արտևանունքները քննում են մարդկանց որդիքներին։
5 Տէրը քննում է արդարին, բայց ամբարշտին և անիրաւութիւն սիրողին ատում է նորա անձը։
6 Նա ամբարիշտների վերայ որոգայթներ՝ կրակ և ծծումբ կ'աղեղայ, և նոցա բաժակի բաժինը սրտով մրրիկ կ'լինի։
7 Քանզի Տէրն արդար է և արդարութիւն է սիրում. ուղիղները կ'տեսանեն նորա երեսը։

ՍԱՂՄ. ԺԲ

Սրգոյների գլխաւորին Ութերորդի վերայ Դաւթի սաղմոս

1 Փրկիր, Տէր, քանզի սուրբերը պակասեցան. քանզի հաւատացեալները քիչացան մարդկանց որդիքների միջից։
2 Ամեն մարդ զուր բան է խօս-

ում իր ընկերի հետ. նենգաւոր շրթունքներով և կեղծ սրտով են խօսում։

3 Տէրը կ'ամայացնէ ամեն նենգաւոր շրթունքները, և մեծ մեծ բաներ խօսող լեզուն,

4 Որ ասում են՝ Թէ Մեր լեզուներով զօրաւոր ենք, մեր շրթունքները մեզ հետ են. ո՞վ է Տէրը մեզ համար։

5 Խեղճերի նեղութեան և աղքատների հառաչելու համար իսկ հիմա վեր կ'կենամ, ասում է Տէրը. փրկութեան մէջը կ'դնեմ նորան որ փափաքում է նորան։

6 Տիրոջ խօսքերը մաքուր խօսքեր են, ինչպէս արծաթ որ բովի մէջ երկրի վերայ արուած և եօթն անգամ պարզուած է։

7 Դու, Տէր, կ'պահես նորանց, և կ'ապրեցնես նորանց այս ազգից մինչև յաւիտեան։

8 Ամբարիշտները ամեն կողմով մեն են գալիս՝ երբոր անպիտաններն բարձրանում են մարդկանց որդոց մէջ։

ՍԱՂՄ. ԺԳ

Երգողների գլխաւորին, Դաւթի սաղմոս։

1 Ով Տէր, մինչև ե՞րբ կ'մոռնաս ինձ յաւիտ. մինչև ե՞րբ կ'թագցընես քո երեսն ինձանից։

2 Մինչև ե՞րբ պիտի հոգս անեմ իմ անձումը, և տրտմութիւն ունենամ օրերով իմ սրտումը. մինչև ե՞րբ պիտի իմ վերայ բարձրանայ իմ թշնամին։

3 Նայիր, պատասխան տուր ինձ, ով Տէր՝ իմ Աստուած լուսաւորիր իմ աչքերը, որ մնհու մէջ չննջեմ,

4 Որ իմ թշնամին չասէ՝ Թէ Ես յաղթեցի նորան, և իմ նեղացողները չցնծան, որ սեղից շարժվեցայ։

5 Բայց ես քո ողորմութեանն եմ յուսացած, թող իմ սիրտը ցընծայ քո փրկութիւնովը. թող ես Տիրոջը երգեմ, որ բարի արաւ ինձ։

ՍԱՂՄ. ԺԴ

Երգողների գլխաւորին, Դաւթի սաղմոս։

1 Անզգամն ասաց իր սրտումը՝ Ըէ Աստուած չկայ. նորանք ապականուեցան և գարշելի եղան իրանց գործքերովը. ոչ ով չկայ որ բարի գործէ։

2 Տէրը երկնքիցը մարիկ է անում մարդկանց որդիքների վերայ, որ տեսնէ, Թէ կ'լինի՞ արդեօք մէկ խնամատար, որ Աստուծուն խընդրէ։

3 Ամենքը խոտորվեցան, և միասին անպիտանացան, բարի գործող չկայ, մէկն էլ չկայ։

4 Մի՞թէ չեն իմանում ամեն անօրէնութիւն գործողները, որ իմ ժողովուրդն ուտում են ինչպես որ հացը կ'ուտեն, և Տիրոջը չեն կանչում։

5 Անտեղ վախում են վախով. քանզի Տէրը արդարների ցեղի մէջ է։

6 Խեղճի խորհուրդը ամօթ էք անում, որ Տէրը նորա յոյսն է։

7 Ո՜հ Թէ Սիօնից գար Իսրայէլի փրկութիւնը. երբոր Տէրն իր ժողովրդի գերութիւնը դարձնէ՝ Յակոբը կ'ցնծայ և Իսրայէլն ուրախ կ'լինի։

ՍԱՂՄ. ԺԵ

Դաւթի սաղմոս։

1 Տէր, ո՞վ կ'կենայ քո խորանումը, և ո՞վ կ'բնակուի քո սուրբ լեառնումը։

2 Ուղիղ գնացողը և արդարութիւն գործողը, և իր սրտումը ճշմարտութիւն խօսողը։

3 Նա որ իր լեզուովը չէ բամբասում և իր ընկերին չար չէ անում, և իր դրացու վերայ նախատինք չէ գցում.

4 Որ նորա աչքերի առջև անարգուած է չարագործը. բայց Տիրոջից վախեցողներին պատիւ է տալիս, որ ընկերին երդում է անում և չէ փոփոխում.

5 Որ իր արծաթը վարձով չէ

տալիս, և անմեղի դէմ կաշառք չէ առնում. ով որ այս անէ, չի շարժվիլ տեղիցը յաւիտեան։

ՍԱՂՄ. ԺԶ

Դաւթի Գիրք։

1 Պահիր ինձ, ով Աստուած, ինչու որ քեզ եմ յուսացած։
2 Ասացի Տիրոջը՝ թէ դու ես իմ Տէրը. բարիք չունիմ քեզանից զատ։
3 Սրբերին, որ երկրումն են, և փառաւորներին՝ նորանց վերայ է իմ բոլոր հաճութիւնը։
4 Կ'շատանան նորանց ցաւերը, որ օտար Աստուած եռևից վազում են. ես չեմ մատուցանիլ նորանց ընծաները, որ արիւնից են. և նորանց անուններըը իմ շրթունքներին վերայ չեմ առնիլ։
5 Տէրն է իմ ժառանգութեան և իմ բաժակի բաժինը. դու հաստատ պահում ես իմ ժառանգութիւնը։
6 Վիճակ ընկաւ ինձ ցանկալի տեղանքը, և այս ժառանգութիւնը հաճոյ է ինձ։
7 Ես կ'օրհնեմ Տիրոջը, որ ինձ խրատ է տալիս. և գիշերն էլ իմ երիկամունքներն յորդորում են ինձ։
8 Տիրոջը իմ առջև դրի ամեն ժամանակ. որովհետև նա իմ աջ կողմն է. ես չեմ սասանուիլ։
9 Սորա համար իմ սիրտն ուրախ է, և իմ փառքը ցնծում է. և մարմինս էլ յուսով կ'բնակուի։
10 Քանզի իմ անձը չես թողիլ դժոխքումը, և քո սրբոյն ապականութիւն տեսնիլ չես տալ։
11 Դու ինձ ճանապարհ կ'ուցուցանես կեանց ճանապարհը. քո երեսի առջև ուրախութիւնների լիութիւն կայ, և քո աջ կողմը՝ քաղցրութիւններ յաւիտեան։

ՍԱՂՄ. ԺԷ

Դաւթի Աղօթք

1 Ո՛վ Տէր, լսիր արդարութեան.
մտիկ տուր աղաղակիս, և ականջ դիր իմ աղօթքին, որ ուստ շրթունքներից չէ։
2 Թող քո երեսից դուրս գայ իմ դատաստանը. թող քո աչքերը նային ուղղութեան վերայ։
3 Դու փորձեցիր իմ սիրտը և դիշերումը քննեցիր. դու կրակով հալեցրիր ինձ և անիրաւութիւն չը գտար ինձանումն. ինչ որ մտածում եմ՝ իմ բերանիցը դուրս չէ գալիս։
4 Մարդկանց գործերին նկատմամբ՝ քո շրթանց խօսքի պէս զգոյշ եմ կենում բռնաւոր ճանապարհներից։
5 Հաստատիր իմ գնացքը քո ճանապարհումը, որ ոտքերս չը գլորվին։
6 Ես կանչում եմ քեզ, որ դու լսես ինձ, ով Աստուած. ականջդ դիր ինձ մօտ դարձրու. լսիր իմ խօսքերը։
7 Փառաւոր արա քո ողորմութիւնը, ով յուսացողների փրկողը նորանցից՝ որ քո աջ ձեռին հակառակ են կենում։
8 Պահիր ինձ ինչպէս աչքի բիբ, և քո թևերի շուքի տակ ծածկիր ինձ։
9 Այն ամբարիշտներից՝ որ քանդում են ինձ. իմ անձի թշնամիներից, որ չորս կողմից պաշարում են ինձ։
10 Նորանք փակում են իրանց պարարտ սիրտը, և իրանց բերանովը ամբարտաւանութիւն են խօսում։
11 Հիմա մեր գնացքի չորս կողմը պատում են մեզ. և իրանց աչքերը դրած են, որ մեզ գետնի վերայ գցեն։
12 Նորանք նման են առիւծի, որ ցանկանում է գիշատել. և առիւծի ձագին, որ ծածուկ տեղերումը նստած է։
13 Վեր կաց, Տէր, առ նորան առջևը. նորան գետնի վերայ գըցիր. և իմ անձը քո սրովէ սպրեցրու ամբարիշտների ձեռքիցը։
14 Քո ձեռքովէ, ով Տէր, մարդկանցիցը՝ այս աշխարհքի մարդկանցիցը, որ նորանց

բաժինը այս կեանքումն է. և
լցնում եմ նորանց փորը քո գան-
ձերովը, որ նորանց որդիքներն էլ
կշտացած են, և մնացածը թող-
ում են իրանց երեխաներին:
15 Բայց ես արդարութիւնով կը
տեսնեմ քո երեսը, և կ'կշտա-
նամ, երբոր արթնանամ քո նը-
մանութիւնովը:

ՍԱՂՄ. ԺԷ

*Երգողների գլխաւորին, Տիրոջ ծառայ
Դաւթի սաղմոս, որ այս երգի խօսքերն
ասաց Տիրոջը այն օրումը, որ Տէրը նո-
րան փրկել էր իր բոլոր թշնամիների
ձեռքիցը և Սաուղի ձեռքիցը. և ասաց.*

1 Սրտանց սիրում եմ քեզ, ով
Տէր՝ իմ զօրութիւնը:
2 Տէր, իմ վէմ, և իմ բերդ և
իմ ազատիչ. իմ Աստուած, իմ
ամրութիւն, որին յուսացած
եմ, իմ ապար և իմ փրկու-
թեան եղջիւր, նա իմ բարձրու-
թիւն է.
3 Օրհնեալ Տիրոջ կանչեցի և իմ
թշնամիներիցը կ'փրկուիմ:
4 Մահի լարերը շրջապատեցին
ինձ, և կորստեան վտակները վա-
խեցրին ինձ,
5 Դժոխքի ցաւերը պատեցին ինձ,
մահի որոգայթները հասան ինձ
վերայ.
6 Իմ նեղութիւնումը կանչեցի
դէպի Տէրը, և դէպի իմ Աստ-
ուածն աղաղակեցի. նա լսեց իմ
ձայնը իր տաճարիցը. և իմ ա-
ղաղակը նորա առջև հասաւ՝ նո-
րա ականջներին:
7 Այն ժամանակ երկիրը դողաց
ու շարժուեցաւ, և լեռանց հի-
մունքները սարսափեցան և դո-
ղացին. պատճառն որ նա բար-
կացաւ:
8 Ծուխ գնաց եկաւ նորա բար-
կութիւնիցը, և փչացնող կրակ՝
նորա բերանիցը. կայծակներ փայ-
լատակեցին նորանից:
9 Նա խոնարհեցրեց երկինքը և
վայր եկաւ, և մառախուղ էր
նորա ոտների տակ:
10 Նա հեծաւ քերովբէի վերայ և
թռաւ. և սլացաւ քամու թևե-
րի վերայ:
11 Խաւարը ծածկոյթ դրաւ իր
վերայ. խորան եղան նորան ջրա
կողմովը խաւարային ջուրերն և
երկնից ամպերը:
12 Նորա առջև փայլող լուսիցը
նորա ամպերն անցան, կարկուտ
և կրակի կայծակներ գոռաց:
13 Եւ Տէրը որոտաց երկնքումը,
և Բարձրեալն իր ձայնը տուաւ
կարկտաւով և կրակի կայծակնե-
րով:
14 Եւ իր նետերն ուղարկեց և
ցրուեց նորանց, և կայծակները
դցեց և շփոթեցրեց նորանց:
15 Եւ երևեցան ջրերի անդունդքը,
և երկրի հիմունքը յայտնուեցան
քո սաստելուցը, Տէր. քո բար-
կութեան հողմի փչելուցը:
16 Նա վերևից ուղարկեց և ըռը-
նեց ինձ. նա շատ ջրերից հանեց
ինձ:
17 Նա ազատեց ինձ իմ զօրաւոր
թշնամուցը, և իմ ատողներիցը,
որ ինձանից զօրաւոր էին:
18 Նորանք իմ նեղութեան օրու-
մը առջևս ասան. բայց Տէրը նե-
ցուկ եղաւ ինձ համար:
19 Եւ ինձ հանեց լայնարձակ տեղ
և ինձ փրկեց, ինչու որ հաւա-
նեցաւ ինձ:
20 Տէրը բարի է անում ինձ իմ
արդարութեան պէս, և ինձ հա-
տուցանում է իմ ձեռքի մաք-
րութեան պէս:
21 Քանզի ես պահեցի Տիրոջ ճա-
նապարհները և իմ Աստուածո-
ւից ամբարշտութիւնով չհեռա-
ցայ:
22 Ինչու որ նորա ամեն իրաւունք-
ները իմ առջևն են, և նորա
պատուիրանքներն ինձանից չեմ
հեռացնում:
23 Ես անարատ եմ նորա առջև,
և զգուշանում եմ իմ անօրէնու-
թիւնիցը.
24 Ուստի Տէրը հատուցանում է
ինձ իմ արդարութեան պէս. իմ
ձեռքի մաքրութեան պէս՝ իմ
աչաց առջև:
25 Սրբի հետ սուրբ ես. և ան-
արատի հետ անարատ ես.
26 Ընտրեալի հետ ընտրեալ ես. և
ծուռի հետ ծուռ:

27 Քանզի դու ապքաո ժողովուրդին ապրեցնում ես. և բարձր աչքերը խոնարհեցնում ես։
28 Ինչու որ դու լուսաւորում ես իմ ճրագը. Տէր Աստուածը լուսաւոր է անում իմ խաւարը.
29 Ինչու որ քեզանով վազում եմ զօրքի վերայ. և իմ Աստուածովն անց եմ կենում պարսպի վերայից։
30 Աստուծոյ ճանապարհը կատարեալ է. Տիրոջ խօսքը կրակով մաքրուած է. նա պահապան է ամեն նրան յուսացողների համար.
31 Քանզի ո՞վ է Աստուած բաց ի Տէրից. և ո՞վ է վէմ մեր Աստուածանից զատ.
32 Աստուածը, որ զօրութիւն է հագցնում ինձ. և իմ ճանապարհն անարատ անում.
33 Նա՝ որ իմ ոտներն եղների նմանն է շինում, և ինձ բարձր տեղերումը կանգնեցնում.
34 Նա, իմ ձեռքը վարժեցնում է պատերազմ անելու, որ իմ բազուկը պղնձի աղեղը ծռեն։
35 Եւ տալիս ես ինձ քո փրկութեան վահանը, և քո աջը հաստատում է ինձ, և քո քաղցրութիւնը մեծացնում է ինձ։
36 Դու լայնարձակ ես անում իմ գնացքը իմ տակ, և իմ սրունքները չեն դողում։
37 Իմ թշնամիները կ'հալածեմ և նրանց կ'հասնեմ. և չեմ դառնալ մինչև որ փշանան։
38 Կ'զարկեմ նրանց, որ չկարենան վեր կենալ. նրանք իմ ոտքերի տակ կ'ընկնին։
39 Դու ինձ զօրութիւն ես հագցնում պատերազմի համար. և ինձ դէմ վեր կացածներին իմ տակն ես գցում։
40 Դու իմ թշնամիներին հալածական ես անում. և ես ինձ ատողներին կ'փշացնեմ։
41 Նրանք կանչում են, բայց փրկող չկայ. դէպի Տէրը՝ բայց նա նրանց չէ պատասխանում։
42 Ես կ'փշրեմ նրանց ինչպէս փոշի քամու առջև. դուրս կ'թափեմ նրանց ինչպէս փողոցի ցեխը։

Դու ազատում ես ինձ ժողովրդի հակառակութիւնից, ինձ հեթանոսների վերայ գլուխ ես դնում. այն ժողովուրդը, որ ես նորան չէի ճանաչում, ծառայում է ինձ։ 43
Ականջով լսելով հնազանդեցան ինձ. օտարները դիքը շողոքորթեցին ինձ։ 44
Օտարների որդիքը թուլացան, և սարսափում էին իրանց ապատարաններից։ 45
Կենդանի է Տէրը. և օրհնեալ է իմ վէմը. և բարձրացած լինի իմ փրկութեան Աստուածը. 46
Այն Աստուածը՝ որ վրէժ առնում է, և ժողովուրդներըը հնազանդեցնում է իմ ներքև. 47
Որ փրկում է ինձ իմ թշնամիներից. և բարձրացնում է ինձ նորանցից, որ ինձ դէմ վեր կացան. դու ազատում ես ինձ անիրաւ մարդուց։ 48
Սորա համար հեթանոսների մէջ կ'գոհանամ քեզանից, ով Տէր. և անուանիդ սաղմոս կ'ասեմ։ 49
Նա մեծացնում է իր փրկութիւնը իր թագաւորի համար. և ողորմութիւն է անում իր օծեալ Դաւթին և նորա զաւակին մինչև յաւիտեան։ 50

ՍԱՂՄ. ԺԹ

Երգողների գլխաւորին, Դաւթի սաղմոս։

Երկինքները պատմում են Աստուծոյ փառքը, և հաստատութիւնը իմացնում է նորա ձեռաց գործքերը։ 1
Օրը օրին խօսք է բղխում. և գիշերը գիշերին գիտութիւն է ցոյց տալիս։ 2
Չկայ լեզու և չկայ խօսք. նրանց ձայնը լսելի չէ. 3
Բայց նորանց բարբառը դուրս է գալիս ամեն երկիր, և նորանց խօսքը մինչև աշխարհքի ծայրերը. արեգակի համար խորան դրաւ նորանց միջումը։ 4
Եւ նա փեսայի նման դուրս է գալիս իր առագաստից, և ըն- 5

ուարճանում է ինչպէս հակայ իր ճանապարհը գնալու համար։
6 Նորա ելքը երկնքի մի ծայրից, և նորա գնացքը մինչև նորա միւս ծայրը. և ոչինչ չէ ծածկվում նորա տաքութիւնից։
7 Տիրոջ օրէնքը անարատ է, հանգստացնում է հոգուն, Տիրոջ վկայութիւնը ճշմարիտ է, իմաստուն է անում պարզամիտին։
8 Տիրոջ պատուիրանքները ուղիղ են, ուրախացնում են սիրտը. Տիրոջ հրամանները մաքուր են, լուսաւորում են աչքերը։
9 Տիրոջ վախը սուրբ է, մնում է յաւիտեան. Տիրոջ դատաստանները ճշմարիտ են, բոլորովին արդար։
10 Նորանք աւելի ցանկալի են քան թէ ոսկի և քան թէ շատ մաքրուած ոսկի. էլ աւելի քաղցր են քան թէ մեղր և մեղրահաց։
11 Քո ծառան էլ նորանցում լուսաւորվում է. նորանց պահպանութիւնումը շատ հատուցում կայ։
12 Ո՞վ է իմանում իր սխալմունքները. ծածուկ սխալմունքներից էլ սուրբ արա ինձ։
13 Եւ պահիր քո ծառային ամբարտաւանութիւններից, որ իշխանութիւն չանեն ինձ վերայ. այն ժամանակ անարատ կ'լինիմ և սուրբ կ'լինիմ մեծ անօրէնութիւնից։
14 Թող հաճոյ լինին քեզ բերանիս խօսքերը, և սրտիս խորհուրդը քո առջև՝ ով Տէր, իմ վէմ և իմ Փրկիչ։

ՍԱՂՄ. Ի

Երգողների գլխաւորին, Դաւթի սաղմոս։

1 Տէր լսէ քեզ նեղութեան օրումը, և Յակորայ Աստուծոյ անունը պաշտպանէ քեզ։
2 Նա քեզ օգնութիւն ուղարկէ սուրբ տեղից, և զօրացնէ քեզ Սիոնի միջից։
3 Նա յիշէ քո ամեն պատարագները. և քո ողջակէզները ընդունելի անէ. (Սէլա։)
4 Նա տայ քեզ քո սրտի ցանկութիւնը, և կատարէ քո ամեն խորհուրդները։
5 Թող ցնծանք քո փրկութիւնովը. և դրօշակ բարձրացնենք մեր Աստուծոյ անունովը. Տէրը կատարէ քո ամեն խնդրուածքները։
6 Հիմա իմացայ, որ Տէրը փրկում է իր օծեալին, և լսում է նորան իր սուրբ երկնքից՝ նորա աջի փրկութեան զօրութիւնովը։
7 Ոմանք կառքերով և ոմանք ձիանքով են պարծենում. բայց մենք մեր Տէր Աստուծոյ անունը կ'յիշենք։
8 Նորանք թեքուեցան և վայր ընկան. բայց մենք վեր կացանք և կանգնեցինք։
9 Տէր, ապրեցրու թագաւորին, և լսիր մեզ մեր կանչելու օրը։

ՍԱՂՄ. ԻԱ

Երգողների գլխաւորին, Դաւթի սաղմոս։

1 Ով Տէր, քո զօրութիւնովը ուրախ է թագաւորը, և ո՛րքան ցնծում է քո փրկութիւնովը։
2 Դու տուիր նորան իր սրտի ուզածը, և նորա շրթունքների խնդիրքը չարգելեցիր նորանից։ (Սէլա։)
3 Քանզի դու բարի օրհնութիւններ ես բերում նորա առջև, և մաքուր ոսկի պսակ ես դնում նորա գլխի վերայ։
4 Նա կեանք խնդրեց քեզանից. և դու նորան երկար օրեր տուիր յաւիտեան յաւիտենից։
5 Մեծ է նորա փառքը քո փրկութիւնովը. պատիւ և փառք ես դնում նորա վերայ։
6 Քանզի դու նորան օրհնութիւն ես շինում յաւիտեան. դու ուրախացնում ես նորան ուրախութիւնով քո երեսի առջև։
7 Քանզի թագաւորը Տիրոջն է յուսացած, և Բարձրեալի ողորմութիւնովը չի սասանիլ։
8 Քո ձեռքը կ'գտնէ քո ամեն թշնամիներին. և քո աջը կ'գտնէ քեզ ատողներին։
9 Դու վառուած փուռի նման

կ'անես նորանց՝ երբոր բարկանաս. Տէրը իր բարկութիւնովը կ'կորցնէ նորանց, և կրակը կուտէ նորանց։

10 Նորանց պատուղը կ'կորցնես երկրիցը, և նորանց սերունդը մարդկանց որդիներիցը։

11 Ինչու որ նորանք չարութիւն պատրաստեցին քեզ դէմ, խորհուրդ հնարեցին և ոչինչ չկարացին։

12 Ինչու որ դու նորանց թիկունքը կ'դարձնես. և քո աղեղի լարերը կ'քաշես նորանց երեսի վերայ։

13 Ով Տէր, բարձրացիր զօրութիւնովդ. և մենք կ'օրհնենք և սաղմոս կ'ասենք քո կարողութեանը։

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Երգողնիերի գլխաւորին, Այէլէթ-հաշահարի վերայ, Դաւթի սաղմոս

1 Իմ Աստուած, իմ Աստուած, ինչո՞ւ թողիր ինձ. հեռու ես իմ փրկութիւնիցը և իմ հառաչանքի խօսքերիցը։

2 Ով իմ Աստուած, ես կանչում եմ ցերեկը, բայց դու չես պատասխանում. գիշերն էլ՝ բայց հանգստութիւն չկայ ինձ համար։

3 Բայց դու սուրբ ես, ով Իսրայէլի գովութիւնների մէջ բնակվողդ։

4 Քեզ յուսացան մեր հարքը. նորանք յուսացան և փրկեցիր նորանց։

5 Դէպի քեզ աղաղակեցին, և ազատվեցան. քեզ յոյս դրին և չամաչեցին։

6 Իսկ ես որդն եմ և չէ թէ մարդ. մարդկանց նախատինք և ժողովրդի անարգանք։

7 Ամեն ինձ տեսանողները ծաղր են անում ինձ. էջոնց շրթունքները բաց են անում և գլուխը շարժում։

8 Նա Տիրոջն յուսացաւ, թող ազատէ դորան. թող փրկէ դորան՝ եթէ հաւանել է դորան։

9 Բայց դու ես որ հանեցիր ինձ իմ մոր արգանդիցը. դու եղար իմ յոյսը՝ իմ մոր ծծի վերայ։

10 Իմ մէջ արգանդիցը քեզ վերայ եմ գցուած. իմ մոր փորիցը դու ես իմ Աստուածը։

11 Մի հեռանար ինձանից, ինչու որ նեղութիւնը մօտ է, ինչու որ օգնութիւն անող չկայ։

12 Շատ զուարակներ իմ չորս կողմը պատեցին, և Բասանի զօրեղ եղները պաշարեցին ինձ։

13 Իրանց բերանը բաց արին ինձ վերայ ինչպէս գոռոզ և յափշտակող առիւծ։

14 Ես ջուրի պէս թափուեցայ, և իմ ամեն ոսկերքը լուծուեցան. սիրտս որովայնումս հալած մոմի պէս եղաւ։

15 Զօրութիւնս չորացաւ խեցու պէս, և լեզուս քիմքիս է կպած. և մահու հողի մէջ դրիր ինձ։

16 Քանդի շուներ պատեցին ինձ, և չարերի ժողովքը շրջապատեցին ինձ. իմ ձեռքերն ու ոտքերը ծակեցին։

17 Ես համարում եմ իմ ամեն ոսկերքը, բայց նորանք նայում և դիտում են ինձ։

18 Շորերս բաժանում են իրանց մէջ, և պատմուճանիս վերայ վիճակ են գցում։

19 Բայց դու, ով իմ Տէր, մի հեռանար. ով իմ զօրութիւն, ինձ օգնութեան շտապիր։

20 Փրկիր իմ անձը սրիցը, և իմ կեանքը շան ձեռքից։

21 Ապատիր ինձ առիւծի բերանից, և պատասխանիր ինձ՝ դոմէշի եղջիւրներից։

22 Ես քո անունը կ'պատմեմ իմ եղբարցը. ժողովրդի մէջ կ'օրհնեմ քեզ։

23 Ով Տէրից վախեցողներ, օրհնեցէք նորան. ով Յակոբի ամեն զաւակներ, փառաւորեցէք նորան. և վախեցէք նորանից, ով Իսրայէլի բոլոր զաւակներ։

24 Քանդի նա չանարգեց և չարհամարհեց խեղճի խղճութիւնը, և չծածկեց նորանից իր երեսը. բայց երբոր աղաղակեց դէպի նա, ականջ դրաւ։

25 Քեզ օրհնութիւն կ'տամ մեծ

ժողովրդում. իմ ուխտը կ'կատարեմ նորանից վախեցողների առջև։

26 Թող խեղճերն ուտեն և կշտանան. Թող օրհնեն Տիրոջը նորան խնդրողները. Ձեր սիրտը Թող ապրի յաւիտեան։

27 Երկրի ամեն ծայրերը կ'յիշեն և Տիրոջ մօտ կ'դառնան. հեթանոսների ամեն ազգերը քո առջև երկրպագութիւն կ'անեն։

28 Քանզի Տիրոջն է թագաւորութիւնը, և նա իշխանութիւն է անում հեթանոսների մէջ։

29 Երկրի ամեն պարարտները կ'ուտեն և երկրպագութիւն կ'անեն. նորա առջև վայր կ'ընկնին ամեն հողը իջնողները, որ իրանց անձը չեն ապրեցնում։

30 Սերունդը կ'ծառայէ նորան. նա Տիրոջը ազգ կ'համարուի։ (*)

31 Կ'գան և նորա արդարութիւնը կ'պատմեն այն ծնուելու ժողովրդին. Թէ Այս-ն նա արաւ։

ՍԱՂՄ. ԻԳ

Դաւթի սաղմոս։

1 Տէրն է իմ հովիւը. և կարօտութիւն չեմ ունենալ։

2 Կանաչ տեղերում հանգստացնում է նա ինձ, և հանդարտ ջրերի մօտ տանում է ինձ.

3 Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարութեան շաւիղներում իր անունի համար։

4 Թէ և գնամ մահի շուքի ձորում՝ չար բանից չեմ վախենալ. ինչու որ դու ինձ հետ ես. քո գաւազանն ու քո ցուպը մխիթարում են ինձ։

5 Դու իմ առջև սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես իւղով. իմ բաժակը խիստ լիքն է։

6 Չէնց բարիք և ողորմութիւն կ'գան իմ եանիցն իմ կենաց ամեն օրերում. և Տիրոջ տանը կ'բնակուիմ շատ երկար ժամանակ։

ՍԱՂՄ. ԻԴ

Դաւթի սաղմոս։

1 Տիրոջն է երկիրը և նորա լիութիւնը. աշխարհքը և նորա բնակիչքը։

2 Քանզի նա ինքը ծովերի վերայ հիմնեց նորան, և նորան գետերի վերայ հաստատեց։

3 Ո՞վ վեր կ'ելնի Տիրոջ լեռը, և ո՞վ կ'կանգնի նորա սրբութեան տեղում։

4 Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ սրտով. որ իր անձը անիրաւութեան չէ տալիս, և երդում չէ անում նենգութիւնով։

5 Նա օրհնութիւն կ'ստանայ Տէրից և արդարութիւն՝ իր փրկութեան Աստուածանից։

6 Այս այն ազգն է որ խնդրում է նորան, որ խնդրում է քո երեսը, ով Յակոբի Աստուած։ (Սէլա)։

7 Ով դռներ, բարձրացրէք ձեր գլուխները. և բարձրացրէք, ով յաւիտենական դռներ, որ փառաց Թագաւորը մտնէ։

8 Ո՞վ է այդ փառաց Թագաւորը։ Տէրը՝ զօրաւոր և ուժեղ. Տէրը՝ ուժեղ պատերազմի մէջ։

9 Ո՞վ դռներ, բարձրացրէք ձեր գլուխները, և բարձրացրէք, ով յաւիտենական դռներ, որ փառաց Թագաւորը մտնէ։

10 Ո՞վ է այդ փառաց Թագաւորը։ Զօրութեանց Տէրը՝ նա է փառաց Թագաւորը։ (Սէլա)։

ՍԱՂՄ. ԻԵ

Դաւթի սաղմոս։

1 Ով Տէր, դէպի քեզ եմ բարձրացնում իմ անձը։

2 Իմ Աստուած, քեզ եմ յուսացած, Թող չամաչեմ. Թող իմ թշնամիները չուրախանան ինձ վերայ։

3 Եւ ամեն քեզ սպասողները չեն ամաչիլ. բայց պիտի ամաչեն

*Կ'պատմուի Տիրոջ մասին էկ դարին։

զուր տեղը անօրէնութիւն գործողները։
4 Ցոյց տուր ինձ, ով Տէր, քո ճանապարհները, սովորեցրու ինձ քո գնալու ճանապարհները։
5 Առաջնորդիր ինձ քո ճշմարտութիւնումը, և սովորեցրու ինձ, թէ դու ես իմ փրկութեան Աստուածը. քեզ եմ յոյս դրել ամեն օր։
6 Յիշիր, ով Տէր, քո ողորմութիւնը ու քո քաղցրութիւնը, ինչու որ նորանք յաւիտեան են։
7 Մի յիշիր իմ մանկութեան մեղքերը և իմ յանցանքները, այլ քո ողորմութեան պէս յիշիր ինձ քո բարութեան համար, ով Տէր։
8 Բարի և ուղիղ է Տէրը. սորա համար մեղաւորներին սովորեցնում է ճանապարհը։
9 Նա առաջնորդում է հեզահոգիներին իրաւունքի մէջ. և սովորեցնում է հեզահոգիներին իր ճանապարհը։
10 Տիրոջ բոլոր ճանապարհները ողորմութիւն են և ճշմարտութիւն՝ նորա ուխտն ու վկայութիւնը պահողների համար։
11 Ով Տէր, քո անունի համար քաւիր իմ անօրէնութիւնը, ինչու որ շատ է։
12 Ով է այն մարդը՝ որ Տէրից վախենում է. սոքա կ'սովորեցնէ նորան այն ճանապարհը, որ ընտրել է։
13 Նորա անձը բարութեան մէջ կ'բնակուի. և նորա սերունդը երկիրը կ'ժառանգէ։
14 Տիրոջ մտերմութիւնը նորանից հետ է, որ վախում են նորանից. և իր ուխտը սովորեցնում է նորանց։
15 Իմ աչքերը միշտ դէպի Տէրն են, ինչու որ նա կ'հանէ իմ ոտքերը որոգայթից։
16 Ինձ մտիկ արա և ողորմիր ինձ, ինչու որ միայնակ և խեղճ եմ ես։
17 Արտաքին նեղութիւնները շատ են հանիր ինձ իմ վիշտերից։
18 Մտիկ արա իմ խղճութեանը և իմ ցաւին, և ներիր իմ ամեն մեղքերը։
19 Մտիկ արա իմ թշնամիներին, որ շատ են. և անիրաւ ատելութիւնով ատում են ինձ։
20 Պահիր իմ անձը և փրկիր ինձ. թող չամաչեմ. ինչու որ քեզ եմ յուսացած։
21 Թող անարատութիւնն ու ուղղութիւնը պահեն ինձ. ինչու որ քեզ եմ սպասում։
22 Ով Աստուած, փրկիր Իսրայէլին իր ամեն նեղութիւններից։

ՍԱՂՄ. ԻԶ

Դաւթի (սաղմոս)։

1 Ով Տէր, իրաւունք արա ինձ, ինչու որ ես անարատութիւնով գնացի, և Տիրոջը յուսացայ. ես չեմ սասանիլ։
2 Փորձիր ինձ, Տէր, և քննիր ինձ. փորձիր իմ երիկամունքները և իմ սիրտը։
3 Ինչու որ քո ողորմութիւնն իմ աչաց առջև է, և ես քո ճշմարտութիւնումն եմ գնում։
4 Ես ունայն մարդկանց հետ չեմ նստում, և կեղծաւորների հետ չեմ գնում։
5 Ես ատում եմ չարերի ժողովքը. և ամբարիշտների հետ չեմ նստում։
6 Լուանում եմ ձեռներս անմեղութիւնով. և քո սեղանի չորս կողմովը պտոյտ եմ տալիս, ով Տէր։
7 Որ օրհնութեան ձայնը լսել տամ. և քո ամեն պատմելիքները պատմեմ։
8 Ով Տէր, ես սիրում եմ քո տան բնակութիւնը. և քո փառաց բնակվելու տեղը։
9 Մի կորցնիր իմ անձը մեղաւորների հետ. և իմ կեանքն արիւն թափող մարդկանց հետ.
10 Որ նորանց ձեռքումը անիրաւութիւն կայ, և նորանց աջը լցուած է կաշառքով։
11 Բայց ես գնում եմ անարատութիւնով, փրկիր ինձ և ողորմիր ինձ։
12 Իմ ոտն կանգնած է ուղղութիւնում, և կ'օրհնեմ Տիրոջը ժողովուրդների մէջ։

ՍԱՂՄ. ԻԷ

Դաւթի (սաղմոս)

1 Տէրն է իմ լոյսը և իմ փրկու-
թիւնը, ես ումի՞ց պիտի վախե-
նամ. Տէրն է իմ կեանքի ղօրու-
թիւնը, ես ումի՞ց պիտի սարսա-
փիմ։
2 Չարերն իմ մարմինն ուտելու
համար ինձ վերայ են գալիս. իմ
նեղացնողներն ու թշնամիները
սահում են և վայր ընկնում։
3 Թէև զօրաբանակ էլ ինձ դէմ
բանակ տայ, իմ սիրտը չի վա-
խենալ. թէև պատերազմ էլ վեր
կենայ ինձ դէմ, ես դարձեալ կը
յուսամ։
4 Մէկ բան եմ խնդրում Տէրից.
ձը. և այն շատ կ'փափաքէի, որ
Տիրոջ տանը բնակուիմ իմ կեան-
քի բոլոր օրերը, որ Տիրոջ գեղե-
ցիկ փառքը տեսնեմ և նորա
տաճարին զննելով մտիկ տամ։
5 Ինչու որ չար օրուանը նա ծած-
կում է ինձ իր խորանի մէջ նա
թաղցնում է ինձ իր խորանի
ծածուկ տեղումը, և բարձրաց-
նում է ինձ վէմի վերայ։
6 Եւ հիմա իմ գլուխը կ'բարձ-
րանայ իմ թշնամիների վերայ,
որ իմ չորս կողմովը կ'են. և նորա
խորանի մէջ գոհութեան պա-
տարագներ կ'մատուցանեմ, կ'եր-
գեմ և սաղմոս կ'ասեմ Տիրոջը։
7 Լսիր, Տէր, իմ ձայնին երբոր
կանչեմ, և ողորմիր ինձ, և պա-
տասխան տուր ինձ։
8 Իմ սիրտն ասում է քեզ ի-
խօսէ՝ թէ խնդրեցէք իմ երեսը.
ահա, Տէր, ես էլ խնդրում եմ
քո երեսը։
9 Մի ծածկիր ինձանից քո երե-
սը, մի մերժիր ծառայիդ քո
բարկութեանովը. դու ես իմ օգ-
նութիւնը. մի հեռացներ ինձ և
մի թողուր ինձ, ով իմ փրկու-
թեան Աստուած։
10 Քանզի հայրս ու մայրս թող-
ցին ինձ, բայց Տէրը ընդունում
է ինձ։
11 Սովորեցրու ինձ, Տէր, քո ճա-
նապարհը, և առաջնորդիր ինձ
ուղիղ ճանապարհում իմ թշնա-
միների համար։
12 Մի մատներ ինձ իմ նեղացնող-
ների կամքին. ինչու որ սուտ վը-
կաներ են կանգնում ինձ դէմ՝
որ անօրէնութիւն են փչում։
13 Իսկ թէ որ ես հաստատ չհա-
ւատայի՝ թէ Տիրոջ բարութիւ-
նը կ'տեսանեմ կենդանեաց երկրու-
մը,
14 Սպասիր Տիրոջը, թող սիրտդ
պինա և զօրաւոր լինի. և սպա-
սիր Տիրոջը։

ՍԱՂՄ. ԻԸ

Դաւթի (Սաղմոս)։

1 Տէր, դէպի քեզ եմ կանչում.
իմ Վէմ, լուռ մի կենար ինձա-
նից. որ չլինի թէ դու ինձանից
լուռ կենաս, և ես գերեզմանի
մէջ մեռողներին նմանիմ։
2 Լսիր իմ աղաչանքի ձայնին՝
ես դէպի քեզ աղաղակելիս, երբ-
որ իմ ձեռքը բարձրացնեմ դէ-
պի քո սուրբ խորանը։
3 Մի կորցներ ինձ մեղաւորների
հետ և անօրէնութիւն գոր-
ծողների հետ, որ իրանց ընկեր-
ների հետ խաղաղութիւն են խո-
սում, բայց նորանց սրտերումը
չարութիւն կայ։
4 Տուր նորանց իրանց գործքերի
պէս և իրանց վարքերի չարու-
թեան պէս՝ իրանց ձեռաց գործ-
քերի պէս տուր նորանց. իրանց
հատուցումը դարձրու նորանց։
5 Քանզի միտք չեն դնում Տէ-
րոջ գործքերին, և ոչ նորա ձե-
ռաց գործքերին. նա կ'կործանէ
նորանց և էլ չի շինիլ։
6 Օրհնեալ է Տէրը, ինչու որ լը-
սում է իմ աղաչանքի ձայնին։
7 Տէրն է իմ զօրութիւնը և իմ
վահանը. իմ սիրտը նորան է յու-
սացել, և ինձ օգնութիւն եղաւ.
իմ սիրտը ցնծում է և իմ օրհ-
նութիւնովը փառաբանում եմ
նորան։
8 Տէրն իր *ժողովրդի զօրութիւնն

*Նորանց

է. նա է փրկութեան զօրութիւնը
իր Օծեալին համար։
9 Փրկիր քո ժողովուրդը, և օրհ-
նիր քո ժառանգութիւնը, և
արածացրու նորանց, և բարձրա-
ցրու նորանց մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի

1 Տուէք Տիրոջը, ով Աստուծոյ
որդիք, տուէք Տիրոջը փառք և
զօրութիւն։
2 Տուէք Տիրոջը իր անունի փառ-
քը. երկրպագութիւն տուէք Տի-
րոջը սրբութեան զարդարան-
քով։
3 Տիրոջը ձայնը ջրերի վերայ է.
փառաց Աստուածը որոտում է.
Տէրը շատ ջրերի վերայ է։
4 Տիրոջը ձայնը զօրութիւնով է.
Տիրոջը ձայնը մեծ վեհափառու-
թիւնով է։
5 Տիրոջը ձայնը փշրում է մայ-
րերը, և Տէրը փշրում է Լիբա-
նանի մայրերը։
6 Նա նորանց վեր վեր է վազել
տալիս հորթերի նման, Լիբանա-
նին և Շիրիօնին ինչպէս գոմէշի
հորթ։
7 Տիրոջը ձայնը կրակի բոցեր է
ճեղքում։
8 Տիրոջը ձայնը դողացնում է
անապատը. Տէրը դողացնում է
Կադէս անապատը։
9 Տիրոջը ձայնը եղնիերին ծնել է
տալիս և ծմակները մերկացնում.
և իր տաճարումը ամեն մէկը
փառք է տում նորան։
10 Տէրը նստում է ջրհեղեղի վե-
րայ. և Տէրը թագաւոր կ'նստի
յաւիտեան։
11 Տէրը զօրութիւն կ'տայ իր ժո-
ղովրդին. Տէրն իր ժողովուրդը
կ'օրհնէ խաղաղութիւնով։

ՍԱՂՄ. Լ

Սաղմոս. Տան նուագարանքի երգ. Դաւթի

1 Կ'բարձրացնեմ քեզ, ով Տէր,
որ ազատեցիր ինձ, և իմ թըշ-
նամիներին չուրախացրիր ինձ վե-
րայ։
2 Ով Տէր՝ իմ Աստուած, դէպի
քեզ աղաղակեցի, և դու բժըշ-
կեցիր ինձ։
3 Տէր, դու իմ անձը հանեցիր
դժոխքիցը, և ինձ կենդանի պա-
հեցիր փոսի մէջ մանողներից։
4 Սաղմոս ասացէք Տիրոջը, ով
նորա սուրբեր, և փառաբա-
նեցէք նորա սրբութեան յիշա-
տակը։
5 Քանզի նորա բարկութիւնը ա-
կընթարթի չափ է, բայց նորա
քաղցրութիւնը բոլոր կեանքու-
մը. իրիկունը լաց է գալիս, իսկ
առաւօտը ցնծութիւն։
6 Ես ասացի իմ վստահութիւ-
նումը՝ թէ ուղղից չեմ շարժուիլ
յաւիտեան։
7 Տէր, քո հաճութիւնովդ իմ
լեռնը զօրաւոր արիր, բայց երբ-
որ երեսդ թագրիր՝ ես շփոթուե-
ցայ։
8 Տէր, դէպի քեզ եմ աղաղա-
կում, և Տիրոջդ եմ աղաչում։
9 Ի՞նչ օգուտ կայ իմ արիւնիցը՝
որ ես կորուստն ընկնիմ. մի՞թէ
հողը կ'գոհանայ քեզանից և քո
ճշմարտութիւնը կ'պատմէ՞։
10 Լսիր, Տէր, և ողորմիր ինձ.
Տէր, օգնական եղիր ինձ։
11 Դու իմ սուգը ցնծութիւն փո-
խեցիր. իմ քուրձը հանեցիր ին-
ձանից և ուրախութիւն հագցրիր
ինձ։
12 Որպա՛ս համար թող փառքս
աղմոս ասէ քեզ և լուռ չկե-
նայ. ով Տէր՝ իմ Աստուած,
յաւիտեան կ'գոհանամ քեզանից։

ՍԱՂՄ. ԼԱ

Երգողների գլխաւորին. Դաւթի սաղմոս։

1 Ով Տէր, քեզ եմ յուսացած,
թող չամաչեմ յաւիտեան. քո
արդարութիւնովը փրկիր ինձ։
2 Խոնարհեցրու քո ականջը ինձ
մօտ. շուտով փրկիր ինձ. ինձ
համար զօրաւոր վէմ եղիր և ա-
մուր տուն՝ որ փրկես ինձ։
3 Ինչու որ դու ես իմ վէմը և

բերդը, և քո անունի համար առաջնորդիր ինձ և կառավարիր ինձ։
4 Հանիր ինձ որոգայթից, որ գաղտուկ լարեցին ինձ համար. ինչու որ դու ես իմ զորութիւնը։
5 Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին. դու փրկեցիր ինձ, ով Եհովայ, ճշմարիտ Աստուած։
6 Ատում եմ նորանց որ ունայն կուռքեր են պաշտում. բայց ես Տիրոջն եմ յուսացած։
7 Կ'ցնծամ և ուրախ կ'լինիմ քո ողորմութիւնով. ինչու որ իմ խեղճութիւնը տեսար և իմ անձի նեղութիւնը ճանաչեցիր.
8 Եւ ինձ թշնամու ձեռքը չ'մատնեցիր. ես իմ ոտները լայնատարած տեղ կանգնեցրիր։
9 Ողորմիր ինձ, Տէր, ինչու որ նեղուած եմ. տրտմութիւնով մնաւեցաւ իմ աչքը, իմ անձը և իմ փորը.
10 Քանզի իմ կեանքը վերջացաւ տխրութիւնով, և իմ տարիքը հառաչանքով. իմ զորութիւնը տկարացաւ իմ թշուառութիւնով, և իմ ոսկերքը մնաւեցան։
11 Իմ ամեն թշնամիների առջև շատ նախատինք եղայ, մանաւանդ իմ դրացիների առջև. և ահ ու վախ եղայ իմ բարեկամների համար, փողոցներումն ինձ տեսնողները փախչում են ինձանից՝
12 Մեռածի պէս մոռացուած եղայ սրտից. կորած անօթի նման եմ դառել։
13 Քանզի շատերի բամբասանքը լսեցի. իմ չար կողմանը ահ էր. իրար հետ ժողովուելիս ինձ համար են խորհուրդ անում որ կեանքս վեր առնեն։
14 Բայց ես քեզ եմ յոյս դրած, ով Տէր, ասում եմ՝ թէ Դու ես իմ Աստուածը։
15 Իմ ժամանակը քո ձեռքին է. փրկիր ինձ իմ թշնամիաց ձեռքից և իմ հալածողներից։
16 Երեսդ փայլեցրու քո ծառայի վերայ. փրկիր ինձ քո ողորմութիւնով։
17 Տէր թող չ'ամաչեմ. ինչու որ դեպի քեզ եմ կանչում. թող ամբարիշտներն ամաչեն և լռեն դժոխքում.
18 Թող պատանեուին սուտ շրթունքները՝ որ արդարին հակառակ անամօթութիւն են խօսում գոռոզութիւնով և անարգութիւնով։
19 Քանի մեծ է քո բարութիւնը, որ պահեցիր քեզանից վախեցողներին համար, և որ անում ես քեզ յուսացողներին. մարդկանց որդոց առջև։
20 Դու ծածկում ես նորանց քո երեսի ծածկոյթով մարդու դաւաճանութիւնից. դու թաքցնում ես նորանց քո խորանի մէջ լեզուների հակառակութիւնից։
21 Օրհնեալ է Տէրը, ինչու որ փառաւոր արաւ իր ողորմութիւնը ինձ վերայ մեծ ամուր քաղաքի մէջ։
22 Իսկ ես կասկածելով ասացի՝ թէ Ես դէն գցուեցայ քո աչքերի առջևից. բայց դարձեալ լսեցիր աղաղակիս ձայնին՝ երբոր դեպի քեզ աղաղակեցի։
23 Սիրեցէք Տիրոջը, ով նորա ամեն սուրբեր. Տէրը պահում է հաւատացեալներին. և աւելութիւնով հատուցանում է նորան, որ ամբարտաւանութիւն է գործում։
24 Քաջացէք, և ձեր սրտերը թող զօրանան, դուք ամենքդ՝ որ Տիրոջն էք յոյս դրել։

ՍԱՂՄ. Լ՚

Դաւթի վարդապետութիւն

1 Երանի նորան՝ ում որ անօրէնութիւնը թողուաւ, և ում մեղքը ծածկուեցաւ։
2 Երանի այն մարդուն, որ Տէրն անօրէնութիւն չի համարում նորան՝ և նենգութիւն չկայ նորա հոգու մէջ։
3 Երբոր ես լուռ կացայ՝ ոսկերքս մնաւեցան իմ ամեն օր հառաչելովը։
4 Քանզի ցերեկ և գիշեր քո ձեռքը ծանրանում էր ինձ վերայ, իմ թացութիւնը գառաւ ամառուան չորութիւն։ (Սէլա։)

5 Մեղք յայտնեցի քեզ և ա-
նօրէնութիւնս չծածկեցի. ասացի
Թէ՝ Անօրէնութիւնս խոստով-
նիմ Տէրոջը. և դու թողեցիր իմ
մեղքի անօրէնութիւնը։ (Սէլա։)
6 Սորա համար ամեն բարեպաշտ
աղօթք կ'անէ քեզ՝ քեզ գտնելու
ժամանակումը. իրաւի շատ ջու-
րերի հեղեղների վեր կենալիս՝ չեն
հասնիլ նորանց վերայ։
7 Դու ես իմ ապաստանը. նե-
րումէս կ'պահես ինձ. փրկու-
թեան ուրախութիւնովը կ'պա-
տես ինձ։ (Սէլա։)
8 Խնդաստան կ'անեմ քեզ, և կը
սովրեցնեմ քեզ այն ճանապար-
հը, որ նորանում պիտի գնաս.
իմ աչքովը կ'խրատեմ քեզ։
9 Մի լինիք ինչպէս ձի և ջորի
որ միտք չունին, որ նորանց կզա-
կի մէջ սանձ և պախարձ պէտք
է դնել՝ թէ որ չկամենան մօտե-
նալ քեզ։
10 Շատ ցաւ կայ ամբարշտի հա-
մար, բայց նա որ Տէրոջն է յու-
սացած՝ ողորմութիւն կ'պատե
նորան։
11 Ուրախացէք Տէրովը և ցնծա-
ցէք, ով արդարներ, և պարծե-
ցէք ամենքդ՝ որ ուղիղ էք սրտով։

ՍԱՂՄ. ԼԳ.

1 Ցնծացէք Տէրով, ով արդար-
ներ. ուղիղներին վայելում է
օրհնութիւն։
2 Գոհացէք Տէրոջը քնարով.
տասը թելուր սաղմոսարանով
սաղմոս երգեցէք նորան։
3 Նոր երգ երգեցէք նորան. քը-
նարը լաւ ածեցէք ցնծութեան
բարձր ազաղակով։
4 Քանզի ուղիղ է Տէրոջ խօսքը,
և նորա ամեն գործքերը հաւա-
տարմութիւնով են։
5 Նա արդարութիւն և իրաւունք
է սիրում. երկիրը լիքն է Տէրոջ
ողորմութիւնովը։
6 Տէրոջ խօսքովը երկինքն ստեղ-
ծուեցաւ, և նորա բերանի հոգովը
նորա բոլոր զօրքերը։
7 Նա ժողովում է ծովի ջուրերը
ինչպէս դէզ, և անդունդները
շինում է ամբարներ։
8 Թող Տէրոջը վախենան ամեն
երկիր. թող նորանից սարսափին
աշխարհի ամեն բնակիչները։
9 Քանզի նա ասաց և եղաւ. նա
հրամայեց և հաստատուեցաւ։
10 Տէրը ոչնչացնում է հեթանո-
սների խորհուրդները, և փչացը-
նում է ժողովրդոց մտածմունք-
ները։
11 Բայց Տէրոջ խորհուրդը հաս-
տատ է յաւիտեան. նորա սրտի
մտածմունքները ազգից մինչև
ազգ։
12 Երանի այն ազգին՝ որ նորա
Աստուածը Տէրն է, և այն ժո-
ղովրդին՝ որ նա իր համար ժա-
ռանգութիւն ընտրեց նորան։
13 Տէրը մոխիկ է անում երկնքի-
ցը. տեսնում է մարդկանց ամեն
որդիքը։
14 Իրան բնակութեան վայրիցը
նայում է երկրի ամեն բնակիչ-
ների վերայ,
15 Նորանց ամենի սիրտը ստեղ-
ծողը, նորանց ամեն գործքերը
տեսնողը։
16 Թագաւորը չ'է փրկվում զօրքի
շատութիւնով, և հսկան չի պըրծ-
նում շատ զօրութիւնով։
17 Սուտ է ձին փրկութեան հա-
մար. և իր շատ զօրութիւնովը
չի ազատում։
18 Ահա Տիրոջը աչքը նորանից
վախեցողների վերայ է և նորանց
վերայ՝ որ նորա ողորմութեանն
են սպասում.
19 Որ փրկէ նորանց անձերը մա-
հից, և սովի ժամանակին նո-
րանց կեռակրէ։
20 Մեր անձը մոխիկ է տալիս Տի-
րոջը. նա է մեր օգնութիւնն ու
պահապանը։
21 Քանզի նորանով է ուրախա-
նում մեր սիրտը. ինչու որ մենք
նորա սուրբ անունին ենք յուսա-
ցած։
22 Տէր, քո ողորմութիւնը լինի
մեզ վերայ՝ ինչպէս որ սպասում
ենք քեզ։

ՍԱՂՄ. ԼԴ

Դաւթի (Սաղմոս). երբոր իր կերպարանքը փոխեց Աբիմելէքի առջեւ, և նա դուրս դցեց նորան, և գնաց։

1 Տէրոջը կ'օրհնեմ ամեն ժամանակ. նորա փառաբանութիւնը միշտ իմ բերանումը պիտի լինի։
2 Թող իմ անձը Տիրոջմով պարծենայ. խեղճերը թող լսեն և ուրախանան։
3 Մեծացրէք ինձ հետ Տիրոջը. թող իրար հետ բարձր սցնենք նորա անունը։
4 Ես խնդրեցի Տիրոջը, և նա պատասխան տուաւ ինձ, և իմ ամեն ահ ու վախից ազատեց ինձ։
5 Նորան են մտիկ տալիս և լուսաւորվում. և նորանց երեսը չի ամաչիլ։
6 Այս խեղճը կանչեց, և Տէրը լսեց, և իր ամեն նեղութիւններից փրկեց նորան։
7 Տիրոջը հրեշտակը բանակ է շինում նորանից վախեցողների չորս կողմովը և փրկում է նորանց։
8 Ճաշակեցէք և տեսէք, որ Տէրը քաղցր է. երանելի՛ է այն մարդը՝ որ յուսացած է նորան։
9 Վախեցէք Տէրից, ով նորա սուրբեր, ինչու որ նորանից վախեցողների համար պակասութիւն չկայ։
10 Առիւծի կորիւնները կարօտում են և սոված են. բայց Տիրոջը խնդրողները ոչ մի բարիքի պակասութիւն չունին։
11 Եկէք, որդիք, լսեցէք ինձ. ես Տիրոջը երկիւղը սովորեցնեմ ձեզ։
12 Ով մարդ, որ կեանք ես ուզում և լա՜ օրեր սիրում, բարութիւն տեսնելու համար.
13 Պահիր քո լեզուն չարութիւնից, և քո շրթունքները՝ որ նենգութիւն չխօսին։
14 Հեռացիր չարից և գործիր բարին. խնդրիր խաղաղութիւն և նորա ետևէն գնա։
15 Տիրոջն աչքերը արդարների վերայ են. և նորա ականջները նորանց աղաղակի վերայ։
16 Տիրոջն երեսը չարագործների վերայ է, որ նորանց յիշատակը երկրից ջնջէ։
17 Արդարները աղաղակում են և Տէրը լսում է. և իրանց ամեն նեղութիւններից փրկում է նորանց։
18 Տէրը մօտիկ է սրտով կորցուածներին, և փրկում է հոգով փշրուածներին,
19 Շատ են արդարի նեղութիւնները, բայց Տէրը սրանից ամենից փրկում է նորան։
20 Տէրը պահում է նորա ամեն ոսկերքը, որ նորանից ոչ մէկն էլ չկոտրուի։
21 Չարութիւնը ամբարշտին կ'բռնէ, և արդարին ատողները կը դատապարտվին։
22 Տէրը փրկում է իր ծառաների անձը, և բոլոր նորան յուսացողները չեն դատապարտվիլ։

ՍԱՂՄ. ԼԵ

Դաւթի (Սաղմոս)։

1 Հակառակիր, Տէր, իմ հակառակողների հետ, և կռիվը ինձ հետ կռվողների հետ։
2 Վեր առ զէնքն ու վահանը, և վեր կաց ինձ օգնելու համար։
3 Հանիր գեղարդը և փակիր ճանապարհը իմ հալածողների դէմ. ասա իմ անձին՝ քո փրկութիւնը ես եմ։
4 Թող ամաչեն և ամօթ լինին իմ անձը որոնողները. թող յետ դառնան և ամօթ լինին ինձ դէմ չար խորհողները։
5 Նորանք քամու առջև մղեղի պէս լինին. և Տիրոջը հրեշտակը հալածէ նորանց։
6 Նորանց ճանապարհը խաւար և գայթակղութիւն լինի. և Տիրոջը հրեշտակը նեղէ նորանց։
7 Քանզի զուր տեղը փոս որոգայթ շինեցին ինձ բռնելու համար. զուր տեղը հոգ փորեցին իմ անձի համար։
8 Թող աւերում հասնէ նորան յանկարծակի. նորա լարած որոգայթը իրան բռնէ. աւերումով նորա մէջ ընկնէ։

9 Բայց իմ անձը պիտի ցնծայ Տիրոջմով, և ուրախանայ նորա փրկութիւնովը։
10 Իմ ամեն ոսկերքը պիտի ասեն. Տէր, ո՞վ է քեզ նմանը՝ որ փրկուած ես խեղճին իրանից զօրաւորից, և անանկին ու աղքատին իրան յափշտակողից։
11 Սուտ վկաներ են վեր կենում, իմ չգիտացած բաները հարցնում են ինձանից։
12 Չար են հատուցանում ինձ բարուց տեղ՝ իմ անձն անժառանգ անելով։
13 Բայց ես քուրձ էի հագնում՝ նորանք հիւանդանալիս. իմ անձը ծոմով չարչարում էի. բայց իմ աղօթքը իմ ծոցն է դառնում։
14 Ես նրանց հետ վարւում էի ինչպէս իմ բարեկամի և իմ եղբօր հետ. և տրտմութեամբ ցածանում էի իր մօր համար սուգ անողի նման։
15 Սակայն ես սխալուելիս՝ նորանք ուրախանում են և ժողովւում. ժողովւում ինձ վերայ, որ խոցեն ինձ, և ես չէի գիտում. հայհոյում են և չեն դադարում։
16 Խնջոյքի նուագաց ծաղրածուների հետ իրանց ատամները կրճտացնում են ինձ վերայ։
17 Տէր, մինչև ե՞րբ ես մնիկ տալու, ապրեցրու իմ անձը նորանց կորստից, իմ կեանքն առիւծի կորիւններից։
18 Կ'գոհանամ քեզանից, Տէր, մեծ ժողովրդի մէջ, և կ'փառաբանեմ քեզ շատ ժողովրդի մէջ։
19 Թող չուրախանան ինձ վերայ զուր տեղը ինձ թշնամութիւն անողները, և աչքով չանեն ինձ առանց պատճառի ատողները։
20 Քանզի նորանք խաղաղութիւն չեն խօսում. բայց նենգաւոր բաներ են մտածում երկրի վերայ հանգիստ լինողների դէմ։
21 Եւ իրանց բերանը բաց են անում լայնարձակ ինձ վերայ և ասում. վա՜հ վա՜հ հէ՛ս մեր աչքերը տեսան։
22 Դու տեսար, Տէր, լուռ մի կեցար. Տէր, մի հեռանար ինձանից։
23 Զարթնացիր և վեր կաց՝ ինձ իրաւունք անելու համար, ով իմ Աստուած և իմ Տէր, ինձ դատաստան անելու համար։
24 Դատաստան արա ինձ քո արդարութեան պէս, ով Տէր՝ իմ Աստուած, և թող չուրախանան ինձ վերայ։
25 Թող չասեն իրանց սրտումը՝ Ո՛ւհ՝ մեր փափաքը կատարւեց. թող չասեն՝ Մենք կուլ տուինք նորան։
26 Թող իրար հետ ամաչեն և ամօթ լինեն իմ նեղութեան համար ուրախացողները. թող ամօթ և անարգանք հագնեն ինձ վերայ պարծենացողները.
27 Թող ցնծան և ուրախ լինեն նորանք՝ որ հաւանում են իմ արդարութեանը, և միշտ ասեն՝ Տէրը փառաւորուի, որ իր ծառայի խաղաղութիւնը կամենում է։
28 Եւ իմ լեզուն թող պատմէ քո արդարութիւնը, և ամեն օր քո գովաբանութիւնը։

ՍԱՂՄ. ԼԶ

Երգողների գլխաւորին, Տիրոջ ծառայ Դաւթի (Սաղմոս)։

1 Անօրէնութեան խօսքը ամբարիշտի համար իմ սրտումը այս է՝ Որ Աստուծոյ վախը չկայ նորա աչքի առջև։
2 Քանզի քազցը է թուում նա իր աչքումը, որ իր անօրէնութիւնը գտնէ և ատելութիւն գործէ։
3 Նորա բերանի խօսքերը անօրէնութիւն և նենգութիւն են։ Նա դադարել է իմաստուն լինելուց և բարի գործելուց։
4 Անօրէնութիւն է մտածում իր անկողնումը. կանգնած է այն ճանապարհի վերայ՝ որ բարի չէ. և չար բանից չէ զգուշանում։
5 Տէր, քո ողորմութիւնը երկինքումն է, և քո ճշմարտութիւնը հասնում է մինչև ամպերը։
6 Քո արդարութիւնը ինչպես Աստուծոյ լեռներն է. և քո իրաւունքը ինչպես մեծ անդունդ.

դու ես փրկում մարդկանց և անասուններին Տէր։
7 Ո՛նչ պատուական է քո ողորմութիւնը, ով Աստուած, և մարդկանց որդիքը քո թևերի շուքի տակն են ապաւինած։
8 Նորանք լիանում են քո տան պարարտութիւնից. և քո հաճութեանց գետից խմել ես տալիս նորանց։
9 Քանզի կենաց աղբիւրը քեզ մօտ է. և քո լուսովն ենք տեսնում լոյս։
10 Շարունակիր քո ողորմութիւնը քեզ ճանաչողների վերայ, և քո արդարութիւնը սրտով ուղիղների վերայ։
11 Թող ամբարտաւանի ոտքը իմ վերայ չգայ. և ամբարշտի ձեռն ինձ տեղից չշարժէ։
12 Անդ եղ վայր կ'ընկնին անօրէնութիւն գործողները. դէն գցուին և էլ չեն կարողանալ վեր կենալ։

ՍԱՂՄ. ԼԷ

Դաւիթ (Սաղմոս)

1 Մի բարկանար չարերի վերայ, մի նախանձիր անօրէնութիւն գործողներին։
2 Քանզի նորանք խոտի պէս շուտով կ'կոտրուին, և կանաչ խոտի պէս կ'թառամին։
3 Տէրոջը յուսացիր և բարի արա. բնակուիր երկրումը և հաւատիր ճշմարտութեանը։
4 Ցնծացիր Տէրոջմով, և կ'տայ քեզ քո սրտի ուզածները։
5 Տէրոջը յանձնիր քո ճանապարհը՝ և նորան յուսացիր. և նա կ'կատարէ։
6 Եւ քո արդարութիւնը դուրս կ'հանէ լուսոյ պէս, և քո իրաւունքը կէս օրուան պէս։
7 Հանգիստիր Տէրոջը և ապաւիր նորան. մի բարկանար այն մարդուն ճանապարհը յաջողելիս՝ որ էր չար խորհուրդները կատարում է։
8 Դադարիր բարկութիւնից, և թող տուր սրտմտութիւնը. մի բարկանար՝ որ չար գործես։
9 Քանզի չարերը կ'ոտակուին, բայց Տիրոջն ապասողները երկիրը կ'ժառանգեն։
10 Դեռ մին քիչ ժամանակ էլ, և ամբարիշտը չկայ. և երբոր նորա տեղին մտիկ տաս՝ նա չկայ։
11 Բայց խոնարհները երկիրը կը ժառանգեն և փրկութիւն կ'վայելեն խաղաղութեան առատութիւնովը։
12 Ամբարիշտը չար է մտածում արդարի դէմ. և իր ատամները կրճտեցնում է նորա վերայ։
13 Տէրը ծիծաղում է նորա վերայ. ինչու որ տեսնում է՝ որ նորա օրը եկել է։
14 Սուրը հանում են ամբարիշտները և իրանց աղեղները լարում, որ խեղճին ու աղքատին վայր գցեն և սպանեն ճանապարհով ուղիղներին։
15 Բայց նորանց սուրն իրանց սրտի մէջ կ'մտնէ, և նորանց աղեղները կ'փշրուին։
16 Արդարի քիչ բանը լաւ է քան թէ շատ ամբարիշտների ճոխութիւնը։
17 Քանզի ամբարիշտների բազուկները կ'փշրուին, իսկ արդարներին հաստատում է Տէրը։
18 Տէրը ճանաչում է արդարների օրերը, և նորանց ժառանգութիւնը յաւիտեան կ'լինի։
19 Նորանք չեն ամաչիլ չար ժամանակում, և սովի օրերումը կը կշտանան։
20 Որովհետև ամբարիշտները կը կորչին, և Տիրոջ թշնամիները կ'ոչնչանան ինչպէս սրտերի պարարտութիւնը, կ'փչանան ծուխի պէս։
21 Ամբարիշտը փոխ է առնում և չէ վճարում, բայց արդարը ողորմած է և տալիս է։
22 Քանզի նորա օրհնուածները երկիրը կ'ժառանգեն, բայց նորա անիծուածները կ'ոտակուին։
23 Տիրոջմովն է հաստատվում մարդու գնացքը, և նա հաւանում է նորա ճանապարհին։
24 Թէև վայր ընկնի՝ չկործանուիլ, ինչու որ Տէրը նորա ձեռքիցը բռնում է։

25 Տղայ էի և ծերացայ՝ և չտե-
սայ արդարին երեսից թողուած,
և ոչ նորա զաւակին, որ հաց
մուրանայ։
26 Աւետ՝ ամեն օր ողորմած է
և փոխ է տալիս, և նորա զաւա-
կը օրհնուած է։
27 Չետ քաշուիր չարիցը և բարիք
արա, և յաւիտեան կ'ճնաս։
28 Վասն զի Տէրն իրաւունք է սի-
րում և իր սրբերին չէ թողում.
յաւիտեան պահպանուում են,
բայց ամբարիշտների զաւակը կը
ամաուկուի։
29 Արդարները երկիրը կ'ժառան-
գեն, և յաւիտեան կ'բնակուին
նորանում։
30 Արդարի բերանը իմաստութիւն
է խօսում, և նորա լեզուն իրա-
ւունք է պրպտում։
31 Իր Աստուծոյ օրէնքը իր սրբ-
տումն է, նորա քայլերը չեն տա-
տանուիլ։
32 Ամբարիշտը դիտում է արդա-
րին, և մտան է գալիս՝ որ սպանէ
նորան։
33 Բայց Տէրը նորան չի թողիլ
նորա ձեռքին, և չի դատապար-
տիլ նորան՝ երբոր նա դատուի։
34 Սպասիր Տիրոջը և պահիր նո-
րա ճանապարհը, և նա կ'բարձ-
րացնէ քեզ՝ որ երկիրը ժառան-
գես. և կ'տեսանես ամբարիշտները
ոտնակոխելիս։
35 Ես ամբարշտին տեսայ գոռոզ
և տեղը հաստատ ինչպէս լայնա-
տարած դալար ծառ.
36 Բայց ինձ էլ անցնելիս՝ ահա չը
կար նա. մտան եկայ նորան, և
չգտայ։
37 Ի՛մ արդարին մտիկ արա և ու-
ղիղին տես. այսպիսի մարդու
վերջը խաղաղութիւն է։
38 Բայց անիրաւներն իրար հետ
մէկտեղ կ'ոտնակուին. ամբա-
րշտաց վերջը կորուստ է։
39 Եւ արդարների փրկութիւնը
Տէրից է, նա նորանց զօրու-
թիւնն է նեղութեան ժամանակում։
40 Եւ Տէրը կ'օգնէ նորանց և կ'ա-
զատէ նորանց. կ'ազատէ նորանց
ամբարիշտներից և կ'փրկէ նո-
րանց, ինչու որ նորան են յու-
սացած։

ՍԱՂՄ. ԼԸ

Դաւթի Սաղմոս, յիշատակի համար։

1 Ով Տէր, մի յանդիմանիր ինձ
քո բարկութիւնով, և մի խրա-
տիր ինձ քո սրտմտութիւնով։
2 Վասն զի քո նետերը խրուեցան
իմ մէջը, և քո ձեռքը ծանրա-
ցաւ ինձ վերայ։
3 Չկայ իմ մարմնումը առողջու-
թիւն քո բարկանալուն համար.
իմ ոսկերքումը խաղաղութիւն չը
կայ իմ մեղաց համար։
4 Վասն զի իմ անօրէնութիւն-
ները գլխիցս վերայ բարձրացան.
ինչպէս մեծ ծանր բեռն ծանր են
ինձ վերայ։
5 Խոցերս հոտում և փտում են՝
իմ յիմարութեան համար։
6 Ես կեռացած և խիստ ցած ըն-
կած եմ, և ամեն օր մեռն եմ
գալիս սգաւոր։
7 Վասն զի իմ երիկամունքները
լիքն են բորբոքումով, և առող-
ջութիւն չկայ իմ մարմնումը։
8 Ես թուլացած և շատ ստատիկ
փշրուած եմ. հոգոց եմ հանում
իմ սրտի հառաչելուցը։
9 Ով Տէր, քո առջև է իմ բո-
լոր փափաքը. և իմ հառաչանքը
քեզանից ոածուկ չէ։
10 Սիրտս դողդողում է. զօրու-
թիւնս թողել է ինձ. և իմ ա-
չաց լոյսն էլ ինձ մնա չէ։
11 Իմ սիրելիներն ու ընկերները
կանգնած են իմ խոցի դէմ. և
իմ ազգականները կանգնած են
հեռուանց։
12 Եւ իմ անձը խնդրողները որո-
գայթ են լարում, և ինձ չար ու-
զողները անօրէնութիւն են խօս-
ում, և ամեն օր նենգութիւններ
են հնարում։
13 Բայց ես խուլի պէս չեմ լսում,
և համրի պէս՝ որ իր բերանը չէ
բաց անում։
14 Եւ ես եղայ ինչպէս մարդ՝ որ
չէ լսում, և որ նորա բերանումը
փաստ չկայ։

15 Քանզի քեզ եմ ապաւինում, Տէր. դու պատասխան կ'տաս, ով Տէր՝ իմ Աստուած։
16 Ինչու որ ես ասացի Թող ինձ վերայ չուրախանան, որ իմ ոտքը սահելիս՝ պարծենան ինձ վերայ։
17 Ինչու որ ես պատրաստ եմ ընկնելու Համար. և իմ ցաւը միշտ առջեւս է։
18 Քանզի ես կ'պատմեմ իմ անօրէնութիւնը. և կ'տրտմիմ իմ մեղքի համար։
19 Բայց իմ թշնամիները կենդանի և զօրաւոր են. և ինձ զուր ատողները շատ են։
20 Եւ բարւոյ տեղ ինձ չար հատուցանողները հակառակում են ինձ, նորա փոխարէն որ ես հետեւում եմ բարի բանի։
21 Մի թողիր ինձ, ով Տէր՝ իմ Աստուած, մի հեռանար ինձանից։
22 Շուտ արա՝ որ ինձ օգնես, ով Տէր՝ իմ Փրկիչ։

ՍԱՂՄ· ԼԹ

Երգողների գլխաւորին. Իդութունին, Դաւթի Սաղմոս։

1 Ես ասացի Թէ իմ ճանապարհները կ'պահեմ լեզուովս մեղանչելից. իմ բերանին սանձ կ'դնեմ՝ դեռ քանի որ ամբարիշտն իմ առջեւն է։
2 Բերանս փակեցի պապանձուելով. բարի բանից էլ լուռ կացայ, և ցաւս շատ գրգռուեցաւ։
3 Սիրտս ինձանում տապացաւ. ես մտածելիս կրակ էր վառւում. խօսեցի իմ լեզուովը։
4 Տէր, ցոյց տուր ինձ իմ վերջը և իմ օրերի չափը Թէ որքան է, Թող գիտենամ Թէ քանի անցաւոր եմ ես։
5 Ահա Թիզի չափով կարգեցիր իմ օրերը, և իմ կեանքի ժամանակը ոչինչի պէս է քո առջեւ. բոլորովին ունայն է ամեն մարդ՝ որքան հաստատ էլ լինի։ (Ակլա։)
6 Միայն պատկերի պէս է մարդը. միայն զուր տեղն է հոգս քաշում. հաւաքում է և չէ գիտում Թէ այն ով պիտի առնէ։
7 Եւ հիմա ինչ բանի ապասեմ, ով Տէր. իմ յոյսը քեզ վերայ է։
8 Իմ ամեն անօրէնութիւններից փրկիր ինձ. յիմարի նախատինքը մի շինիր ինձ։
9 Ես լուռ եմ կենում, իմ բերանը չեմ բանում, ինչու որ դու արիր։
10 Քո պատուհասը հեռացրու ինձանից. ես քո ձեռքի զարնելովը փչացայ.
11 Երբոր յանդիմանութիւնով խրատում ես մարդուն իր անօրէնութիւնների համար. ապա նորա գեղեցկութիւնը ոչնչացնում ես ինչպէս ցեցից. իրաւի որ ունայն է ամեն մարդ։ (Ակլա։)
12 Տէր, լսիր իմ աղօթքին, և իմ աղաղակին միտք դիր. իմ արտասուքին լուռ մի կենար. ինչու որ ես քո առջեւ պանդուխտ եմ և հիւր՝ ինչպէս որ իմ ամեն հայրերը։
13 Թող տուր ինձ զուարթանամ, որ տակաւին չեմ գնացել և ոչընչացել։

ՍԱՂՄ· Խ

Երգողների գլխաւորին, Դաւթի Սաղմոս։

1 Ասելով ապաշեցի Տիրոջը, և նա դէպի ինձ նայեց և աղաղակս լսեց։
2 Եւ ինձ հանեց կորստի հորիցը՝ տիղմոտ ցեխիցը, և վէմի վերայ կանգնացրեց ոտներս, և գնացքս հաստատեց։
3 Եւ նոր երգ դրաւ իմ բերանումը մեր Աստուծոյ օրհնութիւնը. շատերը կ'տեսնան և կ'վախենան և Տիրոջը կ'յուսան։
4 Երանի այն մարդուն որ իր յոյսը Տէրն է շինում, և ամբարտաւաններին ու սուտ հեառոդներին չէ դառնում։
5 Շատ են քո հրաշքները՝ որ դու արիր, ով Տէր Աստուած. և քո խորհուրդները մեզ վերայ են. ոչ ոք քեզ հաւասար չէ. կը պատմէի և կ'խօսէի նորանց, բայց համարից շատ են։

6 Պատարագի և ընծայի չհաւանեցար, բաց ականջներս բացիր. ողջակէզ ու մեղաց համար պատարագ չպահանջեցիր.
7 Ապա ասացի. Ահա ես գալիս եմ. գրքի տոմարումը գրուած է ինձ համար.
8 Քո կամքը կատարել կամեցայ, ով Աստուածս. և քո օրէնքն իմ սրտի մէջ է։
9 Արդարութիւն եմ քարոզում մեծ ժողովրդի մէջ. ահա իմ շրթունքներս չեմ արգելում. Տէր, դու գիտում ես.
10 Քո արդարութիւնը չեմ թագցրնում սրտիս մէջ. քո ճշմարտութիւն ու փրկութիւնը պատմեցի. քո ողորմութիւն ու հաւատարմութիւնը չեմ ծածկում մեծ ժողովքի առջև։
11 Բայց դու, Տէր, մի հեռացրներ ինձանից քո գթութիւնը. քո ողորմութիւն ու հաւատարմութիւնը թող միշտ պաշտպանեն ինձ։
12 Չանգի անթիւ չարիք պատեցին ինձ. իմ անօրէնութիւնքն հասան ինձ վերայ՝ որ չեմ կարող տեսանել. աւելի շատ են իմ գլխի մազերից. և իմ սիրտը թողեց ինձ։
13 Տէր, հաճիր ինձ փրկելու. Տէր, շուտ արա՝ ինձ օգնիր։
14 Թող իրար հետ ամաչեն և ամօթ լինին իմ անձը կորցնել խնդրողները. թող յետ դառնան և խայտառակ լինին իմ չարն ուզողները։
15 Իրանց ամօթի պատճառով պիտի զարհուրին նորանք, որ ինձ ասում են վա՛հ վահ։
16 Թող ցնծան և ուրախանան քեզանով ամեն քեզ խնդրողները. թող քո փրկութիւնը սիրողները միշտ ասեն՝ Տէրը փառաւորուի։
17 Բայց ես խեղճ եմ և աղքատ, Տէրը հոգս է անում ինձ համար. իմ օգնութիւնն ու փրկութիւնը դու ես, ով իմ Աստուած, մի ուշանար։

ՍԱՂՄ. ԽԱ.

Երգողների գլխաւորին. Դաւթի Սաղմոս։

Երանի նորան՝ որ հոգս է անում աղքատի համար. նեղութեան օրուայն Տէրը կ'փրկէ նորան։ 1
Տէրը կ'պահէ նորան և կ'ապրեցնէ նորան. նա երանելի կ'լինի երկրի վերայ. իր թշնամիների ցանկութեանը դու չես մատնիլ նորան։ 2
Տէրը կ'ամրացնէ նորան տկարութեան անկողնում. դու նորա բոլոր անկողինը կ'փոխես իր հիւանդութեան ժամանակում։ 3
Ես ասացի. Տէր, ողորմիր ինձ և բժշկիր իմ անձը. քանզի որ քո առջև մեղանչեցի։ 4
Իմ թշնամիները չար են խօսում ինձ վերայ, ասելով. Երբ կը մեռնի նա և անունը կ'կորչի.
Եւ եթէ մինը ինձ տեսնելու է գալիս՝ ունայնութիւն է խօսում. նորա սիրտն անօրէնութիւն է հաւաքում իրանում. և դուրս է գնում ու ասում այդ։ 6
Ինձ ատողները փսփսում են միասին ինձ վերայ, և չարութիւն են հնարում ինձ դէմ։ 7
Անօրէնութեան բան հասաւ նորա վերայ, և որ վայր ընկնի այլևս չի վեր կենալ։ 8
Իմ յատուկ բարեկամ մարդն էլ՝ որ նորան յուսացայ, որ իմ հացս ուտում էր, ոտն բարձրացրեց ինձ վերայ։ 9
Բայց դու, Տէր, ողորմիր ինձ և կանգնեցրու ինձ և կ'հատուցանեմ նորանց։ 10
Սորանով ճանաչում եմ որ դու ինձ հաճութիւն ունիս, որ թշնամիս չպարծենայ ինձ վերայ։ 11
Բայց ինձ կ'պահպանես իմ անարատութեան մէջ. և ինձ քո երեսի առջև կ'կանգնեցնես յաւիտեան։ 12
Օրհնեալ լինի Տէրը՝ Իսրայէլի Աստուածը յաւիտենից մինչև յաւիտեան. ամէն և ամէն։ 13

ՍԱՂՄ. ԽԵ

Երգողների գլխաւորին վարդապետութեան կօրխայ որդւոց համար։

1 Ինչպէս որ եղջերուն փափաքում է ջրերի առուների, այնպէս էլ իմ անձը փափաքում է քեզ, ով Աստուած։
2 Իմ անձը ծարաւ է Աստուծոյն՝ կենդանի Աստուծոյն. ե՞րբ կ'գամ և նորա երեսաց առջև կ'երևիմ։
3 Իմ արտասուքն ինձ հաց եղաւ ցերեկ և գիշեր, որ ինձ ամեն օր ասում են. Ո՞ւր է քո Աստուածը։
4 Ես այս բ–ները յիշում և իմ հոգին թափում եմ ինձանում. որ բազմութեան հետ անց կենում գնում նորանց հետ մինչև Աստուծոյ տունը ծանոթմբող ամբոխի հետ օրհնութեան և գովաբանութեան ձայնով։
5 Ինչո՞ւ ես տրտում, ով իմ անձը, և շփոթուած ես ինձանում. Աստուծոյն յուսացիր, ինչու որ էլ կ'գոհանամ նորանից, որ իմ երեսի փրկութիւնն է։
6 Ով իմ Աստուած, իմ անձը տրտում է ինձանում. սորա համար յիշում եմ քեզ Յորդանանի երկրից և Հերմոնիցը և փոքր լեառնիցը։
7 Անդունդն անդունդին կանչում է քո յորձանքների ձայնով. քո ամեն կոհակները և ալիքները անց են կենում ինձ վերայ։
8 Ցերեկը Տէրը պատուիրում է իր ողորմութիւնը, և գիշերը օրհնութիւնը ինձ հետ կ'լինի. աղօթք քո դէպի կենաց Աստուածն է։
9 Ասում եմ Աստուծոյն. Ով իմ վէմ՝ ինչո՞ւ մոռացար ինձ. ինչո՞ւ պատուր գնում եմ թշնամու նեղացնելու համար։
10 Իմ ոսկերքը փշրուելիս իմ թշնամիները ինձ դէմ նախատինք էլ են տալիս և ամեն օր ինձ ասում. Թէ Ո՞ւր է քո Աստուածը։
11 Ինչո՞ւ ես տրտում, ով իմ անձը, ինչո՞ւ ես շփոթուած ինձանում. Աստուծոյն յուսացիր. ինչու որ էլ կ'գոհանամ նորանից, որ իմ երեսի փրկութիւնն և իմ Աստուածն է։

ՍԱՂՄ. ԽԳ

1 Դատաստան արա ինձ, ով Աստուած, և իմ իրաւունքը հատատիր անաւրէն ազգի դէմ. նենգաւոր և անիրաւ մարդուցը փրկիր ինձ։
2 Քանզի դու ես իմ զօրութեան Աստուածը. ինչո՞ւ ես ինձ դէն դցում. ինչու պատուր գնում ես թշնամու նեղացնելու համար։
3 Ուղարկիր քո լոյսը և քո ճշմարտութիւնը. նորանք առաջնորդեն ինձ և տանեն ինձ դէպի քո սուրբ լեառը և դէպի քո բնակարանները։
4 Եւ ես մտնեմ դէպի Աստուծոյ սեղանը իմ ուրախութեան և ցնծութեան Աստուծոյն մօտ, և գոհանամ քեզանից քնարով, ով Աստուած՝ իմ Աստուածը։
5 Ինչո՞ւ ես տրտում, ով իմ անձը, և ինչո՞ւ ես շփոթուած ինձանում. Աստուծոյն յուսացիր. ինչու որ էլ կ'գոհանամ նորանից՝ որ իմ երեսի փրկութիւնը և իմ Աստուածն է։

ՍԱՂՄ. ԽԴ

Երգողների գլխաւորին վարդապետութիւն Կորխայ որդոցը։

1 Ով Աստուած, մեր ականջներով լսեցինք. մեր հարքը պատմեցին մեզ այն գործը, որ դու գործեցիր նորանց օրերումը՝ այն առաջի ժամանակներումը։
2 Դու քո ձեռքով հեթանոսներին դուրս հանեցիր և նորանց տնկեցիր. չարչարեցիր ազգերը և նորանց փռեցիր։
3 Քանզի ոչ թէ իրանց սրով երկիրը ժառանգեցին, և ոչ իրանց բազուկը փրկեց իրանց. այլ քո աջը և քո բազուկը և քո երեսի լոյսը. ինչու որ հաւանեցիր նորանց։
4 Դու ես իմ թագաւորը, ով

Աստուած. հրամայեցիր Յակոբի
որկրութիւնների համար։
5 Վեզանով գետինը գցեցինք մեր
թշնամիներին. քո անունովը կոխ
տուինք մեզ դէմ վեր կեցողներին։
6 Ինչու որ իմ աղեղին չեմ յու-
սացած, և իմ սուրը չէ փրկում
ինձ։
7 Այլ դու ես փրկում մեզ մեր
թշնամիներիցը, և ամօթ ես ա-
նում մեզ ատողներին։
8 Աստուծոյն կ'փառաբանենք ա-
մեն օր, և քո անունիցը կ'գոհա-
նանք յաւիտեան։ (Սէլա։)
9 Բայց հիմի դէն գցեցիր և ամօթ
արիր մեզ, և չես դուրս գալիս
մեր զօրքի հետ։
10 Դու մեզ ետ ես դարձնում
թշնամուցը, և մեզ ատողները
յափշտակում են մեզ համար
համար։
11 Դու արիր մեզ՝ որ ոչխարի պէս
լինինք, և ցրուեցիր մեզ հեթա-
նոսների մէջ։
12 Ծախեցիր քո ժողովուրդը ոչ-
ինչ փողով, և չհարստացար նո-
րանց գնովը։
13 Դու մեզ նախատինք ես դնում
մեր հարևանների առջև, ծաղր
և խայտառակութիւն մեր չորս
կողմում լինողների առջև։
14 Դու մեզ առակ ես դնում
հեթանոսների մէջ, և գլուխ շար-
ժելու պատճառ՝ ազգերի մէջ։
15 Ամեն օր իմ նախատինքը առ-
ջևս է, և իմ երեսի ամօթը ծած-
կում է ինձ,
16 Նախատողի և հայհոյողի ձայ-
նիցը, թշնամուն և վրէժխնդրի
երեսիցը։
17 Այս ամենը եկաւ մեզ վերայ,
և քեզ չմոռացանք, և քո ու-
խտը չքանդեցինք։
18 Մեր սիրտը ետ չդարձաւ, և
մեր գնացքը չծռուեցաւ քո ճա-
նապարհիցը.
19 Թէև փշրեցիր մեզ վիշապների
տեղում, և ծածկեցիր մեզ մա-
հի շուքովը։
20 Եթէ մոռացած լինէինք մեր
Աստուծոյ անունը, և մեր ձեռ-
քերը մեկնած լինէինք դէպի օ-
տար Աստուած։
21 Չէ՞ որ Աստուած կ'քննէր այս
բանը, ինչու որ նա գիտում է
սրտի գաղտնիքները։
22 Բայց քեզ համար սպանվում
ենք ամեն օր, և մորթուելու ոչ-
խարի պէս ենք համարվում։
23 Զարթնացիր, ինչո՞ւ ես քնած,
ով Տէր. վեր կաց, դէն մի գցիր
յաւիտեան։
24 Ինչո՞ւ ես թագցնում քո երե-
սը, և մոռանում մեր խեղճու-
թիւնը և նեղութիւնը։
25 Քանզի մեր անձը խոնարհեցաւ
հողի մէջ, և մեր փորը երկրին
կպաւ։
26 Վեր կաց մեզ օգնութեան,
և փրկիր մեզ քո ողորմութեան
համար։

ՍԱՂՄ. ԽԵ

Երգողների գլխաւորին. չօշանիմով. Կորխայ որդոց համար՝ վարդապետութեան. սիրոյ երգ։

1 Սիրտս բարի խօսք է բղխում. ես ասում եմ՝ իմ քերթուածը թագաւորի համար է. իմ լեզուն ճարտար դպրի գրիչն է։
2 Դու մարդկանց որդիքներիցը գեղեցկագոյն ես. շնորհք է թափուած քո շրթունքների վերայ. սորա համար օրհնեց քեզ Աստուած յաւիտեան։
3 Սուրդ մէջքդ կապիր, ով հզօր. նա է քո պատիւը և քո փառքը։
4 Եւ քո փառքովը յաջողիր և ձի հեծիր ճշմարտութեան համար և հեզ արդարութեան համար. և քո աջ ձեռքը թող սքանչելի բաներ սովորեցնէ քեզ։
5 Քո նետերը սրտաց են. ազգերը քո ներքևն են ընկնում. նորանք թագաւորի թշնամիների սիրտն են մտնում։
6 Ով Աստուած, քո աթոռը յաւիտեանս յաւիտենից կայ. քո թագաւորութեան գաւազանը ուղիղ գաւազան է։
7 Դու սիրում ես արդարութիւնը և ատում ես անօրէնութիւնը. սորա համար, ով Աստուած, օծեց քեզ քո Աստուածը ուրա-

խութեան խզովը աւելի քան քո ընկերներին։
8 Քո հանդերձները խապտո զմուռս և հալուէ և կասիա են. փղոսկրեայ պալատներիցը ուրախացնում են քեզ նուագարանով.
9 Թագաւորների աղջիկները քո պատուականների մէջ են. թագուհին կանգնած է քո աջ կողմը Ոփիրի ազնիւ ոսկովը։
10 Լսիր, աղջիկ, և տես, խոնարհեցրու քո ականջը. և մոռացիր քո ժողովուրդը և քո հօր տունը։
11 Եւ ապա թագաւորը կ'ցանկանայ քո գեղեցկութեանը. ինչու որ նա է քո Տէրը, երկրպագութիւն արա նորան։
12 Եւ Տիրոսի աղջիկը ընծայով կ'ներկայանայ. կ'խնդրեն քո երեսը ժողովրդի հարուստները։
13 Թագաւորի աղջիկը խապտո փառաւոր է ներսումը. նորա հանդերձը ոսկեհուռ է.
14 Պատուճեալ զարդարանքով ներս կ'տարուի թագաւորի մօտ. նորա եաևլեցը եկող աղջիկ ընկերները ներս կ'տանուին քեզ մօտ։
15 Ներս կ'տանուին ուրախութիւնով և ցնծութիւնով. և թագաւորի պալատը կ'մտնեն։
16 Քո հարանց տեղ քո որդիքը կ'լինին, և իշխաններ կ'դնես նորանցամեն երկրի վերայ։
17 Ես կ'յիշեմ քո անունը ազգից մինչև ազգ. սորա համար ժողովուրդները կ'փառաւորեն քեզ յաւիտեանս յաւիտենից։

ՍԱՂՄ. ԽԶ

Երգողների գլխաւորին. Կորխայ որդոց Սաղմոս։

1 Աստուած է մեզ համար ապաւէն և զօրութիւն, նեղութեանց մէջ նա շատ օգնական գտուաւ։
2 Սորա համար չենք վախենալ՝ թէև երկիրն անցնի, և լեառները ծովին մէջ տեղը գցուին։
3 Թող գոռան և եռան նորա ջուրերը. թող լեառները դողդողան նորա ուռենալովը։ (Սէլա)։
4 Բոյս գետն իր առուներովը կ'ուրախացնէ Աստուծոյ քաղաքը՝ Բարձրելոյն սուրբ բնակարանները։
5 Աստուած նորա մէջ է. նա չի շարժուիլ. Աստուած օգնութիւն կ'անէ նորան առաւօտանց կանուխ։
6 Հեթանոսները խռովեցան և թագաւորութիւնները շարժուեցան. նա իր ձայնը տուաւ և երկիրը հալուեցաւ։
7 Զօրութեանց Տէրը մեզ հետ է. Յակոբի Աստուածը մեզ համար ապաստան է։ (Սէլա։)
8 Եկէք և տեսէք Տիրոջ գործքերը, որ աւերմունքներ է անում երկրի վերայ,
9 Որ դադարեցնում է պատերազմները մինչև երկրի ծայրերը. փշրում է աղեղները, կոտրատում է նիզակները, և կառքերը այրում է կրակով։
10 Դադարեցէք և ճանաչեցէք, որ ես եմ Աստուած. բարձր կը լինիմ հեթանոսների մէջ. բարձր կ'լինիմ երկրի վերայ։
11 Զօրութեանց Տէրը մեզ հետ է. Յակոբի Աստուածը մեզ համար ապաստան է։ (Սէլա։)

ՍԱՂՄ. ԽԷ

Երգողների գլխաւորին. Կորխայ որդոց Սաղմոս։

1 Ծափ տուէք, ամեն ժողովուրդներ. աղաղակեցէք դէպի Աստուած ցնծութեան ձայնով։
2 Ինչու որ Տէրը բարձրեալ և Ահաւոր է. մեծ թագաւոր է ամեն երկրի վերայ,
3 Նա ժողովուրդներին մեր ներքեւն է գցում, և ազգերին մեր ոտների ներքևը։
4 Նա մեզ համար ընտրում է մեր ժառանգութիւնը՝ Յակոբին փառաւորութիւնը, որ նորան սիրում է։ (Սէլա։)
5 Աստուած բարձրանում է ցնծութեան օրհնութիւնով. Տէրը փողի ձայնով։
6 Սաղմոս ասացէք Աստուծոյն, սաղմոս ասացէք մեր թագաւորին, սաղմոս ասացէք։
7 Քանզի Աստուած ամեն երկրի

թագաւորն է. սաղմոսեցէք Իմաստութեան երգ։

8 Աստուած թագաւոր է հեթանոսների վերայ, Աստուած նըստում է իր սրբութեան աթոռի վերայ։

9 Ժողովուրդների իշխանները հաւաքվում են Աբրահամու Աստուծոյն ժողովուրդը. ինչու որ երկրի վահանները Աստուծոյն են, նա շատ բարձրացաւ։

ՍԱՂՄ. ԽԸ

Սաղմոսի երգ. Կորնթայ որդոցը

1 Մեծ է Տէրը և շատ օրհնեալ. մեր Աստուծոյ քաղաքումը՝ իր սուրբ լեռան վերայ։

2 Գեղեցիկ բարձրութիւն՝ բոլոր երկրի ուրախութիւն է Սիոն լեառը. հիւսիսի կողմումն է մեծ թագաւորի քաղաքը։

3 Աստուած յայտնի է նորա պալատներումը իբրև ապաւէն։

4 Ինչու որ ահա թագաւորները ժողովուեցան և իրար հետ անց կացան։

5 Նորանք տեսան և զարմացան, շփոթուեցան և շուտով փախան։

6 Դողալը բռնեց նորանց այնտեղ և սաստիկ ցաւ՝ ինչպէս ծննդականի։

7 Արևելեան հողմով փշրում ես դու Թարսիսի նաւերը։

8 Ինչպէս որ լսեցինք այնպէս էլ տեսանք զօրութեանց Տիրոջ քաղաքումը՝ մեր Աստուծոյն քաղաքումը. Աստուած հաստատում է նորան մինչև յաւիտեան։ (Ակ-լա։)

9 Ով Աստուած մտածում ենք քո ողորմութեան վերայ, քո տաճարի մէջ։

10 Ինչպէս քո անունը, ով Աստուած, այնպէս էլ քո գովութիւնն է մինչև երկրի ծայրերը. արդարութիւնով լիքն է քո աջը։

11 Թող ուրախ լինի Սիոն լեառը. և Յուդայի աղջիկները ցնծան քո դատաստաններովը։

12 Գնացէք Սիոնի չորս կողմովը, և նորան շրջապատեցէք. համրեցէք նորա աշտարակները։

13 Ուշադրութիւն արէք նորա բերդերին. քննեցէք նորա պալատները, որ պատմէք գալու ազգին.

14 Թէ այս Աստուածն է մեր Աստուածը միշտ և յաւիտեան. նա կ'առաջնորդէ մեզ մինչև ի մահ։

ՍԱՂՄ. ԽԹ

Երգողների գլխաւորին. Կորխայ որդոց Սաղմոս

1 Լսեցէք այս, ով ամեն ժողովուրդներ, և ականջ դրէք, ով աշխարհքի բոլոր բնակիչներ.

2 Հասարակ ու մեծ մարդիկ, հարուստ և աղքատ՝ ամենեքեան։

3 Իմ բերանը պիտի իմաստութիւն խօսի, և իմ սրտի խորհուրդը՝ իմաստութիւն։

4 Ես իմ ականջը կ'խոնարհեցնեմ դէպի առակ, և քնարով կ'բանամ իմ խրթին խօսքը։

5 Ինչո՞ւ վախենամ ես չար օրերումը, երբ իմ խորամանկ թշնամու անօրէնութիւնը պատում է ինձ։

6 Որ նորանք իրանց ապրանքներին են յուսացած, և իրանց մեծ հարստութիւնովն են պարծենում։

7 Մարդ չէ կարող իր եղբօրը փրկել. և ոչ նորա փրկանքը տալ Աստուծոյն.

8 Ինչու որ թանգ է նորա անձերի փրկանքը. և յաւիտեան կը դադարի.

9 Թէև յաւիտեան ապրի և ապականութիւն չտեսնէ։

10 Բանի տեսնում է որ իմաստունները մեռնում են ինչպէս որ յիմարներն ու անմիտներն են կորչում՝ և իրանց հարստութիւնը ուրիշներին թողում։

11 Նորա միտքը սա՛ է՝ որ իրանց տունը յաւիտեան է, իրանց բնակութիւնը ազգից մինչև ազգ. նոքա իրանց անունովը կ'կանչուին երկիրներումը։

12 Բայց մարդս պատուի մէջ չէ մնում. նման է անասուններին որ կորչում են։

13 Սա է նորանց ճանապարհը որ յիմար են, և նոցա հետևողները

հաւանում են նորանց խօսքին։ (Սէլա։)
14 Ոչխարների պէս դժոխքի մէջ են մատնվում. մահը նոցա հովիւն է. և ուղիղները առաւօտանից կ'տիրապետեն նորանց. և նորանց կերպարանքը կ'մաշուի դժոխքում իրանց բնակարաններից դուրս։
15 Բայց Տէրն իմ անձը կ'փրկէ դժոխքի ձեռքից. ինչու որ նա ընդունում է ինձ։ (Սէլա։)
16 Մի վախենար երբոր մարդ հարստանայ, երբոր նորա տան փառքը շատանայ։
17 Քանզի իր մեռնելու ժամանակին ոչ մին բան վեր չառնիլ իր հետ. նորա փառքը չի գնալ նորա ետևից։
18 Թէև նա իր անձը օրհնում է իր կեանքում, բայց քեզ կ'գովեն, որ բարի ես անում քեզ։
19 Նա կ'մտնէ իր հարանց ազգի մօտ, ու մինչև յաւիտեան լոյս չեն տեսանել։
20 Մարդ՝ որ պատուի մէջ է և իմաստուն չէ, նման է անասուններին որ կորչում են։

ՍԱՂՄ. Ծ

Ասափայ Սաղմոս

1 Աստուածների Աստուածը՝ Եհովան խօսում է. և կանչում է երկրին արևելքից մինչև արևմուտքը։
2 Սիոնի մէջից՝ գեղեցկութեան կատարելութիւնից Աստուած փայլում է։
3 Մեր Աստուածը կ'գայ և լուռ չի կենալ. նորա առջև փչացնող կրակ և նորա չորս կողմով սաստիկ մրրիկ կ'լայ։
4 Նա կանչում է երկնքին վերևից, և երկրին՝ որ իր ժողովրդին դատէ։
5 Ժողովեցէք ինձ մօտ իմ սրբերին, որ ինձ հետ ուխտ դրին զոհով։
6 Եւ երկինքը կ'պատմէ նորա արդարութիւնը. ինչու որ Աստուած դատաւոր է։ (Սէլա։)
7 Լսիր, իմ ժողովուրդ, և ես խօսիմ. ով Իսրայէլ, և ես վկայութիւն տամ քեզ. ես եմ Աստուած, քո Աստուածը։
8 Քո պատարագների համար քեզ չեմ յանդիմանում, և քո ողջակէզները միշտ իմ առջևն են։
9 Քո տնից արջառ չեմ առնում, և ոչ այծեր քո փարախներից։
10 Քանզի իմն են ծմակի ամեն գազանները և հազարաւոր լեռների անասունները։
11 Գիտում եմ ես լեռների բոլոր թռչունները, և վայրի գազանները իմ առջևն են։
12 Եթէ սովածանամ, քեզ չեմ ասիլ, ինչու որ իմն է աշխարհքս և նորա լիութիւնը։
13 Մի՞թէ ես արջառների միս կ'ուտեմ և այծերի արիւն կ'խըմեմ։
14 Պատարագիր Աստուծոյն գոհութիւն, և վճարիր Բարձրեալին քո ուխտերը,
15 Եւ կանչիր ինձ նեղութեան օրումը. և կ'ազատեմ քեզ և դու կ'փառաբանես ինձ։
16 Բայց ամբարշտին ասում է Աստուած. Քե՞զ ինչ որ դու իմ հրամանները պատմում ես և իմ ուխտը բերանդ ես առնում։
17 Եւ խրատն ատում ես և իմ խօսքը քո յետևի կողմն ես գցում։
18 Եթէ գող ես տեսնում, նորա հետ ես գնում. և քո բաժինը շնացողների հետ է։
19 Բերանդ չարութեան ես տալիս, և լեզուդ նենգութիւն է հնարում։
20 Նստում ես և եղբօրդ դէմ հակառակ խօսում. քո մօր որդին վերայ բամբասանք ես անում։
21 Այս բաները արիր դու և ես լուռ կացայ. կարծեցիր թէ ես էլ քեզ նման եմ. բայց կ'յանդիմանեմ քեզ և քո աչաց առջև կ'դնեմ։
22 Միտք արէք այս, ով Աստուծոյն մոռացողներ, մի գուցէ ես յափշտակեմ, և ոչ ոք չլինի որ փրկէ։
23 Գոհութիւն պատարագ մատուցանողը փառաւորում է ինձ.

և ով որ իր ձանապարհին պղու-
շանայ, նորան ցոյց կ'տամ Ա-
տուծոյ փրկութիւնը։

ՍԱՂՄ. ԾԱ.

Երգողների գլխաւորին. Դաւթի Սաղմոս.
երբոր Նաթան մարգարէն նորա մօտ և-
կաւ՝ երբ նա բներեալ մօտ էր մտնել։

1 Ողորմիր ինձ, Աստուած, քո
ողորմութեան պէս. և քո մեծ
ողորմութեան պէս ջնջիր իմ ա-
նօրէնութիւնները։
2 Լսպառ լուա ինձ իմ անօրէ-
նութիւնիցը, և սրբիր ինձ իմ
մեղքիցը։
3 Գիտեմ ես ճանաչում եմ իմ
անօրէնութիւնները, և իմ մեղքն
ամէն ժամանակ իմ առջևն է։
4 Միմիայն քեզ դէմ մեղանչե-
ցի, և չարը քո աչաց առջև գոր-
ծեցի. որ դու արդար լինիս քո
խօսքերումդ, և մաքուր լինիս քո
դատաստանումդ։
5 Ահա ես անօրէնութիւնով ծըն-
ված, և մեղքով յղացաւ ինձ իմ
մայրը։
6 Ահա դու սիրում ես ճշմար-
տութիւնը երիկամունքներում. և
ծածուկ տեղը իմաստութիւն կը
ասորեցնես ինձ։
7 Սրբիր ինձ զոպայով՝ և մաքուր
կ'լինիմ. լուա ինձ՝ և ձիւնից ս-
պիտակ կ'լինիմ։
8 Լսել տուր ինձ ցնծութիւն և
ուրախութիւն. թող ցնծան այն
ոսկերքը, որ կոտրատեցիր։
9 Երես թաղցրու իմ մեղքերի-
ցը, և իմ բոլոր անօրէնութիւն-
ները ջնջիր։
10 Սուրբ սիրտ ստեղծիր ինձա-
նում, ով Աստուած, և ուղիղ
հոգի նորոգիր իմ ներսումը։
11 Դէն մի գցիր ինձ քո երեսիցը,
և քո Սուրբ Հոգին մի վեր առ-
ներ ինձանից։
12 Դարձեալ տուր ինձ քո փըր-
կութեան ուրախութիւնը, և կա-
մաւոր հոգով հաստատիր ինձ։
13 Ապա անօրէններին կ'ասորեց-
նեմ քո ճանապարհները. և մե-
ղաւորները քեզ դառնան քեզ
մօտ։

Փրկիր ինձ արիւնիցը, ով Աս- 14
ուած՝ իմ փրկութեան Աստուա-
ծը. և իմ լեզուն կ'փառաբանէ
քո արդարութիւնը։
Տէր, բաց արա իմ շրթունք- 15
ները. և իմ բերանը կ'պատմէ
քո գովութիւնը։
Զանգի դու պատարագ չես ու- 16
զում. եթէ ես կ'տայի քեզ.
և ողջակէզներին հաւան չես կե-
նում։
Աստուծոյ ընտրեալ պատարագ- 17
ները կոտրուած հոգին է, կոտր-
ուած ու փշրուած սիրտը դու
չես անարգիլ, ով Աստուած։
Բարի արա Սիոնին քո քաղց- 18
րութիւնովը. Երուսաղէմի պա-
րիսպները շինիր։
Այն ժամանակ հաճոյ կ'լինին 19
քեզ արդարութեան պատարագ-
ները՝ ողջակէզներն ու մատաղ-
ները. այն ժամանակ արջառներ
կ'մատուցանեն քո սեղանի վերայ։

ՍԱՂՄ. ԾԲ.

Երգողների գլխաւորին. Դաւթի վարդա-
պետութիւն, երբոր Դոէկ Եդովմացին
եկաւ և Սաուղին պատմեց և նորան
ասաց. թէ Դաւիթն Աբիմելէքի տունն
եկաւ։

Ի՞նչ ես պարծենում չարութիւ- 1
նով, ով բռնաւոր. Աստուծոյ
ողորմութիւնը ամէն օր կայ։
Քո լեզուն չարութիւն է հնա- 2
րում, ինչպէս սուր ածելի նեն-
գութիւն է գործում։
Դու չարն աւելի ես սիրում 3
քան թէ բարին, սուտը աւելի
քան թէ ճշմարտութիւն խօսիլը։
(Սէլա։)
Դու ամէն կորուստ բերող խօս- 4
քը և նենգաւոր լեզուն ես սի-
րում։
Աստուած էլ կ'կործանէ քեզ 5
յաւիտեան. կ'խլէ և կ'հանէ քեզ
քո բնակարանիցը. և քո արմա-
տը կենդանեաց երկրիցը. (Սէլա։)
Այն արդարները կ'տեսանեն և կը 6
վախենան, և նորա վերայ կ'ծի-
ծաղին։
Ահա այն մարդը՝ որ Աստու- 7
ծոյն իրան զօրութիւն չարաւ,
այլ իր մեծ հարստութեանը յա-

ասցաւ և իր չարութիւնովը զօրացաւ։

8 Բայց ես կանանչացած ձիթենու նման եմ Աստուծոյ տան մէջ. Աստուծոյ ողորմութեան եմ յուսացած ես յաւիտեան յաւիտենից։

9 Կ'գովեմ քեզ յաւիտեան, որ դու այս արիր. և քո անունիդ կ'սպասեմ. ինչու որ բարի է քո սրբերի առջև։

ՍԱՂՄ. ԾԶ

Երգողների գլխաւորին Մախալաթի վերայ. Դաւթի վարդապետութիւն։

1 Անզգամն ասաց իր սրտումը՝ Ոչ Աստուած չկայ. նորանք ապականուեցան և գարշելի եղան անօրէնութիւնով. ոչ ով չկայ որ բարին անէ։

2 Աստուած երկնքիցը մտիկ է անում մարդկանց որդոցը վերայ, որ տեսնէ թէ կ'լինի արդեօք մէկ իմաստուն՝ որ Աստուծոյն խնդրէ։

3 Ամենքը յետ քաշուեցան և միասին անպիտանացան, բարի գործող չկայ, մէկն էլ չկայ։

4 Մի՞թէ չեն իմանում անօրէնութիւն գործողները որ իմ ժողովուրդին ուտում են ինչպէս որ հացը կ'ուտեն, և Աստուծոյն չեն կանչում։

5 Անտեղ վախենում են վախով՝ ուր որ վախ չկայ, ինչու որ Աստուած քեզ պատողների ոսկերքը ցրվում է. ամօթ ես անում նորանց, ինչու որ Աստուած դէն է գցում նորանց։

6 Ո՛հ թէ Սիօնիցը գար Իսրայէլի փրկութիւնը. երբոր Աստուած իր ժողովրդի գերութիւնը դարձընէ. ապա Յակոբը կ'ցնծայ ու Իսրայէլն ուրախ կ'լինի։

ՍԱՂՄ. ԾԷ

Երգողների գլխաւորին Նիկինոթով. Դաւթի վարդապետութիւն, երբոր Զիբացիք եկան և Սաուղին ասացին. Չէ՞ որ Դաւիթը մեզ մօտ թագ է կացած։

1 Ով Աստուած, քո անունովն ազատիր ինձ. և քո զօրութիւնովն իրաւունք արա ինձ։

2 Ով Աստուած, լսիր աղօթքիս. ականջ դիր իմ բերնի խօսքերին։

3 Քանզի օտարները վեր կացան ինձ վերայ, և զօրաւորները խընդրում են իմ անձը, նորանք Աստուծոյն չեն դնում իրանց աչաց առջև. (Սէլա։)

4 Ահա Աստուած իմ օգնականն է, Տէրը պահպանում է իմ անձը։

5 Նա չարը կ'դարձնէ իմ թշնամիների վերայ. քո ճշմարտութիւնովը կորցրու նորանց։

6 Ես յօժար կամօք պատարագ կ'մատուցանեմ քեզ և քո անունը կ'գովեմ, ով Տէր, ինչու որ բարի է։

7 Քանզի դու ամեն նեղութիւնից փրկում ես ինձ. և իմ աչքը ուրախութիւնով նայում է իմ թշնամիների վերայ։

ՍԱՂՄ. ԾԸ

Երգողների գլխաւորին. Նիկինոթով։ Դաւթի վարդապետութիւն։

1 Ով Աստուած, ականջ դիր իմ աղօթքին, և քեզ մի թագցներ իմ աղաչանքիցը։

2 Մտիկ արա ինձ վերայ և լսիր ինձ, որ մելորուած եմ իմ տրտմութիւնովը և սուգ եմ անում.

3 Թշնամու ձայնիցը և ամբարշտի նեղացնելուցը. ինչու որ անօրէնութիւն են գցում ինձ վերայ, և բարկութիւնով հալածում են ինձ։

4 Իմ սիրտը դողաց ինձանում, և մահի սարսափը ընկաւ ինձ վերայ.

5 Վախ ու դող եկաւ ինձ վերայ, և սոսկում ծածկեց ինձ։

6 Եւ ես ասացի. Ո՜հ թէ թև ունենայի ինչպէս աղաւնի, որ թռչէի և հանգչէի։

7 Ահա կ'փախչէի, կ'հեռանայի, անապատումը կ'կենայի։ (Սէլա։)

8 Կ'շտապէի որ ինձ համար ապաստան գտնէի յափշտակող քամուցը և մրրկիցը։

9 Ով Տէր, կործանիր բաժանիր նորանց լեզուն. ինչպես որ անիրաւութիւն և հակառակութիւն տեսայ քաղաքումը։

10 Ցերեկ և գիշեր չընկպատում են նորա չորս կողմանը նորա պատրաստների վերայ. անօրէնութիւն և չարագործութիւն կայ նորա մէջ։
11 Անիրաւութիւն կայ նորա մէջ. և խաբէութիւն և պրկողութիւն չէ պակասում նորա փողոցներից։
12 Քանզի եթէ թշնամին ինձ նախատինք տար՝ կ'համբերէի. և եթէ ինձ ատողը պարծենար ինձ վերայ՝ կ'թագչէի նորանից։
13 Բայց դու ինձ հաւասար մարդ էս՝ իմ սրտակիցը և իմ բարեկամը.
14 Որ մենք իրար հետ քաղցրութիւնով խորհուրդ էինք անում և Աստուծոյ տունն էինք գնում ամբոխի հետ։
15 Թող մահ հասնէ նորանց վերայ, և կենդանի կենդանի խորտակուին դժոխքի մէջ, ինչու որ չարութիւնք կան նորանց բնակարաններումն՝ նորանց ներսումը։
16 Բայց ես դէպի Աստուած կը կանչեմ. և Տէրը կ'փրկէ ինձ։
17 Իրիկունն ու առաւօտը և կէս օրին մտածում եմ և հառաչում. և նա կ'լսէ իմ ձայնին։
18 Նա խաղաղութիւնով կ'փրկէ իմ անձը այն կռիւից՝ որ ինձ դէմ է. ինչու որ շատ են նորանք՝ որ ինձ հետ են։
19 Աստուած կ'լսէ, և կ'նեղացնէ նորանց, նա՝ որ վաղուց կայ. (Սէլա։) ինչու որ նորանք չեն փոխւում և Աստուածանից չեն վախենում։
20 Իրանց ձեռքերը գցում են իրանց խաղաղ ընկերների վերայ, իրանց դաշինքը դրժում են։
21 Նորանց բերանը իւղից աւելի կակուղ է, բայց կռիւ կայ նորանց սրտումը. նորանց խօսքերը ձէթից աւելի կակուղ են, բայց սրած թուր են։
22 Քո հոգան Աստուծոյ վերայ դիր, և նա քեզ կ'անէ քեզ. նա թող չի տալ որ արդարը յաւիտեան շարժուի տեղից։
23 Եւ դու, ով Աստուած, կայր կ'դնես նորանց ապականութեան հօրի մէջ. արիւն թափող ու նենգաւոր մարդիկը իրանց օրերը մինչև կէսը չեն հասցնել. բայց ես քեզ եմ յուսացած։

ՍԱՂՄ. ԾԶ

Երգողների գլխաւորին. Համր ազաւնու հեռաւորութեանց Էղե-խվէ. Դաւթի գիր, երբոր փղշտացիք բռնեցին նորան Գէթումը։

Ով Աստուած, ողորմիր ինձ, 1
ինչու որ մարդն ինձ ուզում է կուլ տալ. ամեն օր պատերազմելով նեղացնում է ինձ։
Թշնամիքս ամեն օր կամենում 2
են կուլ տալ ինձ. ինչու որ շատ են ինձ հետ ամբարտաւանութեամբ կռիւ անողները։
Ինչ օր որ վախենամ՝ քեզ կը 3
յուսամ։
Աստուծով կ'գովեմ նորա խօս- 4
քը. Աստուծոյն եմ յուսացած՝ չեմ վախենալ. ի՞նչ կ'անէ ինձ մարմինը։
Ամեն օր ծռում են խօսքերս. 5
նորանց ինձ վերայ ամէն բոլոր խորհուրդները դէպի չարութիւն են։
Նորանք հաւաքվում են և 6
թաղ կենում. իմ ոտաց հետեւին մտիկ են տալիս. ինչու որ կամենում են իմ անձը բռնել։
Մի՞թէ անօրէնութիւնով փըր- 7
կութիւն կ'լինի նորանց. բարկութիւնով վայր դիր ժողովուրդները, ով Աստուած։
Իմ թափառիկը դու համա- 8
րում ես. իմ արտասուքները դիր քո տիկի մէջ. չէ՞ որ նորանք քո գրքումն են։
Այն ժամանակ իմ թշնամիքը 9
յետ կ'դառնան քեզ կանչած օրս. այս ես գիտեմ եմ՝ որ Աստուած ինձ հետ է։
Աստուծով կ'գովեմ նոր խօս- 10
քը. Տիրոջմով կ'գովեմ նոր խօսքը։
Աստուծոյն եմ յուսացած՝ չեմ 11
վախենալ. ի՞նչ կ'անէ ինձ մարդը։
Ով Աստուած, քո ուխտերն 12
ինձ վերայ են, գոհութեան պա-

տարապներ կ'մատուցանեմ քեզ։
13 Գանգի դու իմ անձը փրկեցիր մահից. այս, ոտներս գայթակղելուց, որ Աստուծոյ առջև ման գամ կենդանեաց լուսոյ մէջ։

ՍԱՂՄ. ԾԼ

Երգողների գլխաւորին. Մի ապականներ Եղեռնով. Դաւթի գիր. Երբոր նա Սաուղի երեսից փախել քարայրումն էր։

1 Ողորմիր ինձ, ով Աստուած, ողորմիր ինձ, ինչու որ քեզ է յուսացած իմ անձը. և քո թևերի շուքին կ'յուսամ մինչև որ չարիքն անցնին։
2 Ես բարձրեալ Աստուծոյն եմ կանչում, այն Աստուծոյն որ ինձ բարի է անում։
3 Նա կ'ուղարկէ երկնքից և կը փրկէ ինձ. նա ամօթ կ'անէ նորան որ ուզում է ինձ կուլ տալ։ (Սէլա։) Աստուած ուղարկում է իր ողորմութիւնն ու ճշմարտութիւնը։
4 Իմ անձը առիւծների մէջ է. ես ընկած եմ բոց փչող մարդկանց որդոց մէջ. նորանց ատամները նիզակ ու նետ են, և նորանց լեզուքը սրած թուր։
5 Բարձրացիր, ով Աստուած, երկնքի վերայ. քո փառքն ամեն երկրի վերայ լինէ։
6 Որոգայթ պատրաստեցին իմ քայլերի համար. իմ անձը խոնարհուած էր. փոս փորեցին իմ առջև, և իրանք ընկան մէջը։ (Սէլա։)
7 Սիրտս պատրաստ է, ով Աստուած, սիրտս պատրաստ է. երգով կ'օրհնեմ և սաղմոս կ'ասեմ։
8 Զարթնացիր, իմ փառք. զարթնացիր, սաղմոսարան և քնար. ես կ'զարթնանամ կանուխ առաւօտանից։
9 Կ'գոհանամ քեզանից, Տէր, ժողովրդոց մէջ. սաղմոս կ'ասեմ քեզ ազգերի մէջ։
10 Գանգի քո ողորմութիւնը մեծ է մինչև երկինքը, և քո ճշմարտութիւնը մինչև ամպերը։
11 Բարձրացիր, ով Աստուած, երկնքի վերայ. քո փառքը ամեն երկրի վերայ։

ՍԱՂՄ. ԾՄ

Երգողների գլխաւորին. Մի ապականներ Եղեռնով. Դաւթի գիր։

1 Իրաւի՞ մունջ արդարութիւն կը խօսիք, ուղիղ դատաստան արէ՞ք, ով մարդկանց որդիք։
2 Ընդհակառակն սրտով անօրէնութիւն էք գործում. ձեր ձեռաց անիրաւութիւնը կշռով բաժանում էք երկրի մէջ։
3 Ամբարիշտները մօր արգանդից ծուռ են. որովայնից մոլորուած են սուտ խօսողները։
4 Նորանց թոյնը նման է օձի թոյնի. ինչպէս խուլ իժ, որ իր ականջը խփում է,
5 Որ չլսէ կախարդների ձայնին՝ այն թովչին որ վարպետութեամբ թովում է։
6 Ով Աստուած, փշրիր նորանց առաջներն իրանց բերանում. և առիւծների մեծ ակռաները ջարդիր, ով Տէր։
7 Հալուին նորանք ինչպէս ջուր որ անդադար գնում է, և երբոր նետ գցեն՝ թող լինին իրը բթացած։
8 Խխունջի պէս լինին որ հալվում է գնալիս. կնոջ վիժածի պէս որ արևը չտեսանեն։
9 Դեռ ձեր կաթսաները ձ֊֊֊֊ փուշի տաքութիւնը չիմացած՝ թէ հումը թէ այրուածը, մրրկիցը տարուին։
10 Արդարն ուրախ կ'լինի երբոր վրէժխնդրութիւնը կ'տեսնէ. իր ոտքերը կ'լուանայ ամբարշտի արիւնովը։
11 Եւ մարդիկ կ'ասեն. Իրաւի որ պտուղ կայ արդարի համար, իրաւի որ կայ Աստուած՝ դատաւոր երկրի վերայ։

ՍԱՂՄ. ԾԹ

Երգողների գլխաւորին. Մի ապականներ Եղեռնով. Դաւթի գիր. երբոր Սաուղ ուղարկեց և նորա տունը պահել տուաւ որ սպանէ նորան։

Փրկիր ինձ իմ թշնամիներից, 1

իմ Աստուած. ապրեցրու ինձ նորանցից որ վեր կացան ինձ վրայ։
2 Փրկիր ինձ անօրէնութիւն գործողներից, և արիւնահեղ մարդկանցից ապրեցրու ինձ։
3 Քանզի ահա թաղուն ապատում են՝ որ իմ անձը բռնեն. զօրեղները ժողովւում են ինձ վերայ առանց իմ անօրէնութեան և առանց իմ մեղաց, ով Տէր։
4 Առանց իմ անօրէնութեան վազում են և պատրաստվում. զարթնացիր՝ որ առաջս դաս, և տես։
5 Իսկ դու ով Տէր՝ Զօրութեանց Աստուած՝ Իսրայէլի Աստուածը, վեր կաց որ ամեն հեթանոսներին այցելես. մի ողորմիր ոչ մի անօրէնութիւն գործողի։ (Սէլա։)
6 Իրիկունը յետ են դառնում և ոռնում ինչպէս շուն, և քաղաքումը շուռ են գալիս։
7 Ահա վայրահաչ խօսում են իրանց բերանովը. սրեր են՝ իրանց շրթունքներումը, ինչու որ ասում են՝ Ո՞վ կ'լսէ։
8 Բայց դու, Տէր, կ'ծիծաղես նորանց վերայ, և ծաղր կ'անես այդ ամեն հեթանոսներին։
9 Ով իմ զօրութիւնը քեզ եմ մնիկ տալիս, ինչու որ Աստուած է իմ ապաւէնը։
10 Իմ ողորմութեան Աստուածը ինձ կ'դիմաւորէ. Աստուած ինձ ուրախութիւնով նայիլ կ'տայ իմ թշնամիների վերայ։
11 Մի սպաներ նորանց, որ իմ ժողովուրդը չմոռանայ. ցիր ու ցան արա նորանց քո զօրութիւնովը, և վայր գցիր նորանց, ով Տէր՝ մեր վահանը։
12 Իրանց բերանի մեղքի համար և իրանց շրթունքների խօսքի համար թող բռնուին իրանց ամբարտաւանութիւնովը. և այն անէծքի և սուտ խօսքերի համար որ պատմում են,
13 Ստամբեցրու նորանց բարկութիւնով. ստամբեցրու որ չքանան, և գիտենան՝ որ Աստուած տիրում է Յակոբի մէջ մինչև երկրի ծայրերը. (Սէլա։)

Իրիկունը յետ են դառնում և 14
ոռնում շան նման, և քաղաքումը շուռ գալիս.
Նորանք թափառում են ու- 15
տելու համար. և եթէ չեն կշտանում, արտնջում են։
Բայց ես կ'օրհնեմ քո զօրու- 16
թիւնը, և առաւօտանց կ'փառաբանեմ քո ողորմութիւնը. ինչու որ պահապան և ապաւէն եղար ինձ իմ նեղութեան օրումը։
Ով իմ զօրութիւն քեզ սաղ- 17
մոս կ'երգեմ. ինչու որ, ով Աստուած, դու ես իմ պահապան և իմ ողորմութեան Աստուածը։

ՍԱՂՄ. Կ

Երգողների գլխաւորին. Շուշան-Եդութի վերայ. Դաւթի գիր սովորեցնելու համար։ Երբոր կռիւ արաւ Միջագետաց Ասորոց և Զոպայ Ասորոց հետ, և երբոր Յովաբ յետ դարձաւ և Եդոմիցը տասներկու հազար մարդ կոտորեց Աղի Ձորումը։

Ով Աստուած, մեզ դէն գցե- 1
ցիր, ցրվեցիր մեզ, բարկացար. յետ դարձիր դէպի մեզ։
Դու դողացրիր երկիրը և նո- 2
րան պատառեցիր. բժշկիր նորա կատրածը, ինչու որ երերում է։
Խիստ բան գոյց տուիր քո ժո- 3
ղովրդին. խմել տուիր մեզ թըմրութեան գինի։
Բայց քեզանից վախեցողներին 4
դրօշակ տուիր, որ ճշմարտութեան համար բարձրացնեն։ (Սէլա։)
Որ քո սիրելիքն ապրին. թող 5
քո աջը փրկէ. և լսիր ինձ։
Աստուած խօսեց իր սուրբ տե- 6
ղումը՝ ես կ'ցնծամ, Սիւքէմը կը բաժանեմ և Սուքոթ հովիտը կը չափեմ։
Ինն է Գաղաադը՝ և ինն է 7
Մանասէն, և Եփրեմը իմ գլխի զօրութիւնն է, և Յուդան իմ գաւազանը։
Մովաբն իմ լուանալու տաշնն 8
է. իմ կօշիկը Եդոմայ վերայ կը գցեմ. ով Փղշտացոց երկիր, ցընծա ինձ համար։
Ո՞վ կ'տանի ինձ ամուր քա- 9

դաք, ո՞վ կ՚առաջնորդէ ինձ մինչև Եդոմ։
10 Ո՞չ ապաքէն դու, ով Աստուած, որ դէն գցեցիր մեզ, և չես դուրս գալիս մեր զօրքի հետ, ով Աստուած։
11 Տուր մեզ քո օգնութիւնը նեղութեան մէջ. ինչու որ մարդու օգնութիւնը փուչ է։
12 Աստուծով զօրութիւն կ՚գործենք. և նա կոխ կ՚առնի մեր թշնամիներին։

ՍԱՂՄ. ԿԱ

Երգողների գլխաւորին. Նիկինոթի վերայ. Դաւթի Սաղմոս։

1 Ով Աստուած, լսիր իմ ապաղաչին. մտիկ արա իմ աղօթքին։
2 Երկրի ծայրից կանչում եմ դէպի քեզ՝ երբոր սիրտս թուլանում է. առաջնորդիր ինձ այն վէմին, որ ինձանից բարձր է։
3 Ինչու որ դու ես իմ ապաւէնը, զօրաւոր աշտարակ թշնամուդէմ։
4 Ես քո խորանումը կ՚բնակուիմ յաւիտեանների. քո թեւերի ծածկոյթի տակ կ՚ապաւինիմ։ (Սէլա։)
5 Դանդի, ով Աստուած դու լսեցիր իմ ուխտերը. և տալիս ես ինձ ժառանգութիւնը քո անուանից վախեցողների։
6 Օրեր ես աւելացնում թագաւորի օրերի վերայ. և նորա տարիքը ազգից մինչև ազգ պէս։
7 Նա յաւիտեան կ՚մնայ Աստուծոյ առջև. ողորմութիւն և ճշմարտութիւն պատրաստիր, որ պահեն նորան։
8 Այնմէն քո անուանին յաւիտեան սաղմոս կ՚ասեմ, որ իմ ուխտերն օրէ օր վճարեմ։

ՍԱՂՄ. ԿԲ

Երգողների գլխաւորին. Իդիթունի վերայ. Դաւթի Սաղմոս։

1 Իրաւի որ իմ անձը լուռ ու մունջ ապաստամ է Աստուծոյն, նորանից է իմ փրկութիւնը։
2 Իրաւի որ նա է իմ վէմը և իմ փրկութիւնը, իմ ապաւէնը որ խիստ չշարժուիմ։
3 Մինչև ե՞րբ էք յարձակուիմ մարդու վերայ, որ ամէնքդ սպանէք նորան, ինչպէս ծռած պատ և խախուտ պարիսպ։
4 Իրաւի խորհուրդ են անում որ իր բարձրութիւնից վայր գցեն նորան. հաճոյ են կենում սուտի մէջ. իրանց բերանով օրհնում են, բայց իրանց սրտում անիծում։ (Սէլա։)
5 Ով իմ անձը, միմիակ լուռ մտիկ տուր Աստուծոյն, ինչու որ նորանից է իմ յոյսը։
6 Իրաւի որ նա է իմ վէմը, իմ փրկութիւնը, իմ ապաւէնը. ես չեմ շարժուիլ։
7 Աստուծոյ մօտ է իմ փրկութիւնը և փառքը. իմ զօրութեան վէմն ու իմ ապաւէնը Աստուծոյ մօտ է։
8 Յուսացէք նորան ամէն ժամանակ, ով ժողովուրդներ, թափեցէք ձեր սրտերը նորա առջև. Աստուած մեր ապաւէնն է։ (Սէլա։)
9 Իրաւի որ հասարակ մարդիկն ունայն են և մեծամեծ մարդիկը սուտ. երբոր կշռի մէջ դնուին նորանք ամէն ունայնութիւնից աւելի թեթև են։
10 Մի յուսաք հարստահարութեան, և զուր յոյս մի դնէք յափշտակութեան վերայ. եթէ հարստութիւնը շատանայ՝ սիրտ մի դնէք նրա վերայ։
11 Աստուած մին անգամ խօսեց. և երկու բան լսեցի. թէ զօրութիւնն Աստուծոյն է։
12 Եւ քո է ողորմութիւնը, Տէր, 12 ինչու որ դու մարդուն հատուցում կ՚տաս իր գործքերի պէս։

ՍԱՂՄ. ԿԳ

Դաւթի Սաղմոս, երբոր նա Յուդայի անապատումն էր։

Ով Աստուած, դու ես իմ Աստ- 1
ուածը. առաւօտանից քեզ եմ մտն գալիս. հոգիս ծարաւ է քեզ համար. մարմինս քեզ է ցանկանում ցամաք և ծարաւ երկրում, ուր որ ջուր չկայ։

2 Ամէնէն արդութեան սեզուածը
նայեցի քեզ, որ քո զօրութիւնն
ու փառքը տեսնեմ։
3 Վասնզի քո ողորմութիւնը լաւ
է քան թէ կեանքը. իմ շրթունք-
ները պիտի գովեն քեզ։
4 Ամէնէն կ'օրհնեմ քեզ իմ
կեանքաւս. քո անունովը կը
բարձրացնեմ իմ ձեռքերը։
5 Իմ կեանքս կ'կշտանայ ինչպէս
ճարպով և պարարտութիւնով,
և իմ բերանը կ'օրհնէ քեզ ու-
րախ շրթունքներով։
6 Երբոր քեզ յիշեմ եմ անկողնուս
գիշերուան պահերուն քեզ վերայ եմ մտածեմ։
7 Վասնզի որ դուն եղար ինձ օգ-
նութիւն. և քո թևերուն հովանա-
արութեան տակ կ'ցնծամ։
8 Իմ անձը պինդ քո ետևէդն է
ընկնեմ. քո աջը հաստատ պա-
հեմ է ինձ։
9 Բայց նորանք իմ անձին կո-
րուստն են ուզեմ. վայր կ'ընկ-
նեն երկրի խորերուն մէջ.
10 Սրի ձեռքը կ'մատնուին. չաղալ-
ներուն բաժին կ'լինին։
11 Բայց թագաւորն Աստուծով
կուրախանայ. կ'պարծենան բոլոր
նորանով երդուեմ անոնցները, ին-
չու որ կ'խփուի սուտ խօսողներուն
բերանը։

ՍԱՂՄ. ԿԴ

Երգողներուն գլխաւորին. Դաւթի Սաղմոս։

1 Ով Աստուած, լսէր իմ ձայնին
ես գանգատելիս. պահէր իմ
կեանքը թշնամւոյ սիրէդ։
2 Ծածկէր ինձ չարերուն ժողովքի-
ցը, անօրէնութիւն գործողներուն
ամբոխէդը.
3 Որ իրանց լեզուները սրուած են
սուր, և պատրաստած են իրանց
նետ՝ այսինքն դառն խօսքը.
4 Որ թագուն դցեն անմեղի վե-
րայ. յանկարծակի գցեմ են և
չեն վախեր։
5 Չար բանը զօրաւոր են անեմ
իրանց համար. խորհրդակցեմ
են որ թագուն որոգայթներ դը-
նեն, և ասեմ են. Ո՞վ կ'տեսնէ
նորանց։
6 Նորանք անօրէնութիւններ են
խորհեմ և ասեմ՝ Կատարե-
ցինք. հնարը հնարուած է. մար-
դուս ներքը և սիրտը խոր է։
7 Բայց Աստուած նետ կ'գցէ նո-
րանց վերայ յանկարծ, խոց կ'լի-
նի նորանց։
8 Եւ նորանց լեզուն վեր կ'գցէ
իրանց վրկը միւսին վերայ. ա-
մէնքը՝ որ կ'տեսնեն նորանց՝ կը
փախչին։
9 Եւ ամէն մարդիկ կ'վախենան
և Աստուծոյ գործքերը կ'պատ-
մեն, և նորա արուածը միտք կ'տա-
նեն։
10 Արդարն ուրախ կ'լինի Տիրոջ-
մով ու նորան կ'յուսայ, և կը
պարծենան ամէն սրտով ուղիղ-
ները։

ՍԱՂՄ. ԿԵ

Երգողներուն գլխաւորին. Դաւթի Սաղմոս։

1 Ով Աստուած, քեզ վայելեմ է
հանդուրժութիւնով օրհնութեան
Սիոնի մէջ. և քեզ ուխտ
են տուողանեմ։
2 Դուն լսեմ ես աղօթք, ամէն
մարմին քեզ մօտ կ գալիս։
3 Անօրէնութիւնները զօրացան
ինձ վերայ, մեր ամբարշտութիւն-
ները դուն ես քաւեմ։
4 Երանի նորան՝ որ դուն ընտրեմ
ես և ընդունեմ, որ քո արուես-
մը բնակեմ. թող կշտանանք քո
տան՝ սուրբ տաճարի բարիքնե-
րովը։
5 Զարհուրելի կերպով՝ արդարու-
թիւնով կ'պատասխանես մեզ,
ով մեր փրկութեան Աստուած,
որ երկրի ամէն ծայրերի և հե-
ռաւոր տեղի յոյսն ես։
6 Որ լեռները հաստատեմ է
իր կարողութիւնովը, և զօրու-
թիւն է հագած։
7 Որ ծովի ձայնը ցածացնեմ է՝
նորա ալիքներուն ձայնը և ազգերի
խռովութիւնը։
8 Որ քո նշաններէդը վախենան
երկրի ծայրերուն բնակվողները,
որ ուրախացնեմ ես առաւօ-
եան և իրիկուան ելքը։

9 Տէա՛ ես գալիս երկրին և խմացնում ես նորան. շատ հարստացնում ես նորան. Աստուծոյ գետը լիքն է ջրով. ցորեն ես պատրաստում նորանց համար. ինչու որ այսպէս պատրաստեցիր նորան։
10 Վա՛ւ խմացնում ես նորա ակօսներին. ցածացնում ես նորա վարածը. անձրևով կակղացնում ես նորան և օրհնում ես նորա բուսածը։
11 Դու պսակում ես տարին քո բարիքներովը, և քո հետերը պարարտութիւն են կաթեցնում։
12 Պարարտ են անապատի դաշտերը. և բլուրները ցնծութիւն են հագած։
13 Արօտները հագուստ են ոչխարներով, և հովիտները ծածկած են ցորենով. աղաղակում են ցնծութիւնով և երգում։

ՍԱՂՄ. ԿԶ

Երգողների գլխաւորին. Սաղմոս. երգ։

1 Ցնծութիւնով աղաղակեցէք դէպի Աստուած, ամէն երկիրներ։
2 Սաղմոս ասացէք նորա անունի փառքին, փառաւոր արէք նորա գովութիւնը։
3 Ասացէք Աստուծոյն. Ի՜նչ զարմանալի են քո գործքերը. քո մեծ զօրութեան համար քո թշնամիները կ'ընդդիմանան քեզ։
4 Ամէն երկիր քեզ երկրպագութիւն պիտի տայ և սաղմոս ասէ քեզ. սաղմոս ասէ քո անունին։ (Ակլա։)
5 Եկէք և տեսէք Աստուծոյ գործքերը. նա սքանչելի է գործքերովը մարդկանց որդոց վերայ։
6 Ծովը ցամաքի փոխեց. գետի միջովն անց կացան ոտով. այնտեղ մենք ուրախ եղանք նորանով։
7 Նա տիրապետում է իր զօրութիւնովը յաւիտեան, նորա աչքերը նայում են հեթանոսների վերայ. ապստամբուածները թող չբարձրանան։ (Ակլա։)
8 Ով ժողովուրդներ, օրհնեցէք մեր Աստուծոյն. և լսել տուէք նորա գովութեան ձայնը։
9 Նա մեր անձինքը պահում է կեանքի մէջ. և թոյլ չէ տալիս որ մեր ոտները սասանին։
10 Քանզի դու փորձեցիր մեզ, ով Աստուած. քննեցիր մեզ ինչպէս որ արծաթը քննւում է։
11 Մտցրիր մեզ որոգայթի մէջ. ծանր բեռն դրիր մեր մէջքի վերայ։
12 Մարդիկ հեծացրիր մեր գլխի վերայ. կրակի և ջրի մէջ մնանք. և դու հանեցիր մեզ առատութեան տեղ։
13 Ես կ'մտնեմ քո տունը ողջակէզներով. կ'հատուցանեմ քեզ իմ ուխտերը,
14 Որ իմ շրթունքները խոստացան, և իմ բերանը խօսեց իմ նեղութեան ժամանակին։
15 Պարարտ ողջակէզներ կ'մատուցանեմ քեզ խոյերի ծուխովը. պատրաստ կ'բերեմ արջառներ նոխազների հետ։ (Ակլա։)
16 Եկէք լսեցէք, ամենքդ՝ որ Աստուածանից վախում էք, և պատմեմ ձեզ ինչ որ արաւ նա իմ անձի համար։
17 Կանչեցի դէպի նա իմ բերանովը և փառաբանութիւն կար իմ լեզուի տակ։
18 Եթէ ես անօրէնութիւն տեսնէի իմ սրտովը, Տէրը չէր լսել ինձ։
19 Սակայն Աստուած լսեց, և իմ աղօթքի ձայնին մտիկ արաւ։
20 Օրհնեա՛լ է Աստուած, որ իմ աղօթքը դէն չէ գցում. և իր ողորմութիւնը ինձանից չէ դարձնում։

ՍԱՂՄ. ԿԷ

Երգողների գլխաւորին. Նիկինոթով. Սաղմոս. երգ։

1 Աստուած, ողորմէ մեզ և օրհնէ մեզ. երևացնէ երեսը մեզ վերայ։ (Ակլա։)
2 Որ քո ճանապարհը ճանաչուի երկրում, և քո փրկութիւնը ամեն ազգերի մէջ։

3 Թող ժողովուրդները գոհանան քեզանից, ով Աստուած. թող ամեն ժողովուրդները գոհանան քեզանից։

4 Թող ժողովուրդներն ուրախանան և ցնծան. ինչու որ ժողովուրդներին դատում ես ուղղութիւնով. և ազգերին առաջնորդում ես երկրի վերայ։ (Սելա։)

5 Թող ժողովուրդները գովեն քեզ, ով Աստուած. թող ամեն ժողովուրդները գովեն քեզ։

6 Երկիրն իր պտուղը տուաւ. Թող օրհնէ մեզ Աստուած՝ մեր Աստուածը։

7 Թող օրհնէ մեզ Աստուած, և նորանից վախենան երկրի ամեն ծայրերը։

ՍԱՂՄՈՍ ԿԵ

Երգողների գլխաւորին. Դաւթի Սաղմոս. երգ։

1 Թող Աստուած վեր կենայ, նորա թշնամիները ցրուին, և նորա երեսից փախչին նորանատողները։

2 Ինչպէս որ ծուխը փչանում է՝ փչացրու նորանց. ինչպէս որ մոմը հալւում է կրակի առջև, Թող անիրաւները կորչին Աստուծոյ երեսից։

3 Բայց արդարները պիտի ուրախանան և ցնծան Աստուծոյ առջև, և զուարճանան ուրախութիւնով։

4 Երգեցէք Աստուծոյն, սաղմոս ասացէք նորա անունին. Ճանապարհ պատրաստեցէք անապատի միջովը հեծած եկողին. Նորա անունը. և ցնծացէք նորա առջև։

5 Որբերի հայր և այրիների դատաւոր է Աստուած իր սրբութեան տեղումը։

6 Աստուած մէնակներին բնակեցնում է տան մէջ, գերիներին հանում է յաջողութեան մէջ. բայց ապստամբուածները բնակվում են չոր տեղում։

7 Ով Աստուած, դու քո ժողովրդի առաջից գնալիս, անապատի մէջ անց կենալիս. (Սելա։)

8 Երկիրը դողաց և երկինքը շող թափեց Աստուծոյ երեսից. այս Սինա լեռան էլ դո՞ղ Աստուծոյ՝ Իսրայէլի Աստուծոյ երեսից։

9 Առատութեանց անձրև տեղացիր, ով Աստուած. քո ժառանգութիւնը՝ որ յոգնած էր՝ դու զօրացրիր։

10 Քո ժողովուրդը բնակուեցաւ այնտեղ. քո քաղցրութիւնով էր՞ պատրաստեցիր խեղճի համար, ով Աստուած։

11 Տէրը տալիս է խօսքը. մեծ բազմութիւն են բանողները մեծ բազմութիւն են։

12 Զօրութիւնների թագաւորները կ'փախչեն, բայց տան մէջ բնակուածը կ'բաժանէ աւարը։

13 Երբոր մանկաղների մէջտեղերում հանգստանում էք. ազաւնու թևերը փայլում են արծաթով պատած, և նորանց փետուրները դեղին ոսկով։

14 Ամենակարողը թագաւորներին այն էր՞ը ցրվելու ժամանակ, փայլուն եղաւ ինչպէս ձիւն Սաղմոնում։

15 Ով Աստուծոյ լեառը՝ Բասան լեառ, ով բարձր և պարարտ լեառ.

16 Ով բարձր լեառներ, ինչո՞ւ էք նախանձով նայում. — այն լեառն է որ Աստուած նորան հաւանեցաւ նորա վերայ բնակուելու համար. Տէրը յաւիտան կը բնակուի նորանում։

17 Աստուծոյ կառքերը բիւրաւոր են՝ հազարապատիկ. Տէրը նորանցում է՝ Սինայում՝ սրբութեան տեղում։

18 Վեր ելար բարձր տեղերը, գերի արիր գերութիւնը. պարգևներ առիր մարդկանց համար և ապստամբուածների համար էլ, որ Աստուած այնտեղ բնակուի։

19 Օրհնեալ է Տէրը օրէ օր. Երբ բեռն դնելու լինին մեզ վերայ, Աստուած է մեր փրկութիւնը։ (Սելա։)

20 Աստուած մեզ համար փրկութեան Աստուած է, և Տէր Եհովան ազատում է մահից։

21 Սակայն Աստուած կ'փշրէ իր թշնամիների գլուխը և նորանց

մոգաւոր գոգաթը որ գնում են իրանց անօրէնութիւնների մէջ։
22 Տէրն ասաց. Իսաանիցը չեռ կ'դարձնեմ նորանց՝ ծովի անդունդիցը չեռ կ'դարձնեմ։
23 Ու քո ոտը արիւնով թրջես և քո շների լեզուն թշնամիներից իր բաժինը։
24 Տեսան քո գնացքը, ով Աստուած. իմ Աստուծոյ՝ իմ թագաւորի գնացքը սրբութեան մէջ։
25 Առաջ երգեցողները գնացին, յետոյ նուագածուները. մէջտեղը թմբուկ ածող կոյս աղջիկները։
26 Ժողովուրդների մէջ օրհնեցէք Տէր Աստուծոյն, դուք որ Իսրայէլի աղբիւրից էք։
27 Այնտեղ է Բենիամինը՝ նորանց տիրապետողը. Յուդայի իշխաններն իրանց խառնիճաղնին իրանց խառնիճաղնով. Զաբուղոնի իշխանները, Նեփթաղիմայ իշխանները։
28 Քո Աստուածը հաստատեց քո զօրութիւնը, զօրացրու նորան, ով Աստուած, որ մեզ համար արիր։
29 Քո տաճարի համար Երուսաղէմումը թագաւորները ընծայ կը բերեն քեզ։
30 Աստիր եղէգի գազանին, արջառների ժողովքի՝ ազգերի երինջների հետ. որ երեսի վերայ ընկնին արծաթի կտորներով. ցրիր այն ազգերը որ կռիւ են կամենում։
31 Իշխանք կ'գան Եգիպտոսիցը. Եթովպացիքը իրանց ձեռքերը կը մեկնեն դէպի Աստուած։
32 Ով երկրի թագաւորութիւնք, երգեցէք Աստուծոյն, սազմա ասացէք. (Սէլա։)
33 Նորան, որ յաւիտենից նրաստում է երկնից երկնքի վերայ. ահա իր ձայնովը զօրաւոր ձայն կ'տայ։
34 Զօրութիւն տուէք Աստուծոյն. նորա մեծ փառաւորութիւնը Իսրայէլի վերայ. և նորա զօրութիւնը ամպերի մէջ։
35 Զարմանալի ես քո սրբութեան տեղումը, ով Աստուած՝ Իսրայէլի Աստուածը. նա զօրութիւն և կարողութիւն է տալիս ժողովրդին. օրհնեալ է Աստուած։

ՍԱՂՄ. ԿԹ

Երգողների գլխաւորին. Շօշանիմի վերայ. Դաւթի Սաղմոս։

1 Ապրեցրու ինձ, ով Աստուած, ինչու որ ջուրերն մինչև իմ անձը հասան։
2 Խրուեցայ ցեխի մէջ որ յատակ չունի. Ջրերի խոր տեղը մտայ, և պատուանները ինձ կուլ են տալիս։
3 Յոգնած եմ իմ աղաղակելուվը. կոկորդս ցամաքեցաւ. աչքերս նուազեցան Աստուծոյն մօտիկ տալով։
4 Իմ գլխի մազերից շատացան ինձ զուր տեղը ատողները. զօրաւոր են ինձ կորցնել ուզող թշնամիներս. ինչ որ չեմ յափշտակել՝ նա պէտք է վճարեմ։
5 Ով Աստուած, դու գիտում ես իմ յիմարութիւնը. և իմ յանցանքները քեզանից ծածկուած չեն։
6 Թող ինձ համար չամաչեն նորանք՝ որ քեզ սպասում են, ով Տէր՝ զօրութեանց Տէր. Թող ինձ համար ամօթ չինին քեզ խնդրողները, ով Իսրայէլի Աստուած։
7 Քանի քեզ համար ես համբերում եմ նախատինքի. ամօթը ծածկում է իմ երեսը։
8 Օտար եղայ իմ եղբարցը և անճանաչ իմ մօր որդոցը։
9 Քանի քո տան նախանձը կերաւ ինձ, և քեզ նախատինք տուողների նախատինքներն ինձ վերայ ընկան։
10 Լաց եմ լինում իմ անձի պատպահելովը. և նախատինք է լինում ինձ։
11 Ես իմ հանդերձը քուրձ չինեցի. տուակ եղայ նորանց։
12 Դռներում նստողները պրծց են անում ինձ վերայ. և արբեցնող խմիչքներ խմողների խաղն եմ դառել։
13 Բայց ես ազօթք եմ անում քեզ, ով Տէր, ընդունելի ժա-

մանակում. ով Աստուած, քո աստուածային զորութեան համար լաւ ինձ քո փրկութեան ճշմարտութիւնովը։

14 Ապրեցրու ինձ ցեխիցը որ չը թաղուիմ. թող փրկուիմ ինձ ատողներիցը և խոր ջրերիցը։

15 Թող ջրերի պոռոգանները չյորձրջեն ինձ, և անդունդը կուլ չտայ ինձ. և հորն իր բերանը չփակէ ինձ վերայ։

16 Լսիր ինձ, Տէր, ինչու որ լաւ է քո ողորմութիւնը. քո շատ ողորմութեան պէս նայիր ինձ վերայ։

17 Եւ քո երեսը չետ մի դարձներ քո ծառայիցը. ինչու որ նեղութեան մէջ եմ ես. շուտով լսիր ինձ։

18 Մօտեցիր իմ անձին, փրկիր նորան. իմ թշնամիների համար ապրեցրու ինձ։

19 Դու գիտես իմ նախատինքը և իմ ամօթը և իմ խոշտանգութիւնը. իմ առջև են իմ ամեն նեղացնողները։

20 Նախատինքը կոտրեց իմ սիրտը՝ և հիւանդ եղայ. ցաւակցութեան սպասեցի՝ բայց չկար. մխիթարիչների՝ բայց չեմ գըտնում։

21 Եւ կերակուրիս մէջ լեղի են դնում. և ծարաւութեանս մէջ քացախ են խմեցնում ինձ։

22 Նորանց սեղանը իրանց առջև որոգայթ, և յաջողութեան տեղ վտիտ դառնայ.

23 Նորանց աչքերը խաւարին որ չտեսանեն. և նորանց մէջքը միշտ դողացրու։

24 Թափիր նորանց վերայ քո զարհուրանքը, և քո բարկութեան կրակը հասնէ նորանց վերայ։

25 Նորանց բնակարանն աւերակ լինի, և նորանց տներում բնակուող չլինի։

26 Քանզի հալածում են նորան որ դու զարկեցիր. և քո խոցուածների ցաւերի համար պատմութիւն են անում։

27 Մեղք դիր նորանց մեղքին վերայ, որ քո արդարութեանը չը հասնեն։

28 Կենդանեաց գրքիցը ջնջուին, և արդարների հետ չգրուին։

29 Բայց ես աղքատ և ցաւով լիքն եմ. ով Աստուած, թող քո փրկութիւնը ապրեցնէ ինձ։

30 Ես կ'գովեմ Աստուծոյ անունը երգով և կ'փառաբանեմ նորան գովաբանութիւնով,

31 Եւ սա աւելի հաճոյ կ'լինի Տիրոջը քան պարարտ եզը՝ եղջերաւորը և կճղակաւորը։

32 Խեղճերը կ'տեսանեն կ'ուրախանան. ով Աստուծոյն խնդրողներ, ձեր սիրտը կենդանանայ։

33 Քանզի Տէրը լսում է խեղճերին, և իր գերիներին չէ անարգում։

34 Թող գովեն նորան երկինքն ու երկիրը, ծովերը և նորանց մէջ բոլոր սողուները։

35 Քանզի Տէրը կ'փրկէ Սիոնը և Յուդայի քաղաքները կ'շինէ. և կ'բնակուին այնտեղ և կ'ժառանգեն նորան։

36 Եւ ծառաների զաւակները կը վայելեն նորան, և նորա անունը սիրողները կ'բնակուին նորանում։

ՍԱՂՄ. Հ

Երգողների գլխաւորին. Դաւթի (Սաղմոս). յիշատակի համար։

1 Ով Աստուած, շուտ արա ինձ փրկելու համար, Տէր, ինձ օգնելու համար։

2 Թող ամաչեն և ամօթ լինին իմ անձը խնդրողները. թող չետ դառնան և ամօթ լինին ինձ չար ուզողները։

3 Թող իրանց ամօթովը չետ դառնան նորանք, որ ինձ ասում են՝ վահ վահ։

4 Թող ցնծան և ուրախանան քեզանով բոլոր քեզ խնդրողները, և քո փրկութիւնը սիրողները միշտ ասեն. Մեծ է Աստուած։

5 Բայց ես աղքատ եմ և անանկ, ով Աստուած շուտով հասիր ինձ մօտ. դու ես իմ օգնականն ու փրկիչը. Տէր, մի ուշանար։

ՍԱՂՄ. ՀԱ

1 Ով Տէր, քեզ եմ յուսացած՝ թող չամաչեմ յաւիտեան։

2 Քա արդարութիւնովը ապրեցրու և ազատիր ինձ. խոնարհեցրու ականջներդ ինձ մօտ՝ և փրկիր ինձ։
3 Ապաւինութեան վէմ եղիր ինձ համար, որ միշտ գամ. դու հրամայեցիր փրկել ինձ, ինչու որ իմ վէմը և իմ բերդը դու ես։
4 Աստուած իմ, փրկիր ինձ ամբարշտի ձեռքից՝ անօրէնի և բռնաւորի ձեռքից։
5 Քանզի դու ես իմ ապաւէնը, ով Տէր Եհովայ, իմ յոյսը իմ մանկութենից դո՛ւ ես։
6 Քեզ վերայ հաստատուեցայ արգանդից. դու ես իմ պահապանն իմ մօր փորից. իմ օրհնութիւնդ միշտ քեզ համար է։
7 Հրաշքի պէս եղայ շատերի համար. բայց դու ես իմ զօրաւոր ապաւէնը։
8 Թող իմ բերանը լցուի քո գովաբանութեամբ. ամեն օր քո փառաբանութեամբը։
9 Իմ ծերութեան ժամանակումը դէն մի գցիր ինձ. զօրութիւնս պակասելիս մի թողիր ինձ։
10 Քանզի խօսում են թշնամիներս իմ դէմ. և իմ անձին լսողները իրար հետ խորհուրդ են անում.
11 Եւ ասում. Աստուած թողեց նորան, հալածեցէք և բռնեցէք նորան. ինչու որ ոչ ով չկայ, որ փրկէ նորան։
12 Ով Աստուած, մի հեռանար ինձանից. ով Աստուածս, շուտով օգնիր ինձ։
13 Թող ամաչեն ու կորչին իմ անձի հակառակորդները. թող նախատինքով և ամօթով ծածկուին ինձ չար ուզողները։
14 Բայց ես միշտ կ'ապասեմ, և քո ամեն փառաբանութիւնների վերայ ֆ—բ—ն—ի—ն կ'աւելացընեմ։
15 Թող իմ բերանը պատմէ քո արդարութիւնը, ամեն օր քո փրկութիւնը. ինչու որ ես չեմ գիտում նրանց համրանքը։
16 Ես կ'գամ Տէր Աստուծոյ զօրութիւնովը. ես կ'յիշեմ մէնակ քո արդարութիւնը։
17 Ով Աստուած, դու սովորեցրիր իմ մանկութենից, և մինչև հիմա պատմում եմ քո հրաշքները։
18 Եւ հիմա մինչև իմ ծերութիւնը և ալեւորութիւնը մի թողիր ինձ, ով Աստուած. մինչև որ քո բազուկը պատմեմ յաջորդ սերունդին և քո զօրութիւնը բոլոր եկողներին։
19 Եւ քո արդարութիւնը, ով Աստուած, մինչև բարձրն է. որ դու մեծամեծ բաներ արիր. ով Աստուած, ո՞վ է քեզ նման։
20 Դու որ նեղութիւններ և չարչարանք ցոյց տուիր ինձ. դարձեալ կենդանի ես անում ինձ՝ և երկրի անդնդից դարձեալ հանում ես ինձ։
21 Դու շատացնում ես իմ մեծութիւնը, և դարձեալ մխիթարում ես ինձ։
22 Կ'գոհանամ քեզանից, ով Աստուած, նուագարանով. քո ճշմարտութեանը համար ապտակ կ'տաս քեզ քնարով, Ո՛վ Իսրայէլի Սուրբդ։
23 Իմ շրթունքները կ'ցնծան՝ երբ որ ապտակ կ'տամ քեզ. և իմ անձը՝ որ դու փրկեցիր։
24 Եւ իմ լեզուն էլ ամեն օր կը խօսի քո արդարութեանը համար, ինչու որ ամաչեցին և ամօթ եղան ինձ չար ուզողները։

ՍԱՂՄ. ՀԲ

Սողոմոնի (Սաղմոս)։

1 Ով Աստուած, քո իրաւունքները թագաւորին տուր, և քո արդարութիւնը թագաւորի որդուն։
2 Նա քո ժողովրդին գաւառ արդարութիւնով. և քո խեղճերին իրաւունքով։
3 Լեռները խաղաղութիւն բուսացնեն ժողովրդի համար և բլուրները՝ արդարութիւնով ւեհ—ն։
4 Նա իրաւունք անէ ժողովրդի աղքատներին. խեղճերի որդիքը փրկէ և ճկողներին ջարդէ.

5 Վասնեզան քեզանից քանի որ արեգակը կայ, և լուսնի առջև ազգից մինչև ազգ։
6 Վայր գայ ինչպես անձրև հընձած խոտի վերայ. ինչպես շաղ որ երկիրը ոռոգում է։
7 Նորա օրերումը ծաղկի արդարը. և շատ խաղաղութիւն՝ մինչև որ լուսին էլ չլինի։
8 Եւ նա տիրապետէ ծովիցը մինչև ծովը. և գետիցը մինչև երկրի ծայրերը։
9 Նորա առջև խոնարհուին անապատները, և նորա թշնամիները փոշի լիզեն։
10 Թարսիսի և կղզիների թագաւորներն ընծայ մատուցանեն. Շեբայի և Սաբայի թագաւորներն պարգև բերեն։
11 Եւ ամեն թագաւորները երկրպագութիւն տան նորան. ամեն ազգերը ծառայեն նորան։
12 Քանի նա կ'փրկէ խեղճին որ աղաղակում է, և ազքատին՝ որ օգնական չունի։
13 Նա կ'խղճայ տկարին և խեղճին, և խեղճերի անձերը կ'ապրեցնէ։
14 Ննջգութիւնից և բռնութիւնից կ'փրկէ նորանց անձերը. և նորանց արիւնը պատուական կը լինի նորա առջև։
15 Եւ նա կ'ապրի, և կ'տան նորան Շեբայի ոսկուցը. և աղօթք կ'անեն նորա համար ամեն ժամանակ. ամեն օր կ'օրհնեն նորան։
16 Ցորենի առատութիւն կ'լինի երկրի վրէ լեռների գլխների վերայ. նորա պտուղը կ'շարժուի ինչպես Լիբանանը. և քաղաքները կ'ծաղկին ինչպես երկրի խոտը։
17 Նորա անունը կ'լինի յաւիտեան. դեռ քանի որ արեգակը կը ճառայ. նորա անունը կ'ճնայ, և կ'օրհնուին նորանով. ամեն հեթանոսները երանի կ'տան նորան։
18 Օրհնեալ է Տէր Աստուած՝ Իսրայէլի Աստուածը. որ մէնակ նա է հրաշք անող։
19 Եւ օրհնեալ նորա փառաւոր անունը յաւիտեան. և թող ամեն երկիր լցուի նորա փառքով. ամէն և ամէն։

Վերջացան Յեսսէի որդի Դաւթի աղօթքները։ 20

ՍԱՂՄ. ՀԹ

Ասաբի Սաղմոս

Իրաւի որ Աստուած բարի է Իսրայէլի համար՝ սրտով ուղիղների համար։ 1
Եւ քիչ էր մնացել որ ոտներս ծռուէին, և քան չէր մնացել որ գնացքս սահէր. 2
Քանի նախանձել յաւելայ հպարտների վերայ՝ ամբարիշտների խաղաղութիւնը տեսնելիս։ 3
Ինչու որ նորանք ցաւ չունին մինչև իրանց մահը. և նորանց մարմինը փափուկ է։ 4
Նորանք մարդու նեղութեան մէջ չեն, և ուրիշ մարդկանց հետ չեն տանջուում։ 5
Սորա համար ամբարտաւանութիւնը վզանոցի պէս պատում է նորանց. և բռնութիւնը զարդարանքի պէս ծածկում է նորանց։ 6
Նորանց աչքերը պարարտութիւնից դուրս են գալիս, էրանց սրտի խորհուրդների պէս են կեղծաւորւում։ 7
Ծիծաղում են և չարութիւնով բռնութիւն խօսում. բարձրից են խօսում։ 8
Իրանց բերանը երկնքումն են դնում. և նորանց լեզուն երկրի մէջ է մեն գալիս։ 9
Սորա համար նորա ժողովուրդը այստեղ է դառնում, և լիութիւնով ջուր են գտնում իրանց համար։ 10
Եւ ասում են. Աստուած ինչպէս է գիտում, և գիտութիւն կայ Բարձրեալին մօտ։ 11
Ահա սորանք են ամբարիշտները որ յաջողակ են աշխարհքումը, և աւելացնում են հարստութիւնք։ 12
Իրաւի որ իմ սիրտս զուր տեղն եմ արդում և իմ ձեռքերը արդութիւնով լուանում։ 13
Եւ ամեն օր տանջւում եմ և խրատւում ամեն առաւօտ։ 14
Եթէ ասէի թէ ես էլ նորանց 15

նման կ'խօսիմ. ահա քո որդոց ազգին ներողութիւն կ'անէի։
16 Բայց միտք արի որ իմանամ այս. ասկոյն դժուար էր իմ աչքերի առջև.
17 Մինչև որ Աստուծոյ սրբութեան տեղը մտայ և նորանց վերջն իմացայ։
18 Իրաւի որ դու նորանց հեշտ առնելու տեղ ես դնում, կործանուելու մէջ ես գցում նորանց։
19 Ինչպէս յանկարծակի փշանում՝ աւասկվում՝ կորչում են զարհուրանքով։
20 Ինչպէս երազն է զարթնուլց յետոյ. Տէր, զարթնանալիս կ'անարգես նորանց պատկերը։
21 Երբոր դառն ցաւեցաւ իմ սիրտը, և իմ երիկամունքները խոցեցին ինձ.
22 Ան ժամանակ ես յիմար եղայ և չիմացայ. ինչպէս անասուն եղայ քո առջև։
23 Բայց միշտ քեզ հետ եմ. դու իմ աջ ձեռքից բռնեցիր։
24 Դու առաջնորդում ես ինձ քո խորհրդովը, և վերջը փառօք կ'ընդունես ինձ։
25 Ո՞վ ունիմ ես երկնքումը, և քեզանից ջոկ բան չեմ ուզում երկրի վերայ։
26 Թէև մարմինս ու սիրտս մնաչուն. Աստուած յաւիտեան իմ սրտի ոյժն ու իմ բաժինն է։
27 Քանզի ահա քեզանից հեռացողները կ'կորչին. դու կ'աւասկեցնես բոլոր քեզ դէմ շնացողին։
28 Բայց ինձ համար բարի է մօտենալ Աստուծոյն. իմ յոյսը Տէր Աստուծոյ վերայ եմ դնում, որ քո ամեն գործքերը պատմեմ։

ՍԱՂՄ. ՀԳ.

Ասափայ վարգապետութիւն։

1 Ով Աստուած, ինչո՞ւ ես մեզ բոլորովին մերժում. քո բարկութիւնը բորբոքում է քո արօտի ոչխարների վերայ։
Յիշիր քո ժողովրդին որ առաջար սկզբից. փրկեցիր, որ քեզ ժառանգութեան վիճակ լինի, այս Սիօնի լեռը որ նորանում բնակուած ես։ 2
Բարձրացրու քո քայլերը մշտական աւերմունքների վերայ. թշնամին բոլորն ապականեց սրբութեան տեղումը։ 3
Քո հակառակորդները գոռում են ժողովարանիդ մէջ. իրանց նշանները նշանների տեղ են դնում։ 4
Նա երևում է ինչպէս մի կացին բարձրացնող անտառի ծառերի վերայ։ 5
Եւ հիմա նորա ամեն քանդակագործ զարդարանքը կոտրատեցին կացիններով և մուրճերով։ 6
Կրակ գցեցին քո սրբութիւնը, գետնի տալով պղծեցին քո անունի բնակարանը։ 7
Իրանց սրտերումն ասացին. Որանց ամենը միասին կորցնենք. սրեցին Աստուծոյ ամեն ժողովարանները երկրի մէջ։ 8
Մեր նշանները չենք տեսնում. էլ մարգարէ չկայ. և մեզ մօտ մէկ գիտացող չկայ. մինչև ե՞րբ։ 9
Ով Աստուած, մինչև ե՞րբ է նախատելու նեղացնողը. միթէ թշնամին պիտի բոլորովին անարգէ քո անունը։ 10
Ինչո՞ւ ես յետ դարձնում ձեռքդ և աջդ. հանիր ծոցիդ, կորցրու նորանց։ 11
Բայց Աստուած է իմ թագաւորը սկզբից որ փրկութիւններ արաւ երկրի մէջ։ 12
Դու ծովը պատուեցիր քո զորութիւնովը, վիշապ ձկների գլխները փշրեցիր ջրերի մէջ։ 13
Դու ջարդեցիր Լևիաթանի գլուխները. նորան կերակուր արիր ժողովրդին անապատումը։ 14
Դու բղխացրիր ակրիւրներ և առուներ. դու ցամաքեցրիր սաստիկ գետեր։ 15
Քո է ցերեկը և քո է գիշերը. դու պատրաստեցիր լուսաւորները և արեգակը։ 16
Դու հաստատեցիր երկրի ամեն սահմանները. դու ստեղծեցիր ամառը և ձմեռը։ 17

18 Ապա մտքդ բեր այն՝ որ թըշ-
նամին նախատինք է տալիս Տի-
րոջը. և յիմար ազգը անարգում
է քո անունը։
19 Մի մատներ գազանին քո տատ-
րակի անձը. քո աղքատների
կեանքը մի մոռանար հապաո։
20 Նայիր ի ուխտի վերայ, ինչու-
որ երկրի խաւար տեղերը անօրէ-
նութեան բնակարաններով լցու-
ած են։
21 Թող խեղճը յետ չդառնայ ա-
մօթով. թող խեղճը և աղքատը
օրհնեն քո անունը։
22 Վեր կաց, ով Աստուած, դա-
տիր քո դատաստանը. յիշիր այն
նախատինքը, որ յիմարըամեն
օր քեզ վերայ է դնում։
23 Մի մոռանար քո թշնամիների
ձայնը և քեզ դէմ վեր կացած-
ների խռովութիւնը, որ ամեն
ժամանակ բարձրանում է։

ՍԱՂՄ. ՀԸ

*Երգողների գլխաւորին. Մի ապականիր
Եղծուխվ. Ասափայ Սաղմոս. Երգ։*

1 Գոհանում ենք քեզանից, ով
Աստուած, գոհանում ենք, և
քո անունը մօտ է. քո հրաշք-
ները պատմում են։
2 Երբոր պատշաճ ժամանակ կ'ըս-
տանամ, ուղիղ կ'դատեմ ես։
3 Երկիրը և նորա ամեն բնակիչ-
ները մաշուեցան. ես նորա սիւ-
ները կ'հաստատեմ։ (Սէլա։)
4 Ասացի յիմարներին. Յիմարու-
թիւն մի գործէք. և ամբարիշտ-
ներին. Եղջիւր մի բարձրացնէք.
5 Ձեր եղջիւրը դէպի բարձրը մի
բարձրացնէք. հաստ վզով մի
խօսիք։
6 Քանզի բարձրանալը ոչ արև-
ելքից է և ոչ արևմուտքից՝ և ոչ
անապատից։
7 Բայց Աստուած է դատաւոր.
սորան խոնարհեցնում է և նորան
բարձրացնում։
8 Ինչու որ բաժակ կայ Տիրոջ
ձեռքում. և գինին պղտորութիւ-
նով լցուած եփում է։ Եւ նա
թափում է նորանից. բայց ի-
րաւի երկրի ամեն ամբարիշտնե-
րը նորա մրուրները պիտի քամեն
իմանն։
9 Բայց ես յաւիտեան կ'պատ-
մեմ. սաղմոս կ'ասեմ Յակոբի
Աստուծոյն։
10 Եւ ամբարիշտների ամեն եղ-
ջիւրները կ'փշրեմ. արդարների
եղջիւրները կ'բարձրանան։

ՍԱՂՄ. ՀԹ

*Երգողների գլխաւորին. Նիկինոթով.
Ասափայ Սաղմոս. Երգ։*

1 Աստուած յայտնի է Յուդայի
մէջ. նորա անունը մեծ է Իսրա-
յէլի մէջ։
2 Եւ Սաղէմի մէջ է նորա խո-
րանը. և նորա բնակարանը Սիօնի
մէջ.
3 Անդառնալ փշրեց սաղէղի թռչող
նետերը՝ վահանը, սուրը և կռի-
ւը։ (Սէլա։)
4 Դու լուսաւոր ես՝ աւելի փա-
ռաւոր քան յափշտակութեան
լեռները։
5 Սրտով զօրաւորները աւար է-
ղան. նիջեցին իրանց քնով. և
զօրութեան ամեն մարդիկը չգը-
տան իրանց ձեռքերը։
6 Ով Յակոբի Աստուած, քո
սաստելուցը քնով թմրեցան
կառքերը և ձիանքը։
7 Դու սոսկալի ես, ով Տէր, ո՞վ
կ'կանգնի առջեդ քո բարկու-
թեան ժամանակին։
8 Դու երկնքից լսել ես տալիս
դատաստանը. երկիրը վախենում
է և լուռ է կենում.
9 երբոր Աստուած վեր է կենում
դատաստան անելու. երկրի ամեն
խեղճերը փրկելու համար։ (Սէլա։)
10 Քանզի մարդկանց բարկութի-
նը քեզ համար փառք կ'զտա-
նայ. աւելորդ բարկութիւնը գո-
տու պէս կ'կապես։
11 Ուխտ դրէք և կատարեցէք ձեր
Տէր Աստուծոյն. ամենքը՝ որ նո-
րա չորս կողմանքն են, թող ըն-
ծայ բերեն Սոսկալուին։
12 Որ նա կտրում է իշխանների
հոգին. և սոսկալի է երկրի թա-
գաւորների վերայ։

ՍԱՂՄ. ՀԲ

Երգողների գլխաւորին. Խոր թաւնի վերայ. Առակայ Սաղմոս։

1 Իմ ձայնը դէպի Աստուած է, և կանչում եմ. և իմ ձայնը դէպի Աստուած է, և նա կ'լսէ ինձ։

2 Իմ նեղութեան օրուն զՏէրոջն եմ խնդրում. իմ ձեռը գիշերում մեկնած է և չէ թուլանում. իմ անձը չէ կամենում մխիթարուիլ։

3 Յիշում եմ Տէրոջը և անհանգիստ եմ. մտք եմ անում և հոգիս նուաղում է. (Սէլա։)

4 Իմ աչքերի արուեանունքը փակած ես պահում. խռովուած եմ և չեմ կարող խօսիլ։

5 Մտածում եմ առաջուան օրերը՝ յաւիտենից եղած տարիները։

6 Յիշում եմ գիշերուն իմ երգեր. խօսում եմ իմ սրտի հետ և հոգիս քննութիւն է անում։

7 Մի՞թէ Տէրը յաւիտեան դէն կ'գցէ, և այլևս քաղցրութիւն չի՞ ցոյց տալ։

8 Մի՞թէ յաւիտեան կ'վերջանայ նորա ողորմութիւնը, և նրա խօսքը կ'պակասի՞ ազգից մինչև ազգ։

9 Մի՞թէ մոռացաւ Աստուած շնորհք ցոյց տալ. մի՞թէ բարկութիւնով արգիլեց իր ողորմութիւնը։ (Սէլա։)

10 Բայց ես ասում եմ՝ սա իմ ցաւն է. Բարձրեալին ձեռքին է փոխելը։

11 Յիշում եմ Տիրոջ գործքերը. ինչու որ յիշում եմ քո հրաշքները յաւիտենից։

12 Եւ քննում եմ քո ամեն գործքերը, և միտք եմ առնում քո արածները։

13 Ով Աստուած, քո ճանապարհը սրբութեան մէջ է. ո՞ր Աստուած է մեծ ինչպէս Էլոհիմ։

14 Դու ես Աստուած որ հրաշք ես անում. դու ցոյց տուիր քո զօրութիւնը ժողովրդների մէջ։

15 Դու քո բազկովը փրկեցիր քո ժողովրդին՝ Յակոբի և Յովսէփի որդոցը։ (Սէլա։)

16 Տեսան քեզ ջուրերը, ով Աստուած, տեսան քեզ ջուրերը և դողացին, և անդունդները սարսափեցան։

17 Ամպերը ջուր թափեցին, երկինքները ձայն հանեցին և քո նետերը գնացին։

18 Քո որոտմունքի գոռոցը երկրին քի պտոյտներում. փայլատակումնքը լուսաւորեցին աշխարհքը. երկիրը դղրդաց և դողաց։

19 Քո ճանապարհը ծովումը, և քո շաւիղները շատ ջրերի մէջ, և քո հետքերը չէյայտնուեցան։

20 Առաջնորդեցիր քո ժողովրդին ինչպէս ոչխարի հօտի Մովսէսի և Ահարոնի ձեռով։

ՍԱՂՄ. ՀՐ

Առակայ վարդապետութեան։

1 Ականջ դիր իմ օրէնքին, ով իմ ժողովուրդ, և ձեր ականջները խոնարհեցրէք դէպի բերանիս խօսքերը։

2 Ես առակով կ'բանամ բերանս, դուրս կ'ըղեմ խրթին բաներ հին ժամանակից։

3 Այն որ լսեցինք ու ճանաչեցինք, և մեր հարքը պատմեցին մեզ։

4 Մենք չենք թագցնում նոցա որդիքներից. եկող սերունդին պատմում ենք Տիրոջ գովասանքը, և նորա զօրութիւնքն, ու հրաշքները որ արաւ։

5 Նա վկայութիւն հաստատեց Յակոբի մէջ և օրէնք դրաւ Իսրայէլի մէջ. այն որ պատուիրեց մեր հարանցը որ սովորեցնեն իրանց որդոցը։

6 Որպէս զի իմանայ նոր սերունդը՝ այն որդիքը որ կ'ծնուին. վեր կենան և իրանց որդոցը պատմեն։

7 Որ նորանք իրանց յոյսը Աստուծոյ վերայ դնեն, և չմոռանան Աստուծոյ գործքերը և նորա պատուիրանքները պահեն։

8 Եւ իրանց հարանց նման չլինեն խստասիրտ և դառնացնող ազգ, ազգ՝ որ իր սիրտը չպատրաստեց,

և նորա հոգին հաւատարիմ չէ Աստուծոյ վերայ։
9 Եփրեմի որդիքը՝ որ զէնք հաղած աղեղնաւորներ էին, յետ դարձան պատերազմի օրուանը։
10 Աստուծոյ ուխտը չպահեցին և մերժեցին նորա օրէնքի մէջ գնալ։
11 Եւ մոռացան նորա գործքերը և նորա հրաշքները, որ ցոյց էր տուել նոցանից։
12 Նոցանց հարցանց առջև հրաշք արաւ Եգիպտոսի երկրուանը, Տանեայ դաշտուանը։
13 Նա ծովը պատառեց և անց կացրեց նոցանից, և ջուրերը պարսպի պէս կանգնեցրեց։
14 Ցերեկը առաջնորդեց նոցանց ամպով՝ և ամեն գիշեր կրակի լուսով։
15 Վէմերը պատառեց անապատուանը, և խմացրեց նոցանից լինչպէս շատ հեղեղներ։
16 Առուներ հանեց վէմից և ջուրեր վայր բերաւ գետերի պէս։
17 Բայց և այնպէս դարձեալ մեղանչեցին նորա դէմ, և դառնացրին Բարձրեալին անապատուանը։
18 Եւ փորձեցին Աստուծոյն իրանց արտերուանը, կերակուր խնդրելով իրանց անձերի համար։
19 Եւ Աստուծոյ դէմ խօսեցին և ասացին. Մի՞թէ կարող է Աստուած սեղան պատրաստել անապատուանը։
20 Ահա վէմին զարկաց և ջուրեր բղխեցին և առուներ դուրս թափեցան. Մի՞թէ հաց էլ կարող է տալ. մի՞թէ միս կ'պատրաստէ իր ժողովրդի համար։
21 Սորա համար լսեց Տէրը և խիստ բարկացաւ, և կրակ բորբոքուեցաւ Յակոբի մէջ և բարկութիւն վեր կացաւ Իսրայէլի վերայ։
22 Որ չհաւատացին Աստուծոյն և չյուսացան նորա փրկութեանը։
23 Եւ վերևից Հրամայեց տուաւ ամպերին և երկնքի դռները բաց արաւ։
24 Եւ անձրևի պէս մանանայ տեղաց նոցանց վերայ կերակուրի տեղ. և երկնքի ցորենը տուաւ նոցանց։
25 Մարդ *հրեշտակների հաց կերաւ. կերակուր ուղարկեց նոցանց առատութիւնով։
26 Նա երկնքումը վեր կացրեց արևելեան քամին. և իր զօրութիւնով մեծ քշեց հարաւային քամին։
27 Եւ մի թափեց նոցանց վերայ մարմինս փոշի, և թևաւոր թռչուններ մինչև ծով ամի։
28 Եւ նորա բանակի մէջ գցեց նորա բնակարանների չորս կողմով։
29 Եւ կերան և խիստ կշտացան. և իրանց ցանկութիւնը տուաւ նոցանց։
30 Իրանց ցանկութիւնից չէին դադարել. դեռ իրանց կերակուրը բերաններումն էր.
31 Աստուծոյ բարկութիւնը դուրս եկաւ նոցանց վերայ, և սպանեց նոցանց պարարտների մէջ, և գեամով զարկեց Իսրայէլի երիտասարդները։
32 Այսու ամենայնիւ էլի մեղանչեցին և չհաւատացին նորա հրաշքներին։
33 Եւ նա պակասեցրեց նոցանց օրերը ունայնութեան մէջ. և նոցանց տարիքը սև ու վախով։
34 Երբոր սպանում էր նոցանից՝ խնդրում էին նորան, յետ էին դառնում. և առաւօտեան Աստուծոյն էին խնդրում։
35 Եւ յիշում էին, թէ Աստուած իրանց վէմն է, և Բարձրեալ Աստուածն իրանց Փրկիչն է։
36 Կեղծաւորութիւն էին անում նորան իրանց բերանով, և իրանց լեզուով սուտ էին տում նորան։
37 Եւ նորանց սիրտը ուղիղ չէր նորա հետ. և հաւատարիմ չէին նորա ուխտումը։
38 Բայց նա ողորմած էր. քաւում էր անօրէնութիւնը և չէր սպանում. և շատ անգամ դարձնում էր իր բարկութիւնը, և չէր վեր կացնում իր բոլոր սրտմտութիւնը։
39 Նա յիշում էր որ նորանք մարմին

*զօրաւորների

մին են, քանի որ գնում է և յետ չէ դառնում։
40 Քանի անգամ դառնացրին նո-
րան անապատումը, և բարկաց-
րին նորան անջուր տեղումը։
41 Կրկին և կրկին փորձեցին Ա-
ստուծոյն, և Իսրայէլի Սրբին նե-
ղացրին։
42 Չյիշեցին նորա ձեռքն այն օ-
րումը, որ փրկեց նորանց թշնա-
մուցը։
43 Որ իր նշաններըը արաւ Եգիպ-
տոսում, և իր հրաշքներըը Տա-
նիի դաշտում։
44 Եւ արիւնի փոխեց նորանց գե-
տերը և առուները, որ չկարացին
խմել։
45 Շնաճանճներ ուղարկեց նորանց
վերայ, որ նորանց ուտեն, և
գորտեր՝ որ ապականեն նորանց։
46 Եւ նորանց պտուղներըը թրթու-
րին տուաւ, և նորանց վաստակը
մարախին։
47 Նորանց որթերը փչացրեց կար-
կտով, և նորանց թզի ծառերը
եղեմնով։
48 Նորանց անասուններըը մատնեց
կարկտին, և նորանց հօտերը կը-
րակի կայծակներին։
49 Իր բարկութեան բոցը ուղար-
կեց նորանց վերայ՝ սրտմտութիւն,
բարկութիւն և նեղութիւն՝ չար
հրեշտակներ ուղարկելով։
50 Ճանապարհ պատրաստեց իր
բարկութեան համար. նորանց
անձներըը չպահեց մահից և նո-
րանց կեանքը մատնեց ժանտա-
հարին։
51 Եւ առջինեակ որդիքներըը սպա-
նեց Եգիպտոսումը, զօրութեան
առաջին պտուղներըը Քամի բնա-
կարաններումը։
52 Եւ ժողովրդին հանեց ինչպէս
ոչխարներ, և տարաւ նորանց ինչ-
պէս հօտ անապատումը։
53 Եւ առաջնորդեց նորանց ա-
պահով և չվախեցան. և ծովը
ծածկեց նորանց թշնամիներին։
54 Եւ նորանց տարաւ իր սրբու-
թեան սահմանը՝ այն լեռը, որ
նորա աջ ձեռն ստացաւ։
55 Եւ ազգեր դէն գցեց նորանց
առջև և վիճակով ժառանգու-
թիւն բաժանեց նորանց. և Իս-
րայէլի ցեղերը բնակեցրեց նորանց
բնակարաններումը։
56 Բայց նորանք փորձեցին և դառ-
նացրին Բարձրեալ Աստուծոյն,
և չպահեցին նորա վկայութիւն-
ները։
57 Եւ յետ դարձան և նենդա-
թիւն արին ինչպէս իրանց հար-
քը. յետ դարձան խարէութեան
ղեղի պէս։
58 Եւ նորան բարկացրին իրանց
կռքերի սեղաններովը, և իրանց
կռքերի պատկերներովը նախանձ
շարժեցին նորան։
59 Աստուած լսեց և բարկացաւ
և շատ անարգեց Իսրայէլին։
60 Երեսից գցեց Սելովայ բնակա-
րանը՝ այն խորանը, որ բնակվում
էր նորանում մարդկանց մէջ։
61 Եւ գերութեան մատնեց նորա
զօրութիւնը, և նորա փառքը նե-
ղիչների ձեռը։
62 Եւ իր ժողովրդին մատնեց սրի,
և իր ժառանգութեան համար
խիստ բարկացաւ։
63 Կրակը կերաւ նորա երիտա-
սարդներըը, և նորա աղջիկներին
վերայ երգ չերգեցին։
64 Նորա քահանաներըը սրով ըն-
կան, և նորա որբևայրիները չկա-
րացին սուգ առնել։
65 Բայց Տէրը զարթնեցաւ ինչ-
պէս քնից. ինչպէս զօրաւոր մարդ
որ գինուց գուարճանում է։
66 Եւ իր թշնամիները զարկեց յե-
տի կողմիցը. յաւիտեան նախա-
տինք արաւ նորանց։
67 Եւ Յովսէփի բնակարանը անար-
գեց. և Եփրեմի ցեղը չընտրեց։
68 Բայց Յուդայի ցեղն ընտրեց,
Սիոնի լեռանը որ նորան սիրեց։
69 Եւ իր սրբութիւնը շինեց ինչ-
պէս երկնքի բարձր տեղերը. ինչ-
պէս երկիրըը որ նորան հաստա-
տեց յաւիտեան։
70 Եւ իր ծառայ Դաւթին ընտ-
րեց, և առաւ նորան ոչխարների
փարախիցը։
71 Ծին տուող ոչխարների մատ-
ցը տարաւ նորան, որ իր Յակոբ
ժողովուրդը և իր Իսրայէլ ժա-
ռանգութիւնը կ'առավարէ։

72 Եւ նա արտճեցնում էր նոբանց աւբր արտով. և խնատաւն ձեռքով առաջնորդում էր նոբանց։

ՍԱՂՄ. ՀԹ

Ասափայ Սաղմաս։

1 Ով Աստուած, հեթանոսները մտան քո ժառանգութեան մէջ. պղծեցին քո սուրբ տաճարը. երուսաղէմն աւերակ արին։

2 Նորանք քո ծառաների դիակները կերակուր տուին երկնքի թռչուններին, և քո սրբերի մարմինը երկրի գազաններին։

3 Նորանց արիւնը թափեցին ինչպէս ջուր Երուսաղէմի չորս կողմով. և թաղող չկար։

4 Նախատինք եղանք մենք մեր դրացիներին, ծաղր և անարգանք մեր չորս կողմովը լինողների առջև։

5 Մինչև ե՞րբ, Տէր. կ'բարկանա՞ս հապառ, և քո նախանձը կրակի պէս կ'բորբոքուի՞։

6 Թափիր բարկութիդ այն ազգերի վերայ՝ որ քեզ չեն ճանաչում, և այն թագաւորութեանց վերայ՝ որ քո անունը չեն կանչում։

7 Վասնզի նորանք Յակոբին կերան և նորա բնակութիւնը աւերեցին։

8 Մի յիշիր մեզ դէմ առաջի անօրէնութիւնները, թող շուտով հասնի մեզ քո ողորմութիւնը. ինչու որ շատ տկարացանք։

9 Օգնիր մեզ, ով մեր փրկութեան Աստուած, քո անուան փառքի համար, և փրկիր մեզ և քաւիր մեր մեղքերը քո անունի համար։

10 Ինչո՞ւ ասեն հեթանոսները՝ Թէ Ո՞ր տեղ է նորանց Աստուածը. թող հեթանոսաց մէջ մեր աչաց առջև յայտնուի այն քո ծառաների թափուած արեան վրէժը։

11 Թող գերիների հառաչանքը առջևդ մտնէ. քո բազկի մեծութեան պէս ապրեցրու մահի որդոց։

12 Եօթնապատիկ հատուցում արա մեր դրացիներին իրանց ծոցի մէջ իրանց այն նախատինքը, որով քեզ անարգեցին, ով Տէր։

13 Բայց մենք քո ժողովուրդը և քո արօտի հօտն ենք. յաւիտեան կ'գոհանանք քեզանից, և քո գովասանքը կ'պատմենք ազգից ազգ։

ՍԱՂՄ. Հ

Երգողների պետարարին. Շուշանիմով. Ասափայ վկայութիւն. Սաղմոս։

1 Ով Իսրայէլի հովիւ, ականջ դիր. դու՝ որ Յովսէփին առաջնորդում ես հօտի պէս, որ նըստում ես Քերովբէից վերայ, յայտնուիր։

2 Եփրեմի և Բենիամինի և Մանասէի առջև զօրութիւնը. եկ մեզ ապրեցնելու համար։

3 Ով Աստուած, յետ դարձրու մեզ։

4 Եւ երևացրու քո երեսը՝ և կ'ապրինք. Տէր՝ զօրութեանց Աստուած, մինչև ե՞րբ կ'բարկանա քո ժողովրդի աղօթքի վերայ։

5 Արտասուքի հաց ես ուտեցնում նորանց, և արտասուք ես խմացնում նորանց մեծ չափով։

6 Մեզ կռվի պատճառ ես դնում մեր դրացիներին համար, և մեր թշնամիները ծաղր են անում *մեր վերայ։

7 Ով զօրութեանց Աստուած, յետ դարձրու մեզ, և երևացրու քո երեսը և կ'ապրինք։

8 Մի սրճի փոխադրեցիր Եգիպտոսից, ազգեր դուրս հանեցիր և նորան տնկեցիր։

9 Ճանապարհ պատրաստեցիր նորա առջև, և նորա արմատները հաստատեցիր և լցրեց երկիրը։

10 Լեառները ծածկուեցան նորա շուքով, և Աստուծոյ մայրերի պէս են նորա ճիւղերը։

---

*Իրանց մէջ.

11 Նորա ատաղը երկարացրիր մինչև ծովը, և նորա ճիւղերը մինչև գետը։
12 Ինչո՞ւ քանդեցիր հէմ նորա պատը, որ քաղեն նորան բոլոր ճանապարհովը անցնողները։
13 Անտառի խոզը ապականում է նորան, և վայրի գազանը արածում է նորան։
14 Ով զօրութեանց Աստուած, դարձիր երկնքից, նայիր և տես, և տես եկ այս որթին։
15 Եւ նոր բուսած ճիւղին, որ քո աջը անկեց նորան, և որդոյն որ նորան զօրացրիր քեզ համար։
16 Այրուած է՝ կրակով կտրուած. քո երեսի սաստկութիցը կորչում են։
17 Թող ձեռքդ քո աջի մարդուն վերայ լինի, մարդու որդոյն վերայ՝ որ նորան զօրացրիր քեզ համար։
18 Ապա յետ չենք քաշուիլ քեզանից, կենդանացրու մեզ, և քո անունովը կ՚կանչենք։
19 Տէր՝ զօրութեանց Աստուած, յետ դարձրու մեզ, երեսացրու քո երեսը և կապրինք։

ՍԱՂՄ. ՁԱ

Երգողների գլխաւորին. Կիթիթի վերայ. Ասափայ (Սաղմոս)։

1 Ցնծացէք Աստուծոյ առջև, որ մեր զօրութիւնն է. ուրախութիւնով աղաղակեցէք դէպի Յակոբի Աստուածը։
2 Երգը բարձրացրէք, թմբուկը տուէք, քաղցր քնարը սաղմոսարանի հետ։
3 Փող փչեցէք ամսի գլխուն. Լրացած լուսնի ժամանակին, մեր տօնի օրուն։
4 Քանզի այս հրաման է Իսրայէլին, և Յակոբի Աստուծոյն իրաւունք։
5 Վկայութիւն դրաւ Յովսէփի մէջ՝ երբոր նա դուրս էր գալիս Եգիպտոսի երկրի դէմ. լեզու էի լսում, որ չէի գիտում։
6 Եւ նորա թիկունքը հեռացրի բեռնիցը, և նորա ձեռքերը պղծան քթոցիցը։
7 Նեղութեանդ կանչեցիր, և փրկեցի քեզ. լսեցի քեզ որոտմանքի ծածկոցումը. փորձեցի քեզ Հակառակութեան ջրերի մօտ։ (Ակլա։)
8 Լսիր, իմ ժողովուրդ, և կը վկայեմ քեզ. Իսրայէլ, երանի թէ լսէիր ինձ։
9 Օտար Աստուած չլինի քո մէջդ. և երկրպագութիւն չանես օտար Աստուծոյ։
10 Ես եմ քո Տէր Աստուածը, որ հանեցի քեզ Եգիպտոսի երկրիցը. լայն բաց արա քո բերանը և ես կ՚լեցնեմ դորան։
11 Բայց իմ ժողովուրդը չլսեց իմ ձայնին, և Իսրայէլը չհաւանեցաւ ինձ։
12 Ա՛ր նորանց թողի իրանց սրտաերի կամացը, որ գնան իրանց խորհուրդներուն։
13 Երթէ իմ ժողովուրդը ինձ լսէր, և Իսրայէլն իմ ճանապարհումը գնար.
14 Շուտով կ՚խոնարհեցնէի նորանց թշնամիները և իմ ձեռքը կը դարձնէի նորանց նեղացնողների դէմ։
15 Տիրոջմ ատողները կ՚խոնարհուէին նորա առջև, իսկ նորա ժամանակը յաւիտեան կ՚լինէր։
16 Նա կ՚կերակրէր նորան պարարտ ցորենով, և վէմիցը կ՚կշտացնէի քեզ մեղրով։

ՍԱՂՄ. ՁԲ

Ասափայ Սաղմոս։

1 Աստուած կանգնում է Աստուծոյ ժողովրդի մէջ. Նա աստուածների միջումը դատում է։
2 Մինչև ե՞րբ էք դատելու անիրաւութիւնով, և ամբարիշտներին երես առնելու։ (Ակլա։)
3 Իրաւունք արէք աղքատին և որբին, արդարացրէք խեղճին և աղքատին։
4 Փրկեցէք աղքատին և խեղճին. ազատեցէք ամբարիշտների ձեռքիցը։
5 Բայց չեն իմանում և միտք չեն առնում. խաւարի մէջ են գը-

նուա՛ր. երկրի ամեն ազգերը շար-
ժուած են։

6 *Ես ասացի. Դուք աստուածներ էք, և ամենքդ Բարձրելոյ որդիք։*

7 *Սակայն մարդկանց նման կ'մեռնիք, և ինչպէս իշխաններից մէկը, վայր կ'ընկնիք։*

8 *Վե՛ր կաց, ով Աստուած, դատեր երկիրը. ինչու որ դու պիտի ժառանգես ամեն հեթանոսները։*

ՍԱՂՄ. ՁԲ

Երգ. Ասափայ Սաղմոս։

1 *Ով Աստուած, լսա՛ մի կենար. անձայն մի լինիր, և մի դադարիր, ով Աստուած։*

2 *Ահա քո թշնամիները գոռում են, և քեզ ատողները բարձրացրին իրանց գլխները։*

3 *Խորամանկ հնարք են շինում քո ժողովրդի դէմ. և խորհուրդ են անում քո պահպանածների վերայ։*

4 *Ասում են՝ եկէք կորցնենք, որ ազգ չլինին. և էլ չյիշուի Իսրայէլ անունը։*

5 *Միտքան սրտով խորհուրդ արին, քեզ դէմ դաշինք հաստատեցին։*

6 *Եդոմի բնակարանները և Իսմայէլացիք, Մոլար և Հագարացիք։*

7 *Գեբաղ և Ամմն և Ամաղէկ, Փղշտացիք Տիւրոսի բնակիչների հետ։*

8 *Ասուր էլ միաւորուեցաւ նոքանց հետ. օգնում են Ղոտի որդոցը։ (Սէլա։)*

9 *Արա նոքանց ինչպէս Մադիամին՝ ինչպէս Սիսարային՝ ինչպէս Յաբինին Կիսոն գետի մօտ։*

10 *Որ նոքանք Ենդորի մօտ ապականուեցան. պղե եղան երկրի վերայ։*

11 *Արա նոքանց իշխանները ինչպէս Օրէբը և Զէբը. և նոքանց ամեն մեծաւորները ինչպէս Զեբեէն և Սալմունան։*

12 *Որ նոքանք ասում են. Տիրապետենք մեզ համար Աստուծոյ բնակարաններին։*

13 *Աստուած իմ, արա նոքանց ինչպէս փոշի և ինչպէս դարման քամու առջև։*

14 *Ինչպէս որ կրակն այրում է անտառին, և ինչպէս որ բոցը խանձում է լեռներին։*

15 *Այնպէս հալածիր նոքանց քո մրրիկովը, և զարհուրեցրու նոքանց քո փոթորկովը։*

16 *Լցրու նոքանց երեսները անարդանքով, որ քո անունը խնդրեն, ով Տէր։*

17 *Թող ամաչեն և շփոթուին յաւիտեան յաւիտենից, և ամօթ լինին ու կորչին։*

18 *Եւ իմանան, որ դու կաս, քո անունը Եհովայ է. դու միայնակ Բարձրեալ ես բոլոր երկրի վերայ։*

ՍԱՂՄ. ՁԳ

Երգողների գլխաւորին. Կիթթիթ վերայ. Կորխայ որդոց Սաղմոս։

1 *Քանի սիրելի են քո բնակարանները, ով զօրութեանց Տէր։*

2 *Իմ անձը ցանկանում է և փափաքում Տիրոջ սրահները, իմ սիրտն և իմ մարմինը ցնծում են կենդանի Աստուծով։*

3 *Ճիրն էլ տուն գտաւ և ծիծեռնակը բոյն՝ իրան համար, որ իր ձագերը դնէ նոքանում, սեղանդ քո սեղանները, ով զօրութեանց Տէր՝ իմ Թագաւոր և իմ Աստուած։*

4 *Երանի քո տան բնակուողներին. նոքանք յաւիտեան կ'օրհնեն քեզ։ (Սէլա։)*

5 *Երանի այն մարդկանց որ նոքանց զօրութիւնը քեզանից է, որ նոքանց սրտերումը պատրաստուած ճանապարհներ կան։*

6 *Արտասուքի ձորովն անցնելով՝ նոքան աղբիւրի պէս են շինում. և աշունի անձրևը ծածկում է օրհնութիւնով։*

7 *Նոքանք զօրութենէ՝ի զօրութիւն են գնում, և Աստուծոյ են երևում Սիոնի մէջ։*

8 *Ով Տէր՝ զօրութեանց Աստուած, լսիր իմ աղօթքն. ականջ դիր, ով Յակոբի Աստուած։ (Սէլա։)*

9 Ով մեր վահանը՝ Աստուած, տես, և քո օծելոյ երեսին նայիր։
10 Քանզի լաւ է մէկ օր քո արբունհերուդը քան հազարք, ուրեմն ուզում եմ դուռը պահպանել իմ Աստուծոյն տանը քան բնակուիլ ամբարշտութեան տներուդը։
11 Ինչու որ Տէր Աստուածը արև և վահան է. Տէրը շնորհք և փառք է տալիս. նա ոչինչ չէ խնայում անարատութիւնով գընացողներից։
12 Ով զօրութեանց Տէր, երանի այն մարդուն որ քեզ է յուսացած։

ՍԱՂՄ. ՁԵ

Երգողների գլխաւորին. Կորխայ որդոց. Սաղմոս։

1 Տէր, դու հաւանեցար քո երկրին. դարձրիր Յակոբի գերութիւնը։
2 Քո ժողովրդի անօրէնութիւնը ներեցիր, և նորանց ամեն մեղքերը ծածկեցիր։ (Սէլա։)
3 Հեռի արիր քո ամեն սրտմտութիւնը. յետ դարձար քո բարկութեան բորբոքուելուցը։
4 Դարձրու մեզ, ով մեր փրկիչ Աստուած, և դադարիր քո բարկութիւնից որ մեզ վերայ է։
5 Մի՞թէ յաւիտեան կ'բարկանաս մեզ վերայ. քո բարկութիւնը կ'երկարացնե՞ս ազգից մինչև ազգ։
6 Մի՞թէ յետ չես դառնալ որ մեզ կենդանացնես, և քո ժողովուրդը ուրախ լինի քեզանով։
7 Ցոյց տուր մեզ, Տէր, քո ողորմութիւնը. և տուր մեզ քո ողորմութիւնը։
8 Թող լսեմ թէ ինչ կ'խօսի Տէր Աստուած. նա խաղաղութիւն կը խօսի իր ժողովրդի և իր սրբերի հետ, և յետ չեն դառնալ յիմարութեան մէջ։
9 Իրաւի որ նորա փրկութիւնը մօտիկ է նորանից վախեցողներին, որ փառք բնակուի մեր երկրումը։
10 Ողորմութիւն և ճշմարտութիւն իրար կ'պատահեն. արդարութիւն և խաղաղութիւն էլ կ'համբուրեն։
11 Ճշմարտութիւն կ'բուսանի երկրից և արդարութիւն երկնքիցը վայր կ'նայի։
12 Տէրը բարիք էլ կ'տայ, և մեր երկիրը կ'տայ իր պտուղը։
13 Արդարութիւնն նորա առաջից կ'գնայ, և իր քայլերը կ'դնէ նորա ճանապարհի վերայ։

ՍԱՂՄ. ՁԶ

Դաւթի աղօթք։

1 Տէր, խոնարհեցրու քո ականջը և պատասխանիր ինձ. ինչու որ աղքատ եմ ես և խեղճ։
2 Պահիր իմ անձը, ինչու որ ես մաքուր եմ. փրկիր, ով իմ Աստուած, քո ծառային, որ քեզ է յուսացած։
3 Ողորմիր ինձ, Տէր, ինչու որ դէպի քեզ եմ կանչում ամեն օր։
4 Ուրախ արա քո ծառայի անձը. ինչու որ դէպի քեզ եմ բարձրացնում իմ անձը, ով Տէր։
5 Քանզի դու, Տէր, բարի ես և ներող, և ողորմութիւնով հարուստ բոլոր քեզ կանչողներին։
6 Ականջ դիր իմ աղօթքին, ով Տէր. և մտիկ արա իմ աղաչանաց ձայնին։
7 Իմ նեղութեան օրումը դէպի քեզ եմ կանչում. ինչու որ դու լսում ես ինձ։
8 Քեզ նմանը չկայ աստուածների մէջ, Տէր, և չկայ քո գործերի պէս։
9 Ամեն ազգերն, որ արիր, կը գան և երկրպագութիւն կ'անեն քո առջև, Տէր. և քո անունին փառք կ'տան։
10 Քանզի դու մեծ ես և հրաշք գործող. դու ես միայն Աստուած։
11 Տէր, ցոյց տուր ինձ քո ճանապարհը, որ գնամ քո ճշմարտութեան մէջ. միացրու իմ սիրտը որ քո անունիցը վախենամ։
12 Կ'գոհանամ քեզանից, Տէր՝

իմ Աստուած, բոլոր սրտով. և յաւիտեան կ'փառաւորեմ քո անունը։

13 Քանզի քո ողորմութիւնը մեծ է ինձ վերայ. և դու փրկեցիր իմ անձը ներքևի դժոխքից։

14 Ով Աստուած, ամբարտաւանները վեր կացան ինձ դէմ և բազմաւորների ժողովքը խնդրում է իմ անձը. և քեզ չեն դնում իրանց առջև։

15 Բայց դու, ով Տէր, զթած Աստուած ես և ողորմած, երկայնամիտ ես և շատ քաղցրութիւնով և ճշմարտութիւնով։

16 Նայիր ինձ վերայ և ողորմիր ինձ. քո զօրութիւնը տուր քո ծառային, և փրկիր քո աղախնոյ որդուն։

17 Նշան արա ինձ վերայ բարութեան համար, որ ինձ ատողները տեսնեն և ամչեն. նորա համար դու, Տէր, օգնեցիր և մխիթարեցիր ինձ։

ՍԱՂՄ. ՁԷ

Կորխայ որդոցը. Սաղմոս. երգ։

1 Սորա հիմունքները սուրբ լեռների վերայ են։

2 Տէրը սիրում է Սիոնի դռները աւելի քան Յակոբի բնակարանները։

3 Փառաւոր բաներ պատմվում են քեզանում, ով Աստուծոյ քաղաք։ (Սէլա։)

4 Որհարին և Բաբելոնին կ'յիշեմ նորանց մէջ որ ճանաչում են ինձ. ահա Փղշտացիք և Տիրոս Քուշի հետ. սա այնտեղ է ծնուած։

5 Եւ Սիոնի համար կ'ասուի՝ այս մարդը և այն մարդը նորանում է ծնուած. և ինքը Բարձրեալը նորա հիմունքը հաստատեց։

6 Տէրն ազգերի դրքում կ'պատմէ՝ սա այնտեղ է ծնուած։ (Սէլա։)

7 Եւ երգիչները՝ ինչպէս որ պար եկողները՝ իմ աղբիւրները քեզանում են։

ՍԱՂՄ. ՁԸ

Երգ. Կորխայ որդոցը Սաղմոս. երգ Ներման գնեբի գլխաւորին որ Մախալաթի վերայ. պատասխանելով. Եզրախայեցի Եմանի վարդապետութիւն։

1 Ով Տէր՝ իմ փրկութեան Աստուած, ցերեկը կանչում եմ, և գիշերը առջևդ եմ։

2 Թող իմ աղօթքը առջևդ գայ, խոնարհեցրու քո ականջը դէպի իմ աղաղակը։

3 Քանզի իմ անձը լցուաւ չարիքներով, և կեանքս մօտեցաւ դժոխքին։

4 Ես համարուեցայ գերեզմանի մէջ իջողների հետ. ինչպէս մարդ եղայ, որ ոյժ չունի։

5 Մեռելների մէջ թողացածի պէս եմ. ինչպէս խոցուածներ, որ գերեզմանումը ընկած են, որ նորանց այլևս չեն յիշում, և երեսից դցուած են քո ձեռքից։

6 Դու ինձ ներքի փոսի մէջ դրիր՝ խաւար և խոր տեղերի մէջ։

7 Քո սրտմտութիւնը հաստատուեցաւ ինձ վերայ, և քո ալիքներով նեղեցիր ինձ։ (Սէլա։)

8 Իմ ճանաչները հեռացրիր ինձանից և ինձ գարշելի արիր նորանց համար. փակուած եմ և չեմ դուրս գալիս։

9 Աչքս մաշուեցաւ խեղճութեան պատճառով. կանչում եմ դէպի քեզ, Տէր, բոլոր օրը. մեկնում եմ ձեռքս դէպի քեզ։

10 Մի՞թէ մեռելների վերայ կս հրաշք անելու. մի՞թէ մահացածները վեր կ'կենան և քեզանից կը դոհանան։ (Սէլա։)

11 Մի՞թէ գերեզմանումը կ'պատմեն քո ողորմութիւնը, և քո ճշմարտութիւնը կորստի՞ մէջ։

12 Մի՞թէ խաւարի մէջ կ'ճանաչուին քո հրաշքները, և արդարութիւնը մոռացութեա՞ն երկրումը։

13 Բայց ես դէպի քեզ եմ աղաղակում, Տէր. և իմ աղօթքը կանուխ առաւօտանց գալիս է քեզ մօտ։

14 Տէր, ինչո՞ւ ես իմ անձը երեսից գցում. երեսդ թագցնո՞ւմ ես ինձանից։

15 Ես աղքատ եմ և ծառնուամ
իմ մանկութիւնիցը. քո զար-
հուրանքը քաշեցի, և յոյս
կտրուած է։
16 Քո սրտմտութիւնը հասաւ ինձ
վերայ, քո զարհուրանքներըը կոր-
ցընուած են ինձ։
17 Ցորանք ամեն օր ջրի նման
պատած են ինձ. պատած են
ինձ մին առղ։
18 Դու հեռացրիր ինձանից բարե-
կամիս և մօտաւորիս. իմ ճա-
նաչներըը խաւարի մէջ են։

ՍԱՂՄ. ՁԹ

Եզրախօսեցի էթանի վարդապետութեան

1 Յաւիտեան կ'օրհնեմ Տիրոջ ո-
ղորմութիւնը. ազգից ազգ կը
պատմեմ իմ բերանովը քո ճըշ-
մարտութիւնը։
2 Քանզի ասացի՝ Ողորմութիւնը
յաւիտեան հիմնուած է, երկնը-
քումը հաստատած ես քո ճըշ-
մարտութիւնը։
3 Ես ուխտ դրի իմ ընտրուածի
հետ. երդուայ որի իմ Դաւիթ
ծառայի համար։
4 Մինչև յաւիտեան կ'հաստա-
տեմ քո զաւակը, և ազգից ազգ
կ'հիմնեմ քո աթոռը։ (Սէլա։)
5 Եւ երկինքը կ'փառաւորեն քո
հրաշքներըը, Տէր. և սրբերի ժո-
ղովքումը քո ճշմարտութիւնը։
6 Քանզի ո՞վ կայ ամպերի մէջ՝
որ հաւասար լինի Տիրոջը, և
աստուածներուն որդոց մէջ, որ նը-
ման լինի Տիրոջը։
7 Աստուած զարհուրելի է սրբ-
երի ժողովքումը, և սոսկալի
ամեն նորան շրջապատողներուն մօտ։
8 Եհովայ՝ զօրութեանց Աստ-
ուած, ո՞վ է քեզ պէս զօրաւոր
Տէր, և քո ճշմարտութիւնը քո
չորս կողմինն է։
9 Դու տիրապետում ես ծովի
զօրութեան վերայ. երբոր բարձ-
րանում են նորա կոհակներըը՝ դու
խաղաղեցնում ես նորանց։
10 Դու փշրեցիր Ռահաբին խոցուա-
ծի նման. քո բազկի զօրութիւ-
նովը ցրուեցիր քո թշնամիներըը։
11 Քո են երկինքը, քո է նաև եր-
կիրը. դու հիմնեցիր աշխարհքը
և նորա լիութիւնը։
12 Դու արիր հիւսիսը և հարաւը. Թաբո-
րն ու Հերմոնը ցնծում են
քո անունովը։
13 Քո է ուժեղ բազուկը. քո
ձեռքը զօրաւոր է և քո աջը
բարձր։
14 Արդարութիւն և իրաւունք են
քո աթոռի հաստատութիւնը,
ողորմութիւն և ճշմարտութիւն
գնում են քո երեսի առաջից.
15 Երանի այն ժողովրդին, որ գի-
տէ փողերի ձայնը. ով Տէր,
նորանք քո երեսի լուսովը կ'գը-
նան։
16 Քո անունովը ամեն օր կ'ցըն-
ծան, և քո արդարութիւնովը
կ'բարձրանան։
17 Քանզի դու ես նորանց զօրու-
թեան փառքը. և քո հաճու-
թիւնովը կ'բարձրանայ մեր եղ-
ջիւրը։
18 Ինչու որ Տէրն է մեր վահանը,
և Իսրայէլի սուրբը մեր թագա-
ւորը։
19 Ա՛յն ժամանակը տեսիլքով
խօսեցիր քո սրբի հետ. և ասա-
ցիր՝ Օգնութիւն դրի զօրաւորի
վերայ. բարձրացրի ընտրուածին
ժողովրդի միջից։
20 Իմ Դաւիթ ծառային գտայ,
իմ սուրբ իւղովը օծեցի նորան.
21 Որ իմ ձեռքը կ'հաստատէ նո-
րան, և բազուկս կ'զօրացնէ նո-
րան։
22 Թշնամին չի նեղացնիլ նորան,
և անօրէնութեան որդին չի չար-
չարիլ նորան։
23 Բայց ես կ'փշրեմ նորա թշնա-
միներըը նորա երեսի առջև, և կը
զարկեմ նորա ատողներին։
24 Եւ իմ ճշմարտութիւնն ու իմ
ողորմութիւնը նորա հետ կ'լինի,
և իմ անունովը կ'բարձրանայ նո-
րա եղջիւրը։
25 Եւ նորա ձեռը կ'դնեմ ծովի
մէջ, և նորա աջ ձեռը գետերի
մէջ։
26 Նա դէպի ինձ կ'կանչէ, Դու
ես իմ Հայրը, ով իմ Աստուած
և իմ փրկութեան վէմ։

27 Եւ ես առաջինեակ կ'դնեմ նո-
րան՝ երկրի թագաւորների վերայ
բարձրացած։
28 Յաւիտեան կ'պահեմ նորա հա-
մար իմ ողորմութիւնը. և իմ ու-
խտը Հաւատարիմ կ'լինի նորա հետ։
29 Եւ նորա զաւակին յաւիտեան
կ'հաստատեմ. և նորա աթոռը
ինչպէս երկնքի օրերը։
30 Եթէ նորա որդիքը իմ օրէնքը
թողեն, և իմ իրաւունքի մէջ
չգնան,
31 Եթէ նորանք իմ հրամաններն
անարգեն, և իմ պատուիրանք-
ները չպահեն.
32 Ապա գաւազանով կ'պատժեմ
նորանց անօրէնութիւնը, և ծե-
ծելով նորանց անիրաւութիւնը։
33 Բայց իմ ողորմութիւնը չեմ
կորիլ նորանից, և իմ հաւա-
տարմութիւնը չեմ դրժել։
34 Իմ ուխտը չեմ անարգիլ և
իմ շրթունքներիցը դուրս եկածը
չեմ փոխիլ։
35 Մէկ անգամ երդուեմ եմ ա-
րել իմ արդութիւնովը, թէ սուտ
չեմ ասիլ Դաւթին։
36 Նորա զաւակը յաւիտեան պի-
տի լինի, և նորա աթոռը ինչ-
պէս արեգակն իմ առջև։
37 Ինչպէս լուսինը յաւիտեան
հաստատ պիտի լինի, և ինչպէս
վկան ամպերումը՝ Հաւատարիմ։
(Սէլա։)
38 Բայց հիմա երեսից դցեցիր և
անարգեցիր, բարկացար քո օծե-
լոյն վերայ։
39 Քո ծառայի ուխտը փչացրիր.
նորա պսակը գետնի փալվ պղծե-
ցիր։
40 Նորա ամեն պարիսպները քան-
դեցիր, նորա ամուր տեղերը ա-
ւերակ արիր։
41 Բոլոր ճանապարհովը անցնող-
ները կողոպտում են նորան. նա-
խատինք եղաւ իր հարևանների
առջև։
42 Նորա նեղացնողների աջ ձեռը
բարձրացրիր. նորա ամեն թշնա-
միները ուրախացրիր։
43 Նաև նորա սրի զօրութիւնը
յետ դարձրիր, և պատերազմի
մէջ չհաստատեցիր նորան։
44 Նորա փառաւորութիւնը հան-
գեցրիր, և նորա աթոռը գետ-
նի գցեցիր։
45 Նորա երիտասարդութեան օր-
երը կարճեցրիր, ամօթով ծած-
կեցիր նորան։ (Սէլա։)
46 Տէր, մինչև ե՞րբ կ'թագչես
քո անձը, և սրտմտութիւնը կը-
րակի պէս կ'բորբոքուի՞։
47 Յիշիր թէ ի՛նչ անցաւոր եմ,
և քանի՛ ունայն ստեղծեցիր մարդ-
կանց ամեն որդիքը։
48 Ո՛վ է այն մարդը որ ապրի և
մահ չտեսանէ. և իր անձը գժոխքի
ձեռից փրկէ։ (Սէլա։)
49 Ո՞ւր է քո առաջի ողորմութի-
նը, Տէր. որ երդուեմ արիր Դաւ-
թին քո ճշմարտութիւնովը։
50 Յիշիր, Տէր, քո ծառաների
նախատինքը, որ իմ ծոցումը քա-
շում եմ ամեն զօրաւոր ազգե-
րից.
51 Որ նորանով քո թշնամիները
անարգում են, Տէր, որ նորա-
նով անարգում են քո օծելոյ
քայլերը։
52 Օրհնեալ է Տէրը յաւիտեան։
Ամէն և ամէն։

ՍԱՂՄ. Ղ

Աստուծոյ մարդ՝ Մովսէսի աղօթք։

1 Ով Տէր, մեզ համար ապաւէն
ես ազգից մինչև ազգ։
2 Դեռ որ լեռները չէին ծըն-
ուած, և երկիրս ու աշխարհքս
չէիր ստեղծել. յաւիտենից մին-
չև յաւիտեան դու ես Աստուած։
3 Դու մարդուն փոշի ես դարձ-
նում և ասում՝ Յետ դարձէք,
մարդկանց որդիք։
4 Քանզի հազար տարին քո առ-
ջև ինչպէս երէկուան օրն է, որ
անց կացաւ. և ինչպէս մին պահ
գիշերումը։
5 Ջրհեղեղով ողողում ես նո-
րանց, և նորանք քուն են լի-
նում. ինչպէս խոտ, որ առաւօ-
տանց անց է կենում։
6 Առաւօտանց ծաղկում է և
անցնում. իրիկունը կտրվում է
և չորանում։

7 Քանզի մաշուեցաք քո բարկութիւնովը, և քո սրտմտութիւնովը շփոթուեցանք։
8 Մեր անօրէնութիւնները դրիր քո առջեւ, մեր ծածուկ մեղքերը քո երեսի լուսոյ մէջ.
9 Ինչու որ մեր բոլոր օրերը փչացանում են քո բարկութիւնովը. մեր տարիները անց ենք կացնում ինչպէս սփռղփռղ խօսք։
10 Մեր տարիների օրերը եօթանասուն տարի են, և եթէ շատ լինի՝ ութսուն տարի, նորանց փառքն էլ աշխատանք է և ցաւ. ինչու որ շուտով է անց կենում, և թռչում ենք։
11 Ո՞վ է գիտում քո բարկութեան զօրութիւնը, և քո սրտմտութիւնը քո վախի պէս։
12 Սովորեցրու մեզ, որ այնպէս համարենք մեր օրերը և իմաստուն սիրտ ընդունենք։
13 Դարձիր, Տէր, մինչև ե՞րբ. խղճացիր քո ծառաների վերայ։
14 Կշտացրու մեզ առաւօտանց քո ողորմութիւնովը որ ցնծանք և ուրախ լինինք մեր ամեն օրերումը։
15 Ուրախացրու մեզ այն օրերի չափովը, որ տրտմացրիր մեզ. այն տարիների չափովը, որ նեղութիւն տեսանք։
16 Թող երեւի քո ծառաներին քո գործը, և քո փառքը նորանց որդոցը։
17 Եւ մեր Աստուծոյ վայելչութիւնը լինի մեզ վերայ. և մեր ձեռաց գործերը հաստատիր մեզանում, և մեր ձեռաց գործը հաստատիր։

ՍԱՂՄ. ՂԱ

1 Բարձրելոյն ծածկոցի տակ բնակուողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում։
2 Կ'ասեմ Տիրոջը. Իմ ապաւէն և իմ ամրոց, իմ Աստուած, որին ես յուսացած եմ։
3 Քանզի նա կ'փրկէ քեզ որսողի որոգայթիցը, չար ժանտամահիցը։
4 Նա կ'ծածկէ քեզ իր փետուրներովը, նորա թեւերի տակ ապահով կ'լինիս. նորա ճշմարտութիւնը ասպար է և վրան։
5 Չես վախենալ գիշերի զարհուրանքիցը. այն նետիցը որ թռչում է ցերեկը։
6 Այն ժանտախտիցը, որ խաւարումը շուռ է գալիս. այն հարուածիցը, որ աստակում է կէս օրումը։
7 Հազար հոգի քո կողմիցը կ'ընկնին, և տասն հազար քո աջ կողմիցը. բայց քեզ չի մօտենալ։
8 Միայն քո աչքերովը կ'նայիս, և ամբարիշտների հատուցումը կ'տեսանես։
9 Քանզի դու ես, Տէր, իմ յոյսը. դու Բարձրեալն քեզ ապաւէն արիր։
10 Քեզ չար բան չի հանդիպել. և նեղութիւն չի մօտենալ քո բնակարանին։
11 Քանզի իր հրեշտակներին հրամայել է քեզ համար, որ պահեն քեզ քո բոլոր ճանապարհներումը։
12 Նորանք ձեռների վերայ կ'առնեն քեզ, որ քո ոտը քարի չդպցնես։
13 Առիւծների և իժերի վերայ կը գնաս. առիւծի կորիւններին և վիշապին ոտով կոխ կ'տաս։
14 Քանզի նա ինձ ցանկացաւ՝ և ես կ'փրկեմ նորան. ես բարձր կ'անեմ նորան. ինչու որ նա ճանաչում է իմ անունը։
15 Նա կ'կանչէ դէպի ինձ՝ և ես կ'լսեմ նորան. ես նորա հետ կը լինիմ նեղութեան մէջ. կ'ապրեցնեմ նորան և փառաւոր կ'անեմ նորան։
16 Երկայն օրերով կ'կշտացնեմ նորան. և իմ փրկութիւնը ցոյց կ'տամ նորան։

ՍԱՂՄ. ՂԲ

Սաղմոս. երգ. Շաբաթ օրուան համար

1 Բարի է գոհանալ Տէրիցը, և սաղմոս ասել քո անունին, ով Բարձրեալ։
2 Առաւօտանց պատմել քո ո-

ղորմութիւնը, և գիշերը քո ճըշմարտութիւնը.
3 Տանողակայ նուագարանով և սաղմոսարանով. օրհնութեան ձայնով քնարի հետ։
4 Քանզի դու, Տէր, ուրախացրիր ինձ քո գործքերովը. քո ձեռաց գործքերովը ցնծում եմ։
5 Ով Տէր, քանի՛ մեծ են քո գործքերը. շատ խո՛ր են քո խորհուրդները։
6 Յիմար մարդը չէ իմանում, և անմիտը չէ հասկանում այս։
7 Ամբարիշտները խոտի պէս բուսնելիս՝ ծաղկում են բոլոր անօրէնութիւն գործողները, որ սատակուին յաւիտեանս յաւիտենից։
8 Բայց դու, Տէր բարձր ես յաւիտեան։
9 Քանզի ահա քո թշնամիները, Տէր, ահա քո թշնամիները կը կորչին. և կ'ցրուին բոլոր անօրէնութիւն գործողները։
10 Բայց իմ եղջիւրը բարձրացնես ինչպէս մի եղջերուինը. օծուած եմ ես նոր իւղով։
11 Եւ իմ աչքը կ'նայի իմ թշնամիների վերայ. և ականջս կ'լսէ այն չարագործներին համար, որ վեր կացան ինձ վերայ։
12 Արդարը արմաւենու պէս կը բուսանի. Լիբանանու մայրին պէս կ'մեծանայ։
13 Տիրոջը տան մէջ տնկուածները մեր Աստուծոյ սրահներուն կը բուսանին։
14 Ծերութեան մէջ էլ պտուղ կ'բերեն. պարարտ և դալար կ'լինին.
15 Որ պատմեն, թէ ուղիղ է Տէրը իմ վէմը, և անիրաւութիւն չկայ նորանում։

ՍԱՂՄ. ՂԳ

1 Տէրն է թագաւորում. նա մեծափառութիւն է հագած. Տէրը զօրութիւն հագած և իր մէջքը կապած է. սորա համար աշխարհքը հաստատ է և չէ շարժվում։
2 Հաստատ է քո աթոռը սկզբից. յաւիտենից ես դու։
3 Բարձրացնում են գետերը, Տէր, գետերը բարձրացնում են իրանց ձայնը, գետերը բարձրացնում են իրանց գոռոցը։
4 Շատ ջրերի ձայնից աւելի զօրաւոր են ծովի ալիքները. աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ։
5 Քո վկայութիւնները շատ հաստատուած են. քո տանը վայելուչ է սրբութիւն, ով Տէր, երկայն օրերով։

ՍԱՂՄ. ՂԴ

1 Ով Տէր՝ վրէժխնդրութեան Աստուած, ով վրէժխնդրութեան Աստուած, յայտնուիր։
2 Բարձրացիր, ով երկրի դատաւոր, հատուցում տուր ամբարտաւանների։
3 Ով Տէր, ամբարիշտները մինչև ե՞րբ՝ ամբարիշտները մինչև ե՞րբ կ'պարծենան։
4 Նորանք բղխում խօսում են գոռոզ բաներ. պարծենում են բոլոր անօրէնութիւն գործողները։
5 Տէր, նորանք կոխ են տալիս քո ժողովուրդը, և նեղացնում են քո ժառանգութիւնը։
6 Որբևայրուն և պանդուխտին սպանում են. և որբերին կոտորում են.
7 Եւ ասում. Տէրը չէ տեսնում, և Յակոբի Աստուածը չէ իմանում։
8 Իմացէք, ով յիմարներ ժողովրդի մէջ. և դուք, ո՛վ անմիտներ, ե՞րբ կ'հասկանաք։
9 Մի՞թէ ականջը տնկողը չի լսիլ. կամ թէ աչքը ստեղծողը չի՞ տեսնիլ։
10 Մի՞թէ ազգերը խրատողը չի յանդիմանիլ. նա, որ մարդուս գիտութիւն է սովորեցնում։
11 Տէրը ճանաչում է մարդկանց խորհուրդները, որ ունայն են։
12 Երանի այն մարդուն որ դու խրատում ես նորան, ով Տէր. և քո օրէնքիցը սովորեցնում ես նորան.
13 Որ հանգստացնես նորան չարութեան օրերիցը. մինչև որ հոր փորուի ամբարշտի համար։

14 Քանզի Տէրը երեսից չէ դցուեմ
իր ժողովուրդը, և չէ թողուեմ
իր ժառանգութիւնը։
15 Մինչև որ դատաստանը դէպի
արդարութիւն կ'դառնայ. և նո-
րա ետևից կ'գնան բոլոր սրտով
ուղիղները։
16 Ո՞վ վեր կ'կենայ ինձ հետ չա-
րերի դէմ. ո՞վ ինձ հետ կ'կանգ-
նի նորանց դէմ որ անօրէնու-
թիւն են գործում։
17 Եթէ Տէրը օգնութիւն չլինէր
ինձ, քիչ կ'մնար որ իմ անձը
դժոխքի մէջ բնակուէր։
18 Եթէ ասում եմ. Ոտս դողդո-
ում է. Տէր, քո ողորմութիւնը
հաստատում է ինձ։
19 Իմ հոգերն իմ սրտումը շա-
տանալիս՝ քո մխիթարութիւնքը
ուրախացնում են ինձ։
20 Մի՞թէ քեզ հետ հաղորդակից
է անօրէնութեան աթոռը, որ
չարիք է շինում հրամանի դէմ։
21 Նորանք ժողովւում են արդա-
րի անձի դէմ, և անմեղի արիւնը
դատապարտում։
22 Բայց Տէրը ինձ ապաւէն է, և
իմ Աստուածն է իմ յուսոյ
վէմը։
23 Եւ նա նորանց կ'հատուցանէ
իրանց անօրէնութեան պէս. և
իրանց չարութիւնովը կ'ջնջէ նո-
րանց. մեր Տէր Աստուածը կը
ջնջէ նորանց։

ՍԱՂՄ. Ղ

1 Եկէք ցնծանք Տէրովը. ազաղա-
կենք դէպի մեր փրկութեան վէ-
մը։
2 Թող գոհութիւն տալով կա-
նուխ գանք նորա երեսի առջևը։
սաղմոսներով աղաղակենք դէպի
նա։
3 Քանզի Տէրը մեծ Աստուած է,
և մեծ թագաւոր ամեն աստ-
ուածների վերայ։
4 Որ նորա ձեռքին են երկրի
խորքերը. և լեառների բարձրու-
թիւնները նորանն են։
5 Որ նորանն է ծովը, և նա ա-
րաւ նորան. և նորա ձեռքերն
ստեղծեցին ցամաքը։

Եկէք երկրպագութիւն անենք 6
և երեսի վերայ ընկնենք. ծունր
դնենք մեզ ստեղծող Տիրոջ առ-
ջև։
Քանզի նա է մեր Աստուածը, 7
և մենք նորա արօտի ժողովուր-
դը և նորա ձեռքի ոչխարներն
ենք. այսօր եթէ նորա ձայնը լը-
սէք։
Մի պնդացնէք ձեր սրտերը 8
ինչպէս Մերիբայումը, ինչպէս
փորձութեան օրումը անապատի
մէջ։
Որ երբ ձեր հարքը փորձեցին 9
ինձ. քննեցին ինձ թէև իմ գործ-
քերը տեսան։
Քառասուն տարի զզուեցայ 10
այն ազգիցը. և ասացի նորանք
այնպիսի ժողովուրդ են որ մո-
լորուած են սրտով. նորանք չեն
ճանաչում իմ ճանապարհները։
Որ երդուեմ արի իմ բարկու- 11
թիւնումը, թէ նորանք չեն մըտ-
նել իմ հանգստութիւնը։

ՍԱՂՄ. ՂԶ

Երգեցէք Տիրոջը նոր երգ. եր- 1
գեցէք Տիրոջը ամեն երկիր։
Երգեցէք Տիրոջը. օրհնեցէք 2
նորա անունը. քարոզեցէք օրէ
օր նորա փրկութիւնը։
Պատմեցէք հեթանոսների մէջ 3
նորա փառքը, ամեն ազգերի
մէջ նորա հրաշքները։
Քանզի Տէրը մեծ է և շատ 4
օրհնուած. սոսկալի է նա ամեն
աստուածների վերայ։
Մինչև որ ազգերի բոլոր աստ- 5
ուածները կուռքեր են, բայց
Տէրն արաւ երկինքը։
Փառք և մեծութիւն կ'եայ նորա 6
առջև. զօրութիւն և գեղեցկու-
թիւն նորա սրբութեան մէջ։
Տուէք Տիրոջը, ով ազգերի 7
ցեղեր, տուէք Տիրոջը փառք և
զօրութիւն։
Տուէք Տիրոջը նորա անունի 8
փառքը. ընծայ բերէք, և մտէք
նորա սրահները։
Երկրպագութիւն արէք Տիրոջը 9
սուրբ զարդարանքով. վախեցէք
նորա երեսից, ով ամեն երկիր։

10 Ասացէք հեթանոսաներուն մէջ՝ Տէրն է թագաւոր. ասոր համար աշխարհքը հաստատած է, չէ շարժուելու. նա ժողովուրդները կ'դատէ ուղղութիւնով։
11 Երկինքը թող ուրախ լինի և երկիրը ցնծայ. ծովը գոռգոռայ իր լիութիւնովը։
12 Դաշտն ուրախանայ և ամէն որ նորանում է՝. թող ցնծան անտառի ամէն ծառերը.
13 Տիրոջը առջև. ինչու որ նա գալիս է՝ գալիս է որ երկիրը դատէ. նա աշխարհքը կ'դատէ արդարութիւնով, և իր ժողովուրդներին իր ճշմարտութիւնովը։

ՍԱՂՄ. ՂԵ

1 Տէրն է թագաւոր թող երկիրը ցնծայ և շատ կղզիները ուրախ լինին։
2 Ամպ և մառախուղ է՝ նորա չորս կողմովը. արդարութիւն և իրաւունք նորա աթոռի հիմունքն են։
3 Կրակ է գնում նորա առջևից. և չորս կողմովը այրում է նորա թշնամիներին։
4 Նորա փայլակները լուսաւորում են աշխարհքը. երկիրը տեսնում է և դողում։
5 Լեռները մոմի պէս հալվում են Տիրոջ երեսից, ամեն երկիր՝ Տիրոջ երեսից։
6 Երկինքը պատմում են նորա արդարութիւնը. և ամեն ժողովուրդները տեսանում են նորա փառքը։
7 Թող ամաչեն բոլոր կուռքերի ծառայողները, որ պարծենում են փուչ կուռքերով. ամեն աստուածներ նորան երկրպագութիւն անեն։
8 Սիոնը լսում է և ուրախանում է և Յուդայի ազգիկները ցնծում են, քո իրաւունքի համար, Տէր։
9 Քանզի դու, ով Տէր, բարձրեալ ես բոլոր երկրի վերայ, շատ բարձրացար բոլոր աստուածների վերայ։
10 Ով Տիրոջը սիրողներ, ատեցէք չարը. նա պահում է իր սրբոց անձերը. ամբարիշտների ձեռքից կ'փրկէ նորանց։
11 Լոյս է ծագում արդարին, և ուրախութիւն՝ սրտով ուղիղներին։
12 Ուրախացէք Տիրոջմով, ով արդարք, և օրհնեցէք նորա սուրբ յիշատակը։

ՍԱՂՄ. ՂԶ

Սաղմոս։

1 Օրհնեցէք Տիրոջը նոր օրհնութիւնով. քանզի որ նա հրաշքներ արաւ. փրկից նորան նորա աջ ձեռքը և նորա սուրբ բազուկը։
2 Տէրը ճանաչեցրեց իր փրկութիւնը. և ազգերի աչաց առջև յայտնեց իր արդարութիւնը։
3 Նա յիշեց իր ողորմութիւնը և իր ճշմարտութիւնը Իսրայէլի տան վերայ. երկրի ամեն ծայրերը տեսան մեր Աստուծոյ փրկութիւնը։
4 Ցնծացէք Տիրոջ առջև, ով ամեն երկիր. օրհնեցէք, և երգեցէք, և սաղմոս ասացէք։
5 Սաղմոս ասացէք Տիրոջը քնարով. քնարով և սաղմոսների ձայնով։
6 փողով և շեփորի ձայնով ցնծացէք Եհովայ թագաւորի առջև։
7 Թող գոռայ ծովը և նորա լիութիւնը. աշխարհքը և նորանում բնակուողները։
8 Գետերը ծափ տան ձեռքով. լեռները միասին ցնծան,
9 Տիրոջ առջև. քանզի որ նա գալիս է երկիրը դատելու, նա կ'դատէ աշխարհքը արդարութիւնով և ժողովուրդներին ուղղութիւնով։

ՍԱՂՄ. ՂԹ

1 Տէրն է թագաւոր. ժողովուրդները թող շփոթուին. նա նստում է քերովբէից վերայ՝ թող երկիրը շարժուի։
2 Տէրը մեծ է Սիոնում. և նա բարձր է ամեն ժողովուրդների վերայ։

3 Թող օրհնեն քո մեծ և սոսկալի անունը. ինչու որ սուրբ է։
4 Եւ թագաւորի զօրութիւնը իրաւունք է սիրում. դու հաստատեցիր ուղիղ կարգը. իրաւունք և արդարութիւն դու արիր Յակոբի մէջ։
5 Բարձր արէք մեր Տէր Աստուծոյն. և երկրպագութիւն արէք նորա ոտից պատուանդանի առջև. նա սուրբ է։
6 Մովսէսը և Ահարոնը նորա քահանաների մէջ, և Սամուէլը նորա անունը կանչողների մէջ, դէպի Տէրը կանչեցին և նա լսեց նորանց։
7 Ամպի սիւնուամբ խօսում էր նորանց հետ. նորանք պահում էին նորա վկայութիւնները և օրէնքը՝ որ տուաւ նորանց։
8 Ով Տէր՝ մեր Աստուածը, դու որ լսում էիր նորանց. դու նորանց համար ներող Աստուած էիր, և վրէժ խնդրող նորանց գործքերի համար։
9 Բարձր արէք մեր Տէր Աստուածոյն և երկրպագութիւն արէք դէպի նորա սուրբ լեառը, ինչու որ մեր Տէր Աստուածը սուրբ է։

ՍԱՂՄ. Ճ

Գոհութեան համար Սաղմոս։

1 Աղաղակեցէք դէպի Տէրը, ով ամեն երկիր։
2 Ծառայեցէք Տիրոջը ուրախութիւնով. եկէք նորա երեսաց առջևը ցնծութիւնով։
3 Ճանաչեցէք որ Տէրն է Աստուած. նա արաւ մեզ, և ոչ թէ մենք, որ նորա ժողովուրդն և նորա արօտի ոչխարներն ենք։
4 Մտէք նորա դռները գոհութիւնով, նորա սրահները փառաբանութիւնով. գոհացէք նորանից և օրհնեցէք նորա անունը։
5 Քանզի Տէրը բարի է և նորա ողորմութիւնը յաւիտեան. և նորա ճշմարտութիւնը ազգից մինչև ազգ։

ՍԱՂՄ. Ճ

Դաւիթ Սաղմոս։

1 Ողորմութիւն և իրաւունք կ'երգեմ. քեզ, ով Տէր, սաղմոս կ'ասեմ։
2 Իմաստութիւնով կ'գնամ ուղեն ճանապարհում. ե՞րբ կ'գաս ինձ մօտ. իմ սրտի անմեղութիւնովը կ'գնամ իմ տան մէջ։
3 Իմ աչաց առջև Բելիարի բանները չեմ դնիլ. անօրէնութիւն գործողին ատում եմ. նա ինձ չմօտենայ։
4 Ծուռ սիրտը պէտք է հեռանայ ինձանից. չարին չեմ ճանաչիլ։
5 Նա որ ծածուկ բամբասում է իր ընկերի դէմ, նորան կ'ջնջեմ. նա որ ամբարտաւան է աչքերով և հպարտ սրտով, նորան չեմ կարող համբերել։
6 Իմ աչքերը երկրի հաւատարիմների վերայ է, որ ինձ հետ բնակուին. անմեղ ճանապարհ գնացողը կ'ծառայէ ինձ։
7 Ընդունելութիւն անողը չի բնակվիլ իմ տան մէջ. նա որ սուտ է խօսում՝ հաստատ չի ճնալ իմ աչաց առջև։
8 Առաւօտանց կ'ջնջեմ երկրի ամեն ամբարիշտներին, որ Տիրոջ քաղաքից ստամակեցնեմ բոլոր անօրէնութիւն գործողներին։

ՍԱՂՄ. ՃԲ

Աղքատի ազօթքը, երբոր մաշվում և Տիրոջ առջև իր ցաւը թափում է։

1 Ով Տէր, լսիր իմ ազօթքին, և իմ աղաղակը քեզ մօտ գայ։
2 Մի թագցներ երեսդ ինձանից իմ նեղութեան օրը խոնարհեցրու ականջդ ինձ մօտ. այն օրն որ կանչեմ՝ շուտով պատասխան տուր ինձ։
3 Քանզի իմ օրերը ծխի պէս վերջացան և իմ ոսկերքը չոր խոռիի պէս այրուեցան։
4 Սիրտս կտրուեցաւ և ցամաքեցաւ խոտի նման. որ հաց ուտելս էլ մոռացայ։

5 Հառաչանքիս ձայնիցը ոսկորս իմ մնրմնջյա կպաւ։
6 Ես նմանեցայ անապատի հաւալուսին, աւերակների բուին պէս եղայ։
7 Անքուն մնացի և նմանեցայ կտուրի վերայ մինակ ծառի։
8 Ամեն օր նախատում են ինձ իմ թշնամիքը, ինձ դէմ կատաղածները երդում են անում ինձանով։
9 Հանգի մոխիրը ուտում եմ հացի պէս ու խմելիքս արտասուքի հետ եմ խառնում։
10 Ի բարկութեան և սրտմտութեան համար, որ դու ինձ վեր կալար և դէն գցեցիր։
11 Իմ օրերը երկարացած շուքի պէս են, և ես խոտի պէս չորացայ։
12 Բայց դու, Տէր, յաւիտեան կաս, և քո յիշատակը ազգից մինչև ազգ։
13 Դու վեր կ'կենաս, Սիոնին կ'ողորմիս. քանի ժամանակ է նորան ողորմելու. քանի ժամանակը հասաւ։
14 Հանգի հաւանեցան քո ծառաները նորա քարերին, և նորա փոշոյն խեղճ են գալիս։
15 Ապա հեթանոսները կ'վախենան Տիրոջ անունիցը, և երկրի բոլոր թագաւորները քո փառքիցը։
16 Հանգի Տէրը շինեց Սիոնը, երևեցաւ իր փառքով։
17 Մտիկ է տալիս խեղճերի աղօթքին, և չէ անարգում նորանց աղօթքը։
18 Այս պիտի գրուի միւս ազգի համար. և ստեղծուելու ժողովուրդը Տիրոջը կ'գովէ։
19 Հանգի նա իր սրբութեան բարձրութիւնից մտիկ է տալիս. Տէրը երկնքիցը նայում է երկրի վերայ։
20 Որ լսէ կապեալի հառաչանքը, և արձակէ մնհի որդոցը։
21 Որ պատմեն Սիոնում Տիրոջ անունը, և նորա գովաբանքը Երուսաղէմում։
22 Երբոր ժկտեղ կ'ժողովուին ժողովուրդները և թագաւորութիւնները Տիրոջը ծառայելու համար։
23 Նա թուլացրեց ճանապարհումը իմ զօրութիւնը. և կարճացրեց իմ օրերը։
24 Ես ասացի. Ով Աստուած իմ, վեր մի առներ ինձ իմ օրերի կէսումը. քո տարիքը ազգից մինչև ազգ են։
25 Առաջուց երկրի հիմունքը հաստատեցիր, և քո ձեռաց գործն է երկինքը։
26 Նորանք կ'կորչին, բայց դու կ'մնաս. և նորանք ամենը շորի պէս կ'մաշուին. հագուստի պէս կ'փոխես նորանց, և կ'փոխուին.
27 Բայց դու նոյնն ես, և քո տարիքը չեն վերջանալ։
28 Քո ծառաների որդիքը կ'բնակուին. և նորանց սերունդը հաստատ կ'մնայ քո առջև։

ՍԱՂՄ. ՃԳ

Դաւթի Սաղմոս։

1 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և բոլոր իմ ներքը, նորա սուրբ անունը։
2 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, և մի մոռանար նորա բոլոր բարիքները։
3 Որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո ամեն ցաւերը։
4 Որ փրկում է քո կեանքն ապականութիւնից, պսակում է քեզ շնորհքով և ողորմութիւնով։
5 Որ կշտացնում է քո սիրտը բարութիւնով. և նորոգվում է արծուի պէս քո մանկութիւնը։
6 Արդարութիւն է անում Տէրը, և իրաւունք բոլոր զրկեալներին։
7 Նա իմաց արաւ իր ճանապարհները Մովսէսին, Իսրայէլի որդոցն իր գործքերը։
8 Բարեգութ և ողորմած է Տէրը. երկայնամիտ և բազմագութ։
9 Նա խպտա չի բարկանալ, և ոխ չի պահել յաւիտեան։
10 Նա չէ անում մեզ մեր մեղքերի պէս. և չէ հատուցանում մեզ մեր անօրէնութիւնների պէս։

11 Ամէն որքան որ բարձր է երկինքը երկրիս վերայ, այնքան մեծ է նորա գութը իրանից վախեցողների վերայ։
12 Որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան հեռացրեց մեզանից մեր յանցանքները։
13 Ինչպես որ հայրը կ'գթայ որդոց, այնպես գթած է Տէրը իրանից վախեցողներին։
14 Քանզի նա գիտէ մեր կազմուածքը. յիշում է որ հող ենք մենք։
15 Մարդուս օրերը խոտի նման են. ինչպես դաշտի ծաղիկը՝ այնպես ծաղկում է։
16 Երբոր քամին անցնում է նորա վերայ, նա էլ չկայ. և նորա տեղը այլևս չէ ճանաչում նորան։
17 Բայց Տիրոջ ողորմութիւնը յաւիտենից մինչև յաւիտեան իրանից վախեցողների վերայ է, և նորա արդարութիւնը որդոց որդիքների,
18 Նորա ուխտը պահողների, և նորանց վերայ որ յիշում են նորա պատուիրանքները նորանց կատարելու համար։
19 Տէրը երկնքումը հաստատեց իր աթոռը, և նորա թագաւորութիւնը տիրում է բոլորին։
20 Օրհնեցէք Տիրոջը, ով նորա հրեշտակներ՝ հզոր զօրութեամբ, որ կատարում էք նորա խօսքը. նորա խօսքի ձայնին լսելով։
21 Օրհնեցէք Տիրոջը, ով նորա բոլոր զօրքեր՝ նորա պաշտօնեաներ, որ կատարում էք նորա կամքը։
22 Օրհնեցէք Տիրոջը, ով նորա բոլոր արարածներ, նորա տէրութեան ամեն տեղերումը. օրհնիր Տիրոջը, ով իմ անձը։

ՍԱՂՄ. ՃԴ

1 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը. ով Տէր՝ իմ Աստուած, դու շատ մեծ ես. գեղեցկութիւն և փառք հագած ես։
2 Լոյս ես հագնում ինչպես հանդերձ. երկինքը տարածում ես ինչպես վարագոյր։
3 Նա իր վերնատների վերայ ծածք է շինում, ամպերը շինում է իրան կառք. քամու թևերի վերայ է գնում։
4 Իր հրեշտակները քամիներ է շինում, իր պաշտօնեաները բոց կրակ։
5 Նա հաստատեց երկիրն իր հիմունքի վերայ, որ տեղից չշարժուի բնաւ և յաւիտեան։
6 Անդունդովը ծածկեցիր նորան ինչպես հանդերձով. ջուրերը լեառների վերայ կանգնում են։
7 Քո սաստելուցը փախչում են, քո որոտմունքի ձայնից սարսափելով յետ են գնում։
8 Լեառները բարձրանում են, ձորերը իջնում՝ այնտեղ ուր որ հաստատեցիր նորանց համար։
9 Դու սահման դրիր, նորանով չեն անց կենալ. յետ չեն դառնալ, որ երկիրը ծածկեն։
10 Դու աղբիւրներ ես բղխեցնում ձորերում. լեառների միջովը գնում են։
11 Խմեցնում են բոլոր վայրի գազաններին, և վայրի էշերը կոտրում են իրանց ծարաւը։
12 Նորանց վերայ երկնքի թռչուններն են բնակվում. ճիւղերի միջից ձայն են տալիս։
13 Նա խմեցնում է լեառներին իր վերնատներից. քո գործքերի պտուղներովը կշտացնում ես երկիրը։
14 Խոտ է բուսցնում անասունների համար. և բանջար մարդու օգտի համար, որ հաց հանես երկրից։
15 Եւ գինի, որ ուրախացնում է մարդու սիրտը. նորա երեսը փայլեցնում է իւղից. և հացը հաստատում է մարդու սիրտը։
16 Կշտանում են Տիրոջ ծառերը՝ Լիբանանի մայրերը, որ նա տնկեց։
17 Որ այնտեղ թռչունները բոյն են դնում, և արագիլը եղևիններն վերայ չինում է իր տունը։
18 Բայց լեառները վայրի այծերի համար ապաւէն են, և վէմերը ճագարների։
19 Շինեց լուսինը ժամանակների

Համար, արեգակը ճանաչում է
իր մուտքը։
20 Խաւար ես դնում՝ և գիշեր է
լինում. նորանում մեն են գա-
լիս անտառի ամեն գազաններըը։
21 Առիւծների կորիւնները մռըն-
չում են յափշտակելու, և Աստ-
ուածանից խնդրում են իրանց
կերակուրը։
22 Երբոր արեգակը դուրս է գա-
լիս՝ յետ են քաշվում, և իրանց
որջերումը պառկում։
23 Մարդը դուրս է գնում իր գոր-
ծին և իր ծառայութեանը մինչև
իրիկուն։
24 Ո՜րքան մեծ են քո գործքերը,
ով Տէր. նորանց բոլորն իմաս-
տութիւնով ես արել. երկիրը
լիքն է քո ստեղծուածներովը։
25 Ա՛յս մեծ և լայն ծովն է. այն-
տեղ սողացողները անթիւ են,
փոքր կենդանիներ մեծերի հետ։
26 Անտեղ նաւերը մեն են գա-
լիս. այդ Լևիաթանը դու ստեղ-
ծեցիր, որ խաղայ նորանում։
27 Սրանք ամենքը քեզ են սպա-
սում, որ նորանց կերակուր տաս
իրանց ժամանակին։
28 Դու տալիս ես նորանց, և նո-
րանք հաւաքում են. դու բաց
ես անում քո ձեռքը և կշտանա-
ում են բարիքով։
29 Երբոր ծածկում ես քո երեսը՝
սարսափում են. երբոր վեր ես
առնում նորանց հոգին՝ մեռնում
են, և իրանց հողին են դառնա-
ում։
30 Հոգիդ ուղարկում ես՝ ստեղծ-
վում են. և նորոգում ես երկրի
երեսը։
31 Տէրոջ փառքը յաւիտեան լի-
նի. Տէրն ուրախ լինի իր գործ-
քերովը։
32 Նա նայում է երկրի վերայ,
և սա դողում է. մօտենում է
լեռներին, և ծխում են։
33 Կ՛օրհնեմ Տէրոջն իմ կեան-
քումը. սաղմոս կ՛ասեմ իմ Աս-
տուծոյն քանի որ կամ։
34 Քաղցր պիտի լինի իմ մտա-
ծութիւնը նորա վերայ. ես ու-
րախ կ՛լինիմ Տէրոջմով։
35 Մեղաւորները կ՛պակասին եր-
կրիբը, և ամբարիշտներն էլ չեն
լինիլ. օրհնիր Տէրոջը, ով իմ
անձը։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԵ

1 Գոհացէք Տէրոջը, կանչեցէք
նորա անունը. պատմեցէք ազգե-
րի մէջ նորա գործքերը։
2 Օրհնեցէք նորան. սաղմոս ա-
սացէք նորան. խօսեցէք նորա
ամեն հրաշքները։
3 Պարծեցէք նորա սուրբ անու-
նովը. ուրախ լինի Տէրը խնդրող-
ների սիրտը։
4 Խնդրեցէք Տէրոջը և նորա զո-
րութիւնը. խնդրեցէք նորա ե-
րեսը ամեն ժամանակ։
5 Յիշեցէք նորա հրաշքները որ
արաւ. նորա նշանները և նորա
բերանի իրաւունքը։
6 Ով նորա Աբրահամ ծառայի
զաւակներ, նորա ընտրեալ Յա-
կոբի որդիք.
7 Ինքը Եհովան է մեր Աստուա-
ծը. նորա իրաւունքները ամեն
երկրի մէջ կան։
8 Նա յիշում է յաւիտեան իր
ուխտը. այն խօսքը որ պատուի-
րեց մինչև հազար ազգ.
9 Այն որ Աբրահամի հետ դրաւ,
և իր երդումը Իսահակի հետ։
10 Եւ հաստատեց որ Յակոբի հա-
մար օրէնք և Իսրայէլի համար
յաւիտենական ուխտ լինի.
11 Ասելով. Քեզ կ՛տամ Քանա-
նու երկիրը, որ ձեզ ժառանգու-
թեան երկիր լինի.
12 Երբ նորանք սակաւաթիւ էին,
քիչ և պանդուխտ նորանում.
13 Եւ ազգից ազգ էին գնում,
թագաւորութիւնից ուրիշ ժողո-
վրդի մէջ։
14 Նա թոյլ չտուաւ մարդկանց
որ նեղացնեն նորանց. և թագա-
ւորներ պատժեց նորանց համար.
15 Մի մօտենաք իմ օծեալներին,
և իմ մարգարէներին չար մի ա-
նէք։
16 Եւ սով կանչեց երկրի վերայ,
և հացի ամեն զօրութիւնը կոտ-
րեց։
17 Նորանց առջևից մարդ ուղար-

կեց. Յովսէփը ծառայութեան
մէջ ծախուեցաւ։
18 Զարչարեցին նորա ոտները կա-
պանքի մէջ. նորա անձը երկաթի
մէջ մտաւ։
19 Մինչև այն ժամանակ որ նորա
խօսքը եկաւ. Տիրոջ խօսքը փոր-
ձեց նորան։
20 Թագաւորն ուղարկեց և ար-
ձակեց նորան. նա տիրապետող
էր ժողովուրդներին. ազատեց նո-
րան։
21 Նա Տէր դրաւ նորան իր տան
վերայ, և իշխան իր ամեն ստաց-
ուածքի վերայ.
22 Որ իշխաններին կապէ իր կամքի
պէս, և ծերերին իմաստուն անէ։
23 Եւ Իսրայէլն եկաւ Եգիպտոս.
և Յակոբ պանդուխտ եղաւ Քա-
մի երկրումը։
24 Եւ նա խիստ շատացրեց իր ժո-
ղովուրդը, և նորան զօրեզացրեց
իր թշնամիներից։
25 Փոխեց նորանց սրտերը, որ ա-
տեն իր ժողովուրդը, որ նենգու-
թիւն անեն իր ծառաների դէմ։
26 Իր ծառայ Մովսէսին ուղար-
կեց, Ահարոնին՝ որ ընտրել էր։
27 Նորանք ցոյց տուին նորանց
մէջ նորա նշանների գործքերը,
և հրաշքներ Քամի երկրումը։
28 Խաւար ուղարկեց և խաւարեց-
րեց, և նորա խօսքին չհակառա-
կեցան։
29 Նորանց ջուրերը փոխեց արիւն,
և նորանց ձկները սպանեց։
30 Նորանց երկիրը գորտեր գուրս
տուաւ, թագաւորի ներսի սեն-
եակներումն էլ։
31 Ասաց՝ և շանաճանճը եկաւ.
միջեղներն էլ նորանց բոլոր սահ-
մանների մէջ։
32 Անձրևի տեղ կարկուտ տուաւ
նորանց՝ և կրակի բոց նորանց
երկրումը։
33 Նորանց որթերն ու թզենիները
զարկեց, և նորանց սահմանների
ծառերը փշրեց։
34 Ասաց՝ և մարախն ու թրթու-
րը եկաւ, որ թիւ չկար.
35 Որ կերաւ բոլոր խոտը նորանց
երկրումը. և նորանց արտերի պը-
տուղը կերաւ։
Եւ զարկեց նորանց երկրումը 36
ամեն անդրանիկները, նորանց զօ-
րութեան ամեն առջիններըը։
Եւ նորանց հանեց արծաթով 37
և ոսկով, և նորանց ցեղերումը
տկար մարդ չկար։
Եգիպտոսն ուրախացաւ նորանց 38
դուրս գալու վերայ, ինչու որ
որոնց սարսափն ընկել էր նո-
րանց վերայ։
Ամպ տարածեց որ Հովանի լի- 39
նի, և կրակ որ գիշերը լոյս տայ։
Խնդրեցին և նա լորամարգիներ 40
բերաւ. և երկնքի հացով կշտաց-
րեց նորանց։
Վէմը պատռեց և ջուրեր 41
բղխեցին. գետեր գնացին անջուր
տեղերումն։
Քանզի նա յիշեց իր սուրբ 42
խօսքը, և իր Աբրահամ ծառա-
յին։
Եւ հանեց իր ժողովուրդը ցըն- 43
ծումով, և իր ընտրեալները ու-
րախութիւնով։
Եւ հեթանոսների երկիրները 44
տուաւ նորանց, և ազգաց վաս-
տակները ժառանգեցին նորանք.
Որ նորա պատուիրանքները պա- 45
հեն և նորա օրէնքները կատա-
րեն։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԲ

Ալէլուիա։ Գոհացէք Տէրից 1
ինչու որ բարի է. ինչու որ նո-
րա ողորմութիւնը յաւիտեան է։
Ո՞վ կ'պատմէ Տիրոջ զօրու- 2
թիւնը. ո՞վ կ'լսցնէ նորա բո-
լոր գովասանքը։
Երանի իրաւունք պահողներին 3
և ամեն ժամանակ արդարութիւն
անողներին։
Յիշիր ինձ Տէր, քո ժողովրդի 4
վերայ ունեցած հաճութեանդ պէս,
այցելութիւն արա ինձ քո փրկու-
թիւնովը։
Որ տեսանեմ քո ընտրեալների 5
յաջողութիւնը. ուրախանամ քո
ազգի ուրախութիւնովը. պարծե-
նամ քո ժառանգութիւնովը։
Մեք մեղանչեցինք մեր հարանց
հետ. անօրէնութիւն արինք և
ամբարշտութիւն գործեցինք։

7 Մեր հարքը եգիպտոսումը չը
հաւակացան քո հրաշքներըը. չհի-
շեցին քո մեծ ողորմութիւնը և
հակառակ կացան ծովի մօտ՝ կար-
միր ծովի մօտ։
8 Բայց նա փրկեց նորանց իր ան-
ուան համար, որ հաւակացնէ իր
զօրութիւնը։
9 Եւ կարմիր ծովին սաստեց՝ և
նա ցամաքեց, և նորանց գնալ
տուաւ անդունդի միջովը ինչպէս
անապատումը։
10 Եւ նորանց փրկեց ատելոյն
ձեռքիցը. և նորանց ազատեց
թշնամւոյ ձեռքիցը։
11 Եւ ջուրերը ծածկեցին նորան
նեղացնողներին, որ նորանցից
մէկն էլ չմնաց։
12 Եւ հաւատացին նորա խօսքե-
րին, օրհնեցին նորա օրհնութիւ-
նը։
13 Բայց շուտով մոռացան նորա
գործքերը, և չսպասեցին նորա
խորհուրդներին։
14 Եւ ցանկացան ցանկութիւնով
անապատումը, և փորձեցին Աս-
տուծոյն անջուր տեղումը։
15 Եւ նորանց տուաւ իրանց ու-
զածը. և ուղարկեց վտանգու-
թիւն նորանց անձներին։
16 Եւ նախանձուեցան Մովսէսի
դէմ բանակումը, և Տիրոջ սուր-
բը Ահարոնի դէմ։
17 Երկիրը բացուաւ և կուլ տը-
ուաւ Դաթանին. և ծածկեց Ա-
բիրոնի ժողովքին։
18 Կրակ բորբոքուեցաւ նորանց
ժողովքումը. բոց մուշկ ամբա-
րիշտներին։
19 Հորէբ շինեցին Քորեքումը և
երկրպագութիւն տուին ձուլածոյ
պատկերին։
20 Եւ իրանց փառքը փոխեցին
խոտածարակ հորթի նմանու-
թեան։
21 Մոռացան իրանց փրկիչ Աս-
տուծոյն, որ մեծամեծ գործքեր
արաւ Եգիպտոսումը։
22 Հրաշքները Քամի երկրումը,
սոսուր բաները կարմիր ծովի
վերայ։
23 Եւ ասաց որ ոչնչացնէ նո-
րանց, եթէ նորա ընտրեալ Մով-
սէսը կանգնած չլինէր *ամբառը
նորա առջև, որ յետ դարձնէ
նորա բարկութիւնը ոչնչացնե-
լուց։
24 Եւ անարգեցին այն ցանկալի
երկիրը. չհաւատացին նորա խօս-
քին։
25 Տրտնջեցին իրանց վրաններու-
մը, Տիրոջ ձայնին չլսեցին։
26 Եւ նա բարձրացրեց իր ձեռը
նորանց վերայ, որ նորանց վայր
գցէ անապատումը.
27 Եւ նորանց զաւակը հեթանոս-
ների մէջ գցէ, և նորանց ցրվէ
երկիրների մէջ։
28 Բայց նորանք բոհոտ-փէորին
կպան, և մեռելների զոհերը կե-
րան։
29 Եւ բարկացրին Աստուծոյն ի-
րանց գործքերովը, և ժանտամո-
հը հասաւ նորանց վերայ։
30 Ապա փենեհէս վեր կացաւ և
քաւեց, և մահն արգիլուեցաւ։
31 Եւ սա համարուեցաւ նորան
արդարութիւն ազգից մինչև ազգ
յաւիտեան։
32 Եւ բարկացրին նորան Մերի-
պայի ջրերի վերայ, և Մովսէսին
չար եղաւ նորանց պատճառովը։
33 Քանզի դառնացրին նորա հո-
գին, և նա մեղանչեց իր շըր-
թունքներովը։
34 Նորանք չկորցրին այն ազգերը,
որ Տէրն ասաց նորանց.
35 Այլ խառնուեցան հեթանոս-
ների հետ և սովորեցին նորանց
գործքերը։
36 Եւ ծառայեցին նորանց կռպե-
րին. նորանք էլ որոգայթ եղան
նորանց համար։
37 Եւ մատաղ արին իրանց որ-
դիքը և իրանց աղջիկները դևե-
րին։
38 Եւ անմեղ արիւն թափեցին
իրանց որդոց և իրանց աղջկանց
արիւնը, որ նորանց մատաղ ա-
րին քանանու կռպերին. և երկի-
րը պղծուեցաւ արիւնով։
39 Եւ նորանք պղծուեցան իրանց
գործքերովը, և պոռնկութիւն
արին իրանց արարմունքներովը։

---

*պատառուածքումը

40 Եւ Տէրոջ բարկութիւնը բորբոքեցաւ իր ժողովրդի վերայ, և նա զզուեցաւ իր ժառանգութիւնից:
41 Եւ նորանց մատնեց հեթանոսների ձեռքը. և նորանց ատողները տիրապետեցին նորանց վերայ:
42 Եւ նորանց թշնամիքը նեղացրին նորանց, և խոնարհուեցան նորանց ձեռքի տակ:
43 Շատ անգամ փրկեց նորանց, բայց նորանք դառնացրին նորան իրանց խորհուրդներով, և փչացան իրանց անօրէնութեանց համար:
44 Եւ նա նայեց նորանց նեղութեանը, երբոր նորանց ազաղակը լսեց:
45 Եւ իր ուխտը յիշեց նորանց համար, և զղջացաւ իր մեծ ողորմութեան պէս:
46 Եւ նորանց ողորմութիւն գրաւնել տուաւ այն ամենի առջև, որ գերի արին նորանց:
47 Փրկիր մեզ, ով Տէր՝ մեր Աստուած, և ժողովիր մեզ հեթանոսների միջից, որ գոհանանք քո սուրբ անունիցը և օրհնութիւնով պարծենանք:
48 Օրհնեալ է Եհովան՝ Իսրայէլի Աստուածը յաւիտենից մինչև յաւիտեան. և բոլոր ժողովուրդը ասէ. Ամէն: Ալէլուիա:

ՍԱՂՄ. ՃԵ

1 Գոհացէք Տէրիցը. ինչու որ բարի է. ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը:
2 Ասեն Տիրոջ փրկուածները, որ նորանց փրկեց թշնամու ձեռքիցը:
3 Ու նորանց ժողովեց երկիրներիցը՝ արևելքից և արևմուտքից, հիւսիսից և ծովից.
4 Ու նորանք մոլորուած էին անապատումը՝ անջուր ճանապարհումը, բնակութեան քաղաք չգտան.
5 Սոված և ծարաւ էին, և անձները թուլացան իրանցում.
6 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց նեղութիւնումը, և նա փրկեց նորանց իրանց վշտերիցը.
7 Եւ առաջնորդեց նորանց ուղիղ ճանապարհով որ գնան բնակութեան քաղաք:
8 Թող գոհանան Տէրիցը նորա ողորմութեան համար, և նորա հրաշքների համար՝ որ որմարդկանց որդոց.
9 Զի նա կշտացնում է կարօտած անձը, և յագնում է սոված անձը բարութիւնով:
10 Նորանք որ խաւարի և մահուան շուքումը նստում էին նեղութիւնով և երկաթով կապուած.
11 Որովհետև Աստուծոյ խօսքերին հակառակ կացան. և Բարձրեալին խորհուրդներն անարգեցին.
12 Եւ նա նորանց սիրտը խոնարհեցրեց նեղութիւնով, որ տկարացան և ոչ ով չկար որ օգնէր.
13 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց նեղութիւնումը, և նորանց փրկեց իրանց վշտերիցը.
14 Նորանց հանեց խաւարիցը և մահուան շուքիցը և նորանց կապանքները կտրատեց.
15 Թող գոհանան Տէրիցը նորա ողորմութեան համար, և նորա հրաշքների համար՝ որ որմարդկանց որդոց.
16 Զի նա պղնձէ դռները փշրեց և երկաթէ նգերը կտրատեց.
17 Յիմարները իրանց անօրէնութեան ճանապարհի համար, և իրանց անիրաւութեանց համար նեղութիւն քաշեցին.
18 Նորանց անձները ամեն կերակրից զզուեցան, և մինչև մահի դռները մօտեցան.
19 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց նեղութիւնումը, և նորանց փրկեց իրանց վշտերիցը.
20 Իր խօսքն ուղարկեց և նորանց բժշկեց, և նորանց ազատեց իրանց կորուստիցը.
21 Թող գոհանան Տէրիցը նորա ողորմութեան համար և նորա հրաշքների համար՝ որ որմարդկանց որդոց.
22 Եւ գոհութեան պատարագներ մատուցանեն, և նորա գործքերը պատմեն ցնծութիւնով:

23 Նորանք որ ծոմէն են իջնուած նաւերով, և գործ կատարուած շատ ջրերուն.
24 Նորանք տեսան Տիրոջ գործքերը և նորա հրաշքները անդունդին։
25 Նա ասաց՝ և մրրիկ քամի վեր կացաւ. նորա ալիքները բարձրացրեց.
26 Վեր ելան երկինքը, վայր եկան անդունդը. և նորանց անձերը մաշուեցան նեղութիւնով.
27 Շփոթուեցան և տատանուեցան ինչպէս արբած մարդ. և նորանց ամեն իմաստութիւնը կորաւ։
28 Եւ դէպի Տէրն աղաղակեցին իրանց նեղութիւնուն, և նորանց փրկեց իրանց վշտերիցը.
29 Մրրիկ քամուն դարձրեց հանդարտութեան. և նորա ալիքները հանգատացան.
30 Եւ նորանք ուրախացան որ դադարեցին. և նա առաջնորդեց նորանց դէպի նաւահանգիստ որ ցանկանում էին նորան.
31 Թող գոհանան Տէրիցը նորա ողորմութեան համար, և նորա հրաշքների համար՝ որ որոմարդկանց որդոց.
32 Եւ բարձր անեն նորան ժողովրդի ժողովքուն, և ծերերի առեանուն օրհնեն նորան։
33 Նա գետերն անապատ է դարձնում և ջրերի գնացքները ծարաւ երկիր.
34 Պտղաբեր երկիրն աղի հող՝ նորա մէջ բնակուողների չարութեան համար։
35 Անապատը ջրերի լիճ է փոխում և ծարաւ երկիրը ջրերի գնացք.
36 Եւ այնտեղ բնակեցնում է սովածներին, և նորանք քաղաք են հաստատում բնակուելու համար։
37 Եւ արտեր են ցանում, և այգիներ հանկում որ արմտեաց պտուղ բերեն։
38 Եւ նա օրհնում է նորանց որ շատ շատանան. և նորանց անասուններն չէ պակասեցնում.
39 Դարձեալ պակասում են և ցածանում չարիքների նեղութիւնից և տրտմութիւնից։
40 Նա անարգանք է թափում իշխանների վերայ և նորանց մոլորեցնում է անճանապարհ անապատում.
41 Բայց բարձրացնում է աղքատին նեղութիւնից, և նորա ցեղը ոչխարների հօտի պէս է շինում։
42 Ուղիղներն այս կ'տեսնեն և ուրախ կ'լինին. և ամեն անօրէնութիւն կ'խփէ իր բերանը։
43 Ո՞վ է իմաստուն որ այս բաները պահէ. և նա կ'հասկանայ Տիրոջ ողորմութիւնները։

ՍԱՂՄ. ՃԸ

Երգ. Դաւթի Սաղմոս

1 Իմ սիրտը զուարճանում է, ով Աստուած, կ'երգեմ և սաղմոս կ'ասեմ, նաև իմ փառքը։
2 Զարթնացիր սաղմոսարան և քնար. և ես զարթնանում առաւօտուն։
3 Կ'գոհանամ քեզանից, Տէր, ժողովուրդների մէջ. և սաղմոս կ'ասեմ քեզ ազգերի մէջ։
4 Քանզի մեծ է քո ողորմութիւնը երկնքի վերայ, և քո ճշմարտութիւնը մինչև ամպերը։
5 Բարձրացիր, ով Աստուած, երկնքի վերայ, և քո փառքը բոլոր երկրի վերայ։
6 Որ քո սիրելիքն ազատուին. թող քո ձէը փրկէ, և պատասխան տուր ինձ։
7 Աստուած խօսեց իր սրբարանումը. ես կ'ցնծամ. Սիւքէմը կը բաժանեմ և Սուքօթ Հովիտը կը չափեմ։
8 Իմն է Գաղաադը և իմն է Մանասէն. Եփրեմն իմ գլխի զօրութիւնը, Յուդան իմ գաւազանն է.
9 Մովաբն իմ լուանալու ամանն է. իմ կօշիկը Եդոմի վերայ կը գցեմ. Փղշտացոց երկրի վերայ կը ցնծամ։
10 Ո՞վ կ'տանի ինձ ամուր քաղաք. ո՞վ կ'առաջնորդէ ինձ մինչև Եդոմ։
11 Ո՞չ ապաքէն դու, ով Աստ-

ուած, որ դէն դցեցիր մեղ, և չես դուրս գալիս մեր զօրքի հետ, ով Աստուած։

12 Տուր մեզ օգնութիւն նեղութեան մէջ. ինչու որ մարդու փրկութիւնը փուչ է։

13 Աստուծով զօրութիւն կ'գործենք. և նա կոխ կ'տայ մեր թշնամիները։

ՍԱՂՄ. ՃԹ

Երգողների գլխաւորին. Դաւթի Սաղմոս

1 Ով իմ փառքի Աստուած, լուռ մի կենար։

2 Վասնզի ամբարշտի բերանը և նենգաւորի բերան բացուեցան ինձ վերայ. խօսում են ինձ դէմ սուտ լեզուով։

3 Եւ ատելութեան խօսքերով պատում են ինձ, և զուր տեղը կռիւում են ինձ դէմ։

4 Իմ սիրոյ փոխարէն հակառակում են ինձ, բայց ես աղօթք եմ անում։

5 Եւ չար են հատուցանում ինձ փոխանակ բարւոյ, և իմ սիրոյ փոխարէն ատելութիւն։

6 Մէկ ամբարիշտ դիր նորա վերայ, և սատանան թող կանգնի նորա աջ կողմին։

7 Երբոր դատուի թող դատապարտուած դուրս գայ, և նորա աղօթքը մեղք դառնայ։

8 Նորա օրերը պակասին. և նորա պաշտօնն ուրիշը առնէ։

9 Նորա որդիքը որբ լինին, և նորա կինն այրի լինի.

10 Եւ նորա որդիքն սատանդական թափառեն և մուրանան, և հոչ ուղին իրանց աւերակ բնակարանների միջից։

11 Փոխ տուողն առնէ նորա բոլոր ունեցածը, և օտարները յափշտակեն նորա վաստակը։

12 Մէկը չլինի որ նորան գթութիւն ցոյց տայ. և մէկն էլ չողորմի նորա որբերի վերայ։

13 Նորա զաւակները սատակին. նորանց անունը ջնջուի երկրորդ սերնդեան մէջ։

14 Նորանց հարանց անօրէնութիւնը պիտի յիշուի Տիրոջ առջև, և նորա մօր մեղքը չջնջուի։

15 Անէն ժամանակ Տիրոջ առջև լինի. և նա ջնջէ երկրիցը նորա յիշատակը։

16 Նորա համար որ չյիշեց ողորմութիւն անելը. այլ խեղճ և աղքատ և արտով մաշուած մարդուն հալածեց որ սպանէ։

17 Անէծք սիրեց, և կ'հասնէ նորան. և օրհնութիւն չկամեցաւ, և հեռու կ'լինի նորանից։

18 Անէծքը հագաւ ինչպէս հանդերձ. և նա ջրի պէս կ'մտնէ նորա փորը, և ձէթի պէս նորա ոսկորների մէջ։

19 Նորան այնպէս լինի ինչպէս իր հագնելիս հանդերձը՝ և ինչպէս իր միշտ կապելիս գօտիկը։

20 Սա վարձք լինի Տիրոջ կողմից իմ հակառակորդներին և իմ անձի համար չար խօսողներին։

21 Բայց դու, Տէր Եհովայ, արա ինձ քո անուանի համեմատ, ինչու որ քո ողորմութիւնը բարի է. փրկիր ինձ։

22 Վասնզի ես խեղճ եմ և աղքատ, և իմ սիրտը խոցուած է իմ ներսումը։

23 Ես անց եմ կենում ինչպէս երկարացած շուք, վայր եմ թափվում ինչպէս մարախ։

24 Իմ ծնկները տկարացան ծոմից և մարմինս մնաց պարապութիւնից։

25 Ես նախատինք եղայ նորանց առջև, ինձ տեսնում և շարժում են իրանց գլուխները։

26 Օգնիր ինձ, Տէր՝ իմ Աստուած. փրկիր ինձ քո ողորմութեան պէս,

27 Որ իմանան որ սա քո ձեռքն է, որ դու Տէրդ արիր այս։

28 Նորանք անիծում են, բայց դու օրհնիր. նորանք վեր են կենում ընդ դէմ ու կ'ամաչեն, բայց քո ծառան ուրախ կ'լինի։

29 Թող ամօթ հագնեն իմ հակառակորդները և իրանց ամօթը վերարկուի պէս իրանց վերայ առնեն։

30 Շատ կ'գոհանամ Տէրից իմ բերանովը. և շատերի մէջ կ'օրհնեմ նորան։

31 Քանզի նա կանդնում է աղքատի աջ կողմին, որ նորան փրկէ նորա անձը դատապարտողներից։

ՍԱՂՄ. ՃԻ

Դաւիթ Սաղմոս

1 Տէրն ասաց իմ Տիրոջն, իմ աջ կողմը նստիր մինչև որ թշնամիները քո ոտից կոխելիք դնեմ։
2 Տէրը քո զօրութեան գաւազանը կ'ուղարկէ Սիոնից. տիրապետիր քո թշնամիների մէջ։
3 Քո ժողովուրդը զօրութեանդ օրը յօժար կամքով պատրաստ կ'լինի՝ սրբութեան զարդարանքով. արշալուսի արգանդից քեզ համար քո մանկունքը ցօղի պէս կ'լինին։
4 Տէրը երդում արաւ և չի զղջանալ. դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս։
5 Տէրը քո աջ կողմն է. նա կը ջարդէ թագաւորներին իր բարկութեան օրում։
6 Նա կ'դատէ հեթանոսների մէջ. կ'լցնէ մեռելներով, գլուխը կը ջարդէ շատ երկիրների մէջ։
7 Գետից կ'խմէ ճանապարհում. սորա համար գլուխը կ'բարձրացնէ։

ՍԱՂՄ. ՃԺԱ

1 Ալէլուիա։ Տէրից կ'գոհանամ բոլոր սրտով ուղիղների ժողովքում ու ժողովրդի մէջ։
2 Մեծ են Տիրոջ գործքերը, ցանկալի են այն ամենին, որ սիրում են նորանից։
3 Փառք և պեղեցկութիւն են նորա գործքերը, և նորա արդարութիւնը մնում է յաւիտեան։
4 Յիշատակ շինեց իր հրաշքների համար, ողորմած և գթած է Տէրը։
5 Կերակուր տուաւ իրանից վախեցողներին. յաւիտեան յիշում է իր ուխտը։
6 Իր գործքերի զօրութիւնը ցոյց տուաւ իր ժողովրդին՝ հեթանոսների ժառանգութիւնը նորանից տալով։
7 Նորա ձեռաց գործքերը ճշմարտութիւն և իրաւունք են. նորա բոլոր պատուիրանքները հաստատուն են։
8 Հաստատուած են յաւիտեան յաւիտենից. և շինուած են ճշմարտութիւնով և ուղղութիւնով։
9 Փրկութիւն ուղարկեց իր ժողովրդին. իր ուխտը պատուիրեց յաւիտեան. սուրբ և սքանչելի է նորա անունը։
10 Իմաստութեան սկիզբն Տիրոջ երկիւղն է. բարի խոհեմութիւն է ամենի համար որ անում են նորան. նորա օրհնութիւնը մնում է յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԺԲ

1 Ալէլուիա։ Երանելի է այն մարդը որ Տէրից վախենում է, և նորա պատուիրանքներին շատ հաւան է կենում։
2 Նորա զաւակը զօրաւոր կ'լինի երկրի վերայ. ուղիղների ցեղը կ'օրհնուի։
3 Ապրանք և հարստութիւն կ'լինի նորա տանը. և նորա արդարութիւնը կ'մնայ յաւիտեան։
4 Խաւարի մէջ լոյս է ծագում ուղիղների համար. ողորմած, գթած և արդար է։
5 Երանելի այն մարդուն որ ողորմած է և փոխ է տալիս, և իր բանը շինում է իրաւունքով.
6 Քանզի նա տեղից յաւիտեան չի շարժուիլ. յաւիտենական յիշատակի համար կ'լինի արդարը։
7 Չար համբաւից չի վախենալ. նորա սիրտը պատրաստ է, որ Տիրոջը յուսայ։
8 Նորա սիրտը հաստատուած է և չի վախենալ, մինչև որ նայի իր նեղիչների վերայ։
9 Նա փռեց և ողբասներին տուաւ. նորա արդարութիւնը կը մնայ յաւիտեան. նորա եղջիւրը կ'բարձրանայ փառքով։
10 Ամբարիշտը կ'տեսանէ և կը բարկանայ. իր առամները կ'կըճ-

ասացնէ և կ'հալուի . ամբարիշտներուն ցանկութիւնը կ'կորչի :

ՍԱՂՄ· ՃԺԹ

1 Ալէլուիա : Օրհնեցէք , ով Տիրոջ ծառաները , օրհնեցէք Տիրոջ անունը :
2 Տիրոջ անունը օրհնեալ լինի այսուհետև մինչև յաւիտեան :
3 Արևելքից մինչև արևմուտքը օրհնեալ լինի Տիրոջ անունը :
4 Տէրը բարձր է ամեն ազգերի վերայ , և նորա փառքը երկնքի վերայ :
5 Ո՞վ է ինչպէս Տէրը մեր Աստուածը , որ բնակուած է 'ի բարձունս :
6 Որ խոնարհվում է տեսնելու երկինքում ու երկրում եղածները :
7 Որ աղքատին փոշուց վեր է կացնում , և խեղճին բարձրացնում է աղբից :
8 Որ նստեցնում է իր իշխանների հետ , իր ժողովրդի իշխանների հետ :
9 Որ ամուլ կնոջ բնակեցնում է տան մէջ , որ որդոց մայր լինի ուրախ : Ալէլուիա :

ՍԱՂՄ· ՃԺԴ

1 Երբոր Իսրայէլը Եգիպտոսից դուրս էր գալիս՝ Յակոբի տունը խուժադուժ ժողովրդի միջից ,
2 Յուդան եղաւ նորա սրբութիւն՝ Իսրայէլը նորա իշխանութիւն :
3 Ծովը տեսաւ և փախաւ , Յորդանանը յետ դարձաւ :
4 Լեռները խոյերի պէս վեր վեր խաղացին , և բլուրները գառների պէս :
5 Ի՞նչ եղաւ քեզ , ով ծով , որ փախչում էիր , և ով Յորդանան , որ յետ էիր դառնում՝
6 Դուք , ով լեռներ , խոյերի պէս վեր վեր խաղացիք . ով բլուրներ , գառների պէս :
7 Տիրոջ երեսից սարսափիր , ով երկիր , Յակոբի Աստուծոյ երեսից ,
8 Որ նա վէմը ջրերի լիճ է դարձնում , և քարքարուտը ջրերի աղբիւր :

ՍԱՂՄ· ՃԺԵ

1 Ոչ թէ մեզ , Տէր , ոչ թէ մեզ , այլ քո անունին փառք տուր քո ողորմութեան համար և քո ճշմարտութեան համար :
2 Ինչու համար հեթանոսները ասեն , թէ Ո՞ւր է նորանց Աստուածը :
3 Բայց մեր Աստուածն երկնքում է , նա ամեն ինչ որ կամենում է՝ անում է :
4 Նորանց կուռքերը արծաթ ու ոսկի են , մարդու ձեռաց գործեր .
5 Բերան ունին և չեն խօսում , աչքեր ունին և չեն տեսնում .
6 Ականջներ ունին և չեն լսում , քիթ ունին և հոտ չեն առնում .
7 Ձեռքեր ունին և չեն շօշափում , ոտքեր ունին և չեն գնում , և իրանց կոկորդովը ձայն չեն հանում :
8 Նորանց շինողներն էլ նորանց նման են , և այն ամենքը , որ յոյս են դնում նորանց վերայ :
9 Ով Իսրայէլ , յուսացիր Տիրոջը , նորանց օգնութիւնը և վահանը նա է :
10 Ով Ահարոնի տուն , յուսացէք Տիրոջը , նորանց օգնութիւնը և վահանը նա է :
11 Ով Տէրից վախեցողներ , յուսացէք Տիրոջը . նորանց օգնութիւնը և վահանը նա է :
12 Տէրը յիշում է մեզ . նա կ'օրհնէ՝ նա կ'օրհնէ Իսրայէլի տունը , նա կ'օրհնէ Ահարոնի տունը :
13 Նա կ'օրհնէ Տէրից վախեցողներին՝ փոքրներին մեծերի հետ :
14 Տէրը օրհնութիւն կ'շատացնէ ձեզ վերայ . ձեզ վերայ և ձեր որդոց վերայ .
15 Օրհնեալ էք դուք Տէրից , որ երկինքն ու երկիրը ստեղծեց :
16 Երկնից երկինքը Տիրոջն է , և երկիրը մարդկանց որդոցը տուաւ :
17 Ոչ թէ մեռելները կ'օրհնեն Տիրոջը . և ոչ էլ դժոխքը իջնողները :
18 Բայց մենք պիտի օրհնենք Տիրոջը այսուհետև մինչև յաւիտեան : Ալէլուիա :

ՍԱՂՄ· ՃԺԹ

Օրհնեցէք Տիրոջը, ով ամեն ազգեր. գովեցէք նորան, ով ամեն ժողովուրդներ։ 1

Քանզի նորա ողորմութիւնը զօրաւոր է մեզ վերայ. և Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտեան է։ Ալէլուիա։ 2

ՍԱՂՄ· ՃԺԿ

Գոհացեք Տէրոջը. ինչու որ բարի է, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։ 1

Թող Իսրայէլն ասէ՝ թէ յաւիտեան է նորա ողորմութիւնը։ 2

Ահարոնի տունն ասէ՝ թէ յաւիտեան է նորա ողորմութիւնը։

Տէրոջը վախեցողներն ասեն՝ թէ յաւիտեան է նորա ողորմութիւնը։ 4

Ընդարձակութեան միջից Տիրոջը կանչեցի. Տէրը լսեց ինձ և լայնարձակ տեղ հանեց։ 5

Տէրն ինձ հետ է. չեմ վախենալ. մարդն ինձ ի՞նչ կ'անէ։ 6

Տէրն իմ օգնականներումն ինձ հետ է. և ես իմ թշնամիներին վերայ կ'նայեմ։ 7

Լաւ է Տիրոջը յուսալ՝ քան թէ մարդկանց ապաւինել։ 8

Լաւ է Տիրոջը յուսալ՝ քան թէ իշխաններին ապաւինել։ 9

Բոլոր հեթանոսները պաշարեցին ինձ, բայց Տիրոջ անունովը կ'ջարդեմ նորանց։ 10

Ամեն կողմով պաշարեցին ինձ, բայց Տիրոջ անունովը կ'ջարդեմ նորանց։ 11

Պաշարեցին ինձ ինչպէս մեղուներ. վառուեցան ինչպէս փշերի կրակ. բայց Տիրոջ անունովը կը ջարդեմ նորանց։ 12

Չարկելով չարկեցիր ինձ որ վայր ընկնիմ, բայց Տէրն օգնեց ինձ։ 13

Տէրն իմ զօրութիւնը և սաղմոսն է. նա եղաւ ինձ համար փրկութիւն։ 14

Ցնծութեան և փրկութեան ձայն կայ արդարների բնակարաններումը. Տիրոջ աջը զօրութիւն է գործում։ 15

ՍԱՂՄ· ՃԺԶ

Ես ուրախ եմ, որ Տէրը լսեց իմ աղաչանքի ձայնին։ 1

Քանզի նա իր ականջը խոնարհացրեց դէպի ինձ. և իմ օրերումը կ'կանչեմ նորան։ 2

Մահի ցաւերը պատեցին ինձ, և դժոխքի վշտերը գտան ինձ. նեղութիւն և տրտմութիւն գըտայ ես։ 3

Բայց ես Տիրոջ անունը կանչեցի. Տէր, փրկիր իմ անձը։ 4

Ողորմած է Տէրը և արդար. և մեր Աստուածը գթած է։ 5

Տէրը պահում է պարզամիտներին. ես խեղճ եղայ, և նա ապրեցրեց ինձ։ 6

Ով իմ անձը, դարձիր դէպի քո հանգստութիւնը, ինչու որ Տէրը բարի արաւ քեզ։ 7

Քանզի դու փրկեցիր իմ անձը մահից՝ իմ աչքն արտասուքից և իմ ոտքերը գայթակղութիւնից։ 8

Ես միտն կ'դամ Տիրոջ առջև կենդանեաց երկրումը։ 9

Հաւատացի՝ նորա համար խօսեցի. ես շատ չարչարուեցայ։ 10

Ես ասացի իմ շփոթութիւնումը՝ թէ ամեն մարդ սուտ է։ 11

Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նորա բոլոր բարութեան համար, որ ինձ արաւ։ 12

Փրկութեան բաժակը կ'առնեմ և Տիրոջ անունը կ'կանչեմ։ 13

Իմ ուխտերը Տիրոջը կ'վճարեմ՝ նորա բոլոր ժողովրդի առջև։ 14

Պատուական է Տիրոջ առջև նորա սրբերի մահը։ 15

Ո՜հ Տէր, ես քո ծառան եմ. ես քո ծառան եմ և քո աղախնի որդին. դու իմ կապանքները արձակեցիր։ 16

Քեզ գոհութեան պատարագ կ'մատուցանեմ. և Տիրոջ անունը կ'կանչեմ։ 17

Իմ ուխտերը Տիրոջը կ'վճարեմ՝ նորա բոլոր ժողովրդի առջև։ 18

Տիրոջ տան սրահներումը. քո մէջումը, Երուսաղէմ։ Ալէլուիա։ 19

16 Տիրոջ աչքը բարձր է, Տիրոջ
աչքը զօրութիւն է դործում։
17 Ես չեմ մեռնիլ՝ կ'ապրիմ. և
Տիրոջ դործը կ'պատմեմ։
18 Խրատելով խրատեց ինձ Տէրը,
բայց մահին չմատնեց ինձ։
19 Բացէք ինձ համար արդարու-
թեան դուռները, որ նորանց մէջ
մտնեմ և Տէրից գոհանամ.
20 Ա՛յս դուռը Տիրոջն է. արդա-
րները կ'մտնեն սորանով։
21 Գոհանում եմ քեզանից, որ
ինձ լսեցիր և ինձ համար փրկու-
թիւն եղար։
22 Ա՛յն քարը որ շինողները անար-
դեցին՝ նա եղաւ անկիւնի գլուխ։
23 Տէրից եղաւ այս բանը, և
զարմանալի է մեր աչքերի առ-
ջև։
24 Սա այն օրն է որ Տէրն արաւ,
թող ցնծանք և ուրախ լինինք
սորանում։
25 Ո՛հ Տէր, փրկիր. ո՛հ Տէր, յա-
ջողիր։
26 Օրհնեալ է նա, որ գալիս է
Տիրոջ անունովը. օրհնում ենք
ձեզ, որ Տիրոջ տանից էք։
27 Եհովան է Աստուած, և լոյս
է երևացնում մեզ. մատաղները
կապեցէք չուաններով մինչև սե-
ղանի եղջիւրները։
28 Դու ես իմ Աստուածը, և գո-
հանում եմ քեզանից. ով իմ
Աստուած, բարձր կ'անեմ քեզ։
29 Գոհացէք Տէրից. ինչու որ
բարի է, ինչու որ յաւիտեան է
նորա ողորմութիւնը։

ՍԱՂՄ. ՃԺԹ

ԱԼԻՖ

1 Երանելի են ճանապարհով ան-
ւեղները, որ Տիրոջ օրէնքումը
գնում են։
2 Երանելի են նորա վկայութիւն-
ները պահողները, որ բոլոր սըր-
տով խնդրում են նորան։
3 Քանդի նորանք անօրէնութիւն
չեն գործում, այլ գնում են նո-
րա ճանապարհներովը։
4 Դու պատուիրեցիր պինդ պա-
հել քո պատուիրանքները։
5 Երանի թէ իմ ճանապարհները
յաջողուէին, որ պահեմ քո
պատուիրանքները։
6 Ապա չեմ ամաչիլ, երբոր քո
բոլոր հրամաններին մտիկ կ'տամ։
7 Ես կ'գոհանամ քեզանից սրտի
ուղղութիւնով, երբոր քո արդա-
րութեան իրաւունքները կ'սովո-
րեմ։
8 Քո հրամանները կ'պահեմ. մի
թողիր ինձ խափան։

ԲԷԹ

9 Երիտասարդն ինչո՞վ իստակ
կ'անէ իր ճանապարհը. քո խօսքի
պէս գնուշանալով։
10 Իմ բոլոր սրտովը խնդրեցի
քեզ, թող մի տար որ քո պատ-
ուիրանքներիցը մոլորուիմ։
11 Իմ սրտումը թագցրի քո խօս-
քերը, որ չմեղանչեմ քեզ դէմ։
12 Օրհնեալ ես դու, Տէր. սովո-
րեցրու ինձ քո հրամանները։
13 Իմ շրթունքներովը պատմում
եմ քո բերանի բոլոր իրաւունք-
ները։
14 Քո վկայութեանց ճանապար-
հովը ուրախանում եմ, ինչպէս
ամեն կերպ հարստութիւնով։
15 Քո պատուիրանքների վերայ կը
մտածեմ. և քո ճանապարհին
մտիկ կ'տամ։
16 Քո հրամաններովը կ'ուրախա-
նամ. և քո խօսքը չեմ մոռա-
նալ։

ԳԻՄԷԼ

17 Բարի արա քո ծառային, որ
ապրիմ և քո խօսքը պահեմ։
18 Բաց արա իմ աչքերը, որ քո
օրէնքի հրաշքները տեսանեմ։
19 Պանդուխտ եմ երկրիս վերայ.
մի թագցներ ինձանից քո պատ-
ուիրանքները։
20 Իմ անձը մաշուած է ամեն ժա-
մանակ՝ ցանկանալով քո իրա-
ւունքներին։
21 Դու սաստեցիր անիծուած ամ-
բարտաւաններին, որ քո պատ-
ուիրանքներիցը մոլորուեցան։
22 Նախատինքը անարգանքը վեր

առ ինձանից, ինչու որ քո վկայութիւնները պահում եմ։
23 Իշխանները էլ նստում ինձ դէմ խօսում են, քո ծառան քո հրամաններին վերայ է մտածում։
24 Իրաւի որ քո վկայութիւնները իմ ուրախութիւնն են և իմ խորհրդականները։

ԴԱԼԵԹ

25 Իմ անձը կպաւ հողի հետ. ապրեցրու ինձ քո խօսքի պէս։
26 Ես իմ ճանապարհները պատմում եմ և դու լսում ես ինձ. սովորեցրու ինձ քո հրամանները։
27 Պատուիրանքներիդ ճանապարհը ինձ իմացրու, և կ'մտածեմ քո սքանչելիքից վերայ։
28 Իմ անձը հալուեցաւ տրտմութիւնից. հաստատիր ինձ քո խօսքին պէս։
29 Սուտ ճանապարհը հեռացրու ինձանից, և քո օրէնքը շնորհիր ինձ։
30 Ես ճշմարտութեան ճանապարհը ընտրեցի. քո իրաւունքները իմ առջև դրի։
31 Քո վկայութիւններին մօտեցայ. Տէր, ամօթի մի տանիր ինձ։
32 Քո պատուիրանքների ճանապարհով կ'վազեմ, ինչու որ դու իմ սիրտը լայնացրիր։

ՀԷ

33 Տէր, ցոյց տուր ինձ քո հրամանների ճանապարհը, որ միշտ վերջը պահեմ նորան։
34 Իմաստութիւն տուր ինձ, որ քո օրէնքը պահեմ և նորան կատարեմ իմ բոլոր սրտով։
35 Առաջնորդիր ինձ քո պատուիրանքների շաւիղներումը. ինչու որ նորանց հաւանեցայ։
36 Խոնարհացրու իմ սիրտը դէպի քո վկայութիւնները, և ոչ թէ դէպի ագահութիւնը։
37 Ցետ դարձրու իմ աչքերը որ ունայն բան չտեսնեն, կենդանացրու ինձ քո ճանապարհներումը։
38 Հաստատիր քո խօսքը քո ծառային համար, որ քեզանից վախենայ։
39 Ցետ դարձրու ինձանից իմ նախատինքը, որ նորանից վախեցայ. ինչու որ քո իրաւունքները բարի են։
40 Ահա ցանկանում եմ քո պատուիրաններին. քո արդարութիւնով ապրեցրու ինձ։

ՎԱՎ

41 Տէր, թող քո ողորմութիւնը գայ ինձ վերայ, և քո փրկութիւնը քո խօսքին պէս։
42 Այդ ես կ'պատասխանեմ ինձ խօսքով նախատողներին. ինչու որ քո խօսքին եմ յուսացած։
43 Եւ քո ճշմարտութեան խօսքը ամենևին մի հեռացներ իմ բերանիցը. ինչու որ քո իրաւունքին եմ յուսացած։
44 Այդ քո օրէնքը կ'պահեմ ա-մեն ժամանակ՝ յաւիտեան յաւիտենից։
45 Եւ լայնարձակ կ'գնամ. ինչու որ քո պատուիրանքները խնդրեցի։
46 Եւ քո վկայութեանց համար կ'խօսիմ թագաւորների առջև, և չեմ ամաչիլ։
47 Եւ քո պատուիրանքներովը կ'ուրախանամ, որ նորանց սիրում եմ։
48 Եւ իմ ձեռքը կ'բարձրացնեմ դէպի քո պատուիրանքները որ սիրում եմ. և քո հրամաններին վերայ կ'մտածեմ։

ԶԱՅԻՆ

49 Յիշիր քո ծառային վերայ եղած խօսքը, որ նորան յուսալ տուիր ինձ։
50 Իմ նեղութիւնումն այն է իմ մխիթարութիւնը՝ որ քո խօսքն ապրեցնում է ինձ։
51 Ամբարտաւանները ինձ վերայ շատ ծաղր են անում. բայց ես քո օրէնքիցը չեմ ծռվում։
52 Տէր, յիշում եմ քո իրաւունքները յաւիտենից, և մխիթարվում եմ։

53 Բարկութիւն բռնեց ինձ ամբարիշտներէն մնասին, որ քո օրէնքը թողում են։
54 Քո հրամանները ինձ հոսանք երգ են իմ պանդխտութեան տան մէջ։
55 Տէր, գիշերուընդ յիշում եմ քո անունը, և պահում եմ քո օրէնքը։
56 Այս եղաւ ինձ, որ քո հրամանները պահեմ։

խէթ

57 Իմ բաժինը դու ես, Տէր. ես ասացի՝ թէ քո խօսքերը պահեմ։
58 Աղաչում եմ քո առջև բոլոր սրտով, ողորմիր ինձ քո խօսքի պէս։
59 Ես մտածում եմ քո ճանապարհների վերայ. և իմ ոտները դարձնում եմ քո վկայութիւններին։
60 Շուտ եմ անում և չեմ ուշանում, որ քո պատուիրանքները պահեմ։
61 Ամբարիշտների չուաններըպատեցին ինձ. ես քո օրէնքը չեմ մոռանում։
62 Կէս գիշերին վեր եմ կենում, որ քեզանից գոհանամ քո արդար իրաւունքների համար։
63 Ես ընկեր եմ այն ամենի որ վախում եմ քեզանից՝ և քո պատուիրանքները պահում են։
64 Տէր, երկիրը լիքն է քո ողորմութիւնովը. քո հրամանները սովորեցրու ինձ։

թէթ

65 Բարի արիր, Տէր, քո ծառային, քո խօսքի պէս։
66 Բարի իմաստութիւն և գիտութիւն սովորեցրու ինձ, ինչու որ հաւատում եմ քո պատուիրանքներին։
67 Դեռ որ խոնարհուած չէի, սխալվում էի, բայց հիմա քո խօսքը պահում եմ։
68 Բարի ես դու, և բարի անող. սովորեցրու ինձ քո հրամանները։
69 Ամբարտաւանները սուտ են հնարում ինձ վերայ. ես բոլոր սրտով կ'պահեմ քո պատուիրանքները։
70 Նորանց սիրտը պարարտ է ինչպէս ճարպ, ես ուրախանում եմ քո օրէնքովը։
71 Լաւ է ինձ համար որ խոնարհուեցայ, որ քո հրամանները սովորիմ։
72 Բարի է ինձ համար քո բերնի օրէնքը, աւելի քան թէ հազարաւոր ոսկի ու արծաթ։

բէթ

73 Քո ձեռքերն արին ինձ և հաստատեցին ինձ. իմաստուն արա ինձ որ քո պատուիրանքները սովորիմ։
74 Քեզանից վախեցողները կ'տեսնեն ինձ և ուրախ կ'լինին, ինչու որ քո խօսքերին յուսացայ։
75 Գիտեմ եմ, Տէր, որ քո դատաստանները արդարութիւնով են. և իրաւունքով խոնարհեցրիր ինձ։
76 Թող քո ողորմութիւնը լինի ինձ մխիթարելու համար, քո ծառային տուած խօսքիդ պէս։
77 Թող քո բարեգթութիւնը ինձ վերայ գայ որ ապրիմ, ինչու որ քո օրէնքն է իմ ուրախութիւնը։
78 Ամբարտաւանները թող ամօթ լինին, քանզի ի զուր անիրաւութիւն գործեցին ինձ վերայ. ես ես քո պատուիրանքների վերայ եմ խօսում։
79 Թող ինձ մօտ դառնան քեզանից վախեցողները և քո վկայութիւնները ճանաչողները։
80 Թող իմ սիրտն անարատ լինի քո հրամանների մէջ, որպէս զի չամաչեմ։

գիմէլ

81 Իմ անձը մաշուեցաւ քո փրկութեանը սպասելով. ես յոյս ես քո խօսքին յուսացայ։
82 Իմ աչքերը մաշուեցան քո խօսքին ցանկանալով. ես ասում եմ՝ Ե՞րբ կ'մխիթարես ինձ։
83 Քանզի ես ծխի մէջ եղած

ակի պէս եղայ . բայց քո հրամանները չեմ մոռանում ։

84 Քանի՞ են քո ծառայի օրերը. ե՞րբ պատասան կ'անես իմ հալածողներին ։

85 Ամբարտաւանները հոլեր փորեցին ինձ համար , որ քո օրէնքի պէս չեն ։

86 Քո բոլոր պատուիրանքները ճշմարիտ են . զուր են հալածում ինձ . օգնիր ինձ ։

87 Քիչ էր մնացել որ ինձ կորցնէին երկրի վրայ . եւ քո պատուիրանքները չեմ թողում ։

88 Քո ողորմութեան պէս ապրեցրու ինձ . և քո բերանի վկայութիւնները կ'պահեմ ։

ԼԱՄԷԴ

89 Ով Տէր , քո խօսքը յաւիտեան հաստատ է երկնքում ։

90 Քո ճշմարտութիւնը միում է ազգից մինչև ազգ . դու երկիրը հաստատեցիր և կենում է ։

91 Քո հրամանների պէս կենում են այսօր , քանզի ամենքը քո ծառայ են ։

92 Եթէ քո օրէնքն իմ ուրախութիւնը չլինէր , եւ վաղուց կորած կ'լինէի իմ խղճութիւնում ։

93 Յաւիտեան չեմ մոռանալ քո պատուիրանները , ինչու որ նոքանցով ապրեցրիր ինձ ։

94 Քո եմ ես . փրկիր ինձ . ինչու որ քո պատուիրանները խնդրում եմ ։

95 Ամբարիշտները սպասում են ինձ որ կորցնեն ինձ . և քո վկայութիւնները միտքս եմ առնում ։

96 Ամեն կատարեալ բանի վերջը տեսայ . քո պատուիրանքը շատ լայնարձակ է ։

ՄԷՄ

97 Ո՜րքան եմ սիրում քո պատուիրանքները . ամեն օր նոա է իմ մտածմունքը ։

98 Քո պատուիրանքներն ինձ իմաստուն են անում իմ թշնամիներից . ինչու որ յաւիտեան իմ են ։

99 Աւելի իմաստուն եղայ քան թէ իմ ամեն վարժապետները . ինչու որ քո վկայութիւնքն են իմ մտածմունքը ։

100 Աւելի խելացի եղայ քան թէ ծերերը , ինչու որ քո պատուիրանքները պահում եմ ։

101 Ամեն չար ճանապարհից իմ ոտները եւս եմ քաշում , որ քո խօսքը պահեմ ։

102 Քո իրաւունքից չեմ հեռանում . ինչու որ դու սովորեցնում ես ինձ ։

103 Ո՜րքան քաղցր է քո խօսքը իմ քմից . մեղրից էլ աւելի է իմ բերանիս ։

104 Քո պատուիրանքներով ես իմաստուն եղայ . սորա համար ատում եմ ստութեան ամեն ճանապարհը ։

ՆՈՒՆ

105 Քո խօսքը ճրագ է իմ ոտքերի համար , և լոյս իմ ճանապարհի համար ։

106 Ես երդում արի և կ'կատարեմ , թէ քո արդարութեան իրաւունքը կ'պահեմ ։

107 Ես շատ խոնարհուեցայ . Տէր , ապրեցրու ինձ քո խօսքի պէս ։

108 Իմ բերանի կամաւոր զոհերն ընդունիր , Տէր . և քո իրաւունքները սովորեցրու ինձ ։

109 Իմ անձն ամեն ժամանակ ձեռքումն է , և քո օրէնքն չեմ մոռանում ։

110 Ամբարիշտները որոգայթ դրին ինձ համար . բայց ես քո պատուիրանքներից չեմ մոլորւում ։

111 Ես քո վկայութիւնները ժառանգեցի մինչև յաւիտեան . ինչու որ նոքանք իմ սրտի ցնծութիւն են ։

112 Ես խոնարհեցրի սիրտս որ քո հրամաններն անեմ յաւիտեան մինչև վերջը ։

ՍԱՄԷԽ

113 Երկմիտներին ատում եմ , բայց քո օրէնքը սիրեցի ։

114 Հովանիս և պահապանս դու
ես. քո խօսքին յուսացայ։
115 Հեռու կացէք ինձմանից, ով
չարեր. որ ես պահեմ իմ Ա-
ստուծոյ պատուիրանքները։
116 Պահպանիր ինձ խօսքիդ պէս.
և ամօթ մի անիր ինձ իմ յու-
սոյ համար։
117 Օգնիր ինձ և կ'ապրիմ. և ա-
մեն ժամանակ հրամաններիդ մի-
ակ կ'ատամ։
118 Անարգում ես այն ամենին որ
հրամաններիցդ հեռանում են.
քանզի նորանց նենգութիւնը
սուտ է։
119 Դու կզկզանք ես համարում
երկրի բոլոր ամբարիշտները. ա-
րա համար սիրում եմ քո վկա-
յութիւնները։
120 Մարմինս դողում է քո ա հի-
ցը, և քո դատաստաններիցը
վախում եմ։

ԱՅԻՆ

121 Ես իրաւունք և արդարութիւն
եմ անում. մի մատներ ինձ նե-
ղացնողներիս ձեռքը։
122 Երաշխաւորիր ծառայիդ որ
բարի լինի նորա. որ ամբարտա-
ւանները չնեղացնեն ինձ։
123 Աչքերս մնաշուեցան քո փրր-
կութեանը և քո արդարութեան
խօսքին սպասելով։
124 Քո ծառայի հետ արա ողոր-
մութեանդ պէս. և քո հրաման-
ները սովորեցրու ինձ։
125 Ես քո ծառան եմ իմաստուն
արա ինձ, որ քո վկայութիւն-
ները ճանաչեմ։
126 Ժամանակ է որ Տէրն անէ
այս. ինչը- որ նորանք քո օրէնքը
խափանեցին։
127 Սորա համար սիրում եմ քո
պատուիրանքները ոսկուց և ազ-
նիւ ոսկուց աւելի։
128 Սորա համար ամեն պատուի-
րանքները բոլորովին ուղիղ եմ
պահում. ամեն ճա-
նապարհն ատում եմ։

ՓԷ

129 Քո վկայութիւնները զարմա-
նալի են. սորա համար իմ
անձը պահում է նորանց։
130 Խօսքերիդ յայտնութիւնը լոյս
է տալիս, և իմաստուն է անում
պարզամիտներին։
131 Իմ բերանը բաց եմ անում
և շունչ առնում, քանզի քո
պատուիրաններին ցանկանում
եմ։
132 Նայիր ինձ վերայ և ողորմիր
ինձ. ինչպէս որ սովոր ես անել
քո անունը սիրողներին։
133 Իմ դնացքը հաստատիր քո
խօսքի մէջ, և անօրէնութիւն
չտիրէ ինձ վերայ։
134 Փրկիր ինձ մարդկանց բռնու-
թիւնից, և կ'պահեմ քո պատ-
ուիրանքները։
135 Երեսդ լուսաւորիր քո ծառա-
յի վերայ. և սովորեցրու ինձ
քո հրամանները։
136 Ջրերի առուներ են վայր գա-
լիս իմ աչքերիցը, որովհետև
քո օրէնքը չեն պահում։

ՑԱԴԷ

137 Դու արդար ես, Տէր. և դա-
տաստաններդ ուղիղ են։
138 Քո վկայութիւններիդ արդարու-
թիւնը պատուիրեցիր, և նորանք
շատ ճշմարիտ են։
139 Նախանձս ինձ մաշեց, վասն
զի թշնամիքս մոռանում են քո
խօսքը։
140 Քո խօսքը շատ մաքրուած է,
և քո ծառան սիրում է նորան։
141 Ես ցած և անարգուած եմ,
բայց չեմ մոռանում քո պատ-
ուիրանքները։
142 Քո արդարութիւնը յաւիտե-
նական արդարութիւն է. և քո
օրէնքը ճշմարիտ։
143 Նեղութիւն և ցաւ գտան ինձ.
քո պատուիրանքներն են իմ ու-
րախութիւնը։
144 Քո վկայութիւնների արդա-
րութիւնը յաւիտեան է. իմաս-
տուն արա ինձ և կ'ապրիմ։

ՔՈՖ

145 Բոլոր սրտով կանչում եմ.

լսիր ինձ, Տէր, ու հրամաններդ պահեմ։

146 Դէպի քեզ եմ կանչում, փրկիր ինձ. և քո վկայութիւններըդ կ'պահեմ։

147 Կանուխ գալիս եմ արշալուսին և աղաղակում. ես քո խօսքին յուսացայ։

148 Գիշերուայ պահերին առաջ են զարթնում իմ աչքերը, որ խօսքիդ վերայ մտածեմ։

149 Իմ ձայնին լսիր քո ողորմութեան պէս, Տէր, քո իրաւունքի պէս ապրեցրու ինձ։

150 Անօրէնութեան հետևողները մօտեցան. նորանք քո օրէնքիցը հեռացան։

151 Տէր, դու մօտիկ ես. և քո բոլոր պատուիրանքները ճշմարտութիւն են։

152 Առաջուց իմացայ քո վկայութիւններիցը, որ դու հաստատեցիր նորանց յաւիտեան։

ՐՀՇ

153 Տես իմ խղճութիւնը և փրկիր ինձ. ինչու որ քո օրէնքը չեմ մոռանում։

154 Ինձ իրաւունք պրա և ազատիր ինձ. քո խօսքի պէս ապրեցրու ինձ։

155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներիցը, ինչու որ քո հրամանները չեն խնդրում։

156 Տէր, քո բարեգթութիւնը շատ է. իրաւունքիդ պէս ապրեցրու ինձ։

157 Շատ են ինձ հալածողներն ու նեղացնողները. քո օրէնքիցը դուրս չեմ գալիս։

158 Ես տեսնում եմ ապստամբուածներին և դժվում եմ, նորա համար որ խօսքդ չեն պահում։

159 Տես որ քո պատուիրանքները սիրում եմ. Տէր, քո ողորմութեան պէս ապրեցրու ինձ։

160 Քո խօսքի սկիզբը ճշմարտութիւն է. և արդարութեանդ բոլոր իրաւունքները յաւիտեան։

ՇԻՆ

Իշխանները զուր են հալածում ինձ. բայց իմ սիրտը վախում է քո խօսքերիցը։ 161

Ես ցնծում եմ քո խօսքով, ինչպէս մէկ շատ աւար գտնող։ 162

Սուտութիւն ատում եմ և գարշելի համարում. բայց քո օրէնքը սիրում եմ։ 163

Օրը եօթն անգամ օրհնում եմ քեզ քո արդարութեան իրաւունքների համար։ 164

Շատ խաղաղութիւն կայ քո օրէնքը սիրողների համար. և գայթակղութիւն չկայ նորանց համար։ 165

Տէր, ես քո փրկութեանն եմ սպասում, և պատուիրանքներդ կատարում։ 166

Իմ անձը պահում է քո վկայութիւնները. և ես շատ սիրում եմ նորանց։ 167

Ես պահում եմ պատուիրանքներդ ու վկայութիւններդ. ինչու որ բոլոր ճանապարհներս քո առջևն են։ 168

ԹԱՎ

Տէր, թող իմ աղաղակը մօտենայ քո առջև. քո խօսքի պէս իմաստուն արա ինձ։ 169

Թող իմ աղաչանքը մտնէ քո առջև. քո խօսքի պէս փրկիր ինձ։ 170

Իմ շրթունքները օրհնութիւն են բղխում, որ հրամաններդ ուսուցանես ինձ։ 171

Թող իմ լեզուն խօսի քո խօսքի համար. ինչու որ բոլոր պատուիրանքներդ արդարութիւն են։ 172

Թող ձեռքդ ինձ օգնական լինի. ինչու որ քո պատուիրանքներն ընտրում եմ։ 173

Տէր, ես ցանկանում եմ քո փրկութեանը. և օրէնքդ է իմ ուրախութիւնը։ 174

Թող իմ անձն ապրի և քեզ օրհնէ. և քո իրաւունքներն օգնեն ինձ։ 175

Ես մոլորուեցայ ինչպէս կորած ոչխար. մտն ետ քո ծառային. 176

ինչու որ քո պատուիրանքները ես չմոռացայ։

ՍԱՂՄ. ՃԻ

Ասիճաններուն երգ։

1 Իմ նեղութիւնովս դէպի Տէրը կանչեցի, և նա լսեց ինձ։
2 Տէր, փրկիր իմ անձը սուտ շրթունքներէն՝ նենգաւոր լեզուէն։
3 Ի՞նչ կ'տայ քեզ, և էլ ի՞նչ կ'աւելցնէ քեզ, ով նենգաւոր լեզու։
4 Զօրաւոր մարդու նետերը սուր են՝ գիհիներուն կայծերով։
5 Վա՛յ ինձ որ պանդուխտ եմ Մեսեքի մէջ, և բնակուած եմ Կեդարի վրաններուն մէջ։
6 Շատ երկարացաւ իմ անձիս համար բնակուիլ նորանց հետ, որ ատում են խաղաղութիւնը։
7 Ես խաղաղութեան մէջ եմ, բայց երբոր խօսում եմ, նորանք կռիւ են անում։

ՍԱՂՄ. ՃԻԱ

Ասիճաններուն երգ։

1 Ես բարձրացնում եմ իմ աչքերը դէպի լեռները, ո՞ր տեղից կ'գայ իմ օգնութիւնը։
2 Իմ օգնութիւնը Տէրից է, որ երկինքն ու երկիրս արաւ։
3 Նա քո ոտքին սահել չի տալ, քո պահապանը չի քնիլ։
4 Ահա Իսրայէլի պահապանը չի նընջիլ և չի քնանալ։
5 Տէրը քո պահապանն է. Տէրը քեզ հովանի է քո աջ ձեռքի վերայ։
6 Ցերեկուայ արեգակը չի զարկիլ քեզ, ոչ լուսինը գիշերուայ։
7 Տէրը կ'պահպանէ քեզ ամեն չարից, նա կ'պահպանէ քո անձը։
8 Տէրը կ'պահպանէ քո դուրս գալն ու մտնելը՝ այսուհետև մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԻԲ

Ասիճաններուն երգ։ Դաւիթ (Սաղմոս)։

1 Ես ուրախ եղայ երբոր ասացին ինձ, թէ Տիրոջ տունը գնանք։
2 Մեր ոտները կ'կանգնին քո դռներուումը, ով Երուսաղէմ։
3 Երուսաղէմը շինուած է ինչպէս քաղաք՝ որ ինքն իրան յետ միաւորուած է։
4 Ուր այնտեղ են ելլում ցեղերը՝ Տիրոջ ցեղերը Իսրայէլի վկայութեան պէս, որ Տիրոջ անունին գոհանան։
5 Քանի այնտեղ են դրուած դատաստանի աթոռները՝ Դաւթի տան աթոռները։
6 Խաղաղութիւն խնդրեցէք Երուսաղէմի համար. թող յաջողին քեզ սիրողները։
7 Թող խաղաղութիւն լինի քո պարիսպներուումը, յաջողութիւն քո պալատներուումը։
8 Իմ եղբարց և իմ ընկերների համար ասում եմ ես՝ խաղաղութիւն լինի քեզ։
9 Մեր Տէր Աստուծոյ տան համար բարի եմ ուզում քեզ։

ՍԱՂՄ. ՃԻԳ

Ասիճաններուն երգ։

1 Դէպի քեզ եմ բարձրացնում աչքերս, ով երկնքումը բնակուող։
2 Ահա ինչպէս ծառաների աչքերը իրանց Տէրերի ձեռքին են նայում, ինչպէս որ աղախնոյ աչքերն իր տիկնոջ ձեռքին. այնպէս էլ մեր աչքերը մեր Տէր Աստուծոյն մինչև որ ողորմի մեզ։
3 Ողորմիր մեզ, Տէր, ողորմիր մեզ. ինչու որ շատ լցուեցանք անարգանքով։
4 Շատ լցուած է մեր անձը գոռոզների նախատանօքը և ամբարտաւանների անարգանօքը։

ՍԱՂՄ. ՃԻԴ

Ասիճաններուն երգ։ Դաւթի (Սաղմոս)։

1 Եթէ Տէրը մեզ հետ չլինէր. թող ասէ Իսրայէլը.
2 Եթէ Տէրը մեզ հետ չլինէր՝ մարդիկ մեզ վերայ վեր կենալիս.

3 Ա.պա կենդանի կենդանի կու-
լ կ'ուտին մեզ՝ նորանց բարկու-
թիւնը մեզ վերայ բորբոքուելիս.
4 Ա.պա ջուրերը կ'թաղէին մեզ,
հեղեղը մեր անձների վերայ անց
կ'կենար։
5 Ա.պա գոռոզ ջուրերը անց կը
կենային մեր անձների վերայ։
6 Օրհնեալ լիչ Տէրը որ մեզ որս
չտուաւ նորանց առամներին։
7 Մեր անձինքը ինչպէս ծիտ՝
պրծան որսորդների որոգայթից.
որոգայթը փշրուեցաւ և մենք
պրծանք։
8 Մեր օգնութիւնը Տիրոջ անու-
նովն է, որ երկինքն ու երկիրս
արաւ։

ՍԱՂՄ· ՃԻԵ

Ասաիճանների երգ։

1 Տիրոջը յուսացողները Սիօն լե-
ռան պէս են, որ չէ շարժվում
և կենում է յաւիտեան։
2 Երուսաղէմի չորս կողմովը
լեռներ կ'են, և Տէրն իր ժողո-
վրդի չորս կողմն է այսուհե-
տև մինչև յաւիտեան։
3 Քանզի ամբարիշտների գաւա-
զանը չի ձգալ արդարների վիճա-
կի վերայ, որ արդարները իրանց
ձեռքերը չձգեն դէպի անօրէնու-
թիւն։
4 Տէր, բարի արա նորանց, որ
բարի են և իրանց սրտերովն ու-
ղիղ։
5 Բայց դէպի իրանց ծուռ ճա-
նապարհը ծռուողներին Տէրը կը
տանի նորանց հետ, որ անօրէ-
նութիւն են գործում. խաղաղու-
թիւն լիչ Իսրայէլի վերայ։

ՍԱՂՄ· ՃԻԶ

Ասաիճանների երգ։

1 Երբոր Տէրը Սիօնի գերութիւնը
դարձնէ, երազ տեսանողների պէս
կ'լինինք։
2 Այն ժամանակ մեր բերանը կը
լցուի ծիծաղով և մեր լեզուն
ցնծութիւնով. այն ժամանակ
կ'ասեն հեթանոսների մէջ. Տէրը
մեծ բաներ արաւ նորանց վերայ։
3 Տէրը մեծ բաներ արաւ մեզ
վերայ և մենք ուրախացանք։
4 Ով Տէր, դարձրու մեր գերու-
թիւնը ինչպէս առուները հարա-
ւի երկրումը։
5 Արտասուքով ցանողները ցն-
ծութիւնով կ'հնձեն։
6 Գնում են — գնում և լաց լի-
նում՝ ցանելու սերմը տանելով.
գալով կ'գան ցնծութիւնով՝ է-
րանց ցորենի խուրձերը բերելով։

ՍԱՂՄ· ՃԻԷ

Ասաիճանների երգ. Սողոմոնի (Սաղմս)։

1 Եթէ Տէրը չչինէ տունը՝ զուր
են աշխատում նորա շինողները.
եթէ Տէրը չպահպանէ քաղաքը՝
զուր է անքուն լինում պահա-
պանը։
2 Զուր է ձեզ համար կանուխ
վեր կենալը՝ ուշ հանգստանալը,
դուք որ հացը ցաւով էք ու-
տում. ինչու որ նա իր սիրելոյն
քնի մէջ է տալիս։
3 Ա.հա որդիքը Տիրոջ ժառան-
գութիւնն են. և որովայնի պը-
տուղը՝ նորա վարձքը։
4 Ինչպէս որ նետերը զօրեղ մար-
դու ձեռումը, այնպէս են երի-
տասարդ որդիքը։
5 Երանի այն մարդուն որ իր կա-
պարճը նորանցով լցրեց. նորանք
չեն ամաչիլ երբոր թշնամիների
հետ կ'խօսին դրան մէջ։

ՍԱՂՄ· ՃԻԸ

Ասաիճանների երգ։

1 Երանի՛ այն ամենին, որ Տէրից
վախում են և նորա ճանապարհ-
ներումը գնում.
2 Ձեռացդ աշխատանքը՝ ի հարկէ
կ'ուտես. երանի քեզ. և բա՛ղ
լաւ է քեզ համար։
3 Կինդ պտղաբեր որթի պէս է
քո տան ներսերումը. որդիքդ
անկուած ձիթենիների պէս քո
սեղանի չորս կողմովը։

4 Ահա հէնց այսպէս է օրհնե-
վում այն մարդը, որ վախում է
Տէրից։
5 Տէրը կ'օրհնէ քեզ Սիոնից, և
երուսաղէմի բարութիւնը կ'տես-
նես կենացդ բոլոր օրերում։
6 Եւ քո որդոց որդիքը կ'տես-
նես. խաղաղութիւն լինի Իսրա-
յէլի վերայ։

ՍԱՂՄ. ՃԻԹ

Աստիճանների երգ։

1 Շատ անգամ նեղացրին ինձ իմ
մանկութիւնից, թող ասէ Իս-
րայէլը.
2 Շատ անգամ նեղացրին ինձ
իմ մանկութիւնից, բայց չյաղ-
թեցին ինձ։
3 Հերկողները իմ թիկունքի վե-
րայ հերկեցին և իրանց ակօսները
երկար արին։
4 Տէրն արդար է. նա ամբարիշտ-
ների չուանները կտրեց։
5 Ամօթ պիտի լինին և յետ
դառնան այն ամենքը, որ ատում
են Սիօնը։
6 Կտուրի խոտի պէս պիտի լի-
նին, որ գեռ չհնձած չորանում է։
7 Որ նորանից չէ լցնում հնձողն
իր ձեռքը, և ոչ խուրձ կապողն
իր գիրկը.
8 Եւ անցնողներն էլ չեն ասում.
Տիրոջ օրհնութիւնը ձեզ վերայ.
Օրհնում ենք ձեզ Տիրոջը անուա-
նով։

ՍԱՂՄ. ՃԼ

Աստիճանների երգ։

1 Ով Տէր, խոր տեղերից դէպի
քեզ եմ կանչում։
2 Ով Տէր, լսիր իմ ձայնին. թող
ականջներդ մտիկ անեն իմ ա-
ղօթքի ձայնին։
3 Տէր, եթէ դու անօրէնութիւն-
ները համարես, ո՞վ կ'կենայ,
Տէր։
4 Քանզի քեզ մօտ է թողու-
թիւնը, որ քեզանից վախեն։
5 Ես սպասում եմ Տիրոջը, իմ
անձը սպասում է, և նորա խօս-
քին եմ յուսացած։
6 Իմ անձը սպասում է Տիրոջը ա- 6
ւելի քան թէ առաւօտուայ ա-
պասողները՝ առաւօտուայ ապա-
սողները։
7 Իսրայէլը թող յուսայ Տիրո- 7
ջը. ինչու որ Տիրոջ մօտ է ողոր-
մութիւն, և նորա մօտ է շատ
փրկութիւն։
8 Եւ նա կ'փրկէ Իսրայէլին իր 8
ամեն անօրէնութիւններից։

ՍԱՂՄ. ՃԼԱ

Աստիճանների երգ. Դաւթի (Սաղմոս)։

Տէր, իմ սիրտը չէ գոռոզանում 1
և իմ աչքերը չեն բարձրանում.
և ես չեմ գնում մեծամեծ բա-
ների մէջ, և ոչ այն բաների մէջ
որ ինձանից բարձր են։
Իրաւի իմ անձը հանդարտաց- 2
րի և հանգստացրի իր մօր կա-
թից կտրուածի պէս. իմ անձը
կաթից կտրուածի նման է։
Իսրայէլը Տիրոջը կ'յուսայ այ- 3
սուհետև մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԼԲ

Աստիճանների երգ։

Տէր, յիշիր Դաւթին և նորա 1
բոլոր նեղութիւնները.
Որ երդուաւ Տիրոջը և ուխտ 2
դրաւ Յակոբի Զօրաւորին,
Թէ տանս յարկի տակ չեմ 3
մտնիլ, և իմ փռած անկողնի վե-
րայ չեմ ելլել.
Թէ աչացս քուն չեմ տալ, և ոչ 4
իմ արտեւանունքներին նիրհում,
Մինչև որ տեղ գտնեմ Տիրոջ 5
համար, և բնակարան Յակոբի
Զօրաւորի համար։
Ահա լսեցինք նորա համար Եփ- 6
րաթայումը, գտանք նորան ան-
տառի դաշտումը։
Թող մտնենք նորա բնակարան- 7
ները երկրպագենք նորա պատ-
ուանդանի դէմ։
Վեր կաց, Տէր, դէպի քո հան- 8
դրստութիւնը, դու և քո զօրու-
թեան տապանակը։
Քո քահանայքը թող արդա- 9

թաթխեն հագնին, և քո արիները
ցնծան։
10 Քո ծառայի՝ Դաւթի համար
մի դարձներ քո օծելոյ երեսը։
11 Տէրը երդուաւ արաւ Դաւթին
ճշմարտութեամբ, յետ չի դառ-
նալ նորանից, թէ Քո արուեստի
պտղից կ'նստեցնեմ աթոռիդ
վերայ։
12 Եթէ որդիքդ իմ ուխտն ու
վկայութիւնը պահեն, որ կ'ամ-
բնեցնեմ նորանց, ապա նորանց
որդիքը յաւիտեան յաւիտենից
կ'նստին քո աթոռի վերայ։
13 Քանզի Տէրը Սիոնին ընտրեց,
հաւանեց նորան իրան բնակարան
լինել- համար.
14 Այս է յաւիտեան իմ հան-
գիստը, այստեղ բնակուիմ. ին-
չու որ սորան հաւանեցի։
15 Նորա կերակուրն օրհնելով
կ'օրհնեմ, և նորա աղքատները
կ'կշտացնեմ հացով։
16 Եւ նորա քահանաներին փրկու-
թիւն կ'հագցնեմ, և նորա
սուրբերը ցնծալով կ'ցնծան։
17 Այնտեղ Դաւթի համար եղ-
ջիւր կ'բուսցնեմ. և ճրագ կ'պատ-
րաստեմ իմ օծելոյ համար։
18 Նորա թշնամիներին ամօթ կը
հագցնեմ, բայց նորա վերայ նորա
պսակը կ'ծագկի։

ՍԱՂՄ· ՃԼԹ

Աստիճանների երգ։ Դաւթի (Սաղմոս)։

1 Տես ի՞նչքան բարի և ի՞նչքան
ցանկալի է, որ եղբարք իրար հետ
միակամ բնակուին։
2 Այն աղնիւ իւղի պէս է դլխի
վերայ, որ թափւում է մօրուքի,
այսինքն Ահարոնի մօրուքի վե-
րայ, և իջնում է մինչև նորա
հանդերձների ծայրը։
3 Հերմոնի շողի պէս է որ վայր
է դալիս Սիոնի լեռների վերայ.
ինչու որ Տէրն այնտեղ պատրաս-
տեց օրհնութիւն և կեանք մինչև
յաւիտեան։

ՍԱՂՄ· ՃԼԴ

Աստիճանների երգ։

1 Ահա օրհնեցէք Տիրոջը, ով Տի-
րոջ բոլոր ծառաները, որ Տիրոջ
տանը կանգնում էք գիշերները։
2 Ձեր ձեռները բարձրացրէք դէ-
պի սրբութիւնը և օրհնեցէք Տի-
րոջը։
3 Տէրը կ'օրհնէ քեզ Սիոնից,
նա՝ որ երկինքն ու երկիրս արաւ։

ՍԱՂՄ· ՃԼԵ

Սկիզբ։

1 Օրհնեցէք Տիրոջ անունը. օրհ-
նեցէք, ով Տիրոջ ծառաները.
2 Որ Տիրոջ տանը կանգնում էք՝
մեր Աստուծոյ տան սրահներում։
3 Օրհնեցէք Տիրոջը, ինչու որ
Տէրը բարի է. սաղմոս ասացէք
նորա անունին, ինչու որ քաղցր է։
4 Քանզի Տէրը Յակոբին ընտրեց
իրան համար, և Իսրայէլին՝ իր
ժառանգութեան համար։
5 Քանզի ես իմացայ որ Տէրը մեծ
է. և մեր Տէրն աւելի մեծ է քան
ամեն աստուածները։
6 Տէրն իր բոլոր կամեցածն ա-
նում է երկնքում ու երկրում,
ծովերում և ամեն խոր տեղե-
րում։
7 Որ նա ամպերը բարձրացնում
է երկրի ծայրերից՝ կայծակներն
անձրև է շինում. քամին հանում
է իր շտեմարաններից։
8 Որ Եգիպտոսի անդրանիկներն
ապանեց մարդուց մինչև անա-
սուները։
9 Որ նշաններ և հրաշքներ ու-
ղարկեց քո մէջը, ով Եգիպտոս,
փարաւոնի և նորա բոլոր ծառա-
ների վերայ։
10 Որ շատ ազգեր զարկեց, և զո-
րեղ թագաւորներ սպանեց.
11 Ամորհացոց Սեհոն թագաւորը,
Բասանի Օգ թագաւորը, և Քա-
նանացոց բոլոր թագաւորութիւն-
ները։
12 Եւ նորանց երկիրը տուաւ ժա-
ռանգութիւն, ժառանգութիւն
իր Իսրայէլ ժողովրդի համար։
13 Տէր, քո անունը մինչև յա-
ւիտեան է. Տէր քո յիշատակը
ազգից մինչև ազգ։
14 Քանզի Տէրն իր ժողովրդին կը

գաստէ, և իր ծառաներին կ'ողորմի։
15 Չեմ անուսց կուռքերը արծաթ և ոսկի են, մարդկանց ձեռաց գործքեր։
16 Բերան ունին և չեն խօսուիր, աչքեր ունին և չեն տեսանուիր.
17 Ականջներ ունին և չեն լսուիր, և բնաւ շունչ չկայ նորանց բերանուիր։
18 Նորանց նման են նորանց շինողները, և բոլոր նորանց յուսացողները։
19 Ով Իսրայէլի տուն, օրհնեցէք Տէրոջը. ով Ահարոնի տուն օրհնեցէք Տէրոջը։
20 Ով Ղևիի տուն, օրհնեցէք Տէրոջը. ով Տէրից վախեցողներ, օրհնեցէք Տէրոջը։
21 Օրհնեալ լինի Տէրը Սիոնի միջնէցը, նա՝ որ բնակուած է Երուսաղէմումը։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԼԶ

1 Գոհացէք Տէրից, ինչու որ բարի է. ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
2 Գոհացէք աստուածների Աստուածից, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
3 Գոհացէք տէրերի Տէրից, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
4 Որ նա է միայն մեծամեծ հրաշքներ անում, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
5 Որ երկինքն սրտի խոհեմութիւնով. ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
6 Որ երկիրը ջրերի վերայ տարածեց, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
7 Որ արուի մեծամեծ լուսաւորներ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
8 Արեգակը որ ցերեկի վերայ իշխէ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
9 Լուսինն ու աստղերը որ գիշերի վերայ իշխեն, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
10 Որ Եգիպտոսին զարկաւ իր առաջինեկներով, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
11 Եւ Իսրայէլին հանեց նորանց միջից, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
12 Զօրեղ ձեռքով և երկար մկնոտ բազուկով, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
13 Կարմիր ծովը երկու բաժին արաւ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
14 Եւ Իսրայէլին անց կացրեց նորա միջովը, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
15 Եւ փարաւոնին և նորա զօրքին կարմիր ծովի մէջ թափեց. ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
16 Եւ իր ժողովրդին անապատի միջովը տարաւ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
17 Որ մեծամեծ թագաւորներ պարկեց, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
18 Եւ զօրեղ թագաւորներ սպանեց, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
19 Ամորհացոց Սեհոն թագաւորին, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
20 Եւ Բասանի Օգ թագաւորին, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
21 Եւ նորանց երկիրը ժառանգութիւն տուաւ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
22 Ժառանգութիւն իր Իսրայէլ ժողովրդի համար, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
23 Որ մեր խոնարհութեանումը յիշեց մեզ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
24 Եւ փրկեց մեզ մեր թշնամիներից, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը.
25 Որ հաց է տալիս ամեն մարմնոյ, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։
26 Գոհացէք երկնքի Աստուածից, ինչու որ յաւիտեան է նորա ողորմութիւնը։

ՍԱՂՄ· ՃԼԵ

1 Բարկանի գետերի մօտ՝ այնտեղ նստում էինք և լաց լինում Սիօնը յիշելիս։
2 Նորա միջի ուռիներից կախ էինք տալիս մեր քնարները։
3 Քանզի մեզ գերի անողները մեզանից օրհներգութեան խօսք էին պահանջում այնտեղ և մեզ գերի տանողները՝ ուրախութեան. թէ երգեցէք Սիօնի երգերից մեզ համար։
4 Տիրոջ օրհնութիւնը ի՞նչպէս երգենք օտար երկրում։
5 Եթէ քեզ մոռանամ, երուսաղէմ, իմ աջ ձեռը մոռացուած լինի։
6 Իմ լեզուն թող քիմքիս կպչի, եթէ քեզ չյիշեմ. եթէ Երուզէմին իմ ուրախութիւնիցը վեր չի դասեմ։
7 Յիշիր, Տէր, Եդովմի որդիքը Երուսաղէմի օրուայը, որ ասում էին. Քանդեցէք քանդեցէք մինչև նորա հիմունքը։
8 Ով Բաբելոնի ազջիկ, ով քանդուած. երանի նորան որ քո հատուցումը կ'ասէ. այն հատուցումը, որ հատուցիր մեզ։
9 Երանի նորան որ քո երեխերքը կ'առնէ և քարերին կ'զարկէ։

ՍԱՂՄ· ՃԼԸ

Դաւթի (Սաղմոս)

1 Կ'դոհանամ քեզանից բոլոր սրտով. աստուածների առջև քեզ սաղմոս կ'ասեմ։
2 Երկրպագութիւն կ'անեմ դէպ սուրբ տաճարի առջև և կ'դոհանամ անունիցդ քո ողորմութեան համար և քո ճշմարտութեան համար. ինչու որ բոլոր անունիցդ բարձր մեծացրիր քո խօսքը։
3 Այն օրը որ կանչեցի քեզ պատասխանեցիր ինձ. դու ինձ զօրութիւնով ուժովացնում էս իմ անձումը։
4 Տէր, երկրի բոլոր թագաւորները կ'դոհանան քեզանից, ինչու որ քո բերանի խօսքերը լսեցին։
5 Եւ Տիրոջ ճանապարհներումը օրհնութիւն կ'ասեն, որ Տիրոջ փառքը մեծ է։
6 Քանզի Տէրը բարձր է և տեսնում է ցածը. և բարձրամտին հեռուանց է ճանաչում։
7 Եթէ նեղութեան մէջ գնամ՝ կ'պարեցնես ինձ, իմ թշնամիաց բարկութեան վերայ ձեռքդ կը կ'մեկնես և աջդ կ'փրկէ ինձ։
8 Տէրը կ'կատարէ ինձ տէզ. Տէր, քո ողորմութիւնը յաւիտեան է. քո ձեռաց գործքերը երեսիցդ մի թողներ։

ՍԱՂՄ· ՃԼԹ

Երգողների գլխաւորին. Դաւթի Սաղմոս

1 Տէր, դու քննում էս ինձ և ճանաչում էս ինձ։
2 Դու գիտում էս իմ նստիլն ու վեր կենալը, իմ մտածմունքներն հեռուանց էս իմանում։
3 Իմ գնալն ու պառկիլը քննում էս. և իմ բոլոր ճանապարհները գիտում էս։
4 Քանզի բնաւ խօսք չկայ իմ լեզուի վերայ. ահա, ով Տէր, դու ամենը գիտում էս։
5 Իմ եռևիցն և առջևիցը պատում էս ինձ, և քո ձեռքն ինձ վերայ էս դրել։
6 Այս գիտութիւնը ինձ համար շատ զարմանալի է, բարձր է, չեմ կարող հասնիլ նորան։
7 Ո՞ւր գնամ քո Հոգուցը. և ե՞ւ երեսիցդ ո՞ւր փախչիմ։
8 Եթէ վերանամ երկինքը՝ դու այնտեղ էս. և եթէ դժոխքը փռեմ, ահա դու այնտեղ էս։
9 Եթէ արշալուսի թևերն առնեմ և ծովի վերջի ծայրերումը բնակուիմ.
10 Այնտեղ էլ ձեռքդ կ'առաջնորդէ ինձ, և աջդ կ'պահէ ինձ։
11 Եւ եթէ ասեմ. Թող խաւարն ինձ ծածկէ. այն ժամուայ գիշերն էլ լոյս կ'լինի իմ շուրջը։
12 Խաւարն էլ քեզ համար խաւար չէ, գիշերն էլ ցերեկի պէս լոյս է. խաւարն էլ լուսոյ պէս է քեզ համար։

13 Քանզի դու ստեղծեցիր իմ երիկամունքները, և ծածկեցիր ինձ մօրս որովայնումը։
14 Գոհանում եմ քեզանից, որ սքանչելի և զարմանալի կերպով ստեղծուեցայ. զարմանալի են քո գործքերը, և իմ անձը լաւ գիտէ։
15 Իմ ոսկերքը չծածկուեցաւ քեզանից, երբոր ստեղծուեցայ ծածուկ տեղը. և երկրի խորութիւնների ներսումը ճարտարութեամբ կազմուեցայ։
16 Քո աչքերը տեսան իմ կերպարանքը՝ դեռ անպատրաստ. և քո գրքումը գրուած էին այն բոլոր օրերը որ լինելու էին՝ երբոր նորանցից մէկը դեռ չկար։
17 Քանի՛ պատուական են ինձ համար քո խորհուրդները, ով Աստուած. քանի՛ մեծ է նորանց թիւը։
18 Եթէ համարեմ նորանց՝ աւազից շատ են. զարթնացայ, և դեռ քեզ հետ եմ։
19 Երանի թէ ամբարիշտներին սպաներ, ով Աստուած. և դուք, արիւնահեղ մարդիկ, հեռացէք ինձանից։
20 Նորանք քեզ հակառակ են խօսում նենգութեամբ. և քո թշնամիքը սուտ երդում են անում։
21 Քեզ ատողներին ես չէ՞մ ատում, ով Տէր. և քեզ դէմ ապստամբողներից չէ՞մ գզուում։
22 Կատարեալ ատելութեամբ ատում եմ նորանց. ինձ թշնամի են դառել։
23 Փորձիր ինձ, ով Աստուած, և ճանաչիր իմ սիրտը. քննիր ինձ և ճանաչիր իմ մտածմունքները.
24 Եւ տես թէ չար ճանապարհում լինիմ, և առաջնորդիր ինձ դէպի յաւիտենական ճանապարհը։

ՍԱՂՄ. ՃԽ

Սրտողների գլխաւորին. Դաւթի Սաղմոս։

1 Տէր, ապրեցրու ինձ չար մարդուց. պահիր ինձ բռնաւոր մարդուց.
2 Որ չար բաներ են մտածում սրտով, և ամեն օր կռիւներ են յարուցանում։
3 Իրանց լեզուները սրում են օձի նման. իժ օձի թոյն կայ նորանց շրթունքների տակ։ (Սէլա։)
4 Տէր, պահիր ինձ ամբարշտի ձեռքից, պահիր ինձ բռնաւոր մարդկանցից, որ հնարում են իմ ոտքերը սահեցնելու համար։
5 Ամբարտաւանները ինձ համար որոգայթ և շուաններ թաղցրին, որոգայթ լարեցին իմ ճանապարհումը. վարժեր դրին ինձ համար։ (Սէլա։)
6 Ես ասացի Տիրոջը, Դու ես իմ Աստուածը. Տէր լսիր աղաչանաց ձայնին։
7 Ով Տէր Եհովայ, իմ փրկութեան զօրութիւնը. դու հովանի ես իմ գլխին կռւի օրումը։
8 Տէր, մի տար ամբարշտին իր ցանկութիւնը, մի յաջողեր նորա չար խորհուրդը. նորանք կը բարձրանան։ (Սէլա։)
9 Ինձ պաշարողների գլուխը՝ իրանց շրթունքների վատաւակը պիտի ծածկէ։
10 Թող այրող ածուխներ ընկնին նորանց վերայ. թող նա կրակը գցէ նորանց՝ խոր հորերը՝ որ ըստնաւ չկանգնեն։
11 Զարտխօս մարդը չի հաստատուիլ երկրի վերայ. չարիքը կ'որսայ բռնաւոր մարդուն, մինչև որ կործանուի։
12 Գիտեմ որ Տէրը դատաստան կ'անէ խեղճի համար և իրաւունք աղքատի համար։
13 Իրաւի որ արդարները կ'գոհանան քո անունիցը, և ուղիղները կ'բնակուին քո երեսի առջև։

ՍԱՂՄ. ՃԾԱ

Դաւթի Սաղմոս։

1 Տէր, ես կանչում եմ դէպի քեզ. շուտ արա դէպի ինձ. ականջ դիր ձայնիս՝ ես դէպի քեզ կանչելիս։

2 Իմ աղօթքը թող ընդունելի լինի ինչպէս խունկ քո առջեւ. իմ ձեռաց բարձրանալը իրիկուայ պատարագի պէս։

3 Տէր, պահապան դիր իմ բերանին. իմ շրթունքներէն դուռը պահպանիր։

4 Սիրտս մի դարձներ չար բանի վերայ, որ չարութիւնով վատ գործեր չգործեմ անօրէնութիւն անողներուն հետ. և նոցանց ախորժալի կերակրիցը չուտեմ։

5 Արդարը թող խրատէ ինձ քաղցրութիւնով, և յանդիմանէ ինձ. նա գլխի իւղ է. իմ գլուխը չի մերժիլ. քանզի իմ աղօթքը նոցանց չարագործութեանց ժամանակին էլ ընթացք է։

6 Նոցանց դատաւորները քարերի վերայ ընկան, և իմ խօսքերը լսեցին որ քաղցր են։

7 Ինչպէս որ վարնորդն ու սկօս ճեղքողը հողի վէջ ցանուած է, այնպէս ցրուած են մեր ոսկերքը դժոխքի բերանուն։

8 Բայց, Տէր Եհովայ, իմ աչքերը դէպի քեզ են ուղղած. քեզ եմ յուսացած, իմ անձը մի մատներ։

9 Պահիր ինձ այն որոգայթներէն որ լարեցին ինձ համար, և չարագործներուն վտիտներէն։

10 Ամբարիշտները իրանց ցանցերը պիտի ընկնին, մինչդեռ ես բոլորովին անց կ'կենամ։

ՍԱՂՄ. ՃԽԶ

Դաւթի վարդապետութիւն. երբոր քարայրումն էր. աղօթք։

1 Ձայնովս դէպի Տէրն եմ աղաղակեմ. ձայնովս Տիրոջն եմ աղաչեմ։

2 Իմ հառաչանքը թափեմ եմ նորա առջեւ. իմ նեղութիւնը պատմեմ եմ նորա առջեւ։

3 Երբոր հոգիս մնչվեմ է ինձանեմ, դու ճանաչեմ ես այն ժամանակ իմ գնացքը. այն ճանապարհին, որ գնեմ եմ, ծածկեմ լարեցին ինձ համար։

4 Նայիր աջ կողմին և տես. մէկը չկայ որ ինձ ճանաչէ. ապաստանը կորաւ ինձանից. մէկը չը կայ որ իմ անձի համար հոգա անէ։

5 Տէր, դէպի քեզ եմ աղաղակեմ և ասեմ. Դու ես իմ յոյսը՝ իմ բաժինը կենդանեաց երկրումը։

6 Նայիր դէպի իմ աղաղակը, ինչու որ շատ խեղճ եմ. փրկիր ինձ իմ հալածիչներէցը, ինչու որ ինձանից զօրաւոր են։

7 Իմ անձը հանիր բանտիցը որ գոհանամ անունիդ. արդարները կ'պատեն ինձ, երբոր ինձ բարութիւն անես։

ՍԱՂՄ. ՃԽԹ

Դաւթի Սաղմոս։

1 Ով Տէր, լսիր իմ աղօթքին. աղաչանքիս ականջ դիր քո ճշմարտութիւնովը. միտք դիր ինձ քո արդարութիւնովը։

2 Եւ դատաստանի մի մտներ քո ծառայի հետ. ինչու որ ոչ մէկ կենդանի չարդարանայ քո առջեւ։

3 Քանզի թշնամին հալածեմ է իմ անձը, կեանքս վայր է դնեմ գետինը և նստեցնեմ է ինձ խաւարի մէջ ինչպէս որ առաջուց մեռածները։

4 Եւ իմ հոգին մռչեմ է ինձանեմ, իմ սիրտն աւերեմ է ինձանեմ։

5 Յիշեմ եմ առաջի օրերը. մտածեմ եմ քո բոլոր գործքերի վերայ. քո ձեռացդ գործքի վերայ խորհեմ եմ։

6 Ձեռքերս տարածեմ եմ դէպի քեզ. իմ անձը չոր երկրի պէս քեզ է ծարաւ։ (Սէլա։)

7 Շուտ արա, լսիր ինձ, Տէր. հոգիս մնչվեմ է. երեսդ մի ծածկիր ինձանից, որ գերեզմանի մէջ իջնողներուն չնմանիմ։

8 Առաւօտ լսել տուր ինձ քո ողորմութիւնը. ինչու որ քեզ յուսացայ. ինձ ցոյց տուր այն ճանապարհը որ պիտի գնեմ նեմ, ինչու որ դէպի քեզ եմ բարձրացնեմ իմ անձը։

9 Տէր, փրկիր ինձ իմ թշնամի-
ներիցը. քեզ եմ ապաւինել։
10 Սովորեցրու ինձ կատարել քո
կամքը, ինչու որ դու ես իմ
Աստուածը. քո բարի Հոգին թող
առաջնորդէ ինձ դէպի ուղիղ
երկիր։
11 Տէր, քո անունի համար ապ-
րեցրու ինձ. քո արդարութեան
համար հանիր իմ անձը նեղու-
թիւնից։
12 Եւ ողորմութիւնովդ սատա-
կեցրու թշնամիներիս և կորցրու
իմ անձի բոլոր նեղիչներին. քան-
զի ես քո ծառան եմ։

ՍԱՂՄ. ՁԻԹ

Դաւթի (Սաղմոս)

1 Օրհնեալ է Տէրը՝ իմ վէմը,
որ սովորեցնում է ձեռներս կռ-
ւիւ անել և մատներս պատե-
րազմիլ։
2 Ողորմութիւնս և ապաւէնս,
օգնականս և փրկիչս. պահապա-
նըս՝ որին յուսացած եմ, որ հը-
նազանդեցնում է իմ ժողովուր-
դըն իմ յե-ց տակ։
3 Տէր, ի՞նչ է մարդը որ նորան
ճանաչես. և մարդու որդին որ
միտք դնես նորան։
4 Մարդը նման է ունայնութեան
նորա օրերը անցնող շուքի պէս
են։
5 Տէր, խոնարհեցրու երկինքդ և
իջիր. մօտեցիր լեռներին՝ և կը
ծխեն։
6 Փայլատակիր փայլատակով և
ցրվիր նորանց. նետերդ ուղարկիր
և շփոթեցրու նորանց։
7 Ձեռքդ ուղարկիր բարձրից և
ազատիր ինձ. և փրկիր ինձ շատ
ջրերից՝ օտար որդոց ձեռքից.
8 Որ նորանց բերանը ունայն բան
է խօսում, և նորանց աջը սուտ-
թեան աջ է։
9 Ով Աստուած, նոր օրհնու-
թիւն կ'երգեմ քեզ. տասնաղեղ
տաւիղով սաղմոս կ'ասեմ քեզ։
10 Որ փրկութիւն է տալիս թա-
գաւորներին, և իր Դաւիթ ծա-
ռային փրկում է չար սուրից։
11 Ազատիր ինձ և փրկիր ինձ օ-
տար որդոց ձեռքից, որ նորանց
բերանը ունայն բան է խօսում,
և նորանց աջը սուտութեան աջ է.
12 Որ մեր որդիքը մեծանան տղա-
յութիւնից ինչպէս նորատունկ
ծառեր, և մեր աղջիկները ինչ-
պէս անկիւնի սիւներ՝ պալատների
ձևով քանդակուած։
13 Որ մեր շտեմարանները լիքը լի-
նէն և զանազան կերակուր բղխեն,
մեր ոչխարները հազարներ ու տա-
սն հազարներ լինեն մեր փողոց-
ներումը։
14 Որ մեր եզները պարարտ լինեն,
և ախտ ու կորուստ չլինի՝ և ոչ
աղաղակ մեր փողոցներումը։
15 Երանի այն ժողովրդին, որ նո-
րա վի-ը այսպէս է. երանի այն
ժողովրդին, որ նորա Աստուածը
Եհովան է։

ՍԱՂՄ. ՁԻԵ

Դաւթի օրհնաբանութիւն։

1 Բարձր կ'անեմ քեզ, ով իմ
Աստուած, ով թագաւոր. և
կ'օրհնեմ քո անունը յաւիտեան
յաւիտենից։
2 Ամեն օր կ'օրհնեմ քեզ, և ա-
նունդ կ'գովեմ յաւիտեան յա-
ւիտենից։
3 Մեծ է Տէրը և շատ օրհնեալ.
և նորա մեծութեանը չափ չկայ։
4 Ազգ ազգի կ'գովէ քո գործե-
րը. և կ'պատմեն քո զօրութիւն-
ները։
5 Քո փառաւոր մեծութեան գե-
ղեցկութեան, և քո հրաշալի
գործքերի վերայ կ'մտածեմ։
6 Քո ահաւոր զօրութեան մա-
սին կ'խօսին. և ես քո մեծու-
թիւնը կ'պատմեմ։
7 Քո շատ քաղցրութեան յիշա-
տակը կ'հրատարակեն. և ես կը
պատմեմ քո մեծութիւնը։
8 Ողորմած և գթած է Տէրը.
երկայնամիտ և բազումողորմ։
9 Բարի է Տէրը ամենի համար.
և նորա ողորմութիւնը իր բոլոր
գործքերի վերայ է։
10 Տէր, քո բոլոր գործքերը պի-

ոչ գոհանան քեզանից, և քո աւուրքերը պիտի օրհնեն քեզ։
11 Քո թագաւորութեան փառքը պիտի խօսին. և քո զօրութիւնները պիտի պատմեն։
12 Որ իմացնեն մարդկանց որդոց նորա զօրութիւնները, և նորա թագաւորութեան փառաւոր ծառութիւնը։
13 Քո թագաւորութիւնը ամենայաւէտ թագաւորութիւն է, և քո իշխանութիւնը միշտ ազգից մինչև ազգ։
14 Տէրը հաստատուն է ընկածներին, և կանգնեցնում է ամեն կռացածներին։
15 Ամենի աչքերը քեզ են սպասում, և դու տալիս ես իրանց կերակուրը իրանց ժամանակին։
16 Դու բաց ես անում քո ձեռքը, և կշտացնում ամեն կենդանիներին հաճութիւնով։
17 Արդար է Տէրն իր բոլոր ճանապարհներումը. և սուրբ՝ իր բոլոր գործքերումը։
18 Տէրը մօտիկ է բոլոր դէպի իրան կանչողներին. այն ամենին որ կանչում են նորան ճշմարտութիւնով։
19 Իրանից վախեցողների կամքը անում է նա. և նորանց աղաղակին լսում և նորանց փրկում է։
20 Տէրը պահում է բոլոր իրան սիրողներին. բայց բոլոր ամբարիշտներին կ'կորցնէ։
21 Իմ բերանը Տիրոջ օրհնութիւն կ'խօսի, և ամեն մարմին նորա սուրբ անունը կ'օրհնէ յաւիտեան յաւիտենից։

ՍԱՂՄ. ՃԽԷ

Ալէլուիա

1 Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը։
2 Տիրոջը կ'օրհնեմ իմ կեանքումը. իմ Աստուծոյն սաղմոս կ'ասեմ քանի որ կամ։
3 Մի յուսայք իշխաններին՝ մարդու որդին, որի մօտ փրկութիւն չկայ։
4 Նորա հոգին դուրս կ'գայ, նա դէպի իր հողը կ'դառնայ, նոյն օրը կ'կորչին նորա խորհուրդները։
5 Երանի նորան, որի օգնականը Յակոբի Աստուածն է. որ նորա յոյսն իր Եհովայ Աստուծոյն վերայ է։
6 Որ ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովը ու նորանց մէջ ամեն եղածը. որ հաւատարմութիւն է պահում յաւիտեան.
7 Որ իրաւունք է անում զրկուածներին. և հաց տալիս սովածներին. Տէրը արձակում է կապուածներին։
8 Տէրը բանում է կոյրերի աչքերը. Տէրը կանգնեցնում է ընկածներին. Տէրը սիրում է արդարներին։
9 Տէրը պահում է պանդուխտներին. նա ընդունում է որբերին և այրեաց[1]ներին. բայց ամբարիշտների ճանապարհը ծռեցնում է։
10 Տէրը կ'թագաւորէ յաւիտեան. քո Աստուածը, ով Սիօն, ազգից ազգ։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԽԵ

1 Օրհնեցէք Տիրոջը. ինչու որ բարի է մեր Աստուծոյն սաղմոս ասել. ինչու որ քաղցր և գեղեցիկ է օրհնաբանութիւնը։
2 Տէրը շինում է Երուսաղէմին, և ժողովում է Իսրայէլի ցրուածները։
3 Նա բժշկում է սրտով կոտրուածներին և փաթաթում նորանց խոցերը։
4 Նա համարում է աստեղաց թիւը, և կանչում նորանց ամենը անուններով։
5 Մեծ է մեր Տէրը և շատ զօրաւոր նորա իմաստութեանը չափ չկայ։
6 Տէրը հաստատում է խեղճերին, բայց խոնարհեցնում ամբարիշտներին մինչև հողը։
7 Երգեցէք Տիրոջը գոհութեամբ. մեր Աստուծոյն սաղմոս երգեցէք քնարով։
8 Որ ծածկում է երկինքը ամպերով, անձրև է պատրաստում երկրիս համար, և խոտ է բուսցնել տալ լեռներին։

9 Որ նա անուանները տալիս է
իրանց կերակուրը, ագռաւի ձա-
գերին որ կանչում են էրա՛:
10 Նա ձիան զօրութեան հաճու-
թիւն չունի, զօրեղ մարդու ար-
բանեակներին չէ հաւանում:
11 Տէրը հաւանում է իրանից վա-
խեցողներին, որ իր ողորմութեա-
նըն են յուսացած:
12 Ով Երուսաղէմ, գովիր Տիրո-
ջը. օրհնիր քո Աստուածդին, ով
Սիօն:
13 Քանի նա պնդացնում է քո
դռների նիգերը, և քո որդիանցն
օրհնում է քեզանում:
14 Նա խաղաղութիւն է տալիս
քո սահմաններին, և կշտացնում
է քեզ պարարտ ցորենով:
15 Նա ուղարկում է իր խօսքը
երկրի մէջ. և նորա խօսքը վա-
զում է շուտ, շուտ:
16 Նա բուրդի պէս ձիւն է տա-
լիս. և եղեամ է ցանում փոշի
մոխրի պէս:
17 Իր սառուցը ուղարկում է կո-
տորների պէս. նորա ցրտի առջև
ո՞վ կ'կենայ:
18 Նա ուղարկում է իր խօսքը և
հալում նորանց. իր քամին փչել
է տալիս և ջուրեր են վազում:
19 Նա պատմում է իր խօսքը Յա-
կոբին, իր հրամաններն ու իրա-
ւունքները Իսրայէլին:
20 Ոչ մի ազգի այսպէս չարաւ.
և նորանք չեն ճանաչում նորա
դատաստանները: Ալէլուիա:

ՍԱՂՄ. ՃԽԷ

Ալէլուիա:

1 Օրհնեցէք Տիրոջը երկնքից.
օրհնեցէք նորան ի բարձունս:
2 Օրհնեցէք նորան, ով նորա
ամեն հրեշտակներ. օրհնեցէք նո-
րան բոլոր զօրքեր:
3 Օրհնեցէք նորան, ով արեգակն
ու լուսին. օրհնեցէք նորան ա-
մեն լուսաւոր աստղեր:
4 Օրհնեցէք նորան, ով երկնից
երկինք. և ջուրեր որ երկնքի վե-
րայ:
5 Թող Տիրոջ անունը օրհնեն.
ինչու որ նա հրամայեց և նորանք
ստեղծուեցան:
6 Եւ նորանց կանգնացրեց միշտ
յաւիտեան յաւիտենից. կանոն
դրաւ, որ չի խափանուիլ:
7 Օրհնեցէք Տիրոջը երկրից, ով
վիշապ ձուկներ և ամեն անդունդ-
ներ:
8 Կրակ և կարկուտ, ձիւն և
ծուխ և մրրիկ քամի, որ նորա
խօսքը կատարում էք.
9 Լեռներ և ամեն բլուրներ,
պտղաբեր ծառեր և ամեն մայրի
ծառեր.
10 Կենդանիք և ամեն անասուն,
սողացողք և թեւաւոր թռչուն-
ներ.
11 Երկրի թագաւորներ և ամեն
ազգեր. իշխաններ և երկրի ամեն
դատաւորներ.
12 Երիտասարդներ և աղջիկներ.
ծերեր տղաներով միասեղ.
13 Օրհնեն Տիրոջ անունը. ինչու
որ միայն նորա անունը բարձր է.
նորա փառքը երկինքի և երկրի
վերայ է:
14 Եւ նա բարձրացրեց իր ժողո-
վրդի եղջիւրը. իր ամեն սրբերի
Իսրայէլի որդոց՝ իր մօտի ժողո-
վրդի օրհնութիւնը: Ալէլուիա:

ՍԱՂ. ՃԽԹ

Ալէլուիա:

1 Երգեցէք Տիրոջը նոր երգ՝ նորա
օրհնութիւնը սրբերի ժողովքու-
մը:
2 Թող Իսրայէլն ուրախ լինի իր
Ստեղծողովը. Սիօնի որդիքը ցն-
ծան իրանց Թագաւորովը:
3 Թող նորա անունը օրհնեն ցն-
ծութիւնով. թմբուկով ու քն-
նարով սաղմոս ասեն նորան:
4 Քանզի Տէրը հաւանում է իր
ժողովրդին. խեղճերին փառաւո-
րում է փրկութիւնով:
5 Թող սուրբերն ուրախանան
փառքով, ցնծան իրանց անկող-
նում:
6 Աստուծոյ գովաստքը նորանց
բերանում լինի. և երկսայրի
սուր նորանց ձեռքում:

7 Որ վրէժխնդրութիւն առնեն հեթանոսների վրէ, և պատիժ՝ ազգերի վրէ։
8 Որ նորանց թագաւորներին կապեն շղթաներով, և նորանց իշխաններին ոտնակապերով։
9 Որ նորանց վերայ առնեն գրուած դատաստանը. այս փառքը նորա ամեն սրբերին։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԺ

Ալէլուիա։

1 Օրհնեցէք Աստուծոյն իր սրբութեանը. օրհնեցէք նորան իր զորութեան հաստատութիւնովը։
2 Օրհնեցէք նորան իր զօրութիւնովը. օրհնեցէք նորան իր մեծ փառաւորութիւնովը։
3 Օրհնեցէք նորան շեփորի ձայնով. օրհնեցէք նորան տաւիղով և քնարով.
4 Օրհնեցէք նորան թմբուկով և պարով. օրհնեցէք նորան թելաւոր նուագարաններով և սրինգով։
5 Օրհնեցէք նորան ձայնաւոր ձնծղաներով. օրհնեցէք նորան մեծաձայն ձնծղաներով։
6 Ամեն շունչ ունեցողը թող օրհնէ Տէրոջը։ Ալէլուիա։

ԳԻՐՔ ԱՌԱԿԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Իսրայէլի թագաւոր՝ Դաւթի որդի Սողոմոնի առակները։
2 Իմաստութիւն և խրատ գիտենալու համար, հանճարի խօսքերը հասկանալու համար,
3 Իմաստութեան խրատն ընդունելու համար, այսինքն արդարութիւն, իրաւունք և ուղղութիւն.
4 Պարզամիտներին խորագիտութիւն տալու համար, երիտասարդին՝ գիտութիւն և խորհրդածութիւն.
5 Թող լսէ իմաստունը և աւելացնէ ուսումը, և բանիմացը վարժութիւն առնոյ,
6 Որ հասկանայ առակ և այլաբանութիւն, իմաստուններուն խօսքերը և խրթնադատութիւնները։
7 Իմաստութեան սկիզբը Տէրոջ վախն է. միայն յիմարները կ'անարգեն իմաստութիւնը և խրատը։
8 Լսէր, որդեակս, քո հօր խրատը, և մի մերժէր քո մօր հրահանգը։
9 Վասն զի դրանք շնորհաց պսակ են քո գլխին, և մանեակներ՝ քո պարանոցին։
10 Որդեակս, եթէ քեզ հրապուրեն մեղաւորները, դու հաճութիւն չտաս։
11 Եթէ ։Ե՛կ մեզ հետ՝ սրեան դարանամուտ լինինք, թաք կենանք անմեղի դէմ՝ զուր տեղը։
12 Դժոխքի պէս նորանց ողջ ողջ կուլ տանք, և ամբողջ ամբողջ գուբն իջնողներին պէս։
13 Ամեն տեսակ պատուական բաներ գտնենք, լցնենք մեր տուները աւարով։
14 Վիճակդ գցիր մեր մէջը, մեր ամենների քսակը մէկ կ'լինի։
15 Որդեակս, նորանց հետ ճանապարհ մի գնալ. ոտքդետ պահիր նորանց շաւիղներից։
16 Վասն զի նորանց ոտքերը չարութեան են վազում, և շտապում են արիւն թափելու։
17 Վասն զի ի զուր է վարմի տարածուիլը ամեն որևիցէ թևաւորի աչքի առջև.
18 Բայց դորանք դարանամուտ են լինում նորանց արեանը, թաքչըվում են նորանց անձանց համար։
19 Այսպէս են ամեն արծաթասիրութեան մոլի մարդու շաւիղները. որ իրան անձնատուր եղողի հոգին առնում է։

20 իմաստութիւնը ապրեցուցանէ զիրաւսն, հրապարակներուն մէջ տալիս ձայնը։
21 Նա ոգեկոչից առիթներ դիմելի է կանչում, դռներուն մուտքերուը մը, և քաղաքին մէջ խօսում իր խօսքերը։
22 Մինչև ե՞րբ պիտի, ով անմիտներ, անմտութիւն սիրէք, և մինչև ե՞րբ ծաղր անելը պիտի հաճելի լինի ծաղր անողներին. և յիմարները ատե՞ն գիտութիւնը։
23 Ետ դարձէք դէպի իմ յանդիմանութիւնը. ահա ես իմ հոգին կ'թափեմ ձեզ վերայ, իմ խօսքերը կ'հայտնեմ ձեզ։
24 Որովհետև ես կանչեցի, և դուք չուզեցիք, ձեռքս մեկնեցի և ուշադրող չկար,
25 Եւ դուք մերժեցիք իմ բոլոր խորհուրդը, և իմ յանդիմանութիւնը չուզեցիք.
26 Ես էլ կ'ծիծաղեմ ձեր թշուառութիւնովը, և ծաղր կ'անեմ ձեր վախը հասնելիս։
27 Երբոր ձեր վախը կործանման պէս կ'գայ, և ձեր թշուառութիւնը մրրկի նման կ'հասնէ, երբոր ձեզ վերայ նեղութիւն և տառապանք կ'գայ.
28 Ան ժամանակ ինձ կ'կանչեն, բայց ես չեմ պատասխանել, առաւօտանց կանուխ ինձ կ'որոնեն, բայց ինձ չեն գտնել.
29 Վասն զի գիտութիւնն ատեցին, և չընտրեցին Տիրոջ վախը.
30 Իմ խորհուրդը չուզեցին, իմ բոլոր յանդիմանութիւնն անարգեցին։
31 Ուրեմն նորանք իրանց ճանապարհի պտղին պտղից ուտեն, և իրանց խորհուրդներէցը կշտանան։
32 Վասն զի անմիտներուն խոտորումը նորանց պիտի սպանէ, և յիմարներուն անհոգութիւնը պիտի կորցնէ իրանց։
33 Բայց ինձ լսողը ապահով կը բնակէ, և հանդարտ կ'լինի չարիքի վախէցը։

ԳԼ. Բ

1 Որդեակս, եթէ իմ խօսքերն ընդունես, և իմ պատուէրներս պահես քեզ մօտ.
2 Որ ականջ դնես իմաստութեանը, և սիրտդ ուղղես հանճարին,
3 Երբոր հասկացողութիւնը կանչես, և ձայն տաս հանճարին,
4 Եթէ դու նորան որոնես ինչպէս արծաթը, և դանձերի նման նորան պտրտես,
5 Ան ժամանակ կ'հասկանաս Տիրոջ երկիւղը, և Աստուծոյ գիտութիւնը կ'գտնես։
6 Վասն զի Տէրն է տալիս իմաստութիւնը, նորա բերանիցն է գիտութիւնն ու հանճարը։
7 Նա ուղիղներուն համար յաջողութիւն է պահում, նա վահան է անարատութեամբ գնացողներուն համար.
8 Որ իրաւունքի ճանապարհները պահպանէ. նա պահում է իր բարեպաշտների ճանապարհը։
9 Ան ժամանակ կ'հասկանաս արդարութիւնն ու իրաւունքը, ուղղութիւնը և ամեն բարի ուղին։
10 Վասն զի իմաստութիւնը կը մտնէ քո սիրտը, և գիտութիւնը ախորժելի կ'լինի քո հոգուն։
11 Խոհեմութիւնը քեզ պիտի պահէ, հանճարը պիտի քեզ պաշտպանէ.
12 Որ քեզ ազատէ չար ճանապարհիցը, և նենգութիւններ խօսող մարդուցը,
13 Որ ուղղութեան ճանապարհները թողում են, որպէս զի խաւարի ճանապարհներովը գնան.
14 Որ ուրախանում են չարութիւն անելով, և զուարճանում են չար նենգութիւնով.
15 Որոնց շաւիղները ծուռ են, և որոնք խոտորում են իրանց ուղիներովը։
16 Որ քեզ ազատէ օտար կնոջից, և ուրիշ կնոջից որ կակուղ խօսքեր է տալիս.
17 Նա որ ձգել է իր երիտասարդութեան բարեկամին, և մոռացել իր Աստուծոյ ուխտը։
18 Որովհետև նորա տունը խոտտակում է դէպի մահ, և նորա ուղիները՝ դէպի ուրուականները։

19 Նորա մօտ գնացողները այլ ևս
ետ չեն դառնալ, և կենաց ճա-
նապարհները չեն հասնիլ։
20 Որպէս մի բոլիների ճանապար-
հովը գնաս, և արդարների ճա-
նապարհները պահես։
21 Վասն մի ուղիները պիտի բը-
նակին երկրի վերայ, և կատար-
եալները պիտի մնան նորանում։
22 Իսկ անզգամները պիտի բնա-
ջինջ լինին երկրիցը, և նենգա-
որները խլուին նորանից։

ԳԼ. Գ

1 Որդեակս, իմ օրէնքը մի մոռա-
նար, և քո սիրտը թող պահէ
իմ պատուէրները.
2 Որովհետև երկայն օրեր և կեն-
դանութեան տարիներ, և խա-
ղաղութիւն կ'շատացնեն քեզ
համար.
3 Շնորհքն ու ճշմարտութիւնը
քեզ չեն ձդիլ, նորանց պնդացրու
քո պարանոցի վերայ, գրիր նո-
րանց քո սրտի տախտակի վերայ։
4 Այսպէս գու շնորհք և հաճու-
թիւն կ'գտնես Աստուծոյ և մարդ-
կանց առջև։
5 Տիրոջն ապաւինիր քո բոլոր
սրտովը, և քո հասկացողութեան-
ը մի վստահիր։
6 Քո բոլոր ճանապարհներումը
մը ճանաչիր նորան, և նա կ'ուղ-
ղէ քո ճանապարհները։
7 Գու քո աչքի առջև իմաս-
տուն մի լինիր, վախիր Տիրոջիցը
և հեռացիր չարից։
8 Այս առողջութիւն կ'լինի քո
*մարմնոյ համար և պտրտութ-
իւն՝ քո ոսկորներին։
9 Պատուիր Տիրոջը քո առաջ-
ուածքիցը, և քո բոլոր բերքերի
երախտիքներիցը.
10 Այն ժամանակ կ'լցուին քո շը-
տեմնարանները առատութեամբ,
և քո հնձաններդը պիտի գեղանին
նոր գինիով։
11 Տիրոջ խրատը, որդեակս, մի
անտրտնջիր, և նորա յանդիմանու-
թիւններիցը մի ձանձրանար.

12 Վասն որ Տէրը որին որ սիր-
ում է՝ յանդիմանում է, և ինչ-
պէս մէկ հայր որ իր որդուն սի-
րում է։
13 Երանի այն մարդուն որ իմաս-
տութիւն է գտել, և այն մարդ-
ուն, որ հանճար է ստանում։
14 Վասն որ նորա շահը լաւ է
արծաթի շահիցը, և նորա արդ-
իւնքը՝ մաքուր ոսկուց։
15 Նա պատուական է *գոհարնե-
րից, և քո բոլոր ցանկալի բան-
երը նորան չարժեն։
16 Նորա աջ ձեռքին օրերի եր-
կայնութիւն կայ, նորա ձախ
ձեռքին՝ հարստութիւն և փառք։
17 Նորա ճանապարհները հաճելի
ճանապարհներ են, և նորա բոլոր
շաւիղները խաղաղութիւն են։
18 Նա կենաց ծառ է նորանց հա-
մար որ բռնել են նորան, և նա
երան պինդ բռնողին երջանիկ
կ'անէ։
19 Տէրը իմաստութեամբ հիմնեց
երկիրը, հանճարով հաստատեց
երկինքը։
20 Նորա գիտութեամբը անդունդ-
ները յորդեցին, և ամպերը ցող
ցանեցին։
21 Որդեակս, սրանք չգնան քո
աչքի առաջից, պինդ պահիր խո-
հեմութիւնն ու խորհուրդը։
22 Եւ նորանք քո հոգու համար
կեանք լինին, և շնորհք քո պա-
րանոցի համար։
23 Այն ժամանակ ապահով կ'գը-
նաս քո ճանապարհովը, և ոտք
չի գայթել։
24 Եթէ պառկես, չես վախենալ.
և կ'պառկես և քունդ քաղցր կը
լինի։
25 Յանկարծահաս երկիւղիցը չես
վախենալ, և ամբարիշտների փո-
թորիկիցը, երբոր գայ։
26 Վասն որ Տէրը կ'լինի քո յոյ-
սը, և նա կ'պահէ քո ոտքը, որ
չբռնուի։
27 Բարութիւնը մի խնայիր որին
որ կ'վայելէ, երբոր ձեռքդ
զօրութիւն կայ անելու.
28 Մի ասիր քո ընկերին. գնա՝

*պորտի

*բուսաերից

միւս անգամ եկ, և էդուց կը տամ. քանի որ քեզ մօտ կայ։
29 Գո ընկերն դէմ չարութիւն մի մտածիր, քանի որ նա վստահաբար կենում է քեզ մօտ։
30 Մարդու հետ զուր տեղը մի վիճիր, եթէ նա քեզ չարութիւն չէ արել։
31 Բռնաւոր մարդուն մի նախանձիր, և նորա բոլոր ճանապարհներին մի հաւանիր.
32 վասն զի խոտորնակ մարդը գզուելի է Տիրոջը, բայց նորա մերամտութիւնը ուղիղների հետն է։
33 Ամբարշտի տանը Տիրոջ անէծքը կայ, բայց արդարների բնակարանը նա օրհնում է։
34 Իրաւ նա ծաղր անողներին ծաղրում է, իսկ խոնարհներին շնորհք է տալիս։
35 Փառք պիտի ժառանգեն իմաստունները, բայց յիմարները կը բարձրանան անարգանքով։

ԳԼ. Գ

1 Որդիք, լսեցէք հօր խրատը. և ականջ դրէք որ իմաստութիւնն իմանաք.
2 վասն զի ձեզ բարի ուսում եմ տալիս, իմ օրէնքը մի թողէք.
3 Որովհետև ես իմ հօր որդին էի, փափուկ և միամօր էի։
4 Նա ինձ սովորեցնում էր և ասում ինձ. Թող քո սիրտը բռնէ իմ խօսքերը, պահիր իմ պատուէրները և ապրիր։
5 Իմաստութիւն ստացիր, հանճար ստացիր, մի մոռանար, և մի խոտորիր իմ բերանի խօսքերից։
6 Մի թողիր նորան, և նա քեզ կ'պահէ. նորան սիրիր, և նա քեզ կ'պաշտպանէ։
7 Իմաստութեան սկիզբը է՝ իմաստութիւն ստացիր. և քո ամեն ստացուածքով հանճար ստացիր։
8 Գու նորան մեծարիր և նա քեզ կ'բարձրացնէ. նա քեզ կ'պատուէ, երբոր նորան գրկես։
9 Նա քեզ գեղեցիկ պսակ կը տայ քո գլխի համար, և փառաց թագ կ'պարգևէ քեզ։
10 Լսիր, որդեակս, և ընդունիր իմ խօսքերը, և կ'շատանան քո կենաց տարիները։
11 Իմաստութեան ճանապարհը քեզ սովորեցրի, քեզ առաջնորդեցի ուղղութեան շաւիղներուն։
12 Գու գնալիս՝ քո քայլերը պիտի չնեղուին, և վազելիս չես պատկռիլ։
13 Պինդ բռնիր խրատը, մի ձգիր. նորան պահիր, վասն զի նա քո կեանքն է։
14 Անզգամների ճանապարհը մի մտնիր. և մի մտն գալ չարերի ճանապարհումը։
15 Թող տուր նորան, նորա վրայ մի գնար, նորանից խոտորիր և անցիր։
16 Վասն զի նորանք չեն քնիլ, մինչ որ չարութիւն չանեն. և քնից կ'զրկուին, եթէ չկործանեն։
17 Վասն զի նորանք ամբարշտութեան հացն են ուտում և անիրաւութեան գինին խմում։
18 Բայց արդարների ճանապարհը ծագող լոյսի պէս է. որ գնալով լուսաւորվում է, մինչև որ կատարեալ օր է լինում։
19 Ամբարիշտների ճանապարհը խաւարի նման է, չգիտեն թէ ինչով են գայթակղում։
20 Որդեակս, ուշադիր եղիր իմ խօսքերին, և ականջդ տուր իմ առածներին.
21 Թող նորանք չգնան քո աչքի առջևից, պահիր նորանց քո սրտի մէջ։
22 Վասն զի նորանք կեանք են նորանց գտնողներին, և նորանց բոլոր մարմնոյն բժշկութիւն։
23 Ամեն զգուշութիւնից առաւել զգուշացիր քո սրտին, վասն զի նորանից է կենաց ելքը։
24 Հեռացրու քեզանից բերանի ծռութիւնը, և նենգաւոր շրթունքները թող հեռու լինին քեզանից։
25 Թող քո աչքերը ուղիղ նայեն, և քո արտևանունքները

ուղղուած լինին դէպի քո առջեւ։
26 Շիտակ արա քո ոտքերի շաւիղը, և քո բոլոր ճանապարհները հաստատուին։
27 Մի խոտորիր աջ և ձախ, ոտքդ հեռացրու չարիցը։

ԳԼ. Ե

1 Որդեակս, մտիկ տուր իմ իմաստութեանը, և ականջ դիր իմ հանճարին,
2 Որ խոհեմութիւն պահես, և գիտութիւն պահեն քո շրթունքները։
3 Վասն զի մեղրի խորիսխ են կաթեցնում օտար կնոջ շրթունքները, և նորա քիմքը իւղից կակուղ է։
4 Բայց նորա վախճանը դառն է օշինդրի պէս, սուր է երկայրի սուրի պէս։
5 Նորա ոտքերը իջնում են մահը, դժոխքին հասնում նորա քայլերը։
6 Կենաց ճանապարհով նա չի գնալ, նորա ճանապարհները փոփոխական են, դու չգիտես։
7 Եւ հիմա, որդեակք, ինձ լսեցէք, և մի հեռանաք իմ բերանի խօսքերիցը։
8 Այն կնոջից հեռու պահիր քո ճանապարհը, և չմօտենաս նորա տան դրանը.
9 Որ մի դուցէ քո փառքը ուրիշներին տաս, և քո տարիները անողորմին։
10 Որ մի դուցէ օտարները կշտանան քո զօրութիւնիցը, և քո վաստակը օտարի տունը գնայ.
11 Եւ քո վերջումը հառաչես, երբոր միսդ ու մարմինդ կ'մաշուին.
12 Եւ ասես. Ինչպէս ես խրատը ատեցի, և սիրտս անտրգեց յանդիմանութիւնը.
13 Եւ չլսեցի ինձ խրատողի ձայնին, և իմ ականջներս չտուի իմ ուսուցիչներին։
14 Քիչ է ինծի որ ամեն մի չարութեան մէջ լինիմ, ժողովքի և ժողովրդի մէջ ընկղմիմ։
15 Դու քո ջրափոսիցը ջուր խմիր, և քո ջրհորի միջիցը հոսող ջուրերը։
16 Քո աղբիւրները տարածուին դրսում, հրապարակներում՝ ջրերի վտակները։
17 Մէնակ քոնը լինին, և ոչ թէ օտարներինը և քոնը։
18 Թող քո աղբիւրը օրհնեալ լինի, և ուրախացիր քո երիտասարդութեան կնոջ հետ.
19 Այն սիրելի եղնիկը և շնորհալի այծեամը՝ նորա տներքները թող քեզ կշտացնեն ամեն ժամանակ, նորա սիրովը միշտ զմայլիս։
20 Եւ ինչո՞ւ համար, որդեակս, օտարի կնոջ զմայլես, և օտար կնոջ ծոցը գրկես։
21 Վասն զի Տիրոջ աչքի առջեւն են մարդուս ճանապարհները և նա ուղղում է նորա բոլոր շաւիղները։
22 Զարագործին պիտի բռնեն նորա անօրէնութիւնները, և նա պիտի բռնուի իր մեղքի չուաններովը։
23 Նա պիտի մեռնի առանց խրատի, և պիտի մոլորի իր յիմարութեան շատութիւնովը։

ԳԼ. Զ

1 Որդեակս, եթէ դու երաշխաւոր եղար քո ընկերի համար, և ձեռքդ տուիր օտարի համար,
2 Դու բռնուել ես քո բերանի խօսքովը, և քեզ բռնել տուել քո բերանի ասածներովը։
3 Սո այսպէս արա, որդեակս, և ազատիր քեզ, որովհետև քո ընկերի ձեռքն ընկար։ գնա խոնարհուիր և թախանձիր քո ընկերին։
4 Քուն մի տար աչքերիդ, և հանգիստ տարեւանուններիդ.
5 Քեզ ձեռքիցը ազատիր այծեամի պէս, կամ հաւորսի ձեռքից պատսաժ թռչնի պէս։
6 Գնա մրջիւնին մօտ, ով ծոյլ, նորա ճանապարհները տես և իմաստուն եղիր.
7 Որ չունի իշխան, ոստիկան և տէրտէր.

8 Բայց իր կերակուրը պատրաստում է ամառը, և իր ուտելիքը հունձին է ժողովում։
9 Մինչև ե՞րբ ես պառկելու, ով ծոյլ, ե՞րբ ես պարմներու քնիցդ։
10 Մի քիչ քուն, մի քիչ նընջել, մի քիչ էլ ձեռք ձեռքի դնել պառկել.
11 Այն ժամանակը քո աղքատութիւնը ճանապարհորդի պես կ'գայ, և քո կարօտութիւնը՝ ապառազինեալ մարդու պես։
12 Անպիտան մարդը՝ անօրէն մարդը ծուռ բերանով է գնում գոլիս,
13 Նա ակնարկում է աչքերովը, ոտքերովը խօսում, մատներովը բան սովրեցնում.
14 Չէնգութիւն կայ նորա սրտում, նա միշտ չարութիւն է հնարում, կռիւներ տարածում։
15 Սորա համար յանկարծ կ'գայ նորա կորուստը, նա յանկարծ պիտի կոտրուի, և ողջութիւն պիտի չգտնէ։
16 Վեց բան կայ որ Տէրն ատում է, և եօթը՝ գզուելի են նորա հոգու առջև.
17 Ամբարտաւան աչքեր, սուտ խօս լեզու, և անմեղ արիւն թափող ձեռքեր.
18 Չար խորհուրդներ հնարող սիրտ, չարութեան համար վազելու շտապող ոտքեր.
19 Սուտեր փչող անիրաւ վկայ, և եղբարց մէջ կռիւներ գցող։
20 Որդեակս, պահիր քո հօր պատուիրանքը, և քո մօր օրէնքը մի մերժիր։
21 Նորանց միշտ կապիր քո սրտի վերայ, փաթաթիր քո վզին նորանց։
22 Թող գնալու ժամանակդ քեզ առաջնորդեն, քնած ժամանակդ քեզ պահպանեն, և երբոր զարթնես, թող քեզ հետ խօսակցեն։
23 Վասն զի պատուիրանքը ճրագ է և օրէնքը լոյս, և կենաց ճանապարհ խրատի յանդիմանութիւնները։
24 Որ քեզ պահէ չար կնոջիցը, օտար կնոջ շողոքորթող լեզուիցը.
25 Մի ցանկանար նորա գեղեցկութեանը քո սրտովը, և թող նա քեզ չխոփշտակէ իր աչուընքներովը։
26 Որովհետև մի պոռնիկ կնոջ պատճառով հացի չափ են մինչև մի նկանակ հացի. և ընդունայնասիրը պատուական հոգին կ'որսայ։
27 Հնա՞ր է որ մի մարդ կրակ կրէ իր ծոցումը, և նորա հանդերձները չայրուին։
28 Կամ կարելի՞ է որ մի մարդ կայծերի վերայ մանի գայ, և նորա ոտքերը չխանձուին։
29 Այսպէս է նաև իր դրացու կնոջ մօտ գնացողը, անմեղ չէ ամեն նորան դիպչողը։
30 Չեն արհամարհիլ այն գողին, որ գողացել է իր սովը կշտացնելու համար, որովհետև սոված էր։
31 Սակայն եթէ բռնուի, եօթնապատիկ պիտի վճարէ, իր տան բոլոր առացուածքը պիտի տայ։
32 Բայց կին պզծողը անմիտ է, իր հոգին է փչացնում, ով որ անէ այս։
33 Նա վէրք և անարգանք կ'գտնէ, և նորա նախատինքը չի ջնջուիլ։
34 Վասն զի նախանձը մարդուս կատաղութիւնն է, և նա չի խնայիլ վրէժխնդրութեան օրը։
35 Նա ոչ մի փրկանքի երեսին մտիկ չի անիլ, և նա չի հաճիլ, որքան էլ շատացնես դու կաշառքը։

ԳԼ. Է

1 Որդեակս, պահիր իմ խօսքերը, և իմ պատուիրանքները թաքցրու քեզ մօտ։
2 Պահիր իմ պատուիրանքները որ ապրիս, և իմ օրէնքը՝ քո աչաց բիբին պէս։
3 Կապիր նորանց քո մատներին, գրիր նորանց քո սրտի տախտակի վերայ։
4 Իմաստութեանն ասիր. Իմ քոյրըն ես. և հանճարին Ցանօթ կոչիր։
5 Որ քեզ պահէ օտար կնոջից, այն օտար կնոջից, որի խօսքերը շողոքորթում են։

6 Վասն զի իմ ասն պատուհասնելցը, իմ վանդակի միջովը մեռիկ էի տալիս։
7 Եւ տեսայ անմիտների մէջ, և նկատեցի երիտասարդ պատանեաց մէջ մէկ պակասամիտին,
8 Որ անց էր կենում փողոցում այն կնոջ կողքովը, և նորա տան ճանապարհը բռնեց,
9 Օրը երեկոյեան մթնած ժամնադակը, երբոր գիշերուան խաւարը կոխել էր։
10 Եւ ահա մի կին նորան դիմաւորեց, պոռնկի ծածկոյով և նենգաւոր սրտով.
11 Խիստ վրդովուած էր նա և անձնակոտոր, նորա ոտքերը չէին կենում իր տանը։
12 Երբեմն դուրսը, երբեմն հրապարակներում, և ամեն անկիւնի մօտ դարանամուտ էր լինում։
13 Եւ սա բռնեց նորան և համբուրեց նորան, երեսը պնդացրեց և ասաց նորան.
14 Ես խաղաղութեան զոհեր պիտի անէի, այսօր կատարել եմ իմ ուխտերը.
15 Նորա համար դուրս եկայ քո դիմացը, քո երեսը խնդրելու և գտայ քեզ.
16 Փափուկ բարձերով տաքել եմ անկողինս, Եգիպտոսի երփներանգ հիւսուածքով,
17 Ննջարանիս մէջ խնկել եմ զմուռս, հոլուէ և կինամոն։
18 Եկ տափանք զուարճանանք մինչև առաւօտ՝ զմայլինք սիրով.
19 Վասն զի այրս տանը չէ, հեռու ճանապարհ է գնացել.
20 Փողի քսակն առել է իր մօտը, լուսնի լրման օրն է տուն գալու։
21 Այսպէս իր շատ խօսքերովը հրապուրեց նորան, իր շրթունքների շողոքորթութեամբը քշեց տարաւ նորան.
22 Գնաց նա էլ իսկոյն նորա ետևից, ինչպէս որ արջառը կ'գնայ սպանդանոցը, և ինչպէս գիժը գէպի շղթայով պատժուելը։
23 Մինչև որ նետը ճեղքէ նորա լերդը, ինչպէս որ թռչունը շտապում է դէպի ծուղակը, և չգիտէ որ նա իր հոգին համար է։
24 Եւ հիմա, որդեակներ, լսեցէք ինձ, և ուշադրութիւն արէք իմ բերանի խօսքերին։
25 Թող սիրտ չխաոտրէ դէպի նորա ճանապարհները, և մի մոլորուիր նորա շաւիղներումը։
26 Վասն զի նա շատերին է խոցոտել վայր գցել և ամեն նորա սպանուածները զօրաւոր էին։
27 Դժոխքի ճանապարհներն է նորա տունը, որ իջնում են մահուան աւեհարանները։

ԳԼ. Ը

1 Ահա իմաստութիւնը կանչում է, և հանճարը ձայն է տալիս.
2 Բարձրերի գլխին, փողոցների վերայ, շաւիղների մէջտեղը կանգնած է.
3 Դռներն մօտ, քաղաքի մուտքումը դրանց մտնելու տեղը աղաղակում է.
4 Ձեզ եմ կանչում, ով մարդիկ, և իմ ձայնը դէպի մարդկանց որդիներին է։
5 Հասկացէք, ով անմիտներ, իմաստութիւն, և ով յիմարներ, խելք հասկացէք.
6 Լսեցէք, վասն զի ազնիւ բաներ եմ խօսելու, և իմ շրթունքները պիտի բանում ուղիղ բանեբով։
7 Վասն զի քիմքս ճշմարտութիւն է խօսելու, և իմ շրթունքներն համար պիղծ է անպատմութիւնը։
8 Արդարութեամբ են բերանիս բոլոր խօսքերը, նորանց մէջ դարձուած ու ծուռ բան չկայ։
9 Նորանք ամենքն էլ ուղիղ են հասկացողին, և շիտակ են գիտութիւն գտնողներին։
10 Առէք իմ խրատը և ոչ թէ արծաթի, և գիտութիւնը ընտիր ոսկուց աւելի է։
11 Վասն զի իմաստութիւնը գոհարներից լաւ է, և բոլոր ցանկալի բաները չարժեն նորան։
12 Ես իմաստութիւնս բնակում

եմ խորագիտութեամբ, և խորհուրդների գիտութիւնը գտել եմ։

13 Տիրոջ երկիւղը չարն ատելն է, հպարտութիւնն ու ամբարտաւանութիւնը և չար գնացքը և նենգաւոր բերանը ես ատում եմ։

14 Իմն է խորհուրդը և յաջողութիւնը, ես եմ հանճարը, զօրութիւնը իմն է։

15 Ինձանով են թագաւորները թագաւորում, և նախարարները արդարութեան կանոններ դնում։

16 Ինձանով են իշխում իշխանները, նաև ազնուականները — աշխարհքի բոլոր դատաւորները։

17 Ես ինձ սիրողներին կ'սիրեմ, և ինձ որոնողները կ'գտանեն ինձ։

18 Հարստութիւն և փառք կայ ինձ մօտ, մնայուն առատութիւն և արդարութիւն։

19 Լաւ է իմ պտուղը ընտիր և մաքուր ոսկուցը, և իմ արդիւնքը՝ ընտիր արծաթից։

20 Ես մեն եմ գալիս արդարութեան ճանապարհումը, իրաւանց շաւիղների մէջումը,

21 Որ ինձ սիրողներին էական բաները ժառանգեցնեմ, և նրանց շտեմարանները լցնեմ։

22 Տէրն ինձ ունէր իր ճանապարհի սկզբումը, իր վաղեմի գործքերից առաջ։

23 Ես *օծուել եմ յաւիտենից հետէ՝ 'ի սկզբանէ երկրիս, յառաջ գալուցն առաջ։

24 Անդունդները չեղած եմ ծընուել, ջրառատ աղբիւրները չեղած։

25 Տակաւին լեառները չձգուած, բլուրներից առաջ եմ ես ծընուել։

26 Երբոր տակաւին չէր ստեղծել երկիրը և դաշտերը և աշխարհքի սկզբնական շամանդաղները։

27 Նա երկինքները պատրաստելիս՝ ես այնտեղ էի, երբոր նա անդնդոց վերայ կամար էր գծում։

28 Երբոր նա պնդացնում էր վերի ամպերը, հաստատում էր անդընդոց աղբիւրները։

29 Երբոր դնում էր ծովի համար նորա կանոնը, որ ջուրերն իրանց եզերքից դուրս չանցնեն, երբոր գցում էր երկրի հիմունքը,

30 Ես ժամանակ ես նորա կըշտին ճարտարապետ էի, և ուրախութիւն էի ամեն օր՝ զուարճանալով նորա առջև ամեն ժամանակ։

31 Ուրախանում էի նորա երկրի աշխարհքումը, և իմ զուարճութիւնը մարդկանց որդիների հետ էր։

32 Եւ հիմա, որդեակք, լսեցէք ինձ. և երանի՛ նորանց, որ պահում են իմ ճանապարհները։

33 Խրատ լսեցէք և իմաստուն եղէք, և մի մերժէք։

34 Երանի՛ է այն մարդուն որ ինձ մտիկ է անում, որ ամեն օր հսկում է իմ դռների մօտ իմ դրանդեաց մուտքերը պահելու համար։

35 Վասն զի ինձ գտնողը կեանք է գտել, և Տիրոջից շնորհք կստանայ։

36 Բայց ինձ դէմ մեղանչողը կը վնասէ իր հոգին, բոլոր ինձ ատողները մահն են սիրում։

Գլ. Թ

1 Իմաստութիւնը շինեց իր տունը, տաշեց նորա եօթը սիւները.

2 Մորթեց իր մատուներին, խառնեց իր գինին, նաև պատրաստեց իր սեղանը.

3 Նա ուղարկեց իր աղախիններին, կանչում է քաղաքի բարձր տեղերի գլխին.

4 Ով որ պարզամիտ է, թող դառնայ այստեղ քաշուի. և պակասամիտին ասում է.

5 Եկէք կերէք իմ հացից, և խմեցէք իմ խառնած գինուցը։

6 Թողեցէք յիմարութիւնը, և ապրեցէք. և վարուեցէք խոհեմութեան ճանապարհումը։

7 Որ անողին խրատողը իր վերայ անարգանք է առնում, և ամբարշտին յանդիմանողը՝ իր արատը։

8 Որ անողին մի յանդիմա-

*Հաստատուել եմ

նիր, որ քեզ չսուտէ, յանդիմանիր իմաստունին, և նա քեզ կը սիրէ։

9 Գէտ-ին տուր իմաստունին, և էլ աւելի իմաստուն կ'դառնայ. արդար մարդուն սովորեցրու, և նա կ'աւելացնէ ուսումը։

10 Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, և Ամենասրբին ճանաչելը՝ հանճար.

11 Վասն զի քո օրերն ինձանով կ'շատանան, և քո կենաց տարիները կ'աւելացնեմ։

12 Եթէ իմաստուն ես, քեզ համար ես իմաստուն. եթէ ծաղր անող ես, միայն դու ես քաշելու։

13 Յիմարութիւնը աղաղակող կնոջ պէս կ'լինի, անմիտ է և մի բան չգիտէ.

14 Եւ նստած է իր տան մուտքումը քաղաքի բարձր տեղերի աթոռի վերայ.

15 Ազաղակելով ճանապարհի անցուդարձողներին, որ ուղիղ գնում են իրանց ճանապարհները.

16 Ով որ պարզամիտ է, թող այստեղ քաշուի, և պակասամիտին ասում է,

17 Գողացուած ջուրերը քաղցր են լինում, և ծածուկ հացը ախորժելի։

18 Բայց նա չգիտէ որ այնտեղ մահացեալներ կան, դժոխքի անդունդներումն են նորա հրաւիրուածները։

ԳԼ. Ժ

Սողոմոնի առակները

1 Իմաստուն որդին կ'ուրախացնէ իր հօրը, և յիմար որդին իր մօր տրտմութիւնն է։

2 Անօրէնութեան գանձերը օգուտ չեն նիր, բայց արդարութիւնը ազատում է մահից։

3 Տէրը չի թողիլ որ արդարի հոգին սովէ, բայց ամբարիշտների բաղձանքը խափանում է։

4 Ծոյլ ձեռքը աղքատ է շինում. իսկ ժրերի ձեռքը հարստացնում է։

5 Ամառը ժողովողը խոհեմ որդի է, հունձքին քնողը ամօթ բերող որդի է։

6 Օրհնութիւններ կան արդարի գլխին, և բռնութիւնը կ'խցկէ ամբարիշտների բերանը։

7 Արդարների յիշատակը օրհնեալ կ'լինի, բայց ամբարիշտների անունը կ'փտէ.

8 Իմաստուն սիրտ ունեցողը պատուէրը կ'ընդունէ, բայց յիմար շրթունք ունեցողը կ'կործանուի։

9 Կատարեալութեամբ վարուողը ապահով կ'գնայ. բայց իր ճանապարհները ծռողը կ'ճանչուի։

10 Աչքով սկնարկողը նեղութիւն է տալիս, և յիմար շրթունք ունեցողը կ'կործանուի։

11 Կենաց աղբիւր է արդարի բերանը, բայց բռնութիւնը կ'խցկէ ամբարիշտների բերանը։

12 Ատելութիւնը կռիւներ կ'քրքրէ, բայց սէրը կ'ծածկէ ամեն յանցանքները։

13 Հանճարեղի շրթանց վերայ իմաստութիւն կ'գտնուի, և գաւազան անմիտի մէջքի համար։

14 Իմաստունները գանձում են գիտութիւնը, բայց յիմարի բերանը մօտ է կործանման։

15 Հարուստի ճոխութիւնը իր զօրութեան քաղաքն է, իսկ աղքատների չքաւորութիւնը էր-ն կործանումն է։

16 Արդարի գործողութիւնը կենաց համար է. ամբարշտի արդիւնքը՝ մեղաց համար։

17 Ճանապարհ է դէպի կեանք խրատ պահելը, բայց յանդիմանութիւնը ձգողը մոլորում է։

18 Ատելութիւն ծածկողը սուտ խօս է և բամբասանք հնարողը անմիտ է։

19 Շատախօսութեան մէջ յանցանքը պակաս չի լինիլ, բայց իր շրթունքները զսպողը խելացի է։

20 Ընտիր արծաթ է արդարի լեզուն. էւ ամբարիշտների սիրտը չնչին բանի պէս է։

21 Արդարի շրթունքները շատերին են առաջնորդում, բայց յիմարները մեռնում են պակասամտութեան մէջ։

22 Տիրոջ օրհնութիւնն է հարըստացնում, և չարչարութիւլը մի բան չէ աւելացնում նորա վերայ։
23 Ցիմարի համար չարութիւն անելը զուարճքի պէս է, բայց իմաստութիւնը՝ հանճարեղ մարդունը։
24 Չարի վախեցած բանը գալիս է նորա վերայ. բայց արդարների փափաքը տրվում է։
25 Երբոր մրրիկը անց է կենում, ամբարիշտը բնաջինջ է լինում, բայց արդարը յաւիտեան հաստատուն է։
26 Ինչպէս որ քացախն է ատամներին, և ծուխն աչքերին. նոյնպէս է և ծոյլը իր ուղարկողի համար։
27 Տիրոջ երկիւղը կ'աւելացնէ օրերը, և ամբարիշտների օրերը կը կարճանան։
28 Արդարների յոյսն ուրախութիւն է, բայց ամբարիշտների ակնկալութիւնը կ'կորչէ։
29 Զօրութիւն է Տիրոջ ճանապարհը կատարեալի համար, բայց կործանում՝ անօրէնութիւն գործողների համար։
30 Արդարը յաւիտեան չի սասանիլ, բայց անպտուղները չեն բնակել երկրի վերայ։
31 Արդարի բերանը իմաստութիւն է բղխում, բայց նենգաւոր լեզուն պիտի կտրուի։
32 Արդարի շրթունքը գիտեն հաճելի բանը, բայց ամբարիշտների բերանը՝ նենգութիւն։

ԳԼ. ԺԱ

1 Խարդախ կշիռքը զզուանք է Տիրոջ համար. բայց ուղիղ քարը նորան հաճելի է։
2 Հպարտութիւնը եկաւ, անարգութիւն էլ կ'պայ. բայց խոնարհների հետ կայ իմաստութիւն
3 Ուղիղների ճշմարտութիւնը նրանց կ'առաջնորդէ, բայց նենգաւորների ծռութիւնը նրանց կ'փչացնէ։
4 Օգուտ չունի հարստութիւնը բարկութեան օրը, բայց արդարութիւնը կ'ազատէ մահից։
5 Կատարեալների արդարութիւնը կ'ուղղէ նորանց ճանապարհը, բայց անզգամը կ'ընկնէ իր անբզդամութեամբը։
6 Ուղիղների արդարութիւնը նրանց կ'ազատէ. բայց ցանկութեան մէջ կ'բռնուին նենգաւորները։
7 Չարը մեռնելիս ակնկալութիւնը կ'փչանայ, և անօրէնների յոյսը կ'կորչէ։
8 Արդարը կ'ազատուի նեղութիւնից, բայց ամբարիշտը կ'գայ նորա տեղը։
9 Կեղծաւորը բերանով կ'փչացնէ իր հարևանին, բայց արդարները կ'ազատուին գիտութեամբ։
10 Արդարների յաջողակութեամբը քաղաքը կ'ուրախանայ, և չարերի կորած ժամանակը ցնծութեան ձայն կ'լինի։
11 Ուղիղների օրհնութիւնով քաղաքը կ'բարձրանայ, բայց ամբարիշտների բերանով կ'կործանուի։
12 Իր հարևանին արհամարհողը պակասամիտ է, բայց խոհեմ մարդը կ'լռէ։
13 Բանսարկութեան մեջ եկողը գաղտնիքը կ'յայտնէ, բայց հաւատարիմ հոգի ունեցողը կ'ծածկէ բանը։
14 Առաջնորդութիւն չլինելիս ժողովուրդը կ'ընկնէ, բայց խորհրդատուների շատութեամբը փրկութիւն կ'լինի։
15 Անշուշտ չարիքի կ'հանդիպէ նա որ օտարին երաշխաւոր դառնայ, բայց երաշխաւորութիւնն առողջ ապահով է։
16 Շնորհալի կինը պատիւ կ'առնայ. և ուժեղները հարստութիւն կ'յափշտակեն։
17 Ողորմած մարդը իր անձին լաւութիւն կ'անէ, բայց անգութ մարդը կ'տանջէ իր մարմինը։
18 Անզգամը անօգուտ գործ է գործում, իսկ արդարութիւն սերմողը՝ ճշմարիտ վարձք։
19 Ինչպէս որ արդարութիւնը հաստատ է կեանքին, նոյնպէս և չարութեան հետևողը՝ իր մահուանը։
20 Զզուելի են Տիրոջը ծուռ սիրտ

ունեցողները, բայց նորան հա-
ճելի են կատարեալ ճանապարհի
ունկերը։
21 *Անշուշտ որ անպատիժ չի մը-*
նալ չարը, բայց արդարների սե-
բուններ կ'ազատուի։
22 *Ինչ որ է մի ոսկի օղակը խոզի*
քթին, այն է մի գեղեցիկ կին
որ խոհեմութիւն չունի։
23 *Արդարների ցանկացածը միայն*
բարութիւն է, բայց ամբարիշտ-
ների ակնկալածը բարկութիւն է։
24 *Կայ որ ցրուած է, և էլ է ա-*
ւելանում. բայց չափից դուրս
խնայողը կայ, ասկոյն կարօտու-
թեան է հասնում։
25 *Օրհնութիւն տուող անձը կը*
գիրանայ, և առատողը ինքն էլ
կ'առատուի։
26 *Ցորենը ետ պահողին կ'անիծէ*
ժողովուրդը, բայց օրհնութիւն
կ'գայ ծախողի գլխին։
27 *Բարութիւն որոնողը ուզում է*
հաճելի լինել. բայց չարութիւն
ուզողը, նորան կ'հանդիպէ։
28 *Իր հարստութեանը յուսացողը*
վայր կ'ընկնէ, բայց արդարները
պիտի ծաղկին դալարի պէս։
29 *Իր տունը տանջողը քամի կը*
ժառանգէ, և յիմարը պիտի ծա-
ռայէ իմաստուն սիրտ ունեցո-
ղին։
30 *Արդարի պտուղը կենաց ծառ*
է, և հոգիներ շահողը իմաս-
տուն։
31 *Ահա արդարը առնում է երկ-*
րիս վերայ իր հատուցումը. ապա
ո՞ւր մնաց որ անզգամը և մեղա-
ւորը։

ԳԼ. ԺԲ

1 *Ով սիրում ուսուցանութիւն է սի-*
րում, բայց յանդիմանութիւն
ատողը անխելք։
2 *Բարին Տէրոջից շնորհք կ'առա-*
նայ, բայց նենգաւոր մարդուն
նա կ'դատապարտէ։
3 *Մարդս չի հաստատուիլ ամ-*
բարշտութիւնով, իսկ արդարնե-
րի արմատը չի սասանիլ։
4 *Առաքինի կինը իր մարդու պըս-*
ակն է. բայց նորա ոսկորների
մէջ փտութեան պէս է նախա-
տինք բերողը։
5 *Արդարների մտածողութիւնքը*
իրաւունք են. իսկ ամբարիշտնե-
րի խորհուրդները՝ նենգութիւն։
6 *Ամբարիշտների խօսքը սրեան*
դարանամուտ լինել է, բայց ու-
ղիղների բերանը իրանց կ'ազատէ։
7 *Ամբարիշտները կ'կործանուին*
ու կ'չքանան. բայց արդարների
տունը կ'մնայ։
8 *Իր խոհեմութեան չափ կ'գով-*
ուի մարդ. բայց ծուռ սիրտ ու-
նեցողը կ'անարգուի։
9 *Լաւ է անշուք լինող՝ բայց ծա-*
ռայ ունեցողը, ինքն իրան մեծա-
ցնող ու հացի կարօտ եղողից։
10 *Արդարը գիտէ իր անասունի*
հոգսը, բայց ամբարիշտների ո-
ղիքները անգութ են։
11 *Իր երկիրը գործողը կ'կշտանայ*
հացով, բայց դատաւկներին հե-
տևողը պակասութիւն է։
12 *Ամբարիշտը փափաքում է չա-*
րերի ուսերին, բայց արդարների
արմատը ճչ–ղէ կ'տայ։
13 *Շրթունքների խորամանկու-*
թեան մէջ չար որոգայթ կայ.
բայց նեղութիւնից դուրս է գա-
լիս արդարը։
14 *Մարդս բերանին պտուղներից*
կ'կշտանայ բարիքներով, և մար-
դու ձեռաց արարքը ետ կ'դառ-
նայ իրան։
15 *Յիմարի ճանապարհը ուղիղ է*
իր աչքի առջև, բայց խրատին
լսողը իմաստուն է։
16 *Յիմարի բարկութիւնը նոյն օ-*
րը կ'իմացուի. բայց անարգան-
քը ծածկող է խորագէտը։
17 *Ճշմարտութեամբ ոգևորուածը*
արդարութիւն կ'յայտնէ. բայց
սուտ վկան՝ խարէբայութիւն։
18 *Շատախօս է լինում, որ սուրի*
պէս խոցոտում է. բայց իմաս-
տունների բժշկութիւն է։
19 *Ճշմարտախօս շրթունքը յա-*
ւիտեան կ'մնայ. բայց վայրկեան-
ական է ստախօս շրթունքը։
20 *Նենգութիւն կայ չարութիւն*
խորհողների սրտումը. բայց խա-
ղաղութիւն խորհուրդ տուողնե-
րի համար՝ ուրախութիւն։

21 Արդարին ոչ մի չարիք չի հան-
դիպիլ, բայց ամբարիշտները լիքն
են չարիքներով։
22 Զգուելի են Տիրոջ համար ար-
ատախօս շրթունքները, բայց հա-
ւատարմութիւն անողները հա-
ճելի են նորան։
23 Խորագէտ մարդը գիտեցածը
ծածկող է, բայց յիմարների
սիրտը անմտութիւն կ'հրատա-
րակէ։
24 Աշխատասէրների ձեռքը կ'իշ-
խէ, բայց ծոյլը հարկատու կ'լինի։
25 Մարդուս սրտին վիշտը կ'ճնշէ
նորան, բայց բարի խօսքը նորան
կ'ուրախացնէ։
26 Արդարը *ճանապարհ է ցոյց
տալիս իր ընկերին, բայց ամբ-
արիշտների ճանապարհը իրանց կը
մոլորեցնէ։
27 Ծոյլը չի խորովիլ իր որսը,
բայց մարդուս պատուական ը-
ստացուածքը աշխատասիրութիւ-
նըն է։
28 Արդարութեան ճանապարհու-
մը կեանք կայ, և նորա շաւիղ-
ների ճանապարհումը մահ չկայ։

ԳԼ. ԺԳ

1 Իմաստուն որդին լ'ըե իր հօր
խրատը, բայց ծաղր անողը չի
լսիլ կշտամբելը։
2 Մարդս բերանին պտղից բա-
րիքներ կ'ուտէ, բայց անօրէնների
հոգին՝ բռնութիւն։
3 Իր բերանը զսպողը կ'պահէ իր
հոգին. իր շրթունքները լայն բաց
անողը կործանում է իրան հա-
մար։
4 Փափաքում է և չունի ծոյլի
հոգին. բայց աշխատասէրների
հոգին կ'պարարտանայ։
5 Արդարը ատում է սուտ խօս-
քը, բայց ամբարիշտը այսպանում
ու խայտառակում է իրան։
6 Արդարութիւնը կ'պահէ կա-
տարեալ վարքը, բայց անզգա-
մութիւնը կ'կործանէ մեղաւորին։
7 Կան որ իրանց հարուստ են
ձևացնում և ոչինչ չունին. ի-
րան աղքատ ձևացնողներ էլ՝ որ
շատ ստացուածք ունին։
8 Մարդուս կեանքի փրկանքը իր
հարստութիւնն է, բայց աղքա-
տը յանդիմանութիւն չի լսիլ։
9 Արդարների լոյսը պիտի զուար-
թանայ, բայց ամբարիշտների ճը-
րագը կ'հանգչէ։
10 Միմիայն կռիւ կ'ծագէ ամբար-
տաւանութիւնից, բայց խրատ-
ւածների մօտ իմաստութիւն
կայ։
11 Ստացուածքը անայնասիրու-
թիւնից կ'պակասէ, բայց քիչ
քիչ ժողովողը կ'շատացնէ։
12 Ուշացած յոյսը սիրտը կ'հիւան-
դացնէ, բայց կենաց ծառ է կա-
տարուած փափաքը։
13 Խօսքն արհամարհողը իրան է
վնասում, իսկ պատուիրանքից
վախեցողը կ'վարձատրուի։
14 Իմաստունի օրէնքը կենաց
աղբիւր է, մահուան որոգայթ-
ներից խոյս տալու համար։
15 Բարի խմաստութիւնը շնորհք
կ'տայ, բայց խորամանկների ճա-
նապարհը կոշտ է։
16 Ամեն խորագէտ իմաստու-
թեամբ կ'գործէ, բայց անմիտը
յիմարութիւն կ'տարածէ։
17 Անզգամ պատգամաւորը չար-
եաց մէջ կ'ընկնէ, բայց մի հա-
ւատարիմ դեսպանը բժշկու-
թիւն է։
18 Աղքատութիւն և նախատինք
կայ խրատը մերժողի համար, իսկ
յանդիմանութիւնը պահողը կը
պատուի։
19 Կատարուած փափաքը սիրե-
լի է հոգուն, բայց յիմարների
համար գզուելի է չարութիւնից
հեռանալը։
20 Իմաստուններին հետ վարուողը
իմաստուն կ'դառնայ. բայց տրխ-
մորների հետ ընկերացողը կ'չա-
րանայ։
21 Մեղաւորի հետևից կ'գնայ չա-
րիքը, բայց արդարներին բարիք
կ'հատուցուի.
22 Բարին ժառանգութիւն կ'թո-
ղէ որդոց որդիների համար, բայց
արդարի համար է պահուած մե-
ղաւորի կայքը։

*դերազանց է իր ընկերից

23 Աղքատների խոհեմութիւնը շատ ուսելիք է լինում. բայց կայ որ կորչում է անիրաւութենից։
24 Գաւազանը խնայողը սուտ է իր որդուն. բայց նորան սիրողը կանուխ կ'խրատէ նորան։
25 Արդարը կ'ուտէ մինչև իր անձը կ'կշտանայ. բայց ամբարիշտների փորը կարօտ կ'մնայ։

ԳԼ. ԺԳ

1 Կանանց իմաստութիւնը շինում է իր տունը, բայց յիմարութիւնը իր ձեռքով քանդում է նորան։
2 Իր ուղղութեան մէջ վարողը վախենում է Տիրոջից, բայց իր ճանապարհները ծռածը անարգում է նորան։
3 Յիմարի բերանումը գաւազան թեան գաւազան կայ, բայց իմաստունների շրթունքները պահում են նորանց։
4 Արջառ չլինելիս մսուրը մաքուր է, բայց արդիւնքի առատութիւնը եզի ոյժովն է։
5 Ճշմարտութեան վկան սուտ չի խօսիլ, բայց սուտը կ'փչէ ստախօս վկան։
6 Իմաստութիւն է որոնում ծաղր անողը, և չկայ. բայց դիտութիւնը դիւրին է բանիմացի համար։
7 Գնա առջևից յիմար մարդու, որ բնաւ չիմացար թէ դիտութեան շրթունքներ ունի։
8 Խորագէտի իմաստութիւնը իր ճանապարհը հասկանալն է. բայց յիմարների անմտութիւնը խարդախութիւն է։
9 Յիմարները ծաղրում են յանցանքը, բայց ուղիղների մէջ հաճութիւն կայ։
10 Սիրտն է գիտէ իր հոգու ցաւը, և նորա ուրախութեանը օտարը չի խառնուիլ։
11 Ամբարիշտների տունը կ'կործանուի, բայց ուղիղների վրանը պիտի ծաղկէ։
12 Կայ ճանապարհ որ ուղիղ է մարդուս առջև, բայց նորա վերջը մահուան ճանապարհներ են։
13 Ծիծաղելիս էլ սիրտը կ'տրտմէ, և նորա ուրախութեան վերջը սուգ է։
14 Խոտորած սիրտը կ'կշտանայ իր ճանապարհներից, բայց բարի մարդը ինքն իրանից։
15 Պարզամիտը հաւատում է ամեն խօսքի, բայց խորագէտը քննում է իր քայլերը։
16 Իմաստունը վախենում և հեռանում է չարից, բայց յիմարը վրդովվում է և յանձնապատան լինում։
17 Բարկասիրտը յիմարութիւն կը գործէ, և նենգամիտը կ'ատուի։
18 Անմիտները յիմարութիւն կը ժառանգեն, իսկ խորագէտները գիտութեամբ կ'պսակուին։
19 Կ'խոնարհուին չարերը բարիների առաջ, և ամբարիշտները արդարի դռներին։
20 Աղքատը իր ընկերին էլ է ատելի, բայց հարուստին սիրողները շատ են։
21 Իր ընկերին անարգողը մեղանչում է, բայց ով որ աղքատներին ողորմէ՝ երանի նորան։
22 Չէ՞ որ պիտի մոլորուին չարութիւն խորհողները. բայց ողորմութիւն ու ճշմարտութիւն կայ բարութիւն մտածողների համար։
23 Ամեն աշխատութեան մէջ շահ կայ. բայց դատարկաբանութիւնը միայն դէպի կարօտութեան է տանում։
24 Իմաստունների հարստութիւնը իրանց պսակն է, բայց յիմարների յիմարութիւնը յիմարութիւն կ'մնայ։
25 Հոգիներ ազատող է հաւատարիմ վկան, բայց խարդախը սուտեր կ'փչէ։
26 Տիրոջ վախումը զօրեղ վստահութիւն կայ. և նորա որդկանց համար ապաւէն պիտի լինի։
27 Տիրոջ երկիւղը կենաց աղբիւր է մահուան որոգայթներից խոյս տալու համար։
28 Ժողովրդի բազմութեան մէջ է թագաւորի պատիւը, բայց ժողովրդի նուազութիւնը իշխանի կործանումն է։

29 Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է, բայց դիւրագրգիռը յիմարութիւն է հանուամ։
30 Մարմնոյն կեանք է մի հանդարտ սիրտը, բայց նախանձը փտութիւն ոսկորներուն։
31 Աղքատին նեղողը նորա Արարչին է անարգում. բայց Ողորմած պատուողը անոնկին կ'ողորմէ։
32 Ամբարիշտը դուրս կ'անուի իր չարութեան համար. բայց արդարը ապաւէն ունի իր մահուամբ։
33 Խոհեմի սրտումը իմաստութիւն կայ, բայց յիմարներուն սրտինը կ'իմացուի։
34 Ազգութիւնը կ'բարձրացնէ մի ազգ, բայց մեղքը անարգանք է ժողովուրդներուն։
35 Թագաւորի հաճութիւնը խոհեմ ծառայի վերան է. և նորա բարկութիւնը կ'լինի նախատինք բերողի վերայ։

ԳԼ. ԺԵ

1 Մեղմ պատասխանը կ'հանգըստացնէ բարկութիւնը, բայց վիրաւորիչ խօսքը բարկութիւն կը գրգռէ։
2 Իմաստուններուն լեզուն գիտութիւն է ճարտարախօսում, բայց յիմարներուն բերանը ղխտում է տխմարութիւն։
3 Ամեն տեղ են Տիրոջ աչքերը, քննում են չարերին և բարիներին։
4 Հաւժոդ լեզուն կենաց ծառ է, բայց նորա վերայի նենգութիւնը հոգու վէրք է։
5 Յիմարը կ'անարգէ իր հօր խրատը, բայց յանդիմանութիւն պահողը խելացի է։
6 Արդարի տանը շատ գանձ կայ, բայց ամբարիշտներուն եկամուտները՝ աւերմունք։
7 Իմաստուններուն շրթունքները գիտութիւն են տարածում, բայց յիմարներուն սիրտը *այսպէս չէ։
8 Անզգամներուն զոհը զզուանք է Տիրոջ համար, բայց ուղիղներուն աղօթքը նորան հաճելի է։
9 Զզուելի է Տիրոջ համար ամբարչտի ճանապարհը, բայց արդարութեան հետևողին սիրում է նա։
10 Շատ պատիժ կայ ճանապարհից ծռողի համար, յանդիմանութիւն ատողը պիտի մեռնի։
11 Դժոխքն ու կորուստը Տիրոջ առջևն են, էլ ո՞ւր ճնաց որ մարդկանց որդիներուն սրտերը։
12 Ծաղր անողը չի սիրել իր յանդիմանիչին, նա չի գնալ իմաստուններուն մօտ։
13 Ուրախ սիրտը կ'զուարթացնէ երեսը, բայց սիրտը վշտանալիս հոգին կ'ճնշուի։
14 Խոհեմ սիրտը գիտութիւն կ'որոնէ, բայց յիմարների բերանը յիմարութեամբ է անանուամ։
15 Թշուառի բոլոր օրերը վատ են, բայց ուրախ սիրտը մշտական խնջոյք է։
16 Լաւ է քիչը Տիրոջ երկիւղով, քան թէ մեծ գանձը՝ խռովութիւնով։
17 Լաւ է խոտեղէն կերակուր, և սէր հետը, քան թէ գեր զուարակը՝ ատելութիւնով։
18 Բարկացոտ մարդը կռիւ կ'գրգռէ, բայց երկայնամիտը վէճ կը հանգստացնէ։
19 Ծոյլի ճանապարհը փշեղէն ցանկի նման է, բայց ուղիղների ճանապարհը հարթուած է։
20 Իմաստուն որդին կ'ուրախացնէ հօրը. բայց յիմար մարդը կ'անարգէ իր մօրը։
21 Յիմարութիւնը ուրախութիւն է պակասամիտի համար. բայց խոհեմ մարդը կ'ուղղէ իր ընթացքը։
22 Դիտաւորութիւնները խանգարուում են խորհրդականների շատութիւնովը հաստատուում են։
23 Ուրախութիւն է մարդուս համար իր բերանի յարմար պատասխանը. և խօսքն իր ժամանակին ինչ լաւ է։
24 Կենաց ճանապարհը դէպի վեր է իմաստունի համար, որ խոյս տայ ցածումը դժոխքից։
25 Հպարտների տունը Տէրը քանդում է, բայց հաստատում է որբևայրու սահմանը։

*Հաստատ չէ։

26 Տիրոջը զզուելի են չար մտածմունքները, բայց մաքուր են պարկեշտ խօսքերը։
27 Իր տունը քանդում է ով որ ագահութեան մոլի է. բայց կաշառքներն ատողը կ'ապրէ։
28 Արդարի սիրտը մտածում է թէ ինչ պատասխանէ, բայց անզգամի բերանը չարութիւններ է բղխում։
29 Հեռու է Տէրը ամբարիշտներից, բայց լսում է արդարների աղօթքը։
30 Աչքի զուարթութիւնը ուրախացնում է սիրտը. բարի լուրը պարարտացնում է ոսկորները։
31 Կենաց յանդիմանութիւն լսող ականջը իմաստունների մէջ է բնակում։
32 Խրատ մերժողը իր անձն է անարգում, բայց յանդիմանութիւն լսողը խելք կ'ձեռնհ է։
33 Տիրոջ երկիւղն է իմաստութեան խրատը, և փառաց առջև խոնարհութիւն է գնում։

ԳԼ. ԺԶ

1 Մարդունն են սրտի որոշումները, բայց Տիրոջից է լեզուի պատասխանը։
2 Մարդու բոլոր ճանապարհները մաքուր են իր աչաց առջև, բայց Տէրն է հոգիները կշռողը։
3 Գցիր Տիրոջ վերայ քո գործքերը, և կ'հաստատուին քո խորհուրդները։
4 Տէրն ստեղծել է ամէնը իր նշանակութեան համար, բայց ամբարիշտին էլ չար օրուան համար։
5 Տիրոջը զզուելի են ամէն գոռոզամիտները, անշուշտ որ անմեղ չեն համարուելու։
6 Ողորմութեամբ և ճշմարտութեամբ կ'քաւուի անօրէնութիւնը և Տիրոջ վախով մարդ կ'հեռանայ չարիցը։
7 Եթէ Տիրոջը հաճելի են մարդու ճանապարհները, նաև նորա թշնամիներին կ'հաշտեցնէ նորա հետ։
8 Լաւ է քիչը արդարութեամբ, քան թէ շատ եկամուտներ առանց իրաւունքի։
9 Մարդու սիրտը խորհում է իր ճանապարհը, բայց նորա քայլերը Տէրն է հաստատում։
10 Պատգամ կայ թագաւորի շրթունքների վերայ, չեխալէ նորա բերանը դատաստանում։
11 Իրաւացի կշռաքարն ու կշիռը Տիրոջն է, նորա գործ են մեխաղի բոլոր կշռաքարերը։
12 Թագաւորներին զզուելի է չարագործութիւնը, վասն զի արդարութեամբ կ'հաստատուի աթոռը։
13 Թագաւորներին հաճելի են արդար շրթունքները, և ճշմարտախօսին նա կ'սիրէ։
14 Թագաւորի բարկութիւն մահուան հրեշտակ է. բայց իմաստուն մարդը նորան կ'մեղմացնէ։
15 Թագաւորի երեսի զուարթութիւնը կեանք է, և նորա հաճութիւնը՝ վերջի անձրևի ամպին նման։
16 Իմաստութիւն շահելը որքա՜ն լաւ է ոսկուց, և հանճար շահիլը արծաթից ընտիր է։
17 Ուղիղների պողատան չարութիւնից հեռանալն է, իր հոգին պահպանողը իր ճանապարհին ըզգոյշ կ'լինի։
18 Կորուստից առաջ փո՜մ է գոռոզութիւնը, և կործանումից առաջ ամբարտաւան հոգին։
19 Լաւ է խոնարհամիտ լինել խոնարհների հետ, քան թէ աւար բաժանել հպարտների հետ։
20 Խօսքի մասին խելօք վարուողը բարիք կ'գտնէ, և նա որ Տիրոջն է ապաւինում՝ երանի նորան։
21 Իմաստուն սիրտ ունեցողը խոհեմ կ'կոչուի. և շրթանց քաղցրութիւնը ուսումը կ'աւելացնէ։
22 Կենաց աղբիւր է խոհեմութիւնը՝ իր ունեցողի համար, բայց յիմարների խրատը յիմարութիւն է։
23 Իմաստունի սիրտը իմաստուն է անում նորա բերանը, և նորա շրթունքների վերայ ուսում է աւելացնում։
24 Մեղրի խորիսխ է վայելուչ

խօսքը, քաղցր է հոգուն և բըժշկութիւն՝ ոսկորներին։
25 Կայ ճանապարհ, որ ուղիղ է մարդուս առջև, բայց նորա վախճանը մահուան ճանապարհներ են։
26 Աշխատող անձը իրան համար է աշխատում. վասն զի բերանը պահանջում է իրանից։
27 Անպիտան մարդը չարութիւն կ'փորէ. և նորա շրթունքների վերայ կարծես այրող կրակ կայ։
28 Խոտորնակ մարդը կռիւ կ'հրնարէ, և քսուն մտերիմներին կը բաժանէ։
29 Անօրէն մարդը կ'խաբէ իր ընկերին, և նորան կ'տանէ չար ճանապարհով։
30 Կ'խփէ աչքերը, որ ծուռ բաներ մտածէ, կծռտում է իր շրթունքները՝ չարութիւն կատարում։
31 Փառաց պսակ է ալևորութիւնը. արդարութեան ճանապարհով կ'գտնուի։
32 Երկայնամիտը զօրաւորիցը լաւ է, և իր ոգին զսպողը՝ քաղաք առնողիցը։
33 Ծոցն է դնվում վիճակը, բայց Տիրոջից է դալիս նորա բոլոր վճիռը։

ԳԼ. ԺԶ

1 Լաւ է մի չոր պատառ՝ խաղաղութիւնով, քան թէ մի տուն լիքը մորթուած ուխտ՝ կռիւով։
2 Խմաստուն ծառան կ'տիրէ նախատինք բերող որդու վերայ, և եղբարց մէջ ժառանգութեան բաժին կ'տանէ։
3 Արծաթի համար հալոց կայ և ոսկուն համար՝ քուրայ, բայց սրտերը քննողը Տէրն է։
4 Չարագործը սկանջ է դնում անիրաւ շրթունքների, ստախօսը լսում կորստական լեզուին։
5 Աղքատին ծաղր անողը նորա Արարչին է անարգում, ձախորդութեան վերայ ուրախացողը անպատիժ չի մնալ։
6 Մերերի պսակը որդկանց որդիքն են, և որդկանց պարծանքը՝ իրանց Հայրերը։
7 Տխմարին չի վայելել բարձրախօս շրթունքները, ո՛ւր մնաց որ ազնուականին՝ ստախօս շրթունքը։
8 Կաշառքի ընծան պատուական քար է ունեցողին համար. ուր որ էլ դառնայ՝ յաջողվում է։
9 Յանցանքը ծածկողը բարեկամութիւն ուղող է, բայց խօսքը կրկնողը մտերիմ բարեկամներին կ'բաժանէ։
10 Յանդիմանութիւնը աւելի է ազդում խոհեմին, քան թէ հարիւր հարուածը՝ յիմարին։
11 Միշտ ապստամբութիւն է ուզում չարը, բայց մի անգութ պատգամաւոր կ'ուղարկուի նորան։
12 Լաւ է մարդուս մի ձագերը կորցրած արջ պատահէ, և ոչ թէ յիմարը իր յիմարութեան ժամանակ։
13 Լաւութեան փոխարէն ով որ չարութիւն հատուցանէ նորա տանիցը չարիքը չի հեռանալ։
14 Ջրի արձակման նման է կռիւի սկիզբը, բայց վէճը չերկարաձգուած դու ետ քաշուիր։
15 Անզդամին արդարացնողը, և արդարին անզգամ անողը, երկուսն էլ զզուելի են Տիրոջը։
16 Ի՞նչ պէտք է յիմարի ձեռքին իմաստութիւն առնելու գինը, քանի որ *խելք չունի։
17 Ամեն ժամանակ սիրող է բարեկամը, և եղբայրը նեղ օրուան համար է ծնուած։
18 Պակասամիտ մարդը ձեռքը է բռնչխաւորութեան կ'տայ, և գրաւ կ'լինի իր ընկերի առջև։
19 Յանցանք սիրող է կռիւ սիրողը, իր դուռը բարձրացնողը կործանման է մատնում։
20 Ծուռ սրտի տէրը բարութիւն չի գտնիլ, և լեզուն ծռողը չարութեան մէջ կ'ընկնէ։
21 Յիմարը արտմութիւն է իր ծնողի համար, և տխմարի հայրը չի ուրախանալ։
22 Ուրախ սիրտը օգտակար է ինչպէս դեղ, բայց կտրած սիրտը ոսկորները կ'չորացնէ։

---

*սիրտ

23 Կաշառքը ծոցիցը առնում է
ամբարիշտը, որ ծռէ իրաւունքի
ճանապարհները։
24 Խնամատուածութիւնը հասկացողի
առջևն է, բայց յիմարի աչքերի
համար՝ աշխարհքի ծայրումը։
25 Ցիմար սրտին տրտմութիւն է
իր հօր համար, և դառնութիւն
իր ծնողի համար։
26 Արդարի վերայ էլ տուգանք
դնել լաւ չէ, նաև իշխաններին
ծեծել՝ ուղղութեան համար։
27 Իր խօսքերը զսպողը գիտու-
թիւն ունի, և ծանրաբարոյ
մարդը խոհեմ է։
28 Ցիմարն էլ լռելով իմաստուն
կ'համարուի, և իր շրթունքը խը-
փողը՝ հանճարեղ։

ԳԼ. ԺԸ

1 Ինքնահաճոյ մարդը ցանկութիւն
է որոնում. ամեն յաջողակու-
թեան դէմ բորբոքւում է։
2 Ցիմարը չի սիրում խոհեմու-
թիւնից, այլ իր սրտինը կ'յայտնէ։
3 Ամբարիշտը գալիս՝ անարգանքն
էլ կ'գայ, և նախատինքի հետ՝
խայտառակութիւնը։
4 Խոր ջուրեր են մարդուս բերա-
նի խօսքերը, բղխող գետ է ի-
մաստութեան աղբիւրը։
5 Լաւ չէ ամբարշտին աչառու-
թիւն անել՝ արդարին դատա-
տանում ծռելու համար։
6 Ցիմարի շրթունքը կռիւի մէջ
կ'մտնեն, և նորա բերանը ծեծ է
կանչում։
7 Ցիմարի բերանը կործանում է
իրան համար, և նորա շրթունք-
ները՝ որոգայթ իր անձի համար։
8 Փսու մարդոց խօսքերը քաղցր
պատառների պէս են, նորանք էլ
են իջնում փորի ներսերը։
9 Իր գործումը թոյլ լինողն էլ
փչացնողի եղբայրն է։
10 Ամուր աշտարակ է Տէրոջ ա-
նունը, նորա մէջ է փախչում
արդարը և ապահան գտնում։
11 Հարուստի ստացուածքը իր ա-
մուր քաղաքն է, և բարձր պա-
րիսպի նման է նորա երևակայու-
թիւնումը։
12 Կործանումից առաջ հպարտա-
նում է մարդուս սիրտը. բայց
փառքից առաջ գնում է խոնար-
հութիւնը։
13 Ով որ բանը չլսած պատասխան
տայ, սա նորա համար յիմարու-
թիւն է և ամօթ։
14 Մարդուս հոգին ուժում է իր
հիւանդութիւնը, բայց կոտրած
սիրտն ո՞վ կարող է տանել։
15 Խոհեմ սիրտը գիտութիւն կը
շահէ. և իմաստունների ականջը
գիտութիւն կ'որոնէ։
16 Մարդուս ընծան տեղ է բա-
նում նորա համար, և նորան
տանում է մեծամեծների առ-
ջևը։
17 Արդար է երևում դատաս առ-
աջ սկսողը, բայց ոտքը գալիս
է և քննում նորան։
18 Վիճակը դադարեցնում է վէ-
ճերը, և զօրաւորներին բաժա-
նում է։
19 Վիրաւորուած եղբայրը ամուր
քաղաքից պինդ է. և վէճերը
բերդի նիգերին են նման։
20 Մարդուս բերանի պտղից կը
կշտանայ նորա փորը. նա կ'կըշ-
տանայ իր շրթունքների արդիւնքից։
21 Մահն ու կեանքը լեզուի ձեռ-
քին է, և նորան սիրողը կ'ուտէ
նորա պտուղը։
22 Ամուսնուհի գտնողը բարիք է
գտել և Տէրոջից շնորհք ստա-
ցել։
23 Աղաչանքներով է խօսում աղ-
քատը, բայց հարուստը կոշտ է
պատասխանում։
24 Բարեկամներ ունեցող մարդը
ինքս կ'քաշէ, բայց բարեկամ
կայ որ եղբօրից աւելի հաստատ է։

ԳԼ. ԺԹ

1 Լաւ է իր ուղղութիւնով գնա-
ցող աղքատը, քան թէ նենգա-
ւոր շրթունք ունեցողը որ նաև
յիմար է։
2 Առանց գիտութեան հոգին էլ
չէ լաւ, և ոտքերովը շտապողը
կ'սոհէ։
3 Մարդուս յիմարութիւնը ա-

երեւմ է նորա ճանապարհը, և նորա ակրաը արանջասմ է Տիրոջ դեմ։

4 Աստղաւածքը շատ բարեկամ ներ կ'աւելացնէ, բայց աղքատը կ'բաժանուի իր ընկերոջը։

5 Սուտաօա վկան անպատիժ չի մնալ, և սուտեր փչողը չի պրծնիլ։

6 Շատերն են խնդրասմ իշխանի երեսը, և ամեներ բարեկամ են ընծայ տուողին։

7 Աղքատի բոլոր եղբայրները զզվասմ են նորանից, ո՞ր մնաց որ նորանից չհեռանան նորա բարեկամները. նա վազասմ է խոսքերի ետևից որ ոչինչ են։

8 Խելք աշխատողը իր հոգին է սիրասմ, խոհեմութիւնը պահողը բարիք կ'գտնէ։

9 Սուտաօա վկան անպատիժ չի մնալ, և սուտեր փչողը կ'կորչէ։

10 Յիմարին չի վայելել փափկութիւն, ո՞ր մնաց մի ծառայի իշխաններին վերայ իշխել։

11 Մարդուս իմաստութիւնը նորան երկայնամիտ կ'անէ, և նորա փառքը յանցանք ներելն է։

12 Առիւծի մռնչիւնին է նման թագաւորի բարկութիւնը, իսկ նորա հաճութիւնը խոտի վերայի ցօղին պէս է։

13 Անմիտ տղան սրտմութիւն է իր հօր համար, և կնոջ վէճերը շարունակուող կաթկաթոց է։

14 Տունը և սոցուածքը ժառանգութիւն է հայրերից, բայց իմաստուն կինը՝ Տիրոջից է։

15 Ծուլութիւնը կ'գցէ մրափի մէջ, և թոյլ անձը կ'սովածանայ։

16 Պատուիրանքը պահողը իր հոգին է պահասմ, նորա ճանապարհները անարգողը պիտի մեռնէ։

17 Տիրոջն է փոխ տալիս աղքատին ողորմողը, և նա կ'հատուցանէ նորա վարձը։

18 Խրատիր որդուդ քանի որ յոյս կայ, և նորա աղաղակին ուշդ մի դարձնիր։

19 Շատ բարկասիրտը պէտս կ'կրէ, վասն զի եթէ ազատես, էլի պիտի շարունակես։

20 Խորհուրդ լսիր և խրատ ընդունիր, որ յետոյ ժամանակամիդ իմաստուն լինիս։

21 Շատ դիտաւորութիւններ կան մարդուս սրտումը, բայց Տիրոջ խորհուրդը կ'մնայ հաստատ։

22 Մարդուս գուարճանքն է իր ողորմածութիւնը, և աղքատը լաւ է սուտասս մարդուցը։

23 Տիրոջ երկիւղը դէպի կեանք է պատասխ. և մարդս նորանով կ'պահակ սուանց չարեաց հանդիպելու։

24 Ծոյլը իր ձեռքը կ'կոխէ անօթի ժէջը, բայց դէպի բերանն էլ չի դարձնիլ։

25 Ծաղր անողին ծեծիր, և միամիտը կ'խոհեմանայ. և բանիմացին յանդիմանես՝ գիտութիւն կ'ստանէ։

26 Հօրը կողոպտողը ու մօրը դուրս անողը ամօթ և խայտառակութիւն բերող տղայ է։

27 Զգիր, որդեակս, այն խրատը լսելը, որ քեզ կ'մոլորեցնէ գիտութեան խօսքերից։

28 Անպիտան վկան ծաղրում է արդարութիւնը, և ամբարիշտների բերանը անիրաւութիւն կը կլանէ։

29 Պատրաստ են ծաղր անողների համար դատաստաններ, և ծեծեր՝ յիմարների մէջքի համար։

ԳԼ. Ի

1 Ծաղրող է գինին, խռովարար՝ ցքին. և ամեն ով որ դորանցով մոլորուի՝ իմաստուն չի լինիլ։

2 Թագաւորի սպառնալը առիւծի մռնչիւնին է նման. նորան զրգռողը մեղանչում է իր անձի դէմ։

3 Պատիւ է մարդուս համար կռուից քաշուիլը, բայց ամեն յիմար կռուասէր է։

4 Ձմեռուայ պատճառով ծոյլը չի հերկիլ, հունձքին կ'մուրայ և չի ունենալ։

5 Խոր ջուրեր է մարդուս սրտի խորհուրդը, բայց խելօք մարդը նորան կ'հանէ։

6 Շատ մարդ հրատարակում է

մարդուս բարեբարութիւնը, բայց հաւատարիմ մարդուն ո՞վ կը գտնէ։

7 Ով որ իր ուղղութիւնով կը-նաւէ՝ արդար է, երանի՛ նորանից յետոյ նորա որդիքանչը։

8 Թագաւորը դատաստանի աթոռի վերայ նստելիս իր աչքերովը ցրիւ է տալիս ամեն չարութիւնը։

9 Ո՞վ կարող է ասել թէ՝ Մի՛րտս սրբել եմ, մաքուր եմ իմ մեղքից։

10 Տեսակ տեսակ կշռաքարեր՝ և տեսակ տեսակ չափեր՝ երկուսն էլ գզուելի են Տիրոջ համար։

11 Մի երեխան անգամ ճանաչվում է իր արարքից՝ թէ մաքուր և թէ ուղիղ է նորա գործքը։

12 Լսող ականջն ու տեսնող աչքը՝ երկուսն էլ Տէրն է անում։

13 Մի սիրիր քունը որ մի գուցէ աղքատանաս, աչքերդ բաց՝ հացով կշտացիր։

14 Վատ է՝ վատ է՝ կ'ասէ առնողը։ Բայց երբոր կ'գնայ, այն ժամանակ կ'գովէ։

15 Կայ ոսկի և շատ գոհարեղէն. բայց պատուական գործիք են գիտուն շրթունքները։

16 Առ նորա հանդերձը, որ երաշխաւոր է դառել օտարին. և գրաւ պահիր նորան օտարների փոխարէն։

17 Քաղցր է մարդուս համար սուտութեան հացը, բայց յետոյ բերանը լցվում է խիճով։

18 Դիտաւորութիւնը հաստատվում է խորհրդով, և խոհեմութեամբ արա պատերազմը։

19 Գաղտնիքը յայտնում է բանսարկութեամբ մեան եկողը, ուրեմն շրթունքը լայն բացողի հետ մի հաղորդակցիր։

20 Ով որ իր հօրն ու մօրը անիծէ, նորա ճրագը կ'հանգչէ մթին խաւարի մէջ։

21 Մի ժառանգութիւն, որ սկզբումը շտապելով է ստացուել, նորա վախճանն էլ չի օրհնուել։

22 Մի ասիր. Չարութեան փոխարէնը հատուցանեմ. Տիրոջը յուսացիր, և նա քեզ կ'ազատէ։

Երկու տեսակ կշռաքարերը 23
պղծելի են Տիրոջը, և խարդախ կշիռքը լաւ չէ։

Տիրոջից է մարդուս քայլերի 24
յ-ե-ղ-ու-թ-ի-ւնը, ուրեմն մարդս ի՞նչ է հասկանում իր ճանապարհը։

Որոգայթ է մարդուս համար 25
անխորհրդաբար ասել. Նուէր, և ուխտելուց յետոյ կշռադատել։

Ամբարիշտներ ցրուող է իմաս- 26
տուն թագաւորը, և նորանց վերայ դարձնում է անիւը։

Մարդուս հոգին Տիրոջ ճրագն 27
է, նա քննում է սրտի բոլոր ներսերը։

Ողորմութիւնը և ճշմարտու- 28
թիւնը պահում են թագաւորին, և նա ողորմութիւնով կ'պահպանէ իր աթոռը։

Երիտասարդների զարդը իրանց 29
ոյժն է, և ծերերի փառքը ալևորութիւնը։

Հարուածի վէրքերը մաքրում 30
են չարութիւնը, և ծեծելը՝ ապրում է ներքին սրտի ներսերը։

ԳԼ. ԻԱ.

Թագաւորների սիրտը ջրի վա- 1
տակների պէս է Տիրոջ ձեռքին, դէպի ուր որ էլ ուզենայ՝ կը դարձնէ։

Մարդուս ամեն ճանապարհը 2
ուղիղ է իր աչքից առջև, բայց սրտերը կշռողը Տէրն է։

Արդարութիւն և իրաւունք 3
գործելը Տիրոջը հաճելի է պահից։

Աչքից ամբարտաւանութիւնը 4
և սրտի հպարտութիւնը, որ ամբարշտից լոյսն է, մեղք է։

Աշխատասէրի մտածողութիւն- 5
ները միայն դէպի առատութիւն են, բայց ամեն աճապարել՝ միայն դէպի կարօտութիւն։

Սուտլեզուով գանձեր շի- 6
նելը մահը որոնողների փախուստական ունայնութիւնն է։

Ամբարիշտների բռնութիւնը 7
քարշ կ'տայ իրանց, վասն զի չեն ուզում իրաւունք անել։

Մեռեալ է յանցաւոր մար- 8

գու ճանապարհը, բայց մաքուրի գործը ուղիղ է։

9 Լաւ է կտուրի մի անկիւնում բնակել, քան թէ կռուասէր կնոջ հետ՝ այն էլ ընկերուհի տան մէջ։

10 Անզգամի հոգին չարութիւն է ցանկանում, նորա ընկերը նորա աչքի առջև շնորհք չի գտնիլ։

11 Ծաղրողը տուժելիս միամիտը կ'իմաստանայ, և խմաստունը կրթուելիս՝ գիտութիւն կ'առնայ։

12 Արդարն Աստուած դիտում է ամբարշտի տան վերայ, նա գցում է ամբարիշտներին չարիքի մէջ։

13 Աղքատի աղաղակի դէմ իր ականջը ով որ խցկէ, ինքն էլ կ'կանչէ, և պատասխան չի գտնիլ։

14 Գաղտնի ընծան բարկութիւնը կ'հանդցնէ, և ծոցի պարգևը՝ սաստիկ ցասումը։

15 Ուրախութիւն է արդարի համար իրաւունք անելը, բայց սոսկում՝ չարագործների համար։

16 Մարդ որ մոլորում է խոհեմութեան ճանապարհից, ուրուականների ժողովքի մէջ կ'իջնէ։

17 Կարօտութիւն կունենայ այն մարդը որ ուրախութիւն է սիրում, գինի ու իւղ սիրողը չի հարստանալ։

18 Արդարի համար անզգամը փրկանք կ'դառնայ, և ուղիղների փոխարէն՝ անօրէնը։

19 Լաւ է բնակել ամայի երկրում, քան թէ կռուասէր և բարկացուս կնոջ հետ։

20 Ցանկալի գանձ և իւղ կ'գտնուի իմաստունի բնակարանում, բայց յիմարը կուլ կ'տայ նորան։

21 Արդարութեան և ողորմածութեան հետևողը կ'գտնէ կեանք, արդարութիւն և պատիւ։

22 Իմաստունը վեր կ'ելլէ զօրաւորների քաղաքը, և կ'կործանէ նորա ապաւինած ամրութիւնը։

23 Ով որ զսպէ իր բերանն ու լեզուն, իր հոգին նեղութիւններից կ'պահէ։

24 Ամբարտաւան լրբի անունը ծաղրող է, որ յանդգնութեամբ լրբութիւն է անում։

25 Ծոյլի ցանկութիւնը սպանում է նորան, վասն զի նորա ձեռքերը չեն ուզում գործել։

26 Նաամեն օր սաստիկ ցանկանում է, բայց արդարը տալիս է և չէ խնայում։

27 Ամբարիշտների զոհը պիղծ է, մանաւանդ երբոր չար խորհրդով մատուցանեն։

28 Ստախօս վկան պիտի կորչէ, բայց նա, որ ինքը լսել է, միշտ կ'խօսէ։

29 Անզգամ մարդը պնդացնում է իր երեսը, բայց նա՝ որ ուղիղ է, քննում է իր ճանապարհը։

30 Չկայ իմաստութիւն, չկայ հանճար, չկայ նաև մի խորհուրդ Տիրոջ դէմ։

31 Ձի է պատրաստվում պատերազմի օրուան համար. բայց փրկութիւնը Տիրոջից է։

ԳԼ. ԻԲ

1 Անունը աւելի ընտիր է շատ հարստութիւնից, արծաթից ու ոսկուց շնորհքն է լաւ։

2 Հարուստ և աղքատ հանդիպում են իրար. նորանց ամենքի անողը Տէրն է։

3 Խորագէտը տեսնում է չարիքը և իրան պահում, բայց պարզամիտները անց են կենում և վնասվում։

4 Խոնարհութեան վարձքն է Տիրոջ երկիւղը, հարստութիւն, և պատիւ ու կեանք։

5 Փուշեր, որոգայթներ կան ծուռ մարդու ճանապարհում, իր հոգին կ'պահպանէ, ով որ նորանից հեռանայ։

6 Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ չի հեռանալ նորանից։

7 Հարուստը աղքատներին կ'տիրէ, և փող առնողը ծառայ կը լինի փոխ տուողին։

8 Չարութիւն ցանողը անօրէնութիւն կ'հնձէ, և նորա բարկութեան գաւազանը պիտի կորչէ։

9 Բարեսիրտը օրհնուած կ'լինի,

վան զի իր հացիցը տալիս է աղքատին ։

10 Կուրս արա ծաղրողին, և կռիվը դուրս կ'գնայ, և վէճն ու անարգանքը կ'դադարէ ։

11 Արի ժլքութենեն սիրողին, որ շնորհք ունի իր շրթանց վրայ, թագաւորը բարեկամ է ։

12 Տիրոջ աչքերը պահում են գիտութիւնը, և նա ուղղում է անօրէնի խօսքերը ։

13 Ծոյլն ատում է. Ախտ կայ դրանը. հրապարակաց մէջ կ'լսպանուիմ ։

14 Խոր փոս է օտար կիներն բերանը. որի վերայ որ Տէրը բարկացած է՝ նա այնտեղ կ'ընկնէ ։

15 Յիմարութիւնը կապուած է երեխայի սրտին. խրատի գաւազանը նորան կ'հեռացնէ նորանից ։

16 Ով որ աղքատին գրկէ՝ իրանը շատացնելու համար է. ով որ հարուստին է տալիս՝ գա միայն կորուստի համար է ։

17 Ծռի ականջդ և լսիր իմաստնոց խօսքերը, և սրտդ տուր իմ գիտութեանը ։

18 Վասն զի հաճելի է եթէ նորանց պահես արտումդ. նորանք բոլորը միասին հաստատուին քո շրթանց վերայ ։

19 Որպէս զի քո ապաւինութիւնը Տիրոջ վերայ լինի, հէնց քեզ սովորեցրի այսօր ։

20 Չէ՞ որ քեզ համար գրեցի եռապատիկ խրատներով և գիտութեամբ,

21 Որ քեզ ստիպեցնեմ ճշմարտութեան խօսքերի ստուգութիւնը, որ քեզ *հարցնողներին ճշմարտութեան խօսքեր պատասխանես ։

22 Մի կողոպտիր աղքատին որովհետև աղքատ է. և անտնկին մի կոխիր †դատարանումդ.

23 Վասն զի Տէրն է վարում նորանց դատը, և կ'կողոպտէ նորանց հոգին կողոպտողներին ։

24 Մի ընկերանար բարկութեան տէր մարդու հետ, և բորբոքուող մարդու հետ մի գնար ։

Որ մի գուցէ սովորես նորա ճանապարհները, և որոգայթ բռնանաս քո հոգուն համար ։

26 Մի լինիր ձեռքը էջ—է պատուհներից, որ պարտքի համար երաշխաւոր են լինում.

27 Եթէ որ դու չունենաս վճարելու, ինչո՞ւ համար անկողինդ տակիցդ առնեն ։

28 Մի շարժիր սեղիցը վաղեմի սահմանանշանները, որ շինել են քո հայրերը ։

29 Տեսե՞լ ես մի մարդ որ շուտափոյթ է իր գործումը. նա թագաւորների առջևն է կանգնելու, աննշան մարդկանց առջև չի կանգնիլ ։

ԳԼ. ԻԳ

1 Երբոր մի իշխանի հետ հաց ուտելու նստես, լաւ ուշադրութիւն արա թէ ինչ կայ առջևդ,

2 Եւ դանակ դիր կոկորդիդ վերայ, եթէ մեծ ախորժակի տէր ես ։

3 Նորա կերակուրներին մի ցանկանար, որովհետև նորանք խաբէութեան հաց են ։

4 Մի աշխատիր հարստանալու. քո այդ հասկացողութիւնից դադարիր ։

5 Մի՞թէ աչքդ պիտի դնես այն բանին որ ոչինչ է. վասն զի իրան համար անշուշտ թևեր կը շինէ, արծիւին պէս երկինքը կը թռչէ ։

6 Մի ուտեր չկամի հացը, և նորա կերակուրներին մի ցանկանար ։

7 Վասն զի նա ինչպէս որ իր սրտումը հաշիւներ անողն է՝ այնպէս է. քեզ կ'ասէ. կեր և խմիր, բայց սիրտը քեզ հետ չէ ։

8 Այն պատառդ, որ կերել ես, կ'փսխես, և կորցրել ես այն անոյշ խօսքերդ ։

9 Յիմարի ականջներին բան մի ասիր. վասն զի կ'անարգէ քո խօսքերի իմաստութիւնը ։

10 Մի շարժիր սեղիցը վաղեմի սահմանանշանները, և որբի տների մէջը մի մտնիր ։

---

*ուղղակողներին †դրանը.

11 Վասն դի նորանց վրէժխնդիրը զօրաւոր է. Նա կ'վարէ նորանց դատը քեզ հետ։
12 Միրտդ տուր խրատի, և ականջներդ դիտութեան խօսքերի։
13 Երեխայից մի խնայիր խրատը, վասն դի եթէ նորան գաւազանով ծեծես՝ չի մեռնիլ։
14 Դու նորան գաւազանով կ'ծեծես, բայց Հոգին կ'ազատես դժոխքից։
15 Որդեակս, եթէ սիրտդ իմաստուն լինի, իմ սիրտն էլ կ'ուրախանայ,
16 Եւ իմ երիկամունքները կ'ցնծան, քո շրթունքները ուղիղ բաներ խօսելիս։
17 Թող սիրտդ չնախանձէ մեղաւորներին. այլ Տիրոջ վախի մէջ եղիր ամեն օր։
18 Յիրաւի մի վախճան կայ, և քո ապաւինելը պիտի չկտրուի։
19 Լսիր դու, որդեակս, և իմաստուն եղիր, և ուղիղ ճանապարհի մէջ քո սիրտը։
20 Գինեքաշողների մէջ մի լինիր, և ոչ էլ միս լափողների հետ։
21 Վասն դի լսկողն ու լափողը պիտի աղքատանան, և քնափութիւնը պատառատած հանդերձներ կ'հագցնէ։
22 Լսիր քո ծնող հօրը, և մի անարգիր քո մօրը երբոր պառաւ է։
23 Ճշմարտութիւն գնիր՝ և մի ծախիր. Դա՛ իմաստութիւն, խրատ և հանճար։
24 Արդարի հայրը անշուշտ պիտի ցնծայ, իմաստունի ծնողը նորանով պիտի ուրախանայ։
25 Թող ուրախանայ հայրդ ու մայրդ, և ցնծայ քո ծնողը։
26 Սիրտդ ինձ տուր, որդեակս, և թող աչքերիդ հաճելի լինին իմ ճանապարհները։
27 Վասն դի պոռնիկը խոր փոս է, և օտար կինը նեղ ջրհոր.
28 Իրաւ նա աւազակի պէս դարան է մտնում և մարդկանց մէջ շատացնում է անհաւատարիմները։
29 Ո՞ւմն է վայը, ո՞ւմն է վո՛ւյը, ո՞ւմն են կռիւները, ո՞ւմն են տըրտունջները, ո՞ւմն են կարմրատած աչքերը։
30 Նորանցը, որ ուշանում են գինու մօտ, նորանցը, որ գնում են խառնած գինին քննելու։
31 Մի նայիր գինուն, որ կարմրի է տալիս, որ բաժակի մէջ աչքով է անում, որ ուղիղ ուղիղ ինքն իրան է գնում.
32 Նա վերջը օձի պէս կ'կծէ, և իժի պէս կ'ծակէ։
33 Աչքերդ օտար կիներից կ'նայեն և սիրտդ ծուռումուռ բաներ կը խօսէ,
34 Եւ ծովի միջումը քնողի նման կ'լինես, և կայմի վերայ քնողի նման։
35 Կ'ասես. Ինձ ծեծել են, բայց չեմ զգացել, ինձ գարկել են, բայց չեմ իմացել. Երբ եմ քնթափուելու. Նորան գարձեալ պիտի որոնեմ։

ԳԼ. ԻԴ

1 Մի նախանձիր չար մարդկանց, և մի ցանկանար նորանց հետ լինել։
2 Վասն դի նորանց սիրտը բռնութիւն է խորհում, և տանջանք են խօսում նորանց շրթունքները։
3 Տունը կ'շինուի իմաստութեամբ, և հանճարով կ'հաստատուի։
4 Գիտութիւնով կ'լցուին շտեմարանները և կ'ստացուին ամեն պատուական ստացուածք և վայելչութիւնք։
5 Իմաստուն մարդը զօրաւոր կը լինի, և գիտուն մարդը էլ զօրը կ'աւելացնէ։
6 Վասն դի պատերազմի խոհեմութեամբ կ'անես, և յաջողակութիւնը խորհրդականների շատութիւնով կ'լինի։
7 Խիստ բարձր է յիմարի համար իմաստութիւնը, նա դրան մէջ չի բանալ իր բերանը։
8 Ով որ մտածում է չարանալ, նորան նենգամիտ մարդ կ'սանձն։
9 Յիմարութիւն մտածելը մեղք է, և գզուելի են մարդկանց համար ծաղրողը։

10 Եթէ նեղութեան օրը թուլացար, այժդ նեղ կ'լինի։
11 Աղաւնիք մանուան տարուողներին, և գէպի սպանուելու դողդոջացողներին ազատել մի խնայիր։
12 Եթէ ասես. Թէ Մենք չգիտանք. ահա սրտերը կշռողը դիտէ, և հոգիդ պահողը իմանում է, նա որ մարդուս հատուցանում է իր գործին համեմատ։
13 Մեղր կեր, որդեակս, որ լաւ է, և մեղրախորիսխ, որ քաղցր է քո քիմքի համար.
14 Այսպէս է իմաստութեան գիտութիւնը քո հոգու համար, եթէ նորան գտել ես, և մի վախճան կայ, որ քո յոյսը չի կտրուիլ։
15 Դարանակալ մի լինիր, ով անզգամ, արդարի բնակարանին մի աւերիր նորա հանգստութեան տեղը։
16 Վասն զի եօթն անգամ վայր կ'ընկնէ արդարը և կ'կանգնէ, բայց անզգամները չարեաց մէջ կ'կործանուին։
17 Թշնամիդ վայր ընկնելիս մի ուրախանար, և նա կործանուելիս սիրտդ չցնծայ։
18 Մի գուցէ Տէրը տեսանէ, և նորա աչքին անհաճոյ երևայ. և իր բարկութիւնը նա դարձնէ նորանից։
19 Մի վառուիր չարերի պատճառով, մի նախանձիր անզգամներին։
20 Վասն զի վերջ չունի չարը, ամբարիշտների ճրագը պիտի հանդչէ։
21 Որդեակս, վախիր Տիրոջից և թագաւորից. և յեղափոխականների հետ մի ընկերանար.
22 Վասն զի նորանց կործանումը յանկարծ վեր կ'կենայ. և այն երկուսի էլ պատուհասը ո՞վ գիտէ։
23 Սորանք էլ են իմաստուններին՝ դատաստանում աչառութիւն անելը լաւ չէ։
24 Ով որ անզգամին ասէ՝ Արդար ես, ազգերը նորան կ'անիծեն. ժողովուրդները նորան պիտի անարգեն։
25 Բայց յանդիմանողներին բարիք կ'լինի, և նորանց վերայ բարի օրհնութիւն կ'գայ։
26 Շրթունքներ է համբուրում նա, որ յարմար պատասխան է տալիս։
27 Պատրաստիր դրսի գործդ, և բանդ կարգադրիր դաշտումդ, յետոյ էլ շինիր տունդ։
28 Քո ընկերի դէմ զուր վկայութիւն մի տար, և մի խաբիր քո շրթունքներովդ։
29 Մի ասիր. Ինչպէս որ ինձ արաւ, ես էլ իրան այնպէս եմ անելու, այն մարդուն հատուցանելու եմ իր գործքին համեմատ։
30 Ծոյլ մարդու արտի մօտովն անց կացայ, և պակասամիտ մարդու այգու մօտովը.
31 Եւ ահա բոլորը փուշեր էին դուրս եկել, նորանից երեսը ծածկել էին եղինճներ, և նորա քարի պատը փուլ էր եկած։
32 Եւ երբոր աւեայ՝ դրի մտքիս մէջ, մտիկ արի և խրատ վեր առի։
33 Մի քիչ քուն, մի քիչ նընջել, մի քիչ էլ ձեռք ձեռքի տալ պառկել.
34 Այն ժամանակ քո աղքատութիւնը կ'գայ էբեւ ճանապարհորդ, և քո կարօտութիւնը՝ զրահաւոր մարդու պէս։

ԳԼ. ԻԵ

1 Սորանք էլ են Սողոմոնի առակներն, որ Յուդայի Եզեկիա թագաւորի մարդիկը օրինակեցին։
2 Աստուծոյ փառքն է բանը ծածկել. բայց թագաւորների փառքն է բանը քննել։
3 Երկինքը բարձրութիւնով, և երկիրը խորութիւնով և թագաւորների սիրտը չի քննուիլ։
4 Հանիր կղկղանքը արծաթից, և ոսկերչի համար անօթ դուրս կ'գայ։
5 Դուրս արա թագաւորի առջևից ամբարշտին, և նորա թագը կ'հաստատուի արդարութեամբ։
6 Մի պարծենար թագաւորի առջև, և մեծամեծների տեղը մի կանգնիր։

7 Վասն զի լաւ է քեզ ասել. Ա՛ել բարձրացիր այստեղ, քան թէ քեզ խոնարհեցնեն այն իշխանի առջեւ, որին տեսանում են քո աչքերը։

8 Շուտով կառնուի մի գնաց, մի գուցէ չմնաս թէ վերջումը ինչ պիտի անես, երբոր ընկերդ քեզ ամօթեցնէ։

9 Դատ վարիր ընկերիդ հետ, բայց գաղտնիքը ուրիշին մի յայտնէր։

10 Որ մի գուցէ լսողը քեզ անարգէ, և վատ անուն դու ամենեւին չգնայ։

11 Ոսկի խնձորներ են արծաթի զարդերի մէջ՝ մէկ յարմար ժամանակին խօսուած խօսքը։

12 Ոսկի օղ և գոհարեղէն մանեակ է խնամառուն խրատը լսող ականջի համար։

13 Ինչպէս է ձիւնի պաղութիւնը հունձքի ժամանակին, նոյնն է հաւատարիմ դեսպանը իրան ուղարկողի համար. նա զուարթացնում է իր տիրոջ հոգին։

14 Ամպեր և քամի՝ բայց առանց անձրեւի՝ այն մարդն է որ պարծենում է ստեղծ պարգեւներով։

15 Երկայնմտութեամբ կ'համոզուի իշխանը, և կակուղ լեզուն ոսկոր կ'կոտրէ։

16 Եթէ մեղր գտնես՝ կեր որքան որ պէտքդ է. մի գուցէ նորանով կշտանաս և փսխես նորան։

17 Որքդ ոտքս յաճախէ ընկերիդ տունը, մի գուցէ քեզանից կշտանայ և գզուէ քեզանից։

18 Որ և սուր և սրած նետ է այն մարդը, որ սուտ վկայութիւն է տալիս՝ իր ընկերի դէմ։

19 Կոտրած ատամ և դիւրտղլոր ոտք է նեղ օրը անհաւատարիմ մարդու վերայ ապաւինելը։

20 Ցուրտ օրին զգեստը հանել, կամ բորակի վերայ քացախ ածել է երգեր երգելը տրտում մարդու առջեւ։

21 Եթէ թշնամիդ սոված է՝ հացտուր նորան, և եթէ ծարաւ է՝ ջուր խմեցրու նորան։

22 Վասն զի այդպէս ածելով նորա գլխի վերայ կրակի կայծեր կ'դիզես. և Տէրը քեզ կ'հատուցանէ։

23 Հիւսիսային քամին անձրեւ է բերում, և խոժոռ դէմքը՝ գաղտնախօս լեզու։

24 Լաւ է բնակել մի կտուրի անկիւնում, քան թէ կանանէր կնոջ հետ մեծ տան մէջ։

25 Պաղ ջուր է ծարաւած ոգուն համար երկրից։

26 Պղտորած ակնի և քանդուած աղբիւրի նման է ամբարշտի առջեւ ընկճուող արդարը։

27 Շատ մեղր ուտելը լաւ չէ, իր պատիւը տրտնելն պատիւ չէ։

28 Քանդուած անպարիսպ քաղաք է այն մարդը որ չէ զսպում իր ոգին։

ԳԼ. ԻԶ

1 Ինչպէս ձիւնը ամառուան և անձրեւը հունձքին՝ այնպէս էլ չի վայելել յիմարին պատիւ։

2 Ինչպէս որ ճնճղուկը թըռթռում և ծիծեռնակը թռչում, այնպէս էլ զուր անէծքը չի կատարուիլ։

3 Խարազանը ձիու համար, և սանձ՝ էշի, և գաւազանը յիմարների մէջքի համար։

4 Մի պատասխանիր յիմարին իր յիմարութեան համեմատ, մի գուցէ դու էլ նորան նմանես։

5 Պատասխանիր յիմարին իր յիմարութեան համեմատ, մի գուցէ իր աչքին իմաստուն երեայ։

6 Իր ոտքերը կտրող և ջուրս կըրող է ով որ յիմարի ձեռքով խօսք ապագրէ։

7 Ինչպէս որ սուսանում են կաղի ոտքերը, այնպէս էլ առակը յիմարների բերանում։

8 Ինչպէս որ քարն են ծրարում և պարանոցի մէջ լցուում, այնպէս է և յիմարին պատիւ տուողը։

9 Արբածի ձեռքը մատ փուշը, և առակը՝ յիմարների բերանը։

10 Մեծ է ամեն բան ստեղծողը, վարձք է տալիս յիմարին էլ,

վարձք է տալիս յանցաւորներին էլ։
11 Ինչպէս որ շունը ետ է դառնում դէպի իր փսխածը, այնպէս է իր յիմարութիւնը կրկնող յիմարը։
12 Տեսա՞լ ես մէկ մարդ իր աչքին իմաստուն երեւացող. յիմարից աւելի յոյս կայ քան թէ նորանից։
13 Ծոյլն ասում է. Ճանապարհին առիւծ կայ, հրապարակների մէջ առիւծ։
14 Դուռը շուռ է տալիս իր ծղրտնու վերայ, ծոյլն էլ իր անկողնի վերայ։
15 Ծոյլը իր ձեռքը կ'կոխէ անօթի մէջը, և նորա համար դժուար է նորան ետ տանել իր բերանը։
16 Ծոյլը իմաստուն է երեւում իր աչքին եօթը խելօք պատասխան տուողից աւելի։
17 Շունը ոկանջներից բռնում է այն անցաւորը որ գրգռւում է իրանը չեզած գաոի համար։
18 Կրակի կայծեր, նետեր և մահ ցանող գիժի նման է
19 Այն մարդը որ իր ընկերին խաբում է, և ասում. Ա՛հա կատակ եմ անում եա։
20 Փայտ չլինելիս կրակը կ'հանգչէ. և քամ չլինելիս կռիւը կը դադարէ։
21 Ինչպէս ածուխը կայծերին, և փայտը կրակին, նոյնպէս է կռուասար մարդը վէճ վառելու։
22 Քամ մարդու խօսքերը քաղցր պատառների պէս են, նորանք էլ են իջնում փորի ներսերը։
23 Կիկղանքի արծաթով պատած հողի ամանի պէս է սիրատորդոր շրթունքը ու չար սիրտը միասին։
24 Ատեցողը կեղծում է իր շրթունքներովը, և սրտում նենգութիւն է դնում.
25 Երբոր նա անուշացնէ ձայնը նորան չհաւատաս. վասն զի եօթը գարշելի բան կայ նորա սրտումը։
26 Թէ կուզ՝ ատելութիւնը ծածկուի նենգութեամբ, նորա չարութիւնը կ'յայտնուի ժողովքի մէջ։
27 Ով որ փոս փորէ՝ նորա մէջը կ'ընկնէ. և ով որ քար գլորէ նորա վերայ կ'դառնայ։
28 Ստախօս լեզուն ատում է իր ճնճաձներին, և շողոքորթող բերանը կորուստ է պատճառում։

ԳԼ. ԻԷ

1 Մի պարծենար վաղուան օրովը. վասն զի չգիտես թէ օրը ինչ կը ծնէ։
2 Թող ուրիշը գովէ, և ոչ թէ քո բերանը, օտարը, և ոչ թէ քո շրթունքները։
3 Ծանր է քարը և բեռ-ն է աւազը, բայց յիմարի բարկութիւնը երկուսից էլ ծանր է։
4 Բարկութիւնը անգութ է և ցասումը հեղեղատաստ. բայց ո՞վ կարող է կանգնել նախանձի առջև։
5 Լաւ է յայտնի յանդիմանութիւնը, քան թէ ծածուկ սէրը։
6 Անկեղծ են բարեկամի պատ-ի վէրքերը. բայց առատ են ատողի համբոյրները։
7 Կուշտ անձը կոխ է տալիս մեղրախորիսխը, բայց սոված անձի համար ամեն լեղի բանը քաղցր է։
8 Ինչպէս որ իր բոյնից թափառական եղած թռչունն է, այնպէս է իր տեղից թափառական եղող մարդը։
9 Ուղն ու խունկը ուրախացնում են սիրտը, նաև ընկերի քաղցր խօսքը մտերիմ խրատով։
10 Քո բարեկամին և հօրդ բարեկամին մի ձգիր, և եղբօրդ տունը մի գնար քո նեղութեան օրը. լաւ է մօտիկ հարևանը քան թէ հեռու եղբայրը։
11 Որդեակ, իմաստուն եղիր և սիրտս ուրախացրու, որ ես կարողանամ պատասխան տալ ինձ անարգողին։
12 Խորագէտ տեսնում է չարիքը և իրան պահում, բայց պարզամիտները անց են կենում՝ ջաստվում։
13 Առ նորա հանդերձը, որ երաշխաւոր է դառել օտարին, և գրաւ պահիր նորան օտարի փոխարէն։

14 Ով որ առաւօտուն կանուխ իր դրացուն օրհնէ բարձր ձայնով, սա նորա համար անէծք կը համարուի։

15 Անդադար ծլծլոցը, անձրևատ օրը և կռուատէր կինը իրար նըմանն են։

16 Ով որ նորան ծածկէ՝ քամի է ծածկում, և նորա ազ ձեռքի իւղը ձայն կ'տայ։

17 Երկաթը երկաթով է սրւում, և մարդս սրում է իր ընկերի երեսը։

18 Թզենին պահողը կ'ուտէ նորա պտուղը, և իր տիրոջը պահպանողը կ'պատուի։

19 Ինչպէս ջրում երեսն է երեսի դէմ, այնպէս է սրտի մէջ մարդս մարդու դէմ։

20 Դժոխքը և կորուստը չեն կըշտանալ, նոյնպէս չեն կշտանալ և մարդուս աչքերը։

21 Հալոցը արծաթին, և քուրան ոսկուն է ֆրյուֆ, նոյնպէս էլ մարդ՝ իրան գովաստնող բերանը ըսղ ֆրյէ։

22 Եթէ յիմարին ձեռես կորկոտի հետ թաւկով ամանի մէջ, նորանից չի հեռանալ նորա յիմարութիւնը։

23 Լաւ հոգ տար քո ոչխարներին, ուշ դարձրու քո հօտերին։

24 Վասն զի հարստութիւնը մըշտարնջենաւոր չէ, կամ թէ թագը ամո՞ղ է դարէ ցդար։

25 Կանանչը կ'բուանէ և խոտը կերևայ, և կ'ժողովուին լեռների խոտերը.

26 Գառները հագուստիդ համար են, և գաշտի գինն են նոխազները։

27 Եւ բուտկան այծի կաթ կ'լինի քեզ կերակրելու և տունդ կերակրելու համար, նոյնպէս և ապրուստ քո աղախինների համար։

ԳԼ. ԻԸ

1 Ամբարիշտը փախչում է առանց մէկի հալածելու, բայց արդարները առիւծի պէս ապահով են։

2 Երկրի յանցանքի պատճառով

շատ կ'լինեն նորա իշխանները. բայց իմաստուն և բանիբուն մարդու միջոցով նա երկար կ'դիմանայ։

3 Մի մարդ որ չքաւոր է և նեղում է աղքատներին նա հեղեղակոծ անձրև է որ հաց չունի։

4 Օրէնքը ձգողները կ'գովեն ամբարիշտներին, բայց օրէնքը պահողները կ'պայրանան նորանց։

5 Չար մարդիկը իրաւունքը չեն հասկանալ, բայց Տիրոջը խնդրողները բոլոր բանները կ'հասկանան։

6 Լաւ է իր ուղղութեան մէջ գնացող աղքատը քան թէ ծուռ ճանապարհների տէր մարդը թէև հարուստ լինի։

7 Օրէնքը պահողը իմաստուն որդի է, բայց շատակերի բարեկամը կ'ամօչեցնէ իր հօրը։

8 Իր առացուածքը տոկոսիքով ու վաշխով շատացնողը, աղքատներին ողորմողի համար է ժողովում նորան։

9 Ով որ ժերժէ իր ականջը օրէնք լսելուց, նորա աղօթքն անգամ գարշելի է։

10 Ով որ մոլորեցնէ ուղիղներին չար ճանապարհում, ինքը կ'ընկնէ. բայց արդարները բարիք պիտի ժառանգեն։

11 Հարուստ մարդը իմաստուն է երևում իր աչքին, բայց գիտուն աղքատը նորան կ'քննէ.

12 Արդարները ուրախանալիս փառքը մեծ կ'լինի. բայց անըզգամների բարձրանալիս մարդ կը թագչէ։

13 Իր յանցանքը ծածկողը չի յաջողուիլ, բայց խոստովանող ու թողող ողորմութիւն կ'գտնէ։

14 Երանի՛ այն մարդուն որ միշտ երկիւղ ունի. բայց իր սիրտը խստացնողը չարիքի մէջ կ'ընկնէ։

15 Մռնչող առիւծ և սոված արջ է՝ աղքատ ժողովրդի վերայ իշխող ամբարիշտը։

16 Խոհեմութիւնը պակաս իշխանի ժամանակին գրկանքը շատ կ'լինի. եւ ագահութիւնն ատողը օրերը կ'երկարացնէ։

17 Արդասպանութեան համար տանջուող մարդը մինչև գուբը

կ'փախչէ, նորան չեն կարողանար բռնել։

18 Կառավարութեամբ վարուողը կ'փրկուի, բայց ծուռ ճանապարհներով գնացողը մէկուն վայր կ'ընկնէ։

19 Ով որ իր երկիրը գործէ հացով կ'կշտանայ, և դատարկ մարդկանց հետևողը կ'կշտանայ աղքատութիւնով։

20 Հաւատարիմ մարդու օրհնութիւնները շատ են, բայց հարբատանալու շտապողը անպատիժ չի մնալ։

21 Երեսպաշտութիւնը լաւ չէ, բայց մի պատառ հացի համար յանցանք է գործում մարդ։

22 Հարստանալու է շտապում չար աչք մարդը, բայց չգիտէ թէ կարօտութիւն պիտի գայ իր վերայ։

23 Մարդ յանդիմանողը վերջը շնորհք կ'գտնէ աւելի քան թէ լեզուով շողոքորթողը։

24 Ով որ իր հօրն ու մօրը կողոպտէ ասելով թէ Մեղք չէ, նա ապականիչ մարդու ընկերն է։

25 Հպարտ սիրտ ունեցողը կռիւ կ'գրգռէ, բայց Տիրոջն ապաւինողը կ'պարարտանայ։

26 Իր սրտին ապաւինողը յիմար է, բայց իմաստութեան մէջ վարուողը կ'պրծնի։

27 Ով որ աղքատին տայ՝ կարօտ չի լինիլ, բայց ով որ աչքերը թագցնէ՝ շատ անէծքներ կան նորա համար։

28 Ամբարիշտները բարձրանալիս մարդ կ'թաքչէ, և երբոր նորանք փչանան, արդարները կ'շատանան։

ԳԼ. ԻԹ

1 Յանդիմանութիւններ ատացող մարդը՝ եթէ իր պարանոցը խստացնէ, յանկարծ կ'ջարդուի և բժշկութիւն չի գտնիլ։

2 Արդարները շատանալիս ժողովուրդը կ'ուրախանայ, բայց երբոր ամբարիշտը իշխէ, ժողովուրդը կ'հեծէ։

3 Իմաստութիւն սիրող մարդը կ'ուրախացնէ իր հօրը, բայց պոռնիկներն ընկեր եղողը ստացուածքը կ'փչացնէ։

4 Թագաւորը արդարութեամբ կ'հաստատէ երկիրը, բայց կաշառակեր մարդը նորան կ'քանդէ։

5 Իր ընկերին շողոքորթող մարդը, որոգայթ է լարում նորա քայլերի համար։

6 Չար մարդու յանցանքում ո-րոգայթ կայ, բայց արդարը ցնծում է և ուրախանում։

7 Արդարը գիտէ աղքատների դատը, բայց անպիտան մարդը գիտութիւն չունի։

8 Ծաղրանող մարդիկը քաղաք տակնուվրայ կ'անեն, բայց իմաստունները բարկութիւնը կը հանդարտացնեն։

9 Իմաստուն մարդը յիմարի հետ վիճելիս, թէ բարկանայ թէ ծիծաղէ՝ հանգիստ չի լինիլ։

10 Արիւնահեղ մարդիկը կ'ատեն կատարեալին, բայց ուղիղները նորան կ'որոնեն։

11 Յիմարը իր սրտին բոլոր դուռը կ'տայ, բայց իմաստունը նորան ետ է պահում։

12 Մէկ իշխան որ սուտ խօսքերի ականջ է դնում, նորա բոլոր պաշտօնէները չար կ'լինին։

13 Աղքատը և բռնաւորը հանդիպում են իրար, բայց երկուսին էլ աչքի լոյսը տուողը Տէրն է։

14 Այն դատաւորը որ աղքատներին դատում է արդարութեամբ, նորա աթոռը յաւիտեան կ'մնայ։

15 Գաւազանը և յանդիմանութիւնը իմաստութիւն կ'տայ, բայց լաց ընկած տղան անարգանք կ'բերէ իր մօր համար։

16 Անզգամները շատանալիս յանցանքը կ'շատանայ, բայց արդարները կ'տեսանեն նորանց վայր ընկնելը։

17 Խրատիր որդուդ, և նա էլ քեզ կ'հանգստացնէ. և սիրտդ կ'պատճառէ քո հոգին։

18 Առանց մարգարէութեան ժողովուրդը կ'վայրենանայ, բայց ով որ օրէնքը պահէ՝ երանի՛ նորան։

19 Խօսքերով չի խրատուիլ այն

ծառաձ, որ հասկանում է բայց չէ պատասխանում։
20 Իր խօսքերի մէջ վատղող մարդ տեսա՞ր. յիմարից աւելի յոյս կայ քան թէ նորանից։
21 Ով որ իր ծառային ի մանկութենէ փափուկ պահէ. նա յետոյ տղան կ'դառնայ։
22 Բարկացող մարդը կռիւ կ'հրնոսրէ, և ցասկոտ մարդը շատ յանցանք կ'ունենայ։
23 Մարդուս ամբարտաւանութիւնը նորան կ'կործանէ, բայց հեզահոգին փառք կ'ստանայ։
24 Գողի հետ վաճառողը իր անձն է ատում. նա երդումը անելուց յետոյ էլ բան չի յայտնիլ։
25 Մարդուս վախը որոգայթի մէջ կ'գցէ, բայց Տիրոջն ապաւինողը կ'ապաստանուի։
26 Շատերը կ'որոնեն իշխանի երեսը, բայց մարդուս իրաւունքը Տիրոջից է։
27 Անօրէն մարդը զզուելի է արդարներին, բայց ամբարշտի համար զզուելի է ուղիղ վարուողը։

ԳԼ. Լ

1 Յակէեան Ագուրի խօսքերը. այսինքն այն մարգարէական պատգամը, որ նա ասաց Իթիէլին, Իթիէլին և Ուքալին։
2 Յիրաւի ես ամէն մարդուց աւելի թանձրամիտ եմ, և մարդկային խոհեմութիւն չունիմ։
3 Ես իմաստութիւն չեմ սովորել, և Ամենասուրբի գիտութիւնը չգիտեմ։
4 Ո՞վ վեր ելաւ երկինքը և իջաւ, ո՞վ ժողովեց քամին իր բուռների մէջ. ո՞վ ծրարեց ջուրը հանդերձումը, ո՞վ հաստատեց երկրիս բոլոր ծայրերը. ի՞նչ է նորա անունը, և ի՞նչ է նորա որդու անունը. արդեօք գիտե՞ս։
5 Աստուծոյ ամեն խօսքերը մաքրուած են. նա ապար է իրան ապաւինողների համար։
6 Չաւելացնես նորա խօսքերի վերայ, որ մի գուցէ քեզ յանդիմանէ, և դու ստախօս երևաս։
7 Քեզանից երկու բան եմ խընդրում, ինձանից մի արգելիր ես դեռ չմեռած.
8 Ունայն և սուտ խօսքը հեռացրու ինձանից, աղքատութիւն կամ հարստութիւն ինձ մի տար, ինձ համար որոշուած հացովը կերակրիր ինձ։
9 Չլինի որ կշտանամ և ուրանամ, և ասեմ՝ Ո՞վ է Տէրը. և չլինի որ չքաւորանամ և գողանամ, և զուր յիշեմ իմ Աստուծոյ անունը։
10 Մի բամբասիր մի ծառայից իր Տիրոջ մօտ, որ քեզ չանիծէ և դու յանցաւոր գտնուիս։
11 Մի ազգ որ անիծում է իր հօրը, և իր մօրը չէ օրհնում.
12 Մի ազգ է որ իր աչքին մաքուր է երևում, բայց իր աղբիցը չէ մաքրուած,
13 Մի ազգ է, որ աչքերը շատ բարձր են, և նորա արտևանունքները վեր վեր են գնում.
14 Մի ազգ է, որի ատամները սուրեր են, որի ժանիքները դանակներ են, որ ուտէ աղքատներին երկրիս վերայից, և տնակներին մարդկանց միջից։
15 Տզրուկը երկու աղջիկ ունի, որոնք են՝ տուր տուր. Նոյնպէս և երեք են որ չեն կշտանում և չորս են որ չեն ասիլ Հերիք է.
16 Գերեզմանը և ամուլ արգանդը, երկիրը որ ջրով չի կշտանում և կրակը որ չի ասիլ Հերիք։
17 Աչքը որ իր հօրը կ'ծաղրէ և կանարգէ իր մօրը հնազանդել, նորան պիտի փորեն ձորի ագռաւները, և նորան պիտի ուտեն արծիւի ձագերը։
18 Երեք բան կայ որ ինձ համար զարմանալի են, և չորսը՝ որոնց չեմ հասկանում.
19 Արծիւի ճանապարհը երկնքի երեսին, օձի ճանապարհը ապառաժի վերայ, ծովի մէջ նաւի ճանապարհը, և մարդուս ճանապարհը աղջկան մօտ։
20 Այնպէս է շնացող կնոջ ճանապարհը. ուտում է և բերանը սրբում, և ասում. Չար բան չեմ արել։
21 Երեք բանի տակին դողում է

երկիրը, և չար բան կայ, որանից նա չէ կարող ազատել.

22 Ծառան, երբոր թագաւորէ, և յիմարը, երբոր հացով կշտանայ.

23 Ատելի կինը, երբոր ամուսնանայ, և աղախինը, երբոր իր տիկնոջ ժառանգ դառնայ։

24 Չորս բան կայ, որ երկրի փոքրերն են, բայց իմաստուններից իմաստուն են.

25 Մրջիւնները որ մի զօրաւոր ժողովուրդ չեն, բայց իրանց հացը ամառն են պատրաստում։

26 Ճպուռները որ մի ուժեղ ժողովուրդ չեն, բայց իրանց տունը ապառաժումն են շինում։

27 Մարախները թագաւոր չունեն, բայց դուրս են գալիս ամենքը գունդ գունդ։

28 Մողէսը կպչում է ձեռքերովը դռեբէն, բայց թագաւորական պալատներումն է նա։

29 Երեք են որ գեղեցիկ են գնում, և չորս են, որ գեղեցիկ ընթացք ունին.

30 Առիւծը որ գազաններից զօրաւորն է, և ոչ մի բանի երեսից էտ չի դառնում։

31 *Մէջապինդը և նոխազը և թագաւորը որի զօրքը իր հետն է։

32 Եթէ յիմարութիւն արիր հպարտանալով, կամ եթէ մի չար բան մտածեցիր՝ ձեռքդ դէպ բերանիդ.

33 Վասն զի կաթի ծեծելուց կարագ դուրս կ'գայ, և քիթը ծեծելուց արիւն դուրս կ'գայ. և բարկութիւնը գրգռելուց դուրս կ'գայ կռիւ։

ԳԼ. ԼԱ.

1 Լեմուէլ թագաւորի խօսքերը, այն պատգամը որ նորան խրատեց իր մայրը՝

2 Ի՞նչ, որդիս. ի՞նչ, ով հարազատ որդիս. ի՞նչ, ով իմ ուխտեալ որդիս.

3 Քո զօրութիւնը մի տար կիներին, ոչ էլ քո ճանապարհները

*Երևվալը, կամ թէ եղնիկը։

այն կանանց, որ թագաւորներին են փչացնում։

Ով Լեմուէլ, թագաւորների 4
բանը չէ՝ թագաւորների բանը չէ
գինի խմելը, և ոչ էլ իշխաններին՝ թէ ո՞ւր է օղին։

Նիթէ ոչ՝ կ'խմէ և կ'մոռանայ 5
օրէնքը, և կ'ծռէ ամեն տառապեալի դատը։

Օղին կորչողին տուէք, և գինի 6
դառնասրտներին.

Թող խմէ և մոռանայ իր աղ- 7
քատութիւնը, և իր տառապանքը այլևս չյիշէ։

Բաց բերանդ համրի համար, 8
և ամեն անխնամների դատի համար։

Բաց բերանդ, դատիր արդա- 9
րութեամբ, և տես աղքատի և անանկի դատը։

Առաքինի կինն ո՞վ կարող է 10
գտնել. նորա գինը աւելի է քան թէ գոհարները։

Նորա վերայ վստահ է իր մար- 11
դու սիրտը, և շահի կարօտութիւն չի լինիլ։

Նա նորան բարիք կ'հատուցա- 12
նէ և ոչ թէ չարիք, իր կենաց ամբոր օրերումը։

Նա կ'որոնէ բուրդ և քթան, 13
և կ'գործէ իր ձեռքի յօժարութեամբը.

Նա վաճառականի նաւերին կը 14
նմանի, հեռուից կ'գայ նորա հացը։

Նա դեռ գիշերն է վեր կենում 15
և իր տան կերակուրը տալիս, և իր աղախիններին՝ բաժինը։

Արտի վերայ է մտածում և 16
նորան ծախու առնում, իր ձեռաց արդիւնքից մի է տնկում։

Իր մէջքը պնդացնում է զօրու- 17
թիւնով, և զօրացնում է իր բազուկները։

Նա ճաշակում է որ իր աշխա- 18
տանքը լաւ է, նորա ճրագը գիշերը չէ հանգչում։

Իր ձեռքը մեկնում է խլիկին, 19
և իր ափովը ճախարակը բռնում։

Նա իր ձեռքը աղքատին է տա- 20
դիս աղքատը, և ձեռքը մեկնում է անանկին։

Նա չէ վախենում ձիւնից իր 21

տան Տամար, վասն զի բոլոր ընտանիքը կրկնատանդերձ են Տագած։
22 Նա ծածկոցներ է շինում իր Տամար, նորա Տանդերձները լինել է և ծիրանի։
23 Նորա մարդը յայտնի է դռներում, երբոր նստում է երկրի ծերերի Տետ։
24 Նա կտաւ է շինում և ծախում, և գօտի է տալիս վաճառականին։
25 Փառք և պատիւ է նորա Տանդերձը, և ուրախ է ապագայ օրուան Տամար։
26 Նա իր բերանը բանում է իմաստութեամբ, և նորա լեզուի վերայ շնորՀալի օրէնք կայ։
27 Նա մտիկ է անում իր տան ընթացքին, և ծոյլ ծոյլ չէ ուտում Տացը։
28 Նորա որդիքը կանգնում են և նորան երանի տալիս, նորա մարդը Տանում է և գովաբանում նորան.
29 Շատ աղջիկներ են առաքինութիւն գործել, բայց դու նորանց ամենից էլ գերազանց էղար.
30 Սուտ է վայելչութիւնը, և ունայն՝ գեղեցկութիւնը. այն կինը որ վախենում է Տէրոջից՝ նա կը գովուի։
31 Տուէք նորան իր ձեռքի արդիւնքից, և նորա գործքերը գովեն նորան դռներում։

ԳԻՐՔ ԺՈՂՈՎՈՂԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Բառք ժողովողի Դաւթի որդի Երուսաղէմում թագաւոր՝ Դաւթի որդի ժողովողի խօսքերը.
2 Ունայնութիւն ունայնութեանց ասաց՝ ժողովողը, ունայնութիւն ունայնութեանց, բոլորը ունայն է։
3 Ի՞նչ օգուտ ունի մարդս, իր բոլոր տառապանքից, որ քաշում է արեգակի տակին։
4 Մի սերունդ գնում է, և մի սերունդ գալիս է, բայց երկիրը յաւիտեան կայ կանգնած։
5 Եւ արեգակը ծագում է և մթագնում է, և դէպի իր տեղը շտապում՝ և այնտեղ ծագում է։
6 Գնում է դէպի Տարաւ և դառնում դէպի Տիւսիս, դառնում դառնում գնում է քամին, և իր դարձուածքներով դարձեալ եւ գալիս քամին։
7 Ամեն գետերը գնում են ծովը, բայց ծովը չէ լցվում. այնտեղը ուր որ գնում են գետերը, կըրկին այնտեղ են դառնում որ գընան։
8 Ամեն խօսքերը տկար են, մարդ չէ կարող ասել. աչքը չէ կշտանում տեսանելուց, և ականջը չէ լցվում լսելուց։
9 Ինչ որ եղել էր, նա էլ կը լինի. և ինչ որ արուած էր, նա էլ կ'անուի. և արեգակի տակին բնաւ մի նոր բան չկայ։
10 Կա՞յ արդեօք մի այնպիսի բան, որի Տամար ասուի թէ սա նոր է. արդէն Տին դարերից եղած է, որ մեզանից առաջ եղել են։
11 Առաջիններին յիշատակը չկայ. նոյնպէս այն յետիններին Տամար էլ որ գալու են յիշատակ չէ լինելու նորանց մօտ, որ յետոյ են գալու։
12 Ես ժողովողս թագաւոր էի Իսրայէլի վերայ Երուսաղէմում։
13 Եւ իմ սիրտը տուի որ որոնեմ և քննեմ իմաստութեամբ ամեն ինչ որ գործվում է երկնից տակ. սա մի չարաչար զբաղմունք է, որ Աստուած տուել է մարդկանց որդոցը, որ նորանով չարչարուին։
14 Ես տեսայ այն բոլոր գործքերը՝ երկնից տակ գործուած. և ահա բոլորը ունայն էր, քամու աշխատանք էր։
15 Ծուռը չէ կարող ուղղուիլ,

և պակասորդը չէ կարող հաշուել։
16 Ես խօսեցի իմ սրտի հետ և ասացի. Ահա ես մեծ եմ և իմաստութեամբ աւելի հարստացայ քան թէ Երուսաղէմում ինձանից առաջ բոլոր եղածները. և իմ սիրտը շատ իմաստութիւն և գիտութիւն է տեսել։
17 Ես իմ սիրտը տուի իմաստութիւն հասկանալու, և գիժութիւն ու յիմարութիւն հասկանալու. հասկացայ որ սա էլ է եղել քամու աշխատանք։
18 Վասն զի շատ իմաստութեան հետ շատ տրտմութիւն կայ, և գիտութիւն աւելացնողը վիշտն էլ է աւելացնում։

ԳԼ. Բ

1 Ես ասում ասացի. Մի եկ քեզ փորձեմ ուրախութիւնով, և բարիք էլ վայելիր. բայց ահա սա էլ էր ունայն։
2 Ծիծաղին ասացի. Յիմար ես դու. և ուրախութեանը՝ Դա ի՞նչ ես անում։
3 Սրտիս մէջ մտածեցի որ մարմինս գինիով զուարթացնեմ, և՝ սիրտս իմաստութեամբ վարուելով՝ յիմարութիւնն էլ բռնեմ, մինչև որ տեսնեմ թէ ինչն է մարդկանց որդոց բարին, որ անում են երկնքի տակին իրանց կենաց քիչ օրերումը։
4 Ես մեծացրի իմ գործքերը՝ ինձ համար տուներ շինեցի, այգիներ տնկեցի ինձ համար։
5 Այգիներ և դրախտներ շինեցի, և նորանց մէջ ամեն տեսակ պտղաբեր ծառեր տնկեցի.
6 ինձ համար ջրի աւազաններ շինեցի, որ նորանցից առուգուի ծառատունկի անտառը։
7 Ծառաներ և աղախիններ առայ, նաև բնատնիներ ունեցայ, և շատ արջառներ և հօտեր ունեցայ, ինձանից առաջ Երուսաղէմում եղածների ամենից աւելի։
8 Ինձ համար գանձեցի արծաթ և ոսկի, և թագաւորական ու գաւառական սեփհականութիւններ. ինձ համար երգիչներ և երգչուհիներ դրի, և մարդկանց որդոց զուարճութիւնները, դշխոյ և դշխոյք։
9 Եւ մեծացայ ու բարգաւաճեցայ ինձանից առաջ Երուսաղէմում եղածների ամենից աւելի։ Նաև իմաստութիւնս կայր ինձ մօտ։
10 Եւ ամեն ինչ որ աչքերս պահանջում էին՝ նորանցից չարգիլեցի, սիրտս չզրկեցի ոչ մի ուրախութիւնից, վասն զի սիրտս ուրախացաւ իմ բոլոր աշխատանքներից, և սա էր իմ բաժինը իմ աշխատանքից։
11 Եւ ես նայեցայ իմ ձեռքերի արած բոլոր գործքերին, և այն աշխատանքիս որ աշխատելով արել էի. և ահա բոլորը ունայն էր և քամու աշխատանք. և արեգակի տակին մի օգուտ չկայ։
12 Եւ ես ուշ դարձրի իմաստութիւնը տեսանելու, նաև յիմարութիւնը և անմտութիւնը. վասն զի ի՞նչ է այն մարդը, որ թագաւորից յետոյ գալու է, նա որ պէտք է արել է արդէն։
13 Եւ ես տեսայ որ իմաստութիւնը աւելի օգուտ ունի յիմարութիւնից. որքան որ լոյսը խաւարից աւելի օգուտ ունի։
14 Իմաստունի աչքերը իր գլխին են. բայց յիմարը խաւարումն է գնում. և ես էլ իմացայ, որ ինչ որ մէկին է պատահում, պատահում է ամենքին։
15 Եւ ես ասացի իմ սրտումը. ինչպէս որ յիմարին է պատահում, ինձ էլ է պատահելու. ուրեմն էլ ինչո՞ւ համար ես իմաստուն եղայ։ Եւ իմ սրտումն ասացի. Թէ Սա էլ է ունայն։
16 Վասն զի յաւիտեան չեն յիշում իմաստունին էլ յիմարին պէս, որովհետև ապագայ օրերումը արդէն բոլորը մոռացուած կ'լինի. և ո՛հ իմաստունը մեռնում է յիմարի հետ։
17 Եւ ես ատեցի կեանքը, վասն զի զզուելի էին ինձ համար արեգակի տակին եղած գործքերը.

որովհետև ամեն ուներն է և քամու աշխատանք։

18 Եւ ես ատեցի արեգակի տակին աշխատած աշխատանքս, որ թողելու եմ ինձանից յետոյ եկող մարդու համար։

19 Եւ ո՞վ գիտէ, թէ նա իմաստուն կ'լինի թէ յիմար. սակայն տիրելու է իմ բոլոր աշխատանքին, որ աշխատեցի և օրի մէջ իմաստութիւն ցոյց տուի արեգակի տակին. սա էլ է ուներն։

20 Եւ ես ետ դարձայ, որ սրտիս յոյսը կտրեմ արեգակի տակին աշխատած բոլոր աշխատանքից։

21 Վասն զի մարդ կայ արեգակի տակին, որի գործքը իմաստութեամբ, գիտութեամբ և յաջողութեամբ է, բայց նա այս բաները պիտի իրեն բաժին տայ առանց չաշխատող մարդուն։ Սա էլ է ուներն և մի մեծ չարիք։

22 Վասն զի ի՞նչ է ինուամ մարդուս համար իր բոլոր աշխատանքից, և իր սրտի տանջանքից, որ նա աշխատեց արեգակի տակին։

23 Որովհետև նորա բոլոր օրերը վիշտեր՝ և նորա գործքը տրտմութիւն են. գիշերն էլ չէ հանգիստ նորա միտը. սա էլ է ուներն։

24 Սորանից լաւ բան չկայ մարդուս համար որ ուտէ և խմէ, և իր աշխատանքովը միտը գուարճացնէ. բայց ես սա էլ տեսայ, որ այդ բանը Աստուծոյ ձեռքից է լինում։

25 Վասն զի ո՞վ է կարող ուտել և ո՞վ է կարող վայելել առանց *նորան։

26 Վասն զի այն մարդուն, որ հաճելի է իր առջև, նա տալիս է իմաստութիւն, գիտութիւն և ուրախութիւն, բայց մեղաւորին տալիս է զբաղմունք, որ նա ժողովէ և գանձէ, և տայ Աստուծոյ առջև հաճելի եղողին։ Սա էլ է ուներն և քամու աշխատանք։

---

*ինձ։

ԳԼ. Գ

Ամեն բանի ժամանակ կայ. և 1
ժամանակ՝ արեգակի տակին բոլոր ձեռնարկութեան։

Ծնելու ժամանակ, և մեռնելու 2
ժամանակ. տնկելու ժամանակ, և տնկածը պոկելու ժամանակ.

Սպանելու ժամանակ, և բժշկել 3
ելու ժամանակ. քանդելու ժամանակ, և շինելու ժամանակ.

Լալու ժամանակ, և ծիծաղելու 4
ժամանակ. սգալու ժամանակ, և պարելու ժամանակ.

Քարեր դէն գցելու ժամանակ, 5
և քարեր ժողովելու ժամանակ. գրկելու ժամանակ, և գրկելուց հեռացնելու ժամանակ.

Որոնելու ժամանակ, և կորցնե- 6
լու ժամանակ. պահելու ժամանակ, և դէն գցելու ժամանակ.

Պատառելու ժամանակ, և կա- 7
րելու ժամանակ. լռելու ժամանակ, և խօսելու ժամանակ.

Սիրելու ժամանակ, և ատելու 8
ժամանակ. պատերազմի ժամանակ, և խաղաղութեան ժամանակ։

Ի՞նչ օգուտ ունի նա, որ գոր- 9
ծում է, իր քաշած աշխատանքից։

Տեսայ այն զբաղմունքը որ Աս- 10
ուած տուել է մարդկանց որդոցը, որ նորանով զբաղուին։

Նա ամեն բան արել է վայե- 11
լուչ իր ժամանակին, նաև յաւիտենականութիւնը դրել է նորանց սրտումը, բայց այնպէս որ մարդս չէ կարող ըմբռնել Աստուծոյ արած գործքը գլխից մինչև ծայրը։

Իմացել եմ որ նորանցում մի 12
աւելի լաւ բան չկայ քան թէ լաւութիւն անելը իր կեանքում։

Ու նաև որ ամեն մարդ ուտ- 13
ում խմում է և իր բոլոր աշխատանքը վայելում, գա Աստուծոյ պարգևն է։

Իմացել եմ, որ ամեն ինչ որ 14
Աստուած անում է, այն յաւիտենական է, նորա վերայ չի ա-

ելլացնուիլ, և նորանից չի պա-
կասացնուիլ, և Աստուած արել
է որ վախենան իր երեսից։
15 Ինչ որ կայ, այն արդէն կար.
և ինչ որ լինելու է, այն արդէն
եղած է, և Աստուած կ'որոնէ
անցկացածը։
16 Եւ էլի տեսայ արեգակի տա-
կին դատի տեղը, որ անզգամու-
թիւն կար այնտեղ. և արդարու-
թեան տեղը՝ որ այնտեղ անըզ-
գամութիւն կար։
17 Ես ասացի իմ սրտումը. Ար-
դարին և ամբարշտին Աստուած
է դատում. վասն զի ամեն ձեռ-
նարկութեան ժամանակ կայ, և
ամեն բանի համար՝ որ լինում է
այնտեղ։
18 Ես ասացի իմ սրտումը. Որ
մարդկանց որդոց համար է, որ
Աստուած փորձէ նորանց, որ
տեսնեն թէ իրանք անասուններ
են ինքն ըստ ինքեան։
19 Վասն զի մարդկանց որդոց
պատահածը և անասուններին
պատահածը, և նորանց պատա-
հածը մէկ է։ Ինչպէս սա է մեռ-
նում, նոյնպէս էլ մեռնում է
նա. և ամենքի շունչը մէկ է. և
մարդս անասունից մի առաւե-
լութիւն չունի. որովհետև ամե-
նըն էլ ունայն է։
20 Ամենը գնում է մէկտեղ, ա-
մենը հողից է եղել և ամենը հող
է դառնալու։
21 Ո՞վ գիտէ թէ մարդկանց որ-
դոց հոգին վերև է երթում, և
անասունի հոգին ցած է գնում
գետինը։
22 Եւ ես տեսայ որ նորանից ա-
ւելի լաւութիւն չկայ որ մարդ
ուրախանայ իր գործքովը, վասն
զի նորա բաժինը դա է. որովհե-
տև ո՞վ պիտի տանէ նորան որ
տեսնէ, թէ իրանից յետոյ ինչ
է լինելու։

Գ Լ. Դ

1 Եւ ես դարձայ և տեսայ արե-
գակի տակին եղած բոլոր զրկանք-
ները. և ահա զրկեալների ար-
տասուք կար, բայց մխիթարող
չունէին. և նորանց զրկողների
ձեռքից բռնութիւն կար, բայց
իրանք մխիթարող չունէին։
2 Եւ ես գովեցի այն մեռածնե-
րին, որ արդէն մեռել էին, աւե-
լի քան թէ այն ապրողները որ
հիմա դեռ ապրում են։
3 Բայց այն երկուսից էլ լաւա-
գոյն է նա որ չէ եղել, որ չէ
տեսել արեգակի տակին գործը-
ւող չարութիւնը։
4 Եւ ես տեսայ բոլոր աշխատու-
թիւնը և բոլոր յաջող գործքը,
որի համար մարդս նախանձում
է իր ընկերին։ Սա էլ է ունայն
և քամու աշխատանք։
5 Անմիտը իր ձեռքերը գրկում
է և իր միսն ուտում։
6 Աւելի լաւ է մի բուռ լիքը
հանգստութիւնով քան թէ եր-
կու ափերը լիքը՝ աշխատութեամբ
և չարաչար հոգսերով։
7 Եւ ես դարձայ ու տեսայ արե-
գակի տակին ունայնութիւնը։
8 Մէկը կայ որ մի երկրորդ չու-
նի, ոչ որդի ունի և ոչ եղբայր.
բայց նորա զբաղմունքը վերջ չու-
նի. նաև աչքը չէ կշտանում
հարստութիւնով, և չէ ասում.
Ո՞րի համար եմ ես աշխատում, և զրկո՞ւմ իմ հոգուն բա-
րիքից. սա էլ է ունայն, և չար
տանջանք։
9 Երկուսը լաւ է քան թէ մէկը.
որ նորանք վարձք ունին իրանց
աշխատանքից։
10 Որովհետև եթէ վայր ընկնեն,
մէկը միւսին վեր կ'կացնէ. բայց
վա՛յ մէկին որ ընկնէ, և մի եր-
րորդ չկայ որ նորան կանգնեցնէ։
11 Եւ երբոր երկուսը միասին քը-
նեն՝ կ'տաքանան. բայց մէկը ի՞նչ-
պէս կ'տաքանայ։
12 Եւ եթէ մէկը նորան բռնա-
թիւն անէ, երկուսը նորա դէմ
կ'կանգնեն. և երեքպատիկ թելը
շուտով չի կտրուիլ։
13 Լաւ է մի աղքատ և խելա-
ւոր երեխան քան թէ ծեր և
անմիտ թագաւորը, որ այլևս
չգիտէ լսուարուիլ։
14 Վասն զի նա կալանաւորների
տնից դուրս է գալիս որ թա-

գաւորէ, իսկ — իր թագաւորութիւնն անգամ ծնուած՝ ազգատ է։

15 Եւ առայ արեգակին տակին վարուող բոլոր ապրողներին այն երկրորդի հետ, որ պիտի կանգնէ նորա տեղը։

16 Ծայր չկայ այն բոլոր ժողովրդին՝ այն ամենին, որ նորանցից առաջ էին, նորանցից եաինները էլ նորանով չեն ուրախանալու. սա էլ է ունայն և քամու աշխատանք։

Գլ. Ե

1 Զգոյշ եղիր ոտքիդ համար, երբ որ գնաս Աստուծոյ տունը. և մօտեցիր աւելի լսելու համար քան թէ յիմարների պոհ բեր. վասն զի նորանք չգիտեն որ չարութիւն են անում։

2 Մի շտապիր լեզուովդ, և սիրտդ շուտով բան չարտասանէ Աստուծոյ առջև, վասն զի Աստուած երկնքումն է և դու երկրի վերայ. սորա համար թող խօսքերդ քիչ լինին։

3 Վասն զի երազը գալիս է բազմութիւնից շատութիւնից, և յիմարի ձայնը՝ շատախօսութիւնից։

4 Երբոր Աստուծոյն ուխտ ես ուխտում, մի ուշացնիր նորան հատուցանելու. վասն զի յիմարներին նա չէ հաճում. ինչ որ ուխտում ես՝ կատարիր։

5 Լաւ է որ չուխտես, քան թէ ուխտես և չկատարես։

6 Թող մի տար բերանիդ որ մարմնոյդ մեղանչել տայ. և Աստուծոյ պատգամաւորի առջև մի ասիր. թէ Սխալմունք եղաւ. ինչո՞ւ համար Աստուած բարկանայ քո խօսքի համար, և քո ձեռաց գործքերը ապերէ։

7 Վասն զի շատ երազներում և շատ խօսքերում շատ էլ ունայնութիւններ կան. բայց դու վախեցիր Աստուածանից։

8 Եթէ մի տգքատի զրկանքը և արդարութեան ու իրաւունքի յափշտակութիւը տեսանես մի զարհուրիր այդ բանից. վասն զի բարձրիցը ևս աւելի բարձրը նայում է և բարձրեր կան նորանից վերայ։

9 Եւ երկրի օգուտը ամեն բանում այն է, որ թագաւորը երկրին նուիրուած է։

10 Արծաթի սիրողը արծաթից չի կշտանալ, և ով հարստութիւն է սիրում, եկամուտը չէ լինում. սա էլ է ունայն։

11 Բարիքները շատանալիս շատանում են նորա ուտողները, ուրեմն նորա տէրերի համար ի՞նչ շահ կայ բացի իրանց աչքով տեսնելուց.

12 Քաղցր է գործաւորի քունը թէ քիչ ուտէ նա, թէ կուշտ շատ, բայց հարուստի կուշտութիւնը նորան թոյլ չի տալ որ հանգիստ քնէ.

13 Տեսայ որ մի վատ ցաւ կայ արեգակի տակին, այսինքն այն հարստութիւնը, որ պահվում է իր տիրոջ ձախորդութեան համար։

14 Եւ այն հարստութիւնը մի չար պատահարով կ'կորչէ, և նա որդի է ծնել, բայց ձեռքին մի բան չկայ։

15 Ինչպէս որ եկաւ մարդը որովայնիցը, մերկ էլ եաւ կ'գառնայ, կը գնայ ինչպէս եկել էր. և մի բան վեր չի առնիլ իր աշխատանքիցը որ կարող էր տանել իր ձեռքին։

16 Սա էլ է մի վատ ցաւ, որ բոլորովին ինչպէս որ եկաւ այնպէս էլ գնալու է, և նորան ինչ օգուտ կայ, որ աշխատեց քամու համար։

17 Նա իր բոլոր օրերը խաւարումն կ'ուտէ, մեծ վիշտով և ցաւով և բարկութեամբ։

18 Ահա այս իմ տեսածը լաւ է, որ վայելուչ է ուտել և խմել և բարիք վայելել արեգակի տակին իր քաշած տանջանքովը Աստուծոյ իր տուած կենաց քիչ օրերումը. վասն զի դա է նորա բաժինը։

19 Նաև ամեն մարդ, որին Աստուած տուել է հարստութիւն

և կայք, և նորան իշխանութիւն է տալիս նորանից ուտելու և բաժին առնելու. և իր աշխատանքովը ուրախանալու. սա Աստուծոյ պարգևն է։

20 Վասն զի նա իր կենաց օրերը շատ չէ յիշելու, որովհետև Աստուած պատասխանում է նորա սրտի ուրախութեամբը։

ԳԼ. Զ

1 Մի չարիք կայ, որ տեսել եմ արեգակի տակին, և նորանից շատ կայ մարդկանց մէջ.

2 Մի մարդ, որին Աստուած տուել է հարստութիւն, ստացուածք և փառք, որ ոչինչ պակասութիւն չունի իր հոգու ցանկացած բաներից. բայց Աստուած նորան իշխանութիւն չէ տալիս նորանից վայելելու, այլ մի օտար մարդ է ուտում այն. սա ունայնութիւն է և վատ ցաւ։

3 Եթէ մի մարդ հարիւր որդի ծնէ, և շատ տարիներ ապրէ, և նորա տարիները շատ լինին, և նորա հոգին չկշտանայ բարիքից, և նա թաղում չունենայ. ես ասում եմ, որ վիժածը նորանից լաւ է։

4 Վասն զի նա ունայնութեամբ գալիս է, և խաւարով գնում, և խաւարում ծածկվում է նորա անունը։

5 Արեգակն էլ նորան չէ տեսել և չէ ճանաչել. նա նորանից հանգիստ կ'լինի։

6 Եւ եթէ նա ապրէ հազար տարի կրկին անգամ, և մի լաւութիւն չտեսանէ. չէ՞ որ ամենքն էլ մէկ տեղ են գնում։

7 Մարդու բոլոր աշխատանքը իր բերանի համար է, սակայն հոգին չի կշտանում։

8 Վասն զի իմաստունը ինչ գերազանցութիւն ունի յիմարից, և ինչ՝ այն ապրել գիտացող աղքատը ապրողների առջև։

9 Լաւ է աչքով տեսանել քան թէ մտքով պտտուիլ. սա էլ է ունայն և քամու աշխատանք։

10 Ինչ որ եղել է, նորա անունը արդէն դրուած է, և յայտնի է, որ մարդ է. և որ նա չէ կարող վիճել իրանից Զօրաւորի հետ։

11 Որովհետև շատ խօսքեր կան, որ ունայնութիւնը շատացնում են. մարդուս ի՞նչ օգուտ։

12 Վասն զի ո՞վ գիտէ թէ ինչ է լաւ մարդուս համար կեանքի մէջ, իր կեանց սակաւաթիւ օրերում ունայն է լինում, և նորանց շուքի պէս անց կացնում. և ո՞վ էլ պիտի մարդուս խնացնէ, թէ ի՞նչ կ'լինի նորանից յետոյ արեգակի տակին։

ԳԼ. Է

1 Բարի անունը լաւ է հոտաւէտ իւղից. և մահուան օրը նորա ծնընդեան օրից։

2 Լաւ է գնալ սուգի տունը, քան թէ գնալ խնջոյքի տունը, վասն զի նա (մահը) ամեն մարդու վերջն է. և ապրողը կ'պահէ այդ իր սրտումը։

3 Լաւ է տրտմութիւնը ուրախանալուց, վասն զի երեսը տխրելիս սիրտը կ'ուրախանայ։

4 Իմաստունների սիրտը սուգի տանն է, բայց յիմարների սիրտը՝ ուրախութեան տանը։

5 Լաւ է լսել իմաստունների կըշտամբութիւնը, քան թէ այն մարդը, որ լսում է յիմարների երգը։

6 Վասն զի ինչպէս որ փուշերի ձայնն է կաթսայի տակին, այնպէս է յիմարի ծիծաղելը. սա էլ է ունայն։

7 Վասն զի բռնութիւնը կ'յիմարացնէ իմաստունին, և պարգևը փչացնում է սիրտը։

8 Մի բանի վախճանը լաւ է նորա սկզբից. լաւ է երկայնամիտը բարձրամիտ մարդուց։

9 Մի շտապիր հոգովդ բարկանալու, վասն զի բարկութիւնը յիմարների ծոցումն է հանգչում։

10 Մի ասիր թէ՝ ինչ է որ առաջի օրերը աւրանցից լաւ էին, որովհետև իմաստութիւնից չես հարցնում այս բանը։

11 Իմաստութիւնը լաւ է ժառանգութեան հետ, և շահաւէտ է արեգակը տեսանողների համար։

12 Վասն զի իմաստութեան հովանու տակ — արծաթի հովանու տակ՝ ահ է. բայց գիտութեան շահը սա է, որ իմաստութիւնը կ'ապրեցնէ իր տիրոջը։
13 Տես Աստուծոյ գործքը, վասն զի ո՞վ կարող է ուղղել նորա ծռածը։
14 Լաւ օրը լաւութեամբ անց կացրու, և վատ օրը զգուշութիւն արա, որպէս էլ Աստուած նորա կշռին առեղծեց, որ մարդս իրանից յետոյ մի բան չգտնէ։
15 Բոլորը տեսայ իմ ունայնութեան օրերումը, արդար կայ որ կորչում է իր արդարութեան մէջ. և ամբարիշտ էլ կայ, որ երկարացնում է կեանքը իր ամբարշտութեան մէջ։
16 Խիստ շատ արդար մի լինիր. և քեզ չափազանց իմաստուն մի կարծիր. ինչո՞ւ համար քեզ կորցնես։
17 Խիստ ամբարիշտ մի լինիր, և յիմար մի լինիր. ինչո՞ւ համար տարաժամ մեռնես։
18 Լաւ է որ մէկին բռնես և միւսից էլ ձեռքդ չքաշես, վասն զի Աստուածանից վախեցողը ամենը կ'կատարէ։
19 Իմաստութիւնը աւելի ոյժ կը տայ իմաստունին, քան թէ տասը իշխանները, որ այն քաղաքումը լինին։
20 Իրաւ որ երկրի վերայ արդար մարդ չկայ, որ բարի գործէ և չմեղանչէ։
21 Ամեն խօսած խօսքերի էլ սիրտդ մի տար, որ չլսես ծառադ քեզ անիծելիս։
22 Վասն զի քո սիրտն էլ իմացել է շատ անգամ, որ դու էլ ես անիծել ուրիշներին։
23 Այս ամենը փորձեցի իմաստութիւնով, ասացի թէ՝ Ես իմաստուն դառնամ, բայց նա ինձանից հեռու էր։
24 Հեռու է այն ինչ որ եղել է. և խորը՝ խոր. ո՞վ կարող է հասնել նորան։
25 Ես իմ սրտովը շուռ տուի, որ գիտենամ և քննեմ և որոնեմ իմաստութիւն և հանճար. և գիտենամ թէ յիմարութիւնը չարութիւն է, և անմտութիւնը գիժութիւն։
26 Եւ ես գտայ մահից աւելի դառն այն կինը, որի սիրտը ցանցեր և ուռկաններ են, և որի ձեռքերը՝ կապանքներ։ Աստուծոյ առջև հաճելի եղողը կ'ազատուի նորանից, իսկ մեղաւորը կ'բռնուի նորա մէջ։
27 Ահա գտել եմ այս բանը, ասում է ժողովողը, մէկ մէկ պէտք է հաշիւը գտնելու համար։
28 Որ հոգիս տակաւին որոնում է, և ես չեմ գտել. մէկ մարդ եմ գտել հազարիցը, բայց ոտքանց ամենի մէջ մի կին չգտայ։
29 Սակայն ահա սա եմ գտել, որ Աստուած մարդուս ուղիղ է առեղծել, բայց նորանք շատ հնարքներ որոնեցին։

Գլ. Ը

1 Ո՞վ կայ իմաստունին պէս, և ո՞վ է բանի մեկնութիւնը գիտեցողը. մարդուս իմաստութիւնը փայլեցնում է նորա երեսը. և նորա երեսի պնդութիւնը կ'փոխուի։
2 Ես ասում եմ. Պահիր թագաւորի խօսքը, մանաւանդ Աստուծոյ երդումի պատճառովը.
3 Մի շտապիր նորա երեսի առջևից գնալու, մի կանգնիր չար գործի մէջ. վասն զի ամեն ինչ որ ուզէ կ'անէ։
4 Ըստ որում թագաւորի խօսքը հզօր է, և ո՞վ կարող է ասել նորան, թէ ի՞նչ ես անում։
5 Պատուիրանքը պահողը չարիք չէ ճանաչում, այլ ժամանակն ու իրաւունքը ճանաչում է իմաստունի սիրտը։
6 Վասն զի ամեն ձեռնարկութեան համար կայ ժամանակ և իրաւունք, բայց մարդուս համար մեծ չարիք կայ գորանից։
7 Վասն զի նա չգիտէ թէ ինչ է լինելու. և թէ ի՞նչպէս է լինելու, ո՞վ է կարող իմացնել նորան։

8 Մարդ չկայ որ քամուն վերայ իշխէ որ քամին արգելէ. և իշխող էլ չկայ մահուան օրուան վերայ, և արձակում չկայ պատերազմի մէջ. և ամբարշտութիւնը չի պրծացնէլ իր տիրոջը:
9 Ահա բոլորը տեսայ, և արեգակի տակին եղած բոլոր գործքերին ուշ դարձի. ժամանակ կայ որ մարդ մարդու վերայ իշխում է իր ժառայ համար:
10 Եւ յետոյ տեսայ որ անպիտանները թաղվուած էին գնուած. և սուրբ տեղիցը գնացին և մոռացուեցան այն քաղաքումը, ուր որ այսպէս արել էին. սա էլ է ունայն:
11 Որովհետև չար գործի վճիռը շուտով չէ կատարվուած, սորա համար էլ մարդկանց որդոց սիրտը համարձակվուած է չարութիւն անելու:
12 Թէև մեղաւորը հարիւր անգամ մեղք անէ, և նա երկարատև էլ լինի. այնու ամենայնիւ գիտեմ ես, որ բարիք կ'լինի Աստուածանից վախեցողներին, որ վախենուած են նորա երեսից:
13 Բայց ամբարշտին բարութիւն չի լինիլ. և իր օրերը չի երկարացնիլ ինչպէս որ սոսերը. վասն զի չեն վախենուած Աստուծոյ երեսից:
14 Մի ունայնութիւն կայ որ լինուած է երկրի վերայ, որ արդարներ կան, որոնց պատահած է ամբարիշտների գործքին պէս. և կան ամբարիշտներ, որոնց պատահած է արդարների գործքին պէս. ես ասացի, որ սա էլ ունայնութիւն է:
15 Եւ ես գովեցի ուրախութիւնը, որ մարդուս համար արեգակի տակին մի լաւ բան չկայ, բաց'ի միայն ուտել ու խմել և ուրախանալը. և սա է նորա հետ գընուած իր աշխատութեան մէջ իր կենաց օրերումը, որ Աստուած նորան տուել է արեգակի տակին:
16 Երբոր ես ուշ դարձրի իմաստութիւնը գիտենալու և այն բաղմութիւնը տեսանելու, որ լինուած է երկրի վերայ. (որովհետև թէ ցերեկը և թէ գիշերը նորա աչքերը քուն չեն տեսանում,)
17 Ահա ժամանակ տեսայ Աստուծոյ բոլոր գործքը, որ մարդս կարող չէ հասանելու այն գործին, որ լինուած է արեգակի տակին. որքան էլ մարդս աշխատէ որոնելու՝ չի հասնիլ. և մինչև անգամ եթէ իմաստունն էլ ասէ. թէ գիտեմ. դարձեալ չէ կարող հասանել:

ԳԼ. Թ

1 Վասն զի այս բոլորը դրի իմ սրտումը, որ այս բոլորն էլ քննեմ, որ արդարները և իմաստուններն ու նորանց գործքերը Աստուծոյ ձեռքին են. սէրն էլ ատելութիւնն էլ չգիտէ մարդս. բոլորն էլ իրանց առջևն են:
2 Ամենը իրեւ թէ ամենքի համար է. միևնոյնը պատահուած է արդարին և ամբարշտին, բարի և մաքուր մարդուն և անմաքուրին, զոհողին, և զոհ չանողին, ինչպէս է բարին՝ այնպէս է մեղաւորը. երդուած անողը՝ այնպէս և երդումից վախեցողը:
3 Սա վատ է արեգակի տակին եղած բոլոր գործքերումը, որ ամենքին էլ միևնոյնն է պատահուած. Ու նաև մարդկանց որդոց սիրտը լիքն է չարութեամբը, և խենթութիւն կայ նորանց սրտումը իրանց կեանքի մէջ. իսկ վերջը էջ՝ մեռելների մօտը:
4 Վասն զի ով որ ընկեր է միւս ապրողներին՝ յոյս կայ նորանից. որովհետև ողջ շունը լաւ է մեռած առիւծից:
5 Վասն զի կենդանիները գիտեն որ մեռնելու են, բայց մեռելները մի բան չգիտեն և վարձք էլ չունին, վասն զի նորանց յիշատակը մոռացուել է:
6 Նորանց սէրն էլ, նորանց ատելութիւնն էլ, նորանց նախանձն էլ վաղուց է փչացել. և նորանց համար այլ ևս յաւիտեան բաժին չկայ, արեգակի տակին եղած բոլոր բաներին մէջ,

7 Գնա ուրախութեամբ կեր հացդ, և զուարթ սրտով խմիր գինիդ, վասն զի վաղուց հաւանել է Աստուած քո գործքին։
8 Հանդերձներդ միշտ սպիտակ լինին, և գլխիդ իւղը չպակասէ։
9 Կեանք վայելիր քո սիրած կնոջ հետ քո ունայն կենաց բոլոր օրերումը, որ քեզ տուել է արեգակի տակ քո բոլոր ունայն օրերումը, վասն զի նա է քո բաժինը ապրողների մէջ, և արեգակի տակին քո քրտած աշխատանքի մէջ։
10 Ամեն ինչ որ ձեռքդ գտնէ առնելու՝ ուժովդ արա, վասն զի գործք, խորհուրդ, գիտութիւն և իմաստութիւն չկայ միւս աշխարհքումը, ուր որ գուս պիտի գնաս։
11 Դարձեալ տեսայ արեգակի տակին որ ընթացքը վազողներինը չէ, և ոչ էլ պատերազմը՝ քաջերինը, և ոչ էլ հացը՝ իմաստուններինը, և ոչ էլ հարստութիւնը՝ հասկացողներինը, և ոչ էլ շնորհքը՝ գիտուններինը. վասն զի ժամանակն ու դիպուածը ամենքին նոյնն է պատահում։
12 Վասն զի մարդս էլ չգիտէ իր ժամանակը. ինչպէս որ ձուկերը բռնվում են չար ուռկանով, և ինչպէս որ թռչուններն բռնվում են ծուղակի մէջ. նորանց նման էլ բռնվում են մարդկանց որդիքը որոգայթի մէջ մի չար ժամանակում, երբոր յանկարծ բնկնում է նորանց վերայ։
13 Արեգակի տակին այս իմաստութիւնն էլ տեսայ, և նա ինձ համար մեծ էր։
14 Մի փոքր քաղաք, և միջին քիչ ժողովուրդ. և նորա վերայ եկաւ մի մեծ թագաւոր, և նորան պաշարեց, և նորա դէմ մեծամեծ պատնէշներ շինեց.
15 բայց նորանում մի աղքատ իմաստուն գտնուեցաւ, և նա իր իմաստութեամբը ազատեց քաղաքը. բայց ոչ մի մարդ չյիշեց այն աղքատ մարդուն։
16 Եւ ես ասացի. Իմաստութիւնը լաւ է ուժից. թէև աղքատի իմաստութիւնը անարգուած լինի, և նորա խօսքին չլսեն։
17 Իմաստունների խօսքերը՝ մեղմութեամբ լսուած, լաւ է յիմարների վերայ իշխողի աղաղակից։
18 Իմաստութիւնը լաւ է պատերազմական գործիքներից, բայց մէկ մեղաւորը շատ բարիքներ կը փչացնէ։

Գլ. Ժ

1 Մահաբեր ճանճերը գարշահոտ են անում եռացնում իւղապործի իւղը, նոյնպէս և մի քիչ յիմարութիւնը աւելի ծանր է լինում իմաստութիւնից և փառքից։
2 Իմաստունի սիրտը իր աջ կողմին է, և յիմարի սիրտը՝ իր ձախ կողմին։
3 Որ ճանապարհով էլ որ գնայ յիմարը՝ պակասաւիտ է. և ամենին կ'ասէ, թէ ինքը յիմար է։
4 Եթէ իշխանի բարկութիւնը վեր կենայ քեզ դէմ, քո տեղը չձգես. վասն զի մեղմութիւնը մեծ յանցանքները կ'դադարեցնէ։
5 Կայ մի չարիք էլ, որ տեսայ արեգակի տակին, այն սխալմանքի նման, որ դուրս է գալիս իշխանի առջևից։
6 Յիմարութիւնը դրվում է շատ բարձրերում, իսկ հարուստները ցածումն են նստում։
7 Տեսայ ծառաներ՝ ձիերի վերայ. և իշխաններ՝ ծառաների պէս քայլելիս երկրի վերայ։
8 Ով որ փոս փորէ, մէջը կ'ընկնէ. և ով որ ցանկը քանդէ, օձը կ'կծէ նորան։
9 Ով որ քարեր տեղահանէ, նորանցով կ'վնասուի. փայտ կըտրողը վտանգի է ենթարկուած նորանից։
10 Եթէ կացինը փխացել է, և նա չարէ նորա բերանը, այն ժամանակ նա պէտք է ոյժը զօրացընէ, և յաջողութեան շահը իմաստութիւնն է։
11 Եթէ օձը խայթէ առանց թովելու, ուրեմն օգուտ չկայ թովչութիւն ունեցողի համար։

12 Իմաստունի բերանի խօսքերը շնորհք են, բայց անմտի շրթունքները իրան կուլ կ'տան։
13 Նորա բերանի խօսքերի սկիզբը յիմարութիւն է. և նորա բերանի վերջը չար խենդութիւն։
14 Եւ յիմարը կ'շատացնէ խօսքերը. մարդս չգիտէ թէ ինչ է լինելու. և թէ նորանից յետոյ ինչ է լինելու, ո՞վ կարող է իմացնել նորան։
15 Յիմարի աշխատութիւնը իրան կ'յոգնեցնէ, որ չգիտէ քաղաքը գնալը։
16 Վա՛յ քեզ, երկիր, որ թագաւորդ տղայ է. և որ իշխաններդ առաւօտանց կանուխ են ուտում։
17 Երանի՛ քեզ, երկիր, որ թագաւորդ ազնուազարմ է, և որ իշխաններդ իր ժամանակին են ուտում ուժի համար և ոչ թէ խնջոյքի համար։
18 Ծուլութիւններով շէնքը փուլ կ'գայ, և ձեռքերը կախելով տունը կ'կաթէ։
19 Ուրախանալու համար կ'անեն հացկերոյթը, և գինին կ'զուարթացնէ կեանքը, և արծաթը պատասխան է տալիս ամենին։
20 Քո մտքումն անգամ մի անիծիր թագաւորին, և քո անկողնարանումը մի անիծիր հարուստին. վասն զի երկնից թռչունը ձայն կ'տանէ. և թեւաւորը խօսքը կ'պատմէ։

ԳԼ. ԺԱ

1 Հացդ թող տուր ջրերի երեսին, վասն զի շատ օրերից յետոյ նորան կ'գտնես։
2 Բաժին տուր եօթնեին և ութին էլ, վասն զի չգիտես թէ ինչ չարիք պիտի լինի երկրի վերայ։
3 Եթէ ամպերը լցուին՝ երկրի վերայ անձրև կ'տեղան, և եթէ մի ծառ դէպի հարաւ ընկնէ կամ դէպի հիւսիս, այնտեղը, ուր որ ծառը ընկել է, կ'մնայ։
4 Քամուն մտիկ անողը սերմը չի ցանիլ, և ամպերին նայողը չի հնձիլ։
5 Ինչպէս որ չգիտես, թէ որն է քամու ճանապարհը, ինչպէս են ոսկորները յղի կնոջ արգանդումը, նոյնպէս և չգիտես ամենատեղծ Աստուծոյ գործը։
6 Առաւօտանց ցանիր քո սերմը, և իրիկունը թող չդադարէ քո ձեռքը, վասն զի չգիտես, թէ որն է յաջողելու, սա թէ նա, կամ թէ երկուսն էլ միասին են լաւ լինելու։
7 Եւ քաղցր է լոյսը, և ախորժելի է աչքին տեսանել արևը.
8 Իրաւ եթէ մարդս շատ տարիներ էլ ապրէ, նորանցումն թող ուրախանայ. բայց յիշէ խաւարի օրերը, որ շատ են լինելու. ամեն ինչ որ պիտի դայ ունայն է։
9 Ուրախացիր, երիտասարդ, քո մանկութիւնումը, և թող զուարճացնէ քեզ քո սիրտը երիտասարդութեանդ օրերումը. և գնա քո սրտի ճանապարհովը և աչքերդ նայուածքովը. և գիտացիր որ սորանց ամենի համար Աստուած քեզ դատաստանի է բերելու։
10 Եւ հեռացրու տրտմութիւնը սրտիցդ, և դէն սրա չարութիւնը մարմնիցդ, որովհետև մանկութիւնը և երիտասարդութիւնը ունայն է։

ԳԼ. ԺԲ

1 Եւ յիշիր քո Ստեղծողին քո երիտասարդութեան օրերումը, քանի որ չեն եկել թշուառութեան օրերը, և չեն հասել այն տարիները, որ ասես. Թէ նորանց չեմ հաւանում։
2 Քանի որ չէ խաւարել արեգակն ու լոյսը, լուսինը և աստղերը, և չեն դարձել ամպերը անձրևի ետևիցը.
3 Այն օրը, որ կ'դողդողան տան պահապանները, և կ'կորանան զօրաւոր մարդիկը, և կ'դադարեն աղացողները քիչ լինելու համար. և պատուհաններից նայողները կ'մթնեն,
4 Եւ դրսի դռները կ'կապուին՝ աղօրիքի ձայնը տկարանալով. և

նա վեր կ'կենայ Թագուհի ձայնովը, և բոլոր երգեցողները պիտի նկուն լինին։

5 Մի բարձր տեղից վինչև անգամ կ'վախենան, և վախվախելով կ'գնան ճանապարհը, և նշենին կ'ծաղկէ, և մորախը կ'ծանրանայ, և *ախորժակը կ'դադարէ. վասն զի մարդս գնալիս է լինում իր յաւիտենական տունը. և դրսումը շրջապատում են լացողները։

6 Քանի որ չէ կտրուել արծաթի թելը, չէ կոտրել ոսկի բաժակը, և չէ փշրուել սափորը աղբիւրի մօտ, և չէ կոտրել անիւը ջրհորի վերայ։

7 Եւ հողը եւ դարձել երկրին ինչպէս որ էր, և հոգին եւ դարձել Աստուծոյ մօտ, որ տուել էր։

8 Ունայնութիւն ունայնութեանց ասաց Ժողովողը, ամեն բան ունայն է։

9 Եւ բացի դորանից որ Ժողովողը իմաստուն էր, նա դեռ ժողովրդին գիտութիւն սովորեցրեց. և կշռեց ու քննեց և շատ առակներ շարադրեց։

10 Ժողովողը ջանք արաւ վայելուչ խօսքեր գտնելու, և գրուածը ուղիղ ճշմարիտ խօսքեր են։

11 Իմաստուններուի խօսքերը խթանների պէս են, և ինչպէս խրուած բևեռներ ժողովածուների տէրերի ՅԵՒՈՎԱ տրուած են մէկ հովիւից։

12 Եւ վերջապէս, որդեակս, նրանցով լուսաւորուիր. շատ գրքեր շինելը ծայր չունի. և շատ կարդալը կ'յոգնեցնէ մարմինը։

13 Բոլոր խօսքի վախճանը լսենք. Աստուածանից վախեցիր և նորա պատուիրանքները պահիր. վասն զի սա է ամեն բան մարդուս համար։

14 Վասն զի ամեն գործքը բերելու է դատաստան, ամեն ծածուկ բանի հետ՝ թէ բարի թէ չար։

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Երգ երգոց Սողոմոնի։

2 Թող ինձ համբուրէ իր բերանի համբոյրներովը, վասն զի քո սէրը գինուց լաւ է։

3 Անուշելի են հոտոտելուց քո իւղերը, թափուած իւղ է քո անունը, նորա համար սիրուած են քեզ օրիորդները։

4 Քաշիր ինձ. ետևիցդ կ'վազենք. ինձ տարաւ թագաւորը իր սենեակները, ցնծանք և ուրախանանք քեզ հետ. քո սէրն ասելի յիշենք քան թէ գինին. ուղղութեամբ սիրուած են քեզ։

5 Սև եմ ես, բայց գեղեցիկ, ով Երուսաղէմի աղջկունք, կեդարի վրաններուի նման, Սողոմոնի վարագոյրների նման։

6 Մի նայիք որ ես սևացած եմ, վասն զի արևն ինձ խանձել է. մօրս որդիքը բարկացել էին ինձ վերայ, ինձ պահապանուհի էին դրել այգիներին. բայց իմ սեպհական այգին չէի պահպանում։

7 Ասիր ինձ, ով հոգիս սիրածը, որտեղ ես արածեցնում. որտեղ ես ցերեկը իջեցնում կէս օրին. ապա ինչո՞ւ համար թափառականի պէս լինիմ քո ընկերների հօտերի մօտ։

8 Եթէ դու չգիտես, ով կանանց գեղեցկագոյնը, դուրս եկ հօտի ետևիցը, և արածեցրու ուլերիդ հովիւների վրաններուի կըզաւին։

9 Փարաւոնի կառքին լծուած ձիերիս նմանեցրի քեզ, ով ընկերուհիս։

10 Այտերդ գեղեցիկ են դինդերովը, պարանոցդ՝ մանեակներովը։

---

*կապարը

11 Ոսկի գնդեր շինենք քեզ համար, արծաթի կիտուածքով։
12 Մինչև որ թագաւորը իր սեղանին վերայ է, իմ նարդոսը իր հոտը բուրեց։
13 Մատչխի ծրար է իմ սիրականը ինձ համար. ամբողջ գիշերը իմ ծոցիս մէջ է անցկացնելու գիշերը։
14 Ենգեդի ողկոյզ է իմ սիրականը ինձ համար. Ենգադդիի այգեստանումը։
15 Ահա գեղեցիկ ես դու, ով բնկերուհիս. ահա գեղեցիկ ես. աչքերդ աղաւնիների պէս են։
16 Ահա գեղեցիկ ես դու, ով իմ սիրական, նաև հաճելի, նաև մեր անկողինը դալար է։
17 Մեր տների գերանները եղեւնափայտ են, մեր առիքները մայր փայտ։

ԳԼ. Բ

1 Ես Սարոնի ծաղիկն եմ, հովիտների շուշանն եմ։
2 Ինչպէս շուշանը է փուշերի մէջ նոյնպէս է իմ բնկերուհին աղջկանց մէջ։
3 Ինչպէս խնձորենին է անտառի ծառերի մէջ, այնպէս է իմ սիրականը տղերանց մէջ։ Ներա հովանոն հաւանեցայ և նստեցայ, և նորա պտուղը քաղցր է իմ քիմքին։
4 Ինձ տարաւ *խնջոյքի տունը, և նորա դրօշն ինձ վերայ սէր է։
5 Զօրացրէք ինձ կարկանդակներով, ուժովացրէք ինձ խնձորներով. վասն զի սիրոյ հիւանդ եմ ես։
6 Ներա ձախ ձեռքը գլխիս տակին, և աջը ինձ պրկէ։
7 Երդում եմ տալիս ձեզ, ով Երուսաղէմի աղջկունք, դաշտի այծեաներով կամ եղնիկներով. մի զարթնեցնէք և մի կացնէք սիրուհուն, մինչև որ ինքը կամենայ։
8 Իմ սիրականի ձայնն է. ահա նա գալիս է, թռչտելով լեռների վերայ, ստոստոտելով բլուրների վերայ։

*գինու

9 Նմանն է իմ սիրականը այծեման կամ եղնիկի ձագին. ահա նա կանգնած է մեր պատի ետեւին, դիտում է պատուհաններից, գնում է վանդակներից։
10 Պատասխանեց իմ սիրականը և ասաց ինձ. Վեր կաց, ով բնկերուհիս, ով գեղեցիկս, ու արի ևկ։
11 Վասն զի ահա ձմեռն անցել է, անձրեւը անցել գնացել է։
12 Ծաղիկները երեւում են տափի վերայ, երգելու ժամանակը հասել է. տատրակի ձայնը լսւում է մեր երկրումը։
13 Թզենին հասցնում է իր պտուղները, և ծաղկած որթերը հոտ են բուրում. վեր կաց, ով բնկերուհիս, ով գեղեցիկս, ու արի ևկ։
14 Ով աղաւնիս, որ վէմի խոռոչներումն ես, որ ապառաժի ծածկոցի տակին ես, ցոյց տուր ինձ քո երեսը, ձայնդ ինձ լսել տուր. վասն զի ձայնդ քաղցր և դէմքդ հաճելի է։
15 Բռնեցէք մեզ համար աղուէսներըը, այդ մանր պզտիկ աղուէսները. որովհետև մեր այգին ծաղկել են։
16 Իմ սիրականն իմն է, և ես նորանը. նա արածեցնում է շուշանների մէջ։
17 Քանի որ օրուան քամին փչում է, և ստուերները փախչում են. ետ դարձիր, ով իմ սիրական, նմանիր այծեամին, կամ եղնիկի ձագին, որ պատառոտուած լեռների վերայ են։

ԳԼ. Գ

1 Իմ անկողնի մէջ գիշերը ես ուրենեցի իմ հոգու սիրածին, ես որոնեցի նորան, բայց չգտայ։
2 Վեր կենամ, շուռ գամ քաղաքը, փողոցներումն ու հրապարակներումը որոնեմ իմ հոգու սիրածին. նորան որոնեցի բայց չգտայ։
3 Գաղաքի մէջ շուռ եկող պահապաններն ինձ գտան. իմ հոգու սիրածին տեսե՞լ էք։

4 Չպիտի թէ անց էի կացել նո-
րանցից, որ գտայ իմ Հոգու ա-
րածին. նորան բռնեցի և դուց չը
թողեցի, մինչև որ նորան տարի
իմ մօր տունը և ինձ ծնանողի
սենեակը։
5 Երդուեմ եմ տալիս ձեզ, ով
Երուսաղէմի աղջկունք, այծեամ-
ներովը կամ դաշտի եղնիկներու-
վը, մի զարթնեցնէք և վեր մի
կացնէք սիրականին, մինչև որ
ինքը բարեհաճէ։
6 Ո՞վ է սա որ վեր է գալիս ա-
նապատից, ծուխի սիւներին նը-
մանն, խնկաւած զմուռսով ու
կնդրուկով բուրավառած ամեն
տեսակ փոշիներով։
7 Ահա Սողոմոնի անկողինը վաթ-
սան զօրաւորներ կան նորա շուր-
ջը Իսրայէլի զօրաւորներից։
8 Ընդունք ամենքը սուսերաւոր
են, պատերազմի վարժուած, ի-
րաքանչիւրն սուրը իր ազդրի վե-
րայ գիշերների վախի պատճա-
ռովը։
9 Սողոմոն թագաւորը իրան հա-
մար մի գահաւորակ է շինել Լի-
բանանի փայտերից։
10 Նորա սիւները արծաթից է շի-
նել, յենարանները՝ ոսկուց. բազ-
մոցը՝ ծիրանուց. նորա ներքը
զարդարուած է Երուսաղէմի աղջ-
կանց սիրովը։
11 Դուրս եկէք ու տեսէք մեկ,
ով Սիոնի աղջկունք, Սողոմոն
թագաւորին, այն թագովը որով
պսակեց նորան իր մայրը նա փե-
սայանալիս, նորա սրտի ուրա-
խութեան օրը։

Գ.Լ. Գ

1 Ահա դու գեղեցիկ ես, ով ըն-
կերուհիս, գեղեցիկ. աչքերդ ա-
պառնու աչքերի նման են ծամերիդ
ետևից. մազերդ Գաղաադի լեռ-
ները իջնող այծերի հօտին են
նման։
2 Ատամներդ լուացարանից դուրս
եկող խուզած հօտի նման են. ո-
րոնք ամենքը երկուորեակ ծնող-
ներ են, և ամուլը չկայ նորանց
մէջ։
3 Որդան կարմրի թելի նման են
քո շրթունքները, և բերանդ
վայելուչ է. կիսած նռնի նման՝
այտերդ ծամերիդ տակին։
4 Պարանոցդ նման է Դաւթի
աշտարակին՝ զինարան համար
շինուած. ուր հազար ատեր
կան կախուած, բոլորն էլ քա-
ջազանց վահաններ։
5 Ջուխտ տունքդ նման է մի
ջուխտ ուլերի, երկուորեակ այծ-
եամի, որ արածում են շուշան-
ների մէջ։
6 Քանի որ փչում է օրուան քա-
մին, և փախչում են նորա քաո-
սերները, գնամ ես զմուռսի
լեռովը և կնդրուկի բլուրովը։
7 Բոլորովին գեղեցիկ ես, ով ըն-
կերուհիս. և քեզ վերայ չկայ
մի արատ։
8 Արի ինձ հետ Լիբանանից, ով
հարս, ինձ հետ Լիբանանից
գը. մտիկ տուր Ամանայի գագա-
թից, Սանիրի և Հերմոնի գա-
գաթից, առիւծների բանակա-
տեղից, ինձերի լեռներից։
9 Սիրտս յափշտակել ես, ով
իմ քոյր հարս. սիրտս յափշտ-
ակել ես նայուածքներիդ մէկ-
ովը, պարանոցիդ մանեակների
մէկովը։
10 Ի՜նչ գեղեցիկ է քո սէրը, ով
իմ քոյր հարս, ինչ լաւ է քո
սէրը գինուց, և քո իւղերի
բուրմունքը՝ ամեն խունկերից։
11 Մեղրախորիսխ է կաթում շըր-
թունքներիցդ, ով հարս. մեղր
ու կաթ կայ լեզուիդ տակին. և
հանդերձներիդ հոտը Լիբանանի
հոտին է նման։
12 Փակուած այգի է իմ քոյր
հարսը, փակուած ակն է, կնքը-
ուած աղբիւր է։
13 Քո ատերը նռնենուց դրախտ
է պատուական պտուղներով,
կիպրոսներով ու նարդոսներով.
14 Նարդոս և քրքում, եղէգն ու
կինամոն, ամեն խնկաբեր ծառով,
զմուռսով և հալուէով, բոլոր
գլխաւոր բուրմունքներով.
15 Պարտէզների աղբիւր, կենդանի
ջրի ջրհոր, և Լիբանանից հոսած
վտակներ։

16 Զաբթիները, ով Հիւսիս, և եկ
ով Հարաւ, փչիր իմ պարտէզին,
փուսին նորա փուրմանքը, Թող
իմ սիրականը իր պարտէզը գայ,
և ուտէ նորա պատուական պը-
տուղները։

ԳԼ. Ե

1 Եկայ իմ պարտէզը, ով իմ
քոյր Հարս. քաղեցի զմուռսս իմ
բուրմանցը Հետ. կերայ իմ խո-
բիսքը իմ մեղրի Հետ. խմեցի
գինիս իմ կաթի Հետ. կերէք
ով բարեկամներ, խմեցէք ու զը-
ուարթացէք, ով սիրելիներ։
2 Ես քնում եմ, բայց սիրտս
զարթուն է. սիրականիս ձայնն
է, դո՛ւռը թակում է. Ինձ
Համար, ով քոյրս, ընկերուհիս,
աղաւնիս, կատարեալս. որովհե-
տև գլուխս լիքն է ցօղով, վար-
սերս՝ գիշերուայ շաղերով։
3 Հանել եմ իմ պատմուճանը.
ի՞նչպէս հագնեմ ես նորան. ոտ-
քերս լուացել եմ, ի՞նչպէս ես
աղտոտեմ նորանց։
4 Սիրականս ձեռքը մեկնեց ծա-
կովը. և աղիքս գալարուեցան
նորա Համար.
5 Ես վեր կացայ որ բանամ սի-
րականիս Համար. և ձեռքերիցս
զմուռս կաթեց, և մատներիցս
Հեղուկ զմուռս փականքի բըռ-
նեատի վերայ։
6 Ես բացի սիրականիս Համար,
բայց իմ սիրականը դարձել ան-
ցել էր, սիրտս գնացել էր նո
խօսելիս, որոնեցի նորան բայց
չգտայ. կանչեցի, բայց չպատաս-
խանեց։
7 Ինձ գտան քաղաքումը շուռ
եկող պահապանները, խփեցին
վիրաւորեցին ինձ. վեր առին քօ-
ղըս վերայիցս պարիսպներուն պա-
հապանները։
8 Երդում եմ տալիս ձեզ, ով
Երուսաղէմի աղջկունք, եթէ
գտնէք իմ սիրականին, ի՞նչ էք
ասելու նորան. տասցէ՛ք. Թէ Սի-
րով Հիւանդ եմ ես։
9 Ի՞նչ աւելի է քո սիրականը ու-
սիրականից, ով կանանց գե-
ղե-

ցիկդ, ի՞նչ աւելի է քո սիրա-
կանը ու- սիրականից, որ մեզ
այդպէս երդում ես տալիս։
10 Իմ սիրականը ապիտակ ու
կարմիր է, բիւրերից գերազանց է։
11 Նորա գլուխը ոսկի է մաքուր,
նորա գէսերը ծռծանվում են,
ևւ են ագռաւի պէս։
12 Նորա աչքերը Ջրի վտակների
մօտ եղող աղաւնիներինին նման
է. կաթի մէջ են լողում, քնդե-
ւուած ա-ն-ի պէս նստած են։
13 Նորա այտերը բալասանի ա-
ծուի պէս են, ծաղկանց բուրաս-
տաններ, շրթունքները հեղուկ
զմուռս կաթող շուշաններ են։
14 Ձեռքերը ոսկի գլաններ են,
Թորթիսի քարերով լիքը, նորա
որովայնը փղոսկրեայ բանուածք
է, շափիւղաներով պատուած։
15 Նորա սրունքները մարմարեայ
սիւներ են, հաստատուած մա-
քուր ոսկու խարիսխների վերայ.
կերպարանքը՝ Լիբանանի պէս,
ընտիր՝ եղևիններին նման։
16 Նորա քիմքը քաղցրեղէններ է,
և նա ինքը բոլորովին ցանկալիք
է. ա՛յս իմ սիրականը, և ա՛յս
իմ բնիկը, ով Երուսաղէմի աղջ-
կունք։

ԳԼ. Զ

1 Ո՞ւր է գնացել քո սիրականը,
ով կանանց գեղեցիկդ. ո՞ւր է
դիմել քո սիրականը, որ նորան
որոնենք քեզ Հետ։
2 Իմ սիրականն իջել է իր պար-
տէզը, բալասանի ածուի մօտ.
որ արածեցնէ պարտէզներումը,
և շուշաններ քաղէ։
3 Ես իմ սիրականինն եմ, և իմ
սիրականը իմն է, որ արածեց-
նում է շուշանների մէջ։
4 Գեղեցիկ ես դու, ով ընկեր-
ուհիս, Թերսայի պէս, հաճելի
ես Երուսաղէմի պէս. երկիւղալի՝
դրօշակիր զօրքերի պէս։
5 Դարձրու աչքերդ իմ առջևից,
վասն զի յարձակվում են ինձ
վերայ. մազերդ Գաղաադից իջ-
նող այծերի Հօտին նման են։
6 Ատամներդ լուացարանից դուրս

եկող մաքինների հօտին նման են, որոնք ամենքը երկուսական են ծնում, և մի ամուլը չկայ նոքա մէջում։

7 Կիսած նռնի նման են այտերդ ծամերիդ տակին։

8 Վաթսուն են թագուհիները, և ութսուն՝ հարճերը, և օրիորդներին թիւ չկայ։

9 Մէկ հատիկ է իմ ազաւնին, իմ կատարեալը, նա միամօր է, նա ընտրուած է իր մօր համար. աղջիկները տեսան նորան և նորան երանեցին, թագուհիներն ու հարճերն էլ գովաբանեցին նորան։

10 Ո՞վ է այդ որ նայում է արշալոյսի պէս, գեղեցիկ է լուսնի նման, մաքուր՝ արեգակին պէս. սոսափելու՝ դրօշակիր զօրքերի պէս։

11 Ընկոյզների պարտէզն իջայ, հովտի կանաչները տեսնելու, տեսնելու թէ ծլե՞լ է որթը արդեօք, թէ ծաղկե՞լ են նռնենիները։

12 Ես չգիտէի, իմ հոգիս դրել էր ինձ իմ ազգի մի ազնուականի կառքումը։

13 Դարձիր, դարձիր, ով Սուլամիթ, դարձիր, դարձիր, որ քեզ տեսանենք։ Ի՞նչ պիտի տեսնէք Սուլամիթի վերայ. ինչպէս Մանայէմի պարախումբը։

ԳԼ. Է

1 Ի՜նչ գեղեցիկ են քո քայլերը կօշիկներով, ով իշխանի դուստր. քո բարձերի դարձուածքը նման են արուեստագործի՝ արուեստապետի ձեռքով շինուած։

2 Քո պորտը բոլորակ բաժակ է՝ անպակաս բմպելիքից. քո փորը ցորենի չեղջ շուշանով պատուած։

3 Ջուխտ ատինքդ նման են մի ջուխտակ աւելերի, մի այծեամի երկուսական ծնածը։

4 Պարանոցդ փղոսկրեայ աշտարակի պէս, աչքերդ Եսեբոնի Բաթ-բարբիմ դրան մօտ ամրոցների պէս. քիթդ Լիբանանի աշտարակի նման որ դէպի Դամասկոս է նայում։

5 Քո գլուխը քեզ վերայ Կարմելոսին է նման, և գլխիդ վերայ ծածանուածը ծիրանու նման. թագաւորը բռնուած է քո ոլորուն մազերով։

6 Ո՜նչ գեղեցիկ եա, և ի՜նչ վայելուչ եա. ով իմ ցանկալեաց սիրուհին։

7 Այդ քո հասակը նման է արմաւենու և ատինքներդ՝ ողկոյզների։

8 Ասացի՝ Արմաւենու վերայ ելնեմ, բռնեմ նորա ճիւղերը. և քո ատինքները լինէին որթի ողկոյզի պէս, և անգացդ հոտը խնձորների հոտին պէս։

9 Եւ քիմքդ ազնիւ գինու պէս է, որ հոսում է ուղիղ իմ սիրականի համար, որ հանգչեցնում է քնողների շրթունքները։

10 Ես իմ սիրականինն եմ, և նա էլ ինձ է ցանկանում։

11 Արի, սիրականս, դուրս գանք դաշտը, օթևանենք գիւղերում։

12 Առաւօտը կանուխ այգիները գնանք, տեսնենք թէ որթը ծլե՞լ է, կակոնը ծաղկե՞լ է. ծաղկե՞լ են նռնենիները. այնտեղ սէրս քեզ եմ տալու։

13 Մանրագործները հոտ են բուրում, և մեր դռներում կան ամեն պատուական պտուղները՝ թէ նոր թէ հին. ով իմ սիրական, քեզ եմ պահել։

ԳԼ. Ը

1 Երանի թէ ինձ եղբայր լինէիր՝ մօրս ատինքը ծծած, քեզ դուրսը գտնէի համբուրէի. ինձ չէին էլ անարգել։

2 Քեզ կ'առնէի կ'մտցնէի իմ մօր տունը, դու ինձ կ'աւետացնէիր. քեզ կ'խմեցնէի իմ հոտաւէտ գինուցը իմ նռան օշարակից։

3 Նորա ձախ ձեռքը գլխիս տակին, և աջը գրկէ ինձ։

4 Երդում եմ տալիս ձեզ, ով Երուսաղէմի աղջկունք, մի զարթեցնէք և մի վեր կացնէք իմ սիրուհուն, մինչև որ ինքը բաւհաճէ։

5 Սա ո՞վ է որ վեր է գալիս անապատից, կռնած իր սիրոյն վերայ։ Քեզ խնձորենու տակին զարթեցրի. այնտեղ էր ծնել քեզ քո մայրը. այնտեղ էր ծնել քեզ քո ծնողը։

6 Ինձ կնիքի պէս դիր սրտիդ վերայ, կնիքի պէս՝ քո բազուկի վերայ. վասն զի մահուան պէս զօրաւոր է սէրը. դժոխքի պէս ամուր է նախանձը. նորա կայծերը բոցավառ կրակի կայծերի պէս են։

7 Շատ ջուրերը չեն կարող հանգցնել սէրը, և գետերը նորան չեն ընկղմել. եթէ մի մարդ իր տան բոլոր կայքը տայ սիրոյ տեղ, անարգելով կ'անարգեն նորան։

8 Մենք մի փոքր քոյր ունինք, որ տուինք չունի. ի՞նչ անենք մեր քրոջը, նորա համար խօսուած օրը։

9 Եթէ նա պարիսպ է, նորա վերայ մի արծաթի աշտարակ շինենք. և եթէ նա մի դուռ է, նորան պատենք եղևնափայտի տախտակով։

10 Ես պարիսպ եմ. և իմ ստինքները աշտարակների նման են. ուրեմն նորա աչքի առջեւն կ'լինիմ խաղաղութիւն գտածի պէս։

11 Սողոմոն մի այգի ունէր Բաղամոնի մէջ. այն այգին տուաւ պահապաններին. ամեն մէկն իր պտուղովը հազար արծաթի էր բերում։

12 Իմ այգին իմ առջեւն է. հազարը քեզ, օ՛ Սողոմոն, և երկու հարիւրը նորա պտուղը պահողների համար։

13 Ով պարտէզների մէջ նստող, ընկերները լսում են ձայնդ, թոյլ տուր ինձ լսել։

14 Վազիր, օ՛ իմ սիրական, նման եղիր այծեամին կամ եղնիկների ձագին բուրաստի լեռանց վերայ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Ամէն որդի Եսայեի տեսիլքը որ տեսաւ Յուդայի և Երուսաղէմի վերայ Յուդայի թագաւորների՝ Ոզիայի, Յովաթամի, Աքազի և Եզեկիայի օրերին։

2 Լսեցէք, օ՛ երկինք, և ականջ դիր, օ՛ երկիր. վասն զի Եհովան է խօսում. զաւակներ մեծացրի և բարձրացրի, բայց նորանք ապստամբեցին ինձ դէմ։

3 Եզը ճանաչում է իր սիրոջը, և էշը՝ իր սիրոջ մսուրը, Իսրայէլը չէ ճանաչում, իմ ժողովուրդը չէ խնամում։

4 Վա՛յ մեղաւոր ազգին, անօրէնութիւնով ծանրացած ժողովուրդ, չարագործների սերունդ, ապականիչ զաւակներ. թողում են Տիրոջը, անարգում են Իսրայէլի Սուրբին, քաշվում են

5 ետ։ Ձեր էլ ո՞ր տեղին կարելի է զարկել, որ ապստամբութիւնը աւելացնում էք. բոլոր գլուխը հիւանդ է, և բոլոր սիրտը՝ նուաղել։ Ոտքի թաթից մինչև գլուխը 6
ողջ տեղ չկայ նորա վերայ. հարուածներ և վէրքեր և շարուառի խոցեր, չեն մաքրվում և չեն կապվում և իւղով չեն կակղացնվում։ Ձեր երկիրը աւեր- 7
ուած, ձեր քաղաքները կրակով այրուած են. ձեր արտերը ձեր առջև օտարներն են ուտում. և խոպանացած են օտարների տակնուվրայ արած պէս։ Եւ Ցիոն 8
ցել է Սիոնի աղջիկը այգու մէջի մի խրճիթի պէս, և ինչպէս մի հիւղ վարունգի արտում, մի պաշարուած քաղաքի նման։ Եթէ 9
որ Զօրաց Տէրը մեզ համար մի քիչ մնացորդ չթողեր. Սոդոմին պէս կ'լինէինք, Գոմորին կ'նմանէինք։

Լսեցէք Տիրոջ խօսքը, օ՛ 10

Սողոմի իշխաններ, ականջ դրէք
ձեր Աստուծոյ օրէնքին, ալ Գո-
11 մորի ժողովուրդ։ Ինչ պէտք է
ինձ ձեր զոհերի շատութիւնը,
ասում է Տէրը. կշտացել եմ
խոյերի ողջակէզներից, և պա-
րարտների ճարպից. և զուա-
րակների, ու ոչխարների ու նո-
խազների արիւնը չեմ ախորժում։
12 Երբոր գալիս էք իմ երեսը տես-
նելու. դա ո՞վ է պահանջում
ձեր ձեռքից՝ կոխատել իմ սր-
13 բատները։ Այլև ես ունայն ընծա-
ներ մի բերէք, դա ինձ համար
պիղծ նուէր է. ամսագլուխներին
և շաբաթներին — ժողովներ գու-
մարուելուն չեմ տանիլ. անօրէ-
նութիւն և տօնախմբութիւն։
14 Ձեր ամսագլուխներից ու տօներից
զզուել է հոգիս, նորանք ինձ վե-
րայ բեռ են. յոգնել եմ տանե-
15 լուց։ Եւ դուք ձեր ձեռքերը
տարածելիս՝ աչքերս ծածկում
եմ ձեզանից. նաև երբոր աղօթ-
ք շատացնում էք, ես չեմ լը-
սում. ձեր ձեռքերն լիքն են սր-
բութիւնով։
16 Լուացուեցէք, մաքրուեցէք,
հեռացրէք ձեր գործքերի չարու-
թիւնը իմ աչաց առջևից, դա-
դարեցէք չարութիւն գործելուց։
17 Սովորեցէք բարութիւն անել,
որոնեցէք իրաւունք, ուղղու-
թիւն ցուցէք զրկուածին, որբի
դատը տեսէք, որևայրու դատը
պաշտպանեցէք։
18 Հիմա եկէք ու վիճաբանենք,
ասում է Տէրը, եթէ ձեր մեղ-
քերը կրկնակի կարմիրի պէս լի-
նեն, ձիւնի պէս պիտի սպիտա-
կանան. եթէ նորանք որդան կար-
միրի պէս լինեն, ասրի պէս —ե-
19 թող պիտի դառնան։ Եթէ յօժա-
րէք և լսէք, երկրի բարիքը կ'ու-
20 տէք։ Բայց եթէ մերժէք և ա-
պրստամբէք, սուրը պիտի ձեզ
ուտէ. վասն զի Տիրոջը բերանը
խօսեց։
21 Ի՜նչպէս պոռնկացաւ հաւա-
տարիմ քաղաքը. լիքն էր իրաւ-
ունքով, արդարութիւն էր օթե-
ւանում նորանում. բայց հի՛մա,
22 մարդասպաններ։ Արծաթդ կղկը-
ղանք է դարձել. գինիդ ջրով
խառնուած է։ Իշխաններդ ա- 23
պստամբներ և գողերի ընկերներ
են, ամենքն էլ կաշառք են սի-
ում և վարձի ետևից են ընկել.
որբի դատը չեն նայում, և որբ-
ևայրու դատը չի գալիս նորանց
առաջը։
Ետև համար Զօրաց Եհովայ 24
Տէր՝ Իսրայէլի Հզօրի խօսքը սա
է. Ահա ես ինձ կ'հանգստացնեմ
իմ նեղիչներիցը, և վրէժս կ'ա-
նեմ իմ թշնամիներիցը։ Եւ ես 25
կ'դարձնեմ իմ ձեռքը դէպի
քեզ, և կ'մաքրեմ քո կղկղանքը
ինչպէս թէ բորակով, և կ'հեռա-
ցնեմ քո բոլոր անագը։ Եւ ետ 26
կ'բերեմ քո դատաւորներին՝ ինչ-
պէս առաջ էր, և քո խորհրդա-
կաններին՝ ինչպէս որ սկզբում։
Ապա ետև քեզ կ'սեն՝ Ար-
դարութեան քաղաք Հաւատա-
րիմ սեան։ Սիօնը *դատաստա- 27
նով պիտի փրկուի և նորա ետ
դարձողները՝ արդարութեամբ։
Բայց անօրէնների ու մեղաւոր- 28
ների կործանումը միասին կ'լինի,
և որոնք որ թողում են Տիրո-
ջը, պիտի փչանան։ Վասն զի 29
նորանք պիտի ամաչեն ձեր ախոր-
ժած բևեկնիներից, և պիտի ա-
մօթով մնաք այն պարտէզներից
որ հաւանել էք։ Վասն զի 30
դուք պիտի լինիք տերևները թա-
ռամած բևեկնու պէս, և մի ջու-
մը ջուր չեզող պարտէզի պէս։
Եւ կ'լինի զօրաւորը որպէս խը- 31
ծուծ, և նորա գործքը՝ կայծ. և
երկուսը կ'այրուին մէկտեղ և
հանգցնող չի լինիլ։

ԳԼ. Բ

Այն խօսքը որ տեսաւ Ամոսի 1
որդի Եսայի Յուդայի և Երուսա-
ղէմի վերայ։
Եւ կ'լինի օրերի վերջին, որ 2
հաստատ կ'լինի Տիրոջ տան լեռ-
ը՝ լեռանց գլխին, և կ'բարձրա-
նայ բլուրներիցը. և յորդորելով
նորա մօտ կ'գնան բոլոր ազգերը։

*իրաւունքով

3 Եւ շատ ժողովուրդներ կ'գնան
և կ'ասեն. Եկէք վեր գնանք ե-
հովայի լեառը, Յակոբի Աստու-
ծոյ տունը. և նա կ'սովրեցնէ
մեզ իր ճանապարհներից, և
մենք կ'գնանք նորա շաւիղներու-
մը. վասն զի Սիօնից է դուրս
գալու օրէնքը, և Տիրոջ խօս-
4 քը՝ Երուսաղէմից։ Եւ նա պիտի
դատէ հեթանոսաց մէջ, և խր-
ատէ շատ ազգերին. և նորանք
կ'ձուլեն իրանց սուրերը խոփեր,
և իրանց նիզակները՝ դալոցներ.
ազգ ազգի վերայ սուր չի բարձ-
րացնել, և այլևս պատերազմի
չեն վարժուիլ։
5 Ով Յակոբի տուն, եկէք և
6 գնանք Տիրոջ լուսովը։ Քանի
դու ձգել ես քո ժողովուրդ՝ Յա-
կոբի տունը, վասն զի նորանք
լցուած են արևելքիւնովի,
և հմայութիւն են անում՝ փղշ-
տացոց պէս, և օտարների որդ-
7 կանց հետ համնմիտ են։ Եւ եր-
կիրը լցուած է արծաթով ու ոս-
կով, և նորա գանձերին ծայր չը
կայ, և երկիրը լցուած է ձիե-
րով, ու վախճան չկայ նորա
8 կառքերին։ Եւ երկիրը լցուած է
կուռքերով. ձեռաց գործի են
երկրպագութիւն անում, նորան
9 որ իրանց մատները շինեցին։ Եւ
խոնարհում է մարդն ու վայր
ընկնում այրը. և դու չես ներել
նորանց։
10 Մտիր ժայռի մէջը և հողումը
թաք կեցիր, Տիրոջ սոհատրու-
թեան երեսից և նորա վեհա-
փառութեան մեծութիւնից։
11 Մարդուս ամբարտաւան աչքերը
պիտի խոնարհեն, և իջնէ մարդ-
կանց հպարտութիւնը. և միայն
12 Տէրը կ'բարձրանայ այն օրը։ Վա-
սն զի Զօրաց Տէրը մէկ օր ունի
ամեն ամբարտաւանութեան ու
բարձրութեան դէմ և ամեն հը-
պարտացածների դէմ, ու պիտի
13 ցածանան։ Եւ Լիբանանի բոլոր
եղևիններին դէմ, որ բարձրացած
ու վեր եղած են, և Բասանի բո-
14 լոր կաղնիների դէմ։ Եւ բոլոր
բարձր լեռանց դէմ, և բոլոր վեր
15 եղած բլուրների դէմ. և բոլոր
բարձր աշտարակի դէմ և ամեն
ամուր պարսպի դէմ։ Եւ Թարշ- 16
ախի բոլոր նաւերի դէմ, և բոլոր
ցանկալի տեսարան ունեցողների
դէմ. Եւ մարդուս ամբարտաւա- 17
նութիւնը պիտի խոնարհէ, և
պիտի իջնէ մարդկանց բարձրու-
թիւնը. և միայն Տէրը բարձր կը
լինի այն օրը։ Եւ կուռքերը բո- 18
լորովին ընաջինջ պիտի լինին։
Եւ պիտի մտնեն ժայռերի այրե- 19
րի մէջ, և երկրի խոռոչները Տի-
րոջ սոհատրութեան առջևից և
նորա վեհափառութեան մեծու-
թիւնից, երբոր նա վեր կենայ
երկիրը սարսեցնելու։
Այն օր մարդ կ'գցէ իր արծա- 20
թի կուռքերը ու ոսկի կուռքե-
րը, որ շինել են նորա համար որ
երկրպագութիւն անեն, խլուրդ-
ների ու չղջիկների մօտ. Որ 21
մտնէ ապառաժների ծակերը և
վէմերի ծերպերը Տիրոջ վախից ե-
րեսից և նորա վեհափառութեան
մեծութիւնից։ Դադարեցէք մար- 22
դու վերայ յո—սը—ց, որի շունչը
նոզտացը մէջ է. վասն զի ինչ է
համարուում նա։

Գ.Լ. Գ

Վասն զի սոհա Զօրաց Եհովայ 1
Տէրը հեռացնելու է Երուսաղէ-
մից և Յուդայից գաւազանն ու
ցուպը, հացի բոլոր նեցուկը, և
ջրի բոլոր նեցուկը, քաջին և պա- 2
տերազմական մարդուն, դատա-
ւորին ու մարգարէին, և դուշա-
կողին ու ծերին. Յիսնապետին 3
ու պատուաւորին, և խորհրդա-
կանին ու իմաստուն ճարտարա-
պետին և դիտուն կախարդին։
Եւ նորանց վերայ երիտասարդներ 4
պիտի իշխան դնեմ, և մանուկ-
ները պիտի իշխեն նորանց վերայ։
Եւ պիտի հարստահարուի ժողո- 5
վուրդը իրարից, և ամեն մէկին իր
ընկերից. և տղայքը պիտի գո-
ռոզանան ծերերի դէմ, և ան-
արգները՝ պատուաւորների դէմ։
Այն ժամանակ մարդ կ'բռնէ իր 6
հարազատ եղբօրը, ասելով. Դու
հանդերձ ունիս, մեզ վերայ իշ-

խան եղիր, և այս ուերակը քո
7 ձեռքի տակին լինի։ Իակ նա
բարձրանայ պիտի ասէ այն օրը.
Ես բժշկող չեմ լինել, և տանս
հաց չկայ և հանդերձ չկայ. ինձ
իշխան մի դնէք ժողովրդի վերայ։
8 Վասն զի Երուսաղէմը առանս-
ուել է և Յուդան՝ ընկել. որով-
հետև նորանց լեզուներն ու գործ-
քերը Տիրոջ դէմ է, որ հակա-
ռակեն նորա փառաց աչքերին։
9 Նորանց երեսի տեսքը վկայում
է իրանց դէմ. և իրանց մեղքերը
հրաւարակում են, չեն ծած-
կում. վա՛յ նորանց անձին, որ ի-
րանց չարիք են հատուցանում։
10 Ասացէք արդարին, որ նորան
լաւ է. որովհետև իրանց գործ-
11 քերի պտուղն են ուտելու։ Վա՛յ
անպատճին, նորան չար է, վասն
զի իր ձեռաց գործոյն հատու-
12 ցումը պիտի լինի իրան։ Իմ ժո-
ղովրդի վերայ բռնացողները տղ-
այք են, և կանայք են իշխում
նորա վերայ. ով իմ ժողովուրդ,
քո առաջնորդները մոլորեցուցիչք
են, և քո շաւիղների ճանապար-
հը խանգարել են։
13 Վեր է կացել Տէրը որ դատէ.
և կանգնել է՝ ժողովուրդներին
14 դատելու համար։ Տէրը դատի է
մտնում իր ժողովրդի ծերերի և
նորա իշխանների հետ. որ դուք
այրել էք այգին. աղքատից կո-
ղոպտուածը ձեր տներումն է։
15 Ինչ է եղել ձեզ, որ փշրում
էք իմ ժողովրդին, և տնանկնե-
րի երեսը ջարդում, ասում է
Զօրաց Եհովայ Տէրը։
16 Եւ Տէրն ասաց. Որովհետև հը-
պարտացել են Սիոնի աղջիկները,
և պարանոցը վեր բարձրացած են
մտան գալիս, և աչքերով անհա-
մեստ ակնարկում. գնալիս կա-
քաւելով են գնում, և իրանց
17 ոտքերովը խշրտոց հանում. Եւ
Տէրն էլ պիտի կնաացնէ Սիոնի
աղջկանց գագաթը, և Տէրը պի-
տի մերկացնէ նորանց ամօթոյքը։
18 Այն օրը Տէրը պիտի հեռացնէ
ոտնապարանջանների փառքը,
գանգակեպ ճակատանոցները և
19 մանիկները, Գինգերը, ապարան-
ջանները և շղարշտեռները, Ա- 20
պարոշները, ոտքի շղթայիկները
և գօտիները, բուրվառից տուփե-
րը, հմայեակները, Մատանիները 21
և քթի օղակները, Պատմուճան- 22
ները և կշտապանակները, վերար-
կուները և քսակները. Հայելինե- 23
րը և բեհեզները, խոյրերը և քօ-
ղերը։ Եւ խնկեղինաց փոխարէն 24
կ'լինի փտութիւն, և գօտի տեղ
չուան, և հիւսուած խոպոպիկի
տեղ՝ կնատութիւն. և լանջապեղ
կամարի տեղ՝ քրձեայ գօտի, գե-
ղեցկութեան տեղ՝ խարան։ Քո 25
մարդիկը սրով պիտի ընկնեն, և
քաջերդ՝ պատերազմով. Եւ նորա 26
դուռները պիտի ողբան ու սուգ
բռնեն, և ամայացած պիտի նըս-
տէ տափին։

Գ.Լ. Դ

Եւ այն օրը եօթը կին պիտի մէկ 1
մարդ բռնեն և ասեն. Մեր հացն
ուտենք և մեր հագուստը հագ-
նենք, միայն քո անունը կոչուի
մեզ վերայ մեր նախատինքը վեր
առ։
Այն օր Տիրոջ շառաւիղը կը 2
լինի զարդի և փառաց համար.
և երկրի պտուղը պարծանք ու
պատիւ կ'լինի Իսրայէլի փրկուած-
ների համար։ Եւ այնպէս պիտի 3
լինի որ Սիոնի մնացածը և Երու-
սաղէմի մնացորդը սուրբ պիտի
կոչուին. ամենքը որ գրուած են
կենաց համար Երուսաղէմում։
Երբոր Տէրը լուացած կ'լինի Սիո- 4
նի աղջկանց աղտը, և Երուսա-
ղէմի արիւնները նորա միջիցը մաք-
րած կ'լինի, իրաւանց հոգով և
այրող հոգով։ Եւ Տէրը կ'շինէ 5
Սիոն լեռան ամեն տեղերի վերայ
և նորա ժողովքների վերայ ամպ
ցերեկով և ծուխ, իսկ գիշերը փայ-
լուն կրակի բոց. վասն զի ամեն
փառքի վերայ հովանի պիտի լի-
նի։ Եւ վրան կ'գառնայ ցերեկը 6
հովանի տալու համար տաքու-
թեան դէմ, և ապաստանարան
ու ծածկոց՝ մրրկի և անձրևի դէմ։

Գլ. Ե

1 Ապէ երգեմ իմ սիրելոյս համար
իմ սիրականի երգը իր այգու
մասին։ Իմ սիրելին մի այգի ու-
նէր մի պտղատու լեռնածայրին։
2 Եւ նա ցանգով պատեց նորան,
քարերը հանեց միջից, և նորա-
նում ընտիր որթեր տնկեց, և
մի հնձան էլ փորեց նորանում,
և սպասեց որ խաղող բերէ, բայց
բերաւ ագռխ։
3 Եւ հիմա ով Երուսաղէմի բը-
նակիչ և Յուդայի մարդ, մէկ
դատեցէք իմ ու իմ այգու մէջ։
4 Էլ ինչ կար անելու իմ այգուն,
որ ես չեմ արել նորան. ինչո՞ւ
համար սպասեցի, որ խաղող բե-
5 րէր. և նա ագռխ բերաւ։ Եւ հի-
մա ձեզ իմացնեմ թէ ինչ եմ
անելու իմ այգուն, քանդելու
եմ նորա ցանգը, որ լինի արօ-
տատեղ. քարուքանդ եմ անելու
նորա պատերը որ ոտնահար դառ-
6 նայ։ Խոպանացած եմ թողելու
նորան, նա պիտի չէօտուի և չը
բրուի, և պիտի ցախ ու փուշ
բուսնէ. և ամպերին պատուիրե-
լու եմ, որ նորա վերայ անձրև
7 չտեղան։ Վասն զի Զօրաց Տիրոջ
այգին Իսրայէլի տունն է, և Յու-
դայի տունը նորա սիրուժելի
տունկը. և նա սպասում էր ի-
րաւունքի, և ահա արիւնհեղու-
թիւն, արդարութեան՝ և ահա
աղաղակ։
8 Վա՛յ նորանց որ տունը տան
են կպցնում, արտը արտին են
մօտեցնում մինչև որ այլ ևս տեղ
չէ լինում, որ դուք միայնակ բնա-
9 կէք երկրիս մէջ։ Իմ ականջնե-
րին ասաց Զօրաց Տէրը, Անշուշտ
շատ տներ աւերակ են դառնա-
լու, մեծ ու գեղեցիկ փնէր՝ ա-
10 ռանց բնակչի։ Վասն զի տասը
լծամեայ այգին մէկ մար պիտի
տայ, և մէկ քոռ սերմը մէկ ար-
դու պիտի տայ։
11 Վա՛յ նորանց որ առաւօտանց
կանուխ վեր են կենում և գքնի
ետևից վազում, ուշանում են ի-
րիկունը, որ գինին նորանց տա-
12 քացրէ էւ։ Եւ լինում է քնար
ու տաւիղ, թմբուկ ու սրինգ և
գինի նորանց խնջոյքներում.
բայց Տիրոջ արածներին մտիկ չեն
տալիս, և նորա ձեռաց գործքե-
րը չեն տեսանում։ Նորա համար 13
իմ ժողովուրդը տգիտութիւնից
գերի է գնում, և նորա փառա-
ւորները սովամահ մարդիկ են
լինում, և նորա բազմութիւնը
տօչորւում է ծարաւութիւնից։
Նորա համար դժոխքը պիտի 14
լայնացնէ իրան, և իր բերանը
բանայ անչափ, և պիտի իջնէ
նորա պարծանքն ու բազմութի-
նը, և նորա աղաղակն ու զուար-
ճութիւնը նորա մէջը։ Եւ մարդը 15
պիտի խոնարհէ, և այրը վայր
ընկնէ, և ամբարտաւանների աչ-
քերը՝ ցածանան։ Եւ Զօրաց Տէ- 16
րը պիտի բարձրանայ իրաւունք-
քով, և սուրբ Աստուածը սրբու-
թի՝ արդարութիւնով։ Եւ ոչ- 17
խարները կ'արածեն իրանց արօտ-
ումը, և հարուստներից հո-
ւերակները օտարները պիտի ու-
տեն։

Վա՛յ նորանց որ քաշում են ա- 18
նօրէնութիւնը ունայնութեան չը-
ուանիներով, և իրը թէ սայլի
թոկերով՝ մեղքը. Որոնք ասում 19
են. Շտապէ, շուտով անէ իր
գործը, որ տեսանենք, և մօտենայ
ու գայ Իսրայէլի Սուրբի խոր-
հուրդը, որ գիտենանք։ Վա՛յ 20
նորանց որ չարին ասում են բա-
րի, և բարիին՝ չար. որ խաւարը
շինում են լոյս, և լոյսը՝ խա-
ւար. որ դառնը քաղցր են շի-
նում, և քաղցրը՝ դառն։ Վա՛յ նո- 21
րանց որ իրանց աչքին իմաստուն
են, և իրանց առջևը՝ գիտուն։
Վա՛յ նորանց որ քաջ են գինի 22
խմելում և զօրաւոր են գքնի
խառնելու. Որ արդարացնում են 23
ամբարշտին կաշառքից համար,
բայց արդարների արդարութիւնը
հեռացնում է նորանցից։

Նորա համար ինչպէս որ կրակի 24
լեզուն ուտում է մղեղը, և խոտը
անցնում է բոցի մէջ. նորանց
արմատն էլ փտածի պէս պիտի
լինի, և նորանց ծաղիկը փոշու
պէս պիտի վեր ելնէ. վասն զի

անարդեցին Զօրաց Տիրոջ օրէնքը, և Իսրայէլի Սուրբի խօսքը մերժեցին։ Ընդ այս համար բորբոքեալ է Տիրոջ բարկութիւնը իր ժողովրդի դէմ, և երկարացրել է իր ձեռքը նորա վերայ ու նորան զարկել, որ լեռները դողդողում են. և նորանց դիները աղբի պէս եղան փողոցներումը. այսու ամենայնիւ նորա բարկութիւնը ետ չէ դարձել, և նորա ձեռքը դեռ մեկնած է։

26 Եւ նա դրօշակ է բարձրացնելու հեռու ազգերի համար, և սուլելու է նորանց երկրի ծայրից, և ահա նորանք շուտով հեշտութեամբ գալիս են։ 27 Ցոգնածը չկայ, և տկարը չկայ նորանցում. մեկը չէ ննջում և չէ քնում, և մեկի մէջքի գօտին չէ բացվում, և ոչ մեկի կօշկի կապը չէ կտրվում։ 28 Որի նետերը սրուած են, և բոլոր աղեղները լարուած, ձիանց սմբակները գայլախտաղ են համարեա թէ, 29 և անիւները՝ մրրկի նման։ Նորա մռնչիւնը առիւծի նման է. գոռում է կորիւնների պէս. և բռնում ու յափշտակում է կողոպուտը, և փախցնում, և ապատող չկայ։ 30 Եւ այն օրը պիտի գոռան նորա վերայ ծովի գոռալուն պէս. և նա դէպի երկիրը մութ կ'նայ, և ահա խաւար է և տագնապ. բայց լոյսը խաւարել է նորա երկնքի վերայ։

ԳԼ. Զ

1 Որի թագաւորի մեռած տարին տեսայ Տիրոջը նստած բարձր և վերացած աթոռի վերայ, և նորա քղանցքը լցրել էր տաճարը։ 2 Սերովբէք կանգնած էին նորանից վերև, որոնց ամեն մեկը վեց թև ունէր. երկուսով ծածկում էր իր երեսը և երկուսով ծածկում էր իր ոտները և երկուսով թռչում էր։ 3 Եւ մեկը կանչում էր միւսին և ասում. Սուրբ, Սուրբ, Սուրբ է Զօրաց Տէրը. բոլոր երկիրը լիքն է նորա փառքով։ 4 Եւ դրանդեաց հիմունքը երերեցան աղաղակողի ձայնից, և տունը լցուեցաւ ծուխով։ 5 Եւ ես ասացի. Վա՛յ ինձ, վասն զի կորած եմ. որովհետև պիղծ շրթունքով մարդ եմ ես, և պիղծ շրթունքով ժողովրդի մէջ եմ ես բնակւում, և իմ աչքերը տեսան Թագաւոր Զօրաց Տ'րոջը։ 6 Եւ սերովբէից մէկը թռաւ ինձ մօտ ձեռքին մի կրակէ կայծ, որ սեղանի վերայից. 7 Եւ նորանով դիպաւ իմ բերանին և ասաց. Ահա սա դիպաւ քո շրթունքներին, և հեռացաւ քո անօրէնութիւնը, և մեղքդ քաւուեցաւ։

8 Եւ լսեցի Տիրոջ ձայնը, որ ասում էր. Ո՞վ ուղարկեմ, և ո՞վ կ'գնայ մեզ համար. և ես ասացի. Ահա ես, ինձ ուղարկիր։ 9 Եւ նա ասաց. Գնա և ասիր այս ժողովրդին. Լսելով կ'լսէք, բայց չէք հասկանալ, և տեսնելով կը տեսնէք, բայց չէք իմանալ։ 10 Թանձրացրու այս ժողովրդի սիրտը, և նորա ականջները ծանրացրու և նորա աչքերը ծեփիր, որ չտեսնէ աչքերովը, և ականջներովը չլսէ, և սիրտն իմանայ, ու դարձի գայ, և բժշկուի։ 11 Եւ ես ասացի. Մինչև ե՞րբ, Տէր իմ, և նա ասաց. Մինչև որ ամայանան քաղաքները բնակիչ չլինելով, և տուները՝ մարդ չունենալով, և երկիրը աւերուած լինելով անապատ կ'դառնայ։ 12 Եւ Տէրը կ'հեռացնէ մարդկանցը, և ձգած թողածը կ'շատանայ երկրի մէջ։ 13 Եւ եթէ նորանում դեռ մի տասներորդ մասը լինի, նա էլ պիտի դարձեալ աւերակ դառնայ. ինչպէս որ բևեկինին ու կաղնին, որ կտրուելիս մի բուն է լինում նորանցում, նոյնպէս այն սուրբ սերունդն է նորա բունը։

ԳԼ. Է

1 Եւ եղաւ Յուդայի թագաւոր Ոզիայի որդի Յովաթամի որդու Աքազի օրերումը, որ վեր եկան Ասորոց Ռասին թագաւորը և Իսրայէլի թագաւոր՝ Ռոմելայի որ-

դին փակէէն երուսաղէմ պա-
տերազմելու նորա հետ, բայց չը
կարողացան նորա հետ պատե-
2 րազմ անել։ Եւ Դաւթի տանը
լուր տրուեցաւ ասելով. Թէ Ա-
սորին բանակ է կռռվիլ Եփրեմի
հետ. այն ժամանակ դողաց նո-
րա սիրտը և նորա ժողովրդի սիր-
տը ինչպէս որ անտառի ծառերը
3 դողում են քամուցը։ Եւ Տէրն
ասաց Եսայիային. Գնա ակ Ա-
քազին դիմաւորելու՝ դու և քո
որդին Սէյար-եասուբը վերի աւա-
զանի ջրմուղի ծայրը Թափիչի ա-
4 գարակի ճանապարհի վերայ. Եւ
ասիր նորան. Զգոյշ եղիր որ հան-
դարտ լինիս, մի վախենար և սիր-
տդ չթուլանայ այս երկու ծուխ
անող կիսայրեաց խանձողներից,
բարկութիւնը բորբոքած Ասո-
նից և Ասորեցիներից և Ռեմա-
5 լիայի որդուցը։ Որովհետև Ա-
սորին քո մասին չար խորհուրդ է
արել, նաև Եփրեմն ու Ռեմալիա-
յի որդին, ասելով.
6 Վե՛ր գնանք Յուդայի վերայ և
սոսկեցնենք նորան և նուա-
ճենք նորան մեզ համար, և նո-
րա մէջ թագաւոր դնենք Տաբէ-
7 ելի որդուն։ Այսպէս է ասում
Եհովայ Տէրը. Պիտի չհաստա-
8 ւուի և չկատարուի այդ։ Վասն
զի Ասորոց գլուխը Դամասկոսն
է, և Դամասկոսի գլուխը՝ Ռա-
սին. և դեռ մինչև վաթսուն և
հինգ տարին Եփրեմը կ'ջնջուի
9 ազգ լինելուց։ Եւ Եփրեմի գլու-
խըն է Սամարիա, և Սամարիայի
գլուխը՝ Ռեմալիայի որդին. եթէ
չհաւատաք, յիրաւի չէք մնալ։
10 Եւ դարձեալ խօսեց Տէրը Ա-
11 քազի հետ ասելով. Մի նշան
խնդրիր քեզ համար քո Եհովայ
Աստուածոյնից, համ խոր անդուն-
դումը, համ վեր բարձունքումը։
12 Բայց Ակազն ասաց. Չեմ խնդը-
13 րիլ, և Տիրոջը չեմ փորձիլ։ Նա
էլ ասաց. Լսեցէք, ով
Դաւթի տունը, սա քի՞չ բան է
ձեզ համար որ մարդկանց աշ-
խատութիւն էք տալիս, որ Ա-
ստուծոյն էլ էք աշխատութիւն
14 տալիս. Սրա համար Տէրն ինքը
ձեզ նշան կ'տայ. ահա կոյսը կը
յղանայ և կ'ծնէ մի որդի, և նո-
րա անունը կ'կանչէ Էմմանուէլ։
15 Կաթ կոպի և մեղր կ'ուտէ մինչև
որ գիտենայ չարը մերժել և լա-
16 ւը ընտրել։ Վասն զի մանուկը
չարը մերժելը և բարին ընտրելը
գիտենալուց առաջ կ'թողուի այն
երկիրը որոնց երկու թագաւորաց
17 առջևը դու վախում էս։ Տէրը
բերելու է քեզ վերայ և քո ժո-
ղովրդի վերայ և քո հօր տանը
վերայ այնպիսի օրեր, որ չեն ե-
կած Եփրեմը Յուդայից հեռա-
նալու օրից հետէ. այսինքն Ա-
18 սորեստանի թագաւորին։ Եւ կ'լինի
այն օրը, որ Տէրը կ'սուլէ այն
ճանճերին, որ Եգիպտոսի գետի
եզերքումն են. և այն մեղուներին
որ Ասորեստանի երկրումն են.
19 Եւ ամէնքը կ'գան և կ'հանգչեն
ամայի ձորերումը և վէմերի խո-
ռոչներումը, և ամէն թուփերու-
մ և ամէն արօտներումը։ Այն
20 օրը Տէրը վարձած մէկիով՝ գետի
այն կողմի Ասորեստանի թագա-
ւորով պիտի ածիլէ գլուխը և ոտ-
քերի մազը, ու նաև մօրուքը
21 պիտի սափրէ։ Եւ այն օրը կ'լինի
որ մէկ մարդ մէկ երինջ և երկու
22 ոչխար կ'պահէ, Եւ պիտի լինի
որ կաթը շատ շինելուց կոպի պի-
տի ուտէ. վասն զի կոպի և մեղր
պիտի ուտեն ամէնքը որ մնացած
23 կ'լինին երկրի մէջ։ Եւ այն օրը
կ'լինի, որ ամէն մի տեղ ուր որ
կար հազար որթ հազար արծա-
թի, ցախ և փուշ պիտի դար-
24 ձած լինի։ Նետերով ու աղեղ-
ներով պիտի գնան այնտեղ, վա-
սն զի բոլոր երկիրը ցախեր ու
փուշեր պիտի դարձած լինին։ Եւ 25
բոլոր լեռներըը, որ բրիչով փոր-
ւում էին, պիտի չկարողանաս
գնալ այնտեղ ցախի ու փուշի
երկիւղի պատճառով. և պիտի
արջառներն արօտ և խաշինքներն
կոխան դառնայ։

Գ.Լ. Ը

1 Եւ Տէրն ինձ ասաց. Ա՛ռ քեզ
Համար մի մեծ տուն, և գրիր

նորա վերայ մարդու գրչով *Մա-
2 հեր-շալալ հաշ-բազ մասին։ Եւ
ես ինձ համար հաւատարիմ վկաներ եմ բռնելու Ուրիա քահանային և Բարաքիայի որդի Զաքարիային։
3 Եւ ես մօտեցայ մարգարէուհուն, և նա յղացաւ և մի որդի ծնաւ, և Տէրն ինձ ասաց. Նորա անունը կոչիր Մա-
4 հեր-շալալ հաշ-բազ։ Վասն զի մանուկը չգիտէ հայրս ու մայրս կանչելը սամարացւոց առաջ վեր պիտի առնուի Դամասկոսի հարստութիւնը և Սամարիայի աւարը թ-ր-է Ասորեստանի թագաւորի առաջը։
5 Եւ Տէրը դարձեալ խօսեց ինձ
6 հետ և ասաց. Որովհետև արհամարհում է այս ժողովուրդը Սիլոամայի հանդարտ հոսող ջուրերը, և զուարճանում է Ռասինով և Ռոմմելայի որդով,
7 Ուրեմն նորա համար Տէրը նորանց վերայ պիտի հանէ գետի զօրաւոր և առատ ջուրերը այսինքն Ասորեստանի թագաւորին և նորա բոլոր զօրութիւնը. և նա վեր պիտի բարձրանայ իր բոլոր յատակներից, և պիտի անցնէ իր բոլոր եզերքներից
8 վրայ։ Եւ պիտի յորդէ Յուդայի մէջ, ողողէ անցնէ և մինչև պարանոցը պիտի հասնէ. և նորա թևերի տարածութիւնը լցնելու է քո երկրի լայնութիւնը, ով Էմմանուէլ։
9 Զարացէք, ազգեր, բայց պիտի ահաբեկուիք. և ականջ դրէք, ով երկրի հեռու տեղերը. պատրաստուեցէք, բայց պիտի ահաբեկուիք, պատրաստուեցէք, բայց
10 պիտի ահաբեկուիք։ Խորհուրդ հնարեցէք, բայց պիտի խափանուի, խօսեցէք խօսք, բայց պիտի չհաստատուի, վասն զի Աստուած մեզ հետ է։
11 Վասն զի այսպէս ասաց ինձ Տէրը ձեռքին զօրութեամբը, և ինձ խրատեց չգնալ այս ժողովրդի ճանապարհով,
12 ասելով. Մի ասէք դաշնակցութիւն այն բոլորին, որին այս ժողովուրդը դաշնակցութիւն է ասում. և նորա վախովը մի վախենաք և մի զարհուրէք։
13 Զօրաց Տէրոջը՝ այս նորան սրբեցէք. և նա լինի ձեր երկիւղը և ձեր
14 զարհուրանքը։ Եւ նա յԷզ հարց արբատան կ'լինի. իսկ գայթակղութեան քար և գլորման վէմ Իսրայէլի երկու տներին համար, և թակարդ ու որոգայթ պիտի լինի Երուսաղէմի բնակչի համար։
15 Եւ նորանցում շատերը գլորուելու են. և վայր են բնկնելու և փշրուելու, և որոգայթն են բնկնելու ու բռնուելու։
16 Կապիր վկայութիւնը, կնքիր օրէնքը իմ աշակերտների մէջ։
17 Եւ ես սպասում եմ Տէրոջը, որ ծածկել է իր երեսը Յակոբի տանից, և յուսում եմ նորան։
18 Ա.Ա՛ա ես և այն զաւակները, որ Տէրը տուաւ ինձ, որ նշաններ և սքանչելիքներ լինեն Իսրայէլում, Զօրաց Տիրոջ կողմանէ, որ բնակում է Սիոն լեռան վերայ։
19 Եւ երբոր ձեզ ասեն. Հարցրէք ժեռելահարցուկներին և վհուկներին, և փսփսողներին ու քրթմնջողներին. պ-ո-ւ-է ել Ժողովուրդը պէտք է իր Աստուծոյն հարցնէ, կենդանիների համար մեռածների՞ն պէտք։
20 Օրէնքին ու վկայութեանը պէտք է, եթէ նորանք չխօսեն այս խօսքի համեմատ, նորանք չունին արշալոյս։
21 Եւ անցնում են նորանում վշտացած և սոված. և երբոր նա սովածանում է՝ բարկանում է, և անիծում է իր թագաւորին և իր Աստուծոյն, և դառնում է դէպի վեր,
22 Եւ երկրին է մօտիկ տալիս, և ահա վիշտ ու խաւար, նեղութեան մէջ, և մթութեան մէջ քշուած. վասն զի մթին չի մնալ, ուր որ նեղութիւն կայ։

ԳԼ՛Թ

1 Ա.Աւաջի ժամանակը անարգեց Զաբուղոնի երկիրը և Նեփթաղիմի երկիրը, բայց վերջումը յարգելու է. ծովի ճանապարհը, Յորդանանի միւս կողմի, Հեթանո-

*շատ պիր աւարի, շուտով յափրշտակիր կողոպուտ։

2 ասց Գալիլեան, խաւարումը զբ-
նացոզ ժողովուրդը մեծ լոյս տե-
սաւ. մնոնաւան աւուրի երկրու-
մը բնակոշներուն վերայ լոյս ծա-
3 գեց։ Դու շատացրիր ազգը, մե-
ծացրիր նորա ուրախութիւնը.
նորանք ուրախանում են քո առ-
ջեւ հունձի ժամանակի ուրախու-
թեան պէս. ինչպէս որ ցնծում
4 են աւար բաժանելիս։ Վասն զի
նորա ծանրաբեռն լուծը և նորա
ուսքի գաւազանը, նորա վերայ
բանացոզի ցուպը կոտրեցիր՝ Մա-
5 դիամա օրուան պէս։ Որովհետև
ճակատամարտի մէջ զինուորեալ-
ներուն բոլոր զէնքերը և արիւնա-
թաթախ հանդերձները պիտի այ-
րուին և հրոյ ճարակ լինին։
6 Վասն զի մեզ համար մի մա-
նուկ ծնաւ մեզ մի որդի տրուե-
ցաւ, և իշխանութիւնը պիտի լի-
նի նորա ուսի վերայ, և նորա
անունը պիտի կոչուի Սքանչելի,
Խորհրդական, Հզօր Աստուած,
յաւիտենականութեան Հայր,
7 Խաղաղութեան Իշխան։ Իշխա-
նութիւնը շատացնելուն և խա-
ղաղութեանը վերջ չկայ, Դաւթի
աթոռի վերայ և նորա թագա-
ւորութեան վերայ, որ նորան
հաստատէ և պնդացնէ նորան ի-
րաւունքով և արդարութեամբ
հիմակուց մինչև յաւիտեան։ Զօ-
րաց Տէրոջ նախանձը պիտի ան-
այս։
8 Տէրը պատգամ ուղարկեց Յա-
կոբին, և նա իջաւ Իսրայէլի վե-
9 րայ։ Եւ իմանայ բոլոր ժողովուր-
դը՝ Եփրեմը և Սամարիոյի բնա-
կիչները, որոնք սիրտառութեամբ
10 ասում են. Աղիւսները ընկան,
բայց մենք սրատաշ քարերով
պիտի շինենք, մոլախոտը կորը-
ւեցան, բայց մենք նորանց տեղ
11 եղևիններ պիտի դնենք։ Սակայն
Տէրը պիտի յարուցանէ Ռասինի
հակառակորդները նորա վերայ,
և նորա թշնամիները դրդռէ։
12 Ասորիք առջևից, և փղշտացիք
ետևից, և պիտի ուտեն Իսրա-
էլին լիքը բերանով։ Այսու ա-
մենայնիւ նորա բարկութիւնը ետ
չէ դարձել, և նորա ձեռքը դեռ
մեկնած է։

Բայց ժողովուրդը ետ չէ դար- 13
նում դէպի իրան զարկողին, և
Զօրաց Տէրոջը չեն խնդրում։ Եւ 14
Տէրը կտրեց Իսրայէլից գլուխը
և ոտին, արմաւենու ճառը և
եղիւնը մէկ օրում։ Ծերը և պատ- 15
ուաւորը գլուխն է, իսկ մարգա-
րէն որ սուտ ճառ է սովորեցնում
ոտին։ Եւ մոլորեցնում են այս 16
ժողովրդի առաջնորդները, և նո-
րանցից առաջնորդուածները պիտի
կուլ գնան։ Այս պատճառով 17
Տէրը չէ ուրախանալու նորա ե-
րիտասարդների վերայ, և նորա
որբերին ու այրեւայրիներին չէ ո-
ղորմելու։ Վասն զի ամենքը կեղ-
ծաւոր ու չարագործ եղան, և
ամեն բերան յիմարութիւն է
խօսում։ Այսու ամենայնիւ նորա
բարկութիւնը ետ չէ դարձել, և
նորա ձեռքը դեռ մեկնած է։
Վասն զի կրակի պէս այրում 18
է անօրէնութիւնը, ցախերն ու
փուշերը լափում է և վառում է
անտառի ծմակները և վեր են
քլքլում բարձր ծխախիտներով։
Զօրաց Տիրոջ բարկութիւնից եր- 19
կիրը այրուելու է, և ժողովուր-
դը հրոյ ճարակի պէս է լինելու,
մարդ իր եղբօրը չէ խնայելու։
Եւ կտրելու են ոչ կողմից, բայց 20
սոված են մնալու, և ձախ կող-
մից ուտելու, բայց չեն կշտա-
նալու, ամեն մարդ իր բազուկ-
ների միսն է ուտելու. Մանասէն 21
Եփրեմին, և Եփրեմը Մանասէին,
և նորանք մէկտեղ Յուդայի վե-
րայ։ Այսու ամենայնիւ նորա
բարկութիւնը ետ չէ դարձել և
նորա ձեռքը դեռ մեկնած է։

ԳԼ. Ժ

Վա՛յ անօրէն կանոններ դնողնե- 1
րին, և այն դպիրներին, որ անի-
րաւութիւն են գրում. Աղքատ- 2
ների դատաստանը ծռելու հա-
մար, և իմ ժողովրդի տնանկնե-
րի իրաւունքը յափշտակելու,
որպէսզի նորանց աւարը լի-
նելու համար և որ որբերին կո-

3 ղոպանն։ Եւ ի՞նչ էք անելու պյցելութեան օրը, և այն կոր-
ծանման ժամանակին՝ որ գալիս է հեռուանց, դէպի ո՞ւմ էք վա-
զելու օգնութեան համար, և ո՞ւր պիտի ձգէք ձեր փառքը։
4 Եթէ ոչ՝ գերիներուն մէջ ծռաւին, և սպանուածներուն մէջ ընկնեն։
Ա՛յսու ամենայնիւ նորա բարկու-
թիւնը ետ չէ դարձել, և նորա
ձեռքը դեռ մեկնած է։
5 Վա՛յ Ասորեստանին՝ իմ բար-
կութեան գաւազանին, որի ձեռ-
քի ցուպը իմ ցասումն է։ Մի
6 կեղծաւոր ազգի դէմ եմ ուղար-
կելու նորան, և իմ բարկացած
ժողովրդի վերայ՝ նշանակելու նո-
րան. աւար առնելու և կողո-
պուտ կողոպտելու համար, և որ
նորան տոնաւար անէ ինչպէս
7 փողոցներուն ցեխը։ Բայց նա այն-
պէս չէ մտածում, և նորա սիր-
տը այնպէս չէ խորհում, այլ
փչացնել է նորա սրտինը, և շատ
8 ազգեր բնաջինջ անել։ Վասն զի
նա ասում է. Մի՞թէ իմ իշ-
խաններն ամենքն էլ թագաւոր-
9 ներ չեն։ Մի՞թէ Քարքամիսն
պէս չէ Քաղանէ, կամ թէ Ար-
փաթի պէս չէ՞ Եմաթը, կամ
թէ Դամասկոսն պէս՝ Սամարի-
10 ա՞ն։ Ինչպէս որ իմ ձեռքը հա-
սաւ կուռքերի թագաւորու-
թեանցը, և նորանց քանդակա-
ծոյներըը շատ էին Երուսաղէմի-
11 նից ու Սամարիայինից, Մի՞թէ
ինչպէս որ արել եմ Սամարիա-
յին և նորա կուռքերին, նոյն-
պէս չե՞մ անելու նաև Երուսա-
12 ղէմի և նորա կուռքերին։ Եւ
պիտի լինի որ երբ Տէրը կ'կատա-
րէ իր բոլոր գործը Սիոն լեռան
վերայ և Երուսաղէմումը, կ'քըն-
նեմ Ասորեստանի թագաւորի
հպարտ սրտի պտուղը և նորա
ամբարտաւան աչքերի փառքը։
13 Վասն զի նա ասում է, Իմ
ձեռքի ուժովն արի և իմ իմաս-
տութեամբը, որովհետև ես խե-
լօք եմ, և ազգերի սահմանները
վերցրի, և նորանց պաշարները
յափշտակեցի, և նուաճեցի զո-
րաւորի պէս նորանց գահակալ-
ներին. Եւ իմ ձեռքը հասաւ աղ- 14
գերի ստացուածքին ինչպէս մի
բոյնի, և թողուած ձգուած ձուե-
րի հաւաքելու պէս ես հաւաքե-
ցի բոլոր երկիրը. և չեղաւ մի
թև շարժող, կամ բերան բացող
և ճիչ հանող։ Մի՞թէ կացինը կը 15
պարծենայ իրանով կտրողի դէմ,
կամ կ'գոռոզանա՞յ սղոցը նորա-
նով քաշողի դէմ. իբր թէ գա-
ւազանը շարժէր իրան վեր առնո-
ղին, իբր թէ ցուպը բարձրաց-
նում լինէր՝ փայտ չլինելով։ Ետ- 16
րա համար Տէրը՝ Զօրաց Տէրը
նորա պարարտներուն դէմ նիհա-
րութիւն պիտի ուղարկէ, և նո-
րա փառքի տակին պիտի հրդեհ-
ուի հրդեհը՝ ինչպէս բոցավառ
հրդեհութիւն։ Եւ Իսրայէլի Լոյ- 17
սը հուր պիտի դառնայ և նորա
Սուրբը՝ բոց, և այրէ ու ապառէ
նորա փուշն ու ցախը մէկ օրում։
Եւ նորա անտառի և նորա բեր- 18
քեր պտղատիի փառքը պիտի փը-
չացնէ՝ հոգին էլ մարմինն էլ. և
նա հաշտ մաշողի պէս կ'լինի։
Եւ նորա անտառի ծառերի մնա- 19
ցորդը տակաւաթիւ կ'լինի, և մի
տղայ կարող էր նորանց գրել։
Եւ այն օրը կ'լինի, որ Իսրայէլի 20
մնացորդը և Յակոբի տան ազատ-
ուածները այլև պիտի չապաւի-
նեն իրանց զարկողին, այլ պիտի
ապաւինեն Եհովայ՝ Իսրայէլի
Սուրբին՝ ճշմարտութեամբ։ Մը- 21
նացորդը պիտի դառնայ, Յակո-
բի մնացորդը՝ առ Հզօրն Աստ-
ուած պիտի դառնայ։ Վասն զի 22
եթէ քո ժողովուրդը, ով Իսրա-
յէլ, ծովի աւազին չափ լինի նո-
րանցից մէկ մնացորդ է ետ դառ-
նալու. աւերումը որոշուած է,
յորդում է արդարութիւն։ Վա- 23
սն զի աւերումը և որոշումը ա-
նում է Տէրը՝ Զօրաց Տէրը բոլոր
երկրի մէջ։ Նորա համար Զօրաց 24
Եհովայ Տէրը այսպէս է ասում.
Ով իմ ժողովուրդ որ բնակում
ես Սիոնում, Ասորեստանից մի
վախենար, նա քեզ զարկում է
գաւազանով, և իր մահակը վեր-
ցնում է քեզ վերայ Եգիպտոսին
պէս։ Վասն զի շատ փոքրիկ ժա- 25

մանուկ էլ կայ, որ յետոյ ցաւումը կ'վերջանայ, և իմ բարկութիւնը կ'լինի նորանից փչացնելու
26 համար։ Եւ Զօրաց Տէրը կ'բարձրացնէ նորա վերայ խարազանը՝ Օրէբ վէմի մօտ Մադիամու հարուածին նման. և իր գաւազանը ծովի վերայ է, և նա կ'բարձրացնէ նորան ինչպէս որ Եգիպտոսի
27 վերայ։ Եւ այն օրը կ'լինի որ նորա բեռը վեր կառնուի քո ուսիցը, և նորա լուծը քո պարանոցի վերայից, և լուծը պիտի կոտրուի ճարպի պատճառով։
28 Գալիս է Անգէն, անցնում է Մագրոնը, Մաքմասումը տեղ-
29 ւորում է իր կառ կարասիքը. Անցնում են անցքովը, Գաբայումն օթևանում, Ռաման սարսափում է, Սաւուղի Գաբաան փախչում.
30 Զայնուդ բղաւիր, ով Գաղղիմի աղջիկ, ականջ դիր, Լայիս.
31 խե՛ղճ Անաթովթի. Տարագրուեցաւ Մադմենան, Գեբիմի բնակիչները վազում են պրծնելու.
32 Այսօր էլ Նոբումն պիտի կենայ և ձեռքը շարժէ Սիոնի աղջկան լեռան վերայ՝ Երուսաղէմի բլուրի վերայ։
33 Ահա Զօրաց Եհովայ Տէրը կ'տորելու է ճիւղերը ահաւոր զօրութեամբ, և հասակով բարձրերը պիտի կրճատուին, և բարձրացածները պիտի ցածանան.
34 Եւ նա պիտի կտրէ անտառի ծմակները կացինով, և Լիբանանը վայր պիտի ընկնէ Հզօրի միջոցովը։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ Յեսսէի բունիցը մի շառաւիղ է դուրս գալու, և մի ընձիւղ է բուսանելու նորա արմատներիցը.
2 Եւ նորա վերայ Հանդչելու է Տիրոջ Հոգին, իմաստութեան և հանճարի Հոգին, խորհըրդի և զօրութեան Հոգին, գիտութեան և Տիրոջ երկիւղի Հո-
3 գին։ Եւ նորա սխրժանքը Տիրոջ երկիւղին է, և նա իր աչաց տեսածին պէս պիտի չդատէ, և ոչ իր ականջներն լսածին պէս

պիտի յանդիմանէ։ Այլ արդարութեամբ պիտի դատէ աղքատներին, և ուղղութեամբ յանդիմանէ երկրի խոնարհների մասին. և երկրին պիտի զարկէ իր բերանի գաւազանովը, և իր շրթանց հոգով պիտի մեռցնէ ամբարշտին։
5 Եւ արդարութիւնը նորա մէջքի գօտին է լինելու, և ճշմարտութիւնը՝ նորա երանքի գօտին։
6 Գայլը կ'բնակէ գառի հետ, և ընձը ուլի հետ կ'պառկէ. և որթն ու առիւծը և պարարտ գուարակը միասին կ'լինին, և մի փոքր տղայ կ'քշէ նորանց։
7 Եւ կովն ու արջը պիտի արածեն, միասին պիտի պառկեն նորանց ձագերը, և առիւծը արջառի պէս յարդ պիտի ուտէ։
8 Եւ կաթնակեր տղան իժի ծակի վերայ կ'խաղայ, և քարքի բոյնի վերայ ձեռքը կ'դնէ կաթից կտրուածը։
9 Նորանք չեն վնասիլ և չեն ապականիլ իմ բոլոր սուրբ լեռան վերայ. վասն զի լիքն է լինելու երկիրը Տիրոջ գիտութիւնովը, ինչպէս որ ջուրերը ծովը ծածկում են։
10 Այն օրը կ'լինի, որ Յեսսէի արմատը ազգերի համար դրօշակ կը կանգնէ, և ազգերը նորան պիտի խնդրեն. և նորա հանգիստը փառք պիտի լինի։
11 Եւ այն օրը կ'լինի, որ Տէրը կրկին անգամ իր ձեռքը կ'մեկնէ, որ իր ժողովրդի մնացորդը առնէ, որ մնացել է, Ասորեստանից, Եգիպտոսից, Պաթրուսից, Եթովպիայից, Ելամից, Սենաարից, Եմաթից և ծովի կղզիներից։
12 Եւ նա դրօշակ կը բարձրացնէ ազգերի համար, և կ'ժողովէ Իսրայէլի տարտղրեալներին, և Յուդայի ցրուեալներին կ'հաւաքէ երկրի չորս անկիւնները։
13 Եւ պիտի վերանայ Եփրեմի նախանձը, և Յուդայի նեղիչները պիտի բնաջինջ լինին, Եփրեմը Յուդային չի նախանձելու, և Յուդան Եփրեմին չի նեղելու։
14 Այլ նորանք փղշտացոց ուսի վերայ դէպի ծովը կ'թռչեն, միասին կը կողոպտեն արևելցիներին, Եդոմի ու Մոաբի վերայ կ'երկարացնեն իրանց ձեռքը, և Ամմոնի

որդիքը պետք է հնազանդեն նո-
15 բանց , եւ Տէրը անէծք է թափե-
լու Եգիպտոսի ծովի *ծոցի վե-
րայ եւ իր ձեռքը շարժելու է գե-
տի վերայ քամուստաստկութեամ-
բը եւ նորան զարկելու եօթը ա-
ռուներն է բաժանելը , եւ կօշի-
16 կով գնալ է տալու : Եւ մի պա-
զատայ է լինել իր ժողովրդի մը-
նացորդի համար , որ կ'մնայ Ա-
սորեստանից , ինչպէս որ եղաւ
Իսրայէլին Եգիպտոսից դուրս
գալիս օրը :

ԳԼ. ԺԲ

1 Եւ այն օրը կ'ասես . Ով Տէր ,
գոհում եմ քեզ , որ ինձ վերայ
բարկացար . բարկութիւնդ ետ
դարձաւ , եւ ինձ մխիթարեցիր :
2 Ահա Աստուած է իմ փրկութիւ-
նը . յուսում եմ և չեմ վախե-
նալ . վասն զի զօրութիւնս ու
գովեստանքս Տէր Եհովան է , և
3 նա եղաւ ինձ փրկութիւն : Եւ
ուրախութեամբ ջուր էք քաշե-
լու , փրկութեան աղբիւրներից :
4 Եւ այն օրը ասելու էք . Գո-
ցէք Տիրոջը , կանչեցէք նորա ա-
նունը , պատմեցէք ազգաց մէջ
նորա գործքերը . յիշեցէք որ բար-
5 ձրը է նորա անունը : Օրհներգե-
ցէք Տիրոջը , որ մեծամեծ բաներ
է արել , իմացուած են սորանք
6 բոլոր երկրում : Աղաղակիր և
ցնծացիր , ով Սիոնի բնակչուհի ,
վասն զի մեծ է քո միջումը Իս-
րայէլի Սուրբը :

ԳԼ. ԺԳ

1 Բաբելոնի պատգամը որ տեսաւ
Ամովսի որդի Եսայիան :
2 Դաշտացած լեռան վերայ դրօ-
շակ անկեցէք , ձայն բարձրացրէք
դէպի նորանց , ձեռք երերացրէք ,
3 որ իշխանները գան դուռները : Ես
եմ իմ արբեալներին պատուիրել ,
իմ զօրաւորներին էլ կանչել եմ
իմ բարկութեան համար՝ իմ վե-
հափառութիւնով խրոխտացող-

*Լեզուի

ներին : Բազմութեան ձայն կայ լե- 4
ռանց վերայ մեծ ժողովրդի նման-
նութիւնով , ժողովուած ազգերի
թագաւորութեանց աղմուկի
ձայնը . Զօրաց Տէրը հանդէս է
անում պատերազմի զօրքին , Որ 5
եկել են հեռու երկրից՝ երկնքի
ծայրից . Տէրը և նորա բարկու-
թեան գործիքները՝ բոլոր երկիրը
աւերելու համար :
Ողբացէք , վասն զի մօտ է Տի- 6
րոջ օրը , իբրև զօրաւոր աւեր-
ում Ամենազօրաւորից է գալիս :
Նորա համար թուլացել են ա- 7
մեն ձեռքեր , և ամեն մարդու
սիրտը հալում է : Սոսկում են , 8
անձկութիւններ և ցաւեր են
բռնում նորանց , ծննդականի
պէս երկունք են քաշում , ամեն
մարդ ապշած է մնում դէպի իր
ընկերը , բոցավառ երեսներ են
նորանց երեսները :
Ահա գալիս է Տիրոջ օրը՝ ան- 9
գթութիւն , ցասումն և բարկու-
թեան բորբոքումն . որ երկիրը ա-
ւերակ անէ , և նորա մեղաւոր-
ներին բնաջինջ անէ նորանից :
Վասն զի երկնից աստղերը և նո- 10
րա աստեղատները չեն տալու ի-
րանց լոյսը . արեգակը խաւար է
լինելու դուրս գալիս , և լուսինը
չի ցոլացնելու իր լոյսը : Եւ ես 11
պիտի պատժեմ աշխարհքը չա-
րութեան համար , և ամբարիշտ-
ներին՝ իրանց անօրէնութեան հա-
մար , և պիտի դադարեցնեմ հը-
պարտների ամբարտաւանութիւ-
նը , և բռնաւորների գոռոզու-
թիւնը պիտի ցածացնեմ : Ես 12
մարդուն մաքուր ոսկուց աւելի
պատուական պիտի անեմ և հո-
ղեղենին՝ Ոփիրի զանձուցը : Սորա 13
համար սարսեցնելու եմ երկինքը ,
և երկիրը սասանելու է իր տեղի-
ից . Զօրաց Տիրոջ բարկութիւնո-
վը և նորա բորբոքեալ բարկու-
թեան օրը : Եւ պիտի լինի ինչ- 14
պէս մի հալածուած այծեամն ,
և ինչպէս ոչխարներ , որոնք հաւա-
քող չունին , ամեն մարդ իր ժողո-
վրդին է դառնալու , ամեն մարդ
փախչելու է իր երկիրը : Ամեն 15
ով որ գտնուի՝ պիտի խոցուի , և

ամեն ալ որ բռնուի որով պիտի
16 ընկնի ։ Եւ նորանց մնացուկները
պիտի ջարդուին իրանց աչաց առ-
ջեւը, նորանց տաճարը կողոպտուին
և նորանց կանայքը պղծուին ։
17 Ահա ես կ'յարուցանեմ նորանց
վրայ Մարաց թագաւորը, որոնք ար-
ծաթը մի բան չեն համարուի,
18 և ոսկուն չեն հաւնուի ։ Եւ ա-
ղեղնները երիտասարդներին են
խորտակի, և որովայնի պտուղին
չեն ողորմուի, և աղաքներին չէ
19 խնայուի նորանց աչքը ։ Եւ Բա-
բելոնը՝ թագաւորութեանց գար-
դը, Քաղդէացւոց փառաւորու-
թեան պարծանքը պիտի դառնայ
Աստուծոյ կործանման պէս ։ ը-
20 ը— Սոդոմին և Գոմորին ։ Երբէք
չէ շէնանալու, և չէ բնակուելու
ազգ յազգ. և Արաբացին այն-
տեղ պիտի չիանդնեցնէ վրանը,
և հովիւները այնտեղ պիտի չը
21 նստեցնեն էրանց խաչինէը ։ Այլ
այնտեղ վայրի գազաններն են
մնակաղ տալու. և բուերն են
լցնելու նորանց տաճարը, և այն-
տեղ Ջայլամները՝ բնակելու, և
յուշկապարիկներն են այնտեղ
22 պար գալու ։ Եւ չաքալները են
ոռնալու նորա պալատներուն մէջ,
և վայրի շուները նորա զբօսանոց
տներուն մէջ, և մօտ է, որ գայ նո-
րա ժամանակը, և նորա օրերը
չեն ուշանալու ։

ԳԼ. ԺԴ

1 Վասն զի Տէրը ողորմելու է Յա-
կոբին, Եւ միւսանգամ ընտրե-
լու Իսրայէլին, և նորանց հան-
գըստացնելու իրանց երկրի վը-
րայ, և օտարազգիք պիտի յարին
նորանց և միանան Յակոբի տան
2 հետ ։ Եւ ժողովուրդները առնե-
լու են նորանց և տանելու իրանց
տեղը. և Իսրայէլի տունը պիտի
ժառանգէ նորանց Տիրոջ հողի
վրայ, իբրև ծառաներ և աղա-
խիններ, և նորանք գերի պիտի
անեն իրանց գերեվարներին, և
տիրեն իրանց վրայ բռնացողնե-
րին ։
3 Եւ լինելու է, որ երբ Տէրը

քեզ կ'հանգստացնէ քո աշխա-
տութիւնիցը, քո տանջանքիցը,
և այն ծանր ծառայութիւնիցը,
որով դու ծառայ էիր եղած ։
Այն ժամանակ այս առակը խօ- 4
սեա Բաբելոնի թագաւորի մասին
և ասա. Ինչպէս է դադրել
բռնաւորը, դադրեց տանջա-
րանը ։ Տէրը կոտրել է ամբարիշտ- 5
ներու գաւազանը, իշխանաւորներու
մնհակը. Որ սրտմտութեամբ 6
զարկում էր ազգերին անդադար
հարուածներով որ բռնանում էր
բարկութեամբ ժողովուրդներու
վերայ անդադար հալածանքով ։
Հանգստացել հանգարտել է բո- 7
լոր երկիրը, գոչում են ցնծու-
թեամբ ։ Մայրերն էլ են ուրա- 8
խանում քեզ համար ։ Իշխանա-
նի եղևիններն էլ. քանի որ դու
պառկել ես փայտ կտրողը վեր
չէ եկել մեզ վերայ ։ Դժոխքը 9
տակիցը դղրդաց քեզ համար քո
գալուստը դիմաւորելու. քրքրեց
քեզ համար ուրուականներին
երկրի բոլոր իշխաններին, վեր
կանդնեցրեց իրանց աթոռներիցը
ազգաց բոլոր թագաւորներին ։
Նորանք ամենքը քեզ պատաս- 10
խանում են և ասում. Դո՞ւ էլ
տկարացար մեզ նման, մեզ նը-
ման եղա՞ր ։ Դժոխքն իջաւ քո 11
փառքը քո տաւիղներուն հնչմունք-
ները. տակիդ տարածուած են
ճճիներ, և քո ծածկոցը որդերն
են ։ Ինչպէս վայր ընկար երկնը- 12
քից, ով առաւօտը ծագող Ա-
րուսեակ. կտրուեցար գետինն
ընկած, ով ազգեր նկուն անող ։
Բայց ինքդ ասել էիր քո սրտու- 13
մը. Վեր կ'ելնեմ երկինքը, Աս-
տուծոյ աստղերից վեր կ'դնեմ
իմ աթոռս, կ'նստեմ ժողո-
վէքի ժողովի լեռան վերայ հիւսի-
սի ծայրերումը ։ Վեր կ'ելլեմ 14
ամպերի բարձրութիւնների վե-
րայ, Բարձրեցայն կ'նմանեմ ։ Բայց 15
դժոխքն ես իջել, գուբի խորհր-
դատեղը ։ Քեզ տեսնողները հիա- 16
նալու են քեզ վերայ և դնդղե-
լու. Սո՞ւ է այն մարդը, որ սար-
սեցնում էր երկիրը, դողացնո՞ւմ
էր թագաւորութիւնները. Աշ- 17

խարհքս անապա՞տ էր դարձնում, և նորա քաղաքները աւերա՞կ էր անում. Ես նորա գերիներին չէ՞ր
18 արձակում տուն Փ–ը–, Բոլոր ազգերի թագաւորները, ամենքը պառկած են փառքով իրանց
19 աներում։ Բայց դու տարտարոսեցար քո գերեզմանից գարշելի ընձիւղի պէս, Հագնուած՝ սրբով խոցուած մեռելներով, որ
իջնում են գետի քարերի մօտ
20 ոտնահար դիակի պէս։ Դու թաղուելով չմիացար նորանց հետ, վասն զի դու քանդեցիր քո երկիրը, սպանեցիր քո ժողովուրդը. չարերի սերունդը պիտի չը
21 յիշուի յաւիտեան։ Նորա որդիքանց համար կատարուեն պատրաստեցէք իրանց հայրերի անօրէնութեան համար. որ վեր չկենան և երկիրը ժառանգեն, և աշխարհի երեսը լցնեն քաղաքներով։
22 Եւ ես վեր եմ կենալու նորանց դէմ, ասում է Զօրաց Տէրը, և բնաջինջ եմ անելու Բաբելոնի անունն ու մնացորդը, և զաւակն
23 ու սերունդը, ասում է Տէրը։ Եւ նորան չինելու եմ ոզնիների ժառանգութիւն և ջրերի լճակներ. և նորան աւերելու եմ կորստեան աւելով, ասում է Զօրաց Տէրը։
24 Երդում է արել Զօրաց Տէրը և ասել. Անշուշտ ինչպէս որ խորհել եմ՝ այնպէս կ'լինի, և ինչպէս որ որոշել եմ՝ նա կ'կա-
25 տարուի. Որ Ասորեստանցուն կատրեմ իմ երկրումը, և իմ լեռանց վերայ առնուկոխ եմ անելու նորան, և կ'հեռանայ նորանց վերայից նորա լուծը, և նորա բեռը կ'հեռանայ նորանց
26 ուսից։ Սա է այն որոշումը, որ որոշուել է բոլոր երկրի համար, և սա է այն ձեռքը, որ մեկնուած է բոլոր ազգերի վերայ։
27 Վասն զի Զօրաց Տէրը որոշեց, և ո՞վ կարող է արգելել, և նորա ձեռքը մեկնուած է. և ո՞վ կարող է նորան ետ դարձնել։
28 Աքսոր թագաւորին մեռած տարին եղաւ այս պատգամը։
29 Մի ուրախանար բոլորովին,

ով Փղշտացոց երկիր, որ քեզ զարկողի գաւազանը կոտրուեցաւ. վասն զի օձի արմատից քարը է դուրս գալու, և նորա պտուղը թռչող վիշապ է լինելու։ Եւ կերակրուելու են աղքատաների անդրանիկները, և չքաւորները ապահով պիտի պառկեն, և ես պիտի մեռցնեմ սովով քո արմատը. և նա պիտի սպանէ քո մնացորդը։ Ողբա, ով դուռ. աղաղակիր, ով քաղաք. Հալումաշ պիտի լինիս դու բոլորովին, ով Փղշտացոց երկիր։ Վասն զի հիւսիսից ժի ծուխ է գալիս, և բաժանուողը չկայ նորա խումբերումը։ Եւ ի՞նչ կ'պատասխանեն ազգաց պատգամաւորները, որ Տէրը հաստատեց Սիոնի հիմունքը, և նորա ժողովրդի խեղճերը այնտեղ պիտի ապաստանեն։

ԳԼ. ԺԵ

Մովաբի պատգամը։ 1
Յիրաւի գիշերով կործանուեցաւ Մովաբի Ար ի–ը–ի–ը, ամայացաւ։ Վեր է ելնում տա- 2
ճարը և Դեբոնը՝ այն բարձր տեղերը լաց լինելու համար. Նաբաւի և Մեդաբայի վերայ Մովաբը պիտի ողբայ. նորա ամեն գլուխների վերայ կնաւթիւն կայ, ամեն մօրուք կարուած է։
Նորա փողոցներումը քուրձ են 3
հագել, նորա կտուրներին և հրապարակներումը բոլորը ողբում է, վայր են իջնում լաց լինելով։
Եւ Եսերոնն ու Եղէալէն ազա- 4
ղակում են, մինչև Եասան լսուեցաւ. յիրաւի գիշերով կործանուեցաւ Մովաբի Կիր ի–ը–ի–ը, ամայացաւ։ Վեր է ելնում տա- 2
ճարը և Դեբոնը՝ այն բարձր տեղերը լաց լինելու համար. Նաբաւի և Մեդաբայի վերայ Մովաբը պիտի ողբայ. նորա ամեն գլուխների վերայ կնաւթիւն կայ, ամեն մօրուք կարուած է։
Նորա փողոցներումը քուրձ են 3
հագել, նորա կտուրներին և հրապարակներումը բոլորը ողբում է, վայր են իջնում լաց լինելով։
Եւ Եսերոնն ու Եղէալէն ազա- 4
ղակում են, մինչև Եասան լսուեցաւ. նորա համար Մովաբի ապառազէնները կոծ են անում, նորա սիրտը դողում է։ Իմ սիրտն ազաղակում է 5
Մովաբի համար. նորա փախստականները հասել էն մինչև Սեղորը՝ մինչև երրորդ Եգլաթը. վասն զի Ղուխիթի գառիվերը լալով պիտի վեր ելնեն։ Որովհետև Որոնայիմի ճանապարհումը կոտո-

բաժի ազաղակով պիտի բզաւնն։
6 Վասն զի Եւեմերիմի ջուրերը պիտի
աւերուին, վասն զի խոտը չորա-
նալու է, կանանչը՝ վերջանալու,
7 գալար չէ լինելու։ Նորա համար
այն առատութիւնը, որ չինել էին,
և իրանց պահածը ուրիներին ձորն
8 են տանելու։ Վասն զի ազազա-
կը շրջապատել է Մովաբի սահ-
մանը, նորա ողբը հասել է մին-
չև Եգլայիմը, և մինչև Բերելի-
9 մը՝ նորա ողբը։ Վասն զի Դիմո-
նի ջուրերը արիւնով պիտի լցո-
ւին, վասն զի Դիմոնի վերայ
պիտի բերեմ էլ աւելի՝ այսինքն
առիւծին՝ Մովաբի ազատուածա-
նների վերայ և երկրի մնացորդների
վերայ։

ԳԼ. ԺԶ

1 Ուղարկեցէք գառը երկրի տի-
րողին՝
Անապատի Սելայից Սիոնի
2 աղջկան լեռը։ Եւ թափառա-
կան թռչունի պէս, որ դուրս է
արուած բոյնից, պիտի լինին
Մովաբի աղջիկները Առնոնի անց-
3 քերումը։ Խորհուրդ տուր, դա-
տաստան արա, գիշերուան պէս
շինիր քո հովանին կէս օրուայ
մէջ. թաքցրու աքսորուածներին,
փախստականին մի յայտներ։
4 Թող իմ աքսորուածները քեզ
մօտ պանդխտանան, ով Մովաբ.
դու նորանց համար ծածկոյթ ե-
ղիր կործանողի դէմ։ Վասն զի
բռնաւորը վերջացաւ, աւերիչը
փչացաւ կոխ առողները ոտա-
5 ուել են երկրից։ Եւ աթոռը
ողորմութեամբ կ'հաստատուի,
և նորա վերայ կ'նստէ ճշմարտու-
թեամբ՝ Դաւթի խորանումը մի
դատաւոր, որ իրաւունք է որո-
նում և արդարութիւնը շտապով
գործադրում։
6 Մենք լսեցինք Մովաբի ամբար-
տաւանութիւնը, շատ ամբար-
տաւան է, նորա գոռոզութիւնն,
ամբարտաւանութիւնն ու բար-
կութիւնն էլ՝ նորա խօսքերի ան-
7 առութիւնը։ Սորա համար
պիտի ողբայ Մովաբը Մովաբի
համար, ամեն մէկը պիտի ող-
բայ. Կիր-Հարեսեթի հիմունքը
համար պիտի հեծեծաք, հէնց
փշրուած. Վասն զի Եսեբոնի 8
դաշտերը նուազեցան. ազգայ
իշխանները Սերամայի որթի բո-
րոտ ճիւղերը կոտրատեցին, նո-
րանք հասել էին մինչև Յազերը,
անապատը շրջապատել, նորա
շառաւիղները տարածուել ան-
ցել էին ծովից։ Սորա համար 9
լաց եմ լինելու Յազերի լացով
Սերամայի որթի վերայ, քեզ
աչքիս արտասուքով առոգելու
եմ, ով Եսեբոն ու Եղէալէ.
վասն զի դադարելու է քո պըտ-
ղաբաղի և այգեկութի աղաղա-
կը։ Եւ ուրախութիւնն ու ցըն- 10
ծութիւնը պիտի վերանայ պա-
րարտ արտերից, և այգիներում
երգել ցնծալ չէ լինելու, հըն-
ձանի մէջ գինի կոխողը չէ կո-
խելու. ազազակը դադարեցրի։
Դորա համար իմ ոգիքը քնարի 11
պէս հնչում է Մովաբի մասին,
և նորա՝ Կիր-Հարեսեթի համար։
Եւ լինելու է, որ պիտի երևայ, 12
թէ Մովաբը յոգնում է բարձ-
րաւանդակի վերայ, և մտնում
է իր սրբարանը աղօթելու. բայց
չէ յաջողելու։
Սա է այն խօսքը, որ Տէրը խո- 13
սել է Մովաբի վերայ վաղուց։
Բայց հիմա Տէրը խօսում է և
ասում. երեք տարում, ինչպէս
որ վարձկանի տարիքն են, Մո-
վաբի փառքը պիտի անարգուի,
այն բոլոր մեծ բազմութիւնով,
և փոքր մնացորդը պզտիկ չնչին
պիտի լինի։

ԳԼ. ԺԷ

Դամասկոսի պատգամը։ 1
Ահա Դամասկոսը դադարում
է քաղաք լինելուց, և պիտի
դառնայ փլակների շէզջ։ Թող- 2
ուած ձգուած են Արոերի քաղաք-
ները, հօտերին են դառնալու,
որ նորանք մնակող տան և վախե-
ցնող չինի։ Եւ վեր է առնում 3
Եփրեմից պարիսպը, և թագաւո-
րութիւնը՝ Դամասկոսից և Ասորց

Շաբաթվից. Իսրայէլի որդւոցմէ
փառքի պէս պիտի լինին. ասում
4 է Ձօրաց Տէրը։ Եւ այն օրը կը
լինի, որ պիտի պակասէ Յակոբի
փառքը, և նորա մարմնոյ պա-
րարտութիւնը պիտի նիհարա-
5 նայ։ Եւ կ'լինի ինչպէս որ հնձո-
ղը ցորենը հնձում է, և նորա
բազուկը հնձում է հասկերը. և
հասկեր ժողովելու պէս է լինելու
6 Ռափայնոց հովիտումը։ Բայց նո-
րա վերայ ճիւեր պիտի մնան,
ինչպէս ձիթենին են թափում,
ը երկու երեք հատ է լինում
ճիւղի ծայրին, մի չորս ու հինգ
պտղաբեր ոստի վերայ, ասում է
Իսրայէլի Եհովայ Աստուածը։
7 Այն օրը մարդս մտիկ է ա-
լու իր Արարչին, և աչքերը պի-
տի տեսանեն Իսրայէլի Սուրբին։
8 Եւ չի նայիլ իր ձեռաց գործ
սեղաններին. և չի տեսնիլ այն
որ իր մատերը շինել են՝ Աստա-
ղաշէների և արեգակի
9 կուռքերը։ Այն օրը նորա ամուր
քաղաքները անտառների և լեռ-
նագագաթների աւերակներ պի-
տի լինին, որ թողեցին Իսրայէլի
որդւոցմէ առջև և անապատ է
10 դառնալու։ Որովհետև դու մո-
ռացել ես քո փրկութեան Աս-
տուածոյն. և քո զօրութեան վէ-
մին չես յիշել. նորա համար հա-
ճելի տունկեր էիր տնկում, և օ-
տար որթի ճիւղեր էիր տնկում։
11 Տնկած օրդ նոքա ցանկապատե-
ցիր, և առաւօտուն քուացրիր
քո ցանածը. դա մի հունձքի
դէզ է վէրքի օրուամը, և ան-
սիկ ցաւ։
12 Վա՛յ շատ ժողովուրդների
բազմութեանը, որ գոռում են
ծովերի գոռումի պէս, և ժողո-
վուրդների աղմուկին, որ աղմուկ
են հանում սաստիկ ջրերի աղ-
13 մուկին պէս։ Ազգերը շատ ջրերի
աղմուկին պէս աղմուկ են հան-
ում, բայց նա նորան յանդիմա-
նելու է, որ նա էլ հեռու փախ-
չէ, և հալածուի լեռանց մղեղին
պէս քամու առջևից, և ինչպէս
14 փոշին՝ մրրկի առջևից։ Իրիկուան
ժամանակին, ահա խռովութիւն,

և առաւօտից առաջ, չիք են
գառել։ Սա է մեզ կողոպտող-
ների բաժինը, և մեզ յափշտա-
կողների վիճակը.

ԳԼ. ԺԸ

Ով թեւաւոր շառաչողների եր- 1
կիր, որ Եթովպիայի գետերի այն
կողմին է։ Որ դեսպաններ է ու- 2
ղարկում ծովով պատուհէն նա-
ւակներում ջրի երեսին։ Գնացէք,
ով արագընթաց դեսպաններ,
այն ազգի մօտ, որ երկայնա-
հասակ և կոկուած է. ակզբից
մինչև հիմա ահեղ ժողովրդի
մօտ, մի ազգ որ փ-լ-ե հրաման
ու հրաման և ոտնակոխում, որի
երկիրը գետերը կտորում են։
Ով աշխարհի բոլոր բնակիչները, 3
երկրի բնակողները, երբոր դրօշա-
կը բարձրանայ լեռանից վերայ,
նայեցէք, և երբոր փողը հնչուի
ականջ դրէք։ Վասն զի Տէրն 4
ինձ այսպէս է ասել. Ես հան-
գիստ եմ լինելու և նայելու եմ
իմ բնակարանումը, ինչպէս պայ-
ծառ տաքութիւնը արևի ժամա-
նակին, և ցօղաբեր ամպը հունձ-
քի տաքումը։ Վասն զի հունձ- 5
քից առաջ ընձիւղը վերանալիս,
և ածք ընկած ազոխ կ'դառնայ
է-ղէ ծաղիկը. այն ժամանակ
ճիւղերը կտրելու է յօտացով, և
ուռերը հեռացնելու և կտրա-
տելու է. Նորանք միասին պիտի 6
թողուին լերանց գիշատիչ թռ-
չուններին և երկրի գազաններին.
և գիշատիչ թռչունները ամառը
նորանց վերայ կ'անցնեն, և եր-
կրի բոլոր գազանները նորա վերայ
կ'ձմերեն։ Այն ժամանակը ըն- 7
ծայ է բերուելու Ձօրաց Տէրոջը
երկայնահասակ և կոկուած ազ-
գից, և ակզբից մինչև հիմա
ահեղ ժողովրդից, հրաման ու
հրաման փ-լ-ղ ու ոտնակոխ անող
ազգից, որի երկիրը կտորում
են գետերը՝ Ձօրաց Տէրոջ ան-
ուան տեղը՝ Սիօնի լեռը։

ԳԼ. ԺԹ

Եգիպտոսի պատգամը։ 1

Ա.Հա Տէրը հնձել է թեթև
ամպի վերայ, և գալիս է Եգիպ-
տոս. և սարսում են Եգիպտոսի
կուռքերը նորա երեսից, և Ե-
գիպտոսի սիրտը հալում է իր
2 մէջումը: Եւ ես պիտի Եգիպտո-
սը գրգռեմ Եգիպտոսի դէմ, և
պիտի պատերազմեն ամեն մարդ
իր եղբօր հետ, և ամեն մարդ իր
ընկերի հետ, քաղաք քաղաքի
հետ, և թագաւորութիւն թա-
3 գաւորութեան հետ: Եւ պիտի
նուազէ Եգիպտոսի սիրտը իր մէ-
ջումը, և նորա խորհուրդը պիտի
խորտակեմ, և նորանք խնդրելու
են կուռքերին և կախարդներին,
և վհուկներին և նշանագէտնե-
4 րին: Եւ ես պիտի մատնեմ Ե-
գիպտոսը մի խիստ տէրտէր ձեռք,
և մի բռնաւոր թագաւոր պիտի
իշխէ նորանց վերայ, ասում է
5 Ջօրաց Եհովայ Տէրը: Եւ պիտի
քաշուին ջուրերը ծովից, և գե-
տը պիտի չորանայ և ցամքէ:
6 Եւ պիտի հոտեն գետերը, և պի-
տի բարակին և չորանան Մատրի
վտակները, եղէգն ու պտուղն
7 պիտի թառամեն: Եղեգեայ մօտ
և Եղեգեայ եզերքի մօտ եղող մար-
գագետինները, և Եղեգեայ բոլոր
վարուցանը, պիտի չորանայ,
8 փուլ կայ և չքանայ: Եւ ձկնորս-
ները պիտի հեծեծան, և ողբան
Եղեգեայ մէջ կորիւն ձգողները բո-
լորը. և ջրի երեսի վերայ ուռ-
9 կան փռողները պիտի տխրեն: Եւ
պիտի ամաչեն բարակ քէտան
գործողները, և բամպակի կառուե-
10 ղէն հիւսողները: Եւ նորա սիւները
պիտի կոտրատուած լինեն, և բո-
լոր վարձքով գործողների սիրտը
11 կսկած պիտի լինի: Հէնց յի-
մարներ են Տոյանեայ իշխանները.
Փարաւոնի խորհրդատու իմաս-
տուններն խորհուրդը յիմարա-
կան է. դուք ի՞նչպէս էք ասում
Փարաւոնին. Ես իմաստուններն
որդի եմ, վաղեմի թագաւորաց
12 որդի: Հիմա ո՞ւր են քո իմաս-
տուններդ որ քեզ պատմեն, և ի-
մացնեն, թէ ինչ է վճռել Ջօրաց
13 Տէրը Եգիպտոսի վերայ: Տոյա-
նեայ իշխանները յիմարացել են,

Մեմփեայ իշխանները խորտա-
կեն, և Եգիպտոսին մոլորեցրել
են նորա ցեղերի գլխաւորները:
Տէրը նորա մէջ խառնեց մոլոր- 14
ութեան հոգի, և նորանք մոլո-
րեցրել են Եգիպտոսին նորա բո-
լոր գործերումը, ինչպէս որ ար-
բուծն է մոլորում փսխելիս: Ե- 15
գիպտոսումը գործ պիտի չլինի,
որ գործէ գլուխը և պոչին, ար-
մաւենու ճառը և կնխունը: Ա.Յն 16
օրը Եգիպտոսը կռնանց պէս է
լինելու, և պիտի դողայ և զար-
հուրէ Ջօրաց Տէրոջ ձեռքի շար-
ժելուց, որ նա շարժելու է նորա
վերայ: Եւ Յուդայի երկիրը Ե- 17
գիպտոսի համար արհաւիրք է
դառնալու, ամեն ով որ նորան
յիշէ, պիտի վախենայ, Ջօրաց
Տէրոջ խորհրդի պատճառով, որ
նա նորա վերայ որոշել է: Ա.Յն 18
օրը հինգ քաղաք է լինելու Եգիպ-
տոսի երկրումը, Քանանու լեզուն
խօսող, և Ջօրաց Տէրոջ անու-
նով երդուող. մէկին Արեգակի
քաղաք են ասելու: Ա.Յն օրը Տի- 19
րոջ համար մի սեղան է լինելու
Եգիպտոսի երկրի մէջ. և նորա
սահմանի կշտին մի կոթող Տի-
րոջ համար: Եւ նա նշան ու վ- 20
կայութիւն է լինելու, Ջօրաց
Տէրոջ համար Եգիպտոսի երկ-
րումը. վասն զի դէպի Տէրն են
աղաղակելու բռնաւորների երե-
սից, և նա մի փրկիչ և մի մե-
ծին ուղարկելու է նորանց մօտ
և նորանց փրկելու է: Եւ Տէրը 21
ճանաչուած պիտի լինի Եգիպ-
տոսում, և Եգիպտացիք պիտի
ճանաչեն Տիրոջը այն օրը. և զո-
հեր ու պատարագներ պիտի մա-
տուցանեն, և ուխտ պիտի ուխ-
տեն Տիրոջը և կատարեն: Եւ Տէ- 22
րը պիտի հարուածէ Եգիպտացի-
ներին, պիտի հարուածէ և պիտի
բժշկէ, և նորանք պիտի դառնան
Տիրոջը մօտ, և պիտի ընդունելի
նորանք, և նա պիտի բժշկէ նո-
րանց: Ա.Յն օրը մի պողոտայ է 23
լինելու Եգիպտոսից դէպի Ասո-
րեստան, և Ասորեստանցիք գա-
լու են Եգիպտոս, և Եգիպտա-
ցիք՝ Ասորեստան, և ծառայելու

են Եգիպտացիք Ասորեստանցոց
24 հետ Տ:ը-ը. Այն օրը Իսրայէլ երրորդը պիտի լինի, Եգիպտոսի և Ասորեստանի մէջ. և օրհնուածութիւն կ'լինի երկրի մէջ,
25 Որին օրհնելու է Զօրաց Տէրը ասելով. Օրհնեալ լինի իմ ժողովուրդը Եգիպտոս. և իմ ձեռաց գործը՝ Ասորեստան, և իմ բաժինը Իսրայէլ:

ԳԼ. Ի

1 Այն տարին, որ Տարթան Ասրգոն թագաւորից ուղարկուելով եկաւ Ազովտոս, և Ազովտոսի հետ պատերազմեց ու նորան
2 յաղթեց, Այն ժամանակ Տէրը խօսեց Ամովսի որդի Եսայիայի ձեռամբ ասելով. Գնա հանիր քուրձը քո մէջքիցը, և կօշիկները հանիր քո ոտքերիցդ. և նա այնպէս արաւ, և շրջում էր մերկ և
3 բոկոտն: Եւ Տէրն ասաց. Ինչպէս որ իմ ծառան Եսայիան շրջում է մերկ և բոկոտն, որ եբէ ատրուշ նշան և ցոյց լինի Եգիպտոսի և Եթովպիայի հա-
4 մար, Այնպէս էլ Ասորեստանի թագաւորը գերի է քշելու Եգիպտոսին և Եթովպիոյ գերեւարներին՝ երիտասարդներին և ծերերին՝ մերկ և բոկոտն, և նրանց յետոյներիքը բաց Եգիպտոսի նախատինքի համար:
5 Եւ պիտի զարհուրեն և ամաչեն Եթովպիայից՝ իրանց յոյսից, և Եգիպտոսից՝
6 իրանց փառքից: Եւ այն օրը այս ծովեզերեայ երկրի բնակիչը ասելու է. Ահա սա է մեր ապաստանարանը, ուր որ փախել էինք օգնութեան համար որ փրկուէինք Ասորեստանի թագաւորի երեսից. ուրեմն մենք ի՞նչպէս ենք ազատուելու:

ԳԼ. ԻԱ

1 Ծովի անապատի պատգամը:
Հարաւից յարձակուող մրրիկների պէս անապատից է գալիս՝
2 սոսկալի երկրից: Մի խիստ տեսիլք է ինձ յայտնուել. յափըշտակողը յափշտակում է և կործանողը կործանում է: Վե՛ր եկ, Ելամ. պաշարիր, ով Մարաց ազգ, Նորա բոլոր հառաչանքը դադարեցրել եմ: Սորա համար
3 երանքս լիքն են ցաւերով, ծննդականի ցաւերի պէս ցաւեր են բռնել ինձ. գալարվում եմ, չեմ լսում. վրդովուած եմ, չեմ տեսնում: Միտս շփոթուել է, ար-
4 հաւիրքն ինձ զարհուրեցրել է, իմ ցանկալի գիշերը ինձ համար արտասրի դարձրեց:
5 Սեղանը դցում են, դէսը դիտում է. ուտում են, խմում են. վե՛ր կացէք, ով իշխաններ, օծեցէք վահանները: Վա՛ն զի
6 Տէրն ինձ այսպէս է ասել. Գնա դէմն կանգնեցրու, որ տեսածը յայտնէ: Եւ նա ձիաւորներ տե-
7 սաւ զոյգ հեծեալներ, էշի վերայ հեծեալներ, ուղտի վերայ հեծեալներ, և մեծ ուշադրութեամբ
8 ուշադրութիւն արաւ: Եւ առիւծօրէն աղաղակեց. Ով Տէր, դիտանոցի վերայ կանգնած եմ ես միշտ ցերեկը, և իմ պահպանութեան տեղը կանգնած եմ
9 ես բոլոր գիշերը: Եւ ահա սա գալիս են՝ ձիաւորներ, զոյգ հեծեալներ. և պատասխանեց ու ասաց. Ընկա՛ւ, ընկաւ Բաբելոն, և նորա աստուածների բոլոր արձանները փշրեց երկրի վրայ տալով:
10 Ով իմ կասուածներ, և իմ կալի պտուղը, ինչ որ լսել եմ Զօրաց Տէր Իսրայէլի Աստուածանից, այն իմացրել եմ ձեզ:
11 *Եդովմի պատգամը:
Դէպի ինձ ձայն է գալիս Սէիրից. պահապան, ի՞նչ կայ գիշերից. պահապան, ի՞նչ կայ
12 գիշերից: Պահապանն ասում է. Առաւօտը եկած էլ լինի, էլի գիշեր է. եթէ հարցնում էք՝ հարցրէք, եա դարձէք, եկէք:
13 Արաբիայի պատգամը:
Արաբիայի անտառումը պիտի օթևանէք, ով Դեդանեանց կարաւաններ: Ծարաւին դիմաւորելու գացէք ջրով, ով Թեմայի

*Դումայի կամ լռութեան

երկրի բնակիչներ. նորա հացովը փախատականի առաջը եկէք։
15 Վասն զի նորանք փախչում են սուրերի երեսից, քաշած սուրի առջևից, և լարած աղեղի առջևից, և պատերազմի սաստկութեան առջևից։
16 Վասն զի Տէրն ինձ այսպէս է ասել. Դեռ մէկ տարի էլ կայ՝ վարձկանի տարուան, որ պիտի վերջանայ Կեդարի բոլոր փառքը։ Եւ Կեդարի
17 որդկանց զօրաւոր աղեղնաւորաց հնացորդների թիւը քիչ է լինելու. վասն զի Իսրայէլի Աստուած Եհովան է խօսել։

ԳԼ. ԻԲ

1 Տեսիլքի ձորի պատգամը։
Հիմա քեզ ի՞նչ եղաւ, որ ամէնքդ վեր էք ելել կտուրները.
2 Ով խռովութեամբ լցուած, աղմկալից քաղաք, պօսաւէր քաղաք. քո սպանուածները սուրի սպանած չեն և ոչ պատերազմի
3 մեռելներ։ Բոլոր իշխաններդ միասին փախան, առանց աղեղի կապուելոյ, բոլոր քեզ մօտ գտնուողները միասին կապուեցան, որ հեռու էին փախել։ Ես
4 ըսի՝ Ինձանից դարձէք ինձանից, դառնապէս լաց եմ լինելու. մի բռնադատէք ինձ մխիթարելու իմ ժողովրդի
5 աղջկան աւերակի համար։ Վասն զի խռովութեան, ոտնահարութեան և շփոթութեան օր է տէրիկի Ձորաց Եհովայ Տէրոջ համար. պարիսպը քանդուած են, և դիրդոցը հասած է
6 լեառը։ Եւ Եղամը կրում է կապարճը, կառքի հետ մարդկանց և ձիաւորներին. և Կիր բաց է
7 հանում վահանը։ Եւ քո ընտիր հովիտները կառքերով լիքն է լինելու, և ձիաւորները շարքով շարուելու են դէպի դուռները։
8 Եւ նա կ'բանայ Յուդայի ծածկոցը, և դու կ'նայես այն օրը անտառի տան զէնքերին։ Եւ կը
9 տեսնէք Դաւթի քաղաքի ճեղքերը, որ շատ կ'լինին, և կ'ժողվէք ցածի աւազանի ջուրերը։
Եւ կ'համարէք Երուսաղէմի տուները, և տուները կ'քանդէք պարիսպը պնդացնելու համար։ Եւ
11 ձի ջրակոյտ կ'շինէք երկու պարսպի միջտեղը հին աւազանի ջրերի համար. բայց չէք նայում այս բանին անողին, և վաղուց այս
12 բանը շինողին չէք տեսնում։ Եւ Զօրաց Եհովայ Տէրը կանչեց այն օրը լաց լինելու և սգալու համար, գլուխ հնացնելու և քուրձ հագնելու համար։ Եւ ահա ըն-
13 ծութիւն և ուրախութիւն, արջառներ սպանել և ոչխարներ մորթել, միս ուտել և գինի խմել, ասելով. Ուտենք և խմենք, վասն զի էգուց մեռնելու ենք։
14 Բայց Զօրաց Տէրը յայտնել է իմ ականջներին, անշուշտ պիտի չքաւուի ձեր այս անօրէնութիւնը մինչև որ մեռնէք, ասում է Զօրաց Եհովայ Տէրը։
15 Այսպէս է ասում Զօրաց Եհովայ Տէրը. Գնա մտիր այդ պալատական Սեբնայի մօտ, որ պալատի վերակացու է, և ասէ.
16 Ի՞նչ ունես այստեղ, և ո՞վ ունես այստեղ, որ այստեղ քեզ համար գերեզման ես փորել. փորե՛լ է բարձրում իր գերեզմանը, քանդե՛լ է վէմի մէջ իրան համար բնակարանը։
17 Ահա Տէրը քեզ թաւալեցնելու է՝ ուժով մարդու թաւալեցնելուն պէս, և
18 քեզ գլորելու է ոլորցնելու։ Քեզ կծիկի պէս կծկելու կծիկ է շինելու գնատակի պէս լայնարձակ երկրի վերայ. դու այնտեղ պիտի մեռնես, և այնտեղ էլ՝ քո փառաց կառքերը, դու, ով քո Տիրոջ տան անարգանքը։
19 Եւ ես քեզ մերժեցի քո պաշտօնից. և նա պիտի քեզ խորտակէ քո կանգնած տեղից։
20 Եւ այն օրը կ'լինի, որ կ'կանչեմ իմ ծառային՝ Քղկիայի որդի Եղիակիմին։
21 Եւ նորան եմ հագցնելու քո պատմուճանը, և քո գօտին նորան եմ կապելու, և քո իշխանութիւնը տալու եմ նորա ձեռքը և նա հայր կ'դառնայ Երուսաղէմի բնակչաց և Յուդայի տան համար։
22 Եւ Դաւթի տան

բանալին դնելու եմ նորա ուսին, որ նա բանայ, և ոչ ոք չգոցէ.
23 և գոցէ, ու ոչ ոք չբանայ։ Եւ նորան պիտի պնդացնեմ բևեռի պէս մի հաստատ տեղ, և նա փառաց աթոռի պէս կ'լինի իր
24 հօր տան համար։ Եւ նորանից կ'կախուին իր հօր տան բոլոր փառաւոր բաները, ազգերը և շառաւիղները, բոլոր նուագաց անօթները՝ սկսած սրսկանների տեսակ անօթներից սկսած մինչև ա-
25 մեն տեսակ սափորները։ Ան օրը, ասում է Զօրաց Տէրը, պիտի շարժուի այն հաստատ տեղումն պնդացրուած բևեռը, և կտրուի ու վայր ընկնէ, և այն բեռը պիտի կտրատուի որ նորա վերայ էր. որովհետև Տէրն է խօսել։

ԳԼ. ԻԹ

1 Տիւրոսի պատգամը։
Ողբացէք, ով Թարսիսի նաւեր, վասն զի աւերակ է դառել ոչ տուն կայ ոչ մուտք. Կիտացոց երկրիցը յայտնուեցաւ նո-
2 րանց։ Լռեցէք, ով ծովեզրեայ բնակիչներ, Սիդոնի ծովագնաց վաճառականները քեզ լցրել էին։
3 Շատ ջրերի միջի Սիհորի սերմը՝ Նեղոսի հունձքը նորա եկամուտն էր. և նա եղել էր ազգերի վա-
4 ճառանոցը։ Ամօթ քեզ, ով Սիդոն, վասն զի ծովն է խօսում, ծովի զօրաւթիւնն է ասում, ես ծննդականի ցաւ չեմ քաշել և չեմ ծնել, և երիտասարդներ չեմ մեծացրել և կոյսեր բարձրացրել։
5 Երբոր լուրը Եգիպտոս հասնէ, պիտի ողբան Տիւրոսի լուրի
6 համար։ Անց կացէք Թարսիս, ողբացէք, ով ծովեզրեայ բնա-
7 կիչք։ Սա՞ է ձեր դուարճացեալ քաղաքը, որի հնութիւնը հին ժամանակից է. նորա ոտքերը պիտի քշեն նորան հեռու տեղ պան-
8 դուխտ լինելու։ Ո՞վ արաւ այս խորհուրդը Տիւրոսի մասին, որ պսակներ էր բաժանում, որի վաճառականները իշխաններ էին, որի առուտուր անողները՝ երկրի պատուաւորները։ Զօրաց Տէրն է 9
արել այս խորհուրդը, որ խայտառակէ ամեն զարդի բարձրութիւնը, որ անարգէ երկրի բոլոր պատուաւորներին։

Հեղեղիր քո երկիրը Նեղոսի 10
պէս, ով Թարսիսի աղջիկ, այլ ևս *արգելք չկայ։ Նա իր ձեռ- 11
քը մեկնել է ծովի վերայ, սարսեցրել է տէրութիւններին. Եհովան պատուիրել է Քանանացոց մասին, որ նորա բերդերը քանդեն։ Եւ ասում է. Դու այլ 12
ևս պիտի չուրախանաս, ով դու պղծուած կուսական աղջիկ Սիդոնի. դէպի Կիտիմ, վեր կաց, անցիր, ե՛յ այնտեղ էլ պիտի հանգիստ չլինես։ Ահա Քաղդէա- 13
ցոց երկիրը, այս ազգը, որ չէր եղած, Ասորեստան հիմնեց դորան վայրենիների համար. նորանք կանգնեցրին նորա աշտարակները, քանդեցին նորա պալատները, նորան աւերակ արին։ Ողբացէք, 14
ով Թարսիսի նաւեր, վասն զի ձեր ամրութիւնը քարուքանդ եղաւ։

Եւ այն օրը կ'լինի որ Տիւրոս 15
կ'մոռացուի եօթանասուն տարի, մէկ թագաւորի օրերի չափ. եօթանասուն տարուց յետոյ կ'լինի Տիւրոսին՝ այն պոռնկի երգին համեմատ. Առ քնարը, շրջիր 16
քաղաքը, ով մոռացուած պոռնիկ. լաւ ածիր, շատ խաղ ասիր, որ քեզ յիշեն։ Եւ եօթա- 17
նասուն տարուց յետոյ կ'լինի, որ Տէրը այցելութիւն կ'անէ Տիւրոսին, և նա էտ կ'դառնայ դէպի պոռնկական վարձքը և կ'պոռնկանայ աշխարհի երեսին եղող բոլոր երկրի թագաւորութեանց հետ։ Եւ նորա աշխատանքն ու 18
վարձանքը պիտի նուիրուի Տիրոջը, նա չպիտի գանձարանը մնանէ, և չպիտի շտեմարանուի պահուի, այլ Տիրոջ առջև բնակողներինը պիտի լինի նորա աշխատանքը. որ ուտեն կշտանան, և պատուական զգեստներ հագնեն։

---

*գօտի.

ԳԼ. ԻԴ

1 Ահա Տէրը դատաւկելու է երկիրը և նորան քարուքանդ անելու, և փոխելու է նորա կերպարանքը և ցրուելու նորա բնակիչներին։ 2 Եւ կ'լինի, ինչպէս որ ժողովրդին նոյնպէս էլ քահանային, ինչպէս ծառային այնպէս էլ իր տէրոջը, ինչպէս աղախնին այնպէս էլ իր տիկնոջը, ինչպէս ծախողին այնպէս էլ ծախողին, ինչպէս փոխ տուողին այնպէս էլ փոխ առնողին, ինչպէս պարտատիրոջ այնպէս էլ 3 պարտականին։ Երկիրը դատարկուելու դատարկ է լինելու, և կողոպտուելով կողոպտած է դառնալու, վասն զի Տէրն է խօսել 4 այս խօսքը։ Տխրելու տրտմելու է երկիրը, նուաղելու ու տրտմելու է աշխարհը, նուաղելու են երկրի 5 ժողովրդների մեծամեծները։ Եւ երկիրը պղծուած է իր բնակիչների տակին, վասն զի օրէնքները զանց են արել, պատուիրանքը փոխել, յաւիտենական ուխտը 6 խափանել են։ Դորա համար անէծքը թափել է երկիրը, և բնակիչները նորանով պատիժ կրեցին, այս պատճառով երկրի բնակիչներն այրուեցան, և քիչ 7 մարդիկ մնացին։ Սուգ է անում նոր գինին, նուաղում որթը, հառաչում են բոլոր ուրախասիրտները։ 8 Դադարել է թմբուկների զուարճութիւնը, կտրել է ուրախացողների աղաղակը, դադարել է քնարի զուարճութիւնը։ 9 Գինին չեն խմելու երգով, դառնանալու է գինի իր խմողներին համար։ 10 Ջարդուել է դատարկ քաղաքը, կղպուել է տան մէն տուն, մտնել չկայ։ 11 Լաց կայ գինու համար փողոցներում, մթնել է ամեն ուրախութիւն, վերացել է երկրի ցնծութիւնը։ 12 Ամայութիւն է մնացել քաղաքում, և փշրուել աւերակ է դարձել։ 13 Վասն զի այսպէս պիտի լինի երկրի մէջ ժողովուրդների միջում, այսինքն ինչպէս թափած ձիթենի, ինչպէս ճաշտղ

այգեկութը վերջանալուց յետոյ։ 14 Եւ նորանք կ'բարձրացնեն իրանց ձայնը, կ'ցնծան. Տիրոջ փառաւորութեամբը պիտի աղաղակեն ծովի կողմից։ 15 Սորա համար արեւելքում փառաւորեցէք Տիրոջը, ծովի կղզիներում Իսրայէլի Տէր Աստուծոյ անունը։ 16 Երկրի ծայրից երգեր լսեցինք, փառք Արդարին. բայց ես ասացի. Մաշուած եմ, մաշուած եմ, վա՛յ ինձ. յափշտակողները յափշտակում են, յափշտակողները յափշտակելով յափշտակում են. 17 վախ ու վիհ ու որոգայթ կայ քեզ համար, ով երկրի բնակիչ։ 18 Եւ ով որ փախչելու լինի վախի ձայնից՝ վիհն է ընկնելու, և վիհի միջից դուրս եկողը՝ որոգայթի մէջ է բռնուելու. վասն զի վերևից բաց են պատուհանները, և երկրի հիմունքը պիտի սասին։ 19 Ճեղքուում ճեղքուելով է երկիրը, պատռուում պատառ պատառ է լինում երկիրը, դողում է դողդողում երկիրը։ 20 Երերում տրորուում է երկիրը արբածի նման, և ճօճում է հիւղի նման, և նորա մեղքը ծանրացել է նորա վերայ, և նա վայր է ընկնելու, և այլևս վեր չի կենալ։ 21 Եւ այն օրը լինելու է որ Տէրը կոչ ցնէ բարձանց մէջ բարձանց զօրացը, և երկրի վերայ երկրի թագաւորներին։ 22 Եւ պիտի հաւաքուին մէկ հաւաքուած դառնան, և կապուին գուբի մէջ, և պիտի բանտարկուին բանտի մէջ. և շատ օրերից յետոյ պիտի այցելութիւն ունենան։ 23 Եւ պիտի ամչէ լուսինը, ու արեգակը պատկառէ, երբոր թագաւորէ Զօրից Տէրը Սիոնի լեռան վերայ և Երուսաղէմում, և պատիւ կ'լինի իր ծերերի առջևը։

ԳԼ. ԻԵ

1 Եհովայ, դու իմ Աստուածն ես, քեզ բարձրացնում եմ ես, գովում եմ քո անունը. վասն զի սքանչելիք արիր, վաղեմի խորհուրդները, հաւատարմութիւն և

2 ճշմարտութիւն։ Վասն զի քա-
ղաքիցը հոզակոյտ շինեցիր, պա-
րսպատար քաղաքը՝ փլատակ.
քաղաքը օտարների պալատ, յա-
3 ւիտեան չէ շինուելու։ Ընդ այս հա-
մար քեզ պիտի պատուէ զօրա-
ւոր ժողովուրդը, ահարկու ազ-
գաց քաղաքը պիտի վախենայ
4 քեզմանից։ Վասն զի դու ապաս-
տան եղար աղքատին, ապաս-
տան չքաւորին իր նեղութեան
մէջ, ապաւէն փոթորկից, հո-
վանի տաքութիւնից. որովհետև
զօրաւորների կատաղութիւնը
պատ է անդր փոթորկի նման է։
5 Ինչպէս տաքութիւն է չոր տեղ-
ում օտարների աղմուկը, ու դու
խոնարհեցրիր. տաքութիւնը ամ-
պի հովանով անդնդը- պէս բռնա-
զորաց երգը պիտի իջնէ։
6 Եւ Զօրաց Տէրը բոլոր ազգերի
համար այս լեռան վերայ խնջոյք
է անելու պարարտ բաներով հին
գինիներով, ծուծով լիքը պա-
րարտ բաներով, հին և մաքրը-
7 ուած գինիներով։ Եւ պիտի բը-
նջինջ անէ այս լեռան վերայ
երեսի ծածկոցը, որ ծածկում է
բոլոր ժողովուրդներին, և այն
վարագոյրը որ փորագործուած է
8 բոլոր ազգերի վերայ։ Նա պիտի
կլանէ մահին յաւիտեան, և պի-
տի ջնջէ Եհովայ Տէրը արտասու-
քը ամեն երեսից, և իր ազգի
ամօթը պիտի հեռացնէ բոլոր
երկրի վերայից, վասն զի Տէրն է
ասում։
9 Եւ այն օրն ասելու են, ահա
մեր Աստուածը, որին մենք յու-
սացել ենք, և նա մեզ փրկեց.
Եհովան է սա, որին յուսացել
ենք, ուրախանալու և ցնծալու
10 ենք նորա փրկութիւնով։ Վասն
զի Տէրոջ ձեռքը հանգչելու է
այս լեռան վերայ. և Մովաբը
ջարդուելու է նորա տակին, ինչ-
պէս որ խոզանը է կոխ տրվում
11 աղբահորումը։ Եւ նա տարա-
ձելու է իր ձեռքերը նորա մէջ,
ինչպէս որ տարածում է լող-
ցողը լողանալիս, բայց նա պիտի
ցածացնէ նորա հպարտութիւնը
նորա ձեռքերի հնարքներով հետ։

Եւ քո պարիսպների բարձր ամ- 12
րութիւնը նա պիտի խոնարհեցնէ,
ցածացնէ, մինչև փոշին գետնովը
տայ։

ԳԼ. ԻԶ

Այն օրը այս երգն է երգուելու 1
Յուդայի երկրումը.

Մենք մի զօրաւոր քաղաք ու-
նինք, նա փրկութիւնը դնում է
իբրև պարիսպ ու պատնէշ։ Բա- 2
ցէք դուռները, որ մտնէ արդար
և հաւատարմութիւն պահող
ժողովուրդը։ Հաստատ միտքը 3
ես պահում խաղաղ խաղաղու-
թիւնով, վասն զի քեզ է յու-
սում։ Յաւիտեան Տիրոջը յու- 4
ցէք, վասն զի Տէր Եհովան յա-
ւիտենական վէմ է։ Վասն զի 5
նա խոնարհեցնում է բարձր բը-
նակիչներին, բարձր բերդը. նա
նորան ցածացնում է, ցած է
քաշում նորան մինչև գետինը,
նա նորան նկուն է անում մինչև
փոշին։ Ոտքը նորան պիտի կոխէ՝ 6
աղքատի ոտքը՝ չքաւորների կո-
խելը։ Արդարի ճանապարհը ու- 7
ղիղ է, ուղիղ հարթում ես ար-
դարի շաւիղը։ Հէնց քո դատա- 8
ստանների ճանապարհին սպասել
ենք քեզ, ով Տէր, քո անուանն
ու քո յիշատակին էր ցանկան-
ում մեր հոգին։ Գիշերով քեզ եմ 9
փափաքում գիշերը, հէնց իմ
ներսի հոգովը ես քեզ եմ բաղ-
ձում. որովհետև երբոր քո դա-
տաստանները հաստատ են երկրին,
աշխարհի բնակիչները արդարու-
թիւն են սովորում։ Ողորմութիւն 10
լինում է ամբարշտին, բայց ար-
դարութիւն չէ սովորում, նա
ուղղութեան երկրումը ծուռութիւն
է անում և չէ տեսնում Տիրոջ
մեծափառութիւնը։ Ով Տէր, 11
նորանք քո ձեռքի բարձրութիւ-
նը չեն տեսնում, կ'տեսնեն ամա-
չելով քո ժողովրդի վերայ ունե-
ցած նախանձը, կրակն է ապա-
ուելու քո թշնամիներին։ Ով 12
Տէր, դու կ'հաստատես մեզ հա-
մար խաղաղութիւնը. վասն զի
մեր ամեն գործքերն էլ դու գոր-

13 Ձեզիր մեզ համար՝ ով Տէր մեր
Աստուած, քեզանից զոկ ուրիշ
տէրեր տիրեցին մեզ վերայ, Բա-յց
միայն քեզանով պիտի յիշենք
14 քո անունը: Մեռածները չեն
կենդանանալ, ուրուականները
չեն կանգնիլ, այնպէս եա դու նո-
րանց այցելել և փչացրել, և բը-
նաջինջ եա արել նորանց բոլոր
15 յիշատակը: Դու աւելացրիր այս
ազգը, ով Տէր, դու աւելացրիր
այս ազգը և փառաւորուեցար,
երկրի ամեն ծայրերը ընդարձա-
16 կեցիր: Ով Տէր, նեղութեան
մէջ քեզ որոնեցին, հառաչանք
թափեցին դու նորանց խրատե-
17 լիս: Ինչպէս որ յղին ծնելու մօ-
տենալով երկունքի մէջ տանջ-
ւում և ազաղակում է, մենք
էլ նոյնպէս եինք դառել քո առ-
18 ջև, ով Տէր: Յղացանք, երկունք
քաշեցինք, կարծես թէ քամի
ծնեցինք, մենք փրկութիւն չգոր-
ծեցինք երկրի համար, և աշխար-
19 հի բնակիչները չրնկան: Քո մե-
ռելները պիտի կենդանանան, իմ
մեռելների դիակները պիտի կանգ-
նեն. վեր կացէք և ցնծացէք,
ով հողի բնակիչներ. վասն զի
ւղյաերի ցօղ է քո ցօղը. քո եր-
կիրը դուրս պիտի գցէ ուրուա-
կաններին:

20 Գնա, ով իմ ժողովուրդ, մը-
տիր քո սենեակները, և գոցիր
քո դուռները եաեւիցդ. ծածկուիր
մի փոքրիկ վայրկեան, մինչև որ
21 բարկութիւնն անցնէ: Վասն զի
ահա Տէրը դուրս է գալիս իր տե-
ղիցը, որ երկրի բնակիչներին պցե-
լէ նորանց անօրէնութեան համին,
և երկիրը պիտի յայտնէ իր ընդ-
ւն արիւնները և պիտի չծածկէ
այլեա իր սպանուածներին:

ԳԼ. ԻԷ

1 Ա՛յն օրը Տէրը պիտի պցիլէ իր
սուր ու մեծ և զօրաւոր սրով
լևիաթան փախչող օձին, և լե-
ւիաթան պարուն օձին, և պի-
տի սպանէ ծովի մէջի վիշապին:
2 Ա՛յն օրը *գինու պղպէ կ'լինի. նո-

*տանք վայելուչ

րա համար երգեցէք: Ես Տէրս
եմ նորա պահապանը, ամեն
վայրկեան ուռգում եմ նորան.
որպէս զի նորան ոչ ոք չվնասէ,
գիշեր և ցերեկ ես նորան պահ-
պանում եմ: Ես բարկութիւն
չունիմ, երանի թէ ցոխեր փուշ-
ներ լինէին, պատերազմով նո-
րանց վերայ կ'յարձակէի ամենը
միասին կպրէի: Կամ թէ իմ
զօրութիւնից բռնեն, ինձ հետ
խաղաղութիւն անեն. խաղաղու-
թիւն անեն ինձ հետ:

Ա՛պագայում Յակոբը պիտի
արմատանայ, Իսրայէլը ծաղկէ
և բնձիւղէ. և լքցնեն աշխարհի
երեսը պտուղով: Մի՞թէ նորա
զարկողի զարկածին պէս է զար-
կել նորան, կամ նա նորա բա-
պանութեան սպանման նման բա-
պանուեցա՞ւ: Չափաւորութեամբ
վիճեցիր նորա հետ նորան ար-
ձակելիս, նորան դուրս արտա
ստատիկ քամիով արևելեան քա-
մու օրը: Ուրեմն սորանով կ'քա-
ւի Յակոբի անօրէնութիւնը, և
սա է նորա մեղքի հեռացնելու
բոլոր պտուղը. երբոր սեղանի
քարերը փշրուած կրաքարերի պէս
կ'անէ, վեր չեն կենալ աստա-
րովթներ և արեգական կուռքե-
րը: Քանզի պարսպաւոր քաղաքը
մեկնուցած՝ ձգուած և թողուած
բնակարան պիտի լինի անապա-
ւի պէս. այնտեղ զուարակն է
արածելու, և այնտեղ մնակալե-
լու, և նորա ճիւղերը վերջացնե-
լու է: Նորա ճիւղերը չորանա-
լով պիտի կոտրատուին, կիները
պիտի գան, վառեն նորան, վասն
զի նա իմաստուն ժողովուրդ չէ,
վասն որոյ նորան չէ ողորմելու
նորա Արարիչը, և նորա ստեղ-
ծողը նորան չէ գթալու: Եւ այն
օրը կ'լինի, որ Տէրը կ'թօթափէ
Գետի յորձանքիցը մինչև Եգիպ-
տոսի հեղեղատը, և դուք պիտի
հաւաքուիք մէկ մէկ, ով Իսրա-
յէլի որդիք: Եւ այն օրը փչուե-
լու է մեծ փողով, և գալու են
Ասորեստանի երկրում կորածնե-
րը, և Եգիպտոսի երկրի մէջ ա-
պստրամներըը, և երկրպագելու

են Տիրոջը՝ սուրբ լեռան վերայ Երուսաղէմում։

ԳԼ. ԻԸ

1 Վա՛յ եփրեմի արբեցողների հըպարտութեան պսակին, և նորա փառաց զարդի թառամեալ ծաղկին, որ գիւնհարների պարարտ
2 հովտի գլխին է։ Ահա Տէրն ունի մէկ քաջին և զօրաւորին, կարկտի փոթորկի նման՝ մի ապականիչ մրրիկ, յորդող առատ ջրերի հեղեղի պէս թափելու է
3 երկրի վերայ հզօր ձեռքով։ Ոտքով կոխ են տալու եփրեմի արբեցողների հպարտութեան պսակը։
4 Եւ մի թառամեալ ծաղիկ պիտի դառնայ նորա փառաց պըսակը, որ պարարտ հովտի գլխին է, ինչպէս հունձքից առաջ վաղահաս թուզը, որ նորան տեսնողը՝ հապա թէ ձեռքն է ա-
5 ռել կուլ է տալիս։ Այն օրը Զօրաց Տէրն է լինելու զարդի պսակ, և շքեղ թագ՝ իր ժողո-
6 վըրդի մնացորդի համար. Եւ իրաւունքի հոգի՝ իրաւունքի համար նստողին, և ոյժ՝ պատերազմը դէպի դուռը ետ դարձնողնե-
7 րին։ Բայց սորանք էլ են գինով մոլորուած, և ցբիով խոտորում են. քահանան և մարգարէն մոլորուած են ցբիով, կուլ են գըներացել գինու մէջ, ցբիով խոտորել են. մոլորում են տեսիլքի մէջ, դանդաչում են դատաստանումը։
8 Վա՛ն զի բոլոր սեղանները լիքն են պիղծ փսխրուածքով, այլևս տեղ չէ մնացել։
9 Ո՞ւմ է նա գիտութիւն տալու, և ո՞ւմ՝ քարոզ հասկացնում. կաթից կտրուածների՞,
10 տունկից քաշուածների՞։ Վա՛ն զի հրաման հրամանի վերայ՝ հըրաման հրամանի վերայ, խրատ խրատի վերայ՝ խրատ խրատի վերայ. մի քիչ այստեղ, մի քիչ
11 այնտեղ։ Այո՛ թոթովախօս շրթունքով և օտար լեզուով պիտի խօսէ նա այս ժողովրդի հետ։
12 Նա որ նորանց ասաց՝ Սա է ձեր հոգնածին հանգստացնելու հանգըստութիւնը, և սա է մխիթարութիւնը. բայց նորանք չուզեցին լսել։ Եւ Տիրոջ խօսքն էլ 13
լինելու է նորանց համար հրաման հրամանի վերայ՝ հրաման հրամանի վերայ. խրատ խրատի վերայ՝ խրատ խրատի վերայ, մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ, որպէս զի գնան և ետևի վերայ ընկնեն ու ջարդուին, և որոգայթի մէջ ընկնեն և բռնուին։
Սորա համար լսեցէք Տիրոջ 14
խօսքը, ով ծաղրող մարդիկ, այս ժողովրդի իշխաններ, որ Երուսաղէմումն է. Որովհետև ա- 15
ռաւ էք՝ Մենք ուխտ ենք դրել մահուան հետ, և այն աշխարհքի հետ՝ դաշինք կապել, որ յորդահոս հեղեղը, եթէ անցնելու լինի, մեզ չի հասնիլ. վասն զի մենք սուտ թիւնը մեր պատսպարանը շինեցինք, և խաբէութեան մէջ ենք ծածկուած։ Վասն որոյ 16
այսպէս է ասում Եհովայ Տէրը. Ահա ես եմ որ Սիովնումը դրել եմ վէմը, ընտիր վէմ, պատուական անկիւն, հաստատուն հիմնադրութիւն. ով որ նորան հաւատայ, չի փախչիլ։ Եւ ես իրաւունքը 17
չափին հաւասար, և արդարութիւնը կշռքին հաւասար պիտի անեմ, և կարկուտը պիտի սուրթեան պատսպարանը խորտակէ, և թաքուստը ջուրերը պիտի ողողեն։ Եւ ձեր ուխտը մահի հետ 18
պիտի ջնջուի, և այն աշխարհքի հետ արած դաշինքը պիտի չհաստատուի, որ երբոր յորդահոս հեղեղը անցնելու լինի, դուք նորանից առնահար պիտի լինիք։ 19
Քանի անգամ որ անցնէ, ձեզ պիտի տանէ, որովհետև առաւօտ առաւօտ անց է կենալու՝ ցերեկը և գիշերը. և մի միայն առաւ կում է լինելու լուրը առնելը։
Վա՛ն զի անկողինը կարճ է եր- 20
կար ձգուելու համար, և ծածկոցը նեղ է նորանով ծածկուելու։
Վա՛ն զի ինչպէս փարասին լե- 21
ռան վերայ՝ վեր է կենալու Տէրը, և բարկանալու է, ինչպէս էր Գաբաւոնի ձորումը, որ գործէ

իր գործը՝ իր օտարոտի գործը. և
կատարէ իր պաշտօնը՝ իր տարօ-
22 րինակ պաշտօնը։ Եւ հիմա ծաղր
անողներ մի լինիք, որ ձեր կա-
պերը աւելի չպնդանան, վասն զի
լսեցի այն որոշուածն ու սահ-
մանուածը Զօրաց Եհովայ Տիրոջ
կողմանէ բոլոր երկրի վերայ։
23 Ականջ դրէք, և լսեցէք իմ
ձայնը, մտիկ ուշէք, և լսեցէք
24 իմ խօսքը։ Մի՞թէ ամէն օր հեր-
կուամ է հերկողը ցանելու համար,
և բանո՞ւմ է տափանո՞ւմ իր սր-
25 տը. Չէ՞ որ նորա երեսը շիտա-
կելուց յետոյ՝ ցրիւ է տալիս
սերմնոցը և ցանում չամնոը,
և ցորենը կարգո՞վ դնում և գա-
րին իր որո՞շ տեղը և հաճարը
26 իր սահմանումը։ Եւ կրթել է
նորան խոհեմութեան, և ուսուց-
րել է նորան իր Աստուածը։
27 Վասն զի սերմնոցը կամնասոյ-
լով չի ծեծուիլ, և սայլի անիւը
չի դարձնուիլ չամնոի վերայ,
այլ գաւազանով է թակուում
սերմնոցը, և չամնոը՝ մնհակով։
28 Ցորենը կ'փշրուի՞, Ո՛չ, նա յաւեր-
ման չէ կաւլում ու կոտրում նո-
րան, և իր սայլի անիւը քշում
նորա վերայ և իր ձիերին, և նո-
29 րանք չեն փշրուում։ Սա էլ է Զօ-
րաց Եհովայ Տիրոջից դուրս գա-
լիս, որ խորհուրդն՝ սքանչելի,
հանճարը գերապանց է։

ԳԼ. ԽԹ

1 Վա՛յ Արիէլին, Արիէլին, Դա-
թի՛ բանակ տուած քաղաքին,
աւելացրէք տարի տարուայ վե-
րայ, տօները թող պտոյտ տան.
2 եւ ես պիտի նեղացնեմ Արիէ-
լին, և պիտի լինի հառաչել և
հառաչանք, և նա կ'լինի ինձ հա-
3 մար Արիէլի պէս։ Եւ բանակ պի-
տի տամ շրջանի պէս քեզ վե-
րայ, և քեզ պիտի նեղեմ պատ-
նէշներով, և քեզ դէմ պիտի
4 հողակոյտներ կանգնեցնեմ։ Եւ
պիտի ցածանաս՝ հողից խօսես,
և պիտի փոշուց ձայնս քո խօս-
քերը, և վհուկի պէս՝ տափից
է դուրս գալու քո ձայնը, և փո-

շուց պիտի ճռճռան քո խօսքերը։
Եւ մանր փոշու պէս պիտի լի-
նի քո օտարականների բազմու-
թիւնը, և անգնող մղեղի պէս՝ 5
բռնաւորների բազմութիւնը. և
յանկարծակի մէկ վայրկեանի
մէջ կ'լինի։ Զօրաց Տիրոջ կող- 6
մանէ ամպրոպ և երկրաշարժ
մեծ ձայնով, մրրիկով, ու փո-
թորիկով, և մաշող կրակի բո-
ցով։ Եւ դիշերուայ տեսիլքի և- 7
րազին պէս են լինելու Արիէլի
վերայ պատերազմի եկող բոլոր
ազգաց բազմութիւնը, և բոլոր
նորա և նորա բերդի վերայ յար-
ձակողները և նորա նեղիչները։
Եւ կ'լինի, ինչպէս որ սովածը ե- 8
րազ է տեսնում, թէ ուտում
է, և վեր է կենում քաղցած, որ
փորը դատարկ է, և ինչպէս որ
ծարաւն է երազ տեսնում, թէ
խմում է, և զարթնում է պես-
պես, թէ նուազած է և սիրտը
պապակւում է. այսպէս է լին-
լու բոլոր ազգերի բազմութիւնը,
որ պատերազմի են դուրս գալիս
Սիոն լեռան դէմ։ Ապշեցէք և 9
զարմացէք, շլացրէք ձեզ և շլա-
ցէք. նորանք արբած են, բայց
չէ թէ գինով, նորանք գանգա-
ջում են, բայց չէ թէ ցքուց։
Վասն զի Տէրը ձեզ վերայ թմբ- 10
րութեան հոգի է թափել, և
կապել է ձեր աչքերը, մարգա-
րէներին և ձեր գլխաւորներին,
որ տեսիլք էին տեսնում, քօղ-
արկել է։ Եւ ամէն մի բանի տե- 11
սիլքը պիտի լինի ձեզ համար
կնքուած գրքի խօսքերին պէս,
որ կ'տան գրագէտին և կ'ասեն.
Մէկ կարդայ այս. և նա կ'տայ.
Չեմ կարող՝ վասն զի կնքուած է։
Եւ կ'տան այն գիրքը մէկ ան- 12
գրագէտ ասելով. Մէկ կարդա
այս. և նա կ'տայ. Ես կարդալ
չգիտեմ։ Եւ Տէրն ասում է. Ո- 13
րովհետև այս ժողովուրդը մօտ-
նում է բերանով և իրանց շըր-
թունքներով են ինձ պատուում,
և նորանց սիրտը հեռու է ինձա-
նից, և նորանց ինձ պատուելը
մարդկանց սովորեցրած պատուէր

14 է. Դուրս համար ահա ես այ-
սուհետև զարմանալի բաներ եմ
անելու այս ժողովրդի հետ՝ զար-
մանալիք և զարմանք. և պիտի
փչանայ նորանց իմաստուններուն
իմաստութիւնը, և հանճարեղ-
ներուն հանճարը պիտի խափանուի։
15 Վա՛յ նորանց, որ խորհուրդը խոր
տեղերում ծածկում են Տիրո-
ջմէ, և խաւարում է լինում նո-
րանց գործքը, և ասում են. Ով
է մեզ տեսնում, և ով է մեզ
16 գիտում։ Ո՜հ ձեր խառնակու-
թեանը. մի՞թէ կաւի պէս կ'հա-
մարուի բրուտը, որ շինքը ասէ
իր շինողին՝ Ինձ չէ շինել. և ա-
րարածն ասէ իր արարչին. Թէ
17 Նա չէ հասկանում։ Ահա մի
փոքր քիչ ժամանակից յետոյ Լի-
բանանը կ'դառնայ պտղաբեր
արտ, և պտղաբեր արտը անտառ
18 պիտի համարուի։ Եւ այն օրը
խուլերը կ'լսեն գրքի խօսքերը, և
մէգիցն ու խաւարիցը կ'տեսանեն
19 կոյրերի աչքերը։ Եւ խեղճերը
ուրախութիւն պիտի ունենան
Տէրով, և չքաւոր մարդիկը պիտի
ցնծան Իսրայէլի Սուրբովը։
20 Վասն զի բռնաւորը պիտի չքա-
նայ, և ծաղրողը վերջանայ. և
փչանան բոլոր չարութիւն խոր-
21 հողները. Նորանք որ մարդուս
դատի մէջ յանցաւոր են շինում,
և *դատարանում յանդիմանողին
որոգայթի են դնում, և դատարկ
բանով վայր են գցում արդա-
22 րին։ Սորա համար այսպէս է ա-
սում Տէրը Յակոբի տան մասին.
Նա որ փրկեց Աբրահամին, այլ
ևս պիտի չամաչէ Յակոբը, և
23 նորա երեսը պիտի չսպրանէ։ Վա-
սն զի նա՝ նորա որդիքը իմ ձե-
ռաց գործը իրանց մէջ տեսնելիս
†փառաւորելու են իմ անունը,
և †փառաւորելու են Յակոբի
Սուրբին, և Իսրայէլի Աստուա-
24 ծանից սարսելու են։ Եւ հոգով
մոլորուածները իմաստութիւն են
հասկանալու, և տրտնջողները
խրատ են առնելու։

*դրան մէջ
†օրհնելու են

ԳԼ Ա

Վա՛յ ապստամբ որդիանցը, ա- 1
սում է Տէրը, որ խորհուրդ են
անում, բայց չէ թէ ինձանից,
որ դաշինք են կապում, բայց չէ
թէ իմ հոգովը, որպէս զի շա-
տացնեն մեղք մեղքի վերայ։ Որ 2
գնում են իջնելու Եգիպտոս, և
իմ բերանը չեն հարցնում. որ
պատսպարուին փարաւոնի պա-
տսպարանովը և որ ապաւինեն
Եգիպտոսի հովանուն։ Բայց փա- 3
րաւոնի պատսպարանը ձեզ հա-
մար ամօթ պիտի լինի և Եգիպ-
տոսի հովանուն ապաւինելը նա-
խատինք։ Վասն զի նորա իշխան- 4
ները Տոյանիս են եղել, և նորա
թագաւորները հասել են Հանէս։
Ամենքը պիտի ամաչեն այն ազգի 5
համին, որ իրանց օգուտ չունի,
ոչ օգնութիւն և ոչ օգուտ ու-
նի, այլ ամօթի և խայտառա-
կութեան համար է։ Հարաւի 6
*Զիսագետաց պատգամը։ Նեղու-
թեան և վշտաց երկրովը, որտե-
ղից որ են մատակ առիւծը և
առոյգ առիւծը, իժը և թեւաւոր
կիզող օձը, տանում են իրանց
ստացուածքը էշերի մէջքի վե-
րայ, և ուղտերի ապտակ վերայ
գանձերը մի այնպիսի ժողովրդի
համ, որ օգուտ չունի։ Եւ ու- 7
նայն ու դարտակ է Եգիպտոսի
օգնութիւնը, նորա համար կան-
չեցի նորան՝ Կոկոզարան դատար-
կատեղեր են նորանք։ Արդ գնա 8
գրիր այս նորանց հետ տախտակի
վերայ և գրքին վերայ նշանակիր,
և գա ճոյ յետի օրուան համար
վկայութիւն միշտ յաւիտեան։
Վասն զի դա մի ապստամբ ժո- 9
ղովուրդ է՝ ստախօս որդիք, որ-
դիք, որ չեն ուզում լսել Տիրոջ
օրէնքը։ Որ ասում են տեսանող- 10
ներին. Մի տեսնէք. և մարգա-
բէներին՝ Թէ Մեզ համար ուղիղ
բաներ մի մարգարէանաք. մեզ
կակուղ բաներ ասացէք, խաբէ-
ութիւններ մարգարէացէք։ Հե- 11
ռացէք ճանապարհիցը, ծռեցէք

*Ընհեմովթ

ուզուցը, վերցրէք մեր առաջից
12 Իսրայէլի Աստուծին։ Սորա համար
այսպէս է ասում Իսրայէլի Աստ-
ուածը. Որովհետև ձեր զգուանքը գա-
լիս է այս խօսքից, և ապաւինել
էք բռնութեան և ծուռութեան,
13 և նորանից վերայ կռնել էք. Ով-
րա համար այս անօրէնութիւնը
ձեզ համար կ'լինի բարձր պա-
րսպի վերայ ուռած վայր ընկ-
նող փլուածքի պէս, որի կոր-
ծանումը յանկարծակի անկարծ
14 կ'գայ։ Եւ նորան փշրելու է որ-
պէսի սպնդի փշրելու պէս՝ փշրե-
լու է և չէ խնայելու, և նորա
կտորտանքներից մի խեցի կարո
չէ գտնուելու կրակարանից կո-
րիւն վեր առնելու և փոսից ջուր
15 հանելու համար։ Վասն զի այս-
պէս է ասում Եհովայ Տէրը՝ Իս-
րայէլի Աստուածը. դառնալով և
հանգարտ կենալով կ'փրկուէք,
հանգարտութեամբ և ապաւի-
նութեամբ կ'լինի ձեր զօրութիւ-
16 նը. բայց դուք չէք ուզում։ Եւ
ասում էք. Ոչ, այլ ձիով փախ-
չինք. դորա համար փախչելու
էք. Եւ արագընթացների վերայ
հեծնինք, դորա համար արագ-
ընթաց են լինելու ձեզ հալած-
17 ողները։ Ձեր մէկ հազարը մէկի
սպառնալիքի առջև՝ հինգի սպ-
սպառնալիքի առջև դուք պիտի
փախչէք, մինչև որ ձեր մնաք մի ձո-
ղի պէս լեռան գլխին, և մի դր-
18 բօշակի պէս բլուրի պտկին։ Եւ
դորա համար Տէրը սպասելու է
որ ձեզ ողորմէ և դորա համար
բարձրանալու է որ ձեզ գթայ.
վասն զի Տէրը իրաւունքի Աստ-
ուած է. երանի այն ամենին որ
նորան են սպասում։

19 Որովհետև մի ժողովուրդ պիտի
բնակէ Սիոնի վերայ Երուսաղէ-
մում, լաց էլ չես լինելու. Նա
քեզ պիտի ողորմէ ողողակիդ
ձայնովը. հէնց որ նա լսեց՝ քեզ
20 պատասխան է տալու։ Եւ Տէրը
ձեզ տալու է նեղութեան հաց
և տառապանաց ջուր, բայց քո
ուսուցիչները այլևս ետ չեն քաշ-
ուելու, և քո աչքերը շարունակ
տեսնելու են քո ուսուցիչներին։

Եւ քո ականջները լսելու են մի 21
խօսք քո հետևից որ ասէ. Սա է
ճանապարհը՝ սորանով գնացէք,
երբոր աջ կողմը պէտք է գնաք
և երբոր ձախ կողմը պէտք է գը-
նաք։ Այն ժամանակ դուք պիղծ 22
կ'համարէք դու քո արծաթի
կուռքերի ծածկոցները, և դու
քո ոսկու կռածոյների ձուլուած-
քը. դու գիրուցան կ'անես դուշ-
մանի շորի պէս, նորանից ասելու
է՝ Դուրս։ Եւ նա անձրև կ'տայ 23
սերմիդ, երբ սերմած սերմիդ, և երկ-
րի արդիւնքից՝ հաց. և առատ
ու պարարտ կ'լինի. այն օրը քո
խաշինքը ընդարձակ արօտում են
արածելու։ Եւ այն եզներն ու էշ- 24
երը, որ երկիրը կ'գործեն, պիտի
աղուած կերակուր ուտեն, թի-
ով և հոսելով մաքրուած։ Եւ 25
ամեն բարձր լեռան վերայ և ա-
մեն բարձրացած բլուրի վերայ
վտակներ՝ ջրերի առուներ են լի-
նելու մեծ կոտորածի օրը՝ աշտա-
րակները ընկնելիս։ Եւ լուսնի լոյ- 26
սը արեգակի լոյսին պէս կ'լինի և
արեգակի լոյսը եօթնապատիկ կը
լինի՝ եօթը օրուայ լոյսին չափ,
այն օրը որ Եհովան կ'կապէ իր
ժողովրդի կոտրածը և նորա հար-
ուածի խոցը կ'բժշկէ։

Ահա Տէրոջ անունը հեռուից 27
է գալիս. նորա բարկութիւնը
բորբոքած է և բոցը՝ առատիկ.
շրթունքները լիքն են բարկութիւ-
նով, և լեզուն մաշող կրակի
պէս է։ Եւ նորա հոգին յորդա- 28
հոս գետի պէս մինչև պարանոցն
է հասնում, որ շարժէ ազգերին
փուճ շարժումով, և մոլորու-
թեան սանձ դնէ ազգերի կզա-
կին։ Դուք երգ կ'ունենաք սուրբ 29
ածնի գիշերուան նման, և սրտի
ուրախութիւն սրինգով գնացողի
պէս, որ գնում է Տէրոջ լեռը
Իսրայէլի վէմի մօտ։ Եւ Տէրը 30
լսել է տալու իր ձայնի փառքը,
և իր բազուկի իջնելը ցոյց է տա-
լու սաստիկ բարկութիւնով և
լափող կրակի բոցով, հեղեղով,
փոթորկով և կարկտի քարերով։
Վասն զի Տէրոջ ձայնից զար- 31
հուրելու է Ասորեստանցին, որ

32 զարկուամ էր գաւազանով։ Եւ ա-
րոյշած գաւազանի ամէն հար-
ուածը, որ Տէրը իջեցնելու է նո-
րա վերայ, լինելու է թմբուկնե-
րով և քնարներով. և պատե-
րազմելու է նորա հետ պատե-
րազմներով շարժելով էր ձեռը։
33 Վասն զի վաղուց պատրաստ է
Տոփեթ, նաև թագաւորին հա-
մար է պատրաստ. նա խորաց-
րել լայնացրել է. նորա խարոյ-
կը շատ կրակ և փայտ ունի. Տի-
րոջ շունչը ծծումբի հեղեղի պէս
վառելու է նորան։

ԳԼ. ԼԱ

1 Վա՛յ նորանց, որ իջնում են Ե-
գիպտոս օգնութեան համար, և
ձիերի են ապաւինում և կառ-
քերի վստահում, որ շատ են.
և ձիաւորների, որ խիստ զօրա-
ւոր են. և չեն ապաւինում Իս-
րայէլի Սուրբին, և Տիրոջը չեն
2 խնդրում։ Բայց նա էլ է իմաս-
տուն, և չարիք է բերում, և իր
խօսքերը դէն չէ գցում. և վեր է
կենում չարերի տան վերայ և ա-
նօրէնութիւն գործողների օգնու-
3 թեան դէմ։ Եւ Եգիպտացիք մարդ
են. և ոչ թէ Աստուած, և նորանց
ձիանքը մարմին են և ոչ թէ հո-
գի. բայց Տէրը կ'մեկնէ իր ձեռքը,
կ'առնէ օգնողը ու վայր կ'ընկնէ
օգնուողը, և ամենքը միասին կը
4 փչանան։ Վասն զի այսպէս է
ասում ինձ Տէրը. Ինչպէս մռըն-
չում է առիւծը և կորիւնը իր
որսի համար, որի դէմ մէկտեղ
կ'կանչուին հովիւների մի մեծ
բազմութիւն, որ նորանց ձայնի-
ցը չի զարհուրիլ, և նորանց ա-
ղմուկից չի ընկճուիլ. նոյնպէս էլ
իջնելու է Զօրաց Տէրը պատե-
րազմելու՝ Սիոն լեռան և նորա
5 բլուրի համար։ Թռչնիկների պէս՝ ծածկելու է
Զօրաց Տէրը Երուսաղէմին, պաշտ-
պանելով և փրկելով, խնայելով,
և ազատելով։
6 Եա դարձէք դէպի նորան, ո-
րից Իսրայէլի որդիքը շատ խոր
7 ապստամբեցին։ Վասն զի այն

օրը պիտի ամէն մարդ ղղուէ իր
արծաթի կուռքերը և իր ոսկի
կուռքերը, որոնք ձեր ձեռքերը
շինեցին ձեզ համար մեզք։
Եւ վայր է ընկնելու Ասորեացին 8
ոչ թէ մարդու սրով, և մի սուր՝
որ մարդունը չէ՝ ուտելու է նո-
րան. և նա փախչելու է սուրի
առջևից, և նորա երիտասարդ-
ները հարկատու են լինելու։ Նո- 9
րա վէմը վախից պիտի անցնէ,
և նորա իշխանները պիտի զար-
հուրեն դրօշակից, ասում է
Տէրը, որի լոյսը Սիոնում է, և
որի հնոցը Երուսաղէմում։

ԳԼ. ԼԲ

Ահա արդարութեամբ է թա- 1
գաւորելու մի թագաւոր, և իշ-
խանները իրաւունքով են իշխե-
լու։ Եւ ամեն մէկը քամու դէմ 2
եղող պատսպարանի պէս, և փո-
թորկի դէմ եղող ծածկոցի պէս,
չոր տեղում եղող ջրերի վտակ-
ների նման, մեծ ապառաժի հո-
վանուն պէս պիտի լինի ծարաւ-
ուտ երկրում։ Եւ տեսանողների 3
աչքերը պիտի չշլանան, և լսող-
ների ականջները ուշադիր են լի-
նելու։ Եւ վատողների սիրտը 4
կ'հասկանայ գիտենալ, և թո-
թովախօսների լեզուն կ'շտապէ
պայծառ խօսել։ Այլև այս չեն կո- 5
չիլ տխմարին ազնուաբարոյ, և
նենգամիտին չեն ասիլ՝ Վսեմա- 6
շուք։ Վասն զի տխմարը տխմա-
րութիւն կ'խօսէ, և նորա սիրտը
անօրէնութիւն կ'գործէ. որ կեղ-
ծաւորութիւն անէ և Տիրոջ մա-
սին ծռութիւններ խօսէ, որ ա-
նօթի հոգին զրկէ հաչէց, և ծարա-
ւի խմելիքը պակասեցնէ։ Եւ նեն- 7
գամիտի հնարքները չար են, նա
նենգութիւններ է մտածում, որ
աղքատներին կորցնէ սուտ խօս-
քերով, թէև անտունը իրաւունք
քով էլ խօսէ։ Իսկ ազնուաբա- 8
րոյ մարդը ազնիւ բաներ է խոր-
հում. և ազնիւ բաների վերայ
կ'կանգնէ։
Ով վատահոգից կանայք, վեր 9
կացէք, ձայնս լսեցէք. ով ա-

պահով աղջկունք, իմ խօսքին
10 ականջ դրէք։ Օրէր կան տար-
ւոյ համար, որ պիտի դողաք,
ով ապահովներ, վասն զի այգե-
կութիւը փչացել է, և հունձքի
11 ժամանակ չէ գալու։ Ով վատա-
հողներ, դողացէք, սարսեցէք,
ով ապահովներ, հանուեցէք ու
մերկացէք, մէջքներիդ քուրձ
12 կապեցէք։ Ագալով խփում են
կուծքերին ցանկալի արտերի,
13 պտղաբեր որթի համար։ Իմ ժո-
ղովրդի երկրի վերայ փուշ ցախ
պիտի բուսանէ. նոյն իսկ ամեն
ուրախութեան տան վերայ ըն-
14 ուարճալի քաղաքումը։ Վասն
զի պալատը թողուած է, քա-
ղաքի ազմուկը ձգուած, Օփէլ
ու աշտարակը յաւիտեան քար-
այրների տեղ պիտի լինին ցիուե-
լի ղուարճութեան՝ խաշինքների
15 արօտ լինելու համար։ Մինչև որ
մեզ վերայ Հոգի թափուի վերևե-
ից, և անապատը պտղաբեր արտ
դառնայ, և պտղաբեր արտը ան-
16 տառ համարուի։ Եւ անապատ-
ումը կ'բնակէ իրաւունքը, և ար-
դարութիւնը պտղաբեր արտումը
17 կ'նստէ։ Եւ արդարութեան գոր-
ծը կ'լինի խաղաղութիւն, և ար-
դարութեան արդիւնքը՝ հանդիստ
ու ապահովութիւն յաւիտեան։
18 Եւ իմ ժողովուրդը կ'բնակէ խա-
ղաղաբար բնակարանումը, և ա-
պահով վրաններումը և անդորը
19 հանդչարաններումը։ Բայց կար-
կուտ է իջնելու անտառի վերայ,
և խիտ ցած ցածանալու է քա-
20 ղաքը։ Երանի՛ ձեզ որ ցանում
էք ամեն ջրերի մօտ, որ ոտքս
արձակում էք եզան և էշի ոտ-
քերը։

ԳԼ. Լ Գ

1 Վա՛յ քեզ, ով կործանող, որ
չկործանուեցար, և ով յափշ-
տակող, որ քեզ չյափշտակեցին.
երբոր վերջացնես կործանելը,
պիտի կործանուիս, երբոր դա-
դարես յափշտակելուց, քեզ պի-
տի յափշտակեն։
2 Ով Տէր, մեզ ողորմիր, քեզ
ենք յուսացել. նորանց բազուկը
եղիր ամեն առաւօտ, նաև մեր
փրկութիւնը՝ նեղութեան ժամա-
նակին։ Աղմուկի ձայնից փախչ- 3
ում են ժողովուրդները, քո բարձ-
րանալուցը ցրւում են ազգերը։
Եւ ձեր աւարը պիտի ժողով- 4
ուի ինչպես թրթուրն է ժողով-
ում, և մարտիկի ոստնելու պես
ոստոստելու են նորա վերայ։ Տէ- 5
րը բարձրացած է, վասն զի բարձ-
րուած է բնակում, լցրել է Սիօ-
նը իրաւունքով ու արդարու-
թիւնով։ Եւ քո ժամանակներին 6
հաստատութիւնը կ'լինի փրկու-
թեան առատութիւն, իմաստու-
թիւն և գիտութիւն. Տիրոջ ե-
կիւղը կ'լինի նորա գանձը։
Ահա նորանց քաջալուները 7
աղաղակում են դրսումը, խա-
ղաղութեան դեսպանները լաց են
լինում դառնապէս։ Ամլացել 8
են ճանապարհները, դադարել է
ճանապարհորդը, ուխտը քանդել
է, քաղաքները անարգել, մար-
դուս բանի տեղ չէ համարում։
Տրտմած սխրած է երկիրը, ամու- 9
չած է Լիբանանը՝ թառամած,
Սարօնը անապատի պէս է եղել,
և Բասան ու Կարմեղոս տերեւա-
թափ են լինում։ Հիմա վեր եմ 10
կենալու, ասում է Տէրը, հիմա
բարձրանալու եմ. հիմա վեր եմ
բարձրանալու։ Յղութով էք յղ- 11
ացել, մղեղ էք ծնելու, ձեր
շունչը կրակ է դառնալու ձեզ
ուտէ։ Եւ ժողովուրդները կիր 12
այրուելու պէս պիտի դառնան,
նորանք կտրուած փուշերի պէս
կրակով պիտի այրուին։ Ով հե- 13
ռաւորներ, լսեցէք ինչ որ արել
եմ, գիտացէք, ով մօտաւորներ,
իմ զօրութիւնը։ Սիօնում վա- 14
խեցած են մեղաւորները, դող է
բռնել կեղծաւորներին, մեզանից
ո՞վ է կարող բնակել լափող կր-
ակովմ, մեզանից ո՞վ է կարող
բնակել յաւիտենական բոցեր-
ումը, Արդարութեամբ վարուողը 15
և ուղղութիւն խօսողը, անիրա-
ւութեան շահը մերժողը, կա-
շառք բռնելուց ձեռքը թափ
տուողը, արիւնհեղութեան խօս-

լսելուց իր ականջը խփողը, և
չարութիւն տեսնելուց իր աչքե-
16 րը խփողը՝ Նա բարձրերուքը պի-
տի բնակէ, նորա քերդը վէմերի
ամրութիւններն են. նորա հացը
տրուած է, նորա ջուրերը ապա-
17 հով են։ Քո աչքերը տեսնելու են
թագաւորին իր գեղեցկութեան
մէջ, տեսնելու են լայնութեանց
18 երկիրը։ Քո սիրտը վախերի վե-
րայ է մտածելու. Ո՞ւր է գիրը,
ո՞ւր է կշռողը, ո՞ւր է աշտա-
19 րակներ համարողը։ Այն խիստ
ժողովրդին տեսնելու չես, այն
ժողովրդին որ անծանօթ և ան-
հասկնալի շրթունք ունէր, որ
թոթովախաս ու անհմանալի լե-
20 զու ունէր։ Նայէ Սիոնին, մեր
տօնախմբութեան քաղաքին, քո
աչքերը կ'տեսանեն Երուսաղէմը,
իբրև ապահով բնակարան՝ ան-
սասան վրան, որի ցիցերը յա-
ւիտեան չեն շարժուիլ, և որի
ամեն չուաններըը չեն կտրուիլ։
21 Այլ Տէրը փառաւոր պիտի լինի
մեզի տեղ համար, լայնատա-
րած գետերի՝ վտակներու տեղը,
ուր որ չի գնալ թիակարշ նա-
ւը, և մեծ նաւ մեզմով չի
22 անց կենալ։ Վասն զի մեր դա-
տաւորը Տէրն է, մեր օրէնսդիրը
Տէրն է, մեր թագաւորը Տէրն է,
նա է մեզ ազատողը։
23 Քո չուաններըը թուլացել են,
իրանց կայմի խարիսխը պինդ չը
բռնեցին, առագաստ չրացին,
այն ժամանակ մինչև անգամ մեծ
ասար բաժանուեցաւ, կաղերն
24 էլ կողոպուտ կողոպտեցին։ Եւ
չէ ասելու այն բնակիչը թէ
ակար եմ, այն ժողովուրդը որ
մեզմով բնակուած է անօրէնու-
թիւնը թողուած է։

ԳԼ. ԼԴ

1 Մօտեցէք, ով ազգեր, որ լը-
սէք, և ով ժողովուրդներ, որ
ուշ դնէք. լսիր, ով երկիր և
նորա լրութիւնը, ով աշխարհք
և նորա վերայ բոլոր ծնուածնե-
2 րը։ Վասն զի Տիրոջ բարկու-
թիւնը բոլոր ազգերի վերայ է,
և սրամտութիւնը՝ նորանց բոլոր
զօրքերի վերայ. Նա նորանց նը-
զովել է՝ սպանման է մատնել,
3 Եւ նորանց սպանուածները դէն
են գցուած, և նորանց դիակնե-
րուցը գարշահոտութիւն է բարձ-
րանում, և լեռները հալուած
4 են նորանց արիւնուցը։ Եւ հալ-
ուելու են երկնքի բոլոր զօրքերը,
և պիտի գալարուի երկինքը մա-
զաղաթի պէս, և նորա բոլոր
զօրքերը պիտի վայր ընկնեն, ինչ-
պէս որ տերևը թափուում է որ-
թից, և ինչպէս որ թզենին է
5 տերևաթափ լինում։ Վասն զի
իմ սուրս արբել է երկինքում.
ահա նա իջնում է Եդոմի վե-
րայ, և իմ նզոված ժողովրդի
6 վերայ դատաստանի համար։ Տի-
րոջ սուրը լիքն է արիւնով, ի-
զուռած ճարպով, գառների ու
նոխազների արիւնով, խոյերի ե-
րիկամունց ճարպով. վասն զի
Տիրոջ համար զոհ կայ Բոսրա-
յում, և մեծ մորթուածք Եդո-
7 մի երկրում։ Եւ նորանց պիտի
իջնեն գոմէշները, և զուարակ-
ները ցուլերի հետ. և նորանց եր-
կիրը պիտի արբենայ արիւնով, և
նորանց հողը ճարպով պարարտա-
նայ։ Վասն զի վրէժխնդրութեան
8 օրն է Տիրոջ համար, հատուց-
ման տարին է Սիոնի վէճի հա-
մար։ Եւ նորա գետերը պիտի
9 ձիւթի փոխուին, և նորա հողը
ծծումբի, և նորա երկիրը վառ-
ուած ձիւթ պիտի լինի։ Գիշեր
10 ու ցերեկ պիտի չհանգչէ, յա-
ւիտեան պիտի վեր ելնէ նորա
ծուխը, և զարէզգազ աւերակ
պիտի մնայ, յաւիտեան յաւի-
տենից նորանով անցնող պիտի
չինի։ Եւ նորան պիտի հաս-
11 նուանեն ու ոզնիները ժառան-
գեն, և քաջհաւն ու ագռաւը
պիտի բնակուին նորանում, և նո-
րա վերայ պիտի քաշուի դատար-
կութեան լարը, և ունայնու-
թեան քարերը։ Նորա ազնուա-
12 կանները այնտեղ թագաւորու-
թիւն չունին որ կանչեն. և նո-
րա բոլոր իշխանները պիտի ոչն-
չանան։ Եւ նորա պալատներէ
13

վերայ պիտի բուանեն փուշերը, և եղինճ ու ցախ՝ նորա պարիսպներուն վերայ. և պիտի լինի քաղաքներուն բնակարան և ջայլամներու գաւթի։ Եւ պիտի հանդիպին վայրենի կատուները բուներուն, և մի այծամորդ միւսին պիտի պատահէ, և գիշերային ճիւաղները այնտեղ պիտի հանգստանան, և անդէզ իրանց համար հանգիստ գտնեն։ Այնտեղ բոյն պիտի շինէ նետօձը, և ձու ածէ, և ջուտեր հանէ, և իր հովանուն պիտի խնամէ. նաև այնտեղ պիտի հաւաքուին ուրուրները ամէն մէկն իր ընկերի հետ։ Որոնեցէք Տիրոջ գրքուն և կարդացէք, սորանցից մէկ հատը չի պակսիլ, մէկն մեօտ իր ընկերը պակաս չէ լինելու, վասն զի նորա բերանն է հրամայել, և նորա Հոգին ինքն է ժողովելու նորանց։ Եւ Նա ինքը նորանց վերայ վիճակ է գցել. և նորա ձեռքը նորանց բաժանել է լարով. յաւիտեան պիտի ժառանգեն նորան. գարեդար պիտի բնակեն նորանում։

ԳԼ. ԼԵ

Ուրախանան անապատն ու չոր երկիրը, և ցնծայ ամային ու ծաղկէ շուշանի պէս։ Թող բացուի ծաղկէ և ցնծայ ցնծալով և բարձրաձայն երգելով, Լիբանանի փառքը պիտի նորան տրուի, Կարմելոսի և Սարօնի վայելչութիւնը, նորանք պիտի տեսանեն Տիրոջ փառքը, մեր Աստուծոյ վայելչութիւնը։

Ուժովցրէք թուլացած ձեռքերը, և դողդոջուն ծունկերը զօրացրէք։ Ասացէք թուլասիրտներին, ուժովացէք, մի վախենաք, ահա ձեր Աստուածը գալիս վրէժ առնելու, Աստուծոյ հատուցումով է գալիս նա և ձեզ փրկելու է։ Այն ժամանակ բացուելու են կոյրերի աչքերը, և խուլերի ականջները պիտի բացուին։ Այն ժամանակ լոք է տալու կաղը եղջերուի պէս. և օրհներգելու է համրի լեզուն. վասն զի անապատումը ջուրեր են բղխելու և առուներ՝ անմայր տեղումը։ Եւ խորշակահար երկիրը լիճի պիտի փոխուի, և ծարաւատը՝ ջրերի աղբիւրների. Զաղջուկի բնակած բնակարանումը խոտ է բուսանում՝ եղէգ և կնիւն։ Եւ այնտեղ պողտայ և ճանապարհ է լինելու, և նորան սուրբ ճանապարհ է տաուելու. նորա վերայ պիղծը պիտի չանցնի. նա նորանցն է. ճանապարհը գնացողը և տկարամիտներն էլ չեն մոլորուիլ։ Այնտեղ առիւծ չի լինիլ և գիշատիչ գազան չի գալ նորա վերայ, և այնտեղ չի գտնուիլ. և փրկուածները մեն կ'գան։ Եւ Տիրոջ փրկեալները կու պիտի դառնան, և գան Սիոն բարձրաձայն երգերով, և նորանց գլխին յաւիտենական ուրախութիւն, ուրախութեան ու ցնծութեան են հասնելու նորանք. և տրտմութիւնն ու հեծութիւնը փախչելու է։

ԳԼ. ԼԶ

Եւ եղաւ որ Եզեկիա թագաւորի չորեքտասաներորդ տարին վեր եկաւ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքների վերայ և առաւ նորանց։ Եւ Ասորեստանի թագաւորը ուղարկեց Րաբսակին Լաքիսից Երուսաղէմ Եզեկիա թագաւորի մօտ շատ զօրքով, և նա կանգնեց Թափչի ագարակի ճանապարհին լինող վերի աւազանի ջրմուղի վերայ։ Եւ նորանց մօտ դուրս եկան Փեղկիայի որդին Եղիակիմ, պալատի վերակացուն և Սերնա առենադպիրը, և յիշատակաց գպիր Ասափի որդին Յովաքը։

Եւ Րաբսակն ասաց նորանց. Ասացէք Եզեկիային. Այսպէս է ասում մեծ թագաւորը՝ Ասորեստանի թագաւորը. Ի՞նչ է այդ յոյսը, որի վերայ դու ապաւինել ես։ Ես ասում եմ, Ըե Մի- այն շրթունքի խօսքեր են դորանք՝

Ե՛ խորհուրդ ու զօրութիւն՝ հնդ պատերազմի համար. հիմա ո՞վ ապաւինեցիր որ ինձանից ապրատամբեցիր։ Ահա դու ապաւինել ես այն ջախջախած եղէգի ցուպին՝ եգիպտոսին, որ եթէ մէկ մարդ նորա վերայ կռնէ, ձեռքը պիտի մտնէ և նորան ծակէ. այսպէս է եգիպտոսի փարաւոն թագաւորը բոլոր իրան ապաւինողների համար։ Բայց եթէ ինձ ասես. Թէ Մենք մեր Եհովայ Աստուծոյն ենք ապաւինել. մի՞թէ դա այն չէ, որի բարձրաւանդակները և սեղանները Եզեկիան վերցրեց և Յուդային ու Երուսաղէմին ասաց. Մէյն այս սեղանի առջև երկրպագութիւն արէք։ Արդ ուրեմն մրցիր իմ տիրոջ Ասորեստանի թագաւորի հետ, և ես քեզ երկու հազար ձի տամ, եթէ դու կարող ես նորանից վերայ հեծնողներ դնել։ Ապա ի՞նչպէս ես կարող դէմ դնել իմ տիրոջ փոքրիկ ծառաներից մէկ կուսակալին, որ դու կառքերի և ձիերի համար Եգիպտոսին ես ապաւինում։ Եւ հիմա առանց Եհովայի եմ եկել արդեօք այս երկրի վերայ նորան աւերելու համար. Եհովան ինձ ասաց. Գնա այն երկրի վերայ և նորան աւերիր։

Եւ Եղիակիմն ու Սերնան և Յովաքն ասացին Րաբսակին. Խնդրում ենք ծառաներիդ հետ *Ասորերէն խօսիր, վասն զի մենք հասկանում ենք, և մի խօսիր դէպի մեզ Երուսաղէմի պարսպի վերայ եղող ժողովրդի ականջները։ Եւ Րաբսակն ասաց. Մի՞թէ քո տիրոջ և քեզ մեռ ուղարկել ինձ իմ աէրը այս խօսքերը խօսելու. չէ՞ որ այս մարդկանց համար որոնք պարսպի վերայ նստած են ձեզ հետ իրանց աղբն ուտելու և իրանց մեզը խմելու։

Եւ Րաբսակը կանգնեց և մեծ ձայնով աղաղակեց Երուսաղէմի և ասաց. Լսեցէք մեծ թագաւորի Ասորեստանի թագաւորի խօսքը. Թագաւորը այսպէս է ասում. Եզեկիան ձեզ չխաբէ, վասն զի նա կարող չէ ձեզ ազատել։ Եւ Եզեկիան ձեզ Եհովային չյուսացնէ ասելով. Եհովան մեզ անպատճառ ազատելու է, և այս քաղաքը պիտի չտրուի Ասորեստանի թագաւորի ձեռքը։ Եզեկիային մի լսէք, վասն զի Ասորեստանի թագաւորը այսպէս է ասում. Ինձ հետ հաշտութիւն արէք, և դուրս եկէք ինձ մօտ, և ամեն մարդ իր որթիցը և ամեն մարդ իր թզենուցն ուտէ, և ամեն մարդ իր ջրհորի ջրիցը խըմէ։ Մինչև որ ես գամ և ձեզ տանեմ ձեր երկրի պէս մի երկիր՝ ցորենի ու գինու երկիր, հացի ու այգիների երկիր։ Մի գուցե Եզեկիան ձեզ խաբէ ասելով. Թէ Եհովան մեզ ազատելու է։ Մի՞թէ փրկեցին այն ազգերի աստուածները՝ ամեն մէկն իր երկիրը Ասորեստանի թագաւորի ձեռքից։ Ո՞ւր են Եմաթի և Արփադի աստուածները. ո՞ւր են Սեփարուիմի աստուածները, որ ազատէին Սամարիան իմ ձեռքից։ Ո՞րն է այս երկիրների բոլոր աստուածներիցը, որ ազատած լինին իրանց երկիրը իմ ձեռքից, որ Եհովան էլ ազատէր Երուսաղէմն իմ ձեռքից։ Եւ նորանք լռեցին և նորանք պատասխան չտուին, որովհետև թագաւորը հրաման էր արել ասելով. Նորան չպատասխանէք։

Եւ Քեղկիայի որդի Եղիակիմ պալատի վերակացուն և Սեբնա ատենադպիրը և Ասափի որդին Յովաք յիշատակաց դպիրը գնացին հանդարձները պատռտելով Եզեկիայի մօտ և նորան պատմեցին Րաբսակի խօսքերը։

Գ.Լ. ԼԷ

Եւ եղաւ երբոր Եզեկիա թագաւորը լսեց, պատռտեց իր հանդերձները և քուրձ հագաւ ու գնաց Տիրոջ տունը։ Եւ պալատի վերակացու Եղիակիմին և ա-

*Բաղդեարէն.

տեղապիկը Ակրնայեն և քահանաներն ծերերին քուրձեր հագած ուղարկեց Ամոսի որդի Եսայիա մարգարէի մօտ։ Եւ նորանք ասացին նորան. Այսպէս է ասում Եզեկիան. Նեղութեան և կշտամբանաց ու նախատանաց օր է, վասն զի երեխաները հասել են ծննդեան կէտին, բայց ոյժ չկայ ծնելու։ Թերևս լսէ քո Աստուածը Ռափսակի խօսքերը, որին իր տէրը՝ Ասորեստանի թագաւորն ուղարկեց կենդանի Աստուածն նախատելու և այնպիսի խօսքերով կշտամբելու, որոնք լսել է քո Տէր Աստուածը. ուրեմն աղօթք արա գտնուող մնացորդի համար։ Եւ Եզեկիա թագաւորի ծառաները եկան Եսայիայի մօտ։ Եւ Եսայիան ասաց նորանց. Այսպէս ասացէք ձեր տիրոջը, Տէրը այսպէս է ասում. Մի վախիր այն խօսքերից, որ լսեցիր որով հայհոյեցին ինձ Ասորեստանի թագաւորի ծառաները։ Ահա ես նորա վերայ մի ոգի կ'ուղարկեմ, և նա մի լուր կ'լսէ և ետ կ'դառնայ իր երկիրը, և սրով կ'ընկնէ իր երկրումը։ Եւ Ռափսակը ետ դարձաւ և գտաւ Ասորեստանի թագաւորին Լիբնայի հետ պատերազմելիս, վասն զի լսել էր թէ չուել էր Լաքիսից։ Եւ նա լսել էր Եթովպացոց թագաւոր Թարակայի մասին ասելով. Ահա գալիս է քեզ հետ պատերազմելու. և դեսպաններ ուղարկեց Եզեկիայի մօտ ասելով. Այսպէս ասացէք Եզեկիային՝ Յուդայի թագաւորին ասելով. Թէ Թող քո Աստուածը քեզ չխաբէ, որին դու ապաւինել ես ասելով. Երուսաղէմը պիտի չտրուի Ասորեստանի թագաւորի ձեռքը։ Ահա դու լսեցիր, թէ ինչ են արել Ասորեստանի թագաւորները բոլոր երկիրներին՝ նորանց բնաջինջ անելով. և դո՞ւ կ'ազատուիս։ Մի՞թէ ազգերի աստուածները ազատեցին նորանց, որոնց փչացրին իմ հայրերը՝ Գոզանը, Խառանը, Ռեսեփը և Թելասարում եղող Եդեմի որդիները։ Ո՞ւր է Եմաթի թագաւորը, Արփադի թագաւորը, Սեփարուիմ քաղաքի Անայի և Աւայի թագաւորը։

Եւ Եզեկիան առաւ նամակները դեսպանների ձեռից և կարդաց նորան, և վեր գնաց Տիրոջ տունը և Եզեկիան տարածեց նորանց Տիրոջ առջև։ Եւ Եզեկիան աղաչեց Տիրոջը՝ ասելով. Ով Տէր Զօրաց՝ Իսրայէլի Աստուածը, որ նստած ես քերովբէների վերայ, դու ես միայն Աստուածը երկրի բոլոր թագաւորութիւնների համար, դու ես ստեղծել երկինքն ու երկիրը։ Խոնարհեցրու, Տէր, քո ականջը և լսիր. բաց, ով Տէր, քո աչքերը և տես. և լսիր Սենեքերիմի բոլոր խօսքերը, որ ուղարկեց կենդանի Աստուծոյն նախատելու։ Արդարև, ով Տէր, աւերել են Ասորեստանի թագաւորները բոլոր երկիրներն և նորանց երկիրը. Եւ նորանք այրել են նորանց աստուածները կրակով, վասն զի նորանք աստուածներ չէին, այլ մարդու ձեռքի գործ՝ փայտ ու քար. ուրեմն նորանց փչացրին էլ։ Բայց արդ, ով Տէր մեր Աստուած, մեզ ազատիր նորա ձեռքից, որ երկրի ամեն թագաւորութիւնները իմանան, որ միայն դու կաս Եհովայ։

Եւ Ամոսի որդին Եսայիան մարդ ուղարկեց Եզեկիայի մօտ ասելով. Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. որ աղաչեցիր ինձ Ասորեստանի թագաւորի մասին, Սա է այն խօսքը որ Տէրն ասում է նորա մասին. Քեզ անարգեց, քեզ ծաղրեց Սիոնի կոյս աղջիկը. քո ետևից գլուխը շարժեց Երուսաղէմի աղջիկը։ Ո՞ւմ նախատեցիր և հայհոյեցիր, և ո՞ւմ վերայ ձայն բարձրացրիր. և աչքերդ վեր հանեցիր Իսրայէլի Սուրբի վերայ։ Քո ծառաների ձեռքով նախատեցիր Տիրոջը և ասացիր. Իմ կառքերի շատութիւնով վեր եմ լեռան բարձրութեան վերայ, Լիբանանու կողմերը. և կտրում

եմ նորա բարձր եղևիններըե, և նորա ընտիր մայրերը. և մտնում եմ նորա ծայրի վերևը, նորա
23 կարմելոսի անտառը: Ես փորեցի և ջուր խմեցի, և իմ ոտքերի թաթերովը կ'չորացնեմ Եգիպտոսի բոլոր գետերը:
26 Մի՞թե չես լսել որ ես եմ վաղուց արել այդ, և հին օրերից դորան ձևակերպել. հիմա բերի այդ, որ ամրակների հողակոյտների դարձնես պարսպատոր քա-
27 ղաքները: Եւ նորանց բնակիչները՝ ձեռքը կարճացած, զարհուրեցին և ամաչեցին և եղան դաշտի խոտ և կանաչ բանջար և կատուրի խոտ, և մի որտ հասկը
28 քշելուց առաջ: Բայց ես գիտեմ քո բնակութիւնը, քո ելքն ու քո մուտքը, և քո բարկութիւնը
29 ինձ դէմ: Քո ինձ դէմ ունեցած բարկութեան համար, և որովհետև քո ամբարտաւանութիւնը հասել է իմ ականջներին, ես էլ դնում եմ իմ կարթը քո քթին, և իմ սանձը քո բերնին, և քեզ ետ եմ դարձնում քո եկած ճանապարհովը:
30 Եւ —Ս— սա քեզ նշան. կերէք այս տարի թափուածից բուսածը, և երկրորդ տարին ինքնիրանից բուսածը, իսկ երրորդ տարին սերմեցէք ու հնձեցէք, և այգիներ անկեցէք ու նորանց պտուղը
31 կերէք: Եւ Յուդայի տան պատուած ճնացորդը կրկին արմատ կ'արձակէ դէպի ցած, և պտուղ
32 կ'տայ վերևումը: Վասն զի Երուսաղէմից դուրս կ'գայ ճնացորդ, և փրկուածներ՝ Սիոն լեռնից. սա Զօրաց Տէրոջ նախանձն է անելու:
33 Սորա համար այսպէս է ասում Տէրը Ասորեստանի թագաւորի մասին. Նա այս քաղաքը չի մտնել, և մի նետ չի գցել այստեղ, և նորա առաջը չի գալ վահանով, և նորա դէմ պատնէշ պի-
34 տի չկանգնեցնէ: Իր եկած ճանապարհովը ետ պիտի դառնայ, և այս քաղաքը չի մտնել, ասում
35 է Տէրը: Եւ ես պիտի պաշտպանեմ այդ քաղաքը, որ ազատեմ

դորան, ինձ համար և իմ ծառայ Դաւթի համար:
Եւ Տէրոջ հրեշտակը դուրս ե- 36
կաւ և զարկեց Ասորեստացոց բանակում հարիւր ութսուն և հինգ հազար. և երբոր առաւօտը վեր կացան, և ահա բոլորը մեռած դիակներ էին: Եւ Աս- 37
որեստանի Սենեքերիմ թագաւորը չուեց գնաց դարձեալ և նստեց Նինուէում: Եւ երբոր նա երկր- 38
պագում էր իր աստուծոյն Նեսրոքի տանը, նորա որդիքը Ադրամելէքը և Սարասարը սպանեցին նորան սրով և իրանք փախան Արարատի երկիրը: Եւ նորա որդին Ասարդանը թագաւոր եղաւ նորա տեղ:

ԳԼ· ԼՐ

Այն օրերը Հիւանդացաւ Եզե- 1
կիան մերձ՝ ի մահ, և Ամովսի որդի Եսայիա մարգարէն եկաւ նորա մօտ և նորան ասաց. Այսպէս է ասում Տէրը. կտակդ արա քո տան մասին, վասն զի դու պիտի մեռնես և չապրես:
Եւ Եզեկիան իր երեսը դարձրեց 2
դէպի պատը և աղօթք արաւ Տիրոջ, Եւ ասաց. Աղաչեմ, Տէր, 3
յիշիր որ քո առջեւդ գնացի հաւատարմութեամբ և կատարեալ սրտով և քո աչքերին հաճելի եղածն արի: Եւ Եզեկիան մեծ լացով լացաւ:
Եւ Տիրոջ խօսքը եղաւ Եսա- 4
յիային ասելով. Գնա և ասիր 5
Եզեկիային. Թէ Այսպէս է ասում Տէրը քո հօր Դաւթի Աստուածը. Լսեցի քո աղօթքը, տեսայ քո արտասուքը. ահա ես պիտի աւելացնեմ քո օրերի վերայ տասնևհինգ տարի: Եւ քեզ 6
պիտի ազատեմ Ասորեստանի թագաւորի ձեռքիցը, և այս քաղաքը պիտի պաշտպանեմ: Եւ 7
սա քեզ նշան լինի Տիրոջից որ Տէրը անելու է այս բանը, որ ասել է. Ահա ես ետ պիտի 8
դարձնեմ աստիճանների աստեղը, որ իջել է Աքազի արևի ժամացոյցի աստիճաններովը, տասը

աստիճան ։ Եւ արեւը ետ դարձաւ տասը աստիճան այն ճեմած աստիճաններովը ։

9 Յուդայի թագաւոր Եզեկիայի գրուածքը՝ երբոր հիւանդացաւ և հիւանդութենէն առողջացաւ ։

10 Ես ասացի. Իմ օրերուն հանգիստ ժամանակին պիտի գնամ այն աշխարհքին դուռները, պիտի զրկուիմ իմ տարիներուն մնացորդը ։

11 Ասացի. Տէրոջը չեմ տեսնելու՝ Տէրոջիցը՝ կենդանեաց երկրումը. մարդու չեմ նայելու այլ ևս հանգերձեալի բնակչացը հետ

12 միասին ։ Իմ *շրջանը չուաւ է, և փախարկուած է ինձանից հովիւի վրանի նման. կտրեցի իմ կեանքը ոստայնակի պէս. նա ինձ կտրեց առէշիցը. ցերեկից մինչև

13 գիշերը ինձ կ'վերջացնես ։ Սպասեցի մինչև առաւօտը, ինչպէս առիւծը՝ այնպէս կոտրատած է իմ բոլոր ոսկորներս. ցերեկից մինչև գիշերը ինձ կ'վերջացնես ։

14 Կառնկի պէս ճիճեռնակի պէս ճլճլուած էի, ճնչուած էի աղաւնու պէս, աչքերս նուաղած էին դէպի վեր. ով Տէր, տագնապ ունիմ, օգնիր ինձ ։

15 Ինչ ասեմ, որ նա ինձ ասաց և նա էլ արաւ. կամաց պիտի գնամ իմ բոլոր տարիներուս իմ

16 հոգու ցաւի համար ։ Ով Տէր, նորանցով ապրած են նորանք. և նորանց բոլորն ի մէջ է իմ հոգու կեանքը, և դու ինձ բժշկեցիր

17 և ապրեցրիր ։ Ահա խաղաղութեան համար դառնութիւն եղաւ ինձ՝ դառնութիւն, բայց դու սիրեցիր իմ անձը ոչնչանալու գուբից հաներ, վասն զի բոլոր մեղքերս մէջքիդ ետևը դրեցիր ։

18 Որովհետև ոչն աշխարհքը քեզ չի գովիլ, մահը քեզ չի օրհնաբանիլ, չեն յուսալ քո ճշմարտութենանը գուբն իջնողները ։

19 Ապրողը՝ ապրողն է քեզ օրհնելու, ինչպէս ես այսօր. հայրը որդկանցը պիտի իմացնէ

20 քո ճշմարտութիւնը ։ Տէրը պատրաստ է ինձ օգնելու. ուրեմն

*բնակարան

լարուած նուագարաններովս նուագելնք, մեր կենաց բոլոր օրերումը Տէրոջ տան մէջ ։

21 Եւ Եսայիան ասել էր որ՝ Զոր թուզեր առնեն և ապեղանի շինեն վէրքին վերայ և կ'առողջանայ ։ 22 Եւ Եզեկիան ասել էր. Ինչ է այն նշանը թէ Տէրոջ տունն եմ վեր գնալու ։

Գլ. ԼԹ

1 Ան ժամանակը Բաղադանի որդի Մարովդաք-բողդան Բաբելոնի թագաւորը նամակներ և ընծայ ուղարկեց Եզեկիային, որ լսել էր թէ հիւանդ էր և առողջացել է ։ 2 Եւ Եզեկիան ուրախացաւ նորանց վերայ, և ցոյց տուաւ նորանց իր գանձերի տունը՝ արծաթը և ոսկին և խնկերէնները և պատուական իւղը և իր զէնքերի բոլոր տունը և ամեն ինչ որ գտնուում էր նորա գանձարաններումը. մէկ բան չկար որ Եզեկիան ցոյց տուած չլիներ նորանց իր տանը և իր բոլոր թագաւորութիւնումը ։

3 Եւ Եսայիա մարգարէն եկաւ Եզեկիա թագաւորի մօտ և ասաց նորան. Ինչ են ասում այս մարդիկը, և ո՞րտեղից են եկել քեզ մօտ ։ Եւ Եզեկիան ասաց. Հեռու երկրից՝ Բաբելոնից են եկել ինձ մօտ ։ 4 Եւ նա ասաց. Ինչ տեսան քո տանը ։ Եւ Եզեկիան ասաց. Ամեն ինչ որ կայ տանս մէջ տեսան. մի բան չկայ որ ցոյց տուած չլինիմ նորանց իմ գանձարանումը ։ 5 Եւ Եսայիան ասաց Եզեկիային. Լսիր Զօրաց Տէրոջ խօսքը ։ 6 Ահա օրեր կ'գան որ ամեն ինչ որ կայ քո տանը և ինչ որ գանձեցին քո հայրերը մինչև այսօր պիտի տարուին Բաբելոն. մէկ բան պիտի չմնայ ասում է Տէրը ։ 7 Եւ քո որդիներից որոնք քեզանից յառաջ կը գան, որոնց դու կ'ծնուես, կ'առնեն, և նորանք նեղբինիներ պիտի դառնան Բաբելոնի թագաւորի պալատումը ։ 8 Եւ Եզեկիան Եսայիային ասաց. Տէրոջ խօսքը՝ որ

դու ասացիր, բարի է. և ասաց. Որովհետև իմ օրհրուժս խաղաղութիւն և ապահովութիւն պիտի լինի։

ԳԼ. Խ

1 Ախիթաբեցէք, ախիթաբեցէք իմ ժողովրդին, ասում է ձեր
2 Աստուածը. Երուսաղէմի հետ սիրտը առնելով խօսեցէք. և կանչեցէք նորան թէ նորա ստապանքը վերջացել է, թէ նորա անօրէնութիւնը թողուեցաւ. վասն զի առացել է Տիրոջ ձեռքից կրկնապատիկ հ-պ-ց-մ իր բոլոր մեղքերի համար։
3 Անապատի մէջ կանչողի ձայնը, պատրաստեցէք Տիրոջ ճանապարհը, և ուղիղ արէք ամայութեան մէջ շաւիղը մեր Աստուծոյ համար։
4 Ամեն ձոր բարձրանայ, և ամեն լեառ ու բլուր ցածանայ, և ծուռը ուղիղ դառնայ, և խորտուբորտ տեղերը
5 հարթավայրակ։ Եւ պիտի յայտնուի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսանեն. վասն զի Տիրոջ բերանն է խօսել։
6 Մէկ ձայն ասում է. կանչիր. և նա ասաց. Ի՞նչ կանչեմ. -յ- Ե ամեն մարմին խոտ է, և նորա բոլոր վայելչութիւնը դաշտի
7 ծաղկին պէս։ Խոտը չորանում է՝ ծաղիկը թառամում, որովհետև Աստուծոյ ոգին փչեց նորա վերայ, իրաւ ժողովուրդը խոտ
8 է։ Խոտը կ՚չորանայ, ծաղիկը կը թառամէ, բայց մեր Աստուծոյ խօսքը կ՚մնայ յաւիտեան։
9 Բարձր լեառն վերայ ելիր, ով Սիոնի աւետարերը, ձայնդ ուժով բարձրացրու, մի վախենար ասիր Յուդայի քաղաքներին. Ա-
10 հա ձեր Աստուածը։ Ահա Եհովայ Տէրը զօրութեամբ կ՚գայ, և նորա բազուկը կ՚իշխէ նորա համար. ահա իր վարձքն իր հետ է և իր հատուցումը՝ իր առջև։
11 Հովիւի նման հօտերը է նա իր հօտին, իր բազուկի վերայ է ժողովելու գառնիկներին, և իր գրկումը կրելու նրանց, և ծիծ տուողներին կամաց քշելու։

Ո՞վ չափեց ջուրերը իր ափ- 12
ովը, և երկինքը թիզովը կարգապրեց, և ամփոփեց եռամսանում երկրի հողը. և կշռեց կշռարդով լեառները և բլուրները՝ կշիռքով։
Ո՞վ քննեց Տիրոջ Հոգին, և իբ- 13
րև նորա խորհրդական նորան հասկացրե՞ց։ Ումի՞ց խորհուրդ 14
հարցրեց, որ նորան իմացնէր, և նորան սովորեցնէր իրաւունքի ճանապարհը, և նորան սովորեցնէր գիտութիւն, և իմաստութեան ճանապարհը նորան գիտեցնէր։
Ահա ազգերը դոյլին կաթ- 15
ի պէս են, և կշիռքի փոշին հաւասար են համարվում, ահա կղզիները վեր խաղացող ճանճոտի պէս են։ Եւ Լիբա- 16
նոնը չէ բաւական կրակի համար, և նորա անասուններըը ողջակէզի համար բաւական չեն։ Բոլոր ազ- 17
գերը նորա առջև ոչնչի պէս են. ոչնչից էլ պակաս են և ունայնութիւն են համարվում նորա համար։
Ումի՞ հետ 18
Աստուծոյն, և ի՞նչ նմանութիւն հաւասարացնում նորան։ Կուռ- 19
քը արուեստաւորն է ձուլում, և ոսկերիչը ոսկով պատում նորան, և արծաթի շղթաներ ձուլում։
Ընծաներ տալու անկարողը ան- 20
փուտ փայտ է ընտրում, իր համար մի ճարտար արուեստաւոր է որոնում, որ մի անշարժ կուռք շինէ։ Մի՞թէ չգիտէք, մի՞թէ չը 21
լսեցիք, մի՞թէ չպատմուեցաւ ձեզ առաջուց. մի՞թէ չէք հասկացել երկրի հիմնադրութիւնից։
Նա է երկրի շրջանի վերայ նստո- 22
ղը, որի բնակիչները մորեխների պէս են, նա է որ երկինքը տարածում է վարագոյրի պէս, և նորանց սփռել է վրանի պէս բնակելու համար։ Նա է իշխաննե- 23
րին ոչինչ շինողը, որ երկրի դատաւորներին ոչնչի պէս է անում։
Նորանք հազիւ թէ տնկվում են, 24
հազիւ թէ ցանվում են, հազիւ թէ նորանց բունը արմատանում է երկրում, և նա փչում է նորանց վերայ և նորանք չորանում են, և փոթորիկը նորանց կրում

23 է մղեղի պէս։ Ուրեմն ո՞ւմ էք
ինձ նմանեցնում, որ ես նման
26 լինիմ, ասում է Սուրբը։ Վեր
բարձրացրէք ձեր աչքերը և նա-
յեցէք, ո՞վ է ստեղծել սորանց.
նորանց զօրքերը թուով հանողը,
որ նորանց ամենին կանչում է
անունովը, մեծ իշխանութեամբը
և՝ սաստիկ զօրութեամբը. մէկը չի
կորչիլ։
27 Ինչո՞ւ համար ասում ես, ով
Յակոբ, և ընչո՞ւ ես խօսում, ով
Իսրայէլ, թէ իմ ճանապարհը
ծածկուած է Տիրոջից, և իմ
Աստուածանից զանց է եղած իմ
28 իրաւունքը։ Մի՞թէ չգիտես,
կամ չես լսել, որ յաւիտենա-
կան Աստուած է Եհովան, երկ-
րի ծայրերի ստեղծողը. նա չի
յոգնիլ, և չի վաստակիլ. նորա
29 հանճարը անքննելի է։ Նա է
յոգնածին այժ տուողը. և կա-
րողութիւն չունեցողին զօրու-
30 թիւն նա է շատեցնում։ Եւ երի-
տասարդները կ'յոգնեն և կ'վաս-
տակեն, և ընտիրները թուլա-
31 թիւնով կ'թուլանան, Բայց Տի-
րոջը ապաւինողները կ'նորոգուին
ոյժով, թևերով վեր կ'ելանեն
արծիւների պէս, կ'վազեն և չեն
վաստակիլ, կ'գնան և չեն յոգնիլ։

ԳԼ. ԽԱ

1 Լռեցէք ինձ մօտ, ով կղզիներ,
և՝ ով ազգեր, նորոգուեցէք ոյ-
ժով, թող մօտենան, այն ժա-
մանակ խօսեն. միասին մօտ գանք
2 դատաստանի։ Ո՞վ զարթեցրեց
արևելքից նրան, որին կոչում են
արդարութիւն՝ իր շաւիղում։
Նա ազգերը գցում է նորա առջե-
ւը, և նա թագաւորներ է նուա-
ճում, փոշու պէս դնում է նորա
թուրի առջևը, և քշուած մղեղի
3 պէս՝ նորա աղեղի առջևը։ Նա
նորանց հալածում է, անցնում
է խաղաղութեամբ, ի ճանա-
պարհով, ուր որ նա —— չէր
4 գնացած իր ոտքովը։ Ո՞վ գոր-
ծեց և արաւ այս, ազգերը՝ի ըս-
կզբանէ կանչող՝ ես Եհովաս որ
առաջինն եմ, և վերջիններին հետ
էլ ես եմ։

Կղզիները տեսան և վախեցան,
երկրի ծայրերը դողացին, նորանք
մօտեցան և եկան։ Նորանց ամեն
մէկն օգնեց էր ընկերին, և իր
եղբօրն ասաց. Զօրացիր։ Եւ քա-
ջալերեց արուեստաւորը ոսկեր-
չին, ուր հարկանողը սալին զար-
կողին՝ ասելով. Կպցնելու համար
լաւ է դա, և նորան պնդացնում
է մանրներով, որ չերերայ։
Եւ դու Իսրայէլ, իմ ծառայ, 8
ով Յակոբ, որ քեզ ընտրել եմ,
իմ սիրելիի՝ Աբրահամի սերունդը. Որ քեզ առի երկրի ծայրե- 9
րից, և քեզ կանչեցի նորա ե-
զերքներից, և քեզ ասացի. Դու
իմ ծառան ես. քեզ եմ ընտ-
րել, և քեզ չեմ մերժել։ Մի 10
վախենար, վասն զի ես քեզ հետ
եմ, մի վեհերիր, վասն զի ես քո
Աստուածն եմ. ես զօրացրել եմ
քեզ, նաև օգնել եմ քեզ. նաև
քեզ հաստատել եմ իմ արդա-
րութեան աջովը։ Ահա պիտի ա- 11
մաչեն և ամօթահար լինին բոլոր
քեզ դէմ բորբոքողները. ոչնչի
պէս պիտի դառնան և փչանան
քեզ հետ վիճող մարդիկը։ Դու 12
նորանց կ'որոնես, բայց չես գըտ-
նիլ. այն քեզ հետ կռիւ անող
մարդկանցը. ոչնչի պէս պիտի
դառնան և չիք լինին քեզ հետ
պատերազմող մարդիկը։ Վասն 13
զի ես Եհովան՝ քո Աստուածը
զօրացնում եմ քո աջը. որ ա-
ւում եմ քեզ, Մի վախենար, ես
կ'օգնեմ քեզ։ Մի վախենար, ով 14
որդն Յակոբ, ով Իսրայէլի խըմ-
բիկը, ես քեզ օգնելու եմ, ա-
ւում է Եհովան, և քեզ փրկո-
ղը Իսրայէլի Սուրբն է։ Ահա ես 15
քեզ մի սուր, նոր, ատամնաւոր
կոմնասայլ եմ շինել. լեռները
պիտի ոռնոհար անես և փշրես,
և բլուրները մղեղի պէս անես։
Դու նորանց պիտի հոսես և քա- 16
մին տանէ նորանց, և փոթորիկը
ցիրուցան անէ նորանց. բայց դու
Տէրոջով պիտի ցնծաս, և Իսրա-
յէլի Սուրբովը պիտի պարծենաս։
Աղքատներն ու անօթիները ջուր 17
են որոնում. և չկայ, նորանց լե-
զուն ծարաւից չորացել է. ես

Եհովա նորանց պատասխան եմ տալու, Իսրայէլի Աստուածս
18 նորանց չեմ ձգել։ Բլրագագաթներուն վերայ գետեր պիտի բանամ, և հովիտներուն մէջ աղբիւրներ. անապատը պիտի ջրի լիճի դարձնեմ, և չոր երկիրը՝ ջուր բղխելու
19 տեղեր։ Անապատումը եղևին պիտի դնեմ, սատիմ, մրտենի և իւղենի ծառ. ամայի տեղումը պիտի տնկեմ մայրի, սոսի ու սոսխ միասին։
20 Որպէս զի տեսանեն և գիտենան, և մտածեն ու հասկնան միասին, թէ Տիրոջ ձեռքն արաւ այս բանը, և Իսրայէլի Սուրբը ստեղծեց զորան։
21 Մօտ բերէք ձեր դատը, ատաւմ է Տէրը, յառաջ բերէք ձեր փաստերը, ատաւմ է Յակոբի Թագաւորը։
22 Յառաջ գան և մեզ իմացնեն, թէ ինչ պիտի պատահի. սկիզբը ի՞նչ է ատոնց եք, որ ուշադիր լինինք և իմանանք վերջը, կամ թէ ապագայ
23 բաները մեզ լուր տուէք։ Իմացէք ետևէն եկող բաները, և մենք էլ կ'իմանանք, թէ աստուած էք դուք. հէնց մէկ բարի կամ մէկ չար բան դործեցէք, որ հիանաք
24 ու զարմանաք միասին։ Տեսէք, դուք ոչնչից էք, և ձեր գործքը ոչնչութիւն է. գարշելի է ով որ ձեզ
25 ընտրէ։ Վեր եմ կացրել հիւսիսի կողմիցը, և գալիս է. արևելքէցը պիտի կանչէ իմ անունը. և նա կոխ է տալիս կուսակալներուն ցեխի պէս. և բրուտի
26 պէս որ կոխ է տալիս կաւը։ Ով պատմեց սկզբիցը, որ իմանանք, և առաջուց, որ ասենք՝ ճշմարիտ է. ոչ իմացնող կայ, ոչ լուր տուող կայ, և ոչ ձեր խօսքերուն լսող կայ։
27 Առաջ է ըսել Սիոնին. Ահա, անոնք նորանք են։ Բուսապէսին աւետարեր տուի։
28 Եւ նայեցայ, ու մարդ չկար, և առանցից՝ ու մի խորհուրդ տուող չկար, որուն ես հարցնէի, և նորանք ինձ պատասխան տային։ Ահա
29 նորանք ամենքը անուտի են, նորանց գործքերը փուճ են. քամի են՝ դատակ են նորանց ձուլածոյ կուռքերը։

ԳԼ. ԽԲ

1 Ահա իմ ծառան, որին ես հաստատել եմ, իմ ընտրածը, որուն հաւանել է իմ Հոգին. իմ Հոգին դրել եմ նորա վերայ, նա իրաւունքը պիտի հանէ աղգերուն համար։
2 Նա չի աղաղակել, և ձայն չի բարձրացնել, և իր ձայնը լսել չի տալ դուրսումը։
3 Ջախջախած եղէգը չի փշրել, և ծխացած կայծեակ պատրոյգը չի հանդցնել, իրաւունքը պիտի դուրս բերէ ճշմարտութեամբ։
4 Նա չի տկարանալ և չի թուլանալ, մինչև որ հաստատէ իրաւունքը երկրի վերայ. և կղզիները պատրաստ են նորա օրէնքին։
5 Այսպէս է ատաւմ Տէր Աստուածը, որ ստեղծեց երկինքը և նորան տարածեց. որ ընդարձակեց երկիրը և նորանից բուսածը, որ շունչ է տալիս նորա վերայ եղող ժողովրդին, և հոգի նորա վերայ գնացողներուն։
6 Ես՝ Տէրս եմ կանչել քեզ արդարութեամբ, և բռնում եմ քո ձեռքը և քեզ պաշտպանում, և քեզ պիտի ժողովրդի ուխտ շինեմ և՝ ազգերի լոյս. կոյրերի
7 աչքերը բանալու. բանտարկեալներին բանտից հանելու, և կապանքի տնից՝ խաւարի մնում նրստողներին։
8 Ես եմ Եհովան, սա է իմ անունը. և իմ պատիւը ուրիշին չեմ տալ. և ոչ իմ
9 փառքը՝ կուռքերին։ Առաջի բաները ահա կատարուել են. և նորերը ես եմ պատմում. նորանք դեռ չըզգած՝ ձեզ իմացնում եմ։

10 Տիրոջը նոր երդ երգեցէք, նորա գովութիւնը երկրի ծայրերից, ով ծովը իջնողներ և նորան լցնողներ, ով կղզիներ և նորանց բնակիչները։
11 Զայնը բարձրացնեն անապատը և նորա քաղաքները, այն գիւղօրայքը որ բնակուած են Կեդարուայ։ Բարձրաձայն աղաղակեն վիմաքարաբի բնակիչները, լեռանց գագաթից գոչեն։
12 Պատիւ մատուցանեն Տիրոջը, և նորա փառքը

13 պատմեն կզմնեբուամը։ Տէրը
դուբս է գալու Հզօրի պէս. պա-
տերազմի մարդու պէս դրգռելու
է էջ նախանձը. աղաղակելու ու
նաև բարձրաձայն գոչելու է, և
յաղթող է հանդիսանալու իր
թշնամեաց վերայ։
14 Ես վաղուց է լռել եմ, Համ-
բերատար էի և ինձ զսպել էի. Բայց
հիմա ծննդականի պէս պիտի գո-
ռամ, շունչ պիտի առնեմ և
15 շնչեմ էլ։ Աւերակ պիտի անեմ
լեառները ու բլուրները, և նո-
րանց բոլոր խոտը պիտի չորաց-
նեմ, և գետերի կզմնների պէս
ցամաք պիտի շինեմ. և լիճերը պի-
տի ցամաքեցնեմ։
16 Եւ կոյրերին պիտի մեն ուղեմ իրանց չգիտե-
ցած ճանապարհով, նորանց չը
գիտեցած շաւիղներով առաջ-
նորդելու եմ նորանց. նորանց
առջև խաւարը լոյսի եմ դարձը-
նելու, դարուփոսերը՝ հաւասա-
րի, այս բաները պիտի անեմ ա-
րանց, և նորանց պիտի չձգեմ։
17 Նա պիտի քաշուին և ամօ-
պէս ամաչին կուռքի յուսացող-
ները. որ ասում են ձուլածոյին
Դուք մեր աստուածներն էք։
18 Ով խուլեր, լսեցէք. և ով
կոյրեր, նայեցէք որ տեսնէք։
19 Ո՞վ է կոյր բացի իմ ծառան,
և խո՞ւլ՝ իմ ուղարկած դեսպանի
պէս. ո՞վ է կոյր նուիրեալին պէս.
և կոյր՝ Տիրոջ ծառային պէս։
20 Շատ բաներ ես տեսել, բայց բան
չես պահել. ականջները բաց են,
21 բայց չէ լսում։ Տէրը հաւանեց
նորա իր արդարութեան համար,
օրէնքը մեծացրեց և փառաւո-
22 րեց։ Բայց նա յափշտակուած
և կողոպտուած ժողովուրդ է,
նորանք ամենքը փոսերում որո-
գայթի մէջ ընկած են, և կա-
լանաց տան մէջ թաքնուած են,
նորանք յափշտակուեցան, և ա-
պառող չկայ, կողոպուտ եղան
և ասող չկայ թէ՝ Ետ տուր։
23 Ձեզանում ո՞վ կայ, որ սրան
ականջ դնէ, ուշադիր լինի և լսէ
24 յետագային համար։ Ո՞վ մատնեց
Յակոբին յափշտակութեան, և Իս-
րայէլին՝ կողոպտիչներին. չէ՞ որ

Եհովան, նա, որի դէմ մեղանչե-
ցինք, և չկամեցան նորա ճանա-
պարհներով գնալ, և որի օրէն-
քին չլսեցին։ Եւ նա թափեց նո- 25
րա վերայ իր բարկութեան բոր-
բոքումը և պատերազմի ուժգնու-
թիւնը. և ամեն կողմից նորան
վառեց, բայց նա չիմացաւ. և
նորան այրեց, բայց նա իր ուշքը
չդարձրեց։

ԳԼ. ԽԳ

Եւ հիմա այսպէս է ասում Տէ- 1
րը՝ քո ստեղծողը. ով Յակոբ.
և քո Արարիչը, ով Իսրայէլ. Մի
վախենար, վասն զի ես քեզ փրկ-
կել եմ, քո անունով կանչել
եմ, քո է իմն ես։ Երբոր ջը- 2
րերից անցնես, ես քեզ հետ
եմ, և եթէ գետերով՝ քեզ չեն
ողողիլ, երբոր գնաս կրակի մէ-
ջովը, չես այրուիլ, և բոցը քեզ
պիտի չվառէ։ Վասն զի ես Տէրս 3
քո Աստուածն եմ, Իսրայէլի
Սուրբս քո Փրկիչն եմ. ես Եգիպ-
տոսը քեզ տեղ փրկանք եմ տը-
ուել, Եթովպիան և Սաբան՝
քեզ տեղ փոխարէն։ Որովհետև 4
իմ աչքին պատուական երևեցար,
պատիւ գոտար. և ես քեզ սիրե-
ցի. և քո փոխարէն մարդ պիտի
տամ, և ժողովուրդներ քո հո-
գու փոխարէն։ Մի վախենար, 5
վասն զի ես քեզ հետ եմ. քո
սերունդը արևելքից եմ բերե-
լու, և արևմուտքից ժողովելու
եմ քեզ։ Ասելու եմ հիւսիսին. 6
Տուր. և հարաւին՝ Թէ Մի ար-
գիլիր, բեր իմ որդիներին հե-
ռուից, և իմ աղջիկներին՝ երկրի
ծայրից. Բոլոր իմ անունով կոչ- 7
ուածներին, և որոնց ես ստեղ-
ծել եմ իմ փառաց համար,
նորանց կապեցի և արի էլ։
Հանեցէք կոյր ժողովրդին, որ 8
թէև աչքեր ունի. և խուլերին,
որոնք թէև ականջներ ունին։
Բոլոր ազգերը ժողովուին ամէ- 9
ուեղ, և ժողովուրդները հաւաք-
ուին. ո՞վ կայ նորանցում որ
սա իմացնէ, և առաջի բաները
մեզ լսելի տայ. Թող բերեն ի-

բանց վկաներին որ արդարանան,
և լսէին լսեն և ասեն՝ ճշմարիտ
10 է։ Դու էք իմ վկաները, ասում
է Տէրը. և իմ ծառան, որին
ես ընտրել եմ. որպէս զի գիտե-
նաք և հաւատաք ինձ, և հաս-
կանաք որ ես եմ. ինձանից ա-
ռաջ մի աստուած չկազմուե-
ցաւ, և ինձանից յետոյ չի լի-
11 նելու։ Ես՝ ես եմ Ես Հովայ. և
12 ինձանից զատ Փրկիչ չկայ։ Ես ի-
մացրի, ու փրկեցի և լուր տուի, և
մի օտարը չկար ձեր մէջը. և դուք
իմ վկաներն էք, ասում է Տէ-
13 րը, որ ես եմ Աստուած։ Դաև
*վաղուց՝ ի վեր ես նոյնն եմ, և
չկայ իմ ձեռքից փրկող. ես որ
գործեմ, ո՞վ է որ արգելէ։
14 Այսպէս է ասում Տէրը՝ ձեր
Փրկիչը՝ Իսրայէլի Սուրբը. Ձեր
պատճառով ուղարկեցի Բաբի-
լոն, և նորանց ամէնը ցած ի-
ջեցրի իրրև փախստականներ, և
Քաղդէացիներին իրանց ցնծա-
15 թեան նաւերով։ Ես եմ Ես Հո-
վայ ձեր Սուրբը, Իսրայէլի Ստեղ-
16 ծողը՝ ձեր Թագաւորը. Այսպէս
է ասում Ես Հովան, որ ծովումը
ճանապարհ է շինում և զօրաւոր
17 ջրերի մէջ ուղի. Որ դուրս է բե-
րում կառքն ու ձին, և զօրքն
ու ոյժը, միասին կ'պառկեն,
բայց վեր չեն կենալ. նորանք
պատրոյգի պէս կ'հանգչեն ու
18 կ'անցնեն։ Առաջիններըը մի յի-
շէք. և հին բաներըը մի մտաբե-
19 րէք։ Ահա ես նոր բան եմ ան-
ում. հիմա կ'յայտնուի. մի՞թէ չէք
իմանալ։ Դաև մի ճանապարհ եմ
շինելու անապատումը, ամայի
20 տեղերումն էլ գետեր։ Ինձ պիտի
փառաւորեն գազանները,
չագալները և ջայլամները. վասն
զի ջուր պիտի տամ անապատու-
մը, գետեր՝ ամայի տեղերումը,
իմ ընտրեալ ժողովրդին խմելցնե-
21 լու համար։ Այն ազգը, որ ես
կազմել եմ ինձ համար, պիտի
պատմէ իմ օրհնութիւնը։
22 Բայց ոչ թէ ինձ կանչեցիր,
ով Յակոբ, այլ ինձանից ձանձ-

*օրից

բացար, ով Իսրայէլ։ Դու ինձ 23
համար չես բերել քո ոչխարներն
երի ոչխարները, և քո պոհերովը
չփառաւորեցիր ինձ. ես քեզ չէ
ծառայեցրի ընծայով, և քեզ չէ
վատաւկեցրի կնդրուկով։ Դու 24
ինձ համար արծաթով խնկեղէգ
չես առել, և քո պոհերի ճարպո-
վը ինձ չես կշտացրել, այլ դու
ինձ ծառայեցրել ես քո մեղքերո-
վը, և ինձ վատաւկեցրել ես քո
անօրէնութիւններովը։ Ես՝ ես 25
եմ որ ջնջում եմ քո յանցանք-
ները իմ պատճառի և քո մեղ-
քերը չեմ յիշում։ Յիշեցրու ինձ, 26
միասին դատուինք. դու պատմիր,
որպէս զի արդարանաս։ Քո նա- 27
խահայրը մեղք գործեց, և քո
բարեխօսները ապստամբեցին ինձ
դէմ։ Եւ ես պիղծ համարեցի 28
արբարանի իշխաններին և Յակոբը
նզովք չինեցի, և Իսրայէլը նա-
խատինք։

ԳԼ. ԽԴ.

Եւ հիմա ականջ դիր, ով իմ 1
ծառայ Յակոբ, և ով Իսրայէլ,
որին ես հաւանել եմ։ Այսպէս 2
է ասում Ես Հովան՝ քեզ Ստեղ-
ծողը, քեզ արգանդից կազմողը,
որ քեզ օգնում է. Մի վախե-
նար, ով իմ ծառայ Յակոբ, և
ով *Եսուրուն, որին ես հաւա-
նել եմ։ Վասն զի ջուր պիտի 3
թափեմ ծարաւի վերայ, և հե-
ղեղներ՝ չորութեան վերայ, պի-
տի թափեմ իմ Հոգին քո սե-
րունդի վերայ, և իմ օրհնու-
թիւնը՝ քո զաւակների վերայ։ Եւ 4
նորանք պիտի ծլեն խոտերի մէջ,
ինչպէս ուռիները ջրերի վտակ-
ների մօտ։ Սա պիտի ասէ. Ես 5
Տիրոջն եմ. նա պիտի Յակոբի
անունովը կոչուի, և միւսը իր
ձեռքովը պիտի գրէ. Տիրոջն էմ
ես. և Իսրայէլի անունովը պիտի
մականուանուի։

Այսպէս է ասում Տէրը՝ Իս- 6
րայէլի Թագաւորը, և նորա Փըր-
կիչը՝ Զօրաց Տէրը. Ես եմ առա-

*ուղղասիրտ

ջինը, և ես եմ վերջինը. և ին-
7 ձանից ջոկ Աստուած չկայ։ Եւ
ո՞վ կայ ինձ նման որ կանչէ,
թող լսուցնէ և կարգադրէ ինձ
համար, իմ յաւիտենական ժո-
ղովուրդ շինելուց հետէ. թող ա-
պագայ բաները, որ կատարուելու
8 են, լսուցնեն մեզ։ Մի զարհուրէք
և մի վեհերէք. չէ՞ որ ես քեզ
վաղուց լուր տուի, և ասացի թէ
Դուք իմ վկաներն էք. մի՞թէ
ինձանից ջոկ Աստուած կայ, և
9 մէկ վէմ չկայ. ես չգիտեմ։ Կուռք
շինողների ամենքն էլ ունայնու-
թիւն են, և նրանց ցանկալիքը
անպիտան են. և իրանց վկաներն
իրանք են. չեն տեսնում և չեն
10 իմանում, որ ամաչեն։ Ո՞վ է որ
աստուած է շինում, և կուռք
11 է ձուլո՞ւմ, որ անպիտան է։ Ա-
հա նրա բոլոր ընկերները պիտի
ամաչեն, և նրա արուեստաւոր-
ները իրանց մարդկանցից են.
թող ժողովուին ամենքը կանգ-
նեն, նրանք պիտի սարսափեն
12 ամաչեն միասին։ Երկաթագործը
ուներ գործիքը, և գործում է ա-
ծուխով, և կռաններով ձևակեր-
պում է նրան, և իր զօրաւոր
բազուկովը շինում է նրան. ա-
վածանում էլ է, և ոյժը թու-
լանում, ջուր չէ խմում և նը-
13 ուաղում է։ Փայտագործը քա-
շում է լարը և մատիտով նրան
գծագրում է, նրան շինում է
դուրով և գծագրում կարկինով,
և նրան մարդու կերպարանքի
պէս շինում, մարդու գեղեցիկու-
թեան նման, որ տանը բնակէ։
14 Մէկն իրան համար կտրում է ե-
ղևիններ, և առնում է թեղջ
ու կաղնի, և ընտրում իրան հա-
մար անտառի փայտերիցը, նա
տնկում է սոճին, և անձրևը ա-
15 ճեցնում է։ Եւ նա մարդու հա-
մար վառելիք է լինում. և նա
առնում է նրանցից և տաքանա-
ում, նաև վառում է և հաց
թխում, աստուած էլ է շինում
նրանից և երկրպագում նրան.
նա կուռք է շինում նրանից և
16 նրան պաշտում։ Նրա կէսը նա
պրեց կրակով, նրա կէսի վերայ

էլ միս եփէց կերաւ, խորոված
խորովեց ու կշտացաւ, տաքան-
ում էլ է և ասում. Ահա, տա-
քացայ, տեսայ կրակը։ Եւ նրա 17
մնացածն իր կուռքն է շինում
աստուած, նրան պաշտում, նո-
րան երկրպագում, և նրան ա-
ղօթք անում և ասում. Փրկիր
ինձ, վասն զի դու ես իմ աստ-
ուածը։ Չեն իմանում և չեն հաս- 18
կանում, վասն զի ծեփուած են
նրանց աչքերը որ չտեսանեն, և
նրանց սրտերը՝ որ իմանան։ Եւ 19
նա միտք չէ անում, և գիտու-
թիւն չունի ու հասկացողութիւն
չունի, որ ասէ. Նրա կէսը ես
պրեցի կրակով, և նրա կայծե-
րի վերայ հաց էլ թխեցի, միս
խորովեցի ու կերայ, և մնացածը
գարշելի բան շինե՞մ, և փայտի
կաճը պաշտե՞մ։ Նա փոշու ետև- 20
ից է ընկած, նո՛ւ խաբուած սիր-
տը մոլորեցրել է նրան, և նա
չէ կարողանում իր հոգին ազա-
տել, և չէ ասում. Թէ Սուտու-
թիւն չէ՞ իմ ազ ձեռքին։ Յի- 21
շիր այս, ով Յակոբ, և դու,
ով Իսրայէլ, վասն զի դու իմ
ծառան ես. ես քեզ ստեղծեցի,
դու իմ ծառան ես, ով Իսրա-
յէլ, դու ինձանից չես մոռաց-
ուած։ Ես ջնջել եմ մեղի պես 22
քո յանցանքները, և ամպի պես
քո մեղքերը, դարձիր դէպի ինձ,
վասն զի քեզ փրկել եմ։

Ցնծացէք, ով երկինք, վասն 23
զի Տէրն է արել. ցնծալով ա-
ղաղակեցէք, ով երկրի խորքերը.
ուրախալից ձայներ հանեցէք,
ով լեռներ, ով անտառ և բոլոր
նրա միջի ծառեր, վասն զի Տէ-
րը փրկել է Յակոբին, և Իսրա-
յէլի մէջ փառաւորուեցաւ։

Այսպէս է ասում Տէրը քո 24
փրկիչը, քեզ արգանդից Ստեղ-
ծողը, ես եմ Եհովան, ամեն
բան անողը, երկինքը մենակ
տարածողը ես եմ, երկիրը ընդ-
արձակեցի ես ինքս ինձանից. Որ 25
առասանների նշաններըը փչացնում
եմ, և գուշակողներին յիմարաց-
նում, որ իմաստուններին ետ եմ
դարձնում, և նրանց գիտու-

26 Թիւնը յիմարացնում, Որ հաս-
տատում եմ իմ ծառայի խօս-
քը, և իմ դեսպաններուն խորհուր-
դը կատարում, որ ասում եմ
Երուսաղէմին. Թէ Պիտի բնակ-
ուիս, և Յուդայի քաղաքներին,
Թէ Պիտի շինուիք. և նորա ա-
27 ւերակները կանդնեցնում. Որ ա-
ստում եմ յորձանքին՝ Զորացիր.
28 և քո գետերը ցամաքեցնում. Որ
ասում եմ Կիւրոսին Թէ՝ Իմ
հովիւն ես, և իմ բոլոր կամքը
նա պիտի կատարէ, և պիտի ա-
սէ Երուսաղէմին Թէ Շինուիր,
և տաճարին Թէ՝ Հիմնուիր։

ԳԼ. ԽԵ

1 Ա յսպէս է ասում Տէրը իր օծ-
եալին՝ Կիւրոսին, որին ես բռնա-
նել եմ աջ ձեռքից, որ ազգերը
լծեցնեմ նորա առջև, և թա-
գաւորների երանքները թուլաց-
նեմ, որ բանամ նորա առջև
դրանց փեղկերը, և դուռները նո-
2 ր՝ ա՛լ չկապուին։ Ես պիտի գը-
նամ քո առջևից, և խորտուբորտ
տեղերը պիտի հաւասարեցնեմ,
պղնձի դռները պիտի փշրեմ, և
երկաթի նիգերը պիտի կոտրա-
3 տեմ։ Ես քեզ պիտի տամ խա-
ւարի մէջի գանձերը. և ծածուկ
տեղերում պահուած հարստու-
թիւնները, որպէս զի գիտենաս
Թէ ես եմ Եհովան, որ կանչեցի
քեզ քո անունովդ՝ Իսրայէլի
4 Աստուածս. Իմ ծառայ Յակոբի
համար, և իմ ընտրեալ Իսրա-
յէլի համար, և կանչեցի քեզ
քո անունովդ, ես քեզ մականուն դրի, թէև ինձ չէիր ճա-
5 նաչում։ Ես եմ Տէրը, և ուրիշը
չկայ. ինձանից զատ Աստուած չը
կայ. ես քեզ օգնեցի, թէև դու
6 ինձ չէիր ճանաչում. Որպէս զի
գիտենան արևելքից և արևմուտ-
քից որ ինձանից զատ մէկը չկայ.
ես եմ Տէրը, և ուրիշը չկայ.
7 Որ հաստատում եմ լոյսը և ըս-
տեղծում խաւարը. որ անում
եմ խաղաղութիւնը և ստեղծում
չարիքը, ես Տէրս եմ այս բոլորն
անողը։

8 Ցօղացէք վերևից, ով երկինք-
ներ, և նօսր ամպերը արդարու-
թիւն շաղ տան, երկիրը բաց-
ուի, և ծաղկէ փրկութիւն, և
արդարութիւն ծլէ միասին. ես
եհովան եմ ստեղծել այն։

9 Վա՛յ իր Արարչի հետ վիճողին,
խեցիների հետ մի խեցին երկրի-
ը. մի՞թէ կաւը կ՚ասէ իր կաղ-
մողին Թէ ի՞նչ ես անում, և
քո գործը չունի ձեռք. Վա՛յ էլ հօրն ա- 10
ասողին. Թէ ի՞նչ ես ծնում, և
կնոջը՝ Թէ ի՞նչ ես երկունք քա-
շում։

Ա յսպէս է ասում Եհովան. 11
Իսրայէլի Սուրբը և նորա Արա-
րիչը, ապագայ բաները ինձանից
հարցրէք, իմ որդիանց և իմ
ձեռաց գործի համար ինձ պատ-
ուիրեցէք։ Ես եմ շինել երկիրը 12
և մարդուն նորա վերայ ստեղ-
ծել, իմ ձեռքերն են տարածել
երկինքը, և ես պատուիրում եմ
նորա բոլոր զօրքին։ Ես նորան 13
զօրութեամբ արդարութիւնով, և
նորա բոլոր ճանապարհները ուղ-
ղում եմ. Նա պիտի շինէ իմ քա-
ղաքը. և իմ գերեվարեալներին
էժ պիտի ուղարկէ. առանց գնոյ
և առանց կաշառքի, ասում է
Զօրաց Տէրը։ Ա յսպէս է ասում 14
Տէրը. Եգիպտոսի վաստակածը
և Եթովպիայի ու երկայնահա-
սակ Սաբայեցոց վաճառքը քեզ
են անցնելու և քոնն են լինելու.
նորանք մեծ են գալու քո ե-
տևից, շղթաներով անց են կե-
նալու, խոնարհուելու են քո
առջև, և քեզ ողջոյնք են ա-
նելու, Թէ միայն քո մէջը կայ
Աստուած, և ուրիշ Աստուած
չկայ։

Յիրաւի դու ծածկապատուած 15
Աստուած ես, ով Իսրայէլի փըր-
կիչ Աստուածը։ Պիտի ամաչեն 16
և պատկառեն նորանք ամենքը,
միասին պիտի ամօթահար լինեն
կուռք շինողները։ Իսրայէլը պի- 17
տի փրկուի Տիրոջ ձեռքով յա-
ւիտենական փրկութիւնով. պի-
տի չամաչէք և չպատկառէք յա-
ւիտեան յաւիտենից։

18 Վասն զի այսպէս է ասում Եհովան՝ երկինքը ստեղծողը, նա է Աստուած, որ կազմեց երկիրը, և արաւ նորան՝ հաստատեց նորան. նորան չստեղծեց դատարկ, բնակելու համար ստեղծեց նորան. Ես եմ Եհովան, և 19 ուրիշը չկայ։ Ոչ թէ ծածուկում եմ խօսել՝ երկրի մութ տեղը. ես չասացի Յակոբի սերունդին՝ թէ Զուր տեղը որոնեցէք ինձ. ես Եհովա արդարութիւն եմ խօսում, ճշմարիտ բաներ եմ 20 յայտնում։ Ժողովուեցէք և եկէք, միասին մօտեցէք, ով ազգաց ապրածներդ, չեն իմանում իրանց կուռքի փայտը կրողները, և այնպիսի աստուծոյ աղօթք անողները, որ չի փրկել։ 21 Խնացրէք և մօտեցրէք, նորանք էլ միասին խորհուրդ անեն. ո՞վ է լուր տուել այս բաները վաղուց, այն ժամանակից իմացրե՞լ այս. չէ՞ որ ես Եհովա, և որ ուրիշ Աստուած չկայ ինձանից զատ, ճշմարիտ և փրկող Աստ- 22 ուած չկայ բացի ինձանից։ Ով երկրի բոլոր ծայրերը, դէպի ինձ դարձէք որ փրկուէք. վասն զի ես եմ Աստուած, և ուրիշը չը- 23 կայ։ Ինձանով երդուեմ արի, իմ բերանից արդարութեան խօսք դուրս եկաւ և ետ չի դառնալ, որ ինձ պիտի կրկնուի ամեն ծունկ 24 և ամեն լեզու երդուեմ անէ, Միմիայն Տէրոմը կայ ինձ համար արդարութիւն և զօրութիւն, պիտի ամէ. նորա մօտ պիտի գան և ամաչեն բոլոր նորա դէմ 25 բորբոքեալները։ Տէրով պիտի արդարանան և պարծենան Իսրայէլի բոլոր սերունդը։

ԳԼ. ԽԶ

1 Բէլը խոնարհուեցաւ, Նեբովը խորտակուեցաւ, նորանց կուռքերը գազաններին ու անասուններին են. ձեր կրածները բեռներ են դառել, ծանրոցք՝ վաստա- 2 կածների համար։ Խորտակուել խոնարհուել են միասին, չկարողացան ծանրոցն ազատել, իրանք էլ գերի գնացին։

Ինձ լսեցէք, ով Յակոբի տուն, 3
և Իսրայէլի տան բոլոր մնացորդը, որ բեռնուած էիք մօր արգանդից՝ ի վեր, և տարուում էք որովայնից հետէ։ Եւ մինչև ծե- 4
րանալն էլ ես եմ, և մինչև աչքերաբեխնը պիտի կրեմ ձեզ, ես ստեղծեցի և ես պիտի կրեմ, և ես պիտի վեր առնեմ և ազատեմ։

Ո՞ւմ էք նմանեցնում ինձ և 5
հաւասարեցնում, և ինձ նմա՞ն անում, որ նման լինենք։ Ոսկին 6
թափում են քսակից, և արծաթը կշռով կշռում, վարձում են ոսկերիչ, որ նորան շինէ աստուած, յետոյ պաշտում և երկրպագում էլ են։ Նորան կրում 7
են ուսի վերայ և բեռնում, և պնդացնում են իր տեղը, և նա կանգնում է, իր տեղիցը չէ շարժում. Նորան աղաղակում էլ է, բայց նա չէ պատասխանում. նորա նեղութիւնից նորան չէ ազատում։

Յիշեցէք այս, և արեցէք, 8
ձեր միտքը բերէք, ով յանցաւորներ։ Յիշեցէք առաջիններից 9
յաւիտենից, վասն զի ես եմ Աստուած, և ուրիշը չկայ աստուած. և ինձ պէս մի ջոկը չկայ. Որ պատմում եմ առաջուց վեր- 10
ջինը, և վաղուց՝ այն որ չէ եղած. որ ասում եմ, թէ իմ խորհուրդը պիտի հաստատուի, և անում եմ իմ բոլոր ուզածը. Որ կանչում եմ արեւելքից գի- 11
շատիչ թռչունը հեռու երկրից՝ իմ խորհրդի մարդուն. խօսել եմ ես, կատարելու էլ եմ, որոշել եմ ես, անելու էլ եմ։ Ինձ լսե- 12
ցէք, ով խստասիրտներ, որ հեռացած էք արդարութիւնից.

13 Ես մօտեցրել եմ իմ արդարութիւնը, չէ հեռանալու, և իմ փրկութիւնը չէ ուշանալու. և Սիոնի մէջ փրկութիւն եմ տալու Իսրայէլի համար, որ իմ փառքն է։

ԳԼ. ԽԷ

1 Իջիր ու նստիր հողի վերայ,

ով Բաբելոնի կոյս ազջիկ, տա-
փին նստիր առանց աթոռի, ով
Քաղդեացոց ազջիկ, քանզի այլ
ևս չեն կոչելու քեզ քնքուշ և
2 փափուկ։ Առ երկանքը և ալիւր
աղա, լաջակդ բաց, քղանցքդ
վեր կալ, սրունքդ բաց արա,
3 անցիր գետերով։ Պիտի բացուի
քո մերկութիւնը, պիտի երևայ
քո նախատինքը, վրէժ պիտի առ-
նեմ, և չեմ խնայելու մարդու։
4 Մեր Փրկչի անունը Զօրաց Տէր
5 է, Իսրայէլի Սուրբը։ Լուռ նըս-
տիր և մտիր խաւարի մէջ, ով
Քաղդեացոց ազջիկ. վասն զի
այլ ևս քեզ չեն կոչելու թագա-
6 ւորութեանց տիկին։ Ես բար-
կացած էի իմ ժողովրդի վերայ,
պղծեցի իմ ժառանգութիւնը,
և նորանց յանձնեցի քո ձեռքը.
դու նորանց գթութիւն չարիր,
ծերի վերայ շատ ծանրացրիր քո
7 լուծը։ Եւ ասացիր՝ Ես յաւիտ-
եան տիկին պիտի լինիմ. մինչև
որ այս միտք չարիր, որպես վախ-
8 ճանը չյիշեցիր։ Եւ հիմա լսիր
այս, ով հեշտասէրդ, որ անհո-
գութեամբ նստել ես, որ սրտիդ
մէջ ասում ես. Ես եմ, և ինձանից
ջոկ մէկը չկայ. որբևայրի
պիտի չնստեմ, և անզաւակու-
9 թիւն պիտի չգիտենամ։ Եւ գա-
լու են քեզ վերայ այս երկուքը
յանկարծ մէկ օրուայ մէջ ան-
զաւակութիւն և որբևայրութիւն.
որպէս բոլորը գալու են քեզ վե-
րայ քո շատ դիւթութիւնների
պատճառով, և քո խիստ շատա-
ցած կախարդութեանց համար։
10 Եւ դու ապաւինեցիր քո չարու-
թեանը, ասացիր՝ Ինձ տեսնող
չկայ, քո իմաստութիւնն և քո
գիտութիւնն են քեզ մոլորեցնո-
ղը. բայց դու ասում ես քո
սրտումը. Ես եմ, և ինձանից
11 ջոկ մէկը չկայ։ Եւ քեզ վերայ
չարիք է գալիս, որին չես գիտե-
լու դիւթել. և քեզ վերայ մի
թշուառութիւն ընկնելու, որ չես
կարողանալու քաւել. և քեզ
վերայ յանկարծ մի աւերում է
գալու առանց քո գիտենալու։
12 Մէկ կանգնիր քո կախարդու-
թիւններով և քո շատ դիւթու-
թիւններով, որոնցով վաստա-
կել ես քո մանկութենից՝ ի վեր.
գուցէ կարողանաս օգուտ բերել,
գուցէ վախեցնես։ Դու ձանձրա- 13
ցել ես քո խորհուրդների շատու-
թիւնովը, թող մէկ կանգնեն և
քեզ փրկեն երկինքը պնդողները,
աստեղագէտները, նոր լուսինով
գուշակողները այն բանից, որ
գալու է քեզ վերայ։ Ահա նո- 14
րանք ժղեղի պէս են դառել. կը-
րակը պիտի այրէ նորանց, իրանց
հոգին չեն ազատելու բոցի ձեռ-
քից, չէ լինելու մի կայծ տա-
քանալու համար, կամ մի կրակ
առջևը նստելու համար։ Ահա 15
պէս պէտք է լինին քեզ համար
նորանք, որոնցով դու վաստա-
կել ես, նորանք որոնց հետ դու
վաճառականութիւն արիր քո
մանկութենից՝ ի վեր. իւրաքանչ-
իւրն իր ճանապարհովը մոլորուե-
ցաւ գնաց, քեզ ազատող չկայ։

ԳԼ. ԽԸ

Լսեցէք այս, ով Յակոբի տուն, 1
որ Իսրայէլի անունովը կոչուած
էք, որ Յուդայի ջրերից էք ե-
լել, որ երդում էք անում Եհո-
վայի անունովը և Իսրայէլի Ա-
ստուծոյն յիշում, բայց ոչ թէ
ճշմարտութեամբ և ոչ թէ ար-
դարութեամբ։ Վասն զի նորանք 2
սուրբ քաղաքից են կոչվում, և
Իսրայէլի Աստուծոյ վերայ են
կռնում, որի անունը Զօրաց Տէր
է։ Առաջի բաները վաղուց եմ 3
իմացրել, և իմ բերանիցը դուրս
եկան, և ես նորանց իմացրի.
յանկարծ կատարեցի և նորանք
եկան։ Որովհետև գիտէի, որ 4
պինդ ես դու, և երկաթի ջիլե-
րից է քո վիզը, և քո ճակատը
պղնձից է. Նորա համար վաղուց 5
քեզ պատմեցի, և գալուց ա-
ռաջ քեզ լուր տուի, որ գուցէ
ասես՝ Իմ արձանս արաւ սոր-
անց. և իմ քանդակած ու ձու-
լած կուռքս է հրամայել այն։
Դու լսեցիր, մտիկ արա ամենին. 6
և դուք չէ՞ք խոստովանելու.

քեզ այսուհետև նորանոր բաներ եմ լսեր տալու և ծածուկ բաներ, որոնք դու չէիր գիտում։
7 Հիմա են նորանք ստեղծագործված և ոչ թէ վաղուց, և այս օրից առաջ դու նորանց չես լսել, որպէս զի չասես. Թէ Ահա
8 ես գիտէի նորանց։ Դու ոչ լսել ես, և ոչ էլ գիտէիր, և ոչ էլ ականջդ բաց էր վաղուց. վասն զի գիտէի, որ դու խիստ նենգաւոր ես, և որովայնիցդ քեզ
9 ապստամբ են կոչում։ Իմ անուան համար ուշացնում եմ իմ բարկութիւնը, և իմ փառաց համար ինձ պիտի ես պահեմ քեզ դէմ, որպէս զի քեզ չը
10 փչացնեմ։ Ահա ես քեզ մաքրեցի, և ոչ թէ արծաթի կերպով, ես քեզ փորձեցի նեղութեան
11 հնոցում։ Իմ պատճառով, իմ պատճառով պիտի անեմ, վասն զի ինչպէս է պղծվում. և իմ
12 փառքը ուրիշին չեմ տալ։ Լսիր ինձ, ով Յակոբ և իմ կանչած Իսրայէլ, ես նոյնն եմ, ես առաջինն եմ, հէնց վերջինն էլ ես
13 եմ։ Հէնց իմ ձեռքն է հիմնել երկիրը, և իմ աջ ձեռքը տարածել երկինքը. ես նորանց կան-
14 չելիս, մէկտեղ կ'կանգնեն։ Ամէնքդ ժողովուեցէք ու լսեցէք. նորանցից ո՞րն է խնացրել այս բանը. Եհովայի սիրածը պիտի կատարէ Նորա կամքը Բաբիլոնում, և Նորա բազուկը Քաղդէացոց վերայ։ Ես՝ ես եմ խօսել, և
15 նորան կանչել էլ, նորան բերել եմ, և նորա ճանապարհը պիտի
16 յաջողէ։ Մօտեցէք ինձ, լսեցէք այս բանը. ծածուկ չեմ խօսել առաջուց, սա լինելու ժամանակից ի վեր ես այնտեղ եմ, և հիմա Եհովայ Տէրն է ինձ ուղար-
17 կել, և Նորա Հոգին։ Այսպէս է ասում Տէրը, քո Փրկիչը Իսրայէլի Սուրբը. Ես եմ քո Աստուածը, որ քեզ սովորեցնում եմ օգտակար եղողը, որ քեզ առաջնորդում եմ քո գնալու
18 ճանապարհում։ Երանի թէ ուշադրութիւն անէիր իմ պատուէրներին, և գետի պէս պիտի

լինէր քո խաղաղութիւնը, և քո արդարութիւնը՝ ծովի ալիքներին պէս. Եւ սերմն նման կ'լինէր 19
քո սերունդ, և քո երանքի զաւակունքը՝ Նորա խիճին չափ, Նորա անունը իմ առջևից չէր կտրուիլ և չէր փչանալ։

Դուրս եկէք Բաբիլոնից, փա- 20
խէք Քաղդէացիներից, ցնծալի ձայնով պատմեցէք հրատարակեցէք այս, հռչակեցէք այս վին-
ջև երկրի ծայրը. ասացէք. Եհովան փրկել է իր ծառայ Յակոբին։ Եւ նորանք չծարաւեցին 21
նա նորանց անապատներում մեն ածելիս, ջուրը վէմից հոսեցրեց նորանց համար, և պատռեց վէմը, և ջուրերը բղխեցին։ Խա- 22
ղաղութիւն չունին ամբարիշտները, ասում է Տէրը։

Գլ. խթ

Ով կղզիներ, ինձ լսեցէք, և 1
ուշադիր եղէք հեռուանց, ով ժողովուրդներ։ Եհովան ինձ արգանդից է կանչել, իմ մօր ո-
րովայնից յիշել է իմ անունը. Եւ իմ բերանը սրած թուրի պէս 2
է արել, իր ձեռքի հովանու տակին ծածկել է ինձ, և ինձ շինել է փայլուն նետ, և ինձ թաքցրել իր կապարճումը։ Եւ ինձ 3
ասել է. Դու իմ ծառան ես, ով Իսրայէլ, որ քեզանով պի-
տի փառաւորուիմ։ Բայց ես ա- 4
սում էի թէ՝ Զուր եմ վաստակում, դատարկ և ունայն տեղը վերջացրի իմ զօրութիւնը. տա-
կսին իմ իրաւունքը Տիրոջ մօտ է, և իմ վարձքը՝ իմ Աստուծոյ մօտ։ Եւ հիմա ասում է Տէրը, 5
ինձ որովայնիցը իրան համար ծառայ առնողը, որ Յակոբը դարձնեմ իրան մօտ, և Իսրայէ-
լը ժողովուի նորա համար, որ փառաւորուիմ Տիրոջ առջև, և իմ Աստուածը իմ զօրութիւնը լինի։ Եւ ասում է. Դո՞ւ քիչ 6
քիչ է, որ դու իմ ծառան լինես, Յակոբի ցեղերն վերականգնելու համար, և Իսրայէլի ա-
զատուածներըետ դարձնելու հա-

մար, եւ քեզ ազգերի լոյս էլ եմ շինել, որ դու իմ փրկութիւնը լինես մինչեւ երկրի ծայրը։
7 Ասյպէս է ասում Տէրը, Իսրայէլի Փրկիչը, նորա Սուրբը, անարգուած հոգի ունեցողին, ազգաց ատելի եղողին, իշխանաց ծառային. Թագաւորներ պիտի տեսանեն և վեր կենան, իշխաններ՝ և երկրպագութիւն անեն. Տիրոջ համար, որ հաւատարիմ է, Իսրայէլի Սուրբի համար, որ քեզ
8 ընտրել է։ Տէրը այսպէս է ասում. Ընդունելի ժամանակին քեզ լսեցի, և փրկութեան օրը քեզ օգնեցի և քեզ պահպանեցի, և քեզ ուխտ շինեցի ժողովրդին, որ երկիրը հաստատես, և ժառանգեցնես աւերակացած
9 ժառանգութիւնները։ Որ ասես կապուածներին. Դուրս եկէք, և նորանց, որ խաւարումն են. Թէ փայլեցէք. նորանք ճանապարհներին պիտի արածեն, և ամեն բլուրների վերայ նորանց
10 համար արօտ կայ։ Նորանք պիտի չսովին, և չծարաւեն և նորանց պիտի չզարկէ խորշակը և արեւը, վասն զի նորանց ողորմողը պիտի առաջնորդէ նորանց, և ջրի աղբիւրների վերայ պիտի տանէ նորանց։
11 Եւ իմ բոլոր լեռները պիտի ճանապարհ շինեմ, և իմ պողոտաները պիտի բարձրանան։
12 Ահա սորանք հեռուից են գալիս, և ահա նորանք հիւսիսից ու արեւմուտքից, և միւսները Սինեացոց երկրից։
13 Ցնծացէք, ով երկինք, և բերկրացիր, ով երկիր, և ուրախութեան ձայնով ազաղակեցէք, ով լերինք, վասն զի Տէրը մխիթարել է իր ժողովրդին, և ողորմել է նորա տնանկներին։
14 Բայց Սիօն ասաց. Եհովան ինձ ձգել է. և Տէրը մոռացել է ինձ։
15 Մի՞թէ կինը կ'մոռանայ իր կաթնակեր մանուկին, որ չգթայ իր որովայնի ծննդեան վերայ, նորանք եթէ մոռանան էլ, բայց
16 ես քեզ չեմ մոռանալ։ Ահա ես իմ ձեռաց մէջ եմ նկարագրել քեզ, քո պարիսպները իմ դիմացն են միշտ։ Քո որդիքը պիտի
17 շտապեն, քեզ քանդողներն ու աւերողները դուրս են գալու քեզանից։
18 Բարձրացրու շուրջանակի աչքերդ և տես, բոլորը ժողովւում են գալիս են քեզ մօտ. կենդանի եմ ես, ասում է Տէրը, որ նորանց ամենին էլ հագնելու ես զարդի պէս, և նորանցով գօտեւորուելու ես հարսի
19 պէս։ Վասն զի քո աւերակները և քո ամայի տեղուանքը, և քո փլատակների երկիրը, հիմա նեղ պիտի լինի բնակչացը համար. և պիտի հեռանան քեզ կլանողները։
20 Դեռ ասելու են քո ականջներին քո ամուլութեան որդիքը, այստեղը նեղ է լինձ համար, տեղ տուր ինձ, որ բնակեմ։
21 Եւ դու ասելու ես քո սրտումը, ո՞վ ծնեց ինձ համար սորանց, քանի որ ես անզաւակ և ամուլ էի. ես գերի և աքսորուած էի, և սորանց ո՞վ է մեծացրել. ահա ես մէնակ էի մնացել. սորանք ո՞րտեղ էին։
22 Այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա իմ ձեռքը բարձրացնում եմ ազգերի վերայ, և ժողովուրդների վերայ վեր եմ հանում իմ դրօշակը, և նորանք պիտի բերեն քո որդկանցը ծոցում, և քո աղջիկների ուսի վերայ պիտի տարուին։
23 Եւ թագաւորները պիտի լինեն քո անուցիչները, և նորանց իշխանուհիները՝ քո դայեակները, երեսանկեալ քեզ երկրպագութիւն պիտի անեն, և քո ոտքերի փոշին լիզելու են. և դու կ'գիտենաս, որ ես եմ Եհովայ, որ չեն ամաչիլ
24 ինձ յուսացողները։ Մի՞թէ հզօրից կառնուի աւարը, կամ
25 արդարի գերին կ'ազատուի՞։ Վասն զի Տէրը այսպէս է ասում. Այո, տղամարդի գերին էլ կ'առնուի, և հզօրի աւարն էլ կ'ազատուի. և քեզ հետ վիճողների հետ էլ ես պիտի վիճեմ, և քո որդկանցը ես պիտի ազատեմ։
26 Եւ պիտի ուտեցնեմ քեզ հարստահարողներին իրանց միսը, և իրը թէ նոր գինիով պիտի

գինուիման իրանց արիւնովը. և ամեն մարմին կ'գիտենայ, որ ես եմ Տէրը՝ քո Փրկիչը, և քեզ փրկողը՝ Յակոբի հզօրը։

ԳԼ. Ծ

1 Ա՛յսպէս է ասում Տէրը. Ո՞ւր է ձեր մօր ապահորդանի թուղթը, որով ես նորան արձակել եմ. կամ նա ո՞րն է իր պարտատէրներից, որին ծախել եմ ձեզ. ահա դուք ձեր անօրէնութիւնների համար էք ծախուել, և ձեր մայրը ձեր յանցանաց համար է արձակուել։ 2 Ինչո՞ւ համար ես որ եկայ, մարդ չկար, ես որ կանչեցի, պատասխանող չկար, միթէ իմ ձեռքը խիստ շատ կարճացել էր, որ չկարողանայ փրկել, և կամ թէ ես զօրութիւն չունէի՞ ապատելու. ահա իմ սաստկովը ցամաքեցնում եմ ծովը, գետերը անապատ եմ դարձնում, նստում է նորանց ձուկերը ջուր չլինելուց 3 և մեռնում է ծարաւից։ Երկինքները խաւար եմ հագցնում, և նորանց ծածկոցը քուրձ եմ շինում։

4 Տէր Եհովան ինձ ուսումնատարժ լեզու է տուել, որ գիտենամ վաստակածին օգնել խօսքով, զարթեցնում է առաւօտ՝ զարթեցնում է իմ ականջը որ լսեմ աշակերտների 5 պէս։ Տէր Եհովան բացել է իմ ականջը, և ես չհակառակեցի՝ 6 եւ չդարձայ։ Իմ թիկունքը տուի հարուածողներին և իմ ծնօտները՝ նոսրացնողներին. իմ երեսը չծածկեցի նախատինքներից և թքից. 7 Սակայն Տէր Եհովան օգնում է ինձ, նորա համար ամօթահարած չեմ լինել, նորա համար իմ երեսը դռլլտախոպի պէս շինեցի, և գիտեմ որ պիտի չամչեմ։ 8 Մօտ է ինձ արդարացնողը. ո՞վ է ինձ հետ վիճում. միասին կանգնենք. ո՞վ է իմ դատախազը. թող մօտենայ ինձ։ 9 Ահա Տէր Եհովան օգնում է ինձ, ո՞վ է որ ինձ յանցաւոր հանէ. ահա նորանք ամենքը շորի պէս պիտի մաշուին, ցեցը պիտի ուտէ նորանց։

10 Ո՞վ կայ ձեզանում Տէրից վախեցող, նորա ծառայի ձայնին լսող, որ գնում է խաւարում և ճառագայթ չունի. որ ապաւինում է Տիրոջ անուանը, և իրան գցում է իր Աստուծոյ վերայ։

11 Ահա դուք ամենքդ, որ կրակ էք վառում, և կայծերով շրջապատւում, գնացէք ձեր կրակի վառուածքի մէջ, և ձեր կրակ առած կայծերի մէջ։ Սա իմ ձեռքիցը եղաւ ձեզ համար, դուք ցաւով պիտի պառկէք։

ԳԼ. ԾԱ

1 Ինձ լսեցէք, ով արդարութեան հետևողներ, ով Տիրոջը խնդրողներ, նայեցէք այն վէմին, որից դուք կտրուած էք, և այն հորի գուբին, որից դուք փորուած էք. 2 Նայեցէք ձեր հօրը՝ Աբրահամին, և ձեզ ծնող Սարային. վասն զի մէկ հատ էր նա, որ ես կանչեցի, բայց ես նորան օրհնեցի և նորան բազմացրի։ 3 Վասն զի Տէրը պիտի մխիթարէ Սիոնին, պիտի մխիթարէ նորա բոլոր աւերակները, և նորա անապատը դրախտի նման պիտի շինէ, և նորա ամայի տեղը Տիրոջ պարտէզի պէս. ցնծութիւն և ուրախութիւն պիտի գտնուի նորանում, գոհաբանութիւն և օրհներգութեան ձայն։ 4 Ուշադիր եղէք չէ՞ որ ինձ, ով իմ ժողովուրդ, և ով իմ ազգ, ինձ ականջ դիր. վասն զի ինձանից օրէնք է դուրս գալու, և իմ իրաւունքը լոյս պիտի հաստատեմ ազգերի համար։ 5 Մօտ է իմ արդարութիւնը, դուրս է եկել իմ փրկութիւնը, և իմ բազուկները դատում են ժողովուրդներին։ Կղզիները ինձ են յուսում, և իմ բազուկին ապաւինում։ 6 Բարձրացրէք ձեր աչքերը դէպի երկինք, և նայեցէք երկրին դէպի ցած. քանզի երկինքը պիտի ծու-

խի պէս ցրիւ դայ, և երկիրը հանդերձի պէս պիտի ճաշէ. և նորա բնակիչները այսպէս պիտի մեռանին. բայց իմ փրկութիւնը յաւիտեան պիտի լինի, և իմ արդարութիւնը չի պակասիլ։

7 Լսեցէք ինձ, ով արդարութիւն ճանաչողներ, ով ազգ, որ իմ օրէնքն ունիս սրտումդ. մի վախենաք մարդկանց նախատինքից, և նորանց բամբասանքից 8 մի զարհուրէք։ Վասն զի հանդերձի պէս ցեցն է ուտելու նորանց, և բուրդի պէս ուտելու է նորանց մեղը. բայց իմ արդարութիւնը յաւիտեան պիտի լինի, և իմ փրկութիւն յաւիտեան յաւիտենից։

9 Զարթիր, զարթիր, զօրութիւն հագիր, ով Տէրոջ բազուկ, զարթիր առաջի օրերին պէս, յաւիտենական դարերին պէս, մի՞թէ դու այն չէս, որ Ջարդեցիր Ռահաբը, որ վիշապին խոցեցիր։ 10 Մի՞թէ դու այն չէս, որ ծովը ցամաքեցրիր, մեծ անդունդի ջուրերը, որ ծովի խորութիւնը ճանապարհ շինեցիր, փրկուածներին անցնելու համար։ 11 Եւ Տէրոջ փրկուածները կը պիտի դառնան, և գան Սիոն ցնծալի երգերով, և յաւիտենական ուրախութիւն պիտի լինի նորանց գլխին, ցնծութեան և ուրախութեան պիտի հասնին. պիտի փախչին տրտմութիւնը և հեծութիւնը։

12 Ես՝ ես եմ ձեզ մխիթարողը, դու ո՞վ ես, որ վախում ես մահկանացու մարդուց, և մարդու որդուց, որ խոտի նման է չինուած։ 13 Եւ մոռանում ես քեզ ստեղծող Տէրոջը, որ տարածում է երկինքը և երկիրը հաստատում. և վախում ես միշտ ամեն օր բռնաւորի բարկութիւնից, որ կարծես թէ պատրաստ է քեզ կորցնելու, բայց ո՞ւր է բռնաւորի բարկութիւնը։ 14 Կալանաւորը շուտով պիտի արձակուի, և չի մեռնիլ գուբի մէջ, և նորա հացը չի պակասիլ։ 15 Եւ ես եմ քո Տէր Աստուածը, որ ատում եմ ծովին, և նորա ալիքները ազմուկ են հանում, Զօրաց Եհովայ է իմ անունը։ 16 Եւ իմ խօսքերը դրի քո բերանումը, և իմ ձեռքի հովանոցով ծածկեցի քեզ, որ երկինքը դնեմ և երկիրը հիմնարկեմ, և ասեմ Սիոնին՝ Իմ ժողովուրդն ես դու։

17 Արթնացիր, արթնացիր, վեր կաց, ով Երուսաղէմ, որ խմեցիր Տէրոջը ձեռքից նորա բարկութեան բաժակը, որ թմրութեան լցնող բաժակը խմեցիր քամեցիր։ 18 Ի բոլոր նորածին որդիքանցից, որ ծնաց, չը կայ նա որ առաջնորդէ նրան, և ձեռքից բռնող չկայ նրան ծաղրած բոլոր որդիքանցից։ 19 Երկու բաներ են, որ քեզ պատահել են. ո՞վ է կարող քեզ մխիթարել. կործանում ու կոտրած, և սով ու սուր. որո՞վ մխիթարեմ ես քեզ։ 20 Քո որդիքը նուաղած պառկել են ամեն փողոցների գլխին որոգայթի մէջ փռմփռուած վայրի այծի պէս, որոնք լիքն են Տէրոջ բարկութիւնով, քո Աստուծոյ յանդիմանութիւնով։ 21 Ուրեմն լսիր այս, ով խեղճ, և ով արբած, բայց ոչ թէ գինով։ 22 Այսպէս է ասում քո Տէրը Եհովան, և քո Աստուածը, որ պաշտպանում է իր ժողովուրդը. Ահա առնում եմ ձեռքիցդ թմրութեան բաժակը, և դու այլևս պիտի չը խմես այն։ 23 Եւ նորան դնում եմ քեզ հարստահարողների ձեռքին, որոնք ասում էին քո անձին. Ծռիր որ մենք անցնենք. և դու քո մէջքը երկրին հաւասար արիր և փողոցի պէս՝ անցուդարձողաց համար։

ԳԼ. ԾԲ

1 Զարթիր, զարթիր, հագիր զօրութիւնդ, ով Սիօն, քո փառաւոր հանդերձները հագիր, ով Երուսաղէմ՝ սուրբ քաղաք. վասն զի այլևս պիտի միւսանգամ չմտնէ քո մէջը անթլփատը և պիղծը։ 2 Փեղ թափ տուր հողից, վեր կաց, նստիր, ով Երու-

ասղէմ, բայց սրա պատանցիք կապերը, ով Աիօնի դևրի ողջ-
3 կը։ Ման դի այսպէս է ասում Տէրը. Դուք ձրի ծախուեցաք, և առանց փողի պիտի փրկուիք։
4 Ման դի այսպէս է ասում Տէր Եհովան. Իմ ժողովուրդն առաջ ԼՋաւ Եգիպտոս այնտեղ պան-
դխատնելու, և Ասորեստանցիք
5 զուր տեղը նորան ճնշեցին։ Եւ հիմա, ես ի՞նչ ունիմ այստեղ, ասում է Տէրը, վասն դի զուր
վեր առնուեցաւ իմ ժողովուրդը, նորա վերայ իշխողները բղաւում են, ասում է Տէրը, և միշտ ա-
մեն օր հայհոյվում է իմ անու-
6 նը։ Սորա համար պիտի գիտենայ իմ ժողովուրդը իմ անունը, սորա համար այն օրը՝ թէ ես եմ այն որ ասում եմ. Ահա ես։
7 Ո՜նչ գեղեցիկ են լեռանց վե-
րայ աւետարանչի ոտքերը, որ խաղաղութիւն է քարոզում, բա-
րիք աւետում, փրկութիւն քա-
րոզում, որ ասում է Աիօնին Թագաւորում է քո Աստուածը։
8 Քո պահապանները ահա ձայն են բարձրացնում, միասին բարձրա-
ձայն ցնծում, վասն դի դէմ յանդիման պիտի տեսանեն, երբոր
9 Տէրը դառ բերէ Աիօնին։ Ադաղա-
կեցէք, բարձրաձայն ցնծացէք միասին, ով Երուսաղէմի փլա-
տակներ. վասն դի Տէրը մխիթա-
րեց իր ժողովրդին, փրկեց Երու-
10 սաղէմին։ Տէրը մերկացրել է իր սուրբ բազուկը, բոլոր ազգաց աչքերի առջև, և երկրի բոլոր ծայրերը պիտի տեսանեն, մեր Ա-
ստուծոյ փրկութիւնը։
11 Հեռացէք, հեռացէք, այնտե-
ղից դուրս եկէք, պիղծ բանի մի դպչէք, դուրս եկէք նորա միջի-
ցը, մաքուր եղէք, ով Տիրոջ
12 սպասները կրողներդ։ Ման դի ոչ թէ հապճեպով պիտի դուրս գաք, և փախչելով էլ չէք գը-
նալ, այլ Տէրը պիտի գնայ ձեր առջևից և ձեր թիկնապահը Իս-
րայէլի Աստուածն է։
13 Ահա իմ ծառան խնամաս-
թեամբ պիտի վարուի, պիտի մե-
ծանայ և բարձրանայ և շատ փա-

առաքուն։ Ինչպէս որ շատերը 14
ապշեցին քեզ վերայ, (այնպէս
խանգարուած է նորա տեսքը մար-
դու պէս, և կերպարանքը մար-
դու որդկանց կերպարանքից.)
Նոյնպէս պիտի զարմացնէ շատ 15
ազգեր, թագաւորները պիտի
խփեն նորա առջև իրանց բե-
րանը. վասն դի պիտի տեսնեն
այն, որ իրանց չէ պատմուած,
և այն, որ չեն լսած, պիտի ի-
մանան։

ԳԼ. ԾԳ

Ո՞վ հաւատաց մեր լուրին, և 1
Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնը-
ւեցաւ։ Վասն դի նա մատա- 2
ղատունկի պէս դուրս եկաւ նո-
րա առջև, և արմատի պէս՝ ծա-
րաւատ երկրից. ոչ կերպարանք
ունէր, ոչ էլ վայելչութիւն, և
մենք տեսանք նորան, և մի տեսք
չկար, որ նորան ախորժէինք։
Նա անարգուած և մարդկանց ե- 3
բեսից ընկած, հարուածների տէր
և ցաւի տեղեակ եղաւ, և մի
այնպիսի, որից պէտք է երես
ծածկել. անարգուած էր, և մենք
նորան ոչինչ էինք համարում։
Յիրաւի նա մեր ցաւերը վեր ա- 4
ռաւ, և մեր վիշտերը բեռնեց էր
վերայ, բայց մենք նորան համար-
ում էինք պատուհասուած,
Աստուածանից զարկուած և նը-
կուն եղած։ Բայց նա մեր մեղ- 5
քերի համար վիրաւորուեցաւ,
և մեր անօրէնութիւնների հա-
մար հարուածուեցաւ, մեր խա-
ղաղութեան պատիժը նորա վե-
րայ եղաւ, և նորա վէրքերովը
մենք բժշկուեցանք։ Մենք ամեն- 6
քըս ոչխարների պէս մոլորուե-
ցանք, իւրաքանչիւրն իր ճանա-
պարհին դարձաւ, և Տէրը նորա
վերայ դրաւ մեր ամենի մեղքը։
Նա անիրաւութիւն կրեց և չար- 7
չարուեցաւ, բայց իր բերանը չը
բացաւ, ինչպէս մի ոչխար որ
մորթուելու է տարվում, և ինչ-
պէս մի մունճ մազի իր խուզող-
ների առջև, այնպէս իր բերանը
չբացաւ։ Կալանքից և դատա- 8

պարտութիւնից վեր առնուեցաւ
և նորա ոտքատակը ո՞վ կարող
է պատմել. վասն զի նա կորը-
ւեցաւ կենդանիների երկրից.
իմ ժողովրդի մեղքի համար նա
9 զարկուեցաւ։ Եւ ամբարիշտների
հետ արձակուեցաւ նորա գերեզմա-
նը, թէպէտ հարուստի հետ եղաւ
նա մեռած ժամանակը. քանզի ո-
րովհետև նա զրկոտութիւն չէր ա-
րել, և խարէութիւն չկար նորա
10 բերանումը։ Բայց Տէրը հաճեց
նորան զարկել ցաւերիս. երբոր
նորա *հոգին մեղաց զոհն արաւ,
նա պիտի սերունդ տեսանէ, և օ-
րերը երկարացնէ. և Տէրոջ հա-
ճութիւնը պիտի յաջողէ նորա
11 ձեռօքը։ Իր անձի աշխատու-
թեան պտուղը պիտի տեսանէ և
կշտանայ. իր գիտութեամբը պի-
տի արդարացնէ իմ արդար ծա-
ռան շատերին, վասն զի նորանց
12 անօրէնութիւնը ինքը կրեց։ Ով-
րա համար նորան բաժին պիտի
տամ շատերի հետ, և հզօրների
հետ աւար պիտի բաժանէ. նորա
փոխարէն որ իր անձը †մատնեց
մինչեւ ան, և յանցաւորների հետ
հաշուեցաւ. և նա շատերի մեղ-
քը վեր առաւ, և յանցաւորների
համար միջնորդեց։

ԳԼ. ԾԴ

1 Ցնծա, ով ամուլ, որ չէիր ծը-
նում, բարձրաձայն աղաղակելով
ցնծա և աղաղակէ, ով երկունք
չքաշող, վասն զի երեսից ձըգ-
ուած որդիքը շատ են արամիւի
որդիանցից, ասում է Տէրը։
2 Լայնացրու քո վրանի տեղը, և
թող քո բնակարանի վարագոյր-
ները տարածեն. մի խնայիր, եր-
կարացրու քո ճոպանները երդ, և ցից երդ
3 պնդացրու։ Վասն զի պիտի աջ
ու ձախ տարածուիս, և քո սե-
րունդը պիտի ժառանգէ ազգե-
րին, և աւերակացած քաղաք-
4 ները շէնացնելու են։ Մի վախե-
նար վասն զի պիտի չամաչես, և
մի պատկառիր, վասն զի պիտի
չնախատուիս. վասն զի քո ման-
կութեան ամօթը պիտի մոռա-
նաս, և քո այրիութեան
նախատինքը այլևս պիտի չյի-
շես։ Վասն զի քո այրը քեզ 5
Ստեղծողն է, Զօրաց Եհովայ է
նորա անունը, և քո փրկիչը Իս-
րայէլի Սուրբն է, նա կոչուած է
բոլոր երկրի Աստուածը։ Վասն 6
զի Տէրը քեզ մի երեսից ձգուած
և հոգով վշտացած կնոջ պէս
կանչեց, և մի երիտասարդ կնոջ
պէս, որ մերժուած է, ասում
է քո Աստուածը։ Մի փոքր վայր- 7
կեան քեզ թողեցի, բայց մեծ
ողորմութիւններով պիտի ժողո-
վեմ քեզ։ Բարկութիւնս աս- 8
քանչով՝ ծածկեցի երես քեզ-
անից մի վայրկեան, բայց յաւի-
տենական ողորմութիւնով քեզ
պիտի ողորմեմ, ասում է քո
փրկիչը՝ Եհովան։ Վասն զի Նոյի 9
ջրերին պէս է սա ինձ համար, որ
երդում արի, թէ այլևս պիտի
չանցնեն Նոյի ջուրերը երկրի վե-
րայ. նոյնպէս էլ երդում արի,
որ քեզ չբարկանամ և քեզ չը
յանդիմանեմ։ Վասն զի լեռները 10
կ'քաշուին, և բլուրները կ'սասա-
նեն, բայց իմ ողորմութիւնը քե-
զանից չի քաշուիլ, և իմ խա-
ղաղութեան ուխտը չի սասա-
նիլ, ասում է քեզ ողորմող
Տէրը։ Ով ողորմելի ալեկոծեալ 11
անմխիթար, ահա ես քո քարե-
րըդ ծարուրով պիտի դնեմ, և
քեզ պիտի հիմնեմ շափիւղանե-
րով։ Եւ քո բերդաւանքները կար- 12
միր յակինթներով պիտի շինեմ,
և քո դուռները կարկեհաններ-
րով, և քո բոլոր սահմանը պատ-
ուական քարերով։ Եւ քո բոլոր 13
որդիքը Տիրոջից ուսած պիտի լի-
նին, և շատ պիտի լինի քո որդ-
կանց խաղաղութիւնը։ Արդարու- 14
թեամբ պիտի հաստատուիս. հե-
ռացիր բռնութիւնից, որովհետև
չես վախենալու, և արհաւիրքից,
որովհետև քեզ չէ մօտենալու։
Ահա նորանք անպատճառ հա- 15
ւաքուելու են, առանց ինձանից
լինելու. ով որ քեզ վերայ հա-
ւաքուի, քո կողմը պիտի ընկնէ։

---

*անձը †Թափեց

16 Ահա ես եմ առեղծել դարբինին
որ փչում է կրակի կայծերին, և
գործիք հնարում իր արուեստի
համար. նոյնպէս էլ ես եմ ըն-
տեղծել կործանողին որ աւերէ։
17 Բոլոր քեզ դէմ շինած գործիքը
պիտի չյաջողէ, և ամեն լեզու,
որ վեր կենայ քեզ դէմ դատաս-
տանի, պիտի դատապարտուի.
սա է Տիրոջ ծառաների ժառան-
գութիւնը, և նորանց արդարու-
թիւնը ինձանից է, ասում է
Տէրը։

ԳԼ. ԽԵ

1 Ո՛հ բոլոր ծարաւներ, եկէք ջը-
րերին մօտ. և դուք որ փող չու-
նէք, եկէք, ծախու առէք և կե-
րէք, եկէք առէք առանց փողի,
առանց վճարի՝ գինի և կաթ։
2 Ինչո՞ւ էք փող վճարում, և ոչ
թէ հացի, և ձեր վաստակը՝ չը
կշտացնող բանի համար։ Մէկ
ինձ լսեցէք, որ բարիք ուտէք,
և ձեր հոգին ցուտրճանայ պա-
3 րարտութիւնով։ Ձեր ականջը
խոնարհեցրէք, և ինձ մօտ եկէք,
լսեցէք և ձեր հոգին կ'ապրէ.
և ձեզ հետ յաւիտենական ուխտ
պիտի դնեմ, Դաւթի հաւատա-
4 րիմ ողորմութիւնները։ Ահա ես
նորան ժողովուրդների վկայ եմ
դրել, ազգերի առաջնորդ և հր-
5 բամանատար։ Ահա չճանաչած
ազգիդ պիտի կանչես, և ազգեր
որ քեզ չէին ճանաչում, վազե-
լու են քեզ մօտ, քո Աստուած՝
Տիրոջ պատճառով, և Իսրայէլի
Սուրբի պատճառով, որ քեզ
փառաւորեց։
6 Խնդրեցէք Տիրոջը, քանի որ
նա գտնվում է. նորան կանչե-
7 ցէք, քանի որ նա մօտ է։ Ամ-
բարիշտը թողէ իր ճանապարհին,
և անօրէն մարդը՝ իր խորհուրդ-
ներին, և դառնայ Տիրոջը, և նա
կողորմէ նորան, և՝ իր Աստու-
ծոյն, վասն զի նա շատ ներող
8 է։ Վասն զի իմ խորհուրդները
ձեր խորհուրդները չեն, և ձեր
ճանապարհները չեն իմ ճանա-
9 պարհները, ասում է Տէրը. Այլ

բարձր է երկինքը երկրից, նոյն-
պէս էլ բարձր են իմ ճանա-
պարհները ձեր ճանապարհնե-
րից և իմ խորհուրդները ձեր խոր-
հուրդներից։ 10
Վասն զի ինչպէս
որ իջնում է անձրևը և ձիւնը
երկնքից և ետ չէ դառնում
այնտեղ, այլ ոռոգում է երկիրը
և նորան արգասաւոր անում և
բողբոջեցնում նորան, և տալիս
է սերմ սերմնացանին և հաց՝
ուտողին։ 11
Այնպէս էլ պիտի լինի
իմ բերանից դուրս եկած խօսքը,
նա պիտի պարապ ետ չդառնայ
ինձ մօտ, այլ կատարէ իմ ու-
զածը, և յաջողէ նորանում, ին-
չի համար որ նորան ուղարկեցի։
Վասն զի ուրախութեամբ պիտի 12
դուրս գաք, և խաղաղութեամբ
պիտի առաջնորդուիք, լեռներն
ու բլուրները պիտի բարձրաձայն
ցնծան ձեր առջև, և դաշտերի
բոլոր ծառերը պիտի ծափ տան։
Թուփի փոխարէն մայր պիտի 13
բուսանէ, դժնիկի փոխարէն պիտի
բուսանէ մրտենի. և սա պիտի լի-
նի Տիրոջ համբաւի համար, իբ-
րև յաւիտենական նշան, որ չի
ջնջուիլ։

ԳԼ. ԽԶ

Այսպէս է ասում Տէրը, իրա- 1
ւունք պահեցէք, և արդարու-
թիւն արէք. վասն զի իմ փրկու-
թիւնը մօտ է գալու, և իմ
արդարութիւնը՝ յայտնուելու։
Երանի այն մարդուն, որ կ'անէ 2
այս, և մարդու որդուն, որ պինդ
կ'բռնէ այս, և շաբաթը կ'պահէ
պղծելուց, և կ'պահէ իր ձեռքը
որ և իցէ չարութիւն անելուց։
Եւ թող չասէ Տիրոջը յարող 3
օտարականի որդին այսպէս թէ՝
Տէրը ինձ բոլորովին բաժանել է
իր ժողովրդից, և թող չասէ
ներքինին. Ահա ես մի չոր ծառ
եմ։ Վասն զի Տէրը այսպէս է 4
ասում այն ներքինիներին. Որոնք
պահում են իմ շաբաթները, և
ընտրում են իմ ուզածը, և հաս-
տատ են իմ ուխտումը։ Եւ ես 5
նորանց տեղ և անուն պիտի

տամ իմ տանն ու իմ պարիսպ-
ներուս մէջ, աւելի լաւ քան թէ
որդիք և աղջկերք. և նորանց մի
յաւիտենական անուն կ'տամ, որ
6 չի ջնջուիլ։ Եւ այն օտարական-
ներն որդիքը, որ յարել են Տի-
րոջը, նորան ծառայելու և Տի-
րոջ անունը սիրելու, և նորա
ծառաները լինելու համար, այս-
ինքն բոլոր իմ շաբաթը պղծե-
լուց պահողները և իմ ուխտը
7 բռնողները, Նորանց էլ պիտի
բերեմ իմ սուրբ լեռը, և նո-
րանց ուրախացնեմ իմ աղօթքի
տան մէջ. նորանց ողջակէզներն
ու զոհերը ընդունելի պիտի լինին
իմ սեղանի վերայ, վասն զի իմ
տունը աղօթքի տուն պիտի կոչ-
8 ուի բոլոր ազգերի համար։ Տէր
Եհովայի խօսքն է, որ ժողովում
է Իսրայէլի աքսորուածներին,
դեռ էլ պիտի ժողովէ բացի նո-
րանից նորա ժողովուածների վե-
րայ։

9 Ով դաշտի բոլոր գազաններ,
եկէք ուտելու, ով անտառի
10 բոլոր գազաններ։ Նորա պահա-
պաններն բոլորը կոյր են, չգի-
տեն, նորանք ամենքը համր շու-
ներ են, որ կարող չեն հաչել,
տեսանողները քնում են, սիրում
11 են մրափելը. Եւ շուներ են շա-
տակեր, ու կշտանալ չգիտեն.
և նորանք հովիւներ են, որ չգի-
տեն բան հասկանալը. նորանք ա-
մենքը իրանց ճանապարհին դար-
ձան, ամեն մէկն իր շահի եռանից
12 իր մասին. Եկէք, ինի բերեմ,
և արբենք գինով. և եղուցուայ
օրն էլ այսպէս լինի, և շատ ա-
ւելել մեծ։

ԳԼ. ԾԷ

1 Արդարը կորչում է և ուշադ-
րութիւն անող մարդ չկայ, և
բարի մարդիկ վեր են առնւում
առանց մէկի իմանալու, թէ չար-
ևաց առջևից վեր առնուեցաւ
2 արդարը։ Նա մտնում է խաղա-
ղութեան մէջ, նորանք հանգչում
են իրանց հանգչարաններում,
որոնք վարւում են ուղղութեամբ։

3 հայց դուք այստեղ մօտեցէք,
ով վհկուհու որդիք, ով սեր-
4 ունդ պոռնկի և բոզի։ Ո՞ւմ վե-
րայ էք ծաղրում, ո՞ւմ վերայ
էք լայնացնում ձեր բերանը, և
լեզուն երկարացնում. չէ՞ որ դուք
անօրէնութեան զաւակներ՝ սուտ-
5 թեան սերունդ էք։ Որ տաքան-
ում էք բևեռնու [illegible] ամեն
կանաչ ծառի տակին, որ մորթ-
ում էք մանուկներին ձորերում
վէմերի խոռոչների տակին։ Ձորի
6 կոկած [illegible] էին քո բաժինը,
նորանք են նորանք քո վիճակը.
նորանց էլ թափեցիր նուէր՝ մա-
տուցրիր ընծայ. մի՞թէ ես կ'դի-
7 մանում սորանց, Բարձրացած և
վեր եղած լեռան վերայ դրիր քո
անկողինը, այնտեղ էլ բարձրա-
ցար զոհ զոհելու համար։ Եւ
8 դրանց և դրանդեաց ետև դրիր քո
յիշեցուցիչները, որ ինձանից հե-
ռու մերկացնես, ու վեր ելնես,
լայնացրիր անկողինդ և դաշին-
քով վարձեցիր քեզ համար նո-
րանցից, նորանց անկողինը սիրե-
ցիր. *յարմար տեսար։ Դու թա-
9 գաւորի մօտը գնացիր իւղով, և
շատացրիր քո անուշահոտու-
թիւնները, և ուղարկեցիր դես-
պաններդիդ մինչև հեռու տեղեր,
և խոնարհուեցար մինչև գժոխքը.
10 քո ճանապարհի շատութիւնից
վատացար, բայց մէկ չասացիր
թէ՝ Յոյս չկայ. ձեռքիդ վերա-
կենդանութիւնը գտար, դորա
11 համար ցաւ չունեցար։ Եւ ո՞ւմից
էիր զարհուրում և վախենում,
որ սուտ ասացիր, և ինձ չյիշե-
ցիր և հոգս չարիր. չէ՞ որ ես լռ-
ում եմ և այն էլ վաղուց ի՛
վեր է, թէպէտ դու ինձանից
12 չես վախենում։ Ես պիտի յայտ-
նեմ քո արդարութիւնը, և քո
գործերը, և նորանք քեզ օ-
13 գուտ չունին։ Դու աղաղակելիս
թող ժողոված կուռքերդ քեզ
փրկեն. բայց նորանց ամենքն էլ
քամին պիտի տանէ, մէկ շունչ
պիտի վեր առնէ, բայց ինձ յու-
սացողը պիտի ժառանգէ երկիրը,

*Ձեռք, «մահ» անդամ.

և առանց իմ սուրբ լեառնը։
14 Եւ նա առաւմ է. Հարդեցէք,
հարդեցէք, ճանապարհ բացէք,
վեր առէք խոչն իմ ժողովրդի
15 ճանապարհիցը։ Վասն զի այսպէս
է առաւմ բարձրը և բարձրեալ-
ը, յաւիտենականութեան մէջ
բնակողը, և որի անունը Սուրբ
է. Ես բնակուամ եմ բարձրուամբ
և սուրբ տեղը, և լինուամ եմ
կոտրած և խոնարհ հոգի ունե-
ցողի հետ, որ խոնարհների հո-
գուն կենդանացնեմ, և կենդա-
նացնեմ սրտով կոտրուածներին։
16 Վասն զի ես չեմ վիճելու յաւ-
իտեան, և չեմ բարկանալու
միշտ, վասն զի կ'նուաղէին իմ
առջև հոգին և ոգիները, որոնք
17 ես առնդծել եմ։ Նորա ագա-
հութեան անօրէնութեան համար
բարկացայ, և նորան զարկեցի,
ծածկուեցայ և բարկացայ, և
նա ետ ետ գնաց իր սրտի ճա-
18 նապարհովը։ Նորա ճանապարհ-
ները ես տեսել եմ, և բժշկելու
եմ նորան. և նորան առաջնոր-
դելու ու նորան և իր սգաւորնե-
19 րին մխիթարելու եմ։ Շրթունք-
ների պտուղն առնդծելով, խա-
ղաղութիւն, խաղաղութիւն լինի
հեռուներին և մօտներին, ասա-
ւաւմ է Տէրը, և ես պիտի բժըշ-
20 կեմ նորան։ Բայց ամբարիշտները
ալեծուփ ծովի նման են, որ չէ
կարող հանդարտել, և նորա ջու-
րերը տիղմ ու ցեխ են դուրս
21 տալիս։ Խաղաղութիւն չկայ,
ասաւմ է իմ Աստուածը, ամ-
բարիշտների համար։

ԳԼ. ԾԸ

1 Գոչէր կոկորդալիր, մի խնայէր,
փողի պէս բարձրացրու ձայնդ,
և իմացրու իմ ժողովրդին իրանց
յանցանքը, և Յակոբի տանը՝ ի-
2 րանց մեղքերը։ Եւ ինձ խնդրուամ
են օր քան օր է, և իմ ճանա-
պարհներըն՝ գիտութիւնը ուզուամ
են, իբրև մի ազգ, որ արդարու-
թիւն է գործուամ, և իր Աստու-
ծոյ իրաւունքը զանց չէ անուամ,
և ինձանից հարցնուամ են արդա-

րութեան իրաւունքը, և փափա-
քուամ են Աստուծոյ մօտենալ։
Ինչո՞ւ մենք ծոմ ենք պահուամ, 3
և դու չես տեսնուամ, ճգնեցնուամ
ենք մեր անձերին, և դու չգի-
տես։ Ահա ձեր ծոմ օրը բազ-
ձանք էք կատարուամ, և ձեր բո-
լոր աշխատաւորներին նեղուամ
էք։ Ահա կռուի և հակառակ- 4
ութեան համար էք ծոմ պահ-
ուամ, և անզգամութեան բռունց-
քով զարկելու համար, դուք հի-
մա ծոմ չէք պահուամ, որ լսելի
անէք բարձրուամը ձեր ձայնը։
Այսպէ՞ս կ'լինի այն ծոմը, որին 5
ես եմ հաւանուամ, իբրև մի օր,
որ մարդ ճգնուամ է իր հոգուվը,
գլուխը քաշ գցել կնիւնի պէս,
և քուրձն ու մոխիրը անկողին շի-
նել, սո՞ ես դու ծոմ կոչուամ, և
Տիրոջը հաճելի օ՞ր։ Ահա սա է այն 6
ծոմը, որին ես հաւանուամ եմ,
լուծիլ անիրաւութեան կապանք-
ները, բաց արա լուծի կոշկռա-
ները. և ջարդուածներին ազատ
թող տուր, և որ ամեն տեսակ
լուծ կոտրէք։ Այո՛, հացդ կըտ- 7
րիր քու՝ սովածին, և թափա-
ռական խեղճերին տար տունդ,
երբոր մի մերկ տեսնես, նորան
հագցրու, և քեզ պէս մարմին
ունեցողից քեզ մի ծածկիր։
Այն ժամանակ քո լոյսը արշա- 8
լոյսի պէս պիտի ծագէ, և քո
բժշկութիւնը շուտով պիտի
բուսանէ, և քո արդարութիւնը
պիտի գնայ քո առջևից, Տիրոջ
փառքը պիտի պահէ քեզ ետևե-
ից։ Այն ժամանակ դու կ'կան- 9
չես, և Տէրը կ'պատասխանէ,
դու կ'աղաղակես, և նա կ'ասէ.
Ահա ես։ Եթէ որ հեռացնես
քո մէջից լուծը, մատնելն և չա-
րախօսութիւնը դէն գցես. Եւ 10
կերակրես սովածին ախորժանօք,
և կարօտի հոգին կշռացնես. այն
ժամանակ քո լոյսը կ'ծագէ խա-
ւարումը, և քո խաւարը կ'լինի
կէս օրուայ պէս։ Եւ Տէրը քեզ 11
միշտ կ'առաջնորդէ, և կ'կշռա-
ցընէ քո անձը երաշանեքումը, և
ոսկորներդ կ'պաւարթացնէ, և
Ջրարբի պարտէզի նման կ'լինիս,

և ջրի ակնի պէս որի ջուրը չի
12 պակասիլ։ Եւ քանդքը պիտի շի-
նեն մշտակայ աւերակները. և
դու կ'կանգնեցնես դարերից ի
վեր աւերակ հիմերը, և քեզ կը
կոչեն նորոգութիւն, և շէն
13 ճանապարհներ վերանորոգող։ Ե-
թէ ետ դարձնես շաբաթից քո
ոտքը, որ բաղձանքդ չկատարես
իմ սուրբ օրը, և շաբաթը կոչես
զուարճութիւն, և Տիրոջը նուիր-
եալը պատուական. և նորան
պատուես՝ քո ճանապարհները
չկատարելով, և քո բաղձանքը չը
լրացնելով և զրուցաբանու-
14 թիւն չանելով. Ապ ժամանակ
կ'զուարճանաս Տէրով, և ես քեզ
վեր կ'հանեմ երկրի բարձր տեղե-
րը, և քեզ կ'ուտեցնեմ քո Հօր
Յակոբի ժառանգութիւնը. վասն
զի Տիրոջ բերանը խօսեց։

ԳԼ. ՆԹ

1 Ահա Տիրոջ ձեռքը չէ կարճա-
ցել փրկելուց, և նորա ականջը
2 չէ ծանրացել լսելուց. Ապ ձեր
անօրէնութիւններն են բաժա-
ւում ձեր մէջը և ձեր Աստուծոյ
մէջը. և ձեր մեղքերը ծածկեցին
3 երեսը ձեզանից որ չլսէ։ Վասն
զի ձեր ձեռքերը պղծուած են
արիւնով, և ձեր մատները՝ անօ-
րէնութիւնով, ձեր շրթունքները
սուտ են խօսում, ձեր լեզուն
4 խորհում է անիրաւութիւն։ Ձը
կայ արդարութեամբ բողոքող,
և չկայ ճշմարտութեամբ դատ վա-
րող, նորանք յուսում են դա-
տարկ բաների, և խօսում են ա-
նպտութիւն, յղի են թշուառա-
թեամբ և կ'ծնանն անօրէնութիւն։
5 Քարկի ձուերով են թունաւոր գա-
զան, և սարդի ստոյն են հիւ-
սում, նորանց ձուերից ուտողը
կ'մեռնէ, և կտրուողից իժ է
6 դուրս պրծնում։ Նորանց ստո-
յներն հանդերձ չեն դառնալ,
և չի ծածկուիլ նորանց գործե-
րով, նորանց գործերը անօրէնու-
թեան գործեր են, և բռնու-
թեան գործ՝ նորանց ձեռքին։
7 Նորանց ոտքերը չարութեան են

վազում, և շտապում են անմեղ
արիւն թափելու, նորանց խոր-
հուրդները անօրէնութեան խոր-
հուրդներ են, նորանց ճանա-
պարհներում աւերում ու ապա-
կանում կայ։ Խաղաղութեան 8
ճանապարհը չգիտեն, և իրա-
ւունք չկայ նորանց ուղիներում.
իրանց շաւիղները ծռմռել են,
ամեն ով որ նորանում մտնէ
գալիս՝ խաղաղութիւն չգիտէ։
Սրա համար իրաւունքը հեռա- 9
ցաւ մեզանից, և մեզ չէ հա-
նում արդարութիւն. սպասում
են լուսոյ, և ահա խաւարը,
պայծառութեան՝ և –հա մտա-
խուղում ենք մեռ գալիս։ Պատն 10
ենք շօշափում կոյրերի պէս, և
աչք չունեցողի պէս խարխափում
ենք. գլորւում ենք կէս օրին կար-
ծես թէ գիշեր լինի, պարարտ-
ների մէջ լինելով մեռելների
պէս ենք։ Ամենքս մռնչում ենք 11
արջերի պէս, և սգաւորների
պէս ճղճղում. սպասում ենք
դատաստանի, բայց չկայ, փըր-
կութեան է՛+ –ահա՛. նա մեզա-
նից հեռու է։ Վասն զի շատա- 12
ցել են մեր յանցանքները քո
առջեւ, և մեր մեղքերը վկայում
են մեզ դէմ, վասն զի մեր յան-
ցանքները մեզ հետ են, և մեր
անօրէնութիւնները գիտենք։ Յան- 13
ցանք ենք գործել, և ուրացել
ենք Տիրոջը, և խոտորել մեր Ա-
ստուծոյն հետևելուցը, բռնու-
թիւն և ապստամբութիւն ենք
խօսել, և մեր սրտից փուճ բա-
ներն մտածել։ Եւ դատաստանը 14
ետ է դարձել, և արդարութի-
նը՝ հեռուանց կանգնել, քանզի
ճշմարտութիւնը գլորւում է հր-
ապարակում, և ուղղութիւնը
չէ կարողանում ներս մտնել։
ճշմարտութիւնը անհետացել է 15
դառնում, և չարութիւնից հե-
ռացողը կողոպտւում է. և Տէրը
տեսաւ, և սա չար երևեցաւ նո-
րա աչքին, որովհետև իրաւունք
չկայ։ Եւ տեսաւ որ մարդ չը 16
կար, և զարմացաւ որ միջնորդ
չկար. և նորա բազուկը օգնեց
նորան, և նորա արդարութիւնը

17 Նորան նպաստեց։ Եւ նա հագաւ արդարութիւնը զրահի պէս, և փրկութեան սաղաւարտը իր գլխին. և վրէժխնդրութեան զգեստը հագաւ իբր պատմուճան, և իր վերայ առաւ նախանձը վեր-
18 արկուի պէս։ Գործքերին համեմատ հատուցում է տալու համեմատարար. բարկութիւն՝ իր հակառակորդներին, հատուցում՝ իր թշնամիներին, և կղզիներին էլ՝ վարձքը պիտի հատուցանէ։
19 Եւ պիտի վախենան Տիրոջ անունից արևմուտքից եղողները, և նորա փառքից արևելքից եղողները. երբոր թշնամին գետի պէս գայ, Տիրոջ Հոգին նորան փախ-
20 ցնելիս։ Եւ Փրկիչ պիտի գայ Սիոնի համար, և Յակոբի մէջ յանցանքից ետ դարձողների հա-
21 մար, ասում է Տէրը։ Իմ էլ ուխտը նորանց հետ սա է, ասում է Տէրը. Իմ Հոգին որ քեզ վերայ, և իմ խօսքերը որ դրել եմ քո բերանումը, պիտի չպակասեն քո բերանից և քո զաւակից բերանից և քո զաւակների զաւակից բերանից, ասում է Տէրը, այսուհետև մինչև յաւիտեան։

ԳԼ. Կ

1 Վե՛ր կաց, լուսաւորուի՛ր, վասն զի լոյսդ եկել է, և Տիրոջ
2 փառքը ծագել քեզ վերայ։ Վասն զի ահա խաւարը ծածկել է երկիրը, և մառախուղը՝ ազգերը. բայց քեզ վերայ ծագում է Տէրը, և նորա փառքը երեւում է
3 քեզ վերայ։ Եւ մեծ են գալու ազգերը դէպի քո լոյսը, և թագաւորները՝ դէպի քեզ վերայ ծագած պայծառութիւնը։
4 Շուրջդ աչքերդ շուրջանակի և տես, բոլորը ժողովուել գալիս են դէպի քեզ. քո որդիքը հեռուներից են գալիս, և աղջիկներդ բազուկ-
5 ների մէջ են դրուած։ Այն ժամանակ կ'տեսնես և կ'զմայլես, և սիրտդ ուրախութեամբ կ'դողայ և կ'լայնանայ. վասն զի դէպի քեզ պիտի դիմէ մեծ առատութիւ-

ն, և ազգաց հարստութիւնը գայ քեզ մօտ։ Ուղտերի բազ- 6
մութիւնը պիտի ծածկէ քեզ՝ Մադիամու և Գեփայի կորեակները, բոլորը Սաբայից են գալիս, ոսկի և կնդրուկ են բերելու, և Տիրոջ գովասանքներն աւետելու։
Կեդարի բոլոր հօտերը քեզ մօտ 7
պիտի ժողովուին, Նաբայեթի խոյերը պիտի ծառայեն քեզ. վեր պիտի ելնեն իբրև ընդունելի իմ սեղանի վերայ, և իմ փառաց տունը պիտի փառաւորեմ։
Ո՞վ են սորանք, որ թռչում 8
են ամպի պէս, և աղաւնիների պէս՝ դէպի իրանց վանդակները։
Վասն զի կղզիները ակնկալում են 9
ինձ, և Թարսիսի նաւերը առաջինն են, որ քո որդիքը բերեն հեռուից, և նորանց հետ նորանց արծաթն ու նորանց ոսկին, քո Տէր Աստուծոյ և քեզ զարդարող Իսրայէլի Սուրբի անուան համար։ Եւ օտարաց որդիքը պի- 10
տի շինեն քո պարիսպները, և նորանց թագաւորները քեզ պիտի ծառայեն. վասն զի իմ բարկութեանդ մէջ քեզ զարկեցի, բայց իմ հաճութիւնով պիտի քեզ գթամ։ Եւ քո դուռները պիտի 11
միշտ բաց լինեն, ցերեկը և գիշերը պիտի չփակուեն, որ ազգերի զօրութիւնը քեզ մօտ բերեն, և նորանց թագաւորները հանդէսով կ'գան։ Վասն զի այն 12
ազգը և այն թագաւորութիւնը որ քեզ չի ծառայել, պիտի փչանայ. և այնպիսի ազգերը պիտի բոլորովին քանդուին։ Լիբանանի 13
փառքը քեզ մօտ պիտի գայ, մայրը, սօսին և սօսախը միասին, իմ սրբարանի տեղը զարդարելու համար, և իմ ոտքերի տեղը պիտի փառաւորեմ։ Եւ 14
քեզ մօտ պիտի գան ծռելով քեզ տանջողների որդիքը, և քեզ պիտի երկրպագութիւն անեն ոտքերիդ թաթերի մօտ բոլոր քեզ անարգողները. և քեզ պիտի կոչեն. Տիրոջ քաղաք, Իսրայէլի Սուրբի Սիօնը։ Նորա 15
փոխանակ որ եղել էիր թողուած, ատուած, և անտես ձգուած,

ես քեզ շինել եմ յաւիտենական փառք, ուրախութիւն յազ-
16 դէ յազգ։ Եւ պիտի ազգերի կաթին ծծես, և թագաւորների
աւինքին ես ծծելու, և իմանալու ես, որ ես Տէրս եմ քո Փրկիչը,
և քեզ Ազաւորը՝ Յակոբի Հզօրս։
17 Պղնձի տեղ ոսկուն պիտի բերեմ,
և երկաթի տեղ պիտի արծաթի բերեմ, և փայտերի տեղ՝ պղինձ,
և քարերի տեղ՝ երկաթ, և քո վերակացուներդ պիտի շինեմ խա-
ղաղութիւնը, և քո տասիկաններ-
18 դըդ՝ արդարութիւնը։ Այլևս ըլ-
ալի չի լինիլ քո երկրումը բռնութիւն, և աւերում ու կոտրած՝ քո սահմաններումը. և
փրկութիւնը կոչելու ես քո պարիսպները և քո դուռները Օրհ-
19 նաբանութիւնը։ Այլևս արևը չէ լինելու քո լոյսը ցերեկումը,
և լուսինը չէ քեզ լոյս տալու լուսաւորելու համար. այլ Եհովան կ'լինի քեզ համար յաւի-
տենական լոյսը, և քո Աստուա-
20 ծը՝ քո փառքը։ Քո արևն այլ
ևս պիտի մայր չմտնէ, և քո լուսինը չնուազի, այլ Եհովան պիտի լինի քո յաւիտենական լոյսը,
և պիտի վերջանան քո սուգի օ-
21 րերը։ Եւ քո ժողովրդի բոլորն էլ արդար պիտի լինին, յաւիտեան պիտի ժառանգեն երկիրը, իրրև
իմ անկած ընձիւղը՝ իմ ձեռաց գործը փառաւորուելու համար։
22 Ամենափոքրը հազար պիտի դառնայ, և ամենապզտիկը զօրաւոր
ազգ. ես Տէրս իր ժամանակին կ'շտապեմ։

ԳԼ. ԿԱ.

1 Տէր Եհովայի Հոգին ինձ վերայ է, քանի որովհետև Տէրը օծել է ինձ. նա ուղարկել է ինձ աղքատներին աւետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատութիւն հրատա-
2 րակելու և կապեալներին՝ արձակում. Տիրոջ համար հրատարակել ընդունելի տարին, և վրէժխնդրութեան օրը՝ մեր Աստուծոյ համար. բոլոր սգաւորներին

մխիթարելու համար. Սիոնի սգաւորների համար որոշելու, որ 3
նորանց փառք տրուի մոխրի տեղ, ուրախութեան իւղ՝ սուգի տեղ, գովութեան պատմուճան հանգուցած սրտի տեղ. և նորանց պիտի կոչեն Արդարութեան բներ, որ Տէրը է տնկել իր փառաւորութեան համար։ Եւ 4
նորանք պիտի շինեն յաւիտենական աւերակները, առաջի փլատակները պիտի կանգնեցնեն, և պիտի նորոգեն աւերման քաղաքները, դարե ցդար ամայի տեղերը։ Եւ օտարականները պի- 5
տի կանգնեն, և ձեր հօտերը հովուեն. և օտարաց որդիքը ձեր երկրագործներն ու այգեգործները պիտի լինին։ Եւ դուք պիտի 6
Տիրոջ քահանաները կոչուիք, մեր Աստուծոյ պաշտօնեաներ են ասելու ձեզ. ազգերի հարստութիւնը պիտի ուտէք, և նորանց փառքովը պանծաք։ Ձեր ամօթի 7
փոխարէն կրկնապատիկ ---։--- և անարգանաց փոխարէն պիտի ցնծան իրանց բաժնի վերայ, սորա համար կրկնապատիկը պիտի ժառանգեն իրանց երկրումը, յաւիտենական ուրախութիւն են ունենալու նորանք։ Վասն զի ես Տէրս սիրում եմ 8
իրաւունքը, ատում եմ անիրաւութեամբ յափշտակողին, և պիտի տամ նորանց գործոց վարձքը հաւատարմութիւնով, և նորանց հետ յաւիտենական ուխտ պիտի դնեմ։ Եւ պիտի ճանաչ- 9
ուին ազգերի մէջ նորանց սերունդը, և նորանց զաւակունքը ժողովրդների մէջ, բոլոր նորանց տեսնողները պիտի ճանչնան, վասն զի նորանք Տիրոջ օրհնուած սերունդը պիտի լինին։

Ես ուրախութեամբ պիտի ու- 10
րախանամ Տէրովը, պիտի ինդայ իմ անձը իմ Աստուծովը. որովհետև ինձ հագցրեց փրկութեան հանդերձներին, արդարութեան պատմուճանը գցեց ինձ վերայ. ինչպէս մի փեսայ, որ դնում է իր խոյրը, և մի հարսի պէս՝ որ զարդարւում է իր զարդերովը։

11 վասն զի ինչպէս որ երկիրը բուսացընէ՛ է իր առնիկը, և ինչպէս որ պարտէզը ծլիլ է տալիս իր մէջ սերմնուածը, այսպէս էլ Տէր Եհովան բուսացնելու է արդարութիւնը և օրհնաբանութիւնը բոլոր ազգերի առջև։

ԳԼ. ԿԲ

1 Սիոնի պատճառով չեմ լռելու, և Երուսաղէմի համար չեմ հանդրտանալու, մինչև որ ծագէ նորա արդարութիւնը պայծառ պէս, և նորա փրկութիւնը՝ բո-
2 ցակառ ջահի պէս։ Եւ ազգերը պիտի տեսանեն քո արդարութիւնը, և բոլոր թագաւորութիւնները՝ քո փառքը. և քեզ նոր անունով պիտի կոչեն, որ Տի-
3 րոջ բերանը կ'անուանէ։ Եւ դու փառաւոր պսակ կ'լինիս Տիրոջ ձեռքումը, և արքայական թագ՝ քո Աստուծոյ ափումը։
4 Այլևս քեզ չեն ասել Թողուած, և քո երկրին այլևս չեն ասել Աւերակ, այլ քեզ պիտի ասեն Իմ հաւանածը, և քո երկրին Ամուսին ունեցող, վասն զի Տէրը հաւանելու է, և քո երկիրն իր-
5 րև ամուսին է առնելու։ Վասն զի երիտասարդը կոյսի հետ ամուսնանալու պէս, պէտք է քո որդիները քեզ հետ ամուսնանան, և փեսան հարսի վերայ ուրախանալու պէս, պէտք է քեզ վերայ ուրախանայ քո Աստուածը։
6 Քո պարիսպներին վերայ, ով Երուսաղէմ, պահապաններ եմ դրել, նորանք բոլոր օրը և բոլոր գիշերը բնաւ պիտի չլռեն. դուք ով Տիրոջը յիշողներ, մի լռէք,
7 Եւ նորան դադար մի տաք, մինչև որ նա հաստատէ, և մինչև որ Երուսաղէմը օրհնութիւն շինէ
8 երկրումը։ Տէրը երդում է արել իր աջովը և իր զօրութեան բազկովը, Թէ Քո ցորենը չեմ տալու ուրիշ ազգաց քո թշնամիներին իրրև կերակուր, և օտարաց որդիքը պիտի չխմեն գինին, որի վերայ դու վաստակեցիր։
9 Այլ նորա հնձողները պիտի ու-

տեն նորան, և Տիրոջը օրհնաբանեն, և նորա ժողովները պիտի խմեն իմ սրբարանի սրահներումը։

10 Անցէք՝ անցէք դռներիցը, պատրաստեցէք ժողովրդի ճանապարհը, ուղղեցէք՝ ուղղեցէք ուղին, քարերը միջոցը հանեցէք, դրօշակ բարձրացրէք ազգերի հա-
11 մար։ Ահա Տէրը լսել է տուել մինչև երկրի ծայրը. ասացէք Սիոնի աղջկանը՝ Ահա քո փրկիչը գալիս է, ահա նորա վարձքը իր հետն է, և իր հատուցումը իր առջևն։ Եւ նորանց պիտի տանեն.
12 Սուրբ ժողովուրդ, Տիրոջ փրկեալները. և քեզ պիտի կոչեն. Ուզուած, Չմոռաց քաղաք։

ԳԼ. ԿԳ

1 Ո՞վ է սա, որ գալիս է Եդոմից, հանդերձները կարմրացած Բոսորայից. սա՝ որ փառաւորուած է իր հագուստովը, և ծածանուելեմ է իր շատ զօրութեան մէջ։

Ես, որ խօսում եմ արդարութեամբ և կարող եմ փրկելու։

2 Ինչո՞ւ համար կարմիր է քո հագուստը, և քո հանդերձները հնձան կոխողինի պէս։

3 Հնձանը ես մենակ եմ կոխել, և ժողովուրդներից մէկը չկար ինձ հետ. և ես կոխեցի նորանց իմ բարկութեամբս, և ոտնահարեցի իմ սրտմտութեամբս, և նորանց արիւնը իմ հանդերձներովս տուաւ և իմ բոլոր զգեստները ներկեցի։

4 Վասն զի վրէժխնդրութեան օր կար իմ սրտումը, և իմ փրկեալներուս տարին եկել էր։

5 Եւ նայեցի, բայց օգնող չկար, և սիրտս զարմացաւ մեծապէս, բայց ձեռք բռնող չկար. և ինձ օգնեց իմ բազուկը, և իմ բարկութիւնն էր ինձ ձեռք բռնողը։

6 Եւ ես ժողովուրդները կոխ տուի իմ բարկութեամբս, և նորանց արբեցրի իմ սրտմտութեամբս, և նորանց արիւնը իջեցրի գետինը։

7 Տիրոջ ողորմութիւնները պիտի յիշեմ, Տիրոջ գովաբանքները,

Տիրոջ բոլոր մեզ արածների համեմատ, և այն շատ բարիքը՝ ի-
մայել տան համար, որոնք նա
արաւ իր գթութեամբն ու ա-
8 ւատ ողորմութեամբը։ Եւ նա
ասաց. Նորանք հէնց իմ ժողո-
վուրդներն են, —ինչ-է որդիք, ո-
րոնք չեն ստել. և նա նորանց
9 փրկիչը եղաւ։ Նորանց բոլոր նե-
ղութեանց մէջ նա նեղվում էր.
և նորա երեսի հրեշտակը ազա-
տեց նորանց, իր սիրոյն ու գը-
թութեամբը նա փրկեց նորանց,
և նորանց վեր առաւ և կրեց նո-
րանց բոլոր վաղուայ օրերին։
10 Բայց նորանք ապստամբեցին և
բարկացրին նորա Սուրբ Հոգին,
նա էլ նորանց թշնամի դարձաւ,
և ինքը պատերազմեց նորանց հետ։
11 Եւ այն հին օրերին յիշեց Մովսէս
իր ժողովուրդը, ո՞ւր է նա, որ
վեր հանեց նորանց ծովիցը իր
հօտի հովիւովը, ո՞ւր է նա, որ
նորանց միջումը դրաւ իր Սուրբ
12 Հոգին. Որ ման ածեց Մովսէսի
աջ կողմին իր փառաւորութեան
բազուկը, որ պատառեց Ջուրերը
նորանց առջև, որպէս զի իրան
համար յաւիտենական անուն
13 չինէ. Որ նորանց անցկացրեց ան-
դունդներով, որոնք չասհեցին
ինչպէս որ ձին անապատումը։
14 Ինչպէս որ անասունը իջնում է
հովիտումը, Տիրոջ Հոգին նորան
հանգստացրեց, նոյնպէս էլ դու
առաջնորդեցիր քո ժողովրդին,
որ քեզ համար փառաւոր անուն
15 չինես։ Նայիր երկնքիցը և տես,
և քո սուրբ և փառաւոր բնա-
կարանից, ո՞ւր է քո նախանձն
ու ոյժը, քո ողիքների գալար-
ումը և քո գթութիւնները իմ-
րանց ետ են քաշում ինձ դէմ։
16 Վասն զի մեր Հայրը դու ես, ո-
րովհետև մենք Աբրահամին չենք
դիտում, և Իսրայէլին չենք ճա-
նաչում. դու ես մեր Հայրը, ով
Տէր, վաղուց ի վեր է քո անու-
17 նը մեր Փրկիչ։ Ինչո՞ւ համար
դու մեզ մոլորեցնում ես, ով
Տէր, քո ճանապարհներից, խըս-
տացնո՞ւմ մեր սրտերը, որ քե-
զանից չվախենանք, ետ դարձիր
քո ծառաների համար՝ քո ժա-
ռանգութեան ցեղերի համար։
Քիչ ժամանակ ժառանգեց քո 18
սրբութեան ժողովուրդը. մեր
թշնամիները ոտնակոխ արին քո
սրբարանը։ Մենք եղել ենք այն- 19
պէս որ իրր թէ դու յաւիտեան
չես տիրել մեզ վերայ, որոնց
վերայ կոչուած չէ եղել քո ա-
նունը։

Գլ. ԿԴ

Ո՜հ թէ ճեղքէիր երկինքը՝ վայր 1
իջնէիր. քո առջևը լեռները
պիտի հալուէին ինչպէս կրակով
2 վառվում է խուրը, և ջուրը
եփում կրակով. որ իմացնէիր
քո անունը քո թշնամիներին, և
քո երեսից դողային ազգերը։
3 Երբոր դու արիր այն սոսկալի
բաները, որ մենք չէինք յուսում,
և իջար, քո երեսից լեռները
4 հալուեցան։ Եւ յաւիտենից ի վեր
չէ լսուած և ականջի չէ հա-
սած, աչք էլ չէ տեսել, որ քե-
զանից բաց մէկ ուրիշ աստուած
յոյժ բաներ անէր իրան յու-
սացողներին։ Դու հանդում ես 5
ուրախ եղողին և արդարութիւն
անողին, որ յիշում են քեզ քո
ճանապարհներումը. ահա դու
բարկացար, և մենք յանցաւոր
էինք. յաւէտ դորանցում ենք
փրկուում, մի՞թէ մենք կ'փրկը-
ուինք։ Եւ մենք ամենքս պիղծ 6
բանի պէս ենք դառել, և դաշ-
տանի շորի պէս է մեր ամեն ար-
դարութիւնը, և մենք ամենքս
տերևի պէս մենք ամենքս, և մեր
յանցանքները քամու պէս վեր
են առնում մեզ։ Եւ քո անունը 7
կանչող չկայ, մէկ զարթնող՝ որ
քեզանով զօրանար. վասն զի
դու ծածկել ես քո երեսը մե-
զանից, և մեզ մաշեցնում ես
մեր անօրէնութեանց ձեռքովը։
Եւ հիմա, ով Տէր, դու ես մեր 8
Հայրն, մենք կաւն ենք, և դու՝
մեր բրուտը, և քո ձեռաց գործ
ենք մենք ամենքս։ Մի բարկա- 9
նար, ով Տէր, յանչափս, և մի
յաւիտեան յիշիր անօրէնութիւ-

նը, ահա նայիր մէկ, ամենքս քո
10 ժողովուրդն ենք։ Քո սուրբ քա-
ղաքները եղել են անապատ, Սիօնը անապատ է դառել, Երու-
11 սաղէմը՝ աւերակ։ Մեր սրբու-
թեան և մեր փառաց տունը, որի մէջ քեզ օրհներգում էին մեր հայրերը, եղել է հրոյ ճարակ. և մեր ամեն ցանկալիքը ա-
12 մայի են դարձել։ Ա՛յս բաների վերայ պիտի զսպե՞ս քեզ, ով Տէր, պիտի լռե՞ս և մեզ յանդիման նեղե՞ս։

ԳԼ. ԿԵ

1 Ես որոնուեցայ նորանցից, որ չէին հարցնում, ես գտնուեցայ նորանցից, որ ինձ չէին խնդրում. և ասացի. Ա՛հա ես, ահա ես, այն ազգին, որ իմ անունը չէր
2 կանչել։ Ես տարածեցի իմ ձեռքերը ամեն օր դէպի մի ապստամբ ժողովուրդ, որոնք գնում են մի այնպիսի ճանապարհով որ լաւ չէ, իրանց խորհուրդների ե-
3 տևից. Մի այնպիսի ժողովուրդ, որ ինձ բարկացնում են միշտ իմ առջև, որոնք զոհում են այգիներում, և խունկ ծխում աղիւս-
4 ների վերայ. Որոնք բնակում են դերեզմաններում, և գաղտուկ տեղերում օթևանում, որոնք խոզի միս են ուտում, և որոնց ամանների մէջ պղծութիւններ
5 կան փրթուած։ Որոնք ասում են՝ Զգուշացիր, ինձ մի դիպչիր, վասն զի ես սուրբ եմ քեզ համար. սրանք ծուխ են իմ բնդոց մէջ, բորբոքած կրակ են ա-
6 մեն օր։ Ա՛հա գրուած է իմ առջև, չպիտի լռեմ, այլ պիտի հատուցանեմ, և հատուցանեմ
7 նորանց ծոցը. Ձեր անօրէնութիւնները և ձեր հարանց անօրէնութիւնները միասին, ասում է Տէրը, որոնք խունկ ծխեցին լեռանց վերայ, և բլուրների վերայ անարգեցին ինձ, և ես եմ պիտի չափեմ իրանց առաջի գործն իրանց ածին։
8 Ա՛յսպէս է ասում Տէրը. Ինչպէս քաղցու է գտնւում ողկոյզի մէջ, և ասում են. Դորան մի փչացնիր, վասն զի օրհնութիւն կայ միջումը, նոյնպէս եմ անելու ես էլ իմ ծառայի համար, որպէս զի ամենքին չփչացնեմ։
9 Եւ ներուած պիտի հանեմ Յակոբից սերնդը, և Յուդայից իմ լեռանց ժառանգներ, և իմ ընտրեալները պիտի ժառանգեն այն, և իմ ծառաները՝ այնտեղ բնակեն։
10 Սարօնը պիտի հօտերի փարախ լինի և Ախորի ձորը՝ արջառների մակաղատեղ իմ ժողովրդի հա-
11 մար, որ ինձ խնդրելու է։ Բայց դուք Տիրոջը թողնող էք, իմ սուրբ լեռան մոռացողներ, Գադ [illegible] սեղան պատրաստողներ, և Մենի կուռքին նուէր լցնողներ էք։
12 Եւ ես էլ ձեզ որոշեցի սրի համար, և ամենքդ պիտի ծռուիք մորթուելու, որովհետև կանչեցի և դուք չպատասխանեցիք, խօսեցի և դուք չլսեցիք. այլ չարութիւն արիք իմ աչքի առջև, և ինձ հաճելի չեղածն
13 ընտրեցիք։ Նորա համար Տէրը Եհովան այսպէս է ասում. Ա՛հա իմ ծառաները պիտի ուտեն, բայց դուք պիտի սոված մնաք, ահա իմ ծառաները պիտի խմեն, բայց դուք պիտի ծարաւ մնաք, ահա իմ ծառաները պիտի ուրախանան, բայց դուք պիտի ամչէք։
14 Ահա իմ ծառաները պիտի ցնծան սրտի բերկրութիւնից, բայց դուք պիտի գոռաք սրտի ցաւից, և սրտաբեկութիւնից
15 պիտի ոռնաք։ Եւ ձեր անունը պիտի թողէք իբրև անէծք իմ ընտրեալների համար, և Տէր Եհովան քեզ պիտի մեռցնէ, բայց իր ծառաներին պիտի մի ուրիշ
16 անուն կանչէ։ Որ երկրի վերայ օրհնուողը պիտի օրհնուի ճշմարիտ Աստուծով, և երկրի վերայ երդում անողը երդում անէ ճշմարիտ Աստուծով, վասն զի այն առաջի նեղութիւնները մոռացուեցան, և նորանք ծածկուած
17 են իմ աչքի առջևից։ Որովհետև ահա ես նոր երկինք և նոր երկիր եմ ստեղծում, և առաջիններն պիտի չյիշուին և միտքը չգան։

18 Աւլ դուք պիտի ուրախանաք
և բերկրուիք յաւիտեան յաւի-
տենից նորանով, որ ես ստեղ-
ծելու եմ։ Վասն զի ահա ես ըս-
տեղծում եմ Երուսաղէմը բերկ-
րանք և նորա ժողովուրդը՝ ուրա-
19 խութիւն։ Եւ ես պիտի ցնծամ
Երուսաղէմի վերայ, և ուրախա-
նամ իմ ժողովրդովը. և այլևս
պիտի չլսուի նորանում լացի ձայն
20 և ողբի ձայն։ Եւ այլևս պիտի
չինի այնտեղից մի քանի օրական
մանուկ, և մի ծեր, որ իր օրերը
լրացրած չինի. վասն զի երիտա-
սարդը պիտի հարիւր տարեկան
մեռնէ, և հարիւր տարուան ժե-
21 ղաւորը պիտի անիծուի։ Եւ տու-
ներ պիտի շինեն և բնակեն, և
այգիներ անկեն ու նորանց պը-
22 տուղն ուտեն։ Նորանք չեն շի-
նիլ, որ ուրիշը բնակէ, նորանք
չեն տնկել, որ ուրիշն ուտէ. վա-
սն զի իմ ժողովրդի օրերը ծառի
օրերի չափ պիտի լինին, և իրանց
ձեռաց գործը պիտի մնաշեցնեն
23 իմ ընտրեալները։ Նորանք պիտի
դատարկ աշխատին, և
չծնեն թշուառութեան համար.
վասն զի նորանք Տիրոջ օրհնեալ-
ների սերունդը կ'լինեն, և նորանց
24 ազգակունքն են նորանք։ Եւ պի-
տի լինի, որ նորանք դեռ չկան-
չած՝ ես կ'պատասխանեմ և նո-
րանք դեռ խօսելիս՝ ես կ'լսեմ։
25 Գայլը և գառը միասին կ'արած-
ճեն, և առիւծը արջառի պէս
խոտ պիտի ուտէ. և օձի կերա-
կուրը հող է լինելու։ Նորանք
պիտի չվնասեն և չապականեն իմ
բոլոր սուրբ լեռան վերայ, ասա-
ւմ է Տէրը։

ԳԼ. ԿԶ

1 Ասպէս է ասում Տէրը. Եր-
կինքը իմ աթոռն է և երկիրը
իմ ոտքերի պատուանդանը, գո
ի՞նչ տուն է, որ շինում էք ինձ
համար, և գա ի՞նչ տեղ է իմ
2 հանգստութեան համար։ Այդ
ամենն էլ իմ ձեռքն է արել,
և եղան այդ ամենը, ասում է
Տէրը. և ես սորան եմ մտիկ տալիս՝
խոնարհին և կսկծած հոգի ունե-
ցողին և իմ խօսքից դողացողին։
Արջառ մորթողը մարդասպան է, գառն զոհողը շուն
մորթող է, նուէր մատուցանողը
խոզի արիւն մատուցանող, կնդրուկ
յիշեցնողը կուռքը օրհնող է։
Նորանք էլ են ընտրել իրանց
ճանապարհները, և իրանց սրտին
հաճելի են իրանց կուռքերը. Ես
էլ եմ ընտրում իրանց թշուա-
ռութիւնները, և նորանց վախե-
ցած բաները պիտի բերեմ նո-
րանց վերայ, վասն զի ես կանչե-
ցի և պատասխանող չկար, խո-
սեցի և նորանք չլսեցին, և չա-
րութիւն արին իմ աչքի առջև,
և իմ չուզած բանը ընտրեցին։
Լսեցէք Տիրոջ խօսքը դուք,
որ դողում էք նորա խօսքից. ա-
սում են ձեր եղբայրները, որ
ձեզ ատում և անարգում են
իմ անուան համար՝ Թող Տէրը
փառաւորուի, և մենք տեսանենք
ձեզ ուրախութեան մէջ. բայց նո-
րանք պիտի ամաչեն։
Աղաղակի ձայն կայ քաղաքի-
ցը, մի ձայն՝ տաճարիցը. Տիրոջ
ձայնը, որ հատուցանում է իր
թշնամիներին հատուցումը։ Դեռ
չերկնած ծնեց, դեռ երկունքը
չեկած՝ արու զաւակով ազատ-
ուեցաւ։ Ո՞վ է այսպիսի բան
լսել, ո՞վ այսպիսի բան տեսել,
մի՞թէ երկիրը մէկ օրում է ծըն-
ւում, կամ մէկ ազգը մէկ անգա-
մում է ծնվում, որ Սիոնը երկ-
նում և իսկոյն ծնում է իր որդ-
կանցը։ Ես որ բերում եմ ծնե-
լու կէտին՝ ծնել չե՞մ տալ, աս-
ում է Տէրը, կամ ես որ ծնել
եմ տալիս՝ պիտի կապէ՞ աստ-
է քո Աստուածը։ Երուսաղէմի
հետ ուրախացէք, և բերկրացէք
նորանով, դուք ամենքդ որ նորան
սիրում էք. ուրախացէք նորա
հետ ուրախութեամբ, ով դուք
ամենքդ, որ նորա հետ սուգ էիք
անում։ Վասն զի պիտի ծծէք և
կշտանաք նորա մխիթարութեան
տինքիցը, որպէս զի դիէք և
զուարճանաք նորա փառաց առ-
ատութիւնիցը։

12 Վա՛ն զի այսպէս է ասում Տէրը. Ահա ես բերում եմ գետի պես խաղաղութիւնը նորա վերայ, և յորդահոս վտակի պէս՝ ազգաց փառքը. և դուք պիտի ծծէք, գրկի մէջ պիտի վեր առնուիք, և ծունկերի վերայ պիտի գգվուիք։ 13 Ինչպէս որ մէկ մարդ՝ որին իր մայրը կ'մխիթարէ, նոյնպէս էլ ես պիտի մխիթարեմ ձեզ, և Երուսաղէմով պիտի մխիթարուիք։ 14 Եւ պիտի տեանէք, և ձեր սրտերը ուրախանան. և ձեր ոսկորները պիտի կանանչ խոտի պէս ծաղկեն, և պիտի յայտնուի Տիրոջ ձեռքը իր ծառաների վերայ, և բարկութիւնը նորա թըշնամիների վերայ։ 15 Քանզի ահա Տէրը գալիս է կրակով և մրրկի պէս նորա կառքերը. որ գործ դնէ եռանդով իր բարկութիւնը. և իր սպառնալիքը կրակի բոցով։ 16 Վա՛ն զի կրակով է դատելու Տէրը՝ և իր սրովը բոլոր մարմինը, և շատ են լինելու Տիրոջ սպանածները։

17 Իրանց սրբոցները և իրանց մաքրոցները, պարտէզների հետևմար մէկի ետևից մէջտեղը, ուրանք խոզի միս են ուտում և պիղծ բան և մուկ, մէկտեղ պիտի բնաջինջ լինին, ասում է 18 Տէրը։ Եւ ես նորանց գործերին և նորանց խորհուրդներին համեմատ պիտի գամ, բոլոր ազգերն ու լեզուները ժողովելու, և նորանք պիտի գան և իմ փառքը տեսնեն։ 19 Եւ նորանցում նշան պիտի դնեմ, և նորանցից պիտի ուղարկեմ իրեև ազատուածներ ազգերի մօտ, այսինքն Թարսիս, Փուղ Ղուդ՝ աղեղնաւորներին, Թոբել և Յաւան. այն հեռու կղզիքը, որ չեն լսել իմ համբաւը և չեն տեսել իմ փառքը, և պիտի պատմեն իմ փառքը ազգերի մէջ։ 20 Եւ նորանք պիտի բերեն ձեր բոլոր եղբայրներին բոլոր ազգերից իրեև ընծայ Տիրոջ համար ձիերով և կառքով, գահաւորակներով, ջորիներով և տաճիկ ուղտերով իմ սուրբ լեառը՝ Երուսաղէմ, ասում է Տէրը. ինչպէս որ Իսրայէլի որդիքն են բերում ընծայ մաքուր ամանով Տիրոջ տունը։ 21 Եւ նորանցից էլ եմ առնելու քահանաներ և Ղեւտացիներ, ասում է Տէրը։ 22 Վա՛ն զի ինչպէս որ այն նոր երկինքը և այն նոր երկիրը, որ ես առեղծելու եմ, կանգնած են իմ առջև, ասում է Տէրը, նոյնպէս էլ պիտի կանգնած կենայ ձեր սերունդը և ձեր անունը։ 23 Եւ պիտի լինի, որ ամսից ամիս և շաբաթից շաբաթ պիտի գայ ամեն մարմին իմ առջև երկրպագելու, ասում է Տէրը։ 24 Եւ նորանք պիտի դուրս գան և տեսնեն ինձ դէմ ապստամբող մարդկանց դիերը, վասն զի նորանց որդը չի մեռնիլ, և նորանց կրակը չի հանգչիլ, և նորանք պիտի զզուանք լինին ամեն մարմնոյ համար։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Բենիամինի երկրում Անաթովթի մէջ եղող քահանաներից Քեղկիայի որդի Երեմիայի խօսքերը, 2 որ դէպի նորան եղաւ Տիրոջ խօսքը Յուդայի թագաւոր՝ Ամոնի որդի Յովսիայի օրերումը՝ նորա թագաւորութեան երեք-

3 տասանեերորդ տարումը. Եւ եղաւ Յուդայի թագաւոր՝ Յովսիայի որդի Յովակիմի օրերումը մինչև Յովսիայի որդու Սեդեկիայի տասանեերորդ տարուայ վերջը մինչև Երուսաղէմի գերութիւնը՝ հինգերորդ ամսումը։

4 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-

5 սելով. Քեզ որովայնում չառեղ-

ծած՝ ես քեզ դիտէի, և արգան-
դից դեռ դու դուրս չեկած՝ ես
քեզ սրբեցի, ես քեզ ազգերի
6 մարգարէ եմ դրել։ Եւ ես ասա-
ցի. Ո՛հ, ով Տէր Եհովայ, ահա
ես չգիտեմ խօսել, վասն զի ես
7 մանուկ եմ։ Եւ Տէրն ասաց ինձ.
Մի ասիր թէ՝ Ես մանուկ եմ,
բայց ուր որ քեզ ուղարկեմ՝
գնա. և ամեն ինչ որ քեզ պատ-
8 ուիրեմ՝ խօսիր։ Մի վախիր նո-
րանց երեսից, վասն զի ես քեզ
հետ եմ քեզ ազատելու համար
ասում է Տէրը։
9 Եւ Տէրը մեկնեց իր ձեռքը և
դիպաւ իմ բերանին, և Տէրն ա-
սաց ինձ. Ահա իմ խօսքերը քո
10 բերանը դրի, Տես, ես քեզ նշա-
նակեցի այսօր ազգերի վերայ և
թագաւորութեանց վերայ, որ
խլես և պոկես և փչացնես ու
կորցնես, որ շինես և տնկես։
11 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
սելով. Ի՞նչ ես տեսանում դու,
ով Երեմիա, և ես ասացի. Մի
նշենի գաւազան եմ տեսանում
12 ես։ Եւ Տէրն ասաց ինձ. Լաւ
տեսար, վասն զի ես պիտի հըս-
կեմ իմ խօսքերի համար, որ
կատարեմ այն։
13 Եւ երկրորդ անգամ եղաւ Տի-
րոջ խօսքը դէպի ինձ ասելով.
Ի՞նչ ես տեսանում դու. և ես ա-
սացի. Մի եռացող կաթսայ եմ
տեսանում ես, և երեսը հիւսիսի
14 կողմից է։ Եւ Տէրն ինձ ասաց.
Հիւսիսից պիտի յարձակուի չա-
րիքը երկրի բոլոր բնակիչների վե-
15 րայ։ Վասն զի ահա ես կ՚կանչեմ
հիւսիսի բոլոր թագաւորութեանց
ցեղերը, ասում է Տէրը, որ գան
և ամեն մէկը իր աթոռը դնէ Ե-
րուսաղէմի դրան մուտքում, և
նորա բոլոր պարիսպների վերայ
շուրջանակի և Յուդայի բոլոր
16 քաղաքների վերայ։ Եւ կ՚խօսեմ
իմ իրաւունքները նորանց հետ
նորանց բոլոր չարութիւնների
համար. որ ինձ թողել են և ու-
րիշ աստուածների են խունկ ծը-
խում, և իրանց ձեռաց գործքե-
րին են երկրպագում։
17 Բայց դու մէջքդ գօտեպնդիր,

և վեր կաց ու ասիր նորանց ա-
մեն ինչ որ քեզ հրամայում եմ
ես. նորանց երեսից մի վախե-
նար, որ մի գուցէ քեզ վախե-
ցընեմ նորանց առջև։ Եւ ահա 18
ես քեզ այսօր շինում եմ մի
ամուր քաղաք և երկաթի սիւն
և պղնձի պարիսպներ բոլոր երկրի
դէմ, Յուդայի թագաւորների և
նորա իշխանների դէմ, նորա քա-
հանաների և երկրի ժողովրդի
դէմ։ Եւ նորանք կ՚պատերազմեն 19
քեզ դէմ, բայց քեզ չեն յաղ-
թել, վասն զի ես քեզ հետ եմ,
ասում է Տէրը, քեզ փրկելու
համար։

ԳԼ. Բ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ դէպի 1
ինձ ասելով. Գնա և կանչիր Ե- 2
րուսաղէմի ականջներին և ասիր.
Այսպէս է ասում Տէրը՝ Յիշեցի
քեզ համար քո երիտասարդու-
թեան քաղցրութիւնը, քո հարս-
նութեան սէրը, քո իմ ետևից
գալը անապատի մէջ այն չսեր-
ուած երկրում։ Սուրբ էր Իսրայէ- 3
լի Տիրոջ համար, նորա արդեանց
առաջինեկը, բոլոր նորան ուտող-
ները յանցաւոր էին լինում, չա-
րիք էր գալիս նորանց վերայ, ա-
սում է Տէրը։ Լսեցէք Տիրոջ 4
խօսքը, ով Յակոբի տուն, և Իս-
րայէլի տան բոլոր ազգատոհմ-
ներ, Այսպէս է ասում Տէրը, 5
Ձեր հայրերը ի՞նչ անիրաւու-
թիւն գտան ինձ վերայ, որ հե-
ռացան ինձանից, և ունայնու-
թեան ետևից գնացին, և ունայ-
նացան։ Եւ չասացին. Թէ Ո՞ւր 6
է Տէրը, որ մեզ վեր հանեց Ե-
գիպտոսի երկրից, որ մեզ մանե
անապատում, ամայու-
թեան և փոսերի երկրում՝ չո-
րութեան և մահուան սուերի
երկրում, այնպիսի մի երկրում,
որով մարդ չէ անցնում, և ուր
մարդ չէ բնակւում։ Եւ ձեզ բերի 7
մի պտղաբեր երկիր, որ ուտէք
նորա պտուղը և նորա բարիքը,
և դուք մտաք և անմաքուր ա-
րիք իմ երկիրը, և իմ ժառան-

գութիւնը պղծութիւն չինեցիք։
8 Քահանաները չասացին. Թէ Ուր
է Տէրը, և օրէնքը ձեռքին բռա-
նողները ինձ չճանաչեցին, և հո-
վիւները ապստամբեցին ինձ դէմ,
և մարգարէքը Բահաղով մարգա-
բէացան, և անպիտան բաներէն
հետիքը գնացին։
9 Ասոր համար դեռ վիճելու եմ
ձեզ հետ, ասում է Տէրը, և
ձեր որդւոց որդիներուն հետ եմ
10 վիճելու։ Վասն որ անցկացէք
Կիտացւոց կղզիները և տեսէք, և
Կեդար ուղարկեցէք կեդար և մէկ
լաւ հասկացէք, և տեսէք, Թէ
արդեօք եղած կա՞յ մի այդպիսի
11 բան։ Թէ արդեօք մի ազգ փո-
խել է էր աստուածները թէպէտ
և նորանք աստուածներ չեն,
բայց իմ ժողովուրդը փոխել է
իր փառքը մի այնպիսի բանով,
12 որ օգուտ չունի։ Երկինք, զար-
մացէք այս բանի վերայ, սասկա-
ցէք և հիացէք շատ, ասում է
13 Տէրը։ Վասն որ իմ ժողովուրդը
երկպառիկ չարութիւն գործեց,
ինձ՝ կենաց Ջրի աղբիւրս՝ թողե-
ցին որ իրանց համար հորեր փո-
րեն՝ ծակծակոտ հորեր, որոնք
չեն կարող պահել ջուրը։
14 Ծառա՞յ է Իսրայէլը, կամ Թէ
ընտածի՞ն է նա. ապա ինչո՞ւ հա-
մար յափշտակութեան մատնը-
15 ուեցաւ։ Նորա դէմ մռնչեցին
առիւծները՝ հանեցին իրանց ձայ-
նը, և նորա երկիրը աւերակ ա-
րին, նորա քաղաքները այրեցին,
16 որ բնակիչ չմնաց։ Մեմփեցւոց
ու Տափնեցւոց տղայքն էլ արա-
17 ծեցին քո գագաթի վերայ։ Չէ՞ որ
սա արաւ քեզ, քո Տէր Աստու-
ծոյն ձգելդ այն ժամանակ երբ
նա քեզ առաջնորդում էր ճա-
18 նապարհումը։ Եւ հիմա ի՞նչ ու-
նիս դու Եգիպտոսի ճանապար-
հումը, և Սիհորի ջուրը խմես,
և ի՞նչ ունիս դու Ասորեստանի
ճանապարհումը, որ գետի ջուրը
19 խմես։ Քեզ քո չարութիւնն է
խրատում, և քո անհաւատար-
մութիւնները են քեզ յանդիմա-
նում. Արդ իմացիր և տես, որ
չար և դառն բան է քո Տէր Աս-
տուծոյն թողելդ, և իմ երկիւղը
քեզ վերայ չինելը, ասում է
Հօրդս Տէր Եհովան։ Վասն որ 20
վաղուց *եմ ես կտրել քո լու-
ծը և քո կապերը կտրել, և ա-
սել ես Թէ Չեմ ծառայում. ո-
բովհետև ամեն բարձր բլուրի վե-
րայ և ամեն կանաչ ծառի տակ
պառկեցիր դու՝ պոռնկացար։ Եւ 21
ես քեզ տնկել եմ իբրև ընտիր
որթ, բոլորովին հաւատարիմ
սերմ. բայց ինչպէ՞ս փոխուեցար
ինձ համար՝ դարձար վայրի որթի
անպիտան ճիւղեր։ Վասն որ 22
Թէ բորակով լուացուիս, և շատ
օճառ գործածես, քո անօրէնու-
թիւնը պիտի մնայ իմ առջև
իբրև արատ, ասում է Տէր Եհո-
վան։ Ինչպէս կարող ես ասել. 23
Չեմ պղծուել Բահաղների ետևից
չեմ գնացել. մտիկ արա հովտի
մէջ քո ճանապարհին, հասկա-
ցիր Թէ ինչ ես արել, ով Թե-
թևաշարժ մայրաշուխիլ մատակ
ուղտ։ Ո՞վ կարող է ետ դարձնել 24
է անապատին, և իր հոգու ցան-
կութիւնով օդ է ծծում, ո՞վ է
կարող նորա տափանքը ետ դարձ-
նել. նորա բոլոր որոնողները չեն
վատանալում, նորան իր ամսում
են գտնում։ Եւ պահիր ոտքդ 25
մերկութիւնից, և կոկորդդ ծա-
րաւութիւնից, բայց դու ասա-
ցիր. †Անկարելի է՝ ոչ, վասն որ
ես սիրել եմ օտարներին, և գը-
նալու եմ նորանց ետևից։

Ինչպէս որ ամաչում է գողը, 26
երբոր բռնւում է, նոյնպէս էլ
ամաչելու են Իսրայէլի տունը,
նորանք իրանց թագաւորները,
իրանց իշխանները, և նորանց քա-
հանաները ու մարգարէները. Ո- 27
րոնք ասում են փայտին Իմ Հայ-
րն ես, և քարին Դու ծնեցիր
ինձ. վասն որ իրանց մէջքը դարձ-
րին դէպի ինձ և ոչ Թէ երեսը.
բայց իրանց նեղութեան ժա-
մանակին ասում են Վեր կաց
և ազատիր մեզ։ Արդ ո՞ւր են 28
քո աստուածները որ շինեցիր
քեզ համար, Թող վեր կենան

---

*ես դու †Այս չկայ

պուղէ քեզ օգնեն քո ձախորդութեան ժամանակին։ Վասն զի քո քաղաքներուն չափ եղան քո աստուածները, ով Յուդա։ Ինչո՞ւ համար վիճաւմ էք ինձ հետ, դուք ամէնքդ ապստամբել էք ինձ դէմ, ասւամ է Տէրը։ Ի զուր եմ ծեծել ձեր որդիանցը, խրատ չեն առել նորանք. ձեր սուրը կերել է ձեր մարգարէներին, ինչպէս մի ապականիչ առիւծ։ Ով ազգ՝ դուք, մտիկ արէք Տիրոջ խօսքին. Մի՞թէ եղա Իսրայէլի համար անապատ եղայ, կամ մի մռայլապատ երկիր. ինչո՞ւ համար է ասւամ իմ ժողովուրդը՝ Ազատ ենք, այլ ևս չենք գալիս քեզ մօտ։ Մի՞թէ կոյսը կ'մոռանայ իր զարդը, հարսը՝ իր գօտին. բայց իմ ժողովուրդը մոռացել է ինձ այնքան օրեր որ թիւ չունի։ Ինչ լաւ սարքւամ ես քո ճանապարհը սէր որոնելու համար, հէնց դորա համար էլ ընթացքդ սովրեցրել ես չարութիւններուն։ Քո քղանցքուամը անմեղ աղքատաց հոգիներուն արիւն էլ է գտնվւամ, ես նորանց չգտայ դռն ծակելիս, այլ այս ամէն բերէր վերայ։ Բայց ասւամ ես. Թէ ես անմեղ եմ, հէնց նորա բարկութիւնը ետ էլ է դառել ինձմանից։ Ահա ես քեզ հետ պիտի դատ վարեմ քո ասելու համար, թէ Չեմ մեղանչել։ Ինչո՞ւ ես շատ թափառւամ՝ ճանապարհներդ փոխփոխելով, Եգիպտոսից էլ պիտի ամաչես, ինչպէս Ասորեստանից ես ամաչել։ Սորանից էլ դուրս կ'գաս, ձեռքերդ էլ գլխիդ, վասն զի Տէրը մերժել է քո յոյսերը, և դու չես յաջողւալու նորանցում։

ԳԼ. Գ

1 Ասելով թէ՝ Ահա մէկ մարդ որ արձակէ իր կնոջը, և նա նորանից գնայ, և մի ուրիշ մարդու հո դառնայ, մի՞թէ նա (մարդը) էլի նորա մօտ կ'դառնայ. մի՞թէ այն երկիրը բոլորովին չէր պղծըւել. բայց դու, թէև շատ համնիներուն հետ ես շնացել, էլի դէպի ինձ ետ դարձիր, ասւամ է Տէրը։ Բարձրացրու աչքերդ դէպի 2
բլուրները և տես, ո՞ւր չես պոռնկութիւն արել. ճանապարհներին նստել էիր նորանց համար ինչպես Արաբացին անապատումը, և երկիրը պղծեցիր քո պոռնկութիւններուն ու չարութիւններուն։ Եւ անձրևները խա 3
փանուեցան, և վերջի անձրևը չեղաւ, բայց դու մի պոռնիկ կնոջ ճակատը ունեցար, մեկ կողմ ես դրել ամաչելը։ Ահա այսուհետև 4
դու ինձ կանչելու ես՝ Ով հայրս, դու ես իմ երիտասարդութեան մտերիմը։

Մի՞թէ յաւիտեան պիտի բար 5
կանայ և ի-ւ-ի-ն-ը միշտ պահէ՞. ահա քո խօսածը, և չարութիւնը անում ես և կարողանում։

Եւ Տէրն ասաց ինձ Յովսիա 6
թագաւորի օրերին. Տեսա՞ր ինչ որ արաւ ապստամբ Իսրայէլը, նա գնաց ամեն բարձր լեռան վերայ և ամեն կանաչ ծառի տակ և պոռնկուեցաւ այնտեղ։ Եւ 7
ասւամ էի՝ Այս ամենը անելուց յետոյ ետ կ'գառնայ դէպի ինձ, բայց ետ չդարձաւ. և նորա խաբեբայ քոյրը՝ Յուդան էլ տեսաւ։ Եւ ես տեսայ որ երբ այս ամենի 8
համար, որ ապստամբ Իսրայէլը պղծութիւն արաւ, նորան արձակեցի և արձակման թուղթ տուի նորան, նորա խաբեբայ քոյրը Յուդան չվախեցաւ, և գնաց ու ինքն էլ շնացաւ։ Եւ ե- 9
ղաւ որ նորա շնութիւնը հաչակուելով երկիրը պղծուեցաւ, և նա պղծութիւն գործեց քարի հետ և փայտի հետ։ Բայց այսու 10
ամենայնիւ էլ նորա խաբեբայ քոյրը՝ Յուդան դէպի ինձ չդարձաւ բոլոր սրտովը. այլ սուտ թիւնով, ասւամ է Տէրը։

Եւ Տէրն ինձ ասաց՝ Ապստամբ 11
Իսրայէլն արդարացնում է իր անձը խաբեբայ Յուդայից աւելի։ Գնա և կանչիր այս խօսքերը դե- 12
պի հիւսիս և ասիր՝ Ետ դարձիր, ով ապստամբ Իսրայէլ, ասւամ

է Տէրը. չեմ թափիլ իմ բարկութիւնը ձեզ վերայ, վասն զի ես ողորմած եմ, ասէ Տէրը, 13 չեմ բարկանալ յաւիտեան: Միայն թէ ճանաչիր քո անօրէնութիւնը, որապստամբեցիր քո Տէր Աստուծոյ դէմ, և ափեցիր քո ճանապարհները օտարների առջև ամեն կանաչ ծառի տակ, և իմ ձայնին չլսեցիք, ասէ 14 Տէրը: Դարձէք, ով ապստամբ որդիք, ասէ Տէրը, վասն զի ես եմ ձեր վերայ տիրողը, և ես ձեզ առնեմ՝ քաղաքից մէկին, և ազգատոհմից երկուսին, և ձեզ 15 տանեմ Սիոն: Եւ ձեզ հովիւներ տամ իմ սրտի համեմատ, և նորանք հովուեն ձեզ գիտութիւ- 16 նով և իմաստութիւնով: Եւ երբոր դուք շատացած և ածած կ'լինիք այն երկրում այն օրերը, ասէ Տէրը, այլևս չեն ասել Տիրոջ սխրտի տապանակը, և նա միտք չի ընկնիլ, և նորան չեն յիշել ու չեն պանել. և այլ 17 ևս չեն շինել: Այն ժամանակ Երուսաղէմը կ'կոչեն Տիրոջ աթոռ, և նորա վերայ պիտի ժողովուին բոլոր ազգերը Տիրոջ անուան համար Երուսաղէմում. և այլ ևս չեն գնալ իրանց չար սրտի կամակո- 18 րութեան ետևից: Այն օրերը պիտի գնան Յուդայի տունը Իսրայէլի տան հետ, և միասին պիտի գան հիւսիսային երկրից այն երկիրը որ ես ժառանգեցրի նո- 19 րանց հայրերին: Բայց ես ասում էի. Քեզ ի՞նչպէս կ'դնեի որդիկանց հետ, և կ'տայի քեզ ցանկալի երկիրը՝ ազգաց զարդարանքներին զարդի ժառանգութիւնը. և ասում էի. Իմ հայրս կ'կանչէիր ինձ, և իմ ետևից ետ չէիր 20 դառնալ: Սակայն յիրաւի ինչպէս որ մի կին անհաւատարիմ կ'լինի իր մարդուն, նոյնպէս անհաւատարիմ եղաք դուք ինձ, ով Իսրայէլի տուն, ասէ Տէրը:

21 Մի ձայն է լսւում բլուրների վերայ՝ Իսրայէլի որդիների լացը. վասն զի նորանք ծռել են իրանց ճանապարհը, մոռացել իրանց Տէր Աստուածին:

Ետ դարձէք, ով ապստամբ 22 որդիք, ես կ'բժշկեմ ձեր ապստամբութիւնները:

Ահա մենք գալիս ենք դէպի քեզ, վասն զի դու ես մեր Աստուածը, ով Տէր: Ցիրաւի սուտ 23 էր բլուրներից՝ լերանց բազմութիւնից քեզ յուսալը. վասն զի Տէր Աստուածանից է Իսրայէլի փրկութիւնը: Եւ ամօթը կերել է 24 մեր հարցանց՝ ի մանկութենե վաստակածը՝ նորանց հօտերը և նորանց արջառները, նորանց տղայ և նորանց աղջկերանց: Մենք 25 պառկում ենք մեր ամօթով, և մեր անարգանքը ծածկում է մեզ, վասն զի մեր Տէր Աստուծոյ դէմ մեղանչեցինք՝ մենք և մեր հայրերը մեր մանկութենից մինչև այսօր. և չլսեցինք մեր Տէր Աստուծոյ ձայնին:

Գ.Լ. Գ

Եթէ դառնալ լինիս, ով Իս- 1 րայէլ, ասէ Տէրը, դէպի ինձ դարձիր, և եթէ հեռացնելու լինես քո գարշելիքը իմ առջևից, 2 թափառական պիտի չլինիս. Եւ երդում պիտի անես՝ կենդանի է Տէրը՝ ճշմարտութեամբ, իրաւամբ ու արդարութեամբ. և ազգերը պիտի նորանով օրհնուին և նորանով պարծենան: Վասն 3 զի այսպէս է ասում Տէրը Յուդայի և Երուսաղէմի մարդկանց. Նոր հերկ հերկեցէք ձեզ համար, և մի սերմէք փուշերի մէջ: Թլփատուեցէք Տիրոջ համար և հեռացրէք ձեր սրտի անթլփատութիւնը, ով Յուդայի մարդիկ և Երուսաղէմի բնակիչք. որ մի գուցէ կրակի պէս դուրս գայ իմ բարկութիւնը և այրէ առանց մի հանգցնողի ձեր գործքերի չարութեան համար:

Խնդրեցէք Յուդայի և Երու- 5 սաղէմի մէջ, լսեր տուէք և ասացէք և փող հնչեցրէք երկրի վերայ. կանչեցէք, ձայնը բարձրացրէք, և ասացէք. Ժողովուեցէք և մտնենք պարսպաւոր քաղաք-

6 Ձերը։ Դրօշակ բարձրացրէք դէպի
Սիօն, փախէք, մի կանդնէք.
վասն զի ես չարիք եմ բերում
7 հիւսիսից՝ և մեծ կոտորած։ Վէր
կացաւ առիւծը իր մացառից և
ազգերին կործանողը ճանապարհ-
ուեցաւ դուրս եկաւ իր տեղից.
որ քո երկիրը աւերակ անէ, քա-
ղաքներդ պիտի քանդուին հա-
8 ւանից բնակչի։ Սրա համար
քուրձեր հագէք, սուգ արէք ու
ողբացէք, վասն զի Տիրոջ բար-
կութեան բորբոքումը մեզանից
9 դեռ չէ դարձել։ Եւ պիտի լինի
այն օրը, ասում է Տէրը, որ պի-
տի կորչէ թագաւորի սիրտը և
իշխանների սիրտը, և պիտի տա-
շնեն քահանաները, ու մարգարէ-
ները հիանան։
10 Եւ ես ասացի. Աւա՛ղ, ով Տէր
Եհովայ, անշուշտ դու խաբեցիր
այս ժողովուրդն ու Երուսաղէմը՝
ասելով. Թէ Քեզ խաղաղութիւն
կ'լինի. բայց սուրը մինչև հոգին
հասել է։
11 Ա՛յն ժամանակ պիտի ասուի
այս ժողովրդին ու Երուսաղէմին.
Մի տօթագին քամի է ելե՛լ բլու-
րներից անապատումը՝ իմ ժո-
ղովրդի աղջկան ճանապարհին,
որ հառելու համար է և ոչ մաք-
12 րելու համար։ Սրանից մի ուժ-
ի աւազակ քամի է գալու. հիմա
էլ ես եմ խօսելու նրանց հետ
դատաստաններով։
13 Ա՛հա նա ամպերի պէս է վեր
կենում, և փոթորկի պէս են նո-
ր կառքերը, արծիւներից արա-
գաշարժ են նրա ձիերը, վա՛յ
մեզ, որովհետև աւերակ դա-
14 ռանք։ Մաքրիր չարութիւնից քո
սիրտը, ով Երուսաղէմ, որպէս
զի փրկութիւն գտնես. մինչև
ե՞րբ պիտի քո մէջ արտումդ քո չար
15 խորհուրդները։ Վասն զի մի ձայն
լսուց է տալիս Դանից, և թըշ-
ուառութիւն է լուր տալիս Եփ-
16 րեմի լեռներից։ Յիշեցրէք ազգե-
րին, ա՛հա լուր տուէք Երուսա-
ղէմի մասին. պահապաններ են
գալիս հեռաւոր երկրից, և իրանց
ձայնը տալիս են Յուդայի քա-
17 ղաքների վերայ։ Ագարակի պա-

հապանների պէս նրա շուրջանակի, վասն զի նա ինձ դէմ ապստամբեց, ասում է Տէրը։ 18
Քո ճանապարհները և քո արարքները արին քեզ այս բա-
նը, սա քո չարութիւնն է, ի-
րա՛ւ դառն, իրա՛ւ հասել է մին-
չև սիրտդ։
Ողո՛ւայ ինձ, ողո՛ւայ ինձ, ցաւով 19
բռնուած եմ, արտիս *խուցերը
տակն ու վրայ է արտուվ, չեմ
լռիլ. վասն զի փողի ձայնը լսում
ես, ով իմ անձը, այն պատե-
րազմի աղաղակը։ Կոտորած կո- 20
տորածի վերայ է կանչվում, վա-
սն զի բոլոր երկիրը աւերակ ե-
ղաւ. յանկարծակի աւերակ ե-
ղան իմ վրանները, մի վայրկեա-
նում՝ իմ խորանները։ Մինչև 21
ե՞րբ պիտի տեսնեմ դրօշը, լսե՞մ
փողի ձայնը։
Վասն զի յիմար է իմ ժողո- 22
վուրդը. ինձ չճանաչեցին. նորանք
անմիտ զաւակներ են և բան չը
հասկցող. նորանք խմաստուն են
չարութիւն անելու, բայց բարու-
թիւն անելը չգիտեն։
Նայեցի երկրի վերայ, և ա՛հա 23
պարապ և անձև էր, և երկնքին՝
և նրա լոյսը չկար։ Նայեցի լե- 24
ռանց, և ա՛հա դողում էին, և
բոլոր բլուրները սասանվում էին։
Նայեցի, և ա՛հա մարդ չկար, և 25
երկնքի բոլոր թռչուններըը փա-
խել էին։ Նայեցի, և ա՛հա կար- 26
մրաղը փղերը անապատ էր, և
նրա բոլոր քաղաքները քարու-
քանդուած էին Տիրոջ երեսից և
նրա բարկութեան բորբոքման
երեսից։
Վասն զի այսպէս է ասում 27
Տէրը. Բոլոր երկիրը աւերակ պի-
տի դառնայ, բայց բոլորովին
վերջ չեմ անելու։ Սրա համար 28
երկիրը պիտի ոգայ, և պիտի խա-
ւարուի երկինքը վերևից. ըստ
որում ես ասել եմ, խորհել եմ,
և չեմ զղջալու և նորանից ետ
չեմ դառնալու։ Ձիաւորների և 29
աղեղնաւորների ձայնից փախ-
չում է բոլոր քաղաքը, մտնում

*պատերը

են ծմակները և վեր են ելլում ապառաժները, բոլոր քաղաքները ձգուած թողուած են, և նորանցում մի բնակող մարդ չկայ։ 30 Եւ դո՞ւ ինչ պիտի անես, ով աւերակացած, որ ծիրանիներ ես հագնում, ու քեզ ոսկի զարդերով զարդարում, որ լայն բաց ես անում ծարոյրոտ աչքերդ. զուր ես քեզ գեղեցկացնում, համանիքդ քեզ մերժեցին, հոգիդ 31 են որոնում։ Վա՛ան դի մի ձայն լսեցի իբր թէ ծննդակնի կոյր, անդրանիկ ծնողի տառապանք է Սիօնի աղջկան ձայնը, հառաչում է և տարածում իր ձեռքերը՝ վա՛յ ինձ, վա՛ան դի հոգիս նուաղում է սպանուածների մասին։

ԳԼ. Ե

1 Վա՛ան եկէք Երուսաղէմի փողոցներումը և մէկ տեսէք ու իմացէք, և որոնեցէք նորա հրապարակներումը, եթէ մի մարդ կը գտնէք, եթէ լինի մի իրաւունք անող և ճշմարտութիւն խնդրող, 2 ես այն քաղաքին կ'ներեմ։ Եւ թէպէտ ասում են՝ կենդանի է Տէրը, բայց սուտ են երդում անում։

3 Ով Տէր, միթէ քո աչքերը դէպի ճշմարտութիւնը չեն. դու նորանց ծեծեցիր, բայց նորանք չցաւեցին. դու նորանց վերջացրիր, չեն ուզում խրատ առնել. նորանք իրանց երեսը ապառաժից պինդ են արել, չեն ուզում 4 ետ դառնալ։ Բայց ես ասացի. Միայն աղքատներն են սորանք, տգէտ են ու Տիրոջ ճանապարհը չգիտեն և իրանց Աստուծոյ իրաւունքը։ 5 Ես գնամ մեծերի մօտ և նորանց հետ խօսեմ, վաան դի նորանք գիտեն Տիրոջ ճանապարհները՝ իրանց Աստուծոյ իրաւունքը, բայց նորանք էլ ամենքը կոտրել են լուծը, կոտրտել են կապերը։ 6 Սորա համար նորանց պիտի առիւծը զարկէ անտառից, անապատների գայլը փչացնէ նորանց, ինձն է հրաւիրել նորանց քաղաքների վերայ, ամեն ով որ նորանից դուրս գայ՝ պիտի պատառուի, վաան դի շատացել են նորանց յանցանքները, զօրացել են նորանց ապստամբութիւնները։

Սորա համար ես ինչպէս նե- 7
րեմ քեզ, քո որդիքը ինձ թողել են, և երդում են անում չաստուածներով, և ես կշատցրի նորանց, բայց նորանք շնացան, և խումբով բազանոցը գնացին։ Պարարտացած ձիերի պէս առա- 8
աւօտեան վեր են կենում, ամեն մէկին իր ընկերի կնոջ վերայ է խխնջում։ Մի՞թէ սորա համար 9
պիցելութիւն պիտի չանեմ, ասում է Տէրը, կամ սորա նման մի ազգից իմ անձը վրէժ պիտի չառնէ՞։

Վե՛ր ելէք նորա պարիսպների 10
վերայ և կործանեցէք, բայց բոլորովին չվերջացնէք. վերցրէք նորա ոստերը, վաան դի նորանք Տիրոջը չեն։ Վաան դի խարեբա- 11
յութեամբ խարեցին ինձ Իսրայէլի տունը և Յուդայի տունը, ասում է Տէրը։ Նորանք ուրա- 12
ցան Տիրոջը և ասացին՝ Նա չէ, և մեզ վերայ չարիք չի գալ. և սուր ու սով չենք տեսանելու։ Եւ 13
մարգարէքը քամի են դառնալու, և խօսողը չի լինելու նորանցում, այսպէս է լինելու նորանց։

Նորա համար Զօրաց Տէր Աս- 14
ուածը այսպէս է ասում. Որովհետև դուք խօսում էք այս խօսքը. ահա ես իմ խօսքերը քո բերանումը կրակ եմ շինում, և այս ժողովուրդը՝ փայտ. և նա նորանց պիտի ուտէ։ Ահա ես 15
ձեզ վերայ հեռուից մէկ ազգ եմ բերում, ով Իսրայէլի տուն, ասում է Տէրը, նա զօրաւոր ազգ է, նա հին ազգ է. մի ազգ՝ որի լեզուն չգիտես, և չես իմանում թէ ինչ է խօսում։ Նորա կա- 16
պարճը բաց գերեզմանի պէս է, նորանք ամենքը ախոյեաններ են։ Եւ նա պիտի ուտէ քո հունձքը 17
և քո հացը, նորանք պիտի ուտեն քո տղաներին և աղջիկներին, պիտի ուտէ քո հօտերն ու քո արջառները, պիտի ուտէ քո

որթին ու թզենին. քարուքանդ
պիտի անէ քո ապաւինած պա-
րսպատուր քաղաքները սրով։
18 Բայց այն օրերն էլ, ասում է
Տէրը, ձեզ պիտի բոլորովին չը
19 վերջացնեմ։ Եւ երբոր ասելու լի-
նիք, Ինչ բանի փոխարէն արաւ
մեզ մեր Տէր Աստուածը այս ա-
մենը, դու էլ ասիր նորանց,
Ինչպէս որ դուք ինձ թողեցիք,
և օտար աստուածներ պաշտե-
ցիք ձեր երկրումը, նոյնպէս էլ
օտարների պիտի ծառայէք ձերը
չեղած երկրում։
20 Սա իմացրէք Յակոբի տանը,
և հրատարակեցէք այդ Յու-
21 դայի մէջ, ասելով. Մէկ լսե-
ցէք սորան, ով յիմար և ան-
միտ ժողովուրդ, աչքեր ու-
նին ու չեն տեսանում, ականջներ
22 ունին ու չեն լսում։ Չէ՞ք վախե-
նում ինձանից, ասում է Տէրը,
կամ իմ երեսից չէ՞ք դողում,
որ աւազը ծովին սահման դրի
իբրև յաւիտենական կանոն, և
նա նորանից չի անցնիլ. թէև ծը-
փում են նորա ալիքները, բայց
չեն յաղթում, թէև գղրդում
23 են, բայց անց չեն կենում։ Բայց
այս ազգը սի անհնազանդ և ա-
պըստամբ սիրտ ունի, նորանք ա-
պըստամբում են քանի որ գնում
24 են։ Եւ չասացին իրանց սրտում-
ը. Մէկ վախենանք մեր Տէր
Աստուածանից, որ տալիս է անձ-
րևը՝ առաջինը և վերջինը իր ժա-
մանակին, որ պահում է մեզ
համար հունձքին որոշուած շա-
25 բաթները. Ձեր անօրէնութիւն-
ները դարձրին այս բաները, և
ձեր մեղքերն են խափանում ձե-
26 զանից բարին։ Վասն զի անըզ-
գաները են գտնւում իմ ժողո-
վրդի մէջ դարանամուտ են լի-
նում կծկատուած թռչնորսների
պէս, որոգայթներ են լարում
27 մարդիկ որսում։ Ինչպէս որ վան-
դակը լիքն է լինում թռչուններ-
րով, նոյնպէս էլ լիքն են նորանց
տները նենգութիւնով. նորա հա-
մար մեծացել և հարստացել են
28 նորանք։ Պարարտացել են փայ-
լում են, չարերի գործքերից էլ
են դերազանցում. դատը չեն դա-
տում որբի դատը, այսու ամե-
նայնիւ յաջողում են, թէև աղ-
քատների իրաւունքը չեն դատ-
ում։ Այս բանների համար ես այ- 29
ցելութիւն չանե՞մ, ասում է
Տէրը, կամ սորա նման մի ազ-
գից իր վրէժը չառնէ՞ իմ հոգին։
Սոսկալի և քաոճելի բան է 30
լինում երկրի վերայ. Մարգարէ- 31
քը սուտ են մարգարէանում, և
քահանաները իշխում են նորանց
ձեռքովը. և իմ ժողովուրդն էլ
այսպէս է սիրում. բայց վե՞րջը
ինչ պիտի անէք։

ԳԼ. Զ

Փախէք, ով Բենիամինի որդիք, 1
Երուսաղէմի միջից, և Թեկուէ-
ում փող հնչեցրէք, և Բեթա-
քարմայի վերայ նշան բարձրաց-
րէք. վասն զի չարիք է յարձակ-
ուել հիւսիսից և մեծ կոտորած։
Դաստարեցնում եմ վայելչագեղ 2
և փափկացեալ Սիոնի աղջկան։
Նորա մօտ գալիս են հովիւները 3
և իրանց հօտերը, նորա դէմ
վրաններ են կանգնեցնում շուր-
ջանակի, ամեն մէկը արածեց-
նում է իր բաժնումը։ Սուրբ պա- 4
տերազմ որոշեցէք նորա դէմ,
վեր կացէք, որ վեր գնանք կէս
օրին. վա՛յ մեզ, վասն զի օրը
դարձել է, և երկարացել են ե-
րեկոյեան ստուերները։ Վեր կա- 5
ցէք, որ վեր գնանք գիշերով, և
կործանենք նորա պալատները։
Վասն զի այսպէս է ասում Զօ- 6
բաց Տէրը. Փայտ կտրեցէք և
պատնէշ կառուցէք Երուսաղէմի
դէմ. այս քաղաքին տուգելութիւն
պիտի լինի, բոլոր նորա միջինը
զրկանք է։ Ինչպէս որ ջրհորը բըզ- 7
խում է իր ջուրերը, նոյնպէս էլ
նա բղխում է իր չարութիւնը.
նորանում զրկանք և յափշտակու-
թիւն է լսւում, իմ առջև կան
միշտ ցաւ և հարուած։ Խրատ- 8
ուիր, ով Երուսաղէմ, որ հոգիս
քեզանից չդատանուի, որ քեզ ա-
ւերակ երկիր չշինեմ անբնակ։
Այսպէս է ասում Զօրաց Տէ- 9

րը. Բոլորովին ճեռաքաղ պիտի
անեն որթի պէս Իսրայէլի մնա-
ցորդին. ձեռքդ դարձրու քաղո-
ղի պէս դեպի կողովը։
10 Ո՞ւմ ասեմ և վկայեմ, որ լը-
սեն. ահա նորանց ականջը ան-
թլփատ է, և չեն կարող լսել,
ահա Տիրոջ խօսքը նորանց հա-
մար անարգանք եղաւ, նորանից
11 չեն ախորժում։ Սակայն Տիրոջ
բարկութիւնովը լիքն եմ, յոգ-
նած եմ տանելուցը։ Թափիր
տղայոց վերայ դրսումը և երի-
տասարդների բոլոր խմբի վերայ.
վասն զի մարդն էլ կնոջ հետ
պիտի բռնուին, ծերը տարիները
12 առածի հետ։ Եւ նորանց տու-
ները պիտի ուրիշների անցնեն,
ագարակներն ու կանայքն միա-
սին. վասն զի իմ ձեռքը պիտի
երկարացնեմ երկրի բնակչացը վե-
13 րայ, ասում է Տէրը։ Վասն զի
նորանց պղտիկից մինչև նորանց
մեծը, բոլորն էլ շահի ագահ
են. և մարգարէից մինչև քա-
հանան բոլորն էլ ստութիւններ են։
14 Եւ իմ ժողովրդի աղջկան վէր-
քը բժշկում են թեթև կերպով,
ասելով՝ խաղաղութիւն, խաղա-
ղութիւն. քանի որ խաղաղութիւն
15 չկայ։ Մի՞թէ ամաչում են պըղ-
ծութիւն անելիս, ոչ ամաչել
են ամաչում, ոչ պատկառել
գիտեն, դորա համար պիտի ըն-
նեն ընկնողների հետ, և ես նո-
րանց այցելելիս պիտի գլորուին,
ասում է Տէրը։
16 Այսպէս է ասում Տէրը. կանգ-
նեցէք ճանապարհներին և տեսէք
և հարցրէք վաղեմի ճանապարհ-
ներից թէ որդեօք որն է լաւ ու-
ղին, այն ժամանակ գնացէք նո-
րանով. և դուք հանգստութիւն
կ'գտնէք ձեր հոգիների համար,
Բայց նորանք ասում են՝ Չենք
17 գնում։ Եւ ձեզ վերայ դէտեր նը-
շանակեցի, թէ Ուշադիր եղէք
փողի ձայնին, բայց նորանք ա-
ում են՝ Ուշադիր չենք լինում։
18 Ուրեմն լսեցէք, ով ազգեր, և
իմացիր, ով ժողով, նորանց մի-
19 ջինը։ Լսիր, ով երկիր, ահա ես
այս ժողովրդի վերայ չարիք եմ
բերելու, նորանց խորհուրդների
պտուղը. վասն զի ուշ չդարձրին
իմ խօսքերին, և իմ օրէնքն էլ
մերժեցին։ Ինչո՞ւ համար Սաբա- 20
յից կնդրուկ գայ ինձ համար,
և անուշահոտ խնկեղէգը՝ հեռու
երկրից. ձեր ողջակէզները ընդու-
նելի չեն, և ձեր զոհերը ինձ հա-
ճելի չեն։ Վասն որոյ այսպէս է 21
ասում Տէրը. Ահա ես խոչեր եմ
դնում այս ժողովրդի համար. և
նորանցով պիտի գլորուին հայ-
րերը և որդիքը միասին, դրացին
և նորա հարևանը պիտի կորչեն։
Այսպէս է ասում Տէրը. Ահա 22
մի ժողովուրդ է գալիս հիւսիսի
երկրիցը, և մի մեծ ազգ է դուրս
գալիս երկրի ծայրերիցը։ Աղեղ 23
և նիզակ են բռնած, անգութ
են և չեն ողորմիլ, նորանց ձայ-
նը գոռում է ծովի նման, և ձի-
երի վերայ են հեծնում, շարուած
են պատերազմի մարդկանց պէս
քեզ դէմ, ով Սիոնի աղջիկ։
Նորա լուրը լսեցինք, մեր ձեռ- 24
քերը թուլացան, ցաւը մեզ բռնե-
ց ծննդականի երկանց պէս։
Դուրս մի գնաք արտերը և ճա- 25
նապարհին մի կանգնէք, վասն
զի թշնամու սուրը կայ, վախ է
շուրջանակի։
Ով իմ ժողովրդի աղջիկ, քուրձ 26
հագիր, և մոխրում փաթաթ-
ուիր. միամօրի սուգ արա դառ-
նակսկիծ կոծ, վասն զի յանկար-
ծակի պիտի գայ կործանողը մեզ
վերայ։
Փորձող եմ շինել ես քեզ իմ 27
ժողովրդի մէջ իբրև մի բերդ,
որ իմանաս նորանց ճանապարհը
և փորձես։ Նորանք ամենքը կա- 28
մակոր ապստամբներ են, բամ-
բասկութեամբ վարուողներ են՝
պղինձ և երկաթ. նորանք ամեն-
քըն էլ ապականիչ են։ Փուքսը 29
այրուեցաւ, կրակիցը վերջացաւ
կապարը, զուր է հալեցնում հա-
լեցնողը. վասն զի չարերը չջոկ-
ուեցան։ Խոտան արծաթ, պիտի 30
կոչեն նորանց, որովհետև Տէրը
անարգեց նորանց։

ԳԼ. Ի

1 Այս խօսքը եղաւ Երեմիային
2 Տիրոջ կողմից ասելով. Կանգնիր
Տիրոջ տան դրանը և այնտեղ
կանչիր այս խօսքը, և ասիր՝ Լսե-
ցէք Տիրոջ խօսքը, օվ բոլոր
Յուդա, որ մտնում էք այս
դռներով Տիրոջը երկրպագելու:
3 Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝
Իսրայէլի Աստուածը. Լուացրէք
ձեր ճանապարհները ու ձեր գործ-
քերը, և ձեզ կ'թողեմ, որ բնա-
4 կէք այս տեղը: Մի յուսայք
սուտ խօսքերի ասելով՝ Տիրոջ
տաճարը, Տիրոջ տաճարը, Տի-
5 րոջ տաճարն են սորանք: Այլ
եթէ դուք լուացնէք ձեր ճա-
նապարհները ու գործքերը, եթէ
դուք իրաւունք անէք մարդու
6 և իր ընկերի մէջ. Օտարին, որ-
բին և որբևայրուն չզրկէք, և
անմեղ արիւն չթափէք այս տե-
ղը, և ուրիշ աստուածների ե-
7 տևից չգնայք ձեզ՝ ի չարիս. Այն
ժամանակ էս ձեզ կ'թողեմ, որ
բնակէք այստեղ՝ այս երկրում
որ տուել եմ ձեր հայրերին յա-
ւիտեանից յաւիտեան:
8 Ահա դուք ձեզ համար սուտ
խօսքերի էք յուսում, որոնք օ-
9 գուտ չունին: Մի՞թէ գողանաք,
սպանէք, շնութիւն անէք, և
սուտ երդում անէք ու Բահա-
ղին խունկ ծխէք, և այնպիսի
աստուածների ետևից գնայք, ո-
10 րոնց չէիք ճանաչում. Եւ յետոյ
գաք ու կանգնէք այս տանը, ո-
րի վերայ կոչուած է իմ անու-
նը, և ասէք. Ազատուեցանք բո-
լոր այս գարշութիւններն անելու
11 համար: Մի՞թէ աւազակների
այր է այս տունը, որի վերայ
կոչուած է իմ անունը, ձեր ա-
չաց աչքե. ահա ես էլ եմ տե-
12 սել, ասում է Տէրը: Սակայն
մէկ գնացէք իմ այն տեղը, որ
Սիլովումն է, ուր որ իմ անունը
բնակել էի սկզբից առաջ, և տե-
սէք, թէ ինչ եմ արել նորան
իմ Իսրայէլ ժողովրդի չարու-
թեան համար:
13 Եւ հիմա, որովհետև արիք այս
բոլոր գործքերը, ասում է Տէրը,
թէև խօսեցի ձեզ հետ կանուխ
վեր կենալով ու խօսելով, բայց
դուք չլսեցիք, և կանչեցի ձեզ,
բայց դուք չպատասխանեցիք.
14 Ես էլ պէտք է անեմ այն տանը, որի վերայ կոչուած է իմ ա-
նունը, և որին դուք ապաւինել
էք, և այն տեղին, որ ես տուել
եմ ձեզ և ձեր հայրերին, ինչ-
15 պէս որ արել եմ Սիլովին. Եւ
ձեզ պէտք է դէն գցեմ իմ ե-
րեսի առջևիցը, ինչպէս որ դէն
եմ գցել ձեր բոլոր եղբայրներին՝
Եփրեմի բոլոր սերունդին:
16 Որեմն դու մի աղօթիր այս
ժողովրդի համար, և նորանց հա-
մար աղաղակ ու աղաչանք մի
բարձրացնիր, և նորանց համար
մի բարեխօսիր, վասն զի քեզ
17 չեմ լսելու: Մի՞թէ դու չես տես-
նում, թէ նորանք ինչ են ան-
ում Յուդայի քաղաքներում,
և Երուսաղէմի փողոցներում:
18 Որդիքը փայտեր են ժողովում և
հայրերը կրակ են վառում, և
կիները խմոր են հունցում, որ
երկնից թագուհու համար բլիթ-
ներ շինեն, և նուէրներ նուիրեն
ուրիշ աստուածների, որպէս զի
19 ինձ բարկացնեն: Մի՞թէ ինձ են
բարկացնում նորանք, ասում է
Տէրը. չէ՞ որ իրանց որ ամօթա-
հար անեն իրանց երեսը:
20 Սորա համար Տէր Եհովան այս-
պէս է ասում. Ահա իմ բարկու-
թիւնն ու իմ ցասումը պիտի
թափուի այս տեղի վերայ. մարդ-
ու վերայ և անասունի վերայ,
դաշտի ծառի վերայ և երկրի
պտղի վերայ, որ այրէ և չմանդ-
չէ:
21 Այսպէս է ասում Զօրաց Տէրն
Իսրայէլի Աստուածը. Ձեր ողջա-
կէզները աւելացրէք ձեր զոհերի
վերայ, և միս կերէք: Վասն զի
22 ես չեմ խօսել ձեր հայրերի հետ
և նորանց պատուէր չեմ տուել,
այն ժամանակ երբոր նորանց
դուրս հանեցի Եգիպտոսի երկրի-
ցը, ողջակէզի և զոհի վերաբե-
րութեամբ: Այլ այս բանը պատ-
23 ուիրեցի նորանց ասելով. Լսեցէք

իմ ձայնին, և ես ձեզ Աստուած
կ'լինիմ, և դուք ինձ համար կը
լինիք ժողովուրդ, և գնացէք ոյն
բոլոր ճանապարհաւն, որ ձեզ
պատուիրեմ եմ, որպէս զի ձեզ
24 համար բարի լինի: Բայց նորանք
չլսեցին և ականջ չդրին, և վար-
ուեցան էրանց խորհուրդներովը ի-
րանց չար սրտի կամակորութիւ-
նովը, և ետ գնացին, և ոչ թէ
25 առաջ: Ահն օրից որ ձեր հայրե-
րը դուրս եկան Եգիպտոսի երկ-
րից մինչև այսօր, ես ուղարկում
եմ ձեզ մեր իմ ամեն ծառա-
ներին՝ մարգարէներին ամեն օր
կանուխ վեր կենալով ուղարկում
26 եմ: Բայց նորանք չլսեցին ինձ և
ականջ չդրին, այլ իրանց վիզը
խստացրին՝ իրանց հայրերիցը չար
եղան:

27 Եւ դու ասում ես նորանց այս
բոլոր բաները, բայց նորանք քեզ
չեն լսում, և դու կանչում ես
նորանց, բայց նորանք չեն պա-
28 տասխանում: Ուրեմն ասիր նո-
րանց. Սա այն ազգն է, որ չէ
լսում իր Տէր Աստուծոյ ձայնին,
և խրատ չեն ընդունում, ճշմար-
տութիւնը կորել և կտրուել է
նորանց բերանքից:

29 Խուզիր մազերդ և դէն գցիր,
և ողբ բարձրացրու բլուրների վե-
րայ, վասն զի Տէրը մերժեց և
դէն գցեց իր սրամտութեան սե-
30 րունդը: Վասն զի Յուդայի որ-
դիքը չարութիւն արին իմ աչքի
առջև, ասում է Տէրը, իրանց
գարշելիքը դրին այն տանը, որի
վերայ կոչուած է իմ անունը,
31 որ պղծեն նորան: Եւ շինեցին
Տոփեթի բարձրաւանդակները, որ
Ենոմի որդու ձորումն են, որ
կրակով այրեն իրանց տղայոց և
իրանց աղջկերանցը, որն որ ես
չպատուիրեցի, և մտքս էլ չէր ե-
32 կել: Ուրեմն ահա օրեր են գալիս,
ասում է Տէրը, որ չի ասուիլ
այլ ևս Տոփեթ կամ Ենոմի որդու
ձոր, այլ Սպանութեան ձոր, և
Տոփեթում պինքան կ'թաղեն, որ
33 էլ տեղ չի մնայ: Եւ այս ժողո-
վրդի դիերը կերակուր պիտի
դառնայ երկնքի թռչուններին և

երկրի գազաններին, և նորան վա-
խեցնող չէ լինելու: Եւ պիտի 34
դադարեցնեմ Յուդայի քաղաք-
ներից և Երուսաղէմի փողոցնե-
րից ցնծութեան ձայնը և ուրա-
խութեան ձայնը, փեսայի ձայնը
և հարսի ձայնը, վասն զի երկիրը
աւերակ պիտի լինի:

ԳԼ. Ը

Ահն ժամանակ ասում է Տէրը, 1
կ'հանեն Յուդայի թագաւորների
ոսկորները և նորա իշխանների
ոսկորները, քահանաների ոսկոր-
ները և մարգարէների ոսկորները
և Երուսաղէմի բնակչաց ոսկոր-
ները իրանց գերեզմաններից: Եւ 2
կ'փռեն նորանց արեգակի դէմ,
լուսնի դէմ և երկնքի բոլոր զօր-
քերի դէմ, որոնց սիրեցին, որոնց
ծառայեցին, և որոնց հետևե-
ցին, որոնց խնդրեցին և որոնց
երկրպագեցին. ոչ պիտի հաւաք-
ուին, ոչ էլ թաղուին. աղբ
պիտի դառնան երկրի երեսի վե-
րայ: Եւ մահը ցանկալի պիտի 3
լինի կեանքից այն ամեն մնացոր-
դի համար, որ կ'մնան այս չար
ցեղից, որոնք կ'մնան այն ամեն
տեղերում, ուր որ նորանց տա-
րածրել էի, ասում է Զօրաց
Տէրը:

Եւ ասիր նորանց, այսպէս է 4
ասում Տէրը. Վայր կ'ընկնեն և
էլ վեր չե՞ն կենալ, կամ ետ կը
դառնան, և էլ դարձի չե՞ն գալ:
Մնչո՞ւ համար է ետ դարձել այս 5
Երուսաղէմի ժողովուրդը միշտ-
կան ապստամբութեամբ. պինդ
բռնել են խարտեաւնքը, չեն
ուզում դարձի գալ: Ունկնդիր 6
եղայ և լսեցի. նորանք ուղիղ
չեն խօսում, մարդ չկայ, որ զղջ-
ալ իր չարութեան վերայ, և ա-
սէ. թէ ես ի՞նչ եմ արել. ա-
մենը դարձել են իրանց ընթաց-
քին, իբրև ձի որ արշաւում է
պատերազմ: Արտերն անգամ 7
օդումը գիտե իր ժամանակը,
և տատրակը ու կռունկն ու ծի-
ծեռնակը պահում են իրանց դա-
լու ժամանակը, բայց իմ ժողո-

վուրդը չէ գիտում Տիրոջ իրա-
8 ւունքը։ Դուք ի՞նչպէս էք ա-
ռում. Թէ Մենք իմաստուններ
ենք, և Թէ Տիրոջ օրէնքը մեզ
մօտ է. յիրաւի աւետացրել է
9 դպիրների սուտ գրիչը։ Իմաս-
տուները ամաչեցին, զարհու-
րեցին և բռնուեցան. ահա անար-
գեցին Տիրոջ խօսքը, և էլ ի՞նչ
10 իմաստութիւն ունին։ Սորա հա-
մար ես նորանց կանայքը ուրիշ-
ների պիտի տամ, նորանց ագա-
րանքները՝ իրանց տիրոջներին,
վասն զի փոքրից մինչև մեծը բո-
լորը ագահ են չահասիրութեան.
մարգարէից մինչև քահանան բո-
11 լորը ստոյգն են։ Եւ Թեթև
կերպով բժշկում են իմ ժողո-
վրդի աղջկան վէրքը, ասելով.
Խաղաղութիւն, խաղաղութիւն,
քանի որ խաղաղութիւն չկայ։
12 Պէտք է ամաչէին, որ պղծու-
թիւն գործեցին. բայց ոչ ամա-
չել են ամաչում, և ոչ պատ-
կառել գիտեն. սորա համար պի-
տի ընկնեն ընկնողների հետ, նո-
րանց այցելելու ժամանակին պի-
տի բռնուին, ասում է Տէրը։
13 Բոլորովին բնաջինջ եմ անելու
նորանց, ասում է Տէրը, խաղող
չէ լինելու որթի վերայ, և թուզ
չէ լինելու թզենու վերայ, և տե-
րևը թառամելու է, և այն որ
տուել եմ նորանց, անց է կե-
նալու նորանցից։
14 Ինչո՞ւ համար ենք նստել մենք,
հաւաքուեցէք և գնանք պարսպ-
պատուր քաղաքների մէջ, և այն-
տեղ կորենք մեր ձայնը. վասն զի
մեր Տէր Աստուածը կորեցրեց մեր
ձայնը և մեզ լեղի ջուր խմեցրեց,
վասն զի մենք մեղանչեցինք Տի-
15 րոջ դէմ։ Խաղաղութեան ապա-
սեցինք, բայց բարիք չկար. բժ-
շկութեան ժամանակին՝ բայց
16 ահա խռովութիւն։ Դանից է
լսւում նորա ձիերի շնչիւնը, նո-
րա երիվարների վրնջելու ձայնից
դողում է բոլոր երկիրը. և նո-
րանք գալու են և ուտելու են եր-
կիրը ու նորա լրութիւնը, քա-
ղաքը և նորանում բնակողներին։
17 Վասն զի ահա ես ուղարկում
եմ ձեր մէջը օձեր և քարբեր, ո-
րանց համար թովչութիւնը ոչինչ
է. և նորանք պիտի կծատեն ձեզ,
ասում է Տէրը։
18 Ցաւարթութիւնս տրտմու-
թեան մէջ. սիրտս ինձանում
19 նուաղել է։ Ահա իմ ժողովրդի
աղջկան ձայնը հեռու երկրից,
Տէրը Սիօնում չէ՞, կամ թէ նո-
րա թագաւորը նորանում չէ՞.
ինչո՞ւ համար ինձ բարկացրին ի-
րանց կուռքերով՝ օտար ունայ-
նութիւններով։ Հունձքը անցաւ,
20 ամառը վերջացաւ. բայց մենք չը
փրկուեցանք։ Իմ ժողովրդի աղ-
21 ջկան վէրքի պատճառով կոտ-
րատուած եմ, խաւարուած եմ՝
սոսկում բռնել է ինձ։
22 Բալասան չկա՞յ Գաղաադում, կամ
բժիշկ չկա՞յ այնտեղ. ապա ինչո՞ւ
համար առողջութիւն չգտաւ իմ
ժողովրդի աղջիկը։

Գլ. Թ

Երանի՛ թէ գլուխս ջուր լինէր, 1
և աչքերս արտասուքի աղբիւր.
և ես լաց կ'լինէի ցերեկ և գիշեր
իմ ժողովրդի աղջկան սպանուած-
ների վերայ։ Ո՛հ թէ ինձ անա- 2
պատի մէջ ուղևորների իջևան
տային. և ես կ'ձգէի իմ ժողո-
վուրդը և կ'գնայի նորանց մօտից,
վասն զի նորանք ամենքը շնացող-
ներ են, խորեհրդների խումբ են։
Եւ նորանք լարում են իրանց լե- 3
զուները սուտի համար իբրև ի-
րանց աղեղը, և ոչ թէ ճշմար-
տութեամբ են քաջանում երկրի
վերայ, վասն զի մի չարութիւնից
դուրս են գալիս հաւատ միւսը,
և ինձ չեն ճանաչում, ասում է
Տէրը։ Ամեն մարդ զգուշանայ իր 4
ընկերից, և ամենևին մէկ եղբօր
մի ապաւինէք, վասն զի ամեն
եղբայր խարում է խարէութեամբ
և ամեն ընկեր մեռն է գալիս բա-
նսարկութեամբ։ Եւ ամեն մարդ 5
նենգում է իր ընկերին, և ճըշ-
մարտութիւն չեն խօսում, սովո-
րեցրել են իրանց լեզուն սուտ
ասելու, անիրաւութիւն անելով
յոգնում են։

6 փո բնակութիւնը խարգախու-
թեան մէջ է. խարդախութեան
համար չեն ուզում ինձ ճանա-
7 չել, ասում է Տէրը: Դորա
համար Զօրաց Տէրը այսպէս է
ասում. Ահա ես նորանց պիտի
հալեցնեմ և նորանց փորձեմ,
վասն զի էլ ի՞նչպէս անեմ ես իմ
8 ժողովրդի աղջկան հետ: Մահա-
բեր նետ է նորանց լեզուն. նեն-
գութիւն է խօսում, բերանովը
խաղաղութիւն է խօսում իր ըն-
կերի հետ, իսկ իր սրտումը դա-
9 րան է պատրաստում նորան: Ա-
րանց համար ես նորանց չպյցե-
լե՞մ, ասում է Տէրը. կամ մի
այսպիսի ազգից իմ հոգին վրէժ
չառնէ՞:
10 Լեռան մասին բարձրաձայն
պիտի լաց լինեմ և ողբամ, և
անապատի արօտների համար կած
անեմ, վասն զի այրուել են, անց-
նող չկայ, և խաշինքների ձայն
չեն լսում, երկնքի թռչուններից
մինչև անասունը փախան դնա-
11 ցին: Եւ ես Երուսաղէմը պիտի ա-
նեմ փլատակների դէզեր՝ շագալ-
ների բնակարան. և Յուդայի քա-
ղաքները ամայի պիտի շինեմ որ
12 բնակող չլինի: Ո՞վ է այն իմաս-
տուն մարդը, որ սա հասկանայ.
և այն ինչ որ խօսել է Տէրոջ
բերանը դէպի նորան, և պատմէ
այն, թէ երկիրը ինչո՞ւ համար
է փչացել, և այրուել անապա-
13 տի պէս, որ անցնող չկայ: Եւ
Տէրն ասաց. Նորա համար որ թո-
ղեցին իմ օրէնքը որ ես դրել էի
նորանց առջև, և իմ ձայնը չը
լսեցին և նորանով չվարուեցան:
14 Այլ գնացին իրանց սրտի կամա-
կորութեան ետևից, և այն Բա-
հաղների ետևից, որ իրանց հայ-
15 րերը սովորեցրին իրանց: Սորա
համար այսպէս է ասում Զօրաց
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա
ես սա ժողովրդին օշինդր եմ ու-
տեցնելու, և լեղի ջուր խմեցնե-
16 լու: Եւ նորանց պիտի ցրուեմ ազ-
գերի մէջ, որոնց ոչ իրանք գիտէ-
ին, ոչ իրանց հայրերը, և նորանց
ետևից պիտի սուրն ուղարկեմ,
մինչև որ նորանց վերջացնեմ:

17 Այսպէս է ասում Զօրաց Տէ-
րը. Մտածեցէք և լալկան կանայք
կանչեցէք, որ գան, և այս բանում
վարպետներին ետևից մարդ ուղար-
18 կեցէք, որ գան: Եւ շուտով գան
և մեզ վերայ բարձրացնեն ողբը,
և մեր աչքերը արտասուք թա-
փեն, և մեր արտեւանունքներից
19 ջուրեր յորդեն: Վասն զի Սիոնից
ողբի ձայն լսուեցաւ՝ Ինչպէ՛ս կոր-
ծանուեցանք, շատ ամաչեցինք,
որովհետև ձգեցինք երկիրը, քա-
նորում դէն էին գցել մեր բնա-
20 կարանները: Ովքեմն, ով կանայք,
լսեցէք Տէրոջ խօսքը, և ձեր ական-
ջը ընդունէ նորա բերանի խօսքը, և
ձեր աղջկերանցը ողբ սովորեցրէք,
և ամեն մէկ կին իր ընկերին՝ լաց:
21 Վասն զի մահը վեր եկաւ մեր պա-
տուհանները, մտաւ մեր պալատ-
ները, որ բնաջինջ անէ երեխային
փողոցից, երիտասարդներին՝ հրա-
22 պարակներից: Ասիր թէ՝ Տէրը
այսպէս է ասում. թէ Մարդկանց
դիակները վայր պիտի ընկնեն ինչ-
պէս աղբը դաշտի երեսի վերայ,
և ինչպէս խուրձերը հնձողի ե-
տևից, որ ժողովող չլինի: Ա-
23 յսպէս է ասում Տէրը. Զգաստնայ
իմաստունը իր իմաստութիւնով,
և չպարծենայ զօրաւորը իր զօրու-
թիւնով, չպարծենայ հարուստը
24 իր հարստութիւնով. այլ սրտա-
նով պարծենայ, ով որ պարծե-
նում է, թէ հասկանում և ճա-
նաչում է ինձ, որ ես եմ Տէրն,
որ երկրի վերայ ողորմութիւն, ի-
րաւունք և արդարութիւն եմ ա-
նում, վասն զի ես սորանց եմ հա-
25 ւանում, ասում է Տէրը: Ահա
օրեր կ'գան, ասում է Տէրը, որ
պիտի այցելեմ բոլոր թլփատ-
ուածներին և անթլփատներին,
26 Եգիպտոսին և Յուդային և Եդո-
մին, և Ամմոնի որդիանց և Մո-
ւաբին, և բոլոր մօրուքը ծայրը
կտրողներին, որ բնակում են ա-
նապատումը. վասն զի բոլոր ազ-
գերը անթլփատ են, բայց բոլոր
Իսրայէլի տունը անթլփատ է սըր-
տով:

ԳԼ. Ժ

1 Լսեցէք այն խօսքը, որ Տէրը ա-
մաւմ է ձեզ, ով Իսրայէլի տուն.
2 Այսպէս է ասում Տէրը, Ազգե-
րի ճանապարհները մի սովորէք,
և երկնքի նշաններից մի վախե-
նաք, վասն զի հեթանոսները կը
3 վախենան նորանից։ Վասն զի
ժողովուրդների սովորութիւննե-
րը ունայն են. որովհետև անտա-
ռի փայտ է այն, որ նա կտրել
է, արուեստագէտի ձեռաց գոր-
4 ծը՝ կացինով։ Արծաթով
և ոսկով նորան զարդարում են,
բևեռներով և ուռերով պինդաց-
նում են նորան, և նա չէ շար-
5 ժում։ Նորանք կոկուած արմա-
ւենու պէս են և չեն խօսիլ. նո-
րանք պէտք է տարուին, որով-
հետև չեն գնալ. նորանցից մի վա-
խենաք, որովհետև չարութիւն
չեն անիլ. բարիք անել էլ չկայ
նորանց մօտ։
6 Բնաւ չկայ քեզ նմանը, ով
Տէր, դու մեծ ես, և մեծ է քո
7 անունը զօրութեամբ։ Ով չի վա-
խենալ քեզանից, ով ազգաց թա-
գաւոր, վասն զի քեզ է վայե-
լում. որովհետև ազգաց բոլոր ի-
մաստուններին մէջ և նորանց բո-
լոր թագաւորութեանց մէջ բնաւ
8 չկայ քեզ նմանը։ Նոյց միանգա-
մայն անբան և անմիտ են, ու-
նայնութեանց խրատը փայտ է։
9 Թիթեղացրուած արծաթը Թար-
սիսից է բերվում, և ոսկին՝ Ոփա-
զից. արուեստաւորի և ոսկերչի
ձեռաց գործքն են, կապուտակ
և ծիրանի է նորանց զգեստը,
ամենքը վարպետների գործք են։
10 Սակայն Եհովան ճշմարիտ Աստ-
ուած է. նա կենդանի Աստուած
է և յաւիտենական թագաւոր.
նորա բարկութիւնից սարսում
է երկիրը, և ազգերը չեն դիմա-
11 նալ նորա բարկութեանը։ Այս-
պէս ասացէք նորանց. Այն աստ-
ուածները, որոնք երկինքն ու եր-
կիրը չեն շինել, պիտի բնաջինջ
լինին նորանք երկրից և երկնքի
12 տակից։ Նա է ստեղծել երկիրը
իր զօրութիւնով, հաստատել
աշխարհքը իր իմաստութիւնով,
և իր հանճարով տարածել է
երկինքը։ Նա ձայն տալիս՝ ջրերի 13
բազմութիւն է լինում երկնքում.
և վեր է հանում գոլորշիները
երկրի ծայրերից, կայծակներ է
շինում անձրևի համար, և հող-
մը հանում է իր շտեմարաննե-
րից։ Անասնացել է ամեն մարդ 14
առանց գիտութեան, պէտք է
ամաչել ամեն ոսկերիչ կուռքի-
ցը, վասն զի սուտ է նորա ձու-
լածը, և հոգի չկայ նորանցում։
Ունայնութիւն են նորանք, մո- 15
լորութեան գործ, նորանց այցե-
լութիւն եղած ժամանակ պիտի
կորչեն։ Սորանց պէս չէ Յակոբի 16
բաժինը. վասն զի նա ամենի
Ստեղծողն է, և Իսրայէլը նորա
ժառանգութեան վիճակն է. Նո-
րա անունը Եհովայ Սաբաոթ է։
Ժողովիր երկրից քո ապրանք- 17
ները, ով բերդի մէջ բնակող
կին։ Վասն զի այսպէս է ասում 18
Տէրը. Ահա ես այս անգամ
դէն եմ գցելու երկրի բնակիչնե-
րին և նորանց նեղութեան մէջ
պիտի դնեմ, որ գտնեն։
Վա՛յ ինձ իմ հարուածի հա- 19
մար, անդարմանելի է իմ վէր-
քը. և ես ասացի՝ Արդարև սա
իմ ցաւն է, և ես պէտք է տա-
նեմ նորան։ Իմ վրանը կոր- 20
ծանուեցաւ և ամեն չուանները
կտրտուեցան, իմ որդիքը ինձա-
նից յառաջ եկան և չկան. այլ
ես իմ վրանը կանգնեցնող չկայ
և ոչ իմ առագաստները ուղղող։
Վասն զի անասնացել են հովիւ- 21
ները և Տիրոջը չեն խնդրում. դո-
րա համար նորանք անխոհեմա-
ցան, և նորանց բոլոր հօտը ցըր-
ուեցաւ։ Լսուրի ձայն կայ, ահա 22
գալիս է, և մեծ դղրդոց հիւսի-
սի երկրից. որ Յուդայի քաղաք-
ները աւերակ շինէ՝ այսինքն շա-
գալների բնակարան։
Գիտեմ, ով Տէր, որ մարդու- 23
նը չէ իր ճանապարհը, որ գնա-
ցող մարդու բանը չէ, որ ուղղէ
իր գնացքը։ Ով Տէր, ինձ խրա- 24
տիր, բայց իրաւունքով. ոչ թէ
քո բարկութեամբը, որ մի դու-

25 ցէ ինձ ապառնեան ։ Թոափիր քո ցասումը այն ազգերի վերայ , որ քեզ չեն ճանաչում, և այն ցեղերի վերայ , որոնք քո անունը չեն կանչում, վասն զի կերան Յակոբը , և կերան ու վերջացրին նորան , և նորա բնակութիւնը աւերակ դարձրին ։

ԳԼ· ԺԱ

1 Այն խօսքն է առ , որ եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ ասելով · 2 Լսեցէք այս ուխտի խօսքերը , և ասացէք Յուդայի մարդկանցը և Երուսաղէմի բնակիչներին . 3 և ասացէք նորանց , Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը . Անիծեալ է այն մարդը , որ չլսէ այս ուխտի խօսքերին . 4 Որ ես պատուիրել եմ ձեր Հայրերին այն օրը , որ ես նորանց հանեցի Եգիպտոսի երկրից՝ այն երկաթի հնոցից , ասելով , Լսեցէք իմ ձայնին և կատարեցէք զորանց բոլորովին ինչպէս որ ես պատուիրում եմ ձեզ . և դուք կ'լինէք ինձ ժողովուրդ , և ես կը 5 լինիմ ձեզ Աստուած ։ Որպէս զի հաստատեմ այն երդումը , որ արել եմ ձեր Հայրերին , որ նորանց տամ կաթ և մեղր բղխող երկիրը՝ ինչպէս որ այսօր ։ Եւ ես պատասխանեցի ու ասացի . Ամէն , ով Տէր ։

6 Եւ Տէրն ասաց ինձ . Կանչիր այս բոլոր խօսքերը Յուդայի քաղաքներում և Երուսաղէմի փողոցներում ասելով . Լսեցէք այս ուխտի խօսքերը և արէք նորանց ։ 7 Վասն զի ես ձեր Հայրերին պարզապէս խրատեցի այն օրից , որ նորանց հանեցի Եգիպտոսի երկրից մինչև այս օր , կանուխ վեր էի կենում ու խրատում և ասում . Լսեցէք իմ ձայնին , 8 Բայց նորանք չլսեցին և ականջ չդրին , և ամեն մէկը գնաց իր չար սրտի կամակորութիւնովը , և ես բերի նորանց վերայ այս ուխտի բոլոր խօսքերը , որ պատուիրել էի որ 9 անեն , բայց չարին ։ Եւ Տէրը ասաց ինձ . Դաւաճանութիւն է գտնվում Յուդայի մարդկանցում և Երուսաղէմի բնակիչներում ։ 10 Նորանք դարձան դէպի իրանց առաջի հայրերի անօրէնութիւնները , որ մերժեցին լսել իմ խօսքերին , և նորանք գնացին ուրիշ աստուածների ետևից , որ նորանց ծառայեն . Իսրայէլի տունը և Յուդայի տունը քանդեցին իմ ուխտը , որ արել էի նորանց հայրերի հետ ։

11 Վասն որոյ Տէրը այսպէս է ասում . Ահա ես նորանց վերայ չարիք եմ բերելու , որից նորանք չեն կարողանալ դուրս գալ , և կ'կանչեն դէպի ինձ , բայց ես նորանց չեմ լսել ։ 12 Եւ Յուդայի քաղաքները և Երուսաղէմի բնակիչները կ'գնան և կ'կանչեն այն աստուածներին , որոնց իրանք խունկ էին ծխում , բայց նորանք բնաւ չեն օգնել նորանց իրանց նեղութեան ժամանակին ։ 13 Վասն զի քո քաղաքների չափ եղան քո աստուածները , ով Յուդա . և Երուսաղէմի փողոցների չափ սեղաններ էք շինել ամօթի համար , սեղաններ՝ որք բահաղին խունկ ծխելու համար են ։ 14 Բայց դու մի աղօթիր այս ժողովրդի համար , և նորանց համար աղաղակ ու աղաչանք մի բարձրացներ , վասն զի ես չեմ լսելու նորանց դէպի ինձ կանչած ժամանակը նորանց չարիքի համար ։

15 Ի՞նչ ունի իմ սիրելին իմ տանը . շատ անօրէնութիւններ գործելով , սուրբ միսն էլ պիտի անց կենայ քեզանից , վասն զի դու չարութիւն անելիս ուրախանում ես ։ 16 Կանաչ ձիթենի՝ գեղեցիկ բարեպտուղ կոչեց Տէրը քո անունը . բայց մեծ աղմկի ձայնով կրակ վառեց նորա կողմը , և նորա ճառերը կոտրատուեցան ։ 17 Եւ Զօրաց Տէրը , որ քեզ տնկել է , չարիք է խօսել քեզ վերայ , Իսրայէլի տան և Յուդայի տան չարութեան համար , որ իրանք արին , բահաղին խունկ ծխելով ինձ բարկացնելու համար ։ 18 Եւ Տէրն ինձ իմացրեց , և ես գիտեմ . դու ինձ ցոյց տուիր այն ժամանակ

19 նորանց գործքերը, բայց ես մի
ընտելացած գառնի պես էի, որ
տարվում է մորթուելու, և չը
գիտէի, թէ ինձ դէմ նենդու-
թիւն են հնարում, թէ փչացը-
նենք ծառը իր պտղովը, և նորան
բնաջինջ անենք կենդանեաց երկ-
բից, և նորա անունը այլ ևս չը
20 յիշուի: Սակայն, ով Զօրաց
Տէր՝ արդար դատաւոր, երիկա-
մուխքներն ու սիրտը քննող, թող
տեանեմ քո վրէժը նորանցից.
վասն զի իմ վէճը քեզ եմ ձգել:
21 Սորա համար այսպէս է ասում
Տէրը Անաթովթի մարդկանց հա-
մար, որոնք որոնում են քո հո-
գին՝ ասելով. Մի մարգարէանար
Տիրոջ անունովը, որ մեր ձեռ-
22 քովը չմեռնես: Վասն որոյ այս-
պէս է ասում Զօրաց Տէրը. Ահա
ես այցելութիւն պիտի անեմ նո-
րանց, ընտիրները պիտի սրով
ընկնեն, նորանց որդիքը և նորանց
աղջկերքը պիտի սովով մեռնեն:
23 Եւ մնացորդ պիտի չունենան նո-
րանք, վասն զի ես չարիք եմ բե-
րում Անաթովթի մարդկանց վե-
րայ՝ նորանց այցելելու տարին:

ԳԼ. ԺԲ

1 Արդար ես դու, ով Տէր, երբոր
վիճեմ քեզ հետ. սակայն իրա-
ւացի բաներ եմ խօսում քեզ
հետ. ինչո՞ւ համար յաջող է
ամբարիշտներուն ճանապարհը,
հանգիստ են բոլոր նենգութիւն
2 գործողները: Դու նորանց տնկե-
ցիր, և նորանք արմատացան,
աճում են և պտուղ էլ են բե-
րում, դու մօտ ես նորանց բե-
րանին, բայց հեռու՝ նորանց երի-
3 կամուխքներից: Եւ դու, ով Տէր,
գիտես ինձ, դու ինձ տեսար և
քննեցիր իմ սիրտը քեզ մօտ.
ջոկիր նորանց մորթուելու ոչխար-
ների պէս, և *որոշիր նորանց ըս-
4 պանման օրուան համար: Մինչև
ե՞րբ պիտի սուգ անէ երկիրը,
և բոլոր դաշտի խոտը չորանա՞յ.
նորանում բնակողների չարու-

*Երբիր

թեան համար. փչանում են ան-
ասուն ու թռչունը, վասն զի
նորանք ասում են՝ Նա պիտի չը
տեսնէ մեր վախճանը:

5 Եթէ դու հետևակների հետ
վազեցիր և նորանք քեզ յոգնեց-
րին, ապա ի՞նչպէս պիտի մրցէիր
ձիերի հետ. և խաղաղութեան
երկրի վերայ դու որ ապահով ես,
ապա ի՞նչպէս պիտի անէիր Յոր-
դանանը բարձրանալիս: 6 Վասն զի
քո եղբայրներն էլ և քո հօր տու-
նըն էլ՝ հէնց նորանք էլ նենգու-
թիւն արին քեզ դէմ, հէնց նո-
րանք էլ կանչեցին բարձրաձայն
քո ետևից. դու նորանց մի հա-
ւատար, թէ և քեզ լաւ բաներ
էլ ասեն:

7 Ես ձգել եմ իմ տունը, բար-
ձի թողի եմ արել իմ ժառան-
գութիւնը, իմ հոգու սիրածը
տուի իր թշնամիների ձեռքը: 8 Իմ
ժառանգութիւնն ինձ համար ե-
ղաւ անտառի առիւծին պէս, իր
ձայնը արձակեց ինձ վերայ. ա-
րա համար ատեցի նորան: 9 Իմ
ժառանգութիւնը մի գոյնզգոյն
թռչուն է եղել ինձ համար,
թռչունները յարձակուել են նո-
րա վերայ շուրջանակի. եկէք հա-
ւաքուեցէք, ով դաշտի բոլոր
գազաններ, բերէք որ ուտեն նո-
րան: 10 Շատ հովիւներ աւերել են
իմ այգին, առնակոխ են արել
իմ բաժինը, իմ ցանկալի վիճա-
կը սմսյի անապատ դարձրին:
11 Նորան անապատ դարձրին, սուգ
արաւ իմ առջև իրրև անա-
պատ, աւերակ է դարձել բոլոր
երկիրը, վասն զի մարդ չկայ, որ
12 ուշ դարձնէ: Անապատումը բո-
լոր բլուրների վերայ ասպատակ-
ներ եկան, վասն զի Տիրոջ սուրը
ուտում է երկրի մէկ ծայրից մին-
չև երկրի միւս ծայրը, խաղաղու-
թիւն չկայ ոչ մի մարմնոյ հա-
մար: 13 Նորանք ցանել են ցորեն,
բայց հնձեցին փուշ. աշխատանք
են քաշել, օգուտ չտեսան. և պի-
տի ամաչէք ձեր արդիւնքներից
Տիրոջ բարկութեան բորբոքման
համար:

14 Այսպէս է ասում Տէրը իմ

չար գործիներէն համար, որոնք դիպչում են այն ժառանգութեան, որ առել եմ իմ Իսրայէլ ժողովրդին. Ահա ես նորանց պիտի խլեմ երկրէ նորանց, և Յուդայի տունը պիտի խլեմ նորանց միջոցը։ Եւ երբոր ես նորանց խլած կ'լինիմ, յետոյ ես կ'դառնամ և կ'ողորմիմ նորանց, և ես կ'դարձնեմ ամեն մէկին իր ժառանգութեանը, և ամեն մարդուն իր երկիրը։ Եւ եթէ նորանք լաւ սովորին իմ ժողովրդի ճանապարհները, որ իմ անունովը երդում անեն՝ թէ կենդանի է Տէրը, ինչպէս որ սովորեցրին իմ ժողովրդին Բահաղով երդում անել, այն ժամանակ պիտի հաստատուին իմ ժողովրդի մէջ։ Բայց եթէ չլսեն, պիտի խլեմ այն ժողովուրդը բոլորովին, և նա պիտի փչանայ, ասում է Տէրը։

ԳԼ. ԺԹ

Ահա ասաց ինձ Տէրը. Գնա և քեզ համար մի քթանի գօտի գնիր և նորան մէջքդ կապիր, և նորան ջուրը չկոխես։ Եւ ես գնեցի գօտին Տիրոջ խօսքին համեմատ և կապեցի մէջքիս։ Եւ Տիրոջ խօսքը երկրորդ անգամ եղաւ ինձ ասելով. Առ քո գնած գօտին, որ մէջքիդ է, և վեր կաց գնա Եփրատ և թաքցրու այնտեղ վէմի ծակումը։ Եւ ես գնացի ու թաքցրի նորան Եփրատի մօտ, ինչպէս որ Տէրն ինձ պատուիրել էր։ Եւ եղաւ որ շատ ժամանակ անցնելուց յետոյ Տէրն ինձ ասաց. Վեր կաց գնա Եփրատ և վեր առ այնտեղից այն գօտին, որ ես քեզ հրամայեցի թաքցնել այնտեղ։ Եւ ես գնացի Եփրատ և քանդեցի և վեր առի գօտին այնտեղից, ու ահա գօտին փտել էր և ոչ մի բանի պիտանի չէր։ Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Տէրը այսպէս է ասում. Պիտի այսպէս փչացնեմ Յուդայի հպարտութիւնը և Երուսաղէմի մեծ հպարտութիւնը։ Այս չար ժողովուրդը, որ չէ ուզում լսել իմ խօսքերին, որ վարւում են իրանց սրտի կամակորութեամբ, և գնում են ուրիշ աստուածների հետից, որ ծառայեն նորանց և երկրպագութիւն անեն նորանց, նորանք պիտի այս գօտու պէս դառնան, որ ոչ մի բանի պիտանի չէ։ Վասն զի ինչպէս որ գօտին փաթաթած է մարդու մէջքին, այնպէս ես էլ փաթաթել էի ինձ բոլոր Իսրայէլի տունը, և բոլոր Յուդայի տունը, ասում է Տէրը, որ ինձ համար ժողովուրդ լինին և անուն և փառք ու պարծանք. բայց նորանք չլսեցին։

Եւ ասիր նորանց այս խօսքը. Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. Ամեն սիկ պիտի լցուի գինիով. բայց նորանք քեզ ասելու են. Մի՞թէ մենք բնաւ չգիտէինք, որ ամեն սիկ գինիով կ'լցուի։ Բայց դու ասիր նորանց. Այսպէս է ասում Տէրը. Ահա ես պիտի լցնեմ այս երկրի բոլոր բնակիչներին և այն թագաւորներին, որ նստում են Դաւթի աթոռի վերայ, և քահանաներին ու մարգարէներին, և Երուսաղէմի բոլոր բնակիչներին արբեցութեամբ։ Եւ պիտի կոտրատեմ մէկըմէկով, և հայրերին ու որդիներին միասին, ասում է Տէրը. ոչ պիտի գթամ և ոչ խնայեմ, և չեմ ողորմելու՝ նորանց բնաջինջ անելով։

Լսեցէք և ականջ դրէք, մի հպարտանաք, վասն զի Տէրն է խօսում։ Փառք տուէք ձեր Տէր Աստուծոյն, դեռ չխաւարած, և դեռ ձեր ոտքերը մթութեան լեռանց վերայ չգլորած, և դուք կ'սպասէք լուսոյ, բայց նա նորան մահուան սուրբ կ'շինէ, և թանձր մէգ կ'դարձնէ։ Բայց եթէ չլսէք սորան, իմ հոգին ծածուկ տեղերում պիտի լայ հպարտութեան համար, և պիտի արտասուքով արտասուէ և աչքս արտասուք թափէ. վասն զի Տիրոջ հօտը գերի առնուեցաւ։

Ասիր թագաւորին և թագու-

Հուն. Խոնարհեցէք, ցած նստեցէք, վասն զի իջել է ձեր գլխից
19 ձեր փառաց թագը։ Հարաւային քաղաքները կղպուեցան և բացող չկայ, գերութեան գնաց բոլոր Յուդան, ամբողջապէս գերի գնաց։
20 Նայ։ Բարձրացրէք ձեր աչքերը և տեսէք հիւսիսից եկողներին, ո՞ւր է քեզ տրուած հօտը՝ քո փա-
21 ռաց խաշինքները։ Ի՞նչ պիտի ասես երբոր քեզ սցցելութիւն տնէ. և դու ես նորանց սովորեցրել քեզ վերայ գլխաւոր իշխաններ լինելու. մի՞թէ քեզ ցաւեր չեն բռնելու ծննդական կնոջ նը-
22 ման։ Եւ եթէ ասես քո սրտումը. Այս բաները ինչո՞ւ համար են ինձ հանդիպել. քո անօրէնութեան շատութիւնից բացուեցան քո քղանցքը, բաց եղան քո
23 գարշապարները։ Մի՞թէ Եթէովպացին կ'փոխէ իր մորթը, կամ ինձը՝ իւր խայտուցները, որ դուք էլ կարողանայիք բարութիւն անել, որ սովորած էք չարութիւն
24 անելու։ Եւ ես նորանց պիտի ցըրիւ տամ ինչպէս մղեղ, որ տար-
25 վում է անապատի քամուցը։ Սա քո վիճակն է՝ քո մաս ես՝ բաժինը իմ կողմից, ասում է Տէրը, որ դու ինձ մոռացար և սուտ-
26 պատիներիր։ Ուրեմն ես էլ վեր հանեցի քո քղանցքը քո երեսի վերայ, և երևեցաւ քո ան-
27 գանքը։ Եւ քո շնութիւնները և վրնջիւնները, քո խորամանդ պոռնկութիւնը դաշտի բլուրների վերայ տեսել եմ, այսինքն քո պղծութիւնները. վա՛յ քեզ, Երուսաղէմ. դու քեզ չես մաքրում. էլ մինչև ե՞րբ։

ԳԼ. ԺԴ.

1 Տէրոջ այն խօսքը, որ եղաւ Երեմիայեան երաշտութեան մասին։
2 Յուդան սուգ է անում, և նորա դուռները թառամել են, և մթնել են գետնի վերայ, և Երուսաղէմի
3 աղաղակը վեր է ելել։ Եւ նորանց աղնուականքը ուղարկում իրանց պզտիկներին ջրի. նորանք գնացին ջրհորների մօտ, ջուր չգտան,

և դարձան սրտնեղած. ամաչեցին ու պատկառեցին և ծածկեցին իրանց գլուխը։ Որով- 4
հետև գետինը ճաքճքել է, երկրի վերայ անձրև չլինելու պատճառով, երկրագործները ամաչեցին և ծածկեցին իրանց գլուխը։
Վասն զի եղնիկն էլ ծնեց դաշ- 5
տումը և ձգեց, որովհետև խոտ չկար։ Եւ վայրի էշերը կանգնեցին բլուրների վերայ, ծծում են 6
օդը չջադների պէս. նորանց աչքերը նուաղել են, որովհետև խոտ չկայ։
Թէև մեր անօրէնութիւնները 7
վկայում են մեզ դէմ, ով Տէր, դու արա քո անուան համար. վասն զի մեր յանցանքները շատ են, քեզ դէմ մեղք ենք գործել։ Ով Իսրայէլի Յոյսը, նորա 8
Փրկիչը նեղութեան ժամանակին. ինչո՞ւ ես հիւրի պէս դարձել երկրումը, և մի ճանապարհորդի պէս՝ որ մտել է օթևելու։ Ինչո՞ւ 9
ես հիացած մարդու պէս դարձել, մի զօրաւորի պէս՝ որ չէ կարող օգնելու. սակայն դու մեր միջումն ես, ով Տէր, և քո անունը կանչուած է մեզ վերայ. մեզ մի թողիր։
Այսպէս է ասում Տէրը այս 10
ժողովրդին. Որովհետև նորանք սիրեցին թափառելը, իրանց ոտքերը չզսպեցին. Տէրն նորանց չընդունեց, հիմա պիտի յիշէ նորանց անօրէնութիւնները, և պտցնէ նորանց մեղքերը։ Եւ Տէրն 11
ինձ ասաց. Մի աղօթիր այս ժողովրդի համար՝ ի բարին։ Նորանք 12
ծոմ պահելիս՝ ես չեմ լսում նորանց աղաղակը, և նորանք ողջակէզ և նուէր մատուցանելիս՝ ես չեմ հաւանում, վասն զի սրով, ու սովով և ժանտախտով պիտի ոչնչեմ ես նորանց։ Եւ ես ա- 13
սացի. Աւաղ, Տէր Եհովայ, ահա մարգարէքն ասում են նորանց. Պիտի սուր չտեսնէք և սով էլ չէ լինելու ձեզ համար. այլ ճշմարիտ խաղաղութիւն պիտի լինի ձեզ համար այստեղում։ Եւ Տէ- 14
րն ինձ ասաց. Մարգարէները սուտ են մարգարէանում իմ ա-

նեանովը, ես նորանց չեմ ուղարկել և նորանց չեմ պատուիրել, և նորանց չեմ ասել. նորանք սուտ տեսիլքներ, և գուշակութիւն, և անոտի բան և իրանց սրտի խարէութիւններն են մարգարեանում ձեզ համար։ Ուրեմն այսպէս է ասում Տէրը այն մարգարէների համար, որոնք մարգարեանում են իմ անունովը. Թէև ես նորանց չեմ ուղարկել, և նորանք ասում են. Սուր ու սով չէ լինելու այս երկրումը, սրով ու սովով պիտի փչանան այն մարգարէքը։ Եւ այն ժողովուրդը՝ որոնց համար նորանք մարգարեանում են, պիտի գցուին Երուսաղէմի մէջ՝ սովի և սրի պատճառով, և թաղող պիտի չլինի, այսինքն իրանք, իրանց կանայքը և իրանց տղայքը և աղջկունքը, և նորանց վերայ պիտի թափեմ իրանց չարութիւնը։

Եւ նորանց ասիր այս խօսքը. Թող իմ աչքերը արտասուք թափեն գիշեր ու ցորեկ անդադար, վասն զի մեծ կոտորածով հարուածուել է իմ ժողովրդի կոյս աղջիկը մի խիստ ցաւալի հարուածով։ Եթէ դաշտն եմ դուրս գալիս՝ ահա սրով սպանուածներ են, և եթէ քաղաք եմ մտնում՝ ահա սովից թուլացածներ, վասն զի մարգարէն էլ՝ քահանան էլ՝ շուռ են գալիս երկրի վերայ և չգիտեն։

Մի՞թէ բոլորովին մերժել ես Յուդային. կամ Սիոնից ղըւե՞լ է հոգիդ, ինչո՞ւ համար մեզ զարկեցիր այնպէս որ չբժշկուինք. ապասում ենք խաղաղութեան, բայց բարիք չկայ, և բժշկութեան ժամանակին բայց ահա խռովութիւն։ Մենք գիտենք, ով Տէր, մեր ամբարշտութիւնը՝ մեր հայրերի անօրէնութիւնը. որ մեղանչել ենք քեզ դէմ։ Մի ղըւիր քո անուան սիրոյ համար, մի անարգիր քո փառաց աթոռը. յիշիր և մի քանդիր քո ուխտը մեզ հետ։ Մի՞թէ հեթանոսաց ունայնութիւններուն մէջ անձրև տուող կայ. կամ թէ երկի՞նքն է տալիս անձրևները. չէ՞ որ տուողը դու ես, ով Տէր մեր Աստուած, և մենք յուսում ենք քեզ, վասն զի դու ես անում այս ամեն բաները։

ԳԼ. ԺԵ

Եւ Տէրն ասաց ինձ. Եթէ Մովսէս ու Սամուէլն էլ կանգնէին իմ առջև, իմ սիրտը այս ժողովրդի վերայ չէ լինելու. նորանց դէն արա իմ երեսի առջևից որ գնան։ Եւ եթէ քեզ ասելու լինեն, Ո՞ւր դուրս գնանք, և նորանց ասես՝ Տէրը այսպէս է ասում. Որոնք մահուան համար են՝ մահուան, և որոնք սրի համար են՝ սրին, և որոնք սովի համար են՝ սովին, և որոնք գերութեան համար են՝ գերութեանը։ Եւ ես նորանց վերայ չորս տեսակ պատիժ եմ որոշել, ասում է Տէրը. սուրը՝ սպանելու համար, և շուները՝ պատառելու համար. և երկնից թռչունները ու երկրի գազանները՝ ուտելու և ապականելու համար։ Եւ նորանց չարչարանքի պիտի մատնեմ երկրի բոլոր թագաւորութիւններին, Յուդայի թագաւոր Եզեկիայի որդի Մանասէի պատճառով. նորա Երուսաղէմում արածի համար։ Վասն զի ո՞վ պիտի ողորմէ քեզ, ով Երուսաղէմ, և ո՞վ քեզ ցաւակից լինի. և ո՞վ պիտի դառնայ քո առողջութիւնը հարցնելու։ Դու ինձ ձգեցիր, ասում է Տէրը, ետ գնացիր, ես էլ իմ ձեռքը երկարացնելու եմ քեզ վերայ և քեզ փչացնելու եմ, ես վատնակել եմ գթութիւն անելուց։ Եւ հեծանոցով հոսելու եմ նորանց երկրի դըռներուն մէջ, անզաւակ եմ անելու, կորցնելեմ իմ ժողովրդին. նորանք իրանց ճանապարհներից ետ չեն դառնում։ Աւելի շատ եղան իմ առջև նորանց որբևայրիքը ծովերի աւազից, ես նորանց երիտասարդի մօր վերայ բերելու եմ աւերուածն կէս օրին, յանկարծ նորա վերայ գցելու եմ ահ ու սարսափ։

9 Եռաղելոյ է հօթը ծնողը, հո-
գին փչելու, նորա արևը մայր է
մանելու դեռ օրով, նա ամաչե-
լու ու պատկառելու է։ Իսկ մը-
նացորդը նորանց թշնամիներուն
սրին եմ մատնելու, ասում է
Տէրը։
10 Վա՛յ ինձ, ով իմ մայրը, որ
ինձ ծնար կռուի մարդ և վէճի
մարդ բոլոր երկրի համար. ոչ
շահով փող եմ առել, ոչ էլ
ինձ շահով փող են տուել, բայց
11 ամէնքը ինձ անիծում են։ Տէրն
ասում է. Անշուշտ քեզ պիտի
ազատեմ յաջողութեան համար,
և անշուշտ աղաչել պիտի տամ
+ թշնամուն դէպի քեզ ձա-
խորդութեան ժամանակին և նե-
12 ղութեան ժամանակին։ Մի՞թէ
կ'կոտրուի երկաթը՝ նա էլ հիւ-
13 սիսի երկաթը և պղինձը։ Քո
առացուածքն ու քո գանձերը յա-
փշտակութեան պիտի մատնեմ
ձրիապէս, այն էլ քո բոլոր մեղ-
քերի պատճառով, և քո բոլոր
14 սահմաններուդ։ Եւ քո թշնա-
միներուն տանել եմ տալու մի
երկիր, որ դու չգիտես. վասն զի
կրակ է վառուել իմ բարկու-
թիւնովը, ձեզ վերայ բորբոք-
ուել է։
15 Դու գիտես, ով Տէր, ինձ յի-
շիր և ինձ այցելիր, և իմ վրէժն
առ ինձ հալածողներէս, ինձ մի
վեր առնիր քո երկայնմտութեան
համար, գիտացիր, որ քո մասին
16 նախատինք կրեցի։ Գտանուեցան
քո խօսքերը, և ես կերայ նորանց,
և քո խօսքը եղաւ ինձ համար
ուրախութիւն և սրտիս ցնծութիւն. վասն զի քո անունը կոչուած է ինձ վերայ, ով Եհովայ
17 Զօրից Աստուած։ Ես չնստեցի ծիծաղողներուն ժողովքումը և չը զուարճացայ, քո ձեռքի պատճառով առանձին նստեցի, վասն զի բարկութեամբ լցրել էիր ինձ։
18 Ինչո՞ւ է իմ ցաւը միշտնջենաւոր, և իմ հարուածը՝ անդարմանելի, որ չուզում բժշկուիլ. միթէ դու ինձ համար իրաւ խաբողի նման ես դառնալու, ջրերի պէս որ հաւատարիմ չեն։

Սորա համար այսպէս է ասում Տէրը. եթէ դարձի գաս, ես քեզ ետ կ'բերեմ, իմ առջևը կը կանգնես. և եթէ հանես պատուականը անարգիցը, իմ բերանի պէս կ'լինիս. նորանք կ'դառնան դէպի քեզ, և դու դէպի նորանց չես դառնալ։ Եւ քեզ այս ազգի դէմ պղնձի ամուր պարիսպ կը շինեմ. և նորանք կ'պատերազմեն քեզ դէմ և քեզ չեն յաղթել, որովհետև ես քեզ հետ եմ քեզ փրկելու և քեզ ազատելու համար, ասում է Տէրը։ Եւ քեզ պիտի ազատեմ չարերի ձեռքից, և փրկեմ բռնաւորների ձեռքից։

ԳԼ. ԺԶ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ դէպի ինձ ասելով. Քեզ համար կին մի առնիր, և քեզ համար տղայք և աղջկունք չլինին այստեղ։ Վասն զի այսպէս է ասում Տէրը այստեղ ծնուած տղայոց և աղջկանց մասին, նաև նորանց այս երկրում ծնող մայրերի և նորանց ծնող հայրերի համար. Ցաւալի մահերով պիտի մեռնեն. նորանց վերայ սուգ չէ լինելու, և նորանք չեն թաղուելու, և նորանք աղբ պիտի դառնան երկրի երեսին. և սրով ու սովով պիտի ոչնչանան. և նորանց դիակները կերակուր պիտի դառնայ երկնից թռչուններին և դաշտի գազաններին։ Վասն զի Տէրը այսպէս է ասում. Սուգի տուն մի մտնիր և մի գնար ողբալու, և նորանց համար մի ցաւակցիր. վասն զի ես ետ եմ առել այս ժողովրդից իմ խաղաղութիւնը, ասում է Տէրը, ողորմութիւնը և գթութիւնը։ Եւ մեռնելու են մեծերն ու պզտիկները այս երկրում և չեն թաղուելու. և նորանց համար սուգ չեն անելու, և իրանց մարմինները չեն կտրտելու, և իրանց մազերը չեն խուզելու։ Եւ հաց չեն կտրելու սուգի համար մեռելի մասին մխիթարելու պատճառով, և նորանց չեն խմեցնե-

լու միսիթարութեան բաժակը, նորա հօր և նորա մօր համար։
8 Եւ խնջոյքի տուն մի մտնիր, նոր-
բանց հետ բնակելու, ուտելու և
9 խմելու համար։ Վասն զի այս-
պէս է ասում Տիրոջ Տէրը՝ Իս-
րայէլի Աստուածը. Ահա ես կը
դադարեցնեմ այստեղից ձեր ա-
չաց առջև և ձեր օրերում ցըն-
ծութեան ձայնը և ուրախու-
թեան ձայնը, փեսայի ձայնը և
10 հարսի ձայնը։ Եւ երբոր դու ա-
ռած կ'լինես այս բոլոր խօսքերը
այս ժողովրդին, և նորանք քեզ
կ'ասեն, Ինչո՞ւ համար է Տէրն
ասում մեր մասին այս բոլոր մեծ
չարիքը, և ի՞նչ է մեր անօրէ-
նութիւնը, և ի՞նչ է մեր մեղքը,
որ մեզանից լինելինք մեր Տէր
11 Աստուծոյ դէմ։ Եւ դու ասիր
նորանց. Նորա համար որ ձեր
հայրերը ինձ թողեցին, ասում
է Տէրը, և գնացին ուրիշ աստ-
ուածների ետևից, և ծառայե-
ցին նոցանց ու երկրպագեցին նո-
րանց, բայց ինձ թողեցին և իմ
12 օրէնքը չպահեցին։ Սակայն դուք
աւելի չարութիւն գործեցիք քան
թէ ձեր հայրերը, և ահա ձեզա-
նից ամեն մէկը գնում է իր չար
սրտի կամակորութեան ետևից,
13 որ ինձ չէ լսում։ Ես էլ գէն եմ
գցում ձեզ այս երկրի երեսից
մի այնպիսի երկիր, որ դուք չը
գիտէիք և ոչ ձեր հայրերը, և
այնտեղ պիտի ծառայէք գերիկ
և գիշեր ուրիշ աստուածների,
որովհետև ձեզ ողորմութիւն չեմ
անելու։
14 Սորա համար ահա օրեր կ'գան,
ասում է Տէրը, որ այլևս չի
ասուիլ թէ՝ Կենդանի է Տէրը,
որ Իսրայէլի որդիանցը վեր հա-
15 նեց Եգիպտոսի երկրիցը, Այլ
թէ՝ Կենդանի է Տէրը, որ հանեց
Իսրայէլի որդիանցը հիւսիսի երկ-
րիցը, և այն բոլոր երկիրներիցը,
ուր որ նորանց սփռուել էր. և
ես պիտի եւս դարձնեմ նորանց
դէպի իրանց երկիրը, որ տուել
եմ իրանց հայրերին։
16 Ահա ես շատ ձկնորսներ եմ
ուղարկելու, ասում է Տէրը, և
նորանք պիտի որսան նորանց. և
նորանից յետոյ շատ որսորդներ
եմ ուղարկելու, և նորանք պիտի
բռնեն նորանց ամեն լեռան վե-
րայից, և ամեն բլրի վերայից և
վէմերի ծակերիցը։ Վասն զի իմ 17
աչքերը նորանց բոլոր ճանա-
պարհների վերայ է. նորանք ծա-
ծուկ չեն իմ երեսի առջև, և
գաղանի չէ նորանց անօրէնու-
թիւնը իմ աչաց առջև։ Եւ ես 18
առաջ պիտի նորանց կրկնապա-
տիկ հատուցանեմ նորանց անօ-
րէնութեան և նորանց մեղքի ֆո-
խարէն. որովհետև նորանք պղծե-
ցին իմ երկիրը, իրանց գարշե-
լի թիւններով և պղծութիւնների
դիւերովը լցրին իմ ժառանգու-
թիւնը։
Ով Տէր, իմ զօրութիւնն ու 19
իմ բերդը, և իմ ապաստարանը
նեղ օրում. քեզ մօտ են գալու
ազգերը երկրի ծայրերից և ասեն.
Միայն ստութիւն ժառանգե-
ցին մեր հայրերը՝ ունայնութիւն,
որոնց մէջ օգուտ չկայ։
Մի՞թէ մարդս իրան համար 20
աստուածներ շինէ, քանի որ նո-
րանք աստուածներ չեն։ Սորա 21
համար ահա ես նորանց պիտի ի-
մացնեմ այս անգամ, պիտի իմաց-
ընեմ նորանց իմ ձեռքը և իմ
զօրը. և պիտի գիտենան, որ իմ
անունը Եհովայ է։

ԳԼ. ԺԷ

Յուդայի մեղքը գրուած է եր- 1
կաթի գրիչով՝ ադամանդեայ
ծայրով, փորագրուած է նորանց
սրտի տախտակի վերայ, և ձեր
սեղանների եղջիւրների վերայ։
Նորանք յիշում են իրանց որդիանց 2
յիշելուն պէս իրանց սեղաններին,
և իրանց աստարտեներին կա-
նաչ ծառերի մօտ բարձր բլուր-
ների վերան։ Իմ լեռը դաշտի 3
մէջ քո հարստութիւնը՝ քո գա-
նձերը յափշտակութեան
պիտի մատնեմ, քո բարձրատա-
պանները մեղքի համար քո բոլոր
սահմաններում։ Եւ պիտի պրկ- 4
ուես հէնց քեզանով քո ժառան-

գութիւնիցը որ քեզ առի, և քեզ ծառայեցնելու եմ քո թըշնամիներին՝ ի այնպիսի երկրում որ դու չգիտէիր, վասն զի կրակ էք առել իմ բարկութեանը, մինչև յաւիտեան պիտի վառուի։

5 Այսպէս է ասում Տէրը. Անիծեալ լինի այն մարդը, որ մարդու է ապաւինում, և մարմինը իրան բազուկ չինում, և իր սըրտով խոտորում Տիրոջիցը։ 6 Նա պիտի լինի մոշենու պէս անապատում, և պիտի բարիքը եկած ժամանակը չտեսանէ, և պիտի բնակէ անապատի այրուած տեղերում, աղի և անբնակ երկրում։ 7 Օրհնեալ լինի այն մարդը, որ Տիրոջն է ապաւինում, 8 և Տէրն է նորա յոյսը։ Նա կ'լինի ինչպէս մի ծառ, որ անկուած է ջրերի մօտ, նա իր արմատները կ'ձգէ դեպի մօտովը, և չի տեսնել տաքութիւնը եկած ժամանակը. այլ նորա տերևները կանաչ կ'լինի, և երաշտ տարին նա չի վախել և չի դադարիլ պտուղ տալուց։

9 Խորհրդանիկ է սիրտ ամենից ուժգին և ապականուած. նորան 10 ո՞վ կարող է գիտենալ։ Ես Տէրս քննում եմ սիրտը փորձում երիկամունքը որ տամ մարդուս իր ճանապարհների համեմատ և իր գործքերի պտուղին համեմատ։ 11 Իր չածածկը թխսող կոչուի՝ պէս է անիրաւութեամբ հարստութիւն շինողը. նա իր օրերի կէսին պիտի թողէ նորան, և իր վերջումը յիմար կ'լինի։

12 Փառաց աթոռ, բարձր ի սկզբանէ, մեր սրբարանի տեղը, 13 յուսէլի յոյսը, ով Տէր, բոլոր քեզ թողողները պիտի ամաչեն. ինձանից հեռացողները տափուճին են գրուելու. վասն զի թողեցին կենաց ջրի աղբիւրը՝ Տիրոջը։

14 Ինձ բժշկիր, ով Տէր, և ես կ'բժշկուիմ, փրկիր ինձ, և ես կ'փրկուիմ. վասն զի իմ պարծանքը դու ես։ 15 Ահա նորանք ինձ ասում են, Ո՞ւր է Տիրոջ խօսքը, 16 թող մէկ գայ։ Բայց ես ետ չը քաշուեցայ քո ետևից հովիւ լինելուց, և ձախորդ օրուան չեմ բաղձացել, դու գիտես. իմ շրթունքներից դուրս եկածը քո դիմաց առջևն էր։ 17 Ինձ համար սրհուելիք մի լինիր. իմ ապաւէնը դու ես չար օրը։ 18 Թող ամաչեն ինձ հալածողները, իսկ ես պիտի չամաչեմ. թող նորանք զարհուրեն, իսկ ես պիտի չզարհուրեմ. նորանց վերայ չար օր բեր, և երկպատիկ կոտրածով կոտրիր նորանց։

19 Տէրն այսպէս է ասում ինձ. Գնա և կանգնիր ժողովրդի որդիքանց դրանը, որով Յուդայի թագաւորները մտնում և դուրս են գալիս. և Երուսաղէմի բոլոր դռներումը։ 20 Եւ ասիր նորանց. Լսեցէք Տիրոջ խօսքը, ով Յուդայի թագաւորներ և ով բոլոր Յուդա և ով Երուսաղէմի բոլոր բնակիչներ, որ գալիս էք այս դռներըը։ 21 Այսպէս է ասում Տէրը. Զգուշացէք ձեր անձանց համար, և բեռ մի վեր առնէք շաբաթ օրը ու բերէք Երուսաղէմի դռները։ 22 Եւ ձեր տներից բեռ մի դուրս բերէք շաբաթ օրը, և ոչ մի գործ մի անէք. իսկ սրբեցէք շաբաթ օրը, ինչպէս որ պատուիրել եմ ձեր հայրերին։ 23 Բայց նորանք չլսեցին և իրանց ականջը չծռեցին. այլ խստացրին իրանց պարանոցը, որ չլսեն և որ խրատ չառնեն։ 24 Եւ եթէ ուշադրութեամբ ականջ դնէք ինձ, ասում է Տէրը, որ այս քաղաքի դռները բեռ չբերէք շաբաթ օրը, և որ շաբաթ օրը սրբէք, որ նորանում ոչ մի գործ չանէք. 25 Այն ժամանակ այս քաղաքի դռներովը կ'մտնեն թագաւորներ և իշխաններ, որ կ'նստեն Դաւթի աթոռի վերայ՝ հեծած կառքերի և ձիերի, թէ իրանք թէ իրանց իշխանները, Յուդայի մարդիկը և Երուսաղէմի բնակիչները. և այս քաղաքը կ'բնակուի յաւիտեան։ 26 Եւ կ'գան Յուդայի քաղաքներից և Երուսաղէմի շրջակայքից և Բենիամինի երկրից, և դաշտից ու լեռներից, և հարաւից, և կ'բերեն ող-

ջակէզ և պոհ և ընծայ և կնդրուկ,
և գոհուեցան ընծաները կ'երերին
27 Տիրոջ առաջ։ Բայց եթէ ինձ չլը
լսէք, որ շաբաթ օրը պահէք,
որ բեռ վեր չառնէք ու բերէք
Երուսաղէմի դուռները շաբաթ
օրուընդ, այն ժամանակ ես էլ
կրակ կ'վառեմ նորա դուռներուընդ,
և նա կ'ուտէ Երուսաղէմի պա-
լատները և չի հանգչուիլ։

ԳԼ. ԺԸ

1 Այն խօսքը, որ եղաւ Երեմիա-
յին Տիրոջ կողմանէ ասելով.
2 Վեր կաց իջիր բրուտի տունը,
և այնտեղ քեզ ես պիտի լսել
3 տամ իմ խօսքերը։ Եւ ես իջայ
բրուտի տունը, և ահա նա բան
էր անում ճախարակների վերայ։
4 Եւ աւերուեցաւ այն անօնը, որ
նա շինում էր, ինչպէս կաւը
բրուտի ձեռքին կ'պատահէ, և նա
դարձաւ ու մի ուրիշ անօն շի-
նեց, ինչպէս որ բրուտի աչքին
5 հաճելի էր անելու։ Եւ Տիրոջ
խօսքը եղաւ դէպի ինձ ասելով.
6 Մի՞թէ չեմ կարող այս բրուտի
պէս անել ձեզ, ով Իսրայէլի
տուն, ասում է Տէրը, ահա ինչ-
պէս որ կաւն է բրուտի ձեռքին,
նոյնպէս էք դուք իմ ձեռքին,
7 ով Իսրայէլի տուն։ Յանկ և իսկ
խօսում եմ մէկ ազգի կամ մէկ
թագաւորութեան դէմ, նոքան
քանդելու, փուլ ածելու և կոր-
8 ցընելու համար. Եւ այն ազգը
դարձ է գալիս իր չարութիւնիցը,
որի մասին ես խօսել էի, ես էլ
պղջում եմ այն չարիքի համար,
որ խորհել էի նորան անելու հա-
9 մար։ Եւ իսկ և իսկ խօսում եմ
մէկ ազգի կամ մէկ թագաւոր-
ութեան մասին, նոքան շինելու և
10 տնկելու համար. Եւ նա չարու-
թիւն է անում իմ աչքի առջև
և չէ լսում իմ խօսքին. ես էլ
պղջում եմ այն բարեաց համար,
որ ասել էի թէ՝ Նորան բարիք
եմ անելու։

11 Եւ հիմա ասա Յուդայի մարդ-
կանցը և Երուսաղէմի բնակիչնե-
րին, թէ Այսպէս է ասում Տէ-
րը. Ահա ես ձեզ համար չարիք
եմ շինում, և ձեր մասին մի
խորհուրդ եմ խորհում, եկէք
ես դարձէք ամեն մարդ իր չար
ճանապարհիցը, և ուղղեցէք ձեր
ճանապարհները և ձեր գործքերը։
12 Բայց նորանք ասում են. *Անիը-
նարին է, վասն զի մենք մեր խոր-
հուրդների ետևիցն ենք գնալու,
և իւրաքանչիւրս իր չար սրտի
կամակորութիւնն ենք անելու։
13 Սորա համար այսպէս է ա-
ում Տէրը. Մէկ հարցրէք ազգաց
մէջ, ո՞վ է լսել այսպիսի բաներ.
խիստ սոսկալի բան արաւ Իսրա-
յէլի կոյսը։ Մի՞թէ դաշտի վէ-
14 միցը կ'պակասէ Լիբանանի ձիւնը,
կամ կ'ցամաքեն հոսող օտար
ցուրտ ջուրերը։ Սակայն ինձ մո-
15 ռացել է իմ ժողովուրդը, ու-
նայն բանին է խունկ ծխում. և
նորանց սահեցրել են իրանց ճա-
նապարհներուընդ, որ հին ճանա-
պարհներ էին, որ այնպիսի ուղի-
ներով գնան, որ պողոտայ չեն։
16 Որ իրանց երկիրը աւերակ յա-
ւիտեան սուլելու առարկայ չինեն.
որ ամեն նորա մօտավ անցնողը
հիանայ և գլուխը շարժէ։ Իբրև
17 թէ արևելեան քամիով պիտի
նորանց երեսի թշնամու առջև.
մէջը և ոչ թէ երես պիտի ցոյց
տամ նորանց կործանման օրը։

18 Բայց նորանք ասացին. Եկէք
հնարքներ սարքինք Երեմիայի
դէմ, վասն զի օրէնքը չի կորչիլ
քահանայիցը, և խորհուրդը՝ ի-
մաստունիցը, և խօսքը՝ մարգա-
րէիցը։ Եկէք նորան զարկենք լե-
զուով, և նորա ոչ մի խօսքին
մտիկ չանենք։

19 Ով Տէր, դէպի ինձ մտիկ ա-
րա, և լսիր ինձ հետ վիճողների
ձայնը։ 20 Մի՞թէ բարիքի փոխարէն
չարութիւն կ'հատուցանուի, վա-
սն զի նորանք փոս են փորել իմ
անձի համար. յիշիր իմ կանգնելը
քո առջև նորանց համար բարեխօ-
սելու մասին, որ ետ դարձնեմ քո
բարկութիւնը նորանցից։ 21 Սորա
համար նորանց որդկանցը մատնիր

*Յոյս չկայ

ասլի և նորանց յանձնիը աւրի
ձեռքը, որ նորանց կանայքը ան-
զաւակ ու արբևայրի դառնան, և
նորանց մարդիկը մահուամբ ըս-
պանուածներ լինեն, նորանց ե-
րիտասարդները՝ պատերազմում
22 արով զարկուածներ։ Աղաղակ
լսուի նորանց տներիցը, երբոր
դու նորանց վերայ յանկարծակի
գունդեր բերես, որովհետև փոս
փորեցին ինձ բռնելու համար,
և վարժեր լարեցին ծածուկ իմ
23 ոտքերի համար։ Բայց դու, օվ
Տէր, գիտես նորանց բոլոր խոր-
հուրդները ինձ դէմ մահուան
համար. նորանց մեղքերը մի քա-
ւիր, և նորանց մեղքը քո առ-
ջևից մի ջնջիր. այլ թող նորանք
կործանուին քո առջև, նորանց
արա քո բարկութեան ժամա-
նակին։

ԳԼ. ԺԹ

1 Ասացէք ասաց Տէրը. Գնա մի
բրուտի հոդի կաւժ առ, և ժո-
ղովրդի ծերերից ու քահանա-
2 ների ծերերից էլ. Եւ դուրս ել
Ենոմի որդու ձորը, որ Հարսա-
թի դրան մուտքի մօտին է, և
կանչիր այնտեղ այն խօսքերը, որ
3 կ'ասեմ քեզ. Եւ ասիր. Լսեցէք
Տիրոջ խօսքը, ով Յուդայի թա-
գաւորներ, և ով Երուսաղէմի
բնակիչներ. այսպէս է ասում
Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուա-
ծը. Ահա ես չարիք եմ բերելու
այս տեղի վերայ, որ ամեն լսողի
4 ականջները ծվլան։ Որա համար
որ ինձ թողեցին և օտարացրին
այս տեղը, և նորանում խունկ
ծխեցին ուրիշ աստուածների,
որոնց չէին ճանաչում իրանք և
իրանց հայրերն ու Յուդայի թա-
գաւորները, և լցրին այս տեղը
5 անմեղների արիւնով։ Եւ շինեցին
Բահաղի բարձրաւանդակները, որ
իրանց որդիանցը կրակով այրեն,
իբրև ողջակէզներ Բահաղի հա-
մար, որ ես չեմ պատուիրել, և
չեմ ասել, և միտքս էլ չէ ե-
6 կել։ Վասն որոյ ահա օրեր կը
գան, ասում է Տէրը, որ այլևս

այստեղին Տոփէթ և Ենոմի որ-
դու ձոր չի ասուիլ, այլ սպա-
նուելեան ձոր։ Եւ ես պիտի խա- 7
փանեմ այս տեղում Յուդայի և
Երուսաղէմի խորհուրդը, և նո-
րանց պիտի արով կործանեմ ի-
րանց թշնամեաց առջև, և նո-
րանց հոգիները պահանջողների
ձեռքովը, և նորանց դիակները
պիտի տամ իբրև կերակուր եր-
կընքի թռչուններին և երկրի գա-
զաններին։ Եւ այս քաղաքը կը 8
շինեմ աւերակ և նախատինք.
ամեն նորա մօտով անցնողը պի-
տի հիանայ և պիտի սուլէ նորա
բոլոր հարուածների մասին։ Եւ 9
նորանց պիտի ուտեցնեմ իրանց
որդիանց միսը և իրանց աղջկե-
րանց միսը, և ամեն մարդ իր ըն-
կերի միսն է ուտելու այն պա-
շարմանքի և նեղութեան մէջ,
որով պիտի նեղեն նորանց իրանց
թշնամիքը և նորանց հոգին պա-
հանջողները։

Եւ կոտրիր այն կուժը քեզ 10
հետ գնացող մարդկանց աչքի
առջև։ Եւ ասիր նորանց. Այս- 11
պէս է ասում Զօրաց Տէրը. Ս-
րա պէս պիտի կոտրեմ այս ժո-
ղովուրդը և այս քաղաքը, ին-
պէս որ նա կոտրեց բրուտի ա-
մանը, որ այլևս չի ողջանալ,
և Տոփէթում պիտի թաղուին,
թաղելու տեղ չլինելու համար։
Այսպէս պիտի անեմ այս տե- 12
ղին, ասում է Տէրը, և նորա
բնակիչներին, և այս քաղաքը
Տոփէթի պէս պիտի անեմ։ Եւ 13
Երուսաղէմի տուները, և Յու-
դայի թագաւորների տուները
Տոփէթի տեղին պէս պիղծ կ'լի-
նին, այն բոլոր տների մասին,
որոնց կտրներին խունկ են ծխել
երկնքի բոլոր զօրքերի համար և
թափելու նուէրներ են թափել
օտար աստուածների։

Եւ Երեմիան եկաւ Տոփէթից, 14
ուր որ Տէրը ուղարկել էր նո-
րան մարգարէութիւն անելու, և
կանգնեց Տիրոջ տան գաւիթու-
մը և ասաց բոլոր ժողովրդին.
Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ 15
Իսրայէլի Աստուածը. Ահա ես

պիտի բերեմ այս քաղաքի վերայ և նորա բոլոր քաղաքներուն վերայ, այն ամեն չարիքը, որ ասել եմ նորա մասին. վասն զի նորանք խստացրել են իրանց պարանոցը, որ իմ խօսքերը չլսեն։

ԳԼ. Ի

1 Եւ լսեց Եմմերի որդի Փասուր քահանան, որ իշխանապետ վերակացու էր Տիրոջ տանը, Երեմիային որ մարգարէանում էր
2 այս խօսքերը, եւ զարկեց Փասուրը Երեմիա մարգարէին և դրաւ նորան կոճղում որ Բենիամինի վերի դրանն էր Տիրոջ տան
3 մէջ։ Եւ հետևեալ օրը եղաւ որ Փասուրը հանեց Երեմիային կոճղից. և Երեմիան ասաց նորան. Տէրը քո անունը ոչ թէ Փասուր է կոչելու, այլ *Մագոր–միսաբիր։
4 Վասն զի այսպէս է ասում Տէրը. Ահա ես քեզ սարհաւիրք պիտի շինեմ քեզ համար, և քո բոլոր բարեկամների համար. և նորանք պիտի ընկնեն իրանց թըշնամեաց սրովը, և քո աչքերը պիտի տեսանեն, և բոլոր Յուդան պիտի մատնեմ Բաբելոնի թագաւորի ձեռքը, և նա նորանց գերի պիտի տանէ Բաբելոն, և
5 նորանց պիտի զարկէ սրով։ Եւ այս քաղաքի ամեն մեծերքը և նորա բոլոր վաստակը և նորա բոլոր պատուական բաները, և Յուդայի թագաւորների բոլոր գանձերը պիտի տամ իրանց թըշնամիների ձեռքը, և նորանք պիտի կողոպտեն նորանց, և նորանց
6 առնեն ու տանեն Բաբելոն։ Իսկ դու, ով Փասուր, և քո տան բոլոր բնակիչները, գերի պիտի դնաք. և Բաբելոն պիտի գնաս և այնտեղ մեռնես և այնտեղ թաղուես դու և քո բոլոր բարեկամները, որանց դու սուտ մարգարէութիւն էիր անում։
7 Դու ինձ համոզեցիր, ով Տէր, և ես համոզուեցայ, դու ինձանից զօրաւոր եղար և յաղթեցիր.

*Վախ շուրջանակի

և ծաղր եմ դառել ամեն օր, ամենքը ծիծաղում են վերաս։ Վասն զի քանի անգամ որ խօսեմ՝ պիտի աղաղակեմ, պիտի բողոքեմ բռնութիւն և պրկում։ Վասն զի Տիրոջ խօսքը ինձ համար ամեն օր նախատինք ու անարգանք է դառել։ Եւ ես ասացի. Նորան չյիշեմ, և չխօսեմ այլ ևս նորա անունով. այն ժամանակ սրտիս մէջ վառուած կըրակի պէս դարձաւ՝ ոսկորներումս պահուած, և յոգնեցի կրելուցը, և չկարողացայ։ Վասն զի ես շատերի պարսաւանքը լսեցի. վախ է շուրջանակի։ Յայտնեցէք և մենք էլ ենք յայտնելու նորա մասին, ասում են նորանք. իմ բոլոր բարեկամները նայում են իմ սահելուն. գուցե կ'խաբուի, այն ժամանակ մենք նորան կ'յաղթենք, և մեր վրէժը կ'առնենք նորանից։ Բայց Տէրը ինձ հետ է զօրաւոր սխոյեանի պէս, դորա համար իմ հալածողները պիտի գլորուին և պիտի չյաղթեն, նորանք պէտք է շատ ամաչեն, որովհետև նորանք խելք չունին, մի յաւիտենական անարգանքով, որ պիտի չմոռացուի։ Բայց ով Զօրաց Տէր, որ քննում ես արդարին, որ տեսնում ես երիկամունքը և սիրտը, թող տեսնեմ քո վրէժխնդրութիւնը նորանցից, վասն զի իմ դատը քեզ վերայ եմ գցել։ Երգեցէք Տիրոջը, օրհնեցէք Տիրոջը, վասն զի նա փրկեց աղքատի հոգին չարագործների ձեռքից։

Անիծեալ լինի իմ ծնուած օրը, և այն օրը, որ իմ մայրը ծընեց ինձ, օրհնեալ չլինի։ Անիծեալ լինի այն մարդը, որ աւետիք տուաւ իմ հօրը ասելով. Քեզ մի արու զաւակ է ծնուել, որ նորան ուրախութիւնով ուրախացրեց։ Եւ այն մարդը այն քաղաքների նման լինի, որոնց կործանեց Տէրը և չխնայեց, և նա աղաղակ լսէ առաւօտին, և գոռում՝ կէս օրուայ ժամանակին։ Որ ինձ չմեռցրեց արգանդից, որ իմ մայրը լինէր ինձ համար իմ գերեզմանը, և նորա

արդանդը յղի ձեռ յուխտեան։
18 Ինչո՞ւ համար ես դուրս եկայ արգանդից, որ աշխատութիւն և ցաւ տեսանեմ, և իմ օրերը վերջանան ամօթով։

ԳԼ. ԼԱ

1 Ա.յն խօսքը որ եղաւ Տիրոջ կողմանէ դէպի Երեմիան, երբոր Սեդեկիա թագաւորը նորա մօտ ուղարկեց Մեղքիայի որդի Փաշուրին և Մաասեայի որդի Սոփոնիա քահանային ասելով. Մեկ հարցրու մեզ համար Տիրոջը, վասն զի Նաբուղոնոսոր Նոռոգոդոնոսորը պատերազմում է մեզ դեմ. գուցե Տէրը մեզ հետ անէ իր ամէն սքանչելիքների համեմատ. և նա պէն գնայ մեզանից։
3 Եւ Երեմիան ասաց նորանց. Այսպէս ասացէք Սեդեկիային.
4 Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա ես շուռ պիտի տամ այն պատերազմական գործիքները, որ ձեր ձեռքին են և որոնցով դուք պատերազմում էք Նաբուղոնոսորի և Քաղդէացիների հետ, որ ձեզ պաշարել են պարսպի դուրսից, և պիտի ժողովեմ նորանց այս քաղաքի մէջ։ 5 Եւ ես պիտի պատերազմեմ ձեզ հետ երկարացրած ձեռքով և զօրաւոր բազուկով և բարկութիւնով և սրտմտութիւնով և մեծ ցասումով։ 6 Եւ պիտի զարկեմ այս քաղաքի բնակիչներին, մարդն էլ անասունն էլ. մեծ ժանտախտով պիտի մեռնեն նորանք։ 7 Եւ նորանից յետոյ պիտի տամ՝ Յուդայի թագաւոր Սեդեկիային և նորա ծառաներին և ժողովուրդին ու այս քաղաքի մէջ ժանտախտից, սրից և սովից մնացածներին Նաբուղոնոսոր Նոռոգոդոնոսորի թագաւոր Նորուգոդոնոսորի ձեռքը և իրանց թշնամիների ձեռքը և իրանց հոգիները պահանջողների ձեռքը. և նա պիտի զարկէ նորանց սրի բերանով. նորանց պիտի չխնայէ, և չդթայ և չողորմէ։

8 Եւ այս ժողովրդին ասիր. Այսպէս է ասում Տէրը. Ահա ես դնում եմ ձեր առջեւը կենաց ճանապարհը և մահուան ճանապարհը։ 9 Այս քաղաքում ձեռ ցողը պիտի մեռնէ սրով և սովով և ժանտախտով. բայց դուրս ելող Քաղդէացոց կողմն անցնողը, որոնք ձեզ պաշարել են, պիտի ապրէ, և նորա անձը իր համար աւար պիտի լինի։ 10 Վասն զի ես իմ երեսը արուել եմ դէպի այս քաղաքը չարիքի համար և ոչ թէ բարիքի համար, ասում է Տէրը. նա պիտի Բաբիլոնի թագաւորի ձեռքը տրուի, և նա պիտի կրակով այրէ նորան։

11 Եւ Յուդայի թագաւորի տանն ասիր. Լսեցէք Տիրոջ խօսքը. 12 Ով Դաւթի տուն. այսպէս է ասում Տէրը. Առաւօտներբ դատաստան արէք, և ազատեցէք զրկեալին հարստահարողի ձեռքից, որպէս զի իմ բարկութիւնը դուրս չգայ կրակի պէս և այրէ, և հանգցնող չլինի, ձեր գործքերի չարութեան պատճառով։ 13 Ահա ես ձեզ դէմ եմ, ով հովիտի գաշտի վէմի բնակիչ, ասում է Տէրը, որ ասում էիք, ո՞վ է վայր իջնելու մեզ վերայ, և ո՞վ է գալու մեր բնակարանները։ 14 Բայց ես պիտի այցելեմ ձեզ ձեր գործքերի պտուղին համեմատ, ասում է Տէրը, և կրակ պիտի վառեմ նորա անտառումը, որ ապտէ նորա բոլոր շրջակայքը։

ԳԼ. ԼԲ

1 Ա.յսպէս է ասում Տէրը. Իջիր 2 Յուդայի թագաւորի տունը, և ասիր այնտեղ այս խօսքը. Եւ ասիր. Լսիր Տիրոջ խօսքը, ով Յուդայի թագաւոր, որ նստել ես Դաւթի աթոռի վերայ, դու և քո ծառաները և քո ժողովուրդը, որ եկել էք այս դռներով, 3 Այսպէս է ասում Տէրը. Իրաւունք և արդարութիւն արէք, և ազատեցէք զրկեալին հարստահարողի ձեռքից, մի ճնշէք, մի

բռնանաք, և անմեղ արիւն մի
4 թափէք այս տեղւոյս՝ ոչ ասն դի
եթէ իրաւ անէք այս բանը. այն
ժամանակ կ'մտանեն այս տան
դռներովը Դաւթի աթոռի վերայ
նստող թագաւորներ՝ կառքի և
ձիերի վերայ հեծած՝ ինքը և իր
ծառաներն ու իր ժողովուրդը։
5 Իսկ եթէ չլսէք այս խօսքերուն,
ինձմով երդում եմ անուս,
ասում է Տէրը. որ այս տունը
6 աւերակ պիտի դառնայ։ Վասն
դի այսպէս է ասում Տէրը Յու-
դայի թագաւորի տան մասին.
Դուն ինձ համար Գաղաադ ես՝
Լիբանանի գագաթ է՝, բայց
անշուշտ քեզ անապատ պիտի
շինեմ, այնպիսի քաղաքներ, որ
7 բնակուած չեն։ Եւ քեզ դէմ
կործանողներ եմ պրոշելու, ամեն
մէկն իր զէնքերովը. և նորանք
պիտի կտրեն քու ընտիր եղևին-
ները և պիտի գցեն կրակի մէջը։
8 Եւ շատ ազգեր պիտի անցնեն
այս քաղաքովը և ասեն ամեն մէկն
իր ընկերին. Ինչո՞ւ համար Տէրը
այսպէս արաւ այս մեծ քաղա-
9 քին։ Եւ նորանք պիտի ասեն.
Վասն զի թողուցին իրանց Տէր
Աստուծոյ ուխտը և երկրպագու-
թիւն արին ուրիշ աստուածների
և նորանց պաշտեցին։
10 Լաց մի լինիք մեռնողի համար
և նորա մասին մի ողբաք, այլ
լաց եղէք գնացողի համար, որով-
հետև այլևս պիտի ետ չդառ-
նայ. որ տեսնէ իր ծննդեան եր-
11 կիրը։ Վասն զի այսպէս է աս-
ում Տէրը Յուդայի թագաւոր
Յովսիայի որդի Սեղդումի մասին,
որ թագաւորեց իր հօր Յովսիայի
տեղը, որ դուրս եկաւ այս տե-
ղիցը. այլևս ետ պիտի չդառ-
12 նայ այստեղ։ Վասն զի այնտեղ,
ուր որ նորան գերի էին տարել,
պիտի մեռնի, և այլևս պիտի
չտեսնէ այս երկիրը։
13 Վա՛յ նորան, որ իր տունը
անօրէնութիւնով է շինում,
և իր վերնատունները՝ անիրաւու-
թիւնով, որ ձրի բանեցնում է
իր դրացուն, և նորա վարձքը չէ
14 տալիս նորան, Որ ասում է. Ես
ինձ համար ընդարձակ տուն և
հովասուն վերնատներ շինեմ,
և իր համար պատուհաններ բաց
անում, և ծածկում եղևնափայ-
տով, և ներկում կարմրագոյնով։
15 Մի՞թէ կ'թագաւորես, որ տա-
քացել ես եղևնափայտի համար.
չէ՞ որ քո հայրը կերաւ և խմեց,
և իրաւունք ու արդարութիւն
արաւ. այն ժամանակ լաւ եղաւ
16 նորա համար։ Նա տեսաւ աղքա-
տի և անմանկի դատը, և լաւ էր.
մի՞թէ սա չէ ինձ ճանաչելը, ա-
սում է Տէրը։ 17 Բայց քո աչքերն
ու քո սիրտը ուրիշ բանի վերայ
չէ բայց միայն քո շահասիրու-
թեան վերայ, և անմեղ արիւն
թափելու և անիրաւութեան ու
զրկողութեան վերայ, որ անես։
18 Սորա համար այսպէս է ասում
Տէրը Յուդայի թագաւոր Յովսի-
այի որդի Յովակիմի մասին. Նո-
րա վերայ պիտի չողբան՝ վա՛յ եղ-
բայրը, վա՛յ քոյր. նորա վերայ
պիտի չողբան՝ վա՛յ տէր, վա՛յ
19 նորա փառքը։ Էշի թագումով
պիտի թագուն նա, քաշ տալով
ու դէն գցելով Երուսաղէմի դրա-
նեցիցը դուրս։
20 Վեր ելիր Լիբանանը ու կան-
չիր, և Բասանի վերայ ձայնդ
բարձրացրու, և աղաղակիր Աբա-
րիմիցը, վասն զի քո բոլոր համան-
21 նիներդ փշրուեցան։ Ես ասացի
քեզ քո յաջողութիւնումդ. բայց
դու ասացիր՝ Չեմ լսում. սա է
քո ճանապարհը քո մանկութիւ-
22 նից, որ իմ խօսքին չլսես։ Քո
բոլոր հովիւներին քամին է քշե-
լու, և քո համանիները գերի պի-
տի գնան, իրաւ այն ժամանակ
պիտի ամաչես, և պիտի պատ-
կառես քո բոլոր չարութիւննե-
23 րից։ Ով Լիբանանում բնակող
և եղևիններում բոյն դնող, ինչ
ողորմելի պիտի լինես դու, երբոր
քեզ վերայ կ'գան ծննդեան դա-
ւերը ինչպէս մի ծննդականի։
24 Կենդանի եմ ես, ասում է Տէ-
րը, որ եթէ Յուդայի թագաւորի
Յովակիմի որդի *Յեքոնիան մա-

---

*Բանիս

տանու կնիք լինի իմ աջ ձեռքումը, որ այնտեղից էլ քեզ
25 պիտի պոկեմ. Եւ քեզ պիտի տամ քո հոգին պահանջողների ձեռքը և նորանց ձեռքը, որոց երեսից դու վախենում ես. և Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը և Քաղդէացոց
26 ձեռքը: Եւ դէն պիտի գլորեմ քեզ և քո ծնող մորը օտար երկիր, ուր որ չէք ծնուել, որ
27 այնտեղ մեռնէք: Եւ այն երկիրը, ուր որ նորանց անձը բազձում է դառնալ, այնտեղ պիտի ետ չը
28 դառնան: Մի՞թէ մի անարգուած փչրուած աման է այս Ցեբռնիա մարդը, կամ մի այնպիսի անօթ է, որ նորան չհաւանին. ինչո՞ւ համար գլորուեցան ինքը և իր աւերունդը, և քշուեցան իրանց չը
29 գիտեցած երկիրը: Ով երկիր, երկիր, երկիր, լսիր Տիրոջ խօսքը:
30 Տէրը այսպէս է ասում. Անզաւակ գրեցէք այս մարդուն, մի մարդ, որ յաջողութիւն պիտի չտեսանէ իր օրերումը, վասն զի չպիտի յաջողէ նորա աւերունդից մէկ մարդ, որ նստէ Դաւթի աթոռի վերայ, և էլի տիրէ Յուդայի վերայ:

ԳԼ. ԻԳ

1 Վա՛յ այն հովիւներին, որ կորցընում և ցրուում են իմ արօտի
2 ոչխարներին, ասում է Տէրը: Վասն այսորիկ այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը այն հովիւների մասին, որ հսկում են իմ ժողովրդին. Դուք իմ ոչխարներին ցրիւ տուիք և դուրս արիք և նորանց վերայ տեսչութիւն չարիք. ահա ես ձեզ ոչ-
3 ընչութիւն պիտի անեմ ձեր գործոց չարութեան համար, ասում է Տէրը: Եւ ես պիտի ժողովեմ իմ հօտի մնացորդը այն ամեն երկիրներից, ուր որ նորանց աքսորեցի, և նորանց ետ պիտի դարձընեմ իրանց փարախները, և նորանք պիտի աճեն և բազմանան:
4 Եւ նորանց վերայ հովիւներ պիտի կանգնեցնեմ, որ նորանց հով-

ուեն, և նորանք այլ ևս պիտի չը վախենան և չդարհուրին, և պիտի չպակասեն, ասում է Տէրը:
5 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ Դաւթի համար վեր կը կացնեմ արդարութեան Շառաւիղ և էն թագաւոր կ'թագաւորէ ու իմաստութեամբ կ'վարուի, և իրաւունք ու արդարու-
6 թիւն կ'գործէ երկրի վերայ: Նորա օրերին կ'ազատուի Յուդան, և Իսրայէլը ապահով կ'բնակէ. և սա է նորա անունը, որով նա կ'կոչուի՝ ՏԷՐՐ ՄԵՐ ԱՐԻԱՐՈՒԹԻՒՆԸ: Սորա համար ահա օրեր
7 են գալիս, ասում է Տէրը, որ այլ ևս չեն ասելու, թէ կենդանի է Տէրը, որ դուրս հանեց Իսրայէլի սրդկանցը Եգիպտոսի երկրից. Այլ թէ՝ կենդանի է Տէ-
8 րը, որ վեր հանեց և որ բերաւ Իսրայէլի տան աւերունդը հիւսիսի երկրից և այն բոլոր երկիրներից, ուր որ ես նորանց քշել էի, և նորանք պիտի բնակեն իրանց հողի վերայ: Մարգարէների հա-
9 մար սիրտս կոտրուում է ներսումս, երերում են բոլոր ոսկորներս. եղել եմ արբած մարդու պէս, և գինեհար մարդու նման, Տիրոջ երեսից և նորա սուրբ խօսքերի
10 երեսից: Վասն զի շնացողներով լցուել է երկիրը, որ անէծքի պատճառով երկիրը սուգ է բռնել, չորացել են անապատի արօտները, և նորանց ընթացքը չար է, և նորանց ոյժը ուղիղ
11 չէ: Վասն զի թէ մարգարէն թէ քահանան եղծուած են, իմ տանը նրն անգամ գտել եմ նորանց չարութիւնը, ասում է Տէրը:
12 Սորա համար նորանց ճանապարհը իրանց համար խաւարի մէջ սահելիկ տեղերի պէս պիտի լինի. նորանք պէտք է հրուին, և նորանում վայր ընկնեն, վասն զի ես նորանց վերայ չարիք եմ բերելու նորանց այցելութեան տարին, ասում է Տէրը:
13 Եւ Սամարիայի մարգարէներումը յիմարութիւն տեսայ, Բահաղով մարգարէացան և մոլորցրին իմ Իսրայէլ ժողովրդին:

14 Եւ Երուսաղէմի մարգարէներուն
մէջ սոսկալի բան տեսայ՝ շնանալ
և սուտ քալել, որ չարագործներուն ձեռքերը զօրացնեն,
որ ետ չդառնան ամէն մէկն իր
չարութիւնէն, Նորանց ամէնը
ինձ համար Սոդոմի պէս են, և
նորա բնակիչները Գոմորի պէս։
15 Ուստի համար այսպէս է ասում
Զօրաց Տէրը մարգարէների մասին. Ահա ես նորանց օշինդը պիտի ուտեցնեմ, և նորանց լեղի
ջուր պիտի խմեցնեմ, վասն զի
Երուսաղէմի մարգարէներից ապականութիւն դուրս եկաւ բոլոր
երկրի մէջ։
16 Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Մի լսէք ձեզ համար մարգարէացող մարգարէների խօսքերին. նորանք խաբում են ձեզ,
նորանք իրանց սրտի տեսիլքն են
խօսում, և ոչ թէ Տիրոջ բերանից։
17 Նորանք ասում ու ասում
են ինձ անարգողներին. Տէրը խօսեց, խաղաղութիւն է լինելու
ձեզ համար. և ամէն իր սրտի
կամակորութեամբ վարուողներին
ասում են. Չեզ վերայ չարիք չէ
18 գալու։ Վասն զի ո՞վ է կանգնել Տիրոջ խորհուրդում, և
տեսել ու լսել նորա խօսքը. ո՞վ
է ականջ դրել նորա խօսքին ու
19 լսել։ Ահա Տիրոջ մրրիկը բորբոքած դուրս եկաւ, և պտոյտ
եկող թափառը պտտուելու
20 է չարերի գլխին։ Տիրոջ բարկութիւնը ետ չէ դառնալու, մինչև
որ անէ և մինչև որ կատարէ իր
սրտի խորհուրդները. յետին օրերում պիտի պարզ հասկանաք
21 այդ։ Ես այդ մարգարէներին չեմ
ուղարկել, բայց իրանք վազ են
տալիս, և ես նորանց հետ չեմ
խօսել, բայց իրանք մարգարէա-
22 նում են։ Եւ եթէ կանգնած լինէին իմ խորհրդում, այն ժամանակ լսել կ'տային իմ խօսքերը
իմ ժողովրդին, և նորանց ետ կը
դարձնէին իրանց չար ճանապարհներից, և իրանց չար գործքերից։
23 Մի՞թէ ես մօտիկում եմ Աստուած, ասում է Տէրը, և հե-
ռուից Աստուած չէ՞մ։ Կամ մի 24
մարդ կարո՞ղ է ծածկուել ծածուկ տեղերը, որ ես նորան չտեսնեմ, ասում է Տէրը. չէ՞ որ երկինքն ու երկիրը լցնողը ես եմ,
ասում է Տէրը։ Ես լսել եմ ինչ 25
որ ասում են իմ անունով սուտ
մարգարէացող մարգարէքը, ասելով. Երազ եմ տեսել, երազ
եմ տեսել։ Մինչև ե՞րբ է լինել- 26
լու այս սուտ մարգարէացող
մարգարէների սրտում, որ մարգարէներն իրանց սրտի խաբէութիւնը։ Որոնք մտածում են 27
որ իմ ժողովրդին մոռացնել տան
իմ անունը, այն երազներով որ
իրար պատմում են, ինչպէս որ
իրանց հայրերը մոռացան իմ անունը Բահաղի պատճառով։ Այն 28
մարգարէն, որի մօտ երազ կայ,
թող երազ պատմէ, և որի մօտ
կայ իմ խօսքը, թող իմ խօսքը
խօսէ ճշմարտութեամբ. ցորեկը
ինչ բան ունի ցորենի հետը,
ասում է Տէրը։ Ահա իմ խօսքը 29
կրակի նման է, ասում է Տէրը,
և մուրճի պէս որ ապառաժն է
կտրտում։ Ուստի համար ահա 30
ես այն մարգարէների դէմ եմ,
ասում է Տէրը, որոնք գողանում
են իմ խօսքերը իրարից։ Ահա ես 31
այն մարգարէների դէմ եմ ասում է Տէրը, որ վեր են առնում
իրանց լեզուն և պատգամ հրատարակում։ Ահա ես այն սուտ 32
երազներ մարգարէացողների դէմ
եմ, ասում է Տէրը, որ պատմում են նորանց և մոլորեցնում
իմ ժողովրդին իրանց սուտերով
և իրանց անզգուշութեամբ, և ես նորանց չեմ ուղարկել և նորանց չեմ պատուիրել, և ոչ շահ և օգուտ չունին
այս ժողովրդի համար, ասում է
Տէրը։

Եւ երբոր քեզ հարցնէ այս ժո- 33
ղովուրդը կամ մարգարէն կամ
քահանան՝ ասելով. Թէ ի՞նչ է
Տիրոջ *պատգամը այն ժամանակ
դու ասիր նորանց. Ո՞ր բեռը,
և ես ձեզ պիտի դէն դցեմ, ասում

*բեռը

34 ուամ է Տէրը։ Եւ Տիրոջ բեռն
ասող մարգարէին և քահանային
ու ժողովրդին՝ ես այնպիսի մար-
դուն ու նորա տանը պիտի այ-
35 ցելեմ։ Այսպէս ասացէք՝ ամեն
մարդ իր ընկերին և ամեն մարդ
իր եղբօրը. Տէրը ի՞նչ է պա-
տասխանել, և ի՞նչ է ասել Տէ-
36 րը։ Եւ այլևս մի յիշէք Տիրոջ
բեռը. վասն զի բեռն է դառնա-
լու ամեն մարդու համար իր խօս-
քը, և դուք փոխել էք կենդա-
նի Աստուծոյ խօսքը, որ Զօրաց
37 Տէրն է մեր Աստուածը։ Այսպէս
ասիր մարգարէին՝ Տէրը քեզ ի՞նչ
է պատասխանել, և ի՞նչ է ասել
38 Տէրը։ Բայց եթէ Տիրոջ բեռը
ասէք, ուրեմն այսպէս է ասում
Տէրը, Որովհետև դուք ասում
էք այդ Տիրոջ բեռը խօսքը, թէ
և ըստ ուղարկեցի ձեզ մօտ ա-
սելով՝ Մի ասէք Տիրոջ բեռը։
39 Դորա համար ահա ես ձեզ բա-
ղարձին պիտի մոռանամ, և ձեզ
պիտի դցեմ իմ երեսի առջևից,
և այն քաղաքը, որ տուել եմ
40 ձեզ և ձեր հայրերին։ Եւ ձեզ
վերայ պիտի դնեմ յաւիտենական
անարգանք և յաւիտենական նա-
խատինք, որ չի մոռացուիլ։

ԳԼ. ԻԴ

1 Տէրը ինձ ցոյց տուաւ, և ահա
երկու կողով թուզ՝ դրուած Տի-
րոջ տաճարի առջև, նորանից
յետոյ որ Բաբելոնի Նաբուգոդո-
նոսոր թագաւորը գերի էր տարել
Յուդայի թագաւոր Յոյակիմի որ-
դի Յեքոնիային և Յուդայի իշ-
խաններին և հիւսերին ու դար-
բիններին Երուսաղէմից և նորանց
2 Բաբելոն տարել։ Մէկ կողովը
շատ լաւ թուզեր էին կանխահաս
թուզերի պէս, և միւս կողովը՝
շատ վատ թուզեր, որ վատու-
3 թիւնից չէին ուտուել։ Եւ Տէրը
ասաց ինձ. Դու ի՞նչ ես տես-
նում, Երեմիա. և ես ասացի.
Թուզեր. լաւ թուզերը շատ են
լաւ, իսկ վատերը շատ վատ, որ
վատութիւնից չեն ուտուել։
4 Եւ Տիրոջ խօսքը եղաւ դէպի
ինձ ասելով. Այսպէս է ասում
Տէրը Իսրայէլի Աստուածը. Ինչ-
պէս լաւ թուզերին պէս պիտի
միևնոյն տում Յուդայի գերեվար-
եալներին, որոնց ես այստեղից
ուղարկեցի Քաղդէացոց երկիրը
՝ի բարին։ Եւ իմ աչքերը պիտի
ուղղեմ նորանց վերայ ՝ի բարին,
և նորանց ետ պիտի դարձնեմ
այս երկիրը. և նորանց պիտի շի-
նեմ և պիտի չքանդեմ, և նո-
րանց պիտի տնկեմ և չխլեմ։ Եւ
նորանց մի սիրտ պիտի տում ինձ
ճանաչելու, վասն զի ես եմ Տէ-
րը, և նորանք իմ ժողովուրդը
պիտի լինին, իսկ ես կ՚լինիմ նո-
րանց Աստուած. որովհետև ի-
րանց բոլոր սրտովը դէպի ինձ
պիտի դառնան։ Իսկ այն վատ
թուզերի մասին, որոնք վատու-
թիւնից չէին ուտուել, այսպէս
է ասում Տէրը. Այնպէս պէտք
է անեմ Յուդայի թագաւոր Սե-
դեկիային և նորա իշխաններին և
Երուսաղէմի մնացորդին, որ մնա-
ցել են այս երկրումը, և Եգիպ-
տոսի երկրումը բնակողներին։ Եւ
նորանց պիտի տամ տանջանքի
և չարչարանքի երկրի բոլոր թա-
գաւորութիւններին նախատինք
ու առակ ու անարգանք և անէծք
լինելու համար այն բոլոր տեղեր-
ում ուր որ ես նորանց պիտի
քշեմ։ Եւ նորանց մէջ ուղարկե-
լու եմ սուրը, սովը և ժանտախ-
տը մինչև որ նորանց վերջացնեմ
հողի երեսից, որ տուել եմ նո-
րանց և նորանց հայրերին։

ԳԼ. ԻԵ

1 Այն խօսքը որ եղաւ դէպի Երե-
միային բոլոր Յուդայի մասին Յու-
դայի թագաւոր Յովսիայի որդի
Յովակիմի չորրորդ տարին, որ
Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թա-
2 գաւորի առաջին տարին էր, Որ
ասաց Երեմիա մարգարէն բոլոր
Յուդայի ժողովրդին և Երուսա-
ղէմի բոլոր բնակիչներին ասելով.
3 Յուդայի թագաւոր Ամմոնի որ-
դի Յովսիայի տասներեքերորդ
տարուց մինչև այս օրը ա-

Հո քառնևերիք տարի է, որ Տի-
րոջ խօսքը լինում է դէպի ինձ,
և ես խօսում եմ ձեզ հետ կա-
նուխ վեր կենալով և խօսելով,
4 բայց դուք չլսեցիք. Եւ Տէրը ու-
ղարկեց ձեզ մօտ իր բոլոր ծա-
ռաներին՝ մարգարէներին կանուխ
վեր կենալով և ուղարկելով, բայց
դուք չլսեցիք, և ձեր ականջը
5 լսելու չդուխք, Որոնք ասում է-
ին. Մէկ ես դարձէք ամեն մէկդ
իր չար ճանապարհից և ձեր չար
գործերից, և կ'բնակէք այն երկ-
րում, որ Տէրը տուաւ ձեզ և
ձեր հայրերին՝ յաւիտենից մինչև
6 յաւիտեան: Մի գնաք ուրիշ
աստուածների ետևից նորանց
ծառայելու և նորանց երկրպա-
գելու համար, և ինձ մի բարկա-
ցընէք ձեր ձեռաց գործքերովը.
7 և ես ձեզ չարիք չեմ անիլ: Բայց
դուք ինձ չլսեցիք, ասում է Տէ-
րը, որ ինձ բարկացնէիք ձեր ձե-
ռաց գործքովը ձեզ համար՝ ի
վնաս:

8 Վասն որոյ այսպէս է ասում
Զօրաց Տէրը, Որովհետև դուք
9 չլսեցիք իմ խօսքերին, Ահա ես
կ'ուղարկեմ և կ'առնեմ հիւսիսի
բոլոր ազգատոհմերը, ասում է
Տէրը, և Բաբելոնի Նաբուգոդո-
նոսոր թագաւորի իմ ծառայի
հետ կ'գնեմ, և ես նորանց կ'բե-
րեմ այս երկրի վերայ և նորա
բնակիչների վերայ, և այս բոլոր
ազգերի վերայ շուրջանակի, և
նորանց պիտի նզովեմ և նորանց
շինեմ հիացման և նախատանաց
—սլոյ և յաւիտենական ա-
10 ւերակներ: Եւ պիտի կորցնեմ նո-
րանց միջից ցնծութեան ձայնը և
ուրախութեան ձայնը, փեսայի
ձայնը և հարսի ձայնը, երկանքի
11 ձայնը և ճրագի լոյսը: Եւ այս
բոլոր երկիրը պիտի անապատ և
աւերակ դառնայ, և այս ազգերը
պէտք է Բաբելոնի թագաւորին
ծառային եօթանասուն տարի:
12 Եւ երբոր եօթանասուն տարին
վերջացած կ'լինի, ես պիտի պա-
տժեմ Բաբելոնի թագաւորին և
այն ազգին, ասում է Տէրը, նո-
րանց անօրէնութեան համար, և
Քաղդէացոց երկրին, և նորան
պիտի յաւիտենական աւերակներ
շինեմ: Եւ պիտի բերեմ այն երկ- 13
րի վերայ այն բոլոր խօսքերս, որ
ասել եմ նորա մասին, այս գրքի
մէջ բոլոր գրուածը, որ մարգա-
րէացել է Երեմիա մարգարէն բո-
լոր ազգերի մասին: Վասն որ նո- 14
րանց էլ պիտի ծառայեցնեն շատ
ազգեր և մեծ թագաւորներ, և
ես պիտի հատուցանեմ նորանց
իրանց արարքի համեմատ և իրանց
ձեռքերի գործքերին համեմատ:

Վասն որ այսպէս է ասում 15
ինձ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Առ այս բարկութեան գինու բա-
ժակը իմ ձեռքից և խմեցրու
նորան բոլոր ազգերին, որոնց
մօտ ես քեզ ուղարկում եմ: Որ 16
խմեն և շղթայուին և յիմարանան
այն սուրի պատճառով, որ ես
ուղարկում եմ նորանց մէջը:
Եւ ես առի բաժակը Տէրոջ ձեռ- 17
քից և խմեցրի բոլոր ազգերին,
որոնց մօտ Տէրը ուղարկեց ինձ.
Երուսաղէմին և Յուդայի քա- 18
ղաքներին, և նորա թագաւորին
— նորա իշխաններին, որ նորանց
անապատ, ամայութիւն, նախա-
տինք ու անէծք անէ, ինչպէս որ
այսօր է. Եգիպտոսի Փարաւոն 19
թագաւորին, և նորա ծառանե-
րին, և նորա իշխաններին ու նո-
րա բոլոր ժողովրդին. Եւ բոլոր 20
խառնիճաղանճ ժողովրդին, և
Հուս երկրի բոլոր թագաւորնե-
րին, և Փղշտացոց երկրի բոլոր
թագաւորներին, այսինքն Աշկա-
ղոնին, Գազային, Ակկարոնին և
Ազովտոսի մնացածներին. Եդո- 21
մին, Մովաբին և Ամմոնի որդ-
կանցը, Եւ Տիւրոսի բոլոր թա- 22
գաւորներին, և Սիդոնի բոլոր
թագաւորներին, և ծովեզրեայ
թագաւորներին, որ ծովի այն
կողմին են, Դեդանին և Թեման- 23
ին, և Բուզին, և բոլոր ծայ-
րերի ծայրը կտրողներին, Եւ Ա- 24
րաբացոց բոլոր թագաւորներին,
և խառնիճաղանճ ժողովուրդների
բոլոր թագաւորներին, որ բնա-
կում են անապատումը: Եւ Զամբ- 25
րիի բոլոր թագաւորներին, և Ե-

տամ բոլոր թագաւորներին, և
Մարաց բոլոր թագաւորներին.
26 Եւ հիւսիսի բոլոր թագաւորնե-
րին՝ իրար մօտիկներին և հեռու-
ներին, և երկրի բոլոր թագաւո-
րութիւններին, որ հողագնդի ե-
րեսին են, և նորանցից յետոյ
թող խմէ Սիսակի թագաւորը:
27 Եւ ասիր նորանց. Այսպէս է ա-
սում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստ-
ուածը. Խմեցէք, ու արբեցէք և
փսխեցէք, և կործանուեցէք ու
մի կանգնէք այն սուրի առջևը,
որ ես ուղարկում եմ ձեր մէջը:
28 Եւ եթէ լինի, որ չուզեն բաժա-
կը առնել քո ձեռքից խմելու
համար, այն ժամանակ դու նո-
րանց ասիր. Այսպէս է ասում
Զօրաց Տէրը. Անպատճառ պիտի
29 խմէք: Վասն զի այն քաղաքի
վերայ, որի վերայ կոչուած է իմ
անունը, ես սկսել եմ չարիք բե-
րելու, մի՞թէ դուք անպատիժ
կ'մնաք. անպատիժ պիտի չմնաք.
վասն զի ես սուրը պիտի կանչեմ
երկրիս բոլոր բնակիչների վերայ,
ասում է Զօրաց Տէրը:
30 Եւ դու մարգարէացիր նորանց
մասին այս բոլոր խօսքերը և նո-
րանց ասիր. Տէրը բարձրից ո-
րոտալու է, և իր սուրբ բնակու-
թիւնից տալու է իր ձայնը. իր
բնակարանի վերայ որոտալու է
մեծաձայն, հնձան կոխողների ա-
ղաղակին պէս պիտի կանչէ, երկ-
31 րի բոլոր բնակիչների վերայ: Ա-
ղաղակը հասնելու է մինչև երկրի
ծայրը, վասն զի Տէրը վէճ ունի
ազգերի հետ, նա դատ է տես-
նում ամեն մարմնոյ հետ. նա ամ-
բարիշտներին սուրի է մատնելու,
ասում է Տէրը:
32 Այսպէս է ասում, Զօրաց Տէ-
րը. Ահա չարիք պիտի դուրս գայ
մէկ ազգից դէպի միւս ազգ, և մեծ
մրրիկ պիտի վեր կենայ երկրի
33 ծայրերից: Եւ Տիրոջ սպան-
ուածները այն օրը երկրի մէկ ծայ-
րից մինչև երկրի միւս ծայրը կը
լինին. նորանց համար սուգ պի-
տի չլինի, և նորանք պիտի չժո-
ղովուին և չթաղուին. աղբ պիտի
դառնան նորանք երկրի երեսին:

Ողբացէք, ով հովիւներ, և 34
աղաղակեցէք. և թաւալուեցէք,
ով հօտի ընտիրներ. վասն զի
լրացել են ձեր մորթուելու և
ցիրուցան լինելու օրերը. և վայր
պիտի ընկնէք ինչպէս մի պատ-
ուական անօթ: Եւ պիտի անհե- 35
տանայ ապաստանը հովիւներից,
և փրկութիւնը՝ հօտի ընտիրնե-
րից: Հովիւների ազաղակի ձայ- 36
նը, և հօտի ընտիրների առնալը
լսւում է. վասն զի Տէրը աւերակ
է արել նորանց արօտները: Եւ 37
ամայացել են խաղաղութեան
բնակարանները, Տիրոջ սաստիկ
բարկութեան երեսից: Նա թո- 38
ղեց իրեն մի առիւծ իր
բնակարանը, վասն զի նորանց
երկիրը ամայի է դարձել աւերի-
չի բարկութեան երեսից, և նո-
րա սաստիկ բարկութեան երե-
սից:

ԳԼ. ԼԶ

Յուդայի թագաւոր Յովսիայի 1
որդի Յովակիմի թագաւորութեան
սկզբում այս խօսքը եղաւ Տիրոջ
կողմանէ ասելով.
Տէրն այսպէս է ասում. Կանգ- 2
նիր Տիրոջ տան գաւթումը և
ասիր երկրպագելու համար Տիրոջ
տունը եկող Յուդայի բոլոր քա-
ղաքներին այն ամեն խօսքերը, որ
քեզ պատուիրել եմ նորանց ա-
սելու, մի խօսք չպակասեցնես:
Գուցե կ'լսեն և ետ կ'դառնան 3
ամեն մէկը իր չար ճանապարհի-
ցը, որ ես պղջամ այն չարիքի
մասին, որ ես մտածել եմ նո-
րանց անելու իրանց գործքերի
չարութեան պատճառով: Եւ ա- 4
սիր նորանց, Այսպէս է ասում
Տէրը. Եթէ ինձ չլսէք, որ իմ
օրէնքումը վարուիք, որն որ ես
դրել եմ ձեր առջև. Որ լսէք 5
իմ ծառաների մարգարէների
խօսքերին, որոնց ես ուղարկում
եմ ձեզ մօտ, որ ես կանուխ
վեր կենալով ուղարկում էի,
բայց դուք չլսեցիք. Այն ժամա- 6
նակ այս տունը Սիլովի պէս պի-
տի անեմ, և այս քաղաքը անէծք

պետի շինեմ երկրի բոլոր ազգերի համար։
7 Եւ լսեցին քահանաներն ու մարգարէքը և բոլոր ժողովուրդը՝ Երեմիան այս խօսքերը Տիրոջ տա-
8 նը ասելիս։ Եւ եղաւ երբոր ասաց վերջացրեց ամեն ինչ որ Տէրը պատուիրել էր ասելու այն բոլոր ժողովրդին, այն ժամնամակ բռնեցին նորան քահանաները և մարգարէքը և բոլոր ժողովուրդը ասելով՝ Դուռ անպատճառ պէտք է
9 մեռնես։ Ինչո՞ւ համար մարգարեացար Տիրոջ անունով ասելով. Այս տունը Սիլովի պէս պիտի դառնայ, և այս քաղաքը պիտի քանդուի՝ և անբնակ դառնայ. և բոլոր ժողովուրդը ժողովեցաւ Տիրոջ տունը Երեմիայի մօտ։
10 Եւ Յուդայի իշխանները լսեցին այս բաները և վեր գնացին թագաւորի տանից Տիրոջ տունը և նստեցին Տիրոջ փառ նոր դրան
11 մուտքում։ Եւ ասացին քահանաները և մարգարէքը իշխաններին և բոլոր ժողովրդին. Թէ Այս մարդը մահու արժանի է, վասն զի մարգարէացել է այս քաղաքի դէմ, ինչպէս որ լսեցիք ձեր ականջներով։
12 Եւ Երեմիան ասաց բոլոր իշխաններին և բոլոր ժողովրդին. Տէրը ինձ ուղարկեց մարգարէանալու այս տան դէմ և այս քաղաքի դէմ այն բոլոր խօսքերը որ
13 լսել էք։ Եւ հիմա լաւացրէք ձեր ճանապարհները և ձեր գործքերը, և լսեցէք ձեր Տէր Աստուծոյ ձայնին, և Տէրը կ'ղջայ այն չարիքի մասին, որ խօսել է ձեր
14 մասին։ Բայց ես այո ձեր ձեռքին եմ, արէք ինձ ինչ որ հաճոյ և ուղիղ է ձեր աչքին։
15 Միայն թէ լաւ իմացած լինէք, որ եթէ ինձ սպանելու լինէք, որ դուք անմեղ արիւն էք թափում ձեր վերայ և այս քաղաքի վերայ ու նորա բնակիչների վերայ. վասն զի ճշմարտապէս Տէրն է ինձ ուղարկել ձեզ մօտ, որ ասեմ ձեր
16 ականջներին այս ամեն խօսքերը։ Եւ ասացին իշխանները և բո-
ժողովուրդը այն քահանաներին և մարգարէներին. Այս մարդը մահու արժանի չէ, վասն զի Տէր Աստուծոյ անունն է խօսել
17 մեզ դէմ։ Եւ երկրի ծերերից մարդիկ վեր կացան և ասացին ժողովրդի բոլոր ժողովքին.
18 Թէ Մօրաստացի Միքիան մարգարէանում էր Յուդայի Եզեկիա թագաւորի օրերին. և նա ասաց Յուդայի բոլոր ժողովրդին. Թէ Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Սիոնը պիտի հերկուի իբրև պատարակ, և Երուսաղէմը աւերակների դէղեր պիտի դառնայ, և տաճարի լեռան՝ անտառի բարձր տեղերի
19 պէս։ Մի՞թէ Յուդայի թագաւոր Եզեկիան և բոլոր Յուդան նորան խակոյն մեռցրին. չէ՞ որ վախեցաւ Տէրից և աղօթք արաւ Տիրոջ առջև. և Տէրը զղջաց այն չարիքի մասին, որ ասել էր նորանց դէմ. ուրեմն մենք մեծ չարութիւն արած կ'լինենք մեր անձների դէմ։
20 Եւ մի մարդ էլ կար, որ մարգարէանում էր Տիրոջ անունով՝ Կարիաթարիմից Սեմայիայի որդի Ուրիան. և նա մարգարէացաւ այս քաղաքի վերայ և այս երկրի վերայ Երեմիայի բոլոր խօսքերին
21 պէս։ Եւ երբոր լսեց Յովակիմ թագաւորը և բոլոր նորա քաջագունդները և բոլոր իշխանները այն խօսքերը, այն ժամնամակ թագաւորը ուզեց նորան սպանել. բայց երբոր Ուրիան լսեց՝ վախեցաւ և փախաւ ու դնաց
22 Եգիպտոս։ Եւ Յովակիմ թագաւորը Եգիպտոս մարդիկ ուղարկեց՝ Ակբորի որդի Եղնաթանին և նորա հետ մի քանի մարդիկ
23 Եգիպտոս. Եւ նորանք հանեցին Ուրիային Եգիպտոսից և նորան բերին Յովակիմ թագաւորի մօտ, և նորան սպանեց սրով և նորա մարմինը դցեց ժողովրդի որդիանց գերեզմանները։
24 Բայց Սափանի որդու Ակիկամի ձեռքը Երեմիայի հետ էր, որ նորան չմատնեն ժողովրդի ձեռքը նորան սպանելու համար։

ԳԼ. ԻԷ

1 Յուդայի թագաւոր Յովսիայի որդի *Սեդեկիայի թագաւորութեան սկզբումը այս խօսքը եղաւ Երեմիայի Տէրոջ կողմանէ ասելով.
2 Այսպէս է ասում ինձ Տէրը. Քեզ համար կապեր և լուծեր շինիր, և նորանց դիր քո պորտայնի։
3 Եւ նորանց ուղարկիր Եդոմի թագաւորին, Մովաբի թագաւորին և Ամմոնի որդւոցն թագաւորին և Տիւրոսի թագաւորին և Սիդոնի թագաւորին այն դեսպանների ձեռքով, որ եկել են Երուսաղէմ Յուդայի Սեդեկիա թագաւորի մօտ։
4 Եւ պատուիրիր նորանց, ըսելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Այսպէս ասացէք ձեր
5 տէրանց. Ես եմ ստեղծել երկիրը և մարդը և անասունը, որ երկրի երեսին են, իմ մեծ զօրութիւնով և իմ մեկնած բազուկովը, և տալիս եմ այն ում որ հաճոյ է
6 իմ աչքին։ Եւ հիմա ես տուել եմ այս բոլոր երկիրները իմ ծառայ Բաբելոնի Նաբուզոդոնոսոր թագաւորի ձեռքը, նաև դաշտի գազանները տուել եմ նորան,
7 որ նորան ծառայեն։ Եւ պիտի ծառայեն նորան բոլոր ազգերը, և նորա որդուն, և նորա որդոյ որդուն, մինչև որ դայ նորա երկրի էլ ժամանակը. և նորան ծառայեցնեն շատ ազգեր և մեծ
8 թագաւորներ։ Եւ պիտի լինի որ այն ազգը և այն թագաւորութիւնը որ նորան չծառայէ այնինքն Բաբելոնի Նաբուզոդոնոսորին, և իր պորտայնը չդնէ Բաբելոնի թագաւորի լուծի տակը, ես սուսէ, որով և ժանտախտով պիտի այցելեմ այն ազգին, ասում է Տէրը, մինչև որ նորան ոչնչացնեմ նորա ձեռքով։
9 Եւ դուք մի լսէք ձեր մարգարէներին, և ձեր կռապաշտներին, և ձեր երազատեսներին, և ձեր գուշակներին և ձեր կախարդներին, որոնք ձեզ ասում են. Թէ Բաբելոնի թագաւորին չպիտի ծառայէք։ Վասն զի նորանք ձեզ սուտ են մարգարէանում, որպէս զի ձեզ հեռացնեն ձեր երկրի վերայից, որ ես դուրս անեմ, և դուք կորչէք։ Իսկ այն ազգը որ իր պորտայնը կ'դնէ Բաբելոնի թագաւորի լծի տակին և նորան կ'ծառայէ, ես նորան հանգիստ պիտի թողեմ երկրի վերայ, ասում է Տէրը, և նա պիտի մշակէ նորան և նորանում բնակէ։
10 Եւ ես խօսեցի Յուդայի թագաւոր Սեդեկիայի հետ այս բոլոր խօսքերի համեմատ ասելով. Դուք ձեր պորտայնները դրէք Բաբելոնի թագաւորի լծի տակին և ծառայեցէք նորան և նորա ժողովրդին, և պիտի ողջ մնաք։
11 Ինչո՞ւ համար մեռնէք դուք և քո ժողովուրդը սրով, սովով և ժանտախտով, ինչպէս որ Տէրն ասել է այն ազգի մասին, որ չը ծառայէ Բաբելոնի թագաւորին։
12 Եւ մի լսէք այն մարգարէների խօսքերին, որ ձեզ ասում են՝ թէ Դուք չպիտի ծառայէք Բաբելոնի թագաւորին, վասն զի նորանք ձեզ սուտ են մարգարէանում։
13 Վասն զի ես նորանց չեմ ուղարկել, ասում է Տէրը, և նորանք սուտ են մարգարէանում իմ անունովը, որպէս զի ես ձեզ դուրս անեմ և կորչէք դուք և ձեզ համար մարգարէացող մարգարէները։
14 Եւ ես խօսեցի քահանաների և 16 այս բոլոր ժողովրդի հետ ասելով. Այսպէս է ասում Տէրը. Մի լսէք ձեր մարգարէների խօսքերին, որ մարգարէանում են ձեզ համար ասելով. Ահա Տէրոջ սուն անօթները հիմա շուտով եւս են բերուելու Բաբելոնից, վասն զի նորանք ձեզ սուտ են մարգարէանում։
15 Նորանց մի լսէք. ծառայեցէք Բաբելոնի թագաւորին, և պիտի ողջ մնաք. ինչո՞ւ համար այս քաղաքը աւերակ դառնայ։ Իսկ եթէ նո- 18
16 րանք մարգարէներ են, և եթէ
17

*Յովակիմ

Տիրոջ խօսք կայ նորանց մօտ, թագ մէկ ազօթք անեն Ջօրաց Տիրոջ, որ այն անօթները, որ մնացել են Տիրոջ տանը և Յուդայի թագաւորի տանը և Երուսաղէմի, Բաբիլոն չգնան։ Վասն զի այսպէս է ասում Ջօրաց Տէրը, սիւների, ծովի և մեքենաների մասին և այն մնացած անօթների մասին, որ մնացել են այս քաղաքում. Որոնց Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը չէ վեր առել գերեվ, երբոր նա գերի տարաւ Յուդայի թագաւոր Յովակիմի որդի Յեքոնիային Երուսաղէմից Բաբիլոն, և Յուդայի և Երուսաղէմի բոլոր ազնուականներին. Վասն զի այսպէս է ասում Ջօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը այն անօթների մասին, որ մնացած են Տիրոջ տանը և Յուդայի թագաւորի տանը և Երուսաղէմում. Բաբիլոն պիտի տարուին նորանք և այնտեղ պիտի մնան մինչև նորանց այցելելուս օրը՝ ասում է Տէրը, և յետոյ նորանց պիտի հանեմ ու ետ բերեմ այս տեղը։

ԳԼ. ԻԸ

1 Եւ եղաւ այն տարին Յուդայի թագաւոր Սեդեկիայի թագաւորելի առաջին սկզբում չորրորդ տարում հինգերորդ ամսում մարգարէ Անանիա մարգարէն, որ Գաբաւոնից է, Տիրոջ տանը քահանաների և բոլոր ժողովրդի աչքի առջև. Այսպէս է ասում Ջօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը թէ՝ Ես կոտրեցի Բաբիլոնի թագաւորի լուծը. Մինչև երկու տարին ես ետ եմ բերելու այս տեղը Տիրոջ տան բոլոր անօթները, որոնք Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը վեր է առել այստեղից և նորանց տարել Բաբիլոն։ Եւ Յուդայի թագաւոր Յովակիմի որդի Յեքոնիային էլ և Յուդայի բոլոր գերիներին, որ գնացել են Բաբիլոն, ես ետ եմ դարձնելու այս տեղը, ասում է Տէրը. վասն զի կոտրելու եմ Բաբիլոնի թագաւորի լուծը։

Եւ երեմիա մարգարէն ասաց Անանիա մարգարէին քահանաների առջև և բոլոր ժողովրդի առջև որ կանգնած էին Տիրոջ տանը, Եւ երեմիա մարգարէն ասաց. Ամէն. այդպէս անէ Տէրը, Տէրը հաստատէ քո խօսքերը, որոնք մարգարէացար Տիրոջ տան անօթները և բոլոր գերիներին Բաբիլոնից այստեղը ետ դարձնելու համար, Բայց մէկ լսիր այս խօսքը, որ ես եմ խօսում քո ականջներին և բոլոր ժողովրդի ականջներին. Այն մարգարէները, որոնք կային ինձանից և քեզանից առաջ վաղուց՝ ի վեր, և նորանք մարգարէանում էին շատ երկիրների և մեծ թագաւորութիւնների դէմ պատերազմ, և չարիք, և ժանտախտ. Այն մարգարէն, որ խաղաղութիւն էր մարգարէանում, երբոր այն մարգարէի խօսքը կատարվում էր, այն ժամանակ ճանաչվում էր այն մարգարէն, թէ ճշմարտապէս Տէրն է ուղարկել նորան։

Եւ Անանիա մարգարէն վեր առաւ լուծը երեմիա մարգարէի պարանոցից, և կոտրեց նորան։ Եւ Անանիան ասաց բոլոր ժողովրդի աչքի առջև. Թէ Այսպէս է ասում Տէրը. Սորան նմանապէս կոտրելու եմ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի լուծը մինչև երկու տարին բոլոր ազգերի պարանոցից վերայից. և երեմիա մարգարէն գնաց իր ճանապարհը։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ երեմիայի, Անանիա մարգարէն լուծը երեմիա մարգարէի պարանոցից վերայից կոտրելուց յետոյ ասելով. Գնա և ասիր Անանիային թէ՝ Այսպէս է ասում Տէրը. փայտի լուծերը դու կոտրեցիր, բայց նորանց տեղը պիտի երկաթի լուծեր շինես։ Վասն զի այսպէս է ասում Ջօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Երկաթի լուծ եմ դնում այս բոլոր ազգերի պարանոցին Բաբիլոնի Նաբուգո-

դնեսցը թագաւորին ծառայելու համար, և նորանք պիտի ծառայեն նորան, և դաշտի գազանները էլ եմ տուել նորան։

15 Եւ Երեմիա մարգարէն ասաց Անանիա մարգարէին. Լսիր, Անանիա, Տէրը քեզ չէ ուղարկել, և դու տուիր յուսացրիր այս
16 ժողովրդին։ Դորա համար այսպէս է ասում Տէրը. Ահա ես քեզ դուրս պիտի դցեմ երկրի երեսից. այս տարի պիտի մեռնես, վասն զի ապստամբութիւն
17 խօսեցիր Տիրոջ դէմ։ Եւ Անանիա մարգարէն մեռաւ այն տարին՝ եօթներորդ ամսումը։

ԳԼ. ԻԹ

1 Եւ սորանք են այն նամակի խօսքերը, որ Երեմիա մարգարէն ուղարկեց Երուսաղէմից գերութեան մնացած ծերերին և քահանաներին և մարգարէներին և բոլոր ժողովրդին, որոնց Նաբուզոդոնոսորը Երուսաղէմից գերի էր
2 տարել Բաբելոն։ Յեքոնիա թագաւորը և թագուհին և պալատականները և Յուդայի ու Երուսաղէմի իշխանները և հիւանդերն ու դարբիններն Երուսաղէմից
3 դուրս գալուց յետոյ, Սափանի որդի Եղեասայի և Քեղկիայի որդի Գամարիայի ձեռքով, որոնց Յուդայի թագաւորը Սեդեկիան ուղարկեց Բաբելոն Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի մօտ, ասելով.

4 Այսպէս է ասում Զօրաց Տէրը Իսրայէլի Աստուածը բոլոր գերիներիդ, որոնց ես գերի տանել տուի Երուսաղէմից Բաբելոն.
5 Տներ շինեցէք և բնակուեցէք, և այգիներ տնկեցէք և կերէք
6 նորանց պտուղը. Կանայք առէք և տղերք ու աղջկերք ծնեցէք, և ձեր տղայոց համար կանայք առէք, և ձեր աղջկերքը մարդու տուէք, որ նորանք տղերք և աղջկերք ծնեն, և շատացէք այդ
7 տեղ, և մի քիչանաք։ Եւ այն քաղաքի խաղաղութիւնն ուզեցէք, ուր որ ես ձեզ գերի եմ տանել տուել և աղօթք արէք նորա համար Տիրոջը, որովհետև նորա խաղաղութիւնով ձեզ խաղաղութիւն կ'լինի։ 8
Վասն զի այսպէս է ասում Զօրաց Տէրը Իսրայէլի Աստուածը. Թող ձեզ չխաբեն ձեր մարգարէները, որ ձեր մէջումն են և ձեր հմայողները, և մի լսէք ձեր երազատեսներին, որ երազ են տեսանում ձեզ համար։ 9
Վասն զի նորանք սուտ են մարգարէանում ձեզ համար իմ անունովը, ես նորանց չեմ ուղարկել, ասում է Տէրը։
10 Վասն զի այսպէս է ասում Տէրը. Որովհետև իսկոյն որ լրացաւ եօթանասուն տարին Բաբելոնի համար, ես ձեզ պիտի այցելեմ և հաստատեմ ձեզ համար իմ բարի խօսքը, որ ձեզ ես բերեմ այս տեղը։ 11
Վասն զի ես գիտեմ այն խորհուրդները, որ ես խորհում եմ ձեր մասին, ասում է Տէրը, խաղաղութեան խորհուրդները և ոչ թէ՛ի չարն, որ ձեզ տամ ապագան և յոյսը։ 12
Եւ դուք կ'կանչէք ինձ, և կ'գնաք ու աղօթք կ'անէք դէպի ինձ, և ես կ'լսեմ ձեզ. Եւ դուք ինձ 13
կ'որոնէք և կ'գտնէք, վասն զի ինձ կ'խնդրէք ձեր բոլոր սրտովը. Եւ ես կ'գտնուիմ ձեզ համար, 14
ասում է Տէրը, և ես պիտի դարձնեմ ձեր գերութիւնը և ժողովեմ ձեզ ամեն ազգերից և ամեն տեղերից, ուր որ ձեզ ոտրել եմ, ասում է Տէրը, և ես ձեզ ետ պիտի դարձնեմ այն տեղը, որ տեղից որ ես ձեզ գերի տանել տուի։ 15
Վասն զի դուք ասել էք թէ Տէրը մեզ համար մարգարէներ է յարուցրել Բաբելոնում։

Վասն զի այսպէս է ասում 16
Տէրը այն թագաւորին, որ նստում է Դաւթի աթոռի վերայ և այն ամեն ժողովրդին, որ բնակում է այս քաղաքում, ձեր եղբայրներին, որ ձեզ հետ չեն գնացել գերութիւնը։ Այսպէս է 17
ասում Զօրաց Տէրը, Ահա ես ուղարկում եմ նորանց վէջ սուրը, սովը և ժանտախտը, և նո-

բանց ժանտ թուղերի պէս անեմ,
որ պէշտեթիւնից չի ուտուիլ։
18 Եւ նորանց պիտի հալածեմ սրով,
սովով և ժանտախտով, և նո-
րանց չարչարանքի մատնեմ երկ-
րի բոլոր թագաւորութիւններին
անէծքի ու զարմանքի և սուլելու
ու նախատինքի համար ամեն ազ-
գերի մէջ, ուր որ ես նորանց աք-
19 սորել եմ։ Որովհետև նորանք չը
լսեցին իմ խօսքերին, ասում է
Տէրը, որ ես նորանց մօտ ղրկեցի
իմ ծառաներին մարգարէներին
կանուխ վեր կենալով և ուղար-
կելով, բայց դուք չլսեցիք, աս-
20 ում է Տէրը։ Իսկ դուք լսեցէք
Տէրոջ խօսքը, ով բոլոր գերի-
ներ, որոնց ես ուղարկել եմ Ե-
21 րուսաղէմից Բաբիլոն։ Այսպէս է
ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի
Աստուածը Կոլկիայի որդի Ա-
քաաբի և Մաասիայի որդի Սե-
դեկիայի մասին, որ ձեզ սուտ
մարգարէութիւն են անում իմ
անունովը. Ահա ես պիտի մատ-
նեմ նորանց Բաբիլոնի Նաբու-
ղոդոնոսոր թագաւորի ձեռքը,
և նա նորանց պիտի սպանէ ձեր
22 աչքի առջև։ Եւ նորանցից ա-
նէծք պիտի առնուի Յուդայի բո-
լոր գերիների համար որ Բաբի-
լոնում են ասելով թէ՝ Տէրը քեզ
Սեդեկիային և Աքաաբի պէս ա-
նէ, որոնց Բաբիլոնի թագաւորը
23 խորովեց կրակով։ Որովհետև յի-
մարութիւն արին Իսրայէլի մէջ
և շնութիւն արին իրանց ընկեր-
ների կանանց հետ, և իմ անու-
նովը սուտ խօսք խօսեցին, որ ես
իրանց չէի պատուիրել, բայց ես
դիտեմ և վկայ եմ, ասում է
Տէրը։

24 Եւ Նեհելամացի Սեմայիայի
25 հետ խօսէր ասելով. Այսպէս է
ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի
Աստուածը ասելով. Որովհետև
դու քո անունովը թուղթեր ես
ուղարկել բոլոր ժողովրդին որ Ե-
րուսաղէմումն է և Մաասիայի
որդի Սոփոնիա քահանային և
26 քահանաներին ասելով. Տէրը
քեզ քահանայ է դրել Յովիա-
դա քահանայի տեղ, որ վերա-

կացուներ լինին Տիրոջ տանը ա-
մեն խելացնորող ու մարգարէա-
ցող մարդու դէմ, որ նորան դնես
կոճղուած և վզէ շղթայուած. Եւ 27
հիմա ինչո՞ւ չսանդիմանեցիր Ա-
նաթովթացի Երեմիային, որ մար-
գարէանում է ձեզ համար, վա- 28
սին պի որա համար թուղթ է
ուղարկել մեզ մօտ Բաբիլոն,
ասելով թէ՝ Երկարատև է լինե-
լու, տներ շինեցէք և բնակեցէք,
և այգիներ տնկեցէք և կերէք
նորանց պտուղը։ Եւ Սոփոնիա 29
քահանան կարդաց այս թուղթը
Երեմիա մարգարէի ականջների
առջև։ Եւ Տիրոջ խօսքը եղաւ 30
Երեմիային ասելով. Լո՛ւր ուղար- 31
կիր բոլոր երկիրներին ասելով.
Այսպէս է ասում Տէրը Նեհե-
լամացի Սեմայիայի մասին, որով-
հետև Սեմայիան ձեզ համար
մարգարէացաւ, քանի որ ես նո-
րան չէի ուղարկել և ձեզ սուտի
յուսացրեց. Դորա համար Տէրը 32
այսպէս է ասում. Ահա ես պիտի
պցելեմ Նեհելամացի Սեմայիա-
յին և նորա սերունդին. նորա
համար մարդ պիտի չլինի այս
ժողովրդի մէջ բնակող, և նա
պիտի չտեսանէ այն բարիքը, որ
ես անելու եմ իմ ժողովրդին,
ասում է Տէրը, վասն զի Տիրոջ
դէմ ապստամբութիւն է խօսել։

ԳԼ. Լ

Այն խօսքը որ եղաւ Երեմիա 1
մարգարէին Տիրոջ կողմանէ ա-
սելով. Այսպէս է ասում Տէրը՝ 2
Իսրայէլի Աստուածը, թէ Գրիր
քեզ համար մէկ գրքի մէջ այն
բոլոր խօսքերը, որ քեզ հետ խօ-
սել եմ. Վասն զի ահա օրեր են 3
գալիս, ասում է Տէրը, որ ես
պիտի դարձնեմ իմ Իսրայէլ և
Յուդա ժողովրդի գերութիւնը,
ասում է Տէրը, և նորանց ես
պիտի դարձնեմ այն երկիրը, որ
տուել եմ իրանց հայրերին, և
պիտի ժառանգեն նորան։

Եւ սորանք են այն խօսքերը, 4
որ Տէրը խօսել է Իսրայէլի և
Յուդայի մասին. Թէ այսպէս է 5

ասում Տէրը՝ Սոսկալի ձայն լսեցինք, վախ կայ և խաղաղութիւն
6 չկայ։ Մէկ հարցրէք և տեսէք, թէ արո՞ւն կ՚ծնէ, ապա ինչո՞ւ եմ տեսնում ամեն մարդ ձեռքերը երանքին պէս՝ ծննդականի պէս, և ամեն երեսները փոխ-
7 ուած դէղնացած։ Աւա՛ղ, վասն զի մեծ է այն օրը. նորա նմանը չկայ. և նա նեղութեան ժամանակ պիտի լինի Յակոբի համար. բայց նա ազատուելու է նորա-
8 նից։ Եւ կ՚լինի այն օրը, ասում է Զօրաց Տէրը, ես կ՚կտրեմ նորա լուծը քո պարանոցիցը, և քո կապերը կ՚կտրեմ. որ նորան այլևս չեն ծառայեցնել օտար-
9 ները։ Եւ նորանք կ՚ծառայեն իրանց Տէր Աստուծոյն, և իրանց Դաւիթ թագաւորին, որին ես կ՚յարուցանեմ նորանց համար։
10 Բայց դու մի վախենար, ով իմ ծառայ Յակոբ, ասում է Տէրը. Մի զարհուրիր, ով Իսրայէլ, վասն զի ահա ես քեզ օգնում եմ հեռուից և քո սերունդին իրանց գերութեան երկրիցը. և Յակոբը էտ կ՚դառնայ և հանդարտ ու հանգիստ կ՚լինի. և վա-
11 խեցնող պիտի չլինի։ Վասն զի ես քեզ հետ եմ, ասում է Տէրը, քեզ ազատելու համար, վասն զի պիտի վերջացնեմ այն բոլոր ազգերը, ուր որ ես քեզ ցրիւ եմ տուել. բայց քեզ պիտի չը վերջացնեմ, այլ քեզ պիտի խրատեմ իրաւունքով, և քեզ
12 բնաւ անմեղ չհամարեմ։ Վասն զի այսպէս է ասում Տէրը. Յուսահատական է քո կտրուածը,
13 ցաւալի՝ քո հարուածը։ Քո դատը դատող չկայ կապելու համար. բժշկութիւն՝ ապեղանի չկայ
14 քեզ համար։ Քո բոլոր հոմանիները մոռացել են քեզ, քեզ չեն որոնում. վասն զի թշնամու հարուածով հարուածեցի քեզ՝ անդութի խրատով, քո անօրէնութիւնների շատութեան համար,
15 շատացել էին քո մեղքերը։ Ի՞նչ ես աղաղակում քո կտրուածի համար, յուսահատական է քո ցաւը. քո անօրէնութիւնների շատութեան համար, որ շատացել էին քո մեղքերը, արի ես այս բաները քեզ։ Սորա համար 16
բոլոր քեզ ուտողները պիտի ուտուեն, և բոլոր քեզ նեղողները՝ ամենքն էլ գերի պիտի գնան. և քեզ յափշտակողները պիտի յափշտակուին, և բոլոր քեզ կողոպտողներին պիտի տամ կողոպուտի։ Վասն զի ես քեզ պիտի 17
ապեղանի դնեմ, և քո հարուածներիցը պիտի բժշկեմ քեզ, ասում է Տէրը. վասն զի քեզ՝ Անտուած կոչեցին, Ըէ — այն Սիօնն է, որին խնդրող չկայ։

Այսպէս է ասում Տէրը. Ահա 18
ես եմ պիտի դարձնեմ Յակոբի վրաններէի գերութիւնը. և նորա բնակարաններին պիտի ողորմեմ, և պիտի քաղաք շինուի իր տեղը, և պալատը ըստ իւր կարգի բնակուի։ Եւ նորանցից պիտի դուրս գայ 19
գովասանութիւն և ուրախացողների ձայն. և նորանց պիտի շատացնեմ, ու պիտի չքչչանան նորանք. և նորանց պիտի փառաւորեմ, և պիտի չնուաստանան։ Եւ նորա որդիքը առաջուց պէս 20
պիտի լինին, և նորանց ժողովքը պիտի հաստատուի իմ առջև, և ես պիտի այցելեմ նորա բոլոր հարստահարիչներին։ Եւ նորա 21
մեծաւորը պիտի իրանից լինի, և նորա իշխանը իր միջիցը պիտի դուրս գայ, և ես պիտի մօտեցնեմ նորան, և նա պիտի մօտ լինի ինձ. վասն զի ո՞վ է նա որ վատահանայ իր սրտովը ինձ մօտենալու, ասում է Տէրը։ Եւ 22
դուք կ՚լինիք ինձ համար ժողովուրդ, և ես կ՚լինիմ ձեզ համար Աստուած։

Ահա Տիրոջ մրրիկը բարկու- 23
թեամբ պիտի դուրս գայ. շաւաչող թափառը պտուտուելու է չարերի գլխին։ Տիրոջ բարկու- 24
թեան բորբոքումը էտ չէ դառնալու, մինչև որ անէ և մինչև որ կատարէ իր սրտի խորհուրդները. յետի օրերումը պիտի հասկանաք այս։

ԳԼ. Լ.Ա

1 Ա.յն ժամանակ, ասաւ Է Տէրը, ես Աստուած կ'լինիմ Իսրայէլի բոլոր ազգատոհմերի համար. և նորանք ինձ համար ժողովուրդ կ'լինին։ 2 Այսպէս է ասում Տէրը. Շնորհք գտաւ անապատումը սուրից փախած ժողովուրդը, երբոր գնում էր Իսրայէլին հանգրաստացնելու։ 3 Հեռուանց է երևեցել ինձ Տէրը, թէ Յաւիտենական սիրով սիրել եմ քեզ. դորա համար քաշեցի քեզ ողորմութիւնով։ 4 Եւ քեզ միւսանգամ պիտի շինեմ, և դու պիտի շինուիս, ով Իսրայէլի կոյսը. միւսանգամ պիտի զարդարուիս քո թմբուկներովը, և պիտի դուրս գաս ուրախացողների պարախումբի մէջ։ 5 Միւսանգամ պիտի պիներ տնկես Սամարիայի լեռանց վերայ, տնկողները պիտի տնկեն և քաղեն։ 6 Վասն զի կայ օր, որ պահապանները պիտի կանչեն Եփրեմի լեռան վերայ. Վեր կացէք և վեր գնանք Սիօն դէպի մեր Տէր Աստուծոյն։

7 Վասն զի այսպէս է ասում Տէրը. Ուրախութեամբ երգեցէք Յակոբի համար, և ցնծացէք ազգերի գլխի վերայ, բարձրաձայն գովաբանեցէք ու ասացէք. Փրկիր, ով Տէր, քո ժողովրդին Իսրայէլի մնացորդին։ 8 Ահա ես նորանց պիտի բերեմ հիւսիսի երկրից, և պիտի ժողովեմ նորանց երկրի ծայրերից, նորանց հետ կոյրին ու կաղին, յղիին ու ծնածին միասին. մեծ ժողով 9 պիտի դառնայ այնտեղ։ Լացով են գալու, և ողջոյններով եմ բերելու նորանց. նորանց պիտի առաջնորդեմ դէպի ջրերի վտակները, ուղիղ ճանապարհով, որի մէջ պիտի չդպչեն. վասն զի ես Իսրայէլին հայր եղայ, և Եփրեմը իմ անդրանիկն է։

10 Լսեցէք Տիրոջ խօսքը, ով ազգեր, և իմացրէք հեռաւոր կղզիներին, և ասացէք. Իսրայէլին ցրիւ տուողը պիտի ժողովէ նորան, և նորան պիտի պահպանէ

ինչպէս հովիւն իր հօտը։ 11 Վասն զի Տէրը փրկել է Յակոբին և նորան ազատել է նորանից մի ուժեղի զօրաւոր ձեռքից։ 12 Եւ պիտի գան ու ցնծան Սիօնի բարձրութիւնովը, և պիտի հասնեն դէպի Տիրոջ բարիքները, դէպի ցորենը և դէպի գինին և դէպի իւղը, և դէպի հօտերն ու արջառները. և նորանց անձերը պիտի լինին ջրուած պարտէզի պէս, և այլևս պիտի չնուաղեն։ 13 Այն ժամանակ կոյսը պիտի ուրախանայ պարախումբովը, և երիտասարդներն ու ծերերը միասին. և ես կ'դարձնեմ նորանց սուգը ուրախութեան, ու կ'մխիթարեմ նորանց, և նորանց կ'ուրախացնեմ նորանց տրտմութիւնից։ 14 Եւ պիտի պարարտացնեմ քահանաների հոգիները իւղով, և իմ ժողովուրդը պիտի կշտանայ իմ բարիքովը, ասում է Տէրը։

15 Այսպէս է ասում Տէրը. Ողբ լսուեցաւ Հռամայում, դառն լաց. Ռաքելը լաց է լինում իր որդիների համար, չէ ուզում մխիթարուիլ իր որդիների համար, որ չկան։ 16 Այսպէս է ասում Տէրը. Դադարեցրու ձայնդ լալուց և աչքերդ արտասուքից, վասն զի վարձք կայ քո գործի համար, ասում է Տէրը. և նա պիտի դառնան թշնամու երկրից։ 17 Եւ յոյս կայ քո ապագայի համար, ասում է Տէրը, և որդիքը նա պիտի դառնան իրանց սահմանը։

18 Բոլորովին լսել եմ Եփրեմին ողբալիս. Ինձ խրատեցիր, և ես խրատուեցայ չսովորած զուարակի նման. ինձ դարձրու, և ես կ'դառնամ, որովհետև դու ես, ով Տէր, իմ Աստուածը։ 19 Իրաւ իմ դառնալուց յետոյ ապշեցի, և խելքս գնալուց յետոյ զարկեցի իմ ազդրին, ամաչեցի և պատկառեցի էլ, վասն զի կրեցի իմ մանկութեան անարգանքը։ 20 Մի՞թէ պատուական որդի է ինձ համար Եփրեմը, կամ մի սիրելի զաւակ է նա, որ քանիցս որ խօսում եմ նորա վերայ, էլի

յիշում եմ նորան անպատճառ, սորա համար գալարում են իմ ազիքները, անշուշտ պիտի ողորմեմ նորան, ասում է Տէրը։
21 Կոթողներ անկիր քեզ համար, քեզ համար սիւներ դիր. միտդ առ քո գնացիք ճանապարհին պողատային, եւ դարձիր, ով Իսրայէլի կոյսը, եւ դարձիր դէպի
22 այս քաղաքները։ Մինչե՞ր պիտի տատրակիս, ով ապստամբ դուստր, վասն զի Տէրը նոր բան է ստեղծել երկրիս վերայ, կինը պիտի շրջապատէ մարդուն։
23 Այսպէս է ասում Զօրից Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Դեռ պիտի ասեն այս խօսքը Յուդայի երկրումը եւ նորա քաղաքներումը, երբոր ես եւ եմ կ'դարձնեմ նորանց գերութիւնը. Քեզ օրհնէ Տէրը, ով արդարութեան բնակարան,
24 սուրբ լեռ։ Եւ նորանում պիտի բնակեն Յուդան եւ նորա բոլոր քաղաքները միասին, երկրագործներ եւ հօտերով չուաղներ։
25 Վասն զի պիտի զովացնեմ վաստակած հոգին, եւ ամեն նուաղած հոգին պիտի կշտացնեմ։
26 Սորա համար զարթնեցի եւ նայեցի, եւ իմ քունը քաղցր էր ինձ համար։
27 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, եւ Իսրայէլի տունը եւ Յուդայի տունը պիտի սերմեմ մարդու սերմ եւ անասունի սերմ։
28 Եւ ինչպէս որ հսկեցի նորանց վերայ՝ նորանց խլելու, փչացնելու, քանդելու, կորցնելու եւ չարչարելու համար, նոյնպէս պէտք է հսկեմ նորանց վերայ շինելու եւ տնկելու համար, ասում է Տէրը։
29 Այն օրերը այլ եւս չեն ասիլ Հայրերը ողիս են կերել, եւ որդկանց ատամները առել է։
30 Այլ ամեն մարդ իր անօրէնութեան համար պիտի մեռնէ, ամեն մարդ, որ ողիս ուտէ, նորա ատամները պիտի առնէ։
31 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ Իսրայէլի տան հետ եւ Յուդայի տան հետ պիտի նոր
32 ուխտ կապեմ։ Ոչ թէ այն ուխտի պէս, որ ես արի նորանց հայրերի հետ, այն օրը որ ես բռնեցի նորանց ձեռքից Եգիպտոսի երկրից նորանց հանելու համար, որ իմ այն ուխտը նորանք զանց արին, թէպէտ ես նորանց հետ ամուսնակատարէս կատարել էի, ասում է Տէրը։
33 Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայէլի տան հետ այն օրերից յետոյ, ասում է Տէրը. Իմ օրէնքը պիտի դնեմ նորանց ներսումը, եւ նորանց սրտի վերան պիտի գրեմ այն, եւ ես պիտի լինեմ նորանց Աստուած, եւ նորանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն։
34 Եւ այլ ես մէկ մարդ իր ընկերին եւ մէկ մարդ իր եղբօրը պիտի չսովորեցնէ, ասելով. Թէ ճանաչեցէք Տէրոջը, վասն զի նորանք ամենքը պիտի ճանաչեն ինձ, նորանց փոքրերից մինչե նորանց մեծերը, ասում է Տէրը. վասն զի ես պիտի ներեմ նորանց անօրէնութիւնը, եւ նորանց մեղքերը այլ ես պիտի չյիշեմ։
35 Այսպէս է ասում Տէրը, որ արեգակը տուել է օրուան լոյսի համար, լուսնի եւ աստղերի կանոնները գիշերուայ լոյսի համար, որ սասում է ծովին, եւ նորա ալիքները գոռում են, նորա անունը Զօրից Եհովայ է։
36 Եթէ վերանան այս կանոնները իմ առջեւից, ասում է Տէրը, Իսրայէլի սերունդն էլ կ'դադարեն իմ առջեւ ամեն ժամանակ ազգ լինելուց։
37 Այսպէս է ասում Տէրը, Եթէ երկինքը կ'չափուի վերեւումը, եւ կ'քննուին երկրի հիմունքը ցածումը, ես էլ կ'մերժեմ Իսրայէլի բոլոր սերունդը իրանց բոլոր արածների համար, ասում է Տէրը։
38 Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ քաղաքը պիտի շինուի Տիրոջ համար, Անանէլի աշտարակից մինչե Անկեան դուռը։
39 Եւ պիտի էլ դուրս գնայ չափի լարը դէպի առաջ մինչե Գարեբի բլուրը եւ եւս դառնայ դէպի Գոատ։
40 Եւ դիակների ու մոխրի բոլոր ձորը եւ բոլոր արտերը

մինչև կեդրոն հեղեղատը մինչև Զիերի դրան անկիւնը դէպի արեւելք, սուրբ պիտի լինի Տիրոջ Համար, այլ ևս պիտի յաւիտեան չքանդուի և փուլ ածուի։

ԳԼ. ԼԲ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ Յուդայի թա-
գաւոր Սեդեկիայի տասներորդ տարին այսինքն Նաբուգոդոնոսո-
2 րի տասնութերորդ տարին։ Եւ այն ժամանակ Բաբիլոնի թագա-
ւորի զօրքը պաշարել էր Երու-
սաղէմը, և Երեմիա մարգարէն արգիլուած էր բանդի գաւիթու-
մը, որ Յուդայի թագաւորի տա-
3 նէն է, Ուր որ նորան բանդարկել էր Յուդայի թագաւոր Սե-
դեկիան ասելով. Ինչո՞ւ դու մար-
գարէութիւն արիր և ասացիր Թէ՝ Տէրը այսպէս է ասում. Ա-
հա ես պիտի տամ այս քաղաքը Բաբիլոնի թագաւորի ձեռքը, և
4 նա պիտի առնէ նորան։ Եւ Յու-
դայի Սեդեկիա թագաւորը չի պրծնիլ Քաղդէացւոց ձեռքից, այլ անպատճառ պիտի Բաբիլո-
նի թագաւորի ձեռքը տրուի և պիտի բերան առ բերան խօսէ նո-
րա հետ և աչք աչքի հետ պիտի
5 տեսնուին։ Եւ նա պիտի Բաբի-
լոն տանէ Սեդեկիային, և նա այնտեղ պիտի մնայ մինչև որ ես նորան այցելեմ, ասում է Տէրը. երբոր պատերազմէք Քաղդէացի-
ների հետ չպիտի յաջողէք։

6 Եւ Երեմիան ասաց. Տիրոջ
7 խօսքը եղաւ ինձ ասելով. Ահա քո հօրեղբօր Սեղղումի որդի Ա-
նամէլը պիտի քեզ մօտ գայ և ասէ. Առ իմ պատարակը, որ Ա-
նաթովթումն է, վասն զի ապ-
գականութեան իրաւունքը քոնն
8 է, որ ծախու առնես։ Եւ իմ հօրեղբօր որդի Անամէլն եկաւ ինձ մօտ Տիրոջ խօսքին համե-
մատ բանդի գաւիթը և ասաց ինձ. Խնդրեմ՝ ծախու առ իմ պատարակը, որ Բենիամինի երկրի Անաթովթումն է, վասն զի քեզ կ'վերաբերէ ժառանգութեան ի-
րաւունքը և քոնն է ապգականու-
թիւնը, ծախու առ քեզ Համար։ Եւ ես իմացայ որ սա Տիրոջ խօս-
քըն էր։ Եւ ես ծախու առի այն 9
պատարակը իմ հօրեղբօր որդի Ա-
նամէլից, որ Անաթովթումն է, և կշռեցի փող նորան արծա-
թը՝ տասն եօթը սիկղ արծաթ։
Եւ ես գրեցի մուրհակումը և 10
կնքեցի և վկաներով վկայեցի, և
կշռով կշռեցի արծաթը։ Եւ 11
առի ստացուածքի մուրհակը
պատուէրի ու կանոնների Համա-
ձայն կնքուածը և բացը, Եւ տուի 12
այն ստացուածքի մուրհակը Մա-
ասիայի որդի Ներիայի որդու
Բարուքին իմ հօրեղբօր Անամա-
յէլի աչաց առջև և այն վկաների
աչաց առջև որոնք գրուած էին
ստացուածքի մուրհակումը՝ և
այն ամեն Հրեաների աչաց առ-
ջև. որոնք նստած էին բանդի գա-
ւիթումը. Եւ Բարուքին պատ- 13
ուիրեցի նորանց աչքի առջև ա-
սելով. Այսպէս է ասում Զօրաց 14
Տէրը Իսրայէլի Աստուածը. Առ
այս մուրհակները՝ այս ստաց-
ուածքի մուրհակը՝ կնքուածը և
այս բաց մուրհակը, և դիր նո-
րանց մի հողի ամանի մէջ, որ
շատ օրեր մնան։ Վասն զի այս- 15
պէս է ասում Զօրաց Տէրը՝ Իս-
րայէլի Աստուածը. Դեռ տներ
և պարակներ ու այգիներ պիտի
ծախու առնուին այս երկրում։

Եւ ես աղօթք արի Տիրոջը՝ ա- 16
ստացուածքի մուրհակը Ներիայի
որդի Բարուքին տալուցս յետոյ
ասելով. Ո՜հ, Տէր Եհովայ, դու 17
ես ստեղծել երկինքն ու երկիրը
քո մեծ զօրութիւնովը և քո մեկ-
նած բազուկովը. քեզ Համար
ոչ մի բան դժուար չէ. Որ դու 18
ողորմութիւն ես անում Հազար-
ներին, և Հայրերի անօրէնութիւն-
ները Հատուցանում ես նորանց
որդկանց ծոցը նորանցից յետոյ,
ով դու մեծ և Հզօր Աստուած,
որի անունը Զօրաց Եհովայ է։
Դու մեծ ես խորհուրդով և զո- 19
րաւոր՝ գործքերով, որ աչքերդ
բաց են մարդկանց որդիների ա-
մեն ճանապարհների վերայ, որ

վճարես մարդուս իր ճանապարհներուն համեմատ և իր գործքերուն պտուղին համեմատ. Որ նշաններ և հրաշքներ արիր Եգիպտոսի երկրին մէջ մինչև այսօր և Իսրայէլի ու մարդկանց վերայ, և քեզ համար անուն շահեցիր՝ ինչպես որ այսօր կայ. Եւ հանեցիր քո ժողովրդին Իսրայէլ Եգիպտոսի երկրէն նշաններով և հրաշքներով և զօրաւոր ձեռքով և մեկնած բազուկով և մեծ ահարկու թեամբ. Եւ տուիր նորանց այս երկիրը, որ երդուայ էիր արել հրանց հայրերին, որ տան նորանց մի երկիր՝ որ կաթ ու մեղր է բղխում: Եւ նորանք եկան ու ժառանգեցին նորան, և չլսեցին քո ձայնին և քո օրէնքներովը չը գնացին, և այն ամենը, որ դու պատուիրել էիր նորանց անելու համար, չարին և դու նորանց հանդիպեցրիր այս բոլոր չարեացը: Ահա պատնէշները եկել են քաղաքը՝ որ նորան առնեն, և քաղաքը տրուեցաւ Քաղդէացոց ձեռքը, որ պատերազմում են նորա դէմ, սուրի, սովի և ժանտախտի պատճառովը. և ինչ որ ասել էիր՝ եղաւ. և ահա դու տեսնում ես: Սակայն դու ասացիր ինձ, ով Տէր Եհովայ, փողով առ քեզ համար այն ագարակը, և վկաներով վկայիր. բայց քաղաքը Քաղդէացոց ձեռքն է արվում:

Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիայեայ, ասելով. Ահա ես եմ Տէրը՝ ամեն մարմնոյ Աստուածը, մի՞թէ ինձ համար մի որ և է դժուար բան կայ. Սորա համար Տէրը այսպէս է ասում. Ահա ես այս քաղաքը պիտի մատնեմ Քաղդէացոց ձեռքը և Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը, և նա պիտի առնէ նորան: Եւ այս քաղաքի դէմ պատերազմող Քաղդէացիք պիտի գան, և պիտի այրեն այս քաղաքը կրակով և նորան այրեն, և նաև այն տուները՝ որոնց կտուրների վերայ Բահաղին խունկ են ծխում և թափելու նուէրներ մատուցանում օտար աստուածների, որպէս զի ինձ բարկացնեն: Վասն զի Իսրայէլի որդիքը և Յուդայի որդիքը միայն չարութիւն էին անում իմ առջև իրանց մանկութենից՝ ի վեր. վասն զի Իսրայէլի որդիքը ինձ հէնց բարկացրնում են իրանց ձեռաց գործքերով, ասում է Տէրը: Վասն զի իմ բարկութեան և իմ սրտմտութեան համար եղաւ այս քաղաքը ինձ համար այն օրից որ նորան շինեցին մինչև այս օրը, որ նորան վերացնեմ իմ առջևիցը, Իսրայէլի որդիկանց և Յուդայի որդիկանց ամեն չարութեան համար, որ նորանք գործեցին ինձ բարկացնելու համար և նորանց թագաւորներն ու նորանց իշխանները՝ նորանց քահանաները և մարգարէները և Յուդայի մարդիկը և Երուսաղէմի բնակիչները: Եւ դէպի ինձ քամակ դարձրին և ոչ թէ երես, թէպետ և ես ուսուցանում էի նորանց կանուխ վեր կենալով և ուսուցանելով. բայց նորանք չէին լսում խրատ առնելու համար: Ահա իրանց պղծութիւնները դրին այն տան մէջ, որի վերայ կոչուած էր իմ անունը, որ նորան պղծէին. Եւ շինեցին Բահաղի բարձրաւանդակները, որ Ենոմի որդու ձորումն է, որ իրենց տղայքն ու աղջկերքը անցկացնեն Մողոքի համար, որ ես նորանց չէի հրամայել և մտքովս էլ չէր անցել այդ գարշելութիւնը անելը Յուդային մեղանչել տալու համար:

Եւ հիմա սորա համար այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա քաղաքի մասին, որ դուք ասում էք թէ Բաբելոնի թագաւորի ձեռքն է տրուում սրով, սովով և ժանտախտով. Ահա ես նորանց պիտի ժողովեմ այն բոլոր երկիրներից, ուր որ ես նորանց աքսորել եմ իմ բարկութիւնովը և մեծ ցասումով, և ետ պիտի բերեմ այս տեղը և նորանց պիտի բնակեցնեմ ապահովութիւնով: Եւ նորանք ինձ համար կ՚լինեն ժողո-

վուրդ, և ես կ'լինեմ նորանց Տ-
39 մար Աստուած։ Եւ ես կ'տամ նորանց մէկ սիրտ և մէկ ճանապարհ, որ ինձանից վախենան ամեն ժամանակ, որ լաւ լինի իրանց համար և իրանցից յետոյ
40 իրանց որդկանց համար։ Եւ ես յաւիտենական ուխտ եմ դնում նորանց հետ, որ ետ չդառնամ նորանցից նորանց բարութիւն անելուց, և իմ երկիւղը կ'դնեմ նորանց սրտերումը, որ ինձանից
41 չհեռանան։ Եւ ես պիտի ուրախանամ նորանց բարութիւն անելով, և նորանց պիտի տնկեմ այս երկրումը հաւատարմութեամբ իմ բոլոր սրտովը և իմ բո-
42 լոր անձնովը։ Վասն զի այսպէս է ասում Տէրը. Ինչպէս որ ես բերի այս ազգի վերայ այս բոլոր մեծ չարիքը, այնպէս էլ պիտի բերեմ նորանց վերայ այն բոլոր բարիքը, որոնք ես խօսել եմ նո-
43 րանց մասին։ Եւ ագարակներ պիտի առնուի այս երկրումը, որի համար դուք ասում էք. Թէ Ամայի է եղանց մարդու և անասուն, Քաղդէացոց ձեռքը պի-
44 տի տրուի։ Փողով ագարակներ են առնելու և մուրհակում գրեն և կնքեն և վկայներով վկայեն Բենիամինի երկրումը, և Երուսաղէմի շրջակայքում, և Յուդայի քաղաքներումը և լեռան քաղաքներումը, և դաշտային քաղաքներումը և հարաւային քաղաքներումը. վասն զի ես եմ դարձընելու նորանց գերութիւնը, ասում է Տէրը։

ԳԼ. ԼԳ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիայի երկրորդ անգամ և նա տակաւին արգելուած էր բանդի գա-
2 լիթումը, ասելով. Այսպէս է ասում Տէրը՝ այս անողը, և այս կազմող Տէրը, որ աս հաստատուի, որի անունն Եհովայ է.
3 կանչիր ինձ և ես քեզ պիտի պատասխանեմ, և ես քեզ պիտի մեծամեծ և անհասանելի բաներ
4 իմացնեմ, որ դու չգիտես։ Վասն զի այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը այս քաղաքի տների մասին և Յուդայի թագաւորի տների մասին, որ քանդուել են պատնէշների և սուրի համար. Գալիս են պատերազմելու Քաղդէացոց հետ, և որ նորանց լցնեն մարդու դիակներով, որոնց ես պիտի զարկեմ իմ բարկութիւնովը և իմ սրտմտութիւնովը, որովհետև ես ծածկել եմ իմ երեսը այս քաղաքից նորանց բոլոր չարութիւնների համար։ Ահա ես դնելու եմ նորա վերայ ապեզանիք և բժշկութիւն, և պիտի բժշկեմ նորանց, և պիտի յայտնեմ նորանց խաղաղութեան և ճշմարտութեան առատութիւն. Եւ պիտի ես դարձնեմ Յուդայի գերութիւնը և Իսրայէլի գերութիւնը, և պիտի շինեմ նորանց ինչպէս առաջ. Եւ պիտի մաքրեմ նորանց իրանց անօրէնութիւններից, որ մեղանչեցին ինձ դէմ, և պիտի ներեմ նորանց բոլոր անօրէնութիւնները, որով մեղանչեցին ինձ դէմ և որով ինձ դէմ ապստամբեցին. Եւ նա պիտի լինի ինձ համար ուրախութեան անուն, փառք և պարծանք երկրի բոլոր ազգերի համար, որոնք կ'լսեն այն բոլոր բարիքը, որ ես կանեմ նորանց. և նորանք պիտի վախենան և դողան այն բոլոր բարիքի համար և այն բոլոր խաղաղութեան համար, որ ես նորան կ'անեմ։

Այսպէս է ասում Տէրը. Դեռ այս տեղում, որի համար դուք ասում էք թէ Աւերակ է՝ առանց մարդու և առանց անասունի, Յուդայի քաղաքներումը, Երուսաղէմի փողոցներումը որ աւերակ է դարձած առանց մարդու և առանց բնակչի և առանց անասունի, Պիտի լսուի ցնծութեան ձայն և ուրախութեան ձայն, փեսայի ձայն և հարսի ձայն, որ կ'ասեն. Օրհնեցէք Տիրոջը, վասն զի բարի է Տէրը, և յաւիտեան է նորա ողորմութիւն՝ Տիրոջ տունը գոհութեան նուէր

բերելով, վասն զի ես եւ ետ պիտի
դարձնեմ երկրի գերութիւնը
ինչպէս որ առաջ էր, ասում է
12 Տէրը։ Այսպէս է ասում Զօրից
Տէրը. Դեռ այս տեղումը, որ
աւերակ է առանց մարդու մին-
չեւ անասունը, եւ նորա ամեն քա-
ղաքներումը պիտի լինին հովիւ-
ների բնակարաններ, որոնք հօտեր
13 են մակաղեցնում։ Լեռնային քա-
ղաքներում, դաշտային քաղաք-
ներում, եւ հարաւային քաղաք-
ներում եւ Բենիամինի քաղաք-
ների շրջակայքում եւ Յուդայի քաղաքներումը
դեռ հօտեր են անց կենալու հա-
մարողի ձեռքովը, ասում է
Տէրը։
14 Ահա օրեր են գալիս ասում է
Տէրը, որ պիտի հաստատեմ այն
բարի խօսքը, որ ասել եմ Իս-
րայէլի տան համար եւ Յուդայի
15 տան համար։ Այն օրերը եւ այն
ժամանակը ես Դաւթի համար
մի արդարութեան շառաւիղ պի-
տի բուսցնեմ, եւ նա պիտի իրա-
ւունք եւ արդարութիւն անէ երկ-
16 րի վերայ։ Այն օրերը Յուդան
պիտի ազատուի եւ Երուսաղէմը
պիտի բնակէ ապահովութիւնով,
եւ այս է որով նա պիտի կոչուի,
Եհովան մեր արդարութիւնը։
17 Վասն զի այսպէս է ասում Տէ-
րը, չպիտի պակասէ Դաւթի հա-
մար մէկ մարդ՝ նստող Իսրայէլի
18 տան աթոռի վերայ. Եւ Ղեւտա-
ցի քահանաներից պակաս չպիտի
լինի իմ առջեւ ողջակէզ մատու-
ցանող, հացի ընծայ նուիրող եւ
զոհ անող մարդ ամեն ժամա-
նակ։
19 Եւ եղաւ Տիրոջ խօսքը Երեմի-
20 այեան ասելով. Այսպէս է ասում
Տէրը. Եթէ խափանէք իմ ու-
խտը ցերեկը եւ իմ ուխտը գիշերը,
որ չլինի ցերեկն ու գիշերն իրանց
21 ժամանակին։ Իմ ուխտն էլ կը
խափանուի իմ ծառայ Դաւթի
հետ, որ նա որդի չունենայ թա-
գաւորող իր աթոռի վերայ. նոյն-
պէս եւ իմ պաշտօնեայք Ղեւտա-
22 ցի քահանաների հետ։ Ինչպէս
որ չհամարուիլ երկնից զօրքը եւ
չի համարուիլ ծովի աւազը,
նոյնպէս պիտի շատացնեմ իմ
ծառայ Դաւթի սերունդը, եւ իմ
պաշտօնեայ Ղեւտացիներին։
23 Եւ Տիրոջը խօսքը եղաւ Երե-
24 միայեան ասելով. Չե՞ս տեսնում
թէ ինչ են խօսում այս ժողո-
վուրդը ասելով. Թէ Այն երկու
ազգատոհմերին, որոնց Տէրը
ընտրել էր, նորանց մերժել է.
եւ նորանք անարգում են իմ ժո-
ղովրդին, որ ազգ չլինի այլ եւս
25 նորանց առջեւ։ Այսպէս է ա-
սում Տէրը. Եթէ ես ուխտ չդնիմ
ցերեկուայ եւ գիշերուայ հետ եւ
կանոններ չեմ դրել երկնքին եւ
երկրիս, 26 Յակոբի եւ իմ ծառայ
Դաւթի սերունդն էլ պիտի մեր-
ժեմ, որ նորա սերունդից չառ-
նեմ իշխաններ Աբրահամի, Իսա-
հակի եւ Յակոբի սերունդի վե-
րայ, վասն զի նորանց գերութիւ-
նը պիտի դարձնեմ եւ նորանց պի-
տի ողորմեմ։

ԳԼ. ԼԴ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիայեան
Տիրոջ կողմանէ, երբ Բաբելոնի
Նաբուգոդոնոսոր թագաւորը եւ
նորա բոլոր զօրքերը եւ երկրի բո-
լոր թագաւորութիւնները որ իր
իշխանութեան ձեռքումն էին,
եւ բոլոր ժողովուրդներովը պա-
տերազմում էին Երուսաղէմի
դէմ եւ նորա բոլոր քաղաքների
դէմ, ասելով.
2 Այսպէս է ասում Տէրը՝ Իսրա-
յէլի Աստուածը. Գնա եւ ասիր
Յուդայի թագաւոր Սեդեկիայեին
եւ ասիր նորան. Այսպէս է ա-
սում Տէրը. Ահա ես այս քաղա-
քը պիտի տամ Բաբելոնի թա-
գաւորի ձեռքը, եւ նա պիտի
այրէ նորան կրակով։ 3 Եւ դու
պիտի չպրծնես նորա ձեռքից,
այլ անպատճառ պիտի բռնուիս
եւ նորա ձեռքը մատնուիս, եւ
քո աչքերը պիտի տեսանեն Բաբե-
լոնի թագաւորի աչքերը, եւ նո-
րա բերանը պիտի խօսէ քո բե-
րանի հետ, եւ պիտի գնաս Բա-
բելոն։ 4 Սակայն լսիր Տիրոջ խօս-

քը, ալ Յուդայի Սեդեկիա թագաւոր, այսպէս է ասում Տէրը քո մասին. Դու սրով պիտի չը
5 մեռնես։ Դու խաղաղութիւնով պիտի մեռնես. և ինչպէս որ քեզանից առաջ եղող քո հայրերի առջև թագաւորների համար խունկ ծխեցին, նոյնպէս և պիտի ծխեն քեզ համար, և վա՛յ ասէր, ասելով, պիտի սուգ անեն քեզ վերայ, վաո՛ն որ այս խօսքը ես խօսեցի, ասում է Տէրը։

6 Եւ Երեմիա մարգարէն խօսեց Յուդայի Սեդեկիա թագաւորի հետ այս բոլոր խօսքերը Երուսաղէմում։ 7 Եւ Բաբելոնի թագաւորի զօրքը պատերազմում էր Երուսաղէմի դէմ և Յուդայի մնացած բոլոր քաղաքների դէմ, վաո՛ն որ Յուդայի քաղաքների մէջ ապրանք էին մնացել պարսպապատ քաղաքներ։ 8 Այն խօսքը որ եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ, երբոր Սեդեկիա թագաւորը Երուսաղէմում եղող ժողովրդի բոլորի հետ ուխտ էր դրել, որ նորանք ազատութիւն քարոզեն, 9 Որ ամեն մարդ իր ծառային և ամեն մարդ իր աղախնոյն Եբրայեցուն և Եբրայեցուհուն ազատ արձակէ, որ ոչ մէկը չը ծառայեցնէ իր Հրէայ եղբօրը։ 10 Եւ լսեցին բոլոր իշխանները և բոլոր ժողովուրդը, որոնք ուխտ արին, որ ամեն մարդ իր ծառային և ամեն մարդ իր աղախնոյն ազատ արձակէ, որ այլև նորան չծառայեցնէ. և նորանք լսեցին ու արձակեցին։ 11 Բայց յետոյ ետ դարձան և իրանց ազատ արձակած ծառաներին և աղախիններին ետ բերին և նորանց բռնի ծառաներ և աղախիններ արին։

12 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ՝ ասելով. 13 Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ես ուխտ արի ձեր հայրերի հետ այն օրը որ նորանց հանեցի Եգիպտոսի երկրից՝ ծառայութեան տանից՝ ասելով թէ. 14 Եօթը տարուց յետոյ ձեզանից ամեն մարդ արձակէ իր եբրայեցի եղբօրը, որ ծախուած է քեզ վերայ և ծառայել է քեզ վեց տարի, դու նորան ազատ արձակիր քո կշտից, բայց հայրերը ինձ չէնազանդեցին և ականջ չդրին։ 15 Եւ դուք այսօր ետ էիք դարձել և արել այն ինչ որ ուղիղ է իմ աչքի առջև ամեն մարդ իր ընկերին ազատութիւն քարոզելով, և ուխտ էիք կապել իմ առջև այն տան, որի վերայ կոչուած է իմ անունը. 16 Բայց էյ դարձաք ու պղծեցիք իմ անունը, և ետ դարձրիք ամեն մարդ իր ծառային և ամեն մարդ իր աղախնոյն, որոնց ազատ արձակել էիք իրանց համար, և նորանց բռնադատեցիք, որ ձեզ համար ծառաներ և աղախիններ լինին։

17 Վաո՛ն որոյ այսպէս է ասում Տէրը. Դուք ինձ չլսեցիք, որ ազատութիւն քարոզէիք ամեն մարդ իր եղբօրը և ամեն մարդ իր ընկերին, այո՛ ես ձեզ համար ազատութիւն կ'քարոզեմ, ասում է Տէրը, սուրին, և ժանտախտին և սովին, և ձեզ պիտի մատնեմ տանջանքի երկրի բոլոր թագաւորութիւններին։ 18 Եւ պիտի մատնեմ այն մարդկանցը, որոնք զանց են արել իմ ուխտը, որոնք չեն կատարել այն ուխտի խօսքերը, որ արին իմ երեսի առջև, որ զատարակը բաժանեցին երկու կտոր և կտորների միջովը անցան, 19 Այսինքն Յուդայի իշխանները և Երուսաղէմի իշխանները, պալատականները և քահանաները և երկրի բոլոր ժողովուրդը, որ անց կացան զատարակի կտորների միջովը։ 20 Եւ նորանց պիտի մատնեմ իրանց թշնամիների ձեռքը և նորանց հոգին պահանջողների ձեռքը, և նորանց դիակները պիտի կերակուր դառնան երկնից թռչունների համար և երկրի գազանների համար։ 21 Եւ Յուդայի Սեդեկիա թագաւորին և նորա իշխաններին պիտի տամ իրանց թշնամիների ձեռքը և նորանց հոգին պահանջողների ձեռքը և Բաբելոնի թագաւորի զօրքի ձեռ-

քը, որ ձեզանից եւս են դնացել։
22 Ահա ես հրամայում եմ, ասում է Տէրը, և նորանից եւս եմ դարձնելու այս քաղաքի վերայ, և նորանք պիտի պատերազմեն նորա դէմ և նորան առնեն և նորան այրեն կրակով, և Յուդայի քաղաքները պիտի ամայի անեմ՝ առանց բնակչի։

ԳԼ. ԼԵ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիա մարգարէին Տիրոջ կողմանէ Յուդայի թագաւոր Յովսիայի որդի
2 Յովակիմի օրերին, ասելով. Գնա Ռեքաբեանց տունը և ասիր նորանց և տար նորանց Տիրոջ տունը՝ սենեակներէն մէկը, և նորանց
3 գինի խմել տուր։ Եւ ես Յազանիայի որդու Երեմիայի որդի Յեզոնիային և նորա եղբայրներին և նորա բոլոր որդիքանցը վեր առի, նաև բոլոր Ռեքաբեանց տունը,
4 և նորանց տարի Տիրոջ տունը Անտուծոյ մարդ Յեգդոլիայի որդի Անանի որդիքանց սենեակը, որ Սեղղումի որդի Մասաիա դռնապանի սենեակից վերև եղող իշխաններէն սենեակի մօտ
5 է, և Ռեքաբեանց տան որդիքանց առջև ամաններ դրի գինով լիքը և բաժակներ, և ասացի նորանց. Գինի խմեցէք։
6 Եւ նորանք ասացին. Մենք գինի չենք խըմում, վասն զի մեր Հայրը՝ Ռեքաբի որդի Յովնադաբը մեզ պատուիրել է ասելով. Թէ գինի չխմէք ոչ դուք և ոչ ձեր
7 որդիքը յաւիտեան։ Եւ տուն չը շինէք, և սերմ չցանէք, և այգի չունենաք, այլ վրաններում բնակեցէք ձեր բոլոր օրերում, որպէս զի շատ օրեր ապրէք երկրի երեսին, ուր որ դուք պանդուխտ
8 էք։ Եւ մենք լսում ենք մեր Հօր՝ Ռեքաբի որդի Յովնադաբի ձայնին այն ամեն բանում որ պատուիրել է մեզ, որ գինի չխմենք մեր բոլոր օրերում թէ մենք թէ մեր կանայքը թէ մեր տղայքը
9 թէ մեր աղջկունքը։ Եւ տուն չենք շինում մեզ նստելու համար, և մենք այգի, ագարակ և ցանք չենք ունենում։ 10
Այլ վրաններում ենք բնակում, և հնազանդում ենք ու անում այն ամենի համեմատ, որ մեզ պատուիրել է մեր Հայրը՝ Յովնադաբը։ 11
Եւ եղաւ երբոր Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը եկաւ այս երկրի վերայ, այն ժամանակ ասացինք. Եկէք գնանք Երուսաղէմ Քաղդէացոց զօրքերի պատճառով և Ասորց զօրքերի պատճառով, և բնակում ենք Երուսաղէմում։
Եւ եղաւ Տիրոջ խօսքը Երե- 12
միային ասելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Գնա և ասիր Յուդայի մարդկանց և Երուսաղէմի բնակիչներին. Միթէ խրատ չէք առնում որ իմ խօսքերին հնազանդէք. ասում է Տէրը։ 13 14
Ռեքաբի որդի Յովնադաբի խօսքերը, որ պատուիրել է իր որդիքանցը գինի չխմել, հաստատուում են, և նորանք չեն խմում մինչև այսօր, այլ հնազանդում են իրանց Հօր պատուէրին. բայց ես խօսեցի ձեզ հետ կանուխ վեր կենալով և խօսելով, բայց դուք ինձ չլսեցիք։ 15
Եւ ես ձեզ մօտ ուղարկեցի իմ բոլոր ծառաներին՝ մարգարէներին, կանուխ վեր կենալով և ուղարկելով, և ասի. Նայ դարձէք ամեն մարդ իր ճանապարհից, և լուացրէք ձեր գործքերը, և ուրիշ աստուածների ետևից մի գնաք նորանց ծառայելու համար, և կ'բնակէք այս երկրի վերայ որ ես տուել եմ ձեզ և ձեր Հայրերին, բայց դուք ականջ չդրիք և չլսեցիք ինձ։
Սակայն Ռեքաբի որդի Յովնա- 16
դաբի որդիքը կատարեցին իրանց Հօր պատուէրը, որ պատուիրել էր իրանց, իսկ այս ժողովուրդը ինձ չեն լսում։ Սորա համար 17
այսպէս է ասում Զօրաց Տէր Աստուած՝ Իսրայէլի Աստուածը. Ահա ես բերելու եմ Յուդայի վերայ և Երուսաղէմի բոլոր բնակիչների վերայ այն ամեն չարիքը, որ խօսել եմ նորանց մասին, ա-

բովհետև ես ասացի նորանց, բայց նորանք չլսեցին, և կանչեցի նորանց, բայց նորանք չպատասխանեցին։

18 *Եւ Երեմիան ասաց Ռեքաբեանց տանը, Ով Աւրպես է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Որովհետև դուք լսել էք ձեր հօր Յոնադաբի պատուէրին, և պահում էք նորա ամեն պատուէրները, և անում էք այն ամենի համեմատ, որ*

19 *նա ձեզ պատուիրել է. Դորա համար այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ռեքաբի որդի Յոնադաբի համար միշտ իմ առջև կանգնող մարդ պիտի պակաս չլինի։*

ԳԼ. ԼԶ

1 *Եւ եղաւ Յուդայի թագաւոր Յովսիայի որդի Յովակիմի չորրորդ տարին որ այս խօսքը եղաւ Երեմիայեն Տէրոջ կողմանէ ասելով.*

2 *Բեզ համար մի տոմս առ և գրիր նորա վերայ այն բոլոր խօսքերը, որ ասել եմ քեզ Իսրայէլի մասին և Յուդայի մասին և բոլոր ազգերի մասին այն օրէնն սկսեալ որ խօսեցի քեզ հետ Յովսիայի*

3 *օրերէնը մինչև այս օրը։ Կարելի է կ'լսէ Յուդայի տունը այն բոլոր չարիքը, որ ես խորհել եմ նորանց անելու, որպէս զի ամեն մարդ իր չար ճանապարհէնը ետ դառնայ, և ես ներեմ նորանց անօրէնութիւնը և նորանց մեղքը։*

4 *Եւ Երեմիան կանչեց Ներիայի որդի Բարուքին. և Բարուք գրեց Երեմիայի բերանէն Տէրոջ բոլոր խօսքերը, որ նա ասել էր նորան,*

5 *մի գրքի տոմսի վերայ։ Եւ Երեմիան պատուիրեց Բարուքին ասելով. Ես բանդարկուած եմ՝ չեմ կարող գնալ Տէրոջ տունը.*

6 *Բայց դու գնա և կարդա այդ տոմսիցը, որ դու գրեցիր իմ բերանէց, Տէրոջ խօսքերը՝ ժողովրդի ականջին Տէրոջ տանը ծոմապահութեան օրը, նաև բոլոր Յուդայի մարդկանց ականջին, որ գալիս են իրանց քաղաքներէցը,*

կարդաս նորանց։ Կարելի է նորանց աղօթքը ընկնէ Տիրոջ առջևը և ամեն մարդ ետ դառնայ իր չար ճանապարհէցը, վասն զի մեծ է այն բարկութիւնն ու սրտմնութիւնը, որ Տէրը ասել է այս ժողովրդի դէմ։

7 8

Եւ Ներիայի որդին Բարուք արաւ այն ամենի համեմատ, որ նորան պատուիրել էր Երեմիա մարգարէն, որ կարդայ Տիրոջ խօսքերի գրքիցը Տիրոջ տանը։

9 *Եւ եղաւ Յուդայի թագաւոր Յովսիայի որդի Յովակիմի հինգերորդ տարին իններորդ ամսին ծոմապահութիւն քարոզեցին Տիրոջ առջև Երուսաղէմի բոլոր ժողովուրդը, և այն բոլոր ժողովուրդը, որ եկել էր Յուդայի քաղաքներէց Երուսաղէմ։*

10 *Եւ Բարուք կարդաց գրքիցը Երեմիայի խօսքերը Տիրոջ տանը Սափան դպրի որդի Գամարիայի սենեակում՝ վերի գաւթում Տիրոջ տան նոր դրան մուտքումը ժողովրդի ականջի առջև։*

11 *Եւ Սափանի որդու Գամարիայի որդի Միքիան լսեց Տիրոջ բոլոր խօսքերը այն գրքի միջից.*

12 *Եւ իջաւ թագաւորի տունը դպրի սենեակը, և ահա այնտեղ նըստած էին բոլոր իշխանները՝ Եղիսամա դպիրը և Սեմայիայի որդին Դալայիան և Ակբորի որդին Եղնաթանը և Սափանի որդին Գամարիան և Անանիայի որդին Սեդեկիան և բոլոր իշխանները։*

13 *Եւ Միքիան նորանց պատմեց այն ամեն խօսքերը, որ լսել էր, երբոր Բարուք կարդում էր գրքիցը ժողովրդի ականջին։*

14 *Եւ բոլոր իշխանները ուղարկեցին Բարուքի մօտ Քուսիի որդի Սեղեմիայի որդու Նաթանիայի որդի Յուդին ասելով. Այն տոմսը, որից դու կարդացել ես ժողովրդի ականջին, վեր առ և եկ. և Ներիայի որդի Բարուք առաւ այն տոմսը իր ձեռքը և գնաց նորանց մօտ։*

15 *Եւ նորանք ասացին նորան. Խնդրում ենք՝ նստիր, և կարդա դորան մեր ականջին. Բարուք էլ կարդաց*

16 նորանց ականջին։ Եւ երբոր նո-
րանք լսեցին այն բոլոր խօսքերը,
դողդոմ էին իրար մօտ, և ասա-
ցին Բարուքին. Անպատճառ
պատժելու ենք Թագաւորին այդ-
17 բոլոր խօսքերը։ Եւ Բարուքին
Յարցրին և ասացին. Խնդրում
ենք՝ մեզ ասիր՝ ի՞նչպէս գրեցիր
այս բոլոր խօսքերը նորա բերա-
18 նից։ Եւ Բարուքն ասաց նորանց.
Իր բերանովը նա ինձ ասում էր
այս բոլոր խօսքերը և ես գրում
19 էի այս գրքում թանաքով։ Եւ
իշխաններն ասացին Բարուքին.
Գնա և թաք կացէք դու և Ե-
րեմիան, և մարդ չիմանայ թէ
դուք որտեղ էք։
20 Եւ նորանք եկան արտը Թա-
գաւորի մօտ, բայց տոմարը պահ
տուին դպիր Եղիսամայի սենեակ-
ում, և պատմեցին Թագաւորի
21 ականջին բոլոր խօսքերը։ Եւ
Թագաւորը ուղարկեց Յուդիին,
որ առնէ տոմարը. և նա առա
նորան դպիր Եղիսամայի սենեա-
կից և Յուդին կարդաց նորան
Թագաւորի ականջին և բոլոր ժո-
ղովրդի ականջին, որ կանգնել
22 էին Թագաւորի կողմին։ Եւ Թա-
գաւորը կենում էր ձմերոցանը
ինն երորդ ամսում, և կրակարանը
23 վառուած էր նորա առջև։ Եւ
եղաւ երբոր Յուդի կարդաց երեք
և չորս էջ, նորան կտրեց դպրի
դանակով և գցեց կրակը որ կը-
րակարանում էր մինչև որ բոլոր
տոմարը վերջացաւ կրակարանում
24 եղող կրակի վերայ։ Եւ չդող-
հուրեցան և չպատառեցին Թ-
րանց հանդերձները ոչ Թագաւո-
րը և ոչ նորա բոլոր ծառաները,
որ լսում էին այս բոլոր խօսքե-
25 րը. Թէպէտ և Եղնաթանը, Դա-
ղարիան և Գամարիան Թագաւո-
րին պաղատեցին, որ տոմարը չայ-
26 րէ. բայց նա նորանց չլսեց։ Եւ
Թագաւորը հրամայեց Յերամե-
ելին Թագաւորի որդուն և Եզրի-
էլի որդի Սարայիային և Աբդիէլի
որդի Սեղեմիային, որ բռնեն
դպիր Բարուքին և Երեմիա մար-
գարէին, բայց Տէրը նորանց ծած-
կեց։

27 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմի-
այեն, երբոր Թագաւորը այրել
էր այն տոմարը և այն խօսքերը,
որոնք բարուք գրել էր Երեմիայի
բերանից, ասելով՝ 28 Կարձեալ քեզ
համար մի ուրիշ տոմս առ և
գրիր նորա վերայ այն առաջի
խօսքերը, որոնք կային առաջի
տոմսի վերայ, որ Յուդայի Յով-
կիմ Թագաւորը այրեց, 29 և Յու-
դայի Յովակիմ Թագաւորին ա-
սիր. Այսպէս է ասում Տէրը.
Դու այրեցիր այս տոմսը ասելով
թէ՝ Ինչո՞ւ ես գրել նորա վերայ
թէ անպատճառ պիտի գայ Բա-
բելոնի Թագաւորը և աւերէ եր-
կիրը և դադարեցնէ նորանից
մարդն ու անասունը։
30 Դորա համար այսպէս է ա-
սում Տէրը Յուդայի Յովակիմ
Թագաւորի մասին. Նորա համար
նստող չպիտի լինի Դաւթի ա-
թոռի վերայ և նորա դիակը պի-
տի դէն գցուի և ցերեկը
տաքում և գիշերը ցրտում։ 31 Եւ
ես պիտի այցելեմ նորան և նորա
սերունդին և նորա ծառաներին
իրանց անօրէնութիւնների հա-
մար, և պիտի բերեմ նորանց
վերայ և Երուսաղէմի բնակիչների
վերայ և Յուդայի մարդկանց վե-
րայ այն բոլոր չարիքը, որովհե-
տև ես խօսեցի նորանց հետ,
բայց նորանք չլսեցին։
32 Եւ Երեմիան մի ուրիշ տոմս
առաւ և տուաւ Ներիայի որդի
դպիր Բարուքին, և նա գրեց նո-
րա վերայ Երեմիայի բերանից այն
գրքի բոլոր խօսքերը, որ Յուդայի
Յովակիմ Թագաւորը այրել էր
կրակով, և դեռ նորանց վերայ
նորանց պէս շատ բաներ էլ աւե-
լացուեցան։

ԳԼ. ԼԷ

1 Եւ Յովսիայի որդին Սեդեկիա
Թագաւորը Թագաւոր եղաւ Յո-
վակիմի որդի Յեքոնիայի տեղ,
որին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր
Թագաւորը Յուդայի երկրում
2 Թագաւոր դրաւ։ Բայց նա և
նորա ծառաները և երկրի ժողո-

վուրդը չհնազանդեցին Տիրոջ խօսքին, որ խօսեց Երեմիա մարգարէի ձեռամբը։
3 Եւ Սեդեկիա թագաւորը ուղարկեց Սեղեմիայի որդի Յուքաղին և Մաասիայի որդի Սոփոնիա քահանային Երեմիա մարգարէի մօտ ասելով. Խնդրում ենք՝ աղօթք արա մեզ համար դէպի
4 մեր Տէր Աստուածդ։ Եւ Երեմիան մտնում ու դուրս էր գալիս ժողովրդի մէջ, և նորան չէին
5 դրել բանդի տունը։ Եւ փարաւոնի զօրքը դուրս եկաւ Եգիպտոսից, և քաղդէացիք, որոնք պաշարել էին Երուսաղէմը, լսեցին նորանց լուրը և հեռացան Երուսաղէմի վերայից։
6 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիա
7 մարգարէին ասելով. Այսպէս է ասում Տէրը Իսրայէլի Աստուածը. Այսպէս ասացէք Յուդայի թագաւորին, որ ձեզ ուղարկել է ինձ մօտ ինձ հարցնելու. Ահա փարաւոնի զօրքը, որ դուրս էր եկել ձեզ օգնելու, եւ պիտի դառնայ իր երկիրը Եգիպտոս։
8 Եւ քաղդէացիք էլ պիտի եւ դառնան ու պատերազմեն այս քաղաքի դէմ, և պիտի նորան առնեն և նորան կրակով
9 այրեն։ Այսպէս է ասում Տէրը. Մի խաբէք ձեր անձերը ասելով. Թէ Անշուշտ գնացել են մեր վերայից քաղդէացիք. բայց նորանք
10 չեն գնալու։ Վասն զի եթէ զարկէք քաղդէացոց բոլոր զօրքը, որ պատերազմում է ձեզ հետ, և նորանցից մի քանի վիրաւորուած մարդիկ մնան, դոյնք ամեն մարդ իր վրանումը կանգնելով պիտի այրեն այս քաղաքը կրակով։
11 Եւ եղաւ երբոր քաղդէացոց զօրքը եւ քաշուեցաւ Երուսաղէմի վերայից փարաւոնի զօրքի
12 պատճառով, Այն ժամանակ դուրս եկաւ Երեմիան Երուսաղէմից, որ գնայ Բենիամինի երկիրը որ բաժին առնէ այնտեղից
13 ժողովրդի մէջ. Եւ նա երբոր Բենիամինի դռնումն էր, և այնտեղ էր մի սարկաւագ՝ անունը Անանիայի որդու Սեղեմիայի որդին Յերիա, և նա բռնեց Երեմիա մարգարէին ասելով. Թէ դու անցնում ես քաղդէացոց կողմը։
14 Բայց Երեմիան ասաց. Սուտ է, ես քաղդէացոց կողմը չեմ անց կենում. իսկ նա նորան չլսեց, և Յերիա բռնեց Երեմիային, և նորան տարաւ իշխաններին մօտ։
15 Եւ իշխանները բարկացան Երեմիայի վերայ և նորան ծեծեցին և նորան գցեցին բանդը դպիր Յոնաթանի տանը. վասն զի դա բանդ էին շինել։
16 Երբոր Երեմիան մտաւ բանդը և խուցերը, այնտեղ մնաց Երե-
17 միան շատ օրեր. Եւ Սեդեկիա թագաւորը մարդ ուղարկեց և նորան առաւ, և թագաւորը հարցրեց նորան իր տանը ծածուկ և ասաց. Խօսք կա՞յ Տիրոջ կողմանէ. և Երեմիան ասաց՝ Կայ. և ասաց՝ Բաբելոնի թագաւորի
18 ձեռքն ես արուելու դու։ Եւ Երեմիան ասաց Սեդեկիա թագաւորին. Ես ի՞նչ մեղք եմ արել քեզ դէմ և քո ծառաների դէմ և այս ժողովրդի դէմ, որ ինձ
19 դրել էք բանդը։ Եւ ո՞ւր են ձեր մարգարէները, որ մարգարէանում էին ձեզ ասելով. Թէ Բաբելոնի թագաւորը չպիտի գայ ձեզ վերայ և այս երկրի վերայ։
20 Եւ հիմա լսիր՝ խնդրեմ, ով իմ տէր թագաւոր, թող իմ աղաչանքը քո առջեւն ընկնէ. և ինձ եւ մի ուղարկիր դպիր Յոնաթանի տունը, որ այնտեղ չմեռնեմ։
21 Եւ Սեդեկիա թագաւորը պատուիրեց, և Երեմիային դրին բանդի դրանը, և որ նորան տան ամեն օր մէկ նկանակ հաց հացագործների փողոցից, մինչև բոլոր հացը քաղաքից վերջանալը։ Եւ Երեմիան մնում էր բանդի դաւիթում։

ԳԼ. ԼԸ

1 Եւ լսեցին Մատթանի որդին Սափատիան և Փաշուրի որդին Գոդոդիան և Սեղեմիայի որդին Յուքաղը և Մեղքիայի որդին

Փաստը այս խօսքերը, որ Երե-
միան խօսեմ էր բոլոր ժողո-
2 վըրդի հետ ասելով. Այսպէս է
ասեմ Տէրը. Այս քաղաքում
մնացողը պիտի սրով, սովով և
ժանտախտով մեռնի, իսկ դուրս
եկող Քաղդէացիների մօտ փո-
խողը պիտի ապրի, և իր հոգին
իրան համար աւարի պէս պիտի
3 լինի, և նա պիտի ապրի: Այս-
պէս է ասեմ Տէրը. Անպատ-
ճառ այս քաղաքը պիտի Բաբի-
լոնի թագաւորի զօրքի ձեռքը
մատնուի, և նա պիտի առնէ
4 նորան: Եւ իշխաններն ասացին
թագաւորին. Թող այս մարդը
մեռցնուի, վասն զի այդ պատ-
ճառով դա թուլացնում է պա-
տերազմի մարդկանց ձեռքերը,
որոնք մնացել ենք այս քաղա-
քում, և բոլոր ժողովրդի ձեռ-
քերը, նորանց այսպիսի խօսքեր
ասելով. վասն զի այս մարդը
խաղաղութիւն չէ ուզում այս
ժողովրդի համար, այլ չարիք:
5 Եւ Սեդեկիա թագաւորն ասաց.
Ահա նա ձեր ձեռքին է, վասն
զի թագաւորը ձեզ մօտ մի բան
6 չէ կարող: Եւ առին Երեմիային
և գցեցին նորան թագաւորի որ-
դի Մեղքիայի գուբը, որ բանդի
դրանն էր. և չուաններով իջեց-
րին Երեմիային, և գուբի մէջ
ջուր չկար այլ տիղմ. և Երեմի-
ան ընկղմուեց տիղմի մէջ:
7 Եւ Եթէովպացի Աբդիմելէք
ներքինին որ թագաւորի տանն
էր լինում լսեց, որ Երեմիային
գցել են գուբը. և թագաւորը
նստել էր Բենիամինի դրանը:
8 Եւ Աբդիմելէք դուրս եկաւ թա-
գաւորի տանից և խօսեց թագա-
9 ւորի հետ ասելով. Ով Տէր իմ
թագաւոր, այս մարդիկը վատ
բան արին ամեն ինչ որ Երեմիա
մարգարէին արին, որ նորան գցե-
ցին գուբը. և նա կ'մեռնէ նորա
տակին սովի պատճառով, վասն
զի քաղաքումը այլևս հաց չը
10 կայ: Եւ թագաւորը պատուիրեց
Եթէովպացի Աբդիմելէքին ասե-
լով. Վեր առ այստեղից քեզ
հետ երեսուն մարդ և հանիր Ե-
րեմիա մարգարէին այն գուբից
նորա մեռնելուց առաջ: Եւ Աբ- 11
դիմելէքն առաւ այն մարդիկն
իր մօտ և տորաւ նորանց թա-
գաւորի տունը շտեմարանի տա-
կը, և այնտեղից առաւ պատա-
ռոտած շորեր և հինացած շորեր
և իջեցրեց նորանց չուաններով
գուբը Երեմիայի մօտ: Եւ Եթէ- 12
ովպացի Աբդիմելէքն ասաց Երե-
միային. Այդ պատռոտած և
հինացած շորերը դիր կռներիդ
տակին չուանների տակ. և Երե-
միան այնպէս արաւ: Եւ Երեմի- 13
այի վեր քաշեցին չուաններով
և նորան հանեցին գուբից. և
Երեմիան կեցաւ բանդի գա-
ւիթումը:

Եւ Սեդեկիա թագաւորը մարդ 14
ուղարկեց և տարաւ Երեմիա
մարգարէին իր մօտ այն երրորդ
մուտքը որ Տիրոջ տան մօտ է,
և թագաւորն ասաց Երեմիային.
Ես քեզանից մի բան եմ հարցնե-
լու, ինձանից ոչինչ չծածկես:
Եւ Երեմիան ասաց Սեդեկիա- 15
յին. Եթէ քեզ պատմեմ, միթէ
ինձ չես պատնել տալ. և եթէ
քեզ խրատ տամ, ինձ չես լսիլ:
Եւ Սեդեկիա թագաւորը ծածուկ 16
երդուեց առաւ Երեմիային ասե-
լով. Կենդանի է Տէրը, որ առեղ-
ծել է մեր այս հոգին, որ քեզ
չեմ մեռցնիլ և քեզ չեմ տալ
այս մարդկանց ձեռքը, որ պա-
հանջում են քո հոգին: Եւ Ե- 17
րեմիան ասաց Սեդեկիային. Այս
է ասում Եհովայ Զօրաց Աստ-
ուածը Իսրայէլի Աստուածը.
Եթէ իրաւ դուրս գաս Բաբելոնի
թագաւորի իշխաններին մօտ, այն
ժամանակ քո անձը ողջ պիտի
մնայ, և այս քաղաքը չի այրուիլ
կրակով. և ողջ կ'մնաս դու և
քո տունը: Իսկ եթէ դուրս չը 18
գաս Բաբելոնի թագաւորի իշխան-
ների մօտ, այն ժամանակ այս
քաղաքը պիտի Քաղդէացոց ձեռ-
քը մատնուի, և նորանք պիտի
այրեն նորան կրակով, և դու էլ
չես պրծնիլ նորանց ձեռքից:
Եւ Սեդեկիա թագաւորն ասաց 19
Երեմիային. Ես վախում եմ

Հրեաներից, որոնք անցել են Քաղդէացոց կողմը, որ մի գուցէ ինձ նորանց ձեռքը տան, և նո-
20 րանք անարգեն ինձ։ Եւ Երեմիան ասաց. Չեն տալ. խնդրեմ՝ լսիր Տիրոջ ձայնին, որ ես քեզ ասում եմ, այն ժամանակ լաւ կ'լինի քեզ համար, և քո անձը
21 ողջ կ'մնայ։ Իսկ եթէ չուզես դուրս գնալ, ահա այն բանը որ
22 Տէրը ցոյց տուաւ ինձ։ Եւ ահա այն բոլոր կանայքը, որոնք մնացել են Յուդայի թագաւորի տանը, պիտի դուրս տարուին Բաբելոնի թագաւորի իշխանների մօտ, և նորանք պիտի ասեն. Քեզ հրապուրեցին և քեզ յաղթեցին քո բարեկամները. խրուեցան տիղմի մէջ քո ոտքերը, նո-
23 րանք ետ քաշուեցան։ Եւ քո բոլոր կանանցը և քո որդիանցը պիտի դուրս հանեն Քաղդէացոց մօտ, և դու էլ չես պրծնիլ նորանց ձեռքից. այլ պիտի բռնուիս Բաբելոնի թագաւորի ձեռքովը, և այս քաղաքը պիտի այ-
24 րես կրակով։ Եւ Սեդեկիան ասաց Երեմիային. Ոչ մի մարդ չիմանայ այս խօսքերը, և դու չես
25 մեռնիլ. Եւ երբոր իշխանները լսեն, որ ես քեզ հետ խօսել եմ և գան քեզ մօտ և քեզ ասեն. Մեզ ասիր՝ ինչ ես ասել թագաւորին, մեզանից մի ծածկիր, և մենք էլ քեզ չենք սպանել, և ինչ ասաց քեզ թա-
26 գաւորը։ Այն ժամանակ ասես նորանց. Ես աղաչանքս մատուցի թագաւորին, որ ինձ ետ չուղարկէ Յոնաթանի տունը, որ
27 այնտեղ մեռնեմ։ Եւ բոլոր իշխանները եկան Երեմիայի մօտ և նորանից հարցրին, և նա պատմեց այս բոլոր խօսքերի համեմատ որ թագաւորը հրամայել էր նրան, և դադարեցին նորա-
նից, վասն զի բանը չէր յայտնուեցաւ։
28 Եւ Երեմիան ետ գարձաբանդի գաւիթը մինչև այն օրը, որ Երուսաղէմ առնուեցաւ. և եղաւ այնտեղ, երբոր առաւ Երուսաղէմ։

ԳԼ. ԼԹ

Յուդայի թագաւոր Սեդեկիայի 1
իններորդ տարուայ տասներորդ ամսումը եկաւ Բաբելոնի նաբուգոդոնոսոր թագաւորը և նորա բոլոր զօրքը Երուսաղէմ և պաշարեցին նորան։ Սեդեկիայի մե- 2
տասաներորդ տարուայ չորրորդ ամսում՝ ամսի իննին քաղաքը նեղաճուեցաւ։ Եւ Բաբելոնի թա- 3
գաւորի բոլոր իշխանները եկան նստեցին միջին դրանը այսինքն Ներգեղսարասարը, Սամգարնաբուն, Սարսեքիմ ներքինապետը, Ներգեղսարասար մոգպետը և Բաբելոնի թագաւորի բոլոր մնացած իշխանները,

Եւ երբոր նորանց տեսան Յու- 4
դայի թագաւոր Սեդեկիան և բոլոր պատերազմի մարդիկը, փախան և քաղաքից դուրս եկան գիշերը թագաւորի պարտէզի ճանապարհովը երկու պարսպի միջի դռնովը. և ինքը դուրս եկաւ դաշտի ճանապարհը։ Եւ Քաղ- 5
դէացոց զօրքերը բնկան նորանց ետևից և հասան Սեդեկիային Երիքովի դաշտերումը և նորան բռնեցին և տարին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի մօտ Եմաթ երկրի Ռեբղայի մէջ, և նա վճռեց նորա դատաստանը։
Եւ Բաբելոնի թագաւորը մոր- 6
թեց Սեդեկիայի որդիանցը նորա աչքի առջև Ռեբղայում և Յուդայի բոլոր ազնուականներին էլ մորթեց Բաբելոնի թագաւորը։
Եւ կուրացրեց Սեդեկիայի աչք- 7
երը, և նորան կապեցին պղնձի շղթաներով, որ նորան տանեն Բաբելոն։ Եւ Քաղդէացիք այրեցին 8
թագաւորի տունը և ժողովրդի տունները կրակով, և Երուսաղէմի պարիսպները քանդեցին։ Եւ քա- 9
ղաքում մնացած ժողովրդի մնացորդը և այն փոխառականներին, որոնք անցել էին նորա կողմը, և մնացած ժողովրդի մնացորդը Նաբուզարդան գահճապետը գերի տարաւ Բաբելոն։ Եւ աղքատ 10
ժողովրդից, որ ոչինչ չունէին, թողեց Նաբուզարդան գահճա-

պետը Յուդայի երկրում, և նոքանց տուաւ այգիներ և արտեր նոյն ժամանակին։

11 Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը պատուիրեց Երեմիայի մասին զօրապետ Նաբուզարդանի ձեռամբը ասելով. 12 Զարդանի ձեռամբը ասելով. Ն՛ոքան առ և աչքդ թող նորա վրայ լինի և նորան ոչինչ չար բան չանես, այլ ինչպէս որ քեզ ասէ, 13 նորան այնպէս արա։ Եւ Նաբուզարդան զօրապետը և Նաբուսազբան ներքինապետը և Ներգեղասարասար մոգպետը և Բաբելոնի թագաւորի բոլոր նախարարները ուղարկեցին, 14 Այ-ինքն առանք մարդ ուղարկեցին և առին Երեմիային բանդի գաւթից, և տուին նորան Սափանի որդու Աքիկամի որդու Գոդողիային, որ նորան դուրս բերէ տանէ տունը. և նա բնակից ժողովրդի մէջ։

15 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիային, երբոր նա բանդի գաւթումը արգելուած էր, ասելով. 16 Գնա ասիր Եթէովպացի Աբդիմելէքին թէ՝ Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա ես պիտի բերեմ իմ խօսքերը այս քաղաքի վերայ՝ ի չարն, և ոչ թէ՝ ի բարին, և կը կատարուին քո առջեւը այն օրը։ 17 Եւ կ՛ազատեմ քեզ այն օրը, ասում է Տէրը, և դու չես տրուիլ այն մարդկանց ձեռքը, որոնց առջեւ դու վախում ես։ 18 Վասն զի ես քեզ անպատճառ պիտի պրծացնեմ, և դու սրով չես ընկնիլ, և քո հոգին քեզ համար աւարի պէս կ՛լինի, որովհետեւ դու ինձ յուսացիր, ասում է Տէրը։

ԳԼ. Խ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիային Տիրոջ կողմանէ երբոր Նաբուզարդան զօրապետը նորան Ռամայից արձակել էր և յետոյ նորան կապել շղթաներով այն բոլոր Երուսաղէմի և Յուդայի գերիների մէջ, որ գերի էին տարուելում Երուսաղէմ։

2 Եւ զօրապետը առաւ Երեմիային և նորան ասաց. Քո Տէր Աստուածը խօսել է այս չարիքը այս տեղի վերայ. 3 Եւ բերել է և արել է Տէրը ինչպէս որ խօսել էր, որովհետեւ դուք մեղանչել էք Տիրոջ դէմ և չէք լսել նորա ձայնին, և ձեզ եղաւ այս բանը։ 4 Եւ հիմա ես ահա այսօր քեզ արձակում եմ այդ շղթաներից, որ քո ձեռքերի վերայ են. եթէ հաճելի է քո աչքերին երթալ ինձ հետ Բաբելոն գնալը, եկ, և ես իմ աչքը քեզ վերայ կ՛դնեմ. իսկ եթէ վատ է երթալ քո աչքին ինձ հետ Բաբելոն գնալը, թող մնայ. տես՝ բոլոր երկիրը քո առջեւ է. ուր որ լաւ և ուղիղ է երթալ քո աչքին գնալու՝ գնա։ 5 Ուրեմն դեռ Սափանի որդի Աքիկամի որդի Գոդողիան, որին Բաբելոնի թագաւորը Յուդայի քաղաքների վերայ է դրել, հետ չդարձած, դու դարձիր և բնակիր նորա հետ ժողովրդի մէջ, կամ ամեն ուր որ հաճելի է քո աչքին որ երթաս, գնա։ Եւ զօրապետը նորան պարշտը և պարգեւ տուաւ ու արձակեց նորան։

6 Եւ Երեմիան եկաւ Մասփա Աքիկամի որդի Գոդողիայի մօտ և բնակեց նորա հետ այն ժողովրդի մէջ, որ մնացել էր երկրումը։

7 Եւ երբոր լսեցին գաշտումը եղող զօրքերի գլխաւորները՝ իրանք և իրանց մարդիկը, որ Բաբելոնի թագաւորը վերակացու է դրել երկրի վերայ Աքիկամի որդի Գոդողիային և նորան յանձնել է այն մարդկանցն ու կանանցը և երեխաներին և երկրի աղքատ լինողներիցը, որոնցից Բաբելոն գերի չէին տարուած. 8 Եկան Մասփա Գոդողիայի մօտ այսինքն Նաթանիայի որդին Իսմայէլը և Կարէի որդիքը Յօհանանը և Յովնաթանը, և Թանհումեթի որդին Սարայիան և Նետոփաթացի Եփայի որդիքը և Մաքաթիի որդին Յեզոնիան՝ իրանք և իրանց մարդիկը։ 9 Եւ Սափանի որդու

Աքիկամի որդին Գադոդիան երդում արաւ նորանց և նորանց մարդկանցը, ասելով. Մի վախենաք Քաղդէացիներին ծառայելուց. բնակեցէք այս երկրում և ծառայեցէք Բաբելոնի թագաւորին, և ձեզ համար լաւ կը լինի: Եւ ահա ես կենում եմ Մասփայում, որ կանգնեմ այն Քաղդէացոց առջև որ գալիս են մեզ մօտ. և դուք գինի և ամառային պտուղներ և իւղ ժողովեցէք և դրէք ձեր ամանները և բնակեցէք ձեր քաղաքներումը, որոնք բռնած էք: Եւ երբոր լսեցին այն ամեն Հրէաները, որ Մովաբում ու Ամմոնի որդկանց մէջ և Եդոմումն և բոլոր երկիրներումն էին, որ Բաբելոնի թագաւորը մնացորդ է թողել Հրէաստանում, և նորանց վերայ դրել է Սափանի որդի Աքիկամի որդի Գադոդիային: Այն ժամանակ ետ դարձան բոլոր Հրէաները այն բոլոր երկիրներից, ուր որ աքսորուած էին, և եկան Հրէաստանի երկիրը Մասփա Գադոդիայի մօտ. և ժողովեցին գինի և ամառային պտուղ խիստ շատ:

Եւ Կարէի որդի Յոհանանը և դաշտումը եղող բոլոր զօրավարները եկան Մասփա Գադոդիայի մօտ. Եւ ասացին նորան. Գիտե՞ս որ Ամմոնի որդկանց թագաւորը Բաալիս ուղարկել է Նաթանիայի որդի Իսմայէլին քո անձը սպանելու համար. բայց Աքիկամի որդի Գադոդիան նորանց չհաւատաց: Եւ Կարէի որդին Յոհանանը ասաց Մասփայում Գադոդիային. Թէ թող գնամ և սպանեմ Նաթանիայի որդի Իսմայէլին, և ոչ մի մարդ չիմանայ. ինչո՞ւ համար նա սպանէ քո անձը, և ցրուին բոլոր Հրէայք, որոնք ժողովուել են քեզ մօտ և կորչէ Հրէից մնացորդը: Եւ Աքիկամի որդի Գադոդիան ասաց Կարէի որդի Յոհանանին. Մի անիր այդ բանը, վասն զի դու սուտ ես խօսում Իսմայէլի մասին:

ԳԼ. ԽԱ

Եւ եղաւ եօթներորդ ամսում, որ եկաւ Թագաւորացն Եղիսամայի որդու Նաթանիայի որդին Իսմայէլը, և Թագաւորի նախարարները և տասը մարդ իր հետը, Մասփա Աքիկամի որդի Գադոդիայի մօտ, և միասին հաց կերան այնտեղ Մասփայում: Եւ վեր կացաւ Նաթանիայի որդին Իսմայէլը և այն տասը մարդիկը, որոնք նորա հետն էին, և զարկեցին Սափանի որդու Աքիկամի որդի Գադոդիային սրով և սպանեցին նորան, որին Բաբելոնի թագաւորը դրել էր երկրի վերայ, Եւ այն բոլոր Հրէաներին, որոնք Գադոդիայի հետ Մասփայումն էին, և այն քաղդէացիներին էլ, որոնք գտնուում էին այնտեղ, այն պատերազմականներին կոտորեց Իսմայէլը:

Եւ եղաւ որ Գադոդիային մեռցընելու հետևեալ օր դեռ մարդ չգիտեր, Սիւքեմից, Սելովից և Սամարիայից ութսուն մարդիկ եկան իրանց մօրուքները ածիլած և հանդերձները պատռած և մարմինները կտորած, և նորանց ձեռքին ընծաներ և կնդրուկ Տիրոջ տանը մատուցանելու համար: Եւ Նաթանիայի որդին Իսմայէլը դուրս եկաւ նորանց դէմ Մասփայից, և գնալիս գնում էր ու լաց լինում. և երբոր նորանց հասաւ, այն ժամանակ ասաց նորանց. Եկէք Աքիկամի որդի Գադոդիայի մօտ: Եւ եղաւ հէնց որ նորանք եկան քաղաքի մէջը, Նաթանիայի որդի Իսմայէլը նորանց կոտորեց այն փոսի մէջ ինքը և իր հետ եղող մարդիկը: Եւ տասը մարդ գտնուեցան նորանց մէջ, որ ասացին Իսմայէլին. Մեզ մի սպանիր, վասն զի մենք դաշտումը ցորենի, գարու, իւղի և մեղրի շտեմարաններ ունինք. և նա թող տուաւ, և նորանց չսպանեց իրանց եղբարց մէջ:

Եւ այն փոսը, ուր որ Իսմայէլը ածեց այդ բոլոր մարդկանց

դեսակները, որոնց նա ապանեց Գոդողիայի կշռին, այն է որ Աստա թագաւորը չինել էր Իսրայէլի Բաասա թագաւորի պատճառաւ. Նաթանիայի որդի Իսմայէլը լցրեց նորան մեռելներով:
10 Եւ Իսմայէլը գերի արաւ Մասփայում եղող ժողովրդի բոլոր Ցեսդորդը՝ թագաւորի աղջկանցը և Մասփայում Ցեսցած բոլոր ժողովուրդը, որոնց վերայ դահճապետ Նաբուզարդանը դրել էր Աքիկամի որդի Գոդողիային. և Նաթանիայի որդին Իսմայէլը նորանց գերի արաւ ու գնաց, որ անցնէ Ամմոնի որդկանց մօտ:
11 Եւ Կարէի որդի Յոհանանը և նորա հետ եղող բոլոր զօրավարները լսեցին այն բոլոր չարիքը, որ Նաթանիայի որդին Իսմայէլը
12 արել էր. Եւ առին բոլոր մարդկանցը և գնացին Նաթանիայի որդի Իսմայէլի հետ պատերազմելու, և նորան գտին Գաբաւոնի շատ ջրերի մօտ:
13 Եւ երբոր Իսմայէլի մօտ եղող բոլոր ժողովուրդը տեսան Կարէի որդի Յոհանանին և նորա հետ եղող բոլոր զօրավարներին, ուրախացան:
14 Եւ շուռ տուաւ այն բոլոր ժողովուրդը, որին Իսմայէլը գերի էր առել Մասփայից, և եաւ դարձան ու գնացին Կարէի որդի Յոհանանի մօտ:
15 Իսկ Նաթանիայի որդին Իսմայէլը փախաւ ութը մարդով Յոհանանի երեսից և գնաց Ամմոնի որդկանց մօտ:
16 Եւ Կարէի որդին Յոհանանը և նորա հետ եղող բոլոր զօրավարները առին ժողովրդի բոլոր մնացորդը, որը Նաթանիայի որդին Իսմայէլը գերի էր տարել Մասփայից Աքիկամի որդի Գոդողիային ապանելուց յետոյ՝ այսինքն այն պատերազմող քաջ մարդիկը և կանայքը և երեխայքը և ներքինիները, որոնց գերի էր առել Գաբաւոնից:
17 Եւ գնացին ու մնացին Բեթլեհեմի կշռին եղող Քամոսի պանդոկումը, որ գնան մտնեն Եգիպտոս
18 բեւիցը, վասն զի վախում էին նորանցից, որովհետև Նաթանիայի որդի Իսմայէլը սպանել էր Աքիկամի որդի Գոդողիային, որին Բաբելոնի թագաւորը վերակացու էր դրել երկրի վերայ:

ԳԼ. ԽԲ

1 Եւ մօտեցան բոլոր զօրավարները և Կարէի որդին Յոհանանը և Ովսէիայի որդի Յեզոնիան և բոլոր ժողովուրդը փոքրիցը մինչև մեծը, և ասացին Երեմիա մարգարէին. Թող մեր աղաչանքը քո առջև ընդունելի լինի, և մեզ համար աղօթք արա քո Տէր Աստուծոյդ այս բոլոր մնացորդի համար, վասն զի շատիցը քիչ ենք մնացել, ինչպէս որ աչքդ մեզ տեսանում է: 3 Եւ քո Տէր Աստուածը մեզ իմացնէ մեր գնալու ճանապարհը և մեր անելու բանը: 4 Եւ Երեմիա մարգարէն ասաց նորանց. Լսեցի, ահա ես աղօթք կ'անեմ ձեր Տէր Աստուծոյն ձեր խօսքերի համեմատ, և ինչ պատասխան որ Տէրը ձեզ համար տալու լինի, ես ձեզ կ'իմացնեմ, ձեզանից մի բան եաւ չեմ պահել: 5 Եւ նորանք ասացին Երեմիային. Տէրը մեր մէջը ճշմարիտ և հաւատարիմ վկայ լինի, որ անպատճառ կ'անենք այն ամեն խօսքերի համեմատ, որոնք քո Տէր Աստուածը կ'ուղարկէ քեզ մօտ մեր մասին, այնպէս կ'անենք. 6 թէ բարի թէ չար, մենք պիտի լսենք մեր Տէր Աստուծոյ ձայնին, որի մօտ մենք քեզ ուղարկում ենք, որպէս զի մեզ համար լաւ լինի մեր Տէր Աստուծոյ ձայնին լսելով: 7 Եւ տասը օրից յետոյ եղաւ Տիրոջ խօսքը Երեմիային. 8 Եւ նա կանչեց Կարէի որդի Յոհանանին և նորա հետ եղող բոլոր զօրավարներին և բոլոր ժողովրդին փոքրից մինչև մեծը, 9 Եւ նորանց ասաց. Այսպէս է ասում Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, որի մօտ դուք ինձ ուղարկեցիք, որ ձեր աղօթքը մատուցանեմ նորան. 10 Եթէ այս երկրում բնակելու լինիք, ես էլ պիտի շէն անեմ ձեզ և պիտի չքան-

դեմ, և ես պիտի անկեմ ձեզ և պիտի չխլեմ, վասն զի զղջացի այն չարիքի համար, որ արի ձեզ:
11 Մի վախենաք Բաբիլոնի թագաւորի երեսից, որի երեսիցը դուք վախում էք. նորանից մի վախենաք, ասում է Տէրը, վասն զի ես ձեզ հետ եմ ձեզ ազատելու և ձեզ փրկելու նորա ձեռքիցը.
12 և ձեզ ողորմութիւններ պիտի ցոյց տամ, և նա ձեզ պիտի ողորմէ, և նա ձեզ եւ
13 պիտի դարձնէ ձեր երկիրը: Եւ եթէ ասէք. Մենք չենք կենալ այս երկրումը՝ ձեր Տէր Աստուծոյ ձայնին չլսելով. Ասելով. թէ
14 Ոչ, այլ պէտք է գնանք Եգիպտոսի երկիրը, որ այնպէս պատերազմ չենք տեսանիլ և փողի ձայնը չենք լսիլ, և հացի համար չենք սովիլ, և այնտեղ կ'բնակենք:
15 Ուրեմն հիմա Տիրոջ խօսքը լսեցէք, ով Յուդայի մնացորդ. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Եթէ դուք ձեր երեսները ուղղէք Եգիպտոս գնալու և գնաք այնտեղ պան-
16 դըխտանալու, Այն ժամանակ այն սուրը, որից դուք վախենում էք, այնտեղ Եգիպտոսի երկրումը պիտի հասնէ ձեզ, և այն սովը, որից դուք զարհուրում էք, այնտեղ պիտի փակչէ ձեր ետևից Եգիպտոսումը, և
17 այնտեղ պիտի մեռնէք: Եւ այն ամեն մարդիկը, որոնք իրենց երեսները ուղղել են Եգիպտոս գնալու համար, որ այնտեղ պանդխտանան, պիտի մեռնեն սրով, սովով և ժանտախտով, և նորանցից ազատուող պրծնող պիտի չլինի այն չարեաց երեսիցը, որոնք ես պիտի բերեմ ձեզ վերայ:
18 Վասն զի այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ինչպէս որ թափուեցաւ իմ բարկութիւնն ու իմ սրտմտութիւնը Երուսաղէմի բնակիչների վերայ, նոյնպէս պիտի թափուի ձեզ վերայ իմ սրտմտութիւնը, երբոր դուք Եգիպտոս գնաք, և դուք պիտի լինիք անէծք և զարմանք և նախատինք. և այլևս չէք տեսանիլ այստեղը:
19 Տէրը ասում է ձեզ համար, ով Յուդայի մնացորդը, Եգիպտոս մի գնաք. հաստատ իմացած լինէք, որ այսօր վկայեցի ձեզ համար:
20 Վասն զի դուք նենգաթիթն արիք ձեր հոգիների դէմ, որ ինձ ուղարկեցիք ձեր Տէր Աստուածի մօտ ասելով. Մեզ համար աղօթք արա դէպի մեր Տէր Աստուածը, և այն ամենի համեմատ լինչ որ ասէ մեր Տէր Աստուածը, այնպէս մեզ իմացրու և մենք կանենք:
21 Եւ ես այսօր ձեզ իմացրի, բայց դուք չէք լսում ձեր Տէր Աստուծոյ ձայնին, և այն ամենին, որոնց համար նա ինձ ձեզ մօտ է ուղարկել:
22 Եւ հիմա հաստատ իմացած լինէք, որ սրով, սովով և ժանտախտով պիտի մեռնէք այնտեղը, ուր որ ուզում էք գնալ այնտեղ պանդխտանալու համար:

ԳԼ. ԽԳ.

1 Եւ երբոր Երեմիան վերջացրեց դէպի բոլոր ժողովուրդը իրանց Տէր Աստուծոյ բոլոր խօսքերը խօսելը, որ իրանց Տէր Աստուածը ուղարկել էր նորանց մօտ՝ այսինքն այս ամեն խօսքերը.
2 նակ Ովսէիայի որդին Ազարիան և Կարէի որդին Յոհանանը և բոլոր ամբարտաւան մարդիկը խօսեցին և ասացին Երեմիային. Դու սուտ ես խօսում, քեզ չէ ուղարկել մեր Տէր Աստուածը ասելով. Թէ Եգիպտոս մի գնաք
3 այնտեղ պանդխտանալու համար. Այլ Ներիայի որդի Բարուքն է քեզ գրգռում մեզ դէմ, որ մեզ մատնէ Քաղդէացոց ձեռքը, որ մեզ մեռցնեն, և որ մեզ գերի տանեն Բաբիլոն:
4 Եւ Կարէի որդին Յոհանանը և բոլոր զօրավարները և բոլոր ժողովուրդը չլսեցին Տիրոջ ձայնին, որ Յուդայի երկրումը մնային:
5 Այլ Կարէի որդին Յոհանանը և բոլոր զօրավարները առին Յուդայի բոլոր մնացորդը, որոնք եւս էին դարձել

այն ամեն ազգերից, ուր որ աքսորել էին, որ պանդխտանան
6 Յուդայի երկրում. Այսինքն մարդկանց և կանանց և երեխաներին և թագուհուն աղջկանց և այն բոլոր անձերին, որոնց թողել էր Նաբուզարդան դահճապետը Սափանի որդու Աքիկամի որդի Գոդոդիայի մոտ, և Երեմիա մարգարէին և Ներիայի
7 որդի Բարուքին. Եւ գնացին Եգիպտոսի երկիրը, որովհետև չը լսեցին Տիրոջ ձայնին, և գնացին մինչև Տափնաս:
8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Երեմիային Տափնասում ասելով.
9 Քեզ մեծ մեծ քարեր առ և նրանց թաղիր աղիւսատան կաւի մէջ, որ փարաւոնի տան մուտքումն է Տափնասի մէջ, Յուդայի
10 մարդկանց աչքի առջև: Եւ ասիր նորանց. Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ահա ես կ'ուղարկեմ և կ'առնեմ իմ ծառայ՝ Բաբիլոնի թագաւոր Նաբուգոդոնոսորին և նրա աթոռը կ'դնեմ այս քարերի վերայ, որոնք թաղեցի, և նա պիտի տարածէ իր գահոյքը նրանց վերայ:
11 Եւ պիտի գայ և պիտի զարկէ Եգիպտոսի երկիրը, ո՛րը մահու համար՝ մահուան, և ո՛րը գերութեան համար՝ գերի, և ո՛րը սուրի համար՝ սուրին:
12 Եւ կրակ պիտի վառեմ Եգիպտոսի աստուածների տներում. և նա պիտի այրէ նորանց, և նրանց գերի տանէ. և նա պիտի իր վերայ փաթաթէ Եգիպտոսի երկիրը, ինչպէս որ հովիւը փաթաթում է իր հանդերձը իր վերայ. և նա խաղաղութեամբ պիտի դուրս գայ:
13 Եւ նա պիտի կտրատէ Եգիպտոսում եղող *Բեթսամիսի արձանները, և Եգիպտոսի աստուածների տուները կրակով պիտի այրէ:

ԳԼ. ԽԴ

1 Այն խօսքը որ եղաւ Երեմիային բոլոր Հրէաների մասին որոնք բնակում էին Եգիպտոսի երկրում, այսինքն բնակում էին Մագդողում, Տափնասում, Մեմփիսում և Պաթուրեսի երկրում, ասելով. 2 Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Դուք տեսաք այն ամեն չարիքը, որ ես բերի Երուսաղէմի վերայ և ահա նորանք այսօր աւերակ են, և նորանցում բնակող չկայ. 3 Այն չարութեան պատճառով, որ արին ինձ բարկացնելու համար որ գնան խունկ ծխեն և ուրիշ աստուածների ծառայեն, որոնց չէին ճանաչում ոչ դուք, ոչ ձեր հայրերը: 4 Եւ ես ուղարկեցի ձեզ մօտ իմ բոլոր ծառաներին մարգարէներին կանուխ վեր կենալով և ուղարկելով՝ ասելով. Մի անիք այս գարշելի բանը որ ես ատում եմ: 5 Բայց նորանք չլսեցին և ականջ չդրին որ ետ դառնային իրանց չարութիւնից, որ ուրիշ աստուածների խունկ չծխէին: 6 Եւ իմ սրտմտութիւնն ու իմ բարկութիւնը թափուեցաւ և վառուեցաւ Յուդայի քաղաքներում և Երուսաղէմի փողոցներում, և նորանք անապատ և ամայի եղան, ինչպէս որ այսօր է: 7 Եւ հիմա այսպէս է ասում Զօրաց Տէր Աստուածը՝ Իսրայէլի Աստուածը. Ինչո՞ւ էք դուք մեծ չարութիւն անում ձեր անձերի դէմ, որ ձեզ համար բնաջինջ անէք մարդն ու կինը, երեխան ու կաթնակեր մանուկը Յուդայի միջից, որ ձեզ համար մնացորդ չմնայ: 8 Որ ինձ բարկացնէք ձեր ձեռաց գործքերով Եգիպտոսի երկրում ուրիշ աստուածների խունկ ծխելու համար, ուր որ դուք մտել էք պանդխտանալու համար, որ ձեզ բնաջինջ անէք, և որ անէծք ու նախատինք լինիք երկրի բոլոր ազգերի մէջ: 9 Մի՞թէ մոռացել էք ձեր հայրերի չարութիւնները և Յուդայի թագաւորների չարութիւնները և նորանց կանանց չարութիւնները և ձեր չարութիւնները և

*Արեգակի տան

ձեր կանանց չարութիւնները, որ
արել են Յուդայի երկրաւմբ և
10 Երուսաղէմի փողոցներուսմբ։ Ո-
բանք չխոնարհուեցան մինչև այս
օրը և չվախեցան և չգնացին իմ
օրէնքովս ու իմ կանոններովը,
որոնց ես դրել եմ ձեր առջև
11 և ձեր հայրերի առջև։ Սորա հա-
մար այսպէս է ասում Զօրաց
Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Ա-
հա ես իմ երեսը ուղղել եմ դէպի
ձեզ չարիք՝ ձեզ՝ և բոլոր Յու-
դան բնաջինջ անելու համար։
12 Եւ պիտի առնեմ Յուդայի մնա-
ցորդը, որոնք ուղղել են իրանց
երեսը Եգիպտոս գնալու համար,
որ այնտեղ պանդխտանան. և ա-
մենքը պիտի վերջանան Եգիպ-
տոսի երկրաւմբ. սրով պիտի ըն-
կնեն, սովով պիտի ապաւորին.
փոքրիցը մինչև մեծը՝ սրով ու
սովով պիտի մեռնեն, և պիտի
դառնան անէծք, զարմանք և
13 նզովք ու նախատինք։ Եւ պիտի
այցելեմ Եգիպտոսի երկրաւմ բը-
նակուղներին, ինչպէս որ Երուսա-
ղէմին եմ այցելել՝ սրովք, սո-
14 վով և ժանտախտով։ Եւ ա-
պաւորող ու պրծնող պիտի չլի-
նի Յուդայի մնացորդից, որոնք
եկել են որ պանդխտանան Ե-
գիպտոսի երկրաւմբ, որ ետ դառ-
նան Յուդայի երկիրը, ուր որ նո-
րանք փափաքաւմ են ետ դառ-
նալ, որ այնտեղ բնակուին. վասն
զի ոչ ոք ետ չի դառնալ, բայց
միայն պրծածները։
15 Եւ այն ամեն մարդիկ որոնք
գիտէին, որ իրանց կանայքը
խունկ էին ծխաւմ ուրիշ աստ-
ուածների և բոլոր ներկայ կա-
նայքը՝ մի մեծ ժողով և բոլոր
ժողովուրդը, որ բնակուած էր Ե-
գիպտոսի երկրաւմբ և Պաթուրե-
աւմ, պատասխանեցին Երեմիա-
16 յին ասելով. Ա՛յն խօսքը, որ դու
ասացիր մեզ Տիրոջ անունովը,
17 մենք քեզ չենք լսաւմ. Այլ ան-
պատճառ մեր բերանից դուրս ե-
կած խօսքն ենք անելու երկնքի
Թագուհուն խունկ ծխելով և նո-
րան թափելու նուէրներ մատու-
ցանելով, ինչպէս որ արել ենք
մենք և մեր հայրերը, մեր թագա-
ւորներն ու իշխանները Յուդայի
քաղաքներուսմբ և Երուսաղէմի փո-
ղոցներուսմբ, և հացով կուշտ էինք
և յաջողակ էինք և չարիք չտեսանք։
18 Բայց այն ժամանակից որ դադա-
րեցինք երկնից Թագուհուն խունկ
ծխելու և նորան թափելու նուէր-
ներ մատուցանելու, ամեն բանի
կարօտ եղանք և սրով ու սովով
19 սպառուեցանք։ Իսկ երբոր երկ-
նից Թագուհուն խունկ էինք ծխ-
ուաւմ, և նորան թափելու նուէր-
ներ մատուցանուաւմ, մի՞թէ առանց
մեր մարդկանց էինք նորա համար
բլիթներ շինուաւմ նորան պատկե-
րացնելով, և նորան թափելու
նուէրներ մատուցանուաւմ։ Եւ Ե-
20 րեմիան ասաց բոլոր ժողովրդին՝
մարդկանցը և կանանցը և բոլոր
ժողովրդին որ իրան խօսք պա-
տասխան տուին, և ասաց. Չէ՞
21 որ այն խունկը, որ ծխաւմ էիք
Յուդայի քաղաքներուսմբ և Երու-
սաղէմի փողոցներուսմբ դուք և
ձեր Հայրերը, ձեր թագաւորներն
ու ձեր իշխանները և երկրի ժողո-
վուրդը, յիշել է Տէրը և նորա
միտքն են ընկել. Եւ Տէրը չկա-
22 րողացաւ այլևս համբերել ձեր
գործքերի չարութեան պատճա-
ռով՝ այն գարշութեանց պատ-
ճառով, որ դուք արել էք, և
ձեր երկիրը եղել է աւերակ, ա-
մայի և նզովք առանց բնակչի,
ինչպէս որ այսօր կայ։ Որովհետև
23 դուք խունկ ծխեցիք և մեղք
գործեցիք Տիրոջ դէմ և չլսեցիք
Տիրոջ ձայնին և նորա օրէնքովը
և կանոններովը ու վկայութիւն-
ներովը չդնացիք. դորա համար
ձեզ հանդիպել է այդ չարիքը,
ինչպէս որ այսօր է։
24 Եւ Երեմիան ասաց բոլոր ժո-
ղովրդին և բոլոր կանանցը. Լսե-
ցէք Տիրոջ խօսքը, ով Եգիպտո-
սի երկրաւմբ եղող բոլոր Յուդա.
25 Այսպէս է ասում Զօրաց Տէրը՝
Իսրայէլի Աստուածը ասելով.
Դուք և ձեր կանայքը խօսեցիք
ձեր բերանովը և ձեր ձեռքովը
կատարեցիք՝ ասելով. Անպատ-
ճառ պէտք է կատարենք մեր

ուխտերը որ ուխտել ենք՝ երկնից թագուհան խունկ ծխելու և նուրան թափելու նուէրներ մատուցանելու համար. անշուշտ դուք կ'հաստատէք ձեր ուխտերը և պիտի կատարէք ձեր ուխտերը։
26 Դորա համար լսեցէք Տէրոջ խօսքը, ով Եգիպտոսի երկրուհի բնակող բոլոր Յուդա. Ահա ես երդուեմ արի իմ մեծ անունովը, ասում է Տէրը, որ այլևս իմ անունը պիտի չկանչուի ոչ մի մարդու բերանից ասելով. Թէ կենդանի է Տէր Եհովան, բոլոր
27 Եգիպտոսի երկրում։ Ահա ես նուրանց վերայ հսկում եմ՝ ի չարն և ոչ թէ՝ ի բարին, և պիտի լսպառուին Եգիպտոսի երկրում սրով և սովով մինչև որ վերջա-
28 նան։ Եւ սուրից ազատուածներըը, որ եւս կ'դառնան Եգիպտոսի երկրից Յուդայի երկիրը, սակաւաթիւ մարդիկ կ'լինին, և պիտի իմանան Յուդայի մնացորդը, որոնք մտել են Եգիպտոսի երկիրը այնտեղ պանդխտանալու համար, թէ որի՞ խօսքը պիտի հաստատուի՝ իմը թէ նորանցը։ Եւ սա
29 ձեզ նշան լինի, ասում է Տէրը, որ այս տեղը ես ձեզ այցելութիւն պիտի անեմ, որպէս զի իմանաք թէ իմ խօսքերը անպատճառ պիտի հաստատուին ձեզ
30 վերայ՝ ի չարն։ Այսպէս է ասում Տէրը. Ահա ես մատնել եմ Եգիպտոսի Վափրա փարաւոն թագաւորին իր թշնամիների ձեռքը և նորա հոգին պահանջողների ձեռքը, ինչպէս որ մատնեցի Յուդայի Սեդեկիա թագաւորին իր թշնամու և իր հոգին պահանջողի՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը։

ԳԼ. ԽԵ

1 Այն խօսքը որ խօսեց Երեմիա մարգարէն Բարուքի որդի Նաբուքի հետ երբոր նա գրում էր այս խօսքերը գրքում Երեմիայի բերանից Յուդայի թագաւոր Յովսիայի որդի Յովակիմի չորրորդ տարին ասելով.

ՓՈՔՐ Համար այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը, ով Բարուք. Դու ասացիր. Ո՛հ 3
վայ ինձ, վասն զի Տէրը տրտմութիւն է աւելացրել իմ ցաւի վերայ, վաստակել եմ հեծեծելուցս, և հանգստութիւն չեմ գտնում։ Նորան այսպէս ասիր. Տէ- 4
րը այսպէս է ասում. Ահա իմ շինածը ես քանդում եմ, և իմ տնկածը ես խլում եմ, այսինքն այս բոլոր երկիրը։ Եւ դու քեզ 5
համար մեծամեծ բաներ ես որոնո՞ւմ. մի որոնիր. վասն զի ահա ես չարիք եմ բերելու բոլոր մարմնոյ վերայ, ասում է Տէրը, և քո անձը քեզ տալիս եմ իբրև աւար այն ամեն տեղերում, ուր որ գնաս։

ԳԼ. ԽԶ

Տէրոջը խօսքը որ եղաւ Երեմիա 1
մարգարէին ազգերի մասին. Ե- 2
գիպտոսի Նեկաոմամի Եգիպտոսի Նեբաւով փարաւոնի զօրքի մասին, որ Եփրատ գետի մօտ Քարքամիսումն էր, որին զարկեց Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Յուդայի թագաւոր Յովսիայի որդի Յովակիմի չորրորդ տարին։

Ասպար ու վահան պատրաստեցէք, և մօտեցէք պատերազմի. 3
Լծեցէք ձիանցը, և ձիաւորուեցէք, ով հեծեալներ. շարուեցէք սաղաւարտներով, փայլեցրէք նիզակները, հագէք զրահները։ Ինչո՞ւ եմ նորանց տես- 5
նում զարհուրած ետ դառնալիս, և նորանց քաջազուններըը ջարդուած են. վազելով փախչում են և ետ չեն նայում, երկիւղ շուրջանակի, ասում է Տէրը։ Թող 6
արագաշարժը չփախչէ, և չպրծնէ զօրաւորը. հիւսիսում՝ Եփրատ գետի եզերքում պիտի սահեն և կործանուին։ Ո՞վ է սա որ վեր 7
է գալիս գետի պէս, գետերի նման ծփում են նորա ջուրերը։ Եգիպտոսը վեր է գալիս գետի 8
պէս, և գետերի պէս ծփում են ջուրերը. Եւ ասում է. Ես վեր

կ'գնամ, երկիրը կ'ծածկեմ, բնա-
ջինջ կանեմ քաղաքը և նորա-
9 նում բնակողներին, վէր ելէք,
ով ձիանք, և կառապետեք, ով
կառքեր, և զօրաւորները դուրս
գան, Եթէոպացի և Փութացի
վահան բռնողները, և Ղևատացի
10 աղեղ բռնող լարողները։ Վասն
զի այս օրն է Զօրաց Եհովայ Տի-
րոջ վրէժխնդրութեան օրը, որ
վրէժ առնէ իր թշնամիներից, և
սուրը պիտի ուտէ և կշտանայ և
նորանց արիւնովը լիանայ, վասն
զի Զօրաց Եհովայ Տէրը զոհ ու-
նի, հիւսիսային երկրումն Եփ-
11 րատ գետի մօտ։ Վէր ելիր Գա-
ղաադ և բալասան առ, ով Ե-
գիպտոսի կոյս աղջիկ. զուր ես
շատացնում դեղերը. ապեղանիք
12 չկայ քեզ համար։ Ազգերը լսում
են քո անարգանքը, և քո աղա-
ղակովը լցուել է երկիրը. վասն
զի զօրաւորը զօրաւորովը սահում
է, նորանք միասին երկուսն էլ
կործանուեցան։
13 Ա՛յն խօսքը որ Տէրը խօսեց Ե-
րեմիա մարգարէին Բաբիլոնի Ն-
աբուգոդոնոսոր Թագաւորի գալու
և Եգիպտոսի երկիրը զարկելու
14 նկատմամբ։ Պատմեցէք Եգիպ-
տոսում և լուր տուէք Մագ-
դոլում, և լուր տուէք Մեմփիս-
ում և Տափնասում, ասացէք,
կանգնիր և պատրաստ եղիր.
վասն զի սուրը պիտի ուտէ քո
15 շրջակայքը։ Ինչո՞ւ կործանուե-
ցան քո զօրաւորքը. նա չկանգ-
նեց, վասն զի Տէրը նորան վայր
16 դցեց։ Շատացրեց գլորուածնե-
րին. իրար վերայ էլ ընկան, և
ասացին. Վէր կաց, որ վէր դա-
նանք դէպի մեր ժողովուրդը և
դէպի մեր հայրենի երկիրը բռնա-
17 ւորի սուրի պատճառով։ Ա՛ն-
ուանդ կանչում էին Եգիպտոսի
փարաւոն թագաւորը ճայթում
է, անց է կացրել օրոշուած ժա-
18 մանակը։ Կենդանի եմ ես, ա-
սում է Թագաւորը՝ անունը Զօ-
րաց Տէր. որ ինչպէս Թաբօրն է
լեռանց մէջ, և Կարմէղոսը մին-
19 չև ծովը, նա պէտք է գայ։ Գե-
րութեան կարասիներ պատրաս-

տիր քեզ համար, ով Եգիպտո-
սի բնակող աղջիկ, վասն զի Մեմ-
փիսը աւերակ պիտի դառնայ, և
պիտի վառուի առանց բնակողի
մնայ։
Եգիպտոսը մի գեղեցկագոյն ե- 20
րինջ է, բայց կոտորածը հիւսի-
սից գալիս է գալիս։ Նորա վարձ- 21
ուածներն էլ նորա մէջ պարտարա
երինջների նման են. վասն զի նո-
րանք էլ ետ դարձան, փախան
միասին չկանգնեցին, որովհետև
նորանց կորստեան օրը եկաւ նո-
րանց վերայ, նորանց այցելու-
թեան ժամանակը։ Նորա ձայնը 22
դուրս է գալիս ինչպէս օձինը,
վասն զի զօրքով են դուրս գա-
լիս, և կացիններով են գալիս
նորա վերայ փայտահարների նը-
մանն։ Նորանք պիտի կտրեն նորա 23
անտառը, ասում է Տէրը, թէ-
պէտ և նա անհամար էլ լինի.
վասն զի նորանք մարախից շատ
են և թիւ չկայ նորանց։ Ամօթով 24
պիտի մնայ Եգիպտոսի աղջիկը,
նա պիտի հիւսիսի ժողովրդի ձեռ-
քը տրուի։ Զօրաց Տէրը Իսրայէ- 25
լի Աստուածը ասում է. Ա՛հա
ես այցելում եմ Ամոնին. նաև փարաւոնին և Եգիպ-
տոսին, և նորա աստուածներին
ու նորա թագաւորներին, և փա-
րաւոնին և նորան ապաւինողնե-
րին։ Եւ նորանց պիտի մատնեմ 26
նորանց հոգին պահանջողների
ձեռքը և Բաբիլոնի Նաբուգոդո-
նոսոր թագաւորի ձեռքը և նո-
րա ծառաների ձեռքը. և այնու-
հետև կ'բնակէ առաջի օրերին
պէս, ասում է Տէրը։
Բայց դու մի վախենար, ով 27
իմ ծառայ Յակոբ, և մի զար-
հուրիր, ով Իսրայէլ, վասն զի
ա՛հա ես քեզ ազատելու եմ հե-
ռուից, և քո սերունդը՝ իրանց
գերութեան երկրիցը. և Յակոբը
պիտի ետ դառնայ, և հանգիստ
ու հանդարտ լինի. և վախեցնող
չէ լինելու։ Դու մի վախենար, 28
ով իմ ծառայ Յակոբ, ասում
է Տէրը. վասն զի ես քեզ հետ
եմ. որովհետև ես պիտի վերջա-
ցընեմ բոլոր այն ազգերին, ուր

որ քեզ սքաորեցի. բայց քեզ պիտի չվերջացնեմ, այլ քեզ պիտի խրատեմ չափաւորութեամբ, և քեզ անպատճառ անմեղ չեմ համարելու։

ԳԼ. ԽԷ

1 Ա.ին խօսքը Տէրոջ որ եղաւ Երեմիա մարգարէին փղշտացոց նկատմամբ Փարաւոնը Գազան 2 զարկելուց առաջ։ Տէրը այսպէս է ասում. Ահա ջուրեր են վեր գալիս հիւսիսից և յորդած հեղեղ են դառնում, և պիտի հեղեղեն երկիրը և նորա լիութիւնը, քաղաքը և նորանում բնակիչներին. և մարդիկ պիտի աղաղակեն, և երկրի բոլոր բնակիչները 3 պիտի ոռնան։ Նորա երիվարների ամրակների տրոփելու ձայնից, նորա կառքերի շաչիւնից և նորա անիւների չառաչիւնից, հայրերը պիտի չնայեն որդկանց վերայ 4 ձեռքերի թուլութիւնից։ Ա.ին օրուայ համար որ գալիս է բոլոր Փղշտացիներին կորցնելու, Տիւրոսին և Սիդոնին բնաջինջ անելու, բոլոր ազատուած օգնականներին. վասն զի Տէրը պիտի աւերակ անէ Փղշտացիներին, Կափթոր կղզու մնացորդներին։ 5 Գազայի վերայ կնաւութիւն եկաւ, Ասկաղոն աւերակ եղաւ իր հովտի մնացորդով, մինչև ե՞րբ պի- 6 տի քեզ կտորես։ Աւա՛ղ, ով Տէրոջ սուր, մինչև ե՞րբ չես դադարելու, եա քաշուիր քո պատեանը, հանգիստ եղիր և լռիր։ 7 Ի՞նչպէս եա կարող հանգստանալ, քանի որ Եհովան պատուիրել է *քեզ. Ասկաղոնի և ծովեզերքի դէմ նշանակել է *քեզ։

ԳԼ. ԽԸ

1 Մովաբի մասին այսպէս է ասում Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը. Վա՛յ Նաբաւին, վասն զի աւերակ է դարձել. Կարիաթեմ ամօչից առնուեցաւ, ամրանը մնաչն Մասգաբ և զարհուրից։ Ա.ելա Մովաբի պարծենալը չէ 2 կայ Եսեբոնում. նորա վերայ չարիք են խորհում, ասելով՝ Գնանք նորան փչացնենք ազգութիւնից. Դու էլ, ով Մադմէն, պիտի պապանձես, եւ սրեւիցդ դալիս է սուրը։ Աղաղակի ձայն է գալիս 3 Որոնայիմից, աւերմամ և մեծ կատարած։ Մովաբը պէտք է 4 փշրուի. նորա պզտիկները աղաղակ են հնչեցնում։ Վասն զի 5 Ղուխիթի զառիվերով լացով են վեր երթում լացով. վասն զի Որոնայիմի զառիվայրի վերայ լսում են թշնամիքը կատարածի աղաղակ։ Փախէք, ազատեցէք ձեր 6 անձը. և մոշենու պէս եղէք անապատումը։ Որովհետև քո գործքերին և քո գանձերին վստահելու համար դու էլ պիտի առնուես. և Քամոսը պիտի գերի գնայ նորա քահանաները և նորա իշխանները միասին իր հետ։ Եւ 8 պիտի գայ կործանողը ամեն քաղաքի վերայ, և ոչ մի քաղաք պիտի չազատի, և հովիտը պիտի փչանայ և դաշտը աւերուի, որպէս որ ասել է Տէրը։ Մովաբին թեւ- 9 եր տուէք, որ թռչէ փախչէ. և նորա քաղաքները աւերակ պիտի դառնան, բնակիչ պիտի չլինի նորանում։ Անիծեալ լինի Տի- 10 րոջ գործը թուլութեամբ անողը, և անիծեալ լինի իր սուրը արիւնից խնայողը։

Հանգիստ էր Մովաբ իր ման- 11 կութիւնից ի վեր, և հանգստացած մնացել էր իր մրուրի վերայ, նա չէ փոխուեցաւ ամանից աման, և գերութեան չգնաց. դորա համար համը մնաց իրանում և հոտը չփոխուեցաւ։ Ուրեմն տես- 12 օրեր են գալիս, ասում է Տէրը, որ ես նորա համար փոխադրողներ կ'ուղարկեմ, և նորանք կը փոխադրեն նորան, և նորա անոթները կ'դատարկեն և նորա տիկերը կ'պատառատեն։ Եւ Մո- 13 վաբը պիտի ամչէ Քամոսից, ինչպէս որ Իսրայէլի տունը ամչեց իր ապաւինած Բեթէլից։ Ի՞նչպէս էք ասում, Մենք տղա- 14

*Նորան.

մարդիկ ենք, և զօրաւոր մարդիկ
15 պատերազմի համար։ Մովսէսը
քանդուեցաւ և նորա քաղաքնե-
րը վեր եկան, և նորա բնակիչ ե-
բիտաասրդները լեցան մորթուե-
լու, ասում է Թագաւորն՝ որի
16 անունը Զօրաց Տէր է։ Մօտ է Մո-
վսէսի կորուստը որ գայ, և նորա
ձախորդութիւնը շտապում է։
17 Ողբացէք նորա վերայ, ով բոլոր
նորա շրջակայքը, և ով բոլոր
նորա անունը գիտացողներ, ա-
սացէք, Ինչպէս կոտրուեցաւ զօ-
րութեան գաւազանը՝ փառաց
18 ցուպը։ Իջիր փառքից և նստիր
ծարաւութիւնում, ով Դեբոն-
ում բնակող աղջիկ. վասն զի
Մովսէսը կործանողը քեզ վերայ
է յարձակուելու, և քարուքանդ
19 է անելու քո բերդերը։ Ճանա-
պարհին կանգնիր և դիտիր, ով
Արոերի բնակիչ, հարցրու փախ-
չողին և պրծնողին, ասիր՝ Ի՞նչ
գաւաս։
20 Ամաչեց Մովսէս, վասն զի կոտ-
րուեցաւ. ոռնա և գոռա. պատ-
մեցէք Արնոնում, թէ աւերակ
21 եղաւ Մովսէս։ Եւ դատաստան
եկաւ դաշտի երկրի վերայ Հօղո-
նի, Յասայի և Մեփայաթի վե-
22 րայ. Եւ Դեբոնի վերայ, Նաբա-
ւի վերայ, և Բեթդեբղաթեմի
23 վերայ, Եւ Կարիաթեմի վերայ,
և Բեթգամոզի վերայ և Բեթ-
24 մաւոնի վերայ. Եւ Կարիօթի վե-
րայ, և Բոսրայի վերայ, և Մո-
վսէսի երկրի բոլոր քաղաքների
վերայ, հեռաւորների և մօտա-
25 ւորների վերայ։ Կոտրուեցաւ Մո-
վսէսի եղջիւրը, և նորա բազուկը
փշրուեցաւ, ասում է Տէրը։
26 Նորան արբեցրէք, վասն զի գո-
ռոզացաւ Տիրոջը դէմ, որ թա-
ւալուի Մովսէս իր փսխածումը
27 և ինքն էլ ծաղր լինի։ Կամ մի՞
թէ Իսրայէլը ծաղր չեղաւ քեզ
համար, կամ նա գողերի միջում
գտնուեցա՞ւ, որ քանիցս նորա
վերայ խօսէիր, գլուխդ էիր շար-
28 շում։ Զգուշացէք քաղաքները և
վէմերում բնակեցէք, ով Մո-
վսէսի բնակիչներ. և ազաւնու
նման եղէք, որ բոյն է դնում

անդունդի բերանի անցքում։
Մենք լսել ենք Մովսէսի ամ- 29
բարտաւանութիւնը, շատ ամ-
բարտաւան է. նորա հպարտու-
թիւնը, և նորա ամբարտաւա-
նութիւնը, նորա գոռոզութիւնը
և նորա բարձրամտութիւնը։ Ես 30
գիտեմ, ասում է Տէրը, նորա
սրամտութիւնը, բայց այնպէս
չէ. նորա անապարծ խօսքերը՝ որ
նորանք ուղիղ չեն գործում։ Ա- 31
րա համար պիտի ողբամ Մովս-
էսի վերայ, և ազաղակեմ բոլոր
Մովսէսի վերայ, Կիր Հարեսի մարդ-
կանց համար հառաչում են։
Յազերի լացովը լաց եմ լինելու 32
քեզ վերայ, ով Սերամայի որթը,
քո շառաւիղները անցան ծովի-
ցը, մինչև Յազերի ծովն են հա-
սել. քո ամառային պտուղի և
քո այգեկութի վերայ աւարառու
յարձակուեցաւ։ Եւ վեր է առ- 33
նուելու ուրախութիւնն ու ցըն-
ծութիւնը պտղաբեր արտերից
ու Մովսէսի երկրից, և գինին
դադարեցնելու եմ հնձաններից,
ուրախութիւնով խաղող պիտի չը
կոխուի, և խաղող կոխելու ու-
րախութիւնը ուրախութիւն չէ
լինելու։ Եսեբոնի աղաղակից մին- 34
չև Եղէազէ, մինչև Յասա տուին
իրանց ձայնը. Սեգորից մինչև
Որոնայիմ եռամեայ երինջի նման.
վասն զի Նեմրիմի ջուրերը ա-
նապատ են դարձել։ Եւ պիտի 35
դադարեցնեմ Մովսէսից, ասում
է Տէրը, բարձրաւանդակում ող-
ջակէզ մատուցանողին, և նորա
աստուածներին խունկ ծխողին։
Սորա համար սիրտս հնչում է 36
սրինգների պէս Մովսէսի վերայ,
և իմ սիրտը Կիրհարեսի մարդ-
կանց վերայ հնչում է սրինգների
պէս, սորա համար այն հարըս-
տութիւնը, որ արել էին, փչա-
նում է։ Վասն զի ամեն գլուխ 37
պիտի կնատանոյ, և ամեն մօրուք
կտրուի, ամեն ձեռքերի վերայ
կտրածներ պիտի լինեն, և մէջքի
վերայ՝ քուրձ։ Մովսէսի բոլոր 38
կտուրների վերայ և նորա փողոց-
ներումը բոլորովին ողբ պիտի լի-
նի, վասն զի ես կոտրեցի Մովս-

բին մի այնպիսի ամանի պէս, ո-
րից չեն ախորժել, ասում է Տէ-
39 րը: Ի՜նչպէս կոտրուեցաւ, ու-
նում են, ի՜նչպէս է Մովաբը
մէջքը դարձնում ամօթով. և
Մովաբը ծաղր ու սոսկում պի-
տի լինի, բոլոր իրան շրջապա-
40 տողների համար: Վասն զի այս-
պէս է ասում Տէրը. Ահա ար-
ծիւի պէս թռչում է, և տա-
րածում իր թևերը Մովաբի վե-
41 րայ: Քաղաքները առնւում են,
և բերդերը՝ նուաճւում. և այն
օրը Մովաբի տղամարդկանց սիր-
տը երկանց ցաւ քաշող կնոջ
42 սրտին պէս կ'լինի: Եւ Մովաբ
պիտի ոչնչանայ ժողովուրդ լինե-
լուց, վասն զի դուրսցաւ Տի-
43 րոջ դէմ, Վախ ու փի՛ղ ու վտամ
քեզ վերայ, ով Մովաբի բնա-
44 կիչ, ասում է Տէրը: Վախից
փախչողը փի՛ղը պիտի ընկնի, և
փի՛ղից դուրս ելնողը վտամուն
պիտի բռնուի. վասն զի նորա
վերայ այսինքն Մովաբի վերայ
պիտի բերեմ նորանց այցելու-
թեան տարին, ասում է Տէրը:
45 Եսեբոնի հովանուն պիտի կանգ-
նեն ուժը գնացած փախստական-
ները. բայց կրակ պիտի դուրս
գայ Եսեբոնից և Սեհոնի միջից՝
ըոց, և պիտի ուտէ Մովաբի
ծայրը և աղմուկի որդիների գա-
46 գաթը: Վա՛յ քեզ, Մովաբ, կո-
րաւ Քամոսի ժողովուրդը, վասն
զի տղայքդ գերի առնուեցան,
47 և աղջկերքդ՝ գերութեան: Բայց
ետքի օրերը ետ պիտի դարձնեմ
Մովաբի գերութիւնը, ասում է
Տէրը:

Մինչև այստեղ է Մովաբի դա-
տաստանը:

ԳԼ. ԽԹ

1 Ամմոնի որդիների նկատմամբ՝
այսպէս է ասում Տէրը. Մի՞թէ
որդիք չունի Իսրայէլ. կամ նա
ժառանգ չունի՞. ինչու Մելքոմը
ժառանգեց Գադին, և նորա ժո-
ղովուրդը նորա քաղաքներում
2 բնակե՞ց: Սորա համար ահա օ-
րեր են գալիս, ասում է Տէրը,
որ Ամմոնի որդիներիՌաբբայի
դէմ պատերազմի աղաղակ պիտի
լսել տամ, որ նա փլատակների
դէմ դառնայ, և նորա աղջկերքը
կրակով այրուին. իսկ Իսրայէլը
պիտի ժառանգէ իր ժառանգող-
ներին, ասում է Տէրը:

3 Ողո՛ւա, ով Եսեբոն, վասն զի
գայլն ոչնչացաւ, աղաղակեցէ՛ք,
ով Ռաբբայի աղջկերքը, քուրձեր
հագէ՛ք, սուգ արէ՛ք և դէս ու
դէն փախէ՛ք ցանգերի մէջ. վասն
զի Մելքոմը գերի պիտի գնայ՝
իր քահանաներն ու իշխանները
4 միասին: Ի՞նչ ես հովիտներով
պարծենում. հովիտդ ջրի պէս
գնաց, ով ապստամբ աղջիկ, որ
ապաւինել էիր քո գանձերին,
—ասել. Ո՞վ է գալիս ինձ վերայ:
5 Ահա ես քեզ վերայ վախ եմ
բերում, ասում է Զօրաց Տէրը
Եհովան, քո բոլոր շրջականերից.
և դուք պիտի ցրուիք ամեն մարդ
դէպի իր առաջը. և փախստա-
կաններին ժողովող պիտի չլինի:
6 Եւ նորանից յետոյ պիտի ետ
դարձնեմ Ամմոնի որդիների գե-
րութիւնը, ասում է Տէրը:

7 Եդովմի նկատմամբ՝ այսպէս է
ասում Զօրաց Տէրը. Մի՞թէ էլ
իմաստութիւն չկայ Թեմանում,
կորա՞ւ խորհուրդը հանճարեղնե-
րից, դարտակուեցա՞ւ նորանց ի-
8 մաստութիւնը: Փախէ՛ք, դար-
ձէ՛ք, խորերը մտէ՛ք բնակելու
համար, ով Դեդանի բնակիչներ,
վասն զի Եսաւի կորուստը պիտի
բերեմ նորա վերայ, նորան այ-
ցելութիւն սրած ժամանակս:
9 Եթէ քեզ մօտ քաղողներ գա-
յին, մի՞թէ ուխտորդ ճիւռեր չէին
ձգալ. եթէ գողեր՝ գիշերով, նո-
րա փչացնում են որքան իրանց
10 բաւական է: Սակայն ես մեր-
կացրի Եսաւին, բաց արի նորա
ծածուկ տեղերը. բայց նա չէ կա-
րող թաք կենալ. կորան նորա
սերունդը, նորա եղբայրները և
նորա դրացիքը, և չկան: Թող
11 տուր քո որբերին, ես նորանց կը
պահեմ. և քո որբևայրիքը թող
ինձ ապաւինեն: Վասն զի այս-
12 պէս է ասում Տէրը. Ահա նո-

բանք որ պատուական չէին բաժակը խմելոյ՝ անպատճառ պէտք է խմեն, և դու որ ջանք էիր անուամ անպատիժ մնալու. անպատիժ չես մնալ, այլ անպատճառ
13 պիտի խմես։ Վասն զի երդուամ եմ անուամ իմ անձովը, ասէ Տէրը, որ անպայութիւն, նախատինք, աւերակ և անէծք պիտի դառնայ Բոսրան, և նորա բոլոր քաղաքները պիտի յաւիտենական աւերակներ դառնան։
14 Լուր լսեցի Տիրոջ կողմանէ, և դեսպան ուղարկուեցաւ ազգերին, Թէ ժողովուեցէք և գնացէք նորա վերայ, և կանգնեցէք
15 պատերազմի։ Վասն զի ահա ես քեզ պզտիկ եմ արել ազգերի մէջ, անարգ մարդկանց մէջ։
16 Քո ահաւորութիւնը քո սրտի ամբարտաւանութիւնը խաբել է քեզ, ով վէմի խոռոչներուն մէջ բնակող և բարձր բլուրները փակչող, եթէ արծիւի պէս բարձրանաս դնես քո բոյնը, այնտեղից էլ քեզ պիտի իջեցնեմ, ասէ
17 Է Տէրը։ Եւ Եդոմը անապատ պիտի լինի. ամեն նորա մօտով անցնողը պիտի հիանայ, և նորա բոլոր հարուածներուն համար պիտի
18 սուլէ։ Սոդոմի ու Գոմորի և նորա դրացիներուն կործանման պէս, ասէ Տէրը. այնտեղ մարդ չի բնակիլ և մարդու որդի նո-
19 րանում չի պանդխտանալ։ Ահա առիւծի պէս վեր պիտի գնայ Յորդանանի փարքերը ամուր բնակարանը. վասն զի մի վայրկեանում պիտի փախցնեմ նորան նորա վերայից, և ո՞վ է ընտրեալ, որ նորա վերայ դնեմ, վասն զի ո՞վ է ինձ նման, և ով կ'որոշէ իմ ժամանակը, և ո՞վ է այն հովիւը, որ կանգնէր իմ առջև։
20 Ուրեմն լսեցէք Տիրոջ խորհուրդը, որ խորհել է Եդոմի վերայ, և նորա մտածմունքները, որ մտածել է Թեմանի բնակիչների վերայ. անպատճառ պիտի քշեն նորանց հօտի փոքրերը, անպատճառ նորանց բնակարանները
21 պիտի աւերէ նորանց հետ։ Նորանց ընկնելու ձայնից երկիրը

պիտի դողայ, աղաղակը մինչև Կարմիր ծովը լսուեմ է նորա ձայնը։ Ահա արծիւի նման վեր 22
է բարձրանում և թռչում, և իր թևերը տարածում Բոսրայի վերայ, և այն օրը Եդոմի ազատամարդկանց սիրտը երկանց ցաւ քաշող կնոջ սրտին պէս կ'լինի։

Դամասկոսի նկատմամբ։ 23
Եմաթն ու Արփադը ամաչեցին, վասն զի վատ լուր լսեցին։ Հալուեմ են. ծովումը տառապանք կայ՝ չէ կարող հանդարտանալ։ Թուլացել է Դամասկոս 24
ը, դարձել է որ փախչէ, արհաւիրքը բռնել է նորան տագնապն ու երկունքը բռնել են նորան ինչպէս ծննդական կնոջ։
Ինչպէս չմոռացաւ փառաց 25
քաղաքը, իմ զուարճութեան քաղաքը։ Սորա համար նորա ըն- 26
տիրները վայր կ'ընկնեն նորա հրապարակներումը, և բոլոր պատերազմական մարդիկը կ'պատանդուին այն օրը, ասէ Զօրաց Տէրը։ Եւ ես կրակ պիտի 27
վառեմ Դամասկոսի պարսպի մէջ, և նա պիտի լափէ Բենադադի պալատները։

Կեդարի նկատմամբ և Հասորի 28
թագաւորութեանց նկատմամբ, որոնց Նաբուքոդոնոսոր Բաբելոնի թագաւորը զարկեց, այսպէս է ասէ Տէրը. Վեր կացէք գնացէք Կեդարի վերայ, և փչացրէք արևելքի որդիներին։ Նորանց 29
վրաններն և նորանց հօտերը պիտի առնեն, նորանց վարագոյրներն և նորանց բոլոր կարասիները, և նորանց ուղտերը պիտի առնեն իրանց համար. և նորանց պէտք է կանչեն, Վախ շուրջանակի։

Փախէք, վազեցէք շատ, խո- 30
րերը մտէք բնակելու, ով Հասորի բնակիչներ, ասէ Տէրը, վասն զի Նաբուքոդոնոսոր թագաւորը ձեզ դէմ խորհուրդ է խորհել, և նորանց դէմ մտածմունք է մտածել։

Վեր կացէք, վեր եկէք ազա- 31
հով և անդորը բնակող ազգի վերայ, ասէ Տէրը, որ դուռներ չունի, նիզակ չունի, առան-

32 ձին է բնակուած՝ եւ նորանց ուղ-
տերը աւար պիտի դառնան, և
նորանց խաշինքներուն բազմութի-
նը կողոպուտ, և ես պիտի ցըր-
ուեմ ամեն կողմ մօրուքին ծայրը
կտրողներին, և ամեն անցուդար-
ձից պիտի բերեմ նորանց կորուս-
33 տը, ասում է Տէրը։ Եւ Հասոր
պիտի չոգաղներուն օրջ դառնայ
յաւիտենական ամայութիւն.
այնտեղ մարդ պիտի չբնակէ, և
նորանցմով մարդ պիտի չանցկնայ մարդու
որդի։
34 Տիրոջ խօսքը, որ եղաւ Երե-
միա մարգարէին Եղամի մասին
Յուդայի Սեդեկիա թագաւորի
թագաւորութեան սկզբուանը, ա-
սելով.
35 Ահա ես ասում Ջօրաց Տէ-
րը. Ահա ես կոտրում եմ Եղա-
մի աղեղը, նորանց զօրութեան
36 գլխաւորը։ Եւ պիտի բերեմ Ե-
ղամի վերայ չորս հողմերը երկնքի
չորս կողմից, և նորանց պիտի
ցրուեմ այս բոլոր հողմերին, և
այն ազգը չէ լինելու, ուր գնա-
ցած չլինին Եղամի փախստական-
37 ները։ Եւ ես պիտի վախեցնեմ
Եղամին իրանց թշնամեաց առ-
ջև, և նորանց հոգիները պահան-
ջողների առջև, և նորանց վերայ
ձախորդութիւն պիտի բերեմ՝ իմ
բարկութեան բորբոքումը, ա-
սում է Տէրը, և նորանց ետևից
պիտի ուղարկեմ սուրը, մինչև
38 որ նորանց վերջացնեմ։ Եւ ես իմ
աթոռը պիտի դնեմ Եղամում
և այնտեղից պիտի թագաւոր և
իշխաններ կորցնեմ, ասում է
39 Տէրը։ Եւ պիտի լինի որ վերջի
օրերումը Եղամի գերութիւնը
պիտի դարձնեմ, ասում է Տէրը։

Գլ. Ծ

1 Այն խօսքը որ Տէրը խօսեց Քաղ-
դէացոց երկրի Բաբիլոնի մասին
Երեմիա մարգարէի ձեռովը։
2 Յայտնեցէք ազգերի մէջ, հրա-
տարակեցէք ու դրօշակ բարձ-
րացրէք, հրատարակեցէք, մի
ծածկէք, ասացէք. Բաբիլոնը
առնուեցաւ, Բէլը ամաչեց, Մա-
րոդաքը կոտրուեցաւ, ամաչեցին
նորա արձանները, կոտրատուե-
ցան նորա կուռքերը։ Վասն զի 3
նորա վերայ հիւսիսից մի ազգ
եկաւ, նա նորա երկիրը աւերակ
պիտի անէ, և նորանցմով բնա-
կող չէ լինելու. մարդուց մինչև
անասուն պիտի փախչեն գնան։
Այն օրերը և այն ժամանակը, 4
ասում է Տէրը, պիտի գան Իս-
րայէլի որդիքը՝ իրանք և Յուդայի
որդիքը միասին, գնալով ու լա-
լով պիտի գան և իրանց Տէր
Աստուծոյն որոնեն։ Սիօնը են 5
հարցնելու՝ երեսները դէպի այն-
տեղ, եկէք և Տիրոջը յարենք յա-
ւիտենական անմոռաց ուխտով։
Կորած ոչխարներ եղան իմ ժո- 6
ղովուրդը, նորանց հովիւներն են
նորանց մոլորեցնում, լեռանց
վերայ շուռ են տուում նորանց,
լեռնից դէպի բլուրը գնացին՝
իրանց մսակաղատեղը մոռացան։
Ամեն ով որ նորանց գտաւ՝ կե- 7
րաւ նորանց, և նորանց նեղիչ-
ները ասացին՝ Մենք յանցաւոր
չենք, նորա փոխարէն, որ նորանք
մեղք են գործել Տիրոջ արդա-
րութեան բնակարանի դէմ, և
իրանց հայրերի յուսատեղի՝ Տի-
րոջ դէմ։ Փախէք Բաբիլոնի մի- 8
ջից, և դուրս եկէք Քաղդէացոց
երկրից, և նոխազների պէս ե-
ղէք հօտերի առջև։ Վասն զի 9
ահա ես պիտի զարթնեցնեմ և
բերեմ Բաբիլոնի վերայ մեծամեծ
ազգերի ժողովք հիւսիսի երկրից.
նորանք շարվում են նորա դէմ,
և նա կառնուի այնտեղից. նորա
նետերը հմուտ զօրամարդի պէս
են՝ պարապ չեն եւ դառնալ։
Եւ Քաղդէացոց երկիրը աւար 10
պիտի լինի. նորա ամեն աւարա-
ռները պիտի կշտանան, ասում
է Տէրը։
Վասն զի ուրախանաք էլ, ցըն- 11
ծաք էլ, ով իմ ժառանգութի-
նը կողոպտողներ, թէև ասանուք
խոտի միջի երինջին նման և երի-
վարների պէս խրնջաք. Ձեր մայ- 12
րը պիտի շատ ամաչէ, ձեզ ծնո-
ղը պիտի պատկառէ, ահա նա
ազգերի յետինը, անապատ, ան-
ջուր, և ամայի պիտի լինի։ Տի- 13

բոլը ցաւուն պատճառով նա պիտի չընակուի, այլ պիտի բոլորովին աւերակ դառնոյ, Բաբելացւոց մօտով ամեն անց կենողը պիտի հիանայ և սուլէ նորա ամեն հարուածներուն վերայ։ Շարուեցէք Բաբելոնի դէմ շուրջանակի, ով բոլոր աղեղ լարողներ, գցեցէք նորա վերայ, նետերը մի խնայէք, վասն զի նա մեղանչել է Տիրոջ դէմ։ Աղաղակեցէք նորա դէմ շուրջանակի, նա անձնատուր եղաւ. նորա բուրգերը վայր ընկան, նորա պարիսպները հիմնայատակ եղան. վասն զի սա Տիրոջ վրէժխնդրութիւնն է, նորանից վրէժ առէք, ինչպէս նա է արել՝ արէք իրան։ Կտրեցէք սերմնացուն Բաբելոնից և մանգաղաւորին հունձի ժամանակին բռնաւորի սուրի երեսից, ամեն մարդ ետ դառնայ իր ժողովրդին, և ամեն մարդ իր երկիրը փախչէ։

Իսրայէլը մի մոլորեալ ոչխար է, առիւծներն են փախցրել. նախ նորան Ասորեստանի թագաւորը կերաւ, և ահա յետոյ նորա ոսկորները փշրեց Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը։ Սորա համար Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը այսպէս է ասում. Ահա ես պիտի այցելեմ Բաբելոնի թագաւորին և նորա երկրին, ինչպէս այցելել եմ Ասորեստանի թագաւորին։ Եւ Իսրայէլին պիտի դարձնեմ իր բնակարանը. և նա պիտի արածէ Կարմելոսում և Բասանում, և Եփրեմի լեռան վերայ և Գաղաադում պիտի կշտանայ նորա հոգին։ Այն օրերին և այն ժամանակին, ասում է Տէրը, պիտի Իսրայէլի անօրէնութիւնը որոնուի, բայց պիտի չլինի նա. և Յուդայի մեղքերը՝ բայց պիտի չգտնուին. վասն զի ես պիտի ներեմ նորանց, որոնց մնացորդ պահեցի։

21 *Մերաթայիմի երկրի մասին. վե՛ր ելիր նորա վերայ և փա-

*Կրկնապատիկ ապստամբութեան պատժուած

կուղի բնակչաց դէմ, աւերիր և նզովիր նորանց ետևից, ասում է Տէրը, և արա այն ամենի պէս որ քեզ պատուիրում եմ։ Երկրումը պատերազմի ձայն կայ, և մեծ կոտորած։ Ինչպէս կտրեցուեցաւ ու փշրուեցաւ բոլոր երկրի մուրճը, ինչպէս աւերակ եղաւ Բաբելոնը ազգերի մէջ։ Ես որոգայթ լարեցի քեզ համար, դու էլ բռնուեցար, ով Բաբելոն, բայց դու չգիտացիր, գըտնուեցար և բռնուեցար. վասն զի Տիրոջ դէմ հակառակեցիր։ Տէրը բաց արաւ իր զինարանը, և հանեց իր բարկութեան գործիները. վասն զի գործ ունի Զօրաց Տէր Աստուածը Քաղդէացւոց երկրումը։ Եկէք նորա վերայ ծայրերից, բացէք նորա շտեմարանները, դէղ տուէք նորան խո՜չ շէղջերի պէս, և նորան նզովեցէք, նորա համար մնացորդ չլինի։ Փչացրէք նորա բոլոր զուարակները, թող նորանք իջնեն ապանդանոցը վոյ նորանց, վասն զի եկել է նորանց օրը՝ նորանց այցելելու ժամանակը։ Բաբելոնի երկրից փախչողների և ազատուողների ձայնը, որ պատմէ Սիովնում մեր Տէր Աստուծոյ վրէժխնդրութիւնը՝ նորա տաճարի վրէժխնդրութիւնը։

Բաբելոնի վերայ հրաւիրեցէք ազեղնաւորներին. ով բոլոր աղեղնաւորներ, նորա դէմ բանակ տուէք շուրջանակի, ազատուող պիտի չլինի. նորան հատուցրէք նորա գործքի համեմատ, այն ամենի համեմատ որ նա է արել՝ արէք իրան. վասն զի նա հպարտացաւ Տիրոջ՝ Իսրայէլի Սուրբի դէմ։ Սորա համար նորա երիտասարդները պիտի ընկնեն նորա հրապարակներումը, և բոլոր պատերազմի մարդիկը պիտի պատանձուին այն օրը, ասում է Տէրը։ Ահա ես քեզ դէմ եմ, ով հպարտ, ասում է Զօրաց Տէր Յեհովայ Տէրը. վասն զի եկել է քո այցելութեան ժամանակը։ Եւ հպարտը պիտի սահէ և վայր ընկնէ, և ոչ կանգնեցնող պիտի չը

լինի նորա Համար, և ես նորա քաղաքների մէջ կրակ պիտի վառեմ, և նա պիտի լափէ նորա բոլոր շրջակայքը։

33 Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Իսրայէլի որդիքը և Յուդայի որդիքը միասին ճրկուեցան և բոլոր նորանց գերի անողները բռնեցին նորանց, չուզեցին նորանց
34 արձակել։ Նորանց փրկիչը զօրաւոր է, Զօրաց Եհովայ է նորա անունը. նա անպատճառ պիտի ջատագովէ նորանց դատը, որ երկրին հանգստութիւն տայ, և դողացնէ Բաբիլոնի բնակիչներին։
35 Սուր Քաղդէացոց վերայ, ասում է Տէրը, և Բաբիլոնի բնակիչների վերայ, և նորա իշխանների և նո-
36 րա իմաստուններն վերայ։ Սուր շաղակրատների վերայ, որ յիմարանան, սուր նորա զաղտմարդկանց վերայ, որ զարհուրեն։
37 Սուր նորա ձիերի և նորա կառքերի վերայ, և նորա միջում եղող բոլոր խառնիճաղանճի վերայ, որ կանանց նման դառնան. սուր նորա գանձերի վերայ, որ
38 յափշտակուին։ Զօրութիւն նորա ջրերի վերայ, որ չորանան, վասն զի նա կուռքերի երկիր է, և սոսկալի բաներով գժվում
39 են։ Դորա Համար անբնակ վայրի կատուներ և բորենիներ պիտի բնակեն, և ջայլամներ պիտի բնակեն նորանում, և նա պիտի յաւիտենական միւսանգամ չբնակուի մինչև ազգ ազգ։
40 Ինչպէս որ Աստուած կործանեց Սոդոմն ու Գոմորը և նորա դրացիներին, ասում է Տէրը, այնտեղ էլ մարդ պիտի չբնակէ, և բնակութիւն չանէ նորանում մարդու որդի։
41 Ահա մի ժողովուրդ է գալիս հիւսիսից, և մի մեծ ազգ և շատ թագաւորներ զարթնում են երկ-
42 րի ծայրերից։ Նորանք աղեղ և գեղարդ ունին, անգութ են նորանք և չեն ողորմիլ, նորանց ձայնը ծովի պէս է գոռում, և ձիերի վերայ են հեծած՝ պատրաստուած են պատերազմի մարդու նման քեզ դէմ, ով Բաբի-

լոնի աղջիկ։ Բաբելոնի թագաւորը լսեց նորանց լուրը, և նորա ձեռքերը թուլացան. տագնապը նորան բռնեց իրրև ծննդականի երկունք։
44 Ահա առիւծի պէս բարձրանում է Յորդանանի փուքից դէպի ամուր բնակարանը. վասն զի իսկոյն պիտի նորանց փախցնեմ նորա վերայից և ո՞վ է ընտրուած, որ նորա վերայ նշանակեմ, վասն զի ո՞վ է ինձ նման, և ո՞վ կարող է իմ ժամանակը որոշել, և ո՞վ է այն հովիւը, որ կանգնէր իմ առջև։
45 Ուրեմն լսեցէք Տիրոջ խորհուրդը, որ խորհել է Բաբելոնի վերայ, և նորա մտածմունքները, որ մտածել է Քաղդէացոց երկրի վերայ. անպատճառ պիտի քշեն նորանց հօտի փոքրերը, անպատճառ պիտի աւերէ բնակարանը նորանց հետ։
46 Բաբելոնի առնուելու ձայնից երկիրը պիտի դողայ, և աղաղակը պիտի լսուի ազգերի մէջ։

ԳԼ. Ծ Ա.

1 Այսպէս է ասում Տէրը, Ահա ես պիտի գրգռեմ Բաբելոնի վերայ և իմ թշնամուց մէջ բնակողների վերայ մի սպանիչ հողմ։
2 Եւ Բաբելոնի վերայ հողներ պիտի ուղարկեմ, և նորանք պիտի հողեն նորան և դատարկեն նորա երկիրը. վասն զի նորա վերայ պիտի գան շուրջանակի
3 ձախորդութեան օրը։ Աղեղնաւորի դէմ աղեղ պիտի լարէ աղեղը լարողը և իր զրահով հպարտացողի դէմ. և մի խնայէք նորա երիտասարդներին, նզովեցէք
4 նորա բոլոր զօրքերը։ Եւ սպանուածներ պիտի ընկնեն Քաղդէացոց երկրում, և խոցոտուածներ նորա փողոցներում։
5 Վասն զի որբևայրի չէ թողուած Իսրայէլն ու Յուդան իր Աստուածմանից, Զօրաց Տիրոջից. այլ նորանց երկիրը լիքն է յանցանքով Իսրայէլի Սուրբի դէմ։
6 Փախէք Բաբելոնի միջից և ամեն մարդ ազատէ իր անձը, որ չփչանաք նորա անօրէնութեանով. վասն զի վրէժխնդրութեան ժամանակ է

Տէրոջը համար, նորա արարքը
7 պիտի հատուցանէ նորան։ Ոակի բաժակ էր Բաբիլոնը Տէրոջը ձեռքին, որ արբեցնում էր բոլոր երկիրը։ Նորա գինուցը խմեցին ազգերը, որա համար յիմնայա-
8 ցան ազգերը։ Յանկարծ վայր ընկաւ Բաբիլոնը և կոտրուեցաւ, աղաչեք նորա վերայ, բալասան առէք նորա վէրքի համար, գուցէ բժշկուի։
9 Բաբիլոնին դարմանեցինք, բայց չբժշկուեցաւ, թողէք նորան, և իւրաքանչիւրս իր երկիրը գնանք. վասն զի նորա դատաստանը երկինքին հասաւ, և բարձրացաւ մինչև ամպերը։
10 Տէրը դուրս բերաւ մեր արդարութիւնը. Եկէք ու Սիովնում պատմենք մեր Տէր Աստուծոյ
11 գործը։ Փայլեցրէք նետերը, վահանները լցրէք։ Տէրը գրգռեց Մարաց թագաւորների հոգին. վասն զի նորա մտածմունքը Բաբիլոնի վերայ է նորան փչացնելու համար. որովհետև Տիրոջ վրէժխնդրութիւնն է սա՝
12 իր տաճարի վրէժը։ Բաբիլոնի պարիսպների դէմ դրօշ բարձրացրէք, ուժեղացրէք պահապանին, դէտեր նշանակեցէք, դարաններ պատրաստեցէք. վասն զի Տէրը որոշեց, և արաւ էլ իր տառը Բաբիլոնի բնակչաց վե-
13 րայ։ Ով շատ ջրերի վերայ բնակող, շատ գանձեր ունեցող, եկել է քո վերջը՝ քո ագահութեան չա-
14 փը։ Զօրաց Տէրը երդուաւ է ասել իր անձով, թէ Քեզ անպատճառ պիտի յցնեմ մարդկանցով մարախի պէս, և նորանք պիտի աղաղակով գոռան քեզ վերայ։
15 Երկիրն իր զօրութիւնով շինողը, աշխարհքն իր իմաստութիւնով հաստատողը, նա որ իր հանճարով տարածել է երկինքը,
16 Նա որոտալով երկնքումը ջուրերը կուտակելիս, ամպեր է բարձրացնում երկրի ծայրերից, փայլատակմունք է շինում անձրևի համար, և քամին է հանում իր
17 շտեմարաններից։ Տգէտ անա-

ւուն է դառնում ամեն մարդ, ամաչում է ամեն ոսկերիչ էլ քանդակածքից. վասն զի սուտ է նորա ձուլածը, և հոգի չկայ նորանում։ Ունայն են նորանք՝ խա- 18
բէութեան գործ, նորանց այցելութեան եղած ժամանակը պիտի կորչեն։ Սորանց նման չէ Յակոբի 19
բաժինը, վասն զի նա ամենի Ստեղծողն է, Իսրայէլը նորա ժառանգութեան վիճակին է, Զօրաց Տէր է նորա անունը։
Դու ինձ համար կռան ես, 20
պատերազմի գործիք ես, և ես քեզանով ազգեր կ'ջարդեմ, և թագաւորութիւններ կ'փչացնեմ քեզանով։ Եւ ես քեզանով ձին 21
ու ձիաւորին կ'ջարդեմ, և քեզանով կ'ջարդեմ կառքն ու կառավարը։ Եւ քեզանով մարդուն 22
ու կնոջը կ'ջարդեմ, և կ'ջարդեմ քեզանով ծերին ու երիտասարդին, և քեզանով տղամարդին ու կոյսին կ'ջարդեմ։ Եւ քեզա- 23
նով կ'ջարդեմ հովիւն և իր հօտը, և քեզանով երկրագործին ու նորա զոյգ եզինքը կ'ջարդեմ, և կուսակալներին ու նախարարներին կ'ջարդեմ քեզանով. Եւ 24
կ'հատուցանեմ Բաբիլոնին և բոլոր Քաղդէացոց բնակիչներին նորանց բոլոր չարութիւնները, որ իրանք արին Սիոնին՝ ձեր աչքի առջև, ասում է Տէրը։ Ահա ես 25
քեզ դէմ եմ, ով ապականիչ լեռ, ասում է Տէրը, որ ապականեցիր բոլոր երկիրը, և ես պիտի մեկնեմ իմ ձեռքը քեզ վերայ, և քեզ պիտի գլորեմ վէմերից, և քեզ այրած լեռ պիտի շինեմ։ Եւ քեզանից չեն առնել 26
ոչ անկեան քար ոչ հիմնի քար, վասն զի յաւիտենական աւերակ պիտի դառնաս, ասում է Տէրը։
Դրօշակ բարձրացրէք երկրի մէջ, 27
փող հնչեցրէք ազգերի մէջ, նորա դէմ պատրաստեցէք ազգերին, հրաւիրեցէք նորա դէմ Ասպատի, Մինոնի և Ասքանազի թագաւորութիւնները, նորա վերայ զօրավարներ նշանակեցէք, ձիեր վեր հանեցէք մարտա մարախների չափ։ Նորա դէմ պատ- 28

բռատեցէք ազգերին Մարաց
թագաւորներին, նորա կուսա-
կալներին և նորա բոլոր նախա-
րարներին և նորա տէրութեան
29 բոլոր երկիրը։ Եւ երկիրը պիտի
դողայ և ցնծայ, վասն զի բա-
բելոնի վերայ պիտի կատարուի
Տիրոջ մտածմունքները, Բաբելո-
նի երկիրը ամայի անելու համար՝
30 անբնակ։ Դադարեցին Բաբելոնի
տղամարդիկը պատերազմելու,
բերդերուն մէջ բնակեցին, նորանց
ոյժը կտրուեցաւ, կանայք դար-
ձան. նորա բնակարանները այ-
րեցին, կատրուեցան նորա նիգե-
31 րը։ Սուրհանդակ սուրհանդակի
դէմ է վազում, և լուրեր լուրե-
րի դէմ, Բաբելոնի թագաւո-
րին իմացնելու համար, թէ նորա
քաղաքը առնուեցաւ մէկ կող-
32 մից։ Անցքերը բռնուեցան, և
եղէգները այրեցին կրակով, և
պատերազմի մարդիկը խառնվեցան։
33 Վասն զի այսպէս է ասում Զօ-
րաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը.
Բաբելոնի աղջիկը կալի նման է,
նորան կոխելու ժամանակն է,
մի քիչ ժամանակ էլ և կ'գայ
նորա հնձելու ժամանակը։
34 Կերաւ կերաւ, մեզ բնաջինջ
արաւ Բաբելոնի Նաբուգոդոնո-
սոր թագաւորը, մեզ դրաւ իբ-
րև պարապ անօն, մեզ կուլ
տուաւ վիշապի պէս, իր փորը
լցրեց իմ փափկութիւններիցը,
35 մեզ դուրս արաւ։ Ինձ եղած
զրկանքը և իմ մարմինը Բաբել-
ոնի վերայ լինէ, պիտի ասէ Սիօ-
նի բնակչուհին. և՝ Իմ արիւնը՝
Քաղդէացոց բնակիչների վերայ,
36 պիտի ասէ Երուսաղէմը։ Սորա
համար այսպէս է ասում Տէրը.
Ահա ես եմ վարում քո դատը,
և ես եմ առնում քո վրէժը, և
նորա ծովը ցամաքեցնում եմ, և
37 չորացնում նորա աղբիւրը։ Եւ
Բաբելոնը պիտի փլատակներ
դառնայ, շագալների բնակարան,
ամայութիւն և ծաղր առանց
38 բնակչի։ Միասին պիտի գոռան
առոյգ առիւծների պէս, պիտի
մռնչեն մատակ առիւծների կո-
39 րիւնների պէս։ Նորանք տաքա-
նալիս կոչունք պիտի անեմ նո-
րանց, և նորանց պիտի արբեցնեմ
որ զուարճանան, և քնանան յա-
ւիտենական քնով, և չզարթնեն,
ասում է Տէրը։ Կա նորանց պի- 40
տի իջեցնեմ ագռնդանոցը գառ-
ների պէս, ինչպէս խոյերը նո-
խազների հետ։ Ի՜նչպէս առնուե- 41
ցաւ Սիսակ, և բռնուեցաւ բոլոր
երկրի պարծանքը, ի՜նչպէս ամա-
յի եղաւ Բաբելոն ազգերի մէջ։
Ծովը վեր եկաւ Բաբելոնի վերայ, 42
նորա ալիքների շառաչիւնից
ծածկուեցաւ։ Նորա քաղաքները 43
աւերակ պիտի դառնան՝ անջուր
երկիր և անապատ, մի երկիր
ուր ոչ մի մարդ չէ բնակում, և
նորանով մի մարդու որդի չէ
անցնում։ Եւ պիտի այցելեմ Բե- 44
լին Բաբելոնում, և պիտի հա-
նեմ նորա կուլ տուածը նորա
բերանից, և ազգերը այլ և այլ
մօտ չեն գնալ. Բաբելոնի պարիս-
պն էլ վայր կ'ընկնի։ Դուրս ե- 45
կէք նորա միջիցը, ով իմ ժողո-
վուրդ, և իւրաքանչիւրը թող
պրատէ իր անձը, Տիրոջ բորբո-
քած բարկութիւնիցը։ Եւ մի 46
գուցէ ձեր սիրտը նուաղի և վա-
խենաք՝ երկրում լուրը լսելիս.
և գայ տարուայ մէջ այն լուրը,
և նորա հետևեալ տարում դէ-
լուրը, և բռնութիւն լինի երկրում
մէ՝ այսինքն իշխան իշխանի դէմ։
Սորա համար ահա օրեր են 47
գալիս, որ պիտի այցելեմ Բա-
բելոնի կուռքերին, և նորա բո-
լոր երկիրը ամօթով պիտի լինի,
և նորա բոլոր սպանուածները պի-
տի նորանում ընկնեն։ Եւ պիտի 48
ցնծան Բաբելոնի վերայ երկինքն
ու երկիրը, և ամեն ինչ որ կայ
նորանցում, վասն զի աւերողնե-
րը հիւսիսից գալիս են նորա հա-
մար, ասում է Տէրը։ Ինչպէս 49
Բաբելոնն է վայր գցել Իսրայէլի
սպանուածներին, նոյնպէս էլ
Բաբելոնի բոլոր երկրի սպանուած-
ները պիտի վայր ընկնեն։ Ով 50
սուրից ազատուածներ, գնացէք,
մի կանգնէք. Հեռուից յիշեցէք
Տիրոջը, և Երուսաղէմը թող ձեր
միտքը գայ։

51 Մենք ամաչում ենք, վասն զի նախատինք լսեցինք, ամօթը ծածկեց մեր երեսը, վասն զի օտարները մտան Տիրոջ տան սրբարա-
52 նը։ Նորա համար այս օրեր են գալիս, ասում է Տէրը, որ պիտի այցելեմ նորա կուռքերին, և նորա բոլոր երկրամէջ պիտի
53 հեծեծի վիրաւորեալները։ Թէև բարձրանայ Բաբիլոնը երկինքը և բարձրացնի պնդացնէ իր զօրութիւնը, իմ կողմանէ աւերողներ պիտի գան նորա համար, ասում է
54 Տէրը։ Աղաղակի ձայն կայ Բաբիլոնից, և մեծ կոտորած՝ Քաղդեացոց երկրից։
55 Վասն զի Տէրը պիտի աւերէ Բաբիլոնը, և կորցրնէ նորանից մեծ ձայնը, որովհետև գոչում են նորանց ալիքները շատ ջրերի նման, նորանց
56 ձայնը աղմուկ է հանում։ Վասն զի նորա՝ այսինքն Բաբիլոնի վերայ աւերող եկաւ, և նորա զօրաւորները առնուեցան, նորանց աղեղները կոտրուեցան. վասն զի Տէրը հատուցանող Աստուած է,
57 անպատճառ կ'հատուցանէ։ Եւ ես պիտի արբեցնեմ նորա իշխաններին, և նորա իմաստուններին, կուսակալներին, և նորա նախարարներին ու նորա ազամարդիկներին, որ յաւիտենական քնով քնանան և չզարթնեն, ասում է Թագաւորը՝ որի անունը Զօրաց
58 Տէր է։ Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Բաբիլոնի լայն պարիսպները հիմնայատակ պիտի լինին, և նորա բարձր դռնները կրակով պիտի այրուին, և ժողովուրդները դատարկ տեղը պիտի յոգնեն, և ազգերը կրակի համար աշխատեն։

59 Այն խօսքը որ Երեմիա մարգարէն պատուիրեց Մաասեայի որդու Ներիայի որդի Սարայիային, երբոր նա Յուդայի Սեդեկիա թագաւորի հետ Բաբիլոն գնաց նորա թագաւորութեան չորրորդ տարին, և Սարայիան
60 դիխաւոր անդեակապան էր։ Եւ Երեմիան գրեց այն ամեն չարիքը, որ գալու էին Բաբիլոնի վերայ, այն գրքում, այսինքն այս
61 բոլոր խօսքերը որ գրուած են Բաբիլոնի դէմ։ Եւ Երեմիան ասաց Սարայիային. Երբոր Բաբիլոն մտար, այն ժամանակ նայիր որ կարդաս այս բոլոր խօսքերը,
62 և ասես. Ով Տէր, դու խօսեցիր այստեղի մասին, որ աւերես նորան, որ նորանում բնակող չլինի մարդուց մինչև անասունը, վասն զի սա պէտք է յաւիտենական
63 աւերակներ դառնայ։ Եւ երբոր վերջացրիր այս գիրքը կարդալը, նորանից մի քար կապիր և գցիր նորան Եփրատի մէջ, և ասիր.
64 Այսպէս պէտք է ընկղմուի Բաբիլոնը և չկանգնէ այն չարեաց պատճառով, որ ես պիտի բերեմ նորա վերայ, և նորանք պէտք է վատասկեն։

Մինչև այստեղ է Երեմիայի խօսքերը։

ԳԼ. ԾԲ

1 Գաւառմէկ տղեկան էր Սեդեկիան, երբոր թագաւոր եղաւ, և տասնումէկ տարի թագաւորութիւն արաւ Երուսաղէմում, և նորա մօր անունը՝ Ամիտաղ
2 Լաբնացի Երեմիայի աղջիկը։ Եւ չարութիւն արաւ Տիրոջ առջև բոլորովին այնպէս ինչ որ արել էր Յովակիմ։ Վասն զի Տիրոջ
3 բարկութիւնը Երուսաղէմի և Յուդայի վերայ էր, որ նորանց դէն գցէր իր երեսի առջևից, և Սեդեկիան ապստամբեց Բաբիլոնի թագաւորի դէմ։

4 Եւ եղաւ նորա թագաւորութեան իններորդ տարում տասներորդ ամսում՝ ամեն տասին եկաւ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը ինքը և իր բոլոր զօրքը Երուսաղէմի վերայ, և բանակ սուին նորա դէմ, և նորա դէմ պատնէշներ շինեցին շուրջանակի։ Եւ քաղաքը պաշարման
5 մէջ ընկաւ մինչև Սեդեկիա թագաւորի մեռասաներորդ տարին.
6 Չորրորդ ամսում՝ ամեն իններին սով առաւ քաղաքում, և հաց չկար երկրի ժողովրդի
7 համար։ Եւ քաղաքը ճղուեցաւ,

և բոլոր պատերազմական մարդիկը փախան և դուրս եկան քաղաքեցը գիշերով երկու պարիսպների միջի դռան ճանապարհովը, որ թագաւորի պարտէզի մօտ է, և Քաղդէացիք քաղաքը շրջապատած էին. և նորանք գնացին 8 անապատի ճանապարհովը: Բայց Քաղդէացոց զօրքերը ընկան թագաւորի ետևից և հասան Սեդեկիայի երիքովի դաշտերումը. և նորա բոլոր զօրքերը ցրուեցան 9 նորա մօտից: Եւ թագաւորին բռնեցին և նորան վեր տարին Եմաթի երկրում լինող Ռեբղան թագաւորի մօտ. և նա վճռեց 10 նորա դատաստանը: Եւ Բաբիլոնի թագաւորը մորթեց Սեդեկիայի որդիանցը նորա աչքի առջև և Յուդայի բոլոր իշխաններին էլ 11 մորթեց Ռեբղայում: Եւ Սեդեկիայի աչքերը կուրացրեց, և նորան կապեց պղնձի շղթաներով, և Բաբիլոնի թագաւորը նորան տարաւ Բաբիլոն, և նորան բանդը դրաւ մինչև նորա մահուան օրը:

12 Եւ Բաբիլոնի Նաբուզոդոնոսոր թագաւորի տասնեիններորդ տարին հինգերորդ ամսուայ ամսի տասնին եկաւ Նաբուզարդան դահճապետը, որ կանգնում էր Բաբիլոնի թագաւորի առջև Երուսաղէմ: 13 Եւ այրեց Տիրոջ տունը և թագաւորի տունը, և Երուսաղէմի բոլոր տունները և մեծն մեծ տունները այրեց կրակով: 14 Եւ Քաղդէացոց բոլոր պատերը շուրջանակի քանդեցին Քաղդէացոց բոլոր զօրքերը որ դահճապետի հետ էին: 15 Եւ ժողովրդի աղքատներից և ժողովրդի մնացորդը, որ մնացել էին քաղաքումը և այն փախչողներին, որոնք Բաբիլոնի թագաւորի կողմն էին անցկացել, և մնացած բազմութիւնը գերի տարաւ Նաբուզարդան դահճապետը: 16 Եւ երկրի աղքատներից թողեց Նաբուզարդան դահճապետը այգեգործներ և երկրագործներ:

17 Եւ այն պղնձի սիւները, որ Տիրոջ տանն էին, նաև մեքենաները և պղնձի ծովը, որ Տիրոջ տանն էր, Քաղդէացիք կոտրատեցին, և նորանց բոլոր պղինձը տարին Բաբիլոն: 18 Եւ թագաւորները և դիւակները և բազմակաները և կոնքերը և խնկատուփերը և բոլոր պղնձի անօթները, որոնցով սպասաւորութիւն էր լինում, վեր առին: 19 Եւ բաժակները և կրակակալները և կոնքերը և թագաւորները և աշտանակները և խնկատուփերը և սկուտակները՝ որը ոսկի էր ոսկի և որը արծաթ էր արծաթ՝ վեր առաւ դահճապետը: 20 Եւ երկու սիւները, մէկ ծովը, տասներկու պղնձի եզները որ մեքենաների *տեղը էին, որ Սողոմոն թագաւորը շինել էր Տիրոջ տան համար. այս բոլոր անօթների պղինձին կշիռը չկար: 21 Եւ սիւներից մէկ սիւնը տասնևւթը կանգուն էր բարձրութիւնով, և մի դերձան տասներկու կանգուն շրջապատում էր նորան, և նորա թանձրութիւնը չորս մատնաչափ էր՝ մէջը դատակ: 22 Եւ մի պղնձի խոյակ կար նորա վերայ, և մէկ խոյակի բարձրութիւնը հինգ կանգուն, և ցանցեր ու նռներ կային խոյակի վերայ շուրջանակի՝ բոլորը պղնձի. և որպա նման էր և միւս սիւնը և նռները: 23 Եւ նռները իննսուն և վեց էին մէկ կողմով, բոլոր նռները հարիւր էին ցանցի վերայ շուրջանակի:

24 Եւ դահճապետը առաւ մեծ քահանայ Սարայիային և երկրորդ քահանայ Սոփոնիային և դրան երեք պահապաններին, 25 Եւ քաղաքից առաւ մի ներքինի, որ պատերազմի մարդկանց վերակացուն էր, և թագաւորի առջև կանգնողներից եօթը մարդ, որոնք գտնվում էին քաղաքումը և զօրքի գլխաւոր գրագրին, որ զինուորագրում էր երկրի ժողովրդին, և վաթսուն մարդ երկրի ժողովրդից, որոնք գտնվում էին քաղաքի միջումը: 26 Եւ նորանց վեր առաւ Նաբուզարդան դահճապետը և տարաւ նորանց Բա-

*տակին

բելոնի թագաւորի մօտ Ռեղղա։
27 Եւ Բաբելոնի թագաւորը զարկաւ նորանց և սպանեց նորանց Եմաթի երկրի Ռեղղայում։ Եւ Յուդան գերի տարուեցաւ իր
28 երկրից։ Սա է Նաբուզոդոնոսորի գերի տարած ժողովուրդը. եօթներորդ տարին երեք հազար քսան
29 և երեք Հրէայ. Նաբուզոդոնոսորի տասնեւութերորդ տարին՝ Երուսաղէմից ութը հարիւր երե-
30 սուն և երկու հոգի։ Նաբուզոդոնոսորի քսանեւերեքերորդ տարին Նաբուզարդան գահճապետը Հրէաներից գերի տարաւ եօթը հարիւր քառասուն և հինգ հոգի. ամենը չորս հազար վեց հար-
31 իւր հոգի։ Եւ եղաւ Յուդայի Յոյաքին թագաւորի գերութեան երեսուն և եօթներորդ տարին

տասներկուերորդ ամսում՝ ամսի քսան և հինգին բարձրացրեց Եղմարոդաք Բաբելոնի թագաւորը իր թագաւոր եղած տարին Յուդայի Յոյաքին թագաւորի գլուխը և նորան հանեց բանդի տա-
նիցը։ Եւ նորա հետ քաղցրու- 32
թեամբ խօսեց, և նորա աթոռը նորա հետ Բաբելոնում եղող թագաւորների աթոռից վեր դրբաւ։ Եւ նորա բանդի հանդերձ- 33
ները փոխեց, և միշտ իր կենաց բոլոր օրերում հացը նորա առջև էր ուտում։ Եւ նորա ռոճիկը 34
մշտական ռոճիկ էր տրւում նորան Բաբելոնի թագաւորի կողմանէ օր ըստ օրէ մինչև նորա մահուան օրը, նորա կենաց բոլոր օրերում։

ՈՂԲՔ ԵՐԵՄԻԱՅԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ինչպէս առանձին է նստում բազմամարդ քաղաքը, որ եւս պէս է դառել ազգերի մէջ մեծը, գաւառներում իշխանուհի եղողը հարկատու է դառել։
2 Գառնապէս լաց է լինում գիշերը և նորա արտասուքը նորա այտերի վերայ է, մխիթարող չունի նա իր բոլոր սիրելիներից. նորա բոլոր ընկերները խաբեցին նորան, թշնամիներ եղան նորա համար։
3 Գերի գնաց Յուդա տառապանքից և շատ ծառայութիւնից, նա բնակում է ազգերի մէջ, հանգստութիւն չէ գտել, նորա բոլոր հալածողները հասան նորան նեղութեանց մէջ։
4 Սիոնի ճանապարհները սուգ են անում ոտնի եկողներ չլինելով, նորա բոլոր դուռները ամայացած են, նորա քահանաները հեծում են, նորա կոյսերը տրտմած են և ինքը տխրած է։
5 Նորա նեղիչները գլխաւոր եղան, նորա թշնամիքը ապահով են, վասն զի Տէրը նորանից տրտմեցրել է նորա յանցանաց շատութեան համար, նորա երեխայքը գերի գնացին թշնամու առջև։
6 Եւ հեռացաւ Սիոնի աղջկանց բոլոր վայելչութիւնը, նորա իշխանները եղան ճարակ չգտնող եղջերուների նման. և տկարացած գնում են հալածողի առջև։
7 Երուսաղէմ յիշեց իր տառապանաց և թշուառութեան օրերում իր բոլոր վայելչութիւններ, որ ունէր վաղ ժամանակներից, երբոր իր ժողովուրդը թշնամու ձեռքն ընկաւ, և օգնող չունէր, թշնամիները տեսան նորան, ծիծաղեցին նորա շաբաթների վերայ։
8 Երուսաղէմ ծանր մեղանչեց, դորա համար զզուելի է համարվում, նորա բոլոր պատուողները անարգում են նորան, վասն զի տեսան նորա մերկութիւնը, նա ինքն էլ է հեծում, և ետ դառնում։
9 Նորա պղծութիւնները իր քը-

զանգքներէ վերայ է. նա չյիշեց
իր վերջը. և զարմանալի կերպով
ցածացաւ, մխիթարիչ չունի.
նայիր, ով Տէր, իմ տառապանքին, վասն զի հպարտացաւ թշնամին։
10 Թշնամին մեկնեց իր ձեռքը
նորա բոլոր ցանկալի բաներին,
վասն զի տեսաւ հեթանոսներին,
որ մտան իր սրբարանը, որոնց դու պատուիրել էիր, որ քո ժողովքի մէջ չմտնեն.
11 Նորա բոլոր ժողովուրդը հեծում է հաց ուղելով, իրանց ցանկալիքը տուին են ուտելիքի՝ սիրտը ուժովցնելու համար. տես, ով Տէր, և նայիր, վասն զի ես անարգանք եմ դառել։
12 Չէ՞ք տեսնում, ով բոլոր ճանապարհով անցնողներ, նայեցէք և տեսէք. թէ արդեօք կայ մի ցաւ իմ ցաւի նման, որ եկաւ ինձ վերայ, որին տրտմեցրեր է Տէրը իր բորբոքած բարկութեան օրումը։
13 Բարձրից կրակ ուղարկեց իմ ոսկորների մէջ, որ նորանց տիրէ, ոտքերիս ցանց տարածեց, ինձ ետ դարձրեց, ամայի արաւ ինձ՝ բոլոր օրը հիւանդոտ։
14 Իմ յանցանքի լուծը նորա ձեռքով կապուեցաւ, նորանք հիւսուեցան՝ վեր եկան իմ պարանոցի վերայ. նա նուաճել է իմ ոյժը. Տէրը ինձ մատնել է ձեռքերի, որ չեմ կարող կանգնել։
15 Վեր առաւ Տէրը իմ բոլոր զօրաւորներին իմ միջումը, ինձ վերայ ժողով կանչեց իմ երիտասարդներին կոտրելու համար, հնձան կոխեց Տէրը Յուդայի կոյս աղջկան համար։
16 Սորանց համար ես լաց եմ լինում, աչքերս՝ աչքերս ջուր են թափում, վասն զի հեռացել է ինձանից մխիթարիչը՝ իմ սիրտը հանգստացնողը, իմ որդիքը նուաղեցան, որովհետև թշնամին զօրացաւ։
17 Սիոնը մեկնում է իր ձեռքերը, և՛յ մխիթարող չկայ նորա համար. Տէրը պատուիրեց Յակոբի մասին, որ նեղիչներ լինեն նորա շուրջը. Երուսաղէմը դաշտանաւոր կին դարձաւ նորանց մէջ։
18 Արդար է Տէրը, վասն զի ես նորա դէմ անհնազանդ եղայ, մէկ լսեցէք, ով բոլոր ժողովուրդներ, և տեսէք իմ ցաւը, իմ կոյսերն ու իմ երիտասարդները գերի գնացին։
19 Կանչեցի իմ սիրելիներին, նորանք ինձ խաբեցին, քահանայապետ ու ծերերս քաղաքումը վախճանուեցան. երբոր կերակուր էին որոնում իրանց համար, որ իրանց սիրտը ուժովացնեն։
20 Նայիր, ով Տէր, որ նեղութեան մէջ եմ, աղիքներս գալարվում են, սիրտս տակնուվրայ է ներսումս, վասն զի սաստիկ ապստամբել եմ, դրսից սուրըն է ինձ անզաւակ անում, ներսից ինչպէս մահ։
21 Լսեցին որ ես հառաչում եմ, և՛յ մխիթարիչ չունիմ. իմ բոլոր թշնամիները լսեցին իմ թշուառութիւնը, ուրախացան որ դու արիր. դու բերեցիր այն օրը որ կանչեցիր, որ նորանք էլ ինձ պէս դառնան։
22 Նորանց բոլոր չարութիւնը քո առջևը գայ, և նորանց այնպէս արա ինչպէս ինձ արիր իմ բոլոր յանցանաց համար, վասն զի իմ հառաչանքները շատ են և սիրտս նուաղած է։

ԳԼ. Բ

1 Ո՛նչպէս է Տէրը ամպով պատել Սիոնի աղջկանը իր բարկութիւնովը, երկնքից գցեց երկրի վերայ Իսրայէլի փառքը, և չյիշեց իր ոտքերի պատուանդանը իր բարկութեան օրը։
2 Խորտակեց Տէրը առանց խնայելու Յակոբի բոլոր բնակարանները, քանդեց իր բարկութիւնովը Յուդայի աղջկան ամրոցները, տափով տուաւ, ապականեց թագաւորութիւնն ու նորա իշխանները։
3 Իր բորբոքած բարկութիւնովը փշրեց Իսրայէլի բոլոր եղջիւրը,

եւ դարձրեց նորա ալ ձեռքը Թշնամու երեսից, և վառուեցաւ կրակի բոցի պէս Յակոբի մէջ կերաւ շուրջանակի։

4 Իր աղեղը լարեց Թշնամու պէս, կանգնեց իր աջովը նեղիչի նման, և կոտորեց բոլոր աչաց հաճելի բաները. Սիօնի աղջկանց վրանը ածեց կրակի պէս իր բարկութիւնը։

5 Տէրը Թշնամու պէս եղաւ, կործանեց Իսրայէլին, կործանեց նորա բոլոր պալատները, փչացրեց նորա բերդերը, և շատացրեց Յուդայի աղջկան մէջ ողբն ու կոծը։

6 Հարատահարեց այգու պէս իր տանդը, նորա ժողովատեղին փչացրեց, Տէրը մոռացրեց Սիօնի մէջ տօնը և շաբաթը, և անարգեց իր բարկութեան ցասումովը թագաւորին ու քահանային։

7 Տէրը մերժեց իր սեղանը, պղծեց իր սրբարանից, յանձնեց Թշնամու ձեռքը նորա պալատների պարիսպները. ձայն տուին Տիրոջ տանը տօնի օրուան պէս։

8 Տէրը խորհեց Սիօնի աղջկան պարիսպը քանդել, քաշեց լարը, եւ չդարձրեց իր ձեռքը կործանելուց, պատնէշն ու պարիսպը սուգ անել տուաւ, միասին տրտմեցին։

9 Տախը մտան նորա դուռները. փչացրեց ու փշրեց նորա նիգերը, նորա թագաւորն ու նորա իշխանները ազգերի մէջ են. օրէնք չկայ. նորա մարգարէներն էլ չեն տեսիլք գտնում Տիրոջից։

10 Հողի վերայ նստել են լռել են Սիօնի աղջկան ծերերը. փոշի բարձրացրին իրանց գլխի վերայ, քուրձեր հագան, իրանց գլուխը գետինը իջեցրին Երուսաղէմի կոյսերը։

11 Աչքերս մաշուեցան արտասուքով, աղիքներս բորբոքուել են, լեարդս գետինը թափուեցաւ իմ ժողովրդի աղջկան բեկման համար, երեխաներն ու կաթնակերները քաղաքի հրապարակներումը նուաղելիս։

12 Իրանց մայրերին ասում են.

Ո՞ւր է ցորենն ու գինին, քաղաքի հրապարակներումը վիրաւորուածների պէս նուաղելիս, և իրանց հոգին իրանց մայրերի գրկումը ասանդելիս։

13 Քեզ ի՞նչ վկայեմ, քեզ ի՞նչ օրինակ բերեմ, ով Երուսաղէմի աղջիկ, քեզ ի՞նչ նմանութիւն բերեմ որ քեզ մխիթարեմ, ով Սիօնի կոյս աղջիկ. վասն զի քո կոտրածը մեծ է ծովի պէս, ո՞վ կ'բժշկէ քեզ։

14 Քո մարգարէքը քեզ համար սուտ ու անհամ տեսիլքներ տեսան, քո անօրէնութիւնը բաց չարին, որ քո գերութիւնը եւս դարձնէին, և քեզ համար սուտ պատգամներ ու աքսորանքներ տեսան։

15 Ծափ են տալիս քեզ վերայ բոլոր ճանապարհով անցնողները, սուլում են և իրանց գլուխը շարժում Երուսաղէմի աղջկան վերայ, սո՞ է այն քաղաքը, որին ասում էին՝ Գեղեցկութեան կատարելութիւն, բոլոր երկրի ուրախութիւն։

16 Իրանց բերանը բաց արին քեզ վերայ քո բոլոր թշնամիները, սուլեցին և ատամ կրճտեցին ու ասացին. Կուլ տուինք. հէնց սա է մեր ապասած օրը. գտանք, տեսանք։

17 Տէրը կատարեց իր խորհածը, լրացրեց իր խօսքը որ պատուիրեց առաջի օրերից. քանդեց և չխնայեց, և ուրախացրեց քեզ վերայ քո թշնամուն. բարձրացրեց քո նեղիչների եղջիւրը։

18 Նորանց սիրտն աղաղակեց դէպի Տէրը. ով Սիօնի աղջկան պարիսպ, գետի պէս արտասուք թափիր ցերեկ ու գիշեր, քեզ դադար մի տար, աչքիդ բիբը թող չհանգստանայ։

19 Վեր կաց աղաղակիր գիշերով՝ պահերի սկզբումը. սիրտդ ջրի պէս թափիր Տիրոջ երեսի առջեւ. դէպի նորան բարձրացրու ձեռքերդ քո երեխաների հոգիների համար, որոնք սովից նուաղում են բոլոր փողոցների գլխին։

20 Նայիր, ով Տէր, և տես, ո՞ւմ

եա այսպէս ասել. մի՞թէ կանայք իրանց պտուղը՝ գրկած երեխաներին ուտեն. Տիրոջ սրբարանութեան ապանութի՞ն քահանան ու մարգարէն։

21 Գետնի վերայ պառկեցին դրսում տղան ու ծերը. իմ կոյսերն ու իմ երիտասարդները սրով ընկան, սպանեցիր քո բարկութեան օրուըմը, մորթեցիր, չխնայեցիր։

22 Տօնի օրուայ պէս կանչեցիր իմ վախերը շուրջանակի. եւ Տիրոջ բարկութեան օրը չեղան պրծնող ու ազատուող, ինչ որ գրկել ու մեծացրել էի, իմ թշնամին նորանց բնաջինջ արաւ։

ԳԼ. Գ

1 Ես այն մարդն եմ, որ տառապանք տեսայ նորա բարկութեան գաւազանովը։

2 Ինձ տարաւ ու մեն մնեց խաւարուըմ և ոչ թէ լոյսի մէջ։

3 Հէնց ինձ դէմ դարձաւ, ձեռքը դարձրեց բոլոր օրը։

4 Մաշեց մսերմինս ու մորթս, կոտրատեց ոսկորներս։

5 Ինձ դէմ շինեց և շրջապատեց դառնութիւնով ու տառապանքով։

6 Մութ տեղերուըմ ինձ նստեցրեց յաւիտենական մեռելների պէս։

7 Եռևիցս ցանցով պատեց որ դուրս չգամ, ծանրացրեց իմ շղթաները։

8 Եթէ աղաղակեմ էլ և գոչեմ, նա արգելեց իմ աղօթքը։

9 Նա պատեց իմ ճանապարհները տաշած քարերով, ծռեց իմ շաւիղները։

10 Նա ինձ համար դարանակալ արջ է, մի առիւծ՝ թաքուն տեղերուըմ։

11 Նա խոտորեցրեց իմ ճանապարհները, ինձ ցիրուցան արաւ, ինձ ամլի շինեց։

12 Լարեց իր աղեղը և ինձ կանգնեցրեց նետի նպատակի պէս։

13 Իմ երիկամունքների մէջ կոխեց իր նետերը։

14 Ես ծաղր եղայ իմ բոլոր ժողովրդին, նորանց երգը բոլոր օրը։

15 Ինձ կշտացրեց դառնութիւններով, օշինդը խմեցրեց ինձ։

16 Եւ կոտրատեց խիճերով իմ ատամները, ինձ մոխիրը դրաւ։

17 Այսպէս հեռացրիր իմ անձը խաղաղութիւնից, բարիքը մոռացել եմ։

18 Եւ ասացի՝ կորաւ իմ զօրութիւնը և իմ ակնկալութիւնը Տիրոջից։

19 Յիշիր իմ տառապանքը ու իմ թշուառութիւնը, օշինդը և դառնութիւնը։

20 Լաւ յիշում է իմ հոգին և խոնարհվում է ինձանում։

21 Սրանք ես իմ միտքն եմ բերում, ուրեմն և յոյս ունիմ։

22 Տիրոջ ողորմութիւններն են, որ չվերջացանք, վասն զի չպակասեցան նորա գթութիւնները։

23 Նորանոր են ամեն առաւօտ, մեծ է քո հաւատարմութիւնը։

24 Իմ բաժինը Տէրն է, ասաց իմ հոգին, սորա համար նորան եմ յուսալու։

25 Բարի է Տէրը իրան յուսացողներին՝ այն անձին որ նորան որոնում է։

26 Լաւ է յուսալ և ապաւել լռութիւնով Տիրոջ փրկութեանը։

27 Լաւ է մարդուս համար, որ լուծը իր երիտասարդութիւնումը կրէ։

28 Առանձին կ'նստէ և կ'լռէ, երբ որ բեռ դրուի նորա վերայ։

29 Նա իր բերանը հողին է դնում, գուցէ յոյս կ'լինի։

30 Նա իր ծնօտը տալիս է նորան զարկողին, կշտանում է նախատինքով։

31 Վասն զի Տէրը չի մերժիլ յաւիտեան։

32 Այլ թէև ցաւեցնէ էլ, դարձեալ կ'գթայ իր ողորմութեանց շատութեան չափ։

33 Վասն զի նա 'ի սրտէ չէ նեղացընում և տրտմեցնում մարդկանց որդիներին։

34 Իր ոտքերի տակին կոխ տալ երկրի ամեն կապուտծներին,

35 Մարդու իրաւունքը ծռել
Բարձրելոյն երեսի առջև,
36 Մարդուս անիրաւութիւն ա-
նել իր դատումը, Տէրը չէ՞ տես-
նում։
37 Ո՞վ է նա որ ասէ, և կատար-
ուի, որ Տէրը չէ հրամայել։
38 Բարձրելոյն բերանից չէ՞ն
գուրս գալիս չարիքն ու բա-
րիքը։
39 Ի՞նչ է տրտնջում ապրող մար-
դը՝ մարդը իր մեղաց մէջ։
40 Քննենք մեր ճանապարհները և
փորձենք, և եա դառնանք Տի-
րոջը։
41 Բարձրացնենք մեր սրտերը ձեռ-
քերի մէջ դէպի երկինքում լինող
Աստուածը։
42 Մենք յանցանք արինք և ա-
պստամբեցինք. դու չներեցիր։
43 Ծածկեցիր բարկութիւնով և
մեզ հալածեցիր, սպանեցիր ու
չխնայեցիր։
44 Քեզ ամպով ծածկեցիր, որ ա-
ղօթք անց չկենայ։
45 Աւելուք և անարդ արիր մեզ
ազգերի մէջ։
46 Մեր բոլոր թշնամիները լայն
բացել են իրանց բերանը մեզ
դէմ։
47 Վախ և փիհ եղաւ մեզ հա-
մար՝ աւերումն ու կատարած։
48 Ջրի գետեր է թափում իմ
աչքը իմ ժողովրդի աղջկան բեկ-
ման համար։
49 Իմ աչքը բղխում է և չէ դա-
դարում՝ հանգստութիւն չունի։
50 Մինչև որ նայէ և տեսնէ Տէրը
երկնքիցը։
51 Աչքս ցաւում է հոգով չափ
իմ քաղաքի բոլոր աղջկանց հա-
մար։
52 Որսալու են աշխատում ինձ
ճնճղուկի պէս զուր տեղը իմ
թշնամիները։
53 Գուբի դատապարտեցին իմ
կեանքը, և քար գցեցին ինձ վե-
րայ։
54 Ջուրերն անցան գլխովս. ես
ասացի թէ՝ կորուեցայ։
55 Ես կանչեցի քո անունը, ով
Տէր, խորագոյն գուբիցը։
56 Ձայնս լսեցիր, մի ծածկիր ա-
կանջդ իմ հառաչանքին՝ իմ ա-
ղաղակին։
57 Դու մօտեցար՝ ես քեզ կան-
չած օրը, ասացիր՝ Մի վախե-
նար։
58 Իմ հոգու դատը վարեցիր, ով
Տէր, դու փրկեցիր իմ կեանքը։
59 Ով Տէր, դու տեսար ինձ եղած
զրկանքը, պաշտպանիր իմ դատը։
60 Դու տեսար նորանց բոլոր վը-
րէժխնդրութիւնը՝ նորանց բոլոր
դիտաւորութիւնքը ինձ դէմ։
61 Լսեցիր նորանց նախատինքը,
ով Տէր, նորանց բոլոր դիտաւո-
րութիւնքը ինձ դէմ։
62 Իմ թշնամիների շրթունքները
և նորանց ամեն օր արած մտած-
մունքները ինձ դէմ։
63 Նորանց նստելն ու նորանց վեր
կենալը դիտիր, ես նորանց երգն
եմ։
64 Նորանց հատուցում տուր, ով
Տէր, նորանց ձեռաց գործքերի
համեմատ։
65 Նորանց սրտի մթութիւն տուր,
քո անէծքը նորանց վերայ լինի։
66 Հալածիր նորանց քո բարկու-
թեամբը, և նորանց բնաջինջ ա-
րա երկնքի տակից, ով Տէր։

Գ.Լ. Գ

1 Ինչպէս է մթացել ոսկին,
փոխուել է մաքուր ոսկին. թափ-
ուած են սուրբ քարերը ամեն
փողոցների գլխին։
2 Սիոնի որդիքը պատուական՝
մաքուր ոսկու հատուսար, ին-
չպէս համարուեցան իրրև ցեխի
անոթներ՝ բրուտի ձեռաց գործ։
3 Վիշապներն էլ են ծիծր հան-
ում իրանց ձագերին կաթ տա-
լիս, իմ ժողովրդի ազջիկը ան-
գութ է դառել անապատի ջայ-
լամների պէս։
4 Կամնակերի լեզուն ծարաւու-
թիւնից կպաւ իր քիմքին. երե-
խաները հաց ուզեցին, հաց կըտ-
րող չկայ նորանց համար։
5 Հաճոյ բաներ ուտողները քան-
դուած նստել են փողոցներում,
որդան կարմիրի վերայ մեծացած-
ները աղբանոցները գրկեցին։

6 Եւ մեծ եղաւ իմ ժողովրդի աղջկան անօրէնութիւնը Սոդոմի մեղքից, որ հիմնայատակ եղաւ յանկարծակի, և նորան ձեռք չէր դպել։
7 Պաքուր էին նորա աղնուականները ձիւնից, սպիտակ էին կաթից. կարմիր էին մարմնով բուսատերից, շափիւղայ էր նորանց կերպարանքը։
8 Ածուխից սև եղաւ նորանց դէմքը, չեն ճանաչվում փողոցներում. նորանց մորթը նորանց ոսկորին է կպել, չորացել է փայտի պէս։
9 Լաւ էին սուրից սպանուածները քան թէ սովից սպանուածները, վասն զի նորանք մնաշուեցան՝ ապարակի պտուղներին կարօտ։
10 Ողորմած կանանց ձեռքերը եփեցին իրանց զաւակներին, նորանց համար կերակուր եղան իմ ժողովրդի աղջկան բեկման ժամանակ։
11 Տէրը կատարեց իր բարկութիւնը, թափեց իր բորբոքած բարկութիւնը, և նա կրակ վառեց Սիոնում, և նա լափեց նորա հիմունքները։
12 Չհաւատացին երկրի թագաւորները և աշխարհի բոլոր բնակիչները, թէ նեղիչն ու թշնամին կ'մտնեն Երուսաղէմի դռները։
13 Նորա մարգարէների մեղքերից, նորա քահանաների անօրէնութիւններից, որոնք թափում էին արդարների արիւնը նորա մէջ,
14 թափառեցին իրեւ կոյրեր փողոցներում. պղծուեցան արիւնով, որ կարող չէին դպչել նորանց հագուստներին։
15 Քաշուեցէք, պիղծեր, կանչում էին նորանց, քաշուեցէք, քաշուեցէք, մի դպչիք. նորանք էլ փախան և թափառեցին. ասացին ազգերի մէջ Այլևս չեն բնակելու։
16 Տիրոջ բարկութիւնը ցրուել է նորանց, էլ չէ նայելու նորանց վերայ. քահանաների երեսը չէ յարգեցին, ծերերին չգթացին։
17 Տակաւին մնաշում էին մեր աչքերը զուր տեղը մեր օգնութեանը ապաւէնով, մեր դիտարաններում դիտում էինք մի ազգի, որ չէր օգնել։
18 Նորանք որսացին մեր քայլերը, որ չգնանք մեր հրապարակներում, մեր վերջը մօտեցաւ, մեր օրերը լեցուեցան. իրաւ եկել է մեր վերջը։
19 Թեթևաշարժ են մեր հալածողները երկնքի արծիւներից, լեռանց վերայ մեզ հալածեցին, դաշտումը դարան սարքեցին մեզ համար։
20 Մեր *կենաց շունչը՝ Տիրոջ օծեալը բռնուեցաւ նորանց որոգայթներումը, որի համար մենք ասում էինք. Նորա հովանուտակ կապրենք ազգերի մէջ։
21 Ցնծա և ուրախ եղիր, ով Եդոմի աղջիկ, որ բնակում ես Հուս երկրումը, քեզ էլ կ'անցնէ բաժակը, կ'արբես և ինքդ քեզ կ'մերկացնես։
22 Քո անօրէնութիւնը պիտի վերջանայ, ով Սիոնի աղջիկ, էլ գերի չի տանիլ քեզ. քո անօրէնութեանը կ'այցելէ, ով Եդոմի աղջիկ, կ'յայտնէ քո մեղքերը։

ԳԼ. Ե

Յիշիր, ով Տէր, թէ մեզ ինչ եղաւ, և տես մեր անարգանքը։
2 Մեր ժառանգութիւնը անցաւ օտարներին, մեր տուները օտարականներին։
3 Որբեր եղանք առանց հօր, մեր մայրերը որբևայրիների նման են։
4 Մեր ջուրը փողով խմեցինք, մեր փայտը գնով է գալիս։
5 Մեր վզին ջղէ-ելով հալածվում ենք, վաստակեցինք ու հանգստութիւն չունինք։
6 Եգիպտոսին ձեռք մեկնեցինք, Ասորեստանին էլ, հացով կշտանալու համար։
7 Մեր հայրերը մեղք գործեցին, և չկան, իսկ մենք նորանց անօրէնութիւնները կրում ենք։
8 Ծառաներ տիրեցին մեզ վերայ, նորանց ձեռքից ազատող չկայ։
9 Մեր անձի վտանգով բերինք մեր

հացը, անապատումը եղող սուրբ պատճառով։
10 Մեր մորթը փուռի պէս սեւացաւ, սովի տանջանաց պատճառով։
11 Կանանցը Սիոնի մէջ բռնադատեցին, կոյսերին Յուդայի քաղաքներուն։
12 Իշխանները կախուեցան իրանց ձեռքովը, ծերերուն երեսը չյարգուեցան։
13 Երիտասարդները երկանաքարեր վեր առին, և տղայքը փայտի տակին ընկան։
14 Ծերերը դադրեցին դռնիցը, երիտասարդները՝ իրանց երգելուցը։
15 Դադրեց մեր սրտի ուրախութիւնը, մեր պարը սուգի փոխուեցաւ։
16 Վայ ընկաւ մեր գլխէն թագը, վա՛յ մեզ, որ մեղանչել ենք։
17 Սորա համար մեր սիրտը նուաղած է, որոնց համար խաւարեցան մեր աչքերը։
18 Սիոն լեռան համար, որ աւերակ է, աղուէսներ են մեն գալիս նորանում։
19 Դուն, ով Տէր, յաւիտեան կաս, քո աթոռը ազգից ազգ է։
20 Ինչո՞ւ ես մեզ յաւիտեան մոռանում, մեզ ձգում ես երկար օրերով։
21 Մեզ դարձրու, ով Տէր, դէպի քեզ, և մենք կ'դառնանք. նորոգիր մեր օրերը առաջուայ պէս։
22 Աւ՛լ դուն մեզ բոլորովին մերժեցիր, մեզ վերայ շատ բարկացար։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ եղաւ երեսուներորդ տարուայ չորրորդ ամսուայ հինգին, երբոր ես գերիներուն մէջ էի Քոբար գետի մօտ, բացուեցաւ երկինքը, և ես տեսայ Աստուծոյ
2 տեսիլքները։ Ամսի հինգին այսինքն Յոյակիմ թագաւորի գե-
3 րեթեան հինգերորդ տարին, եղաւ Տէրոջ խօսքը Բուզիի որդի Եզեկիել քահանային Քաղդէացոց երկրումը Քոբար գետի մօտ, և այնտեղ Տէրոջը ձեռքը նորա վերայ եղաւ։
4 Եւ տեսայ և ահա մի մրրկայից հողմ էր գալիս հիւսիսից՝ մեծ ամպ և բորբոքուած կրակ, և մի պայծառութիւն նորա շուրջը. և նորա միջիցը մի հրահոլքի
5 կերպարանք կրակի միջիցը։ Եւ նորա միջիցը չորս կենդանիների նմանութիւնք. և նորանց երեւոյթը սա էր. նորանց կերպարանքը
6 մարդու նմանութիւն ունէին։ Եւ չորս երես ունէր ամեն մէկը, և չորս թեւ ունէր նորանց ամեն մէ-
7 կը։ Եւ նորանց ոտքերը ուղիղ ոտքեր էին. և նորանց ոտքերի թաթը զուարակի ոտքերի թաթին նման, և փայլում էին թեւթեւ պղնձի կերպարանքի պէս։
8 Եւ մարդու ձեռքեր կային նորանց թեւերի տակին նորանց չորս քառակողմներին. և չորան էլ երեսներ ու թեւեր ունէին։
9 Մէկի թեւերը կպած էին մեւսինին. շուռ չէին տալիս երբոր նորանք գնում էին. ամեն մէկը ուղիղ իր դիմացն էր գնում։
10 Եւ նորանց երեսների նմանութիւնը մարդու երես էր, և առիւծի երես աջ կողմից այն չորսի համար, և եզի երես ձախ կողմից այն չորսի համար. և արծիւի երես չորան էլ ունէին։
11 Եւ նորանց երեսները և թեւերը բաժանուած էին վերից, ամեն մէկի երկուսը կպած էին իրար և երկուսովը ծածկում էին իրանց մարմինները։
12 Եւ ամեն մէկը գնում էր իր երեսի դիմացը, ուր որ հոգին էլ լինում որ գնայ՝ նորանք գնում էին. շուռ չէին տալիս երբոր գնում էին։

13 Եւ կենդանիների նմանութիւնը՝ նորանց կերպարանքը կրակի վառուած կայծերի պէս էր ինչպէս ջահերի կերպարանք. նա մանէր գալիս կենդանիների մէջ, և փայլուն էր կրակը. և կրակից կայ-
14 ծակներ էին դուրս գալիս։ Եւ կենդանիները վազում և դառնում էին փայլատակմանց կերպարանքով։
15 Եւ մտիկ տուի կենդանիներին, և ահա մէկ անիւ կար գետնի վերայ կենդանիների կշտին դէպի
16 քառակողմը։ Անիւների կերպարանքը և նորանց շինուածքը տակեքարի պէս էր, և այն չորան էլ մէկ նմանութիւն ունէին. և նորանց կերպարանքն ու շինուածքը իբրև թէ անիւի մէջ լինէր։
17 Գնալիս իրանց չորս քառակողմանց վերայ էին գնում, շուռ չէին տալիս երբոր գնում էին։
18 Եւ նորանց շրջանակները բարձր էին և ահեղ էին. և նորանց չորս շրջանակները լիքն էին աչքերով շուրջանակի։
19 Եւ կենդանիները գնալիս անիւները գնում էին նորանց կշտին, և կենդանիները երկրի վերայից բարձրանալիս անիւները բարձրանում էին։
20 Դէպի ուր որ հոգին էր լինում գնալու համար՝ գնում էին, ուր որ հոգին գնար. և անիւները բարձրանում էին նորանց կողքին, վասն զի կենդանու ոգին կար անիւների մէջ։
21 Նորանք գնալիս՝ գնում էին, և նորանք կանգնելիս՝ կանգնում էին, և նորանք երկրի վերայից բարձրանալիս՝ անիւները բարձրանում էին նորա կողքին, վասն զի կենդանու ոգին
22 կար անիւների մէջ։ Եւ կենդանու գլուխների վերայ մի նմանութիւն հաստատութեան սհաւոր ակնվանիի կերպարանքի նման, տարածուած վերևից նորանց գլուխ-
23 ների վերայ։ Եւ հաստատութեան տակին նորանց թևերը ուղիղ փոփչէմ էին դէպի մէկմէկ. ամեն մէկը երկուսն ունէր, որով ծածկում էր և միւսը ունէր երկուսը, որով նորանք ծածկում
24 էին իրանց մարմինները։ Եւ ես լսեցի նորանց թևերի ձայնը շատ ջրերի ձայնի պէս՝ Ամենակարողի ձայնին պէս, երբոր գնում էին, աղմուկի ձայնի պէս՝ բանակի ձայնի պէս. կանգնելիս կախ էին գցում իրանց թևերը։ Եւ մի 25
ձայն եղաւ այն հաստատութեան վերևից որ նորանց գլխի վերայ էր. (նորանք կանգնելիս կախ էին գցում իրանց թևերը։)

Եւ այն հաստատութենից վեր, 26
որ նորանց գլխի վերայ էր, շափիւղայ քարի կերպարանքով աթոռի նման մի բան կար, և այն աթոռի նմանի վերայ մի նմանութիւն կար մարդու կերպարանքով նորա վերայ վերևից։ Եւ ես 27
մտիկ տուի հրահալքի երևոյթի պէս կրակի կերպարանքով ներսևանից շուրջանակի նորա երանքի կերպարանքից մինչև վեր, և նորա երանքի կերպարանքից դէպի ցած տեսայ կրակի կերպարանքի պէս, և պայծառութիւն նորա շուրջը։ Ծիածանի կերպարանքի 28
նման, որ լինում է ամպում անձրևի օրը, այնպէս էր այն պայծառութեան կերպարանքը շուրջանակի։ Սա Տիրոջ փառաց նմանութեան կերպարանքն էր. և ես տեսայ ու վայր ընկայ երեսիս վերայ. և մի ձայն լսեցի որ խօսում էր։

ԳԼ. Բ

Եւ ինձ ասաց, Որդի մարդոյ, 1
կանգնիր ոտքերիդ վերայ, որ քեզ հետ խօսեմ։ Եւ հոգի մտաւ ինձ մէջս 2
հէնց որ նա խօսեց ինձ հետ, և ինձ կանգնեցրեց ոտքերիս վերայ. և ես լսեցի նորան, որ խօսում էր ինձ հետ։ Եւ նա ասաց ինձ. 3
Որդի մարդոյ, ես քեզ ուղարկում եմ Իսրայէլի որդիանց մօտ, այն ինձ դէմ ապստամբող ապստամբ ազգերի մօտ. նորանք և նորանց հայրերը յանցաւոր եղան ինձ դէմ մինչև իսկ այս օրը. Եւ որդիքը պինդերես և 4
խստասիրտ են. ես քեզ նորանց մօտ եմ ուղարկում. և ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր Ե-

5 Հովան։ Եւ նորանք՝ թէ լսեն թէ զանց անեն, վասն զի նորանք ապստամբ տուն են, և կ'իմանան որ մարգարէ է եղել իրանց մէջը։
6 Իսկ դու, որդի մարդոյ, մի վախենար նորանցից, և նորանց խօսքերից էլ մի վախենար, թէ և մօտ տատասկներ և փուշեր էլ լինին, և դու կարիճների վերայ ես բնակուում. նորանց խօսքերից էլ մի վախենար և նորանց երեսից էլ մի զարհուրիր, վասն զի
7 նորանք ապստամբ տուն են։ Եւ իմ խօսքերն ասիր նորանց՝ թէ լսեն թէ զանց անեն, վասն զի նորանք ապստամբ են։
8 Իսկ դու, որդի մարդոյ, լսիր թէ ես ինչ եմ ասում քեզ, ապստամբ մի լինիր այն ապստամբ տան պէս. բաց բերանդ և կեր
9 ինչ որ ես տալիս եմ քեզ։ Եւ ես մտիկ արի և ահա մի ձեռք կար դէպի ինձ մեկնուած, և ահա նորանում մի գրքի տոմս։
10 Եւ նա տարածեց նորան իմ առջև, և նա գրուած էր առջևից ու ետևից. և նորա վերայ գրուած էին ողբեր և հառաչանք ու վայ։

ԳԼ. Գ

1 Եւ ասաց ինձ. Որդի մարդոյ, ինչ որ գտար՝ կեր, կեր այս տոմարը, և գնա խօսիր Իսրայէլի տան
2 հետ։ Եւ ես բացի բերանս, և նա ինձ ուտեցրեց այն տոմարը։
3 Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, փորդ կերակրիր և աստամբաղ լցրու այս տոմարով որ ես քեզ եմ տալիս։ Եւ ես կերայ նորան, և մեղրի պէս քաղցր էր իմ բերանումն։
4 Եւ նա ասաց. Որդի մարդոյ, գնա մտիր Իսրայէլի տունը և խօսիր նորանց հետ իմ խօսքերով.
5 վասն զի դու դժուարիմաց և ծանրալեզու ժողովրդի մօտ չես ուղարկվում, այլ Իսրայէլի
6 տան մօտ. Ոչ թէ դժուարիմաց և ծանրալեզու շատ ժողովուրդների մօտ, որոնց խօսքերը դու չես հասկանում. այլ նորանց մօտ եմ ուղարկել քեզ, նորանք
7 քեզ կ'հասկանան։ Բայց Իսրայէլի տունը չեն ուզելու քեզ լսել, վասն զի նորանք չեն ուզում ինձ լսել. որովհետև բոլոր Իսրայէլի տունը ճակատապինդ և խստասիրտ են։
8 Ահա ես պինդ եմ շինում քո երեսը նորանց երեսի դէմ, և ճակատդ ամուր նորանց ճակատի դէմ։
9 Անդամանդի պէս վէմից պինդ եմ շինելու ճակատդ, նորանցից մի վախենար, և մի զարհուրիր նորանց երեսից, վասն զի նորանք ապստամբ տուն են։
10 Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, այս ամեն խօսքերս որ խօսում եմ քեզ սրտիդ մէջ դիր և ականջներովդ լսիր.
11 Եւ գնա մտիր գերիների մէջ քո ժողովրդի որդիների մօտ և խօսիր նորանց հետ և ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր Եհովան, թէ լսեն թէ զանց անեն։
12 Եւ մի հողմ ինձ բարձրացրեց և լսեցի իմ ետևից մի մեծ որոտման ձայն՝ Օրհնեալ է Տիրոջ փառքը իր տեղիցը,
13 Եւ կենդանիների իրար դպչող թևերի ձայնը և նորանց կողքի անիւների ձայնը և մեծ որոտման ձայնը։
14 Եւ հողմը ինձ բարձրացրեց և ինձ վեր առաւ, և ես գնում էի դառնապէս իմ հոգու բորբոքումովը. և Տիրոջ ձեռքը ինձ վերայ ամուր էր։
15 Եւ ես եկայ Թելաբիբ գերիների մօտ, որոնք բնակում էին Քորաբ գետի մօտ. և ուր որ իրանք նստած էին՝ ես էլ նստեցի այնտեղ եօթն օր նորանց մէջ ապշած։
16 Եւ եօթն օրից յետոյ Տիրոջ
17 խօսքը եղաւ ինձ ասելով. Որդի մարդոյ, ես քեզ դէտ եմ դրել Իսրայէլի տան համար. և դու պէտք է իմ բերանից խօսք լսես և զգուշացնես նորանց իմ կողմանէ։
18 Երբոր ես ամբարշտին ասեմ՝ Անպատճառ պէտք է մեռնես, և դու նորան չզգուշացնես և չխօսես որ զգուշացնես ամբարշտին իր չար ճանապարհից որ ապրէ. այն ամբարիշտը իր անօրէնութիւնով կ'մեռնէ, բայց նո-

բա արիւնը քո ձեռքից պիտի
19 պահանջեմ։ Իսկ եթէ դու զգուշացնես ամբարշտին, և նա ետ
չդառնայ իր ամբարշտութիւնից և իր չար ճանապարհից. նա իր
անօրէնութիւնովը կ'մեռնէ, իսկ
20 դու կ'ազատես քո անձը։ Եւ երբոր արդարը ետ դառնայ իր
արդարութիւնից և չարութիւն
անէ, և ես գայթակղութիւն դնեմ նորա առջև և նա մեռնէ,
որովհետև դու նորան չզգուշացրիր. նա իր մեղքովը կ'մեռնէ և
չի յիշուիլ նորա արած արդարութիւնը, իսկ նորա արիւնը քո
21 ձեռքից պիտի պահանջեմ։ Եւ եթէ դու զգուշացնես արդարին,
որ չմեղանչէ արդարը և նա էլ չմեղանչէ, նա անպատճառ պիտի
ապրէ, որովհետև զգուշացրուել է, և դու կ'ազատես քո անձը։
22 Եւ այնտեղ Տիրոջ ձեռքը եղաւ ինձ վերայ և ասաց ինձ.
Վեր կաց գնա դուրս՝ հովիտը,
և այնտեղ կ'խօսեմ քեզ հետ։
23 Եւ ես վեր կացայ և գնացի դուրս
հովիտը, և ահա այնտեղ կանգնած էր Տիրոջ փառքը այն փառքի պէս որ տեսել էի Քորաբ
գետի մօտ, և ես վայր ընկայ ե-
24 րեսիս վերայ։ Եւ հոգի եկաւ ինձ
և ինձ կանգնեցրեց ոտքերիս վերայ, և խօսեց ինձ հետ և ասաց
ինձ՝ Գնա թաք կաց քո տունը։
25 Եւ դու, որդի մարդոյ, ահա
քեզ վերայ կապանքներ են դնելու և քեզ կ'ապելու են նորանցով, որ դու դուրս չգաս նորանց
26 մէջ։ Եւ ես քո լեզուդ քիմքիդ
եմ կպցնելու, և դու պիտի համրանաս, և դու նորանց համար
խրատող մարդ չես լինելու, վասն զի նորանք ապստամբ տուն
27 են։ Եւ ես քեզ հետ խօսելիս կը
բանամ քո բերանը, և դու նորանց ասես. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Լսողը լսէ, զանց անողը զանց անէ, վասն զի նորանք ապստամբ տուն են։

ԳԼ. Դ

1 Եւ դու, որդի մարդոյ, ա՛ր ազ-

իւս առ քեզ համար, և նորան
դիր առջևդ, և գծագրիր նորա
վերայ Երուսաղէմ քաղաքը։ Եւ 2
նորա վերայ պաշարում շինիր, և
նորա դէմ մարտկոցներ հիմնիր,
և նորա դէմ պատնէշ դիր, և
բանակներ շինիր նորա դէմ, և
խոյեր դիր նորա դէմ շուրջանակի։ Եւ դու քեզ համար մի եր- 3
կաթի տապակ առ և նորան դիր
իբրև երկաթի պարիսպ քո մէջ
և քաղաքի մէջ, և երեսդ դարձրուս դէպի նորան, և նա լինի պաշարման մէջ և նորան պաշարիր.
սա մէկ նշան լինի Իսրայէլի տան
համար։

Եւ դու պառկիր քո ձախ կող- 4
քին, և նորա վերայ դիր Իսրայէլի տան անօրէնութիւնը, այն
օրերի թուովը, որ դու կ'պառկես նորա վերայ, պիտի կրես նո-
րանց անօրէնութիւնը։ Եւ ես 5
քեզ տուի նորանց անօրէնութեան տարիները օրերի թուով
երեք հարիւր իննսուն օր. և դու
կ'կրես Իսրայէլի տան անօրէնութիւնը։ Եւ երբոր սորանց վեր- 6
ջացնես, այն ժամանակ կրկին
պառկիր քո աջ կողքին, և կրիր
Յուդայի տան անօրէնութիւնը
քառասուն օր՝ ամեն մէկ տարուայ տեղ մէկ մէկ հատ օր եմ
տալիս քեզ։

Եւ դէպի Երուսաղէմի պաշար- 7
ումը ուղիղ երեսդ և քո մերկացրած բազուկը, և դու մարգարէացիր նորանց դէմ։ Եւ ես ա- 8
հա կապանքներ պիտի դնեմ քեզ
վերայ, որ դու մէկ կողքիցդ միւս
կողքիդ վերայ չդառնաս, մինչև
որ լրացնես քո պաշարման օրերը։

Եւ դու վեր առ քեզ համար 9
ցորեն, գարի, բակլայ, ոսպ,
կորեկ և հաճար, և նորանց
դիր մէկ ամանումի, և նորանց
հաց շինիր քեզ համար. այն օրերի թուով որ պառկած էիր քո
կողքին երեք հարիւր իննսուն օր
ուտես այն։ Եւ կերակուրդ, որ 10
պիտի ուտես, կշռով լինի՝ օրը
քսան սիկղ, ժամանակից ժամանակ ուտես այն։ Եւ ջուրը չա- 11
փով խմես՝ հինգերորդ

դը, ժամանակից ժամանակ խմես
12 այն։ Եւ գարեզէն նկանակներ
ուտես այն. և մարդու աղբով
թխես այն նորանց աչքի առջև։
13 Եւ Տէրը ասաց. Իսրայէլի որդիքը
սուրբ նման պիղծ պիտի ուտեն
իրանց հացը այն ազգերի մէջ,
14 ուր որ ես նորանց կ'աքսորեմ։ Եւ
ես ասացի. Ա՜հ, ով Տէր Ե-
հովայ, ահա իմ անձը պղծուած
չէ. և մեռելոտի ու գազանաբեկ
չեմ կերած իմ մանկութիւնից
մինչև հիմա, և բերանս պիղծ
15 միս չէ մտած։ Եւ ինձ ասաց.
Տես՝ արջառի քսակը ներշնակե-
ցի քեզ համար մարդու աղբի
տեղ, և հացդ նորա վերայ շի-
16 նիր։ Եւ ինձ ասաց. Որդի մար-
դոյ, ահա ես պիտի կոտրեմ Հա-
ցի ցուպը Երուսաղէմում, և նո-
րանք հացը կշռով և տագնա-
պով պիտի ուտեն, և ջուրը չա-
փով և ապշութեամբ պիտի խը-
17 մեն։ Վասն զի պիտի կարօտա-
նան հացի և ջրի, և պիտի ապ-
շեն իրար հետ, և պիտի հալու-
մաշ լինեն իրանց անօրէնութեան
մէջ։

ԳԼ. Ե

1 Եւ դու, որդի մարդոյ, քեզ
համար մի սուր թուր առ, քեզ
համար մի սափրիչի ածելի առ,
և անց կացրու գլխիդ վերայով
և մօրուքիդ վերայով, և քեզ
համար կշռարդով մի կշիռք առ
2 և նորանց բաժանիր։ Մի երրոր-
դը կրակով այրիր քաղաքի մէջ,
երբոր պաշարման օրերը լրանան,
և մի երրորդն առ և թուրով
կտորիր նորա շուրջը, իսկ մի եր-
րորդը ցրիւ տուր օդի մէջ, և ես
սուր պիտի մերկացնեմ նորանց
3 ետևից։ Եւ նորանցից մի սակաւ
թուով առ, և ծրարիր նորանց
4 քղանցքներիդ մէջ։ Եւ էլի առ
նորանցից և կրակը գցիր նորանց
և կրակով այրիր նորանց. նորա-
նից կրակ պիտի դուրս գայ բոլոր
Իսրայէլի տան համար։
5 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Այս Երուսաղէմը ես դրել
եմ ազգերի մէջ, և նորա շրջա-
կայքը երկիրներ են։ Բայց նա 6
ապստամբեց իմ իրաւունքների
դէմ ազգերից աւելի չարութիւն
գործելով, և իմ կանոնների դէմ
իր շրջակայքում եղող երկիրնե-
րից աւելի. վասն զի նորանք մեր-
ժեցին իմ դատաստանները և չը
գնացին իմ կանոններով։ Դորա 7
համար այսպէս է ասում Տէր Ե-
հովան. Որովհետև դուք աղմկե-
ցիք աւելի քան թէ ձեր շրջակայ-
քում եղող ազգերը՝ իմ կանո-
ներում չգնացիք, և իմ իրաւ-
ունքները չարիք, և ձեզ շրջապա-
տող ազգերի սովորութեանց պէս
էլ չարիք։ Դորա համար այսպէս 8
է ասում Տէր Եհովան. Ահա ես
էլ քեզ դէմ եմ, և քո մէջ
դատաստաններ պիտի անեմ, ազ-
գերի աչքի առջև։
Եւ քեզ այն բանը պիտի ա- 9
նեմ, որ նորա նմանը երբէք էլ
չեմ արած և չեմ էլ անիլ, քո
բոլոր գարշելութիւնների համար։
Դորա համար քո մէջ հայրերը 10
պիտի որդկանցը ուտեն, և որ-
դիքը պիտի իրանց հայրերին ու-
տեն, և քեզ դատաստաններ պի-
տի անեմ, և քո բոլոր մնացոր-
դը պիտի ցրիւ տամ բոլոր կող-
մերին։ Դորա համար կենդանի 11
եմ ես, ասում է Տէր Եհովան,
որովհետև դու պղծեցիր իմ սուր-
բարանը քո բոլոր պղծութիւննե-
րովը և քո բոլոր գարշելութիւն-
ներովը, ես էլ պիտի փչով կոտ-
րեմ և աչքս պիտի չխնայէ, և
ես էլ պիտի չողորմեմ։ Քո մի 12
երրորդը ժանտախտով պիտի
մեռնեն և սովով պիտի վերջա-
նան քո մէջ, և մի երրորդը սու-
րով պիտի ընկնեն քո շուրջը,
իսկ մի երրորդը ցրիւ պիտի տամ
բոլոր կողմերը և սուր պիտի մեր-
կացնեմ նորանց ետևիցը։ Եւ իմ 13
բարկութիւնը կ'կատարուի, և
պիտի հանգստացնեմ իմ սրտմ-
տութիւնը նորանց վերայ և վրէժ
պիտի առնեմ. և պիտի գիտե-
նան, որ ես Տէրս եմ խօսել իմ
նախանձովը, երբոր իմ բարկու-
թիւնը կատարեմ նորանց վերայ։

14 Եւ ես քեզ պիտի աւերմունքի և
անարգանքի մատնեմ քեզ շրջա-
պատող ազգերի մէջ առաջի
15 նոցի աչքի առջև։ Եւ դու անար-
գանք ու նախատինք, խրատ և
զարմացում պիտի դառնաս քեզ
շրջապատող ազգերի համար, երբ-
որ ես քեզ վերայ դատաստան-
ներ անեմ, բարկութիւնով և
սրտմտութիւնով և բարկութեան
պատիժներով. ես Տէրս եմ ասել։
16 Երբոր սովի չար նետերը նո-
րանց վերայ գցեմ, որ նոցա ա-
պականեն, որոնք ես պիտի գցեմ
ձեզ փչացնելու համար, սովն էլ
եմ աւելցնելու ձեզ վերայ, և
ձեր հացի ցուպը պիտի կոտրեմ։
17 Եւ ձեզ վերայ սով պիտի ու-
ղարկեմ և չար գազաններ, որ
քեզ անզաւակ անեն. և ժանտա-
խտ ու արիւն պիտի անցնէ քո
միջովը, և սուր պիտի բերեմ
քեզ վերայ. ես Տէրս եմ ասել։

ԳԼ. Զ

1 Եւ Տէրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, երեսդ
դարձրու դէպի Իսրայէլի լեառնե-
րը և մարգարէացիր նոցանից դէմ,
3 եւ ասիր. Ով Իսրայէլի լեառ-
ներ, լսեցէք Տէր Եհովայի խօս-
քը, այսպէս է ասում Տէր Եհո-
վան լեառներին ու բլուրներին,
ձորերին ու հովիտներին. Ահա
ես ձեզ վերայ պիտի բերեմ սուր.
և պիտի կորցնեմ ձեր բարձրա-
4 տանդակները. Եւ աւերակ պիտի
դառնան ձեր սեղանները և պիտի
փշրուին ձեր արեգական կուռ-
քերը, և ձեր սպանուածներին
պիտի գցեմ ձեր կուռքերի առ-
5 ջևը։ Եւ Իսրայէլի որդկանց դի-
ակները պիտի դնեմ իրանց կուռ-
քերի առջև, և պիտի ցրիւ տամ
ձեր ոսկորները ձեր սեղանների
6 շուրջերը։ Ձեր ամեն բնակու-
թիւններում քաղաքները պիտի
աւերակ դառնան, և բարձրա-
տանդակները՝ ամայանան. որպէս
զի աւերակ ու ամայի դառնան
ձեր սեղանները, և փշրուին ու
խափանուին ձեր կուռքերը, և
ձեր արեգական կուռքերը կոտր-
ուին և ձեր արարքները ջնջուին։
7 Եւ սպանուած պիտի վայր ընկնէ
ձեր մէջ, որ իմանաք թէ ես եմ
Տէրը։
8 Եւ ես աւելորդ պիտի թողեմ
որ մնան ձեզ համար սուրից ա-
զատուածներ ազգերի մէջ, երբոր
դուք ցրուած կ'լինէք երկիրնե-
րի մէջ։ Եւ ձեր ազատուածները
9 պիտի յիշեն ինձ ազգերի մէջ,
ուր որ նորանք գերի են տարուել,
որ կոտրեմ նորանց շնացող սիր-
տը, որ հեռացել էր ինձանից,
և նորանց աչքերը որոնք շնացան
իրանց կուռքերի ետևից. և նո-
րանք պիտի զզուին իրանցից այն
չարութեանց համար, որ արին
իրանց բոլոր պղծութիւնների նը-
կատմամբ։ Եւ պիտի իմանան, 10
որ ես եմ Տէրը, որ ի զուր չեմ
խօսել, թէ պիտի անեմ նորանց
այս չարիքը։ Այսպէս է ասում 11
Տէր Եհովան. Ձարկիր ձեռքերիդ
և ոտքերովդ տրոփիր, և ասիր.
Աւա՛ղ Իսրայէլի տան բոլոր չար
պղծութիւններին, որ սուրով,
սովով և ժանտախտով պիտի
ընկնեն։ Հեռուն ժանտախտով 12
պիտի մեռնէ, և մօտիկը սուրով
պիտի ընկնէ, և մնացածն ու պա-
շարուածը սովով պիտի մեռնէ,
և ես պիտի կատարեմ իմ բար-
կութիւնը նորանց վերայ։ Եւ պի- 13
տի գիտենաք որ ես եմ Տէրը,
երբոր նորանց սպանուածները կը
լինին իրանց կուռքերի մէջտեղը,
իրանց սեղանների շուրջերը,
բարձր բլուրի վերայ՝ լեռանց բո-
լոր գլխներին և ամեն կանաչ ծա-
ռի տակ և ամեն տերևախիտ
բեկինու տակ, այնտեղ ուր որ
անուշահոտ խունկ էին մատու-
ցանում իրանց ամեն կուռքերին։
Այսպէս իմ ձեռքը պիտի մեկ- 14
նեմ նորանց վերայ, և երկիրը
պիտի աւերակ ու աւերուած շի-
նեմ Դիբլաթի անապատից աւե-
լի նորանց բոլոր բնակութիւննե-
րում. և կ'իմանան որ ես եմ
Տէրը։

ԳԼ. Է

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Եւ դու, որդի մարդոյ, այսպէս է ասում Տէր Եհովան Իսրայէլի երկրին. Վախճան եկել է վախճանը երկրի չորս ծայրերի հա-
3 մար։ Հիմա եկել է վախճանը քեզ վերայ, այսինքն իմ բարկութիւնը պիտի ուղարկեմ քեզ վերայ, և քեզ պիտի դատեմ քո ճանապարհների համեմատ, և քեզ վերայ պիտի բերեմ քո բոլոր
4 պղծութիւնները։ Եւ իմ աչքը քեզ պիտի չխնայէ, և ես պիտի չխնայեմ. այլ քո ճանապարհները քեզ վերայ պիտի դնեմ, և քո պղծութիւնները քո մէջը պիտի լինեն, և դուք կ'իմանաք, թէ ես եմ Տէրը։

5 Այսպէս է ասում Տէր Եհովան. Մէկ չարիք, ահա մէկ չա-
6 րիք է գալիս։ Վախճանն է գալիս, եկել է վախճանը. արթնացել է քեզ վերայ, ահա գալիս է։
7 Պատուհասը դէպի քեզ է գալիս, ով երկրի բնակիչ, ժամանակը եկել է, մօտ է խառնաթեան օրը, և ոչ թէ ցնծա-
8 թիւն լեռանց վերայ։ Հիմա մօտերիս պիտի թափեմ իմ սրտմտութիւնը քեզ վերայ, և իմ բարկութիւնը քեզ վերայ կատարեմ, և քեզ պիտի դատեմ քո ճանապարհների համեմատ, և քեզ վերայ բերեմ քո բոլոր
9 գարշելութիւնները։ Եւ իմ աչքը քեզ պիտի չխնայէ, և ես պիտի չողորմեմ, քո ճանապարհների համեմատ պիտի տամ քեզ, և քո պղծութիւնները պիտի քո մէջտեղը լինեն, և պիտի իմանաք
10 որ ես Տէրս եմ զարկողը։ Ահա օրը, ահա գալիս է, գուրս է եկել պատուհասը, ծաղկել է գաւազանը, ընձիւղուել է ամ-
11 բարտաւանութիւնը։ Բռնաւորութիւնը վեր կացաւ իբրև ամբարշտութեան գաւազան. ոչ մի բան նորանցից, ոչինչ նորանց բազմութիւնից ու ոչինչ նորանց ճոխութիւնից պէտք չէ, և ոչ
12 մի վայելչութիւն՝ նորանցում։ Ե-

կաւ ժամանակը, մօտեցաւ օրը, գնողը չուրախանայ և ծախողը չողբայ, վասն զի բարկութիւն կայ նորա բոլոր բազմութեան վե-
13 րայ։ Վասն զի ծախողը ետ պիտի չդառնայ էլ ծախուածին, թէպէտ և նա տակաւին ապրողների մէջ ողջ լինի. որովհետև տեսիլքը նորա բոլոր բազմութեան համար պիտի ետ չդառնայ, և մարդ իր կեանքի անօրէնութիւնով պիտի չզօրանայ։

14 Փողը հնչեցրին, և պատրաստեցին ամենը, բայց պատերազմի գնացող չկայ. վասն զի իմ բարկութիւնը նորա բոլոր բազմութեան վերայ է։ 15 Սուրը դրսում է, և ժանտախտն ու սովը ներսևանց. դաշտումը եղողը սրով պիտի մեռնի, և քաղաքումը եղողին սովն ու ժանտախտն է ա-
16 տելու։ Եւ նորանց ազատուածները, որ կ'ազատուին, պիտի լինին լեռանց վերայ ձորերի ազա-
17 նիների նման, ամենքը պիտի հեծեծեն՝ ամեն մէկը իր անօրէնութեան համար։ Ամեն ձեռքերը պիտի կոխ ընկնեն, և բոլոր ծունկերը պիտի ջրի պէս գնան։ 18 Եւ քուրձեր պիտի հագնեն, և սարսափը պիտի ծածկէ նորանց, և ամեն երեսի վերայ ամօթ պիտի լինի, և նորանց ամեն գլխի վերայ՝ ինատութիւն։ 19 Իրանց արծաթը պիտի փողոցները գըցեն, և նորանց ոսկին անպատշաճ պիտի դառնայ, նորանց արծաթն ու ոսկին չէ կարող փրկել նորանց Տիրոջ բարկութեան օրը, նորանք չեն կշտացնել իրանց անձը, և իրանց փորը չեն լցնել. վասն զի նա եղաւ նորանց անօրէնութեան դայթակղութի-
20 նը։ Եւ իր զարդերի փառքը հպարտութեան գործածեց, և իրանց գարշելի պատկերները՝ իրանց կուռքերը շինեցին նորանով, սորա համար անպատշաճ պիտի շինեմ նորան իրանց մօտ։
21 Եւ նորան օտարների ձեռքը պիտի տամ յափշտակելու, և երկրի ամբարիշտներին՝ կողոպտելու,

և նորանք պիտի պղծեն նորան։
22 Եւ ես շուռ պիտի տամ իմ երեսը նորանցից, և նորանք պիտի պղծեն իմ գաղտնի տեղը. և նորա մէջը բռնաւորներ պիտի մըտնեն, և պիտի պղծեն նորան։
23 Շինիր շղթան, վասն զի երկիրը լցուեցաւ արեան դատաստաններով, և քաղաքը բռնութիւնով լցուեցաւ։ 24 Եւ ես ազգերի չարերին պիտի բերեմ, և նորանք պիտի ժառանգեն նորանց տուները, և պիտի դադարեցնեմ բռնաւորների ամբարտաւանութիւնը, և պիտի պղծուին նորանց 25 սրբարանները։ Կործանումը գալիս է և պիտի խաղաղութիւն ո- 26 րոնեն, բայց չկայ։ Թշուառութիւն թշուառութեան վերայ է գալիս, և գոյժի վերայ գոյժ է լինելու, և նորանք տեսիլք պիտի որոնեն մարգարէից, և օրէնքը պիտի կորչէ քահանայից, և խոր- 27 հուրդը՝ ծերերից։ Թագաւորը սուգ պիտի անէ, և իշխանը ապշութիւն պիտի հագնէ, և երկրի ժողովրդի ձեռքերը պիտի դողան. նորանց ընթացքի համեմատ պիտի անեմ նորանց, և նորանց դատաստաններովը պիտի դատեմ նորանց, և նորանք կ'իմանան, որ ես եմ Տէրը։

ԳԼ. Ը

1 Եւ եղաւ որ վեցերորդ տարին վեցերորդ ամսի հինգին ես նստած էի տանս, և Յուդայի ծերերը նստած էին իմ առջև, և այնտեղ Տէր Եհովայի ձեռքը ընկաւ 2 ինձ վերայ։ Եւ մտիկ արի և ահա մի կերպարանք՝ կրակի երևոյթով, ներս երանքի կերպարանքից դէպի ցած կրակ էր, և ներս երանքից դէպի վեր մի փառաւոր կերպարանք հրահալքի 3 տեսքով։ Եւ նա մի ձեռքի նմանութիւն մեկնեց և բռնեց իմ գլխի վարսից, և վերացրեց ինձ հոգին երկրի ու երկնից մէջտեղը, և տարաւ ինձ Երուսաղէմ Աստուծոյ տեսիլքներով ներքին դրան մուտքը, որ նայում է դէպի հիւսիս, ուր որ նստած էր նախանձի պատկերը՝ նախանձ գրգռողը։ Եւ ահա այնտեղ էր Իսրայէլի Աստուծոյ փառքը, այն տեսիլքի պէս, որ տեսել էի դաշտումը։

5 Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, աչքերդ բարձրացրու դէպի հիւսիս. և ես բարձրացրի աչքերս դէպի հիւսիս, և ահա սեղանի դրան հիւսիսային կողմին կար այդ նախանձի կուռքը մուտքում։ 6 Եւ նա ասաց ինձ. Որդի մարդոյ, տեսանո՞ւմ ես դու, թէ դորանք ի՞նչ են անում, այդ մեծամեծ պղծութիւնները, որ Իսրայէլի տունը անում է այստեղ որ հեռանամ իմ սրբարանից, բայց էլի դարձիր տես աւելի մեծագոյն պղծութիւններ։

7 Եւ ինձ տարաւ գաւթի դուռը, և ես մտիկ տուի, և ահա մի ծակ կար պատի վերայ։ 8 Եւ ասաց ինձ. Որդի մարդոյ, քանդիր այս պատը. և ես քանդեցի պատը, և ահա մէկ մուտք կար։ 9 Եւ նա ասաց ինձ. Եկ և տես այն գէշ պղծութիւնները, որ նորանք անում են այստեղ։ 10 Եւ ես մտայ ու տեսայ և ահա ամեն տեսակ սողուններէ և գարշելի անասունների նմանութիւններ, և Իսրայէլի տան բոլոր կուռքերը պատին վերայ փորուած շուրջանակի 11 շուրջով։ Եւ եօթանասուն մարդիկ Իսրայէլի տան ծերերից և Սափանի որդին Յեզոնիան նորանց մէջ կանգնած, որոնք կանգնած էին նորանց առջև. և ամեն մէկը բուրվառը ձեռքին, և խունկի ծուխի ամպը վեր էր բարձրանում։ 12 Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, տեսանո՞ւմ ես ինչ են անում Իսրայէլի տան ծերերը խաւարում, ամեն մարդ իր նկարների սենեակներումը, որովհետև ասում են. Թէ Տէրը մեզ չէ տեսանում, Տէրը թողել է երկիրը։ 13 Եւ ասաց ինձ. Էլի դարձիր տես աւելի մեծագոյն պղծութիւններ, որ նորանք անում են։

14 Եւ ինձ տարաւ Տիրոջ տան դրան մուտքը, որ դէպի հիւսիս

էր, և ահա պիտակ կանոյք էին նոսեալ, որ լաց էին լինում Թամմուզի վերայ։ Եւ ասաց ինձ, Տեսա՞ւ ես, որդի մարդոյ. էլի դարձիր տես սրանցից աւելի մեծագոյն պղծութիւններ։

16 Եւ ինձ տարաւ Տիրոջ տան ներքին դատին, և ահա Տիրոջ տաճարի մուտքում սրահի և սեղանի մէջտեղը քսան հինգ մարդ էին, քահանաները պէս Տիրոջ տաճարը և երեսները դէպի արևելք, և նորանք երկրպագութիւն էին անում դէպի 17 արևելք արեգակին։ Եւ ինձ ասաց. Տեսա՞ւ ես, որդի մարդոյ, մի՞թէ թեթև բան է Յուդայի տան համար անել այս պղծութիւնները, որ անում են այստեղ, որ լցրել են երկիրը բռնութիւնով և եւս են դարձել ինձ բարկացնելու համար, և ահա նորանք ճիւղը մեկնում են 18 դէպի իրանց քիթը։ Եւ ես էլ պէտք է անեմ սրտմտութիւնով. աչքս պիտի չխնայէ, և ես պիտի չողորմեմ. և նորանք պիտի կանչեն իմ ականջներին մեծ ազդակով, բայց ես նորանց չեմ լսելու։

ԳԼ. Թ

1 Եւ մեծ ձայնով կանչեց իմ ա-
2 կանջներին առելով. Մօտեցէք, ով քաղաքի վերակացուներդ, և ամեն մարդ իր ապականիչ զօրքը իր ձեռքին։ Եւ ահա վեց մարդ էին գալիս վերի դրան ճանապարհով, որ դէպի հիւսիս է, և ամեն մարդ իր փշրող զօրքը իր ձեռքին, և նորանց մէջ մէկ մարդ կար քթանի հագած, և մի գրադրի թանաքամանը մէջքին. և եկան ու կանգ-
3 նեցին պղնձի սեղանի կողքին։ Եւ Իսրայէլի Աստուծոյ փառքը վեր բարձրացաւ այն քերովբէի վերայից, որի վերայ որ էր, դէպի տան սեմը։

Եւ կանչեց այն քթանի հագած մարդուն, որ գրադրի թանաքամանը մէջքին

մէ. Եւ Տէրը ասաց նորան. Անց 4
կաց քաղաքի միջովը այսինքն Երուսաղէմի միջովը, և նշան դիր այն մարդկանց ճակատներին որ հառաչում և ողբում են նորա միջումն արած բոլոր պղծութիւնների համար։ Եւ մեսանեքին ա- 5
սաց իմ ականջներն առջև. Գնացէք նորա հետևից քաղաքի միջովը և զարկէք, ձեր աչքերը չ խնայեն, և չողորմէք։ Կիներին, և 6
երեսատարպին, և կոյսին ու երեխայներին ու կանանցը սպանեցէք փչացրէք, բայց ամեն ով, որ վրան նշանը լինի նորան մի մօտենաք, և իմ սրբարանից սկսեցէք։ Եւ նորանք սկսեցին այն ծեր մարդկանցից, որ տան առջև էին։ Եւ ասաց նորանց. Պղծեցէք տունը և գաւիթները լցրէք սպանուածներով, դուրս ելէք. և նորանք դուրս եկան և ջարդեցին քաղաքումը։

Եւ երբոր նորանց զարկեցին, և 8
ես մնացի, և ես վայր ընկայ երեսս վերայ և գոչեցի և ասացի. Աւա՛ղ, ով Տէր Եհովայ, մի՞թէ դու փչացնելու ես Իսրայէլի բոլոր մնացորդը քո սրտմտութիւնը Երուսաղէմի վերայ թափելով։ Եւ ինձ ասաց. Իսրայէլի և 9
Յուդայի տան անօրէնութիւնը շատ և շատ մեծ է, և երկիրը արիւնով լցուել է, և քաղաքը լիքն է անիրաւութիւնով, որովհետև ասում են, թէ Տէրը թողել է երկիրը, և Տէրը չէ տեսնում։ Եւ հիմա ես էլ աչքով 10
պիտի չխնայեմ և պիտի չողորմեմ, նորանց ճանապարհը իրանց գլուխներումն եմ տալու։

Եւ ահա այն քթանի հագուստ 11
հագած մարդը, որի մէջքումն էր թանաքամանը, պատասխան տուաւ և ասաց. Ես արի ինչպէս որ ինձ հրամայել էիր։

ԳԼ. Ժ

Եւ ես նայեցի և ահա այն հաս- 1
տատութեան վերայ, որ քերովբէների գլխի վերայ էր, շափիւզայ քարի պէս սեպաձև նմանու-

թեան կերպարանքով դէպ ի՛ւր երե-
2 ում էր նորանց վերայ. եւ ասաց
այն քթեանն հագուստ հագած
մարդուն առելով. Եկ քերովբէից
տակի անիւների միջեցը եւ ամ-
փեր լցու կրակի կայծերից
ը քերովբէների միջից եւ ցրիւ
տուր քաղաքի վերայ. եւ նա մտաւ
3 իմ աչքերի առջեւ։ Եւ քերովբէ-
ները կանգնած էին տան աջ կող-
մին այն մարդը մտնելիս, եւ ամ-
4 պը լցրեց ներսի գաւիթը։ Եւ Տի-
րոջ փառքը բարձրացաւ քերով-
բէից վերայից տան սեմի վերայ,
եւ տունը լցուեցաւ ամպով եւ
գաւիթն էլ լցուեցաւ Տիրոջ փա-
5 ռաց պայծառութիւնով։ Եւ քե-
րովբէից թեւերի ձայնը լսւում էր
մինչեւ դուրսի սրահը իբրեւ Ամե-
նակարող Աստուծոյ ձայնը երբոր խօսում
6 է։ Եւ եղաւ երբոր հրամայեց քը-
թանի հագուստ հագած մարդուն
առելով՝ Անիւների միջից քերով-
բէների միջեցից կրակ վեր առ,
նա գնաց ու կանգնեց անիւի
7 մօտ. Եւ քերովբէների միջից քե-
րովբէն մեկնեց իր ձեռքը դէպի
քերովբէների միջեցը եղող կրա-
կը եւ վեր առաւ դրաւ քթեանի
հագուստ հագածի ափովը, եւ
8 նա առաւ ու դուրս եկաւ։ Եւ
քերովբէների թեւերի տակին մի
մարդու ձեռքի նմանութիւն էր
երեւում։
9 Եւ ես մտիկ տուի, եւ ահա
չորս անիւներ կային քերովբէների
կողքին՝ մէկ անիւը մէկ քերովբէի
կողքին, եւ մէկ անիւն էլ մէկ քե-
րովբէի կողքին, եւ անիւների կեր-
պարանքը ականքարի տեսքի պէս։
10 Եւ նորանց չորսի կերպարանքն
էլ մէկ նմանութիւն ունէր՝ իբր
11 թէ անիւ անիւի մէջ լինէր։ Գնա-
լիս դէպի չորս բառակողմն էին
գնում, շուռ չէին գալիս երբոր
գնում էին, վասն զի այն կողմը
ուր որ ուղղուած էր գլուխը՝ նո-
րա հետեւից էին գնում. նորանք
շուռ չէին տալիս երբոր գնում
12 էին։ Եւ նորանց բոլոր մարմին-
ները եւ նորանց մէջքերը ու ձեռ-
քերը եւ նորանց թեւերը եւ անիւ-
ները լիքն էին աչքերով շուրջա-
նակի այն չորս անիւները։ Անիւ- 13
ներին մասին՝ նորանց կանչեցին
Մրրիկ, իմ ականջներին առջեւ։
Եւ մէկը չորս երես ունէր. 14
մէկի երեսը քերովբէի երեսն էր,
եւ երկրորդի երեսը մարդու երես
էր, եւ երրորդը՝ առիւծի երես,
եւ չորրորդը՝ արծուի երես։ Եւ 15
քերովբէները վերացան։ Սորանք
են այն կենդանիները որոնց տեսայ
Քոբար գետի մօտ։ Եւ քերովբէ- 16
ները գնալիս անիւները կշտովը
գնում էին. եւ երբոր քերովբէ-
ները բարձրացնում էին իրանց
թեւերը որ վերանան երկրի վերա-
յից, անիւներն էլ շուռ չէին
տալիս նորանց կշտից։ Նորանք 17
կանգնելիս կանգնում էին, եւ նո-
րանք վերանալիս վերանում էին
նորանց հետ, վասն զի կենդանու
հոգին կար նորանցում։
Եւ դուրս եկաւ Տիրոջ փառքը 18
տան սեմի վերայից եւ կանգնեց
քերովբէների վերայ։ Եւ քերով- 19
բէները բարձրացրին իրանց թե-
երը եւ վերացան երկրիցը իմ աչ-
քերի առջեւ դուրս գալով, եւ ա-
նիւներն նորանց մօտին, եւ կանգ-
նեցին Տիրոջ տան արեւելեան
դրան մուտքում, եւ Իսրայէլի
Աստուծոյ փառքը նորանց վերայ
էր վերեւից։ Սորանք էին այն կեն- 20
դանիները, որ ես տեսայ Իսրայէլի
Աստուծոյ տակին Քոբար գետի
մօտ եւ գիտացի, որ Քերովբէներ են
նորանք։ Ամեն մէկը չորս չորս երես 21
ունէին, եւ ամեն մէկը չորս թեւ,
եւ մարդու ձեռքերի նմանութիւն
կար նորանց թեւերի տակին։ Եւ 22
նորանց երեսների նմանութիւնը
այն երեսներինն էր, որ տեսել
էի Քոբար գետի մօտ՝ նորանց
կերպարանքը եւ իրանք. ամեն մէ-
կը ուղիղ դէպի առաջ էր գնում։

ԳԼ. ԺՍ.

Եւ Հոգին ինձ վեր առաւ եւ քե- 1
րաւ ինձ Տիրոջ տան արեւելեան
դուռը, որ ուղղուած է դէպի
արեւելք, եւ ահա դրան մուտքու-
մը քսանհինգ մարդ կար. եւ նո-
րանց մէջ տեսայ Ազուրի որդի

Յեզեկիայէն և Բանիայէ որդի Փաղատիայէն՝ ժողովրդի իշխան-
2 ներին՝ Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, սոքանք են անօրէնու-
թիւն մտածող մարդիկը, որ չար խորհուրդ են տալիս այս քաղա-
3 քին. Որ ասում են. Մօտիկներումն չէ. տուներ շինել պէտք է. սա կաթսան է, և մենք՝ միսը:
4 Սորա համար մարգարէացիր նոցանց վերայ, մարգարէացիր, որդի մարդոյ:
5 Եւ Տէրոջ Հոգին ընկաւ ինձ վերայ և ինձ ասաց. Ասիր՝ Տէրը այսպէս է ասում. Դուք այսպէս ասացիք, ով Իսրայէլի տուն, բայց ես իմացել եմ ձեր մտքերը-
6 ում վեր կացածը: Դուք շատացրիք ձեր սպանածները այս քաղաքում, և լցրիք նորա փո-
7 ղոցները սպանուածներով: Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Ձեր սպանուածները, որ դուք նորանց մէջը դրիք, նորանք են միսը, և նա՝ կաթսան. բայց ձեզ պիտի հանեմ նորա միջից:
8 Սուրից վախեցիք. բայց ես սուր եմ բերել ձեզ վերայ, ասում
9 է Տէր Եհովան: Եւ ձեզ պիտի դուրս բերեմ նորա միջից, և ձեզ պիտի օտարների ձեռքը մատնեմ, և ձեզ դատաստաններ
10 պիտի անեմ: Սուրով պիտի ընկնէք. Իսրայէլի սահմանի վերայ պիտի դատեմ ձեզ. և պիտի գի-
11 տենաք, թէ ես եմ Տէրը: Սա ձեզ համար պիտի կաթսայ չը դառնայ, որ դուք նորանում միս լինէիք. Իսրայէլի սահմանի
12 վերայ պիտի դատեմ ձեզ: Եւ դուք պիտի գիտենաք որ ես եմ Տէրը, որ իմ կանոններովը չգնացիք, և իմ իրաւունքները չկատարեցիք, և ձեզ շրջապատող ազգերի սովորութիւնից պէս ա-
13 րիք: Եւ եղաւ որ ես մարգարէացնելիս Բանիայի որդի Փաղատիան մեռաւ, և ես իմ երեսի վերայ ընկայ ու աղաղակեցի մեծ ձայնով և ասացի. Ա՛հ, ով Տէր Եհովայ, միթէ պիտի փչացնես Իսրայէլի մնացորդը:
14 Եւ Տէրոջ խօսքը եղաւ ինձ ասելով.

Որդի մարդոյ, քո եղբայրները՝ 15
հէնց էն քո եղբայրները են քո
ազգականները և բոլոր Իսրայէլի
տունը ամենքը, որոնց ասում են
Երուսաղէմի բնակիչները. Հեռա-
ցէք Տիրոջ մօտից. այս երկիրը մեզ
է տրուած իրրև ժառանգութիւն:
Դորա համար ասիր. Այսպէս 16
է ասում Տէր Եհովան. Թէև հե-
ռացրել եմ նորանց ազգերի մէջ,
և թէև ցրուել եմ նորանց եր-
կիրներում, բայց ես նորանց հա-
մար սրբարան պիտի դառնամ մի
քիչ այն երկիրներում, ուր որ
նորանք գնացել են: Սորա հա- 17
մար ասիր. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Ես ձեզ պէտք է
հաւաքեմ ազգերի միջից, և պի-
տի ժողովեմ ձեզ այն երկիրնե-
րից, ուր որ ցրուած էք, և ձեզ
պիտի տամ Իսրայէլի երկիրը:
Եւ այնտեղ պիտի մտնեն, և պի- 18
տի հեռացնեն նորանից նորա բո-
լոր կուռքերը, և նորա բոլոր
պղծութիւնները: Եւ նորանց պի- 19
տի մէկ սիրտ տամ, և նոր հոգի
պիտի դնեմ ձեր ներսումը, և
պիտի հեռացնեմ քարի սիրտը
նորանց մարմնիցը, և նորանց մի
մսի սիրտ տամ: Որպէս զի իմ 20
օրէնքներումը գնան, և իմ իրա-
ւունքները պահեն և նորանց կա-
տարեն, որ նորանք ինձ համար
ժողովուրդ լինեն, և ես նորանց
համար Աստուած լինեմ: Բայց 21
որոնց սրտերը, որ դէպի իրանց
գարշելիքաց ու պղծութեանց սիր-
տն է գնում, նորանց ճանապար-
հը իրանց գլխովը պիտի տամ,
ասում է Տէր Եհովան:

Եւ քերովբէները բարձրացրին 22
իրանց թևերը և անիւները
նորանց կշտին, և Իսրայէլի Աստու-
ծոյ փառքը նորանց վերայ էր վե-
րևիցը: Եւ բարձրացաւ Տիրոջ 23
փառքը քաղաքի մէջտեղի վերա-
յից և կանգնեց այն լեռան վե-
րայ, որ քաղաքի արևելքումն էր:
Եւ Հոգին ինձ վեր առաւ ու 24
բերաւ Քաղդէացոց երկիրը գերի-
ների մօտ տեսիլքում Աստուծոյ
Հոգովը. և վերացաւ իմ վերայից
այն տեսիլքը, որ տեսել էի: Եւ 25

և խօսեցի գերիներէն հետ Տիրոջ բոլոր խօսքերը, որ ինձ ցոյց տըուել էր։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, ապստամբ-
նողներուն տան մէջ կը բնակուիս դու, որոնք աչքեր ունին տեսնելու բայց չեն տեսնուիր, և ականջներ ունին լսելու բայց չեն լսուիր, վասն զի ապստամբներուն տուն են
3 նորանք։ Իսկ դու, որդի մարդոյ, քեզ համար գաղթելու գործիքներ շինիր և գաղթիր ցերեկով նորանց աչքին առջև, և գաղթիր քո տեղիցը մի ուրիշ տեղ նորանց աչքին առջև. գուցէ տեսնեն, վասն զի ապստամբներուն
4 տուն են նորանք։ Եւ դուրս բեր քո գործիքները իբրև գաղթելու գործիքներ ցերեկով նորանց աչքին առջև, բայց իրիկունը դուրս ելլ նորանց աչքին առջև գերուա-
5 ծեան գնացողներուն նման։ Նորանց աչքին առջև պատը ծակիր
6 և այնտեղով դուրս բեր։ Նորանց աչքին առջև ուսիդ վերայ առ դուրս ելլ մթնած ժամանակը, երեսդ ծածկիր որ տափը չտեսնես, վասն զի քեզ նշան եմ դնում Իսրայէլի տան համար։
7 Եւ ես այնպէս արի ինչպէս որ ինձ պատուիրել էր, գործիքներս դուրս հանեցի ինչպէս գաղթողի գործիքներ ցերեկով, և իրիկունը պատը ծակեցի ինձ համար ձեռքով, մթնած ժամանակը դուրս հանեցի ուսի վերայ կրելով նո-
8 րանց աչքին առջև։ Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ առաւօտ ասե-
9 լով. Որդի մարդոյ, չասացի՞ն քեզ Իսրայէլի տունը՝ ապստամբներուն տունը, թէ Ա՛յդ ի՞նչ ես անում։
10 Նորանց ասիր. Ա՛յսպէս է ասում Տէր Եհովան. Իշխանին է այս պատգամը Երուսաղէմում և Իսրայէլի բոլոր տանը, որոնք նո-
11 րանում են։ Ասիր. Ես ձեզ համար նշան եմ, ես ինչպէս որ արի, նորանց այնպէս է լինելու, նորանք պիտի գաղթեն գերի գը-
նան։ Եւ այն իշխանը որ նորանց մէջ է, ուսին վերայ է վեր առնելու մթնած ժամանակը և դուրս գայ, պատը պիտի ծակեն, որ նորանով դուրս բերեն, նա իր երեսը պիտի ծածկէ, որպէս զի աչքով տափը չտեսնէ։ Եւ նորա վերայ պիտի տարածեմ իմ ցանցը, և նա պիտի բռնուի իմ որոգայթումը, և նորան պիտի տանեմ Բաբելոն Քաղդէացոց երկիրը, բայց նա նորան պիտի չը տեսնէ և այնտեղ պիտի մեռնի։
Եւ բոլոր նորա շուրջը եղող օգնականներին և նորա բոլոր զօրքերին պիտի ցրիւ տամ բոլոր կողմերը, և սուր պիտի մերկացնեմ նորանց ետևից։ Եւ պիտի իմանան որ ես եմ Տէրը, երբոր նորանց տարածեմ ազգերի մէջ և ցրիւ տամ նորանց երկիրներում։ Եւ նորանցից պիտի սակաւաթիւ մարդիկ թողեմ, որ հառաչողներ լինին սրից, սովից և ժանտախտից, որպէս զի պատմեն իրանց բոլոր պղծութիւններըը այն ազգերի մէջ ուր որ պիտի գնան և պիտի իմանան, որ ես եմ Տէրը։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ
ասելով. Որդի մարդոյ, հացդ
դողալով կեր, և ջուրդ տագնապով և անձկութիւնով խմիր,
Եւ ասիր այս երկրի ժողովրդին.
Ա՛յսպէս է ասում Տէր Եհովան. Երուսաղէմի բնակիչներին Իսրայէլի երկրի վերայ, իրանց հացը անձկութիւնով պիտի ուտեն և իրանց ջուրը սպառութիւնով խըմեն, որովհետև նորանց երկիրը պիտի ամայանայ իր լրութիւնից՝ նորանում բնակիչների բոլորի անիրաւութեան պատճառով։
Եւ շէն քաղաքները պիտի աւերակ դառնայ, և երկիրը ամայի պիտի իմանաք, որ ես եմ Տէրը։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Որդի մարդոյ, դա ինչ առած է որ ունիք Իսրայէլի երկրում, որ ասում էք. Օրերը երկարանում են, և ամեն տեսիլք ոչնչանում է։ Սորա համար ասիր նորանց. Ա՛յսպէս է ասում

Տէր եհովան. Ես կ'դադարեցնեմ այդ առակը և նորան մի՛ւսանգամ չեն ասիլ իբրև առակ Իսրայէլի տան մէջ. այլ նորանց ասիր. Օրերը մօտեցել են, և ամեն տեսիլքի կատարումը։ Վասն զի այլևս ոչ մի տեսիլք դատարկ պիտի չլինի և շողոքորթութեան դուշակութիւն Իսրայէլի տան մէջ։ Վասն զի ես եմ Տէրը. խօսածս խօսում եմ և խօսքս կատարում, այլևս պիտի չուշանայ. վասն զի ձեր օրերումը, ով ապստամբների տուն, մի խօսք եմ խօսում, և նորան պիտի կատարեմ, ասում է Տէր եհովան։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Որդի մարդոյ, ահա Իսրայէլի տունը ասում են. Այն տեսիլքը որ դա տեսնում է շատ օրերի համար է, և հեռաւ ժամանակների համար է դա մարգարէանում։ Սորա համար ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր եհովան. Այլևս ոչ մի խօսքս պիտի չուշանայ. խօսածս խօսքս պիտի կատարեմ, ասում է Տէր եհովան։

ԳԼ. ԺԳ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Որդի մարդոյ, մարգարէացիր Իսրայէլի մարգարէացող մարգարէից դէմ, և ասիր իրանց սրտից մարգարէացողներին. Լսեցէք Տիրոջ խօսքը. Այսպէս է ասում Տէր եհովան. Վա՛յ յիմար մարգարէներին, որ իրանց հոգու ետևից են գնում, և ոչ ինչ չեն տեսել։ Աւերակներում եղող աղուէսների պէս են դառել քո մարգարէները, ով Իսրայէլ։ Դուք վեր չդնացիք խրամատների առջևը, և պարսպով չպատեցիք Իսրայէլի տունը, պատերազմում կանգնելու Տիրոջ օրումը։ Նորանք դատարկ տեսիլք և սուտ դուշակութիւն են տեսնում, որ ասում են. Տէրն է ասում, թէև Տէրը նորանց չէ ուղարկել. և յոյս են տալիս թէ խօսքը պիտի կատարուի։ Չէ՞ որ դատարկ տեսիլքներ տեսաք, և սուտ դուշակութիւն խօսեցի՞ք, և ասացիք. Տէրն է ասում, թէ և ես չէի խօսել։ Սորա համար այսպէս է ասում Տէր եհովան. Որովհետև ձեր խօսքերը դատարկ են և ձեր դուշակութիւնը սուտ, Սորա համար ես ձեզ դէմ եմ, ասում է Տէր եհովան։ Եւ իմ ձեռքը պիտի լինի այն մարգարէից դէմ, որոնք դատարկ տեսիլք են տեսնում և սուտ դուշակում. նորանք պիտի չլինին իմ ժողովրդի խորհրդումը, և Իսրայէլի տան գրքումը պիտի չգրուին, և Իսրայէլի երկիրը պիտի չմտնեն, և դուք պիտի իմանաք, որ ես եմ Տէրը։ Նորա համար և հէնց նորա համար որ մոլորեցնում են իմ ժողովուրդը ասելով թէ՝ խաղաղութիւն է, քանի որ խաղաղութիւն չկայ. և սա մի պատ է շինում, և ահա նորանք ցեխով ծեփում են։ Ասիր այն ցեխով ծեփողներին, թէ վայր է ընկնելու, յորդահոս անձրև է լինելու, և դուք, ով կարկտաի քարեր, վայր ընկէք, և մրրկալից հողմը յարձակուի։ Եւ ահա պատը վայր պիտի ընկնէ. միթէ ձեզ չեն ասելու. Ո՞ւր է այն ծեփը, որ ծեփեցիք։ Սորա համար այսպէս է ասում Տէր եհովան. Որ իմ սրտմտութիւնովը մրրկալից հողմ պիտի բաց թողեմ, և յորդահոս անձրև պիտի լինի իմ բարկութիւնովը, և կարկտաի քարեր սրտմտութեամբ վչացնելու համար։ Եւ պիտի քանդեմ այն պատը, որ ցեխով ծեփեցիք, և պիտի տափակը տամ նորան, որ նորա հիմքը բացուի, և վայր ընկնէ, և դուք նորա միջումը բնաջինջ լինէք, որ իմանաք, թէ ես եմ Տէրը։ Եւ իմ սրտմտութիւնը պիտի կատարեմ այդ պատի վերայ և նորան ցեխով ծեփողների վերայ, և ձեզ պիտի ասեմ. Չկայ պատը և չկան նորան ծեփողները. Այսինքն Իսրայէլի մարգարէները, որոնք մարգարէանում են Երուսաղէմի վերայ, և նորա մասին

խաղաղութեան ուխտ կ՚ընեմ ընդ նոսա, քանի որ խաղաղութիւն չկայ, ասում է Տէր Եհովան։
17 Եւ դու որդի մարդոյ, երեսդ դարձրու դէպի քո ժողովրդի աղջիկները, որոնք իրանց սրտից մարգարէանում են, և մարգա-
18 բեացիր նորանց մասին. Եւ ասիր. Այսպէս է ասում Տէր Եհովան. Վա՛յ նորանց, որ *ձեռքերի ամեն արմուկի համար բարձիկներ են կարում և լուչակներ են շինում ամեն հասակի գլխի համար հոգիներ որսալու նպատակով։ Իմ ժողովրդի հոգիները դուք որսում էք, և մի՞թէ ձեր հո-
19 գիները կ՚ապրեն։ Եւ դուք ինձ անարգում էք իմ ժողովրդի առջև մի քանի բուռ գարու և մի քանի կտոր հացի համար, որ մեռցնէք չմեռնելու հոգիները, և որ ապրեցնէք չապրելու հոգինե՛րը ձեր սուտովը որ ասում էք իմ աուելիի ժողովրդին։
20 Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես ձեր բարձիկների դէմ եմ, որոնցով դուք հոգիներ էք որսում, որ նորանից թռցնեմ. և նորանց պիտի պոկեմ ձեր բազուկների վերայից, և պիտի արձակեմ այն հոգիները որ դուք որսում էք այն հոգի-
21 ների որ թռչեն. Եւ պիտի պատառեմ ձեր լուչակները և պիտի ազատեմ իմ ժողովուրդը ձեր ձեռքից, որ նորանք այլ ևս որս չլինին ձեր ձեռքումը, և կ՚իմանաք
22 նոքա, որ ես եմ Տէրը։ Որովհետև դուք տրտմեցնում էք արդարի սիրտը սուտիւնով, որին ես չեմ տրտմեցնում, և ուժովացնում էք ամբարշտի ձեռքերը, որ իր չար ճանապարհից ետ չը
23 դառնայ և ապրէ։ Ուրեմն դատաստակ տեսիլք մի տեսանէք և այլ ևս գուշակութիւն մի գուշակէք. և ես պիտի ազատեմ իմ ժողովուրդը ձեր ձեռքից, և կ՚գիտենաք, որ ես եմ Տէրը։

*ձեռքիս ամեն յօդերի համար ծամծկոցներ

ԳԼ. ԼԴ

1 Եւ մարդիկ եկան ինձ մօտ Իսրայէլի ծերերից և նստեցին առջևս։ Եւ Տէրոջ խօսքը եղաւ ինձ
2 ասելով. Որդի մարդոյ, այս մարդիկը իրանց կուռքերը դրել են իրանց սրտումը, և իրանց անօրէնութեան գայթակղութիւնը դրել են իրանց երեսի առջևը. մի՞թէ ես երբէք պատասխան տամ նորանց։ Սորա համար խօ-
4 սիր նորանց հետ և ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր Եհովան. Ամեն մէկ մարդ Իսրայէլի տունից, որ իր կուռքերը դրել է իր սրտումը և իր անօրէնութեան գայթակղութիւնը դրել իր երեսի առջև, և գալիս է մարգարէի մօտ, ես Տէրս նորան պատասխան պիտի տամ, որ գալիս է, նորա կուռքերի շատութեան
5 համեմատ։ Որպէս զի բռնեմ Իսրայէլի տունը իրանց սրտից, որ-
6 քանք օտարացել են ինձանից իրանց բոլոր կուռքերով։
Սորա համար ասիր Իսրայէլի տանը. Այսպէս է ասում Տէր Եհովան. Դարձի եկէք, և ետ դարձէք ձեր կուռքերից և ձեր բոլոր պղծութիւններից ետ դարձրէք ձեր երեսները։
7 Վասն զի ամեն մէկ մարդ Իսրայէլի տանից և այն պանդուխտներից, որ պանդխտանում են Իսրայէլի մէջ, որ օտարանայ ինձանից և իր կուռքերը դնէ իր սրտումը և իր անօրէնութեան գայթակղութիւնը դնէ իր երեսի առջև, և գայ մարգարէի մօտ որ նորանով հարցընէ ինձանից, ես Տէրս եմ տալու նորա պատասխանը ինձանով։
8 Եւ ես իմ երեսը պիտի ուղղեմ դէպի այն մարդը և նորան աւերակ անեմ իբրև նշան և առակ, և նորան պիտի բնաջինջ անեմ իմ ժողովրդի միջից, և կ՚իմանաք որ ես եմ Տէրը։
9 Եւ երբոր մէկ մարգարէ սխալուի ու խօսք խօսէ, ես Տէրս եմ սխալեցրել այն մարգարէին. և ես պիտի մեկնեմ իմ ձեռքը նորա վերայ և նորան փչացնեմ իմ

10 Խորհէլ ժողովրդի միջինը։ Եւ նորանք պիտի կրեն իրանց պատիժը. ինչպէս որ է Տէրցանողի յանցանքը, մարգարէի յանցանքն
11 էլ նոյնչափ լինի։ Որպէս զի միւս անգամ չմոլորէ Իսրայէլի տունը ինձ հետևելուց, և այլ ևս չպղծուին իրանց բոլոր յանցանքներով. և նորանք իմ ժողովուրդը լինեն և ես նորանց Աստուած լինեմ, ասում է Տէր Եհովան։
12 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
13 սելով. Որդի մարդոյ, երբոր մի երկիր անհաւատարմութիւն անելով մեղանչէ ինձ դէմ, և ես մեկնեմ իմ ձեռքը նորա վերայ և կատրեմ նորա հացի ցուպը և նորա մէջը սով ուղարկեմ, և բնաջինջ անեմ նորանցից մարդն
14 ու անասունը. Եւ լինի որ այս երեք մարդիկը նորա մէջ լինեն՝ Նոյ, Դանիէլ և Յոբ. սորանք իրանց արդարութիւնով կ'ազատեն դէպ իրանց անձինքը, ասում է Տէր Եհովան։
15 Եթէ ես չար գազաններ բերեմ երկիրը, որ նորան անզաւակ անեն, և նա ամայի գառնայ որ անցնող չլինի գազանների պատ-
16 ճառով. Եթէ այս երեք մարդիկը նորա մէջը լինեն, կենդանի եմ ես՝ ասում է Տէր Եհովան, որ էրանց տղայոցն ու աղջկանցն էլ չեն ազատել. նորանք իրանք միայն կ'ազատուեն, և երկիրը անապատ կ'դառնայ։
17 Կամ եթէ սուր բերեմ այն երկրի վերայ, և ասեմ. Ով սուր, անց կաց այդ երկրով, և նորանից փչացնեմ մարդն ու անասու-
18 նը. Եւ այս երեք մարդիկը նորա մէջը լինեն, կենդանի եմ ես՝ ասում է Տէր Եհովան, որ էրանց տղայոցն ու աղջկանցը էլ չեն ազատել, այլ միայն իրանք կ'ազատուեն։
19 Կամ եթէ ժանտախտ ուղարկեմ այն երկիրը և իմ սրտմտութիւնը թափեմ նորա վերայ արիւնով նորանից մարդն ու անա-
20 սունը փչացնելու համար. Եւ Նոյը, Դանիէլը և Յոբը նորա մէջը լինեն, կենդանի եմ ես՝ ասում է Տէր Եհովան, որ էրանց տղայոցն ու աղջկանցը էլ չեն ազատել. նորանք իրանք միայն կ'ազատուեն, և երկիրը անապատ կ'դառնայ։
21 Վա՛յ ինձ որպէս է ասում Տէր Եհովան. Ո՞ւր մնաց որ եթէ իմ չորս չար պատիժներըս՝ սրինքն սուրը, սովը, և չար գազանները ու ժանտախտը բերեմ Երուսաղէմի վերայ նորանից մարդն ու անասունը բնաջինջ անելու համար։
22 Եւ ահա նորա մէջ մնացորդ պիտի մնայ ազատուած՝ դուրս բերուած տղայքն ու աղջկունքը. ահա նորանք դուրս են գալու ձեզ մօտ, և դուք պիտի տեսնէք նորանց ճանապարհը և նորանց գործքերը, և պիտի մխիթարուիք այն պատուհասի մասին որ բերի Երուսաղէմի վերայ այսինքն այն բոլորը, որ բերի նորա վերայ։
23 Եւ նորանք պիտի մխիթարեն ձեզ երբոր տեսնէք նորանց ճանապարհը և նորանց բոլոր գործքերը. և դուք կ'իմանաք թէ ի զուր չեմ արել այն ամենը որ արի նորան, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԺԵ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, ի՞նչ է ե՞ւթ է որթը ամեն փայտերից, որթի ճիւղը անտառի ծառերի
3 մէջ է։ Մի՞թէ նորանից փայտ կառնուի մի բանի գործածելու համար, կամ թէ նորանից մի ցից կ'առնուի՞ նորանից որ և է աման կախելու համար։
4 Ահա կրակի մէջ է դցված այրուելու համար. նորա երկու ծայրերն էլ կուռէ կրակը, և մէջը կայրուի. միթէ նա պիտանի՞ է մի բանի։
5 Ահա նա ամբողջ եղած ժամանակը մի բանի օգուտ չունի. ո՞ւր մնաց որ կրակը նորան ուռէ, և նա այրուած լինի. մի՞թէ նա էլ մի բանի օգուտ կ'ունենայ։
6 Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Ինչպէս որ է որթի փայտը անտառի փայտերի մէջ, որ տուել եմ կրակին այ-

բելու համար, նոյնպէս եւ տաճարի Երուսաղէմի բնակիչներին։
7 Եւ իմ երեսը պիտի ուղղեմ դէպի նորանց. նորանք մէկ կրակիցը դուրս կ'գան և միւս կրակը կուտէ նորանց, և դուք կ'իմանաք, Թէ ես եմ Տէրը, երբոր երեսս
8 ձեր վերայ ուղղած կ'լինեմ։ Եւ այս երկիրը ամայի պիտի անեմ, նորանց արած անհաւատարմութեան համար, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԺԶ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, հասկացրու Երուսաղէմին իր պղծու-
3 թիւնները, եւ ասիր. Այսպէս է ասում Տէր Եհովան Երուսաղէմին. Ակնդրդ ու ծննդդ Քանանացոց երկրից է, Հայրդ Ամո-
4 հացին է և մայրդ Քեւտացին։ Եւ ծննդդ՝ դու ծնուած օրդ պորտդդ չկտրուեցաւ, և ջրով չը լուացուեցար մաքրուելու համար, և աղով չաղուեցար, և խանձա-
5 րուրով չփաթաթուեցար. Մի աչք քեզ չխնայեց, որ սորանցից մէկը անէր քեզ համար քեզ ողորմելով, այլ դաշտի երեսը գցուեցար քո անձի զզուանքով
6 քո ծնուած օրը։ Եւ ես անցայ, մօտովդ ու տեսայ քեզ արեանդ մէջ կոխ տալիս, և ասացի քեզ քո արեան մէջ Թէ՝ Ապրիր. Այո՛, ասացի քեզ քո արեան մէջ Թէ՝
7 Ապրիր։ Դաշտի բոյսի պէս քեզ բիւրաւոր շինեցի, և դու շատացար ու մեծացար, և հասար գեղեցկութեան կատարելութեան. ամրոցներդ եղան և մազերդ բուսան, բայց դու մերկ ու տկլոր էիր։
8 Եւ ես անցայ մօտովդ ու տեսայ քեզ, և ահա ժամանակդ սիրոյ ժամանակ էր, և ես տարածեցի իմ քղանցքը քեզ վերայ, և ծածկեցի քո մերկութիւնը, և քեզ համար երդում անելով քեզ հետ ուխտ արի, ասում է Տէր Եհովան, և դու
9 իմը եղար։ Եւ քեզ լուացի ջրով, և արիւնդ ողողեցի քո վերայից, և օծեցի քեզ իւղով։ Եւ 10
քեզ նկարագործ հագուստ հագցրի, և կօշիկներդ թեհաշի արի, և քեզ բեհեզի դօսի կապեցի, և քեզ մետաքսով ծածկեցի։ Եւ 11
քեզ զարդարեցի զարդով, և ապրանջաններ դրի ձեռքերիդ վերայ, և մանեակ՝ պորտիդ վերայ։ Եւ օղակ դրի քո քթին, 12
և գինաեր քո ականջներին և փառաւոր պսակ՝ քո գլխին։ Եւ 13
դու զարդարուեցար ոսկով և արծաթով և քո հագուստները բեհեզ ու մետաքս ու նկարագործ եղան. նաշխ ու մեղր ու իւղ կերար, և շատ ու շատ գեղեցկացար, և թագաւորութեան յաջողեցիր։ Եւ քո գեղեցկու- 14
թեան համբաւը դուրս եկաւ ազգերի մէջ, վասն զի նա կատարեալ եղաւ իմ քեզ վերայ դրած վայելչութեան համար, ասում է Տէր Եհովան։
Բայց դու վստահացար քո գե- 15
ղեցկութեանը, և շնացար քո անուան պատճառով, և թափեցիր քո շնութիւնը ամեն անցնողի վերայ. և նա նորանն էր լինում։ Եւ դու առիր քո հանդերձ- 16
ներից, և քեզ համար գոյնզգոյն բարձրաւանդակներ շինեցիր, և շնացար նորանց վերայ, չեղած և չլինելու բան։ Եւ առիր քո 17
զարդարանքի բաները քո ոսկուցը ու արծաթիցս որ ես էի քեզ տուել, և քեզ համար արուական պատկերներ շինեցիր, և նոքանցով շնացար։ Եւ առիր քո 18
նկարագործ հագուստդ և նորանց ծածկեցիր, և իմ իւղն ու իմ խունկը նորանց առջեւը դրիր։
Եւ իմ քեզ տուած հացը՝ քեզ 19
ուտեցրած նաշխը և իւղը և մեղրը, դու նորանց առջեւը դրիր անոյշ հոտի համար, և եղաւ էլ, ասում է Տէր Եհովան։ Եւ առիր 20
տղաներիդ և աղջիկներիդ, որոնց դու ինձ համար էիր ծնել, և զոհեցիր նորանց ուտելու համար. միթէ քիչ է քո պոռնկութիւնը։ Եւ դու մորթեցիր իմ որդի- 21
կանցը, և նորանց տուիր՝ նորանց

22 ի՛ւղէց անցկացնելով, եւ քո բո-
լոր պղծութիւնների ու պոռնի-
կութիւնների հետ չլինիցիր քո
մանկութեան օրերը, երբոր դու
մերկ ու տկլոր էիր, և քո ար-
23 եան մէջ կոխ էիր տալիս։ Եւ ե-
ղաւ որ քո բոլոր չարութիւններից
յետոյ, (վա՛յ վա՛յ քեզ, ասում
24 է Տէր Եհովան.) Դու քեզ հա-
մար բազանոց էլ շինեցիր, և քեզ
համար բարձր տեղ պատրաստե-
25 ցիր ամեն հրապարակում։ Ամեն
ճանապարհի գլխին շինեցիր քո
բարձրաւանդակները և պղծեցիր
քո գեղեցկութիւնը, և շքեղ-
ցաց սրիր ամեն անցնողի հա-
մար, և շատացրիր քո պոռնկու-
26 թիւնները։ Եւ քո մեծանդամ
Եգիպտացի դրացիների հետ շնա-
ցար, և շատացրիր քո շնութիւն-
ները բնաւ բարկացնելու համար։
27 Բայց ահա ես իմ ձեռքը քեզ
վերայ եմ մեկնել, և կտրճացրել
եմ քո ուռճիկը, և քեզ յանձ-
նեցի քեզ ատող փղշտացոց աղջ-
կանց հաճութեանը, որոնք ամա-
չում են քո ցանկամոլ ընթաց-
քից։
28 Եւ Ասորեստանի որդիանց հետ
էլ շնացար առանց կշտանալու,
և նորանց հետ շնացար, և չկըշ-
29 տացար։ Եւ շատացրիր քո շնու-
թիւնները Քանանու երկրի վերայ
մինչև Քաղդէացոց երկիրը, բայց
30 սորանով էլ չկշտացար։ Ո՜նչ
նուաղ է քո սիրտը, ասում է
Տէր Եհովան, որ անում ես այս
բոլոր բաները՝ հոմարձակ պոռ-
31 նիկ կնոջ գործքը. Բաղանոցնե-
րըդ ամեն Ճանապարհի գլխին շի-
նելով, որ բարձրաւանդակներդ
ամեն հրապարակի մէջ շինեցիր.
և դուն պէս չեղար՝ կոպէնքը ա-
32 նարգելով։ Շնացող կինը իր մար-
դու փոխարէն օտարներին է ա-
33 նում։ Ամեն պոռնկին կոպէնք
կուտան, իսկ դու քո կոպէնքը
տալիս ես հոմանիներիդ. այո՛,
դու նորանց կաշառում ես, որ
քեզ մօտ գան շրջակայքից քո
34 շնութեանց համար։ Եւ քեզ կա-
նանց պոռնկութիւն հակառակ է լին-
ում քո պոռնկութիւններում, որ

քեզ հետևող չկայ շնանալու հա-
մար։ Եւ դու կոպէնք տալով,
և քեզ կոպէնք չառնելով, դու
հակառակը եղար։
Որովհետև, ով պոռնիկ, լսիր Տի- 35
րոջ խօսքը. Այսպէս է ասում 36
Տէր Եհովան. Որովհետև տարած-
ուեցաւ քո պղինձը, և յայտնը-
ուեցաւ քո մերկութիւնը հոմա-
նիներիդ վերայ քո պոռնկութեան-
ներովը, և քո ամեն գարշելի
կուռքերովը, և քո որդիանց ար-
իւնների չափովը, որ տուիր նո-
րանց. Դորա համար ահա ես 37
պիտի հաւաքեմ քո ամեն հոմա-
նիներին, որոնց դու հաճեցիր և-
ղար, և քո բոլոր սիրածներին,
քո բոլոր ատածներին, և ես նո-
րանց պիտի շրջակայքից քեզ վե-
րայ ժողովեմ, և քո մերկութի-
նը բաց անեմ նորանց առջև, որ
նորանք տեսանեն քո մերկութի-
նը։ Եւ քեզ պիտի դատեմ շնա- 38
ցող և արիւնահեղ կանանց դա-
տաստանովը, և քեզ արտաս-
թեան ու նախանձի արեանը պի-
տի տամ։ Եւ ես քեզ նորանց 39
ձեռքը պիտի յանձնեմ, և նո-
րանք պիտի քարու-քանդ անեն քո
բազանոցները, և պիտի փուլ ա-
ծեն քո բարձր տեղերը, և քեզ-
անից պիտի մերկացնեն քո հան-
դերձները, և վեր պիտի առնեն
քո զարդարանքի բաները, և քեզ
պիտի թողուն մերկ ու տկլոր։
Եւ քեզ վերայ մի ժողով պիտի 40
կանգնեցնեն, և քեզ պիտի քա-
րով քարկոծեն, և քեզ պիտի
խացոտեն իրանց սուրերովը։ Եւ 41
պիտի այրեն տներդ կրակով, և
քեզ դատաստաններ պիտի անեն
շատ կանանց աչքի առջև, և ես
պիտի դադարեցնեմ քեզ պոռնի-
կութիւնից, և միւսանգամ էլ
կոպէնք չես տալ։ Եւ ես կ'հան- 42
գստացնեմ իմ արտասութիւնը
քեզ վերայ, և իմ նախանձը կը
հեռանայ քեզանից, որ ես հան-
գստանամ և էլ չբարկանամ։
Որովհետև դու չհիշեցիր քո ման- 43
կութեան օրերը, այլ ինձ բար-
կացրիր այս ամենովը, և ես էլ
ահա քո ճանապարհը քո գլխովը

եմ տալիս, ասում է Տէր Եհովան, և դուք չեք անիլ այդ չար խորհուրդը քո բոլոր պղծութիւններից յետոյ։
44 Ահա ամեն առակախօսը պիտի առակ ասէ քեզ վերայ թէ, Ինչպէս մայրը՝ նոյնպէս եւ աղջիկը։
45 Քո մօր աղջիկն ես դու, որ զզուեցաւ իր այրից և իր որդիներից, և դու քո քոյրերի քոյրն ես, որոնք զզուեցան իրանց այրերից ու իրանց որդիներից, ձեր մայրը Քեթացի և ձեր հայրը
46 Ամորհացի է. Եւ քո մեծ քոյրը Սամարիան է, ինքը և իր աղջիկները որ բնակում են քո ձախ կողմին, և քո փոքր քոյրը քո աջ կողմին բնակողն է, այսինքն
47 Սոդոմը և իր աղջիկները։ Բայց դու նորանց ճանապարհներով չը գնացիր, և նորանց պղծութիւնների պէս արիր՝ մի քիչ միայն. այլ դու նորանցից աւելի ապականութիւն արիր քո բոլոր ճա-
48 նապարհներումդ։ Կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ քո քոյրը Սոդոմն ինքն ու իր աղջիկները չեն արել, ինչպէս որ դու ես արել և քո աղջիկները։
49 Ահա սա էր քո քոյր Սոդոմի անօրէնութիւնը, հպարտութիւն, հացի կշտութիւն և անհոգ հանգրաութիւն ունէր նա և իր աղջիկները. և խեղճի ու աղքատի
50 ձեռքը չէր ուժովացնում։ Եւ նորանք հպարտացան և պղծութիւններ արին իմ առջև, և նորանց վերացրի հէնց որ տեսայ.
51 Սամարիան էլ քո մեղքերի կէսն էլ չափ չէ մեղանչել. և դու քո պղծութիւնները նորանցից շատացրիր, և արդարացրիր քո քոյրերին քո ամեն բոլոր պղծու-
52 թիւններով։ Դու էլ ուրեմն կրիր քո անարգանքը, որ դատապարտում էիր քո քոյրերին, քո մեղքերի համար, որ նորանցից աւելի պղծութիւն գործեցիր, նորանք քեզանից արդար են։ Ուրեմն դու էլ ամաչիր և քո անարգանքը կրիր, որ արդարացրիր քո քոյրերին։
53 Եւ ես եմ պիտի դարձնեմ նորանց գերութիւնը, Սոդոմի և նորա աղջիկների գերութիւնը, և Սամարիայի և նորա աղջիկների գերութիւնը, և քո գերութեան գերութիւնը նորանց միջումը։
54 Որպէս զի կրես քո անարգանքը, և ամաչես քո ամեն արածիցդ նորանց մխիթարելովդ։
55 Եւ քո քոյրերը՝ Սոդոմ ու իր աղջիկները եւ պիտի դառնան իրանց առաջի վիճակին, և Սամարիան ու իր աղջիկները եւ պիտի դառնան իրանց առաջի վիճակին, և դու ու քո աղջիկները եւ պիտի դառնաք ձեր առաջի վիճակին։
56 Եւ քո քոյր Սոդոմի լուրն անգամ չը կար քո բերանումը քո հպարտութեան օրումը
57 յայտնուելուց առաջ. ինչպէս այն ժամանակ որ յայտնուեցաւ ամօթը Ասորց աղջիկների առջև և քո բոլոր շրջակայ փղշտացոց աղջիկների առջև, որոնք քեզ նախատում էին շուրջանակի։
58 Քո չարագործութիւններն ու քո պղծութիւնները դու պիտի կրես, ասում է Տէրը։
59 Վասն զի այսպէս է ասում Տէր Եհովան. Ես էլ քեզ արի, ինչպէս դու էիր արել, որ երդումն անարգեցիր ոչնչացնելով։
60 Իսկ ես պիտի յիշեմ իմ քեզ հետ քո մանկութեան օրերին արած ուխտը, և քեզ հետ յաւիտենական ուխտ պիտի հաստատեմ։
61 Եւ պիտի յիշես քո ճանապարհները և պիտի ամաչես՝ քեզանից մեծ քոյրերիդ և քեզանից փոքրներին ընդունելով և ես նորանց քեզ պիտի տամ իրրև աղջիկներ, թէև քո ուխտից չեն։
62 Եւ ես պիտի հաստատեմ իմ ուխտը քեզ հետ, և դու պիտի իմանաս որ ես եմ
63 Տէրը։ Որպէս զի յիշես և ամաչես, և միւսանգամ բերանդ չը բանաս ամաչելուդ համար, երբոր ես քաւութիւն անեմ քեզ համար քո ամեն արածին, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 մէլով. Որդի մարդոյ, մի հանե-

լուկ առաջարկիր և առակ ասիր
3 Իսրայէլի տանը. եւ ասիր. Այսպէս է առում Տէր Եհովան. Մեծ արծիւ՝ թևերը մեծ՝ փետուրը երկայն՝ փետրալից՝ գոյնզգոյն եկաւ Լիբանան և առաւ եղևինի
4 գագաթը, Նորա ընձիւղներին ծայրը կտրեց և տարաւ Նորան Քանանու երկիրը և Նորան դրաւ
5 վաճառականաց քաղաքումը։ Եւ առաւ այն երկրի սերմերից և դրաւ Նորան մի ցանկի արտում. Նորան առաւ շատ ջրերի մօտ տընկաց իբրև ուռի։ (Եւ նա բուսաւ
6 և եղաւ մի տարածուած որթ կարճահասակ,) որ Նորա ճիւղերը դէպի Նորան ուղղուին և արմատները Նորա տակին լինին. և նա մի որթ եղաւ և ոստեր հանեց և ընձիւղներ արձակեց։
7 Եւ մէկ արծիւ էլ կար մեծ՝ թևերը մեծ՝ և փետրալից. և ահա այս որթը իր արմատները տարածեց դէպի Նորան և իր ճիւղերը դէպի Նորան արձակեց, որ Նորան առնէ
8 իր անկուած ածուներից։ Նա անկուեցաւ բարեբեր արտում շատ ջրերի մօտ, որ ոստեր տայ և պտուղ բերէ և ազնիւ որթ
9 լինի։ Ասիր Այսպէս է առում Տէր Եհովան, Մի՞թէ նա կ'յաջողէ. մի՞թէ Նորա արմատները չէ խլիլ, և Նորա պտուղը չէ քաղիլ, որ նա չորանայ։ Նորա բոլոր բուսած տերևները պիտի չորանան, և առանց մեծ բազուկի և շատ ժողովրդի, որ Նորան հա-
10 նէ Նորա արմատներից։ Եւ ահա թէև անկուեցաւ, մի՞թէ յաջողուելու է. չէ՞ որ հէնց արևելեան քամին Նորան դիպչելուն պէս պիտի իսկոյն չորանայ, իր բուսած ածուներում պիտի չորանայ։
11 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
12 սելով. Ասիր ապստամբների տանը, մի՞թէ չէ՞ք հասկանում թէ սա ինչ է. ասիր. Ահա եկաւ Բաբելոնի թագաւորը Երուսաղէմ և առաւ Նորա թագաւորին և Նորա իշխաններին և Նորանց տա-
13 րաւ Բաբելոն իր մօտ։ Եւ առաւ թագաւորի սերունդից մէկին և Նորա հետ ուխտ արաւ և Նորան երդում անել տուաւ, և երկրի զօրաւորներին էլ առաւ. Որ թա-
14 գաւորութիւնը ցած լինի և չկարողանայ իրան բարձրացնել, որ իր խոստումը պահէ որ ինքը հաստատ լինէ։ Բայց Նա ապստամ-
15 բեց Նորա դէմ իր դեսպաններին Եգիպտոս ուղարկելով որ իրան ձիեր և շատ զօրք տան. Մի՞թէ յաջողուելու է. Մի՞թէ ազատուելու է այս բաներն անողը. և ուխտը կ'դրժէ՝ և կ'ազատուի՞։
16 Կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ Նա պէտք է այն տեղը, ուր որ թագաւորը Նորան թագաւոր արաւ, որի երդումը Նա անարգեց և որի ուխտը Նա դրժեց, Նորա հետ մեռնէ Բաբի-
17 լոնում։ Եւ մեծ զօրքով և շատ բազմութիւնով փարաւոնը Նորան մի բան չի անիլ պատերազմի մէջ պատնէշ շինուելիս և մարտկոց կազմուելիս՝ շատ հոգիներ կոտրելու համար։
18 Եւ Նա անարգեց երդումը, որ ուխտը դրժէ. և ահա Նա իր ձեռքը տուել էր և այս ամենը արաւ. Նա չի ազատուիլ։
19 Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Կենդանի եմ ես որ իմ երդումը որ Նա անարգեց և իմ ուխտը որ Նա դրժեց, Նորա գլխովը պիտի տամ. Եւ Նորա
20 վերայ պիտի տարածեմ իմ ցանցը, և Նա պիտի բռնուի իմ որոգայթումը, և ես Նորան պիտի տանեմ Բաբիլոն և Նորա հետ դատ պիտի վարեմ այնտեղ այն յանցանքի համար, որ գործեց ինձ դէմ։ Եւ Նորա բոլոր փախու-
21 տականները Նորա բոլոր զօրքերումը պիտի սրով ընկնեն, և մնացածները պիտի ցրուին դէպի ամեն կողմը. և դուք կ'իմանաք, որ ես Տէրս եմ խօսել։

Այսպէս է առում Տէր Եհո-
22 վան. Ես էլ պիտի առնեմ բարձր եղևինի գագաթից և պիտի տընկեմ. Նորա ընձիւղների ծայրից պիտի մատղաշը կտրեմ և պիտի տնկեմ ես մէկ բարձր և վեր եղած
23 լեռան վերայ։ Իսրայէլի բարձր լեռան վերայ պիտի տնկեմ Նորան. և Նա ոստեր պիտի արձա-

կէ և պտուղ տայ, և նա ազնիւ եղևին պիտի դառնայ. և նորա տակին կ'բնակեն ամեն տեսակ թևաւոր թռչուններ, նորա ոստերուն հովանիովը կ'բնակեն նո-
24 րանք։ Եւ դաշտի բոլոր ծառերը պիտի գիտենան որ ես Տէրս եմ բարձր ծառերը ցածցրել և ցած ծառերը բարձրացրել, կանաչ ծառը չորացրել, և դալարացրել չոր ծառը. ես Տէրս ասել եմ և պիտի անեմ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Ո՞նչ էք դուք այդ առակը ասում Իսրայէլի երկրումը ասելով. Հայրերը ազոխ կերան
3 և որդկանց ատամները առին։ Ես կենդանի եմ, ասում է Տէր Եհովան, որ այս առակը այլևս
4 պիտի չասէք Իսրայէլումը։ Ահա բոլոր հոգիները իմն են. ինչպէս է հօր հոգին, նոյնպէս է և որդու հոգին ինձ համար. մեղանչող անձը ինքը պիտի մեռնի։
5 Եթէ մէկ մարդ արդար է և գործէ իրաւունք և արդարութիւն,
6 Լեռանց վերայ չուտէ, և աչքերը չյարձրացնէ դէպի Իսրայէլի տան կուռքերը, և իր ընկերի կնոջը չպղծէ, և իր ամսականն անմաքրութեան մէջ լինող կնոջ չմօ-
7 տենայ, Եւ մարդու չզրկէ, նորա պարտքի գրաւը ետ դարձնէ, յափշտակութեամբ բան չյափշտակէ, իր հացը սովածին տայ, և
8 մերկին հանդերձ հագցնէ. Վաշխով փող չտայ և տոկոս չառնէ, իր ձեռքը ետ քաշէ անօրէնութիւնից, ճշմարիտ դատաստան անէ մէկի ու միւսի մէջտեղը,
9 Նա իմ օրէնքներովս է գնում և իմ իրաւունքները պահում է որ ճշմարտութիւն անէ. նա արդար է. նա անպատճառ պիտի ապրէ, ասում է Տէր Եհովան։
10 Եւ էթէ նա ծնէ մի անիրաւ և արիւնահեղ որդի, և նա առա-
11 ջից միայն մէկից անէ. Այսինքն նա այս ամենը չանէ, այլ լեռանց վերայ ուտէ էլ, և իր ընկերի կնոջը պղծէ, խեղճին և աղքատին զրկէ, յափշտակութիւններ անէ, գրաւը ետ չդարձնէ և իր աչքերը բարձրացնէ դէպի կուռքերը՝ պղծութիւն գործէ,
13 Վաշխով փող տայ և տոկոս առնէ. միթէ նա կ'ապրէ. նա չի ապրիլ, որ անում է այս բոլոր պղծութիւնները, նա պէտք է անշուշտ մեռնի. նորա արիւնը իր վերայ լինի։
14 Կամ թէ ահա նա մի որդի ծնէ, և նա տեսնէ իր հօր արած բոլոր մեղքերը և վախենայ և այնպէս չանէ. Լեռանց վերայ չու-
15 տէ, և իր աչքերը վեր չյարձրացնէ դէպի Իսրայէլի տան պղծութիւնները, իր ընկերի կնոջը չպղծէ. Եւ մէկ մարդու չզրկէ,
16 գրաւ չառնէ, և յափշտակութիւն չանէ, իր հացը սովածին տայ և մերկին ծածկէ հագուստով, խեղճից ետ քաշէ իր ձեռ-
17 քը, վաշխ և տոկոս չառնէ, իմ դատաստանները գործադրէ, իմ օրէնքներումս վարուի. նա պիտի չմեռնի իր հօր անօրէնութիւնովը. նա անշուշտ պէտք է ապրէ։
18 Նորա հայրը, որովհետև զրկանք արաւ և էր եղբօրը յափշտակեց, և արաւ այն, ինչ որ լաւ չէր, իր ազգի մէջ, և ահա նա պիտի մեռնի իր անօրէնութիւնովը։
19 Եւ դուք ասում էք. Ինչո՞ւ չկրէ որդին հօր անօրէնութիւնը, Որովհետև որդին իրաւունք և արդարութիւն գործեց, իմ բոլոր օրէնքները պահեց և նորանց կատարեց, նա պէտք է անշուշտ
20 ապրէ։ Անձն անձը որ մեղանչում է, նա պիտի մեռնի. որդին պիտի չկրէ հօր անօրէնութիւնը. և հայրը պիտի չկրէ որդու անօրէնութիւնը. արդարի արդարութիւնը իր վերայ պիտի լինի, և ամբարշտի ամբարշտութիւնը իր
21 վերայ պիտի լինի։ Եւ ամբարիշտը, երբոր դարձի գայ իր բոլոր մեղքերից որ արել էր, և պահէ իմ բոլոր օրէնքները և իրաւունք ու արդարութիւն գործէ, պէտք է անշուշտ ապրէ, նա պիտի չմեռնի։
22 Նորա արած բոլոր յանցանք-

ները պիտի չլինեն նորան. իր
սրած սրգպարտութիւնով նա պի-
23 տի սպրէ։ Մի՛թէ ես երբէք
կ'ուզեմ ամբարշտի մեռնիլը,
ասում է Տէր Եհովան. չէ՞ որ
նորա իր ճանապարհից դարձի
24 գալն ու սպրիլն եմ ուզում։ Բայց
եթէ արդարը ես սրգպարտի
դարձութիւնից և անօրէնութիւն
անէ, և ամբարշտի սրած բոլոր
պղծութիւնների պէս անէ, մի՞-
թէ նա կ'սպրէ. նորա սրած բո-
լոր արդարութիւնը պիտի չլինի
ուի. նա նորանցով այսինքն իր
սրած յանցանքով և իր սրած
մեղքով պիտի մեռնի։

25 Եւ դուք ասում էք. Տիրոջ
ճանապարհը ուղիղ չէ. մեկ լսե-
ցէք, ով Իսրայէլի տուն. մի՞թէ
ուղիղ չէ իմ ճանապարհը. չէ՞
որ ձեր ճանապարհը չէ ուղիղ։
26 Երբոր արդարը ես դառնայ իր
արդարութիւնից և անօրէնու-
թիւն անէ և նորանցով մեռնի,
նա իր սրած անօրէնութեան հա-
27 մար պիտի մեռնի։ Եւ երբոր
ամբարիշտը ես դառնայ իր ա-
րած ամբարշտութիւնից և իրա-
ւունք ու արդարութիւն անէ, նա
28 կ'սպրեցնի իր անձը. Որովհետև
տեսաւ և ես դարձաւ իր սրած բո-
լոր յանցանքներից. նա անշուշտ
պիտի սպրի, պիտի չմեռնի,
29 Բայց Իսրայէլի տունն ասում
է. Տիրոջ ճանապարհը ուղիղ
չէ. մի՞թէ իմ ճանապարհները
ուղիղ չեն, ով Իսրայէլի տուն,
չէ՞ որ ձեր ճանապարհները չեն
30 ուղիղ։ Վասն որոյ ես ձեր ամեն
մարդուն իր ճանապարհների հա-
մեմատ պիտի դատեմ, ով Իս-
րայէլի տուն, ասում է Տէր Ե-
հովան. դարձի եկէք, և ձեր բո-
լոր յանցանքներից և դարձէք,
որ ձեզ համար անօրէնութեան
31 գայթակղութիւն չդառնայ։ Դէն
դցեցէք ձեր վերայից ձեր բոլոր
յանցանքները, որով դուք յան-
ցաւոր եղաք և ձեզ համար նոր
սիրտ և նոր հոգի գործեցէք,
վասն զի ինչո՞ւ համար մեռնէք,
32 ով Իսրայէլի տուն։ Վասն զի
ես հաճութիւն չունիմ մեռնողի
մեռնելուն, ասում է Տէր Եհո-
վան, ածեցէք և դարձէք որ սպ-
րէք։

ԳԼ. ԺԹ

Եւ դու ողբ բարձրացրու Իսրա- 1
յէլի իշխանների վերայ, և ասիր. 2
Ո՞նչ է քո մայրը, մի մատակ
առիւծ, որ առիւծների մէջ է
պառկում, որ իր լակոտների
կորիւնների մէջ է մեծացնում։
Եւ նա մեծացրեց իր լակոտներից 3
մէկին, որ մի կորիւն եղաւ, և
սովրեց յափշտակութիւն անել,
և որ մարդ էր ուտում։ Եւ ազ- 4
գերը լսեցին նորա մասին, նա
բռնուեցաւ նորանց փառաւը. և
նորան շղթաներով տարան Ե-
գիպտոսի երկիրը։ Եւ երբոր տե- 5
սաւ որ թառլացել է, յոյսը կորը-
ուել է, մի ժամանակ իր լա-
կոտներից մէկին առաւ, մի կոր-
իւն շինեց նորան։ Եւ նա մտաւ 6
եկաւ առիւծների մէջ առիւծ է-
դաւ, և սովրեց յափշտակու-
թիւն անել, և մարդ ուտել։ Եւ 7
նա պիտաց նորա արուարձիները
և քանդեց նորանց քաղաքները,
և ապականեց երկիրն ու նորա
գօրութիւնը նորա մեծնալու ձայ-
նից։ Եւ ազգեր վեր կացան նո- 8
րա վերայ գաւառներից շուրջա-
նակի, և տարածեցին նորա վե-
րայ իրանց ցանցը, նա էլ բռնը-
ուեցաւ նորանց փառաւը։ Եւ նո- 9
րան շղթաներով վանդակում
դրին, և նորան տարին Բաբելոնի
թագաւորի մօտ, և նորան դրին
բերդում. որպէս զի նորա ձայնը
այլևայլևս չլսուի Իսրայէլի լե-
ռանց վերայ։

Մայրդ քո նմանութեամբ ջը- 10
րերի վերայ տնկուած որթի նման
է, որ պտղաւոր և ոստոտից է-
ղաւ շատ ջրերից։ Եւ նա գօրա- 11
ւոր շաւաւիղներ ունեցաւ իշխա-
նաց գաւազանների համար, և
նորա հասակը բարձրացաւ մինչև
ամպերի մէջը, և նա երևեցաւ
իր բարձրութեամբ՝ իր ճիւղերի
առատութեամբ։ Բայց նա խըլ- 12
ուեցաւ բարկութեամբ՝ գետինը

գցուեցաւ, և արևելեան քամին
չորացրեց նորա պտուղը, կոտ-
րատուեցան և չորացան նորա զօ-
րաւոր ճիւղերը, կրակը լափեց նո-
13 րան։ Եւ հիմա անկուռել է անա-
պատումը, չոր ու ցամաք երկ-
14 րումը։ Եւ կրակ դուրս եկաւ
նորա ատերի մի շատախիղից,
կերաւ նորա պտուղը, և նորա
վերայ զօրաւոր ճիւղ չմնաց իշ-
խանի գաւազանի համար։ Սա
ողբ է, և ողբ պիտի լինի։

ԳԼ. Ի

1 Եւ եղաւ եօթներորդ տարում
հինգերորդ ամսուայ տասնին,
որ Իսրայէլի ծերերից մարդիկ ե-
կան Եհովայից հարցնելու, և
նստեցին իմ առջեւս։
2 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
3 սելով. Որդի մարդոյ, խօսիր Իս-
րայէլի ծերերի հետ և ասիր նո-
րանց. Այսպէս է ասում Տէր Ե-
հովան. Դուք ինձանից հարցնե-
լո՞ւ էք եկել. կենդանի եմ ես,
որ ես ինձ հարցնուել չեմ տալ
ձեզանից, ասում է Տէր Եհո-
4 վան։ Մի՞թէ նորանց դատելու
ես. դատելո՞ւ ես, օվ որդի մար-
դոյ. դու նորանց իրանց հայրերի
5 պղծութիւնները իմացրու. Եւ
ասիր նորանց. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Ես Իսրայէլին ընտ-
րած օրս որ ձեռքս վեր բարձ-
րացրի Յակոբի տան սերունդի
համար և յայտնուեցայ նորանց
Եգիպտոսի երկրումը, իմ ձեռքս
վեր բարձրացրի ասելով. Ես եմ
6 Տէր Աստուածը. Այն օրը որ ես
ձեռքս վեր բարձրացրի նորանց
համար, որ նորանց հանեմ Ե-
գիպտոսի երկրից դէպի այն եր-
կիրը, որ ես նորանց համար պատ-
րաստել էի, որ կաթ և մեղր էր
բղխում, որ ամեն երկիրների
7 զարդն է. Եւ ասի նորանց. Ջե-
զանից ամեն մարդ դէն գցէ իր
աչքերի գարշութիւնները և Ե-
գիպտոսի կուռքերովը մի պղծը-
ուէք. ես եմ ձեր Տէր Աստուածը։
8 Բայց նորանք ապստամբեցին
ինձ դէմ և չուզեցին ինձ լսել.
ամեն մարդ իր աչքերի գարշու-
թիւնները դէն չգցեց, և Եգիպ-
տոսի կուռքերը չձգեցին. և ես
ասացի որ թափեմ իմ սրտմուա-
թիւնը նորանց վերայ որ իմ բար-
կութիւնը կատարեմ նորանց վե-
րայ Եգիպտոսի երկրումը։ Եւ ես 9
արի իմ անուան համար, որ չը
պղծուի այն ազգերի աչքից առ-
ջեւ, որոնց մէջ են նորանք, ո-
րոնց ես յայտնուեցայ նորանց
աչքերի առջեւ նորանց Եգիպտո-
սի երկրից հանելիս։
Եւ ես նորանց հանեցի Եգիպ- 10
տոսի երկրից և նորանց տարայ
անապատը. Եւ տուի նորանց իմ 11
օրէնքները և իմ իրաւունքները ի-
մացրի նորանց, որոնց ո՛ր մարդ
որ կատարէ կ՚ապրէ նորանցով։
Նաև իմ շաբաթները տուի նո- 12
րանց որ նշան լինի իմ և նորանց
մէջ, որ իմանան թէ ես եմ նո-
րանց սրբող Տէրը։
Բայց Իսրայէլի տունը ապըս- 13
տամբեց ինձ դէմ անապատումը,
նորանք չգնացին իմ օրէնքներո-
վը, և իմ իրաւունքները մերժե-
ցին, որոնց կատարող մարդը նո-
րանցով կ՚ապրէ, և իմ շաբաթ-
ները շատ պղծեցին. և ես ասա-
ցի թէ թափեմ իմ սրտմուա-
թիւնը նորանց վերայ անապատ-
ումը նորանց բնաջինջ անելու
համար։ Եւ ես արի իմ անուան 14
համար, որ չպղծուի ազգերի աչ-
քերի առջեւ, որոնց աչքից առջեւ
ես հանեցի նորանց։ Եւ ձեռքս 15
էլ բարձրացրի նորանց համար
անապատումը, որ նորանց չտա-
նեմ այն տուած երկիրս, որ մեղր
և կաթ է բղխում, որ գարդ է
բոլոր երկիրների համար։ Որովհե- 16
տև մերժեցին իմ իրաւունքները
և իմ օրէնքներովը չգնացին և
իմ շաբաթները պղծեցին, վասն
զի իրանց կուռքերի ետևից էր
գնում նորանց սիրտը։ Բայց իմ 17
աչքը խնայեց նորանից, որ նորանց
չկորցնեմ, և նորանց չվերջացրի
անապատումը։
Եւ նորանց որդիներին ասացի 18
անապատումը. Ձեր հայրերի կա-
նոններովը մի գնաք, և նորանց

աւելորդութիւնները մի պահէք և նորանց կուռքերովը մի պղծուիք։
19 *Ես եմ ձեր Տէր Աստուածը, իմ օրէնքներովը գնացէք, և իմ իրաւունքները պահեցէք և նորանց*
20 *կատարեցէք։ Ես իմ շաբաթները սրբեցէք, որ նորանք նշան լինին իմ մէջ և ձեր մէջ, որ իմանաք թէ ես եմ Տէրը ձեր Աստուածը։*
21 *Բայց որդիքը ապստամբեցին ինձ դէմ, իմ օրէնքներովը չգնացին և իմ իրաւունքները չպահեցին որ անէին նորանց, որոնց մարդն ով որ անէ՝ նորանցով կ'ապրէ. նորանք պղծեցին իմ շաբաթները. և ես ասացի որ իմ սրտմտութիւնը թափեմ նորանց վրայ, որ կատարեմ իմ բարկութիւնը նորանց վերայ անապատումը։*
22 *Սակայն ես ետ քաշեցի իմ ձեռքը, և արի իմ անուան համար, որ չպղծուի այն ազգերի աչաց առջև որոնց աչքերի առջև ես նորանց հանեցի։*
23 *Ես էլ իմ ձեռքը բարձրացրի նորանց համար անապատումը, որ նորանց ցրուեմ ազգերի մէջ և նորանց սփռեմ երկիրների մէջ,*
24 *Որովհետև նորանք չկատարեցին իմ իրաւունքները և մերժեցին իմ օրէնքները և իմ շաբաթները պղծեցին և նորանց աչքերը իրանց հայրերի կուռքերի ետևից էր։*
25 *Եւ ես էլ նորանց օրէնքներ տուի որ լաւ չէին, և իրաւունքներ՝ որոնցով չէին կարող ապրել։*
26 *Եւ նորանց պղծեցի իրանց ընծաներովը ամեն արգանդ բացողին ետ-ն-ը անցկացնել տալով, որպէս զի նորանց բնաջինջ անեմ, և որպէս զի գիտենան որ ես եմ Տէրը։*
27 *Որա համար խօսիր Իսրայէլի տան հետ, որդի մարդոյ, և ասիր նորանց. Այսպէս է ասում Տէր Եհովան. Դեռ սրանով էլ նախատեցին ինձ ձեր հայրերը ինձ դէմ անհաւատարմութիւն գործելով։*
28 *Եւ ես նորանց տարի էի այն երկիրը, որի մասին ես բարձրացրել էի ձեռքս, որ նորանց տամ այն, իսկ նորանք ամեն*

բարձր բլուր և ամեն տերևավից ծառ տեսնելով այնտեղ իրանց զոհերը մատուցրին և իրանց գրգռող մատաղները այնտեղ տարին և իրանց անուշահոտ խունկերը մատուցրին այնտեղ, և այնտեղ թափեցին իրանց նուէրները։
29 *Եւ ես նորանց ասացի. Դա ինչ բարձրատեղի է ուր որ դուք գնում էք, և նորան մինչև այս օրը բարձրատեղի են անուանում։*
30 *Սորա համար ասիր Իսրայէլի տանը. Այսպէս է ասում Տէր Եհովան. Միթէ դուք ձեր հայրերի ճանապարհովը պղծուիք և նորանց գարշութեանց հետևելով*
31 *պոռնկանաք, և ձեր ընծաները մատուցանելիս և ձեր որդիանց կրակով անցկացնելիս պղծուիք ձեր բոլոր կուռքերովը մինչև այս օր, և ես ինձ հարցանուի՞լ կը տամ ձեզանից, ով Իսրայէլի տուն, կենդանի եմ ես, ասում է Տէր Եհովան, որ ես ինձ ձեզանից հարցանուիլ չեմ տալ։*
32 *Եւ ձեր մտքում վեր կացածը պիտի բնաւ չկատարուի, որ ասում էք թէ Ազգերի պէս և երկրի ցեղերի պէս լինենք փայտին ու քարին պաշտելով։ Կենդանի եմ ես,*
33 *ասում է Տէր Եհովան, որ անշուշտ պիտի ձեզ վերայ զօրաւոր ձեռքով և մեկնած բազուկով ու թափած սրտմտութիւնով տիրեմ։*
34 *Եւ ձեզ պիտի հանեմ և ձեզ ժողովեմ երկիրներից ուր որ ձեզ ցրիւ էի տուել զօրաւոր ձեռքով և մեկնած բազուկով և թափած սրտմտութիւնով։*
35 *Եւ ձեզ պիտի տանեմ ազգերի անապատը և ձեզ հետ այնտեղ դատուիմ երես առ երես։*
36 *Ինչպէս որ դատուեցայ ձեր հայրերի հետ Եգիպտոսի երկրի անապատումը, նոյնպէս պիտի դատուիմ և ձեզ հետ, ասում է Տէր Եհովան։*
37 *Եւ ձեզ պիտի անցկացնեմ գաւազանի տակովը և ձեզ պիտի մտցնեմ ուխտի կապուածքի տակ։*
38 *Եւ ես պիտի ջոկեմ ձեզանից ապստամբներին և ինձ դէմ յանցաւոր եղողներին իրանց պանդխտութեան*

երկրին Հանեմ, որ Իսրայէլի երկիրը չմնանեն. և դուք պիտի իմանաք որ ես եմ Տէրը։

39 Եւ դուք, ով Իսրայէլի տուն, այսպէս է ասում Տէր Եհովան. Գնացէք ամեն մարդ կուռքերին ծառայեցէք. բայց յետոյ երթալ որ ինձ պիտի լսէք և իմ սուրբ անունս այլև պիտի չպղծէք ձեր ընծաներովը և
40 ձեր կուռքերովը։ Վասն զի իմ սուրբ լեռան վերայ, Իսրայէլի լեռան վերայ, ասում է Տէր Եհովան, այնտեղ ինձ պիտի ծառայեն բոլոր Իսրայէլի տունը բոլորովին այն երկրումը. այնտեղ ես պիտի հաւանեմ նորանց և այնտեղ պիտի որոնեմ ձեր ընծաները, ձեր տուրքերի երախտրիքը ձեր բոլոր սուրբ բաներովը.
41 Անուշահոտ խունկով պիտի հաճեմ ձեզ երբոր ձեզ հանեմ ազգերի միջից և ձեզ ժողովեմ այն երկիրներից ուր որ ձեզ ցրիւ եմ տուել, և պիտի սրբուիմ ձեզանով
42 ազգերի աչքի առջև։ Եւ դուք կ'իմանաք թէ ես եմ Տէրը երբոր ձեզ կ'առնեմ Իսրայէլի երկիրը՝ այն երկիրը որի մասին ձեռքս վեր եմ բարձրացրել որ
43 նորանց հայրերին տամ այն։ Եւ այնտեղ պիտի յիշէք ձեր ճանապարհները և ձեր բոլոր գործքերը որոնցով դուք պղծուեցաք, և պիտի զզուէք ձեր անձերից ձեր արած բոլոր չարութիւնների համար.
44 Եւ պիտի գիտենաք որ ես եմ Տէրը, երբոր ես ձեզ կանեմ այս իմ անուան համար և ոչ թէ ձեր չար ճանապարհների համեմատ, և ձեր ապականեալ արարքների համեմատ, ով Իսրայէլի տուն, ասում է Տէր Եհովան։

45 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
46 սելով. Որդի մարդոյ, երեսդ դէպի հարաւ արա և խօսք բղխիր դէպի հարաւ և մարգարէացիր հարաւային դաշտի անտառի մասին.
47 Եւ ասիր հարաւային անտառին. Լսիր Տիրոջ խօսքը, այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես քեզանում կրակ եմ վա-

առնել, որ պիտի լափէ քո մէջ ամեն կանաչ ծառը և ամեն չոր ծառը. բորբոքուած բոցը պիտի չհանգչէ և ամեն կողմերը պիտի այրուին նորանով հարաւից մինչև հիւսիս։ Եւ ամեն մարմին
48 պիտի տեսնէ որ ես Տէրս եմ նորան վառել. նա չպիտի հանգչէ։
49 Եւ ես ասացի. Ա՛հա, Տէր Եհովայ, նորանք ինձ համար առակախօսութիւններ է անում։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, երեսդ դէպի Երուսաղէմ արա և խօսք բղխիր սրբարանների մասին և մարգարէացիր Իսրայէլի երկրի մասին,
3 Եւ ասիր Իսրայէլի երկրին. Այսպէս է ասում Տէրը. Ահա ես քեզ դէմ եմ և հանում եմ իմ սուրը իր պատեանից և պիտի բնաջինջ անեմ քեզանից արդարին և ամբարշտին։
4 Որովհետև ես պիտի բնաջինջ անեմ արդարին և ամբարշտին, ուրեմն պիտի դուրս գայ իմ սուրը իր պատեանից ամեն մարմնոյ վերայ հարաւից մինչև հիւսիս։
5 Եւ ամեն մարմին պիտի դիտենայ, որ ես Տէրս եմ հանել իմ սուրը իր պատեանից, այլ և այնտեղ չի դառնալ։
6 Եւ դու, որդի մարդոյ, հառաչիր, մէջքը կոտրելով և դառն հառաչանքով նորանց աչքի առջև.
7 Եւ եթէ լինի որ քեզ ասեն. Ինչո՞ւ համար ես հառաչում. դու էլ ասիր. Վասն որ գալիս է. և ամեն սիրտ պիտի հալուի, և ամեն ձեռքեր թուլանան, և ամեն հոգի պիտի նուաղէ, և ամեն ծունկեր պիտի գնան ջրի պէս. ա՛հա կ'գայ և կ'կատարուի, ասում է Տէր Եհովան։

8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
9 սելով. Որդի մարդոյ, մարգարէացիր և ասիր. Այսպէս է ասում Տէրը. Ասիր՝ Սուրը, սուրը սրուել է և մաքրուել էլ է։
10 Մեծ կոտորած անելու համար է սրուել, փայլելու համար է մաքրուել.

կամ ուրախանա՞նք, Ե՞ր որդուս
գուսպանը արհամարհուած է ա-
11 մեն փայտ։ Ընչից նա առաւ նո-
բան մաքրուելու՝ ձեռքով բանե-
լու համար. այն առուը սրուել
է, և նա սրուել է սպանողի
12 ձեռքին դնելու համար։ Աղաղա-
կիր և ողբա, որդի մարդոյ, վասն
զի նա պիտի լի՛ ժողովրդի վերայ
և Իսրայէլի բոլոր իշխանների վե-
րայ լինի, առուի են մնացուած
լի՛ ժողովուրդը. դարս համար
13 խիթը ապրիլի։ Վասն զի փորձ
եղաւ, և ի՞նչ, եթէ այն անարգող
գաւազանն էլ չլինի, ասում է
14 Տէր Եհովան։ Եւ դու, որդի մարդ-
դոյ, մարգարէացիր և ծափ ծափիլ
զարկ. և առուը պիտի կրկնուի երեք
անգամ՝ այսինքն վիրաւորողների
առուը որ է մեծ կատրածի առու-
րը, որ շրջապատում է նորանից։
15 Արտերը հալածելու և խոշերը շա-
տանալու համար նորանից բոլոր
դռների վերայ դրի առուի երկիւ-
ղը. ա՜խ, շինուել է փայլելու,
16 սրուել է մորթելու համար։ Շա-
տաքուիր՝ ազ կողմն անցիր, կամ
անց կաց ձախ կողմը, ուր որ ու-
17 զուած է երեսդ։ Ես էլ եմ
ծափ ծափիլ զարկելու, և իմ
սրտմտութիւնը պիտի հանգստա-
ցընեմ, ես Տէրս եմ խօսել։
18 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
19 սելով. Եւ դու, որդի մարդոյ,
դու քեզ համար երկու ճանա-
պարհ պատրաստիր Բաբելոնի
թագաւորի սուրը գալու համար.
մէկ երկրից պիտի դուրս գան նո-
րանք երկուսն էլ. և մի ձեռք
դծագրիր, քաղաքի ճանապարհի
20 գլխին դծագրիր. Մի ճանապարհ
պատրաստիր, որ սուրը գայ Ամ-
մոնի որդիքից Րաբբան և Յու-
դայի էրէմ պարսպաւոր Երու-
սաղէմը։
21 Վասն զի Բաբելոնի թագաւորը
կանգնել է ճանապարհի գլխին
երկու ճանապարհների բաժան-
ման տեղի վերայ որ հմայութիւն
անէ. նա երերացնում է նետե-
րը՝ հարցնում թերափիմներին,
22 մորի տալիս լեարդին։ Նորա ա-
ձեռքին հմայութիւն կար Երու-
սաղէմի համար, որ պատրաս-
քենաներ դնեն, բերան բանան
պատերազմի ազաղակով, ձայնը
բարձրացնեն դաշնալով, մեքենաներ
դնեն դռների դէմ, հողապատներ
կապեն, մատուցիներ շինեն։ Նոյց 23
սա նորանց աչքին սուտ անուան
հմայութեան պէս պիտի լինի,
ամենատատանիկ երդումներ ունէ-
լով նորանց համար. բայց նա ա-
նօրէնութիւնը յիշեցնելու է որ
բռնուին։

Սորա համար այսպէս է ասում 24
Տէր Եհովան. Որովհետև դուք
յիշեցրիք ձեր անօրէնութիւնը՝
ձեր յանցանքները յայտնուելիս,
որ երևան ձեր մեղքերը ձեր բո-
լոր գործերում. ձեր յիշեցնելու
համար ձեռքով պիտի բռնուիք։
Եւ դու, ով պիղծ ամբարիշտ 25
Իսրայէլի իշխան, որի օրը եկել
է վերջի անօրէնութեան ժամա-
նակին։ Այսպէս է ասում Տէր 26
Եհովան. Հեռացրու խոյրը և վեր
առ թագը. սա այս չէ. ցածր
պիտի բարձրանայ, և բարձրը պի-
տի ցածանայ. Տակին ի վեր՝ տակին է 27
վեր՝ տակին ի վեր պիտի անեմ նո-
րան. սա էլ պիտի չլինի մինչև
որ իրաւունքն ունեցողը գայ. նո-
րան եմ տալ։

Եւ դու, որդի մարդոյ, մար- 28
գարէացիր և ասիր. Այսպէս է
ասում Տէր Եհովան Ամմոնի որդ-
կանց մասին և նորանց նախա-
տանքից մասին, և ասիր. Սուրը՝
սուրը հանուած է մորթելու հա-
մար մաքրուած որ փչացնէ, որ-
պէս թէ փայլէ։ Քեզ համար ա- 29
նոյն տեսիլքներ տեսնելիս և քեզ
համար սուտ հմայութիւններ ա-
նելիս, քեզ պիտի դնեն սպա-
նիչների պատուածների վրայ,
որոնց օրը հասել է վերջի անօրէ-
նութեան ժամանակին։ Ետ դարձ- 30
րու իր պատեանը. այնտեղ որ
ստեղծուեցար՝ քո ծագման երկ-
րում պիտի դատեմ քեզ։ Եւ 31
քեզ վերայ պիտի թափեմ իմ
ցասումը, իմ բարկութեան կրա-
կով պիտի փչեմ քեզ վերայ.
և քեզ պիտի մատնեմ վայրենի
մարդկանց ձեռքը, որոնք վար-

32 պետ են փչացնելու համար։ Հրոյ ճարակ պիտի լինես դու, քո արիւնը պիտի երկրի մէջտեղը լինի։ Դու պիտի չյիշուես, վասն զի ես Տէրս եմ խօսեմ։

ԳԼ. ԻԹ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Եւ դու, որդի մարդոյ, մի՞թէ դու դատելու՝ դատելու ես այս արիւնահեղ քաղաքը, այլ իմացրու նորան իր բոլոր
3 պղծութիւնները, եւ ասիր. Այսպէս է ասում Տէր Եհովան. Ով քաղաք, որ իր մէջն արիւն է թափում որպէս զի իր ժամանակը գայ, և իր մօտ կուռքեր է շինում պղծութեան համար։
4 Քո այն թափած արիւնով յանցաւոր եղար և քո այն շինած կուռքերով պղծուեցար, և օրերդ մօտեցրիր և հասար քո տարիներին, դորա համար ես քեզ անարգանք շինեցի ազգերի համար և ծաղր՝ բոլոր երկիրների
5 համար։ Քեզանից մօտաւորները և հեռաւորները քեզանով ծաղր պիտի անեն, ով վատահամբաւ և աղմկալից։
6 Ահա Իսրայէլի իշխանները ամեն մէկը իր բազուկովը քեզանում է որպէս զի արիւն թափէ։
7 Հօրն ու մօրը անարգեցին քեզանում, օտարականին յանդուգն արին քո մէջը, որբին ու որևայրուն պրկեցին քեզանում։
8 Իմ սուրբ բաներն արհամարհեցիր, և իմ շաբաթները պղծեցիր։
9 Բանսարկու մարդիկ եղան քեզանում արիւն թափելու համար, և լեռանց վերայ կերան քեզանում, եղեռնագործութիւններ ա-
10 րին քո մէջը։ Հօր մերկութիւն բացին քեզանում, ամսականով անմաքուր կնոջ բռնադատեցին
11 քեզանում. Եւ մարդ իր ընկերի կնոջ հետ պղծութիւն գործեց, և մարդ իր հարսին պղծեց եղեռնագործութիւնով, և մարդ իր քրոջը՝ իր հօր աղջկանը բըռ-
12 նադատեց։ Կաշառք առին քեզանում արիւն թափելու համար, վերայ ու տոկոս առիր, և ագահանալով քաշում ես քո ընկերներից բռնութիւնով, և ինձ մոռացել ես, ասում է Տէր Եհովան։ Եւ ահա ես պարկեցի ա- 13
փերս իրար քո արած ագահութեան վերայ և քո մէջ եղած արիւնհեղութիւնների վերայ։
Մի՞թէ սիրտդ կ'դիմանայ, կամ 14
ձեռքերդ կ'ուժովանան այն օրերը որ ես քեզ հաշուեյառ պիտի անեմ։ Ես Տէրս ասացի և պիտի անեմ էլ։ Եւ քեզ պիտի ցրուեմ 15
ազգերի մէջ և քեզ պիտի փռեմ երկիրների մէջ, և պիտի վերջացնեմ քո պղծութիւնը քեզանից։ Եւ դու քեզանով պիտի 16
պղծուես ազգերի աչքի առջև, և կ'իմանաս թէ ես եմ Տէրը։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 17
սելով. Որդի մարդոյ, Իսրայէլի 18
տունը ինձ համար կղկղանք է դառել, նորանք ամենքը պղինձ, անագ և երկաթ ու կապար են հալոցի մէջ արծաթի կղկղանք են դառել։ Սորա համար Տէր Ե- 19
հովան այսպէս է ասում. Որովհետև դուք ամենքդ կղկղանք էք դառել, դորա համար ահա ես ձեզ պիտի ժողովեմ Երուսաղէմի մէջ։ Արծաթը և պղինձը ու 20
երկաթին ու կապարն ու անագը հալոցի մէջ ժողովելու պէս, որ նորա վերայ կրակը փչեն որ հալեցնեն, նոյնպէս պիտի ժողովեմ ձեզ իմ բարկութիւնովս ու սրտմտութիւնովը և դնեմ ու հալեցնեմ։ Եւ ձեզ պիտի ժողովեմ 21
և ձեզ վերայ փչեմ իմ ցասման կրակովը, որ դուք հալուիք նորանում։ Ինչպէս որ արծաթը 22
հալւում է հալոցումը, նոյնպէս էլ դուք պիտի հալուիք նորանում. որ իմանաք թէ ես Տէրս եմ թափել իմ սրտմտութիւնը ձեզ վերայ։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 23
սելով. Որդի մարդոյ, ասիր նո- 24
րան. Դու մի երկիր ես որ չէ մաքրուել, անձրև չէ ստացել բարկութեան օրը։ Նորա մարգա- 25
րէների դաւաճանութիւնը կայ նորա մէջ, մանչուկ՝ առաջ յա-

փըշտակող առիւծի պէս հոգի են ուտում, գանձեր ու պատուական բաներ են առնում, նորա որբևայրիներին շատացնում
26 են նորանում։ Նորա քահանաները բռնութեամբ են իմ օրէնքը, և իմ սրբութիւնները պղծեցին, սուրբի և պիղծի մէջ տարբերութիւն չարին, և անմաքուրի ու մաքուրի մէջ ջոկութիւնը չը
27 տեսրեցրին և իմ շաբաթներից ծածկեցին, որանց աչքերը, և ես պղծուեցայ նորանց միջումը։ Նորա իշխանները նորա միջումը գայլերի պէս սուր են յափշտակում, արիւն թափելու՝ հոգիներ կորցնելու համար, որպէս զի ագահու-
28 թեամբ քաշեն։ Եւ նորա մարգարէները նորանց համար ցեխ են ծեփում՝ ունայն տեսիլքներ տեսանելով և նորանց համար սուտ հմայելով, ասելով թէ՝ Այսպէս է տուում Տէր Եհովան, քանի որ Տէրը չէ
29 խօսել։ Երկրի ժողովուրդը պըրկանքներ է որ գործում է՝ յափշտակութիւններ է որ անում է, և խեղճին ու աղքատին հարստահարում, և օտարականին
30 զրկում անիրաւութեամբ։ Եւ ես նորանցից մարդ որոնեցի պարիսպը շինող և խրամատութեան առջև կանգնող իմ դիմացը երկրի համար, որ նորան չաւրկա-
31 նեմ. բայց չգտայ։ Վասն որոյ նորանց վերայ թափեցի իմ ցասումը՝ իմ բարկութեան կրակովը ապատեցի նորանց. նորանց ճանապարհը իրանց գլխովը տուի, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, երկու կանայք կային մէկ մօր աղջկերքը,
3 Եւ նորանք պոռնկութիւն արին Եգիպտոսում, իրանց մանկութիւնումը պոռնկութիւն արին, այնտեղ ճմլուեցան նորանց ծիծերը, և այնտեղ շօշափեցին նորանց կուսութեան առինքները։
4 Եւ նորանց անուններըն՝ մեծինը Ոհղայ, և նորա քրոջինը Ոհղիբայ. և նորանք իմն էին, և որդիք ու աղջիկերք ծնեցին. և նորանց անուններըն՝ Սամարիան Ոհղայ, և Երուսաղէմը Ոհղիբայ։

Եւ Ոհղան իմը լինելովը պոռնկեցաւ և սիրահարուեցաւ իր սիրականներն ասորեաց իշխանների վերայ, պատկառելի
6 նոր կուսակալների և նախարարների վերայ, բոլորը շնորհալի երիտասարդներ, ձիաւորներ՝ ձիանք հեծած։ Եւ նա իր պոռնկութիւնը նորանց ընծայեց՝ Ասորեստանի ընտիր որդիանց ամենին. և այն ամենովը, որանց վերայ սիրահարուել էր՝ նորանց բոլոր կուռքերովը պղծուեցաւ։ Եւ իր
8 Եգիպտոսից բերած պոռնկութիւնները չձգեց, վասն զի նորա հետ պառկել էին նորա մանկութեան ժամանակին, և նորանք շօշափել էին նորա կուսական առինքները. և իրանց պոռնկութիւնը թափել էին նորա վերայ։ Դորա համար
9 նորան յանձնեցի իր սիրականների ձեռքը՝ Ասորեստանի որդիանց ձեռքը որոնց վերայ նա սիրահարուել էր։ Նորանք բաց արին
10 նորա ամօթոյքը, առին նորա տղայքն ու աղջկերքը, և իրան էլ սպանեցին, և նա անուանի եղաւ կանանց մէջ, և դատաստաններ գործադրեցին նորա վերայ։

Եւ նորա Ոհղիբայ քոյրը տե-
11 սաւ, և նորանից աւելի ապականութիւն արաւ իր տափանքովը, և իր պոռնկութիւնները իր քրոջ
12 պոռնկութիւններից աւելի. Ասորեստանի որդիանց սիրահարուեցաւ՝ կուսակալներին և նախարարներին էր դրացիներին, որանք հագուստ էին շքեղութիւնով՝ ձիաւորներ՝ ձիանք հեծած, բոլորը շնորհալի երիտասարդներ։
13 Եւ տեսայ որ պղծուեցաւ, երկուսին էլ ճանապարհը մէկ էր։
14 Եւ իր պոռնկութիւնները աւելացրեց. երբոր մարդիկ տեսան պատի վերայ փորագրուած քաղդէացոց պատկերները կարմիր ներկերով նկարուած. Իրանց մէջքե-
15

րը գօտի կապած, գոյնզգոյն խոյրեր իրանց գլուխներին, ամենքը իշխանների կերպարանքով իրանց ծննդեան երկրի՝ Բաբելոնի որդիքանց նմանութիւնով.
16 Աչի ժամանակ գորանց սիրտհարուեցաւ՝ աչքերը տեսածին պէս, և դեսպաններ ուղարկեց նորանց
17 մօտ Բաբելացոց երկիրը: Եւ Բաբելոնի որդիքը նորա մօտ մբռան տուփանաց անկողինը և նորանցով. և նորանցից բաժանուեցաւ նորա հոգին:
18 Եւ նա բաց արաւ իր պառնկութիւնները և բաց արաւ իր ամօթոյքը. և իմ հոգին էլ բաժանուեցաւ նորանից ինչպէս որ հոգիս բաժանուել
19 էր նորա քրոջից: Եւ նա շատացրեց իր պառնկութիւնները՝ յիշելով իր մանկութեան օրերը, որ պառնկացել էր Եգիպտոսի երկրում.
20 Եւ նա սիրահարուեցաւ իր տարփածուների վերայ, որոնց մարմինը էշերի մարմին է, և ցանկութիւնը ձիերի ցանկութիւն:
21 Եւ դու մտիկ տուիր քո մանկութեան եղեռնագործութեանը՝ եգիպտացիները քո տղինքները շոշափեցին քո մանկութեան ծրծերի պատճառով:
22 Սորա համար, ով Ոողիբայ, այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես քո սիրականներին վեր եմ կացնելու քեզ վերայ, որոնցից քո հոգին բաժանուել է, և նորանց քեզ վերայ եմ բերելու
23 ամեն կողմից, Բաբելոնի որդիներին, և բոլոր Քաղդէացիներին, Փակուդին, Սուէին և Կուէին, Ասորեստանի բոլոր որդիքը նորանց հետ, բոլորը ընտրհայի երիտասարդներ, կուսակալներ և նախարարներ, ամենքը զօրապրակներ և անուանիներ՝ ձի հեծնողներ:
24 Եւ նորանք պիտի գան քեզ վերայ զէնքերով, կառքերով ու անիւներով և ժողովուրդների բազմութիւնով, և վահան ու ասպար և սաղաւարտ պիտի դնեն քեզ դէմ շուրջանակի, և նորանց առջև պիտի դնեմ դատաստանը, որ նորանք քեզ դատեն իրանց դատաստաններովը:
25 Եւ ես իմ նախանձը պիտի քեզ դէմ ուղղեմ, և նորանք քեզ հետ բարկութեամբ պիտի վարուին. քիթդ ու ականջներդ պիտի վեր առնեն, և մնացորդդ սրով պիտի ընկնէ. նորանք պիտի առնեն քո տղայքն և աղջկերքը, և մնացորդդ կրակով պիտի այրուի:
26 Եւ քեզանից պիտի հանեն քո հանդերձները և պիտի առնեն քո զարդարանքի բանները.
27 Եւ ես պիտի դադարեցնեմ քո պղծագործութիւնները քեզանից և եգիպտական երկրից հետ քո պառնկութիւններդ. և աչքերդ պիտի չը բարձրացնես դէպի նորանք, և միւս անգամ չես յիշել Եգիպտոսը:
28 Վասն զի այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես քեզ մատնեցի նորանց ձեռքը որոնց դուստրեմ ես, որոնցից բաժանուել է քո հոգին:
29 Եւ նորանք քեզ հետ ատելութեամբ պիտի վարուին, և պիտի առնեն քո բոլոր վաստակը, և քեզ մերկ ու տկլոր պիտի ձգեն, և պիտի բացուի քո պառնկութեան ամօթոյքը և քո պղծագործութիւնն ու քո պառնկութիւնները:
30 Սորանք պէտք է կատարուին քեզ վերայ, որովհետև դու ազգերին հետևելով պառնկութիւն արիր, նորա համար որ դու պղծուեցար նորանց կուռքերովը:
31 Դու քո քրոջ ճանապարհովը գնացիր, ես էլ նորա բաժակը քո ձեռքին դրի:
32 Այսպէս է ասում Տէր Եհովան. Դու պիտի քո քրոջ խոր և լայն բաժակը խմես, դու պիտի ծաղր ու ծանակ լինես. նա շատ կ'պարունակէ:
33 Աքրեցութիւնով ու տրտմութիւնով պիտի լցուիս. ապշութեան ու հիացութեան բաժակ է քո քրոջ Սամարիայի բաժակը:
34 Եւ դու պիտի խմես նորան և քամես և նորա կտորները պիտի լիզես. և պիտի ատինքներդ նորանով պատառոտես, վասն զի ես եմ խօսել, ասում է Տէր Եհովան:
35 Սորա համար այս-

պէս է առաւ Տէր Աստուած. Որ-
պիսիսկոպոսի դա՛ւ ինձ մեռցար և
ինձ քո մէջքի քաւնիկը պղծիր,
ասելովն դա՛ւ էլ կրիր քո պղծա-
գործութիւններն ու պառնկա-
թիւններն։

36 Եւ Տէրը ասաց ինձ. Որդի մար-
դոյ, մի՞թէ դա՛ւ դատելու ես Ո-
ղոլին և Ոգիբային, ապա նո-
րանց գարշելի էրանց պղծութիւն-
37 ները։ Վասն զի նորանք շնա-
թիւն են արել, և արիւն կայ
նորանց ձեռքերին, և էրանց
կուռքերովը շնացել են, և էրանց
որդիանցն էլ, որանց ծնել էին
ինձ համար, աստուածներուն
նորանց համար որ կերակուր լի-
38 նին։ Դեռ սա էլ արին ինձ. իմ
սրբարանը պղծացին այն օրը,
39 և իմ շաբաթները պղծեցին. Այս-
ինքն էրանց որդիանցը մորթեցին
էրանց կուռքերին համար և մեռ-
նալն օրը մտան իմ սրբարանիցս պիղծ-
ներ բերելու, և նորանք ա-
պարանջաններ էին դնում նորանց
ձեռքերին, և պարծանայ ծա-
40 ղեր նորանց պիտին. Եւ ասացի
շնաթիւններէն ու չարչարեցին
էց եկող մարդիկցը, որանց մօտ
սուրհանդակ ղրկած էիր, և ահա
գալու էին, որոնց համար դուն
լուացուեցար, աչքերիդ ծա-
ղրյը դրիր և զարդերով զարդա-
41 ւեցար։ Եւ գահոյքի մոտ փա-
ռաւոր մահճի վերայ նստեցիր, և պա-
տրաստած սեղան կար նորա ա-
ջև, և իմ խունկն ու իւղը դրիր
42 նորա վերայ։ Եւ ազնիւկի ձայնը
հանդարտութեամբ նորանումն, և մար-
դա շատ ծարաւիներ այն մարդ-
կանց մօտ անապատից պիտեցին
ներ բերացուն, և նորանք ա-
պարանջաններ էին դնում նորանց
ձեռքերին, և պարծանայ ծա-
43 ղեր նորանց պիտին. Եւ ասացի
շնաթիւններէն հետ պառնկացին,
Հիմա նորա պառնկաթիւններն
44 էլ կ'պառնկանան։ Եւ նորա
մօտ կ'մտնեն պառնիկ կնոջ մօտ
մտնելու նման, նոյնպէս մտան
Ոգոլին և Ոգիբային մօտ՝ այդ
45 պղծագործ կանանց մօտ։ Եւ ար-
դար մարդիկ նորանց մօտ՝ պոռնիկ կնոջ
նորանց չնացող կանանց դատաս-
տանելը և արիւնհեղներէն դա-
տաստանելը, վասն զի նորանք
շնացողներ են և արիւն կայ նո-
րանց ձեռքին։

46 Վասն զի այսպէս է ասաց Տէր Աստուած. Այս նորանց դէմ
ժողով պիտի կանչեցնեմ և նո-
րանց պիտի մատնեմ ահռելու
և յափշտակութեան։ Եւ ժո- 47
ղովը պիտի նորանց քարկոծէ
քարերով, և նորանց կտրէ ի-
րանց սուրերով, նորանց տղոյ-
ն. աղջիկները սրով սպան
ու տղէկները տակէն վառէ։ Եւ պի- 48
տի դադրեցնեմ պղծագործա-
թիւնը երկրէն, և բոլոր կանայք
պիտի խրատուին որ ձեր պղծա-
գործութիւններէն պէս չանեն։ Եւ 49
ձեր պղծագործութիւնը ձեզ վե-
րայ պիտի դնեն, և դուք ձեր
կուռքերէն մեղքերը պիտի կրէք և
գիտնաք որ ես եմ Տէր Աստուած։

ԳԼ. ԻԴ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ին- 1
ներորդ տարուայ տասներորդ
ամսուայ ամսի տասին ասելով.
Որդի մարդոյ, գրիր քեզ համար 2
այս օրուայ անունը հէնց այսօր.
Բաբելոնի թագաւորը հէնց այսօր
յարձակուեց Երուսաղէմի վերայ։
Եւ առակով խօսիր դէպի այս 3
ապստամբ տունը և ասիր նո-
րանց. Այսպէս է ասաց Տէր Ա-
ստուած. Դիր կամանդ դիր, և
ջուր էլ ածիր մէջն. ժողովիր 4
նորա կտորները մէջը ամեն լա-
ւերը, ազդրը և ուսը, բոլոր
ակռաներով լցրու։ Ոչխարներէն 5
ընտիրները առ և ակռաները դի-
դիր նորա տակին. նորան տապակ
եղացրու, որ ակռաներն էլ եփ-
ուին մէջտեղ։

Վասն Տաճար այսպէս է ա- 6
ասաց Տէր Աստուած. Վա՛յ սրիկա-
ական քաղաքին, այն կամանին
որի ժանգը իրանից դուրս չէ եկած, կամ
կտոր Տանէր կտորներէն. նորա վի-
րայ վիճակ չձգուի։ Վասն զի ին- 7
նորա արիւնը իրանից դուրս է. չոր ե-
պատուի վերայ է դրել նորան,
գետնի վերայ չէ թափել նորան որ

8 Նորան ամէկ հոգով, իմ արուես-
տաւթիւնը վեր հանելու՝ վրէժ
առնելու համար նորա որբերը
որ չը ապրուածի վերայ որ չը
9 ամէկուն, Որու համար այսպէս
է ասում Տէր Աստուած. Ահ-
կին որբերուն պղծուածի կա-
մին խորհիլը պիտի մեծանայ,
10 Շատացրու փոյտերը, վառիր կր-
տակը, մեր հարուն, խորհիկը
եփուի, ոսկորները խորովուին,
11 Եւ յետոյ կայծկլը վերայ դիր
պարապ, որպէս պի տապանայ և
պղտուի պղինձը, և հալուի նո-
րանում նորա պղծուածիւնը վեր-
12 ջանայ ժանգը, Աշխատուածիւն-
ները ապառնցրեց, և նորանից
դուրս չելաւ նորա շատ ժանգը
13 կրակով նորա ժանգը, Քո ան-
մաքրուածիւնումդ պղծապրծու-
ածիւն կայ, որովհետև ես քեզ
մաքրեցի և դու մաքուր չեղար,
այլ և պիտի չմաքրուիս քո պղծ-
ապրծուածիւնից մինչև որ իմ
բարկուածիւնը Հանգստացնեմ
14 քեզ վերայ, Ես Տէրս եմ խոսել,
պիտի գայ, և ես պիտի կատա-
րեմ, ես պիտի չխոզեմ, և չը
խնայեմ և չդղջամ, ըստ ճանա-
պարհներդ Հանեցին և ըստ ա-
րարքներդ Հանեցին պիտի դա-
տեմ քեզ, ասում է Տէր Աստ-
ուած,

15 Եւ Տիրոջ խօսքը ինձ եղաւ ա-
16 սելով. Որդի մարդոյ, ահա ես
վեր եմ առնում քեզանից մի
Հարուածով ըստ աչքերի ցանկա-
ծիւնը, և դու պիտի ոչ սգաս
ոչ լաց լինես, և արտասուք չի
17 պիտի գայ, Լռութեամբ Հա-
ւաջիր, մեռելի սուգ պիտի չա-
նես, սպասիր կապիր գլխիդ,
կօշիկները ոտքերդ Հագիր, դուն-
չըդ մի ծածկիր, և մարդկանց
Հացը մի ուտիր,
18 Եւ ես առաւօտ խօսեցի ժո-
ղովրդի Հետ, և իրիկունը մեռա-
ւի կին, և ես առաւօտ ինձ Հր-
19 ամայուածիւն արի, Եւ ժո-
ղովուրդն ինձ ասաց. Մեզ չե՞ս
խնայիլ, թէ ատ ինչ է նշանա-
ւոր մեզ Համար որ դու անում
ես,

Եւ ես ասացի նորանց. Տիրոջ 20
խօսքը եղաւ ինձ ասելով. Ասիր 21
Իսրայէլի տանը. Թէ Աստուած է
ասում՝ Տէր Աստուած. Ահա ես
պիտի պղծեմ իմ սրբարանը՝ ձեր
զօրութեան պարծանքը, ձեր աչ-
քերի ցանկութիւնը և ձեր Հոգու
խնայողութիւնը. և ձեր թողած տղայք
ու աղջիկները սուրով պիտի ընկ-
նեն. Եւ դուք պիտի իմ արա- 22
ծին պէս անէք, դունչ պիտի չը
ծածկէք, և մարդկանց Հացը պի-
տի չուտէք. Եւ ձեր պատուէնի- 23
րը ձեր գլխին և ձեր կօշիկները
ձեր ոտքին քաշել պիտի ուշ չա-
նէք և լաց չիմէք, այլ պիտի
Հալուածոյ լինէք ձեր անիրաւու-
թիւններովը և դէպի իրար Հա-
ւաջէք. Եւ Եզեկիէլը ձեզ Հա- 24
մար նշան է. Ըստ բոլոր արա-
ծին պէս պիտի անէք. ատ լինե-
լու կ'իմանաք, որ ես եմ Տէր Ա-
Հաւասիկ.

Եւ դու, որդի մարդոյ, ոչի 25
երբոր ես վեր կ'առնեմ նորանցից
իրանց զօրութիւնը, իրանց պար-
ծանոց ուրախութիւնը, իրանց
աչքերի ցանկութիւնը և իրանց
սրտի ուզածը իրանց տղայքն ու
աղջիկները, Այն ժամանակ կ'գայ 26
պատառած մէկը քեզ մօտ որ
լուր կ'բերէ ականջներիդ. Այն 27
ժամանակ բերանդ պիտի բացուի
այն պատառածովը և պիտի խո-
սես ու այլևս Համր չիմաս, և
դու նորանց Համար նշան կ'լինիս.
և նորանք կ'իմանան որ ես եմ
Տէրը.

ԳԼ. ԻԲ

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ 1
ասելով. Որդի մարդոյ, երես դէ- 2
պի Ամմնի որդիները սրանց և
մարգարէացիր նորանց դէմ, Եւ 3
ասիր Ամմնի որդիներ. Լսեցէք
Տէր Աստուծոյ խօսքը, Աստուած է
ասում՝ Տէր Աստուած. Որովհետև
դու՝ Ա՜ՀՀ ասացիր իմ սրբարա-
նի մասին երբոր նա պղծուեցաւ,
և Իսրայէլի երկրի մասին երբոր
նա անապատացաւ, և Յուդայի
ազի մասին երբոր նորանք գերի

4 գնացին. Դորա համար ահա ես
քեզ պիտի սրևելքի որդկանցը
մատնեմ իրեւ ժառանգութիւն,
որ նորանք իրանց գիւղերը շինեն
քեզանում և իրանց վրաններըը
դնեն քեզանում. նորանք պիտի
ուտեն քո պտուղներըը և նորանք
5 պիտի խմեն քո կաթը։ Եւ ես
Ռաբբան պիտի ուղտերի փարախ
շինեմ և Ամմոնի որդկանցը՝ հո-
տերի մսակոտոր, և դուք կ'ի-
մանաք որ ես եմ Տէրը։
6 մանաք որ ես եմ Տէրը, վասն
դի այսպէս է ասում Տէր Եհո-
վան, որովհետև դու ծափ տուիր
և ոտքով ֆեթֆեը արուեցիր և
քո բոլոր արհամարհանօքը հոգով
չար ուրախացիր Իսրայէլի երկրի
7 վերայ, Դորա համար ահա ես
ձեռքս մեկնում եմ դէպի քեզ,
և քեզ մատնում եմ ազգերի
իրեւ յափշտակութիւն. և ես
քեզ պիտի փչացնեմ ազգերից,
և քեզ պիտի կորցնեմ երկիրներ-
ից. ես քեզ բնաջինջ կ'անեմ,
և դու կ'իմանաս որ ես եմ Տէրը։
8 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան, որովհետև Մովաբ և Սէիր
ասացին. Թէ Ահա Յուդայի տու-
9 նը ամեն ազգերի պէս է. Դորա
համար ահա ես պիտի բանամ
Մովաբի կողմը քաղաքներից՝
նորա քաղաքներից նորա սահ-
մաններից, երկրի պարծանք Բե-
թեսիմոթը, Բեելմէոնը և Կարիա-
10 թեմը Արևելքի որդկանց համար՝
Ամմոնի որդկանց հետ միասին
պիտի աս էլ ասեմ իրեւ ժա-
ռանգութիւն, որպէս դի Ամմոնի
որդկանց յիշատակ չլինի ազգերի
11 մէջ։ Մովաբում էլ եմ դատաս-
տանները անելու, և նորանք պիտի
իմանան որ ես եմ Տէրը։
12 Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Որովհետև Եդոմը վրէժ-
խնդրութիւնով վրէժ առաւ
Յուդայի տունից, և յանցանք
գործելով վրէժ առաւ նորանից,
13 Դորա համար այսպէս է ասում
Տէր Եհովան. Ես իմ ձեռքը պի-
տի տարածեմ Եդոմի վերայ, և
նորանից բնաջինջ անեմ մարդը
և անասունը, և նորան պիտի
Թեմանից առաւել անապատ շի-
նեմ, և մինչև Դեդան պիտի սր-
բով ընկնեն։ Եւ իմ վրէժը պի- 14
տի կատարեմ Եդոմի վերայ իմ
ժողովուրդ Իսրայէլի ձեռով. և
նորանք պիտի անեն Եդոմի մէջ
իմ բարկութեան և իմ սրտմ-
տութեան համեմատ. և նորանք
պիտի ճանաչեն իմ վրէժը, ասում
է Տէր Եհովան։
Այսպէս է ասում Տէր Եհո- 15
վան. Որովհետև Փղշտացիք վրէժ-
խնդրութիւնով վարուեցան և
հոգու արհամարհանօք վրէժ ա-
ռին միշտական ատելութիւնով
պատճառելով. Դորա համար այս- 16
պէս է ասում Տէր Եհովան. Ահա
ես իմ ձեռքը տարածում եմ
Փղշտացոց վերայ և նորանց Քե-
րեթիներին պիտի բնաջինջ անեմ,
և պիտի փչացնեմ ծովի եզերք-
ում եղող մնացորդը. Եւ նորանց 17
մէջ մեծամեծ վրէժխնդրութիւն-
ներ պիտի գործեմ արտմտու-
թեամբ յանդիմանութիւններով.
և նորանք պիտի իմանան որ ես
եմ Տէրը, երբոր իմ վրէժը կ'ա-
ռնեմ նորանցից։

ԳԼ. ԻԶ

Եւ եղաւ տասնմէկերորդ տար- 1
ուայ ամսի մէկին Տիրոջ խօսքը
դէպի ինձ ասելով. Որդի մարդոյ, 2
որովհետև Տիւրոս Երուսաղէմի
վերայ ասաց՝ Վա՛շ կատարուեցան
ժողովուրդների դուռները, դէպի
ինձ է շուռ տուիս. ես պիտի
լցուիմ. նա անապատ է դառն-
ուում։ Դորա համար այսպէս է 3
ասում Տէր Եհովան. Ահա քեզ
դէմ եմ, ով Տիւրոս, և շատ
ազգեր պիտի յարուցանեմ քեզ
վերայ, ինչպէս որ ծովը յարու-
ցանում է իր ալիքները։ Եւ 4
նորանք պիտի քանդեն Տիւրոսի
պարիսպները և փուլ տան նորա
աշտարակները, և ես պիտի ա-
ւերեմ նորա հողը իրանից և նորան
չար ապառաժ պիտի շինեմ։ Նա 5
ուռկան փռելու տեղ պիտի դա-
նայ ծովի մէջ, վասն զի ես եմ
խօսել, ասում է Տէր Եհովան.
և նա ազգերին աւար պիտի դա-

6 Նայ՝ Ես նորա ազգկերքը, որունք
գաշտումն են, որով պիտի ըս-
պանուին, և պիտի իմանան որ
Ես եմ Տէրը։
7 Վասն զի այսպէս է ասում
Տէր Եհովան. Ահա Ես Իսրաէլի
վերայ պիտի բերեմ Բաբիլոնի
թագաւոր Նաբուգոդոնոսորին
Հիւսիսից՝ թագաւորաց թագա-
ւորին ձիերով, կառքերով ու
ձիաւորներով և բազմութիւնով
8 ու մեծ ժողովուրդով։ Նա քո ազ-
գկերքը գաշտումը սրով պիտի
սպանէ, և քեզ դէմ մուրհակ
պիտի շինէ, և քեզ դէմ հողա-
կոյտեր պիտի կանգնեցնէ, և
քեզ դէմ վահան պիտի բարձ-
9 րացնէ. Ես իր կործանիչ մեքե-
նաները պիտի դնէ քո պարիսպ-
ների դէմ և քո աշտարակները
պիտի քանդէ իր տապարներովը։
10 Նորա ձիերի շատութիւնից քեզ
պիտի ծածկէ նորանց փոշին. ձի-
աւորների, անիւների և կառք-
երի դղրդիւնից պիտի սասանին
քո պարիսպները, երբոր նա մտ-
նէ քո դռներովը ինչպէս որ կոտ-
11 րուած քաղաքը կ'մտնեն։ Իր ձի-
երի սմբակներովը պիտի կոխ առյ
քո բոլոր փողոցները, քո ժողո-
վըրդին սրով պիտի սպանէ և քո
զօրաւոր սեղդերը գետինը պիտի
12 իջնեն։ Եւ քո հարստութիւնը
պիտի թալանեն և պիտի կողոպ-
տեն քո ապրանքները և քոթու քանդ
անեն քո ցանկալի տուներըը, և
քո քարերը ու քո փայտերը և
քո հողը պիտի ջրի մէջը թափեն։
13 Եւ ես պիտի դադարեցնեմ քո
երգերի ազմուկը, և քո քնար-
ների ձայնը այլև պիտի չլսուի։
14 Եւ ես քեզ պիտի չոր ապառաժ
շինեմ. ուռկան փռելու տեղ պի-
տի դառնաս. այլև պիտի չշին-
ուիս. վասն զի ես Տէրս եմ խօ-
սել, ասում է Տէր Եհովան։
15 Տէր Եհովան այսպէս է ասում
Տիւրոսին. Մի՞թէ քո կործան-
ման ձայնից՝ երբոր քո միջում
կատղած կատարուելով վիրա-
ւորուածների հեծեծելովը կողինները
16 պիտի չասանեն։ Եւ ծովի բոլոր
իշխանները պիտի իջնեն իրանց ա-
թոռներից և պիտի հանեն
իրանց պատմուճանները և իրանց
նկարագործ հանդերձներից պիտի
մերկանան, սոսկումներ պիտի
հագնեն, գետնի վերայ պիտի
նստեն և պիտի սոսկան ամեն
վայրկեան, և պիտի ապշեն քեզ
վերայ։ Եւ ողբ պիտի բարձրացնեն 17
քեզ վերայ և քեզ ասեն. Ո՛նչպէս
կործանուեցար, ով ծովեզերեայ
անուանի քաղաք, որ ծովում
զօրաւոր էիր ինքդ և բնակիչներդ,
որ ահ էիք տալիս նորա բոլոր
բնակիչներին։ Հիմա պիտի զար- 18
հուրեն կղզիները քո կործանման
օրը, և ծովում եղող կղզիները
պիտի ապշեն քո կորուստովը։
Վասն զի այսպէս է ասում 19
Տէր Եհովան. Ես քեզ այն ան-
բնակ քաղաքների պէս աւերակ
քաղաք շինելիս՝ անդունդը քեզ
վերայ հանելիս, որ քեզ ծածկեն
շատ ջուրերը, Ես քեզ գուրը 20
իջնողների հետ այն յաւիտենա-
կան ժողովրդի մօտ իջեցնեմ և
քեզ տակի երկրումը յաւիտե-
նական աւերակներումը նստեց-
նեմ գուրը իջնողների հետ որպէս
զի չբնակուիս, այն ժամանակ ես
փառք կ'դնեմ կենդանեաց եր-
կրումը։ Քեզ սոսկման պատճառ 21
պիտի շինեմ, և պիտի ոչնչանաս,
և գու պիտի որոնուիս, բայց պի-
տի այլ ես չգտնուիս յաւիտեան,
ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԻՆ

Եւ Տէրոջ խօսքը եղաւ ինձ ա- 1
սելով. Եւ գու, որդի մարդոյ, 2
Տիւրոսի վերայ ողբ բարձրացրու,
Եւ ասիր Տիւրոսին. Ով ծովի 3
մուտքերումը բնակող, որ վաճա-
ռականութիւն ես անում ազգե-
րի հետ շատ կղզիների վերայ,
այսպէս է ասում Տէր Եհովան.
Ով Տիւրոս, գու ասացիր Ես
դեղեցկութեան կատարելութիւնն
եմ։ Ծովի սրտումն են քո սահ- 4
մանները. քեզ շինողները կատա-
րեալ գեղեցիկ են քո դեղեցկութի-
նը։

5 Սանիրի մայրից շինեցին բոլոր
լանջքերը քեզ համար. Լիբա-
նանի եղևին առին քեզ վերայ
6 կայմ շինելու. Գո թիակները
Բասանի կաղնիներից շինեցին.
քո նստարանները շինեցին փղոսկ-
րից՝ պոբէջէն Քիտացոց կղզիներից
7 էին տաճախած. Եգիպտոսից բէ-
բ-ձ նկարադործ բեհեզից էր քո
առաջատը, որ քեզ համար
դրօշ լինեը. կապուտակ և ծիրա-
նեգոյն էր քո ծածկոցը Եղիսայէ
8 կղզիցը բէբ---ձ: Սիդոնի և Արո-
ադի բնակիչները թիակահարներդ
էին. քո իմաստունները, ով
Տիւրոս, որ քեզանում կայիին,
9 քո նաւավարներն էին: Գեբադի
ծերերը և քո իմաստունները, որ
քեզանում կային, ծակոտուածք-
քդ պնդացնողներն էին, ծովի
բոլոր նաւերը և նորանց նաւ-
ատներն էին քեզանում էին քո
ապրանքները առուտուրի դնե-
10 լու: Պարսիկներ, Ղուդացիք և
Փութացիք քո զօրքի մէջ էին
իրեն քո պատերազմական մար-
դիկը. վահան և սաղաւարտ կա-
խած էին. նորանք քեզ փառա-
11 ւորութիւն տուին: Արուադացիք
և քո զօրքը քո պարիսպների վե-
րայ էին շուրջանակի, և քաջա-
սիրտները էին քո աշտարակների
վերայ. նորանք իրանց վահանները
կախած էին քո պարիսպների
վերայ շուրջանակի. նորանք կա-
տարելագործեցին քո գեղեցիկու-
թիւնը:
12 Թարսիսը քո վաճառականնե-
րըդ էր ամեն տեսակ ապրանքի
շատութիւնիցը. արծաթով, եր-
կաթով, անագով և կապարով
13 արին քո առուտուրը: Յաւանը,
Թոբելը և Մասոքը քո վաճառա-
կաններն էին. նորանք քեզ մարդ-
կանց հոգիների և պղնձի անօթ-
ների առուտուր էին անում:
14 Թորգոմայի տունից ձիեր և ձիա-
որներ և ջորիներ էին բերում
քեզ մօտ իրեն առուտուրի տպ-
15 րանք: Դեդանի որդիքը քո վա-
ճառականներն էին. շատ կղզի-
ներ իրեն վաճառականութեան
տեղեր ձեռքիդ էին. փղոսկրեայ
եղջիւրներ և սպիտակ փայտ էին
16 ետ դարձնում քեզ իբրև փոխա-
նակութիւն: Ասորիք քո վաճա-
ռականներն էին, քո ձեռագործ-
ներդ շատութեան համար. կար-
կեհանով, ծիրանեգոյնով, նկա-
րագործներով, բեհեզով, բուս-
տերով և կարմիր յակինթով ա-
17 նում էին քո առուտուրը: Յու-
դան և Իսրայէլի երկիրը քո վա-
ճառականներն էին. Մինիթի
ցորենով, խմորեղէնով, մեղրով,
իւղով և բալասանով անում
էին քո վաճառականութիւնը:
18 Դամասկոսը քո վաճառակա-
տեղն էր, ձեռագործներիդ շա-
տութեան ամեն տեսակ ապրանքի
շատութեան համար՝ Քեղբոնի
գինիով և սպիտակ բուրդով:
19 Վեդանը և Յաւանը Ուզալից բե-
ում էին քո ապրանքները՝ շինած
երկաթեղէն. կասիա և խնկեղէն
էր լինում քո փոխանակութիւ-
նը: Դեդանը քո վաճառականնե-
20 րըն էր կառքի պատառակներ-
բով: Արաբացիք և Կեդարի բոլոր
21 իշխանները, նորանք քո վաճառա-
տեղիքն էին, գառներով, խոյե-
րով և նոխազներով էին առև-
տուր անում քեզ հետ: Սաբայի
22 և Ռեգմայի վաճառականները քո
վաճառականներն էին, ամեն տե-
սակ գլխաւոր բուրմունքներով և
ամեն տեսակ պատուական քա-
րերով և ոսկով անում էին քո
առուտուրը: Խառանը, Քաննէն
23 և Եդեմը, Սաբայի վաճառակա-
նները, Ասորեստանն -- Քազմադը
քո վաճառականներն էին: Նո-
24 րանք քեզ հետ վաճառակութի-
թիւն էին անում շքեղ հան-
դերձներով, կապուտակ և նկա-
րագործ վերարկուներով, մանած-
ների կուտակներով, հիւսուած
չուաններով և եղևնափայտեայ
անասելիներով քո վաճառանոցնե-
րում: Թարսիսի նաւերը քո կա-
25 րաւաններն էին, և դու յոյժ
և շատ փառաւորութեամբ ծովի
միջումը:
Շատ ջրերով տարին քեզ ++
26 թիակահարները. արևելեան քամին
քեզ կտրեց ծովի միջումը: Քո
27

ապրանքներն ու վաճառքները՝ քո առևտուրը, քո նաւաստիները ու նաւավարները, քո ծախկոտուածքը պնդացնողները և քեզ հետ առևտուր անողները, և քեզանում անող քո բոլոր պատերազմի մարդիկը և քո բոլոր բազմութեան հետ որ քեզ անում էր, ընկան ծովի մէջը քո
28 անկման օրը։ Քո նաւավարների աղաղակի ձայնից պիտի դողան
29 արուարձանները։ Եւ պիտի իջնեն իրանց նաւերից բոլոր թիավարները, նաւաստիները՝ ամեն նաւավարները ծովի մէջ և կանգ-
30 նեն երկրի վերայ։ Եւ իրանց ձայնը լսել են ասլիս քո վերայ և աղաղակում են դառնապէս. և հող են վեր ածում իրանց գլուխների վերայ, և մոխրի մէջ
31 թաւալվում։ Եւ իրանց մազերը ածիլում են քո մասին և քուրձեր են հագնում և քեզ վերայ լաց են լինում դառն հոգով և
32 դառն սուգով. Եւ իրանց կոծանելով ողբ են բարձրացնում քեզ վերայ, և ողբ են երգում քեզ վերայ ՝ե՛վ. Ո՞վ է Տիրոսի նմանը, ծովի մէջին բնաջինջ եղած
33 ձին նման։ Քո վաճառքները ծովից դուրս գալիս՝ շատ ազգեր էիր կշռացնում քո ապրանքների ու քո առևտուրների շատութեանով հարստացնում էիր երկ-
34 րի թագաւորներին։ Երբ որ ծովի միջում ջրերի խորերն ես խորտակուել, քո վաճառքներն և բոլոր բազմութիւնդ ընկան քո
35 մէջը։ Կղզիների բոլոր բնակիչները ապշել են քեզ վերայ և նրանց թագաւորները սաստիկ զարհուրեցան, դողում են նը-
36 րանց երեսները։ Ազգերի միջի վաճառականները սուլում են քեզ վերայ, դու սոսկում եղար և ոչնչացար յաւիտեան։

ԳԼ. ԻՀ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, ասիր Տիրոսի իշխանին՝ Թէ Այսպէս է ասում Տէր Եհովան. Որովհետև

սիրտդ հպարտացաւ և ասացիր. Ես աստուած եմ, Աստուծոյ աթոռի վերայ եմ նստած ծովի միջումը. բայց դու մարդ ես և ոչ Աստուած, և դու ես քո սիրտը Աստուծոյ սրտի պէս շինել.
3 Ահա դու Դանիէլից իմաստուն ես. ոչ մի գաղտնիք մութ չէ
4 քեզ համար. Քո իմաստութեամբ և քո հանճարով քեզ համար
5 հարստութիւն շինեցիր, և ոսկի ու արծաթ գրիր քո գանձարանները. Քո շատ իմաստութեանով՝ քո վաճառականութիւնով շատացրիր քո հարստութիւնը, և սիրտդ բարձրացաւ քո հարստութիւնով։
6 Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Որովհետև դու քո սիրտը Աստուծոյ սրտի նման շինեցիր,
7 Դորա համար ահա ես քեզ վերայ պիտի բերեմ օտարներին՝ ազգերի բռնաւորներին, և նորանք պիտի հանեն իրանց սուրերը քո իմաստութեան գեղեցկութեան վերայ, և պիտի ապականեն քո գեղեցկութիւնը։
8 Քեզ գուբը պիտի գցեն, և պիտի մեռնես վիրաւորուածների մահով ծովի մէջ։
9 Մի՞թէ ասելու ես քեզ սպանողների առջև. Ես աստուած եմ. քանի որ դու մարդ ես և ոչ Աստուած՝ քեզ սպանողների ձեռքին։
10 Անթլփատների մահով պիտի մեռնես օտարների ձեռքով. վասն զի ես խօսեցի. ասում է Տէր Եհովան։
11 Եւ Տիրոջ խօսքն եղաւ ինձ ա-
12 սելով. Որդի մարդոյ, ողբ բարձրացրու Տիրոսի թագաւորի վերայ և ասիր նորան. Այսպէս է ասում Տէր Եհովան. Դու կատարելութեան կնիքն ես՝ լիքն իմաստութիւնով և գեղեցկութեամբ կատարեալ։
13 Եդեմում՝ Աստուծոյ դրախտումն էիր. բոլոր պատուական քարերը քո ծածկոցն էին՝ սարդիոն, տոպազիոն, անդամանդ, ոսկեքար, բիւրեղ և յասպիս, շափիւզայ, կարկեհան և զմրուխտ և ոսկի. քո թմբուկների և քո կանանց գործը քեզ համար քո ստեղծուածդ

14 որք պատրաստուեցան՝ Դուռ մի
ծծուած քերթուէ էիր ծածկոյ,
և ես քեզ շինեցի. Աստուծոյ
սուրբ լեռան վերայ էիր. կրակի
քարերի մէջ սեղ էիր մեն դա-
15 լիս՝ Դուռ կատարեալ էիր քո
ճանապարհներուդ քո սահեց-
ուած օրերդ մինչև որ քեզանեաւ
16 անօրէնութիւն դտուեցաւ՝ Քո
առաւտուրդ շատութեան համար
լցուեցաս քո ներսը պրկանքով և
դու մեղանչեցիր. և ես քեզ նը-
րբև պիղծ հեռացրի Աստուծոյ
լեառնէցը, և քեզ փշացրի, ով
ծածկող քերթուէ, կրակի քա-
17 րերի միջից՝ Սիրտդ հպարտացաւ
քո գեղեցկութիւնովդ. դու ա-
պականեցիր քո իմաստութիւնը
քո գեղեցկութեան պատճառով.
ես քեզ գետինը պիտի դցեմ.
թագաւորների առջև քեզ ա-
18 տրան պիտի շինեմ՝ Քո անօրէ-
նութիւններուդ շատութիւնովդ՝ քո
անիրաւ վաճառականութիւնովդ
պղծեցիր քո սրբութիւնները. և ես
կրակ պիտի հանեմ քո միջից.
նա պիտի ուտէ քեզ, և ես քեզ
մոխիր պիտի շինեմ երկրի վերայ
բոլոր քեզ տեսնողներուն աչքից
19 առջև՝ Ազգերի մէջ քեզ ամեն
ճանաչողները պիտի ապշեն քեզ
վերայ. դու սոսկում եղար և
ընդհատակ յաւիտեան՝

20 Եւ Տէրոջ խօսքը եղաւ ինձ ա-
21 սելով. Որդի մարդոյ, երեսդ Սի-
դոնին դարձրու, և մարգարէա-
22 ցիր նորա վերայ. Եւ ասիր. Այս-
պէս է ասում Տէր Եհովան. Ահա
ես քեզ դէմ եմ, ով Սիդոն. և
պիտի փառաւորուեմ քեզանե-
ում, և պիտի իմանան որ ես եմ
Տէրը, երբոր նորանում դատաս-
տաններ անեմ և նորանում սրբու-
23 ւեմ՝ Եւ նորա մէջ ժանտախտ
պիտի ուղարկեմ և նորա փողոց-
ների մէջ արիւն. և վիրաւոր-
ուածներ պիտի ընկնեն նորա մէջ
նորա վերայից սրով շուրջառիկ՝
Եւ պիտի իմանան, որ ես եմ
24 Տէրը՝ Եւ Իսրայէլի տան համար
այլև պիտի չինի խայթող տա-
տասկ և ցաւացնող փուշ նորանց
բոլոր շրջակայներից, որ տում
են նորանց. և պիտի գիտենան,
որ ես եմ Տէր Եհովան՝

Այսպէս է ասում Տէր Եհո- 25
վան. Երբոր ես կ'հաւաքեմ Իս-
րայէլի տունը այն ազգերի միջից
որոնցում ցրուել եմ, և երբոր
ես կ'արդարեմ նորանցով ազգերի
աչքից առջև, այն ժամանակ նո-
րանք կ'բնակեն իրանց հողի վե- 26
րայ, որ ես տուի իմ ծառայ Յա-
կոբին. Եւ նորանք կ'բնակեն նո-
րանում ապահովութիւնով և
տուներ կ'շինեն և այգիներ կ'տնկե-
կեն, և ապահով կ'բնակեն, երբ-
որ ես դատաստաններ կ'անեմ Իս-
րայէլ շրջակայքիցը բոլոր իրանց
արհամարհողներին, և կ'գիտենան
որ ես եմ Տէրը նորանց Աստուածը՝

ԳԼ. ԼԹ

Տասներորդ տարում տասներորդ 1
ամսի տասներկուսին եղաւ Տիրոջ
խօսքը ինձ ասելով. Որդի մարդոյ, 2
երեսդ դարձրու Եգիպտոսի
Փարաւոն թագաւորը, և մարգա-
բէացիր նորա դէմ և բոլոր Եգիպ-
տոսի դէմ. խօսիր և ասիր. Ա- 3
յսպէս է ասում Տէր Եհովան. Ա-
հա ես քեզ դէմ եմ, ով Եգիպ-
տոսի փարաւոն թագաւորը, ով
մեծ վիշապ որ պառկում ես գե-
տերումդ, որ ասում ես. Գետս
իմն է, և ես եմ շինել ինձ հա-
մար՝ Բայց ես քո կզակներին 4
կարթեր եմ անցկացնելու և քո
գետերի ձկները կպցնելու եմ քո
թեփերին, և քեզ դուրս եմ
քաշելու քո գետերիցը, նաև քո
գետերի բոլոր ձկները, որ կպած
կ'լինեն քո թեփերին՝ Եւ քեզ 5
դէն պիտի դցեմ անապատը և
քո գետերի բոլոր ձկները. դու
դաշտի երեսի վերան ես ընկնե-
լու, դու պիտի չժողովուես և
պիտի չհաւաքուես. ես քեզ տա-
լիս եմ երկրի գազաններին և եր-
կնքի թռչուններին իբրև կերա-
կուր՝ Եւ Եգիպտոսի բոլոր բնա- 6
կիչները կ'գիտենան, որ ես եմ
Տէրը. որովհետև նորանք եղէգի
ցուպ եղան Իսրայէլի տան հա-
մար՝ Նորանք քեզ ձեռքիցդ 7

բռնելիս, դու կատրուեցար և նո-
րանց բոլոր թիկունքները ճղեցիր.
և նորանք քեզ վերայ կռնելիս,
դու փշրուեցար և *կանդնեցրիր
նորանց երանքները։
8 Դորա համար այսպէս է ասում
Տէր Եհովան. Ահա ես սուր եմ
բերում քեզ վերայ, և քեզանից
պիտի փշացնեմ մարդն ու անա-
9 սունը։ Եւ Եգիպտոսի երկիրը
պիտի ամայի և անապատ դառ-
նայ, և պիտի իմանան որ ես եմ
Տէրը, որովհետև նա ասաց. Գե-
10 տը իմն է, և ես եմ շինել։ Դորա
համար ահա ես քեզ դեմ և քո
գետերի դեմ եմ. և Եգիպտոսի
երկիրը անապատների անապատի
պէս ամայի պիտի շինեմ Մագ-
դոլից մինչև Սուէնէ և մինչև Ե-
11 թէոպացոց սահմանը։ Նորանով
մարդու ոտք չպիտի անց կենայ,
և անասունի ոտք չպիտի անց կե-
նայ նորանով. և բնակուած չպի-
12 տի լինի քառասուն տարի։ Եւ
ես Եգիպտոսի երկիրը ամայի պի-
տի անեմ ամայացած երկիրների
միջում, և նորա քաղաքները ա-
նապատացած քաղաքների միջում
պիտի ամայի լինին քառասուն
տարի. և Եգիպտացիներին պիտի
ցրուեմ ազգերի մէջ և նորանց
ցիրուցան անեմ երկիրների մէջ։
13 Վասն զի այսպէս է ասում
Տէր Եհովան. Քառասուն տա-
րուց յետոյ պիտի ժողովեմ Եգիպ-
տացիներին այն ազգերից ուր որ
14 ցրուած են եղել։ Եւ ես պիտի
դարձնեմ Եգիպտոսի գերութիւ-
նը, և ես պիտի տանեմ նորանց
Պաթուրեսի երկիրը՝ իրանց ծագ-
ման երկիրը, և նորանք այնտեղ
մի ցած թագաւորութիւն պիտի
15 լինին։ Թագաւորութիւններից
ցածը պիտի լինի, և այլևս պի-
տի չբարձրանայ ազգաց վերայ.
և ես նորանց պիտի քիչացնեմ
16 որ չտիրեն ազգաց վերայ. Եւ
այլևս պիտի Իսրայէլի տան հա-
մար ապաստանարան չլինի՝ անօ-
րէնութիւն յիշեցնելով նորանց
ետևից հետևելով։ Եւ նորանք

*դողդոջուն արին

պիտի իմանան որ ես եմ Տէրը Ե-
հովան։
Եւ եղաւ քսանուեօթներորդ 17
տարում առաջին ամսի մէկին
Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով.
Որդի մարդոյ, Բաբիլոնի Նաբու- 18
գոդոնոսոր թագաւորը իր զօրքը
մեծ ծառայութեան համար ծա-
ռայեցրեց Տիւրոսի դէմ. ամեն
գլուխ կնոտացաւ, և ամեն ուս
պլոկուեցաւ. բայց մի վարձք չե-
ղաւ նորան և նորա զօրքին Տիւ-
րոսից. այն նորա դէմ արած
ծառայութեան համար։ Դորա 19
համար այսպէս է ասում Տէր Ե-
հովան. Ահա ես Բաբիլոնի Նա-
բուգոդոնոսոր թագաւորին տա-
լիս եմ Եգիպտոսի երկիրը. և
նա պիտի վեր առնէ նորա առա-
տութիւնը և կողոպտէ նորա կո-
ղոպուտը և յափշտակէ նորա ա-
ւարը. և սա վարձք կ'լինի նորա
զօրքին։ Իբրև վճար, որի համար 20
նա ծառայել է, տալիս եմ նո-
րան Եգիպտոսի երկիրը. որովհե-
տև ինձ համար են արել. ասում
է Տէր Եհովան։ Այն օրը մի եղ- 21
ջիւր պիտի բուսցնեմ Իսրայէլի
տան համար, և քեզ էլ բերանի
բացութիւն պիտի տամ նորանց
մէջ. և նորանք պիտի իմանան
որ ես եմ Տէրը։

Գ.Լ. Լ.

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 1
սելով. Որդի մարդոյ, մարգարէա- 2
ցիր և ասիր. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Ողբացէք՝ ասա՛ղ
այն օրուան։ Վասն զի օրը մո- 3
տացել է, և մօտացել է Տիրոջ
օրը, ամպոտ օրը. դա ազգերի
ժամանակը պիտի լինի։ Եւ սուր 4
պիտի գայ Եգիպտոսի վերայ և
երկունք պիտի լինի Եթէոպիա-
յում, երբոր Եգիպտոսում կ'ընկ-
նեն սպանուածները, և վեր կ'առ-
նեն նորա առատութիւնը և քար-
ուքանդ կ'լինեն նորա հիմունք-
ները։ Եթէոպացիք, փութա- 5
ցիք, Լուդացիք և բոլոր խառնի-
ճաղանճ ժողովուրդը և Փութա-
ցիք և ուխտի երկրի որդիքը նո-

բանց հետ արուի պիտի ընկնին։
6 Այսպէս է տուեր Տէրը. Եղիպ-
տոսի օդնականներն էլ պիտի
ընկնին, և պիտի իջնէ նորա զօ-
րութեան հպարտութիւնը, Մագ-
դոլից մինչև Սուհէն արուի պիտի
ընկնին նորանով, տուեր է Տէր
7 Եհովան. Եւ պիտի ամայանան
ամայացած երկիրներուն մէջտեղ, և
նորա քաղաքները պիտի լինին ա-
նապատացած քաղաքներուն մէջ։
8 Եւ պիտի իմանան որ ես եմ Տէ-
րը, երբոր ես կրակ կ'ըգնեմ Եղիպ-
տոսի մէջ և կ'ոտրտուին նորա
9 բոլոր օդնականները։ Այն օրը
դեսպաններ պիտի դուրս դան
ինձմէ իմ առաջիս՝ ապահով
Եթովպացիներուն վախցնելու
համար, և նորանց մէջ երկունք
պիտի լինի Եղիպտոսի օրուայ
պէս. վասն զի ահա գալիս է։
10 Այսպէս է տուեր Տէրը Եհո-
վան. Ես Եղիպտոսի բազմութիւնն
էլ պիտի վչացնեմ Բաբիլոնի Նա-
բուգոդոնոսոր Թագաւորի ձեռ-
11 քով։ Նա և իր ժողովուրդն իր
հետ ազգաց բռնակալները բեր-
ուած են երկիրը աւերակ անելու,
և նորանք պիտի մերկացնեն իրանց
սուրերը Եղիպտոսի վերայ, և եր-
12 կիրը լցնեն սպանուածներով։ Ես
ես պիտի ցամաքեցնեմ գետերը,
և երկիրը ծախած չարերի ձեռ-
քով, և ամայի անեմ երկիրը և
նորա լիութիւնը օտարներուն ձեռ-
քով. ես Տէրս եմ խօսել։
13 Այսպէս է տուեր Տէր Եհո-
վան. Ես կուռքերն էլ պիտի բը-
նաջինջ անեմ, և վչացնեմ չաստ-
ուածները Մեմփիսէն. և Եղիպ-
տոսի երկրէն այլևս իշխան պի-
տի չինի. և վախ պիտի դնեմ
14 Եղիպտոսի երկրամէջ։ Եւ պիտի
ամայի անեմ Պաթուրէսին և
Տոյանէսի մէջ կրակ պիտի դնեմ,
և ծովի մէջ դատաստաններ պի-
15 տի անեմ. Եւ իմ սրտմտութիւ-
նը պիտի թափեմ Եղիպտոսի
ամրութեան՝ Սինի վերայ և պի-
տի ջարդեմ Նոովի բազմութիւնը։
16 Եւ կրակ պիտի դնեմ Եղիպտոսի
մէջ. Սինը պիտի երկունքներով
գալարուի, և Նոովը պիտի ճեղ-
քուի. և Մեմփիսը պիտի թշնա-
միներով ցերեկով ըլլայ։ Աւետի 17
և Բուբաստի երիտասարդները պի-
տի սրով ընկնին. և իրանք գերի
պիտի գնան։ Եւ Տափնասում ցե- 18
րեկը պիտի խաւար գառնայ, երբ-
որ ես այնտեղ կոտրտեմ Եղիպ-
տոսի լուծերը, և երբոր այնտեղ
կ'վչանայ նորա զօրեղ հպարտու-
թիւնը. ամպ պիտի ծածկէ նո-
րան, և նորա աղջկունքը գերի
պիտի գնան։ Այսպէս Եղիպտոս- 19
ում դատաստաններ պիտի անեմ,
և նորանք պիտի իմանան որ ես
եմ Տէրը։
Եւ եղաւ տասնումէկերորդ 20
տարուայ առաջին ամսի եօթին
Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով.
Որդի մարդոյ, Եղիպտոսի փարա- 21
ւոն Թագաւորի բազուկը կտրե-
ցի, և ահա նա պիտի չփաթաթ-
ուի բժշկութիւն տալու համար,
որ կապ դնեն փաթաթածի վե-
րայ, որպէս զի զօրանայ սուր
բռնելու համար։ Ցորս համար 22
այսպէս է տուեր Տէր Եհովան.
Ահա ես Եղիպտոսի փարաւոն
Թագաւորի դէմ եմ, և պիտի
վչրեմ նորա բազուկները՝ թէ զօ-
րաւորը թէ կոտրածը, և վայր
պիտի գցել տամ սուրը նորա
ձեռքից։ Եւ Եղիպտացիները 23
պիտի ցրուեմ ազգաց մէջ և նո-
րանց սփռեմ երկիրներուն մէջ։
Բայց պիտի զօրացնեմ Բաբիլոնի 24
Թագաւորի բազուկները, և իմ
սուրը պիտի դնեմ նորա ձեռքին,
սակայն փարաւոնի բազուկները
պիտի վչրեմ, և նա պիտի սպան-
ուողի հեծեծանքով հեծէ նորա
առջև։ Եւ Բաբիլոնի Թագաւորի 25
բազուկները պիտի զօրացնեմ,
իսկ փարաւոնի բազուկները պիտի
ընկնին. և պիտի իմանան որ ես
եմ Տէրը, երբոր ես իմ սուրը կը
տամ Բաբիլոնի Թագաւորի ձեռ-
քը, և նա նորան կ'մեկնէ Եղիպ-
տոսի երկրի վերայ. Եւ կ'ցրուեմ 26
Եղիպտացիները ազգերի մէջ և
նորանց կ'սփռեմ երկիրներուն մէջ,
այն ժամանակ կ'իմանան որ ես
եմ Տէրը։

ԳԼ. ԼԱ.

1 Եւ եղեւ ապանութիւնդ տարուայ երրորդ ամսի մէկին, Տիրոջ
2 խօսքը եղաւ ինձ ասելով. Որդի մարդոյ, ասիր Եգիպտոսի փարաւոն թագաւորին և նորա բազմութեանը. Դու ո՞ւմ ես նմանեա՛ց
3 դ քո մեծութիւնովդ։ Ահա Ասորեստանցին մի եղեւին էր Լիբանանի վերայ, ոտերը գեղեցիկ և տերևախիտ, հովանաւոր և բարձրահասակ էր, և ամպերի
4 մէջ էր նորա գագաթը։ Ջուրերը նորան մեծացրին, անդունդները նորան բարձրացրին, իր գետերը գնում էին իր տունկի շուրջը, և իր վտակները նա ուղարկում էր
5 դաշտի բոլոր ծառերին։ Սորա համար նորա հասակը բարձր եղաւ դաշտի բոլոր ծառերից, և աճեցին նորա ոտերը և տարածուեցան նորա ճիւղերը շատ ջրե-
6 րից ընդարձակութեամբ։ Նորա ճիւղերի վերայ բոյն էին դնում երկնքի բոլոր թռչունները, և նորա ճիւղերի տակ ծնում էին դաշտի բոլոր գազանները, և նորա հովանումը բնակում էին բոլոր
7 մեծամեծ ազգերը։ Եւ նա գեղեցիկ էր իր մեծութիւնովը, իր ոտերի ընդարձակութիւնովը. վասն զի նորա արմատը շատ ջրերի վերայ էր։
8 Եղևիները նորան չէին ծածկում Ասուծոյ դրախտումը, մայրի ծառերը չէին նմանում նորա շառաւիղներին, և ասլիները նորա ոտերի նման չէին. ոչ մի ծառ Ասուծոյ դրախտի մէջ չէր նմանում նորան
9 իր գեղեցկութիւնովը։ Ես նորան գեղեցիկ էի շինել իր ոտերի շատութիւնովը. և նախանձում էին նորան Ասուծոյ դրախտումը եղող բոլոր Եդեմի ծառերը։
10 Դորա համար այսպէս ասաց Տէր Եհովան. որովհետև *բարձրացաւ հասակով և իր գագաթը դրաւ ամպերի մէջ, և իր սիրտը հպարտացաւ իր բարձրութիւնո-
11 վը, ես էլ նորան տուի ազգերի

*դու բարձրացար

հզօրի ձեռքը. նա հատուցանելով հատուցրեց նորան. նորա չարութեան համար քշեցի նորան,
12 և օտարները՝ ազգաց բռնակալները նորան ջարդեցին և դէն գցեցին. լեռանց և բոլոր հովիտների վերայ ընկան նորա ոտերը և կտարատուեցան նորա շառաւիղները երկրի բոլոր ձորերում, և նորա հովանուց իջան երկրի բոլոր ժողովուրդները և դէն գցեցին նորան։ Նորա ընկածների վե-
13 րայ բնակեցին երկնքի ամեն թռչունները, և նորա շառաւիղների վերայ էին դաշտի ամեն գազանները։ Որպէս զի իրանց հասակո-
14 վը չհպարտանան ամեն ջրատուն ծառերը և իրանց գագաթները չդնեն ամպերի մէջ, և իրանց հզօրութիւնովը իրանց վերայ հաստատ չկենան բոլոր ջրով ուռզուածները, որովհետև ամենքը մահուան են մատնուած դէպի տակերքումը մարդկանց որդիների մէջ գտնուողների հետ։
15 Այսպէս է ասում Տէր Եհովան. Նա գերեզմանը իջած օրը սուգ անել տուի. նորա համար անդունդը ծածկեցի և արգելեցի նորա գետերը, և շատ ջուրեր բռնուեցան, և սուգ հագցրի Լիբանանին նորա մասին, և դաշտի բոլոր ծառերը թառամեցին նորա
16 պատճառով։ Նորա անկման ձայնից դողալ տուի ազգերին երբոր նորան իջեցրի գերեզմանը գտնողների հետ, և մխիթարուեցան Եդեմի բոլոր ծառերը, Լիբանանի ընտիրներն ու լաւերը՝ բոլոր ջրով
17 ուռզուածները։ Նորանք էլ նորա հետ իջան գերեզմանը սրով սպանուածների մօտ. և նորա բազուկը եղողները, որ բնակում էին նորա հովանիումը ազգաց մէջ։
18 Ո՞ւմ ես նմանում այսպէս փառքով և մեծութիւնով Եդեմի ծառերի մէջ. դու վայր պիտի գցուիս Եդեմի ծառերի հետ գետնի տակը, անթլփատների մէջ պիտի պառկես սրով սպանուածների հետ։ Այսինքն փարաւոնը

և նորա բոլոր բազմութիւնը, ասաւամ է Տէր Եհովան։

ԳԼ. ԼԹ

1 Եւ եղաւ տասներկուերորդ տարում, տասներկուերորդ ամսուայ
2 մին մէկին եղաւ Տիրոջ խօսքը ինձ ասելով. Որդի մարդոյ, զգեստ բարձրացրու Եգիպտոսի փարաւոն թագաւորի վերայ և ասիր նորա մասին. Ազգերի մէջ դու առիւծի էիր նմանւում. և դու մի վիշապի նման էիր ջրերում. դու վեր էիր բղխում քո գետերովը, և պղտորեցնում էիր ջուրը ոտքերովդ, և կոխատեցիր նո-
3 րանց գետերը։ Այսպէս է ասում Տէր Եհովան. Ես պիտի իմ ցանցը քեզ վերայ տարածեմ շատ ազգերի ժողովրդովը, և քեզ վեր պիտի քաշեմ իմ ուռկանո-
4 վը։ Եւ քեզ պիտի գցեմ գետնի վերայ, դաշտի երեսը պիտի շրպռտեմ քեզ, և քեզ վերայ պիտի բնակեցնեմ երկնքի բոլոր թռչուններին, և քեզանով պիտի կշտացնեմ երկրի բոլոր գա-
5 զաններին։ Եւ քո միսը պիտի լեռանց վերայ դնեմ, և պիտի
6 լցնեմ ձորերը քո դէզերովը։ Եւ երկրին պիտի խմեցնեմ քո արեան արտահոսածովը լեռանց վերայ, և հեղեղատները պիտի լցուին քեզանով։
7 Եւ քեզ հանդչելիս պիտի ծածկեմ երկինքը, և աստղ պիտի հատցնեմ նորա աստղերին, արեգակը ամպով պիտի ծածկեմ, և լուսինը պիտի
8 չճառագայթէ իր լոյսը։ Երկնից վերայ բոլոր լուսաւոր լուսատուներին պիտի խաւարեցնեմ քո պատճառով, և քո երկրի վերայ մթութիւն պիտի բերեմ, ասաւամ
9 է Տէր Եհովան։ Եւ շատ ժողովուրդների սիրտը պիտի խռովեցնեմ, երբոր քո կործանումը հասցնեմ ազգերին այն երկիրները-
10 ում, որոնց չէիր գիտում։ Եւ շատ ժողովուրդներ պիտի ապշեցնեմ քեզ վերայ, և նորանց թագաւորները զարհուրանքով պիտի քեզ վերայ զարհուրեն,

երբոր իմ սուրը կ'երեւացնեմ նորանց առջեւ. և պիտի ամեն մարդ ամեն վայրկեան սարսափէ իր անձի համար քո կործանման օրը։

Վասն զի այսպէս է ասում Տէր 11
Եհովան. Բաբելոնի թագաւորի սուրը պիտի գայ քեզ վերայ։ Զօրաւորների սուրերովը վայր պի- 12
տի գցեմ քո բազմութիւնը, որոնք ամենքը ազգաց բռնաւորներն են, և նորանք պիտի կողոպտեն Եգիպտոսի պարծանքը, և պիտի ոչնչանայ նորա բոլոր բազմութիւնը։ Եւ պիտի կորցնեմ 13
նորա բոլոր անասուններըը, շատ ջրերի վերայից, և այլեւս նորանց պիտի չպղտորէ մարդու ոտք, և անասունի կճղակներ պիտի նորանց չպղտորեն։ Այն ժամանակ 14
պիտի պարզեցնեմ նորանց ջուրերը, և իւղի պէս հոսեցնեմ նորանց գետերը, ասաւամ է Տէր Եհովան. Երբոր Եգիպտոսի երկիրը 15
աւերակ կ'դարձնեմ, և երկիրը աւերակ կ'դառնայ իր լիութիւնից. երբոր ես կ'զարկեմ նորա մէջի բոլոր բնակիչներին, այն ժամանակ կ'իմանան թէ ես եմ Տէրը։

Սա մի ողբ է, և ողբով պիտի 16
երգեն նորան, ազգաց աղջիկները պիտի ողբալով երգեն նորան, Եգիպտոսի վերայ և նորա բոլոր բազմութեան վերայ պիտի ողբալով երգեն նորան, ասաւամ է Տէր Եհովան։

Եւ եղաւ տասներկուերորդ տա- 17
ւում՝ ամսի տասնհինգին, որ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ասելով. Որդի մարդոյ, կոծ արա Եգիպ- 18
տոսի բազմութեան վերայ և իջեցրու նորան՝ նորան և զօրաւոր ազգաց աղջիկներին գետնի տակը դուրը իջնողների հետ։ Դու ա- 19
մէնց ես վայելուչ. իջիր և պառկիր անթլփատների հետ։ Սրով 20
սպանուածների մէջ պիտի ընկնեն, սուրն պիտի տրուի նա, քաշքշեցէք նորան և նորա բոլոր բազմութիւնը։ Նորան ասելու 21
են զօրաւորների հզօրները այն աշխարհի միջից նորա օգնողների

հետ, իջել պառկել են անթլփատները սրով սպանուածի:
22 Ասինեղ է Ասորեստանցին և նորա բոլոր ամբոխը, նորա գերեզմանները նորա շրջակայքումն են. ամենքը սպանուած՝ սրով
23 ընկածներ են: Որի գերեզմանները գուբի խորքերումն են շինուած, և իր ամբոխը իր գերեզմանների շրջակայքումն է, ամենքը սպանուած՝ սրով ընկածներ են, որոնք վախ էին տալիս կենդանեաց երկրում:
24 Ասինեղ է Եղամացին և իր բոլոր բազմութիւնը, իր գերեզմանների շրջակայքումը, ամենքը սպանուած՝ սրով ընկածներ են, որոնք իջել են անթլփատ՝ երկրի տակերը, որոնք իրանց վախը տալիս էին կենդանեաց երկրումը, սակայն իրանց ամօթը պիտի կրեն
25 գուբը իջնողների հետ: Սպանուածների մէջ նորան անկողին տուին իր բոլոր բազմութեան հետ, նորա շրջակայքումն են իր գերեզմանները. ամենքը անթլփատներ՝ սրով սպանուած, որ իրանց վախը տալիս էին կենդանեաց երկրումը, և որոնք պիտի կրեն իրանց ամօթը գուբը իջնողների հետ. նա սպանուածների մէջ պիտի դրուի:
26 Ասինեղ է Մոսոքը՝ Թոբելը և նորա բոլոր ամբոխը, նորա շրջակայքումն են իր գերեզմանները. ամենքը անթլփատներ՝ սրով սպանուածներ, որոնք իրանց վախը տալիս էին կենդանեաց երկրում:
27 Եւ նորանք պիտի չպառկեն անթլփատներից ընկնող զօրաւորների հետ, որոնք իրանց պատերազմական զէնքերովը դժոխքն իջան, և որոնց սուրերը իրանց գլխների տակին դրին. բայց նորանց անօրէնութիւնները իրանց ոսկորների վերայ պիտի լինի, թէ և զօրաւորների երկիւղն էին կեն-
28 դանեաց երկրումը: Եւ դու պիտի անթլփատների մէջ փշրուիս, և պառկես սրով սպանուածների հետ:
29 Ասինեղ է Եդոմը, նորա թագաւորները և նորա բոլոր իշխանները, որոնք իրանց զօրութիւնով սրով սպանուածների հետ են դրուած. նորանք պիտի պառկեն անթլփատների հետ և գուբը իջնողների հետ:
30 Ասինեղ են հիւսիսի իշխանները բոլորը, և բոլոր Սիդոնացիք, որոնք իջան սպանուածների հետ. իրանց ահարկութիւնով պիտի ամաչեն իրանց զօրութիւնից, և պիտի պառկեն անթլփատ՝ սրով սպանուածների հետ, և իրանց ամօթը կրեն գուբը իջնողների հետ:
31 Փարաւոնը տեսանելու է նորանց, և պիտի մխիթարուի իր բոլոր ամբոխի մասին, սրով սպանուածներ են փարաւոնը և իր բոլոր զօրքերը, ասում է Տէր Եհովան:
32 Վասն զի ես նորա երկիւղ տալ տուի կենդանեաց երկրումը. և նա պիտի պառկեցնուի անթլփատների մէջ սրով սպանուածների հետ՝ փարաւոնը և նորա բոլոր ամբոխը, ասում է Տէր Եհովան:

ԳԼ. ԼԳ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, խօսիր քո ժողովրդի որդիանց հետ և ասիր նորանց. Եթէ մի երկրի վերայ սուր բերեմ, և այն երկրի ժողովուրդը մէկ մարդ ընտրէ իր միջիցը և նորան իրանց համար դէտ
3 շինեն. Եւ նա տեսանէ այն սուրը գալիս երկրի վերայ, և փողը հնչեցնէ և ժողովրդին զգուշացնէ.
4 Բայց մէկը փողի ձայնը որոշ լսէ և չզգուշանայ, և սուրը գայ և նորան վեր առնէ. նորա արիւնը
5 նորա գլուխը լինի: Նա լսել էր փողի ձայնը և չզգուշացաւ. նորա արիւնը իր վերայ լինի. և եթէ նա զգուշացած լինէր իր
6 անձը կ'ազատէր: Բայց եթէ դէտը տեսանէ սուրը գալիս և փողը չէ հնչեցնէ, և ժողովուրդը չզգուշանայ, և սուրը գայ և նորանցից մի հոգի վեր առնէ. նա իր անօրէնութիւնով վեր առնուեցաւ, բայց նորա արիւնը ես դէտի ձեռքից եմ պահանջելու:

7 Եւ դու, որդի մարդոյ, եւ քեզ
դէտ դրի Իսրայէլի տան վերայ,
և դու պիտի իմ բերանէս խօսքը
լսես և նորանից զգուշացնես իմ
8 կողմանէ։ Ես ամբարշտին ասե-
լիս, Ով ամբարիշտ, դու ան-
պատճառ պիտի մեռնես, և դու
եթէ չխօսես ամբարշտին՝ իր ճա-
նապարհից զգուշացնելու հա-
մար. այն ամբարիշտը կ՚մեռնէ
իր անօրէնութեան համար, բայց
նորա արիւնը քո ձեռքից եմ
9 պահանջելու։ Իսկ եթէ դու զգ-
գուշացնես ամբարշտին իր ճա-
նապարհից, որ նորանից ետ
դառնայ, բայց նա ետ չդառնայ,
նա իր անօրէնութեան համար կը
մեռնէ, բայց դու ազատած կը
կինես քո անձը։
10 Եւ դու, որդի մարդոյ, ասիր
Իսրայէլի տանը. Դուք այսպէս
էք խօսում և ասում. Թէ Մեր
յանցանքներն ու մեր մեղքե-
րը մեզ վերայ է, և մենք նորան-
ցով մաշվում ենք. ուրեմն ինչ-
11 պէս պիտի ապրենք։ Նորանց ա-
սիր. Կենդանի եմ ես, ասում է
Տէր Եհովան, որ ամբարշտի մեռ-
նելը չեմ ուզում, այլ որ ամ-
բարիշտը դարձի գայ իր ճանա-
պարհից և ապրէ։ Դարձէք,
դարձէք ձեր ճանապարհներից,
ով չարեր, և ինչո՞ւ համար դուք
մեռնէք, ով Իսրայէլի տուն։
12 Եւ դու, որդի մարդոյ, ասիր
քո ժողովրդի որդկանցը. Թէ Ա-
դարի արդարութիւնը նորան չի
փրկիլ երբոր նա յանցանք գոր-
ծէ, և ամբարիշտը իր ամբարշ-
տութիւնովը չի գլորուիլ երբոր
իր ամբարշտութիւնից ետ դառ-
նայ, և արդարը չէ կարող իր ար-
դարութիւնովը ապրիլ երբոր մե-
13 ղանչէ։ Երբոր ես արդարին ա-
սեմ. Թէ նա անպատճառ պիտի
ապրէ, և նա վստահանայ իր ար-
դարութեան վերայ և անօրէնու-
թիւն անէ. նորա բոլոր արդա-
րութիւնը պիտի չյիշուի, և այն
իր արած անօրէնութիւնովը պի-
14 տի մեռնէ։ Բայց երբոր ամբա-
րշտին ասեմ. Դու անպատճառ
պիտի մեռնես, և նա ետ դառ-
նայ իր մեղքից և իրաւունք ու
արդարութիւն գործէ. Գրաւը ետ 15
դարձնէ ամբարիշտը, յափշտա-
կածը հատուցանէ, կենաց կա-
նոններովը գնայ առանց անօրէ-
նութիւն գործելու. Նա անշուշտ
պիտի ապրէ և չպիտի մեռնէ։
Ամէն մեղքերը, որ նա ա- 16
րել էր, պիտի չյիշուին. Նա ի-
րաւունք ու արդարութիւն գոր-
ծեց. Նա անշուշտ պիտի ապրէ։
Եւ քո ժողովրդի որդիքը կ՚ա- 17
սեն. Տիրոջ ճանապարհը ուղիղ
չէ. բայց իրանց ճանապարհն է
որ ուղիղ չէ։ Երբոր արդարը ետ 18
դառնայ իր արդարութիւնից և
անօրէնութիւն գործէ, այն ժա-
մանակ նա պէտք է մեռնէ նո-
րանցով։ Եւ երբոր ամբարիշտը 19
ետ դառնայ իր ամբարշտութի-
նից և իրաւունք ու արդարու-
թիւն գործէ, նորանցով նա պէտք
է ապրէ։ Բայց դուք ասում էք 20
թէ՝ Տիրոջ ճանապարհը ուղիղ
չէ, Ես Ձեղանից ամեն մէկին իր
ճանապարհների համեմատ պիտի
դատեմ, ով Իսրայէլի տուն։
Եւ եղաւ որ մեր գերութեան 21
տասներկուերորդ տարում տաս-
երորդ ամսի հինգին մէկ ազատ-
ուած եկաւ ինձ մօտ Երուսաղէ-
մից ասելով. Թէ քաղաքը կոտ-
րուեցաւ։
Եւ Տիրոջ ձեռքը ինձ վերայ 22
եղաւ այն իրիկունը ազատուածի
գալուց առաջ և բացաւ իմ բե-
րանը մինչև որ նա առաւօտը ինձ
մօտ եկաւ, և բերանս բացուե-
ցաւ և այլևս համր չէի։
Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա- 23
սելով. Որդի մարդոյ, այս ա- 24
րաքների բնակիչները Իսրայէլի
երկրի վերայ ասում են թէ՝ Ա-
բրահամ մէկ հատ մարդ էր և ժա-
ռանգեց երկիրը. իսկ մենք շատ
ենք, երկիրը մեզ տրուեցաւ իր-
րև ժառանգութիւն։ Դորա հա- 25
մար ասիր նորանց. Այսպէս է
ասում Տէր Եհովան. Դուք ար-
իւնովն էք ուտում և ձեր աչքե-
րը բարձրացնում էք դէպի ձեր
կուռքերը և արիւն էք թափ-
ում. և դուք ժառանգէ՞ք երկի-

26 ըը՝ Դուք հաստատ կանգնած
էք ձեր սրի վերայ, պղծութիւն
էք անում, և ձեզանից ամեն մէ-
կը իր ընկերի կնոջն է պղծում.
27 և դուք ժառանգէ՞ք երկիրը՝ Այս-
պէս ասիր նորանց. Այսպէս է
ասում Տէրը Եհովան. կենդանի
եմ ես, որ աւերակներովքն է-
ղողները սրով պիտի ընկնեն, և
դաշտի վերայ եղողները գազան-
ներին եմ տալիս իբրև նորանց
կերակուր, և բերդերումն ու
քարայրերումն եղողները ժան-
28 տախտով պիտի մեռնեն։ Եւ եր-
կիրը ամայի ու ամայացած պիտի
շինեմ, և պիտի փչանայ նորա
զօրութեան հպարտութիւնը. և
ամայի պիտի դառնան Իսրայէլի
լեռները որ անց կենող չլինի։
29 Եւ կ'իմանան որ ես եմ Տէրը,
երբոր երկիրը ամայի ու ամայա-
ցած կ'անեմ նորանց արած բոլոր
պղծութեանց համար։
30 Իսկ դու, որդի մարդոյ, քո
ժողովրդի որդիքը որ խօսակցում
են քեզ դէմ պատերի մօտ և
տների դռներումը և մէկմէկու
հետ խօսում են իրար ասելով.
Մէկ եկէք ու լսեցէք թէ ինչ
բան կայ դուրս եկած Տիրոջ կող-
31 մից։ Եւ նորանք քեզ մօտ կ'գան
հէնց որ ժողովուրդը եկաւ և քո
առջև կ'նստեն իբրև իմ ժողո-
վուրդ, և կ'լսեն քո խօսքերը,
բայց նորանց չեն կատարել. այլ
նորանք իրանց բերանովը հաճու-
թիւն ցոյց կ'տան, բայց նորանց
սիրտն իրանց ագահութեան քա-
32 մակից է գնում։ Եւ ահա դու
նորանց համար քաղցր երգի պէս
ես՝ գեղեցկաձայն և բարեյարմար.
և նորանք կ'լսեն քո խօսքերը,
բայց նորանց կատարողները չեն։
33 Եւ երբոր սա կ'գայ, (ահա պիտի
գայ), այն ժամանակ պիտի իմա-
նան, որ իրանց միջումը մարգա-
բէ է եղել։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, մարգարէ-
ացիր Իսրայէլի հովիւների մասին,
մարգարէացիր և ասիր նորանց՝
այդ հովիւներին. Թէ Այսպէս է
ասում Տէրը Եհովան. Վա՛յ Իս-
րայէլի հովիւներին, որոնք իրանց
են արածեցնում. չէ՞ որ հօտը
պիտի արածեցնեն հովիւները։
Կաթը ուտում էք, և բուրդը 3
հագնում էք, և պարարտին մոր-
թում էք. իսկ հօտը չէք արած-
ծեցնում։ Տկարներին չուժովաց- 4
րիք, և հիւանդին չբժշկեցիք, և
դուք կոտրածին չկապեցիք, և
մոլորուածին ետ չբերիք, և կո-
րածին չորոնեցիք, այլ խստու-
թեամբ տիրեցիք նորանց վերայ
և բռնութեամբ։ Եւ նորանք ցրիւ 5
եկան հովիւ չլինելու պատճա-
ռով, և կերակուր եղան դաշտի
բոլոր գազաններին և ցիրուցան
եղան։ Մոլորւում են իմ ոչխար- 6
ները ամեն լեռանց վերայ և ամեն
բարձր բլուրի վերայ, և երկրի
բոլոր երեսի վերայ ցրուել են
իմ ոչխարները. և որոնող չկայ,
ու հարցնող չկայ։

Դորա համար, ով հովիւներ, 7
լսեցէք Տիրոջ խօսքը. Կենդանի 8
եմ ես, ասում է Տէրը Եհովան,
որովհետև իմ հօտը յափշտակ-
ուեցաւ և իմ հօտը՝ հովիւ չլի-
նելու համար՝ դաշտի գազաննե-
րին կերակուր եղաւ, և իմ հո-
վիւները չորոնեցին իմ ոչխարնե-
րին, և հովիւները իրանց են ա-
րածեցնում, բայց իմ ոչխարնե-
րին չեն արածեցնում։ Դորա հա- 9
մար, ով հովիւներ, լսեցէք Տի- 10
րոջ խօսքը. Այսպէս է ասում
Տէրը Եհովան. Ահա ես հովիւների
դէմ եմ, և իմ ոչխարներին պի-
տի պահանջեմ նորանց ձեռքիցը,
և նորանց պիտի դադարեցնեմ
ոչխար արածեցնելուց, և հովիւ-
ները այլևս պիտի չարածեցնեն
նորանց, և պիտի ազատեմ իմ
ոչխարներին նորանց բերանիցը,
որ նորանք նորանց համար ուտե-
լիք չլինեն։

Վասն զի այսպէս է ասում Տէրը 11
Եհովան. Ահա ես ինքս եմ պա-
հանջելու իմ ոչխարներին և նո-
րանց որոնելու. Ինչպէս որ հո- 12
վիւն է որոնում իր հօտը երբոր

նորանք ցրուած ժամանակ նա իր
ոչխարների մէջ է լինում, այն-
պէս պիտի որոնեմ իմ ոչխարնե-
րին և նորանց պիտի ազատեմ
այն ամեն տեղերից, ուր որ նո-
րանք ցրուած են եղել ամպի և
13 մառախուղի օրը. Եւ նորանց պի-
տի հանեմ ազգերի միջից և պի-
տի ժողովեմ նորանց երկիրներից
և նորանց պիտի բերեմ նորանց
երկիրը և նորանց պիտի արած-
ցընեմ Իսրայէլի լեռանց վերայ,
ձորերում և երկրի բոլոր բնա-
14 կութիւններում. Նորանց պիտի
լաւ արօտում արածեցնեմ, և
Իսրայէլի բարձր լեռանց վերայ
պիտի լինի նորանց փարախը.
այնտեղ լաւ փարախի մէջ պիտի
մնակաղեն. և պարարտ արօտում
պիտի արածեն Իսրայէլի լեռանց
15 վերայ: Ես եմ արածեցնելու իմ
ոչխարներին և ես եմ նորանց մա-
կաղել տալու, ասում է Տէր Ե-
16 հովան: Կորածը որոնելու եմ, և
մոլորուածը ետ եմ բերելու, և
կատրածը պիտի կապեմ և հի-
ւանդը պիտի զօրացնեմ, և պա-
րարտն ու զօրաւորը պիտի փչա-
ցընեմ՝ իրաւունքով պիտի հով-
ուեմ նորանց:

17 Եւ դուք, ով իմ ոչխարները,
այսպէս է ասում Տէր Եհովան.
Ա.հա ես դատաստան եմ անելու
ոչխարի և ոչխարի մէջ, խոյերի և
18 նոխազների մէջ: Սա քի՞չ է ձեզ
համար որ լաւ արօտում էք արա-
ծում, ձեր արօտի մնացորդը ձեր
ոտքերովը կոխ է՞լ էք տալիս. և
մաքուր ջուրը խմում էք, մնացո-
ծը ձեր ոտքերովը պղտորո՞ւմ էք:
19 Եւ իմ ոչխարները ձեր ոտնակոխ
արածն է ուտում, և ձեր ոտքե-
րով պղտորածն է խմում:

20 Դորա համար այսպէս է ասում
Տէր Եհովան նորանց. Ա.հա ես
ինքս պիտի դատեմ պարարտ ոչ-
21 խարի և նիհար ոչխարի մէջ: Ո-
րովհետև դուք ձեր կողքովը հրը-
ում էք և ձեր եղջիւրներովը հար-
ուած էք ամեն տկարներին, մին-
չև որ նորանց ցիրուցան արինք
22 դրսումը: Բայց ես պիտի փրկեմ
իմ ոչխարներին, և նորանք այլ
և այլ պիտի չյափշտակուին, և պի-
տի դատեմ ոչխարի և ոչխարի
մէջ: Եւ նորանց վերայ մէկ հո- 23
վիւ պիտի դնեմ, և նա պիտի
արածեցնէ նորանց, այսինքն իմ
Դաւիթ ծառային, նա պիտի ա-
րածեցնէ նորանց, և նա է լինե-
լու նորանց հովիւը: Եւ ես Տէրս 24
կ'լինիմ նորանց համար Ա.աո-
ւած, իսկ իմ Դաւիթ ծառան՝
իշխան նորանց մէջ. ես Տէրս եմ
խօսել: Եւ ձեզ հետ խաղաղու- 25
թեան ուխտ պիտի դնեմ, և պի-
տի դադարեցնեմ չար գազաննե-
րին այդ երկրից. և նորանք կը
բնակեն անապատումը ապահով.
և կ'քնանան անտառներումը: Եւ 26
նորանց և իմ բլուրի շրջակայքը
պիտի օրհնութիւն շինեմ, և
անձրևը պիտի ցած թափեմ իր
ժամանակին. անձրևները պիտի
օրհնութիւն լինեն: Եւ դաշտի 27
ծառը պիտի իր պտուղը տայ, և
երկիրը պիտի տայ իր բերքը, և
նորանք ապահով պիտի լինին ի-
րանց երկրումը, և պիտի իմա-
նան թէ ես եմ Տէրը, երբոր նո-
րանց լուծի փայտերը կ'կոտրեմ
և նորանց կազատեմ իրանց ծա-
ռայեցնողների ձեռքիցը: Եւ այլ 28
և ազգերին աւար չեն լինիլ, և
երկրի գազանները նորանց չեն ու-
տիլ, և ապահով կ'բնակեն և
վախեցնող չի լինիլ: Եւ նորանց 29
համար մի անուանի բոյս վեր կը
կացնեմ, որ այլ և այս սովով չըս-
պառուին այն երկրումը, և այլ
և չկրեն ազգաց նախատինքը:
Եւ կ'գիտենան թէ ես՝ նորանց 30
Տէր Ա.աուածը իրանց հետ եմ,
և իրանք իմ ժողովուրդն են՝ Իս-
րայէլի տունը, ասում է Տէր Ե-
հովան:

Եւ դուք իմ ոչխարները՝ իմ 31
արօտի ոչխարները մարդիկ էք
դուք. ես ձեր Ա.աուածն եմ,
ասում է Տէր Եհովան:

ԳԼ. Լ Ե

Եւ Տէրոջ խօսքը եղաւ ինձ ա- 1
սելով. Որդի մարդոյ, երեսդ Ա- 2
իր լեռանը դարձրու և մարգա-

3 բեացիը նորա մասին, եւ ասիը նորան. Այսպէս է ասում Տէր ԵՀովան. Ահա ես քեզ դէմ եմ, ով Սէիր լեառ, և մեկնում եմ իմ ձեռքը քեզ վերայ և ես քեզ ամայի ու ամլացած պիտի անեմ։
4 Քո քաղաքները աւերակ պիտի անեմ, և դու ամայի պիտի դառնաս, և պիտի գիտենաս որ ես եմ Տէրը։
5 Որովհետև դու մշտնջենական տեղութիւն ունիս և Իսրայէլի որդիանցը սուրի ձեռք մատնեցիր նորանց պատուհասի ժամանակին, անօրէնութիւնը ծայրին հասի ժամանակին։
6 Դորա համար կենդանի եմ ես, ասում է Տէր ԵՀովան, որ քեզ արիւն պիտի անեմ, և արիւնը պիտի հալածէ քեզ. քանի որում դու արիւնը չատեցիր, արիւնն էլ պիտի հալածէ քեզ։
7 Եւ ես Սէիր լեառը ամայի ու ամլացած պիտի շինեմ, և նորանից պիտի փչացնեմ
8 անցնողն ու դարձողը։ Եւ պիտի լցնեմ նորա լեառները նորա սպանուածներովը, և բլուրներիդ ու հովիտներիդ և բոլոր ձորերիդ մէջ պիտի սրով սպանուածներ
9 ընկնեն։ Եւ քեզ յաւիտենական անապատներ պիտի շինեմ, և քո քաղաքները պիտի չբնակուին, և դուք պիտի իմանաք որ ես եմ Տէրը։
10 Որովհետև դու ասացիր. Թէ Այս երկու ազգերը և այս երկու երկիրները իմն են լինելու, և մենք պիտի տիրենք նորանց, թէև
11 Տէրը այնտեղ էր. Դորա համար՝ կենդանի եմ ես, ասում է Տէր ԵՀովան, որ պէտք է անեմ քո բարկութեան և քո նախանձի համեմատ, որ ի գործ դրիր նորանց ատելիս, և ես պիտի ճանաչուիմ նորանց մէջ երբոր կ'անեմ քո
12 դատաստանը։ Եւ կ'գիտենաս, որ ես Տէրս լսել եմ քո հայհոյանքները, որ ասացիր Իսրայէլի լեռանց վերայ ասելով. Աւերակ եղան՝ մեզ տրուեցան իբրև ուտելիք։
13 Եւ հպարտացաք ձեր բերանովը ինձ դէմ, և ձեր խօսքերը շատացրիք ինձ դէմ. ես լսել եմ։

14 Այսպէս է ասում Տէր ԵՀովան. Բոլոր երկիրը ուրախանալիս, քեզ աւերակ պիտի անեմ։
15 Ինչպէս որ դու ուրախացար Իսրայէլի տան ժառանգութեան վերայ, երբոր նա աւերակ եղաւ, այնպէս էլ պիտի անեմ քեզ. դու աւերակ պիտի դառնաս, ով Սէիր լեառ, և ով բոլոր Եդոմ, և կ'իմանան որ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԶ

1 Եւ դու, որդի մարդոյ, մարգարեացիր Իսրայէլի լեռանց և ասիր. Ով Իսրայէլի լեռներ, լսեցէք Տիրոջ խօսքը։
2 Այսպէս է ասում Տէր ԵՀովան. Որովհետև թշնամին ասաց ձեր մասին. Վա՛շ, յաւիտենական բլուրներն էլ մեզ համար ժառանգութիւն եղան.
3 Սորա համար մարգարեացիր և ասիր. Այսպէս է ասում Տէր ԵՀովան. Հէնց իսկ նորա համար որ ձեզ աւերակ արին և ձեզ վերայ յարձակուեցան շուրջանակի որ մնացած ազգերին ժառանգութիւն դառնաք, և դուք լեզուանիների շրթունքն ընկիք և նախատինք եղաք ժողովրդին։
4 Սորա համար, ով Իսրայէլի լեռներ, լսեցէք Տէր ԵՀովայի խօսքը. Տէր ԵՀովան այսպէս է ասում լեռանց, բլուրներին, ձորերին և հովիտներին և ամայի աւերակներին և թողուած քաղաքներին, որոնք ուտար և ծաղր են դառել շուրջանակի եղող ազգերի մնացածին.
5 Սորա համար այսպէս է ասում Տէր ԵՀովան. Որ անշուշտ իմ նախանձի կրակովն եմ խօսել մնացած ազգերի և բոլոր Եդոմի մասին, որովհետև նորանք իմ երկիրը իրանց տուին իբրև ժառանգութիւն բոլոր սրտի ուրախութիւնով և հոգու արհամարհանքով, որ նորան դարատակելով յափշտակէ։

6 Դորա համար մարգարեացիր Իսրայէլի երկրի մասին և ասիր լեռանց և բլուրներին, ձորերին և հովիտներին. Թէ Այսպէս է

ասում Տէր Եհովան. Ահա ես խօսեցի իմ նախանձուի և իմ բարկութիւնովը, որովհետև դուք
7 կրեցիք ազգաց նախատինքը։ Դրա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Ես բարձրացրել եմ իմ ձեռքը երդուելով, որ ձեր շուրջը եղող ազգերը իրանք պիտի
8 քաշեն իրանց նախատինքը։ Իսկ դուք, ով Իսրայէլի լեռներ, ձեզ համար ճիւղեր տուէք, և ձեր պտուղը բերէք իմ Իսրայէլ ժողովրդի համար, վասն զի մօ-
9 տեցել են գալու համար։ Վասն զի ահա ես ձեր կողմին եմ, և դէպի ձեզ եմ դարձել, և դուք պիտի մշակուիք և սերմանուիք։
10 Եւ ձեզ վերայ պիտի մարդը շատացնեմ այսինքն Իսրայէլի տունը բոլորը. և քաղաքները պիտի շէնանան, և աւերակները պիտի
11 շինուին։ Եւ ձեզ վերայ պիտի շատացնեմ մարդը և անասունը, և նորանք պիտի բազմանան և պտղաբեր լինին, և ձեզ պիտի բնակեցնեմ ձեր առաջի կացութեան պէս և ձեր առաջուայ վիճակից աւելի լաւութիւն պիտի անեմ, և պիտի իմանաք թէ ես
12 եմ Տէրը։ Եւ ձեզ վերայ մարդ պիտի մանն ածեմ այսինքն իմ ժողովուրդ Իսրայէլը, և նորանք պիտի ժառանգեն քեզ, և դու նորանց ժառանգութիւնը պիտի լինիս. և նորանց պիտի այլեւս անզաւակ չանես։
13 Այսպէս է ասում Տէր Եհովան. Որովհետև ձեզ համար ասում են թէ՝ Դու մարդ ուտող ես, և քո ժողովրդին անզաւակ
14 ես արել. Դորա համար այլեւս մարդ պիտի չուտես և այլեւս պիտի անզաւակ չանես քո ժողովրդին, ասում է Տէր Եհովան։
15 Եւ քո մէջ այլեւս պիտի լսել չտամ ազգաց նախատինքը, և այլեւս պիտի չկրես ժողովուրդների անարգանքը, և քո ազգերին այլեւս պիտի անզաւակ չանես, ասում է Տէր Եհովան։
16 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
17 սելով. Որդի մարդոյ, Իսրայէլի տունը իրանց երկրումը բնակեցին և նորան պղծեցին իրանց ճանապարհովը և իրանց գործքերովը, դաշտանաւորի պղծութեան պէս եղաւ նորանց ճանապարհը իմ առջեւ։ Ես էլ իմ բարկութիւնը 18
թափեցի նորանց վերայ այն արեան համար, որ թափեցին երկրի վերայ, և որը պղծեցին իրանց կուռքերովը։ Եւ նորանց ցրուեցի 19
ազգերի մէջ, և նորանք ցիրուցան եղան երկիրների մէջ. նորանց ճանապարհի և նորանց գործքերի համեմատ դատաստան արի իրանց։ Եւ երբոր գնացին այն ազ- 20
գաց մօտ ուր որ գնացել են, պղծեցին իմ սուրբ անունը, երբոր նորանց համար ասուեցաւ. Սորանք Տիրոջ ազգն են և նորա երկրիցն են դուրս եկել։ Սակայն 21
ես գթացի իմ սուրբ անուան համար, որ Իսրայէլի տունը պղծեցին այն ազգաց մէջ, ուր որ գնացել էին։

Սորա համար ասիր Իսրայէլի 22
տունը. Այսպէս է ասում Տէր Եհովան. Չէ թէ ձեզ համար եմ անում ես, ով Իսրայէլի տուն, այլ իմ սուրբ անուան համար, որ դուք պղծեցիք այն ազգաց 23
մէջ ուր որ գնացել էք։ Եւ ես արձեցի իմ սուրբ մեծ անունը, որ պղծուած էր այն ազգաց մէջ որոնց մէջ դուք պղծեցիք. և ազգերը պիտի գիտենան որ ես եմ Տէրը, ասում է Տէր Եհովան, երբոր ես կ'սրբուիմ ձեր մէջ նորանց աչքերի առջեւ։ Եւ 24
ձեզ պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեր ամեն երկիրներից և ձեզ բերեմ ձեր հողը. Եւ ձեզ վերայ մաքուր ջուր պիտի 25
սրսկեմ, և մաքուր պիտի լինէք. ձեր բոլոր պղծութիւններից ու ձեր բոլոր կուռքերից պիտի մաքրեմ ձեզ։ Եւ ես ձեզ 26
նոր սիրտ պիտի տամ, և նոր հոգի պիտի դնեմ ձեր միջումը, և վեր պիտի առնեմ ձեր մարմնիցը քարեղէն սիրտը և ձեզ մարմնեղէն սիրտ պիտի տամ։ Եւ իմ 27
հոգին պիտի դնեմ ձեր միջումը, և պիտի անեմ, որ իմ օրէնքներով մէջ վարուիք և իմ դատաս-

տանները պահէք և նորանց կատարէք։ 28 Եւ բնակէք այն երկրում որ տուել եմ ձեր հայրերին, և իմ ժողովուրդը լինէք, 29 և ես ձեր Աստուածը լինեմ։ Եւ ձեզ պիտի ազատեմ ձեր բոլոր պղծութիւններից, և պիտի կանչեմ ցորենը և շատացնեմ նորան. և ձեզ վերայ սով պիտի 30 չբերեմ։ Եւ պիտի շատացնեմ ծառերի պտուղը և դաշտի բերքը, որպէս զի այլևս սովի նախատինք չքաշէք ազգաց մէջ։ 31 Եւ դուք պիտի յիշէք ձեր չար ճանապարհները և ձեր գործերը որ լաւ չէին, և պիտի զզուիք ձեզանից ձեր անօրէնութիւնների համար և ձեր պղծութիւնների 32 համար։ Ոչ թէ ձեզ համար եմ անում, ասում է Տէր Եհովան, — ձեզ յայտնի լինի. ամաչեցէք և պատկառեցէք ձեր ճանապարհներից, օվ Իսրայէլի տուն։

33 Այսպէս է ասում Տէր Եհովան. Այն օրը որ ձեզ կ'մաքրեմ ձեր բոլոր անօրէնութիւններից, այն ժամանակ քաղաքները պիտի բնակուին, և անապատները շէնանան։ 34 Եւ ամայացած երկիրը պիտի մշակուի փոխանակ որ ամայի էր ամեն անցնողի աչքի 35 առջև։ Եւ պիտի ասեն. Այս ամայացած երկիրը եդեմի դրախտի պէս է դառել և աւերակ ու ամայի և քարուքանդ քաղաքները պարսպաւոր — մարդաբնակ են 36 դառել։ Եւ ձեր շրջակայքում մնացած ազգերը պիտի իմանան որ ես Տէրս շինում եմ քանդուածները և տնկում ամայացածը. ես Տէրս խօսեցի և պիտի կատարեմ։

37 Այսպէս է ասում Տէր Եհովան. Դեռ այս բանն էլ պիտի խնդրէ ինձանից Իսրայէլի տունը, որ անեմ իրանց. նորանց պիտի շատացնեմ մարդկանցով խաշինքի 38 պէս։ Սուրբ խաշինքի պէս, երուսաղէմի խաշինքների պէս նորա ասն օրերին. այնպէս պիտի լինեն այն աւերակ քաղաքները մարդկանց խաշինքներով լիքը, և պիտի իմանան որ ես եմ Տէրը։

ԴԼ. ԼԷ

1 Տիրոջ ձեռքը ինձ վերայ եղաւ, և ինձ դուրս հանեց Հոգով Տէրը, և ինձ դուրս հանեց դաշտի մէջը, և դա լիքն էր ոսկորներով։ 2 Եւ ինձ մտն ածեց նորանց վերայ շուրջանակի, և ահա նորանք խիստ շատ էին դաշտի երեսի վերայ. և ահա շատ չորացած էին։ 3 Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, միթէ կ'կենդանանան այս ոսկորները. և ես ասացի. Ով Տէր Եհովայ, դու գիտես։ 4 Եւ նա ինձ ասաց. Մարգարէացիր այս ոսկորների վերայ և ասիր նորանց. Ով չորացած ոսկորներ, լսեցէք Տիրոջ խօսքը. 5 Այսպէս է ասում Տէր Եհովան այս ոսկորներին. Ահա ես ձեր մէջը հոգի պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք։ 6 Եւ ձեզ վերայ ջիղեր պիտի դնեմ, և ձեզ վերայ միս պիտի բերեմ և ձեզ պիտի մորթով պատեմ, և ձեր մէջը հոգի պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք. և պիտի իմանաք որ ես եմ Տէրը։

7 Եւ ես մարգարէացայ ինչպէս որ ինձ պատուիրուեցաւ. և մի ձայն եղաւ հէնց որ մարգարէացայ, և ահա մի շարժում, և ոսկորները մօտեցան՝ ոսկոր ոսկորի մօտ։ 8 Եւ տեսայ, և ահա նորանց վերայ ջիղեր և միս եկաւ, և մորթը պատեց նորանց վերևից, սակայն շունչ չկար նորանց մէջ։ 9 Եւ ինձ ասաց. Մարգարէացիր շունչին՝ մարգարէացիր, ով որդի մարդոյ, և ասիր շունչին. Այսպէս է ասում Տէր Եհովան Չորս աշխարհակողմից եկ, ով շունչ, և փչիր այս սպանուածների վերայ որ կենդանանան։ 10 Եւ ես մարգարէացայ ինչպէս որ ինձ պատուիրուել էր, և նորանց մէջը շունչ մտաւ, և նորանք կենդանացան և կանգնեցին իրանց ոտքերի վերայ, և մի խիստ շատ մեծ բազմութիւն էր։

11 Եւ ինձ ասաց. Որդի մարդոյ, այս ոսկորները բոլոր Իսրայէլի տունն է. ահա նորանք ասում են. Մեր ոսկորները չորացան և մեր

յոյսը փչացաւ, մենք կորած ենք։
12 Դորա համար մարգարէացիր և ա-
սիր նորանց. Այսպէս է ասում
Տէր Եհովան. Ահա ես պիտի բա-
նամ ձեր գերեզմանները, և ձեզ՝
իմ ժողովուրդը դուրս պիտի հա-
նեմ ձեր գերեզմաններից, և ձեզ
պիտի տանեմ Իսրայէլի երկիրը։
13 Եւ դուք կ'իմանաք որ ես եմ
Տէրը, երբոր կ'բանամ ձեր գե-
րեզմանները և ձեզ էջս իմ ժո-
ղովուրդը կ'հանեմ ձեր գերեզ-
14 մաններից։ Եւ ես իմ Հոգին ձեր
մէջը կ'դնեմ, և դուք կ'կենդա-
նանաք, և ես ձեզ կ'հանգստաց-
ընեմ ձեր երկրի վերայ, և դուք
կ'իմանաք որ ես Տէրս խօսեցի և
կատարեցի, ասում է Տէրը։
15 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
16 սելով. Եւ դու, որդի մարդոյ,
քեզ համար մէկ փայտ առ և նո-
րա վերայ գրիր՝ Յուդայինը և նո-
րա ընկեր Իսրայէլի որդիանցը. և
մէկ փայտ էլ առ և նորա վերայ
գրիր՝ Յովսէփինը՝ Եփրեմի փայտը
և նորա ընկեր Իսրայէլ բոլոր
17 տանը։ Եւ նորանց մօտեցրու մի-
միանց որ մէկ փայտ դառնան,
և նորանք միանան քո ձեռքում
18 մը։ Եւ երբոր քո ժողովրդի որ-
դիքը խօսեն քեզ հետ ասելով.
Մեզ չե՞ս ասիլ թէ սա ի՞նչ է
19 քո ունեցածը։ Նորանց ասիր.
Թէ Այսպէս է ասում Տէր Եհո-
վան. Ահա ես վեր եմ առնելու
Յովսէփի փայտը, որ Եփրեմի
ձեռքին է, և նորա ընկեր Իս-
րայէլի ցեղերը, և նորանց նորա
վերայ դնեմ Յուդայի փայտի հետ
և նորանց մէկ փայտ եմ շինելու,
և նորանք մէկ պիտի լինեն իմ
20 ձեռքումը։ Եւ այն փայտերը, ո-
րանց վերայ դու պիտի գրես, քո
ձեռքին լինին նորանց աչքի առ-
21 ջև. Եւ ասիր նորանց. Այսպէս
է ասում Տէր Եհովան. Ահա ես
վեր եմ առնելու Իսրայէլի որդի-
ները այն ազգերի միջից, ուր
որ նրանք գնացել են, և նորանց
ժողովելու եմ շուրջանակի և բե-
22 րեմ նորանց իրանց երկիրը։ Եւ
նորանց մէկ ազգ եմ շինելու երկ-
րումը Իսրայէլի լեռանց վերայ
և մէկ թագաւոր պիտի լինի նո-
րանց ամենքի թագաւորը, և այլ
ևս երկու ազգեր չեն լինիլ և
այլ ևս պիտի չպատակուին եր-
կու թագաւորութիւնների։ 23 Եւ
այլ ևս պիտի չպղծուին իրանց
կուռքերովը ու գարշելիներովը և
իրանց բոլոր յանցանքներովը, և
ես պիտի ազատեմ նորանց իրանց
բոլոր բնակութիւններից, որոնց
մէջ իրանք մեղք գործեցին, և
նորանց պիտի սրբեմ, և նորանք
կ'լինեն իմ ժողովուրդը և ես կը
լինեմ նորանց Աստուած. 24 Եւ իմ
ծառան Դաւիթը՝ թագաւոր նո-
րանց վերայ, և նորանց ամենին
մէկ հովիւ կ'լինի. և իմ իրա-
ւունքների մէջ կ'գնան և իմ կա-
նոնները կ'պահեն և նորանց կը
կատարեն։ 25 Եւ ետ կ'դառնան
այն երկիրը որ տուել եմ իմ
ծառայ Յակոբին, ուր որ ձեր
հայրերը բնակել էին. և նորանք
կ'բնակեն նորա վերայ՝ իրանք և
իրանց որդիքը և իրանց որդիանց
որդիքը մինչև յաւիտեան, և իմ
ծառան Դաւիթը իշխան կ'լինի
նորանց համար մինչև յաւիտեան։
26 Եւ նորանց համար խաղաղու-
թեան ուխտ կ'դնեմ՝ յաւիտե-
նական ուխտ կ'լինի նորանց հետ.
և նորանց պիտի հաստատեմ և
շատացնեմ, և իմ սրբարանը նո-
րանց մէջ դնեմ յաւիտեան։ 27 Եւ
իմ խորանը նորանց մօտ կ'լինի
և ես նորանց Աստուած կ'լինեմ
և նորանք իմ ժողովուրդը կ'լի-
նեն։ 28 Եւ ազգերը կ'իմանան որ ես
եմ Տէրը Իսրայէլին սրբողը, երբ-
որ իմ սրբարանը նորանց մէջ կը
լինի յաւիտեան։

ԳԼ. ԼԸ

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
2 սելով. Որդի մարդոյ, երեսդ դէ-
պի Գոգն արա Մագոգի երկրում՝
Ռոսին, Մոսոքի և Թոբէլի իշխա-
նը և մարգարէացիր նորա վերայ,
3 Եւ ասիր. Այսպէս է ասում Տէր
Եհովան, Ահա ես քեզ դէմ եմ,
ով Գոգ՝ Ռոսին, Մոսոքի և Թո-
բէլի իշխան։ Եւ քեզ պիտի ետ
4

դարձնեմ և կարթեր պիտի դնեմ կղակներիդ, և քեզ պիտի հանեմ և քո բոլոր զօրքը՝ ձիերն ու ձիաւորները, բոլորը շքեղաթիւնով հագուած վահանաւորների և ասպարակիրների մեծ ժողովքը, որոնց ամենքն էլ սուր 5 բռնողներ են։ Պարսիկները, Եթէովպացիք և Փութացիք նորանց հետ են. ամենքն էլ ասպարակիր 6 են և սաղաւարտաւոր, Գոմեր և նորա բոլոր գունդերը, Թորգոմայի տունը, հիւսիսի ծայրերը և նորա բոլոր գնդերի հետ. շատ ժողովուրդներ կան քեզ հետ։

7 Պատրաստ եղիր և պատրաստիր քեզ և քո բոլոր ժողովքը որ ժողովուել են և դու նորանց 8 պահապանը եղիր։ Շատ օրերից յետոյ պիտի այցելուես. տարիների վերջին դու պիտի գաս այն երկիրը որ սուրիցը ետ է առնուած, և շատ ազգերից ժողովուածի վերայ Իսրայէլի լեռանց վերայ, որոնք մշանջենական աւերակներ էին. բայց ազգերի միջից դուրս բերուեցան, և ամենքն 9 էլ ապահով են բնակուում։ Բայց դու մրրիկի պէս պիտի վեր կենաս գաս, երկիրը ծածկելու համար եղող ամպի պէս պիտի լինես՝ դու և քո բոլոր գունդերը և շատ ազգեր քեզ հետ։

10 Այսպէս է տուում Տէր Եհովան. Եւ այն օրը պիտի լինի, որ սրտումդ բաներ պիտի վեր կենան և դու պիտի չար խորհուրդներ 11 խորհես, Եւ ասես. Վեր գնամ բաց երկրի վերայ, հանդեմ ապահովների վերայ որ ապահով բնակել են, ամենքը բնակուում են առանց պարսպի, և նորանք նիգեր ու գուռներ չունին, Աւար 12 յափշտակելու և կողոպուտ կոդոպտելու, որ ձեռքդ դարձնես մարդազէն դառած աւերակներին, և դէպի այն ժողովուրդը որ հաւաքուած է ազգերի միջից, որ խաշինք ու ապրանք է ստացել, որ նստել են երկրի միջին տեղը։ 13 Սաբա և Դեդան և Թարսիսի վաճառականները և նորա բոլոր առիւծները քեզ պիտի ասեն. Մի՞թէ աւար յափշտակելու համար եկար դու, մի՞թէ կողոպուտ կոդոպտելու համար ժողովեցիր քո ժողովքը որ արծաթ ու ոսկի վեր առնես, որ խաշինք ու ապրանք առնես, որ մեծ աւար յափշտակես։

Դորա համար մարգարէացիր, 14 որդի մարդոյ, և ասիր Գոգին. Այսպէս է տուում Տէր Եհովան. Ահա այն օրը, երբոր իմ ժողովուրդն Իսրայէլը ապահով կ'բնակէ, կ'իմանաս, Եւ կ'գաս քո 15 տեղերից՝ հիւսիսի ծայրերիցը՝ դու ինքդ և շատ ժողովուրդներ քեզ հետ, ամենքը ձիեր հեծած, մեծ բազմաթիւնով և շատ զօրքով։ Եւ դու վեր կ'գաս իմ Իսրա- 16 էլ ժողովրդի վերայ իբրև ամպ երկիրը ծածկելու. վերջի օրերումը պիտի լինի. և քեզ պիտի իմ երկրի վերայ բերեմ, որպէս զի ազգերը ինձ ճանաչեն, երբոր ես քեզանով կ'սրբուիմ նորանց աչքի առջև, ով Գոգ։

Այսպէս է տուում Տէր Եհո- 17 վան. Դու նո՞ւ ես որի համար առաջի օրերը տալ եմ իմ ծառաներս՝ Իսրայէլի մարգարէների ձեռովը, որ մարգարէանում էին այն օրերը և տարիները, որ քեզ նորանց վերայ բերեմ։ Եւ այն օ- 18 րը պիտի լինի երբոր Գոգը կ'գայ Իսրայէլի երկրի վերայ, տուում է Տէր Եհովան, իմ բարկութիւնը պիտի բորբոքէ բարձրանայ։ Եւ իմ նախանձովը՝ իմ բարկու- 19 թեան կրակովը խօսեցի, որ այն օրը անշուշտ մեծ խռովութիւն պիտի լինի Իսրայէլի երկրի վերայ։ Եւ պիտի դողան իմ երեսից 20 ծովի ձկները և երկնքի թռչունները և դաշտի գազանները և երկրի վերայ սողացող բոլոր սողուններն և ամեն մարդ որ երկրի երեսին է, և լեռները պիտի քանդուին, և գահավէժ ժայռերը կործանուին և ամեն պարիսպները գետինը պիտի ընկնեն։ Եւ իմ 21 բոլոր լեռանց վերայ նորա դէմ սուր պիտի կոչեմ, տուում է Տէր Եհովան, ամեն մարդու սուրը իր ընկերի դէմ պիտի լինի։

22 Եւ նորա հետ պիտի դատուիմ ժանտախտով և արիւնով և յորդահոս անձրեւ և կարկուտի քարեր և կրակ ու ծծումբ պիտի տեղամ նորա վերայ և նորա գունդերի վերայ և նորա հետ եղող շատ
23 ազգերի վերայ։ Եւ ես պիտի փառաւորուիմ և սրբուիմ և ճանչուիմ շատ ազգերի աչքի առջև, և պիտի իմանան որ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԹ

1 Եւ դու, որդի մարդոյ, մարգարեացիր Գոգի դէմ և ասիր. Այսպէս է ասում Տէր Եհովան. Ահա ես քեզ դէմ եմ, ով Գոգ՝ Ռոշի, Մոսոքի և Թոբէլի իշխան։
2 Եւ ես քեզ ետ պիտի դարձնեմ և քեզ պիտի առնեմ և քեզ վեր հանեմ հիւսիսի ծայրերիցը և քեզ պիտի բերեմ Իսրայէլի լեռանց վերայ։
3 Եւ պիտի զարկեմ աղեղդ ձախ ձեռքիդ և նետդ վայր պիտի գցեմ աջ ձեռքիդ։
4 Իսրայէլի լեռանց վերայ պիտի ընկնես դու ինքդ և քո գունդերը և քեզ հետ եղող ազգերը. ամեն տեսակ թռչուն գիշատիչ թռչնի և դաշտի գազանի
5 կերակուր եմ տուել քեզ։ Դաշտի երեսին պիտի ընկնես, վասն զի ասացի, ասում է Տէր Եհովան։
6 Եւ կրակ պիտի ուղարկեմ Մագոգի վերայ և կղզիներուն ապահով բնակողներուն վերայ, և պիտի իմանան թէ ես եմ Տէրը։
7 Եւ իմ սուրբ անունը պիտի ճանչցեմ տամ իմ Իսրայէլ ժողովրդի մէջ, և իմ սուրբ անունը այլեւս պղծել չեմ տար. և ազգերը կ'իմանան որ ես եմ Իսրայէլում
8 սուրբը եղող Տէրը։ Ահա գալիս է, և կ'կատարուի, ասում է Տէր Եհովան. սա այն օրն է որ ասացի։
9 Եւ Իսրայէլի քաղաքներուն բնակիչները դուրս կ'գան և կրակ կ'վառեն, և կայրեն զէնքերը, և ասպարներով ու վահաններով, աղեղներով ու նետերով, ձեռքի մահակներով և նիզակներով եօթը տարի կրակ կ'անեն։
10 Եւ փայտ չեն կրել դաշտիցը, և փայտ էլ չեն անել անտառներիցը, վասն զի զէնքերով պիտի կրակ անեն, և նորանց աւարները պիտի յափշտակեն և նորանցից կողոպտուները պիտի կողոպտեն, ասում է Տէր Եհովան։

11 Եւ այն օրը կ'լինի որ ես այն տեղ Գոգին տեղ պիտի տամ իրեւ գերեզման Իսրայէլի մէջ անցաւորաց ձորը՝ ծովի արեւելքում. և նա արգիլելու է անցաւորներին, և այնտեղ պիտի թաղեն Գոգին և նորա բոլոր բազմութիւնը, և կ'կոչեն Գոգի բազմութեան ձորը։ 12 Եւ Իսրայէլի տունը պիտի թաղեն նորանց երկիրը մաքրելու համար եօթը ամիս։ 13 Եւ երկրի բոլոր ժողովուրդը պիտի թաղէ, և սա նորանց համար համբաւ պիտի դառնայ այն օրը որ ես կ'փառաւորուիմ, ասում է Տէր Եհովան։ 14 Եւ մարդիկ պիտի ջոկեն որ միշտ մնան գան երկրումը, որոնք մնան եկողների հետ թաղեն երկրի երեսի վերայ մեռածներին նորան մաքրելու համար. եօթն ամսից յետոյ պիտի որոնեն։ 15 Եւ մնան եկողները մնան պիտի գան երկրումը, և երբոր մարդու ոսկորներ տեսան՝ նորա կշտին կոթող պիտի շինեն մինչև որ թաղողները թաղեն նորան Գոգի բազմութեան ձորումը։ 16 Եւ քաղաքի անունն էլ *Համոնա պիտի լինի. և երկիրը պիտի մաքրեն։

17 Իսկ դու, որդի մարդոյ, այսպէս է ասում Տէր Եհովան. Ասիր ամեն թռչնին և դաշտի բոլոր գազաններին. ժողովուեցէք ու եկէք՝ հաւաքուեցէք շուրջանակի իմ զոհի համար որ ես զոհել եմ ձեզ համար՝ մեծ զոհ Իսրայէլի լեռանց վերայ, և միս կերէք ու արիւն խմեցէք։ 18 Զօրաւորների միս կերէք և երկրի իշխանների արիւն խմեցէք՝ խոյերի, գառների, նոխազների, զուարակների, որոնք ամենքը Բասանի պարարտներ են։ 19 Եւ ճարպ կերէք մինչև որ կշտա-

*Բազմութիւն

նաք, և արիւն խմեցէք մինչև որ արբենաք այն զոհիցը որ ես զո-
20 հեցի ձեզ համար։ Եւ կշտացէք իմ սեղանի վերայ ձիերով և կառքերով, զօրաւորներով և ա-
21 մեն պատերազմական մարդով, ասում է Տէր Եհովան։ Եւ ես իմ փառքը պիտի դնեմ ազգաց մէջ և ամեն ազգերը պիտի տես-
նեն իմ դատաստանը որ պիտի անեմ, և իմ ձեռքը որ նորանց
22 վերայ պիտի դնեմ։ Եւ Իսրայէլի տունը պիտի իմանան, որ ես եմ նորանց Տէր Աստուածը այս օրից
23 և յետոյ. Եւ ազգերը պիտի իմանան, որ Իսրայէլի տունը իրանց անօրէնութեանց համար գերի են գնացել, որովհետև ա-
պստամբել են ինձ դէմ, և ես պիտի ծածկեմ իմ երեսը նորան-
ցից, և նորանց պիտի իրանց նե-
րիչների ձեռքը մատնեմ և ամեն-
24 քը սրով պիտի ընկնեն, Նորանց պղծութեանց և նորանց յանցա-
նաց համեմատ պիտի անեմ նո-
րանց, և իմ երեսը պիտի ծած-
կեմ նորանցից։

25 Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Հիմա ետ պիտի դարձնեմ Յակոբի գերութիւնը և պիտի գթամ Իսրայէլի բոլոր տանը, և պիտի նախանձեմ իմ
26 սուրբ անուան համար։ Եւ նո-
րանք պիտի կրեն իրանց նախա-
տինքը և իրանց բոլոր ապստամ-
բութիւնը որ ապստամբեցին ինձ դէմ երբոր ապահով բնակել էին իրանց երկրումը և վախեցնող չը
27 կար։ Երբոր ես նորանց ետ կ'բե-
րեմ ազգերի միջից և նորանց կը ժողովեմ իրանց թշնամեաց եր-
կիրներիցը, և նորանցով կ'սրբը-
ւեմ շատ ազգերի աչքի առջև։
28 Այն ժամանակ նորանք կ'իմանան թէ ես եմ նորանց Տէր Աստուա-
ծը, երբոր նորանց գերի կ'տանեմ ազգերի մէջ և կ'հաւաքեմ նո-
րանց իրանց երկիրը, և նորանցից
29 այլևս այնտեղ չեմ թողիլ։ Եւ այլևս չեմ ծածկիլ իմ երեսը նորանցից. վասն զի իմ Հոգին թափած կ'լինեմ Իսրայէլի տան վերայ, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. Խ

Մեր գերութեան քսանևհինգ 1
տարում՝ տարուայ սկզբի ամի տասնին, քաղաքի յաղթուելուց յետոյ տասնուչորսերորդ տար-
ում, նոյն օրը Տիրոջ ձեռքը ե-
ղաւ ինձ վերայ և ինձ տարաւ այնտեղ։ Աստուծոյ տեսիլքներո- 2
վը ինձ տարաւ Իսրայէլի երկիրը և ինձ մի շատ բարձր լեռան վե-
րայ դրաւ. և նորա վերայ մի քա-
ղաքի շինուածքի պէս բան կար դէպի հարաւին կողմը։ Եւ ինձ 3
տարաւ այնտեղ. և ահա մի մարդ որի երևոյթը պղնձի երևոյթի պէս էր, և մի քթանի լար ձեռ-
քին և չափի եղէգը. և նա կանգ-
նած էր դրան մէջ։ Եւ այն մար- 4
դը խօսեց ինձ հետ. Որդի մար-
դոյ, մտիկ տուր աչքերովդ, և ականջներովդ լսիր, և ուշադրու-
թիւն արա այն ամենին ինչ որ ես քեզ ցոյց եմ տալու, վասն զի քեզ ցոյց տալու համար բեր-
ուեցար դու այստեղ. պատմիր ամեն ինչ որ տեսնում ես Իսրա-
յէլի տանը։

Եւ ահա մի պարիսպ կար տա- 5
նիցը դուրս շրջապատ. և այն մարդու ձեռքին չափի եղէգը վեց կանգուն էր՝ մէկ կանգուն և մի ձեռքի լայնութիւն. և նա չա-
փեց շէնքի լայնութիւնը մէկ ե-
ղէգ և նորա բարձրութիւնը մէկ եղէգ։

Եւ եկաւ այն դուռը որի եր- 6
ը դէպի արևելք էր և նորա աս-
տիճաններովը վեր ելաւ և չափեց դրան սեմը մէկ եղէգ լայն, և մէկ սեմը մէկ եղէգ լայն։ Եւ 7
մէկ խուցը մէկ եղէգ երկայն և մէկ եղէգ լայն էր. և խուցերի միջտեղերը հինգ կանգուն. և դր-
բան սեմը դրան արտի կշտին տաճարի կողմից մէկ կանգուն։
Եւ չափեց դրան արտը տաճարի 8
կողմից մէկ եղէգ։ Եւ չափեց դր- 9
բան արտը ութ կանգուն և նո-
րա դրանդիքը երկու կանգուն, և դրան արտը դէպի տաճարը։
Եւ դրան խուցերը դէպի արևելք՝ 10
երեքը այս կողմից երեքը այն կող-

մից . նորանց երեքի չափն էլ մէկ
էր . և դրանդինների չափն էլ մէկ
էր այս կողմին և այն կողմին :
11 Եւ չափեց դրան մուտքի լայնու-
թիւնը տասը կանգուն . դրան եր-
կայնութիւնը տասներեք կան-
12 գուն : Եւ մէկ սահման կար խու-
ցերի առջև մէկ կանգուն , և մէկ
կանգուն էր սահմանը մեա կող-
մից . և խուցը վեց կանգուն էր
այս կողմից և վեց կանգուն մեա
13 կողմից : Եւ չափեց դուռը մէկ
խցի կտուրից մինչև դ—ի կտու-
րը՝ լայնութիւնը քսան և հինգ
կանգուն , մուտք մուտքի դէմ :
14 Եւ դրանդիքը վաթսուն կանգուն
արաւ , և մինչև դրանդեացը հաս-
նում էր գաւիթը դրան շուրջը :
15 Եւ դուրսի դրան երեսից մինչև
ներսի դրան սրահի երեսը հիսուն
16 կանգուն : Եւ վանդակապատ պա-
տուհաններ խցերի մօտ և նորանց
դրանդեաց մօտ դրան ներսումը
շուրջանակի . և այսպէս էին սր-
բատները , շուրջանակի պատու-
հաններ ներսի կողմից . և դրանդ-
եաց վերայ արմաւենիներ :
17 Եւ ինձ տարաւ դուրսի գաւի-
թը , և ահա սենեակներ և գա-
ւիթի համար շինուած շուրջա-
նակի քարայատակ . երեսուն սեն-
18 եակ քարայատակի վերայ . Եւ
քարայատակը դռների կշռին էր
դռների երկայնութեան դէմ ու
դէմ , այնքան տակի քարայատա-
19 կը : Եւ նա չափեց լայնութիւնը
տակի դրան առաջից մինչև ներ-
քին գաւթի երեսը ներսից հար-
իւր կանգուն , արևելքից և հիւ-
սիսից :
20 Եւ այն դուռը որը երեսով
դէպի հիւսիս էր նայում ներսի
գաւթի մօտ՝ չափեց նորա եր-
կայնութիւնը և նորա լայնութիւ-
21 նը : Եւ նորա խուցերը երեքը այս
կողմից և երեքը այն կողմից էին ,
և նորա դրանդիքն ու նորա սր-
բատները առաջի դրան չափին
համեմատ էին՝ հիսուն կանգուն
նորա երկայնութիւնը և լայնու-
թիւնը քսանուհինգ կանգուն :
22 Եւ նորա պատուհաններն ու սր-
բատները և արմաւենիները այն

դրան չափին համեմատ , որի ե-
լեալը դէպի արևելք էր ուղղ-
ուած . և եօթը աստիճանով վեր
էին երթում նորա վերայ , և նորա
սրահները նորանց առջև էին :
23 Եւ մէկ դուռ ներսի գաւթի մօտ
հիւսիսային և արևելեան
դրան դիմացը . և նա չափեց դր-
նից մինչև դուռ հարիւր կան-
գուն :
24 Եւ ինձ տարաւ հարաւային
կողմը , և ահա մէկ դուռ կար
դէպի հարաւ . և չափեց նորա
դրանդիքը և նորա սրահները նոյն
չափերին համեմատ : 25
Եւ նա պա-
տուհաններ ունէր և նորա սրահ-
ները շուրջանակի այն պատու-
հաններին պէս . հիսուն կանգուն
երկայն և լայնութիւնը քսան և
հինգ կանգուն : 26
Եւ եօթը աստի-
ճան էին նորանով վեր երթելու
համար . և նորա սրահները նո-
րանց առաջից էին , և արմաւե-
նիներ ունէր մէկը այս կողմից
միւսը այն կողմից իր դրանդեաց
մօտ :
27
Եւ ներսի գաւթի դուռը դէ-
պի հարաւ էր , և չափեց դռնից
դուռ դէպի հարաւ հարիւր կան-
գուն : 28
Եւ ինձ տարաւ դէպի ներ-
սի գաւիթը հարաւի դրան մի-
ջով , և չափեց հարաւային դու-
ռը նոյն չափերին համեմատ : 29
Եւ
նորա խուցերը և դրանդիները ու
սրահները շուրջանակի՝ հիսուն
կանգուն երկայն և լայնութիւնը
քսանևհինգ կանգուն : 30
Եւ շուր-
ջանակի սրահները երկայն էին
քսանևհինգ կանգուն և լայնու-
թիւնը հինգ կանգուն : 31
Եւ նորա
սրահները դէպի գաւթին դուրսի
էին , և արմաւենիներ կային նո-
րա դրանդեաց վերայ . և ութ
աստիճան ունէր վեր երթելու հա-
մար :
32
Եւ ինձ տարաւ ներսի գաւիթը
դէպի արևելք , և չափեց դուռը
նոյն չափերին համեմատ : 33
Եւ նո-
րա խուցերը և դրանդիքն ու սր-
բատները նոյն չափերին համե-
մատ , և նա պատուհաններ ու-
նէր և նորա սրահները շուրջա-
նակի՝ երկայնութիւնը հիսուն

կանգուն և լայնութիւնը քսան
34 և հինգ կանգուն։ Եւ նորա սը-
բահները դէպի դուրսի դաւիթը,
և նորա դրանդեաց վերայ արմա-
ւենիներ այս կողմից և այն կող-
մից. և ութ սանդման ունէր վեր
ելնելու համար։
35 Եւ ինձ տարաւ հիւսիսային
դուռը և չափեց նոյն չափերին
36 համեմատ. նորա խուցերը, դը-
բանդիքը և սրահները. և նա պա-
տուհաններ ունէր շուրջանակի
երկայնութիւնը հիսուն կանգուն
և լայնութիւնը քսանհինգ կան-
37 գուն։ Եւ նորա դրանդիքը դէպի
դրսի դաւիթն էին, և արմաւե-
նիներ կային նորա դրանդեաց վե-
րայ այս կողմից և այն կողմից,
և ութ սանդման ունէր վեր ել-
նելու համար։
38 Եւ մէկ սենեակ կար, և նորա
մուտքը դռների դրանդեաց մօտ.
այնտեղ լուանում էին ողջակէ-
39 զը։ Եւ դրան սրահումը երկու
սեղան կար այս կողմից և երկու
սեղան այն կողմից նորանց վերայ
ողջակէզը և մեղքի պատարագը
և յանցանքի պատարագը մոր-
40 թելու համար։ Եւ դրսի կողմին
դէպի հիւսիսային դրան մուտքը
վեր գնալու մօտ երկու սեղաններ
կային, և միւս կողմին որ դրան
սրահի մօտ էր երկու սեղաններ։
41 Չորս սեղան այս կողմից և չորս
սեղան միւս կողմից դրան կողմին,
ութ սեղան՝ որ նորանց վերայ
42 մորթեն։ Եւ չորս սեղան ողջա-
կէզի համար, տաշած քարից՝
երկայնութիւնը մէկ ու կէս կան-
գուն և լայնութիւնը մէկ ու կէս
կանգուն և բարձրութիւնը մէկ
կանգուն. դորանց վերայ պէտք է
դնէին այն գործիքները, որոնցով
մորթում էին ողջակէզը և զոհը։
43 Եւ կրկնակորթեր՝ մէկ ձեռքի
չափ՝ պնդացրուած էին տան վե-
րայ շուրջանակի, և սեղանների
վերայ զոհի միսը։
44 Եւ ներսի դրան դրսի կողմից
երգեցողների սենեակներն էին,
ներսի դաւիթում, որ հիւսիսա-
յին դրան կողքին էր, և նորանց
երեսները դէպի հարաւ էին, մէկը
արևելեան դրան կողքին երեսը
դէպի հիւսիս։ Եւ նա ասաց ինձ.
Այս սենեակը որի երեսը դէպի
հարաւ է՝ տաճարի պահպանու-
թիւնը անող քահանաներինն է։
Եւ այն սենեակը որի երեսը դէ-
պի հիւսիս է՝ սեղանի պահպա-
նութիւնն անող քահանաներինն
է։ Նորանք Սադովկի որդիքն են,
որոնք Ղևիի որդիներից մօտենա-
ում են Տիրոջը՝ նորան ծառայե-
լու։
Եւ չափեց դաւիթը՝ երկայնու- 47
թիւնը հարիւր կանգուն և լայ-
նութիւնը հարիւր կանգուն՝ քա-
ռակուսի, և սեղանը տաճարի
առջև։
Եւ ինձ տարաւ տաճարի սրա- 48
հը և չափեց սրահի դրանդիքը
հինգ կանգուն մէկ կողմից և հինգ
կանգուն միւս կողմից. և դրան
լայնութիւնը երեք կանգուն մէկ
կողմից և երեք կանգուն միւս
կողմից։ Սրահի երկայնութիւնը 49
քսան կանգուն և լայնութիւնը
տասնումէկ կանգուն, և այն աս-
տիճաններով միասին որոնցով
վեր էին ելնում. և դրանդեաց
մօտ սիւներ կային՝ մէկը մէկ կող-
մից և մէկը միւս կողմից։

ԳԼ. ԽԱ.

Եւ ինձ տարաւ տաճարը, և չա- 1
փեց դրանդիքը՝ վեց կանգուն լայն
այս կողմից և վեց կանգուն լայն
այն կողմից խորանի լայնութիւ-
նովը։ Եւ մուտքի լայնութիւնը 2
տասը կանգուն, և դրան կողքե-
րը՝ հինգ կանգուն այս կողմից և
հինգ կանգուն միւս կողմից, և
չափեց նորա երկայնութիւնը՝ քա-
ռասուն կանգուն, և լայնութիւ-
նը քսան կանգուն։
Եւ ներս մտաւ, և չափեց մուտ- 3
քի դրանդիքը՝ երկու կանգուն, և
մուտքը վեց կանգուն, և մուտքի
լայնութիւնը եօթը կանգուն։
Եւ չափեց նորա երկայնութիւ- 4
նը քսան կանգուն և լայնութիւնը
քսան կանգուն տաճարի երեսովը.
և ինձ ասաց. Սա սրբութեանց
սրբութիւնն է։

5 Եւ չափեց զսուրբ զվէմ կանգնոն, և տեսին մի անուանի բարեմեծութիւնք, որոնք շուրջանակի սուրբ շուրջն էին, չորս կանգնոն էր։
6 Եւ անուանիներքն երկու՝ անուանի անուանիի վերայ երեսանն անդամ՝ և մեծամեծ էին սուրբ սրտիւ որ ինամած էր շուրջանակի անուանիներն հանուր ոգի բռնելին, բայց իրանք բռնած չէին սուրբ
7 սրտիցդ։ Եւ բարեմեծ՝ և բազմադարձակեալ՝ էին անուանիներքն մէջտեղի վերայ, ուսն ի ուսոյ վերայ էր, ուսն ի ուսոյ վերայ շուրջանակի սուրբ շուրջն, որոց հանուր բարեմեծ էր սուրբ ոգին վերայ էր, և սրտիցդ էր ուսոյ վերայ. և սրտիցդ էր ուսոյ վերայ. և սրտիցդ չորիցդ բարձրանալ էր, վերի
8 չորիցդ մէջտեղի։ Եւ անոյշ սուրբ ձայն բարձրանալեաւ շուրջանակի, անուանիներն հնարքն սրտիցդ ուխտ եղէդ՝ վեց կանգնոն մինչև
9 չորսուրբ։ Անուանիներն սուրբ բարեմեծութիւնք գործոյն հինգ կանգնոն, և ճոպանքն անուանիներն
10 մէջն էր ներսիցդ։ Եւ գ— անուանիներն մէջն բարեմեծութիւնք քսան կանգնոն էր շուրջանակի սուրբ
11 շուրջդ։ Եւ անուանիներն մուտքերքն գործ մեծագոյն սուրբ էին, ուխտ մուտքն գործ հիւսիս, և ուխտ մուտքն գործ հարաւ, և մեծագոյն սուրբ բարեմեծութիւնք հինգ կանգնոն շուրջանակի։
12 Եւ անջրպետն գործոյն շէնքերքն գործ սրբանման կողմն՝ եօթանասուն կանգնոն և շէնքն սուրբ հինգ կանգնոն բոլոր շուրջանակի, և նորա երկայնութիւնք
13 հինգսուն կանգնոն։ Եւ չափեց սուրբ՝ երկայնութիւնք հարաւ կանգնոն, և անջրպետն և շէնքն և նորա սուրբ հարաւ կանգնոն երկայն։
14 Եւ նորա դէմքն երկայն՝ Եւ սուրբ երեսաց բարեմեծութիւնք և անջրպետն գործ սրբանման էր հարաւ կանգնոն։
15 Եւ չափեց շէնքն երկայնութիւնք նոր անջրպետն գործոյն, որ նորա ետեւն կողմն էր, և նորա խորշերքն այս կողմէ և միւս կողմէ հարաւ կանգնոն. և ներսիցդ սուրբ
16 ճարտարք և դահլիճ սրտիցդ՝ Սև-

մերք և վանդակապատ սրտիցդ հանդերքն և խորշերքն շուրջանակի անուանիներն մուտքերքն յերեսաց, ուսերքն սուրբ սրտիցդ՝ պատուհանք մինչև սրտիցդ ճամկուած էին։ Սուրբ վերայ 17
փեղք թէ ներսն մինչև սուրբ թէ դուրսն բոլոր սրտի վերայ շուրջանակի ներսիցդ և դրսիցդ չափերով։
Եւ քերովբէներ ու սրմանիներ 18
ներ էին շինուած, և մէկ սրմանի ունէր երկու քերովբէներէ մէջտեղը, և քերովբէն երկու երես ունէր։ Եւ մարդոյ երեսն դէմ սրմանիին մէկ կողմէն և առիւծի երեսն դէմ սրմանիին մէկ կողմէն՝ շինուած էր բոլոր սուրբ հանուր շուրջանակի։ Գետնիցդ մինչև 20
ճակտի վերեր շինուած էին քերովբէներն և սրմանիներն և սուրբ սրտիցդ վերայ։ Ճակտի 21
դռներքն քառակուսի էին, և սրտիցդ երեսն նոյն երեւոյթն ունէր։
Սեղան փայտիցդ էր՝ երեք կան- 22
գնոն բարձրութիւնք և նորա երկայնութիւնք երկու կանգնոն և անկիւններ ունէր. և նորա ,յատակն ու պատերքն փայտիցդ էին։ Եւ ինձ ասաց. Սա է Տիրոջ առջև եղող սեղանն։ Եւ սուրբ 23
ու սրբատեղի երկու դուռ ունէին։ Եւ դուռներքն երկու փեղկանի 24
էին, երկու ծալուած փեղկերով, երկու փեղկեր մէկ փեղկին և երկու փեղկեր միւսին։ Եւ նորանց 25
վերայ պատերքն սուրբ դռներքն վերայ քերովբէներ և սրմանիներ էին շինուած ինչպէս որ շինուած էր պատերքն վերայ. և փայտանման կոպտիկ դրսի կողմից։ Եւ վանդակապատ սրտիցդ 26
հաստաքներ և սրմանիներ այս կողմէն և այն կողմէն սրտիցդ կողքերքն և սուրբ և փայտամածք կողմնակներն։

ԳԼ. ԽԲ

Եւ ինձ դուրս տարաւ դուռն 1
դռանցն որ դէպի հիւսիս ճանա-

պարհսոյը և ինձ բերուս այն անեղակը, որ անջրպետս ասջև էր և որ դէպի հիւսիսային կողմն
2 չէնքսն ասջևն էր, Եւ մին հարիւր կանգուն երկարութեան ասջևը՝ մասրը դէպի հիւսիս որի լայնու-
3 թիւնը յիսուն կանգուն էր։ Ներսի պատին դէմ քսան կանգուն ասջևը և պատի պատին դէմ
4 յատակի ասջևը խորշ խորշին դէմ եռաստիճ. և անեղակներն դիմաց մի ճեմելիք՝ տասն կանգուն լայն
ներսեվից և մի ճանապարհ՝ մէկ կանգուն. և նորանց մասրերը
5 դէպի հիւսիս։ Եւ վերի անեղակները կարճ էին, վասն զի խորշները նորանցից տեղ էին առնում
այսինքն շէնքսն տակի և միջի յատ-
6 կերիցը։ Վասն զի եռաստիճ էին նորանք և սիւներ չունէին պատիցն պատին նման. նորա համար նեղասում էին տակի և միջի յարկերից դեանից։
7 Եւ մի պատ կար դրսից անեղակներն կշտամբ դէպի պատին պատիցն եւ կողմնակի անեղակներն դիմաց՝ երկայնութիւնը յիսուն կանգուն։
8 Վասն զի դրսի պատիցն անեղակներն երկայնութիւնը յիսուն կանգուն էր, և սոքա առաջի դի-
9 մաց հարիւր կանգուն էր։ Եւ այս անեղակներն տակին մի մասրէ մտնելովից նորանց ներս գնալու համար դրսի պատիցն կողմից։
10 Պատին պատի լայնութիւնովը դէպի արևելք անջրպետս ասջև և շէնքն ասջև անեղակներ էին։
11 Եւ դէպի նորանց ասջև մի ճանապարհ կար դէպի հիւսիս երես անեղակներն երևոյթին պէս թէ նորանց երկայնութեան թէ լայնութեան և նորանց ելքերի և նորանց ձևերի և մասրերի նկատմանն, Եւ նոյնպէս էլ անեղակներն մասրերը որանք դէպի հարաւն էին, մի մասր կար ճանապարհի դիմին այսինքն դէմ՝ ու դէմ եղող պատի ասջևի ճանապարհի՝ որ եղեան ճանապարհի դիմին երկար պատիս էին։
13 Եւ ինձ ասաց. Հիւսիսի անեղակներն և հարաւի անեղակներն որանք անջրպետի ասջևն են, նորանք ասեր անեղակներն են, ուր որ Տիրոջը մօտեցող քահանայքը պիտի ուտեն սահմանաւորապէս
14 նաներըը. այնտեղ պիտի դնեն սահմանաւորապէս նաներըը և հագի քնանան և մեղքի պատարագն ու յանցանքի պատարագը. վասն զի այնտեղը սուրբ է։ Երբոր քա-
15 հանայքը սուրբ կ՚ելնեն, պիտի չելնեն սրահէն սրբութեան դուրս չգան սուրբ անեղակներն, մինչև որ իրենց պաշտօնի հագերը պիտի դնեն իրանց պաշտօնեայ հագերը որոնցով նորանք պաշտօն են մատուցանում, վասն զի նորանք սուրբ են. ուրիշ հագուստներ հագնեն և մօտենան ժողովրդի վերաբերեալ բաներին։
16 Եւ վերջացրեց ներսի տան չափերը, և ինձ դուրս տարաւ արևելեան Ճանապարհովը, որի երեսը դէպի արևելք էր, և նորան չափեց շուրջանակի։ Նա չափեց արևելեան կողմը չափի եղէգովը՝ հինգ
17 հարիւր եղէգ չափի եղէգովը շուրջանակի։ Չափեց հիւսիսային կողմի՝ հինգ հարիւր եղէգ չափի եղէգովը։
18 Չափեց հարաւային կողմի՝ հինգ հարիւր եղէգ չափի եղէգովը։
19 Դարձաւ դէպի արևմտեան կողմի՝ չափեց հինգ հարիւր եղէգ չափի եղէգովը.
20 Չորս կողմերը չափեց նորան. նա շուրջանակի պատեր ունէր, երկայնութիւնը հինգ հարիւր և լայնութիւնը հինգ հարիւր, սուրբ և անասուրը բաժանելու համար։

Գ.Լ. Խ.

1 Եւ ինձ տարաւ դարձ դէպի արևելք
2 դէպի արևելք նայող դուռը։ Եւ ահա Իսրայէլի Աստուծոյ փառքը դալիս էր արևելքի ճանապարհից։ և նորա ձայնը շատ ջրերի ձայնի նման էր, և երկիրը լուսաւորուեցաւ նորա փառքովը։ Եւ տե-
3 սիլքը նման էր այն տեսիլքին, որ տեսել էի երբեմն իմ տեսած տեսիլքը, երբոր գալիս էի քաղաքը աւերելու. և տեսիլքը նման էր այն տեսիլքին, որ տեսել էի Քեբար գետի մօտ. և ես վայր ընկայ երեսիս վերայ։

4 Եւ Տիրոջ փառքը եկաւ տա-
նը այն դրան ճանապարհով, որի
5 երեսը դէպի արեւելք է։ Եւ Հո-
գին վեր առաւ ինձ և տարաւ
ներսի գաւիթը, և ահա Տիրոջ
6 փառքը լցրել էր տունը։ Եւ լսե-
ցի մի խօսող դէպի ինձ մարդը,
և մի մարդ կանգնել էր կշտիս։
7 Եւ ասաց ինձ. Որդի մարդոյ,
բե՛ք իմ աչքո՛ւս տեղը և ոտքերի
դարշապարների տեղը, ուր որ ես
պիտի բնակեմ Իսրայէլի որդ-
կանց մէջ յաւիտեան. և այլ ևս
պիտի չպղծեն Իսրայէլի տունը
իմ անունը՝ իրանք և իրանց թա-
գաւորները իրանց պոռնկութիւն-
ներովը և իրանց թագաւորների
դիակներովը իրանց բարձրանալով
8 ներսումը, իրանց ահերը իմ ա-
հերի կող և իրանց դրանդները իմ
դրանդաց մօտ դնելով, և պա-
տը միայն իմ և նրանց միջ տեղ,
և նրանք պղծեցին իմ սուրբ ա-
նունը իրանց արած պղծութիւն-
ներովը, և ես սրտմտեցի նրանց
9 իմ բարկութեամբ։ Հիմա թող
հեռացնեն իրանց պոռնկութիւն-
ները և իրանց թագաւորների դիակ-
ները ինձանից, և ես յաւիտեան
նրանց մէջ կբնակեմ։

10 Դու, որդի մարդոյ, պատմիր
Իսրայէլի տանը այդ տունը, որ
ամաչեն իրանց անօրէնութիւն-
ներից. և թող չափեն գաղափա-
11 րը։ Եւ եթէ ամաչեն բոլոր ի-
րանց արածներից, տանը ձևը
և նորա կարգաւորութիւնը և նո-
րա ելքերը և մուտքերը և նորա
բոլոր ձևերը, և նորա կանոնները
և նորա բոլոր ձևերը և նորա բո-
լոր օրէնքները հանկարծ նո-
րանց, և գրիր նրանց աչքի ա-
ջև, որ նորանք պահեն նորա բո-
լոր ձևը, և նորա բոլոր կանո-
12 նները և կատարեն նորանց։ Սա է
տաճարի օրէնքը. լեռանը գլխին
նորա բոլոր գաւառը շուրջանակի
սրբութիւնն է. ահա սա է տա-
ճարի օրէնքը։

Եւ սրանք են սեղանի չափե-
րը կանոնաւոր, (կանոնաւոր՝ մէկ
կանոնաւոր և մէկ մուճ) և խորքը
մէկ կանոնաւոր քառորդ և մէկ կա-
նոնաւոր եզր և մէկ կանո-
նաւոր գոգ ամէն կողմը, և սա է
սեղանի ճակատը։ Եւ նա ասաց
ինձ. Մարդոյ որդի, այսպէս է ասում
Տէր Եհովան. Սրանք են սեղանի
կանոնները նորան շինելիս, որ նորա վրայ
պղծութիւն անողներն և նորա
վրայ արիւն սրսկեն։

Եւ տուր Ղեւտացի քահանա-
յապետին, որը Սադոկի սերունդից
պիտի են որ մօտենում են ինձ,
ասում է Տէր Եհովան, ինձ ծա-
ռայելու համար, արջառներից
մէկ պատուական ցեղի զոհ սրբա-
համար։ Եւ նորա արիւնից և
թող նորա չորս եղջիւրների և
տանեն չորս անկիւնների և
սրբի և բոլոր նորան։ Եւ տա-
մեղաց պատարագի զոհատուր
տեղը պիտի այրեն տաճարի
տեղից դուրս, սրբարանից
առաջ։ Եւ այսօր պատարագի զոհատուր
պիտի չուտեն, այլ կրակով պիտի
այրեն։ Եւ երկրորդ օրը մի կատարեալ արջառ
նորան պատարագի զոհատուր
արածներից, և սրբի սեղանը
սրբարանից, երբ որ նորան սրբե-
ցիր մեղքերի զոհատուրով։ Եւ
վերայ ոչ մնան և նորանց ո-
ջնակէս մնան Տիրոջը։ Ս-

թէն օր մուտացանեն օրը մէկ նախատ մեղքի պատրուակ համար, և սրջառներից մի պատրուակ և սխարներից մի խոց, կատարեսցեն պիտի մուտացրուին։ Եւ թէն օր բանաձեւն անեն ասելոյն և նորան արկեն, և նորան նախեն։ Եւ երբոր այդ օրերը վերջանան, այն ժամանակ ումեքրոց օրը և այնուհետև էլ պէտք է քահանաները ասգանի վերայ մուտացանեն ձեր ողջակէզները և ձեր խաղաղութեան զոհերը. և ես պիտի ընդունեմ ձեզ, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԽԴ

1 Եւ ինձ ես գարձրից գուբան արբառանի պրան ճանապարհով, որ նայում է դէպի արևելք. և
2 նա կզպուած էր։ Եւ Տէրը ասաց ինձ. Այս գուռը կզպուած պիտի մնայ, չպիտի բացուի, նորանով պիտի չմտնեն, վասն զի Խորհելի Տէր Աստուածը մուտ նորանով, ուրեմն կզպուած պիտի
3 մնայ։ Իսկ իշխանը ինքը իրրև իշխան նստի նորա մէջ ուտելու Տիրոջ առջև. պրան արբանի ճանապարհով պիտի մտնի, և նոյն ճանապարհով գուրս պիտի գայ։
4 Եւ ինձ ասրու հիւսիսային պրան ճանապարհով տան առջևը, և տեսայ, և ահաւասիկ լցրել էր Տիրոջ փառքը Տիրոջ տաճար. և
5 ես ընկայ երեսիս վերայ։ Եւ Տէրը ասաց ինձ. Որդի մարդոյ, ուշադրութիւն արա և տես աչքերովդ և ականջներովդ լսիր ամեն ինչ որ խոսում եմ քեզ հետ Տիրոջ տան բոլոր կանոնների և նորա բոլոր օրէնքների համար. և ուշդ դարձրու տանը մուտքին արբառանի բոլոր
6 ելքերովը։ Եւ ասիր ապստամբներին՝ այսինքն Խորհելի տանը. Այսպէս է ասում Տէր Եհովան. Բաւական է ձեզ համար ձեր բոլոր պղծութիւնները, ով Խորհելի տուն,
7 էլի տուն, Որ դուք ներս էք բերում օտարների որդիքը՝ սրտով անթլփատներին մարմնով անթլփատներին, որ իմ սրբութիւնը պղծեն ինձ համար, դուք իմ հացը, ճարպը և արիւնը մուտացրիք. և նորանք դժրեցին իմ ուխտը իրանց բոլոր պղծութիւններով։
8 Եւ չպահեցիք իմ սուրբ բաները պահպանութիւնը, այլ իմ սրբութիւնը պահպանութիւն համար ձեզ համար պահպանեցին ձեր տեղը։
9 Այսպէս է ասում Տէր Եհովան. Ոչ մի օտարազգի սրտով անթլփատ և մարմնով անթլփատ պիտի չմտնէ իմ սրբարանը բոլոր օտարազգիներից, որոնք Խորհելի որդիների մէջ են։
10 Այլ և Ղեւացիները էլ, որոնք հեռացան ինձանից Խորհելի ինձ դէմ սրած մոլորութիւնով մոլորուելով և իրանց կուռքերին հետևելով, պիտի իրանց անօրէնութիւնները կրեն։
11 Եւ սպասաւորներ պիտի լինեն իմ սրբարանում տան դռները պահող և տանը ծառայողներ. նորանք պէտք է մորթեն ողջակէզը և զոհը ժողովրդի համար. և նորանք պէտք է կանգնեն նորանց առջև նորանց ծառայելու համար։
12 Որովհետև նորանց ծառայութիւն արին իրանց կուռքերի առջև, և Խորհելի տան համար անօրէնութեան գայթակղութիւն եղան, դորա համար ձեռս բարձրացրի նորանց վերայ, ասում է Տէր Եհովան, որ կրեն իրանց անօրէնութիւնները։
13 Եւ պէտք է ինձ չմօտենան ինձ համար քահանայութիւն անելու և իմ բոլոր սուրբ բաները և սրբութեան սրբութիւնը համար. այլ իրանց նախատինքը պիտի կրեն և իրանց արած պղծութիւնները։ Սակայն
14 նորանց պիտի տանը պահպանութիւնը պահպանողներ շինեմ նորա բոլոր ծառայութեան համար, և այն ամեն բանի համար որ նորանում պիտի կատարուի։
15 Բայց Ղեւացի քահանաները՝ Սադովկի որդիքը, որոնք պահեցին իմ սրբարանի պահպանութիւնը Խորհելի որդիքը ինձանից

ապատամբելու ժամանակ, նորանք պիտի մօտենան ինձ որ ինձ ծառայեն, և պիտի կանգնեն իմ առջև ինձ ճարպ և արիւն մատուցանելու, ասում է Տէր Եհովան։ 16 Նորանք պիտի իմ արբառանքը մանեն, և նորանք պիտի մօտենան իմ սեղանին ինձ ծառայելու համար, և պիտի պահպանեն իմ պահպանութիւնը։ 17 Եւ կ'լինի որ նորանք ներսի գաւիթի դռներում մտնելիս պէտք է կտաւի հանդերձներ հագնեն, և նորանց վերայ բուրդ պիտի չը գայ, նորանք ներսի գաւիթի դռներում և ներսում ծառայելու ժամանակ։ 18 Կտաւի ապտրոշներ պիտի լինեն նորանց գլխին և կտաւի վարտիքներ՝ նորանց ազդրանքների վերայ. քրտնեցնող գործ պիտի չկապեն։ 19 Եւ դուրսի գաւիթը ժողովրդի մօտ՝ պէտք է այն հանդերձները հանեն որանցով նորանց պաշտօն են մատուցանում, և նորանց պիտի սուրբ անուամբները դնեն, և ուրիշ հանդերձներ հագնեն, որպէս զի ժողովուրդը չսրբեն իրանց հանդերձներովը։ 20 Եւ իրանց գլուխը պիտի չսափրեն և իրանց վարսերը չերկարացնեն. իրանց գլխի մազերը պէտք է անպատճառ խուզեն։ 21 Եւ բնաւ գինի պիտի չխմեն քահանաները երբոր ներքին գաւիթն են գալիս։ 22 Եւ որևէայրին ու արձակուածը իրանց համար կին չառնեն, այլ Իսրայէլի տան սերունդից եղող կոյսը. կամ այն որևէայրին որ մի քահանայից որևէայրի է մնացել, առնեն։ 23 Եւ իմ ժողովրդին ասողներցնեն սուրբի և անսուրբի տարբերութիւնը, և պիղծի ու մաքուրի տարբերութիւնը պիտի հասկացնեն նորանց։ 24 Եւ դատերի վերայ նորանք պէտք է կենան դատելու համար իմ դատաստաններովս և նորանց դատեն իմ օրէնքովը և իմ կանոններովս, և իմ տօները պիտի պահեն և իմ շաբաթներն սրբեն։ 25 Եւ մեռած մարդի մօտ պիտի չը գնան որ չպղծուին, այլ միայն իր հօր և մօր, որդու և աղջկան, եղբօր և քրոջ մօտ գնան որ մարդու չէ դնացած, որ պղծուին։ 26 Եւ մէկը իր մաքրուելուց յետոյ եօթը օր համարէ իր համար։ 27 Եւ նա որ բարձրանալ գաւթի դուռները սրբարանում պաշտօն մատուցանելու մտած օրը, նա պիտի մատուցանէ իր մեղաց պատարագը, ասում է Տէր Եհովան։

28 Եւ սա նորանց համար ժառանգութիւն լինի՝ ես եմ նորանց ժառանգութիւնը. և նորանց կալուածք չտաք Իսրայէլում. ես եմ նորանց կալուածքը։ 29 Հացի ընծան, մեղքի պատարագը և յանցանքի պատարագը նորանք պիտի ուտեն. և Իսրայէլի մէջ ամեն նուիրուածը նորանցը պիտի լինի։ 30 Եւ ամեն բանի բոլոր երեխայրներին առաջինը, և ամեն բանի բոլոր ընծան ձեր բոլոր ընծաներից քահանաներինը լինի. և ձեր ցորենեղէններն երեխայրինները տուէք քահանային, որ օրհնութիւնը հանդչէ քո տան վերայ։ 31 Ոչ մի մեռած կամ գազանորեկ, թէ թռչուն թէ անասուն, պիտի չուտեն քահանաները։

ԳԼ. ԽԵ

1 Եւ երբոր վիճակ գցէք երկրի վերայ ժառանգելու, Տէրոջ համար մի սուրբ նուէր պիտի նուիրէք երկրիցը. երկայնութիւնը քառնեհինգ հազար երկայն, և լայնութիւնը տաս հազար. սա սուրբ է շուրջանակի բոլոր սահմաններում։ 2 Սորանից պէտք է լինի սրբարանի համար հինգ հարիւրով հինգ հարիւր քառակուսի շուրջանակի. և յիսուն կանգուն նորա արուարձանը շուրջանակի։ 3 Եւ այս չափածից չափիր երկայնութիւնով քառն և հինգ հազար և լայնութիւնով տաս հազար. և նորանում պիտի լինի սրբարանը՝ ամենասուրբ տեղը։ 4 Սա սուրբ պիտի լինի երկրիցը սրբարանին ծառայող քահանա-

ների համար, որոնք մօտենում են Տիրոջը ծառայելու, և նորանց համար անելի ուժ պիտի լինի, և ասէր՝ արդարանալ համար։

5 Եւ քառնասնիւոք հազար ընկոյզնաթիւնով և տասը հազար լծընաթիւնով պիտի լինի Վևտացիներին, որոնք ծառայում են տանը, իրրև իրանց կալուածք. նա քան անենակ։

6 Եւ քաղաքին կալուածք տուր հինգ հազար լծի, և երկրագնութիւնը քառնհինգ հազար արբարանի ընծայի կշռին. սա բոլոր Իսրայէլի տան համար պիտի լինի։

7 Իսկ իշխանին՝ արբարանի կալուածքի և քաղաքի կալուածքի այս կողմից և այն կողմից, արբարանի ընծայի դիմաց և քաղաքի կալուածքի դիմաց, ծովի կողմից դէպի արևմուտք և արևելեան կողմից դէպի արևելք. և երկայնութիւնով ժառանգութեանց մէկի մասով արևմտեան սահմանից

8 մինչև արևելեան սահմանը։ Իրրև երկիր նորա կալուածքը լինի սա Իսրայէլի մէջ. և այլ ևս չհարբատահարեն իմ իշխանները իմ ժողովրդին. և երկիրը տան Իսրայէլի տանը նորանց ցեղերի համեմատ։

9 Այսպէս է ասում Տէր Եհովան. Բաւական է ձեզ, ով Իսրայէլի իշխաններ, դրկանքն ու յափշտակութիւնը հեռացրէք. և իրաւունք ու արդարութիւն արէք. վեր առէք ձեր հարստահանքը իմ ժողովրդի վերայից,

10 ասում է Տէր Եհովան։ Արդար կշիռք և արդար արդու և արդար մար ունեցէք։

11 Արդուն և մարը մէկ չափ լինեն, որպէս զի մարը քառի տասներորդը պարունակէ և արդուն էլ քառի տասներորդը պարունակէ. քառի համեմատ լինի նորա չափը։

12 Եւ սիկղը քսան կերտէ, ձեր մինաը քսան սիկղ, քառնհինգ սիկղ և տասնհինգ սիկղ լինի։

13 Սա է ձեր մատուցանելու ընծան՝ մէկ վեցերորդ արդու մէկ քառ ցորենից, և մէկ վեցերորդ

14 արդու մէկ քառ գարուցը։ Եւ իւղի կանոնը՝ մէկ մար իւղից մէկ

մարի տասներորդը մէկ քառից. կոր տասը մարից որ մէկ խօմէր է, վասն զի տասը մարը մէկ խօմէր է։ Եւ մէկ ոչխար խաշնէքից 15 երկու հարիւրից Իսրայէլի ջրարբի հօտերէն իրրև հացի ընծայ և ողջակէզ և խաղաղութեան զոհ, որ նորանց համար քաւութիւն լինի, ասում է Տէր Եհովան։

Երկրի բոլոր ժողովուրդը պար- 16 տական են այս ընծան Իսրայէլում իշխան եղողին։

Եւ իշխանի վերայ պիտի լինեն 17 ողջակէզները և հացի նուէրը և թափելու ընծան տօներին և ամսագլուխներին և շաբաթներին և Իսրայէլի տան բոլոր տօներին. նա պէտք է մատուցանէ մեղաց պատարագը և հացի նուէրը և ողջակէզը և խաղաղութեան զոհերը Իսրայէլի տան համար քաւութիւն անելու համար։

Այսպէս է ասում Տէր Եհո- 18 վան. Առաջի ամսի առաջինին վեր առ մի կատարեալ զուարակ արջառներից, և նորան մեղքի պատարագ արա արբարանի համար։ Եւ քահանան առնէ մեղաց 19 պատարագի արիւնից և քսէ տան դրանդեացը և սեղանի չորս անկիւններին և ներսի գաւթի դրան դրանդեացը։ Եւ այսպէս պիտի անես ամսի 20 եօթին ախալուսած և անմիտ մարդու համար, և տան համար քաւութիւն արէք։

Առաջի ամսի տասնուչորսերորդ 21 օրը ձեզ համար զատիկ լինի, եօթն օր ատն. բաղարջ պիտի ուտուի։ Եւ այն օրը իշխանը իր 22 համար և երկրի բոլոր ժողովրդի համար մէկ զուարակ մատուցանէ իրրև մեղաց պատարագ։ Եւ 23 ատն եօթն օրը Տիրոջը ողջակէզ մատուցուի եօթը զուարակ և եօթը կատարեալ խոյ իւրաքանչիւր օր եօթն օրերը. իսկ մեղաց պատարագ այծերից մի նոխազ իւրաքանչիւր օր։ Եւ մէկ արդու 24 հացի նուէր մէկ զուարակի համար և մէկ արդու մէկ խոյի համար մատուցնուի. և մէկ հինէն իւղ մէկ արդուի համար։ Եօթն- 25

երորդ ամսուայ ամէն տասն և հինգերորդ օրը տօնի ժամանակին այսպէս անուն եօթն օր թէ մեզմէ պատարագը թէ ողջակէզը թէ հացի նուէրը թէ իւղը։

ԳԼ. ԽԶ

1 Ա.յսպէս է ասում Տէր Եհովան. Ներսի գաւթի դէպի արևելք նայող դուռը կղպուած մնայ գործի վեց օրը, իսկ շաբաթ օրը բացուի. և ամսագլուխ օրն էլ 2 բացուի։ Եւ իշխանը մտնէ դրսից դրան սրահի ճանապարհով և կանգնէ դրան դրանդեաց մօտ, և քահանաները մատուցանեն նրա ողջակէզը և նորա խաղաղութեան զոհերը, և նա երկրպագութիւն անէ դրան սեմի վերայ և դուրս գայ, և դուռը կ'կղպուի 3 մինչև իրիկուն։ Եւ երկրի ժողովուրդը երկրպագութիւն անէն դրան մուտքում շաբաթներին և ամսագլուխներին Տիրոջ առջև։

4 Եւ իշխանի ողջակէզը որ պիտի մատուցանէ Տիրոջը՝ շաբաթ օրը վեց կատարեալ գառն և մէկ 5 կատարեալ խոյ։ Եւ իրրև հացի նուէր մէկ արդու մէկ խոյին, և գառների համար իրրև հացի նուէր ձեռքերը եկածը, և մէկ հինէն իւղ իւրաքանչիւր արդուի 6 համար։ Ամսագլուխ օրը արջառներից մէկ ղուարակ կատարեալ և վեց գառներ և մէկ խոյ, որ 7 պէտք է կատարեալ լինին։ Եւ մէկ արդու մէկ ղուարակի համար և մէկ արդու մէկ խոյի համար մատուցնուի իրրև հացի նուէր, և գառների համար՝ ձեռքին հասածը. իսկ մէկ հինէն իւղ մէկ արդուին։

8 Եւ իշխանը գալիս դրան սրահի ճանապարհով պիտի գայ և նոյն 9 ճանապարհով դուրս գայ։ Եւ երկրի ժողովուրդը տօներին Տիրոջ առջևը գալիս հիւսիսային դրան ճանապարհով երկրպագելու համար մտնողը հարաւային դրան ճանապարհով դուրս գայ, և հարաւային դրան ճանապարհով մտնողը հիւսիսային դրան ճանապարհով դուրս գայ, իր ներս մտած դրան ճանապարհով ետ չդառնայ, այլ դիմացինովը դուրս գայ։ Եւ իշխանը 10 նորանց մէջ նորանք մտնելիս մտնէ, և դուրս գալիս դուրս գայ։

Եւ տօներին ու հանդիսաւոր 11 օրերին հացի նուէրը մէկ արդու մէկ ղուարակին և մէկ արդու մէկ խոյին. և գառներին ձեռքինը եկածը. իսկ մէկ հինէն իւղ մէկ արդուին։ Եւ երբոր իշխանը մէկ 12 կամաւոր ողջակէզ կամ կամաւոր խաղաղութեան զոհ մատուցանէ Տիրոջը, այն ժամանակ նորա համար բանան դէպի արևելք նայող դուռը, և նա մատուցանէ իր ողջակէզը և իր խաղաղութեան զոհը ինչպէս որ մատուցանում է շաբաթ օրը, և դուրս գայ, և դուռը կղպեն նորա դուրս գալուց յետոյ։

Եւ ամեն օր մէկ տարեկան կա- 13 տարեալ գառն ողջակէզ մատուցանես Տիրոջը. ամեն առաւօտ մատուցանես նորան։ Եւ նորա 14 համար հացի նուէր մատուցանես ամեն առաւօտ մէկ վեցերորդ արդու, և մէկ երրորդ հինէն իւղ նաշխի հետ խառնելու համար իրրև հացի նուէր Տիրոջը. սա մշտական յաւիտենական կանոն է։ Եւ մատուցանեն գառը և 15 հացի ընծան և իւղը ամեն առաւօտ՝ մշտնջենական ողջակէզ։

Ա.յսպէս է ասում Տէր Եհովան. 16 Երբոր իշխանը իր որդիներից մէկին ընծայ տայ, նա նորա ժառանգութիւնն է՝ նորա որդիները լինի. նա նորանց ժառան- 17 գական կալուածքն է։ Եւ երբոր իր ժառանգութիւնից ընծայ տայ իր ծառաներից մէկին, դա նորանը լինի մինչև թողութեան տարին. յետոյ ետ դառնայ իշխանին. նորա ժառանգութիւնը միմիայն իր որդիներինը պիտի լինի։ Եւ իշխանը պիտի չառնէ ժո- 18 ղովրդի ժառանգութիւնից, նորանց զրկելով իրանց կալուածքից. իր կալուածքից ժառանգութիւն տայ իր որդիներին, որպէս զի իմ ժողովուրդը չցրուի ամեն մէկն իր կալուածքից։

19 Եւ ինձ տարաւ դրան մօտ եղող մուտքովը դէպի քահանաների սուրբ սենեակները, որ ուղղուած են դէպի հիւսիս. և ահա այնտեղ մէկ տեղ կար ետքի կողմերումը դէպ՝ արևմուտք։ Եւ ասաց ինձ. Սա այն տեղն է ուր որ քահանաները պիտի եփեն յանցանքի պատարագի և մեղքի պատարագի միսը, ուր որ հացի նուէրը պիտի թխեն, որպէս զի դուրս չտանեն գաւիթը, որ ժողովուրդը սրբեն։

21 Եւ ինձ դուրսը տարաւ գաւթի գաւիթը և ինձ մեծ ածեց գաւիթի չորս անկիւնները. և ահա գաւիթի ամեն մէկ անկիւնում մէկ գաւիթ կար։ Գաւիթի չորս անկիւններումը շրջապատ գաւիթներ կային քառասուն կանգուն երկայն և երեսուն լայն. այն չորս անկիւնները մէկ չափով էին։ Եւ նորանց չորսի շուրջն էլ շուրջանակի մէկ կարգ չինուած կար. և եփարաններ էին շինուած կարգերի տակին շուրջանակի։ Եւ ինձ ասաց. Սորանք եփողների տուներն են, ուր որ տանը պաշտօնեաները պիտի եփեն ժողովրդի զոհը։

ԳԼ. ԽԷ

1 Եւ ինձ ետ դարձրեց տան մուտքը, և ահա ջուրեր էին դուրս գալիս տան սեմի տակից արևելեան կողմից. վասն զի տան երեսը դէպի արևելքն էր. և ջուրերը իջնում էին տան աջ կողմի տակին սեղանի հարաւային կողմից։ 2 Եւ ինձ դուրս տարաւ հիւսիսային դրան ճանապարհով և շուռ ածեց դուրսի ճանապարհով դէպի դուրսի դուռը դէպի արևելք նայող ճանապարհով. և ահա ջուրեր էին բղխում աջ կողքից։ 3 Մարդը դէպի արևելք դուրս գնալիս մի լար ունէր ձեռքին, և հարիւր կանգուն չափեց, և ինձ անց կացրեց ջրերովը. ջուրերը 4 մինչև գարշապարներս էին։ Եւ նա չափեց հազար էլ, և ինձ անց կացրեց ջրերովը. ջուրերը մինչ ծունկերս էին, և չափեց հազար էլ, և ինձ անց կացրեց. ջուրերը մինչև մէջքս էին։ Եւ չափեց 5 հազար էլ. մի գետ որով չկարողացայ անց կենալ, վասն զի ջուրերը յորդել էին, լողալու ջուրեր էին, մի այնպիսի գետ որ չէր կարելի անց կենալ։

Եւ ինձ ասաց. Տեսա՞ր ես, 6 որդի մարդոյ. և ինձ տարաւ մանն ածեց գետի եզերքին։ Եւ ես մանն 7 էի գալիս, ահա գետի եզերքին խիստ շատ ծառեր կային այս կողմից և այն կողմից։ Եւ ինձ 8 ասաց. Սոյն ջուրերը դուրս են գալիս դէպի արևելեան գաւառը և իջնում են անապատը և գընում են ծովը. դուրս են տարվում ծովը, որ առողջանան նորա ջուրերը։ Եւ պիտի լինի որ ամեն կեն- 9 դանի շունչ, որ շարժում է այն ամեն տեղերում ուր որ այն կըրկնակի գետը գնում է, պիտի ապրէ, և ձուկը խիստ շատ պիտի լինի. վասն զի այս ջուրերը այնտեղ պիտի գնան, և նորանք պիտի բժշկուին, և ամենքը պիտի կենդանանան ուր որ գետը գնայ։ Եւ պիտի լինի որ նորա վերայ 10 ձկնորսներ պիտի կանգնեն, Ենգադիից մինչև Ենեգլայիմ ուռկաններ փռելու տեղ պիտի լինի. նորանց ձկները ըստ տեսակին են լինելու, մեծ ծովի ձկերին չափ խիստ շատ են լինելու։ Նորա 11 տիղմերը և նորա ճահիճները չեն բժշկուելու, աղի համար պիտի մնան։ Եւ գետի վերայ նորա ե- 12 զերքին պիտի այս կողմից և այն կողմից ամեն տեսակ պտղաբեր ծառեր բուսանեն. նորանց տերևը չի թառամիլ և նորանց պտուղը չի վերջանալ. ամեն ամիս նորից պտուղ պիտի տայ, վասն զի նորա ջուրերը սրբատանից են դուրս գալիս. և նորանց պտուղը ուտելու համար է և նորանց տերևները՝ բժշկութեան համար։

Այսպէս է ասում Տէր Եհո- 13 վան. Սա է այն երկրի սահմանը, որը պիտի ժառանգէք Իսրայէլի տասներկու ցեղերին համեմատ. Յովսէփին երկու բաժին։ Եւ նո- 14 րան ամեն մարդ իր ընկերին պէս

պիտի ժառանգէ, որի համար իմ ձեռքը երդմամբ բարձրացրի որ տամ ձեր հայրերին. և այս երկիրը ձեզ պիտի ընկնէ իբրև
15 ժառանգութիւն։ Եւ սա է երկրի սահմանը. դէպի հիւսիսային կողմը մեծ ծովից ելնելով ճանա-
16 պարհը մինչև Սեդադ, Եմաթ, Բերոթա, Սիբրայիմ, որ Դամասկոսի սահմանի և Եմաթի սահմանի մէջտեղն է, մինչև Ասերը որ
17 Աբրանի սահմանն է։ Եւ սահմանը լինի ծովից Ասար-Ենան՝ Դամասկոսի սահմանը, և հիւսիսի նկատմամբ դէպի հիւսիս և Եմաթի սահմանը և հիւսիսային
18 կողմը։ Եւ արևելեան կողմը Աբրանի միջից՝ և Դամասկոսի միջից և Գաղաադի միջից և Իսրայէլի երկրի միջից՝ Յորդանանը. սահմանիցը չափեցէք մինչև արևելեան ծովը. սա արևելեան կողմը։
19 Եւ հարաւային կողմը դէպի հարաւ Թամարից մինչև Կադէսի վիճաբանութեան ջուրերը, հեղեղատովը մինչև մեծ ծովը. և դէպի հարաւային կողմը սա է հա-
20 րաւը։ Եւ արևմտեան կողմը՝ մեծ ծովը սահմանիցը մինչև Եմաթի դիմացը. սա է արևմտեան կողմը։
21 Եւ բաժանեցէք այս երկիրը ձեզ համար Իսրայէլի ցեղերի վե-
22 րայ, Եւ պիտի լինի որ վիճակով պիտի բաժանէք նորան ձեզ համար և ձեր միջում պանդխտացող օտարականների համար, որոնք ձեր մէջ որդիք են ծնել, և նորանք ձեզ համար բնակիչների պէս պիտի լինեն Իսրայէլի որդիքանց մէջ. նորանք ձեզ հետ պիտի ժառանգեն Իսրայէլի ցեղերի
23 մէջ։ Եւ ո՛ր ցեղի մէջ որ օտարականը պանդխտացել է, այնտեղ պիտի տաք նորա ժառանգութիւնը, ասում է Տէր Եհովան։

ԳԼ. ԽԸ

1 Եւ սորանք են ցեղերի անուննե-
րը։ Հիւսիսի ծայրից Եթլոնի ճանապարհի մօտովը դէպի Եմաթ, և Ասար-Ենան՝ Դամասկոսի սահմանը դէպի հիւսիս մինչև Եմաթի մօտը. սա պէտք է լինի արևելեան և արևմտեան կողմը. Դանը՝ մէկ։ Եւ Դանի սահմանի 2
մօտ արևելեան կողմից դէպի արևմտեան կողմը. Ասերը՝ մէկ։ Եւ 3
Ասերի սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Նեփթաղիմը՝ մէկ։ Եւ Նեփթա- 4
ղիմի սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Մանասէ՝ մէկ։ Եւ Մանասէի 5
սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Եփրեմը՝ մէկ։ Եւ Եփրեմի սահմանի 6
մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Ռուբէնը՝ մէկ։ Եւ Ռուբէնի սահմանի մօտ արև- 7
ելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Յուդան՝ մէկ։

Եւ Յուդայի սահմանի մօտ ա- 8
րևելեան կողմից մինչև արևմտեան կողմը այն ընծան լինի, որ պիտի նուիրէք. քսանևհինգ հազար եղէգ լայն, և երկայնութիւնը բաժիններից մէկին չափ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. և սրբարանը նորա մէջ լինի։ Այն ընծան՝ որ պիտի նուի- 9
րէք Տիրոջը, երկայնութիւնը քսանևհինգ հազար և լայնութիւնը տասն հազար լինի։ Եւ սո- 10
րանցը պիտի լինի սուրբ ընծան այսինքն քահանաներին. դէպի հիւսիս քսանևհինգ հազար, և դէպի արևմուտք լայնութեամբ տասը հազար, և դէպի արևելք լայնութեամբ տասը հազար, և դէպի հարաւ երկայնութեամբ քսանևհինգ հազար եղէգ. և Տիրոջ սրբարանը նորա միջումը լինի. Սադովկի որդիանցից սըր- 11
բուած քահանաներինը լինի, որոնք կատարել են իմ պահպանութիւնը, և չեն մոլորուել երբ որ մոլորուեցան Իսրայէլի որդիքը, ինչպէս որ Ղեւտացիքը մոլորուեցան։ Եւ նորանցը պիտի 12
լինի մէկ ընծան երկրի նուէրքից իբրև սուրբերը Ղեւտացոց սահմանների մօտ։

Եւ Ղեւտացիները լինին քահա- 13
նաների սահմանի կշռին՝ քսանևհինգ հազար երկայնութեամբ և

լայնութեամբ տասն հազար. բոլոր երկայնութիւնը քսան և հինգ հազար և լայնութիւնը տասն հազար: 14 Եւ պիտի չծախեն նորանից և պիտի չփոխեն, և երկրի երախայրին չէն անց կացնեն, վասն զի սուրբ է Տիրոջ համար:

15 Եւ այն քսանևհինգ հազարի մօտ լայնութիւնով մնացած հինգ հազարը անսուրբ պիտի լինի քաղաքի համար, բնակութեան համար և արուարձանի համար. և 16 քաղաքը նորա մէջ լինի: Եւ սորանք են նորա չափերը՝ հիւսիսային կողմը չորս հազար հինգ հարիւր, և հարաւային կողմը չորս հազար հինգ հարիւր, և արևելեան կողմից չորս հազար հինգ հարիւր և արևմտեան կողմից չորս 17 հազար հինգ հարիւր: Եւ քաղաքի արուարձանը էր դէպի հիւսիս երկու հարիւր հիսուն, և դէպի հարաւ երկու հարիւր հիսուն, և դէպի արևելք երկու հարիւր հիսուն, և դէպի արևմուտք երկու 18 հարիւր հիսուն: Եւ երկայնութեամբ մնացածը սուրբ ընծայի կշտովը տասը հազար դէպի արևելք և տասը հազար դէպի արևմուտք, (որ սուրբ ընծայի կշտին է) և նորա բերքը կերակուր լինի քաղաքի ծառայողներին: 19 Եւ քաղաքին ծառայողները պէտք է Իսրայէլի բոլոր ցեղերիցը լինին: 20 Բոլոր ընծան քսան և հինգ հազար քսան և հինգ հազարով քառակուսի ընծայեցէք սուրբ ընծան իբրև քաղաքի կալուածք: 21 Եւ մնացածը իշխանինը լինի սուրբ ընծայի և քաղաքի կալուածքի այս կողմից և այն կողմից, ընծայի քսան և հինգ հազարի առջև մինչև արևելեան սահմանը, և դէպի արևմուտք քսան և հինգ հազարի առջև մինչև արևմտեան սահմանը դէպ բաժիններուն կշտին իշխանինը լինի: Սա է սուրբ ընծան, և տաճարի 22 սրբարանը նորա մէջտեղը: Եւ Ղեւտացոց կալուածքից և քաղաքի կալուածքից իշխանի բաժնի մէջտեղը Յուդայի սահմանի և Բենիամինի սահմանի մէջը իշխանինը լինի:

23 Եւ մնացած ցեղերը. արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Բենիամինը՝ մէկ: 24 Եւ Բենիամինի սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Սիմէոնը՝ մէկ: 25 Եւ Սիմէոնի սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Իսաքարը՝ մէկ: 26 Եւ Իսաքարի սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Զաբուղոնը՝ մէկ: 27 Եւ Զաբուղոնի սահմանի մօտ արևելեան կողմից մինչև արևմտեան կողմը. Գադը՝ մէկ: 28 Եւ Գադի սահմանի մօտ հարաւային կողմից մինչև հարաւ պէտք է սահման լինի Կադէսի վիճարանութեան ջուրը հեղեղատովը մինչև մեծ ծովը: 29 Սա է այն երկիրը որ վիճակով պիտի բաժանէք Իսրայէլի ցեղերին. և սորանք են նորանց բաժինները, ասում է Տէր Եհովան:

30 Եւ սորանք են քաղաքի ելքերը. հիւսիսային կողմից չորս հազար հինգ հարիւր չափ: 31 Եւ քաղաքի դուռները Իսրայէլի ցեղերի անուններին համեմատ պիտի լինի. երեք դուռ դէպի հիւսիս, Ռուբէնի դուռը՝ մէկ. Յուդայի դուռը՝ մէկ. Ղևիի դուռը՝ մէկ: 32 Եւ արևելեան կողմին չորս հազար հինգ հարիւր, և երեք դուռ. Յովսէփի դուռը՝ մէկ, Բենիամինի դուռը՝ մէկ. Դանի դուռը՝ մէկ: 33 Եւ հարաւային կողմին չորս հազար հինգ հարիւր չափ, և երեք դուռ. Սիմէոնի դուռը՝ մէկ. Իսաքարի դուռը՝ մէկ. Զաբուղոնի դուռը՝ մէկ: 34 Արևմտեան կողմին չորս հազար հինգ հարիւր, նորա դուռները երեք. Գադի դուռը՝ մէկ. Ասերի դուռը՝ մէկ. Նեփթաղիմի դուռը՝ մէկ: 35 Շրջապատը տասնութը հազար ըստ. և քաղաքի անունը այն օրից Եհովայ-շամմա է. (ՅԻՒՆ Տէրը ԿԱՑԱ)

ՄԱՐԳԱՐԻՏՈՒՆ ԴԱՆԻԷԼԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յամին երրորդի թագաւորութեան Յովակիմայ թագաւորին Յուդայ եկն Նաբուքոդոնոսոր թագաւոր Բաբելացւոց յԵրուսաղէմ եւ պատե-
2 րազմեցաւ զնոսա։ Եւ Տէր ետուր ձեռս ի ձեռն Յովակիմայ Յուդայի եւ զսկիհսն տանն Աստուծոյ եւ տարաւ զնոսա յերկիրն Սենաարայ, եւ տանն աստուծոյ իւրոյ ետուր ի գանձս աստուծոյ իւրոյ։
3 Եւ ասաց թագաւորն առ Ասփենազ, որ էր իշխան ներքինեացն, որ բերէր զորդիսն Իսրայէլի եւ զազգս թագաւորական եւ ի
4 նախարարաց՝ մանկունս, զորս ոչ իցէ ընդեղծ եւ գեղեցիկ եւ իմաստասէր եւ հմուտ ամենայն իմաստութեան եւ գիտելի
5 գիտութեանց՝ մանկունս եւ զորս իցէ կարող կալ ի պալատին թագաւորին, եւ ուսուսցէ զնոսա գիրս եւ լեզուս Քաղդէացւոց։ Եւ կարգեաց թագաւորն նոցա
6 պատարագ յամենայնէ ուտելեաց թագաւորին եւ ի գինւոյ նորա, եւ սնուցանել զնոսա ամս երիս, եւ յետ այնորիկ կալ առաջի թագաւորին։
7 Եւ էին ի նոսա յորդիսն Յուդայ Դանիէլ, Անանիա, Միսայէլ եւ Ազարիա։ Եւ ետ նոցա ներքինապետն անուանս նոր, եւ կոչեաց զԴանիէլ՝ Բաղտասար, Անանիա՝ Սեդրաք, Միսայէլ՝ Միսաք եւ Ազարիա՝ Աբեդնագով։
8 Եւ Դանիէլ սրտիւ իւրում զգաստացաւ, զի մի՛ պղծեսցէ զանձն իւր ի պատարագէ թագաւորին եւ ի գինւոյ նորա, եւ խնդրեաց ներքինապետէն,
9 զի մի՛ պղծեսցէ։ Եւ Աստուած Դանիէլի ետ զնա ողորմութիւն եւ գթութիւն առաջի
10 ներքինապետին առնէ։ Եւ ներքինապետն ասէ Դանիէլի՝ Եւ վասն զի՞ երկնչիմ ես զտէր իմ թագաւորն, որ սահման-

ուրիցդ, զի որպէս է ձեր տեսանել զերեսս ձեր տղայոցդ, որ յաղագս ձեր են ի ներքոյ երկնից, եւ դուք դատապարտեսջիք զգլուխս իմ առաջի թագաւորին։ Եւ Դանիէլ ասաց առ Մելսադան, զոր կարգեաց ներքինապետն ի վերայ Դանիէլի, Անանիայի, Միսայէլի եւ Ազարիայի, 11
12 եւ ասէ՝ Փորձեա՛ զծառայս քո տասն աւուրս, եւ տացեն մեզ ընդեղծ եւ ուտիցեմք զհաց եւ արբցուք զջուր, 13
եւ տեսցես զերեսս մեր եւ զերեսս տղայոցն, որ ուտիցեն զբաժինս թագաւորին, եւ որպէս տեսանիցես, արա՛ ընդ ծառայս քո։ 14
Եւ լուաւ նոցա զայսմ բանի եւ փորձեաց զնոսա տասն աւուրս։ Եւ յետ տասն աւուրցն 15
երեւեցան երեսք նոցա գեղեցիկ եւ մարմինք նոցա զուարթ քան զամենայն տղայսն, որ ուտէին զբաժինս թագաւորին։ Եւ Մելսադան 16
առնոյր զբաժինս նոցա եւ զգինի ըմպելեաց նոցա եւ տայր նոցա զհաց։
Եւ Աստուած այս չորեցունց տղայոց 17
գիտութիւն եւ հմտութիւն ամենայն գրոց եւ իմաստութիւն, եւ Դանիէլ տեսանէր ամենայն տեսլեան եւ երազոց։ Եւ ի լցանել 18
զաւուրսն, զոր ասաց թագաւորն տանել զնոսա, ետ զնոսա ներքինապետն առաջի Նաբուքոդոնոսորայ։ Եւ խօսեցաւ թագաւորն 19
ընդ նոսա, եւ ոչ գտաւ ի նոսա ոք նման Դանիէլի, Անանիայի, Միսայէլի եւ Ազարիայի, եւ կացին առաջի թագաւորին։ Եւ ամենայն 20
իմաստութեան հանճարոյ զոր խնդրեաց թագաւորն ի նոսա, գտաւ զնոսա տասնապատիկ քան զամենայն գիրս եւ զհմուտս, որ էին ամենայն թագաւորութեան նորա։

---

*Սելսադան

ած էր նորանից, Թագաւորը նորանից մանաւանդ պերսաքաց էր գտնում իր բոլոր Թագաւորութեան իշխանները եղող մարդերից ու
21 Հնդկաստանցիներից, և Դանիէլը մնաց մինչև Կիւրոս Թագաւորի տարին։

ԳԼ. Բ

1 Եւ նորա թագաւորութեան Թագաւորի երկրորդ տարին Նաբուգոդոնոսորը երազներ տեսաւ և խռովեցաւ նորա հոգին, և նորա քունը գնաց նորանից։
2 Յետոյ Նա Թագաւորը հրամայեց կանչել մոգերին և Հնդկաստանցիներին և կախարդներին ու Քաղդէացիներին, որ Թագաւորին պատմեն նորա երազները. և նորանք եկան ու կանգնեցին Թագաւորի առջև։
3 Եւ Թագաւորն ասաց նորանց. Ես մի երազ տեսայ, և իմ հոգիս խռովեցաւ, որ իմանամ
4 այն երազը։ Եւ Քաղդէացիները ասացին Թագաւորին Քաղդէերէն. Թագաւոր, յաւիտեան կաց, ասա երազը քո ծառաներին, և մենք խնդիրը կ'ասենք։
5 Թագաւորը պատասխանեց և ասաց Քաղդէացիներին. Խօսքը գնաց ինձանից, եթէ դուք չիմացնէք երազը և նորա մեկնութիւնը, կտոր կտոր պիտի շինուիք, և ձեր տուները պղծուին։
6 Բայց եթէ երազը և նորա մեկնութիւնը իմացնէք, ինձանից պարգևներ, ատրճներ և մեծ պատիւ կ'առնուք. ուրեմն երազն ու նորա մեկնութիւնը ինձ իմացուցէք։
7 Նորանք կրկին պատասխանեցին և ասացին. Թագաւորը իւր ծառաներին երազը պատմէ, և մենք կ'իմացնենք նորա մեկնութիւնը։
8 Թագաւորը պատասխանեց և ասաց. Ճշմարիտ գիտեմ ես, որ դուք ժամանակ էք գտնում, որովհետև տեսնում էք որ *խօսքը գնաց է ինձանից։
9 Եթէ երազը ինձ չիմացնէք երազը,

*Բանը

Ձեզ համար մէկ պատճառ կայ. ուստի պէտք պատրաստեցէք ասելու և ապականեալ բան խօսելու իմ առջև, մինչև որ ժամանակը փոխուի. ուրեմն ասացէք ինձ երազը, և ես կ'իմանամ թէ դուք ինձ նորա մեկնութիւնն էլ կ'ասէք։ Քաղդէացիները պատասխանեցին Թագաւորին առջև և ասացին. Երկրի վերայ մարդ չկայ որ կարողանայ Թագաւորի բանը իմացնել. և ոչ մի Թագաւոր մեծ և իշխան ոչ մի բան մի պատահական չի պահանջած ոչ մի մոգից, Հնդկացից և Քաղդէացից։ Եւ այն բանը որ Թագաւորը պահանջում է, դժուար է, և մի ուրիշը չկայ որ Թագաւորի առջև իմացնէ այն բանը մարդկանցից, որոնց բնակութիւնը մսակերների մէջ չէ։
Սորա համար Թագաւորը բարկացաւ և շատ բորբոքուեցաւ և հրամայեց կոտորել Բաբելոնի բոլոր իմաստունները։ Եւ հրամանը դուրս եկաւ, և իմաստունները կոտորում էին. և որոնց Դանիէլին և նորա ընկերներին որ նորանց պատնեն։ Այն ժամանակ Դանիէլը իմաստութիւն և խոհեմութիւն խնդրեց Թագաւորի պահապետ Արիովքից, որ գնաց էր սպանելու Բաբելոնի իմաստունները։ Խօսեցաւ և ասաց Թագաւորի իշխան Արիովքին. Ինչո՞ւ համար է այս խիստ հրամանը Թագաւորի կողմից. այն ժամանակ Արիովք իմացրեց բանը Դանիէլին։ Եւ Դանիէլ մտաւ և խնդրեց Թագաւորից որ ժամանակ տուած լինի, և նա մեկնութիւնը կ'իմացնէ Թագաւորին։ Այն ժամանակ Դանիէլը գնաց տուն, և իմացրեց բանը իր ընկերներին Անանիային, Միսայէլին և Ազարիային, Որ ողորմութիւն խնդրեն երկնքի Աստուածից այս գաղտնիքի համար, որ չկորչուին Դանիէլը և նորա ընկերները Բաբելոնի մնացեալ իմաստունների հետ։
Այն ժամանակ գիշերուայ տեսիլքով գաղտնիքը յայտնեցաւ Դանիէլին։

լին այն գաղանիքը. և Դանիէլն
20 օրհնեց երկնից Աստուծոյն, Դա-
նիէլը խօսեց և ասաց. Օրհնեալ
լինի Աստուծոյ անունը յաւի-
տենից մինչև յաւիտեան, զոր
պիտի իմաստութիւնը և զօրու-
21 նը նորա՛ն է. Նա է ժամա-
նակները և ժամերը փոխողը,
թագաւորներ իջեցնողը և թա-
գաւորներ դնողը. նա է տալիս
իմաստութիւն իմաստուններին,
22 և հանճար՝ գիտնականներին. Նա
է խոր և ծածուկ բաները յայտ-
նողը, որ գիտէ մութի մէջ ե-
զածը, և լոյսը նորա՛ հետ է բը-
23 նակուած. Քեզ, ով իմ հայրերի
Աստուած, օրհնում եմ և փառա-
բանում եմ՛ քեզ՛ որ իմաստու-
թիւն և զօրութիւն տուիր ինձ,
և հիմա ինձ իմացրիր ինչ որ
խնդրել էինք քեզանից, որ թա-
գաւորի բանը մեզ իմացրիր։
24 Ապա որ Դանիէլը մտաւ Ա-
րիովքի մօտ, որին թագաւորը
դահճապետ էր կարգել իմաս-
տուններին կորցնելու Համար.
գնաց և այսպէս ասաց նորան.
Բաբելոնի իմաստուններին մի կոր-
ծանիր. ինձ թագաւորի առջեւ
տար, և ես իմացնեմ մեկնու-
25 թիւնը թագաւորին։ Այն ժա-
մանակ Արիովքը շտապելով Դա-
նիէլին թագաւորի առջեւ տա-
րաւ և նորան այսպէս ասաց.
Թէ Մի մարդ եմ գտել Յուդա-
յի գերիներից, որ պիտի իմացնէ
26 մեկնութիւնը թագաւորին։ Թա-
գաւորը պատասխանեց և ասաց
Դանիէլին, որի անունը Բալտա-
սար էր. Կարո՞ղ ես արդեօք ինձ
իմացնել իմ տեսած երազը և
նորա մեկնութիւնը։
27 Դանիէլը պատասխանեց թա-
գաւորի առջեւ և ասաց. Այդ
գաղտնիքը որ թագաւորը պա-
հանջում է, չեն կարող իմաս-
տունները, հմայողները, մոգերը
և բազդ նայողները թագաւորին
28 իմացնել. Բայց կայ Աստուած
երկնքում՝ գաղտնիքներ յայտ-
նող, և նա յայտնում է Նա-
բուգոդոնոսոր թագաւորին ինչ
որ պիտի լինի յետին օրերում.
երազդ և գլխիդ տեսիլքը քո
անկողնի վերայ սա է. Դու, ով 29
թագաւոր, խորհրդածութիւններ
էիր անում քո անկողնի վերայ թէ
ապագայում ինչ պիտի լինի,
և գաղտնիքներ յայտնողը քեզ
իմացրեց թէ ինչ պիտի լինի,
Նա ինձ, ոչ թէ ամեն ապրողնե- 30
րից ամէն իմաստութիւն ունե-
նալուս Համար, յայտնեցաւ
այս գաղտնիքը, այլ նորա Հա-
մար որ մեկնութիւնը իմացնեմ
թագաւորին, և որ գիտենաս քո
սրտի խորհուրդները։
Դու, ով թագաւոր, տեսար 31
էիր, և ահա մի մեծ արձան.
այդ արձանը մեծ էր և նորա պայ-
ծառութիւնը գերազանց կանգ-
նած քո առջեւ. և նորա երեսը
թէր սոսկալի էր։ Այդ արձանի 32
գլուխը մաքուր ոսկուց էր. նորա
կուրծքը և բազուկները արծա-
թից, նորա միջքն ու երանքները
պղնձից. Սրունքները երկաթից, 33
նորա ոտքերը մէկ մասը երկա-
թից մէկ մասը կաւից։ Դու տես- 34
նում էիր մինչև որ մի քար կտր-
տուեցաւ առանց ձեռքի, և
զարկաւեցաւ պատկերի ոտքերին,
որ երկաթից ու կաւից էին, և
նորանց փշրեց։ Այն ժամանակ 35
փշրուեցան միասին երկաթը, կա-
ւը, պղինձը, արծաթը և ոսկին,
և սեւուռոյ կալերի մէկերին պէս
եղան, և քամին տարաւ նորանց,
և բնաւ տեղ չգտնուեցաւ նո-
րանց Համար. բայց այն քարը,
որ զարկեց պատկերին, մեծ լեռ
եղաւ և լցրեց բոլոր երկիրը։ Սա 36
է երազը, և նորա մեկնութիւնն
ասելք թագաւորի առջեւ։
Դու, ով թագաւոր, թագա- 37
ւորաց թագաւոր ես, զոր որ
երկնից Աստուածը քեզ թագա-
ւորութիւն, կարողութիւն, զո-
րութիւն և պատիւ է տուել,
Եւ ամեն տեղեր ուր որ մարդ- 38
կանց որդիք են բնակում՝ դաշտի
գազանները և երկնից թռչուննե-
րը քո Ձեռքդ է տուել, և քեզ
իշխան է դրել նորանց ամենի վե-
րայ. դու ես նորա այն ոսկի գլ-
լուխը։ Եւ քեզանից յետոյ վեր 39

են կենալու առիչ թագաւորու-
թիւնները քեզանից ցած, և մի
այլ երրորդ թագաւորութիւն
պղնձից, որ կ'տիրէ բոլոր երկրին։
40 Եւ չորրորդ թագաւորութիւնը
պինդ կ'լինի երկաթի նման, քան
որպէս երկաթը փշրում է և
ջարդում ամեն բան, և ապա էլ
այս ամենը կտրտտող երկաթին
41 նման կ'փշրէ և կ'կտրատէ։ Եւ
որ տեսար ոտքերը և մատները մի
մասը բրուտի կաւից, և մի մասը
երկաթից, այդ թագաւորութիւն է լինելու, և
երկաթի պնդութիւնից է նը-
նալու, որովհետև տեսար երկա-
թը ոչնչում կաւի հետ խառնը-
42 ուած։ Եւ ոտքերի մատները մի
մասը երկաթից, մի մասը կաւից՝
— է, Եւ այդ թագաւորութիւնը
մասամբ պինդ է լինելու, և մի
43 մասը փխրուն է լինելու։ Եւ
որ դու տեսար երկաթը խառնը-
ուած ոչնչում կաւի հետ, — է՝
Եւ նորանք խառնուելու են մարդ-
կանց սերունդի հետ, բայց մէկը-
մէկ պիտի չկպչեն, ոնց ինչպէս
երկաթը չխառնուի կաւի հետ։
44 Եւ այդ թագաւորների օրերում
մի երկինից Աստուածը մէկ թա-
գաւորութիւն է վեր կացնելու,
որ յաւիտեան չի ոչնչուիլ, և
նորա սէրութիւնը ուրիշ ազգի
չի տրուիլ. նա պիտի փշրէ և
վերջացնէ այս բոլոր թագաւոր-
ութիւնները, իսկ նա ինքը կ'մը-
45 նայ յաւիտեան։ Որովհետև դու
տեսար որ լեռանիցը մի քար
կտրուեցաւ առանց ձեռքի, և
նա փշրեց երկաթը, պղինձը, կա-
ւը, արծաթը և ոսկին. մեծ Աս-
տուածը իմացրեց թագաւորին,
թէ որտանից յետոյ ինչ է լինե-
լու, և երազը հաստատ է և մեկ-
նութիւնը ապրիլ։

46 Այն ժամանակ Նաբուգոդո-
նոսոր թագաւորը գնաց իր երե-
սի վերայ, և Դանիէլին երկրպա-
գութիւն արաւ, և պնծանքներ ու
անուշահոտ բաներ հրամայեց որ
47 մատուցանեն նորան։ Թագաւորը
պատասխանեց Դանիէլին և ա-
սաց. Ճշմարիտ որ ձեր Աստուածն
է աստուածների Աստուածը և
թագաւորների Տէրը և գաղտնիք-
ների յայտնողը, որովհետև դու
կարողացար յայտնել այս գաղտ-
նիքը։ Այն ժամանակ թագաւորը 48
մեծացրեց Դանիէլին և շատ մեծ
պարգևներ տուաւ նորան, և նո-
րան իշխան դրաւ Բաբելոնի բոլոր
գաւառի վերայ, և Բաբելոնի բո-
լոր իմաստուններին վերայ դիւան-
ապետ իշխան։ Եւ Դանիէլը խնդրեց 49
թագաւորից, և նշանակեց Բա-
բելոնի գաւառը կառավարելու
համար Սադրաքին, Միսաքին և
Աբեդնագովին. և Դանիէլը թա-
գաւորի դրանն էր լինում։

Գ.

Նաբուգոդոնոսոր թագաւորը մի 1
ոսկի արձան շինեց՝ նորա բարձ-
րութիւնը վաթսուն կանգուն,
լայնութիւնը վեց կանգուն. նո-
րան կանգնեցրեց Դէնթոյ դաշտ-
ում Բաբելոնի գաւառում։ Եւ 2
Նաբուգոդոնոսոր թագաւորը ու-
ղարկեց հաւաքել կուսակալնե-
րին, նախարարներին և կառա-
վարիչներին, դիւանապետներին
գանձապետներին, օրէնսդե-
տներին, դատաւորներին և
գաւառների բոլոր իշխաններին,
որ գան Նաբուգոդոնոսոր թա-
գաւորի կանգնեցրած արձանի
նաւակատիքին։ Այն ժամանակ 3
ժողովեցան կուսակալները, նա-
խարարները և կառավարիչները,
դիւանապետները, գանձա-
պետները, օրէնսդէտները, դա-
տաւորները և գաւառների բոլոր
իշխանները Նաբուգոդոնոսոր թա-
գաւորի կանգնեցրած արձանի
նաւակատիքին, և կանգնեցին այն
արձանի առջև, որ կանգնեցրել
էր Նաբուգոդոնոսոր։

Եւ մունետիկը կանչում էր ու- 4
ժով. Ձեզ են ասում, ով ժո-
ղովուրդներ, ազգեր և լեզուներ,
Երբոր լսէք փողի, արնգի, քնա- 5
րի, ջութակի, տաւիղի, տիկի
և ամեն տեսակ նուագարանների
ձայնը, վայր բնկէք և երկրպա-
գութիւն արէք այն ոսկի արձա-

նին, որ կանդնեցրեց Եփրատա-
6 գետում քարէ սեղանը։ Եւ ամէն որ
չքնին և երկրպագութիւն չանէ,
խունկն պիտի ցցուի կրակով բար-
7 բառած Հնոցի մէջը։ Ասելին
երբոր լսեցին բոլոր ժողովուրդ-
ները փողի, պնդի, քնարի, Ջա-
խախի, սամֆոնի, տրիկի և ամէն
տեսակ նուագարանների ձայնը,
քնկնում էին բոլոր ժողովուրդ-
ները, ազգերը և լեզուները և եր-
կրպագութիւն էին անում ոսկի
պատկերին, որ կանդնեցրել
էր Նաբուգոդոնոսոր թագաւորը։
8 Ասում որոշ այր Քաղդէացի
մօտեցան մի քանի Հրեայի
մատնեցին և չարախօսութիւն արին
9 Հրեայի։ Ասացին և ասացին
Նաբուգոդոնոսոր թագաւորին.
10 Թագաւոր կաց, յաւիտեան։ Դու
թագաւոր, հրամայեցիր որ ա-
մէն մարդ, որ լսի ձայնը, փողի,
քնարի, Ջախախի, սամֆոնի, տրի-
կի և ամէն տեսակ նուագարան-
ների ձայնը, քնկնի և երկրպա-
գութիւն էն անում ոսկի
պատկերին, որ կանդնեցրել
11 էր Նաբուգոդոնոսոր թագաւորը։
Եւ ով որ չքնկնի և երկրպագու-
թիւն չանի, պիտի ցցուի կրա-
կով բարբառած Հնոցի մէջը։
12 Մի քանի Հրեայ մարդիկ կան,
որոնց դու պաշտօն ես Բաբելոնի
գաւառի գործերում Շադրա՝
Մեսքաք, Աբդենագո, որ մարդիկ
դու չեն դրել, ով թագաւոր,
քո աստուածներին չեն պաշտում,
և քո կանդնեցրած ոսկի
պատկերին երկրպագութիւն չեն
անում։

13 Այն ժամանակ Նաբուգոդոնոսոր
բարկութեամբ և բորբոքմամբ ա-
սաց բերել Մեսքաքը, Աբդենագոն
և Աբեդնագոն, և այդ մարդիկ բերին
այդ մարդկանց թագաւորի առաջ։
14 Եւ Նաբուգոդոնոսոր խոսեցաւ
պատասխան տուաւ և ասաց։ Ի-
րա՞ւ, ով Մեսքաք, Աբդենագո և
Աբեդնագով, դուք չէք պաշտ-
ում իմ աստուածներին, և իմ կանդ-
նեցրած ոսկի պատկերին երկրպագու-
15 թիւն չէք անում։ Արդ եթէ
պատրաստ էք որ երբ լսէք ձա-
նը, փողի, քնարի, Ջախախի,
սամֆոնի, տրիկի և ամէն տե-
սակ նուագարանների ձայնը,
քնկնէք և երկրպագութիւն անէք իմ շի-
նած պատկերին, բայց եթէ երկր-
պագութիւն չանէք, խունկն պի-
տի ցցուի կրակով բարբառած
Հնոցի մէջը, և ո՞ր աստուածն է
որ ձեզ պատուէ իմ ձեռքից։

16 Եւ Մեսքաքը, Աբդենագոն և Աբե-
դնագոն պատասխանեցին և
ասացին Նաբուգոդոնոսորին. Ով
թագաւոր, մեզ պէտք չունինք
այս բանի մասին քեզ պատաս-
խան տալու։ 17 Ահա մեր Աստու-
ծը, որին մենք պաշտում ենք,
կարող է մեզ պահել կրակով
բարբառած Հնոցից, և քո ձեռ-
քից էլ, ով թագաւոր, նա
մեզ կ'պահէ։ Եւ եթէ ոչ, թող 18
քեզ յայտնի լինի, ով թագա-
ւոր, որ քո աստուածներին մենք չենք
պաշտում և քո կանդնեցրած
ոսկի պատկերին երկրպագութիւն չենք
անում։

19 Այն ժամանակ Նաբուգոդոնո-
սորը լցուեցաւ բարկութեամբ,
և նորա երեսի կերպարանքը փոխ-
ուեցաւ Մեսքաքի, Աբդենագոյի և
Աբեդնագովի վերայ, պատասխա-
նեց և հրամայեց, որ վառեն հ-
նոցը եօթնապատիկ ուժգին քան
եղել էր տաքացած լինելու։ Եւ ուր 20
ամենազօր զօրաւոր մարդիկ
զօրքում էին Նաբուգոդոնոսորի,
կապեցին Մեսքաքին, Աբդենագոյին
և Աբեդնագովին և գցեն
բորբոքուած Հնոցի մէջը։ Այն ժա- 21
մանակ այդ մարդիկ կապեցին հ-
րանց տաբատներով, պատ-
մուճաններով և գլխարկներով
և միւս հագուստներով և գցե-
ցին կրակով բարբառած Հնոցի
մէջը։ Որովհետև հրամանը խոս- 22
ր ստիպող էր և Հնոցը չափա-
զանց վառած էր, այն մարդ-
կանցը, որոնք վեր առին Նաբու-
գոդոնոսորին, Մեսքաքին և Աբեդնագովին,
սպանեց էր կրակի բոցը։ Եւ այս 23
երեք մարդիկ՝ Նաբուգոդոնոսորը, Մես-
քաքը և Աբեդնագովը ընկան կա-
պած կրակով բարբառած Հնոցի մէջը
կապած։

24 Աչի ժամանակ Նաբուգոդոնոսոր ինդամսոր սպել էր և բռնութեամբ վեր կացաւ և խօսեց և ասաց իր խորհրդականներին. Չէ՞ որ մենք երեք մարդ պղծեինք կրակի մէջը կապած. նորանք պատասխանեցին և ասացին թագաւորին. Այո, ով թագաւոր։
25 Նա էլ պատասխանեց և ասաց. Ահա ես չորս մարդ եմ տեսնում արձակուած մեռ են պտիս կրակի մէջը, և վնաս չկայ նորանց վերայ. և չորրորդի կերպարանքը աստուածների որդու է նման։
26 Աչի ժամանակ մօտեցաւ Նաբուգոդոնոսորը կրակի հնոցի դրանը, պատասխանեց և ասաց. Ով Սեդրա՛ք, Միսա՛ք և Աբեդնագո՛, ծառա՛յ Աստուծոյ Ամենա՛բարձրեալ, դուրս եկէ՛ք եկէ՛ք։ Աչի ժամանակ դուրս եկան Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագոյ կրակի մէջից։
27 Եւ ժողովեցան կառավարիչները, նախարարները, և կառավարիչները և թագաւորի խորհրդականները, մինչ տեսին այն մարդկանցը, որ նորանց մարմինների վերայ կրակը չէր տիրել և նրանց գլխի մազը չէր պրսկել և նորանց անդրավարտիքները չէին փոխուել, և կրակի հոտ էլ չէր գար նորանց վերայ։
28 Պատասխան առաւ Նաբուգոդոնոսորը և ասաց. Օրհնեա՛լ է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագոյի Աստուածը, որ ուղարկեց իր հրեշտակին և ազատեց իր ծառաներին, որոնք նորան յուսացին և թագաւորի խօսքը անարգեցին, և իրանց մարմինները տուին, որպէս զի չպաշտեն և չերկրպագեն ոչ մի աստուծոյ, բայց իրանց Աստուածոյն։
29 Եւ ինձանից հրամանք է դուրս գալիս, որ ամեն ժողովուրդ, ազգ և լեզու որ ասէ բան ասէ Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագոյի Աստուծոյ դէմ, պիտի կտոր կտոր լայնասի և նորա տունը պղտնոց պիտի դառնայ, որովհետև չկայ մի ուրիշ աստուած որ կարող լինի այսպէս ազատել։
30 Աչի ժամանակ թագաւորը յա-

ջողեցուց ասաց Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագոյին նահանգի գործերի մէջ։

Գ.Լ. Գ

1 Նաբուգոդոնոսորթագաւորը բոլոր ժողովուրդներին, ազգերին և լեզուներին, որոնք բնակուած են բոլոր երկրի վերայ, գրեց. Խաղաղութիւնը ձեր մէջ յաւելցի։
2 Նշանները և հրաշքները, որ ինձ համար Բարձեալն Աստուած, ինձ երևեցաւ անել է հարմար իմ առջև յայտնել։
3 Նորա նշանները մեծ են, և նորա հրաշքները զօրաւոր են. նորա թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, և նորա իշխանութիւնը ազգէ ազգ է տևում։
4 Ես Նաբուգոդոնոսոր հանգիստ էի իմ տունը, և ծաղկում էի իմ պալատիս մէջ։
5 Բայց տեսայ, որ ինձ վախեցրեց, և խորհուրդներ անկողնիս վերայ, և գլխիս տեսիլքները ինձ խռովեցրին։
6 Եւ ինձանից հրաման դուրս եկաւ, որ իմ առջևը բերեն Բաբելոնի բոլոր իմաստունները, որ ինձ յայտնեն երազի մեկնութիւնը։
7 Աչի ժամանակ եկան մոգերը, հմայողները, Քաղդէացիները և բոլոր գուշակները, և ես երազը տարի նորանց առջև, բայց նորանք ինձ չմեկնեցին մեկնութիւնը։
8 Եւ վերջապէս եկաւ առջևս Դանիէլը, որի անունն է Բաղտասար՝ իմ աստուծոյ անունի պէս, և որի մէջ կայ սուրբ աստուածների հոգին. և ես առջև երազը նորա առջև.
9 Ով Բաղտասա՛ր մոգերի իշխան, որովհետև գիտեմ որ սուրբ աստուածների հոգին կայ քեզանում և ոչ մի գաղտնիք քեզ նեղութիւն չի տալ. երազիս տեսիլքները, որ տեսայ, ա՛ռ և նորա մեկնութիւնը ասա։
10 Եւ իմ գլխի տեսիլքները անկողնիս վերայ ա՛ռ էր. տեսնում էի, և ահա մի ծառ երկրի մէջ և նորա բարձրութիւնը մեծ էր։
11 Աչի ծառը մեծացաւ էր և զո-

բանում, և նորա բարձրութիւնը հասաւ երկինքին, և նա տեսանելում
12 էր մինչև բոլոր երկրի ծայրը։ Նորա տերևները գեղեցիկ էին և նորա պտուղները գօրաւոր. և նորա վերայ կերակուր կար ամենի համար. նորա տակին հովանաւորւում էին դաշտի գազանները և նորա ոստերի վերայ բնակում էին երկնքի թռչունները, և նորանից էր կերակրվում ամեն մարմին։
13 Ես տեսանում էի իմ գլխի տեսիլքներում անկողնիս վերայ, և ահա մի պահապան և մի սուրբ
14 իջաւ երկնքից։ Նա կանչեց ուժով և այսպէս ասաց. Կտրեցէք, և ոստերը կտրեցէք տերևները թօթափեցէք, և պտուղները ցրուեցէք. գազանները փախչեն նորա տակից և թռչունները նորա ոստերից։
15 Բայց նորա արմատի բունը թողեցէք երկրումը, և երկաթի ու պղնձի կապանքով, դաշտի խոտերի մէջ, և երկնքի ցօղովը թրջուի, և նորա բաժինը անասունների հետ լինի երկրի խոտերի մէջ.
16 սրտը մարդկութիւնից փոխուի, և նորան անասունի սիրտ տրուի, և նորա վերայով եօթը ժամանակ անց կենան։
17 Պահապանների վճռովն է պատգամը, և սրբերի խօսքովը՝ խնդիրքը. որպէս զի ապրողները իմանան թէ Բարձրեալն է տիրում մարդկանց թագաւորութեան վերայ, և ում որ ուզում է՝ տալիս է այն, և մարդկանց անարդին դնում է նորա
18 վերայ։ Սա երազը տեսայ ես Նաբուզոդոնոսոր թագաւորս. իսկ դու, Բաղդասար, ասիր մեկնութիւնը, որովհետև իմ թագաւորութեան բոլոր իմաստունները չկարողացան ինձ իմացնել մեկնութիւնը. բայց դու կարող ես, վասն զի քեզանում է սուրբ աստուածների հոգին կայ։

19 Սա՛ն ժամանակ Դանիէլը, որի անունը Բաղդասար էր, մէկ ժամ հիացած մնաց և նորա խորհուրդները նորան խռովեցրին։ Թագաւորը պատասխանեց և ասաց. Ով Բաղդասար, երազը և մեկնութիւնը թող քեզ չխռովեցնէ։ Բաղդասարը պատասխանեց և ասաց. Ով տէր իմ, երազը քեզ ատողներին և նորա մեկնութիւնը քո թշնամիներին։ Այն ծառը որ 20
տեսար, որ մեծացաւ և ուժովացաւ և նորա բարձրութիւնը հասաւ երկինքին, և նա տեսանելում էր բոլոր երկրում, և նորա տե- 21
րևները գեղեցիկ և պտուղը առատ էր, և կերակուր կար նորա վերայ ամենի համար. նորա տակին բնակում էին դաշտի գազանները, և նորա ոստերի վերայ կենում էին երկնից թռչունները. Նա դու ես, ով թագաւոր, որ 22
մեծացար և ուժովացար և քո մեծութիւնը բարձրացաւ և հասաւ երկինքին, և քո իշխանութիւնը հասաւ երկրի ծայրը։ Եւ 23
որ թագաւորը մի պահապան և սուրբ տեսաւ իջնելիս երկնքից որ ասաց. Կտրեցէք ծառը, և ուժերեցէք նորան, բայց նորա արմատի բունը թողեցէք երկրումը, և երկաթի ու պղնձի կապանքով կապուի, դաշտի խոտերումը հաս, և երկնքի ցօղովը թրջուի, և դաշտի գազանների հետ լինի նորա բաժինը, մինչև որ եօթը ժամանակ անց կենան նորա վերայ. Սա 24
է մեկնութիւնը, ով թագաւոր, և Բարձրեալի վճիռն է այդ, որ հասել է իմ տէր թագաւորին։ Եւ քեզ արտաքսելու են մարդ- 25
կանց միջից և դաշտի անասունների հետ պիտի լինի քո բնակութիւնը, և խոտ են ուտեցնելու քեզ արջառների պէս, և երկնից ցօղովը թրջուելու ես. և եօթը ժամանակ է անց կենալու քեզ վերայ, մինչև որ իմանաս թէ Բարձրեալն է տիրում մարդկանց թագաւորութեան վերայ, և որին որ ուզում է՝ տալիս է այն։ Եւ 26
որ ասացին թէ մնայ ծառի արմատի բունը, քո թագաւորութիւնը պէտք է վերահաստատուի քեզ համար այն պատճառով որ հասկացած կ'լինիս որ իշխողը երկնքումն է։ Դորա հա- 27
մար, ով թագաւոր, թող իմ խրատը քեզ հաճոյ երևայ, և քո

մեղքերը արդարութիւնով գէն գցիր, և քո անօրէնութիւններդ ողորմելով, եթէ երկայն պէտք է լինի քո խաղաղութիւնդ։
28 Այս ամենը պատահեց Նաբու-
29 գոդոնոսորի թագաւորին։ Տասներկու ամսից յետոյ ճեմում էր թագաւորական պալատի վերայ
30 որ Բաբելոնում է։ Թագաւորը պատասխանեց և ասաց. Ահա այն մեծ Բաբելոնը, որ ես թագաւորութեան տուն եմ շինել իմ մեծ զօրութեամբը և իմ մեծութեան
31 փառքի համար։ Խօսքը դեռ թագաւորի բերանումն էր, երկնքից մի ձայն իջաւ. Թէ Քեզ են ասում, ով Նաբուգոդոնոսոր արքայ, թագաւորութիւնդ գնաց քեզ-
32 նից։ Եւ մարդկանցից քեզ պիտի արտաքսեն և դաշտի անասուններուն հետ պիտի լինի քո բնակութիւնը, խոտ են ուտեցնելու քեզ արջառների պէս. և եօթը ժամանակ է անց կենալու քեզ վերայ մինչև որ իմանաս թէ Բարձրեանն է տիրում մարդկանց թագաւորութեան վերայ, և ում
33 որ ուզում է՝ տալիս է այն։ Նոյն ժամում կատարուեցաւ խօսքը Նաբուգոդոնոսորի վերայ. և մարդկանց միջից արտաքսուեցաւ, և խոտ էր ուտում արջառների պէս, և երկնքի ցօղովը թրջվում էր նորա մարմինը մինչև որ նորա մազերը երկարացան ինչպէս արծիւներինը, և նորա ըղունգները թռչուններինի պէս։
34 Եւ այն օրերից յետոյ ես Նաբուգոդոնոսորս աչքերս բարձրացրի դէպի երկինքը, և խելքս ինձ վերայ եկաւ և Բարձրեալին օրհնեցի, և գովեցի և փառաւորեցի յաւիտեան կենդանի եղողին, որի իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է և նորա թագաւորութիւնը դարէ
35 դար։ Եւ երկրիս բոլոր բնակիչները ոչինչի պէս են համարվում, և իր ուզածին պէս է անում երկնից զօրքովը և երկրի բնակիչներովը, և մէկը չկայ որ զարկէ նորա ձեռքին և նորան ասէ.
36 Ինչ ես անում։ Այն ժամանակ խելքս ինձ վերայ եկաւ, և իմ թագաւորութեան փառքը, իմ պատիւը և իմ մեծ վայելչութիւնը եկաւ ինձ վերայ. և իմ խորհրդականներն և իմ մեծամեծները որոնեցին ինձ, և հաստատուեցայ իմ թագաւորութեան վերայ, և չափազանց վեհափառութիւն տրուեցաւ ինձ։
37 Արդ ես Նաբուգոդոնոսոր գովում, բարձրացնում և փառաւորում եմ երկնից թագաւորին, որովհետև նորա բոլոր գործքերը ճշմարտութիւն և նորա ընթացքը իրաւունք է, և որովհետև ամբարտաւանութեամբ վարուողներին նա կարողանում է ցածացընել։

Գլ. Ե

1 Բաղդասար թագաւորը մեծ հացկերոյթ ըրաւ իր մեծամեծներից հազարի համար, և այն հազարի առջև գինի խմեց։
2 Բաղդասարը, երբոր գինին ճաշակել էր, հրամայեց որ բերեն այն ոսկի և արծաթի անօթները, որոնք վեր էր առել իր հայրը Նաբուգոդոնոսորը Երուսաղէմի տաճարից, որ խմեն նորանցով թագաւորը և նորա մեծամեծները, նորա կանայքը և նորա հարճերը։
3 Այն ժամանակը բերին այն ոսկի անօթները որ վեր էին առել Երուսաղէմ եղող Աստուծոյ տաճարից, և նորանցով խմեցին թագաւորը և նորա մեծամեծները, նորա կանայքը և նորա հարճերը։
4 Գինին խմում էին և գովում ոսկի և արծաթի, պղնձի, երկաթի, փայտի և քարի աստուածները։
5 Նոյն ժամում դուրս եկան մարդու ձեռքի մատներ և գրեցին աշտանակին հանդէպ թագաւորական պալատի պատի ծեփի վերայ, և թագաւորը տեսաւ այն ձեռքի թաթը որ գրում էր։
6 Այն ժամանակ թագաւորի գոյնը փոխուեցաւ, և նորա խորհուրդները նորան խռովեցրին, և նորա մէջքի յօդերը լուծվում էին, և

նորա ծունկերը ակղմկու էին
7 խփուամ։ Թագաւորը ազաղակեց
ուժով որ բերեն հմայողներին,
քաղդէացիներին և բազդ նայողնե-
րին. Թագաւորը պատասխանեց
և ասաց Բաբելոնի իմաստուննե-
րին. Ով որ կարդայ այս գրուած-
քը և մեկնութիւնը ինձ իմացնէ,
նա ծիրանի պիտի հագնէ և ոսկի
մանեակ նորա պարանոցին, և
թագաւորութեան մէջ երրորդ
8 իշխան պիտի լինի։ Այն ժամա-
նակ եկան թագաւորի բոլոր ի-
մաստունները, բայց չկարողացան
գրուածքը կարդալ և մեկնու-
9 թիւնը իմացնել թագաւորին։ Այն
ժամանակ Բազդատար թագաւորը
սաստիկ խռովեցաւ, և նորա գոյ-
նը փոխուեցաւ նորա վերայ, և
նորա մեծամեծները ապշամփեցին։
10 Թագուհին խնջոյքի տունը ե-
կաւ թագաւորի և նորա մեծա-
մեծների խօսքի պատճառովը.
թագուհին պատասխանեց և ա-
սաց. Արքայ, յաւիտեան կաց,
քու խորհուրդները քեզ չվաուաե-
11 ցընեն և գոյնդ չփոխուի։ Քո
թագաւորութեան մէջ մի մարդ
կայ, որի մէջ կայ սուրբ աստ-
ուածների հոգին. և քո հօր օ-
րերումը լոյս և հանճար և աստ-
ուածների իմաստութեան պէս
իմաստութիւն գտնուեցաւ նո-
րանում, և հայրդ Նաբուգոդո-
նոսոր թագաւորը նորան մոգերի,
հմայողների, քաղդէացիների, բազդ
նայողների գլխաւոր դրաւ. քո
12 հայրը, ով թագաւոր։ Որովհե-
տեւ մի գերազանց հոգի և գի-
տութիւն և հանճար կայ նորա-
նում երազներ մեկնելու, խրթի-
նամութիւնները յայտնելու և
կնճիռներ լուծելու, այդ Դանի-
էլումը, որի անունը թագաւորը
Բազդատար դրաւ. թող կանչուի
Դանիէլը և նա կ'իմացնէ մեկնու-
թիւնը։
13 Այն ժամանակ Դանիէլը տար-
ուեցաւ թագաւորի առջևը. Թա-
գաւորը պատասխանեց և ասաց
Դանիէլին. Դո՞ւ ես Դանիէլը այն
Հրէայ գերիներից որոնց իմ հայր
թագաւորը բերաւ Հրէաստանից։

Եւ ես լսել եմ քու մասին թէ 14
աստուածների հոգի կայ քեզնում, և լոյս ու հանճար և գերազանց իմաստութիւն կայ քեզմօտ. Եւ հիմա իմ առջևը իմաստուններ, հմայողներ բերուեցան, 15
որ այս գրուածքը կարդային և նորա մեկնութիւնը ինձ իմացնէին. բայց չկարողացան իմացնել այս խօսքի մեկնութիւնը. Եւ ես լսեցի քու մասին որ կարող ես 16
մեկնել մեկնութիւն և կնճիռներ լուծել. արդ եթէ կարող ես կարդալ գրուածքը և նորա մեկնութիւնը ինձ իմացնել, ծիրանի կը հագնես և ոսկի մանեակ՝ պարանոցիդ վերայ. և թագաւորութեան մէջ երրորդ իշխան կ'լինիս։
Այն ժամանակ Դանիէլը պա- 17
տասխանեց և ասաց թագաւորի առջև. Պարգևներդ քեզ լինին, և ընծաներդ ուրիշի տուր. բայց ես կ'կարդամ գրուածքը թագաւորի համար և մեկնութիւնը կ'իմացընեմ իրան։ Դու, ով թագաւոր, 18
Բարձրեալն Աստուած թագաւորութիւն և մեծութիւն և փառք ու պատիւ տուաւ քու հօրը Նաբուգոդոնոսորին։ Եւ այն մեծու- 19
թիւնից, որ տուել էր նորան, բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները դողում և վախենում էին նորա առջև. որին որ ուզում էր՝ սպանում էր, և որին որ ուզում էր՝ ապրեցնում էր, և որին որ ուզում էր՝ բարձրացնում էր, և որին որ ուզում էր՝ ցածացնում էր։ Բայց երբոր նորա սիրտը 20
հպարտացաւ և նորա հոգին խրաւտացաւ ամբարտաւանութեամբ, մինչև որ գիտաց որ Բարձրեալն Աստուած է սիրում մարդկանց թագաւորութեան վերայ, 21

և որին որ ուզեմ՝ դնեմ է
22 նորա վերայ։ Եւ դու նորա որդի, Բաղդասար, չխոնարհեցրիր
քո սիրտը, թէև այս ամենը գիտէիր։
23 Այլ երկնից Տիրոջ վերայ քեզ բարձրացրիր և նորա տան անօթները բերին քո առջևը, և դու ու քո մեծամեծները և քո կանայքն ու քո հարճերը գինի խմեցիք նորանցով, և արծաթի ու ոսկի, պղնձի, երկաթի, փայտի և քարի աստուածներին գովեցիր, որոնք ոչ տեսնում են, ոչ լսում և ոչ իմանում. բայց այն Աստուծոյն, որի ձեռքին է քո շունչը և որինն են քո բոլոր ճանապարհները, չփառաւորեցիր։
24 Այն ժամանակ այն ձեռքի թաթը ուղարկուեցաւ նորա առջևից, և նկարուեցաւ այս գրուածքը։
25 Եւ այս է այն նկարուած գրուածքը. ՄԱՆԷ, ՄԱՆԷ,
26 ԹԵԿԷՂ ՈՒ ՓԱՐՍԻՆ։ Այս է խօսքի մեկնութիւնը. Մանէ, Աստուած համարել է քո թագաւորութիւնը և նորան վերջացրել։
27 Թեկէղ, կշռուեցար կշիռքով և պակաս գտնուեցար։
28 Փարէս, պիտի բաժանուի քո թագաւորութիւնը և տրուի Մարաց և Պարսից։
29 Այն ժամանակ հրամայեց Բաղդասար, և Դանիէլին ծիրանի հագցրին, և ոսկի մանեակ նորա պարանոցին, և մեհենաւոր կանչել տուին նորա մասին, որ երրորդ իշխան լինի թագաւորութեան մէջ։
30 Նոյն գիշերը սպանուեցաւ Բաղդեացոց Բաղդասար թագաւորը։
31 Եւ Մարաց Դարեհը առաւ թագաւորութիւնը իբրև վաթսուն և երկու տարեկան։

Գլ. Զ

1 Հաճոյ երևեցաւ Դարեհի առջև թագաւորութեանը վերայ հարիւր քսան կուսակալներ դնելու, որոնք լինեն բոլոր թագաւորութեան մէջ։
2 Եւ որոնց վերայ երեք հրամանատար, որոնցից մէկը Դանիէլն էր, որոնց այն կուսակալները հաշիւ տան, որ թագաւորին վնաս չլինի։
3 Այն ժամանակ այս Դանիէլը նախապատիւ եղաւ հրամանատարներից և կուսակալներից, վասն զի նորանում գերազանց հոգի կար, և թագաւորը մտածում էր որ նորան դնէ բոլոր թագաւորութեան վերայ։
4 Այն ժամանակ հրամանատարները և կուսակալները աշխատում էին մի պատճառ գտնելու Դանիէլի դէմ կուսակալութեան կողմանէ, բայց բնաւ մի պատճառ և չարաչարութիւն չկարողացան գտնել, վասն զի նա հաւատարիմ էր և ոչ մի յանցանք և չարութիւն չգտնուեցաւ անոր վերայ։
5 Այն ժամանակ այս մարդիկն ասացին. Թէ Մենք Դանիէլի դէմ բնաւ մի պատճառ չենք գտնելու, այլ նորա վերայ կ'գտնենք Աստուծոյ օրէնքի կողմանէ։
6 Այն ժամանակ հրամանատարները և կուսակալները ժողովուեցան թագաւորի մօտ և այսպէս ասացին նորան. Ով Դարեհ թագաւոր, յաւիտեան կաց։
7 Խորհրդակցել են թագաւորութեան բոլոր հրամանատարները, նախարարները և կուսակալները, խորհրդականները և կառավարիչները, որ մի հրաման որոշէ թագաւորը և մի արգելք հաստատուի, որ ամեն ով որ մի խնդրուած խնդրէ որ և է աստուածանից և մարդուց մինչև երեսուն օր քացի քեզանից, ով թագաւոր, նա գցուի առիւծների դուրը։
8 Հիմա, ով թագաւոր, հաստատիր այս արգելքը և առորագրիր հրովարտակը, որ չփոխուի Մարաց և Պարսից օրէնքի համեմատ որ անխափանելի է։
9 Վասն որոյ Դարեհ թագաւորը առորագրեց հրովարտակը և արգելքը։
10 Եւ երբոր Դանիէլն իմացաւ, թէ հրովարտակը առորագրուեցաւ՝ գնաց իր տունը, և իր պատուհանները բաց էին վերնատունը դէպի Երուսաղէմ, և օրը երեք անգամ նա ծունկի վերայ էր գալիս և աղօթք էր անում և գովաբանում էր իր Աստուծոյն, ըստ որում նա առանից

11 առաջ այսպէս էր անուն՝ Ա՛յն
ժամանակ այն մարդիկը ժողո-
ւեցան և գտան Դանիէլին խնդր-
բելիս և աղաչելիս իր Աստուծոյ
12 առջև։ Ա՛յն ժամանակ մօտեցան
և ասացին Թագաւորի առջև
Թագաւորի արգելքի մասին. Չէ՞
որ դու մի արգելք ստորագրեցիր
որ ամեն մարդ որ խնդրէ որ և է
աստուածմանից և մարդուց մինչև
երեսուն օր բացի քեզանից, ով
Թագաւոր, պիտի գցուի առիւծ-
ների գուբը. Թագաւորը պատաս-
խանեց և ասաց. Հաստատ է այդ
բանը Մարաց և Պարսից օրէնքին
համեմատ որ չի խափանուիլ։
13 Ա՛յն ժամանակ պատասխանեցին
և ասացին Թագաւորի առջև.
Թէ Դանիէլը, որ Հրէաստանի
գերիներից է, քեզ, ով Թա-
գաւոր, և քո ստորագրած ար-
գելքին մի ինչ չէ համարում, և
օրը երեք անգամ խնդրուածք է
14 խնդրում։ Ա՛յն ժամանակ Թա-
գաւորը, երբոր լսեց այս խօսքը,
շատ տրտմեց ինքնիրանում, և
միտքը դրաւ Դանիէլի վերայ որ
նորան ազատէ, և մինչև արե-
գակի մտնելը ջանք էր անում նո-
15 րան ազատելու։ Ա՛յն ժամանակ
այն մարդիկը Թագաւորի մօտ
ժողովուեցան և Թագաւորին ա-
սացին. Գիտացիր, ով Թագա-
ւոր, որ Մարաց և Պարսից օրէնք
է, որ Թագաւորի հաստատած
ամեն արգելքն ու հրամանը չի
16 փոխուիլ։ Ա՛յն ժամանակ Թա-
գաւորն ասաց, և բերին Դանիէլին
և նորան գցեցին առիւծների գու-
բը. Թագաւորը պատասխանեց և
ասաց Դանիէլին. Քո Աստուա-
ծը, որին դու պաշտում ես ան-
17 դադար, նա ազատէ քեզ։ Եւ մի
քար բերին և դրին գուբի բերա-
նին. և Թագաւորը կնքեց նորան
իր կնիքով և իր մեծամեծների
կնիքով, որ Դանիէլի նկատմամբ
18 մի բան չփոխուի։ Յետոյ Թագա-
ւորը գնաց իր պալատը, և գի-
շերը անցրեց առանց ուտելու, և
կերակուր էլ բերել չտուաւ իր
առջևը. և քունը գնաց նորա վե-
րայից։

Ա՛յն ժամանակ Թագաւորը ար- 19
շալուսին վեր կացաւ կոնակ և
շտապելով գնաց առիւծների գու-
բը. Եւ երբոր գուբին մօտեցաւ, 20
Դանիէլին կանչեց տրտում ձայ-
նով. Թագաւորը խօսեց և ասաց
Դանիէլին. Ով Դանիէլ կենդանի
Աստուծոյ ծառայ, քո Աստուա-
ծը, որին դու պաշտում ես ան-
դադար, կարողացա՞ւ քեզ ազա-
տել առիւծներից։ Ա՛յն ժամա- 21
նակ Դանիէլը խօսեց Թագաւորի
հետ. Ով Թագաւոր, յաւիտեան
ողջ կաց։ Իմ Աստուածը ուղար- 22
կեց իր հրեշտակը, և նա փակեց
առիւծների բերանը, և նորանք
ինձ չվնասեցին, վասն զի նորա
առջև մաքրութիւն գտնուեցաւ
ինձ վերայ, և քո առջև էլ, ով
Թագաւոր, մի յանցանք չեմ ա-
րել։ Ա՛յն ժամանակ Թագաւորը 23
շատ ուրախացաւ իրանում, և
հրամայեց որ Դանիէլին գուբա
հանեն գուբից. և Դանիէլը գուբա
բերուեցաւ գուբից և նորա վե-
րայ ոչ մի վնաս չգտնուեցաւ,
վասն զի հաւատացել էր իր Ա-
ստուծոյն։ Եւ Թագաւորը հրա- 24
մայեց, և այն մարդկանցը բերին,
որոնք Դանիէլի չարախօսութիւնն
արել էին, և գցեցին առիւծների
գուբը՝ նորանց, նորանց որդիքան-
ցը և նորանց կանանցը. և նո-
րանք գեռ չէին հասել գուբի
յատակին, որ առիւծները տիրե-
ցին նորանց և նորանց բոլոր ա-
կռներըը փշրեցին։

Ա՛յն ժամանակ Դարեհ Թա- 25
գաւորը գրեց բոլոր ժողովուրդ-
ներին, ազգերին և լեզուներին,
որոնք բնակում են ամեն երկրում,
Շատանայ ձեր խաղաղութիւնը։
Ինձանից հրաման գուբա եկաւ, 26
որ իմ Թագաւորութեան բոլոր
իշխանութեան մէջ դողան և վա-
խենան Դանիէլի Աստուծոյ երե-
սից, վասն զի նա է կենդանի
Աստուածը և կոյ յաւիտեան,
և նորա Թագաւորութիւնը չի
քանդուիլ, և նորա իշխանու-
թիւնը մինչև վերջն է. Նա է 27
ազատում և փրկում, և նշան-
ներ ու հրաշքներ անում երկնք-

ումը և երկրի վերայ, որ Դանիէլին ազատեց առիւծների ձեռքից։

28 Եւ այս Դանիէլը յաջողութիւն գտաւ Դարեհի թագաւորութիւնում և Պարսիկ Կիւրոսի թագաւորութիւնում։

ԳԼ. Է

1 Բաբելոնի Բազդասար թագաւորի առաջին տարին Դանիէլն երազ տեսաւ, և իր անկողնում իր գլխի տեսիլքները. յետոյ գրեց երազը. գլխաւոր բանը ասաց։
2 Դանիէլը խօսեց և ասաց. Տիշերը տեսանում էի տեսիլքում և ահա երկնքի չորս կողմերը յարձակվում էին մեծ ծովի վերայ։
3 Եւ չորս մեծամեծ գազաններ ելան ծովից՝ տարբեր մէկմէկից։
4 Առաջինը առիւծի պէս էր և արծիւի թեւեր ունէր. և տեսանում էի մինչև որ նորա թեւերը պոկուեցան, և նա վեր առնուեցաւ երկրից, և ոտքերին վերայ մարդու պէս դրուեցաւ, և մարդու սիրտ տրուեցաւ նորան։
5 Եւ ահա մի ուրիշ գազան՝ երկրորդը՝ արջու նման, և մէկ կողմի վերայ կանգնեց, և երեք կողքի ակօրներ ունէր բերանումը ատամների մէջ, և այսպէս ասացին նորան. վեր կաց՝ շատ միս կեր։
6 Սորանից յետոյ նայում էի, և ահա մի ուրիշը ինձու նման, որի մէջքին չորս թռչնի թեւեր կային. և չորս գլուխ ունէր գազանը. և իշխանութիւն տրուեցաւ նորան։
7 Սորանից յետոյ տեսանում էի գիշերուայ տեսիլքում, և ահա մի չորրորդ գազան՝ ահեղ, սոսկալի և չափազանց զօրաւոր, որ երկաթի մեծ մեծ ատամներ ունէր, ուտում էր և փշրում և մնացածը ոտքերովը կոխ էր տալիս, և նա տարբեր էր իրանից առաջ եղող բոլոր գազաններից. և տասը եղջիւր ունէր։
8 Եւ մտիկ էի տալիս այն եղջիւրներին, և ահա մի ուրիշ փոքր եղջիւր դուրս ելաւ նորանց մէջ, և այն առաջի եղջիւրներից երեքը խլուեցան նորա առջևից. և ահա մարդու աչքերի պէս աչքեր կային այդ եղջիւրի վերայ և մի մեծ մեծ բաներ խօսող բերան։
9 Եւ տեսանում էի մինչև որ աթոռներ դրուեցան, և Հինաւուրցը նստեց. նորա հագուստը ձիւնի պէս սպիտակ, և նորա գլխի մազը մաքուր սարի պէս. նորա աթոռը կրակի բոց, նորա անիւները վառուած կրակ։
10 Մի կրակի գետ էր հոսում և գնում նորա առջևից. հազար հազարներ ծառայում էին նորան և բիւր բիւրեր կանգնած էին նորա առջև. տեսանը նստեց և գրքերը բացուեցան։
11 Եւ տեսանում էի, այն ժամանակ եղջիւրի խօսած մեծ մեծ խօսքերի համար, և մտիկ էի տալիս մինչև որ գազանը սպանուեցաւ և կորաւ նորա մարմինը, և տրուեցաւ կրակի բոցին։
12 Եւ միւս գազաններից առնուեցաւ նորանից տրուած էր եղել մի կեանց երկարութիւն մինչև մի ժամ և ժամանակ։
13 Եւ տեսանում էի գիշերուայ տեսիլքներում, և ահա երկնից ամպերով գալիս էր մարդու Որդի նման, և մինչև Հինաւուրցը եկաւ, և նորա առջև մօտեցրին նորան։
14 Եւ նորան տրուեցաւ իշխանութիւն և պատիւ ու թագաւորութիւն, որ բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները նորան ծառայեն. նորա իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է, որ չի անցնիլ և նորա թագաւորութիւնը չի քանդուիլ։
15 Եւ Դանիէլը վշտացայ սրտովս իմ միջումը, և իմ գլխի տեսիլքները ինձ խառնիճաղին։
16 Եւ մօտեցայ կանգնածներից մէկին և հարցրի այս բոլոր բաների իսկութիւնը. և նա ասաց ինձ և բաների մեկնութիւնը իմացրեց ինձ։
17 Այս չորս մեծ գազանները՝ չորս թագաւորներ են վեր կենալու երկրից։
18 Իսկ թագաւորութիւնը առնելու են Բարձրեալի սուր-

բերը և ժառանգելու են թագաւորութիւնը մինչև յաւիտեան և մինչև յաւիտեանս յաւիտենից։

19 Յետոյ ուզեցի իսկութիւնն իմանալ չորրորդ գազանին, որ ամենեցը տարբեր էր և խիստ ահեղ, ատամները երկաթի և ղանդիները պղնձի, ուտում էր, փշրում էր և մնացածը ոտքերով 20 վը կոխ տալիս. Եւ նորա գլխի վերայ տասը եղջիւրների մասին, և այն մեւսի մասին որ դուրս եկաւ և նորա առջևից երեքը ընկան, որ այս եղջիւրը աչքեր ունէր և մեծ մեծ բաներ խօսող բերան. և նորա կերպարանքը մեծ 21 էր քան թէ իր ընկերներինը։ Ես տեսանում էի, և այն եղջիւրը պատերազմ էր անում սուրբերի 22 հետ, և նոցանից յաղթեց։ Մինչև որ եկաւ Հինաւուրցը, և իրաւունք տուեցաւ Բարձրելոյն սուրբերին, և ժամանակը հասաւ որ սուրբերը տանեն թագաւո- 23 րութիւնը։ Այսպէս ասաց. Չորրորդ գազանը չորրորդ թագաւորութիւն է լինելու երկրի վերայ, որ տարբեր պիտի լինի բոլոր թագաւորութիւններից, և պիտի ուտէ բոլոր երկիրը և նորան պիտի 24 ոտնահարէ և փշրէ։ Եւ այն տասը եղջիւրները՝ այն թագաւորութիւնից տասը թագաւորներ են վեր կենալու, և նոցանցից յետոյ մի ուրիշն է վեր կենալու, և նա տարբեր է լինելու առաջիններից, և նա երեք թագաւորի կործա- 25 նելու է. Եւ Բարձրելոյն դէմ խօսքեր է խօսելու և Բարձրելոյ սուրբերին հալածահարելու, և խորհելու է ժամանակներն ու օրէնքները փոխելու, և նոցանք պիտի նորա ձեռքը տուեն մինչև մի ժամանակ և (երկու) ժա- 26 մանակներ և կէս ժամանակ։ Բայց աստուածը պիտի նստէ, և նորա իշխանութիւնը պիտի վեր առնեն, որ փչացնեն և կորցնեն հա- 27 պաւս։ Եւ թագաւորութիւնն ու իշխանութիւնը և բոլոր երկնից տակին եղող թագաւորութիւնների մեծութիւնը պիտի տրուի Բարձրելոյ սուրբերի ժողովրդին. նորա թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է և բոլոր իշխանութիւնները պիտի նորան ծառայեն և հնազանդեն։

28 Մինչև այստեղ է խօսքի վերջը. ինձ Դանիէլիս շատ խռովեցնում էին իմ խորհուրդները, և գոյնս փոխուեցաւ իմ վերաս, և խօսքը պահեցի իմ սրտումը։

ԳԼ. Ը

1 Թագաւոր Թագաւորի թագաւորութեան երրորդ տարում մի տեսիլք երևեցաւ ինձ Դանիէլիս, այն սկզբումը ինձ երևցածիցը յետոյ։ 2 Եւ ես տեսայ Տեսիլքում. և եղաւ որ ես տեսնելիս՝ ես Ելոմի գաւառումն եղող Շուշան մայրաքաղաքումն էի. և տեսայ տեսիլքում որ ես Ուլայ գետի մօտ էի։

3 Եւ ես բարձրացրի իմ աչքերը և տեսայ, և ահա գետի կշտին մէկ խոյ կար կանգնած, և նա երկու եղջիւր ունէր, և այն եղջիւրները բարձր էին, և մէկը միւսից աւելի բարձր էր, և այն 4 բարձրը յետոյ վեր եկաւ։ Տեսայ խոյը խփում էր դէպի արևմուտք և դէպի հիւսիս և դէպի հարաւ, և ոչ մի գազան չէր կանգնում նորա առջև և նորա ձեռքից ազատող չկար. այլ նա անում էր իր հաճութեան պէս, և մեծացաւ։

5 Եւ երբոր ես մտածում էի, և ահա մի այծերի քոշ եկաւ արևմուտքից բոլոր երկրի երեսի վերայ, և գետնին չէր տրիպչում, և քոշը մի երևելի եղջիւր ունէր 6 իր աչքերի մէջտեղը։ Եւ նա հասաւ այն երկու եղջիւրաւոր խոյին, որ տեսել էի գետի կշտին կանգնած, և նորա վերայ վազեց իր զօրութեան կատաղութիւնով։ 7 Եւ ես տեսայ նորան որ հասաւ խոյի մօտ, և դառնացած նորա վերայ՝ զարկեց խոյին և կոտրատեց նորա երկու եղջիւրները, և այժ չկար խոյումը նորա առջև կանգնելու. և նորան գցեց գե-

տինը և կոխ տուաւ նորան, և մէկը չկար որ խոյին ազատէր նո-
8 րա ձեռքից։ Եւ այծերի քոշը խիստ մեծացաւ, և հէնց որ ու-
ժովցաւ նորա մեծ եղջիւրը կոտ-
րուեցաւ, և նորա տեղը չորս ե-
րևելիները դուրս եկան դէպի երկ-
9 նից չորս կողմերը։ Եւ նորանցից
մէկից մի փոքր եղջիւր դուրս ե-
կաւ, և նա չափազանց մեծացաւ
դէպի հարաւ և դէպի արևելք և
10 դէպի փառաւորը. Եւ մեծացաւ
մինչև երկնից զօրքը, և գցեց գե-
տինը այն զօրքից և աստղերից և
11 նորանց կոխ տուաւ։ Եւ մինչև զո-
րաց Իշխանը բարձրացաւ, և նո-
րանից վեր առաւ մշտնջենակա-
նը, և կործանուեցաւ նորա արք-
12 բատանի բնակարանը։ Եւ մէկ
զօրք պիտի տրուի մշտնջենական
հետ ամբարշտութեան համար,
և ճշմարտութիւնը գցեց գետինը,
13 և անուամ էր ու յաջողուամ։ Եւ
ես լսեցի մէկ սուրբ խօսելիս, և
մէկ սուրբ ասաց այն ինչ խօս-
ղին, Մինչև ե՞րբ է մշտնջենակա-
նի տեսիլքը և աւերող ամբարշ-
տութիւնը, որ սրբարանն էլ
զօրքն էլ պիտի տրուին ոտնակո-
14 խութեան։ Եւ նա ասաց ինձ.
Մինչև իրիկուն-առաւօտ երկու
հազար երեք հարիւր. յետոյ սրբ-
բարանը պիտի արդարանայ։
15 Եւ եղաւ որ երբոր ես Դանիէլս
տեսիլքը տեսայ, այն ժամանակ
հասկացողութիւն էի որոնում,
և տե՛ս կանգնած էր դէմ առջևս
16 մարդու երևոյթի պէս. Եւ ես
լսեցի մի մարդու ձայն Ուլայի
միջից, և նա կանչեց ու ասաց.
Ով Գաբրիէլ, հասկացրու դրան
17 տեսիլքը։ Եւ նա եկաւ կանգնած
տեղիս մօտը, և երբոր նա եկաւ
ես վախեցայ և ընկայ երեսիս վե-
րայ, և նա ինձ ասաց. Հասկաց,
ով որդի մարդոյ, որ վերջի ժա-
18 մանակի համար է տեսիլքը։ Եւ
նա ինձ հետ խօսելիս ես թմրած
վայր ընկայ երեսիս վերայ գետի-
նը, և նա ինձ դիպաւ և ինձ
կանգնեցրեց կանգնած տեղիս վե-
19 րայ։ Եւ ասաց. Ահա քեզ ի-
մացնում եմ թէ ինչ է լինելու
բարկութեան վերջումը, վասն զի
վերջի որոշ ժամանակի համար
է։ Ա՛ն երկու եղջիւրաւոր խոյը,
որ տեսար, Մարաց և Պարսից
թագաւորներն է. Եւ այն փոքր
այծը Յունաց թագաւորն է. և
այն մեծ եղջիւրը նորա աչքերի
մէջ տեղը՝ առաջին թագաւորն
է։ Եւ այն կոտրուածը որի տեղը
չորը դուրս եկաւ, չորս թագա-
ւորութիւններ են դուրս գալու
ազգիցը, բայց ոչ թէ նորա զո-
րութեամբը։ Եւ նորանց թագա-
ւորութեան վերջին՝ երբոր մեղա-
րիշտները կ'լրացնեն, մի պինդ
երես և խորագէտ թագաւոր վեր
կ'կենայ. Եւ կ'զօրանայ նորա իշ-
խանութիւնը, բայց ոչ թէ նորա
զօրութեամբը, և սքանչելիքնե-
րով պիտի աւերէ և յաջողէ ու
կատարէ, և պիտի փչացնէ զօրա-
ւորներին և սրբոց ժողովուրդը։
Եւ իր խելքով պիտի յաջողեցնէ
խարէութիւնը նորա ձեռքով,
և նա պիտի իր սրտովը հպար-
տանայ, և խաղաղութեան մէջ
շատերին պիտի կորցնէ, և վեր
պիտի կենայ իշխանաց Իշխանի
դէմ, բայց առանց ձեռքի պիտի
կոտրուի։ Եւ իրիկուան ու ա-
ռաւօտուան տեսիլքը, որ ասա-
ւեցաւ, ճշմարիտ է. և դու տե-
սիլքը փակիր, վասն զի շատ օ-
րերի համար է։

Եւ ես Դանիէլս նուաղեցի և
հիւանդացայ մի քանի օր. յետոյ
վեր կացայ և սրի թագաւորի
գործը, և զարմացած էի տեսիլքի
մասին, և մէկ հասկացնող չկար։

Գ.Լ. Թ

Ա՛սուերոսի որդի Դարեհի ա-
ռաջի տարին, որ Մարաց սերունդից էր և թագաւոր դրուեցաւ
Քաղդէացոց թագաւորութեան
վերայ, Նորա թագաւորութեան
առաջին տարին ես Դանիէլս ի-
մացայ գրքերուամբ այն տարիների
թիւը, որոնց համար Տիրոջ խօս-
քը եղել էր Երեմիա մարգարէ-
ին, թէ պիտի վերջացներ Երու-
սաղէմի աւերմունքները եօթա-
նասուն տարիով։

3 Եւ ես դարձրի իմ երեսը դէպի
Տէր Աստուծոյն, որ աղօթք և
աղաչանք մատուցանեմ ծոմով և
4 քուրձով ու մոխիրով։ Եւ աղօթե-
ցի իմ Տէր Աստուծոյն և խոստո-
վանուեցայ ու ասացի. Ո՜հ, Տէր,
մեծ Աստուած և սքանչելի, որ
ուխտ և ողորմութիւն ես պահ-
ում քեզ սիրողներին և պատ-
5 ուիրանքներդ պահողներին. Մենք
մեղանչեցինք և անօրէնութիւն
գործեցինք և ամբարիշտ եղանք
ու ապստամբեցինք և խոտորե-
ցանք քո պատուիրանքներից ու
6 իրաւունքներից. Եւ չլսեցինք քո
ծառաներին մարգարէներին, ո-
րոնք խօսեցին քո անունով մեր
թագաւորների, մեր իշխանների
և մեր հայրերի հետ և երկրի բո-
7 լոր ժողովրդի հետ։ Քանի է, ով
Տէր, արդարութիւնը, իսկ մերը՝
երեսի ամօթը, ինչպէս որ այսօր
է, Յուդայի մարդկանցը և Երու-
սաղէմի բնակիչներին և բոլոր Իս-
րայէլին մօտաւորներին և հեռա-
ւորներին այն ամեն երկիրներում,
ուր որ նրանց սքսորել ես նո-
րանց այն յանցանքի համար, որ
8 գործեցին քեզ դէմ։ Տէր, մերն
է երեսի ամօթը՝ մեր թագաւոր-
ներինը, մեր իշխաններինը և մեր
հայրերինը որ մեղանչեցինք քեզ
9 դէմ։ Մեր Տէր Աստուծոյնն է
ողորմութիւնը և ներողութիւնը,
վասն զի մենք ապստամբեցինք
10 նորա դէմ, Եւ չլսեցինք մեր Տէր
Աստուծոյ ձայնին, որ գնայինք
նորա օրէնքով, որոնք նա դրաւ
մեր առջև իր ծառաներին մար-
11 գարէների ձեռքով. Եւ բոլոր
Իսրայէլը զանց արաւ քո օրէնքը
և խոտորեցաւ, որ չլսէ քո ձայ-
նին և թափուեցաւ մեզ վերայ
այն անէծքը և երդումը որ գրու-
ած է Աստուծոյ ծառայ Մով-
սէսի օրէնքում. վասն զի մեղան-
12 չեցինք նորա դէմ։ Եւ նա հաս-
տատեց իր խօսքերը որ ասել էր
մեր մասին և մեզ դատող մեր
դատաւորների մասին մեզ վերայ
մեծ չարիք բերելով, այնպէս որ
երկնից տակ եղած չէ ինչպէս որ
13 եղաւ Երուսաղէմին։ Մովսէսի
օրէնքումը գրուածին պէս այս
բոլոր չարիքը եկաւ մեզ վերայ,
սակայն մենք չխնդրեցինք մեր Տէր
Աստուծոյ երեսը որ ետ դառնա-
յինք մեր անօրէնութիւններից և
խելամտէինք քո ճշմարտութեան
մէջ։ Եւ Տէրը հսկեց այս չարիքի 14
համար և նորան բերաւ մեզ վե-
րայ. վասն զի արդար է մեր Տէր
Աստուածը իր արած բոլոր գործ-
երի մասին. իսկ մենք չլսեցինք
նորա ձայնին։ Եւ արդ, ով մեր 15
Տէր Աստուած, որ քո ժողովուր-
դը Եգիպտոսի երկրից հանեցիր
հզոր ձեռքով, և քեզ համար
անուն շինեցիր, ինչպէս որ այսօր
է. մենք մեղանչեցինք անօրինա-
ցանք։ Ով Տէր, քո բոլոր ար- 16
դարութեան համեմատ, սքանչ-
ում ենք, թող ետ դառնայ քո
բարկութիւնը և սրտմտութիւնը
քո սուրբ լեռանից՝ քո Երուսա-
ղէմ քաղաքից. վասն զի մեր
մեղքերի համար և մեր հայրերի
անօրէնութիւնների համար Երու-
սաղէմը և քո ժողովուրդը նա-
խատինք են դառել մեր բոլոր
շրջականերին։ Եւ արդ, ով մեր 17
Աստուած, լսիր քո ծառայի ա-
ղօթքը և նորա աղաչանքը, և
փայլեցրու քո երեսը քո ամայա-
ցած սրբարանի վերայ Տիրոջ շը-
նորհիւ։ Ականջ դիր, ով իմ 18
Աստուած, և լսիր, բաց աչքե-
րըդ և տես մեր աւերակները և
այն քաղաքը որի վերայ կոչուած
է քո անունը, վասն զի ոչ թէ
մեր արդարութիւնների համար
ենք աղաչում մենք աղօթելով
քո առջև, այլ քո շատ ողոր- 19
մութիւնների համար։ Ով Տէր,
լսիր, ով Տէր, ներիր, ով Տէր
ականջ դիր և կատարիր, մի ու-
շացնիր քեզ համար, ով իմ
Աստուած, վասն զի քո անունն
է կոչուած քո քաղաքի և քո
ժողովրդի վերայ։

Եւ ես տակաւին խօսում էի 20
և աղօթում և խոստովանում
էի իմ մեղքը և իմ ժողովրդի
Իսրայէլի մեղքը և իմ աղաչանքը
մատուցանում էի իմ Տէր Ա-
ստուծոյ առջև իմ Աստուծոյ

21 աւուրը լեռան համար. Եւ ես տա-
կաւին խօսում էի աղօթքում,
որ այն Գաբրիէլ մարդը, որ ես-
սկզբում տեսել էի սկզբումը
թռուլցած նուաղած ժամանա-
կին, դպաւ ինձ երեկոյեան զոհի
22 ժամանակին, Եւ հասկացնելով
խօսում էր ինձ հետ, և ասաց.
Ով Դանիէլ, հիմա դուրս եկայ
որ քեզ իմաստութիւն սովորե-
23 ցընեմ. Քո աղաչանքի սկզբումը
խօսք դուրս եկաւ, և ես եկայ ի-
մացնելու որ դու ցանկալի ես.
ուրեմն հասկաց խօսքը և իմաց
24 տեսիլը. Եօթանասուն եօթնե-
կակ է վճռուած քո ժողովրդի և
քո սուրբ քաղաքի վերայ, յան-
ցանքը վերջացնելու և մեղքերը
կնքելու և անօրէնութիւնը քա-
ւելու և յաւիտենական արդա-
րութիւն բերելու և տեսիլքն ու
մարգարէքը կնքելու և ամենա-
25 սուրբը օծելու համար: Եւ իմաց
ու հասկաց որ Երուսաղէմը դարձ-
եալ շինելու համար հրամանը
դուրս գալուց մինչև *Մեսիա իշ-
խանը եօթը եօթնեակ և վեթ-
սուն և երկու եօթնեակ կայ, ո՛ր
դարձեալ պիտի շինուի հրապա-
րակը և պարիսպը, այն էլ նեղ
26 ժամանակներում: Եւ վեթսունն
և երկու եօթնեակից յետոյ պի-
տի Մեսիան մահով դատապար-
տուի, բայց չէ թէ իրան համար.
և եկող իշխանի ժողովուրդը պի-
տի փչացնէ քաղաքը և սրբարա-
նը, և նորա վերջը իբր թէ հե-
ղեղով կ'լինէ, և մինչև պատե-
րազմի վերջը աւերումներ են ո-
27 րոշուած: Եւ նա պիտի զօրացնէ
ուխտը շատերի համար մէկ եօթնե-
եակ, և եօթնեակի կէսին պիտի
դադարեցնէ զոհը և պատարագը.
և փ-ճ-ի ծայրի վերայ աւերածի
պղծութիւնը կ'լինի մինչև որ
վերջնական և նախատահմանեալ
պ-փ-հ-ը կ'թափուի աւերածի
վերայ:

Գլ. Ժ

1 Պարսից Կիւրոս թագաւորի եր-

*Օծեալ

րորդ տարին խօսք յայտնուեցաւ
Դանիէլին, որի անունը Բաղդա-
սար է կոչվում, և խօսքը ճշմա-
րիտ էր և զօրքը մեծ. և նա հաս-
կացաւ խօսքը և տեղեկութիւն
առնել տեսիլքի համար: Այն օ- 2
րերը ես Դանիէլս սուգի մէջ էի
երեք եօթնեակ օրեր. Ախորժելի 3
հաց չկերայ և միս ու գինի չմը-
տաւ բերանս, և բնաւ չօծուե-
ցայ մինչև որ երեք եօթնեակ օ-
րերը լրացան:
Եւ առաջի ամսուան քսան և 4
չորսերորդ օրը ես մեծ գետի այս-
ինքն Տիգրիսի եզերքին էի. Եւ 5
աչքերս բարձրացրի ու տեայ,
և ահա մէկ մարդ՝ կտաւ հագած
և մէջքը գօտի կապած Ոփազի
ոսկուց. Եւ նորա մարմինը ա- 6
կնքարի նման, և նորա դէմքը
կայծակի երեւոյթին պէս և աչ-
քերը կրակի բոցերի պէս և նորա
բազուկներն ու ոտքերը փայլուն
պղնձի տեսքի նման, և նորա
խօսքերի ձայնը ամբոխի ձայնի
պէս: Եւ մէնակ ես Դանիէլս էի 7
տեսանում այս տեսիլքը, և այն
մարդիկք՝ որոնք ինձ հետ էին,
տեսիլքը չէին տեսանում, այլ մեծ
երկիւղ բնկաւ նորանց վերայ և
փախան թաքուսաը: Եւ ես մէ- 8
նակ մնացի և տեայ այս մեծ
տեսիլքը, և ինձանում զօրու-
թիւն չմնաց, և իմ վայելչու-
թիւնը փոխուեցաւ ապականու-
թեան, և ես էլ այժ չունեցայ:
Եւ լսեցի նորա խօսքերի ձայնը, 9
և երբոր նորա խօսքերի ձայնը լը-
սեցի, ես թմրած եղայ ընկայ ե-
րեսիս վերայ, և երեսս գետինն
էր:
Եւ ահա մի ձեռք դպաւ ինձ, 10
և կանգնեցրեց ինձ ծունկերիս և
ձեռքերիս թաթերի վերայ, Եւ 11
ասաց ինձ. Ով Դանիէլ ցանկալի
մարդ, հասկաց այն խօսքերը որ
ես ասում եմ քեզ և կանգնիր
կանգնած տեղդ, վասն զի հիմա
քեզ մօտ ուղարկուեցայ. և նո
այս խօսքը ինձ հետ խօսելիս
կանգնեցի դողալով: Եւ նա ինձ 12
ասաց. Մի վախենար, ով Դա-
նիէլ, քանզի այն առաջի օրից

որ ակրտ տուիր հասկանալու, և քո անձը խոնարհեցնելու քո Աստուծոյ առջև, քո խօսքերը լսուած են, և ես եկայ քո խօսքե-
13 րի համար։ Եւ Պարսից թագաւորութեան իշխանը կանգնել էր իմ դիմացը քսանումէկ օր. և ահա Միքայէլը՝ առաջի իշխաննե-
րից մէկը եկաւ ինձ օգնելու. և ես մնացի այնտեղ Պարսից
14 թագաւորի կշտին։ Եւ ես եկայ քեզ հասկացնելու թէ ինչ պիտի պատահէ քո ժողովրդին վերջի
օրերումը, վասն զի տեսիլքը տա-
15 կաւին այն օրերի համար է։ Եւ նա այսպէս խօսքեր ինձ հետ խօսելիս, ես երեսս դէպի գետնին
արի և համր եղայ։
16 Եւ ահա մարդու որդիանց նմանութիւնով մէկը դիպաւ շրթունքներիս, և ես բերանս բացի
արի և խօսեցի և ասացի իմ տէ-
ջևը կանգնողին. Ով Տէր իմ, այս տեսիլքովը ետ դարձան դէպի ինձ իմ ցաւերը, և ես էլ
17 ոյժ չունեցայ։ Եւ ինչպէս պիտի կարողանայ այս իմ տիրոջ ծառան խօսել այս իմ տիրոջ հետ. վասն զի ինձանումս հիմակուանից ոյժ չկայ, և ինձանումս շունչ չը
18 մնաց։ Եւ կրկին դպաւ ինձ այն մարդու կերպարանք ունեցողը և
19 ինձ զօրացրեց. Եւ ասաց. Մի վախենար, ով ցանկալի մարդ, խաղաղութիւն քեզ, զօրացիր և զօրացիր. և նա ինձ հետ խօսե-
լիս ես զօրացայ և ասացի. Թող խօսէ Տէրս, վասն զի ինձ զօրացրիր։

20 Եւ նա ասաց. Գիտես թէ ինչու համար եկայ քեզ մօտ, և հիմա ետ պիտի դառնամ Պարսից իշխանի հետ պատերազմելու. և ես դուրս եկած ժամանակ, ահա Յունաց իշխանը պիտի գայ։
21 Սակայն ես քեզ իմացնում եմ ճշմարտութեան գրքումը գրուածը, և մէկը չկայ որ ինձ հետ զօրեզանայ սրանց դէմ բացի ձեր իշխան Միքայէլից։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ ես Մարաց Դարեհ թագա-

էի առաջին տարին կանգնել եմ նորա հետ՝ ուժովացնելու և նորան օգնելու։ Եւ հիմա քեզ ճշմարտու- 2
թիւնը իմացնեմ. Ահա դեռ երեք թագաւորներ են վեր կենալու Պարսից համար, և չորրորդը մեծ հարստութիւնով պիտի հարստանայ աւելի քան թէ ամենքը. և երբոր նա ուժովացաւ իր հարստութիւնովը, այն ժամանակ նա ամենին պիտի դրգռէ Յունաց թագաւորութեան դէմ։

Եւ վեր կ'կենայ մի զօրաւոր 3
թագաւոր որ մեծ իշխանութիւնով կ'իշխէ և կ'անէ իր հաճութեան պէս։ Եւ հէնց որ բարձրա- 4
ցաւ, պիտի կտրուի նորա թագաւորութիւնը և պիտի բաժանուի երկնից չորս կողմերին, բայց ոչ թէ իր յաջորդներին և ոչ էլ այն իշխանութեան պէս, որ իշխած էր. վասն զի նորա թագաւորութիւնը պիտի քանդուի և ուրիշներինը լինի սրանցից զատ։

Եւ պիտի զօրանայ Հարաւի թա- 5
գաւորը, և նորա իշխաններից մէկը պիտի զօրանայ նորա վերայ և տիրէ. մեծ իշխանութիւն պիտի լինի նորա իշխանութիւնը։
Եւ մի քանի տարիներից յետոյ 6
պիտի իրար հետ դաշնակցեն, և Հարաւի թագաւորի աղջիկը պիտի գնայ Հիւսիսի թագաւորին հաշտութիւն անելու համար. բայց բազուկը այժ պիտի չունենայ, և պիտի չդիմանայ նորա բազուկն էլ. այլ պիտի մատնուին ինքը և նորա բերողները և նորա ծնողները և նորան այն ժամանակներում օգնողները։

Բայց նորա արմատներից ընձիղ- 7
նեներից մէկը վեր կ'կենայ նորա համար, և նա կ'գայ զօրքով և կը մտնէ Հիւսիսի թագաւորի ամրոցը և կ'գործէ նորանցում և կը զօրեզանայ։ Եւ նորանց աստ- 8
ուածներն էլ նորանց ձուլածոյ կուռքերի և ակնեղէն ու արծաթեղէն ցանկալի անօթներով գերի պիտի տանէ Եգիպտոս. և մի քանի տարի նա բարձր պիտի լինի Հիւսիսային թագաւորից։
Եւ պիտի մտնէ Հարաւային թա- 9

գաւառի Թագաւորութեան ձէջ, և եւս գառնայ իր երկիրը։
10 Եւ նորա որդիքը պիտի զինուորանան և շատ զօրքերի բազմութիւն ժողովեն. և նա անպատճառ պիտի գայ և հեղեղէ ու անցնի. և եւս գառնալով էլ պիտի պատերազմէ մինչև նորա ամրոցը։ 11 Բայց Հարաւի Թագաւորը պիտի գառնանայ և պիտի գուրս գայ ու պատերազմէ նորա հետ այսինքն Հիւսիսի Թագաւորի հետ. նա էլ մեծ բազմութիւն է հաներու, և այն բազմութիւնը 12 նորա ձեռքն է տրուելու։ Եւ բազմութիւնը պիտի բարձրանայ, նորա սիրտը պիտի հպարտանայ, և նա բիւրաւորներ պիտի վայր գցէ, բայց պիտի չզօրանայ։ 13 Եւ Հիւսիսի Թագաւորը եւս պիտի գառնայ և մի բազմութիւն հանէ առաջինից շատ. և մի քանի ժամանակներից յետոյ անպատճառ պիտի գայ մեծ զօրքով 14 և մեծ պատրաստութիւնով։ Եւ այն ժամանակները շատերը վեր են կենալու Հարաւային Թագաւորի դէմ, և քո ժողովրդի բռնաւորների որդիքը պիտի բարձրանան, որ հաստատեն տեսիլքը, բայց պիտի ընկնեն։ 15 Հիւսիսի Թագաւորը պիտի գայ, և հողաբլուրներ պիտի կուտէ և առնէ պատսպարուր քաղաքները. և Հարաւի բազուկները պիտի չը դիմանան և նորա ընտրեալների ժողովուրդն էլ, և դիմանալու 16 ոյժ էլ չի լինիլ։ Եւ նորա մօտ եկողը պիտի իր հաճութեան պէս անէ, և կանգնող չի լինիլ նորա առջև. և նա պիտի կանգնէ փառաւոր երկրումը, և նա պիտի 17 վչանայ նորա ձեռքովը։ Եւ իր երեսը պիտի ուղղէ որ գայ իր Թագաւորութեան բոլոր ոյժովը, և ուղիղները նորա հետ. և նա պիտի գործէ, և կնանց աղջիկը պիտի տան նորան որ փչացնէ նորան. բայց նա պիտի չկանգնէ, 18 և նա նորանը պիտի չլինի։ Յետոյ նա իր երեսը պիտի դարձնէ դէպի կղզիները և շատերը պիտի առնէ. և մի իշխան պիտի դադարեցնէ նորա նախատինքը դէպի նորան, առանց նորա նախատինքը իրան հետ դարձնելու։ 19 Եւ նա եւս պիտի դարձնէ իր երեսը դէպի իր երկրի ամրոցները, բայց պիտի գլորուի և վայր ընկնի ու չգտնուի։

Եւ նորա տեղը մէկը վեր կ'կենայ, 20 որ կ'ուղարկէ Հարկատուն հանդիսին Թագաւորութեան փառքով, և նա մէկ քանի օրերից կ'կոտրուի, բայց ոչ բարկութիւնով և ոչ պատերազմով։

Եւ նորա տեղը մէկ անարգը 21 վեր կ'կենայ, որ նորան Թագաւորական պատիւ չեն տալ. բայց նա կ'գայ հանդարտութիւնով և կ'յափշտակէ Թագաւորութիւնը շողոքորթութիւններով։ 22 Եւ հեղեղի բազուկները պիտի ընկղմուին նորա առջև և ջարդուին, և ուխտի իշխանն էլ։ Եւ նորա 23 հետ եղած դաշնակցութիւնից նա նենգութիւն պիտի անէ, և վեր պիտի գնայ և ոյժ առնայ քիչ ազգով։ Խաղաղ և պարարտ գա- 24 ւառը պիտի մտնէ, և պիտի անէ այն բան որ չէին արել իր հայրերը և իր հայրերի հայրերը. կողոպուտ, աւար և առատութիւնը պիտի բաշխէ նորանց, և պարիսպների դէմ պիտի մտածմունքներ մտածէ, բայց մինչև մի ժամանակ։ Եւ իր զօրութիւնն ու իր 25 սիրտը պիտի մեծ զօրքով գրգռէ Հարաւային Թագաւորի դէմ և Հարաւային Թագաւորը պիտի զինուորուի պատերազմի մեծ և խիստ զօրաւոր զօրքով, բայց պիտի չդիմանայ. վասն զի նորա դէմ խորհուրդներ պիտի խորհեն։ Եւ նորա 26 կերակուրները ուտողները նորան պիտի կոտրեն. և նորա զօրքը պիտի ընկղմէ. և շատ սպանուածներ պիտի ընկնեն։ Եւ այս երկու Թա- 27 գաւորներն էլ սրտերը չարութիւն համար է. և մէկ սեղանի վերայ սուտ են խօսելու, բայց չէ յաջողելու, վասն զի տակաւին վախճան կայ որոշուած ժամանակի համար։ Եւ նա երկիրը 28 պիտի դառնայ մեծ ստացուածքով, և նորա սիրտը սուրբ ուխ-

ան դէմ է լինելու. և պիտի գործէ և ետ դառնայ իր երկիրը։
29 Որոշուած ժամանակին ետ պիտի դառնայ և գնայ Հարաւի վերայ. բայց առաջինի և վերջինի
30 նման չի լինիլ։ Վասն զի Կիտացւոց նաւերը նորա վերայ պիտի գնան, և նա պիտի թուլանայ. և նա ետ պիտի դառնայ ու բարկանայ սուրբ ուխտի դէմ և գործէ, և ետ պիտի դառնայ և ուշք դարձնէ սուրբ ուխտը ձգողներին
31 վերայ։ Եւ բազուկներ են վեր կենալու նորա կողմից, և նորանք պիտի պղծեն արուարանը՝ ամրոցը և հեռացնեն մշտնջենաւորը և պիտի դնեն աւերածի պղծութիւ-
32 նը։ Եւ ուխտին դէմ ամբարշտութեան անողներին պիտի հրապուրէ շողոքորթութեամբ, բայց իրանց Աստուծոյն ճանաչողների ժողովուրդը պիտի զօրանայ և
33 գործէ. Եւ ժողովրդի խնամատարները շատերին պիտի սովորեցնեն, բայց մի քանի ժամանակ պիտի ընկնեն սրով ու կրակով, գերութեամբ ու յափշտակութեամբ։
34 Եւ նորանք ընկնելիս մի փոքր օգնութեամբ պիտի օգնուին, և շատերը շողոքորթութեամբ
35 նորանց պիտի յարեն։ Եւ իմաստուններից ոմանք պիտի ընկնեն, որ նորանց հալեցնէ և մաքրէ և սպիտակացնէ մինչև վերջի ժամանակը. վասն զի դեռ մինչև ո-
36 րոշ ժամանակն է։ Եւ թագաւորը իր հաճութեան պէս պիտի անէ, և իրան բարձրացնելու և մեծացնելու է ամեն աստուածութիւնից վեր, և աստուածների Աստուծոյ դէմ սոհելի բաներ է ասելու, և պիտի յաջողուի մինչև որ կատարէ բարկութիւնը, վասն զի նախատեսմանուածը պի-
37 տի գործադրուի։ Եւ իր հայրերի աստուածներին մի բան պիտի չը հասկանայ, և կանանց ցանկութիւնը և ոչ մի աստուած մի բան պիտի չհասկանայ, վասն զի իրան ամենից մեծ է հասկնալու։
38 Սակայն ամրոցների աստուածոյն՝ իրան տեղը՝ կ'պատուէ և իր հայրերի չճանաչած աստուածոյն կը պատուէ ոսկով ու արծաթով և պատուական քարով ու ցանկալի բաներով։ Եւ պիտի գործէ 39
ամրոցների պնդութիւնով օտար աստուծոյ հետ. ով որ ճանաչէ նորան՝ փառքը պիտի շատացնէ, և նորանց տիրել պիտի տայ շատերի վերայ, և երկիրը է բաժանելու իրրև վարձք։
Եւ վերջի ժամանակում նորա 40
հետ պիտի զարկուի հարաւի թագաւորը և մրրիկի պէս նորա վերայ է յարձակելու հիւսիսի թագաւորը կառքերով և ձիաւորներով և շատ նաւերով, և երկիրները պիտի մտնէ և պիտի ողողէ ու անցնէ։ Եւ պիտի գայ 41
փառաւոր երկիրը, և շատերը պիտի կործանուին. բայց սորանք պիտի ազատուին նորա ձեռքից՝ Եդոմ և Մաւաբ և Ամմոնի որդիներից գլխաւոր մասը։ Եւ նա 42
իր ձեռքը պիտի մեկնէ դէպի երկիրները. և Եգիպտոսի երկիրը չի ազատուիլ։ Եւ պիտի տիրէ Ե- 43
գիպտոսի ոսկի և արծաթի գանձերին և բոլոր ցանկալիքներին. և Լիբէացիք ու Եթէոպացիք նորան հետևող կ'լինին։ Բայց 44
լուրեր պիտի խռովեցնեն նորան արևելքից և հիւսիսից, և նա պիտի դուրս գայ մեծ բարկութիւնով որ շատերին փչացնէ և բնաջինջ անէ. Եւ իր պալատի 45
պէս վրաններըը տարածելու է ծովերի մէջտեղը դէպի փառաւոր սուրբ լեռը. և պիտի հասնէ իր վախճանին. և նորան օգնող պիտի չլինի։

ԳԼ. ԺԲ

Եւ այն ժամանակ վեր կ'կենայ 1
այն մեծ իշխան Միքայէլը, որ կանգնած է քո ժողովրդի որդիների վերայ. և նեղութեան ժամանակ կ'լինի, որը եղած չէ քանի որ մի ազգ կայ մինչ այս ժամանակը, և այն ժամանակ քո ժողովուրդը կ'ազատուի՝ ամեն ով որ գտնուի գրքումը գրուած։ Եւ երկրի 2
հողումը դնողների շատերը պիտի զարթնեն՝ ոմանք՝ ի յաւիտե-

նական կեանք, իսկ ամէնք ՚ի յաւիտենական նախատինք և անարգանք։ 3 Եւ իմաստունները պիտի փայլեն իբրեւ հաստատութեան լոյսին պէս և շատերին արդարութեան առաջնորդողները՝ աստղերին պէս յաւիտեան յաւիտենից։

4 Եւ դու, ով Դանիէլ, փակիր այս խօսքերը և կնքիր գիրքը մինչև վերջի ժամանակը. շատերը պիտի քննեն, և գիտութիւնը պիտի շատանայ։

5 Եւ ես Դանիէլս տեսայ, և ահա երկու ուրիշը կանգնել էին, մէկը գետի այս ափին՝ միւսը 6 գետի այն ափին։ Եւ ասաց այն կտաւ հագած մարդուն, որ գետի ջրերից վեր էր. Մինչև ե՞րբ 7 է այս զարմանալեաց վերջը։ Եւ ես լսեցի, որ այն կտաւ հագած մարդը, որ գետի ջրերից վեր էր, իր աջ և ձախ ձեռքը բարձրացրեց դէպի երկինքը և երդուաւ յաւիտեան կենդանի եղողովը, թէ մի ժամանակ, երկու ժամանակ և կէս. և երբոր վերջացնայ սուրը ժողովրդի ձեռքի փշրելը, այս ամէնը պիտի կատարուի։

8 Եւ ես լսեցի, բայց չհասկացայ, և ասացի. Ով Տէր իմ, ի՞նչ պիտի լինի սորանից վերջը. 9 Եւ նա ասաց. Գնա, Դանիէլ, վասն զի այս խօսքերը փակուած և կնքուած են մինչև վերջի ժամանակը։ 10 Շատերը պիտի մաքրուին և սպիտականան և հալուին, իսկ ամբարիշտները պիտի ամբարշտանան, և ոչ մի ամբարիշտ պիտի չհասկանայ. բայց իմաստունները պիտի հասկանան։ 11 Մշտնջենականը վերացնելու և աւերածի պղծութիւնը դնելու ժամանակից յետոյ հազար երկու հարիւր իննսուն օր է։ 12 Երանի նորան որ կ'սպասէ և կ'հասնէ հազար երեք հարիւր երեսուն և հինգ օրուան։ 13 Բայց դու գնա մինչև վախճանը և հանգստացիր, և կ'կանգնես օրերի վերջին քո վիճակումդ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՈՎՍԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տէրոջ խօսքը, որ եղաւ Բէերիի որդի Ովսէէին Յուդայի թագաւորների՝ Ոզիայի, Յովաթամի, Աքազի և Եզեկիայի օրերուամբ և Իսրայէլի թագաւոր՝ Յովասի որդի Յերոբովամի օրերուամբ։

2 Սկզբումը Տէրը Ովսէէի հետ խօսելով՝ Տէրը ասաց Ովսէէին. Գնա քեզ համար մի պոռնկութեան կին և պոռնկութեան որդիք առ. վասն զի երկիրը բոլորովին պոռնկացել է Տէրոջը հետևելուց խոտորելով։

3 Եւ նա գնաց և առաւ Դաբելայիմի աղջիկ Գոմերին. և նա յղացաւ և նորա համար մի որդի 4 ծնեց։ Եւ Տէրը ասաց նորան. Նորա անունը դիր Յեզրայէլ, վասն զի քիչ ժամանակից յետոյ պիտի պահանջեմ Յեզրայէլի արիւնները Յեհուի տանից, և պիտի դադարեցնեմ Իսրայէլի տան թագաւորութիւնը։ 5 Եւ այն օրը կ'լինի, որ կ'կոտրեմ Իսրայէլի աղեղը Յեզրայէլի հովտումը։

6 Եւ նա դարձեալ յղացաւ և ծնեց մի աղջիկ։ Եւ նա ասաց նորան. Դորա անունը *Լօ-րուհամա դիր, վասն զի այլև չեմ ողորմելու Իսրայէլի տանը որ նորանց ներեմ։ 7 Բայց Յուդայի տանը ողորմելու եմ, և նորանց պէտք է փրկեմ իրանց Տէր Աստուծովը, և նորանց չեմ փրկել աղեղով և սրով ու պատերազմով՝ ձիերով ու ձիաւորներով։

8 Եւ նա կաթից կտրեց Լօ-րուհամային, և յղացաւ ու ծնեց

---

*Ողորմեալ։

9 մի տղայ. եւ նա ասաց նորան. Դորա անունը դիր *Լօ-ամմի, վասն զի դուք իմ ժողովուրդը չէք, և ես էլ ձեզ Ա-ե-ե-ի չեմ
10 լինիլ։ Եւ Իսրայէլի որդւոցն թիւը ծովի աւազի պէս պիտի լինի որ չի չափուիլ և չի համարուիլ. և պիտի լինի որ՝ այնտեղ որ նոքա ասուեցաւ՝ Դուք իմ ժողովուրդը չէք, նոցանց պիտի ասուի՝ Կենդանի Աստուծոյ որդիք։
11 Եւ Յուդայի որդիքն ու Իսրայէլի որդիքը պիտի ժողովուին մէկտեղ, և իրանց վերայ մէկ իշխան դնեն և վեր գնան երկրէն, վասն զի մեծ է Յեզրաելի օրը։

ԳԼ. Բ

1 Ձեր եղբայրներին ասացէք՝ †Ա-մմի և ձեր քոյրերին՝ ‡Ռու-համա.
2 Վիճեցէք ձեր մօր հետ, վիճեցէք, վասն զի նա իմ կինը չէ, և ես նորա այրը չեմ. որ նա հեռացնէ իր պոռնկութիւնները իր երեսից, և իր շնութիւնները իր
3 ծոցերի միջից։ Որ մի գուցէ նորան հանեմ մերկացնեմ, և նորան ներկայեցնեմ իր ծնուած օրին պէս. և նորան անապատի պէս շինեմ, և նորան անջուր երկրի պէս անեմ և ծարաւով մեռ-
4 ցընեմ նորան. Եւ նորա որդիանց չողորմեմ, վասն զի պոռնկութեան որդիք են նորանք։
5 Վասն զի պոռնկացաւ նորանց մայրը, խայտառակուեցաւ նորանց ծնողը. վասն զի ասաց. Գնամ իմ հմայիչներուն ետևից, որոնք որ տալիս են իմ հացը և ջուրը, բուրդն ու քթանը. իւղս և խըմելիքներս։
6 Դորա համար ահա ես փուշերով ցանգ պիտի քաշեմ Նորա ճանապարհին և նորան պիտի պատեմ պատով, որ
7 իր շաւիղները չգտանէ։ Եւ նա կը գնայ իր հմայիչներուն ետևից, բայց նորանց չի հասնիլ, և նորանց կ'որոնէ, բայց չի գտնալ.

*Ոչ իմ ժողովուրդ
†Իմ ժողովուրդ
‡Ողորմեալ

այն ժամանակ կ'ասէ. Ես դառնամ գնամ իմ առաջի մարդուս մօտ, վասն զի ինձ համար այն ժամանակը լաւ էր քան թէ հիմա։ Եւ նա չգիտէր, որ ես էի 8
տալիս իրան ցորենը, գինին և իւղը. և նորա արծաթը շատացրի և ոսկին. որոնցով նորանք Բահաղներ շինեցին։ Վասն 9
որոյ հասկերը եւս պիտի առնեմ ցորենս իր ժամանակին և գինիս՝ իր եղանակին. և պիտի խլեմ բուրդս ու քթանս, որ նորա մերկութիւնը ծածկելու համար էր. Եւ 10
հիմա պիտի յայտնեմ նորա անպատշաճութիւնը նորա հմայիչների առջև, և ոչ ոք չէ կարող նորան ազատել իմ ձեռքից։ Եւ 11
պիտի դադարեցնեմ նորա բոլոր ուրախութիւնները, նորա տօնը, ամսագլուխները և շաբաթները. և նորա բոլոր հանդիսաւոր ժամանակները. Եւ պիտի 12
աւերեմ նորա որթերը և թզենիները, որոնց համար ասում էր. Թէ նորանք իմ կապիկներն են, որ իմ հմայիչները տուել են ինձ. և ես նորանց անտառ պիտի շինեմ, և գազանները պիտի ուտեն նորանց։ Եւ նորան 13
պիտի պատժեմ Բահաղիմների օրերի համար, որոնցում նա խունկ էր ծխում նորանց, և զարդարուում էր օղերով և պատճառանքով, և իր հմայիչների ետևից գնում, և ինձ մոռացել էր, ասում է Տէրը։

Սորա համար ահա ես նորան կը 14
համոզեմ, և նորան կ'առնեմ անապատը, և կ'խօսեմ նորա սրտի հետ։ Եւ ես կ'տամ նորան իր այ- 15
գինները այնտեղից, և Ա-քորի ձորը իբրև յոյսի դուռ, և նա կ'պատասխանէ այնտեղ իր մանկութեան օրերի պէս և իր Եգիպտոսի երկրից վեր գալու օրուան պէս։ Եւ 16
կ'լինի այն օրը, ասում է Տէրը, որ ինձ Ով իմ այր կ'կանչես, և ինձ այլևս *Բահատս չես կոչել։ Եւ ես կ'հեռացնեմ Բահա- 17
գինների անունները նորա բեր-

*Տէրս

նից . և նորանք այլևս պիտի չը
18 յիշուին իրանց անուններով ։ Եւ
նորանց համար ուխտ պիտի դը-
նեմ այն օրը դաշտի գազանների
հետ և երկնից թռչունների հետ
և երկրի սողուններուն հետ . և սա-
ղեղը , աւերը և պատերազմը պի-
տի կոտրեմ երկրից , և նորանց
պիտի պառկեցնեմ ապահով-
19 թեամբ ։ Եւ քեզ պիտի նշանեմ
ինձ համար յաւիտեան . և քեզ
պիտի նշանեմ ինձ համար ար-
դարութիւնով և իրաւունքով ,
և ողորմութիւնով ու գթու-
20 թիւնով ։ Եւ քեզ պիտի նշանեմ
ինձ համար ճշմարտութիւնով ,
21 և դու կ'ճանաչես Տէրոջը ։ Եւ կը
լինի այն օրը , որ ես կ'պատաս-
խանեմ , ասում է Տէրը , կ'պա-
տասխանեմ երկնքին , և նա կը
22 պատասխանէ երկրին ։ Եւ երկիրը
կ'պատասխանէ ցորենին , գինուն
և իւղին , և նորանք կ'պատաս-
23 խանեն Յեզրէելին ։ Եւ նորան
պիտի սերմանեմ ինձ համար երկ-
րի վերայ և պիտի ողորմեմ չո-
ղորմեալին , և կ'ասեմ նորան որ
իմ ժողովուրդը չէ . դու իմ ժո-
ղովուրդս ես , և նա կ'ասէ . Ով
իմ Աստուած ։

ԳԼ . Գ

1 Եւ ասաց ինձ Տէրը . Էլի գնա
սի կին սիրիր՝ ընկերիցը սիրուած ,
ինչպէս որ Տէրը սիրում է Իս-
րայէլի որդիանցը , խակ նորանք
դառնում են դէպի ուրիշ աստ-
ուածներ և չամիչի կարկանդակ-
2 ներ են սիրում ։ Եւ ես առի նո-
րան ինձ համար տասնեհինգ ար-
ծաթով և մէկ ու կէս քոռ գա-
3 րիով , Եւ ասացի նորան . Շատ
օրերով կ'նստես ինձ համար , չես
պոռնկանալ , և մարդու չես մօ-
տենալ , խակ ես էլ նոյնպէս քո
նկատմամբ ։
4 Վասն զի շատ օրեր Իսրայէլի
որդիքը պիտի նստեն առանց թա-
գաւորի և առանց իշխանի , և
առանց զոհի ու առանց կոթողի ,
և առանց եփուդի ու առանց
5 թերափիմի ։ Յետոյ պիտի դար-

նան Իսրայէլի որդիքը և որոնեն
իրանց Տէր Աստուածն և իրանց
Դաւիթ թագաւորին , և դողալ
մօտենան Տիրոջը և նորա բա-
րութեանը վերջի օրերուն ։

ԳԼ . Դ

1 Լսեցէք Տիրոջ խօսքը , ով Իս-
րայէլի որդիք , վասն զի Տէրը վէճ
ունի երկրի բնակիչների հետ , ո-
րովհետև ճշմարտութիւն չկայ ,
ողորմութիւն չկայ , և Աստուծոյ
գիտութիւն չկայ երկրի մէջ ։
2 Երդնուելն ու ստելը և սպանելն
ու գողանալն ու պոռնկանալը
դուրս են թափուել . և արիւն-
ները արիւնների են հասնում ։
3 Դորա համար երկիրը սուգ պիտի
անէ , և պիտի նուաղին նորա
բոլոր բնակիչները գաշտի գազան-
ների և երկնքի թռչունների հետ ,
և ծովի ձուկերն էլ պիտի վեր-
4 ջանան ։ Սակայն թող մարդ չը
վիճէ , և մարդ չյանդիմանէ .
բայց քո ժողովուրդը քահանայի
հետ վիճողների պէս է ։ Եւ դու
5 կ'գլորուես ցերեկը , և կ'գլորուի
քեզ հետ մարգարէն էլ գիշերը ,
և պիտի բնաջինջ անեմ քո մօրը ։
6 Իմ ժողովուրդը բնաջինջ եղաւ
գիտութիւն չունենալու համար . վա-
սն զի դու մերժեցիր գիտու-
թիւնը , ես էլ քեզ եմ մերժե-
լու իմ քահանայութիւնից . և
դու մոռացար քո Աստուծոյ օ-
րէնքը , ես էլ քո որդիանցն եմ
7 մոռանալու ։ Որչափ որ մեծացան , Ա
այնչափ մեղանչեցին ինձ դէմ .
նորանց փառքը ես անարգու-
8 թեան պիտի փոխեմ ։ Նորանք
ուտում են իմ ժողովրդի մեղքը ,
և նորանց անօրէնութեանը ցան-
կանում են սրտով ։ Եւ պիտի 9
լինի ինչպէս ժողովրդին նոյնպէս
էլ քահանային , և նորանց պիտի
պատժեմ նորանց ճանապարհնե-
րի համեմատ , և նորանց գործ-
քերը պիտի հատուցանեմ իրանց ։
10 Եւ նորանք կուտեն ու չեն կըշ-
տանալ , կ'պոռնկանան ու չեն
բազմանալ , վասն զի թողել են
Տիրոջը որ չհնազանդեն ։

11 Շնութիւնը, դինին և քաղ-
12 ցած ուռնում են սիրտը։ Իմ ժողովուրդը իր փայտին է հարցնում, և իր ցուպը պիտի խնդրէ նորան. վասն զի պոռնկութեան հոգին խաբել է, և պոռնկացան իրանց Աստուծոյն
13 չհպատակելով։ Լեռանց գլուխներին զոհ են մատուցանում, և բլուրների վերայ ծխում կաղնու, կաղամախի և բևեկնու տակ՝ քանզի հովանին սիրուն է, ապա համար ձեր աղջիկները պոռնկանան, և ձեր հարսերը շնութիւն անեն։
14 Ես չեմ պատժել ձեր աղջիկներին նորանք պոռնկանալուս, և ձեր հարսներին երբոր նորանք շնանան. վասն զի ապրանք պոռնիկների հետ բաժանուած են, և նուիրեալ բոզերի հետ զոհում են. և ժողովուրդը, որ չէ հասկանում, կորչում է։
15 Թէև դու պոռնկանաս, ով Իսրայէլ, Յուդան թող յանցաւոր չլինի. և մի գնաք Գաղգաղա, և վեր մի երթէք Բեթաւան, և երդում մի անէք՝ Կենդանի է
16 Տէրը։ Վասն զի ապստամբ եղինջի պէս ապստամբել է Իսրայէլ. հիմա նորանց պիտի արածեցնէ Տէրը դառների պէս լայն-
17 արձակ տեղ։ Եփրեմը կուռքերին է փակել. թող առաք դա-
18 րան։ Խառնուակ է նորանց արբեցողութիւնը, շնութիւնով շըներացել են, սիրով սիրահարուել
19 են ամօթի նորա իշխաններըը։ Քամին նորան փաթաթել է իր թևերի մէջ և նորանք պիտի ամաչեն իրանց պատճառներից։

ԳԼ. Ե

1 Լսեցէք այս, ով քահանաներ, և ականջ դրէք, ով Իսրայէլի տուն, և ուշադիր եղէք, ով Թագաւորի տուն, վասն զի դատաստան կայ ձեզ համար, որովհետև դուք որոգայթ եղաք Մասփայում, և տարածուած
2 վարմ՝ Թաբորի վերայ։ Եւ ապականութիւնով մոլորուողները խորասոյզ եղան, բայց ես նորանց ամենին պիտի խրատեմ։
3 Ես ճանաչում եմ Եփրեմին, և Իսրայէլը ծածկուած չէ ինձանից. վասն զի դու Եփրեմ շնացար, ով Եփրեմ, Իսրայէլը պղծուած
4 է։ Թոյլ չեն տալիս նորանց գործքերը, որ ետ դառնան իրանց Աստուծոյ մօտ. վասն զի նորանում շնութեան հոգի կայ, և Տիրոջը չեն ճանաչում։
5 Եւ Իսրայէլի հպարտութիւնը պիտի խոնարհուի նորանց առջև, և Իսրայէլն ու Եփրեմը պիտի գլորուին իրանց անօրէնութեամբը, Յուդան էլ պիտի գլորուի նորանց հետ։
6 Նորանք իրանց ոչխարներովն ու արջառներովը պիտի գնան Տիրոջը որոնելու, բայց պիտի չգտանեն, նա քաշուել է նորանցից։
7 Անհաւատարմութիւն արին Տիրոջը, վասն զի օտար որդիներ ծնան. հիմա ամիսը պիտի ուտէ նորանց իրանց վիճակներովը։
8 Շեփոր հնչեցրէք Գաբաայում, փող՝ Ռամայում, բարձրաձայն կանչեցէք Բեթաւանում, քո ետևիցը, ով Բենիամին։
9 Եփրեմը ամայի պիտի դառնայ իր յանդիմանութեան օրը. Իսրայէլի ցեղերում ճշմարտութիւնն իմացրի։
10 Յուդայի իշխանները տահմանը փոխողների պէս էղան, նորանց վերայ պիտի թափեմ ջրերի պէս իմ բարկութիւնը։
11 Եփրեմը ճնշուած է և դատաստանով փշրուած, վասն զի յօժարակամ գնաց հրամանի ետևիցը։
12 Բայց ես ցեցի պէս եմ Եփրեմի համար, և ուռիճի պէս՝ Յուդայի տան համար։
13 Եւ Եփրեմը տեսաւ իր ցաւը և Յուդա՝ իր վէրքը, և Եփրեմը գնաց Ասորեստան, և Յարէբ թագաւորի մօտ ուղարկեց. բայց նա կարող չէ ձեզ առողջացնելու, և չի առողջացնել
14 ձեր վէրքը։ Վասն զի ես առիւծի պէս եմ Եփրեմի համար, և առիւծի պէս՝ Յուդայի տան համար. ես՝ ես պիտի պատառեմ ու գնամ, պիտի տանեմ և ազատող պիտի չլինի։
15 Գնում եմ՝ ես եմ դառնում իմ

տեղը, մինչև որ իրանց յանցանքը խոստովանեն և իմ երեսը փրկանեն. երբոր նորանք նեղութեան մէջ լինեն կանուխ պիտի լինձ գիմեն։

ԳԼ. Զ

1 Եկէք ու եա դառնանք Տիրոջ մօտ, վասն զի նա պատառեց, և նա էլ կ'ըժշկէ մեզ, նա զարկեց, 2 նա էլ կ'պատէ մեզ։ Նա մեզ կ'կենդանացնէ երկու օրից յետոյ, երրորդ օրը նա մեզ կ'կանգնեցնէ, և մենք կ'ապրենք նորա 3 առջևը։ Եւ կ'ճանաչենք, և էլ կ'հետևինք ճանաչելու Տիրոջը, արշալոյսի պէս պատրաստ է նորա ելքը, և նա պիտի գայ մեզ համար անձրևի պէս, վերջի անձրևի պէս որ ոռոգում է երկիրը։ 4 Ի՞նչ անեմ քեզ, ով Եփրեմ, ի՞նչ անեմ քեզ, ով Յուդա, վասն զի ձեր բարեպաշտութիւնը առաւօտեան ամպին պէս է, և վաղահաս ցօղի նման է որ անցնում 5 է։ Նորա համար տաշեցի մարգարէներով, նորանց սպանեցի իմ բերանի խօսքերով, և քո դատաստանները դուրս կ'գայ իրրև լոյս։ 6 Վասն զի ողորմութիւն եմ ուզում և ոչ թէ զոհ, և Աստուծոյ գիտութիւն քան թէ ող- 7 ջակէզներ։ Բայց նորանք Ադամի պէս ուխտը զանց են անում, այնտեղ ինձ անհաւատարմու- 8 թիւն արին։ Գաղաադը անօրէնութիւն անողների քաղաք է, 9 շաղախուած է արիւնով։ Աւազակների մարդու եաևից դարան մտնելու պէս քահանաների խումբը Սիւքեմի ճանապարհումը մեղ- 10 գործութիւն են անում։ Իսրայէլի տանը սոսկալի բաներ տեսայ, այնտեղ է Եփրեմի պոռնկութիւ- 11 նը, Իսրայէլը պղծուեցաւ։ Քեզ համար էլ, ով Յուդա, մի հունձք կայ, երբոր ես եա կ'դարձնեմ իմ ժողովրդի գերութիւնը։

ԳԼ. Է

1 Ես Իսրայէլին բժշկելիս յայտնուեցաւ Եփրեմի անօրէնութիւնը և Սամարիայի չարութիւնները, վասն զի նորանք սուտ են գործում, գողը ներս է մտնում, աւազակների գունդը դրսումը մերկացնում է։ 2 Եւ իրանց սրտումը չեն ասում. թէ Ես յիշում եմ նորանց բոլոր չարութիւնը, հիմա նորանց գործքերը պատշարում են նորանց. նորանք իմ երեսի առջև են։ 3 Իրանց չարութիւնովը ուրախացնում են թագաւորին, և իրանց սուտերնովը՝ իշխաններին։ 4 Նորանք ամենքը շնացողներ են, մի թոնիրի նման որ վառուած է հաց թխողից, որ դադարում է արծարծելուց՝ խմորը հունցելուց մինչև նորա թթուելը։ 5 Մեր թագաւորի օրումը հիւանդացան իշխանները գինու սաքուեթիւնից, նա մեկնեց իր ձեռքը ծաղր անողների հետ։ 6 Վասն զի նորանք իրանց սիրտը թոնիրի պէս են շինել իրանց դարանումը, բոլոր գիշերը գնում է նորանց հացթուխը, առաւօտը նա վառում է բոցավառ կրակի պէս։ 7 Նորանք ամենքը տաքցել են թոնիրի պէս. և ուտում են իրանց դատաւորներին. նորանց բոլոր թագաւորներն ընկել են. նորանցում ինձ կանչող չկայ։

8 Եփրեմը խառնուել է ժողովուրդներին, Եփրեմը դառել է մի չդարձուած կարկանդակ։ 9 Օտարները կերան նորա զօրութիւնը, բայց ինքը չգիտէ. ալևորութիւն էլ է թափուել վերան, դարձեալ ինքը չգիտէ։ 10 Եւ Իսրայէլի զօրութիւնը խոնարհուել է նորա հանդէպ, բայց նորանք եա չեն դառնում իրանց Տէր Աստուծոյ մօտ, և այսու ամենայնիւ նորան չեն որոնում։ 11 Եւ Եփրեմը եղել է մի միամիտ աղաւնու պէս՝ անխելք. Եգիպտացիներին են կանչել, Ասորեստան են գնում։ 12 Երբ որ նորանք գնացին, եա իմ վարմը պիտի տարածեմ նորանց վերայ, նորանց պիտի իջեցնեմ երկնից թռչնի պէս, և նորանց պատժեմ ինչպէս որ լսուել է ժողովքին։

13 Վա՛յ նորանց, վասն զի փա-
խան ինձանից, աւերա՛մ նորանց,
վասն զի ինձ գէմ յանցաւոր ե-
ղան. թէև ես նորանց փրկեցի.
բայց նորանք ինձ գէմ ասու-
14 թիւններ են խօսում։ Եւ նորանք
չազաղակեցին ինձ գէմ իրանց
սրտովը, երբոր ողբում էին ի-
րանց անկողիններըն վերայ, նորանք
ցորեներն և գինու համար խառնվում
15 են, խոտորում են ինձ գէմ։ Եւ
ես խրատեցի, զօրացրի նորանց
բազուկը, իսկ նորանք ինձ գէմ
16 չարութիւն խորհեցին։ Նորանք
դառնում են, բայց ոչ Թէ դէպի
Բարձրեալը, նորանք խաբէայ
աղեղի պէս են դարձել, նորանց
իշխանները սրով պիտի ընկնեն
իրանց լեզուի կատաղութիւնից.
նա նորանց նախատինքը կ'ինի Ե-
գիպտոսի երկրումը։

ԳԼ. Ը

1 Փողը բերանի՛դ. արծիւի պէս
յո՛ղն-կո՛ղմ է Տիրոջ տան վերայ,
որովհետև զանց արին իմ ուխ-
տը, և իմ օրէնքի դէմ յանցանք
2 գործեցին։ Դէպի ինձ են աղա-
ղակում. Ով Աստուած, մենք
3 ճանաչում ենք քեզ։ Իսրայէլը
մերժեց բարին, թշնամին պիտի
4 հալածէ նորան։ Նորանք թա-
գաւոր դրին, բայց ոչ Թէ ինձա-
նից. իշխաններ դրին, բայց ես
չիմացայ. իրանց արծաթին ու ի-
րանց ոսկին իրանց համար կուռ-
քեր շինեցին, որպէս զի բնաջինջ
լինին։
5 Քո որթը մերժուեցաւ, ով
Սամարիա, վառուեցաւ իմ բար-
կութիւնը նորանց վերայ. մինչև
Ե՞րբ պիտի նորանք չկարողանան
6 արդարել։ Վասն զի նա էլ է Իս-
րայէլից. արուեստաւորը շինեց
նորան, և նա Աստուած չէ. վա-
սըն զի փշուր փշուր պիտի գառ-
7 նայ Սամարիայի որթը։ Վասն
զի քամի սերմեցին և մրրիկ պի-
տի հնձեն. նա հասկ չունի. բոյ-
սը չի շինելու խիւսը. եթէ շինէ
էլ օտարներն են կուլ տալու։
8 Իսրայէլը կուլ գնաց. հիմա ազ-

գերի մէջ պիտի լինին անտարժ
անելի պէս։ Վասն զի նորանք 9
գնացին Ասորեստան. վայրենի է-
շը մինն է գալիս իրան համար.
Եփրեմը սիրականներ է վարձում։
Թէև վարձեն էլ ազգերի մէջ, 10
ես նորանց պիտի ժողովեմ. և
նորանք *կ'հանգստանան մի քիչ
իշխանաց թագաւորի բեռիցը։
Վասն զի Եփրեմը շատացրեց սե- 11
զանները մեղանչելով, սեղանները
նորա համար մեղքի պատճառ
եղան։ Եւ նորան գրեցի իմ բիւ- 12
րաւոր օրէնքները. է՛լ օտարոտի
բանի պէս համարուեցան։ Իրրև 13
իմ ընծաների զոհեր նորանք միս
են զոհում և ուտում, Տէրը նո-
րանց չէ հաւանում. հիմա պիտի
յիշէ նորանց անօրէնութիւնը և
պատժէ նորանց մեղքերը. նո-
րանք Եգիպտոս պիտի դառ-
նան։ Որովհետև Իսրայէլը մոռա- 14
ցաւ իր Արարչին և պալատներ
շինեց. և Յուդան շատացրեց պա-
րսպապատ քաղաքները։ Բայց ես
կրակ պիտի ուղարկեմ նորանց
վերայ, և նա պիտի չափէ նորա
պալատները։

ԳԼ. Թ

Մի ուրախանար, ով Իսրայէլ, 1
ցնծութեամբ ժողովուրդների պէս,
վասն զի պոռնկութիւն արիր քո
Աստուծոյ դէմ. կոպէնք սիրեցիր
ամեն ցորենի կալի վերայ։ Կալը 2
և հնձանը նորանց չի կերակրիլ,
և քաղցուն պիտի առէ նորան։
Նորանք չեն բնակիլ Տիրոջ երկ- 3
րում, այլ Եփրեմը Եգիպտոս պիտի
դառնայ Եգիպտոս. և Ասորեստա-
նում պիղծ բաներ պիտի ու-
տէ։ Նորանք գինու նուէր պիտի 4
չմատուցանեն Տիրոջը և նորան
ընդունելի չեն նորանց զոհերը.
ագաւորներն հացի պէս են նո-
րանց համար. նորա բոլոր ուտող-
ները պիտի պղծուին, վասն զի
նորանց հացը նորանց անձերի հա-
մար պիտի չմտնէ Տիրոջ տունը։
Ի՞նչ էք անելու տօնի օրը, և 5

*կ'չարչարուին

Տէրոջ տօնախմբութեան օ՞րը։
6 Վասն զի ահա գնացեալ են կոր-
ծանումիցը, Եգիպտոսը պիտի
ժողովէ նորանց, Մեմփիսը նո-
րանց թաղէ. նորանց ցանկալի
արծաթեղէնները եղինճը պիտի
ժառանգէ, փուշ պիտի լինի նորանց
7 վրաններուն։ Եկան այցելու-
թեան օրերը, եկան հատուցման
օրերը, Իսրայէլը պիտի իմանայ.
անմիտ է մարգարէն, խելագար՝
ներշնչեալ մարդը քո անօրէնու-
թեան շատութեան եւ մեծ հա-
8 կառակութեան համար։ Մտիկ
է տալիս Եփրեմը իմ Աստուծոյն.
մարգարէն որոգայթ է լարուած
նորա բոլոր ճանապարհներուն վը-
րայ, հակառակութիւն՝ իր Աս-
9 տուծոյ տան մէջ։ Ապականուե-
ցան խրուեցան Գաբաայի օրերուն
պէս. Նա պիտի յիշէ նորանց ա-
նօրէնութիւնը, պատժէ նորանց
մեղքերը։
10 Խաղողի պէս գտայ ես անա-
պատումը Իսրայէլին. Թզենու
առաջի երախայրիի պէս տեսայ
ձեր հայրերուն, նորանք եկան Բա-
ալփեգովր, և իրանց նուիրեցին
ամօթի ու պիղծ եղան իրանց սի-
11 րածին պէս։ Եփրեմի փառքը
թռչնի պէս պիտի թռչուէ. ոչ
ծնունդ, ոչ յղութիւն, ոչ յղա-
12 թիւն պիտի լինի։ Թէև իրանց որդ-
կանցը մեծացնեն, դարձեալ պի-
տի մարդուց զուրկ թողեմ նո-
րանց. որովհետև վա՛յ էլ նորանց,
13 երբոր ես ետ քաշուիմ։ Եփրեմը՝
ինչպէս որ Տիւրոսը տեսայ, տըն-
կուած էր զուարճալի տեղ. բայց
Եփրեմը իր որդկանցը դուրս պի-
14 տի հանէ սպանողին մօտը։ Տուր
նորանց, ով Տէր, ի՞նչ պիտի
տաս. տուր նորանց վիժող ար-
15 գանդ և ցամաք ստինքներ։ Նո-
րանց բոլոր չարութիւնը Գաղգա-
ղայուն է. վասն զի այնտեղ ա-
տեցի նորանց իրանց գործքերուն
չարութեան համար, նորանց ար-
տաքսելու եմ իմ տանիցը, էլ
չեմ սիրելու նորանց. նորանց բո-
լոր իշխանները ապստամբներ են։
16 Չարուժոռեցաւ Եփրեմը. նո-
րանց արմատը չորացաւ. պտուղ
չեն տալու. թէև ծնեն էլ, նո-
րանց արգանդի ցանկալիներուն էլ
պիտի մեռցնեմ։
17 Նորանց մերժելու է իմ Աստ-
ուածը, վասն զի նորան չլսեցին.
և թափառողներ պիտի լինին ազ-
գերուն մէջ։

Գլ. Ժ

1 Մի ասղարթաճաւալ որթ է
Իսրայէլը. պտուղ է բերում ի-
րան համար. Նա շատացրել է
սեղանները իր երկրի արդիւնքի
չափ. որքան լաւ է երկիրը, նո-
րանք այնքան լաւացնում են կուռ-
քերը։ Կոկուած էր նորանց սիր-
տը. Հիմա յանցաւոր կ՚լինին. Նա
պիտի ջարդէ նորանց սեղանները,
փչացնէ նորանց կուռքերը։ Վա-
սըն զի հիմա նորանք պիտի ա-
սեն. Մենք թագաւոր չունինք,
որովհետև Տէրից չվախեցանք, և
թագաւորն ի՞նչ կ՚անէ մեզ։
4 Խօսքեր են խօսել, սուտ երդ-
ուել, ուխտ դնելիս, և դատաս-
տանը սէզի պէս պիտի բուսնէ
արտի ակօսների վերայ։
5 Բեթաւանի որթերի պատճառաւ պիտի
վախենան Սամարիայի բնակիչնե-
րը, վասն զի սուգ պիտի անէ
նորա վերայ նորա ժողովուրդը,
և նորա քուրմերը գոռալու են
նորա փառքի համար. վասն զի
նա գերի պիտի գնայ նորանից։
6 Նա էլ է Ասորեստան տարուե-
լու իբրև ընծայ Յարէբ թագա-
ւորի համար, ամօթը պիտի բռնէ
Եփրեմին, և Իսրայէլը պիտի ա-
մաչէ իր խորհրդիցը։ Սամարիան
7 բնաջինջ պիտի լինի իր թագա-
ւորով, ջրի երեսի փրփուրին
պէս։ Եւ քարուքանդ պիտի լի-
8 նին Աւենի բարձրաւանդակները՝
Իսրայէլի մեղքը, փուշ ու տա-
տասկ պիտի բուսանէ նորանց սե-
ղանների վերայ. և պիտի ասեն
լեռանց. Ծածկեցէք մեզ, և բլ-
լուրներին՝ Ընկէք մեզ վերայ։
9 Գաբաայի օրերիցը մեղք գոր-
ծեցիր, ով Իսրայէլ. այնտեղ
կանգնեցին. նորանց չհասաւ գա-
բաայում պատերազմը չորու-

10 Թեան որդկանց դէմ, իմ ազգածովը նորանց կ'խրատեմ էլ, և նորանց վերայ ժողովուրդներ կը ժողովեմ, նորանք իրանց երկու անօրէնութեանց համար կապ-
11 ուած ժամանակը։ Եւ եփրեմը մի սովրած երինջ է՝ կալ կուսել սիրող, բայց ես նորա վրի գեղեցկութեան վերայ ըն-ե կ'անցուցնեմ, կառքի եմ լծելու Եփրեմին. Յուդան պիտի հերկէ. Յակոբը պիտի տափանէ նորա համար։

12 Սերմեցէք ձեզ համար արդարութեամբ, հնձեցէք ողորմութեան համեմատ, խամնհատ մըշակեցէք ձեզ համար, ըսա ո-րում ժամանակ է Տիրոջը որոնելու, մինչև որ ինքը գայ և արդարութիւն տեղայ ձեզ վերայ։
13 Դուք ամբարշտութիւնով էք հերկել, անօրէնութիւն հնձեցիք. սուտեան պտուղը կերաք. որովհետև դու ապաւինեցիր քո ճանապարհին ե քո զօրաւորներուն
14 բազմութեանը։ Ուրեմն խռովութիւն է վեր կենալու քո ժողովուրդներուն մէջ, և քո բոլոր բերդերը պիտի քանդուին, ինչպէս Սալման քանդեց Բեթարբէլը պատերազմի օրը. մայրը որդկան-
15 ցը հետ ջարդուեցաւ։ Այսպէս է անելու ձեզ Բեթէլը, ձեր չարութեան չար լինելու համար. արշալոյսին պիտի բոլորովին բնաջինջ լինի Իսրայէլի թագաւորը։

ԳԼ. ԺԱ

1 Երբոր մանուկ էր Իսրայէլը, ես սիրեցի զայն, և Եգիպտոսից կանչեցի իմ որդին։ Կանչեցին նորանց, բայց նորանք գնացին նորանց առջևից. Բահաղիմ ևերին զոհ մատուցին, և կուռքերին խունկ ծխեցին։ Բայց ես եմ ան ոճեցի Եփրեմին նորանց բռնում էի իրանց բազուկներից, սակայն չիմացան թէ ես եմ
4 բժշկում նորանց։ Մարդու լարերով և նորանց քաշեցի սիրոյ կապերով, և ես նորանց համար եղայ իբրև նորանց ծնօտներուցը լուծը հանող, և հմնդրատ ընե-ը նորանց դէմ՝ ուտեցնում էի։ Ես չպիտի դառնայ նա Եգիպտոս, այլ Ասորեստանն է նորա թագաւորը, վասն զի չուզեցին դառնալ։ Եւ պատերազմ պիտի տայ 6 աւրը նորա քաղաքներուն վերայ, և վերջացնէ նորա նիզակները ան լափէ նորանց խորհուրդներուն մասին։ Եւ իմ ժողովուրդը հակամիտ է 7 ինձանից խոտորելու. թէև դէպի բարձրեալն են կանչում նորան, ոչ-ոք վեր չեն կենում միասին։

Ես քեզ ի՞նչպէս թող տամ, 8 ով Եփրեմ, և քեզ յանձնե՞մ, ով Իսրայէլ. ես քեզ ի՞նչպէս Ադմայի պէս անեմ, Սեբոյիմի պէս շինե՞մ, գալարվում է սիրտս ինձանում, միանգամայն քբբրուել է կարեկցութիւնս։ Ես չեմ գործադրել իմ բորբո- 9 քած բարկութիւնը, կրկին չեմ աւերել Եփրեմին. վասն զի ես Աստուած եմ և ոչ թէ մարդ. քո միջումը Սուրբ եմ, և չեմ գալ գրգռմունքով։ Տիրոջ ետևից 10 պիտի գնան. առիւծի պէս է գոչելու նա. երբոր նա գոչէ, արագապէս կ'գան որդիքը արևմուտքից։ Նորանք արագապէս 11 պիտի գան թռչնի պէս Եգիպտոսից, և աղաւնու պէս Ասորեստանի երկրից. և ես նորանց պիտի բնակեցնեմ իրանց տներումը, ասում է Տէրը։

ԳԼ. ԺԲ

Ինձ սուտութիւնով պաշարել է 1 Եփրեմը, և նենգութիւնով՝ Իսրայէլի տունը. բայց Յուդան տակաւին տիրում է Աստուծով, և հաւատարիմ է սուրբերի հետ։ Եփրեմը քամի է արածում, և 2 արևելեան քամու ետևից գնում. ամեն օր սուտութիւն ու աւերումը շատացնում է, և դաշինք են դնում Ասորեստանի հետ, և իւղ են տանում Եգիպտոս։ Եւ 3 Յուդայի հետ էլ վէճ ունի Տէրը, և պիտի պատժէ Յակոբին նորա ճանապարհների համեմատ,

նորա գործքերին համեմատ պիտի
4 հատուցանէ նորան։ Արգանդումը բռնեց եղբօր գարշապարիցը, և իր ոյժովը գօտեմարտեց Աստուծոյ հետ։
5 Եւ գօտեմարտեց հրեշտակի հետ և յաղթեց, լաց եղաւ և աղաչանք արաւ նորան. Բեթէլում գտաւ նորան, և այնտեղ խօսեց մեզ հետ, Ա.յսինքն
6 Տէրը Զօրաց Աստուածը, որի
7 յիշատակը Եհովայ է։ Եւ դու քո Աստուծոյն դարձիր, ողորմութիւն և իրաւունք պահիր, և քո Աստուծոյն յուսա միշտ։
8 Եւ վաճառական է. նորա ձեռքին խաբէութեան կշիռք կայ, նա սիրում է հարստահարել։
9 Բայց Եփրեմն ասում է. Իրաւ հարստացայ, ինձ համար առատութիւն գտայ. իմ բոլոր վաստակներումը մի անօրէնութիւն չեն
10 գտնիլ որ մեղք լինի։ Բայց ես քո Տէր Աստուածն եմ Եգիպտոսի երկրիցը, դեռ քեզ վրանների մէջ եմ բնակեցնելու նաև
11 դիտաւոր օրերի պէս։ Որովհետև խօսեցի մարգարէների հետ, և շատացրի տեսիլքները. և մարգարէների ձեռով առակներ
12 թիւն արի։ Անշուշտ անօրէն է Գաղաադը, իրաւ ունայն են դարձել. Գաղգաղայում արջառներ մորթեցին, նորանց սեղաններն էլ քարակոյտների նման են արտի ակօսների վերայ։
13 Եւ Յակոբը փախաւ Ասորեստանի դաշտը, և Իսրայէլը ծառայեց կնոջ համար, և կնոջ համար
14 պահապան եղաւ։ Եւ մի մարգարէով Տէրը վեր հանեց Իսրայէլին Եգիպտոսից և մի մարգարէով նա պահպանուեցաւ։
15 Եփրեմը դառնապէս բարկացրեց Աստուծոյն, և նորա արիւնը նորա վերայ պիտի թափէ, և նորա նախատինքը նորան կատարի պիտի բերէ Տէրը։

ԳԼ. ԺԴ

1 Երբոր Եփրեմը խօսում էր, դողում էին, բոյց բարկացաւ Բահաղի մէջ, և յանգիտանք կորաւ

Ռուհտով և մնաւ։ Եւ հրեա 2
էլի մեզք են գործում, և իրանց
համար ձուլածոյ կուռքեր են
շինում իրանց արծաթից իրանց
խելքի համեմատ արձանները, որ
ամէնքը արուեստաւորի գործք
են. իրանք ասում են նորանց.
Զոհ անող մարդիկը համբուրեն
որթերին։ Դորա համար պիտի 3
առաւօտեան ամպի պէս լինեն.
և ցօղին պէս որ շուտով անյետ
նում գնում է. մխեղի պէս, որ
փոթորիկը վեր է հանում կալից
ը. և ծխնելոյզից պէս որ ելած
ծուխին պէս։ Սակայն ես քո Աստուածն եմ Եգիպտոսի երկրից 'ի վեր. և ինձանից զատ մի
Աստուած չես ճանաչում. և մի
փրկիչ չկայ բացի ինձանից։ Ես
քեզ ճանաչեցի անապատումը,
առատակէզ երկրումը։ Իրանց ա.
րօտին համեմատ նորանք կշտացան. կշտացան և նորանց սիրտը
հպարտացաւ. որդա համար ինձ
մոռացան։ Եւ ես նորանց հա.
մար պիտի առիւծի պէս լինեմ
ճանապարհի մօտ. նրանց պիտի
ինձի նման պարսից արջի պէս
և գազանի պէս որ ջուսում ունի
նրանց պատռեմ։ Իսրայէլ, քեզ 9
կորցրեցին, բայց ինձանով օգնութիւն կայ։ Ո՞ւր է քո թագաւորը, որ քեզ փրկէ քո բոլոր 10
քաղաքներումը, և քո դատաւորները, որոնց համար ասացիր.
Ինձ թագաւոր և իշխաններ տուր։
Ես քեզ բարկութեանս մէջ թագաւոր տուի, և իմ սրտիս մէջ 11
վերցրի։ Եփրեմի անօրէնութիւնը 12
կապուած է, նորա մեղքը պահուած է։ Նորան ցաւեր են 13
գալիս ինչպէս ծնող կնոջ, նա
անխելք որդի է, որովհետև ժամանակին չի կանգնում ծնունդների առաջ։ Ես նորանց 14
գերեզմանի ձեռից պիտի ազատեցնեմ, մահից պիտի փրկեմ։
Մահ, ո՞ւր են քո ժանտախտները,
գերեզման, ո՞ւր է քո կորուստը։
Ես ինձանից զատ մի բան չեմ
տեսնում։ Թէև նա իր եղբայրների մէջ պտղաբեր է, արեւելեան քամի պիտի գայ, Տիրոջ
շունչը անապատից պիտի բարձրանայ, և նորա աղբիւրը պիտի
ցամաքի, և նորա ակունքը պիտի
չորանայ. նա կողոպտի գանձերի
ամէն սքանչելի կահ-կարասիները։
Սամարիան իր մեղքերի համար 16
պիտի պատժուի, որովհետև իր
Աստուծոյ դէմ ապստամբեցաւ։
Նորանք սրի տակ պիտի ընկնեն,
նորանց մանուկները պիտի ջարդեն, և նորանց յղի կանանց
պիտի պատռեն։

ՈՎՍԵԱՅ

1 Դարձիր, Իսրայէլ, քո Տէր Աստուածիդ, որովհետև քո անօրէնութեան պատճառով ընկար։
2 Ձեզ հետ խօսքեր առէք և դարձէք Տիրոջ. ասացէք նորան.
Ամէն անօրէնութիւն վերացրու
և ընդունիր բարութիւնը, որ
մենք քո շրթանց պտուղները
մատուցանենք։ Ասորեստանը
չպիտի փրկէ մեզ, ձիերի վրայ
չենք նստիլ, և մեր ձեռքերի
գործերին էլ չենք ասիլ. Դուք
մեր աստուածներն էք, որովհետև որբի վրայ ողորմութիւն
կը գտնի քեզ մօտ։ Ես նորանց
կը բժշկեմ իրանց ապստամբութիւնից, սիրով կը սիրեմ նորանց, որովհետև իմ բարկութիւնս նորանցից դարձաւ։ Ես
Իսրայէլի համար կարող կը լինեմ
ինչպէս ցօղ, նա հասկ կը հանի
ինչպէս հաւկիթ, և իր արմատները կը տարածի ինչպէս Լիբանան։ Նորա ճիւղերը կը տարածուին, և նորա գեղեցկութիւնը կը լինի ինչպէս ձիթենի,
և նորա բոյրը ինչպէս Լիբանանի։ Նորա ստուերի տակ նստողները կը դառնան, ցորենի
պէս կը ծաղկին և խաղողի պէս
կը ծաղկին, նորա յիշատակը
կը լինի ինչպէս Լիբանանի գինի։
Եփրեմ, ինչ է քեզ համար կուռքերի հետ, ես նորան կը լսեմ և
կը նայեմ նորան. ես նորան
կանաչ նոճի պէս եմ, ինձանից
պտուղ կը գտնուի քեզ համար։
Ո՞վ է իմաստուն, որ այս բաները հասկանայ, հանճարեղ, որ
գիտենայ. որովհետև Տիրոջ ճանապարհները ուղիղ են, և արդարները նորանցով կը գնան,
բայց յանցաւորները նորանցով
կը գայթագղին։

ցընեմ նորանց, ո՞ւր է ժանտախտդ, մահ, ո՞ւր է աւերմունքդ, դժո՛խք. պղջումը ծածկուած է իմ աչքերից։ 15 Վասն զի նա պաղատեր է եղբարցը մէջ. ե՞յց արևելեան քամին պիտի գայ, Տէրոջը հողմը վեր է կենալու անապատից, և պիտի ցամաքի նորա աղբիւրը, և չորանայ նորա ակունը. նա պիտի կողոպտէ ամեն ցանկալի բաներէ գանձը։ 16 Սամարիան աւերակ պիտի դառնայ, որ ապստամբեց իր Աստուծոյն դէմ. սրով պիտի ընկնեն, նորանց երեխաները պիտի ջախջախուին. և նորանց յղի կանայքը պիտի ճեղքուին։

ԳԼ. ԺԴ

1 Եա դարձիր, ով Իսրայէլ, քո Տէր Աստուծոյդ մօտ. վասն զի դու գլորուել ես անօրէնութեան 2 պատճառով։ Ձեզ հետ խօսքեր վեր առէք և եա դարձէք Տիրոջ մօտ. ասացէք նորան. Ամեն անօրէնութիւն վեր առ, և բարի դուն ընդունէ բարութեամբ, և մենք պիտի մատուցանենք մեր շրթունքներուն զուարակները։ 3 Ասորեստանցին մեզ չի փրկել. ձիերի վերայ չենք հեծնիլ, և մեր ձեռաց գործերին չենք ասել միւս անգամ. Ով մեր Աստուած. վասն զի որբը քեզանից կ'գտնէ ողորմութիւն։

Նորանց խոտորմունքը պիտի բժշկեմ, նորանց պիտի ձրի սիրեմ, վասն զի իմ բարկութիւնը 4 ետ է դարձել նորանցից. Ես ցօղի պէս պիտի լինիմ Իսրայէլի համար. նա շուշանի պէս պիտի ծաղկէ, և արմատներ պիտի գցէ Լիբանանի պէս։ 6 Նորա ոստերը պիտի տարածուին, և նորա վայելչութիւնը ձիթենու պէս, և նորա բուրմունքը Լիբանանի պէս պիտի լինի։ 7 Ետ պիտի դառնան նորա հովանուն նստողները. պիտի կենդանանան ցորենով, և ծաղկեն որթի պէս, նորա յիշատակը Լիբանանի գինուն պէս պիտի լինի։ 8 Եփրեմը պէտք ասէ. Ես էլ ի՞նչ ունիմ կուռքերի հետ։ Ես լսեցի նորա խնդրուածքը, և նորան խնամեցի, ես կանաչ մայրի ծառի պէս եմ. ինձանից է քո պտուղը գտնուելու։

9 Ո՞վ է իմաստուն, որ հասկանայ այս, կամ հասկացո՞ղ, որ գիտենայ սորանց. վասն զի ուղիղ են Տիրոջ ճանապարհները և արդարները գնում են նորանցով, իսկ յանցաւորները կ'գլորուին նորանցում։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎԵԼԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Տիրոջ խօսքը, որ եղաւ Փա-
2 թուէլի որդի՝ Յովելին։ Լսեցէք այս, ով ծերեր, և ականջ դրէք, ով երկրի բոլոր բնակիչներ, այս պիտի բան եղե՞լ է արդեօք ձեր օրերին, և կամ ձեր հայրերի օրերին։ 3 Սորա մասին պատմեցէք ձեր որդկանցը, և ձեր որդիքն իրանց որդկանցը, և նորանց որդիքը ուրիշ սերունդի։ 4 Խատնիճից մնացածը մորեխը կերաւ, և մորեխից մնացածը Ջրեակից մնացածը եւ Ջրեակից մնացածը եղբէլը կերաւ։

Զարթնեցէք, ով արբշիռներ, և լացէք, և ողբացէք, ով ամեն գինի խմողներ, քաղցուին համար որ կտրուել է ձեր բերանից։ 6 Վասն զի մի ազգ է վեր եկել իմ երկրի վերայ՝ զօրաւոր և անթիւ, նորա ատամները առիւծի ատամներ են, և մատակ առիւծի ժանիքներ ունի։ 7 Նա իմ որթը աւերեց, թզենիս կոտրատեց, բոլորովին պլոկեց ու դէն գցեց, նորա ուռերը սպիտակացրեց։

8 Ողբա կոյսի պէս, որ քուրձով
գօտևորուած է իր երիտասար-
9 դութեան տիրոջ վերայ։ Կորըն-
ուել է հացի ընծան և նուէրը
Տիրոջը տանիցը, սուգ են անում
Տիրոջը ծառայող քահանաները։
10 Աչքը աւերուել է, երկիրը սուգ
է անում, վասն զի աւերուել է
ցորենը, չորացել քաղցուն, թօ-
ռոմել իւղը։
11 Ամաչեցէք, ով երկրագործներ.
ողբացէք, ով այգեգործներ, ցո-
րենին համար և գարիին համար որ
12 փչացել է արտի բերքը։ Որթը չո-
րացել է, և թզենին թոռոմել,
նռնենին, արմաւենին էլ և խնձո-
րենին՝ արտի բոլոր ծառերը չորա-
ցել են. վասն զի ցամաքել է ու-
րախութիւնը մարդկանց որդինե-
րիցը։
13 Գօտևորուեցէք և սուգ արէք,
ով քահանաներ, ողբացէք, ով
սեղանի պաշտաւորներ, եկէք՝
գիշերը քուրձերով անցրէք, ով
իմ Աստուծոյ պաշտաւորները,
վասն զի խափանուել է ձեր Աս-
տուծոյ տանիցը հացի ընծան և
14 նուէրը։ Ծոմ արձակեցէք, հանդէս
կանչեցէք. ժողովեցէք ծերերին
երկրի բոլոր բնակիչներին ձեր Տէր
Աստուծոյ տունը և աղաղակե-
ցէք Տիրոջը։
15 Վա՛յ այն օրին, վասն զի մօտ
է Տիրոջ օրը. և իբրև աւերմունք
է գալիս Ամենակարողի կողմից։
16 Ահա մեր աչքի առջև կտրուել
է կերակուրը, մեր Աստուծոյ
տանիցը ուրախութիւնն ու ցըն-
17 ծութիւնը։ Սերմերը փտել են
հողի կօշտերի տակին, ամբաց-
ել են շտեմարանները, քանդը-
ուել ամբարները, վասն զի խոր-
18 շակահար է եղել ցորենը։ Ինչ-
պէս են հեծում անասունները,
շշկլտել են արջառների հօտերը,
որովհետև արօտ չկայ նորանց
համար, ոչխարների հօտերն էլ
19 տանջվում են։ Դէպի քեզ եմ
աղաղակում, ով Տէր, վասն զի
կրակը կերել է անապատի ա-
բօտները, և բոցը այրել է դաշ-
20 տի բոլոր ծառերը։ Դաշտի ա-
նասուններն էլ են քեզ մոլիկ
տալիս վասն զի չորացել են ջրե-
րի վտակները, և կրակը այրել
է անապատի արօտները։

ԳԼ Բ

1 Փող հնչեցրէք Սիօնում, և ազդ
աղաղակեցէք իմ սուրբ լեռան
վերայ. դողան երկրի բոլոր բնա-
կիչները, վասն զի Տիրոջ օրը է-
2 կել է, վասն զի մօտ է։ Խաւա-
րի և մէգի օրը, ամպի և մա-
ռախուղի օրը. ինչպէս որ արշա-
լոյսը տարածվում է լեռանց վե-
րայ, մի բազմաթիւ և զօրաւոր
ազգ է գ-ւ-, որի նմանը չէ ե-
ղել յաւիտենից և նորանից յե-
տոյ էլ չի լինիլ, մինչև տարի-
3 ների դարե ցդար։ Նորա առջե-
ից կրակը պիտի ուտէ, և նորա
ետևից բոցը պիտի այրէ, եդեմի
դրախտին պէս կ'լինի երկիրը նո-
րա առջև, իսկ նորա ետևից ա-
մայի անապատին պէս, և մէկ
ազատուած անգամ չի ունենալ։
4 Ձիերի կերպարանք է նորանց
կերպարանքը, և ձիաւորների պէս
5 պիտի վազեն։ Կառքերի ձայնին
պէս լեռանց գլխին ատամում
են յարդ ուտող կրակի բոցի
ձայնի պէս, մի հզօր ժողովրդի
պէս, որ շարուած է պատերազ-
մի։ Նորանց երեսից պիտի տագ-
6 նապեն ժողովուրդները, բոլոր ե-
րեսները պիտի քաշեն գոյնը։ Զօ-
7 րաւորների պէս պիտի վազեն,
պատերազմի մարդկանց պէս վեր
պիտի ելնեն պարսպի վերայ, և
ամեն մարդ իր ճանապարհներո-
վը պիտի գնայ, և պիտի չփոխեն
8 իրանց շաւիղները։ Եւ մէկն իր
ընկերին պիտի չհրէ, ամեն մէկն
իր ճանապարհով պիտի գնան.
և եթէ զէնքի վերայ էլ ընկնեն,
9 պիտի չվիրաւորուին։ Քաղաքու-
մը պիտի վազվազեն, պարսպի
վերայ պիտի վազեն, վեր պիտի
ելնեն տուները, պատուհաննե-
րով ներս պիտի մտնեն գողի նը-
10 ման։ Նորանց երեսից երկիրը
պիտի դողայ, երկինքը սարսե,
արեգակն ու լուսինը պիտի խա-
ւարուին, և աստղերը՝ քաշեն ի-
11 րանց լոյսը։ Եւ Տէրը պիտի այ

իր ձայնը իր զօրաց առջև, վասն
զի շատ մեծ է նորա բանակը,
որովհետև զօրաւոր է իր խօսքը
կատարողը։ Վասն զի մեծ է Տի-
րոջ օրը և շատ ահեղ, և ո՞վ
կարող է դիմանալ նորան։
12 Սակայն հիմա էլ, ասում է
Տէրը, դեպի ինձ դարձէք ձեր
բոլոր սրտով, և ծոմով ու լա-
13 ցով և սգով։ Եւ պատառեցէք
ձեր սրտերը, ու չէ թէ ձեր հան-
դերձները, և եւս դարձէք դեպի
ձեր Տէր Աստուածը, քան որում
ողորմած և գթած է, երկայնա-
միտ և բազումողորմ և զղջացող
14 չարիքի համար։ Ո՞վ գիտէ, գու-
ցէ դարձեալ զղջայ. և իր հետ-
ևից օրհնութիւն թողէ, հացի
ընծայ և թափելու նուէր ձեր
Տէր Աստուծոյն համար։
15 Փող հնչեցրէք Սիոնում, ծոմ
արձակեցէք, հանդէս հրաւիրեցէք։
16 Ժողովուրդ հաւաքեցէք, ժողով-
քը սրբեցէք, ծերերին ժողովե-
ցէք. երեխաներին ու մանուկնե-
րին հաւաքեցէք, փեսան դուրս
գայ իր սենեակիցը, և հարսը՝ իր
17 առագաստիցը։ Արտի և սեղա-
նի մէջտեղը լաց լինին քահանա-
ները՝ Տիրոջ ծառաները. և ա-
սեն. Խնայիր, ով Տէր, քո ժո-
ղովրդին, և քո ժառանգութիւնը
մի տար նախատինքի, որ ազգե-
րը տիրեն նորանց վերայ. ինչո՞ւ
համար ասեն ազգաց մէջ. Ո՞ւր է
նորանց Աստուածը։
18 Այն ժամանակ Տէրը պիտի նա-
խանձէ իր երկրի համար, և ո-
19 ղորմէ իր ժողովրդին։ Եւ Տէրը
պիտի պատասխանէ և ասէ իր
ժողովրդին. Ահա ես ձեզ համար
ուղարկում եմ ցորեն, գինի և
իւղ, որ պիտի կշտանաք նորա-
նով. և ձեզ այլևս նախատինք
20 պիտի չանեմ ազգաց մէջ. Եւ
հիւսիսացուն պիտի հեռացնեմ
ձեր վերայից, և նորան պիտի
քշեմ մի չոր և ամայի երկիր,
երեսը դէպի արևելեան ծովը և
քամակը դէպի հետևի ծովը և նո-
րա վառ հոտը պիտի բարձրանայ,
և կ'բարձրանայ նորա գարշահո-
տութիւնը, վասն զի մեծ բաներ
է կատարել։ Մի վախեներ, ով 21
երկիր, ցնծա և ուրախացիր,
վասն զի Տէրը մեծ բաներ է ան-
ում։ Մի վախեներ, ով դաշտի 22
անասուններ, վասն զի կանաչե-
լու են անապատի արօտները, ո-
րովհետև ծառը տալու է իր պը-
տուղը, թզենին և որթը պիտի
տան իրանց զօրութիւնը։ Եւ ով 23
Սիոնի որդիք, ցնծացէք և ուրա-
խացէք Տիրոջմով՝ ձեր Աստու-
ծով. որ կ'տայ ձեզ առաջին անձ-
րևը չափաւորապէս. և ձեզ հա-
մար անձրև կ'իջեցնէ՝ առաջի և
վերջի անձրև առաջուան պէս։
Եւ կալերը կ'լցուին ցորենով, և 24
հնձանները կ'յորդեն գինիով և
իւղով։ Եւ ես կ'հատուցանեմ 25
ձեզ այն տարիները, որ կերան
մօրեխը, ջրեակը, երևիլը և
խառնիճը, այն իմ մեծ զօրքը որ
ուղարկեցի ձեր մէջը։ Եւ պիտի 26
ուտէք ու ուտէք և կշտանաք, և
օրհնաբանէք ձեր Տէր Աստուծոյ
անունը, որ ձեզ համար հրաշքներ
արաւ. և իմ ժողովուրդը պիտի
չամչէ յաւիտեան։ Եւ պիտի 27
իմանաք որ ես Իսրայէլի մէջ եմ,
և ես եմ ձեր Տէր Աստուածը,
ու միւսը չկայ. և իմ ժողովուր-
դը պիտի չամչէ յաւիտեան։
Եւ պիտի լինի ետքանից յետոյ, 28
որ իմ Հոգին պիտի թափեմ ա-
մեն մարմնոյ վերայ, և պիտի
մարգարէանան ձեր տղայքն ու
ձեր աղջկերքը, ձեր ծերերը ե-
րազներ պիտի երազեն. ձեր երի-
տասարդները տեսիլքներ պիտի
տեսանեն։ Եւ ծառաներին ու ա- 29
ղախիններին վերայ էլ պիտի թա-
փեմ այն օրերը իմ Հոգին։ Եւ 30
նշաններ պիտի տամ երկինքում
ու երկրիս վերայ. արիւն և կրակ
և ծուխի սիւներ։ Արեգակը պի- 31
տի փոխուի խաւարի, և լուսինը՝
արեան, Տիրոջ մեծ և ահեղ օրը
գալուց առաջ։ Եւ պիտի լինի, 32
որ ամեն ով որ կանչէ Տիրոջ ա-
նունը, կ'փրկուի. վասն զի Սիոն
լեռան վերայ և Երուսաղէմում
փրկութիւն կ'լինի՝ Տիրոջ ասա-
ծին պէս. և այն մնացորդների
վերայ, որանց Տէրը կ'կանչէ։

ԳԼ. Գ

1 Վասն զի ահա այն օրերը և այն ժամանակը, որ ես եառ կ'դարձընեմ Յուդայի և Երուսաղէմի գերութիւնը. Ա 2 ժամանակ կ'ժողովեմ բոլոր ազգերը, և նորանց կ'իջեցնեմ Յովսափատի հովիտը, և այնտեղ նորանց հետ դատ կը վարեմ իմ ժողովրդի և իմ ժառանգութիւն Իսրայէլի համար, որին ցրուեցին ազգերի մէջ, և 3 իմ երկիրը բաժանեցին: Եւ իմ ժողովրդի վերայ վիճակ ձգեցին, և երեխային տուին պոռնկի տեղ, և աղջիկը ծախեցին գինու և խմեցին: 4 Եւ դուք էլ ի՞նչ էք ինձ համար, ով Տիրոս և Սիդոն, և ով բոլոր Փղշտացոց սահմաններ, մի՞թէ դուք ինձ հատուցում էք անելու, և կամ դուք ինձ հատուցանողնե՞ր էք. հեշտ ե՛ շուտով ետ կ'դարձնեմ ձեր հատուցումը ձեր գլխին. 5 Որովհետև իմ արծաթին ու ոսկին առիք դուք, և իմ ցանկալի բարի բաները տարիք ձեր մեհեանները: 6 Եւ Յուդայի որդիներին ու Երուսաղէմի որդիներին Յունաց որդիները ծախեցիք. որպէս զի նորանց հեռացընէք իրանց սահմանից: 7 Ահա ես պիտի զարթնեցնեմ նորանց այնտեղից ուր որ նորանց ծախեցիք, և ձեր հատուցումը ետ պիտի դարձնեմ ձեր գլխին: 8 Եւ պիտի ծախեմ ձեր տղայքն ու աղջկերքը Յուդայի որդւոց ձեռովը, և նորանք պիտի ծախեն նորանց Սաբայեցիներին՝ այն հեռու ազգին. վասն զի Տէրն է խօսել: 9 Հրատարակեցէք այս՝ ազգերի մէջ, պատերազմ որոշեցէք. զարթնեցրէք զօրաւորներին, մօտենան վեր գնան բոլոր պատերազմի մարդիկը: 10 Ձեր խոփերը սուրեր շինեցէք, և ձեր յօտցնելը՝ նիզակներ. թող տկարն ասէ. Զօրաւոր եմ ես: 11 Շտապեցէք և եկէք, ով բոլոր շրջակայ ազգեր, և ժողովուեցէք, այնտեղ տար, ով Տէր, քո զօրաւորները: 12 Զարթնեն և վեր կան ազգերը Յովսափատի հովիտը, վասն զի այնտեղ պիտի նստեմ բոլոր շրջակայ ազգերը դատելու համար:

13 Մանգաղը գցեցէք, վասն զի հասել է հունձը, եկէք, իջէք, վասն զի լցուել է հնձանը. ասեղանները յորդում են. որովհետև շատ է նորանց չարութիւնը: 14 Բազմութիւններ, բազմութիւններ վճռի հովիտումը, վասն զի մօտ է Տիրոջ օրը վճռի հովիտումը: 15 Արեգակն ու լուսինը պիտի խաւարեն, և աստղերը ետ քաշեն իրանց լոյսը: 16 Եւ Տէրը պիտի գոչէ Սիոնից, և Երուսաղէմից ձայն տայ, և երկինքը ու երկիրը պիտի դողան. բայց Տէրը ապաւէն կ'լինի իր ժողովրդի համար, և ամրոց՝ Իսրայէլի որդւոցն համար: 17 Եւ դուք պիտի իմանաք, որ ես եմ ձեր Տէր Աստուածը, որ բնակում եմ իմ սուրբ լեառ Սիոնում. և Երուսաղէմը սուրբ պիտի լինի, և օտարներ այլ ևս չեն անց կենալ նորա միջով:

18 Եւ պիտի լինի այն օրը որ լեառները քաղցու պիտի ծորեցընեն, և բլուրները կաթ հոսեցընեն, և Յուդայի բոլոր ձորերը ջուր պիտի բղխեն, և Տիրոջ տունից մի աղբիւր պիտի դուրս գայ, և ոռոգէ Սատիմի ձորը: 19 Եգիպտոսը ամայի պիտի դառնայ, և Եդոմ մի ամայի անապատ պիտի դառնայ, Յուդայի որդւոցն դէմ բռնութեան համար. որովհետև անմեղ արիւն թափեցին նորանց երկրումը: 20 Բայց Յուդան յաւիտեան պիտի բնակէ, և Երուսաղէմը դարե ցդար: 21 Եւ նորանց արիւնը պիտի մաքրեմ, որ չէի մաքրել. և Տէրը պիտի բնակէ Սիոնում:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄՈՎՍԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ա.մովսի խօսքերը, որ Թեկուէի հովիւներից էր, որ նա տեսաւ Իսրայէլի մասին Յուդայի Ոզիա Թագաւորի օրերին և Իսրայէլի Թագաւոր՝ Յովասեան Յերոբովամի օրերին, երկու տարի դեռնա-
2 շարժից առաջ։ Եւ ասաց. Տէրը Սիօնից պիտի կանչէ, և Երուսաղէմից տայ իր ձայնը. և սուգ պիտի անեն հովիւների արօտները, և Կարմէղոսի գլուխը պիտի չորանայ։
3 Այսպէս է ասում Տէրը, Դամասկոսի երէք յանցանքի համար, և չորսին համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք երկաթի կամնասայլերով կալի պէս
4 կասեցին Գաղաադին։ Այլ կրակ պիտի գցեմ Ազայէլի տունը, որ լափէ Բենադադի պալատները։
5 Եւ պիտի կոտրեմ Դամասկոսի նիգը, և պիտի կորեմ բնակիչը Աւենի հովիտից, և գաւազան բռնողը՝ Եդեմի տունից, և գերի պիտի գնայ Ասորց ժողովուրդը Կիր, ասում է Տէրը։
6 Այսպէս է ասում Տէրը, Գազայի երէք յանցանքի համար, և չորսին համար՝ ետ չեմ դարձնելու. որովհետև նորանք գերիներին գերի քշեցին բոլորովին որ
7 յանձնեն Եդոմացիներին։ Այլ կրակ պիտի ուղարկեմ Գազայի պարսպի վերայ, և պիտի լափէ
8 նորա պալատները։ Եւ պիտի կորեմ բնակիչը Ազովտացից, և գաւազան բռնողը՝ Ասկալոնից, և իմ ձեռքը պիտի Ակկարոնի վերայ դարձնեմ, որ կորչի Փղշտացոց մնացորդը, ասում է Տէր Եհովան։
9 Այսպէս է ասում Տէրը. Տիւրոսի երէք յանցանքի համար, և չորսին համար՝ ետ չեմ դարձնելու, որովհետև նորանք գերիները բոլորովին մատնեցին Եդոմացիներին, և չյիշեցին եղբայրական ուխտը։ Եւ ես կրակ պիտի գցեմ 10
Տիւրոսի պարսպի վերայ, և նա պիտի լափէ նորա պալատները։
Այսպէս է ասում Տէրը. Եդոմ- 11
մի երէք յանցանքի համար, և չորսին համար՝ ետ չեմ դարձնելու, որովհետև սրով հալածեց իր եղբօրը, և կարեց իր ազգմանութիւնը, և պատառեց միշտ իր բարկութիւնը, և իր ցասումը պահեց յաւիտեան։ Եւ ես կրակ պիտի 12
գցեմ Թեմանի մէջ, և պիտի լափէ Բոսորայի պալատները։
Այսպէս է ասում Տէրը. Ամ- 13
մանի որդւոց երէք յանցանքի համար, և չորսին համար՝ ետ չեմ դարձնելու, որովհետև ճղեցին Գաղաադի յղիներին, որպէս զի լայնացնեն իրանց սահմանները։ Բայց ես կրակ պիտի վառեմ 14
Րաբբայի պարսպի վերայ, և պիտի լափէ նորա պալատները, պատերազմի օրը աղաղակի ժամանակին, փոթորիկի օրը մրրկի մէջ. Եւ նորանց Թագաւորը գե- 15
րի պիտի գնայ, Թէ ինքը Թէ իր իշխանները միասին, ասում է Տէրը։

ԳԼ. Բ

Այսպէս է ասում Տէրը. Մո- 1
ւաբի երէք յանցանքի համար, և չորսին համար՝ ետ չեմ դարձնելու, որովհետև սրեց Եդոմի Թագաւորի ոսկորները կիր չէնէց։
Բայց կրակ պիտի գցեմ Մովաբի 2
վերայ, և պիտի լափէ Կարիօթի պալատները, և պիտի ազաղակով մեռնէ Մովաբ, աղմուկով և փողի ձայնով։ Եւ պիտի փչա- 3
ջնեմ դատաւորը նորա միջից, և նորա բոլոր իշխաններին պիտի մեռցնեմ իրան հետ, ասում է Տէրը։
Այսպէս է ասում Տէրը. Յու- 4
դայի երէք յանցանքի համար, և

չորսին համար՝ եւ չեմ դարձնելու, որովհետեւ անարգեցին Տիրոջ օրէնքը, և նորա պատուիրանքները չպահեցին. այլ նորանց մոլորեցրին իրանց սուտերը, որոնց ետեւից գնացել էին իրանց հայրերը։ Բայց ես կրակ պիտի գցեմ Յուդայի մէջ, և պիտի լափե Երուսաղէմի պալատները։

Այսպէս է ասում Տէրը. Իսրայէլի երեք յանցանքի համար, և չորսին համար՝ եւ չեմ դարձնելու, որովհետեւ նորանք արդարը ծախեցին փողով, և անանկը՝ մի զոյգ կոշիկի. Որոնք փափաքում են երկրի հողին ագքատների գլխին, որոնք չքաւորների ճանապարհը ծռում են, և մարդն ու իր հայրը դէնուդաղ աղջկան մօտ են գնում, որպէս զի պղծեմ իմ սուրբ անունը։ Եւ դրաւ դրուած հանդերձների վերայ են պառկում, ամեն մի սեղանի կըշտին. և գրկուածների գինին են խմում իրանց աստուածների տանը։ Բայց ես բնաջինջ արի Ամօրհացուն նորանց առջեւ, որի բարձրութիւնը եղեւինների բարձրութեան պէս էր, և որ պինդ էր կաղնիների նման. և ես փըչացրի նորա պտուղը իր վերայից, և նորա արմատները՝ տակիցը։ Եւ ես ձեզ վեր հանեցի Եգիպտոսի երկրիցը, և ձեզ մանացեցի անապատումը քառասուն տարի, որ ժառանգէիք Ամօրհացոց երկիրը։ Եւ ձեր որդկանցից մարգարէներ վեր կացրի և ձեր երիտասարդներից ուխտաւորներ, ապա այսպէս չէ՞, ով Իսրայէլի որդիք, ասում է Տէրը։ Սակայն դուք ուխտաւորներին գինի խըմեցրիք, և մարգարէներին պատուիրեցիք՝ ասելով. Մի մարգարէանաք։ Ահա ես ձեզ վայր պիտի ճնշեմ, ինչպէս որ ճնշում է սայլը որաններով լիքը սայլը։ Եւ փախչելը կ'կորչի արագընթացից. և զօրաւորին չի քաջացնել նորա ոյժը և տղամարդը չի ազատել իր անձը։ Եւ ազեղ բռնողը չի գիմանալ, և իր ոտքերով թեւթեւը չի պրծնիլ, և ձի հեծածը չի ազատել իր անձը։ Եւ տղամարդիկներըի մէջ քաջասիրտը մերկ պիտի փախչի այն օրը, ասում է Տէրը։

ԳԼ. Գ

Լսեցէք այս խօսքը, որ Տէրը ասում է ձեր մասին, ով Իսրայէլի որդիք, այն բոլոր ազգատոհմի համար, որ վեր բերի Եգիպտոսի երկրից, ասելով. Միայն ձեզ եմ ճանաչել երկրի բոլոր ազգատոհմերից, դորա համար ձեզ պիտի պատժեմ ձեր ամեն անօրէնութիւնների համար։ Մի՞թէ երկուսը կ'գնան միասին, եթէ համաձայնուած չլինին։ Մի՞թէ առիւծը կ'մռնչէ անտառումը, եթէ որս չունենայ. մի՞թէ առոյգ առիւծը ձայնը կ'հանէ իր որջիցը, եթէ դէ բան որսած չլինի։ Մի՞թէ վայր կ'ընկնի թռչունը երկրի վերայ վարմի մէջը, եթէ նորա համար լարող եղած չլինի. մի՞թէ վարմը վեր կառնուի երկրի վերայից, եթէ մի որս որսած չլինի։ Կամ եթէ փող փչուի քաղաքում, և ժողովուրդը չի՞ վախենալ, կամ չարիք կ'լինի՞ մի քաղաքում, որ Տէրը չլինի ասած այն։ Վասն զի Տէր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթէ չյայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին։ Առիւծը մռնչել է, ո՞վ չէ վախենում. Տէր Եհովան է խօսում, ո՞վ չի մարգարէանալ։

Հրատարակեցէք Ազովտոսի պալատների վերայ, և Եգիպտոսի երկրի մէջ պալատների վերայ, և ասացէք. ժողովուեցէք Սամարիայի լեռանց վերայ, և մտիկ արէք նորա միջի շատ խռովութիւններին և նորա միջի հարբատահարութիւններին։ Եւ չեն գիտում ուղղութիւն անել, ասում է Տէրը, իրանց պալատներումը զրկանք ու յափշտակութիւն գիզողները։ Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Թշնամի՛, և այն էլ երկրի շուրջը. և նա պիտի իջեցնէ քեզ

նից քո ոյժը, և քո պալատները պիտի կողոպտուին։
12 Այսպէս է ասում Տէրը. Ինչպէս որ Հովիւն է ազատում առիւծի բերանից երկու ոտքներ կամ մի ականջի բլթակ, այնպէս էլ պիտի ազատուին Իսրայէլի որդիքը, որոնք բնակում են Սամարիայում՝ բազմոցի անկիւնի վերայ և դամասկեայ անկողնի վերայ։
13 Լսեցէք և վկայեցէք Յակոբի տանը, ասում է Տէր Եհովան՝
14 Ջօրաց Աստուածը. Այն օրը երբոր կ'երեմ Իսրայէլի յանցանքների պատիժը իր վերայ, և կը պատժեմ Բեթէլի սեղանները. այն ժամանակ կ'կոտրուին սեղանի եղջիւրներն ու գետինը կ'ընկնեն։
15 Եւ ես կ'ջարդեմ ձմեռային տունը և ամարային տունը, և կ'կորչեն փղոսկրեայ տները, և բնաջինջ կ'լինեն մեծամեծ տունները, ասում է Տէրը։

ԳԼ. Դ

1 Լսեցէք այս խօսքը, ով Սամարիայի լեռանը վերայ եղող Բասանի եզ երինջներ, որ զրկում էք աղքատներին, որ ոտնահարում էք տանկներին, որ ասում էք ձեր տէրանց. Բերէք որ խըմենք։
2 Տէր Եհովան երդուում է անուամ իր սրբութիւնովը, թէ ահա օրեր են գալիս ձեզ վերայ, որ ձեզ վեր կ'առնէ կարթերով, և ձեր սերունդին ձկան կարթերով։
3 Եւ դուք քանդուած տեղերով դուրս կ'գաք ամեն մէկդ իր հանդէպով, և դէն պիտի գցէք բերդի շքեղութիւնը, ասում է Տէրը։
4 Եկէք բեթէլ և յանցանք գործեցէք, Գաղգաղայում շատացրէք յանցանք գործելը, և մատուցէք ամեն առաւօտ ձեր զոհերը, ամեն երեք օրը՝ ձեր տասանորդները։
5 Եւ շնորհակալութեան զոհը խմորեալ թնկեցէք, և քարոզեցէք կամաւոր ընծաներ և հրատարակեցէք, վասն զի այսպէս էք սիրել, ով Իսրայէլի որդիք, ասում է Տէր Եհովան։
6 Ուրեմն ես էլ ձեզ տուայ ձեր ամեն քաղաքներում մաքրութիւն կ'տայ ձեր ամեն քաղաքներում, և հացի կարօտութիւն ձեր բոլոր տեղերում. և դուք ետ չէք դառնում ինձ մօտ, ասում է Տէրը։
7 Ուրեմն ես էլ ձեզանից կ'արգելեմ անձրևը հունձին դեռ երեք ամիս լինելով. և մէկ քաղաքի վերայ անձրև կ'տեղայ, իսկ միւս քաղաքի վերայ անձրև չեմ տեղալ, մէկ վիճակի վերայ անձրև կ'գայ, և այն վիճակը, որի վերայ անձրև չեկաւ, պիտի չորանայ։
8 Եւ երկու երեք քաղաք պիտի հաւաքուին դէն մէկ քաղաք ջուր խմելու համար, բայց պիտի չկշտանան. և դուք ետ չէք դառնում ինձ մօտ, ասում է Տէրը։
9 Ձեզ պիտի զարկեմ խորշակով և դալուկով, ձեր բազմաթիւ այգիները և պարտէզները և թզենիները ու ձիթենիները խառնիճը պիտի ուտէ. և դուք ետ չէք դառնում ինձ մօտ, ասում է Տէրը։
10 Ձեր մէջը ժանտախտ կ'ղցեմ Եգիպտոսի կերպով, սրով կ'սպանեմ ձեր երիտասարդներին, ձեր ձիերը գերի անելով, և ձեր բանակների գարշահոտութիւնը մինչև ձեր քիթերն էլ կը հասնեմ. և դուք ետ չէք դառնում ինձ մօտ, ասում է Տէրը։
11 Կ'կործանեմ ձեզ ինչպէս Աստուած Սոդոմն ու Գոմորը կործանեց, և հրդեհից ազատուած խանձուղի պէս կ'լինէք. և դուք ետ չէք դառնում ինձ մօտ, ասում է Տէրը։
12 Սրա համար քեզ այսպէս եմ անելու, ով Իսրայէլ, և հէնց որ ես քեզ հետ այսպէս կ'անեմ, պատրաստուիր քո Աստուծոյն դիմաւորելու, ով Իսրայէլ։
13 Վասն զի ահա նա, որ կազմում է լեռները և ստեղծում քամին, և իմացնում մարդուն, թէ ինչ է նրա մտածմունքը, որ անում է արշալոյսը, խաւարը, և մանէ գալիս երկրի բարձրերի վերայ. Եհովայ Ջօրաց Աստուած է նրա անունը։

ԳԼ. Ե

1 Լսեցէք այս խօսքը, որով ես
ողբում եմ ձեզ վերայ, ով Իս-
2 րայէլի տուն, Ընկաւ, այլևս վեր
չի կենալու Իսրայէլի կոյսը, փըռ-
ուել է իր երկրի վերայ, կանգ-
3 նեցնող չունի։ Վասն զի այսպէս
է ասում Տէրը Եհովան. Այն քա-
ղաքում, որ հազար էր դուրս
բերում, պիտի մնայ հարիւր, և
հարիւր դուրս բերողումը տասը
պիտի մնայ Իսրայէլի տան հա-
4 մար։ Վասն զի այսպէս է ասում
Տէրը Իսրայէլի տանը. Ինձ որո-
5 նեցէք, և կ'ապրիք։ Բայց Բե-
թէլը մի որոնէք, և Գաղգաղան
մի մտնէք, և Բերսաբէէն մի
գնաք. վասն զի Գաղգաղա ան-
պատճառ գերի պիտի գնայ. և
Բեթէլը պիտի դառնայ *Աւեն։
6 Տիրոջը որոնեցէք և կ'ապրիք, որ
Յարձակուի կրակի պէս Յովսէփի
տան վերայ, և նա լափէ, և Բե-
7 թէլը հանգցնող չունենայ. որ
օշինդը են դարձնում իրաւունքը,
և արդարութիւնը գետնով տա-
լիս։ Նորան, որ արուս Բազմաս-
տեղն ու Հայկը, որ մահուան
ստուերը առաւօտ է դարձնում,
և ցերեկը մթնեցնում է գիշերի.
որ ծովի ջուրերը կանչում է, և
նորանց ածում է երկրի երեսի
9 վերայ, նորա անունը Եհովայ է։Որ
աւերմունք է փայլատակեցնում
բռնաւորի վերայ, և աւերմունքը
մինչև ամրոցն է գալիս։
10 Դրան մէջ ատում են յանդի-
մանողին, և զզվում են ուղիղ
11 խօսողից։ Դորա համար՝ որովհե-
տև ոտնահար էք անում աղքա-
տին, և նորանից ցորենի պար-
գևներ էք առնում. դուք արքա-
տաշ քարից տուներ կ'շինէք,
բայց նորանցում չէք բնակիլ.
ցանկալի այգիներ կ'տնկէք, բայց
12 նորանց գինին չէք խմիլ։ Վասն
զի ես գիտեմ ձեր շատ յան-
ցանքները և ձեր ծանր մեղքերը,
արդարին նեղողները, կաշառք
առնողները, որոնք աղքատներին
ծուռ են դրան մէջ։ Դորա հա- 13
մար խնամատարը այն ժամանակ
պիտի լռէ, վասն զի նա չար ժա-
մանակ է լինելու։ Բարութիւն 14
որոնեցէք և ոչ թէ չարութիւն,
որ ապրիք, և այսպէս Զօրաց
Տէր Աստուածը ձեզ հետ կ'լինի,
ինչպէս որ ասել էք։ Ատեցէք 15
չարութիւնը և սիրեցէք բարին,
և դրան մէջ հաստատեցէք իրա-
ւունքը, գուցէ Զօրաց Տէր Աստ-
ուածը գթայ Յովսէփի մնացոր-
դին։
Դորա համար այսպէս է ասում 16
Տէրը՝ Զօրաց Եհովայ Աստուածը,
ամեն հրապարակներում ողբ պի-
տի լինի, և ամեն փողոցներում
վա՛յ վա՛յ պիտի ասեն, և երկրա-
գործին պիտի սուգի կանչեն, և
ողբի՝ ողբ գիտացողներին։ Եւ 17
ամեն այգիներում ողբ է լինելու,
վասն զի պիտի անցնեմ քո միջո-
վը, ասել է Տէրը։
Վա՛յ Տիրոջ օրուանը ցանկա- 18
ցողներին, ձեզ ի՞նչ պէտք է Տի-
րոջ օրը. նա խաւար է, և ոչ
թէ լոյս։ Ինչպէս որ մարդ կը 19
փախչէ առիւծի բերանից, և ար-
ջը կ'հանդիպէ նորան. կամ տու-
նը կ'մտնէ ու ձեռքը կ'կռնեցնէ
պատին, և օձը կ'կծէ նորան. Ա- 20
հա Տիրոջ օրը խաւար է և ոչ
թէ լոյս, և մռայլուղ, և ոչ
թէ պայծառութիւն ունի նա։
Ատում եմ, մերժում եմ ձեր 21
տօները, և չեմ հոտոտում ձեր
հանդէսներում։ Թէև ինձ ողջա- 22
կէզներ էլ մատուցանէք և ձեր
հացի ընծաները էլ, ես չեմ ըն-
դունիլ. և ձեր պարարտ անա-
սունների խաղաղութեան զոհին
մտիկ չեմ տալ։ Քո երգերի աղ- 23
մուկը հեռացրու ինձանից, որ
չլսեմ տաւիղներիդ եղանակը։
Բայց թող իրաւունքը յորդէ ջրի 24
պէս, և արդարութիւնը վարար
գետի պէս։ Զոհեր և հացի ընծ- 25
աներ էի՞ք մատուցանում ինձ
անապատում, այն քառասուն
տարին, ով Իսրայէլի տուն։ Այլ 26
դուք կրեցիք ձեր Մողոքի վրանը
և ձեր Քեւմփայ աստուծոյ աստ-
ղը՝ ձեր պատկերները որ շինել

*Ոչինչ

27 էիք ձեզ համար։ Ուրեմն ձեզ գերի պիտի անել տամ Դամասկոսից այն կողմ, ասում է Տէրը, որի անունը Զօրաց Աստուած է։

ԳԼ. Զ

1 Վայ Սիօնում ապահով ընդունէին, և Սամարիայի լեռան վերայ վստահացողներին, ազգաց գլխաւոր նշանաւորներին, որոնց մօտ գալիս է Իսրայէլի տունը։
2 Անցէք Քաղանէ և տեսէք, և անտեղից գնացէք մեծ Եմաթը, և փղշտացոց Գէթը իջէք. մի՞թէ լաւ են այս թագաւորութիւններից, կամ նորանց սահմանը մե՞ծ
3 է ձեր սահմանից. Որ չար օրը հեռի էք համարում, և մօտեցնում բռնութեան աթոռը,
4 Որ պառկում էք փղոսկրեայ անկողինների վերայ, և մեկնվում ձեր մահիճների վերայ, և ուտում հօտերից գառնուկները և պարարտացնելու դոմերից՝ որթե-
5 րը։ Որ խաղ ասում տաւիղի ձայնակցութեամբ, Դաւթի նման
6 նուագարաններ հնարում։ Որ բաժակներով գինի խմում, և գլխաւոր իւղով օծվում, և ոչ ցաւում Յովսէփի փեկման վերայ։
7 Դորա համար հիմա պիտի գերի դնան առաջի գերիների հետ. և պիտի հեռանայ խրախճանացողների զուարճանքը։
8 Երդուել է Տէր Եհովան իր անձով՝ ասում է Զօրաց Տէր Աստուածը, Ես գժւում եմ Յակոբի պարծանքից, և ատում եմ նորա պալատները, և պիտի մատնեմ քաղաքն ու իր լիու-
9 թիւնը։ Եւ եթէ լինի որ մէկ տան տասը մարդ մնայ, նոքա
10 բանք էլ պիտի մեռնեն։ Եւ վեր պիտի առնէ նորան իր հօրեղբայրը և նորա այրողը որ ոսկորները դուրս տանէ տանից, և պիտի ասէ տան մէջ եղողին. Էլ կայ մօտդ. և նա պիտի ասէ. Ոչ. նա էլ պիտի ասէ. Լուիր, վասն զի Տիրոջ անունը յիշել չկայ։
11 Վասն զի ահա Տէրը հրամայում է, և նա պիտի փշուր փշուր անէ մեծ տունը, և փոքր տունը կատրտատէ։

12 Մի՞թէ ձիերը ապառաժի վերայ կ'վազեն, կամ թէ նա եզներով կ'հերկուի՞. վասն զի դուք դառնութեան էք փոխել իրաւունքը, և արդարութեան պտուղը՝ օշինդրի։ 13 Դուք ոչինչ բանով ուրախացողներդ, որ ասում էք. Ահա մեր զօրքով մեզ համար եղջիւրներ տուինք։ 14 Վասն զի ահա ես ձեզ վերայ, ով Իսրայէլի տուն, մի ազգ եմ վեր կացնում, ասում է Եհովայ Զօրաց Աստուածը, որ ձեզ նեղեն Եմաթի մուտքից մինչև անապատի հեղեղատը։

ԳԼ. Է

1 Ինձ այսպէս ցոյց տուաւ Տէր Եհովան, որ ահա կազմեց մորեխը յետին խոտի բուսանելու ակզբումը. և ահա վերջին խոտը թագաւորի հունձքից յետոյ է։ 2 Եւ եղաւ երբոր երկրի խոտը կերել վերջացրել էին, այն ժամանակ ես ասացի. Ով Տէր Եհովայ, աղաչում եմ, ներիր, ինչպէս պիտի կանգնէ Յակոբը, որ պզտիկ է։ 3 Տէրը զղջաց սորա վերայ, Չլինի, ասաց Տէրը։

4 Ինձ այսպէս ցոյց տուաւ Տէր Եհովան, և ահա կանչում էր որ դատէ կրակով Տէր Եհովան, և նա կերաւ մեծ անդունդը, և կերաւ վիճակն էլ։ 5 Եւ ես ասացի. Ով Տէր Եհովայ, մեկ դադարիր, Յակոբն ի՞նչպէս կանգնէ, վասն զի փոքր է, 6 Տէրը զղջաց սորա մասին, Սա էլ թող չլինի, ասաց Տէր Եհովան։

7 Ինձ այսպէս ցոյց տուաւ, և ահա կանգնել էր լարուար պարսպի վերայ, և ձեռքին մի լարապուն. 8 Եւ Տէրը ասաց ինձ. Դու ի՞նչ ես տեսնում, ով Ամոս. և ես ասացի. Մի լարապուն. և Տէրը ասաց. Ահա ես լարապուն եմ դնում իմ Իսրայէլ ժողովրդի մէջ. այլևս չեմ անցկենալ նորա մօտով։ 9 Եւ

աւերակ պիտի դառնան Իսահակի բարձրաւանդակները, և Իսրայէլի սրբարանները պիտի քանդուին, և վեր պիտի կենամ Յերոբաամի տան վերայ սրով։

10 Եւ մարդ ուղարկեց Բեթէլի քահանան Ամասիան Իսրայէլի Յերոբաամ թագաւորի մօտ ասելով. Քեզ դէմ դաւաճանութիւն է անում Ամովսը Իսրայէլի տան մէջ, երկիրը չէ կարող դիմանալ նորա բոլոր խօսքերին։

11 Վասն զի Ամովսն այսպէս է ասում. Յերոբաամը սրով պիտի մեռնէ, և Իսրայէլը պիտի անպատճառ գերի տարուի իր երկրի վերայից։

12 Եւ Ամասիան ասաց Ամովսին. Ով տեսանող, դնա փախիր քեզ համար Յուդայի երկիրը, և այնտեղ հաց կեր և այնտեղ մարգարէացիր։

13 Եւ Բեթէլումն այլևս չշարունակես մարգարէանալը, վասն զի նա թագաւորի սրբարանն է, և թագաւորութեան տունն է նա։

14 Եւ Ամովսը պատասխանեց և ասաց Ամասիային. Ես մարգարէ չեմ և մարգարէի որդի չեմ, այլ տաւարած եմ ես և մալաթուզ քաղող։

15 Բայց Տէրը ինձ վեր առաւ հօտերի ետևիցը, և Տէրն ինձ ասաց. Գնա մարգարէացիր իմ Իսրայէլ ժողովրդին։

16 Եւ հիմա լսիր Տիրոջ խօսքը. Դու ասում ես՝ Իսրայէլի մասին մի մարգարէանար, և մի ճչար Իսահակի տան վերայ։

17 Սորա համար Տէրն այսպէս է ասում. Քո կինը քաղաքի մէջ պիտի պոռնկանայ և քո որդիներն ու քո աղջկերքը սրով պիտի ընկնեն, և քո երկիրը լարով պիտի բաժանուի, և դու պիտի պիղծ երկրի վերայ մեռնես, և Իսրայէլն էլ պիտի անպատճառ գերի տարուի իր երկրի վերայից։

ԳԼ. Ը

1 Այսպէս ցոյց տուաւ ինձ Տէր Եհովան, և ահա մի կողով ամառային պտուղ։ 2 Եւ ասաց. Դու ի՞նչ ես տեսնում, ով Ամովս, և ես ասացի՝ Մի կողով ամառային պտուղ. և Տէրը ինձ ասաց. Վերջը եկել է իմ Իսրայէլ ժողովրդի վրայ, այլևս չեմ անց կենալ միւսանգամ նորա մօտով։ 3 Եւ պիտի ողբան տաճարի երգերը այն օրը, ասում է Տէր Եհովան. շա՜տ դիակներ, ամեն տեղ ձգուած՝ լուռ։

4 Լսեցէք այս, ով դուք տնանկին կլանողներ, և երկրի աղքատներին փչացնելու ջանք-ջիք. 5 որ ասում էք. Ե՞րբ է անցնելու ամսագլուխը, որ ցորեն վաճառաշահենք, և շաբա՞թը՝ որ բանանք հացի ըմբարանները, որ փոքրացնենք արդուն և մեծացնենք սիկղը, և նենգենք խարդախութեան կշիռքը։ 6 Որ փողով ծախու առնենք աղքատներին, և տնանկներին մի զոյգ կոշիկով. և ցորենի խոտանովը շահաձառուենք։ 7 Տէրը երդում արաւ Յակոբի մեծ վայելչութիւնով, թէ նորանց բոլոր գործքերը յաւիտեան չեմ մոռանալու։ 8 Մի՞թէ այս բանի վերայ երկիրը չի դողալ, և ա՞ւազ բոնիլ ամեն նորանում բնակողը. և վեր պիտի դնայ Եղեղոսի պէս նորա ամենը, և պիտի քշուի և ոռոգուի Եգիպտոսի Եղեղոսի պէս։ 9 Եւ այն օրը պիտի լինի, ասում է Տէր Եհովան, որ արեգակը մայր եմ մտցնելու կէս օրին, և խաւարեցընելու եմ երկրի համար լոյս օրին։ 10 Եւ ձեր տօները պիտի սուգի դարձնեմ, և ձեր բոլոր երգերը՝ ողբի. և ամեն մէջքի վերայ քուրձ պիտի դնեմ, և ամեն գլխի վերայ՝ կնատութիւն, և պիտի անեմ ինչպէս մէկ հատիկի սուգ, և նորա վախճանը դառնութեան օրուան պէս։

11 Ահա օրեր են գալիս, ասում է Տէր Եհովան, որ սով պիտի ուղարկեմ երկրի վերայ, ոչ թէ հացի սով և ոչ ջրի ծարաւ, այլ՝ Տիրոջ խօսքը լսելու։ 12 Եւ պիտի թափառեն ծովից մինչև ձև ծով և հիւսիսից մինչև արևելք, և նորանք պիտի ման գան

Տէրոջ խօսքը որանելու համար,
13 և պիտի չգանեն։ Այն օրը պիտի
նուագեն գեղեցիկ կոյսերը և ե-
14 րիտասարդները ծարաւով. Որովք
երդնում են Սամարիայի յան-
ցանքովը և ասում. Կենդանի է
քո աստուածը, ով Դան, և
կենդանի է Բերսաբէէի ճանա-
պարհը. Նորանք պիտի ընկնեն և
այլևս վեր չկենան։

ԳԼ. Թ

1 Տէրոջը սեպայ սեղանի վերայ
կանգնած, որ ասաց. Զարկ խո-
յակին որ սեմերը դողան, և նո-
րանց փշրիր նորանց ամենի գլխի
վերայ. և նորանց մնացորդին սր-
բով պիտի սպանեմ. Նորանցից
մի փախստական պիտի չփախչէ,
և նորանցից մէկ պրծնող պիտի
2 չպրծնէ։ Եթէ նորանք ծակեն
դժոխքն անցնեն, այնտեղից էլ
իմ ձեռքը նորանց պիտի առնէ.
եթէ երկինքն էլ ելնեն, այնտե-
ղից էլ պիտի իջեցնեմ նորանց։
3 Եւ եթէ Կարմէղոսի գլխին թաք-
չուին, այնտեղից պիտի փնտռեմ
և առնեմ նորանց, և եթէ իմ
աչքի առջև ծովի խորքումը ծած-
կուին, այնտեղից էլ օձին պիտի
հրամայեմ, և նա պիտի կծէ նո-
4 րանց։ Եւ եթէ նորանք գերի գը-
նան իրանց թշնամիների առջև,
այնտեղից սուրին պիտի հրամա-
յեմ և նա պիտի սպանէ նորանց.
և իմ աչքը պիտի դնեմ նորանց
վերայ չարիքի համար, և ոչ թէ
բարիքի համար։
5 Եւ Զօրաց Եհովայ Տէրը պիտի
դիպչի երկրին, և նա պիտի հալ-
ուի, և բոլոր նորանում բնակող-
ները պիտի սուգ անեն, և վեր
պիտի գնայ Եղբոսի պէս նորա
բոլորը, և պիտի հեղեղուի Ե-
6 գիպտոսի Եղբոսի պէս. Նա որ
երկինքումն է շինում իր վերնա-
տուներըը, և նորա կամարը երկրի
վերայ հաստատում. Նա որ կան-
չում է ծովի ջուրերը և նորանց
թափում է երկրի երեսի վերայ.
Եհովայ է նորա անունը։

Մի՞թէ դուք Եթովպացոց 7
որդկանց պէս չէք ինձ համար,
ով Իսրայէլի որդիք, ասում է
Տէրը. չէ՞ որ Իսրայէլին վեր հա-
նեցի Եգիպտոսի երկրից, և փղշ-
տացիներին Կափթորից, և Ասո-
րիներին Կիրից։ Ահա Տէր Եհո- 8
վայի աչքերը այդ մեղաւոր թա-
գաւորութեան վերայ է. և ես
նորան պիտի փչացնեմ երկրի ե-
րեսի վերայից. միայն թէ բոլորո-
վին պիտի չփչացնեմ Յակոբի
տունը, ասում է Տէրը։ Վասն 9
զի ահա ես հրամայում եմ, և
պիտի խախտեմ ամեն ազգերի
մէջ Իսրայէլի տունը. ինչպէս որ
խախտով կ'խախտուի, որ մի
հատ վայր չընկնի երկրի վերայ։
Սուրով պիտի մեռնեն իմ ժո- 10
ղովրդի բոլոր մեղաւորները, ո-
րոնք ասում են Մեզ չհասնիլ և
մեր առջևը չի գալ չարիքը։

Ահա օրը պիտի կանգնեցնեմ 11
Դաւթի ընկած խորանը, և պիտի
նորոգեմ նորա պատուածքը-
ները, պիտի կանգնեցնեմ նորա
քանդուածքները և նորան պիտի
շինեմ ինչպէս վաղեմի օրերումը.
Որպէս զի նորանք ժառանգեն Ե- 12
դոմի մնացորդը, և այն բոլոր
ազգերը, որոնց վերայ կ'յիշուի
իմ անունը, ասում է Տէրը՝ այս
բաներն անողը։ Ահա օրեր պիտի 13
գան, ասում է Տէրը, որ հերկո-
ղը կ'հասնի հնձողին, և խաղող
կոխողը՝ սերմ ցանողին. և լեռ-
ները քաղցու կ'կաթեցնեն, և
բոլոր բլուրները կ'հալուին։

Եւ ես եմ կ'դարձնեմ իմ Իս- 14
րայէլ ժողովրդի գերութիւնը,
և պիտի շինեն աւերակ քաղաք-
ները, և բնակեն, և այգիներ
պիտի տնկեն և խմեն նորանց գի-
նին, և պարտէզներ պիտի շինեն
և ուտեն նորանց պտուղները։
Եւ ես պիտի տնկեմ նորանց ի- 15
րանց երկրի վերայ, և նորանք
այլևս պիտի չպոկուին իրանց
երկրի վերայից, որ տուել եմ ի-
րանց, ասում է Տէրը՝ քո Աստ-
ուածը։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱԲԴԻՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Աբդիու տեսիլքը։
Ահա՛ է մատեան Տէր Եհովան Եդովմի մասին. Լուր լսեցինք Տիրոջ կողմանէ, և դեսպան ուղարկուեցաւ ազգերի մէջ, Ըն-
2 վեր կացէք որ նորա վերայ պատերազմի վեր կենանք։ Ահա քեզ պզտիկ եմ արել ազգերի մէջ,
3 դու շատ անարգուած ես։ Քո սրտի հպարտութիւնը քեզ խաբել է, ով վէմի խոռոչներուն բնակող, որի բնակարանը բարձր է, որ սրտումդ ասում ես. Ո՞վ
4 կ'իջեցնէ ինձ երկիրը։ Թէև արծիւի պէս բարձրանաս, և թէև աստղերի մէջ դնես քո բոյնը, քեզ այնտեղից պիտի իջեցնեմ,
5 ասում է Տէրը։ Եթէ գողեր կային քեզ մօտ կամ գիշերային աւազակներ, (ինչպէս կործանուեցար.) մի՞թէ չէին գողանալ որքան իրանց բաւական է, եթէ կթողներ գայլն քեզ մօտ, մի՞թէ
6 չէին թողել ճիւեր։ Ինչպէս քննուեցաւ Եսաւ, որոնուեցան
7 նորա ծածուկ տեղերը։ Մինչև սահմանն ուղարկեցին քեզ քո դաշնակիցները, քեզ խաբեցին քեզ յաղթեցին քեզ հետ խաղաղութիւն ունեցողները, քո հացը որոգայթ դրին քո տակին. Հասկացողութիւն չկայ նորանում։
8 Ահա այն օրը, ասում է Տէրը, պիտի փչացնեմ իմաստուններին Եդովմից և հանճարը՝ Եսաւի
9 լեռնից։ Եւ քո զօրաւորները պիտի զարհուրեն, ով Թեման, որպէս զի մարդ բնաջինջ լինի Եսաւի լեռնիցը ապանուելով։
10 Եղբօրդ Յակոբի անիրաւութեան համար քեզ ամօթը պիտի ծածկէ, և դու բնաջինջ պիտի լինես
11 յաւիտեան։ Դու հանդէպ կանգնած օրը, այն օրը որ օտարները գերի արին նորա զօրքը, և օտարազգիները մտան նորա դուռները, և Երուսաղէմի վերայ վիճակ ձգեցին, դու էլ նորանց մէկի նման էիր։ Եւ պիտի մտիկ
12 չանէիր քո եղբօր օրը՝ նորա օտարի օրը, և պիտի չուրախանայիր Յուդայի որդիանց վերայ նորանց կորստեան օրը, և պիտի չմեծագրնէիր բերանդ նեղութեան
13 օրը։ Դու պիտի չմտնէիր իմ ժողովրդի դռնովը նորանց թշուառութեան օրը, դու էլ պիտի մտիկ չանէիր նորա ձախորդութեանը՝ նորա թշուառութեան օրը, և պիտի չերկարացնէիր նորա ապրանքին նորա թշու-
14 առութեան օրը, Եւ պիտի չկանգնէիր ճանապարհի գլխին նորա ազատուածներին բնաջինջ անելու համար, և պիտի չմատնէիր
15 նորա մնացածները նեղութեան օրը։ Վասն զի մօտիկ է Տիրոջ օրը բոլոր ազգերի վերայ, ինչպէս որ դու արիր, քեզ էլ այնպէս պիտի անեն, քո հատուցումը
16 դառնայ քո գլխին։ Որովհետև ինչպէս որ դուք խմեցիք իմ սուրբ լեռան վերայ, բոլոր ազգերն էլ պիտի խմեն միշտ, նորանք պիտի խմեն ու կլանեն, և չեղածի պէս դառնան։
17 Բայց Սիօն լեռան վերայ փրկուածներ լինին, և նա սրբութիւն է լինելու. և Յակոբի տունը պիտի տանայ իր ստացուածքները։
18 Եւ Յակոբի տունը կրակ պիտի լինի և Յովսէփի տունը՝ բոց, և Եսաւի տունը՝ յարդ, և պիտի վառուին նորանց մէջ և ուտեն նորանց. և Եսաւի տունը ճնացորդ չի ունենալ. վասն զի
19 Տէրն է խօսել։ Եւ հարաւացիք պիտի տիրեն Եսաւի լեռան, և դաշտայինք՝ փղշտացոց երկրին, և պիտի տիրեն Եփրեմի դաշտին և Սամարիայի դաշտին և Բենիամինը՝ Գաղաադին.
20 Եւ Իսրայէլի որդիանց այս զօրքի գերիները՝

փանանացոցը մինչև Սարեփթա, և երուսաղէմի գերիները՝ Սեփարադի միջինը, նորանք պիտի տիրեն հարաւային քաղաքներին։

Եւ ազատիչներ պիտի վեր ելնեն Սիոն լեռը, Եսաւի լեռը դատելու համար, և Տիրոջը պիտի լինի թագաւորութիւնը։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Ամաթիի
2 որդի Յոնային ասելով. Վեր կաց գնայ Նինուէ մեծ քաղաքը, և քարոզիր նորա դէմ. վասն զի նորանց չարութիւնը վեր է եկել
3 իմ առջևը։ Բայց Յոնան վեր կացաւ որ Տիրոջ երեսից Թարսիս փախչէ, և իջաւ Յոպպէ և մի նաւ գտաւ որ Թարսիս էր գնում, և նորա վարձքը տուաւ, ու նորա մէջ իջաւ, որ նորանց հետ Թարսիս գնար Տիրոջ երեսից։

4 Եւ Տէրը մի մեծ քամի հանեց ծովի վերայ, և մեծ փոթորիկ եղաւ ծովումը, և նաւը ուզում
5 էր փշրուիլ։ Եւ նաւավարները վախեցան, և ամեն մարդ իր աստուծոյն էր աղաղակում, և այն կարասիները, որ նաւումն էին, գցեցին ծովը, որ իրանց վերայից թեթևացնեն. իսկ Յոնան իջել էր նաւի խորքը և պառկել ու
6 խոր քնել։ Եւ նորա մօտ եկաւ նաւապետը և ասաց նորան, Ի՞նչ ես մրափել, վեր կաց աղաղակիր քո Աստուծոյն, գուցէ Աստուած յիշէ մեզ, և մենք չկորչենք։

7 Եւ մէկմէկի ասում էին. Եկէք վիճակ գցենք ու իմանանք, թէ ո՞ւմ պատճառով է էկել մեզ այս չարիքը. և վիճակ գցեցին,
8 և վիճակը ընկաւ Յոնային։ Եւ նորան ասացին. Մէկ ասիր մեզ թէ ո՞ւմ պատճառով է այս չարիքը էկել մեզ վերայ, ի՞նչ է քո բանը, և ո՞րտեղից ես գալիս. ո՞րն է քո երկիրը, և դու ո՞ր
9 ժողովրդից ես։ Եւ նա նորանց ասաց. Ես Եբրայեցի եմ, և ես պաշտում եմ երկնքի Աստուծոյն՝

Եւ Տէրը հրամայեց մի մեծ ձկան որ Յոնային կուլ տայ. և Յոնանը ձկան փորումն էր երեք օր և երեք գիշեր։

ԳԼ. Բ

1 Եւ Յոնանը աղօթք արաւ իր Տէր
2 Աստուծոյն ձկան փորիցը. Եւ ա-

եւ ազատիչներ պիտի վեր ելնեն Սիոն լեռը, Եսաւի լեռը դատելու համար, և Տիրոջը պիտի լինի թագաւորութիւնը։

Տիրոջը, որ ստեղծել է ծովը և ցամաքը։ Եւ այն մարդիքը վա- 10
խեցան մեծ վախով և ասացին նորան. Դա ի՞նչ ես արել դու. վասն զի այն մարդիկն իմացան որ նա փախչում է Տիրոջ երեսից, որովհետև պատմեց նորանց։
Եւ ասացին նորան. Մենք քեզ 11
ի՞նչ անենք, որ ծովը դադարէ մեզ վերայ. վասն զի ծովը գնալով ալեկոծվում էր։ Եւ նա ա- 12
սաց նորանց. Առէք ինձ և գցեցէք ինձ ծովը, և ծովը կ'դադարէ ձեզ վերայ. վասն զի ես գիտեմ որ իմ պատճառով է էկել այս մեծ փոթորիկը ձեզ վերայ։
Եւ այն մարդիկը թիավարում 13
էին որ ետ հասնեն ցամաքին, բայց չէին կարողանում, որովհետև ծովը գնալով ալեկոծվում էր նորանց վերայ։ Եւ նորանք աղա- 14
ղակեցին Եհովային և ասացին. Ո՛հ, Եհովայ, աղաչում ենք, թող չկորչենք այս մարդու անձի պատճառով, և անմեղ արիւն մի դնիր մեզ վերայ, վասն զի դու, ով Եհովայ, ինչպէս որ ուզում եանում ես։ Եւ առին Յոնային 15
և ծովը գցեցին նորան. և ծովը դադարեց իր կատաղութիւնից։
Եւ այն մարդիկը մեծ երկիւղով 16
վախեցան Տիրոջից, և զոհեր մատուցին Տիրոջը և ուխտեր արին։
Եւ Տէրը հրամայեց մի մեծ 17
ձկան որ Յոնային կուլ տայ. և Յոնանը ձկան փորումն էր երեք օր և երեք գիշեր։

ԳԼ. Բ

1 Եւ Յոնանը աղօթք արաւ իր Տէր
2 Աստուծոյն ձկան փորիցը. Եւ ա-

դէպի Տէրը, և նա ինձ պատասխանեց. անդունդի փորից աղաղակեցի, և դու լսեցիր իմ ձայնը։ Եւ դու ինձ գցեցիր անդունդը՝ ծովերի մէջ. և հեղեղներն ինձ պաշարեցին. քո բոլոր կոհակները և ալիքները անց էին կենում ինձ վերայով։ Եւ ես ասացի՝ Ես վռնտուած եմ քո աչքի առջևից, սակայն էլի պիտի նայեմ քո սուրբ տաճարին։ Ինձ շրջապատեցին ջուրբերը մինչև հոգիս, անդունդն ինձ պաշարել էր, կնիւն գլխիս փաթաթուեցաւ։ Ես լեռանց հիմանց մօտն իջայ, երկիրն իր նիգերովը եռևիս էր յաւիտեան. բայց դու իմ անձը հանեցիր կորուստից, ով իմ Տէր Աստուած։ Հոգիս ինձ վերայ նուաղելիս՝ յիշեցի Տիրոջը, և իմ աղօթքը քեզ մօտ հասաւ քո սուրբ տաճարը։ Փուչ ունայնութիւններ պաշտողները իրանց ընէլս ողորմութիւնը թողում են։ Բայց ես օրհներգութեան ձայնով քեզ զոհ պիտի մատուցանեմ. ուխտ խոստմունքս պիտի կատարեմ. փրկութիւնը Տիրոջն է։ Եւ Տէրը հրամայեց ձկանը, և նա Յովնանին փսխեց ցամաքը։

ԳԼ. Գ

Եւ Տիրոջ խօսքը երկրորդ անգամ եղաւ Յովնանին ասելով, Վեր կաց գնա Նինուէ մեծ քաղաքը և քարոզիր նորա դէմ այն քարոզութիւնը, որ ես քեզ կ'ասեմ. Եւ Յովնանը վեր կացաւ ու գնաց Նինուէ Տիրոջ խօսքին համեմատ, և Նինուէ մեծ քաղաք էր Աստուծոյ համար՝ երեք օրուայ ճանապարհ։ Եւ Յովնանը սկսեց քաղաքը մանել մէկ օրուայ ճանապարհ, և քարոզում էր ու ասում. Դեռ քառասուն օր կայ, և Նինուէն պիտի կործանուի։ Եւ Նինուէի մարդիկը հաւատացին Աստուծոյն, և ծոմ հրատարակեցին և քուրձեր հագին մեծերից մինչև պզտիկները։ Եւ խօսքը հասաւ Նինուէի թագաւորին, և նա վեր կացաւ իր աթոռից և հանեց պատմուճանը իր վերայից և քուրձ հագաւ և նստեց մոխրի վերայ. Եւ կանչել տուաւ ու ասաց Նինուէում թագաւորի և նորա մեծամեծների հրամանովը ասելով. Մարդ և անասուն, արջառ ու ոչխար ոչինչ չճաշակեն, չարածեն և ջուր չխմեն. Եւ քուրձ հագնեն մարդիկ և անասունք, և ուժով աղաղակեն առ Աստուած, և ամեն մարդ ետ դառնայ իր չար ճանապարհից և իր ձեռքերում եղած անիրաւութիւնից։ Ով գիտէ, ։֊֊ե Աստուած ետ կ'դառնայ և կ'զղջայ, և ետ դառնայ ու մեզ չկորչենք։ Եւ Աստուած տեսաւ նորանց գործքերը, որ ետ դարձան իրանց չար ճանապարհից, և Աստուած զղջաց այն չարեաց մասին որ ասել էր թէ պիտի անէ նորանց, և չարաւ։

ԳԼ. Դ

Եւ Յովնանը տրտմեց մեծ տրտմութիւնով և զայրացաւ. Եւ աղօթք արաւ Տիրոջ և ասաց, Ո՛հ Տէր, սա չէ՞ր իմ խօսքը որ դեռ իմ երկրումն էի. դորա համար էլ ածապարեցի որ փախչեմ Թարսիս, վասն զի գիտէի որ դու ողորմած, գթած, երկայնամիտ և բազումողորմ Աստուած ես և կ'զղջաս չարիքի համար։ Եւ հիմա, ով Տէր, առէք հոգիս ինձանից. վասն զի մեռնելս ապրելուցս լաւ է։ Եւ Տէրն ասաց. *Մի՞թէ լաւ է որ բարկացել ես։

Եւ Յովնանը դուրս եկաւ քաղաքից և նստեց քաղաքի արևելեան կողմին, և իրան համար այնտեղ մի հովանի շինեց և նորա տակին նստեց շուքի մէջ մինչև որ տեսնէ թէ ինչ է լինելու քաղաքին։ Եւ Տէր Աստուած հրամայեց մի դդմենու, որ նա վեր ելաւ Յովնանի վերայ որ շուք անէ նորա գլխի վերայ, որ

*Մի՞թէ խիստ բարկացել ես։

նորան ազատէ իր տառապանքը-
ցը, և Յոշեանը ուրախացաւ դըր-
մեւու վերայ մեծ ուրախութիւ-
նով։
7 Եւ Աստուած հրամայեց մի որ-
դի առաւօտեան արշալոյսը ծագե-
լիս, և նա զարկեց դդմենուն, և
8 նա չորացաւ։ Եւ եղաւ երբոր
արեգակը ծագեց, այն ժամանակ
Աստուած հրամայեց արևելեան
խարշակահար քամուն, և արևը
զարկեց Յոշեանի գլխին, և նա
նուաղուեցաւ, և իր անձի հա-
մար ուզում էր մեռնել, և ա-
սաց. Մեռնելս լաւ է ապրելուցս։
9 Եւ Աստուած ասաց Յոնա-
նին. Մի՞թէ լաւ է որ բարկացել
ես դդմենու մասին. և նա ասաց.
Լաւ է որ բարկացել եմ մինչև
ցմահ։
Եւ Տէրն ասաց. Դու ափսոսում 10
ես դդմենու մասին, որի վերայ
աշխատութիւն չքաշեցիր և որին
չմեծացրիր, որն որ մէկ գիշեր-
ուայ մէջ եղաւ և մէկ գիշեր-
ուայ մէջ փչացաւ։ Իսկ ես չափ- 11
սո՞մ Նինուէ մեծ քաղաքի
մասին, որի մէջ կան հարիւր
քսան հազար մարդից աւելի, ո-
րոնք չեն Հասկանում իրանց ա-
ջըն ու ձախը և շատ անասուն։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԻՔԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տէրոջ խօսքը որ եղաւ Մօրաս-
գի Միքիային Յուդայի Յովա-
թամ, Աքազ և Եզեկիա թա-
գաւորների օրերին, որ նա տե-
սաւ Սամարիայի և Երուսաղէմի
մասին։
2 Լսեցէք, ով բոլոր ժողովուրդ-
ներ, ուշադրութիւն արա, ով
երկիր և նորա բոլոր լրութիւնը.
և Տէր Եհովան վկայ լինի ձեզ
դէմ, Տէրը իր սուրբ տաճարից։
3 Վասն զի ահա Տէրը դուրս է
գալիս իր տեղից, և պիտի իջնէ
և մոն գայ երկրի բարձրաւան-
4 դակների վերայ։ Եւ լեռները
պիտի հալուին նորա տակին, և
հովիտները պիտի ճեղքուին ինչ-
պէս մոմ կրակի առջև, ինչպէս
ջուր որ իջնում է զառիվայրից։
5 Յակոբի յանցանքի համար է այս
ամենը և Իսրայէլի տան մեղքերի
համար. ո՞վ է Յակոբի յանցան-
քը, չէ՞ որ Սամարիան. և ո՞վ
է Յուդայի բարձրաւանդակները,
6 չէ՞ որ Երուսաղէմը։ Եւ Սամա-
րիան պիտի դաշտի քարակոյտ
դնեմ՝ այգի անելու տեղեր, և
նորա քարերը պիտի թափեմ ձո-
7 րը, և բանամ նորա հիմերը։ Եւ

*Փոշու տուն †Դաւեցիների տուն,
‡Ելք, ||Մերձակայ տուն
§Դատնութիւններ,

13 Երուսաղէմի դուռը։ Ձին կառքին լծիր, ով Լաքիսի բնակչուհի, դա մեղքի սկիզբն է Սիօնի աղջկան համար. վասն զի քեզանումդ գտնվում են Իսրայէլի յանցանքները։ 14 Դորա համար ընծաներ պիտի տաս Մօրեսեթ-գեթին. *Աքզիբի տուները պիտի տեն Իսրայէլի թագաւորներին։ 15 Դեռ ժառանգ պիտի բերեմ քեզ համար, ով †Մարեսայի բնակչուհի, մինչև Ողողմ պիտի հասնէ Իսրայէլի փառքը։ 16 Եղ կտրիր մազերդ քո փափուկ որդկանց համար, լայնացրու կնտուբիւնդ արծիւի պես, վասն զի գերի տարուեցան քեզանից։

ԳԼ. Բ

1 Վա՛յ անօրէնութիւն խորհողներին, և իրանց անկողիններուն վերայ չարութիւն գործողներին. նորանք անում են այն առաւօտեան լոյսին, վասն զի իրանց ձեռքըն է իրանց ‡Ղլորը։ 2 Եւ նորանք ցանկանում են ագարակների և յափշտակում, և ցնխնում են տների և առնում. և բռնաբարում են մարդին ու իր տանը և մարդին ու նորա ժառանգութեանը։ 3 Դորա համար այսպէս է ասում Տէրը. Ահա ես չարիք եմ խորհում այս ազգի վերայ. որ տեղից որ չէք կարողանալ քաշել ձեր պարանոցները, և չէք գնալ հպարտութեամբ, վասն զի ժամանակը չար է։ 4 Այն օրը ձեզ վերայ առակ են խօսելու, և ողբալի ողբով ողբան ասելով. Բոլորովին փչացանք. իմ ժողովրդի բաժինը նա փոխեց, նա ի՛նչպէս է վեր առնում ինձանից, խոտորողին բաժանում է մեր դաշտերը։ 5 Դորա համար դու լար ձգող պիտի չունենաս, Տէրոջ ժողովքում։

6 Մի մարգարէանաք, ասում են նորանք, մի մարգարէանաք նորանց վերայ. նախատինքը չի հասնիլ։ 7 Ով Յակոբի տուն կոչուածդ, մի՞թէ Տէրոջ հոգին կարճ է. կամ սորա՞նք են նորա գործքերը. մի՞թէ իմ խօսքերը լաւ չեն ուղիղ վարուողի համար։ 8 Եւ իմ երէկուայ ժողովուրդը իբրև թշնամի է վեր կացել. հանդերձի վերայից յափշտակում էք պատմուճանը ապահով անցուդարձողներից, պատերազմից ետ դարձողներից։ 9 Իմ ժողովրդի կանանց վռնտում էք իրանց զուարճալի տներիցը, նորանց երեխաների վերայից առնում էք իմ փառքը յաւիտեան։ 10 Վեր կացէք ու գնացէք, վասն զի սա չէ հանգստութեան տեղը. այն պղծութեան պատճառով, որ պիտի կործանէ, և այն էլ սաստիկ կործանումով։ 11 Եթէ մի մարդ թեթեւաբարոյ և ստապատում՝ քեզ համար գինի և օղի մարգարէանար, ահա նա կ'լինէր այս ազգի մարգարէն։

12 Անպատճառ պիտի ժողովեմ ձեզ ամենիդ, ով Յակոբ, անպատճառ պիտի հաւաքեմ Իսրայէլի մնացորդը Բոսրայի ոչխարների պէս, ինչպէս մի հօտ իր փարախի մէջ. պիտի աղմուկ հանեն մարդկանց բազմութեան պատճառով։ 13 Խրամատողը վեր է ելնում նորանց առջև, նորանք խրամատում և անց են կենում դռնովը ու նորանով դուրս գալիս, և նորանց թագաւորը անց է կենում նորանց առջև, և Տէրը էլ նորանց պարագլուխ։

ԳԼ. Գ

1 Եւ ես ասացի. Մէկ լսեցէք, ով Յակոբի գլխաւորներ, և Իսրայէլի տան իշխաններ, չէ՞ որ դուք պէտք է իմանաք իրաւունքը. 2 Դուք՝ բարին ատողներդ և չարը սիրողներդ, որ մաշկում էք մարդկանց կաշին իրանց վերայից, և նորանց միսը իրանց ոսկորներիցը։ 3 Որ ուտում էք իմ ժողովրդի միսը, և պլոկում էք

*Ատութիւն
†Ժառանգութիւն
‡առաւածը։

*Նորանց

Նորանց կաշին իրանց վերայիցը, և նորանց ոսկորները փշրուամ, և նորանց կտորուամ ինչպէս կամենայուամ և ինչպէս մին պատուկի
4 ժէջ։ Ա՛յն ժամանակ կ՚ազատուին կեն դէպի Տէրը, և նորանց չի պատահանել նա, և իր երեսը կ՚ծածկէ նորանցից այն ժամանակին, վասն զի նորանք չարացրել են իրանց արարքները։
5 Ա՛յսպէս է ասում Տէրը. Իմ ժողովուրդը մոլորեցնող մարգարէների մասին, որ կծում են իրանց ատամներով, և աղաղակում՝ խաղաղութի՛ւն, և ով որ նորանց բերանը ոչ բան չդնէ, նորա դէմ պատերազմ կ՚հրատարակեն։
6 Վասն որոյ դիշեր լի՛նէ ձեզ տեսիլքի պատճառով, և ձեզ խաւար լի՛նէ գուշակութեան համար, և արեգակը պիտի մանէ մարգարէների վերայ, և օրը խաւարէ նորանց վերայ։
7 Եւ պիտի ամաչեն տեսանողները, և պիտի ամօթահարուին գուշակողները և էրանց շրթունքները ծածկեն նորանք ամենքը, որովհետև չկայ
8 Աստուծոյ պատասխան։ Սակայն ես լցուած եմ զօրութիւնով Տիրոջ Հոգովը, նաև դատաստանով ու արիութիւնով, որ իմացընեմ Յակոբին իր յանցանքը, և Իսրայէլին՝ իր մեղքը։
9 Մէկ սա լսեցէք, ով Յակոբի տան գլխաւորներ, և Իսրայէլի տան իշխաններ, իրաւունքից զզուողներ, որ ամեն ուղիղ բանը
10 ծռում էք. Սիօնը արիւնհեղութեամբ շինելով, և Երուսաղէմը անիրաւութեամբ,
11 նորա գլխաւորները կաշառքով են դատում, և նորա քահանաները վարձքով են ասլորեցնում, և նորա մարգարէները փողով են մարգարէանում, և Տիրոջ վերայ են կռնում՝ ասելով. Չէ՞ որ Տէրը մեր մէջն է, մեզ վերայ չարիք
12 չի գալ։ Դորա համար Սիօնը ձեր պատճառով պիտի իբրև ագարակ հերկուի, և Երուսաղէմը աւերակների դէզեր դառնայ, և տաճարի լեառը՝ անտառի բարձրաւանդակներ։

ԳԼ. Դ

Եւ վերջի օրերը պիտի լինի որ 1
Տիրոջ տան լեառը հաստատուն պիտի լինի լեռանց գլխին, և բարձր պիտի լինի բլուրներից, և ժողովուրդները հոսելով նորա մօտ պիտի գնան. Եւ շատ ազ- 2
գեր պիտի գնան և ասեն. Եկէք վեր գնանք Տիրոջ լեառը, և Յակոբի Աստուծոյ տունը, որ նա մեզ սովորեցնէ իր ճանապարհները, և որ մենք գնանք նորա շաւիղներովը, վասն զի Սիօնից պիտի դուրս գայ օրէնքը, և Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից։ Եւ 3
նա շատ ժողովուրդների մէջ դատաստան պիտի անէ, և զօրաւոր ազգերին պիտի յանդիմանէ մինչև հեռուները. և նորանք պէտք է կտրատեն՝ իրանց սուրերը խոփեր լինեն, և իրանց նիզակները՝ յօտացներ, ազգ ազգի վերայ սուր պիտի չբարձրացնէ, և այլևս պատերազմ պիտի չսովորեն։ Այլ 4
ամեն մարդ պիտի իր որթի տակին բնակէ, և իր թզենու տակին, և վախեցնող պիտի չլինի, վասն զի Զօրաց Տիրոջ բերանն է ասել։ Վասն զի բոլոր ժողովուրդ- 5
ները՝ իւրաքանչիւրն իր աստուածոյ անունովն է գնում, իսկ մենք մեր Տէր Աստուծոյ անունովը պիտի գնանք, յաւիտեան յաւիտենից։
Այն օրը, ասում է Տէրը, 6
պիտի ժողովեմ կաղը, և աքսորուածը պիտի հաւաքեմ, և այն էլ՝ որին չարիք եմ արել։ Եւ կաղը պիտի մնացորդ չինեմ, 7
և հեռու քշուածը՝ զօրաւոր ազգ. և Տէրը պիտի թագաւորէ նորանց վերայ՝ Սիօն լեռան վերայ, այսուհետև մինչև յաւիտեան։
Եւ դու, ով հօտի աշտարակ, 8
Սիօնի աղջկան բլուրը, մինչև քեզ է գալու և հասնելու առաջի իշխանութիւնը, Երուսաղէմի աղջկան թագաւորութիւնը։
Հիմա ինչո՞ւ ես դուռում գո- 9
չում, թագաւորը մէջդ չէ՞, կամ թէ խորհրդականդ է կորե՞լ. որ քեզ ծննդականի պէս ցաւ է

10 բանել։ Գալարիը և ցուտադնիը ծննդաբանի պէս, ով Աիօնի աղջիկ, վասն զի հիմա դուրս ես գալու քաղաքիցը, և պիտի բնակես դաշտումը, և պիտի գնաս մինչև Բաբիլոն, և այնտեղ պիտի ազատուիս, Տէրը քեզ այնտեղ պիտի ազատէ քո թշնամիներուն ձեռքիցը։ 11 Եւ հիմա քեզ վերայ շատ ազգեր են ժողովուել, որոնք ասում են. Թող պղծուի, և մեր աչքերը 12 տեսանեն Աիօնին։ Բայց նորանք չը գիտեն Տէրոջ խորհուրդները, և չեն հասկանում նորա խորհուրդը, վասն զի նա նորանց ժողովելու է ինչպէս արտերը կալի 13 մէջ։ Վեր կաց ու կալը կոտրիր, ով Աիօնի աղջիկ, վասն զի քո եղջուրը երկաթի պիտի անեմ, և քո կճղակները պիտի պղնձի շինեմ, և դու շատ ժողովուրդներ պիտի մանրես. և ես Տէրոջը պիտի նուիրեմ նորանց աշխատանքը, և նորանց ստացուածքը, բոլոր երկրի Տէրոջը։

ԳԼ. Ե

1 Հիմա դու քեզ գունդ կոտրիր, ով գնդի աղջիկ, պաշարում է դրուել մեզ վերայ, գաւազանով պիտի հարուածեն Իսրայէլի դատաւորի ծնօտին։ 2 Եւ դու, ով Բեթլէհէմ Եփրաթա, փոքր ես Յուդայի հազարաւորների մէջ, քեզանից պիտի դուրս գայ ինձ համար նա որ իշխան լինի Իսրայէլին, և նորա ելքը վաղուց յաւիտենական օրերից է։ 3 Դորա համար նորանց պիտի ձգէ մինչև ծնանողի ծնելու ժամանակը, և նորա եղբայրների մնացորդը դարձ պիտի դառնայ Իսրայէլի որդիների մօտ։ 4 Եւ նա պիտի կանգնի և հովուէ Տիրոջ ոյժով, իր Տէր Աստուծոյ անուան մեծութեամբը, և նորանք պիտի բնակուին, վասն զի հիմա պիտի մեծանայ մինչև երկրի ծայրերը։ 5 Եւ սա խաղաղութիւն պիտի լինի, Ասորեստանցին երբոր մեր երկիրը մտնէ, և երբոր մեր պալատներուն մէջ գայ մեր պատերազմը, այն ժամանակ մենք կ'կանգնեցնենք նորա դէմ եօթը հովիւ և ութ իշխան մարդ։ 6 Եւ նորանք պիտի հովուեն Ասորեստանի երկիրը սրով և Նեբրովթի երկիրը իր դռներով, և նա պիտի ազատէ Ասորեստանցիներից, երբոր նորանք մեր երկիրը մտնեն և մեր սահմաններուն։ 7 Եւ Յակոբի մնացորդը պիտի շատ ժողովուրդների մէջ Տիրոջ կողմից եղիւն պէս լինի, այն շաղին պէս որ վերայ, որ մարդու չէ սպասում, և մարդու որդիանց չէ յուսում։ 8 Եւ Յակոբի մնացորդը ազգաց մէջ պիտի լինի շատ ժողովուրդների մէջ, ինչպէս առիւծ անտառի անասունների մէջ, ինչպէս կորիւն ոչխարների հօտերի մէջ, որ եթէ անցնէ ու կոխ տայ և պատառէ, ազատող չի լինիլ։ 9 Թող ձեռքդ բարձրանայ քո թշնամիներից վերայ, և քո բոլոր ոսոխները բնաջինջ կ'լինեն։

10 Եւ պիտի լինի այն օրը որ պիտի բնաջինջ անեմ քո ձիերը քո միջիցը և պիտի կորցնեմ քո կառքերը։ 11 Եւ պիտի բնաջինջ անեմ քո երկրի քաղաքները, և պիտի քանդեմ քո բերդերը։ 12 Եւ պիտի բնաջինջ անեմ քո ձեռքից կախարդութիւնները, և գուշակողներ պիտի չունենաս դու։ 13 Եւ պիտի բնաջինջ անեմ քո դրօշեալները և քո արձանները քո միջիցը, և այլևս չես երկրպագել քո ձեռաց գործքերին։ 14 Եւ պիտի կործանեմ քո Աստարովթները քո միջիցը, և պիտի փչացնեմ քո քաղաքները։ 15 Եւ վրէժ պիտի կատարեմ բարկութեամբ և սրտմտութեամբ այն ազգերին որոնք չեն լսում։

ԳԼ. Զ

1 Մէկ լսեցէք Տիրոջ ասածը, վեր կաց, դատ վարիր լեռանց հետ, և բլուրները լսեն քո ձայնը։ 2 Լսեցէք, ով լերինք, Տիրոջ դատը, և դուք, ով հաստատուն հիմունք երկրի, վասն զի Տէրը դատ ունի իր ժողովրդի

հետ, և Իսրայէլի հետ պիտի վիճէ։
3 Ով իմ ժողովուրդ, ես քեզ ի՞նչ եմ արել, և ի՞նչով եմ քեզ յոգնեցրել, պատասխանիր
4 ինձ։ Վասն զի քեզ հանել եմ Եգիպտոսի երկրից, և ծառայութեան տանից քեզ ազատել եմ, և քո առաջն ուղարկեցի Մովսէսին, Ահարոնին և
5 Մարիամին։ Ով իմ ժողովուրդ, մէկ յիշիր թէ ի՞նչ էր խորհուրդ տալիս Մովաբի Բաղակ թագաւորը, և թէ նորան ի՞նչ պատասխանեց Բէովրեան Բաղաամ. Սատիմից մինչև Գաղգաղա. որպէս զի գիտենաս Տիրոջ արդար գործքերը։
6 Ինչո՞վ ես դիմաւորում Տիրոջը, ընկնեմ բարձրեալ Աստուծոյ առջև. արդեօք դիմաւորեմ նորան ողջակէզներո՞վ, մէկ տա-
7 րեկան որթերո՞վ։ Մի՞թէ Տէրը կ'հաճի հազարաւոր խոյերի, կամ բիւրաւոր յուղի գետերի. արդե՞օք իմ անդրանիկը տամ իրրև իմ յանցանքի պատարագ, իմ որովայնի պտո՞ւղը՝ իրրև իմ անձի մեղքի զոհ։
8 Քեզ յայտնել է, ով մարդ, թէ ինչ է բարին, և թէ Տէրը ինչ է ուզում քեզանից. այլ միայն իրաւունք անել, ողորմութիւն սիրել, և խոնարհութեամբ վարուիլ քո Աստուծոյ հետ։
9 Տիրոջ ձայնը կանչում է քաղաքին, և իմաստութիւնը նկատում է քո անունը. լսեցէք պատժի գաւազանը և նորա վճռողին։
10 Դեռ անօրէնի տանը անօրէնութեան գանձեր կա՞ն. և նուազած
11 արդա՞ր որ անիծեալ է։ Մի՞թէ ես մարդու կ'համարեմ անօրէնութեան կշռաւորին և խարդախ
12 քարերի քսակաւորին։ Որի հարուստները լիքն են բռնութեամբ, և նորա բնակիչները սուտ են խօսում. և նորանց բերանումը նենգաւոր լեզու կայ։
13 Ուրեմն ես էլ հիւանդացնում եմ քեզ զարկելով, և աւերակ եմ անում քո
14 մեղքից պատճառով։ Դու պիտի ուտես, ու չկշտանաս, և քո ա-

նօթութիւնը քո փորումը պիտի հայ. և դու կ'քարշես, բայց չես ազատիլ, և ինչ որ ազատես՝ սրի պիտի մատնեմ։ Դու պիտի սերմես, բայց չհնձես, դու ձէթի պիտի կոխես, բայց իւղով չօծուիս. և քաղցու՝ բայց գինի պիտի չը խմես։ Եւ պահվում են Ամրիի հրամանները, և Աքաաբի տան բոլոր գործքերը, և դուք գնում էք նորանց խրատներովը, որպէս զի քեզ ամայի անեմ, և նորա բնակիչները սուլելու ---ին. և դուք պիտի կրէք իմ ժողովրդի նախատինքը։

Գլ. Է

Վա՛յ ինձ, որ պտղաքաղի նման եմ դառել, այգեկութի ճռաքաղի պէս. ողկոյզ չկայ ուտելու, մի կանխահաս թուզ՝ որը փափաքում է սիրտս։ Կորչում է բարեպաշտը երկրից, և ուղիղը չկայ մարդկանց մէջ. ամենքը արիւնների համար դարան են մտքում, ամեն մարդ իր եղբօրը որսում է վարմով։ Դէպի չարութիւն են ձեռքերը, որ յաջողեն, իշխանը պահանջում է ընծայ, և դատաւորը վարձքով է դատ տեսնում, և մեծ մարդը իր սրտի ցանկացածն է խօսում. և նորանք ոլորում են բանը։ Նորանց լաւագոյնը փուշի նման է, ուղիղը փշեղէն ցանկից վատ. քո դէտերի օրը՝ եկաւ քո այցելութիւնը, հիմա պիտի լինի նորանց շփոթութիւնը։ Մի հաւատաք բարեկամին, ընկերին մի վստահիք, ծոցիդ պառկողից պահիր բերանիդ դուռները։ Վասն զի որդին անարգում է հօրը, աղջիկը վեր է կենում իր մօր վերայ, հարսը իր սկեսրի վերայ. մարդու թշնամիները իր ընտանիքն են։

Բայց ես Տիրոջը եմ սպասում, և յուսում եմ իմ փրկութեան Աստուծոյն, ինձ պիտի լսէ իմ Աստուածը։ Մի ուրախանար ինձ վերայ, ով իմ թշնամի, վասն զի ընկել եմ, վեր կ'կենամ,

1 2 3 4 5 6 7 8

թէև խաւարի մէջ նստեմ, Տէրը
9 ինձ լոյս է։ Տիրոջ ցասումը պի-
տի կրեմ, (վասն զի նորա դէմ
մեղք եմ գործել,) մինչև որ նա
պաշտպանէ իմ դատը և ինձ ի-
րաւունք անէ, ինձ հանէ լոյսը,
որ նորա արդարութիւնը տես-
10 նեմ։ Այն ժամանակ իմ թշնա-
մին տեսանէ, և ամօթը նորան
ծածկէ, որ ասում էր ինձ. Թէ
Ո՞ւր է քո Տէր Աստուածը. իմ
աչքերը տեսանեն նորան. հիմա նա
տնտակոխ պիտի լինի ինչպէս փո-
ղոցի ցեխը։
11 Այն օրը որ պարիսպներդ կը
կ'շինուին, նոյն օրը պատուէրը
12 կ'հեռանայ։ Այն օրը մինչև քեզ
մօտ են գալու Ասորեստանից և
Եգիպտոսի քաղաքներից, և Ե-
գիպտոսից մինչև Գետը, և ծո-
13 վից ծով ու լեռնից լեռ։ Ե-
րկիրը ամայի պիտի լինի իր բը-
նակչաց պատճառով, իրանց
գործքերի պտուղների համար։
14 Հովուիր ժողովրդին քո գա-
ւազանովը՝ քո ժառանգութեան
հօտերը, որոնք ձին ներսում
անտառում կարմելոսում, թող
արածեն Բասանում և Գաղաա-

գում վաղի օրերի պէս։ Քո Ե- 15
գիպտոսի երկրից դուրս գալու օ-
րերի պէս նորան հրաշքներ պիտի
ցոյց տամ։ Ազգերը պիտի տես- 16
նեն և ամաչեն իրանց բոլոր որի-
ութիւնից, ձեռքը պիտի դնեն
բերանի վերայ, նորանց ականջ-
ները պիտի խլանան։ Հող պիտի 17
լիզեն օձի պէս, երկրի սողուննե-
րի պէս, դողալով պիտի գան ի-
րանց թաքուստներից, մեր Տէր
Աստուածանից պիտի դողան. ա-
յո՛, քեզանից պիտի վախենան։
Ո՞վ է Աստուած քեզ նման, 18
անօրէնութիւն վեր առնող, և իր
ժառանգութեան մնացորդի մեղ-
քից անց կենող, որ չէ պահում
իր բարկութիւնը յաւիտեան,
վասն զի նա ողորմութիւն սիրող
է։ Նա դարձեալ մեզ պիտի ո- 19
ղորմէ, նա պիտի ոտնահարէ մեր
անօրէնութիւնները. և մեր բոլոր
մեղքերը դու կ'գցես ծովի խորքե-
րը։ Ճշմարտութիւն պիտի 20
տես Յակոբին, և ողորմութիւն
Աբրահամին, որ երդում եա ա-
րել մեր Հայրերին վաղ օրերից
՝ի վեր։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՆԱՈՒՄԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տինուէի պատգամը։ Ելկեսացի
Նաւումի տեսիլքի գիրքը։
2 Նախանձոտ և վրէժխնդիր Աստ-
ուած է Տէրը, վրէժխնդիր է Տէրը և
բարկութեան տէր, վրէժ առնող
է Տէրը իր ոսոխներից, և բար-
կութիւն պահող իր թշնամինե-
3 րի դէմ։ Տէրը երկայնամիտ է և
մեծազօր, և երբէք չի արդարա-
ցընիլ յ–ն–ց––ը։ Տիրոջ ճանա-
պարհը մրրկի և փոթորկի մէջ է,
և ամպերը նորա ոտքերի փոշին
4 են։ Սաստում է ծովին և նորան
ցամաքեցնում, և բոլոր գետերը
չորացնում, թառամում են Բա-
սանն ու Կարմէղոսը, և Լիբա-

նանի ծաղիկը թառամում է։
Լեռները դողում են նորանից 5
և բլուրները հալվում են, երկի-
րը բարձրանում է նորա առջև,
նաև աշխարհը և բոլոր նորան-
ում բնակիչները։ Նորա ցաս- 6
ման առջև ո՞վ կ'կանգնէ, և ո՞վ
կ'դիմանայ նորա բարկութիւնը
բորբոքելիս, նորա սրտմտութի-
նը թափվում է կրակի պէս, և
ապառաժները ճաքում են նորա
առջև։
Բարի է Տէրը, ամրոց է նեղու- 7
թեան օրում. և ճանաչում է
իրան ապաւինողներին։ Յորդա- 8
հոս հեղեղով պիտի վերջ տայ
նորա տեղին, և նորա թշնամի-
ներին պիտի հալածէ խաւարը։

9 Ի՞նչ էք մտածում Տիրոջ դէմ. վերջ առաջը նա է, նեղութիւնը երկու անգամ վեր չի կենալ:
10 Ա՛սան թէ մինչև որ նորանք փուշերի պէս խճճուած են, և իրը իրանց գինիով արբածներ, պիտի ապառաւին բոլորովին չոր յարդի
11 պէս: Քեզանից դուրս եկաւ Տիրոջ դէմ չարութիւն մտածողն անօրէն խորհրդականը: Այսպէս է ասում Տէրը. Թէև անդորը են ապաքան բազմութիւ, բայց և այնպէս պէտք է հնձուին, և անցաւ. և ես քեզ նեղել եմ, այլևս
13 չեմ նեղել: Եւ հիմա պիտի նորա լուծը կոտրեմ քո վերայից, և
14 կապերդ պիտի կարեմ: Եւ Տէրը հրամայել է քո մասին. այլևս սերունդ պիտի չինի քո անունից, քո տաճարներն տանից պիտի բնաջինջ անեմ քանդակած ու ձուլածոյն. քո գերեզմանը պիտի շինեմ, որովհետև
15 թեթև եղար: Ահա լեռանց վերայ աւետիք բերողի ոտքերը, որ խաղաղութիւն է քարոզում, տօնիր, ով Յուդա, քո տօները, կատարիր ուխտերդ. վասն զի այլևս անօրէն պիտի չանցնէ միջովդ, բոլորը բնաջինջ եղաւ:

ԳԼ. Բ

1 Խորտակող է վեր գալիս քեզ դէմ. պահիր պարիսպը. ճանապարհին նայիր, մէջքդ պնդացրու, ոյժդ շատ զօրացրու:
2 Վասն զի Տէրը նո՛ր է դարձրել Յակոբի վայելչութիւնը, Իսրայէլի վայելչութեան պէս. վասն զի դատաստանողները դատակնիք են նորանց, և նորանց արմի ուռերը փչացրել
3 են: Նորա զօրավարների վահանը կարմրած է, քաջագործները ոգեան կարմիրով են հերոսաբար զգեցեալ պողպատով զրահ է կառքը նորա պատրաստութեան օրը, և նոճի նիզակները ծածանվում են:
4 Փողոցներում կատաղում են կառքերը, որոմում են հրապարակներում, նորանց երեւոյթը ջահերի պէս է, կայծակների պէս են վազվզում:

Նա յիշում է իր զօրաւորներին, նորանք գլորվում են գնալիս, շտապում են դէպի պարիսպը, և պատսպարանը պատրաստուած է: Գետերի դուռները պիտի բացուեն, և պալատը պիտի հալուի:
Եւ որոշուեցաւ, որ նա գերութեան հանուի, և նորա աղախինները ճչում են իրը աղաւնիների ձայնով, իրանց սրտերին ծեծելով: Եւ Նինուէ ջրերի ուռազանի պէս իր օրերից 'ի վեր, և նորանք փախչելիս՝ կանգնեցէք, կանգնեցէք, ո՛չ-ոքն, բայց ուշադրող չը կայ: Արծաթ կողոպտեցէք, ոսկի կողոպտեցէք. և վախճան չունին գարդերը՝ ծանրաբեռնուած ամեն տեսակ ցանկալի բաներով: Դատարկ ու դատարկուած ու դատարկացրուած է. և սիրտը հալվում և ծունկերը դողում, և ամեն մէջքերը երերում են, և ամենքի երեսը սպրանում է:

Ո՞ւր է առիւծների բնակարանը, և կորիւնների արօտատեղի՞ն, ուր որ մտան են գալիս արու առիւծը, մատակ առիւծը և առիւծի լակոտը, և վախեցնող չը կայ: Առիւծը պատառում էր իր լակոտներին բաւականանալու չափ, և խեղդում էր իր մատակ առիւծների համար. և լցնում էր որսով իր մորիները, և իր բնակարանները յափշտակութեամբ: Ահա ես քեզ դէմ եմ, ասում է Զօրից Տէրը, և պիտի ծուխով պրեմ նորա կառքերը, և քո կորիւններին պիտի սուրն ուտէ. և երկրիցը պիտի քո որսը բնաջինջ անեմ, և այլևս պիտի չլսուի քո դեսպանների ձայնը:

ԳԼ. Գ

Վա՛յ արիւնհեղութեանց քաղաքին, բոլորը լէկն է առաջութեամբ, յափշտակութեամբ. որը պակաս չէ. խորտանի շռինդը և անիւի շառաչման ձայնը, և արշեթաց ձիու ուղեցուող կառքը. Վեր վեր խաղացող ձիաւորը և թուրի պսպղացը և նիզակի

ղողղոցը, և շատ վիրաւորները
և մեռածների բազմութիւնը, և
անթիւ դիակները, որոնց դիակ-
4 ների վերայ գլորվում են։ Պառնկի
պոռնկութեանց շատութեան հա-
մար, որ լաւ շնորհալի է իրրև
կախարդութեանց տիկին, որ ազ-
գերը ծախում է իր պոռնկու-
թիւնովը, և ազգատոհմները՝ իր
5 կախարդութիւններովը։ Ահա ես
քեզ դէմ եմ, ասում է Զօրաց
Տէրը, և պիտի քաղցդէդ բանամ
քո երեսիդ, և ցոյց տամ ազգե-
րին քո մերկութիւնը, և թա-
գաւորութիւններին՝ քո անար-
6 գանքը։ Եւ քեզ վերայ պիտի
պղծութիւններ գցեմ ու քեզ
խայտառակեմ, և քեզ հանդէս
7 պիտի դնեմ։ Եւ պիտի լինի որ ա-
մեն քեզ տեսնողը պիտի փախչէ
քեզմանից և պիտի ասէ՝ Աւերակ
եղաւ Նինուէն, ո՞վ պիտի ողբայ
նորա վերայ, ո՞րտեղից որոնեմ
քեզ համար մխիթարիչներ։
8 Մի՞թէ դու լաւ ես Նով-ամո-
նից, որ շրջապատուած ջրերով՝
գետերում էր բնակում, որի խը-
րամը ծովն էր, ծովից էր նորա
9 պարիսպը։ Եթովպացիք էին նո-
րա ոյժը, և Եգիպտացիք՝ որ
ծայր չունին. Փուդացիք և Լի-
10 բէացիք քեզ օգնական էին։ Նա
էլ պէտք է աքսոր գնայ գերու-
թիւնով և նորա մանուկները էլ
պիտի ջարդուին ամեն ճանապար-
հի գլխին, և նորա պատուական-
ների վերայ վիճակ պիտի գցեն,
և նորա բոլոր մեծամեծները պի-
11 տի կապուին շղթաներով։ Դու
էլ պիտի արբես՝ անյայտ դառ-
նաս, դու էլ պիտի ապաստանու-
րան որոնես թշնամուցը։ Քո բո- 12
լոր բերդերը թզենիներ են կան-
խահաս ի՛ւր-պէրով. հէնց որ թա-
փահարուին, իսկոյն կ'ընկնեն ու-
տողի բերանը։ Ահա քո ժողո- 13
վուրդը կանայք է քո միջումը,
քո թշնամեաց առջև պիտի բաց-
ուին քո երկրի դուռները, կրա-
կը պիտի ուտէ քո նիգերը։ Պա- 14
շարման համար ջուր քաշիր քեզ
համար, պնդացրու բերդերդ, ցե-
խը մտիր և կոխ տուր կաւը, նո-
րոգիր աղիւսի բուրը։ Այնտեղ 15
քեզ կրակը պիտի ուտէ, սուրը
պիտի քեզ ջարդէ, ջրհեղեղի պէս
քեզ ուտէ. բազմացրու քեզ ջր-
հեղեղի պէս, շատացրու քեզ մո-
րեխի պէս։ Դու շատացրիր քո 16
վաճառականները երկնից աստղե-
րից աւելի. ջրհեղեղը տարած-
ւեցաւ ու թռաւ։ Քո թագա- 17
կիրները մորեխի պէս են, և քո
զօրավարները՝ անթիւ մորեխների
պէս. որոնք հանգչում են ցուրտ
օրը ցանգերի վերայ, արեգակը
ծագելիս՝ չուում են, և չգիտաց-
ւում նորանց տեղը թէ ուր են։
Քնած են քո հովիւները, ով Ա- 18
սորեստանի թագաւոր, պառկած
են քո ազնուականները, ցրուած
է քո ժողովուրդը լեռանց վերայ,
և ժողովող չկայ։ Ամբոխն չը 19
կայ քո կատրուածքի համար,
անբուժելի է քո վէրքը, քո լուրն
ամեն լսողները քեզ վերայ ծափ
են տալիս, վասն զի ո՞ւմ վերայ
չէ անցել քո չարութիւնը միշտ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Ա՛ն պատգամը որ տեսաւ Ամ-
բակում մարգարէն։
2 Մինչև ե՞րբ, ով Տէր, աղա-
ղակեմ եա, և դու չլսես, աղա-
ղակեմ դէպի քեզ զրկանք, և
3 դու չազատես։ Ինչո՞ւ ես ինձ
անօրէնութիւն տեսնել տալիս,
տառապանք ցո՞յց տալիս. և յա-
փրշտակութիւն և զրկանք կայ
իմ առջև, և կռի՞ւ է լինում,
և վէ՞ճ յարձրանում։ Սորա հա- 4
մար օրէնքը խափանուել է և ի-
րաւունքը մշտապես չէ հանդիսանա-
ում, վասն զի ամբարիշտը շրջա-

պատուհմ է արդարին, վասն ո-
րոյ դատաստանն էլ ծուռ է
դուրս գալիս։
5 Նայեցէք ազգերի մէջ և տե-
սէք, և զարմանալով հիացէք,
վասն զի մի գործ է գործում ձեր
օրերումը, որ չէք հաւատալ եթէ
6 պատմուի։ Վասն զի ահա ես
յարուցանում եմ Քաղդէացիները-
րին, այն դառն ու արագընթաց
ազգը, որ գնում է դէպի երկրի
լայնութիւնները, որ տիրէ իրանը
7 չեղող բնակութիւններին։ Նա
սոսկալի և ահարկու է, նորա
դատաստանն ու իշխանութիւնը
8 նորանից դուրս կ'գայ։ Եւ ինձե-
րից աւելի արագաշարժ են նորա
ձիերը, և աւելի կատաղի քան
եթէ երեկոյեան գայլերը, և պիտի
արշաւեն նորա ձիաւորները, և
նորա ձիաւորները հեռուից պիտի
գան, և պիտի թռչեն արծիւի
պէս որ յարձակվում է ուտելու։
9 Ամէնքը զրկանքի համար են
գալիս, իրանց երեսների յարձակ-
մունքը դէպի առաջ է, և ամա-
զի չափով գերիներ պիտի ժողո-
10 վէ։ Եւ նա ծաղր պիտի անէ թա-
գաւորներին, և իշխանները նորա
խաղալիկը պիտի լինին, նա ծի-
ծաղելու է ամեն ամրոցի վերայ,
վասն զի նա հող է դիզելու և
11 նորան առնէ։ Այն ժամանակ
միտքը պիտի փոխուի և հպար-
տանայ ու յանցաւոր դառնայ,
երբ թէ իր այս զօրութիւնը իր
աստուծոյնն է։
12 Ահա դու՛ի յաւիտենից ես, ով
իմ Տէր Աստուած, իմ Սուրբը. մենք
չենք մեռնելու։ Ով Տէրը, դու
նորան դատաստանի համար ես
դրել. և ով Վէմ, դու նորան
յանդիմանութեան համար ես
13 հաստատել։ Դու, որ աչքերդ
մաքուր են չարութիւն տեսնե-
լուց, և անիրաւութեան մոխիկ
տալ չես կարող, ինչո՞ւ ես մոխիկ
տալիս նենգաւորներին, և լռե-
ո՞ւմ՝ ամբարիշտն իրանից արդա-
րին կուլ տալիս։ Եւ մարդս շի-
14 նել ես ծովի ձկների պէս, սողուն-
ների պէս՝ որոնց վերայ տէրդ
15 չկայ։ Նորանց ամենին հանել
է կարթով, նորանց քաշում է
իր ուռկանովը, և նորանց ժողով-
ում է իր ցանցովը, դորա հա-
մար ուրախանում է և ցնծում։
Դորա համար զոհ է մատուցան- 16
ում իր ուռկանին և խունկ ծըխ-
ում՝ իր ցանցին. վասն զի նորան-
ցով պարարտ է նորա բաժինը,
և նորա կերակուրը պարարտաց-
րուածն է։ Արդե՞օք այս պատ- 17
ճառով նա կ'դարտակէ իր ու-
կանը, և միշտ ազգերը խեղդե՞
ւանից խղճալու։

ԳԼ. Բ

Իմ պահապանութեան տեղը 1
կ'անդնեմ, և կեցնում պարսպի
վերայ, և մոխկ տամ տեսանեմ
թէ ի՞նչ է խօսելու ինձ հետ. և
ի՞նչ պիտի պատասխանեմ իմ
յանդիմանութեան մասին։
Եւ Տէրը ինձ պատասխան տը- 2
ուաւ և ասաց. Գրիր տեսիլքը
և որոշ նշանակիր տախտակների
վերայ, որպէս զի վազէ նորան
կարդացողը։ Վասն զի տեսիլքը 3
տակաւին որոշուած ժամանակի
համար է, և շտապում է վախ-
ճանին, և չի ստիլ. եթէ ուշա-
նայ էլ, սպասիր նորան, վասն զի
անպատճառ պիտի գայ և ետ չի
մնալ։ Ահա նա դողացել է, 4
նորա հոգին ուղիղ չէ իրանում,
բայց արդարը իր հաւատքովը պի-
տի ապրէ։ Եւ մանաւանդ գինին 5
խաբեբայ է, ամբարհաւաճ մար-
դը հաստատ չի մնալ, որ դժոխքի
պէս լայնացրել է իր հոգին, և
ինքը մահուան պէս է ու չի կըշ-
տանում. և իր մօտ ժողովել ըն-
ըր ազգերը, և իր մօտ հաւաքել
ամեն ժողովուրդները։ Մի՞թէ ա- 6
րանք ամենքը նորա վերայ առակ
չեն հանելու, և ծաղրական հանե-
լուկներ՝ նորա մասին, և ասելո՞ւ.
Վա՜յ իրանը չեզոքը շատացնո-
ղին, մինչև ե՞րբ. և իր վերայ
ծանր գրաւներ է բեռնում։ Մի- 7
թէ յանկարծ չեն վեր կենալու
քեզ կծողները, և զարթնելո՞ւ
քեզ տեղահան անողները, և դու
աւար ես դառնալու նորանց հա-

8 մար։ Որովհետև դու շատ ազգեր
ես կողոպտել, քեզ էլ պիտի կո-
ղոպտեն բոլոր ազգերի ճնշողդ-
ները, մարդկանց արիւնների և
երկրի — քաղաքի և նորանում
ամեն բնակողների զրկանքին հա-
մար։
9 Վա՛յ իր տան համար չար վաս-
տակ վաստակողին, որպէս զի իր
բոյնը բարձր տեղը դնէ, չարի
ձեռքից ազատուելու համար։
10 Անարգանք խորհեցիր քո տան հա-
մար, շատ ազգերի կործանումով,
11 և մեղանչեցիր քո հոգուվը։ Վա՛ն
զի քարը պիտի պատից աղաղա-
կէ, և գերանը պատասխան պիտի
տայ փայտերի միջից։
12 Վա՛յ քաղաքը արիւններով շի-
նողին, և անիրաւութեամբ ու-
ռանը հաստատողին։ 13 Ջէ՞ որ ահա
սա Զօրաց Տէրից է. որ ազգե-
րը կրակի համար են յոգնում, և
ժողովուրդները դատարկ տեղն են
14 վաստակում։ Վա՛ն զի երկիրը
պիտի լցուի Տիրոջ փառաց գի-
տութեամբը, ինչպէս որ ջուրերը
ծածկում են ծովը։
15 Վա՛յ իր ընկերին խմեցնողին,
որ բարկութիւնդ թափում ես
ու նաև արբեցնում, որպէս զի
տեսնես նորանց մերկութիւնը։
16 Դու փառքից աւելի ամօթով
կշտացար, դու էլ խմիր և մեր-
կացիր, դէպի քեզ պիտի դառ-
նայ Տիրոջ աջի բաժակը, և ան-
արգանքը քո փառքի վերայ։
17 Վա՛ն զի Լիբանանի զրկանքը
պիտի ծածկէ քեզ, և գազանների
յափշտակութիւնը քեզ պիտի
վախեցնէ, մարդկանց արիւնների
և երկրի — քաղաքի և նորանում
ամեն բնակողների զրկանքի
համար։
18 Ի՞նչ օգուտ ունի կուռքը, որն
որ քանդակել է նորան արուես-
տաւորը, ձուլածոյ կուռքը և
ստութիւն սովորեցնողը, որ իր
քանդակածը քանդակողը ապա-
ւինում է նորա վերայ, և համր
19 կուռքեր շինում։ Վա՛յ նորան,
որ փայտին ասում է Զարթնիր.
վեր կաց է սո՜ւտ մունջ քարին.
մի՞թէ նա սովորեցնող է. ահա
նա պատուած է ոսկով և ար-
ծաթով, իսկ բնաւ հոգի չկայ
նորա միջումը։ Սակայն Տէրը իր 20
սուրբ տաճարումն է, լռիր նորա
առջև, ով բոլոր երկիր։

Գ.Լ. Գ

Ա.մբակում մարգարէին աղօթ- 1
ք։ Շիկիոնոթի վերայ։
Ով Տէր, լսել եմ քո լուրը և 2
վախեցել, ով Տէր, վերանորոգիր
քո գործը տարիների մէջ, տարի-
ների մէջ իմացրու, և բարկու-
թեան մէջ ողորմութիւն յիշիր։
Աստուած Թեմանից եկաւ, և 3
Սուրբը՝ փարան լեառնից. (Ե-
լայ.) նորա փառքը ծածկեց եր-
կինքը, և նորա գովաբանու-
թեամբը լցուաւ երկիրը։ Եւ պայ- 4
ծառութիւնը լուսոյ պէս էր,
ճառագայթներ ունէր իր կողմին,
և այնտեղ էր նորա զօրութեան
ծածկոյթը։ Նորա առջև գնում 5
էր ժանտախտը, և հրատապնդ
տենդը դուրս էր գալիս նորա ոտ-
քերի ետևից։ Նա կանգնեց և 6
չափեց երկիրը, նայեց և դողաց-
րեց ազգերը, և պատուաստուե-
ցան վաղեմի լեառները, խոնարհ-
ուեցան մշտական բլուրները, յա-
ւիտենական ընթացք ունի նա։
Տագնապի տակ տեսայ Քուշա- 7
նի վրանները, սարսեցին Մադիա-
մու երկրի առագաստները։ Մի՞- 8
թէ գետերին է բարկացել Տէրը,
կամ գետերին էր քո ցասումը,
կամ ծովի՞ն քո սրտմտութիւ-
նը, որ հեծար ձիերիդ փրկու-
թեան կառքերիդ։ Բոլորովին 9
մերկացաւ քո աղեղը, ցեղերին
ասած երդումներին համաձայն, (Ե-
լայ.) գետերով պատառեցիր եր-
կիրը։ Քեզ տեսան լեառները և 10
դողացին, ջուր հեղեղը անցաւ.
անդունդը տուաւ իր ձայնը. դէ-
պի վեր բարձրացրեց իր ձեռքե-
րը։ Արեգակը, լուսինը, կանգ- 11
նում են էջում կայանումը, նո-
րանք ընթանում են քո նետերի
լոյսովը, քո նիզակի փայլուն
պայծառութիւնովը։ Բարկու- 12
թեամբ քայլում ես երկրի վե-

բայ, արտաուքեամբ առնակոխ-
13 աւմ ես ազգերին։ Դու դուրս ե-
կար քո ժողովրդի փրկութեան
համար, քո օծեալի փրկութեան
համար, ջարդեցիր գլուխը անօ-
րէնի տանից, հիմնաւնքը մերկա-
ցընելով մինչև պարանոցը. (Ա-
14 լայ։) Դու ծակեցիր նորա գա-
ւազանովը նորա զօրախմբի գլու-
խը, որոնք փոթորկի պէս յար-
ձակուեմ են, որ ինձ ցրիւ տան.
որոնք ուրախութիւն ունին իբր
թէ անանկին ուտելու են ծա-
15 ծուկ տեղը։ Դու ճանապարհոր-
դեցիր ծովուդ քո ձիերովը, շատ
16 ջրերի յորձանուտումը։ Լսեցի և
նեղուս սարսափեց, ձայնիցը դո-
ղացին շրթունքներս, փտութիւն
մտաւ իմ ոսկորներուն մէջ, և ես
սարսափեցի իմ տեղը, որ հան-
գըստանամ նեղութեան օրը,
երբոր ժողովրդի վերայ է գալիս
նա, որ նորան նեղում է։

Որովհետև թզենին չի ծաղկե- 17
լու, և որթերուն վերայ բերք չի
լինելու, ձիթենուս արդիւնքը պա-
ակս առէ, և արտերը կերակուր
պիտի չտան, կարուած է փարա-
խիցը ոչխարը, և արջառ չի լի-
նելու գոմերուս մէջ։ Սակայն ես Տի- 18
րոջմով պիտի ցնծամ, պիտի իմ
փրկութեան Աստուծովը ուրա-
խանամ։ Տէր Եհովան իմ զօրու- 19
թիւնն է, և իմ ոտքերը եղնիկ-
ներինի նման է անում. և ինձ
իմ բարձր տեղերի վերայ մանե
ածում։

Գլխաւոր երաժշտին իմ նուա-
գարաններով։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍՈՓՈՆԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տիրոջ խօսքը, որ եղաւ Եղեկի-
այի որդի՝ Ամարիայի որդի՝ Գե-
դոդիայի որդի՝ Քուսիի որդի՝ Ա-
փանիային՝ Յուդայի Թագաւորի
Ամոնի որդւոյ Յովսիայի օրերուն։
2 Բնաջինջ պիտի ա-
նեմ ամեն բան երկրի երեսից,
3 պատմ է Տէրը։ Բնաջինջ պիտի
անեմ մարդն ու անասունը, բը-
նաջինջ պիտի անեմ երկնից թռը-
չուններն ու ծովի ձկները, և
գայթակղութիւնները ամբարիշտ-
ներն հետ, և պիտի վերացնեմ
մարդը երկրի երեսից, պատմ է
4 Տէրը։ Եւ պիտի մեկնեմ իմ
ձեռքը Յուդայի վերայ, և Երու-
սաղէմի բոլոր բնակչաց վերայ.
և պիտի բնաջինջ անեմ այստե-
ղից Բահաղի մնացորդը, քուրմե-
րի անունը քահանաների հետ.
5 Եւ կռուանների վերայ երկնքի զօր-
քերին երկրպագողներին, և այն
երկրպագողներին, որոնք Տիրոջ-
մով են երդնում, և Մելքոմով
6 երդում անողներին. Եւ Տիրոջ ե-
տևից խոտորողներին, և Տիրոջը
չփնտրողներին և չհնդրողներին։

7 Լռիր Տէր Եհովայի առջև, վա-
րան դի մօտ է Տիրոջ օրը, որով-
հետև Տէրը պատրաստել
արել է իր կոչնականներին։ Եւ 8
պիտի լինի Տիրոջ զոհի օրուն,
որ պիտի պատժեմ իշխաններին
և Թագաւորի որդիներին և ամեն
օտար զգեստ հագնողներին։ Եւ 9
պիտի պատժեմ բոլոր սեմովը
նոյն աւուրն այն օրը, որոնք ի-
րանց Տիրոջ տունը լցնում են
զրկանքով, և խարդախութեամբ։
Եւ պիտի լինի այն օրը, ասում 10
է Տէրը, աղաղակի ձայն Ձկանց
դռնից, և հեծեծանք՝ Մասենա-
յից, և մեծ կատորած՝ բլուրնե-
րից։ Ողբացէք, ով Մաքթեսի 11
բնակիչներ, վասն զի փշացել է
Քանանու բոլոր ժողովուրդը, բը-
նաջինջ է եղել բոլոր արծաթ
կրողները։

Եւ պիտի լինի այն ժամանակը, 12
որ ես Երուսաղէմը պիտի քննեմ
ճրագներով, և պիտի պատժեմ
իրանց մրուրի վերայ նստող մարդ-

կանցը, որունք ասում են իրանց արտումը. Տէրը ոչ բարիք է անում, ոչ չարիք։ Եւ նորանց բստացուածքը սուր պիտի դառնայ, և նորանց տուները՝ աւերակներ. և պիտի տուներ չինեն, բայց չբնակեն, և պիտի այգիներ տնկեն, բայց գինին չխմեն։

14 Մօտ է Տիրոջ մեծ օրը, մօտ է և շատ շտապում է, — ձա՛ն Տիրոջ օրուան ձայնը. դառնապէս աղաղակում է այնտեղ տղամարդը։ 15 Բարկութեան օր է այն օրը, նեղութեան և տառապանքի օր, կործանման և աւերման օր, խաւարի և մէգի օր, ամպի և մառախուղի օր. 16 փողի և աղաղակի օր պարսպաւոր քաղաքների դէմ, և բարձրացած աշտարակների 17 դէմ։ Եւ պիտի նեղեմ մարդկանց, որ կոյրերի պէս մանդամանդան, վասն զի Տիրոջ դէմ մեղանչեցին, և նորանց արիւնը պիտի թափուի փոշու պէս, և նորանց 18 միսը՝ աղբերի պէս։ Նորանց արծաթն էլ, նորանց ոսկին էլ չէ կարող նորանց ազատել Տիրոջ բարկութեան օրը, և նորա նախանձի կրակովը պիտի ապառուի բոլոր երկիրը, վասն զի նա պիտի վերջացնէ և պիտի պատուհասէ երկրի բոլոր բնակիչներին։

ԳԼ. Բ

1 Ժողովեցէք ձեր անձերին և քննութիւն արէք, ով անամօթ ազգ։ 2 Դեռ որոշումը չծնած, օրը մղեղի պէս է անցնում, դեռ Տիրոջ բորբոքած բարկութիւնը ձեզ վերայ չեկած, դեռ Տիրոջ բարկութեան 3 օրը ձեզ վերայ չեկած, խնդրեցէք Տիրոջը, ով երկրի բոլոր խոնարհներ, որ կատարում էք նորա իրաւունքը, որոնեցէք արդարութիւն, որոնեցէք խոնարհութիւն, գուցէ ծածկուած պահուիք Տիրոջ բարկութեան օրին։ 4 Վասն զի Գազան թողուած է լինելու, և Ասկաղոնը՝ աւերակ, Ազոտոսին կէսօրին են պարպելու, և Ակկարոնը պիտի վարուի։ 5 Վա՛յ ծովեզերքում բնակող Քերեթիների ազգին. Տիրոջ խօսքը ձեզ դէմ է, ով Փղշտացոց երկիր՝ Քանան, որ ես քեզ պիտի փչացնեմ, որ բնակող չլինի։ 6 Եւ ծովեզերքը պիտի դառնայ հովիւների գետնափոր տրօտներ և հօտերի մանկատեղիք։ 7 Եւ ծովեզերքը Յուդայի տան մնացորդինը պիտի լինի. և նորանք պիտի արածեցնեն նորանց վերայ, Ասկաղոնի տներում իրիկունը պիտի մնակեղեն, վասն զի նորանց Տէր Աստուածը պիտի այցելէ նորանց, և նորանց գերութիւնը պիտի ետ դարձնէ։

8 Լսեցի Մովաբի նախատինքը, և Ամմոնի որդկանց հայհոյութիւնները, որով նախատեցին իմ ժողովրդին, և դուռ գացան նորանց սահմանի դէմ։ 9 Որա համար, կենդանի եմ ես, ասում է Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, որ Մովաբը Սոդոմի պէս պիտի դառնայ, և Ամմոնի որդիքը Գոմորի պէս, եղինճների տոհմագուածք և ագի հանք և անմայի՝ մինչև յաւիտեան. իմ ժողովրդի մնացորդը պիտի յափշտակէ նորանց, և ազգիս մնացորդը պիտի ժառանգէ նորանց։ 10 Սա պիտի լինի նորանց համար իրանց ամբարտաւանութեան տեղ, վասն զի նորանք նախատեցին և ամբարտաւանացան Զօրաց Տիրոջ ժողովրդի դէմ։ 11 Ահարկու է Տէրը նորանց դէմ, վասն զի նա ոչնչացնելու է երկրի բոլոր աստուածներին, և նորան երկրպագութիւն պիտի անեն իւրաքանչիւրն իր տեղից ազգերի բոլոր կղզիները։

12 Դուք էլ, ով Եթէոպացիք, իմ սրովն սպանուածներ էք։

13 Եւ նա մեկնելու է իր ձեռքը հիւսիսի վերայ, և կորցնելու է Ասորեստանցուն, և Նինուէն ամայի է անելու, չոր երկիր՝ ինչպէս անապատը։ 14 Եւ նորա մէջ պիտի հօտերով մնակեղեն ազգաց բոլոր գազանները, հաւտլուսան էլ, ոզնին էլ պիտի օթևանեն նորա խոյակներում. երգողի ձայնը պատուհանում, աւերմունքը շէմքում. վասն զի նորա եղևնա-

15 զարդը նա մերկացրեց, Սա է ցնծացող քաղաքը, որ ապահով բնակել էր, որ իր սրտումն ասում էր. Ես եմ, և ինձանից զատ էլ չկայ. ի՜նչպէս աւերակ և գազաններուն մեկնաստեղի եղաւ. ամեն նորա մօտով անցնողը պիտի սուլէ ու ձեռքը շարժէ։

ԳԼ. Գ

1 Վա՜յ ապստամբին և պիղծին, 2 հարստահարող քաղաքին։ Ձայնին, խրատ չընդունեց, Տիրոջը չապաւինեց, իր Աստուծոյն 3 չմօտեցաւ։ Նորա իշխանները նորա մէջ մռնչող առիւծներ են, նորա դատաւորները երեկոյեան քայլերը են, որոնք մի բան չեն թող- 4 ուր առաւօտեան համար։ Նորա մարգարէքը անապարծ խարդախ մարդիկ են, նորա քահանայքը պղծում են սրբարանը, բռնա- 5 բարում են օրէնքը։ Տէրը արդար է նորա մէջ, նա անօրէնութիւն չէ անում, առաւօտ առաւօտ նա լոյս է հանում իր իրաւունքը անխոնջ, բայց անիրաւը 6 ամօթ չդիտէ։ Ազգերը բնաջինջ եմ արել, ամայացել են նորանց աշտարակները, անապատացրել եմ նորանց փողոցները, որ անցնող չկայ, աւերակ են դառել նորանց քաղաքները անմարդ և 7 անբնակ։ Ասացի. Միայն վախեցէք ինձանից՝ խրատ ընդունէք. և նորա բնակարանը բնաջինջ չի դառնալ, որքան էլ որ նորան պատժելու լինեմ։ Սակայն նորանք կանուխ վեր կացան և ապականեցին իրանց բոլոր արարքը։

8 Ուրեմն ինձ սպասեցէք, ասում է Տէրը, մինչև իմ որոշ վեր կենալու օրը, վասն զի իմ իրաւունքն է ազգերը ժողովել, թագաւորութիւնները հաւաքել, որ նորանց վերայ թափեմ իմ ցասումը՝ իմ բարկութեան բոլոր բորբոքումը, վասն զի իմ նախանձի կրակովը պիտի ապառուի բոլոր երկիրը։

9 Որովհետև այն ժամանակ մաքուր շրթունքներ պիտի դարձնեմ ազգերի ժողովուրդները, որ ամենքը կանչեն Տիրոջ անունը նորան համաձայնութեամբ ծառայելու 10 համար։ Եթովպիայի գետերի այն կողմից պիտի իմ երկրպագողները՝ իմ ցրուածների աղջիկը բերեն ինձ ընծայ։ Այն օ- 11 րը պիտի չամաչես քո բոլոր գործքերից, որոնցով ինձ դէմ յանցանք արիր, վասն զի այն ժամանակ կ'հեռացնեմ քո միջից քո հպարտութեան գուշակները, և այլևս չես հպարտանալ միւսանգամ իմ սուրբ լեռան վերայ։ Եւ քո միջումը 12 պիտի մնացորդ թողեմ մի խոնարհ և աղքատ ժողովուրդ, և նորանք պիտի յուսան Տիրոջ անունը։ Իսրայէլի մնացորդը ան- 13 օրէնութիւն չեն անելու, և սուտ չեն խօսելու, և նորանց բերանումը խաբեբայութեան լեզու չի գտնուելու, վասն զի նորանք պիտի արածեն և մսկաղեն, և վախեցնող չի լինիլ։

Ցնծա, ով Սիոնի աղջիկ, ա- 14 ղաղակիր, ով Իսրայէլ. ուրախացիր ու զուարճացիր բոլոր սրտով, ով Երուսաղէմի աղջիկ։ Տէրը վեր առաւ քո դատաստան- 15 ները, վռնտել է քո թշնամուն, Իսրայէլի թագաւորը՝ Տէրը քո միջումն է, այլևս չարիք չես տեսանելու։

Ան օրը Երուսաղէմին պիտի 16 ասուի. Մի վախենար, ով Սիոն, ձեռքերդ չթուլանան։ Տէր Աստուածդ քո միջումը զօրաւոր է, նա փրկում է, նա պիտի ուրախանայ քեզ վերայ զուարճութեամբ, նա պիտի լռէ իր սիրովը, և պիտի ցնծայ քեզ վերայ խնդալով։ Հանդիսաւոր ժողովի 18 մասին տրտմածներին պիտի ժողովեմ, նորանք քեզանից են. նորանց վերայ բեռ է նախատինքը։ Ահա ես այն ժամանակ պիտի 19 գործեմ քո բոլոր նեղիչների հետ, և կազին պիտի ազատեմ, և աքսորուածին պիտի ժողովեմ, և նորանց գովասանք և անուանի պիտի անեմ, նորանց նախատինքի բոլոր երկրումը։ Ան ժամա- 20

նակ ձեզ պիտի բերեմ, և այն ժամանակ ձեզ պիտի ժողովեմ. վասն զի ձեզ անուանի և գովելի պիտի անեմ երկրի բոլոր ժողովուրդներուն մէջ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՆԳԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Դարեհ թագաւորի երկրորդ տարին՝ վեցերորդ ամսուայ ամսի մէկին Տիրոջ խօսքը եղաւ Անգէ մարգարէի ձեռքով Յուդայի իշխան Սաղաթիէլեան Զօրաբաբէլին և մեծ քահանայ Յովսեդեկեան Յեսուին, 2 եան Յեսուին, ասելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Թէ Այս ժողովուրդն ասում է. Ժամանակը չէ եկել՝ Տիրոջ տունը շինելու ժամանակը։ 3 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Անգէ մարգարէի 4 ձեռքով, ասելով. Ձեզ համար ժամանա՞կ է արդեօք, որ ձեր ձեղունազարդ տուներում բնակէք, իսկ այս տունը աւերա՞կ 5 մնայ։ Եւ հիմա այսպէս է ասում Զօրաց Տէրը. Ձեր ուշը դարձրէք 6 ձեր ճանապարհներին։ Սերմել էք շատ, բայց բերել էք քիչ, կերել էք, բայց չէք կշտացել, խմեցիք, բայց ծարաւը չյանգցրիք, հագնուեցաք, բայց չտաքացաք. և վարձկանը վարձի համար գործում է ծակուած քսակով։

7 Այսպէս է ասում Զօրաց Տէրը, ձեր ուշը դարձրէք ձեր ճա- 8 նապարհներին։ Վեր ելէք լեռը և փայտ բերէք, և տունը շինեցէք. այն ժամանակ ես կ'հաւանեմ դորան և կ'փառաւորուիմ, 9 ասում է Տէրը։ Նայեցիք շատին, և ահա քիչ եղաւ, և բերիք տուն, բայց ես փչեցի միջին։ Ինչո՞ւ համար, ասում է Զօրաց Տէրը. իմ տան համար, որ աւերակ է. իսկ ձեզանից իւրաքանչիւրը վազ է տալիս իր տան հա- 10 մար։ Սորա համար ձեզ վերայ երկինքը պիտի արգիլէ ցօղը և վուրդնեբուսը, երբոր եւ կ'գարձնեմ ձեր գերութիւնը ձեր աչքի առջև, ասում է Տէրը։

ԳԼ. Բ

Եօթներորդ ամսի քսանումէկին եղաւ Տիրոջ խօսքը Անգէ մարգարէի ձեռքով, ասելով. Մէկ ասիր Յուդայի իշխան Սաղաթիէլեան Զօրաբաբէլին և մեծ քահանայ Յովսեդեկեան Յեսուին և մնացորդ ժողովրդին թէ՝

Ո՞վ է ձեզանում մնացորդ, որ տեսել է այս տունը իր առաջի փառաւորութիւնով, և դուք

Ի՞նչպէս էք տեսանում նորան հիմա, չէ՞ որ սա ոչինչն պէս է նո-
4 րա մօտ ձեր աչքերի առջև: Սակայն հիմա զօրացիր, ով Զօրաբաբէլ, ասում է Տէրը, և զօրացիր դու, ով Յովսեդեկեան Յեսու՝ մեծ քահանայ: Եւ զօրացիր, ով երկրի բոլոր ժողովուրդ, ասում է Տէրը, և աշխատեցէք, վասն զի ես ձեզ հետ եմ, ասում է Զօրաց Տէր Աստուածը:
5 Ահն խօսքը որ ես կապել եմ ձեզ հետ՝ դուք Եգիպտոսից դուրս գալիս, և իմ Հոգին կենում է ձեր միջումը, մի վախե-
6 նաք: Վասն զի այսպէս է ասում Զօրաց Տէրը. Մէկ անգամ էլ, մի քիչ չեռ՞ց կ'շարժեմ երկինքն ու երկիրը, և ծովն ու ցամաքը.
7 Եւ կ'շարժեմ բոլոր ազգերը, և կ'գան բոլոր ազգերի ցանկալիքը, և կ'լցնեմ այս տունը փառքով,
8 ասում է Զօրաց Տէրը: Նմն է արծաթիը, և նմն է ոսկին. ասում է Զօրաց Տէրը: Ահա վերջի տան փառքը մեծ պիտի լինի առաջուանինը, ասում է Զօրաց Տէրը, և այստեղումը խաղաղութիւն պիտի տամ, ասում է Զօրաց Տէրը:

10 Եօթնեերորդ ամէ քառնուչորսին Դարեհի երկրորդ տարում, Տիրոջ խօսքը եղաւ Անդէ մարգարէի ձեռովը, ասելով. Ահա
11 ես ասում է ասում Զօրաց Տէրը. Մէկ հարցրու քահանաներից օրէնքը,
12 ասելով. Թէ սխա մի մարդ սուրբ միս տանէ իր հանդերձի քղանցքումը, և իր քղանցքովը դպչէ հացի և ապուրի և գինու, և իւղի և ինչ և իցէ կերակուրի, մի՞թէ նա սուրբ կ'դառնայ: Եւ քահանայքը պատասխանեցին և ասացին. Ոչ: Եւ Անգէն ասաց. Եթէ այս ամեն բաներին դպչէր, մի մեռելով պղծուածը, կ'պղծուի՞: Եւ քահանայքը պատասխանեցին ու ասացին. Կ'պղծուի:
14 Եւ Անգէն պատասխանեց ու ա-
ասց. Ահա՛ես է այս ժողովուրդը և այսպէս է այս ազգը իմ առջև, ասում է Տէրը, և այսպէս է նորանց ձեռքի բոլոր գործքը. և ինչ որ մատուցանեն այնտեղ պիղծ է: Ուրեմն մի լաւ 15
ուշք դարձրէք այս օրից դէպի առաջ քանի որ քար քարի վերայ դրուած չէր Տիրոջ տաճարումը. Երբոր մէկը գալիս էր սո- 16
բանից առաջ քսանանոց դէպի մօտ, այն ժամանակ տասն էր դառնում. գնում էր կարասի մօտ յիսուն հանելու, և քսան էր դառնում: Ես պարկեցի ձեզ 17
խորշակով ու դալուկով և կարկտով, ձեր ձեռաց բոլոր գործքերը, և դուք դէպի ինձ չէք գալ, ասում է Տէրը: Մէկ ձեր 18
ուշադրութիւնը դարձրէք այս օրից և էլ առաջուց ննիերորդ-մէ քառնուչորսերորդ օրիցը, այսինքն այն օրից որ հիմնուեցաւ Տիրոջ տաճարը դարձրէք
ձեր ուշադրութիւնը: Մի՞թէ 19
սերմը դեռ ամբարումն է, և թզենին ու նռնենին և ձիթենին պտուղ չէ՞ն բերել. այս օրից 'ի վեր պիտի օրհնեմ:

Եւ Տիրոջ խօսքը կրկին անգամ 20
եղաւ Անդէին, ամսի քառնուչորսին, ասելով. Ասիր Յուդայի 21
իշխան Զօրաբաբէլին թէ՝ Ես պիտի շարժեմ երկինքն ու երկիրը,
Եւ տակնիվեր պիտի անեմ թա- 22
գաւորութիւնների աթոռը, և պիտի կորցնեմ թագաւորութիւնների զօրութիւնը, և տակնիվեր պիտի անեմ կառքն ու նորա հեծեալը, և պիտի ցածանան ձիանքն ու իրանց հեծեալները.
ամեն մէկն իր ընկերի սրովը: Այ- 23
օրը ասում է Զօրաց Տէրը, և քեզ կ'առնեմ, ով իմ ծառայ Սաղաթիէլեան Զօրաբաբէլ, ասում է Տէրը. և քեզ պիտի շինեմ ինչպէս մի կնիք. վասն զի քեզ հաւանել եմ, ասում է Զօրաց Տէրը:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՋԱՔԱՐԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Դարեհի երկրորդ տարուայ ութերորդ ամսուայն եղաւ Տէրոջ խօսքը Ադդովի որդի Բարաքիայի որդի Զաքարիա մարգարէին ասելով.

2 Բարկացած է Տէրը ձեր հայրերի վերայ բարկութիւնով։ 3 Եւ նոցանց ասիր. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Դէպի ինձ դարձէք, ասում է Զօրաց Տէրը, և ես էլ դէպի ձեզ կ'դառնամ, 4 ասաց Զօրաց Տէրը։ Մի լինէք ձեր հայրերի նման, որոնց ադաղակում էին առաջի մարգարէները՝ ասելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Ե՛ Ձեր չար ճանապարհներից և ձեր չար արարքներից մէկ եա դարձէք, բայց նորանք չլսեցին և ինձ ա- 5 կանջ չդրին, ասում է Տէրը։ Ձեր հայրերն ո՞ւր են. և մի՞թէ յաւիտեան պիտի ապրէին մարգարէները։ 6 Սակայն իմ խօսքերն ու պատուէրները, որոնք ես պատուիրել էի իմ ծառաներին՝ մարգարէներին, չէ՞ որ հասան ձեր հայրերին. ապա նորանք եա դարձան և ասացին. Ինչպէս որ Զօրաց Տէրը մտածում էր մեզ անելու մեր ճանապարհներին ու մեր արարքներին համեմատ, այնպէս է արել մեզ հետ։

7 Դարեհի երկրորդ տարուայ տասնումէկերորդ ամսուայ՝ այսինքն Սերամի ամսի քսանուչորսերորդ օրը եղաւ Տէրոջ խօսքը Ադդովի որդի Բարաքիայի որդի՝ Զաքարիա մարգարէին, ասելով. 8 Տեսայ գիշերը, և ահա մի մարդ՝ հեծած մի աշխեա ձիու վերայ, և կանգնել էր ձորումը եղող մրտենիների մէջ տեղը. և նորա ետևին կային աշխեա, պիտակ ու 9 սպիտակ ձիանք։ Եւ ասացի. Սորանք ի՞նչ են, տէր իմ։ Եւ ասաց ինձ այն հրեշտակը որ ինձ հետ խօսում էր. Թէ՛ ես քեզ ցոյց կ'տամ թէ սորանք ինչ են։ 10 Եւ մրտենիներն մէջ տեղը կանգնող մարդը պատասխանեց և ասաց. Սորանք նորանք են, որ Տէրը ուղարկել է երկրումը մտնելու։ 11 Եւ նորանք պատասխանեցին մրտենիների մէջ տեղը կանգնող Տիրոջ հրեշտակին և ասացին. Մտանք երկրումը, և ահա բոլոր երկիրը նստած և հանգիստ է։ 12 Եւ Տիրոջ հրեշտակը պատասխանեց և ասաց. Ով Զօրաց Տէր, մինչև ե՞րբ չես ողորմելու Երուսաղէմին և Յուդայի քաղաքներին, որոնց վերայ՝ ահա եօթանասուն տարի է՝ բարկացած ես։ 13 Եւ Տէրը պատասխանեց ինձ հետ խօսող հրեշտակին բարի խօսքերով՝ մխիթարական խօսքերով։ 14 Եւ ինձ հետ խօսող հրեշտակը ասաց ինձ. Կանչիր և ասիր. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Մեծ նախանձով եա նախանձել եմ Երուսաղէմի և Սիոնի համար։ 15 Եւ ես բարկութիւնով բարկացել էի հանդարտ ազգերի վերայ, որովհետև ես քիչ էի բարկացել, բայց նորանք օգնեցին չարութեան համար։ 16 Սորա համար Տէրը այսպէս է ասում. Ես եա եմ դառնում Երուսաղէմին ողորմութիւններով. իմ տունը պէտք է շինուի նորանում, ասում է Զօրաց Տէրը, և լար պիտի ձգուի Երուսաղէմի վերայ։ 17 Էլի կանչիր ասելով. Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Դեռ պիտի յորդին իմ քաղաքները բարիքներով, և Տէրը պիտի դեռ մխիթարէ Սիոնին, և դեռ պիտի ընտրէ Երուսաղէմին։

18 Եւ աչքերս բարձրացրի ու նայեցի և ահա չորս եղջիւր։ 19 Եւ ասացի ինձ հետ խօսող հրեշտակին. Սորանք ի՞նչ են. և նա ասաց ինձ. Սորանք այն եղջիւրներն են որոնք ցրուեցին Յուդային, Իսրայէլին և Երուսաղէմին։

20 բայէլին և Երուսաղէմին։ Եւ Տէ-
րը ինձ չորս արուեստաւոր ցոյց
21 տուաւ։ Եւ ես ասացի. Սորանք
գալիս են որ ի՞նչ անեն. և նա
ասաց. Սորանք այն եղջիւրներն
են, որոնք ցրուեցին Յուդային,
այնպէս որ մարդ չդարձրացրեց
իր գլուխը. և սորանք եկել են
որ նորանց վախեցնեն, որ վայր
գցեն Յուդայի երկրի դէմ՝ նորան
ցրուելու համար՝ եղջիւր բարձ-
բացնող ազգերի եղջիւրները։

ԳԼ. Բ

1 Եւ աչքերս վեր բարձրացրի ու
նայեցի, և ահա մի մարդ և ձեռ-
2 քին մի չափեղուն չուան։ Եւ ա-
սացի. Դուն ո՞ւր ես գնում. և նա
ասաց ինձ. Երուսաղէմը չափե-
լու, որ տեսնեմ թէ որքան է
լայնութիւնը և որքան երկայնու-
3 թիւնը։ Եւ ահա այն ինձ հետ
խօսող հրեշտակը դուրս եկաւ,
և մի ուրիշ հրեշտակ դուրս ե-
4 կաւ նորա դիմացը. Եւ ասաց նո-
րան. Վազիր՝ ասիր այս տղային
թէ՝ Լայնարձակ պիտի բնակէ
Երուսաղէմը իրանում եղած
մարդկանց և անասնոց պատճա-
5 ռով։ Եւ ես պիտի նորա համար
հրեղէն պարիսպ լինեմ շուրջ-
նակի, ասում է Տէրը, և փա-
ռաց համար պիտի լինեմ նորա-
նում։

6 Ա՛հ, ա՛յ, էլ փախէք հիւսիսի
երկրիցը, ասում է Տէրը, վասն
զի երկնքի չորս հողմերին պէս
ցրուել եմ ձեզ, ասում է Տէրը։
7 Ա՛հ Սիօն, ազատիր քեզ, որ բը-
նակում ես Բաբիլոնի աղջկան
8 մօտ։ Վասն զի այսպէս է ասում
Զօրաց Տէրը. Փառքի ետևից ու-
ղարկել է նա ինձ ձեզ կողոպ-
տող ազգերի մօտ. որովհետև
ձեզ դիպչողը նորա աչքի բիբին
9 է դպչում։ Վասն զի ահա ես
իմ ձեռքը շարժելու եմ նորանց
վերայ, և նորանք պիտի իրանց
ծառաներին աւար դառնան. և
կ'գիտենաք, որ Զօրաց Տէրն է
10 ինձ ուղարկել։ Ցնծա և ուրա-
խացիր, ով Սիօնի աղջիկ, որով-
հետև ահա ես եկել ու քո մէջ-
ումն եմ բնակում, ասում է
Տէրը։ Եւ այն օրը շատ ազգեր 11
Տիրոջը են յարելու, և ինձ ժո-
ղովուրդ լինելու. և ես քո մէջու-
մըն եմ բնակելու, և դու կ'գի-
տենաս, որ Զօրաց Տէրն է ինձ
ուղարկել քեզ մօտ։ Եւ Տէրը 12
պիտի ժառանգէ իր ժառանգու-
թիւնը՝ Յուդան, աւրը երկրի
վերայ, և էլի պիտի հաւանէ Ե-
րուսաղէմին։ Լռէ ամեն մարմին 13
Տիրոջ առջև, վասն զի նա զարթ-
նեց իր աւրը բնակութիւնիցը։

ԳԼ. Գ

Եւ ինձ ցոյց տուաւ մեծ քա- 1
հանայ Յեսուին, որ կանգնել էր
Տիրոջ հրեշտակի առջև. և սա-
տանան կանգնել էր նորա աջ
կողմին նորան հակառակելու հա-
մար։ Եւ Տէրն ասաց սատանա- 2
յին. Տէրը քեզ յանդիմանէ,
ով սատանայ, և Տէրը քեզ յան-
դիմանէ որ ընտրել է Երուսաղէ-
մին. միթէ սա կրակից պատա-
ռած խանձող չէ։

Եւ Յեսու կեղտոտ հագուստներ 3
էր հագել և կանգնել հրեշտակի
առջև։ Եւ պատասխանեց ու ա- 4
սաց իր առջևը կանգնողներին. թէ
Հեռացրէք նորա վերայից այդ կեղ-
տոտ հագուստները. և նորան ա-
սաց. Տես՝ ես քեզ վերայից վեր
առի քո անօրէնութիւնը, և քեզ
հագցնում եմ պատուական բա-
զեստներ։ Եւ ասացի, որ նորա 5
գլխին մաքուր խոյր դնեն. և մա-
քուր խոյր դրին նորա գլխին և
հանդերձներ հագցրին նորան. և
Տիրոջ հրեշտակը կանգնած էր։

Եւ Տիրոջ հրեշտակը վկայեց 6
Յեսուին և ասաց. Ա՛յսպէս է 7
ասում Զօրաց Տէրը. Եթէ իմ
ճանապարհներովը գնաս, և եթէ
իմ պահպանութիւնը պահես,
այն ժամանակ դու էլ իմ տու-
նը կ'դատես, և իմ սրահներն էլ
կ'պահես, և ես քեզ ընթացք
կ'տամ այս կանգնողների մէջ։
Մէկ լսիր, ով մեծ քահանայ 8
Յեսու, դու և քո առջև նստող

բարեկամներդ, վասն զի նորանք
նշանի մարդիկ են. վասն զի ահա
եա պիտի բերեմ իմ ծառայ
9 Շառաւխին։ վասն զի ահա այն
քարը, որ դրել եմ Յեսուի առ-
ջև. մէկ քարի վերայ եօթը աչք
կայ, ահա ես փորագրեմ նորա
նորա փորագիրը, ասէ Տէր Զո-
բաց Տէրը, և այն երկրի անօրէ-
նութիւնը պիտի մէկ օրում վեր
10 առնեմ։ Ա՛յն օրը, ասէ Տէր Զո-
բաց Տէրը, դուք միմիանց կը
կանչէք որթի տակը և թզենու
տակը։

ԳԼ. Դ

1 Եւ ես դարձաւ ինձ հետ խո-
սող հրեշտակը և ինձ զարթեց-
րից ինչպէս որ մի մարդ կ'զար-
2 թեցնեն իր քնիցը։ Եւ ինձ ա-
սաց. Ի՞նչ ես տեսանում դու. և
ես ասացի. Տեսանում եմ որ ա-
հա մի բոլորովին ոսկի աշտանակ
և մի բաժակ նորա գագաթին,
և եօթը ճրագ նորա վերայ, և
եօթն ու եօթը խողովակներ այն
ճրագների համար, որ նորա գա-
3 գաթին են։ Եւ երկու ձիթենի
նորա կշտին՝ մէկը բաժակի աջ
կողմից և մէկը նորա ձախ կող-
4 մից։ Եւ ես պատասխանեցի և
ասացի ինձ հետ խօսող հրեշտա-
կին. Թէ Սորանք ի՞նչ են, տէր
5 իմ։ Եւ ինձ հետ խօսող հրեշ-
տակը պատասխանեց ինձ և ա-
սաց. Մի՞թէ չգիտես թէ սորանք
ինչ են, և ես ասացի. Ոչ Տէր
6 իմ։ Եւ նա պատասխանեց և ա-
սաց ինձ. Թէ Սա Տիրոջ խօսքն
է առ Զօրաբաբէլ՝ ասելով. Ոչ
թէ զօրութիւնով, և ոչ թէ ոյ-
ժով, այլ իմ Հոգովը, ասում
7 է Զօրաց Տէրը։ Դու ո՞վ ես,
ով մեծ լեառ. Զօրաբաբէլի առ-
ջև մի դաշտ ես. և նա դուրս
պիտի հանէ գլխի քարը ազա-
ղակներով շնո՛րհք, շնո՛րհք նո-
րան։

8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ ա-
9 սելով. Զօրաբաբէլի ձեռքերն են
հիմնել այս տաճարը, և նորա ձեռ-
քերն էլ պիտի աւարտեն. և կը
գիտենաս, որ Զօրաց Տէրն է ինձ
ձեզ մօտ ուղարկել։ Վասն զի 10
ո՞վ է փոքր բաների օրը անարգ-
ում. և ուրախանում ու նայում
են Զօրաբաբէլի ձեռքի կապա-
րագնատակին, սորանք եօթնեանք
Տիրոջ աչքերն են, որանք մտան են
գալիս բոլոր երկրումը։

Եւ ես պատասխան տալ ու 11
ասացի նորան. Ի՞նչ են այս եր-
կու ձիթենիքը աշտանակի աջ
կողմին և նորա ձախ կողմին։ Եւ 12
երկրորդ անգամ պատասխանեցի
և ասացի նորան. Ի՞նչ են այս
երկու ձիթենու հասկերը, որոնք
երկու ոսկի խողովակների միջով
ոսկին թափում են իրանցից։ Եւ 13
նա ինձ ասաց. Թէ Մի՞թէ չգի-
տես թէ սորանք ինչ են, և ես
ասացի. Ոչ, տէր իմ։ Եւ նա ա- 14
սաց. սորանք են երկու օծեալ-
ները, որոնք կանգնում են բոլոր
երկրի Տէրոջ առջև։

ԳԼ. Ե

Եւ ես եա դարձայ ու աչքերս 1
բարձրացրի և տեսայ, և ահա մի
թռչող տոմս։ Եւ նա ինձ ասաց. 2
Ի՞նչ ես տեսանում դու. և ես
ասացի. Ես մի թռչող տոմս եմ
տեսանում, երկայնութիւնը քսան
կանգուն, և լայնութիւնը տասը
կանգուն։ Եւ նա ինձ ասաց. Սա 3
բոլոր երկրի երեսի վերայ դուրս
եկող անէծքն է, վասն զի ամեն
գողութիւն անող այս կողմին
համեմատ պիտի ջնջուի. իսկ եր-
դում անողը միւս կողմին հաւե-
մատ պիտի ջնջուի։ Ես նորան հա- 4
նել եմ, ասում է Զօրաց Տէրը, և
նա պիտի մտնէ գողանողի տունը և
իմ անունովը սուտ երդում անողի
տունը, և նորա տան մէջ պիտի օ-
թևանէ և նորան պիտի ապառէ
նորա փայտերովն ու քարերովը։

Եւ ինձ հետ խօսող հրեշտակը 5
դուրս եկաւ և ինձ ասաց. Մէկ
աչքերդ բարձրացրու և մտիկ
արա, թէ ինչ է այս դուրս ե-
կողը։ Եւ ես ասացի. Ի՞նչ է. 6
և նա ասաց. Սա արդուն է դուրս
եկողը. և ասաց. Սա նորանց աչ-

7 քերն են բոլոր երկրաւմ։ Եւ ա-
հա մի կապարեայ տապանդ վեր
բարձրանայր, և ահա մի կին
8 նստած արգաւի մէջ։ Եւ նա ա-
սաց. Սա չարութիւնն է, և նո-
ցան գցեց արգաւի մէջը, և կա-
պարտղնաւորն էլ գցեց նորա բե-
9 րանին։ Եւ ես բարձրացրի աչքե-
րըս և մտիկ տուի, և ահա եր-
կու կին էին դուրս գալիս, և
քամի կար նորանց թևերումը,
և նորանք արագիլի թևերի պէս
թևեր ունէին, և նորանք վեր ա-
ռին այն արգաւն երկրի ու երկնի-
10 քի մէջտեղը։ Եւ ես ասացի ինձ
հետ խօսող հրեշտակին. Որտե՞ղ
տանեն նորանք այդ արգաւն։
11 Եւ նա ասաց ինձ. Որպէս զի նո-
ցա համար տուն շինեն Սենաարի
երկրումը, և պիտի հաստատուի,
և այնտեղ պիտի դրուի իր խա-
րըսխի վերայ։

Գլ. Զ

1 Եւ ես դարձայ ու աչքերս բարձ-
րացրի, և տեսայ, և ահա չորս
կառք էին դուրս գալիս երկու լե-
ռանց մէջտեղից, և լեռները պղ-
2 ղինձի լեռներէին։ Առաջի կառ-
քի ձիերը սպիտակ էին, և երկրորդ
3 կառքի ձիերը սև էին. Եւ երրորդ
կառքի ձիերը սպիտակ ու չորրորդ
կառքի ձիերը պիտակ էին *գօ-
4 շագոյն։ Եւ ես պատասխան որ-
ուի և ասացի ինձ հետ խօսող
հրեշտակին. Որոնք ի՞նչ են,
5 տէր իմ։ Եւ հրեշտակը պատաս-
խան տուաւ ու ասաց ինձ. Ո-
րոնք երկնքի չորս հողմերն են,
որոնք դուրս են գալիս բոլոր եր-
կրի Տիրոջ առջև կանգնելուց։
6 Այն սև ձիերը, որ նորան չ---ժ
են, դուրս են գալիս դէպի հիւ-
սիսի երկիրը, և սպիտակները
դուրս են գալիս նորանց ետևից,
և պիտակները դուրս են գալիս
7 դէպի հարաւի երկիրը։ Եւ գօ-
շագոյնները դուրս եկան, և ու-
զեցին որ գնան մտնեն դան երկրու-
մը. և նա ասաց. Գնացէք մտե-

*գօրաւոր։

լակէք երկրի վերայ. և նորանք
մտան եկան երկրի վերայ։ Եւ նա 8
ողաղակեց դէպի ինձ և խօսեց
ինձ հետ ասելով. Տես դէպի
հիւսիսի երկիրը դուրս եկողները
հանդչեցրին իմ հոգին հիւսիսի
երկրումը։

Եւ Տիրոջ խօսքը եղաւ ինձ 9
ասելով. Վերտառ գերիներից՝ 10
Հեդդայից, Տոբիայից և Յեդա-
յիայից, և նոյն օրը գնա դու
ինքդ և մտիր Բաբելոնից եկող
Սոփոնիայի որդու Յոսէայի տու-
նը. Եւ արծաթ ու ոսկի առ և 11
պսակներ շինիր, և դիր մեծ քա-
հանայ Յովսեդեկեան Յեհուի գլու-
խին. Եւ ասիր նորան. Թէ Ա-յս- 12
պէս է ասում Զօրից Տէրը. Թէ
Ահա մի մարդ՝ անունը Շուա-
էիլ. նա իր տեղից պիտի բուս-
նէ, և շինէ Տիրոջ տաճարը։ Եւ 13
նա կ'շինէ Տիրոջ տաճարը, և
նա մեծութիւն է կրելու,
և պիտի բազմէ ու իշխէ իր ա-
թոռի վերայ, և նա քահանայ
է լինելու իր աթոռի վերայ, և
խաղաղութեան խորհուրդ պիտի
լինի երկուսի մէջտեղը։

Եւ պսակները պիտի լինին Հե- 14
լեմին, Տոբիային ու Յեդայիային
և Սոփոնիայի որդի Հէնին իբրև
յիշատակ Տիրոջ տաճարումը։
Եւ հեռուներն պիտի գան ու 15
շինեն Տիրոջ տաճարումը, այն
ժամանակ կ'գիտենաք, որ Զօրից
Տէրն է ինձ ուղարկել ձեզ մօտ։
Եւ պիտի լինի, եթէ իրաւ լսէք
ձեր Տէր Աստուծոյ ձայնին։

Գլ. Է

Եւ եղաւ որ Դարեհ թագաւորի 1
չորրորդ տարումը Տիրոջ խօսքը
եղաւ Զաքարիային Հնեերորդ ամ-
սի սխինն Քասլեւ չորսին,
Բեթէլ Սարասարին և Ռեգեմմե- 2
լեքին և նորա մարդկանցը Ա-
ստուծոյ տունը ուղարկեցին, որ
Տիրոջ առջև աղօթք մատուցա-
նեն. Աւելով Զօրից Տիրոջ տան 3
վերայ եղող քահանաներին և
մարգարէներին. Արդեօք լաց լի-
նեմ հինգերորդ ամսում ինձ պա-

հելով, ինչպէս որ այսքան տու-
4 բիներ արել եմ։ Եւ Զօրաց Տի-
րոջ խօսքը եղաւ ինձ ասելով.
5 Ասիր այս երկրի բոլոր ժողովըր-
դին և քահանաներին. Թէ երբ-
որ ծոմ էիք պահում և սուգ
անում հինգերորդ ու եօթներորդ
–Գոնէ սո՞ւտ այս եօթանասուն
տարին, միթէ ինձ համար էիք
6 ծոմ պահում։ Եւ երբոր ուտում
էիք, ու երբոր խմում էիք, մի՞-
թէ ձեզ համար չէիք ուտում և
7 ձեզ համար խմում։ Մի՞թէ նոյն
խօսքերը չհրատարակեց Տէրը ա-
ռաջի մարգարէների ձեռով, քա-
նի որ Երուսաղէմը և նորա շրջա-
կայ քաղաքները շէն և հանգիստ
էին, և հարաւային ու դաշտա-
յին կողմերը շէն էին։
8 Եւ Տիրոջ խօսքը եղաւ Զաքա-
9 րիային ասելով. Այսպէս է ա-
ւում Զօրաց Տէրը. Թէ Արդար
դատաստան արէք, և ողորմու-
թիւն ու գթութիւն արէք ամեն
10 մէկդ իր եղբօրը. Եւ որբևայրուն
ու որբին, օտարականին ու աղ-
քատին մի պրկէք, և միմիանց
դէմ չարութիւն մի մտածէք ձեր
11 սրտերում։ Բայց նորանք մերժե-
ցին ականջ դնել, և դուրս խո-
տորեցրին, և իրանց ականջները
12 ծանրացրին որ չլսեն։ Եւ իրանց
սիրտը անդամանդի պէս շինեցին,
որ չլսեն օրէնքը և այն խօսքերը
որ Զօրաց Տէրը իր Հոգով առաջի
մարգարէների ձեռով ուղարկեց.
և մեծ բարկութիւն եղաւ Զօրաց
13 Տիրոջ կողմանէ։ Եւ եղաւ որ
ինչպէս նա կանչեց, ու նորանք
չլսեցին, այնպէս էլ նորանք կան-
չեցին և ես չլսեցի, ասում է Զօ-
14 րաց Տէրը։ Եւ ես փոթորիկով
քշեցի նորանց ամեն ազգերի մէջ,
որոնց նորանք չգիտէին, և երկի-
րը ամլացաւ նորանց ետևից
անցու դարձից, և ցանկալի երկի-
րը ամայի արին։

ԳԼ. Ը

1 Եւ Զօրաց Տիրոջ խօսքը եղաւ ա-
2 սելով. Այսպէս է ասում Զօրաց
Տէրը. Ես նախանձեցի Սիոնի հա-
մար մեծ նախանձով, և մեծ բար-
կութեամբ նախանձեցի նորա հա-
մար։ Այսպէս է ասում Տէրը. Ես 3
դարձել եմ Սիոնին և բնակելու
եմ Երուսաղէմում, և Երուսա-
ղէմը պիտի հաւատարիմ քա-
ղաք կոչուի, և Տիրոջ լեռը՝
Սուրբ լեռ։

Այսպէս է ասում Զօրաց Տէ- 4
րը. Տակաւին ծերեր և պառա-
ւներ պիտի բնակեն Երուսաղէմի
հրապարակներում, և ամեն
մարդ իր գաւազանը ձեռքին օ-
րերի շատութիւնից։ Եւ քաղա- 5
քի հրապարակները լիքը պիտի
լինեն տղերքով ու աղջկերքով,
որոնք խաղ են անելու նորա հր-
րապարակներում։

Այսպէս է ասում Զօրաց Տէ- 6
րը. Եթէ դժուար լինի այս ժո-
ղովրդի մնացորդի աչքի առջե
այն օրերին, միթէ իմ աչքերի
առջև էլ պիտի դժուար լինի,
ասում է Զօրաց Տէրը։

Այսպէս է ասում Զօրաց Տէ- 7
րը. Ահա ես օգնելու եմ իմ ժո-
ղովրդին արևելեան երկրից և
արևմտեան երկրից։ Եւ նորանց 8
բերելու եմ, որ բնակեն Երուսա-
ղէմի մէջ, և ինձ համար ժողո-
վուրդ լինեն և ես նորանց համար
Աստուած լինեմ ճշմարտութիւ-
նով և արդարութիւնով։

Այսպէս է ասում Զօրաց Տէ- 9
րը. Թող զօրանան ձեր ձեռքե-
րը, ով դուք, որ այս խօսքերը այս
օրերում այն մարգարէների բերա-
նից լսում էք, որոնք կային Զօ-
րաց Տիրոջ տանը տաճարը շինուե-
լիս։ Վասն զի այն օրերից ա- 10
ռաջ մարդու վարձքը չկար, և
անասունի վարձքը ոչինչ էր, և
դուրս եկողն ու մտնողը խաղա-
ղութիւն չունէին նեղութեան
պատճառովը, վասն զի ես ամեն
մարդկանց իրար դէմ էի հանել։
Բայց հիմա ես այն առաջին օ- 11
րերին պէս պիտի չլինեմ այս ժո-
ղովրդի մնացորդի համար, ա-
սում է Զօրաց Տէրը։ Վասն զի 12
ցանգը խաղաղութեամբ է լինե-
լու, որթը իր պտուղը պիտի տայ, և
երկիրը պիտի իր արդիւնքը տայ,

և երկինքը պիտի տայ իր ցօղը, և այս ժողովրդի ճնացորդին ժառանգել պիտի տամ այս բոլո-
13 րը, Եւ պիտի լինի որ ինչպէս դուք անէծք էիք ազգերի մէջ, ով Յուդայի տուն և Իսրայէլի տուն, նոյնպէս էլ պիտի օգնեմ ձեզ, որ դուք օրհնութիւն լինէք. մի վախենար. թող զօրա-
14 նան ձեր ձեռքերը, Վասն զի այսպէս է ասում Տ. Զօրաց Տէրը. ինչպէս որ մտադիր էի չարիք անելու ձեզ, երբոր ձեր հայրերը զայրացրին ինձ, ասում է Զօրաց
15 Տէրը, և չզղջացի. Նոյնպէս էլ մտադիր եմ այս օրերը բարիք անելու Երուսաղէմին և Յուդայի
16 տանը. մի վախենար: Սորանք են այն բաները, որ պէտք է անէք. Ճշմարտութիւն խօսեցէք ամեն մէկը իր ընկերի հետ, արդարութիւնով ու խաղաղ դատաստանով դատեցէք ձեր դրա-
17 ներում: Եւ ամեն մէկը իր ընկերի չարիքը մի խորհէք ձեր սրտերում, և սուտ երդում մի սիրէք, վասն զի այս ամենը ես ատում եմ, ասում է Տէրը:

18 Եւ Զօրաց Տիրոջ խօսքը եղաւ
19 ինձ ասելով, Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Չորրորդի ծոմը, և հինգերորդի ծոմը, և եօթներորդի ծոմը և տասներորդի ծոմը Յուդայի տան համար պիտի ցնծութիւն և ուրախութիւն և խնդալից օրեր դառնան, սրեմն ճշմարտութիւնն ու խաղաղութիւնը սիրեցէք:

20 Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Տակաւին ժողովուրդներ պիտի գան և շատ քաղաքների բը-
21 նակիչներ. Եւ մէկի բնակիչները պիտի գնան միւսի մօտ ասելով. Եկէք գնանք Տիրոջ առջեւը ազօթք անելու և Զօրաց Տիրոջը
22 խնդրելու. ես էլ եմ գալիս: Եւ շատ ժողովուրդներ ու զօրաւոր ազգեր պիտի գան Զօրաց Տիրոջը խնդրելու Երուսաղէմում, և Տի-
23 րոջ առջև ազօթելու: Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Այն օրերը կ'բռնեն ազգերի ամեն լեզուներից տասը մարդ, այնքան կը բռնեն մի Հրէայ մարդու քղանցքը, ասելով. Գնանք ձեզ հետ, որովհետև լսել ենք որ Աստուած ձեզ հետ է:

Գլ. Թ

Տիրոջ խօսքի պատգամը Հատ- 1
րաքի երկրի դէմ. Եւ Դամասկոսը նորա հանգչելու տեղն է, վասն զի Տիրոջ աչքը մարդկանց և Իսրայէլի բոլոր ցեղերի վերայ է: Եւ Եմաթի էլ դիպչած է նո- 2
րան, նաև Տիւրոսն ու Սիդոնը, թէև շատ իմաստութիւն ունէն: Եւ Տիւրոսն իրան համար ամրոց 3
շինեց, և արծաթը դիզեց հողի պէս, և մաքուր ոսկին փողոցների ցեխին պէս: Այժմ Տէրը նո- 4
րան պիտի նուաճէ, և զարկէ ծովումը նորա զօրութիւնը, և նա կրակով պիտի ապրուի:

Տեսնելու է Աշկալոնը և վախ- 5
նալու, Գազան էլ տագնապելու է շատ, և Ակկարոնն էլ, որովհետև ցամաքելու է յոյսը. և կորչելու է թագաւորը Գազայից, և Աշ-
կաղոնը պիտի չբնակուի: Եւ խոր- 6
թը պիտի բնակէ Ազոտոսում, և բնաջինջ պիտի անեմ փղշտացոց հպարտութիւնը: Եւ վերացը- 7
նելու եմ նորա արիւնը իր բերանիցը, և նորա պղծութիւնները իր առամների միջիցը, և նա էլ է մնացորդ լինելու մեր Աստուծոյ համար, և նա պիտի տոհմապետի պէս լինի Յուդայի մէջ, և Ակկարոնը՝ Յերուսացոց պէս:

Եւ ես բանակ պիտի դնեմ իմ 8
տան համար զօրքերի՝ անցուդարձող պատճառով, և այլևս նորանից վերայ բռնաւոր չի անց կենալ. վասն զի հիմա տեսել եմ իմ աչքերովը:

Մեծապէս ուրախացիր, ով 9
Սիոնի աղջիկ, ցնծա, ով Երուսաղէմի աղջիկ, ահա քո թագաւորը գալիս է քեզ մօտ, նա արդար ու փրկագործ է, հեզ, և էշի վերայ հեծած, այոհինքն 10
էշի ձագ՝ յուռնակի վերայ: Եւ պիտի բնաջինջ անեմ կառքը

Եփրեմից և ձին Երուսաղէմից, և պիտի փչանայ պատերազմի ազեղը, և նա խաղաղութիւն է խօսելու ազգերին, և նորա իշխանութիւնը պիտի լինի ծովից մինչև ծով, և գետից մինչև 11 երկրի ծայրերը։ Քո էլ ասիտի արիւնով թող տուի քո գերիներին այն գուբից, որի մէջ 12 ջուր չկայ։ Նո դարձէք ամրոցը, ով յուսոյ գերիներ, այսօր էլ եմ ծանուցանում, Թէ կրկնապատիկ եմ վճարելու քեզ։ Վասն 13 զի Յուդան պիտի ինձ համար լարեմ իրրև աղեղ, և պիտի լցնեմ Եփրեմին, և քո որդիացը պիտի գրգռեմ, ով Սիօն, քո որդիանց վերայ, ով Յունաստան, և քեզ պիտի զօրաւորի սուրի պէս 14 չինեմ։ Եւ Տէրը պիտի երևայ նոցանց վերայ, և կայծակի պէս պիտի դուրս գայ նորա նետը, և Տէր Եհովան պիտի հնչեցնէ փողը, և պիտի գնայ հարաւային 15 մրրիկներով։ Զօրաց Տէրը պիտի պաշտպան լինի նորանց վերայ, և նորանք պիտի ապառեցնեն և ոտնակոխ անեն իրր պարսաքարեր. և պիտի խմեն ու աղմուկ հանեն գինու պէս, և պիտի լցուին ասղաի պէս՝ ինչպէս սեղանի անկիւն- 16 ները։ Եւ այն օրը նորանց Տէր Աստուածը պիտի փրկէ նորանց իր ժողովրդի հօտին պէս, վասն զի իրր թագի քարեր պիտի պսպղան 17 նորա երկրի վերայ։ Վասն զի ինչ է նորա բարութիւնը, և ինչ նորա գեղեցկութիւնը. ցորեանը երիտասարդներ և քաղցած կոյսեր է բուսացնելու։

պէս պիտի չուեն, ճնշուելու են, որովհետև հովիւ չկայ։ Հովիւ- 3
ներին վերայ բորբոքուեցաւ իմ բարկութիւնը, և նոխազներին պիտի այցելեմ, վասն զի այցելեց Զօրաց Տէրը իր հօտը՝ Յուդայի տունը, և նորանց չինեց ինչպէս իր փառաւոր երիվարը պատերազմի մէջ։ Նորանից է 4
անկիւնաքարը, նորանից է բևեռը, նորանից է պատերազմի աղեղը, նորանից է դուրս գալիս ամեն բռնաւորող միասին։ Եւ 5
պիտի լինին տղամարդկանց պէս, որ կոխ են տալիս պատերազմնաւոր փողոցների ցեխի մէջ, և պիտի պատերազմեն, վասն զի Տէրը նորանց հետ է, և պիտի ամօթի ձիանք հեծնողները։ Եւ պիտի 6
քաջացնեմ Յուդայի տունը, և փրկեմ Յովսէփի տունը, և նորանց պիտի բնակեցնեմ, վասն զի նորանց ողորմել եմ, և պիտի լինեն իրր թէ ես նորանց չէի մերժել, վասն զի ես եմ նորանց Տէր Աստուածը, և նորանց պիտի լսեմ։ Եւ զօրաւորի պէս պիտի 7
լինի Եփրեմը, և նորանց սիրտը պիտի ուրախանայ իրր թէ գինիով, և նորանց որդիքն էլ պիտի տեսանեն և ուրախանան, նորանց սիրտը պիտի ցնծայ Տիրոջմով։ Եւ ես նորանց պիտի սուլեմ և նո- 8
րանց ժողովեմ, վասն զի ես փրկել եմ նորանց, և նորանք պիտի շատանան ինչպէս որ շատ էին։ Թէև ես նորանց ցանեմ ազ- 9
գերի մէջ, բայց նորանք հեռաւորութեամբ էլ պիտի յիշեն ինձ, և պիտի ապրեն իրանց որդիանց հետ, և ետ դառնան։ Եւ ես 10
նորանց ետ պիտի դարձնեմ Եգիպտոսի երկրից, և Ասորեստանից պիտի ժողովեմ նորանց. և նորանց պիտի բերեմ Գաղաադ երկիրը և Լիբանան, և տեղ չի գտնուիլ նորանց համար։ Եւ նա 11
պիտի անց կենայ նեղութեան ծովով, և պիտի զարկէ ծովի մրրիկ ալիքներին, և պիտի չորանան գետի բոլոր խորութիւնները, և պիտի իջեցնուի Ասորեստանի հպարտութիւնը, և Եգիպտոսի

ԳԼ. Ժ

1 Խնդրեցէք Տէրից անձրև ետքի անձրևի ժամանակին. Տէրը կայծակներ է շինում, և անձրև ու տարափ կ'տայ նորանց. ամեն մէկին խոտ՝ իր ագարակումը։
2 Վասն զի թերափիմները ունայնութիւն են խօսել, և գուշակները սուտ են տեսել, և փուչ երազներ են խօսել, դատարկ են մխիթարել. սորա համար հօտի

12 գաւազանը պիտի հեռանայ՝ եւ նորանց պիտի զօրացնեմ Տէրոջմամբ, և նորանք միտն պիտի գան նորա անուանովը, ասում է Տէրը։

ԳԼ. ԺՈՒ

1 Բայց արա դուռներդ, ով Լիբանան, և կրակը լափէ քո եղևինները։
2 Թող ողբայ մայրի ծառը, վասն զի ընկել է եղևինը, որովհետև ազնուականները կողոպտել են։ Թող ողբան Բասանու կաղնիները, վասն զի իջել է անմատչելի անտառը։
3 Հովիւների ողբալու ձայնը գալիս է, վասն զի կողոպտուել է նորանց փառքը, գալիս է կրիւնների մռնչելու ձայնը, վասն զի կողոպտուել է Յորդանանի շքեղութիւնը։
4 Այսպէս է ասում իմ Տէր Աստուածը. Արածացրու մորթելուելու հօտը,
5 որոնց առնողները մորթում են ու չեն յանցաւոր լինում, և որոնց ծախողները ասում են. Օրհնեալ լինի Տէրը որ հարստացայ. և նորանց հովիւները չեն
6 գթալու նորանց վերայ։ Վասն զի այլևս չեմ գթալու երկրի բնակիչների վերայ, ասում է Տէրը, և ահա ես մարդկանց իրար ձեռքը պիտի գցեմ և իր թագաւորի ձեռքը, և նորանք պիտի ջարկեն երկիրը, և պիտի չփրկեմ նորանց ձեռքիցը։
7 Եւ ես արածեցրի այն մորթելուելու հօտը, այսինքն հօտի թշուառները, և ես երկու գաւազան առի, մէկին կոչեցի *Գեղեցկութիւն և մէւսին կոչեցի
8 Կապեր, և արածեցրի հօտը։ Եւ փչացրի երեք հովիւներին մէկ ամսում, որովհետև սիրտս վրդովուել է նորանց վերայ, և նորանց սիրտերն էլ ինձանից էին
9 դարձել։ Եւ ես ասացի. Չեմ հովուելու, մեռնողը թող մեռնէ, և փչանողը փչանայ. և մնացածները թող մէկմէկու միս ուտեն։
10 Եւ ես վեր առի իմ գաւազանը՝ Գեղեցկութիւնը, և կոտրեցի նորան, որ ջրեմ իմ
11 ուխտը, որ արել եմ բոլոր ազգերի հետ։ Եւ նա քանդուեցաւ նոյն օրը, և այսպէս ճանաչեցին հօտի խեղճերը, որ սպասում էին ինձ, թէ սա Տիրոջ խօսքն է։
12 Եւ ես նորանց ասացի. Եթէ հաճելի է ձեր աչքին, տուէք իմ վարձքը, իսկ եթէ ոչ, թող արուէք. և նորանք կշռեցին իմ վարձքը երեսուն արծաթի։
13 Եւ Տէրը ասաց ինձ, Դէն գցիր դա բրուտի մօտ, պատուական գին է, որով ես գնահատուեցայ նորանց կողմից. և ես առի այն երեսուն արծաթը, և գցեցի Տիրոջ տունը բրուտի մօտ։
14 Եւ կոտրեցի իմ երկրորդ գաւազանը՝ Կապերը. որ քանդեմ Յուդայի և Իսրայէլի միջի եղբայրութիւնը։
15 Եւ Տէրը ասաց ինձ. Էլի քեզ համար յիմար հովիւի գործիքներ առ։
16 Վասն զի ահա ես երկրի վերայ մի հովիւ եմ յարուցանելու, նա կորչողին պիտի չյայցելէ, և ցրուածը պիտի չորոնէ, և կտրած ը պիտի չբժշկէ, կանդնածին պիտի չկանգնէ. այլ գերեվի միսը պիտի ուտէ, և նորանց կճղակները փշրէ։
17 Վա՛յ փուչ հովիւին, որ ձգում է հօտը. սո՛ւրը նորա բազուկի վերայ և նորա ա՛ջ աչքի վերայ. նորա բազուկը պիտի անպատճառ չորանայ, և նորա ա՛ջ աչքը անպատճառ խաւարի։

ԳԼ. ԺԲ

1 Տիրոջ խօսքի պատգամը Իսրայէլի մասին. ասում է Տէրը, որ տարածում է երկինքը և հիմնում երկիրը և առեղծում մարդու հոգին նորա միջումը.
2 Ահա ես երուսաղէմը թմրութեան բաժակ եմ շինելու բոլոր շրջակայ ազգերի համար, և Յուդայի վերայ էլ պիտի լինի Երուսաղէմի պաշարման ժամանակին։
3 Եւ պիտի լինի որ այն օրը ես Երուսաղէմը ծանր քար եմ շինելու բոլոր ազգերի համար, ամեն նորան բարձրացնողները պիտի անպատճառ ջարդուին, և նորա վերայ պիտի ժո-

*Ընտրհք

ղովուին երկրի բոլոր ազգերը։
4 Ա՛յն օրը, ասում է Տէրը, պիտի
ամէն ձի զարկեմ սոսկումով, և
նորա հեծեալին գիժութիւնով,
իսկ Յուդայի տան վերայ պիտի
բանամ աչքերս, և ժողովուրդ-
ների բոլոր ձիերը պիտի զարկեմ
5 կուրութեամբ։ Եւ Յուդայի տոհ-
մապետները պիտի ասեն իրանց
սրտումը. Ինձ համար զօրութիւն
են Երուսաղէմի բնակիչները Ի-
րանց Հօրաց Տէր Ասուծովը։
6 Ա՛յն օրը ես Յուդայի տոհմա-
պետներին պիտի շինեմ կրակի
վառարանի պէս փայտերի մէջ, և
կրակի ջահի պէս snրաների մէջ, և
նորանք պիտի ուտեն ամէն ազ-
գերը շրջակայ ժողովուրդներին,
և Երուսաղէմ դարձեալ իր տե-
ղը պիտի բնակէ Երուսաղէմում։
7 Եւ Տէրը պիտի փրկէ առաջ Յու-
դայի վրաններըը, որպէս դի չհը-
պարտանայ Դաւթի տան պար-
ծանքը, և Երուսաղէմի բնակչի
8 պարծանքը Յուդայի վերայ։ Ա՛յն
օրը Տէրը պիտի պաշտպանէ Ե-
րուսաղէմում բնակողին, և նո-
րանց միջի դիւրագլխատը այն
օրը Դաւթի պէս պիտի լինի, և
Դաւթի տունը՝ Աստուծոյ պէս,
Տէրոջ հրեշտակին պէս նորանց
9 առջև։ Եւ պիտի լինի այն օրը
որ ես պիտի ջանամ փչացնելու
այն բոլոր ազգերը, որոնք կ'գան
10 Երուսաղէմի վերայ։ Եւ պիտի
թափեմ Դաւթի տան վերայ, և
Երուսաղէմում բնակողի վերայ
շնորհաց և ողթիւց հոգին. և
նորանք պիտի մտիկ տան ինձ,
որին խոցեցին. և սուգ պիտի ա-
նեն նորա վերայ միամօրի սուգի
պէս. և պիտի ցաւեն նորա վե-
րայ, ինչպէս որ անդրանկի վերայ
11 կ'ցաւեն։ Ա՛յն օրը սուգը մեծ
պիտի լինի Երուսաղէմում, ինչ-
պէս Ադադ-ռիմմոնի սուգը Մա-
12 կեդովի դաշտումը։ Եւ երկիրը
պիտի սուգ անէ, ամեն մի ազ-
գատոհմ առանձին. Դաւթի
տան ազգատոհմը առանձին և
նորանց կանայքն առանձին, Նա-
թանի տան ազգատոհմը առան-
ձին և նորանց կանայքն առան-
ձին. Ղևիի տան ազգատոհմը ա- 13
ռանձին և նորանց կանայքն ա-
ռանձին, Սեմէիի ազգատոհմը
առանձին և նորանց կանայքն ա-
ռանձին։ Բոլոր մնացեալ ազգա- 14
տոհմները ամեն մէկն առանձին,
և նորանց կանայքն առանձին։

ԳԼ. ԺԳ

Ա՛յն օրը մի աղբիւր է լինելու 1
բացուած Դաւթի տան համար
և Երուսաղէմի բնակիչների հա-
մար, մեղքի համար և պղծու-
թեան համար։ Եւ այն օրը պիտի 2
լինի, ասում է Զօրաց Տէրը, որ
բնաջինջ պիտի անեմ կուռքերի
անուները երկրից, և այլևս պի-
տի չյիշուին. և մարգարէներին
էլ և պղծութեան հոգին էլ պի-
տի վերացնեմ երկրից։ Եւ պիտի 3
լինի որ երբ մի մարդ էլի մար-
գարէանայ, այն ժամանակ նորա
պիտի ասեն նորա հայրը և մայրը՝
նորա ծնողները. Չապրիս, վասն
զի սուտ խօսեցիր Տիրոջ անու-
նովը. և նորան պիտի խոցեն նո-
րա հայրն ու մայրը՝ նորա ծնող-
ները՝ նա մարգարէանալիս։ Եւ 4
այն օրը պիտի լինի որ պիտի ա-
մաչեն մարգարէները, ամեն մէկը
իր տեսիլքից՝ մարգարէանալիս.
և մազի վերարկու չեն հագնելու
խաբելու նպատակով։ Եւ պիտի 5
ասէ. Ես մարգարէ չեմ. ես մի
երկրագործ մարդ եմ. վասն զի
մի մարդ ինձ գառնել է իմ երե-
խայութիւնիցը։ Եւ նորան ասե- 6
լու են. Սա ի՞նչ հարուածներ
են ձեռքերիդ մէջ. և նա ասելու
է. Այս հարուածքը ես առաջ
եմ իմ բարեկամների տանը։
Ով սուր, վեր կաց իմ հովիւի 7
վերայ, և իմ ընկեր մարդի վե-
րայ, ասում է Զօրաց Տէրը. զար-
կէ հովիւին, և ոչխարները ցրը-
ուին, և ես էտ պիտի դարձնեմ
իմ ձեռքը փոքրների վերայ։ Եւ 8
պիտի լինի բոլոր երկրումը, ա-
ւում Տէրը, երկու մասը նորան-
ում պիտի կտրուի մեռնէ, իսկ
երրորդը պիտի կենայ նորան-
ում։ Եւ այն երրորդ մասը պիտի 9

տանեմ կրակի մէջ, և նորանց պիտի հալեցնեմ ինչպէս արծաթը հալեցնեն են հալեցնեմ. և նորանց պիտի փորձեմ ինչպէս փորձեմ են ոսկին, դա կ'կանչէ իմ անունը և ես կ'պատասխանեմ նորան. ես կ'ասեմ. Դա իմ ժողովուրդն է. և նա կ'ասէ. Տէրը իմ Աստուածն է։

ԳԼ. ԺԴ

1 Ահա մէկ օր է գալիս Տիրոջ
Համար, և քո ստացը պիտի բա-
2 ժանուի քո մէջ։ Եւ ես պիտի
ժողովեմ բոլոր ազգերը Երուսա-
ղէմի վերայ պատերազմի համար,
և քաղաքը պիտի առնուի, և
տուները պիտի կողոպտուին, և
կանայքը պղծուին, և քաղաքի
կէսը գերի գնայ. բայց ժողովրդի
մնացորդը պիտի քաղաքից չը
3 կտրուի։ Եւ Տէրը դուրս պիտի
գայ, և պիտի պատերազմէ այն
ազգերի հետ. ինչպէս նորա պա-
տերազմի օրը Ճակատամարտի
4 օրուայը։ Եւ նորա ոտքերը կանգ-
նած կ'լինեն այն օրը Ձիթենեաց
լեռան վերայ, որ Երուսաղէմի
առջևն է դէպի արևելք, և կը
պատռուի Ձիթենեաց լեռը
մէջտեղը դէպի արևելք ու արև-
մուտք. խիստ մեծ ձոր է լինե-
լու, և լեռան կէսը քաշուելու
է դէպի հիւսիս, և կէսը՝ դէպի
5 հարաւ։ Եւ դուք պիտի փախ-
չէք իմ լեռանց ձորը. վասն
զի լեռանց ձորը պիտի հասնի Ա-
զալ. և դուք պիտի փախչէք
ինչպէս որ գետնաշարժիցը փա-
խաք Յուդայի Ոզիա Թագաւորի
օրերուայը. և պիտի գայ իմ Տէր
Աստուածը. բոլոր սուրբերը քեզ
6 հետ։ Եւ այն օրը պիտի լինի,
որ լոյս չի լինելու, պայծառները
7 ազօտանալու են։ Եւ մէկ օր է
լինելու՝ Տիրոջը յայտնի, ոչ ցե-
րեկ և ոչ գիշեր. և իրիկուայ
8 ժամանակին լոյս է լինելու։ Եւ
պիտի լինի որ այն օրը կենդանի
ջուրեր են դուրս գալու Երուսա-
ղէմից նորանց կէսը դէպի արև-
ելեան ծովը, և նորանց կէսը դէ-
պի արևմտեան ծովը. ամառ ու
ձմեռ լինելու է։ Եւ Տէրը թա- 9
գաւոր է լինելու բոլոր երկրի վե-
րայ. այն օրը մէկ է լինելու Տէ-
րը, և նորա անունն էլ մէկ։
Բոլոր երկիրը դաշտի պէս պիտի 10
դառնայ Գաբաայից մինչև Ռիմ-
մոն Երուսաղէմի հարաւային կող-
մը. և պիտի բարձրանայ և իր
տեղը բնակէ Բենիամինի դռնից
մինչև Առաջի դրան տեղը՝ մինչև
Անկեան դուռը. և Անանէլի
աշտարակից մինչև թագաւորի
հնձանները։ Եւ պիտի բնակեն 11
նորանում. և նզովք էլ չի լինե-
լու. և Երուսաղէմն ապահով
պիտի բնակէ։

Եւ սա պիտի լինի այն հար- 12
ուածը՝ որով Տէրը պիտի հար-
ուածէ բոլոր ժողովուրդներին,
որոնք պատերազմեցին Երուսա-
ղէմի դէմ. նորանց մարմինը պիտի
հալուի իրանց ոտքերին վերայ
կանգնած, և նորանց աչքերը պիտի 13
հալուին իրանց խորշերում, և
նորանց լեզուն պիտի հալուի իրանց
բերանումը։ Եւ պիտի լինի այն
օրը որ Տիրոջ խռովութիւնը մեծ
պիտի լինի նորանցում, և ամեն
մարդ պիտի բռնէ իր ընկերի ձեռ-
քը, և նորա ձեռքը պիտի բարձ-
րանայ իր ընկերի ձեռքի դէմ։
Եւ Յուդան էլ է պատերազմե- 14
լու Երուսաղէմի դէմ, և պիտի
ժողովուի բոլոր շրջակայ ազգերի
ստացուածքը, ոսկի ու արծաթ
և հանդերձներ շատ առատու-
թեամբ։ Եւ այն ձիերի, ջորիների 15
և ուղտի ու էշի և բոլոր անա-
սուններին հարուածը, որ կ'լինին
այն բանակներին մէջ, պիտի այս
հարուածի պէս լինի։ Եւ բոլոր 16
այն ազգերից մնացածը, որոնք
եկել էին Երուսաղէմի վերայ,
վեր պիտի գնան տարուց տարի
Ջօրաց Տիրոջ Թագաւորին երկրը-
պագելու, և տաղաւարահարաց
տօնը կատարելու։ Եւ պիտի լինի 17
որ երկրի ազգատոհմներից ով որ
վեր չդնայ Երուսաղէմ Ջօրաց
Տիրոջ Թագաւորին երկրպագե-
լու, նորանց վերայ անձրև չի լի-
նելու։ Եւ եթէ Եգիպտացի ազ- 18

դաւտհմը վեր չելնէ և չդայ. ոչ էլ նորանց վերայ. պիտի լինի նրանց վերայ այն հարուածը, որով Տէրը պիտի զարկէ այն ազգերին որ վեր չդնացին, որ մտնէին տաղաւարահարաց տօնը։
19 Սա պիտի լինի Եգիպտոսի յանցանքը և այն ամեն ազգերի յանցանքը, որ վեր չդնացին տաղաւարահարաց տօնը մտնելու։
20 Այն օրը ձիանց սանձերի վրայ դի վերայ լինելու է ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՒՈՆ և Տիրոջ տան կաթսաները սեղանի առջևի կոնքերի պէս պիտի լինին։ Եւ երուսաղէմում 21 ու Յուդայում ամեն կաթսայ սուրբ պիտի լինի Զօրաց Տիրոջը, և բոլոր զոհ անողները պիտի գան և նորանցից առնեն ու նորանց մէջ եփեն, և այն օրը այլևս Քանանացի չի լինելու Զօրաց Տիրոջ տանը։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԱՂԱԹԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տիրոջ խօսքի պատգամը Իսրայէլի մասին՝ Մաղաքիայի ձեռով։ 2 Ես ձեզ սիրել եմ, ասում է Տէրը, իսկ դուք ասում էք. Ինչո՞վ ես սիրել մեզ։ Մի՞թէ Եսաւը եղբայր չէ Յակոբին, ասում է Տէրը, և ես Յակոբին եմ 3 սիրել։ Իսկ Եսաւին ատել եմ, և նորա լեռները ամայի եմ արել. և նորա ժառանգութիւնը անապատի չագալներին եմ տուել։ 4 Թէև Եդոմ ասէ. Մենք կործանուեցանք, բայց դարձեալ պիտի շինենք աւերակները. Զօրաց Տէրն էլ այսպէս է ասում. Նորանք կ'շինեն, բայց ես կ'քանդեմ. և նորանց կ'կոչեն Անօրէնութեան սահման, և մի ժողովուրդ՝ որի դէմ Տէրը բարկացած է 5 յաւիտեան։ Եւ ձեր աչքերը պիտի տեսանեն, և դուք էլ պիտի ասէք. Մեծ է Տէրը Իսրայէլի սահմանից վեր։

6 Տղան իր հօրը կ'մեծարէ, և ծառան իր Տիրոջը. եթէ ես էլ հայր եմ, ո՞ւր է իմ մեծարանքը. և եթէ տէր եմ ես, ո՞ւր է իմ երկիւղը, ասում է ձեզ Զօրաց Տէրը, ով իմ անունը անարգող քահանաներ, որ ասում էք. Թէ Ինչո՞վ ենք անարգում քո 7 նունը։ Իմ սեղանի վերայ պիղծ հաց մատուցանելով. բայց դուք ասում էք. Մենք ինչո՞վ ենք քեզ պղծում. Ձեր ասելովը թէ Տիրոջ սեղանը անարգուած է։ 8 Ապա երբոր կոյրը մատուցանում էք զոհելու, վատ չէ՞. կամ երբոր մատուցանում էք կաղը կամ հիւանդը. վատ չէ՞. Նորան մէկ քո իշխանին մատուցրու, արդեօք քեզ կ'հաւանի՞ կամ քեզ կ'ակնածէ՞, ասում է Զօրաց Տէրը։ 9 Եւ արդ, աղօթք արէք Աստծոյ դիմացը, որ մեզ ողորմէ. Ձեր ձեռքից եղաւ այս. մի՞թէ ձեզ կ'ակնածէ՞, ասում է Զօրաց Տէրը։ 10 Ո՞վ էլ կայ ձեզանում որ դուռները չէն փակէ. դուք սեղանս էլ չէք լուսաւորում ձրի. ձեզ չեմ հաւանում, ասում է Զօրաց Տէրը. և ընծայ չեմ ընդունում ձեր ձեռքիցը։ 11 Վասն զի արեգակի ելքիցը մինչև նորա մուտքը մեծ է իմ անունը ազգաց մէջ. և ամեն տեղ իմ անուանը խունկ և սուրբ ընծայ է մատուցվում. վասն զի մեծ է իմ անունը ազգաց մէջ, ասում է Զօրաց Տէրը։ 12 Բայց դուք պղծում էք նորան՝ ձեր ասելովը թէ Տիրոջ սեղանը պղծուած է. և նորա բերքը՝ կերակուրը անարգուած է։ Եւ ասում էք. 13 Ահա ի՞նչ աշխատութիւն է. և փչում էք նորա վերայ, ասում է Զօրաց Տէրը. և բերում էք յափշտակուածն ու կաղը և հիւանդը. այսպէս էք բերում ընծան. մի՞թէ ես կ'ընդունեմ այդ

ձեր ձեռքերիցը, ասում է Տէրը։
44 Եւ անիծեալ լինի խաբողը, որ
իր հօտի մէջ արձը լինելով, ուխտ
է անում և խանգարուածը զոհ-
ում Տիրոջը. վասն զի ես մեծ թա-
գաւոր եմ, ասում է Զօրաց Տէ-
րը, և իմ անունը ահարկու է
ազգաց մէջ։

Գլ. Բ

1 Եւ արդ ձեզ դէմ է այս պատ-
2 ուէրը, ով քահանաներ։ Եթէ
չլսէք և ուշադրութիւն չանէք,
որ իմ անուանը պատիւ տաք,
ասում է Զօրաց Տէրը. այն ժա-
մանակ ես ձեր մէջը կ'ուղարկեմ
անէծքը, և կ'անիծեմ ձեր օրհ-
նութիւնները. այո՛ ես արդէն ա-
նիծել եմ նորանց, վասն զի
3 դուք ուշք չէք դարձնում։ Ա.հա
ես պիտի յանդիմանեմ ձեր սեր-
ունդը, և ագռ պիտի ցրուեմ ձեր
երեսի վերայ՝ ձեր տօների ագռը.
4 և ձեզ իր մօտը պիտի տանէ։ Եւ
դուք կ'իմանաք, թէ ես եմ ու-
ղարկել ձեզ դէմ այս պատուէ-
րը. որպէս զի իմ ուխտը լինի
Ղեւիի հետ, ասում է Զօրաց
5 Տէրը։ Իմ ուխտը նորա հետ էր
իրեւ կեանք և խաղաղութիւն,
և ես տուի նորան իրեւ երկիւղ,
որ նա վախենայ ինձանից. և նա
իմ անուան երեսից ապրումփում
6 էր։ Ճշմարտութեան օրէնք կար
նորա բերանումը, և անիրաւու-
թիւն չէր գտնւում նորա շըր-
թունքներումը. խաղաղութեամբ
ու ուղղութեամբ էր վարւում
ինձ հետ. և շատերին դարձնում
7 էր անօրէնութիւնից։ Վասն զի
քահանայի շրթունքները պէտք է
գիտութիւն պահեն, և օրէնք կը
փնտռեն նորա բերանիցը. վասն
զի նա Զօրաց Տիրոջ դեսպանն
8 է։ Բայց դուք խոտորել էք ճա-
նապարհիցը, շատերին գայթակ-
ղեցրիք օրէնքի մէջ. դուք քան-
դեցիք Ղեւիի ուխտը, ասում է
9 Զօրաց Տէրը։ Ուրիմն ես էլ ձեզ
եմ անարգուած ու նուաստա-
ցած անում բոլոր ժողովրդի
մօտ. ինչպէս որ դուք չէք պա-
հում իմ ճանապարհները. և ե-
րեսպաշառութիւն էք անում օ-
րէնքի մէջ։

Մի՞թէ մեր ամենքի հայրը մէ- 10
կը չէ. մի՞թէ մէկ Աստուած չէ
ստեղծել մեզ. ինչո՞ւ համար է
մէկ-էնէն նենգութիւն անում ամեն
մարդ իր եղբօրը. որ քանդէ մեր
հայրերի ուխտը։ Յուդան նեն- 11
գութիւն է անում, և պղծու-
թիւն է գործւում Իսրայէլի ու
Երուսաղէմի մէջ. վասն զի Յու-
դան պղծում է Տիրոջ սրբարա-
նը, որն նա սիրում է. և ամու-
սին եղաւ օտար աստուծոյ աղջ-
կան։ Տէրը բնաջինջ է անելու 12
այն մարդուն որ անում է այս,
արթուն և պատասխանողին
Յակոբի վրաններիցը. և Զօրաց
Տիրոջը ընծայ մատուցանողին։

Եւ երկրորդ սա էք անում. 13
ծածկում էք արտասուքով Տի-
րոջ սեղանը՝ լացով ու ողբով.
որ 'նա այլ և չէ նայում ընծա-
յին և հաճութեամբ չէ ընդուն-
ում իր ձեռքիցը։ Բայց դուք 14
ասում էք. Ինչո՞ւ համար. Նո-
րա համար որ Տէրը վկայում է
քո և քո երիտասարդութեան
կնոջ մէջտեղը, որի դէմ դու
անհաւատարիմ ես եղել. սակայն
նա քո ընկերն է և քո ուխտի
կինը։ Եւ այն մէկն էլ չարա՞ւ, 15
որ Հոգու աւելորդութիւն ունէր.
և ի՞նչ էր փնտռում այն մէկը.
Աստուծոյ սերունդ. ուրեմն զգ-
ուշացէք ձեր անձերի մասին,
և երիտասարդութեանդ կնոջը
հետ անհաւատարիմ մի լինիր։
Վասն զի ես ասում եմ որ ատա- 16
հարութիւնը, ասում է Իսրայէլի
Տէր Աստուածը. և նա ծածկում
է ածիրով իր հանդերձը, ասում
է Զօրաց Տէրը. ուրեմն զգուշա-
ցէք ձեր անձերի մասին և ան-
հաւատարիմ մի լինիք։

Դուք ձանձրացնում էք Տի- 17
րոջը ձեր խօսքերով. բայց դուք
ասում էք. Ինչո՞վ ենք ձանձ-
րացնում. ձեր ասելով. թէ Ա-
մեն չարագործ հաճելի է Տիրոջ
աչքի առջև. և ինքը հաւանում
է նորանց. կամ թէ, ո՞ւր է գա-
տաստանի Աստուածը։

ԳԼ. Գ

1 Ահա ես ուղարկում եմ իմ դեսպանը, որ ճանապարհ պատրաստէ իմ առջև, և յանկարծակի է գալու իր տաճարի մօտ այն Տէրը, որին դուք որոնում էք, և սխտոի հրեշտակը, որին դուք
2 հաւանում էք. ահա նա գալիս է, ասում է Զօրաց Տէրը։ Եւ ո՞վ է նորա գալու օրը տանողը, և ո՞վ է նորա երևալու ժամանակին կանգնողը, վասն զի նա հալեցնողի կրակին պէս է, և թա-
3 փիչների օճառին պէս։ Եւ նա նստելու է իբրև արծաթի հալեցնող և մաքրող. և մաքրելու է Ղևիի որդիները և զտելու նորանց ոսկու և արծաթի պէս. և նորանք կ'լինին արդարութեամբ բնծայ մատուցանողներ Տիրոջ
4 համար։ Եւ ընդունելի կ'լինի Տիրոջ Յուդայի և Երուսաղէմի բնծան. ինչպէս վաղեմի օրերին և
5 նախնի տարիներին։ Եւ ես կ'մօտենամ ձեզ դատաստանի համար, և ես ժիր վկայ կ'լինիմ կախարդների ու շնացողների և սուտ երդում անողների դէմ. նաև վարձկանի վարձը, որբևայրիին և որբին զրկողներին, և օտարականին ծռնջողներին, որոնք ինձանից չեն վախենում, ասում է Զօրաց Տէրը։
6 Վասն զի ես Տէրս չեմ փոփոխուիլ. և դուք, ով Յակոբի որդիք, չէք ապառուիլ։
7 Ձեր հայրերի օրերից 'ի վեր խոտորել էք իմ պատուէրներից և նորանց չէք պահել. ետ դարձէք դէպի ինձ, և ես էլ կը դառնամ դէպի ձեզ, ասում է Զօրաց Տէրը. բայց դուք ասում էք. Ի՞նչ բանում եմք դառնանք։
8 Մի՞թէ մարդ Աստուած կ'խաբէ, որ դուք ինձ խաբում էք. բայց դուք ասում էք, Ի՞նչ բանում ենք քեզ խաբում. տասանորդ-
9 ումը և ընծայումը։ Անէծքով դուք անիծուած էք, վասն զի դուք ինձ խաբում էք բոլոր
10 ազգդ։ Բոլոր տասանորդը տարէք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի. և ինձ մէկ փորձեցէք առանով, ասում է Զօրաց Տէրը. թէ արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնից պատուհանները և օրհնութիւն թափել ձեզ հա-
11 մար՝ մինչև որ պէտք չլինի։ Եւ ես պիտի կշտամբեմ ձեզ համար ուտողին, որ նա չապականէ ձեզ համար երկրի արդիւնքը, և ձեզ համար անպտուղ չլինի որթը
12 պտղումը, ասում է Զօրաց Տէրը։ Եւ ձեզ պիտի երանեն բոլոր ազգերը, վասն զի դուք պիտի ցանկալի երկիր լինիք, ասում է
13 Զօրաց Տէրը։ Ձեր խօսքերը ծանր են ինձ դէմ, ասում է Տէրը. բայց դուք ասում էք. Մենք ի՞նչ ենք խօսում քեզ դէմ։
14 Դուք ասում էք. Դատարկ է Աստուծոյ ծառայելը, և ի՞նչ օգուտ որ նորա պահպանութիւնը պահել ենք, և ուզով վարուեցանք Զօրաց Տիրոջ առ-
15 ջև։ Եւ հիմա մենք երանում ենք գառոզներին, և բարեչէն էլ են անօրէնութիւն անողները, մինչև անգամ Աստուծոյն էլ փորձում են և պրծնում։
16 Այն ժամանակ խօսեցին Տէրից վախեցողները իրար հետ և Տէրը ականջ դրաւ ու լսեց, և յիշատակի գիրք գրուեցաւ նորա առջևը Տէրից վախեցողների համար, և նորա անունը պատուական համարողների համար։
17 Եւ նորանք իմ կ'լինեն, ասում է Զօրաց Տէրը, այն օրը, որ ես կ'անեմ, էմ սեպհականութիւնը. և ես նորանց կ'խնայեմ մինչպէս մի մարդ իր որդուն կ'խնայէ, որ ծառա-
18 յում է իրան։ Եւ դուք ետ կը դառնաք և կ'տեսնէք արդարի ու ամբարշտի տարբերութիւնը. Աստուծոյ ծառայութիւն անողին և ծառայութիւն չանողի տարբերութիւնը։

ԳԼ. Դ

1 Քանզի ահա գալիս է այն օրը, որ վառուած է թոնիրի պէս, և բոլոր գոռոզները ու չարագործները յարդի պէս են լինելու. և նորանց պէտք է այրէ այն եկող

օրը, սուրբ է Ձօրաց Տէրը, որ նորանց համար արմատ և սատ
2 պիտի չթողէ։ Բայց ձեզ համար, որ իմ անուանից վախում էք, պիտի ծագէ արդարութեան արեգակը, և բժշկութիւն պիտի լինի նորա թեւերի վերայ, և դուք դուրս պիտի գաք ու ոստնէք
3 պարարտ որթերի պէս։ Եւ պիտի կոխ տաք ամբարիշտներին, վասն զի նորանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի թաթերի տակ այն օրը, որ ես կ'անեմ, սուրբ է Ձօրաց Տէրը։

Յիշեցէք իմ ծառայի Մովսէսի 4
օրէնքը, որ նորան պատուիրեցի Խորէբի վերայ բոլոր Իսրայէլի համար, կանոններ և իրաւունքներ։
Ահա ես կ'ուղարկեմ ձեզ համար 5
Եղիա մարգարէն, Տիրոջ մեծ և սքեղ օրը գալուց առաջ. Եւ 6
նա պիտի դարձնէ հայրերի սիրտը դէպի որդիքը և որդկանց սիրտը՝ դէպի իրանց հայրերը, որ մի գուցէ ես գամ և երկիրը զարկեմ անէծքով։

ՎԱԽՃԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԷՋ ՅԻՇՈՒԱԾ ՉԱՓԵՐԻՆ, ԿՇԻՌՆԵՐԻՆ ԵՒ ԴՐԱՄՆԵՐԻՆ ՅԱՆԿԸ

1. ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ

	Լ. ոսկի ե– 100-ուդ	Մ. ոսկի ե– 100-ուդ
Ուղուկ, ջրա մանանեխի	0 . 12	0 . 08
Թիզ, 8 ուղուկ	0 . 36	0 . 23
Կանգուն, 2 թիզ	0 . 71	0 . 46
Գրկաչափ, 4 կանգուն	2 . 85	1 . 85
Եղեկիէլի եղեգը, 6 կանգուն	4 . 27	2 . 77
Ասպարէզ, 100 գրկաչափ	284 . 62	184 . 94
Շաբաթ օրուայ ճանապարհ, 6 ասպարէզ	1,707 . 71	1,109 . 62
Մղոն, 8 ասպարէզ	2,276 . 95	1,479 . 50

2. ՀԵՂԱՆԻՒԹԻՑ ՉԱՓԵՐ*

	Օէֆ– Տր.	Լ. ոսկի ե– 100-ուդ
Ճաշակ	0 100	0 . 32
Հիմէն, 12 ճաշակ	8	3 . 83
Մար, Հիմէն	48	22 . 97
Քոռ կամ խօմէր, 10 մար	480	229 . 68

3. ԱՐՄՏԵԱՅ ՉԱՓԵՐ*

	Օէֆ– Տր.	Լ. ոսկի ե– 100-ուդ
Կապիճ	1	1 . 27
Օմէր, կամ տասանորդ, արդուին 10 մասը	4 320	2 . 30
Գրիւ, 6 կապիճ	6	7 . 65
Արդու, 3 գրիւ	18	22 . 97
Քոռ կամ խօմէր, 10 արդու	180	229 . 68

4. ԿՇԻՌՆԵՐ

	Օէֆ– Տր.	Լ. ոսկի ե– 100-ուդ	Կ. ոսկի ե– 100-ուդ
Կերատ	0 . 23	0 . 71	
Սիկղ. 20 կերատ	4 . 68	14 . 25	
Մնաս, 100 սիկղ	1 46 . 83	1,425 . 51	
Տաղանդ 300 սիկղ	33 296 . 10	42,765 . 50	

5. ԵՐԻԱՑԵԱՑ ԱՐԾԱԹ ԵՒ ՈՍԿԻ ԴՐԱՄՆԵՐԻՆ ԵՒ ԿՇԻՌՆԵՐԻՆ ԱՐԺԷՔԸ

ԱՐԾԱԹԻ	Կ.–Լ.	Փ.	Ճ.–Ն. ե– 100-ուդ
Սիկղ	12	24	2 . 86
Մնաս	1,260	26	286 . 46
Տաղանդ	37,812	20	8,593 . 75
ՈՍԿՒՈՑ			
Սիկղ	201	27	45 . 83
Մնաս	20,166	27	4,583 . 33
Տաղանդ	605,000		137,500

6. ՀՈՄԱՑԵԱՑ ԴՐԱՄՆԵՐԻՆ ԱՐԺԷՔԸ

	Կ.–Լ.	Փ. ե– 100-ուդ	Ճ.–Ն. ե– 100-ուդ
Լումայ		1 . 37	0 . 01
Նաքարակիտ, 2 լումայ		3 . 45	0 . 02
Դանկ, 4 նաքարակիտ		12 . 60	0 . 07
Դահեկան, 10 դանկ	3	06	0 . 72
Երկդրամեան, 2 դահեկան	6	12	1 . 43
Ասեղ, 4 դահեկան	12	24	2 . 86
Մնաս, 100 դահեկան	315	00	71 . 59

*Յիշեալ չափերը, յատկապէս հեղանիւթից և արմաւից, ոմանք աւելի և ոմանք պակաս կը հաշուեն։

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

208.2
Կ-76

Խնամօք ընտրեցաւ և ծախքն բնաւէրք

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՔ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՄՍՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

1882

Ա. ԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուս Քրիստոսի՝ Դաւթի որդւոյ | կոչը ծնաւ Յօսէփին՝ Մարիամի
Աբրահամի որդւոյ ծննդեան մարդին, որից ծնուեցաւ Յիսուսը,
գիրքը։ որասւում է Քրիստոս։ Ամէն՝ բո- 17
2 Աբրահամը ծնաւ Իսահակին. լոր սերդերը Աբրահամից մինչև
Իսահակը ծնաւ Յակոբին. Յա- Դաւիթ տասնուչորս սերդ են, և
կոբը ծնաւ Յուդային և նորա Դաւիթից մինչև Բաբելոնի գե-
3 եղբայրներին. Յուդան ծնաւ Փա- րութիւնը տասնուչորս սերդ, և
րէսին և Զարային Թամարից. Փա- Բաբելոնի գերութիւնից մինչև
րէսը ծնաւ Եզրոնին. Եզրոնը ծ- Քրիստոս տասնուչորս սերդ։
4 նաւ Արամին. Արամը ծնաւ Ա- Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն 18
մինադաբին. Ամինադաբը ծնաւ այսպէս էր. այսինքն նորա մայրը
Նաասոնին. Նաասոնը ծնաւ Սաղ- Մարիամ նշանուած լինելով Յո-
5 մոնին. Սաղմոնը ծնաւ Բոոսին սէփին՝ դեռ մինչև նորանից իրար
Ռախաբից. Բոոսը ծնաւ Օբէդին մօտ գալը Սուրբ Հոգուցը յղա-
Հռութից. Օբէդը ծնաւ Յեսսէին. ցած գտնուեցաւ։ Եւ Յօսէփ նո- 19
Յեսսէն ծնաւ Դաւիթ թագաւո- րա մարդը՝ արդար լինելով, և
6 րին։ Դաւիթ թագաւորը ծնաւ նորան խայտառակել չուզելով,
7 Սողոմոնին Ուրիայի կնոջից. Սո- խորհեց ծածուկ արձակել նո- 20
ղոմոնը ծնաւ Րոբոամին. Րոբո- րան։ Եւ մինչդեռ նա մտածում
բոամը ծնաւ Աբիային. Աբիան էր այս, ահա Տիրոջ հրեշտակը
8 ծնաւ Ասային. Ասան ծնաւ Յո- երազում երևեցաւ նորան և ա-
սափատին. Յոսափատը ծնաւ Յո- սաց. Յօսէփ Դաւթի որդի, մի
բոամին. Յորամը ծնաւ Ոզիային. վախեներ էղ մօտ առնել քո կին
9 Ոզիան ծնաւ Յովոթամին. Յո- Մարիամին, վասն զի նորանում 21
վաթամը ծնաւ Աքազին. Աքազը ծնուածը Սուրբ Հոգուցն է։ Եւ
10 ծնաւ Եզեկիային. Եզեկիան ծ- նա որդի կ'ծնի, և նորա անունը
նաւ Մանասէին. Մանասէն Յիսուս դնես. վասն զի նա իր
ծնաւ Ամմոնին. Ամմոնը ծնաւ Յո- ժողովրդին կ'փրկէ իրանց մեղ- 22
11 սիային, Յոսիան ծնաւ Յեքոնիա- քերից։ Եւ այս ամենը եղաւ,
յին՝ և նորա եղբայրներին, Բա- որ կատարուի Տիրոջից ասուածը
բելոնի գերութեան ժամանակին։ մարգարէի ձեռովն, որ ասում
12 Բաբելոնի գերութիւնից յետոյ է. Ահա՛ կոյսը կ'յղանայ և որդի 23
Յեքոնիան ծնաւ Սաղաթիէլին. կ'ծնի. և նորա անունն Էմմանու-
Սաղաթիէլը ծնաւ Զորաբաբէլին. էլ կ'կանչեն. որ թարգմանվում
13 Զորաբաբէլը ծնաւ Աբիուդին. է՝ Աստուած մեզ հետ։ Եւ Յո- 24
Աբիուդը ծնաւ Եղիակիմին. Ե- սէփը քնից զարթնելով այնպէս
14 ղիակիմը ծնաւ Ազորին. Ազորը արաւ, ինչպէս Տիրոջ հրեշտակը
ծնաւ Սադոկին. Սադոկը ծնաւ հրամայեց իրան. և առաւ իր
Աքինին. Աքինը ծնաւ Եղիու- կնիկն էր մօտ։ Եւ չէր գիտում 25
15 դին. Եղիուդը ծնաւ Եղիազարին. նորան մինչև որ նա իր անդրա-
Եղիազարը ծնաւ Մատթանին. նիկ որդին ծնաւ. և նորա անու-
16 Մատթանը ծնաւ Յակոբին. Յա- նը կոչեց Յիսուս։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Յիսուս ծնուեցաւ Հրէաստանի Բեթղէհէմումը՝ Հերովդէս թագաւորի օրերումը, ահա արեւելքից մոգեր եկան Երուսաղէմ, 2 եւ ասացին. Ո՞րտեղ է Հրեաների ծնուած թագաւորը. վասն զի մենք տեսանք նորա աստղը արեւելքումը, և եկանք նորան 3 երկրպագելու։ Եւ երբոր Հերովդէս թագաւորը լսեց՝ շփոթուեցաւ, և բոլոր Երուսաղէմը նորա 4 հետ։ Եւ բոլոր քահանայապետներին և ժողովրդի գպիրներին ժողովելով՝ նորանցից հարցրեց, թէ ո՞ր տեղ պիտի ծնուի Քրիս- 5 տոսը։ Եւ նորանք ասացին նորան. Հրէաստանի Բեթղէհէմումը. վասն զի այսպէս է գրուած մար- 6 գարէի ձեռովն. Եւ դու, Բեթղէհէմ՝ Յուդայի երկիր, քնաւ փոքրագոյն չես Յուդայի իշխանների մէջ. վասն զի քեզանից իշխան պիտի դուրս գայ, որ իմ՝ Իսրա- 7 յէլ ժողովուրդը հովուէ։ Այն ժամանակ Հերովդէս մոգերին թագուն կանչելով, նորանցից ստուգեց այն եղեալ աստղի 8 ժամանակը։ Եւ նորանց Բեթղէհէմ ուղարկելով ասաց. Գնացէք ամենայն իմացէք այն երեխայի համար, և երբոր գտնէք, ինձ իմացրէք, որ ես էլ գամ երկրպա- 9 գեմ նորան։ Եւ նորանք՝ երբոր լսեցին թագաւորից՝ գնացին. և ահա՛ այն աստղն, որ տեսան արեւելքումը, նորանց առջև գնում էր, մինչև որ եկաւ կանգնեց այն տեղի վերայ, ուր էր երեխան։ 10 Եւ երբոր այն աստղը տեսան, մեծ ուրախութիւնով ուրախ- 11 ցան շատ։ Եւ երբոր տունը մտան, *գտան երեխային իր մայր՝ Մարիամի հետ, և ընկած երկրպագեցին նորան, և իրանց գանձերը բացին՝ ընծայ տուին նորան՝ ոսկի 12 և կնդրուկ և զմուռս։ Եւ երազում հրաման տալի լեալ չը դառնալ Հերովդէսի մօտ, և ուրիշ ճանապարհով գնացին իրանց երկիրը։

13 Եւ երբոր նորանք այն տեղից գնացին, ահա Տիրոջ հրեշտակն երեւեցաւ երազում Յովսէփին և ասաց. Վեր կաց վեր առ երեխային և նորա մօրը, և փախիր Եգիպտոս, և ինա այն տեղ, մինչև որ ասեմ քեզ. վասն զի Հերովդէսը որոնելու է այդ երեխային որ կորցնէ նորան։ 14 Եւ նա վերկացաւ վեր առաւ երեխային և նորա մօրը գիշերով, և տեղափոխեցաւ գնաց Եգիպտոս, և 15 այն տեղ էր մինչև Հերովդէսի վախճանը. Որ կատարուի Տիրոջից ասուածը մարգարէի ձեռովը, որ ասում է. Եգիպտոսից կանչեցի իմ որդին։

16 Այն ժամանակ Հերովդէսը տեսնելով թէ խաբուեցաւ մոգերից, շատ բարկացաւ. և ուղարկեց կատարեց այն ամեն երեխաներին, որ Բեթղէհէմում և նորա չորս կողմերումն էին երկու տարեկանների և նորանցից ցածերը, 17 այն ժամանակին նայելով որ քաւուզից մոգերից։ Այն ժամանակ կատարուեցաւ Երեմիա մարգարէի ձեռով ասածն, որ ասում 18 է. Ձայն լսուեցաւ Հռամայի մէջ ողբ և լաց և կոծ. Հռաքէլը իր որդոց վերայ լաց էր լինում, և չէր կամենում մխիթարուիլ, վասն զի չկան։

19 Եւ երբոր Հերովդէսը մեռաւ, ահա Տիրոջ հրեշտակն երազում երեւեցաւ Յովսէփին Եգիպտոսումը, և ասաց. 20 Վեր կաց վեր առ երեխային և նորա մօրը և գնա Իսրայէլի երկիրը. քանզի երեխայի կեանքը որոնողները մեռել են։ 21 Եւ նա վերկացաւ վեր առաւ երեխային և նորա մօրը և եկաւ Իսրայէլի երկիրը։ 22 Եւ լսելով թէ Արքեղայոս է թագաւորում Հրէաստանի վերայ իր հօր՝ Հերովդէսի տեղ, վախեց գնալ այն տեղ, և երազում պատգամ առնելով՝ գնաց Գալիլեայի կողմերը. 23 Եւ եկաւ բնակեց այն քաղաքում՝ որ Նազարէթ է ասւում. որ կատարուի մարգարէների ձեռով ասուածը թէ՝ Նազովրեցի կ'կոչուի

*Ոմանք՝ տեսան

ԳԼ. Գ

1 Ա.յն օրերումն եկաւ Յովհաննէս
մկրտիչը, քարոզեմ էր Հրէաս-
2 տանի անապատումը, եւ ասեմ.
Ապաշխարեցէք, վասն զի մօտե-
ցել է երկինքի թագաւորութիւ-
3 նը։ Վասն զի սա է այն ասուա-
ծը եղեալ մարգարէի ձեռամբը, որ
ասեմ է. Ձայն կանչողի անա-
պատումը. պատրաստ արէք Տիրոջ
ճանապարհը, ուղիղ արէք նո-
4 րա շաւիղները։ Եւ ինքն Յովհան-
նէս իր հագուստը ունէր ուղ-
տի բրդից, և կաշիէ գօտիկ իր
մէջքին, և նորա կերակուրն էր
5 մարախ և վայրի մեղր։ Ա.յն ժա-
մանակ դուրս էին գնում նորա
մօտ Երուսաղէմը և բոլոր Հրէ-
աստանը և Յորդանանի բոլոր կող-
6 մերը, եւ մկրտվում էին Յորդա-
նանի մէջ նորանից՝ իրանց մեղ-
7 քերը խոստովանելով։ Եւ երբոր
տեսաւ որ Փարիսեցիներից և Սա-
դուկեցիներից շատերը գալիս էին
իր մկրտութեանը, ասաց նո-
րանց. Ի՞նչ զաւակներ, ո՞վ ցոյց
տուեց ձեզ փախչել այն գալու
8 բարկութիւնից։ Արդ ապաշխա-
րութեան արժանի պտուղ արէք։
9 Եւ մի կարծէք ասել ձեր միջու-
մը՝ մենք հայր ունինք Աբրահա-
մին. վասն զի ասում եմ ձեզ, թէ
Աստուած կարող է այս քարե-
րից որդիք յարուցանել Աբրա-
10 համի համար։ Արդէն կացինն
էլ ծառերի արմատին դրուած է.
որ ամեն ծառ, որ բարի պտուղ
չէ բերում, կ'կտրուի ու կրակի
11 մէջ կ'գցուի։ Ես ջրով եմ մկրտում ձեզ ապաշխարութեան
համար. բայց իմ ետևից եկողն
ինձանից զօրաւոր է, որի կօշիկ-
ները վեր առնելու ես արժանի
չեմ. նա ձեզ կ'մկրտէ Սուրբ Հո-
12 գով և կրակով։ Որ հողերին նո-
րա ձեռին է, և կ'արբէ իր կալը
և իր ցորենը կ'հաւաքէ շտեմա-
րանը, իսկ յարդը կ'այրէ անան-
ցանելի կրակով։
13 Ա.յն ժամանակ եկաւ Յիսուս
Գալիլեայից Յորդանան Յովհաննէ-
14 սի մօտ նորանից մկրտուելու։ Եւ
Յովհաննէս արգելում էր նորան
և ասում. Ինձ պէտք է քեզանից
մկրտուիլ, և դու ի՞նձ մօտ ես
գալիս։ Եւ Յիսուս պատասխան 15
տուաւ և ասաց նորան. Թոյլ
տուր հիմա, վասն զի այսպէս է
վայելում մեզ, որ ամեն արդա-
րութիւն կատարենք։ Յայնժամ
թոյլ տուաւ նորան։ Եւ մկըր- 16
տուելուց յետոյ Յիսուս շուտով
դուրս եկաւ ջրից. և ահա եր-
կինքը բացուեցաւ նորա համար,
և տեսաւ Աստուծոյ Հոգուն որ
վայր էր իջնում աղաւնու պէս
և գալիս նորա վերայ։ Եւ ահա 17
երկինքից ձայն էր՝ որ ասում
էր. Դա է իմ սիրելի որդին, որին
հաւանեցի։

ԳԼ. Դ

Ա.յն ժամանակ Յիսուս Հոգուց 1
անապատը տարուեցաւ, որ փոր-
ձուի սատանայից։ Եւ քառա- 2
սուն օր և քառասուն գիշեր
ծոմ պահելուց յետոյ սովեց։ Եւ 3
փորձիչը նորա մօտ գալով ա-
սաց. Եթէ Աստուծոյ որդի ես,
ասա որ այս քարերը հաց լինին։
Նա էլ պատասխան տուաւ և 4
ասաց. Գրուած է՝ Ոչ միայն
հացով կ'ապրի մարդ, այլ ամեն
խօսքով, որ դուրս է գալիս Ա-
ստուծոյ բերանից։
Ա.յն ժամանակ սատանան նո- 5
րան առաւ սուրբ քա-
ղաքը, և կանգնեցրեց նորան տա-
ճարի աշտարակի վերայ, եւ ա- 6
սաց նորան. Եթէ Աստուծոյ որ-
դի ես, քեզ այս վերից
ցիր. վասն զի գրուած է՝ Թէ
իր հրեշտակներին կ'հրամայէ
քեզ համար, և ձեռների վերայ
կ'բարձրացնեն քեզ, որ քո ոտ-
քը քարի չդիպցնես երբէք։ Յի- 7
սուս նորան ասաց. Դարձեալ
գրուած է, թէ Մի փորձիր Տի-
րոջը քո Աստուծոյն։
Դարձեալ առաւ սուրբ նո- 8
րան սատանան մի շատ բարձր
լեռ՝ և ցոյց տուաւ նորան աշ-
խարհքի բոլոր թագաւորութիւն-
ները և նորանց փառքը, եւ 9

ասաց նորան. Սորանց ամենը քեզ կ'տամ, եթէ ընկած երկրբ-
10 պագես ինձ: Ան ժամանակ ա-
սաց նորան Յիսուս. *Դէն գնա, սատանայ. վասն զի գրուած է Թէ
Տիրոջը՝ քո Աստուծոյն երկրպա-
11 գիր և միայն նորան պաշտիր: Ան
ժամանակ սատանան թողեց նո-
րան, և ահա հրեշտակներ մօտ
եկան և ծառայում էին նորան:
12 Եւ երբոր Յիսուս լսեց, թէ
Յովհաննէսը մատնուեցաւ, հեռա-
13 ցաւ գնաց Գալիլեա: Եւ նազա-
րէթը թողած եկաւ բնակեց կա-
փառնայում՝ ծովեզրեայ Զա-
բուղոնի և Նեփթաղիմի
14 սահմաններումը. Որ կատարուի
Եսայի մարգարէի ձեռավ ասուա-
15 ծը, որ ասում է, Զաբուղոնի
երկիրը և Նեփթաղիմի երկիրը՝
ծովու ճանապարհը՝ Յորդանանի
այն կողմը, հեթանոսաց Գալի-
16 լեան. ժողովուրդն, որ խաւարի
մէջ նստած էր, մեծ լոյս տեսաւ.
և նորանց որ մահի երկրումը և
ստուերումը նստած էին, լոյս
17 ծագեց նորանց: Ան ժամանա-
կից Յիսուս սկսեց քարոզել և
ասել. Ապաշխարեցէք, վասն զի
մօտեցել է երկնքի թագաւորու-
թիւնը:
18 Եւ Յիսուս Գալիլեացոց ծովի
եզրումն գալիս՝ տեսաւ եր-
կու եղբարց՝ Սիմոնին որ Պետ-
րոս է կոչուած, և նորա Անդ-
րէաս եղբօրը, որ ուռկան էին
գցում ծովը, վասն զի ձկնորս
19 էին. Եւ ասաց նորանց. Իմ ե-
տևից եկէք, և ձեզ մարդկանց
20 որսորդ կ'շինեմ: Եւ նորանք շու-
տով իրանց ուռկանները թողած
21 նորա ետևից գնացին: Եւ այն
տեղից առաջ գնալով ուրիշ եր-
կու եղբայրներին տեսաւ, Զեբե-
դեան Յակոբոսին և նորա եղբայր
Յովհաննէսին նաւումն իրանց հայր
Զեբեդէոսի հետ իրանց ուռկան-
ները շինելիս, և նորանց կանչեց:
22 Նորանք էլ շուտով նաւն և ի-
րանց հօրը թողած, նորա ետե-
ւից գնացին:

23 Եւ Յիսուս մեռն էր գալիս բո-
լոր Գալիլեան՝ սովորեցնելով նո-
րանց ժողովարաններումն և քա-
րոզելով արքայութեան աւետա-
րանը, և ժողովրդի մէջ եղած
ամեն հիւանդութիւն և ամեն
ցաւ բժշկելով: Եւ նորա համբա- 24
ւը դուրս եկաւ բոլոր Սիւրիա. և
նորա մօտ բերին ամեն հիւանդ-
ներին որ կերպ կերպ ցաւերով և
տանջանքներով նեղուած էին, և
դիւահարներ և լուսնոտներ և
անդամալոյծներ. և նորանց բժշ-
կեց: Եւ նորա ետևից շատ ժո- 25
ղովուրդներ էին գնում Գալիլեա-
յից և Դեկապօլիսից՝ և Երուսա-
ղէմից և Հրէաստանից և Յորդա-
նանի այն կողմից:

ԳԼ. Ե

Եւ ժողովուրդները տեսնելով 1
վեր ելաւ լեռը. և երբոր ինքը
նստեց, նորա աշակերտները ե-
կան նորա մօտ: Եւ իր բերանը 2
բանալով նորանց սովորեցնում էր
և ասում.

Երանի հոգով աղքատներին, 3
վասն զի նորանց է երկնից թա-
գաւորութիւնը: Երանի սգաւոր- 4
ներին, վասն զի նորանք կ'մխի-
թարուին: Երանի հեզերին, վա- 5
սն զի նորանք կ'ժառանգեն եր-
կիրը: Երանի նորանց, որ սոված 6
և ծարաւ են արդարութեան,
վասն զի նորանք կ'կշտանան: Ե- 7
րանի ողորմածներին, վասն զի
նորանք ողորմութիւն կ'գտանեն:
Երանի նորանց, որ սրտով մա- 8
քուր են, վասն զի նորանք Աս-
տուծոյն կ'տեսանեն: Երանի խա- 9
ղաղութիւն անողներին, վասն զի
նորանք Աստուծոյ որդիք կ'կոչ-
ուին: Երանի նորանց՝ որ արդա- 10
րութեան համար հալածուած են,
վասն զի նորանցն է երկնից ար-
քայութիւնը: Երանի է ձեզ, երբ- 11
որ կ'նախատեն ձեզ և կ'հալա-
ծեն և ամեն չար բան սուտ տեղը
կ'սանեն ձեր վերայ իմ պատճա-
ռովը: Ուրախացէք և ցնծացէք, 12
վասն զի ձեր վարձքը շատ է եր-
կինքումը. որովհետև այսպէս հա-

*Ոմանք՝ յետս

լածէցին մարգարէներին, որ ձեզանից առաջ էին։
13 Դուք էք երկրի աղը. եթէ աղն անհամանայ, ի՞նչով կ'աղանուի. այլևս ոչնչի պէտք չէ, միայն թէ դուրս գցուի և մարդկանցից առնակոխ լինի։ 14 Դուք էք աշխարհքի լոյսը. չէ կարող թաքչել մի քաղաք, որ լեռան վերայ կեանում է։ 15 Եւ ճրագը չեն վառիլ և դնիլ գրուանի տակ, այլ ճրագակալի վերայ, և լոյս կ'տայ ամենին որ տան մէջ են։ 16 Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առջև, որ ձեր բարի գործքերը տեսանեն, և փառաւորեն ձեր Հօրն որ երկնքումն է։
17 Մի կարծէք, թէ եկայ օրէնքը կամ մարգարէները քանդելու. չեկայ քանդելու, այլ կատարելու։ 18 Վասն զի ճշմարիտն ասում եմ ձեզ, մինչև երկինքն և երկիրս անց կենան, օրէնքիցը մէկ կէտ կամ մէկ պզտիկ նշանագիր չի անցնիլ մինչև որ բոլորը կատարուի։ 19 Արդ՝ ով որ այս ամենափոքր պատուիրանքներից մէկը քանդէ, և մարդկանց այնպէս սովրեցնէ, նա փոքրագոյն կ'կոչուի երկնից արքայութիւնումը բայց նա որ կ'անէ և կ'սովրեցնէ, նա մեծ կ'կոչուի երկնից 20 արքայութիւնումը։ Վասն զի ասում եմ ձեզ, Եթէ չառելանայ ձեր արդարութիւն աւելի քան դպիրներինը և փարիսեցիներինը, բնաւ չէք մտնիլ երկնից արքայութիւնը։
21 Լսեցէք, որ առաջիններին ասուեցաւ, Մի սպանիր, և ով որ սպանէ, պարտական կ'լինի 22 դատաստանին։ Բայց ես ասում եմ ձեզ՝ թէ ամեն ով որ զուր տեղը բարկանայ իր եղբօրը, պարտական կ'լինի դատաստանին. և ով որ իր եղբօրն ասէ Յիմար, պարտական կ'լինի տանջանին. և ով որ էր Էդիօրդասէ՝ Մօրաս, պարտական կ'լինի 23 գեհենի կրակին։ Արդ՝ եթէ մատուցանես սեղանի վերայ քո ընծան, և այն տեղ յիշես, թէ քո եղբայրը քեզ դէմ մէկ բան ունի, թող այն տեղ քո ընծան 24 սեղանի առջև. և գնա առաջ հաշտուիր քո եղբօր հետ. և յետոյ եկ ընծադ մատուցրու։ 25 ոսոխի հետ շուտով միաբանուիր, քանի որ նորա հետ ճանապարհումն ես. որ մի գուցէ ոսոխը քեզ դատաւորին մատնէ, և դատաւորը քեզ մատնէ դահճին, և բանտը գցուիս։ 26 Ճշմարիտն ասում եմ քեզ. դուրս չես գալ այն տեղից, մինչև որ վերջի նաքարտուկիտը չվճարես։
Լսեցէք որ ասուեցաւ առաջին- 27 ներին, Չես շնութիւն մի՛ անիր։ Բայց ես ասում եմ ձեզ. թէ 28 ամեն ով որ մի կնկան վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդէն շնացաւ նորա հետ իր սրտի մէջ։ 29 Եւ եթէ քո աջ աչքը գայթակղեցնում է քեզ, հանիր նորան և քեզանից դէն գցիր, վասն զի լաւ է քեզ համար, որ քո անդամներից մէկը կորչի, և քո բոլոր մարմինը չգցուի գեհենը։ 30 Եւ եթէ քո աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրիր նորան և քեզանից դէն գցիր. վասն զի լաւ է քեզ համար՝ որ քո անդամներից մէկը կորչի, և քո բոլոր մարմինը չգցուի գեհենը։
Ա- էլ ասուեցաւ՝ թէ Ով որ 31 իր կնիկն արձակէ, թող արձակմանն թուղթ տայ նորան։ Բայց ես 32 ասում եմ ձեզ. թէ Ով որ իր կնիկն արձակէ առանց պոռնկութեան պատճառի, նա նորան շնութիւն անել է տալիս. և ով որ մի արձակածին առնէ, շնութիւն է անում։
Դարձալ լսեցէք՝ որ ասուե- 33 ցաւ առաջիններին, Սուտ երդում մի անիր, բայց Տիրոջը վճարիր քո երդմունքը։ Բայց ես 34 ասում եմ ձեզ. Բնաւ երդում մի՛ անիր. ո՛չ երկինքովը՝ վասն զի աթոռ է Աստուծոյ. Եւ ոչ եր- 35 րովը՝ վասն զի պատուանդան է նորա ոտքերի. և ո՛չ Երուսաղէմովը՝ վասն զի քաղաք է մեծ թագաւորի։ Եւ ո՛չ քո գլխովը եր- 36 դում արա՝ վասն զի կարող չես

մէկ մազ սպիտակ անել կամ
37 սեւ։ Բայց ձեր խօսքը լինի, այո
այո և ոչ ոչ. և սրանից աւելին
չարից է։
38 Լսեցէք՝ որ ասուեցաւ աչք աչ-
քի տեղ, և ատամ ատամի տեղ։
39 Բայց ես ասում եմ ձեզ. չա-
րին հակառակ մի կենաք, այլ
ով որ ապտակ տայ քո աջ ե-
րեսին, միւսն էլ նորան դար-
40 ձրա։ Եւ ով որ ուզէ քեզ հետ
դատ վարել և քո շապիկն առ-
նել, թո՛ր բաճկոնն էլ թող նորա
41 մօտ։ Եւ ով որ քեզ պահակ
բռնած մէկ մղոն քշէ, նորա հետ
42 երկուսը գնա։ Քեզանից խնդ ու-
զողին տուր. քեզանից փոխ առ-
նել կամեցողից երես մի դարձնիր։
43 Լսեցէք որ ասուեցաւ, քո ընկե-
րին սիրիր, և քո թշնամուն ատիր։
44 Բայց ես ասում եմ ձեզ. սիրե-
ցէք ձեր թշնամիներին. օրհնեցէք
ձեզ անիծողներին. բարի արէք
ձեզ ատողներին. և աղօթք ա-
րէք ձեզ չարչարողների և ձեզ
45 հալածողների համար. Որ որդիք
լինիք ձեր Հօրն, որ երկնքումն է.
վասն զի նա իր արեգակը ծա-
գեցնում է չարերի և բարիների
վերայ, և անձրեւ է ածում ար-
դարների և անիրաւների վերայ։
46 Որովհետեւ՝ եթէ ձեզ սիրողներին
սիրէք, ի՞նչ վարձք ունիք. չէ՞
որ մաքսաւորներն էլ նոյնն են
47 անում։ Եւ եթէ միայն ձեր եղ-
բայրներին բարեւ տաք, ի՞նչ ա-
ւելի բան էք անում. չէ՞ որ մաք-
սաւորներն էլ են այնպէս անում։
48 Արդ դուք կատարեալ եղիք,
ինչպէս ձեր Հայրը որ երկնքումն
է, կատարեալ է։

ԳԼ. Զ

1 Զգոյշ կացէք, որ ձեր ողորմա-
թիւնը մարդկանց առջեւ չա-
նէք, նորանցից տեսնուելու հա-
մար, եթէ ոչ՝ վարձք չունիք ձեր
2 Հօրից որ երկնքումն է։ Արդ՝
երբոր ողորմութիւն անես, փող
մի հնչեցնիր քո առջեւը. ինչպէս
կեղծաւորներն են անում ժողո-
վարանների մէջ և փողոցների
մէջ, որ փառաւորուին մարդ-
կանցից. ճշմարիտն ասում եմ
ձեզ. նորանք իրանց վարձքն ա-
ռած են։ Բայց դու երբոր ողոր- 3
մութիւն անես, թող չիմանայ
քո ձախ ձեռքը, թէ ի՛նչ է գոր-
ծում քո աջը. Որպէս զի քո ո- 4
ղորմութիւնը ծածուկ լինի, և
քո Հայրն՝ որ ծածուկ բեղը տես-
նում է, յայտնապէս կ՚հատուց-
ցանէ քեզ։
Եւ երբոր աղօթք անես, չլինիս 5
ինչպէս կեղծաւորները, վասն զի
նորանք սիրում են ժողովարան-
ների մէջ և հրապարակների ան-
կիւնեներում կանգնած աղօթք ա-
նել, որ երեւան մարդկանց։ Ճըշ-
մարիտն ասում եմ ձեզ, որ նո-
րանք իրանց վարձքն առած են։
Բայց դու երբոր աղօթք անես, 6
մտիր քո սենեակը և դուռդ փա-
կած աղօթք արա դէպ ի քո Հայ-
րը, որ ծածուկումն է. և քո Հայրն
որ ծածուկ բեղը տեսնում է,
յայտնապէս կ՚հատուցանէ քեզ։
Եւ աղօթք անելիս շատախօս մի՛ 7
լինիք ինչպէս հեթանոսները, վա-
սն զի նորանք կարծում են, թէ
իրանց շատ խօսելու համար կ՚լսե-
ուին։ Արդ նորանց մի նմանիք. 8
վասն զի ձեր Հայրը գիտէ թէ
ի՞նչ բաներ պէտք են ձեզ, ձեր
նորանից խնդրելուցն առաջ։ Արդ 9
դուք այսպէս աղօթք արէք.
Մեր Հայր, որ երկնքումն ես.
սուրբ լինի քո անունը. Գայ քո 10
արքայութիւնը, լինի քո կամքը,
ինչպէս երկնքումն՝ այնպէս էլ երկ-
րի վերայ։ Մեր ամեն օրուայ հացն 11
տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ 12
մեր պարտքերը, ինչպէս մենք էլ
թողում ենք մեր պարտականնե-
րին։ Եւ մի տանիր մեզ փորձու- 13
թեան մէջ. այլ ազատիր մեզ
չարիցը. վասն զի քո է թագաւո-
րութիւնը և զօրութիւնը և փառ-
քը յաւիտեան. ամէն։ Վասն զի 14
եթէ դուք մարդկանց իրանց յան-
ցանքները թողէք, կ՚թողէ ձեզ էլ
ձեր երկնաւոր Հայրը։ Իսկ եթէ 15
դուք մարդկանց չէք թողել նո-
րանց յանցանքները, ձեր Հայրն
էլ չի թողել ձեր յանցանքները։

16 Եւ երբոր ծոմ էք պահում, մի՛ տրտում լինէք խնչպէս կեղծաւորները, վասն զի նորանք իրանց երեսները տխրեցնում են, որ մարդկանց ծոմ պահող երեւան. ճշմարիտն ասում եմ ձեզ՝ թէ նորանք իրանց վարձքն առած
17 են։ Բայց դու ծոմ պահելիս, իւղով օծիր քո գլուխը և երեսդ
18 լուա. Որ մարդկանց չերեւաս ծոմ պահող, այլ քո Հօրը՝ որ ծածուկումն է. և քո Հայրն, որ ծածուկ տեղը տեսանում է, յայտնապէս կ՚հատուցանէ քեզ։

19 Ձեզ համար գանձեր մի դիզէք երկրի վերայ. ուր որ ցեցն և ժանգն ապականում են, և ուր որ գողերը ծակում են և գողանում։
20 Բայց ձեզ համար գանձեր դիզեցէք երկնքումը, ուր ո՛չ ցեց և ո՛չ ժանգ չեն ապականում, և ուր գողերը ծակ չեն ծակում և
21 չեն գողանում։ Վասն զի ինչ տեղ որ ձեր գանձն է, այն տեղ
22 կ՚լինի և ձեր սիրտը։ Մարմնոյ ճրագն աչքն է. արդ թէ որ քո աչքը պարզ լինի, քո բոլոր մար-
23 մինը լուսաւոր կ՚լինի։ Բայց թէ որ քո աչքը չար լինի, քո բոլոր մարմինը խաւար կ՚լինի։ Ուրեմն այն լոյսն՝ որ քեզումն է՝ խաւար է, —ո— խաւարն ո՞րքան—
24 —եվ։ Ոչ ոք չէ կարող երկու տէրերի ծառայել. վասն զի կամ մէկին կ՚ատէ՝ և միւսին կ՚սիրէ, կամ մէկին կ՚մեծարէ և միւսին կ՚արհամարհէ։ Չէք կարող Աստուծոյն ծառայել և մամոնային։
25 Սորա համար ասում եմ ձեզ. հոգա մի՛ անէք ձեր անձի համար Ե՛ւ ի՞նչ պիտի ուտէք, և ի՞նչ պիտի խմէք. և ո՛չ ձեր մարմնոյ համար՝ Ե՛ւ ի՞նչ պիտի հագնիք։ Չէ՞ որ հոգին աւելի է կերակուրից, և մարմինը հագուստից։
26 Մանկ արէք երկնքի թռչուններին, որ չեն սերմնում, և ոչ էլ հնձում, և ոչ ամբարների մէջ ժողովում, և ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նորանց. չէ՞ որ դուք նորանցից աւելի լաւ էք։
27 Հիմա՝ ձեզանից ո՞վ կարող է հոգս անելով իր հասակի վերայ մէկ կանգուն աւելացնել։ Եւ
28 հագուստի համար ի՞նչ էք հոգս անում. մտիկ արէք դաշտի շուշաններին, Ե՛ւ ինչպէս են մեծանում. ոչ ջանք են անում և ոչ մանում։ Բայց ասում եմ ձեզ,
29 թէ Սողոմոնն էլ իր բոլոր փառքի մէջ նորանց մէկի նման չհագաւ։ Իսկ թէ որ դաշտի խո-
30 տը, որ այսօր կայ և էգուց փուռն է գցվում, Աստուած այնպէս է հագցնում, չէ՞ որ շատ աւելի ձեզ, թերահաւատներ։ Ու-
31 րեմն հոգս մի՛ անէք ասելով, Ե՛ւ ի՞նչ պիտի ուտենք, կամ ի՞նչ պիտի խմենք, կամ ի՞նչ պիտի հագնինք։ Վասն զի այդ ամենը
32 հեթանոսներն են խնդրում. որովհետև գիտէ ձեր երկնաւոր Հայրը, թէ այդ ամենը պէտք է ձեզ։
33 Սակայն առաջ Աստուծոյ արքայութիւնը և նորա արդարութիւնը խնդրեցէք. և այդ ամենը կ՚տրուի ձեզ։
34 Ուրեմն էգուցվայ համար հոգս մի՛ անէք, վասն զի էգուցվայ օրն իր համար հոգս կ՚անէ. օրի համար բաւական է իր նեղութիւնը։

Գ.Լ. Է

1 Մի դատէք, որ չդատուիք։
2 Վասն զի ինչ դատաստանով որ դատում էք, նոքանով պիտի դատուիք. և ինչ չափով որ չափում էք, նորանով կ՚չափուի ձեզ։
3 Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքի մէջի ծեղը տեսնում ես, և քո աչքի մէջի գերանը չես նշմարում։
4 կամ ինչպէս կ՚ասես քո եղբօրը. Թող աչքիդ ծեղը հանեմ, և ահա գերանը քո աչքի մէջ է։
5 Կեղծաւոր, առաջ քո աչքիցը գերանը հանիր, և յետոյ մտիկ կ՚տաս քո եղբօր աչքիցը ծեղը հանելու։
6 Սուրբ բանը մի տաք շներին, ոչ էլ գցեցէք ձեր մարգարիտները խոզերի առջև, որ նորանց կոխ չ՚տան իրանց ոտքերովը և յետ դառնան ձեզ պատառեն։
7 Խնդրեցէք և կ՚տրուի ձեզ. որանեցէք և կ՚գտնէք, դո՛ւռը թա-

8 կեցէք և կ'լսացուի ձեզ։ Վասն
զի ամեն խնդրող առնուլ է, և
որոնողը գտնուլ է. և բա-
9 ղմողին կ'բացուի։ Կամ ո՞վ
է ձեզանից այն մարդն, որ եթէ
նորանից իր որդին հաց ուզէ,
10 միթէ քա՞ր կ'տայ նորան։ Եւ
եթէ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ կ'տայ
11 նորան։ Արդ՝ եթէ դուք՝ չար լի-
նելով, գիտէք բարի պարգևներ
տալ ձեր որդոցն. ո՞րքան աւելի
ձեր Հայրն, որ երկնքումն է, բա-
րիքներ կ'տայ նորանց, որ խընդ-
րում են իրանից։
12 Ամեն ինչ՝ որ կամենում էք՝
թէ ձեզ անեն մարդիկը, այնպէս
էլ դուք արէք նորանց. վասն
զի այս է օրէնքը և մարգարէքը։
13 Ներ դռնովը նեղ մտէք. վասն
զի լայն է դուռը և ընդարձակ
ճանապարհը՝ որ կորուստն է տա-
նում. և շատեր են նորանով
14 գնացողները։ *Քանի՛ նեղ է դու-
ռը՝ և նեղուացք է ճանապարհը,
որ կեանքն է տանում. և քիչ են
նորան գտնողները։
15 Զգոյշ կացէք սուտ մարգա-
բէներից, որ գալիս են ձեզ մօտ
ոչխարների հանդերձներով, բայց
ներսեանից յափշտակող գայլեր
16 են։ Իրանց պտուղներից նո-
րանց †ճանաչեցէք. մի՞թէ փշե-
րից խաղող են քաղում, կամ
17 տատասկից թուզ։ Այսպէս ա-
մեն բարի ծառ բարի պտուղ է
բերում, և չար ծառը չար պը-
18 տուղ է բերում։ Չէ կարող բարի
ծառը չար պտուղ բերել, ոչ էլ
չար ծառը բարի պտուղ բերել։
19 Ամեն ծառ որ բարի պտուղ չէ
բերում, կտրվում է և կրակի մէջ
20 գցվում։ Ուրեմն իրանց պտուղ-
ներից †ճանաչեցէք նորանց։
21 Ոչ թէ ամեն ինձ Տէ՛ր Տէ՛ր ասո-
ղը կ'մտնէ երկնքի արքայութիւնն,
այլ նա որ կատարում է իմ Հօր
22 կամքը, որ երկնքումն է։ Շատերը
կ'ասեն ինձ այն օրը, Տէր Տէր,
չէ՞ որ քո անունովը մարգարէա-
ցանք, և քո անունովը դևեր հա-
նեցինք, և քո անունովը շատ զո-

*Ուժանք՝ քանզի †կ'ճանաչէք

23 բութիւններ գործեցինք։ Եւ այն
ժամանակ պարզ կ'ասեմ նորանց,
թէ երբէք ձեզ չեմ ճանաչել.
ինձանից դէն գնացէք, ով անօ-
րէնութիւն գործողներ։
24 Արդ՝ ամեն ով որ իմ այս
խօսքերը լսում է և նորանց կա-
տարում, կ'նմանացնեմ նորան մի
խելառաւն մարդու, որ իր տու-
25 նը շինեց ժայռի վերայ։ Եւ ան-
ձրևն էլ եկաւ, գետերն էլ վա-
րեցին, քամիներն էլ փչեցին և
այն տանը զարկեցին, և չկործան-
ուեցաւ. վասն զի ժայռի վերայ
26 հաստատուած էր։ Եւ ամեն ով
որ իմ այս խօսքերը լսում է և նո-
րանց չէ կատարում, նա կ'նմանո-
ւի մի անխելք մարդու, որ իր
27 տունը շինեց աւազի վերայ։ Եւ
անձրևն էլ եկաւ, գետերն էլ
վարարեցին, քամիներն էլ փչե-
ցին, և այն տանը զարկեցին, և
կործանուեցաւ, և նորա կործա-
նումը մեծ էր։
28 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս
խօսքերը վերջացրեց, ժողովուրդ-
ները զարմանում էին նորա վար-
29 դապետութեան վերայ։ Վասն զի
իշխանութիւն ունեցողի պէս էր
ասվորեցնում նորանց, և ոչ թէ
գպիրների պէս։

Գլ. Ը

1 Եւ երբոր լեռնէից իջաւ, շատ
2 ժողովուրդներ գնացին նորա ե-
տևից։ Եւ ահա մի բորոտ գա-
լով երկրպագում էր նորան և
ասում. Տէր, թէ որ կամենաս,
3 կարող ես ինձ սրբել։ Եւ Յիսուսը
ձեռը մեկնելով նորան դիպաւ և
ասաց. Կամենում եմ՝ սրբուիր.
և շուտով նորա բորոտութիւնը
4 սրբուեցաւ։ Եւ Յիսուսը ասաց
նորան. Զգոյշ կաց՝ ոչ ոքի չա-
սես, այլ գնա քեզ ցոյց տուր
քահանային, և Մովսէսից հրամա-
յուած ընծան մատուցրու, նո-
րանց վկայութիւն լինելու համար։
5 Եւ երբոր Յիսուսը մտաւ կա-
փառնայում, մի հարիւրապետ ե-
կաւ նորա մօտ, աղաչում էր նո-
6 րան, և ասում. Տէ՛ր, իմ ծա-

ման անդամոյծ ընկած է տանը
7 և չարաչար տանջվում է։ Յիսուսն
էլ ասաց նորան. Ես կ'գամ կ'բը-
8 ժշկեմ նորան։ Եւ հարիւրա-
պետը պատասխանելով ասաց.
Տէր, արժանի չեմ, որ իմ յարկի
տակը մտնես, այլ միայն մի խօսք
ասա՝ և իմ ծառան կ'բժշկուի։
9 Վասն զի ես էլ իշխանութեան
տակ քնաղ մարդ եմ. և իմ ձեռ-
տակ զինուորներ ունիմ. և ա-
սում եմ սորան՝ գնա, և գնում
է, և ուրիշին՝ եկ, և գալիս է. և
ծառային՝ այս բանն արա, և ա-
10 նում է։ Եւ երբոր Յիսուս լսեց,
զարմացաւ և ասաց էր ետևից
եկողներին. Ճշմարիտն ասում եմ
ձեզ. Իսրայէլի մէջ էլ այսպիսի
11 հաւատք չգտայ։ Եւ ասում եմ
ձեզ, որ շատերը արևելքից և ա-
րևմտից կ'գան, և կ'նստեն Ա-
բրահամի և Իսահակի և Յակոբի
հետ երկնքի արքայութիւնումը,
12 Իսկ արքայութեան որդիքը դուրս
կ'գցուին դրսի խաւարը. այնտեղ
կ'լինի լացը և ատամների կրճտե-
13 լը։ Եւ Յիսուսն ասաց հարիւրա-
պետին. Գնա, և ինչպէս որ հա-
ւատացիր՝ թող ըն-ղէ- լինի քեզ.
և առողջացաւ նորա տղան այն
ժամուն։
14 Եւ երբոր Յիսուսն եկաւ Պետ-
րոսի տունը, տեսաւ նորա պա-
15 տանը պառկած ջերմուտ էր։ Եւ
նորա ձեռքից բռնեց, և ջերմը
թողից նորան, և նա վեր կացաւ
և ծառայում էր նորանց։
16 Եւ երբոր իրիկուն եղաւ, շատ
դիւահարներ բերին նորա մօտ,
և խօսքով հանեց ոգիները, և
17 ամեն հիւանդներին բժշկեց. Որ
կատարուի Եսայի մարգարէի ձե-
ռով ասուածը, որ ասում է. Ն-
ա մեր հիւանդութիւնները վեր ա-
ռաւ և մեր ցաւերը կրեց։
18 Եւ երբոր Յիսուս շատ ժողո-
վուրդներ տեսաւ իրան չորս կող-
մումը, հրամայեց այն կողմը գնալ։
19 Եւ մէկ դպիր մօտենալով նորան
ասաց. Վարդապետ, ես քո ե-
տևիցը կ'գամ, որ տեղ էլ որ
20 գնաս։ Յիսուսն էլ ասաց նորան,
Աղուէսներն որջեր ունին, և եր-
կնքի թռչուններն բոյներ. բայց
Որդին մարդոյ չունի տեղ որ իր
21 գլուխը դնէ։ Եւ նորա ա-
շակերտներից մի ուրիշն ասաց
նորան. Տէր, ինձ հրամայն տուր՝
գնամ առաջ իմ հօրը թաղեմ։
22 Եւ Յիսուս նորան ասաց. Իմ ե-
տևից եկ, և թող մեռելները թա-
ղեն իրանց մեռելներին։
23 Եւ երբոր մտաւ նաւը, նորա
աշակերտները գնացին նորա ե-
տևից։ 24 Եւ ահա մեծ ալեկոծում
եղաւ ծովի մէջ, որ նաւն էլ
ծածկվում էր ալիքներից. և ինքն
քնած էր։ 25 Եւ նորա աշակերտները
մօտենալով նորան զարթնեցրին
և ասացին. Տէր, փրկիր մեզ,
կորչում ենք։ 26 Եւ նորանց ասաց.
Ինչո՞ւ վախկոտ էք, սակաւա-
հաւատներ։ Այն ժամանակ վեր
կացաւ առաւել քամիներին և
ծովին, և մեծ խաղաղութիւն ե-
ղաւ։ 27 Իսկ մարդիկը զարմացան և
ասում էին, Սա ի՞նչպիսի մարդ
է՝ որ քամիներն և ծովն էլ հը-
նազանդում են սորան։
28 Եւ երբոր նա այն կողմը՝ Գեր-
գեսացոց երկիրն անցաւ, երկու
դիւահարներ պատահեցան նորան,
գերեզմաններիցը դուրս եկած՝ ե
շատ չար, մինչև որ մէկը չէր կա-
րող այն ճանապարհովն անցնել։
29 Եւ ահա աղաղակեցին և ասա-
ցին. Քեզ ի՞նչ բան կայ մեզ
հետ, Յիսուս՝ Որդի Աստուծոյ,
եկել ես այս տեղ ժամանակից
30 առաջ մեզ տանջելու։ Եւ նո-
րանցից հեռու շատ խոզերի երա-
մուկ կար՝ որ արածում էր։ 31 Եւ
դևերն աղաչում էին նորան և
ասում. Եթէ մեզ հանում ես,
հրամայն տուր մեզ այն խոզերի
երամուկը գնալու։ 32 Եւ նորանց ա-
սաց՝ գնացէք. և նորանք դուրս
եկան և գնացին խոզերի երամու-
կի մէջ. և ահա խոզերի բոլոր ե-
րամուկն այն գահավէժ տեղից
վազեց ծովը, և ջրերի մէջ մե-
ռան։ 33 Եւ խաղարածները փախան,
և քաղաքը գնալով պատմեցին
ամենը և դիւահարների բանէրը
էլ։ 34 Եւ ահա բոլոր քաղաքը դուրս
եկաւ Յիսուսի առջևը, և երբոր

նորան տեսան, ապշեցին որ դէ-
նոյ իրանց առմանէրիցը։

ԳԼ. Թ

1 Եւ նաւը մանելով անցաւ այն
կողմը, և եկաւ իր քաղաքը։
2 Եւ ահա մի անդամալոյծ բերին
նորա մօտ՝ մահճի մէջ դրած. և
Յիսուսը նորանց հաւատքը տես-
նելով՝ անդամալոյծին ասաց.
Քաջացիր, որդեակ, քո մեղ-
քերը թողուած են քեզ։ 3 Եւ ա-
հա դպիրներից ոմանք իրանց մէջ
4 ասացին. Դա հայհոյում է։ Եւ
Յիսուսը նորանց խորհուրդները
տեսանելով, ասաց. Ի՞նչու էք չար
բաներ խորհում ձեր սրտերումը։
5 Վասն զի ո՞րն է աւելի հեշտ. ա-
սել՝ քո մեղքերդ թողուած են
քեզ, թէ ասել՝ վե՛ր կաց և մո՛ն
6 ակ։ Բայց որ իմանաք, թէ Որ-
դին մարդոյ իշխանութիւն ունի
երկրի վերայ մեղքեր թողելու.
այն ժամանակ անդամալոյծին ա-
սաց. Վե՛ր կաց քո մահիճը վեր
7 առ և գնա քո տունը։ Եւ նա
8 վերկացաւ գնաց իր տունը։ Եւ
ժողովուրդները տեսանելով զար-
մացան, և Աստուծոյն փառա-
ւորում էին, որ այնպիսի իշխա-
նութիւն է տուել մարդկանց։
9 Եւ Յիսուս այն տեղից առաջ
գնալով, տեսաւ մի մարդ, որ
նստած էր մաքսատունը, անունը
Մատթէոս, և նորան ասաց. Իմ
ետևից ե՛կ. և նա վեր կացաւ գը-
10 նաց նորա ետևից։ Եւ եղաւ՝ եր-
բոր նա տանը սեղանի վերայ նս-
տած էր, և ահա շատ մաքսա-
ւորներ և մեղաւորներ եկել բազ-
մել էին Յիսուսի և նորա աշա-
11 կերտների հետ։ Եւ փարիսեցիքը
տեսանելով՝ նորա աշակերտներին
ասացին. Ի՞նչու Տէրոջ մաքսա-
ւորների և մեղաւորների հետ ու-
12 տում է ձեր վարդապետը։ Բայց
Յիսուս երբոր լսեց, նորանց ա-
սաց, Կարողները բժշկի կարօտ
13 չեն, այլ հիւանդները։ Գնացէք
ասացեցէք՝ Թէ ի՞նչ է. Ողորմա-
թիւն եմ կամենում՝ և ոչ պա-
տարագ. վասն զի ես չեմ եկել արդարնե-
րին կանչելու, այլ մեղաւորներին
ապաշխարութեան։

14 Այն ժամանակ Յովհաննէսի ա-
շակերտները նորա մօտ եկան և
ասացին. Ի՞նչու մենք և փարի-
սեցիքը շատ ծոմ ենք պահում,
և քո աշակերտները ծոմ չեն պա-
հում։ 15 Եւ Յիսուս նորանց ասաց.
Մի՞թէ կարող են հարսանիքի որ-
դիքը սուգ անել, քանի որ փե-
սան նորանց հետ է. բայց օրեր
կ'գան, որ փեսան նորանցից վեր
կ'առնուի, և այն ժամանակ ծոմ
կ'պահեն։ 16 Ոչ ոք չլուացուած
կտաւերից կարկատան չի գցել
հին հանդերձի վերայ, վասն զի
նորա լրութիւնը (կարկատանը)
կ'առնէ հանդերձիցը, և պատա-
ռուածքը էլ աւելի չար կ'լինի։ 17 Եւ
նոր գինին էլ հին տիկերի մէջ չեն
ածիլ. ապա թէ ոչ՝ տիկերը կ'պա-
տառուին և գինին կ'թափուի,
և տիկերը կ'կորչին. այլ նոր գի-
նին նոր տիկերի մէջ կ'ածեն, և
երկուսն էլ կ'պահուին։

18 Նա այս բաները նորանց հետ
խօսելիս, ահա մի իշխան եկաւ
նորան երկրպագեց և ասաց. Իմ
աղջիկը արդէն մեռաւ, միայն
թէ եկ և ձեռդ նորա վերայ դիր՝
և կ'ապրի։ 19 Եւ Յիսուսը վեր կա-
ցաւ գնաց նորա ետևից և նորա
աշակերտներն էլ։

20 Եւ ահա մի տասներկու տար-
ուայ տեառտես կին ետևիցը մօտ
գալով նորա հանդերձի ծայրին
դիպաւ։ 21 Վասն զի իր մտա-
ծում էր՝ եթէ միայն նորա հան-
դերձին դիպչիմ՝ կ'փրկուիմ։ 22 Բայց
երբոր Յիսուս յետ դարձաւ նո-
րան տեսաւ և ասաց Քաջացիր,
դուստր, քո հաւատքը քեզ ապ-
րեցրեց. և պատուհասս կինը
նոյն ժամից։

23 Եւ երբոր Յիսուս եկաւ իշխա-
նի տունը և տեսաւ փող փչողնե-
րը և շփոթուած ամբոխը. 24 Նորանց
ասաց. Դէն գնացէք, վասն զի
այդ աղջիկը մեռած չէ, այլ քնած
է։ Եւ նորանք ծաղր էին անում
նորան։ 25 Եւ երբոր ամբոխը դուրս
գցուեցաւ, ինքն ներս մտաւ՝ նո-
րա ձեռքը բռնեց, և աղջիկը վեր-

26 կացաւ ։ Եւ այս Համբաւը դուրս
եկաւ այն բոլոր երկիրը ։
27 Եւ Յիսուս այն տեղից անցնե-
լիս, երկու կոյր նորա ետևից գը-
նում էին, աղաղակում և ա-
սում. Ողորմիր մեզ, Որդի Դաւ-
28 թի ։ Եւ երբոր տունը մտաւ,
կոյրերը նորա մօտ եկան. և Յի-
սուս նորանց ասաց. Հաւատո՞ւմ
էք թէ կարող եմ այդ անել ։
29 Նորան ասացին. Այո, Տէր ։ Այն
ժամանակ նորանց աչքերին դի-
պաւ և ասաց. Ձեր Հաւատքի
30 պէս թող լինի ձեզ ։ Եւ նորանց
աչքերը բացուեցան ։ Եւ Յիսուս
նորանց ամուսիս և ասաց. Զգո՛յշ
31 կացէք, ոչ ոք չիմանայ ։ Իսկ նո-
րանք դուրս գնացին հռչակեցին
նորան այն բոլոր երկրումը ։
32 Եւ երբոր նորանք դուրս էին
գնում, ահա մի համր դիւահար
33 մարդ բերին նորա մօտ ։ Եւ երբոր
դևը դուրս հանուեցաւ, համրը
խօսեց. և ժողովուրդները զար-
մացան և ասացին, Թէ Երբէք
Իսրայէլի մէջ այսպիսի բան չէ-
34 րևեցաւ ։ Բայց փարիսեցիքն ա-
սում էին, Դևերի իշխանովն է
հանում դևերը ։
35 Եւ Յիսուս ամէն քաղաքները
և գիւղերը մեն էր գալիս, նո-
րանց ժողովարաններումը սովորե-
ցնելով, և արքայութեան աւե-
տարանը քարոզելով, և ժողովրդի
մէջ ամէն ցաւ և ամէն հիւան-
36 դութիւնը բժշկելով ։ Եւ ժողո-
վուրդներին տեսնելով, գիմաց նո-
րանց վերայ, որ յոգնած և ցիր-
ուցան եղած էին, ինչպէս ոչ-
37 խարներ որ հովիւ չունին ։ Այն
ժամանակ իր աշակերտներին ա-
սաց. Հունձքը շատ է, բայց մր-
38 շակները քիչ ։ Արդ աղաչեցէք
Տնձի Տիրոջն, որ մշակներ հանէ
իր հունձի մէջ ։

Գ Լ. Ժ

1 Եւ իր տասներկու աշակերտ-
ներին իր մօտ կանչեց, և նո-
րանց իշխանութիւն տուաւ պիղծ
հոգիներին վերայ, որ նորանց հա-
նեն. և ամէն ցաւ և ամէն հի-
ւանդութիւն բժշկեն ։

Եւ այն տասներկու առաքելոց 2
անուններն այս են. առաջինը Սի-
մոն՝ որին կոչուածը, և նորա
եղբայրն Անդրէաս ։ Յակոբոս Զե- 3
բեդեանն՝ և նորա եղբայրը՝ Յո-
հաննէս. Փիլիպպոս և Բարթողի-
մէոս. Թովմաս և Մատթէոս մաք-
սաւորը. Յակոբոս Ալփեան. և
Ղեբէոս որ Թադէոս մականուա-
ւեցաւ ։ Սիմոն Կանանացին՝ և 4
Յուդա Իսկարիովտացին, որ մատ-
նեց էլ նորան ։
Այս տասներկուսին ուղարկեց 5
Յիսուս, նորանց պատուէր տուս
և ասաց. Հեթանոսների ճանա-
պարհ չգնաք, և Սամարացց քա-
զաք չմանէք. Բայց աւելի գնա- 6
ցէք Իսրայէլի տան կորած ոչ-
խարների մօտ ։ Եւ երբոր կ'գնաք, 7
քարոզեցէք և ասացէք, Թէ եր-
կնքի արքայութիւնը մօտեցել
է ։ Հիւանդներին բժշկեցէք, բո- 8
րոտներին սրբեցէք, մեռեալներին
յարուցէք, դևերը հանեցէք.
Ձրի առել էք, ձրի տուէք ։ Վեր 9
մի առնէք ոսկի, և ոչ արծաթ,
և ոչ պղինձ ի՛ւղ ձեր գօտիների
մէջ. Ոչ ճանապարհի պարկ, և 10
ոչ երկու հանդերձ, և ոչ կօշիկ-
ներ, և ոչ գաւազան. վասն զի
մշակն իր կերակրին արժանի է ։
Եւ որ քաղաք՝ կամ գիւղ որ 11
մտնէք, հարցրէք Թէ նորանում
ով է արժանի, և այն տեղ կա-
ցէք՝ մինչև որ ա՛յն տեղից
գնաք ։ Եւ երբոր տունը կ'մտնէք, 12
բարև տուէք նորան ։ Եւ եթէ այն 13
տունն արժանի է, ձեր բարևը
նորա վերայ գայ, բայց եթէ ար-
ժանի չէ, ձեր բարևը ձեզ դառ-
նայ դէպի ձեզ ։ Եւ ով որ ձեզ 14
չընդունի և ոչ էլ ձեր խօսքին
ականջ դնէ, երբոր այն տունից
կամ այն քաղաքից դուրս գնաք,
ձեր ոտների փոշին թօթափեցէք ։
Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ 15
Սոդոմացոց և Գոմորացոց երկրի
համար աւելի հեշտ կ'լինի դա-
տաստանի օրումը քան թէ այն
քաղաքին ։
Ահա ես ուղարկում եմ ձեզ 16
ինչպէս ոչխարներ գայլերի մէջ,
ուստի խորամանկ եղէք ինչպէս օ-

ձերը, և միտքիտ՝ ինչպէս ազա-
17 տեր: Եւ զդոյշ կացէք մարդ-
կանցից. վասն զի ձեզ դատաս-
տանի կ'մատնեն, և իրանց ժողո-
վարաններն մէջ կ'ծեծեն ձեզ,
18 Եւ կուսակալներն և թագաւոր-
ներն առջև կ'տարուիք իմ պատ-
ճառաւը, որ ա՛ն նորանց և հե-
թանոսներին վկայութիւն լինի:
19 Բայց երբոր մատնեն ձեզ, հոգա
մի անէք՝ ՚ի՞նչպէս կամ ի՞նչ
պիտի խօսիք. վասն զի նոյն ժա-
մուն կ'արուի ձեզ ինչ որ պիտի
20 խօսիք: Զանզի չէ թէ դուք էք
խօսողները, բայց ձեր Հօր Հոգին,
21 որ ձեզմնուա խօսում է: Եւ եղ-
բայր եղբօրը մահու կ'մատնէ, և
հայրը որդուն, և որդիքը վեր
կ'կենան էրանց ծնողաց վերայ՝ և
22 կ'սպանանեն նորանց: Եւ ամենից
կ'ատուիք իմ անուանի համար.
բայց ով որ կ'համբերէ մինչև
23 վերջը, նա կ'ապրի: Եւ երբոր
հալածեն ձեզ այս քաղաքումն,
փախէք ուրիշը. վասն զի ճշմա-
րիտն ասում եմ ձեզ, չէք վեր-
ջացնիլ Իսրայէլի քաղաքները
մինչև որ Որդին մարդոյ կ'գայ:
24 Աշակերտը վարդապետիցը բարձր
չէ, և ա՛չ ծառան բարձր է իր
25 տիրոջիցը: Բաւական է աշակեր-
տին, որ իր վարդապետի նման
լինի, և ծառան՝ իր տիրոջ նը-
ման: Եթէ տան տիրոջը Բէեղզե-
բուղ կոչեցին, ապա ո՛րքան ա-
26 ւելի նորա ընտանիքը: Ուստի մի
վախենաք նորանցից. վասն զի ոչ-
ինչ չկայ ծածուկ, որ չյայտա-
նուի, և թագուն բան՝ որ չիմաց-
27 ուի: Ինչ որ ասում եմ ձեզ
խաւարումն, լոյսի մէջ ասացէք.
և ինչ որ ականջում լսում էք,
կտրներն վերայ քարոզեցէք:
28 Եւ մի վախենաք նորանցից, որ
մարմինն ապանում են և հոգին
չեն կարող ապանել, բայց աւելի
վախեցէք նորանից, որ կարող է
հոգին էլ մարմինն էլ կորցնել գե-
29 հենի մէջ: Չէ՞ որ երկու ճնճղուկ
մի դանկի են ծախվում, և նո-
րանցից մէկը չի ընկնիլ գետինն
30 առանց ձեր Հօր: Իսկ ձեր գլխի
ամեն մազերն էլ համրուած են:
31 Ուրեմն մի վախենաք. դուք շատ
32 ճնճղուկներից աւելի լաւ էք: Ա՛ր-
ամեն ով որ ինձ մարդկանց
առջև դաւանէ, ես էլ նորան
կ'դաւանեմ իմ Հօր առջև որ
երկնքումն է: Եւ ով որ ինձ ու-
33 րանայ մարդկանց առջև, ես
էլ կ'ուրանամ նորան իմ Հօր
առջև որ երկնքումն է: Մի կար-
34 ծէք՝ թէ եկայ երկրիս վերայ խա-
ղաղութիւն գցելու. չեկայ խա-
ղաղութիւն գցելու, այլ սուր:
35 Վասն զի եկայ բաժանելու մար-
դին իր Հօր դէմ, և աղջկին իր
մօր դէմ, և հարսն իր ակե-
36 րի դէմ: Եւ մարդոյ թշնամի-
ներն իր ընտանիքը կ'լինին:
37 Ով որ Հօրը կամ մօրը ինձանից աւե-
լի է սիրում, նա ինձ արժանի չէ.
և ով որ էր որդին կամ աղ-
ջիկն ինձանից աւելի է սիրում,
նա ինձ արժանի չէ: Եւ ով որ
38 չէ առնում իր խաչն և իմ ե-
տևից գալիս, նա ինձ արժանի
չէ: Ով որ իրան անձը գտնում
39 է՝ կ'կորցնէ նորան. և ով որ
իր անձն ինձ համար կորցրից՝
կ'գտնէ նորան: Ով որ ձեզ ըն-
40 դունում է, ինձ է ընդունում.
և ով որ ինձ ընդունում է, ինձ
ուղարկողին է ընդունում: Ով
41 որ մարգարէ է ընդունում մար-
գարէի անունով, նա մարգարէի
վարձք կ'առնէ. և ով որ արդար
է ընդունում արդարի անունով,
արդարի վարձք կ'առնէ: Եւ ով
42 որ այս փոքրներից մէկին միայն մի
ման ցուրտ ջուր խմեցնէ աշա-
կերտի անունով, ճշմարիտն ա-
սում եմ ձեզ, նա չի կորցնիլ իր
վարձքը:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղաւ երբոր Յիսուս իր
տասներկու աշակերտներին պատ-
ուէր տալը վերջացրեց, այն տե-
ղից գնաց նորանց քաղաքներում
մի սովորեցնելու և քարոզելու:
2 Եւ Յովհաննէս բանտումն Քրիս-
տոսի գործքերը լսելով, իր ա-
շակերտներից երկուսն ուղարկեց:
3 Եւ նորան ասաց, Դո՞ւ ես այն

որ գալու էիր, թէ ուրիշի՞ ըսպասենք։ Եւ Յիսուս պատասխանելով ասաց ա
ցուցէք Յովհաննէսին պատմեցէք ինչ
որ լսում էք և տեսնում էք. կոյրերը տեսնում են, և կաղերը գըն-
նում են, բորոտները սրբվում են, և խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առնում, և աղ-
քատներին աւետարան է քարոզ-
վում և երանելի է նա, որ ինձ վերայ չի գայթակղի։
Բայց երբոր նորանք գնացին, Յիսուս սկսեց ժողովուրդներին ասել Յովհաննէսի համար. Ի՞նչ տեսնելու դուրս գնացիք անապատը, մի եղէ՞գ քամուց շարժուած։ Ապա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք. մի մա՞րդ փափուկ շորեր հագուած, ահա փափուկ հագնողները թագաւորաց առնըւմն են։ Բայց ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մի մարգարէ՞. այո, ասում եմ ձեզ, մարգարէից էլ շատ աւելին։ Վասն զի սա այն է՝ որի համար գրուած է. Ահա ես իմ հրեշտակը ուղարկում եմ քո երեսի առջև, որ քո ճանապարհը քո առջև պատրաստէ։ Ճշմարիտն ասում եմ ձեզ. կանանց ծնածների մէջ չէ վեր կացել Յովհաննէս մկրտչից մի մեծը, բայց երկնքի արքայութեան մէջի փոքրը նորանից մեծ է։ Բայց Յովհաննէս մկրտչի օրերից մինչև հիմա երկնքի արքայութիւն ուժով է առնվում, և ուժեղներն յափշտակում են նորան։ Վասն զի ամեն մարգարէքն և օրէնքը մինչև Յովհաննէսը մարգարէացան։ Եւ եթէ կամենում էք ընդունել նա է Եղիան, որ գալու էր։ Ով որ լսելու կանջ ունի՝ թող լսէ։ Բայց ո՞ւմ նմանեցնեմ այս ազգը, այն տղայոց նման է, որ փողոցներումը նստած իրանց ընկերներին կանչում են, և ասում. Փող փչեցինք ձեզ համար, և պար չեկաք. ողբացինք ձեզ համար, և կոծ չարիք։ Վասն զի Յովհաննէսն եկաւ, ոչ ուտում էր և ոչ խըմում էր. և ասում են, Դև կայ նորանում։ Եկաւ Որդին մարդոյ, ուտում է և խմում է, և ասում են. Ահա ուտող և գինի խմող մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ, և իմաստութիւն արդարացաւ իր որդիներից։
Այն ժամանակ սկսեց նախատել այն քաղաքներին, որոնցում եղան նորա հրաշքների շատերը, վասն զի չապաշխարեցին. Վա՛յ քեզ, Քորազին. վայ քեզ, Բեթսայիդա. վասն զի եթէ Տիւրոսի և Սիդոնի մէջ եղած լինէին այն հրաշքներն որ ձեր մէջ եղան, շատոնց քրձով և մոխրով ապաշխարել էին։ Բայց ասում եմ ձեզ. Տիւրոսին և Սիդոնին աւելի հեշտ կ'լինի դատաստանի օրումը քան թէ ձեզ։ Եւ դու, Կափառնայում, որ մինչև երկինքը բարձրացած ես, մինչև դժոխքը կ'ցածանաս. վասն զի եթէ Սոդոմի մէջ եղած լինէին այն հրաշքներն որ քեզանում եղան, մինչև այսօր դեռ կ'մնային։ Բայց ասում եմ ձեզ, որ Սոդոմացոց երկրի համար աւելի հեշտ կ'լինի դատաստանի օրումն, քան թէ քեզ։
Նոյն ժամանակին Յիսուս պատասխան տուաւ և ասաց. Խոստովանում եմ քեզանից, ով Հայր երկնքի և երկրի Տէր. որ իմաստուններից և դիտուններից այս բաները ծածկեցիր և տղայոց յայտնեցիր։ Այո, ով Հայր. վասն զի այսպէս հաճոյ եղաւ քո առջև։ Ամեն բան ինձ տուեցաւ իմ Հօրից. և ոչ ով չէ ճանաչում Որդին բայց միայն Հայրը. և ոչ ով չէ ճանաչում Հօրը՝ բայց միայն Որդին. և ում որ Որդին կամենայ յայտնել ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ և բեռնաւորուածներ, և ես հանգիստ կ'տամ ձեզ։ Առէք իմ լուծը վերայ ձեզ և ինձանից սովորեցէք. վասն զի ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստութիւն կ'գտնէք։ Վասն զի իմ լուծը քաղցր է, և իմ բեռը թեթև։

ԳԼ. ԺԲ

1 Ա.ՅՆ ժամանակ Յիսուս շաբաթի
օրը գնաց նոքանց արտերի միջովը,
և նորա աշակերտները սկսան
2 տել։ Եւ երբոր փարիսեցիքը տե-
սան, նորան ասացին. Ահա քո
աշակերտներն անում են, ինչ որ
3 արժան չէ շաբաթի օրն անել։ Նա
էլ ասաց նոցանից. Դուք չէ՞ք
կարդացել, թէ ինչ արաւ Դա-
ւիթը, երբոր ինքը սկսաւ և նորա
4 հետ լինողներն էլ, թէ ինչպէս
Աստուծոյ տունը մտաւ և առա-
ջաւորութեան հացը կերաւ, որ
օրինաւոր չէր նորան ուտել, և
ոչ էլ նորա հետ լինողներին,
5 բայց միայն քահանաներին։ Կամ
չէ՞ք կարդացել օրէնքումը, որ
քահանայքը շաբաթի օրերումն
տաճարի մէջ շաբաթը պղծում
6 են, և անմեղ են։ Բայց ասում
եմ ձեզ՝ Որ տաճարիցն էլ մեծն
7 է այս տեղ։ Բայց եթէ գիտէիք՝
ի՛նչ է Ողորմութիւն եմ ուզում
և ոչ թէ զոհ. դուք չէիք դա-
8 տապարտել անմեղներին։ Որով-
հետև շաբաթի էլ տէրն է Որդին
մարդոյ։

9 Եւ Յիսուս այն տեղից գնաց՝
10 եկաւ նորանց ժողովարանը։ Եւ
ահա մի մարդ կար՝ ձեռը չորա-
ցած. նորան հարցրին և ասացին՝
թէ շաբաթի օրումն արժան է բը-
ժշկութիւն անել. որ նորանից
11 չարախօսեն։ Եւ նա ասաց նո-
րանց. Ո՞վ կ'լինի ձեզանից այն
մարդն, որ մէկ ոչխար ունենայ,
և եթէ նա ընկնի փոսի մէջ շա-
բաթի օրը, մի՞թէ չի բռնիլ նո-
12 րան և վեր հանել։ Ապա ո՞րքան
աւելի է մարդը ոչխարից. ապա
ուրեմն արժան է շաբաթի օրը բա-
13 րիք գործել։ Այն ժամանակ ա-
սաց այն մարդուն. Ձեռդ մեկ-
նիր, նա էլ մեկնեց, և նա ողջ
14 եղաւ ինչպէս միւսը։ Բայց Փա-
րիսեցիքը դուրս գնացին և նորա
դէմ խորհուրդ արին, թէ ինչ-
պէս կորցնեն նորան։

15 Եւ Յիսուս իմանալով՝ հեռա-
ցաւ այն տեղից, և շատ ժողո-
վուրդներ գնացին նորա ետևից.
և նորանց ամենին բժշկեց։ Եւ 16
նորանց ասաւ՝ որ նորան յայտ-
նի չանեն. Որ կատարուի եսայի 17
մարգարէի ձեռով ասուածքը որ
ասում է. Ահա իմ ծառան, ո- 18
րին ես ընտրեցի, և իմ սիրելին
որին իմ անձը հաւանել է. իմ
Հոգին նորա վերայ կ'դնեմ, և
հեթանոսներին իրաւունք կ'պատ-
մէ։ Ոչ կ'հակառակէ, և ոչ կ'ա- 19
ղաղակէ, և ոչ էլ հրապարակ-
ների մէջ մէկը նորա ձայնը կ'լսէ։
Ջախջախուած եղէգը չի փշրիլ, 20
և հանդչող պատրոյգը չի հան-
գցնիլ մինչև որ դատաստանը յա-
ղթութեան հանէ։ Եւ նորա անուա- 21
նին հեթանոսները յոյս կ'դնեն։

Այն ժամանակ մին կոյր և համր 22
դիւահար բերուեցաւ նորա մօտ,
և նա նորան բժշկեց. այնպէս որ
կոյրը և համրը խօսեց էլ տեսաւ էլ։
Եւ բոլոր ժողովուրդները զարմա- 23
ցան և ասում էին. Մի՞թէ սա է
Դաւթի որդին։ Բայց Փարիսեցիքը 24
լսելով ասացին. Դա դևերն ա-
ւելով չէ հանում, բայց միայն
Բէեղզեբուղ՝ դևերի իշխանի ձե-
ռովը։ Եւ Յիսուս նորանց խոր- 25
հուրդներն իմանալով, ասաց նո-
րանց. Ամեն թագաւորութիւն,
որ իր դէմ բաժանուած է,
կ'աւերուի, և ամեն քաղաք կամ
տուն, որ իր դէմ բաժանուած է՝ չի մնալ։ Եւ թէ որ սա- 26
տանան սատանային հանում է,
իր դէմ բաժանուեցաւ. էլ ի՞նչ-
պէս նորա թագաւորութիւնը
կ'կենայ։ Եւ եթէ ես Բէեղզեբու- 27
ղով եմ հանում դևերը, ապա
ձեր որդիքն ի՞նչով են հանում.
սորա համար նորանք կ'լինին ձեր
դատաւորներ։ Բայց եթէ ես Աս- 28
տուծոյ Հոգովն եմ հանում դե-
ւերը, ուրեմն Աստուծոյ արքա-
յութիւնը ձեզ վերայ հասել է։
Կամ ի՞նչպէս մէկը կարող է զո- 29
րաւոր մարդու տունը մտնել և
նորա կարասիները յափշտակել.
եթէ առաջ չկապէ այն զօրաւո-
րին, և յետոյ նորա տունը կ'յա-
փշտակէ։ Ո՛վ որ ինձ հետ չէ, 30
ինձ հակառակ է. և ով որ ինձ

հետ չէ ժողովուրդ ցրվուած է։
31 Սորա համար ասում եմ ձեզ. Ա-
մեն մեղք և հայհոյանք կ'թողուի
մարդկանց, բայց Հոգին դէմ հայ-
հոյանքը չի՛ թողուիլ մարդկանց։
32 Եւ ո՛վ որ մարդոյ Որդին դէմ
բան ասէ՝ կ'թողուի նորան. բայց
ով որ Սուրբ Հոգին դէմ ասէ,
նորան չի թողուիլ, ոչ այս աշ-
խարհքումը և ոչ գալու աշխար-
33 հումը։ Կամ ծառը բարի արէք՝
և նորա պտուղն էլ բարի. կամ
ծառը չար արէք՝ և նորա պտուղն
էլ չար, վասն զի ծառն իր
34 պտղից կ'ճանաչուի։ Ժէրի զա-
ւակներ, դուք ի՞նչպէս կարող
էք բարի բաներ խօսիլ՝ որ չար էք.
վասն զի սրտի աւելցածից
35 կ'խօսի բերանը։ Բարի մարդն իր
սրտի բարի գանձից բարիքները
կ'հանէ, և չար մարդն իր չար
չար գանձից չար բաներ կ'հանէ։
36 Բայց ասում եմ ձեզ, թէ ամեն
դատարկ խօսքի համար, որ մար-
դիկ խօսին, նորա համար պա-
տասխան պիտի տան դատաս-
37 տանի օրը։ Վասն զի քո խօսքից
կ'արդարանաս, և քո խօսքից
կ'դատապարտուիս։
38 Ա՛յն ժամանակ դպիրներից և
փարիսեցիներից ոմանք պատաս-
խան տուին և ասացին. Վարդա-
պետ, ուզում ենք քեզանից մի
39 նշան տեսնել։ Նա էլ պատաս-
խան տուաւ և նորանց ասաց.
Չար և շնացող ազգը նշան է ու-
զում, և նշան չի տրուիլ նորան,
բայց միայն Յովնան մարգարէի նը-
40 շանը։ Վասն զի ինչպէս Յովնան
երեք օր և երեք գիշեր կէտի փո-
րուքումն էր, այնպէս կ'լինի Որդին
մարդոյ երեք օր և երեք գիշեր
41 երկրի սրտումը։ Ննուէացի մար-
դիկը վեր կ'կենան դատաստանու-
մը այս ազգի հետ, և կ'դատա-
պարտեն սորան. վասն զի նորանք
Յովնանու քարոզութիւնովը ա-
պաշխարեցին. և ահա Յովնանից
42 մեծն է այս տեղ։ Հարաւի թա-
գուհին վեր կ'կենայ դատաստա-
նումը այս ազգի հետ, և կ'դա-
տապարտէ սորան. վասն զի երկրի
ծայրերից եկաւ Սողոմոնի իմաս-
տութիւնը լսելու. և ահա Սո-
ղոմոնից էլ մեծն է այս տեղ։
Եւ երբոր պիղծ ոգին դուրս է 43
գալիս մարդուց, անջուր տեղե-
րում մտնում է գալիս հանգիստ
խնդրելով, և չէ գտնում։ Ա՛յն 44
ժամանակ ասում է, Ձեռ դառ-
նամ իմ տունը՝ որտեղից դուրս
եկայ, և գալիս նորան գտնում է
պարապ, սրբուած և յարդարու-
ած։ Ա՛յն ժամանակ գնում է 45
իրանից էլ աւելի չար եօթն ու-
րիշ ոգիներ է առնում իր հետ,
և մտնում բնակուում է այն տեղ.
և այն մարդու յետինն աւելի չար
է լինում քան թէ առաջինը.
այսպէս կ'լինի և այս չար ազգին։
Եւ նա տակաւին ժողովուրդնե- 46
րի հետ խօսելիս, ահա նորա մայրը
և նորա եղբարքը դուրսը կանգ-
նած՝ ուզում էին նորա հետ խո-
սել։ Եւ մէկն ասաց նորան. Ա՛հա 47
մայրդ և եղբարքդ դուրսը կանգ-
նած՝ ուզում են քեզ հետ խո-
սել։ Նա էլ պատասխան տուաւ 48
իրան ասողին և ասաց. Ո՞վ է իմ
մայրը, և ո՞վ են իմ եղբարքը։
Եւ իր ձեռը դէպի իր աշակերտ- 49
ները մեկնելով ասաց. Ա՛հա իմ
մայրը և իմ եղբարքը։ Վասն 50
զի ով որ իմ Հօր կամքը կատա-
րէ որ երկնքումն է, նա է իմ եղ-
բայրը, քոյրը և մայրը։

ԳԼ. ԺԳ.

Ա՛յն օրուանից Յիսուս տանից 1
դուրս գալով ծովի մօտ նստաց։
Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ 2
ժողովեցան, մինչև որ նա նա-
ւը մտաւ նստաց. և բոլոր ժողո-
վուրդը ծովի եզերին կանգնել էր։
Եւ նորանց հետ շատ բաներ խո- 3
սեց առակներով ասելով.
Ահա սերմ ցանողը դուրս գնաց 4
սերմ ցանելու. և նա սերմելիս՝
մի քանիսը ճանապարհի մօտ ըն-
կաւ, և երկնքի թռչուններն ե-
կան և կերան նորանց։ Եւ ուրիշ- 5
ներն ընկան քարքարուտ տեղ,
ուր շատ հող չկար, և շուտով
բուսան՝ խոր հող չունենալու
պատճառովը։ Բայց երբոր արե- 6

դակը ծագից, տոքացաւ. և ո-
րովհետև արմատ չունէին՝ չորա-
7 ցան: Եւ ուրիշներն ընկան փշերի
մէջ, և փշերը դուրս եկան և խեղ-
8 դեցին նորանց: Եւ ուրիշներն ըն-
կան բարի երկրի վերայ, և պըտ-
ուղ էին տալիս. որը հարիւր,
և որը վաթսուն, և որը երեսուն:
9 Ով որ լսելու ականջ ունի, թող
լսէ:
10 Եւ աշակերտները մօտ գալով
ասացին նորան. Ինչու առակ-
ներով ես խօսում նորանց հետ:
11 Նա էլ պատասխան տուաւ և
ասաց նորանց. Որովհետև ձեզ
արուած է երկնքի արքայութեան
խորհուրդները գիտենալ, բայց
12 նորանց չէ արուած: Վասն զի
ով որ ունի՝ նորան կ'արուի և
կ'աւելանայ. և ով որ չունի,
ունեցածն էլ կ'առնուի նորանից:
13 Ընդ հանուր եմ առակներով
խօսում նորանց հետ, որ տեսնե-
լով չեն տեսանում, և լսելով չեն
14 լսում, և չեն իմանում: Եւ նո-
րանց վերայ կատարւում է Եսա-
եայ մարգարէութիւնն, որ ասում
է. Լսելով կ'լսէք, և չէք իմա-
նալ, և տեսնելով կ'տեսնէք, և
15 չէք տեսնել: Վասն զի թանձրա-
ցաւ այս ժողովրդի սիրտը, և է-
րանց ականջներով ծանր լսեցին և
իրանց աչքերը խփեցին, մի գու-
ցէ աչքերով տեսնեն՝ և ականջ-
ներով լսեն, և սրտով իմանան,
և դառնան, և ես նորանց
16 բժշկեմ: Բայց երանելի են ձեր
աչքերը՝ որ տեսնում են, և ձեր
17 ականջները՝ որ լսում են: Վասն
զի ճշմարիտն ասում եմ ձեզ, որ
շատ մարգարէներ և արդարներ
ցանկացան տեսնել ինչ որ տես-
նում էք՝ և չտեսան, և լսել
ինչ որ լսում էք՝ և չլսեցին:
18 Դուք հիմա լսեցէք առակ ցա-
19 նողի առակը: Ամէն ումեքից՝ որ
արքայութեան խօսքը լսում է և
չէ իմանում, գալիս է չարը՝ և
յափշտակում նորա սրտի մէջ
սերմածը. սա է ճանապարհի մօտ
20 սերմածը: Եւ քարքարուտ տեղը
սերմածը նա է, որ խօսքը լսելիս
շատով ուրախութիւնով ընդու-
նում է նորան. բայց արմատ չու- 21
նի իր մէջ, այլ ժամանակա-
ւոր է. և երբոր նեղութիւն կամ
հալածանք են լինում այն խօսքի
համար, շուտով գայթակղում
է: Եւ փշերի մէջ սերմածը նա 22
է, որ խօսքը լսում է, և այս աշ-
խարհի հոգսերն և հարստութեան
խաբեբայութիւնը խեղդում են
այն խօսքը, և անպտուղ է լի-
նում: Բայց բարի երկրումը սեր- 23
մածը նա է, որ խօսքը լսում է
և իմանում. որ և պտուղ է տա-
լիս, որը հարիւր, և որը վաթ-
սուն և որը երեսուն:
Մի ուրիշ առակ նորանց ա- 24
ջև դրաւ և ասաց. Երկնքի ար-
քայութիւնը նմանուեցաւ մի
մարդու, որ իր արտումը բա-
րի սերմ ցանեց: Եւ մարդիկը 25
քնանալիս, նորա թշնամին ե-
կաւ և ցորենի մէջ որոմներ ցա-
նեց և գնաց: Եւ երբոր խոտը 26
բուսաւ՝ և պտուղ տուաւ, այն
ժամանակ որոմներն էլ երեւցան:
Եւ տան տիրոջ ծառաները մօտ 27
գալով ասացին նորան. Տէր, մի՞
թէ դու քո արտումը բարի սերմ
չսերմեցիր, ապա ի՞նչ տեղից են
որոմները: Նա էլ ասաց նորանց. 28
Թշնամի մարդ է արել այդ: Ծա-
ռաներն էլ ասացին նորան. Կա-
միս կամենո՞ւմ ես որ գնանք քա-
զինք նորանց դուրս հաւաքե: Նա 29
էլ ասաց, ոչ. մի գուցէ որոմնե-
րը քաղելիս, ցորենն էլ նորանց
հետ պոկէք: Թող տուէք որ եր- 30
կուսը միասին մեծանան մինչև
հունձքը, և հնձի ժամանակին
հնձողներին կ'ասեմ. Առաջ որոմ-
ները քաղեցէք և նորանց խուրձ
խուրձ կապեցէք այրելու, իսկ
ցորենը ժողովեցէք իմ ամբարի
մէջ:
Մի ուրիշ առակ դրաւ նո- 31
րանց առջև և ասաց. Երկնքի
արքայութիւնը նման է մանանե-
խի հատի, որ մի մարդ առաւ
իր արտի մէջ սերմեց. Որ ա- 32
մէն սերմերից փոքրն է, բայց
երբոր կ'աճի, բոլոր բանջարներից
մեծ է, և ծառ է լինում, այն-
պէս որ երկնքի թռչունները գա-

լիս նորա ճշերուամբը հանդիսաւոր են առնուամ։

33 Մի ուրիշ առակ խօսեց նո- րանց եւ ասաց. Երկինքի արքայու- թիւնը նման է խմարի՝ որ մի կին առաւ՝ եւ երեք չափ ալիւրի մէջ թաքցրեց մինչեւ որ բոլորը խմո- րուեցաւ։

34 Ահա բոլորը Յիսուս առակնե- րով խօսեց ժողովուրդներին հետ, եւ առանց առակի չէր խօսում

35 նորանց հետ, Որ մարգարէի ձե- ռով ասուածը կատարուի՝ որ ա- սում է, Առակներով կ'բանամ իմ բերանը, եւ դուրս կ'ըղխեմ աշխարհքի սկզբից ծածկուած բաները։

36 Ապա ժամանակ Յիսուս ժողո- վուրդներին թողելով եկաւ տուն, եւ նորա աշակերտները նորա մօտ եկան եւ ասացին. Մեկնիր մեզ

37 արտի որոմների առակը։ Նա էլ պատասխան տուաւ եւ ասաց նո- րանց, Բարի սերմը ցանողը Որ-

38 դին մարդոյ է։ Եւ արտը աշ- խարհքս է, եւ բարի սերմը նո- րանք են, որ արքայութեան որ- դիքն են. եւ որոմները չարի որ-

39 դիքն են։ Եւ թշնամին, որ նո- րանց սերմեց, սատանան է. եւ հունձքն աշխարհքի վերջն է, եւ

40 հնձողները հրեշտակներն են։ Արդ ինչպէս որ որոմները հաւաքուում են եւ կրակով այրուում, այնպէս

41 կ'լինի աշխարհքիս վերջումը։ Որ- դին մարդոյ կ'ուղարկէ իր հրեշ- տակները, եւ նորա արքայութի- նից կ'հաւաքեն բոլոր գայթակ- ղութիւնները եւ անօրէնութիւն

42 գործողներին։ Եւ կ'գցեն նորանց կրակի փուռը մէջ. այնտեղ կը լինի լացը եւ ատամների կրճտելը։

43 Այն ժամանակ արդարները կը ծագին ինչպէս արեգակը իրանց Հօր արքայութեան մէջ։ Ով որ լսելու ականջ ունի թող լսէ։

44 Դարձեալ նման է երկնքի ար- քայութիւնը մի արտի մէջ թաք- ցրուած գանձի, որ նորան մի մարդ գտնելով թաքցրեց, եւ ու- րախութիւնից գնում ամեն ինչ որ ունի ծախում է, եւ արտը առնում։

45 Դարձեալ նման է երկինքի ար- քայութիւնը մի վաճառական մարդու, որ գեղեցիկ մարգարիտ- ներ է որոնում. Որ մի թանգա- գին մարգարիտ գտնելով, գնաց ամեն ինչ որ ունէր՝ ծախեց, եւ առաւ նորան։

47 Դարձեալ նման է երկինքի ար- քայութիւնը ծովի գցուած ուռ- կանի, որ ամեն տեսակից ժողո- վում է. Որ երբոր լցուեցաւ ցա- մաքը հանեցին, ու նստեցին լա- ւերը ժողովեցին տոպանների մէջ, եւ անպէտքները դուրս գցեցին։

49 Այսպէս կ'լինի աշխարհքի վեր- ջումը. հրեշտակները դուրս կ'գան եւ կ'ջոկեն չարերին արդարների մի- ջից. Եւ կ'գցեն նորանց կրակի

50 փուռը մէջ. այնտեղ կ'լինի լացը եւ ատամների կրճտելը։

51 Յիսուսը ասաց նորանց. Հմու- ցա՞ք այդ բոլորը։ Ասացին նորան.

52 Այո՛, Տէր։ Նա էլ ասաց նո- րանց. Սորա համար ամեն գիրը, որ երկնքի արքայութեանն է ա- շակերտել, նման է տանտէր մար- դու, որ հանում է իր գանձից նոր եւ հին բաներ։

53 Եւ եղաւ՝ երբոր Յիսուսը այս ա- ռակները վերջացրեց, գնաց այն- տեղից։ Եւ գալով իր հայրե-

54 նիքը, նորանց ժողովարանումը սովորեցնում էր նորանց, այնպէս որ զարմանում էին նորանք եւ ա- սում. Ո՞րտեղից է սորան այս իմաստութիւնը եւ զօրութիւնները։

55 Չէ՞ որ սա հիւսան որդին է. Չէ՞ որ սորա մայրը Մարիամ է կոչ- ւում. եւ եղբարքը՝ Յակօբոս եւ Յոսէս եւ Սիմոն եւ Յուդաս։ Եւ

56 Չէ՞ որ սորա ամեն քոյրերը մեզ մօտ են, ապա Ո՞րտեղից է սորան այս ամեն բաները։ Եւ գայթակ-

57 ղում էին նորա վերայ։ Յիսուսն էլ նորանց ասաց. Մի մարգարէ անարգուած չէ, բայց միայն իր հայրենիքի եւ իր տան մէջ։ Եւ

58 այն տեղ շատ զօրութիւններ չա- րաւ նորանց անհաւատութեան պատճառով։

ԳԼ. Ժ.Դ

1 Ետ ժամանակը Հերովդէս չոր-
բորդապետը Յիսուսի համբաւը
2 լսեց. Եւ ասաց իր ծառաներին.
Նա Յովհաննէս Մկրտիչն է. նա
մեռելներուն միջից յարութիւն է
առել. և նորա համար զօրու-
թիւններ են գործվում նորանով։
3 Վասնզի Հերովդէսը բռնեց Յո-
հաննէսին, կապեց նորան և բան-
տի մէջ դրաւ՝ իր եղբայր՝ Փի-
լիպպոսի կնոջ Հերովդիայի համար։
4 Վասնզի Յովհաննէսը նորան ասում
էր, Ըե արժան չէ քեզ, որ դո-
5 րան ին ունենաս։ Եւ ուզում էր
նորան սպանել, բայց ժողով-
դից վախում էր, վասնզի նո-
րան ընդունում էին ինչպէս մար-
6 գարէ։ Եւ երբոր Հերովդէսի ծը-
նընդեան օրն եղաւ, Հերովդիայի
աղջիկը հանդէսի մէջ պարեց՝ և
հաճոյ թուեցաւ Հերովդէսին։
7 Ուստի երդումնով խոստացաւ նո-
8 րան տալ ինչ որ ուզէ։ Նա էլ
առաջ իր մօրից խրատ առած՝
ասաց. Տուր այստեղ ակուռեղի
վերայ Յովհաննէս Մկրտչի գլու-
9 խը։ Եւ թագաւորը տրտմեցաւ,
բայց իր երդմանց և իր հետ նըս-
տողների համար՝ հրամայեց որ
10 տրուի։ Եւ ուղարկեց գլխատեց
11 Յովհաննէսին բանտումը։ Եւ նո-
րա գլուխը բերին ակուռեղի վե-
րայ, և տուին աղջկանը. և նա
12 տարաւ իր մօրը։ Եւ նորա աշա-
կերտներն եկան մարմինը վեր ա-
ռին և թաղեցին նորան. և ե-
կան պատմեցին Յիսուսին։
13 Եւ Յիսուս լսելով այնտեղից
նաւով գնաց առանձին մի ա-
նապատ տեղ։ Եւ ժողովուրդ-
ներն երբոր լսեցին, այն քաղաք-
ներից ոտով գնացին նորա ետե-
ւից։
14 Եւ երբոր Յիսուս դուրս եկաւ,
շատ ժողովուրդ տեսաւ, և գը-
թաց նորանց վերայ, և բժշկեց
15 նորանց հիւանդներին։ Եւ երբոր
իրիկուն եղաւ, աշակերտները նո-
րա մօտ եկան և ասացին. Տեղս
անապատ է, և ժամանակն ար-
դէն անցել է. ժողովուրդները
արձակիր որ գնան գիւղերն իրանց
համար կերակուր առնեն Յիսուս 16
էլ ասաց նորանց. Պէտք չէ որ
գնան, դուք տուէք դորանց ու-
տել։ Նորանք էլ ասացին նորան. 17
Մենք այստեղ բան չունինք, բաց
միայն հինգ հաց և երկու ձուկ։
Նա էլ ասաց. Նորանք այստեղ 18
բերէք ինձ մօտ։ Եւ հրամայեց 19
որ ժողովուրդները խոտերի վե-
րայ նստին. և հինգ հացը և ե-
րկու ձուկն առաւ դէպի երկինքը
նայեց՝ օրհնեց, և կտրեց, տուաւ
աշակերտներին հացերը, և աշա-
կերտները ժողովուրդներին։ Եւ 20
ամենքը կերան և կշտացան, և
կտորների աւելցածը տասներկու
քոթոց լիքը վեր առին։ Եւ ու- 21
տողները հինգ հազարի չափ մար-
դիկ էին՝ բացի կանանցից և երե-
խաներից։
Եւ Յիսուս շուտով իր աշա- 22
կերտներին ստիպեց, որ նաւը մըտ-
նեն և իրանից առաջ անցնեն այն
կողմը, մինչեւ որ ինքն այն ժո-
ղովուրդներին արձակէ։ Եւ երբ- 23
որ ժողովուրդներին արձակեց, վեր
ելաւ լեռան, առանձին աղօթք ա-
նելու. և երբոր իրիկուն եղաւ,
միայն ինքն էր այնտեղ։ Բայց 24
նաւն արդէն ծովի մէջ տեղն էր
և ալեկոծվում էր, վասնզի քա-
մին ներհակ էր։ Եւ գիշերի չոր- 25
րորդ պահին Յիսուս նորանց մօտ
եկաւ ծովի վերայ գնալով։ Եւ 26
աշակերտները երբոր տեսան նո-
րան ծովի վերայ գնալիս, շիտե-
ւեցան և ասացին, Թէ աչքի ե-
րեւոյթ բան է, և վախից ագա-
ղակեցին։ Եւ Յիսուս շուտով խո- 27
սեց նորանց հետ և ասաց. Քաջ
եղէք, ես եմ՝ մի վախենաք։ Եւ 28
Պետրոս պատասխանելով նո-
րան և ասաց, Տէ՛ր, եթէ դու ես,
հրամայիր ինձ, որ ջրերի վերա-
յով քեզ մօտ գամ։ Նա էլ ա- 29
սաց, Եկ։ Եւ Պետրոս նաւից
իջնելով ջրերի վերայովն գնաց,
որ գայ Յիսուսի մօտ։ Եւ տես- 30
նելով որ քամին սաստիկ է, վա-
խեցաւ, և երբոր սկսեց ընկղ-
մուիլ, աղաղակեց և ասաց. Տէր,

31 փրկիր ինձ ։ եւ չուառով Յիսուսը
իր ձեռը մեկնեց նորան բռնեց
եւ ասաց նորան . Թերահաւատ ,
32 ինչո՞ւ երկմտեցիր ։ եւ երբոր նա-
ւը մտան , քամին հանդարտեց ։
33 Եւ նաւի մէջ լինողները մօտ գա-
լով նորան երկրպագեցին եւ ա-
սացին . Ճշմարիտ դու Աստուծոյ
Որդին ես ։
34 Եւ միւս կողմն անցնելով ե-
35 կան Գեննեսարէթի երկիրը ։ Եւ
այն տեղի մարդիկը նորան ճանա-
չելով , ուղարկեցին բոլոր շրջա-
կայքը եւ ամեն հիւանդները նո-
36 րա մօտ բերին ։ Եւ նորան աղա-
չում էին՝ որ միայն նորա հան-
դերձի ծայրին դիպչին . եւ նորանք
որ դիպան , փրկուեցան ։

ԳԼ· ԺԵ

1 Ա՛յն ժամանակ Յիսուսի մօտ ե-
կան Երուսաղէմացի դպիրները եւ
2 փարիսեցիները , եւ ասացին . Ին-
չո՞ւ համար քո աշակերտները
ծերերի աւանդութիւնը զանց են
անում , վասն զի իրանց ձեռնե-
րը չեն լուանում , երբոր հաց են
3 ուտում ։ Նա էլ պատասխան
տուաւ եւ ասաց նորանց . Ա՛պա
դու՛ք ինչո՞ւ էք Աստուծոյ պա-
տուիրանքը զանց անում ձեր ա-
4 ւանդութեան համար ։ Վասնզի
Աստուած պատուիրեց եւ ասաց .
5 Պատուիր քո հօրը եւ մօրը ։ Եւ
իր հօրը կամ մօրը բամբասողը
6 մահով մեռնի ։ Բայց դու՛ք ա-
ւում էք . Ե՛ւ ո՛վ որ հօրը կամ
մօրը ասէ՝ պատարագ է այն որ
ինձանից պիտի շահուէիր , նա
թող չպատուէ իր հօրը եւ իր մօ-
րը ։ Եւ ձեր աւանդութեան հա-
մար Աստուծոյ պատուէրը խա-
7 փանել էք ։ Կեղծաւորնե՛ր , լաւ
մարգարէացաւ ձեր մասին Եսա-
8 ւին ասելով . Այս ժողովուրդը
իրան բերանովը է մօտենում ինձ ,
եւ շրթունքներովը է ինձ պատ-
ւում , բայց իրանց սիրտն ինձանից
9 հեռացած ջոկուած է ։ Զուր տեղն
են պաշտում ինձ . վարդապետու-
թիւններ աւետրեցնելով , որ մարդ-
10 կանց պատուէրներ են ։ Եւ ժո-
ղովուրդին իրան մօտ կանչե-
լով , ասաց նորանց . Լսեցէ՛ք եւ
իմացէ՛ք . Ոչ թէ բերանը մտնողն 11
է պղծում մարդուն , այլ բերա-
նիցը դուրս եկողը , նա է պղծում
մարդուն ։
Այն ժամանակ նորա աշակեր- 12
տները մօտ գալով ասացին նորան .
Գիտե՞ս որ փարիսեցիները այն
խօսքը լսելով գայթակղեցին , նա 13
էլ պատասխան տուաւ եւ ասաց .
Ամեն տունկ , որ իմ երկնաւոր
Հայրը չտնկեց , կ՚պոկուի ։ Թող 14
տուէք նորանց . կոյր առաջնորդ-
ներ են կոյրերի , և երբոր կոյրը
կոյրին առաջնորդէ , երկուսն էլ
փոսի մէջ կ՚ընկնին։ Պետրոսը նո- 15
րան պատասխան տուաւ եւ ա-
սաց . Մեկնի՛ր մեզ այս առակը ։
Յիսուսն էլ ասաց . Դո՞ւք էլ տա- 16
կաւին անխելք էք ։ Տակաւին չէք 17
հասկանում , թէ ամեն ինչ որ
բերանն է մտնում , փորն է գը-
նում և արտաքնոցն է գցվում ։
Բայց բերանիցը դուրս եկող բա- 18
ները սրտիցն են դուրս գալիս և
նորանք են մարդուն պղծում ։ Վա- 19
սընդի սրտիցը դուրս են գալիս
չար խորհուրդներ , սպանութիւն-
ներ , շնութիւններ , պոռնկու-
թիւններ , գողութիւններ , սուտ
վկայութիւններ , հայհոյութիւն-
ներ ։ Սորանք են մարդուն պղծ- 20
ողը , բայց անլուայ ձեռքով ու-
տելը մարդուն չէ պղծում ։
Եւ Յիսուսը այնտեղից դուրս ե- 21
կաւ գնաց Տիւրոսի և Սիդոնի
կողմերը ։ Եւ ահա մի քանանա- 22
ցի կին այն սահմաններից դուրս
եկած աղաղակում էր նորան և
ասում . Ողորմիր ինձ , Տէր , որդի
Դաւթի , իմ աղջիկը չարաչար
դիւահարւում է ։ Եւ նա նորան 23
ոչ խօսք պատասխան չտուաւ .
և նորա աշակերտները մօտ գա-
լով աղաչում էին նորան և ա-
ում . արձակիր դորան , վասնզի
մեր ետեւից աղաղակում է ։
Նա էլ պատասխան տուաւ և ա- 24
սաց . Ես չեմ ուղարկուել՝ եթէ
ոչ Իսրայէլի տան կորած ոչխար-
ների մօտ ։ Ա՛յն կինն էլ եկաւ՝ 25
նորան երկրպագում էր և ասում .

26 Տէր , օգնիր ինձ : Նա էլ պա-
տասխան տուաւ և ասաց . Լաւ
չէ երեխաների հացն առնել և
27 շներին գցել : Նա էլ ասաց .
Այո՛, Տէր , սակայն շներն էլ ի-
րանց տէրերի սեղանից ընկած
28 փշրանքներից են ուտում : Այն
ժամանակ Յիսուսը պատասխան
տուաւ և ասաց նորան . Ով կին,
մեծ է քո հաւատքը . լինի քեզ
ինչպէս ուզում ես . և նորա աղ-
ջիկն բժշկուեց նոյն ժամից :
29 Եւ Յիսուսը այնտեղից գնալով
Գալիլեայի ծովի մօտ եկաւ , և
վեր ելաւ լեռան՝ այնտեղ նստեց:
30 Եւ շատ ժողովուրդներ եկան նո-
րա մօտ , որ իրանց հետ ունէին
կաղեր, կոյրեր, համրեր, հաշման-
դամներ , և ուրիշ շատեր , և նո-
րանց գցեցին Յիսուսի ոտքերը ,
31 և նորանից բժշկեց : Մինչեւ որ
ժողովուրդները զարմանում էին,
տեսնելով համրերին խօսելիս ,
հաշմանդամներին առողջ, կաղե-
րին գնալիս և կոյրերին տեսնե-
լիս . և փառաւորեցին Իսրայէլի
Աստուծոյն :
32 Եւ Յիսուսը իր աշակերտները
մօտ կանչելով ասաց . Գութս
շարժում է այս ժողովրդի վերայ,
վանդի արդէն երեք օր է իմ
մօտս են և բան չունին որ ու-
տեն . և նորանց սոված ճանա-
պարհ գցել չեմ ուզում , մի գու-
33 ցէ նուաղեն ճանապարհումը : Եւ
նորա աշակերտները նորան ասա-
ցին . Ո՞րտեղից է մեզ այս ա-
նապատումը այնչափ հաց , որ
այդքան ժողովուրդը կշտացնենք:
34 Եւ Յիսուսը նորանց ասաց . Քա-
նի՞ հաց ունիք . նորանք էլ ա-
սացին , Եօթը և մի քանի փոքր
35 ձկներ : Եւ հրամայեց ժողո-
վուրդներին , որ գետնի վերայ
36 նստին : Եւ այն եօթն հացը և
ձկները առաւ , գոհացաւ կտրեց
և իր աշակերտներին տուաւ , և
37 աշակերտները ժողովրդին : Եւ
ամենքը կերան և կշտացան . և
կտորների աւելցածը եօթը զամ-
38 բիւղ լեքը վեր առին : Եւ ու-
տողները չորս հազար մարդիկ
էին՝ կանանցից և երեխաներից զուկ:

Եւ ժողովուրդներն արձակե- 39
լուց յետոյ մնաւ նաւն և եկաւ
Մագդալէի սահմանները :

ԳԼ. ԺԶ

Եւ փարիսեցիները և Սադուկե- 1
ցիները նորա մօտ եկան , և փոր-
ձելով նորանից ուզում էին երկն-
քից մի նշան ցոյց տալ նորանց:
Նա էլ պատասխան տուաւ և 2
ասաց նորանց . Իրիկուն դառած
ժամանակ ասում էք՝ պարզ կ'լի-
նէ , վանդի երկինքը կարմիր է :
Եւ առաւօտը . Այսօր մրրիկ կ'լի- 3
նէ , վանդի երկինքը պղտորած
կարմրացել է : Կեղծաւորներ, եր-
կնքի երեսը գիտէք քննել , բայց
ժամանակների նշանները չէ՞ք կա-
րող : Չար և շնացող ազգը նշան 4
է խնդրում . և նշան չի տրուիլ
նորան , բայց միայն Յովնան մար-
գարէի նշանը : Եւ նորանց թող-
ուց գնաց :
Եւ նորա աշակերտները այն 5
կողմը գնալիս մոռացան հաց վեր
առնել : Եւ Յիսուսը նորանց ա- 6
սաց . Տեսէք և զգոյշ կացէք փա-
րիսեցոց և Սադուկեցոց խմորից :
Իսկ նորանք իրանց միջումը միտք 7
էին անում և ասում , թէ Հաց
չենք վեր առել : Եւ Յիսուսը այս 8
իմանալով ասաց. Ինչո՞ւ էք միտք
անում ձեր միջումը , թերահա
ւատներ , թէ հաց չէք վեր ա-
ռել : Տակաւին չէ՞ք իմանում , 9
և չէ՞ք էլ յիշում այն հինգ հա-
ցը հինգ հազար մարդկանցը , և
քանի՞ զթոց վեր առիք : Ո՛չ էլ 10
այն եօթը հացը չորս հազար
մարդկանցը , և քանի՞ զամբիւղ
վեր առիք : Ի՞նչպէս չէք իմա- 11
նում , որ հացի համար չասացի
ձեզ՝ զգոյշ կենալ փարիսեցոց և
Սադուկեցոց խմորից : Այն ժա- 12
մանակ հասկացան , որ չասաց
հացի խմորից զգոյշ կենալ , այլ
փարիսեցոց և Սադուկեցոց վար-
դապետութիւնից :
Եւ Յիսուսը դուրս գնաց Փիլիպ- 13
պեայ Կեսարիայի կողմերը , և իր
աշակերտներին հարցնում էր և
ասում . Մարդիկ ինձ համար ո՞վ

են ասում, որ Որդին մարդոյ լի-
14 նի։ Նորանք էլ ասացին. Ոմանք՝ Յովհաննէս Մկրտիչն է. իսկ միւս-
ները՝ Եղիան. և ուրիշներն էլ՝ Երեմիան, կամ Մարգարէից մէ-
15 կը։ Նորանց ասաց. Իսկ դուք ո՛վ էք ասում ինձ համար, որ
16 լինիմ։ Սիմոն Պետրոսը պատաս-
խան տուաւ և ասաց. Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ
17 որդին։ Եւ Յիսուսը պատասխան տուաւ և ասաց նորան. Երանի քեզ, Սիմոն որդի Յովնանի, վասն
զի մարմինն և արիւնն չյայտնեց քեզ, բայց իմ Հայրը որ երկն-
18 քումն է։ Եւ ես էլ ասում եմ քեզ, որ Դու ես *Պետրոս, և այդ վիմի վերայ կ'շինեմ իմ եկեղե-
ցին, և դժոխքի դռները չեն յաղ-
19 թիլ նորա։ Եւ կ'տամ քեզ երկնքի արքայութեան բանալիները, և այն որ կապես երկրի վերայ, կապուած կ'լինի երկնքումը. և այն որ երկրի վերայ արձակես, արձակուած կ'լինի երկնքումը։
20 Այն ժամանակ իր աշակերտներին պատուիրեց, որ ոչ ոքի չ'ա-
սեն, թէ նա Յիսուսն է Քրիս-
տոսը։

21 Այնուհետև Յիսուսը սկսեց աշակերտներին յայտնել, թէ պէտք է նորան երուսաղէմ գնալ և ծերերից և քահանայապետնե-
րից և դպիրներից շատ չարչա-
րանքով չարչարուիլ, սպանուիլ և երրորդ օրուայն յարութիւն
22 առնել։ Եւ Պետրոսը նորան մի կողմ առնելով սկսեց նորան յանդիմանել և ասել՝ Քաւ լի-
ցի քեզ, Տէր, այդ քո՜ւն չլինի
23 քեզ։ Եւ նա դարձաւ ասաց Պետ-
րոսին. Ետևից գնա, սատանայ, գայթակղութիւն ես ինձ. վասն-
զի դու միտք չես անում Աստու-
ծոյ այլ մարդկանց բո՜ւնը։

24 Այն ժամանակ Յիսուսը իր աշակերտներին ասաց. Եթէ մէկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ և իր խաչն առնէ, և իմ ետևից գայ։
25 Վասնզի ով որ իր անձը ուզէ

* Վէմ

ապրեցնել, կ'կորցնէ նորան, և ով որ իր անձն կորցնէ ինձ հա-
մար կ'գտնէ նորան։ Վասնզի ի՞նչ 26
օգուտ ունի մարդ, որ բոլոր աշ-
խարհքն ստանայ և իր անձը կոր-
ցնէ. կամ ի՞նչ գին կտայ մարդ
իր անձը փրկելու համար։ Վասն- 27
զի Որդին մարդոյ գալու է իր Հօր
փառքովն իր հրեշտակների հետ,
և այն ժամանակ ամեն մէկին կը
հատուցանէ իր գործքերի համե-
մատ։ Ճշմարիտն ասում եմ ձեզ, 28
այստեղ կանգնողներից կան ո-
մանք, որ մահ չեն ճաշակիլ, մին-
չև որ Որդին մարդոյ տեսանեն իր
թագաւորութիւնովը գալիս։

ԳԼ. ԺԷ

Եւ վեց օրից յետոյ Յիսուսը Պետ- 1
րոսին և Յակոբին և Նորա եղբայր
Յովհաննէսին իր հետ առաւ, և
նորանց առանձին մի բարձր լեռ
հանեց։ Եւ նորանց առջևը կեր- 2
պարանափոխուեցաւ, և նորա
երեսը փայլեց ինչպէս արեգա-
կը, և նորա հանդերձները լու-
սոյ պէս սպիտակ եղան։ Եւ ա- 3
հա երևեցան նորանց Մովսէսը և
Եղիան, որ նորա հետ խօսում
էին։ Եւ Պետրոսը պատասխանեց 4
և ասաց Յիսուսին. Տէր, լաւ է
որ մենք այստեղ լինենք. եթէ
կամենաս, այստեղ երեք տաղա-
ւար շինենք, մէկը քեզ համար,
մէկը՝ Մովսէսին, և մէկը՝ Եղիա-
յին։ Եւ նա տակաւին խօսելիս, 5
ահա մի լուսաւոր ամպ հովանի
եղաւ նորանց վերայ. և ահա մի
ձայն էղաւ այն ամպիցը և ասաց.
Դա է իմ սիրելի Որդին, որին
հաւանել եմ. դորան լսեցէք։ Եւ 6
աշակերտները լսելով՝ իրանց ե-
րեսների վերայ ընկան, և շատ
վախեցան։ Եւ Յիսուսը մօտեցաւ 7
նորանց բռնեց և ասաց. Վերկա-
ցէք և մի վախենաք։ Եւ իրանց 8
աչքերը բարձրացրին, — ո՛չ ով
չտեսան, բայց միայն Յիսուսին։
Եւ նորանք լեռնիցը իջնելիս, 9
Յիսուսը նորանց պատուիրեց և ա-
սաց. Ոչ ոքի չասէք այդ տեսիլ-
քը, մինչև որ Որդին մարդոյ մե-

առնելոյ միջից յարութիւն առնէ։ Եւ նորա աշակերտները հարցրին նորանից և ասացին. Ապա ինչո՞ւ գրիչները ասում են, թէ Առաջ եղիան պէտք է գայ։ Յիսուս էլ պատասխանեց և ասաց նորանց. Իրաւ առաջ եղիան կը գայ և ամեն բան կ'վերանորոգէ։ Բայց ասում եմ ձեզ, որ եղիան արդէն եկել է, և նորան չճանաչեցին. այլ ինչ որ ուզեցին նորան արին. այնպէս էլ Որդին մարդոյ չարչարուելու է նորանից։ Այն ժամանակ աշակերտները հասկացան, թէ Յօհաննէս Մկրտչի համար ասաց նորանց։ Եւ երբոր նորանք ժողովրդի մօտ եկան, մի մարդ մօտեցաւ նորան և ուղիը ծունկ դնելով Ասում էր. Տէր, իմ որդուն ողորմի՛ր, որ լուսնոտուած է և չարաչար տանջւում է. վառոի շատ անգամ կրակն է ընկնում. և շատ անգամ ջուրը։ Եւ նորան քո աշակերտների մօտ բերի, և չկարողացան նորան բժշկել։ Յիսուս էլ պատասխանեց և ասաց. Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև երբ պիտի ձեզ համբերեմ. նորան ինձ մօտ բերէ՛ք այստեղ։ Եւ Յիսուս նորան սաստեց. և դեը նորանից դուրս եկաւ, և տղան նոյն ժամից բժշկուեցաւ։ Այն ժամանակ աշակերտները առանձին Յիսուսի մօտ եկան և ասացին. Մենք ինչո՞ւ չկարողացինք հանել նորան։ Յիսուս էլ ասաց նորանց, Ձեր անհաւատութեան համար. վասնզի ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ որ ունենաք հաւատք ինչպէս հատ չոմ հաւատ, այս լեռան կ'ասէք՝ փոխադրուիր այստեղից այնտեղ, և կ'փոխադրուի. և ոչինչ անկարելի չի լինիլ ձեզ համար։ Բայց այս ցեղը դէե՛ւ չի գալ եթէ ոչ աղօթքով և ծոմով։

Եւ երբոր նորանք Գալիլեայի մէջ մնան էին գալիս, Յիսուս նորանց ասաց. Որդին մարդոյ մարդկանց ձեռքն է մատնուելու, և նորան կ'սպանեն, և երրորդ օրում յարութիւն կ'առնէ. և նորանք շատ տրտմեցան։

Եւ երբոր նորանք Կափառնայում եկան, երկդրամեան հաւքն ուղղները Պետրոսի մօտ եկան և ասացին. Ձեր վարդապետն երկդրամները չէ՞ վճարում։ Նա ասաց՝ Այո։ Եւ երբոր տունը մտաւ, Յիսուս նորանից առաջ բռնկաց և ասաց, Քեզ ի՞նչպէս է երևում, Սիմոն, երկրի թագաւորներն ումի՞ց են առնում հարկը կամ տուրքը, իրանց որդիքների՞ց, թէ օտարներից։ Պետրոսը ասաց նորան. Օտարներից։ Յիսուս նորան ասաց. Ապա ուրեմն ազատ են որդիները։ Բայց որպէսզի նորանց չ'գայթակղեցնենք, գնա ծովը և կարթը գցիր, և առաջի գուրս եկող ձուկն առ՝ բերանը բաց, և մի սատեր կ'գտնես. այն առ տուր նորանց իմ և քո տեղ։

ԳԼ. ԺԸ

Այն ժամումը աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին. Ո՞վ է մեծ երկնքի արքայութեան մէջ։ Եւ Յիսուս իր մօտ մի երեխայ կանչելով, նորան կանգնեցրեց նորանց մէջ տեղը. և ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. եթէ դարձ չգաք և չլինէք երեխաների նման, չէք մտնել երկնքի արքայութիւնը։ Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնէ, նա է մեծ երկնքի արքայութեան մէջ։ Եւ ով որ մի այսպիսի երեխայ ընդունի իմ անունովը, ինձ է ընդունում։ Եւ ո՛վ որ գայթակղեցնէ այս փոքրներից մէկին, որ հաւատում են ինձ, աւելի լաւ է նորան, որ մի իշու ջաղացի քար նորա վիզը կախուի և ծովի անդունդում ընկղմուի։

Վա՛յ աշխարհքիս գայթակղութիւնների համար. վասնզի պէտք է որ գայթակղութիւնները գան, սակայն վա՛յ այն մարդուն, որի ձեռովը կը գայ գայթակղութիւնը։ Եւ եթէ քո ձե-

ը կամ քո ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրիր նորան և քեզանից դէն գցիր. լաւ է քեզ կաղ կամ հաշմանդամ մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք և երկու ոտք ունենալ և յաւիտենական կրակը գցուիլ: Եւ թէ որ քո աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր նորան և քեզանից դէն գցիր, լաւ է քեզ մէկ աչքով մտնել կեանքը, քան թէ երկու աչք ունենալ և կրակի գեհենը գցուիլ:

Զգոյշ կացէք, որ այս փոքրներից մէկին չանարգէք. վասնզի ասում եմ ձեզ, որ նորանց հրեշտակները երկնքումը միշտ տեսնում են իմ Հօր երեսը որ երկնքումն է: Վասնզի Որդին մարդոյ եկաւ, որ ապրեցնէ կորածը: Ի՞նչպէս է երեւում ձեզ, եթէ մի մարդի հարիւր ոչխար լինի, և նորանցից մէկը մոլորի, նա չի՞ թողել իննսունն և ինն-էքսը լերումը և գնալ այն մոլորածին որոնել: Եւ եթէ լինի որ գտնէ նորան, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նորա վերայ աւելի կ'ուրախանայ քան թէ այն իննսունն և ինների վերայ որ չեն մոլորած: Այսպէս ձեր Հայրը՝ որ երկնքումն է, չէ կամենում, որ այս փոքրներից մէկը կորչի:

Եթէ քո եղբայրը քեզ դէմ մեղանչէ, գնա նորան յանդիմանիր՝ երբոր դու և նա մէնակ լինիք. եթէ քեզ լսէ, քո եղբայրը շահեցիր: Բայց եթէ չլսէ, վեր առ մի կամ երկու ուրիշն էլ քեզ հետ, վասնզի երկու կամ երիք վկայի բերանով ամէն բան կը հաստատուի: Բայց եթէ նորանց էլ չլսէ, ասա եկեղեցոյն. ապա եթէ եկեղեցոյն էլ չլսէ, թող լինի քեզ հեթանոս կամ մաքսաւոր:

Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքումն էլ կապուած կ'լինի, և ինչ որ երկրի վերայ արձակէք երկնքումն էլ արձակուած կ'լինի: Դարձեալ ասում եմ ձեզ՝ եթէ ձեզանից երկուսը երկրի վերայ միաբանուին ամեն ինչ խնդրելին, կ'լինի նորանց իմ Հօրից՝ որ երկնքումն է, վասնզի ուր որ երկու կամ երիք հաւաքուած լինին իմ անունովը ժողովուած լինին՝ ես այնտեղ նորանց մէջ եմ:

Այն ժամանակ Պետրոս նորա մօտ գալով ասաց. Տէր, քանի՞ անգամ եթէ իմ եղբայրն ինձ դէմ մեղք անէ, և ես նորան ներեմ նորան. մինչև եօթն անգամ: Յիսուս նորան ասաց. Չեմ ասում քեզ, մինչև եօթն անգամ, այլ մինչև եօթանասուն անգամ եօթը: Որու համար երկնքի արքայութիւնը նմանուեցաւ մի թագաւոր մարդու, որ ուզեց իր ծառաների հետ հաշիւ տեսնել: Եւ երբոր սկսեց հաշիւը տեսնել, նորա մօտ մէկը բերուեցաւ տասն հազար քանքար պարտական, բայց որովհետև չունէր վճարելու, նորա տէրը հրամայեց՝ որ նա և նորա կինն և նորա որդիքն և ամեն ինչ որ ունէր ծախուի և պարտքը վճարուի: Եւ ծառան էլ երեսի վերայ ընկնելով երկրպագում էր նորան և ասում. Տէր, համբերիր ինձ համար, և բոլորը կ'հատուցանեմ քեզ: Տէրն էլ գթաց այն ծառայի վերայ՝ նորան արձակեց, և պարտքն էլ շնորհեց նորան: Եւ երբոր այն ծառան դուրս եկաւ, իր ծառայակիցներից մէկին գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան պարտական էր, և նորան բռնած խեղդում էր և ասում, վճարիր ինձ ինչ որ պարտական ես: Հիմա նորա այն ծառայակիցը նորա առաջին ընկաւ, նորան պաղատում էր և ասում. Համբերիր ինձ համար և բոլորը կ'հատուցանեմ քեզ: Բայց նա չէր կամենում, այլ գնաց նորան գցեց բանտը, մինչև որ պարտքը վճարէ: Երբոր նորա ծառայակիցները տեսան եղած բաները շատ տրտմեցան և եկան իրանց տիրոջը յայտնեցին բոլոր եղածը: Այն ժամանակ նորա տէրը մօտը կանչեց նորան և ասաց. Չար ծառայ, ես այն բոլոր պարտքը շնորհեցի քեզ, որովհետև

33 Հետև դու աղաչեցիր ինձ, պէտք
չէ՞ր որ դու էլ քո ծառայակցին
ողորմէիր՝ ինչպէս որ ես էլ քեզ
34 ողորմեցի։ Եւ նորա տէրը բար-
կանալով՝ նորան մատնեց դահիճ-
ներին, մինչև որ բոլոր պարտքը
35 վճարէ նորան։ Այսպէս էլ իմ
երկնաւոր Հայրը կ'անէ ձեզ, ե-
թէ դուք ամեն մէկդ իր եղբօրը՝
ձեր բոլոր սրտիցը չթողէք նո-
րանց յանցանքը։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս
խօսքերը վերջացրեց, Գալիլեայ-
ցը վեր կացաւ Հրէաստանի կող-
մերն եկաւ, Յորդանանի այն կող-
2 մը։ Եւ շատ ժողովուրդներ նորա
ետևից գնացին, և նորանց այն
տեղ բժշկեց։
3 Եւ Փարիսեցիները նորա մօտ
եկան և նորան փորձելով ասում
էին նորան. Արժա՞ն է արդեօք
մարդուս, որ իր կինն արձակէ
ամեն որ և է պատճառի համար։
4 Նա էլ պատասխանեց և ասաց
նորանց. Չէ՞ք կարդացել թէ նո
որ սկզբից ստեղծեց, արու և
էգ ստեղծեց նորանց, և ասաց.
5 Սորա համար մարդ էր Հայրը և
մայրը կ'թողէ և իր կնոջը կ'յա-
րի և երկուսը կ'լինեն մէկ մար-
6 մին։ Ուստի այլ ևս երկու չեն,
այլ մէկ մարմին. արդ այն որ
Աստուած միաւորեց, թող մար-
7 դը չբաժանէ։ Նորան ասացին.
Ապա ինչո՞ւ Մովսէսը պատուի-
րեց մեզ, արձակման թուղթ տալ
8 և արձակել նորան։ Նորանց ա-
սաց, թէ Մովսէսը ձեր քարտա-
ւութեան համար հրաման տուաւ
ձեզ, ձեր կանայքն արձակել.
բայց սկզբից այնպէս չէղաւ։
9 Եւ ասում եմ ձեզ, թէ Ամեն
ով որ իր կինն արձակէ, առանց
պոռնկութեան պատճառի և ու-
րիշն առնէ, շնութիւն է գոր-
ծում. և արձակուածն առնողը
10 շնութիւն է գործում։ Իր աշա-
կերտները նորան ասացին. Ե-
թէ այդպէս է մարդու բանը կնո-
ջան հետ, լաւ չէ ամուսնանալ։
11 Նա էլ ասաց նորանց. Ամենքը
չեն տանում այդ բանը, բայց
որոնց որ տրուած է։ Վասնզի
12 կան ներքինիք, որ մօր արգանդից
այնպէս են ծնուել. և կան ներքի-
նիք՝ որ մարդկանցից են ներքինա-
ցրուել. և կան ներքինիք՝ որ ի-
րանց ներքինացրին երկնքի արքա-
յութեան համար. ով որ կա-
րող է տանել՝ թող տանի։
13 Այն ժամանակ երեխաներ բե-
րեցան նորա մօտ՝ որ ձեռքերը
դնէ նորանց վերայ և աղօթք ա-
նէ. իսկ աշակերտները յանդիմա-
նում էին նորանց։ Բայց Յիսուս
14 ասաց. Թոյլ տուէք այդ երեխա-
ներին՝ և դորանց մի արգելէք ինձ
մօտ գալ. վասնզի այդպիսիներին
15 է երկնքի արքայութիւնը։ Եւ
նորանց վերայ ձեռք դրաւ, և
16 այնտեղից գնաց։ Եւ ահա մէկն
եկաւ նորա մօտ և ասաց. Բարի
վարդապետ, ի՞նչ բարի բան գոր-
ծեմ՝ որ յաւիտենական կեանքն
ունենամ։ Նա էլ ասաց նորան.
17 Ինչո՞ւ ես ինձ բարի ասում. ոչ
ոք է բարի բայց միայն մէկն Ա-
ստուած, իսկ թէ որ կամիս յա-
ւիտենական կեանքը մտնել, պահիր
պատուիրանքները։ Նորան ասաց
18 Որո՞նք։ Յիսուսն էլ ասաց. Ո-
րանք, Մի՛ սպանաներ, Մի՛ շնար,
Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր.
19 Պատուի՛ր քո հօրը և քո մօրը, և
սիրիր քո ընկերին քո անձի պէս։
20 Պատանին նորան ասաց. Այդ ա-
մենն իմ երեխայութիւնիցը պա-
հեցի. էլ ի՞նչ բանով եմ պակաս
21 Յիսուսը նորան ասաց. Եթէ կամե-
նում ես կատարեալ լինել, գնա
ունեցուածներդ ծախի՛ր և տուր աղ-
քատներին, և գանձ կ'ունենաս
երկնքումը, և ինձ հետևիր լինա։
22 Երբոր պատանին այս խօսքը լսեց,
տրտմած գնաց, վասնզի շատ ստա-
ցուածք ունէր։
23 Յիսուսն էլ ասաց իր աշա-
կերտներին. Ճշմարիտ ասում եմ
ձեզ, որ հարուստը դժուար կ'մըտ-
նէ երկնքի արքայութիւնը։ Բայց
24 դարձեալ ասում եմ ձեզ. Աւե-
լի հեշտ է, որ մի ուղտ ասեղի
ծակովը անցնի, քան թէ մի հա-

բուատ Աստուծոյ արքայութիւնը մտնել։ 25 Եւ նորա աշակերտներն երբոր լսեցին, շատ զարմացան և ասացին. Ապա ո՞վ կարող է փրկուիլ։ 26 Յիսուսն էլ նորանց մէջ առիկ տալով ասաց. Մարդկանց կողմանէ դա անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ ամեն բան կարելի է։

27 Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց և ասաց նորան. Ահա մենք ամեն բան թողինք և քո ետևից եկանք. հիմա ի՞նչ 28 կ'լինի մեզ. Յիսուսն էլ ասաց նորանց. Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ դուք՝ իմ ետևից եկողներդ, վերատին ծննդումը երբոր Որդին մարդոյ իր փառաց աթոռի վերայ կ'նստի, դուք էլ տասներկու աթոռի վերայ կ'նստիք՝ և Իսրայէլի տասներկու ցեղերը 29 կ'դատէք։ Եւ ամեն ով որ թողեց տուները, կամ եղբարք՝ կամ քոյրերը, կամ հայր, կամ մայր կամ կին կամ որդիք կամ արտերը իմ անուան համար, հարիւրապատիկ կ'առնէ և յաւիտենական կեանքը կ'ժառանգէ։ 30 Եւ շատ առաջիններ յետինք կ'լինին, և յետիններ առաջինք։

Որովհետև ոչ ոք մեզ չվարձեց։ Նորանց ասաց. Դուք էլ գնացէք այգին, և ինչ որ արժան է՝ կ'առնէք։ Եւ երբոր իրիկուն եղաւ, այգեստէրն իր տան վերակացուին ասաց. Մշակներին կանչիր և նորանց վարձքը տուր՝ յետիններից սկսած մինչև առաջիններըը։ Եւ ժամը տասնումէկին նեըը գալով, մի մի դահեկան առին։ Առաջիններն էլ եկան՝ և կարծեցին, թէ աւելի կ'առնեն. և նորանք էլ մի մի դահեկան առին։ Բայց երբոր առին, տան տիրոջից տրտնջում էին և ասում. Թէ այդ յետիններըը մէկ ժամ գործեցին, և դորանց մեզ հետ հաւասար արիր, որ օրի ծանրութիւնը և տաքութիւնը քաշեցինք։ Նա էլ պատասխանեց նորանցից մէկին և ասաց. Ընկեր, չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանի համաձայնեցիր։ Քոնը առ և գնա. բայց ես ուզում եմ, որ այս յետինին տամ ինչպէս քեզ։ Կամ մի՞թէ ես իշխանութիւն չունի՞մ անելու ինչ որ ուզեմ իմ ատցուածքին. կամ թէ քո աչքը չա՞ր է որ ես բարերար եմ։ Այսպէս յետիններն առաջինք կ'լինին, և առաջիններն յետինք. վասնզի շատեր են կանչուած. բայց քիչեր են ընտրուած։

Երբոր Յիսուսը վեր էր ելնում Երուսաղէմ, տասներկու աշակերտներն առանձին իր հետ առաւ ճանապարհումը և ասաց նորանց. Ահա վեր ենք ելնում Երուսաղէմ, և Որդին մարդոյ կ'մատնուի քահանայապետներին և դպիրներին և կ'դատապարտեն նորան մահով. Եւ կ'մատնեն նորան հեթանոսներին խայտառակելու և ծեծելու և խաչ հանելու. և երրորդ օրումը յարութիւն կ'առնէ։

Այն ժամանակ Զեբեդէոսի որդոց մայրը իր որդոցը հետ նորա մօտ եկաւ երկրպագեց, և նորանից մի բան խնդրեց։ Նա էլ ասաց նորան. Ի՞նչ ես ուզում։ Նորան ասաց. Ասա որ իմ այս եր-

կու որդիքը Նաւեն մէկը քո աջ
կողմը՝ և մէկը ձախ կողմը քո
22 ազգայութիւնուդը։ Յիսուան էլ
պատասխանեց և ասաց. Չէք գի-
տում՝ թէ ի՞նչ էք խնդրում.
կարո՞ղ էք այն բաժակը խմել
որ ես եմ խմելու, կամ այն մի-
կրտութիւնով մկրտուիլ՝ որ ես
եմ մկրտուելու։ Նորան ասացին.
23 Կարող ենք։ Եւ ասաց Նորանց.
Իմ բաժակը կ'խմէք, և այն մի-
կրտութիւնով որ ես պիտի մկր-
տուիմ կ'մկրտուիք, բայց իմ
աջ և ձախ կողմը նստեցնելն՝
իմս չէ տալ. այլ Նորանց՝ որ իմ
24 Հօրիցը պատրաստուած է։ Եւ
այն տասներն երբոր լսեցին, նե-
ղացան այն երկու եղբարց վերայ։
25 Յիսուան էլ Նորանց իրան մօտ
կանչելով ասաց. Գիտէք, որ ազ-
գերի իշխանները տիրում են Նո-
րանց վերայ, և մեծամեծները իշ-
26 խում են Նորանց վերայ. Բայց
այնպէս չլինի ձեր մէջ, այլ ձե-
զանից ով որ կամենայ մեծ լի-
27 նել, թող ձեզ ծառայ լինի։ Եւ
ձեզանից ով որ կամենայ առա-
ջին լինել, թող ձեզ ծառայ լի-
28 նի։ Ինչպէս Որդին մարդոյ չէ-
կաւ որ իրան ծառայեն, այլ որ
ինքը ծառայէ, և շատերի փո-
խանակ իր անձն փրկանք տայ։
29 Եւ երբոր Նորանք Երիքովից
դուրս եկան, շատ ժողովուրդներ
30 գնացին Նորա ետևից։ Եւ ահա
երկու կոյր այն ճանապարհի վե-
րայ նստած էին. երբոր լսեցին
թէ Յիսուան է անց կենում, ա-
ղաղակեցին և ասացին։ Ողորմիր
31 մեզ, Տէր, որդի Դաւթի։ Իսկ
ամբոխն յանդիմանեց Նորանց՝ որ
լռեն, բայց Նորանք էլ առաւել
էին ազաղակում և ասում. Ո-
ղորմիր մեզ, Տէր, որդի Դաւ-
32 թի։ Եւ Յիսուան կանգնեց՝ կան-
չեց Նորանց և ասաց. Ի՞նչ էք
33 ուզում ես անեմ ձեզ։ Նորան
ասացին. Տէր, որ մեր աչքերը
34 բացուին։ Յիսուան էլ գթաց՝ Նո-
րանց աչքերին դիպաւ, և շու-
տով առան Նորանց աչքերը, և
Նորա ետևից գնացին։

ԳԼ. ԻԱ.

Եւ երբոր Երուսաղէմին մօտե- 1
ցան՝ և Բեթփագէ եկան Ձիթե-
նեաց լեռան մօտ, այն ժամանակ
Յիսուսը երկու աշակերտ ուղար-
կեց, Եւ ասաց Նորանց. Գնացէք 2
այդ գիւղը՝ որ ձեր առջևն է, և
շուտով այնտեղ մի էշ կ'գտնէք
կապած և մի ուսանակ Նորա հետ.
արձակեցէք բերէք ինձ մօտ։ Եւ 3
եթէ մէկը բան ասէ ձեզ. ասա-
ցէք, թէ Նորանք Տիրոջը պէտք
են. և շուտով կ'ուղարկէ Նորանց։
Բայց այս ամենը եղաւ, որ կա- 4
տարուի մարգարէի ձեռով խօ-
սածն, որ ասում է. Ասացէք 5
Սիոնի ազջկանը. Ահա քո թա-
գաւորը քեզ մօտ է գալիս, հեզ՝
և էշի ու ուսանակի քուռակը հե-
ծած։ Աշակերտներն էլ գնացին 6
և արին ինչպէս որ Յիսուսը հրա-
մայեց Նորանց. Էշը և ուսանակը 7
բերին՝ և իրանց հանդերձները Նո-
րանց վերայ գցեցին, և Նորանց
վերայ նստեց։ Եւ խիստ շատ ժո- 8
ղովուրդներ իրանց հանդերձները
ճանապարհի վերայ փռեցին. ու-
րիշներն էլ ծառերից ճիւղեր էին
կտրում և ճանապարհումը փռ-
ում։ Եւ առաջից և ետևից գը- 9
նացող ժողովուրդները աղաղա-
կում էին և ասում. Ովսաննա Որ-
դոյ Դաւթի, օրհնեալ է Տիրոջը
անունովը եկողը. Ովսաննա՛ ի
բարձունս։

Եւ երբոր Նա Երուսաղէմ մը- 10
տաւ, բոլոր քաղաքը դղրդաց և
ասաց. Ո՞վ է։ Եւ ժողովուրդ- 11
ները ասում էին. Սա Յիսուս
մարգարէն է Գալիլեայի Նազա-
րէթից։

Եւ Յիսուս մտաւ Աստուծոյ 12
տաճարը և դուրս արաւ տաճարի
մէջ բոլոր ծախողներին և առնող-
ներին, և փող փոխողների սեղան-
ները և աղաւնի ծախողների ա-
թոռները կործանեց. Եւ ասաց 13
Նորանց. Գրուած է՝ իմ տունը
աղօթքի տուն պիտի կոչուի. և
դուք աւազակների այր էք արել
զրան։

Եւ տաճարի մէջ կոյրեր և կա- 14

ղեր եկան նորա մօտ՝ և նորանց
15 բժշկից։ Երբոր քահանայապետները և դպիրները տեսան այն հրաշքները որ արաւ, և այն երեխաները էլ տաճարումն աղաղակելիս և ասելիս Ովսաննա Որդոյ
16 Դաւթի, նեղացան. Եւ ասացին նորան. Լսո՞ւմ ես՝ դուրանք ի՞նչ են ասում։ Յիսուսն էլ ասաց նորանց. Այո, դուք երբէք չէ՞ք կարդացել՝ թէ Մանուկների և կաթնակերների բերանից օրհնութիւն հաստատեցիր։
17 Եւ նորանց թողելով՝ գնաց քաղաքից դուրս Բեթանիա և գիշերն այնտեղ մնաց։
18 Եւ առաւօտանց երբոր յետ էր դառնում քաղաք, սովեց։
19 Եւ այն ճանապարհի վերայ մի թզենի տեսնելով, գնաց նորա մօտ, և նորա վերայ մի բան չգտաւ բայց միայն տերև. և նորան ասաց. Այլ ևս քեզանից պտուղ չլինի յաւիտեան. և իսկոյն չորացաւ թզենին։
20 Աշակերտները տեսնելով զարմացան և ասացին. Ի՞նչպէս իսկոյն
21 չորացաւ թզենին։ Յիսուսն էլ պատասխանեց և ասաց նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ որ հաւատք ունենաք և չերկմտիք, ո՛չ թէ միայն կ՚անէք թզենուն եղածը, այլ թէ որ այդ լեռան էլ ասէք՝ վեր կաց և ընկիր ծովը, կ՚լինի։ Եւ ամեն ինչ
22 որ աղօթքի մէջ խնդրէք հաւատալով, կ՚առնէք։
23 Եւ երբոր եկաւ տաճարը, նա ուսուցանելիս, քահանայապետները և ժողովրդի ծերերը նորա մօտ եկան և ասացին. Ինչ իշխանութեամբ ես անում այդ բանները, և ո՞վ տուաւ քեզ այդ իշխա-
24 նութիւնը։ Յիսուսն էլ պատասխանեց և ասաց նորանց. Ես էլ ձեզանից մէկ բան կ՚հարցնեմ. եթէ այն ինձ ասէք, ես էլ ձեզ կ՚ասեմ ըե ի՞նչ իշխանութեամբ նոյն եմ անում այս բանները։
25 Յովհաննէսի մկրտութիւնը ո՞րտեղից էր, երկնի՞ց թէ մարդկանց՞։ Եւ նորանք իրանց մէջ միտք
26 էին անում և ասում. Եթէ ա-

անք՝ երկնից, կ՚ասէ մեզ՝ Ապա ինչո՞ւ չհաւատացիք նորան. իսկ եթէ ասանք՝ մարդկանցից, ժողովրդից վախենում ենք, վասնզի ամենքը Յովհաննէսին մարգարէ տեղ են ընդունում։ Եւ պատասխանեցին Յիսուսին և ասացին. Չենք գիտում։ Նա էլ նորանց ասաց. Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ ըե ի՞նչ իշխանութեամբ եմ անում այս բանները։

Բայց ի՞նչպէս է երևում ձեզ. Մի մարդ երկու որդի ունէր. Եւ նա առաջինին ասաց. Որդի, գնա այսօր իմ այգումը բանի։ Նա էլ պատասխանեց և ասաց. Չեմ կամենում. բայց յետոյ ղջացաւ գնաց։ Եւ մեսի մօտ գնաց և ասաց այնպէս. Նա էլ պատասխանեց և ասաց. Կ՚գնամ, տէր. և չգնաց։ Հիմա այս երկուսից ո՞րն արաւ էր Հօր կամքը։ Նորան ասացին. Առաջինը։ Յիսուս նորանց ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ մաքսաւորդները և պոռնիկները ձեզանից առաջ կ՚մտնեն Աստուծոյ արքայութիւնը։ Վասնզի Յովհաննէս եկաւ ձեզ մօտ արդարութեան ճանապարհով, և չհաւատացիք նորան, բայց մաքսաւորները և պոռնիկները հաւատացին նորան. և դուք տեսնելով չզղջացիք յետոյ, որ հաւատաք նորան։

Մի ուրիշ առակ լսեցէք. Մի տանուտէր մարդ կար՝ որ այգի տնկեց և նորան ցանդով պատեց. և նորա մէջ հնձան փորեց և աշտարակ շինեց, և տուաւ նորան մշակների, և գնաց հեռու աշխարհ։ Եւ երբոր պտղի ժամանակը մօտեցաւ, ուղարկեց իր ծառաները մշակների մօտ՝ նորա պտուղները առնելու։ Եւ մշակները նորա ծառաներին բռնեցին՝ մէկին տանջեցին, մէկին սպանեցին, մէկին քարկոծեցին։ Դարձեալ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններից շատ, և նորանց էլ այնպէս արին։ Վերջապէս իր որդուն նորանց մօտ ուղարկեց ասելով, իմ որդուցը կ՚ամաչեն։ Բայց մշակները որդուն տեսնելով,

27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38

իրանք իրանց ասացին. Սա է ժառանգը, եկէք սորան սպանենք, և նորա ժառանգութիւնը մերը լիցի: Եւ բռնեցին նորան, 39 այգուցը դուրս հանեցին և սպանեցին: Արդ՝ երբոր այն այգուերը գայ, ի՞նչ կ'անէ այն մը- 40 շակներուն: Նորան ասացին. Զանոնք չարաչար կ'կորցնէ, և այգին կ'տայ ուրիշ մշակներու, որ պտուղները կ'տան նորան իրանց 41 ժամանակներուն: Յիսուս նորանց ասաց. Երբէք դուք չէք կարդացել գրքուն՝ Այն քարն, որ շինողներն անարգեցին, նա եղաւ անկիւնի գլուխ. սա Տիրոջմէն եղաւ՝ և մեր աչքերու առ- 43 ջև զարմանալի է: Սորա համար ասում եմ ձեզ. որ Աստուծոյ արքայութիւնը ձեզմանից վեր կ'առնուի և մի ազգի կ'տրուի, 44 որ նորա պտուղները կ'բերէ: Եւ այս քարի վերայ ընկնողը կ'փըշրուի. և ում վերայ որ նա ընկնի՝ կ'ջարդէ նորան:

45 Եւ երբոր քահանայապետները և փարիսեցիները նորա առակները լսեցին, հասկացան՝ որ իրանց 46 համար է ասում: Եւ որոնում էին որ բռնեն նորան, բայց ժողովուրդներիցը վախեցան. որովհետև նորան մարգարէի տեղ էին ընդունում:

ԳԼ. ԻԲ

1 Եւ Յիսուս պատասխանեց և դարձեալ ասաց նորանց առակներով, ասելով. Երկնքի արքա- 2 յութիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդու, որ իր որդոյն հար- 3 սանիք արաւ: Եւ իր ծառաները ուղարկեց՝ որ հարսանիքի կանչեն հրաւիրուածներին. և նորա- 4 կները չկամեցան գալ: Դարձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց և ասաց. Ասացէք հրաւիրուածներին. ա- հա իմ ճաշը պատրաստեցի. իմ արջառները և մեծացուները մորթուած են, և բոլորը պատրաստ 5 է. եկէք հարսանիքը: Իսկ նորանք անհոգ լինելով՝ գնացին, մէկին իր արտը, միւսն իր առուտու- 6 րին: Եւ մնացածները նորա ծառաները բռնեցին՝ նախատեցին և սպանեցին: Բայց թագաւորը 7 լսելով բարկացաւ, և իր զօրքն ուղարկեց այն սպանողներին ա- տակեցրեց, և նորանց քաղաքն այրեց: Այն ժամանակ իր ծա- 8 ռաներին ասաց. Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածներն արժանի չէին: Արդ գնացէք դէ- 9 պի ճանապարհները, և ում որ էլ գտնէք, կանչեցէք հարսանիքը: Եւ այն ծառաները 10 դուրս գնացին ճանապարհները, և ժողովեցին ամենին ում որ գտան՝ չարը և բարին, և հարսանիքը բազմականներով լցուեցաւ: Բայց երբոր թագաւորը մտաւ՝ որ 11 բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չհագած. Եւ նորան 12 ասաց. Ընկեր, ի՞նչպէս մտար այստեղ, որ հարսանիքի հանդերձ չունիս. և նա պապանձուեցաւ: Այն ժամանակ թագաւորն ասաց 13 ծառաներին. Զորա ոտները և ձեռները կապեցէք. վեր առէք զորան դրսի խաւարը գցեցէք. այնտեղ կ'լինի լացը և ատամների կըրճտելը: Վասնզի շատեր են կան- 14 չուած, բայց քիչեր՝ ընտրուած:

Այն ժամանակ փարիսեցիները 15 գնացին նորա համար խորհուրդ արին, թէ ի՞նչպէս խօսքով որսգայթ գնեն նորան: Եւ իրանց 16 աշակերտներին Հերովդէսեաններուն հետ նորա մօտ ուղարկեցին և ասացին, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես՝ և Աստուծոյ ճանապարհը ճշմարտութիւնով սովրեցնում ես, և քեզ մարդու երեսպաշտութիւն չես անում: Արդ՝ ասա մեզ, ի՞նչպէս է ե- 17 րեւում քեզ, կայսրին հարկ տալ պէ՞տք է, թէ չէ: Եւ Յիսուս 18 նորանց չարութիւնն իմանալով ասաց. Ինչո՞ւ էք փորձում ինձ, կեղծաւորներ: Ցոյց տուէք ինձ 19 հարկի ոսկին, և նորանք մի դահեկան բերին տուին նորան: Եւ 20 նորանց ասաց. Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է: Ասացին նո- 21

բան. կայսեր։ Ան ժամանակ
ասաց. Ոչխարին կայսրինը կայսրին
տուէք Աստուծոյնը Աստուծոյն։
22 Եւ լսելով, զարմացան. և նո-
րան թողին գնացին։
23 Ան օրը Սադուկեցիները նորա
մօտ եկան՝ որ ասում են թէ յա-
րութիւն չկայ. և նորան հարց-
24 րին, եւ ասացին. Վարդապետ,
Մովսէս ասաց, եթէ մի մարդ ա-
ռանց զաւակի մեռնէ, թող նո-
րա եղբայրը նորա կինն առնէ,
և իր եղբօր համար զաւակ յա-
25 րուցանէ։ Հիմա մեզ մօտ եօթն
եղբարք կային. և առաջինը կին
առաւ և մեռաւ, և որովհետև
զաւակ չունէր՝ իրան կինը թո-
26 ղեց իր եղբօրը։ Այնպէս էլ եր-
կրորդ երէցը և երրորդը՝ մինչև
27 եօթներորդը։ Եւ ամենից յետոյ
28 կինը մեռաւ։ Հիմա յարութեան
ժամանակ այն եօթից ո՞րին կ'լի-
նի կին. վասնզի ամենքը նորան
29 ունէին։ Յիսուս էլ պատաս-
խանեց և ասաց նորանց. Մո-
լորուած էք, որ գիրքերը չէք գի-
տում, և ոչ Աստուծոյ զօրու-
30 թիւնը վասնզի յարութեան ժա-
մանակին ոչ կին են առնում, և
ոչ մարդու գնում. այլ երկն-
քում Աստուծոյ հրեշտակներին-
31 ման են։ Իսկ մեռելների յարու-
թիւն առնելու համար, չէ՞ք կար-
դացել այն Աստուածանից ձեզ
32 խօսուածը որ ասում է. Ես եմ
Աբրահամի Աստուածը, և Իսա-
հակի Աստուածը, և Յակոբի Աս-
տուածը։ Աստուած մեռելների
Աստուած չէ, այլ կենդանինե-
33 րի։ Եւ ժողովուրդները լսելով
զարմանում էին նորա վարդա-
պետութեան վերայ։
34 Բայց փարիսեցիները երբոր լսե-
ցին, թէ Սադուկեցիներին պա-
պանձեցրեց, հաւաքուեցան մէկ-
35 տեղ։ Եւ նորանցից մէկը՝ մի օ-
րինական հարցրեց փորձելով նո-
36 րան և ասաց. Վարդապետ, ո՞ր
պատուիրանքն է մեծ օրէնքում։
37 Յիսուս էլ ասաց նորան. Սիրիր
քո Տէր Աստուածը քո բոլոր սըր-
տովը քո բոլոր անձովը՝ և քո բո-
38 լոր մտքովը։ Սա է առաջին և
մեծ պատուիրանքը։ Երկրորդն էլ 39
սորան նման. Սիրիր քո ընկերը
քո անձի պէս։ Այս երկու պա- 40
տուիրանքից կախուած են բոլոր
օրէնքը և մարգարէքը։
Եւ երբոր փարիսեցիները հա- 41
ւաքուած էին, Յիսուսը նորան-
ցից հարցրեց և ասաց. Ձեզ ին- 42
պէս է երևում Քրիստոսի հա-
մար. ո՞ւմ որդին է։ Նորան ա-
սացին. Դաւթի։ Նորանց ասաց. 43
Ապա ի՞նչպէս Դաւիթը հոգով
նորան Տէր է կոչում, ասելով.
Տէրն իմ Տիրոջն ասաց. Իմ աջ 44
կողմը նստիր, մինչև քո թշնա-
միները քո ոտից պատուան-
դան դնեմ։ Արդ եթէ Դաւիթը 45
նորան Տէր է կոչում, ի՞նչպէս է
նորա որդի։ Եւ ոչ ոք չէր կարո- 46
ղանում մի բան պատասխան տալ
նորան. և այն օրից յետոյ էլ մէ-
կը չէր համարձակում նորանից մի
բան հարցնելու։

ԳԼ. ԻԳ

Ան ժամանակ Յիսուս ժողո- 1
վուրդների և իր աշակերտների
հետ խօսեց և ասաց. Մովսէսի ա- 2
թոռի վերայ գպիրները և փարի-
սեցիները նստեցան։ Արդ՝ ինչ էլ 3
որ ասեն ձեզ պահել, պահեցէք
և արէք, բայց նորանց գործերի
պէս մի անէք. վասնզի ասում են
և չեն անում։ Վասնզի ծանր և 4
դժուարակիր բեռներ են կապում
և դնում մարդկանց ուսերին,
բայց իրանց մատովը չեն ուզում
շարժել նորանց։ Եւ իրանց բո- 5
լոր գործքերն անում են մարդ-
կանց երևելու համար. իրանց գրա-
պանակները լայնացնում են և ի-
րանց հանդերձի քղանցքները մե-
ծացնում. Սիրում են ընթրիքնե- 6
րում առաջին բազմոցը, և ժո-
ղովարաններում առաջին աթոռ-
ները, և փողոցների մէջ բարև-
ներ առնելը։ Եւ մարդկանցից 7
Ռաբբի Ռաբբի կոչուիլը։ Բայց 8
դուք Ռաբբի չկանչուիք, վասն-
զի մէկն է ձեր ուսուցիչը, Յի-
սուս Քրիստոս. և դուք ամենքդ
եղբարք էք։ Եւ երկրիս վերայ մէ- 9

կին ձեզ հայր չկանչէք. վասնզի
մէկն է ձեր Հայրը նա որ երկնե-
10 քումն է։ Ոչ էլ ուսուցիչներ
կանչուիցէք, վասնզի մէկն է ձեր
11 ուսուցիչը Քրիստոս։ Եւ
ձեզմանից մեծը թող ձեր ծառան
12 լինի։ Ով որ իր անձը բարձրա-
ցընէ՝ կ'խոնարհուի. և ով որ իր
անձը խոնարհեցնէ՝ կ'բարձրանայ։
13 Եակ վայ ձեզ, դպիրներ և փա-
րիսեցիներ՝ կեղծաւորներ, որ փա-
կում էք երկնից արքայութիւնը
մարդկանց առջև, վասնզի ինքներդ
չէք մտնում, և մտնողներին էլ
14 թոյլ չէք տալիս մտնել։ Վայ
ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝
կեղծաւորներ, որ ուտում էք որբե-
ւորիների տները, և պատճա-
ռանքով երկար աղօթք անում.
նորա համար աւելի դատապար-
15 ութիւն կ'առնէք։ Վայ ձեզ,
դպիրներ և փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ շուռ էք գալիս
ծովն ու ցամաքը, որ մէկը նո-
րահաւատ անէք. և երբոր լինում
է, նորան ձեզանից երկու տակ
աւելի գեհենի որդի էք անում։
16 Վայ ձեզ, կոյր առաջնորդներ,
որ ասում էք, ով որ տաճարով
երդում անէ, մի բան չէ. բայց
ով որ տաճարի ոսկով երդում
17 անէ, պարտական է։ Յիմարներ
և կոյրեր. ո՞րն է արդեօք աւելի
մեծ, ոսկի՞ն թէ տաճա՞րը, որ
18 սրբում է ոսկուն։ Եւ, ով որ
սեղանով երդում անէ, մի բան
չէ. բայց ով որ նորա վերայ լի-
նող պատարագով երդում անէ,
19 պարտական է։ Յիմարներ և կոյ-
րեր. ո՞րն է արդեօք աւելի մեծ,
պատարա՞գը թէ սեղանը, որ սըր-
20 բում է պատարագին։ Արդ ով
սեղանով երդում անում է նորանով՝
և այն բոլոր բաներովն է երդում
21 անում որ նորա վերայ են։ Եւ
տաճարով երդում անողը նորա-
նով և նորանում բնակողովն է
22 երդում անում։ Եւ երկնքովն եր-
դում անողը Աստուծոյ աթո-
ռովն է երդում անում և նորա
23 վերայ նստողովը։ Վայ ձեզ, դը-
պիրներ և փարիսեցիներ՝ կեղծա-
ւորներ, որ անանուխի և սամի-
թի և չամանի տասանորդը տա-
լիս էք, և թողում էք օրէնքի
ծանր ծանր բաները՝ դատաստա-
նը և ողորմութիւնը և հաւատքը.
սա պէտք էր անել՝ և այն չթո-
ղել։ Կոյր առաջնորդներ, որ մը- 24
ժեղը քամում էք, բայց ուղտը
կուլ էք տալիս։ Վայ ձեզ, դը- 25
պիրներ և փարիսեցիներ՝ կեղծա-
ւորներ, որ մաքրում էք բաժակի
և ակառատակի դրսի կողմը, բայց
ներսեանից լիքն են յափշտակու-
թիւնով և անիրաւութիւնով։
Կոյր փարիսեցի, առաջ մաքրիր 26
բաժակի և ակառատակի մէջը, որ
նորանց դուրսն էլ մաքուր լինի։
Վայ ձեզ դպիրներ և փարիսեցի- 27
ներ՝ կեղծաւորներ, որ նման էք
ծեփած գերեզմաններին, որ դրսե-
ւանից գեղեցիկ են երեւում, բայց
ներսեանից լիքն են մեռելների ո-
կերքով և ամեն պղծութիւնով։
Այնպէս էլ դուք՝ դրսեանից ար- 28
դար էք երեւում մարդկանց, բայց
ներսեանից լիքն էք կեղծաւորու-
թիւնով և անօրէնութիւնով։
Վայ ձեզ, դպիրներ և փարիսե- 29
ցիներ՝ կեղծաւորներ, որ մարգա-
րէների տապանները շինում էք՝
և արդարների գերեզմանները զար-
դարում. Եւ ասում էք, եթէ 30
լինէինք մեր հարանց օրերումը,
մասնակից չէինք լինիլ նորանց
հետ մարգարէների արիւնին։ Ո- 31
րովհետեւ դուք ձեր մասին վկայում
էք, թէ որդիք էք մարգարէների
սպանողներին։ Եւ դուք ձեր հա- 32
րանց չափը լցրէք։ Օձեր, իժերի 33
զաւակներ, ի՞նչպէս կ'փախչիք գե-
հենի դատաստանից։ Դորա հա- 34
մար, ահա ես ձեզ մօտ մարգա-
րէներ և իմաստուններ և դպիր-
ներ կ'ուղարկեմ. և նորանցից կըս-
պանէք և կ'խաչէք և նորանցից
ձեր ժողովարաններում կ'տանջէք՝
և քաղաքից քաղաք կ'հալածէք։
Որպէսզի ձեզ վերայ գայ ամեն 35
արդար արիւն, որ երկրի վերայ
թափուել է՝ արդար Աբէլի ա-
րիւնից մինչև Բարաքիայի որդի
Զաքարիայի արիւնը, որին սպա-
նեցիք տաճարի և սեղանի մէջտե-
ղը։ Ճշմարիտն ասում եմ ձեզ, 36

այս բոլորը կ'գայ այս ազգի վերայ։
37 Երուսաղէմ Երուսաղէմ, մարգարէները կոտորող, և քեզ մօտ ուղարկուածները քարկոծող. քանի անգամ կամեցայ քու երեխաները ժողովել, ինչպէս հաւն ժողովէ իր ձագերը թեւերի տակ, 38 և չկամեցաք։ Ահա ձեր տունը 39 աւերուած կ'թողուի ձեզ։ Վասընկի ասում եմ ձեզ, Ըե այսուհետև չէք տեսնիլ ինձ մինչև որ ասէք. Օրհնեալ է Տէրոջը անունով եկողը։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Յիսուս դուրս եկած գնում էր տաճարից, և աշակերտները մօտ եկան որ ցոյց տան նորան 2 տաճարի շինուածքը։ Յիսուս էլ պատասխանեց և ասաց նորանց. Չէք տեսնո՞ւմ այդ ամենը. ճըշմարիտ ասում եմ ձեզ. այդտեղ քար քարի վերայ չի թողուիլ որ չքանդուի։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց լեռան վերայ նստած էր, աշակերտները առանձին նորա մօտ եկան և ասացին. Ասա մեզ, այդ ե՞րբ կ'լինի. և ի՞նչ կ'լինի քո գալուստեան և աշխարհքիս վերջի 4 նշանը։ Յիսուս էլ պատասխանեց և ասաց նորանց. Զգոյշ կացէք, որ մէկը ձեզ չխաբէ։ 5 Վասընկի շատերը կ'գան իմ անունովը կ'ասեն՝ Ես եմ Քրիստոսը. 6 և շատերին կ'մոլորեցնեն։ Կռիւներ և կռիւների համբաւներ էք լսելու, զգոյշ կացէք, որ չշփոթուիք. վասնզի ամենը պէտք է լինի. բայց դեռ վերջը չէ։ 7 Վասընկի ազգ ազգի վերայ վեր կ'կենայ, և թագաւորութիւն թագաւորութեան վերայ. և սովեր կ'լինին. և աստիկ մահեր՝ և տեղ տեղ երկրաշարժութիւններ 8 կ'լինին։ Բայց այս ամենը ցաւերի սկիզբն է։ 9 Այն ժամանակ ձեզ նեղութեան կ'մատնեն. և ձեզ կ'սպանեն, և իմ անունի համար ամեն ազգերից ատուած 10 կ'լինիք։ Եւ այն ժամանակ շատերը կ'գայթակղին, և իրար կը մատնեն և իրար կ'ատեն։ 11 Եւ շատ սուտ մարգարէք դուրս կը գան և շատերին կ'մոլորեցնեն։ 12 Եւ անօրէնութեան շատանալու պատճառաւ՝ շատերի սէրը կը պաղի։ 13 Բայց ով որ մինչև վերջը համբերէ՝ նա կ'փրկուի։ 14 Եւ արքայութեան այս աւետարանը բոլոր տիեզերքումը կ'քարոզուի ամեն հեթանոսներին վկայութիւն լինելու համար։ և այն ժամանակ կ'գայ վերջը։

15 Արդ երբոր տեսնէք աւերածի պղծութիւնը, Դանիէլ մարգարէի ձեռքով ասուածը, սրբութեան տեղումը կանգնած. կարդացողը մտածէ. 16 Այն ժամանակ նորանք, որ Հրէաստանումն են, թող փախչին լեռները։ 17 Ով որ կարի վերայ լինի՝ թող վեր չ'գայ մի բան վեր առնելու իր տնից։ 18 Եւ ով որ յանդումն է՝ թող յետ չդառնայ իր հանդերձները վեր առնելու։ 19 Բայց վայ յղիներին և ծիծ տուողներին այն օրերում։ 20 Եւ ազօթք արէք, որ ձեր փախչիլը ձմեռը չլինի, ոչ էլ շաբաթով։ 21 Վասնզի այն ժամանակ մեծ նեղութիւն կլինի, որ այնպիսին աշխարհքիս սկզբից մինչև հիմայ չեղաւ, և ոչ էլ երբէք կ'լինի։ 22 Եւ եթէ այն օրերն չկարճացուէին, ոչ մի մարմին չէր փրկուիլ. բայց ընտրուածների համար այն օրերը կ'կարճացուին։ 23 Այն ժամանակ եթէ մէկն ասէ ձեզ՝ Ահա այստեղ է Քրիստոսը, կամ այնտեղ. չհաւատաք։ 24 Վասնզի սուտ Քրիստոսներ և սուտ մարգարէներ վեր կ'կենան, և մեծ նշաններ և հրաշքներ տայ կ'տան, մինչև որ եթէ կարելի էր, ընտրուածներին էլ կ'մոլորեցնէին։ 25 Ահա կանխաւ ասացի ձեզ։ 26 Արդ եթէ ասեն ձեզ. Ահա անապատումն է, դուրս չ'գնաք. Ահա ներսի սենեակումն է. չհաւատաք։ 27 Վասնզի ինչպէս կայծակը դուրս է գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք. այնպէս էլ կ'լինի Որդոյ մարդոյ գալուստը։ 28

մարմինը լինի, այնտեղ կ'հաւաքուին արծիւները։
29 Եւ շուտով այն նեղութեան օրերից յետոյ արեգակը կ'խաւարի, և լուսինն իր լոյսը չի տալ, և աստղերը երկնքից վայր կ'ընկնեն, և երկնքի զօրութիւնները
30 կ'շարժուին։ Եւ այն ժամանակ կ'երևի Որդոյ մարդոյ նշանը երկնքումը, և այն ժամանակ կոծ կ'անեն երկրի բոլոր ազգերը, և կ'տեսանեն Որդին մարդոյ գալիս երկնքի ամպերի վերայ զօրութիւնով և շատ փառքով։ Եւ կ'ուղարկէ իր հրեշտակները մեծ ձայն փողով, և նորա ընտրուածներին կ'ժողովեն չորս կողմից՝ երկնքի ծայրերից մինչև նորա միւս ծայրերը։
32 Թզենուց սովորեցէք առակը. երբոր նորա ճղերն արդէն կակուղացել են և տերևը բուսել, գի-
33 տէք որ մօտ է ամառը։ Այսպէս էլ դուք. երբոր այս ամենը տեսանէք, իմացէք որ մօտ է
34 դռներին է։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Այս ազգը չի անցնիլ,
35 մինչև որ այս ամենը լինի։ Երկինքը ու երկիրս կ'անցնեն, բայց իմ խօսքերս չեն անցնիլ։
36 Իսկ այն օրուայ և ժամի համար ոչ ոք չգիտէ, ոչ էլ երկնքի հրեշտակները, բայց միայն
37 իմ Հայրը։ Եւ ինչպէս եղաւ Նոյի օրերին, այնպէս կ'լինի և Որդոյ մարդոյ գալուստը։
38 Վասնզի ինչպէս որ էին ջրհեղեղից առաջ եղած օրերը, ուտում էին և խըմում էին, կին էին առնում և մարդու էին գնում, մինչև այն
39 օրն, որ Նոյը մտաւ տապանը. Եւ չգիտացին, մինչև որ ջրհեղեղն եկաւ, և ամենքը վեր առաւ, այնպէս կ'լինի և Որդոյ մարդոյ գալուստը։
40 Այն ժամանակ երկու հոգի կը լինին արտումը. մէկը կ'առնուի
41 և մէկը կ'թողուի։ Եւ երկու հոգի մի ջաղացում կ'աղան՝ մէկը կ'առնուի և մէկը կ'թողուի։
42 Արդ արթուն կացէք. վասնզի չգիտէք թէ ո՞ր ժամում ձեր
43 Տէրը կ'գայ։ Բայց այս իմացէք,

որ եթէ տան տէրը գիտենար թէ որ պահում կ'գայ գողը, արթուն կ'կենար և թող չէր տալ որ իր տունը ծակեն։ Սորա համար 44
դուք էլ պատրաստ կացէք. վասնզի այն ժամին, որ դուք չէք կարծում, Որդին մարդոյ կ'գայ։ Ո՞ր 45
բեմն ո՞վ է այն հաւատարիմ և խնամատուն ծառան, որին իր տէրն իր ծառաների վերայ դրաւ, որ նորանից կերակուրը ժամանակին։ Երանի այն ծառային, որ 46
նորա տէրը, երբոր գայ, նորան այնպէս անելիս գտնէ։ Ճշմարիտն 47
ասում եմ ձեզ, որ նորան իր ամեն ունեցածների վերայ կ'դնէ։ Բայց եթէ այն չար ծառան իր 48
սրտումն ասէ, Իմ տէրը գալը ուշացնում է. Եւ սկսէ իր ծա- 49
ռայակիցներին ծեծել՝ և արբեցողների հետ ուտել և խմել։ Այն 50
ծառայի տէրը մի օր կ'գայ, որ նա չէ սպասում, և մի ժամ՝ որ նա չգիտէ. Եւ նորան մէջիցը 51
կ'կտրէ, և նորա բաժինը կեղծաւորների հետ կ'դնէ. այնտեղ կ'լինի լացը և ատամների կրճտելը։

ԳԼ. ԻԵ

Այն ժամանակ կ'նմանի երկնքի 1
արքայութիւնը տասն կուսանաց, որ իրանց լապտերները վեր առին և դուրս եկան փեսային դիմաւորելու։ Նորանցից հինգը խմաստուն էին, և հինգը յիմար։ Այն 2
յիմարները վեր առին իրանց լապտերները, բայց ձէթ վեր չառին իրանց հետ։ Սակայն խմաստուն- 3
ներն իրանց անօթներումը ձէթ վեր առին իրանց լապտերների հետ միասին։ Եւ երբոր փեսան ուշա- 4
ցաւ, ամենքը թմրեցան և քնեցին։ Եւ կէս գիշերին աղաղակ եղաւ՝ Ահա փեսան գալիս է. դուրս եկէք նորան դիմաւորելու։ 5
Այն ժամանակ ամեն կուսանքը 6
վեր կացան և իրանց լապտերները պատրաստեցին։ Բայց յիմարներն ասացին խմաստուններին. 7
Տուէք մեզ ձեր իւղիցը, վասնզի մեր լապտերները հանգչում են։ 8
Խմաստուններն էլ պատասխանե- 9

ցին և ասացին . Մի գուցէ մեզ
և ձեզ բաւական չլինի . բայց ա-
ւելի լաւ՝ գնացէք ծախողների
10 մօտ և գնեցէ՛ք ձեզ համար ։ Եւ
երբոր նորանք գնացին գնելու ,
փեսան եկաւ . և պատրաստները
նորա հետ հարսանիքը մտան , և
11 դուռն փակուեցաւ ։ Եւ յետոյ
այն միւս կուսանքն էլ եկան և
ասացին . Տէր , Տէր , բաց մեզ ։
12 Նա էլ պատասխանեց և ասաց .
Ձշմարիտ ասում եմ ձեզ . Ես չեմ
13 ճանաչում ձեզ ։ Արդ՝ արթուն
կացէք . որովհետև չէք գիտում
ոչ օրը և ոչ ժամը , որ նորա-
նում Որդին մարդոյ կ'գայ ։
14 Վասնզի ինչպէս մի մարդ , որ
օտար երկիր էր գնում , իր ծա-
ռաներին կանչեց , և իր ունեցա-
15 ծը նորանց յանձնեց , Եւ մէկին
հինգ քանքար տուաւ , և միւսին
երկու , և միւսին մէկ , իւրաքան-
չիւրին իր կարողութեան չափ ,
16 և շուտով գնաց . Եւ այն հինգ
քանքար առնողը գնաց նորան-
ցով բան արաւ և ուրիշ հինգ
17 քանքար էլ շահեց ։ Այնպէս էլ
նա՝ որ երկուսն առաւ , ուրիշ եր-
18 կուս էլ շահեց ։ Իսկ այն մէկն
առնողը գնաց՝ գետինը փորեց՝ և
իր տիրոջ արծաթը թաքցրեց ։
19 Եւ շատ ժամանակից յետոյ գա-
լիս է այն ծառաների տէրը և
20 նորանցից հաշիւ առնում ։ Եւ
այն հինգ քանքար առնողը մօտ
եկաւ . ուրիշ հինգ քանքար էլ
առաջ բերաւ և ասաց . Տէր ,
ինձ հինգ քանքար տուիր , տես ,
ուրիշ հինգ քանքար էլ շահեցի
21 նորանց վերայ ։ Իր տէրն էլ ա-
սաց նորան . Լա՛ւ , ծառայ՝ բա-
րի և հաւատարիմ , քիչ բաների
վերայ հաւատարիմ էիր , քեզ
շատ բաների վերայ կ'դնեմ . մը-
տիր քո տիրոջ ուրախութիւնը ։
22 Եւ այն երկու քանքար առնողն
էլ մօտ եկաւ և ասաց . Տէր ,
ինձ երկու քանքար տուիր . տես ,
երկու ուրիշ քանքար էլ շահեցի
23 նորանց վերայ ։ Իր տէրը նորան
ասաց . Լա՛ւ , ծառայ՝ բարի և
հաւատարիմ . քիչ բաների վերայ
հաւատարիմ էիր , քեզ շատ բա-
ների վերայ կ'դնեմ . մտիր քո տի-
րոջ ուրախութիւնը ։ Եւ այն մէկ 24
քանքար առնողն էլ մօտ եկաւ
և ասաց . Տէ՛ր , ճանաչում էի
քեզ , որ դու մի պինդ մարդ ես .
հնձում ես ուր որ չսերմեցիր , և
հաւաքում ես , ուր որ չփռեցիր ։
Եւ վախենալով գնացի , թաքցրի 25
քո քանքարը գետնի մէջ . տես
առ քոնը ։ Նորա տէրն էլ պա- 26
տասխանեց և ասաց նորան . Ծա-
ռայ՝ չար և ծոյլ , գիտէիր որ հնձ-
ում եմ ուր որ չսերմեցի , և
հաւաքում եմ ուր որ չփռեցի ։
Ուրեմն պէտք էր որ իմ արծաթը 27
սեղանաւորներին տայիր՝ և ես կը
գայի տոկոսով կ'առնէի իմը ։
Արդ՝ առէք դորանից քանքարը , 28
և տուէք տասը քանքարն ունե-
ցողին ։ Վասն զի ամեն ով որ ու- 29
նի՝ նորան կ'տրուի և կ'աւելանայ ,
բայց նա որ չունի՝ նորանից այն
ունեցածն էլ վեր կ'առնուի ։ Եւ 30
այն անպիտան ծառային հանե-
ցէք դրսի խաւարը , այնտեղ կ'լի-
նի լացը և ատամների կրճտելը ։
Եւ երբոր Որդին մարդոյ իր 31
փառքովը կ'գայ և ամեն սուրբ
հրեշտակները նորա հետ , այն
ժամանակ իր փառաց աթոռի
վերայ կ'նստի . Եւ ամեն ազգերը 32
կ'ժողովուին նորա առջևը , և
նորանց կ'բաժանէ իրարից ինչպէս
հովիւը բաժանում է ոչխարներն
այծերից . Եւ ոչխարներն իր աջ 33
կողմին կ'կանգնեցնէ , իսկ այծե-
րը՝ ձախ կողմին ։
Այն ժամանակ թագաւորը կ'ա- 34
սէ իր աջ կողմիններին , Եկէք ,
ով իմ Հօր օրհնածներ , ժա-
ռանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ
համար պատրաստուած թագա-
ւորութիւնը ։ Վասն զի սովեցի , 35
և տուիք ինձ ուտել , ծարաւեցի
և խմեցրիք ինձ , օտար էի , և ինձ
ձեզ մօտ առիք . Մերկ էի , և հագ- 36
ցրիք ինձ . հիւանդ էի , և ինձ այ-
ցելեցիք . բանտի մէջ էի , և ինձ
մօտ եկաք ։ Այն ժամանակ ար- 37
դարները կ'պատասխանեն նորան
և կ'ասեն . Տէ՛ր , ե՞րբ տեսանք
քեզ սոված , և կերակրեցինք ,
կամ ծարաւ , և խմեցրինք ։ Ե՞րբ 38

տեսանք քեզ օտար, և մեզ մօտ առնինք, կամ մերկ, և հագցրինք։
39 Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ, կամ բանտի մէջ, և եկանք քեզ մօտ։
40 Թագաւորն էլ կ'պատասխանէ և կ'ասէ նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք։
41 Այն ժամանակ կ'ասէ ձախ կողմնեներին էլ. Ինձանից դէն գնացէք, ով անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ, որ պատրաստուած է սատանայի և նորա
42 հրեշտակների համար։ Վասն զի ես սովեցի, և չտուիք ինձ ուտել, ծարաւեցի, և ինձ չխմեցրիք։
43 Օտար էի, և ինձ ձեզ մօտ չառիք. մերկ էի, և ինձ չհագցրիք. հիւանդ և բանտի մէջ էի, և
44 ինձ չայցելեցիք։ Այն ժամանակ նորանք էլ կ'պատասխանեն և կ'ասեն. Տէ՛ր, քեզ ե՞րբ տեսանք սոված, կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, և քեզ ծա-
45 ռայութիւն չարինք։ Այն ժամանակ կ'պատասխանէ նորանց և կ'ասէ. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ որովհետև այս փոքրներից մէկին չ'արիք, ինձ էլ չ'արիք։
46 Եւ սորանք կ'գնան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները յաւիտենական կեանքը։

ԳԼ. ԻԶ

1 Եւ եղաւ երբոր Յիսուս այս ամեն խօսքերը վերջացրեց, իր ա-
2 շակերտներին ասաց. Գիտէք, որ երկու օրից յետոյ զատիկ կ'լինի. և Որդին մարդոյ կ'մատնուի խաչ-
3 ուելու։ Այն ժամանակ քահանայապետները և գպիրները և ժողովրդի ծերերը ժողովուեցան այն քահանայապետի սրահն, որի ա-
4 նունը Կայիափա էր։ Եւ խորհուրդ արին որ Յիսուսին բռնեն
5 նենդութեամբ և սպանեն։ Բայց ասում էին, Այս տօնին ոչ, որ ժողովրդի մէջ խռովութիւն չ'լինի։
6 Եւ երբոր Յիսուս Բեթանիա

էր՝ Սիմոն բորոտի տանը, Ներա
7 մօտ մի կին եկաւ, որ մի շիշ ծանրագին իւղ ունէր, և նորա գլխի վերայ թափեց, երբոր նա
8 սեղան նստած էր։ Ներա աշակերտներն էլ տեսնելով նեղացան և
9 ասացին. Ինչո՞ւ եղաւ այդ կորուստը։ Վասնզի կարող էր այդ
10 իւղը շատի ծախուիլ և աղքատներին տրուիլ։ Յիսուս էլ իմանալով ասաց նորանց. Ինչո՞ւ էք
11 այդ կնոջը նեղութիւն տալիս, վասնզի դա մի բարի բան գործեց ինձ վերայ։ Վասնզի ամեն ժամանակ աղքատներն ունիք ձեզ հետ. բայց ինձ միշտ ձեզ հետ
12 չունիք։ Դա այդ իւղն իմ մարմնի վերայ թափելով, իմ թաղուելու նշանն արաւ։ Բայց ճշմարիտ
13 ասում եմ ձեզ, ուր որ էլ բոլոր աշխարհքի մէջ այս աւետարանը քարոզուի, կ'խօսուի նա էլ, որ դա արաւ՝ դորա յիշատակի համար։

Այն ժամանակ տասներկուսից
14 մէկը, որ Յուդա Իսկարիովտացի էր ասուած, գնաց քահանայապետների մօտ և ասաց. Ինչ էք
15 կամենում ինձ տալ, և ես ձեզ մատնեմ նորան։ Եւ նորանք եբեսուն արծաթ կշռեցին տուին
16 նորան։ Եւ այնուհետև յարմար ժամանակ էր որոնում, որ նորան մատնէ։

Եւ բաղարջակերաց առաջին օ-
17 րում աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին նորան, Ո՞րտեղ ես կամենում, որ քեզ համար զատիկը պատրաստենք ուտելու։
18 Նա էլ ասաց. Գնացէք քաղաքն այս ինչի մօտ, և ասացէք նորան. Վարդապետն ասում է՝ իմ ժամանակը մօտ է. քեզ մօտ կ'առնեմ զատիկն իմ աշակերտների
19 հետ։ Եւ աշակերտներն արին ինչպէս Յիսուս հրամայեց նորան. և զատիկը պատրաստեցին։
20 Եւ երբոր իրիկուն եղաւ տասն-
21 երկուսի հետ սեղան նստեց։ Եւ նորանք ուտելիս, ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ձեզանից մէկը կ'մատնէ ինձ։
22 Եւ շատ արտմած՝ նորանց ամեն մէկն ը-

կաեցին նորան ասել. միթէ ե՞ս
23 եմ, Տէր։ Նա էլ պատասխանեց
և ասաց. Նա որ ինձ հետ իր ձեռն
ակաւտուակի մէջ մատըեց, նա
24 կ'մատնէ ինձ։ Իրաւի մարդոյ Որ-
դին կ'գնայ, ինչպէս նորա հա-
մար գրուած է. բայց վա՛յ այն
մարդոյն, որի ձեռով Որդին մար-
դոյ կ'մատնուի. լաւ էր նորան,
թէ այն մարդը ծնուած չլինէր։
25 Յուդան էլ՝ նորա մատնողը՝ պա-
տասխանեց և ասաց. Միթէ ե՞ս
եմ, վարդապետ։ Նորան ասաց,
դու ասացիր։

26 Եւ նորանք դեռ ուտում էին,
Յիսուսը հացն առաւ և օրհնե-
լով կարեց, և աշակերտներին
տուաւ և ասաց. Առէ՛ք կերէք,
27 այս է իմ մարմինը։ Եւ բաժակն
առաւ, գոհացաւ, նորանց տուաւ
և ասաց. Խմեցէ՛ք դորանից ա-
28 մենքդ։ Վ՚ասնզի այդ է իմ ա-
րիւնը նոր ուխտի, որ թափվում
է շատերի համար՝ ի թողութիւն
29 մեղաց։ Մէսյն ասում եմ ձեզ,
թէ այսուհետև որթի այս բեր-
քից էլ չեմ խմիլ մինչև այն
օրն, որ գորան ձեզ հետ նոր կը
խմեմ իմ Հօր արքայութեան մէջ։

30 Եւ օրհնաբանելուց յետոյ գուրս
31 եկան Զիթենեաց լեառը։ Այն
ժամանակ Յիսուսը նորանց ասաց.
դուք ամենքդ այս գիշեր կ'գայ-
թակղիք ինձանից. վասնզի գրու-
ած է՝ Հովիւը կ'զարնեմ՝ և
32 հօտի ոչխարները կ'ցրուին։ Բայց
իմ յարութիւն առնելուցն յե-
տոյ ձեզանից առաջ կ'գնամ Գա-
33 լիլեա։ Պետրոսը պատասխանեց
և ասաց նորան. Թէ և ամենքն
էլ գայթակղին քեզանից, ես եր-
34 բէք չեմ գայթակղիլ։ Յիսուսը
նորան ասաց. Ճշմարիտն ասում
եմ քեզ. այս գիշեր դեռ հաւը
չխօսած՝ երեք անգամ կ'ուրա-
35 նաս ինձ։ Պետրոսը նորան ասաց.
եթէ քեզ հետ մեռնելու էլ լի-
նիմ, չեմ ուրանալ քեզ. այն-
պէս էլ բոլոր աշակերտներն էին
ասում։

36 Այն ժամանակ Յիսուսը նո-
րանց հետ մի տեղ եկաւ՝ անուա-
նը Գեթսեմանի, և ասաց աշա-
կերտներին. Այդտեղ նստեցէք,
մինչև որ գնամ աղօթք անեմ
այնտեղ։ Եւ Պետրոսին և Զերե- 37
դեայի երկու որդիանց իր հետ
առաւ, սկսեց տրտմիլ և վշտա-
նալ։ Այն ժամանակ նորանց ա- 38
սաց. Հոգիս մեռնելու չափ տրըտ-
մած է. այստեղ մնացէք, և ինձ
հետ արթուն կացէք։ Եւ մի քիչ 39
առաջ գնալով իր երեսին վերայ
ընկաւ, աղօթք էր անում և ա-
սում. Իմ Հայր, եթէ կարելի է,
թող այս բաժակն ինձանից անց-
նի. սակայն ոչ թէ ինչպէս ես
եմ կամենում, այլ ինչպէս դու։
Եւ աշակերտների մօտ է գալիս, 40
և նորանց քնի մէջ է գտնում
և ասում Պետրոսին. Այդպէս՝
մէկ ժամ էլ չկարացիք ինձ հետ
արթուն կենալ։ Արթուն կացէք 41
և աղօթք արէք, որ փորձութեան
մէջ չմտնէք. հոգին յօժար է,
բայց մարմինը տկար։ Դարձեալ 42
երկրորդ անգամ Յիսուսը գնաց,
աղօթք արաւ և ասաց. Իմ Հայր,
եթէ կարելի չէ, որ այս բաժակն
ինձանից անցնի առանց իմ նո-
րան խմելուա, քո կամքը լինի։
Եւ գալով նորանց գտաւ քնի- 43
նի մէջ է գտնում. վասնզի նո-
րանց աչքերը ծանրացել էին։
Նորանց թողեց՝ դարձեալ գնաց, 44
և երրորդ անգամ աղօթք արաւ
և միևնոյն խօսքն ասաց։ Այն ժա- 45
մանակ իր աշակերտներին մօտ է
գալիս և նորանց ասում. Այժու-
հետև քնեցէք և հանգստացէք.
վասնզի ահա հասել է ժամը, և
Որդին մարդոյ մատնվում է մե-
ղաւորաց ձեռքը։ Վեր կացէք գը- 46
նանք, ահա հասաւ ինձ մատնողը։

Եւ նա տակաւին խօսում էր, 47
ահա Յուդան, այն տասներկուսից
մէկը եկաւ, և նորա հետ մեծ
ամբոխ սրերով և բիրերով, քա-
հանայապետների և ժողովրդի ծե-
րերի կողմից։ Եւ նորան մատնո- 48
ղը նորանց նշան էր տուել և ա-
սել. Որին որ համբուրեմ, նա է,
բռնեցէք նորան։ Եւ շուտով Յի- 49
սուսի մօտ եկաւ և ասաց. Ռաբ-
բի, վարդապետ. և նորան համ-
բուրեց։ Յիսուսն էլ ասաց նո- 50

րան. Ընկերը, ինչո՞ւ համար եր-
կար. և այն ժամանակ մօտ ե-
կան՝ Յիսուսին ձեռք ձգեցին՝ և
51 բռնեցին նորան։ Եւ ահա Յիսու-
սի հետ լինողներից մէկը ձեռք
մեկնեց, իր սուրը հանեց, և
քահանայապետի ծառային զար-
52 կելով ականջը կտրեց։ Այն ժա-
մանակ Յիսուսը նորան ասաց.
Սուրդ տեղը դիր. վասնզի բոլոր
սուր վեր առնողները սրով պի-
53 տի կորչին։ Կամ կարծո՞ւմ ես,
թէ չեմ կարող հիմա իմ Հօրն
աղաչել, որ հասցնէ ինձ տասի
քան տասներկու գունդ հրեշ-
54 տակներ։ Բայց ի՞նչպէս կ'կա-
տարուին գրքերը, թէ այսպէս
պէտք է լինել։
55 Այն ժամին Յիսուս ոյն ամ-
բոխներին ասաց. Ինչպէս մի ա-
ւազակի վերայ սրերով և բիրե-
րով դուրս եկաք ինձ բռնելու.
ամեն օր ձեզ մօտ նստում էի
և ուսմարուսմը աւետարանում, և
56 չբռնեցիք ինձ։ Բայց այս ամենը
եղաւ, որ մարգարէների գրքերը
կատարուին։ Այն ժամանակ բո-
լոր աշակերտները նորան թողին
փախան։
57 Բայց նորանք Յիսուսին բռնե-
ցին տարան Կայիափա քահանա-
յապետի մօտ, ուր որ դպիրները
58 և ծերերը ժողովուած էին։ Պետ-
րոս էլ գնում էր նորա ետևից
հեռուանց մինչև քահանայապե-
տի սրահը, և ներս մտաւ, ծա-
ռաների հետ նստեց վերջը տես-
59 նելու։ Բայց քահանայապետնե-
րը և ծերերը և բոլոր տեսանը
Յիսուսի դէմ սուտ վկայութիւն
էին որոնում, որ նորան սպանեն
60 և չգտան։ Եւ թէպետ շատ սուտ
վկաներ էին եկել, բայց չգտան.
վերջապէս երկու սուտ վկաներ
61 առաջ եկան, և ասացին. Սա
ասաց ես կարող եմ Աստուծոյ
տաճարը քանդել՝ և երեք օրու-
62 մը շինել նորան։ Եւ քահանա-
յապետը վեր կացաւ նորան ա-
սաց. Ոչինչ չես պատասխանում
ինչ որ դրանք քեզ դէմ վկա-
63 յում են։ Եւ Յիսուսը լուռ էր
կենում։ Եւ քահանայապետը
պատասխանեց և ասաց նորան.
Երդում եմ տալիս քեզ կենդա-
նի Աստուծովը որ մեզ ասես,
թէ դո՞ւ ես Քրիստոսը Աստու-
ծոյ որդին։ Յիսուս էլ նորան 64
ասաց. Դու ասացիր. ամենին
ասում եմ ձեզ, որ հիմիկուց յե-
տոյ կ'տեսանէք Որդին մարդոյ Զօ-
րութեան աջ կողմը նստած՝ և
երկնքի ամպերի վերայ գալիս։
Այն ժամանակ քահանայապետն 65
իր հանդերձները պատռեց և
ասաց, թէ Հայհոյեց. էլ ի՞նչ
պէտք են մեզ վկայք. ահա հի-
մա դորա հայհոյանքը լսեցիք։
Ի՞նչպէս է երևում ձեզ։ Նորանք 66
էլ պատասխանեցին և ասացին.
Մահապարտ է։ Այն ժամանակ 67
թքեցին նորա երեսին, և բքռնց-
քով ծեծեցին նորան, ոմանք էլ
ապտակ տուին նորան, ասելով.
Մարգարէացիր մեզ, Քրիստոս, 68
ո՞վ էր քեզ զարկողը։
Եւ Պետրոսը դուրսը նստած էր 69
սրահում, և մէկ աղախին եկաւ
նորա մօտ և ասաց. Դու էլ Գա-
լիլեացի Յիսուսի հետ էիր։ Նա 70
էլ բոլորի առջևը ուրացաւ և
ասաց. Չեմ գիտում թէ ինչ ես
ասում։ Եւ երբոր նա դուրսը բա- 71
կը գնաց, մի ուրիշ կին նորան
տեսաւ և այնտեղ լինողներին ա-
սաց. Սա էլ էր Նազովրեցի Յի-
սուսի հետ։ Եւ դարձեալ ուրա- 72
ցաւ երդումով, թէ Ես այն մար-
դը չեմ ճանաչում։ Եւ քիչ ժա- 73
մանակից յետոյ այնտեղ կանգ-
նողները եկան և Պետրոսին ասա-
ցին. Ճշմարիտ՝ դու էլ նորան-
ցից ես. վասնզի քո խօսքն էլ
յայտնի է անում քեզ։ Այն ժա- 74
մանակ սկսեց անիծել և երդուիլ
թէ այն մարդուն չեմ ճանաչում,
և շուտով հաւը խօսեց։ Եւ Պետ- 75
րոսը յիշեց Յիսուսի այն խօսքն,
որ ասաց. Թէ հաւը խօսելուց
առաջ երեք անգամ կ'ուրանաս
ինձ. և դուրս գնաց դառնապէս
լաց եղաւ։

ԳԼ. ԻԷ

Եւ երբոր առաւօտ եղաւ, բո- 1

լոր քահանայապետները և ժողովրդի ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ արին, որ սպանեն նորան։
2 Եւ նորան կապելով տարան, և Պոնտացի Պիղատոս կուսակալին յանձնեցին։
3 Այն ժամանակ նորա մատնիչ Յուդան տեսնելով, որ դատապարտուեցաւ, զղջացած այն երեսուն արծաթը կիսո դարձրեց քահանայապետներին և ծերերին,
4 և ասաց, մեղք գործեցի անմեղ արիւն մատնելով։ Նորանք էլ ասացին, Մե՞զ ինչ.
5 դո՛ւ տես։ Եւ արծաթը գցեց տաճարի մէջ հեռացաւ, և գնաց
6 խեղդուեցաւ։ Եւ քահանայապետները որ արծաթն առին, ասացին. Արժան չէ գորան գանձանակի մէջ ընդունել, որովհետև արիւնի գին է։
7 Եւ խորհուրդ արին և նորանով բրուտի արտաւեղն առին, օտարականների գերեզմանատեղի համար։
8 Որոհամար այն արտաւեղը Արիւնի արտ
9 կոչուեցաւ մինչև այսօր։ Այն ժամանակ կատարուեցաւ Երեմիա մարգարէի ձեռով ասուածը, եւ երեսուն արծաթն առին, այն ծախուածի գինը՝ որ Իսրայէլի որդիներից առել էին,
10 և նորան բրուտի արտին տուին, ինչպէս հրամայեց ինձ Տէրը։
11 Եւ Յիսուս կանգնեց կուսակալի առջևը. և կուսակալը հարցրեց նորան և ասաց. Դո՞ւ ես Հրէից թագաւորը։ Յիսուս էլ
12 ասաց նորան, Դու ես ասում։ Եւ երբոր քահանայապետներից և ծերերից ամբաստանվում էր ոչ
13 ինչ չպատասխանեց։ Այն ժամանակ Պիղատոսը ասաց նորան. Չե՞ս լսում՝ ո՛րչափ բաներ են քեզ
14 հակառակ վկայում։ Եւ նորան իսկի մէկ բան էլ չպատասխանեց. մինչև որ կուսակալն էլ շատ զարմացաւ։
15 Բայց սովորութիւն էր կուսակալին տոնի ժամանակում մէկ կապուած արձակել ժողովրդի համար. որին որ ուզում էին։
16 Եւ այն ժամանակ մի նշանաւոր բանտարկեալ ունէին, անունը

հարաբբաս։ Այդ երբոր նորանք 17
հաւաքուեցան, Պիղատոսը ասաց նորանց. Ո՞րն էք ուզում, որ ձեզ համար արձակեմ. Բարաբբայի՞ն, թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչվում։ Վասնզի գիտէր, 18
որ նախանձով էին մատնել նորան։
Եւ երբոր նա տեղն նստած 19
էր, նորա կինն մարդ ուղարկեց նորա մօտ և ասաց. Այդ արդար մարդոյ հետ դուբան չունիս. վասնզի շատ բաներ քաշեցի այսօր նորա պատճառով։ Բայց քահա- 20
նայապետները և ծերերը ժողովրդին համոզեցին, որ Բարաբբային ուզեն, իսկ Յիսուսին կորցնեն։ Եւ կուսակալը պատասխա- 21
նեց և ասաց նորանց. Այս երկուսից ո՞րն էք ուզում, որ արձակեմ ձեզ համար։ Եւ նորանք ասացին, Բարաբբային։ Պիղա- 22
տոս ասաց նորանց. Ապա ի՞նչ անեմ Յիսուսին որ Քրիստոս է կոչվում։ Ամենքն ասացին. Թող խաչուի։ Եւ կուսակալն ասաց, 23
Ապա ի՞նչ չար բան է արել։ Բայց նորանք էլ աւելի էին ազաղակում և ասում, Խաչուի։ Պիղա- 24
տոս էլ երբոր տեսաւ, թէ ոչինչ օգուտ չէ անում, այլ աւելի խռովութիւն է լինում, ջուր առաւ՝ ձեռները լուաց ժողովրդի առջևը և ասաց. Ես այդ արդարի արիւնից անմեղ եմ, դուք տեսէք։ Եւ բոլոր ժողովուրդը 25
պատասխանեց և ասաց. Նորա արիւնը մեզ վերայ և մեր որդոց վերայ։ Այն ժամանակ Բարաբ- 26
բային արձակեց նորանց համար, և Յիսուսին ծեծելուց յետոյ յանձնեց որ խաչուի։
Այն ժամանակ կուսակալի զին- 27
ուորները Յիսուսին տարան պալատը, և բոլոր զօրագունդը հաւաքեցին նորա վերայ։ Եւ նորան 28
մերկացնելով նորա վերայ մի կարմիր քղամիդ գցեցին։ Եւ փշերից 29
մի թագ ոլորեցին՝ նորա գլխին դրին, և նորա աջ ձեռին մի եղէգ. և նորա առջևը ծունր դնելով ծաղր էին անում և ասում. Ողջ լեր, Հրէից թագաւոր։ Եւ 30
նորա վերայ թքելով եղէգն առ-

նում էին և նորա գլուխը ծե-
31 ծում, և երբոր ծաղր արին նո-
րան, կապիր քղամիդը նորանից
հանեցին և նորան հագցրին իր
հանդերձները, և տարան նորան
խաչելու։
32 Եւ երբոր դուրս եկան, մի կիւ-
րենացի մարդ գտան՝ անունը Սի-
մոն, նորան պահակ բռնեցին, որ
33 նորա խաչը վեր առնէ, և երբոր
Գողգոթա տուած տեղն եկան,
34 որ գանկի տեղ ասել է. Նորան
լեղու հետ խառնած գինի տուին
խմել. և երբոր ճաշակեց, չէր
35 կամենում խմել։ Նորան խաչող-
ներն էլ բաժանեցին նորա հան-
դերձները՝ վիճակ գցելով, որ կա-
տարուի մարգարէից ձեռով ա-
ռածը՝ իմ հանդերձներն իրանց
մէջ բաժանեցին, և իմ պատ-
մուճանի վերայ վիճակ էին գցում։
36 Եւ նստած պահում էին նորան
37 այնտեղ։ Եւ նորա յանցանքը գը-
րուած դրին իր գլխից վեր.
ՍԱ Է ՅԻՍՈՒՍ՝ ՀՐԷԻՑ ԹԱԳԱ-
38 ԻՈՐԸ։ Այն ժամանակ նորա հետ
երկու աւազակներ խաչեցան՝
մէկը աջ կողմին և միւսը ձախ
կողմին։
39 Եւ անցնող դարձողները հայ-
հոյում էին նորան, իրանց գլուխ-
40 ները շարժելով, և ասում. Ով
տաճարը քանդող՝ և երեք օրում
շինող, ազատիր քեզ. եթէ Ա-
ստուծոյ Որդի ես, իջիր խաչից։
41 Այնպէս էլ քահանայապետներն
էին ծաղր անում գպիրների և
42 ծերերի հետ և ասում. Ուրիշնե-
րին ազատեց, ինքն իրան չէ կա-
րողանում ազատել. Թէ որ Իս-
րայէլի Թագաւորն է, իջնէ հիմա
խաչից, և կ'հաւատանք նորան։
43 Աստուծոյն յուսացաւ, հիմա
թող փրկէ նորան, եթէ ուզում
է նորան. վասնզի ասաց, Թէ
44 Աստուծոյ Որդի եմ։ Միևնոյնն
էլ աւազակները, որ նորա հետ
խաչուած էին, նախատում էին
նորան։
45 Եւ ժամը վեցից խաւար եղաւ
ամբողջ երկրի վերայ մինչև իննե
46 ժամը։ Եւ ժամը իննի դէմ, Յի-
սուս մեծ ձայնով աղաղակեց և
ասաց. Էլի՛ Էլի՛ լա՛մա սաբաք-
թանի. այսինքն, Իմ Աստուած՝
իմ Աստուած, ինչո՞ւ թողիր ինձ։
47 Անտեղ կանգնածներից ոմանք
էլ երբոր լսեցին, ասում էին՝
Թէ Եղիային է կանչում դա։ Եւ
48 շուտով նորանցից մէկը վազեց՝
մի սպունգ առաւ քացախով լց-
րեց, եղէգի վերայ անցրեց՝ և նո-
րան առաւ, որ խմէ. Եւ միւս-
49 ներն ասում էին, Թող տեանենք,
Թէ Եղիան կ'գա՞յ՝ դորան փրկէ։
50 Յիսուսը դարձեալ մեծ ձայնով
կանչեց՝ և արձակեց հոգին։
51 Եւ ահա տաճարի վարագոյրն
ներքէն երկու ճղուեցաւ վերևիցը
մինչև ցածը, և երկիրը շարժեց.
52 և քարերը պատռուեցան. Եւ
գերեզմանները բացուեցան. և
շատ սուրբ հանգչողից մարմիններ
53 յարութիւն առին. Եւ գերեզ-
մաններից դուրս գալով, նորա
յարութիւնից յետոյ, սուրբ քա-
ղաքը մտան, և շատերին երևե-
ցան։
54 Բայց հարիւրապետը և նորանք,
որ նորա հետ Յիսուսին պահում
էին, երբոր երկրաշարժը և այն
եղածները տեսան, շատ վախե-
ցան և ասացին. Ճշմարիտ որ սա
Աստուծոյ Որդի էր։
55 Եւ այն տեղ շատ կանայք կա-
յին, որ հեռուանց մօրիկ էին տա-
լիս, որ Գալիլեայից Յիսուսի ե-
տևից էին եկան նորան ծառայու-
թիւն անելու։ Որոնց միջումն
56 էր Մարիամ Մագդաղենացին՝ և
Մարիամ Յակոբի և Յոսէի մայ-
րը՝ և Զեբեդէոսի որդոց մայրը։
57 Եւ երբոր իրիկուն եղաւ Ար-
մաթիայից մի հարուստ մարդ ե-
կաւ՝ անունը Յոսէփ, որ ինքն էլ
աշակերտ եղած էր Յիսուսին։
58 Սա գնաց Պիղատոսի մօտ և Յիսուսի
մարմինը խնդրեց. այն ժամանակ
Պիղատոս հրամայեց որ մարմինը
տուին։ Եւ Յոսէփը մարմինն առ-
59 նելով մաքուր կտաւով պատա-
60 նեց, Եւ դրաւ իր նոր գերեզմա-
նի մէջ, որ վէմի մէջ փորել էր.
և գերեզմանի դրանը մի մեծ քար
գլորելց գնաց։ Եւ այնտեղ էր
61 Մարիամ Մագդաղենացին և միւս

Մարիամը, գերեզմանի դիմացը նստած։
62 Եւ հետևեալ օրը որ ուրբաթից յետոյ է, քահանայապետները և փարիսեցիները հաւաքուեցան Պիղատոսի մօտ,
63 ըսին. Տէր, յիշեցինք որ այն մոլորեցուցիչը, դեռ կենդանի, ասաց էր. երեք օրից յետոյ յարութիւն կ'առնեմ.
64 ուրեմն հրամայիր, որ մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւնով պահեն. մի գուցե աշակերտները գիշերը գան՝ նոքան գողանան, և ժողովրդին ասեն՝ Մեռելներից յարութիւն առաւ, և յետին մոլորութիւնը չար լինի քան թէ առաջինը։
65 Պիղատոսն էլ ասաց նոքանց. Ունիք պահապան զինուորներ, գնացէք՝ զգոյշ պահեցէք՝
66 ինչպէս գիտէք։ Նոքանք էլ գնացին գերեզմանին պահպանութիւն արին, քարը կնքելով պահապան զինուորների հետ։

ԳԼ. ԻԸ

1 Եւ շաբաթի երիկունն՝ որ միշաբաթի էր լուսանում, Մարիամ Մագդալենացին եկաւ՝ և միւս Մարիամը գերեզմանը տեսանելու։
2 Եւ ահա մեծ շարժ եղաւ, վասն զի Տիրոջը հրեշտակը երկնքից իջաւ գնաց դռնից այն քարը հեռու թաւալեց, և նորա վերայ
3 նստեց։ Եւ նորա կերպարանքը փայլակի պէս էր, և նորա հագուստը ձիւնի պէս սպիտակ։
4 Եւ նորա սոխից պահապանները շարժուեցան, և մեռելի նման եղան։
5 Եւ հրեշտակը պատասխանեց և այն կանանցն ասաց, Մի վախենաք դուք, գիտեմ որ խաչուած Յիսուսին էք որոնում։
6 Այստեղ չէ. վասնզի յարութիւն առաւ, ինչպէս ասաց. եկէք, տեսէք այնտեղը, ուր Տէրը պառկած էր։
7 Եւ շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք, թէ յարութիւն առաւ մեռելներից. և ահա նա ձեզանից առաջ Գալիլեա է գնում. այնտեղ նորան կը տեսանէք. ահա ասացի ձեզ։
8 Եւ շուտով գերեզմանից գնացին վախով և մեծ ուրախութիւնով վազում էին նորա աշակերտներին պատմելու։
9 Եւ երբոր գնում էին որ նորա աշակերտներին պատմեն, և ահա Յիսուս պատահեց նոքանց և ասաց. Ողջոյն ձեզ. և նոքանք մօտ եկան, նորա ոտները բռնեցին և նորան երկրպագութիւն արին։
10 Յիսուս ասաց նոքանց. Մի վախենաք. գնացէք իմ եղբայրներին պատմեցէք, որ գնան Գալիլեա, և այնտեղ կ'տեսանեն ինձ։
11 Եւ երբոր նոքանք գնացին, ահա պահապան զինուորներից ոմանք եկան քաղաքը և պատմեցին քահանայապետներին բոլոր եղածները։
12 Եւ նոքա ժողովի հետ հաւաքուած խորհուրդ արին, և շատ փող տուին զինուորներին,
13 և ասացին. Ասացէք, թէ նորա աշակերտները գիշերը եկան գողացան նորան, երբոր մենք քնած էինք։
14 Եւ եթէ այդ լուրը կուսապետին հասնէ, մենք կ'համոզենք նորան և ձեզ անհոգ կ'անենք։
15 Եւ նոքանք փողն առնելով, այնպէս արին ինչպէս սովորեցրուած էին. և այս բանը հռչակուեցաւ Հրէաների մէջ մինչև այսօր։
16 Բայց տասնումէկ աշակերտները գնացին Գալիլեա այն լեռան որ Յիսուս նոքանց հրամայել էր։
17 Եւ երբոր նորան տեսան, երկրպագութիւն արին նորան, և ոմանք երկմտեցան։
18 Եւ Յիսուս մօտ գալով նոքանց հետ խօսեց և ասաց, Ամեն իշխանութիւնն ինձ տրուեցաւ երկնքում և երկրում.
19 ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նոքանց մկրտելով յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ.
20 նոքանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի պահեն. և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր. մինչև աշխարհքի վերջը։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկսումն Որդի՛ Յիսուսի Քրիս-
տոսի աւետարանի սկիզբը։
2 Ինչպէս գրուած է մարգարէ-
ներուն. Ահա ես իմ հրեշտակն
ուղարկում եմ քու երեսի առ-
ջեւից, որ պատրաստէ քու ճանա-
3 պարհը քու առջեւ. Կանչողի ձայն
անապատումը՝ պատրաստ արէք
Տէրոջ ճանապարհը, և շիտակ ա-
4 րէք նորա շաւիղները։ Յովհաննէ-
սը անապատումը մկրտում էր,
և ապաշխարութեան մկրտու-
թիւն քարոզում՝ մեղաց թողու-
5 թեան համար։ Եւ գնում էր նո-
րա մօտ Հրէաստանի բոլոր երկի-
րըն և ամեն Երուսաղէմացիք, և
ամենքը նորանից մկրտուում էին
Յորդանան գետումն, իրանց մեղ-
6 քերը խոստովանելով։ Եւ Յովհան-
նէսը ուղտու բուրդ էր հագած,
և կաշուց գօտիկ իր մէջքին, և
նորա կերակուրը մորեխ և վայրի
7 մեղր. Եւ քարոզելով ասում էր,
Ինձանից զօրաւորը գալիս է իմ
ետևից, որին ես արժանի չեմ
խոնարհուել և նորա կօշիկների
8 կապն արձակել։ Ես ջրով մկրտե-
ցի ձեզ, բայց նա Սուրբ Հոգով
կ՚մկրտէ ձեզ։
9 Եւ եղաւ այն օրերումն՝ որ Յի-
սուս եկաւ Գալիլեացոց Նազա-
րէթից, և մկրտուեցաւ Յով-
10 հաննէսից Յորդանանի մէջ։ Եւ
շուտով որ ջրից դուրս է գա-
լիս՝ տեսաւ երկինքը ճղուած, և
Հոգին աղաւնու պէս՝
11 որ իջնում էր նորա վերայ։ Եւ
ձայն եղաւ երկնքից՝ Դու ես իմ
սիրելի Որդին, որին ես հաճեցայ։
12 Եւ շուտով Հոգին նորան անա-
13 պատը հանեց։ Եւ նա այնտեղ
անապատումն էր քառասուն օր
սատանայից փորձուելով. և գա-
զանների հետ էր, և հրեշտակ-
ները ծառայում էին նորան։
14 Եւ Յովհաննէսը մատնուելուց
յետոյ, Յիսուսը եկաւ Գալիլեա,
Աստուծոյ աւետարանը քարո-
15 զում էր և ասում՝ թէ ժամանակը
կատարուել է, և Աստուծոյ ար-
քայութիւնը մօտեցել է. ապաշ-
խարեցէք, և հաւատացէք աւե-
տարանին։
16 Գալիլեացոց ծովի մօտովն անց-
կենալիս, տեսաւ Սիմոնին և նո-
րա եղբայր՝ Անդրէասին, որ ձո-
կան էին գցում ծովը. վասնզի
17 ձկնորս էին։ Եւ Յիսուս նորանց
ասաց. Իմ ետևից եկէք, և ես
կանեմ ձեզ, որ մարդկանց որ-
սորդ լինիք։
18 Եւ շուտով իրանց
ուռկանները թողին և նորա ետե-
19 ւից գնացին։ Եւ այնտեղից մի
քիչ առաջ գնալով, Յակոբոս
Զեբեդեանին և նորա եղբայր՝ Յո-
հաննէսին տեսաւ, որոնք էլ նա-
ւի մէջ ուռկանները շինում էին,
20 և շուտով նորանց կանչեց։ Եւ
նորանք իրանց հօր՝ Զեբեդէո-
սին վարձկանների հետ նաւի մէջ
թողելով, նորա ետևից գնացին։
21 Եւ մտնում են Կափառնայում.
և շուտով շաբաթ օրը ժողով-
րանը մտաւ և ուսուցանում էր։
22 Եւ զարմանում էին նորա վար-
դապետութեան վերայ. վասնզի
ուսուցանում էր նորանց՝ ինչպէս
իշխանութիւն ունեցող և ոչ թէ
դպիրների պէս։ 23 Եւ նորանց ժո-
ղովարանումը մի մարդ կար՝ պիղծ
դեւով բռնուած, և աղաղակեց և
24 ասաց. Թող տուր. ի՞նչ բան ու-
նես մեզ հետ, Յիսուս Նազովե-
ցի. եկար մեզ կորցնելո՞ւ. գի-

տեմ քեզ, Ե՛ ով ես, Աստուած Սուրբդ։ Եւ Յիսուսը ասաց նորան և ասաց, Պապանձիր, և դորանից դուրս եկ։ Եւ պիղծ ղևը աստիկ թափահարեց նորան, և մեծ ձայնով աղաղակելով դուրս եկաւ նորանից։ Եւ ամենքը զարմացան, մինչև որ իրանց մէջ հարցուփորձ էին անում և ասում. Սա ի՞նչ է, ինչ նոր վարդապետութիւն է դա, որ իշխանութիւնով պիղծ ղևերին էլ ասաում է՝ և հնազանդուեն իրան։ Եւ նորա համբաւը շուտով դուրս գնաց Գալիլեայի ամեն կողմերը։

Եւ շուտով ժողովարանից դուրս գալով, եկան Սիմոնի և Անդրէասի տունը՝ Յակոբի և Յոհաննէսի հետ։ Եւ Սիմոնի զոքանչը տենդած պառկած էր, և շուտով նորա համար ասացին նորան։ Եւ մօտ եկաւ վերկացրեց նորան՝ ձեռքը բռնելով. և շուտով տենդը թողեց նորան, և նա ծառայում էր նորանց։ Եւ երբոր իրիկուն եղաւ, արեգակը մանելիս, բոլոր հիւանդները և դիւահարները նորա մօտ բերին։ Եւ բոլոր քաղաքը ժողովուած էր դրան առջևը։ Եւ շատ հիւանդներին չարշկից կերպ կերպ ցաւերով, և շատ դևեր հանեց. և թոյլ չէր տալիս դևերին որ խօսին. վասնզի գիտում էին նորան։

Եւ լուսածագին առաւօտանց շատ կանուխ վերկացաւ՝ դուրս եկաւ գնաց մի անապատ տեղ, և այնտեղ աղօթք էր անում։ Եւ նորա ետևից գնացին Սիմոնը և նորա հետ լինողները։ Եւ երբոր նորան գտան, ասացին նորան, Թէ Ամենքը որոնում են քեզ։ Եւ նորանց ասաց. Եկէ՛ք այդ գիւղաքաղաքներն էլ գնանք, որ այնտեղ էլ քարոզեմ. վասնզի սորա համար եմ եկած։ Եւ բոլոր Գալիլեայի մէջ նորանց ժողովարաններում քարոզում էր, և դևերը հանում։

Եւ մի բորոտ եկաւ նորա մօտ, աղաչում էր նորան և ծունր էր դնում առջևը և ասում նորան. Թէ որ կամենաս կարող ես ինձ սրբել։ Յիսուսն էլ գթալով ձեռը մեկնեց, նորան դիպաւ, և ասաց նորան. Կամենում եմ սրբուիր։ Եւ երբոր ասաց նորան, շուտով բորոտութիւնը գնաց նորանից, և սրբուեցաւ։ Եւ նորան ասաելով՝ շուտով դուրս հանեց նորան, և ասաց նորան։ Զգոյշ կաց ոչ ոքի ոչինչ չասես. այլ գնա՝ քեզ ցոյց տուր քահանային, և քո սրբութեան համար մատուցիր այն, որ Մովսէսը հրամայեց, նորանց վկայութիւն լինելու համար։ Եւ նա դուրս գալով, սկսեց շատ բաներ քարոզել և այն բանը տարածել, մինչև որ նա այլևս չէր կարողանում յայտնապէս քաղաքը մտնել, այլ դուրսը անապատ տեղերում էր, և ամեն կողմերից գալիս էին նորա մօտ։

ԳԼ. Բ

Եւ դարձեալ մտաւ Կափառնայում ետ՝ օրից յետոյ, և լսուեցաւ թէ տանն է, և շատ մարդիկ ժողովուեցան, մինչև որ տեղ չկար և ոչ էլ դրան մօտ. և խօսում էր նորանց Աստուծոյ խօսքը։ Եւ գալիս էին նորա մօտ, և մի անդամալոյծ էին բերում չորս մարդով վեր առած։ Եւ երբոր չկարողացան մօտենալ նորան ամբոխի պատճառաւը, այն տան ծածկը քանդեցին, ուր էր Յիսուսը, և ծակ բանալով այն մահճակն իջեցրին, որի վերայ անդամալոյծը պառկած էր։ Յիսուսն էլ նորանց հաւատքը տեսնելով, ասաց անդամալոյծին. Որդեակ, թողուած լինին քեզ քո մեղքերը։ Եւ գրպիրներից ոմանք այնտեղ նստած էին. և իրանց սրտերում միտք էին անում. Ինչո՞ւ համար սա այսպէս հայհոյութիւններ է խօսում. ո՞վ կարող է մեղք թողնել, եթէ ոչ մէկը՝ Աստուած։ Եւ Յիսուսը իր հոգու մէջ շուտով գիտաց, թէ իրանց սրտում այսպէս են միտք անում, և

ասաց Նորանց. Ինչո՞ւ էք ձեր
սրտերուն այդ բաները մտա-
9 ծում։ Ո՞րն է հեշտ. անդամա-
լոյծին ասել՝ Թողուած լինին քեզ
քո մեղքերը, կամ ասել՝ Վեր
կաց, քո մահիճն առ և մտն ևկ։
10 Բայց որ իմանաք, թէ Որդին
մարդոյ իշխանութիւն ունի եր-
կրի վերայ մեղքեր թողլու. (ան-
11 դամալոյծին ասաց). Ասում եմ
քեզ. վեր կաց, քո մահիճն ա-
12 և դնա քո տունը։ Եւ նա շու-
տով վերկացաւ, մահիճն առաւ,
և ամենի առջևը դուրս գնաց.
մինչև որ ամենքը զարմանում
էին և Աստուծոյն փառաւորում
ասելով, թէ Երբէք այսպիսի բան
չենք տեսել։

13 Եւ դարձեալ դէպի ծովը ել-
րը դուրս գնաց, և բոլոր ժողո-
վուրդը նորա մօտ էր գալիս. և
14 սովորեցնում էր նորանց։ Եւ անց-
նելիս տեսաւ Ղևի Ալփեանին
նստած մնքատուրութեան. և
նորան ասաց. Իմ ետևից եկ.
և վերկացաւ գնաց նորա ետևից։
15 Եւ եղաւ, երբոր նորա տանը ա-
ղանի վերայ նստած էր, շատ
մնքատուրներ և մեղաւորներ էլ
Յիսուսի և նորա աշակերտների
հետ սեղան էին նստած, վասն-
զի շատ մարդիկ էին, որ նորա
16 ետևից գնում էին։ Բայց դպիր-
ները և փարիսեցիները տեսնելով
որ մնքատուրների և մեղաւորնե-
րի հետ ուտում է, ասացին նո-
րա աշակերտներին. Այդ ի՞նչ է,
որ մնքատուրների և մեղաւորնե-
րի հետ ուտում է և խմում է։
17 Եւ Յիսուս երբոր լսեց, ասաց
նորանց. Առողջներին բժիշկ պէտք
չէ, այլ հիւանդներին. չեկայ
արդարներին այլ մեղաւորներին
կանչել ապաշխարութեան։

18 Եւ Յովհաննէսի աշակերտները
և փարիսեցիները ծոմ էին պա-
հում և եկան նորան ասացին.
Ինչո՞ւ Յովհաննէսի ու փարիսե-
ցիների աշակերտները ծոմ են
պահում, բայց քո աշակերտները
19 ծոմ չեն պահում։ Եւ Յիսուս
նորանց ասաց. Մի՞թէ կարող են
հարսանիքի որդիքը ծոմ պահել
քանի որ փեսան նորանց հետ է.
քանի որ փեսան իրանց հետ ու-
նին, չեն կարող ծոմ պահել։
Բայց օրեր կ'գան, որ փեսան նո- 20
րանցից վեր կ'առնուի, և ապա
այն օրերում կ'պահեն։ Եւ ոչ 21
ով չլուացուած կտաւերից կար-
կատան չի գցիլ հին հանդերձի
վերայ, ապա թէ ոչ՝ նորն իր ու-
ժովը այն հնից կ'առնէ, և պա-
տառուածքն էլ աւելի չար կ'լի-
նի։ Եւ ոչ ով նոր գինին հին 22
տիկերի մէջ չի ածիլ. ապա թէ
ոչ՝ նոր գինին տիկերը կ'պատառէ,
և գինին կ'թափուի, տիկերն էլ
կ'կորչին. այլ նոր գինին նոր տի-
կերի մէջ պէտք է ածուի։

Եւ եղաւ որ նա շաբաթ օ- 23
րում արտերի միջովն անցնում
էր և նորա աշակերտները սկսե-
ցին գնալ հասկ պոկելով։ Եւ 24
փարիսեցիները ասացին նորան.
Տես, ի՞նչ են գործում շաբաթ
օրը, որ արժան չէ։ Եւ նա ա- 25
սաց նորանց. Դուք երբէք չէ՞ք
կարդացել, թէ Դաւիթն ինչ ա-
րաւ, երբոր պէտք ունէր, և ա-
նից ինքն և նորա հետ եղողնե-
րն։ Ինչպէս Աստուծոյ տունը 26
մտաւ Աբիաթար քահանայապե-
տի օրին. և առաջաւորութեան
հացերը կերաւ, որ ուրիշի օրէնք
չէր ուտել, բայց միայն քահա-
նայից. և իր հետ եղողներին էլ
տուաւ։ Եւ նորանց ասաց. Շա- 27
բաթը մարդոյ համար եղաւ, և
ոչ թէ մարդը շաբաթի համար։
Ուրեմն Որդին մարդոյ շաբաթի 28
էլ տէրն է.

Գ.Լ. Գ.

Եւ դարձեալ ժողովարանը մը- 1
տաւ, և այնտեղ մի մարդ կար՝
ձեռքը չորացած։ Եւ պատում 2
էին նորան՝ թէ արդեօք շաբաթի
օրում կ'բժշկէ նորան՝ որ չարա-
խօսեն նորանից։ Եւ ասաց ձեռ- 3
քը չորացած մարդուն. Կանգնիր
մէջ տեղը։ Եւ ասաց նորանց. 4
Արժա՞ն է շաբաթի օրը բարի
գործել՝ թէ չար գործել. մի հո-
գի ապրեցնե՞լ թէ սպանել. իսկ

5 նորանք լուեցին։ Եւ ա՛ն էլ բարկու-
թիւնով չորս կողմովը նորանց
մարիկ տալով նորանց սրտերի կա-
րութեան համար տրամած՝ ձեռն
մարդուն ասաց. Ձգեա՛դ ձեռքդ.
և նա մեկնեց, և նորա ձեռքը
6 ողջացաւ ինչպէս միւսը։ Եւ փա-
րիսեցիները շուտով դուրս գնա-
ցին Հերովդեսեանների հետ նորա
դեմ խորհուրդ էին անում, թէ
ինչպէս կորցնեն նորան։
7 Եւ Յիսուս իր աշակերտների
հետ ծովի մօտ գնաց. և շատ
բազմութիւն նորա ետևից գը-
նում էին Գալիլեայից և Հրէաս-
8 տանից, Եւ Երուսաղէմից, և
Եդոմայից, և Յորդանանի այն
կողմից, և նորանք էլ որ Տիւ-
րոսի և Սիդոնի շրջակայքից էին,
շատ բազմութիւն, երբոր լսում
էին, թէ ինչ բաներ էր անում,
9 նորա մօտ էին գալիս։ Եւ իր ա-
շակերտներին ասաց. որ մի պըզ-
տիկ նաւ պատրաստ լինի իրան
համար այն ամբոխի պատճառով,
10 որ չնեղեն նորան։ Վասնզի շա-
տերին բժշկից. մինչև որ նորա
վերայ էին թափվում, որ նորան
դիպչին, որոնք որ ցաւ ունէին։
11 Եւ պիղծ ոգիները. երբոր նորան
տեսնում էին, ընկնում էին նո-
րա առջևը, աղաղակում էին և
12 ասում. Թէ Դուն ես Աստուծոյ
Որդին. և նա շատ սաստում էր
նորանց, որ իրան չյայտնեն։
13 Եւ վեր ելաւ լեռը և իր մօտ
կանչեց որոնց որ ինքը կամեցաւ.
14 և նորա մօտ գնացին։ Եւ տասն-
երկու հոգի կարգեց, որ իր հետ
լինին, և որ նորանց ուղարկէ
15 քարոզելու։ Եւ իշխանութիւն
ունենան ցաւերը բժշկելու՝ և դե-
16 ևերը հանելու. Եւ Սիմոնի տուա-
17 ր Պետրոս դրաւ։ Եւ Զեբեդեան
Յակոբին՝ և Յակոբի եղբայր Յո-
հաննէսին. և նորանց տուաւ Բա-
նեռգէս դրաւ, որ է որոտա-
18 մուղքի որդիք. Եւ Անդրէասին,
և Փիլիպպոսին, և Բարթուղի-
մէոսին, և Մատթէոսին, և Թո-
մասին, և Յակոբոս Ալփեանին,
և Թադէոսին, և Սիմոն Կանա-
19 նացին։ Եւ Յուդա Իսկարիոտա-
ցուն, նա որ մատնեց էլ նորան։

Եւ եկան տուն, և դարձեալ 20
հաւաքուեցաւ ամբոխը, մինչև
որ չկարողացան հաց էլ ուտել։
Եւ նորա բնաւորքը լսելով դուրս 21
եկան նորան բռնելու. վասնզի
ասում էին թէ գժուել է։ Եւ 22
դպիրները որ Երուսաղէմից իջել
էին, ասում էին, թէ Բէեղզե-
բուղ ունի, և թէ դևերի իշխա-
նովն է հանում դևերը։ Եւ նո- 23
րանց իր մօտ կանչելով՝ առակ-
ներով ասում էր նորանց. Ի՞նչ-
պէս սատանայ կարող է սատա-
նային հանել։ Եւ եթէ մի թա- 24
գաւորութիւն իր միջումը բաժա-
նուի, այն թագաւորութիւնը
կարող չէ կենալ։ Եւ եթէ մի 25
տուն իր միջումը բաժանուի,
այն տունը կարող չէ կենալ։ Եւ 26
եթէ սատանան իր անձի վերայ
վերկացաւ և բաժանուած է,
կարող չէ կենալ, այլ վերջացած
է։ Ոչ ոք կարող չէ մի զօրաւո- 27
րի տունը մտնելով, նորա կարո-
ղը յափշտակել, եթէ առաջ
այն զօրաւորին չկապէ, և ապա
նորա տունը կ'յափշտակէ։ Ճըշ- 28
մարիտն ասում եմ ձեզ՝ թէ
Մարդկանց որդոցն ամեն մեղքե-
րը և հայհոյանքները, որքան որ
հայհոյեն էլ, կ'թողուին. Բայց 29
ով որ Սուրբ Հոգոյն հայհոյէ,
յաւիտեան թողութիւն չի ու-
նենալ. այլ յաւիտենական դա-
տապարտութեան պարտական կը
լինի։ Վասնզի ասում էին, թէ 30
պիղծ ոգի կայ նորանում։

Եւ յետոյ նորա եղբայրքը և 31
մայրը եկան, և դուրսը կանգ-
նած՝ նորա մօտ ուղարկեցին կան-
չեցին նորան։ Եւ ժողովուրդը 32
նորա չորս կողմովը նստած էր.
և ասացին նորան. Ահա մայրդ
և եղբայրքդ դուրսը քեզ ուզում
են։ Եւ նորանց պատասխանեց 33
և ասաց. Ո՞վ է իմ մայրը կամ
իմ եղբայրքը։ Եւ իր չորս կողմո- 34
վը նստածներին մտիկ տուաւ և
ասաց. Ահա իմ մայրը և իմ եղ-
բայրքը։ Վասնզի ով որ կատարէ 35
Աստուծոյ կամքը, նա է իմ եղ-
բայրը և քոյրը և մայրը։

ԳԼ. Դ

1 Եւ գարձեալ սկսեց ծովի մօտ
ուսուցանել և շատ ամբոխ հաւա-
քուեցաւ նորա մօտ, մինչև որ
նաւի մէջ մտաւ. և ծովի վերայ
նստաւ. և բոլոր ամբոխը ծովի
2 մօտ ցամաքի վերայ էին։ Եւ շատ
բաներ էր ուսուցանում նորանց ա-
ռակներով. և ի վարդապե-
տութեան մէջ ասում էր նորանց.
3 Լսեցէք. ահա սերմ ցանողը դուրս
4 գնաց սերմ ցանելու։ Եւ եղաւ
որ սերմանելու ժամանակին մի
քանին ճանապարհի մօտ ընկաւ,
և երկնքի թռչունները եկան և կե-
5 րան նորան։ Եւ ուրիշն ընկաւ
քարքարուտ տեղ, շատ հող չկար,
և շուտով բուսաւ՝ հողը խոր
6 չլինելուն համար։ Եւ երբոր ա-
րեգակը ծագեց՝ տաքացաւ և ար-
մատ չունենալուն համար չորա-
7 ցաւ։ Եւ ուրիշն ընկաւ փշերի
մէջ, և փշերն դուրս եկան և խեղ-
դեցին նորան. և պտուղ չտուաւ։
8 Եւ ուրիշն ընկաւ բարի երկիրը,
և պտուղ էր տալիս, որ դուրս
եկաւ և աճեցաւ, և մէկը բե-
րում էր երեսուն՝ և մէկը վաթ-
9 սուն՝ և մէկը հարիւր։ Եւ ասում
էր նորանց. Ով որ լսելու ականջ
10 ունի՝ թող լսէ։ Եւ երբոր մի-
նակ էր, նորա մօտիններն այն
տասներկուքի հետ հարցրին նո-
11 րան այն առակը։ Եւ ասաց նո-
րանց. Ձեզ արուած է Աստուծոյ
արքայութեան խորհուրդը գիտել,
բայց նորանց որ դրսի են, ամեն
12 բան առակներով է լինում. Որ
տեսնելով տեսնեն՝ և չտեսնեն,
և լսելով լսեն և չիմանան. մի
գուցէ դառնան, և մեղքերը թո-
13 ղուին նորանց։ Եւ նորանց ա-
սաց. Չէ՞ք գիտում այս առակը.
և ի՞նչպէս ամեն առակները կ'գի-
14 տենաք։ Սերմողը խօսքն է սեր-
15 մում։ Եւ նորանք են ճանապար-
հի վերայինները, ուր բանը սերմ-
ւում է, և երբոր լսում են, շու-
տով գալիս է սատանան և վեր
առնում նորանց սրտերումը սեր-
16 մուած խօսքը։ Նոյնպէս էլ քար-
քարուտ տեղը սերմուածները նո-
րանք են, որոնք, երբոր խօսքը
լսում են, շուտով ուրախու-
թիւնով ընդունում են նորան.
17 Եւ իրանց մէջ արմատ չունին,
այլ առժամանակեայ են. յետոյ
երբոր այն խօսքի համար նեղու-
թիւն կամ հալածմունք է լի-
նում, շուտով գայթակղում են։
18 Եւ փշերի մէջ սերմուածները նո-
րանք են, որ խօսքը լսում են,
19 Բայց աշխարհիս հոգսերը և հա-
րստութեան խաբէութիւնը և ու-
րիշ բաների ցանկութիւնները
մտնում են խօսքը խեղդում. և
20 անպտուղ է լինում։ Բայց այն
բարի երկրի վերայ սերմուածները
սորանք են, որ խօսքը լսում են,
և ընդունում են, և պտուղ են
տալիս՝ մէկը երեսուն, և մէկը
վաթսուն՝ և մէկը հարիւր։
21 Եւ ասաց նորանց. Մի՞թէ ճը-
րագը գալիս է, որ գրուանի կամ
մահճի տակ դրուի. չէ՞ մի թէ որ
22 ճրագակալի վերայ դրուի։ Վա-
խի ծածուկ բան չկայ, որ չյայտ-
նուի. և մի թաքուն բան չեղաւ,
23 որ դէպի յայտնութիւն չգար։
Եթէ մէկը լսելու ականջ ունի,
թող լսէ։
24 Եւ ասաց նորանց. Տեսէք՝ ինչ
էք լսում, ինչ չափով որ չա-
փէք, նորանով էլ ձեզ կ'չափուի,
և կ'աւելնայ ձեզ լսողներիդ։
25 Վասնզի ով որ ունի, նորան կը
տրուի. և ով որ չունի, այն էլ
որ ունի՝ վեր կ'առնուի նորանից։
26 Եւ ասում էր. այսպէս է Աս-
տուծոյ արքայութիւնն, որպէս
թէ մի մարդ սերմ գցէր հողի
27 վերայ։ Եւ գիշեր ցերեկ քնէ և վեր-
կենայ. և սերմը բուսնէ և աճի.
28 ինչպէս որ չէ գիտում։ Վասնզի
երկիրն ինքն իրան պտուղ է բե-
րում, առաջ խոտը, յետոյ հաս-
կը, և նրանից յետոյ լցուած ցո-
29 րեն հասկի մէջ։ Բայց երբոր պը-
տուղը կ'տայ, շուտով կ'ուղարկէ
մանգաղը, վասնզի հունձքը հա-
սել է։
30 Եւ ասում էր. ինչի՞ նմանե-
ցընենք Աստուծոյ արքայութի-
նը, կամ ինչ առակով առա-
31 կի բերենք նորան։ Նման է մա-

նանեխի հատի, որ երբոր հողի մէջ սերմնուած է, երկրիս վերայ եղած ամեն սերմերից փոքր է. եւ երբոր սերմնուած է, բուսանում է եւ ամեն բանջարից աւելի մեծ է լինում, եւ մեծ մեծ ճիւղեր է արձակում, մինչեւ որ կարողանում են երկնքի թռչունները նորա հովանու տակ բնակել:

33 Եւ շատ այսպիսի առակներով խօսում էր նորանց հետ խօսքը, ինչպէս որ նորանք կարող էին 34 լսել: Եւ առանց առակի չէր խօսում նորանց հետ, բայց առանձին իր աշակերտներին ամեն բան մեկնում էր:

35 Եւ այն օրն, երբ որ իրիկուն էր լինում, նորանց ասաց. Եկէք 36 անցնենք այն կողմը: Եւ ժողովուրդը թողին, եւ նորան նաւակն առին, ինչպէս էր նաւում. եւ ուրիշ նաւակներ էլ կային նորա հետ: 37 Եւ քամու մեծ փոթորիկ էր լինում, եւ ալիքները թափում էր նաւի մէջ, մինչեւ որ 38 համարեա արդէն լցւում էր: Եւ ինքը նաւի յետի կողմում բարձի վերայ քնած էր. եւ նորան զարթնեցնում են եւ ասում նորան. Վարդապետ, հոգդ չէ՞, որ կորչում ենք: 39 Եւ նա զարթնելով քամուն սաստեց, եւ ասաց ծովին. լռիր, պապանձուիր. եւ քամին դադարեց, եւ մեծ խաղաղութիւն եղաւ: 40 Եւ ասաց նորանց. Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. ի՞նչպէս հաւատք չունիք: Եւ մեծ վախով վախեցան, եւ իրար ասում էին. Սա ո՞վ է արդեօք. որ քամին էլ ծովն էլ հնազանդում են նրան:

ԳԼ. Ե

1 Եւ եկան ծովի այն կողմը՝ Գադարացոց երկիրը: 2 Եւ երբոր նաւից դուրս եկաւ, նորան իսկոյն պատահեց գերեզմաններից մի 3 մարդ պիղծ դեւով բռնուած: Որ գերեզմաններում բնակութիւն էր. եւ ոչ ոք շղթաներով էլ չէր կարող նորան կապել: 4 Որովհետեւ շատ անգամ ոտից կապերով եւ շղթաներով կապուել էր, բայց նա շղթաները կոտրատել եւ ոտից կապերը փշրել էր, եւ ոչ ոք կարող չէր նորան նուաճել: 5 Եւ միշտ գիշեր ու ցերեկ գերեզմաններում եւ լեռներում աղաղակում էր եւ ինքն իրան ծեծում քարերով: 6 Բայց երբոր Յիսուսին տեսաւ, վազեց նորան երկրպագութիւն արաւ. 7 եւ մեծ ձայնով աղաղակելով ասաց. Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ, Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ. Աստուծով երդում եմ տալիս քեզ, 8 մի տանջիր ինձ, (Վասնզի ասում էր նորան. Դուրս եկ, պիղծ ոգի այդ մարդուցը:) 9 Եւ հարցրեց նորան. Անուանդ ի՞նչ է. եւ նա պատասխանեց եւ ասաց. Լէգէոն է իմ անունը. վասնզի մենք շատ ենք: 10 Եւ շատ աղաչում էին նորան, որ իրանց այն աշխարհքից դուրս չուղարկէ: 11 Եւ այնտեղ լեռան մօտ խոզերի մի մեծ երամակ կար, որ արածում էր: 12 Եւ բոլոր դեւերը նորան աղաչեցին եւ ասացին. Ուղարկիր մեզ այն խոզերի մէջ, որ նորանց մէջ մըտնենք: 13 Եւ Յիսուսը հրամանատուաւ նորանց շուտով. եւ պիղծ դեւերը դուրս եկան խոզերի մէջ մտան. եւ երամակն այն գահավէժ տեղից ծովի մէջ վազեց. եւ երկու հազարի չափ էին. եւ ծովումը խեղդվում էին: 14 Եւ խոզարածները փախան եւ քաղաքումը եւ արտերումը պատմեցին. եւ դուրս եկան տեսնելու թէ ինչ է այդ եղածը: 15 Եւ Յիսուսի մօտ եկան, եւ դիւահարին տեսան նստած հագուած եւ խելքը գլուխը եկած, նա՝ որ լէգէոն ունեցել էր. եւ վախեցան: 16 Եւ նորանց պատմեցին տեսնողները, թէ ինչ եղաւ այն դիւահարին, եւ խոզերի մասին: 17 Եւ սկսեցին աղաչել նորան, որ իրանց սահմաններից դուրս գնայ: 18 Եւ երբոր նա նաւը մտաւ, դիւահարն աղաչում էր նորան, որ նորա հետ լինի: 19 Բայց Յիսուսը թոյլ չտուաւ նորան, այլ ասաց նորան. Գնա՛ քո տունը քո

ընտանեաց մօտ, և նորանց պատմիլը, թէ ինչ բաներ արաւ քեզ
20 Տէրը, և ողորմեց քեզ։ Եւ նա գնաց և սկսեց Դեկապօլիսի մէջ քարոզել, ինչ բաներ որ Յիսուս իրան արել էր, և ամենքը զարմանում էին։
21 Եւ երբոր Յիսուս նաւով դարձեալ այն կողմն անցաւ, շատ ժողովուրդ նորա մօտ ժողովեցան, և նա ծովի մօտ էր։ Եւ
22 ահա գալիս է ժողովրդապետներից մէկը՝ անունը Յայրոս. և երբոր նորան տեսաւ, ընկաւ նորա
23 ոտները. Եւ նորան շատ աղաչում էր և ասում. Թէ Աղջիկս վախճանելու մօտ է, որ գաս, ձեռքդ նորա վերայ դնես, որ-
24 պէսզի ազատուի և ապրի։ Եւ նորա հետ գնաց. և շատ ժողովուրդ նորա ետևից գնում էին, և նորան նեղում էին։
25 Եւ մի կին, որ արիւնի տեսութեան մէջ էր տասներկու
26 տարի, Եւ շատ բժիշկներից շատ չարչարուել էր, և իր բոլոր ունեցածը ծախսել և ոչինչ օգուտ չէր ստացել, այլ էլ աւելի էր
27 դէպի վատը դնացել. երբոր Յիսուսի համար լսեց, ամբոխի մէջ ետևից եկաւ դիպաւ նորա հան-
28 դերձին։ Վասնզի ասում էր, որ եթէ միայն նորա հանդերձին մօ-
29 տենամ, կ'փրկուիմ։ Եւ շուտով նորա արիւնի աղբիւրը ցամաքեցաւ. և մարմնում իմացաւ որ այն տանջանքից բժշկուեցաւ։
30 Եւ շուտով Յիսուս իր անձում իմացաւ, որ իրանից զօրութիւն դուրս գնաց, դարձաւ ամբոխի մէջ և ասաց. Ո՞վ դիպաւ իմ
31 հանդերձին։ Եւ նորա աշակերտներն ասացին նորան. Տեսնում ես այդ ամբոխը որ նեղացնում է քեզ, և ասում ես թէ ո՞վ իմ
32 հանդերձին դիպաւ։ Եւ չորս կողմն նայում էր, որ տեսնէ այս
33 բանն անողին։ Կինն էլ վախնալով և դողալով, որովհետև դիտէր ինչ էլաւ իրան, եկաւ ընկաւ նորա առջևը, և բոլոր ճշմարտութիւնն ասաց նորան։
34 Նա էլ ասաց նորան. Դուստր,

քո հաւատքն ազատեց քեզ, գնա խաղաղութեամբ, և քո տանջանքից առողջ եղիր։

Նա դեռ խօսելիս, ժողովրդա- 35
պետի տունից գալիս են և ասում. Թէ Աղջիկդ մեռաւ, էլ ինչո՞ւ ես աշխատեցնում վարդապետին։ Եւ Յիսուս լսած 36
բանն իսկոյն լսելով, ժողովրդապետին ասաց. Մի՛ վախենար, լոյց միայն հաւատա։ Եւ ոչ ո- 37
քի թոյլ չտուաւ որ իր հետ գնայ, լոյց միայն Պետրոսին և Յակոբին և Յակոբի եղբայր Յոհաննէսին. Եւ եկաւ ժողովրդա- 38
պետի տունն, և տեսաղ մեծ ամբոխ տեսաւ և լացողներ, և շատ աղաղակ անողներ. Եւ ներս 39
մտաւ նորանց ասաց. Ինչու էք շփոթվում և լաց լինում. երեխան մեռած չէ, լոյց քնած է։
Եւ ծիծաղում էին նորա վերայ. 40
լոյց նա բոլորին դուրս հանեց, և առնելով երեխայի հօրը և մօրը և իր հետ լինողներին՝ մտաւ այն տեղն ուր երեխան պառկած էր։ Եւ երեխայի ձեռքը բռնե- 41
լով ասաց նորան. Տալիթա կումի. որ կ'թարգմանուի, Ով աղջիկ, (քեզ եմ ասում,) վեր կաց։
Եւ շուտով վերկացաւ աղջիկը և 42
մեռն էր գալիս, վասնզի տասներկու տարեկանի չափ էր, և մեծ զարմանքով զարմացան։ Եւ նո- 43
րանց շատ պատուիրեց, որ ոչ ոք չիմանայ այս. և ասաց, որ նորան բան տան ուտելու։

ԳԼ. Զ

Եւ այն տեղից դուրս գնաց, և- 1
կաւ իր հայրենիքը. և նորա աշակերտները նորա ետևից գնում էին։ Եւ որովհետև շաբաթ էր 2
սկսեց ժողովարանի մէջ ուսուցանել. և շատերը լսելով զարմանում էին և ասում. Սորան ո՞րտեղից է այս բաները, կամ սա ինչ իմաստութիւն է՝ որ տրուած է սորան, որ այսպիսի զօրութիւններ էլ են լինում սորա ձեռքովը։ Չէ՞ որ սա է հիւսը՝ Մա- 3

բիամի որդին, Յակօբի և Յօսէի
և Յուդայի և Սիմօնի եղբայրը.
և չէ՞ որ դորա քոյրերը այստեղ
մեզ մօտ են. և նորա վերայ գոյ-
4 թակղուեմ էին: Յիսուս էլ նո-
րանց ասաց. Թէ Մարգարէ ա-
նարգ չէ, բայց միայն իր հայ-
րենեաց և իր ազգականների և իր
5 տան մէջ: Եւ չէր կարողանում
այնտեղ ոչ մի զօրութիւն անել.
բայց միայն մի քանի հիւանդնե-
րի վերայ ձեռք դրաւ և բժշկեց:
6 Եւ նորանց անհաւատութեան
համար զարմանում էր: Եւ չորս
կողմի գիւղերը մանն էր գալիս և
սովորեցնում:
7 Եւ տասներկուսին իր մօտ կան-
չեց, և սկսեց նորանց երկու եր-
կու ուղարկել, և նորանց իշխա-
նութիւն էր տալիս պիղծ դևերի
8 վերայ: Եւ նորանց պատուիրում
էր, որ ճանապարհի համար ոչինչ
վեր չառնեն, բայց միայն մի գա-
ւազան. ոչ պարկ, ոչ հաց, ոչ
9 պղնձէ փող գօտու մէջ. Այլ
հողաթափ հագնեն. և երկու հան-
10 դերձ չհագնիք: Եւ նորանց ա-
սում էր. Որ տուն որ մանէք,
այնտեղ մնացէք, մինչև որ այն-
11 տեղից դուրս գնաք: Եւ որոնք
որ ձեզ չընդունին, և ձեզ լսանջ
էլ չդնեն, այն տեղից դուրս գա-
լիս՝ ձեր ոտների տակի փոշին թօ-
թափեցէք, նորանց վկայութիւն
լինելու համար: Ճշմարիտն ասում
եմ ձեզ՝ Սոդոմի և Գոմորի հա-
մար աւելի հեշտ կ'լինի դատաս-
տանի օրումը քան թէ այն քա-
ղաքին:
12 Եւ դուրս եկան, քարոզում
13 էին, որ ապաշխարեն: Եւ շատ
դևեր էին հանում, և շատ հի-
ւանդների իւղով օծում էին և
նորանց բժշկում էին:
14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց,
(մանուկի նորա անունը յայտնի ե-
ղաւ.) և ասում էր, թէ Յովհան-
նէս Մկրտիչը մեռելների միջից
յարութիւն առաւ, և նորա հա-
մար զօրութիւններ են գործվում
15 նորանով: Ուրիշներն ասում էին,
թէ Եղիան է. ուրիշներն էլ ա-
սում էին, թէ մարգարէ է, կամ
թէ մարգարէներից մէկի պէս: Եւ 16
երբոր Հերովդէսը լսեց, ասաց.
Սա Յովհաննէան է՝ որի գլուխը ես
կտրեցի. Նա մեռելների միջից յա-
րութիւն է առել:
Վանդի Հերովդէս ինքն ուղար- 17
կեց, Յովհաննէսին բռնեց և նո-
րան կապեց բանտի մէջ իր եղ-
բօր՝ Փիլիպպոսի կնի՝ Հերովդիայի
համար, վանդի կին էր առել նո-
րան: Վանդի Յովհաննէս Հե- 18
րովդէսին ասում էր, թէ Օրէնք չէ
քեզ՝ քո եղբօր կինն ունենալ:
Եւ Հերովդիան նորա դէմ ոխ էր 19
պահում, և ուզում էր սպանել
նորան, և չէր կարողանում: Քան- 20
զի Հերովդէսը Յովհաննէսից վա-
խում էր՝ նորան արդար և սուրբ
մարդ ճանաչելով. և պահում էր
նորան. և նորանից լսելով շատ
բան էր անում, և քաղցրութիւ-
նով լսում էր նորան: Եւ մի 21
յարմար օր պատահելով, երբոր
Հերովդէսը իր ծննդի օրումն ընթրիք
էր տալիս իր նախարարներին և
զօրապետներին և Գալիլեացոց մե-
ծամեծներին. Եւ երբոր իսկ Հե- 22
րովդիայի աղջիկն մտաւ՝ պար ե-
կաւ, և Հերովդէսին և նորա հետ
նստածներին հաճոյ եղաւ. Թա-
գաւորն ասաց աղջկանը. Խնդրիր
ինձանից ինչ որ ուզես, և կ'տամ
քեզ: Եւ երդում արաւ նորան՝ 23
թէ ինչ բան որ դու խնդրես ին-
ձանից, կ'տամ քեզ, մինչև իմ
թագաւորութեան կէսը: Նա էլ 24
դուրս գնաց ասաց իր մօրը, Ի՞նչ
խնդրեմ. և նա էլ ասաց, Յո-
հաննէս Մկրտչի գլուխը: Եւ իս- 25
կոյն շտապելով թագաւորի մօտ
գնաց խնդրեց և ասաց. կամե-
նում եմ որ հենց հիմա սկուտե-
ղի վերայ տաս ինձ Յովհաննէս Մ-
կրտչի գլուխը: Եւ թագաւորն 26
շատ տրտմեցաւ. բայց իր երդ-
մունքի և կանչուած մարդկանց
համար չկամեցաւ անարգել նո-
րան: Եւ թագաւորը շուտով դա- 27
հիճ ուղարկեց և հրամայեց նորա
գլուխը բերել. Նա էլ գնաց գլ-
լուխը կտրեց բանտի մէջ: Եւ նո- 28
րա գլուխը սկուտեղով բերաւ և
աղջկանը տուաւ նորան, աղջիկն

29 էլ առաւ իր մօրը։ Եւ երբոր նորա աշակերտները լսեցին, եկան նորա մարմինը վեր առին և գերեզմանի մէջ դրին։
30 Եւ առաքեալները Յիսուսի մօտ ժողովուեցան, և պատմեցին նորան բոլորը՝ թէ ինչ որ արել, 31 թէ ինչ որ սովորեցրել էին։ Եւ ասաց նորանց. Գնաք առանձին անապատ տեղ եկէք, և մի քիչ հանգիստ առէք. քանի եկող և գնացողները շատ էին, և հաց ուտելու էլ ժամանակ չունէին։ 32 Եւ նաւով առանձին անապատ տեղ 33 գնացին։ Եւ ժողովուրդները տեսան նորանց որ գնում էին, և շատերը ճանաչեցին նորան. և ամեն քաղաքներից ոտով այնտեղ էին վազում, և նորանից առաջ եկան և նորա մօտ հաւաքուեցան։ 34 Եւ երբոր Յիսուսը դուրս եկաւ շատ ամբոխ տեսաւ, և նորանց վերայ գթաց. վասնզի հովիւ չունեցող ոչխարների պէս էին, և սկսեց նորանց շատ բաներ սովորեցնել։ 35 Եւ երբոր արդէն շատ ժամանակը անցաւ, նորա աշակերտները մօտ եկան և ասացին, թէ այս տեղը անապատ է, և 36 ժամանակն էլ արդէն ուշ։ Արձակիր դորանց, որ չորս կողմի շէներն և գիւղերը գնան իրանց համար հաց առնեն. քանզի այստեղ ուտելու բան չունին։ 37 Նա էլ պատասխանեց և նորանց ասաց. Դուք տուէք դորանց ուտել. նորանք էլ ասացին նորան, Գնա՞նք երկու հարիւր դահեկանի հաց առնենք, և դորանց տանք որ ուտեն։ 38 Նա էլ նորանց ասաց. Քանի՞ հատ հաց ունիք. գնացէք և տեսէք. երբ որ գիտացին, նորան ասացին. Հինգ, և երկու ձուկ։ 39 Եւ հրամայեց նորանց՝ որ ամենքը դուռ դուռ կանանչ խոտի վերայ նստին։ 40 Եւ դաս դաս նստեցին, հարիւր հարիւր՝ և յիսուն յիսուն։ 41 Եւ այն հինգ հացն և երկու ձուկն առած դէպի երկինքը նայեց՝ օրհնեց կարկեց հացերը, և իր աշակերտներին տուաւ որ գցեն նորանց առջևը. և այն երկու ձուկը բաժանեց ամենին։ 42 Եւ ամենքը կերան և կշտացան, 43 Եւ փշրանքներից տասներկու կողով լիքը վեր առին, և ձկներից էլ։ Եւ հացը ուտողները հինգ հազար արի չափ մարդիկ էին։ 44

45 Եւ շուտով ստիպեց իր աշակերտներին, որ նաւը մտնեն, և իրանից առաջ այն կողմը Բեթսայիդա գնան, մինչև որ ինքն ժողովուրդին արձակէ։ 46 Եւ նորանից բաժանուելով, վեր ելաւ լեռը՝ աղօթք անելու։ 47 Եւ երբոր իրիկուն եղաւ, նաւը ծովի մէջտեղն էր, և ինքն միայնակ ցամաքում։ 48 Եւ տեսաւ նորանց, որ նաւելիս ալեկոծվում էին, վասնզի քամին ներհակ էր նորանց. և գիշերուայ չորրորդ պահին ծովի վերայ գնալով՝ նորանց մօտ եկաւ, և ուզում էր նորանցից անցնել։ 49 Նորանք էլ, երբոր տեսան ծովի վերայ գնալիս՝ կարծեցին թէ աչքի երևոյթ բան լինի, և աղաղակ բարձրացրին։ 50 Վասնզի ամենքը նորան տեսան՝ և շփոթուեցան. և շուտով խօսեց նորանց հետ և ասաց. Քաջ եղէք, ես եմ, մի վախենաք։ 51 Եւ վեր ելաւ նաւը նորանց մօտ՝ և քամին դադարեց, և իրանց մէջ խիստ չափազանց ապշել էին, և զարմանում էին. 52 Վասնզի այն հացի վերայ էլ չխմացան. քանզի նորանց սիրտը թմրած էր։

53 Եւ այն կողմն անցնելով, Գեննեսարեթի երկիրը եկան, և նաւ խարիսխը գցեցին։ 54 Եւ երբոր նորանք նաւից դուրս եկան, անդէն շուտով ճանաչեցին նորան, 55 Եւ գաւառի կողմերը վազելով սկսեցին հիւանդներին մահճերով բերել, որտեղ որ լսում էին թէ այնտեղ է։ 56 Եւ որտեղ որ մտնում էր՝ գիւղեր թէ քաղաքներ թէ ագարակներ, հիւանդներին հրապարակների մէջ էին դնում, և նորան աղաչում որ գոնէ հանդերձի ծայրին մօտենան. և որոնք որ մօտեցան նորան, փրկուեցան։

Գ Լ. Է

1 Եւ ժողովուեցան նորա մօտ փա-

բնակիչները և դպիրներից ոմանք,
2 որ Երուսաղէմից եկել էին՝ եւ
երբոր տեսան, որ նորա աշա-
կերտներից մի քանիսը խառնակ
ձեռքով, այսինքն առանց լուա-
նալու հաց էին ուտում, բամբա-
3 սեցին։ Վասն զի փարիսեցիները
և բոլոր Հրէաները թէ որ մի լաւ
չլուանան ձեռները հաց չեն ու-
տում. որովհետև ծերերի աւան-
4 դութիւնն են պահում։ Եւ հրա-
պարակից ոչ ի՛նչ է, եթէ չը-
լուացուին, չեն ուտում. և ու-
րիշ շատ բաներ կան, որ ընդու-
նեցին պահել, բաժակների և ա-
նօթների և պղնձէ ամանների և
5 մահիճների լուացմունքներ։ Յե-
տոյ փարիսեցիները և Դպիրները
հարցրին նորան, թէ ինչո՞ւ քո
աշակերտները ծերերի աւանդու-
թեան համեմատ չեն գնում. այլ
անլուայ ձեռքով հաց են ու-
6 տում։ Նա էլ պատասխանեց և
ասաց նորանց, թէ Եսային լաւ
մարգարէացաւ ձեզ կեղծաւոր-
ների վերայ, ինչպէս գրուած է.
Այս ժողովուրդը շրթունքներով
է պատուում ինձ, իսկ նորանց
սիրտը ինձանից հեռացած ջոկ-
7 ուած է։ Եւ զուր տեղն են պաշ-
տում ինձ. սովորեցնելով այն-
պիսի վարդապետութիւններ ոչ
8 մարդկանց պատուէրներ են։ Վա-
սն զի Աստուծոյ պատուիրանքը
թողած՝ պահում էք մարդկանց
աւանդութիւնը, անօթների և
ամանների լուացմունքներ՝ և ա-
յրանց նման էլ ուրիշ շատ բաներ
9 էք անում։ Եւ նորանց ասաց.
Լաւ էք անարգում Աստուծոյ
պատուիրանքը, որ ձեր աւան-
10 դութիւնը պինդ պահէք։ Վասն
զի Մովսէս ասաց. Պատուիր քո
հօրը և քո մօրը. և նա որ հօրիցը
կամ մօրիցը չարախօսութիւն ա-
11 նէ, թող մահով մեռնի։ Բայց
դուք ասում էք, եթէ մարդս
հօրը կամ մօրը ասէ, Կորբան,
(այսինքն պատարագ) այն որ ին-
12 ձանից պետք է շահուխս։ Եւ այլ
ևս թոյլ չէք տալիս նորան որ մի
բան անէ իր հօրը կամ իր մօրը։
13 Եւ Աստուծոյ խօսքն անարգում
էք ձեր աւանդութիւնով, որ ա-
ւանդեցիք. և սորան նման ուրիշ
էլ շատ բաներ էք անում։
14 Եւ բոլոր ժողովուրդն իրան մօտ
կանչելով ասաց նորանց. Ամենքդ
15 ինձ լսեցէք, և հասկացէք։ Ոչինչ
չկայ մարդից դուրս նորա մէջ
մտնող, որ կարողանայ պղծել
նորան, այլ նորանցից այն դուրս
եկողներն են որ մարդուն պղծում։
16 Ով որ լսելու ականջ ունի, թող
լսէ։
17 Եւ երբոր ամբոխից տուն ե-
կաւ, նորա աշակերտները հարց-
րին նորան այն առակի համար։
18 Եւ ասաց նորանց. Դո՞ւք էլ
այդչափ անմիտ էք. չէ՞ք իմա-
նում, որ ամեն ինչ որ դրսից
մտնում է մարդու մէջ չէ կարող
19 նորան պղծել։ Վասն զի նորա
սիրտը չէ մտնում, այլ փորը, և
դուրս է գնում արտաքնոցը՝ ա-
մեն կերակուրները սրբելով։
20 Եւ ասում էր՝ թէ մարդուցը դուրս
եկողն է պղծում մարդուն։ Վա-
21 սն զի ներսից՝ մարդկանց սրտից
են դուրս գալիս չար խորհուրդ-
ներ, շնութիւններ, պոռնկու-
22 թիւններ, Սպանութիւններ, գո-
ղութիւններ, ագահութիւններ,
չարութիւններ, նենգութիւն,
պիղծ ցանկութիւն, չար աչք,
հպարտութիւն, անմտութիւն։
23 Այս ա-
մեն չար բաները ներսից են դուրս
գալիս, և մարդուն պղծում։
24 Եւ այն տեղից վերկացաւ՝ և ե-
կաւ Տիւրոսի և Սիդոնի կողմերը.
և տուն որ մտաւ՝ չէր ուզում որ
մէկն իմանայ, բայց չկարողացաւ
25 ծածկուիլ. Վասն զի նորա հա-
մար լսեց մի կին, որի աղջիկը
պիղծ ոգի ունէր. եկաւ նորա ոտ-
քերի առջևը ընկաւ։ Եւ ան կինը
26 Յոյն էր՝ ազգաւ Փիւնիկ Ասորա-
ցի. և աղաչում էր նորան, որ
դևն իր աղջկանիցը դուրս հանէ։
27 Յիսուս էլ ասաց նորան. Թող
առաջ երեխաները կշտանան. վա-
սն զի լաւ չէ՝ երեխաների հացն
առնել և շներին գցել։ Նա էլ
28 պատասխանեց և ասաց նորան.
Այո, Տէր, վասն զի շներն էլ

սեղանի տակին երեխաների փըշ-
29 րանքից են ուտում՝ եւ ասաց
նորան, Ահա խօսքի համար դնա,
դեը դուրս եկաւ քո աղջկանիցը՝
30 եւ իր տունը որ գնաց, գտաւ
դեը դուրս եկած, և աղջիկն
մահճի վերայ պառկած՝
31 Եւ դարձեալ Տիւրոսի և Սիդոնի
կողմերիցը դուրս գնաց, և Գա-
լիլեացոց մօտ եկաւ՝ Դեկապօլիսի
32 միջի կողմերը՝ Եւ մի խուլ և
դժուարախօս բերին նորան, և
աղաչում էին, որ ձեռը դնէ նորա
33 վերայ՝ Եւ նորան ամբոխիցը մի
կողմ տարաւ, իր մատները նորա
ականջների մէջ դրաւ և թքեց,
34 և նորա լեզուին դիպաւ՝ Եւ դէպ
ի երկինքը նայելով հառաչեց և
ասաց նորան, Եփփաթա՝ այսինքն
35 բացուիր՝ Եւ շուտով նորա ա-
կանջները բացուեցան, և նորա
լեզուի կապն արձակուեցաւ, և
36 խօսում էր ուղիղ՝ Եւ նորանց
պատուիրեց՝ որ ոչ ոքի չասեն.
և որչափ նա պատուիրում էր նո-
րանց, նորանք էլ աւելի էին քա-
37 րոզում՝ Եւ չափից դուրս զար-
մանում էին և ասում. Սա ամեն
բան լաւ գործեց. խուլերին լսել
է տալիս՝ և համրներին խօսել՝

ԳԼ. Ը

1 Յն օրերին՝ երբոր խիստ շատ
ժողովուրդ կար և բան չունէին
ուտելու, Յիսուսը իր աշակերտ-
ներին կանչեց՝ և ասաց նորանց.
2 Ես ողճա է գալիս այդ ժողովուրդի
վերայ. վասն զի արդէն երեք օր
է ինձ մօտ են, և բան չունին որ
3 ուտեն՝ Եւ եթէ նորանց սոված
արձակեմ իրանց տուները, կ'թու-
լանան ճանապարհին. վասն զի
դորանցից ոմանք հեռու տեղից
4 են եկել՝ Նորա աշակերտները
պատասխանեցին նորան. Ո՞ր տե-
ղից կարող է մէկը հացով կըշ-
տացնել դորանց այստեղ՝ անա-
5 պատում՝ Եւ նորանց հարցրեց՝
քանի՞ հաց ունիք՝ Եւ նորանք
6 ասացին՝ եօթն՝ Եւ ժողովրդին
հրամայեց, որ գետնի վերայ նըս-
տին. և այն եօթն հացը առաւ,
գոհացաւ, կտրեց, և իր աշա-
կերտներին էր տալիս, որ դնեն.
և դնեցին ժողովրդի առջևը՝ Մի 7
քիչ փոքր ձուկեր էլ ունէին. և
օրհնեց ու ասաց որ նորանց էլ
դնեն՝ Կերան և կշտացան. և կը- 8
տորների աւելցածը եօթը զամ-
բիւղ վեր առին՝ Եւ ուտողները 9
չորս հազարի չափ էին. և նորանց
արձակեց՝ Եւ շուտով իր աշա- 10
կերտների հետ նաւը մտաւ՝ և
Դալմանութայի կողմերն եկաւ՝
Եւ փարիսեցիներն դուրս եկան 11
և սկսեցին նորա հետ վիճել, և
նորան փորձելով՝ նորանցից նշան
էին ուզում երկնքիցը՝ Եւ նա 12
շատ պայրացաւ իր հոգու մէջ և
ասաց. Ի՞նչ է, որ այս ազգը նըշ-
ան է ուզում. ճշմարիտն ասում
եմ ձեզ, որ այս ազգին նշան չի
տրուիլ՝ Եւ նորանց թողեց, դար- 13
ձեալ նաւը մտաւ՝ և այն կողմը
գնաց՝

Եւ մոռացան հաց վեր առնել, 14
և բաց ի մէկ հացից չունէին ի-
րանց հետ նաւի մէջ՝ Եւ նորանց 15
պատուիրում էր և ասում. Զգույշ
կացէք փարիսեցիների խմորիցը և
Հերովդէսեանների խմորիցը՝ Եւ ի- 16
րար հետ միտք էին անում և ա-
սում, որովհետև հաց չունինք՝
Եւ Յիսուսը իմանալով ասաց նո- 17
րանց, Ի՞նչ էք միտք անում թէ
հաց չունիք. տակաւին չէ՞ք իմա-
նում և չէ՞ք յիշում. տակաւին
թմրած է ձեր սիրտը՝ Աչք ու- 18
նիք՝ և չէ՞ք տեսնում. և ականջ
ունիք՝ և չէ՞ք լսում. և չէ՞ք յի-
շում՝ Երբոր այն հինգ հացը հինգ 19
հազարի համար կտրեցի, քանի՞
կողով լիքն վեր առիք նորա կտոր-
ները. և նորան ասացին՝ Տասն-
երկու՝ Եւ երբոր եօթը հացը 20
չորս հազարին համար, քանի՞
պամբիւղ լիքն վեր առիք նորա
կտորները. և նորանք ասացին,
եօթն՝ Եւ նորանց ասաց. Ապա 21
ի՞նչպէս չէք իմանում՝

Եւ գալիս է Բեթսայիդա. և 22
նորա առջևը մի կոյր են բերում
և նորան աղաչում, որ դպչի նո-
րան՝ Եւ կուրի ձեռքիցը բռնեց՝ 23
ընդհացը դուրս հանեց, և նորա

աչքերի մէջ թքելով, և ձեռը
վերան դնելով նորան հարցրեց,
24 թէ մի բան տեսնո՞ւմ է։ Եւ նա
մտիկ տուաւ և ասում էր. Մարդիկը տեսնում եմ որ իբր ծառերի պէս՝ մին գալիս եմ տես-
25 նում։ Յետոյ ձեռները դարձեալ նորա աչքերի վերայ դրաւ և նորան նայել տուաւ. և նա ոգջացաւ՝ և ամեն բան համարձակ
26 տեսնում էր։ Եւ նորան ուղարկեց իր տունն և ասաց. ոչ գեղը մտնես, ոչ էլ գեղի մէջ մէկին ասես։

27 Եւ Յիսուսը իր աշակերտների հետ գնաց Փիլիպպեայ Կեսարիայի գեղերը. և ճանապարհին հարցնում էր իր աշակերտներին և ասում. Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, թէ եմ։
28 Նորանք էլ պատասխանեցին. Յովհաննէս մկրտիչը, և ուրիշները Եղիան, ուրիշներն էլ մարգարէից
29 մէկը։ Նա էլ ասաց նորանց. Ապա դուք ո՞վ էք ասում ինձ համար, թէ եմ։ Պետրոսը պատասխանեց, և նորան ասաց. Դու
30 ես Քրիստոսը։ Եւ նորանց ասաց, որ ոչ ոքի բան չասեն իրան համար։

31 Եւ սկսեց սովրեցնել նորանց, թէ պէտք է Որդին մարդոյ շատ չարչարուի, և անարգուի ծերերից և քահանայապետներից և դպիրներից, և սպանուի և երեք
32 օրից յետոյ յարութիւն առնէ։ Եւ համարձակ խօսում էր այս խօսքը. և Պետրոսը նորան մի կողմ քաշեց՝ և սկսեց ասատել նորան։
33 Եւ նա դարձաւ, իր աշակերտներին տեսաւ՝ Պետրոսին ասաց և ասաց. Ե՛տս գնա, սատանայ, վասն զի դու Աստուծոյ բանները չես միտք անում, այլ մարդկանց բաները։

34 Եւ ժողովուրդն իր աշակերտների հետ իրան մօտ կանչեց՝ և նորանց ասաց. Ով որ ուզում է իմ ետևից գալ՝ թող իր անձն ուրանայ, և իր խաչը վեր առնէ, և իմ ետևից
35 գայ։ Վասն զի ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կ՚կորցնէ նորան. և ով որ իր անձն ինձ համար և աւետարանի համար կորցընէ, նա կ՚ապրեցնէ նորան։
36 Քանզի ի՞նչ օգուտ է մարդու, եթէ բոլոր աշխարհքս առանայ՝
37 և իր անձին վնաս տայ։ Կամ ի՞նչ փրկանք կ՚տայ մարդ իր անձի համար։
38 Վասն զի ով որ ինձ և իմ խօսքերը ամօթ համարէ այս շնացող և մեղաւոր ազգի մէջ, Որդին մարդոյ էլ նորան ամօթ կ՚համարէ երբոր գայ իր Հօր փառքովը և սուրբ հրեշտակներովը։

39 Եւ նորանց ասաց. Ճշմարիտն ասում եմ ձեզ. Թէ այս տեղ կանդնածներից ոմանք կան, որ մահ չեն ճաշակիլ, մինչև որ տեսնեն Աստուծոյ արքայութիւնը զօրութիւնով եկած։

ԳԼ. Թ

1 Եւ վեց օրից յետոյ Յիսուսը իր հետ առաւ Պետրոսին և Յակոբին և Յովհաննէսին, և հանեց նորանց մինակ առանձին մի բարձր լեառ և այլակերպուեցաւ նորանց առջևը։ 2 Եւ նորա հանդերձները փայլուն եղան՝ ձիւնի պէս շատ սպիտակ, որ երկրիս վերայ թափփչը չէ կարող այնպէս սպիտակացնել։ 3 Եւ երևեցաւ նորանց Եղիան Մովսէսի հետ և խօսում էին Յիսուսի հետ։ 4 Եւ Պետրոսը պատասխանեց և ասաց Յիսուսին. Ռաբբի, լաւ է որ մենք այստեղ լինինք. և երեք տաղաւար շինենք, մէկը քեզ և մէկը Մովսէսին և մէկը Եղիային։ 5 Վասն զի չէր գիտում թէ ինչ խօսէր, որովհետև զարհուրել էին։ 6 Եւ մի ամպ նորանց վերայ հովանի եղաւ, այն ամպիցը ձայն եկաւ՝ և ասաց, դա է իմ սիրելի Որդին. դորան լսեցէք։ 7 Եւ շուտով որ իրանց շուրջը նայեցան, ոչ ոք չտեսան, բայց միայն Յիսուսին իրանց հետ։ 8 Եւ լեռնից իջնելիս, նորանց պատուիրեց, որ ոչ մէկին չպատմեն ինչ որ տեսան, բայց միայն այն ժամանակն որ Որդին մարդոյ մեռելների միջից յարութիւն առնէ։ 9 Եւ այն խօսքը պահեցին իրանց մօտ, և իրար հարցնում էին, թէ ի՞նչ է այն մեռելների

10 միջից յարութիւն առնելը, եւ
նորան հարցրին եւ ասացին. Ի՞նչ
է, գպիրներն ասում են, թէ
11 պէտք է առաջ Եղիան գայ: Նա
էլ պատասխանեց եւ ասաց նո-
րանց. Իրաւ Եղիան առաջ կ'գայ,
և ամեն բան կարգի կ'դնէ. և
ինչպէս գրուած է Որդոյ մարդոյ
համար, թէ շատ պիտի չարչա-
12 րուի և անարգուի: Միայն ասում
եմ ձեզ՝ թէ Եղիան եկաւ էլ,
և ինչեր ուզեցին, նորան արին էլ.
ինչպէս նորա համար գրուած էր:
13 Եւ երբոր եկաւ աշակերտների
մօտ, նորանց չորս կողմնից շատ
ամբոխ տեսաւ, և գպիրներին, որ
14 նորանց հետ վիճում էին: Եւ շու-
տով բոլոր ժողովուրդը տեսնելով
նորան, շատ զարմացան և առաջ
վազելով նորան բարեւում էին:
15 Եւ հարցրեց գպիրներին, Ինչ էիք
16 վիճում նորանց հետ: Եւ ժողո-
վրդի միջից մէկը պատասխանեց
և ասաց. Վարդապետ, իմ որդին
քեզ մօտ բերի, որ համր ոգի
17 ունի: Եւ որտեղ որ նորան հաս-
նում է, գետնում է տալիս նո-
րան. և փրփրեցնում է և ատա-
մները կրճտեցնում է և ցամքում
է, և քո աշակերտներին ասացի,
որ հանեն նորան, բայց չկարո-
18 ղացին: Նա էլ պատասխանեց և
ասաց նորան. Ով անհաւատ ազգ,
մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լի-
նեմ. մինչև ե՞րբ ձեզ պիտի համ-
բերեմ. Նորան ինձ մօտ բերէք:
19 Եւ նորան բերին նորա մօտ. և
նորան որ տեսաւ, շուտով ոգին
ծանր ցնցեց նորան. և գետնին
ընկած թաւալում էր փրփրեցնե-
20 լով: Նորա հօրը հարցրեց, Քանի՞
ժամանակ է, որ այդ եղաւ քո-
րան. Նա էլ ասաց՝ Երեխայու-
21 թիւնից: Եւ շատ անգամ էլ
կրակի մէջ գցեց և ջրի մէջ, որ
զորան կորցնէ, սակայն եթէ մի
բան կարող ես, օգնիր մեզ՝ գթա-
22 լով մեզ վերայ: Յիսուսն էլ նո-
րան ասաց. Այն եթէ կարող ես
հաւատալ, ամեն բան կարելի է
23 հաւատացողին: Եւ շուտով ազգի
հօրն աղաղակեց՝ և արտասու-
քով ասաց, Հաւատում եմ. Տէր,
իմ անհաւատութեանն օգնիր:
24 Եւ երբոր Յիսուսը տեսաւ թէ
ամբոխը դիպվում է, պիղծ ո-
գուն սաստեց և ասաց նորան.
Համր և խուլ ոգի, ես հրամայում
եմ քեզ, դորանից դուրս եկ, և
25 այլ ևս դորա մէջ չմտնես: Եւ
ազդակելով և սաստիկ թափա-
հարելով նորան, դուրս եկաւ. և
նա մեռելի պէս եղաւ. մինչև որ
շատերն ասում էին՝ թէ Մեռաւ:
26 Եւ Յիսուսը նորա ձեռքը բռնեց,
վերկացրեց նորան. և նա կանգ-
նեց: Եւ երբոր նա տուն մտաւ՝
27 աշակերտներն առանձին հարցրին
նորան, թէ Մենք ինչո՞ւ չկարո-
ղացինք հանել նորան: Եւ ասաց
28 նորանց. Այդ ցեղը ուրիշ բա-
նով անկարելի է դուրս գայ, եթէ
ո՛չ աղօթքով և ծոմով:
29 Եւ այն տեղից դուրս եկած՝
Գալիլեայի միջուն անցնում էին.
և չէր ուզում որ մէկն իմանայ:
30 Քանզի իր աշակերտներին սովորեց-
նում էր՝ և նորանց ասում՝ թէ
Որդին մարդոյ մարդկանց ձեռքը
պիտի մատնուի, և նորան կ'սպա-
նեն. բայց երբոր սպանուի, եր-
րորդ օրում յարութիւն կ'առնէ:
31 Իսկ նորանք այն խօսքը չէին իմա-
նում. և վախում էին հարցնել
նորան:
32 Եւ կափառնայում եկաւ. և
երբոր տանն էր, նորանց հարց-
նում էր՝ Ի՞նչ էիք ճանապարհին
33 վիճում իրար հետ: Բայց նորանք
լուում էին վասն զի ճանապարհին
իրար հետ վիճում էին թէ ո՞վ
34 է մեծը: Եւ նստեց՝ տասներկու-
սին կանչեց և ասաց նորանց.
Եթէ մէկն ուզում է առաջինը լի-
նել, թո՛զ ամենից յետին և ա-
35 մենի պաշտօնեայ լինի: Եւ մի ե-
րեխայ առաւ, կանգնեցրեց նո-
րան նորանց մէջտեղը. և նորան
36 գրկելով ասաց նորանց. Ով որ
այսպիսի երեխաներից մէկին իմ
անունովս ընդունի՝ ինձ է ընդու-
նում. և ով որ ինձ ընդունի՝ ինձ
չէ ընդունում, այլ ինձ ուղար-
37 կողին: Եւ Յովհաննէս նորան պա-
տասխանեց և ասաց. Վարդապետ,
մէկին տեսանք որ քո անունովը

դևեր էր հանում, և մեր եռևից
չէր գալիս, և արդիլեցինք նորան,
որովհետև մեր եռևից չէր գալիս։
38 Յիսուսն էլ ասաց. Մի արդիլէք
նորան. վասն զի ոչ ով չկայ՝ որ
իմ անունովը մի զօրութիւն անէ,
և կարողանայ շուտով հայհոյել
39 ինձ։ Վասն զի ով որ մեզ հա-
40 կառակ չէ, մեր կողմն է։ Որով-
հետև ով որ մի բաժակով ջուր
խմեցնէ ձեզ իմ անունովը թէ
դուք Քրիստոսինն էք ճշմարիտն
ասում եմ ձեզ, նա չի կորցնիլ
41 իր վարձքը։ Եւ ով որ գայթակ-
ղեցնէ այս փոքրիկներից մէկին, որ
ինձ հաւատում են, աւելի լաւ
էր նորան, որ նորա վզովը մի ջա-
ղացի քար անցնուէր, և ծովը
42 գցուէր։ Եւ եթէ քո ձեռքը քեզ
գայթակղեցնէ՝ կտիր նորան, վա-
սըն զի լաւ է քեզ՝ որ խեղ մտնես
յաւիտենական կեանքը, քան եր-
կու ձեռքն ունենաս՝ և գեհենը
գնաս այն անանցանելի կրակի
43 մէջ. Որտեղ նորանց որդը չէ մեռ-
44 նում՝ և կրակը չէ անցնում։ Եւ
եթէ քո ոտքը քեզ գայթակղե-
ցընէ՝ կտրիր նորան. լաւ է քեզ
որ կաղ մտնես յաւիտենական
կեանքը, քան թէ երկու ոտքն ու-
նենաս՝ և գեհենը ընկնիս՝ այն ան-
45 անցանելի կրակի մէջ. Որտեղ
նորանց որդը չէ մեռնում՝ և կրա-
46 կը չէ անցնում։ Եւ եթէ քո աչ-
քը քեզ գայթակղեցնէ, գուրս
հանիր նորան. լաւ է քեզ՝ որ մէկ
աչքով Աստուծոյ արքայութիւ-
նը մտնես, քան թէ երկու աչք
ունենաս՝ և կրակի գեհենն ընկնիս
47 Որտեղ նորանց որդը չէ մեռնում՝
48 և կրակը չէ անցնում. Քանզի ա-
ղով պէտք է աղանուի,
և ամեն զոհ աղով պէտք է աղան-
49 ուի։ Աղը բարի է. իսկ եթէ աղն
անհամանայ, ինչո՞վ պիտի հա-
մովացնէք. աղ ունեցէք ձեր ան-
ձերումը, և իրար հետ խաղաղու-
թիւն արէք։

ԳԼ. Ժ

1 Եւ այն տեղից վերկացաւ եկաւ
Հրէաստանի կողմերը՝ Յորդանանի

այն կողմովը. և ժողովուրդները
դարձեալ հաւաքվում էին նորա
մօտ, և ինչպէս սովոր էր՝ դար-
ձեալ սովորեցնում էր նորանց։
2 Բայց փարիսեցիները մօտ եկան,
նորան հարցրին, թէ Արժա՞ն է
մարդուս որ կինը արձակէ. և փոր-
3 ձում էին նորան։ Նա էլ պա-
տասխանեց և ասաց նորանց, Մո-
4 ւսէան ի՞նչ պատուիրեց ձեզ։ Ն-
5 րանք էլ ասացին. Մոսէս հրա-
ման տուաւ՝ արձակման թուղթ
գրել, և արձակել։ Եւ Յիսուսը
պատասխանեց և ասաց նորանց.
Ձեր քարասրտութեան համար
այն պատուիրանքը գրեց ձեզ։
6 Բայց ստեղծագործութեան սկզբ-
7 ից Աստուած նորանց արու և
էգ արաւ, և ասաց. Սորա հա-
մար մարդ իր հօրը և մօրը կ'թո-
8 ղէ, և իր կնկան կ'յարի. Եւ եր-
կուքը մէկ մարմին կ'լինեն. այն-
պէս որ այլ ևս երկու չեն՝ բայց
9 մէկ մարմին։ Ուրեմն ինչ որ Աս-
տուած միաւորեց՝ թող մարդը
10 չբաժանէ։ Եւ տանը աշակերտ-
ները դարձեալ մի և նոյն բանը
11 հարցրին նորանից։ Եւ ասաց նո-
րանց. Ով որ կինն արձակէ և մի
ուրիշն առնէ, շնութիւն է գոր-
12 ծում նորա դէմ։ Եւ եթէ մի կին
իր մարդուն արձակէ և ուրիշ մար-
դու գնայ, շնութիւն է գործում։
13 Եւ նորա մօտ երեխաներ էին
բերում՝ որ դիպչէ նորանց. բայց
աշակերտները սաստում էին բե-
14 րողներին։ Իսկ երբոր Յիսու-
սը տեսաւ, բարկացաւ, և ասաց
նորանց. Թոյլ տուէք երեխանե-
րին ինձ մօտ գան, և մի արգել-
էք դորանց. վասն զի այդպիսի-
ներին է Աստուծոյ արքայութի-
նը։ Ճշմարիտն ասում եմ ձեզ,
15 Ով որ Աստուծոյ արքայութի-
նը չընդունի ինչպէս երեխայ, նա
չի մտնիլ նորա մէջ։ Եւ նորանց
16 գիրկն առաւ, ձեռք դրաւ նո-
րանց վերայ, և օրհնեց նորանց։
17 Եւ այնտեղից ճանապարհը գնա-
լիս, մէկը վազելով եկաւ՝ ծունր
դրաւ, նորան հարցնում էր և ա-
սում. Բարի վարդապետ, ի՞նչ
գործեմ, որ յաւիտենական կեան-

18 քը ժառանգեմ։ Յիսուս էլ ա-
սաց նորան. Ինչո՞ւ ես ինձ բարի
ասում. ոչ ով բարի չկայ, բայց
19 միայն մէկը՝ Աստուած։ Պատ-
ւիրանքները գիտես՝ Մի շնար,
Մի սպանաներ, Մի գողանար,
Մի սուտ վկայեր, մի զրկեր, քո
20 հօրը և մօրը պատուիր։ Նա էլ
պատասխանեց և ասաց նորան.
Վարդապետ, այդ ամենն իմ ե-
21 րեխայութիւնից պահել եմ։ Յի-
սուս էլ նորան մտիկ տուաւ՝
նորան սիրեց, և ասաց նորան.
Մէկ բան պակաս է քեզ, գնա,
ինչ որ ունիս ծախիր և աղքատ-
ներին տուր. և գանձ կ'ունենաս
երկնքումը. և խաչն առած՝ եկ
22 ինձ հետևիր։ Նա էլ այն խօսքի
համար դժուարացած՝ գնաց
տրտմած. վասն զի շատ ապրան-
23 քի տէր էր։ Եւ Յիսուս շուրջը
նայելով՝ ասաց իր աշակերտներին.
Ի՜նչքան դժուար է, որ ապրանք
ունեցողներն Աստուծոյ արքայու-
24 թիւնը մտնեն։ Եւ աշակերտները
զարմացել էին նորա խօսքերի վե-
րայ. բայց Յիսուս դարձեալ
պատասխանեց և ասաց նորանց,
Որդեակներ, ո՜րքան դժուար է,
որ հարստ ապրանքի վերայ յոյս-
ացողները Աստուծոյ արքայութի-
25 նը մտնեն։ Աւելի հեշտ է, որ
ուղտն ասեղի ծակով անցնի, քան
հարուստն Աստուծոյ արքայու-
26 թիւնը մտնէ։ Եւ նորանք առա-
ւել ևս զարմանում էին, իրար
ասելով. Ապա ո՞վ կարող է փըր-
27 կուիլ։ Յիսուս էլ նորանց մտիկ
տուաւ և ասաց. Մարդկանց կող-
մանէ է անկարելի, այլ ոչ թէ
Աստուծոյ կողմանէ. վասնզի ա-
մեն բան կարելի է Աստուծոյ
28 կողմանէ։ Եւ Պետրոսը սկսեց նո-
րան ասել. Ահա մենք ամեն բան
թողինք, և քո ետևից եկանք։
29 Յիսուս էլ պատասխանեց և ա-
սաց. Ճշմարիտն ասում եմ ձեզ,
ոչ ով չկայ, որ թողեց տուն
կամ եղբայրները կամ քոյրերը
կամ հայր կամ մայր կամ կին
կամ որդիք կամ արտերը ինձ հա-
մար կամ աւետարանի համար։
30 Որ հարիւրապատիկ հիմա այս
ժամանակումը չառնէ տներ և եղ-
բայրներ և քոյրեր և մայրեր և
որդիք և արտեր հալածանքի հետ,
և գալու աշխարհքումը յաւի-
տենական կեանքը։ Շատ ով որ 31
առաջիններ յետինք կ'լինեն, և
յետիններն առաջինք։

Եւ ճանապարհի վերայ երու- 32
սաղէմ էին գնում, և Յիսուսը
նորանցից առաջ էր գնում, և
նորանք զարմանում էին և ետե-
ւից գնալով վախենում էին։ Եւ
տասներկուսին դարձեալ առան-
ձին առաւ մօտը, սկսեց նորանց
ասել, թէ ինչ բաներ են իրան
պատահելու. Թէ ահա վեր ենք 33
ելնում Երուսաղէմ. և Որդին մար-
դոյ կ'մատնուի քահանայապետ-
ներին և դպիրներին. և նորան
մահով կ'դատապարտեն, և նո-
րան հեթանոսներին կ'մատնեն։
Եւ նորան ծաղր կ'անեն, և նո- 34
րան կ'ծեծեն, և նորա վերայ կը
թքնեն, և կ'սպանեն նորան. և եր-
րորդ օրումն յարութիւն կ'առնէ։

Եւ Զեբեդէոսի որդիքն՝ Յակո- 35
բոս և Յովհաննէս նորա մօտ են
գնում և ասում. Վարդապետ,
ուզում ենք որ՝ ինչ որ քեզա-
նից խնդրենք՝ մեզ անես։ Նա էլ 36
նորանց ասաց, Ի՜նչ էք ուզում
որ ես ձեզ անեմ։ Նորանք էլ ա- 37
սացին նորան. Տուր մեզ, որ մէ-
կը աջ կողմդ և միւսը ձախ կող-
մըդ նստինք քո փառքումը։ Յի- 38
սուս էլ ասաց նորանց. Չէք գի-
տում՝ ինչ էք խնդրում. կարո՞ղ
էք խմել այն բաժակը որ ես պի-
տի խմեմ, կամ այն մկրտութի-
նովը մկրտուիլ՝ որով պիտի մը-
կրտուիմ։ Նորանք էլ ասացին 39
նորան. Կարող ենք։ Յիսուս էլ
ասաց նորանց. Այն բաժակը որ
ես պիտի խմեմ, կ'խմէք, և այն
մկրտութիւնովն՝ որ ես պիտի մը-
կրտուիմ՝ կ'մկրտուէք։ Բայց 40
իմ աջ և իմ ձախ կողմը նստելն
իմս չէ, որ տամ. այլ նորանց,
որ պատրաստուած է։ Եւ այն 41
տասները լսելով սկսեցին բարկա-
նալ Յակոբի և Յովհաննէսի մա-
սին։ Յիսուս էլ նորանց իրան 42
մօտ կանչեց, և ասաց նորանց.

գիտէք՝ որ հեթանոսաց իշխան համարուողները տիրում են նոցանց վերայ, և նորանց մեծամեծները իշխում են նորանց վերայ: 43 Այնպէս չի պիտի լինի ձեր միջումը. այլ ձեզանից ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ 44 պաշտօնեայ լինի: Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել, 45 թող ամենի ծառայ լինի: Որովհետև Որդին մարդոյ էլ չեկաւ, որ իրան ծառայեն, այլ ինքն ծառայէ, և իր անձը փրկանք տայ շատերի տեղ:

46 Եւ գալիս են Երիքով. և երբոր նա և նորա աշակերտները և շատ ժողովուրդ Երիքովից դուրս էին գալիս, Տիմէի որդի Բարտիմէոս կոյրը ճանապարհի վերայ 47 նստած մուրանում էր: Եւ լսելով թէ Յիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմիր ինձ: 48 Եւ շատ մարդիկ սաստում էին նորան, որ լուռ կենայ. բայց նա էլ աւելի էր աղաղակում. Որդի 49 Դաւթի, ողորմիր ինձ: Եւ Յիսուսը կանգնեց և ասաց, որ նորան կանչեն. և կոյրին կանչեցին՝ և ասացին նորան. փառք եղիր, վեր 50 կաց, քեզ կանչում է: Նա էլ իր հանդերձը դէն գցեց՝ վերկացաւ 51 և Յիսուսի մօտ եկաւ: Եւ Յիսուսը պատասխանեց և նորան ասաց. Ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ: Կոյրն էլ նորան ասաց. 52 Ռաբբունի, որ առնեմ: Յիսուսն էլ ասաց նորան. Գնա՝ քո հաւատքը քեզ ապրեցրեց. և շուտով առնում էր, և ճանապարհումը Յիսուսի հետից գնում էր:

ԳԼ. ԺԱ

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան, Բեթփագէ և Բեթանիա Ձիթենեաց լեռան մօտ իր աշակերտներից երկուսին ուղարկեց: 2 Եւ ասաց նորանց. գնացէք այդ ձեր առջևի գիւղը. և շուտով երբոր նորա մէջ մտնէք, մի կապած աւանակ կ'գտնէք որի վերայ ոչ ոք չէ նստած. նորան ա-

ձակեցէք բերէք: 3 Եւ եթէ մէկը ձեզ ասէ. Ինչո՞ւ համար էք այդ անում. ասացէք՝ Թէ նա պէտք է. և շուտով նորան այստեղ կ'ուղարկէ: 4 Գնացին, և աւանակը գտան դուրսը փողոցի մէջ դրան մօտ կապած, և նորան արձակեցին: 5 Եւ այնտեղ կանգնածներից ոմանք ասացին նորանց. Ի՞նչ էք անում դա, որ արձակում էք այդ աւանակը: 6 Նորանք էլ ասացին նորանց, ինչպէս Յիսուսը հրամայեց. և թոյլ տուին նորանց: 7 Եւ աւանակը Յիսուսի մօտ բերին, և նորա վերայ գցեցին իրանց հանդերձները, և նորա վերայ նստեց: 8 Շատերն էլ իրանց հանդերձները ճանապարհին փռում էին, ուրիշներն էլ ծառերից ճիւղեր էին կտրում և ճանապարհին փռում: 9 Եւ առաջից գնացողները և ետևից եկողները աղաղակում էին և ասում, Ովսաննա. օրհեալ է Տիրոջ անունով եկողը. 10 Օրհեալ է Տիրոջ անունով մեր Դաւթի հօր եկող թագաւորութիւնը. Ովսաննա՛ ի բարձունս:

11 Եւ Յիսուսը մտաւ Երուսաղէմ և տաճարի մէջ. և չորս կողմով ամեն բանի մտիկ տուաւ. և որովհետև արդէն իրիկուան ժամանակ էր, գնաց Բեթանիա տասներկուսի հետ:

12 Եւ հետևեալ օրն երբոր Բեթանիայից դուրս էին գալիս, նա սովեց: 13 Եւ հեռուանց մի թզի ծառ տեսնելով, որ տերևներ ունէր. գնաց թէ արդեօք նորա վերա մի բան կ'գտնէ. և երբոր եկաւ, մի բան չի գտաւ բայց միայն տերևներ. վասնզի թզի ժամանակ չէր: 14 Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. այլևս ոչ ոք քեզանից յաւիտեան պտուղ չուտէ. և նորա աշակերտները լսում էին:

15 Եւ եկան Երուսաղէմ. և Յիսուսը տաճարը մտաւ, սկսեց դուրս հանել տաճարումը ծախողներին և առնողներին. և տապակ փոխողների սեղանները, և աղաւնի ծախողների աթոռները կոր-

16 ծանեց, եւ չէր թողուր, որ մէկը մի անօթ անցկացնէ տաճարի
17 միջով։ Եւ սովորեցնում էր և ասում նորանց, Գրուած չէ՞ թէ Իմ տունը աղօթքի տուն պիտի կոչուի ամեն ազգերի համար, իսկ դուք աւազակների բոյն ա-
18 րիք դարան։ Եւ գպիրները և քահանայապետները լսեցին, և ուզում էին թէ ի՞նչպէս կորցնեն նորան. վասնզի վախում էին նորանից. քանզի բոլոր ժողովուրդը նորա վարդապետութեան վրայ զարմացել էր։
19 Եւ երբոր իրիկուն եղաւ, քա-
20 ղաքից դուրս եկաւ։ Եւ առաւօտեան անցնելիս՝ տեսան այն թզի ծառն արմատից չորացած։
21 Եւ Պետրոսը յիշելով ասաց նորան. Ռաբբի, տես այն թզենին, որ անիծեցիր, չորացաւ։
22 Եւ Յիսուսը պատասխանեց և ասաց նորանց. Ունացէք Հաւատքն ու-
23 նեցէք։ Քանզի ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ով որ այս լեռան ասէ՝ վեր կաց և ծովն ընկիր, և իր սրտումն չերկմտի, քայց հաւատայ՝ թէ ինչ որ ասում է՝ կ'լինի նորան, կ'լինի ինչ որ ասէ։
24 Սորա համար ասում եմ ձեզ թէ Ամեն ինչ որ աղօթք անելով խնդրէք, հաւատացէք թէ կ'առ-
25 նէք, և կ'լինի ձեզ։ Եւ որ ժամանակ որ կանգնէք՝ աղօթք անէք, ներեցէք եթէ մէկի դէմ բան ունենաք. որպէսզի ձեր Հայրը էլ՝ որ երկնքումն է, ձեր
26 յանցանքը թողէ ձեզ։ Բայց եթէ դուք չներէք, ձեր Հայրն էլ որ երկնքումն է, ձեր յանցանքը չի ներել ձեզ։
27 Եւ դարձեալ երուսաղէմ եկան. և նա տաճարումը մտնելիս, քահանայապետները և դպիրները և ծերերը նորա մօտ եկան.
28 և ասացին նորան. Ի՞նչ իշխանութիւնով ես անում այդ. և ո՞վ տուաւ քեզ այդ իշխա-
29 նութիւնը որ այդ անես։ Յիսուսն էլ պատասխանեց և ասաց նորանց. Ես էլ ձեզանից մէկ բան Հարցնեմ ու ինձ պատասխան տուէք, և ես էլ կ'ասեմ ձեզ՝
թէ ի՞նչ իշխանութիւնով եմ ա-
նում այս։ Յովհաննէսի մկրտու- 30
թիւնն երկնքի՞ն էր, թէ մարդկանցից, պատասխան տուէք ինձ։ Եւ իրար հետ միտք էին անում 31
և ասում. Եթէ ասինք՝ երկնքից, կ'ասէ, Ապա ինչու չհաւատացիք նորան։ Այլ թէ ասինք՝ Մարդ- 32
կանցից, ժողովրդից վախենում ենք. վասնզի ամենքը ընդունում էին Յովհաննէսին՝ թէ իրաւի մարգարէ էր։ Եւ պատասխանեցին և 33
ասացին Յիսուսին. Չենք գիտում։ Յիսուսն էլ նորանց պատասխանեց և ասաց. Ես էլ չեմ ասել ձեզ, թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում այս։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսեց նորանց հետ առակներով խօսիլ՝ և ասաց. Մի մարդ այգի տնկեց, և նորան պարիսպով չրջապատեց, և հնձան փորեց, և աշտարակ շինեց, և նորան մշակների տուաւ, և օտար
2 երկիր գնաց։ Եւ ժամանակին այն մշակների մօտ մի ծառայ ուղարկեց, որ մշակներից այգու
3 պտղից առնէ։ Նորանք էլ բռնեցին նորան ծեծեցին, և դա-
4 տարկ ճանապարհ դրին։ Եւ դարձեալ մի ուրիշ ծառայ ուղարկեց նորանց մօտ. և քարկոծելով նորա գլուխը պատառեցին և անպատուած արձակեցին։
5 Եւ դարձեալ ուրիշն ուղարկեց՝ և նորան սպանեցին, և շատ ուրիշներին, ումանց ծեծում և ումանց
6 սպանում էին։ Հիմա դեռ իր մէկ սիրելի որդի ունենալով, նորան էլ ուղարկեց նորանց մօտ վերջապէս և ասաց, թէ Իմ որ-
7 դուցս կամչեն։ Բայց այն մշակները իրար ասացին, թէ Սա է ժառանգը. եկէք սորան սպանենք, և ժառանգութիւնը մեզ կ'լինի։
8 Եւ նորան բռնեցին՝ սպանեցին և հանեցին այգուց
9 դուրս։ Արդ այգու տէրն ի՞նչ կ'անէ. կ'գայ և մշակներին կը կորցնէ և այգին ուրիշներին կը
10 տայ։ Եւ դուք չէ՞ք կարդացել

այն դրածը՝ Ե՛ւ այն քարն՝ որ շի-
նողներն անարգեցին՝ նա եղաւ
41 անկեանի գլուխ։ Տէրից եղաւ
այս, և մեր աչքերի առջևն
զարմանալի է։
42 Եւ ուզում էին նորան բռնել,
բայց ժողովրդից վախեցան. վա-
րընդ իմացան՝ թէ այն առակն
իրանց համար ասաց. և նորան
թողին և գնացին։
43 Եւ փարիսեցիներից և Հերո-
դեսեաններից մի քանի հոգի նո-
րա մօտ ուղարկեցին, որ խօսքով
44 որսան նորան։ Եւ նորանք եկան
և ասացին նորան. Վարդապետ,
գիտենք՝ որ ճշմարիտ ես, և ոչ
ոքից հոգս չունիս, վասնզի մար-
դոց երեսպաշտութիւն չես ա-
նում, այլ Աստուծոյ ճանապարհը
ճշմարտութեամբ ուսուցանում
ես։ Արժա՞ն է՝ կայսրին հարկ
տալ, թէ չէ. տա՞նք թէ չտանք։
45 Նա էլ իմանալով նորանց կեղ-
ծաւորութիւնը, ասաց նորանց.
Ինչո՞ւ էք փորձում ինձ, մի դա-
հեկան բերէք ինձ՝ որ տեսնեմ։
46 Նորանք էլ բերին։ Եւ ասաց նո
րանց. Այս պատկերը կամ գի-
րը ու՞մն է, նորանք էլ ասացին
47 նորան, կայսրին։ Յիսուսն էլ
պատասխանեց և ասաց նորանց.
Կայսրինը կայսրին տուէք, և
Աստուծոյնը՝ Աստուծոյն։ Եւ
զարմացան նորա վերայ։
48 Եւ նորա մօտ եկան Սադուկե-
ցիք, որ ասում են՝ թէ յարու-
թիւն չկայ. նորան հարցրին և
49 ասացին. Վարդապետ, Մովսէս
մեզ համար գրեց որ եթէ մէկի
եղբայրը մեռնի, և կին թողէ,
և որդիք չթողէ՝ որ նորա եղբայ-
րը նորա կինն առնէ, և իր եղբօր
50 համար զաւակ յարուցանէ։ Արդ
եօթը եղբարք կային, և առա-
ջինը կին առաւ՝ և մեռնելիս զա-
51 ւակ չթողեց։ Եւ երկրորդը նո-
րան առաւ՝ և մեռաւ, և նա էլ
զաւակ չթողեց. այսպէս էլ եր-
52 րորդը։ Եւ այն եօթն էլ նորան
առին և զաւակ չթողին. և ա-
53 ռնից վերջը կինն էլ մեռաւ։ Արդ
յարութեան ժամանակին երբոր
յարութիւն կ'առնեն, նորանցից
որի՞ն կ'լինի կինն. վասնզի այն
եօթն էլ նորան կին առին։ Եւ 24
Յիսուսը պատասխանեց և ասաց
նորանց. Չէ՞ որ իսկ դորա համար
մոլորուած էք, որ ոչ գիրքն էք
գիտում և ոչ Աստուծոյ զօրու-
թիւնը։ Վասնզի երբոր մեռելների 25
միջից յարութիւն կ'առնեն, ոչ
կին կ'առնեն՝ և ոչ մարգու կ'գը-
նան, այլ հրեշտակների պէս են
որ երկնքումն են։ Սակայն մեռել- 26
ների համար՝ թէ յարութիւն
կ'առնեն, դուք չէ՞ք կարդացել
Մովսէսի գրքումը մորենու մէջ,
Ե՛ւ Աստուած ինչպէս խօսեց նո-
րան և ասաց. Ես եմ Աբրա-
համի Աստուածը, և Իսահակի
Աստուածը, և Յակոբի Աստուա-
ծը։ Եւ Աստուած մեռելներին 27
չէ, այլ կենդանիների Աստուած,
ուրեմն դուք շատ մոլորուած էք։
Եւ դպիրներից մէկը մօտ եկաւ, 28
լսելով որ վիճում էին, և երբոր
տեսաւ թէ լաւ պատասխանեց նո-
րանց, նորան հարցրեց, Ո՞րն է ա-
մենից առաջին պատուիրանքը։
Յիսուսն էլ նորան պատասխա- 29
նեց, Թէ Ամէն պատուիրանքնե-
րից առաջինը — է, Լսիր, Իսրա-
յէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր
է։ Եւ սիրիր քո Տէր Աստուածն 30
բոլոր սրտիցդ, և բոլոր անձիցդ,
և բոլոր մտքիցդ, և բոլոր զօրու-
թիւնիցդ. սա է առաջին պատ-
ուիրանքը։ Եւ երկրորդը սորան 31
նման, Սիրիր քո ընկերը քո ան-
ձին պէս. սորանցից աւելի մեծ
ուրիշ պատուիրանք չկայ։ Եւ 32
դպիրը նորան ասաց. Լաւ, վար-
դապետ, ճշմարտութեամբ ասա-
ցիր՝ թէ մէկ է Աստուած, նո- 33
րանից բացի ուրիշ չկայ։ Եւ նո-
րան սիրելը բոլոր սրտից և բոլոր
մտքից և բոլոր անձից և բոլոր
զօրութիւնից, և ընկերն անձին
պէս սիրելը՝ աւելի է քան թէ ա-
մեն ողջակէզները և զոհերը։ Եւ 34
Յիսուսը նորան տեսնելով, որ խ-
մաստութեամբ պատասխանեց,
ասաց նորան. Դու հեռու չես
Աստուծոյ արքայութիւնից։ Եւ
այլ ևս ոչ ոք չէր համարձա-
կում նորան մի բան հարցնել։

35 Եւ Յիսուսը պատասխանեց և ասաց, երբ որ տաճարում ման-
եցնում էր. Ի՞նչպէս են ասում դպիրները, թէ Քրիստոս Դաւթի
36 որդի է։ Վասնզի ինքը Դաւիթ սուրբ Հոգովն ասում է, Տէրն իմ
Տիրոջն ասաց. Իմ աջ կողմն նըս-
տիր, մինչև որ քու թշնամիները
37 ոտացդ պատուանդան դնեմ։ Արդ
Դաւիթ ինքն նորան Տէր է ա-
սում՝ ապա ի՞նչպէս նորա որդի
է, և շատ ժողովուրդը քաղցրու-
թեամբ լսում էր նորան։

38 Եւ իր վարդապետութեան մէջ
ասում էր նորանց, զգոյշ կացէք
դպիրներից, որ կամենում են
պայծառ հագուստներով ման-
դալ, և հրապարակներում բա-
39 րևներ ընդունել. Եւ ժողովարան-
ների մէջ առաջին աթոռներ, և
ընթրիքներում առաջին բազմոց-
40 ներ։ Որ որբևայրների տները ու-
տում են, և պատճառանքով եր-
կար աղօթք են անում. դորանք
աւելի կրն դատապարտութիւն
կ'առնեն։

41 Եւ Յիսուսը գանձանակի դի-
մացը նստած մտիկ էր անում,
թէ ժողովուրդն ինչպէս էր ըն-
ղինձ գցում գանձանակը, և շատ
հարուստներ շատ բաներ էին գը-
42 ցում։ Եւ մի աղքատ որբևայրի
եկաւ երկու լումայ գցեց, որ մի
43 նաքարակիտ է։ Եւ իր աշակերտ-
ներին իւրան մօտ կանչեց, և ասաց
նորանց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ՝ թէ այս աղքատ որբևայրին
գանձանակը գցողների ամենից ա-
44 ւելի գցեց։ Վասնզի ամենքն ի-
րանց աւելորդից գցեցին. բայց
սա իր չքաւորութիւնից ամեն
ինչ որ ունէր գցեց, իր կեանքի
բոլոր ապրուստը։

ԳԼ. ԺԳ

1 Եւ երբոր նա տաճարից դուրս
էր գալիս, նորա աշակերտներից
մէկը նորան ասաց. Վարդա-
պետ, տես ինչպիսի քարեր և
2 ինչպիսի շինուածներ։ Եւ Յի-
սուսը պատասխանեց և ասց նո-
րան. Տեսնո՞ւմ ես այդ մեծ շի-
նուածները. քար քարի վերայ չի
թողուիլ՝ որ չքանդուի։

3 Եւ երբոր նա Ձիթենեաց լե-
ռան վերայ նստած էր տաճարի
դիմացը, Պետրոսը և Յակոբոսը և
Յոհաննէսը և Անդրէասը առան-
ձին հարցնում էին նորան. Ասա
4 մեզ, դորանք ե՞րբ կ'լինին. և
նշանն ի՞նչ է, երբոր այդ բոլոր
բաները պիտի կատարուին։ Յի-
5 սուսն էլ պատասխանեց և սկը-
սեց նորանց ասել. Զգոյշ կացէք,
6 մի գուցէ մէկը ձեզ խաբէ։ Վա-
սընզի շատերը կ'գան իմ անու-
նովը, և կ'ասեն՝ թէ Ես եմ. և
7 շատերը կ'մոլորեցնեն։ Բայց երբ-
որ պատերազմներ և պատե-
րազմների համբաւներ կ'լսէք, մի
շփոթուիք, վասնզի պէտք է որ
լինին. բայց դեռ վերջը չէ։ Քան-
8 զի ազգ ազգի վերայ վեր կ'կենայ,
և թագաւորութիւն թագաւո-
րութեան վերայ. և տեղ տեղ
երկրաշարժներ կ'լինին, և սովեր
և խռովութիւններ կ'լինին. ա-
րանք նեղութեանց սկիզբն են։
9 Բայց դուք զգոյշ կացէք ձեր ան-
ձերին, վասնզի ձեզ ատեանների
կ'մատնեն, և ժողովարանների մէջ
կ'տանջուիք, և կուսակալների և
թագաւորների առջև կ'կանգ-
նիք ինձ համար նորանց՝ ի վկա-
յութիւն։ Եւ բոլոր ազգերին
10 պէտք է առաջ Աւետարանը քա
րոզուի։ Բայց երբոր ձեզ կ'տա-
11 նեն որ մատնեն, առաջուց հոգս
չանէք թէ ի՞նչ պիտի խօսիք, և
ոչ մտածեցէք. այլ ինչ որ այն
ժամուն կ'տրուի ձեզ, այն խօ-
սեցէք. քանզի դուք չէք՝ խօսող-
12 ները, այլ Սուրբ Հոգին։ Եւ եղ-
բայր եղբօրը կ'մատնէ մահու, և
հայրը որդուն. և որդիք վեր կ'կե-
նան ծնողաց վերայ, և նորանց
13 կ'սպանեն։ Եւ ամենին ատելի կը
լինիք իմ անունի համար. բայց
ով որ մինչև վերջը համբերէ՝ նա
կապրի։

14 Եւ երբոր տեսնէք աւերածի
պղծութիւնը, որ ասուած է Դա-
նիէլ մարգարէից, կանգնած այն
տեղում որ արժան չէ. (ով որ
կարդում է, միտք առնէ.) այն

ժամանակ նորանք որ Հրէաստա-
նումն են, թող լեառները փախ-
15 չին։ Եւ ով որ կաղի վերայ է,
թող չիջնէ տան մէջ, և չմտնէ
իր տանիցը մի բան վեր առնելու
16 Եւ յանդումը լինողը թող յետ
չդառնայ իր հանդերձը առնե-
17 լու։ Բայց վայ այն օրերուամը յղ-
ղացածներին և ծիծ տուողներին
18 Եւ աղօթք արէք, որ ձեր փախ-
չելը ձմեռ ժամանակին չ'լինի։
19 Վասնզի այն օրերը նեղութիւն-
ներ կ'լինին, որ այնպիսիներ աշ-
խարհի սկզբիցը, որ Աստուած
ստեղծել է, մինչև հիմա չեն ե-
20 ղած, և երբէք չեն լինիլ։ Եւ ե-
թէ Տէրն այն օրերը չէր կարճա-
ցրել, ոչ մի մարմին չէր ապրիլ,
բայց ընտրուածներուն համար, ո-
րոնց ընտրեց, այն օրերը կարճա-
21 ցրեց։ Եւ այն ժամանակ եթէ
մէկը ձեզ ասէ. Ահա այստեղ է
Քրիստոսը, կամ ահա այնտեղ,
22 մի հաւատաք։ Վասնզի սուտ
քրիստոսներ և սուտ մարգարէ-
ներ վեր կ'կենան, և նշաններ և
հրաշքներ կ'տան, որ եթէ կա-
րելի լինէր, ընտրուածներին էլ
23 մոլորեցնեն։ Բայց դուք զգոյշ
կացէք, ահա ասացի առաջուց
բոլորը։
24 Բայց այն օրերուամն այն նեղու-
թիւնից յետոյ արեգակը կ'խա-
ւարի, և լուսինն իր լոյսը չի տալ։
25 Եւ երկնքի աստղերը կ'թափուին,
և երկնքուամը լինող զօրութիւն-
26 ները կ'շարժուին։ Եւ այն ժա-
մանակ կ'տեսանեն Որդին մարդոյ
ամպերով գալիս շատ զօրութիւ-
27 նով և փառքով։ Եւ այն ժա-
մանակ իր հրեշտակները կ'ուղար-
կէ, և իր ընտրուածներին չորս
կողմիցը կ'ժողովէ, երկրի ծայ-
28 րիցը մինչև երկնքի ծայրը։ Բայց
թզենուցը սովորեցէք առակը.
երբոր նորա ճղերը արդէն կ'կակ-
ղին և տերևները կ'արձակուին
29 գիտէք թէ ամառը մօտ է։ Այն-
պէս էլ դուք, երբոր տեսնէք
այս բոլորը լինելիս, իմացէք թէ
30 մօտիկ է դուռներին։ Ճշմարիտ ա-
սում եմ ձեզ, թէ այս ազգը չի
անցնիլ, մինչև որ այս բոլորը լի-
նի։ Երկինքն և երկիրն կ'անցնին, 31
բայց իմ խօսքերը չեն անցնիլ։
Միայն այն օրուայ և ժամի 32
համար ոչ ով չգիտէ, ոչ հրեշ-
տակները երկնքումը և ոչ Որդին,
բայց միայն Հայրը։ Զգուշացէք, 33
արթուն կացէք և աղօթք արէք.
վասնզի չգիտէք թէ ժամանակը
երբ է։ Ինչպէս մի մարդ, որ հե- 34
ռու աշխարհ գնալիս իր տունը
թողէ, և իր ծառաներին իշխա-
նութիւն տայ, և ամեն մէկին իր
գործը, և դռնապանին հրաման
տայ, որ արթուն կենայ։ Արդ 35
արթուն կացէք, վասնզի չգիտէք
թէ տանտէրը երբ կգայ, իրի-
կո՞ւնը, թէ կէս գիշերը, թէ
հաւի խօսելու ժամանակին, թէ
առաւօտուն։) Որ չ'լինի թէ յան- 36
կարծ գալով ձեզ քնած գտնէ։
Բայց ինչ որ ձեզ ասում եմ, ա- 37
մենին եմ ասում. Արթուն կացէք։

ԳԼ. ԺԴ

Եւ երկու օրից յետոյ զատիկն 1
էր և բաղարջակերք, և քահա-
նայապետներն և դպիրները որո-
նում էին, թէ ինչպէս նորան
նենգութեամբ բռնեն սպանեն։
Բայց ասում էին՝ Ո՛չ տօնում 2
ոչ, մի գուցէ ժողովրդի դէլխաո-
վութիւն լինի։
Եւ երբոր Բեթանիա էր, Սի- 3
մոն բորոտի տան սեղան նստած,
մի կին եկաւ՝ որ մի շիշ ապիւ-
թանգագին նարդոսի իւղ ունէր,
և շիշը կոտրեց՝ նորա գլխի վերայ
թափեց։ Բայց կային ոմանք որ 4
իրանց մէջ դժուարացան, ասե-
լով. Ի՞նչու եղաւ իւղի այդ կո-
կոտումը։ Վասնզի կարելի էր դո- 5
րան երէք հարիւր դահեկանից
աւելի թանգ ծախել, և աղքատ-
ներին տալ, և շատ զայրանում
էին նորա վերայ։ Յիսուս էլ ա- 6
սաց. Թողէք տուէք դորան. ինչո՞ւ
էք նեղութիւն տալիս դորան. գո
մի բարի բան գործեց ինձ վերայ։
Վասնզի ամեն ժամանակ աղ- 7
քատներին ձեզ հետ ունիք, և
երբոր կամենաք՝ կարող էք նո-
րանց բարի անել. բայց ինձ ա-

մեն ժամանակ ձեզ հետ չունիք։
8 Դա ինչ որ ունէր, արաւ. առա-
ջուց իմ մարմինն օծեց՝ թաղման
9 համար։ Ճշմարիտն ասում եմ
ձեզ, ուր որ այս աւետարանը
քարոզուի, բոլոր աշխարհքի մէջ
դարձ յիշատակի համար նա էլ
կ'խօսուի՝ որ դա արաւ։
10 Եւ Յուդա Իսկարիօտացին՝ այն
տասներկուսից մէկը՝ քահանայա-
պետների մօտ գնաց, որ նորան
11 մատնէ նորանց։ Նորանք էլ երբ-
որ լսեցին՝ ուրախացան՝ և խոս-
տացան նորան արծաթ տալ. և
որոնում էր թէ ի՞նչպէս յարմար
ժամանակով մատնէ նորան։
12 Եւ բաղարջակերաց առաջին օ-
րը, երբոր զատկի գառն մորթում
էին, նորա աշակերտները նորան
ասացին. Ի՞նչ տեղ ես կամե-
նում, որ գնանք պատրաստենք,
13 որ զատիկն ուտես։ Եւ իր աշա-
կերտներից երկուսին ուղարկեց և
ասաց նորանց. Գնացէք քաղա-
քը, և մի մարդ կ'պատահի ձեզ՝
ջրի կուժն առած։ Հետ տանիլ,
14 նորա տանից գնացէք։ Եւ ուր որ
մտնէ, այն տան տիրոջն ասա-
ցէք, Թէ Վարդապետն ասում է՝
Ո՞ւր է այն իջևանը, ուր զատի-
կըն ուտեմ աշակերտներիս հետ։
15 Եւ նա մի մեծ զարդարուած պատ-
րաստ վերնատուն ցոյց կ'տայ ձեզ.
այն տեղ պատրաստեցէք մեզ հա-
16 մար։ Եւ նորա աշակերտները ե-
լան ու եկան քաղաքը, և գտան
ինչպէս նորանց ասաց. և զատի-
կը պատրաստեցին.
17 Եւ երբոր իրիկուն եղաւ, ե-
18 կաւ տասներկուսին հետ. Եւ
երբոր սեղան նստեցին և ու-
տում էին, ասաց Յիսուսը. Ճըշ-
մարիտն ասում եմ ձեզ, որ ձե-
զանից մէկը կ'մատնէ ինձ. նա որ
19 ինձ հետ ուտում է։ Նորանք էլ
սկսեցին տրտմել և մէկը մէկից
յետոյ նորան ասել, Մի՞թէ ես.
20 և միւսը՝ Մի՞թէ ես՞։ Նա էլ պա-
տասխանեց և ասաց նորանց.
Տասներկուսիցդ մէկը՝ նա որ ձե-
ռը ինձ հետ սկուտեակի մէջ
21 կոխեց։ Բայց Որդին մարդոյ կ'գնայ՝
ինչպէս նորա համար գրուած է.
ասկայն վայ այն մարդուն, որի
ձեռովն Որդին մարդոյ կ'մատնուի,
լաւ էր նորան, ծնուած չլինէր
նա մարդը։
22 Եւ նորանք ուտելիս, Յիսուսը
հաց առաւ՝ օրհնեց՝ կտրեց և
տուաւ նորանց և ասաց. Առէք
կերէք. այս է իմ մարմինը։ 23 Եւ
բաժակն առաւ՝ գոհացաւ, տը-
ւաւ նորանց, և ամենքը խմեցին
նորանից։ 24 Եւ ասաց նորանց. Այս
է իմ արիւնը նոր ուխտի, որ շա-
տերի համար թափվում է։ 25 Ճըշ-
մարիտն ասում եմ ձեզ. Թէ այլ
ևս որթի բերքիցը չեմ խմել մին-
չև այն օրն, երբոր նորան նոր
խմեմ Աստուծոյ արքայութեան
մէջ։
26 Եւ օրհնաբանելուց յետոյ դուրս
եկան Ձիթենեաց լեռանը։ 27 Եւ Յի-
սուսը նորանց ասաց Թէ Ամենքդ
այս գիշեր կ'գայթակղիք ինձա-
նից. վասնզի գրուած է՝ Կ'հար-
ւիւրը կ'զարկեմ՝ և ոչխարները կը
ցրուին։ 28 Բայց իմ յարութիւն
առնելուց յետոյ ձեզանից առաջ
կ'գնամ Գալիլեա։ 29 Պետրոսն էլ
ասաց նորան. Թէև ամենքն էլ
գայթակղին, բայց ես ոչ։ 30 Յի-
սուսն էլ նորան ասաց. Ճշմարիտ
ն ասում եմ քեզ, Թէ այսօր,
հէնց այս գիշերուայն հաւը երկու
անգամ չխօսած, երեք անգամ
կ'ուրանաս ինձ։ 31 Բայց նա շատ
առաւել ևս ասում էր. Թէ որ
քեզ հետ մեռնել էլ պէտք լինի
ինձ, քեզ չեմ ուրանալ. այնպէս
էլ ամենքն էին ասում։
32 Եւ եկան մի գիւղ՝ որի անու-
նը Գեթսեմանի էր. և իր աշա-
կերտներին ասաց. այստեղ նըս-
տեցէք, մինչև ես աղօթք անեմ
33 Եւ Պետրոսին և Յակոբին և Յո-
հաննէսին իր հետ առաւ, և քա-
կսեց զարհուրել և տխրել։ 34 Եւ
ասաց նորանց. Իմ անձը մահու
չափ խիստ տրտմած է. այստեղ
մնացէք և արթուն կացէք։ 35 Եւ
մի քիչ առաջ գնաց, գետնի վե-
րայ ընկաւ, և աղօթք էր անում,
որ եթէ կարելի է, այն ժամն ի-
րանից անցնէ։ 36 Եւ ասում էր.
Աբբա, Հայր, ամեն բան կարե-

լի է քեզ, այս բաժակն ինձանից
անցրու. բայց ոչ թէ ինչ որ ես
եմ կամենում, այլ ինչ որ դու։
37 Եւ գալիս է գտնում նորանց քըն-
նած և ասում Պետրոսին. Սի-
մո՛ն, քնո՞ւմ ես, չկարացի՞ր մէկ
38 ժամ արթուն կենալ։ Արթուն
կացէք և աղօթք արէք, որ փոր-
ձութեան մէջ չմանէք. հոգին
յօժար է, բայց մարմինը տկար։
39 Եւ դարձեալ գնաց աղօթք ա-
40 րաւ, նոյն խօսքերն ասելով։ Եւ
եկաւ դարձաւ՝ նորանց դարձեալ
քնած գտաւ, վասն զի նորանց ա-
չքերը ծանրացել էին, և չէին գի-
տում՝ թէ ինչ պատասխանեն նո-
41 րան։ Եւ երրորդ անգամն է գա-
լիս և ասում նորանց. Այսուհե-
տև քնեցէք և հանգիստ առէք.
բաւական է. ժամն եկաւ. ահա
Որդին մարդոյ մատնվում է մե-
42 ղաւորաց ձեռքը։ Վեր կացէք
գնանք, ահա մօտեցաւ ինձ մատ-
նողը։
43 Եւ շուտով՝ դեռ նա խօսելիս՝
եկաւ Յուդան՝ այն տասներկու-
սից մէկը. և նորա հետ շատ մար-
դիկ սրերով և բիրերով՝ քահա-
նայապետներից և դպիրներից
44 և ծերերից։ Նորան մատնողն
էլ նորանց նշան էր տուել՝ և
ասել, Ում որ ես համբուրե-
մ, նա է, նորան բռնեցէք և
45 պահպանութեամբ տարէք։ Եւ ե-
կաւ՝ շուտով մատեցաւ նորան և
ասաց. Ռաբբի, Ռաբբի, և
46 համբուրեց նորան։ Եւ նորանք
իրանց ձեռքը գցեցին նորա վե-
47 րայ և բռնեցին նորան։ Եւ նո-
րա մօտ կանգնածներից մէկը սու-
րը քաշեց՝ քահանայապետի ծա-
ռային զարկից, և ականջը կըտ-
48 րեց։ Եւ Յիսուսը պատասխանեց
և ասաց նորանց. Ինչպես մի ա-
ւազակի վերայ սրերով և բիրե-
րով դուրս եկաք ինձ բռնելու։
49 Ամեն օր ձեզ մօտ էի ուսմա-
րանում սովորեցնելով, և ինձ չբռ-
նեցիք. բայց որպէս զի գրքերը կա-
50 տարուին։ Եւ ամենքը նորան թո-
51 ղին փախան։ Եւ մէկ երիտա-
սարդ նորա ետևից գնում էր,
որ կտաւ էր գցել մերկ մարմնոյ
վերայ, և երիտասարդները բռնե-
նում էին նորան։ Իսկ նա կտա- 52
ւը թողից՝ և մերկ փախաւ նո-
րանցից։
Եւ Յիսուսին տարան քահա- 53
նայապետի մօտ, և բոլոր քահա-
նայապետները և դպիրները և ծե-
րերը նորա մօտ էին գալիս։ Եւ 54
Պետրոսն էլ հեռուանց գնաց նո-
րա ետևից մինչև քահանայապե-
տի սրահի ներսը, և պահապան-
ների հետ նստել էր և լուսոյ մօտ
տաքանում էր։ Բայց քահանայա- 55
պետներն և բոլոր տեսանը Յի-
սուսի դէմ վկայութիւն էին որո-
նում որ նորան սպանեն, բայց
չէին գտնում։ Վասն զի շատերը 56
սուտ վկայութիւն էին տալիս նո-
րան դէմ, բայց վկայութիւններն
իրար յարմար չէին։ Եւ ոմանք 57
վերկացան և նորան դէմ սուտ
վկայում էին և ասում. Թէ մենք 58
լսեցինք դորանից, որ ասում էր՝
Թէ ես այդ ձեռագործ տաճարը
կ'քանդեմ, և երեք օրում ուրի-
շը կ'շինեմ անձեռագործ։ Սա- 59
կայն այնպէս էլ նորանց վկայու-
թիւնն իրար յարմար չէր։ Եւ 60
քահանայապետը վերկացած մէջ-
տեղը՝ Յիսուսին հարցրեց և ասաց.
Ոչինչ չե՞ս պատասխանում ի՞նչ
են վկայում դորանք քեզ դէմ։
Իսկ նա լուռ էր կենում՝ և ոչինչ 61
պատասխան չէր տալիս. քահա-
նայապետը գարձեալ նորան հարց-
նում էր և ասում. Դո՞ւ ես Քրի-
ստոսը՝ Աւրհնի օրհնելոյն։ Յիսու- 62
սն էլ պատասխանեց, Ես եմ. և
կը տեսանէք Որդին մարդոյ զօրու-
թեան աջ կողմը նստած, և եր-
կնքի ամպերովը եկած։ Եւ քա- 63
հանայապետն իր հանդերձները
պատռելով ասաց. Էլ ի՞նչ պէտք
է մեզ վկայներ։ Լսեցիք հայհո- 64
յանքը. ի՞նչպէս է երևում ձեզ.
նորանք էլ ամենքը դատապար-
տեցին նորան, թէ Մահապարտ է։
Եւ ոմանք սկսեցին նորա երես- 65
թքել, և երեսը ծածկել, և բռ-
նցքով ծեծել նորան և նո-
րան ասել, Մարգարէացիր. և
պահապանները նորան ապտակ
էին տալիս։

66 Եւ երբոր Պետրոսը վարը սրտհուեցաւ էր, քահանայապետին ու-
67 զախիններէն մէկը գալիս է, եւ տեսնում Պետրոսին որ տաքնում է, մտիկ է տալիս նորան և ասում. Դու էլ էիր Յիսուսի
68 Նազովրեցւոյն հետ։ Բայց նա ուրացաւ և ասաց. Չեմ ճանաչում և չեմ էլ հասկանում, թէ դու ինչ ես ասում. և դուրս գնաց
69 նախասրահը և հաւը խօսեց։ Եւ աղախինը նորան տեսաւ և դարձեալ սկսեց ասել այնտեղ կանգնածներին. Թէ Սա նորանցից է։
70 Բայց նա դարձեալ ուրացաւ. և մի քիչ յետոյ այնտեղ կանգնածները դարձեալ ասացին Պետրոսին. Ճշմարիտ՝ դու էլ նորանցից ես, վասն զի Գալիլեացի ես
71 և քո ըսոյցդ էլ նման է։ Բայց նա սկսեց անիծել և երդում անել թէ չեմ գիտում այն մար-
72 դին. որ դուք ասում էք։ Եւ հաւն երկրորդ անգամ խօսեց։ Եւ Պետրոսը յիշեց այն խօսքը, որ Յիսուսը նորան ասաց. Թէ Հաւն դեռ երկու անգամ չխօսած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ. և սկսեց լալ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ շուտով առաւօտանց քահանայապետները ծերերի և դպիրների հետ՝ և բոլոր տեառնը խորհուրդ արին, Յիսուսին կապեցին և տարան մատնեցին Պի-
2 ղատոսին։ Եւ Պիղատոսը նորան հարցրեց. Դո՞ւ ես Հրէից թագաւորը. Նա էլ պատասխանեց և ասաց նորան. Դու ես ասում։
3 Եւ քահանայապետները շատ մեղադրանութիւններ էին անում
4 նորանից. Եւ Պիղատոսը դարձեալ հարցրեց նորան և ասաց. Ոչինչ պատասխան չե՞ս տալիս. տես որքան են վկայում քեզ դէմ
5 Բայց Յիսուսը դարձեալ ոչինչ չպատասխանեց, մինչև որ Պիղատոսը զարմացաւ։
6 Բայց ամեն ոճի ժամանակին մէկ բանտարկեալ էր արձակում նորանց համար, որին որ խնդ-

բում էին։ Եւ Բարաբբաս ա- 7
ուած մէկը կար այն խռովարարների հետ կապուած, որ իրանց խռովութիւնում մարդասպանութիւն էին արել։ Եւ ամբոխն 8
սկսեց բարձր ձայնով աղաղակել և խնդրել, որ անէ ինչպէս միշտ անում էր նորանց։ Պիղատոսն էլ 9
պատասխանեց նորանց և ասաց. Կամենա՞ւմ էք՝ Հրէից թագաւորը կ'արձակեմ ձեզ համար։ Վասն- 10
զի գիտէր որ նախանձով էին մատնել նորան քահանայապետները։
Բայց քահանայապետներն ամբո- 11
խին գրգռեցին, որ աւելի Բարաբբային արձակէ նորանց համար։
Եւ Պիղատոսը դարձեալ պա- 12
տասխանեց նորանց և ասաց. Ապա ի՞նչ էք ուզում որ անեմ նորան որին ասում էք Հրէից թագաւոր. Եւ նորանք դարձեալ ա- 13
ղաղակեցին, խաչիր նորան։ Պի- 14
դատոսն էլ նորանց ասաց. Ապա ի՞նչ չար բան է արել. և նորանք աւելի ևս աղաղակում էին, խաչիր դորան։ Բայց Պիղատոսը՝ 15
որովհետև կամենում էր ամբոխի կամքը հաճել, արձակեց նորանց համար Բարաբբային. և Յիսուսին ձեռնց նորանց յանձնեց, որ խաչուի։

Եւ զինուորները նորան տարան 16
արտի ներսը այսինքն պալատը. և բոլոր գունդը մէկտեղ կանչեցին։ Եւ նորան ծիրանի հագցրին 17
և փշներից շինած պսակ դրին նորա գլխին. Եւ սկսեցին նորան ող- 18
ջոյն տալ. Բարև, Հրէից թագաւոր։ Եւ նորա գլուխն եղէգով 19
ծեծում էին, և նորա երեսին թքում էին՝ և ծունկ դնելով երկրպագում էին նորան։ Եւ երբ 20
որ ծաղր արին նորան, այն ծիրանին նորանից հանեցին, և իր հանդերձները հագցրին, և դուրս տարան որ խաչեն նորան։
Եւ պահակ բռնեցին Սիմոն Կիւ- 21
րենացին, Աղէքսանդրի և Ռուփոսի հօրն՝ որ արտից գալով այն տեղից անցնում էր, որ նորա խաչը վեր առնէ։ Եւ տարան 22
նորան մի Golgotha անուանած տեղ, որ կ'թարգմանուի գանկի տեղ։

23 Եւ նորան զմեռած գինի էին տա-
լիս խմելու, բայց նա չառաւ։
24 Եւ նորան խաչեցին և բաժանե-
ցին նորա հանդերձները վիճակ
գցելով նորանց վերայ՝ թէ ով
25 ինչ պիտի առնէ։ Եւ ժամը եր-
26 րորդն էր՝ և նորան խաչեցին։ Եւ
նորա յանցանքի գիրը գրուած էր՝
27 Հրէից թագաւորը։ Եւ նորա հետ
երկու աւազակ խաչեցին, մէկը
նորա աջ կողմին և մէկը ձախ
28 կողմին։ Եւ կատարուեցաւ այն
գիրն, որ ասած է, Անօրէննե-
29 րի հետ համարուեցաւ։ Եւ այն-
տեղով անցնողները նորան հայ-
հոյում էին, իրանց գլխները շար-
ժելով ու ասելով. Վա՛հ, ով
տաճարը քանդող՝ ու երեք օրու-
30 մը շինող, Ապրեցրու քո անձը և
31 իջիր խաչից։ Նոյնպէս էլ քա-
հանայապետները դպիրների հետ
միասին ծաղր էին անում և ա-
սում. Ուրիշներին ապրեցրեց՝ իր
անձը չէ կարողանում ապրեցնել։
32 Քրիստոսը՝ Իսրայէլի թագաւորը
թող հիմա խաչից իջնէ, որ
տեսնենք և հաւատանք. և նորա
հետ խաչուածներն էլ էին նո-
րան նախատինք տալիս։
33 Եւ երրորդ ժամը վեցը եկաւ,
խաւար եղաւ բոլոր երկրի վերայ
34 մինչև իննը ժամը։ Եւ իններորդ
ժամին Յիսուսը մեծ ձայնով ա-
ղաղակեց և ասաց. Էլի Էլի լա-
մա սաբաքթանի. որ կ'թարգ-
մանուի՝ Իմ Աստուած, իմ Աս-
35 ուած, ինչո՞ւ թողիր ինձ։ Եւ
այնտեղ կանգնածներից ոմանք,
երբոր լսեցին, ասում էին. Ահա
36 Եղիային է կանչում։ Եւ մէկը
վազեց մի սպունգ քացախով լց-
րեց, և եղէգի վերայ դրաւ,
տուաւ նորան՝ որ խմէ, և ասաց.
Թողէք տեսնենք, Եղիան կ'գա՞յ
որ նորան վայր բերէ։
37 Եւ Յիսուսը մեծ ձայն արձա-
38 կեց՝ և հոգին տուաւ։ Եւ տա-
ճարի վարագոյրն երկու կոր պա-
տառուեցաւ՝ վերևից մինչև ցա-
39 ծը։ Եւ հարիւրապետն, որ այն-
տեղ նորա դիմացը կանգնած էր,
երբոր տեսաւ թէ Յիսուսը այս-
պէս աղաղակեց և հոգի տուաւ,
ասաց. Ճշմարիտ, այս մարդն
Աստուծոյ Որդի էր։ Կանայք էլ
կային, որ հեռուանց մտիկ էին
տալիս, որոնց միջումն էր Մա-
րիամ Մագդաղենացին, և Մա-
րիամ փոքր Յակոբի և Յոսէի մայ-
րը, և Սողոմէն, Որոնք և, երբոր
նա Գալիլեա էր, նորա ետևից
գնում և նորան ծառայում էին.
և ուրիշ շատ կանայք էլ, որ նո-
րա հետ Երուսաղէմ էին եկել։
42 Եւ երբոր արդէն իրիկուն ե-
ղաւ, որովհետև ուրբաթ էր՝ այ-
43 սինքն շաբաթից առաջի օրը. Ե-
կաւ Արիմաթացի Յոսէփը՝ մի ե-
րևելի խորհրդական, որ ինքն էլ
Աստուծոյ արքայութեանն սպա-
սում էր. համարձակելով մտաւ
Պիղատոսի մօտ, և խնդրեց Յի-
սուսի մարմինը։ Եւ Պիղատոսը
44 զարմացաւ, թէ արդէն մեռեալ
է. և հարիւրապետին իրան մօտ
կանչեց, նորան հարցրեց և ա-
սաց, թէ շատո՞նց է որ մեռաւ։
45 Եւ հարիւրապետից տեղեկանա-
լով, մարմինը Յոսէփին շնորհեց։
46 Եւ Յոսէփը կտաւ առաւ և նորան
իջեցրեց կտաւով պատեց, և նո-
րան մի գերեզմանի մէջ դրաւ,
որ փորուած էր քարից. և մի
քար թաւալեց գերեզմանի դրան
վերայ։ 47 Եւ Մարիամ Մագդաղե-
նացին և Յոսէի մայր Մարիամն էլ
տեսան ուր որ դրուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ երբոր շաբաթն անցաւ, Մա-
րիամ Մագդաղենացին և Յակո-
բի մայրը Մարիամը և Սողոմէն
խունկեր առին, որ գան նորան
2 օծեն։ Եւ մէկշաբթի առաւօտեան
շատ կանուխ արեգակը ծագելիս
3 գալիս են գերեզմանը։ Եւ իրար
ասում էին. Ով կ'թաւալեցնէ
քարը մեզ համար գերեզմանի
4 դռնիցը։ Եւ նայեցան տեսան,
որ քարը գերեզմանիցը հեռու էր
թաւալած, վասնզի շատ մեծ էր։
5 Եւ երբոր գերեզմանը մտան, մի
երիտասարդ տեսան՝ աջ կողմը
նստած՝ սպիտակ պատմուճան

հագած, և շատ զարհուրեցան։
6 Եւ նա ասաց նոցանից. Մի զար-
հուրիք, դուք Յիսուսը Նազովե-
ցի խաչուածն էք որոնում. յա-
րուցեալ է, այստեղ չէ, ահա այն տեղը՝ ուր որ նոցան
7 դրին։ Բայց գնացէք, նորա ա-
շակերտներին և Պետրոսին ասա-
ցէք, թէ նա ձեզանից առաջ կը
գնա Գալիլեա. այնտեղ կ'տես-
նէք նորան ինչպէս նա ձեզ ասաց։
8 Եւ շուտով դուրս եկան փախան
գերեզմանիցը, և նորանք դողով
և սրտատով բռնուած էին, և
ոչ որի ոչինչ չասացին. վասնզի
վախենում էին։

9 Եւ Յիսուսը երբոր յարութիւն
առաւ՝ մէկշաբթի առաւօտուն
առաջ երևեցաւ Մարիամ Մագ-
դաղենացոյն, որից եօթը դև էր
10 հանել։ Եւ նա գնաց պատմեց
նորա հետ լինողներին, որ սուգ
11 էին անում և լաց լինում։ Ն-
րանք էլ լսելով, թէ կենդանի է,
և երևեցաւ նորան, չհաւատա-
12 ցին։ Սորանից յետոյ ուրիշ կեր-
պարանքով երևեցաւ նորանցից
երկուսին, որ մեն գալով յանդն
13 էին գնում։ Նորանք էլ գնացին
այն միւսներին պատմեցին, բայց
նորանց էլ չհաւատացին։ Վ երբ. 14
ջոպէս երբոր այն տասնումէկը
սեղան էին նստած, նորանց երե-
ևեցաւ և նորանց անհաւատու-
թիւնը և քարտարութիւնը յան-
դիմանեց, որ չհաւատացին նո-
րանց, որ նորան յարութիւն ա-
ռած տեսել էին։

Եւ նորանց ասաց. Գնացէք բո- 15
լոր աշխարհք, աւետարանը քա-
րոզեցէք ամեն արարածի։ Ով որ 16
հաւատաց և մկրտուեցաւ կ'փր-
կուի. և ով որ չհաւատաց՝ կը
դատապարտուի։ Նորանց էլ, որ 17
հաւատացին, այս նշանները կը
հետևին. իմ անունով դևեր կը
հանեն, նոր լեզուներ կ'խօսին։
Օձեր վեր կ'առնեն, և եթէ մի 18
մահացու խմեն, նորանց վնաս
չի տալ. հիւանդների վերայ ձեռք
կ'դնեն, և կ'առողջանան։

Ա.րդ Տէրը նորանց հետ խօսե- 19
լուց յետոյ, երկինքն համբարձաւ,
Աստուծոյ աջ կողմը նստեց։ Ն- 20
րանք էլ դուրս գնացին, ամեն
տեղ քարոզում էին, և Տէրը
գործակցում էր նորան և խօսքը
հաստատում էր այն նշաններով,
որ հետևում էին։ Ամէն։

ԱԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Որովհետև շատերը ձեռնարկե-
ցին մեր մէջ հաստատուած բա-
ների պատմութիւնը վերատես-
2 կարգել. ինչպէս մեզ աւանդե-
ցին սկզբից ականատես և խօս-
3 քին սպասաւոր լինողները. Ես
էլ, որ սկզբից բոլոր բաներին
ճշմարտութեամբ հետևեցի, կա-
րեցի կարգաւ գրել քեզ, ա'վ 4
պատուականդ Թէոփիլէ. Որ ի-
մանաս այն բաների ստուգու-
թիւնը, որ սովորեցիր։ Հրէաս- 5
տանի Թագաւոր՝ Հերովդէսի օրե-
րում մի քահանայ եղաւ անունը
Զաքարիա, Աբիայի դասակար-
գութիւնիցը, և նորա կինն Ա-

Հարօնի աղջիկներից, և նորա
6 անունն Եղիսաբեթ։ Երկուսն էլ
Ասուածոյ առջևն արդար էին,
և Տիրոջ բոլոր պատուիրանքներն
ու իրաւունքներումն դնում
7 էին անարատ։ Եւ նորանք զաւակ
չունէին, քանզի Եղիսաբեթը ա-
մուլ էր. և երկուսն էլ իրանց
օրերը անց էին կացրել։
8 Եւ եղաւ, երբոր նա քահա-
նայութեան էր անում իրան հա-
մար դասակարգութեան օրերու-
9 մը Ասուածոյ առջևն, քահա-
նայութեան սովորութեան պէս,
իրան բնկաւ որ Տիրոջ տաճարը
մտնէ խնկարկութեան անելու։
10 Եւ ժողովրդի բոլոր բազմութի-
ւնը դուրսն աղօթք էին անում
11 խնկարկութեան ժամանակին։ Եւ
Տիրոջ հրեշտակն երևեցաւ նորան՝
կանգնած խնկի սեղանի աջ կող-
12 մին։ Եւ Զաքարիան տեսնելով
շփոթուեցաւ, և վախ բնկաւ նո-
13 րա վերայ։ Եւ հրեշտակն ասաց
նորան. Մի վախենար, Զաքարիա.
վասնզի քո աղօթքը լսուեցաւ,
և քո կինն Եղիսաբեթ մի որդի
կ'ծնի քեզ, և նորա անունը Յո-
14 հաննէս կ'կանչես։ Եւ քեզ ու-
րախութիւն և ցնծութիւն կ'լինի,
և շատերը նորա ծնունդովը կ'ու-
15 րախանան։ Քանզի նա մեծ կ'լի-
նի Տիրոջ առջև. և գինի և օ-
ղի չի խմել, և դեռ իր մօր փո-
16 րիցը Սուրբ Հոգով կ'լցուի։ Եւ
Իսրայէլի որդիքներից շատերին
կ'դարձնէ դէպի իրանց Տէր Ասո-
17 ուածը։ Եւ ինքն կ'գայ նորա ա-
ջևից Եղիայի Հոգովն և զօրու-
թիւնովն, որ հարանց սրտերը դէ-
պի որդիքը դարձնէ. և անհնա-
զանդները արդարների իմաստու-
թեան մէջ, որ Տիրոջ համար բա-
րեկարգ ժողովուրդ պատրաստէ։
18 Եւ Զաքարիան ասաց հրեշտակին.
ինչո՞վ ճանաչեմ այդ բանը. վա-
սընզի ես ծեր եմ, և իմ կինն իր
19 օրերն անց է կացրել։ Եւ հրեշ-
տակը պատասխանեց և ասաց նո-
րան. Ես Գաբրիէլն եմ, որ Ա-
ստուծոյ առջև կանգնում եմ,
և ուղարկուեցայ քեզ հետ խո-
սելու և այս բաները քեզ ա-
ւետելու և ահա համր կ'լի-
նես, և չես կարենալ խօսել, մին-
չև այն օրն՝ որ այս բաները կ'լի-
նին. վասնզի չ'հաւատացիր իմ այս
խօսքերին՝ որ իրանց ժամանակին
կ'կատարուին։ Եւ ժողովուրդը
սպասում էր Զաքարիային, և
զարմանում էին նորա տաճարի
միջումն ուշանալու համար։ Եւ
երբոր դուրս եկաւ, չէր կարե-
նում խօսիլ նորանց հետ. և ի-
մացան որ տաճարի մէջ տեսիլ
է տեսել. և նա նշաններով էր
խօսում նորանց հետ, և մնում
պապանձուած։ Եւ եղաւ, երբոր
նորա պաշտօնի օրերը կատարուե-
ցան, գնաց իր տունը։ Եւ այն
օրերից յետոյ նորա Եղիսաբեթ
կինը յղացաւ, և հինգ ամիս իր
անձը ծածուկ պահում էր և ա-
սում. Թէ այսպէս արաւ ինձ Տէ-
րը այս օրերուՄ, որ էր վերայ
նայեց՝ որ իմ նախատինքը մարդ-
կանց միջից վեր առնէ։

Եւ վեցերորդ ամսումը Գաբ-
րիէլ հրեշտակն Ասուածոյնից
ուղարկուեցաւ Գալիլեայի մի քա-
ղաք, որի անունը Նազարէթ էր,
Մի կոյս մօտ, որ նշանուած էր
մի մարդոյ, որի անունը Յովէփ
էր՝ Դաւթի տանից. և այն կո-
յսի անունը Մարիամ էր։ Եւ հր-
եշտակը նորա մօտ գալով ասաց.
Ողջոյն քեզ, ով շնորհնակալ. Տէ-
րը քեզ հետ. օրհնեալ ես դու
կանանց մէջ։ Եւ նա նորան տես-
նելով շփոթուեցաւ նորա խօսքի
համար, և իր մտքումը մտածում
էր, թէ ինչպիսի բան պիտի լինի
այս ողջոյնը։ Եւ հրեշտակը ասաց
նորան. Մի վախենար, Մարիամ.
քանզի Ասուածոյնից շնորհք
գտար։ Եւ ահա կ'յղանաս և որ-
դի կ'ծնիս. և նորա անունը Յի-
սուս կ'կանչես։ Նա մեծ կ'լինի,
և Որդի Բարձրելոյն կ'կոչուի. և
Տէր Ասուած նորա Դաւթի հօր
աթոռը կ'տայ նորան. և կ'թա-
գաւորէ Յակոբի տան վերայ յա-
ւիտեան. Եւ նորա թագաւորու-
թեանը վերջ չի լինիլ։ Եւ Մա-
րիամը ասաց հրեշտակին. Ա՞ինչ-
պէս կ'լինի. քանզի ես այր

35 չեմ գիտեմ։ Հրեշտակը պա-
տասխանեց և ասաց նորան. Սուրբ
Հոգին կ'գայ քեզ վերայ, և Բար-
ձրելոյն զօրութիւնը քեզ վերայ կը
հովանաւորէ, վասն որոյ և այն
ծնեալ սուրբն էլ Աստուծոյ Որ-
36 դի կ'կոչուի։ Եւ ահա քո ազգա-
կանն Եղիսաբեթը, նա էլ մի
որդիով յղի է իր ծերութիւնու-
մը. և սա այն ամսով կոչուածի
37 վեցերորդ ամիսն է։ Վասնզի Աս-
տուծոյ առջև ոչ մի բան ան-
38 կարելի չէ։ Մարիամն էլ ասաց.
Ահա Տիրոջ աղախինն եմ. թող
քո խօսքի պէս լինի ինձ։ Եւ հր-
եշտակը գնաց նորանից։
39 Մարիամն այն օրերումը վեր-
կացաւ՝ շտապելով լեռնակողմը
40 գնաց՝ Յուդայի քաղաքը. Եւ Զա-
քարիայի տունը մտաւ, և Եղի-
41 սաբեթին բարևեց։ Եւ եղաւ,
երբոր Եղիսաբեթը Մարիամի բա-
րևը լսեց, երեխան նորա որովայ-
նումը խաղաց. և Եղիսաբեթը
42 Սուրբ Հոգով լցուեցաւ։ Եւ մեծ
ձայնով աղաղակեց և ասաց. Օրհ-
նեալ ես դու կանանց մէջ. և
օրհնեալ է քո որովայնի պտուղը
43 Եւ սա ինչ տեղից է ինձ, որ իմ
44 Տիրոջ մայրն ինձ մօտ եկաւ։ Վա-
րդնի ահա, երբոր քո բարևի
ձայնն իմ ականջներին հասաւ,
երեխան որովայնումն ուրախանա-
45 լով խաղաց։ Եւ երանի նորան,
որ հաւատաց, թէ այն բաները
կ'կատարուին, որ Տէրից իրան
46 ասուած են։ Եւ մարիամը ասաց.
Թող իմ անձը փառաւորէ Տիրո-
47 ջը։ Եւ իմ հոգին ուրախացաւ
48 իմ Փրկիչ Աստուածով։ Վասնզի
իր աղախնոյ խոնարհութեանը
մտիկ տուաւ, քանզի ահա այ-
սուհետև բոլոր ազգերը կ'երա-
49 նեն ինձ։ Վասնզի հզօրը մեծա-
մեծ բաներ արաւ ինձ, և սուրբ
50 է նորա անունը։ Եւ նորա ողոր-
մութիւնը ազգից ազգ նորանից
51 վախեցողներին վերայ է։ Զօրու-
թիւն արաւ իր բազուկովը, ցըր-
ւեց ամբարտաւաններին իրանց
52 սրտի մտածմունքովը։ Զօրաւոր-
ներին աթոռներից իջեցրեց, և
53 խոնարհներին բարձրացրեց։ Սո-

վածներին բարիքներով լցրեց, և
հարուստներին դատարկ արձա-
կեց։ Իր խորհել ծառային պաշտ- 54
պանեց էր ողորմութիւնը յիշելով.
Ինչպէս մեր հարցից հետ խօսեց, 55
Աբրահամին և նորա զաւկին՝ մին-
չև յաւիտեան։

Եւ Մարիամն մնաց նորա մօտ 56
երեք ամսի չափ. և չորս դար-
ձաւ իր տունը։

Եւ Եղիսաբեթի ծնելու ժամա- 57
նակն լրացաւ, և որդի ծնաւ։ Եւ 58
նորա դրացիները և ազգականնե-
րը լսեցին, թէ Տէրն իր ողորմա-
թիւնը մեծ արաւ նորա վերայ.
և ուրախանում էին նորա հետ։

Եւ եղաւ՝ ութերորդ օրումն է- 59
կան երեխային թլփատելու, և նո-
րան իր հօր անունովը Զաքարիա
էին կոչում։ Եւ նորա մայրը պա- 60
տասխանեց և ասաց. Ոչ, այլ Յո-
հաննէս կոչուի։ Եւ ասացին նո- 61
րան, թէ Ոչ ոք չ'կայ քո ազգու-
մը, որ այդ անունովը կոչուի։ Եւ 62
նշաններով հարցնում էին նորա
հօրը, թէ ինչ է կամենում որ
նա կոչուի։ Եւ նա տախտակ 63
խնդրեց, գրեց և ասաց, դորա
անունը Յոհաննէս է. և ամենքը
զարմացան։ Եւ իսկոյն նորա բե- 64
բանը և լեզուն բացուեցաւ. և
խօսում էր Աստուծոյն օրհնելով։
Եւ ահ բնկաւ ամենքի վերայ, որ 65
նորանց չորս կողմանը բնակում
էին. և Հրէաստանի բոլոր լեռ-
նակողմումը այս ամեն բաները
պատմվում էին։ Եւ բոլոր լսող- 66
ներն իրանց սրտերումն էին դնում
և ասում. Այս երեխան ինչ պի-
սի լինի։ Եւ Տիրոջ ձեռքը նորա
հետ էր։

Եւ նորա հայրը՝ Զաքարիան 67
Սուրբ Հոգով լցուեցաւ, մարգա-
բեացաւ և ասաց. Օրհնեալ է Ի- 68
սրայէլի Տէր Աստուածը, որ այ-
ցելութիւն եկաւ, և փրկութիւն
արաւ իր ժողովրդի համար։ Եւ 69
փրկութեան եղջիւր վերկացրեց
մեզ համար իր Դաւիթ ծառայի
տանը։ Ինչպէս որ խօսեց 'ի յա- 70
ւիտենից իր սուրբ մարգարէների
բերանովը, Փրկութիւն մեր թըշ- 71
նամիներիցը. և բոլոր մեզ ատող-

72 Ների ձեռքից. Որ մեր հարանց
վերայ ողորմութիւն անէ, և իր
73 սուրբ ուխտը յիշէ. Այն երդում-
մըն, որ մեր Հայր՝ Աբրահամին
74 երդուաւ, որ մեզ տայ, Որ մեր
թշնամիներէն ձեռքից ազատ-
ուած՝ աներկիւղ պաշտենք իրան
75 Սրբութիւնով և արդարութիւ-
նով նորա առջև մեր կենաց
76 բոլոր օրերումը: Եւ դու, երե-
խայ, Բարձրելոյն մարգարէ կ'կոչ-
ուիս. քանզի կ'գնաս Տիրոջ երե-
սի առջևից նորա ճանապարհնե-
77 րը պատրաստելու, Որ նորա ժո-
ղովրդին տաս փրկութեան գի-
տութիւնը իրանց մեղաց թողու-
78 թեան մէջ, Մեր Աստուծոյ գթած
ողորմութեան համար, որով ծա-
գող արեգակը վերևից այցելեց
79 մեզ. Որ երևի խաւարումն և մա-
հի սուերումը նստողներին. որ
մեր ոտները դէպի խաղաղութեան
ճանապարհն ուղղէ:

80 Եւ երեխան աճում էր և զո-
րանում էր հոգով. և անապատ-
ներումն էր, մինչև այն օրն որ
նա երևեցաւ Իսրայէլին:

ԳԼ. Բ

1 Եւ այն օրերումն եղաւ, որ Կ-
րասոն դուրս եկաւ Օգոստոս
կայսերից, որ բոլոր աշխարհ գըր-
2 ուի: Սա առաջին աշխարհագիրն
եղաւ Կիւրենի Սիւրիոյ կուսա-
3 կալութեան ժամանակումը: Եւ
ամենքը գնում էին գրուելու՝ ա-
4 մեն մէկն իր քաղաքը: Յովսէփն
էլ Գալիլեայից՝ Նազարէթ քա-
ղաքից գնաց Հրէաստան Դաւթի
քաղաքն, որ Բեթղեհէմ է կոչ-
վում. վասնզի նա Դաւթի տա-
5 նից և ազգից էր. Որ գրուի իր
նշանուած կնոջ Մարիամի հետ,
6 որ յղի էր: Եւ եղաւ երբոր նո-
րանք այնտեղ էին. նորա ծնե-
7 լու օրերը լրացան: Եւ իր անդ-
րանիկ որդին ծնաւ, և պատեց
խանձարուրներով և մսուրի մէջ
դրաւ. որովհետև այն իջևանու-
մը տեղ չ'կար նորանց համար:
8 Եւ այն տեղումը հովիւներ կա-
յին դաշտումը կացող, որ գիշե-
րըն իրանց հօտերը պահում էին:
9 Եւ ահա Տիրոջ հրեշտակը կանգ-
նեց նորանց առջև, և Տիրոջ
փառքը նորանց շուրջը ծագեց. և
մեծ վախով վախեցան: Եւ հրեշ-
10 տակն ասաց նորանց. Մի վախե-
նաք, վասնզի ահա մեծ ուրախու-
թիւն եմ աւետում ձեզ, որ բո-
11 լոր ժողովրդին պիտի լինի. Թէ
այսօր ձեզ Փրկիչ ծնուաւ Դաւ-
թի քաղաքումը. որ է Քրիստոս
12 Տէրը: Եւ այս լինի ձեզ նշան. Մի
երեխայ կ'գտնէք խանձարուրնե-
րով պատած, և մսուրի մէջ դրած:
13 Եւ յանկարծակի այն հրեշտակի
հետ եղաւ երկնաւոր զօրաց մի
բազմութիւն, որ Աստուծոյն
14 օրհնում էին և ասում. Փառք
Աստուծոյ ի բարձունս, և երկրի
վերայ՝ խաղաղութիւն, և մարդ-
15 կանց մէջ՝ հաճութիւն: Եւ եղաւ
երբոր հրեշտակները նորանցից վե-
րացան երկինքը, այն հովիւ մարդ-
կերն իրար ասացին. Եկէք գնանք
մինչև Բեթղեհեմ, և տեսանենք այս
եղած բանը, որ Տէրը ցոյց տուաւ
մեզ: Եւ շտապելով եկան և գտան
16 Մարիամին և Յովսէփին, և երե-
խային՝ մսուրի մէջ դրած: Եւ
17 երբոր տեսան իմացրին այն բանն,
որ այս երեխայի համար ասուե-
ցաւ նորանց: Եւ բոլոր լսողները
18 զարմացան այն բանների համար,
որ հովիւները նորանց հետ խօսե-
ցան: Իսկ Մարիամ այս բոլոր
19 բանները պահում էր, և իր սր-
տումը մտածում էր: Եւ հովիւ-
20 ները դարձան. Աստուծոյն
փառաբանում և օրհնում էին
այն բոլոր բանների համար, որ
լսեցին և տեսան, ինչպէս որ նո-
րանց ասուեցաւ:

21 Եւ երբոր ութ օր լրացաւ, որ
մանուկը թլփատուէր, նորա ա-
նունը Յիսուս կոչուեցաւ, այն որ
հրեշտակից կոչուած էր՝ նա դեռ
արգանդումը չ'ղացուած:

22 Եւ երբոր նորա սրբութեան
օրերը լրացան, Մովսէսի օրէնքի
պէս, նորան տարան Երուսաղէմ,
որ Տիրոջ առջև կանգնեցնեն:
23 Ինչպէս Տիրոջ օրէնքումը գրուած
է, Թէ Ամեն արու որ արգանդ

բանայ, Տիրոջ սուրբ պիտի կոչ-
24 ուի։ Եւ որ Տիրոջ օրէնքումը ա-
ստածին պէս պատարագ բերին մի
զոյգ տատրակ, կամ աղաւնու-
երկու ձագ։
25 Եւ ահա Երուսաղէմը մի մարդ
կար, որի անունը Սիմէօն էր, և
այս մարդը արդար և Աստուա-
ծավախ էր, և սպասում էր Իս-
րայէլի մխիթարութեանը, և Սուրբ
26 Հոգի կար նորա վերայ։ Եւ նո-
րան պատգամ էր եղած Սուրբ
Հոգուցը, որ մահ չ'տեսանէ, մին-
չև որ Տիրոջ Քրիստոսին տեսնէ։
27 Եւ Հոգովն եկաւ տաճարը, և եր-
որ ծնողքը Յիսուս երեխային բե-
րին, որ օրէնքի սովորութեան պէս
28 նորա վերայ անեն։ Եւ նա առա-
նորան ընդունեց իր գիրկը, և Աս-
29 տուծոյն օրհնեց, և ասաց. Հի-
մա արձակում ես քո ծառային,
ով Տէր, քո խօսքի պէս խաղա-
30 ղութիւնով. Վասնզի իմ աչքերը
31 տեսան քո փրկութիւնը, Որ պատ-
րաստեցիր ամեն ժողովուրդների
32 առջև։ Լոյս՝ հեթանոսներին լու-
սաւորելու, և փառք՝ քո ի-
33 րայել ժողովրդի համար։ Եւ
Յօսէփը և նորա մայրը զարմա-
ցել էին այն բանների վերայ, որ
34 նորա համար խօսւում էին։ Եւ
Սիմէօնն օրհնեց նորանց, և նորա
մայր՝ Մարիամին ասաց, Ա.հա սա
կայ Իսրայէլի մէջ շատերի հա-
մար ընկնելու և կանգնելու պա-
տճառ և հակառակութեան նշան։
35 Եւ խոկ քո անձնէը սուր կ'ան-
ցընէ, որ շատ սրտերից խորհուրդ-
ներ յայտնուին։
36 Եւ այնտեղ էր Աննա մարգա-
րէուհին՝ Փանուէլի աղջիկն՝ Ասերի
ցեղիցը. սա ինքն շատ օրեր էր
անցրել, և իր կուսութեան ժա-
մանակից եօթն տարի էր ապ-
37 րել մարդոյ հետ. Եւ ութսուն
և չորս տարոյ չափ որբևայրի էր,
որ տաճարիցը չէր հեռանում.
ծոյլ ծոմերով և աղօթքներով
դիշեր ու ցերեկ ծառայում էր
38 Աստուծոյն։ Սա էլ նոյն ժամու-
մը վերկացաւ՝ Տէրոջը գոհանում
էր, որ Երուսաղէմի մէջ փրկու-
թեանն սպասում էին։

Եւ երբոր ամեն 39
քի պէս կատարեցին, նա դար-
ձան Գալիլեա՝ իրանց Նազարէթ
քաղաքը։ Երեխան էլ աճում էր 40
և զօրանում հոգով իմաստու-
թիւնով լցուած. և Աստուծոյ
շնորհքը նորա վերայ էր։
Եւ նորա ծնողքը տարուց տա- 41
րի Երուսաղէմ էին գնում զատ-
կի տօնին։ Եւ երբոր նա տաս- 42
ներկու տարեկան եղաւ, նորանք
տօնի սովորութեան պէս Երու-
սաղէմ գնացին, Եւ երբոր օրե- 43
րը կատարելուց յետոյ նա դար-
ձան, Յիսուս տղան Երուսաղէ-
մումը մնաց. և չիմացաւ Յօսէփը
և նորա մայրը, Եւ կարծելով, 44
թէ նա ճանապարհակիցների հետ
կ'լինի, մի օրուայ ճանապարհ ե-
կան՝ և նորան որոնում էին ազ-
գականների և ծանօթների մէջ։
Եւ երբոր նորան չգտան, նա դար- 45
ձան Երուսաղէմ և որոնում էին
նորան։ Եւ երեք օրից յետոյ ե- 46
ղաւ, որ նորան տաճարի մէջ
գտան, վարդապետների մէջ նր-
ստած՝ նորանց ականջ էր դնում,
և նորանցից հարցնում էր։ Եւ 47
ամենքն, որ նորանից լսում էին,
զարմանում էին նորա իմացողու-
թեան և պատասխանների վերայ,
Եւ երբոր նորան տեսան, շատ 48
զարմացան. և նորա մայրն ասաց
նորան. Որդեա՛կ, ինչու համար
մեզ այսպէս արիր. ա.հա, հայրդ
և ես ցաւելով որոնում էինք քեզ։
Եւ նորանց ասաց. Ինչու համար 49
էիք ինձ որանում. չէի՞ք գիտում
թէ պէտք է, որ ես իմ Հօր տա-
ճը լինիմ։ Եւ նորանք չհասկա- 50
ցան այն խօսքը որ նորանց հետ
խօսեց։ Եւ նորանց հետ իջաւ, 51
և գնաց Նազարէթ. և նորանց
հնազանդ էր. և նորա մայրը այս
բոլոր բանները պահում էր իր սըր-
տումը։ Եւ Յիսուս զարգանում 52
էր իմաստութիւնով և հասակով,
և շնորհքով Աստուծոյ և մարդ-
կանց մօտ։

Գ.Լ. Գ.

Տիբերիոս կայսեր տէրութեան 1

տան և հինգերորդ տարում, Պոնտացի Պղատոսի Հրէաստանի վերայ կուսակալութեան ժամանակին, և Հերովդէսի Գալիլեայի վերայ չորրորդապետութեան ժամանակին, և Լիսանիայի Աբիլենացոց վերայ չորրորդապետութեան ժամանակին, Աննայի և Կայիափայի քահանայապետութեան օրերում Աստուծոյ խօսքն եղաւ Զաքարիայի որդի Յովհաննէսին անապատում։ Եւ նա եկաւ Յորդանանի ամէն կողմերն, ապաշխարութեան մկրտութիւնը քարոզելով մեղաց թողութեան համար։ Ինչպէս եսայի մարգարէի խօսքերի գրքում գրուած է՝ որ ասում է կանչողի ձայն անապատում. պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը, և ուղիղ արէք նրա շաւիղները։ Ամէն ձոր լցուի, և ամէն լեառ և բլուր խոնարհուի. և դժուարները հեշտ լինին, և խորտուբորտները հարթ ճանապարհներ լինին։ Եւ ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը տեսանէ։

Եւ այն ժողովուրդներին, որ դուրս էին եկած նրանից մկրտուելու, ասաց. Իժերի զաւակներ, ո՞վ ազդեցրեց ձեզ փախչել այն գալու բարկութիւնից։ Արդ ապաշխարութեան արժանի պտուղներ արէք. և մի սկսէք ասել ձեր միջումը մեզ Աբրահամն ունինք հայր. քանզի ասում եմ ձեզ, թէ Աստուած կարող է այս քարերից որդիք հանել Աբրահամի համար։ Բայց արդէն կացին էլ ծառերի արմատին մօտ դրած է. արդ ամէն ծառ, որ բարի պտուղ չէ բերում, կ'կըտրուի և կրակի մէջ կ'գցուի։ Եւ ժողովուրդները նրան հարցնում էին և ասում. Ապա ինչ անենք։ Եւ պատասխանեց և ասաց նրանց. Նա որ երկու հանդերձ ունի, թող չունեցողին տայ. և նա էլ, որ կերակուր ունի, թող նոյնպէս անէ։ Եւ մաքսաւորներն էլ եկան մկրտուելու, և նրան ասացին. Վարդապետ, ինչ անենք։ Եւ էլ ասաց նրանց. Ձեզ հրամայածից աւելի ոչ մի բան մի առնէք։ Եւ զինուորներն էլ էին հարցնում նրան և ասում. Ապա մենք ինչ անենք, նրանց էլ ասաց. Ոչ մէկին մի հարստահարէք, ոչ էլ զրպարտութիւն արէք, և ձեր թոշակովը բաւականացէք։

Ժողովուրդն էլ դեռ սպասելիս 15
և ամէնքն իրանց սրտերում մտածելիս՝ Յովհաննէսի համար, մի՛ գուցէ նա լինի Քրիստոսը։ Յո- 16
հաննէսն ամէնին պատասխանեց և ասաց. Ես ջրով եմ մկրտում ձեզ, բայց ինձանից աւելի զօրաւորն է գալիս, որ ես արժանի չեմ նրա կօշիկների կապերը լուծելու. նա ձեզ Սուրբ Հոգով և կրակով կ'մկրտէ։ Որ հողելին նրա 17
ձիւանն է, և իր կալը կ'սրբէ, և ցորենն իր ամբարը կ'ժողովէ, իսկ դարմանը կ'այրէ անշէջ հրով։ Եւ 18
ուրիշ էլ շատ բաներ յորդորելով աւետիք էր տալիս ժողովրդին։ Բայց Հերովդէս չորրորդապե- 19
տը՝ նրանից յանդիմանուած իր եղբօր Փիլիպպոսի կնկան Հերովդեայի մասին, և այն ամէն չար գործքերի համար, որ Հերովդէսը արաւ, Ամէնի վերայ սա էլ ա- 20
ւելացրեց, որ Յովհաննէսին բանտի մէջ դրաւ։

Եւ երբոր ժողովուրդի մկրտուե- 21
լու ժամանակին եղաւ, որ երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ և աղօթք էր անում, երկինքը բացուեցաւ, և Սուրբ Հոգին մար- 22
մնաւոր տեսիլքով աղաւնու պէս իջաւ նրա վերայ. և երկնքից ձայն եղաւ, որ ասում էր. Դու ես իմ սիրելի Որդին, քեզ հաճեցայ։

Եւ ինքն Յիսուս սկսած էր և- 23
բեաւն տարեկանի չափ լինել, որ ինչպէս կարծվում էր, Յովսէփի որդին էր. և նա Հեղիին. և նա 24
Մատթատի. և նա Ղևիի. և նա Մեղքիի. և նա Յաննէի. և նա Յովսէփի. և նա Մատաթիի. և 25
նա Ամոսի. և նա Նաւումի. և նա Եսղիի. և նա Նանգէի. և 26
նա Մաւհաթի. և նա Մատաթիի. և նա Սեմէիի. և նա Յովսէ-

27 փի. և նա Յուդայի. եւ նա Յոաննայի. և նա Ռէսայի. և նա
Զօրաբաբէլի. և նա Սաղաթիէլի.
28 և նա Նէրէի. եւ նա Մելքիի.
և նա Ադդէի. և նա կոսամի. և
29 նա Եղմադամի. և նա Էրի. եւ
նա Յոսէի. և նա Եղիազարի. և
նա Յորէմի. և նա Մատթատի.
30 և նա Ղևիի. եւ նա Սիմէոնի.
և նա Յուդայի. և նա Յոսէփի.
և նա Յոնանի. և նա Էղիակիմի.
31 եւ նա Մելիայի. և նա Մայնա-
նի. և նա Մատաթիի. և նա Նա-
32 թանի. և նա Դաւթի. եւ նա
Յեսսէի. և նա Յորէդի. և նա
Բոոսի. և նա Սաղմոնի, և նա
33 Նասսոնի. եւ նա Ամինադաբի.
և նա Արամի. և նա Էսրոնի. և
34 նա Փարէսի, և նա Յուդայի. եւ
նա Յակոբի. և նա Իսահակի. և
նա Աբրահամի. և նա Թարայի.
35 և նա Նաքորի. եւ նա Սերուքի.
և նա Ռագաւի. և նա Փաղեկի.
36 և նա Եբերի. և նա Սաղայի. եւ
Կայնանի. և նա Արփաքսատի.
և նա Սեմի. և նա Նոյի. և նա
37 Ղամեքի. եւ նա Մաթուսաղայի.
և նա Ենոքի. և նա Յարեդի. և
նա Մաղաղիէլի. և նա Կայնանի.
38 եւ նա Ենոսի. և նա Սէթի, և
նա Ադամի. և նա Աստուծոյ։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս Սուրբ Հոգով լե-
ցուած Յորդանանից եւ դարձաւ
և Հոգովն տարուեցաւ անապա-
2 տը։ Քառասուն օր սատանայից
փորձուեցաւ. և այն օրերումը
ոչինչ չկերաւ, և երբոր նորանք
լրացան, վերջապես սովեց։
3 Եւ սատանան նորան ասաց.
Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա
4 այդ քարերին որ հաց լինի։ Եւ
Յիսուս նորան պատասխանեց և
ասաց. Գրուած է, թէ Ոչ միայն
հացով կ'ապրի մարդ, այլ Աս-
տուծոյ ամեն խօսքովը։
5 Եւ սատանան նորան մի բարձր
լեռա հանեց՝ և աշխարհի բոլոր
թագաւորութիւնները ցոյց տուաւ
6 նորա մի վայրկեանի մէջ։ Եւ սա-
տանան ասաց նորան. Ահա բո-

լոր իշխանութիւնները և սորանց
փառքը քեզ կ'տամ. վասնզի ինձ
է տրուած. և ում որ կամենում
եմ, տալիս եմ սորան։ Արդ դու, 7
եթէ իմ առջևը ընկած երկրպա-
գութիւն անես, բոլորը քոնը կ'լի-
նի։ Եւ Յիսուս նորան պատաս- 8
խանեց և ասաց. Գնա յետս, սա-
տանայ. գրուած է, Ընե Տէր
Աստուծոյն պէտք է երկրպագու-
թիւն անես, և նորան միայն պաշ-
տես։

Եւ տարաւ նորան Երուսաղէմ, 9
և տաճարի աշտարակի վերայ
կանգնեցրեց և ասաց նորան. Ե-
թէ Որդի ես Աստուծոյ, այստե-
ղից քեզ վայր գցիր։ Վասնզի 10
գրուած է, թէ Իր հրեշտակնե-
րին կ'հրամայէ քեզ համար, որ
քեզ պահեն։ Եւ որ ձեռներէն վե- 11
րայ քեզ վեր առնեն, որ երբէք
քո ոտը քարի չդպցնես։ Յիսուս 12
նորան պատասխանեց և ասաց,
թէ Ասուած է՝ Մի փորձիր քո
Տէր Աստուծոյն։ Եւ սատանան 13
երբոր բոլոր փորձութիւնը կատա-
րեց, հեռացաւ նորանից մինչև
մի ժամանակ։

Եւ Յիսուս Հոգով զօրութիւ- 14
նովը եաւ գարձաւ Գալիլեա. և
նորա համբաւը գնաց այն
գաւառի ամեն կողմերը։ Եւ նա 15
ասպրեցնում էր նորանց ժողով-
րաններուն, և ամենից փառա-
ւորվում էր։

Եւ եկաւ Նազարէթ, ուր որ 16
մեծացել էր. և իր սովորութեան
պէս շաբաթ օրը ժողովարանը
մտաւ, և կանգնեց որ կարդայ։
Եւ Եսայի մարգարէի գիրքը տուին 17
նորան. և երբոր գիրքը բացաւ՝
այն տեղը գտաւ, ուր գրուած
էր. Տիրոջ Հոգին ինձ վերայ է. 18
որի համար եւ օծեց ինձ. նա ինձ
ուղարկել է աղքատներին աւե-
տիք տալ, արտով կոտրուածնե-
րին բժշկել, գերիներին թող- 19
թիւն քարոզել, և կոյրերին աե-
սութիւն. խոցուածներին արձա-
կել ազատութով, Տիրոջ ընդունե-
լի տարին քարոզել։ Եւ գիրքը 20
խփեց՝ պաշտօնեային տուաւ, նր-
ատց, և ժողովարանի մէջ ամեն-

քի աչքերը նորան էին մոխիկ տա-
21 լիս։ Եւ սկսեց ասել նորանց,
Թէ Աւյասը այս գիրքը կատար-
22 ուեցաւ ձեր ականջներուամբ։ Եւ
ամենքը վկայում էին նորան, և
զարմանում էին այն շնորհաց
խօսքերի վերայ, որ դուրս էին
գալիս նորա բերանիցը. և ասում
էին. Չէ՞ որ սա Յօսէփի որդին
23 է։ Եւ նորանց ասաց, Ի հարկէ՛
այս առակը կ՛ասէք ինձ. Բժի՛շկ,
քո անձը բժշկի՛ր. որչափ բաներ
լսեցինք՝ Կափառնայումի մէջ ե-
ղած. քո հայրենիքումը այնտեղ
24 էլ արա։ Եւ ասաց. Ճշմարիտն
ասում եմ ձեզ, Թէ ոչ մի մար-
գարէ ընդունելի չէ իր հայրենի-
25 քումը։ Եւ ճշմարտութեամբ ա-
սում եմ ձեզ, Էի Եղիայի օրե-
րին Իսրայէլի մէջ շատ որբևայ-
րիներ կային, երբոր երկինքը ե-
րեք տարի և վեց ամիս փակուե-
ցաւ, այնպէս որ բոլոր երկրի վե-
26 րայ մեծ սով եղաւ։ Եւ Եղիան
նորանցից ոչ մէի մօտ չուղարկուե-
ցաւ, բայց միայն Սիդոնացոց Սա-
րեփթան՝ մի որբևայրի կնոջ մօտ։
27 Եւ շատ բորոտներ կային Իսրայէ-
լի մէջ Եղիսէ մարգարէի ժամա-
նակին. և նորանցից ոչ ոք արուե-
ցաւ, բայց միայն Նէեման Սի-
28 րիացին։ Եւ ամենքը բարկութիւ-
նով լցուեցան ժողովարանի մէջ,
29 երբոր այս լսեցին։ Եւ վերկացան
նորան քաղաքից դուրս հանե-
ցին, և տարան նորան մինչև այն
լեռան գլուխը՝ որի վերայ նորանց
քաղաքը շինուած էր, որ բարձր
30 տեղից վայր գցեն նորան։ Իսկ
նա նորանց միջից անցաւ գնաց։
31 Եւ իջաւ Կափառնայում՝ գա-
լիլեացոց քաղաքը, և շաբաթ օ-
32 րը սովորեցնում էր նորանց։ Եւ
զարմանում էին նորա վարդապե-
տութեան վերայ, քանզի նորա
33 խօսքը իշխանութիւնով էր։ Եւ
ժողովարանումը մի մարդ կար,
որ պիղծ դև ունէր, և մեծ ձայ-
34 նով աղաղակեց, Եւ ասաց. Թող
տուր. ի՞նչ բան ունիս մեզ հետ,
Յիսուս Նազովրեցի. եկար՝ մեզ
կորցնելո՞ւ. գիտեմ քեզ, Թէ դու
ով ես, ով Աստուծոյ Սուրբդ։
Յիսուս սաստեց նորան և ասաց. 35
Պապանձիր և դուրս եկ դորանից.
և դևը նորան գետինն զարկեց մէջ
տեղը՝ և դուրս եկաւ նորանից,
և ոչ մի վնաս չտուաւ նորան։
Եւ զարմանք եղաւ ամենքի վե- 36
րայ, և իրար հետ խօսում էին
և ասում. Սա ի՞նչ բան է, որ
իշխանութիւնով և զօրութիւնով
պիղծ ոգիներին ասաստում է, և
դուրս են գալիս։ Եւ նորա համբ 37
բաւը գնում էր շրջակայքի ամեն
տեղը։

Եւ վերկացաւ ժողովարանիցը, 38
և մտաւ Սիմօնի տունը. Սիմօնի
զոքանչն էլ սաստիկ տենդով բռա-
նուած էր. և նորան աղաչեցին
նորա համար։ Եւ նորա մօտ կանգ- 39
նեց՝ սաստեց տենդին. և. թողեց
թողեց նորան. և նա իսկոյն վերա-
կացաւ՝ և ծառայում էր նորանց։

Եւ արեգակը մանելիս՝ ամենքն, 40
որ կերպ կերպ ցաւերով հիւանդ-
ներ ունէին, նորանց բերում էին
նորա մօտ. նա էլ նորանց ամեն-
մէկի վերայ ձեռք էր դնում՝ և
բժշկում նորանց։ Շատերից էլ 41
դևեր էին դուրս գալիս, աղաղա-
կում և ասում, Թէ Դու ես Քրի-
ստոս Աստուծոյ Որդին. և նա
սաստելով նորանց թոյլ չէր տա-
լիս, որ խօսին. վասնզի գիտէին,
Թէ նա Քրիստոսն է։

Եւ երբոր ցերեկ եղաւ, դուրս ե- 42
կաւ գնաց անապատ տեղ. և ժողո-
վուրդները որոնում էին նորան, և
եկան մինչև նորա մօտ. և արգե-
լում էին նորան, որ չգնայ իրան-
ցից։ Նա էլ ասաց նորանց, Էս ու- 43
րիշ քաղաքներին էլ պէտք է Աս-
տուծոյ արքայութիւնը աւետա-
նեմ, վասնզի իսկ սորա համար
ուղարկուեցայ։ Եւ քարոզում էր 44
Գալիլեացոյ ժողովարանների մէջ։

ԳԼ. Ե

Եւ եղաւ, երբոր ժողովուրդը 1
նորա վերայ կիտվում էր, Աստու-
ծոյ խօսքը լսելու, և ինքն Գեն-
նեսարեթի ծովակի մօտ կանգնած
էր. Եւ երկու նաւ տեսաւ՝ ծո- 2
վակի մօտ կանգնած, ձկնորսներն

էլ նորանցից դուրս էին ելած՝ և
3 ուսկաններըը լսանում էին։ Եւ
մտաւ այն նաւերի մէկի մէջ որ
Սիմոնինն էր, և խնդրեց նորան
նաւը քամնքիցը մի քիչ ներս տա-
նել. նստեց և նաւիցը ամբոխը-
նում էր ժողովուրդներին։
4 Եւ երբոր խօսելուց դադարից,
Սիմոնին ասաց. Ե՞ւ դէպի խո-
րը տար, և ձեր ուսկաններըը գցե-
5 ցէք որսի։ Եւ Սիմոն պատասխա-
նից և ասաց նորան. Վարդապետ,
բոլոր գիշերն աշխատեցանք՝ և
ոչինչ չբռնեցինք, բայց քո խօս-
6 քի համար ուսկանը կ'ձգեմ։ Եւ
երբոր այս արին, ձկների մի մեծ
բազմութիւն ներս փակեցին, և
նորանց ուսկանը պատռտւում
7 էր։ Եւ նշան էին անում մեւս
նաւի մէջ լինող ընկերներին, որ
գան իրանց օգնեն. և եկան, և
երկուսնաւըլցրին, մինչև որ թա-
8 վում էին։ Սիմոն Պետրոսն էլ տես-
նելով ընկաւ Յիսուսի ծնկերի մա-
ջև և ասաց. Ինձանից դուրս գնա,
վասնզի ես մեղաւոր մարդ եմ,
9 Տէր։ Քանզի ամ պատեց նորան
և ամենքին էլ, որ նորա հետ էին,
այն ձկների որսի համար որ բռա-
10 նեցին։ Այնպէս էլ Զեբեդեայի
որդիքներին՝ Յակոբին և Յովհան-
նէսին, որ Սիմոնի ընկերներն էին,
և Յիսուսը Սիմոնին ասաց. Մի
վախենար՝ այսուհետև մարդիկ
11 որսող կ'լինիս։ Եւ նաւերը հա-
նեցին ցամաքը, ամեն բաները թո-
ղին, և նորա ետևից գնացին։
12 Եւ եղաւ, երբոր նա քաղաք-
ներիցը մէկումն էր, ահա մի
մարդ բորոտութիւնով լեցն, երբ-
որ Յիսուսին տեսաւ, երեսի վե-
րայ ընկնելով, նորան աղաչեց՝
և ասաց. Տէր, եթէ կամենաս,
13 կարող ես ինձ սրբել։ Եւ նա իր
ձեռը մեկնելով հասցրեց նո-
րան և ասաց. Կամենում եմ,
սրբուիր. և շուտով բորոտու-
14 թիւնը հեռացաւ նորանից։ Եւ
ինքն պատուիրեց նորան, ոչոքի
չասէ, այլ թէ՝ գնա, անձդ ցոյց
տուր քահանային, և քո սրբու-
թեան համար ընծան բեր, ինչպէս
Մովսէսը հրամայեց՝ նորանց իմա-

յութիւն։ Բայց նորա վերայ խո- 15
սակցութիւնը աւելաւ և տա-
րածվում էր, և շատ ժողովուրդ-
ներ ժողովվում էին՝ որ լսեն, և ի-
րանց հիւանդութիւններից բժըշ-
կուին նորանով։ Իսկ նա քաշվում 16
էր անապատ տեղերանք, և աղօթք
էր անում։

Եւ մէկ օր եղաւ, որ ինքն ա- 17
վորիցնում էր. և փարիսեցիներն
և օրինաց վարդապետներընստած
էին, որ գալիլեայի ամեն գիւղա-
քաղաքներից և Հրէաստանից և
Երուսաղէմից հաւաքուած էին.
և Տիրոջ զօրութիւնը կար նո-
րանց բժշկելու համար։ Եւ ահա 18
մարդիկ մահճով մի մարդ էին
բերում, որ անդամալոյծ էր, և
ուզում էին նորան ներս տանել,
և նորա առջևը դնել։ Եւ երբոր 19
չգտան թէ որ տեղով նորան ներս
տանեն՝ այն ամբոխի պատճառո-
վը, վեր ելան կտուրը, և ծած-
կիցը կախեցին նորան մահճովը
մէջտեղը Յիսուսի առջև։ Եւ նո- 20
րանց հաւատքը տեսնելով նորան
ասաց. Ով մարդ, քու մեղքերը
թողուած լինին քեզ։ Եւ դպիր- 21
ներըը և փարիսեցիներն սկսեցին
խորհել և ասել. Սա ո՞վ է, որ
հայհոյանք է խօսում. ո՛վ կարող
է մեղք թողել՝ բաց ի միայն Աստ-
ուածն։ Յիսուսն էլ երբոր նորանց 22
խորհուրդներն իմացաւ, պատաս-
խանեց և նորանց ասաց. Ի՞նչ էք
խորհում ձեր սրտերումը։ Ո՞րն է 23
ասելի հեշտ. ասել՝ Մեղքերդ
թողուած լինին քեզ, թէ ասել՝
Վեր կաց և մոն ակ։ Բայց որ ի- 24
մանաք, թէ Որդին մարդոյ իշ-
խանութիւն ունի երկրի վերայ
մեղքեր թողելու. անդամալու-
ծին ասաց, Քեզ եմ ասում,
Վեր կաց և մահիճդ առ, և գնա
քո տունը։ Եւ իսկոյն նորանց 25
առջևը վերկացաւ, իր վերայ ա-
ռաւ այն որի վերայ պառկած էր,
գնաց իր տունը՝ Աստուծոյն փա-
ռաւորելով։ Եւ զարմանք բռնեց 26
ամենքին, և վախ էին տալիս
Աստուծոյն. և ահով լցուեցան,
և ասում էին, Թէ նորանշանա-
ներ տեսանք այսօր։

27 Եւ նորանից յետոյ Յիսուսը դուրս գնաց և մի մաքսաւորի անունը Ղևի, մաքսատունը նստած, և նորան ասաց, Իմ ե-
28 տևից եկ։ Եւ նա ամեն բան թո-
ղեց, վերկացաւ գնաց նորա ե-
29 տևից։ Եւ Ղևին նորան մեծ ընդունելութիւն արաւ իր տանմէջ. և շատ բազմութիւն կար մաքսաւորների և ուրիշների, որ նո-
30 րանց հետ սեղան էին նստել։ Եւ նորանց դպիրները և փարիսեցիները տրտնջում էին նորա աշակերտների մօտ և ասում. Ինչո՞ւ էք մաքսաւորների և մեղաւորնե-
31 րի հետ ուտում և խմում։ Եւ Յիսուսը պատասխանեց և ասաց նորանց. Առողջները կարօտ չեն
32 բժշկի, այլ հիւանդները։ Չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին ապաշխարութեան
33 Նորանք էլ ասացին նորան. Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտները ամէն պատ են պահում և ա-
ղօթքներ են անում, նոյնպէս էլ փարիսեցիներինը. իսկ քո աշ-
խէրները ուտում են և խմում։
34 Նա էլ ասաց նորանց. Միթէ կարո՞ղ էք հարսանքի տղաներին, քանի որ փեսան նորանց հետ է,
35 ծոմ պահել տալ։ Բայց օրեր կ'գան, և երբոր փեսան վեր կ'առնուի նորանցից. ապա այն օրե-
36 րումը ծոմ կ'պահեն։ Մի առակ էլ ասաց նորանց, Թէ Ոչ ով մի նոր հանդերձի կարկատան հին հանդերձի վերայ չի գցել. ապա Թէ ոչ, այն նորն էլ կ'պատառէ, և հնի հետ չի վերաբանուիլ այն
37 կտորն որ նորից է։ Եւ ոչ ով նոր գինի հին տիկերի մէջ չի ածիլ. ապա Թէ ոչ, նոր գինին տիկերը կ'պատառէ. ինքն էլ կը Թափուի, տիկերն էլ կ'կորչին։
38 Այլ նոր գինին նոր տիկերի մէջ պէտք է ածուի, և երկուքն էլ
39 կ'պահուին։ Եւ ոչ ով չ'կայ, որ հինը խմէ շուտով նորը կամենայ, վասնզի ասում է, Թէ Հինն աւելի քաղցր է։

ԳԼ. Զ

1 Եւ երկրորդի առաջին շաբաթ

օրումն եղաւ որ նա անցնում էր արտերի միջով, և նորա աշակերտները հասկ էին պոկում՝ ա-
փի մէջ շփում և ուտում։ Եւ 2
փարիսեցիներից ոմանք ասացին նորանց. Այդ ինչո՞ւ էք անում, որ շաբաթի օրն օրէնք չէ։ Եւ Յի- 3
սուս նորանց պատասխանեց և ասաց. Դուք չէ՞ք կարդացել այն որ Դաւիթն արաւ, երբոր սովե-
ցաւ և նորա հետ լինողները. Ինչ- 4
պէս նա Աստուծոյ տունը մտաւ, և առաջաւորութեան հացերն ա-
ռաւ և կերաւ, և իր հետ լինող-
ներին էլ տուաւ. որոնց օրէնք չէր ուտել, բացի միայն քահա-
նաներին։ Եւ ասաց նորանց, Թէ 5
Տէր է Որդին մարդոյ շաբաթի էլ։
Եւ միւս շաբաթի օրն էլ եղաւ, 6
որ ժողովարանը մտաւ և սովո-
րեցնում էր. և այնտեղ մի մարդ կար, և նորա աջ ձեռը չորացած էր։ Եւ դպիրները և փարիսեցի- 7
ները ապատում էին նորան, Թէ շաբաթի օրումը կ'բժշկէ, որ նո-
րանից չարախօսելու պատճառ գտա-
նեն։ Նա էլ գիտում էր նորանց 8
խորհուրդները, և այն մարդուն, որի ձեռը չորացած էր, ասաց. Վեր կաց և կանգնիր մէջ տեղը. և նա վերկացաւ կանգնեց։ Այդ 9
Յիսուս ասաց նորանց. Հարցնում եմ ձեզանից. Ի՞նչ է արժան շա-
բաթի օրը, բարի՞ բան անել Թէ չար գործել. հոգի ապրեցնե՞լ Թէ կորցնել։ Եւ չորս կողմը նորանց 10
ամենի վերայ նայելով ասաց այն մարդուն. Ձեռդ մեկնիր, նա էլ այնպէս արաւ. և նորա ձեռքը առողջացաւ միւսի պէս։ Նորանք 11
էլ կատաղութիւնով լցուեցան, և իրար հետ խօսում էին, Թէ ի՞նչ անեն Յիսուսին։

Եւ այն օրերումն եղաւ, որ ե- 12
լաւ լեռան աղօթք անելու, և ամ-
բողջ գիշերն անցրեց աղօթք անե-
լով Աստուած։ Եւ երբոր 13
առաւօտ եղաւ, կանչեց իր աշա-
կերտները, և ընտրեց նորանցից տասներկուսին, որոնց առաքեալ էլ անուանեց. Սիմոնին, որին 14
Պետրոս էլ անուանեց, և նորա եղբայրը՝ Անդրէասին, Յակոբին

և Յօհաննէսին, Փիլիպպոսին և
15 Բարթուղիմէոսին։ Մատթէոսին
և Թովմասին, Յակօբոս Ալփեա-
նին, և Նախանձայոյզ կոչուած
16 Սիմոնին. Եւ Յակօբի Յուդային,
և Յուդայ Իսկարիովտացոյն, որ
17 մատնիչ էլ դառաւ։ Եւ իջաւ
նորանց հետ՝ մի տափարակ տեղ
կանգնեց. և այն բազմութիւն
շակերտների ժողովը և ժողովրդի
մեծ բազմութիւն բոլոր Հրէաս-
տանից և Երուսաղէմից և Տիւրո-
18 սի և Սիդոնի ծովեզերքից, որ ե-
կան նորանից լսելու, և իրանց
հիւանդութիւններից բժշկուե-
լու. և պիղծ ոգիներից չարչար-
19 ուողները. և բժշկվում էին։ Եւ
բոլոր ժողովուրդը ուզում էր դպչ-
ել նորան, վասնզի նորանից զո-
րութիւն էր դուրս գալիս և ամե-
նին բժշկում։

20 Եւ նա իր աչքերը դէպի իր ա-
շակերտները բարձրացրեց՝ և ա-
սաց. Երանի Ձեզ՝ աղքատներիդ,
վասնզի ձերն է Աստուծոյ արքա-
21 յութիւնը։ Երանի Ձեզ, որ հիմա
սոված էք, վասնզի պիտի կշտա-
նաք. երանի Ձեզ որ հիմա լացէք
լինում, վասնզի պիտի ծիծաղիք։
22 Երանի Ձեզ, երբոր մարդիկ Ձեզ
ատեն, և երբոր Ձեզ ջոկեն և
նախատեն, և Ձեզ վերայ չար ա-
նուն հանեն՝ Որդոյ մարդոյ պատ-
23 ճառովը։ Ուրախ եղէք այն օրուն
և ցնծացէք, վասնզի ահա ձեր
վարձքը շատ է երկնքում. որով-
հետև այդպէս էին անում մար-
24 գարէներին նորանց հայրերը։ Բայց
վայ Ձեզ՝ հարուստներիդ, վասնզի
Ձեր մխիթարութիւնն ընդունե-
25 ցիք։ Վայ Ձեզ՝ որ կշտացել էք,
վասնզի պիտի սովիք. վայ Ձեզ՝
որ հիմա ծիծաղում էք, վասնզի
սուգ պիտի անէք, և լաց պիտի
26 լինիք։ Վայ Ձեզ՝ երբոր ամեն
մարդիկ Ձեզանից լաւ ասեն,
վասնզի այդպէս էին անում սուտ
մարգարէներին նորանց հայրերը։
27 Բայց Ձեզ՝ որ լսում էք, ասում
եմ. Սիրեցէք Ձեր թշնամիները,
28 բարի արէք Ձեզ ատողներին, Օրհ-
նեցէք Ձեզ անիծողներին, աղօթք
արէք Ձեզ նեղացնողների վերայ։

Եւ քեզ երեսին զարկողին միւսն 29
էլ դէմ արա. և նա՝ որ քո վե-
րարկուն քեզանից հանում է,
շապիկդ էլ մի արգելիր նորանից։
Ամեն՝ որ ուզում է քեզանից, 30
տուր, և քոնը առնողից էլ մի
առներ։ Եւ ինչպէս կամենում 31
էք՝ որ մարդիկ ձեզ անեն, նոյն-
պէս էլ դուք արէք նորանց։ Եւ 32
եթէ դուք Ձեզ սիրողներին սի-
րէք, ի՞նչ շնորհք է Ձեզ, վա-
սնզի մեղաւորներն էլ են իրանց
սիրողներին սիրում։ Եւ եթէ Ձեր 33
բարերարներին բարի անէք, ի՞նչ
շնորհք է Ձեզ, վասնզի մեղա-
ւորներն էլ են այնպէս անում։
Եւ եթէ փոխ էք տալիս նո- 34
րանց՝ որ նորանցից յետ առնե-
լու յոյս ունիք, ի՞նչ շնորհք է
Ձեզ. վասնզի մեղաւորներն էլ են
մեղաւորներին փոխ տալիս, որ
հաւասար չափը յետ առնեն։ Բայց 35
սիրեցէք Ձեր թշնամիներին, և բա-
րի արէք և փոխ տուէք ոչինչ ա-
կնկալելով. և Ձեր վարձքը շատ
կ'լինի, և Բարձրելոյն որդիք կ'լի-
նիք. վասնզի նա քաղցր է երախ-
տամոռների և չարների վերայ։ Ու- 36
րեմն ողորմած եղէք, ինչպէս Ձեր
Հայրն էլ ողորմած է։ Եւ մի 37
դատէք, և չէք դատուիլ. մի դա-
տապարտէք, և չէք դատապար-
տուիլ. արձակեցէք՝ և կ'արձակ-
ուիք։ Տուէք և կ'տրուի Ձեզ. 38
լաւ չափով՝ թափ արուած շարժ-
ուած լիքելքը կ'տան Ձեր գոգը.
վասնզի այն չափով որ չափէք,
նորանով կ'չափուի Ձեզ։

Մի առակ էլ ասաց նորանց, 39
Մի՞թէ կարող է կոյրը կոյրին ա-
ռաջնորդել, չէ՞ որ երկուքն էլ
փոսը կ'ընկնին։ Աշակերտն իր վար- 40
դապետից բարձր չէ. բայց ամեն
կատարեալն իր վարդապետի պէս
կ'լինի։

Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքումը 41
շիւղը տեսնում ես, և քո աչքի
մէջի գերանը չես նշմարում, կամ
ինչպէս կարող ես եղբօրդ ասել.
Եղբայր, թող քո աչքի մէջի շիւղը
հանեմ, բայց քո աչքի մէջի գե-
րանը չես տեսնում. կեղծաւոր,
առաջ քո աչքիցը գերանը հա-

նի՛ր, և ապա մոխիկ կ՚առնաս, որ քո եղբօր աչքիցը շիւղը հանես։
43 Քանզի բարի ծառ չ՚կայ, որ չար պտուղ բերէ. և ոչ էլ չար ծառ,
44 որ բարի պտուղ բերէ։ Քանզի ամեն մէկ ծառ իր պտղիցն է ճանաչւում. վանդի փշերից թուզ չեն քաղում, և ոչ մորենուցը
45 խաղող են կթռւմ։ Բարի մարդն իր սրտի բարի գանձիցը բարիք է բղխում, և չար մարդն իր սրտի չար գանձիցը չարն է բղխում, վանդի սրտի առելացածիցն է խօսում նորա բերանը։
46 Եւ ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր կոչում, և չէք անում այն որ ա-
47 նում եմ։ Ամեն ով որ ինձ մօտ է գալիս և իմ խօսքերը լսում՝ և նորանց անում, ցոյց տամ ձեզ՝
48 թէ ո՞ւմ նման է։ Նման է մի տուն շինող մարդու, որ փորեց և խորացրեց, և հիմը քարի վերայ դրաւ, և երբոր ջրի հեղեղներ եղան, գետն այն տանը զարկեց, և չկարաց շարժել նորան, վանդի քարի վերայ էր հիմնուած։
49 Բայց էմ խօսքերը լսող և չանողը, նման է մի մարդու՝ որ տունը հողի վերայ շինեց առանց հիման, որ գետը նորան զարկեց, և շուտով վայր ընկաւ. և այն տան կործանումը մեծ եղաւ։

ԳԼ. Է

1 Եւ իր բոլոր խօսքերը ժողովրդի ականջներին խօսելը կատարելուց
2 յետոյ մնաս կափառնայում։ Եւ մի Հարիւրապետի ծառայ հիւանդացած մեռնելու մօտ էր, որ պատուական էր նորա համար։
3 Եւ Յիսուսի համար լսելով, Հրեաներից ծերեր նորա մօտ ուղարկեց՝ նորան աղաչելով, որ գայ
4 իր ծառային ապրեցնէ։ Նորանք էլ Յիսուսի մօտ եկան՝ նորան թախանձանօք աղաչում էին և ասում, թէ Արժանի է նա, որ
5 այս ընդհէն անես նորան։ Վանդի մեր ազգին սիրում է, և ժողովարանն էլ նա շինեց մեզ համար։
6 Եւ Յիսուս նորանց հետ գնաց. երբոր նա տանիցը տակաւին շատ հեռու չէր, Հարիւրապետը բարեկամներ ուղարկեց նորա մօտ և ասաց նորան. Տէր, մի յոգնիր, քանզի արժանի չեմ,
7 որ իմ յարկի տակ մտնես։ Նորա համար ես իմ անձն էլ արժանաւոր չ՚համարեցի՝ քեզ մօտ գալու. այլ խօսքով ասա, և
8 ծառաս կ՚բժշկուի։ Վանդի ես էլ իշխանութեան տակ դրուած մարդ եմ, որ իմ ձեռի տակ զինուորներ ունիմ, և որդան ասում եմ՝ գնա, և նա գնում է. և ուրիշին՝ եկ, և գալիս է. և իմ ծառային՝ Այս բանն արա, և անում է։
9 Եւ Յիսուսը այս լսելով՝ զարմացաւ նորա վերայ, և դարձաւ իր ետևից գնացող ժողովրդին ասաց. Ասում եմ ձեզ՝ թէ Իսրայէլի մէջ էլ այսպիսի հաւատք չ՚գտայ։
10 Եւ այն ուղարկուած տները եան դարձան տուն, և հիւանդ ծառային բժշկուած գտան։
11 Եւ յետոյ օրը եղաւ, որ Նային ասուած քաղաքն էր գնում, և նորա հետ գնում էին նորա աշակերտներից շատերը և շատ ժողովուրդ։
12 Եւ երբոր մօտեցաւ քաղաքի դրան, և ահա մի մեռեալ էին դուրս բերում՝ իր մօր միածնուդ որդին. և նա որբևայրի էր. և քաղաքից էլ մի մեծ բազմութիւն կար նորա հետ։
13 Եւ Տէրը նորան տեսաւ՝ գթաց նորա վերայ և ասաց նորան. Մի լար։
14 Եւ մօտ եկաւ՝ դադաղին դպաւ. և տանողները կանգնեցին. և ասաց. Երիտասարդ, քեզ եմ ասում՝ վե՛ր կաց։
15 Եւ մեռեալը վերկացաւ, նստեց և սկսեց խօսել. և նորան տուաւ իր մօրը։
16 Եւ ահ բռնեց ամենքին, և Աստուածն փառք էին տալիս և ասում, թէ Մի մեծ մարգարէ է վեր կացել մեր մէջ, և թէ Աստուած իր ժողովրդին այցելել է։
17 Եւ այս ձայնը նորա համար դուրս գնաց բոլոր Հրէաստանը և բոլոր շրջակայքը։
18 Եւ Յովհաննէսին պատմեցին իր աշակերտները այս բոլոր բաների համար։
19 Եւ Յովհաննէս իր ա-

շակերտներից երկուսին կանչեց իւրան մօտ, ուղարկեց Յիսուսի մօտ և ասաց. Դո՞ւ ես այն որ գալու է, 20 թէ ուրիշն սպասենք։ Այն մարդիկն էլ նորա մօտ գալով ասացին. Յովհաննէս մկրտիչը մեզ ուղարկել է քեզ մօտ՝ և ասում է, Դո՞ւ ես այն որ գալու է, թէ ու- 21 րիշն սպասենք։ Եւ այն ժամին շատերին բժշկեց հիւանդութիւններից և չարչարանքից և չար ոգիներից, և շատ կոյրերին տեսնել 22 շնորհեց։ Եւ Յիսուս պատասխանեց և ասաց նորանց, Գնացէք Յովհաննէսին պատմեցէք ինչ որ տեսաք և լսեցիք. որ կոյրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առնում, աղքատներին ավե- 23 տարան է քարոզվում։ Եւ երանելի է նա, որ ինձ վերայ չի գայթակղիլ։

24 Եւ երբոր Յովհաննէսի ուղարկած մարդիկը գնացին, սկսեց ժողովուրդների հետ Յովհաննէսի համար ասել, Ի՞նչ տեսնելու դուրս գնացիք անապատը, մի եղէ՞գ քա- 25 մուց շարժուած։ Ապա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մի մա՞րդ փափուկ հանդերձներ հագած. ահա նորանք որ փառաւոր հանդերձներում և փափկութիւնում են՝ թագաւորների պալատներումն 26 են։ Ապա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մի մարգարէ՞. այո, ասում եմ ձեզ, որ մարգարէից էլ 27 աւելին։ Սա այն է, որի համար գրուած է, թէ Ահա իմ հրեշտակն ուղարկում եմ քո առջևից, որ պատրաստ է քո ճա- 28 նապարհը քո առջև, Քանզի ասում եմ ձեզ, որ կանանց ծնունդների մէջ Յովհաննէս մկրտչից աւելի մեծ մարգարէ ոչ ոք չկայ. բայց Աստուծոյ արքայութեան մէջի փոքրագոյնը նորանից մեծ է։

29 Եւ բոլոր ժողովուրդն երբոր այս լսեցին և մաքսաւորները՝ Աստուծոյն արդարացրին Յովհաննէսի մե- 30 կրտութիւնովը մկրտուելով։ Բայց փարիսեցիները և օրինականները անարգեցին Աստուծոյ խորհուրդն իրանց անձերի համար նորանից չմկրտուելով։

Տէրն էլ ասաց. Արդ ո՞ւմ նը- 31 մանեցնեմ այս ազգի մարդիկը. և ո՞ւմ են նման, նմանն են այն 32 տղայոց, որ հրապարակումն նըստած են և իրար կանչում են և ասում. Փող հնչեցինք ձեզ համար՝ և պար չեկաք, ողբեցինք և չլացիք։ Վասնզի Յովհան- 33 նէս մկրտիչն եկաւ, ո՛չ հաց էր ուտում, ո՛չ էլ գինի խմում, և ասում էք՝ դև ունի։ Որդին մար- 34 դոյ եկաւ, ուտում է և խմում է, և ասում էք. Ահա ուտող և գինի խմող մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ։ Եւ 35 իմաստութիւնն արդարացաւ բոլոր իր որդիքներից։

Փարիսեցիներից մէկն աղաչում 36 էր նորան, որ հաց ուտէ իր հետ. և մտաւ փարիսեցու տունը սեղան նստեց։ Եւ ահա այն քա- 37 ղաքումը մի կին կար, որ մեղաւոր էր, երբոր իմացաւ, թէ փարիսեցու տունը սեղան է նստած, մի շիշ անուշահոտ իւղ բերաւ։ Եւ նորա առաջ մօտ նորա ետևից 38 կանգնած, լաց էր լինում, և սկսաւ արտասուքով նորա ոտները թրջել, և իր գլխի մազերովը սրբում էր, և նորա ոտները համբուրում էր, և իւղովն օծում։ Եւ փարիսեցին էլ, որ նորան կան- 39 չել էր, երբոր տեսաւ, իր մտքումն ասում էր. Սա եթէ մի մարգարէ էր, ապա կ'գիտէր՝ թէ ով կամ ինչպիսի կին է նա, որ իրան մօտենում է, քանզի մեղաւոր է։ Եւ Յիսուս պատասխա- 40 նեց և ասաց նորան. Սիմոն, մի բան ունիմ քեզ ասելու. Նա էլ ասաց. Ասա, Վարդապետ. և ասաց. Մի փոխատու երկու պար- 41 տական ունէր, մէկը հինգ հարիւր դահեկան էր պարտական և միւսը յիսուն։ Եւ երբոր նորանք 42 բան չունէին վճարելու, երկուքին էլ շնորհեց. արդ նորանցից ո՞րն աւելի կ'սիրէ նորան, ասա։ Սի- 43 մոն էլ պատասխանեց և ասաց. Ինձ այսպէս է երևում, թէ նա՝

որ նորան շատ չնորհեց. նա էլ ասաց նորան. Ուղիղ դատեցիր:
44 Եւ դառնալով դէպի կինը, Սիմոնին ասաց. Տեսնո՞ւմ ես այս կինը. քո տունը մտայ, իմ ոտքը դու ջուր չես տուել, բայց սա իր արտասուքովը ոտներս թրջեց,
45 և իր գլխի մազերովը սրբեց: Դու ինձ համբոյր չես տուել. իսկ սա՝ քանի որ այստեղ եմ մտել՝ ոտներս համբուրելուց չդադարեց:
46 Դու իւղով չօծեցիր իմ գլուխը. սա անուշահոտ իւղով օծեց իմ
47 ոտները: Վասնորոյ ասում եմ քեզ. Սորա շատ մեղքերն իրան թողուած կ'լինին, վասնզի շատ սիրեց. բայց որին որ քիչ կ'թողուի՝ նա քիչ կ'սիրէ: Եւ նորան
48 ասաց. Քո մեղքերը թողուած լինին քեզ:
49 Եւ նորա հետ սեղան նստողներին սկսեցին իրանց մէջ ասել. Սա ո՞վ է, որ մեղք
50 էլ է թողում: Եւ նա ասաց կնկանը. Քո հաւատքն ապրեցրեց քեզ. գնա խաղաղութիւնով:

ԳԼ. Ը

1 Եւ նորանից յետոյ եղաւ, որ նա մեն էր գալիս քաղաքները և գիւղերը քարոզելով և Աստուծոյ արքայութիւնն աւետարանելով. և այն տասներկուքն էլ նո-
2 րա հետ, Եւ մի քանի կանայք, որ չար ոգիներից և հիւանդութիւններից բժշկուած էին. Մագդաղենացի կոչուած Մարիամը, որ նորանից եօթը դեւ էին դուրս
3 եկել. Եւ Յոհաննան՝ Հերովդէսի տան տեսուչ Քուզայի կինը, և Շուշաննան, և շատ ուրիշներ, որ իրանց ստացուածքներիցը նորան ծառայութիւն էին անում:
4 Եւ երբոր մեծ բազմութիւն էր հաւաքուած, և ամեն մէկ քաղաքից նորա մօտ էկան, առակով
5 ասաց: Սերմ ցանողը դուրս գնաց իր սերմը ցանելու. և նա սերմանելիս՝ որը ճանապարհի մօտ ընկաւ՝ և կոխուեցաւ, և երկնքի թռչուններն ուտեցին զայն:
6 Եւ ուրիշը ապառաժի վերայ ընկաւ. և բուսանելու ժամանակին չորացաւ՝

հիւթի պակասութեան պատճառով: Եւ ուրիշն ընկաւ փշերի 7
մէջ, և փշերը նորա հետ բուսան և խեղդեցին նորան: Եւ ուրիշն 8
ընկաւ այն բարի և պատրաստ երկրի վերայ. և բուսաւ՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ. այս բաները խօսելիս՝ աղաղակեց. Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ:
Աշակերտներն էլ նորան հարց- 9
նում էին, թէ ի՞նչ է այն առակը: Նա էլ ասաց. Ձեզ արուած 10
է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գիտել, բայց ուրիշներին առակներով. որ տեսանեն՝ և չտեսանեն, և լսեն՝ և չիմանան:
Արդ առակն այս է. Սերմը Աս- 11
տուծոյ խօսքն է: Ճանապարհի 12
մօտերն էլ նորանք են, որ լսում են. և յետոյ սատանան գալիս է և խօսքը նորանց սրտից գողանում է, որ չ'հաւատան՝ և փրկուին:
Ապառաժի վրայինն էլ նորանք 13
են, որ երբոր լսեն, խօսքը ուրախութիւնով ընդունում են. և սորանք արմատ չ'ունին. մի ոտ ժամանակ հաւատում են, բայց փորձութեան ժամանակին հետանում են: Փշերի մէջ ընկողն էլ 14
նորանք են, որ խօսքը լսած են լինում, բայց կեանքի հոգսերից և հարստութիւնից և զուարճութիւններից՝ գնալով խեղդւում են, և անպտուղ են լինում: Բայց 15
այն պատրաստ երկրի մէջինը, նորանք են, որ բարի և յօժար սրտով խօսքը լսում և ընդունում են, և համբերութիւնով պտուղ են տալիս:
Ոչ ոք ճրագ չի վառել և ա- 16
նօթով թաքցնել կամ մահճի տակ դնել. այլ ճրագակալի վերայ կ'դնէ, որ ներս մտնողները լոյսը տեսանեն: Քանզի ծածուկ բան 17
չկայ՝ որ չ'յայտնուի. և ոչ թաքուն բան, որ չ'իմացուի և յայտնուի: Ուրեմն տեսէք թէ ինչպէս 18
էք լսում. վասնզի ով որ ունի, նորան կ'տրուի, և ով որ չունի, նա էլ որ կարծում է՝ թէ ունի, նորանից վեր կ'առնուի:
Եւ նորա մայրը և նորա եղ- 19
բայրքը նորա մօտ էկան, և չէին

կարողանում նորա մօտ հանել
20 բազմութեան պատճառով՝ նո-
րան իմաց արին և ասացին. Մայ-
րըդ և եղբարքդ դուրսը կանգ-
նած են՝ ուզում են քեզ տես-
21 նել։ Նա էլ պատասխանեց և ա-
սաց նորանց. Իմ մայրը և իմ
եղբարքը նորանք են, որ Աստու-
ծոյ խօսքը լսում են և անում։
22 Եւ մէկ օր եղաւ, որ նա նաւ
մտաւ, և նորա աշակերտներն էլ
և ասաց նորանց. Անց կենանք
ծովակի միւս կողմը. և ճանա-
23 պարհ բնկան։ Եւ երբոր նաւով
գնում էին՝ նա քնեց. և քամու
փոթորիկ բնկաւ այն ծովակի մէջ,
և նաւը լցվում էր, և վտանգի
24 մէջ էին։ Եւ մօտ եկան, նորան
արթնացրին և ասացին. Վար-
դապետ, վարդապետ, կորչում
ենք. նա էլ վերկացաւ, և քա-
մուն և ջրի ալեկոծութեանը սաս-
տեց, և հանդարտեցին, և խա-
25 ղաղութիւն եղաւ։ Եւ ասաց նո-
րանց. Ո՞ւր է ձեր հաւատքը, և
խիստ վախեցան զարմացան, և
իրար ասում էին. Սա ո՞վ է արդ-
եօք որ քամիներին և ջրերին էլ
է հրաման տալիս, և հնազան-
դում են նորան։
26 Եւ նաւով գնացին Գադա-
րացոց երկիրը, որ Գալիլեայի դի-
27 մացի կողմն է։ Եւ նա ցամաքը
դուրս գնալիս, քաղաքիցը մի մարդ
պատահեց նորան, որ դևեր ու-
նէր բաւական ժամանակից հե-
առ, և հագուստ չէր հագած և
տան մէջ չէր կենում այլ գե-
28 բեզմաններում։ Եւ Յիսուսին որ
տեսաւ, աղաղակեց և նորա առ-
ջև ընկաւ, և մեծ ձայնով ա-
սաց. Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ,
Յիսուս՝ որդի Բարձրելոյն Աստու-
ծոյ. աղաչում եմ քեզ՝ մի
29 տանջիր ինձ, Վասնզի նա պիղծ ո-
գուն հրամայում էր որ այն մար-
դուցը դուրս գայ. որովհետև շատ
ժամանակ էր որ յափշտակել էր
նորան, և շղթաներով ու ոտնա-
կապերով կապուած պահվում էր,
բայց կապանքները կտրում էր,
և դևերը անապատ տեղեր էր
30 տանում։ Յիսուս էլ նորան հար-
ցրեց՝ և ասաց. Անունդ ինչ է.
նա էլ ասաց. Լեգէօն, քանզի
շատ դևեր էին մտած նորա մէջ։
31 Եւ աղաչում էին նորան, որ չ'հր-
րամայէ նորանց գնալ անդունդը
32 Եւ այնտեղ շատ խոզերի ոհ ե-
րամուկ կար, որ այն լեռան վե-
րայ արածում էին, և աղաչում
էին նորան, որ հրամայ տայ ի-
րանց մտնել նորանց մէջ. և հր-
33 րամայեց նորանց։ Դևերն էլ
այն մարդուցը դուրս եկան՝ խո-
զերի մէջ մտան. և երամակն այն
դահավէժ տեղիցը վազեց ծովակի
մէջ՝ և խեղդուեցաւ։ Խոզաբած- 34
նեքն էլ որ տեսան այն եղած բա-
ները, փախան և գնացին քաղա-
քի և շէների մէջ պատմեցին։ Եւ 35
դուրս եկան այն եղած բանը տես-
նելու։ Եւ Յիսուսի մօտ եկան, և
նստած գտան այն մարդը որից
դևերը դուրս էին եկել, հագուած
և ղգաստացած Յիսուսի ոտների
մօտ. և վախեցան։ Եւ նորանք էլ 36
որ տեսել էին, պատմեցին նո-
րանց, թէ ինչպէս փրկուեցաւ
դիւահարը։ Եւ Գադարացոց շըր- 37
ջակայքի բոլոր բազմութիւնը ա-
ղաչեցին նորան, որ իրանցից գնայ
վասնզի մեծ ահով բռնուած էին.
նա էլ նաւ մտաւ՝ ետ դարձաւ։
Եւ այն մարդն էլ, որից դևերը 38
դուրս էին եկել, նորան աղաչում
էր, որ նորա հետ լինի. բայց Յի-
սուսը արձակեց նորան և ասաց.
Դարձիր քո տունը, և պատմիր 39
ինչ որ Աստուած քեզ արաւ. և
նա գնաց քարոզում էր բոլոր
քաղաքումը ինչ որ Յիսուսը ի-
րան արաւ։

Եւ եղաւ երբոր Յիսուսը ետ 40
դարձաւ, ժողովուրդն ընդունեց
նորան. վասնզի ամենքն սպասում
էին նորան։ Եւ ահա մի մարդ 41
եկաւ՝ անունն Յայրոս, և նա ժո-
ղովարանի իշխան էր. և Յիսուսի
ոտների ընկնելով աղաչում էր
նորան, որ իր տունը մտնէ։ Քան- 42
զի մի միածնուհի աղջիկ ունէր,
իբր տասներկու տարեկան, և
նա մեռնում էր. և նորա գալու
ժամանակ՝ ժողովուրդները նե-
ղում էին նորան։

ԳԼՈՒԽ

1 Եւ իր տասներկու աշակերտները կանչեց էր
ւ, և նորանց զորութիւն և իշխանութիւն տուաւ
բոլոր դևերի վերայ, և հիւանդութիւններ բժշկելու։ 2 Եւ նորանց ուղարկեց Աստուծոյ արքայութիւնը քարոզելու, և հիւանդներին բժշկելու։ 3 Եւ ասաց նորանց. ոչինչ վեր չառնէք ճանապարհի համար. ոչ գաւազաններ, ոչ պարկ, ոչ հաց, ոչ արծաթ, ոչ երկու երկու վերարկու ունենալ։ 4 Եւ որ տուն որ մտնէք՝ այնտեղ մնացէք, և այնտեղից դուրս գնացէք։ 5 Եւ որոնք որ ձեզ չընդունին, այն քաղաքից դուրս գնալիս, ձեր ոտներից փոշին էլ թօթափեցէք՝ նորանց վկայութիւն լինելու համար։ 6 Եւ դուրս գնացին՝ և մտան էին գալիս գիւղերը աւետարանը քարոզելով, և ամեն տեղ բժշկութիւններ անելով։

7 Եւ Հերովդէս չորրորդապետը լսեց նորանից եղած բոլոր գործերը. և տարակուսանքի մէջ էր նորա համար՝ որ ոմանք ասում էին. թէ Յովհաննէսը մեռելներից յարութիւն է առել, և ոմանք էլ, թէ Եղիան յայտնուել է. և ուրիշները, թէ առաջի մարգարէներից մէկը յարութիւն է առել. 9 Եւ Հերովդէս ասաց. Յովհաննէսին գլխատեցի. բայց ա՞ս ով է, որի մասին ես այսպիսի բաներ եմ լսում. և ուզում էր տեսնել նորան։

10 Եւ առաքեալները դարձան և պատմեցին նորան ինչ որ արին. և նորանց առաւ և գնաց առանձին մի անապատ տեղ՝ մի քաղաքի մօտ, որ կոչւում էր Բեթսայիդա։ 11 Եւ ժողովուրդները իմանալով, նորա ետևից գնացին. և նորանց ընդունեց և նորանց հետ Աստուծոյ արքայութեան մասին խօսում էր, և նորանից՝ որ բժշկութեան կարօտ էին՝ բժշկում էր։

12 Եւ օրն սկսեց մթնել. տասներկուքն էլ մօտ եկան և ասացին նորան. արձակիր այդ ժողո-

43 Եւ մի կին կար տասներկու տարուց հետէ տեառատեսութեան մէջ, որ իր բոլոր ապրանքը բժիշկների ծախսելով չէր կարեցել ոչ
44 մէկից բժշկուիլ։ Սա մօտ եկաւ ետևից, նորա հանդերձի ծայրին դպաւ. և իսկոյն նորա արիւնի
45 վազելը կանդնեց։ Եւ Յիսուսը ասաց. Ով է որ ինձ դպաւ. և երբոր ամենքն ուրանում էին, ասաց Պետրոսը և նորա հետ լինողները. Վարդապետ, ժողովուրդները աղմուկ են քեզ և նեղում, և դու ասում ես. Ո՞վ է
46 որ ինձ դպաւ։ Եւ Յիսուսը ասաց. Մէկը դպաւ ինձ. վասնզի ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս
47 եկաւ ինձանից։ Եւ երբոր տեսաւ կինը, որ ծածուկ չ'մնաց, դողալով եկաւ՝ նորա առջևը ընկաւ, և բոլոր ժողովրդի առջև պատմեց նորան, թէ ինչ պատճառով նորան դպաւ, և թէ ինչ-
48 պէս իսկոյն բժշկուեցաւ։ Նա էլ ասաց նորան. Քաջացիր, դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ, գնա խաղաղութիւնով։

49 Եւ նա տակաւին խօսելիս ժողովրդապետի տանից մէկն եկաւ, և նորան ասաց, թէ Աղջիկդ մեռաւ. մի աշխատացներ վարդապե-
50 տին։ Բայց Յիսուս երբոր լսեց, նորան պատասխանեց և ասաց. Մի վախենար, միայն հաւատա,
51 և կ'ապրի։ Եւ երբոր տունն էր մտնում, ոչ ոքի չ'թողեց ներս մտնել, բայց միայն Պետրոսին, և Յակոբին և Յովհաննէսին, և ե-
52 րեխայի հօրը և մօրը։ Եւ ամենքը լաց էին լինում և նորա վերայ սուգ անում. և նա ասաց, Լաց մի լինէք, մեռած չէ, այլ
53 քնած է։ Բայց ծաղր էին անում նորան, գիտենալով՝ որ մեռել է։
54 Իսկ նա ամենքին դուրս հանեց, և նորա ձեռքից բռնելով կանչեց
55 և ասաց. Աղջիկ. վեր կաց, Եւ նորա հոգին դարձաւ, և իսկոյն կանգնեց. և հրամայեց, որ նորան բան տան ուտելու։
56 Եւ նորա ծնողքը զարմացան. և նա պատուիրեց, որ ոչ ոքի չասեն եղածը

վուրդը, որ չրջակայ գիւղերը և
չէնքերը գնան, Հանդիսաս առնեն,
և կերակուր պանեն. վասնզի այս-
13 տեղ անապատ տեղումն ենք: Եւ
նորանց ասաց. Դուք տուէք դո-
րանց ուտել. Նորանք էլ ասացին.
Մենք հինգ հացից և երկու ձկ-
նից աւելի չունինք, եթէ ոչ գը-
նանք այդ բոլոր ժողովրդի հա-
14 մար կերակուր գնենք: Վասնզի
հինգ հազարն չափ մարդիկ էին.
և իր աշակերտներին ասաց. Նը-
ստեցրէք դորանց դաս դաս չիսուն
15 չիսուն: Եւ այնպէս արին, և ա-
16 մենքին նստեցին: Եւ այն հինգ
հացն և երկու ձուկն առաւ, դէ-
պի երկինքը նայեց, օրհնեց նո-
րանց և կարեց, և տալիս էր ա-
շակերտներին, որ ժողովրդի առ-
17 ջև դնեն: Ամենքը կերան և կրշ-
տացան. և կտորների փշրանքնե-
րը վեր առին տասներկու քեռց:
18 Եւ եղաւ, երբոր նա առանձին
աղօթք էր անում, աշակերտներն
էլ նորա հետ էին. և հարցրեց
նորանց և ասաց. ժողովուրդները
ինձ համար ո՞վ են ասում, թէ
19 լինիմ: Նորանք էլ պատասխա-
նեցին և ասացին. Յովհաննէս մը-
կրտիչը, ուրիշներն էլ՝ Եղիան,
ուրիշներն էլ, թէ Առաջի մար-
գարէներից մէկը յարութիւն է
20 առել: Եւ նորանց ասաց. Բայց
դուք ո՞վ էք ասում ինձ համար
թէ լինիմ. Պետրոսը պատասխա-
նեց և ասաց. Աստուծոյ Քրիս-
21 տոսը: Նա էլ սաստեց նորանց,
և պատուիրեց՝ որ այս բանը ոչ
22 ոքի չասեն: Եւ ասաց, թէ Պէտք
է Որդին մարդոյ շատ չարչարուի
և անարգուի ծերերից և քահա-
նայապետներից և դպիրներից,
և սպանուի և երրորդ օրում յա-
23 րութիւն առնէ: Եւ ամենքին ա-
սում էր, եթէ մէկը կամենում է
իր ետևից գալ, թող իր անձն
ուրանայ և ամեն օր իր խաչն առ-
24 նէ և իմ ետևից գայ: Վասնզի
ով որ կամենայ իր անձն ապրե-
ցնել՝ կ'կորցնէ նորան. և ով որ
իր անձն կորցնէ ինձ համար՝ նա
25 կ'ապրեցնէ նորան: Քանզի ի՞նչ
օգուտ է մարդոյ, որ բոլոր աշ-
խարհքս առնայ, և իր անձը կոր-
ցընէ, կամ փետուր ի վասնզի ով 26
որ ինձ և իմ խօսքերն ամօթ հա-
մարէ, Որդին մարդոյ էլ նորան
ամօթ կ'համարէ, երբոր գայ իր
Հօրը և սուրբ հրեշտակների փառ-
քովը: Բայց ճշմարիտ ասում եմ 27
ձեզ. Այստեղ կանգնածներից
ոմանք կան, որ մահ չեն ճաշա-
կիլ, մինչև որ Աստուծոյ արքա-
յութիւնն տեսանեն:

Եւ եղաւ, որ այս խօսքերից 28
ութ օրի չափ յետոյ, Պետրոսին
և Յովհաննէսին և Յակոբին առաւ
և վեր եկաւ լեռը աղօթք անե-
լու: Եւ եղաւ որ նա աղօթք ա- 29
նելիս, նորա երեսի կերպարանքն
ուրիշ կերպ եղաւ. և նորա հա-
գուստը սպիտակ փայլուն եղաւ:
Եւ սոկա երկու մարդ խօսում էին 30
նորա հետ. որ Մովսէսն և Եղիան
էին, Նորանք փառքով երևեցած 31
խօսում էին նորա վախճանի հա-
մար, որ Երուսաղէմումն կատա-
րելու էր: Բայց Պետրոսը և նո- 32
րա հետ լինողները քնով ծանրա-
ցած էին, և երբոր զարթնեցան
տեսան նորա փառքը, և այն եր-
կու մարդկանց որ նորա մօտ կանգ-
նած էին: Եւ եղաւ որ նորանք 33
նորանից հեռանալիս, Պետրոսն
ասաց Յիսուսին. Վարդապետ,
լաւ է մեզ համար այստեղ կե-
նալ, և երեք տաղաւար շինենք,
մէկը քեզ համար. և մէկը Մո-
վսէսին, և մէկը Եղիային. և չէր
գիտում՝ ինչ է խօսում: Եւ երբ- 34
որ նա այս ասում էր, մի ամպ
եկաւ և նորանց վերայ հովանի
արաւ. և վախեցան, երբոր այն
ամպի մէջ մտան: Եւ ձայն եղաւ 35
ամպից, որ ասաց. Դա՛ է իմ ա-
րելի Որդին, դորան լսեցէք: Եւ 36
այն ձայնն որ եղաւ, Յիսուսը մե-
նակ գտնուեցաւ. և նորանք լռե-
ցին, և այն օրերումն ոչ ոքի ոչ-
ինչ չպատմեցին այն բաներից,
որ տեսան:

Եւ հետևեալ օրը եղաւ որ նո- 37
րանք լեռնիցը իջնելիս, շատ ժո-
ղովուրդ նորա առջևն եկաւ: Եւ 38
ահա ժողովրդից մի մարդ աղա-
ղակեց և ասաց. Վարդապետ,

աղաչում եմ քեզ, մնիկ տուր
իմ որդոյն, որովհետև միա-
39 ծնեալդ է։ Եւ ահա ոչի լրա-
նում է նորան, և յանկարծ գո-
ռում է, և նորան գեռնով է
տալիս փրփրեցնելով, և հազիւ
հեռանում է նորանից՝ նորան կոտ-
40 րատելուց յետոյ։ Եւ ես քո ա-
շակերտներին ազաչեցի, որ հա-
41 նեն նորան, բայց չկարացին։ Յի-
սուսն էլ պատասխանեց և ասաց.
Ով անհաւատ և թիւր ազգ,
մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լի-
նիմ և համբերեմ ձեզ. քո որդին
42 այստեղ բեր։ Եւ նա դեռ մօտ
գալիս՝ դևը գետնով զարկեց նո-
րան և շատ սաստիկ թափահա-
րեց։ Իսկ Յիսուսը սաստեց պիղծ
ոգուն, և տղային բժշկեց. և նո-
43 րան տուաւ իր հօրը։ Եւ ամենքը
զարմանում էին Աստուծոյ մեծա-
փառութեան վերայ. և երբոր ա-
մենքը զարմանում էին այն բոլոր
բաների վերայ, որ Յիսուսը անում
էր, իր աշակերտներին ասաց.
44 Ա՛յս խօսքերը դուք ձեր ա-
կանջներում դրէք. վասնզի Որ-
դին մարդոյ մարդկանց ձեռքն է
45 մատնուելու։ Բայց նորանք չէին
իմանում այն խօսքը և ծածկուած
էր նորանցից, որ չհասկանան նո-
րան. և վախում էին հարցնել
նորան այն բանի համար։
46 Մի խորհուրդ էլ մտաւ նորանց
մէջ՝ այն թէ՝ նորանցից ո՞վ լինի
47 մեծը։ Յիսուսն էլ նորանց սրտե-
րի մտածմունքները իմանալով մի
երեխայ առաւ՝ և նորան կանգ-
48 նեցրեց իրան մօտ, Եւ ասաց նո-
րանց. Ով որ այս երեխային ըն-
դունի իմ անունովը, ինձ է ըն
դունում. և ով որ ինձ ընդունի,
ինձ ուղարկողին է ընդունում.
քանզի ով որ ձեր ամենիդ մէջ
շատ փոքրն է, նա մեծ կ՛լինի։
49 Յովհաննէսն էլ պատասխանեց և
ասաց. Վարդապետ, մեկը տե-
սանք, որ քո անունովը դևեր էր
հանում, և արգիլեցինք նորան,
քանզի մեզ հետ չէ մտնում գալիս։
50 Եւ Յիսուսը նորանց ասաց. Մի
արգելէք նորան. քանզի ով որ
մեզ հակառակ չէ, մեր կողմն է։

Եւ եղաւ, երբոր նորա վերա- 51
նալու օրերը կատարվում էին, և
նա իր երեսը հաստատեց՝ որ գը-
նայ Երուսաղէմ, Եւ իր երեսի 52
առջևն պատգամաւորներ ուղար-
կեց. և գնացին՝ Սամարացոց մի
գիւղը մտան, որ նորա համար
բան պատրաստեն։ Բայց չընդու- 53
նեցին նորան, վասնզի նորա եր-
ես ---ը էր Երուսաղէմ գնա-
լու։ Երբոր նորա աշակերտները 54
Յակոբոս և Յովհաննէս տեսան՝ ա-
սացին. Տէր՝ կամենո՞ւմ ես ա-
սենք, կրակ իջնէ երկնքից և
նորանց սատկեցնէ ինչպէս Եղիան
էլ արաւ։ Նա էլ դարձաւ՝ սաս- 55
տեց նորանց և ասաց. Չէք գի-
տում՝ թէ որ հոգոյ էք դուք։
Քանզի Որդին մարդոյ չեկաւ՝ 56
մարդկանց հոգիները կորցնելու,
այլ ապրեցնելու. և գնացին ու-
րիշ գիւղ։

Եւ եղաւ որ նորանք գնալիս, 57
ճանապարհին մի մարդ նորան ա-
սաց. Ես քո ետևից կ՛գամ՝ որ
տեղ որ գնաս, Տէր։ Յիսուսն էլ 58
նորան ասաց. Աղուէսները որջեր
ունին, և երկնքի թռչունները բոյ-
ներ. բայց Որդին մարդոյ տեղ
չունի, որ գլուխը դնէ։
Մի ուրիշին էլ ասաց. Իմ ե- 59
տևիցն եկ. և նա ասաց. Տէր,
հրաման տուր, որ գնամ առաջ
իմ հայրը թաղեմ։ Յիսուսը նո- 60
րան ասաց. Թող մեռելները ի-
րանց մեռելները թաղեն. իսկ
դու գնա Աստուծոյ արքայութի-
նը քարոզիր։
Մի ուրիշն էլ ասաց. Տէր, քո 61
ետևից կ՛գամ. միայն թէ առաջ
հրաման տուր ինձ, որ իմ տանը
բարև մնա անեմ։ Յիսուսն էլ նո- 62
րան ասաց. Ոչ ով որ ձեռքը մա-
ճի վերայ է գցում և ետևին մտիկ
անում, յարմար չէ Աստուծոյ
արքայութեան համար։

ԳԼ. ԺԹ.

Սորանցից յետոյ Տէրն ուրիշ եօ- 1
թանասուն հոգի էլ կարգեց. և
նորանց երկու երկու իր երեսի առ-
ջև ուղարկեց այն բոլոր քաղաք-

ներն և տեղերն, որ տեղ որ ինքն
2 գնալու էր։ Եւ ասում էր նորանց.
Հունձքը շատ է, բայց մշակները
քիչ. ուրեմն աղաչեցէք հնձի Տի-
րոջն, որ մշակներ հանէ իր հունձ-
3 քը։ Գնացէք. ահա ես ուղար-
կում եմ ձեզ ինչպէս գառներ
4 գայլերի մէջ։ Վեր մի առնէք ոչ
քսակ, ոչ պարկ, ոչ կօշիկներ.
և ճանապարհին ոչ ոքի բարև
5 չ'տաք։ Եւ որ տուն որ մտնէք,
առաջ ասացէք՝ խաղաղութիւն
6 այս տանը։ Եւ թէ որ այն տեղ
խաղաղութեան որդի լինի, ձեր
խաղաղութիւնը նորա վերայ կը
հանգչի. ապա թէ ոչ՝ դէպի ձեզ
7 կը դառնայ։ Եւ այն տանը
մնացէք, նորանց ունեցածները կե-
րէք և խմեցէք. քանզի մշակն իր
վարձքին արժանի է. տանից տուն
8 մի փոխուիք։ Եւ որ քաղաք որ
մտնէք, և ձեզ ընդունին, կերէք
9 ինչ որ կ'դնեն ձեր առջևն։ Եւ
նորա մէջի հիւանդներին բժշկե-
ցէք. և նորանց ասացէք՝ Թէ Աս-
տուծոյ արքայութիւնը մօտացել
10 է ձեզ վերայ։ Բայց որ քաղաք
որ մտնէք, և ձեզ չ'ընդունին՝
դուրս նորա հրապարակները գա-
11 լով ասացէք. Այն փոշին էլ, որ
ձեր քաղաքից մեր ոտքերն է կը-
պել, թօթափում ենք ձեզ վե-
րայ. միայն թէ սա գիտացէք, որ
Աստուծոյ արքայութիւնը մօտե-
12 ցել է ձեզ։ Եւ ասում եմ ձեզ,
որ Սողոմոնացոց համար աւելի հեշտ
կ'լինի այն օրում՝ քան թէ այն
13 քաղաքին։ Վա՛յ քեզ, Քորազին.
վայ քեզ, Բեթսայիդա. քանզի
եթէ Տիւրոսի և Սիդոնի մէջ ե-
ղած լինէին այն զօրութիւնները՝
որ ձեր մէջ եղան, վաղուց քուր-
ձի և մոխրի մէջ նստած ապաշ-
14 խարել էին։ Սակայն Տիւրոսի և
Սիդոնի համար աւելի հեշտ կ'լինի
դատաստանում քան թէ ձեզ։
15 Եւ դու՝ Կափառնայում, որ մինչև
երկինքը բարձրացած ես, մինչև
16 դժոխքը պիտի ցածանաս։ Ով որ
ձեզ է լսում, ինձ է լսում. և ով որ
ձեզ է անարգում, ինձ է անար-
գում. և ով որ ինձ է անարգում,
ինձ ուղարկողին է անարգում։

Եւ այն եօթանասունքը ուրա- 17
խութիւնով եղան դարձան և ասա-
ցին, Տէր, դևերն էլ հնազանդում
են մեզ քո անունովը։ Եւ նորանց 18
ասաց. Տեսնում էի սատանին, որ
կայծակի պէս երկնքիցը վայր էր
ընկում։ Ահա իշխանութիւնը 19
ատի ձեզ, որ կոխէք օձերի և կա-
րիճների վերայ և թշնամու բո-
լոր զօրութեան վերայ, և ձեզ
ոչինչ վնաս չի անիլ։ Սակայն նորա 20
համար մի ուրախանաք՝ որ ոգի-
ները ձեզ հնազանդում են, բայց
առաւել ուրախացէք, որ ձեր ա-
նուանները երկնքումն գրուած են։
Նոյն ժամուն Յիսուս 21
վեցնծաց և ասաց. Գոհանում եմ
քեզանից, Հայր, երկնքի և երկրի
Տէր, որ իմաստուններից և գի-
տուններից այս բաները ծածկեցիր
և աղայոց յայտնեցիր։ Այո, ով
Հայր. վասնզի այսպէս հաճոյ ե-
ղաւ քո առջև։ Ամեն բան տըր- 22
ուեցաւ ինձ իմ Հօրիցը. և ոչ ով
չէ գիտում՝ թէ ով է Որդին,
բայց միայն Հայրը. և ով է Հայ-
րը՝ բայց միայն Որդին, և ում Որ-
դին կամենայ յայտնել։
Եւ դարձաւ դէպի աշակերտ- 23
ները առանձին՝ և ասաց. Երանի
այն աչքերին՝ որ տեսանում են այն
որ դուք տեսանում էք։ Վասն զի 24
ասում եմ ձեզ, թէ շատ մար-
գարէներ և թագաւորներ կամե-
ցան տեսանել այն որ դուք էք տես-
նում, և չ'տեսան. և լսել այն որ
դուք էք լսում, և չ'լսեցին։
Եւ ահա մէկ օրինական վերկա- 25
ցաւ՝ նորան փորձում էր ասելով.
Վարդապետ, ի՞նչ գործեմ որ
յաւիտենական կեանքը ժառան-
գեմ։ Նա էլ ասաց նորան. Օ- 26
րէնքումն ի՞նչ է գրուած, ի՞նչ-
պէս ես կարդում։ Նա էլ պա- 27
տասխանեց և ասաց. Սիրիր քո
Տէր Աստուածը քո բոլոր սրտի-
ցը, քո բոլոր անձիցը, քո բոլոր
զօրութիւնիցը, և քո բոլոր մըտ-
քիցը. և քո ընկերը քո անձի պէս
Եւ նորան ասաց. Ուղիղ պա- 28
տասխանեցիր. այդ արա՝ և կ'ապ-
րիս։ Իսկ նա՝ որովհետև կամե- 29
նում էր իր անձն արդարացնել՝

Յիսուսին ասաց. Եւ իմ ընկերն
30 ո՞վ է։ Յիսուան էլ պատասխանեց և ասաց. Մի մարդ երուսաղէմից իջնում էր Երիքով. և աւազակներն յե֊ընկան, նրանք էլ մերկացրին նորան՝ և խոցոտեցին նորան, կիսամեռ թո-
31 ղին՝ գնացին։ Եւ դիպուածով մի քահանայ էր իջնում նոյն ճանապարհովը, և նորան տեսաւ՝ ան-
32 ցաւ։ Նոյն պէս էլ մի Ղեւտացի այն տեղն հասաւ եկաւ և տեսաւ
33 անցաւ։ Մի Սամարացի էլ, որ ճանապարհորդում էր, եկաւ այն տեղ և նորան տեսնելով գը-
34 թաց։ Եւ մօտ եկաւ՝ նորա խոցերը փաթաթեց վերան ձէթ և գինի ածելով. և իր անասունի վերայ դրած տարաւ նորան մին իջևան, և նորան հոգ տարաւ։
35 Եւ հետևեալ օրն երբոր այն տեղից գնաց էր գնում, երկու դահեկան հանեց և իջևանի տիրոջը տուաւ և ասաց նորան. Դորան հոգ տար, և ինչ որ դորա համար ծախք անես, ես միւսանգամ էս դառնալիս կ՚վճարեմ
36 քեզ։ Հիմա այն երեքից ո՞րն է երևում քեզ՝ թէ ընկեր է եղել այնաւազակներն յե֊ընկած մար-
37 դոյն։ Նա էլ ասաց. Նա՝ որ ողորմութիւն արաւ նորան։ Ապա Յիսուս նորան ասաց. Գնա, դու էլ այնպէս արա։
38 Եւ եղաւ որ նորանք գնալիս, ինքն էլ մի գիւղ մտաւ. և մի կին՝ անունը Մարթա՝ ընդունեց
39 նորան իր տունը։ Եւ նա մի քոյր ունէր՝ անունը Մարիամ. և ան Տիրոջ ոտների մօտ նստեց, և
40 նորա խօսք լսում էր։ Մարթան էլ ծառայութեան համար շատ պատրաստների մէջ էր. եկաւ կանգնեց և ասաց. Տէր, հոգդ չէ՞ որ քոյրս ինձ միևնակ թողեց ծառայելու. ուրեմն ասա դորան, որ
41 օգնէ ինձ։ Պատասխանեց Յիսուս և ասաց նորան. Մարթա Մարթա՝ դու հոգս ես քաշում և շատ բաներով պատրաստած ես.
42 Բայց միակ բան է պէտք. Մարիամ բարի բաժինն ընտրեց, որ վեր չի առնուիլ նորանից։

ԳԼ. Ժ.Ա

Եւ եղաւ որ մի տեղ աղօթք էր 1
անում. և երբոր դադարեց, իր աշակերտներից մէկն ասաց նորան. Տէր, սովորեցրու մեզ աղօթք անել, ինչպէս Յովհաննէս էլ իր աշակերտներին սովորեցրեց։ Եւ ա- 2
սաց նորանց. Երբոր աղօթք անէք, ասացէք. Մեր Հայր, որ երկնքումն ես, քո անունը սուրբ լինի. քո արքայութիւնը գայ։ Քո 3
կամքը լինի՝ ինչպէս երկնքումն այնպէս էլ երկրիս վերայ։ Մեր ամեն օրուայ հացը օրէց օր տուր մեզ։ Եւ թող մեզ մեր մեղքերը. 4
քանզի մենք էլ թողում ենք ամենին, որ պարտական է մեզ. և մեզ փորձանքի մէջ մի տանիր, այլ փրկիր մեզ չարիցը։
Եւ նորանց ասաց. Ձեզանից ո՞վ 5
է, որ բարեկամ ունենայ, և կէս գիշերին նորա մօտ գնայ, և նորան ասէ. Բարեկամ, ինձ երեք հաց փոխ տուր. Որովհետև իմ 6
բարեկամն ինձ մօտ եկաւ ճանապարհից, և բան չունիմ՝ որ նորա առջև դնեմ։ Եւ նա պատաս- 7
խանէ ներսից և ասէ. Մի յոգնեցներ ինձ. դուռն արդէն փակուած է, և երեխաներս ինձ հետ անկողնումն են. չեմ կարող վեր կենալ և տալ քեզ։ Ասում եմ 8
ձեզ, եթէ վեր էլ չկենայ և նորան տայ, նորա բարեկամ լինելու համար, սակայն նորա անբեսութեան համար վեր կ՚կենայ և կ՚տայ նորան ինչ որ էլ պէտք լինի։ Եւ ես ասում եմ ձեզ, 9
խնդրեցէք՝ և կ՚տրուի ձեզ, որնեցէք և կ՚գտնէք, դո֊ը թակեցէք՝ և կ՚բացուի ձեզ։ Վասն- 10
զի ամեն ով որ խնդրում է՝ առնում է, և ով որ որոնում է՝ գտնում է, և ով որ դո֊ը թակում է՝ բացվում է նորան։ Եւ 11
ձեզանից ո՞ր հօրից իր որդին հաց ուզէ, միթէ քար կ՚տայ նորան. կամ եթէ ձուկ՝ միթէ ձկան տեղ օձ կ՚տայ նորան։ Եւ կամ ձու 12
ուզէ, միթէ կարիճ կ՚տայ նորան։ Արդ եթէ դուք, որ չար էք՝ գի- 13
տում էք բարի պարգևներ տալ

ձեր որդւոցը, եւ ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգի կ'տայ նորանց, որ ուզում են նորանից։
14 Եւ մի դեւ էր հանում, որ համր էր. և եղաւ որ դեւը դուրս դաւլիս համրը խօսեց. և ժողովուրդները զարմացան։ Եւ նորանցից
15 ոմանք ասացին. Դա դեւերի իշխան՝ Բէեղզեբուղովն է հանում
16 դեւերը։ Ուրիշներն էլ փորձելով մի նշան էին խնդրում նորանից
17 երկնքից։ Բայց նա նորանց մտածմունքները իմանալով ասաց նորանց. Ամեն թագաւորութիւն, որ իր մէջ բաժնուած է՝ կ'աւերուի, և տուն տան դէմ բաժնուած
18 կ'կործանուի։ Ապա եթէ սատանան ինքն իրան դէմ բաժանուած է, նորա թագաւորութիւնն ի՞նչպէս կ'կենայ, վասնզի ասում էք, Եա Բէեղզեբուղովն եմ հանում
19 դեւերը։ Եթէ եա Բէեղզեբուղովն եմ հանում դեւերը, որո՞ ձեր որդիքն իմով են հանում. դորա համար նորանք կ'լինին ձեր դատաւորները։ Բայց եթէ Աստուծոյ
20 մատովն եմ հանում դեւերն, ուրեմն Աստուծոյ արքայութիւնն
21 ձեզ վերայ հասել է։ Երբոր զօրաւորը զինուորուած իր տունը պահէ, նորա ստացուածքը խա-
22 զաղութեան մէջ են։ Բայց եթէ նորանցից էլ աւելի զօրաւորը գայ՝ նորան յաղթէ, նորա զէնքերը՝ որ յոյսն նորանց վերայ էր դրել, կ'հանէ և նորա աւարը
23 կ'բաժնէ։ Ով որ ինձ հետ չէ՝ ինձ հակառակ է, և ով որ ինձ հետ չէ ժողովում՝ ցրւում է։
24 Երբոր պիղծ ոգին դուրս է գալիս մարդուց՝ անջուր տեղերում քում ման է գալիս և հանգիստ որնում. և երբոր չէ գտնում՝ ասում է. Ես դառնամ իմ տու-
25 նը՝ որտեղից դուրս եկայ։ Եւ գալիս՝ նորան սրբուած և զարդարուած է գտնում։
26 Այն ժամանակ դնում է և իրանից էլ աւելի չար եօթն ոգիներ է առնում՝ և մտնում բնակվում է այնտեղ, և այն մարդու յետինն աւելի չար է լինում քան թէ առաջինը։
27 Եւ եղաւ որ նա այս խօսելիս, ժողովրդի միջից մի կին ձայն բարձրացրեց և ասաց. Երանի այն փորին՝ որ քեզ կրեց, և այն ծծերին՝ որ քեզ ծծեցրին։ Նա էլ 28
ասաց. Այո՛, երանի նորանց, որ Աստուծոյ խօսքը լսում են և նորան պահում։
Եւ երբոր ժողովուրդները նոր- 29
վերայ դիմում էին, սկսեց ասել. Այս ազգը չար է. նշան է խնդրում, և նշան չի տրուիլ սորան՝ բայց միայն Յովնան մարգարէի նշա-
նը։ Վասնզի ինչպէս Յովնան նշան 30
եղաւ Նինուէացոց համար, այնպէս էլ Որդին մարդոյ այս ազգին կ'լինի։ Հարաւի թագուհին 31
դատաստանում վեր կ'կենայ այս ազգի մարդկանց հետ և կ'դատապարտէ նորանց, որովհետև երկրի ծայրերից եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու, և ահա Սողոմոնից էլ աւելին է այս տեղ։
Նինուէի մարդիկը դատաստա- 32
նում վեր կ'կենան այս ազգի հետ և կ'դատապարտեն սորան, որովհետև նորանք Յովնանու քարոզութիւնով ապաշխարեցին. և ահա Յովնանից էլ աւելին է այստեղ։
Ոչ ոք ճրագը չէ վառում և 33
թաքուն տեղ դնում և ոչ գերեզմանի տակ, այլ ճրագակալի վերայ, որ ներս մտնողները լոյսը տեսանեն։ Մարմնոյ ճրագը աչքն 34
է, արդ երբոր աչքդ պարզ է, ողջ մարմինդ էլ լուսաւոր կ'լինի. բայց երբոր չար է, մարմինդ էլ խաւար կ'լինի։ Ուրեմն՝ զգոյշ 35
կաց, մի գուցե այն լոյսն, որ քեզանում է, խաւար լինի։ Եթէ 36
ողջ մարմինդ լուսաւոր է և ոչ մի խաւար մասն չկայ, ողջը լուսաւոր կ'լինի. ինչպէս երբոր ճրագը իր ճառագայթով լուսաւորէ քեզ։
Եւ նա այս խօսելիս, մէկ Փարի- 37
սեցի աղաչում էր նորան, որ նորա մօտ հաց ուտէ. և նա մտաւ տեղն նստեց։ Փարիսեցին էլ տեսնելով 38
զարմացաւ, որ ճաշից առաջ չ'լուացուեց։ Տէրն էլ ասաց նո- 39
րան. Հիմա դուք Փարիսեցիներդ բաժակն և պնակի դրսի կողմը սրբում էք, բայց ձեր ներսը լիքն

Եւ երբոր այս բաներն առաւ 53
էր նորանց, գպիրները և փարի-
սեցիները սկսեցին ասաստիկ առ-
պել, և շատ բաներէ համար նո-
րա հետ հակառակել. Եւ նորան 54
սէքի տակ առած՝ ուզում էին,
նորա բերանէցը մի բան որսալ,
որ ամբաստանեն նորան։

Գլ. ԺԲ

Ան միջոցին երբոր հազարնե- 1
րով ժողովուրդները դիզված էին
մինչև որ իրար կոխ էին առլիս,
սկսեց իր աշակերտներին ասել.
Առաջ ձեր անձերը պահե-
ցէք փարիսեցոց խմորիցը, որ է
կեղծաւորութիւնը։ Վասնզի ոչ- 2
ինչ չկայ ծածուկ, որ չյայտ-
նուի. և թաքուն, որ չիմացուի։
Ուստի ինչ որ խաւարումն ասէ- 3
ցիք, լուսոյ մէջ կ'լսուի. և ինչ
որ ներսի սենեակներումն ականջ-
ով խօսեցիք, կառուրներէ վե-
րայ կ'քարոզուի։ Բայց ասում եմ 4
ձեզ՝ իմ սիրելիներին. Մի վախե-
նէք նորանցից՝ որ մարմինն սպա-
նում են, և նորանից յետոյ ա-
ւելի բան չունին՝ որ անեն։ Բայց 5
ցոյց տամ ձեզ, թէ ումից պէտք
է վախենաք. Նորանից վախեցէք,
որ սպանելուց յետոյ իշխանու-
թիւն ունի դեհենի մէջ գցելու.
այո՛, ասում եմ ձեզ՝ նորանից
վախեցէք։ Չէ՞ որ հինգ ճնճղուկ 6
երկու դանկի են ծախվում. և նո-
րանցից մէկն էլ Աստուծոյ առ-
ջև մոռացուած չէ։ Բայց ձեր գլ- 7
խի բոլոր մազերն էլ համարուած
են. ուրեմն մի վախենաք. վասն-
զի դուք շատ ճնճղուկներից աւե-
լի լաւ էք։ Իսկ ասում եմ ձեզ, 8
Ով Աւետն ով որ ինձ մարդկանց
առջև դաւանէ, Որդին մարդոյ էլ
նորան կ'դաւանէ Աստուծոյ հրեշ-
տակների առջև։ Եւ ով որ ինձ 9
ուրանայ մարդկանց առջև, նա էլ
կ'ուրացուի Աստուծոյ հրեշտակ-
ների առջև։ Եւ ամեն ով որ Որ- 10
դոյ մարդոյ դէմ բան ասէ, կ'թող-
ուի նորան. բայց ով որ Սուրբ
Հոգոյն դէմ հայհոյէ, նորան չի
թողուիլ։ Եւ երբոր տանեն ձեզ 11

Է յարիշատակութիւնով և չարու-
40 թիւնով։ Անմիտներ, չէ՞ որ դուր-
41 սը անոթը ներսն էլ արաւ։ Բայց
ձեր ունեցածիցը ողորմութիւն
տուէք, և ահա ամեն բաներ ձեր
42 են ձեզ համար։ Բայց վայ ձեզ
փարիսեցիներիդ, որ անանուխի
և փեգենայի և ամեն բանջարի
տասանորդ էք տալիս, և Աստու-
ծոյ իրաւունքը և սէրը զանց էք
անում. այս պէտք էր անել, և
43 նորանք չ'թողել։ Վայ ձեզ փա-
րիսեցիներիդ, որ ժողովարանների
մէջ առաջի աթոռներն էք սի-
րում, և հրապարակներում բա-
44 րեւները։ Վայ ձեզ՝ գպիրներիդ և
փարիսեցիներիդ, կեղծաւորներ,
որ դուք այն գերեզմանների պես
էք, որ անյայտ են, և մարդիկը
որ նորանց վերայ գնում են՝ չեն
գիտում։

45 Եւ պատասխանեց օրինականնե-
րից մէկը և ասաց նորան. Վար-
դապետ, այդ ասելով մեզ էլ
46 ես նախատինք տալիս։ Նա էլ ա-
սաց, Եւ ձեզ օրինականերիդ էլ
վայ. քանզի ծանր տանելի բեռ-
ներ էք բեռնում մարդկանց, և
դուք ձեր մատների մէկովը չէք
ճօռեներում այն բեռներին։ Վայ
47 ձեզ, որ մարգարէների գերեզ-
մանները շինում էք, և հէնց ձեր
48 հարքն սպանեցին նորանց։ Ապա
ուրեմն վկայում էք և հաւանում
էք ձեր հարանց գործքերին. ո-
րովհետև նորանք կոտորեցին նո-
րանց, և դուք շինում էք նո-
49 րանց գերեզմանները։ Սորա հա-
մար Աստուծոյ իմաստութիւնն էլ
ասաց. Մարգարէներ և առաք-
եալներ կ'ուղարկեմ նորանց մօտ,
և նորանցից կ'սպանեն և կ'հա-
50 լածեն։ Որ բոլոր մարգարէների
արիւնն, որ աշխարհքի սկզբիցը
թափուած է, այս ազգիցը պա-
51 հանջուի, Աբելի արիւնիցը մին-
չև Զաքարիայի արիւնը, որ սե-
ղանի և տաճարի մէջ կորաւ.
այո՛, ասում եմ ձեզ, այս ազ-
52 գիցը կ'պահանջուի։ Վայ ձեզ՝
օրինականներիդ, որ գիտութեան
բանալիքը վեր էք առել. դուք չէք
մտել, և մտնողներին էլ արգիլել էք։

ժողովրանները և դատաւորնե-
րի և պետութիւնների առջև,
հոգս մի՛ անէք՝ թէ ինչպէս ու
ինչ պատասխանէք, կամ ինչ
12 ասէք։ Վասնզի Սուրբ Հոգին նոյն
ժամուն կ՚աւետացնէ ձեզ՝ թէ ինչ
պէտք է խօսիլ։
13 Եւ ժողովրդից մէկն ասաց նո-
րան. Վարդապետ, իմ եղբօրն
ասա, որ ժառանգութիւնն ինձ
14 հետ բաժանէ։ Նա էլ ասաց նո-
րան. Մարդ, ո՞վ կարգեց ինձ
ձեզ վերայ դատաւոր կամ բա-
15 ժանարար։ Եւ նորանց ասաց.
Տեսէք և զգուշ կացէք ագահու-
թիւնից, քանզի մարդուս ապ-
րանքների առատութիւնից չէ
16 նորա կեանքը։ Եւ նորանց մի ա-
ռակ խօսեց և ասաց. Մի հա-
րուստ մարդոյ արտը առատ պը-
17 տուղ տուաւ։ Եւ իր մտքումը
մտածում էր և ասում. Ինչ ա-
նեմ, որ տեղ չունիմ որ իմ պը-
18 տուղները այնտեղ ժողովեմ։ Եւ
ասաց. Այս կանեմ. իմ շտեմա-
րանները քանդեմ, և աւելի մե-
ծերը շինեմ, և իմ բոլոր բերքե-
րը ու բարիքները այնտեղ ժո-
19 ղովեմ։ Եւ իմ անձին ասեմ. Ով
անձն, շատ բարիքներ ունիս շատ
տարիների համար ամբարուած.
Հանգչիր, կեր, խմիր, ուրախա-
20 ցիր։ Բայց Աստուած նորան ա-
սաց. ա՛նմիտ. խակ այս գիշերու-
մը հոգիդ քեզանից եառ կ՚պահան-
ջեն. ապա այս որ պատրաստե-
21 ցիր՝ ո՞ւմ կ՚լինի։ Այսպէս էլ նա՝
որ իր անձին համար գանձ է հա-
ւաքում, և Աստուծով չէ հա-
րուստ։
22 Իր աշակերտներին էլ ասաց.
Դորա համար ասում եմ ձեզ.
Հոգս մի անէք ձեր անձի համար՝
ի՞նչ պիտի ուտէք. ոչ էլ
մարմնոյ համար՝ թէ ինչ պիտի
23 հագնիք։ Հոգին աւելի է կերա-
կուրից, և մարմինը հագուստ-
24 ից։ Մտիկ արէք ագռաւներին.
որ ոչ սերմնում են և ոչ հնձում
են. որոնք ոչ շտեմարաններ ու-
նին և ոչ ամբարներ, և Աստուած
կերակրում է նորանց. գուք ո՞ր-
քան աւելի եք թռչուններից՝

Ձեզանից ո՞վ կարող է իր հոգս 25
անելովն իր հասակի վերայ մէկ
կանգուն աւելացնել։ Արդ եթէ 26
ամենափոքր բանի համար կարող
չէք, ի՞նչու էք ուրիշ բաների հա-
մար հոգս անում։ Մտիկ արէք 27
շուշաններին. ինչպէս են աճում.
ոչ ջանք են անում և ոչ
մանում. բայց ասում եմ ձեզ
Սողոմոնն էլ իր բոլոր փառքի մէջ
նորանց մէկի նման չ՚հագաւ։ Իսկ 28
եթէ դանդի խոտն, որ այս օր կայ
և էգուց փուռն մէջ է գցվում,
Աստուած այնպէս է հագցնում,
ո՞րքան եւս առաւել ձեզ, թերա-
հաւատներ։ Եւ դուք մի որոնէք 29
թէ ինչ ուտէք կամ ինչ խմէք,
և մի գրգռուիք։ Քանզի այդ բո- 30
լոր բաներն աշխարհքի հեթանո-
սներն են որոնում. բայց ձեր Հայ-
րը գիտում է՝ որ դորանք ձեզ
պէտք են։ Սակայն Աստուծոյ ար- 31
քայութիւնն խնդրեցէք, և այդ
բոլորը կ՚աւելնայ ձեզ։ Մի վա- 32
խենար, փոքր հօտ. վասնզի ձեր
Հայրն հաճեցաւ, որ արքայու-
թիւնը տայ ձեզ։ Ձեր ստացուած- 33
քը ծախեցէք և ողորմութիւն
տուէք. ձեզ համար չհինացող
քսակներ շինեցէք՝ անպակասող
երկինքում, որտեղ գող չէ մօտե-
նում և ոչ էլ ցեց է ապակա-
նում։ Քանզի որտեղ որ ձեր գան- 34
ձըն է, այնտեղ էլ ձեր սրտերը
կ՚լինին։ Թող ձեր գօտիները պինդ 35
կապուած լինին մէջքին, և ճրագ-
ները վառուած։ Եւ դուք նման 36
եղէք մարդկանց, որ սպասում են
իրանց տիրոջը, թէ երբ եւ կ՚գա-
նայ հարսանիքից. որ երբոր գայ
և դ---ը թակէ, շուտով բանան
նորա համար։ Երանի այն ծա- 37
ռաներին, որ տէրը գալիս՝ ար-
թուն գտնէ նորանց. ճշմարիտն
ասում եմ ձեզ, թէ գօտիկը մէջ-
քը կ՚կապէ և նորանց տեղն կ՚նըս-
տեցնէ և առաջ եկած կ՚ծառա-
յէ նորանց։ Եւ եթէ երկրորդ կամ 38
երրորդ պահին գայ՝ և այնպէս
գտնէ, երանի այն ծառաներին։
Բայց սա իմացէք, որ եթէ տան 39
տէրը գիտէր՝ թէ գողն ո՛ր ժամին
կ՚գայ, արթուն կ՚կենար և թող

40 չէր տալ իր տունը ծախել։ Արդ դուք էլ պատրաստ եղէք, վասն զի այն ժամին, որ չէք կարծում, Որդին մարդոյ կ'գայ։
41 Եւ Պետրոսը ասաց նորան. Տէր. այդ առակը մե՞զ ես ասում, թէ
42 ամենքին էլ։ Տէրն էլ ասաց. Ո՞րն է արդեօք հաւատարիմ և խմաստուն տնտեսն, որին իր տէրը իր գերդաստանի վերայ կարգից, որ նորանց կերակուրը տայ
43 ժամանակին։ Երանի այն ծառային, որ իր տէրը՝ երբոր գայ,
44 այնպէս անելիս գտնէ նորան. ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ իր բոլոր ստացուածքների վերայ կ'դնէ
45 նորան։ Բայց եթէ այն ծառան իր սրտումն ասէ, իմ տէրն ուշանում է գալ, և սկսէ ծառաներին և աղախիններին ծեծել, ուտել ու խմել և արբենալ։
46 Կ'գայ այն ծառայի տէրն այն օրը, որ նա չէ սպասում, և այն ժամին, որ նա չէ գիտում, և նորա միջկից կ'կտրէ, և նորա բաժինն անհաւատների հետ կ'դնէ։
47 Եւ այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտենալով չէ պատրաստել և ոչ էլ արել նորա կամացը պէս, շատ ծեծ կ'ուտէ։ Եւ
48 նա որ չ'գիտենալով ծեծի արժանի բաներ գործեց, քիչ կ'ծեծուի. այն ամենին որ շատ արուեց՝ նորանից շատ կ'ուզուի. և ում որ շատ պահ արուեցաւ՝ նորանից էլ աւելի կ'պահանջին։
49 Ես եկայ որ կրակ գցեմ երկրիս վերայ. և ինչ ուզում եմ, որ
50 արդէն խակ բորբոքուէր։ Բայց մի մկրտութիւն ունիմ մկրտուելու. և ինչպէս տագնապ եմ քաշում,
51 մինչև որ կատարուի։ Կարծո՞ւմ էք թէ եկայ խաղաղութիւն տալ երկրիս վերայ. Ոչ. ասում եմ
52 ձեզ, այլ բաժանումն։ Վասն զի այսուհետև հինգ հոգի մէկ տան մէջ բաժին բաժին կ'լինին, երիքն երկուսի դէմ, և երկուսն
53 երիքի դէմ։ Հայրը կ'բաժնուի որդուց, և որդին հօրից, մայրն աղջկանից, և աղջիկը մօրից, սկեսուրը հարսից, և հարսն իր սկեսրից։

Եւ ժողովուրդներին էլ ասաց. 54
Երբոր տեսնում էք արևմուտից ամպ դուրս գալիս, շուտով ասում էք. Անձրև կ'գայ, և այնպէս է լինում. Եւ հարաւային քամին 55
փչելիս, ասում էք՝ թէ շոգ կ'լինի, և այնպէս է լինում. Կեղծաւորներ, երկրի և երկնքի երեսը գիտէք փորձել. բայց ինչպէս 56
չէք այս ժամանակը փորձում։ Եւ 57
ինչո՞ւ իսկ ձեզանից էլ չէք ընտրում արժանին։ Երբոր քո հակառակ ասեխի հետ իշխանի մօտ 58
ես գնում, ճանապարհին տուր տալիքը, որ նորա ձեռքից ազատուես. մի գուցե քեզ դատաւորի մօտ քաշէ, և դատաւորը քեզ դահճին մատնէ, և դահիճը բանտի մէջ դցէ։ Ասում եմ 59
քեզ. Այնտեղից դուրս չես գալ, մինչև որ վերջի դանկն էլ չ'վճարես։

ԳԼ. ԺԳ

Նոյն ժամանակումը եկան ոմանք 1
և պատմեցին նորա այն Գալիլեացիների մասին, որանց արիւնը Պիղատոս նորանց մատաղի հետ խառնեց։ Յիսուս էլ պատա- 2
խանեց և ասաց նորանց. Կարծո՞ւմ էք, թէ այդ Գալիլեացիները աւելի մեղաւոր էին քան թէ բոլոր Գալիլեացիները, որ այդպիսի բաներ քաշեցին։ Ոչ, ա- 3
սում եմ ձեզ. այլ եթէ չ'ապաշխարէք, ամենքդ էլ այնպէս կ'կորչիք։
Ահա առակն էլ ասաց. Մի 6
մարդ իր այգու մէջ մի թզենի էր տնկել. և եկաւ, նորա վերայ պտուղ որոնելու, և չ'գտաւ։ Եւ 7
այգեպանին ասաց. Ահա երեք տարի է, որ գալիս եմ պտուղ որոնելու այդ թզենու վերայ, և

չեմ գանուամ. կարիր դորան, ին-
չո՞ւ դա երկիրն էլ խափանէ:
8 Նա էլ պատասխանեց և ասաց.
Տէր, այս տարի էլ թող դորան,
մինչև որ դորա չորս կողմանը փո-
9 րեմ և աղբ ածեմ: Թերևս պտուղ
բերէ, ապա եթէ ոչ, եկող տարի
կարիր դորան:
10 Եւ ժողովարաններից մէկումը
11 ասվորեցնում էր շաբաթ օրը: Եւ
ահա մի կին կար, որ հիւանդու-
թեան ոգի ուներ տասնուեօթ տա-
րի. և կծկուած էր, և ամենևին
չէր կարում դէպի վեր նայիլ:
12 Եւ Յիսուս նորան տեսանելով, ի-
րան մօտ կանչեց և ասաց նորան.
Ով կին, արձակուած ես քո հի-
13 ւանդութիւնից: Եւ ձեռքը դրաւ
նորա վերայ, և շուտով ուղղուե-
ցաւ, և փառաւորում էր Աս-
14 տուծոյն: Իսկ ժողովարանի դպե-
խաւորը շատ բարկացած, որ Յի-
սուսը շաբաթ օրը բժշկեց, պա-
տասխանեց և ասաց ժողովրդին.
Վեց օր կայ, որ նորանցում պէտք
է գործել. հիմա այն օրերը եկէք
բժշկուեցէք, և ոչ թէ շաբաթ
15 օրը: Տէրն էլ պատասխանեց նո-
րան և ասաց. Կեղծաւոր, ձե-
զանից ամեն մէկը շաբաթ օրն իր
եզը կամ էշը չէ՞ արձակում մը-
սուրից և առնում ջուր տալիս:
16 Բայց սա՝ Աբրահամի աղջիկը լի-
նելով, որին սատանան ահա
տասնուեօթ տարի է, որ կապել
էր. արժան չէ՞ր որ շաբաթ օրն
17 այն կապանքից արձակուէր: Եւ
երբոր նա այս ասաց, ամօթով
էին լինում ամենքն, որ հակա-
ռակում էին նորան. և բոլոր ժո-
ղովուրդն ուրախանում էր այն
ամեն փառաւոր գործերի համար,
որ նորանով լինում էին:
18 Եւ ասում էր. Աստուծոյ ար-
քայութիւնն ինչի՞ նման է. և
19 ինչի՞ նմանեցնեմ նորան: Մանա-
նեխի հատի նման է, որն մի մարդ
առաւ իր պարտէզի մէջ ցանեց.
և մեծացաւ և մեծ ծառ եղաւ,
և երկնքի թռչունները նորա ճղե-
րի վերայ բնակեցան:
20 Եւ դարձեալ ասաց. ինչի՞ նմա-
նեցնեմ Աստուծոյ արքայութիւնը.
նման է խմորի, որ նորան մի կին 21
առաւ և երեք չափ ալիւրի մէջ
թաքցրեց, մինչև որ բոլորը խմո-
րուեցաւ:
Եւ նա էր գալիս քաղաքները 22
և գիւղերը՝ և ասվորեցնում էր. և
ճանապարհ ընկած գնում էր դէ-
պի Երուսաղէմ. Եւ մէկն ասաց 23
նորան. Տէր, միթէ քիչ են փըր-
կուողները. նա էլ ասաց նորանց.
Ջանք արէք որ նեղ դռնովը ներս 24
մանէք. քանզի՝ ասում եմ ձեզ,
Շատերը կուզեն մտնել և չեն կա-
րենալ: Նորանից յետոյ որ տան 25
տէրն կելնէ և դուռը կ'փակէ. և
կ'սկսէք դուրսը կանգնիլ և դու-
ռը թակել և ասել. Տէր Տէր,
բաց մեզ. և պատասխանելով կ'ա-
սէ ձեզ. Չեմ ճանաչում ձեզ, Ը-
րինչ տեղից էք: Այն ժամանակ 26
կ'սկսէք ասել. Մենք քո առջև
կերանք և խմեցինք, և դու մեր
հրապարակներումը ասվորեցրիր:
Եւ կ'ասէ. Ասում եմ ձեզ, Ես 27
չեմ ճանաչում ձեզ, Ը՞րինչ տե-
ղից էք. Հեռու կացէք ինձանից,
բոլոր անիրաւութիւն գործողնե-
րըդ: Այնտեղ կ'լինի լացը և ա- 28
տամների կրճտելն. երբոր կ'տես-
նէք Աբրահամին և Իսահակին և
Յակոբին և բոլոր մարգարէներին
Աստուծոյ արքայութեան մէջ,
իսկ ձեզ՝ դուրս հանած: Եւ կ'գան 29
արևելքից և արևմտից, և հիւ-
սիսից և հարաւից, և կ'նստեն
Աստուծոյ արքայութիւնումը: Եւ 30
ահա յետիններ կան՝ որ առա-
ջիններ կ'լինեն. և առաջիններ կան՝
որ յետիններ կ'լինեն:
Նոյն օրումը մի քանի փարի- 31
սեցիք մօտ եկան և նորան ասա-
ցին. Դուրս եկ և գնա այստե-
ղից. քանզի Հերովդէս կամենում
է քեզ սպանել: Եւ նորանց ա- 32
սաց. Գնացէք ասացէք այն ա-
ղուէսին. Ահա դևեր եմ հանում
և բժշկութիւններ եմ կատարում
այսօր և էգուց. և երրորդ օրը
կ'կատարուիմ: Սակայն այսօր և 33
էգուց և միւս օրը պէտք է գնամ.
քանզի կարելի չէ որ մի մարգա-
րէ Երուսաղէմիցը դուրս կորչի:
Երուսաղէմ Երուսաղէմ, մար- 34

գալէնեըը կատորող, և քեզ մօտ
ուղարկուածներըը քարկոծող. քա-
նի՞ անգամ կամեցայ քո որդի-
ները ժողովել ինչպէս հաւն իր
ձագերը թևերի տակն է ժողովե-
35 և չ'կամեցար։ Ահա ձեր տունը
աւերակ է թողուած ձեզ. բայց
ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ
ինձ էլ չէք տեսանիլ, մինչև գայ
ժամանակ, որ ասէք. Օրհնեալ է
Տիրոջ անուամբ եկողը։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ, երբոր նա մի շաբաթ
օր փարիսեցոց իշխաններէն մէկի
տունը մտաւ հաց ուտելու. և
2 նորանք պատում էին նորան։ Եւ
ահա մի ջրգողուած մարդ կար
3 նորա առջև։ Եւ Յիսուս պատաս-
խանեց և օրինականերին և փա-
րիսեցիներին ասաց. Թէ Արժա՞ն
է շաբաթ օրը բժշկութիւն ա-
4 նել։ Եւ նորանք լռեցին. և բռու-
նեց բժշկեց նորան և արձակեց։
5 Եւ պատասխանեց նորանց և ա-
սաց. Ձեզանից ո՞րի էշը կամ եզը
ջրհորի մէջ կընկնի, և նա շուտով
չի հանիլ նորան շաբաթ օրուն։
6 Եւ չ'կարողացան պատասխանել
նորան այդ բանի համար։
7 Եւ այն կանչուած մարդկանց
էլ մի առակ խօսեց, տեսանելով
թէ ինչպէս առաջի տեղերն էին
8 ընտրում. և ասաց նորանց. Երբ
որ մէկից հարսանիք եա կանչ-
ուում, մի նստիր առաջի բարձի
վերայ. մի գուցէ քեզանից մի ա-
ռաւել պատուաւորը լինի կանչ-
9 ուած նորա կողմից։ Եւ նա՝ որ
քեզ և նորան կանչեց, գայ և
քեզ ասէ. Սորան տեղ տուր.
և այն ժամանակ ակսես ամօթով
10 վերջի տեղը նստել։ Բայց երբոր
կանչուում ես, գնա վերջի տեղը
նստիր. որպէսզի, երբոր քեզ
կանչողը գայ, ասէ քեզ. Բարե-
կամ, վերև նստիր. այն ժամանակ
քեզ հետ նստողների առջև փառք
11 կ'լինի քեզ։ Վասնզի ամեն ով
որ իր անձը բարձրացնում է՝
կ'խոնարհուի. և ով որ իր անձը
խոնարհացնում է, կ'բարձրանայ։

12 Եւ իրան կանչողին էլ ասաց. Երբոր ճաշ կամ ընթրիք ես ա-
նում, մի կանչիր քո բարեկամ-
ներիդ, և ոչ քո եղբայրներիդ,
և ոչ քո ազգականներիդ, և ոչ
քո հարուստ հարևաններիդ, մի
գուցէ նորանք էլ նորա փոխա-
րէն կանչեն քեզ և հատուցում
13 լինի քեզ։ Այլ երբոր հացկերու-
թիւն եսանում, կանչիր աղքատ-
ներին, խեղերին, կաղերին, կոյ-
14 րերին։ Եւ երանելի կ'լինիս. ո-
րովհետև չեն կարող քեզ հատուցանել
բայց հատուցանի քեզ. քանզի արդա-
րների յարութեան ժամանակին
կ'լինի քեզ հատուցումն։
15 Եւ երբոր սեղան նստողներից
մէկն այս բանները լսեց, նորան ա-
սաց. Երանի նորան, որ Աստու-
ծոյ արքայութիւնում հաց կ'ու-
տէ։ Եւ նա ասաց նորան. Մի
16 մարդ մեծ ընթրիք արաւ և շա-
տերին հրաւիրեց։ Եւ ընթրիքի
17 ժամանակին իր ծառան ուղար-
կեց, որ հրաւիրածներին ասէ. Ե-
կէք, որովհետև արդէն ամենը
18 պատրաստէ։ Եւ ամենքն սկսեցին
մէկ մէկ եան քաշուիլ. առաջինն
ասաց նորան. Ագարակ առի, և
պէտք է գնամ՝ նորան տեսնեմ.
աղաչում եմ քեզ, ինձ հրաժար-
ուած համարիր։ Եւ միւսն ասաց.
19 Հինգ լուծ եզ առի, և գնում
եմ որ նորանց փորձեմ. աղաչում
եմ քեզ, ինձ հրաժարուած հա-
մարիր։ Եւ միւսն ասաց. Կին եմ
20 առել, և նորա համար չեմ կա-
րող գալ։ Եւ այն ծառան ե-
21 կաւ, այս բաները պատմեց իր տի-
րոջը. այն ժամանակ տան տէրը
բարկացած ասաց իր ծառային.
Դուրս գնա շուտով քաղաքի հր-
ապարակները և փողոցները, և
աղքատներին և խեղերին, և կա-
ղերին և կոյրերին մտցրու այս-
տեղ։ Եւ ծառան ասաց. Տէր, 22
եղաւ ինչպէս հրամայեցիր, և դեռ
էլ տեղ կայ։ Եւ տէրն ասաց 23
ծառային. Դուրս գնա ճանա-
պարհները և ցանգերը, և ստի-
պիր այս տեղ մտնեն, որ իմ տու-
նը լցուի։ Քանզի ասում եմ ձեզ, 24
թէ այն կանչուած մարդկանցից

ոչ մէկն իմ ընթրիքը չի ճաշակել։
25 Եւ շատ ժողովուրդներ գնում էին նորա հետ. և դարձաւ նո-
26 րանց ասաց. Եթէ մէկն ինձ մօտ գայ, և չատէ իր հօրը և մօրը, կնոջը և որդիքներին, և եղբայրներին և քոյրերին, և հէնց իր անձին էլ. նա չէ կարող իմ աշակերտ լինել։
27 Եւ ով որ իր խաչը վեր չառնէ և իմ ետևից գայ, նա չէ կարող իմ աշակերտ լի-
28 նել։ Վանդի ձեզանից ո՞վ է, որ կամենայ աշտարակ շինել, և առաջ չնստի և ծախսը հաշուէ թէ աւարտելու համար բաւական
29 բան ունի։ Որ մի գուցէ երբոր հիմքը դնէ և չկարողանայ աւարտել, ամեն տեսնողներն սկսեն
30 ծաղր անել նորան, և ասել. Թէ այս մարդն սկսեց շինել, և
31 չկարողացաւ աւարտել։ Կամ ո՞ր թագաւոր է, որ գնայ ուրիշ թագաւորի հետ պատերազմ անելու. մի՞թէ չնստել առաջ խորհուրդ անել թէ տասն հազարով կարող է դէմ կենալ նորան, որ քսան հազարով գալիս է իր վե-
32 րայ։ Ապա թէ ոչ, քանի որ նա հեռու է, պատգամաւոր կ'ուղարկէ և կ'ուղէ, որ խաղաղութիւն անէ։
33 Արդ այսպէս էլ ձեզանից ամեն մէկն, որ իր բոլոր ապրանքից չհրաժարուի, չէ կարող ինձ աշակերտ լինել։ Աղը
34 լաւ բան է. բայց եթէ աղն անհամանայ, ի՞նչով պիտի համե-
35 ղանայ։ Ոչ հողի համար է պիտանի և ոչ աղբի համար, այլ դուրս կ'ձգեն նորան. ով որ լսելու ականջ ունի, թող լսէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորներն և մեղաւորները մօտենում էին նորան,
2 որ լսեն նորանից։ Եւ փարիսեցիներն և դպիրները արտնջում էին և ասում. Թէ Այս ընդունում է մեղաւորներին և նորանց հետ ուտում։
3 Եւ այս առակն ասաց նորանց։
4 Ձեզանից ո՞վ է այն մարդն, որ

հարիւր ոչխար ունենայ, և նորանցից մէկը կորցնէ. չի՞ թողել իննսուն և ինը անապատում, և այն կորածի ետևից գնալ, մինչև որ գտնէ նորան։ Եւ երբոր գտնէ, ուրախանալով իր ուսերի վերայ կ'դնէ նորան։ Եւ տուն գալով, բարեկամներին և դրացիներին կ'կանչէ և նորանց կ'ասէ. Ուրախացէք ինձ հետ. վանդի իմ կորած ոչխարը գտայ։ Ասում եմ ձեզ, թէ այսպէս ուրախութիւն կ'լինի երկնքում մէկ ապաշխարող հոգու համար, որ տասնհինգ արդարների համար, որոնց ապաշխարութիւն պետք չէ։ Կամ ո՞վ է այն կինն, որ տասն դրամ ունենայ, և եթէ մէկ դրամ կորցնէ, ճրագ չի՞ վառել և տունն աւելել և ամեն որտեղ, մինչև որ գտնէ։ Եւ երբ որ կ'գտնէ, բարեկամներին և դրացիներին կ'կանչէ և կ'ասէ. Ուրախացէք ինձ հետ. վանդի դրամը գտայ, որ կորցրել էի։ Ասում եմ ձեզ, այսպէս էլ Աստուծոյ հրեշտակների առջև ապաշխարող մէկ մեղաւորի համար կ'լինի ուրախութիւն։

Եւ ասաց. Մի մարդ երկու որդի ունէր. Եւ նորանցից փոքրն ասաց հօրը. Հայր, տուր ինձ ինչ որ բաժին կ'հասնէ ինձ ապրանքներիցդ, և նա էլ ապրանքը բաժանեց նորանց։ Եւ շատ օր չանցած փոքր որդին ամեն բաները ժողովից հետու երկիր գնաց. և այնտեղ իր ստացուածքը վատնեց, անառակ ապրելով։ Եւ երբ որ բոլորը հատցրեց, սաստիկ սով եղաւ այն երկրամէջ և ինքն սկսեց չքաւորել։ Եւ գնաց այն երկրի քաղաքացիներից մէկի մօտ մնաց. և նա նորան ուղարկեց իր դաշտը, որ խոզ արածեցնէ։ Եւ նա ցանկանում էր իր փորն լցնել այն եղջիւրներով, որ խոզերն ուտում էին, բայց ոչ ոք չէր տալիս նորան։ Եւ ինքն իրան գալով ասաց. Քանի վարձկաններ ունի իմ հայրը՝ հացով լցուած. և ես այս տեղ սովամահ կորչում եմ։ Կ'եր կենամ գնամ իմ հօր մօտ, և

նորան ասեմ. Հայր, մեղայ երկնքի դէմ և քո առջև, 19
և այլևս արժանի չեմ քո որդի կոչուելու. ինձ քո վարձկաններից մէկի պէս արա: Եւ վերկացաւ եկաւ իր հօր մօտ: Եւ դեռ որ նա հեռու էր, հայրը տեսաւ նորան և գութը շարժեց. և վազեց՝ նորա վզովն ընկաւ, և համբուրեց նորան: Եւ որդին ասաց նորան. Հայր, մեղանչեցի երկնքի դէմ և քո առջև, և այլևս չեմ արժանի քո որդի կոչուելու: Հայրն էլ ասաց իր ծառաներին. Առաջի պատմուճանը հանեցէք և հագցրէք նորան, և մատանի դրէք նորա ձեռին, և կօշիկներ նորա ոտներին: Եւ մատաղ եզը բերէք մորթեցէք, և ուտենք՝ ուրախ լինինք: Վասնզի այս իմ որդին մեռած էր, և կենդանացաւ. և կորած էր, և գտնուեցաւ. և սկսեցին ուրախանալ: Եւ նորա մեծ որդին յանդուման էր. և երբոր եկաւ տանը մօտեցաւ, երգերի և պար դալու ձայնը լսեց: Եւ ծառաներից մէկին կանչեց իրան մօտ, հարցնում էր թէ այդ ինչ է: Նա էլ ասաց նորան. Թէ եղբայրդ եկել է, և քո հայրը մատաղ եզը մորթեց, որովհետև ողջ և առողջ ընդունեց նորան: Եւ նա բարկացաւ, և չէր ուզում ներս մտնել, բայց հայրը դուրս եկաւ, աղաչում էր նորան: Նա էլ պատասխանեց և ասաց հօրը. Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ, և քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել. բայց ինձ երբէք մի ուլ չտուիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինէի: Իսկ երբոր այդ քո որդին եկաւ, որ քո ապրանքը պոռնիկների հետ կերաւ, մատաղ եզը մորթեցիր դորա համար: Նա էլ ասաց նորան. Որդեակ, դու միշտ ինձ հետ ես, և ամէն ինչ որ իմն է՝ քոնն է: Բայց ուրախ լինել և խնդալ պէտք էր. վասնզի այս քո եղբայրը մեռած էր և կենդանացաւ, կորած էր և գտնուեցաւ:

ԳԼ. ԺԶ

Եւ իր աշակերտներին էլ ասաց. 1
Մի մարդ կար հարուստ, որ մի տնտես ունէր. և նորանից գանգատ եղաւ նորան, իբր թէ նա վատնում է նորա ստացուածքը: Եւ նորան կանչեց և ասաց. Սա 2
ի՞նչ է որ լսում եմ քեզանից. տուր քո տնտեսութեան համարը. վասնզի այլ ևս կարող չես տնտես լինել: Տնտեսն էլ իր մտքում ասաց. Ի՞նչ անեմ, որ իմ տէրը տնտեսութիւնն ինձանից առնում է. էրկեր հերկել չեմ կարող, մուրանալ ամաչում եմ: Գիտեմ ինչ կ'անեմ, որ երբոր 4
տնտեսութիւնից դուրս գամ, մարդիկ ընդունեն ինձ իրանց տները: Եւ իր տիրոջ պարտականներին մէկ մէկ իրան մօտ կանչեց և ասաց առաջինին. Ի՞նչքան ես պարտական իմ տիրոջը: Նա էլ 6
ասաց. Հարիւր մար ձէթ. և նորան ասաց. առ գիրդ, և նստիր շուտով գրիր հիսուն: Յետոյ միւսին ասաց. Դո՞ւ ինչքան ես պարտական. Նա էլ ասաց. Հարիւր քոռ ցորեն. և նորան ասաց. Առ գիրդ և գրիր ութսուն: Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին, որ իմաստութիւնով գործեց. վասնզի այս աշխարհքի որդիքը լուսոյ որդիներից ազգի իմաստուն են իրանց ձեղի մէջ: Եւ ես ասում 9
եմ ձեզ. Անիրաւ մամոնայից բարեկամներ արէք ձեզ համար. որ երբոր պակասուիք, յաւիտենական բնակարանների մէջ ընդունեն ձեզ: Ով ում չնչին բանի մէջ հաւատարիմ է, շատ բանի մէջ էլ հաւատարիմ է. և ով չնչին բանի մէջ անիրաւ է, շատ բանի մէջ էլ անիրաւ է: Արդ թէ որ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտն ո՞վ կ'ասէ ձեր ձեռքը: Եւ եթէ օտար բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերն ո՞վ կ'ասէ ձեզ:

Ոչ մի ծառայ չէ կարող երկու տիրոջ ծառայել. վասնզի կամ մէկին կ'ատէ և միւսին կ'սիրէ. կամ մէկին կ'պատուէ և միւսին

կ'արհամարհէ, կարող չէք Աստուծոյ ծառայել և մամոնային։
14 Այս բոլոր բաները լսում էին փարիսեցիները, որ արծաթասէր էին, և ծիծաղում էին նորա վրայ։ 15 Եւ նորանց ասաց. Դուք էք, որ մարդկանց առջև ձեր անձերը արդարացնում էք, բայց Աստուած գիտէ ձեր սրտերը. վասն զի մարդկանց առջև բարձրը պիղծ է Աստուծոյ առջև։ 16 Օրէնքը և մարգարէքը մինչև Յովհաննէան են. նորանից յետոյ Աստուծոյ արքայութիւնն է աւետարանվում, և ամեն մարդ ուժով է մտնում նորա մէջ։ 17 Եւ աւելի հեշտ է որ երկինքն և երկիրս անցնեն, քան թէ օրէնքի մէկ պզտիկ նշանագիրը վայր ընկնէ։ 18 Ամեն ով որ արձակում է իր կինը և ուրիշն առնում, շնութիւն է գործում։
19 Եւ մի մարդ կար հարուստ, և շատ ազնիւ ծիրանի և բեհեզ էր հագնում. և ամեն օր զուարճութիւն էր անում փառաւոր։ 20 Մի աղքատ մարդ էլ կար, անունը Ղազարոս. որ նորա դրան մօտ գցուած էր խոցերով լիքն. 21 եւ ցանկանում էր իրան կշտացնել այն փշրանքներից, որ հարուստի սեղանից ընկնում էին. այլ և շներն էլ գալիս էին և նորա խոցերը լիզում էին։ 22 Եւ եղաւ որ աղքատը մեռաւ, և հրեշտակները տարան նորան Աբրահամի գոգը. հարուստն էլ մեռաւ և թաղուեցաւ։ 23 Եւ դժոխքում՝ մինչ տանջանքի մէջ էր գտնվում, իր աչքերը բարձրացրից, Աբրահամին տեսաւ հեռուանց, և Ղազարոսին էլ նորա գոգումը. 24 եւ նա աղաղակեց և ասաց. Հայր Աբրահամ, ինձ ողորմիր, և Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թրջէ ջրով, և իմ լեզուն հովացնէ. վասնզի այս կրակի բոցի մէջ տանջվում եմ։ 25 Աբրահամն էլ ասաց. Որդեակ, յիշիր, որ դու ընդունեցիր քո բարիքը քո կեանքում, և նմանապէս էլ Ղազարոսը չարչարանքները. և հիմա սա այս տեղ մխիթարվում է, իսկ դու տանջվում ես։ 26 Եւ ի վերայ այսր ամենայնի մեր և ձեր մէջ մեծ անդունդ է հաստատուած, որ այս տեղից ձեզ մօտ անցնել ուզողները չկարողանան, և ոչ էլ այդ տեղից մեզ մօտ անցնեն։ 27 Եւ ասաց. Ուրեմն աղաչում եմ քեզ, հայր, որ դորան ուղարկես իմ հօր տունը։ 28 Վասն զի ես հինգ եղբայր ունիմ. որ նորանց վկայութիւն տայ, որ նորանք էլ չգան այս տանջանքի տեղը։ 29 Աբրահամն ասաց նորան, Նորանք Մովսէսին և մարգարէներին ունին, թող նորանց լսեն։ 30 Նա էլ ասաց. Ոչ, հայր Աբրահամ, այլ եթէ մեռելներից մէկը նորանց մօտ գնայ, կ'ապաշխարեն։ 31 Եւ նորան ասաց. եթէ Մովսէսին և մարգարէներին ականջ չեն դնում, չեն էլ համոզուիլ, եթէ մեռելներից մէկը յարութիւն առնէ։

ԳԼ. ԺԷ

1 Եւ աշակերտներին ասաց. Անկարելի է, որ գայթակղութիւններ չգան. բայց վայ նորան որի ձեռովը կ'գան։ 2 Աւելի լաւ է նորան, որ նորա վզիցը մի իլոր ջաղացի քար կախուէր և ծովը գցուէր, քան թէ այս փոքրներից մէկին գայթակղեցնէ։
3 Զգոյշ կացէք անձերից։ Եթէ քո եղբայրը մեղանչէ քեզ դէմ, յանդիմանիր նորան. և եթէ ապաշխարէ, ներիր նորան։ 4 Եւ եթէ օրն եօթն անգամ քեզ դէմ մեղանչէ և եօթն անգամ քեզ մօտ դառնայ և ասէ Ապաշխարում եմ, ներիր նորան։
5 Եւ առաքեալներն ասացին Տիրոջն. Մեր հաւատքն աւելցրու։ 6 Եւ Տէրն ասաց. Եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք, և այս թզենուն կ'ասէիք. Պոկուիր և ծովի մէջ տնկուիր, և կ'հնազանդուէր ձեզ։
7 Բայց ձեզանից ո՞վ է դա, որ մի հողագործ կամ հովիւ ծառայ ունենայ, որ երբոր յանդիմբը գայ դաշտից մտնէ, շուտով ասէ նորան, Եկ և նստիր նախիր։ 8 Այլ չի՞ ասիլ

նորան, Ե՛ պատրաստիր ինչ որ լ-
բիկուն պիտի ուտեմ, և գո-
տիդ կապիր ինձ ծառայիր, մին-
չև որ ուտեմ և խմեմ, և յետոյ
9 դու էլ կ'ուտես և կ'խմես։ Մի՞-
թէ այն ծառայիցը շնորհակալ
կ'լինի, որ այն բոլոր իրան հրա-
մայուածներն արաւ. չ'կարծեմ։
10 Այնպէս էլ դուք, երբոր բոլոր
ձեզ հրամայուած բաներն անէք,
ասացէք, Թէ Մենք անպիտան
ծառաներ ենք. վասն զի այն ենք
արել, ինչ որ պարտական էինք
անելու։
11 Եւ եղաւ՝ երբոր նա երուսա-
ղէմ էր գնում, ինքն Սամարիայի
և Գալիլեայի միջովն էր անցնում։
12 Եւ նա մի գիւղ մտնելիս, տասն
բորոտ մարդիկ պատահեցան նո-
րան, որ հեռուանց կանգնեցին,
13 Եւ իրանց ձայնը բարձրացրին և
ասացին. Յիսուս՝ Վարդապետ,
ողորմիր մեզ։ Եւ երբոր տեսաւ
ասաց նորանց. Գնացէք ձեր ան-
ձերը քահանաներին ցոյց տուէք.
և եղաւ, որ նորանք գնալիս՝ սըր-
15 բուեցան։ Եւ նորանցից մէկն,
երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ,
ետ դարձաւ բարձր ձայնով փա-
16 ռաւորում էր Աստուծոյն։ Եւ իր
երեսի վերայ ընկաւ նորա ոտների
առջև, և գոհանում էր նորանից.
17 և ինքն Սամարացի էր։ Յիսուան
էլ պատասխանեց և ասաց. Չէ՞
որ տասն էլ սրբուեցան. տասը
18 այն ինն ո՞ւր են։ Չ'գտնուեցան
ետ դառնողները, որ Աստուծոյն
փառք տան, բացի այս այլազգին։
19 Եւ ասաց նորան. Վեր կաց՝ գնա.
քո հաւատքն ապրեցրեց քեզ։
20 Երբոր փարիսեցիներից հար-
ցուեցաւ, Թէ Աստուծոյ արքա-
յութիւնն ե՞րբ պիտի գայ, պա-
տասխանեց նորանց և ասաց. Աս-
տուծոյ արքայութիւնը դրսի նշա-
21 նով չի գալ։ Ոչ էլ կ'ասեն, Ե՛ե
Ահա այս տեղ է, կամ՝ ահա այն
տեղ է. քանզի ահա Աստուծոյ ար-
քայութիւնը ձեզնից ներսումն է։
22 Աշակերտներին էլ ասաց. Օրեր
կ'գան, որ դուք կ'ցանկանաք Որ-
դոյ մարդոյ օրերից մէկը տեսանել,
23 և չէք տեսնիլ։ Եւ ձեզ կ'ասեն՝

Ահա այս տեղ է, կամ՝ ահա այն
տեղ է, չ'գնաք և հետիցը չ'հե-
տևիք։ Վասնզի ինչպէս կայծակն 24
որ փայլում երկնքի տակիցը լոյս
է տալիս մինչև երկնքի դո՜ւս տա-
կը, այնպէս էլ կ'լինի Որդին մարդ-
դոյ իր օրուանը։ Բայց առաջ 25
պէտք է՝ նա շատ չարչարուի և
անարգուի այս ազգիցը։ Եւ ինչ- 26
պէս եղաւ Նոյի օրերուանն, այն-
պէս էլ կ'լինի Որդոյ մարդոյ օրե-
րուանը։ Ուտում էին՝ խմում էին՝ 27
կին էին առնում՝ և մարդու էին
գնում, մինչև այն օրն՝ որ Նոյ
մտաւ տապանը. և ջրհեղեղն ե-
կաւ և ամենքին կորցրեց։ Նմա- 28
նապէս էլ ինչպէս Ղովտի օրե-
րուանն եղաւ. ուտում էին, խմում
էին, առնում էին՝ ծախում էին,
տնկում էին՝ շինում էին։ Եւ այն 29
օրն որ Ղովտը Սոդոմիցը դուրս
եկաւ, կրակ և ծծումբ տեղից
երկնքիցը և ամենին կորցրեց։ Նոյն 30
կերպովն էլ կ'լինի այն օրերուանը,
որ Որդին մարդոյ կ'յայտնուի։
Այն օրերուանն ով որ կարի վե- 31
րայ լինի և իր բաները տան մէջ,
թող չ'իջնէ նորանց առնելու. և
յանպատճառ լինողն էլ այնպէս թող
ետ չ'դառնայ։ Յիշեցէք Ղովտի 32
կնոջը։ Ով որ ուզէ իր անձն ապ- 33
րեցնել, կ'կորցնէ նորան. և ով որ
կորցնէ նորան, կ'ապրեցնէ նորան։
Ասում եմ ձեզ. Նոյն գիշերուանն 34
երկու հոգի մէկ մահճի վրէ կ'լի-
նին, մէկը կ'առնուի և միւսը
կ'թողուի։ Երկու հոգի միասին 35
աղալու վերայ կ'լինին, մէկը կ'առ-
նուի և միւսը կ'թողուի. և երկու
հոգի յանպատճառ կ'լինին, մէկը
կ'առնուի և միւսը կ'թողուի։ Եւ 36
պատասխանեցին և նորան ասա-
ցին. Տէր, ո՞ր տեղ։ Նա էլ ա- 37
սաց նորանց. Որ տեղ մարմինն է,
արծիւներն էլ այնտեղ կ'հաւաք-
ուին։

ԳԼ. ԺԸ

Մի առակ էլ ասաց նորանց՝ նո- 1
րա վերայ թէ պէտք է ամեն ժա-
մանակ աղօթք անել և չ'ձանձ-
րանալ։ Եւ ասաց. Մի դատա- 2

ւոր կար մի քաղաքում, որ Աստուածանից չէր վախենում, և մարդից չէր ամաչում։ Եւ մի որբևայրի էլ կար այն քաղաքում, և նորա մօտ էր գալիս և ասում, Իրաւունք արա ինձ իմ ոսոխիցը։ Եւ նա մի ժամանակ չկամեցաւ. նորանից յետոյ իր մտքումն ասաց թէ և Աստուածանից չեմ վախենում, և մարդկանցից չեմ ամաչում։ Սակայն որովհետև այս այրին յոգնեցնում է ինձ, իրաւունք անեմ նորան, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

Ասաց և առակ ինչ նորանց, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ։ Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում։ Բայց Աստուած մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէ և նրանց վերայ երկայնամիտ էլ լինի։ Ասում եմ ձեզ, թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար։ Սակայն Որդին մարդոյ գալիս արդեօք հաւատք կ'գտնէ երկրի վերայ։

կումը, և այն գալու աշխարհքումը յաւիտենական կեանքը:
31 Եւ այն տասներկուսին մնաս ասաւ և ասաց նոցանից. Ահա վեր ենք ելնում Երուսաղէմ, և կ'կատարուին մարգարէների ձեռովն Որդոյ մարդոյ համար բոլոր գրուածները:
32 Վասնզի հեթանոսներին կ'մատնուի, և ծաղր կ'լինի, կ'հայհոյուի, և նորա վերայ
33 կ'թքուի: Եւ կ'ծեծեն կ'սպանեն նորան. և երրորդ օրը յարութիւն կ'առնէ:
34 Եւ նորանք ոչ բանից ոչ ինչ չիմացան, և խօսքը ծածկուած էր նորանից, և ասած բաները չէին իմանում:
35 Եւ եղաւ, որ նա երիքովին մօտենալիս, մի կոյր ճանապարհի
36 վերայ նստած մուրանում էր: Եւ երբոր ժողովրդի անցնելը լսեց,
37 հարցնում էր՝ թէ դա ինչ է: Եւ պատմեցին նորան, թէ Յիսուս
38 Նազովրեցին է անցնում: Եւ նա աղաղակեց և ասաց. Յիսուս՝ որդի Դաւթի, ինձ ողորմիր:
39 Եւ նորանք՝ որ առջևից գնում էին, յանդիմանում էին նորան, որ լռէ. իսկ նա էլ աւելի էր աղաղակում. Որդի Դաւթի, ինձ
40 ողորմիր: Յիսուսն էլ կանգնեց և հրամայեց, որ նորան իրան մօտ բերեն. և երբոր նա մօտ եկաւ,
41 հարցրեց նորան և ասաց. Ինչ ես ուզում, որ անեմ քեզ. և նա
42 ասաց. Տէր, որ տեսնեմ: Եւ Յիսուսն էլ ասաց նորան. Տես. քո
43 հաւատքը ապրեցրեց քեզ: Եւ նա նոյն տեղումն էր, և նորա ետևից գնում էր՝ Աստուծոյն փառաւորելով. և բոլոր ժողովուրդը որ տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս Աստուծոյն:

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտաւ Երիքովի միջովն անց-
2 նում էր: Եւ ահա մի մարդ՝ անունը Զաքէոս կոչուած, որ նա մեքսապետ էր, և ինքն հարուստ
3 էր: Եւ ուզում էր Յիսուսին տեսնել թէ ով է, բայց բազմութեան պատճառով չէր կարողանում, քանզի հասակով կարճ
4 էր: Եւ առաջ վազեց՝ վեր ելաւ մի ժանատենի, որ տեսնէ նորան. վասնզի այնտեղովն պիտի անցնէր: Եւ երբոր այն տեղն եկաւ, Յիսուսը վեր նայեց և նորան ասաց. Զաքէ, շուտ արա իջիր. վասնզի պետք է ինձ այսօր քո տանը կենալ:
6 Նա շտապելով իջաւ և ուրախութիւնով ընդունեց նորան:
7 Եւ բոլոր տեսնողները տրտնջում էին և ասում՝ թէ Մեղաւոր մարդու մօտ մտաւ հանդիստ առնելու:
8 Զաքէոսն էլ կանգնեց և Տիրոջն ասաց. Տէր, ահա իմ ապրանքների կէսն աղքատներին կ'տամ. և եթէ մէկին զրկել եմ՝ չորեքպատիկ կ'վճարեմ:
9 Յիսուսն էլ նորան ասաց. Թէ Այսօր փրկութիւն եղաւ այս տանը. վասնզի սա էլ Աբրահամի որդի է:
10 Վասնզի Որդին մարդոյ եկաւ, որ որոնէ և ապրեցնէ կորածին:
11 Եւ դեռ որ նորանք այս բաները լսում էին, մի առակ աւելցրեց և ասաց, որովհետև Երուսաղէմին մօտենում էր, և նորանք կարծում էին, թէ Աստուծոյ արքայութիւնը իսկոյն յայտնուելու է:
12 Ապա ասաց. Մի ազնուական գնաց հեռու երկիր, որ թագաւորութիւն առնէ իրան համար և ետ դառնայ:
13 Եւ իր տասն ծառաներին կանչեց, տասն մնաս տուաւ նորանց, և ասաց նորանց. Բանեցրէք մինչև որ գամ:
14 Բայց նորա քաղաքացիները ատում էին նորան. և նորա հետևից պատգամաւորներ ուղարկեցին և ասացին. Չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վերայ:
15 Եւ եղաւ՝ որ նա թագաւորութիւնն առած ետ դարձաւ. և ասաց որ կանչեն այն ծառաներին, որոնց տուել էր արծաթը, որ գիտնայ, թէ ով շահուեցաւ:
16 Եւ առաջինն եկաւ և ասաց. Տէր, քո մնաը շահեց տասն մնաս:
17 Եւ նորան ասաց. Լաւ, բարի ծառայ, որովհետև քիչումը հաւատարիմ եղար, տասն քաղաքի վերայ իշխանութիւն ունեցիր:
18 Եւ երկրորդն եկաւ և ասաց. Տէր քո մնաը հինգ մնաս

19 շահեց։ Նորան էլ ասաց. Դու
էլ հինգ քաղաքի վերայ եղիր։
20 Եւ ուրիշն էլ եկաւ և ասաց.
Տէր, ահա քո մնասը՝ որ վարշա-
մակի մէջ պատած պահած էի։
21 Վասնզի վախենում էի քեզանից.
որովհետև դու պինդ մարդ ես.
վեր ես առնում ինչ որ չես դրել,
և հնձում ես ինչ որ չես սերմել.
22 Եւ ասաց նորան. Քո բերանիցը
քեզ դատում եմ, չար ծառայ.
գիտէիր որ ես պինդ մարդ եմ,
որ վեր եմ առնում ինչ որ չեմ
դրել, և հնձում եմ ինչ որ չեմ
23 սերմել։ Էլ ինչո՞ւ իմ արծաթը
սեղանաւորներին չ'տուիր, որ ես
գայի շահով ետ առնէի նորան։
24 Եւ այն տեղ կանգնողներին ա-
սաց. Առէք գրանից մնասը, և
տուէք տասն մնաս ունեցողին։
25 Եւ նորան ասացին. Տէր, տասն
26 մնաս ունի։ Քանզի ասում եմ ձեզ,
թէ ամեն ունեցողին կ'տրուի. և
չունեցողիցը նա էլ որ ունի, վեր
27 կ'առնուի։ Իսկ այն իմ թշնամի-
ներին, որ չէին ուզում, որ ես
նորանց վերայ թագաւորեմ, այս
տեղ բերէք և սպանեցէք իմ ա-
28 ջևւ։ Եւ երբոր այս ասաց, առաջ
գնաց, որ վեր ելլէ Երուսաղէմ։
29 Եւ եղաւ երբոր Բեթփագէին
և Բեթանիային մօտեցաւ, այն
լեռան մօտ՝ որ Զիթենեաց լե-
ռ կոչվում, իր աշակերտներից եր-
30 կուսին ուղարկեց և ասաց. Գնա-
ցէք այդ դիմացի գիւղը, և երբ
որ մէջը մտնէք մի կապած ու-
նակ կ'գտնէք, որի վերայ երբէք
ոչ մի մարդ նստած չէ. նորան
31 արձակեցէք բերէք։ Եւ եթէ մէ-
կը հարցնէ ձեզ՝ ընչո՞ւ էք ար-
ձակում, նորան այսպէս ասացէք
32 թէ Տիրոջը պէտք է սա։ Ուղար-
կուածներն էլ երբոր գնացին,
այնպէս գտան ինչպէս նորանց ա-
33 սաց։ Եւ նորանք ուսանողին ար-
ձակելիս՝ նորա տէրերն ասացին
նորանց. Ինչո՞ւ էք արձակում
34 այդ ուսանողը։ Նորանք էլ ա-
35 սացին. Տիրոջը պէտք է սա։ Եւ
նորան բերին Յիսուսի մօտ. և
իրանց հանդերձները ուսանողի
վերայ դնելով, Յիսուսին հե-
ծեցրին։ Եւ նորա գնալու ժամա- 36
նակին իրանց հանդերձները փռ-
ում էին ճանապարհի վերայ։
Եւ երբոր նա արդէն մօտեցաւ 37
Զիթենեաց լեռան զառիվայրին,
աշակերտների բոլոր բազմութիւ-
նն ուրախութիւնով սկսեց օրհ-
նել ասել Աստուծոյն բարձր ձայ-
նով այն բոլոր զօրութիւնների
համար, որ տեսել էին։ Եւ ա- 38
սում էին. Օրհնեալ է Տիրոջը ա-
նունովն եկող թագաւորը. խա-
ղաղութիւն երկնքումը և
փառք ի բարձունս։ Եւ փարի- 39
սեցիներից ոմանք ժողովրդի մի-
ջիցը նորան ասացին. Վարդա-
պետ, յանդիմանիր աշակերտնե-
րիդ։ Եւ պատասխանեց և ասաց՝ 40
Ասում եմ ձեզ՝ որ եթէ սորանք
լռեն, քարերն են աղաղակելու։
Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ 41
քաղաքին, լացաւ նորա վերայ և
ասաց. Եթէ դու էլ իմանայիր՝ 42
գոնեա քո այս օրուան օրը քո
խաղաղութեան մասին. բայց հի-
մա ծածկուեցաւ քո աչքերիցը։
Վասնզի օրեր կ'գան քեզ վերայ, 43
և քո թշնամիները չորս կողմիդ
պատնէշ կ'պատեն, և կ'պաշա-
րեն քեզ և ամեն կողմից քեզ
կ'նեղացնեն. Եւ հիմնայատակ 44
կ'անեն քեզ և քո որդիքն էլ քո
միջումը. և չեն թողել քո մի-
ջումը քար քարի վերայ. փոխա-
նակ որ՝ չ'ճանաչեցիր քեզ այցե-
լելու ժամանակը։

Եւ տաճարը մտաւ սկսեց դուրս 45
հանել նորանում ծախողներին և
առնողներին. Եւ նորանց ասաց. 46
Գրուած է՝ Ըե իմ տունն աղօթ-
քի տուն է, և դուք նորան ա-
ւազակների այր էք արել։

Եւ ամեն օր սովորեցնում էր 47
նորանց տաճարումը. բայց քա-
հանայապետները և դպիրները ու-
զում էին կորցնել նորան, ժո-
ղովրդի պետերն էլ։ Եւ 48
չէին գտնում, թէ ինչ անեն.
քանզի բոլոր ժողովուրդը նորանից
կախուած էր լսելով։

ԳԼ. Ի

Եւ եղաւ որ այն օրերի մէկին 1

նա տաճարումը ժողովրդին սովորեցնելիս և աւետարանելիս, քահանայապետները և դպիրները ձերբին հետ վերայ հասան։ Եւ ասացին նորան. Ասա մեզ, ի՞նչ իշխանութիւնով ես անում այդ բաները, կամ ո՞վ է այդ իշխանութիւնը քեզ տուողը։ Եւ պատասխանեց և ասաց նորանց. Ես էլ ձեզ մէկ բան հարցնեմ, և ասացէք ինձ։ Յովհաննէսի մկրտութիւնը երկնքի՞ցն էր, թէ մարդկանցից։ Եւ նորանք իրանց միջումը միտք արին և ասացին. Եթէ ասենք, երկնքիցը. կ'ասէ. Ապա ինչո՞ւ չ'հաւատացիք նորան. և եթէ ասենք, Մարդկանցից, բոլոր ժողովուրդը կ'քարկոծէ մեզ. վասնզի համոզուած են թէ Յովհաննէսը մարգարէ է։ Եւ պատասխանեցին չ'գիտել, թէ որ տեղից է։ Եւ Յիսուս էլ նորանց ասաց. Ես էլ ձեզ չեմ ասիլ թէ ինչ իշխանութիւնով եմ անում այս բաները։

Եւ սկսեց այս առակն ասել ժողովրդին. Մի մարդ այգի տնկեց, և մշակների տուաւ նորան, և ինքն օտարութիւն գնաց շատ ժամանակով։ Եւ ժամանակին մի ծառայ ուղարկեց մշակների մօտ, որ այգու պտղից իրան տան. բայց մշակները ծեծեցին նորան և դատարկ եաս ուղարկեցին։ Եւ նորա վերայ մի ուրիշ ծառայ էլ ուղարկեց. և նորանք նորան էլ ծեծեցին, անպատիւ արին և դատարկ եաս ուղարկեցին։ Եւ նորա վերայ մի երրորդին էլ ուղարկեց. նորանք նորան էլ վիրաւորեցին դուրս հանեցին։ Եւ այգու տէրն ասաց. Ի՞նչ անեմ. իմ սիրելի որդին ուղարկեմ. գուցէ նորան տեսնելով ամաչեն։ Բայց մշակները երբոր նորան տեսան՝ իրար հետ խորհուրդ արին և ասացին. Սա է ժառանգը. եկէք սպանենք սորան. որ ժառանգութիւնը մերը լինի։ Եւ այգուցը դուրս հանեցին նորան և սպանեցին. արդ այգու տէրն ի՞նչ կ'անէ նորանց։ Կ'գայ և՝ այն մշակներին կ'կորցնէ, և այգին ուրիշների կ'տայ։ Լսողներն էլ ասացին. Քաւ լիցի։ Իսկ նա մեկիկ տուաւ նորանց և ասաց. Ապա ի՞նչ է այն գրուածը, որ Այն քարն՝ որ շինողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ եղաւ։ Ամեն այս քարի վերայ ընկողը կ'փշրուի, և ում վերայ որ նա ընկնի, կ'ջարդէ նորան։ Եւ քահանայապետներն և դպիրները նոյն ժամուին ուզում էին ձեռք ձգել նորա վերայ, բայց ժողովրդից վախեցան. վասնզի իմացան, որ իրանց համար ասաց այն առակը։

Եւ դարանամուտ լինելով խաբեայ մարդիկ ուղարկեցին, որ կեղծաւորութիւնով իրանց անձերն արդար էին ցոյց տալիս, որ խօսքով բռնեն նորան՝ տէրութեան և կուսակալի իշխանութեանը նորան մատնելու համար։ Եւ նորան հարցրին և ասացին. Վարդապետ, գիտենք որ ուղիղ ես խօսում և սովորեցնում, և ընդունելութիւն չես անում. այլ ճշմարտութիւնով սովորեցնում ես Աստուծոյ ճանապարհը։ Արժա՞ն է մեզ՝ Կայսրին հարկ տալ թէ ոչ։ Նորանց խորամանկութիւնը հասկանալով, ասաց նորանց. Ինչո՞ւ էք փորձում ինձ. Ցոյց տուէք ինձ մի դահեկան. Ո՞ւմ պատկերն և գիրն ունի։ Պատասխանեցին և ասացին. Կայսեր։ Եւ նա ասաց նորանց։ Ուրեմն կայսրինը կայսրին տուէք, և Աստուծոյնը Աստուծոյն։ Եւ չ'կարացին խօսքով բռնել նորան ժողովրդի առջևը. և նորա պատասխանի վերայ զարմանալով լռեցին։

Սադուկեցիներից, որ հակառակում են թէ յարութիւն չ'կայ, ոմանք մօտ եկան և հարցրին նորան, և ասացին. Վարդապետ, Մովսէս գրեց մեզ, եթէ մէկի եղբայրը մեռնի, որ կին առնէնայ, և ինքն անորդի մեռնի, որ նորա եղբայրն այն կինն առնէ և իր եղբօր համար զաւակ յարուցանէ։ Հիմա եօթն եղբարք կային, և առաջինն կին առաւ և առանց զաւակի մեռաւ։ Եւ երկրորդն ա-

առաւ այն կինը, և նա էլ մեռաւ
31 առանց զաւակի։ Երրորդն էլ առ
աւ նորան. այսպէս էհնց այն
եօթն էլ, և որդիք չ'թողին, և
32 մեռան։ Եւ ամենից յետոյ այն
33 կինն էլ մեռաւ։ Արդ յարու-
թեան ժամանակին նորանցից ո՞-
րին պիտի լինի կին. վասնզի այն
34 եօթն էլ կին առին նորան։ Եւ
Յիսուս պատասխանեց և ասաց
նորանց. Այս աշխարհքի որդիքը
կին են առնում և մարդու են
35 գնում։ Բայց նորանք որ արժանի
լինին այն աշխարհքին հասնելու
և մեռելներից յարութիւն առ-
նելու, ոչ կին կ'առնեն և ոչ մար-
36 դու կ'գնան։ Եւ ոչ իսկ կարող
են մեռնել, վասնզի հրեշտակնե-
րի հաւասար են և Աստուծոյ որ-
դիք, յարութեան որդիք լինե-
37 լով։ Բայց թէ մեռելները յարու-
թիւն կ'առնեն, Մովսէս էլ մար-
գարէացաւ մօտ թմբենու մօտ, ինչպէս
Տէրը Աբրահամայ Աստուած
Իսահակայ և Աստուած Յակոբայ։
38 Իսկ Աստուած մեռելներուն չէ, այլ
կենդանիների. վասնզի ամենքը
39 կենդանի են նորան։ Դպիրներից
ոմանք պատասխանեցին և ասա-
ցին. Վարդապետ, լաւ ասա-
40 ցիր. Եւ այլ ևս չէին համարձա-
կում նորանից ոչ մի բան հար-
ցնելու։

41 Եւ նորանց ասաց. Ինչպէս են
ասում Քրիստոսի համար թէ
42 Դաւթի որդի է։ Եւ Դաւիթ ինքն
Սաղմոսաց գրքումն ասում է.
Տէրն իմ Տէրոջն ասաց՝ Իմ աջ
43 կողմն նստիր, Մինչև որ թշնա-
միներդ ոտքդ պատուանդան
44 դնեմ։ Արդ եթէ Դաւիթ Տէր է
կոչում նորան, ապա ինչպէս է
նորա որդի։

45 Եւ երբոր բոլոր ժողովուրդը
լսում էր, ասաց իր աշակերտ-
46 ներին. Զգոյշ կացէք դպիրներից,
որ փառաւոր պատմուճաններով
կամենում են մանդալ և սիրում
են հրապարակներումը բարև ա-
նելը, և ժողովարանների մէջ ա-
ռաջին աթոռները, և ընթրիքնե-
47 րումը վերևի տեղերը։ Որ որկա-

րինների տները ուտում են, և պատ-
ճառանքով երկար ազօթք են ա-
նում. նորանք աւելի պատուա-
ւութիւն կ'ընդունին։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հա-
րուստներին, որ իրանց տուրքը
2 գանձանակին էին գցում։ Մի որ-
և այլի աղքատ կին էլ տեսաւ,
որ երկու լումայ գցեց այնտեղ։
3 Եւ ասաց. Ճշմարիտ ասում եմ
ձեզ, թէ այս աղքատ որևայ-
4 րին ամենից աւելի գցեց։ Վասն
զի նորանք ամենքն իրանց ավել-
ցածներիցը գցեցին Աստուծոյ ըն-
ծաների մէջ, իսկ սա իր կարօ-
ւութիւնից իր բոլոր ապրուստն
որ ունէր՝ գցեց։

5 Եւ երբոր ոմանք ասում էին
տաճարի համար, թէ գեղեցիկ
քարերով և աշտարակներով զար-
6 դարուած է, ասաց. Այդ բոլորն
որ տեսնում էք, օրեր կ'գան, որ
այդ տեղ քար քարի վերայ չի
7 թողուիլ որ չ'քանդուի։ Եւ հար-
ցրին նորան և ասացին. Վարդա-
պետ, ե՞րբ կ'լինին արդեօք և ի՞նչ
8 է նշանը երբոր այդ լինի։ Նա էլ
ասաց. Զգոյշ կացէք մի խար-
ւուիք. վասնզի շատերը կ'գան իմ
անունովը և կասեն, թէ Ես եմ.
և ժամանակը մօտեցաւ. արդ նո-
9 րանց ետևից մի գնաք։ Բայց երբ
որ պատերազմներ և խռովութիւն-
ներ կ'լսէք, մի զարհուրիք. քան-
զի պէտք է, որ առաջ նա լինի,
10 բայց դեռ շուտով վերջը չէ։ Այն
ժամանակ նորանց ասաց. Ազգ
ազգի վերայ վեր կ'կենայ և թա-
գաւորութիւն թագաւորութեան
վերայ։ Եւ մեծամեծ դեղաշարժ-
11 ներ և տեղ տեղ սովեր և ա-
հեկ մահեր կ'լինին. և երկնքից
սոսկալի բաներ և մեծամեծ նշան-
ներ կ'լինին։ Բայց այս բոլոր բա-
12 ներից առաջ իրանց ձեռները ձեզ
վերայ կ'ձգեն և կ'հալածեն. Ե-
ժողովարանների և բանտերի մէջ
կ'մատնեն, և կ'տանեն թագա-
ւորների և կուսակալների առաջ
իմ անուան համար։ Եւ սա կ'լինի
13

14 ձեզ վկայութեան համար։ Արդ
ձեր սրտի մէջ դրէք, որ առա-
ջուց հոգս չ'անէք պատասխանե-
15 լու համար։ Վասնզի ես բերան
և իմաստութիւն կ'տամ ձեզ.
որին չեն կարողանալ հակառակ
խօսիլ և ոչ ընդդիմանալ ձեր
16 բոլոր հակառակորդները։ Եւ
կ'մատնուիք ծնողներից և եղբայր-
ներից և ազգականներից և բա-
րեկամներից էլ և ձեզանից կ'սպա-
17 նեն։ Եւ բոլորին ատելի կ'լինիք
18 իմ անուան համար։ Եւ ձեր գլխ-
19 խից մազ մազ չի կորչիլ։ Եւ ձեր
համբերութեամբը կ'շահէք ձեր
հոգիները։

20 Բայց երբոր կ'տեսնէք Երուսա-
ղէմը զօրքերով շրջապատուած,
այն ժամանակ գիտացէք, թէ նո-
21 րա աւերումը մօտ է։ Այն ժա-
մանակ նորանք, որ Հրէաստա-
նումն են, թող լեռները փախ-
չեն, և նորանք, որ նորա միջու-
մըն են, թող հեռանան. և նո-
րանք, որ նորա դաշտերումն
են, թող չ'մտնեն նորա մէջ։
22 Վասնզի այն օրերը վրէժխնդրու-
թեան օրեր են, որ ամեն գրուած-
23 ները կատարուին։ Բայց այն օ-
րերումը վա՛յ յղիներին և ծիծ
տուողներին. քանզի մեծ նեղու-
թիւն կ'լինի երկրիս վերայ, և
բարկութիւն այդ ժողովրդի վե-
24 րայ։ Եւ սրի բերանով կ'ընկնին,
և բոլոր հեթանոսների մէջ գերի
կ'տարուին. և Երուսաղէմը հե-
թանոսներից տնտակոխ կ'լինի,
մինչև որ հեթանոսների ժամա-
25 նակները կատարուին։ Եւ նշան-
ներ կ'լինին արեգակումը և լու-
սնումը և աստղերումը, և երկրի
վերայ հեթանոսների խռովու-
թեան տագնապով, ծովը կ'գո-
26 չէ և կ'ծփան ալիքները։ Որովհե-
տև մարդկանց սրտերը կ'նուա-
ղին վախից և այն բաների ապա-
սկուցն, որ բոլոր աշխարհքի վե-
րայ պիտի գան. վասնզի երկնքի
27 զօրութիւնները կ'շարժուին։ Եւ
այն ժամանակ կ'տեսնեն Որդին
մարդոյ ամպերի վերայ եկած զո-
28 րութեամբ և մեծ փառքով։ Եւ
երբոր այս բաները կ'կսկն լինիլ,
վեր հանեցէք և բարձրացրէք ձեր
գլխները. վասնզի ձեր փրկութիւ-
նը մօտ է։

29 Եւ նորանց մի առակ ասաց. Տեսէք թզենին և բոլոր ծառերը։
30 Երբոր արդէն բողբոջած են, տես-
նելով ինքներդ իմանում էք, թէ
31 ամառը մօտ է։ Այնպէս էլ դուք, երբոր այս բոլոր բաները եղած
տեսնէք, գիտացէք, որ Աստուծոյ
32 արքայութիւնը մօտ է։ Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ այս ազգը
չի անցնիլ, մինչև այս բոլորը լի-
33 նի։ Երկինքն և երկիրս կ'անցնեն,
բայց իմ խօսքերը չեն անցնիլ։
34 Զգոյշ կացէք անձներիդ, մի գու-
ցէ ձեր սրտերն ծանրանան շատա-
կերութեամբ և արբեցութեամբ
և ապրուստի հոգսերով, և այն
օրը յանկարծ հասնէ ձեզ վերայ.
35 վասնզի որոգայթի պէս կ'հասնէ
այն ամենքի վերայ, որ բոլոր երկ-
րի երեսի վերայ բնակած են։ Ո-
36 բեմն արթուն կացէք, և ամեն
ժամանակ աղօթք արէք, որ ար-
ժանի լինիք ազատուիլ այն բո-
լոր բաներից, որ պիտի լինին,
և կանգնիլ Որդոյ մարդոյ առջև։

37 Եւ ցերեկները տաճարումը ա-
վետեցնում էր և գիշերները գնա-
էր գալիս և կենում այն լեռա-
նումն, որ Ձիթենեաց լեռ էր
38 կոչւում։ Եւ բոլոր ժողովուրդն
առաւօտանց կանուխ գնում էր
տաճարն նորա մօտ նորանից լսե-
լու։

ԳԼ. ԻԲ

1 Եւ բաղարջակերաց տօնը մօտե-
2 ցաւ, որ զատիկ է կոչւում։ Եւ
քահանայապետներն և գրիչները
որոնում էին, թէ ինչպէս սպա-
նեն նորան. վասնզի ժողովրդից
վախենում էին։

3 Սատանան էլ մտաւ Իսկարիո-
տացի տասնմէկ Յուդայի մէջ, որ
4 տասներկուսի թուից էր։ Եւ գնաց
քահանայապետների և իշխաննե-
րի հետ խօսք կապեց, թէ նորան
5 ինչպէս մատնէ նորանց։ Եւ նո-
րանք ուրախացան և խոստացան
6 արծաթ տալ նորան։ Եւ նա խոսք

տուաւ և յարմար ժամանակ էր
որոնում՝ որ նորան մատնէ նո-
րանց առանց ամբոխի։
7 Եւ բաղարջակերաց օրն եկաւ,
որում պէտք էր զատիկը մորթել։
8 Եւ Պետրոսին և Յովհաննէսին ու-
ղարկեց և ասաց. Գնացէք զատիկը
պատրաստեցէք մեզ համար որ
9 ուտենք, և նորանք ասացին. Ո՞ւր
տեղ կա կամենում, որ պատրաս-
10 տենք։ Նա էլ ասաց նորանց.
Ահա երբոր քաղաքը կ'մտնէք,
մի մարդ կ'պատահի ձեզ, որ ջրի
կուժ է կրում. նորա ետևից գնա-
ցէք այն տունն, որ նա կ'մտնէ,
11 և տան տիրոջն ասացէք. Վար-
դապետն ասում է քեզ, Ո՞ւր է
այն օթևանը, ուր զատիկն ու-
12 տեմ աշակերտներիս հետ։ Եւ նա
ձեզ մի մեծ վերնատուն ցոյց կ'տայ
պարպատած. այնտեղ պատրաս-
13 տեցէք։ Եւ գնացին այնպէս գտան,
ինչպէս ասաց նորանց. և զատի-
կը պատրաստեցին։
14 Եւ երբոր ժամն եղաւ, սեղան
նստեց. և տասներկու առաքեալ-
15 ներն էլ նորա հետ։ Եւ նորանց
ասաց. Յանկանալով ցանկացայ
այս զատիկը ձեզ հետ ուտել իմ
16 չարչարվելուցն առաջ։ Վասնզի
ասում եմ ձեզ, թէ սորանից էլ
երբէք չեմ ուտիլ, մինչև որ կա-
տարուի Աստուծոյ արքայութի-
17 նումը։ Եւ բաժակն առաւ գո-
հացաւ և ասաց. Առէք գորան
18 և ձեր միջումը բաժանեցէք։ Վա-
սնզի ասում եմ ձեզ, թէ սրնից
բնաբնից էլ չեմ խմիլ, մինչև որ
Աստուծոյ արքայութիւնը գայ։
19 Եւ հաց առաւ, գոհացաւ,
կտրեց և նորանց տուաւ, և ա-
սաց. Այս է իմ մարմինը, որ
ձեզ համար արվում է. այս ա-
20 րեք իմ յիշատակի համար։ Այն-
պէս էլ ընթրելից յետոյ բաժակն
առաւ, և ասաց. Այս բաժակը
նոր ուխտն է իմ արիւնովը, որ
ձեզ համար թափվում է։
21 Սակայն ահա իմ մատնողի ձե-
22 ռըն ինձ հետ սեղանի վերայ է։ Եւ
Որդին մարդոյ գնում է ինչպէս
սահմանուած է. բայց վայ այն
մարդուն, որի ձեռովն կ'մատնուի։
23 Եւ նորանք սկսեցին հարցուփորձ
անել իրանց մէջ, թէ իրանցից
ո՞վ է արդեօք նա, որ այն բանը
գործելու է։
24 Նորանց միջումն հակառակու-
թիւն էլ եղաւ, թէ իրանցից ո՞վ
25 պիտի մեծ համարուի։ Եւ նա ա-
սաց նորանց. Ազգերի թագաւոր-
ները տիրապետում են նորանց վե-
րայ, և նորանց վերայ իշխանու-
թիւն անողները բարերար են կոչ-
26 վում։ Բայց դուք ոչ այնպէս. այլ
ձեր միջի մեծը՝ թող փոքրագոյնի
պէս լինի, և առաջնորդը ծառա-
յողի պէս։ Վասնզի ո՞վ է մեծ.
27 սեղան նստո՞ղը թէ ծառայո՞ղը.
չէ՞ որ սեղան նստողը. բայց ես
ձեր միջումը ծառայողի պէս եմ։
28 Իսկ դուք էք, որ միշտ ինձ հետ
կենում էիք իմ փորձութիւննե-
29 րումը։ Եւ ես ուխտում եմ ձեզ
ինչպէս իմ Հայրն
էլ ինձ թագաւորութիւն ու-
30 խտեց. Որ ուտէք և խմէք իմ սե-
ղանի վերայ իմ արքայութիւնու-
մը, և աթոռների վերայ նստէք՝
Իսրայէլի տասներկու ցեղին դա-
տաստան անելու համար։
31 Եւ Տէրն ասաց. Սիմոն Սիմոն.
ահա սատանան ձեզ ուզեց, որ
32 խախտէ ցորենի պէս. Բայց ես
աղաչեցի քեզ համար, որ քո հա-
ւատքը չ'պակասի. և դու երբ
դառնաս, եղբայրներիդ հաստա-
տիր։ Նա էլ ասաց նորան. Տէր.
33 ես պատրաստ եմ քեզ հետ բան-
տ և մահն էլ գնալու։ Եւ նա
34 ասաց. Ասում եմ քեզ, Պետրոս,
այսօր հաւը չի խօսիլ, մինչև որ
դու երեք անգամ կ'ուրանաս՝
չ'գիտել ինձ։
35 Եւ նորանց ասաց. Երբոր ու-
ղարկեցի ձեզ առանց քսակի, և
պարկի և կօշիկներըի, մի՞թէ կա-
36 րօտացաք մի բանի։ Նորանք էլ
ասացին. Ոչինչի. ապա ասաց նո-
րանց. Բայց հիմա քսակ ունե-
ցողը թող առնէ, այնպէս էլ պար-
կը. և չունեցողը՝ թող իր հան-
դերձը ծախէ և իրան համար սուր
առնէ։ Վասնզի ասում եմ ձեզ,
37 թէ դեռ այս գրուածն էլ պէտք
է կատարուի ինձանում, թէ Ա-

նօրէնների հետ համարուեցաւ.
քանզի ինչ որ ինձ համար առաջ
38 է, կատարուած է։ Ընդունք էլ
առացին. Տէր, ահա այսուհետև եր-
կու սուր կայ. և նա ասաց ցնո-
րանց. Բաւական է։
39 Եւ դուրս ելաւ իր սովորու-
թեան պէս գնաց Ձիթենեաց լեռ-
ը, և աշակերտներն էլ նորա
40 ետևից գնացին։ Եւ երբոր այն
տեղը հասաւ, նորանց ասաց.
Աղօթք արէք, որ փորձութեան
41 մէջ չմտնէք։ Եւ ինքն նորանցից
հեռացաւ մի քարընկեցի չափ,
ծունկ դրաւ, աղօթք էր անում,
42 եւ ասում. Հայր, եթէ կամիս
այս բաժակը անցրու ինձանից.
սակայն ոչ թէ իմ կամքը՝ բայց
43 քո կամքը լինի։ Եւ հրեշտակ ե-
րևեցաւ նորան երկնքիցը, և զօ-
րացնում էր նորան, և տագնապի
մէջ լինելով, աւելի եռանդով
44 էր աղօթք անում։ Եւ նորա քրտ-
ինքն էր ինչպէս արիւնի կա-
թիլք, որ թափվում են երկրի
45 վերայ։ Եւ աղօթքից վերկացաւ
եկաւ իր աշակերտների մօտ, և
նորանց քնի մէջ գտաւ տրտմու-
46 թիւնից. Եւ ասաց նորանց. Ին-
չո՞ւ էք քնում. վերկացէք, ա-
ղօթք արէք, որ փորձութեան
մէջ չմտնէք։
47 Եւ նա տակաւին խօսելիս, ա-
հա մի ամիսխ. և Յուդայ կոչ-
ուածը՝ այն տասներկուսիցը մէ-
կը՝ գնում էր նորանց առջև. և
մօտեցաւ Յիսուսին, որ համբու-
48 րէ նորան. Յիսուան էլ նորան ա-
սաց. Յուդա, համբոյրով ես Որ-
49 դին մարդոյ մատնում։ Երբոր նո-
րա հետ լինողները տեսան, թէ
ինչ է լինելու, նորան ասացին.
50 Տէր, սրով զարկե՞նք։ Եւ նորան-
ցից մէկը քահանայապետի ծա-
ռային զարկեց, և նորա աջ ա-
51 կանջը կտրեց։ Յիսուան էլ պա-
տասխանեց և ասաց. Թող տուէք
մինչ այդ վայրը. և նորա ական-
ջին մօտեցաւ և բժշկեց նորան։
52 Եւ Յիսուա ասաց իրան վերայ
եկած քահանայապետներին և
տաճարի իշխաններին և ծերերին.
ինչպէս մի աւազակի վերայ դուրս
եկաք սրերով և բլրերով։ Ես որ 53
ամեն օր ձեզ հետ էի տաճարու-
մը, ձեռք չ'ձգեցիք ինձ վերայ.
բայց սա ձեր ժամն է և խաւարի
իշխանութիւնը։
Եւ նորան բռնեցին տարան, 54
և մտցրին քահանայապետի տու-
նը. Պետրոսն էլ հետևումն գը-
նում էր նորա ետևից։ Եւ երբ- 55
որ արտի մէջ կրակ էին վա-
ռել և շուրջ կողմով նստել,
Պետրոսն էլ նստեց նորանց մէջու-
մը։ Մի աղախին տեսնելով նո- 56
րան՝ լուսոյ մօտ նստած, անդրեց
նորա վերայ և ասաց. Սա էլ նո-
րա հետ էր։ Բայց նա ուրացաւ 57
և ասաց. Ով կին, ես նորան չեմ
գիտում։ Եւ քիչ մի յետոյ ու- 58
րիշը տեսաւ նորան և ասաց. Դու
էլ նորանցից ես. Պետրոսն էլ
ասաց. Ով մարդ, չեմ։ Եւ մէկ 59
ժամուա չափ էլ որ անցաւ, մէկ
ուրիշը վիճում էր և ասում. Ճըշ-
մարիտ որ սա էլ նորա հետ էր.
վասնզի Գալիլեացի է։ Պետրոսն էլ 60
ասաց. Մարդ, չգիտեմ, թէ դու
ինչ ես ասում. և խոսքն նա դեռ
ասելիս՝ հաւը խօսեց։ Եւ Տէրը 61
դարձաւ մտիկ տուաւ Պետրոսին,
և Պետրոսը յիշեց Տիրոջ խօսքը,
որ ասաց նորան, թէ Մինչև հա-
ւի խօսելը, երեք անգամ կ'ուրա-
նաս ինձ։ Եւ դուրս գնաց Պետ- 62
րոսը դառնապէս լացաւ։
Եւ Յիսուսին պահող մարդիկը 63
ծաղր էին անում նորան և ծե-
ծում։ Եւ նորա աչքերը ծածկում 64
էին և երեսին զարկում, և նորան
հարցնում էին և ասում. Մարգա-
բէացիր՝ ո՞վ է նա, որ քեզ զարկեց։
Եւ ուրիշ շատ բաներ էլ հայհո- 65
յանքով խօսում էին նորա դէմ։
Եւ երբոր առաւօտ եղաւ, ժո- 66
ղովրդի ծերակոյտը՝ քահանայա-
պետներն և դպիրները ժողովուե-
ցան, և նորան հանեցին տարան
իրանց ատեանը, և ասացին. Եթէ
դու Քրիստո՞ն ես, ասա մեզ։
Եւ նորանց ասաց. Եթէ ասեմ 67
ձեզ, դուք չէք հաւատալ։ Եւ 68
եթէ ձեզ հարցնեմ էլ, ինձ պա-
տասխան չէք տալ, կամ ինձ ար-
ձակել։ Բայց այսուհետև Որդին 69

մարդոյ նատած կ'լինի Աստուծոյ
70 դրսեւթեան ոջ կողմը : Եւ ա-
մէնքն ասացին . Ուրեմն դո՞ւ Աս-
տուծոյ Որդին ես . և նա ասաց
նոցանց . Դուք էք ասում, որ ես
71 եմ : Նոքանք էլ ասացին . Էլ ի՞նչ
պէտք է մեզ վկայութիւն , վա-
սընդի մենք ինքներս լսեցինք դո-
րա բերանից :

ԳԼ. ԻԹ

1 Եւ նոցանց բոլոր բազմութիւնը
վերկացաւ , և նոքան տարան Պի-
2 ղատոսի մօտ : Եւ սկսեցին չա-
րախօսութիւն անել նորանից և
ասել . Սորան գտանք որ ապըս-
ծռում էր՝ և արգելում էր կայ-
սեր հարկ տալ՝ ինքն իրան Հա-
մար ասելով , թէ Քրիստոս՝ թա-
3 գաւորն է : Բայց Պիղատոս հարց-
րեց նորան և ասաց . Դո՞ւ ես
Հրէից թագաւորը . Նա պատաս-
խանեց նորան և ասաց . Դու ա-
4 սացիր : Պիղատոսն էլ ասաց քա-
հանայապետներին և ժողովուր-
դներին . Ես մի յանցանք չեմ դըտ-
5 նում այս մարդումը : Բայց նո-
քանք առաւելացնում էին և ա-
ռում . Թէ ժողովրդները խռո-
վեցնում է բոլոր Հրէաստանի մէջ
սովորեցնելով Գալիլեացիներից սկսած
6 մինչև այս տեղ : Պիղատոս էլ
երբոր Գալիլեան լսեց , հարցրեց ,
թէ այդ մարդը Գալիլեացի՞ է .
7 Եւ իմանալով թէ Հերովդէսի իշ-
խանութիւնից է . առնել ուղա-
նորան Հերովդէսի մօտ , որ նա էլ
այն օրերը Երուսաղէմումն էր :
8 Հերովդէս էլ Յիսուսին տեսնե-
լով շատ ուրախացաւ . վասն զի
շատ ժամանակից ուզում էր տես-
նել նորան , որովհետև նորա Հա-
մար շատ բաներ էր լսել . և յոյս
ունէր թէ մի նշան կ'տեսնէ նո-
9 րանից եղած : Շատ խօսքերով
հարցնում էր նորան , բայց նա
ոչինչ պատասխան չ'տուաւ նո-
10 րան : Քահանայապետներն և գիր-
նները կանգնած էին , և շատ ամ-
ամբիկ չարախօսում էին նորանից :
11 Հերովդէս էլ իր զինուորների Հետ
անարգեց նորան . և ծաղր անե-
լով մի սպիտակ հանդերձ հագ-
ցրեց նորան , և ետ տանել տուաւ
Պիղատոսի մօտ : Եւ Պիղատոսն 12
ու Հերովդէսը բարեկամ եղան այն
օրը միմեանց Հետ . վասնզի որ ա
ռաջ իրար դէմ թշնամութեան
մէջ էին :

Պիղատոս էլ կանչեց քահա- 13
նայապետներին և իշխաններին և
ժողովրդին , Եւ նորանց ասաց . 14
Դուք այս մարդն ինձ մօտ բերիք
իբրև ժողովուրդը մոլորեցնող . և
ահա ձեր առջև դատելով ոչ մի
յանցանք չ'գտայ այս մարդումն
այն բաների Համար , որ դուք չա- 15
րախօսում էք դորանից : Եւ ոչ
էլ Հերովդէսը . վասնզի ձեզ տա-
նել տուի նորա մօտ . և ահա մեռ-
նելու արժանի ոչինչ չէ գործել
դա : Արդ խրատեմ դորան՝ և ար- 16
ձակեմ : Վասնզի Հարկաւոր էր , 17
որ տօնի ժամանակին մի հոգի ար-
ձակէր նորանց Համար : Իսկ նո- 18
քանք բոլոր բազմութեամբ ազա-
ղակում էին և ասում . Վեր տա-
դորան , և արձակիր մեզ Համար
Բարաբբային : Որ քաղաքումն ե- 19
ղած մի խռովութեան և մարդաս-
պանութեան Համար բանտն էր
գցուած : Եւ Պիղատոս դարձեալ 20
խօսեց դէպի նորանց . կամենա-
լով արձակել Յիսուսին : Իսկ նո- 21
քանք աղաղակում էին և ասում .
Խաչիր , խաչիր դորան : Եւ նա 22
երրորդ անգամ ասաց նորանց .
Ապա ի՞նչ չար բան գործեց ա-
ոչինչ մեռնելու յանցանք չ'գտայ
ասորանում . կ'խրատեմ սորան և
կ'արձակեմ . Բայց նորանք բարձր 23
ձայնով աղաղակում էին և խնդրում
էին , որ նա խաչուի . և նորանց
և քահանայապետների ազաղակը
զօրանում էր : Եւ Պիղատոսը վճռ- 24
ուեց , որ նորանց խնդիրքը լինի :
Արձակեց նորանց Համար խռո- 25
վութեան և մարդասպանութեան
Համար բանտի մէջ գցուածը , ո-
րին խնդրում էին . և Յիսուսին
մատնեց նորանց կամքը :

Եւ երբոր նորան տանում էին , 26
Սիմէն Կիւրենացի առաջ մէկին
բռնեցին , որ յանդիպը գալիս էր .
խաչը նորա վերայ դրին , որ Յի-

27 սուսի եառևից տանէ։ Եւ շատ ժո-
ղովուրդ էր գնում նորա եառևից.
և կանայքէլ, որ կոծ և սուգ
28 էին անում նորա վերայ։ Յիսուսն
էլ դարձաւ նորանց ասաց. Ե-
րուսաղէմի աղջիկներ, լաց մի լի-
նիք ինձ վերայ, այլ լաց եղէք
ձեզ վերայ և ձեր որդոց վերայ։
29 Վասնզի ահա օրեր կ'գան, որ
կ'ասեն. Երանի ամուլներին և այն
փորերին, որ չ'ծնան, և այն ծը-
30 ծերին, որ չ'ծծեցրին։ Այն ժա-
մանակ կ'սկսեն ասել լեռանց,
Մեզ վերայ ընկէք, և բլուրներին
31 Ծածկեցէք մեզ։ Վասնզի եթէ
կանանչ փայտին այս բաներն են
անում, ապա չորին ինչ կ'լինի։
32 Ուրիշ երկու չարագործ մար-
դիկ էլ տարան, որ նորա հետ
33 սպանեն։ Եւ երբոր եկան այն տե-
ղը որ գագաթն էր կոչվում, այն
տեղ խաչեցին նորան. և այն չա-
րագործներին, մէկը աջ կողմը և
34 միւսը ձախ կողմը։ Եւ Յիսուսը
ասաց. Հայր, թողիր դորանց.
վասնզի չեն գիտում թէ ինչ են
անում. և նորա հանդերձները
35 բաժանելիս, վիճակ գցեցին։ Եւ
ժողովուրդը կանգնած նայում էր.
իշխաններն էլ նորանց հետ ծաղր
էին անում՝ և ասում. ուրիշնե-
րին ապրեցրեց, թող իրան էլ
ապրեցնէ, եթէ դու է Քրիստոսն,
36 Աստուծոյ ընտրուածը։ Զինուոր-
ներն էլ էին ծաղր անում նորան.
և մօտ գալով քացախ էին տա-
37 լիս նորան. Եւ ասում. Եթէ դու
ես Հրէից թագաւորը, փրկիր քո
38 անձը։ Եւ մի գիր էր գրուած նո-
րա վերայ, Յունարէն, Հռովմայե-
ցերէն և Եբրայեցերէն գրերով,
ԹԷ Սա է Հրէից թագաւորը։
39 Եւ այն կախուած չարագոր-
ծներից մէկը հայհոյում էր նորան
և ասում. Եթէ դու ես Քրիստո-
40 սը, փրկիր քո անձը և մեզ։ Իսկ
միւսը պատասխանից ասաւկով
նորան՝ և ասաց. Եւ դու չե՞ս վա-
խենում Աստուածոյնից, որ հէնց
41 նոյն պատժի մէջ ես։ Ու մենք՝
իրաւունքով ենք պատժուած. վա-
րձնդի մեր արած գործերին ար-
ժանի հատուցումն ենք առնում.
իսկ սա ոչ մի անտեղի բան չ'գոր-
ծեց։ Եւ ասաց Յիսուսին. Տէր, 42
յիշիր ինձ յիշիր, երբոր գաս քո թա-
գաւորութիւնդը։ Եւ Յիսուսը 43
ասաց նորան. Ճշմարիտն ասում
եմ քեզ, Դու այսօր ինձ հետ դը-
րախտումը կ'լինիս։
Եւ ժամը վեցի դէմ էր. և բո- 44
լոր երկրի վերայ խաւար եղաւ
մինչև ինն ժամը. Եւ արեգակը 45
խաւարեցաւ, և տաճարի վարա-
գոյրը մէջեցր ճղուեցաւ։ Եւ Յի- 46
սուս մեծ ձայնով կանչեց և ա-
սաց. Հայր, Ձեռքդ քո ձեռքն եմ
աւանդում. և այս ասելով հոգի
տուաւ։
Եւ հարիւրապետը եղածը տես- 47
նելով, Աստուծոյն փառք տուաւ
և ասաց. Յիրաւի այս մարդն ար-
դար էր։ Եւ բոլոր ժողովուրդնե- 48
րը, որ այս տեսարանը դիտելու
համար եկել էին, եղած բաները
տեսնելով իրանց կուրծքերը թա-
կում էին և յետ դառնում։ Նո- 49
րա բոլոր ծանօթներն էլ հետ-
ուանից կանգնած էին, և այն կա-
նայքն էլ, որ Գալիլեացիքը նորա
եառևից եկել էին և տեսնում էին
այս բաները։
Եւ ահա մի մարդ՝ անունը Յո- 50
սէփ, որ խորհրդական էր, բա-
րեզործ և արդար մարդ։ (Սա չէր 51
միաբանում նորանց խորհրդի և
գործերի հետ.) Հրէաների Արի-
մաթիա քաղաքից, որ ինքն էլ
հէնց սպասում էր Աստուծոյ ար-
քայութեանը։ Սա գնաց Պիղա- 52
տոսի մօտ և Յիսուսի մարմինը
խնդրեց։ Եւ վայր բերաւ նորան, 53
սինդոնի կտաւով պատեց, և քա-
րից փորած գերեզմանի մէջ դրա-
ւ որ երբէք մի մարդ դրուած չէր։
Եւ օրը ուրբաթ էր, և շաբաթ 54
էր լուսանում։
Եւ այն կանայքն էլ, որ Գա- 55
լիլեացիքը նորա հետ եկել էին
գնում էին նորա եառևից, տեսան
գերեզմանը, և թէ ինչպէս դրը-
ւեց նորա մարմինը։ Եւ յետ դար- 56
ձան, խնկեր և իւղեր պատրաս-
տեցին. բայց շաբաթի օրը հան-
գստեան մնացին պատուիրանքի հա-
մեմատ։

ԳԼ. ԻԳ.

1 Բայց մեկ շաբթի օրը առաւօտանց կանուխ եկան գերեզմանը, և բերին այն խնկերը, որ պատրաստեցին. և ոմանք էլ նորանց
2 հետ։ Եւ քարը գերեզմանիցը հեռու թաւալած գտան։ Եւ երբոր
3 ներս մտան, Տէր Յիսուսի մարմինը չ'գտան։ Եւ եղաւ երբոր նորա համար շատ հիացել էին, և ահա երկու մարդ հատան նորանց լուսաւոր հանդերձներով։
5 Եւ երբոր նորանք ահով լցուեցան, և իրանց երեսները դէպի երկիր խոնարհեցրին, նորանց ասացին. Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում։
6 Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ. յիշեցէք ինչպէս նա ձեզ հետ խօսեց, երբոր Գալիլեայումն էր.
7 Որ ասում էր, թէ պէտք է Որդին մարդոյ մեղաւոր մարդկանց ձեռքը մատնուի՝ և խաչուի և երրորդ օրը յարութիւն առնէ։ Եւ
9 նորա խօսքերը յիշեցին։ Եւ գերեզմանիցը եւս դարձան և այս բոլոր բաները պատմեցին տասնմէկին և բոլոր ուրիշներին։
10 Եւ էին Մարիամ Մագդաղենացին, և Յոհաննան, և Յակոբայ Մարիամը, և նորանց հետ ուրիշներն էլ, որ այս բաները առաքեալներին։
11 Եւ նորանց խօսքերը ցնորք երեւեցաւ նորանց առջև, և չէին հաւատում նորանց։
12 Բայց Պետրոսը վեր կացաւ վազեց գերեզմանը, և ծռելով տեսաւ կտաւները մէնակ դրուած. և գնաց իր մտքումն զարմանալով եղածի վերայ։
13 Եւ ահա նորանցից երկուսը մի և նոյն օրը մի գիւղ էին գնում, որ վեց տասն ասպարէզ երուսաղէմիցը հեռու էր, անունն Էմմաուս։
14 Եւ նորանք իրար հետ խօսում էին այն բոլոր անցած
15 բաների համար։ Եւ եղաւ որ նորանք խօսելիս և վիճաբանելիս, հէնց ինքն Յիսուս մօտեցաւ և
16 գնում էր նորանց հետ։ Բայց նորանց աչքերը բռնուած էին, որ
17 չ'ճանաչին նորան։ Եւ նորանց ա-
18 սաց. Այդ ի՞նչ բաներ են, դորանց համար իրար հետ վիճում էք գնալիս, և տրտում էք։ Եւ պատասխանեց նորանցից մէկը, անունը Կղէոպաս, և ասաց նորան. Դու ես միայն բնակում Երուսաղէմումն, որ չիմացար այն բաները, որ այս օրերը եղան նորանում։
19 Եւ նա ասաց նորանց. Ո՞ր բաներ. և նորանք ասացին. Յիսուս Նազովրեցու մասին, որ մի մարգարէ մարդ էր, զօրաւոր գործքերով Աստուծոյ և բոլոր ժողովրդի առջև։ Թէ ինչպէս մեր քահանայապետներն և իշխանները մատնեցին նորան, և խաչեցին նորան։ Իսկ մենք յոյս
21 ունէինք թէ նա է, որ Իսրայէլին փրկելու էր. այլ այսու ամենայնիւ սա երրորդ օրն է, որ այս
22 բաները եղան։ Բայց մի քանի կանայք էլ մեր միջիցը զարմացրին մեզ, որ առաւօտանց կանուխ
23 գնացին գերեզմանը։ Եւ նորա մարմինը չ'գտած՝ եկան և ասացին, թէ հրեշտակների տեսիլք են տեսել, որ ասում էին, թէ նա կեն-
24 դանի է։ Եւ մեզանից մանք գնացին գերեզմանը, և իսկ այնպէս գտան, ինչպէս կանայքն ասացին, բայց նորան չ'տեսան։ Եւ նա ա-
25 սաց նորանց. Ով անմիտներ և թուլասիրտներ, հաւատալու այն բոլոր բաներին, որ մարգարէները խօսեցան։
26 Չէ՞ որ պէտք էր՝ որ Քրիստոսը այս չարչարանքները քաշէր և իր փառքը մտներ։ Եւ
27 սկսեց Մովսէսից և բոլոր մարգարէներից, մեկնում էր նորանց՝ ինչ որ գրքերի մէջ էր իր մասին։ Եւ մօտեցան այն գիւղին,
28 ուր գնում էին. և նա այնպէս էր ցոյց տալիս, թէ աւելի հեռու տեղ է գնում։ Եւ բռնադատեցին նորան և ասացին. Մնա մեզ
29 հետ, վաղուն իրիկուայ դէմ է և օրս իջել է. և մտաւ որ նորանց հետ մնայ։
30 Եւ եղաւ երբոր նա նորանց հետ սեղան նստեց, հաց առաւ՝ օրհնեց, կտրեց և տուաւ նորանց։
31 Եւ նորանց աչքերը բացուեցան և նորան ճանաչեցին. և նա աներեւոյթ եղաւ նորանցից։

32 Եւ իրար ասացին. Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խօսում էր, և ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար։
33 Եւ նոյն ժամին վերկացան՝ յետ դարձան Երուսաղէմ, և այնտանուվէկին ժողովուած գտան, և
34 նորանց հետ լինողներին. Եւ ասացին. Թէ Աստուած Տէրը յարութիւն է առել, և երևացել
35 Սիմոնին։ Եւ նորանք պատմում էին այն որ ճանապարհին եղաւ, և թէ ինչպէս իրան ճանաչեցրեց իրանց՝ հաց կտրելու ժամանակին։
36 Եւ նորանք այս խօսելիս, Յիսուս ինքն կանգնեց նորանց միջումը և նորանց ասաց. Խաղաղութիւն ձեզ։
37 Եւ նորանք զարհուրելով վախեցած, համարում
38 էին, թէ հոգի են տեսնում։ Եւ նորանց ասաց. Ինչո՞ւ էք շփոթուած. ինչո՞ւ համար խորհուրդներ են վերկենում ձեր սրտերումը։
39 Տեսէք իմ ձեռները և իմ ոտները, որ ես ինքս եմ. շօշափեցէք ինձ և տեսէք. քանզի հոգին մարմին և ոսկերք չունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ։
40 Եւ սա որ ասաց, ձեռներն և ոտները ցոյց տուաւ նորանց։
41 Եւ քանի որ դեռ չէին հաւատում ուրախութիւնից և զարմացած էին. ասաց նորանց. Կէ-
42 րակուր ունի՞ք այս տեղ։ Եւ նորանք խորոված ձկան կտոր տուին
43 նորան։ և մեղրախորիսխ։ Եւ առաւ կերաւ նորանց առջև։ Եւ
44 ասաց նորանց. Ա՛յս այն բաներն են որ ձեզ հետ խօսեցի, քանի որ ձեզ հետ էի, թէ պէտք է կատարուի Մօսէսի օրէնքումն և մարգարէներումն և սաղմոսներումը բոլոր ինձ համար գրուածները։
45 Այն ժամանակ նորանց միտքը բացաւ, որ գրքերն իմանան։
46 Եւ նորանց ասաց. Թէ Այսպէս է գրուած, և այսպէս պէտք էր, Քրիստոսին չարչարուիլ և երրորդ օրը մեռելների միջից յարութիւն առնել.
47 Եւ նորա անունով ապաշխարութիւն և մեղաց թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերի մէջ Երուսաղէմից սկսած։
48 Եւ դուք այս բաների համար վկաներ էք։
49 Եւ ահա ես իմ Հօր աւետիքը կ'ուղարկեմ ձեզ վրայ. դուք էլ նստեցէք Երուսաղէմ քաղաքումը, մինչև վերևից զօրութիւն հագնիք։
50 Եւ նորանց հանեց մինչև Բեթանիա. և իր ձեռները բարձրացրեց և օրհնեց նորանց։
51 Եւ եղաւ որ նա նորանց օրհնելիս, ջոկուեց նորանցից, և վերանում էր երկինքը։
52 Եւ նորանք երկրպագեցին նորան, և մեծ ուրախութիւնով յետ դարձան Երուսաղէմ։
53 Եւ ամեն ժամանակ տաճարումն էին գովում և օրհնում էին Աստուծոյն։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՅՕՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկզբումն էր Բանը, և Բանն Աստուծոյ մօտ էր, և Աստուած էր
2 Բանը։ Նա սկզբումն Աստուծոյ
մօտ էր։ Ամեն ինչ նորանով եղաւ, և առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ։ Նորանով էր
3
4

կեանք, և կեանքը մարդկանց լոյս
5 էր։ Եւ լոյսը խաւարումը լոյս է տա-
լիս, և խաւարը չհմնցաւ նորան։
6 Մի մարդ եղաւ Աստուածմանից
ուղարկուած, անունը Յովհաննէս։
7 Սա վկայութեան համար եկաւ,
որ այն Լուսոյ համար վկայ է.
որ ամենքը նորանով հաւատան։
8 Նա չէր Լոյսն, այլ որ Լուսոյն
համար վկայէ։
9 Էր ճշմարիտ Լոյսն, որ ամեն
մարդուն լուսաւորում է, որ գա-
10 լիս է աշխարհքը։ Աշխարհքումն
էր, և աշխարհքը նորանով ե-
ղաւ, և աշխարհքը նորան չճա-
11 նաչեց։ Իրանների մէջ եկաւ, և
իրանները նորան չընդունեցին։
12 Բայց որոնք որ նորան ընդունե-
ցին, իշխանութիւն տուաւ նո-
րանց Աստուծոյ որդիք լինելու
նորանց, որ նորա անուանը հա-
13 ւատում են։ Որոնք ոչ արիւնից
և ոչ մարմնոյ կամքից, և ոչ մար-
դոյ կամքից, այլ Աստուածմանից
14 ծնուեցան։ Եւ բանը մարմին ե-
ղաւ՝ և բնակեց մեր մէջ. և նո-
րա փառքը տեսանք՝ ինչպէս Հօ-
րից եղած միածնի փառք. շնոր-
հքով և ճշմարտութիւնով լիքն։
15 Յովհաննէս վկայում է նորա հա-
մար. և աղաղակեց և ասաց, Սա
էր, որի համար ասում էի, Ե-
ւթ ինձանից յետոյ եկողը, ինձանից
առաջ եղաւ. վասնզի ինձանից
16 առաջ էր։ Եւ նորա լիութիւնի-
ցը մենք ամենքս առինք շնորհք
17 շնորհքի տեղ։ Քանզի օրէնքը Մո-
ւսէսի ձեռովը տրուեցաւ. շնոր-
հքը և ճշմարտութիւնը Յիսուսի
18 Քրիստոսի ձեռովն եղաւ։ Աստու-
ծոյն ոչ ոք երբէք չէ տեսել.
Բայց միածին Որդին, Հօր ծոցու-
մը լինողը, նա պատմեց։
19 Եւ այս է Յովհաննէսի վկայու-
թիւնը, երբոր Հրէաները Երուսա-
ղէմից քահանաներ և Ղեւտացիներ
ուղարկեցին նորա մօտ, որ հար-
20 ցնեն նորան, Ե՞ւ դու ո՞վ ես։ Եւ
նա խոստովանեցաւ և չուրացաւ.
և խոստովանեցաւ, Թէ ես չեմ
21 Քրիստոսը։ Եւ նորան հարցրին.
Ա՞պա ո՞վ. Եղիա՞ն ես. և ասաց.
Չեմ. մարգարէ՞ն ես դու. և պա-
տասխանեց, Ոչ։ Արդ ասացին 22
նորան. Ա՞ւ ո՞վ ես, որ պա-
տասխան տանք մեզ ուղարկող-
ներին. ի՞նչ ես ասում քեզ հա-
մար։ Ասաց. Ես եմ ձայն կան- 23
չողի անապատումը, Ե՛ւ ուղղեցէք
Տիրոջ ճանապարհը, ինչպէս ե-
սայի մարգարէն ասաց։ Եւ ու- 24
ղարկուածները փարիսեցիներից
էին։ Եւ նորան հարցրին և ասա- 25
ցին. Ապա ինչո՞ւ ես մկրտում,
եթէ դու ոչ Քրիստոսն ես և ոչ
Եղիան, և ոչ մարգարէն։ Յովհան- 26
հաննէսը պատասխանեց նորանց
և ասաց. Ես ջրով եմ մկրտում.
բայց ձեր մէջումը կայ մէնը, որին
դուք չէք գիտում։ Նա է ինձա- 27
նից յետոյ եկողը, որ ինձանից ա-
ռաջ եղաւ. որ ես արժանի չեմ,
նորա կօշիկների կապը արձակե-
լու։ Սա Բեթաբարայումն եղաւ, 28
Յորդանանի այն կողմը. ուր Յո-
հաննէսը մկրտում էր։
Հետեւեալ օրը Յովհաննէս տես- 29
նում է Յիսուսին իրան մօտ գա-
լիս, և ասում է. Ահա Աստու-
ծոյ Գառն, որ վեր է առնում
աշխարհքի մեղքը։ Սա է, որի 30
համար ես ասում էի, Ե՛ւ ինձա-
նից յետոյ մի մարդ է գալիս, որ
ինձանից առաջ եղաւ, վասնզի
ինձանից առաջ էր։ Եւ ես նո- 31
րան չէի գիտում. այլ որ յայտ-
նի լինի Իսրայէլին, նորա համար
ես եկայ ջրով մկրտելու։ Եւ վկա- 32
յեց Յովհաննէսը և ասաց, Թէ
Տեսնում էի Հոգին, որ աղաւնու
պէս վայր էր գալիս երկինքիցը և
նորա վերայ մնում։ Եւ ես չէի 33
գիտում նորան. բայց նա որ ին-
ձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ա-
սաց ինձ. Թէ որի վերայ որտես-
նես Հոգին վայր գալիս և նորա
վերայ մնում, նա է Սուրբ Հո-
գով մկրտողը։ Եւ ես տեսայ և 34
վկայեցի, Թէ Սա է Աստուծոյ
Որդին։
Հետեւեալ օրն դարձեալ կանգ- 35
նած էր Յովհաննէսը, և նորա ա-
շակերտներիցը երկուսը։ Եւ մտիկ 36
տուաւ Յիսուսին, որ գնում էր գա-
լիս, և ասաց. Ահա Աստուծոյ
Գառն։ Եւ այն երկու աշակերտ- 37

ներըը լսեցին նորանից՝ որ խօսում էր, և Յիսուսի ետևից գնացին։
38 Յիսուսն էլ դարձաւ նորանց տեսաւ, որ գնում էին իր ետևից, և ասաց նորանց. Ի՞նչ էք ուզում. նորանք ասացին նորան. Ռաբբի, (որ թարգմանուած ասվում է՝ վարդապետ.) ո՞րտեղ ես
39 կենում։ Նորանց ասաց. Եկէք և տեսէք. եկան և տեսան ի՞նչ որտեղ էր կենում. և այն օրը նորա մօտ մնացին. ժամն էլ տասնի մօտ էր։
40 Անդրէասը՝ վէմ Սիմոնի եղբայրն՝ այն երկուսից մէկն էր, որ Յոհաննէսիցը լսեցին և նորա ետևից
41 գնացին։ Սա առաջ իր Սիմոն եղբօրն է գտնում և նորան ասում. Մեսիան գտել ենք, որ թարգմանվում է Քրիստոս)։ Եւ բերաւ
42 նորան Յիսուսի մօտ. Յիսուսն էլ նորան մոիկ տուաւ և ասաց. Դու Սիմոն ես՝ Յոնանի որդին. դու պիտի կոչուիս Կեփաս, (որ թարգմանվում է Պետրոս)։
43 Հետևեալ օրը կամեցաւ Յիսուսը գուրս գնալ Գալիլեայ. և գտնում է Փիլիպպոսին, և ասում նորան. Իմ ետևից եկ։
44 Փիլիպպոսն էլ Բեթսայիդայից էր, Անդրէասի և Պետրոսի քաղաքից։
45 Փիլիպպոսն էլ գտնում է. Նաթանայէլին և ասում նորան. Նա որի մասին գրից Մովսէս օրէնքումն, և մարգարէներն էլ, գտանք՝ Յոսէփի որդի Յիսուսին
46 Նազարէթից։ Եւ Նաթանայէլ նորան ասաց. Կարելի՞ է Նազարէթից մի բարի բան լինիլ. Փիլիպպոսը նորան ասաց. Եկ և տես։
47 Յիսուսը տեսաւ Նաթանայէլին իրան մօտ գալիս՝ և ասաց նորա համար. Ահա ճիշտ Իսրայէլացի.
48 որում նենգութիւն չկայ։ Նաթանայէլ ասում է նորան. Ինչ տեղից ես ճանաչում ինձ. Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. Փիլիպպոսը դեռ քեզ չ'կանչած քեզ տեսայ որ թզենու տակն էիր։
49 Նաթանայէլը պատասխանեց և ասաց. Ռաբբի, դու Աստուծոյ Որդին ես. Դու ես Իսրայէլի թագաւորը։
50 Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. Որովհետև ասացի քեզ թէ թզենու տակ տեսայ քեզ, հաւատում ես, սրանցից էլ մեծ բաներ կ'տեսնես։ Եւ նորան ասաց. Ճշմարիտ 51
ճշմարիտն ճշմարիտ ասում եմ ձեզ, այսուհետև կ'տեսանէք երկինքը բացուած, և Աստուծոյ հրեշտակներին ելլելիս և իջնելիս Որդոյ մարդոյ վերայ։

ԳԼ. Բ

Եւ երրորդ օրը հարսանիք էր Գա- 1
լիլեայի Կանայումը, և Յիսուսի մայրն այն տեղ էր։ Յիսուսն էլ 2
կանչուեցաւ այն հարսանիքը և նորա աշակերտներն էլ։ Եւ երբ- 3
որ գինին պակասեց, Յիսուսի մայրը ասաց նորան. Գինի չունին։ Յիսուսը նորան ասաց, Կէզ ի՞նչ 4
բան կայ ինձ հետ կին. իմ ժամանակը դեռ չէ հասել։ Նորա 5
մայրն ասաց սպասաւորներին. ինչ որ ասէ ձեզ, արէք։ Սոյն 6
տեղ վէց քարէ կարասներ կային Հրէաների մաքրուելու համար, որոնցից ամեն մէկը երկու կամ երեք մար էին տանում։ Յիսուսը 7
նորանց ասաց. Լցրէք կարասները ջրով. լցրէք. և նորանց լցրին մինչև վեր։ Եւ նորանց ասաց. Հիմա առէք և տարէք սեղանապետի համար. և նորանք տարին։ 8
Եւ երբոր վերակացուն այն գինի 9
ջուրը ճաշակեց, (և չէր գիտում թէ ինչ տեղից է. բայց սպասաւորները գիտէին՝ որ ջուրն լցրել էին) սեղանապետը փեսային կանչեց, և նորան ասաց. Ամեն մարդ 10
առաջ լաւ գինին է տալիս. և երբոր արբեցան, այն ժամանակ վատը. դու լաւ գինին մինչև հիմա պահեցիր։ Նշանների սկիզբը 11
Յիսուսը այս արաւ Գալիլեայի Կանայումը. և իր փառքը յայտնեց. և նորա աշակերտները հաւատացին նորան։

Սորանից յետոյ Յիսուսը իջաւ 12
Կափառնայում, ինքն և իր մայրը և իր եղբայրները և իր աշակերտները. և շատ օրեր չմնացին այնտեղ։

Եւ Հրէից զատիկը մօտ էր, և 13

14 Յիսուսը եկաւ Երուսաղէմ, եւ
տաճարումը գտաւ եղներ և ոչ-
խարներ և աղաւնիներ ծախող-
ներին, և սեղանաւորներին նըս-
15 տած. Եւ չուանից խարազան շի-
նեց, և ամենին տաճարիցը դուրս
հանեց՝ ոչխարներն էլ և եղներն
էլ, և սեղանաւորների պղինձնե-
րը ցրուեց և տախտակները կոր-
16 ծանեց։ Եւ աղաւնի ծախողնե-
րին ասաց. Դորանից վեր առէք
այստեղից. իմ Հօր տունը մի ա-
17 նէք առուտուրի տուն։ Եւ նորա
աշակերտները յիշեցին, թէ գըր-
ուած է, Քո տան նախանձը կե-
կերաւ ինձ։
18 Արդ Հրէաները պատասխանե-
ցին և ասացին նորան. Ի՞նչ նշան
ես ցոյց տալիս մեզ, որ անում
19 ես այդ։ Յիսուսը պատասխանեց
և ասաց նորանց. Քանդեցէք այդ
տաճարը, և երեք օրում կ'կանգ-
20 նեցնեմ դորան։ Հրէաները էլ ա-
սացին. Այս տաճարը քառասուն
և վեց տարում շինուեցաւ, և
դու երեք օրումն կ'կանգնեցնե՞ս
21 դորան։ Բայց նա իր մարմնոյ տա-
22 ճարի համար էր ասում։ Ապա
երբոր նա մեռելների միջից յա-
րութիւն առաւ, նորա աշակերտ-
ները յիշեցին, թէ նա ասաց նո-
րանց այս բանը. և հաւատացին
գըքին՝ և այն խօսքին որ ասաց
Յիսուսը։
23 Եւ երբոր Երուսաղէմումն էր
զատկի տօնին, շատ մարդիկ հա-
ւատացին նորա անունը. տես-
նելով նորա այն նշանները, որ
24 անում էր։ Բայց ինքն Յիսուս իր
անձը չէր հաւատում նորանց.
25 քանզի ինքն ամենը գիտէր։ Եւ
որովհետև պէտք չէր որ մէկը վե-
կայեր մարդու համար. քանզի
ինքը գիտէր, Ե՛ւ ինչ կար մար-
դումը։

ԳԼ. Գ

1 Եւ Փարիսեցիներից մի մարդ
կար՝ անունը Նիկոդիմոս՝ Հրէա-
2 ների իշխան։ Սա գիշերը Յիսուսի
մօտ եկաւ և ասաց նորան. Ռաբ-
բի, գիտենք որ Աստուածանից
վարդապետ ես եկել. քանզի ոչ
ոք չէ կարող այդ նշաններն ա-
նել՝ որ դու անում, եթէ Աստ-
ուած նորա հետ չլինի։ 3
Յիսուսը պատասխանեց և ասաց նորան.
Ճշմարիտն ճշմարիտ ասում եմ
քեզ. Եթէ մէկը վերատին չ'ծնուի՝
կարող չէ Աստուծոյ արքայու-
թիւնը տեսանել։ 4
Նիկոդիմոս նո-
րան ասաց. Արդ ի՞նչպէս կա-
րող է ծնուիլ՝ որ ծեր է. միթէ
կարող է երկրորդ անգամ իր մօր
արգանդը մտնել և ծնուիլ։ 5
Յի-
սուս պատասխանեց. Ճշմարիտն
ճշմարիտ ասում եմ քեզ. Եթէ
մէկը ջրից և Հոգուց չ'ծնուի, նա
կարող չէ Աստուծոյ արքայու-
թիւնը մտնել։ 6
Որ մարմնոյցը ծըն-
ուածը մարմին է. և Հոգուցը ծըն-
ուածը հոգի է։ 7
Մի զարմանար՝
որ ասացի քեզ, Թէ պէտք է ձեզ՝
վերատին ծնուիլ։ 8
Քամին որտեղ
ուզում է՝ փչում է, և նորա ձայնը
լսում ես. բայց չ'գիտես Թէ ո՞ր
տեղից է գալիս և ո՞րտեղ է գը-
նում. այսպէս է ամեն Հոգուցը
ծնուածը։ 9
Նիկոդիմոսը պատաս-
խանեց և ասաց նորան. Այդ ի՞նչ-
պէս կարող է լինիլ։ 10
Յիսուսը պա-
տասխանեց և ասաց նորան. Դու
ես Իսրայէլի վարդապետը, և այս
չէ՞ս գիտում։ 11
Ճշմարիտն ճշմարիտ
ասում եմ քեզ, Թէ ինչ որ
գիտում ենք՝ խօսում ենք, և ինչ
որ տեսանք՝ վկայում ենք. և մեր
վկայութիւնը չէք ընդունում։ 12
Եթէ
երկրաւոր բաներն ասացի ձեզ,
և չէք հաւատում. ապա ի՞նչպէս
կ'հաւատաք, եթէ երկնաւոր բա-
ներն ասեմ։ 13
Եւ ոչ ոք վեր չէ-
լաւ երկինքը, եթէ ոչ երկինքից
իջնողը՝ Որդին մարդոյ՝ նա որ եր-
կինքումն է։ 14
Եւ ինչպէս Մովսէս օձը
բարձրացրեց անապատումը, այն-
պէս պէտք է մարդոյ Որդին բարձ-
րացուել. 15
Որ ամեն նորան հաւա-
տացողը չ'կորչի, այլ յաւիտենա-
կան կեանքն ունենայ։ 16
Վասնզի
Աստուած այնպէս սիրեց աշխար-
քը, որ իր միածին Որդին տուաւ,
որ ամեննորան հաւատացողը չ'կոր-
չի, այլ յաւիտենական կեանքն
ունենայ։ 17
Քանզի Աստուած իր

Որդին չուղարկեց աշխարհքը, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով փրկուի։ Ո-
18 բան հաւատացողը չի դատապարտուիլ, իսկ չ'հաւատացողն արդէն դատապարտուած է. որովհետև չ'հաւատաց Աստուծոյ մի-
19 ածին Որդոյ անուանը։ Եւ սա է դատաստանն, որ լոյսն եկաւ աշխարհքը, և մարդիկ խաւարն աւելի սիրեցին քան թէ լոյսն, վասընզի նորանց գործքերը չար էին
20 Քանզի ամեն չար գործողըատում է լոյսին, և չէ գալիս դէպի լոյսն, որ նորա գործքերը չ'յանդիմանուին։
21 Իսկ ճշմարտութիւն գործողը գալիս է դէպի լոյսն, որ նորա գործերն յայտնուին, վասընզի Աստուծով գործուեցան։
22 Սորանից յետոյ եկաւ Յիսուսը և նորա աշակերտները Հրէաստանի երկիրը. և այնտեղ նորանց հետ մնան էր գալիս և մկրտում
23 էր։ Եւ Յօհաննէսն էլ Աինոնում էր մկրտում՝ Սաղեմոյ մօտ. որովհետև այնտեղ շատ ջուր կար. և գալիս էին և մկրտվում էին։
24 Վանզի Յօհաննէսը դեռ բանտի մէջ չէր դրուած։
25 Արդ Յօհաննէսի աշակերտները Հրէաների հետ վէճ ունեցան մաքրութեան համար։ Եւ Յօհաննէսի
26 մօտ եկան և ասացին նորան. Ռաբբի, նա որ Յորդանանի այն կողմումն էր քեզ հետ, որի համար դու վկայեցիր, ահա նա մկրտում է, և ամենքը նորա մօտ
27 են գալիս։ Յօհաննէսը պատասխանեց և ասաց. Մարդ չէ կարող ոչինչ վեր առնել, եթէ երկնքից տրուած չ'լինի նորան։
28 Դուք ինքներդ վկայում էք ինձ համար, որ ասացի ձեզ, թէ Ես Քրիստոսը չեմ, այլ թէ նորա առ-
29 ջևից ուղարկուած եմ։ Հարսն ունեցողն է փեսայ. բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է և լսում է նորան, ուրախութիւնով ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ իմ այս ուրախութիւնը լցուած է։
30 Նորան պէտք է աճել, և ինձ փոքրանալ։
31 Վերևից եկողն ամենից վեր է. երկրիցը երկրիցն է և երկրիցն է խօսում։ Երկնքից եկողն ամենից վեր է. ինչ որ տեսաւ և լսեց, նա է վկայում. և նորա վկայութիւնը ոչ ով չէ ընդունում։ Նորա վկայութիւնը ընդունողը կնքեց, թէ Աստուած ճշմարիտ է։ Քանզի նա որին Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն է խօսում. վանզի Աստուած Հոգին չափով չէ տալիս։ Հայրը սիրում է Որդոյն, և ամեն բան նորա ձեռքն է տուել։ Որդոյն հաւատացողը յաւիտենական կեանք ունի. իսկ Որդոյն չ'հնազանդողը կեանքը չի տեսնիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է նորա վերայ։

ԴԼ. Դ

Եւ երբոր Տէրն իմացաւ, որ Փարիսեցիները լսեցին, թէ Յիսուսը աւելի աշակերտներ է անում և մկրտում քան թէ Յօհաննէսը։
(Թէպէտև Յիսուսը ինքն չէր մկրտում՝ այլ նորա աշակերտները.)
Հրէաստանի երկիրը թողեց և դարձեալ եկաւ Գալիլեա։ Եւ պէտք էր որ Սամարիայի միջովն անցնէր։ Արդ նա Սամարիայի մի քաղաքն եկաւ, անունը Սիքար, այն տեղի մօտ, որ Յակոբ տուեր որդի Յովսէփին։ Եւ Յակոբի աղբիւրը կար այնտեղ. և Յիսուսը ճանապարհիցը վաստակած այն աղբիւրի վերայ նստեց. և ժամը վեցին դէմ էր։
Արդ Սամարիայից մի կին եկաւ, որ ջուր հանէ. Յիսուսը նորան ասաց. Ինձ ջուր տուր խմեմ։
Վանզի նորա աշակերտները քաղաքն էին գնացել, որ կերակուր առնեն։ Սամարացի կինն էլ ասաց նորան. Դու որ Հրէայ ես, ինչպէս ես ինձանից ջուր ուզում խմել, որ մի Սամարացի կին եմ. որովհետև Հրէաները չեն խառնվում Սամարացոց հետ։ Յիսուսը պատասխանեց և ասաց նորան, Եթէ Աստուծոյ պարգևը գիտենայիր, և թէ ով է նա, որ քեզ ասում է, Ես տուր ինձ խմել, ապա դու նորանից կ'խնդրէիր, և

նա կենդանի ջուր կ'ատար քեզ։
11 Կինը նորան ասաց. Տէր, դու
դոյլ էլ չունիս, և հորը խոր է.
ապա ո՞րտեղից ունիս կենդանի
12 ջուրը։ Մի՞թէ դու աւելի մեծ
ես քան մեր հայր Յակոբը, որ
այս հորը տուաւ մեզ. և ինքն ա-
րանից խմեց, և նորա որդիքը և
13 նորա անասուինները։ Յիսուս պա-
տասխանեց և ասաց նորան. Ամեն
այդ ջրից խմողը դարձեալ կ'ծա-
րաւի. բայց ով որ խմէ այն
ջրից, որ ես կ'տամ նորան, նա
14 յաւիտեան չի ծարաւիլ։ Այլ
այն ջուրն, որ ես կ'տամ նորան,
ջրի աղբիւր կ'լինի նորանում, որ
յաւիտենական կենաց մէջ կ'բղը-
15 խէ։ Կինը նորան ասաց. Տէր,
տուր ինձ այն ջուրը, որ չ'ծա-
րաւիմ, և չ'գամ այստեղ ջուր
16 հանելու։ Յիսուս նորան ասաց.
Գնա կանչիր քո մարդուն, և եկ
17 այստեղ։ Կինը պատասխանեց և
ասաց. Ես մարդ չունիմ. Յիսու-
ս նորան ասաց. Լաւ ասացիր,
18 թէ մարդ չունիմ։ Վասնզի դու
հինգ մարդ ես ունեցել, և նա որ
հիմա ունիս, քո մարդը չէ. դա
19 ճշմարիտ ասացիր։ Կինը նորան
ասաց. Տէր, տեսնում եմ որ դու
20 մարգարէ ես։ Մեր հարքն այս
լեռանումը երկրպագութիւն ա-
րին. և դուք ասում էք, թէ Ե-
րուսաղէմումն է այն տեղն, ուր
պէտք է երկրպագութիւն անել։
21 Յիսուս նորան ասաց. Կին. հա-
ւատա ինձ, որ ժամանակ կ'գայ,
որ այն ժամանակ ոչ այս լեռա-
նումն կ'երկրպագէք Հօրը, և ոչ
22 էլ Երուսաղէմումը։ Դուք երկր-
պագում էք նորան, որ դուք չէք
գիտում. մենք երկրպագում ենք
նորան, որ գիտում ենք. որով-
հետև փրկութիւնը Հրէաներից
23 է։ Բայց ժամանակ կ'գայ, և հի-
մա է, որ ճշմարիտ երկրպագող-
ները հոգով և ճշմարտութիւնով
կ'երկրպագեն Հօրը, քանզի Հայրն
էլ այսպես է ուզում իր երկր-
24 պագողներին։ Աստուած հոգի է,
և նորան երկրպագողները պէտք
է հոգով և ճշմարտութիւնով
25 երկրպագեն։ Կինն ասաց նորան.
Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ
(որ Քրիստոս է կոչվում). երբոր
նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ
մեզ։ Յիսուս նորան ասաց. Ես 26
եմ, որ քեզ հետ խօսում եմ։ Եւ 27
սորա վերայ եկան նորա աշակերտ-
ները, և զարմանում էին, որ կնոջ
հետ խօսում էր. բայց ոչ ոք չա-
սաց, Ի՞նչ ես ուզում, կամ ի՞նչ
ես խօսում դորա հետ։ Կինն էլ 28
իր կուժը թողից, և գնաց քա-
ղաք, և մարդկանց ասաց. Եկէք 29
տեսէք մի մարդ, որ ինձ ասաց
բոլորը ինչ որ գործել եմ. որ-
դեօք նա՞է Քրիստոսը։ Եւ դուրս 30
եկան քաղաքից, և նորա մօտ
էին գալիս։

Եւ այն միջոցին աշակերտները 31
խնդրում էին նորան և ասում.
Ռաբբի, կեր։ Նա էլ ասաց նո- 32
րանց. Ես կերակուր ունիմ ուտե-
լու, որ դուք չէք գիտում։ Աշա- 33
կերտներն էլ իրար ասում էին.
Արդեօք մի մարդ դորան բան բե-
րաւ ուտելու։ Յիսուս ասաց նո- 34
րանց. Իմ կերակուրը նա է, որ
ինձ ուղարկողի կամքն անեմ, և
նորա գործը կատարեմ։ Մի՞թէ 35
դուք չէք ասում, թէ Դեռ չորս
ամիս կայ, և հունձքը կ'գայ. ահա
ես ասում եմ ձեզ. Բարձրացէք
ձեր աչքերը, և տեսէք արտերը,
որ սպիտակացել են և արդէն հնձ-
ձին հասել։ Եւ հնձողը վարձք է 36
առնում, և յաւիտենական կե-
նաց մէջ պտուղ ժողովում. որ
սերմողը և հնձողը իրար հետ ու-
րախանան։ Քանզի առածում ճըշ- 37
մարիտ է այն խօսքը, թէ Ուրիշ
է սերմողը, և ուրիշ է հնձողը։
Ես ուղարկեցի ձեզ հնձել այն, 38
որ դուք չաշխատեցիք. ուրիշնե-
րըն աշխատեցին, և դուք նորանց
աշխատանքի մէջ մտաք։

Եւ Սամարացոց այն քաղաքից 39
շատերը հաւատացին նորան այն
կնոջ խօսքի համար, որ վկայում
էր, թէ Ասաց ինձ բոլորը ինչ որ
գործել էի։ Արդ երբոր Սամարա- 40
ցիք նորա մօտ եկան, նորան ա-
ղաչեցին, որ իրանց մօտ մնայ.
և երկու օր մնաց այնտեղ։ Եւ 41
էլ շատերը հաւատացին նորա-

42 նորա խօսքի համար ; եւ այն կնոջ
էլ ասում էին, թէ Ամէն ևս քո
խօսքերի պատճառով չենք հա-
ւատում. վասնզի մենք ինքներս
լսեցինք, և գիտենք որ ճշմարտա-
պէս սա է աշխարհի Փրկիչը՝
Քրիստոսը ;
43 Եւ երկու օրից յետոյ այնտե-
ղից դուրս եկաւ գնաց Գալիլեա.
44 Վասնզի Քրիստոս ինքն վկայեց,
թէ Մարգարէն իր հայրենիքումը
45 պատիւ չունի ; Բայց երբոր գա-
լիլեա եկաւ, Գալիլեացիները ըն-
դունեցին նորան. տեսնելով այն
բոլորն, որ տօնին արաւ Երու-
սաղէմումը. Քանզի նորանք էլ ե-
կել էին այն տօնին ;
46 Եւ Յիսուս գարձեալ եկաւ
Գալիլեայի Կանան, ուր ջուրը գի-
նի արաւ. Մի թագաւորական
մարդ կար, որի որդին Կափառա-
47 նայումի մէջ հիւանդ էր ; Նա
լսելով թէ Յիսուս Հրեաստանից
եկել է Գալիլեա. եկաւ նորա մօտ
և աղաչում էր, որ իջնէ և իր որ-
դուն բժշկէ. վասնզի մեռնելու
48 մօտ էր ։ Յիսուս էլ նորան ա-
սաց, Եթէ նշաններ և հրաշքներ
49 չտեսանէք՝ չէք հաւատալ ։ Թագա-
ւորականը նորան ասաց. Տէր, ի-
ջիր գեռ քանի որ չէ մեռել տղաս
50 Յիսուս նորան ասաց. Գնա, քո
որդին կենդանի է. և մարդը հա-
ւատաց այն խօսքին՝ որ Յիսուս
51 նորան ասաց, և գնաց ։ Եւ գեռ
որ իջնում էր, նորա ծառաները
նորան դիմաւորեցին և սկսան
ասել և ասացին, թէ քո տղան
52 կենդանի է ։ Նա էլ նորանց հարց-
նում էր այն ժամի համար, ուր
սկսաց լաւանալ. և նորան ասա-
ցին, թէ երէկ ժամը եօթնին ան-
53 դը թողեց նորան ։ Այն ժամա-
նակ հայրն իմացաւ, թէ նոյն ժա-
մին է, որ Յիսուս նորան ասաց,
թէ քո որդին կենդանի է. և հա-
ւատաց ինքն և նորա բոլոր տու-
54 նը ։ Սա գարձեալ երկրորդ նշան
արաւ Յիսուս, երբոր Հրեաս-
տանից եկաւ Գալիլեա ։

Գ Լ · Ե

1 Սրանից յետոյ տօն էր Հրեա-

նների. և Յիսուս վեր եկաւ Երու-
սաղէմ ։ Եւ Երուսաղէմի մէջ Պրո- 2
պատիկէ ասուածի մօտ, որ Եբ-
րայեցերէն Բեթհզդա է կոչվում,
հինգ սրահ կայ ։ Նորանցում խոտո- 3
շատ հիւանդներ կային՝ սպասած.
կոյրեր, կաղեր, չորացածներ, որ
ջրի շարժելուն էին սպասում ։ Վա- 4
սընզի Տէրոջ հրեշտակը ժամանակ
ժամանակ վայր էր գալիս այն ա-
ւազանը և ջուրը շարժում. և ջրի
շարժուելուց յետոյ նորա մէջ ա-
ռաջ մտնողը բժշկվում էր՝ ինչ
հիւանդութիւն էլ որ ունենար ։
Եւ այն տեղ մի մարդ կար, որ երե- 5
սուն և ութ տարի էր հիւանդու-
թեան մէջ ։ Երբոր Յիսուս նորան 6
պառկած տեսաւ, և գիտաց, թէ
արդէն շատ ժամանակից է, նո-
րան ասաց. Կամենո՞ւմ ես ողջ
լինիլ ։ Հիւանդը պատասխանեց 7
նորան. Տէր, մարդ չունիմ, որ
երբոր ջուրերը շարժվում են՝ ինձ
աւազանի մէջ գցէ. և մինչև որ
ես գալիս եմ, ուրիշն ինձանից
առաջ իջնում է մէջը ։ Յիսուս 8
նորան ասաց. Վեր կաց, մահի-
ճըդ առ և մեռ ։ Եւ մարդն 9
խակոյն ողջացաւ, և վեր առաւ
իր մահիճը և մեռ էր գալիս. և
օրը շաբաթ էր ։ Հրեաները էլ ա- 10
սացին բժշկուածին. Շաբաթ է.
արժան չէ քեզ, որ մահիճդ վեր
առնես ։ Նա պատասխանեց նո- 11
րանց. Նա՝ որ ինձ բժշկեց, նա
ասաց ինձ. Մահիճդ առ և մեռ
ել ։ Արդ հարցրին նորան և ա- 12
սացին. Ո՞վ է այն մարդն, որ
քեզ ասաց. Մահիճդ առ և մեռ
ել ։ Բայց բժշկուածը չէր գիտում 13
թէ ո՞վ է. վասնզի Յիսուս այն
տեղի ամբոխի պատճառով խոյս
տուաւ ։ Սրանից յետոյ Յիսուս 14
նորան գտաւ տաճարումը և նո-
րան ասաց. Ահա ողջացար, այլ
ևս չմեղանչես, որ էլ աւելի
չար բան չլինի քեզ ։ Մարդը գնաց 15
և Հրեաներին պատմեց, թէ Յի-
սուսն է, որ նորան առողջացրել է ։
Եւ նորա համար Հրեաները Յի- 16
սուսին հալածում էին, և ուզում
էին նորան սպանել, որ շաբաթ
օրն անում էր այն բանը ։ Եւ Յի- 17

սուրը պատռախանեց նորանց. իմ Հայրը մինչև հիմա գործում է,
18 և ես էլ գործում եմ։ Ընդ հա- մար Հրէաները էլ աւելի ուզում էին սպանել նորան. որ ոչ թէ միայն շաբաթ օրն էր քանդում, այլ Աստուծոյն էլ իրան Հայր էր ասում, իր անձն Աստուծոյն
19 հաւասար անելով։ Յիսուսը պատասխանեց և ասաց նորանց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Որ Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չտեսանէ Հօրն անելիս. վասնզի ինչ որ նա անում է, հէնց Որդին էլ այն
20 բանը նորա նման է անում։ Վասընզի Հայրը սիրում է Որդոյն, և ամեն բան ցոյց է տալիս նորան, որ ինքն անում է, և սորանցից էլ աւելի մեծ մեծ գործքեր ցոյց կ'տայ նորան, որ դուք զարմա-
21 նաք։ Վասնզի ինչպէս որ Հայրը մեռելներին յարուցանում է և կենդանի անում, այնպէս էլ Որդին, որոնց որ կամենում է, կեն-
22 դանի է անում։ Վասնզի Հայրը ոչ մէկին էլ չէ դատում, այլ ամեն դատաստանը տուաւ Որ-
23 դոյն։ Որ ամենքը պատուեն Որդոյն, ինչպէս որ պատուում են Հօրը. Որդոյն չպատուողը Հօրն էլ չէ պատուում, որ ուղարկեց
24 նորան։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ իմ խօսքիս լսողը, և ինձ ուղարկողին հաւատացողը, յաւիտենական կեանք ունի. և դատաստան չի մտնիլ, այլ մահիցը փոխուեցաւ դէպի
25 կեանք։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ ժամանակ կ'գայ և հիմա է, որ մեռելները Աստուծոյ Որդոյ ձայնը կ'լսեն, և
26 լսողները կ'ապրին։ Վասնզի ինչպէս որ Հայրն իր անձումը կեանք ունի, այնպէս էլ Որդոյն տուաւ որ իր անձումն կեանք ունենայ։
27 Եւ նորան իշխանութիւն տուաւ, որ դատաստան էլ անէ. որով-
28 հետև Որդի մարդոյ է. Սորա վերայ մի զարմանաք. որովհետև ժամանակ կ'գայ, որ ամենքն՝ որ գերեզմանների մէջն են, նորա
29 ձայնը կ'լսեն, Եւ դուրս կ'գան,

նորանք, որ բարի են գործել, դէպի կենաց յարութիւնը, և նորանք, որ չար են արել, դէպի դատաստանի յարութիւնը։ Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. ինչպէս լսում եմ այնպէս եմ դատում, և իմ դատաստանն արդար է. քանզի իմ կամքը չեմ որնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը։ Եթէ ես ինձ համար վկայեմ, իմ վկայութիւնը ճշմարիտ չէ։ Ուրիշն է որ ինձ համար վկայում է. և գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը, որ վկայում է ինձ համար։ Դուք ուղարկեցիք Յօհաննէսի մօտ. և նա վկայութիւն տուաւ ճշմարտութեանը։ Բայց ես ոչ թէ մարդկանցից եմ առնում վկայութիւնը. այլ այս ասում եմ, որ դուք ապրիք։ Նա այն ճրագն էր՝ որ վառվում էր և լոյս էր տալիս. և դուք կամեցաք մի ա՛ժամանակ ուրախանալ նորա լուսովը։ Բայց ես աւելի մեծ վկայութիւն ունիմ քան թէ Յօհաննէսը, այսինքն այն գործքերն, որ Հայրն ինձ տուաւ, որ կատարեմ նորանց. նոյն այն գործքերն՝ որ գործում եմ, ինձ համար վկայում են, թէ Հայրն ուղարկեց ինձ։ Եւ ինձ ուղարկող Հայրն ինքն ինձ համար վկայեց. դուք ոչ նորա ձայնը լսեցիք երբէք, և ոչ նորա կերպարանքը տեսաք. Եւ ոչ նորա խօսքն ունիք բնակած ձեզանում. վասնզի այն որ նա ուղարկեց, դուք չէք հաւատում նորան։ Քննեցէք գրքերն. որ դուք կարծում էք թէ նորանցով կեանք՝ յաւիտենական կեանք՝ և նորանք են, որ ինձ համար վկայում են։ Եւ չէք կամենում ինձ մօտ գալ, որ կեանք ունենայք։ Ես մարդկանցից փառք չեմ առնում։ Բայց ճանաչում եմ ձեզ, որ Աստուծոյ սէրը չունիք ձեր անձերումը։ Ես իմ Հօր անունովն եկայ, և ինձ չէք ընդունում. եթէ ուրիշը գայ իր անունովն, նորան կ'ընդունիք։ Ինչպէս կարող էք դուք հաւատալ, որ իրարից էք փառք առնում, և այն փառքն որ միայն Աստուածանից

45 է, չէք որանում Մի կարծէք,
թէ ես Հօր մօտ կ'չարախօսեմ
ձեզանից. կայ ՄԷՆ որ ձեզանից
չարախօսում է՝ Մովսէսն, որի վե-
րայ դուք ձեր յոյսը դրել էք։
46 Վասնզի եթէ դուք Մովսէսին հա-
ւատայիք, ինձ էլ կ'հաւատայիք.
քանզի նա ինձ համար գրեց։
47 Բայց եթէ նորա գրքերին չէք
հաւատում, ինչպէս իմ խօսքե-
րին կ'հաւատաք։

ԳԼ. Զ

1 Ապանից յետոյ գնաց Յիսուսը
Գալիլեայի Տիբերիա ծովի միւս
2 կողմը։ Եւ շատ ժողովուրդ գը-
նում էր նորա հետից. որովհետև
տեսնում էին նորա նշաններն, որ
անում էր հիւանդների վերայ։
3 Յիսուսն էլ վեր եկաւ լեռնը, և
նստեց իր աշակերտների հետ այն-
4 տեղ։ Եւ Հրէաների զատիկ ժամը
մօտ էր։
5 Յիսուսն էլ իր աչքերը բարձ-
րացրեց և տեսաւ, որ շատ ժո-
ղովուրդ էր գալիս իրան մօտ. ա-
սաց Փիլիպպոսին. Ո՞նէ տեղից
հաց առնենք, որ դորանք ուտեն
6 Բայց այս ասաց՝ նորան փորձե-
լով. վասնզի ինքն գիտէր, թէ
7 ինչ պիտի անէր։ Փիլիպպոսը պա-
տասխանեց նորան. Երկու հա-
րիւր դահեկանի հաց բաւական
չէ դորանից, որ դորանից ամեն
8 մէկը մի քիչ առնէ։ Նորա աշա-
կերտներից մէկն, Անդրէասը՝ վէմ
Սիմոնի եղբայրն՝ ասաց նորան.
9 Այս տեղ մէկ տղայ կայ, որ հինգ
գարի հաց ունի և երկու փոքր
ձուկ. բայց սա ի՞նչ է այդ չափ
10 մարդկանց համար։ Յիսուսն էլ
ասաց. Մարդկանցը նստեցրէք. և
շատ խոտ կար այն տեղը. և մար-
դիկը նստեցան համարով իբր հինգ
11 հազար։ Եւ Յիսուսը հացերն ա-
ռաւ՝ գոհացաւ և բաժանեց ա-
շակերտներին, և աշակերտներն
էլ նստողներին. նոյնպէս էլ ձըկ-
12 ներիցը որչափ որ կամեցան։ Եւ
երբոր կշտացան, ասաց իր աշա-
կերտներին. ժողովեցէք աւելցած
13 կտորները՝ որ բան չկորչի։ Եւ
ժողովեցին, և կտորներից տասն
երկու կողով լցրին այն հինգ գա-
րէ հացից, որ ուտողներից ա-
ւելացաւ։ Բայց մարդիկն երբոր 14
տեսան այն նշանն որ արաւ Յի-
սուսը, ասում էին՝ թէ Սա է
ճշմարտապէս այն մարգարէն որ
պիտի աշխարհք գար։ Յիսուսն 15
էլ իմանալով թէ գալու են իրան
յափշտակելու, որ թագաւոր շի-
նեն իրան, դարձեալ գնաց լեռ-
ը մէնակ։ Եւ երբոր իրիկուն 16
եղաւ, նորա աշակերտները իջան
ծովի եզերը և նաւը մտնելով գնա- 17
ցին ծովի այն կողմը՝ Կափառնա-
յում. և արդէն մթնցել էր, և
Յիսուսը չէր եկել նորանց մօտ։
Եւ ծովն էլ սաստիկ քամու փչե- 18
լուցը յուզվում էր։ Եւ երբոր 19
քսան և հինգ կամ երեսուն ա-
րաբէի չափ առաջ գնացել էին,
տեսան Յիսուսին ծովի վերայ գա-
լիս, որ նաւին մօտենում էր և
վախեցան։ Նա էլ ասաց նորանց. 20
Ես եմ մի վախենաք։ Եւ կամե- 21
նում էին նորան ընդունել նաւի
մէջ. և նաւը շուտով հասաւ այն
երկիրն, որ գնում էին։

Հետևեալ օրն այն ժողովուր- 22
դը, որ ծովի այն կողմն էր, տես-
նելով որ ուրիշ նաւ չկար այն
տեղ մէկից ջոկ՝ որ նորա աշա-
կերտները նորա մէջ մտան. և որ
Յիսուսը իր աշակերտների հետ
նաւը չէր մտած, բայց միայն նո-
րա աշակերտները գնացին։ Բայց 23
Տիբերեայից ուրիշ նաւեր եկան
այն տեղի մօտ, ուր հացը կերան
Տիրոջ գոհանալովը։ Արդ երբոր 24
ժողովուրդը տեսաւ, որ Յիսուսն
այն տեղ չէ, և ոչ էլ նորա աշա-
կերտները. իրանք էլ նաւերը
մտան և եկան Կափառնայում,
Յիսուսին որոնելով։ Եւ երբոր նո- 25
րան ծովի այն կողմին գտան, նո-
րան ասացին. Ռաբբի, ե՞րբ եկար
այս տեղ։ Յիսուսը պատասխա- 26
նեց նորանց և՝ ասաց. Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ. Դուք
ինձ որոնում էք՝ ոչ թէ նորա հա-
մար որ նշաններ տեսաք, բայց որ
հացիցը կերաք և կշտացաք։ Գոր- 27
ծեցէք ոչ թէ կորչելու կերա-

կուրը, այլ այն կերակուրն, որ
մնացող է յաւիտենական կեան-
քի մէջ, որ Որդին մարդոյ կ'տայ
ձեզ. վասնզի Աստուած Հայրը
28 կնքեց նորան։ Ասդ նորան ասա-
ցին. Ի՞նչ անենք, որ Աստուծոյ
29 գործքերը գործենք։ Յիսուս էլ
պատասխանեց և նորանց ասաց.
Սա է Աստուծոյ գործը, որ հա-
ւատաք նորան, որին նա ուղար-
30 կեց։ Եւ նորան ասացին. Ապա
դու ի՞նչ նշան ես անում, որ
տեսնենք և հաւատանք, ի՞նչ ես
31 գործում։ Մեր հարքն անապա-
տումը մանանայ կերան. ինչպէս
գրուած է Թէ՝ Երկնքից հաց տուաւ
32 նորանց ուտելու։ Յիսուս էլ նո-
րանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ. Ոչ թէ Մովսէսը
տուաւ ձեզ այն հացը երկնքից, այլ
իմ Հայրը տալիս է ձեզ երկնքից
33 ճշմարիտ հացը։ Վասնզի Աստու-
ծոյ հացը նա է՝ որ երկնքից է
իջնում, և որ աշխարհքին կեանք
34 է տալիս։ Նորանք էլ ասացին.
Տէր, ամեն ժամանակ տուր մեզ
35 այդ հացը։ Յիսուս էլ նորանց
ասաց. Ես եմ կենաց հացը. ինձ
մօտ եկողը չի սովել, և ինձ հա-
ւատացողը երբէք չի ծարաւել։
36 Բայց ասացի ձեզ, Թէ տեսաք էլ
37 ինձ, և չէք հաւատում։ Ամեն ա-
մենը որ Հայրն ինձ է տալիս, ինձ
մօտ կ'գայ. և ինձ մօտ եկողին
38 դուրս չեմ հանիլ։ Քանզի ես ի-
ջայ երկնքից, որ ոչ Թէ իմ
կամքն անեմ, այլ ինձ ուղարկո-
39 ղի կամքը։ Սա է ինձ ուղարկող
Հօր կամքը, որ այն ամենն որ նա
ինձ տուաւ. նորանից չկորցնեմ.
այլ յետին օրումը յարուցանեմ
40 նորան։ Եւ սա է ինձ ուղարկողի
կամքն, որ ամեն ով որ տեսնէ
Որդին և հաւատայ նորան, յա-
ւիտենական կեանք ունենայ. և
ես յետին օրումը կ'յարուցանեմ
նորան։
41 Հրէաներն էլ տրտնջում էին նո-
րանից, որ ասաց, Թէ Ես եմ եր-
42 կնքից իջած հացը։ Եւ ասում
էին. Չէ՞ որ սա Յիսուս է Յո-
սէփի որդին, որի հօրը և մօրը
ճանաչում ենք. ապա սա ինչպէս
43 է ասում, Ես երկնքից եմ իջել։
Յիսուս էլ պատասխանեց և ա-
սաց նորանց. Մի տրտնջաք իրար
44 հետ։ Ոչ ով կարող չէ ինձ մօտ
գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ուղար-
կեց չ'քաշէ նորան. և ես յետին
օրումը կ'յարուցանեմ նորան։
45 Գրուած է մարգարէների մէջ Թէ՝
Եւ ամենքն Աստուածանից սովո-
րած կ'լինին. որդ ամեն ով որ
Հօրից լսում և սովորում է, գա-
46 լիս է ինձ մօտ։ Իրր չէ Թէ մէկը
տեսել է Հօրն. բայց միայն նա,
որ Աստուածանից է. նա տեսել
47 է Հօրը։ Ճշմարիտ ճշմարիտ ա-
սում եմ ձեզ. Ինձ հաւատացողը
յաւիտենական կեանք ունի. Ես
48 եմ կենաց հացը։ Ձեր հարքը մա-
49 նանան կերան անապատումը, և
մեռան։ Սա է այն հացն, որ եր-
50 կնքից է իջնում որ եթէ մէկը
ուրանից ուտէ, չի մեռնիլ։ Ես
51 եմ կենդանի հացն, որ երկնքից
է իջել։ Եթէ մէկն այս հացից
52 ուտէ, յաւիտեան կ'ապրի. և այն
հացն՝ որ ես կ'տամ՝ իմ մարմինն
է, որ ես նորան աշխարհքի կե-
նաց համար կ'տամ։
Հրէաներն էլ իրար հետ կըռ- 53
ւում էին և ասում. Սա ի՞նչպէս
կարող է իր մարմինը տալ մեզ
ուտելու համար։ Յիսուս էլ նո- 54
րանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ, Եթէ Որդոյ մար-
դոյ մարմինը չուտէք և նորա ա-
րիւնը չ'խմէք, կեանք չունիք ձեր
անձերումը։ Իմ մարմինը ուտողը 55
և իմ արիւնը խմողը յաւիտեան
կեանք ունի. և ես յետին
օրումը կ'յարուցանեմ նորան։
Վասնզի իմ մարմինը ճշմարտա- 56
պէս կերակուր է, և իմ արիւնը
ճշմարտապէս խմելիք է։ Իմ մար- 57
մինն ուտողը և իմ արիւնը խմո-
ղը մնում է ինձանում, և ես նո-
րանում։ Ինչպէս ինձ ուղարկեց 58
կենդանի Հայրը, և ես կենդա-
նի եմ Հօր համար. այնպէս
էլ նա որ ինձ ուտում է, կեն-
դանի կ'լինի ինձ համար։ Սա է 59
այն հացն՝ որ երկնքից է իջել.
ոչ Թէ ինչպէս ձեր հարքը մանա-
նան կերան և մեռան. այս հացն

ուտողը յաւիտեան կ'ապրի։
60 Այս ասաց ժողովարանուն երբ որ կափառնայուն մէջ սովրեցնում էր։
61 Եւ նորա աշակերտներից շատերը որ լսեցին, ասացին. Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել
62 դորան։ Բայց երբոր Յիսուսը գիտաց իր անձնուն, թէ իր աշակերտները տրտնջում էին դորա համար, նորանց ասաց. Դա՞ է
63 գայթակղեցնում ձեզ։ Ապա եթէ Որդին մարդոյ տեանէք՝ վեր դնալիս, ուր առաջ էր։ Հոգին է կեն-
64 դանացնողը, մարմինը ոչինչ օգուտ չէ տալիս. այն բանն որ ես ձեզ հետ խօսեցի, հոգի է և կեանք
65 է։ Բայց ձեզանից կան ոմանք, որ չեն հաւատում, վասնզի Յիսուսը սկզբից գիտէր, ո՞վ են չհաւատացողները, և ով է նա՝
66 որ պիտի մատնէր իրան։ Եւ ասաց. Նորա համար ասացի ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ իմ Հօրից տրուած չլինի նորան։
67 Սորանից յետոյ նորա աշակերտներից շատերը յետ գնացին, և այլևս մեան չէին գալիս նորա
68 հետ։ Յիսուսն էլ ասաց այն տասներկուսին, Միթէ դուք էլ
69 ուզում էք գնալ։ Սիմոն Պետրոսն էլ պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յաւիտենական կենաց խօսքեր ունիս
70 դու։ Եւ մենք հաւատացինք և ճանաչեցինք, թէ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին
71 Յիսուսը պատասխանեց նորանց. Չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ ընտրեցի, և ձեզանից մէկը սատանայ է։ Եւ սա Իսկարիովտացի
72 Սիմոնեան Յուդային էր ասում. քանզի նա էր մատնելու նորան. և ինքը տասներկուսից մէկն էր։

ԳԼ. Է

1 Եւ սորանից յետոյ Յիսուսը մեան էր գալիս Գալիլեայի մէջ. վասնզի չէր կամենում Հրէաստանումը մեան գալ, որովհետև Հրէաները որոնում էին սպանել նորան։

2 Եւ Հրէաների տաղաւարատօնացն մօտիկ էր։ Եւ նորա եղ-
3 բայրներն ասացին նորան. Սա տեղից դուրս եկ և գնա Հրէաստան, որ քո աշակերտներն էլ տեանեն քո գործքերը, որ գոր-
4 ծում ես. վասնզի ոչ ով չկայ որ թաքուն մի բան անէ, և ուզէ ճանաչուած լինել, եթէ դու այդ բանները գործում ես, քո անձը յայտնիր աշխարհքին։
5 Որով-
6 հետև իր եղբայրներն էլ չէին հաւատում նորան։ Յիսուս էլ ասաց նորանց. Իմ ժամանակը դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։
7 Աշխարհքը կարող չէ ձեզ ատել. բայց ինձ ատում է, վասնզի ես նորա համար վկայում եմ, թէ նորա գործքերը չար են։
8 Դուք գնացէք այն տօնը, ես դեռ չեմ գնում այն տօնը, որովհետև իմ ժամանակը դեռ լրացած չէ։
9 Սա որ նորանց ասաց, մնաց Գալիլեայում։
10 Երբոր նորա եղբայրները գնացին, այն ժամանակ ինքն էլ գնաց այն տօնը, ոչ թէ յայտնի, այլ իբր գաղտնաբար։

11 Եւ Հրէաները որոնում էին նորան այն տօնումը և ասում, Ո՞ր տեղ է նա։
12 Եւ ժողովրդոց մէջ շատ զրոյցք կար՝ նորա համար. ոմանք ասում էին, թէ բարի մարդ է. ուրիշներն էլ ասում էին. Ոչ, այլ ժողովրդին մոլորեցնում է։
13 Սակայն ոչ ով համարձակ չէր խօսում նորա վերայ՝ Հրէից վախի համար։

14 Եւ երբոր տօնն արդէն կէս եղաւ, Յիսուսը վեր ելաւ տաճարը և սովորեցնում էր։
15 Եւ Հրէաները զարմանում էին և ասում. Սա ի՞նչպէս է դիտում գրքերը, առանց սովորած լինելու։
16 Յիսուսը պատասխանեց նորանց և ասաց. Իմ վարդապետութիւնն իմս չէ, այլ ինձ ուղարկողինն է։
17 Եթէ մէկը կամենում է նորա կամքն անել, նա կ'իմանայ այս վարդապետութեան համար, թէ արդեօք Աստուածմանի՞ց է, կամ եթէ ես իմ անձից եմ խօսում։
18 Իր անձից խօսողը, իր անձի

փառքն է որոնում. բայց նա որ
իրան ուղարկողի փառքն է որո-
նում, նա ճշմարիտ է և անիրաւու-
19 թիւն չկայ նորանում: Չէ՞ որ Մով-
սէս տուաւ ձեզ օրէնքը, և ձեզ-
ջանից ոչ ոք չէ կատարում օ-
20 րէնքը: Ի՞նչու էք ուզում ինձ
սպանել: Ժողովուրդը պատաս-
խանեց և ասաց. Դեւ ունիս. ո՞վ
21 է ուզում քեզ սպանել: Յիսու-
սը պատասխանեց և ասաց նո-
րանց. Մէկ գործ գործեցի, և
22 ամէնքդ զարմացել էք: Նորա
համար Մովսէս ձեզ տուաւ թլփ-
տութիւնը, (ոչ թէ Մովսէսի-
ցըն է, այլ հայրերիցը.) և շա-
բաթ օրը մարդ էք թլփատում:
23 Եթէ մարդ շաբաթ օրուայն թլփ-
տութիւն է ընդունում, որ
Մովսէսի օրէնքը չ'քանդուի, ինձ
բարկանո՞ւմ էք, որ ես ամբողջ
24 մարդ բժշկեցի շաբաթ օրը: Ա-
րէք երեւութով մի դատէք, այլ
ուղիղ դատաստան արէք:
25 Արդ երուսաղէմացիներից ո-
մանք ասում էին. Չէ՞ որ սոնա
26 է, որին ուզում են սպանել: Եւ
ահա համարձակ խօսում է, և
ոչինչ չեն ասում դորան. մի գու-
ցէ իրաւ իշխաններն էլ իմացան,
որ սա է ճշմարտապէս Քրիստոսը:
27 Բայց սորան գիտենք, Թէ որ տե-
ղից է. իսկ Քրիստոսն երբոր գայ,
ոչ ոք չի գիտենալ Թէ որ տե-
28 ղից է: Յիսուսն էլ՝ մինչ ասւսր-
նում էր, որ տաճարումն ասելով՝ ինձ էլ էք գի-
տում և գիտում էլ էք Թէ ինչ
տեղից եմ. և ես իմ անձիցը չեմ ե-
կել. այլ ճշմարիտ է ինձ ուղարկո-
29 ղը, որին դուք չէք գիտում: Իսկ ես
գիտեմ նորան, վասնզի նորանից
30 եմ, և նա ուղարկեց ինձ: Եւ ու-
զում էին բռնել նորան. բայց ոչ
ոք ձեռք չ'ձգեց նորա վերայ, քան-
զի նորա ժամը դեռ չէր հասել:
31 Եւ ժողովրդից շատերը հաւատա-
ցին նորան և ասում էին. Թէ
Քրիստոս երբոր գայ, արդեօք
դորանցից աւելի նշաններ կ'անէ,
քան որ սա արաւ:
32 Եւ փարիսեցիները լսեցին ժո-
ղովրդից, որ այդ բաները արտըն-
ջում էին նորա համար. և փարի-
սեցիներն և քահանայապետներն
պատուիրներ ուղարկեցին, որ
բռնեն նորան: Յիսուս էլ ասաց 33
նորանց. Դեռ մի քիչ ժամանակ
ձեզ հետ եմ, և գնում եմ ինձ
ուղարկողի մօտ: Ինձ կ'որոնէք և 34
չէք գտնիլ, և որ տեղ որ ես եմ,
դուք չէք կարող գալ: Հրէաներն 35
էլ իրար ասացին. Դա ո՞ր տեղ
է գնալու, որ մենք չ'գտնենք դո-
րան. արդեօք Հելլենացրցրուած
ժողովուրդների մօտն է գնալու և
Հելլենացիներին է սովորեցնելու:
Ի՞նչ է այն խօսքն, որ ասաց. Կ՚ 36
ինձ կ'որոնէք և չէք գտնիլ, և
որտեղ որ ես եմ, դուք չէք կա-
րող գալ:
Եւ ամէն վերջին մեծ օրուայ Յի- 37
սուս կանգնած էր աղաղակեց և
ասաց. Եթէ մէկը ծարաւէ, թող
ինձ մօտ գայ, և խմէ: Ինձ հա- 38
ւատացողը, ինչպէս գիրքն ասում
է, նորա փորիցը կենդանի ջրերի
գետեր կ'րղխին: Սա ասաց Հո- 39
գոյն համար, որ ընդունելու էին
նորան հաւատացողները, քանզի
դեռ Հոգին Սուրբ տրուած չէր,
որովհետև Յիսուսը դեռ չ'էր փա-
ռաւորուած: Արդ ժողովրդից շա- 40
տերը, երբոր այս խօսքը լսեցին,
ասում էին. Սա ճշմարտապէս
այն մարգարէն է: Ուրիշներն ա- 41
սում էին. Սա Քրիստոսն է. և
էլ ուրիշներն ասում էին. Մի՞թէ
Քրիստոսը Գալիլեայիցը կ'գայ:
Չէ՞ որ գիրքն ասում է, Քրիստոս 42
Դաւթի սերունդիցը և Բեթղե-
հեմ գիւղիցը կ'գայ, որտեղ Դա-
ւիթն էր: Եւ տարաձայնութիւն 43
եղաւ ժողովրդի մէջ նորա համար:
Եւ նորանցից ոմանք կամեցան բռ- 44
նել նորան. Բայց ոչ ոք ձեռք
չ'ձգեց նորա վերայ:
Եւ սպասաւորները եկան քա- 45
հանայապետների և փարիսեցինե-
րի մօտ. և սորանք ասացին նո-
րանց. Ի՞նչու համար նորան չ'բե-
րիք: Սպասաւորները պատասխա- 46
նեցին. Երբէք մի մարդ այսպէս
չ'խօսեց ինչպէս այս մարդը: Փա- 47
րիսեցիքն էլ պատասխանեցին և
ասացին. Մի՞թէ դուք էլ մո-

48 լսուեցաք։ Մի՞թէ իշխաններիցն
կամ փարիսեցիներից մէկը հա-
49 ւատա՞ց նորան։ Այլ այդ ռա-
միկ ժողովուրդը, որ օրէնքը չէ
50 գիտում, անիծուած են։ Նիկո-
դիմոսը, որ գիշերը նորա մօտ էր
եկել, նորանցից մէկը լինելով. ա-
51 սաց նորանց. Մի՞թէ մեր օրէն-
քը մի մարդի դատում է, եթէ ա-
ռաջ չ'լսէ նորանից և չ'գիտե-
52 նայ, թէ ինչ է գործում։ Պա-
տասխանեցին և ասացին նորան.
Մի՞թէ դու էլ Գալիլեայից ես.
քննիր և տես, որ Գալիլեայից
53 մարգարէ դուրս չէ եկել։ Եւ ա-
մեն մէկը գնաց իր տունը։

ԳԼ. Ը

1 Եւ Յիսուս գնաց Ձիթենեաց
2 լեռը։ Եւ առաւօտանց դարձ-
եալ եկաւ տաճարը, և բոլոր ժո-
ղովուրդը նորա մօտ էր գալիս. և
նստած սովորեցնում էր նորանց։
3 Գրագիրները և փարիսեցիները մի
կին բերին նորա մօտ՝ շնութեան
մէջ բռնուած, և նորան մէջ տե-
4 ղը կանգնեցնելով. Նորան ասա-
ցին. Վարդապետ, այս կինը բռնու-
նուել է յայտնապէս շնանալիս։
5 Եւ օրէնքում Մովսէս պատուիրեց
մեզ, որ այսպիսիները քարկոծ-
ուին. Հիմա դու ի՞նչ ես ասում։
6 Բայց այս բանն ասում էին նո-
րան փորձելով, որ չարախօսեն
նորանից։ Բայց Յիսուս դէպի
ցած ծռուելով մատովը գրում
7 էր հողի վերայ։ Բայց երբոր ա-
պում էին հարցնելով նորան, վեր
նայեց՝ և ասաց. Ձեզանից ով որ
անմեղ է, թող առաջ նա քար
8 դցէ դորա վերայ։ Եւ դարձեալ
դէպի ցած ծռուելով գրում էր
9 հողի վերայ։ Նորանք էլ երբոր
այս լսեցին և իրանց խղճմտանքից
յանդիմանուելցան՝ մէկը մէկի ե-
տևից դուրս էին գնում. ծերե-
րից սկսած մինչև յետիններըը.
և Յիսուս միայն մնաց, և կինը
10 կանգնած մէջ տեղը։ Յիսուս էլ
վեր նայեց, ոչ ոքի չտեսաւ այն
կնկանից զատ, և ասաց նորան.
Ով կին, ո՞ւր են այն քո դա-
տաւորները. ոչ ով քեզ չդա-
տապարտե՞ց։ Նա էլ ասաց. Ոչ, 11
ով Տէր. և Յիսուս էլ ասաց
նորան. Ես էլ չեմ քեզ դատա-
պարտում. գնա, և այսուհետև
մեղք մի գործեր։

Արդ Յիսուս դարձեալ խօսեց 12
նորանց հետ և ասաց. Ես եմ
աշխարհի լոյսը. ով որ իմ ե-
տևից գայ, նա խաւարումը չի
գնալ, այլ կենաց լոյսը կ'ընդու-
նի։ Փարիսեցիները էլ ասացին 13
նորան. Դու քո անձի համար ես
վկայում. քո վկայութիւնը ճըշ-
մարիտ չէ։ Յիսուս պատասխա- 14
նեց և ասաց նորանց. Թէ և ես
վկայեմ իմ անձի համար, իմ
վկայութիւնը ճշմարիտ է. վասն-
զի գիտեմ թէ որտեղից եկայ և
որտեղ եմ գնում. բայց դուք չէք
գիտում, թէ որտեղից եմ գալիս, 15
և որտեղ եմ գնում։ Դուք քաո
մարմնոյ կը դատում. ես չեմ դա-
տում ոչ մէկին էլ։ Եւ եթէ ես 16
դատեմ էլ, իմ դատաստանը ճըշ-
մարիտ է. վասնզի ես միայն չեմ,
այլ ես և ինձ ուղարկող Հայրը։
Եւ ձեր օրէնքումն էլ գրուած է, 17
թէ երկու մարդկանց վկայութիւ-
նը ճշմարիտ է։ Ես եմ, որ ինձ 18
համար վկայում եմ, և վկայում
է ինձ համար ինձ ուղարկող Հայ-
րը։ Եւ ասում էին նորան. Ո՞ւր 19
է քո Հայրը. Յիսուս պատաս-
խանեց. Ոչ ինձ էք գիտում, և
ոչ իմ Հօրը. եթէ ինձ գիտենա-
յիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք։

Այս բանը Յիսուս գանձատան 20
մէջ խօսեց նորանց հետ տաճա-
րում ուսուցանելիս. և ոչ ով
չբռնեց նորան, վասնզի դեռ նո-
րա ժամը չէր հասել։

Յիսուս դարձեալ ասաց նո- 21
րանց. Ես գնում եմ, և ինձ կ'ո-
րոնէք. և ձեր մեղաց մէջ կ'մեռ-
նիք. որ տեղ որ ես եմ գնում,
դուք չէք կարող գալ։ Հրեանե- 22
րըն էլ ասում էին. Միթէ ի՞նքն
իրան կ'սպանէ, որ ասում է, Թէ
Որտեղ որ ես եմ գնում, դուք չէք
կարող գալ։ Եւ ասաց նորանց. 23
Դուք ներքևիցն էք, ես վերևիցն
եմ. դուք այս աշխարհքիցն էք,

24 ես այս աշխարհքիցը չեմ, Ա՛րդ
ասացի ձեզ, թէ Ձեր մեղաց մէջ
կ՚մեռնիք. քանզի եթէ չ՚հաւա-
տաք թէ ես եմ, ձեր մեղաց մէջ
25 կ՚մեռնիք։ Եւ ասացին նորան.
Դու ո՞վ ես. և Յիսուսը ասաց
նորանց. Առաջ այն, որ խօսում
26 էլ եմ ձեզ հետ։ Շատ բան ու-
նիմ ձեզ համար խօսելու և դա-
տելու. բայց ինձ ուղարկողը ճըշ-
մարիտ է. և ես ինչ որ նորանից
լսեցի, այն եմ խօսում աշխարհքի
27 մէջ։ Չիմացան, թէ Հօր համար
էր ասում նորանց։
28 Յիսուսն էլ ասաց նորանց.
Երբոր Որդին մարդոյ կ՚բարձրա-
ցընէք, այն ժամանակ կ՚իմանաք,
թէ ես եմ. և իմ անձինցն ոչինչ
չեմ անում. այլ ինչպէս իմ Հայ-
րը սովորեցրեց ինձ, այն եմ խօ-
29 սում։ Եւ ինձ ուղարկողն ինձ
հետ է. ինձ մէնակ չէ թողել
Հայրը, վասնզի ես միշտ նորան
հաճելի բաներն եմ անում.
30 Երբոր նա այս բաները խօսում
էր, շատերը հաւատացին նորան։
31 Եւ Յիսուսը իրան հաւատացած
Հրէաներին ասաց. Եթէ դուք
իմ խօսքի մէջ կենաք, ճշմարտա-
32 պէս իմ աշակերտներն էք։ Եւ ճըշ-
մարտութիւնը կ՚ճանաչէք. և ճըշ-
33 մարտութիւնը կ՚ազատէ ձեզ։ Պա-
տասխանեցին նորան. Մենք Ա-
բրահամի զաւակ ենք, և ոչ ոքի
երբէք չենք ծառայել. դու ի՞նչ-
պէս ես ասում, թէ ազատ կ՚լի-
34 նիք։ Յիսուսը պատասխանեց նո-
րանց. Ճշմարիտն ճշմարիտ ա-
սում եմ ձեզ, թէ Ամէն ով որ
մեղք է գործում, մեղքի ծա-
35 ռայ է։ Ծառան էլ յաւիտեան
չի կենում տան մէջ. որդին կե-
36 նում է յաւիտեան։ Ուրեմն ե-
թէ Որդին ազատէ ձեզ, յիրա-
37 ւի ազատ կ՚լինիք։ Գիտեմ որ Ա-
բրահամի զաւակ էք. բայց ու-
զում էք ինձ սպանել. վասնզի իմ
38 խօսքը տեղ չունի ձեզանում։ Ես
ինչ որ տեսայ իմ Հօր մօտ, խօ-
սում եմ. և դուք՝ ինչ որ ձեր
39 հօրից էք տեսաք, անում էք։ Պա-
տասխանեցին և ասացին նորան.
Մեր Հայրն Աբրահամն է. Յիսու-
սը նորանց ասաց. Եթէ Աբրահա-
մի որդիք լինէիք, Աբրահամի
գործքերը կ՚գործէիք։ Բայց հիմա 40
ուզում էք ինձ սպանել, մի մար-
դի, որ ճշմարտութիւնն եմ խօ-
սել ձեզ. որ Աստուածմանից լսե-
ցի. այդ բանն Աբրահամ չ՚ա-
րաւ։ Դուք ձեր հօր գործքերն էք 41
անում. և ասացին նորան. Մենք
պոռնկութիւնից չենք ծնուած.
մէկ Հայր ունինք, այն Աս-
ուած։ Յիսուսն էլ նորանց ասաց. 42
Եթէ ձեր Հայրն Աստուած լինէր,
ինձ կ՚սիրէիք. վասնզի ես Աս-
ուածմանից դուրս ելայ և եկայ.
որովհետև ոչ թէ իմ անձից եկայ,
այլ նա ուղարկեց ինձ։ Ինչո՞ւ 43
համար իմ խօսքը չէք իմանում.
նորա համար որ դուք չէք կարող
իմ խօսքը լսել։ Դուք սատանայ 44
հօրից էք, և կամենում էք ձեր
հօր ցանկութիւններն անել. նա
սկզբից մարդասպան էր, և ճըշ-
մարտութեան մէջ չ՚կեցաւ, ո-
րովհետև ճշմարտութիւն չ՚կայ նո-
րանում. երբոր սուտն է խօսում,
իրաններից է խօսում, քանզի
սուտասան է և նորա (սուտեան)
Հայրը։ Բայց ես, որովհետև ճըշ- 45
մարտութիւն եմ խօսում, ինձ
չէք հաւատում։ Ձեզանից ո՞վ կա- 46
րող է ինձ մեղաց համար յանդի-
մանել. բայց եթէ ճշմարտութիւ-
նըն եմ սուտ, ինչո՞ւ չէք հաւա-
տում ինձ։ Աստուածմանից լինողը 47
Աստուծոյ խօսքերը լսում է. նո-
րա համար դուք չէք ականջ դը-
նում, որ Աստուածմանից չէք։
Հրէաները պատասխանեցին և ա- 48
սացին նորան. Չէ՞ որ մենք լա-
ւ ենք ասում, թէ դու Սամարացի
ես, և դև ունիս։ Յիսուսը պա- 49
տասխանեց. Ես դև չունիմ, այլ
իմ Հօրը պատուում եմ, և դուք
անպատուում էք ինձ։ Եւ ես իմ 50
փառքը չեմ որոնում. կայ որոն-
ղը և դատողը։ Ճշմարիտն ճշմա- 51
րիտ ասում եմ ձեզ. Եթէ մէկն
իմ խօսքը պահէ, նա մահ չի տես-
նիլ յաւիտեան։ Հրէաներն էլ 52
ասացին նորան. Հիմա իմացանք,
որ դև ունիս. Աբրահամը մեռաւ
և մարգարէներն էլ. և դու ա-

սում ես, Եթէ մէկն իմ խօսքը
պահէ, մահ չի ճաշակիլ յա-
53 հետեան։ Մի՞թէ դու աւելի մեծ
ես քան մեր Հայր Աբրահամը,
որ մեռաւ և մարգարէներն էլ
մեռան. դու քեզ ո՞վ ես անում։
54 Յիսուսը պատասխանեց. Եթէ ես
իմ անձը փառաւորեմ, իմ փառ-
քը ոչինչ է. Հայրն է ինձ փա-
ռաւորողը, որի համար դուք ա-
սում էք, թէ Ձեր Աստուածն է.
55 Եւ չէք ճանաչում նորան. Բայց
ես գիտում եմ նորան. և եթէ
ասեմ, թէ չեմ գիտում նորան,
ձեզ նման կ'լինիմ ստախօս. բայց
գիտում եմ նորան, և նորա խօս-
56 քը պահում եմ։ Աբրահամ՝ ձեր
Հայրը ցնծաձաղաւ, որ իմ օրը
տեսնէ, և տեսաւ, և ուրախա-
57 ցաւ էլ։ Հրէաները նորան ասա-
ցին. Դու դեռ չիսան տարեկան
58 չես, և Աբրահամի՞ն տեսար։ Յի-
սուսը նորանց ասաց. Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ. Ա-
բրահամի լինելուցն առաջ եմ ես։
59 Եւ քարեր վեր առան, որ նորա
վերայ ձգեն. Բայց Յիսուսը ծած-
կուեցաւ, և դուրս ելաւ գնաց
տաճարից՝ նորանց միջովն անց-
նելով. և այսպէս գնաց հեռա-
ցաւ։

ԳԼ. Թ

1 Եւ անցկենալիս մի մարդ տե-
2 սաւ կոյր ի ծնէ։ Եւ նորա աշա-
կերտները հարցրին նորան և ա-
սացին. Ռաբբի, ո՞վ է մեղան-
չել, ա՞ թէ իր ծնո՞ղքը, որ կոյր
3 ծնուեցաւ։ Յիսուսը պատասխա-
նեց. Ոչ դա է մեղանչել, և ոչ
էլ իր ծնողքը. այլ որ Աստու-
ծոյ գործքերը յայտնի լինին դո-
4 րանում։ Ինձ պէտք է նորա գործ-
քերը գործել, որ ինձ ուղարկեց,
մինչև որ օր կայ. գիշերը գալիս
է, որ այն ժամանակ ոչ ոք կա-
5 րող չէ գործել։ Քանի որ աշ-
խարհքումն եմ, լոյս եմ աշխարհ-
6 քի. Այս ասելով թքեց գետինը,
և թքելը ցեխ շինեց, և ցեխը քս-
7 եց կոյրի աչքերի վերայ, Եւ նո-
րան ասաց. Գնա՝ լուացուիր Սե-

լոամայ աւազանումը, որ թարգ-
մանվում է՝ ուղարկուած. և գնաց
լուացուեցաւ, եկաւ և տեսանում
էր։ Բայց դրացիները և նորանք 8
որ առաջուց տեսել էին նորան,
որ կոյր էր, ասում էին՝ Չէ՞ որ
սա է այն նստող մուրացողը. Ո- 9
րիշներն ասում էին, թէ Նա է.
ուրիշներն էլ, թէ Նորան նման
է. բայց ինքն ասում էր թէ Ես
եմ։ Եւ նորան ասում էին. Ա- 10
պա աչքերդ ի՞նչպէս բացուեցան։ Նա 11
պատասխանեց և ասաց. Մի մարդ՝
անունը Յիսուս, ցեխ շինեց և աչ-
քերիս քսեց, և ինձ ասաց. Գնա
Սելոամ աւազանը, և լուացուիր.
գնացի և լուացուեցայ, և տես-
նում եմ։ Եւ նորան ասացին. Ո՞ւր 12
է նա. ասաց. Չեմ գիտում։

Փարիսեցիների մօտ տարան նո- 13
րան, որ մի ժամանակ կոյր էր։
Եւ շաբաթ օր էր, երբոր Յիսու- 14
սը ցեխը շինեց և նորա աչքերը
բացաւ։ Փարիսեցիները դարձեալ 15
հարցնում էին նորան, թէ ի՞նչ-
պէս տեսաւ. և նա նորանց ա-
սաց. Ցեխ դրաւ իմ աչքերի վե-
րայ, և լուացուեցայ, և տես-
նում եմ։ Եւ Փարիսեցիներից 16
ոմանք ասացին. Այն մարդն Ա-
ստուածմանից չէ, վասնզի շաբա-
թը չէ պահում. ուրիշներն ա-
սում էին, Ի՞նչպէս կարող է մի
մեղաւոր մարդ այսպիսի նշաններ
անել. և բաժանմունք կար նո-
րանց մէջ։ Դարձեալ ասացին 17
կոյրին. Դու ի՞նչ ես ասում նո-
րա համար, որ աչքերդ բացաւ.
և նա ասաց, թէ Մարգարէ է։
Եւ Հրէաները չէին հաւատում 18
նորա համար, թէ կոյր էր և բաց-
ուեցաւ. մինչև որ աչքը բաց-
ուածի ծնողքը կանչեցին. Նորանց 19
հարցրին և ասացին. Սո՞ է ձեր
որդին, որի համար ասում էք
դուք, թէ կոյր ծնուեցաւ. ապա
ի՞նչպէս է տեսանում հիմա։ Նորա 20
ծնողքն պատասխանեցին և ասա-
ցին. Գիտում ենք, որ սա է մեր
որդին, և թէ կոյր ծնուեցաւ.
Բայց թէ հիմա ի՞նչպէս է տես- 21
նում, չգիտենք կամ ո՞վ բացաւ
նորա աչքերը մենք չգիտենք. ինքն

չափահաս է. իրան հարցրէք. թող ինքն խօսի իրան համար։
22 Նորա ծնողքն այս ասացին, վասն|զի Հրէաներից վախենում էին. քանզի Հրէաները արդէն միասին որոշել էին, որ եթէ մէկը Քրիստոս դաւանէ նորան, ժողովա-
23 րանից դուրս լինի։ Նորա համար նորա ծնողքը ասացին, թէ Ինքն չափահաս է, իրանից հար-
24 ցրէք։ Յետոյ երկրորդ անգամ կանչեցին այն մարդուն, որ կոյր էր, և նորան ասացին. Աստուծոյ փառք տուր. մենք գիտենք,
25 որ այն մարդը մեղաւոր է։ Նա էլ պատասխանեց և ասաց. Թէ մեղաւոր է, ես չգիտեմ. մէկ բան եմ գիտում, որ կոյր էի և հիմա
26 տեսնում եմ։ Եւ դարձեալ ասացին նորան. Ինչ արաւ քեզ.
27 ինչպէս բացաւ աչքերդ։ Նորանց պատասխանեց. Արդէն ձեզ ասացի և չլսեցիք. ինչու էք դարձեալ կամենում լսել. մի՞թէ դուք էլ էք կամենում նորան աշակերտ
28 լինել։ Նորանք հայհոյեցին նորան և ասացին. Դու ես նորա աշակերտ. իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք։
29 Մենք գիտենք, որ Աստուած Մովսէսի հետ խօսեց. բայց սորան չենք գիտեմ,
30 թէ ո՛ր տեղից է։ Մարդը պատասխանեց և նորանց ասաց. Հէնց դա է զարմանալին որ դուք չէք գիտեմ, թէ ո՛ր տեղից է, և նա
31 իմ աչքերը բացաւ։ Եւ գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լսում. այլ եթէ մէկը աստուածապաշտ է և նորա կամքը կա-
32 տարում է, նորան լսում է։ Յաւիտենից հետէ չէ լսուած որ մէկը կոյր ծնուածի աչքերը բացաւ։
33 Եթէ սա Աստուածմանից չէր,
34 ոչինչ չէր կարող անել։ Պատասխանեցին և նորան ասացին. Դու բոլորովին մեղքի մէջ ես ծնուել, և դու ես մեզ սովորեցնում. և դուրս արին նորան։
35 Յիսուս լսեց, որ նորան դուրս արին. և նորան գտաւ և ասաց նորան. Դու հաւատո՞ւմ ես Աստուծոյ Որդուն։
36 Նա պատասխանեց և ասաց. Տէր, ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան։
37 Յիսուս էլ նորան ասաց. Տեսար էլ նորան, և քեզ հետ խօսողն էլ նա ինքն է։
38 Եւ նա ասաց. Հաւատում եմ, Տէր, և երկրպագեց նորան։
39 Եւ Յիսուս ասաց. Ես դատաստանի համար եկայ այս աշխարհքը, որ չտեսանողները տեսնեն, և տեսնողները կուրանան։
40 Եւ փարիսեցիներից ոմանք, որ նորա հետ էին, լսեցին այս, և ասացին նորան. Մի թէ մենք էլ կոյր ենք։
41 Յիսուս նորանց ասաց. Եթէ կոյր լինէիք, մեղք չէիք ունենալ. բայց հիմա ասում էք, թէ՝ Տեսնում ենք. նորա համար ձեր մեղքերը մնում են։

ԳԼ. Ժ

1 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ով որ դռնովն չէ մտնում ոչխարների գաւիթը, այլ ուրիշ կողմից է վեր ելնում, նա գող է և աւազակ։
2 Բայց դռնովը մտնողը, ոչխարների հովիւն է։
3 Դրա նորանք նորա համար բաց է անում. և ոչխարները նորա ձայնին լսում են, և իր ոչխարներն էրանց անունովը կանչում է, և նորանց դուրս է հանում։
4 Եւ երբոր իր ոչխարները դուրս է հանում, նորանց առջևից գնում է, և ոչխարները նորա ետևից գնում են. վասնզի նորա ձայնը ճանաչում են։
5 Բայց օտարի ետևից չեն գնում, այլ նորանից փախչում են, որովհետև օտարների ձայնը չեն ճանաչում։
6 Այս առակը Յիսուս ասաց նորանց. բայց նորանք չէին գիտեմ, թէ ինչ էր այն որ խօսում էր նորանց հետ։
7 Յիսուս դարձեալ նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ եմ ձեզ, թէ Ես եմ ոչխարների դուռը։
8 Ամենքն՝ որ ինձանից առաջ եկան, գողեր են և աւազակներ. և ոչխարներն էլ նորանց չլսեցին։
9 Ես եմ դուռը. եթէ մէկն ինձանով դէրս մտնէ, կ'ապրի. և կ'մտնէ և դուրս կ'գայ, և արօտ կ'գտնէ։
10 Գողն չէ գալիս, բայց միայն որ գողանայ և

ապանէ և կորցնէ. ես եկայ որ կեանք ունենան, և էլ աւելի ու-
11 նենան: Ես եմ բարի հովիւը. բարի հովիւն իր անձը դնում է
12 ոչխարների վերայ: Բայց վարձկա-նը որ հովիւ չէ, որ ոչխարներն իրը չեն. տեսնում է գայլին գա-լիս, և թողում է ոչխարներն և փախչում. և գայլը յափշտակում է նրանց և ցրւում է ոչխարնե-
13 րին: Եւ վարձկանն փախչում է, որովհետև վարձկան է, և ոչխար-
14 ների համար հոգս չունի: Ես եմ բարի հովիւը, և իմիններին ճա-նաչում եմ, և իմիններից էլ ճա-
15 նաչվում եմ: Ինչպես Հայրն է ինձ ճանաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը, և իմ անձը դնում եմ ոչ-
16 խարների համար: Եւ ուրիշ ոչ-խարներ էլ ունիմ, որ այս գա-ւիթինը չեն, և նրանց էլ պէտք է, որ բերեմ. և իմ ձայնին կ'լսեն, և մէկ հօտ և մէկ հովիւ կ'լինեն:
17 Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպէսզի դարձեալ առնեմ նորան:
18 Ոչ ոք նրան վեր չ'առնում ինձանից. այլ ես ինքս ինձանից եմ դնում նրան. իշխանութիւն ու-նիմ նրան դնելու և իշխանու-թիւն ունիմ նրան դարձեալ առնելու. այս պատուէրն առի
19 իմ Հօրիցը: Երդ դարձեալ բա-ժանմունք եղաւ Հրէից մէջ այս
20 խօսքերի համար: Եւ նրանցից շատերն ասում էին, թէ Դեւ ու-նի, և գժւում է. ինչո՞ւ էք ա-
21 կանջ դնում դորան: Ուրիշներն ասում էին. Այս խօսքերը դի-ւահարի խօսքեր չեն. միթէ դեւը կարող է կոյրի աչքերը բանալ:
22 Այն ժամանակ Երուսաղէմու-մը նորոգութիւք տօն եղաւ, և
23 ձմեռն էր: Եւ Յիսուս մտն էր գալիս տաճարումը Սողոմոնի սր-
24 հի մէջ: Հրէաներն էլ նորան շըր-ջապատեցին և ասացին նորան. Մինչև ե՞րբ մեր հոգիները թա-փում ես. եթէ դու ես Քրիստո-
25 սը, համարձակ ասիր մեզ: Յի-սուս պատասխանեց նորանց. Ա-սացի ձեզ, և չէք հաւատում. այն գործքերը որ իմ Հօր անու-նովը գործում եմ, նորանք վկա-յում են ինձ համար: Բայց դուք 26
չէք հաւատում. վասնզի իմ ոչ-խարներիցը չէք, ինչպէս որ ա-սացի ձեզ: Իմ ոչխարներն իմ ձայ- 27
նին լսում են, և ես ճանաչում եմ նորանց, և իմ ետևից գալիս են: Եւ ես յաւիտենական կեանք 28
եմ տալիս նորանց, և յաւիտեան չեն կորչիլ, և ոչ ով չի յափշ-տակիլ նորանց իմ ձեռքիցը: Իմ 29
Հայրն որ նորանց տուաւ ինձ, ա-մենից մեծ է, և ոչ ով կարող չէ իմ Հօր ձեռքիցն յափշտակել նորանց: Ես և Հայրը մէկ ենք: 30

Հրէաները դարձեալ քարեր վեր 31
առին, որ նորան քարկոծեն: Յի- 32
սուս նրանց պատասխանեց. Շատ բարի գործքեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցը. նորանցից ո՞ր գործի հա- 33
մար էք ինձ քարկոծում: Հրէա-նները պատասխանեցին և ասացին. Բարի գործքի համար քեզ չենք քարկոծում, այլ հայհոյութեան համար. և որ դու մարդ գոլով քո անձն Աստուած ես անում:
Յիսուս նրանց պատասխանեց. 34
Գրուած չէ՞ ձեր օրէնքումը, թէ Ես ասացի՝ Աստուածներ էք: Եթէ 35
նրանց Աստուածներ է ասում, որ Աստուծոյ խօսքն եղաւ նրանց, (և կարելի չէ որ գիրքը եղծանուի.)
Ա՞ր նորան որ Հայրը սրբեց և 36
ուղարկեց աշխարհք, դուք ասում էք, թէ հայհոյում ես, որ ա-սացի, թէ Աստուծոյ Որդի եմ:
Եթէ իմ Հօր գործքը չեմ գոր- 37
ծում, մի հաւատաք ինձ: Ապա 38
եթէ գործում եմ, թէ և ինձ էլ չ'հաւատաք, գոնե գործքերին հա-ւատացէք, որ ճանաչէք և հա-ւատաք, թէ Հայրն ինձանում է և ես նորա մէջ:

Դարձեալ ուզում էին նորան 39
բռնել, բայց նորանց ձեռքիցը դուրս եկաւ: Եւ դարձեալ գնաց 40
Յորդանանի այն կողմը, այն տե-ղը, որ Յովհաննէս էր առաջուց և մկրտում էր. և այնտեղ էր կե-նում: Եւ շատերը նորա մօտ ե- 41
կան և ասում էին. թէ Յովհան-նէսը ոչ մի նշան չ'գործեց: Բայց 42
բոլորն ինչ որ Յովհաննէսը նորա

համար ասաց, ճշմարիտ էր. և այնտեղ շատերը հաւատացին նորան:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ մի հիւանդ կար, անունը Ղազարոս, Բեթանեայից, Մարիամի և նորա քոյր Մարթայի գիւղից: 2 Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով օծեց և նորա ոտները սրբեց իր մազերովը. որի եղբայրը Ղազարոս հիւանդ էր: 3 Եւ նորա քոյրերն ուղարկեցին նորա մօտ և ասացին. Տէր, ահա նա՝ որին դու սիրում ես՝ հիւանդացել է: 4 Յիսուս էլ երբոր լսեց, ասաց. Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ, այլ Աստուծոյ փառաց համար. որ Որդին Աստուծոյ նորանով փառաւորուի: 5 Եւ Յիսուս սիրում էր Մարթային և նորա քրոջը և Ղազարոսին: 6 Եւ երբոր լսեց, թէ նա հիւանդ է, այն ժամանակ երկու օր մնաց այն տեղը, ուր էր: 7 Ապա նորանից յետոյ ասաց աշակերտներին. Եկէք գարձեալ գնանք Հրէաստան: 8 Աշակերտներն ասացին նորան. Ռաբբի, հիմա Հրէաները ուզում էին քեզ քարկոծել. և գարձեալ գնում ես այն տե՞ղ: 9 Յիսուս պատասխանեց. Չէ՞ որ օրը տասներկու ժամ ունի. եթէ մէկը ցերեկը մանի գայ, չի գայթակղիլ. վասնզի այս աշխարհքի լոյսը տեսնում է: 10 Իսկ եթէ մէկը գիշերը մանի գայ, կ'գայթակղի. որովհետև լոյս չկայ նորանում: 11 Այս ասաց, և սրանից յետոյ ասաց նորանց. Մեր Ղազարոս բարեկամը քնեց. բայց կ'գնամ, որ զարթնեցնեմ նորան: 12 Եւ նորա աշակերտներն ասացին նորան. Տէր, թէ որ քնել է կ'առողջանայ: 13 Բայց Յիսուսը նորա մահուան համար էր ասել. բայց նորանք կարծում էին, թէ քուն քնելու համար էր ասում: 14 Ապա ժամանակ Յիսուսը յայտնի ասաց նորանց. Ղազարոսը մեռաւ: 15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար, որ դուք հաւատաք ինձ, որ ես այն տեղ չէի. բայց գնանք նորա մօտ: 16 Եւ ասաց Թովմա (երկուորեակ կոչուածն) աշակերտակիցներին. Մենք էլ գնանք նորա հետ մեռնինք:

17 Յիսուսն էլ եկաւ՝ նորան արդէն չորս օր գերեզմանի մէջ դրուած գտաւ: 18 Եւ Բեթանիա մօտ էր Երուսաղէմին տասն և հինգ ստադիոնի չափով: 19 Եւ Հրէաներից շատերը եկել էին Մարթայի և Մարիամի մօտ, որ մխիթարեն նորանց իրանց եղբօր մասին: 20 Երբոր Մարթան լսեց, թէ Յիսուսը գալիս է, գնաց նորան դիմաւորելու. բայց Մարիամը տանը նստած էր: 21 Եւ ասաց Մարթան Յիսուսին. Տէր, եթէ այս տեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ: 22 Բայց հիմա էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուածանից խնդրես, Աստուած կ'տայ քեզ: 23 Յիսուսը նորան ասաց. Քո եղբայրը յարութիւն կ'առնէ: 24 Մարթան նորան ասաց. Գիտեմ որ յարութիւն կ'առնէ յարութիւնում՝ յետին օրը: 25 Յիսուսը նորան ասաց. Ես եմ յարութիւնը և կեանքը. ինձ հաւատացողը թէ և մեռնի էլ, կ'ապրի: 26 Եւ ամեն ով որ կենդանի է և ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնիլ. հաւատո՞ւմ ես սորան: 27 Նորան ասաց. Այո, Տէր, ես հաւատացել եմ, թէ դու ես Քրիստոսը Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք գայիր: 28 Եւ երբ որ այս ասաց, գնաց թաքուն կանչեց իր Մարիամ քրոջը, և ասաց. Վարդապետը եկել է և կանչում է քեզ: 29 Նա երբոր լսեց, շուտով վերկացաւ, և եկաւ նորա մօտ: 30 Յիսուս դեռ չէր եկել գիւղը, այլ այն տեղն էր, ուր Մարթան եկաւ նորա առջևը: 31 Բայց Հրէաները, որ տանը նորա հետ էին և նորան մխիթարում էին, երբոր Մարիամին տեսան, թէ շուտով վերկացաւ և գնաց, նորա ետևից գնացին. ասելով թէ գերեզմանն է գնում, որ այն տեղ լայ: 32 Բայց Մարիամ երբոր այն տեղ եկաւ, ուր Յիսուսն էր, և տեսաւ նորան

բան, նորա ոտներն բնկաւ և ա-
ասց նորան. Տէր, եթէ այս տեղ
լինէիր, իմ եղբայրը չէր մեռանել։
33 Յիսուս էլ երբոր նորան տեսաւ
որ լաց էր լինում, և նորա հետ
եկած Հրէաներն էլ՝ որ լաց էին
լինում, իր հոգովը խռովեցաւ
34 և յուզուեցաւ։ Եւ ասաց. Ո՞ւր
դրիք նորան. նորան ասացին.
35 Տէր, եկ և տես։ Յիսուսը ար-
36 տասուեց։ Հրէաներն ասում
էին. Տես ի՛նչպէս էր սիրում
37 նորան։ Նորանցից էլ ոմանք ա-
սում էին. Մի՞թէ սա որ կոյրի
աչքերը բացաւ, չէր կարող ա-
38 նել՝ որ սա էլ չմեռնի։ Եւ Յի-
սուսը դարձեալ խռոված եկաւ
գերեզմանը. և այն մի քարայր
էր, և մի քար նորա վերայ դըր-
39 ուած։ Յիսուսը ասաց. Առ քա-
րը վեր առէք. մեռելի քոյրը՝
Մարթան ասաց նորան. Տէր,
արդէն հոտած է. վասնզի չորս
40 օրուան է։ Յիսուսը նորան ասաց.
Չասացի՞ քեզ, որ եթէ հաւա-
տաս, Աստուծոյ փառքը կ'տես-
41 նես։ Եւ քարը վեր առին, ուր
որ մեռելը դրուած էր. Յիսուսն
էլ իր աչքերը դէպի վեր բարձ-
րացրեց և ասաց. Հայր, գոհանում
42 եմ քեզանից, որ ինձ լսեցիր։ Եւ
ես գիտէի, որ միշտ լսում ես ինձ.
բայց այս շրջակայ ժողովրդի հա-
մար ասացի, որ հաւատան թէ
43 դու ուղարկեցիր ինձ։ Եւ այս ա-
սելով մեծ ձայնով աղաղակեց.
44 Ղազարէ, եկ դուրս։ Եւ մեռե-
լը դուրս եկաւ՝ ոտներն և ձեռ-
ները պատանով կապած, և երե-
սը վարշամակով պատած։ Յի-
սուսը նորանց ասաց. Արձակեց-
եք գրան, և թողէք գնայ։
45 Եւ Հրէաներից շատերը, որ Մա-
րիամի մօտ էին եկել և տեսան
ինչ որ արաւ Յիսուսը, հաւա-
46 տացին նորան։ Եւ նորանցից էլ
ոմանք գնացին փարիսեցիների մօտ,
և ասացին նորանց. Ինչ որ Յի-
սուսը արաւ։
47 Եւ քահանայապետները և փա-
րիսեցիները ատեան ժողովեցին,
և ասացին. Ի՞նչ անենք, որ այդ
մարդը շատ նշաններ է անում։
48 Եթէ գորան այդպէս թողենք, ա-
մենքը կ'հաւատան գորան, և
Հռոմայեցիք կ'գան վեր կ'առնեն
մեր երկիրն էլ և ազգն էլ։
49 Եւ նորանցից մէկը՝ Կայիափան, որ
այն տարուայ քահանայապետն էր,
ասաց նորանց. Դուք ոչինչ չգի-
տէք, Եւ չէք էլ մտածում, թէ
50 լաւ է մեզ համար՝ որ մէկ մարդ
մեռնի ժողովրդի վերայ, քան թէ
51 բոլոր ազգը կորչի։ Բայց սա ի-
րանից չասաց. այլ որովհետև այն
տարուայ քահանայապետն էր,
մարգարէացաւ՝ թէ Յիսուսը պի-
տի մեռնէր ազգի համար։ Եւ ոչ
52 թէ միայն ազգի համար, այլ որ
Աստուծոյ ցրուած որդիքն էլ մէկ
տեղ ժողովէ։
53 Արդ այն օրից հետէ խորհուրդ
արին, որ նորան սպանեն։
54 Յիսուսն էլ համարձակ չէր մեն գա-
լիս Հրէից մէջ. այլ այն տեղից
գնաց մի երկիր, անապատի մօտ,
Եփրայեմ ասուած քաղաքը. և
այն տեղ էր կենում իր աշակերտ-
ների հետ։
55 Եւ Հրէաների զատիկը մօտ էր,
և այն գաւառից շատերը զատ-
կից առաջ վեր եկան Երուսաղէմ,
որ իրանց անձերը սրբեն։
56 Եւ որո-
նում էին Յիսուսին, և իրար ա-
սում էին՝ տաճարում կանգնած.
Ի՞նչպէս է երևում ձեզ. մի՞թէ
այս տօնին չի գալ. բայց քահա-
նայապետները և փարիսեցիները
հրաման էին տուել, որ՝ եթէ մէ-
կը գիտենայ թէ ուր է, իմաց
տայ, որ բռնեն նորան։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յիսուսը զատկից վեց օր ա-
ռաջ եկաւ Բեթանիա, որ տեղ
մեռեալ Ղազարոսն էր, որին մե-
2 ռելներից յարոյց։ Եւ այն տեղ
հացկերոյթ արին նորա հա-
մար. և Մարթա ծառայում էր,
և Ղազարոսը նորա հետ նստող-
3 ներից մէկն էր։ Մարիամն էլ մի
լիտր նարդոսի ազնիւ մեծագին
իւղ առաւ, Յիսուսի ոտները օ-
ծեց, և իր մազերովը սրբում էր
նորա ոտները. և տունը լցուե-

4 ցաւ իւղի Հոտովը : Եւ ասաց Նա-
րա աշակերտներից մէկը՝ Յուդա
Սիմոնեան Իսկարիոտացին , որ
5 նորան մատնելու էր՝ ինչո՞ւ Հա-
մար այդ իւղը երեք Տարիւր դե-
նարի չ'ծախուեցաւ , և աղքատ-
6 ներին տրուեցաւ : Բայց ասա
ցաց , ոչ թէ որովհետև աղքատ-
ների համար նորա հոգն էր . այլ որ
գող էր՝ և քսակը ունէր , և ընդ-
7 կածը պահում էր : Յիսուսն էլ
ասաց . Թոյլ տուր դորան , նա իմ
պատանքի օրուան համար էր պա-
8 հել այդ : Քանզի աղքատները
միշտ ձեզ հետ ունիք . բայց ինձ
միշտ չ'ունիք :
9 Եւ Հրեաներից շատ ժողովուրդ
գիտաց , թէ նա այն տեղ է , և
եկան , ոչ թէ միայն Յիսուսի հա-
մար , այլ որ Ղազարոսին էլ
տեսնեն, որին մեռելներից յարոյց :
10 Քահանայապետներն էլ խորհուրդ
արին , որ Ղազարոսին էլ սպա-
11 նեն Վասնզի Հրեաներից շատերը
նորա պատճառով գնում էին և
հաւատում էին Յիսուսին :
12 Յորա հետեւեալ օրը շատ ժո-
ղովուրդ , որ եկել էին տօնը ,
երբոր լսեցին , թէ Յիսուս գա-
13 լիս է Երուսաղէմ . Արմաւի ճա-
ռերի ճղներ առին , և դուրս գնա-
ցին նորա առջևը , աղաղակում
էին . Ովսաննայ , օրհնեալ որ Տի-
րոջ անունով գալիս ես , ով Իս-
14 րայէլի Թագաւոր : Եւ Յիսուս
մի ուռնակ գտաւ , և նորա վե-
րայ նստեց . ինչպէս գրուած է՝
15 Ոչ . Մի վախենար , Սիոնի ազջիկ,
ահա քո Թագաւորը գալիս է՝ ի-
16 շու ուռնակի վերայ նստած : Եւ
նորա աշակերտներն առաջ չի-
մացան այս բանը . բայց երբոր
Յիսուս փառաւորուեցաւ՝ այն
ժամանակ յիշեցին , թէ այս նո-
րա համար գրուածն էր . և այն
17 բանը արին նորան : Եւ ժողովուր-
դըն՝ որ նորա հետ էր , վկայում
էր , թէ Ղազարոսին գերեզմանի-
ցը դուրս կանչեց . և մեռելներից
18 յարոյց նորան : Եւ նորա համար
էլ ժողովուրդը գնաց նորա առ-
ջևը , վասնզի լսեցին թէ նա ա-
19 րել էր այն նշանը : Բայց փարի-

սեցիներն իրար մէջ ասում էին .
Տեսնո՞ւմ էք , որ ոչինչ օգուտ չու-
նիք . ահա աշխարհքը նորա ետևից
գնաց :
Եւ կային ոմանք Հեղլենացիք՝ 20
նորանցից , որ եկել էին այն տեղ ,
որ երկրպագեն այն տօնում : Նո- 21
րանք եկան Փիլիպպոսի մօտ որ Գա-
լիլեայի Բեթսայիդայից էր , նո-
րան խնդրում էին և ասում . Տէր ,
կամենում ենք Յիսուսին տեսանել :
Փիլիպպոսը գալիս է Անդրէասին 22
ասում . Անդրէաս և Փիլիպպոս
ասում են Յիսուսին : Յիսուս էլ 23
պատասխանեց նորանց՝ և ասաց .
Ժամը հասաւ , որ Որդին մարդոյ
փառաւորուի : Ճշմարիտ ճշմա- 24
րիտ ասում եմ ձեզ . եթէ ցո-
րենի հատը հողի մէջ չ'ընկնի և
մեռնի , ինքը մենակ կ'մնայ . բայց
եթէ մեռնի , շատ պտուղ կ'բե-
րէ : Իր անձը սիրողը՝ կ'կորցնէ նո- 25
րան , և իր անձն ատողը այս
աշխարհքումը , յաւիտենական
կեանց մէջ կ'պահէ նորան : Եթէ 26
մէկը ծառայէ ինձ , թող նա իմ
ետևից գայ . և ուր ես եմ , այն
տեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի .
եթէ մէկը ծառայէ ինձ , Հայրը
կ'պատուէ նորան : Հիմա իմ ան- 27
ձը խռոված է . և ի՞նչ ասեմ .
Հայր , ազատիր ինձ այս ժամից .
սակայն իսկ սորա համար եկայ
այս ժամի մէջ : Հայր , փառա- 28
ւորիր քո անունը : Եւ երկնքից
ձայն եկաւ , Թէ փառաւորեցի էլ
և կրկին փառաւորեմ : Եւ 29
ժողովուրդն , որ կանգնած էր և
լսում էր , ասում էին , Որոտմունք
եղաւ . ուրիշներն ասում էին .
Հրեշտակ խօսեց նորա հետ : Յի- 30
սուս պատասխանեց և ասաց .
Ա՛յս ձայնը ոչ թէ ինձ համար ե-
ղաւ , այլ ձեզ համար : Հիմա 31
դատաստան է այս աշխարհքի .
հիմա այս աշխարհքի իշխանը դուրս
կ'գցուի : Եւ ես երբոր բարձրա- 32
նամ երկրիցը , ամենքին կ'քաշեմ
ինձ մօտ : Եւ այս ասում էր , 33
որ ցոյց տայ , թէ ինչպիսի մա-
հով պիտի մեռնի : Ժողովուրդը 34
պատասխանեց նորան . Մենք օրէն-
քիցը լսեցինք , թէ Քրիստոսը յա-

*Իսուան կ'կենայ . և դու ինչպէս
ես ասում, թէ պէտք է Որդին
մարդոյ բարձրանայ . ո՞վ է այն
35 Որդին մարդոյ : Յիսուան էլ ա-
սաց նորանց . Մի քիչ ժամանակ
դեռ լոյսը ձեզ հետ է . գնացէք,
քանի որ լոյսն ունիք, որ խաւա-
րը ձեզ չ'հասնէ . և խաւարումը
գնացողը չէ դիտում, ինչ ո՞ւր է
36 գնում : Քանի որ լոյսն ունիք,
հաւատացէք լուսոյն, որ լուսոյ
որդիք լինիք : Յիսուս այս բաները
խօսեց, և գնաց թաքցուեցաւ
նորանցից :*

37 *Եւ թէպէտ այնքան նշաններ
նա արել էր նորանց առջև . նո-
րանք չէին հաւատում նորան .*
38 *որ Եսայի մարգարէի խօսք կա-
տարուի, որ ասաց . Տէր, ո՞վ
հաւատաց մեր խօսքին, և Տիրոջ
39 բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ : Ո-
րա համար չէին կարողանում
հաւատալ . վասնզի Եսային դարձ-
40 եալ ասում է . Նորանց աչքերը
կուրացրեց, և նորանց սրտերը
թմրացրեց, որ աչքով չ'տեսնեն,
և սրտով չ'իմանան, և դառնան՝
41 և ես բժշկեմ նորանց : Եսային ա-
սաց, երբոր նորա փառքը տե-
42 սաւ, և նորա համար խօսեց : Բայց
և այնպէս իշխաններից շատերը
հաւատացին նորան . սակայն փա-
րիսեցիների պատճառով չէին դա-
նում, որ ժողովարանից դուրս
43 չ'գցուին : Վասնզի մարդկանց
փառքն աւելի սիրեցին քան թէ
Աստուծոյ փառքը :*

44 *Եւ Յիսուս աղաղակում էր և
ասում . Ինձ հաւատացողը չէ թէ
ինձ է հաւատում, այլ ինձ ու-
45 ղարկողին : Եւ ինձ տեսնողը, ինձ
46 ուղարկողին է տեսնում : Ես լոյս
եկայ աշխարհքը, որ ամեն ինձ
հաւատացողը խաւարի մէջ չ'մնայ :
47 Եւ եթէ մէկն իմ խօսքերին լսէ
և չ'հաւատայ, ես չեմ դատիլ
նորան . քանզի ես չ'եկայ որ աշ-
խարհքը դատեմ, այլ որ փրկեմ
48 աշխարհքը : Ինձ անարգողը և իմ
խօսքերը չ'ընդունողը ունի իրան
դատողին, այն խօսքն՝ որ ես խո-
սեցի, նա կ'դատէ նորան յետին
49 օրը : Որովհետև ես իմ անձիցը
չ'խօսեցի . բայց ինձ ուղարկող
Հայրը, նա պատուէր տուաւ ինձ,
թէ ինչ պիտի ասեմ և ինչ պի-
տի խօսեմ : Եւ գիտեմ, որ նո-
րա պատուիրանքը յաւիտենական
կեանք է . ուրեմն ինչ որ ես խո-
սում եմ, ինչպէս Հայրն ասաց
ինձ՝ այնպէս եմ խօսում :*

ԳԼ· ԺԳ

Զատկի տօնից առաջ Յիսուս
գիտաց, որ իր ժամը հասել է,
որ այս աշխարհքիցը փոխուի դէ-
պի Հայրը, իրաններին՝ որ այս աշ-
խարհքումն են՝ սիրեց . և մինչև
վերջը սիրեց նորանց :

Եւ երբոր ընթրիք էր լինում,
սատանան արդէն Յուդա Սիմոնեան
Իսկարիովտացու սրտի մէջ էր
դցել, որ մատնէ նորան : Յիսու-
ս գիտենալով որ Հայրն ամեն
բան իր ձեռքն է տուել, և որ
Աստուծոյն դուրս եկաւ, և
Աստուծոյ մօտ է գնում . ընթրի-
քիցը վերկացաւ և հանդերձները
վայր դրաւ, և մի ղէնջակ առաւ
իր մէջքը պատեց : Յետոյ ջուր ա-
ծեց կոնքը, և սկսեց աշակերտ-
ների ոտները լուանալ, և այն ղէն-
ջակով սրբել որ մէջքին պատած
էր : Եւ Սիմոն Պետրոսի մօտ ե-
կաւ . և նա նորան ասաց . Տէր,
դո՞ւ ես իմ ոտները լուանում :
Յիսուս պատասխանեց և ասաց
նորան . Ինչ որ ես անում եմ,
դու հիմա չես իմանում, բայց ա-
նից յետոյ կ'իմանաս : Պետրո-
ս նորան ասաց . Դու իմ ոտնե-
րը չես լուանալ յաւիտեան . Յի-
սուս պատասխանեց նորան . Եթէ
քեզ չ'լուանամ, ինձ հետ բա-
ժին չունիս : Սիմոն Պետրոս ա-
ասաց նորան . Տէր, ոչ թէ իմ ո-
տներս միայն, այլ իմ ձեռներս և
գլուխն էլ : Յիսուս նորան ա-
ասաց . Լուացածին բան պէտք չէ,
բացի ոտները լուանալ . այլ բո-
լորովին մաքուր է . և դուք մա-
քուր էք, բայց ոչ թէ ամենքդ :
Վասնզի գիտէր իրան մատնիչին.
նորա համար ասաց, ոչ թէ ա-
մենքդ մաքուր էք : Եւ երբոր նո-

բանց առնելը լուացաւ, իր հան-
դերձներն առաւ՝ և դարձեալ ա-
ղան նստեց, և նոցանց ասաց.
13 Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ։ Դուք
ինձ կանչում էք Վարդապետ և
Տէր, և լաւ էք ասում, քանզի
14 եմ։ Արդ եթէ ես՝ Տէրս և Վար-
դապետս՝ ձեր առնելը լուացի,
դուք էլ պէտք է իրար առնելը
15 լուանաք։ Վասնզի ձեզ օրինակ
տուի, որ ինչպէս ես ձեզի արի,
16 դուք էլ անէք։ Ճշմարիտն ճըշ-
մարիտն ասում եմ ձեզ. Ծառան
իր տիրոջից մեծ չէ. ոչ էլ ա-
ղարկվածը մեծ է իրան ուղար-
17 կողից։ Եթէ այս գիտէք, երա-
18 նելի էք՝ թէ որ այս անէք։ Ձեր
բոլորիդ համար չեմ ասում. ես
գիտեմ նորանց, որ ընտրեցի.
բայց որ գիրքը կատարուի, Ով
Նա որ ինձ հետ հաց էր ուտում,
ինձ դէմ իրան կրունկը բարձրաց-
19 րեց։ Հիմիկուց ասում եմ ձեզ՝
լինելուց առաջ, որ երբոր լինի
20 հաւատաք թէ ես եմ։ Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ. Ով որ
ընդունէ նորան, որ ես կ'ուղար-
կեմ, ինձ է ընդունում. և ինձ
ընդունողը ինձ ուղարկողին է ըն-
դունում։

21 Յիսուս այս ասելով տրտմեցաւ
հոգովը, և վկայեց և ասաց. Ճըշ-
մարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ,
թէ Ձեզանից մէկը կ'մատնէ ինձ։
22 Աշակերտներն էլ իրար մոխիկ էին
տալիս տարակուսած, թէ ո՞ւմ
22 համար է ասում։ Եւ նորա աշա-
կերտներից մէկը Յիսուսի գոգին
նստած էր, որին Յիսուս սիրում
21 էր։ Սիմոն Պետրոսը նորան ակ-
նարկեց հարցնել՝ թէ նա ո՞վ է,
23 որի համար ասում է։ Եւ նա Յի-
սուսի լանջքովը ընկած, ասաց
26 նորան. Տէր, ո՞վ է։ Յիսուս պա-
տասխանեց. Նա է՝ որ ես պա-
տառը թաց կ'անեմ և նորան
կ'տամ. և պատառը թաց արաւ
և տուաւ Յուդա Սիմոնեան Իս-
27 կարիոտացոյն։ Եւ պատառից
յետոյ սատանան մտաւ նորա մէջ.
և Յիսուս նորան ասաց. Ինչ որ
28 անում ես շուտով արա։ Եւ այս
բանը սեղան նստողներից ոչ ով
չիմացաւ, թէ ի՞նչ պատճառով
ասաց նորան։ Վասնզի ոմանք 29
կարծում էին, թէ՝ որովհետև
Յուդան քսակն ուներ, Յիսուսը
նորան ասաց, Ես առ՝ ինչ որ այս
տօնին պէտք է մեզ. կամ թէ՝
աղքատներին բան տայ։ Եւ նա 30
երբոր պատառն առաւ, շուտով
դուրս գնաց. և գիշեր էր։

Եւ երբոր դուրս գնաց, Յիսու- 31
ս ասաց. Հիմա Որդին մարդոյ
փառաւորուեցաւ. և Աստուած
նորանում փառաւորուեցաւ։ Եթէ 32
Աստուած նորանում փառաւոր-
ուեցաւ, Աստուած էլ նորան
կ'փառաւորէ իր անձումը. և շու-
տով կ'փառաւորէ նորան։ Որդ- 33
եակը, տակաւին մի քիչ ժամա-
նակ էլ ձեզ հետ եմ. ինձ կ'որո-
նէք, և ինչպէս Հրեաներին ասա-
ցի, թէ Որտեղ որ ես եմ գնում,
դուք չէք կարող գալ. և հիմա
էլ ձեզ եմ ասում։ Նոր պատ- 34
ուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար
սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի,
որ դուք էլ իրար սիրէք։ Որա- 35
նով կ'գիտենան ամենքը թէ իմ
աշակերտներն էք, եթէ իրար վե-
րայ սէր ունենաք։ Սիմոն Պետրոս 36
նորան ասաց. Տէր, ո՞ւր ես գը-
նում. Յիսուս պատասխանեց նո-
րան. Որ տեղ որ գնում եմ, դու
հիմա չես կարող իմ ետևից գալ.
բայց յետոյ իմ ետևից կ'գաս։
Պետրոսը նորան ասաց. Տէր, ին- 37
չո՞ւ չեմ կարող հիմա քո ետևից
գալ. իմ անձը քեզ համար կ'դը-
նեմ։ Յիսուս պատասխանեց նո- 38
րան. Քո անձը՞ կ'դնես ինձ հա-
մար. ճշմարիտն ճշմարիտն ասում
եմ քեզ, աք հաւը դեռ չի խօսիլ,
որ դու երեք անգամ կ'ուրանաս
ինձ։

ԳԼ. ԺԴ.

Ձեր սրտերը թող չխռովին. Ա- 1
ստուծոյն հաւատացէք, և ինձ հա-
ւատացէք։ Իմ Հօր տանը շատ 2
բնակարաններ կան. ապա թէ ոչ
ես ձեզ կ'ասէի. գնում եմ ձեզ
համար տեղ պատրաստելու։ Եւ 3
եթէ գնամ և ձեզ համար տեղ

պատրաստեմ, դարձեալ կ'գամ
և ձեզ ինձ մօտ կառնեմ. որ ուր
4 ես եմ, դուք էլ լինիք։ Եւ որ
տեղ որ ես գնում եմ՝ գիտէք,
և ճանապարհը գիտէք։
5 Թովմաս նորան ասաց. Տէր,
չենք գիտում որ տեղ ես գնում.
և ի՞նչպէս կարող ենք ճանապար-
6 հը գիտենալ։ Յիսուս նորան ա-
սաց. Ես եմ ճանապարհը և ճըշ-
մարտութիւնը և կեանքը. ոչ ոք
չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ին-
7 ձանով։ Եթէ ինձ գիտենայիք,
իմ Հօրն էլ կ'գիտենայիք. և ա-
րդանից յետոյ կ'գիտենաք նորան
և տեսաք նորան։
8 Փիլիպպոս նորան ասաց. Տէր,
Հայրը ցոյց տուր մեզ, և բաւա-
9 կան է մեզ։ Յիսուս նորան ա-
սաց. Այսքան ժամանակ ձեզ հետ
եմ, և ինձ չ'ճանաչեցի՞ր, Փիլիպ-
պոս. ինձ տեսնողը Հօրը տեսաւ.
և դու ի՞նչպէս ես ասում. Հայ-
10 րը ցոյց տուր մեզ։ Չե՞ս հաւա-
տում, որ ես Հօր մէջ եմ, և Հայ-
րըն ինձանում է, այն բանն որ
ես խօսում եմ ձեզ հետ, իմ ան-
ձինը չեմ խօսում. բայց Հայրն՝
որ ինձանում բնակած է, նա է
11 գործում գործքերը։ Հաւատացէք
ինձ, որ ես Հօր մէջ եմ, և Հայ-
12 րըն ինձանում է։ Ապա թէ ոչ,
խակ այն գործքերի համար հաւա-
տացէք ինձ. ճշմարիտ ճշմարիտն
ասում եմ ձեզ, Ըէ ինձ հաւա-
տացողը այն գործքերն որ ես գոր-
ծում եմ, նա էլ կ'գործէ, և նո-
րանից էլ աւելի մեծ բաներ կ'գոր-
ծէ. վասնզի ես իմ Հօր մօտ եմ
13 գնում։ Եւ ինչ որ էլ խնդրէք
իմ անունովը, այն կ'անեմ, որ
Հայրը փառաւորուի Որդումը։
14 Եթէ իմ անունովը մի բան խընդ-
15 րէք, ես կ'անեմ։ Եթէ ինձ սի-
րում էք, իմ պատուիրանքները
16 պահեցէք։ Եւ ես Հօրը կ'աղա-
չեմ, և ուրիշ Մխիթարիչ կ'տայ
ձեզ. որ միայ ձեզ հետ յաւիտ-
17 եան։ Ճշմարտութեան Հոգին,
որին աշխարհս կարող չէ ընդու-
նել. վասնզի չէ տեսնում նորան.
և ոչ ճանաչում նորան. բայց
դուք նորան ճանաչում էք, վա-
սընդի ձեզ մօտ է մնում և ձեզ
հետ կ'լինի։ Ձեզ որբ չեմ թո- 18
ղել. կ'գամ ձեզ մօտ։ Մի փոքր 19
ժամանակ էլ, և աշխարհքն էլ
չի տեսանիլ ինձ, բայց դուք կ'տես-
նէք ինձ. վասնզի ես կենդանի եմ,
և դուք կենդանի կ'լինիք։ Այն օ- 20
րը դուք կ'ճանաչէք, որ ես իմ
Հօր մէջ եմ, և դուք ինձանում,
և ես ձեզանում։ Ով որ իմ պատ- 21
ուիրանքներն ունի և նորանց պա-
հում է, նա է ինձ սիրողը. և ինձ
սիրողը իմ Հօրիցը կ'սիրուի. և ես
կ'սիրեմ նորան, և ինձ կ'յայտ-
նեմ նորան։
Ասաց նորան Յուդան՝ ոչ թէ 22
Իսկարիոտացին. Տէր, ի՞նչ է,
որ մեզ կ'յայտնես քեզ և աշ-
խարհքին ոչ։ Յիսուս պատաս- 23
խանեց և նորան ասաց. Եթէ ոք ին
ինձ սիրում է, իմ խօսքը կ'պահէ
և իմ Հայրը կ'սիրէ նորան. և նո-
րա մօտը կ'գանք և բնակութիւն
կ'անենք նորա մօտ։ Ինձ չ'սիրողը 24
իմ խօսքերը չէ պահում. և այն
խօսքը որ լսում էք՝ իմն չէ, այլ
ինձ ուղարկող Հօրը։ Այս խօսե- 25
ցի ձեզ հետ՝ քանի որ ձեզ մօտ
եմ։ Բայց Մխիթարիչը՝ Սուրբ 26
Հոգին, որ Հայրը կ'ուղարկէ իմ
անունովը, նա ամեն բան կ'ա-
ւորեցնէ ձեզ, և կ'յիշեցնէ ձեզ
ամեն ինչ որ ձեզ ասացի։ Խա- 27
ղաղութիւն եմ թողում ձեզ, իմ
խաղաղութիւնն եմ տալիս ձեզ.
ոչ թէ ինչպէս աշխարհքն է տա-
լիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիր-
տը չ'խռովի և չ'վախենայ։ Լսե- 28
ցիք, որ ես ասացի ձեզ, Ըէ գնում
եմ, և կ'գամ ձեզ մօտ. եթէ ինձ
սիրէիք, ապա ուրախ կ'լինէիք՝ որ
ասացի, Հօր մօտ եմ գնում. վա-
սընդի իմ Հայրը մեծ է ինձանից։
Եւ հիմա ասացի ձեզ՝ լինելուց 29
առաջ. որ երբոր լինի, հաւատաք։
Այլ ես շատ չեմ խօսիլ ձեզ հետ, 30
վասնզի այս աշխարհքի իշխանը
գալիս է, և ինձանում ոչինչ չու-
նի։ Այլ որպէս զի աշխարհքը 31
գիտենայ, թէ ես սիրում եմ Հօ-
րը. և ինչպէս Հայրը պատուիրեց
ինձ, այնպէս եմ անում. վերկա-
ցէք, գնանք այս տեղից։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ
2 Հայրը մշակն է։ Ամեն ճիւղ, որ
ինձմնում է և պտուղ չէ բերում,
նորան կտրում է. և ամեն պտուղ
բերողին մաքրում է, որ էլ ա-
3 լի պտղաբեր լինի։ Դուք արդէն
մաքուր էք այն խօսքի համար,
4 որ ձեզ հետ խօսեցի։ Կացէք ին-
ձմնում՝ և ես ձեզանում. ինչ-
պէս որ ճիւղն իր անձից կարող
չէ պտուղ բերել, եթէ որթում
չ'մնայ. այսպէս ոչ էլ դուք՝ եթէ
5 ինձմնում չ'մնաք։ Ես որթն եմ՝
և դուք ճիւղերը. նա՝ որ ինձ-
նում է մնում, և ես նորանում,
նա շատ պտուղ է բերում. որով-
հետև առանց ինձ չէք կարող ոչ-
6 ինչ անել։ Եթէ մէկն ինձմնում
չէ մնում, նա դուրս կ'գցուի ինչ-
պէս ճիւղը, և կ'չորանայ. և ժո-
ղովում են նորանից և կրակի մէջ
7 գցում, և այրվում է։ Եթէ կո-
նոր ինձմնում՝ և իմ խօսքերը ձե-
ղումնում մնայ, և ինչ որ էլ կա-
մենաք, կ'խնդրէք, և կ'լինի ձեզ։
8 Սորանով փառաւորեցաւ իմ
Հայրը, որ շատ պտուղ բերէք.
և իմ աշակերտները լինէք։
9 Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց,
ես էլ ձեզ սիրեցի. կացէք իմ
10 սիրոյ մէջ։ Եթէ իմ պատուիրանք-
ները պահէք, իմ սիրոյ մէջը կ'կե-
նաք. ինչպէս ես իմ Հօր պատ-
ուիրանքները պահեցի, և կենում
11 եմ նորա սիրոյ մէջ։ Այս խօսեցի
ձեզ հետ, որ իմ ուրախութիւնը
ձեզումնում մնայ, և ձեր ուրախու-
12 թիւնը լցուած լինի։ Սա է իմ
պատուիրանքը, որ իրար սիրէք,
13 ինչպէս ես ձեզ սիրեցի։ Ոչ ոք
նորանից աւելի մեծ սէր չունի,
որ մէկն իր անձը դնէ իր բարե-
14 կամների համար։ Դուք իմ բա-
րեկամներն էք, եթէ անէք ինչ
15 որ ես պատուիրում եմ ձեզ։ Այլ
ես ծառայ չեմ ասում ձեզ, վա-
րձուն ծառան չէ գիտում, թէ
իր տէրն ինչ է գործում. բայց
ձեզ բարեկամ ասացի, վասնզի
ամեն ինչ որ լսեցի իմ Հօրից,
16 յայտնի ձեզ։ Ոչ թէ դուք ինձ
ընտրեցիք, այլ ես ընտրեցի ձեզ,
և ձեզ դրի, որ դուք գնաք և
պտուղ բերէք. և ձեր պտուղը
մնայ. որպէս զի ինչ որ իմ Հօրից
խնդրէք իմ անունովը, տայ
17 ձեզ։ Սա եմ պատուիրում ձեզ,
որ իրար սիրէք։

18 Եթէ աշխարհքը ձեզ ատում
է, գիտացէք, որ ինձ ձեզանից
առաջ է ատել։ Եթէ այս աշ-
19 խարհքից լինէիք, ապա աշխարհ-
քըն իրանը կ'սիրէր. բայց որով-
հետև աշխարհքից չէք. այլ ես
ձեզ ընտրեցի աշխարհքից, նորա
համար աշխարհքն ատում է ձեզ։
20 Յիշեցէք այն խօսքն, որ ես ասա-
ցի ձեզ. Չէ ծառան իր տիրոջից
մեծ չէ. եթէ ինձ հալածեցին,
ձեզ էլ կ'հալածեն. եթէ իմ խօս-
քը պահեցին՝ ձերն էլ կ'պահեն։
21 Բայց այս ամենը կ'անեն ձեզ իմ
անունի համար. քանի չ'ճանա-
չեցին ինձ ուղարկողին։ Եթէ ես
22 չէի եկել և նորանց հետ խոսա-
ցել, նորանք մեղք չէին ունենալ.
բայց հիմա պատճառ չունին ի-
րանց մեղաց համար։ Ինձ ատողն
23 իմ Հօրն էլ է ատում։ Եթէ այն
24 գործերը չէի գործել նորանց մի-
ջումն, որ մէկ ուրիշը չ'գործեց,
մեղք չէին ունենալ. բայց հիմա
տեսան էլ, և ատեցին ինձ էլ և
իմ Հօրն էլ։ Այլ որպէս զի այն
25 խօսքը կատարուի, որ նորանց օ-
րէնքումը գրուած է, թէ, Զուր
տեղն ատեցին ինձ։ Բայց երբոր
26 Մխիթարիչը կ'գայ, ես Հօրից
կ'ուղարկեմ ձեզ, ճշմարտութեան
Հոգին, որ Հօրից է դուրս գա-
լիս, նա կ'վկայէ ինձ համար։ Եւ
27 դուք էլ կ'վկայէք, վասնզի սկզբ-
ից ինձ հետ էք։

ԳԼ. ԺԶ

Ա.յս խօսեցի ձեզ հետ, որ չ'գայ-
թակղիք։ Իրանց ժողովարաննե-
րից ձեզ դուրս կ'հանեն. բայց
ժամանակ կ'գայ՝ որ ամեն ոք որ
սպանէ ձեզ, կ'կարծէ, թէ Աս-
տուծոյ պաշտօն է մատուցանում։
Եւ սա կ'անեն ձեզ, որովհետև ոչ
Հօրը ճանաչեցին և ոչ ինձ։ Բայց

այս էլ խօսեցի ձեզ հետ, որ
երբոր ժամանակը գայ, որպէս
յիշէք, թէ ես ասացի ձեզ։ Բայց
այս բաները սկզբից չ'ասացի ձեզ.
քանզի ես ձեզ հետ էի։
5 Բայց հիմա ինձ ուղարկողի մօտ
եմ գնում. և ձեզանից ոչ մէկը
չէ հարցնում ինձ, Թէ Ո՞ւր ես
6 գնում։ Այլ որովհետև այս բա-
ները խօսեցի ձեզ հետ, սրտում-
7 Թիւնը լցրեց ձեր սիրտը։ Բայց ես
ճշմարտութիւնն եմ ասում ձեզ,
Թէ լաւ է ձեզ համար, որ ես
գնամ. վասնզի եթէ չ'գնամ, Մխի-
թարիչը չի գալ ձեզ մօտ. բայց
եթէ գնամ, նորան կ'ուղարկեմ
8 ձեզ մօտ։ Եւ նա՝ երբոր գայ՝
աշխարհքին կ'յանդիմանէ մեղաց
համար, և արդարութեան հա-
մար, և դատաստանի համար։
9 Մեղաց համար, որովհետև ինձ
10 չեն հաւատում։ Արդարութեան
համար, որովհետև ես իմ Հօր
մօտ եմ գնում, և ինձ այլ ես
11 չէք տեսանել։ Եւ Դատաստանի
համար, որովհետև այս աշխարհ-
քի իշխանը դատապարտուած է։
12 Տակաւին շատ բան ունիմ ձեզ
ասելու, բայց հիմա չէք կարող
13 տանել։ Բայց երբոր նա՝ ճշմար-
տութեան Հոգին կ'գայ, նա
կ'առաջնորդէ ձեզ ամեն ճշմար-
տութեան մէջ. վասնզի իր անձի-
ցը չի խօսիլ, այլ ինչ որ կ'լսէ՝
կ'խօսի, և գալու բաները կ'պատ-
14 մէ ձեզ։ Նա ինձ կ'փառաւորէ,
վասնզի իմիցը կ'առնէ և կ'պատ-
15 մէ ձեզ։ Ամեն ինչ որ Հայրն ու-
նի՝ իմն է. նորա համար ասացի
ձեզ, Թէ իմիցը կ'առնէ և կ'պատ-
16 մէ ձեզ։ Մի քիչ ժամանակ էլ, և
չէք տեսանել ինձ. և դարձեալ մի
քիչ, և կ'տեսանէք ինձ. որովհետև
ես Հօր մօտ եմ գնում։
17 Նորա աշակերտներից ոմանք ի-
րար ասում էին. Սա ի՞նչ է, որ
ասում է մեզ. Մի քիչ ժամանակ՝
և չէք տեսանել ինձ, և դարձեալ
մի քիչ, և կ'տեսանէք ինձ. և,
18 Թէ ես Հօր մօտ եմ գնում։ Եւ
ասում էին. Ի՞նչ է այն որ ա-
սում է՝ Մի քիչ ժամանակ. չենք գի-
19 տում, Թէ ինչ է խօսում։ Եւ

Յիսուս իմացաւ, որ ուզում էին
հարցնել իրան, և ասաց նորանց.
Դորա՞ համար էք հարցնում իրար,
որ ասացի, Թէ Մի քիչ ժամանակ,
և չէք տեսանել ինձ, և դարձեալ 20
մի քիչ, և կ'տեսանէք ինձ։ Ճըշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ
ձեզ. որ դուք լաց կ'լինէք և կ'ող-
բաք և աշխարհքը կ'ուրախանայ.
դուք կ'տրտմիք, այլ ձեր տրտ-
մութիւնն ուրախութիւն կ'լինի։
Կինն, երբոր ծնում է, տրտմու- 21
թիւն ունի, վասնզի նորա ժամա-
նակն հասել է, բայց երբոր երե-
խան ծնեց, նեղութիւնն էլ չէ
յիշում այն ուրախութեան հա-
մար, որ մի մարդ ծնուեցաւ աշ-
խարհքի մէջ։ Եւ դուք էլ հիմա 22
տրտմութիւն ունիք, բայց դարձ-
եալ կ'տեսանեմ ձեզ, և ձեր սիր-
տը կ'ուրախանայ. և ձեր ուրա-
խութիւնը ոչ ոք չի առնել ձե-
զանից։ Եւ այն օրը ոչինչ չէք 23
հարցնել ինձ. ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, Թէ ինչ որ
Հօրիցը խնդրէք իմ անունովը.
կ'տայ ձեզ։ Մինչև հիմա ոչինչ 24
չէնդրեցիք իմ անունովը. խնդր-
եցէք և կ'առնէք, որ ձեր ուրա-
խութիւնը կատարեալ լինի։ Այս 25
բաները առակով խօսեցի ձեզ
հետ. բայց ժամանակ կ'գայ, որ
էլ առակով չեմ խօսիլ ձեզ հետ.
այլ յայտնապէս կ'պատմեմ ձեզ
Հօր համար։ Այն օրում իմ ա- 26
նունովը կ'խնդրէք. և չեմ ասում
ձեզ, Թէ ես ձեզ համար կ'աղա-
չեմ Հօրը։ Քանզի Հայրն ինքն սի- 27
րում է ձեզ. որովհետև դուք ինձ
սիրել էք և հաւատացել էք, Թէ
ես Աստուածմանից դուրս եկայ։
Հօրիցը դուրս եկայ և եկայ աշ- 28
խարհք. դարձեալ թողում եմ
աշխարհքը և Հօր մօտ գնում։
Աշակերտները նորան ասացին. 29
Ահա հիմա յայտնի ես խօսում,
և ոչ մի առակ չես ասում։ Հի- 30
մա գիտենք, որ դու բոլորը գի-
տում ես. և պէտք չէ, որ մէ-
կը հարցնէ քեզ. սորանով հա-
ւատում ենք, Թէ դու Աստուա-
ծանից դուրս եկար։ Յիսուս պա- 31
ատասխանեց նորանց. Հիմա հա-

32 ասասա՞ք է՞ք։ Ահա ժամանակ
կ'գայ, և հիմա եկած է, որ ա-
մեն մէկդ կ'ցրուիք իր տեղը, և
ինձ մենակ կ'թողէք. բայց մենակ
չեմ. վասնզի Հայրն ինձ հետ է։
33 Ասյս խօսեցայ ձեզ հետ, որ ինձա-
նով խաղաղութիւն ունենաք.
աշխարհքումը նեղութիւն կ'ու-
նենաք. բայց քաջացէք, ես յաղ-
թել եմ աշխարհքին։

ԳԼ. ԺԷ

1 Յիսուս այս խօսեց, և իր աչ-
քերը բարձրացրեց դէպի երկինքն
և ասաց. Հայր, ժամը հասել է,
փառաւորիր քո Որդին, որ քո
2 Որդին էլ քեզ փառաւորէ։ Ինչ-
պէս նորան իշխանութիւն տուիր
ամեն մարմնոյ վերայ որ յաւիտե-
նական կեանք տայ այն ամենին
3 որ տուիր նորան։ Եւ սա է յա-
ւիտենական կեանքը, որ ճանա-
չեն քեզ միայն ճշմարիտ Աստ-
ուած, և նորան, որ ուղարկե-
4 ցիր՝ Յիսուսին Քրիստոսին։ Ես
քեզ փառաւորեցի երկրի վերայ.
այն գործը կատարեցի, որ տուիր
5 ինձ՝ որ անեմ։ Եւ հիմա, փա-
ռաւորիր ինձ դու, Հայր, քեզ
մօտ այն փառքովը, որ աշխարհ-
քի լինելուցն առաջ ունէի քեզ
6 մօտ։ Քո անունը յայտնեցի այն
մարդկանց, որ աշխարհքիցը տուիր
ինձ. քո էին, և ինձ տուիր նո-
7 րանց. և քո խօսքը պահեցին։ Հի-
մա գիտցան, որ այն ամենն որ
8 ինձ տուիր՝ քեզանից է. Որով-
հետև այն խօսքն՝ որ ինձ տուիր,
նորանց տուի. և նորանք ընդու-
նեցին, և ճշմարտութեամբ գիտ-
ցան, որ քեզանից դուրս եկայ.
և հաւատացին, թէ դու ուղար-
9 կեցիր ինձ։ Ես նորանց համար
եմ աղաչում. ոչ թէ աշխարհքի
համար եմ աղաչում. այլ նորանց
համար՝ որ ինձ տուիր, վասնզի
10 քո էին։ Եւ ինչ որ իմն է, քո-
ղքը քո է. և ինչ որ քո է՝ իմն
է. և ես փառաւորուած եմ նո-
11 րանցումն։ Եւ ես՝ այլ ևս աշ-
խարհքումն չեմ, իսկ նորանք աշ-
խարհքումն են, և ես քեզ մօտ
եմ գալիս. ով Հայր Սուրբ, պա-
հիր նորանց քո անունովը, որոնց
տուիր ինձ. որ մէկ լինին, ինչպէս
մենք։ Երբոր աշխարհքումը նորանց 12
հետ էի, ես էի պահում նորանց
քո անունովը. նորանց որ տուիր
ինձ, պահեցի. և նորանցից ոչ
մէկը չկորաւ. բայց միայն կո-
րուստի որդին, որ գիրքը կատար-
ուի։ Բայց հիմա քեզ մօտ եմ 13
գալիս. և այս բանը խօսում եմ
աշխարհքումը, որ իմ ուրախու-
թիւնը կատարեալ ունենան ի-
րանց անձերումը։ Ես քո խօսքը 14
նորանց տուի, և աշխարհքը նո-
րանց ատեց, քանզի աշխարհքիցը
չեն, ինչպէս ես էլ աշխարհքիցը
չեմ։ Ես չեմ աղաչում, որ աշ- 15
խարհքիցը վեր առնես նորանց.
այլ որ նորանց պահես չարիցը։
Ասյս աշխարհքիցը չեն, ինչպէս 16
ես էլ աշխարհքիցը չեմ։ Նորանց 17
սուրբ արա քո ճշմարտութիւնո-
վը. քո խօսքը ճշմարտութիւն է։
Ինչպէս ինձ ուղարկեցիր աշխարհք, 18
ես էլ նորանց ուղարկեցի աշ-
խարհք։ Եւ ես նորանց վերայ եմ 19
անձը սուրբ եմ անում, որ նորանք
էլ ճշմարտութիւնով սրբուած
լինին։ Բայց ոչ թէ միայն նորանց 20
համար եմ աղաչում, այլ նորանց
համար էլ, որ նորանց խօսքովը
կ'հաւատան ինձ։ Որ ամենքը մէկ 21
լինին, ինչպէս դու, Հայր, ին-
ձանում, և ես քեզանում, որ նո-
րանք էլ մեզանում մէկ լինին.
որ աշխարհքը հաւատայ, թէ դու
ուղարկեցիր ինձ։ Եւ ես այն փառ- 22
քին՝ որ ինձ տուիր՝ նորանց տուի,
որ մէկ լինին ինչպէս մենք էլ մէկ
ենք։ Ես նորանցում՝ և դու ին- 23
ձանում, որ կատարեալ լինին
միութիւնում, որպէս զի աշխարհ-
քը գիտենայ, թէ դու ուղարկեցիր
ինձ. և սիրեցիր նորանց՝ ինչպէս
ինձ սիրեցիր։ Հայր, նորանք որ 24
ինձ տուիր, կամենում եմ, որ
ինչ տեղ որ ես եմ՝ նորանք էլ
ինձ հետ լինին. որ իմ փառքը
տեսանեն, որ տուիր ինձ. որովհե-
տև աշխարհքի հիմնելուցն առաջ
սիրեցիր ինձ։ Հայր արդար. և 25
աշխարհքը չճանաչեց քեզ. բայց

ես ճանաչեցի քեզ, և սորանք ճա-
նաչեցին որ դու ուղարկեցիր ինձ։
26 Եւ քո անունը ճանաչեցրի նո-
րանց, և կ'ճանաչեցնեմ. որ այն
սէրն, որով ինձ սիրեցիր՝ նորանում
ցուցմ լինի, և ես էլ նորանցում։

ԳԼ. ԺԸ

1 Յիսուսը այս ասելուց յետոյ իր
աշակերտների հետ դուրս գնաց
Կեդրոնի ձորի միւս կողմը, որ
տեղ մի պարտէզ կար. որի մէջ
մտաւ ինքն և իր աշակերտները։
2 Յուդան նորան մատնողն էլ գի-
տէր այն տեղը. վասնզի Յիսուսը
շատ անգամ ժողովուել էր այն
3 տեղ իր աշակերտների հետ։ Եւ
Յուդան վճռաբեկ գունդը և քա-
հանայապետներից և փարիսեցի-
ներից սպասաւորներ առնելով ե-
կաւ այն տեղ ջահերով և լապ-
4 տերներով և զէնքերով։ Բայց Յի-
սուսը՝ երբոր տեսաւ այն ամենն,
որ իր վերայ էր գալիս. դուրս ե-
կաւ նորանց ասաց. Ո՞ւմ էք ու-
5 զում։ Պատասխանեցին նորան.
Յիսուս Նազովրեցոյն. Յիսուսը նո-
րանց ասաց. Ես եմ. Յուդան՝
նորան մատնողն էլ կանգնած էր
6 նորանց հետ։ Երբոր ասաց նո-
րանց թէ Ես եմ. ետ ետ գնա-
7 ցին, և գետնի վերայ ընկան։ Եւ
դարձեալ հարցրեց նորանց, Ո՞ւմ
էք ուզում. և նորանք ասացին.
8 Յիսուս Նազովրեցոյն։ Յիսուսը պա-
տասխանեց Ձեզ ասացի թէ Ես
եմ. արդ թէ որ ինձ էք ուզում,
թողէք սուրբ դորանց, որ գնան։
9 Որ կատարուի այն խօսքն որ ա-
սաց, թէ Նորանց որ ինձ տուիր,
նորանցից ոչ մէկն էլ չկորցրի։
10 Բայց Սիմոն Պետրոսն, որ սուր
ունէր, քաշեց նորան և քահա-
նայապետի ծառային զարկեց, և
նորա ա՛ջ ականջը կտրեց. և այն
ծառայի անունը Մաղքոս էր։
11 Յիսուսն էլ Պետրոսին ասաց.
Սուրդ գցիր իր պատեանի մէջ.
այն բաժակն որ իմ Հայրը տուաւ
ինձ, ես այն չխմե՞մ։
12 Եւ վճռաբեկ գունդը և հա-
զարապետը և Հրէաների սպասա-
13 ւորները բռնեցին Յիսուսին, և
կապեցին նորան. Եւ տարան նո-
րան առաջ Աննայի մօտ. քանզի
կայիափայի աներն էր. որ այն
տարուայ քահանայապետն էր։ Սա
14 այն կայիափան էր, որ Հրեաներ-
ին խրատ տուաւ, թէ լաւ է,
մէկ մարդ կորչի ժողովրդի վերայ։
15 Եւ Սիմոն Պետրոսը և միւս աշա-
կերտը գնում էին Յիսուսի ետևից։
Այն աշակերտը ճանաչ էր քա-
հանայապետին, և Յիսուսի հետ
մտաւ քահանայապետի սրահը։
16 Պետրոսն էլ դրան մօտ կանգնած
էր դուրսը. այն միւս աշակերտն,
որ քահանայապետին ճանաչ էր,
դուրս եկաւ և դռնապանին ա-
սաց, և Պետրոսին ներս մտցրեց։
17 Եւ այն աղջիկն՝ որ դռնապան էր՝
Պետրոսին ասաց. Չէ՞ որ դու էլ
այն մարդու աշակերտներից ես.
18 և նա ասաց, Չեմ։ Ծառաները ու
սպասաւորներն էլ կանգնել էին՝
կրակ արած, վասնզի ցուրտ էր,
և տաքնում էին. Պետրոսն էլ նո-
րանց հետ կանգնած էր և տա-
19 քանում էր։ Եւ քահանայապե-
տը Յիսուսին հարցրեց նորա աշա-
կերտների համար, և նորա վար-
20 դապետութեան համար։ Յիսու-
ս պատասխանեց նորան. Ես յայտ-
նի խօսեցի աշխարհքին. ես միշտ
ասորեցրի ժողովարանում, և տա-
ճարում, որտեղ ամեն տեղից
Հրեաները ժողովւում են, և ծա-
ծուկ ոչինչ չխօսեցի։ Ինչո՞ւ ես
21 ինձ հարցնում. լսողներին հարց-
րու, թէ ինչ խօսեցի նորանց.
ահա նորանք գիտեն, ես ինչ եմ
22 ասել։ Երբոր նա սա ասաց, սպա-
սաւորներից մէկն, որ այն տեղ
կանգնած էր, Յիսուսին ապտակ
տուաւ և ասաց. Այդպէ՞ս ես
պատասխանում քո քահանայա-
պետին։ Յիսուսը նորան պատաս-
23 խանեց. Եթէ չար խօսեցի, վկա-
յիր այն չարի համար. բայց եթէ
բարի՝ ինչո՞ւ ես զարկում
24 ինձ։ Եւ Աննան նորան կապած
ուղարկեց Կայիափա քահանայա-
պետի մօտ։ Եւ Սիմոն Պետրոսը
25 կանգնած տաքանում էր. նորան
ասացին, Չէ՞ որ դու էլ նորա ա-

շակերտներից ես, նա ուրուցաւ
26 և ասաց՝ Ձեմ։ Եւ քահանայապետի ծառաներից մէկն, որ ազգական էր նորան, որի ականջը Պետրոսը կտրեց, ասաց. Չէ՞ որ ես տեսայ քեզ այն պարտէզումը նորա հետ։ Եւ Պետրոսը դարձեալ ուրացաւ. և շուտով հաւը
28 խօսեց։ Եւ Յիսուսին Կայիափայի դատարանից տարան խառնիխուռն պալատը. և առաւօտ էր. և իրանք չմտան պալատի մէջ, որ չպղծուին, այլ
29 որ զատիկն ուտեն։ Եւ Պիղատոսը դուրս եկաւ նորանց մօտ և ասաց. Այդ մարդու դէմ ի՞նչ
30 դատաստան էք առաջ բերում։ Պատասխանեցին և ասացին նորան. Եթէ այս չարագործ չլիներ, ապա նորան չէինք մատնել քեզ։
31 Պիղատոսն էլ նորանց ասաց. Դուք առէք նորան, և ձեր օրէնքի համեմատ դատեցէք նորան։ Հրեաներն էլ նորան ասացին. Մեզ օ-
32 րէնք չէ ոչ ոքի սպանել։ Որ Յիսուսի խօսքը կատարուի, որ ասաց, ցոյց տալով թէ ինչպիսի
33 մահով է մեռնելու։ Պիղատոսը դարձեալ մտաւ պալատը, Յիսուսին կանչեց և նորան ասաց. Դո՞ւ ես Հրեաների թագաւորը։
34 Յիսուսը նորան պատասխանեց. Դու քեզմո՞նից ես ասում այդ, թէ ուրիշներն ասացին քեզ ինձ
35 համար։ Պիղատոսը պատասխանեց. Մի թէ ես է՞լ Հրեայ եմ. քո ազգը և քահանայապետները քեզ մատնեցին ինձ. ի՞նչ ես ա-
36 րել։ Յիսուսը պատասխանեց. Իմ թագաւորութիւնն այս աշխարհքից չէ. եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհքից լինէր, ապա ծառաներս կռիւ կ'անէին որ չմատնուիմ Հրեաների ձեռքը. բայց հիմա իմ թագաւորու-
37 թիւնն այս տեղից չէ։ Պիղատոսն էլ ասաց նորան. Ապա ուրեմն դու թագաւոր ես. պատասխանեց Յիսուսը. Դու ես ասում որ ես թագաւոր եմ. ես դորա համար եմ ծնուել և եկել աշխարհքս, որ ճշմարտութեանը վկայեմ. ամեն ով որ ճշմարտութիւնից է՝ իմ ձայնին լսում է։ Պիղատոսը նո- 38
րան ասաց. Ի՞նչ է ճշմարտութիւնը։ Եւ սա ասելով դարձեալ դուրս գնաց Հրեաների մօտ և նորանց ասաց. Ես ոչ մի յանցանք չեմ գտնում նորանում։ 39
Բայց ձեզ սովորութիւն է, որ զատկին մի մարդ արձակեմ ձեզ համար. արդ կամենո՞ւմ էք, որ Հրեաների թագաւորն արձակեմ ձեզ համար։
Եւ սոքանք դարձեալ աղաղակեցին և ասում էին, Ոչ թէ դորան՝ այլ Բարաբբային. և այդ 40
Բարաբբան մի աւազակ էր։

ԳԼ. ԺԹ

Այն ժամանակ առաւ Պիղա- 1
տոսը Յիսուսին և ծեծեց։ Եւ զին- 2
ուորները փշերից պսակ հիւսեցին, նորան գլխին դրին, և ծիրանի հանդերձ հագցրին նորան։ Եւ 3
ասում էին. Ողջ կաց, Հրեից թագաւորը. և ապտակներ էին տալիս նորան։ Պիղատոսը դարձեալ 4
դուրս գնաց և նորանց ասաց. Ահա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ, որ գիտենաք թէ՝ ես ոչ մի յանցանք չեմ գտնում նորանում։
Եւ Յիսուսը դուրս եկաւ և փշէ- 5
ղէն պսակն և ծիրանի հագուստը հագած. և նորանց ասաց. Ահա այն մարդը։ Երբոր քահանայա- 6
պետները և սպասաւորները նորան տեսան, աղաղակեցին և ասացին. խաչիր խաչիր։ Պիղատոսը նորանց ասաց. Դուք առէք դորան, և խաչեցէք. վասնզի ես յանցանք չեմ գտնում դորանում։ Հրեանե- 7
րը պատասխանեցին նորան. Մենք օրէնք ունինք, և մեր օրէնքի համեմատ պէտք է մեռնի. վասնզի իր անձն Աստուծոյ Որդի արաւ։
Երբոր Պիղատոսը այս խօսքը լը- 8
սեց, էլ աւելի վախեցաւ։ Եւ 9
դարձեալ մտաւ պալատը, և Յիսուսին ասաց. Դու ի՞նչ տեղից ես. և Յիսուսը չպատասխանեց նորան։ Պիղատոսն էլ ասաց նո- 10
րան. Ինձ հետ չե՞ս խօսում. մի թէ չես գիտում, որ իշխանութիւն ունիմ քեզ խաչելու, և իշխանութիւն ունիմ քեզ արձա-

11 կելու։ Յիսուսը պատասխանեց.
Դու ոչինչ իշխանութիւն չէիր
ունենալ ինձ վերայ, եթէ վե-
րևից տրուած չլինէր քեզ. Ն-
րա համար՝ նա որ ինձ մատնեց
քեզ, նորա մեղքն ունի մեծ է։
12 Եւ նորանից յետոյ Պիղատոսը
ուզում էր նորան արձակել. բայց
Հրէաները աղաղակում էին և ա-
սում. Եթէ դորան արձակես՝ կայ-
սերի բարեկամ չես. ամեն ով որ
իր անձը թագաւոր է կոչում,
13 նա կայսերին հակառակ է։ Պի-
ղատոսն էլ երբոր այս խօսքը լսեց,
Յիսուսին դուրս բերաւ, և բեմի
վերայ նստեց, այն տեղն՝ որ Քա-
րայատակ էր կոչվում, և Եբրա-
14 յեցերէն Գաբբաթա։ Եւ զատկի
ուրբաթն էր՝ ժամը իբր վեցը, և
Հրէաներին ասաց. Ահա ձեր թա-
15 գաւորը։ Իսկ նորանք աղաղա-
կում էին, վեր առ, վեր առ՝ և
խաչիր դորան. Պիղատոսը նորանց
ասաց. Ձեր թագաւո՞րը խաչեմ։
Քահանայապետները պատասխա-
նեցին. Մենք թագաւոր չունինք
16 բացի կայսերից։ Այն ժամանակ
նորան տուաւ նորանց ձեռքը, որ
խաչուի։

17 Եւ նորանք առին տարան Յի-
սուսին. և խաչափայտն ինքն վեր-
կալած, դուրս գնաց այն տեղն,
որ գագաթան էր ասւում, որ
Եբրայեցերէն Գողգոթա է կոչ-
18 վում։ Այն տեղ խաչ հանեցին
նորան. և նորա հետ երկու ու-
րիշներ՝ այս կողմը և այն կողմը,
19 և Յիսուսին մէջ տեղը։ Պիղատո-
սը մի տախտակ էլ գրեց, և խա-
չի վերայ դրաւ. և գրուած էր.
ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ
20 ՀՐԷԻՑ։ Եւ այս տախտակը Հրէա-
ներից շատերը կարդացին. վա-
րինդի քաղաքին մօտ էր այն տե-
ղը՝ որ Յիսուսը խաչուեցաւ. և
գրուած էր Եբրայեցերէն, Յու-
21 նարէն և Լատիներէն։ Եւ Հրէա-
ների քահանայապետներն ասա-
ցին Պիղատոսին. Մի գրեր Թա-
գաւոր Հրէից, այլ թէ նա ա-
սաց, Ես թագաւոր եմ Հրէից։
22 Պիղատոսը պատասխանեց. Ինչ
որ գրեցի՝ գրեցի։

23 Բայց զինուորներն՝ երբոր Յի-
սուսին խաչ հանեցին, նորա հան-
դերձներն առին՝ և չորս բաժին
արին, ամեն մէկ զինուորի համար
մի բաժին. բայց պատմուճանը՝
որովհետև առանց կարի էր, վե-
րևից վայր բոլորը հիւսուած.
24 Ուստի իրար ասացին. Դորան
չպատառենք, այլ վիճակ գցենք
դորա վերայ, թէ ումը լինի. որ
գիրքը կատարուի, որ ասում է.
Թէ իմ հանդերձներն իրանց մէջ
բաժանեցին և իմ պատմուճանի
վերայ վիճակ գցեցին. և զինուոր-
ներն արին այդ բանը։

25 Եւ Յիսուսի խաչի մօտ կանգ-
նած էին նորա մայրը, և նորա
մօր քոյրը՝ Մարիամ Կղէոպասի
կինը, և Մարիամ Մագդաղինա-
ցին։ Յիսուսն էլ տեսնելով իր մօ-
րը և այն աշակերտին՝ որ սիրում
էր, որ մօտիկ կանգնած էր, իր
մօրն ասաց. Ով կին, ահա քո
որդին։ Յետոյ ասաց աշակերտին.
Ահա քո մայրը. և այն ժամանա-
կից այն աշակերտն իրան մօտ ա-
ռաւ նորան։ Սորանից յետոյ Յի-
սուսը իմանալով, որ ամեն բան
արդէն կատարուած է, որպէս զի
գիրքը կատարուի ասաց. Ծարաւ
եմ։ Եւ մի սուրան կար քացախով
լիքն. և նորանք մի սպունգ լցրին
քացախով և զոպայի մշտիկի վե-
րայ դրած նորա բերանին մօտեց-
րին։ Եւ երբոր Յիսուսը քացախն
առաւ՝ ասաց. Կատարուած է.
և գլուխը խոնարհեցրեց հոգին
աւանդեց։

Բայց Հրէաները, որովհետև ու-
րբաթ օր էր, որպէսզի մարմինները
չմնան խաչի վերայ շաբաթ օ-
րը, վասնզի այն շաբաթ օրը մեծ
էր, Պիղատոսին աղաչեցին, որ
նորանց սրունքները ջարդեն. և վեր
առնուին։ Զինուորներն էլ եկան
և առաջինի սրունքները ջարդեցին,
այնպէս էլ միւսինը որ նորա հետ
խաչուած էր։ Բայց երբոր Յի-
սուսի մօտ եկան և տեսան նորան
արդէն մեռած, նորա սրունքնե-
րը չջարդեցին։ Այլ զինուորնե-
րից մէկը գեղարդով նորա կողը
խոցեց. և շուտով արիւն և ջուր

35 գաւրա եկաւ, եւ նա որ այս տեսաւ՝ վկայեց. և նորա վկայութիւնը ճշմարիտ է. և նա գիտէ որ ճշմարիտ է ասում, որ դուք
36 հաւատաք։ Վասնզի սա եղաւ, որ գիրքը կատարուի, Ե՛ Նորա ոսկորը չ'պիտի փշրուի։
37 եւ դարձեալ մի ուրիշ գիրք ասում է, Ե՛ Մարիկ կ'տան նորան, որ խոցեցին։

38 Սրանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յօսէփը, որ Արիմաթեացին էր, (որ աշակերտ լինելով Յիսուսին, բայց Հրէից վախին պատճառով ծածկուած էր) որ Յիսուսի մարմինն վեր առնէ. և Պիղատոսը հրաման տուաւ. և նա եկաւ և վեր առաւ Յիսուսի
39 մարմինը։ Նիկոդիմոսն էլ եկաւ՝ (որ առաջ Յիսուսի մօտ էր եկել գիշերով.) և զմուռս բերաւ հալուէի հետ խառնած՝ հարիւր լարի
40 չափ։ Եւ Յիսուսի մարմինն առան, և այն խնկերի հետ կտաւներով պատեցին, ինչպէս Հրէաներին օրէնք էր պատել։
41 Եւ այն տեղը, որ խաչուեցաւ, մի պարտէզ կար, և այն պարտէզում մի նոր գերեզման, որում երբէք
42 ոչ ոք չէր դրուած։ Եւ այնտեղ դրին Յիսուսին Հրէաների ուրբաթի համար, որովհետև գերեզմանը մօտ էր։

ԳԼ. Ի

1 Եւ մէկ շաբթի օրը Մարիամ Մագդալենացին առաւօտուց՝ տակաւին մութ՝ գալիս է գերեզմանը, և տեսնում քարը գերեզ-
2 մանից վեր առած։ Ա՛պա վազում է գալիս Սիմոն Պետրոսի և միւս աշակերտի մօտ, որին Յիսուսը սիրում էր, և ասում նորանց. Տէրոջը վեր առին գերեզմանիցը, և չենք գիտում, Ե՛ որտեղ դրին
3 նորան։ Եւ դուրս եկաւ Պետրոսը և միւս աշակերտը, և գալիս էին
4 գերեզմանը։ Եւ երկուքը միասին վազում էին. և միւս աշակերտը վազից շուտով անցաւ Պետրոսից, և առաջ եկաւ գերեզմանը։
5 Եւ ծռելով տեսնում է կտաւ-

նները դրած. բայց ներս չ'մտաւ։
6 Սիմոն Պետրոսն էլ հասաւ որնորա ետևից գալիս էր, և մտաւ գերեզմանը, և տեսնում է կտաւ-
7 նները դրած. Եւ վարշամակին՝ որ նորա գլխի վերայ էր, կտաւների հետ չէր, այլ ջոկ ծալած մի տեղն առանձին տեղ։ Այն ժամանակ
8 միւս աշակերտն էլ ներս մտաւ, նա որ առաջ էր գերեզմանը եկել,
9 տեսաւ և հաւատաց։ Վասնզի տակաւին չէին գիտում գիրքը, Թէ պէտք է նա մեռելներից յա-
10 րութիւն առնէ։ Եւ աշակերտներն դարձեալ իրար մօտ եկան։

11 Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած էր դուրսը և լաց էր լինում. և լաց լինելիս ծռեց մէջ-
12 քը գերեզմանի մէջ. Եւ տեսնում է երկու հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով նստած, մէկը գլխի կողմը և միւսը ոտների կողմը,
13 որ տեղ Յիսուսի մարմինը դրուած էր։ Եւ նորանք ասացին նորան. Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում. Նորանց ասաց. Վասն-
14 զի որ իմ Տէրոջը վեր առին, և չգիտեմ՝ Թէ ու՛ր դրին նորան։ Եւ երբոր սա ասաց, դարձաւ իր
15 յետին կողմը, և Յիսուսին տեսաւ՝ կանգնած. և չգիտեր Թէ Յիսուսն է։ Յիսուսը նորան ասաց. Կին, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմ ես որոնում. Նա էլ կարծելով Թէ պարտիզպանն է, ասաց նորան. Տէր, եթէ դու վեր առիր նորան, ասա ինձ՝ ու՛ր ես դրել նորան, որ ես վեր առնեմ նորան։
16 Յիսուսը նորան ասաց. Մարիամ. և նա դարձաւ և ասաց նորան. Ռաբբունի, որ կ'Թարգմանուի Վարդապետ։ Յիսուսը նորան ա-
17 ասց. Մի դպչիր ինձ, որովհետև դեռ չեմ վեր եղել իմ Հօր մօտ. բայց դու գնա իմ եղբայրներին մօտ, և նորանց ասա. Ես վեր եմ ելում իմ Հօր մօտ՝ և ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ և ձեր Աստուծոյ մօտ։ Մարիամ Մագդալե-
18 նացին գալիս է աշակերտներին պատմում, Թէ Տեսա Տէրոջը և այս բանն իրան ասաց։

19 Եւ մէկ շաբթի օրը, երբոր ի-

բիկան էր՝ և դռները փակուած, այն տեղ որ աշակերտները ժողովուած էին Հրէաներէն վախճը, Յիսուս եկաւ և նորանց մէջ կանգնեց, և նորանց ասաց. Խաղաղութիւն ձեզ։ Եւ սա ասելով իր ձեռները և իր կողը ցոյց տուաւ նորանց. և աշակերտներն ուրախացան երբոր Տիրոջը տեսան։ Յիսուս դարձեալ ասաց նորանց. Խաղաղութիւն ձեզ, ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես ալ ձեզ եմ ուղարկում։ Եւ սա ասելով փչեց նորանց վերայ և ասաց. Առէք Սուրբ Հոգին։ Որոնց մեղքը որ թողէք՝ թողուած կ'լինի նորանց. որոնցը որ բռնէք՝ բռնուած կ'լինի։

Բայց Թովմաս՝ տասներկուսից մէկը՝ Երկուորեակ կոչուածը, նորանց հետ չէր, երբոր Յիսուս եկաւ։ Միւս աշակերտներն ասում էին նորան, Թէ Տիրոջը տեսանք. իսկ նա ասաց նորանց, Եթէ նորա ձեռներումն բևեռների նշանը չ'տեսանեմ, և իմ մատը չ'գնեմ բևեռների տեղը, և իմ ձեռքը չ'կոխեմ նորա կողը, չեմ հաւատալ։

Եւ ութ օրից յետոյ աշակերտները դարձեալ ներսումն էին, և Թովմաս էլ նորանց հետ. Յիսուս՝ դռները փակ լինելով եկաւ և նորանց մէջտեղը կանգնեց և ասաց. Խաղաղութիւն ձեզ։ Յետոյ Թովմասին ասաց. Բեր քո մատը այս տեղ, և տես իմ ձեռները, և քո ձեռքը բեր՝ և իմ կողը կոխիր, և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։ Եւ Թովմաս պատասխանեց և ասաց նորան. Իմ Տէրը, և իմ Աստուածը։ Յիսուս նորան ասաց. Որովհետև տեսար ինձ՝ հաւատացիր. երանի նորանց, որ չեն տեսնում և հաւատում են։

Յիսուս ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր աշակերտների առջև, որ չեն գրուած այս գրքումը։ Բայց սորանք գրուեցան՝ որ հաւատաք, Թէ Յիսուս է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին. և որ հաւատալով կեանք ունենաք նորա անունովը։

ԳԼ. ԻԱ.

Սորանից յետոյ Յիսուս երեւեցաւ 1
եւ իր անձը յայտնեց իր աշակերտներին Տիբերեայ ծովի եղերին մօտ. և այսպէս յայտնեց։ Միասին էին Սիմոն Պետրոսը, և Երկուորեակ անուանուած Թովմասը, և Նաթանայէլն՝ որ Գալիլեայի Կանայիցին է, և Զեբեդեայի որդիքը, և նորա աշակերտներից ուրիշ էլ։ Սիմոն Պետրոսը նորանց ասաց. 3
Գնում եմ ձուկ բռնելու. նորան ասացին. Մենք էլ գանք քեզ հետ. գնացին և շուտով մտան նաւը, և այն գիշերը ոչինչ չբռնեցին։ Երբոր արդէն առաւօտ 4
եղաւ, Յիսուս ծովի եղերքը կանգնած էր, սակայն աշակերտները չճանաչեցին, թէ Յիսուս է։ Իսկ Յիսուս նորանց ասաց. Տղայք, ուտելու բան ունի՞ք. պատասխանեցին նորան, Ոչ։ Նա էլ 6
ասաց նորանց. Ուղղակի նաւի աջի կողմը գցեցէք, և կ'գտնէք. նորանք էլ գցեցին, և էլ չէին կարողանում քաշել ձկների շատութեան պատճառով։ Ան- 7
կեան՝ որ Յիսուս սիրում էր նորան՝ Պետրոսին ասաց, Տէրն է նա։ Սիմոն Պետրոս երբոր լսեց՝ թէ Տէրն է, վերարկուն իրան վերայ առաւ, քանզի մերկ էր, և գինքն ծովը գցեց։ Իսկ միւս աշակերտները գալիս էին նաւակովը. վասնզի ցամաքից հեռու չէին. այլ երկու հարիւր կանգուն չափ, և ուռկանը ձկներովը քաշում էին։ Երբոր դուրս եկան ցամաքը, տե- 9
սան ածուխ կրակ վառած, և նորա վերայ ձուկ դրած և հաց։ Յիսուս նորանց ասաց. Բերէք 10
այդ ձկներից՝ որ հիմա բռնեցիք։ Սիմոն Պետրոսը մտաւ և ուռկանը քաշեց դէպի ցամաքը՝ մեծ մեծ ձկներով լիքն՝ հարիւր յիսուն և երեք հատ. և այդքան լինելով 12
դործիքը չ'պատռուեցաւ։ Յիսուս նորանց ասաց. Եկէք ճաշեցէք. և աշակերտներից ոչ ով էր համարձակում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես. վասնզի գիտէին, որ Տէրն է։ Յիսուս էլ եկաւ՝ և 13

Հացն առաւ՝ և նորանց տուաւ,
14 և նոյնպէս էլ ձուկը։ Սա երրորդ
անգամն է որ Յիսուսը իր աշա-
կերտներին երևեցաւ, մեռելնե-
րից յարութիւն առնելուց յե-
տոյ։
15 Եւ երբոր ճաշեցին, Յիսուսը
ասաց Սիմոն Պետրոսին. Սիմոն
Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ
դորանցից աւելի, նորան ասաց.
Այո՛, Տէր, դու գիտես՝ որ սի-
րում եմ քեզ, նորան ասաց. Ա-
16 րածեցրու իմ գառներըը։ Դարձ-
եալ ասաց նորան. Սիմոն Յովնա-
նի որդի, սիրո՞ւմ ես ինձ. նորան
ասաց. Այո՛, Տէր, դու գիտես
որ սիրում եմ քեզ. նորան ասաց,
17 Արածեցրու իմ ոչխարներըը։ Եր-
րորդ անգամն ասաց նորան. Սի-
մոն Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ,
Պետրոսը տրտմեցաւ. որովհետև
երրորդ անգամ նորան ասաց՝ Ե՞ր
Սիրո՞ւմ ես ինձ. և նորան ասաց.
Տէր, դու ամեն բան գիտես, դու
գիտես, որ սիրում եմ քեզ. Յի-
սուսը նորան ասաց. Արածեցրու
18 իմ ոչխարներըը։ Ճշմարիտ ճշմա-
րիտն ասում եմ քեզ, երբոր պա-
տանի էիր՝ ինքդ էիր գօտիդ կա-
պում՝ և ման գալիս որ տեղ որ
ուզում էիր. բայց երբոր կ'ծերա-
նաս, ձեռներդ կ'մեկնես. և ու-
րիշը գօտի կ'կապէ, և կ'տանէ
որտեղ որ չես ուզիլ։ Սա ասաց՝ 19
ցոյց տալով թէ նա ի՞նչ մահով
կ'փառաւորէ Աստուծոյն. և սա
ասելուց յետոյ, նորան ասաց.
Իմ հետևից եկ. Պետրոսն էլ դար- 20
ձաւ՝ տեսաւ այն աշակերտին,
որին Յիսուսը սիրում էր, որ և-
տևից գալիս էր, նա՝ որ էլ նո-
րա լանջքոնն ընկաւ և ասաց.
Տէր, ո՞վ է քեզ մատնողը։ Պետ- 21
րոսը սորան տեսնելով, Յիսուսին
ասաց. Տէր, բայց սա ի՞նչ, Յի- 22
սուսը նորան ասաց. Եթէ կամե-
նում եմ, որ դա կենայ, մինչև
ես գամ. քե՞զ ինչ. դու իմ ե-
տևից եկ։ Եւ այս խօսքը դուրս 23
եկաւ եղբայրների մէջ, թէ այն
աշակերտը չի մեռնիլ. և Յիսու-
սը չասաց նորան, թէ չի մեռնիլ.
այլ եթէ կամենում եմ որ դա
կենայ մինչև ես գամ. քե՞զ ինչ։
Սա այն աշակերտն է, որ այս 24
բանների համար վկայում է, և այս
բաներն էլ գրեց, և գիտենք որ
նորա վկայութիւնը ճշմարիտ է։
Բայց ուրիշ էլ շատ բաներ կան, 25
որ Յիսուսը արաւ, որոնք եթէ
մէկ մէկ գրուած լինէին, կար-
ծում եմ թէ աշխարհքս էլ բա-
ւական չէր լինիլ այն գրուած
գրքերը տանելու։ Ամէն։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Առաջին պատմութիւնն արի,
ով Թէոփիլէ, ամեն բանի հա-
մար, որ Յիսուսը սկսեց անել և
2 ավարտելնել, Մինչև այն օրն, որ
Սուրբ Հոգով ձեռնից պատուէր
առաւ իր ընտրած առաքեալնե-
3 րին, և վերացաւ. Որոնց էլ իր
չարչարանքից յետոյ իրան կեն-
դանի կանգնացրեց շատ ապացոյց-
ներով քառասուն օրուայ միջո-
ցին երևելով նորանց՝ և Աստուծոյ
արքայութեան համար խօսելով.
4 Եւ նորանց միասին ժողոված
ժամանակը, պատուէր էր տալիս
նորանց՝ Երուսաղէմից չհեռա-
նալ, այլ սպասել Հօր աւետիքին,
որ՝ ասաց՝ ինձանից լսեցիք։ Որով- 5
հետև Յովհաննէսը ջրով մկրտեց. բայց դուք Սուրբ Հոգով
կ'մկրտուիք, ոչ թէ շատ օրեր
սորանից յետոյ։ Եւ նորանք մէկ 6
տեղ գալով հարցնում էին նորան
և ասում. Տէր, այս ժամանա-
կումն ես կանգնեցնում Իսրայէլի
թագաւորութիւնը։ Եւ ասաց 7
նորանց. Ձեր բանը չէ գիտենալ
ժամերը և ժամանակները, որ Հայ-
րըն իր իշխանութեանումն դրաւ։

8 Բայց դուք զօրութիւն կ'առնէք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ'գայ, և իմ վկաներըը կ'լինիք Երուսաղէմումն և բոլոր Հրէաստանի և Սամարիայի մէջ, մինչև երկրի ծայրերը։ 9 Եւ երբոր այս ասաց, նայեանք նայելնա՝ վերկացաւ. և ամպ վեր առաւ նորան նայանց 10 աչքերուցը։ Եւ դեռ որ նայանք աչքերը ուղղած մնիկ էին առելնա դէպի երկինքը նորա գնալըն, և ահա երկու մարդիկ երևեցան նորանց սպիտակ հանդերձներով, 11 Որ և ասացին. Ով Գալիլեացի մարդիկ, ինչ էք կանգնել և նայիկ էք անուամ դէպի երկինքը. այս Յիսուսն, որ ձեզանից վերացաւ երկինքը, այսպէս կ'գայ ինչպէս նորան տեսաք երկինքը գնալնա։ Այն 12 ժամանակ Զիթենեաց անուանուած լեռնիցը ետ դարձան Երուսաղէմ. որ մօտ է Երուսաղէմին շաբաթ օրուայ ճանապարհի չափ։ 13 Եւ երբոր մտան, վեր ելան վերնատունը որտեղ բնակած էին. Պետրոսը և Յակոբոսը, և Յոհաննէսը և Անդրէասը, Փիլիպպոսը և Թոմասը, Բարթողիմէոսը և Մատթէոսը, Յակոբոս Ալփեանը և Սիմոն Նախանձայոյզը՝ և Յուդա Յակոբեանը։ 14 Սորանք ամենքը միշտ միաբան ազօթք և աղաչանք էին անուամ կանանց հետ, և Յիսուսի մայր Մարիամի և նորա եղբայրներուն հետ։

15 Եւ այն օրերուամը Պետրոս վերկացաւ եղբայրներուն մէջ ասաց, և այն տեղ հարիւր և քսան հոգիներուն չափ բազմութիւն կային։ 16 Մարդիկ եղբարք, պետք էր այն գրուածը կատարուէր. որ առաջուց ասաց Սուրբ Հոգին Դաւթի բերանովն Յուդային համար, որ Յիսուսի բռնողներուն առաջնորդ 17 եղաւ։ Որ՝ նա մեզ հետ համարուած էր. և այս պաշտօնի վիճակը նորան էլ հասել էր։ 18 Արդ սա անիրաւութեան վարձքովը մի ագարակ առաւ. և գլխի վայր ընկնելով միջիցը ճղուեցաւ, և նորա բոլոր փորը դուրս թափուեցաւ։ 19 Եւ յայտնի եղաւ Երուսաղէմի բոլոր բնակիչներուն. մինչև որ այն ագարակի անունն իրանց լեզուովը Ակեղդամայ կոչուեցաւ. որ է ասել՝ Արիւնի ագարակ։ 20 Վասնզի Սաղմոսաց գրքուամն գրուած է, Թե նորա բնակութիւնը աւերակ պիտի լինի, և նորան մէջ բնակող չլինի. և նորա կարգը ուրիշն առնէ։ 21 Հիմա պետք է այս մարդկանցիցը, որ մեզ հետ են եղել այն բոլոր ժամանակն, որ Տէր Յիսուսը մեզ հետ մտաւ և դուրս եկաւ, 22 Յովհաննէսի մկրտութենիցն սկսած մինչև այն օրն, որ մեզանից վերացաւ. տանցից մէկը մեզ հետ վկայ լինի նորա յարութեանը։ 23 Եւ երկու հոգի կանգնեցրին՝ Յոսէփին՝ որ Բարսաբա էր կոչուած, որ Յուստոս անուանուեցաւ, և Մատթիասին։ 24 Եւ աղօթք անելով ասացին. Դուք, Տէր, ամենի սրտագէտ. այս երկուսից մէկը յայտնիր, որին ընտրեցիր, 25 Որ այս պաշտօնի և առաքելութեան վիճակն առնէ, որից Յուդան ընկաւ՝ իր տեղը գնալու համար։ 26 Եւ նորանց վերայ վիճակ գցեցին, և վիճակն ընկաւ Մատթիասին վերայ, և նա տասնմէկ առաքելոց հետ համարուեցաւ։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Պենտեկոստէի օրերը լրացան, ամենքը միաբան միասին էին։ 2 Եւ յանկարծակի երկնքիցը մի հնչիւն եղաւ՝ աստիկ փչող քամու պէս. և լցրեց բոլոր տունը՝ ուր նստած էին։ 3 Եւ երևեցան նորանց բաժանուած լեզուներ ինչպէս կրակից. և նստաց նորանց ամեն մէկի վերայ։ 4 Եւ ամենքը Սուրբ Հոգով լցուեցան, և սկսեցին ուրիշ լեզուներով խօսել, ինչպէս որ Հոգին նորանց խօսել էր տալիս։ 5 Եւ Երուսաղէմումը բնակած էին Հրէաներ Աստուածավախ մարդիկ՝ երկնքի տակի ամեն ազգերից։ 6 Եւ երբոր այս ձայնը եղաւ, բազմութիւնն եկաւ միկտեղ և կիսուեցաւ. ոմանք եւս ամեն մէկը լսում էր նորանց, որ իր լեզուովը խօսում էին։ 7 Եւ ամենքը հիանում էին և զար-

մանուամ, և իրար առաւամ էին. Զէ՞ որ ահա սրտանք ամենքը, որ խո-
8 առամ են, Գալիլեացի են, և ի՞նչ-պէս մենք ամեն մէկս մեր լեզուա-
վը լսեամ ենք որ ծնարանուամ ծըն-
9 ուած ենք. Պարթեւներ և Մարք և Եղամացիք, և բնակուղներ Մի-
ջագետի, Հրէաստանի և Կապա-
դովկիոյ, Պանտոսի և Ասիոյ մէջ,
10 Փռիւգիոյ և Պամփիլիոյ մէջ, Եգիպտոսում, և Լիբիոյց կող-
մերում Կիւրենէի մօտ, և նո-
րեկ Հռոմայեցիք. Հրէաներ և
11 նորահաւատներ, Կրէտացիք և Արաբացիք, լսեամ ենք, որ նորանք
մեր լեզուներով Աստուծոյ մե-
12 ծամեծ բաներըը խօսամ են: Եւ հիանամ էին ամենքն և զարմա-
նամ, և մէկը միւսին առամ էին,
13 Սա ի՞նչ պիտի լինի: Իսկ ուրիշ-
ները ծաղր անելով առամ էին, քաղցուով արբած են:
14 Եւ վերկացաւ Պետրոսը այն տասնումէկի հետ, իր ձայնը բարձ-
րացրեց, և նորանց հետ խօսեց. Ով Հրէաստանցի մարդիկ, և ա-
մենքդ՝ որ բնակուած էք Երուսա-
ղէմումը, սա ձեզ յայտնի լինի, և իմ խօսքերին ականջ դրէք:
15 Քանի չէ թէ, ինչպէս դուք էք կարծամ, արբած են. որովհետև օրուայ երրորդ ժամն է:
16 Այլ այս ցովիլ Մարգարէի ձե-
17 ռովն ասուածն է, Եւ կ'լինի յե-տին օրերումն, ասում Աստուած, որ իմ Հոգուցը կ'թափեմ ամեն մարմնոյ վերայ, և ձեր որդիները և ձեր աղջիկները կ'մարգարէա-նան. և ձեր երիտասարդները տե-սիլքներ կ'տեսանին, և ձեր ծերը երազներ կ'տեսանին:
18 Եւ իմ ծառաներուն վերայ և իմ աղախին-ներուն վերայ էլ այն օրերումն իմ Հոգուցը կ'թափեմ, և կ'մարգա-
19 բեսանան: Եւ նշաններ կ'տամ վե-րեն երկինքումն, և նշաններ ներ-քեն երկրումը, արիւն և կրակ և
20 ծխի մրրիկ: Արեգակը խաւար կ'դառնայ, և լուսինն արիւն, Տի-րոջ մեծ և երեւելի օրը դեռ չ'ե-
21 կած: Եւ կ'լինի, ամեն ով որ Տի-րոջ անունը կ'կանչէ՝ կ'փրկուի:
22 Ով Իսրայէլացի մարդիկ, այս

խօսքերը լսեցէք. Յիսուս Նազո-րեցին՝ այն մարդը՝ որ Աստուա-ծանից ցոյց տրուեցաւ ձեզանում զօրութիւններով և հրաշքներով և նշաններով, որ Աստուած նո-րա ձեռովն տրաւ ձեր միջումը, ինչպէս դուք էլ գիտէք. Նորան, 23
որ Աստուծոյ սահմանուած խոր-հրդովն և կանխագիտութեամբը մատնուած էր, առիք անօրէննե-րի ձեռքով փայտի վերայ բեւե-ռած, սպանեցիք. Որին Աստուած 24
յարոյց՝ մահի ցաւերը լուծելով, վասնզի կարելի չէր, որ նա բռա-նուի նորանից: Քանզի Դաւիթ 25
ասում է նորա համար. Աստուց տեսանում էի Տիրոջն ամեն ժամա-նակ իմ առջև. վասնզի իմ աջ կողմն է, որ չսասանիմ: Սորա հա- 26
մար իմ սիրտն ուրախ եղաւ, և լեզուս ցնծացաւ, և իմ մարմինն էլ յուսով կ'բնակէ: Որովհետև 27
իմ անձը չես թողել դժոխքու-մը, և ոչ էլ քո Սրբին տալս կանութիւն տեսնել կ'տաս կեան-քի ճանապարհները ճանաչելիր լինիմ. քո երեսի ուրախութիւնո- 28
վը կ'լցնես ինձ: Արդիւնք եղբայր- 29
պէտք է համարձակութեամբ ա-սեմ ձեզ Դաւիթ Նահապետի հա-մար. Թէ նա մեռաւ էլ՝ թաղուե-ցաւ էլ, և նորա գերեզմանը մին-չև այսօր մեր միջումն է: Իսկ ա- 30
րդուիետև մարգարէ էր, և գիտէր, որ Աստուած երդումով երդուա-նորան, որ նորա երանքի պտղից մարմնոյ կազմանէ յարուցանէ Քրիստոսին նորա աթոռի վերայ նստեցնելու համար: Աստուց 31
խնդացած՝ խօսեց Քրիստոսի յա-րութեան համար, թէ նորա հո-գին դժոխքումը չ'թողուեցաւ՝ և ոչ էլ նորա մարմինն տպական-նութիւն տեսաւ: Սոյն այս Յի- 32
սուսին Աստուած յարոյց՝ որի վկա-ներն ենք մենք ամենքս: Արդ Աս- 33
տուծոյ աջովը բարձրացած, և Սուրբ Հոգոյ առնելքը Հօրից ա-ռած, թափեց այս, որ դուք հի-մա տեսանում և լսում էք: Քան- 34
զի ոչ Թէ Դաւիթ վեր եղաւ եր-կինքը, բայց ինքն ասում է, Տէրն իմ Տիրոջն ասաց. Նստ աջ կողմը

35 նաիր, Մինչև քո թշնամիները
քո ոտից պատուանդան դնեմ։
36 Հիմա թող ամբողջ տունը Իս-
րայէլի բոլոր տունը, որ Աստուած
նորան Տէր և Օծեալ արաւ, այն
այս Յիսուսին, որին դուք խա-
չեցիք։
37 Եւ երբոր այս լսեցին, էրա-
սրտերնին ցաւեցաւ, և ասացին
Պետրոսին և միւս առաքեալնե
րին, Ինչ անենք, մարդիկ եղ-
38 բայրք։ Պետրոս էլ նորանց ա-
սաց. Ապաշխարեցէք՝ և ձեզանից
ամեն մէկն թող մկրտուի Յիսուս
Քրիստոսի անունովը՝ մեղաց թո-
ղութեան համար, և Սուրբ Հո-
39 գոյ պարգևը կ'ընդունիք։ Վասն-
զի ձեզ և ձեր որդոց համար է
այս աւետիքը, և այն ամեն հե-
ռաւորների համար, որոնց մեր
40 Տէր Աստուածը կ'կանչէ։ Եւ ու-
րիշ շատ խօսքերով վկայութիւն
էր գնում, և յորդորում և ա-
ւում. Ազատուեցէք այս թիւր
41 ազգիցը։ Եւ նորանք որ նորա խօս-
քը յօժարութեամբ ընդունեցին՝
մկրտուեցան. և այն օրն երեք հա-
42 զարի չափ հոգիք աւելացան։ Եւ
միշտ հետևում էին առաքելոց
վարդապետութեանը և հաղոր-
դութեանը, և հացի կտրելոյն և
աղօթքներին։
43 Եւ ամեն անձի վերայ վախ ե-
կաւ. շատ հրաշքներ և նշաններ
էլ էին գործվում առաքելոց ձեռ-
44 քովը։ Եւ բոլոր հաւատացեալ-
ները իրար հետ մէկ տեղ էին, և
ամեն բան հասարակաց ունէին։
45 Եւ ապրանքները և բոլոր բաները
ծախում էին, և բաշխում էին
այն ամենին, ում ինչ բան որ
46 պէտք էր լինում։ Ամեն օր միա-
բանութեամբ տաճարումն էին լի-
նում, և հաց էին կտրում տնե-
րումը, և ուրախութիւնով և սըր-
տի միամտութիւնով կերակուր
47 էին առնում. Աստուծոյն օրհնում
էին, և բոլոր ժողովրդի առջև
շնորհք ունէին. և Տէրն ամեն օր
փրկուածներին աւելացնում էր
եկեղեցու հետ։

Գ.Լ. Գ

Պետրոսն և Յովհաննէսը գնում էին 1
միասին տաճարն ննեերսրդ ժամի
աղօթքին։ Եւ մի մարդ կար իր 2
մոր որովայնիցը կաղ, որին վեր-
կալած՝ ամեն օր դնում էին տա-
ճարի այն դրան մօտ, որ գեղեցիկ
էր կոչվում, տաճարը մտնողնե-
րից ողորմութիւն խնդրելու հա-
մար։ Երբոր նա տեսաւ Պետրո- 3
սին և Յովհաննէսին, որ գնում էին
մտնեն տաճարը, աղաչում էր,
որ ողորմութիւն առնէ նորանցից։
Պետրոսը Յովհաննէսի հետ մտիկ 4
արաւ նորան և ասաց. Մեզ նա-
յիր։ Նա էլ ուշը դարձրեց դէ- 5
պի նորանց, սպասելով որ մի բան
առնէ նորանցից։ Պետրոսն էլ ա- 6
սաց. Արծաթ և ոսկի չունիմ.
բայց ինչ որ ունիմ, այն քեզ
կ'տամ. Յիսուսի Քրիստոսի՝ Նա-
զովրեցու անունովը վեր կաց և մըն
եկ։ Եւ աջ ձեռքիցը բռնեց՝ վեր- 7
կացրեց նորան. և շուտով հաս-
տատուեցան նորա սրունքը և բարձ-
քը։ Վեր թռաւ կանգնեց և մըն 8
էր գալիս, և նորանց հետ մտաւ
տաճարը մըն գալով և վազ տա-
լով՝ և Աստուծոյն օրհնելով։ Եւ 9
բոլոր ժողովուրդը տեսաւ նորան,
որ մըն էր գալիս և Աստուծոյն
օրհնում էր։ Եւ ճանաչում էին 10
նորան, որ սա էր, որ ողորմու-
թեան համար նստում էր տաճա-
րի գեղեցիկ դրանը, և լցուեցան
երկիւղով և զարմանքով այն ե-
ղած նշանի համար։
Եւ քանի որ այն բժշկուած 11
կաղը Պետրոսին և Յովհաննէսին
բռնած էր, բոլոր ժողովուրդը
վազեց նորանց մօտ այն սրահն,
որ Սողոմոնի սրահ էր կոչվում՝
զարմացած։ Երբոր Պետրոսը տե- 12
սաւ, պատասխանեց ժողովրդին.
Ով Իսրայէլացի մարդիկ, ինչո՞ւ
էք զարմացել սորա վերայ, կամ
մե՞զ վերայ էք ինչո՞ւ սատիկ
նայում, իբր թէ մենք մեր զօրու-
թիւնով և քաջութիւնով սրած
լինինք, որ գա մըն գայ։ Աբրա- 13
համի և Իսահակի և Յակոբի
Աստուածը՝ մեր հարանց Աստուա-

ծը փառաւորեց իր Որդի Յիսուսին. որին դուք մատնեցիք, և ուրացաք Պիղատոսի առջև երբոր նա դատում էր՝ որ արձակէ նա-
14 րան։ Եւ դուք այն Սուրբին և Արդարին ուրացաք, և խնդրեցիք մի մարհապարտ մարդ շնորհել
15 ձեզ։ Իսկ կենաց Առաջնորդին սպանեցիք, որին Աստուած մեռելներից յարոյց. որի վկաներն
16 ենք մենք։ Եւ նորա անունի հաւատքովը սորան՝ որ տեսնում էք և ճանաչում էք, նորա անունը հաստատեց. և հաւատքն՝ որ նորանով է՝ այս առողջութիւնը տուաւ դորան ձեր ամենի առջև։
17 Եւ հիմա, եղբարք, գիտեմ, որ անգիտութեամբ արիք՝ ինչպէս
18 ձեր իշխաններն էլ։ Բայց Աստուած, ինչ որ առաջուց բոլոր մարգարէների բերանովը պատմեց՝ Քրիստոսի չարչարուելու համար, այնպէս էլ կատարեց։ Ու-
19 րեմն դղջացէք և ետ դարձէք, որ
20 ձեր մեղքերը ջնջուին. Որ Տիրոջ երեսից հանգստանալու ժամանակներ գան. և ուղարկէ առաջուց ձեզ համար քարոզուած Յիսուս Քրիստոսին. Որին երկինքը
21 պէտք է ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատուելու ժամանակները. որոնց համար խօսեց Աստուած իր բոլոր առաքեալների բերանովը յաւիտենից
22 հետէ։ Քանզի Մովսէս հարցանց ասաց, թէ Ձեր Տէր Աստուածը մարգարէ վեր կ'կացնէ ձեզ համար ձեր եղբայրների միջից ինձ նման, նորան լսեցէք ամեն բանի
23 համար՝ ինչ որ խօսի ձեզ։ Եւ կ'լինի, որ ամեն անձն՝ որ այն մարգարէին չ'լսէ, նա ժողովրդի
24 միջից թող ստամոքսի։ Եւ բոլոր մարգարէներն որ Սամուէլից հետէ մարգարէացան, այս օրերը
25 պատմեցին։ Դուք էք այն մարգարէների որդիքը՝ և այն ուխտի, որ Աստուած մեր հարցանց հետ հաստատեց, և Աբրահամին ասաց. Եւ քո զաւակովը պիտի օրհ-
26 նուին երկրի բոլոր ազգերը։ Աստուած առաջ ձեզ համար վերկացրեց իր Որդին Յիսուսին, և նորան ուղարկեց՝ որ նա ձեզ օրհնէ, որ ամեն մէկը ձեր չարութիւններից։

ԳԼ. Գ

Եւ նորանք տակաւին ժողովրդի հետ խօսելիս քահանայապետերը և տաճարի իշխանը և Սադուկեցիք նորանց վերայ հասան, Յա-
2 տիկ բարկացած նորա համար՝ որ նորանք ժողովրդին աւետարանում էին, և քարոզում էին Յիսուսի ձեռքովը մեռելներից յարութիւն առնելը։ Եւ իրանց ձեռները գցե-
3 ցին նորանց վերայ, և բանտի մէջ դրին մինչև առաւօտը. վասն զի արդէն իրիկուն էր։ Եւ այս խօս-
4 քը լսողներից շատերը հաւատացին. և մարդկանց համարը հինգ հազարի չափ եղաւ։
5 Եւ հետևեալ օրը եղաւ, որ նորանց իշխանները և երէցները և դպիրները ժողովուեցան Երուսաղէմ։ Եւ Աննա քահանայապետը
6 և Կայիափան, և Յովհաննէսը և Աղէքսանդրոսը, և այն ամենը որ քահանայական ցեղից էին։ Եւ
7 նորանց կանդնեցնելով մէջտեղը՝ հարցնում էին. Ո՞ր ինչ զօրութիւնով կամ ո՞ր անունով արիք դուք այս։ Այն ժամանակ
8 Պետրոսը Սուրբ Հոգով լցուած նորանց ասաց. Ով ժողովրդի իշխաններ՝ և Իսրայէլի երէցներ.
9 Եթէ մենք այսօր հարցաքնուում ենք մի տկար մարդու երախտիք ընելու համար, թէ ում ձեռովը
10 սա բժշկուեցաւ. Թող յայտնի լինի ձեզ ամենիդ՝ և բոլոր Իսրայէլի ժողովուրդից, որ Յիսուս Քրիստոսի Նազովրեցու անունով՝ որին դուք խաչեցիք, և ո-
11 րին Աստուած յարոյց մեռելներից. նորանով սա հիմա ձեր առջև առողջ կանգնած է։ Նա է
12 ձեղանից՝ շինողներիցդ անարգուած քարը, որ անկիւնի գլուխ եղաւ։ Եւ էլ մի ուրիշ ոչ մէկով փրկութիւն չ'կայ. որովհետև ուրիշ անուն էլ չ'կայ երկնքի տակ մարդկանց տրուած, որով կըլինի մեզ փրկուիլ։ Եւ գիտ-
13

բոսի և Յօհաննէսի համարձակութիւնը տեսանելով, և գիտենալով, որ առանց ուսմունքի և տգէտ մարդիկ են, զարմանում էին. ևայն ճանաչում էին նորանց՝ որ 14 Յիսուսի հետ էին։ Եւ այն բժշկուած մարդուն էլ տեսնելով նորանց հետ կանգնած, ոչինչ 15 չունէին պատասխանելու։ Եւ հրամայեցին նորանց, որ տանեքը դուրս գնան, և իրար հետ խոր- 16 հուրդ արին, Եւ ասացին. Ի՞նչ անենք այս մարդկանցը, որ երևելի նշան եղաւ որանց ձեռովը. որ Երուսաղէմի մէջ բոլոր բնակողներին յայտնի է, և կարող 17 չենք ուրանալ։ Այլ որպէս զի աւելի չ'տարածուի ժողովրդի մէջ, սաստիկ սպառնանք նորանց, որ այլ ևս այն անունովը չ'խօսին 18 մարդկանց ոչ մէկի հետ։ Եւ նորանց կանչեցին՝ պատուէր տուին, որ ամենևին չ'խօսին, և ոչ էլ սովրեցնեն Յիսուսի անունովը։ 19 Բայց Պետրոսը և Յօհաննէսը պատասխանեցին նորանց և ասացին. Եթէ արժա՞ն է Աստուծոյ առջև՝ որ ձեզ աւելի ականջ դնենք քան թէ Աստուծոյն, դուք դա- 20 տեցէք։ Վասնզի մենք չենք կարող այն որ տեսանք և լսեցինք, 21 չ'խօսիլ։ Իսկ նորանք սպառնալով արձակեցին նորանց, և ոչինչ չ'գտնելով թէ ինչպես պատիժ տան նորանց՝ ժողովրդի պատճառովը. վասնզի ամենքն էլ այն եղածի համար փառք էին տալիս 22 Աստուծոյն։ Քանզի այն մարդը որուսանն տարուց աւելի էր, որի վերայ այս բժշկութեան նշանը եղաւ։

23 Եւ արձակուելուց յետոյ եկան իրանցներին մօտ, և պատմեցին ինչ որ քահանայապետները և երէց- 24 ներն ասացին նորանց։ Եւ նորանք երբոր լսեցին, միաբանութեամբ իրանց ձայները բարձրացրին դէպի Աստուած և ասացին. Տէր, դու ևս Աստուած, որ արիր երկինքը և երկիրը՝ ծովը և նորանց մէ- 25 ջի բոլոր բանները։ Որ քո Դաւիթ ծառայի բերանովը խօսեցիր և ասացիր. Ինչու համար ազգերը խռովեցան՝ և ժողովուրդներն ունայն բաներ մտածեցին։ Երկրի 26 թագաւորները վերկացան, և իշխանները ժէկտեղ հաւաքուեցան Տէրոջ դէմ և նորա Օծեալի դէմ։ Վասնզի արդարև հաւաքուեցան 27 քո սուրբ Որդի Յիսուսի վերայ, որին օծեցիր. Հերովդէսը և Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսների հետ և Իսրայէլի ժողովուրդների հետ, Որ անեն՝ ինչ որ քո ձեռը և կամքն առաջուց սահմանեց 28 լինելու։ Եւ հիմա, Տէր, նայիր 29 նորանց սպառնալիքին, և տուր քո ծառաներին, բոլոր համարձակութիւնով քո խօսքը խօսել. Որ քո ձեռը մեկնես, որ բժշկու- 30 թիւն, և նշաններ և հրաշքներ լինին, քո սուրբ Որդի Յիսուսի անունովը։ Եւ նորանք աղօթք ա- 31 նելիս՝ շարժուեցաւ այն տեղը, ուր որ ժողովուած էին, և ամենքը Սուրբ Հոգով լցուեցան. և Աստուծոյ խօսքը խօսում էին համարձակութեամբ։

Եւ հաւատացելոց բազմու- 32 թեան սիրտը և հոգին մէկ էր. և ոչ ոք չէր ասում իր ապրանքի մէկի համար՝ թէ իրանն են. այլ նորանց համար ամեն բաները հասարակաց էր։ Եւ առաքեալները 33 մեծ զօրութեամբ վկայութիւն էին տալիս Տէր Յիսուսի յարութեան համար. և մեծ շնորհք կար նորանց ամենի վերայ։ Որովհետև 34 նորանց մէջ ոչ մէկը կարօտութիւն չունէր. վասնզի նորանք որ տարտակների կամ անեղի տէր էին, ծախում էին, և ծախուածի գինը բերում էին, Առաքելոց ոտնե- 35 րի մօտ էին դնում. և ամեն մէկին տրվում էր ինչ որ պէտք էր ունենում։ Եւ Յովսէսը որ առաքե- 36 ալներից Բառնաբաս կոչուեցաւ, որ Մխիթարութեան որդի կ'թարգմանուի, Ղևտացի, ծննդեամբ Կիպրացի. Նա մի տարտակ ու- 37 նէր, ծախեց և գինը բերաւ առաքելոց ոտների մօտ դրաւ։

Գլ. Ե

Եւ մի մարդ՝ անուն Անանիա, 1

իր Սափիրա կնոջ հետ՝ մի կալ-
2 ուածք ծախեց, եւ նորա գնիցը
թաքցրեց, որ կինն էլ գիտէր.
և մի բաժինը բերաւ առաքելոց
3 ոտների մօտ դրաւ: Եւ Պետրոսը
ասաց. Անանիա, ինչո՞ւ համար
սատանան քո սիրտը լցրեց, որ
դու սուտ խօսես Սուրբ Հոգոյն,
և ագարակի գնիցը թաքցնես:
4 Չէ՞ որ նա որ կենում էր՝ քոնն
էր, և ծախուած էլ քո իշխա-
նութեան տակն էր. ինչ է՞ որ
այս բանը գրիր քո սրտի մէջ.
ոչ թէ մարդկանց սուտ խօսեցիր,
5 այլ Աստուծոյն: Եւ Անանիան
հէնց որ այս խօսքը լսեց, վայր
ընկաւ և հոգին հանեց. և մեծ
վախ եղաւ ամենքի վերայ, որ այդ
6 լսեցին: Երիտասարդներն էլ վեր-
կացան՝ պատանեցին նորան, և
7 տարան թաղեցին: Եւ եղաւ երբ
որ երեք ժամի չափ անցաւ, ն-
րա կինն որ չէր գիտում եղածը՝
8 ներս մտաւ: Պետրոսը պատաս-
խանեց նորան և ասաց. Ասա ինձ՝
թէ այնչափի ծախեցիք պատա-
կը. նա էլ ասաց. Այո, այն չա-
9 փի: Պետրոս էլ ասաց նորան.
Ինչ է՞ որ միաբանեցաք դուք,
որ Տիրոջ Հոգին փորձէք. ահա
քո մարդը թաղողների ոտները
դրան մօտ են, քեզ էլ կ'հանեն:
10 Եւ իսկոյն վայր ընկաւ նորա ոտ-
ների առջև՝ և հոգին հանեց. և
երիտասարդներն էլ ներս մտան՝
նորան մեռած գտան, և հանե-
ցին՝ իր մարդի մօտ թաղեցին:
11 Եւ մեծ ահ եղաւ բոլոր եկեղե-
ցու վերայ, և ամենքի վերայ որ
12 այս լսեցին: Եւ առաքելների
ձեռովը շատ նշաններ և հրաշք-
ներ էին լինում ժողովրդի մէջ.
ամենքը միաբան Սողոմոնի սրա-
13 հումն էին: Եւ ուրիշներից ոչ
ոք չէր համարձակում յարել նո-
րանց. բայց ժողովուրդը մեծա-
14 րում էր նորանց: Եւ առաւել ևս
շատանում էին Տիրոջ հաւատաց-
եալները, և էգ— մի բազմութիւն
15 մարդկանց և կանանց: Մինչև որ
հիւանդներին հանում էին հրա-
պարակները, և իրանց պատգա-
րակներովն և մահիճներովն այն
տեղ էին դնում, որ Պետրոսը անց-
նելիս, գոնե նորա հովանին նո-
րանցից մէկի վերայ ընկնէ: Եւ 16
շրջակայ քաղաքներից բազմու-
թիւնը հաւաքվում էին Երուսա-
ղէմ, որ բերում էին հիւանդնե-
րին և պիղծ ոգիներից չարչար-
ուածներին, որ ամենքն էլ բժըշկ-
վում էին:

Եւ վերկացաւ քահանայապետը 17
և ամենքն որ նորան հետ էին, և
Սադուկեցոց աղանդը, և նախան-
ձով լցուեցան. Եւ ձեռք դցե- 18
ցին առաքեալներին, և նորանց
դրին հասարակաց բանտի մէջ:
Բայց Տիրոջ հրեշտակը գիշերով 19
բանտի դռները բացաւ, և նորանց
դուրս հանելով ասաց. Գնացէք 20
և կանգնեցէք տաճարի մէջ և այս
կեանքի բոլոր հրամանները խօսե-
ցէք ժողովրդի հետ: Եւ երբոր 21
լսեցին, առաւօտանց մտան տա-
ճարը և ամբոխնում էին. քա-
հանայապետն էլ ինքն և նորանք
էլ որ նորա հետ էին, և կան-
չեցին առեանը և Իսրայէլի որ-
դոց բոլոր ծերակոյտն ժէկ տեղ,
և ուղարկեցին բանտը որ բերեն
նորանց: Եւ երբոր սպասաւորնե- 22
րըն եկան, նորանց չ'գտան բան-
տի մէջ. և ետ դարձան պատմե-
ցին, Եւ ասացին. Թէ բանտը 23
բոլոր զգուշութեամբ փակած գը-
տանք, և պահապաններն էլ՝ դուր-
սը դրան մօտ կանգնած. բայց
երբոր բաց արինք՝ ներսումն ոչ
ոքին չգտանք: Եւ երբոր քահա- 24
նայապետը և տաճարի իշխանը այս
խօսքը լսեցին, հիանում էին նո-
րանց համար, թէ սա ինչ պիտի
լինի: Եւ մէկն եկաւ նորանց պատ- 25
մեց, թէ Ահա այն մարդիկն, որ
բանտի մէջ դրիք, տաճարում
կանգնած սովորեցնում են ժողո-
վրդին: Այն ժամանակ իշխանն 26
սպասաւորներին հետ գնաց՝ նո-
րանց բերաւ առանց բռնութեան.
քանզի ժողովրդից վախենում
էին՝ որ չ'քարկոծեն: Եւ երբոր 27
բերին նորանց՝ կանգնեցրին տա-
ճարում. և քահանայապետը
հարցրեց նորանց, Եւ ասաց. Չէ՞ 28
որ պատուիրելով պատուիրեցինք

ձեզ՝ չ'ասվրեցնել այդ անունովը. և ահա երուսաղէմը լցրիք ձեր ուսմունքովը, և կամենաք էք այն մարդու արիւնը ինձ վերայ բերել։

29 Պետրոսը և առաքեալները պատասխանելով ասացին. Աստուծոյ պէտք է աւելի հնազանդել
30 քան թէ մարդկանց։ Մեր հարանց Աստուածը յարոյց Յիսուսին՝ որին դուք փայտից կախած
31 սպանեցիք։ Աստուած նորան Առաջնորդ և Փրկիչ բարձրացրեց իր աջովն, որ Իսրայէլին ապաշխարութիւն և մեղաց թողութիւն
32 տայ։ Եւ մենք նորա վկաներն ենք այս բանների համար, և Սուրբ Հոգին էլ, որ Աստուած իրան հնազանդողներին տուաւ։
33 Եւ նորանք երբոր լսեցին, կատաղեցան էին. և խորհուրդ էին, որ նորանց սպանեն։

34 Բայց մի փարիսեցի վերկացաւ ատեանումը՝ անունը Գամալիէլ, օրէնքի վարդապետ՝ բոլոր ժողովրդի առջև պատուական, հրամայեց առաքեալներին մի քիչ
35 դուրս տանել, և նորանց ասաց. Իսրայէլացի մարդիկ, զգուշացէք այս մարդկանց համար, թէ ինչ
36 պիտի անէք։ Քանզի այս օրերից առաջ Թևդաս վերկացաւ՝ ասելով թէ ինքն մի բան է. որ թուով չորս հարիւրի չափ մարդիկ նորան յարեցան. որ էլ սպանուեցաւ՝ և ամենքն էլ՝ որ նորան հնազանդել էին, ցրուեցան և
37 ոչինչ եղան։ Նորանից յետոյ Գալիլեացի Յուդան վերկացաւ աշխարհագրի օրերումը. և շատ ժողովուրդ ապստամբեցրեց իրան յետից. նա էլ կորաւ՝ և ամենքն էլ որ նորան հնազանդել էին,
38 ցիրուցան եղան։ Եւ հիմա ասում եմ ձեզ. Հեռու կացէք այդ մարդկանցից, և թողէք դորանց. քանզի եթէ այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կ'քանդուի.
39 բայց եթէ Աստուածանից է, չէք կարող քանդել դորան. մի գուցէ Աստուծոյ դէմ կռիւ
40 անող էլ գտնուիք։ Նորանք էլ համոզուեցան նորան. և առաքեալներին կանչեցին՝ ծեծեցին, և պատուէր տուին, որ չ'խօսեն Յիսուսի անունովը. և արձակեցին նորանց։ Իսկ նորանք ուրախանալով գնացին առեանի երեսից. որովհետև արժանի եղան նորա անունի համար անարգուիլ։ Եւ բոլոր օրը չէին դադարում տաճարումը և աներումը աւետարանել և Յիսուսին Քրիստոսին ուսուցանել։

Գլ. Զ.

1 Եւ այն օրերումն՝ երբոր աշակերտները շատացան, Հելլենացոց կողմանէ տրտունջ եղաւ Եբրայեցոց դէմ. թէ նորանց սրբեսրիքը ամեն օրուան մատակարարութեանց մէջ անտես էին լինում։ Եւ տասներկուքը կանչեցին աշակերտների բազմութիւնը և ասացին. Մեզ վայել չէ որ Աստուծոյ խօսքը թողած սեղանին
3 ծառայենք։ Հիմա, եղբայրք, ձեզանից եօթը վկայուած մարդիկ ընտրեցէք, Սուրբ Հոգով և իմաստութիւնով լցուած, որոնց այս պետութից վերայ դնենք։ Իսկ մենք
4 աղօթքին և խօսքի պաշտամունքին հետևինք։ Եւ այս խօսքը բոլոր
5 բազմութեան առջև հաւանելի եղեաւ. և ընտրեցին Ստեփաննոսին որ Սուրբ Հոգով և հաւատքով լցուած մարդ էր, և Փիլիպպոսին և Պրոխորոսին և Նիկանորին և Տիմոնին և Պարմենային և Անտիոքացի նորահաւատ Նիկողայոսին։ Նորանց կանգնեցրին առաքելոց առջև. և աղօթք անելով ձեռք դրին նորանց
7 վերայ։ Եւ Աստուծոյ խօսքը աճում էր և աշակերտների համարը խիստ շատանում էր Երուսաղէմում. և քահանաներից էլ շատ բազմութիւն հնազանդվում էին հաւատքին։

8 Ստեփաննոսն էլ հաւատքով և զօրութիւնով լցուած, մեծ մեծ հրաշքներ և նշաններ էր անում ժողովրդի մէջ։ Եւ վերկացան ոմանք այն ժողովարանից՝ որ
9 Լիբերտինացոց էր կոչվում. և

Ախլեննացիներից և Ազէքսանդրացիներից և նորանցից որ Կիլիկիայից և Ասիայից էին, և վիճաբանում էին Ստեփաննոսի հետ.
10 Եւ չէին կարողանում դէմ կենալ այն իմաստութեանը՝ և այն հոգւոյն, որով նա խօսում էր։
11 Այն ժամանակ դ֊ահէ մարդկանց հրապուրեցին որ ասեն, թէ Մենք լսեցինք դորանից, որ հայհոյութեան բաներ էր խօսում Մովսէսի դէմ և Աստուծոյ դէմ։
12 Եւ ժողովուրդին և երէցներին և դպիրներին գրգռեցին. և վերայ հասան յարձակեցին նորան՝ և առան նա-
13 ևանը. Եւ սուտ վկաներ կանգնեցրին, որ ասում էին. Այս մարդը չէ դադարում այս սուրբ տեղոյ և օրէնքի դէմ հայհոյու-
14 թեան բաներ խօսելուց։ Քանզի մենք լսեցինք դորանից՝ որ ասում էր, թէ Այս Յիսուս Նազովրեցին այս տեղը կ'քանդէ, և կ'փոխէ Մովսէսի մեզ տուած սովորու-
15 թիւնները։ Եւ տեսանում էր նրա տողների ամենը երբոր մտիկ տուին նորան՝ նորա երեսը հրեշտակի երեսի նման տեսան։

ԳԼ. Է

1 Եւ քահանայապետն ասաց. Թէ Արդեօք այդ բաներն այդպէ՞ս են
2 Նա էլ ասաց. Մարդիկ եղբայրք և հարք, լսեցէք. Փառաց Աստուածն երևեցաւ մեր հայր Աբրահամին, որ Միջագետումն էր, դեռ խառանի մէջ չ'բնակուած.
3 և ասաց նորան. Դուրս ել քո երկրից և քո ազգիցը, և եկ այն երկիրն՝ որ ես ցոյց կ'տամ քեզ։
4 Այն ժամանակ Քաղդէացոց երկրից դուրս եկաւ՝ խառանումն բնակեցաւ. և այն տեղից նորա հօր մեռնելուց յետոյ՝ նորան փոխադրեց, և պանդխտացրեց այս երկրումը, որում դուք հիմա բնակած էք։
5 Եւ սորանում ժառանգութիւն չ'տուաւ նորան, և ոչ էլ մի ոտքի քայլի տեղ, և խոստացաւ նորան այս տեղը տալ նորան. և նորանից յետոյ՝ նորա զաւակին, նա դեռ որդի չունեցած։
6 Եւ Աստուած այսպէս խօսեց. Թէ նորա զաւակը պանդխտ կ'լինի օտար երկրի մէջ. և կ'ծառայեցնեն նորան, և կ'չարչարեն չորս հարիւր տարի։
7 Եւ այն ազգին, որին կ'ծառայեն, նրան ես կ'դատեմ, ասաց Աստուած. և սորանից յետոյ դուրս կ'գան և այլ տեղ ինձ կ'պաշտեն։
8 Եւ նորան թլփատութեան ուխտը տուաւ. և յետոյ Իսահակին ծնաւ, և ութերորդ օրը թլփատեց նորան. և Իսահակը Յակոբին, և Յակոբը տասներկու նահապետներին։
9 Հայրապետները նախանձելով Յովսէփին վերայ ծախեցին Եգիպտոս. և Աստուած նորա հետ էր։
10 փրկեց նորան իր բոլոր նեղութիւններից. և նորան շնորհք և իմաստութիւն տուաւ Եգիպտոսի փարաւօն թագաւորի առջև. և նորան իշխան կանգնեցրեց Եգիպտոսի և իր բոլոր տան վերայ։
11 Եւ սով եկաւ Եգիպտոսի բոլոր երկիրը՝ և Քանան էլ, և մեծ նեղութիւն. և մեր հարքը կերակուր չէին գտնում։
12 Եւ Յակոբը լսելով թէ Եգիպտոսումը ցորեն կայ, մեր հարանցն ուղարկեց առաջին անգամը։
13 Եւ երկրորդումը Յովսէփ իրան ճանաչել տուաւ իր եղբայրներին. և Յովսէփի ազգը յայտնի եղաւ փարաւօնին։
14 Յովսէփ էլ ուղարկեց և կանչեց իր հայր՝ Յակոբին, և բոլոր ազգատոհմին՝ եօթանասուն և հինգ հոգիք։
15 Եւ Յակոբ իջաւ Եգիպտոս, և վախճանեցաւ ինքն և մեր հարքը։
16 Եւ փոխադրուեցան Սիքեմ, դրուեցան այն գերեզմանումը, որ Աբրահամ Սիքեմի հօր Եմորայի որդիներից տաւ արծաթով։
17 Եւ երբոր աւետիքի ժամանակը մօտեցաւ՝ որ Աստուած Աբրահամին երդումով խոստացել էր, ժողովուրդը աճեց և շատացաւ Եգիպտոսումն.
18 Մինչև որ մի ուրիշ թագաւոր վերկացաւ Եգիպտոսումը՝ որ Յովսէփին չէր ճանաչում։
19 Նա հնարք գործածեց մեր ազգի դէմ, և մեր հարանցը չարչարեց՝ որ իրանց երե-

խաներըը դուրս գցեն, որ չտպրին
20 Ու այն ժամանակ Մովսէսն էլ
ծնուեցաւ, և գեղեցիկ էր Աստու-
ծոյ առջև. որ իր հօր տունն ե-
21 րեք ամիս կերտկրուեցաւ։ Եւ երբ
որ դուրս գցեցին նորան, փարա-
ւոնի աղջիկը վեր առաւ նորան
և մեծացրեց նորան՝ իրան իբրև
22 որդի։ Եւ Մովսէս վարժուեցաւ
Եգիպտացոց բոլոր իմաստութի-
նովը. և զօրաւոր էր խօսքերով
23 և գործքերով։ Եւ երբոր նորա
քառասուն տարեկան ժամանա-
կը լրացաւ, նորա սրտի մէջ ըն-
կաւ՝ որ իր եղբայրներին՝ Իսրա-
էլի որդիքներին այցելութիւն ա-
24 նէ։ Եւ երբոր տեսաւ, որ մէկը
զրկուած էր, պաշտպանեց և այն
զրկուածի վրէժն առաւ՝ եգիպ-
25 տացին սպանելով։ Կարծում էր
թէ նորա եղբարքը կ'իմանան, որ
Աստուած նորա ձեռովը փրկու-
թիւն պիտի տայ նորանց. բայց
26 նորանք չիմացան։ Եւ հետևեալ
օրն երևեցաւ նորանց, որ կռիւ
էին անում, և յորդորեց նորանց
դէպի խաղաղութիւն, ասելով.
Մարդիկ, դուք եղբարք էք, ին-
27 չո՞ւ էք իրար զրկում։ Բայց նա՝
որ ընկերին զրկում էր, մերժեց
նորան և ասաց. Ո՞վ կանգ-
նեցրեց մեզ վերայ իշխան և դա-
28 տաւոր։ Մի՞թէ դու կամենում
ես ինձ էլ սպանել, ինչպէս երէկ
29 Եգիպտացին սպանեցիր։ Եւ փա-
խաւ Մովսէս այս խօսքիցը, և պան-
դուխտ եղաւ Մադիամի երկրու-
30 մը. ուր երկու որդիք ծնաւ։ Եւ
երբոր քառասուն տարի լրացաւ,
Ահնա լեռան անապատումը Տի-
րոջ հրեշտակն երևեցաւ նորան
31 կրակի բոցով մորենումը։ Եւ Մո-
վսէս երբոր տեսաւ՝ զարմացաւ այն
տեսիլքի համար, և երբոր մօ-
տենում էր որ մտիկ անէ, Տիրոջ
32 ձայնն եղաւ նորան։ Ես եմ քո
հարանց Աստուածը, Աբրահամի
Աստուածը և Իսահակի Աստուա-
ծը և Յակոբի Աստուածը. և Մո-
վսէս զարհուրած չէր համարձա-
33 կում նայել։ Եւ Տէրն ասաց նո-
րան. Կօշիկներդ հանիր ոտներից
ցըդ, քանզի այդ տեղը որ դու
կանգնել ես, սուրբ երկիր է։
34 Տեսանելով տեսայ իմ ժողովրդի
չարչարանքները որ Եգիպտոսումն
է, և լսեցի նորանց հառաչանքը
և իջայ որ նորանց փրկեմ. և հի-
մա եկ, քեզ ուղարկեմ Եգիպ-
տոս։ Այն այն Մովսէսին՝ որին
35 ուրացան և ասացին. Քեզ ո՞վ
կանգնեցրեց մեզ վերայ իշխան և
դատաւոր, Աստուած նորան իշ-
խան և փրկիչ ուղարկեց հրեշ-
տակի ձեռովն, որ մարենումն ե-
րևեցաւ նորան։ Նա հանեց նո-
36 րանց՝ և հրաշքներ և նշաններ ա-
րաւ Եգիպտոսի երկրումը, և կար-
միր ծովումն, և անապատումը
քառասուն տարի։ Սա այն Մո-
37 վսէսն է, որ ասաց Իսրայէլի որ-
դոցը. Ձեր Տէր Աստուածը ձի մար-
դարէ վեր կ'կացնէ ձեզ համար ձեր
եղբայրներիցն ինձ նման. նորան
լսեցէք։ Սա է՝ որ եղաւ ժողովրդի
38 մէջ անապատումն այն հրեշտա-
կի հետ, որի հետ Սինայ լեռա-
նումն խօսեց՝ և մեր հարանց հետ.
որ կենդանի պատգամներ առաւ
որ տայ մեզ։ Որին մեր հարքը
39 չկամեցան հնազանդ լինել. այլ
մերժեցին և իրանց սրտերով՝ Եգ-
տոս դարձան. Եւ Ահարո-
40 նին ասացին. Մեզ համար աստ-
ուածներ շինիր, որ մեր առջև
դնան. քանզի այն Մովսէսն՝ որ Եգ-
տոսի երկրիցը մեզ հանեց,
չենք գիտում ի՞նչ եղաւ նորան։
41 Եւ այն օրերումն մի հորթ շինե-
ցին, և զոհ մատուցին կուռքին
և ուրախանում էին իրանց ձեռաց
42 գործքերովը։ Եւ Աստուած էրե-
սը դարձրեց և նորանց մատնեց՝ որ
երկնքի զօրութեանը պաշտեն.
ինչպէս որ գրուած է մարգարէ-
ների գրքումն. Միթէ զոհեր և
պատարագներ բերիք ինձ քառա-
սուն տարի անապատումն, ով
Իսրայէլի տունը. Եւ Մողոքի վր- 43
րանն առիք, և ձեր Հռեմփա աս-
տուածոյ աստղն. այն պատկերնե-
րըն որ արիք նորանց երկրպագու-
թիւն տալու համար. և ձեզ
կ'փոխադրեմ Բաբելոնից այն կող-
մը։ Վկայութեան խորանը մեր 44
հարանց հետ անապատումն էր.

ինչպէս հրաման տուաւ Մովսէսի հետ խօսողը, որ նորան անէ այն
45 օրինակի պէս՝ որ տեսաւ։ Որ նորան մեր հարքն էլ առին բերին Յեսուայ հետ այն ազգերի կալուածքը, որ Աստուած դուրս արաւ մեր հարանց երեսից. մին-
46 չև Դաւթի օրերը, Որ Աստուծոյ առջև շնորհք գտաւ, և խնդրեց՝ որ Յակոբի Աստուծոյ համար բնա-
47 կարան գտնէ։ Բայց Սողոմոնը շի-
48 նեց նորա համար տուն. Սակայն Բարձրեալն ոչ թէ ձեռագործ տաճարներում է բնակում, ինչպէս
49 մարգարէն ասում է. Երկինքն իմ աթոռն է, և երկիրն իմ ոտից պատուանդան. ի՞նչպիսի տուն պիտի շինէք ինձ համար, ասում է Տէրը, կամ ո՞րն է իմ հանգիստ
50 առնելու տեղը։ Չէ՞ որ իմ ձեռն
51 արաւ այս ամենքը։ Խստապարանոցներ՝ և սրտերով և ականջներով չթլփատուածներ. դուք միշտ Սուրբ Հոգոյն հակառակում էք. ինչպէս ձեր հարքն՝ այնպէս էլ
52 դուք։ Մարգարէներից ո՞րին չ'հալածեցին ձեր հարքը, և սպանեցին նորանց՝ որ առաջուց պատմեցին այն Արդարի գալստեան համար, որի դուք հիմա մատնիչներն և սպանողներն եղաք.
53 Որ օրէնքն առիք հրեշտակների մատակարարութեամբն և չ'պահեցիք։

54 Եւ այս խօսքերը լսելով, իրանց սրտերումը կատաղում էին, և ատամները կրճտեցնում էին նո-
55 րա վերայ։ Իսկ նա լցուած Սուրբ Հոգով դէպի երկինքը նայեց և Աստուծոյ փառքը տեսաւ, և Յիսուսին կանգնած Աստուծոյ ձախ կողմումը. Եւ ասաց. Ահա տեսնում եմ երկինքը բացուած, և Մարդոյ Որդին կանգնած Աստու-
56 ծոյ աջ կողմումը։ Իսկ նորա մեծաձայն սաղարտելով խլեցին իրանց ականջները, և միասին յարձակուեցան նորա վերայ։ Եւ քա-
57 ղաքից դուրս հանելով նորան քարկոծում էին. և վկաները իրանց հանդերձները դնում էին մի երիտասարդի ոտից մօտ՝ որ
58 Սողոս էր կոչւում։ Եւ քարկո-

ծում էին Ստեփանոսին, որ կանչում էր և ասում. Տէր Յիսուս, ընդունիր իմ հոգին։ Եւ ծունկ 59
դրաւ՝ և բարձր ձայնով աղաղակեց. Տէր, այդ մեղքը մի համարիր նորանց համար. և այս ասելով ննջեց. և Սողոս կամակից էր նորա սպանուելուն։

ԳԼ. Ը

Եւ այն օրերումը մեծ հալածանք եղաւ Երուսաղէմացւոյն վրայ. և ամենքն ցրուեցան Հրէաստանի և Սամարիայի երկիրների մէջ, բացի առաքեալներից։ Եւ Աստուածավախ մարդիկ Ստեփանոսին վեր առին՝ և մեծ սուգ արին նորա վերայ։ Բայց Սողոս վնաս էր տալիս եկեղեցուն. և տանից տուն էր մտնում, և մարդկանց և կանանց քաշում մատնում բանտի մէջ։

Իսկ ցրուածները գնում էին գալիս՝ խօսքն աւետարանելով։ Եւ Փիլիպպոս իջաւ Սամարիայի մի քաղաքը՝ և Քրիստոսին քարոզում էր նորանց։ Ժողովուրդները էլ միաբան ականջ էին դնում Փիլիպպոսի խօսածներին, լսելով և տեսնելով այն նշանները, որ անում էր։ Վասնզի պիղծ ոգիներ ունեցողների շատերից մեծաձայն աղաղակելով դուրս էին գալիս։ Եւ շատ անդամալոյծներ և կաղեր բժշկւում էին։ Եւ մեծ ուրախութիւն եղաւ այն քաղաքումը։ Եւ մի մարդ՝ անունը Սիմոն, առաջուց այն քաղաքումն մոգութիւն էր անում, և Սամարացոց ապշեցնում էր. ասելով թէ ինքն մի մեծ բան է։ Որին ամենքն էլ՝ փոքրից մինչև մեծը մտիկ էին անում, և ասում. Ըե Սա է Աստուծոյ այն մեծ զօրութիւնը։ Եւ մտիկ էին անում նորան. վասնզի շատ ժամանակ մոգութիւններով ապշեցրել էր նորանց։ Բայց երբոր հաւատացին Փիլիպպոսին, որ աւետարանում էր Աստուծոյ արքայութեան և Յիսուսի Քրիստոսի անունն քա-

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

ները, ամենքն էլ մկրտվում էին
13 թէ մարդիկ և թէ կանայք։ Եւ
Սիմոն ինքն էլ հաւատաց, և երբ
որ մկրտուեցաւ՝ միշտ Փիլիպպոսի
հետ էր. և տեսնելով այն նշան-
ներն և մեծ մեծ զօրութիւնները,
որ լինում էին, զարմանում էր։
14 Երբոր Երուսաղէմ լինող առաք-
եալքը լսեցին, թէ Սամարիան
Աստուծոյ խօսքը ընդունեց, Պետ-
րոսին և Յովհաննէսին ուղարկեցին
15 նորանց մօտ։ Որոնք իջան և ա-
ղօթք արին նորանց վերայ, որ
16 Սուրբ Հոգին առնեն. վասնզի
դեռ նորանցից ոչ մէկի վերայ չէր
իջել. միայն Տէր Յիսուսի ա-
17 նունովը մկրտուած էին։ Այն
ժամանակ ձեռները դրին նորանց
վերայ, և նորանք ընդունում էին
18 Սուրբ Հոգին։ Սիմոն երբոր տե-
սաւ՝ թէ առաքելոց ձեռք դնե-
լովը՝ Սուրբ Հոգին տրվում է,
19 փող բերաւ նորանց և ասաց. Ինձ
էլ տուէք այս իշխանութիւնն,
որ ում վերայ ձեռք դնեմ՝ Սուրբ
20 Հոգին առնէ։ Պետրոսն էլ ասաց
նորան. Քո արծաթը քեզ հետ
կորչի. որովհետև դու կարծեցիր,
թէ Աստուծոյ պարգևը փողով
21 կ'առնուի։ Դու բաժին և վիճակ
չունիս այդ բանումը. վասնզի սիր-
տդ ուղիղ չէ Աստուծոյ առջև։
22 Արդ ապաշխարիր քո այդ չարու-
թիւնիցը՝ և Աստուծոյն աղաչիր,
որ թերևս թողուի քեզ քո սրտի
23 չար խորհուրդը։ Վասնզի տես-
նում եմ քեզ՝ որ դառն մաղձի
և անիրաւութեան կապանքի մէջ
24 ես։ Սիմոնն էլ պատասխանեց և
ասաց. Դուք ինձ համար աղօթք
արէք Տիրոջը, որ ինձ վերայ մի
բան չգայ նորանցից, որ դուք ա-
25 սացիք։ Եւ նորանք վկայութիւն
տալով և Տիրոջ խօսքը խօսելով,
ետ դարձան Երուսաղէմ. և Սա-
մարացոց շատ գիւղերի մէջ ա-
ւետարանում էին։

26 Եւ Տիրոջ հրեշտակը խօսեց Փի-
լիպպոսի հետ և ասաց. Վեր կաց
և գնա հարաւային կողմն՝ այն
ճանապարհը, որ Երուսաղէմից
իջնում է Գազայ, որ է անապատ։
27 Եւ վեր կացաւ գնաց. և ահա մի

եթովպացի մարդ, եթովպացոց կան-
թակա թագուհու ներքինի մի իշ-
խանը, որ նորա բոլոր գանձի վե-
րայ էր, որ եկել էր Երուսաղէմ
երկրպագութիւն անելու։ Եւ ետ 28
դառնալիս իր կառքումը նստած
կարդում էր Եսայեայ մարգարէի
գիրքը։ Հոգին էլ Փիլիպպոսին ա- 29
սաց. Մօտեցիր և հասիր այդ կառ-
քին։ Եւ Փիլիպպոս առաջ վա- 30
զելով լսեց որ Եսայեայ մարգա-
րէի գիրքը էր կարդում, և ասաց.
Հասկանո՞ւմ ես արդեօք կարդա-
ցածդ։ Նա էլ ասաց՝ Ինչպէս 31
կ'կարենամ, եթէ մէկը չառաջ-
նորդէ ինձ. և Փիլիպպոսին աղա-
չեց, որ վեր ելլէ նստէ նորա հետ։
Եւ գրքի պարունակութիւնն որ 32
կարդում էր՝ այս էր. Ինչպէս ոչ-
խար վարուեցաւ մորթուելու. և
ինչպէս գառն իր խուզողի առջև
լուռ կացած՝ այնպէս չէ բանում
իր բերանը։ Նորա խոնարհու- 33
թիւնովը նորա դատաստանը վեր
առնուեցաւ, նորա ցեղն ո՞վ պի-
տի պատմէ. վասնզի նորա կեան-
քը երկրիցս վեր է առնւում։ Եւ 34
Ներքինին պատասխանեց Փիլիպպո-
սին և ասաց. Աղաչում եմ քեզ,
մարգարէն, սա ո՞ւմ համար է ա-
սում. իրա՞ն համար, թէ մի ու-
րիշի՞ համար։ Փիլիպպոսն էլ իր 35
բերանը բացաւ, և այս գրքիցը
սկսած՝ Յիսուսն աւետարանեց նո-
րան։ Երբոր ճանապարհումը գը- 36
նում էին, եկան մի ջրի մօտ. և
Ներքինին ասաց. Ահա ջուր, ի՞նչ
է արգելում ինձ, որ մկրտուիմ։
Եւ նորան ասաց Փիլիպպոսը. Եթէ 37
բոլոր սրտից հաւատում ես, կա-
րելի է. և նա պատասխանեց և
ասաց. Հաւատում եմ՝ թէ Ա-
ստուծոյ Որդին է Յիսուս Քրիստո-
սը։ Եւ հրամայեց տուաւ որ կա- 38
քը կանգնէ. և երկուսն էլ իջան
ջուրը՝ Փիլիպպոսը և Ներքինին, և
մկրտեց նորան։ Եւ երբոր ջրիցը 39
դուրս եկան, Տիրոջ Հոգին Փի-
լիպպոսին յափշտակեց, և Ներ-
քինին այլ ևս չ'տեսաւ նորան. և
ուրախութեամբ գնում էր իր ճա-
նապարհը։ Եւ Փիլիպպոսը գըտ- 40
նուեցաւ Ազոտոսումը. և մին գա-

գալով ուխտադրուժ էր ամեն քաղաքներին մինչև որ եկաւ Կեսարիա։

ԳԼ· Թ

1 Բայց Սօղոսը՝ դեռ սպառնալիք և մահ շնչելով Տիրոջ աշակերտների վերայ, քահանայապետի մօտ
2 եկաւ, և նորանից թղթեր խնդրեց Դամասկոս՝ ժողովարանների վերայ. որ եթէ մէկին գտնէ այն ճանապարհին հետևող՝ մարդիկ կամ կանայք, նորանց կապած
3 բերէ Երուսաղէմ։ Եւ նա գնալիս մօտեցաւ Դամասկոսին, և յանկարծակի նորա չորս կողմանը
4 լոյս փայլեց երկնքից։ Եւ գետնի վերայ ընկած մի ձայն լսեց, որ ասում էր նորան, Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես ինձ հալածում։
5 Եւ նա ասաց. Ո՞վ ես, Տէր. և Տէրն ասաց. Ես Յիսուսն եմ, որին դու հալածում ես. դժուար
6 է քեզ՝ խթանին քացի տալ։ Եւ դողալով ու զարհուրելով ասաց. Տէր, ի՞նչ ես կամենում որ ա-
7 նեմ։ Եւ Տէրն ասաց նորան. Կանգնիր և մտիր քաղաքը, և կ'ասուի քեզ թէ ինչ է պէտք քեզ անել. բայց այն մարդիկն՝ որ նորա հետ գնում էին, ապուշ կանգնած էին. ձայնը լսում էին, բայց ոչինչ չէին
8 տեսնում։ Սօղոս էլ վերկացաւ գետնիցը, իր աչքերը բաց անելով ոչ ոքին չէր տեսնում, և նորա ձեռքից բռնած մոցրին Դա-
9 մասկոս։ Եւ երեք օր չէր տեսնում. և ոչ ուտում և ոչ խըմում էր։

10 Եւ Դամասկոսում մի աշակերտ կար՝ անունն Անանիա, և Տէրը տեսիլքի մէջ նորան ասաց. Ան-
11 նիա. և նա ասաց. Ահա ես, Տէր։ Եւ Տէրը նորան ասաց. Վեր կաց գնա այն փողոցն՝ որ կոչվում է ուղիղ. և Յուդայի տանը որոնիր մի Սօղոս անուն Տարսացի հոգի, քանզի ահա աղօթք է անում,
12 և տեսիլքի մէջ տեսաւ մի Անանիա անուն մարդ, որ մտաւ և ձեռն դրաւ իրան վերայ, որ տես-
13 նէ։ Անանիան էլ պատասխանեց.

Տէր, ես այն մարդու համար շատերից լսեցի, թէ որչափ չարիք արաւ քո սուրբերին Երուսաղէմում։ Եւ այս տեղ էլ քահա- 14
նայապետներից իշխանութիւն ունի, որ այն ամենքին կապէ, որ քո անունը կանչում են։ Տէրն 15
էլ ասաց նորան. Գնա, վասնզի նա ինձ համար ընտրուած անօթ է, որ իմ անունը տանէ հեթա-
նոսների. թագաւորների և Իսրայէլի որդոց առջևը։ Վասնզի 16
ես ցոյց կ'տամ նորան, թէ որչափ պիտի չարչարուի իմ անուան համար։ Եւ Անանիան գնաց՝ և մտաւ 17
այն տունը. և ձեռները դրաւ նորա վերայ, և ասաց. Սաւուղ եղբայր, Տէրն ուղարկեց ինձ, այն Յիսուսն որ երևեցաւ քեզ ճանապարհումը, որ գալիս էիր, որ տեսնես՝ և Սուրբ Հոգով լցուիս։
Եւ շուտով նորա աչքերիցը կե- 18
ղևների պէս վայր ընկան. և իսկոյն տեսաւ, և վերկացաւ մկրտուեցաւ. Եւ կերակուր առաւ՝ զո- 19
րացաւ։ Եւ Սօղոս մի քանի օր Դամասկոսումը լինում աշակերտների հետ եղաւ։

Եւ շուտով ժողովարաններում 20
մը Քրիստոսին քարոզեց, թէ Սո՛ւ է Աստուծոյ Որդին։ Ամենքն էլ՝ 21
որ լսում էին, զարմանում էին և ասում. Չէ՞ որ սա էր՝ որ Երուսաղէմումը հալածում էր այս անունը կանչողներին. և հէնց նորա համար է այս տեղ եկել, որ նորանց կապած տանէ քահանայապետների մօտ։ Բայց Սօղոս ա- 22
ւելի ևս զօրանում էր՝ և յաղթում էր այն Հրէաներին, որ Դամասկոսումն բնակած էին. ապացուցանելով թէ սա է Քրիստոսը։ Երբոր բաւական օրեր լրացան, 23
Հրէաները խորհուրդ արին՝ որ սպանեն նորան։ Բայց նորանց նեն- 24
դութիւնը յայտնուեցաւ Սօղոսին, քանզի գիշեր և ցերեկ դռները պահում էին՝ որ նորան սպանեն։
Աշակերտներն էլ նորան գիշերով 25
առին, և զամբիւղով պարսպիցը կախելով իջեցրին։

Եւ երբոր Սօղոսը Երուսաղէմ 26
եկաւ, ջանք էր անում, որ ա-

շակերտների հետ միաւորուի. և
ամենքը նորանից վախենում էին, և չէին համարձակում թէ
27 աշակերտ է։ Բայց Բառնաբասը
նորան առաւ տարաւ, առաքեալների մօտ. և նորանց պատմեց՝ թէ ինչպէս Ճանապարհումը Տիրոջը տեսաւ, և թէ նորա հետ խօսեց, և ինչպէս Դամասկոսումը համարձակ քարոզեց
28 Յիսուսի անունը։ Եւ նորանց հետ
էր Երուսաղէմումը մնալով և
պարբերաբար քարոզելով
29 Տէր Յիսուսի անունը համարձակ քարոզելով։ Եւ Հեղինաիսաների հետ էլ խօսում էր՝ և վիճաբանութիւն էր անում. և նորանք որոնում էին, որ սպա-
30 նեն նորան։ Եւ եղբարքն իմանալով, նորան իջեցրին Կեսարիա, և ուղարկեցին նորան Տարսոն։
31 Բայց եկեղեցիները բոլոր Հրէաստանի՝ Գալիլիայի և Սամարիայի մէջ խաղաղութիւն ունէին, շինւում էին և Տիրոջ երկիւղին հետևում. և Սուրբ Հոգոյ մխիթարութեամբը շատանում էին։

32 Եւ եղաւ երբոր Պետրոսը մանէր
գալիս ամեն տեղ, եկաւ սրբերի մօտ, որ Լիւդիայի մէջ բնա-
33 կած էին։ Եւ այն տեղ մի մարդ
գտաւ, անունը Ենէա որ ութ տարի մահճի մէջ անդամալոյծ
34 դրած էր։ Եւ Պետրոսը ասաց նորան. Ենէա, Տէր Յիսուս Քրիստոսը քեզ բժշկէ, վեր կաց և անկողինդ շինիր. և շուտով
35 վերկացաւ։ Եւ տեսան նորան ամենքն որ բնակած էին Լիւդիայի և Սարոնի մէջ, որոնք
36 դարձան դէպի Տէրը։ Եւ Յոպպէի մէջ մի աշակերտ եղած կին կար՝ անունը Տաբիթա, որ Թարգմանուած ասւում է Սնձենիկ. սա լիքն էր բարի գործքերով և ողորմութիւններով, որ
37 անում էր։ Եւ եղաւ այն օրերում, որ նա հիւանդացաւ և մեռաւ. և նորան լուացին դրին վեր-
38 նատունը։ Եւ Լիւդիան Յոպպէին մօտիկ լինելով, աշակերտները լսեցին՝ թէ Պետրոսը այն տեղ է, նորա մօտ երկու մարդ ուղարկե-
ցին աղաչելու, որ չ'ուշանայ նո-
րանց մօտ գալ։ Եւ Պետրոսը վեր- 39
կացաւ եկաւ նորանց հետ. և երբ
որ եկաւ, նորան հանեցին այն
վերնատունը. և ամեն որբևայրիները նորա չորս կողմանը կանգնեցին, լաց էին լինում և ցոյց տալիս այն հագուստները և այն հանդերձները որ Սնձենիկը շինում էր, քանի որ նորանց հետ էր։ Եւ Պետրոսը ամենին դուրս 40
հանեց, ծունկ դրաւ՝ աղօթք արաւ. և դարձաւ դէպի մարմինն և ասաց. Տաբիթա, վեր կաց. և նա աչքերը բաց արաւ. և Պետրոսին որ տեսաւ ուղիղ նստեց։
Եւ նա ձեռը տուաւ նորան՝ և 41
վեր կացրեց նորան. և կանչեց սուրբերին և որբևայրիներին, և նորան առջև կենդանի կանգնեցրեց նորան։ Եւ յայտնի եղաւ բոլոր Յոպ- 42
պէի մէջ, և շատերը հաւատացին Տիրոջը. Եւ նա շատ օր մնաց 43
Յոպպէումը՝ մի կաշեգործ Սիմոնի մօտ։

ԳԼ. Ժ

Կեսարիայումը մի մարդ կար՝ ա- 1
նունը Կուռնելիոս՝ հարիւրապետ,
Իտալացի կոչուած գնդից, բա- 2
բեպաշտ և աստուածավախ իր բոլոր տունովը. շատ ողորմութիւններ էր անում ժողովրդին, և ամեն ժամանակ աղօթք անում դէպի Աստուած։ Նա օրուան իրրև 3
իններորդ ժամին տեսիլքի մէջ յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշտակը, որ մտնելով նորան մօտ՝ ասում էր նորան. Կուռնելիոս։
Նա էլ նորան նայելով շատ վա- 4
խով բռնուեցաւ, և ասաց. Ի՞նչ է, Տէր. և նա ասաց նորան. Քո աղօթքներն ու քո ողորմութիւնները վեր եկան Աստուծոյ առջև՝ յիշատակի համար։ Եւ հիմա 5
մարդիկ ուղարկիր Յոպպէ, և կ'անչիր Սիմոնին, որ Պետրոս է կոչւում։ Նա հիւր է մի կաշեգործ 6
Սիմոնի մօտ, որի տունը ծովի մօտ է. նա կ'ասէ քեզ ինչ պէտք է անել։ Եւ երբոր գնաց այն հրեշ- 7
տակն՝ որ Կուռնելիոսի հետ խո-

սում էր, իր ծառաներից երկուսին՝ և իր սպասաւորներից մէկ
8 բարեպաշտ զինուոր կանչեց. Եւ բոլորը պատմեց նորանց, և ուղարկեց նորանց Յոպպէ։
9 Եւ հետևեալ օրն երբոր նորանք ճանապարհ ընկան, և այն քաղաքին մօտեցան, Պետրոսը վեր
ելաւ կտուրը վեց ժամի մօտերը
10 աղօթք անելու։ Սովեց՝ և կամենում էր ճաշել, և նորանց հետ պատրաստելիս՝ յափշտա-
11 կութիւն եղաւ նորա վերայ։ Եւ տեսաւ երկինքը բացուած. և մի մեծ կտաւի պէս անօթ չորս ծայրից կապած՝ իջաւ երկրի վերայ,
12 Որի մէջ կային երկրի ամեն կերպ չորքոտանիները և գազանները և սողունները և երկնքի թռչուննե-
13 րը։ Եւ ձայն եղաւ նորան. Վեր կաց, Պետրոս, մորթիր՝ և կեր։
14 Պետրոսն էլ ասաց. Ջաւ լինի, Տէր, որովհետև ես երբէք պիղծ
15 կամ անմաքուր բան չ'կերայ։ Եւ դարձեալ երկրորդ անգամ ձայն էր նորան, Ա՛յն որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր։
16 Այս երեք անգամ եղաւ, և այն
17 անօթը վերացաւ երկինքը։ Եւ երբոր Պետրոսը զարմացած էր իր մտքումը, թէ ինչ պիտի լինի այն տեսիլքը՝ որ տեսաւ. և ահա Կուռնէլիոսից ուղարկուած մարդիկը՝ Սիմոնի տունը որոնելով դրան
18 մօտ կանդնեցին. Եւ կանչելով հարցնում էին, թէ Սիմոնն՝ որ Պետրոս է կոչվում՝ այս տե՞ղ է
19 հիւր։ Եւ դեռ Պետրոսը այն տեսիլքի համար միտք էր անում, Հոգին նորան ասաց. Ահա երեք
20 մարդիկ քեզ որոնում են։ Բայց վեր կաց իջիր. և գնա նորանց հետ առանց խղճմտանք անելու, վասնզի ես եմ ուղարկել նորանց։
21 Եւ Պետրոսը իջաւ այն մարդկանց մօտ որ Կուռնէլիոսից նորա մօտ էին ուղարկուած և ասաց. Ահա ես եմ, որ որոնում էք. ի՞նչ բան
22 կայ, որի համար եկաք դուք։ Նորանք էլ ասացին, Կուռնէլիոս հարիւրապետն՝ արդար և աստուածավախ մարդ, որ Հրէաների բոլոր ազգիցը բարի վկայութիւն

ունի. նա հրաման առաւ սուրբ հրեշտակից, որ քեզ կանչէ իր տունը և քեզանից խօսքեր լսէ։
Եւ ներս կանչեց նորանց՝ և ընդունեց իրրև հիւր.
Եւ հետևեալ օրը Պետրոսը նո- 23
րանց հետ գնաց. և այն եղբայրներից՝ որ Յոպպէայումն էին, մի
քանիսը նորա հետ եկան։ Եւ 24
հետևեալ օրը մտան Կեսարիա. և Կուռնէլիոս իր ազգականներին և ընտանի բարեկամներին կանչել էր, և սպասում էր նորանց։
Եւ եղաւ երբոր Պետրոսը ներս էր 25
մտնում, Կուռնէլիոսը դիմաւորեց նորան, և առնելն ընկած երկրպագեց։ Պետրոսն էլ կանդնեցրեց 26
նորան և ասաց. Վե՛ր կաց, ես ինքնս էլ մարդ եմ։ Եւ նորա հետ 27
խօսելով ներս մտաւ. և գտաւ շատ մարդ ժողովուած գտաւ։ Եւ 28
նորանց ասաց. Դուք գիտէք, ինչպէս սպօրէն բան է Հրէայ մարդու համար մի այլազգու դպչիլ կամ մօտենալ. բայց Աստուած ինձ ցոյց տուաւ, ոչ մէկ մարդի էլ պիղծ կամ անմաքուր չասել։
Որա համար էլ առանց ընդդէմ 29
խօսելու եկայ, երբոր կանչուեցայ. հիմա հարցնում եմ, ի՞նչ բանի համար կանչեցիք ինձ։ Եւ Կուռ- 30
նէլիոսը ասաց. Չորս օրից առաջ մինչև այս ժամը՝ ծոմ էի պահում և իննեերորդ ժամին իմ տան մէջ աղօթք էի անում, և ահա մի մարդ կանգնեց իմ առջև
պայտակ հանդերձներով, և ասաց.
Կուռնէլիոս, քո աղօթքը լսուե- 31
ցաւ, և քո ողորմութիւնները յիշուեցան Աստուծոյ առջև։ Հիմա 32
ուղարկիր Յոպպէ, և կանչիր Սիմոնին՝ որ Պետրոս է կոչվում. սա ման կաշեգործ Սիմոնի տանն հիւր է՝ ծովի մօտ. որ նա գայ, քեզ հետ խօսի։ Եւ ես իսկոյն քեզ 33
մօտ ուղարկեցի. դու էլ լաւ արիր, որ եկար. հիմա մենք ամենքս Աստուծոյ առջև կանգնած ենք, որ լսենք այն ամենն որ Տէրը քեզ հրամայուած է։
Պետրոսը իր բերանը բանալով 34
ասաց. Ճշմարտութեամբ հասկանում եմ, որ Աստուած երեսպաշտ

35 չէ. Ալ ամեն ազգումն, ով որ վախենում է նորանից՝ և արդարութիւն է գործում, ընդունելի
36 է նորան։ Այն խօսքը որ ուղարկեց Իսրայէլի որդոցն համար, խաղաղութիւն աւետարանել Յիսուսի Քրիստոսի ձեռնով. (սա է
37 ամենի Տէրը.) Դուք ինքներդ գիտէք այն բանն, որ եղաւ բոլոր Հրէաստանումը Գալիլեայից սկսած այն մկրտութիւնից յետոյ, որ
38 Յովհաննէսը քարոզեց. Այն Յիսուսին որ Նազարէթից է, թէ ինչպէս նորան Աստուած Սուրբ Հոգով և զօրութիւնով օծեց. որ մեն եկաւ բարի անելով և աստանայիցը բոլոր հարստահարուածներըը բժշկելով. վասնզի Աստուած նորա հետ էր։ Եւ մենք վկայ
39 ենք այն ամեն բաներին, որ Հրէից երկրումը և Երուսաղէմումն արաւ. որին փայտից կախած սպա-
40 նեցին։ Նորան Աստուած յորոյց երրորդ օրը. և յայտնի արաւ նո-
41 րան։ Ոչ թէ բոլոր ժողովրդին, այլ մեզ՝ Աստուածանից յառաջագոյն ընտրուած վկաներիս. որ կերանք և խմեցինք նորա հետ՝ նորա մեռելներից յարութիւն առնելուց
42 յետոյ։ Եւ պատուիրեց մեզ ժողովրդին քարոզել՝ և վկայութիւն դնել, թէ ինքն է Աստուածանից սահմանուած դատաւորը մեռելոց
43 և կենդանեաց։ Բոլոր մարգարէները վկայութիւն են տալիս նորան, որ նորա անունովը մեղաց թողութիւն կ'առնէ ամեն նորան հաւատացողը։
44 Եւ Պետրոսը դեռ այս բանը խօսելիս, Սուրբ Հոգին իջաւ այն
45 խօսքը լսողների բոլորի վերայ։ Եւ պարմացան Պետրոսի հետ եկող հաւատացեալները, որ թլփատութիւնից էին. որ հեթանոսների մէջ էլ Սուրբ Հոգոյ պարգեը
46 թափուած էր։ Որովհետև լսում էին՝ որ նորանք լեզուներով խօսում և Աստուծոյն փառաւորում
47 էին։ Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց. Մի՞թէ մէկը կարող է ջուրը արգիլել, որ մորանք չմկրտուին, որ Սուրբ Հոգին ընդունեցին ինչպէս և մենք։ Եւ նո-
48 րանց հրամայեց որ Տիրոջ անունով մկրտուին. այն ժամանակ աղաչեցին նորան՝ որ մի քանի օր մնայ այն տեղ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ առաքեալները և այն եղբայրները 1
ներն՝ որ Հրէաստանի կողմերումն էին, լսեցին, որ հեթանոսներն էլ ընդունեցին Աստուծոյ խօսքը։
2 Բայց երբոր Պետրոսը վեր եկաւ Երուսաղէմ, այն հաւատացեալ- 2
3 ներն որ թլփատութիւնից էին՝ վիճում էին նորա դէմ, Եւ ա- 3
սում էին, թէ Նա անթլփատ մարդկանց մօտ մտաւ, և նորանց հետ կերաւ։ Եւ Պետրոսը սկսեց կար- 4
գով պատմել նորանց՝ և ասաց.
5 Ես Յոպպէ քաղաքումն աղօթք էի անում՝ և յափշտակութեան մէջ տեսիլք տեսայ. ոչ մեծ կտաւի պէս մի անօթ՝ չորս ծայրից կախուած՝ երկնքից վայր էր գալիս, 6
և եկաւ մինչև ինձ մօտ։ Երբոր աչքս նորա մէջ գցած նայում էի, և տեսայ երկրի չորքոտանիները, և գազանները, և սողուն- 7
ները, և երկնքի թռչունները. Եւ ձայն լսեցի, որ ասում էր ինձ. վեր կաց, Պետրոս, մորթիր և կեր։ Եւ ասացի. Ոչ լիցի, Տէր. 8
որովհետև երբէք պիղծ կամ անմաքուր բան իմ բերանը չէ մտած։ Ձայնը երկնքից ինձ երկրորդ ան- 9
գամ պատասխանեց. Ինչ որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր։ Եւ այս երեք անգամ է- 10
ղաւ, և բոլորը դարձեալ վերացաւ երկինքը։ Եւ անդ շուտով 11
երեք մարդիկ եկան կանգնեցին այն տան առջևն, ուր ես էի, Կեսարիայից ինձ մօտ ուղարկուած։ Եւ Հոգին ինձ ասաց, որ 12
նորանց հետ գնամ՝ առանց խղճմտանք անելու. այս վեց եղբարքն էլ ինձ հետ եկան, և մտանք այն մարդու տունը։ Եւ պատմեց մեզ, 13
թէ ինչպէս տեսաւ Հրեշտակն իր տանը, որ կանգնած էր՝ և ասում էր նորան. Ուղարկիր Յոպպէ, և կանչիր Պետրոս կոչուած Սիմոնին. Նա քեզ հետ բաներ կ'խօսի, որ 14

նորանով կ'փրկուիս դու՝ և քո
15 բոլոր տունը։ Եւ երբոր սկսեցի
խօսել, Սուրբ Հոգին ինչա՛ւ նո-
րանց վերայ. ինչպէս և մեզ վե-
16 րայ սկզբումը։ Եւ յիշեցի Տիրոջ
այն խօսքն՝ որ ասում էր. Յո-
հաննէս ջրով մկրտեց. բայց դուք
17 Սուրբ Հոգով կ'մկրտուիք։ Ուրեմն՝ եթէ Աստուած մի և նոյն պարգևը տուաւ նորանց, ինչպէս և մեզ, որ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք. ապա ես ո՞վ էի որ կարողանայի Աստուծոյն արգելել
18 լե՛լ։ Եւ երբոր լսեցին այս, լռեցին և փառաւորում էին Աստուծոյն՝ և ասում էին. Ուրեմն հեթանոսներին էլ Աստուած կենաց համար ապաշխարութիւնը տուաւ։
19 Եւ նորանք որ ցրուած էին այն նեղութիւնից, որ Ստեփանոսի վերայ եղաւ, մինչև Փիւնիկէ և Կիպրոս և Անտիոքիա հասան. և ոչ ոքի չէին խօսում Աստուծոյ խօսքը, բայց միայն Հրեաներին։
20 Եւ նորանցից ոմանք կային Կիպրացի և Կիւրենացի մարդիկ, որ Անտիոք մտած խօսում էին Հեղինեականների հետ՝ ա-
21 ւետարանելով Տէր Յիսուսը։ Եւ Տիրոջ ձեռը նորանց հետ էր. և բազմաթիւ մարդիկ հաւատացին
22 և դէպի Տէրը դարձան։ Այս բանի լուրը հասաւ Երուսաղէմի եկեղեցու ականջին, և Բառնաբասին ուղարկեցին որ գնայ մինչև Անտիոք։
23 Նա երբոր եկաւ, և Աստուծոյ շնորհքը տեսաւ՝ ուրախ եղաւ, և խնդրում էր ամենին որ սրտի յամառութեամբ Տիրոջ
24 հետ մնան։ Վասնզի նա բարի և Սուրբ Հոգով և հաւատքով լցուած մարդ էր. և շատ ժողովուրդ աւելացաւ Տիրոջ համար։
25 Եւ Բառնաբաս դուրս եկաւ գնաց Տարսոն, որ Սօղոսին գտնէ, և
26 նորան գտաւ բերաւ Անտիոք։ Եւ եղաւ որ նորանք մի բոլոր տարի ժողովուում էին եկեղեցու մէջ, և շատ ժողովուրդ էին ամօթացնում, և աշակերտներն առաջ Անտիոքում Քրիստոնեայ անուանուեցան։
27 Եւ այն օրերումն Երուսաղէմից

ցը մարգարէներ իջան Անտիոք։
28 Եւ նորանցից մէկին՝ անունն Ագաբոս, վերկացաւ՝ Հոգուին իմաց տուաւ, թէ բոլոր աշխարհքի վերայ մեծ սով է լինելու, որ կղօդիոս կայսեր ժամանակին եղաւ
29 էլ։ Բայց այն աշակերտներից ա-մեն մէկն ինչպէս որ կարող էր, որոշեցին օգնութիւն ուղարկել
30 Հրէաստանումն բնակած եղբայրներին. Որ արին էլ, և ուղարկեցին երէցների մօտ՝ Բառնաբասի և Սօղոսի ձեռովը։

ԳԼ. ԺԲ

1 Այն ժամանակին Հերովդէս թագաւորը ձեռք գցեց, որ եկեղեցուցն մի քանիսին չարչարէ։
2 Եւ Յակոբին՝ Յոհաննէսի եղբօրը սրով սպանեց։
3 Եւ տեսնելով Հրէաներին հաճոյ է, նորա վերայ Պետրոսին էլ բռնեց. (և բաղարջակերաց օրերն էր։)
4 Նորան՝ երբ որ բռնեց՝ բանտը դրաւ, և մատնեց չորս չորեքտասն զինուորների՝ որ պահեն նորան. և կամենում էր զատկից յետոյ նորան բերել ժողովրդի առջև։
5 Եւ Պետրոս բանտումը պահուած էր. բայց նորա համար անդադար աղօթք էր լինում եկեղեցուցն դէպի Աստուած։
6 Եւ երբոր Հերովդէս կամեցաւ նորան դուրս բերել. այն գիշերը Պետրոս քնած էր երկու զինուորների մէջ երկու շղթայով կապուած. և պահապանները դրան առջև բանտը պահում էին։
7 Եւ ահա Տիրոջ հրեշտակը էկաւ կանգնեց, և տան մէջ լոյս ծագեց. և խըթեց Պետրոսի կողին՝ նորան արթնացրեց՝ և ասաց. Վե՛ր կաց շուտով. շղթաները վայր ընկան նորա ձեռներից։
8 Եւ հրեշտակն ասաց նորան. Գօտիդ կապիր և հողմոցներդ հագիր ոտներդ և այն պէս արա. և ասաց նորան. Հանդերձներդ քեզ վերայ գցիր՝
9 և իմ ետևից եկ։ Եւ դուրս եկաւ դնում էր նորա ետևից, և չէր գիտում, թէ ճշմարիտ է հրեշտակից եղածը. կարծում էր թէ երազ է տեսնում։

10 Եւ երբոր նորանք անցան առա-
ջի պահապաններէն և երկրորդէն,
եկան մինչև երկաթի դուռն՝ որ
դէպի քաղաքն էր տանում. որ
ինքն իրանից բացուեցաւ նորանց
համար, և նորանից դուրս գալով
մի փողոց անցան, և շուտով հր-
11 եշտակը նորանից հեռացաւ։ Եւ
Պետրոսը ինքն իրան գալով ա-
սաց. Հիմա ճշմարիտ իմացայ, որ
Տէրն իր հրեշտակն ուղարկեց, և
վրկեց ինձ Հերովդէսի ձեռքից, և
Հրէաների ժողովուրդի բոլոր սպա-
12 սած բաներից։ Եւ մտածելով
եկաւ Մարկոս կոչուած Յովհան-
նէսի մայր՝ Մարեմայ տունը. ուր
շատերը ժողովուած՝ աղօթք էին
13 անում։ Եւ դուռը որ թակեց,
մի աղախին՝ անունն Հոդէ մօտ
14 եկաւ, որ ականջ դնէ. Եւ Պետ-
րոսի ձայնը ճանաչեց, ուրախու-
թիւնից դուռը բաց չարաւ. ներս
վազեց և պատմեց, թէ Պետրոսը
15 դրանը կանգնած է։ Նորանք էլ
ասացին նորան՝ գժուել ես. իսկ
նա հաստատում էր, թէ այսպէս
է. և նորանք ասում էին, թէ
16 Նորա հրեշտակն է։ Բայց Պետ-
րոսը կանգնած դուռը թակում էր
երբոր բաց արին, տեսան նորան
17 և զարմացան։ Եւ նա ձեռով նը-
շան արաւ նորանց որ լուռ կե-
նան. և պատմեց նորանց, թէ
ինչպէս Տէրը բանտից իրան հա-
նեց. և ասաց, Ասա բանը պատ-
մեցէք Յակոբին և եղբայրներին.
և դուրս եկաւ գնաց ուրիշ տեղ։
18 Եւ երբոր առաւօտ եղաւ՝ մեծ
խռովութիւն կար այն զինուոր-
ների մէջ, թէ Պետրոսը ինչ եղաւ։
19 Բայց Հերովդէս երբոր նորան ու-
զեց և չգտաւ, պահապաններին
քննեց և հրամայեց սպանել. և
Հրէաստանից իջաւ Կեսարիա՝ և
այն տեղ էր լինում։
20 Եւ Հերովդէս շատ բարկացած
էր Տիւրացոց և Սիդոնացոց վր-
րայ. և նորանք միաբան եկան նո-
րա մօտ. և Բղաստոսին՝ թագա-
ւորի ներսի սուն վերակացուին՝
համոզելով՝ խաղաղութիւն էին
խնդրում. քանզի նորանց երկիրը՝
21 ուրուանքից էր կերակրվում։ Մի
հանդիսաւոր օր, Հերովդէսը թա-
գաւորական զգեստ հագած աս-
տեանում էր, և ամենի
առջև ատենաբանում էր դէպի
նորանց։ Եւ ամբոխն աղաղակում 22
էր, թէ Դա Աստուծոյ ձայն է,
և ոչ թէ մարդու։ Եւ իսկոյն Տի- 23
բոջ հրեշտակը զարկեց նորան,
քանզի Աստուծոյն չտուաւ փառ-
քը. և որդներով լցուեցաւ՝ մե-
ռաւ։
Եւ Աստուծոյ խօսքն աճում էր 24
և շատանում։ Բառնաբաս և Սօ- 25
ղոս պաշտամունքը կատարելով
Երուսաղէմից ետ դարձան. և ի-
րանց հետ էին առել Յովհաննէ-
սին էլ որ Մարկոս էր կոչուած։

ԳԼ. ԺԳ

Եւ Անտիոքում՝ այն տեղի եկե- 1
ղեցու մէջ կային մի քանի մար-
գարէներ և վարդապետներ. Բառ-
նաբաս՝ և Նիւգէր որ սուտած Սի-
մոնը, և Ղուկիոս Կիւրենացին,
և Հերովդէս չորրորդապետի ան-
դակից Մանայէնը, և Սօղոսը։
Սորանք երբոր Տէրոջը պաշտօն էին 2
մատուցանում և ծոմ էին պա-
հում, Սուրբ Հոգին ասաց. Ինձ
համար որոշեցէք Բառնաբասին և
Սօղոսին այն գործի համար, որ
ես դորանց կանչել եմ։ Այն ժա- 3
մանակ ծոմ պահեցին և աղօթք
արին, նորանց վերայ ձեռք դրին՝
արձակեցին։
Եւ նորանք էլ Սուրբ Հոգուց 4
ուղարկուած՝ իջան Սելևկիա, և
այն տեղից նաւով գնացին Կիպ-
րոս։ Եւ Սողոմինա հասնելով 5
Աստուծոյ խօսքը պատմում էին
Հրէաների ժողովարաններում. և
Յովհաննէսին էլ պաշտօնակից ու-
նէին։ Ման եկան կղզին մինչև 6
Պափոս. և մի մոգ գտան՝ սուտ
մարգարէ՝ Հրէայ, որի անունը
Բարէյեսուս էր։ Որ փոխանակ 7
դեշխ՝ Սերգիոս Պօղոսի՝ իմաստուն
մարդու հետ էր. սա Բառնաբա-
սին և Սօղոսին իրան մօտ կանչելով
ուզում էր որ Աստուծոյ խօսքը լսէ։
Բայց նորանց հակառակ կացաւ 8
Էլիմաս մոգը. վասնզի այսպէս է

թարգմանվում նորա անունը. առ
ուզում էր փոխանակ դպեշխին հա-
9 սարքյը փոխել։ Բայց Սողոս,
որ Պողոս է կոչվում՝ Սուրբ Հո-
գով լցուած մնիկ առաւ նորան,
10 եւ ասաց. Ով ամեն խաբեբայու-
թիւնով եւ ամեն խորամանկու-
թիւնով լցուած, սատանայի որ-
դի, ամեն արդարութեան թըշ-
նամի. չես դադարում Տիրոջ ու-
ղիղ ճանապարհները ծռելուց։
11 Եւ հիմա ահա Տիրոջ ձեռն քեզ
վերայ է, եւ կոյր կ'լինիս՝ որ չտես-
նես արեգակը մինչև մի ժամա-
նակ. եւ իսկոյն մութ եւ խաւար
ընկաւ նորա վերայ, եւ մարդ գա-
լով ձեռք բռնող մարդիկ էր որո-
12 նում։ Այն ժամանակ փոխանակ
դպեշխն երբոր տեսաւ այդ եղա-
ծը, հաւատաց, եւ Տիրոջ վար-
դապետութեան վերայ զարմացաւ։
13 Եւ Պողոսն և հետը լինողները
Պափոսից դուրս եկան՝ եկան Պամ-
փիւլիայի Պերգէ քաղաքը. բայց
Յովհաննէս նորանցից բաժանուեց
14 եւ դարձաւ Երուսաղէմ։ Եւ նո-
րանք Պերգէից գնացին՝ եկան Պի-
սիդիայի Անտիոքը. և շաբաթ օ-
րը ժողովարանը մտան նստեցին։
15 Եւ օրէնքն ու մարգարէները կար-
դալուց յետոյ, ժողովրդապետ-
ները նորանց մօտ ուղարկեցին և
ասացին. Մարդիկ եղբայրք եթէ
դուք այդ ժողովրդին համար յոր-
դորական խօսքեր ունիք՝ խօսեցէք։
16 Պողոսն էլ վերկացաւ՝ ձեռք շար-
ժեց և ասաց. Ով Իսրայէլացի
մարդիկ, և դուք՝ որ Աստուա-
17 ծանից վախում էք, լսեցէք։ Այս
Իսրայէլացի ժողովրդի Աստուա-
ծը ընտրեց մեր հարցերը. և ժո-
ղովուրդը բարձրացրեց պանդխ-
տութիւնում՝ Եգիպտոսի երկրի
մէջ. և բարձր բազուկով նորանց
18 այն տեղից դուրս հանեց։ Եւ քա-
ռասուն տարի չափ ժամանակ
նորանց կերակրեց անապատումը։
19 Եւ Քանանու երկրումն եօթն ազ-
գեր խորտակեց և նորանց երկիրը
20 նորանց ժառանգել տուաւ։ Եւ
այսանից էլը չորս հարիւր և յի-
սուն տարի յետոյ նորանց դա-
տաւորներ տուաւ մինչև Սամուէլ
մարգարէն։ Եւ ապա թագաւոր 21
ուզեցին, և Աստուած տուաւ նո-
րանց Կիսի որդի Սաւուղը՝ մի մարդ
Բենիամինի ցեղից, քառասուն
տարի։ Եւ նորան փոխելով, Դա- 22
թին նորանց համար թագաւոր
կանգնեցրեց, որ նորա համար էլ
վկայութիւն տուաւ և ասաց. Յես-
սէի որդի Դաւթին գտայ իմ սիրե-
լի՝ ով պէս մարդ, որ նա իմ
բոլոր կամքը կ'անէ։ Սորա զաւա- 23
կից Աստուած իր ասածի պէս
Իսրայէլացոց համար Յիսուս Փըր-
կիչը վերկացրեց։ Որ Յովհաննէսը՝ 24
նորա մտնելուց առաջ, կանխա-
պատրաստութեան մկրտութիւնը
քարոզեց Իսրայէլի բոլոր ժողովր-
դին։ Եւ երբոր Յովհաննէս վեր- 25
ջացնում էր իր ընթացքը՝ ասում
էր. Ինձ համար ո՞վ էք կարծում
որ լինիմ. ես այն չեմ. բայց ահա
իմ ետևից գալիս է նա, որ ես
չեմ արժանի նորա ոտից կօշիկն
արձակելու։ Մարդիկ եղբայրք, 26
Աբրահամի ցեղի որդիքներ, և ով
որ ձեզանում աստուածավախ են.
ձեզ ուղարկուեցաւ այս փրկու-
թեան խօսքը։ Քանի որ երուսաղէ- 27
մում բնակողները, և նորանց իշ-
խանները՝ չճանաչեցին նորան, և
ոչ մարգարէների ձայները, որ ա-
մեն շաբաթ օրեր կարդացվում
են՝ դատապարտելով կատա-
րեցին։ Եւ թէպէտ մի մահու 28
պատճառ չգտան, Պիղատոսից
ուզեցին՝ որ նա սպանուի։ Եւ 29
երբոր այն ամենը՝ որ նորա համար
գրուած էր, կատարեցին, փայտից
վայր բերին՝ դրին գերեզման։ Բայց 30
Աստուած նորան մեռելներից յա-
րոյց, որ շատ օրերով երևեցաւ
նորանց, որ նորա հետ Գալիլեա- 31
յից ելել էին Երուսաղէմ, որոնք
նորա համար վկաներ են ժողով-
դի առջև։ Եւ մենք աւետարա- 32
նում ենք ձեզ այն խոստումները,
որ հարցին եղած էր. Որ Աս- 33
տուած այն կատարեց մեզանում՝
որ նորանց որդիքներ, Յիսուսին
յարուցանելով. ինչպէս երկրորդ
սաղմոսումն գրուած է. Դու իմ
Որդին ես. ես այսօր ծնայ քեզ։
Եւ թէ մեռելներից յարոյց նո- 34

բան, որ էլ չ'պիտի դառնայ ա-
պականութեան մէջ՝ այսպէս ա-
սաց. թէ Ձեզ կ'տամ Դաւթի
հաւատարիմ սուրբ խոստումները:
35 Քանզի ուրիշ տեղում էլ ասում
է. Քո սրբոյն չես տալ ապակա-
36 նութիւն տեսնել: Բայց Դաւիթն
իր դարումը ծառայեց Աստուծոյ
կամքին, և ննջեց, և իր հարանց
հետ դրուեցաւ և ապականութիւն
37 տեսաւ: Բայց նա, որին Աստուած
յարոյց, ապականութիւն չ'տե-
38 սաւ: Արդ թող յայտնի լինի ձեզ,
մարդիկ եղբարք, որ սորանով մե-
ղաց թողութիւն է աւետարան-
վում ձեզ. և այն ամեն բաներից
39 ցըն, որ Մովսէսի օրէնքով չ'կա-
րողացէք արդարանալ: Սորանով
ամեն հաւատացողը կ'արդարա-
40 նայ: Արդ զգոյշ կացէք՝ որ չ'լի-
նի թէ ձեզ վերայ գայ մարգա-
41 րէներից ասուածը ՝ Տեսէք, ա-
նարգողներ, և զարմացէք և փը-
ճացէք. վասնզի ես մի գործ եմ
գործում ձեր օրերումը. մի գործ,
որ նորան չէք հաւատալ եթէ մէ-
կը պատմէ ձեզ:
42 Եւ երբոր Հրէից ժողովարանի-
ցը դուրս եկան, աղաչում էին
հեթանոսները որ միւս շաբաթու-
մըն էլ այն բանը խօսէն իրանց
43 համար: Երբոր ժողովուրդն ար-
ձակուեցաւ, Հրէաներից՝ և նորա-
հաւատ աստուածապաշտ մարդ-
կանցից շատերը գնում էին Պօ-
ղոսի և Բառնաբասի ետևից. ո-
րոնք նորանց հետ խօսելով նորանց
համոզում էին Աստուծոյ շնորհքի
44 մէջ կենալ: Եւ երբոր գ-ա շա-
բաթն եկաւ, համարեա թէ բո-
լոր քաղաքը հաւաքուեցաւ՝ Աս-
45 տուծոյ խօսքը լսելու: Երբոր Հրէա-
ները ամբոխը տեսան՝ նախանձով
լցուեցան և Պօղոսից ասուած
խօսքերին դէմ խօսելով հակա-
46 ռակում և հայհոյում էին: Պօ-
ղոսն և Բառնաբասն էլ համարձա-
կութեամբ ասում էին. Առաջ
պէտք էր որ Աստուծոյ բանը ձեզ
խօսուէր. բայց որովհետև դուք
մերժում էք նորան և արժան չէք
համարում ձեզ յաւիտենական
կենացը, ահա դէպի հեթանոս-
ներն ենք դառնում: 47 Վասնզի տէ-
րըն այսպէս պատուիրեց մեզ. Ե-
ղեզ հեթանոսների լոյս դրի, որ
դու փրկութիւն լինես մինչև երկ-
րի ծայրերը: 48 Հեթանոսներն այս
լսելով ուրախանում էին, և Տի-
րոջ խօսքը փառաւորում էին. և
հաւատացին՝ քանիքը որ կարգուած
էին դէպի յաւիտենական կեան-
քը: 49 Եւ Տիրոջ խօսքը փուվում էր
այն բոլոր գաւառը: 50 Բայց Հրէա-
ները գրգռեցին աստուածապաշտ
և պարկեշտ կանանցը և քաղա-
քի գլխաւորներին, և հալածանք
վերկացնելով Պօղոսի և Բառնա-
բասի վերայ՝ նորանց դուրս արին
51 իրանց սահմաններից: Եւ նորանք
իրանց ոտների փոշին թօթափե-
ցին նորանց վերայ, և եկան Իկո-
նիոն: 52 Եւ աշակերտները լցվում
էին ուրախութիւնով և Սուրբ
Հոգիով:

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ Իկոնիոնում որ նորանք
միասին մտնում էին Հրէաների
ժողովարանը, և այնպէս խօսում
որ Հրէից՝ և Յոյներից մեծ բազ-
մութիւն հաւատացին: 2 Բայց չհա-
ւատացող Հրէաները հեթանոս-
ների սիրտերը գրգռեցին և չա-
րացրին եղբայրների դէմ. 3 Եւ շատ
ժամանակ մնում էին գալիս հա-
մարձակ խօսելով Տիրոջ վերայ,
որ վկայում էր իր շնորհաց խօս-
քին. և նշաններ և հրաշքներ էր
լինել տալիս նորանց ձեռովը: 4 Եւ
տարաձայնութիւն եղաւ քաղա-
քի բազմութեան մէջ. և ոմանք
Հրէաների կողմն էին, և ոմանք
առաքեալների կողմը: 5 Երբոր հե-
թանոսներն և Հրէաներն իրանց
իշխաններովը նորանց վերայ յար-
ձակեցան, որ նորանց նախատեն
և քարկոծեն, 6 Նորանք իմացան՝
և փախան Լիկայոնացոց Լիւստրա
և Դերբէ քաղաքները և նորանց
շրջակայքը, և այն տեղ աւետա-
րանում էին:

7 Եւ Լիւստրայում մի մարդ՝ ո-
ներով տկար՝ նստած էր, որ իր
մօր փորիցը կաղ էր ծնուած, և

8 երբէք մեզ եկած չէր։ Սա լսեց Պօ-
ղոսի խոսքերը, նա էլ նորա վե-
րայ նայեց, և երբոր տեսաւ, որ
9 հաւատք ունի փրկուելու։ Մեծ
ձայնով ասաց. Ոտներիդ վերայ
ուղիղ կանգնիր. և նա վազեմ
10 էր և մեզ էր գալիս։ Եւ ժողո-
վուրդը Պօղոսի տեսածը տեսնելով,
իրանց ձայնը բարձրացրին Լիկա-
ոնեերէն և ասացին. Աստուած-
ները մարդկանց նման եղած վայր
11 եկան մեզ մօտ։ Եւ Բառնաբա-
սին Դիա էին կոչում, և Պօղո-
սին Հերմէս. որովհետև նա էր խօս-
12 քի առաջնորդը։ Բայց Դիոսի քա-
հանան՝ որ քաղաքի առջև կար,
արջառներ և պսակներ բերաւ
դռներին մօտ և այն բազմութեան
հետ՝ կամենում էր զոհ մատուցել։
13 Եւ երբոր Բառնաբաս և Պօղոս
առաքեալները լսեցին, իրանց հան-
դերձները պատռած՝ ամբոխի
մէջ վազեցին. մեծ ձայնով կան-
14 չում էին, և ասում. Մարդիկ
այդ ի՞նչ էք անում. մենք էլ ձեզ
նման կարօտութիւն ունեցող մար-
դիկ ենք. որ աւետարանում ենք
ձեզ՝ այդպիսի ունայն բաներից
եւ դառնալ դէպի կենդանի Աստ-
ուածը. որ ստեղծեց երկինքն ու
երկիրը և ծովը՝ և ամեն ինչ որ
15 նորանց մէջ է։ Որ անցած դարե-
րումը թոյլ տուաւ ամեն հե-
թանոսներին՝ որ իրանց ճանա-
16 պարհներով գնան. թէպէտև ին-
քըն իրան առանց վկայութեան
չթողեց, բարերարութիւն անե-
լով երկնքիցը տուաւ ձեզ անձ-
րեներ և պտղաբեր ժամանակներ,
կերակուրներով և ուրախութիւ-
17 նով ձեր սրտերը լցնելով։ Եւ այս
ասելով հազիւ թէ ժողովուրդ-
ները դադարեցրին որ զոհ չմատ-
ուցին իրանց համար։
18 Եւ Անտիոքից և Իկոնիոնից Հր-
էութներ եկան՝ ժողովուրդներին
համոզեցին և Պօղոսին քարկոծ
անելով քաղաքիցը դուրս քաշե-
ցին, և կարծում էին թէ մեռած
19 է։ Եւ երբոր աշակերտները նո-
րան շրջապատեցին, վերկացաւ
մօտ քաղաքը. և հետևեալ օրը
Բառնաբասին հետ դուրս եկաւ
գնաց Դերբէ. Այն քաղաքում 20
էլ աւետարանեցին, և շատերին
աշակերտ շինեցին. և ապա կո-
դարձան Լիստրա՝ և Իկոնիոն և
Անտիոք. Աշակերտների սրտերը 21
հաստատեցին, և յորդորեցին որ
հաստատ կենան հաւատքի մէջ.
և թէ շատ նեղութիւններով պէտք
է մեզ մտնել Աստուծոյ արքա-
յութիւնը։ Նորանց ամեն մէկ ե. 22
կեղեցիների համար երէցներ ձեռ-
նադրեցին. աղօթք արին ծոմ պա-
հելով, և նորանց յանձնեցին այն
Տիրոջը որին հաւատացել էին։
Եւ Պիսիդիայի մէջ մտն գալով 23
եկան Պամփիլիայ։ Եւ երբոր Պեր- 24
գէի մէջ Տիրոջ խօսքը խօսեցին,
իջան Աստալիա։ Եւ այն տեղից 25
նաւով գնացին Անտիոք, որ այն
տեղից Աստուծոյ շնորհքին յանձ-
նուած էին՝ այն գործի համար՝
որ կատարեցին։ Եւ երբոր եկան՝ 26
ժողովեցին եկեղեցին պատմեցին
ինչ որ Աստուած արաւ իրանց
հետ. և թէ նա հեթանոսների
համար հաւատքի դուռը բացաւ։
Եւ շատ ժամանակ այն տեղ մնա- 27
ցին աշակերտների հետ։

ԳԼ. ԺԵ

Եւ Հրէաստանից ոմանք իջել էին 1
եղբայրներին սովորեցնում էին որ
եթէ չթլփատուիք Մովսէսի օրէնք
չէք կարող փրկուել։
Եւ Պօղոս և Բառնաբաս նորանց 2
հետ բաւական հակառակութիւն
և վէճ անելուց յետոյ. վճռեցին
որ Պօղոս և Բառնաբաս և նորան-
ցից մի քանիսն այն խնդրի հա-
մար վեր գնան Երուսաղէմ ա-
ռաքեալների և երէցների մօտ։
Նորանք էլ եկեղեցուցը ճանա- 3
պարհ գցուեցան, և Փիւնիկիէի
և Սամարիայի միջով անցնելով
պատմում էին հեթանոսների դար-
նալը, և մեծ ուրախութիւն էին
անում բոլոր եղբայրներին։ Եւ 4
երբոր հասան Երուսաղէմ, եկե-
ղեցուցն և առաքեալներից և ե-
րէցներից ընդունուեցան, և պատ-
մեցին ինչ բաներ որ Աստուած
իրանց հետ արաւ։ Բայց 5

հերձուածից մի քանի հաւատացեալներ վերկացան և ասում էին,
թէ պէտք է թլփատել դորանց
և պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն։
6 Եւ առաքեալներն և երէցներն ժողովեցան, որ տեսանեն այս բա-
7 նի համար։ Եւ շատ քննութիւն լինելուց յետոյ Պետրոսը վերկացաւ և նորանց ասաց. Մարդիկ եղբայրք, դուք գիտէք, որ առ-
ջին օրերից ձեր միջումն Աստուած ընտրեց որ իմ բերանովը հեթա-
նոսներն աւետարանի խօսքը լսեն
8 և հաւատան։ Եւ սրտագէտ Աստուած վկայութիւն տուաւ նորանց,
Սուրբ Հոգին տալով նորանց ինչ-
9 պէս և մեզ։ Եւ ոչինչ խտրութիւն չարաւ նորանց և մեր մէջ,
հաւատքով սրբելով նորանց սըր-
10 տերը։ Եւ հիմա ինչո՞ւ էք Աստուծոյն փորձում, որ մի լուծ դնէք աշակերտների վրի վերայ,
որ ոչ մեր հարքը՝ և ոչ մենք կա-
11 րողացինք տանել։ Այլ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքովը հաւատում ենք ապրիլ, ինչպէս նորանք էլ։
12 Եւ բոլոր բազմութիւնը լռեց, և լսում էին Բառնաբասին և Պօղոսին որ պատմում էին թէ Աստուած որչափ նշաններ և հրաշքներ արաւ նորանց ձեռովը հեթա-
13 նոսների մէջ։ Եւ երբոր նորանք լռեցին, Յակոբոս պատասխանեց և ասաց. Մարդիկ եղբայրք, ինձ
14 լսեցէք։ Սիմոնը պատմեց, թէ ինչպէս Աստուած առաջուց այց արաւ, որ հեթանոսներիցը ժողովուրդ առնէ իր անուան համար
15 Եւ սորա հետ միաբանվում են մարգարէների խօսքերը. ինչպէս
16 էլ գրուած է. Սորանից յետոյ կ'դառնամ՝ և դաւթի վայր ընկած բնակարանը կ'շինեմ, և նորա քանդուածները նոր կ'շինեմ՝
17 և կ'կանգնեցնեմ նորան. Որ մարդկանց մնացածները Տիրոջը խընդրեն. և այն բոլոր հեթանոսներն՝ որոնց վերայ իմ անունը կոչուած է, ասում է Տէրը. նա որ այս
18 բոլորն անում է։ Յաւիտենից հետէ յայտնի է Տիրոջը իր բոլոր
19 գործքերը։ Նորա համար ես էլ յորմար եմ համարում, նեղութիւն չտալ նորանց՝ որ հեթանոսներից են դառնում դէպի
20 Աստուած։ Բայց որ թուղթ գրուի նորանց, որ յետ քաշուին կուռքերի կերակուրներից, և պոռնկութիւնից. և խեղդուածից
21 և արիւնից։ Վասն որ Մովսես առաջին դարերից հետէ ամեն քաղաքներում նորան քարոզիչներն ունի և ժողովարաններում ամեն շաբաթ օր կարդացվում է։
22 Այն ժամանակ հաճոյ երևեցաւ առաքեալներին և երէցներին բոլոր եկեղեցու հետ, որ իրանցից ընտրեսած մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Պօղոսի և Բառնաբասի հետ, Բարսաբայ կոչուած Յուդային, և Շիղային՝ որ գլխաւոր մարդիկ էին եղբարց մէջ. Եւ նո-
23 րանց ձեռովը գրեցին այս բանը։
Առաքեալներս և երէցներս և եղբայրներս, Անտիոքի և Սիւրիայի և Կիլիկիայի մէջ լինող եղբայրներիդ՝ որ հեթանոսներից էք,
24 ողջոյն։ Որովհետև լսեցինք, թէ ոմանք մեր միջից դուրս գալով խռովեցրին ձեզ խօսքերով և ձեր անձերը խախտեցին, ասելով թէ պէտք է թլփատուիլ և օրէնքը պահել. որոնց մենք չհրամայեցինք.
25 Մեզ միտքն ժողովուածներիս հաճոյ երևեցաւ, որ ընտրուած մարդիկ ուղարկենք ձեզ մեր սիրելիների՝ Բառնաբասի և Պօղոսի հետ։
26 Այնպէս մարդիկ, որ իրանց անձերը նուիրած են մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անուան հա-
մար։
27 Արդ Յուդային և Շիղային ուղարկեցինք. որ իրանք էլ խօսքով միևնոյնը պատմեն ձեզ.
28 Սուրբ Հոգին և մեզ հաճոյ երևեցաւ, ասելի ոչինչ բեռը չդնել ձեզ վերայ այս հարկաւոր
29 բաներից զատ. Որ հեռու կենաք կռքի զոհուածից և արիւնից՝ և խեղդուածից՝ և պոռնկութիւնից. որ սորանցից ձեր անձերը պահելով լաւ կանէք. ողջ կացէք։
30 Եւ սորանք արձակուեցան՝ և եկան Անտիոք, և ժողովուրդը հաւաքեցին՝ և թուղթը տուին։ Եւ
31

կարդալով ուրախացան այն մխի-
32 թարութեան վերայ։ Եւ Յուդան
և Շիղան, որովհետև նորանք էլ
մարգարէք էին, շատ խօսքերով
մխիթարեցին և հաստատեցին եղ-
33 բայրներին։ Եւ մի ժամանակ՝ յե-
տ էդ կենալուց յետոյ, եղբայրնե-
րից խաղաղութիւնով արձակ
34 ուեցան դէպի առաքեալները. Եւ
Շիղային հաճոյ երևեցաւ՝ այն տեղ
35 մնալ։ Բայց Պօղոս և Բառնաբաս
Անտիոքի մէջ մնան էին գալիս, և
Տիրոջ խօսքը շատ ուրիշ բաների
հետ սովորեցնում էին և աւետա-
րանում։

36 Բայց մի քանի օրերից յետոյ
Պօղոս ասաց Բառնաբասին. Դա-
նանք և այցելութիւն անենք մեր
եղբայրներին ամեն քաղաքներում,
որոնց մէջ Տիրոջ խօսքը քարոզե-
37 ցինք, տեսնենք թէ ինչպէս են։ Եւ
Բառնաբասը կամենում էր Մար-
կոս կոչուած Յովհաննէսին էլ վեր
38 առնել։ Բայց Պօղոս արժան էր
համարում, որ Պամփիւլիայի մէջ
իրանցից ջոկուածին, և նորանց
հետ գործի մէջ չ'եկածին իրանց
39 հետ չառնեն։ Եւ այսպէս գրժ-
տութիւն եղաւ. մինչև որ ջոկուե-
ցան իրարից. Բառնաբասը Մար-
կոսին առաւ որ նաւով գնայ Կիպ-
40 րոս։ Եւ Պօղոսը Շիղային ընտրեց
ճանապարհ ելաւ, եղբայրներից
Աստուծոյ շնորհքին յանձնուած։
41 Եւ Սիւրիայի և Կիլիկիայի երկիրը
մեն էր գալիս, և եկեղեցիները
հաստատում էր։

ԳԼ. ԺԶ

1 Եւ եկաւ հասաւ Դերբէ և Լիս-
տրա. և ահա մէկ աշակերտ կար
այն տեղ՝ անունը Տիմոթէոս. որ
մի հաւատացեալ Հրէայ կնկան՝ և
2 Յոյն հօր որդի էր։ Որ բարի վկա-
յութիւն ունէր Լիստրացի և
3 Իկոնիացի եղբայրներից։ Պօղոսը
կամեցաւ, որ սա գնայ իր հետ.
և առաւ թլփատեց նորան՝ այն
տեղերում լինող Հրէաների պատ-
ճառով, վասնզի ամենքը գիտէին
4 որ նորա հայրն Յոյն էր։ Եւ երբ
որ անցնում էին այն քաղաքներու-

վը, ասանդում էին նորանց պա-
հել այն հրամաններն, որ երու-
սաղէմում լինող առաքեալներից
և երէցներից պատուիրուած
էին։ Եւ եկեղեցիները հաւատ- 5
քով հաստատվում էին, և օրէ
ցօր թուով աւելանում էին։

Եւ Փռիւգիան և Գաղատացոց 6
երկիրը ման եկան, Սուրբ Հո-
գուց արգելուելով որ Ասիայի
մէջ Աստուծոյ խօսքը չխօսին։ Երբ 7
որ եկան Միւսիայի կողմերը, ջանք
էին անում որ գնան դէպի Բի-
թանիա, և Հոգին թոյլ չտուաւ
նորանց։ Եւ Միւսիայովին անցնե- 8
լով եկան Տրոադա։ Եւ գիշերու- 9
մը տեսիլք երևեցաւ Պօղոսին.
մէկ Մակեդոնացի մարդ կանգնած
էր, աղաչում էր նորան՝ և ասում.
Անցիր Մակեդոնիա՝ և օգնիր մեզ։
Եւ երբոր տեսաւ տեսիլքը, շու- 10
տով ուզեցինք դուրս գալ Մա-
կեդոնիա. հասկանալով որ Տէրն
է հրաւիրել մեզ, որ աւետարա-
նենք նորանց։

Եւ Տրոադայից դուրս եկած՝ 11
ուղիղ գնացինք Սամոթրակէ. և
հետևեալ օրը Նէապոլիս. Եւ այն 12
տեղից Փիլիպպէ, որ Մակեդոնա-
ցոց բաժնի առաջինն է՝ Կոլոնիա
քաղաք. և մենք քաղաքում մի
քանի օր մնացինք, Եւ շաբաթ 13
օրը քաղաքից դուրս գնացինք
դէպի գետը, ուր սովոր էին ա-
ղօթք անելու. և նստած խօսում
էինք ժողովուած կանանց հետ։
Եւ մի կին՝ անունը Լիդիա՝ ծի- 14
բանավաճառ, Թիւատիր քաղա-
քից, աստուածավախ, լսեց. ո-
րի սիրտը Տէրը բացաւ, որ Պօ-
ղոսի խօսածներին մտիկ անէ։ Եւ 15
երբոր նա և իր տունը մկրտուե-
ցաւ, աղաչեց ասելով. Եթէ ինձ
Տիրոջը հաւատացած համարէք,
մտէք իմ տունը՝ մնացէք. և բռա-
նադատեց մեզ։

Եղաւ որ մենք աղօթքի գնա- 16
լիս, մի աղախին պատահեց մեզ՝
որ կախարդութեան ոգի ունէր.
որ կախարդութիւնովն իր տէրե-
րին շատ շահ էր բերում։ Սա Պօ- 17
ղոսի և մեր ետևից ընկած՝ աղա-
ղակում էր և ասում. Այս մարդ-

դիկը ըստձեալ Աստուծոյ ծառայներն են, որ ձեզ պատմեմ են
18 փրկութեան ճանապարհը եւ շատ օրեր այս բանն անում էր. Պօղոս էլ պայրացած յետ դարձաւ և ասաց այն ոգուն. Յիսուսի Քրիստոսի անունովը պատուիրում եմ քեզ, Դուրս եկ դրանից. և նոյն
19 ժամուն դուրս եկաւ։ Եւ երբոր նորա տէրերը տեսան, թէ յուսոյ կորուեցաւ, Պօղոսին և Շիղային առին քաշեցին հրա-
20 պարակն իշխանների մօտ։ Եւ նորանց տարան զօրագլուխների մօտ և ասացին. Այս մարդիկը խռովեցնում են մեր քաղաքը՝ իրանք
21 Հրեաներ լինելով. Եւ այնպիսի սովորութիւններ են քարոզում, որ մեզ արժան չէ ընդունել, և ոչ էլ անել. որ Հռոմայեցի ենք։
22 Եւ ամբոխը կիսաուեցաւ նորանց վերայ. և զօրագլուխները նորանց հանդերձները հանեցին, և հրա-
23 ման տուին որ ծեծեն։ Եւ նորանց շատ խոցեր տալուց յետոյ բանտը գցեցին, բանտապետին պատուիրելով, որ նորանց զգուշութեամբ
24 պահէ։ Նա էլ այն պատուէրն առած, նորանց ներսի բանտը գցեց. և նորանց ոտները պնդացրեց կաճղուամբ։
25 Եւ կէս գիշերին Պօղոս և Շիղան աղօթք անելով օրհնում էին Աստուծոյն. և բանտարկուածներն էլ նորանց լսում էին։
26 Եւ յանկարծակի մեծ շարժ եղաւ՝ մինչև որ բանտի հիմունքները էլ շարժ վում էին. և իսկոյն բոլոր դռները բացուեցան, և ամենքի կապանքներն արձակուե-
27 ցան։ Երբոր բանտապետն էլ զարթնելով տեսաւ բանտի դռները բացուած, սուրը քաշեց՝ և կամենում էր ինքն իրան սպանել. վասնզի կարծում էր՝ թէ կապուածները փախել են։
28 Եւ Պօղոս մեծ ձայնով կանչեց և ասաց. Անձիդ չար բան չանես, քանզի
29 ամենքս այս տեղ ենք։ Ճրագ ուզեց և ներս վազեց. և դողալով Պօղոսի և Շիղայի առջև ընկաւ։
30 Եւ նորանց դուրս հանեց և ասաց. Տէրեր, ես ի՞նչ պէտք է անեմ
որ փրկուիմ։ Եւ նորանք ասացին. 31
Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին և կ'փրկուես դու՝ և քո տունը։
Եւ Տիրոջ խօսքը խօսեցին նորան՝ 32
և այն ամենքին, որ նորա տանն էին։ Եւ նորանց վէր առաւ գի- 33
շերի նոյն ժամուամբ և խոցերից լուացաւ. և իսկոյն մկրտուեցաւ ինքը՝ և նորա բոլոր ընտանիքը։
Եւ նորանց տարաւ իր տունը, 34
նորանց առջևնին սեղան դրաւ. և ուրախ եղաւ բոլոր ընտանիքովն՝
Աստուծոյն հաւատալով։ Եւ երբ 35
որ լուսացաւ, զօրագլուխները նախարարներին ուղարկեցին և ասացին.
Արձակիր այն մարդկանցը։ Եւ 36
բանտապետն այս խօսքերը պատմեց Պօղոսին, թէ Զօրագլուխները ուղարկեցին՝ որ արձակուիք. ուրեմն հիմա դուրս եկէք, գնացէք խաղաղութեամբ։ Բայց Պօ- 37
ղոս ասաց նորանց. Հրապարակաւ ծեծեցին մեզ՝ անմեղներիս որ Հռոմայեցի մարդիկ ենք, և բանտը գցեցին. և հիմա մեզ թաքո՞ւն են հանում. ոչ. այլ թող իրանք գան մեզ հանեն։ Եւ նախա- 38
րարներն այն խօսքերը պատմեցին զօրագլուխներին. և նորանք վախեցան՝ երբոր լսեցին թէ Հռոմայեցի են. և եկան աղաչեցին նո- 39
րանց, և երբոր հանեցին, խնդրում էին որ քաղաքիցը գնան։
Եւ բանտիցը դուրս եկան՝ մտան 40
Լիդիայի տունը. և եղբայրներին տեսնելով, նորանց մխիթարեցին և գնացին։

ԳԼ. ԺԷ

Եւ Ամփիպօլիսի և Ապողոնիայի 1
միջովը մտնելով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր էր Հրէից ժողովրանը։ Եւ Պօղոսը էր սովորութեան 2
պէս մտաւ նորանց մօտ, և երեք շաբաթ օրէր նորանց հետ խօսեց գրքերիցը. Բաց էր անում՝ և տա- 3
ջևնին դնում, թէ պէտք էր՝ Քրիստոսը չարչարուէր՝ և մեռելներից յարութիւն առնէր. և թէ Քրիստոսը այս Յիսուսն է որ ես պատմում եմ ձեզ։ Եւ նորանցից ոմանք 4
հաւատացին, և Պօղոսի և Շի-

ղայի հետ մեռցան. և ասուածածապաշտ Յոյներից էլ շատ բազմութիւն, և գլխաւոր կանանցից
5 էլ ոչ սակաւ։ Բայց Հրէաները նախանձելով և փողոցից մի քանի անպիտան մարդիկ առնելով ամբոխ արին և քաղաքի մէջ շփոթութիւն շինեցին. և Յասոնի տան մօտ հասնելով՝ ուզում էին, որ նրանց
6 տանեն հրապարակը։ Եւ երբոր չգտան նրանց՝ Յասոնին և մի քանի եղբարներին քաշկռտել տանում էին քաղաքապետների մօտ, և ասելիկ աղաղակում թէ այս
7 աշխարհքը շփոթեցնողները այս տեղ էլ հասան. Որոնց Յասոնն ընդունել է. և սրանք ամենքը կայսեր հրամաններին հակառակ են գործում. ասելով թէ մի ու-
8 րիշն է թագաւոր՝ Յիսուս։ Եւ շփոթեցրին ժողովուրդին և քաղաքապետներին, որ լսում էին այս
9 բանը։ Եւ Յասոնից ու ուրիշներից երաշխաւորութիւն առին,
10 և նրանց արձակեցին։ Բայց եղբայրները Պօղոսին և Շիղային շուտով գիշերանց Ճանապարհ դցեցին դէպի Բերիա. որ երբոր այն
11 տեղ հասան, գնացին Հրէից ժողովրանը։ Բայց սրանք ազնիւ էին քան նորանք՝ որ Թեսաղանիկէացի էին. որ խօսքը բոլոր յօժարութեամբ ընդունեցին. ամեն օր Գրքերը քննում էին, թէ
12 այս բանը այսպէ՞ս է։ Եւ նորանցից շատերը հաւատացին. և Յոյն պարկեշտ կանանցից և մարդկան-
13 ցից էլ ոչ սակաւ։ Բայց երբոր Թեսաղանիկէի Հրէաները գիտացին, թէ Բերիայի մէջ էլ Աստուծոյ խօսքը պատմուեցաւ Պօղոսից, այն տեղ էլ եկան ժո-
14 ղովուրդները դրդռելով։ Անի ժամանակ եղբարները Պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ մինչև ծովը գնայ. և Շիղան և Տիմոթէոսն
15 այն տեղ մնացին։ Եւ Պօղոսին տանողները նորան մինչև Աթենք տարան. և պատուէր առնելով Շիղային և Տիմոթէոսի համար՝ որ շուտով դան նորա մօտ, գնացին։
16 Եւ երբոր Պօղոս Աթենքում

նորանց սպասում էր, նորա հոգին ստաւիկ զայրանում էր իրանում որ տեսնում էր քաղաքը կուռքերով լիքը։ Եւ խօսում էր 17
ժողովարանում Հրէաների և աստուածապաշտների հետ և փողոցում ամեն օր պատահողների
հետ։ Եպիկուրեան և Ստոյիկեան 18
փիլիսոփաներից ոմանք նորա հետ հակառակում էին. և ոմանք ասում էին. Ա՛յս աերմանաբաստն ի՞նչ է ուզում ասել. բայց ուրիշներն էլ. Երևում է, որ օտար աստուածների քարոզիչ է. որովհետև Յիսուս և յարութիւն էր աւետարանում։ Եւ առին նորան 19
բան Արիսպագոս՝ ասելով. Կարո՞ղ ենք իմանալ, թէ ի՞նչ է քո այդ խօսած նոր վարդապետութիւնը. Վասնզի մի օտար բան 20
ես բերում մեր ականջներին. Հիմա կամենում ենք իմանալ՝ թէ ա՛ի՞նչ բան պիտի լինի։ Վասնզի բո- 21
լոր Աթենացիք և այն տեղ կեցող օտարները՝ ուրիշ ոչ մի բանի չէին պարապում, բայց միայն նոր բան ասել կամ լսել։

Պօղոս էլ կանգնեց Արիսպա- 22
գոսի միջին և ասաց. Ով Աթենացի մարդիկ, ես ձեզ բան ամենայնի կրօնասէր եմ տեսնում. Քանզի մինչ գալիս և ձեր պաշտա- 23
մունքներին մտիկ տալիս, մի սեղան էլ գտայ, որի վերայ գրած էր, ԱՆԾԱՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՅՆ. այն որ դուք առանց ճանաչելու պաշտում էք. ես նորան եմ պատմում ձեզ։ Աի՛ Աստուածն, որ 24
աշխարհքս և ամեն բան՝ որ նորա մէջ կայ՝ արար, նա երկնքի և երկրիս Տէրը լինելով ձեռագործ տաճարներում չէ բնակում։ Եւ 25
ոչ էլ մարդկանց ձեռքով է պաշտվում՝ իբր թէ մի բանի կարօտ. նա է ամենի կեանք և շունչ և ամեն բան տուողը։ Եւ նա մէկ 26
արիւնից մարդկանց բոլոր ազգերն արաւ, որ երկրի բոլոր երեսի վերայ բնակեն. որոշուած ժամանակներ և նորանց բնակութեան սահմանները հաստատեց որ Աստուծոյն խնդրեն. Որ լինի թէ զգա- 27
նեն նորան և գտնեն. թէ և ին-

քը հետս չէ մեր ամեն ժկկիցը։
28 Վասանկի մենք նորանով ենք
ապրում և շարժվում և կանք.
ինչպես ձեր բանաստեղծներից ո-
մանք էլ ասացին. Ընչ նորա ազ-
29 գին էլ ենք։ Արդ որովհետև Ա-
ստուծոյ ազգին ենք, պետք չէ
համարենք, թէ Աստուածութիւնը
նման լինի ոսկու կամ արծաթի
կամ քարի՝ մարդու վարպետու-
թեամբ և միտքով քանդակուած։
30 Բայց Աստուած տգիտութեան
ժամանակներն մտաց անելով,
հիմա մարդկանց պատուիրում է,
ամենին ամեն տեղ ապաշխարել։
31 Մէկ օր հաստատեց որ նորանում
աշխարհքս արդարութեամբ պի-
տի դատէ այն մարդու ձեռովն,
որ առմանից նորանով ամենքին
հաւատք տալ, որին մեռելներից
յարուցց։
32 Երբոր լսեցին մեռելների յա-
րութիւնը, ոմանք ծաղր էին ա-
նում. ոմանք էլ ասում. Ա՛յդ
բան հետոր քեզանից դարձեալ
33 կ'լսենք։ Եւ այսպէս Պօղոս նորանց
34 միջիցը դուրս եկաւ։ Բայց մի քա-
նի մարդիկ նորա կողմն անցնելով
հաւատացին. որոց հետ էր Դիո-
նէսիոս Արիսպագացին, և մի կին
անուն Դամարիս, և ուրիշներ
ալ անոնց հետ։

ԳԼ. ԺԸ.

1 Սորանից յետոյ Պօղոս Աթենա-
ցիներից բաժանուեց եկաւ Կորն-
2 թոս։ Եւ մի Հրէայ գտաւ՝ անու-
նը Ակիւղաս, ազգով Պոնտացի,
և նորա Պրիսկիլլա կինն էլ, Ի-
տալիայից նոր եկած, Կղօդիոսի
հրամանի համեմատ՝ որ բոլոր
Հրէաները Հռօմից հեռանան. և
3 նորանց մօտ գնաց։ Եւ որովհետև
արհեստակից էր, մնաց նորանց
մօտ և բան էր անում. վասնզի
4 արհեստով խորանակոր էին։ Եւ
խօսում էր ժողովրդեան ամեն
շաբաթ օր և Հրէաներին և Յու-
5 ներին համոզում էր։ Եւ երբոր
Սիղան և Տիմոթէոսն իջան Մա-
կեդոնիայից, Պօղոսը հոգով վա-
ռում էր վկայելով Հրէաներին թէ
Յիսուսն է Քրիստոսը։ Նա երբոր 6
նորանք հակառակում էին և հայ-
հոյում, հանդերձները թօթափեց
և ասաց նորանց. Ձեր արիւնը ձեր
գլուխը, ես անպարտ եմ, այսու-
հետև հեթանոսներին եմ գնում։
Եւ այն տեղից գնաց մտաւ մէկի 7
տունն՝ որի անունը Յուստոս էր,
մի աստուածապաշտ մարդ, որ
նորա տունը ժողովարանի կից էր։
Ներքսպոս ժողովրդապետը հաւա- 8
ցաց Տիրոջն իր բոլոր տունովը.
և Կորնթացիներից շատերը երբոր
լսեցին հաւատացին և մկրտուե-
ցան։ Եւ Տէրն ասաց գիշերուայ 9
տեսիլքով Պօղոսին, Մի վախենար՝
այլ խօսիր՝ և լուռ մի կենար։
Վասնզի ես քեզ հետ եմ, և ոչ 10
ոք քեզ դէմ չի կենալ՝ քեզ վնա-
սելու. քանզի ես շատ ժողովուրդ
ունիմ այս քաղաքումը։ Եւ ան- 11
քեզ մէկ տարի և վեց ամիս նստեց՝
և նորանց ուսուցանում էր Ա-
ստուծոյ խօսքը։
Եւ երբոր Գալլիոսը Աքայիայում 12
յառաջդէր էր Ակայիայում, Հրէա-
ները միաբան վրայ կացան Պօղոսի
վերայ, և նորան տարան առեա-
նը. Ասելով, թէ Սա օրինաց հա- 13
կառակ հրապուրում է մարդկանց
Աստուած պաշտել։ Եւ երբոր Պօ- 14
ղոսն իր բերանը ուզում էր բանալ
Գալլիան Հրէաներին ասաց. Ով
Հրէաներ, եթէ մի անիրաւութիւն
կամ մի չար ներգործութիւն լինէր,
ինձ արժան էր որ լսէի։ Բայց ե- 15
թէ խնդիրը խօսքի և անունների
և ձեր օրէնքի համար է, դուք
ինքներդ տեսէք. վասնզի այդպիսի
բաների դատաւոր չեմ ուզում
լինել։ Եւ նորանց հանեց դատա- 16
ստանից։ Եւ բոլոր Յոյները Սո- 17
թենէս ժողովրդապետին բռնեցին
և առանի առջեր ծեծում էին.
և Գալլիան սորանց համար ոչինչ
հոգս չէր անում։
Բայց Պօղոսը տակաւին շատ օ- 18
րեր մնալուց յետոյ, եղբայրներից
ջը հրաժարուելով, նաւով գնում
էր գէպի Ասորիք. և Պրիսկիլլան
և Ակիւղաս նորա հետ, կէնքրա-
յումը գլուխը խուզեց. վասնզի
ուխտ ունէր։ Եւ երբոր հասաւ 19

Եփեսոս, նորանց այնտեղ թողեց, և ինքը ժողովարանը մտնելով 20 Հրէաների հետ խօսեմ էր, եւ երբոր հասաւ Եփեսոս, նորանք աղաչեմ էին նորան՝ որ շատ ժամանակ այնտեղ մնայ, յանձը 21 չառաւ, բայց նորանցից հրաժարեց և ասաց. Անպատճառ պէտք է ես առաջիկայ տօնը Երուսաղէմումն անեմ. Ասուծոյ կամքը դարձեալ ձեզ մօտ կ'դառնամ. և Եփեսոսից վերկացաւ, 22 եւ իջաւ Կեսարիա, վեր ելաւ, և բարև տուաւ եկեղեցոյն, և վայր եկաւ Անտիոք: 23 եւ մի ժամանակ մնալուց յետոյ, դարձ եկաւ՝ որ կարգով մեն գայ Գաղատացոց աշխարհքումն և Փռիգիայումը, բոլոր աշակերտները հաստատելով:

24 Եւ մի Հրէայ՝ անունը Ապողոս, ազգով Աղէքսանդրացի, ճարտասխօս մարդ՝ եկաւ Հասաւ Եփեսոս, որ զօրաւոր էր Գրքերումը: 25 Սա Տիրոջ ճանապարհին տեղեկացած էր, և հոգով վառուած՝ Տիրոջ հասնար խօսեմ էր՝ և ասոյգ սովորեցնեմ էր. բայց միայն Յօհաննէսի մկրտութիւնն 26 էր գիտեմ: Սա սկսեց ժողովարանումը համարձակ խօսել. և երբոր Ակիւղան և Պրիսկիղան նորանից լսեցին, նորան իրանց մօտ առին, և էլ աւելի ասոյգ Ասուծոյ ճանապարհն բացատրեցին 27 նորան: Եւ երբոր նա կամեցաւ գնալ Աքայիա, եղբարները քաջալերելով գրեցին աշակերտներին, որ նորան ընդունին. երբոր նա այնտեղ հասաւ, հաւատացեալներին շատ օգնութիւն էր տալիս շնորհքի ձեռնին: 28 Վասնզի խիստ սաստիկ յանդիմանում էր Հրէաներին հրապարակաւ գրքերից ցոյց տալով, թէ Քրիստոսը Յիսուսն է:

Գլ. ԺԹ.

1 Եւ եղաւ որ Ապողոսը Կորնթոսումն եղած ժամանակ, Պօղոսը որ վերի կողմերումն մտն էր եկել՝ եկաւ Եփեսոս. և մի քանի աշակերտներ գտնելով՝ 2 Ասաց նորանց. Արդեօք Սուրբ Հոգին ընդունեցի՞ք՝ երբոր հաւատացիք. նորանք ասացին նորան. Մենք չենք էլ լսել, թէ Սուրբ Հոգի կայ: 3 եւ ասաց նորանց. Ապա ինչո՞վ մկրտուեցաք. նորանք էլ ասացին. Յօհաննէսի մկրտութիւնով: 4 Եւ Պօղոսը ասաց. Յօհաննէսը ժողովրդին ապաշխարութեան մկրտութիւնն էր մկրտում և ասում, թէ նա՝ որ նորա ետևից պիտի գայ, նորան հաւատան. այսինքն՝ Քրիստոս Յիսուսին: 5 Եւ երբոր լսեցին, Տէր Յիսուսի 6 անունովը մկրտուեցան: Եւ երբոր Պօղոսը ձեռք դրաւ նորանց վերայ, Սուրբ Հոգին եկաւ նորանց վերայ. և լեզուներ էին խօսում և մարգարէանում: 7 Եւ ամէնքը տասներկու մարդու չափ էին: 8 Եւ ժողովարանի մէջ մտած երեք ամիս համարձակ խօսում էր. և Աստուծոյ արքայութեան մասին համոզում էր: 9 Եւ երբոր մի քանիսը յամառում էին և չէին հնազանդում այն ճանապարհը բամբասելով բազմութեան առջև, նա բաժանուեցաւ նորանցից՝ և աշակերտներին ջոկեց. և ամեն օր խօսում էր մի Տիրաննի ժողովարանումը: 10 Եւ այս եղաւ մի երկու տարի, մինչև որ Ասիայի բոլոր բնակիչները՝ Հրէաները և Յոյները Տիրոջ խօսքը լսեցին: 11 Եւ Աստուած ոչ սակաւ զօրութիւններ էր անում Պօղոսի ձեռքովը: 12 Մինչև որ նորա մարմնի վերայից թաշկինակներ և վարշամակներ տանում էին դնում հիւանդների վերայ և ցաւերը հեռանում էին նորանցից, և չար ոգիները դուրս էին գալիս: 13 Եւ թափառական Հրէաներից մանք, որ երդմնեցուցիչ էին, համարձակեցին Տէր Յիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վերայ ասելով. երդում եմ քեզ մեր Յիսուսովն՝ որ Պօղոսը քարոզում է, 14 Սկևի Հրէայ քահանայապետի եօթն որդիքն էին, որ այս անում էին: 15 Չար ոգին պատասխանեց և ասաց. Յիսուսին գիտեմ եմ, և

Պօղոսին ճանապարհակից եմ, բայց
16 դուք ով էք։ Եւ այն մարդն՝ որ
նորանում չար ոգի կար՝ յարձա-
կելով նորանց վերայ բռնեց, նո-
րանց յաղթահարեց, մինչև որ
մերկ և խոցուած այն տանից
17 փախան։ Եւ այս յայտնի եղաւ
բոլոր Հրէաներին և Յոյներին, որ
Եփեսոսումն բնակած էին. և ահ
ընկաւ նորանց ամենի վերայ. և
Տէր Յիսուսի անունը մեծանում
18 էր։ Եւ հաւատացեալներից շա-
տերը գալիս էին՝ խոստովանում
էին, և իրանց գործքերը պատ-
19 մում էին։ Եւ կախարդութեան
հետևողներից շատերը իրանց գրքե-
րը բերում էին, և ամենի առջև
այրում էին. և նորանց գինը հա-
մարեցին՝ և գտան հիսուն հազար
20 արծաթի։ Եւ այսպէս Տէրոջ
խօսքը աճում էր և զօրանում։
21 Եւ երբոր այս կատարուեցաւ,
Պօղոսը միտքը դրաւ՝ որ Մակե-
դոնիայի և Աքայիայի միջովն
անցնելով՝ գնայ Երուսաղէմ՝ ա-
սելով՝ թէ ես իմ այնտեղ գնալուց
յետոյ, պէտք է ինձ Հռոմ էլ
22 տեսնեմ։ Եւ իրան պաշտօնեանե-
րից երկուսին՝ Տիմոթէոսին և Ե-
րաստոսին ուղարկեց Մակեդոնիա,
և ինքը մի ու ժամանակ մնաց
23 Ասիայում։ Եւ այն ժամանակ ոչ
սակաւ խռովութիւն եղաւ այն
24 ճանապարհի համար։ Վասնզի
մի արծաթագործ՝ անունը Դե-
մետրիոս, Արտեմիս ի-էի արծա-
թէ տաճարներ շինելով ոչ սա-
կաւ շահ էր տալիս վարպետնե-
25 րին. Որոնց հետ ու այս տրհետի
բանուորներին ժողովեց և ասաց.
Ո՛վ մարդիկ, դուք ինքներդ գի-
տէք, որ այս գործից է մեր շա-
26 հը։ Եւ տեսնում էք ու լսում
էք՝ որ այս Պօղոսը չէ թէ միայն
Եփեսացիներից, բայց համարեա
թէ բոլոր Ասիացիներից շատ ժո-
ղովուրդ համոզելով այն կողմը
դարձրեց. որ ասում է թէ Ձեռ-
քով շինուածները աստուածներ
27 չեն։ Եւ այս բանը ոչ թէ միայն
մեր մասն է վտանգի մէջ գալու
որ անարգուի, բայց մեծ աստու-
ծուհոյ Արտեմեայի տաճարն էլ
ոչինչի տեղ է համարվում. և
նորա մեծութիւնն էլ կ'քան-
դուի, որին բոլոր Ասիան՝ և աշ-
խարհքը պաշտում է։ Եւ այս 28
լսելով՝ բարկութեամբ լցուեցան
աղաղակում էին և ասում, Մեծ
է Եփեսացոց Արտեմիսը։ Եւ բո- 29
լոր քաղաքը շփոթութեամբ լց-
ուեցաւ. ամենքն էլ միասին վա-
զեցին թատրոնը քաշելով Գայիո-
սին և Արիստարքոս Մակեդոնա-
ցուն՝ Պօղոսի ճանապարհակիցնե-
րին։ Բայց Պօղոսը երբոր կամեցաւ 30
ամբոխի մէջ մտնել, աշակերտ-
ները չ'թողին նորան։ Ասիայի 31
գլխաւորներից ամենք էլ, որ նորա
բարեկամներն էին, ուղարկեցին
նորա մօտ՝ և աղաչում էին, որ
թատրոնի մէջ չ'գնայ։ Եւ ամեն 32
մէկը մի ուրիշ բան էր աղաղա-
կում. քանզի ժողովքը խռովուած
էր. և նորանցից շատերը չէին
գիտում, թէ ինչո՞ւ համար են
հաւաքուած։ Եւ այն բազմու- 33
թեան միջից Աղէքսանդրոսին
առաջ բերին. և երբոր Հրէայք
նորան առաջ քաշեցին, Աղէք-
սանդրոսը ձեռն շարժեց՝ և կամե-
նում էր ամբոխին պատասխանել։
Բայց երբոր գիտացին՝ թէ Հրէայ 34
է, ամենքն էլ մէկ ձայնով երկու
ժամի չափ աղաղակում էին. Թէ
Մեծ է Եփեսացոց Արտեմիսը։
Բայց տաճնապետը ամբոխին հան- 35
դարտեցնելուց յետոյ ասաց. Ո՛վ
Եփեսացի մարդիկ, ո՞վ է այն
մարդն՝ որ չէ գիտում թէ Եփե-
սոս քաղաքը մեծ Արտեմիս Աստ-
ուածուհու և Դիապետի տաճար-
ների պաշտօնեան է. Եւ որովհե- 36
տև այդ անվիճելի կերպով այդ-
պէս է, պէտք է ձեզ հանդարտ
կենաք և յանդգնութեամբ բան
չ'գործէք։ Քանզի այդ մարդկանցը 37
բերիք այստեղ, որ ոչ կուքի տուն
կողոպտողներ և ոչ ձեր աստու-
ծոյն հայհոյանք տուողներ են։
Ուրեմն՝ եթէ Դեմետրիոսը և նո- 38
րա հետ լինող վարպետները մէկի
հետ բան ունին, առեան կայ և
փոխանակ բդեշխի կայ, թող մի
միանցից գանգատ անեն։ Իսկ Ե- 39
թէ մի ուրիշ բանի համար է ձեր

խնդիրը, Թող օրինաւոր ժողովքաւմ վճռուի։ Գանդի մեզ էլ
40 մեծ վտանգ կայ այս օրուայ կրուի համար որ ամբաստանուինք. որովհետև ոչ պատճառ չ'կայ, որ այս ժողովքի համար կարող լինէինք պատասխան տալ. և այս ասելով՝ ժողովուրդին արձակեց։

ԳԼ. Ի

1 Եւ ոչնուկը դադարելուց յետոյ Պօղոս աշակերտներին կանչեց, և հրաժարական ողջոյն տուաւ՝ և դուրս եկաւ որ գնայ
2 Մակեդոնիա։ Եւ այն կողմերը ման գալով և նորանց շատ խօսքերով մխիթարելով, եկաւ Ելլադա։
3 Եւ երբոր երեք ամիս կացաւ, Հրէաները նենգութեան խորհուրդ արին նորա համար, երբոր կամենուէը դուրս գալ Սիւրիա. ինչ եւ խորհուրդ արաւ՝ որ Մակեդոնիայի միջովը յետ դառնայ։
4 Եւ մինչև Ասիա նորա հետ գնումը Սոպատրոս Բերիացին, և Թեսաղոնիկեցիներից Արիստարքոսն և Սեկունդոսը՝ և Գայոս Դերբացին և Տիմոթէոսը, և Ասիացիք՝ Տիւքիկոսն և Տրոփիմոսը
5 Սորանք առաջ գնալով սպասում
6 էին մեզ Տրոադայումը։ Եւ մենք բազարջակերաց օրերից յետոյ նաւով գնացինք Փիլիպպոսից, և մինչև հինգ օրն եկանք Տրոադա նորանց մօտ. ուր եօթն օր դադարեցանք։
7 Եւ միաշաբաթի օրը գնա որ ժողովուած էինք հաց կոտրելու համար, Պօղոս նորանց հետ խօսում էր՝ քանզի հետևեալ օրը պիտի գնալու էր. և խօսքն երկարացրեց
8 մինչև կէս գիշեր։ Եւ շատ լապտերներ կային այն վերնատունն, ուր որ մենք ժողովուած էինք։
9 Եւ Եւտիքոս անունով մի երիտասարդ պատուհանի վերայ նստած էր. Պօղոսի երկար խօսելու ժամանակ խոր քնի մէջ էր մտել. նա խոր քնով բռնուած ան երկրորդ յատակից վայր ընկաւ,
10 և վեր առնուեցաւ մեռած։ Եւ Պօղոս իջաւ նորա վերայ ընկաւ. և գիրկն առնելով նորան՝ ասաց. Մի շփոթուիք, վասն զի հոգին [11] կորեց և կերաւ. և շատ խօսեց մինչև առաւօտը, և յետոյ դուրս եկաւ գնաց։ Եւ այն պատանուն [12] բերին կենդանի, և մխիթարուեցան անչափ։ Իսկ մենք նաւը [13] մտանք գնացինք Ասոն. որ Պօղոսին դարձեալ այն տեղից մեզ հետ առնէինք. վասն զի այնպէս էր պատուիրել՝ որովհետև ինքն ցամաքումն էր գնալու։ Եւ երբոր [14] Ասոնումն հանդիպեցաւ մեզ, վեր առինք նորան եկանք Միտիլինէ։ Եւ այն տեղից նաւով գնացինք՝ [15] հետևեալ օրը եկանք Քիոսի դիմացը, և միւս օր հասանք Սամոս. և Տրոգիլիոնումն մնալով և հետևեալ օրն եկանք Միլետոս։ Քանզի Պօղոս որոշել էր՝ որ [16] ասիա մնալն նորա անցնէ՝ որ չ'լինի թէ նա Ասիայի մէջ ժամանակ կորցնէ. վասն զի շտապում էր, որ եթէ կարելի լինի նորան Պենտեկոստէի օրը Երուսաղէմը լինի։

Եւ Միլետոսից ուղարկեց [17] Եփեսոս՝ եկեղեցու երէցներին կանչեց։ Եւ երբոր եկան նորա մօտ, [18] ասաց նորանց. Դուք գիտեմ էք որ այն առաջին օրից հետէ որ Ասիա եկայ, ինչպէս եղայ ամեն ժամանակ ձեզ հետ, Ամենայն [19] խոնարհութեամբ Տիրոջը ծառայելով և շատ արտասուքով և փորձութիւններով որ Հրէաների նենգութիւններից պատահեցան ինձ. Որ ինչպէս չ'պահեցի [20] ոչ մի օգտակար բան, որ չ'պատմեմ ձեզ՝ թէ հրապարակներում և թէ տան մէջ։ Հրէաներին և Յոյներին վկայու- [21] թիւն տալով՝ ապաշխարել դէպի Աստուած, և մեր Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալ։ Եւ հիմա [22] ահա ես հոգով կապուած գնում եմ Երուսաղէմ. և չեմ գիտեմ՝ թէ այնտեղ ինչ պիտի պատահի ինձ։ Միայն թէ Սուրբ Հոգին [23] քաղաքից քաղաք վկայում է՝ և ասում, թէ կապանքներ և նեղութիւններ պատրաստ են ինձ։

24 Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատուական չեմ համարում՝ որ ավարտեմ իմ ընթացքը, և այն պաշտօնը որ Տէր Յիսուսից առի, որ Աստուծոյ շնորհաց աւետարանին վկայեմ։
25 Եւ հիմա տես ես գիտեմ, որ իմ երեսն այլ ևս չէք տեսնիլ դուք ամենքդ, որ ձեր մէջն մտի եկայ Աստուծոյ արքայութիւնը
26 քարոզելով։ Որու համար այս օրուայ օրը վկայութիւն եմ դնում ձեզ՝ որ ամենից արիւնից ան-
27 մեղ եմ։ Զանգի չես չքաշուեցայ Աստուծոյ բոլոր կամքը ձեզ
28 պատմելուց։ Արդ զգոյշ կացէք ձեր անձներիդ՝ և բոլոր հօտիդ, որի մէջ Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ դրաւ, որ արածեցընէք Աստուծոյ եկեղեցին, որ
29 իր արիւնովն առաւ։ Զանգի ես գիտեմ, որ իմ հեռանալուց յետոյ յափշտակող գայլեր կգան ձեր մէջը, որ հօտիդ չեն խնայիլ։
30 Եւ հէնց ձեզանից մարդիկ վեր կ'կենան, որ ծուռ բաներ կ'խօսին, որ աշակերտներին իրանց ետևից քաշեն։
31 Սորա համար արթուն կացէք, յիշելով որ երեք տարի գիշեր և ցերեկ չդադարեցի ամեն մէկիդ արտասուքով խրատել։
32 Եւ հիմա՝ ձեզ Աստուծոյն եմ յանձնում՝ եղբարք, և նորա շնորհաց խօսքին, որ նա կարող է շինել և ամեն արդարներին հետ ձեզ ժառանգութիւն
33 տալ։ Ձեզանից մէկի արծաթին կամ ոսկուն կամ հանդերձին
34 չգանկացայ։ Դուք ինքներդ գիտէք, որ այս ձեռները վաստակեցան իմ պէտքը, և նորանց էլ
35 որ ինձ հետ էին։ Ամեն բանցոյց տուի ձեզ՝ որ այսպէս պէտք է աշխատել, և տկարներին հոգ տանել, և Տէր Յիսուսի խօսքը յիշել, որ ինքն ասաց. Աւելի երանելի է տալը քան թէ առնելը։
36 Եւ երբոր այս ասաց. ծունկ դրաւ ամենի հետ՝ և աղօթք արաւ։
37 Եւ ամենքն էլ շատ լաց էին լինում. և Պօղոսի վզովն ընկած՝ նա-
38 րան համբուրում էին։ Յատուկ

էին մանաւանդ այն խօսքի համար՝ որ ասաւ էր, թէ նորա երեսը այլ ևս պիտի չտեսանեն. և նորան ճանապարհ գցեցին դէպի նաւը։

ԳԼ. ԻԱ.

Եւ երբոր եղաւ՝ որ մենք դուրս 1
եկանք և նորանցից բաժանուեցանք, ուղիղ գնալով եկանք Կոս, և հետևեալ օրը՝ Հռոդոն, և այն
անցից՝ Պատարայ։ Եւ մի նաւ 2
գտանք, որ փիւնիկէ էր գնում, նորա մէջ մտանք գնացինք։ Եւ 3
երբոր Կիպրոսն երևեցաւ, նորան թողինք ձախ կողմը, և նաւարկեցինք դէպի Սիրիա և իջանք Տիւրոս. վասնզի նաւը բեռը այն տեղ պիտի թափէր։ Եւ աշակերտ- 4
ներին գտնելով այնտեղ եօթն օր մնացինք. նորանք Սուրբ Հոգով ձեռնուն Պօղոսին չասում էին, որ վեր չելլէ Երուսաղէմ։ Եւ երբոր 5
մենք այն օրերը կատարեցինք, դուրս եկանք գնացինք. ամենքը կանանցով և որդիներով մեզ ճանապարհ գցեցին մինչև քաղաքի դուրսի կողմը. և ծովի եզերին մօտ ծունկ դրինք աղօթք արինք։ Եւ 6
իրարից բաժանուելով վեր եկանք նաւը. և նորանք տես դարձան իրանց տեղերը։ Եւ մենք ծովի ճա- 7
նապարհորդութիւնը վերջացնելով Տիւրոսից Պտողոմայիդա եկանք։ Եղբայրներին ողջոյն տուինք՝ և նորանց մօտ մէկ օր մնացինք։ Եւ հետևեալ 8
օրն այն տեղից դուրս եկանք մենք՝ Պօղոսի ընկերներս՝ եկանք Կեսարիա. և Փիլիպպոս աւետարանչի տունը մտնելով. որ այն եօթնիցն էր, նորա մօտ մնացինք։ Նա չորս 9
կոյս աղջիկներ ունէր, որ մարգարէութիւն էին անում։ Եւ երբոր 10
մենք այնտեղ շատ օրեր մնում էինք, Հրէաստանից մի մարգարէ իջաւ անունն Ագաբոս։ Եւ մեզ 11
մօտ եկաւ, Պօղոսի գօտին առաւ իր ձեռները և ոտները կապեց և ասաց, Սուրբ Հոգին այսպէս է ասում. Այն մարդուն՝ որի գօտին է այս, Հրէաները Երուսաղէմը այսպէս կ'կապեն, և հեթա-

12 նոանելի ձեռքն կ'մատնեն, եւ երբոր այս լսեցինք, ապշեցա՛մ էինք մենք, և այն տեղացիքը էլ,
13 որ վեր չելլէ Երուսաղէմ. Այն ժամնամակ Պօղոսը պատասխանեց և ասաց. Ի՞նչ էք անում, ընչո՞հա՞ր էք լաց լինում և սիրտս ճմլում. քանզի ես ոչ միայն կապուելու բայց Երուսաղէմումը մեռնելու էլ պատրաստ եմ Տէր Յիսուսի Քրիստոսի անուան համար,
14 Եւ երբոր նա ականջ չդրաւ, լռեցինք՝ և ասացինք. Տէրոջ կամքը լինի,
15 Եւ այն օրերից յետոյ պատրաստուած վեր ելանք Երուսաղէմ,
16 Եւ այն Կեսարացի աշակերտներից էլ մեզ հետ եկան, և տանում էին մեզ մի Մնասոն անուն Կիպրացի մարդու՝ առաջին աշակերտի մօտ, որ նորա
17 մօտ կենանք: Եւ երբոր մենք Երուսաղէմ մտանք, եղբարք մեզ
18 ուրախութեամբ ընդունեցին: Բայց հետեւեալ օրը Պօղոսը մեզ հետ գնաց Յակոբի մօտ, և բոլոր ե-
19 րէցները եկան: Եւ ողջոյն տալով նորանց՝ մին մին պատմում էր լինչ որ Աստուած հեթանոսների մէջ
20 արաւ իր ծառայութեամբը: Եւ նորանք լսելով, փառաւորում էին Տէրոջը. և ասում էին նորան. Եղբայր, տեսնո՞ւմ ես, քանի բիւրաւոր Հաւատացեալ Հրէաներ կան, և ամենքն օրէնքի նա-
21 խանձաւոր են: Բայց քեզ համար լսուցել են, թէ հեթանոսների մէջ լինող ամեն Հրէաներին ստիպում ես Մովսէսից ես քաշուել, ասելով որ իրանց որդիներին չթլփատեն, և սովորութեանց
22 պէս չվարուին: Հիմա ի՞նչ կ'լինի. անպատճառ պէտք է բազմութիւնը մէկ տեղ գայ, քանզի
23 կ'լսեն որ եկել ես: Հիմա ասա՛ մեզ՝ որ քեզ ասում ենք. Մեզ-նում չորս մարդ կան, որ ուխտ են դրած իրանց անձերի վերայ:
24 Նորանց առ՝ և նորանց հետ սրբուիր. և նորանց վերայ ծախք արա՝ որ էրանց գլխները ածիլեն. և ամենքն գիտենան, թէ ինչ որ քեզ համար լսուցել էին՝ ոչ ինչ է. այլ թէ դու էլ միտրան ես՝ օրէնքը պահելով: Բայց այն հա-
25 ւատացեալ հեթանոսների համար մենք ուղարկեցինք՝ որոշելով, որ նորանք այնպիսի բան չպահեն, բայց միայն զգուշանան կռքի զոհից և արիւնից և խեղդուածից, և պոռնկութիւնից: Այն ժամա-
26 նակ Պօղոսը այն մարդկանցն առաւ, հետեւեալ օրը նորանց հետ սրբուեցաւ, և տաճարը մտաւ լինց տալով սրբութեան օրերի լրանալը. մինչև որ նորանց ամեն մէկի վերայ պատարագը մատուցուեցաւ,
27 Եւ երբոր այն եօթն օրը լրանալու մօտ էին, Ասիացի Հրէաները նորան տեսան տաճարում, և բոլոր ամբոխին դէպ վերայ թափեցին, և նորան ձեռք ձգելով
28 պատսպարում էին. Ով Իսրայէլացի մարդիկ, օգնեցէք. սա այն մարդն է՝ որ ժողովրդի և օրէնքի և այստեղի հակառակ ամենին ամեն տեղ ամենքին ուսուցանում է. մինչև որ Յոյներ էլ մտցրեց տաճարի մէջ և այս սուրբ տեղը պղծեց: Վասնզի Տրոփիմոս Եփե-
29 սացին առաջուց նորա հետ քաղաքումը տեսել էին. և կարծում էին, թէ Պօղոսը նորան մտցրեց տաճարի մէջ: Եւ բոլոր քաղաքը
30 դղրդեց, և ժողովուրդը կիսուեցաւ. և Պօղոսին բռնած տաճարից դուրս քաշեցին, և շուտով դռները փակուեցան: Եւ երբոր
31 ուզում էին նորան սպանել. լուր հասաւ գնդի հազարապետին, թէ բոլոր Երուսաղէմը տակն ի վեր է
32 եղել: Նա էլ իսկոյն զինուորներ և հարիւրապետներ առաւ նորանց վերայ վազեց. և նորանք երբոր հազարապետին և զինուորներին տեսան, Պօղոսին ծեծելուց դադարեցան: Այն ժամնամակ հա-
33 զարապետը մօտեցաւ բռնեց նորան և հրամայեց, որ երկու շղթայով կապեն. և հարցնում էր, թէ ո՞վ է, և ի՞նչ է արել: Եւ
34 ամեն մէկը ամբոխի մէջ մի ուրիշ բան էին ազաղակում. երբոր ամբոխի շփոթութիւնից չկարողացաւ ստոյգն իմանալ հրամայեց

35 Նորան տանել բանակը, եւ երբոր
հասաւ ատոխճաններին, պէտք ե-
ղաւ որ ամբոխի բռնութեան պատ-
ճառով զինուորները Նորան վեր
36 առնեն բերեն, Որովհետեւ ժողո-
վուրդի բազմութիւնը հետեւից գը-
նում էր աղաղակելով. վեր կալ
37 գորան, եւ գեռ քանի որ Պօղո-
սը բանակը մտնելու վրայ էր,
հազարապետին ասաց. Կարելի՞
է ինձ արդեօք, որ քեզ հետ խօ-
սիմ. նա էլ ասաց՝ Յունարէն գի-
38 տե՞ս, Արդեօ՞ք դու այն Եգիպ-
տացին չես, որ այս օրերից ա
ռաջ շփոթութիւն արար՝ եւ չորս
հազար սիկարեան (աւազակ) մար-
39 դիկ հանեց անապատը, եւ Պօ-
ղոս ասաց. Ես Հրէայ մարդ եմ՝
Կիլիկեցոց Տարսոնիցը, ոչ թէ
աննշան քաղաքի քաղաքացի.
աղաչում եմ քեզ՝ հրամայ տուր
ինձ, որ այդ ժողովրդի հետ խօ-
սիմ.

40 Եւ երբոր նա հրամայեց, Պօ-
ղոս սանդիճաններուն վերայ կանգ-
նեց եւ դէպի ժողովուրդը ձեռք
շարժեց. եւ երբոր շատ լուռ կա-
ցան, սկսեց Եբրայեցոց լեզուով
խօսիլ՝ եւ ասաց.

ԳԼ. ԻԲ

1 Արդիւնք եղբարք եւ հարք, հի-
մա իմ ձեզ պատասխան տուլիս
2 լսեցէք. Եւ երբոր լսեցին թէ Եբ-
րայեցոց լեզուով էր նորանց հետ
խօսում, էլ աւելի լուռ կացան.
3 Եւ նա ասաց. Ես Հրէայ մարդ
եմ Կիլիկեցոց Տարսոնումն ծնուած՝
այս քաղաքումս սնած Գա-
մալիէլի ոտքի մօտ, հայրենական
օրէնքի ճշմարտութեան պէս վար-
ժուած. Աստուծոյ մասին նախան-
ձաւոր էի՝ ինչպէս այսօր դուք
4 ամէնքդ էք. Որ այս ճանապարհը
հալածեցի մինչև ի մահ, որ մարդ-
կանց եւ կանանց կապում էի եւ
5 մատնում բանտերի մէջ. Ինչպէս
քահանայապետն էլ ինձ վկայում
է՝ եւ ծերերի բոլոր ժողովն էլ. ո-
րանցից թղթեր էլ առած գնում
էի Դամասկոս եղբայրների մօտ,
որ այնտեղ լինողներին էլ կա-
պած բերեմ Երուսաղէմ, որ պատ-
ժուին. Եւ եղաւ որ երբ ես գնա- 6
լիս Դամասկոսին մօտեցում էի,
կէս օրուայ դէմ յանկարծակի
երկնքից մի մեծ լոյս փայլեց
իմ չորս կողմանը. Եւ վայր ընկայ 7
գետինը, և մի ձայն լսեցի՝ որ ա-
սում էր ինձ. Սաւուղ Սաւուղ,
ինձ ինչո՞ւ ես հալածում. Եւ ես 8
պատասխանեցի, Տէր՝ դու ո՞վ
ես. և ինձ ասաց. Ես Յիսուս Նա-
զովեցին եմ՝ որին դու հալածում
ես. Բայց ինձ հետ լինողները լոյ- 9
սը տեսնում էին և վախով լեց-
վում էին, բայց ինձ հետ խօսողի
ձայնը չէին լսում. Եւ ասացի, 10
Ինչ անեմ՝ Տէր, և Տէրն ասաց
ինձ. վեր կաց՝ գնա Դամասկոս,
և այնտեղ կ'ասուի քեզ ամեն
բանի համար, որ քեզ հրամայ
է անել. Եւ երբոր այն լուսոյ 11
փառքից չէի տեսնում, ինձ հետ
լինողները ձեռքից բռնեցին՝ և
մտայ Դամասկոս. Եւ մի Անա- 12
նիա մարդ՝ օրէնքի համեմատ առա-
ւոտուայ խոստովան, որ Հրէաներից բնա-
կող բոլոր Հրէաներից լաւի վկա-
յութիւն ունէր. Նա եկաւ ինձ 13
մօտ կանգնեց և ասաց. Սաւուղ
եղբայր, վեր նայիր. Եւ ես նոյն 14
ժամուին վեր նայեցի դէպի նա և
նա ինձ ասաց. Մեր հարանց Աս-
ուածն առաջուց քեզ ընտրեց,
որ նորա կամքը ճանաչես, և այն
Արդարին տեսնես, և նորա բե-
րանից ձայն լսես. Որ նորա վկայ 15
լինիս բոլոր մարդկանց առջև այն
բանների համար, որ տեսար և լսե-
ցիր. Եւ հիմա ինչո՞ւ ես ուշա- 16
նում, վեր կաց մկրտուիր և քո
մեղքերը լուա Տիրոջ անունը կան-
չելով. Եւ եղաւ երբոր ես դար- 17
ձայ Երուսաղէմ, և տաճարումն
աղօթք էի անում, չափշտակու-
թիւն ինձ բռնեց. Եւ նորան տե- 18
սայ որ ինձ ասում էր. Շտապիր
շուտ դուրս ել Երուսաղէմից.
քանզի չեն ընդունիլ քո վկայու-
թիւնը, որ ինձ համար տալիս ես.
Եւ ես ասացի. Տէր՝ նորանք գի- 19
տեն՝ որ ես բանտեր էի դնում և
ժողովարաններուդ ծեծում էի
քեզ հաւատացողներին. Եւ երբ 20

որ քո Սահփանոս վկայի արիւնը թափեամ էր, ես ինքն եւս կանգնած էի, և նորա սպանմանը կամակից էի, և նորա սպանողների հանդերձները պահում էի։
21 Եւ ասաց ինձ. Գնա, քանզի ես հեռու հեթանոսների մէջ կ'ուղարկեմ քեզ։
22 Եւ մինչև այս խօսքն ականջ էին դնում նորան, և իրանց ձայները բարձրացրին և ասացին. Այդպիսի մարդուն երկրից վեր առ. քանզի պէտք չէ
23 դա ապրի։ Եւ երբոր նորանք աղաղակում էին և հանդերձները վեր գցում, և փոշին օդի մէջ
24 ցանում. Հազարապետը հրամայեց, որ նա բանակը տարուի. ասելով թէ պէտք է ծեծելով հարցնել նորան, որ գիտենամ. Թէ ինչ յանցանքի համար էին նորա վերայ այնպէս աղաղակում։
25 Եւ երբոր նորան կաշէ փոկերով պինդ կապեցին, Պօղոս ասաց մօտ կանգնած հարեւրապետին, Թէ Արժա՞ն է որ դուք Հռովմեցի և չդատապարտուած մարդուն
26 ծեծէք։ Եւ երբոր լսեց հարեւրապետը, մօտեցաւ հազարապետին պատմեց և ասաց. Զգուշացիր թէ ինչ ես կամենում անել, քանի որ այս մարդը Հռովմեցի է։ Եւ
27 հազարապետը մօտ եկաւ և նորան ասաց. Ասա ինձ թէ դուք Հռովմեցի՞ ես. և նա ասաց.
28 Այո. Եւ հազարապետը պատասխանեց. Ես շատ փողով ազատեցայ այս պինդութիւնը, և Պօղոս ասաց. Ես հէնց ծնուած
29 եմ։ Եւ նորանք՝ որ նորան հետազօտելու էին, շուտով հեռացան նորանից. և հազարապետն էլ վախեցաւ երբոր իմացաւ թէ Հռովմեցի է. վասնզի կապել էր նորան։
30 Եւ հետևեալ օրը կամենալով ճշմարիտն իմանալ, թէ ինչ է Հրեաների չարախօսութիւնը, նորան արձակեց կապերից և հրամայեց որ քահանայապետները և բոլոր ատեանը կանչեն. և Պօղոսին էլ բերաւ նորանց մէջ կանգնեցրեց։

ԳԼ. ԻԳ.

1 Եւ Պօղոս ատենին մտիկ տուաւ և ասաց. Մարդիկ եղբարք, ես բոլորովին բարի խղճմտանքով վարուել եմ Աստուծոյ առջև մինչև այսօր։ 2 Եւ Անանիա քահանայապետը պատուիրեց ծառաներին հրամայից, որ նորա բերանին զարկեն։ 3 Այնժամանակ Պօղոս ասաց նորան. Աստուած պիտի քեզ զարկէ դրուած ծեփած պատ. և դու նըստե՞լես ես ինձ օրէնքի պէս դատելու, և օրէնքի հակառակ հրամայում ես՝ որ ես զարկուեմ։ 4 Եւ նորա մօտ կանգնածներն ասացին. Աստուծոյ քահանայապե՞տին ես հայհոյանք տալիս։ 5 Եւ Պօղոս ասաց. Եղբարք, ես չէի գիտեամ՝ որ քահանայապետ է. քանզի գրուած է՝ Ըե՛ւ քո ժողովրդի իշխանին չհայհոյես։ 6 Երբոր Պօղոս իմանալով թէ մէկ մասը Սադուկեցիներից է՝ և մեւս մասը Փարիսեցիներից, ատեանի մէջ աղաղակում էր. Մարդիկ եղբարք, ես Փարիսեցի եմ՝ և Փարիսեցու որդի. յուսոյն և մեռելների յարութեան համար եմ դատուում։ 7 Եւ երբոր նա այս ասաց, Փարիսեցոց և Սադուկեցոց մէջ երկպառակութիւն ընկաւ. և բազմութիւնը բաժանուեցաւ։ 8 Որովհետև Սադուկեցիք ասում են, թէ ոչ յարութիւն կայ, ոչ հրեշտակ, և ոչ հոգի. բայց Փարիսեցիք երկուսն էլ դաւանում են։ 9 Եւ մեծ աղաղակ եղաւ. և Փարիսեցոց կողմից դպիրները վերկացան, հակառակում էին և ասում. Ոչինչ չարութիւն չենք գտնում այս մարդուումը. բայց եթէ հոգի խօսեց դրանում կամ հրեշտակ. մենք Աստուծոյ հետ չմարտնչենք։ 10 Եւ երբոր խռովութիւնը շատացաւ, հազարապետը վախեցաւ՝ մի գուցէ Պօղոս նորանցից պատառուէ. պինդութիւն հրամայից, որ իջնեն նորանց մէջիցը յափշտակեն, և բերեն բանակը։ 11 Եւ հետևեալ գիշերը Տէրը կանգնեց նորա մօտ և ասաց. Քաջացիր, Պօղոս, վասն

զի ինչպես ինձ համար երեսաղեժումը վկայեցիր, այնպես էլ պետք է Հռոմում վկայես։
12 Եւ երբոր տեսա օր եղաւ Դրեսանեցիներից ոմանք միտրանեցոն և իրանց անձերը նզովեցին ասելով, որ չուտեն և չխմեն, մինչև որ Պօղոսին սպանեն։ 13 Եւ քառասունից աւելի էին այս երդումն իրար 14 հետ անողները։ Նորանք քահանայապետների և երէցների մօտ եկան և ասացին. Նզովքով նզովեցինք մեր անձերը՝ որ ոչինչ չճաշակենք մինչև որ Պօղոսին սպանենք։ 15 Բայց դուք հիմա տեսանի հետ իմաց արէք հազարապետին, որ էգուց նորան վայր բերէ ձեզ մօտ, իբր թէ կամենում էիք աւելի ևս ճշմարտութեամբ բան իմանալ նորա համար. մենք էլ նորա մօտ գալուց առաջ պատրաստ ենք սպանելու նորան։ 16 Եւ Պօղոսի քրոջ որդին երբոր նորանց այս դաւաճանութիւնը լսեց, եկաւ մտաւ բանակը և Պօղոսին պատմեց։ 17 Եւ Պօղոս հարիւրապետներից մէկին կանչեց իրան մօտ և ասաց. Այս պատանին տար հազարապետի մօտ. վասնզի բան ունի նորան պատմելու։ 18 Եւ նա առաւ նորան հազարապետի մօտ տարաւ և ասաց. Կապուած Պօղոսն ինձ կանչեց և աղաչեց, այս պատանին քեզ մօտ բերել, որ բան ունի քեզ խօսելու։ 19 Հազարապետը նորա ձեռքից բռնեց, դնաց առանձին տեղ, հարցնում էր, թէ ինչ բան ունես ինձ ասելու։ 20 Եւ նա ասաց. Թէ Հրեաները միտրանեցոն քեզ աղաչելու, որ էգուց Պօղոսին վայր բերես առաքելը, իբր թէ կամենում էին աւելի ճշմարիտ քննութիւն անել նորա համար։ 21 Բայց դու մի հաւատար նորանց. որովհետև նորանցից քառասունից էլ աւելի մարդիկ դարան են մտել նորա համար, որ իրանց անձերն էլ նզովեցին, որ չուտեն և չխմեն մինչև որ նորան սպանեն. և հիմա պատրաստ են և քո հրամանին են սպասում։ 22 Այսպես հազարապետն այն պատանուն արձակեց և պատուէր տուաւ, թէ ոչ ոքի չասես, որ այս բանն իմաց արիր ինձ։

23 Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց և ասաց. Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, որ գնան մինչև Կեսարիա. և եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր էլ մուգաւոր՝ գիշերուայ ժամը եօթից։ 24 Եւ գրաստներ էլ պատրաստեն, որ Պօղոսին հեծցնեն և ապահով հասցնեն փելիքս կուսակալի մօտ։ 25 Եւ ղ նամակ գրեց, որի օրինակն այս էր։ 26 Կղօդիս Լիւսիաս. պատուական կուսակալ Փիլիքսին ողջոյն. 27 Այս մարդուն որ Հրեաներից բռնուած էր և նորանցից սպանուելու մօտ էր, զինուորներով վերայ հասայ պրծացրի, իմանալով որ Հռոմայեցի է։ Եւ ուզելով որ նորա յանցանքն իմանամ՝ որի համար գանգատ էին անում դորանից. 28 վայր բերի դորան նորանց առաջը։ Եւ 29 գտայ նորան իրանց օրէնքի մի խնդիրների համար մեղադրուած, և մեռնելու կամ կապուելու արժանի ոչինչ յանցանք չունէր։ Եւ 30 երբոր ականջս հասաւ, որ Հրեաների կողմից այն մարդու համար նենգութիւն կայ, նորան իսկոյն քեզ մօտ ուղարկեցի. և չարախօսներին էլ հրամայեցի, որ դորանից քո առջև խօսեն. Ողջ կաց։

31 Եւ զինուորները իրանց հրամայուածի պէս՝ Պօղոսին առին և գիշերով տարան Անտիպատրիս։ 32 Եւ հետեւեալ օրն ձիաւորներին թողին, որ նորա հետ գնան, և իրանք մնան դարձան բանակը։ 33 Եւ նորանք մտան Կեսարիա. և թուղթը կուսակալին տուին, և Պօղոսին էլ նորա առջև ներկայացրին։ 34 Եւ երբոր կարդաց՝ կուսակալը հարցրեց թէ ո՞ր գաւառից է. և երբոր տեղեկացաւ թէ Կիլիկիայից է, 35 Ասաց. Կ'լսեմ քեզ՝ երբոր քո չարախօսներն էլ կ'գան. և հրամայեց՝ որ Հերովդէսի պալատումը պահեն նորան։

ԳԼ. ԻԴ

1 Եւ հինգ օրից յետոյ Անանիա քահանայապետը ծերերի և մի ճարտարախօս Տերտիւղոս անուն մարդու հետ իջաւ, և իմաց արին կուսակալին Պօղոսի համար։
2 Եւ երբոր նորան կոչեց, Տերտիւղոսը սկսեց ամբաստանել և
3 ասել. Որովհետև քեզանով շատ խաղաղութիւն ենք գտել՝ և այս ազգի համար շատ բաների կարգադրութիւն է եղել քո խնամքով տանելովը, ամեն կերպով և ամեն տեղ շատ գոհութեամբ ընդունակ ենք քեզանից, ով
4 պատուական Փելիքս, բայց որպէսզի աւելի ներողութիւն չտամ քեզ, աղաչում եմ՝ որ համառօտապար լսես մեզ քո հեզութեամբ
5 դը։ Քանզի մենք գտանք այս մարդուն որ ապականիչ և խռովարար է այն ամեն Հրէաներին, որ բոլոր աշխարհքումն կան. և Նազովրեցոց հերձուածի առաջնորդ
6 է. Որ տաճարն էլ ուզեց պղծել. որին բռնեցինք էլ. և մեր օրէնքի պէս ուզեցինք դատաստան էլ ա-
7 նել։ Բայց Լիւսիաս հազարապետն եկաւ՝ և մեծ բռնութեամբ
8 մեր ձեռներիցը հանեց, Հրամայելով որ նորա դատախազներն էլ գան քեզ մօտ. որ դու վերաքննելով կարող ես տեղեկանալ այն ամեն բանի համար, որ մենք դատ-
9 դատում ենք դորանից։ Հրէաներն էլ միարան եղած ասացին. Թէ Այսպէս է։
10 Պօղոս էլ պատասխանեց՝ երբոր կուսակալը նորան ակնարկեց որ խօսէ. Գիտենալով որ դու շատ տարուց հետէ այս ազգի դատաւոր ես, աւելի յօժարութեամբ իմ մասին պատասխան եմ ա-
11 ռնում։ Վասնզի դու կարող ես գիտենալ, որ տասներկու օրից աւելի չէ՝ որ ես եկայ երկրպագութիւն անել Երուսաղէմումը։
12 Եւ ոչ տաճարումն են գտել ինձ մի մարդու հետ խօսելիս, կամ շատ մարդ ժէկ տեղ հաւաքելիս, և
13 ոչ ժողովարանումը, Եւ ոչ էլ քաղաքումը. և ոչ էլ կարող են

քո առջև ցոյց տալ այն, որոնց համար հիմա չարութեամբ են
14 ինձանից։ Բայց սա եմ խոստովանում քեզ, թէ այն ճանապարհովն՝ որ տանում են հերձուած,
15 այնպէս պաշտում եմ հայրենական Աստուծոյն, ամեն բաների հաւատալով՝ որ օրէնքումն և մարգարէներումն գրուած է. Յուսալով այն Աստուածոյն որին դորանք էլ ապասում են, թէ արդարների և մեղաւորների յարութիւն պիտի լինի։
16 Որ հէնց սորա համար ջանք եմ անում, որ ամեն ժամ մաքուր խղճմտանք ունենամ Աստուծոյ առջև և մարդկանց առջև։
17 Արդ շատ տարիներից յետոյ եկայ որ իմ ազգին ողորմութիւն անեմ և ընծաներ
18 բերեմ. Որ այդ բանի մէջ մի քանի Գալիլացի Հրէաներ ինձ գտան սրճարումը արդուած, ոչ շաւաղի և ոչ էլ ամբոխի հետ։
19 Որ նորանց պէտք էր գալ քո առջև և դանգատ անել, եթէ մի բան ունենային ինձանից։
20 Կամ հէնց սորանք իրանք թող ասեն, Թէ ինձանում ինչ անիրաւութիւն գտան՝ դեռ քանի որ առաջնումը կանգնած էի։
21 Բայց այս մէկ խօսքի համար, որ նորանց միջումն կանգնած ազաղակեցի, Թէ Մեռելների յարութիւն առնելոյն համար եմ ես այսօր դատուում ձեզանից։
22 Փելիքսն էլ երբոր լսեց այս բաները, նորանց ուշացրեց, վասնզի շատ լաւ տեղեկացած էր այն ճանապարհի համար, և ասաց. Երբ որ Լիւսիաս հազարապետը կ'իջնէ, կ'տեղեկանամ ձեր գործին։
23 Եւ հարիւրապետին հրամայեց՝ որ Պօղոսին պահէ՝ բայց ընդարձակութիւն տայ, և նորա մարդկանցից ոչ մէկին չարգիլէ՝ նորան ծառայութիւն անելու կամ նորա մօտ գնալու։
24 Եւ մի քանի օրից յետոյ Փելիքս եկաւ իր Դրուսիլա կնկան հետ, որ Հրէայ էր, Պօղոսին կանչեց՝ և նորանից Քրիստոսի հաւատքի
25 համար բան լսեց։ Եւ երբոր նա խօսում էր արդարութեան և ժու-

կալուածեան և գալու դատաստանի համար, փիլիքս շատ ոհով բռնութեամբ, և պատուախանեց. Գնա հիմա գնա. երբոր ժամանակ կ'ունենամ, կ'կանչեմ քեզ։ 26 Բայց նա յոյս էլ ունէր, որ Պօղոսից մի բան կ'տրուի իրան. որ նորան սրձակէ և նորա համար շատ անգամ կանչում էր նորան և նորա հետ խօսում։ 27 Եւ երբոր երկու տարին լրացաւ, փիլիքսի տեղ եկաւ փեստոս Պորկիոս. և որովհետև փիլիքսը կամեցաւ Հրէաներին մի շնորհք անել, Պօղոսին կապած թողեց։

ԳԼ. ԻԵ

1 Եւ փեստոսը երբոր իշխանութեան հասաւ, երեք օրից յետոյ Կեսարիայից վեր ելաւ Երուսաղէմ։ 2 Եւ քահանայապետն և Հրէից գլխաւորները Պօղոսի համար խնդրեցին նորանից, 3 և աղաչում էին նորան, Եւ ազաչում էին՝ այս շնորհքը խնդրելով նորանից, որ Երուսաղէմ կանչէ նորան, քանզի դարան էին գործել՝ որ ճանապարհին սպանեն նորան։ 4 Բայց փեստոսը պատասխանեց, թէ Պօղոս Կեսարիայում կ'պահուի. և ինքն էլ շուտով այնտեղ է գնալու։ 5 Եւ ձեզանից որոնք որ կարող են, ասաց, թող էդ հետ գան. և եթէ այն մարդումը մի յանցանք կայ՝ թող նորանից գանգատ անեն։ 6 Եւ այն տեղ աստն օրից աւելի մնալով իջաւ Կեսարիա. և հետևեալ օրը առեան նստեց, և հրամայեց Պօղոսին բերել։ 7 Եւ նա երբոր եկաւ՝ նորա չորս կողմից կանգնեցան Երուսաղէմից եկած Հրէայքը. շատ և ծանր յանցանք բերելով Պօղոսի դէմ որ չէին կարողանում 8 ապացուցանել։ Քանզի նա պատասխան էր տալիս, թէ՝ Ոչ Հրէից օրէնքի, և ոչ տաճարի, և ոչ կայսեր դէմ մի մեղք եմ գործել։ 9 Բայց փեստոսը՝ կամենալով Հրէաներին շնորհք անել, պատասխանեց Պօղոսին և ասաց. Կամենո՞ւմ ես Երուսաղէմ գնալ՝ և այնտեղ այդ բաների համար

դատուիլ իմ առջև։ Պօղոսն էլ 10
ասաց. Կայսեր առեանումն եմ կանգնած, որ այնտեղ պէտք է ես դատուիմ. Հրէաներին ոչինչ չեմ տուել, ինչպէս դու էլ լաւ գիտում ես։ Բայց թէ որ ա- 11
նիրաւութիւն անիմ և մեռնելու արժանի բան եմ գործել՝ մեռնելուց չեմ քաշվում. բայց եթէ այնպիսի մի բան չկայ, որ առանք ինձանից գանգատում են, ոչ ոք ինձ կարող չէ դորանց շնորհել. ես դէպի կայսրն եմ բողոքում։ Ա.յն ժամանակ փեստոս 12
ը խորհրդակցաց հետ խօսեց՝ և պատասխանեց, Դէպի կայսրը բողոքեցիր, կայսեր մօտ գնա։

Երբոր մի քանի օր անցաւ, Ա.գ- 13
րիպպաս թագաւորը և Բերենիկէն եկան Կեսարիա՝ փեստոսին շնորհաւորելու։ Եւ երբոր այնտեղ 14
շատ օրեր անցկացրին, փեստոսը Պօղոսի համար խօսեցրեց թագաւորին՝ և ասաց Ա.յստեղ մի մարդ է մնացել փիլիքսից կապուած. Որի համար՝ երբոր Երուսաղէմ 15
էի, քահանայապետներն ու Հրէից գլխաւորներն խնդրին ինձ, խնդրելով նորա դատապարտութիւնը։ Որոնց պատասխանեցի թէ 16
Հռոմայեցիներին օրէնք չէ՝ որ մի մարդ կորսուեան շնորհուի մինչև որ ամբաստանեալն իր ամբաստանողներին իր դիմացը չունենայ՝ և այն չարախօսութեան համար պատասխան տալու պատեհութիւն չառնէ։ Եւ երբոր նորանք այս- 17
տեղ եկան՝ բնաւ չուշացրի, այլ հետևեալ օրը առեան նստած՝ հրամայեցի այն մարդուն բերել։ Եւ երբոր ամբաստանողներն ա- 18
ռաջ եկան, ոչ մի յանցանք յառաջ չէին բերում իմ կասկածածներից։ Այլ թէ իրանց կրո- 19
քի համար մի քանի վէճեր ունէին նորա հետ, և մի մեռած Յիսուսի համար՝ որ նորա համար Պօղոս ասում էր՝ թէ կենդանի է։ Բայց երբոր ես դժուարացայ 20
այսպիսի բաները քննելու՝ ասացի. Արդեօք կամենո՞ւմ է Երուսաղէմ գնալ՝ և այնտեղ դատուիլ այդ բաների համար։ Բայց 21

երբոր Պօղոսը բաղդիկց, որ վէ-
հափառ կայսեր քննութեան հա-
մար պահուի, հրաման տուի նո-
րան պահել, մինչև որ ուղարկեմ
22 կայսեր մօտ։ Ագրիպպաս էլ փեա-
ստոսին ասաց. Ես էլ կ'կամենայի
լսել այդ մարդուն. և նա ասաց.
Էգուց կ'լսես։
23 Եւ հետևեալ օրն երբոր Ագ-
րիպպան և Բերինիկէ՝ մեծ հան-
դէսով եկան, և հազարապետ-
ներն և քաղաքի պատուաւոր
մարդկանց հետ տեղը մտան,
փեաստոսը հրամայեց՝ և Պօղոսին
24 բերին։ Եւ փեաստոս ասաց. Ով
Ագրիպպաս թագաւոր, և բոլոր
մարդիկ որ մեզ հետ էք, տես-
նում էք սրան, որի համար Հը-
բէից բոլոր ժողովուրդն իմ ա-
ջև եկան երուսաղէմումն և այս
տեղ՝ աղաղակելով թէ նա այլ
25 ևս պիտի չապրի։ Բայց ես տեղ-
կացայ, որ դա ոչինչ մեռնելու
արժանի բան չէ գործել. և երբոր
դա ինքն դէպի Վեհափառը բա-
ղձաց, խարհուրդ արի որ ուղար-
26 կեմ։ Որի համար մի հաստատ
բան չունիմ՝ որ գրեմ իմ Տիրո-
ջը. նորա համար դրան բերի
ձեր առջևը, և մանաւանդ քո
առջևը, ով Ագրիպպաս թագա-
ւոր, որ վերաքննելով մի բան ու-
27 նենամ գրելու։ Քանզի ինձ ան-
պատշաճ է երևում, որ մի կա-
պած մարդ ուղարկեմ, և նորա
դէմ ասած յանցանքները չհա-
մցնեմ։

ԳԼ· ԻԶ

1 Եւ Ագրիպպաս Պօղոսին ասաց
Քեզ հրաման է որ քո մասին խօ-
սես. այն ժամանակ Պօղոս ձե-
ռը մեկնեց՝ և պատասխան էր տա-
2 լիս. Ամէն ամենի համար՝ որի մա-
սին Հրեաները դանգատում են ին-
ձանից, ով Ագրիպպաս թագա-
ւոր, իմ անձը երանելի եմ հա-
մարում, որ այսօր քո առջև պա-
3 տասխան պիտի տամ. Մանա-
ւանդ որ դու սովորած ես Հրէից
բոլոր սովորութիւններին և վէճե-
րին. նորա համար աղաչում եմ,
որ համբերութեամբ լսես ինձ։
Արդ իմ կեանքին, որ ազգու- 4
թիւնից հետէ՝ ի սկզբանէ իմ
ազգի մէջ երուսաղէմումն եմ ե-
զել, բոլոր Հրեայքը տեղեակ են.
Քանզի վաղուց դիտեն, (եթէ կա- 5
մենան վկայութիւն տալ,) որ ես
ևս կրօնքի ճշմարտագոյն կու-
սակցութեան համեմատ փարիսե-
ցի եմ ապրել։ Եւ հիմա Աստ- 6
ուածմունից մեր հարցանդեմ ե-
մ եղել յուսոյ համար՝ որին
կանդնած դատվում եմ. Որին մեր 7
տասներկու ցեղը գիշեր և ցերեկ
անդադար պաշտելով ապառում
են հասնել. և այդ յուսոյն հա-
մար ամբաստանվում եմ Հրեայ-
ից, ով Ագրիպպաս թագաւոր։
Ինչո՞ւ, անհաւատալի բան է երև- 8
ո՞ւմ ձեզ, որ Աստուած մեռել-
ներին յարուցանում է։ Եւ ես 9
ևս ինքս հարկաւոր էի համարում,
որ Յիսուս Նազովրեցոյ անունի
հակառակ շատ բաներ գործեմ.
Որ երուսաղէմումն արի էլ. և 10
սրբերից շատերին ես բանտարկե-
ցի քահանայապետներից իշխա-
նութիւնառած, և նորանք սպան-
ուելիս հաւանութիւն էի տալիս։
Եւ բոլոր ժողովարաններում շատ 11
անգամ պատիժ տալով նորանց
բանսարկում էի որ հայհոյեն. և
էլ աւելի նորանց վերայ կատա-
ղած՝ հալածում էի մինչև դրսի
քաղաքները։ Որով և երբոր քա- 12
հանայապետների իշխանութիւնն
ևս և հրամանն ինձ դնում էի Դա-
մասկոս, կէս օրում ժամանա- 13
կին ճանապարհի վերայ տեսայ,
ով արքայ, որ երկնքից արեգա-
կան լուսից աւելի մի լոյս ծա-
գեց իմ շուրս կողմանս՝ և նորան-
ցով էլ՝ որ ինձ հետ գնում էին։
Եւ երբոր մենք ամենքս գետնի վե- 14
րայ ընկանք՝ ես ձայն լսեցի, որ
եբրայեցոց բարբառով ինձ ասում
էր. Սաւուղ Սաւուղ, ինչո՞ւ ես
ինձ հալածում. դժուար է քեզ՝
խթանին դէմ քացի տալ։ Եւ ես 15
ասացի. Դու ո՞վ ես, Տէր. և
նա ասաց. Ես Յիսուսն եմ, որին
դու հալածում ես։ Բայց վեր կաց՝ 16
և առնելիդ վերայ կանգնիր, վա-

արդեն նորա համար երևեցայ քեզ, որ քեզ ձեռքս առնեմ պաշտօնեայ և վկայ լինելու այն բաներին որ դու տեսար, և այն բաներին 17 որոնցով պիտի երևամ քեզ. Որ ազատեմ քեզ այդ ժողովրդից և հեթանոսներից, որոնց մէջ ես հիմա քեզ ուղարկում եմ. 18 Որպէս աչքերը բանալու, և խաւարից դէպի լոյսը դարձնելու, և սատանայի իշխանութիւնից դէպի Աստուած. որ նորանք ստացց թողութիւն և արքերի հետ ժառանգութիւն առնեն՝ ինձ հաւատալով։ 19 Ուստի, ով Ագրիպպա արքայ, անհնազանդ չեղայ այն երկնային տեսիլքին։ 20 Այլ առաջ նորանց՝ որ Դամասկոսումն և Երուսաղէմումն էին և բոլոր Հրէաստանի երկրումը և հեթանոսներին պատմեցի, ապաշխարել և դառնալ դէպի Աստուծոյն, ապաշխարութեան արժանի գործքեր գործելով։ 21 Սորա համար Հրէաները ինձ տաճարումը բռնելով ուզում էին սպանել։ 22 Իսկ որովհետև Աստուածանից ինձ օգնութիւն հասաւ՝ մինչև այսօր կանգնած վկայում եմ փոքրին և մեծին. նորանից դուրս ոչինչ չասելով՝ որ մարգարէներն, և Մովսէսը խօսեցին այն լինելու բաներին 23 Թէ Քրիստոսը պիտի չարչարուի, և նա առաջինը մեռելներից յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէ ժողովրդին և հեթանոսներին։

24 Եւ նա այս պատասխանը տալիս, Փեստոսը մեծ ձայնով ասաց. Գժվում ես, Պօղոս, շատ կարդացողութիւններդ մոլորեցնում 25 են քեզ։ Նա էլ ասաց. Չեմ գժվում, ով պանծալի Փեստոս, այլ ճշմարտութեան և խոհութեան 26 խօսքեր եմ խօսում։ Վասնզի թագաւորն էլ այս բաները գիտէ, որի հետ էլ համարձակ խօսում եմ. քանզի չեմ կարծում որ սրանցից մէկին էլ նորանից ծածկուած լինի. վասնզի այս բանը 27 անկիւնի մէջ եղած չէ։ Հաւատո՞ւմ ես մարգարէներին, ով Ագրիպպա արքայ. գիտեմ որ հաւատում ես։ Ագրիպպան էլ Պօղոսին ասաց. Քիչ է մնում որ ինձ համոզես քրիստոնեայ լինել։ 28 Եւ Պօղոսը ասաց. Աստուծոնից կ'ինդրէի՝ թէ քիչ թէ շատ ոչ միայն դու, այլ այն ամենքն էլ որ այսօր լսում են ինձ, այնպէս լինէին ինչպէս ես եմ, այս կապանքներիցը զատ։ 29

Եւ երբոր նա այսպէս էր, վերկացաւ թագաւորը և կուսակալը և Բերենիկէն, և նորանց հետ նստողները. 30 Եւ գնալիս, իրար հետ խօսում էին և ասում. Թէ Ադրիմարդը մեռնելու կամ կապանքի արժանի բան չէ գործել։ 31 Բայց Ագրիպպաը Փեստոսին ասաց. Կարելի էր այս մարդուն արձակել՝ եթէ դէպի կայսրն չէր բողոքել։ 32

ԳԼ. ԻԷ

Երբոր հրաման եղաւ մեզ, որ նաւով գնանք Իտալիա, Պօղոսին և ուրիշ մի քանի կապուածներ էլ տուին մի Յուլիոս անուն հարիւրապետի, Աւգոստոսի գնդից։ 2 Եւ մտնելով մի Ադրամիտացի նաւ՝ որ գնալու էր Ասիացոց կողմերը, ճանապարհ բռնեցինք. Արիստարքոս Մակեդոնացի Թեսաղոնիկեցին էլ մեզ հետ էր։ 3 Եւ մեր օրը իջանք Սիդոն. և Յուլիոս մարդասիրութիւն ցոյց տալով Պօղոսին՝ հրամայեց որ բարեկամներն մօտ գնայ՝ և խնամք դառնէ։ 4 Եւ այնտեղից ճանապարհ ելնելով նաւով գնացինք Կիպրոսի ցած կողմովը՝ քանզի հակառակ լինելու պատճառով։ 5 Այն ժամանակ Կիլիկիոյ և Պամփիլիոյ ծովի միջով գնալով իջանք Լիկիացոց Միւռան։ 6 Եւ հարիւրապետն այնտեղ մի Աղեքսանդրացի նաւ գտաւ՝ որ Իտալիա էր գնում, և մեզ նորա մէջ մտցրեց։ 7 Եւ շատ օրեր ծանր նաւելով հազիւ հասանք Կնիդի կողմերը. և երբոր քամին չթողեց մեզ, նաւով գնացինք Կրետէի ցած կողմն Սողմոնեայի մօտ։ 8 Եւ երբոր նորանով դժուարութեամբ եկանք մի տեղ

որ կոչվում էր դեղեցիկ նաւահանգիստ. որին մօտ էր քաղաքը Ղասեայ։

9 Եւ որովհետև շատ ժամանակ էր անցել և նաւով գնալու հարմար վտանգաւոր էր, ծոմի ժամանակն էլ արդէն անցած լինելով, Պօղոսը խրատ էր տալիս, ն-
10 րանց ասելով. Ով մարդիկ, տեսնում եմ որ այս նաւարկութիւնը նեղութիւնով և շատ վնասով է լինելու, ոչ թէ միայն բեռներին և նաւին, այլ մեր անձերին էլ։
11 Բայց հարիւրապետը նաւապետին և նաւավարին աւելի էր ակնջ դնում քան թէ Պօղոսի խօսքե-
12 րին։ Որովհետև այն նաւահանգիստը անյարմար էր ձմեռն անցկացնելու համար, շատերը խորհեցին որ այնտեղից գնան, որ ձմեռն մնալու համար գուցէ կարողանան Փիւնիկէն հասնել Կրէտացոց այն նաւահանգիստը որ դէպի արևմտեան հարաւի կողմը և դէպի արևմտեան
13 հիւսիսն էր նայում։ Եւ երբոր հարաւի քամին փչեց, կարծում էին թէ էրանց նպատակին կ'հասնեն. և ճանապարհ ընկած անց-
14 նում էին Կրետէի մօտովը։ Եւ շատ ժամանակ չէր անցել որ նրա վերայ մի մրրկալից հողմ ընկաւ, որ Եւրակիկլոն էր կոչվում,
15 Եւ երբոր նաւը բռնուեցաւ և հողմի դէմ չկարողացաւ դիմանալ, բաց ընկած գնում և գա-
16 լիս էինք։ Եւ դիմելով մի կղզու՝ որ Կլօդա էր կոչվում, հազիւ
17 կարողացանք մակոյկը բռնել։ Որն առնելով օգնութեան գործածեցին և նաւը տակիցը կապեցին, և վախենալով որ յորձանուտն չընկնեն, առագաստը իջեցրին, և այն-
18 պէս գնում և գալիս էին։ Եւ երբ որ մենք շատ նեղութիւն էինք քաշում, հետևեալ օրը կոտաքն ծո-
19 վի մէջ էին գցում։ Եւ երրորդ օրը մեր ձեռով նաւի գործիքը
20 դուրս թափեցինք։ Եւ երբոր շատ օրեր՝ ոչ արև և ոչ աստղեր էին երևում, և փոթորիկն էլ քիչ չէր որ մեզ վերայ կար, ապա մեր ազատուելու բոլոր յոյսը կտրուե-

21 ցաւ։ Եւ որովհետև շատ օր ա-
վաճ էին, այն ժամանակ Պօղոսը նրանց մէջ կանգնած ասաց. Ով մարդիկ, պէտք էր ձեզ՝ ինձ լսելիք, և Կրետէիցը դուրս չգայիք՝
22 և այս նեղութիւնիցը և վնասիցը պրծնէիք։ Եւ հիմա էլ խրատում եմ ձեզ՝ որ սրտապինդ կենաք. վասնզի ձեզանից ոչ մէկի անձին
23 էլ վնաս չի լինիլ, բացի այդ նաւիցը։ Վասնզի այս գիշերում երևեցաւ ինձ այն Աստուծոյ հրեշտակն՝ որին ես եմ, և որին էլ
24 պաշտում եմ. Եւ ասաց. Մի վախենար, Պօղոս. պէտք է քեզ Կայսեր առջև կանգնիս. և ահա Աստուած շնորհել է քեզ այդ
25 բոլոր քեզ հետ նաւողները։ Սրա համար սրտապինդ կացէք, ով մարդիկ. վասնզի հաւատում եմ Աստուծոյն, որ այսպէս կ'լինի ինչպէս ինձ հետ խօսեց։ Բայց պէտք
26 է մի կղզի ընկնինք։

27 Երբոր տասնուչորսերորդ գիշերն եղաւ՝ քանի որ դեռ Ադրիանայի անդունդներումն տարուբերում էին, կէս գիշերում նաւավարները կարծում էին՝ թէ մի
28 ցամաքի հասած լինին։ Եւ գնդերը գցելով քսան գիրկ խոր գտան. և մի քիչ էլ առաջ գնալով էլի գցեցին՝ և տասնուհինգ
29 գիրկ գտան։ Եւ որովհետև վախեցան որ մի գուցէ քարոտ տեղերի վերջ ընկնին, յետև կողմիցը չորս խարիսխ գցեցին և ապասում
30 էին լուսանալուն։ Բայց երբոր նաւավարներն ուզում էին՝ որ նաւից փախչեն և մակոյկը իջեցրին ծովը. այն պատճառանքով՝ իբր թէ առջևի կողմիցն էլ պիտի խարիսխ գցեն. Պօղոսը հարիւրա-
31 պետին և զինուորներին ասաց. Եթէ դորանք նաւում չմնան, դուք չէք կարող ապրիլ։ Այն
32 ժամանակ զինուորները մակոյկի չուանները կտրեցին՝ և նորան դէն գցեցին։ Եւ երբոր ուզում էր ա-
33 ռաւօտ լինիլ, Պօղոսը ամենին աղաչում էր՝ որ կերակուր առնեն, ասելով. Այսօր տասնուչորսերորդ օրն է՝ որ դուք ապասելով անօթի էք մնացել, և մի բան չէք կե-

34 բել՝ Ընթա՛ր համար ազատեա՛մ եմ
ձեզ որ կերակուր ուտէք, քանզի սա ձեր ապրուստեան հա-
մար է. վասնզի ձեզանից մէկի
35 գլխիցը մի մազ չի ընկնիլ։ Եւ սա
ասելով, հաց առաւ ամենքի առա-
ջև Աստուածանից գոհացաւ, կըտ-
36 րեց և սկսեց ուտել։ Եւ ամենքը
քաջալերուեցան, և իրանք էլ կե-
37 րակուր առին։ Եւ նաւի մէջ ա-
մենքս երկու հարիւր եօթանասուն
38 և վեց հոգի էինք։ Երբոր այն կերակ-
րովը կշտացան, նաւը թեթևաց-
րին՝ և ցորենը ծովը թափեցին։
39 Եւ երբոր առաւօտ եղաւ՝ երկիրը
չէին ճանաչում, բայց մի ղոդ էին
տեսնում՝ որ ծովեզը էր. և մտա-
ծում էին որ եթէ հնար լինի, նաւն
40 այնտեղ պրծացնեն։ Եւ խարիսխ-
ները վեր առնելով ծովը ձգեցին.
ղեկերի կապերը թուլացրին. և
առագաստը վեր առին՝ քամուն
տուին դէպի ծովի եզրի կողմը։
41 Եւ մի տեղ ընկան՝ որ երկու կող-
մից ծով ունէր. և նաւը նստեց-
րին. և նաւի առջևի կողմը խըր-
ուած անշարժ մնաց, և յետի
կողմն ալիքների աստակութիւնի-
42 ց քանդվում էր։ Եւ զինուորնե-
րը խորհուրդ էին արել՝ որ կապ-
ականներին սպանեն, մի գուցէ մէ-
43 կը լողալ փախչի։ Բայց հարիւ-
րապետը կամենալով Պօղոսին ապ-
րեցնել, նորանց այն խորհրդիցը
արգիլեց. և հրամայեց որ՝ լող
տալ կարողացողներն առաջ ընկ-
44 նին և գուրս գնան ցամաքը։ Եւ
մնացեալներն էլ որը տախտակ-
ներով և որը նաւի ուրիշ բաներ-
ով. և այնպէս եղաւ որ ամենքը
պրծան գուրս եկան ցամաքը։

ԳԼ. ԻԸ

1 Եւ երբոր ազատուեցանք, այն
ժամանակ գիտացինք՝ որ այն կըղ-
զու անունը Մելիտէ էր. բայց
բարբարոսները ոչ սակաւ մար-
դասիրութիւն ցոյց տուին մեզ։
2 Վասնզի կրակ վառեցին և մեզ
ամենքիս ընդունեցին մեր վերայ
եկած անձրևի և սաստիկ ցրտի
3 համար։ Եւ Պօղոսը՝ երբոր շատ
խռիւ էր հաւաքել և կրակի վե-
րայ էր դնում, տաքութիւնից
մի իժ գուրս եկաւ և նորա ձե-
ռիցը բռնեց։ Եւ երբոր բարբա- 4
րոսները տեսան գազանը նորա ձե-
ռիցը կախուած, իրար ասում
էին. այս մարդն անպատճառ մար-
դասպան է, որ ծովիցը ազատ-
ուելուց յետոյ արդար իրաւունք
չի ողեց որ ապրի։ Եւ նա այն 5
գազանը կրակին մէջ թափառաւ.
և նորան ոչինչ վնաս չեղաւ։ Իսկ 6
նորանք սպասում էին, թէ կամ
կ'ուռենայ կամ յանկարծակի մե-
ռած վայր կընկնի. և երբոր շատ
սպասեցին, և տեսան որ վնաս
չեղաւ նորան, իրանց խօսքը դարձ-
րին, և ասում էին, թէ Սա մի
աստուած է։ Եւ այնտեղի չորս 7
կողմովը կային այն կղզու գլխա-
ւորի գիւղերը, որի անունը Պօպ-
լիոս էր. որ մեզ երեք օր իրան
մօտ առաւ և սիրով ընդունեց։
Եւ եղաւ որ Պօպլիոսի Հայրը ջեր- 8
մով և թանչքով հիւանդացած
պառկած էր. Պօղոսը նորա մօտ
մտաւ՝ և աղօթք արաւ, և ձե-
ռը նորա վերայ դրաւ, և նորան
բժշկեց։ Եւ երբոր այս եղաւ, 9
ուրիշ հիւանդներն էլ որ այն կըղ-
զումը կային, գալիս էին և բժըշկ-
ւում։ Որոնք շատ պատուով էլ 10
պատուեցին մեզ. և երբոր գնա-
ցինք. ինչ որ պէտք էր տուին։
Եւ երեք ամսից յետոյ վեր ելանք 11
մի Աղէքսանդրացի նաւ, որ ձը-
մեռը այն կղզումն էր անցկացրել
և Պիոսկուրացոց նշանն ուներ։
Եւ իջանք Սիրակուսա, և երեք 12
օր այնտեղ մնացինք։ Այնտեղից 13
գնացինք հասանք Հռեգիոն. և
մէկ օրից յետոյ երբոր հարաւ
քամին փչեց, երկրորդ օրը եկանք
Պուտիոլոս։ Ուր եղբայրներ էլ գը- 14
տանք, որոնք աղաչեցին որ եօթն
օր այնտեղ մնանք. և այսպէս ե-
կանք Հռոմ։ Եւ երբոր այնտեղից 15
եղբայրները մեր մասին լսեցին,
մեր առաջը գուրս եկան մինչև
Ապիոսի վաճառանոցը և երեք
խանութները. Պօղոս որ նորանց
տեսաւ, Աստուածանից գոհացաւ
և քաջութիւն առաւ։

16 Եւ երբոր մնաք Հռոմ Հրեայ-
ապետը կապեալները զօրապետին
յանձնեց. և Պօղոսին հրաման
եղաւ որ իր պահապան զինուորի
17 հետ առանձին կենայ։ Եւ ետք
օրից յետոյ եղաւ որ Պօղոսը Հրէից
գլխաւորները կանչեց. և երբոր
եկան, ասոնց ասաց. Արդիկ
եղբարք, ես ժողովրդի կամ հայ-
րենական կրօնքի հակառակ մի
բան չգործած, Երուսաղէմիցը
կապուած մատնուեցայ Հռովմայե-
18 ցոց ձեռքը։ Որոնք ինձ դատելով
կամեցան թող տալ, վասնզի ին-
ձանոնմէ մեռնելու ոչինչ յանցանք
19 չկար։ Բայց երբոր Հրեաները հա-
կառակեցան, ստիպուեցայ դե-
պի կայսրը բողոքել. ոչ թէ իբր
իմ ազգիցը մի չարախօսելու բան
20 ունենի։ Եւ այս պատճառի հա-
մար աղաչեցի ձեզ հիմա որ տես-
նեմ և խօսիմ. վասնզի Իսրայէլի
յուսոյն համար եմ ես այս շղ-
21 թայով կապուած։ Նորանք էլ
ասացին նորան. Մենք քեզ հա-
մար Հրէաստանիցը ոչ թուղթ
ենք առացել և ոչ էլ եղբարնե-
րէն մէկը եկաւ պատմեց կամ
քեզ համար մի չար բան խօսեց։
22 Բայց կ'ուզենք քեզմանից լսել
թէ ինչ ես խորհուրդ. որովհետև
այդ հերձուածքի համար մեզ
յայտնի է, որ ամեն տեղ դուրս
23 դէմ են խօսում։ Երբոր նորա հետ
մէկ օր որոշել էին, շատ մար-
դիկ եկան նորա մօտ այն հիւրա-
նոցը, որոնց Աստուծոյ արքայու-
թիւնը վկայութիւնով պատմում
էր, և Յիսուսին համար նորանց
համոզում էր Մովսէսի օրէնքիցն
և մարգարէներիցն առաւօտանից
մինչև իրիկունը։ Եւ ոմանք խօս- 24
քերին համոզվում էին, իսկ ո-
մանք չէին հաւատում։ Եւ երբ 25
հետ չվիճաբանուած արձակուե-
ցան, երբոր Պօղոսը այս մէկ խօս-
քըն ասաց. Թէ Սուրբ Հոգին Ե-
սայի մարգարէի ձեռովը մեր հա-
րանց հետ լաւ խօսեց, Եւ ասաց. 26
Գնա ժողովրդի մօտ և ասա. Դուք
լսելով կ'լսէք և չէք իմանալ. և
տեսնելով կ'տեսնէք և չէք տես-
նել։ Վասնզի այս ժողովրդի սիր- 27
տը թմրացաւ, և էրանց ականջ-
ներովը ծանր լսեցին, և էրանց աչ-
քերը խփեցին. որ մի գուցէ աչ-
քով տեսնեն և ականջներովը լսեն,
և սրտով իմանան և ետ դառ-
նան, և ես բժշկեմ նորանց։ Եւ 28
հիմա յայտնի լինի ձեզ, որ Աս-
տուծոյ փրկութիւնն ուղարկուե-
ցաւ հեթանոսներին, և նորանք
կ'լսեն։ Եւ երբոր նա այս ասաց. 29
Հրեաները դուրս գնացին նորա-
նից. և իրանց մէջ շատ վիճա-
բանութիւն ունէին։

Եւ Պօղոսը ամբողջ երկու տա- 30
րի, իր վարձքուին այնտեղ մնաց։
Եւ ամեն իրան մօտ եկողներին 31
ընդունում էր. Աստուծոյ ար- 32
քայութիւնը քարոզելով, և Տէր
Յիսուս Քրիստոսի համար տղե-
տութիւնով ամեն համարձակու-
թեամբ։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս ծառայ Յիսուս Քրիստո-
սի կանչուած առաքեալ՝ Աստու-
ծոյ աւետարանի համար որոշ-
2 ուած։ Որ որ առաջուց խոս-
տացաւ իր մարգարէների ձեռովը
3 սուրբ գրքերումը, իր Որդոյ հա-
մար, ու մարմնոյ կողմանէ Դա-
ւթի զաւակից եղաւ. Եւ Աս- 4
տուծոյ Որդի սահմանուեցաւ զո-
րութիւնով սրբութեան Հոգոյն
կողմանէ՝ մեռելներից յարութիւն
առնելուցը, մեր Տէր Յիսուսի Քր-
իստոսի համար։ Որով ընդունե- 5
ցինք շնորհք և առաքելութիւն

հաւատոյն հնազանդութեան հա-
մար ամեն ազգերի մէջ նորա ան-
6 ուան համար. Որոնց միջումը դուք
էլ Յիսուսի Քրիստոսի կանչուած-
7 ներն էք. Ձեզ ամենից՝ որ Հռո-
մուն էք՝ Աստուծոյ սիրելիներից՝
կանչուած սրբերից, շնորհք ու-
ի ձեզ և խաղաղութիւն Աստու-
ծմանից՝ մեր Հօրից և Տէր Յիսուս
Քրիստոսից։
8 Առաջ՝ գոհանում եմ Աստուա-
ծանից Յիսուսի Քրիստոսի ձեռա-
կը ձեր ամենքի համար, որ ձեր
հաւատքը բոլոր աշխարհքի մէջ
9 պատմւում է։ Քանզի Աստուած
ինձ վկայ է, որին ես պաշտում
եմ իմ հոգովը նորա Որդոյ աւե-
տարանումը, թէ ինչպէս ան-
10 դադար ձեզ յիշում եմ։ Ամեն
ժամանակ իմ աղօթքներումն ա-
ղաչելով՝ որ լինի թէ ու ինդամ
յաջողուի ինձ՝ Աստուծոյ կամքո-
11 վը ձեզ մօտ գալ։ Քանզի շատ
ցանկանում եմ ձեզ տեսնել, որ
ու հոգևոր շնորհք հաղորդեմ ձեզ
12 ձեր հաստատուելու համար. Այս-
ինքն՝ որ ձեզ հետ միխիթարուիմ
մեր փոխադարձ յարմարութիւնից իմ և ձեր
13 հաւատքի միջոցով։ Եղբարք,
չեմ կամենում որ դուք չգիտենաք,
թէ շատ անգամ միտք դրի որ
ձեզ մօտ գամ, (բայց մինչև հի-
մա արգիլուեցայ.) որ ձեր մէջը
ես էլ պտուղ ունենամ ինչպէս
14 և ուրիշ հեթանոսների մէջ։ Քան-
զի ես Յունաց և բարբարոսաց,
իմաստուններին և անմիտներին
15 պարտական եմ։ Այնպէս՝ իմով-
անն յօժար եմ ձեզ էլ, որ Հռո-
մուն էք՝ աւետարանել քարո-
զել։
16 Քանզի ես Քրիստոսի աւետա-
րանը ամօթ չեմ համարում. ո-
րովհետև Աստուծոյ զօրութիւն
է փրկելու համար ամեն հաւա-
տացողին, առաջ Հրէային և յե-
17 ոյ Յոյնին։ Քանզի Աստուծոյ
արդարութիւնը նորանով յայտն-
վում է՝ հաւատքից հաւատքի մէջ.
ինչպէս գրուած է. Թէ Արդարը
հաւատքից կ'ապրի։
18 Քանզի Աստուծոյ բարկութիւ-
նըն երկնքից յայտնվում է մարդ-
կանց ամեն ամբարշտութեան և
անիրաւութեան վերայ, որ ճըշ-
մարտութիւնն անիրաւութիւնով
բռնում են։ Վանզի Աստուծոյ 19
դիտելիքը յայտնի է նորանցում.
որովհետև Աստուած յայտնեց նո-
րանց։ Քանզի նորա աներեւոյթ 20
բաները աշխարհքի սկզբից ստեղծ-
ուածներումն խմացուելով տեսնըւ-
վում են, որ է նորա մշտնջենա-
կան զօրութիւնն և Աստուածու-
թիւնն, այնպէս որ անպատաս-
խան լինան։ Քանզի Աստուծոյն 21
ճանաչելով, նորան Աստուծոյ պէս
չփառաւորեցին կամ շնորհակալ
եղան. այլ իրանց մտածմունք-
ներումն ունայնացան և նորանց
անմիտ սրտերը խաւարեցան։
Ասելով թէ խմաստուն են՝ յի- 22
մնացան. Եւ անեղծ Աստուծոյ 23
փառքը փոխեցին եղծանելի մար-
դու և թռչունների և չորսոտա-
նիների և սողունների պատկերի
նմանութեան հետ։ Նորա համար 24
Աստուած էլ նորանց մտածեց ի-
րանց սրտերի ցանկութեան մէջ
պղծութեան համար. որ խայտա-
ռակեն իրանց մարմիններն իրանց
անձերումը։ Որոնք Աստուծոյ ճըշ- 25
մարտութիւնը ստութեան հետ
փոխեցին. և երկրպագեցին և պաշ-
տեցին ստեղծուածներին քան թէ
Ստեղծողին. որ օրհնեալ է՛ի յա-
ւիտեան. ամէն։ Նորա համար 26
Աստուած մատնեց նորանց խայ-
տառակ ցանկութիւնների. և նո-
րանց էգերը բնական գործածու-
թիւնը փոխեցին անբնական ձո-
ւ-ձ-ո-ւ-ի հետ։ Այնպէս էլ ա- 27
րուները կնոջ բնական գործածու-
թիւնը թողելով, իրանց ցանկու-
թիւններումն իրար հետ բորբո-
քեցան. արուներն արուների հետ
խայտառակութիւն էին գործում,
և այն փոխարէնը՝ որ արժան էր
իրանց մոլորութեան՝ իրանց անձ-
ներումը ընդունում էին։ Եւ ինչ- 28
պէս որ չընտրեցին Աստուծոյն
ունենալ իրանց գիտութեան մէջ,
Աստուած մատնեց նորանց ա-
նարդ մտքի որ անարժան բաներ
գործեն. Որոնք լցուած են ամեն 29
անիրաւութիւնով, պոռնկութիւ-

նով, անպտղութեամբ, պատուհասութեամբ, չարութեամբ, լիքն նախանձով, մարդասպանութեամբ, կռուով, նենգութեամբ, 30 չարաբարութեամբ. Քաոսներ, բամբասողներ, Աստուածատողներ, թշնամանողներ, ամբարտաւանութիւնք, գոռոզներ, չար բաներ հնարողներ, ծնողներին անհնազանդ- 31 ներ. Անմիտներ, ուխտապրուժներ, անգութներ, անհաշտներ, 32 անողորմներ. Որ Աստուծոյ իրաւունքները հասկանալով թէ այսպիսի բաներ գործողները մահի արժանի են, ոչ թէ միայն այս բաներն անում են, այլ գործողներին էլ համակից են լինում:

ԳԼ. Բ

1 Ասրա համար առանց պատասխան տալու ես՝ ով մարդ՝ ով որ էլ լինիս, որ դատում ես. քանզի ինչով որ ուրիշին դատում ես, քեզ ես դատապարտում. քանզի դու նոյնն ես գործում 2 որ ինքդ դատում ես: Բայց գիտենք որ Աստուծոյ դատաստանը ճշմարտութեամբ է նորանց վերայ, որ այսպիսի բաներ են գոր- 3 ծում. Իսկ, ով մարդ, որ դատում ես այսպիսի բաներ գործողներին, և որ դու նոյնն ես գործում, մի թէ կարծո՞ւմ ես՝ թէ դու կ'պրծնիս Աստուծոյ դա- 4 տաստանից: Կամ՝ թէ նորա քաղցրութեան առատութիւնը և համբերութիւնը և երկայնմտութիւնը արհամարհո՞ւմ ես. չգիտենալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ ապաշխարութեան է 5 տանում: Բայց դու քո խստութիւնովդ և անզեղջ սրտովդ բարկութիւն ես կիտում քո անձի համար՝ բարկութեան և այն Աստուծոյ արդար դատաստանի յայտ- 6 նութեան օրուայն, Որ ամեն մէկին իր գործքերի պէս հատուցում կ'տայ. Նորանց, որ բարի 7 գործերի մէջ են յարատեւում, և փառք ու պատիւ և անապականութիւն են որոնում, յաւիտենական կեանք: Բայց նորանց՝ 8 որ հակառակութիւնից են՝ և ճըշմարտութեան անհնազանդ և անիրաւութեան ետևից գնացած, բարկութիւն և սրտմտութիւն: Նեղութիւն և տառապանք այն 9 ամեն մարդու վերայ՝ որ չարութիւն է գործում. առաջ Հրեայի՝ և յետոյ Յոյնի: Իսկ փառք 10 և պատիւ և խաղաղութիւն ամեն բարի գործողին. առաջ Հրեայիի՝ և յետոյ Յոյնին: Քանզի Աստուծոյ մօտ երեսպաշտութիւն չկայ: 11 Քանզի նորանք՝ որ առանց օրէնքի մեղք գործեցին, առանց օրէնքի էլ կ'կորչին. և նորանք՝ որ օրէնքի տակ մեղք գործեցին օրէնքով կ'դատուին: (Քանզի ոչ 12 թէ օրէնքը լսողներն են Աստուծոյ առջև արդար, այլ օրէնքի կատարողները կ'արդարանան: Որով- 13 հետև երբոր հեթանոսներն՝ որ օրէնք չունին՝ բնութեամբ օրէնքի գործքերն անեն, սորանք թէ և օրէնք չունին իրանք են իրանց համար օրէնք. Որոնք ցոյց են տալիս թէ 14 օրէնքի գործքը նորանց սրտերումն գրուած է՝ նորանց խղճմտանքի վկայութիւնովը, և իրանց խորհուրդների իրար յանդիմանելովը, կամ թէ պատասխան տալովը.) Այն օրն՝ որ Աստուած դատի- 15 կանց ծածուկ բաները կ'դատէ՝ իմ աւետարանի համեմատ Յիսուսի Քրիստոսի ձեռովը:

Ահա դու Հրեայ ես անուանվում, և կռթնվում ես օրէնքի վերայ, և պարծենում ես Աստուծով, Եւ նորա կամքը գիտես, և զանազանում ես սորբեր բաները օրէնքիցը խրատուած լինելով, Եւ քո անձի վերայ վստահութիւն ունիս՝ որ կոյրերի առաջնորդ ես. և խաւարեալների լոյս. Անմիտների խրատիչ, տղաների վարդապետ. որ օրէնքի գիտութեան և ճշմարտութեան կերպարանքն ունիս օրէնքումը. Որ- 21 պէսն դու՝ որ ուրիշին սովորեցնում ես, քո անձին չե՞ս սովորեցնում. դու որ քարոզում ես՝ չգողանալ՝ գողանում է՞ս: Որ ասում ես՝ 22 շնութիւն չգործել՝ շնութի՞ւն ես գործում. դու՝ որ կռքերիցը գար-

շում եա՝ արդապղծութիւն եա ա-
23 նո՛ւմ։ Դուն՝ որ օրէնքովը պար-
ծենուս եա, օրէնքին դէմ դոր-
ծելով Աստուծոյն անարգուս ես
24 Քանզի Աստուծոյ անունը ձեր
պատճառովը հայհոյուած է հե-
թանոսաներուն մէջ, ինչպէս և գըր-
ուած է։
25 Արդ թլփատութիւնը շահաւոր
է՝ թէ որ օրէնքը պահող եա. ա-
պա եթէ օրէնքին դէմ յանցաւոր
ես, քու թլփատութիւնդ անթլ-
26 փատութիւն եղաւ։ Ընդ թէ որ
անթլփատութիւնն օրէնքի իրա-
ւունքները պահէ, չէ՞ որ նորա
անթլփատութիւնը՝ թլփատու-
27 թիւն կ'համարուի։ Եւ՝ ի բնէ
անթլփատութիւնը՝ օրէնքը կա-
տարելով կ'դատէ քեզ, որ գրով
և թլփատութիւնով օրէնքի դէմ
28 յանցաւոր ես։ Քանզի նա չէ Հր-
էայ՝ որ դրսի երևոյթով է, և
այն չէ թլփատութիւնն՝ որ մարմ-
29 նով դրսի երևոյթով է. Այլ նա՝
որ ծածուկ Հրէայ է, և սրտի թլ-
փատութիւնը Հոգով՝ և ոչ թէ
գրով. որի գովասանքը ոչ թէ
մարդկանցից է, այլ Աստուա-
ծանից։

ԳԼ. Գ

1 Արդ ի՞նչ է Հրէի առաւելու-
թիւնը, կամ ի՞նչ է թլփատու-
2 թեան օգուտը։ Շատ, ամեն կեր-
պով. առաջ հէնց նա որ Աստու-
ծոյ պատգամները նորանց հաւա-
3 տացուեցան։ Բայց ի՞նչ. եթէ
ոմանք չհաւատացին, մի՞թէ նո-
րանց անհաւատութիւնն Աստու-
ծոյ հաւատքը կ'խափանէ. քա-
4 լիցի։ Արդ թող Աստուած ճըշ-
մարիտ լինի, իսկ ամեն մարդ
սուտ. ինչպէս գրուած է, Որ ար-
դար լինիս քո խօսքերուդը, և
5 յաղթես քո դատելուդը։ Բայց
եթէ մեր անիրաւութիւնն Աստու-
ծոյ արդարութիւնը յայտնի ե-
րևացնուի է, ի՞նչ ասենք. մի՞թէ
անիրաւ է Աստուած, որ բար-
6 կութիւնը բերուի է։ Մարդու
կերպով եմ ասուի, քա լիցի.
ապա Աստուած ի՞նչպէս կ'դատէ
աշխարհքը։ Քանզի եթէ Աստու- 7
ծոյ ճշմարտութիւնն իմ ստու-
թիւնովդ աւելացաւ նորա փառ-
քի համար, էլ ինչո՞ւ եմ ես մե-
ղաւորի պէս դատուի։ Եւ ինչո՞ւ 8
համար այնպէս չանէնք ինչպէս հայ-
հոյուի եմք, և ինչպէս ոմանք
ասուի են մեզ համար, թէ ա-
սուի լինինք, թէ Չար գործենք՝
որ բարին գայ. որոնց դատաս-
տանը արդար է։

Եւ հիմա ի՞նչ. աւելի՞ ենք. ա- 9
մենևին ոչ. քանզի առաջ մե-
ղադրեցինք Հրէաներին և հեթա-
նոսներին, թէ ամենքը մեղքի տակ
են. Ինչպէս որ գրուած է, թէ 10
Արդար չկայ՝ մէկն էլ չկայ։ Չկայ 11
իմացող, չկայ Աստուծոյն խնդ-
րող, Ամենք խոտորեցան, միասին 12
անպիտան եղան. չկայ քաղցրու-
թիւն անող, մինչև մէկն էլ չկայ։
Նորանց կոկորդը բաց գերեզման 13
է, և իրանց լեզուներովը նենգու-
թիւն են անուի. իժերի թոյն կայ
նորանց շրթանց տակ։ Որոնց բե- 14
րանը անէծքով և դառնութիւ-
նով լիքն է։ Որոնց ոտները շու- 15
տագնաց են արիւն թափելու հա-
մար։ կործանուի և թշուառու- 16
թիւն է նորանց ճանապարհներու-
մը։ Եւ խաղաղութեան ճանա- 17
պարհը չճանաչեցին։ Աստուծոյ 18
երկիւղը նորանց աչքերի առջև չէ։
Բայց գիտենք, թէ ամեն ինչ որ 19
օրէնքն ասուի է նորանց է ասուի,
որ օրէնքի տակ են. որ ամեն բե-
րան խփուի, և բոլոր աշխարհք
Աստուծոյ առջև դատապարտե-
նի։ Որովհետև օրէնքի գործքերի- 20
ցը ոչ մի մարմին չի արդարանալ
նորա առջև. որովհետև օրէնքովը
ճանաչուի է մեղքի գիտութիւն։

Բայց հիմա առանց օրէնքի Աս- 21
տուծոյ արդարութիւնը յայտ-
նուած է, օրէնքից և մարգարէ-
ներից վկայուած լինելով. Եւ Աս- 22
տուծոյ արդարութիւնը Յիսուսի
Քրիստոսի հաւատքից է այն ա-
մենի համար և ամենի վերայ, որ
հաւատում են. քանզի խտրու-
թիւն չկայ։ Քանզի ամենքը մե- 23
ղանչեցին, և Աստուծոյ փառքի-
ցը պակասուած են. Ըրի են ար- 24

պարտուամ նորա շնորհքովը՝ այն
փրկութեան ձեռովը՝ որ Յիսուս
25 *Քրիստոսումն է։ Որին Աստուած*
առաջուց առհմանեց քաւութիւն
լինելու համար հաւատալով նո-
ցա արիւնովը, որ իր արդարու-
թիւնը ցոյց տայ՝ այն առաջուց
գործած մեղքերի թոյլտուու-
թեան համար՝ Աստուծոյ ներ-
26 *ման ժամանակին։ Որ իր արդա-*
րութիւնը երևացնէ այս ժամա-
նակուամը. որ ինքն լինի արդար և
արդարացնող նորան՝ որ Յիսուսի
27 *հաւատքին է. Հիմա ո՞ւր է պար-*
ծանքը. խափանուեցաւ. ո՞ր օրէն-
քով, գործքերի՞ օրէնքովը. ոչ, այլ
28 *հաւատքի օրէնքովը։ Որովհետև հա-*
մարուամ ենք, որ մարդն հաւա-
քով է արդարանուամ առանց օ-
29 *րէնքի գործքերի։ Միթէ Աստ-*
ուած միայն Հրէաներին է, և հե-
թանոսներին էլ չէ. այո, հեթա-
30 *նոսներին էլ է։ Որովհետև մէկ*
Աստուած է՝ որ արդարացնուամ է
թլփատութիւնն հաւատքից, և
անթլփատութիւնն նոյն հաւատ-
31 *քովը։ Արդ միթէ օրէնքը խափա-*
նուամ ենք հաւատքովը. քաւելի.
այլ օրէնքը հաստատուամ ենք։

ԳԼ. Դ

1 Արդ ի՞նչ ասենք, թէ մեր հայ-
րը Աբրահամ գտաւ մարմնոյ կող-
2 *մանէ։ Քանզի եթէ Աբրահամ*
գործքերով արդարացաւ լիներ՝
պարծանք կ'ունենար. բայց ոչ թէ
3 *Աստուծոյ առջև։ Քանզի գիրքն*
ի՞նչ է ասում. Աբրահամն հա-
ւատաց Աստուծոյն, և արդա-
րութիւն համարուեցաւ նորան։
4 *Բայց նորան՝ որ գործք է անում,*
վարձքը չէ համարուամ շնորհքի
5 *պէս, այլ պարտքի պէս։ Բայց*
նորան՝ որ գործք չէ անում այլ
հաւատում է նորան, որ ամբա-
րիշին արդարացնուամ է, նորա
հաւատքը համարուամ է արդա-
6 *րութիւն։ Ինչպէս որ Դաւիթն*
էլ այն մարդու երանութիւնն է
ասում, որին Աստուած արդա-
րութիւն է համարում առանց
7 *գործքերի։ Երանի նորանց՝ որոնց*
անօրէնութիւնները թողուան, և
որոնց մեղքերը ծածկուեցան։ 8
Երանի է այն մարդուն, որին Տէ-
րը մեղք չի համարիլ։ Արդ այս 9
երանութիւնը՝ թլփատութեանվե-
րա՞յ է՝ կամ թէ անթլփատու-
թեան վերայ էլ է. քանզի ա-
սում ենք՝ թէ Աբրահամին հա-
ւատքն արդարութիւն համար-
ուեցաւ։ Արդ ի՞նչպէս համար- 10
ուեցաւ. երբոր թլփատութիւ-
նո՞ւմ էր՝ թէ անթլփատութիւ-
նուամ, այլ անթլփատութիւնուամ։
Եւ թլփատութեան նշանն առաւ 11
էբե՞ր արդարութեան կնիք այն հա-
ւատքի որ անթլփատութիւնուամն
էր, որ նա հայր լինի այն ամեն
հաւատացեալներին՝ որ անթլփա-
տութիւնից են՝ որ նորանց էլ
համարուի արդարութիւնը։ Եւ 12
թլփատութեան հայր համարէ ոչ
միայն նորանց՝ որ թլփատութի-
նից են, այլ նորանց էլ՝ որ այն
հաւատքի հետքովն են գնում, որ
մեր հայր Աբրահամն անթլփա-
տութիւնուամն ունէր։ Քանզի ոչ 13
թէ օրէնքովը եղե՝ Աբրահամին
կամ նորա զաւակին այն ուխտ-
քըն թէ նա աշխարհքի ժառան-
գըն է, այլ հաւատքի արդարու-
թիւնից։ Քանզի եթէ օրէնքից 14
լինողներն են ժառանգ, ապա հա-
ւատքն ունայն էր՝ և ուխտիքը
կ'խափանուէր։ Քանզի օրէնքը բար- 15
կութիւն է գործում. վասնզի ուր
օրէնք չկայ՝ օրինազանցութիւն էլ
չկայ։ Սորա համար հաւատքից է 16
է, որ շնորհքով լինի. որ ուխ-
տիքը հաստատ լինի ամեն զաւա-
կի համար, ոչ միայն օրէնքից լի-
նողի համար, այլ նորա համար
էլ որ Աբրահամի հաւատքից է,
որ մեր ամենքի հայրն է։ Ինչպէս 17
որ էլ գրուած է, թէ Շատ ազ-
գերի հայր արի քեզ Աստուծոյ
առջև, որին հաւատաց, որ մե-
ռելներին կենդանի է անում՝ և
չլինող բաներըլինողի պէս է կան-
չում։ Որ առանց յոյսի՝ յոյսով 18
հաւատաց՝ թէ շատ ազգերի հայր
կ'լինի. ինչպէս ասուեցաւ՝ թէ Ա՛յն-
պէս պիտի լինի քո զաւակը։ Եւ 19
չհիւծուեցաւ հաւատքով, այնպէս

մոխիկ չարաւ իբ մարմնոյն որ արդէն մեռած էր, ինքը իրրև հարիւրամեայ լինելով, և ոչ էլ Սառայի արգանդի մեռած լինելուն։ Եւ Աստուծոյ աւետիքի համար չերկմըտեցաւ անհաւատութիւնով, այլ զօրացաւ հաւատքով, և Աստուծոյն փառք տուաւ։ Եւ իբ մտքումը համոզուած էր, թէ ինչըան որ նա խոստացաւ, կարող է և անել։ Նորա համար էլ արդարութիւն համարուեցաւ նորան։ Բայց ոչ միայն նորա համար գրուեցաւ թէ նորան համարուեցաւ արդարութիւն. Այլ մեզ համար էլ, որ մեզ պիտի համարուի. որ հաւատում ենք նորան որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարուցից մեռելներից, Որ մատնուեցաւ մեր յանցանաց համար, և յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար։

ԳԼ. Ե

Արդ մենք՝ հաւատքով արդարացած լինելով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը։ Որով ընդունեցինք հաւատքով այս շնորհքի մէջ մտնելն էլ, որում կանգնած ենք, և պարծենում ենք Աստուծոյ փառաց յուսովը։ Եւ ոչ միայն այսքան, այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք. գիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է գործում. համբերութիւնը փորձառութիւն, փորձառութիւնը յոյս. Յոյսն էլ չէ ամաչեցնում. քանզի Աստուծոյ սէրը փառաւած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգոյ ձեռովը՝ որ տրուեցաւ մեզ։ Քանզի երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստոս մեզ համար իբ ժամանակումն մեռելների տեղ մեռաւ, Վասնզի հազիւ թէ մի արդարի համար մէկը մեռնի. (բայց մի բարի մարդու համար իցէ թէ մէկը համարձակի մեռնիլ.) Բայց Աստուած յայտնեց իր սէրը դէպի մեզ, որ երբոր մենք դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզ համար մեռաւ. Ապա ո՛րքան աւելի հիմա, որ արդարացանք նորա արիւնովը՝ կ'փրկուինք նորանով բարկութիւնից։ Քանզի թէ որ դեռ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք նորա Որդոյ մահովը, ո՛րքան աւելի որ հաշտուած ենք, կ'ապրինք նորա կեանքովը։ Եւ ոչ միայն այ-ն-ա. այլ Աստուծով էլ պարծենում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը, որով հիմա հաշտութիւնն ընդունեցինք։

Սորա համար՝ ինչպէս մէկ մարդու ձեռովը մեղքը մտաւ աշխարհքը, և այն մեղքովն էլ մահը. և այսպէս մահն ամեն մարդկանց վերայ տարածուեցաւ, քան որում ամենքը մեղանչեցին։ Քանզի մինչև օրէնքը՝ մեղք կար աշխարհքումը, բայց մեղքը չէ համարվում քանի որ օրէնք չկայ։ Բայց մահը թագաւորեց Ադամից մինչև Մովսէս Ադամի մեղքի նման չմեղանչողների վերայ էլ. որ օրինակ է նորան որ գալու էր։ Բայց շնորհքն այնպէս չէ ինչպէս յանցանքը. քանզի եթէ մէկի յանցանքով շատերը մեռան, էլ ո՛րքան աւելի Աստուծոյ շնորհքն ու պարգևը մէկ մարդու՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովն աւելացաւ շատերի վերայ։ Եւ պարգևն այնպէս չէ՝ ինչպէս այն մէկ մեղանչողից եղածը, քանզի դատաստանն այն մէն մեղքից դէպի դատապարտութիւն տարաւ. բայց շնորհքը շատ մեղքերից արդարութեան մէջ է դառնում։ Քանզի եթէ մէկի մեղքովը մահը թագաւորեց այն մէկի ձեռովն, էլ ո՛րքան աւելի նորանք, որ ընդունում են շնորհաց լիութիւնն ու արդարութեան պարգևները կեանքով կ'թագաւորեն՝ այն մէկ Յիսուս Քրիստոսի ձեռովը։ Արդ ուրեմն՝ ինչպէս որ մէկի յանցանքովն ամեն մարդկանց վերայ դատապարտութիւն է—, նոյնպէս էլ մէկի արդարութիւնովն ամեն մարդկանց վերայ կենաց արդարութիւն է —։ Քանզի ինչպէս որ մէկ մարդու անհնազանդութիւնովը շատերը մեղաւորներ եղան, այնպէս էլ

մէկի հնազանդութիւնովը շատերը արդարներ կ'լինին։ Բայց օրէնքը մէջ ընկաւ՝ որ յանցանքը շատանայ. քանզի ուր որ աւելի եղաւ մեղքը, այնտեղ աւելի ևս շատացաւ շնորհքը։ Որպէս զի ինչպէս մեղքը թագաւորեց մահի ձեռովը, այնպէս էլ շնորհքը թագաւորէ արդարութիւնով յաւիտենական կեանքի մէջ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը։

ԳԼ. Զ

1 Արդ ի՞նչ ասենք. միա՞նք մեղքի
2 մէջ, որ շնորհքը շատանայ։ Քաւ
լիցի. մենք որ մեռանք մեղքին,
էլ ի՞նչպէս դեռ կ'ապրինք նորա-
3 նում։ Կամ չէ՞ք գիտում՝ թէ
որքանս որ Յիսուս Քրիստոսովին
մկրտուեցանք՝ նորա մահի մէջ
4 մկրտուեցանք։ Մկրտութիւնովը
նորա հետ թաղուեցանք մահի մէջ.
որ ինչպէս Քրիստոս Հօր փառքովը մեռելների միջից յարու-
թիւն առաւ, այնպէս մենք էլ
կենաց նորոգութեան մէջ մանք
5 դանք։ Քանզի եթէ նորա մահի
նմանութիւնովը նորա հետ անկը-
ուեցանք, ապա նորա յարութեա-
6 նըն էլ նմա՛ն կ'լինինք։ Այս գի-
տենալով, որ մեր հին մարդը նո-
րա հետ խաչուեցաւ, որ մեղաց
մարմինը խափանուի, որ այլ ևս
7 չծառայենք մեղքին։ Քանզի նա
որ մեռնում է՝ արդարացած է
8 մեղքից։ Եւ եթէ Քրիստոսի հետ
մեռանք, հաւատում ենք՝ որ նո-
9 րա հետ էլ կ'ապրինք։ Գիտենա-
լով որ՝ Քրիստոս մեռելների մի-
ջից յարութիւն առած լինելով,
այլ ևս չէ մեռնում, և մահն նո-
րա վերայ այլ ևս չէ տիրում։
10 Քանզի այն որ մեռաւ՝ մեղքին
մեռաւ մէկ անգամ, և այն որ
կենդանի է՝ Աստուծոյն է կեն-
11 դանի։ Նոյնպէս էլ դուք ձեր ան-
ձերը մեղքին մեռած համարեցէք,
և Աստուծոյն կենդանի՝ մեր Տէր
12 Քրիստոս Յիսուսի ձեռովը։ Որա
համար թող մեղքը չթագաւորէ
ձեր մահկանացու մարմնի մէջ, որ
նորան հնազանդիք նորա ցանկու-
թիւններուն։ Եւ ձեր անդամնե- 13
րը անիրաւութեան զէնք մի նե-
կուցանէք մեղքին. այլ ձեր անձ-
ները ներկայացրէք Աստուծոյն՝
ինչպէս մեռելներից կենդանացած-
ներ, և ձեր անդամներն արդա- 14
րութեան զէնք՝ Աստուծոյն։ Քան-
զի մեղքը չի տիրիլ ձեզ վերայ.
որովհետև օրէնքի տակ չէք, այլ
շնորհաց տակ։

Արդ ի՞նչ. մեղ՞ք գործենք. ո- 15
րովհետև օրէնքի տակ չենք՝ այլ
շնորհաց տակ. քաւ լիցի։ Չէ՞ք 16
գիտում, թէ ում որ ձեր անձնե-
րը ծառայ էք պատրաստում՝ նո-
րան հնազանդելու, ծառայք էք
նորան որին հնազանդում էք. թէ
մեղքին՝ դէպի մահ, և թէ հնա-
զանդութեան՝ դէպի արդարու-
թիւն։ Բայց շնորհակալութիւն 17
Աստուծոյ. որ մեղքի ծառայ էիք,
բայց սրտով հնազանդեցիք այն
վարդապետութեան օրինակին՝ ո- 18
րին յանձնուեցաք։ Ուրեմն դուք
մեղքից ազատուած՝ ծառայեցիք
արդարութեան։ Մարդկօրէն եմ 19
ասում ձեր մարմնոյ տկարութեան
համար. որ ինչպէս ձեր անդամ-
ները ծառայ ներկայացրիք պղծու-
թեան ու անօրէնութեան՝ ա-
նօրէնութեան համար, նոյնպէս
էլ հիմա ձեր անդամները ծառայ
ներկայացրէք արդարութեան սըր-
բանալու համար։ Քանզի երբոր 20
մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք
արդարութիւնից։ Արդ ի՞նչ պը- 21
տուղ ունէիք այն ժամանակ, ո-
րոնց համար հիմա ամօթ էք քա-
շում. քանզի նորանց վերջը մահ
է։ Բայց հիմա որ մեղքից ա- 22
զատուած և Աստուծոյ ծառայ
եղած էք՝ ձեր պտուղն ունիք սրբ-
բանութիւն համար, և նո- վերջը
յաւիտենական կեանքն է։ Քան- 23
զի մեղքի պարշտիքը մահն է. բայց
Աստուծոյ շնորհքը՝ յաւիտենա-
կան կեանք՝ մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի ձեռովը։

ԳԼ. Է

Կամ չէ՞ք գիտում, եղբարք, 1
(քանզի օրէնք գիտեցողների հետ

եմ խօսում). որ օրէնքը մարդու
վերայ տիրում է՝ քանի որ նա
2 կենդանի է։ Կանոյն մարդ ունե-
ցող կնիկը՝ իր կենդանի մարդու
հետ կապուած է օրէնքով. բայց
եթէ մարդը մեռնի՝ մարդկից ա-
3 ձակուած է։ Ուրեմն՝ քանի որ
մարդը կենդանի է՝ նա շնացող է
կոչվում, եթէ ուրիշ մարդու գնայ.
բայց եթէ մարդը մեռնի, օրէն-
քից ազատ է՝ որ շնացող չլինի
4 եթէ ուրիշ մարդու գնայ։ Ա՛ր-
պէս էլ, եղբարք, դուք Քրիստո-
սի մարմնով մեռաք օրէնքին՝ որ
ուրիշի լինիք՝ նորան որ մեռելնե-
րի միջից յարութիւն է առել,
որ պտուղ բերենք Աստուծոյն։
5 Կանոյն քանի որ մարմնով էինք.
մեղքերի ցանկութիւնները՝ որ օ-
րէնքովն էին՝ գործում էին մեր
անդամներումը, որ մենք պտուղ
6 բերենք մահին։ Բայց հիմա ա-
ձակուեցանք օրէնքից՝ մեռնելով
նորան՝ որով որ բռնուած էինք,
որպէսզի հոգու նորոգութիւնով
ծառայենք՝ և ոչ թէ գրի հնու-
թիւնովը։

7 Ա՛րդ ի՞նչ ասենք. օրէնքը մե՞ղք
է. կաց լինի. բայց մեղքը չէի
գիտենալ՝ եթէ ոչ օրէնքով. և
ցանկութիւնը չէի ճանաչել՝ եթէ
օրէնքը չէր ասել՝ Մի ցանկանար
8 Մեղքը առիթ առնելով պատ-
ուիրանքովը՝ ինձանում ամեն ցան-
կութիւն գործեց. քանզի առանց
9 օրէնքի մեղքը մեռած է։ Եւ ես
առանց օրէնքի մի ժամանակ կեն-
դանի էի. բայց երբոր պատուի-
րանքը եկաւ, մեղքը կենդանա-
10 ցաւ։ Իսկ ես մեռայ, և այն պատ-
ուիրանքն՝ որ կենաց համար էր,
11 ինձ մահի պատճառ եղաւ։ Քան-
զի մեղքը առիթ առած պատ-
ուիրանքովը՝ խաբեց ինձ և նորա-
12 նով սպանեց։ Ուրեմն՝ օրէնքը սուրբ
է՝ և պատուիրանքն էլ սուրբ և
արդար և բարի։
13 Ա՛պա բարի՞ն եղաւ ինձ մահ.
քաւ լիցի. այլ մեղքը. որ մեղ-
քըն երևի որ բարիովն ինձ մահ
գործեց. որ մեղքն առելի ևս մե-
ղաւոր լինի պատուիրանքի ձեռա-
14 վը։ Քանզի գիտենք՝ որ օրէնքը
հոգևոր է. բայց ես եմ մարմնա-
ւոր մեղքի տակ ծախուած։ Քան- 15
զի ինչ որ գործում եմ չեմ գի-
տում. քանզի ոչ թէ ինչ որ կա-
մենում եմ՝ այն եմ գործում.
այլ ինչ որ ատում եմ, այն եմ
գործում։ Եւ եթէ ինչ որ չեմ 16
կամենում՝ այն եմ գործում, օ-
րինաց համար վկայում եմ՝ թէ
բարի է։ Ա՛րդ ուրեմն ոչ թէ ես 17
եմ գործում այն, այլ ինձանում
բնակած մեղքը։ Քանզի գիտեմ 18
որ ինձանում (այսինքն իմ մարմ-
նումը) մի բարի բան չէ բնակում.
քանզի կամենալն առաջ կայ. բայց
բարին անելը չեմ գտնում։ Քան- 19
զի ոչ թէ բարին՝ որ կամենում
եմ, անում եմ. այլ չարն՝ որ չեմ
կամենում, այն եմ գործում։ Ու- 20
րեմն եթէ այն որ չեմ կամենում
ես, այն եմ անում. էլ ես չեմ
անում այն, բայց ինձանում բը-
նակած մեղքը։ Ուրեմն գտնում 21
եմ այդ օրէնքը՝ որ երբ ես կա-
մենում եմ բարին անել. չարն իմ
առջև կայ։ Քանզի հաւանում 22
եմ Աստուծոյ օրէնքին՝ ներսի
մարդովը։ Բայց տեսնում եմ ու- 23
րիշ օրէնք իմ անդամներումը՝ որ
իմ մտքի օրէնքի դէմ պատերազ-
մում է, և ինձ գերի է բռնում
այն մեղքի օրէնքովը՝ որ իմ ան-
դամներումն է։ Ես խղճալի մար- 24
դս. ո՞վ կ'ապրեցնէ ինձ այս մա-
հի մարմնից։ Շնորհակալ եմ 25
Աստուծոյ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի ձեռովը. Ա՛րդ ուրեմն
ես ինքս մտքով ծառայում եմ
Աստուծոյ օրէնքին, իսկ մարմնով
մեղքի օրէնքին։

Գ Լ. Ը

Ուրեմն հիմա դատապարտու- 1
թիւն չկայ Յիսուս Քրիստոսումն
լինողների համար, որ մարմնոյ պէս
չեն վարվում, այլ հոգոյ պէս։
Քանզի կենաց հոգոյ օրէնքը Յի- 2
սուս Քրիստոսումն ազատեց ինձ
մեղքի և մահի օրէնքիցը։ Քան- 3
զի այն որ անկարելի էր օրէնքին,
որովհետև տկար էր մարմնոյ պատ-
ճառովը, Աստուած իր Որդին ու-

զարկելով մեզաց մարմնոյ նմա-
նութիւնը և մեզքի համար՝ մեզ-
քին դատապարտեց այն մարմնու-
Հ մէր։ Որ օրէնքի արդարութիւնը
կատարուի մեզանում, որ մարմ-
նոյ պէս չենք վարվում՝ այլ հո-
Յ գոյ պէս։ Քանզի մարմնոյ պէս լի-
նողները մարմնոյ բաներն են մտա-
ծում. իսկ հոգոյ պէս լինողները՝
6 հոգոյ բաները։ Քանզի մարմնոյ
խորհուրդը մահ է. և հոգոյ խոր-
հուրդը կեանք և խաղաղութիւն.
7 Քանզի մարմնոյ խորհուրդը Աս-
տուծոյ դէմ թշնամութիւն է.
քանզի Աստուծոյ օրէնքին չէ հնա-
8 զանդում, և կարող էլ չէ։ Եւ
նորանք՝ որ մարմնով են, չեն կա-
9 րող Աստուծոյն հաճոյ լինել։ Բայց
դուք մարմնով չէք՝ այլ հոգով,
եթէ Աստուծոյ Հոգին ձեզանում
բնակած է. և եթէ մէկը Քրիս-
տոսի Հոգին չունի՝ նա նորանը
10 չէ։ Եւ եթէ Քրիստոս է ձեզա-
նում՝ ապա մարմինը մեռած է
մեղքի համար, և Հոգին կենդա-
11 նի է արդարութեան համար։ Եւ
եթէ Յիսուսին մեռելներից յա-
րուցանողի Հոգին ձեզանում բնա-
կած է, ապա Քրիստոսին մեռել-
ներից յարուցանողը, ձեր մահ-
կանացու մարմիններն էլ կ'կեն-
դանացնէ իր Հոգովը, որ ձեզա-
նում բնակած է։

12 Ապա ուրեմն, եղբայրք, պար-
տականներ ոչ թէ մարմնոյն՝ մարմ-
13 նոյ պէս ապրելու։ Քանզի եթէ
մարմնոյ պէս ապրիք՝ մեռնելու էք.
բայց եթէ Հոգով մարմնոյ գործ-
14 քերն սպանէք՝ կ'ապրիք։ Քանզի
որոնք որ Աստուծոյ Հոգովն են
վարվում, նորանք Աստուծոյ որ-
15 դիք են։ Քանզի ծառայութեան
Հոգին չունիք որ դարձեալ վա-
խենաք, այլ որդեգրութեան Հո-
գին առիք, որով աղաղակում
16 ենք՝ Աբբա, Հայր։ Նոյն ինքն
Հոգին վկայութիւն է տալիս մեր
հոգոյն հետ, որ մենք Աստուծոյ
17 որդիք ենք։ Եւ եթէ որդիք՝ ապա
ժառանգներ էլ, Աստուծոյ ժա-
ռանգներ և Քրիստոսի ժառան-
գակիցներ. որ եթէ նորա չար-
չարանքներին կցորդ ենք՝ որ
փառքին էլ մասնակից լինինք։

Քանզի ես այնպէս եմ դատում, 18
թէ այս ժամանակի չարչարանք-
ները չեն արժանի այն գալու փառ-
քին, որ մեզանում պիտի յայտ-
նուի։ Քանզի աստեղծուածների ա- 19
կնկալութիւնը Աստուծոյ որդոց
յայտնութեանն է սպասում։ Քան- 20
զի աստեղծուածները հնազանդե-
ցան ունայնութեանն, ոչ թէ կա-
մեւ այլ նորա համար՝ որ հնա-
զանդեցրեց զ-ն յուսով, Որ ըս- 21
տեղծուածներն էրանք էլ ապա-
կանութեան ծառայութիւնից
կ'ազատուին՝ Աստուծոյ որդոց
փառաւոր ազատութեան մէջ մըտ-
նելով։ Քանզի գիտենք՝ որ ըսկըզ- 22
բանից ամբողջ աստեղծուածները մինչև հիմա միա-
սին հառաչում են և ցաւի մէջ
են։ Եւ ոչ միայն նորանք, այլ 23
մենքներս էլ՝ որ Հոգոյ առաջին
պտուղն ունինք, մենք էլ մեր մէջ
նեղուած հառաչում ենք՝ որդեգ-
րութեանն ազատելով զ-մեր
մարմնոյ ազատութեանը։ Քանզի 24
յուսով փրկուեցանք. բայց յոյսն
որ տեսանում է, յոյս չէ. քան-
զի այն բանն, որ մէկը տեսնում
է՝ էլ ի՞նչպէս կ'յուսայ։ Բայց 25
եթէ այն որ չենք տեսնում, նորա
յոյս ունինք, ապա համբերու-
թեամբ ապասում ենք։ Այսպէս 26
էլ Հոգին օգնում է մեր տկարու-
թեանցը, քանզի թէ ինչ բանի
համար պէտք անենք՝ ինչպէս
արժան է, չգիտենք. բայց ինքն
Հոգին անբարբառ հառաչանքով
բարեխօս է լինում։ Եւ սրտերը 27
քննողը գիտէ թէ ինչ է Հոգոյն
խորհուրդը. քանզի Աստուծոյն
վայելուչ կերպով սրբոց համար բա-
րեխօսում է։

Բայց գիտենք, որ Աստուծոյն 28
սիրողներին ամեն բաները գործա-
կից են լինում դէպի բարին նո-
րանց՝ որ նախասահմանելով կան-
չուած են։ Քանզի նորանց՝ որս- 29
ուաջուց ճանաչեց, ուաջուց էլ
սահմանեց՝ իր Որդոյ պատկերի
կերպարանակից լինել շատ եղբայրների
մէջ։ Եւ որոնց ուաջուց սահ- 30
մանեց, նորանց կանչեց էլ. և ո-

րանց կանչեց, նորանց արդարացրեց էլ. և որոնց արդարացրեց,
30 նորանց փառաւորը էլ արաւ։ Ա-պա ի՞նչ ասենք սորա համար. եթէ Աստուած մեր կողմն է՝ ո՞վ
32 է մեզ հակառակ. Որ իր Որդոյն էլ չխնայեց, այլ մեր ամենքի համար մատնեց նորան. էլ ի՞նչպէս նորան հետ ամեն բան չի
33 շնորհիլ մեզ։ Ո՞վ է որ Աստուծոյ ընտրեալներուն դէմ մեղադիր լինի. Աստուած է՝ որ արդարացնում է։
34 Ո՞վ է որ դատապարտէ. Քրիստոս, որ մեռաւ՝ և աւելի որ յարութիւն էլ տուաւ և Աստուծոյ աջ կողմն է, որ մեզ համար
35 բարեխօս էլ է։ Ա՞պա ո՞վ կ'բաժանէ մեզ Քրիստոսի սէրիցը. տառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ
մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ
36 սո՞ւր։ Ինչպէս գրուած է, թէ Քեզ համար մեռցնում ենք բո-լոր օրը և մորթուելու ոչխարի պէս
37 համարուեցանք։ Բայց այս ամեն բաներուն առաւել ևս յաղթում ենք նորա ձեռովն՝ որ մեզ սիրեց,
38 Քանզի համոստ գիտեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ, ոչ
39 զօրութիւններ, ոչ ներկայ բաներ, ոչ գալու բաներ։ Եւ ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն, և ոչ մէկ ուրիշ առեղծուածքան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սէրիցը՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է։

ԳԼ. Թ

1 Ճշմարիտն ասում եմ Քրիստոսումի՝ և սուտ չեմ ասում, իմ խղճմտանքն էլ վկայում է ինձ
2 Սուրբ Հոգով։ Որ մեծ տրտմութիւն է ինձ և անդադար ցաւ
3 իմ սրտին։ Քանզի կ'ընդրէի՝ ես ինքս նզովուած լինիլ Քրիստոսից իմ եղբայրների և մարմնաւոր ազ-
4 գականների համար. Որոնք Իսրայէլացի են, որոնցն է որդեգրութիւնը, և փառքը և կտակարանները, և օրինադրութիւնը և պաշ-
5 տօնը և խոստումները. Որոնց են

հարքը՝ և որոնցից Քրիստոսն է մարմնով կողմանէ, որ է ամենի վերայ Աստուած, օրհնեալ յաւիտեան. ամէն։ Բայց ոչ իբր 6
թէ Աստուծոյ խօսքը գետինն է ընկել. քանզի ոչ թէ ամենքն որ Իսրայէլից են՝ նորանք են Իսրայէլը։ Եւ ոչ թէ նորանք որ Ա- 7
բրահամի զաւակ են, ամենքն որդիք են, այլ Իսահակով քեզ համար զաւակ պիտի կանչուի։ Այսինքն՝ ոչ թէ մարմնոյ որդիքն 8
են Աստուծոյ որդիք. այլ խոստման որդիքն են զաւակ համարուում։ Քանզի խոստման խօս- 9
քը սա է. Թէ Այս ժամանակիս կ'գամ և Սառային որդի կ'լինի։ Եւ ոչ միայն այս. բայց 10
Հռեբեկան էլ մէկից յղանալով մեր հայր Իսահակից. Քանզի նո- 11
րանք տակաւին չծնուած, և ոչ բարի կամ չար բան էլ չգործած. որպէս թի ընտրութեան պէս Աստուծոյ նախասահմանութիւնը հաստատ մնայ. Ոչ թէ գործքերից 12
ցըն՝ այլ կանչողիցը, ասուեցաւ նորան. Թէ մեծը պիտի ծառայէ 13
փոքրին. ինչպէս գրուած է. Յակոբին սիրեցի, և Եսաւին ատեցի։
Հիմա ի՞նչ ասենք. միթէ Աս- 14
տուծոյ մօտ անիրաւութիւն կայ. քաւ լիցի։ Քանզի Մովսէսին ա- 15
ստում է. Կ'ողորմիմ՝ ում որ կ'ողորմիմ, և կ'գթամ՝ ում որ կ'գթամ։ Ա՞պա ուրեմն ոչ կամե- 16
ցողից է, և ոչ էլ վազողիցը, այլ Աստուածանից որ ողորմում է։ Քանզի գիրքն ասում է Փա- 17
րաւոնին, Թէ Հէնց նորա համար դրդուեցի քեզ՝ որ քեզանում յայտ տամ իմ զօրութիւնը, և իմ անունն ամեն երկրի մէջ պատմուի։
Ա՞պա ուրեմն՝ ում որ կամենում 18
է ողորմում է. և ում կամենում է խստացնում է։ Ա՞պա ինձ կ'ա- 19
սես, Էլ ինչո՞ւ է մեղադրում. նորա կամքին ո՞վ հակառակ կ'կենայ։ Բայց դու ո՞վ ես, մարդ, 20
որ Աստուծոյն դէմ պատասխան ես տալիս. միթէ առեղծուածը կ'ասէ իր Ստեղծողին՝ Թէ Ինչո՞ւ այդպէս արիր ինձ։ Միթէ բրու- 21
տը իշխանութիւն չունի հողի վե-

ԳԼ. Ժ

Եղբարք, իմ սրտի փափագը և դէպի Աստուած աղօթքը Իսրայէլի համար փրկութեան մասին է։ Քանզի վկայեմ եմ նորանց՝ որ Աստուծոյ նախանձն ունին, բայց գիտութեամբ չէ։ Քանզի Աստուծոյ արդարութիւնը չգիտենալով, և իրանց արդարութիւնը կանգնեցնել կամենալով՝ Աստուծոյ արդարութեանը չհնազանդեցին։ Քանզի օրէնքի վախճանը Քրիստոս է՝ ամեն հաւատացողի համար դէպի արդարութիւն։

Քանզի Մովսէս գրում է այն արդարութեան համար՝ որ օրէնքից է, Թէ այս բաները անող մարդը կ'ապրի նորանցով։ Բայց հաւատքից արդարութիւնը այսպէս է ասում. Ձասես քո սրտումը, Ո՞վ վեր կ'ելլէ երկինքն, այսինքն՝ Քրիստոսին վայր բերելու համար։ Կամ՝ ո՞վ կ'իջնէ անդունդն այսինքն՝ Քրիստոսին մեռելների միջից հանելու համար։ Բայց ինչ է ասում. Մօտիկ է քեզ խօսքը, քո բերանումն ու քո սրտումն է, այսինքն հաւատքի խօսքն՝ որ մենք քարոզում ենք։ Քանզի եթէ բերանովդ Յիսուսին Տէր դաւանես, և սրտովդ հաւատաս՝ Թէ Աստուած յարոյց նորան մեռելներից, կ'ապրիս։ Քանզի սրտով հաւատում ենք արդարանալու համար, և բերանով դաւանութիւն ենք՝ փրկուելու համար։ Քանզի գիրքն ասում է. Ամեն ով որ հաւատայ նորան՝ չի ամաչիլ։ Քանզի խտրութիւն չկայ Հրէայի և Յոյնի մէջ. որովհետև ինքն է ամենի Տէրը, առատ ամենի համար՝ որ կանչում են նորան։ Քանզի ամեն ով որ Տիրոջ անունը կանչէ կ'ապրի։

Արդ ինչպէս կանչեն, որին չհաւատացին. և ինչպէս հաւատան, որից չլսեցին. և ինչպէս լսեն, առանց քարոզողի. Եւ ինչպէս քարոզեն, եթէ չուղարկուին. ինչպէս գրուած է. Որպէ՛ս գեղեցիկ են նորանց առնելն՝ որ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

բայ, որ միևնոյն զանգուածիցը շինէ մէկը պատուոյ անօթ, և
22 միւսը անարգութեան։ Եւ եթէ Աստուած՝ կամենալով ցոյց տալ բարկութիւնը և յայտնել իր զօրութիւնը՝ շատ երկայնմտութեամբ համբերեց բարկութեան անօթներին՝ որ կորստեան համար
23 պատրաստուած էին. Եւ որ յայտնի ցոյց տայ իր փառաց մեծութիւնը՝ ողորմութեան անօթների վերայ, որոնց առաջուց պատ-
24 րաստեց փառաց համար։ Որ մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն Հրէաներից, այլ հեթանոսներից էլ.
25 Ինչպէս որ Յօսէի գրքումն էլ ասում է. Ան որ իմ ժողովուրդը չէ, ինձ ժողովուրդ կ'կանչեմ. և
26 չսիրուածը՝ սիրուած։ Եւ կ'լինի որ այնտեղ որ ասուեցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժողովուրդ չէք, այնտեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչուին։
27 Եսային աղաղակում է Իսրայէլի համար. Թէ և Իսրայէլի որդոց համարը ծովի աւազին պէս շատ լինի,
28 Հոյն մնացորդը կ'փրկուի։ Քանզի մի կարճ և համառօտ բան կ'անէ Տէրը արդարութեամբ. Տէրը կարճ
29 կ'անէ բանը երկրի վերայ։ Եւ ինչպէս որ Եսային առաջուց ասաց. Եթէ Սաբաւովթ Տէրը մեզ համար զաւակ չէր թողել, մենք Սոդոմի պէս կ'լինէինք և Գոմորին կ'նմանէինք։

30 Արդ ինչ ասենք. այն՝ որ հեթանոսներն, որ արդարութեան հետից չէին գնում, արդարութեան հասան՝ այն արդարութեանն որ հաւատքից է։ Բայց
31 Իսրայէլն՝ որ գնում էր արդարութեան օրէնքի հետից, արդարութեան օրէնքին չհասաւ։
32 Ինչո՞ւ համար. որովհետև ոչ թէ հաւատքից, այլ իբր օրէնքի գործքերից էին արդարանալ. քանզի գայթակղութեան քարի
33 վերայ գլորուեցան, Ինչպէս գրուած է. Ահա ես Սիոնի մէջ գայթակղութեան քար և գլորուելու վէմ եմ դնում. և ամեն նորան հաւատացողը չի ամաչիլ։

խաղաղութիւն են քարոզում և
բարի բաներ են աւետիք տալիս։
16 Բայց ոչ թէ ամենքը հնազանդ
եղան աւետարանին։ Դանիէլ ե-
սային ասում է. Տէր, ո՞վ հա-
17 ւատաց մեր լսելին։ Ուրեմն հա-
ւատքը լսելուցն է, և լսելը Ա-
18 ստուծոյ խօսքիցը։ Բայց ասում
եմ. Մի՞թէ չլսեցին. մանաւանդ
որ նորանց ձայնը դուրս գնաց բո-
լոր երկիրը, և նորանց խօսքը մին-
19 չև աշխարհքի ծայրերը։ Բայց ա-
սում եմ. Մի՞թէ Իսրայէլը չգի-
տաց. առաջ Մովսէս է ասում.
Ես ձեզ նախանձաւոր կ'շինեմ մի
ոչինչ ժողովրդով, և մի անմիտ
20 ազգով կ'կսկծացնեմ ձեզ։ Բայց
Եսային աւելի համարձակում է՝
և ասում. Ես գտնուեցայ նորան-
ցից՝ որ ինձ չէին որոնում. յայտ-
նի եղայ նորանց՝ որ ինձ համար
21 չէին հարցնում։ Բայց Իսրայէլին
ասում է. Ամբողջ օրն իմ ձեռքե-
րը մեկնեցի դէպի մի անհնազանդ
և հակառակող ժողովուրդ։

ԳԼ. ԺԱ.

1 Ասում եմ, Մի՞թէ Աստ-
ուած դէն գցեց իր ժողովուրդը.
քաւ լիցի. քանզի ես էլ Իսրա-
էլացի եմ՝ Աբրահամի զաւակից,
2 Բենիամինի ձեղիցը։ Աստուած
դէն չգցեց իր ժողովուրդը՝ որին
առաջուց ճանաչեց. կամ թէ չէ՞ք
գիտում թէ գիրքն ի՞նչ է ասում
Եղիայի համար ի՞նչպէս նա Իսրայէլի դէմ գանգա-
3 տում է Աստուծոյ առջև. Տէր,
քո մարգարէներին կատրեցին և
քո սեղանները կործանեցին. և
մինչև ես միայն մնացի, և իմ անձն են
4 որոնում։ Բայց աստուածային
պատգամն ի՞նչ է ասում նորան.
Եօթն հազար մարդ թողի ինձ
համար, որ Բահաղին ծունր
5 չդրին։ Հէնց այսպէս էլ այս ժա-
մանակումն շնորհքի ընտրութեան
6 պէս մի մնացորդ եղաւ։ Բայց ե-
թէ որ շնորհքով է՝ էլ գործքե-
րից չէ. ապա թէ ոչ՝ շնորհքն էլ
շնորհք չի լինիլ. բայց եթէ գործ-
քերից է, էլ շնորհք չէ. ապա

թէ ոչ՝ գործքն էլ գործք չէ։ Ու- 7
րեմն ի՞նչ. այն որ Իսրայէլը որո-
նում էր՝ նորան չհասաւ, բայց
ընտրուածները հասան, և միւս-
նները կուրացան։ Ինչպէս գրուած 8
է. Աստուած տուաւ նորանց թմր-
րութեան հոգի. աչքեր՝ որ չտես-
նեն, և ականջներ որ չլսեն, մին-
չև այս օրուայ օրը։ Եւ Դաւիթ 9
ասում է. Նորանց սեղանը թող
որոգայթ լինի նորանց՝ և որս և
գայթակղութիւն՝ և հատուցում
նորանց համար։ Թող նորանց աչ- 10
քերը խաւարին՝ որ չտեսանեն. և
նորանց թիկունքները միշտ ծռե-
ցուր։ Ուրեմն ասում եմ. Մի՞թէ 11
գլորուեցան՝ որ կործանուին. քաւ
լիցի. բայց նորանց գլորուելովը
հեթանոսների փրկութիւն եղաւ՝
որ նախանձի գրգռէ նորանց։ Բայց 12
եթէ նորանց յանցանքը աշխարհ-
քին մեծութիւն է, և նորանց
նուաստութիւնը հեթանոսների
մեծութիւն. էլ ո՞րքան աւելի
նորանց լիութիւնը։ Բայց ձեզ հե- 13
թանոսներիդ ասում եմ, քանի որ
ես հեթանոսների առաքեալ եմ՝
իմ պաշտօնը փառաւոր կ'անեմ.
Որ գուցէ իմ մարմինը քնքշեցնեմ 14
նախանձի գրգռեմ, և նորանցից
մի քանիսն ապրեցնեմ։ Քանզի ե- 15
թէ նորանց մերժումը աշխարհքի
հաշտութիւն է. ապա նորանց
ընդունելութի՞ւնն ինչ է, եթէ
ոչ՝ կենդանութիւն մեռելներից։
Եւ եթէ սկիզբը սուրբ է՝ ապա 16
զանգուածն էլ. և եթէ արմատը
սուրբ է՝ ապա ճիւղերն էլ։ Բայց 17
եթէ ճիւղերից ոմանք կտրուե-
ցան, և դու որ վայրի ձիթենի էիր՝
նորանցում պատուաստուեցար, և
հաղորդ եղար արմատին՝ և ձի-
թենու պարարութեանը. Մի 18
պարծենար այն ճիւղերի դէմ. բայց
եթէ պարծենաս, դու չես արմա-
տը վեր բռնում, այլ արմատը
քեզ։ Արդ կ'ասես, ճիւղերը կտր- 19
ուեցան՝ որ ես պատուաստուիմ։
Լաւ. նորանք անհաւատութեա- 20
նով կտրուեցան, և դու հա-
ւատքով հաստատուեցար. մի մե-
բարտուանար, այլ վախեցիր։
Քանզի եթէ Աստուած բնական 21

ճիւղերին չխնայեց, մի գուցէ քեզ
22 էլ չխնայէ։ Արդ տես Աստուծոյ քաղցրութիւնը և ահագնութիւնը. կործանուածներուն վերայ ահագնութիւնը, և քեզ վերայ քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութեանը մէջ կենաս. ապա թէ ոչ
23 դու էլ կ'կտրուիս։ Եւ նորանք էլ՝ եթէ անհաւատութիւնով չկենան՝ կ'պատուաստուին. քանզի Աստուած կարող է դարձեալ
24 պատուաստել նորանց։ Քանզի եթէ դու ի բնէ վայրի ձիթենուէ կտրուեցար՝ և բնութեան դէմ բարի ձիթենու վերայ պատուաստուեցար, էլ ո՞րքան աւելի նորանք՝ որ բնական են՝ կ'պատուաստուին իրանց ձիթենու վերայ։
25 Քանզի չեմ կամենում, եղբարք, որ չգիտենաք այս խորհուրդը, որ ձեր անձներուդ իմաստուն չլինիք, որ քար մասին Իսրայէլին կուրութիւն եղաւ, մինչև հեթա-
26 նոսներուն լրութիւնը մտնէ։ Եւ այսպէս բոլոր Իսրայէլը կ'ապրի. ինչպէս գրուած է, թէ Սիոնիցը Փրկիչը կ'գայ՝ և ամբարշտութիւնները դէն կ'գցէ Յակոբիցը։
27 Եւ այս է իմ ուխտը նորանց հետ, երբոր նորանց մեղքերը վեր կ'առնեմ։
28 Աւետարանի նկատմամբ նորանք թշնամի են ձեր պատճառով, բնտրութեան նկատմամբ՝ սիրելի են հարանց համար։ Որովհետև Աստուծոյ շնորհքը և կոչումը պղջնալ չուներ։
30 Քանզի ինչպէս դուք էլ մի ժամանակ չէիք հաւատում Աստուծոյն, և հիմա ողորմութիւն գտաք նորանց ան-
31 հնազանդութիւնովը. Այնպէս էլ նորանք հիմա չհաւատացին ձեր ողորմութիւնովը. որ նորանք էլ ո-
32 ղորմութիւն գտնեն։ Քանզի Աստուած ամենքին անհաւատութեան մէջ արգիլեց՝ որ ամենքին ողորմի։
33 Ո՛վ Աստուծոյ ճոխութեան և իմաստութեան և գիտութեան խորութիւնը. ինչպէ՛ս անքննելի են նորա դատաստանները, և անհետանալի են նորա ճանապարհները։
34 Քանզի ով գիտաց Տիրոջ միտքը, կամ ո՞վ եղաւ նորա խոր-
35 հրդակից, կամ ո՞վ նորա առա-

ջուց դ բան տուաւ, որ նորա հատուցումն առնէ նորանից։ Քանզի 36
ամէն նորանից և նորանով և դէպի նո՛ւա է ամէն բան. նորան փառք յաւիտեան. ամէն։

ԳԼ. ԺԲ

Արդ աղաչում եմ ձեզ, եղբարք, 1
Աստուծոյ ողորմութիւնովն, որ ձեր մարմինները պատարագ կեան դանի, սուրբ և Աստուծոյ ընդունելի պատարագ, որ է ձեր բանաւոր պաշտօնը։ Եւ մի կերպարանուիք այս աշխարհքին կերպարանքը. այլ նորոգուեցէք ձեր մտքին նորոգութեամբը, որ գուք քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին և կատարեալը։ Քանզի Աստուծոյ շնորհքովն՝ որ ինձ տրուած է՝ ասում եմ ձեր մէջ ամենին, բան չմտածել նորանից աւելի, քան թէ արժան է մտածել. այլ մտածել պարկեշտ կենալ՝ ինչպէս որ Աստուած ամեն մէկին հատուածի չափը բաժանեց։ Որովհետև ինչպէս մէկ մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք, և այն ամեն անդամները մի և նոյն գործը չունին։ Այնպէս էլ շատերս մէկ մարմին ենք Քրիստոսումն, բայց ամեն մէկն միմեանց անդամ ենք։ Միայն թէ պատուական պարգևներ ունինք այն շնորհաց պէս՝ որ մեզ տրուած է. թէ մարգարէութիւն՝ հաւատքի չափովը համեմատութեամբ։ թէ պաշտօն՝ պաշտօնութեամբ։ թէ ուսուցիչ՝ ուսուցմամբ։ Ներ-
պէս՝ որ ներողամիտ է՝ մարդասիրութեամբ։ Ներ-
կայ եղէք. պատիւ տալով իրար առաջ անցէք։ Ջանք անելով՝ թոյլ չլինիք. հոգովն ջերմեռանդ եղէք, Տիրոջը ծառայեցէք։ Յուսով ուրախացէք, նեղութեան համբերեցէք, աղօթքին առէք հետևեցէք։ Սրբերի պիտոյիցը հաղորդ եղէք. հիւրասիրութեան հե-

14 տեսնեք։ Ձեզ հալածողներին օրհ-
15 նեցէք և մի անիծէք։ Ուրախա-
ցողների հետ ուրախացէք, և լա-
16 ցողների հետ լացէք։ Իրար վերայ
մի և նոյն խորհուրդը ունեցէք.
բարձր բաները մի խորհիք. այլ
խոնարհների հետ խոնարհուեցէք.
ձեր անձերուն մէջ իմաստուն մի լի-
17 նիք։ Մէկին չարի տեղ չար մի
հատուցանէք. ամեն մարդկանց
առջև բարի խորհուրդ ունեցէք։
18 Եթէ կարելի է՝ որքան ձեզանից
է կախուած՝ ամեն մարդկանց հետ
19 խաղաղութիւն ունեցէք։ Ձեր ան-
ձների համար վրէժխնդրութիւն մի
անէք, սիրելիներ. այլ բարկու-
թեան տեղ տուէք. քանի գրու-
ած է՝ Վրէժխնդրութիւնն իմն
է. ես հատուցումը կ'ուտամ, ա-
20 սում է Տէրը։ Այդ եթէ քո թշնա-
մին սոված է, հաց տուր նորան. և եթէ ծարաւ է, ջուր
տուր նորան. քանի այս անելով
կրակի կոյտեր կ'ժողովես նո-
21 րա գլխի վերայ։ Մի յաղթուիր
չարից, այլ բարիով յաղթիր
չարին։

ԳԼ. Ժ.Գ

1 Ամեն անձն թող հնազանդէ
բարձր իշխանութեանց. քանի
չկայ իշխանութիւն որ ոչ է Աստուածանից. և ներկայ իշխա-
թիւնները Աստուածանից են կար-
2 գուած։ Որովհետև իշխանութեանը
հակառակողը Աստուծոյ հրամանին է հակառակում. և հակա-
ռակողները իրանց անձերին դա-
3 տաստան կ'ընդունին։ Քանի իշ-
խանները բարի գործքերի համար
վախի պատճառ չեն, այլ չար գործ-
քերի. կամենա՞ս դու որ իշխա-
նութիւնից չվախենաս, բարին
գործիր, և նորանից գովասանք
4 կ'ընդունիս։ Քանի ապաստար է
նա Աստուծոյ քեզ համար դէպի
բարին. ապա եթէ չարը գործես
վախեցիր. քանի զուր տեղը սու-
ր չէ կրում. քանի նա ապաստա-
ր է Աստուծոյ՝ վրէժխնդիր բար-
կութիւն բերելը չարը գործողի
5 համար։ Վանորոյ պէտք է հնա-
զանդ լինել ոչ միայն բարկու-
թեան համար, այլ խղճմտանքի
համար էլ։ Որովհամար հարկ էլ 6
էք վճարում. քանզի նորանք ապա-
ստարներ են Աստուծոյ որ իսկ
այս բանին հոգ են տանում։ Ու- 7
րեմն ամենին վճարեցէք ինչ պարտ-
քը. ում որ հարկ պիտի էք՝ հար-
կը. ում որ մաքս՝ մաքսը. ում
որ վախ՝ վախը, ում որ պատիւ՝
պատիւը։

Ոչ ումի ոչինչ պարտական չմնաք՝ 8
բացի իրար սիրելուց. քանզի ըն-
կերին սիրողը՝ օրէնքը կատարել
է։ Վանզի այն Մի շնար, Մի 9
սպանանիր, Մի գողանար, Մի
ատա վկայիր, և Մի ցանկանա-
րը, և ուրիշ ինչ պատուիրանք
էլ որ կայ, այս խօսքումն է բո-
վանդակում, Որ ընկերն սիրիր քո
անձի պէս։ Սէրն իր ընկերին չար 10
չի անիլ. արդ օրէնքի լրումը սէ-
րըն է։

Եւ այս ժամանակով ժամա- 11
նակը. որ ժամ է արդէն որ քնե-
ցըն զարթնել. քանզի հիմա մեզ
աւելի մօտ է փրկութիւնը՝ քան
թէ այն ժամանակ՝ որ հաւատա-
ցինք։ Գիշերն անցաւ գնաց, և 12
ցերեկը մօտեցել է. ուրեմն դէն
գցենք խաւարի գործքերը, և հագ-
նենք լուսոյ զէնքերը։ Ինչպէս ցե- 13
րեկով պարկեշտութեամբ մեն
գանք. ոչ թէ անառակութիւն-
ներով և արբեցութիւններով և
խառն անկողիններով և պղծու-
թիւններով, ոչ հակառակու-
թիւնով և ոչ նախանձով։ Բայց 14
Տէր Յիսուս Քրիստոսին հագէք.
և մարմնոյ համար խնամք մի տա-
նիք դէպի ցանկութիւն։

ԳԼ. Ժ.Դ

Բայց հաւատքի մէջ տկար լի- 1
նողին ընդունեցէք առանց կար-
ծիքների վերայ վիճելու։ Մէկը հա- 2
ւատում է՝ թէ ամեն բան կարող
է ուտել. բայց տկարը բանջար է
ուտում։ Ուտողը չանարգէ չու- 3
տողին. և չուտողը չդատէ ուտո-
ղին. քանզի Աստուած ընդունեց
նորան. Դու ո՞վ ես՝ որ ուրիշի 4

ծառային դատում ես. իր Տիրոջ
է կանգնում կամ ընկնում. բայց
կ'կանգնի, քանզի Աստուած կա-
5 րող է կանգնեցնել նորան։ Մէ-
կը օրն օրից աւելի է համարում,
իսկ միւսն ամեն օր մէկ է համա-
րում. ամեն մէկը թող իր միտքը
6 հաստեցնէ։ Օրին մտիկ անողը, Տի-
րոջ համար է մտիկ անում. և օ-
րին մտիկ չանողը, Տիրոջ համար
չէ մտիկ անում. և ուտողը Տիրոջ
համար է ուտում, քանզի Աս-
տուծոյնից գոհանում է. և չու-
տողը Տիրոջ համար չէ ուտում,
և Աստուծոյնից գոհանում է։
7 Քանզի մեզանից ոչ ոք ինքն իրան
համար չէ ապրում, և ոչ ոք
ինքն իրան համար չէ մեռնում։
8 Քանզի եթէ ապրինք՝ Տիրոջ հնք
ապրում, և եթէ մեռնինք՝ Տի-
րոջն հնք մեռնում. ուրեմն թէ
ապրինք և թէ մեռնինք՝ Տիրոջն
9 հնք։ Քանզի նոյն իսկ Նորա համար
էլ Քրիստոս մեռաւ և կենդա-
նացաւ՝ որ մեռելների և կենդա-
10 նիների վերայ տիրէ։ Բայց դու
ինչո՞ւ համար ես դատում եղբօ-
րըդ, կամ ինչո՞ւ ես քո եղբօրն
անարգում. քանզի ամենքս Քրիս-
տոսի առաջին առջև պիտի կանգ-
11 նինք։ Որովհետև գրուած է՝ Ես
կենդանի եմ, ասում է Տէրը. որ
ամեն ծունկ ինձ պիտի կրկնուի
և ամեն լեզու խոստովան լինի Աս-
12 տուծոյն։ Ուրեմն մեզանից ամեն
մէկն իր անձի համար պիտի հա-
13 շիւ տայ Աստուծոյն։ Այսուհետև
այլ ևս իրար չդատենք. այլ ա-
ւելի այս դրեք ձեր մտքումը, որ
եղբօր գլորում կամ գայթակ-
14 ղութիւն չդնէք։ Գիտեմ և հաս-
տատ իմանում եմ Տէր Յիսու-
սումն, որ ոչ մի բան պիղծ չէ
ինքն իրանով. բայց ով որ մի
բան պիղծ է համարում, նորա
15 համար պիղծ է։ Բայց եթէ կե-
րակուրի պատճառով քո եղբայ-
րը տրտմում է, դու այլ ևս նո-
րա հետ սիրով չես վարվում, քո
կերակուրովը մի կորցնիր նորան,
16 որի համար Քրիստոս մեռաւ։ Արդ
17 ձեր բարի բանը չհայհոյուի։ Քան-
զի Աստուծոյ արքայութիւնն ու-
տելիք և խմելիք չէ, այլ արդա-
րութիւն և խաղաղութիւն և ու-
րախութիւն Սուրբ Հոգովը։ 18
Քանզի որ սորանցնում Քրիստոսին
ծառայում է, Աստուծոյն հաճոյ
է, և մարդկանց գովելի։ Ա՛պա 19
ուրեմն խաղաղութեան և միմեանց
շինութեան բաներըն հետևից դը-
նանք։ Կերակուրի պատճառով մի 20
քանդիր Աստուծոյ գործը. ամեն
բան մաքուր է. բայց չար՝ այն
մարդու համար որ գայթակղու-
թիւն տալով է ուտում։ Լաւ է 21
միս չուտել և գինի չխմել, և այն
բանը չանել որ նորանով քո եղ-
բայրը գայթակղում է կամ գայթ-
ղում է կամ տկարանում է։ Դու 22
հաւատ ունիս. քեզ համար ու-
նեցիր Աստուծոյ առջև. երանի
նորան՝ որ իր անձը չդատապար-
տէ նորանով, որ ընդունում է։
Իսկ նա որ խղճմտանք է անում, 23
եթէ ուտէ դատապարտուած է,
քանզի հաւատքից չէ. և ամեն
բան որ հաւատքից չէ, մեղք է։

ԳԼ. ԺԵ

Մենք որ կարող ենք՝ պէտք է 1
տկարների տկարութիւնը վեր տա-
նենք, և միայն մեր անձներին հա-
ճոյ չլինինք։ Ա՛պա մեզանից ա- 2
մեն մէկը թող հաճոյ լինի ընկե-
րին դէպի բարին՝ շինութեան հա-
մար։ Որովհետև Քրիստոս էլ ոչ 3
թէ իր անձին հաճոյ եղաւ, այլ
ինչպէս գրուած է, Ըն Քեզ նա-
խատողների նախատինքներն ինձ
վերայ ընկան։ Վասնզի ինչ որ 4
գրուեցաւ՝ մեր սովորելուն հա-
մար գրուեցաւ, որ համբերու-
թեամբ և գրքերի մխիթարու-
թեամբը յոյսն ունենանք։ Եւ համ- 5
բերութեան և մխիթարութեան
Աստուածը տայ ձեզ միևնոյն բա-
նը խորհիլ իրար հետ Քրիստոս
Յիսուսի պէս։ Որ միաբան մէկ 6
բերանով փառաւորէք Աստու-
ծոյն, և մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի Հօրը։ Վասնորոյ իրար ըն- 7
դունեցէք, ինչպէս Քրիստոս էլ
մեզ ընդունեց Աստուծոյ փառաց
համար։ Բայց ասում եմ. թէ Յի- 8

սուս Պրիսկա թլփատութեան
պատասուր եղաւ Աստուծոյ ճըշ-
մարտութեան համար, որ հա-
րանց խոստումները հաստատէ։
9 Բայց հեթանոսները ողորմութեան
համար փառաւորեմ են Աստու-
ծոյն, ինչպէս գրուած է. Ե՛ս ա-
րա համար կ'գոհանամ քեզանից
հեթանոսների մէջ, և քո անուա-
10 նը սաղմոս կ'ասեմ։ Եւ դարձեալ
ասում է. Ուրախացէք, ով հե-
թանոսներ, նորա ժողովրդի հետ։
11 Եւ դարձեալ Օրհնեցէք Տիրոջ,
ամեն հեթանոսներ, և գովեցէք
12 նորան, ամեն ժողովուրդներ։ Եւ
դարձեալ Եսային ասում է. Յէս-
սէի արմատը կ'լինի, և նա որ հե-
թանոսների համար իշխան կ'կանգ-
նի. նորան յոյս կ'դնեն հեթա-
13 նոսները։ Եւ յուսոյ Աստուածը
լեցնէ ձեզ ամեն ուրախութիւնով
և խաղաղութիւնով, հաւատա-
լու մէջ, որ յուսով առլանաք
Սուրբ Հոգոյ զօրութիւնով։
14 Եւ ես ինքս էլ, եղբարքս, ձեզ
համար հաստատ եմ, որ դուք լի-
քըն էք բարութիւնով, լեցուած
ամեն գիտութիւնով, որ կարող էք
15 իրար էլ խրատել։ Բայց համար-
ձակեցի, եղբարք, փոքր ի շատէ
գրել ձեզ. իբր թէ ձեզ յիշեց-
նեմ Աստուածանից ինձ տրուած
16 այն շնորհքի պատճառովը. Որ
ես Յիսուսի Քրիստոսի սպասաւո-
րըն եմ հեթանոսների մէջ. Ա-
ստուծոյ աւետարանը մատակարա
րող, որ հեթանոսների պատա-
րագն ընդունելի լինի՝ Սուրբ Հո-
17 գովը սրբուած։ Արդ պարծանք
ունիմ Քրիստոս Յիսուսը Աստու-
18 ծոյ առջև։ Քանզի չեմ համար-
ձակիլ մի բան խօսել՝ որը Քրիս-
տոս չգործեց ինձանով հեթանո-
սները հնազանդեցնելու համար՝
19 խօսքով և գործքով, նշանների
և հրաշքների զօրութիւնով, Ա-
ստուծոյ Հոգոյ զօրութիւնով. այն-
պէս որ ես Երուսաղէմից սկսած
պտոյտ տալով մինչև Լիւրիկա-
ցոց կողմերը Քրիստոսի աւետա-
20 րանովը լցրել եմ։ Այնպէս ջանք
արի աւետարանը քարոզել, ոչ
թէ որտեղ որ Քրիստոսի անունն
անուանուած էր, որ մի գուցէ
ուրիշի հիման վերայ շինեմ. այլ
ինչպէս որ գրուած է. Թէ որոնց 21
չէ պատմուած նորա համար՝ կ'տես-
նեն, և որոնք որ չեն լսել՝ միտք
կ'անեն։ Սորա համար էլ շատ 22
անգամ արգիլուեցայ ձեզ մօտ գա-
լուց։ Բայց հիմա որ այս կողմե- 23
րումն այլ ևս տեղ չունիմ. և շատ
տարուց հետէ խիստ փափագ ու-
նիմ ձեզ մօտ գալու. Երբոր անց- 24
կենամ Սպանիա, կ'գամ ձեզ
մօտ. յոյս ունիմ որ անցկենալու
ժամանակս տեսնեմ ձեզ, և ձե-
զանից ճանապարհ գցուիմ այն
տեղ, եթէ առաջ մի քիչ ձեզա-
նով լիանամ։ Բայց հիմա Երու- 25
սաղէմ եմ գնում սրբերին ծա-
ռայութիւն տանելով։ Քանզի Մա- 26
կեդոնացիք և Աքայեցիք հաճեցան
մի հաղորդութիւն անել աղքատ
սրբերին որ Երուսաղէմումն են.
Հաճեցան, նոյն իսկ պարտական 27
էլ են նորանց. քանզի եթէ հե-
թանոսները նորանց հոգևոր բա-
րիքներին մասնակից եղան, պէտք
է՝ որ մարմնական բաներում էլ
ծառայեն նորանց։ Արդ այս որ 28
կատարեմ և նորանց պտուղն իր
առջև հասցնեմ, կ'անցնեմ Սպա-
նիա ձեր միջովը։ Եւ գիտեմ որ 29
երբոր ձեզ մօտ գամ, Քրիստոսի
աւետարանի առատ օրհնութիւ-
նովը կ'գամ։
Եւ աղաչում եմ ձեզ, եղբարք, 30
մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձե-
ռովը և Հոգոյ սիրովը, որ ինձ
պատերազմակից լինիք՝ ինձ հա-
մար աղօթքներ անելով դէպի
Աստուած. Որ ազատուիմ այն 31
անհնազանդներից որ Հրէաստա-
նումն են. և իմ ծառայութիւնն
որ Երուսաղէմ էմ տանում՝ սուր-
բերին ընդունելի լինի. Որ ուրա- 32
խութիւնով ձեզ մօտ գամ Աս-
տուծոյ կամքովը, և ձեզ հետ
հանգիստ առնեմ։ Եւ խաղաղու- 33
թեան Աստուածը ձեր ամենի հետ
լինի. ամէն։

ԳԼ. ԺԶ

Յանձնում եմ ձեզ մեր քոյր Փիբէ 1

քոյրը, որ ապաւաւոր է Կենքրէայի
2 եկեղեցու։ Որ նորան ընդունիք
Տէրով. ինչպէս արժանի
է. և հոգ առնիք նորան ինչ բան
որ ձեզանից պէտք ունենայ, քան-
զի ինքն էլ շատերին խնամք է
3 տարել, և իսկ ինձ էլ։ Բարև
տուէք Պրիսկիլլային և Ակիւղա-
յին՝ իմ գործընկերներին Քրիս-
4 տոս Յիսուսումը. Որ իմ անձի
տեղ իրանց վիզը տուին,
որոնցից ոչ միայն ես եմ շնորհա-
կալ՝ այլ և Հեթանոսների բոլոր
5 եկեղեցիները. Եւ նորանց տանը
լինող եկեղեցուն. բարև տուէք
Եպենետին՝ իմ սիրելին որ Աքա-
յիայէն անդրանիկն է՝ ի Քրիստոս։
6 Բարև տուէք Մարիամին՝ որ շատ
7 աշխատեց մեր վերայ։ Բարև տուէք
Անդրոնիկոսին և Յունեային՝ իմ
ազգականներին, և գերութեանս
ընկերներին. որ առաքելոց մէջ
երևելի են՝ որ ինձանից առաջ են
8 եղել Քրիստոսումը։ Բարև տուէք
Ամպլիատին իմ սիրելոյն՝ ի Տէր։
9 Բարև տուէք Ուրբանոսին՝ մեր
գործակցին՝ ի Քրիստոս, և Ստա-
10 քեսին իմ սիրելուն։ Բարև տուէք
Ապելլէսին՝ որ ազնիւ է՝ ի Քրիս-
11 տոս։ Բարև տուէք նորանց՝ որ
Արիստոբուլի տանիցն են. բարև
տուէք Հերովդիոնին՝ իմ ազգա-
կանին. բարև տուէք նորանց,
որ Նարկիսէի տանիցն են՝ ի Տէր։
12 Բարև տուէք Տրիփանոսին և Տրի-
փոսին՝ որ աշխատաւորներ են՝ ի
Տէր. բարև տուէք Պերսիդէ սի-
րելուն՝ որ շատ աշխատեց՝ ի Տէր։
13 Բարև տուէք Ռուփոսին՝ որ ըն-
տիր է՝ ի Տէր. և նորա և իմ մօ-
14 րը։ Բարև տուէք Ասինկրիտոսին,
Փլեգոնտին, Երմոսին, Պատրո-
բային, Երմէսին, և եղբայրներին
15 որ նորանց հետ են։ Բարև տուէք
Փիլոլոգին և Յուլիային և Ներ-
էին և նորա քրոջը և Ոլիմպասին
և բոլոր սրբերին՝ որ նորանց հետ
16 են։ Բարև տուէք իրար սուրբ
համբուրով. բարև են տալիս ձեզ

Քրիստոսի բոլոր եկեղեցիները։
Աղաչում եմ ձեզ, եղբարք, որ 17
մտիք տակ նորանց՝ որ հերձուած-
ներ և գայթակղութիւններ են
շինում այն վարդապետութիւն-
ցը դուրս՝ որ դուք սովորեցիք՝ և
հեռու քաշուեցէք նորանցից։
Քանզի այդպիսիները մեր Տէր Քրի- 18
ստոսին չեն ծառայում, այլ
իրանց փորին. և քաղցր խօսքե-
րով և գովութիւնով խաբում են
անմեղների սրտերը։ Քանզի ձեր 19
հնազանդութիւնն ամենի մէջն
հասաւ. և սորա համար ուրախ
եմ ձեզ համար. միայն ուզում
եմ՝ որ դուք իմաստուն լինիք դէ-
պի բարին՝ և անմեղ դէպի չարը։
Եւ խաղաղութեան Աստուածը 20
խորտակէ սատանային ձեր ոտց
տակ շուտով. մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի շնորհքը թէ ձեզ հետ.
ամէն։
Բարև են տալիս ձեզ Տիմոթէ- 21
ոս՝ իմ գործընկերը, և Լուկիոս
և Յասոն և Սոսիպատրոս՝ իմ ազ-
գականները։ Բարև եմ տալիս ձեզ 22
ես՝ Տերտիոս, որ այս թուղթը
գրեցի՝ ի Տէր։ Բարև է տալիս ձեզ 23
Գայիոս՝ իմ և բոլոր եկեղեցու
հիւրընկալը. բարև է տալիս ձեզ
Երաստոս՝ քաղաքիս հոգաւորը,
և Կուարտոս եղբայրը։ Մեր Տէր 24
Յիսուսի Քրիստոսի շնորհքը թէ
ձեր ամենից հետ. ամէն։
Բայց նորան, որ կարող է ձեզ 25
հաստատ պահել իմ աւետարանի
և Յիսուսի Քրիստոսի քարոզու-
թեան համեմատ, այն խորհրդոյ
յայտնութեան համեմատ որ յա-
ւիտենական ժամանակներից լուռ
պահուած էր, բայց հիմա մար- 26
գարէական գրքերով յայտնուե-
ցաւ՝ յաւիտենական Աստուծոյ
հրամանին պէս, և հաւատքին
հնազանդելու համար բոլոր հե-
թանոսների մէջ ճանաչուեցաւ.
Ա՛յն միայն իմաստուն Աստու- 27
ծոյն, Յիսուս Քրիստոսի միջոցով,
նորան փառք յաւիտեան. Ամէն

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի կան-
չուած առաքեալ Աստուծոյ կամ-
2 քով, և Սոսթենէս եղբայրը. Ա-
ստուծոյ եկեղեցւոյդ, որ Կորնթա-
ւոսի է, Յիսուս Քրիստոսովը
սրբուածներիդ՝ կանչուած սրբե-
րիդ՝ այն ամենքի հետ, որ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի անունը
կանչում են ամեն տեղ՝ իրանց և
3 մեր։ Շնորհք լինի ձեզ հետ և խա-
ղաղութիւն Աստուած մեր Հօրի-
ցը՝ և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
4 Ամեն ժամանակ գոհանում եմ
իմ Աստուածանից ձեր մասին,
Աստուծոյ այն շնորհքի համար՝
որ տրուած է ձեզ Քրիստոս Յի-
5 սուսումը. Որ ամեն բանի մէջ
հարստացաք նորանով ամեն խօս-
6 քով և ամեն գիտութիւնով։ Ինչ-
պէս Քրիստոսի վկայութիւնը հաս-
7 տատուեցաւ ձեր մէջ։ Որ դուք
չպակասուիք ոչ մի շնորհքով մեր
Տէր Յիսուս Քրիստոսի յայտնու-
8 թեան ապասելով. Որ և կ'հաս-
տատէ ձեզ մինչև վերջը՝ անմե-
ղադրելի մեր Տէր Յիսուսի Քրիս-
9 տոսի օրուայը։ Հաւատարիմ է
Աստուած՝ որի ձեռով կանչուե-
ցաք դէպի նորա Որդոյ՝ մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի հաղորդու-
թիւնը։
10 Աղաչում եմ ձեզ, եղբարք,
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անու-
նովը, որ ամենքիդ միևնոյն խօս-
քըն ունենաք, և երկպառակու-
թիւններ չլինին ձեր մէջ. այլ մի
և նոյն մտքի և մի և նոյն կարծի-
քի մէջ հաստատուած լինիք։
11 Քանզի ձեր մասին ինձ լուր հա-
սաւ, եղբարք, Քղուէի ընտանի-
քից, թէ հակառակութիւններ
12 կան ձեզանում։ Եւ այս եմ ա-
սում՝ որ ձեզանից ամեն մէկն ա-
սում է. Ես Պօղոսեան եմ, և ե՛ս
Ես Ապողոսեան, և ե՛ս Ես Կեփասեան, և ե՛ս Ես Քրիս-
տոսեան։ Բաժանուա՞ծ է Քրիս- 13
տոս. մի՞թէ Պօղոս խաչուեցաւ
ձեզ համար՝ կամ Պօղոսի անու-
նով մկրտուեցաք։ Գոհանում եմ 14
Աստուածանից որ ձեզանից ոչ
մէկին չմկրտեցի. բայց միայն Կրիս-
պոսին և Գայիոսին. Որ մէկը չասէ, 15
թէ իմ անունովը մկրտեցի։ Եւ 16
Ստեփանի տունն էլ մկրտեցի.
էլ չգիտեմ, թէ մի ուրիշն էլ մը-
կըրտեցի։
Քանզի Քրիստոս չուղարկեց ինձ 17
մկրտելու, այլ աւետարանը քա-
րոզելու. ոչ թէ խօսքի իմաս-
տութեամբ, որպէսզի ունայն չլի-
նի Քրիստոսի խաչը։ Քանզի խա- 18
չի խօսքը կորածների համար յի-
մարութիւն է, բայց մեզ փըր-
կուածներիս համար Աստուծոյ
զօրութիւն է։ Քանզի գրուած է. 19
Իմաստուններիի իմաստութիւնը
կ'կորցնեմ, և խելացիների խոր-
հուրդները կ'անարգեմ։ Ո՞ւր է ի- 20
մաստուն, ո՞ւր է գպիր, ո՞ւր է
այս աշխարհի քննող. չէ՞ որ
Աստուած այս աշխարհի իմաս-
տութիւնը յիմարացրեց։ Քանզի 21
որովհետև Աստուծոյ իմաստու-
թեան մէջ աշխարհ իմաստու-
թիւնով չճանաչեց Աստուծոյն.
Աստուած հաճեցաւ որ քարոզու-
թեան յիմարութիւնովը ապրեցնէ
հաւատացեալներին։ Եւ որովհե- 22
տև Հրէաները նշան են ուզում,
և Յոյները իմաստութիւն են խընդ-
րում. Մենք էլ քարոզում ենք 23
խաչեալ Քրիստոսը, Հրէաներին
գայթակղութիւն և Յոյներին յի-
մարութիւն, Բայց այն կանչուած 24
Հրէաներին և Յոյներին, Քրիստո-
սը Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն։
Վասնզի Աստուծոյ յիմարութիւ- 25
նը իմաստուն է քան թէ մարդիկ
և Աստուծոյ տկարութիւնը զօրա-
ւոր է քան թէ մարդիկ։ Հէնց 26
ձեր կոչումին մտիկ արէք, եղ-
բարք, որ ոչ թէ շատ իմաստուն-

ներ մարմնոյ կողմանէ, և ոչ թէ
շատ զօրութիւնք, և ոչ թէ շատ
27 ազնուականք. Այլ այս աշ-
խարհքի յիմարները Աստուած
ընտրեց՝ որ ամաչեցնէ իմաստուն-
ները. և աշխարհքիս տկարները
Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ
28 զօրութիւնները, և աշխարհքիս
անտոհմները և անարգուածները
ընտրեց Աստուած և ոչինչ-
ները, որ մի բան լինողներին ոչն-
29 չացնէ, Ոչ մի մարմին չպարծե-
30 նայ նորա առջև, և դուք նո-
րանից էք Յիսուս Քրիստոսումն՝
որ Աստուածանից մեզ համար
եղաւ իմաստութիւն, և արդա-
րութիւն և սրբութիւն և փրկու-
31 թիւն, Որ ինչպէս գրուած է.
Ով որ պարծենում է՝ Թող Տէ-
րով պարծենայ։

Գ.Լ. Բ

1 Եւ ես էլ, եղբայրք, որ ձեզ մօտ
եկայ, ոչ թէ խօսքի կամ իմաս-
տութեան գերազանցութիւնով
եկայ Աստուծոյ վկայութիւնը ձեզ
2 պատմելու, Քանզի միտքս չէի
դրած՝ մի ուրիշ բան գիտենալ
ձեր մէջ բայց միայն Յիսուս Քրի-
ստոսին՝ և այն էլ խաչուածին
3 Եւ ես տկարութիւնով և վախով
և շատ դողով եղայ ձեզ մօտ,
4 Եւ իմ՝ խօսքը և քարոզութիւնը
ոչ թէ մարդկային իմաստու-
թեան պատեր խօսքերովն եղաւ,
այլ Հոգոյ և զօրութեան ապա-
5 ցուցութեամբը. Որ ձեր հաւատքը
մարդկանց իմաստութիւնով չլի-
նի այլ Աստուծոյ զօրութիւնով
6 լը։ Բայց իմաստութիւն ենք խո-
սում կատարեալների հետ, և ոչ
թէ այս աշխարհքի իմաստութիւ-
նը, և ոչ էլ այս աշխարհքի իշ-
խանների՝ որ պիտի խափան-
7 ուին։ Այլ Աստուծոյ ծածուկ
իմաստութիւնն ենք խօսում՝ խոր-
հրդով, որ Աստուած յաւիտե-
նից առաջ սահմանեց նորան մեր
8 փառաց համար։ Որն այս աշխարհ-
քի իշխաններից ոչ ով չճանա-
չեց. քանզի եթէ ճանաչած լինէին
փառաց Տէրոջը չէին խաչ հանել.
Այլ ինչպէս գրուած է. Ինչ որ 9
աչք չտեսաւ և ականջ չլսեց և
մարդու սիրտ չընկալաւ, այն պատ-
րաստեց Աստուած իրան սիրողնե-
րի համար։ Բայց մեզ յայտնեց 10
Աստուած իր Հոգովը. քանզի Հո-
գին ամեն բաները քննում է, և
Աստուծոյ խորքն էլ։ Քանզի մարդ- 11
կանցից ո՞վ գիտէ մարդու բաներ-
ը եթէ ոչ մարդու հոգին, որ
նորանում է. այնպէս էլ Աստու-
ծոյ բաներն ոչ ով չգիտէ, եթէ
ոչ Աստուծոյ Հոգին։ Եւ մենք ոչ 12
թէ այս աշխարհքի հոգին առինք,
այլ այն Հոգին՝ որ Աստուածա-
նից է. որ ճանաչենք այն աշխարհ-
քին՝ որ Աստուածանից պարեւեցաւ
մեզ։ Որն էլ խօսում ենք՝ ոչ թէ 13
մարդկային իմաստութեան սովո-
րած խօսքերով, այլ Սուրբ Հո-
գոյ սովորեցրածներովը՝ հոգևոր-
ներն հոգևորների հետ համեմա-
տելով։ Բայց շնչաւոր մարդն Ա- 14
ստուծոյ Հոգոյ բաները չէ ընդու-
նում. քանզի նորանք յիմարու-
թիւն են նորա համար, և չէ կա-
րող էլ գիտենալ՝ որովհետև հո-
գևոր կերպով են քննվում։ Բայց 15
հոգևոր մարդը ամեն բան քննում
է, և ինքն ոչ ոքից չէ քննվում։
Քանզի՝ «Ո՞վ գիտաց Տիրոջ միտ- 16
քը, որ բան սովորեցնէ նորան.
բայց մենք Քրիստոսի միտքն ու-
նինք։

Գ.Լ. Գ

Եւ ես, եղբայրք, չկարողացայ 1
ձեզ հետ խօսել ինչպէս հոգևոր-
ների հետ, այլ ինչպէս մարմնա-
ւորների հետ, ինչպէս տղաների
հետ Քրիստոսում. Կաթ խմեցրի 2
ձեզ, և ոչ թէ կերակուր. քան-
զի տակաւին չէիք կարող, այլ
հիմա էլ դեռ չէք կարող։ Որով- 3
հետև տակաւին մարմնաւոր էք.
քանզի տակաւին նախանձ և կռիւ
և բաժանումներ կան ձեզանում.
չէ՞ որ մարմնաւոր էք և մարդկո-
րէն էք վարվում։ Քանզի երբոր 4
մէկն ասէ, Ես Պօղոսեան եմ, և
միւսը Ես Ապողոսեան. չէ՞ որ
մարմնաւոր էք։ Արդ ո՞վ է Պօ- 5

ղոսը կամ ո՞վ է Ապողոսը. միայն պաշտօնեաներ, որոնց ձեռօվը հաւատացիք. և ամեն մէկին ինչպէս Տէրը տուաւ։ 6 Ես տնկեցի, Ապողոսը ջուր տուաւ, բայց Աստուածը աճեցուց։ 7 Ուրեմն ոչ տնկողն է ինչ բան, ոչ էլ ջուր տուողը. բայց աճեցնող Աստուածը։ 8 Տնկողը և ջուր տուողը մէկ են. բայց ամեն մէկն իր վարձքը կ'առնէ իր աշխատանքի չափովը։ 9 Վասն զի մենք Աստուծոյ գործակիցներ ենք. դուք Աստուծոյ մշակութիւն Աստուծոյ շինուածն էք։ 10 Ըստ Աստուծոյ շնորհքի չափովը՝ որ ինձ տրուած է, իմաստուն ճարտարապետի պէս հիմը դրի. բայց ուրիշը շինում է. միայն թէ ամեն մէկն ճոխ տայ թէ ինչպէս 11 է շինում։ Քանզի ոչ ոք ուրիշ հիմն չէ կարող դնել՝ քան թէ որ դրուած է, որ է Յիսուս Քրիստոս։ 12 Եթէ մէկն այս հիմնի վրայ շինէ ոսկի, արծաթ, պղնիձ քարեր, փայտ, խոտ, եղէգն. 13 Ամեն մէկի գործքը պիտի յայտնուի. քանզի օրը կ'երևեցնէ. որովհետև կրակով պիտի յայտնուի։ Եւ ամեն մէկի գործքը թէ 14 ինչպէս է, կրակը կ'փորձէ։ Եթէ մէկի գործքը՝ որ շինեց՝ հաստատ կենայ, վարձք կառնէ. 15 Եթէ մէկի գործքն այրուի՝ վնաս կ'քաշէ, բայց ինքը կ'ապրի. այլ այնպէս՝ ինչպէս թէ կրակով։ 16 Չէ՞ք գիտեր՝ որ դուք Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ Հոգին բնակած է ձեզմէնուն։ 17 Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, Աստուած կ'ապականէ. քանզի՝ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք։

18 Ոչ ոք իր անձը չխաբէ. եթէ ձեզմէնից մէկը կարծում է իմաստուն լինիլ այս աշխարհքումը, թող նա յիմար լինի՝ որ իմաստուն լինի։ 19 Քանզի այս աշխարհքի իմաստութիւնը յիմարութիւն է Աստուծոյ առջև. վասնզի գրուած է՝ Ըն իմաստուններին բռնում է իրանց խորագիտութեան 20 մէջ։ Եւ դարձեալ Ըն Տէրը ճանաչում է իմաստուններուն մտածմունքները, որ սուտ են։ 21 Ուրեմն ոչ ոք չպարծենայ մարդկանցով։ Քանզի ամեն բան ձերն է. 22 թէ Պօղոսը, թէ Ապողոսը, թէ Կեփասը, թէ աշխարհքը թէ կեանքը, թէ մահը, թէ ներկայ բանները, թէ գալու բանները, ամեն բան ձերն է։ Դուք Քրիստոսինը 23 և Քրիստոսը Աստուծոյնը։

ԳԼ. Դ

Թող ամեն մարդ այսպէս համարէ մեզ՝ ինչպէս Քրիստոսի պաշտօնեաներ և Աստուծոյ խորհուրդներուն տնտեսներ։ 2 Արդ տնտեսներուն մէջ այն է պահանջվում որ մէկը հաւատարիմ գտնուի։ 3 Բայց ինձ համար ոչինչ բան է՝ որ ձեզմէնից դատուիմ, կամ մարդկային դատաստանից*. այլ ես իմ անձն էլ չեմ քննում։ 4 Քանզի իմ անձի համար բան չեմ գիտում. բայց սրանով չեմ արդարանում. քանզի ինձ քննողը Տէրն է։ 5 Ուրեմն ժամանակից առաջ մի դատէք. մինչև Տէրը գայ՝ որ խաւարի ծածուկ բաները կ'բերէ էլ լուսոյ մէջ, և սրտերի խորհուրդները կ'յայտնէ, և այն ժամանակ ամեն մէկին գովաստանք կ'լինի Աստուածմանից։

6 Այս բանը, եղբարք, իմ անձի և Ապողոսի վերայ օրինակ բերի ձեզ համար. որ մեզանից սովորէք գրուածից աւելի բան չհորհել. որ չլինի թէ մէկը մէկի վերայ հպարտանայ ընկերի պատճառովը։ 7 Քանզի ո՞վ է քեզ որոշում. ի՞նչ ունիս դու՝ որ չես առել. և եթէ առեր, ինչո՞ւ ես պարծենում չառածի պէս։

8 Արդէն կշտացած էք, արդէն հարստացաք, առանց մեզ թագաւորեցիք և երանի թէ թագաւորէիք, որ մենք էլ ձեզ հետ թագաւորէինք։ 9 Քանզի ինձ այսպէս է երևում՝ թէ Աստուած մեզ առաքեալներիս շատ յետին տուաւ՝ մահապարտների պէս. որովհետև աշխարհքի տեսարան ե-

*Յունարէն՝ օրից։

ղանք, հրեշտակաց էլ՝ մարդկանց
10 էլ. Մենք յիմար ենք Քրիստոսի
համար, իսկ դուք՝ իմաստուն Քրիս-
տոսովմը. մենք տկար՝ իսկ դուք
զօրաւոր. դուք փառաւորուած
11 իսկ մենք անարգուած։ Մինչև
այս օրուս ժամը սովում էլ ենք՝
ծարաւում էլ, մերկ էլ գնա-
ցինք և գլխներս զարկվում էլ է
և հանգստութիւն չենք գտնում,
12 Եւ աշխատում ենք մեր ձեռներս-
վը գործելով. բամբասում են մեզ,
իսկ մենք օրհնում ենք. հալա-
ծում են և մենք համբերում ենք,
13 Հայհոյում են, մենք ողջունք
ենք անում. ինչպէս աւելուք է-
ղանք աշխարհքին՝ ամենի ջնջոց
14 լինելով մինչև հիմա։ Ոչ թէ ձեզ
ամաչեցնելով եմ այս գրում. այլ
ինչպէս իմ սիրելի որդիքներին
15 խրատում եմ։ Քանզի թէ և հա-
զարաւոր վարդապետներ ունենաք
Քրիստոսումը, բայց ոչ թէ շատ
հայր. քանզի Քրիստոս Յիսու-
սում ես աւետարանովը ծնայ ձեզ։
16 Ուրեմն աղաչում եմ ձեզ՝ որ ինձ
17 նմանող լինիք, Ընդ հանդր Տի-
մոթէոսին ուղարկեցի ձեզ մօտ,
որ իմ սիրելի և հաւատարիմ որ-
դին է Տէրով. որ ձեզ յիշեցնէ
իմ ճանապարհները՝ որ Քրիստո-
սումն են, ինչպէս ամեն տեղ ա-
մեն եկեղեցիներումը սովորեցնում
18 եմ։ Ոմն քանիսը հպարտացել են
իբր թէ ես չպիտի գամ ձեզ մօտ
19 Բայց կ'գամ ձեզ մօտ շուտով,
եթէ Տէրը կամենայ. և կ'հաս-
կանամ ոչ թէ հպարտացածների
20 խօսքերը. այլ զօրութիւնը։ Քան-
զի Աստուծոյ արքայութիւնն ոչ
թէ խօսքով է՝ այլ զօրութիւ-
21 նով։ Ինչպէս էք կամենում, գա-
ւազանո՞վ գամ ձեզ մօտ, թէ
սիրով և հեզութեանհան հոգով։

ԳԼ. Ե

1 Ա. հաստատակ լսվում է՝ ձեր մէջ
պոռնկութիւն է և այնպիսի պո-
ռնկութիւն՝ որ հեթանոսների
մէջ էլ չկայ անունը, այնպէս որ
2 մէկն իր հօր կինն ունենայ։ Եւ
դուք հպարտացած էք՝ և աւելի
աւագ չէ՞ք մնում՝ որ ձեր միջից
վեր առնուի նա, որ այն բանը
գործեց։ Քանզի ես՝ թէ և մարմ-
նով բացակայ եմ բայց հոգով
ներկայ՝ արդէն վճռել եմ ներկայ
լինողի պէս՝ նորան, որ այնպիսի
բան գործեց, Ձեր Տէր Յիսուս
Քրիստոսի անունովը՝ ձեր և իմ
հոգոյ մեկտեղ ժողովուելու ժա-
մանակ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի զօրութեան հետ, Սատանա-
յին մատնել առանցային մարմի-
նը կորչելու համար. որ հոգին
օրը մեր Տէր Յիսուսի օրուն։
Ձեր պարծանքը լաւ չէ. չէ՞ք գի-
տում որ մի փոքր խմորը բոլոր
զանգուածը խմորացնում է։ Դէն
պցեցէք հին խմորը, որ նոր զանգ-
ուած լինիք, ինչպէս որ անխմոր
էք. քանզի մեր զատիկ Քրիս-
թոս մեզ համար՝ Քրիստոս։
Ուստի տօն կատարենք ոչ թէ
հին խմորով, և ոչ էլ չարութեան
և անզգամութեան խմորովը, այլ
մաքրութեան և ճշմարտութեան
չխմորուածովը։ Գրեցի ձեզ թղթ-
թումը՝ չխառնուիլ պոռնիկների
հետ։ Եւ ոչ թէ ամենևին այս
աշխարհքի պոռնիկների հետ, կամ
ագահների հետ, կամ յափշտա-
կողների հետ, կամ կռապաշտ-
ների հետ, ապա թէ ոչ՝ պէտք
էր ձեզ որ հէնց աշխարհքիցը
դուրս դնայիք։ Բայց հիմա գրե-
ցի ձեզ՝ չխառնուիլ, որ եթէ մէ-
կը, որ եղբայր է անուանուած,
լինի պոռնիկ, կամ ագահ, կամ
կռապաշտ, կամ նախատող կամ
արբեցող կամ յափշտակող, այն-
պիսի հետ հաց էլ չուտել։ Քան-
զի ինձ ի՞նչ պէտք է՝ որ դրսին-
ներին էլ դատեմ. չէ՞ որ դուք
ներսիններին պիտի դատէք։ Իսկ
դրսիններին Աստուած ի՛դատէ.
բայց դ--+ չարը ձեր միջից վեր
առէք։

ԳԼ. Զ

1 Ձեզանից մէկին՝ եթէ բան ունե-
նայ իր ընկերի հետ, համարձակ-
վո՞ւմ է անիրաւների առջև դատ-
ուիլ և ոչ թէ արդարի առջև։

2 Կամ թէ չէ՞ք գիտեւմ, որ սրբե-
րըն աշխարհքս կ'դատեն. և եթէ
ձեզանով աշխարհքը դատվեւմ
է, ապա չէք արժան անարդ դա-
3 տերի դատաստան անելու։ Չէ՞ք
գիտեւմ որ մենք հրեշտակներին
կ'դատենք. էլ ո՞րքան աւելի երկ-
4 բաւոր բաները։ Եթէ երկրաւոր
բաներըն համար դատաստան ու-
նիք, եկեղեցւս ցած մարդկանցը
ձեզ համար դատաւորնատեցրէք։
5 Ձեր ամօթի համար եմ ասեւմ.
այնքան մի իմաստուն մարդ էլ
չկա՞յ ձեր միջեւմը, որ կարող լի-
նի իրաւունք որոշել իր եղբայր-
6 ների մէջ։ Այլ եղբայր եղբօր հետ
դատաստան է գնեւմ, և այն էլ
7 անհաւատների առաջ։ Եւ հէնց
արդէն բոլորովին պակասութիւն
է ձեր միջեւմը որ դատաստաններ
ունիք իրար հետ. ինչո՞ւ չէք ա-
ւելի դուք զրկվեւմ. և ինչո՞ւ չէք
աւելի դուք անիրաւութիւն քա-
8 շեւմ։ Բայց դուք էք զրկեւմ և
անիրաւութիւն անեւմ և այն էլ
9 ձեր եղբայրներին։ Կամ թէ չէ՞ք
գիտեւմ որ անիրաւներն Աստու-
ծոյ արքայութիւնը չեն ժառան-
գիլ։ Մի խաբուիք. ոչ պոռնիկնե-
րը, ոչ կռապաշտները, ոչ շնա-
10 ցողները, ոչ իգացողները, ոչ
արուապէտները, ոչ գողերը, ոչ
ագահները, ոչ արբեցողները, ոչ
նախատողները, և ոչ յափշտա-
կողները Աստուծոյ արքայութի-
11 նը չեն ժառանգիլ։ Եւ մի քա-
նիներդ այսպէսներ էիք. բայց
լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝
բայց արդարացաք Տէր Յիսուսի
անունովը և մեր Աստուծոյ Հո-
գովը։

12 Ամեն բան կարելի է ինձ, բայց
ամեն օգուտ չէ. ամեն բան կա-
րելի է ինձ, բայց ես չպիտի մի
բանի իշխանութեան տակ լի-
13 նիմ։ Կերակուրները փորի համար,
և փորը կերակուրների համար.
բայց Աստուած սորան էլ նորանց
էլ կ'խափանէ. միայն թէ մար-
մինը պոռնկութեան համար չէ,
այլ Տիրոջ համար. և Տէրը մարմ-
14 նոյն համար։ Բայց Աստուած,
որ մեր Տիրոջն էլ յարոյց, ձեզ
էլ կ'յարուցանէ իր զօրութեամբ
15 ը։ Չէ՞ք գիտեւմ որ ձեր մար-
մինները Քրիստոսի անդամներն են.
ապա Քրիստոսի անդամներն առ-
նեմ պոռնիկի անդա՞մ չինեմ.
16 քաւ լիցի։ Կամ թէ չէ՞ք գի-
տեւմ, որ նա՝ որ պոռնիկին կըպ-
չեւմ է, մէկ մարմին է նորա հետ.
քանզի՝ երկուսն, ասեւմ է, մէկ
17 մարմին կ'լինին։ Եւ նա՝ որ Տի-
րոջն է կպչեւմ՝ մէկ հոգի է նո-
18 ր հետ։ Փախէք պոռնկութիւնից. 18
ամեն մեղք որ մարդ գործէ, իր
մարմնից դուրս է. բայց պոռն-
կութիւն անողն, իր մարմնոյ մէջ
19 է մեղանչեւմ։ Կամ թէ չէ՞ք գի- 19
տեւմ, որ ձեր մարմինները Սուրբ
Հոգոյ տաճար են՝ որ ձեզանեւմ
է, որ Աստուածմանից ու-
նիք. և ձերինը չէք, քանզի մեծ 20
գնով գնուեցաք. ուստի փառա-
ւորեցէք Աստուծոյն ձեր մարմնու-
մը և ձեր հոգուն՝ որ են Աստու-
ծոյն։

ԳԼ. Է

Բայց այն բաների համար՝ որ ինձ 1
գրեցիք, — — — ՀԷՄ ԲԷ, Լաւ է մար-
դուս որ կնկան չմօտենայ։ Սակայն 2
պոռնկութեան պատճառով թող
ամեն մարդ իր կինն ունենայ. և
ամեն մէկ կին թող իր մարդն
ունենայ։ Կինդան իր մարդը թող 3
պարտքը վճարէ. և այնպէս էլ
կինն իր մարդուն։ Կինն իր մարմ- 4
նոյ վերայ իշխանութիւն չունի.
այլ մարդը. այնպէս էլ մարդն իր
մարմնոյն վերայ իշխանութիւն չու-
նի, այլ կինը։ Խրատ մի զրկէք. բայց 5
միայն իրար հետ միաբանութեամբ
մի քիչ ժամանակի համար, որ
ծոմապահութեան և աղօթքի պա-
րապուէք. և դարձեալ մէկտեղ
դարձէք, որ սատանան չփորձէ
ձեզ՝ ձեր անժուժկալութեան
պատճառովը։ Բայց ես այս նե- 6
րելով եմ ասեւմ, և ոչ թէ հր-
ամանով։ Քանզի կամենւմ եմ՝ 7
որ ամեն մարդ ինձ պէս լինէր.
բայց ամեն մարդ իր յատուկ
շնորհքն ունի Աստուածմանից. մէկն
այսպէս և միւսն այնպէս։ Բայց 8

ամուրիներին և որբևայրիներին ասում եմ, Ինձ Լաւ է նորանց
9 Համար՝ որ ինձ պէս մնան։ Ապա եթէ ժուժկալութիւն չունին, թող ամուսնանան. քանզի աւելի լաւ է ամուսնանալ, քան թէ
10 վառուիլ։ Բայց ամուսնացածներին պատուիրում եմ, ոչ թէ ես՝ այլ Տէրը, որ կինը չբաժանուի
11 իր մարդուցը։ Ապա եթէ բաժանուի էլ, թող առանց ամուսնանալու մնայ՝ կամ իր մարդուն հետ հաշտուի. և որ մարդն էլ
12 կինը չթողէ։ Բայց ուրիշներին ես եմ ասում, ոչ թէ Տէրը. Եթէ մի եղբայր անհաւատ կին ունի, և նա հաճի նորա հետ բնակել
13 թող նորան չթողէ։ Եւ մի կին որ անհաւատ մարդ ունի, և նա հաճի նորա հետ բնակել՝ թող
14 նորան չթողէ։ Քանզի անհաւատ մարդը սրբուած է կնկանովը, և անհաւատ կինը սրբուած է մարդովը. ապա թէ ոչ՝ ձեր որդիքը պիղծ կ'լինէին. բայց հիմա սուրբ
15 են։ Բայց եթէ անհաւատը բաժանվում է, թող բաժանուի. այսպիսի բաների մէջ մի եղբայր կամ քոյր գերի եղած չէ. Աստուած մեզ կանչեց խաղաղութեան
16 մէջ։ Քանզի ի՞նչ գիտես, կին, դուցէ քո մարդը կապրեցնես. կամ ի՞նչ գիտես, մարդ, դուցէ քո
17 կինը կապրեցնես. Միայն թէ՝ ամեն մէկին ինչպէս Տէրը բաժին է տուել, ամեն մէկն ինչպէս Աստուած կանչեց նորան, այնպէս գնայ. և այնպէս ամեն եկեղեցիներում պատուէր եմ տալիս։
18 Մէկը թլփատուած կանչուեցաւ, թող անթլփատ չձևանայ. մէկը անթլփատութեան մէջ կանչուեցաւ՝ թող չթլփատուի. Թլփատութիւնն ոչինչ է, և անթլփատութիւնն ոչինչ. այլ Աստուծոյ պատուիրանքների պահելը։
20 Ամեն մէկն՝ որ կոչումի մէջ որ կանչուեցաւ, նորանում կեն-
21 նայ։ Ծառայ կանչուեցար՝ հոգս մի անիր. բայց եթէ կարենաս ազատ էլ լինել՝ աւելի նա գոր-
22 ծածէ։ Քանզի Տէրով կանչուած ծառան՝ Տէրոջ ազատն է. այն-

պէս էլ ազատ կանչուածը Քրիստոսի ծառայ է։ Մէջ գնով գնուեցաք՝ մարդկանց ծառայ մի լինիք։ Ամեն մէկն ինչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, եղբայրք, թող նորանում մնայ Աստուծոյ առջև։

Բայց կոյսերի համար հրաման չունիմ Տէրից. միայն խրատ եմ տալիս ինչպէս Տէրից ողորմութիւն գտած՝ հաւատարիմ լինելու համար։ Արդ ես համոզուած եմ թէ այսպէս լաւ է ներկայնեղութեան պատճառով, որ լաւ է մարդուն՝ այնպէս լինիլ։ Կնկան հետ կապուա՞ծ ես՝ մի աշխատիր արձակուելու. կնկանից արձակուա՞ծ ես՝ կին մի որոնիր։ Բայց եթէ ամուսնանաս, չմեղանչեցիր. և եթէ մի կոյս ամուսնանայ, չմեղանչեց. միայն թէ այնպիսիները մարմնոյ նեղութիւն կ'ունենան. իսկ ես խնայում եմ ձեզ։ Բայց այս եմ ասում, եղբայրք, թէ ժամանակս կարճ է այսուհետև, որ կին ունեցողներն էլ չունեցողների պէս լինէին։ Եւ լացողները չլացողների պէս. և ուրախացողները չուրախացողների և ծախու առնողները չունեցողների պէս. Եւ այս աշխարհքը գործածողները չար կերպով չգործածողների պէս. քանզի այս աշխարհի կերպարանքն անցնում է։ Բայց կամենում եմ որ դուք առանց հոգսի լինիք. չամուսնացողը Տիրոջ բանների համար է հոգս անում, թէ ինչպէս հաճոյ լինի Տիրոջը։ Բայց ամուսնացածը աշխարհքի բանների համար է հոգս անում, թէ ինչպէս հաճոյ լինի կնկանը։ Եւ երկուքի տարբեր են կինը և կոյսը. չամուսնացած կոյսը Տիրոջ բանների համար է հոգս անում՝ որ սուրբ լինի մարմնով և հոգով, իսկ ամուսնացած կինը աշխարհքի բանների համար է հոգս անում, թէ ինչպէս հաճոյ լինի մարդուն։ Միայն թէ՝ սա ես ձեր շահի համար եմ ասում. և ոչ թէ որ ձեր վերայ էեղբեր- չուան գցեմ. այլ պարկեշտութեան համար՝ և առանց արգելքի Տիրոջը ծառայե-

36 լու համար։ Բայց եթէ մէկն ա-
մօթ համարէ իր կոյսի համար՝
թէ չափահասութենէն անցել
է, և այնպէս պէտք է լինիլ, ինչ
որ կամենում է թող անէ. չէ
մեղանչում՝ թող ամուսնանան։
37 Բայց նա՝ որ իր սրտի մէջ հաս-
տատ է՝ և պէտք էլ չունի, նա
իր կամքի վերայ իշխանութիւն
ունի, և նա վճռեց իր սրտումն՝
որ իր կոյսը պահէ, նա լաւ է ա-
38 նում։ Ընդունպէս և նա՝ որ իր կոյ-
սը մարդու է տալիս, լաւ է ա-
նում, և նա՝ որ մարդու չէ տա-
39 լիս, աւելի լաւ է անում։ Կինը
կապուած է օրէնքով քանի ժա-
մանակ որ նորա մարդը կենդանի
է. բայց եթէ նորա մարդը ննջէ,
ազատ է ում հետ որ կամենայ
ամուսնանալու, միայն թէ Տէ-
40 րով։ Բայց էլ աւելի երանելի է.
թէ որ այնպէս կենայ՝ իմ խրա-
տի պէս. այսպէս եմ համարում,
թէ ես էլ ունիմ Աստուծոյ Հոգին

ԳԼ. Ը

1 Բայց կռքերի զոհերի համար գի-
տենք, քանզի ամենքս գիտութիւն
ունինք. գիտութիւնը հպարտաց-
նում է, բայց սէրը շինում է։
2 Եթէ մէկը կարծում է թէ բան
գիտէ, նա դեռ բան չգիտաց՝
3 ինչպէս պէտք է գիտել։ Բայց եթէ
մէկը Աստուծոյն սիրէ, նա ճա-
4 նաչուած է նորանից։ Արդ կռաց
զոհուած կերակուրների համար
գիտենք, որ կռքը ոչինչ է աշ-
խարհքում. և որ աւրիշ ոչ մի
Աստուած չկայ բացի այն մէկը։
5 Քանզի թէպէտև կան որ աստ-
ուածներ են անուանւում՝ թէ
երկնքումն թէ երկրի վերայ. ինչ-
պէս որ շատ աստուածներ կան և
6 շատ տէրեր։ Բայց մեզ համար
մէկ Աստուած կայ՝ Հայրն, որի-
ցըն են ամեն բաները, և մենք նո-
րա համար. և մէկ Տէր Յիսուս
Քրիստոս որով են ամեն բաները,
7 և մենք նորանով։ Սակայն ամեն-
քը այդ գիտութիւնը չունին. քան-
զի ոմանք կռքի մասին խղճմտան-
քով են ուտում մինչև հիմա իբ-
րև կուռքերին զոհուած, և նո-
րանց խղճմտանքը տկար լինելով
պղծվում է։ Բայց կերակուրը մեզ 8
չի կանգնեցնել Աստուծոյ առջև.
քանզի եթէ ուտենք՝ մի բանով
չենք աւելանալ, և եթէ չուտենք՝
մի բանով չենք պակասել։ Միայն 9
թէ զգոյշ կացէք՝ որ այդ ձեր իշ-
խանութիւնը գայթակղութիւն
չլինի տկարներին։ Քանզի եթէ 10
մէկը տեսնէ քեզ՝ որ գիտութիւն
ունիս՝ կռքի տան մէջ անկնտրա-
տած, չէ՞ որ նորա խղճմտանքը,
որ տկար է, շինութիւն կ'ստա-
նայ զոհուած բանն ուտելու։ Եւ 11
այն տկար եղբայրը կ'կորչի քո գի-
տութեան պատճառովը, որի հա-
մար Քրիստոս մեռաւ։ Եւ այս- 12
պէս եղբայրների դէմ մեղանչե-
լով, և այն տկարների խղճմտան-
քը զարկելով Քրիստոսի դէմ մեղք
էք գործում։ Վասն որոյ՝ եթէ 13
կերակուրն իմ եղբօրը գայթակ-
ղեցնում է, ես յաւիտեան միս
չեմ ուտիլ, որ իմ եղբօրը չգայ-
թակղեցնեմ։

ԳԼ. Թ

Չէ՞ որ առաքեալ եմ, չէ՞ որ 1
ազատ եմ, չէ՞ որ մեր Տէր Յիսու-
սին Քրիստոսին տեսայ, չէ՞ որ
դուք իմ գործն էք Տէրով։ Թէ և 2
ուրիշներին առաքեալ չլինիմ,
բայց հէնց ձեզ եմ քանի
մի իմ առաքելութեան կնիքը դուք
էք Տէրով։ Իմ պատասխանը ինձ 3
քննողների դէմ այս է։ Մի՞թէ 4
մենք իշխանութիւն չունինք ու-
տելու և խմելու։ Մի՞թէ իշխա- 5
նութիւն չունինք քոյր կին մեզ
ածելու մեզ հետ, ինչպէս ուրիշ
առաքեալները և Տիրոջ եղբայրքը,
և Կեփասը։ Կամ միթէ միայն 6
ես և Բառնաբասը իշխանութիւն
չունինք չգործելու։ Ո՞վ է որ ի- 7
րէք իր պաշտօնէն ինքնուրոյն
անէ. ո՞վ է որ այգի տնկէ՝ և նո-
րա պտղից չուտէ. ո՞վ է որ հօտ
արածեցնէ՝ և հօտի կաթնից չու-
տէ։ Մի՞թէ ես այս բաները մար- 8
դու կերպով եմ ասում, կամ չէ՞
որ օրէնքն էլ է ասում այս բա-

9 ներըս՝ Քանզի Մօսէսի օրէնքումն
գրուած է՝ Կալի մէջ աշխատող
եզան դունչը մի կապիր. Ա՞թէ
Աստուած եզների համար էր հոգս
10 անում, կամ չ՞ որ մանաւանդ
մեզ համար է ասում. քանզի մեզ
համար գրուեցաւ, որ ցանողը
պէտք է յուսով ցանէ, և կա-
ւողն իր յոյսը վայելելու յուսով
11 խոե։ Եթէ մենք ձեզանում հո-
գևորները սերմեցինք, մեծ բա՞ն
է որ ձեզանից մնրմնաւորները հըն-
12 ձենք։ Եթէ ուրիշները ձեզ վե-
րայ այդ իշխանութիւնը վայելում
են, ոչ առաւել և մե՞նք. բայց
մենք այս իշխանութիւնը չգործա-
ծինք. այլ ամեն բանի համբե-
րում ենք, որ որպէսզի չդնենք Քրի-
13 ստոսի աւետարանին։ Չէ՞ք գի-
տում թէ նորանք՝ որ տաճարում
մը գործում են, տաճարից են ու-
տում. և նորանք՝ որ սեղանի պաշ-
տօնեաներ են, սեղանից են բա-
14 ժին առնում։ Այնպէս էլ Տէրը
հրամայեց տուաւ աւետարանը քա-
րոզողներին աւետարանից ապ-
15 րել։ Բայց ես սորանցից ոչ մէկին
էլ չգործեցի. և այս բաները չգը-
րեցի որ՝ ինձ այդպէս լինի. քան-
զի աւելի լաւ է ինձ մեռնիլ, քան
թէ մէկին իմ պարծանքը ունայ-
16 նացնէ։ Քանզի եթէ աւետարա-
նը քարոզեմ, դա ինձ պարծանք
չէ. որովհետև դ՚ահ է դրբ-
ւած ինձ վերայ. բայց վայ է ինձ,
17 եթէ չաւետարանեմ։ Քանզի եթէ
յօժար կամքով անեմ այս, վարձք
ունիմ. իսկ եթէ ակամայ՝ տնտե-
18 սութիւնը յանձնուած է ինձ։ Ապա
ի՞նչ է իմ վարձքը, ըն որ՝ աւե-
տարանելիս ձրի տամ Քրիստոսի
աւետարանը, որ աւետարանի մէջ
իմ իշխանութիւնը պէշ կերպով
19 չգործեցնեմ։ Քանզի ամենից ա-
զատ լինելով, իմ անձը ամենքին
ծառայ արի, որ շատերին շահեմ։
20 Հրեաներին Հրեայի պէս եղայ,
21 որ Հրեաներին շահեմ։ Օրէնքի
տակ լինողներին օրէնքի տակ լի-
նողի պէս եղայ, որ օրէնքի տակ
լինողներին շահեմ. անօրէններին
անօրէնի պէս եղայ. (իրր չէ թէ
ես Աստուծոյ առջև անօրէն էի,
այլ Քրիստոսի օրէնքի տակ,) որ
անօրէններին շահեմ։ Տկարներին 22
տկարի պէս եղայ, որ տկարներին
շահեմ. ամենին ամեն բան եղայ,
որ ինչ և իցէ մի քանիսին ապրեց-
նեմ։ Ա՛յս անում եմ աւետարա- 23
նի համար, որ նորան կցորդ լի-
նիմ։ Չէ՞ք գիտում, թէ ասպա- 24
րէզի մէջ վազողներն՝ ամենքն են
վազում. բայց մէկն է յաղթա-
նակն առնում. դուք այնպէս վա-
զեցէք որ հասնէք։ Եւ ամեն ով 25
որ պատերազմ է անում, ամեն
բանից ժուժկալ է լինում. հիմա
նորանք պսակ են որ մի ա-
պականելի պսակ առնեն, իսկ մենք՝
անապականելի։ Ուրեմն ես այն- 26
պէս եմ վազում, ոչ թէ ինչպէս
անստոյգ. այնպէս եմ մրցում ոչ
թէ ինչպէս օդին զարկելով։ Այլ 27
իմ մարմինը ճնշում եմ և նուա-
ճում, որ մի գուցէ ուրիշներին
քարոզելով, ինքս անպիտան գըտ-
նուիմ։

ԳԼ. Ժ

Զի կամենում, եղբայրք, որ 1
չգիտենաք՝ թէ մեր հարքն ամեն-
քըն էլ ամպի տակն էին. և ա-
մենքը ծովի միջովն անցան։ Եւ 2
ամենքը Մօսէսով մկրտուեցան
ամպումն և ծովումն։ Եւ ամեն- 3
քըն էլ նոյն հոգևոր կերակուրը
կերան։ Եւ ամենքն էլ նոյն հո- 4
գևոր խմելիքը խմեցին. քանզի այն
հոգևոր վէմից էին խմում՝ որ
գնում էր նորանց հետ. և այն
վէմն էր Քրիստոս։ Բայց Աստուած 5
նորանցից շատերին չհաւանեցաւ.
քանզի անապատումն փռուած ին-
կան։ Եւ սորանք մեզ օրինակի 6
համար եղան, որ մենք չար բանե-
րի ցանկացող չլինինք, ինչպէս
նորանք ցանկացան։ Եւ կռապաշտ 7
մի լինինք ինչպէս նորանցից ոմանք.
ինչպէս գրուած է, Թէ ժողովուր-
դը նստեց ուտելու և խմելու, և
վերկացան որ խաղան։ Եւ պոռն- 8
կութիւն էլ չանենք, ինչպէս նո-
րանցից ոմանք պոռնկութիւն ա-
րին, և մէկ օրում քսան և երեք
հազար հոգի վայր ընկան։ Եւ Քը- 9

բիատասին էլ չփորձենք, ինչպէս
նորանցից էլ ոմանք փորձեցին, և
10 օձերից սատակեցան։ Եւ չտրտ-
նջանք էլ, ինչպէս նորանցից էլ
ոմանք տրտնջացին, և սատակչի
11 ձեռով կորան։ Եւ այն ամենն
օրինակի համար էր նորանց հան-
դիպում, բայց մեզ խրատի հա-
մար գրուեցաւ, որոնց դարերի
12 վերջը հասաւ։ Ուրեմն ով որ հա-
մարում է թէ հաստատ կանգ-
նած է, թող զգոյշ լինի, որ վայր
13 չընկնի։ Ձեզ ուրիշ փորձութիւն
չէ պատահել բացի մարդկային
է֊ը֊ի֊ն֊ե֊ց. բայց Աստուած հա-
ւատարիմ է, որ չի թողել ձեզ
ձեր կարողութիւնից վեր փոր-
ձուելու, այլ փորձութեան հետ
ելքն էլ կ'պատրաստէ, որ կա-
րողանաք համբերել։
14 Ուրա համար, իմ սիրելիք,
15 փախէք կռապաշտութիւնից։ Ինչ-
պէս իմաստուններին հետ եմ խո-
սում, դուք ինքներդ դատեցէք
16 այն որ ասում եմ. Օրհնութեան
բաժակը, որ օրհնում ենք, չէ՞ որ
հաղորդութիւն է Քրիստոսի ար-
եանը. հացը, որ կարում ենք,
չէ՞ որ հաղորդութիւն է Քրիստո-
17 սի մարմնոյն։ Որովհետև մէկ հաց,
մէկ մարմին ենք մենք շատերս.
քանզի ամենքս այն մէկ հացիցն
18 ենք վայելում։ Տեսէք Իսրայէլին
մարմնոյ կողմանէ. չէ՞ որ պոհ-
ասածներն ուտողները մասնակից
19 են սեղանին։ Ա՞րդ ի՞նչ ասեմ.
մի՞թէ կուռքը մի բան է, և կամ
թէ կռքերի զոհասածները մի բան
20 են։ Բայց այն որ հեթանոսները
զոհում են, դեներին են զոհում,
և ոչ թէ Աստուծոյն. բայց չեմ
կամենում, որ դուք դեներին մաս-
նակից լինէք. չէք կարող Տիրոջ
բաժակը խմել և դեների բաժա-
21 կը. Չէք կարող Տիրոջ սեղանիցը
22 վայելել և դեների սեղանիցը։ Կամ
թէ Տիրոջը նախանձի գրգռենք.
մի՞թէ նորանից ուժեղ ծորուր
ենք. ամեն բան կարելի է ինձ,
բայց ամեն բան օգուտ չէ։
23 Ամեն բան կարելի է ինձ, բայց
ամեն բան շինութիւն չէ տալիս։
24 Ոչ ով միայն իր անձի օգուտը
չորանէ, այլ ամեն մէկն ընկերին
էլ։ Ամեն ինչ որ սպանդանոցում 25
ծախվում է, կերէք առանց մի
բան քննելու խղճմտանքի պատ-
ճառով։ Քանզի Տիրոջն է երկիրը 26
և նորա բոլոր լիութիւնը։ Եթէ 27
անհաւատներից մէկը կանչէ ձեզ,
և դուք կամենաք գնալ, ամեն
բան որ ձեր առջև դրուի, կե-
րէք, առանց մի բան քննելու
խղճմտանքի պատճառով։ Բայց 28
եթէ մէկն ասէ ձեզ, թէ դա կրա-
քի զոհասած բան է, մի ուտէք
նորա պատճառին որ իմացրեց,
և խղճմտանքի պատճառովը. քան-
զի Տիրոջն է երկիրը և նորա բո-
լոր լիութիւնը։ Բայց խղճմտանք 29
եմ ասում՝ ոչ թէ իր, այլ ըն-
կերինը. քանզի ինչո՞ւ իմ ազա-
տութիւնը պիտի դատուի ուրիշի
խղճմտանքից. Թէ որ ես շնորհա- 30
կալութիւնով վայելում եմ, ին-
չո՞ւ հայհոյուիմ այն բանի հա-
մար՝ որի համար ես գոհանում
եմ։ Ուրեմն՝ թէ ուտէք թէ խը- 31
մէք թէ ինչ գործ էլ որ անէք,
ամեն բան Աստուծոյ փառաց հա-
մար արէք։ Առանց գայթակղու- 32
թիւն տալու եղէք Հրեաներին և
Յոյներին և Աստուծոյ եկեղեցոյն։
Ինչպէս ես էլ ամեն բանով ա- 33
մենին հաճոյ եմ լինում. իմ ան-
ձի օգուտը չորանելով, բայց շա-
տերինը որ փրկուին։

ԳԼ. ԺԱ.

Ինձ նմանող եղէք, ինչպէս ես 1
էլ Քրիստոսի։ Ա՞րդ գովում եմ 2
ձեզ, եղբարք, որ իմ ամեն բա-
ները յիշում էք, և ինչպէս պատ-
ուիրեցի ձեզ, այն պատուէրները
պահում էք։ Բայց կամենում եմ 3
որ դուք գիտենաք, թէ ամեն մար-
դու գլուխը Քրիստոս է, և կըն-
կան գլուխը մարդը, և Քրիստո-
սի գլուխն՝ Աստուած։ Ամեն մարդ՝ 4
երբոր աղօթք է անում կամ մար-
գարէանում՝ և գլուխը ծածկած
ունենայ, ամօթ է անում իր գլ-
ուխը։ Եւ ամեն կին՝ երբոր ա- 5
ղօթք է անում կամ մարգարէա-
նում բաց գլխով, ամօթ է ա-

նում իր գլուխը. քանզի մի և նոյն
6 է թէ սնթլուսած է, Քանզի եթէ
կինը չծածկուի, թող ուրեմն իր
մազերն էլ կտրէ. բայց եթէ կըն-
կան ամօթ է մազերը կտրելը կամ
7 սնթլելը, թող ծածկուի: Սակայն
մարդուն պէտք չէ որ իր գլուխը
ծածկէ, քանզի Աստուծոյ պատ-
կերն և փառքն է. բայց կինը մար-
8 դու փառքն է: Քանզի ոչ թէ
մարդն է կնկանմից, այլ կինն է
9 մարդուցը: Եւ որովհետև ոչ թէ
մարդը կնկան համար ստեղծուե-
ցաւ, այլ կինը մարդու համար:
10 Ընդհանար պէտք է, որ կինը
շուք* դնէ գլխի վերայ հրեշտակ-
11 ների համար: Բայց դարձեալ ոչ
կինն առանց մարդու, և ոչ մար-
12 դն առանց կնկան Տէրուն: Քան-
զի ինչպէս որ կինը մարդուցը է-
ղե, այնպէս էլ մարդը կնկան
միջոցովն է. բայց ամենն Աստ-
13 ուածմանից: Դուք ինքներդ դա-
տեցէք. մի կնկան վայելո՞ւմ է որ
չծածկուած ազօթք անէ Աստու-
14 ծոյն: Կամ հէնց բնութիւնն ինքն
չէ՞ սովրեցնում ձեզ, որ եթէ
մարդը էրկար մազեր ունենայ, այն
15 անպատիւք է նորան: Բայց եթէ
կինն էրկար մազեր ունի, այն փառք
է նորան. քանզի էրկար մազերը
հագուստի տեղ է տրուած նո-
16 րան: Բայց եթէ մէկը կամենում
է հակառակել, մենք այնպիսի սո-
վորութիւն չունինք, և ոչ էլ Աս-
տուծոյ եկեղեցիները:
17 Բայց այս էլ պատուիրելով
չեմ գովում, որ դուք ոչ թէ դէ-
պի լաւագոյնն այլ դէպի վատ-
18 թարն էք ժողովւում: Քանզի նախ
և առաջ երբոր մէկտեղ էք ժո-
ղովւում եկեղեցու մէջ, լսում
եմ որ հերձուածներ կան ձեր մէջ,
և մասամբ էլ հաւատում եմ:
19 Քանզի հերձուածներ էլ պէտք է
լինին ձեր մէջ, որ բնաւոր լինող-
ները յայտնի լինին ձեզանում:
20 Արդ երբոր մէկտեղ էք ժողով-
ւում, սա Տէրունական ընթրիքն
21 ուտել չէ: Քանզի ամեն մէկին ա-
ռաջ իր ընթրիքն է առնում ու-

* Իշխանութիւն

տելու ժամանակ, և մէկը սոված
է, և միւսը արբած: Մի՞թէ տուն 22
չունիք ուտելու և խմելու. կամ
թէ Աստուծոյ եկեղեցին արհա-
մարհո՞ւմ էք, և չքաւորներին ա-
մօչեցնում. ձեզ ի՞նչ ասեմ. գո-
վե՞մ ձեզ. այդ բանումը չեմ գո-
վում: Քանզի ես Տէրից ընդու- 23
նեցի այն որ ձեզ էլ աւանդեցի.
որ Տէր Յիսուսը այն գիշերը որ
մատնւում էր, հաց առաւ, Եւ 24
գոհանալուց յետոյ կտրեց և ա-
սաց. Առէք, կերէք. այս է իմ
մարմինը՝ որ ձեզ համար կոտրը-
վում է այս արէք իմ յիշատա-
կի համար: Այնպէս էլ՝ ընթրիքն 25
ուտելուց յետոյ բաժակն —
և ասաց. Այս բաժակը նոր ու-
տարն է իմ արիւնովը. այս արէք՝
քանի անգամ որ խմէք, իմ յի-
շատակի համար: Վասնզի քանի 26
անգամ որ այս հացն ուտէք, և
այս բաժակը խմէք, Տիրոջ մահը
պատմեցէք՝ մինչև որ նա կ'գայ:
Արդեն ով որ այս հացն ուտէ՝ 27
կամ Տիրոջ բաժակը խմէ անար-
ժանութեամբ, նա պատասխան
կ'լինի Տիրոջ մարմնոյն և արեանը:
Ուրեմն թող մարդ փորձէ իր ան- 28
ձը, և ապա այն հացից ուտէ
և այն բաժակից խմէ: Քանզի 29
անարժանութեամբ ուտողը և խմ-
ողը իր անձի համար դատաս-
տան է ուտում և խմում քան-
զի չէ որոշում Տիրոջ մարմինը:
Նորա համար էլ ձեր միջումը շատ 30
հիւանդներ և ցաւագարներ կան.
և շատեր էլ ննջած են: Քանզի 31
եթէ մեր անձերը քննէինք, չէինք
դատապարտուիլ: Բայց դատուե- 32
լով Տէրից խրատւում ենք, որ
աշխարհի հետ չդատապարտ-
ուինք: Ուրեմն, եղբարքս, երբոր 33
ժողովուիք ուտելու համար, ի-
րար սպասեցէք: Ապա եթէ մէկը 34
սոված է՝ թող էդ տանն ուտէ.
որ դատապարտութեան համար
չժողովուիք. բայց ուրիշ բաները
երբոր կ'գամ՝ այն ժամանակ
կ'պատուիրեմ:

Գ.Կ. ԺԲ

Բայց հոգևոր ընծաների համար, 1

եղբարք, չեմ կամենում որ չգի-
2 տենաք։ Դուք գիտէք, որ հե-
թանոս էիք, և անձայն կուքերի
մօտ էիք տարվում ինչպէս որ ա-
3 ռաջնորդվում էիք։ Ընդրա համար
յայտնում եմ ձեզ, որ ոչ ով ասէ
Աստուծոյ Հոգովը խօսող որ Յի-
սուսին նզովեալ ասէ. և ոչ ով
չէ կարող Յիսուսին Տէր ասել
4 եթէ ոչ Հոգով Սուրբով։ Պար-
գևները զանազան են, բայց Հո-
5 գին նոյնն է։ Եւ պաշտօնները զա-
նազան են, բայց Տէրը նոյնն է։
6 Եւ ներգործութիւնները զանա-
զան են, բայց Աստուած նոյնն է,
որ ամենը ամենքի մէջ ներգոր-
7 ծում է։ Բայց ամեն մէկին տրը-
ւած է Հոգոյ յայտնութիւնը
8 օգտի համար։ Քանզի մէկին Հո-
գուցը տրուած է իմաստութեան
խօսք. և ուրիշին գիտութեան
9 խօսք՝ նոյն Հոգոյ չափովը։ Մի-
սին հաւատք նոյն Հոգովը. ուրի-
շին բժշկութեան պարգևներ նոյն
10 Հոգովը։ Ուրիշին զօրութիւնների
ներգործութիւններ. և ուրիշին
մարգարէութիւն. ուրիշին հոգի-
ների ընտրութիւն. ուրիշին այլ
և այլ լեզուներ. ուրիշին լեզու-
11 ների թարգմանութիւններ։ Բայց
այս ամենը Հէնց մի և նոյն Հոգին
է ներգործում, ամեն մէկին բա-
ժանելով ինչպէս կամենում է։
12 Ինչպէս էլ մարմինը մէկ է և
անդամներ շատ ունի. և մէկ մարմ-
նոյ բոլոր անդամները շատ լինե-
լով մարմինը մէկ է. այսպէս էլ
13 Քրիստոս։ Քանզի մենք էլ ա-
մենքս մէկ Հոգով մկրտուեցանք
մէկ մարմին լինելու. թէ Հրէա-
ներ, թէ Յոյներ. թէ ծառաներ,
թէ ազատներ, և ամենքս մէկ
14 Հոգին խմեցինք։ Քանզի մարմինն
էլ մէկ անդամ չէ, այլ շատ։
15 Եթէ ոտն ասէ. Որովհետև ձեռն
չեմ՝ մարմնից չեմ ի՞նչ նո-
16 րանով մարմնից չի լինիլ։ Եւ
եթէ ականջն ասէ, Որովհետև
աչք չեմ՝ մարմնից չեմ. ի՞նչ
17 նորանով մարմնից չի լինիլ։ Եթէ
բոլոր մարմինն աչք լինէր, ո՞ր
տեղ էր լսելիքը. և եթէ բո-
լոր մարմինը լսելիք լինէր, ո՞ր տեղ
էր հոտոտելիքը։ Բայց հիմա Աս- 18
ուած անդամները նորանց ա-
մեն մէկը դրաւ մարմնոյ մէջ ին-
չպէս կամեցաւ։ Եւ եթէ ամենը 19
մէկ անդամ լինէր, ո՞ր տեղ էր
մարմինը։ Բայց հիմա անդամնե- 20
րը շատ են, իսկ մարմինը մէկ։
Աչքը չէ կարող ձեռին ասել, Ինձ 21
պէտք չես. կամ դարձեալ գլու-
խը ոտներին՝ Ինձ պէտք չէք։ Այլ 22
մանաւանդ մարմնոյ այն անդամ-
ները՝ որ երևում են թէ տկարա-
գոյն են, նորանք հարկաւոր են։
Եւ նորանք՝ որ կարծում ենք թէ 23
մարմնոյ շատ անարգուածներն են,
նորանց առաւել և պատիւ ենք
անում. և մեր ամօթալիքներն ա-
ւելի պարկեշտութիւն ունին։ Եւ 24
մեր պարկեշտ անդամները մի բան
պէտք չունին. բայց Աստուած
մարմինը բարեխառնեց, ցածին
աւելի պատիւ տալով։ Որ մարմ- 25
նոյ մէջ տարաձայնութիւն չլինի,
այլ որ անդամներն իրար համար
նոյն հոգան ունենան։ Եւ եթէ 26
մէկ անդամը ցաւում է, բոլոր
անդամներն էլ նորա հետ ցաւում
են. և եթէ մէկ անդամը փառա-
ւորվում է, բոլոր անդամներն էլ
նորա հետ ուրախանում են։ Այդ 27
դուք Քրիստոսի մարմինն էք, և
մէկ մէկ նորա անդամներ։ Եւ ո- 28
մանց դրաւ Աստուած եկեղեցու-
մը, առաջ առաքեալներին, երկ-
րորդ՝ մարգարէներին, երրորդ՝
վարդապետներին. յետոյ զօրու-
թիւններ. յետոյ բժշկութեանց
պարգևներ, օգնութիւններ, կա-
ռավարութիւններ, այլ և այլ լե-
զուներ։ Մի՞թէ ամենքն առաք- 29
եալք են. մի՞թէ ամենքը մարգա-
րէք են. մի՞թէ ամենքը վարդա-
պետներ են. մի՞թէ ամենքը զօ-
րութիւններ ունին։ Մի՞թէ ա- 30
մենքը բժշկութեանց պարգևներ
ունին. մի՞թէ ամենքը լեզուներ
են խօսում. մի՞թէ ամենքը թարգ-
մանում են։

Բայց դուք նախանձաւոր եղէք 31
լաւագոյն շնորհքներին. և ես էլ
աւելի գերազանց ճանապարհ ցոյց
տամ ձեզ։

ԳԼ. ԺԳ

1 Եթէ մարդկանց և հրեշտակներ-
ի լեզուներով խօսիմ, բայց սէր
չունեմ, ես եղայ ձայն հնչող
պղինձ, կամ հնչեցող ծնծղայ։
2 Եւ եթէ մարգարէութիւն ունե-
նամ, և դիտենամ ամեն խոր-
հուրդները և ամեն գիտութիւնը.
և եթէ ամեն հաւատքն ունենամ,
մինչև որ լեռներն էլ փոխեմ,
3 բայց սէր չունեմ, ոչինչ եմ։ Եւ
եթէ իմ ամեն ապրանքներն ա-
ղքատներին ուտեցնեմ և իմ մար-
մինը մատնեմ որ այրուի, բայց
սէր չունեմ, ես ոչինչ օգուտ չեմ
4 ունենալ։ Սէրը երկայնամիտ է՝
քաղցր է. սէրը չէ նախանձվում,
չէ գոռոզանում, չէ հպարտա-
5 նում։ Չի լըռանում, իրը չէ որա-
նում. չէ դրգռվում, չարը չէ
6 մտածում։ Անիրաւութեան վե-
րայ չէ ուրախանում, բայց ու-
րախանում է ճշմարտութեան
7 հետ։ Ամեն բանի դիմանում է.
ամեն բան հաւատում է, ամեն
բանի համար յոյս ունի, ամեն
8 բանի համբերում է։ Սէրը երբէք
չի վերջանալ. եթէ մարգարէու-
թիւններ կ՚ըլլան՝ կ՚խափանուին. եթէ
լեզուներ՝ կ՚լռեն. եթէ գիտու-
9 թիւն՝ կ՚խափանուի։ Քանզի փոքր
՚ի շատէ գիտում ենք. և փոքր ՚ի
10 շատէ մարգարէանում ենք։ Բայց
երբոր կատարեալը գայ, այս փոքր
11 ՚ի շատէն կ՚խափանուի։ Երբոր
տղայ էի՝ տղայի պէս էի խօսում,
տղայի պէս էի մտածում, տղայի
պէս էի համարում. բայց երբոր
մարդ եղայ, այն տղայութեան
12 բաները խափանեցի։ Քանզի հիմա
հայելու մէջ օրինակով ենք տես-
նում, բայց այն ժամանակ դէմա-
դէմ. հիմա փոքր ՚ի շատ եմ
տեղեակ, բայց այն ժամանակն
այնպէս կ՚գիտենամ՝ ինչպէս գի-
13 տացուած եմ։ Ապա ուրեմն մնում
է հաւատք, յոյս, սէր. այս ե-
րեքը, և սրանցից մեծը սէրն է։

ԳԼ. ԺԴ

1 Սէրոյն հետևեցէք, և հոգևոր

ընդհանրէին նախանձաւոր եղէք, և
մանաւանդ որ մարգարէանաք։
2 Քանզի լեզուներով խօսողը, մարդ-
կանց հետ չէ խօսում, այլ Աս-
տուծոյ հետ. քանզի ոչ ոք չէ
լսում, բայց Հոգով խորհուրդ-
ներ է խօսում։ 3 Իսկ մարգարէա-
նողը, մարդկանց հետ շինութիւն
և մխիթարութիւն և սփոփու-
թիւն է խօսում։ 4 Լեզուով խօս-
ողը իր անձն է շինում, իսկ մար-
գարէանողը եկեղեցին է շինում։
5 Ես կամենում եմ որ դուք ամեն-
քդ լեզուներով խօսիք, բայց
մանաւանդ որ մարգարէանաք.
քանզի աւելի մեծ է մարգարէա-
նողը, քան թէ լեզուներով խօս-
ողը, միայն եթէ թարգմանէ, որ
եկեղեցին շինութիւն առնէ։
6 Բայց հիմա, եղբարք, եթէ ձեզ
մօտ գամ և լեզուներով խօսիմ,
ի՞նչ օգուտ կ՚տամ ձեզ՝ եթէ չխօ-
սիմ ձեզ հետ կամ յայտնութիւ-
նով, կամ գիտութիւնով, կամ
մարգարէութիւնով, կամ վար-
դապետութիւնով։ 7 Այնպէս էլ
անշունչ բաները որ ձայն են տա-
լիս, թէ փող թէ քնար. եթէ
ձայներով զանազանութիւն չա-
նեն, ի՞նչպէս կ՚ճանաչուի փողի
փչելը, կամ քնարի հնչելը։ 8 Քան-
զի եթէ փողն էլ անորոշ ձայն
տայ, ո՞վ կ՚պատրաստուի պատե-
րազմի համար։ 9 Այսպէս էլ դուք,
եթէ լեզուներով բանը յայտնի
չասէք, այն խօսածն ի՞նչպէս կ՚ի-
մացուի. քանզի երէք օդի մէջ
խօսողներ կ՚լինիք։ 10 Քանզի այնքան
այլ և այլ ձայներ կան աշխարհ-
քումը, և նորանց ոչ մէկն էլ ա-
ռանց ձայնի չէ։ 11 Արդ եթէ ես
ձայնի զօրութիւնը չգիտենամ, ես
խօսողին խուժ կ՚լինիմ, և խօսողն
ինձ համար խուժ։ 12 Այսպէս էլ
դուք, որովհետև հոգևոր ընդհա-
նրէին նախանձաւոր էք, եկեղեցու
շինութեան համար ջանք արէք,
որ էլ առաւելանաք։ 13 Վասնորոյ
լեզուով խօսողը, թող աղօթք
անէ, որ թարգմանէ էլ։ 14 Քան-
զի եթէ ես աղօթք անեմ օտար
լեզուով, իմ հոգին է աղօթք ա-
նում, բայց միտքս անպտուղ է։

15 Ուրեմն ի՞նչ է, ազօթք անեմ հոգով, ազօթք անեմ մտքով ել. աղաղնա սաեմ հոգով, աղաղնա սաեմ մտքով ել։ 16 Ապա եթէ դու օրհնես հոգով, նա որ տգէտի տեղն է բռնում ինչպէս ամէն սաե քո օրհնութեանը, քանի որ 17 չէ գիտում ինչ ես սասւմ։ Դու իրաւ որ լաւ ես գոհանում. բայց 18 միւսը չէ շինվում։ Գոհանում եմ իմ Աստուածանից, որ ձեր ամենից աւելի լեզուներով խօսում 19 եմ։ Բայց եկեղեցու մէջ աւելի կամենում եմ որ հինգ խօսք իմ մտքովը խօսիմ, որ ուրիշներին ել բան սովորեցնեմ քան թէ բիւրաւոր խօսքեր լեզուներով։

20 Եղբարք, մտքով տղայ մի լինէք. բայց չարութեան կողմանէ տղայ եղէք, իսկ մտքով կատար- 21 եալ եղէք։ Օրէնքումը գրուած է, թէ Օտար լեզուներով և օտար շրթունքներով կ'խօսիմ այս ժողովրդի հետ. բայց և այնպէս ինձ ականջ չեն դնիլ, ասում է 22 Տէրը։ Ուրեմն լեզուները նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներին, այլ անհաւատներին. բայց մարգարէութիւնը ոչ թէ անհաւատների համար է, այլ հաւա- 23 տացեալների։ Արդ եթէ բոլոր եկեղեցին մէկ տեղ գայ, և ամենքը լեզուներով խօսին. և տգէտներ կամ անհաւատներ մտնեն՝ չէ՞, մի՞թէ չեն ասիլ թէ դուք 24 գժուած էք։ Բայց եթէ ամենքը մարգարէանան, և մի անհաւատ կամ տգէտ գայ մտնէ, նա ամենից կ'յանդիմանուի, ամենից 25 կ'քննուի։ Եւ այսպէս նորա սրտի գաղտնիքը յայտնի կ'լինի. և ապա երեսի վերայ ընկած Աստուծոյն երկրպագութիւն կ'անէ, խոստովանելով թէ արդարև Աստուած ձեր միջումն է։

26 Ուրեմն ի՞նչ է, եղբարք. երբ որ ժողովուիք, ձեզանից ամեն մէկը սաղմոս ունենայ, վարդապետութիւն ունենայ, յայտնութիւն ունենայ, թարգմանութիւն ունենայ. ամենը շինութեան 27 համար լինի։ Եթէ մէկը լեզուով խօսի, թող երկու, և եթէ էլ աւելի շատ՝ երեք լինին. մէկը միւսից յետոյ. և մէկը թող թարգմանէ։ Բայց եթէ թարգմանող 28 չկայ, թող լռէ եկեղեցումը. թող իրան համար և Աստուծոյ հետ խօսի։ Բայց մարգարէները թող 29 երկու կամ երեք խօսին, և ուրիշները քննեն։ Բայց եթէ մի ուրիշին 30 յայտնուելիս նստած է՝ յայտնութիւն լինի, առաջինը թող լռէ։ Քանզի կարող էք մէկ մէկ 31 կից յետոյ ամենքդ մարգարէանալ. որ ամենքը սովորին և ամենքը մխիթարուին։ Եւ մարգա- 32 րէից հոգիները էլ մարգարէներին հնազանդուում են։ Քանզի 33 Աստուած խառնակութեան Աստուած չէ, այլ խաղաղութեան, ինչպէս սրբերի բոլոր եկեղեցիներումը։

Ձեր կանայքը եկեղեցիներում 34 լուռ կենան. քանզի նորանց հրաման չկայ խօսելու, այլ որ հնազանդ լինին, ինչպէս օրէնքն էլ ասում է։ Բայց եթէ մի բան 35 կամենան սովորիլ, թող տան մէջ իրանց մարդկանցից հարցնեն. քանզի կնկանն անվայել է եկեղեցում խօսել։ Կամ թէ Աստու- 36 ծոյ խօսքը ձեզանի՞ց դուրս եկաւ, կամ միայն ձե՞զ հասաւ։ Բայց 37 եթէ մէկը կարծէ՝ թէ նա մարգարէ է կամ հոգևոր, թող գիտենայ ինչ որ գրեցի ձեզ, որ Տիրոջ պատուիրաններն են։ Բայց 38 եթէ մէկը տգէտ է, թող տգէտ լինի։ Ուրեմն, եղբարք, ջանք ա- 39 րէք որ մարգարէանաք, և լեզուներով խօսելը մի արգելէք։ Ամեն- 40 բան թող պարկեշտութեամբ և կարգով լինի։

ԳԼ. ԺԵ

Իմացնում եմ ձեզ, եղբարք, այն 1 աւետարանը՝ որ աւետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի մէջ էլ կանգնած էք. Որով փըրկ- 2 վում էլ էք. այն բանով որ ձեզ աւետարանեցի, եթէ ամուր բռնէք նէք Նրան. եթէ զուր տեղը չէք հաւատացել։ Քանզի ես առա- 3 ջուց այն տուի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թէ Քրիստոս մեր մե-

ղաց համար մեռաւ՝ զքեզի սա-
4 ՀԷ պէս ։ Եւ թէ թաղուեցաւ, և
թէ երրորդ օրը յարութիւն ա-
5 ռաւ՝ զքեզի սաՀէ պէս ։ Եւ թէ
երեւեցաւ Կեփասին, յետոյ այն
6 տասնեկուսին ։ Ցետոյ երեւեցաւ
հինգ հարիւրից աւելի եղբայրնե-
րին մէկ անգամ, որոնցից շատե-
րը մինչև հիմա ճիւռամ են, բայց
7 մի քանիսն էլ ննջեցին ։ Եւ յե-
տոյ երեւեցաւ Յակոբին, յետոյ
8 բոլոր առաքեալներին ։ Ամենից
յետոյ՝ իբր թէ մի վիժածի՝ ինձ
9 էլ երեւեցաւ ։ Քանի ես առաք-
եալների յետինն եմ, որ արժանի
չեմ առաքեալ կոչուելու, որով-
Հետև Աստուծոյ եկեղեցին հա-
10 լածեցի ։ Բայց Աստուծոյ շնոր-
քով եմ ինչ որ եմ, և նորա շը-
նորհքն որ ինձանում է ունայն
չեղաւ, այլ նրանց ամենից ա-
ւելի աշխատեցի, սակայն ոչ թէ
ես, այլ Աստուծոյ շնորհքը որ
11 ինձ հետ է ։ Արդ թէ ես՝ թէ նո-
րանք, այսպէս ենք քարոզում, և
դուք այսպէս հաւատացիք ։
12 Բայց եթէ Քրիստոսը քարոզվում
է՝ թէ մեռելներից յարութիւն է
առել, ի՞նչպէս են ձեզանից ո-
մանք ասում, թէ Մեռելների յա-
13 րութիւն չկայ ։ Եթէ մեռելների
յարութիւն չկայ, ապա Քրիստոսն
14 էլ չէ յարութիւն առել ։ Եւ ե-
թէ Քրիստոսը յարութիւն չէ ա-
ռել, ուրեմն ունայն է մեր քա-
րոզութիւնը, և ունայն է ձեր
15 հաւատքն էլ ։ Եւ մենք էլ Աս-
տուծոյ սուտ վկաներ ենք գըտն-
վում, որ Աստուծոյ համար վկա-
յեցինք, թէ Քրիստոսին յարոյց,
որին չյարոյց, եթէ արդարև մե-
ռելները յարութիւն չեն առ-
16 նում ։ Քանզի եթէ մեռելներն յա-
րութիւն չեն առնում, ապա Քր-
իստոս էլ յարութիւն չէ առել ։
17 Եւ եթէ Քրիստոս յարութիւն չէ
առել՝ ունայն է ձեր հաւատքը ։
18 Ե՛ դեռ ձեր մեղաց մէջ էք ։ Ա-
րդեն նորանք էլ, որ Քրիստոսու-
19 մը ննջեցին, կորան ։ Եթէ միայն
այս կեանքումն ունինք յոյս Քրիս-
տոսի վերայ, ամեն մարդկանցից
20 աւելի ողորմելի ենք ։ Բայց հիմա
Քրիստոս յարութիւն է առել
մեռելներից, ինքն ննջածների ա-
ռաջինեկ եղաւ ։ Քանզի որովհե- 21
տև մարդով եղաւ մահը, և մար-
դով էլ մեռելների յարութիւնը
Քանզի ինչպէս Ադամով ամենքը 22
մեռնում են, այնպէս էլ Քրիստո-
սով ամենքը կենդանանում են ։
Եւ ամեն մէկն իր կարգումը ։ Ա- 23
ռաջի պտուղը Քրիստոս և յետոյ
Քրիստոսինները նորա գալու ժամա-
նակումը ։ Եւ յետոյ վերջը, երբ 24
որ թագաւորութիւնը Աստուծոյն
և Հօրը կ'տայ ։ երբոր կ'խափանէ
ամեն իշխանութիւնը և ամեն պե-
տութիւնը և զօրութիւնը ։ Քան- 25
զի պէտք է որ նա թագաւորէ,
մինչև որ բոլոր թշնամիները իր
ոտաց տակ դնէ ։ Յետին թշնամին՝ 26
որ կ'խափանուի՝ մահն է ։ Քանզի ։
Ամեն բան հնազանդեցրեց նորա
ոտաց տակ ։ Բայց երբոր ասէ՝ թէ 27
Ամեն բան հնազանդ է նորան,
յայտնի է որ բացի նորանցից որ
ամեն բան հնազանդեցրեց նորան ։
Բայց երբոր ամենը կ'հնազանդի 28
նորան, այն ժամանակ ինքն Որ-
դին էլ կ'հնազանդի նորան՝ որ
ամենը հնազանդեցրեց նորան ։ որ
Աստուած լինի ամենայն յամե-
նայնի ։ Ապա եթէ ոչ, ի՞նչ կ'ա- 29
նեն մեռելների վերայ մկրտուղ-
ները եթէ որպէսև մեռելները յա-
րութիւն չառնեն ։ Էլ ինչո՞ւ են
մեռելների վերայ մկրտվում ։ Եւ 30
մենք ինչո՞ւ ամեն ժամանակ վը-
տանգի մէջ ենք ։ Ամեն օր մեռ- 31
նում եմ ։ երդնում եմ ձեր վերայ
ունեցած պարծանքովս որ մեր Տէր
Յիսուս Քրիստոսումն ունիմ ։ Եթէ 32
մարդկօրէն կռիւ առաւ գազան-
ների կռուի մէջ մնայ, ինչ օ-
գուտ էր ինձ համար, եթէ մե-
ռելները յարութիւն չեն առնում ։
ուտենք և խմենք, քանզի էգուց
կ'մեռնինք ։ Մի խաբուիք ։ չար 33
ընկերակցութիւնքն ապականում
են քաղցր վարքերը ։ Արթուն կա- 34
ցէք արդարութեամբ և մեղք մի
գործէք ։ քանզի մի քանիսն Աս-
տուծոյ մասին տգէտ են ։ այս ձեր
ամօթի համար եմ ասում ։
Բայց մէկը կ'ասէ ։ Մեռելներն 35

ինչպէս յարութիւն կ՛առնեն, և
36 թէ ի՞նչ մարմնով կ՛գան։ Ան-
միտ, այն որ դուն սերմնում ես,
չի կենդանանայ՝ եթէ չմեռնի։
37 Եւ այն որ սերմնում ես, ոչ թէ
այն մարմինն ես սերմնում որ պի-
տի բուսանի, այլ մերկ հատը. թէ
ցորենի լինի, թէ ուրիշ սերմանք-
38 ներէն։ Եւ Աստուած մարմին է
տալիս նորան ինչպէս կամենում
է, և սերմանքներուն ամեն մէկին
39 իրանց մարմինը։ Ամեն մարմին մի
և նոյն մարմինը չէ. ուրիշ է մարդ-
կանց մարմինը, ուրիշ է անա-
սուններուն մարմինը. ուրիշ է ձըկ-
ներուն մարմինը, ուրիշ է թռչուն-
40 ներուն մարմինը։ Կան երկնաւոր
մարմիններ էլ, երկրաւոր մար-
միններ էլ. բայց ուրիշ է երկնա-
ւորներուն փառքը, և ուրիշ է երկ-
41 րաւորներուն փառքը։ Ուրիշ է ա-
րեգակին փառքը, և ուրիշ է լուս-
նի փառքը, և ուրիշ է աստղե-
րուն փառքը. քանզի մի աստղ մի-
սից գոնազանվում է փառքով։
42 Այնպէս էլ մեռելներուն յարու-
թիւնը. սերմվում է ապականու-
թիւնով, և յարութիւն է առ-
43 նում անապականութիւնով. Սերմ-
վում է անարգութիւնով, և յա-
րութիւն է առնում զօրութիւ-
44 նով։ Սերմվում է շնչաւոր մար-
մին, և յարութիւն է առնում
հոգևոր մարմին. կայ շնչաւոր
մարմին, կայ և հոգևոր մարմին։
45 Այնպէս էլ գրուած է, թէ Ա-
ռաջին մարդն Ադամ կենդանի
շունչ եղաւ, երկրորդ Ադամ կեն-
46 դանարար հոգի։ Սակայն թէ հո-
գևորն առաջ չէ, այլ շնչաւորը,
47 և յետոյ հոգևորը։ Առաջին մար-
դը երկրիցն է հողեղէն. երկ-
րորդ մարդն է Տէրը երկնքից։
48 Ինչպէս հողեղէնը. այնպէս էլ հո-
ղեղէնները. և ինչպէս երկնաւորը,
49 այնպէս էլ երկնաւորները։ Եւ
ինչպէս հողեղէնի պատկերը հա-
գանք, երկնաւորի պատկերն էլ
50 պիտի հագնենք։ Սակայն թէ ա-
եմ ասում, եղբարք, որ մարմին
և արիւն չեն կարող Աստուծոյ
արքայութիւնը ժառանգել. և ոչ
էլ ապականութիւնը ժառան-
գում է անապականութիւնը։

Ահա, ձի խորհուրդ եմ ասում 51
ձեզ. Ոչ թէ ամենքս կ՛ննջենք,
այլ ամենքս կ՛նորոգուինք։ Յան- 52
կարծ՝ ձի ակառնթարթում յետին
փողի ժամանակին. քանզի էդ
կ՛փչուի, և մեռելները յարու-
թիւն կ՛առնեն անապականելի, և մենք
կ՛նորոգուինք։ Քանզի պէտք է որ 53
այս ապականացուն հագնէ անա-
պականութիւնը, և այս մահկա-
նացուն հագնէ անմահութիւնը։
Եւ երբոր այս ապականացուն ա- 54
նապականութիւնը, և այս մահ-
կանացուն կ՛հագնէ անմահութիւ-
նը, այն ժամանակ կ՛լինի այն խօս-
քը որ գրուած է. Թէ Մահն կը-
կղմուեցաւ յաղթութեան մէջ։
Ով մահ, ո՞ւր է քո խայթոցը. 55
դժոխք, ո՞ւր է քո յաղթութիւ-
նը։ Մահի խայթոցը մեղքն է, 56
և մեղքի զօրութիւնը՝ օրէնքը։
Բայց շնորհակալութիւն թէ Ա- 57
ստուծոյն, որ տուաւ մեզ յաղ-
թութիւնը մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի ձեռովը։ Ուրեմն, սիրե- 58
լի եղբարքս, հաստատ եղէք, ան-
շարժ կացէք, ամեն ժամանակ
աւելի առաջացէք Տիրոջ գոր-
ծովը, գիտացէք, որ ձեր աշխա-
տանքը զուր չէ Տէրոջը։

ԳԼ. ԺԶ.

Բայց այն տուրք ժողովելու կող- 1
մանէ՝ որ սրբերի համար է, ինչ-
պէս Գաղատացոց եկեղեցիներին
պատուիրեցի, այնպէս էլ դուք
արէք։ Ամէն մէկ միաշաբաթի օ- 2
րէրը ձեզանից ամեն մէկը թող ի-
րան մօտ հաւաքէ՝ ինչ որ կ՛յա-
ջողուի։ Որ չլինի թէ երբոր գամ, 3
այն ժամանակ ժողովելը լինի.
բայց երբոր գամ՝ որոնց որ թղ-
թերով ընտրեցիք, նորանց կ՛ու-
ղարկեմ՝ որ ձեր ընծան տանեն
Երուսաղէմ։ Եւ եթէ ինձ էլ ար- 4
ժան լինի գալ, թող ինձ հետ
գնան։ Բայց ձեզ մօտ կ՛գամ՝ երբ 5
որ Մակեդոնիայի միջովը կ՛անց-
նիմ. քանզի Մակեդոնիայի միջո-
վը մտն կ՛գամ, Եւ կարելի է որ 6
ձեզ մօտ կ՛ձեամ՝ կամ թէ ձմե-
ռը կ՛անցնեմ. որ դուք ինձ ճա-

Ողջոյն եմ ձեզ, եղբարք, պի- 15
տէք Ստեփանի տունը, որ Աքա-
յեցոց առաջի պտուղն է, և իրանց
անձերը սրբերի ծառայութեան
նուիրեցին։ Որ դուք էլ հնազանդ 16
լինիք այնպիսիներին, և այն ամե-
նին, որ գործքի և աշխատանքի
ընկեր են։ Աւրախ եղայ Ստեփա- 17
նի և Փորտունատի և Աքայիկոսի
գալու համար, քանզի նորանք
ձեր պակասութիւնը լցրին։ Քան- 18
զի իմ և ձեր հոգին հանգիստ
տուին. ուրեմն ճանաչեցէք այն-
պիսիներին։

Բարև են տալիս ձեզ Ասիացոց 19
եկեղեցիները. շատ բարև են տա-
լիս ձեզ Տէրով Ակիւղասը և Պր-
իսկիլլան այն եկեղեցու հետ՝ որ
նորանց տանն է։ Բարև են տա- 20
լիս ձեզ բոլոր եղբարքը. բարև
տուէք իրար սուրբ համբուրով։

Իմ Պօղոսի ձեռքի բարևն է։ 21
Եթէ ոմեկը Տէր Յիսուսին չսիրէ, 22
անիծուած լինի. մարանաթա։
Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շը- 23
նորհքը ձեզ հետ լինի։ Եւ իմ 24
սէրը ձեր ամենի հետ Քրիստոս
Յիսուսումն. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ա-
ռաքեալ՝ Աստուծոյ կամքովը, և
Տիմոթէոս եղբայրը. Աստուծոյ
եկեղեցւոյդ որ Կորնթոսումն է՝ ա-
մեն սրբերի հետ որ բոլոր Աքա-
2 յիայումն են. Շնորհք լինի ձեզ և
խաղաղութիւն՝ Աստուծմէ մեր Հօ-
րէն, և Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Օրհնեալ լինի Աստուած և մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրը,
գթութեանց Հայրը և ամեն մխի-
4 թարութեան Աստուածը, Որ մխի-
թարեաց մեզ մեր ամեն նեղու-
թիւնումն, որ մենք կարող լի-
նինք մխիթարել նորանց որ ամեն
տեսակ նեղութիւնումն են՝ այն մխի-
թարութիւնովն որով մենք Աստ-
ուածմանէ մխիթարուում ենք։ Քան- 5
զի ինչպէս Քրիստոսի չարչարանք-
ներն առատանում են մեզ համար,
այնպէս էլ Քրիստոսի ձեռովը շա-
տանում է մեր մխիթարութիւնը։
Եւ եթէ նեղութիւն ենք քա- 6

---

*Այլ՝ Եւ եթէ նեղութիւն ենք
քաշում, այն՝ ձեր մխիթարու-
թեան և փրկութեան համար է.
և եթէ մխիթարւում ենք, այն
ձեր մխիթարութեան և փրկու-
թեան համար է, որ յաջողւում
է այն չարչարանքների համբերու-
թիւնովը որ մենք էլ չարչարւում
ենք. և մեր յոյսը ձեզ վերայ հաս-
տատ է։

շում, այն ձեր միխիթարութեան և
փրկութեան համար է. որ յա-
ջողում է այն չարչարանքների
համբերութիւնով, որ մենք էլ
չարչարվում ենք. և եթէ մխի-
թարվում ենք, այն ձեր միխիթա-
րութեան և փրկութեան հա-
մար է, և մեր յոյսը ձեզ համար
7 հաստատ է: Գիտենք թէ
ինչպէս չարչարանքների մասնա-
կից էք, այնպէս էլ միխիթարու-
8 թեանը: Գանդի չենք կամենում,
եղբայրք, որ գուք չգիտենաք այն
նեղութեան որ Ասիայում մեզ
եղաւ. քանդի մեր կորազութի-
նից աւելի ծանրաբեռնուեցանք.
մինչև որ մեր կենաց յոյսն էլ
9 կտրել էինք: Բայց մենք ինքներս
մեզ վերայ մահուան վճիռն ու-
նէինք. որպէս զի մեր անձների վե-
րայ յոյս չդնենք, այլ Աստուծոյ
վերայ որ մեռելներին յարուցա-
10 նում է: Որ այնպիսի մահից մեզ
11 փրկից և փրկում էլ է. Որին յոյս
ունինք՝ թէ տակաւին կ'փրկէ էլ
ձեր մեզ համար արած աղօթքի
օգնականութեամբը. որ շատ մարդ-
կանցից մեզ եղած շնորհքի հա-
մար շատերի ձեռով գոհութիւն
մատուցանուի մեզ համար:
12 Գանդի մեր պարծանքը սա է՝
մեր խղճմտանքի վկայութիւնը,
որ սրբութիւնով և Աստուծոյ
պարզութիւնովը և ոչ թէ մարմ-
նական իմաստութիւնով, այլ
Աստուծոյ շնորհքովը վարուեցանք
աշխարհքի մէջ, և էլ աւելի դէ-
13 պի ձեզ: Գանդի ուրիշ բաներ չենք
գրում ձեզ, այլ միայն նա որ
կարդում էք կամ հէնց ճանաչում
էք. և յոյս ունիմ թէ մինչև վեր-
14 ջն էլ կ'ճանաչէք: Ինչպէս էլ
փոքր 'ի շատէ ճանաչեցիք մեզ.
քանդի ձեր պարծանքն ենք. ինչ-
պէս գուք էլ մերը՝ Տէր Յիսուսի
օրումը:
15 Եւ այս վստահութիւնովը կա-
մենում էի առաջ ձեզ մօտ գալ,
որ գուք երկրորդ շնորհք ընդու-
16 նէք. Եւ ձեզանից գնալ Մակե-
դոնիա. և դարձեալ Մակեդո-
նիայից ձեզ մօտ գալ, և ձեզա-
նից ճանապարհ գցուիլ դէպի Հր-

բեաստան: Արդ եթէ այս միտքն
արի՝ միթէ թեթևամտութիւն 17
գործածեցի. և կամ թէ այն որ
խորհում եմ մարմնո՞յ կերպով եմ
խորհում. որ իմ կողմանէ այո՝
այո լինի, և ոչը՝ ոչ: Եւ Աստ- 18
ուած հաւատարիմ է, որ մեր խօս-
քը գէպի ձեզ այո և ոչ չեղաւ:
Գանդի Աստուծոյ Որդին Յիսուս 19
Քրիստոսը, որ մեզանով ձեր մէջ
քարոզուեցաւ, ինձանով և Սի-
ղուանոսով և Տիմոթէոսով, այո
և ոչ չեղաւ. այլ այո եղաւ նո-
րանում: Գանդի որքան Աստուծոյ 20
աւետիքներ որ կան նորանում է
այո՝, և նորանում է ամէնը Աս-
տուծոյ փառքի համար մեզանով:
Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսու- 21
մը հաստատողը և մեզ օծողը Աստ-
ուած է. Որ մեզ կնքեց էլ, և 22
Հոգու գրաւը մեր սրտերի մէջ
տուաւ: Բայց ես Աստուծոյն վը- 23
կայ եմ կանչում իմ անձի վե-
րայ. որ ձեզ խնայելու համար այլ
ևս չեկայ Կորնթոս. ոչ թէ ձեր 24
հաւատքի վերայ տիրապետում
ենք՝ այլ ձեր ուրախութեանը
գործընկեր ենք, քանդի հաւատ-
քով հաստատ կանգնած էք:

Գլ. Բ

Բայց ես այս որոշեցի ինձանում 1
որ դարձեալ տրտմութիւնով
չգամ ձեզ մօտ: Գանդի եթէ ես 2
ձեզ տրտմեցնեմ, էլ ո՞վ է ինձ
ուրախացնողը եթէ ոչ ինձանից
տրտմողը: Եւ հէնց այս գրեցի՝ 3
ձեզ, որ մի գուցէ ես եկած ժա-
մանակս տրտմութիւն քաշեմ նո-
րանցից որոնցից պէտք էր ինձ ու-
րախ լինել. յոյս ունիմ ձեր ա-
մենի վերայ, որ իմ ուրախութի-
նըն ձեր ամենինն է: Գանդի շատ 4
նեղութիւնից սրտիս տագնապից
գրեցի ձեզ շատ արտասուքով.
ոչ թէ՝ որ տրտմիք, այլ որ իմ
սէրը գիտենաք, որն ես առատո-
րէն ունիմ ձեզ վերայ.
Ապա եթէ մէկը տրտմեցրել է, 5
ոչ թէ ինձ է տրտմեցրել, այլ
փոքր 'ի շատէ, որ չծանրացնեմ՝
ձեզ ամենիդ: Բաւական է այն- 6

պիսի մարդուն համար այն խրատը, որ շատերիցը եղե-
7 ր, որ Հետևակը՝ աւելի նեղեցէք, և մխիթարեցէք. մի գու-
ցե շատ սատակ տրամութիւնից
8 այնպիսին խեղդուի, Որա համար աղաչում եմ ձեզ, որ սէրը
9 հաստատէք նորա վերայ, Քանզի նորա համար գրեցի էլ ձեզ, որ
ձեզ փորձով գիտենամ, թէ
արդեօք ամեն բանի մէջ հնա-
10 զանդ էք, Բայց եթէ դուք մէկին
մի բան ներէք, ես էլ. որովհետև
ես էլ եթէ մի բան ներեմ, որին
որ ներում եմ՝ ձեզ համար է
11 Քրիստոսի առջև, Որ չդրկուինք
սատանայիցը. քանզի նորա խոր-
հուրդներին անտեղեակ չենք,
12 Բայց երբոր ես հասայ Տրոադա
Քրիստոսի աւետարանի համար,
և դուռն ինձ համար բաց էր Տե-
13 րոջ, Իմ հոգու մէջ հանգստու-
թիւն չունէի. քանզի իմ Տիտոս
եղբօրն այն տեղ չգտայ. այլ նո-
րանցից հրաժարվելով գնացի Մա-
կեդոնիա։
14 Բայց շնորհակալութիւն Ա-
ստուծոյն՝ որ ամեն ժամանակ մեզ
յաղթող է անում Քրիստոսում
և իր գիտութեան հոտը մեզանով
15 յայտնվում է ամենայն տեղ, Որով-
հետև մենք Քրիստոսի անուշ հոտն
ենք Աստուծոյ առջև, փրկուածնե-
16 րի մէջ և կորածների մէջ, Ո-
մանց համար մահուան հոտ դէ-
պի մահ. և ոմանց համար կեն-
դանց հոտ դէպի կեանք. և այս
բաների համար ո՞վ բաւական
17 կ'լինի, Քանզի շատերին պէս չենք,
որ Աստուծոյ խօսքը խարդախում
են. այլ ինչպէս պարզութիւնից,
ինչպէս Աստուածմանից՝ Աստու-
ծոյ առջև խօսում ենք Քրիստո-
սում։

ԳԼ. Գ

1 Դարձեալ սկսում ե՞նք մեր ան-
ձները յանձն առնել. կամ թէ ո-
մանց պէս պէտք են մեզ յանձ-
նարարական թղթեր ձեզ վերայ՝
կամ ձեզանից յանձնարարական-
2 ներ։ Մեր թուղթը դուք եք՝ մեր
արտի մէջ գրուած՝ ոմանց
կանցից իմացուած և կարդաց-
ուած։ Դուք յայտնի էք թէ Քրի- 3
ստոսի թուղթն էք՝ մեր ծառա-
յութիւնովը եղած. և գրուած՝
ոչ թէ թանաքով, այլ կենդա-
նի Աստուծոյ Հոգովը. ոչ թէ
քարի տախտակների վերայ, այլ
սրտի մարմնեղէն տախտակների
վերայ։ Եւ այսպիսի յոյս ունինք 4
առ Աստուած Քրիստոսի ձեռովը։
Ոչ թէ մենք մեզանից բաւական 5
ենք մի բան միտք անելու ինչպէս
մեզանից, այլ մեր բաւական լի-
նելն Աստուածանից է. Որ մեզ 6
բաւական էլ արաւ Նոր կտա-
կարանի պաշտօնեայք լինելու՝ ոչ
թէ գրի, այլ Հոգու. քանզի գի-
րըն սպանում է, այլ Հոգին կեն-
դանացնում է։ Բայց եթէ մահի 7
պաշտօնը գրով քարերի վերայ
փորուած՝ փառքով եղաւ, մին-
չև որ Իսրայէլի որդիքը չէին կա-
րող Մովսէսի երեսին մտիկ անել
նորա երեսի փառքի համար, որ
խափանուող էր. Ո՞րքան աւելի 8
Հոգուն պաշտօնը փառքով չլինի,
Քանզի եթէ դատապարտութեան 9
պաշտօնը փառքով էր, ապա ո՞ր-
քան աւելի արդարութեան պաշ-
տօնը փառքով է, Քանզի այն փա- 10
ռաւորն էլ փառաւոր չէ այս մա-
նին այն գերազանցող փառքի հա-
մար, Քանզի եթէ այն խափան- 11
ուողը փառքով էր, ո՞րքան աւելի
փառքով է հաստատ մնացողը։
Արդ այսպիսի յոյս ունենալով 12
շատ համարձակութեամբ ենք վար-
վում։ Եւ ոչ թէ ինչպէս Մովսէսն 13
իր երեսի վերայ քող էր գցում՝
որ Իսրայէլի որդիքը չնայեն խա-
փանուողի վերջին. Բայց նորանց 14
միտքը կուրացաւ. քանզի մինչև
այս օրուայ օրը այն քողը մնում
է Հին Կտակարանի կարդացմունք
քի վերայ վեր չառուած, որով-
հետև Քրիստոսով է խափանվում։
Այլ մինչև այսօր երբոր Մովսէսին 15
կարդում են, մի քող ընկած է
նորանց սրտերի վերայ։ Բայց երբոր 16
դէպի Տէրը կ'դառնան, այն քո-
ղը վեր կ'առնուի։ Քանզի Տէրն 17
է Հոգին. որտեղ որ Տէրոջ Հո-

գին է՝ այնտեղ է ազատութիւն
18 Բայց մենք ամենքս՝ բաց երեսով
Տիրոջ փառքն ինչպէս հայելու
մէջ տեսանելով նոյն պատկերին նը-
մանի կերպարանափոխվում ենք
փառքից դէպի փառք. ինչպէս թէ
Տիրոջ Հոգուցը։

ԳԼ. Դ

1 Սորա համար այս պաշտօնն ու-
նենալով, ինչպէս որ ողորմութիւն
2 գտանք, չենք ձանձրանում։ Այլ
ամօթալի ծածուկ բաները մեր-
ժել ենք. և խորամանկութեամբ
չենք վարվում։ Եւ Աստուծոյ խօս-
քին էլ չենք ծռում, այլ ճըշ-
մարտութեան յայտնութիւնով
մեր անձներն ընդունելի ենք ա-
նում ամեն մարդկանց խղճմտան-
3 քին՝ Աստուծոյ առջև։ Իսկ եթէ
մեր աւետարանը ծածկուած էլ
լինի, նա կորածների մէջ է ծած-
4 կուած։ Որոնցում այս աշխարհ-
քի Աստուածը այն անհաւատնե-
րի սրտերը կուրացրեց, որ Քրիս-
տոսի փառաւոր աւետարանի լու-
սաւորութիւնը չծագէ նորանց վե-
րայ. որ աներևոյթ Աստուծոյ
5 պատկերն է։ Քանզի մենք ոչ թէ
մեր անձներն ենք քարոզում, այլ
Տէր Յիսուս Քրիստոսին. և մեզ
ձեր ծառաներ Յիսուսի համար։
6 Քանզի Աստուած որ ասաց թէ
խաւարից լոյս ծագէ, ինքն մեր
սրտերի մէջ ծագեց՝ Աստուծոյ
փառաց գիտութեան լուսաւորու-
թիւնը տալու համար Յիսուսի
7 Քրիստոսի դէմքում։ Բայց այս
գանձն ունինք հողի անօթներում,
որ զօրութեան գերազանցութիւ-
նը Աստուծոյն լինի, և ոչ թէ
8 մեզանից։ Ամեն բանի մէջ նեղ-
ուած եմ, բայց չենք ճնշուած.
կարօտ ենք, բայց չենք տարա-
9 կուսել։ Հալածուած, բայց երե-
սից չընկած. վայր բնկած, բայց
10 չկորուսած։ Ամեն ժամանակ Յի-
սուսի մեռնիլը մեր մարմնում
կրում ենք՝ որ Յիսուսի կեանքն
էլ մեր մարմնում յայտնուի։
11 Քանզի մենք կենդանիքս միշտ Յի-
սուսի համար ի մահ ենք մատն-
վում. որ Յիսուսի կեանքն էլ
յայտնուի մեր մահկանացու մարմ-
նում։ Այնպէս որ մահը մեզա- 12
նում է զօրանում, և կեանքը ձե-
ռանում։ Բայց միևնոյն հաւատ- 13
քի հոգին ունենալով, ինչպէս
գրուած է. Հաւատացի և նորա
համար խօսեցի. մենք էլ հաւա-
տում ենք՝ և սորա համար էլ խօ-
սում ենք։ Գիտենալով որ Տէր 14
Յիսուսին յարուցանողը մեզ էլ
Յիսուսի հետ կ'յարուցանէ, և
ձեզ հետ իր առջև կ'կանգնեցը-
նէ։ Քանզի ամեն բան ձեզ հա- 15
մար է. որ շատացած շնորհքը շա-
տերի գոհութիւնից՝ աւելանայ
Աստուծոյ փառաց համար։

Նորա համար չենք թուլանում. 16
այլ թէ և մեր դրսի մարդն փը-
ճանում է, բայց մեր ներսի մար-
դըն օրէ ցօր նորոգվում է։ Քան- 17
զի մեր այժմեան թեթև նեղու-
թիւնը ամենագերազանց յաւի-
տենական փառքի մեծութիւն է
գործում մեզ համար, Որ այս 18
երևող բաներին չենք մտիկ ա-
նում, այլ աներևոյթներին. քան-
զի երևաղները ժամանակաւոր են,
իսկ չերևաղները յաւիտենական։

ԳԼ. Ե

1 Քանզի գիտենք որ՝ եթէ մեր
վրանի պէս երկրաւոր շինուածքը
քանդուի, Աստուածանից մի շին-
ուածք ունինք՝ անձեռագործ մի
տուն, որ յաւիտենական է երկին-
քումը։ Եւ հէնց սորանում հա- 2
ռաչում ենք ցանկանալով հագ-
նիլ մեր այն բնակութիւնը որ
երկնքիցն է։ Միայն թէ՝ երբ որ 3
այն հագնինք, մերկ չգտնուինք։
Քանզի մենք այս վրանի տակ լի- 4
նողներս հառաչում ենք ծանրու-
թիւն կրելով. որովհետև չենք կա-
մենում հանուիլ, այլ այն վրա
վերայ հագնիլ. որ մահկանացուն
կեանքի մէջ ընկղմուի։ Բայց այս 5
բանը մեզ յաջողել տուողը Աստ-
ուած է. որ Հոգու պրաւն էլ
տուաւ մեզ։ Նորա համար ամեն 6
ժամանակ համարձակութիւն ու-
նինք, և գիտենք թէ՝ այս մարմ-

նուամբ կենալով Տէրոջը օտարա-
7 նուամ ենք։ (Քանզի հաւատովք
ենք գնում, և ոչ թէ երևոյթով։)
8 Բայց վստահ ենք և աւելի ընտ-
րում ենք այս մարմնիցը դուրս
9 գնալ՝ և Տիրոջ մօտ մնալ։ Ընդ-
համար էլ ջանք ենք անում, որ
թէ կենանք՝ և թէ դուրս գնանք՝
10 հաճոյ լինինք նորան։ Քանզի մեզ
ամենքս պէտք է յայտնի լինինք
Քրիստոսի առեանի առջև. որ
ամեն մէկն ընդունի իր մարմնովին՝
ինչ որ գործեց՝ թէ բարի, և թէ
չար։

11 Արդ Տիրոջ սխաւորութիւնը
գիտենալով, մարդկանց համոզում
ենք. բայց Աստուծոյ առջև յայտ-
նի ենք. և ես յոյս ունիմ՝ որ
ձեր խղճմտանքումն էլ յայտնի
12 ենք։ Ոչ թէ դարձեալ մեր անձ-
ները ձեզ յանձնում ենք. այլ
պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ
համար պարծենալու, որ մի բան
ունենաք նորանց դէմ, որ պար-
ծենում են աչքի առջև և ոչ թէ
13 սրտով։ Քանզի եթէ գժուած ենք՝
Աստուծոյ համար է. և եթէ
14 պգաստ ենք՝ ձեզ համար է։ Քան-
զի Քրիստոսի սէրը ստիպում է
մեզ՝ որ սա ենք միտք անում, թէ
եթէ մէկն ամենքի տեղ մեռաւ,
15 ուրեմն ամենքը մեռած են. և
ամենքի համար մեռաւ, որ կեն-
դանի լինողները այլ ևս ոչ թէ
իրանց անձների համար կենդանի
լինին, այլ նորա համար՝ որ ի-
րանց համար մեռաւ, և յարու-
16 թիւն առաւ։ Ուրեմն այսուհետև
մենք ոչ ոքին չենք գիտում մարմ-
նոյ կողմանէ. և թէ և Քրիստո-
սին էլ գիտում էինք մարմնոյ
կողմանէ, այլ հիմա այլ ևս չենք
17 գիտում։ Ուրեմն եթէ մէկը Քրի-
ստոսումն է՝ նոր ստեղծուած է.
հինները անցան, ահա ամեն բան
18 նոր եղաւ։ Բայց այն ամենն Աստ-
ուածմանից է. որ մեզ իրան հետ
հաշտեցրեց Յիսուս Քրիստոսի ձե-
ռովը. և մեզ հաշտութեան պաշ-
19 տօնը տուաւ։ Քանզի Աստուած
էր Քրիստոսումը որ աշխարհը
հաշտեցրեց իրան հետ, և նորանց
յանցանքները չհամարեց նորանց
և հաշտութեան խօսքը մեր մի-
ջումը դրաւ։ Արդ Քրիստոսի կող- 20
մանէ պատգամաւորութեան ենք
անում, իբրև թէ Աստուած է
յորդորում մեզանով. աղաչում
ենք Քրիստոսի տեղ հաշտուեցէք
Աստուծոյ հետ։ Քանզի Աստուած 21
նորան, որ մեղք չէր գիտում,
մեզ համար մեղք արաւ. որ մենք
Աստուծոյ արդարութիւնը լինինք
նորանում։

ԳԼ. Զ

Եւ մենք գործակից լինելով նաև 1
աղաչում ենք, որ դուք Աստու-
ծոյ շնորհքը զուր տեղը չընդու-
նիք։ Քանզի ասում է. Ընդունե- 2
լի ժամանակում լսեցի քեզ, և
փրկութեան օրումն օգնեցի քեզ.
ահա հիմա է ընդունելի ժամա-
նակ. ահա հիմա է փրկութեան
օր։ Ոչ մի բանով ոչ մի պատ- 3
թառկութիւն չենք տալիս, որ
պաշտօնը չնախատուի. Այլ ամեն 4
բանի մէջ մեր անձները ընծայում
ենք ինչպէս Աստուծոյ պաշտօն-
եաներ՝ շատ համբերութիւնով նե-
ղութիւններում, վիշտերում, չար-
չարանքներում, ծեծերում, բան- 5
տերում, խռովութիւններում,
աշխատանքներում, հսկումներն-
րում, ծոմերում, Սրբութիւնով, 6
գիտութիւնով, երկայնմտութիւ-
նով, քաղցրութիւնով, Սուրբ
Հոգով, անկեղծ սիրով. Ճշմար- 7
տութեան խօսքով, Աստուծոյ զո-
րութիւնով, արդարութեան զէն-
քերովը աջ կողմանէ և ձախ կող-
մանէ, փառքով և անարգանքով, 8
պարսաւանքով և գովասանքով,
ինչպէս մոլորեցնողներ՝ բայց ճըշ-
մարիտներ. ինչպէս չճանաչուած- 9
ներ, բայց լաւ ճանաչուածներ.
ինչպէս մեռածներ, բայց ահա
կենդանի ենք. ինչպէս պատժուած-
ներ, բայց չսպանուածներ, Ինչ- 10
պէս տրտմածներ, բայց միշտ ու-
րախներ. ինչպէս աղքատներ, բայց
շատերին հարստացնողներ. ինչպէս
թէ ոչինչ չունեցողներ, բայց ա-
մեն բան ունեցողներ։ Մեր բերա- 11
նը բացուած է դէպի ձեզ, ով

Կորնթացիք, մեր սիրտը լայնա-
12 ցած է։ Դուք մեզանից նեղու-
թիւն չունիք, միայն թէ ձեր սըր-
13 տերուն մէջ նեղվուած էք։ Եւ ին
նոյն հատուցումը ունելով, (ինչպէս
թէ որդիներուն հետ եմ խօսում,)
դուք էլ լայնացէք։
14 Անհաւատներուն հետ այլախառն
լծակից մի լինիք. քանզի ի՞նչ
մասնակցութիւն ունի արդարու-
թիւնը անօրէնութեան հետ. և
ի՞նչ հաղորդութիւն ունի լոյսը
15 խաւարի հետ։ Եւ ի՞նչ միաբա-
նութիւն ունի Քրիստոս՝ Բելիարի
հետ. կամ ի՞նչ բաժին ունի հա-
ւատացեալն անհաւատի հետ։
16 Կամ ի՞նչ միաբանութիւն ունի
Աստուծոյ տաճարը կռքերի հետ.
քանզի դուք կենդանի Աստուծոյ
տաճարն էք. ինչպէս Աստուած
ասաց. Ըե Նորանցում կ'բնակիմ,
և նորանցում մեն կ'գամ. և Նո-
րանց Աստուած կ'լինիմ, և Նո-
17 րանք իմ ժողովուրդ։ Նորա հա-
մար՝ նորանց միջիցը դուրս գնա-
ցէք և բաժանուեցէք, ասում է
Տէրը, և պիղծ բաներին մի դպ-
18 չիք։ Եւ ես կ'ընդունիմ ձեզ, և
դուք ինձ որդիներ և աղջիկներ
կ'լինիք, ասում է Ամենակարող
Տէրը։

ԳԼ. Է

1 Արդ այսպիսի խոստումներ ու-
նենալով, սիրելիներ, մեր անձերը
սրբենք հոգւոյ և մարմնոյ ամեն
պղծութիւնիցը, սրբութիւնը կա-
տարենք Աստուծոյ ահովը։
2 Տեղ արէք մեզ. ոչ ոքի վնաս
չենք տուել, ոչ ոքին չենք փճաց-
3 րել, ոչ ոքին չենք զրկել։ Ոչ թէ
դատապարտելու համար եմ ա-
սում. քանզի առաջուց ասացի,
որ դուք մեր սրտերումն էք՝ չեզ
հետ միասին կենդանի լինելու և
4 մեռնելու էլ։ Իմ համարձակու-
թիւնը շատ է դէպի ձեզ. շատ է իմ
պարծանքը ձեր վերայ. մխիթա-
րութիւնով լիքն եմ. ուրախու-
թիւնով աւելացած եմ մեր ա-
5 մեն նեղութիւնումը։ Քանզի երբ
որ հասանք Մակեդոնիա, մեր

մարմինը ոչինչ հանգիստ չունե-
ցաւ, այլ ամեն բանի մէջ նեղ-
վում էինք. դրսիցը կռիւներ՝ ներ-
սիցն ահ ու վախ։ Բայց խոնարհ- 6
ներին մխիթարողն Աստուած մխի-
թարեց մեզ Տիտոսի գալովը. Ոչ 7
միայն նորա գալովը, այլ և այն
մխիթարութիւնովն՝ որով նա ձեր
միջումն մխիթարուել էր, երբոր
նա պատմեց մեզ ձեր սրտի փա-
փագը՝ ձեր ողբալը՝ և ձեր ջերմե-
ռանդութիւնը ինձ համար, մին-
չև որ աւելի ևս ուրախացայ.
Որ թէ և տրտմեցրի ձեզ այն թըղ- 8
թովը՝ չեմ զղջում, թէ և զըղ-
ջացած էլ էի, որովհետև տես-
նում եմ որ այն թուղթը, թէ
և մի փոքր ժամանակ, ձեզ տըրտ-
մեցրեց։ Հիմա ուրախ եմ, ոչ թէ 9
նորա համար որ տրտմեցիք՝ այլ
որ տրտմեցիք ապաշխարութեան
համար. քանզի դուք Աստուծոյ
կերպով տրտմեցիք, որ մեզանից
ոչ մի բանով չվնասուիք։ Քան- 10
զի Աստուծոյ կերպով տրտմու-
թիւնը, ապաշխարութիւն է գոր-
ծում փրկութեան համար առանց
ողջալու. բայց աշխարհքի տրտ-
մութիւնը մահ է գործում։ Քան- 11
զի ահա հէնց նա որ դուք Աս-
տուծոյ կերպով տրտմեցիք, որ-
քան ջանք գործեց ձեզանում,
նաև արդարացումն, նաև զայ-
րոյթ, նաև վախ, նաև փափագ,
նաև նախանձ, նաև վրէժխնդրու-
թիւն. ամեն բանով ցոյց տուիք
ձեր անձները, որ անմեղ էք այն
բանումը։ Ուրեմն թէև գրեցի 12
ձեզ՝ ոչ թէ զրկողի համար էր,
և ոչ էլ զրկեալի համար այլ որ
ձեր ջանքը՝ որ մեզ վերայ ունիք,
յայտնի լինի ձեզ մօտ՝ Աստու-
ծոյ առջև։ Նորա համար մխի- 13
թարուած ենք ձեր մխիթարու-
թեանը համար. և մանաւանդ
աւելի ուրախացանք Տիտոսի ու-
րախութեան համար. որ նորա
հոգին ձեր ամենիցը հանգիստ էր
ստած։ Քանզի ինչ որ էլ ձեզ 14
համար պարծեցայ նորա առջև,
չամաչեցի. այլ ինչպէս ամեն բան
ճշմարտութիւնով խօսեցինք ձեզ
հետ, այնպէս էլ մեր պարծանքը

ճշմարիտ եղաւ Տիտոսի առջեւ ։ 15 Եւ նորա սէրն էլ աւելի է ձեզ վերայ , երբոր յիշում է ձեր ամենքի հնազանդութիւնը , թէ ինչպէս սիով և դողով ընդունեցիք 16 նորան ։ Ուրդ ուրախ եմ , որ ամեն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեզ վերայ ։

ԳԼ· Ը

1 Բայց եղբարք , յայտնում ենք ձեզ Աստուծոյ այն շնորհքն , որ Մակեդոնացոց եկեղեցիներին տրուած է ։ 2 Քանզի նեղութեան մեծ փորձի մէջ նորանց ուրախութեան առատութիւնը և նորանց ծանր աղքատութիւնն շատ առատաձեռն եղաւ նորանց պարզութեան 3 նամբ։ Քանզի իրանց կարողութեան չափ , վկայում եմ , և կարողութիւնից էլ աւելի յօժար կամ- 4 քով , Շատ աղաչանքով աղաչում էին մեզ , որ այն պաշտօնի ընծան և պաշտօնի հաղորդութիւնը՝ սրբերի համար , ընդու- 5 նենք մենք ։ Եւ ոչ թէ որքան որ յոյս ունէինք , այլ իրանց անձներն էլ տուին առաջ Տիրոջը և մեզ՝ Աստուծոյ կամքով։ 6 Որ մենք էլ Տիտոսին աղաչեցինք , որ ինչպէս առաջուց սկսեց՝ այնպէս կատարէ այդ ընծան էլ ձեր միջու- 7 մը ։ Բայց ինչպէս ամեն բանի մէջ աւելանում էք հաւատքով , և խօսքով , և գիտութիւնով , և ամեն ջանքով , և ձեր սիրովը դէպի մեզ , որպէս զի այդ շնորհքումն 8 էլ աւելանաք ։ Ոչ թէ հրաման տալով եմ ասում , բայց ուրիշների ջանք անելու համար , և ձեր սիրոյ հաւատարմութիւնը փոր- 9 ձելով ։ Քանզի դիտէք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը , որ ձեզ համար աղքատացաւ նա՝ որ հարուստ էր , որ դուք նորա աղքատութիւնովը հարստանաք ։ 10 Եւ այս բանի մէջ մի խրատ եմ տալիս . քանզի սա օգուտ է ձեզ . որ ոչ թէ միայն անելը այլ և կամենալն առաջուց սկսեցիք հերու- 11 անից ։ Բայց հիմա անելն էլ կատարեցէք . որ ինչպէս յօժարութիւն կայ կամենալու , այնպէս էլ կատարելը լինի ունեցածից ։ Քանզի եթէ յօժարութիւն 12 կայ , ունեցածի չափովն է ընդունելի և ոչ թէ չունեցածի չափովը ։ Քանզի ոչ թէ ուրիշներին 13 հանգստութիւնն եմ խնդրում , իսկ ձեզ նեղութիւն , Բայց հաւասա- 14 րութեամբ՝ այժմեան ժամանակում ձեր աւելութիւնը նորանց պակասութեանը , որ նորանց աւելութիւնն էլ ձեր պակասութեանը , որ հաւասարութիւն լինի . ինչպէս գրուած է . Թէ նա որ շատ՝ չաւելցուց . և 15 նա որ քիչ՝ չպակասեց ։ Բայց շնորհակալութիւն Աստուծոյն , որ 16 նոյն ջանքը ձեզ համար տուաւ Տիտոսի սրտի մէջ . Որովհետև էմ 17 աղաչանքն ընդունեց , և շատ յօժար կամքով ձեզ մօտ եկաւ , Եւ նորա հետ ուղարկեցինք 18 այն եղբօրն , որ գովաբանք ունի աւետարանութեան ամեն եկեղեցիների մէջ , Եւ ոչ թէ միայն այս- 19 քան , այլ եկեղեցիներից էլ ընտրուած՝ մեր պանդխտութեան ընկեր այս շնորհքումը , որին մենք ծառայում ենք Տիրոջ փառաց համար և ձեր յօժար սրտովը . Այս բանից զգուշանալով , որ 20 չլինի թէ մէկը սրտաուրէ մեզ այս առատութիւնում , որին մենք ծառայում ենք ։ Քանզի բարի 21 բաներ ենք մտածում ոչ միայն Տիրոջ առջեւ , այլ և մարդկանց առջեւ ։ Եւ նորանց հետ ուղար- 22 կեցինք մեր եղբօրը՝ որին փորձել ենք շատ բաների մէջ շատ անգամ որ ժիր է . և հիմա էլ աւելի ջանք անող այն մեծ վստահութեամբն որ ունի դէպի ձեզ ։ Իսկ եթէ Տիտոսի համար խօսք լինի , 23 նա իմ ընկերն է՝ և ձեզ համար գործակից . և եթէ մեր եղբայրների համար , նորանց եկեղեցիների առաքեալներ են՝ և Քրիստոսի փառքը ։ Ուրեմն ձեր սիրոյ և մեր 24 ձեր համար պարծենալու ապացոյցը ցոյց տուէք դորանց առաջև եկեղեցիների առջև ։

ԳԼ· Թ

1 Քանզի արժեքի համար լինելու
պաշտօնի մասին, աւելորդ է ինձ
2 ձեզ գրելը։ Քանզի գիտեմ ձեր
յօժարութիւնը, որով Մակեդո-
նացոց մէջ ձեզ համար պարծե-
նում եմ. թէ Աքայեցիք հերուա-
նից պատրաստ են, և ձեր նախան-
3 ձը շատերին գրգռեց։ Եւ եղբայր-
ներին ուղարկեցի, որ մեր ձեզ
վերայ պարծենալն զուր չլինի այս
մասին. այլ ինչպէս ասել եմ,
4 պատրաստուած լինիք։ Որ չլինի
թէ՝ երբոր Մակեդոնացիք ինձ
հետ գան՝ և ձեզ անպատրաստ
գտնեն, ամօթ լինինք մեզ. (որ
չասենք թէ՝ դուք.) այս պար-
5 ծանքի՝ վստահութեամբը։ Արդ
հարկաւոր համարեցի եղբայրնե-
րին աղաչել, որ առաջ ձեզ մօտ
գան, և առաջուց պատրաստեն
ձեր առաջուց խոստացած օրհնու-
թիւնը, որ պատրաստ լինի, այն-
պէս ինչպէս օրհնութիւն, և ոչ
6 թէ ինչպէս ագահութիւն։ Քան-
զի սա եմ ասում՝ թէ խնայելով
սերմնացը, խնայելով էլ կ'հնձէ.
և առատութեամբ սերմնացը, ա-
7 ռատութեամբ էլ կ'հնձէ։ Ամեն
մէկն ինչպէս որ սրտի յօժարու-
թիւն կայ, ոչ թէ տրտմութիւ-
նով կամ հարկադրութիւնով.
քանզի Աստուած ուրախ տը-
8 վողին է սիրում։ Բայց Աստ-
ուած կարող է ամեն շնորհքներն
աւելցնել ձեզանում. որ ամեն
բանի մէջ ամեն ժամանակ ամեն
բաւականութիւն ունենալով ա-
մեն բարի գործի համար աւելա-
9 նաք։ Ինչպէս գրուած է. Փռեց՝
աղքատներին տուաւ. նորա ար-
դարութիւնը մնում է յաւիտեան
10 Բայց նա՝ որ սերմ ցանողին սերմ
է պարգեւում, և հաց՝ կերակու-
րի համար, նա կ'պարգեւէ և կ'շա-
տացնէ ձեր սերմունքը, և կ'ա-
ճեցնէ ձեր արդարութեան պտու-
11 ղը։ Ամեն բանի մէջ հարստացած
ամեն լիութիւնով՝ որ մեզանով
գոհութիւն է ընծում Աստու-
12 ծոյն։ Քանզի այս տուրքի պաշ-
տօնը ոչ թէ միայն սրբերի պա-
կասութիւնն է լրացնում, այլ և
շատերի գոհութիւնը շատացնում
13 Աստուծոյ համար։ Որ այս պաշ-
տօնի փորձովն Աստուծոյն փա-
ռաւորեն ձեր քրիստոսի աւետա-
րանին հնազանդ դաւանութեա-
նը համար. և այն առատ հա-
14 ղորդութեան համար որ նորանց
և ամենին ընդ։ Եւ նորանց
աղօթքովը ձեզ համար, որ փա-
փագեն ձեզ Աստուծոյ այն ա-
ռատ շնորհքի համար՝ որ ձեզա-
նում է։ Եւ շնորհակալութիւն
15 Աստուծոյնորա անպատմելի պար-
գևի համար։

ԳԼ· Ժ

1 Բայց ես ինքս՝ Պօղոս աղաչում
եմ ձեզ Քրիստոսի հեզութիւնո-
վըն ու հանդարտութիւնովը, որ
երևոյթին նայելով ցած եմ ձեր
միջումը. իսկ հեռուից համար-
2 ձակ եմ դէպի ձեզ։ Աղաչում
եմ որ չլինի՝ թէ մօտից էլ այն
վստահութիւնով համարձակ լի-
նիմ որ համարում եմ յանդգնիլ
մի քանիսի դէմ, որ մեզ համար
կարծում են՝ թէ մարմնոյ պէս ենք
3 վարվում։ Քանզի թէ և մարմ-
նով ենք վարվում, բայց մարմնոյ
պէս չենք զինուորութիւն անում։
4 Քանզի մեր զինուորութեան զէն-
քերը մարմնաւոր չեն, այլ Ա-
ստուծով զօրաւոր, բերդեր քան-
դելու. խորհուրդներ ենք քան-
5 դում, Եւ ամեն բարձրութիւն՝
որ գոռոզանում է Աստուծոյ գի-
տութեան դէմ. և գերի ենք բըռ-
նում ամեն միտք Քրիստոսին հնա-
6 զանդեցնելու համար։ Եւ պատ-
րաստ ենք վրէժ առնելու ամեն
անհնազանդութեան համար՝ երբ
որ ձեր հնազանդութիւնը կատար-
7 եալ լինի։ Երեսի՞ էք նայում. եթէ
մէկն իր անձի վերայ վստահ է թէ
Քրիստոսինն է, թող իր մտքումն
այս էլ մտածէ, թէ ինչպէս որ
նա Քրիստոսինն է, այնպէս էլ
8 մենք ենք Քրիստոսինը։ Քանզի
եթէ մի աւելի բան պարծենալու

---

* Կողմանէ

լինիմ մեր իշխանութեան համար
որ Տէրը տուաւ մեզ՝ ձեր շինու-
թեան և ոչ թէ կործանման հա-
9 մար, չեմ ամաչիլ։ Որ չերևիմ
իբր թէ վախեցնուած եմ ձեզ այս
10 թղթերովը։ Քանզի թղթերը՝ ա-
ւուած են՝ ծանր են և սաստիկ.
բայց մարմնոյ կերպարանքը տկար՝
11 և խօսքն էլ անարդ։ Այնպիսին
թող սա միտք անէ, թէ ինչպէս
որ ենք հեռուանց խօսքով ձեր
թղթերովը, այնպէս էլ մօտանց
12 գործքով։ Քանզի չենք համարձա-
կուիմ մեր անձը կշռել և բաղ-
դատել ոմանց հետ՝ որ իրանց անձ-
ները գովելով յանձնուած են. այլ
նորանք իրանցմով իրանց անձնե-
րը չափելով, և իրանց անձները
իրանց հետ բաղդատելով, չեն հա-
13 կանուիմ։ Բայց մենք չափից դուրս
չենք պարծենուիմ. այլ այն կա-
նոնի չափովը, որն Աստուած բա-
ժանեց մեզ՝ հասնել մինչև ձեզ
14 մօտ էլ, Քանզի ոչ թէ իբր թէ
ձեզ մօտ չհասած մեր անձները
երկայնացնուիմ ենք. քանզի մին-
չև ձեզ մօտ էլ հասանք Քրիստոսի
15 աւետարանովը։ Եւ չափից դուրս
չենք պարծենուիմ՝ օտար աշխա-
տանքով, յուսալով որ ձեր հա-
ւատքի մեծանալու ժամանակին
մեծանանք ձեզանուիմ մեր կանոնի
16 պէս առաւելութեամբ։ Որ ձե-
զանից այն կողմն էլ աւետարա-
նը քարոզենք՝ և օտար կանոնով
պատրաստուածների վերայ չպար-
17 ծենանք։ Եւ ով որ պարծենուիմ
18 է՝ թող Տէրովը պարծենայ։ Քան-
զի ոչ թէ իր անձն յանձնողն է
ընաիր. այլ նա՝ որին Տէրն է յանձ-
նուիմ։

ԳԼ. ԺԱ.

1 Երանի թէ մի քիչ իմ անմտու-
թեանը նեղէիք. բայց նեղուիմ էլ
2 էք ինձ։ Վասնզի ձեզ համար
նախանձաւոր եմ Աստուծոյ նա-
խանձովը. որովհետև ձեզ մի մար-
դու նշանեցի՝ որ մի առբը կոյս
կ'անպնեցնեմ Քրիստոսի առջև։
3 Բայց վախենուիմ եմ՝ մի գուցէ
ինչպէս օձն իր խորամանկութեամբ

բը խաբեց Եւային, այնպէս էլ
ձեր միտքն ապականուի այն միա-
մտութենէն՝ որ Քրիստոսումն է։
Քանզի եթէ մէկը գայ և ուրիշ 4
Յիսուս քարոզէ՝ որ մենք չքարո-
զեցինք, կամ ուրիշ Հոգի առնէք՝
որ չառնէք, կամ ուրիշ աւետա-
րան որ չընդունեցիք, լաւ կ'համ-
բերէիք։ Քանզի կարծեմ թէ ոչ 5
մի բանով պակաս չեմ քան թէ
մեծամեծ առաքեալները։ Թէ և 6
տգէտ լինիմ խօսքով, բայց ոչ թէ
գիտութիւնով. այլ ամեն բանի
մէջ բոլորովին յայտնուեցանք ձեզ։
Կամ թէ մե՞ղք գործեցի՝ որ իմ 7
անձը խոնարհացրի. որ դուք բարձ-
րանաք. որովհետև Աստուծոյ ա-
ւետարանը ձրի աւետարանեցի
ձեզ։ Ուրիշ եկեղեցիները կողոպ- 8
տեցի, և վարձք առի ձեզ ծա-
ռայելու համար։ Եւ երբոր ձեզ 9
մօտ էի՝ մի բանի պակասութիւն
քաշած ժամանակս էլ, ձեզանից
մէկին ծանրութիւն չտուի. քան-
զի իմ պակասութիւնը Մակեդո-
նիայից եկած եղբարքը լրացրին.
և ամեն բանի մէջ իմ անձն ա-
նունց ձեզ ծանրութիւն տալու
պահեցի, և կ'պահեմ էլ։ Քրիս- 10
տոսի ճշմարտութիւնն է ինձ-
նում. որ այս պարծանքն Աքա-
յիայի կողմերումը չի խափանուիլ
ինձանից։ Ինչո՞ւ համար. որով- 11
հետև ձեզ չի՞մ սիրում. Աստ-
ուած գիտէ։ Այն որ անում եմ՝ 12
կ'անեմ էլ, որ պատճառ որոնող-
ների պատճառը կտրեմ. որ ին-
չով որ պարծենուիմ են՝ նորանք
էլ մեզ նման գտնուին։ Քանզի 13
այնպիսիները սուտ առաքեալներ,
նենգաւոր մշակներ, Քրիստոսի ա-
ռաքեալների պէս կերպարանուող-
ներ են։ Եւ պարմանալի էլ չէ. 14
քանզի սատանան ինքն էլ լուսոյ
հրեշտակի կերպարանքն իրան վե-
րայ է առնում։ Ուրեմն մեծ բան 15
չէ որ նորա պաշտօնեաներն էլ
կերպարանուին արդարութեան
պաշտօնեաների նման. որոնց վեր-
ջը իրանց գործքերին պէս կ'լինի։
Կարձեալ ասում եմ. չլինի որ 16
ոչինչ ինձ լիմար համարէք. ապա
թէ ոչ գոնեա լիմարի պէս ըն-

դուն եցէք ինձ որ ես էլ մի քիչ
17 պարծենամ։ Ինչ որ խօսում եմ,
ոչ թէ Տիրոջ մտիկ տալով եմ
խօսում, այլ ինչպէս անմտու-
թեամբ այս պարծանքի նիւթին
18 նկատմամբ։ Եւ որովհետեւ շատե-
րը մարմնոյ կողմանէ պարծենում
19 են, ես էլ կ՚պարծենամ։ Քանզի
ջաժարութեամբ համբերում էք
անմիտներին՝ իմաստուն գոլով։
20 Քանզի համբերում էք, եթէ մէ-
կը ծառայեցնէ ձեզ, եթէ մէկը ձեր
բանն ուտէ, եթէ մէկը բան առ-
նէ, եթէ մէկը գոռոզանայ, եթէ
21 մէկը ձեր երեսին զարկէ։ Անար-
գանքի համար եմ ասում, իբր
թէ մենք տկարացա՞նք. ինչ բա-
նով որ մէկը համարձակէ, ան-
մտութեամբ եմ ասում, ես էլ
22 եմ համարձակուում։ Եբրայեցի՞
են, ես էլ. Իսրայէլացի՞ են, ես
էլ. Աբրահամի զաւա՞կ են, ես
23 էլ։ Քրիստոսի պաշտօնեանե՞ր են,
յիմարութեամբ եմ ասում՝ թէ
էլ աւելի ես, մանաւանդ աշխա-
տանքներով, ծեծերով էլ աւելի,
բանտերի մէջ մանաւանդ, մա-
24 հերով շատ անգամ։ Հրէաներից
ըը հինգ անգամ՝ քառասունից
25 մէկ պակաս ձէ՞ ընդունեցի։ Երեք
անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ
անգամ քարկոծուեցայ. երեք ան-
գամ նաւակոծ եղայ. մի ցերեկ
26 ու գիշեր անդնդումը մնացի։ Շատ
անգամ ճանապարհներում. գե-
տերից վտանգներ, աւազակներից
վտանգներ, ազգիցս վտանգներ,
հեթանոսներից վտանգներ, քա-
ղաքի մէջ վտանգներ, անապա-
տի մէջ վտանգներ, ծովի մէջ
վտանգներ, սուտ եղբայրներից
27 վտանգներ։ Ջանքի մէջ և աշխա-
տանքի մէջ. շատ անգամ արթ-
նութիւնների մէջ. սովի և ծա-
րաւի մէջ. շատ անգամ ծոմի մէջ.
28 ցրտի և մերկութեան մէջ։ Բացի
ուրիշ դէպք-ի-դէպերը ինձ վերայ
կիսաւելն՝ ամեն օր ամեն եկեղե-
29 ցիների հոգսը։ Ո՞վ կ՚տկարանայ՝
և ես չե՞մ տկարանում. ո՞վ կ՚գայ-
թակղէ՝ և ես չեմ բորբոքուիլ։
30 Եթէ պարծենալ պէտք լինի, իմ
տկարութիւնովը կ՚պարծենամ։
Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրն՝ որ յաւիտեան 31
օրհնեալ է՝ գիտէ որ սուտ չեմ
ասում. Դամասկոսում Արիտաս 32
թագաւորի ազգապետն Դամաս-
կացոց քաղաքումը պահապաններ
էր դրել որ ինձ բռնէ. Եւ պա- 33
տուհանիցը քիթոցով կախուեցայ
պարսպիցը, և փախայ նորա ձեռ-
քիցը։

ԳԼ. ԺԲ

Ա՛պա՝ պարծենալն յիրաւի օգուտ 1
չէ բերում ինձ. բայց կ՚գամ Տի-
րոջ տեսիլքներին և յայտնու-
թիւններին։ Մէկ մարդ գիտեմ 2
Քրիստոսումը ասան չորս տարուց
առաջ, թէ մարմնով էր՝ չեմ գի-
տում, և թէ առանց մարմնոյ էր՝
չեմ գիտում, Աստուած գիտէ.
նա յափշտակուեցաւ մինչև եր-
րորդ երկինքը։ Եւ գիտեմ այն- 3
պիսի մարդու թէ մարմնով և թէ
առանց մարմնոյ էր՝ չեմ գիտում.
Աստուած գիտէ. Որ նա յափշ- 4
տակուեցաւ դրախտի մէջ. և ան-
ասելի բաներ լսեց՝ որ մարդու
պէտք չէ նորանց խօսել։ Այնպի- 5
սի համար կ՚պարծենամ. բայց
իմ անձի համար չեմ պարծենալ,
բայց միայն իմ տկարութիւննե-
րովը։ Քանզի եթէ կամենամ էլ 6
պարծենալ՝ անմիտ չեմ լինիլ.
քանզի ճշմարիտն եմ ասում. բայց
խնայում եմ, որ մի գուցէ մէկն
ինձ համար աւելի բան համարէ,
քանթէ այն՝ որ ինձանումս տես-
նում է կամ ինձանից լսում։ Եւ 7
որ յայտնութիւնների առաւելու-
թեամբը չհպարտանամ, մարմ-
նոյս համար խայթ տրուեցաւ ինձ՝
Սատանի հրեշտակ, որ ինձ բռ-
նութեամբ ծեծէ, որ չգոռոզա-
նամ. Որու համար երեք անգամ 8
աղաչեցի Տիրոջը, որ նորանից հե-
ռացնէ ինձանից։ Եւ ինձ ասաց. 9
Բաւական է քեզ իմ շնորհքը,
քանզի իմ զօրութիւնը տկարու-
թեան մէջ է կատարվում. արդ
աւելի ջաժարութեամբ իմ տկա-
րութիւններովը կ՚պարծենամ, որ
Քրիստոսի զօրութիւնը բնակէ

10 ինձանում՝ վ ամենոյն հաւանել եմ տկտրութիւններին, թշնամանքներին, վիշտերին, հալածանքներին, և նեղութիւնների Քրիստոսի համար. քանզի երբոր տկտրանում եմ, այն ժամանակ զօրանում եմ։
11 Անմիտ եղայ պարծենալովս. դուք ինձ բռնադատեցիք. քանզի պէտք էր ինձ վկայութիւն առնել ձեզանից. քանզի ոչ մի բանով պակաս չեղայ քան թէ այն մեծամեծ առաքեալները, թէ և ես ոչ
12 ինչ եմ։ Բայց առաքելոյ նշաններըը ձեր մէջ գործուեցան՝ ամեն համբերութիւնով, նշաններով և հրաշքներով և զօրութիւններով։
13 Քանզի ի՞նչ է որ նուազում պակաս գտնուեցաք քան թէ ուրիշ եկեղեցիները. եթէ ոչ նորանով՝ որ ես ծանրութիւն չտուի ձեզ. շնորհեցէք ինձ այդ ձեսաը։
14 Ա.Ահա երրորդ անգամն է որ պատրաստ եմ ձեզ մօտ գալու, և ձեզ ծանրութիւն չեմ տալ. քանզի ձեր բանը չեմ որոնում՝ այլ ձեզ. քանզի ոչ թէ որդիքը հարանց համար պէտք է դանձ հաւաքին, այլ հարքը որդոց համար։
15 Բայց ես յօժարութեամբ ձեր անձների համար ծախք կ'անեմ, և ծախք կ'լինիմ. թէ և աւելի սիրելով ձեզ՝ ես քիչ սիրուիմ։
16 Բայց թող լինի. ես ծանրութիւն չեղայ ձեզ. սակայն խորամանկ լինելով՝ մոլորեցուցի ձեզ բռնեցի ձեզ։
17 Մի՞թէ նորանից ձեռնի՝ որ ձեզ մօտ ուղարկեցի՝ մի
18 բան քաշեցի ձեզանից։ Աղաչեցի Տիտոսին՝ և նորա հետ այն եղբօրն էլ ուղարկեցի, մի՞թէ Տիտոս ձեզանից մի բան քաշեց. չէ՞ որ մենք նոյն հոգով վարուեցանք. չէ՞ որ նոյն ճանապարհով գնացինք։
19 Դարձեալ կարծո՞ւմ էք թէ մենք խօսքով մեզ պաշտպանում ենք. Աստուծոյ առջև Քրիստոսում խօսում ենք. և ամեն բան, սիրելիներ, ձեր շինութեան համար է։
20 Քանզի վախում եմ, որ մի գուցէ իմ գալու ժամանակը ձեզ այնպէս չգտնեմ՝ ինչպէս կամենում եմ. և ես գտնուիմ ձեզ համար ինչպէս էլ դուք չէք կամենում. որ գուցէ կռիւներ, նախանձներ, բարկութիւններ, գրգռութիւններ, չարախօսութիւններ, քսութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ։
21 Որ մի գուցէ դարձեալ իմ գալու ժամանակ՝ իմ Աստուծն ինձ ցածացնէ ձեզ մօտ. և սուգ վարեմ շատերի համար որ առաջուց մեղք գործեցին, և ապաշխարած չլինին այն պղծութեան և պոռնկութեան և գիճութեան համար՝ որ գործեցին։

ԳԼ. ԺԳ

1 Ա.Այս երրորդ անգամն է որ ձեզ մօտ եմ գալիս. երկու և երեք վկաների բերանից ամեն բան հաստատուի։ 2 Առաջուց ասացի և առաջ էլ ասում եմ իբր մօտ լինող երկրորդ անգամ. և հիմա հեռանից գրում եմ այն առաջուց մեղք գործածներին և ամեն ուրիշներին. որ եթէ դարձեալ գամ, չեմ խնայիլ։ 3 Որովհետև ուզում էք փորձել այն Քրիստոսին, որ ինձանով խօսում է. որ ձեր միջումը տկար չէ, այլ զօրեաւոր է ձեզանում։ 4 Քանզի թէ և խաչուեցաւ տկարութիւնից, բայց կենդանի է Աստուծոյ զօրութիւնով. քանզի մենք էլ թէ և տկարանում ենք նորա համար՝ բայց կենդանի կ'լինինք նորա հետ Աստուծոյ զօրութիւնով. ձեզ համար։ 5 փորձեցէք ձեր անձները, թէ որպէսք հաւատքում էք. քննեցէք ձեր անձները. կամ թէ չէ՞ք գիտում ձեր անձները՝ որ Յիսուս Քրիստոս ձեզանում է. բայց եթէ միայն անպիտան լինիք։ 6 Բայց յոյս ունիմ որ գիտենաք, թէ մենք անպիտան չենք։ 7 Եւ աղօթում եմ դէպի Աստուած որ չար բան չանէք. ոչ թէ որ մենք ընտիր երևինք, բայց որ դուք բարին գործէք, և մենք անպիտանի պէս լինենք։ 8 Քանզի մի բան չենք կարող ճշմարտութեան դէմ. բայց 9 ճշմարտութեան համար։ Ուրախանում ենք, երբոր մենք տկարանում ենք և դուք զօրանում

էք. որ հէնց դա էլ աղօթքով
խնդրեմ ինք, զ-ինչ ձեր կատա-
10 րելութիւնը, Ես որա համար այս
հեռուանց գրում եմ. որ չլինի
թէ իմ գալու ժամանակ սատա-
կութեամբ վարուիմ իմ իշխանու-
թեան չափուին, որ Տէրը տուա-
ւին շինելու և ոչ թէ քանդելու
համար։
11 Վերջապէս, եղբարք, ուրախ

եղէք, կատարեալ եղէք, մխի-
թարուեցէք, միաբան եղէք, և
խաղաղութիւն ունէք. և սիրոյ և
խաղաղութեան Աստուածը ձեզ
հետ լինի։ Իրար բարև տուէք 12
սուրբ համբոյրով. բարև են տա-
լիս ձեզ բոլոր սրբերը։ Տէր Յիսու- 13
սի Քրիստոսի շնորհքը, և Աստու-
ծոյ սէրը, և Սուրբ Հոգւոյ հաղոր-
դութիւնը ձեր ամենի հետ. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ ոչ թէ մարդ-
կանցից և ոչ թէ մարդու ձեռով,
այլ Յիսուսի Քրիստոսի և Հայր
Աստուծոյ ձեռովը, որ մեռելնե-
2 րից յարոյց նորան։ Եւ ամեն եղ-
բարքն՝ որ ինձ հետ են. Գաղա-
3 տիայի եկեղեցիներին։ Շնորհք ի-
ձեզ և խաղաղութիւն Հայր Աստ-
ուածանից և մեր Տէր Յիսուս Քր-
4 իստոսից, Որ իր անձը մեր մե-
ղաց համար տուաւ, որ մեզ այս
չար աշխարհքիցը փրկէ՝ Աստու-
5 ծոյ և մեր Հօր կամքի պէս։ Որին
փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։
6 Զարմանում եմ որ այսպէս շու-
տով փոփոխւում էք ձեզ Քրիս-
տոսի շնորհքի մէջ կանչողից դէ-
7 պի ուրիշ աւետարան։ Որ ուրի-
շը չկայ. միայն թէ կան ոմանք
որ ձեզ խռովեցնում են, և կա-
մենում են Քրիստոսի Աւետարա-
8 նը փոխել։ Բայց եթէ մենք էլ,
կամ երկնքիցը մի հրեշտակ աւե-
տարանէ ձեզ նորանից ուրիշ քան
թէ որ մենք աւետարանեցինք ձեզ,
9 նզոված լինի։ Ինչպէս առաջ
ասացինք՝ և հիմա դարձեալ ա-
սում եմ, եթէ մէկն աւետարանէ
ձեզ նորանից ուրիշ քան որ դուք
10 առիք, նզոված լինի։ Գանդի
հիմա մարդկանից եմ հաճելնում,
թէ Աստուծոյն. կամ ուզում եմ
մարդկանից հաճոյ լինել. եթէ առ-

կաւին մարդկանց հաճոյ լինէի,
Քրիստոսի ծառայ չէի։
Իմացնում եմ ձեզ, եղբարք, 11
այն աւետարանն, որ ինձանից ա-
ւետարանուեցաւ, որ նա մարդ-
կօրէն չէ։ Գանդի և էլ ոչ մար- 12
դուց առի նորան, և ոչ էլ ու-
սուցաւ. այլ Յիսուսի Քրիստոսի
յայտնութիւնովը։ Գանդի դուք 13
իմ վարքը լսել էք, որ մի ժամա-
նակ Հրէութեան մէջ էի. որ չա-
փից դուրս հալածում էի Աս-
տուծոյ եկեղեցին, և կործանում
էի նորան։ Եւ Հրէութեան մէջ 14
իմ հասակակիցների շատերից ա-
ռաջադէմ էի իմ ազգի մէջ, ա-
ւելի նախանձաւոր լինելով իմ
հայրենական աւանդութիւններն
համար։ Բայց երբոր բարեհաճեց 15
Աստուած, որ իմ մօր փորիցն ինձ
որոշել և իր շնորհքովն կանչել է,
Որ իր Որդին ինձանով յայտնէ, 16
որ նորան հեթանոսների միջումն
աւետարանեմ. այն ժամանակ խո-
հին մարմնոյ և արիւնի հետ խոր-
հուրդ չարի. և ոչ էլ գնացի 17
Երուսաղէմ նորանից մեծ, որ ին-
ձանից առաջ առաքեալներ էին.
այլ գնացի Արաբիա, և կրկին
դարձայ Դամասկոս։ Յետոյ հետև 18
երեք տարուց յետոյ գնացի Ե-
րուսաղէմ, Պետրոսին տեսանելու.
և տասնուհինգ օր նորա մօտ ե-
ղայ։ Եւ առաքեալներից մի ու- 19
րիշին չտեսայ, բայց միայն Տի-
րոջ եղբայր Յակոբին։ Բայց ինչ 20

որ ձեզ գրեմ եմ, Ահա Աստուած այլ առջև որ սուտ չեմ ասեմ։
21 Յետոյ եկայ Սիւրիայի և Կիլի-
22 կիայի կողմերը։ Եւ երեսով անծանօթ էի Քրէատոնի եկեղեցիներին՝ որ Քրիստոսումն էին։
23 Բայց միայն լսել էին, թէ Նա որ մի ժամանակ մեզ հալածում էր, հիմա այն հաւատքն է աւետարանում որ առաջ կործանում
24 էր։ Եւ ինձանով փառաւորում էին Աստուծոյն։

ԳԼ. Բ

1 Ապա տասն ու չորս տարուց յետոյ դարձեալ գնացի Երուսաղէմ, Բառնաբասի հետ, և Տիտոսին
2 էլ ինձ հետ առի։ Եւ գնացի յայտնութիւնով. և նորանց հանգրի այն աւետարանն՝ որ քարոզում եմ հեթանոսների մէջ, և մասնաւորապէս նորանց՝ որ ճե՛ կարծուած էին. որ չլինի թէ զուր տեղը վազեմ կամ վազած լինիմ։
3 Բայց Տիտոս էլ որ ինձ հետ էր՝ Հելլենացի լինելով, չբռնադատուեցաւ թլփատուելու։ Եւ այն
4 նեռս պրծած սուտ եղբայրների պատճառով, որ նեռս պրծան մեր ազատութիւնը լրտեսելու համար, որ Քրիստոս Յիսուսումն ունինք,
5 որ մեզ ծառայեցնեն։ Որոնց մի ժամ էլ ականջ չդրինք՝ հնազանդ լինելու համար, որ աւետարանի ճշմարտութիւնն ձեզանում հաստատ մնայ։
6 Բայց այն ճե՛ կարծուածներից համար, թէ մի բան լինին, (թէ ինչ էլ մի ժամանակ. Նա ես հոգս չեմ անում. Աստուած մարդկանց երես չէ առնում.) քանզի այն ճե՛ կարծուածներն ինձ ոչինչ չհմացրին։
7 Բայց ընդհակառակն, երբոր տեսան թէ անթլփատութեան աւետարանն ինձ հաւատացուած է, ինչպէս Պետրոսին թլփատութեան
8 առաքելութիւնով։ (Քանզի Նա որ Պետրոսին յաջողեց թլփատութեան առաքելութիւնով, ինձ էլ յա-
9 ջողեց հեթանոսների մէջ։) Եւ երբոր իմացան այն շնորհքը որ ինձ տրուած էր, Յակոբոսը և Կեփաս

որ և Յովհաննէսը, որ սիւներ էին կարծուած, ինձ և Բառնաբասին աջ ձեռքը տուին հաղորդակցութեան համար. որ մենք հեթանոսների մէջ գնանք, և նորան թլփատութեան մէջ։ Բայց միայն 10
որ աղքատներըը յիշենք. որ ես էլ ջանք արի նոյնն անելու։ Բայց երբ 11
որ Պետրոսը եկաւ Անտիոք, ես նորան հակառակ կացայ, որովհետև մեղապրելի էր։ Վասնզի մի 12
քանի մարդիկ դեռ չեկած Յակոբոսից, անխտիր ուտում էր հեթանոսների հետ. բայց երբոր եկան, ետ էր քաշվում և իր անձը ջոկում, վախենալով նորանցից որ թլփատութիւնից էին։
Եւ նորա հետ ուրիշ Հրէաներն 13
էլ կեղծաւորութիւն արին. մինչև որ Բառնաբասն էլ ծռուեցաւ նորանց կեղծաւորութիւնով։ Բայց 14
երբոր տեսայ, որ աւետարանի ճշմարտութեան համեմատ ուղիղ չեն գնում, ամենքի առջև ասացի Պետրոսին. եթե դու, Հրէայ լինելովդ, հեթանոսի պէս ես վարւում և ոչ թէ Հրէայի պէս, էլ ինչո՞ւ ես բռնադատում հեթանոսներին որ Հրէայի պէս վարուին։ Մենք որ բուն Հրէաներ 15
ենք, և ոչ թէ հեթանոսների միջից մեղաւորներ. Գիտենք որ մարդ 16
օրէնքի գործքերից չէ արդարանում, բայց միայն Յիսուսի Քրիստոսի հաւատքից. և մենք Յիսուսի Քրիստոսին հաւատացինք, որ Քրիստոսի հաւատքից արդարանանք, և ոչ թէ օրէնքի գործքերից. որովհետև օրէնքի գործքերից ոչ մի մարմին չի արդարանալ։ Իսկ եթե մենք՝ որ ու- 17
զում ենք Քրիստոսով արդարանալ, ինքներս էլ մեղաւոր դուրս եկանք, Քրիստոս մեղքի պաշտօնեա՞յ է. քաւ լիցի։ Քանի 18
զի՝ եթե այն որ քանդեցի, նորան կրկին շինում, ապա ես ինքս իմ անձը մեղաւոր եմ երևեցնում։
Քանզի ես օրէնքով օրէնքին մե- 19
ռայ, որ ապրիմ Աստուծոյն. ես Քրիստոսի հետ խաչուած եմ։ Եւ 20
կենդանի եմ, ոչ թէ այլ ևս ես, այլ Քրիստոս է կենդանի ինձա-

նում. և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով Աստուծոյ Որդոյ հաւատքովն եմ կենդանի. որ ինձ սիրեց և իր անձը ինձ համար մատնեց։ 21 Եւ Աստուծոյ շնորհքը չեմ անարգում, քանզի եթէ արդարութիւնն օրէնքից էր, ուրեմն Քրիստոսը զուր տեղը մեռաւ։

Գլ. Գ.

1 Ով անմիտ Գաղատացիք, ո՞վ կախարդեց ձեզ որ ճշմարտութեանը չհնազանդիք. որոց համար աչքերի առջև նկարագրուեցաւ Յիսուս Քրիստոսը խաչուած 2 ձեր մէջ։ Այս միայն կամենում եմ ասվորիլ ձեզանից. օրէնքի գործքերի՞ց ընդունեցիք Հոգին՝ 3 թէ հաւատքի լսելո՞ւցը։ Այդքան անմի՞տ էք. Հոգով սկսեցիք, և հիմա մարմնո՞վ էք վերջանում։ 4 Այնքան նեղութիւնները զո՞ւր տեղը կրեցիք. թէ որ զուր էլ լինի։ 5 Արդ ձեզ Հոգին բաժանողը և ձեր միջումը զօրութիւններ գործողը, օրէնքի գործքերի՞ց է 6 թէ հաւատքի լսելո՞ւցը։ Ինչպէս Աբրահամ հաւատաց Աստուծոյն, և այն նորա համար արդարութիւն համարուեցաւ։ 7 Թիւն համարուեցաւ։ Ուրեմն գիտացէք. թէ նորանք որ հաւատքից են, նորանք են Աբրահամի 8 որդիք։ Գիրքն էլ առաջուց գիտենալով, որ Աստուած հաւատքից է արդարացնում հեթանոսներին՝ առաջուց Աբրահամին խոստացաւ, թէ քեզանում պիտի 9 օրհնուին բոլոր ազգերը։ Ուրեմն նորանք որ հաւատքից են, օրհնւում են հաւատացեալ Աբրահամի հետ։ 10 Քանզի որանք որ օրէնքի գործքերից են, անէծքի տակ են. քանզի գրուած է. Ընդ Անիծեալ լինի ամեն մարդ, որ չէ կենում օրէնքի գրքի մէջի բոլոր գրուածներումը, որ ամենն անէ։ 11 Եւ թէ օրէնքովն ոչ ով չէ արդարանում Աստուծոյ առջև, դա յայտնի է. որովհետև Արդարը հաւատքից 12 ը կ'ապրի։ Բայց օրէնքը հաւատքից չէ, այլ Ն որանից կատարող 13 մարդը կ'ապրի նորանով։ Քրիստոս մեզ օրէնքի անէծքից մեզ համար անէծք լինելով. (քանզի գրուած է. Ընդ Անիծեալ լինի ամեն փայտից կախուածը։) Որ 14 Աբրահամի օրհնութիւնը հեթանոսների մէջ լինի Քրիստոս Յիսուսով, որ մենք Սուրբ Հոգւոյ աւետիքն ընդունինք հաւատքով։ Մարդկօրէն եմ ասում, եղբարք։ 15 ոպոքէն մի մարդու հաստատուած կտակը ոչ ով չէ անարգում. և ոչ էլ նորա վերայ ուրիշ հրաման աւելացնում։ Եւ 16 Աբրահամին խոստացուեցան այն աւետիքները, և նորա զաւակին. չէ ասում, Եւ զաւակներին՝ ինչպէս շատերին, այլ ինչպէս մէկին. Եւ քո զաւակին, որ է Քրիստոսը։ Բայց սա եմ ասում. Այն 17 կտակին, որ առաջուց Աստուածանից հաստատուած էր Քրիստոսի վերայ, չորս հարիւր և երեսուն տարուց յետոյ եղած օրէնքը չի քանդիլ որ աւետիքը խափանուի։ Քանզի եթէ ժառան- 18 գութիւն օրէնքից լինէր, ապա աւետիքից չէր. բայց Աստուած աւետիքով շնորհեց Աբրահամին։ Արդ օրէնքն ի՞նչ է. Նա յան- 19 ցանքների պատճառով աւելացաւ. մինչև որ գայ այն զաւակը, որին եղաւ խոստմունքը հրեշտակներով կարգուած միջնորդի ձեռով։ Բայց 20 միջնորդը մէկի չէ, բայց Աստուած մէկ է։ Ուրեմն օրէնքն Աս- 21 տուծոյ աւետիքներին հակառա՞կ է. քաւ լիցի. քանզի եթէ օրէնք տրուած լինէր որ կարող լինէր կենդանի անել, ապա իրաւի օրէնքից կ'լինէր արդարութիւնը։ Բայց գիրքը. փակեց ամենքը մեղքի նեղքև, որ աւետիքը Յիսուսի Քրիստոսի հաւատքից տրուի հաւատացողներին։ Դեռ որ հաւատ- 23 քը չէր եկած օրէնքի նեղքև փակուած պահվում էինք այն հաւատքի համար, որ պէտք էր յայտնուէր։ Ուրեմն օրէնքը մեզ հա- 24 մար դաստիարակ եղաւ դէպի Յիսուս Քրիստոս, որ հաւատքից արդարանանք։ Բայց երբոր հա- 25 ւատքն եկաւ, այլ ևս դաստիարակի տակ չենք։ Քանզի ամենքդ 26

Աստուծոյ որդիք էք Քրիստոս Յի-
27 սուսի հաւատքովը։ Քանզի ամեն-
քերդ որ Քրիստոսմէ մկրտուե-
28 ցաք, Քրիստոսին հագած էք։ Այլ
եւս ոչ Հրէայ կայ եւ ոչ Յոյն, ոչ
ծառայ կայ եւ ոչ ազատ, ոչ ա-
րու կայ եւ ոչ էգ. քանզի դուք
ամենքդ մէկ էք Քրիստոս Յիսու-
29 սումը։ Ապա եթէ դուք Քրիստո-
սինն էք, ուրեմն Աբրահամի զա-
ւակ էք՝ եւ ըստ խոստման ժա-
ռանգներ։

ԳԼ. Դ

1 Բայց ասում եմ. քանի ժամա-
նակ որ ժառանգը տղայ է՝ ծա-
ռայից չունչ տարբերութիւն չու-
նի, թէ և ամեն բանի տէր է։
2 Բայց վերակացուների և տնտես-
ներու ներքեւ է մինչեւ հօրը որոշած
3 ժամանակը։ Այնպէս էլ մենք,
քանի որ տղայ էինք՝ աշխարհքի
սկզբունքներու ներքեւ ծառայու-
4 թեան մէջ էինք։ Բայց երբոր ժա-
մանակի լրումն եկաւ, Աստուած
ուղարկեց իր Որդին՝ կնկանից ծըն-
ուած՝ և օրէնքի ներքեւ եղած,
5 Որ օրէնքի տակ լինողներին փըր-
կէ, որ որդեգրութիւնն ընդու-
6 նինք։ Եւ որովհետեւ դուք որդիք
էք, Աստուած իր Որդոյ Հոգին
ուղարկեց ձեր սրտերի մէջ, որ
7 աղաղակում է Աբբա Հայր։ Ու-
րեմն այլեւս ծառայ չես՝ այլ որ-
դի. և եթէ որդի՝ Աստուծոյ ժա-
8 ռանգ էլ Քրիստոսով։ Բայց այն
ժամանակ որ Աստուծոյն չէիք
գիտում, ծառայում էիք նորանց
9 որ ’ի բնէ աստուածներ չեն։ Բայց
հիմա որ ճանաչեցիք Աստուծոյն,
մանաւանդ եթէ Աստուածմանից ճա-
նաչուեցաք, ի՞նչպէս էք կրկին յետ
դառնում դէպի այն տկար և աղ-
քատ սկզբունքներն, որոնց կամե-
10 նում էք դարձեալ ծառայել։ Օ-
րեր էք պահպանում և ամիսներ
11 և ժամանակներ և տարիներ։ Վա-
խում եմ ձեզանից՝ որ մի գուցէ
ըստ տեղն աշխատեցի ձեր մի-
ջումը։

12 Ինձ նման եղէք, որովհետեւ ես
էլ ձեզ նման եմ. եղբարք, աղա-

չում եմ ձեզ, դուք ինձ ոչ մի
վնաս չէք տուել։ Եւ գիտէք որ 13
մարմնոյ տկարութիւնով առաջ-
րանեցի ձեզ առաջի անգամին.
Եւ իմ փորձանքն՝ որ իմ մարմ- 14
նումն էր, չանարգեցիք և չարհա-
մարհեցիք, այլ ինչպէս Աստու-
ծոյ հրեշտակ ընդունեցիք ինձ՝ ինչ-
պէս Քրիստոս Յիսուսին։ Ուրդ 15
ւինչ էր այն ձեր երանութիւնը.
քանզի վկայում եմ ձեզ համար,
որ եթէ կարելի էր՝ ձեր աչքերն
էլ կ’հանէիք և ինձ կ’տայիք։ Ու- 16
րեմն թշնամի՞ եղայ ձեզ՝ ձեզ հետ
ճշմարիտը խօսելով։ Նախանձում 17
են ձեզ համար, ոչ թէ բարին,
այլ կամենում են արգելել մեզ
որ նորանց համար նախանձոտ
լինիք։ Սակայն լաւ է բարի բա- 18
նում ամեն ժամանակ նախանձո-
տ լինիլ, և ոչ թէ միայն երբ
որ ձեզ մօտ լինիմ։ Իմ որդեակ- 19
ներ, որ ձեզ կրկին ծնում եմ
ցաւով, մինչեւ որ Քրիստոս կեր-
պարանուի ձեզանում։ Կամենում 20
էի որ հիմա ձեզ մօտ գամ և ձայ-
նս փոխեմ. որովհետեւ տարա-
կուսած եմ ձեզ համար։

Ասացէք ինձ դո՛ւք, որ կամե- 21
նում էք օրէնքի տակ լինիլ, օ-
րէնքը չէ՞ք լսում։ Քանզի գրուած 22
է, թէ Աբրահամ երկու որդիք
ունէր, միւն ազախնիցը, և մի-
սն ազատիցը։ Բայց նա որ ա- 23
զախնիցն էր՝ մարմնոյ կողմանէ
էր ծնուած, և նա որ ազատիցն՝
ուխտիքի պէս։ Այս բաները պա- 24
րաբանօրէն են. քանզի նորանք
երկու կտակարաններն են, մէկը
Սինայ լեռնիցը ծառայութեան
մէջ ծնուած՝ որ է Հագար։ Քան- 25
զի Հագարը Սինա լեռն է Ա-
րաբիայումն, որ հաւասար է այժմ-
եան Երուսաղէմին, որ իր զա-
ւակներովը հանդերձ ծառայ է։
Բայց վերին Երուսաղէմն ազատ 26
է, որ մեր ամենքիս մայրն է։
Քանզի գրուած է Ընդ, ցնծա, 27
ով ամուլ՝ որ չէիր ծնում, դո-
չիր և ազաղակիր դու՝ որ ծնելու
ցաւ չէիր քաշում. քանզի ամե-
ւլի շատ են թողուածի որդիքը քան
թէ մարդ ունեցողն։ Իսկ մենք, եղ- 28

բարք, Իսահակի պէս աւետիքի
29 որդիք ենք։ Բայց ինչպէս որ այն
ժամանակ մարմնոյ կողմանէ ծըն-
ուածը հալածուամ էր նորան որ
հոգու կողմանէ էր, այնպէս էլ
30 հիմա։ Բայց գիրքն ինչ է ասում.
Դուրս հանիր աղախնին և նորա
որդուն. քանզի աղախնի որդին
ժառանգութիւն չպիտի առանոյ
31 ազատի որդու հետ։ Սորա հա-
մար, եղբարք, աղախնի որդիք
չենք, այլ ազատի.

ԳԼ. Ե

1 Ա.րդ այն ազատութիւնովն որ
Քրիստոս մեզ ազատեց, հաս-
տատ կացէք և դարձեալ ծառա-
յութեան լծի տակ մի մտնէք։
2 Ահա ես Պօղոս ասում եմ ձեզ. որ
եթէ թլփատուիք, Քրիստոս ձեզ
3 օգուտ չի անիլ։ Եւ դարձեալ
վկայում եմ ամեն մարդու հա-
մար որ թլփատվում է, թէ նա
պարտական է բոլոր օրէնքը կա-
4 տարելու։ Խափանուած էք Քր-
իստոսից դուք, որ օրէնքով էք
կամենում արդարանալ. շնորհ-
5 քից ընկած էք։ Քանզի մենք Հո-
գով հաւատքից ենք ապասում
6 արդարութեան յուսոյն։ Քանզի
Քրիստոս Յիսուսում ոչ թլփա-
տութիւնն է մի բան կարող, և
ոչ անթլփատութիւնը. այլ հա-
ւատքը որ սիրով գործում է։
7 Լաւ էիք վազում, ձեզ ո՞վ եւս
կանգնեցրեց՝ որ չհնազանդիք ճըշ-
8 մարտութեանը։ Այդ համոզու-
մը նորանից չէ որ կանչեց ձեզ։
9 Մի քիչ խմորը բոլոր զանգուածը
10 խմորեցնում է։ Ես ձեզ վերայ
յոյս ունիմ Տէրոջն՝ որ ուրիշ
բան չէք մտածել. և ձեզ խռովեց-
նողը դատապարտութիւն կ'քա-
11 շէ ով որ էլ լինի։ Բայց ես, եղ-
բարք, եթէ տակաւին թլփատու-
թիւն եմ քարոզում, էլ ինչո՞ւ
համար եմ հալածվում. ուրեմն
խաչի գայթակղութիւնը խա-
12 փանուած է։ Երանի թէ բոլորո-
վին կտրուէին նորանք որ ձեզ
խռովեցնում են։
13 Քանզի դուք ազատութեան մէջ

էք կանչուել, եղբարք. միայն թէ
ձեր ազատութիւնը պատճառ
ըլոյ մարմնոյն. այլ սիրով ծա-
ռայեցէք իրար։ Քանզի բոլոր օ- 14
րէնքն այս մէկ խօսքումն է կա-
տարվում. Քո ընկերին քո անձի
պէս սիրիր։ Բայց եթէ իրար կը- 15
ծէք և ուտէք, զգուշացէք որ ի-
րարից չփճանաք։ Բայց ասում եմ. 16
Հոգով գնացէք, և մարմնոյ ցան-
կութիւնը չէք կատարել։ Քան- 17
զի մարմինը ցանկանում է հո-
գուն հակառակ, և հոգին մարմ-
նոյն հակառակ. և սորանք իրար
հակառակ են, որ մի դուցէ այն
որ դուք կամենում էք՝ այն անէք։
Բայց եթէ Հոգով վարուիք, օ- 18
րէնքի տակ չէք։ Եւ յայտնի են 19
մարմնոյ գործքերը, որ են՝ շնու-
թիւն, պոռնկութիւն, պղծու-
թիւն, կատաղաշութիւն, կա- 20
խարդութիւն, թշնամութիւններ,
կռիւներ, նախանձներ, բարկու-
թիւններ, հակառակութիւններ,
երկպառակութիւններ, բաժան- 21
մունքներ, Զար նայուածներ,
սպանութիւններ, արբեցութիւն-
ներ, անառակութիւններ, և ինչ
որ սորանց նման են. որ առա-
ջուց ասում եմ ձեզ, ինչպէս էլ
առաջուց ասում էի, թէ այսպի-
սի բաներ գործողներն Աստուծոյ
արքայութիւնը չեն ժառանգիլ։
Բայց Հոգու պտուղն է՝ սէր, ու- 22
րախութիւն, խաղաղութիւն, եր-
կայնմտութիւն, քաղցրութիւն, 23
բարութիւն, հաւատք, հեզու-
թիւն, ժուժկալութիւն. այնպի-
սիների դէմ օրէնք չկայ։ Բայց 24
նորանք որ Քրիստոսինն են, իրանց
մարմինը խաչ հանեցին կիրքերովն
և ցանկութիւններովն միասին։
Եթէ Հոգով ենք ապրում, Հոգով 25
վարուինք։ Մնապարծ չլինինք ի- 26
րար գրգռելով, և իրար վերայ
նախանձելով։

ԳԼ. Զ

Եղբարք, եթէ մէկը յանկարծ 1
բռնուի մի յանցանքով, դուք
հոգևորներդ այնպիսին հաստա-
տեցէք հեզութեան հոգով. պա-

ջացիր քո անձին, որ դու էլ չփոր-
2 ձուիս։ Իրար բեռը վեր առէք,
և այսպէս Քրիստոսի օրէնքը կա-
3 տարեցէք։ Քանզի եթէ մէկը հա-
մարում է թէ մին բան է և չէ,
4 նա իր անձը խաբում է։ Բայց ա-
մեն մէկը թող իր գործը կշռէ,
և ապա միայն իր անձի վերայ
պարծանք կ'ունենայ, և ոչ թէ
5 ուրիշի վերայ. Քանզի ամեն մէկին
իր բեռը պիտի վեր առնէ։
6 Խօսքին աշակերտողը թող հա-
ղորդութիւն անէ վարդապետին
7 ամեն բարի բաներով։ Մի խաբ-
ուիք. Աստուած չի ծաղրուիր։
8 Քանզի ինչ որ մարդ սեր-
մէ, այն էլ կ'հնձէ. իր մարմնի
մէջ սերմողը մարմնից ապակա-
նութիւն կ'հնձէ. և Հոգու մէջ
սերմողը Հոգուց յաւիտենական
9 կեանք կ'հնձէ։ Եւ չձանձրանանք
բարին գործելուցը, քանզի իր
ժամանակին կ'հնձենք՝ եթէ չթու-
10 լանանք։ Ուրեմն քանի որ ժամա-
նակ ունինք, բարի գործենք ա-
մենքին, մանաւանդ հաւատքի ըն-
տանիքներին։
11 Տեսէք թէ ինչպիսի գրերով գր-
բեցի ձեզ իմ ձեռամբ։ Որովք որ 12
կամենում են հաճոյ երևել մարմ-
նոյ կողմանէ, նորանք սիրտում
են ձեզ՝ որ թլփատուիք. միայն
որ Քրիստոսի խաչի համար չհա-
լածուին։ Քանզի այն թլփատ- 13
ուածներն իրանք էլ օրէնքը չեն
պահում. այլ կամենում են որ
դուք թլփատուիք, որ ձեր մարմ-
նովը պարծենան։ Սակայն ինձ 14
քառ լինի պարծենալ, բայց միայն
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խա-
չովն. որ նորանով աշխարհքն ինձ
համար խաչուած է, և ես էլ աշ-
խարհքին։ Քանզի Քրիստոս Յի- 15
սուսում ոչ թլփատութիւնը մի
բան է, և ոչ անթլփատութիւ-
նը, բայց նոր արարածը։ Եւ այն 16
ամենքն որ այս կանոնի համեմատ
են վարվում, խաղաղութիւն լի-
նի նորանց և ողորմութիւն և Ա-
ստուծոյ Իսրայէլին։ Սորանից յե- 17
տոյ թող մէկը չաշխատեցնէ ինձ.
քանզի ես կրում եմ Տէր Յիսու-
սի վէրքի նշանները իմ մարմնոյ
մէջ։ Մեր Տէր Յիսուսի Քրիստո- 18
սի շնորհքը, եղբարք, ձեր հոգու
հետ լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ա-
ռաքեալ Աստուծոյ կամքովը. սո-
րբերին որ Եփեսոսումն են, և
Քրիստոս Յիսուսում հաւատաց-
2 եալներին։ Շնորհք լինի ձեզ և
խաղաղութիւն Աստուած՝ մեր
Հօրից, և Տէր Յիսուս Քրիստո-
սից։
3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր
Յիսուս Քրիստոսի Հայրը. որ մեզ
օրհնեց ամեն հոգևոր օրհնութիւ-
նով երկնաւոր բաներումը Քրիս-
4 տոսով։ Ինչպէս ընտրեց մեզ նո-
րանով աշխարհքի ստեղծուածն
առաջ, որ մենք սուրբ և անա-
րատ լինինք նորա առջև սիրով.
5 Մեզ առաջուց սահմանելով, որ
իրան որդեգիր լինինք Յիսուսի Քրի-
ստոսի ձեռամբ՝ իր կամքի հա-
6 ճութեան պէս, Իր փառաւոր
շնորհաց գովաբանքի համար. որ
նորանով շնորհք ցոյց տուաւ մեզ՝
սիրելիովը։ Որով ունինք փրկ- 7
ութիւնը նորա արիւնովը՝ մե-
ղաց թողութիւնը իր շնորհաց մե-
ծութեան չափովը. Որ առատ- 8
ացուց մեզանում՝ ամեն իմաստու-
թիւնով և գիտութիւնով. Ցոյց 9
տալով մեզ իր կամքի խորհուր-
դը՝ իր հաճութեան պէս. որ ա-
ռաջուց դրաւ իրանում. Ժամա- 10
նակների լրութեան տնտեսու-
թեան համար, որ ամեն բան քրի-
ստոսումն միացնէ, թէ որ երկնքում

ԳԼ· Բ

Եւ դուք, որ մեռած էիք յան- 1
ցանքներուն եւ մեղքերուն. Ո- 2
րոնցում մի ժամանակ գնում էիք
այս աշխարհքի սովորութեան
պէս՝ օդիս իշխանութեան իշխանի
պէս, այն հոգու պէս՝ որ հիմա
ներգործում է ապստամբութեան
որդիքների մէջ, Որոնց մէջ մենք 3
ամենքս էլ մի ժամանակ մեռած էինք
գալիս մեր մարմնոյ ցանկութիւն-
ներուն՝ մարմնոյ և մտքի կամքն
կատարելով, և բնութեամբ բար-
կութեան որդիք էինք ինչպէս ու-
րիշներն էլ· Բայց Աստուած, որ 4
մեծ է ողորմութեամբ, իր շատ
սիրոյ համար որ սիրեց մեզ, երբ 5
որ մեռած էինք յանցանքներուն,
մեզ կենդանի արաւ Քրիստոսի
հետ. շնորհքով էք փրկուած·
Ներա հետ մեզ յարոյց, և նորա 6
հետ երկնաւորներուն նստեցրեց՝
Քրիստոս Յիսուսումը· Որ նոր ե- 7
կող դարերում յաւիտեան ցոյց
տայ իր շնորհաց գերազանց մե-
ծութիւնը, Քրիստոս Յիսուսի մեզ
վերայ ցոյց տուած քաղցրութիւնո-
վը· Վանզի շնորհքով էք փըր- 8
կուած հաւատքի ձեռովը. և սա
ոչ թէ ձեզանից է, այլ Աստու-
ծոյ պարգեւն է· Ոչ թէ գործքե- 9
րից, որ մէկը չպարծենայ· Վան 10
զի նորա ստեղծուածն ենք՝ Քրիս-
տոսով Յիսուսով հաստատուած
բարի գործքերի համար. որոնց
համար Աստուած առաջուց պատ-
րաստեց մեզ, որ նորանցում
վարուինք·

Վանորոյ յիշեցէք որ դուք՝ 11
մի ժամանակ հեթանոսներ մարմ-
նով, որ անթլփատութիւն են
կոչուած՝ մարմնոյ մէջ ձեռքով
արած թլփատութեան կողմանէ·
Որ այն ժամանակ առանց Քրիս- 12
տոսի էիք, և հեռացած Իսրա-
յէլի քաղաքակցութիւնից. և
օտարացած խոստմունքի ուխտե-
րից. յոյս չունէիք. և անաստ-
ուած էիք աշխարհքումս· Բայց 13
հիմա Յիսուսի Քրիստոսի ձեռովը
դուք՝ որ ժամանակով հեռաւոր
էիք, մօտաւոր եղաք Քրիստոսի

եկինքումն է՝ և ինչ որ երկրումը,
11 նորանում. Որով որ էլ աստ-
ցանք ժառանգութիւնը մենք՝ ա-
ռաջուց որոշուած լինելով, նորա
առաջադրութեան պէս, որ ա-
մեն բան յաջողում է իր կամքի
12 խորհուրդների պէս. Որ մենք գո-
վաստանք լինինք նորա փառացը,
որ առաջուց մեր յոյսը Քրիստոսի
13 վերայ ենք դրել· Որում և դուք
յուսացէք, երբոր ճշմարտութեան
խօսքը լսեցիք՝ ձեր փրկութեան
աւետարանը, որին էլ երբոր հա-
ւատացիք՝ աւետիքի Սուրբ Հո-
14 գովը կնքուեցաք, Որ մեր ժառան-
գութեան գրաւն է, մինչև ստաց-
ուածքի փրկութիւնը, նորա փա-
ռացը գովաստանքի համար·

15 Ներա համարս էլ լսելով ձեր
հաւատքը, որ ունիք Տէր Յիսու-
սի վերայ, և ձեր սէրը դէպի ա-
16 մեն սրբերը, Չեմ դադարում ձեզ
համար գոհութիւն տալուց՝ ձեզ
17 իմ աղօթքներումը յիշելով. Որ
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Աստ-
ուածը՝ փառաց Հայրը տայ ձեզ
իմաստութեան և յայտնութեան
18 հոգի՝ իր գիտութիւնովը· Որ ձեր
սրտերի աչքերը լուսաւորուելով՝
գիտենաք, թէ ի՞նչ է նորա կո-
չումի յոյսը, և ի՞նչ է իր ժա-
ռանգութեան փառաւոր մեծու-
19 թիւնը սրբերումը. Եւ ի՞նչ է նո-
րա զօրութեան գերազանց մեծու-
թիւնը մեզանում՝ որ հաւատաց-
ինք, իր կարող զօրութեան յա-
20 ջողութեան պէս, Որ Քրիստոսում-
ը գործադրեց՝ նորան մեռելնե-
րի միջից յարուցանելով, և իր
աջ կողմը նստեցրեց երկնաւորնե-
21 րումը, Ամեն իշխանութեան և
պետութեան և զօրութեան և տէ-
րութեան վերայ՝ և ամեն անուան
վերայ՝ որ անուանվում է, ոչ մի-
այն այս աշխարհքումը, այլ և
22 այն հանդերձեալումը· Եւ ամեն
բան հնազանդեցրեց նորա ոտաց
տակ, և նորան գլուխ դրաւ եկե-
ղեցուն՝ բոլոր բաների վերայ,
23 Որ է նորա մարմինը, այն լրու-
մը որ ամեն ամենի մէջ լրաց-
նում է·

14 արիւնովը։ Վասնզի նա է մեր
խաղաղութիւնը որ երկուսին մէկ
արաւ և մէջ ունզի բաժանող
պատը՝ թշնամութիւնը քանդեց
15 իր մարմնովը. Հրամաններով դր-
ած պատուիրանքներէ օրէնքը
խափանելով. որ իրանով երկու-
սին մէկ նոր մարդ ստեղծէ, խա-
16 ղաղութիւն անելով։ Եւ երկու-
սին մէկ մարմնով Հաշտեցնէ Ա-
ստուծոյ հետ՝ էդ խաչովը, սպանե-
լով թշնամութիւնն նորանով։
17 Եւ եկաւ ուրախացուց խաղա-
ղութիւն ձեզ հեռաւորներիդ և
18 մօտաւորներին։ Վասնզի նորա-
նով երկուքս մէկ Հոգով ունինք
19 մօտենալը Հօր մօտ։ Ուրեմն այ-
սուհետև այլ ևս օտար և պան-
դուխտ չէք, այլ սրբերի հետ
քաղաքացիներ և Աստուծոյ ըն-
20 տանիքներ, Առաքելոց և մարգա-
րէից հիման վերայ շինուած. որի
անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոս
21 է. Որում բոլոր շինուածքը միա-
սին յարմարուած աճում է, որ
22 լինէ սուրբ տաճար Տէրով. Որում
դուք էլ նորա հետ շինվում էք
Աստուծոյ բնակարան Հոգով։

ԳԼ. Գ

1 Սորա համար ես Պօղոս՝ Յիսու-
սի Քրիստոսի կապուածս ձեզ
2 հեթանոսներիդ համար։ Անշուշտ
դուք լսած էք Աստուծոյ շնորհաց
այն տնտեսութիւնն, որ ինձ տըր-
3 ուած է ձեզ համար։ Որ յայտ-
նութիւնով ցոյց տրուաւ ինձ այն
խորհուրդը. (ինչպէս առաջուց
4 կարճառօտ գրեցի ձեզ. Որ կա-
րող լինիք կարդալ և իմանալ
իմ տեղեկութիւնը, որ Քրիստո-
5 սի խորհրդի համար է.) Որ ուրիշ
դարերում մարդկանց զուսկնե-
րին ցոյց չտրուեցաւ. ինչպէս հի-
մա իր սուրբ առաքեալներին և
մարգարէներին յայտնուեցաւ՝ Հո-
6 գով. Որ հեթանոսները ժառան-
գակիցներ և մարմնակիցներ են,
և Քրիստոսում ունէրքի մաս-
7 նակից՝ աւետարանով. Որի ես
սպասաւորը եղայ՝ Աստուծոյ շը-
նորհաց պարգեվի պէս՝ որ տրուե-
ցաւ ինձ, նորա զօրութեան ներ-
գործելու պէս. Ինձ՝ ամեն սրբ- 8
երի յետինիս, տրուեցաւ այս
շնորհքը, որ հեթանոսների մէջ
աւետարանեմ Քրիստոսի անքնն-
ելի հարստութիւնը. Եւ ամենքին 9
լուսաւորեմ, թէ ի՞նչ է այն խոր-
հրդի տնտեսութիւնը, որ յաւեր-
ժանններից հետէ ծածկուած էր
Աստուծոյ մօտ՝ որ ամեն բան
ստեղծեց (Յիսուս Քրիստոսով)
Որ հիմա իշխանութիւններին և 10
պետութիւններին երկնաւորնե-
րում եկեղեցու ձեռովը յայտ-
նուի Աստուծոյ բազմապատիկ ի-
մաստութիւնը, Ա՛յն յաւերժա- 11
կան տնտեսութեան պէս,
որ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձե-
ռովն արաւ. Որով ունինք հա- 12
մարձակութիւնը և յուսով մօտե-
նալը նորան հաւատալով։

Վասն որոյ աղաչում եմ, որ 13
չձանձրանաք իմ նեղութիւններու-
մը, ձեզ համար որ ձեր փառքն է։
Սորա համար կրկնում եմ իմ ծըն- 14
կերը մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
Հօր առջև, Որից ամեն նահապե- 15
տութիւն երկինքումն և երկրումն
անուն է առնում, Որ իր փառքի 16
հարստութեան պէս տայ ձեզ, որ
զօրութեամբ հաստատուիք իր Հո-
գու ձեռովը ներսի մարդումը, Որ 17
Քրիստոս հաւատքով բնակուի
ձեր սրտերումը. և սիրով արմատ
գցած և հաստատուած լինիք, Որ 18
ամեն սրբերի հետ իմանաք, թէ
ի՞նչ է լայնութիւնը և երկայնու-
թիւնը և բարձրութիւնը և խո-
րութիւնը. Որ Քրիստոսի ամեն 19
գիտութիւնից գերազանց սէրը
ճանաչէք. որ Աստուծոյ ամեն լիու-
թիւնովը լցուիք։ Բայց նորան՝ որ 20
կարող է առատութեամբ անել
ամեն բաներից աւելի քան որ
խնդրում ենք և իմանում, այն
զօրութեան չափովն՝ որ մեզանում
ներգործում է. Նորան փառք և 21
եկեղեցումն, որ Քրիստոս Յիսու-
սումն է, ամեն դարերում յա-
ւիտեան յաւիտենից. Ամէն։

ԳԼ. Դ

Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տի- 1

րոջ համար կապուածս, որ այնպէս գնաք ինչպէս որ կ'վայելէ այն կոչումին որի մէջ կանչուեցաք։
2 Ամեն խոնարհութիւնով և հեզութիւնով և երկայնմտութիւնով, սիրով իրար համբերելով։
3 Ջանալով Հոգւոյ միութիւնը պահել խաղաղութեան կապովը։
4 Մէկ մարմին և մէկ Հոգի, ինչպէս կոչուեցաք էլ ձեր կոչումի մի մէկ յուսոյ մէջ։
5 Մէկ Տէր, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն,
6 Մէկ Աստուած և ամենքի Հայր, որ ամենքի վերայ և ամենքի հետ՝
7 և ձեր ամենքի մէջ է։ Բայց մեր ամեն մէկիս տրուած է շնորհքը՝ Քրիստոսի պարգեւի չափի պէս։
8 Սորա համար ասում է. Ել վեր եկաւ բարձրը, գերի առաւ գերութիւնը. և մարդկանց պարգեւներ տուաւ։
9 Ան վեր եկաւը ի՞նչ է, եթէ ոչ՝ որ առաջ վայր իջաւ երկրի ցած կողմերը։
10 Ան վայր իջնողը նոյն ինքն է, որ ամեն երկինքներից աւելի բարձր վեր եկաւ, որ ամենը լցացնէ։
11 Եւ նա մի քանիսին տուաւ առաքեալներ լինելու, մի քանիսին մարգարէներ, մի քանիսին աւետարանիչներ, մի քանիսին
12 հովիւներ և վարդապետներ Սրբերի կատարելութեանը համար, պաշտօնի գործի համար, Քրիստոսի մարմնոյ շինութեան համար.
13 Մինչև որ ամենքս հասնինք հաւատքի և Աստուծոյ Որդոյ գիտութեան միութեանը. և կատարեալ մարդ լինինք Քրիստոսի
14 կատարեալ հասակի չափովը. Որ այլ եւս տղայ չլինինք երերուած ու տատանուած վարդապետութեան ամեն քամուցը մարդկանց խարէութեամբ. մոլորեցնելու խարէութեան խորամանկութիւնով։
15 Բայց ճշմարիտ լինելով սիրոյ մէջ աճինք նորանում ամեն բանով, որ է գլուխն՝
16 Քրիստոս. Որից բոլոր մարմինը միասին կազմուելով և միասին յարմարուելով ամեն յօդուածի ձեռնտուութեամբը ամեն մէկ անդամի ներգործութեան չափովը մարմնոյ աճիլը գործում է՝ իր

անձը սիրով շինելու համար։
17 Արդ սա եմ ասում և վկայում Տէրով, որ դուք այլ եւս չգնաք ինչպէս ուրիշ հեթանոսներն են գնում իրանց մտքի ունայնութիւնով,
18 Որ խաւարուած են մտքով, և օտար Աստուծոյ կեանքից, այն տգիտութեան պատճառով որ նորանցում է. իրանց սրտերի կուրութեան համար։
19 Որ անզգայացած՝ իրանց անձները մատնեցին անառակութեան ամեն պղծութեան գործքերի մէջ ագահութիւնով։
20 Բայց դուք Քրիստոսին այսպէս չսովրեցիք.
21 Եթէ նորանից լսեցիք, և նորանով սովրեցիք՝ ինչպէս որ ճշմարտութիւն է Յիսուսում։
22 Ձեզանից դուրս հանեցէք առաջի գնացքի պէս էլած հին մարդուն որ խաբէութեան ցանկութիւնով նեղ ապականուած է.
23 Եւ ձեր մտքի հոգովը նորոգուեցէք.
24 Եւ նոր մարդուն հագնիք՝ որ Աստուծոյն պէս ստեղծուած է՝ ճշմարտութեան արդարութիւնով և սրբութիւնով։
25 Ընդ որս համար դէն դնելով սուտը՝ խօսեցէք ճշմարտութիւն ամեն մարդ իր ընկերի հետ. վասնզի իրար անդամ ենք։
26 Բարկանաք՝ մի մեղանչէք. թող արեգակը ձեր բարկութեան վերայ չմտնէ։
27 Եւ տեղի չտաք սատանային։
28 Նա որ գողանում էր, թող էլ չգողանայ, այլ մանաւանդ աշխատէ իր ձեռքերովը բարին գործելով. որ ունենայ տալու պէտք ունեցողին։
29 Ոչ մի դէշ խօսք չգուրս գայ ձեր բերանից. բայց այն՝ որ բարի է շինութեան համար հարկաւոր, որ շնորհք տայ լսողներին։
30 Եւ մի տրտմեցնէք Աստուծոյ սուրբ Հոգին, որով կնքուեցաք փրկութեան օրուայ համար։
31 Ամեն դառնութիւն և բարկութիւն և սրտմտութիւն և աղաղակ և հայհոյութիւն թող վեր առնուի ձեզանից՝ ամեն չարութեան հետ։
32 Եւ իրար հետ քաղցր եղէք, գթած՝ իրար ներելով, ինչպէս Աստուած էլ Քրիստոսով ձեզ ներեց։

ԳԼ. Ե

1 Արդ նմանող եղէք Աստուծոյն
2 ինչպէս սիրելի որդիքներ, եւ սի-
րով գնացէք, ինչպէս որ Քրիս-
տոս էլ մեզ սիրեց, և իր անձը
մեզ համար մատնեց, պատարագ
և զոհ Աստուծոյ անոյշ հոտ լի-
3 նելու. Բայց պոռնկութիւն և ա-
մեն պղծութիւն, կամ ագահու-
թիւն թող չանուանուի ձեզա-
նում ինչպէս սրբերին կ'վայելէ,
4 Եւ գարշութիւն, կամ յիմար
խօսքեր, կամ խեղկատակութիւն,
որ չեն վայելում. այլ մանաւանդ
5 գոհութիւն, Քանզի սա գիտէք,
որ ոչ մի պոռնիկ, կամ պիղծ,
կամ ագահ, որ կռապաշտ է՝
ժառանգութիւն չունի Քրիստո-
սի և Աստուծոյ արքայութիւնու-
6 մը: Ոչ ով թող չխաբէ ձեզ
դատարկ խօսքերով. քանզի այս
պատճառով էլ՝ Աստուծոյ բար-
կութիւնը գալիս է անհնազան-
7 դութեան որդիների վերայ: Ու-
րեմն մանակից մի լինիք նորանց:
8 Վասն զի մի ժամանակ խաւար
էիք, իսկ հիմա լոյս էք Տէրոմը.
լուսոյ որդիների պէս գնացէք:
9 Վասն զի Հոգու պտուղը ամեն
բարութիւնով է, և արդարու-
թիւնով, և ճշմարտութիւնով:
10 Փորձեցէք թէ ինչ է հաճոյ Տի-
11 րոջը: Եւ մանակից մի լինիք խա-
ւարի անպտուղ գործքերին. այլ
12 մանաւանդ յանդիմանեցէք: Քան-
զի նորանց միջումն ծածուկ գործ-
ուածները խօսքով ասելն էլ ա-
13 մօթ է: Բայց ամեն բան՝ լուսից
յանդիմանուած՝ յայտնի է լի-
նում. վասն զի ամեն բան՝ որ
14 յայտնի է լինում, լոյս է: Սորա
համար էլ ասում է. Վեր կաց,
ով քնած, և վեր կանգնիր մե-
ռելներից, և Քրիստոս կ'լուսա-
ւորէ քեզ:
15 Արդ նայեցէք թէ ինչպէս զգու-
շութեամբ վարուիք. ոչ թէ ինչ-
16 պէս անխելքներ, Այլ ինչպէս ի-
մաստուններ. գնեցէք ժամանա-
17 կը, քանզի օրերը չար են, Ն-
րա համար մի լինիք անմիտ, այլ
իմացէք թէ ինչ է Տիրոջ կամքը:
18 եւ մի արբենոք գինով, որ նո-
րանում անառակութիւն կայ,
այլ լցուեցէք Հոգով, խօսելով
19 ձեր մէջ սաղմոսներով և օրհ-
նութիւններով և հոգևոր երգե-
րով, երգեցէք և սաղմոսեցէք ձեր
20 սրտերումը Տիրոջը: Ամեն ժամա-
նակ ամեն բանի համար գոհա-
ցէք Աստուածանից և Հօրից՝
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ա-
նունովը:
21 Իրար հնազանդ եղէք Ա-
22 ստուծոյ վախովը: Կանայք հնա-
զանդեցէք ձեր մարդկանցը ինչպէս
Տիրոջը: Մարդն է կնոջ գլուխն՝
23 ինչպէս Քրիստոս էլ եկեղեցու
գլուխը, և ինքն է մարմնոյն Քրի-
կիչը: Բայց ինչպէս եկեղեցին հը-
24 նազանդ է լինում Քրիստոսին,
այնպէս էլ կանայք՝ իրանց մարդ-
կանցն ամեն բանի մէջ: Մարդիկ,
25 սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս
Քրիստոս էլ սիրեց եկեղեցուն և
իր անձը մատնեց նորա համար.
26 Որ նորան սրբէ մկրտելով ջրի սրբ-
27 բութիւնովը խօսքով. Որ իր առջև
փառաւոր կանգնեցնէ եկեղեցին,
որ չունենայ մի արատ կամ խոր-
շոմութիւն կամ ուրիշ բաներ,
որ սուրբ և անարատ լինի: Այս-
28 պէս պէտք է մարդիկ սիրեն ի-
րանց կանանցը, ինչպէս իրանց
մարմիններըը. ով որ իր կնկանը
29 սիրում է, իրան է սիրում: Վա-
րընդի ոչ ով իր անձը չէ ատել,
այլ կերակրում է և պահպանում
է նորան. ինչպէս Քրէն էլ եկե-
30 ցին: Որովհետև նորա մարմնոյ
անդամներն ենք, նորա մարմնիցը
31 և նորա ոսկորներիցը: Սորա հա-
մար մարդը կ'թողէ իր հօրը և մօ-
րը, և իր կնկան կ'յարէ և եր-
կուքը մէկ մարմին կ'լինին: Այս
32 խորհուրդը մեծ է, բայց ես Քր-
իստոսի և եկեղեցու վերայ եմ
ասում: Սակայն դուք էլ մի ըստ
33 միոջէ ամեն մէկն իր կնկանը թող
այնպէս սիրէ ինչպէս իր անձը. և
կինը վախենայ իր մարդուցը:

ԳԼ. Զ

1 Որդիք, հնազանդ եղէք ձեր ծը-

նողներին Տէրով. վասն զի այն է
2 արժանը։ Պատուիր քո հօրը և
մօրը, ա՛ս է առաջին պատուի-
3 րանքը խոստմունքով, Որ քեզ
լաւ լինի, և երկար ապրիս երկ-
4 րի վերայ։ Եւ հայրեր, մի բար-
կացնէք ձեր որդկանցը. այլ մե-
ծացրէք նորանց խրատով և Տի-
5 րոջ ուսմունքովը։ Ծառաներ,
հնազանդ եղէք ձեր մարմնաւոր
տէրերին, վախով և դողալով ձեր
սրտի միամտութեամբն ինչպէս
6 Քրիստոսին. Ոչ թէ աչքի առջև
ծառայելով մարդոց հաճոյ լի-
նողների պէս, այլ ինչպէս Քրիս-
տոսի ծառաներ, որ Աստուծոյ
7 կամքն են անում սրտանց, յո-
ժարութեամբ ծառայելով Տիրո-
8 ջը և ոչ թէ մարդկանց. Գի-
տենալով որ ամեն մէկն ինչ բա-
րի որ անէ, նոյնը կընդունի Տէ-
րից. թէ ծառայ լինի և թէ
9 ազատ։ Եւ դուք տէրեր, նոյնն
արէք նորանց՝ թողելով սպառ-
նալիքը. գիտացէք որ հէնց ձեզ
ինքներդուդ էլ Տէր կայ երկնքումը,
և նորա առջև երեսպաշտութիւն
չկայ։
10 Ա՛յսուհետև, եղբայրներս, զո-
րացէք Տէրով և նորա զօրու-
11 թեան կարողութիւնովը։ Եւ Ա-
ստուծոյ զէնքերը հագէք. որ կա-
րող լինիք սատանայի հնարքնե-
12 րին հակառակ կենալ։ Որովհետև
մեր պատերազմը արիւնի և մարմ-
նոյ հետ չէ, այլ իշխանութիւն-
ների և պետութիւնների հետ,
այս աշխարհի խաւարի աշխար-
հակալների հետ, այն չար հոգի-
ների հետ որ երկնաւորների մէջ
13 են։ Սորա համար Աստուծոյ զէն
քերն առէք, որ կարող լինիք հա-
կառակ կենալ չարութեան օրու-
մը, և ամենը կատարելով հաս-
տատ կանգնիլ. Արդ հաստատ 14
կանգնեցէք ձեր մէջքերը ճշմար-
տութեամբ գօտեւորուած, և ար-
դարութեան զրահը հագած, Եւ 15
ոտները կոշիկ հագած խա-
ղաղութեան աւետարանի պատ-
րաստութիւնովը։ Եւ ամենի վե- 16
րայ հաւատքի վահանն առէք,
որով կարող լինիք չարի ա-
մեն կրակոտ նետերը հանգցնել։
Եւ փրկութեան սաղաւարտն ա- 17
ռէք, և Հոգու սուրը որ Աստու-
ծոյ խօսքն է։ Ամեն աղօթքով և 18
աղաչանքով աղօթք արէք ամեն
ժամանակ Հոգով. և սորանում
հսկեցէք բոլոր յարատևութեամբ
և աղաչանքով ամեն սրբերի հա-
մար, Եւ ինձ համար էլ. որ ինձ 19
խօսք տրուի իմ բերանը բանալու
ժամանակ, որ համարձակութիւ-
նով հռակացնեմ աւետարանի
խորհուրդը։ Որի համար ես պատ- 20
գամաւոր եմ կապանքներում, որ
նորանով համարձակ լինում, ինչ-
պէս որ պէտք է ինձ խօսիլ։
Բայց որպէս զի դուք էլ գիտե- 21
նաք ինձ համար, թէ ինչ եմ
գործում. ամեն բան կ'իմացնէ
ձեզ Տիւքիկոս եղբայրը և Տէրում
պաշտօնեայն. Որին հէնց դորա 22
համար ուղարկեցի ձեզ մօտ, որ
մեր մասին տեղեկանաք, և նա
ձեր սրտերը մխիթարէ։
Խաղաղութիւն լինի եղբայրների 23
հետ, և սէր հաւատքով Աստ-
ուած Հօրից և Տէր Յիսուս Քր-
իստոսից։ Շնորհք լինի այն ա- 24
մենի հետ, որ մեր Տէր Յիսուսին
Քրիստոսին սիրով են անկեղծու-
թեամբ. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

Ա.Ն ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուսի | Քրիստոսի ծառաներք. ամեն սըր-
բերին Քրիստոս Յիսուսում, որ
փիլիպպէացիներ են, եպիսկոպոսնե-

2 րի և առիւաւագներրի հետ, Շը-
նորհք ընէ ձեզ հետ և խաղա-
ղութիւն Աստուած մեր Հօրից,
և Տէր Յիսուս Քրիստոսից։
3 Գոհանում եմ իմ Աստուծուց
ամեն ժամանակ որ ձեզ յիշում
4 եմ, Որ ամեն ժամանակ իմ ա-
մեն աղաչանքներումը ձեր ամենի
համար աղօթք եմ անում ուրա-
5 խութիւնով, Ձեր աւետարանին
հաղորդ լինելու համար այն ա-
6 ռաջին օրից մինչև հիմա։ Եւ
հաստատ համոզուած եմ սրան,
թէ նա որ ձեզանում սկսեց այս
բարի գործը, կ'կատարէ էլ մին-
7 չև Յիսուսի Քրիստոսի օրը, Ինչ-
պէս որ պէտք է ինձ մտածելու
այս բանը ձեր ամենի համար, ո-
րովհետև ձեզ էմ սրտի մէջ ունիմ
իմ կապանքներումը, և աւետա-
րանի ջատագովութեան և հաս-
տատութեան ժամանակ, որ դուք
ամենքդ ինձ հետ շնորհացը հա-
8 դորդ եղաք։ Վասն զի Աստուած
ինձ վկայ է, թէ ինչպէս ձեր ա-
մենիդ փափագում եմ Յիսուսի
9 Քրիստոսի գութովը։ Եւ սա ա-
ղօթք եմ անում, որ ձեր սէրն
էլ աւելի և աւելի հարստանայ
գիտութիւնով և ամեն հասկա-
10 ցողութիւնով, Որ դուք լաւա-
գոյնն ընտրէք, որ մաքուր լինիք
և առանց գայթակղութեան Քը-
11 րիստոսի օրումը, Արդարութեան
պտուղներով լցուած՝ Յիսու-
սի Քրիստոսի ձեռովը, Աստու-
ծոյ փառաց և գովաստանաց հա-
մար։
12 Կամենում եմ, եղբարք, որ
գիտենաք, թէ ինչ բան որ իմ
մասին եղաւ, աւելի աւետարանի
յառաջադիմութեան համար յա-
13 ջողեցաւ։ Մինչև որ իմ կա-
պանքները Քրիստոսում յայտնի
եղան բոլոր պալատին և ուրիշ
14 ամենքին էլ։ Եւ Տէրումը եղբայր-
ներից շատերը իմ կապանքներովը
քաջալերուած աւելի համարձակ
եղան Աստծոյ խօսքը առանց
15 վախի խօսելու։ Ոմանք նախան-
ձով և հակառակութեան պատ-
ճառով, և ոմանք էլ բարեյօժար
մտքով քարոզում են Քրիստոսին
16 *Նրանք սիրով հակառակութիւնից
են քարոզում Քրիստոսին, և
ոչ թէ անկեղծ. կարծելով թէ
իմ կապանքների վերայ նեղու-
17 թիւն բերեն։ *Իսկ ոմանք սէրից,
գիտենալով որ Աւետարանի ջա-
տագովութեան համար կանգնած
18 եմ։ Բայց ի՞նչ. ինչ կերպով էլ
որ լինի, թէ պատճառանքով և
թէ ճշմարտութիւնով Քրիստոսն
է քարոզվում. և սրա համար ու-
րախ եմ՝ և ուրախ էլ կ'լինիմ։
19 Վասն զի գիտեմ, թէ այս բանը
վերջապէս ինձ փրկութեան պատ-
ճառ կ'լինի ձեր աղօթքովը՝ և Յի-
սուսի Քրիստոսի Հոգու ձեռնը-
20 տուութիւնովը։ Իմ ակնկալու-
թեան և յուսոյ համեմատ ոչ մի
բանով ամօթ չեմ լինիլ, այլ բո-
լոր համարձակութիւնով ինչպէս
ամեն ժամանակ, հիմա էլ Քրիս-
տոս փառաւորուի իմ մարմնումը,
21 թէ կեանքով և թէ մահով։ Վասն
զի ինձ համար կեանքը Քրիստոս
22 է, և մեռնելը՝ շահ։ Բայց եթէ
մարմնոյ մէջ ապրիլը իմ գործոյս
պտուղ է ինձ համար, էլ չգիտեմ՝
23 թէ ո՞րն ընտրեմ։ Երկու կողմանէ
էլ նեղ տեղ եմ. փափագելով
դուրս գալ և Քրիստոսի հետ լի-
նել. վասն զի շատ աւելի լաւ է։
24 Բայց մարմնումը կենալը աւելի
25 հարկաւոր է ձեզ համար։ Եւ
հաստատ համոզուած սա գիտեմ.
որ կ'կենամ և կ'մնամ ձեր ամենի
հետ, որ դուք զարգանաք և ու-
րախ լինիք հաւատքով։ Որ ձեր
26 պարծանքը աւելի լինի Քրիստոս
Յիսուսով ինձանով՝ իմ դարձեալ
ձեզ մօտ գալու համար։
27 Միայն թէ Քրիստոսի աւետա-
րանին վայելուչ կերպով գնացէք.
որ՝ թէ գամ և տեսնեմ ձեզ, և
թէ հեռու լինիմ և լսեմ ձեր մա-
սին, որ հաստատ էք մէկ հոգով
և մէկ շունչով պատերազմիք ա-
ւետարանի հաւատքի համար։
28 Եւ ոչ մի բանով մի զարհուրիք
հակառակորդիցը, որ դա նո-
րանց համար նշան է կորստի, և

*Ոմանք 16 ը տունը 17 րէց յե-
տոյ են գնում։

29 ձեզ համար՝ փրկութեան ։ Եւ
ձեզ Աստուածանից դա ընծայք
եղաւ Քրիստոսի համար , ոչ մի-
այն հաւատալ նորան , այլ նորա
30 համար չարչարուիլ էլ ։ Նոյն
պատերազմն ունենալով որ ինձ-
նում տեսաք , և հիմա ինձանից
լսում էք ։

ԳԼ· Բ·

1 Արդ եթէ մխիթարութիւն կայ
Քրիստոսով , եթէ սիրոյ սփոփու-
թիւն , եթէ Հոգու հաղորդու-
թիւն , եթէ գթածութիւն և ո-
2 ղորմութիւն . Ա՛ր- լցրէք իմ ու-
րախութիւնը , որ նոյն միտքն ու-
նենաք , նոյն սէրն ունենալով ,
միաշունչ մի և նոյնը խորհէք ։
3 Ոչ մի բան չլինի գրգռումով , և
ոչ էլ անպարծութիւնով . այլ
խոնարհութիւնով թող մէկը միւ-
սին իր անձնից աւելի լաւ հա-
4 մարէ ։ Մինակ ձեր անձների բա-
նին մտիք չտաք , այլ ամեն մէկն
5 իր ընկերի բանին էլ ։ Ձեր ումն
մէկն թող այն մտածէ , որ էլ
6 Քրիստոս Յիսուսումն էր . Որ Ա-
ստուծոյ կերպարանքումն լինելով ,
յափշտակութիւն չհամարեց Ա-
7 ստուծոյն հաւասար լինիլ ։ Այլ
իր անձն ունայնացրեց , և ծա-
ռայի կերպարանք առնելով՝ մարդ-
կանց նման լինելով և կերպարան-
8 քով մարդու պէս գտնուելով ։ Ի-
րան խոնարհեցրեց , և հնազանդ
եղաւ մինչև 'ի մահ՝ և այն էլ
9 խաչի մահ ։ Ընդ համար էլ
Աստուած շատ բարձրացրեց նո-
րան , և նորան մի անուն շնոր-
հեց , որ ամեն անունից աւելի
10 բարձր է . Որ Յիսուսի անունովն
կրկնուի ամեն ծունկ երկնաւոր-
ների և երկրաւորների և երկրի
11 տակ լինողների , և ամեն լեզու
դաւանէ , թէ Յիսուս Քրիստոս
Տէր է Հօր Աստուծոյ փառքի
12 համար ։ Ա՛րդեն , իմ սիրելիներ ,
ինչպէս ամեն ժամանակ հնազան-
դեցաք՝ ոչ միայն իմ ներկայու-
թիւնումը , այլ հիմա էլ աւելի
իմ բացակայութիւնումը , ահով
և դողալով գործեցէք ձեր անձ-
ների փրկութիւնը ։ Վ՚ասն զի 13
Աստուած է՝ որ ներգործում է
ձեզանում կամենալն էլ՝ անելն էլ
էլ հաճութեան պէս ։ Ամեն բան 14
գործեցէք առանց տրտնջանքի և
վիճաբանութիւնների ։ Որ լինիք 15
անբիծ և անարատ՝ որդիք Աստու-
ծոյ առանց մեղապրանքի այն
կամակոր և ծուռ ազգի մէջ . ո-
րոնց միջումը երևիք ինչպէս լոյս
տուողներ աշխարհքի մէջ . Կենաց 16
խօսքը պահելով ինձ պարծանք լի-
նելու համար Քրիստոսի օրում .
որ զուր տեղն չվազեցի , և զուր
չաշխատեցի ։ Բայց թէև ընծայ- 17
ուիմ ձեր հաւատքի պատարագի
և պաշտամունքի վերայ՝ ուրախ
եմ , և ձեր ամենի հետ ուրախա-
նում եմ ։ Այնպէս էլ դուք ու- 18
րախ եղէք , և ինձ հետ ուրախա-
ցէք ։

Բայց յոյս ունիմ Տէր Յիսու- 19
սում , որ Տիմոթէոսին շուտով
ուղարկեմ ձեզ մօտ , որ սիրտս էլ
հանգստանայ , երբոր ձեր վիճակն
իմանամ ։ Վ՚ասն զի ինձ չունիմ 20
միասիրտ , որ մտերմութիւն տանէ
ձեզ համար ։ Վ՚ասն զի ա- 21
մենքն իրենց բաներն են որոնում
և ոչ թէ Յիսուսի Քրիստոսինը ։
Բայց դուք գիտէք նորա ընտիր 22
լինելը , որ ինչպէս մի որդի էր
հօրը՝ այնպէս ինձ հետ Ծառայեց
աւետարանին ։ Ուրեմն յոյս ու- 23
նիմ որ սորան ուղարկեմ իսկոյն ,
երբոր իմ անձի մասին կ՚տեսնեմ ,
կանամ ։ Բայց վստահ եմ Տէրու- 24
մը , որ ինքս էլ շուտով գամ ։
Միայն հարկաւոր համարեցի՝ որ 25
Եպաբրոդիտոս եղբօրը՝ գործիս և
պինուորութեանս ընկերին , այն
ձեր առաքեալին , և իմ պէտք
լինող բաների պաշտօնեային ու-
ղարկեմ ձեզ մօտ ։ Վ՚ասն զի ին- 26
քըն էլ խիստ փափագ ունէր ձեզ
ամենին տեսնելու և հոգս էր քա-
շում՝ որ լսել էիք թէ նա հի-
ւանդացաւ ։ Եւ իրաւի որ հի- 27
ւանդացաւ մերձ 'ի մահ , բայց
Աստուած ողորմեց նորան . ոչ
միայն նորան , այլ ինձ էլ , որ
տրտմութիւն տրտմութեանն վե-
րայ չունենամ ։ Ուրեմն աւելի ըզ- 28

տապով ուղարկեցի նորան, որ տեսանելով նորան դարձեալ ուրախ լինիք, և ես էլ առանց
29 տրտմութեան լինիմ։ Այդ ընդունեցէք նորան Տէրուհի ամեն ուրախութեամբ, և այնպիսիներին պատուական համարեցէք։
30 Վասն զի Քրիստոսի գործի համար մինչև մահուան մօտեցաւ. իր անձը վտանգի մէջ գցելով, որ ձեր ինձ ծառայելու պակասութիւնը լրացնէ։

ԳԼ. Գ.

1 Ա՛յսուհետև, իմ եղբարք, ուրախ եղէք Տէրոմբ, մի և նոյն բաները ձեզ գրելը ինձ համար ձանձրութիւն չէ, բայց ձեզ ա-
2 պահովութիւն է։ Զգոյշ կացէք շներից. զգոյշ կացէք չար մշակներից. զգոյշ կացէք կրճատու-
3 թիւնից։ Վասն զի մենք ենք թլփատութիւնն, որ Հոգով պաշտում ենք Աստուծոյն, և Քրիստոսով պարծենում ենք, և մարմնով չենք պարծենում։
4 Եւ մարմնով չենք պարծենում, թէ և ես վստահութիւն ունիմ մարմնոյ կողմանէ էլ. եթէ մի ուրիշը կարծէ որ մարմնով վստահ լինի,
5 աւելի ևս ես։ Ութ օրեայ թլփատուած, Իսրայէլի ազգից, Բենիամինի ցեղից, Եբրայեցի Եբրայեցիներից, օրինաց կողմանէ Փարիսեցի,
6 Ջերմեռանդութեան կողմանէ հալածող էի եկեղեցուն. օրէնքի արդարութեան
7 մասին տալով անարատ էի։ Բայց ինչ բան որ ինձ շահ էր, այն Քրիստոսի համարեցի Քրիստոսի հա-
8 մար։ Եւ հէնց ամեն բաներ էլ Քրիստոսի գերազանց գիտութեան համար, որի պատճառով ամեն բանից զրկուեցայ, և նրանց ապր եմ համարում, որ
9 Քրիստոսին շահեմ, և նորանում գտնուիմ. և ոչ թէ իմ արդարութիւնն ունենամ՝ որ օրէնքից է, այլ այն որ Քրիստոսի հաւատքից է. այն արդարութիւնը որ Աստուծոց է հաւատքով.
10 Որ ճանաչեմ նորան՝ և նորա յա-
րութեան զօրութիւնը՝ և նորա չարչարանքի մասնակից լինելը, նորա մահուան կերպարանակից
լինելով. Որպէս զի մեռելների 11
յարութեանը հասնիմ. Ոչ իբր 12
արդէն բռնած լինիմ, կամ թէ արդէն կատարեալ եղած լինեմ, բայց հետևում եմ որ իցէ թէ հասնիմ նորան, ինչպէս որ էլ հենց Քրիստոս Յիսուսից բռնուած եմ։ Եղբարք, ես իմ անձը 13
չեմ համարում որ հասած լինիմ, բայց մէկ բան կայ, յետևի բաները մոռանալով, դէպի առջևի
լինողներն են նկրտում։ Դէպի 14
նպատակը հետևում եմ Աստուծոյ վերին կոչումի մրցանակին Քրիստոս Յիսուսումը։ Այդ ո- 15
րոնք կատարեալ ենք, այս միտածենք, և եթէ մի բան ուրիշ կերպով մտածէք, այն էլ Աստուած կ'յայտնէ ձեզ։ Միայն թէ 16
ինչի որ հասանք, նոյն կանոնով վարուինք, նոյնը մտածենք։ Ինձ 17
նմանող եղէք, եղբարք, և նայեցէք այն կերպով գնացողներին ինչպէս մեզ օրինակ ունէք։ Վասն 18
զի շատերն են գնում, որոնց համար շատ անգամ ասում էի ձեզ, և հիմա էլ լալով ասում եմ, որ Քրիստոսի խաչի թշնամիներ են. 19
Որոնց վերջը կորուստ է, որոնց Աստուածն էրն է որովայնն է. և փառքը՝ նրանց ամօթն է. որոնք երկրաւոր բաներն են մտածում։
Բայց մեր քաղաքականութիւնն 20
երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին. Որ կ'նորոգէ մեր խո- 21
նարհ մարմինը որ իր փառաւոր մարմնոյն կերպարանակից լինի այն զօրութիւնով, որ կարող է ամեն բան հնազանդեցնել իրան։

ԳԼ. Դ.

Ուրեմն, իմ սիրելի և բաղձալի 1
եղբարք, իմ ուրախութիւնը և իմ պսակը. այսպէս հաստատ կացէք Տէրոմբ, սիրելիներ։
Եւոդիային աղաչում եմ, և 2
Սինդիքին աղաչում եմ, որ մի և նոյնը խորհին Տէրոմբ։ Այո, 3

քեզ էլ եմ աղաչում, իմ հարա-
զատ լծակից, դու էլ օգնիր նո-
րանց, որ պատերազմեցին Աւե-
տարանումն ինձ հետ միասին և
Կղեմէսի հետ և իմ ուրիշ գոր-
ծակիցների հետ էլ, որ նորանց
անուանները կենաց գրքումն են:
4 Ուրախ եղէք Տէրումն ամեն ժա-
մանակ. դարձեալ ասում եմ՝
5 ուրախ եղէք: Ձեր հեզութիւնը
թող յայտնի լինի ամեն մարդ-
6 կանց. Տէրը մօտ է: Ոչինչ հոգա
մի անէք, այլ ամեն բանում ա-
ղօթքով և աղաչանքով և գոհու-
թիւնով ձեր խնդրուածքները թող
7 յայտնի լինին Աստուծոյն: Եւ
Աստուծոյ խաղաղութիւնը, որ
ամեն մտքից վեր է, պահպանէ
ձեր սրտերն ու մտքները Քրիստոս
8 Յիսուսում: Ա՛յսուհետև, եղ-
բայրք, ինչ որ ճշմարիտ է, ինչ
որ պարկեշտ, ինչ որ արդար,
ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն,
ինչ որ բարի անուն, թէ առա-
քինութիւն է, և թէ գովութիւն
9 է, այն մտածեցէք: Հէնց այն որ
սովորեցիք, և ընդունեցիք, և
լսեցիք, և ինձանում տեսաք,
այն արէք, և խաղաղութեան
Աստուածը ձեզ հետ կ՚լինի:
10 Եւ մեծապէս ուրախացայ Տե-
րումն, որ դուք արդէն դարձեալ
մտքներդ բերիք հոգալ ինձ հա-
մար, ինչպէս էլ հոգում էիք,
բայց պատշաճ ժամանակ չէիք
11 գտնում: Ոչ թէ կարօտութեան
պատճառով եմ ասում, վասն զի
ես սովորեցի ինչի մէջ որ կամ,
12 նորանով բաւական լինիլ: Գի-
տեմ պակասութիւն քաշել, և
առատութիւնով լինելն էլ. ամեն
բանի մէջ ամենին լաւ տեղեկա-
ցած եմ՝ կշտանալն էլ սովելն էլ,
առատութիւնով ունենալն էլ, պա-
կասութիւն քաշելն էլ: Ամեն 13
բան կարող եմ ինձ զօրացնող
Քրիստոսով: Սակայն լաւ արիք 14
որ հաղորդ եղաք ինձ իմ նեղու-
թիւնումը: Դուք ինքներդ էլ, 15
փիլիպպեցիք, գիտէք, որ աւե-
տարանի սկզբումը՝ երբոր Մակե-
դոնիայից դուրս եկայ ոչ մի ե-
կեղեցի հաղորդութիւն չարաւ
ինձ տալու կամ առնելու հաշիւ-
ով, բայց միայն դուք: Վասն 16
զի Թեսաղոնիկէի մէջ էլ մի ե-
կու անգամ ինձ պէտք եղած
բաները ուղարկեցիք: Իբր ոչ թէ 17
տուրքն եմ ուզում, այլ պտուղն
եմ ուզում, որ աւելանայ ձեր
հաշիւին: Բայց ես ամեն բան ա- 18
ռել եմ, և առատութիւն ու-
նիմ. լիքն եմ, որ Եպափրոդիտո-
սից ձեռնից ընդունեցի այն որ ձե-
զանից է՝ անուշ հոտ ընդունելի
պատարագ՝ Աստուծոյ հաճոյ:
Եւ իմ Աստուածը լրացնէ ձեր ա- 19
մեն կարօտութիւնն իր հարստու-
թեան չափովը՝ փառքով Քրիստոս
Յիսուսումը: Բայց Աստուծոյն՝ 20
մեր Հօրը փառք յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:

Բարև տուէք ամեն սրբերին Քր- 21
իստոս Յիսուսումը: Բարև են 22
տալիս ձեզ ինձ հետ լինող եղ-
բայրները: Բարև են տալիս ձեզ 23
ամեն սրբերն, մանաւանդ կայսրի
տանից լինողները: Տէր Յիսուս 24
Քրիստոսի շնորհքը ձեր ամենքիդ
հետ լինի. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

Ա՛Ո ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ա-
ռաքեալ Աստուծոյ կամքովը, և
2 Տիմոթէոս եղբայրը. Կողոսայում
լինող սրբերին և հաւատացեալ
եղբայրներին Քրիստոսում, Շնորհք
լինի ձեզ հետ՝ և խաղաղութիւն
Աստուած մեր Հօրից՝ և Տէր
Յիսուս Քրիստոսից:
3 Գոհանում ենք Աստուածանից
և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի

Հօրիցը . ամեն ժամանակ ձեզ
4 համար աղօթք անելով . Երբոր
լսեցինք ձեր հաւատքը , որ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ ,
և սէրը՝ որ դէպի ամեն սրբերն
5 ունիք . Ա՛յն յոյսոյ համար՝ որ
պահված է ձեզ համար երկնքում-
մըն , որի համար առաջուց լսե-
ցիք աւետարանի ճշմարիտ խօս-
6 քովը . Որ հասաւ ձեզ , ինչպէս
ամեն աշխարհի մէջ , և պտուղ է
բերում , ինչպէս ձեր միջումն էլ ,
այն օրից հետէ՝ որ լսեցիք և
Աստուծոյ շնորհքը ճանաչեցիք
7 ճշմարտութիւնով ; ինչպէս էլ
սովորեցիք Եպափրասից՝ մեր սի-
րելի ծառայակցիցը , որ ձեզ հա-
մար Քրիստոսի հաւատարիմ պաշ-
8 տօնեայ է , Որ էլ պատմեց մեզ
ձեր սէրը Հոգով ;
9 Նորա համար մենք էլ այն օ-
րից հետէ որ լսեցինք , չենք դա-
դարում ձեզ համար աղօթք ա-
նել , և խնդրուածք մատուցանել
որ լցուիք նորա կամաց գիտու-
թիւնով , ամեն իմաստութիւ-
10 նով և հոգևոր հանճարով . Որ
դուք գնաք ինչպէս արժանի է
Տիրոջը , ամեն բանի մէջ հաճոյ
լինելով նորան , ամեն բարի գործ-
քով պտղաբեր լինելք և աճիք
11 Աստուծոյ գիտութեան մէջ . Ամեն
զօրութիւնով զօրացած իր փառ-
քի զօրութեան համեմատ , ամեն
համբերութեան և երկայնմտու-
12 թեան մէջ ուրախութիւնով . Եւ
գոհութիւն տաք Հօրը որ մեզ
արժանացրեց մասնակից լինելու
13 սրբերի վիճակին լուսումը . Որ
փրկեց մեզ խաւարի իշխանու-
թիւնից , և փոխադրեց մեզ իր
սիրելի Որդոյ արքայութեան մէջ ,
14 Որի ձեռնից ունինք փրկութիւն
նորա արիւնով՝ մեղաց թողու-
15 թիւնը : Որ անտեսի Աստուծոյ
պատկերն է՝ ամեն ստեղծուած-
16 ներից առաջ ծնուած . Վասն զի
նորանով ամեն բան ստեղծու-
ցաւ ինչ որ երկնքումն՝ և ինչ որ
երկրիս վերայ է . երևողները և
չերևողները , թէ աթոռները ,
թէ տէրութիւնները , թէ պե-
տութիւնները , թէ իշխանու-
թիւնները . ամեն բաները նորա-
նով և նորա համար ստեղծու-
ցան : Եւ նա ամենից առաջ է , 17
և ամեն բան նորանով է հաս-
տատ . Եւ նա է մարմնոյ այնի 18
եկեղեցւոյ գլուխը , որ նա է սկիզ-
բը , անդրանիկը . որ-
պէս զի ամեն բանի մէջ նա լինի
առաջինը : Որովհետև Աստուած 19
հաճեցաւ , որ նորանումն Աստ-
ծութիւն բոլոր լիութիւնը բնակ-
ուի : Եւ նորանով ամենքը հաշ- 20
տեցնէ իրան հետ , խաղաղութիւն
անելով նորա ձեռովը նորա խաչի
արիւնովը , թէ երկրիս վերայ թէ
երկնքումը լինողներին :
Եւ ձեզ էլ , որ մի ժամանակ 21
օտարացած և թշնամի էիք միտ-
քով չար գործքերումը , Հիմա 22
հաշտեցրեց իր մնեղէն մարմնոյ
մէջ իր մահուան ձեռովը , որ ձեզ
սուրբ , և անբիծ , և անպատա-
կանդնեցնէ իր առջևը : Եթէ հա- 23
ւատքի մէջ հիմնուած և հաստատ
կենաք , և առանց շարժուելու
այն աւետարանի յոյսից՝ որ լսե-
ցիք , որ երկնքի տակ լինող բո-
լոր արարածներին քարոզուեցաւ ,
որին ես Պօղոս պաշտօնեայ եղայ :
Հիմա ուրախ եմ իմ չարչարանք- 24
ներումը ձեզ համար , և լրացնում
եմ Քրիստոսի նեղութիւնների պա-
կասը իմ մարմնումը նորա մարմ-
նոյ համար , որ է եկեղեցին , Որի 25
ես պաշտօնեայ եղայ , Աստուծոյ
այն անտեսութեան պէս , որ ինձ
տրուած է ձեզ համար Աստուծոյ
խօսքը կատարելու համար . Այն 26
խորհուրդը որ ծածկուած էր յա-
ւիտեններից և դարերից , իսկ հիմա
յայտնուեցաւ իր սրբերին . Որոնց 27
Աստուած կամեցաւ ցոյց տալ ,
թէ ինչ է այս խորհուրդի փառա-
ւոր ճոխութիւնը հեթանոսների-
մը , որ է Քրիստոս ձեզանում՝
փառաց յոյսը : Որին մենք քարո- 28
զում ենք ամեն մարդ խրատելով
և ամեն մարդ սորվեցնելով ամեն
իմաստութիւնով , որ ամեն մարդ
կատարեալ կանգնեցնենք Քրիս-
տոս Յիսուսում՝ Որի համար էլ 29
աշխատում եմ պատերազմ անե-
լով նորա ներգործութեան չա-

փոխը, որ ինձանեւամ ներգործեւամ
է զօրութիւնով։

ԳԼ. Բ

1 Վասն զի կամիմեւամ եմ որ գիտենաք դուք, թէ ինչափան պատերազմ ունիմ ձեզ համար և Լաւոդիկեացոց համար, և որոնք իմ երեսը մարմնով չեն տեսել.
2 Որ նորանց սրտերը մխիթարուին սիրով միացած. և կատարեալ իմաստութեան ամեն ճոխութեանը հասնին, այինքն Աստուծոյ և Հօր և Քրիստոսի խորհուրդը ի-
3 մանալուն. Որի մէջ ծածկուած կան իմաստութեան և գիտու-
4 թեան ամեն գանձերը։ Բայց սա եմ ասում, որ մի գուցէ մէկը մոլորեցնէ ձեզ հրապուրական
5 խօսքերով։ Վասն զի թէ և մարմնով բացակայ եմ, բայց հոգով ձեզ հետ եմ. ուրախանալով ձեր կարգը տեսնելով, և ձեր հաստատութիւնը՝ որ Քրիս-
6 տոսի վերայ է։ Ուրեմն ինչպէս Քրիստոս Յեսուս Տէրն ընդունե-
7 ցիք՝ նորանում գնացէք։ Արմատացած և նորանում շինուած, և հաւատքումը հաստատուած՝ ինչպէս որ սովորեցիք՝ աճելով նորա-
8 նում գոհութիւնով։ Զգոյշ կացէք՝ մի գուցէ մէկը յափշտակէ ձեզ փիլիսոփայութիւնով և դատարկ խաբեպայութիւնով, մարդկանց աւանդութեան պէս, աշխարհքիս սկզբունքների պէս և
9 ոչ թէ Քրիստոսի պէս։ Որովհետև նորանում բնակուած է Աստուածութեան ամեն լիութիւնը
10 մարմնապէս։ Եւ դուք նորանով լցուած էք, որ նա է ամեն իշխանութեան և պետութեան գլ-
11 լուխը։ Որով դուք թլփատուեցաք անձեռագործ թլփատութիւնով, մարմնոյ մեղքերի անդամները մերկանալով Քրիստոսի
12 թլփատութիւնովը. թաղուելով նորա հետ մկրտութիւնումը, որով յարութիւն էլ առիք նորա հետ Աստուծոյ ապդեցութեան հաւատքովը, որ յարոյց նորան
13 մեռելների միջից։ Եւ ձեզ որ մի ժամանակ մեռած էիք մեղքերու-
թեամբ և ձեր մարմնոյ անթլփատութիւնումը, իրան հետ կենդանացրեց բոլոր մեղքերը ձեզ շնորհելով։ Եւ ջնջեց այն մեզ հա- 14
կառակ ձեռագիրը էր հրամանների-
թովը որ մեզ հակառակ էր, և նորան վեր առաւ միջ տեղիցը և խաչափայտին վերայ բևեռեց. Իշ- 15
խանութիւններին և պետութիւն-
ներին մերկացնելով, յայտնապէս
խայտառակեց և նորան յաղթա-
նակեց նորանում։

Արդ թող մէկը չդատէ ձեզ ու- 16
տելու կամ խմելու համար, կամ
տօնի կամ ամսագլխի կամ շա-
բաթների մասին, Որոնք նոր գա- 17
լու բաների ստուերներն են, բայց
մարմինը Քրիստոսինն է։ Ոչ ով 18
չզրկէ ձեզ մրցանակիցը՝ ինքնա-
կամ խոնարհութիւնով և հրեշ-
տակների կրօնքով՝ միջամուխ լի-
նելով այն բաներին որ չէ տեսած
և զուր տեղը գոռոզացած է իր
մարմնաւոր մտքումը. Եւ չբռնե- 19
լով գլուխը, որից բոլոր մարմինը
յօդուածներով և խազերով հա-
զօրդուած և խառնուած՝ մեծա-
նում է Աստուծոյ աճմունքովը։
Արդ եթէ Քրիստոսի հետ մեռաք 20
այս աշխարհքի սկզբունքներից՝
էլ ինչո՞ւ էք այս աշխարհքի մէջ
կենդանիների պէս օրէնք-
ներով կապում, Թէ Մի մօտենար, 21
մի ճաշակեր, մի դպչիր. Որ ա- 22
մենքն ապականութեան համար
են գործածութեամբ, մարդկանց
պատուիրանքների և վարդապե-
տութեանց պէս։ Որոնք իմաս- 23
տութեան կերպարանք ունին ինք-
նահնար կրօնքով և խոնարհու-
թիւնով և մարմնոյն չխնայելով,
մի տեսակ չպատուելով մարմինը
յագեցնելը։

ԳԼ. Գ

Արդ եթէ Քրիստոսի հետ յա- 1
րութիւն առիք, ապա խնդրեցէք
վերինները, որ տեղ Քրիստոս է
նստում Աստուծոյ աջ կողմը։
Վերինները մտածեցէք, ոչ թէ 2
երկրի վերայինները. Վասն զի 3

գուք մեռաք՝ և ձեր կեանքը ծած-
կուած է Քրիստոսի հետ Աստու-
4 ծոյ մէջ։ Բայց երբոր Քրիստոս՝
մեր կեանքը կ'յայտնուի, այն
ժամանակ գուք էլ նորա հետ
կ'յայտնուիք փառքով։
5 Ուրեմն սպանեցէք ձեր անդամ-
ները որ երկրի վերայ են, պոռնը-
կութիւնը, պղծութիւնը, կիրքը,
չար ցանկութիւնը, և ագահու-
թիւնը որ կռապաշտութիւն է։
6 Որոնց համար Աստուծոյ բարկու-
թիւնը գալիս է անհաւատու-
7 թեան որդիների վերայ, Որոնց
մէջ գուք էլ մի ժամանակ գնա-
ցել էք, երբոր կենդանի էիք նո-
8 րանցում։ Բայց հիմա գուք էլ
դէն դրէք այն ամենը, բարկու-
թիւնը, սրտմտութիւնը, չարու-
թիւնը, հայհոյութիւնը, ամօ-
թալի խօսքերը ձեր բերանից։
9 Սուտ մի խօսիք իրար հետ. հա-
նեցէք հին մարդն իր գործերով։
10 Եւ հագէք նոր մարդն որ նո-
րոգուած է գիտութիւնով իր ըս-
11 տեղծողի պատկերի պէս։ Ուր ոչ
Յոյն կայ և ոչ Հրէայ, ոչ թլփա-
տութիւն և ոչ անթլփատու-
թիւն, խուժ դուժ, Սկիւթացի,
ծառայ, ազատ. բայց ամենքը
12 և ամենքի մէջ Քրիստոս։ Ուրեմն
հագէք՝ ինչպէս Աստուծոյ ընտ-
րեալներ՝ սուրբեր և սիրելիներ՝
ողորմածութիւն, քաղց-
րութիւն, խոնարհութիւն, հե-
13 զութիւն, երկայնմտութիւն. ի-
րար նեղելով, և իրար թողելով,
եթէ մէկը միւսի դէմ տրտունջ
ունենայ, ինչպէս Քրիստոս էլ
14 ձեզ ներեց, այնպէս էլ գուք. Եւ
այս ամենի վերայ հագէք սէրը, որ
15 կատարելութեան կապն է։ Եւ
Աստուծոյ խաղաղութիւնը իշխէ
ձեր սրտերումը, որի մէջ էլ կան-
չուեցաք մէկ մարմնով, և գոհա-
16 ցող եղէք։ Քրիստոսի խօսքը բը-
նակուի ձեր մէջումն առատապէս
ամեն իմաստութիւնով. իրար ու-
սուցանեցէք և խրատեցէք, սաղմոս-
ներով և օրհնութիւններով և հո-
գևոր երգերով և շնորհքով օրհ-
նեցէք Տէրոջը ձեր սրտերումը
17 Եւ ամեն ինչ որ էլ անէք խօսքով

կամ գործով, ամենը Տէր Յիսուսի
անունովը գոհութիւն տալով
Աստուծոյն և Հօրը նորա ձեռովը։
18 Կանայք, հնազանդ եղէք ձեր
մարդկանցը, ինչպէս կ'վայելէ Տէ-
19 րումն։ Մարդիկ, սիրեցէք ձեր
կանանցը, և դառն մի լինիք նո-
20 րանց դէմ։ Որդիք, հնազանդ ե-
ղէք Տէր ծնողներին ամեն բանի
մէջ. վասն զի այդ հաճոյ է Տի-
21 րոջը։ Հարք, մի գայրացնէք ձեր
որդոցը, որ չվհատին։ Ծառաներ,
22 հնազանդ եղէք ամեն բանի մէջ
ձեր մարմնաւոր տէրանցը ոչ թէ
աչքի առջև ծառայութիւն անե-
լով մարդահաճոյների պէս. բայց
սրտի միամտութեամբ Աստու-
ծուց վախենալով։ Եւ ամեն ինչ
23 որ էլ անէք, սրտանց արէք, ինչ-
պէս Տիրոջը, և ոչ թէ մարդ-
24 կանց։ Գիտենալով որ Տէրիցը
կ'առնէք ժառանգութեան հա-
տուցումը. վասն զի Տէր Քրիս-
25 տոսին էք ծառայում։ Բայց ան-
բան հատուցում կ'առնայ իր
արած անիրաւութեան համար.
աչառութիւն չկայ։

ԳԼ. Դ

Տէրեր, իրաւունքը և հաւասարը
1 տուէք ծառաներին. գիտենալով
որ դուք էլ Տէր ունիք երկնքումը։
2 Աղօթքին միշտ հետևեցէք. և
արթուն կացէք նորանում գոհու-
3 թիւնով։ Եւ մեզ համար էլ ա-
ղօթք արէք, որ Աստուած բա-
նայ մեզ համար խօսքի դուռն
խօսել Քրիստոսի խորհուրդը, որի
4 համար էլ կապուած եմ։ Որ
յայտնեմ նորան՝ ինչպէս ինձ ար-
5 ժան է խօսել։ Իմաստութիւնով
վարուեցէք դրսիններին հետ, և
6 ժամանակը գնեցէք։ Ձեր խօսքը
ամեն ժամանակ շնորհքով աղով
համեմուած լինի, որ գիտենաք թէ
ինչպէս արժան է ձեզ ամեն մե-
կին պատասխան տալ։

7 Իմ մասին ամենը կ'իմացնէ ձեզ
Տիւքիկոս սիրելի եղբայրը և հա-
ւատարիմ պաշտօնեան, և ծա-
8 ռայակիցը Տէրումը, Որին հէնց
դրա համար ուղարկեցի ձեզ

մօտ, որ իմանայ ձեր մասին և
9 մխիթարէ ձեր սրտերը. Որեհետև
հաւատարիմ և սիրելի եղբօր հետ,
որ ձեզմանից է. Նորանք ամենը
կ'իմացնեն ձեզ ինչ որ այստեղ
10 կը լինի: Բարև է տալիս ձեզ
Արիստարքոսն՝ իմ գերութեան
ընկերը, և Բառնաբասի եղբօր
որդին Մարկոսը. որի համար
պատուէր առիք, որ եթէ ձեզ
11 մօտ գայ, ընդունիք նորան: Եւ
Յիսուսն որ Յուստոս է անուան-
վամբ, որանք թլփատութիւնից
են. միայն գորանք են իմ գոր-
ծակիցները Աստուծոյ արքայու-
թիւնումն, որ ինձ համար էլ
12 մխիթարութիւն եղան: Բարև է
տալիս ձեզ Եպաբրաս Քրիստոսի
ծառան, որ ձեզմանից է. ամեն
ժամանակ ձեզ համար պատե-
րազմում է աղօթքներում, որ
կատարեալ և լցուած լինիք Ա-
ստուծոյ բոլոր կամքումը: Վկան 13
ղի վկայում եմ նորա համար որ
շատ նախանձ ունի ձեզ համար,
և նորանց համար որ Լաւոդիկէ-
ումն և Յերապօլիսումն են: Բարև 14
է տալիս ձեզ բժիշկ Ղուկաս սի-
րելին և Դէմասը: Բարև տուէք 15
Լաւոդիկէումն լինող եղբայրնե-
րին և Նիմփային և նորա տան
եկեղեցուն: Եւ երբոր ձեզ մօտ 16
կարդացուի այս թուղթը Լաւո-
դիկէոց եկեղեցումն էլ կարդալ
տուէք. և որ Լաւոդիկէացոցն էլ
դուք կարդաք: Եւ Արքիպոսին 17
ասացէք. Զգոյշ եղիր այն սպա-
սաւորութեանը որ ընդունեցիր
Տէրումն, որ նորան կատարես:
Այս բարևը իմ Պօղոսիս ձեռքով 18
է, յիշեցէք իմ կապանքը. շը-
նորհքը լինի ձեզ հետ. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ Ա. ՓԵԼՈՅ

Ա. ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Ա. ՈՒԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէ-
ոս, թեսաղոնիկեցոց եկեղեցոյդ
Աստուած Հօրումը և Տէր Յիսուս
Քրիստոսումը. շնորհք լինի ձեզ
հետ և խաղաղութիւն մեր Հայր
Աստուածմանից և Տէր Յիսուս
Քրիստոսից:
2 Գոհանում ենք Աստուածմանից
ամեն ժամանակ ձեր ամենքի հա-
մար ձեզ յիշելով մեր աղօթքնե-
3 րումը. Եւ անդադար յիշում
ենք ձեր հաւատքի գործը և սի-
րոյ աշխատանքը, և մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի յոյսի համբերու-
թիւնը Աստուծոյ և մեր Հօր
4 առջև. Գիտենալով, Աստուա-
ծանից սիրուած եղբարք, ձեր
5 ընտրութիւնը, Որ մեր աւետա-
րանը ձեզ մօտ չեղաւ միայն խօս-
քով, այլ և զօրութիւնով և Հո-
գով Սուրբով և շատ լիութիւ-
նով. ինչպէս լաւ գիտէք, թէ
որպիսիք եղանք ձեր միջումը ձեզ
համար: Եւ դուք նմանող եղաք 6
մեզ և Տիրոջը՝ խօսքն ընդունելով
շատ նեղութեան մէջ Սուրբ Հո-
գու ուրախութիւնովը. Որ դուք 7
օրինակ եղաք ամեն հաւատաց-
եալներին Մակեդոնիայի և Աքա-
յիայի մէջ: Վասն զի ձեզմանից 8
հռչակուեցաւ Տիրոջ խօսքը. ոչ
միայն Մակեդոնիայի և Աքայի-
այի մէջ, այլ և ամեն տեղ դուրս
եկաւ ձեր հաւատքը առ Աստ-
ուած. այնպէս որ պէտք չէ մեզ
մի բան խօսել: Վասն զի հէնց 9
իրանք պատմում են մեր մասին
թէ ինչպիսի մուտք ունեցանք ձեզ
մօտ և ինչպէս դարձաք կուքերի-
ցը դէպի Աստուած, որ ծառայէք
կենդանի և ճշմարիտ Աստուծոյն,
Եւ սպասէք նորա Որդոյն երկնի- 10
քիցը, որին յարոյց մեռելների
միջից՝ Յիսուսին, որ փրկում է
մեզ գալու բարկութիւնից:

ԳԼ. Բ

Վասն զի ինքներդ գիտէք, եղ- 1

բարք, այն մեր ձեզ մօտ մտնելը, 2 որ ունայն չեղաւ. Այլ առաջ չարչարուելով և անարգուելով, ինչպէս գիտէք, Փիլիպպէոսի Համարձակեցանք մեր Աստուծով խօսել ձեզ Աստուծոյ աւետարա- 3 նը մեծ պատերազմով։ Վասն զի մեր յորդորանքը ոչ մոլութիւնից է, և ոչ պղծութիւնից, և ոչ 4 խարէպատութիւնով։ Այլ ինչպէս մենք Աստուածմանից ընտրուեցանք որ աւետարանը մեզ Համաստուտ, այնպէս էլ խօսում ենք. ոչ թէ իբր մարդկանց Հաճոյ լինողներ, այլ Աստուծոյն՝ 5 որ մեր սրտերը քննում է։ Վասն զի երբէք շողոքորթութեան խօսքերով չեղանք, ինչպէս գիտէք. և ոչ էլ ագահութեան պատճա- 6 ռանքով. Աստուած վկայ է։ Եւ ոչ մարդկանցից փառք խնդրեցինք, ոչ ձեզանից, և ոչ ուրիշ- 7 ներից, թէ և կարող էինք ինչպէս Քրիստոսի առաքեալներ ծանրութիւն լինել, բայց հեզահոգի եղանք ձեր մէջ ինչպէս մի ծծատ- մայր մնուցանում է իր երախտա- 8 ներին։ Այնպէս էլ մենք գիտելով ձեզ, Համեցանք ոչ թէ միայն Աստուծոյ աւետարանը տալ ձեզ, այլ մեր անձերն էլ, որովհետև 9 մեր սիրելիքն եղաք։ Վասն զի յիշում էք, եղբայրք, մեր աշխատանքը և ջանքը, որ գիշեր և ցերեկ գործում էինք, որ ձեզանից ոչ մէկին ծանրութիւն չտանք. և Աստուծոյ աւետարանը քարո- 10 զում էինք ձեզ։ Դուք վկայ էք և Աստուած էլ, թէ ինչպէս արդարութեամբ և արդա- րութեամբ և անարատութեամբ եղանք ձեզ Համասուտեցեալներիդ 11 մէջ։ Ինչպէս գիտէք, որ ձեզանից ամեն մէկին՝ ինչպէս մի Հայր իր 12 որդիներին՝ յորդորում և մխի- թարում էինք, և վկայութիւն էինք տալիս, որ դուք դնաք, ինչպէս այն Աստուծոյն կ'վայելէ, որ ձեզ իր արքայութեան և փա- 13 ռաց մէջ կանչեց։ Ընդ Համայն էլ մենք անպակաս գոհանում ենք Աստուածմանից, որ դուք Աս- տուծոյ քարոզութեան խօսքը մե- զանից առած ընդունեցիք, ոչ թէ իբր մարդկանց խօսք, այլ ինչպէս որ ճշմարիտ է՝ Աստուծոյ խօսք, որ և ներգործում է ձեզ Հաւա- տացեալներիդ։ Վասն զի դուք 14 բարք, դուք նմանեցաք Աստու- ծոյ այն եկեղեցիներին, որ Հրէաստանում են Քրիստոս Յիսու- սում. որովհետև դուք էլ նոյնը կրեցիք ձեր ազգականներից, ինչ- պէս նորանք էլ Հրէաներից։ Ո- 15 րոնք Տէր Յիսուսին էլ սպանեցին և իրանց մարգարէներին, և մեզ Հալածեցին և Աստուծոյ անՀա- ճոյ եղան. և բոլոր մարդկանց Հա- կառակ են. Որ մեզ արգելում են 16 խօսել հեթանոսներին որ փրկը- ուին, որ իրանց մեղքերը կատար- եալ անեն ամեն ժամանակ, և Հասել է նորանց վերայ բարկու- թիւնը մինչև վերջը։

Բայց մենք, եղբարք, թէև ու- 17 ժամանակ ձեզանից որբ մնացինք երեսով և ոչ սրտով, բայց ուրախ և շատ ջանացինք ձեր երեսը տես- նելու մեծ փափաքով։ Նորա Հա- 18 մար ես Պօղոս մի երկու անգամ կամեցայ ձեզ մօտ գալ, և սա- տանան խափանեց մեզ։ Որովհե- 19 տև ո՞վ է մեր յոյսը կամ ուրա- խութիւնը կամ պարծանքի պսա- կը, եթէ ոչ դուք Տէրոջմէ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի առջև նորա գալուս ժամանակուընդ վա- 20 սն զի դուք էք մեր փառքը և ուրախութիւնը։

Գ.Լ. Գ.

Վասն որոյ այլ ևս չՀամբե- 1 րելով բարձր երևեցաւ մեզ, որ մնաք մենակ Աթէնքում, և ուղարկեցինք մեր Տիմոթէոս 2 եղբայրը և Աստուծոյ ծառայն և Քրիստոսի աւետարանին մէջ մեր գործակիցն, որ ձեզ Հաստատէ և մխիթարէ ձեր Հաւատքի Համար, Որ չսասանիք այս նեղութիւննե- 3 րումը, վասն զի դուք ինքներդ գիտէք, որ Հէնց սորա Համար կանգնած ենք, Որովհետև երբոր 4 էլ ձեզ մօտ էինք, կանխաւ ա- սում էինք ձեզ, թէ նեղութիւն-

դեր ենք կրելու. ինչպէս որ եղաւ
5 էլ, և իմացանք էլ։ Սորա համար
եւս էլ այլ ևս չհամբերելով, ու-
զարկեցի որ ձեր հաւատքը գի-
տենամ, որ մի գուցէ փորձիչը
ձեզ փորձեց և մեր աշխատանքը
6 զուր լինի։ Բայց հիմա երբոր Տի-
մոթէոսը ձեզանից եկաւ մեզ մօտ,
և ձեր հաւատքի և սիրոյ աւե-
տիքը տուաւ մեզ, որ ամեն ժա-
մանակ մեր բարի յիշատակը ՅԵՐ
խփո-ճ ունիք, փափագելով մեզ
7 տեսնել՝ ինչպէս մենք էլ ձեզ. Ն՛ո-
րա համար, եղբարք, մխիթար-
ուեցանք ձեզ վերայ այն մեր ա-
մեն վշտումը և նեղութիւնումը
8 ձեր հաւատքի համար։ Քանզի
հիմա մենք կենդանի ենք, եթէ
դուք հաստատ կենաք Տէրումը։
9 Վասն զի ի՞նչ գոհութիւն կա-
րող ենք հատուցանել Աստուծոյն
ձեզ համար այն ամեն ուրախու-
թեան համար, որով ուրախա-
նում ենք ձեզ համար մեր Ա-
10 ստուծոյ առջև, գիշեր և ցերեկ
առաւել ևս աղաչում ենք, որ
ձեր երեսը տեսնենք, և ձեր հա-
ւատքի պակասութիւնը լրացնենք.
11 Բայց ինքն Աստուած և մեր Հայրն
և մեր Տէրը Յիսուս Քրիստոս
ուղղէ մեր ճանապարհը դէպի
12 ձեզ։ Իսկ ձեզ ածեցնէ և աւե-
լացնէ Տէրը սիրով դէպի իրար և
դէպի ամենն, ինչպէս մենք էլ
13 դէպի ձեզ. Որ ձեր սրտերը հաս-
տատուին անարատ արդութիւնով
Աստուծոյ և մեր Հօր առջև մեր
Տէր Յիսուս Քրիստոսի իր ամեն
սրբերովը գալու ժամանակումը։

ԳԼ. Դ

1 Ա՛յսուհետև, եղբարք, աղա-
չում ենք ձեզ և յորդորում ենք
Տէր Յիսուսումը, ինչպէս ընդու-
նեցիք մեզանից, թէ ինչպէս պէտք
է ձեզ գնալ և հաճոյ լինիլ Աս-
տուծոյ, որ էլ աւելի առաջա-
2 նաք նորանում, վասն զի գիտէք
թէ ինչպիսի պատուիրանքներ
տուինք ձեզ Տէր Յիսուսումը,
3 Վասն զի սա է Աստուծոյ կամքը,
ձեր սրբութիւնը. որ դուք հե-
4 կենաք պոռնկութիւնից, և ձե-
ռանից ամեն մէկը գիտենայ իր
անօթը պահել սրբութեամբ և
5 պատուով, Ոչ թէ ցանկութեան
կիրքով, ինչպէս հեթանոսներն էլ
6 որ Աստուծոյն չեն գիտում։ Չլի-
նի որ մէկը մի բանում չափից
անցնէ և իր եղբօրը զրկէ. որով-
հետև Տէրն այդ բոլոր բաների
համար վրէժխնդիր է. ինչպէս ա-
ռաջուց էլ ասացինք ձեզ և վը-
7 կայութիւն տուինք։ Վասն զի
Աստուած մեզ չկանչեց պղծու-
թեան մէջ, այլ սրբութեան մէջ։
8 Ուրեմն նա որ անարգում է, ոչ
թէ մարդուն է անարգում, այլ
Աստուծոյն որ և տուաւ մեզ
Սուրբ Հոգին։
9 Բայց եղբայրասիրութեան հա-
մար պէտք չունիք մի բան գրել
ձեզ. վասն զի դուք ինքներդ Աս-
տուածանից սովրած էք իրար սի-
10 րել. Որ հէնց այդ էլ անում էք
այն բոլոր եղբայրներին որ ամբողջ
Մակեդոնիայումն են. և աղա-
չում ենք ձեզ, եղբարք, որ էլ
աւելանոք, և ջանք անէք որ հան-
դարտ լինիք։ Եւ ամեն մէկն իր
11 գործը գործէ. և ձեր ձեռքովն
աշխատէք, ինչպէս պատուիրե-
ցինք ձեզ, որ պարկեշտութիւնով
վարուիք դրսիններին հետ և ոչ մի
բանով կարօտ չլինիք։
12 Չեմ կամենում, եղբարք, որ
տգէտ լինիք նոյնեցելոց կողմանէ.
որ չտրտմիք ինչպէս ուրիշները որ
յոյս չունին։ Վասն զի եթէ հա-
13 ւատում ենք որ Յիսուսը մեռաւ
և յարութիւն առաւ, այնպէս
էլ Աստուած նոյնեցեալներին Յի-
սուսի ձեռով կ'բերէ նորա հետ։
14 Վասն զի սա ենք ասում ձեզ
Տիրոջ խօսքովը, թէ մենք որ կեն-
դանի մնացած ենք մինչև Տիրոջ
գալը, նոյնեցեալներից չենք առա-
ջանալ։ Որովհետև ինքը Տէրը հը-
15 րամանով, հրեշտակապետի ձայ-
նով և Աստուծոյ փողով վայր
կ'գայ երկնքից. և Քրիստոսով
մեռելներն առաջ յարութիւն
16 կ'առնեն, Եւ յետոյ մենք, որ
կենդանի ենք մնացած նորանից
հետ ամպերով օդի մէջ

կ՚յափշտակուինք Տիրոջը դիմա-
ւորելու և այնպէս ամեն ժամու-
17 նակ Տիրոջ հետ կ՚լինինք։ Ուրեմն
իրար մխիթարեցէք այս խօս-
քերովը։

ԳԼ. Ե

1 Բայց այն ժամերի և ժամանակ-
ների համար եղբայրք պէտք չու-
2 նիք գրել ձեզ։ Որովհետև դուք
ինքներդ հաստատ գիտէք, թէ
Տիրոջ օրը ինչպէս գիշերուայ գող
3 այնպէս կ՚հասնէ։ Վասն զի երբ-
որ կ՚ասեն թէ խաղաղութիւն և
ապահովութիւն է, այն ժամա-
նակ յանկարծակի կ՚հասնէ նո-
րանց վերայ կորուստը ինչպէս
ցաւը յղիի վերայ, և չեն պրծնիլ։
4 Իսկ դուք, եղբարք, խաւարուին
չէք, որ այն օրն գողի պէս ձեզ
5 վերայ հասնէ։ Դուք ամենքդ լու-
սոյ որդիք էք և ցերեկի որդիք,
գիշերինը չենք և ոչ խաւարինը։
6 Ապա ուրեմն չքնենք ուրիշների
պէս, հապա արթուն և զարթուն
7 լինինք։ Վասն զի նորանք որ քնա-
նում են գիշերն են քնում, և նո-
րանք որ արբենում են գիշերն են
8 արբենում։ Իսկ մենք ցերեկինը
լինելով արթուն լինինք՝ հագած
հաւատքի և սիրոյ զրահը, և
փրկութեան յուսոյ սաղաւարտը։
9 Վասն զի Աստուած մեզ չդը-
րաւ բարկութեան համար, այլ
փրկութիւնն առանելու համար
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձե-
10 ռովը։ Որ մեզ համար մեռաւ,
որ՝ թէ արթուն լինինք և թէ
քնենք, նորա հետ միասին ապ-
11 րինք։ Սորա համար իրար մխի-
թարեցէք, և իրար շինութիւն
տուէք՝ ինչպէս անում էլ էք։

12 Եւ աղաչում ենք ձեզ, եղբարք,
որ ճանաչէք ձեր միջումը աշխա-
տողներին և ձեր վերակացուներ-
ին Տէրումը, և ձեր խրատողնե-
13 րին էլ։ Եւ նորանց առաւելա-
պէն սիրոյ արժանի համարուեցէք
իրանց գործքի պատճառով. իրար
հետ խաղաղութիւնով վարուե-
14 ցէք։ Աղաչում ենք ձեզ, եղբարք,
խրատեցէք անկարգներին, մխի-
թարեցէք փոքրոտներին, օգնա-
կան եղէք տկարներին, երկայնա-
15 միտ եղէք ամենքի հետ։ Զգոյշ
կացէք մի գուցէ մէկը չարի տեղ
չար հատուցանէ, այլ ամեն ժա-
մանակ բարին հետեւեցէք իրար
16 հետ և ամենքի հետ։ Ամեն ժա-
17 մանակ ուրախ եղէք։ Անդադար
18 աղօթք արէք։ Ամեն բանի մէջ
գոհացէք. վասն զի սա է Աստու-
ծոյ կամքը ձեզ վերայ Քրիստոս
19 Յիսուսումը։ Հոգին մի հանգցնէք։
20 Մարգարէութիւնները մի անար-
21 գէք։ Ամեն բան փորձեցէք, բա-
րին ընդունեցէք։ Ամեն չար երե-
22 սոյթից հեռու կացէք։ Եւ ինքն
23 խաղաղութեան Աստուածը ձեզ
սուրբ անէ բոլորովին. և ձեր բո-
լոր հոգին և շունչը և մարմինը
անարատ պահուի մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի գալը։ Հաւա-
24 տարիմ է նա որ կանչեց ձեզ,
որ կ՚անէ էլ։

25 Եղբարք, աղօթք արէք մեզ
26 համար էլ։ Բարև տուէք բոլոր
եղբայրներին սուրբ համբուրով։
27 Երդում եմ տալիս ձեզ Տէրովը,
որ այս թուղթը բոլոր սուրբ եղ-
28 բայրներին կարդացուի։ Մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեզ
հետ լինի։ Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէ-
ոս՝ Թեսաղոնիկեցոց եկեղեցւոյդ
Աստուած մեր Հօրումը և Տէր
2 Յիսուս Քրիստոսումը՝ շնորհք

լինէ ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրից և Տէր Յիսուս Քրիստոսից։

3 Պարտինք ամեն ժամանակ Աստուածածնից գոհանալ ձեզ համար, եղբարք, ինչպէս արժան է, որ ձեր հաւատքը խիստ մեծանում է, և ձեր ամեն մէկի սէրն աւելանում է իրար վե-
4 րայ։ Այնպէս որ մենք ինքներս ձեզանով պարծենում ենք Աստուծոյ եկեղեցիներում ձեր համբերութեան և հաւատքի համար ձեր բոլոր հալածանքներում և նեղութիւններում, ո-
5 րոնց դուք համբերում էք։ Որ դա Աստուծոյ արդար դատաստանի նշան է. որ դուք արժանի լինիք Աստուծոյ արքայութեան, որի համար էլ նեղութիւն էք քա-
6 շում, Որ եթէ իրաւունք է Աստուծոյ առջև ձեզ նեղացնողներին նեղութիւն հատուցանել. և
7 ձեզ նեղուածներիդ՝ հանգիստ մեզ հետ Տէր Յիսուսի երկնքից յայտնուելումը իր զօրութեան հրեշ-
8 տակներով, կրակի բոցով վրէժ առնելու նորանցից, որ Աստուծոյն չեն ճանաչում, և չեն հնազանդում մեր Տէր Յիսուսի աւե-
9 տարանին. Որոնք պատիժ կ'կրեն յաւիտենական կորուստը Տիրոջ երեսից և նորա փառաւոր զո-
10 րութիւնից, Երբոր կ'գայ, որ փառաւոր լինի իր սրբերումը, և զարմանալի բոլոր հաւատացեալներում. (քանզի մեր վկայութիւնը ձեզ վերայ հաւատացաւ)
11 ցաւ) այն օրումը։ Ա.յս պատճառով էլ ամեն ժամանակ աղօթք ենք անում ձեզ համար որ մեր Աստուածը ձեզ արժանի անէ իւր կոչումին և կատարէ բոլոր բարի հաճութիւնը, և հաւատքի գոր-
12 ծը զօրութիւնով. Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունը փառաւորուի ձեզանում և դուք նորանում, մեր Աստուծոյ և Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքի պէս։

ԳԼ. Բ

1 Ա.ղաչում ենք ձեզ, եղբարք,

մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գալստեան և մեր նորա մօտ ժողովուելու համար. Որ դուք շուտով 2
չշարժուիք ձեր մտքից և չզարհուրիք ոչ հոգով, և ոչ խօսքով, և ոչ թղթով իբր թէ մեզանից եկած հասած լինի։ Մէկը չխաբէ 3
ձեզ ոչ մի կերպով. վասն զի նա չի գալ եթէ առաջ չգայ ապստամբութիւնը, և յայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին, Ա.յն հակառակորդը որ գո- 4
ռոզացած է այն ամենի վերայ, որ Աստուած կամ Աստուծոյ պաշտօնեայ է անուանուած. մինչև որ նա Աստուծոյ տաճարի մէջ (իբրև Աստուած) նստի, և իր անձը ցոյց տայ թէ Աստուած է։
Չէ՞ք յիշում, որ քանի որ ձեզ 5
մօտ էի, այս բաներն ասում էի ձեզ։ Եւ հիմա գիտէք այն որ 6
խափանում է, որ նա իր ժամանակին յայտնուի։ Վասն զի ան- 7
օրէնութեան խորհուրդը արդէն զօրանում է. միայն թէ մինչև որ մէջ տեղից վեր առնուի այժմ խափանողը։ Եւ այն ժամանակ 8
կ'յայտնուի այն անօրէնը, որին Տէրը կ'սատակեցնէ իր բերանի հոգով, և կ'խափանէ իր գալստեան յայտնութիւնով։ Որի գալը սա- 9
տանայի ներգործութիւնից է, ամեն զօրութիւնով և սուտ նշաններով և հրաշքներով. Եւ ա- 10
նիրաւութեան ամեն խաբեբայութիւններով կորուսեալների մէջ. փոխանակ նորա որ ճշմարտութեան սէրը չընդունեցին որ ապրին, և նորա համար Աստուած մոլորութեան ներգործութիւն կ'ուղարկէ նորանց, որ հաւատան 11
սուտին. Որ դատապարտուին ամենքը որ չհաւատացին ճշմարտութեանը, բայց հաւանեցան անօրէնութեանը։ Իսկ մենք պարտ 12
ենք ամեն ժամանակ Աստուածածնից շնորհակալ լինել ձեզ համար Տէրից սիրուած եղբարք, որ Աստուած սկզբից ընտրեց ձեզ փրկութեան համար Հոգու սրբութեան և ճշմարիտ հաւատքի մէջ. Որի մէջ կանչեց ձեզ մեր ա- 13

տարանովը մեր Տէր Յիսուսի Քրիստոսի փառքն ստանալու համար։
14 Ուրեմն, եղբարք, հաստատ կացէք, և պինդ բռնեցէք այն աւանդութիւնները, որ սովորեցիք՝ թէ խօսքով և թէ մեր թղթով։
15 Բայց ինքը մեր Տէր Յիսուս Քրիստոսը և մեր Աստուածը և Հայրը, որ սիրեց մեզ և յաւիտենական մխիթարութիւն տուաւ մեզ և բարի յոյս շնորհքով,
16 Նա մխիթարէ ձեր սրտերը և հաստատէ ձեզ ամեն բարի խօսքի և գործքերի մէջ։

Գ.Ղ. Գ

1 Ա.յսուհետև, եղբարք, աղօթք արէք մեզ համար, որ Տիրոջ խօսքն առաջանայ, և ամեն տեղ փառաւորուի ինչպէս որ էլ ձեզ
2 մօտ։ Եւ որ փրկուինք անօրէն և անզգամ մարդկանցից. վասն զի
3 հաւատքն ամենի բան չէ։ Բայց Տէրը հաւատարիմ է, որ կ'հաստատէ ձեզ և կ'պահէ այն չարից։
4 Վստահութիւն ունինք ձեզ վերայ Տէրով, որ այն բաներն որ պատուիրեցինք ձեզ, և անում էք
5 և կ'անէք էլ։ Իսկ Տէրը ուղղէ ձեր սրտերը դէպի Աստուծոյ սէրը և դէպի Քրիստոսի համբերութիւնը։
6 Եւ պատուիրում ենք ձեզ, եղբարք, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը, որ եւս քաշուէք ամեն եղբայրից, որ անկարգ է վարվում, և ոչ թէ այն պատուիրանքի պէս որ ընդունեց մեզանից։
7 Վասն զի դուք ինքներդ գիտէք, թէ ինչպէս պէտք է ձեզ մեզ նմանիլ. որովհետև ձեր մէջ անկարգութիւնով չվարուեցանք։
8 Եւ ոչ էլ ձրի հաց կերանք մէկի մօտ, այլ ջանքով և աշխատանքով գիշեր և ցերեկ գործելով, որ ձեզանից մէկին ծանրութիւն չտանք։
9 Ոչ իբր թէ իշխանութիւն չունինք, այլ որ մեր անձնեն օրինակ տանք ձեզ որ մեզ նմանիք։
10 Վասն զի երբոր ձեզ մօտ էինք, սա էինք պատուիրում ձեզ, որ եթէ մէկը չէ կամենում գործել՝ թող չուտէ էլ։
11 Որովհետև ձեզանից ոմանց համար լսում ենք որ անկարգութիւնով են վարվում, բան չեն գործում, այլ հետաքրքիր մարդ են գալիս։
12 Այնպիսիներին պատուիրում ենք և աղաչում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսովը, որ հանդարտութիւնով աշխատին և իրանց հացն ուտեն։
13 Բայց դուք, եղբարք, մի ձանձրանաք բարիք գործելուց։
14 Եւ եթէ մէկը չհնազանդէ մեր խօսքին այս թղթովը, դուք նշան արէք նորան. և մի խառնուիք նորա հետ որ ամաչէ։
15 Բայց թշնամու պէս մի համարէք, այլ խրատեցէք նորան ինչպէս եղբայր։
16 Իսկ ինքն խաղաղութեան Տէրը տայ ձեզ խաղաղութիւնը ամեն ժամանակ, և ամեն կերպով, Տէրը ձեր ամենի հետ լինի։

17 Այս բարևը իմ Պօղոսիս ձեռքինն է, որ նշան է ամեն թղթերումը. Այսպէս եմ գրում։
18 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեր ամենի հետ լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի առաքեալ մեր փրկիչ Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի՝ մեր յուսոյն
2 հրամանովը. Տիմոթէոս՝ սիրելի որդոյս՝ հաւատքով, շնորհք, ո-

4 Եւ մոխիկ չտան առասպելների և
ազգահամարների, որ վերջ չունին,
որ աւելի վիճաբանութիւններ են
գրգռում, քան թէ Աստուծոյ
5 շինութիւնը հաւատքով, նակ
պատուիրանքի վախճանը սէրն է
սըրտից, և բարի խղճմըտանքով, և անկեղծ հաւատքից.
6 Որոնցից մանք խոտորելով ու-
նայն խօսքերի եռեից դնացին
7 կամենում են օրէնքի վարդապետ
լինել, և իրանք չեն իմանում ոչ
այն որ խօսում են, և ոչ էլ այն
8 բաները որ պնդում են: Եւ գիտենք
որ օրէնքը բարի է, եթէ մէկն
օրինաւորապէս գործածէ նորան,
9 Սա իմանալով, որ արդարին օ-
րէնք չկայ, այլ անօրէններին և
անհնազանդներին, ամպարիշտներին, և մեղաւորներին, անսուրբներին, և պիղծերին, հայրասպաններին, և մայրասպաններին,
10 մարդասպաններին, պոռնիկներին,
արուագէտներին, մարդագողներին, սուտ ասողներին, սուտ երդում անողներին. և եթէ ուրիշ
ինչ հակառակ է առջեմիտ վար-
11 դապետութեանը, Երանելի Աս-
տուծոյ փառաւոր աւետարանի
համեմատ, որն ինձ հաւատացուեցաւ: Եւ շնորհակալ եմ ինձ
12 մեր Տէր Յիսուս Քրիստոսումը
զօրացնողիցը, որ ինձ հաւատարիմ
համարեց և սպասաւորութեան
13 մէջ դրաւ, Որ առաջուց հայհոյիչ և հալածող և թշնամանող
էի, բայց ողորմութիւն գտայ,
վասն զի չգիտենալով էի գործում
14 անհաւատութիւնով: Բայց էլ
աւելի շատ եղաւ մեր Տիրոջ շնորհքը հաւատքով և սիրով որ
15 Քրիստոս Յիսուսումն է: Ճշմարիտ է այս խօսքը և ամեն ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու, որոնց առաջինը
16 ես եմ: Սակայն նորա համար ո-
ղորմութիւն գտայ, որ առաջ
ինձանումս ցոյց տայ Յիսուս Քրիստոս բոլոր երկայնամտութիւնը
օրինակ լինելու նորանից որ պիտի
հաւատան նորան յաւիտենական
17 կենաց համար: Բայց յաւիտենից
թագաւորին՝ այն անեղծին և անեւոյթին, այն միակ Աստուծոյն
18 պատիւ և փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Այս պատուիրանքն ուանդում 18
եմ քեզ, Տիմոթէոս որդեակ, ա-
ռաջուց քեզ վերայ եղած մար-
գարէութիւնների պէս, որ նո-
րանցով պատերազմիս բարի պա-
տերազմը. Ունենալով հաւատք և 19
բարի խղճմտանք, որ մի քանիսը
դէն գցելով հաւատքումը նաւա-
կոծութիւն քաշեցին. Որոնցից 20
են Հիմենոս և Աղէքսանդրոս,
որոնց մատնեցի սատանային, որ
խրատուին չհայհոյել:

ԳԼ. Բ

Արդ աղաչում եմ, ամենից ա- 1
ռաջ աղօթք անել, խնդրուածք,
աղաչանք, գոհութիւն ամեն մարդ-
կանց համար, Թագաւորների և 2
ամեն իշխանաւորների համար. որ
խաղաղ և հանդարտ կեանք վա-
րենք, բոլոր աստուածպաշտու-
թիւնով և արդութիւնով: Վասն 3
զի սա բարի և ընդունելի է մեր
փրկիչ Աստուծոյ առջև, Որ կա- 4
մենում է որ ամեն մարդիկ փրկուին, և ճշմարտութեան գիտութեանը գան: Որովհետև մէկ Աս- 5
ուած կայ, և մէկ միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ Քրիստոս Յիսուս մարդը, Որ իր անձը 6
ամենքի համար փրկանք տուաւ,
ու վկայութիւն էնէ իր ժամանակներումը, Որին ես քարոզիչ և ա- 7
ռաքեալ կարգուեցայ. (ճշմարիտն
եմ ասում, սուտ չեմ խօսում).
հեթանոսների վարդապետ հաւատքի և ճշմարտութեան մէջ:
Արդ կամենում եմ, որ մարդիկ 8
ամեն տեղ աղօթք անեն, սուրբ
ձեռքեր վեր բարձրացնեն առանց
բարկութեան և երկմտութեան:
Այնպէս էլ կանայք վայելուչ հա- 9
գուստով ամօթխածութիւնով և
պարկեշտութիւնով իրանց անձները զարդարեն, ոչ թէ հիւս-
ուածներով, կամ ոսկիով կամ
մարգարիտներով կամ թանգագին
հանդերձներով. Այլ ինչպես կը 10

վայելէ առաւածպաշտութիւնը
յանձնառած կանանց՝ բարի գործ-
11 քերով։ Կինը թող հանդարտու-
թեամբ առնէ առնն հնազան-
12 դութիւնով։ Կնկան հրաման չեմ
տալիս, որ ասլորեցնէ, և ոչ էլ
մարդուն վերայ իշխէ, այլ որ
13 լուռ կենայ։ Վասն զի Ադամ
առաջ ստեղծուեցաւ և յետոյ Ե-
14 ւան։ Եւ Ադամ չխաբուեցաւ այլ
կինը խաբուելով մեղք գործեց։
15 Սակայն կ'ապրի որդեծնութեան
համար, եթէ կենայ հաւատքի և
սիրոյ և սրբութեան մէջ պար-
կեշտութեան հետ։

ԳԼ. Գ

1 Ճշմարիտ է այս խօսքը, եթէ
մէկը եպիսկոպոսութեան է ցան-
կանում՝ բարի գործի է ցանկա-
2 նում։ Բայց եպիսկոպոսին պէտք
է անարատ լինել, մէկ կնկան
մարդ, զգաստ, խոհեմ, պարկեշտ,
հիւրասէր, ասլորեցնելու յարմար.
3 Ոչ գինեմոլ, ոչ զարկող, (և ոչ
ամօթալից շահ սիրող) այլ հան-
դարտ, կռիւ չանող, ոչ արծա-
4 թասէր. Իր տունը բարի վերա-
կացու լինող, որ որդիքներ ունե-
նայ հնազանդութեան մէջ ամեն
5 պարկեշտութիւնով։ (Բայց եթէ
մէկն իր տունը վերակացու լինել
չգիտենայ, ի՞նչպէս նա Աստու-
ծոյ եկեղեցին խնամք կ'առնի։)
6 Ոչ մուտազատուն, որ չգոռոզա-
նայ և սատանայի դատաստանն
7 ընկնի։ Բայց պէտք է նորան,
դրսիններից բարի վկայութիւն
էլ ունենալ. որ չընկնի նախա-
տինքի և սատանայի որոգայթի
մէջ։

8 Այնպէս էլ սարկաւագները
պէտք է ծանրաբարոյ լինին. ոչ
երկու լեզուանի, ոչ գինու մոլի.
9 ոչ ամօթալից շահ սիրող. Այլ հա-
ւատքի խորհուրդը սուրբ խղճմը-
10 տանքի մէջ ունեցող։ Եւ սորանք
առաջ թող փորձուին, և յետոյ
այն պաշտօնը մատնեն, եթէ ա-
11 նարատ լինին։ Այնպէս էլ նոքանց
կանայքը պէտք է ծանրաբարոյ լի-
նէն. ոչ թէ չարախօս, այլ զգաստ,
ամեն բանի մէջ հաւատարիմ։
Սարկաւագները մէկ կնկան մարդ 12
լինին, իրանց որդոցը և իրանց
անձերին բարի վերակացու։ Վասն 13
զի պաշտօնը լաւ կատարողներն
իրանց անձերի համար բարի աս-
տիճան են շահում, և շատ հա-
մարձակութիւն այն հաւատքում
որ Քրիստոս Յիսուսումն է։

Այս գրում եմ քեզ յուսալով 14
որ շուտով քեզ մօտ գամ։ Իսկ 15
եթէ ուշանում, որ գիտենաս թէ
ինչպէս պէտք է Աստուծոյ տան
մէջ վարուիլ. որ է եկեղեցի կեն-
դանի Աստուծոյ, սիւն և հաս-
տատութիւն ճշմարտութեան։ Եւ 16
յայտնապէս մեծ է Աստուած-
պաշտութեան խորհուրդը. Աս-
ուած յայտնուեցաւ մարմնում,
արդարացաւ Հոգով, երեւեցաւ
հրեշտակներին, քարոզուեցաւ հե-
թանոսներին, հաւատացուեցաւ
աշխարհքում և վերացաւ փառ-
քով։

ԳԼ. Դ

Եւ Հոգին յայտնի ասում է թէ 1
յետին ժամանակներում ոմանք
հաւատքից կ'հեռանան։ և մոլի
կ'ասեն մեռած ոգիների և դեւերի
վարդապետութիւնների, Սուտ- 2
խօսների կեղծաւորութեամբը, ո-
րոնց խղճմտանքը տաղտուկ է.
Որ ամուսնանալուց կ'արգիլեն, 3
կ'հրաժարեն կերակուրներից որ
Աստուած ստեղծեց հաւատաց-
եալների և ճշմարտութիւնը ճա-
նաչողների համար որ գոհա-
թեամբ վայելեն։ Վասն զի Աս- 4
տուծոյ բոլոր ստեղծուածները
բարի են, և ոչ մի բան խոտան
չէ. երբոր գոհութիւնով ընդուն-
ուի։ Որովհետև սրբվում է Աս- 5
տուծոյ խօսքովը և աղօթքով։ Ե- 6
թէ այս բաները եղբայրներին խը-
րատ տաս, Յիսուս Քրիստոսի բա-
րի պաշտօնեայ կ'լինիս, անուած
հաւատքի խօսքերովը, և այն բա-
րի վարդապետութիւնովն որին
հետևեցիր։ Եւ պիղծ ու պառա- 7
ւական առասպելներից ետ կաց.
բայց վարժեցրու քո անձը աստ-

8 ուսածպաշտութեան ։ Վասն զի մարմնոյ վարժութիւնը քիչ բանի համար է օգտակար . բայց աստուածպաշտութիւնն ամեն բանի համար օգտակար է , ունենալով այժմեան և գալու կեանց աւետիքն ։ 9 Ճշմարիտ է այս խօսքը և ամեն ընդունելութեան արժանի ։ 10 Վասն զի հէնց սորա համար էլ աշխատում ենք և նախատւում , որ յոյս ենք դրել կենդանի Աստուծոյ վերայ , որ Փրկիչ է ամեն մարդկանց , և մանաւանդ հաւատացեալներին ։ 11 Այս բաները պատուիրիր և սովորեցրու ։ 12 Ոչ ոք քո մանկութիւնը չանարգե . այլ օրինակ եղիր հաւատացեալներին խօսքով , վարքով , սիրով , հաւատքով , արբութիւնով ։ 13 Մինչև որ գամ՝ միտք դիր կարդալուն , յորդորմունքին և վարդապետութեանը ։ 14 Անհոգ մի լինիր այն քեզանում եղած շնորհքի համար , որ քեզ տրուեցաւ մարգարէութիւնով երիցութեան ձեռնադրութեամբը . 15 Սորանք մըտածիր , սորանցում կաց , որ քո յառաջադիմութիւնը ամենին յայտնի լինի ։ 16 Զգոյշ կաց անձիդ և վարդապետութեանդ , և դրանում յարատեւիր . վասն զի այդ անելով քո անձն էլ կապրեցնես , և քեզ լսողներին էլ ։

ԳԼ· Ե

1 Ծերին սաստիկ մի յանդիմանիր , այլ յորդորիր ինչպէս Հօր , երիտասարդներին եղբայրների պէս ։ 2 Պառաւներին մայրերի պէս , մատղաշ կանանց քոյրերի պէս բոլոր 3 արբութիւնով ։ Որբևայրիներին պատուիր՝ որ ճշմարիտ որբևայրի են ։ 4 Բայց եթէ մէկ որբևայրի որդիք և թոռներ ունենայ , թող առաջ սովրեն իրանց տանը բարի մնել և փոխարէն հատուցանել ծնողներին . վասն զի սա բարի է և Աստուծոյ առջև ընդունելի ։ 5 Իսկ նա որ ճշմարիտ որբևայրի է և մէնակ մնացած . նա յոյսը Աստուծոյ վերայ է դնում , և գիշեր և ցերեկ աղօթքին և աղաչանքին հետևում , բայց փափկասէր մեռած է ։ 6 Եւ այդ կենդանին էլ մեռած է ։ 7 Եւ այս բաները պատուիրիր , որ անարատ լինին ։ 8 Բայց եթէ մէկը իրանների և մանաւանդ ընտանիքների համար խնամք չտանի , նա հաւատքից ուրացած է և անհաւատից էլ չար է ։ 9 Որբևայրի նա ընտրուի , որ վաթսուն տարուց պակաս չէ և մէկ մարդու կին եղած է . 10 բարի գործերով վկայուած , եթէ երեխաներ է մեծացրել , հիւրեր ընդունել , սրբերի ոտները լուացել , նեղացածներին ձեռնտու եղել , ամեն բարի գործքերին հետևել ։ 11 Բայց մատղաշ որբևայրիներից ետ կաց . վասն զի երբոր ցանկութիւնով լցուում են՝ Քրիստոսի հակառակ կամենում են ամուսնանալ . 12 ատապարտութիւն են ընդունում , որ առաջին հաւատքը դէն գցեցին ։ 13 Միանգամայն էլ ծոյլ են սովորում տուները մեն գալով . և ոչ թէ միայն ծոյլ այլ և շատախօս , և հետաքրքիր , և խօսում են ինչ որ պետք չէ ։ 14 Նում եմ որ մատղաշ որբևայրիները ամուսնանան , որդիք ծնեն , տնաշէն լինեն . և հակառակողին ոչ մի պատճառ չտան հայհոյանք տալու ։ 15 Վասն զի արդէն մի քանիսը խոտորուեցան սատանայի ետևից ։ 16 Եթէ մի հաւատացեալ մարդ կամ հաւատացեալ կին որբևայրիներ ունենայ , նա թող նրանց խնամք տանէ . և եկեղեցուն ծանրութիւն չլինի , որ ճշմարիտ որբևայրիներին խնամք տանէ ։

17 Լաւ վերակացութիւն անող երէցները թող երկուապատիկ պատուոյ արժանի լինին , մանաւանդ նորանք որ խօսքով և վարդապետութիւնով են աշխատում ։ 18 Վասն զի գիրքն ասում է . Ցե Կալը մէջ աշխատող եզի դունչը չկապես . Ցե մշակը արժանի է իր վարձքին ։ 19 Երէցի վերայ գանգատ մի ընդունիր , բայց միայն երկու կամ երեք վկաներով ։ 20 Մեղանչողներին ամենի առջև յանդիմանիր , որ ուրիշներն էլ վախենան ։ 21 Վկայութիւն եմ դնում Աստու-

Ծոյ և Յիսուսի Քրիստոսի և ընտրուած հրեշտակներուն առջև, որ այս բաները պահես առանց նախապաշարման. ոչինչ գործելով 22 երեսպաշտութեամբ։ Ձեռը շուտով մի դնիր մէկի վերայ, և ուրիշներուն մեղացը մասնակից մի լինիր. քո անձը սուրբ պահիր։ 23 Այսուհետև միայն ջուր չխմես, այլ մի քիչ գինի գործածիր քո ստամոքսի և քո շուտ շուտ տկարանալուդ համար։ 24 Կան մարդիկ, որոնց մեղքերը յայտնի են, և առաջուց դատաստանի հասած. իսկ ոմանցն էլ ետևիցն են դալիս յայտնի։ 25 Այնպէս էլ բարի գործքերը յայտնի են. և ուրիշ կերպ լինողներն էլ չեն կարող ծածկուիլ։

Գլ. Ե.

1 Ստրանք որ ծառայութեան լծի տակ են, թող իրանց տէրերին ամեն պատուոյ արժանի համարեն. որ Աստուծոյ անունը և վարդապետութիւնը չհայհոյուի։ 2 Իսկ հաւատացեալ տէրեր ունեցողները թող չանարգեն նորա համար որք եղբարք են. այլ առաւել ևս ծառայեն. նորա համար որ հաւատացեալ են և սիրելի, որ բարերարութեանը մասնակից են. այս բաները սովորեցրու և յորդորիր։ 3 Իսկ եթէ մէկն ուրիշ կերպ բան սովորեցնէ և մտիկ չանէ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողջամիտ խօսքերուն, և աստուածպաշտութեան համեմատ վարդապետութեանը։ 4 Նա դառոզացած է, ոչինչ չհմանալով. այլ ախտացած է վիճաբանութիւններուն և խօսքերով հակառակելու համար, որ նորանից լինում է նախանձ, կռիւ, հայհոյութիւն, չար կարծիքներ, 5 մտքով ապականուած և ճշմարտութիւնից հեռացած են. որ աստուածպաշտութիւնը շահավաճառութիւն են համարում. 6 այնպիսիներից եա քաշուիր։ Բայց մեծ շահավաճառութիւն է երա-

աստուածպաշտութիւնը բաւականութեան հետ միասին։ 7 Վասն զի ոչինչ չենք բերել աշխարհքս և յայտնի է որ ոչինչ էլ չենք կարենալ դուրս տանիլ։ 8 Բայց եթէ կերակուր և հագուստ ունինք, նորանցով բաւականանանք։ 9 Իսկ նորանք որ կամենում են հարստանալ փորձութեան և որոգայթի և շատ անմիտ վնասակար ցանկութիւնների մէջ են ընկնում. որ ընկղմում են մարդկանց աստակուժի և կորուստի մէջ։ 10 Վասն զի արծաթասիրութիւնը ամեն չարեաց արմատն է. ուրին մի քանիսը ցանկանալով հաւատքից մոլորուեցան, և իրանց անձները շատ ցաւերի մէջ գցեցին։

Բայց դու, ով Աստուծոյ 11 մարդ, փախիր սորանցից, և հետևիր արդարութեան, աստուածպաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան, հեզութեան։ Պատերազմիր հաւատքի բարի 12 պատերազմը, և բռնիր յաւիտենական կեանքը որի մէջ կանչուեցար, և դաւանեցիր բարի դաւանութիւնը շատ վկաների առջև։ Պատուիրում եմ քեզ Աս- 13 տուծոյ առջև որ ամեն բան կենդանի է անում, և Քրիստոս Յիսուսի առջև որ բարի դաւանութիւնը վկայեց Պոնտացի Պիղատոսի առջև. Որ դու պատուի- 14 րանքը անբիծ և անարատ պահես, մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնը։ Որ իր 15 ժամանակին ցոյց կ'տայ երանելին և միայն Հզօրն, թագաւորների թագաւորը և տէրանց Տէրը, Որ նա միայն անմահութիւն 16 ունի անմատոյց լուսոյ մէջ բնակուած. որ մարդկանցից ոչ ոք չտեսաւ և ոչ էլ կարող է տեսնել. նորան լինի պատիւ և զօրութիւն յաւիտեանս. Ամէն։

Ներկայ աշխարհիս հարուստներին պատուիրիր որ չգոռոզանան, և ոչ էլ ունոյն մեծութեան վրայ յոյս դնեն, այլ կենդանի Աստուծոյ վերայ որ ամեն բան առատապէս տալիս է մեզ առատապէս վայելելու համար։ Բարի գործեն, 18

բարի գործքերով հարատանան, առատաձեռն և կարօտներին հաղորդակից լինին: 19 Իրանց անձների համար բարի հիմն գանձեն հանդերձեալի համար, որ յաւիտենական կեանքը ձեռք բերեն: 20 Ով Տիմոթէոս, պահիր զբաւանդը, և ետ կաց պիղծ և նորաձայն խօսքերից և առարուեստ գիտութեան հակառակութիւններից. 21 Որ ոմի քանիսը ընդունելով հաւատքից մոլորուեցան. շնորհքը քեզ հետ ըլլի: Ամէն:

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, կեանքի աւետիքի պէս, որ Քրիստոս Յիսուսումն է, 2 Տիմոթէոս սիրելի որդոյս, շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը:

3 Շնորհակալ եմ Աստուծոյն, որին պաշտում եմ էմ նախնիքներից. սուրբ մտքով, որ անպակաս յիշում եմ քեզ իմ աղօթքներումը 4 մը գիշեր և ցերեկ, ցանկանալով քեզ տեսանել երբ յիշում եմ քո արտասուքը, որ ուրախութիւնով 5 լցուիմ. Միտքս բերելով այն անկեղծ հաւատքն որ քեզանում է. որ առաջ քո Լօիդա տատումը և քո Եւնիկէ մօրումը բնակուեցաւ, համոզուած եմ որ քեզանում է: 6 Վասն որոյ պատճառով միտքդ եմ բերում որ արծարծես Աստուծոյ այն շնորհքն, որ քեզանում է իմ ձեռքերը էդ ետքը դնելովը: 7 Վասն զի Աստուած չտուաւ մեզ երկչոտութեան հոգի, այլ զօրութեան և սիրոյ և պատուութեան: 8 Ուրեմն մօթի մի համարիր մեր Տիրոջ վկայութիւնը, և ոչ էլ ինձ որ նորա կապուածն եմ. այլ միասին չարչարուիր աւետարանի համար Աստուծոյ 9 զօրութեան համեմատ, Որ փրկեց մեզ, և սուրբ կոչումով կանչեց. ոչ թէ մեր գործքերի համար, այլ իր առաջադրութեան և շնորհքի համար, որ արուեցաւ մեզ Քրիստոս Յիսուսումբ յաւիտենական դարերից առաջ, 10 Եւ հիմա յայտնուեցաւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի երևելովը. որ խափանեց մահին և լուսոյ մէջ բերաւ կեանքն ու անմահութիւնը աւետարանի միջոցով, 11 Որին ես քարոզիչ և առաքեալ կարգուեցայ, և հեթանոսների վարդապետ: 12 Որ այդ պատճառով էլ չարչարանքները կրում եմ. բայց ամօթ չեմ համարում. վասն զի գիտեմ թէ ո՞ւմ եմ հաւատացել. և համոզուած եմ թէ կարող է իմ առնդը պահել մինչև այն օրը: 13 Ունեցիր ողջամիտ խօսքերի օրինակն, որ ինձանից լսեցիր հաւատքով և սիրով որ Քրիստոս Յիսուսումն է: 14 Այն բարի առնդը պահիր Սուրբ Հոգովը որ բնակուած է մեզանում: 15 Սա գիտես, որ ինձանից ետ քաշուեցան այն ամենքն որ Ասիոյումն էին. որոնցից են Փեգելոս և Հերմոգինէս: 16 Տէրը ողորմութիւն տայ Ընեսիփորոսի տունը, վասն զի շատ անգամ հանգստացրեց ինձ, և իմ կապանքն ամօթ չհամարեց. 17 Այլ երբոր Հռոմումն էր, շատ ջանքով որոնեց ինձ և գտաւ: 18 Տէրը տայ նորան որ ողորմութիւն գտնէ Տէրից այն օրումն. և թէ որքան ծառայութիւն արաւ ինձ Եփեսոսումը որ դու ինքդ լաւ գիտես:

ԳԼ. Բ

1 Այդ դու, իմ որդեակ, զօրացիր այն շնորհքովն որ Քրիստոս

2 Ցիսուսումն է, Եւ այն բաներն որ ինձանից լսեցիր շատ վկայութիւ, յանձնիր հաւատարիմ մարդկանց որ կարող լինին ուրիշներին
3 սովորեցնել, Դու նեղութիւնները կրիր ինչպէս Քրիստոսի Յիսուսի բարի զինուոր, Ոչ մի զի-
4 նուորութիւն անող այս աշխարհքի գործերովը չէ զբաղուում, որպէս զի զօրապետին հաճոյ լինի,
5 Եւ եթէ մէկը մրցէ էլ՝ պսակ չի առանալ եթէ լաւ օրինի չմրցէ,
6 Աշխատող հողագործն առաջ
7 պէտք է պտղից վայելէ, Խնացիր ինչ որ ասում եմ. Տէրը քեզ խնաստութիւն տայ ամեն բանի
8 մէջ, Յիշիր Յիսուս Քրիստոսին մեռելների միջից յարութիւն առածին, որ Դաւթի սերունդից է, իմ աւետարանի համեմատ,
9 Որի համար չարչարւում եմ մինչև կապանքի մէջ ընել չարագործի պէս, բայց Աստուծոյ խօս-
10 քը կապուած չէ, Վասն որոյ ամեն բանի համբերում եմ ընտրեալների համար, որ նոքանք էլ հասնեն այն փրկութեան, որ Քրիստոս Յիսուսումն է յաւիտենական փառաց հետ, Ճշմարիտ
11 է այս խօսքը, որ եթէ հետը մեռանք՝ հետն էլ կ'ապրինք, Եթէ
12 համբերինք, հետն էլ կ'թագաւորենք, և եթէ ուրանանք, նա
13 էլ կ'ուրանայ մեզ, Եւ եթէ չհաւատանք, նա հաւատարիմ կ'մնայ, իր անձն չէ կարող ուրա-
14 նալ, Այս բանը յիշեցրու Տիրոջ առջև վկայութիւն դնելով, որ խօսքերով կռիւ չանեն, որ ոչինչի պետքն չէ և լսողներին է միայն
15 կործանում, Ջանք արա որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստուծոյ առջև էջ մի ջնակ առանց ամօթոյ, որ ճշմարտութեան խօս-
16 քը ուղիղ մատակարարես, Բայց պիղծ ունայնախօսութիւնից հետ քաշուիր, վասն զի աւելի առաջ կ'գնան ամբարշտութեան մէջ,
17 Եւ նորանց խօսքերը քաղցկեղի պէս ճարակում է, որոնցից են
18 Հիմենոս և Փիլետոս, Որոնք ճշմարտութիւնից մոլորել են, ասելով թէ յարութիւնն արդէն եղած է, և կործանում
19 են ումանց հաւատքը, Բայց Աստուծոյ հաստատ հիմը կանգնած է և այս կնիքն ունի, Թէ Տէրը ճանաչում է նորան որ իրն են, և Թէ յետ կեանց անիրաւութիւնից
20 այն ամենն որ Քրիստոսի անունն կոչում է, Բայց մի մեծ տան մէջ ոչ միայն ոսկեղէն և արծաթեղէն անօթներ կան, այլ փայտէ և հողէ էլ, կան որ պատուոյ համար
21 են, և կան որ անարգութեան համար են, Եթէ մէկը իր անձը մաքրէ այդպիսիներից, նա պատուական անօթ կ'լինի՝ սրբուած և իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործքերի համար պատրաստուած,
22 Երիտասարդական ցանկութիւններից փախիր, այլ հետևիր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, Տիրոջ անունը սրբը սրտանց էրեւոյ վերայ կանչողների հետ, Բայց յիմար և ան-
23 կիրթ վիճաբանութիւններից հետ քաշուիր, իմանալով որ կռիւներ
24 են ծնում, Բայց Տիրոջ ծառային պէտք չէ կռիւ անել, այլ ամենի հետ հեզահոգի լինիլ, ասելոյ-
25 նող, ոխ չպահող, Հակառակողներին հանդարտութիւնով խրատել, թերևս Աստուած նորանց ապաշխարութիւն տայ ճշմարտու-
26 թիւնն իմանալու համար, Եւ ասատանայի որոգայթից պատասնալէ որոգայթից պատասնալու, որից նորանք որսացուել են նորա կամքին ծառայելու համար

Գլ. Գ

1 Սա գիտացիր, որ յետ օրերու-
2 մը չար ժամանակներ կ'գան, Վասն զի մարդիկ կ'լինին ինքնասէր, արծաթասէր, մեծամտասէր, հպարտ, հայհոյիչ, ծնողաց անհնազանդ, շնորհակալութիւն, անուրբ,
3 Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, գազան, անբարեսէր. Մատնիչ, յանդուգն, գո-
4 ռոզ, աւելի ցանկասէր քան թէ աստուածասէր, Որ աստուածապաշտութեան կերպարանքն ունին, բայց նորա զօրութիւնն ու-
5 րացած են, նորանցից էլ հետ քաշ-

6 ուխը ։ Վասն դի սորանցից են որ
տաւնէ տուն են մտնում՝ և գերի
անում մեղքերով բեռնաւորուած
կիներին, որ կերպ կերպ ցան-
7 կութիւններով վարուած են. Որ
ամեն ժամանակ սովորում են, և
երբէք գէպի ճշմարտութեան գի-
տութիւնն չեն կարողանում գալ,
8 Այլ ինչպէս որ Յաննէս և Յամբրէս
Մօսէսին հակառակ կեցան, այն-
պէս էլ սորանք են հակառակ կե-
նում ճշմարտութեանը, մարդիկ՝
մտքով ապականուած, անպիտան
9 հաւատքի համար։ Բայց աւելի
չեն առաջանալ. վասն դի սորանց
անմտութիւնն ամենին յայտնի
կ'լինի. ինչպէս նորանցն էլ եղաւ։
10 Բայց դու հետևեցիր իմ վարդա-
պետութեանը, վարմունքին, գի-
տութեանը, հաւատքին, եր-
կայնմտութեանը, սիրոյն, համ-
11 բերութեանը, Հալածմունքներին,
չարչարանքներին. ինչպէս որ եղան
ինձ Անտիոքում և Իկոնիոնում
և Լիւստրայում. ինչպիսի հա-
լածանքների համբերեցի. և ամե-
12 նից ինձ ազատեց Տէրը։ Եւ ա-
մենքն որ կամենում են աստուած-
պաշտութեամբ ապրիլ Քրիստոս
Յիսուսում, հալածանք պիտի
13 կրեն. Բայց չար և կախարդ մարդ-
կին առաջ կ'գնան չարութեան
վէջ, մոլորեցնելով և մոլորելով։
14 Բայց դու հաստատ կաց նորան-
ցում, որ սովորեցիր և հաւատա-
ցիր. և գիտենալով ՚ի ումից սո-
15 վորեցիր. Եւ որ մանկութիւնից գ-
աւրբ գրքերը գիտես, որ կարող
են քեզ իմաստուն անել փրկու-
թեան համար այն հաւատքի ձե-
ռովն որ Քրիստոս Յիսուսում է։
16 Ամեն գիրք աստուածաշունչ են
և օգտակար վարդապետութեան,
և յանդիմանութեան, և ուղղե-
լու, և արդարութեան խրատելու
17 համար. Որ Աստուծոյ մարդը
կատարեալ լինի ամեն բարի գործ-
քերի համար պատրաստուած։

ԳԼ. Դ

1 Ահագ այս վկայութիւնը դնում
եմ Աստուծոյ և Տէր Յիսուսի

փրկատոսի առջև որ դատելու է
կենդանիներին և մեռելներին իր
յայտնութիւնովն և թագաւո-
րութիւնովը. խօսքը քարոզիր. 2
վերայ հասիր թէ պատշաճ ժա-
մանակ լինի թէ անպատշաճ յան-
դիմանիր, սաստիր, սխիթարիր
ամեն երկայնմտութիւնով և վար-
դապետութիւնով։ Վասն դի ժա- 3
մանակ կ'գայ որ ողջամիտ վար-
դապետութեանը չեն համբերիլ,
այլ իրանց յատուկ ցանկութիւն-
ներին համեմատ վարդապետներ
կ'դիպեն իրանց վերայ, իրանց լը-
սելուց մարմնջելու պէս։ Եւ ի- 4
րանց լսելիքը ճշմարտութիւնից
ետ կ'դարձնեն և առասպելների
ետևից կ'մոլորին. Բայց դու ար- 5
թուն կաց ամեն բանի վէջ նեղու-
թիւններ կրելով. աւետարանչի
գործքը գործիր. քո պաշտօնը կա-
տարիր։ Վասն դի ես արդէն նը- 6
ուիրուում եմ, և իմ բաժնուելու
ժամանակը հասած է։ Բարի պա- 7
տերազմը պատերազմեցի, ընթաց-
քը կատարեցի, հաւատքը պա-
հեցի. Ապայետև ինձ համար 8
արդարութեան պսակը, որ Տէրը
կ'տայ ինձ այն օրումը՝ արդար
դատաւորը. և ոչ միայն ինձ, այլ
և ամենին. որ սիրեցին նորա յայտ-
նութիւնը։

Շտապիր որ շուտով ինձ մօտ 9
գաս. վասն զի Դեմասը թողեց
ինձ և այս աշխարհքը սիրեց, և
գնաց Թեսաղոնիկէ, Կրեսկէսը 10
Գաղատիա. Տիտոսը Դաղմատիա.
Ղուկաս է միայն ինձ հետ. Մար- 11
կոսին առնես հետ բերես. Վասն
զի ինձ ծառայութեան համար
պէտք է։ Տիւքիկոսին ուղարկեցի 12
Եփեսոս։ Վերարկուն, որ Դրօա- 13
դայումն Կարպոսի մօտ թողի,
գալիս՝ բեր, գրքերն էլ, մանա-
ւանդ մագաղաթները. Աղեքսանդ- 14
րոս դարբինն ինձ շատ չարութիւն
արաւ. Տէրը նորան հատուցում
տայ իր գործքերի պէս։ Դու էլ 15
նորանից զգուշացիր. վասն զի նա
շատ հակառակ կեցաւ մեր խօս-
քերին։ Ա՛ռաջին ան- 16
գամ պատասխանելիս՝ ոչ ոք չկանգ-
նեց իմ կողմը, այլ ամենքը ինձ

թողին . թող չհամարուի նորանց
17 իակ Տէրն ինձ մօտ կանգնեց , և
զօրացրեց ինձ որ ինձանով քարո-
զութիւնն հաստատուի , և բոլոր
հեթանոսները լսեն . և ես ազատ-
18 ուեցայ առիւծի բերանից : Եւ
կ'փրկէ ինձ Տէրն ամեն չար բանից
և կ'ազատէ կ'հասցնէ իր երկնա-
յին արքայութեանը . որին լինի
փառք յաւիտեանս յաւիտենից .
Ամէն :

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Աստուծոյ ծառայ և Յի-
սուսի Քրիստոսի առաքեալ . Աս-
տուծոյ ընտրուածների հաւատքի
և աստուածապաշտական ճշմար-
տութեան գիտութեան համե-
2 մատ , Յաւիտենական կենաց յոյ-
սով , որ յաւիտենական դարերից
առաջ խոստացաւ անսուտ Աս-
3 տուած . Բայց իր ժամանակին յայտ-
նեց իր խօսքը քարոզութիւնով ,
որ ինձ հաւատացուեցաւ փրկիչ
Աստուծոյ հրամանի համեմատ .
4 Տիտոս՝ սիրելի որդոյս , մեր հա-
ւատակից հաւատքի համեմատ ,
շնորհք , ողորմութիւն և խաղա-
ղութիւն լինի Աստուած Հօրից և
Տէր Յիսուս Քրիստոսից մեր Փրկ-
չիցը :
5 Նորա համար թողի քեզ Կրէ-
տէի մէջ որ պակասորդները ուղ-
ղես , և ամեն մէկ քաղաքում
երէցներ կարգես , ինչպէս ես քեզ
6 պատուիրեցի : Եթէ մէկն անա-
րատ է , մէկ կնոջն մարդ . հա-
ւատացեալ որդիք ունենայ որոնց
վերայ անառակութեան դանդատ
7 չկայ կամ անհնազանդ չեն . վասն
զի եպիսկոպոսը պէտք է անարատ
լինի ինչպէս Աստուծոյ անտես .
ոչ յանդուգն , ոչ բարկացող , ոչ
գինեմոլ , ոչ զարկող , ոչ պիղծ
8 շահ սիրող : Այլ հիւրասէր , բա-
րեսէր , խոհեմ , արդար , սուրբ ,
ժուժկալ . Հաստատ բռնելով վար- 9
դապետութեան հաւատարիմ խօս-
քը , որ կարող լինի ողջամիտ վար-
դապետութիւնով յորդորել էլ ,
և հակառակողներին յանդիման-
նել էլ : Վասն զի շատ անհնա- 10
զանդներ , զրախօսներ , խաբեբա-
ներ կան . մանաւանդ նորանք որ
թլփատութիւնից են : Որոնց պէտք 11
է պատնէշ դնել , որ ամբողջ տը-
ներըը կործանուած են , ասելով
լսել այն որ արժան չէ՝ պիղծ շա-
հի պատճառով : Նորանցից մէկը՝ 12
հէնց իրանց յատուկ մարգարէ
ասաց . Կրէտացիք միշտ ստախօս
են , չար գազաններ , դատարկա-
փոր : Այս վկայութիւնը ճշմարիտ 13
է . Նորա համար ստուգիկ յանդի-
մանիր նորանց , որ առողջ լինին
հաւատքում . Եւ մտիկ չդան Հր- 14
էական առասպելներին և այն
մարդկանց պատուիրանքներին որ
ճշմարտութիւնից թեքուած են :
Ամեն բան սուրբ է սրտերին . բայց 15
պիղծերին և անհաւատներին ոչ
մի բան սուրբ չէ , այլ պղծուած
է նորանց միտքը և խորհուրդնե-
րը : Խոստովանում են թէ Աս- 16
տուծոյն գիտեն , բայց էրանց գոր-
ծերովն ուրանում են նրան . պիղծ
են և անհնազանդ և ամեն բարի
գործի համար անպիտան :

ԳԼ . Բ

Բայց դու խօսիր ինչ որ կ'վայելէ 1

ողջամիտ վարդապետութեանը ,
2 Ծերերը զգաստ լինին , ծանրա-
բարոյ , խոհեմ , ողջամիտ հաւատ-
քով , սիրով , համբերութեամբ .
3 Նոյնպէս եւ պառաւները սրբա-
վայել վարմունքով լինին , ոչ
բանսարկու , ոչ գինեմոլ , այլ բա-
4 րի խրատ տուող . Որ զգաստա-
ցընեն մատղաշ կանայս՝ լինել
5 սիրատէր և որդեսէր , խոհեմ ,
մաքուր , տնտեսաբար , բարեգործ ,
իրանց մարդկանց հնազանդ , որ
Աստուծոյ խօսքը չհայհոյուի ;
6 Նոյնպէս եւ յորդորիր երիտա-
7 սարդներին որ խոհեմ լինին . Ամեն
կողմանէ քո անձը բարի գործքե-
րի օրինակ դնելով վարդապե-
տութեան մէջ անեղծութիւն ,
8 ծանրաբարոյութիւն , Ողջամիտ
խօսք անմեղադրելի . որ հակա-
ռակորդը ամչէ , ձեզ վերայ չար
9 ասելու բան չունենալով : Ծա-
ռաներն իրանց տէրանց հնա-
զանդ լինին , ամեն բաներու մէջ
հաճոյ լինին , ոչ թէ հակառակ
10 խօսողներ . Բան չթաքցնեն , այլ
կատարեալ բարի հաւատարմու-
թիւն ցոյց տան . որ մեր Փրկիչ
Աստուծոյ վարդապետութիւնը
զարդարեն ամեն բաներու մէջ :
11 Վասն զի Աստուծոյ շնորհքն
երևեցաւ . որ փրկարար է , ամեն
12 մարդկանց համար . Որ խրատում
է մեզ , որ ուրանանք ամբարշ-
տութիւնը և աշխարհական ցան-
կութիւնները . և խոհեմութեամբ
և արդարութեամբ և աստուած-
պաշտութեամբ ապրինք այս աշ-
13 խարհումը . Սպասելով այն երա-
նելի յուսոյն և մեծ Աստուծոյ և
մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի
14 փառաւոր յայտնութեանը , Որ իր
անձն մեզ համար տուաւ , որ
մեզ ամեն անօրէնութիւնից փրկէ ,
և սրբէ իրան համար յատուկ
ժողովուրդ՝ ջան բարի գործքերի
15 նախանձաւոր : Այդ բաները խօ-
սիր և յորդորիր և յանդիմանիր
բոլոր առատութիւնով ոչ ոք քեզ
չանարգէ :

ԳԼ . Գ

1 Զորանց միտքը բեր , որ իշխա-
նութիւններին և պետութիւննե-
րին հնազանդեն , հպատակեն , և
ամեն բարի գործքերի համար հը-
նազանդ լինին . Ոչ մէկին չհայհո- 2
յեն , կռիւ չանեն , հեզ լինին ,
ամեն մարդկանց ամեն քաղցրու-
թիւն ցոյց տան : Վասն զի մենք 3
էլ էինք մի ժամանակ անմիտ ,
անհնազանդ , մոլորած , ցանկու-
թիւնների և կերպ կերպ անառա-
կութիւնների ծառայողներ , վար-
ւում էինք չարութիւնով և նա-
խանձով , ատելի էինք , և իրար
ատող : Բայց երբ որ մեր Փրկիչ 4
Աստուծոյ քաղցրութիւնը և մար-
դասիրութիւնը յայտնուեցաւ , Ոչ 5
թէ արդարութեան գործքերից ,
որ մենք արինք , այլ իր ողորմու-
թեան համեմատ փրկեց մեզ միւս-
անգամ ծնուելու ատաղանով , և
Սուրբ Հոգու նորոգութիւնով ,
Որ առատութիւնով թափեց մեզ 6
վերայ մեր Փրկիչ Յիսուսի Քրիս-
տոսի ձեռով , Որ նորա շնորհքո- 7
վին արդարացած ժառանգ լինինք
յաւիտենական կեանքի յուսով :
Ճշմարիտ է այս խօսքը և կամե- 8
նում եմ , որ դու այս բաները
հաստատես , որ Աստուծոյն հա-
ւատացողները ջանք անեն բարի
գործքերի մէջ կենալու , որոնք
են բարի և մարդկանց օգտակար :
Բայց յիմար վիճաբանութիւննե- 9
րից , տոհմաբանութիւններից և հակա-
ռակութիւններից , և օրէնքի կռ-
իւներից հետ քաշուիր . վասն զի
անօգուտ և ունայն են : Հերձ- 10
ուածող մարդուց , երբոր առաջին
և երկրորդ անգամ խրատել ես ,
հետ կաց : Գիտենալով որ այնպի- 11
սին ծռուած է և մեղք է գոր-
ծում՝ ինքն իր անձն դատապար-
տելով :

Երբոր Արտեմասին կամ Տիւքի- 12
կոսին ուղարկեմ քեզ մօտ՝ շտա-
պիր որ գաս Նիկոպօլիս՝ ինձ մօտ .
վասն զի որոշել եմ ձմեռն այն
տեղ մնալ : Եւ օրինական Զենա- 13
սին և Ապողոսին շուտով ճանա-
պարհ դիր . և նայէ որ ոչ մի բան
չպակասի նորանց : Բայց մերինն- 14
երն էլ թող սովորեն բարի գործ-
քերի մէջ կենալ հարկաւոր պի-

տյդքնելի համար, որ անպատուղ
չլինին։ Բարև են տալիս քեզ այն
ամենքն որ ինձ հետ են. բարև
տուր նորանց որ սիրում են մեզ
հաւատքով. շնորհքը ձեր ամենի
հետ լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի կապ-
ուածը և Տիմոթէոս եղբայրը,
Փիլիմոն սիրելոյն և մեր գործակ-
2 ցին, և Ափփիա սիրելուհուն և
Աքքիպոսին՝ մեր զինուորակցին և
3 քո տան եկեղեցուն. Շնորհք ընդ
ձեզ հետ և խաղաղութիւն Աստ-
ուած մեր Հօրմէն և Տէր Յիսուս
Քրիստոսէն։

4 Գոհանում եմ Աստուածոյիս՝
ամեն ժամանակ յիշելով քեզ իմ
5 աղօթքներումը. Լսելով քո սէրը
և հաւատքն, որ ունիս դէպի Տէր
Յիսուս, և դէպի ամեն սրբերը,
6 Որ քո հաւատքի հաղորդակցու-
թիւնն պատճառը լինի այն ամեն
բարի բաներին գիտութիւնովին որ
ձեզանում է Քրիստոս Յիսուսումն
7 Վասն զի շատ ուրախութիւն և
մխիթարութիւն ընդունեցինք քո
սիրոյ վերայ, որ սրբերի սրտերը
քեզանով հանգիստ են տուել,
եղբայր։

8 Վասն որոյ թէպէտ շատ հա-
մարձակութիւն ունիմ Քրիստո-
սումն հրամայել քեզ այն որ որ-
9 ժան է, Սակայն սիրոյ համար
աւելի աղաչում եմ մի այնպիսի
լինելով, ինչպէս ծերունի Պօղոս,
և հիմա էլ Յիսուսի Քրիստոսի
10 կապուածս։ Աղաչում եմ քեզ
իմ որդոյ համար, որին ծնայ իմ
կապանքներումը, Ոնեսիմոսի
11 համար, Որ մի ժամանակ
անպիտան էր քեզ. բայց հիմա
քեզ և ինձ պիտանի, նորան ու-
12 ղարկեցի ետ քոփ։ Դու էլ դորան
որ իմ սրտի կտորը, ընդունիր։

13 Ես կամենում էի նորան ինձ մօտ
պահել, որ քո փոխանակ ծա-
ռայութիւն անէ ինձ աւետարանի
կապանքներումը։ Բայց առանց
14 քո կամացը չկամեցայ ոչինչ ա-
նել, որ քո բարիքը իբրև ստիպ-
մամբ չլինի, այլ կամաւ։ Եւ թեր-
15 ևս հէնց սորա համար մի ժա-
մանակ բաժնուեցաւ ետևդիդ, որ
յաւիտեան ունենաս դորան։
16 Այլ ոչ ևս ինչպէս ծառայ, այլ
ծառայից բարձր, ինչպէս սիրելի
եղբայր, մանաւանդ ինձ, բայց
ո՞րքան աւելի քեզ թէ մարմնոյ և
17 թէ Տիրոջ կողմանէ։ Եթէ ինձ
ընկեր ես համարում, ընդու-
նիր դորան ինչպէս ինձ։ Եւ եթէ
18 քեզ մին վնաս է տուած կամ պար-
տական է, նա ինձ հաշուիր։ Ես
19 Պօղոս իմ ձեռովը գրեցի, ես կ'վը-
ճարեմ. որ չասեմ քեզ թէ դու
քո անձն էլ ինձ պարտական ես։
20 Այո, եղբայր, թող շահիմ
քեզանից Տէրումը. Հանգստաց
իմ սիրտը Տէրումը։ Քո հը-
21 նազանդութեան վերայ համոզ-
ուած գրեցի քեզ. գիտենալով որ
աւելի կանես,

22 Միանգամայն ինձ համար կե-
նակ տեղ էլ պատրաստիր. վասն
զի յոյս ունիմ որ ձեր աղօթքնե-
րովը շնորհուիմ ձեզ։ Բարև է տա-
23 լիս քեզ Եպափրաս իմ գերու-
թեան ընկերը Քրիստոս Յիսու-
սումն. Մարկոսը, Արիստարքոսը, 24
Դէմասը, Ղուկասը իմ գործա-
կիցները։ Մեր Տէր Յիսուս Քրի- 25
ստոսի շնորհքը ձեր հոգուն հետ
լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւտ մտաերով և շատ կերպե-
րով Աստուածը առաջուց խօսե-
լով մեր հարանց հետ մարգարե-
2 ների ձեռաւ. Ա՛յս վերջի օրերու-
մը խօսեց մեզ հետ Որդովը, որին
ամեն բանի ժառանգ դրաւ, որով
3 յաւիտեանները էլ արաւ. Որ նո-
րա փառաց լոյսը լինելով և նորա
էութեան նկարագիրը, որ իր զօ-
րութեան խօսքովն ամեն բան կը-
րաւմ է՝ մեր մեղքերի սրբութիւնն
իրանով անելուց յետոյ նստեց
Աստուծոյ մեծութեան ոջ կողմը
4 ի բարձունս, Եւ հրեշտակներից
այնքան աւելի լաւ եղաւ, որքան
նորանցից աւելի գերազանց ա-
5 նուն ժառանգեց, Վասն զի հր-
եշտակներից որին ասաց երբեք,
Իմ որդին ես դու, ես այսօր ծը-
նայ քեզ. և դարձեալ Ես նորան
Հայր կ'լինիմ, և նա ինձ Որդի
6 կ'լինի: Եւ երբոր անդրանիկին
միւսանգամ աշխարհ կ'մտցնէ ա-
սում է. Եւ երկրպագեն նորան
Աստուծոյ բոլոր հրեշտակները:
7 Բայց հրեշտակների համար ասում
է. Նա որ իր հրեշտակները հո-
գիներ արաւ, և իր պաշտօնեայ-
8 ներն կրակի բոց: Բայց Որդոյն
ասում է, Քո աթոռն, ով Աստ-
ուած, մինչև յաւիտեանի յա-
ւիտեան է. քո թագաւորու-
թեան գաւազանը շիտակ գաւա-
9 զան է: Սիրեցիր արդարութիւնը
ևատեցիր անօրէնութիւնը. սորա
համար օծեց քեզ, ով Աստուած,
քո Աստուածը ուրախութեան
իւղով աւելի քան թէ քո ընկեր-
10 ներին: Եւ դու, ով Տէր, ի սկզ-
բան երկիրը հիմնեցիր. և եր-
կինքները քո ձեռքի գործն են:
11 Նորանք կ'կորչին, բայց դու կ'կե-
նաս կ'մնաս. և ամենքը ձորձի
12 պէս կ'մաշուին. Եւ վերարկուի
պէս կ'գալարես նորանց և կ'փոխ-
ուին, բայց դու նոյնն ես և քո
տարիները չեն պակասիլ: Եւ հր- 13
եշտակներից որի՞ն ասաց երբեք.
Իմ աջ կողմը նստիր, մինչև որ
քո թշնամիները քո ոտից պատ-
առանդան դնեմ: Չէ՞ որ ամենքը 14
սպասաւոր հոգիներ են ուղար-
կուած սպասաւորութիւն անելու
նորանց համար, որ փրկութիւնը
պիտի ժառանգեն:

ԳԼ. Բ

Վորա համար պէտք է մեզ ա- 1
ռաւել ևս ականջ դնենք այն ձե
լսած բաներին, որ մի գուցէ պա-
կասինք: Վասն զի եթէ հրեշ- 2
տակների ձեռաւ խօսած բանը
հաստատ եղաւ, և ամեն յան-
ցանք և անհնազանդութիւն ըն-
դունեց իր արդար պատիժը: Ա- 3
մենք ի՞նչպէս կ'պրծնենք, եթէ
անհոգ լինինք այսպիսի փրկու-
թեան համար, որ սկիզբն առաւ
խօսելու Տէրիցը, և լսողների
ձեռաւը մեր միջուկը հաստատ-
ուեցաւ. Աստուած էլ միասին 4
վկայեց նշաններով և հրաշքնե-
րով, և կերպ կերպ զօրութիւն-
ներով, և Սուրբ Հոգու պարգևնե-
րովը ինչպէս ինքն կամեցաւ:
Վասն զի ոչ թէ հրեշտակներին 5
հնազանդ արաւ այն հանդերձ-
եալ աշխարհքը, որի մասին խօ-
սում ենք: Մէկը վկայեց մէկտեղ 6
ասելով. Մարդն ի՞նչ է որ դու
յիշես նորան, կամ մարդու որդին
որ այցելես նորան: Մի քիչ ցած 7
արիր նորան հրեշտակներից փառ-
քով և պատուով պսակեցիր նո-
րան, և քո ձեռքի գործքերի վե-
րայ կանդնեցիր նորան: Ամեն բան 8
հնազանդ արիր նորա ոտից տակ.
Վասն զի ամենն որ հնազանդեցրեց
նորան, ոչինչ չթողեց որ հնազանդ
չլինի նորան. բայց հիմա տակա-
ւին չենք տեսնում թէ ամեն բան
հնազանդուած է նորան: Բայց 9
հրեշտակներից մի քիչ ցածացած

տեանում ենք Յիսուսին մինչ չարչարանքի համար. փառքով և պատուով պսակուած, որ Աստուծոյ շնորհքովն ամենի համար մահը ճաշակէ: Արժէհաւ վայելում էր նորան, որի համար է ամեն բան և որով ամեն բան, որ շատ որդիք փառքի մէջ առնուին՝ նորանց փրկութեան Առաջնորդին չարչարանքով կատարէ:

11 Վասն զի թէ սրբողը, և թէ սրբուողները, ամենքը մէկից են. և այդ պատճառով ամօթ չէ համարում նորանց եղբայր կոչել և
12 ասել. Կ'պատմեմ քո անունը իմ եղբայրներին, եկեղեցու մէջ կ'օրհնեմ քեզ. Եւ դարձեալ, Ես ևս
13 յոյս կ'դնեմ նորա վերայ. և դարձեալ. Ահա ես և իմ մանուկները որ նորանց Աստուած տուաւ ինձ: Արդ որովհետև մանկունքն արիւնի և մսոյնոյ մասնակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղաւ նորանց. որ էր մահուամբ խափանէ մահի իշխանութիւնն ունեցողին այսինքն
15 սատանային, Եւ ազատէ նորանց որ մահի վախուից իրանց բոլոր կեանց մէջ ծառայութեան մէջ
16 բռնուած էին, Վասն զի ինքն հրեշտակների ձեռք չէ տալիս,
17 Աւասիկ պէտք էր նորան որ բոլորովին եղբայրներին նմանուի. որ ողորմած լինի, և հաւատարիմ քահանայապետ սատանայական կողմանէ որ ժողովրդի մեղքերը
18 քաւէ: Վասն զի ինքն որ չարչարեցաւ և փորձուեցաւ, կարող է օգնութիւն տալ փորձուողներին:

ԳԼ. Գ

1 Ասաի, սուրբ եղբայրք՝ երկնաւոր կոչումին մասնակիցք, մտիկ առէք մեր դառնութեան Աստքելոյն և Քահանայապետին Յիսուսին, Որ հաւատարիմ
2 է իրան հաստատողին, ինչպէս Մովսէս էլ նորա բոլոր տան մէջ:
3 Վասն զի նա աւելի փառքի արժան եղաւ քան Մովսէս, ոլորտն որ տունից աւելի պատիւ ունի նորա շինողը. Վասն զի ամեն տուն մէկից է շինւում. բայց նա որ ամենն արաւ՝ Աստուած է: Եւ Մովսէս հաւատարիմ է բոլոր տան մէջ ինչպէս ծառայ՝ այն առաքելութեան վկայ լինելու համար: Բայց Քրիստոս ինչպէս որդի իր տան վերայ. որի տունը մենք ենք, եթէ յոյսի համարձակութիւնը և պարծանքը մինչև վերջը հաստատուն բռնենք:

Նորա համար. ինչպէս Սուրբ Հոգին ասում է. Այսօր՝ եթէ նորա ձայնը լսէք, Մի խստացնէք ձեր սրտերը ինչպէս բարկանալու ժամանակ, փորձութեան օրը անապատի մէջ. Ուր որ ձեր հարքը փորձեցին ինձ. քննեցին ինձ և տեսան իմ գործքերը քառասուն տարի: Նորա համար զզուեցայ այն ազգիցը և ասացի. Միշտ մոլորում են սրտով. և նորանք չճանաչեցին իմ ճանապարհները: Ինչպէս որ երդում արի իմ բարկութիւնովս, թէ պիտի չմտնեն իմ հանգստի մէջ: Նայեցէք, եղբայրք, մի գուցէ ձեզանից մէկումն անհաւատութեան չար սիրտ լինի որ ապստամբուի կենդանի Աստուածանից: Այլ իրար յորդորեցէք ամեն մէկ օր. քանի որ այսօր է ասւում. որ ձեզանից մէկը չխաբուի մեղքի խաբէութիւնովը: Վասն զի մասնակից եղանք Քրիստոսին, եթէ այն հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինդ բռնենք, Քանի որ ասւում է. Այսօր եթէ նորա ձայնը լսէք մի խստացնէք ձեր սրտերն ինչպէս որ բարկացնելու ժամանակը: Վասն զի ովքեր որ լսել էին, բարկացրին. բայց ոչ թէ Եգիպտոսից Մովսէսի միջոցով բոլոր գուրս եկածները: Եւ ումի՞ց զզուեցաւ այն քառասուն տարին. չէ՞ որ մեղք գործողներիցը. որոնց ոսկորներն ընկան անապատի մէջը: Եւ որո՞նց երդում արաւ որ իր հանգստի մէջ չպիտի մտնեն, եթէ ոչ անհաւատներին: Եւ տեսնում ենք որ չկարողացան մտնել անհաւատութեան պատճառով:

ԳԼ. Դ

1 Որեմն վախենանք, մի գուցէ
երբէք նորա հանգստի մէջ մտնե-
լու ուխտիքը ձեզանից
2 մէկը պակասած գտնուի: Վասն
զի մենք էլ ենք ուխտիքն առել
ինչպէս և նորանք. բայց նորանց
օգուտ չբերաւ խօսքը, որովհետև չը
խառնուեցաւ հաւատքի հետ լը-
3 սողների մէջ: Բայց մենք հաւա-
տացեալքս մտնում ենք այն հան-
գըստի մէջ, ինչպէս ասաց. Ե-
ինչպէս երդուայ սրի իմ բարկու-
թիւնուսմբ, թէ պիտի չմտնեն իմ
հանգստի մէջ. թէև գործքերն
աշխարհքի սկզբից կատարուած
4 էին, վասն զի մի կատեղ եօթներ-
որդ օրուայ համար այսպէս է
ասում. Եւ Աստուած եօթներորդ
օրումը հանգիստ առաւ իր բոլոր
5 գործքերից: Եւ այս տեղ դարձ-
եալ ասում է թէ պիտի չմտնեն
6 իմ հանգստի մէջ: Արդ որովհետև
մնում է որ մի քանիսը նորա
մէջ մտնեն, և նորանք որ առա-
ջուց ուխտիքն առան, չմտան
անհաւատութեան պատճառով.
7 Նորից ուրիշ օր է հաստատում.
Այսօր Դաւթով ասելով այնքան
ժամանակներից յետոյ. ինչպէս
որ ասուեցաւ Այսօր որ նորա
ձայնը լսէք մի խստացնէք ձեր
8 սրտերը: Վասն զի եթէ Յեսուն
նորանց հանգստի մէջ էր տարել,
նորանից յետոյ ուրիշ օրի համար
9 էլ չէր խօսել: Որեմն մնում է
մի շաբաթանալ Աստուծոյ ժո-
10 ղովրդի համար: Վասն զի նորա
հանգիստը մտնողը, ինքն էլ հան-
գըստացաւ իր գործքերից. ինչ-
պէս Աստուած էլ իրաններից:
11 Որեմն ջանանք այն հանգստի մէջ
մտնելու, որ մի գուցէ մէկը նոյն
անհաւատութեան օրինակի պէս
12 ընկնի: Որովհետև Աստուծոյ խօս-
քը կենդանի է և զօրաւոր և ա-
ւելի քան երկսայրի սուրից ա-
ռնելի կըտրուկ է, և թափանցում է մինչև
շունչի և ոգու և յօդուածների
և ծուծի բաժանումը. և քննող
է սրտի մտքերը և խորհուրդները:
13 Եւ չկայ մի արարած աներևոյթ
նորա երեսից. բայց ամեն էլ
մերկ և բաց է նորա աչաց առջև
որի հետ է մեր բանը:
14 Արդ որովհետև մեծ քահանա-
յապետ ունինք երկինքներումն ան-
ցած. Յեսուսին Որդին Յիսուսին,
պինդ բռնենք դաւանութիւնը:
15 Վասն զի ոչ թէ չունինք քահա-
նայապետ ունինք որ չկարենայ
մեր տկարութեանց հետ կարեկից
լինիլ. այլ փորձուած ըստ ամեն
բանով փորձուած ըստ նմանու-
16 թեամբ, բայց առանց մեղաց: Ու-
րեմն համարձակութիւնով մօտե-
նանք շնորհաց աթոռին, որ ո-
ղորմութիւն ընդունինք և շնորհք
գտնենք պատշաճ ժամանակին օգ-
նելու:

ԳԼ. Ե

1 Վասն զի ամեն քահանայապետ
մարդկանցից առուած մարդկանց
համար է դրվում առաջնորդ
բաներում. որ ընծաներ և զոհեր
2 մատուցանէ մեղաց համար: Որ
նա կարող է կարեկից լինել տգէտ-
ներին և մոլորուածներին. վասն
զի ինքն էլ տկարութիւնով պատ-
3 ուած է: Եւ այն պատճառով
պէտք է ինչպէս ժողովրդի համար
նոյնպէս էլ իր անձի համար պա-
տարագ մատուցանէ մեղաց համար:
4 Եւ ոչ թէ մէկն իր անձի համար
առնում է պատիւը. այլ նա որ
5 Աստուածանից կանչուած է, ինչ-
պէս Ահարօնը: Այսպէս էլ Քրիս-
տոս ոչ թէ ինքն իր անձը փառա-
ւորեց, որ քահանայապետ լինի.
այլ նա որ ասաց նորան Որդին ես դու, ես այսօր ծնայ
6 քեզ: Ինչպէս էլ մի ուրիշ տեղ ա-
սում է. Դու քահանայ ես յա-
ւիտեան Մելքիսեդեկի կարգի
7 պէս: Նա որ իր մարմնոյ օրերումն
աղօթք և աղաչանք աստիկ ա-
ղաղակով և արտասուքով մա-
տուցանում էր նորան, որ կարող
էր ազատել նորան մահից. և լսա-
ւեցաւ իր բարեպաշտութեան
8 համար: Թէ և Որդի էր, այն չար-
չարանքներից հնազանդութիւնը
9 սովորեց: Եւ երբոր կատարե-

ցաւ բոլոր իրան հնազանդողների
Համար յաւիտենական վրկու-
10 թեան պատճառ եղաւ։ Աստ-
ուածմանից անուանուելով Քահա-
նայապետ Մելքիսեդեկի կարգի
11 պէս։ Որի համար շատ խօսք ու-
նինք, և դժուար է մեկնել ասե-
լով, որովհետև ծոյլ եղաք ականջ-
12 ներով։ Վասն զի ժամանակին
նայելով պիտի վարդապետ լինէ-
ք. կրկին կարօտ էք սովորելու
թէ ինչ են Աստուծոյ խօսքերի
առաջին նշանագրերը. և կարօ-
տողներ եղաք կաթի և ոչ թէ
13 հաստատ կերակուրի։ Վասն զի
ամեն ով որ կաթնակեր է, ան-
հմուտ է արդարութեան խօսքին,
14 որովհետև տղայ է։ Բայց կա-
տարեալների համար է հաստատ
կերակուրը. որոնց զգայարանները
վարժողութեամբ կրթուած են
բարին և չարը զանազանելու։

Գլ. Զ

1 Ուստի Քրիստոսի մասէ սկզբնա-
կան խօսքը թողլով դէպի կա-
տարեալը գանք. առանց կրկին
հիմը դնելու մեռած գործքերից
ապաշխարութեան և Աստուծոյ
2 հաւատալու համար. Եւ մկրտու-
թիւնների ուսմունքի, և ձեռք
դնելու, և մեռելների յարու-
թեան և յաւիտենական դատաս-
3 տանի համար։ Եւ սա անենք,
եթէ Աստուած հրամայեսցէ։
4 Վասն զի անկարելի է նորանց որ
մէկ անգամ լուսաւորուած, այն
երկնաւոր պարգևի համն առած,
և Սուրբ Հոգոյն մասնակից եղած,
5 Եւ Աստուծոյ գեղեցիկ խօսքի, և
հանդերձեալ աշխարհքի զօրու-
6 թիւնները ճաշակած են, Եթէ
կործանում են. որ նորից դարձ-
եալ նորոգուին ապաշխարութեան
համար. որովհետև Աստուծոյ
Որդոյն իրանց համար կրկին խա-
7 չեցին և խայտառակ արին Վասն
զի այն երկիրն, որ իր վերայ շատ
անգամ եկած անձրևը խմէ, և
շահաւոր արդիւնք բուսուցանէ նո-
րանց համար, որոնց ձեռքովն էլ
մշակվում է. նա Աստուածմանից
օրհնութիւն կ'ընդունի։ Բայց այն 8
որ փուշ և տատասկ է բերում,
անպիտան է և անէծքի մօտ. և
նորա վերջն այրուիլ է։ Իսկ ձեզ 9
համար, սիրելիներ, համոզ-
յալ ենք ունինք լաւագոյն և փրկու-
թեան վերաբերեալ բաների մա-
սին։ Վասն զի Աստուած անիրաւ 10
չէ որ մոռանայ ձեր գործքը և
այն սիրոյ աշխատանքն, որ նորա
անունի համար ցոյց տուիք, որ
ծառայում էիք սրբերին և ծա-
ռայում էք։

Եւ փափաքում ենք որ ձեզանից 11
ամեն մէկը նոյն ջանքը ցոյց տայ,
որ յոյսը հաստատ մնայ մինչև
վերջը։ Որ հիւանդամիտ չլինիք. 12
այլ նմանող լինիք հաւատքով և
երկայնմտութիւնով աւետիքները
ժառանգողներին։ Վասն զի երբոր 13
Աստուած տուաւ Աբրահամին ա-
ւետիքի խոստումնքը, որովհետև
ուրիշ աւելի մեծը չուներ, որ նո-
րանով երդուի անէր, Իր անձնո- 14
վն երդուաւ ասաւ և ասաց. Ա՛յո,
օրհնելով կ'օրհնեմ քեզ, և շա-
տացնելով կ'շատացնեմ քեզ։ Եւ 15
այսպէս երկայնամիտ լինելով, հա-
սաւ աւետիքին։ Իրաւի մարդիկ 16
աւելի մեծովն են երդուում անում,
և նորանց բոլոր հակառակու-
թեան վճիռը՝ բանը հաստատելու
համար՝ երդումն է։ Որով Աստ- 17
ուած առաւել ևս կամենալով
աւետիքի ժառանգողներին ցոյց
տալ իր խորհրդի անփոփոխ լինե-
լը, երդումը մէջ բերաւ. Որ եր- 18
կու անփոփոխելի բանով, որոն-
ցով անկարելի է որ Աստուած
սուտ խօսի, հաստատուն մխի-
թարութիւն ունենանք, մենք որ
ապաւինեցանք առջևնիս դրած
յոյսը բռնելու. Որ հաստատ և 19
անշարժ խարիսխի պէս ունինք մեր
անձի համար. որ և մտնում է
վարագուրի ներսի կողմն էլ, Ուր 20
որ մեզ համար Առաջնորդ մտաւ
Յիսուսը, Մելքիսեդեկի կարգի
պէս յաւիտենական Քահանայա-
պետ եղած։

Գլ. Է

1 Վասն զի այս Մելքիսեդեկը

Սաղէմի թագաւոր էր. բարձրեալ Աստուծոյ քահանայ. որ դիմաւորեց Աբրահամին, երբոր նա թագաւորներուն կոտորելուցն ետ էր դառնում և օրհնեց նորան
2 Որին Աբրահամ ամեն բաներից տասանորդ էլ տուաւ. նա առաջ թարգմանվում է արդարութեան թագաւոր, և յետոյ Սաղէմի թագաւոր, որ է խաղաղութեան
3 թագաւոր: Անհայր, անմայր, առանց ազգահամարի. որ ոչ օրերի սկիզբն ունի, և ոչ կենաց վերջ. այլ Աստուծոյ Որդոյ նման եղած կենում ճնում է քահանայ յաւիտենաւոր:
4 Հիմա տեսէք թէ քանի մեծ էր սա, որին Աբրահամ նահապետն էլ տասանորդ տուաւ այն աւարից:
5 Եւ Ղևիի որդիքներից նորանք, որ ընդունում են քահանայութիւն, հրաման ունին ժողովրդից տասանորդ առնելու ըստ օրինի, այսինքն իրանց եղբայրներից. թէպէտ և նորանք էլ Աբրահամի ազգանքից են ելած:
6 Բայց նա, որի ազգահամարը նորանցից չէր, տասանորդ առաւ Աբրահամից. և օրհնեց նորան որ
7 աւետիքներն ունէր: Հիմա առանց որ և է հակառակութեան՝ ցածը լաւագոյնից է օրհնվում:
8 Եւ այստեղ մնկանացու մարդիկ են առնում տասանորդ. բայց այնտեղ նա, որ վկայուեցաւ թէ
9 կենդանի է: Եւ կարելի է ասել, թէ Աբրահամի պատճառով Ղեւին էլ որ տասանորդ է առնում,
10 տասանորդ տուաւ: Վասն զի նա տակաւին իր հօր ազդրումն էր, երբոր Մելքիսեդեկ նորան դիմաւորեց:
11 Ապա ուրեմն եթէ կատարեալութիւնը Ղևտացոց քահանայութիւնով էր. (որովհետև ժողովուրդը նորա վերայ հիմնուելով օրէնքն ընդունեց). էլ ի՞նչ պէտք կայ, որ Մելքիսեդեկի կարգի պէս մի ուրիշ քահանայ վեր կենայ և ոչ թէ Ահարոնի կարգի
12 պէս ասուի: Բայց երբոր քահանայութիւնը փոխվում է, հարկ է որ օրէնքին էլ փոփոխութիւն
լինի: Վասն զի նա, որի համար 13
այս բաներն ասվում է, ուրիշ ցեղի էր մանուկից, որից ոչ ոք սեղանին չմատեցաւ: Վասն զի յայտնի է, որ մեր Տէրը Յուդայի ցեղից ծագեց, որ այն ցեղի վերայ Մովսէս ոչ մի բան չխօսեց քահանայութեան համար: Եւ սա աւելի և յայտնի է, երբ Մելքիսեդեկի նմանութեան պէս ուրիշ քահանայ է վեր կենում, Որ ոչ թէ մարմնաւոր պատուէրի օրէնքի պէս եղաւ, այլ անվախճան կեանքի զօրութեան պէս: Վասն զի վկայում է, թէ դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս: Վասն զի խափանուում է լինում առաջի պատուիրանքին իր տկարութեան և անօգուտ լինելու համար: (Վասն զի օրէնքն ոչինչ չկատարեաւ) և ներա է մնում մի աղնուագոյն յոյս, որով մօտենում ենք Աստուծոյն:
Եւ որքան որ առանց երդումի չէ. (վասն զի նորանք առանց երդումի են քահանայ եղած. Բայց սա երդումով նորա ձեռքն որ ասաց նորան. Տէրը երդուաւ և չի զղջանալ, դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս.) Այնքան աւելի աղնիւ ուխտի երաշխաւոր եղաւ Յիսուս:
Եւ նորանք շատ քահանաներ են եղել. Նրանց միշտ մեռնելը մահով արգիլուելու պատճառով. Բայց սա, որովհետև յաւիտեան է կենում, քահանայութիւնն ունի անանցանելի. Ուստի և բոլորովին կարող է փրկել նորանց որ նորանով մօտենում են Աստուծոյն, որովհետև միշտ կենդանի է որ նորանց համար բարեխօսութիւն անէ:
Վասն զի այսպիսի քահանայապետ էր վայելում մեզ, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներից զատուած և երկնքից վեր բարձրացած. Որին ամեն օր պէտք չէ 27
ինչպէս ուրիշ քահանայապետներին, որ առաջ իրանց մեղքերի համար պատարագներ մատուցանեն և յետոյ ժողովրդի մեղքերի համար. վասն զի սա մէկ անգամ

կատարեց այդ իր անձը պատրաստ մատուցանելով։ Որովհետև
28 օրէնքը մարդիկ է կանգնեցնում քահանայապետներ, որ տկարութիւն ունին. բայց երդումի խօսքը որ օրէնքիցը յետոյ է Որդոյն՝ որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼ. Ը

1 Եւ սաածներիս բովանդակութիւնը սա է. մենք այնպիսի քահանայապետ ունինք, որ մեծափառութեան սեռոյ մէջ կողմը
2 նստեց երկնքում. պաշտօնեայ սրբութեանց և ճշմարիտ խորանին, որն որ Տէրը կանգնեցրեց և
3 ոչ թէ մարդ։ Վասն զի ամեն քահանայապետ ընծայներ և պատարագներ մատուցանելու համար է կարգուում. ուստի սորան էլ պէտք է որ մի բան ունենայ մա-
4 տուցանելու։ Որովհետև եթէ երկրի վերայ լինէր, քահանայ չէր լինել, քանի որ կանում էին դեռ նորանք, որ օրէնքի պէս պատ-
5 րաստ էին մատուցանում. Որոնք երկնաւոր բաների օրինակով և շուքովն էին ծառայում, ինչպէս հրաման եղաւ Մովսէսին, որ խորանը շինելու էր, Մտիկ տուր, ասում է, որ ամեն բան անես այն օրինակի պէս, որ ցոյց տըր-
6 ուեցաւ քեզ լեռանումը։ Բայց հիմա Յէսուս ունեցաւ ազնիւ պաշտամունքի հասաւ, որքան որ ինքն ունեցաւ լաւ ուխտի միջնորդ է, որ ուխտը ազնիւ ուխտերի վերայ օրինադրուեցաւ։
7 Վասն զի եթէ այն առաջինն առանց պակասութեան լինէր, էլ երկրորդին համար տեղ չէր ո-
8 րոնուել։ Վասն զի նորանց յանդիմանելով ասում է. Ահա օրեր կ'գան, ասում է Տէրը, և նոր ուխտ կ'կատարեմ Իսրայէլի տան
9 և Յուդայի տան հետ, Ոչ թէ այն ուխտի պէս որ նորանց հարանց հետ արի այն օրուանից, որ նորանց ձեռքից բռնեցի Եգիպտացոց երկրիցը հանելու համար. վասն զի նորանք չմնացին իմ ուխտի մէջ, և ես էլ անփոյթ եղայ

նորանց համար, ասում է Տէրն։
Վասն զի սա է այն ուխտն որ 10
կ'դնեմ Իսրայէլի տան հետ այս օրերից յետոյ, ասում է Տէրը. կ'տամ իմ օրէնքները նորանց մտքի մէջ և նորանց սրտերի վերայ կ'գրեմ նորանք. և նորանց կ'լինիմ Աստուած, և նորանք կ'լինին ինձ ժողովուրդ։ Եւ նորանց ամեն մէ- 11
կը չի սովորեցնիլ իր ընկերին, և ոչ էլ ամեն մէկն իր եղբօրը և ասել, Ճանաչիր Տէրոջը. որովհետև ամենքն էլ կ'ճանաչեն ինձ նորանց փոքրներիցը մինչև մեծը։ Վասն 12
զի նորանց անօրէնութիւնները ներող կ'լինիմ, և նորանց մեղքերը և նորանց անօրէնութիւնները այլև չեմ յիշել։
Ն որ ասելով՝ այն առաջինը հը- 13
նացրեց. և այն որ հնանում է և ծերանում, մօտ է ապականութեան։

ԳԼ. Թ

Իրաւ որ առաջի ուխտն էլ ու- 1
նէր պաշտամունքի իրաւունքը՝ աշխարհական սրբարանը. Վասն 2
զի առաջի խորանն —յորէ— պատրաստուեցաւ, որում էր աշտանակը և սեղանը և հացերի նուէրը, սա կոչվում էր սրբութիւն։ Իսկ երկ- 3
րորդ վարագուրի ետևը մի խորան կար որ Սրբութիւն սրբութեանց էր կոչվում։ Որ ունէր ոսկէ բուր- 4
վառը, և կտակարանների տապանակը ամեն կողմից ոսկով պատած. որում կար ոսկէ սափորը մանանայով, և Ահարոնի գաւազանը որ ծաղկեց, և կտակարանների տախտակները։ Եւ նորանից 5
բարձր փառաց քերովբէները որ հովանի էին անում քաւութիւնի վերայ, որոնց համար պէտք չէ հիմա մանրամասն ասել։
Եւ այս բաներն այսպէս պատ- 6
րաստուած լինելով, քահանայքն ամեն ժամանակ մտնում էին առաջին խորանը պաշտամունքները կատարելու։ Բայց երկրորդի մէջ 7
մտնում էր քահանայապետը տարին մէկ անգամ, և ոչ առանց արիւնի, որ մատուցանում էր ի-

բան համար և ժողովրդի տգի-
8 տութիւնների համար։ Սուրբ Հո-
գին նորանով ցոյց էր տալիս, որ
դեռ սրբութիւնների ճանապարհը
յայտնուած չէր, քանի որ առա-
ջի խորանը դեռ հաստատ կանգ-
9 նած էր, Որ օրինակ էր այն յա-
ռաջիկայ ժամանակի համար, ո-
րում ընծաներ և զոհեր էին մա-
տուցանվում, որ ըստ խղճմտա-
նաց չէին կարող կատարեալ ա-
10 նել պաշտօն մատուցանողին, Մի-
այն կերակուրներով և խմելիքնե-
րով և կերպ կերպ լուացմունքնե-
րով, և մարմնոյ արդարութիւն-
ներով, մինչև ուղղութեան ժա-
11 մանակը թողուած։ Բայց Քրիս-
տոս, որ հանդերձեալ բարիքների
քահանայապետ եղաւ, աւելի մեծ
և կատարեալ և անձեռագործ
խորանով, այսինքն այն որ այս
12 արարածներիցը չէ, Եւ ոչ թէ
նոխազների և զուարակների ար-
իւնով, այլ բուն իր արիւնովը մէկ
անգամ մտաւ այն սրբութեղին և
յաւիտենական փրկութիւն գը-
13 տաւ։ Վասն զի եթէ ցուլերի և
նոխազների արիւնը և երինջների
մոխիրը սրսկելով սրբում էր պղ-
ծուածներին մարմնաւոր սրբու-
14 թիւն առնելու համար։ Էլ ո՞ր-
քան աւելի Քրիստոսի արիւնն,
որ յաւիտենական հոգով իր ան-
ձին անարատ պատարագ մատոյց
Աստուծոյն, Ձեր խղճմտանքը կ՚սրբէ
այն մեռած գործերից որ կենդանի
Աստուծոյն պաշտէք։
15 Եւ սորա համար նոր ուխտի
միջնորդ է, որ երբոր մահն եղաւ
այն առաջի ուխտի ժամանակում
գործոց յանցանքների քաւու-
թեան համար, ապեսքն առնեն
յաւիտենական ժառանգութեան
16 կանչուածները։ Վասն զի որտեղ
որ կտակ կայ, Հարկաւոր է որ
17 կտակարարի մահը մէջ մտնէ. Ո-
րովհետև կտակը մեռնելուց յե-
տոյ է հաստատ. վասն զի երբէք
զօրութիւն չունենալ քանի որ
18 կտակարարը կենդանի է։ Ուստի
և առաջինն էլ առանց արիւնի
19 չհաստատուեցաւ։ Վասն զի Մո-
ւսէս երբոր օրէնքի ամեն պատուի-

բանքները պատմեց ժողովրդին,
ցուլերի և նոխազների արիւնն ա-
ռաւ ջրի և կարմիր բրդի և զո-
պայի հետ, և բուն այն գրքի և
բոլոր ժողովրդի վերայ սրսկեց,
20 Եւ ասաց. Սա այն կտակի արիւ-
նն է, որ Աստուած նորան պատ-
21 ուիրեց ձեզ։ Եւ խորանի և պաշ-
տամունքի բոլոր անօթների վերայ
էլ արիւնը նոյնպէս սրսկեց։ Եւ
22 համարեա թէ ամեն բան արիւ-
նով է սրբվում ըստ օրինաց, և
առանց արիւն թափելու թողու-
թիւն չէ լինում։

Արդ հարկաւոր էր որ երկնքում
23 եղած բանների օրինակները այսպի-
սի բաներով սրբուին, բայց բուն
երկնաւորները նորանից աւելի
ազնիւ պատարագներով։ Վասն
24 զի ոչ թէ ձեռագործ սրբատեղի-
ը մտաւ Քրիստոս որ ճշմարտի
օրինակներն էին, այլ բուն իսկ
երկնքի մէջ որ հիմա Աստուծոյ
երեսի առջև երևի մեզ համար։
25 Ոչ թէ որպէս զի շատ անգամ
իր անձը պատարագ մատուցանէ
ինչպէս քահանայապետն, որ ա-
մեն տարի մտնում էր սրբու-
թիւնն օտար արիւ-
նով։ Ապա թէ ոչ պէտք էր որ
26 աշխարհքի սկզբից յետոյ շատ
անգամ չարչարուէր, բայց հիմա
ժամանակների վերջումը մէկ ան-
գամ յայտնուեցաւ, որ մեղքը
27 դէն գցէ իր պատարագովը։ Եւ
ինչպէս մարդկանց համար սահ-
մանուած է մէկ անգամ մեռնել
և նորանից յետոյ դատաստանն.
28 Նոյնպէս էլ Քրիստոսը մէկ ան-
գամ պատարագուեցաւ շատերի
մեղքերը վեր առնելու համար. Ե-
րկրորդ անգամն առանց մեղքի
կ՚յայտնուի իրան սպասողներին
փրկութեան համար։

ԳԼ. Ժ

1 Վասն զի օրէնքը գալու բարիք-
ների շուքն ունենալով, և ոչ թէ
այն բաների յատուկ կերպարան-
քը, ամեն տարի մատուցուած
մի և նոյն պատարագներովը չէր
կարող կատարեալ անել մատու-

2 ցանողներին։ Ապա թէ ոչ՝ կ'դադարէին մատուցանելուց, որովհետև պաշտօն մատուցանողներն էլ մեղքի խղճմտանք չէին ունենալ՝ մէկ անգամ սրբուած լինելով, 3 բայց նորանցով ամեն տարի մեղքերի յիշատակ եղ լինի՝ 4 վասն զի անկարելի է որ նախատների և ցուլերի արիւնը մեղքեր 5 վեր առնէ։ Նորա համար աշխարհք մտնելիս ասում է. Զոհ և պատարագ չկամեցար, բայց մարմինը պատրաստեցիր ինձ համար. 6 Ողջակէզների և մեղաց հա- 7 մար ցաւ չհաճեցար։ Այն ժամանակ ասացի թէ Ահա գալիս եմ, գրքի գլխուն գրուած է ինձ համար քո կամքն անելու, 8 ով Աստուած։ Վերևումն ասելով թէ զոհի և պատարագի և ողջակէզների և մեղաց համար ցաւ չկամեցար և չհաճեցար նորանց, որոնք ըստ օրինաց 9 մատուցանվում են. Այն ժամանակ ասում է. Ահա գալիս եմ քո կամքն անելու, ով Աստուած, առաջինը դէն է գցում 10 որ երկրորդը հաստատէ։ Որ այն կամքով մենք սրբուեցանք մէկ անգամ Յիսուսի Քրիստոսի մարմնոյ պատարագով։

11 Եւ ամեն քահանայապետ ամեն օր կանգնած պաշտօն է կատարում. և նոյն պատարագներն է մատուցանում շատ անգամ, որ երբէք չեն կարող մեղքեր վեր 12 առնել։ Բայց սա մեղաց համար մէկ պատարագ մատուցանելով յաւիտենապէս նստեց Աս- 13 տուծոյ աջ կողմը։ Եւ այսուհետև սպասում է մինչև որ իր բոլոր թշնամիները իր ոտից պատ- 14 առանդանը դրուին։ Վասն զի մէկ պատարագով յաւիտեան կատարեց սրբուողներին։

15 Բայց Սուրբ Հոգին էլ վկայում է մեզ, այն առաջուց ասելով. 16 Թէ Սա է ան ուխտն որ կ'դնեմ նորանց հետ այն օրերից յետոյ, ասում է Տէրը, կ'տամ իմ օրէնքներըս նորանց սրտերի մէջ, և նորանց խորհուրդների վերայ կը 17 դրեմ նորանց։ Եւ ապա կ'ասէ.

Նորանց մեղքերը և նորանց անօրէնութիւնները էլ չեմ յիշել։ 18 Բայց որ տեղ որ սորանց թողութիւնը կայ, այն տեղ էլ մեղքի համար պատարագ պէտք չէ։

Արդ, եղբարք, որովհետև 19 համարձակութիւն ունինք սրբարանը մտնելու Յիսուսի արիւնով, Որն որ նորոգեց մեզ համար նոր 20 և կենդանի ճանապարհ վարագուրի միջովն, այսինքն իր մարմնով, և մի մեծ քահանայ Աս- 21 տուծոյ տան վերայ։ Ա՞ր թողնենք նորան ճշմարիտ սրտով, 22 հաւատքի լրութեամբը, ձեր սրտերը մաքրուած չար խղճմտանքից, և մեր մարմինը մկրտուած սուրբ ջրով։ Պինդ բռնենք յուսոյ դա- 23 նութիւնն՝ անսայթաք. վասն զի հաւատարիմ է խոստացողը։ Եւ դգուշանանք իրար համար՝ 24 դէպի սէր և բարի գործքեր գրգռելով. Եւ չթողնենք մեր իրար 25 հետ ժողովելը, ինչպէս սմանց սովորութիւն է. բայց էր՞ յորդորենք, և այնքան աւելի՝ որքան տեսնում էք որ օրը մօտեցած է։

Վասն զի եթէ մենք ճշմարտու- 26 թեան գիտութիւնն ընդունելուց յետոյ յօժար կամքով մեզ գործենք, այլևս նորանից յետոյ մեղաց համար զոհ չէ մնում, Այլ 27 դատաստանի սոհասր ապասելը, և կրակի զայրոյթը որ հակառակողներին կ'լափէ։ Մէկն, որ 28 Մովսէսի օրէնքն անարգում էր, առանց ողորմութեան երկու կամ երեք վկայի խօսքով մեռնում էր։ Էլ ո՞րքան աւելի, կարծում էք, 29 աստիկ պատժոյ կարժանանայ, նա որ Աստուծոյ Որդոյն ոտքի տակ կոխեց, և նոր ուխտի արիւնը պիղծ համարեց որով նա սրբուեցաւ, և շնորհաց Հոգուն նախատեց։ Վասն զի գիտենք նա- 30 րան որ ասաց. Իմն է վրէժխնդրութիւնն ես հատուցումը կ'տամ, ասում է Տէրը. և դարձեալ, Որ Տէրը կ'դատէ իր ժողովրդին։ Սարսափելի բան է կենդանի Աս- 31 տուծոյ ձեռքն ընկնելը։

Արդ յիշեցէք առաջին օրերը, 32 որ դուք լուսաւորուելուց յետոյ

և շատ չարչարանքների պատե-
33 րազմին համբերեցիք, երբեմն նա-
խատինքների և նեղութիւնների
մէջ խայտառակուեցաք, և եր-
բեմն էլ այնպիսի վիճակում լի-
նողների հետ մասնակից եղաք:
34 Վասն զի իմ կապանքների հետ
էլ չարչարուեցաք, և ձեր ապ-
րանքների յափշտակութիւնն էլ
ուրախութիւնով ընդունեցիք.
գիտենալով որ ձեր անձների հա-
մար աւելի լաւ և մնայուն ստաց-
35 ուածք ունիք երկնքում: Ուրեմն
դէն մի գցէք ձեր վստահութի-
նը, որ մեծ վարձքի հատուցումն
36 ունի: Վասն զի համբերութիւն
է պէտք ձեզ, որ Աստուծոյ կամքն
37 անելով աւետիքն առնեք: Ո-
րովհետև մնայն մի քիչ ժամա-
նակ էլ, և նա որ գալու է՝ կ'գայ
38 և չի ուշանալ: Բայց արդարը
հաւատքից կ'ապրի. և եթէ մէկը
ետ քաշուի, իմ անձը նորան չի
39 հաւանիլ: Բայց մենք ետ քաշ-
ուողներից չենք որ կորչինք. այլ
հաւատքից ենք որ՚ֆէջ հոգիները
փրկուին:

ԳԼ. ԺԱ.

1 Հաւատքն էլ յուսացած բանների
հաստատութիւնը՝ և չերևեցող
2 բանների ապացոյցն է: Վասն զի
նորանով առաջինները վկայու-
թիւն ընդունեցին:
3 Հաւատքով ենք իմանում, որ
աշխարհքները Աստուծոյ խօսքով
հաստատուեցան, որ չերևողնե-
րից այս տեսանուողները եղած են:
4 Հաւատքով Հաբէլ կայէնից ա-
ւելի լաւ պատարագ մատոյց Ա-
ստուծոյն, որով վկայութիւն ըն-
դունեց թէ արդար է, երբոր
Աստուած նորա պատարագների
վերայ վկայութիւն տուաւ. որ
նորանով տակաւին հիմն էլ խո-
սում է թէպէտ և մեռել է:
5 Հաւատքով Ենովք փոխուեցաւ
որ մահ չտեսնէ. և չէր գտնվում.
վասն զի Աստուած փոխեց նորան.
վասն զի իրանց փոխուելուցն ա-
ռաջ վկայուեցաւ որ հաճելի էր
6 Աստուծոյն: Բայց առանց հա-

ւատքի անկարելի է հաճոյ լինիլ.
վասն զի Աստուծոյն մօտեցողը
պէտք է հաւատայ, թէ նա կայ,
և թէ իրան խնդրողներին վարձա-
հատոյց կ'լինի:
7 Հաւատքով Նոյ պատգամ առ-
նելով դեռ չերևած բաների հա-
մար և երկիւղած լինելով շինեց
տապանը իր տան փրկութեան
համար, որով աշխարհքին դա-
տապարտեց. և հաւատքով լինող
արդարութեանը ժառանգ եղաւ:
8 Հաւատքով Աբրահամ երբոր
կանչուեցաւ հնազանդ եղաւ դուրս
գնալու այն տեղ, որ ժառանգու-
թեան համար առնելու էր. և
դուրս եկաւ գնաց առանց գիտե-
նալու թէ ուր է գնում:
9 Հաւատքով պանդուխտ եղաւ աւետիքի
երկրումն իբր օտարութիւնում.
խորաններում բնակելով Իսահակի
և Յակոբի հետ, որ նոյն աւետի-
քի ժառանգակիցները էին:
10 Վասն զի սպասում էր այն հիմունքով
հաստատուած քաղաքին, որի
ճարտարապետն և արարիչն Աստ-
ուած է:
11 Հաւատքով Սառան ինքն էլ
սերմն առնելու զօրութիւն ընդու-
նեց. և տարիժամ հասակի մէջ
որդի ծնեց. վասն զի հաւատա-
րիմ համարեց խոստացողին:
12 Որ համար և այն մէկից, այն
էլ այն մեռած պրծածից՝ շատու-
թեամբ ծնվում էին, ինչպէս եր-
կնքի աստղերն և ինչպէս անհա-
մար աւազը ծովի ափի մօտ:
13 Սորանք ամենքը մեռան հաւատ-
քի մէջ. առանց աւետիքները ըս-
տանալու, այլ հեռուանց տես-
նում էին նորանց և ուրախանում.
և բարևում էին և դաւանում,
թէ օտարներ և պանդուխտներ
14 են երկրումը: Վասն զի այնպիսի
բաներ խօսողները յայտնի ցոյց են
տալիս, որ մի հայրենիք են որո-
նում: Եւ եթէ այն էին յիշում
15 որից դուրս եկան, ապաքէն ժա-
մանակ ունէին ետ դառնալու:
16 Բայց հիմա աւելի ազնիւին են ցան-
կանում, այսինքն երկնաւորին. և
նորա համար Աստուած մօթ չէ
համարում՝ նորանց Աստուած

կոչուիլ. վասն զի մի քաղաք է պատրաստել նորանց համար։
17 Հաւատքով Աբրահամ Իսահակին պոծոյծ մատոյց երբոր փորձուեցաւ. և միածնին մատուցանեաւ էր նա որ աւետիքն ընդունել էր,
18 Որ ասուեցաւ թէ Իսահակով քեզ զաւակ կ'կոչուի։
19 Մտածելով թէ Աստուած կարող է մեռելներէն էլ յարուցանել. ուստի օրինակի համար էլ ընդունեց նորան։
20 Հաւատքով Իսահակ Յակոբին և Եսաւին օրհնեց հանդերձեալ
21 բաներուն մասին։ Հաւատքով Յակոբ մեռնելիս Յովսէփի որդկանց ամեն մէկին օրհնեց, և իր գաւազանի ծայրի վերայ երկրպագութիւն ըրաւ։
22 Հաւատքով Յովսէփ վախճանելիս յիշեց Իսրայէլի որդոց դուրս գնալու մասին, և իր ոսկրներուն համար հրաման տուաւ։
23 Հաւատքով Մովսէս երբոր ծնաւ՝ երեք ամիս թաքուն պահուեցաւ իր ծնողքէնը. վասն զի տեսան թէ մանուկը գեղեցիկ էր, և չվախեցան թագաւորի հրամանին
24 նէնը։ Հաւատքով Մովսէս երբոր մեծցաւ՝ չկամեցաւ փարաւոնի
25 աղջկան որդի կոչուիլ։ Աւելի լաւ համարեց Աստուծոյ ժողովրդի հետ չարչարուիլ, քան թէ մի առ ժամանակ մեղքի զուարճութիւնն ունենալ,
26 Աւելի մեծ հարստութիւն համարելով Քրիստոսի նախատինքը Եգիպտոսոց հարստութիւններէն. վասն զի աչք դրած մնիկ էր տալիս վարձքի
27 հատուցմանը։ Հաւատքով թողեց նա Եգիպտոսը չվախենալով թագաւորի բարկութիւնէն. վասն զի Անտեսանելին տեսնողի պէս
28 պինդ բռնել էր։ Հաւատքով տարաւ զատիկը և արիւնի հեղումը. որ առաջնեկներուն աւերակիչը չդպնայ նորանց։
29 Հաւատքով անցան Կարմիր ծովէն ինչպէս ցամաքով. որի փորձն Եգիպտացիներն անելիս խեղդուեցան։
30 Հաւատքով Երիքովի պարիսպները վայր ընկան, երբոր եօթն օր նորա շուրջը պտտեցին։
31 Հաւատքով Բախտը պոռնիկը չկորաւ անհաւատներուն հետ, որ լրտեսներին ընդունել էր խաղաղութիւնով։
32 Եւ էլ ի՞նչ ասեմ. վասն զի ժամանակս բաւական չէ որ պատմեմ Գեդէոնի, Բարակի, Սամփսոնի, Յեփթայի, Դաւթի և Սամուէլի և մարգարէներուն համար,
33 Որոնք հաւատքով թագաւորութիւններ յաղթեցին, արդարութիւն գործեցին, աւետիքներ ստացան, առիւծներուն բերաններ խցկեցին.
34 Կրակի զօրութիւն անցրին. սրի բերանէն պրծան. տկարութիւնէն զօրացան. պատերազմի մէջ զօրաւոր եղան. օտարներուն բանակներն տուին։
35 Կանայք իրանց մեռելներն ընդունեցին յարութիւնէն. ուրիշներն էլ խիստ չարչարուեցան ազատութիւնը չընդունելով, որ լաւագոյն յարութեան հասնին։
36 Միւսներն էլ նախատինքներու և ծեծերու, կապանքներու և բանտի դիմացան.
37 Քարկոծուեցան, ազոռուեցան, փորձանքի մէջ ընկան, սրով սպանուած մեռան. ոչխարի մորթերով և այծի կաշիներով մեն ելկան. կարօտութիւն քաշելով, նեղացած, չարչարուած.
38 Որ աշխարհքը նորանց արժանի չէր. անապատներուն մոլորուեցան և լեռներուն և սյրերուն և երկրի խոռոչներուն։
39 Եւ սորանք ամենը հաւատքով վկայութիւն առին, բայց առիքը չընդունեցին.
40 Որովհետև Աստուած մեզ համար աւելի լաւ բան նախատեսաւած էր, որ նոքա առանց մեզ չկատարուին։

ԳԼ. ԺԲ

1 Ուստի մենք էլ որ վկայներով այսքան *բազմութիւն ունինք մեզ շրջապատած, դէն գցենք ամեն ծանրութիւն, և մեզ դիւրաւ պաշարող մեղքը. և համբերութեամբ վազենք մեր առջև դրած պատե-

*ամպ

2 բաղմի ընթացքը. Մտիկ տանք
Հաւատոյ զօրագլուխին և կատարող Յիսուսին, որ իր առջև դրուած ուրախութեան փոխանակ խաչը յանձն առաւ, և ամօթին արհամարհելով Աստուծոյ աթոռի աջ կողմը նստեց.
3 Ուրեմն մտածեցէք նորա վերայ, որ իրան դէմ Եղած այսպիսի հակառակութիւն քաշեց մեղաւորներէն, որ դուք ձեր անձերով չյոգնիք թուլացած։ Տակաւին մինչև արիւն ընդդիմացած չէք կռուած մեղքին. Եւ մոռցաք այն խիթարութիւնն որ ձեզ հետ ինչպես որդիներուն հետ խօսում է. Իմ որդեակ, մի անարգեր Տիրոջ խրատը. և ոչ էլ սիրտդ կտրուի, նորանից յանդիմանուած ժամանակ։ Վասն զի Տէրը իրան սիրածին խրատում է. Նա ձեծում է ամեն որդի որ ընդունում է։
7 Եթէ խրատին համբերէք, Աստուած ձեզ հետ ինչպես որդոց հետ կ'վարուի. վասն զի ո՞ր որդին է որ հայրը նորան չէ խրատում։ Բայց եթէ առանց խրատի էք, որին ամենքը մասնակից եղան, ուրեմն խորթ էք և ոչ որդիք։ Եաև մենք մեր մարմնաւոր հայրերը խրատող ունենալով նրանցից ամաչում էինք. չէ՞ որ առաւել և պիտի հնազանդինք հոգիների Հօրն, և ապրինք։ Վասն զի տղաքն մի քիչ ժամանակ իրանց հաճոյ երևցածի պէս խրատում էին, բայց նա՝ օգտի համար, որ նորա սրբութիւնն ընդունինք։ Եւ ամեն խրատ հէնց նոյն ժամանակին ուրախութիւն չէ երևում, այլ տրտմութիւն. բայց յետոյ նորանով վարժուածներին արդար խաղաղութեան պտուղ է վճարում։
12 Ընդ հանդր հասատատեցէք թուլացած ձեռները, և տկարացած
13 ծնկները. և ձեր ոտների համար ուղիղ ճանապարհներ շինեցէք, որ կաղը չգլորուի, այլ մանաւանդ
14 բժշկուի։ Հետևեցէք խաղաղութեան ամենքի հետ և սրբութեան, որ առանց նորան ոչ ոք Տիրոջը չի տեսանիլ. Զգոյշ կացէք, որ մէկը յետ մնացող չլինի Աստուծոյ շնորհքից. Որ մի դառն արմատ վեր չբուսանէ և նեղութիւն տայ, և նորանով շատերը պղծուին։ Որ չլինի մէկը պոռնիկ և պիղծ ինչպէս Եսաւը. որ մի կերակուրի համար իր անդրանկութիւնը ծախեց։ Վասն զի գիտէք որ թէև յետոյ կամեցաւ օրհնութիւնը ժառանգել, Բ-ոյց մերժուեցաւ. որովհետև ապաշխարութեան տեղի չգտաւ, թէև արտասուքով խընդրեց նորան։
18 Վասն զի դուք չէք մօտեցել շօշափելի լեառան, որ կրակով վառուած էր և այն մէգին և խաւարին և մրրկին. Եւ փողի հընչումին և խօսքերի ձայնին, որից հրաժարուեցան լսողները, որ խօսքը չշարունակուի նորանից։ Վասն զի չէին դիմանում այն հրամանին. և եթէ մի անասուն էլ մօտենայ լեառան քարկոծուի կամ նետով սպանուի. Եւ այնպէս սաստիկ էր տեսիլքն, որ Մովսէս ասում էր, Ես զարհուրում եմ և դողում։) Այլ մօտեցել էք Սիոն լեառան, և կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմին, և բիւրաւոր հրեշտակներին, Եւ երկնքում գրուած անդրանիկների հանդէսին և եկեղեցուն, և ամենքի դատաւոր Աստուծոյն, և կատարեալ արդարների հոգիներին. Եւ նոր կտակարանի միջնորդ Յիսուսին. և այն արեան հեզմանը որ աւելի լաւ է խօսում քան թէ Հաբէլի արիւնը։
25 Զգոյշ կացէք որ չմերժէք նորան որ խօսեց. վասն զի եթէ չկարողացան պրծնել երկրիս վերայ պատգամ տուողին մերժողները, որքան աւելի ապա մենք, եթէ երկնքից խօսողին մերժենք։ Որի ձայնն այն
26 ժամանակ երկիրը շարժեց. և հիմա խոստացել է և ասում է. Թէ Միւսանգամ ևս կ'շարժեմ, ոչ միայն երկիրը բայց երկինքն էլ։
27 Բայց այն Միւսանգամը ցոյց է տալիս որ շարժուող բաները իբրև եղածներ պիտի փոխուին, որ

Հաստատ Ինձն չջարժուողները ։
28 Ուստի անշարժ թագաւորութիւն
ընդունած լինելով , պինդ բռնենք
այն շնորհքն որով պաշտում ենք
Հաճութեամբ Աստուծոյն , ահով
29 և երկիւղածութեամբ ։ Վասն զի
մեր Աստուածն փճացնող կրակ է ։

ԴԼ· ԺԳ·

1 Եղբայրասիրութիւնը Հաստատմը-
2 նայ . Հիւրասիրութիւնը մի մոռա-
նաք . վասն զի նորանով ոմանք
առանց գիտենալու Հրեշտակներ
3 ընդունեցին ։ Յիշեցէք կապեալնե-
րին իբր մեսին կապուածներ . և
չարչարանքներին ինչպէս դուք էլ
4 մարմնով լինողներ էք Ամուսնու-
թիւնը ամեն կողմանէ պատուա-
կան է և անկողինը սուրբ . բայց
շնացողներին և պոռնիկներին Աս-
5 տուած կ'դատէ ։ Վարքն առանց
արծաթասիրութեան լինի . բաւա-
կան Համարեցէք այն որ ձեռնհե-
րուն մէջ ունիք . վասն զի ինքն ա-
սաց , Թէ չեմ թողուր քեզ և ե-
6 րեսից չեմ գցել ։ Այնպէս որ Հա-
մարձակ ենք ասելու . Տէրն է իմ
օգնականը , և չեմ վախենար , ի՞նչ
7 կանէ ինձ մարդը ։ Յիշեցէք ձեր
առաջնորդներին որ Աստուծոյ
բանը խօսեցին ձեզ . նայեցէք նո-
րանց վարմունքի վախճանին և
նմանեցէք Հաւատքին ։
8 Յիսուս Քրիստոս նոյն է երէկ և
այսօր և յաւիտեան ։
9 Կերպ կերպ և օտար ուսմունք-
ներով մի տարուիք . վասն զի
լաւ է որ սիրտը շնորհքով Հաս-
տատուի , ոչ Թէ կերակուրներով ,
որոնցով ոչինչ օգուտ չունեցան
10 նորանք որ այնպէս գնացին Մենք
ունինք սեղան , որից ուտելու իշ-
խանութիւն չունին խորանի պաշ-
11 տամնեքին ծառայողները . Վասն
զի այն անասուններուն արիւնն ,
որ քահանայապետի ձեռնէն արքա-
նի մէջ է տարուում մեղաց Հա-
մար , նորանց մարմիններն այր-
12 ւուում են բանակից դուրս ։ Նորա
Համար Յիսուս էլ որպէս զի բուն
իր արիւնովը ժողովրդին սրբէ ,
13 դրան դրսի կողմանէն չարչարուե-
ցաւ ։ Ուրեմն ելնե՛ք բանակէն դուր-
սը գնանք նորա մօտ , և նորա նա-
խատինքը մեզ վերայ առնենք ։
14 Վասն զի այստեղ Հաստատ մնա-
ցող քաղաք չունինք . այլ Հան-
դերձեալն ենք որոնում ։ Ուստի
15 նորա ձեռնէն ամեն ժամանակ Ա-
ստուծոյն օրհնութեան պատարագ
մատուցանենք . այսինքն նորա ա-
նունը դաւանող շրթունքների
պտուղ ։ Իսկ բարերարութիւնը
16 և Հաղորդակցիլը մի մոռնանք . վասն զի այնպիսի պա-
տարագներին Հաճանում է Աստ-
ուած ։ Ակնջ դրէք ձեր առաջ-
17 նորդներին , և Հնազանդեցէք .
վասն զի նորանք Հսկում են ձեր
Հոգիների Համար որպէս թէ Հա-
շիւ պիտի տան որ ուրախութիւ-
նով անեն այն , և ոչ Թէ Հառա-
չելով . որ դու ձեզ օգուտ չէ ։
18 Աղօթք արէք մեզ Համար , վասն
զի Համոզուած ենք որ բարի խըղճ-
մտանք ունիմ կամենալով ամեն
19 բանի մէջ բարուք վարուիլ ։ Եւ
առաւել ևս ապրչում եմ որ այս
անէք , որ շուտով դառնամ ձեզ
մօտ ։

20 Եւ խաղաղութեան Աստուա-
ծը որ մեռելներից վեր Հանեց ոչ-
խարների մեծ Հովիւն յաւիտենա-
կան ուխտին արիւնովը մեր Տէր
21 Յիսուսին , Հատուտէ ձեզ ամեն
բարի գործքի մէջ նորա կամքն ա-
նելու , և գործէ ձեզանում ինչ
որ Հաճոյ է նորա առջև Յիսուսի
Քրիստոսի ձեռովը . որին քնէ փառք
յաւիտեանս յաւիտենից . Ամէն ։
22 Աղաչում եմ ձեզ , եղբարք ,
Համբերութեամբ տարէք այս մը-
խիթարութեան խօսքը . և քիչ
23 էլ գրեցի ձեզ ։ Ճանաչում էք Տի-
մոթէոս եղբօրը որ ձեզ մօտ ու-
ղարկուած է . եթէ նա շուտով
գայ՝ նորա հետ կ'տեսանեմ ձեզ ։
24 Բարև տուէք ձեր բոլոր առաջ-
նորդներին , և բոլոր սրբերին , բա-
րև են տալիս ձեզ նորանք որ Ի-
25 տալիայի կողմերից են ։ Շնորհքը
ձեր ամենի հետ լինի . Ամէն ։

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Յակովբոս Աստուծոյ և Տէր Յի-
սուսի Քրիստոսի ծառայ. տասն-
երկու ցեղերուդ որ ցրուած էք,
ողջոյն։
2 Բոլորովին ուրախութիւն հա-
մարեցէք, եղբայրք, երբոր կերպ
կերպ փորձանքներուն մէջ ընկնիք.
3 գիտնալով որ ձեր հաւատքին
փորձառութիւնը համբերութիւն
4 է գործէ։ Իսկ համբերութիւնը
թող կատարեալ գործ ունենայ.
որ կատարեալ և ամբողջ ըլնիք,
և ոչ մի բանի պակասութիւն
չունենաք։
5 Բայց եթէ մէկը ձեզմէնից պա-
կասութիւն ունի իմաստութեան,
թող խնդրէ Աստուածմանից, որ
ամենին տալիս է առատութեամբ
և չէ նախատում, և կ'արուի նո-
6 րան։ Միայն թէ թող հաւատ-
քով խնդրէ առանց երկմտելու,
վասն զի երկմտողը նման է ծովի
հողմտկածուած և տատանուած
7 ալիքին։ Այն մարդը թող չկարծէ
8 'որ Տէրէցը մի բան կ'առնէ։ Երկ-
միտ մարդը անհաստատ է իր բո-
լոր ճանապարհներուն։
9 Թող խոնարհ եղբայրը պարծե-
10 նայ իր բարձրութիւնովը։ Եւ հա-
րուստն իր խոնարհութիւնովը.
վասն զի խոտի ծաղկի նման կ'անց-
11 նի։ Վասն զի արեգակը ծագեց
իր առաջիկ տաքութիւնովը և
խոտը չորցուց, և նորա ծաղիկը
թափուեցաւ, և նորա երեսի գե-
ղեցկութիւնը կորաւ. այնպէս էլ
հարուստն իր ճանապարհներուն
կ'թառամի։
12 Երանելի է այն մարդն որ համ-
բերում է փորձութեան. վասն զի
ընտիր գտնուելով կենաց պսակը
կ'առնէ, այն որ Տէրը խոստա-
13 ցաւ իրան սիրողներին։ Ոչ ոք,
որ փորձութեան մէջ է, չասէ թէ
Աստուածմանից եմ փորձուում.
վասն զի Աստուած անփորձ է
չար բաներից. ինքն էլ ոչ մէկին
չէ փորձում. Բայց ամեն մէկը 14
փորձուում է բուն իր ցանկութի-
նից հրապուրուած և խաբուած։
Եւ այնուհետև որ ցանկութիւնը 15
յղացած է՝ ծնում է մեղք, և
մեղքն էլ երբոր կատարուում է՝
մահ կ'ծնի։ Մի խաբուիք իմ սի- 16
րելի եղբարք. Ամեն բարի տուրք, 17
և ամեն կատարեալ պարգև վե-
րևիցն է իջնում լուսոյ Հօրիցը.
որի մէջ բնաւ փոփոխում կամ
դարձուածքի շուք չկայ։ Նա կա- 18
մեցուով ծնաւ մեզ ճշմարտու-
թեան խօսքով, որ մենք նորա ա-
րարածների երախայրի լինինք։
Ասում, իմ սիրելի եղբայրներ, 19
թող ամեն մարդ շուտ լինի լսե-
լու համար, և ծանր խօսելու հա-
մար, և ծանր բարկանալու հա-
մար։ Վասն զի մարդու բարկու- 20
թիւնն Աստուծոյ արդարութիւնը
չէ գործում։
Սորա համար ամեն պղտեղու- 21
թիւն և չարութեան առատելու-
թիւնը դէն գցեցէք, և խոնար-
հութիւնով ընդունեցէք ձեր մէջ
սերմնած խօսքը, որ կարող է
ձեր հոգիները ապրեցնել։
Բայց խօսքը անող եղէք, և ոչ 22
միայն լսողներ՝ ձեր անձերը խա-
բելով։ Վասն զի եթէ մէկը միայն 23
խօսքի լսող է և ոչ անող, նա նման
է այն մարդուն որ պղտցած մը-
տիկ է տալիս իր բնական երե-
սին հայելու մէջ. Վասն զի նա- 24
յելով տեսաւ իրան և անցաւ,
և շուտով մոռացաւ թէ ինչպէս
էր։ Բայց նա որ ազատութեան 25
կատարեալ օրէնքի մէջ աչքը գը-
ցած մտիկ տուաւ և նորանում
կացաւ, նա մոռացուկ լսող չե-
ղաւ այլ գործ կատարող. նա իր
անելովը երանելի է։ Եթէ ձևա- 26
նից մէկը կարծում է թէ կրօնա-
ւոր է և իր լեզուն չսանձահարէ,
այլ իր սիրտը խաբէ, այնպիսի
մարդու— կրօնաւորութիւնը զուր է,

27 Սուրբ և անարատ կրօնասիրու-
թիւնն Աստուծոյ և Հօր առջև
սա է, որքերին և այրիներին այ-
ցելել իրանց նեղութեան մէջ, և
իր անձն աշխարհքից անարատ
պահել։

ԳԼ. Բ

1 Եղբարքս, մի գուցէ աչառու-
թեամբ ունենաք մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի հաւատքը, որ փառաց
2 Տէրն է։ Եթէ մի մարդ մտնէ ձեր
ժողովարանը, որ ոսկի մատանի
և պայծառ հագուստ ունենայ,
և մի աղքատ էլ մտնէ այնտեղ
3 կեղտոտ հագուստով. Եւ մտիք
տաք նորան որ պայծառ հագուստ
ունի, և ասէք նորան. Դու այս
տեղ նստիր պատուով, և աղքա-
տին ասէք թէ Դու այնտեղ կանգ-
նիր. կամ թէ նստիր այնտեղ
4 պատուանդանիս մօտ։ Եւ խղճմը-
տանք չէ՞ք անում ձեզանում, և
չեղա՞ք չար խորհուրդների դա-
5 տաւորներ։ Լսեցէք, սիրելի եղ-
բարքս, չէ՞ որ Աստուած ընտրեց
այս աշխարհքի աղքատներին, որ
հարուստ են, և ժառանգներ այն
արքայութեան որ Աստուած խոս-
6 տացաւ իրան սիրողներին։ Բայց
դուք անպատուեցիք աղքատին
չէ՞ որ հարուստներն են ձեզ հա-
րըստահարում և նորանք են ձեզ
7 դատաստան քաշում։ Չէ՞ որ նո-
րանք են հայհոյում այն բարի ա-
նունն որ ձեզ վերայ կանչուած է։
8 Արդ եթէ թագաւորական օրէն-
քը կատարէք բան գրոց՝ Ընկ Սի-
րիր քո ընկերին քո անձի պէս,
9 լաւ էք անում։ Բայց եթէ աչա-
ռութիւն էք անում, մեղք էք
անում՝ յանդիմանուած օրէնքից
10 ինչպէս օրինազանցներ։ Վասն զի
ով որ բոլոր օրէնքը պահէ և մէ-
կու մի մեղանչէ, ամեն օրէնքին
11 եղաւ պարտական։ Որովհետև այն
ինչ ասաց թէ մի անիր, ասողը ա-
սաց էլ, Մի սպաներ, իսկ եթէ
չնութիւն չանես բայց սպանես,
12 եղար օրինազանց։ Ա՛յնպէս խօ-
սեցէք և այնպէս արէք, որպէս
թէ ազատութեան օրէնքով էք
13 դատուելու։ Վասն զի անողորմ
դատաստան պիտի լինի ողոր-
մութիւն չանողի վերայ. և ողոր-
մութիւնը պարծենում է դատաստա-
նի դէմ։

14 Ի՞նչ է օգուտը, եղբարքս, եթէ
մէկն ասէ թէ հաւատք ունի և
գործք չունենայ. մի՞թէ հաւատ-
քը կրնայ ապրեցնել նորան։ 15 Եթէ
մի եղբայր կամ քոյր մերկ լինին
կամ օրուայ կերակրին կարօտ.
16 Եւ ձեզանից մէկն ասէ նորանց. Գնացէք խաղաղութեամբ, տա-
քացէք և կշտացէք. և մարմնոյ
պէտք եղածը չտաք նորանց, օ-
գուտն ի՞նչ կ'լինի։ 17 Այսպէս էլ
հաւատքը, եթէ գործ չունենայ,
18 բուն ինքեան մեռած է։ Բայց մէ-
կը կ'ասէ. Թէ Դու հաւատք ու-
նիս, և ես գործք ունիմ. ցոյց
տուր ինձ քո հաւատքն *գործքե-
րից, և ես էլ ցոյց կ'տամ քեզ
19 իմ հաւատքն իմ գործքերիցը։ Դու
հաւատում ես թէ մէկ է Աստ-
ուած, լաւ ես անում. դեւերն էլ
են հաւատում և սարսում են։
20 Բայց կամենո՞ւմ ես գիտենալ, ով
դատարկ մարդ, որ հաւատքն ա-
ռանց գործքերի մեռած է։ 21 Մեր
հայրն Աբրահամ՝ չէ՞ որ գործքե-
րով արդարացաւ իր որդի Սահա-
կին պատարագ հանելով սեղանի
վերայ։ 22 Տեսնո՞ւմ ես որ հաւատքը
նորա գործքերի հետ միասին գոր-
ծեց. և այն գործքերովը հաւատքը
կատարեալ եղաւ. 23 Եւ կատարուե-
ցաւ գրքի խօսքը որ ասում է. Եւ
Աբրահամ հաւատաց Աստուծոյն
և արդարութիւն համարուեցաւ
նորա համար. և Աստուծոյ բա-
րեկամ կոչուեցաւ։ 24 Արդ տես-
նո՞ւմ էք որ մարդ գործքերով է
արդարանում, և ոչ միայն հա-
ւատքով։ 25 Նոյնպէս էլ Րահաբ
պոռնիկը. չէ՞ որ գործքերով ար-
դարացաւ, երբոր լրտեսներին ի-
րան մօտ առաւ և ուրիշ ճանա-
պարհով արձակեց։ 26 Վասն զի ին-
չպէս որ մարմինն առանց հոգու
մեռած է, այնպէս և հաւատքն
առանց գործքերի մեռած է։

---

*Ամենք առանց գործքերի։

ԳԼ. Գ

1 Եաս վարդապետներ մի լինիք, եղբարքս. գիտենալով որ մեծ դա-
2 տաստան պիտի ընդունիք։ Վասն զի շատ բաներով մեղանչումք ենք
3 ամենքս։ Եթէ մէկը խօսքով չէ մեղանչում նա կատարեալ մարդ է, որ կարող է իր բոլոր մարմինը
4 սանձահարել։ Ցեա, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նորանք հնազանդեն մեզ, և նորանց բո-
լոր մարմինը հնազանդեցնումք
5 ենք։ Ահա նաւերն էլ, որ այսչափ մեծ են և սաստիկ քամիներից քշվում են, մի փոքր ղեկով կառավարվում են որ կողմն որ ղեկավարի միտքը կամենայ։ Այնպէս էլ լեզուն՝ մի փոքր անդամ է, բայց մեծ մեծ բաներ է խօսում. տես, մի փոքր կրակը ո՞ր-
6 քան բան է վառում։ Լեզուն էլ կրակ է՝ այդ անիրաւութեան աշխարհքը. այսպէս է լեզուն դրուած մեր անդամների մէջ, որ նա բոլոր մարմինն ապականում է և կրակով վառում է մեր գոյութեան անիւը, և ինքն բորբո-
7 ւած է գեհենիցը։ Վասն զի գազանների, և թռչունների, և սողունների, և ծովում լինողների բոլոր բնութիւնը նուաճուած է և նուաճվում է մարդկային բը-
8 նութիւնից։ Բայց մարդկանց լեզուն ոչ ով կարող չէ նուաճել, մի անզուսպ չար է՝ լցուած մա-
9 հաբեր թոյնով։ Նորանով օրհնում ենք Աստուած և Հայրն, և նորանով անիծում ենք մարդկանց, որ Աստուծոյ նմանութիւնովը ս-
10 տեղծուած են։ Միևնոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւն և անէծք. պէտք չէ, եղբարքս,
11 որ սա այսպէս լինի։ Մի՞թէ մի աղբիւր նոյն ակնից քաղցր և
12 դառն ջուր կ'բղխէ։ Մի՞թէ կարելի է, եղբարքս, որ թզենին ձիթապտուղ բերէ, կամ որթը թուզ. այնպէս էլ աղի աղբիւրն
13 չէ կարող քաղցր ջուր հանել։ Ով է ձեզանում իմաստուն և խելացի, թող իր բարի վարքովը ցոյց տայ իր գործքերը իմաստութեան

ԳԼ. Դ

հեզութիւնովը։ Բայց եթէ դառն 14
նախանձ և հակառակութիւն ունիք ձեր սրտերումը, մի պարծենաք և սուտ մի տաք ճշմարտութեան դէմ։ Ա՛յս իմաստութիւնը վերևից իջած չէ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւական։ Վասն 16
զի ուր որ նախանձ և կռիւ կայ, այնտեղ անկարգութիւն և ամենայն բաներ կան։ Բայց վերին 17
մտաւութիւնը նախ և առաջ սուրբ է, և յետոյ խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով և բարի պտուղներով լիքն, անկողմնակալ, անկեղծ։ Եւ արդարութեան պտուղը խաղաղութիւնով է սերմվում նորանց համար, որ խաղաղութիւն են անում։

ԳԼ. Դ

Ո՞ր տեղից են պատերազմունք- 1
ներ և կռիւներ ձեր միջումը. չէ՞ որ այստեղից է, ախտից ցանկութիւններից որ պատերազմում են ձեր անդամներումը։ Ցանկա- 2
նում էք և չունիք. սպանում էք և նախանձում էք և չէք կարողանում հասնել. պատերազմում էք կռվում էք, բայց չունիք, ո-
րովհետև չէք խնդրում։ Խնդրում 3
էք և չէք առնում, վասն զի չար կերպով էք խնդրում, որ ձեր ցանկութիւններումը վատնէք։ Շնա- 4
ցողներ, չէք գիտում որ աշխարհքիս սէրը թշնամութիւն է Աստուծոյ դէմ. արդ՝ ով որ կամենայ աշխարհքի բարեկամ լինել, իր անձն Աստուծոյ թշնամի կ'առնէ։ Կամ թէ կարծում էք Սուրբ 5
Գիրքը պարապ տեղն է ասում, Նախանձով փափագում է հոգին որ բնակուած է մեզանում. Բայց 6
աւելի շնորհք է տալիս. Նորա համար ասում է. Տէրն ամբարտաւաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս։ Արդ հնազանդեցէք Ա- 7
ստուծոյն, հակառակ կացէք սատանային, և կ'փախչի ձեզանից։ Մօտեցէք Աստուծոյն, և նա կ'մօ- 8
տենայ ձեզ։ Սրբեցէք ձեր ձեռները, ով մեղաւորներ, և ձեր

արտերը մաքրեցեք, ով երկմիտ-
9 ներ։ Տառապեցէք և սուգ արէք
և լացէք. ձեր ծիծաղը թող
սուգ դառնայ, և ձեր ուրախու-
10 թիւնը տրտմութիւն։ Խոնարհե-
ցէք Տիրոջ առջև և նա կ'բարձ-
րացնէ ձեզ։
11 Իրար մի բամբասէք, եղբայրք,
իր եղբօրը բամբասողը կամ իր
եղբօրը դատողը օրէնքին է բամ-
բասում և օրէնքին է դատում.
արդ՝ եթէ օրէնքը դատում ես,
էլ օրէնքի կատարող չես այլ դա-
12 տաւոր։ Մէկն է օրէնադիրը [և
դատաւորը] որ կարող է փրկել և
կորցնել. դու ո՞վ ես որ ուրիշին
դատում ես։
13 Ահա, ով դուք, որ ասում
էք, թէ Այսօր և էգուց գնանք
այս ինչ քաղաքը, և այն տեղ
մի տարի լինինք և վաճառենք և
14 շահենք. Դուք որ չէք գիտում
15 էգուցվայ օրը. Ի՞նչպիսի բան է
ձեր կեանքը. Վասն զի մի շոգի
է, որ մի քիչ ժամանակ երեւում է
և յետոյ անհետանում. փո-
խանակ որ պէտք էր ասէիք, եթէ
Տէրը կամենայ և ապրինք, և այս
բանը կամ այն բանը կ'անենք։
16 Բայց հիմա պարծենո՞ւմ էք ձեր
ամբարտաւանութիւնումը. ամեն
այդպիսի պարծանքը չարութիւն
17 է։ Արդ ով որ բարին գիտենայ
և չանէ, նորա համար մեղք է։

ԳԼ. Ե

1 Ադէ հիմա ով հարուստներ,
լացէք և ողբ արէք ձեր թշուա-
ռութիւնների վերայ, որ պիտի
2 գան ձեզ վերայ։ Ձեր հարստու-
թիւնը փտել է, և ձեր հանդերձ-
3 ները ցեցի կերակուր եղան. Ձեր
ոսկին և արծաթը ժանգոտած,
նորանց ժանգը վկայ կ'լինի ձեզ
դէմ, և ձեր միսերը կ'ուտէ կրակի
նման. դուք գանձեր դիզեցիք յե-
4 տին օրերում։ Ահա այն մշակնե-
րի վարձքն որ ձեր արտերը հնձել
են, և որ դուք զրկել էք, աղա-
ղակում է, և հնձողների աղա-
ղակները հասան զօրութեանց Տի-
5 րոջ ականջը։ Երկրի վերայ փո-
փուկ ապրեցիք և զբօսացիք. ձեր
սրտերը գիրացրիք ինչպէս մորթե-
լու համար։ Զրկեցիք, սպանեցիք 6
արդարին, նա հակառակ չէ կե-
նում։
Արդ, եղբայրք, երկայնամիտ 7
եղէք մինչև Տիրոջ գալուստը. ա-
հա մշակը երկայնամիտ է ազած ը-
պատում է երկրի պտուղին
պողին, մինչև որ առաջի և վերջի
անձրևն առնէ։ Երկայնամիտ եղէք 8
դուք էլ, հաստատեցէք ձեր սըր-
տերը. վասն զի Տիրոջ գալուստը
մօտացել է։ Մի հառաչէք իրար 9
դէմ, եղբայրք, որ չդատուիք. ա-
հա դատաւորը դրան առջև կանգ-
նած է։ Եղբայրք, չարչարանքի և 10
երկայնմտութեան օրինակ առէք
մարգարէներին, որ Տիրոջ անու-
նովը խօսեցին։ Ահա համբերող- 11
ներին երանի ենք տալիս. Յոբայ
համբերութիւնը լսել էք, և Տի-
րոջ կատարումը տեսաք. որ Տէրը
բազմողութ է և ողորմած։
Եւ ամեն բանից առաջ, եղ- 12
բայրք, երդում մի անէք ոչ երկնի-
քով, ոչ երկրով և ոչ էլ մի ու-
րիշ երդումով, այլ թող լինի
ձեր այո այո և ոչն ոչ, որ դա-
տաստանի տակ չընկնիք։
Եթէ ձեզանից մէկը նեղութիւն 13
է քաշում, թող աղօթք անէ.
եթէ մէկն ուրախանում է, թող
սաղմոս ասէ։ Եթէ ձեզանից մէկը 14
հիւանդ է, թող եկեղեցու երէց-
ներին կանչէ, որ նորա վերայ ա-
ղօթք անեն, նորան իւղով օծեն
Տիրոջ անունովը. Եւ հաւատքով 15
աղօթքը կ'փրկէ այն հիւանդին,
և Տէրը վեր կ'կացնէ նորան. և
եթէ մեղք գործած լինի, կ'թող-
ուի նորան։ Իրար խոստովանեցէք 16
ձեր յանցանքները, և իրար վերայ
աղօթք արէք, որ բժշկուիք, շատ
զօրաւոր է արդարի աղօթքը ներ-
գործելով։ Եղիան մարդ էր մեզ 17
պէս կրից ենթակայ. և ջերմե-
ռանդ աղօթք արաւ որ անձրև
չգայ, և անձրև չեկաւ երկրի վե-
րայ երեք տարի և վեց ամիս։ Եւ 18
դարձեալ աղօթք արաւ, և եր-
կինքն անձրև տուաւ, և երկիրն
իր պտուղը բուսեցրեց։

19 Եղբարք, եթէ ձեզանից մէկը
ճշմարտութեան ճանա-
պարհից, և մէկը դարձնէ նորան
20 թող գիտենայ, թէ մեղաւորին

իր մոլորութեան ճանապարհից
դառնողը, մի հոգի կ'փրկէ մա-
հից և մեղաց շատութիւնը կը
ծածկէ։

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պետրոս Յիսուսի Քրիստոսի ա-
ռաքեալ, ընտրուած օտարական-
ներիդ որ ցրուած էք Պոնտոսի,
Գաղատիոյի և Կապադովկիոյի և
2 Ասիոյի և Բիւթանիոյի էրկընդր-
ը. Հօր Աստուծոյ կանխագիտու-
թեան պէս, Հոգու սրբութիւնով,
հնազանդութեան և Յիսուսի Քր-
իստոսի արեան սրսկելու համար.
շնորհք և խաղաղութիւն շատա-
նայ ձեզ վրայ։
3 Օրհնեալ է Աստուած և մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրն,
որ իր առատ ողորմութեան հա-
մեմատ մեզ վերստին ծնաւ դէպի
կենդանի յոյսն, Յիսուսի Քրիս-
տոսի մեռելներից յարութիւն առ-
4 նելովը, դէպի այն անեղծ և ա-
նարատ և անթառամ ժառան-
գութիւնը, որ երկնքումը պահ-
5 ուած է ձեզ համար. Որ Աստու-
ծոյ զօրութեամբը պահպանվում
էք հաւատքով դէպի պատրաս-
տուած փրկութիւնն, որ յայտ-
նուելու էր յետին ժամանակումը
6 Որ նորանով կ'ուրախանաք, թէև
հիմա՝ ինչպէս որ հարկը պահան-
ջում է՝ մի քիչ տրտմած էք կերպ
7 կերպ փորձանքների մէջ, Որ ձեր
հաւատքի փորձառութիւնն աւե-
լի պատուական գտնուի քան կո-
րուստեան ականի, որ կրակով է
փորձվում, գովութեան պատուոյ
և փառաց համար Յիսուսի Քրիս-
8 տոսի յայտնութիւնումը. Որին
չտեսած սիրում էք. որ նորան
հաւատալիք թէև հիմա չէք տես-
նում, և ուրախ էք անպատմելի
9 և փառաւոր խնդութիւնով, Ձեր
հաւատքի վախճանն ընդունելով,

այսինքն հոգիների փրկութիւնը։
10 Որ այն փրկութեան համար որո-
նեցին և քննեցին մարգարէները,
որ մարգարէանում էին այն շնոր-
հքի համար որ լինելու էր ձեզա-
11 նում, փնտրելով թէ որ և ինչպիսի
ժամանակի համար էր գուշակում
Քրիստոսի Հոգին որ նորանցում
էր, առաջուց վկայելով Քրիստո-
սի չարչարանքները և նորանից
12 յետոյ փառքը։ Որոնց յայտ-
նուեցաւ, որ ոչ թէ իրանց անձ-
ներին, այլ մեզ էին սպասաւո-
րում այն բաները, որ հիմա պատ-
մուեցան ձեզ նորանց ձեռովը, որ
աւետարանեցին ձեզ Սուրբ Հո-
գովը որ երկնքից ուղարկուեցաւ.
որի մէջ հրեշտակները ցանկանում
են տեսնելով թափանցել։
13 Ընդ որա համար ձեր մտքի մէջքը
գօտեպնդած, և զարթնցած, կա-
տարեալապէս յուսացէք այն շնոր-
հքին որ հասնում է ձեզ Յիսուսի
14 Քրիստոսի յայտնութիւնումը, Իբ-
նազանդ որդոց պէս, չնմանելով
այն ձեր տգիտութեան ժամանա-
15 կներին Ա.ՀԼ ձեզ
կանչող Սրբոյն պէս, դուք էլ սուրբ
16 եղէք ձեր ընթացքումը. Որով-
հետև գրուած է, Սուրբ եղէք,
17 վասն զի ես սուրբ եմ։ Եւ եթէ Հայր
էք կանչում նորան, որ առանց ակ-
նառութեան դատաստան է ա-
նում ամեն մէկի գործքի պէս,
ապա ձեր պանդխտութեան ժա-
մանակը վախով վարուեցէք։ Գի-
18 տենալով որ ոչ թէ ապականա-
ցու արծաթով կամ ոսկով փրկը-
ուեցաք ձեր հայրենաւանդ ունայն
19 վարմունքիցը։ Ա.ՀԼ Քրիստոսի պա-
տուական արիւնովը, ինչպէս ո-
20 անբիծ և անարատ գառի. Որ ա-

ռաջուց ճանաչուած էր աշխարհքիս սկզբից՝ առաջ, բայց ժամանակների վերջումն երևեցաւ 21 ձեզ համար, Ձեզ՝ նորանով այն Աստուծոյն հաւատացողներիդ, որ նորան մեռելներից յարոյց, և փառքը նորան տուաւ, որ ձեր հաւատքն և յոյսն Աստուծոյ վերայ 22 լինի։ Որ՝ ձեր անձները սրբելով ճշմարտութեան հնազանդութեան մէջ Ս–ԷՒ Հոգովն անկեղծ եղբայրասիրութեան համար, մաքուր սրտով իրար սիրէք. վերստին 23 ծնուած լինելով ոչ թէ ապականաւթեան սերմից այլ անապական՝ Աստուծոյ կենդանի և յաւիտենական խօսքով։ վասն զի 24 ամեն մարմին խոտի պէս է, և մարդու ամեն փառքը խոտի ծաղկի պէս. խոտը չորացաւ և նորա ծաղիկը թափուեցաւ։ Իսկ Տիրոջ 25 խօսքը միւսմ է յաւիտեան. և սա այն խօսքն է, որ ձեզ աւետարանուեցաւ։

ԳԼ. Բ

1 Արդ՝ դէն գցելով ամեն չարութիւնը և ամեն խարէութիւնը, և կեղծաւորութիւնները, և նախանձը, և ամեն չարախօսութիւն- 2 ը, Նորածին երեխաների պէս ցանկացէք այն բանաւոր անխորտակ կաթին որ նորանով աճէք 3 [դէպի փրկութիւնը] Եթէ ճա- 4 շակել էք որ Տէրը քաղցր է։ Որին մօտեցել էք այն կենդանի քարին, որ թէև մարդկանցից անարգուած, բայց Աստուծոյ մօտ ընտ- 5 րուած և պատուական է։ Դուք էլ կենդանի քարերի պէս շինուեցէք հոգևոր տաճար, սուրբ քահանայութիւն, որ հոգևոր պատարագներ մատուցանէք Աստուծոյ ընդունելի Յիսուսի Քրիստոսի 6 ձեռամբ։ Որովհետև գրքումն էլ կայ, Ե՛ Ա՛հա Սիոնումն անկիւնի գլուխ ընտիր պատուական քար եմ դնում, և նորան հաւատացող չի ամաչիլ։ Արդ՝ ձեզ հա- 7 ւատացեալներիդ պատուականութիւն է. բայց անհաւատներին այն քարն որ շինողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ եղաւ. և գլորման քար, և գայթակղելու վէմ որ գայթակղում են խօսքին չհաւատալով. որ նորա համար էլ դրուած են։ Բայց դուք 9 ընտիր ազգ էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփհական ժողովուրդ, որ քարոզէք նորա առաքինութիւնները, որ ձեզ խաւարից կանչեց իր զարմանալի լոյսի մէջ. Որ դուք 10 ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդ էք. որ ողորմած չէիք, բայց հիմա ողորմածներ։

Սիրելիներ, աղաչում եմ ձեզ 11 ինչպէս պանդուխտների և օտարականների, հեռու կացէք մարմնաւոր ցանկութիւններից, որ կռիւ են հոգու դէմ։ Ձեր վար- 12 քը հեթանոսների մէջն բարի պահեցէք, որ ինչ բանով որ ձեզ չարագործների պէս բանսարում են, ձեր բարի գործքերը տեսնելով փառաւորեն Աստուծոյն այցելութեան օրումը։

Արդ հնազանդեցէք ամեն մարդ- 13 կային կարգի Տիրոջ համար. թէ թագաւորի ինչպէս թէ մի վերնադոյնի. թէ կուսակալների ինչպէս 14 նորանից ուղարկուածների՝ չարագործները պատժելու և բարեգործները գովելու համար։ Վասն զի 15 Աստուծոյ կամքն այսպէս է, որ բարի գործքերով պապանձեցնէք անխելք մարդկանց տգիտութիւնը։ Ինչպէս ազատներ, և ոչ թէ ա- 16 զատութիւնն ինչպէս չարութեան ծածկոց ունեցողներ. այլ ինչպէս Աստուծոյ ծառաներ։ Զամենին 17 պատուեցէք. եղբայրութիւն սիրեցէք. Աստուծոնից վախեցէք. թագաւորին պատուեցէք։

Տառաներն հնազանդ լինին տե- 18 րերին ամեն վախով, ոչ միայն բարիներին և հեզահոգիներին, բայց ծուռերին էլ։ Վասն զի սա 19 շնորհք է եթէ մէկն սա Աստուծ ունեցած մտքով նեղութիւնների համբերէ անիրաւ տեղը։ Վասն 20 զի ի՞նչ գովասանք է, եթէ մեղանչէք և տանջուելիք ու համբերէք. այլ եթէ բարիք գործէք և

չարչարուիք ու համբերէք, դա է
21 շնորհք Աստուածանից, վասն
զի դուք հէնց այդ բանի մէջ
կանչուեցաք. որովհետև Քրիստոս
էլ չարչարուեցաւ և ձեզ էլ օրի-
նակ թողեց որ նորա հետքերին
22 հետևիք։ Որ մեղք չգործեց, և
խաբէութիւն չգտնուեցաւ նորա
23 բերանումը. Որ բամբասուելիս՝
փոխարէնը չէր բամբասում. չար-
չարուելիս՝ չէր սպառնում, այլ
ջաջաջանը յանձնում էր արդար
24 դատաւորին. Որ ինքն մեր մեղ-
քերն իր մարմնումը խաչափայտի
վերայ բարձրացրեց. որ մեղքերի-
ցը հեռանալով արդարութեան
համար ապրինք, որ նորա խոցե-
25 րովը բժշկուեցաք։ Վասն զի մո-
լորուած ոչխարների պէս էիք.
բայց հիմա դարձաք դէպի ձեր
հոգիների Հովիւն և Տեսուչը։

Գ.Լ. Գ

1 Նոյնպէս էլ կանայք, հնազանդ
եղէք ձեր մարդկանցը, որ եթէ
ոմանք էլ անհնազանդ
լինին խօսքին, կանանց վարքովը
2 առանց խօսքի շահուին, Տեսնե-
լով ձեր երկիւղածութեամբ պար-
3 կեշտ վարքը։ Որ ձեր զարդարան-
քը չլինի դրսևանց մազերի հիւ-
սելը, և ոսկեղէնների շարելը կամ
4 շքեղ հանդերձներ հագնելը. Այլ
սրտի ծածուկ մարդը հեզ և հան-
դարտ հոգու անեղծութեամբը.
որ դա Աստուծոյ առջև շատ
5 թանգագին է։ Վասն զի այսպէս
էլ մի ժամանակով այն սուրբ
կանայքն, որ իրանց յոյսն Աս-
տուծոյ վերայ էին դրել, զարդա-
րում էին իրանց անձներն իրանց
6 մարդկանցը հնազանդելով։ Ինչ-
պէս Սառան հնազանդ էր Աբրա-
համին, նորան տէր կոչելով. որի
որդիքներ էք եղել դուք, որ բա-
րեգործ լինէք և ոչ մի երկիւղից
7 չվախենոք։ Նմանապէս, մարդիկ,
խնամատարութիւնով բնակեցէք նո-
րանց հետ, ինչպէս տկար անօթի
հետ՝ կանանց պատիւ տալով և
ինչպէս կենաց շնորհքի ժառան-
գակիցների հետ. որ ձեր աղօթքը
չխափանուի։

8 Եւ վերջապէս ամենքդ համա-
միտ, կարեկից, եղբայրասէր, բա-
րեսիրտ, քաղցրաբարոյ եղէք։
9 Չարի փոխարէն չար չհատուցա-
նէք, կամ բամբասանքի փոխարէն
բամբասանք. այլ ընդ հակառակն
օրհնեցէք, գիտենալով որ իսկ ա-
րա մէջ կանչուեցաք, որ օրհնու-
10 թիւնը ժառանգէք։ Վասն զի ով
որ կամենում է կեանք սիրել և
լաւ օրեր տեսնել, թող իր լեզուն
չարութիւնից լուռ պահէ, և իր
շրթունքները, որ նենգութիւն
11 չխօսին. Չարիցը հատ քաշուի և
բարի անէ, խաղաղութիւն որոնէ
12 և նորան հետևէ։ Վասն զի Տի-
րոջ աչքերն արդարների վերայ են,
և նորա ականջները դէպի նորանց
աղօթքը, Տիրոջ երեսը չարագործ-
ների վերայ է։ Եւ ո՞վ է նա որ
13 չարչարէ ձեզ, եթէ դուք բարոյն
14 հետևող լինիք։ Բայց թէև չար-
չարուիք էլ արդարութեան հա-
մար, երանելի էք. բայց նորանց
երկիւղիցը մի վախենաք և մի շը-
փոթուիք։ Այլ Տէր Աստուծոյն
15 ձեր սրտի մէջ սուրբ պահեցէք. և
միշտ պատրաստ եղէք հեղութեամբ
և երկիւղածութեամբ պատաս-
խան տալու ամենին, որ ձեր մէջ
եղած յուսոյ համար պատճառ
հարցնէ։ Եւ բարի խղճմտանք
16 ունենաք, որ նորանով որ չարա-
խօսում են ձեզանից ինչպէս չա-
րագործներից, ամօթով ձնան ձեր
բարի վարքը Քրիստոսումը առա-
17 նելով։ Վասն զի աւելի լաւ է,
եթէ Աստուծոյ կամքը այդ կամե-
նում է, բարի գործելով չարչար-
ուիլ, քան թէ չար գործելով։
18 Վասն զի Քրիստոս էլ մէկ ան-
գամ մեղաց համար չարչարուե-
ցաւ, այն Արդարն անարդարների
վերայ, որ մեզ մօտեցնէ Աստու-
ծոյն. որ թէև մեռաւ մարմնով.
19 բայց կենդանի եղաւ հոգով։ Ո-
րով գնաց բանտումը եղող հոգի-
20 ներին էլ քարոզեց, Որոնք մի
ժամանակ ապստամբ էին, երբոր
Աստուծոյ երկայնամտութիւնը համ-
բերում էր նոյն օրերում
տապանը պատրաստուելիս, որի
մէջ քիչ այսինքն ութ հոգի ջրի-

22 ցը պրծան. Որի օրինակն այսինքն
ակրտութիւնը մեզ էլ հիմա ապ-
րեցնուամ է, ոչ թէ մարմնոյ ու-
ռը դէն գցելով, այլ բարի խղճմը-
տանաց ուխտը առ Աստուած,
Յիսուսի Քրիստոսի յարութիւ-
22 նովը։ Որ գնացել է երկինքը, և
Աստուծոյ աջ կողմն է. հրեշ-
տակները և իշխանութիւնները և
զօրութիւնները հնազանդելով նո-
ցան։

ԳԼ. Դ

1 Արդ Քրիստոս որ մարմնով մեզ
համար չարչարուեցաւ, դուք էլ
նոյն մտքովը զինուորուեցէք. վասն
զի մարմնով չարչարուողը մեղքից
2 դադարեց։ Որ այլ ևս ոչ թէ
մարդկանց ցանկութիւնների պէս,
այլ Աստուծոյ կամաց պէս ապ-
րիք մարմնով մնացած ժամանա-
3 կը։ Վասն զի բաւական է մեզ
որ ՀԸ կենաց անցած ժամանակը
հեթանոսաց կամքը կատարեցինք,
որ վարուած էիք գիճութիւններ-
րով, ցանկութիւններով, գի-
նեմոլութիւններով, անառակու-
թիւններով, արբեցութիւններով,
կամ անօրէն կռապաշտութիւն-
4 ներով։ Որ դորա վերայ զարմա-
նում են, որ դուք նորանց հետ
չէք վազում նոյն անկարգ զեղ-
խութեան մէջ, և հայհոյում են,
5 Որ նորանք պիտի հաշիւ տան նո-
րան, որ պատրաստ է դատա-
ստան անելու կենդանիներին և
6 մեռելներին։ Վասն զի խակ սորա
համար մեռելներին էլ աւետա-
րանուեցաւ, որ մարդու կողմանէ
մարմնով դատուին, բայց կեն-
դանի լինին Աստուծոյ կողմանէ
հոգով։
7 Եւ ամեն բանի վերջն մօտացել
է, ուրեմն պարկեշտ կացէք և ար-
8 թուն եղէք աղօթքներում։ Բայց
ամենից առաջ սէրը տեր ունե-
ցէք իրար հետ, վասն զի սէրը
ծածկում է մեղաց շատութիւնը։
9 Հիւրասէր եղէք իրար հետ ա-
10 ռանց տրտնջանաց։ Ամեն մէկդ
ինչպէս որ շնորհք է ընդունել՝ այն
իրար մատակարարեցէք. ինչպէս
պէս Աստուծոյ կերպ կերպ շնոր-
հաց լաւ տնտեսներ։ Եթէ մէկը 11
խօսում է թող ինչպէս Աստուծոյ
հրամաններ էօսէ. եթէ մէկը ըն-
ծայում է թող լինի ինչպէս այն
զօրութիւնից, որ Աստուած է շը-
նորհում. որ ամեն բանի մէջ Աս-
ուած փառաւորուի Յիսուսի Քրիս-
տոսի ձեռօվը. որին լինի փառք և
զօրութիւն յաւիտեան յաւիտե-
նից. Ամէն։
Սիրելիներ, օտար բան մի հա- 12
մարէք այն բորբոքուած նեղու-
թիւնն որ ձեզ փորձելու համար
լինում է, իբր թէ մի օտար բան
է պատահում ձեզ։ Այլ ու- 13
րախ եղէք իբրև թէ Քրիստոսի
չարչարանացը մասնակից եղած-
նեք, որ նորա փառքի յայտնու-
թեան ժամանակում էլ ցնծա-
լով ուրախանաք։ Եթէ նախատ- 14
ուիք Քրիստոսի անունի համար,
երանելի էք. վասն զի փառաց և
Աստուծոյ Հոգին հանգչում է ձեզ
վերայ, նորանցից նա հայհոյվում
է, բայց ձեզանից փառաւորվում։
Ձեզանից մէկը չչարչարուի ինչպէս 15
մարդասպան, կամ գող, կամ
չարագործ, կամ ինչպէս օտարա-
տեսուչ. Բայց եթէ ինչպէս Քրիս- 16
տոնեայ չարչարուի, թող չամչէ,
այլ փառք տայ Աստուծոյն այս
մասին։ Որովհետև ժամանակն է 17
որ դատաստանն սկսէ Աստուծոյ
տանից. բայց եթէ առաջ մեզա-
նից, ապա ի՞նչ կ'լինի նորանց վերջն
որ Աստուծոյ աւետարանին ան-
հնազանդ են։ Եւ եթէ արդարն 18
հազիւ է ապրում, ուր ամբա-
րիշնն և մեղաւորն ո՞րտեղ կ'երե-
ւայ։ Սորա համար Աստուծոյ 19
կամաց պէս չարչարուողներն էլ,
թող ինչպէս հաւատարիմ Ստեղ-
ծողին յանձնեն իրանց հոգիները
բարեգործութիւնով։

ԳԼ. Ե

Զեր մէջի երէցներին աղաչում 1
եմ երէցընկերս և Քրիստոսի չար-
չարանքների վկայ, և այն յայտ-
նուելու էլ փառքի մասնակից,
Արածեցրէք Աստուծոյ հօտն որ 2

ձեզ մատ է, վերակացու լինելով
ոչ թէ ստիպուած, այլ յօժար
կամքով, ոչ թէ պիղծ շահասի-
րութիւնով այլ յօժարութիւնով.
3 Ոչ թէ ինչպէս վիճակների վերայ
տիրապետելով, այլ հօտին օրի-
4 նակներ լինելով։ Եւ երբոր Հով-
ուապետն կ'երևի, փառաց ան-
թառամ պսակն կ'ընդունիք։
5 Այսպէս էլ դուք, երիտասարդ-
ներ, հնազանդեցէք ծերերին, ա-
մենքդ իրար հնազանդելով խոնար-
հութիւնը հագէք. վասն զի Աստ-
ուած ամբարտաւաններին հակա-
ռակ է կենում, բայց խոնարհ-
6 ներին շնորհք է տալիս։ Խոնար-
հեցէք Աստուծոյ հզօր ձեռի տակ,
որ ձեզ բարձրացնէ ժամանակով։
7 Ձեր բոլոր հոգսը նորա վերայ գցե-
ցէք, վասն զի նա հոգս է անում
ձեզ համար։
8 Արթուն եղէք, հակում արէք.
որովհետև ձեր ոսխ սատանան
ատամնան գոռոզ առիւծի պէս
մեն է գալիս և որոնում է թէ
9 որին կուլ տայ։ Որին հակառակ
կացէք հաստատուած հաւատ-
քով, գիտենալով որ ձեր եղբայր-
ներն էլ նոյն չարչարանքները քա-
շում են իրանց անձերում աշ-
խարհքիս մէջ։

Եւ ամեն շնորհքի Աստուածն, 10
որ մեզ կանչեց իր յաւիտենական
փառքի մէջ Քրիստոս Յիսուսով,
ձեզ որ մի քիչ չարչարւում էք,
կատարեալ անէ, հաստատէ, զօ-
րացնէ, հիմնէ. Նորան լինի փառք 11
և իշխանութիւն յաւիտեանս յա-
ւիտենից. Ամէն։ Սիղուանոս հա- 12
ւատարիմ եղբօր ձեռօվն, ինչպէս
կարծում եմ, կարճառօտ գրեցի,
որ յորդորեմ և այս բանի համար
վկայեմ, թէ սա է Աստուծոյ
ճշմարիտ շնորհքը, որի մէջ դուք
կանգնած էք։ Բարև է տալիս ձեզ 13
ձեզ հետ ընտրուած եկեղեցին որ
Բաբիլոնում է. և իմ որդի Մար-
կոսը։ Իրար բարև տուէք սիրոյ 14
համբոյրով. խաղաղութիւն լինի
ձեզ ամենիդ որ Քրիստոս Յիսու-
սումն էք. Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Սիմէն Պետրոս Յիսուսի Քրիս-
տոսի ծառայ և առաքեալ, յԵրկ որ
մեզ հետ նոյն պատուական հա-
ւատքին հասաք մեր Աստուծոյ
և Փրկիչ Յիսուսի Քրիստոսի ար-
2 դարութիւնով. Շնորհք և խա-
ղաղութիւն շատանայ ձեզ վերայ
Աստուծոյ և մեր Տէր Յիսուսի
գիտութիւնով։
3 Ինչպէս որ նորա աստուածային
զօրութիւնը շնորհեց մեզ այն ա-
մենը որ կեանքի և աստուածա-
պաշտութեան համար պէտք է նո-
րա գիտութիւնով, որ մեզ կան-
չեց փառքով առաքինութիւնով.
4 Որանցով ամենամեծ և պատուա-
կան ուխտերը են տրուած մեզ.
որ նորանցով հաղորդակից լինինք
աստուածային բնութեանը աշ-
խարհքի մէջ ցանկութիւնից ե-
ղած ապականութիւնից հեռա-
փախչելով. Եւ այն այս բանի հա- 5
մար ամեն ջանք անելով ձեր հա-
ւատքին ներկայացրէք առաքի-
նութիւնը, և առաքինութիւնով
գիտութիւնը, Եւ գիտութիւնով 6
ժուժկալութիւնը, և ժուժկալու-
թիւնով համբերութիւն, և համ-
բերութիւնով աստուածպաշտու-
թիւն, Եւ աստուածպաշտութիւ- 7
նով եղբայրասիրութիւն, և եղ-
բայրասիրութիւնով սէր։ Վասն 8
զի այս բաները ձեզանում ճնշելով
և աճելով դատարկ և անպտուղ
չեն անել ձեզ մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի գիտութիւնով։ Բայց 9
նա որ այս բաներն իրան մօտ չու-
նի, կոյր է և կարճատես, մոռա-

ցած լինելով իր առաջին մեղքե-
10 րից սրբուիլը։ Սորա համար, եղ-
բայրք, աւելի ջանք արէք որ ձեր
կոչումն և ընտրութիւնն հաս-
տատ անէք. վասն զի սրանք ա-
նելով երբէք յանցանքի մէջ չէք
11 ընկնիլ։ Վասն զի այսպէս առա-
տաւելութիւնով կ'արուի ձեզ մտնել
մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստո-
սի յաւիտենական արքայութիւնը։
12 Ասոր համար պատրաստ չեմ լի-
նել ձեզ յիշեցնելու սրանց հա-
մար, թէ և գիտէք և հաստատ-
ուած էք այս ներկայ ճշմարտու-
13 թիւնովը։ Եւ իրաւունք եմ հա-
մարում, որ քանի որ այս վրանի
մէջ եմ զարթնուցնեմ ձեզ յիշե-
14 ցնելով։ Գիտեմ որ շուտով պի-
տի ինձմանից հանեմ իմ այս վրա-
նը, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրի-
15 ստոսը յայտնեց ինձ։ Բայց ջանք
էլ կանեմ որ միշտ կարողանաք
իմ աշխարհքից դուրս գալուց
16 յետոյ այս բաները յիշել։ Վա-
սն զի մենք ոչ թէ վարպետու-
թեամբ հնարուած առասպելների
հետևելով ցոյց տուինք ձեզ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի զօրու-
թիւնը և գալուստը, այլ ակա-
նատես լինելով նորա մեծափա-
17 ռութեանը։ Վասն զի Հայր Աստ-
ուածմանից պատիւ և փառք ա-
ռաւ, երբոր այն մեծ վայելչու-
թեան փառքից այնպիսի ձայն
եկաւ նորան. Ընդ դա է իմ սիրե-
լի Որդին որին ես հաւանեցայ,
18 Եւ այս ձայնը մենք լսեցինք երկնի-
քից եկած, երբոր նորա հետ
19 այն սուրբ լեռան մէջ էինք։ Եւ
մարգարէական աւելի հաստատ
խօսքն ունինք, որ եթէ նորան
մտիկ անէք, լաւ կ'անէք, ինչպէս
մի ճրագի որ լոյս է տալիս մութ
տեղը, մինչև որ ցերեկը լուսա-
նայ և լուսաբերը ծագի ձեր սրբ-
20 տերութեամբը։ Բայց առաջ այս գիտա-
ցէք, որ ամեն մարգարէութիւն
իր գրուածքի մեկնութիւնովը չի
21 լինիլ. Վասն զի երբէք մի մարդ-
կանից կամքի պէս, բայց Սուրբ
Հոգուցն շարժուած խօսեցան Աս-
տուածոյ մարդիկը։

ԳԼ. Բ

Եւ աստ մարգարէք էլ կային 1
այն ժողովրդի մէջ, ինչպէս ձեր
մէջ էլ պիտի աստուածատեսներ լինին, որ ներս կ'մտցնեն կո-
րըստական հերձուածոցութիւն-
ներ. և ուրանալով այն Տէրոջը
որ իրանց գնեց, իրանց վերայ շու- 2
տահաս կորուստ կ'բերեն։ Եւ շատ
մարդիկ կ'հետևին նորանց կորստ-
եանը. որոնց պատճառով ճշմար-
տութեան ճանապարհը կ'հայհոյ-
ուի։ Եւ ագահութիւնով էրանց 3
մտից հնարած խօսքերով ձեզ վա-
ճառաշահութեան կ'գործածեն,
որոնց դատաստանը վաղուց պա-
տրաստած պարապ չէ, և նորանց
կորուստը չէ ննջում։

Վասն զի եթէ Աստուած այն 4
հրեշտակներին, որ մեղանչեցին,
չխնայեց, այլ խաւարի կապան-
քովը տարտարոսը գցած դատաս-
տանի համար պահել տուաւ. Եւ 5
առաջին աշխարհքին էլ չխնայեց,
այլ Նոյին, որ ութերորդն էր.
այն արդարութեան քարոզչին՝
պահեց երբոր ամբարիշտների աշ-
խարհքի վերայ ջրհեղեղը ածեց։
Եւ Սոդոմացոց և Գոմորացոց 6
քաղաքները մոխիր դարձնելով կոր-
ծանմամբ դատապարտեց, յետոյ
ևկող ամբարիշտներին օրինակ դնե-
լով. Եւ փրկեց արդար Ղովտին 7
որ անօրէնների անառակ վար-
մունքներովն ձանձրացել էր։ Վա- 8
սն զի այն արդարը՝ նորանց մէջ
բնակելով՝ տեսնելովը և լսելովը,
օրէցօր իր արդար հոգին տանջ-
ւում էր նորանց անօրէն գործքե-
րովը։ Տէրը գիտէ աստուածա- 9
պաշտներին փրկել փորձանքից, և
անիրաւներին պահել դատաստա-
նի օրուայ համար որ տանջուին։
Մանաւանդ նորանց որ պղծա- 10
լից ցանկութիւնով մարմնոյ հետե-
ւից են գնում. և տէրութիւնը
անարգում, յանդուգներ, ինքնա-
հաւաններ, որ չեն վախում փառ-
քը հայհոյելով։ Մինչդեռ հրեշ- 11
տակներն, որ զօրութիւնով և կա-
րողութիւնով աւելի մեծ են, հայ-
հոյանքի դատաստանը չեն բերում

12 նորանց վերայ Տիրոջ աջև ։ Իսկ
սրանք ինչպես անբան անասուն-
ներ, որ իրենք ծնուած են որսի
և ապականութեան համար, հայ-
հոյում են այն բաները որ չեն գի-
տում, իրանց ապականութիւնովը
13 կ'ապականուին ։ Անիրաւութեան
վարձքն առանալով, որ այս օր-
ուայ փափկութիւնը զուարճու-
թիւն են համարում, աղտ են և
կեղտ, և իրանց խաբէբայութիւն-
ներովը զուարճանում են, ձեզ
14 հետ միասին ուտել խմելիս ։ Աչ-
քեր ունին պոռնկութիւնով լիքն,
և մեղքից չեն դադարում. խա-
բում են անհաստատ անձներին,
որ ագահութիւնով քաղուած
15 սրտեր ունին, անէծքի որդիք ։ Որ
շիտակ ճանապարհը թողած մո-
լորուեցան, Բէօրեան Բաղաամի
ճանապարհին հետևելով, որ ա-
16 նիրաւութեան վարձքը սիրեց ։ Բ
իր անօրէնութեան յանդիմանու-
թիւնն առաց, անխօս էշը մար-
դու ձայնով խօսելով արգիլեց
17 մարգարէի յիմարութիւնը ։ Սո-
րանք անջուր աղբիւրներ են, մըրր-
կից քշուած ամպեր, որոնց հա-
մար խաւարի մթութիւնը պահ-
18 ուած է յաւիտեան ։ Վասն զի
ունայնութեան հպարտ բաներ
խօսելով դիճութիւններով խա-
բում են մարմնոյ ցանկութիւննե-
րով նորանց, որ ճշմարտապէս
փախել են մոլորութեան մէջ վար-
19 ուողներից ։ Նորանց ազատու-
թիւն են խոստանում, և իրանք
ապականութեան ծառաներ են.
վասն զի ինչ բանով որ մէկը յաղ-
20 թուի, նորան էլ ծառան է ։ Վասն
զի եթէ աշխարհքի պղծութիւն-
ներից մեր Տէր և փրկիչ Յիսուսի
Քրիստոսի գիտութիւնովը փախ-
չողները կրկին նորանում շաղախ-
ուած յաղթուին, նորանց վերջը
չար եղաւ քան թէ առաջինը ։
21 Վասն զի լաւ էր նորանց որ չճա-
նաչէին արդարութեան ճանա-
պարհը, քան թէ ճանաչեցին և
յետ քաշուեցան սուրբ պատ-
ուիրանքից, որ առանդուեցաւ
22 նորանց ։ Նա նորանց պատահեց
այն ճշմարիտ առակի խօսքը. Թէ
Շունն վերադառնում է դէպի իր
փսխածը, և լուացուած խոզը՝
թաւալուելու ցեխի մէջ։

Գլ. Գ

Սիրելիներ, սա արդէն երկրորդ 1
թուղթն եմ գրում ձեզ որոնցով
ձեր մաքուր միտքը յիշեցնելով
զարթնացնեմ, Որ յիշէք սուրբ 2
մարգարէներից առաջուց ասուած
խօսքերը և մեր Տիրոջ և
փրկչի առաքեալներիս պատուի-
րանքները։ Բայց առաջ այս գի- 3
տացէք, որ յետին օրերում ծաղր-
անողներ կ'գան, որ իրանց ցան-
կութեանց պէս կ'վարուին։ Եւ 4
կասեն. Ուր է նորա գալստեան
խոստումը, վասն զի այնուհետև
որ հարքը վախճանեցան ամեն բան
նոյնպէս կենում ինում է աշխարհ-
քի ստեղծագործութիւնից հետէ։
Վասն զի նորանք ուզում են այս 5
բանը մոռանալ, թէ երկինքները
վաղուց էին և երկիրս ջրից և ջր-
ով հաստատուած է Աստուծոյ
խօսքովը. Նորա համար այն հին 6
աշխարհքը ջրհեղեղով ապակա-
ուած կորաւ։ Եւ այժմեան եր- 7
կինքն ու երկիրս նոյն խօսքովը
պահպանուած պահվում են կրակի
համար դատաստանի և ամբարիշտ
մարդկանց կորստեան օրուայն։
Բայց այս մէկն էլ ձեզանից ծա- 8
ծուկ չլինի, սիրելիներ, որ Տիրոջ
մօտ մէկ օրը հազար տարուայ
պէս է, և հազար տարին ինչպէս
մէկ օր։ Տէրը չի ուշացնիլ խոս- 9
տումը, ինչպէս ոմանք ուշացնել
են կարծում, բայց երկայնամիտ
է լինում մեզ վերայ, որովհե-
տև չէ կամենում որ կորչողներ
լինին, բայց որ ամենքն ապաշխա-
րութեան հասանեն։ Բայց Տիրոջ 10
օրը (գիշերուայ) գողի պէս կ'գայ.
որ նորանում երկինքը շառաչիւ-
նով կանցնէ և տարերքը կրակով
վառուած կ'հալուին, և երկիրն
և նորանում եղած բաներն էլ
կ'այրուին։ Հիմա որ սորանք ա- 11
մենքը հալուելու բաներ են. ի՜նչ-
պէս պէտք է դուք գտնուիք սուրբ
և աստուածապաշտ վարքում։

12 Սպասելով և ջանք անելով Տիրոջ
գալստեան օրին հասնել, որ նը-
րանում երկինքները կրակով այ-
րուած կ'լուծուին. և տարերքը
13 կրակ ընկած կ'հալուին։ Բայց
նորա խոստմունքի պէս՝ նոր եր-
կընքի և նոր երկրի ենք ապասում.
որոնցում արդարութիւն է բնա-
կւում։
14 Սորա համար, սիրելիներ, սը-
րանց ապասելով ջանք արէք որ
անբիծ և անարատ գտնուիք նորա
15 առջև խաղաղութեան մէջ։ Եւ
մեր Տիրոջ երկայնմտութիւնը փրր-
կութիւն համարեցէք. ինչպէս մեր
սիրելի եղբայր Պօղոսն էլ Աստ-
ուածներից իրան տրուած իմաս-
տութեան պէս գրեց ձեզ, ինչ- 16
պէս ամեն թղթերումն էլ խօսում
է այս բաների համար. որոնցում
մի քանի դժուարիմաց բաներ
կան. որ անուսումնները և ան-
հաստատները նորանց ծռում են,
ինչպէս միւս գրքերն էլ՝ իրանց
անձների կորստեան համար։ Ալ- 17
բեմն դուք, սիրելիներ, առաջուց
իմանալով զգոյշ կացէք, որ մի
դուցե անօրէնների մոլորութիւ-
նով յափշտակուելով ընկնիք ձեր
հաստատութիւնից, Եւ աճեցէք 18
մեր Տէր և Փրկիչ Յիսուսի Քրիս-
տոսի շնորհքումն և գիտութիւնը-
վը. նորան լինի փառք և հիմա և
մինչև յաւիտենական օրն. Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Ա՛յն որ սկզբից էր, որ լսեցինք,
որ մեր աչքերովը տեսանք, որին
նայեցինք, և մեր ձեռները շօշա-
2 փեցին՝ կենաց բանի համար. (Եւ
կեանքը յայտնուեցաւ, և տե-
սանք, և վկայում ենք, և պատ-
մում ենք ձեզ յաւիտենական
կեանքը, որ Հօր մօտ էր և երե-
3 ցաւ մեզ։) Ա՛յն որ տեսանք և
լսեցինք, պատմում ենք ձեզ, որ
դուք էլ հաղորդութիւն ունենաք
մեզ հետ. և մեր հաղորդութիւնը
Հօր հետ և նորա Որդի Յիսուսի
4 Քրիստոսի հետ։ Եւ սա գրում
ենք ձեզ, որ ձեր ուրախութիւնն
կատարեալ լինի։
5 Եւ սա է այն աւետիքն, որ նո-
րանից լսեցինք և պատմում ենք
ձեզ, թէ Աստուած լոյս է, և
ոչ մի խաւար չկայ նորանում։
6 Եթէ ասենք թէ հաղորդութիւն
ունինք նորա հետ, և խաւարի
մէջ մնանք գանք, սուտ ենք ասում
և ճշմարտութիւնը չենք անում։
7 Բայց եթէ լուսոյ մէջ մնանք գանք
ինչպէս նա է լուսոյ մէջ, հաղոր-
դութիւն ունինք իրար հետ, և
նորա Որդի Յիսուսի Քրիստոսի
արիւնը մեզ սրբում է ամեն մեղ-
քից։ Եթէ ասենք թէ մեղք չու- 8
նինք, մեր անձները խաբում ենք
և ճշմարտութիւնը չկայ մեզա-
նում։ Ալ թէ մեր մեղքերը խոս- 9
տովանինք, հաւատարիմ է և ար-
դար որ մեր մեղքերը թողէ մեզ,
և սրբէ մեզ ամեն անիրաւութիւ-
նից։ Եթէ ասենք թէ մեղք չգոր- 10
ծեցինք, ստախօս ենք անում նո-
րան, և նորա խօսքը մեզանում չէ։

ԳԼ. Բ

Իմ որդեակներս, սա գրում եմ 1
ձեզ որ չմեղանչէք, և եթէ մէկը
մեղանչէ, բարեխօս ունինք Հօր
մօտ Յիսուս Քրիստոս արդարին։
Եւ նա քաւութիւն է մեր մեղաց
համար. և ոչ միայն մերինների
բայց ամբողջ աշխարհքի էլ։
Եւ սորանով գիտում ենք որ 3
ճանաչեցինք նորան, եթէ նորա
պատուիրանքները պահենք։ Ով 4
որ ասում է, Ես ճանաչեցի նորան
և նորա պատուիրանքները չէ պա-
հում, ստախօս է, և ճշմարտու-
թիւնը չկայ նորանում։ Բայց ով 5

որ նորա խօսքը պահէ, իրաւի Աստուծոյ սէրը նորանուն կատարեալ է. սորանով ճանաչուն
6 ենք որ նորանուն ենք։ Ով որ ասում է թէ նորանուն եմ բնակում. պէտք է, ինչպէս որ նա գնաց, ինքն էլ այնպէս գնայ։
7 Եղբայրներ, ոչ թէ մի նոր պատուիրանք եմ գրում ձեզ, այլ հին պատուիրանքը որ սկզբից ունէիք և հին պատուիրանքն այն խօս-
8 քըն է որ լսեցիք սկզբից։ Դարձեալ նոր պատուիրանք եմ գրում ձեզ, որ ճշմարիտ է նորանուն և ձեզանուն. վասն զի խաւարն անցնում է, և ճշմարիտ լոյսն ար-
9 դէն երևում է։ Ով որ ասում է, Թէ լուսոյ մէջ է և իր եղբօրն ատում է, մինչև հիմա խաւարի
10 մէջ է։ Նա որ իր եղբօրը սիրում է, լուսոյ մէջ է մնում, և գայթակղութիւն չկայ նորանում։
11 Բայց նա որ իր եղբօրն ատում է, խաւարումն է, և խաւարի մէջ է ման գալիս, և չէ գիտում թէ ուր է գնում, վասն զի խաւարը կուրացրեց նորա աչքերը։
12 Գրում եմ ձեզ, որդեակներ, վասն զի ձեր մեղքերը թողուած են ձեզ նորա անունի համար։
13 Գրում եմ ձեզ, հարք, վասն զի ճանաչեցիք նորան որ սկզբից է, գրում եմ ձեզ, երիտասարդներ, վասն զի դուք յաղթեցիք չարին։
14 Գրում եմ ձեզ, մանկունք, վասն զի ճանաչեցիք Հօրը. գրեցի ձեզ, հարք, վասն զի ճանաչեցիք նորան որ սկզբից է. գրեցի ձեզ, երիտասարդներ, վասն զի դուք զօրաւոր էք. և Աստուծոյ խօսքը բնակում է ձեզանում, և դուք յաղթել էք չարին։ Մի սիրէք
15 աշխարհքը. և ոչ էլ այն որ աշ-
17 խարհքի մէջ է։ Եթէ մէկն աշխարհքին սիրէ, Հօր սէրը նորանում չէ. վասն զի ամեն ինչ որ աշխարհքումն է՝ մարմնոյ ցանկութիւնը, և աչաց բաղձանութիւնը, Հօրիցը չէ, այլ աշխարհքից է։ Եւ աշխարհքը անցնում է և նորա ցանկութիւնն էլ, բայց Աստուծոյ կամքն անողը մնում է յաւիտեան։

Որդեակներ, վերջի ժամանակն 18
է, և ինչպէս լսեցիք թէ Նեռը գալիս է, և այժմ շատ նեռեր են եղել, որ սորանից իմանում ենք թէ վերջի ժամանակն է։ Մեզ- 19
նից դուրս գնացին, բայց մեզնից չէին. վասն զի եթէ մեզանից լինէին, ապա մեզ հետ մնացած կ'լինէին. բայց որ յայտնի լինին թէ նորանք ամենքն մեզանից չեն։
Եւ դուք օծութիւն ունիք այն 20
Սուրբից, և ամեն բան գիտէք։
Չգրեցի ձեզ իբր թէ ճշմարտու- 21
թիւնը չէք գիտում, այլ թէ գիտէք նորան, և՝ թէ ամեն սուտ թիւն այն ճշմարտութիւնից չէ։
Ո՞վ է սուտը, եթէ ոչ նա որ ու- 22
րանում է թէ Յիսուսը չէ Քրիստոսը. նա Նեռն է, որ ուրանում Հօրը և Որդուն։ Ամեն ով որ Որ- 23
դուն ուրանում է, Հօրն էլ չունի. [նա որ Որդուն դաւանում է, Հօրն էլ ունի։] Արդ դուք այն որ լսե- 24
ցիք սկզբից, թող բնակէ ձեզանում. եթէ բնակէ ձեզանում այն որ սկզբից լսեցիք, դուք էլ կ'բնակէք Որդու և Հօր մէջ։ Եւ սա 25
է այն աւետիքն որ նա աւետացրեց մեզ, այսինքն յաւիտենական կեանքը։ Այս բաները գրեցի 26
ձեզ՝ ձեզ մոլորեցնողների մասին։
Եւ դուք այն օծութիւնն, որ նո- 27
րանից ընդունեցիք բնակում է ձեզանում. և դուք պէտք չունիք որ մէկը սովորեցնէ ձեզ. այլ ինչպէս այն օծութիւնը սովորեցնում է ձեզ ամեն բանի համար, ճշմարիտ էլ է և սուտ չէ. և ինչպէս նա սովորեցրեց ձեզ, կ'ացէք նորանում։
Եւ հիմա, որդեակներ, կ'ացէք 28
նորանում. որ երբոր նա կ'յայտնուի, համարձակութիւն ունենանք, և չամաչենք նորանից նորա գալստեան ժամանակումը։
Եթէ գիտէք որ նա արդար է, 29
կիմանաք թէ ամեն ով որ արդարութիւն է անում, նորանից է ծնուած։

ԳԼ. Գ

Տեսէք թէ Հայրն ինչպիսի սէր 1

ընորհեց մեզ, որ Աստուծոյ որդիք կոչուինք, սորա համար աշխարհքը չէ ճանաչում մեզ, վասն
2 զի նորան չճանաչեց։ Սիրելիներ, հիմա Աստուծոյ որդիք ենք, և տակաւին յայտնուած չէ թէ ինչ
պիտի լինինք. բայց գիտենք թէ, երբոր նա յայտնուեցաւ, նորան նման կ'լինինք, վասն զի կ'տեսանենք
նորան ինչպէս որ է։
3 Եւ ամեն ով որ այս յոյսն ունի իրանում, սրբում է իր անձն ինչ-
4 պէս որ նա սուրբ է։ Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է անում, և մեղքն
5 է անօրէնութիւնը։ Եւ գիտէք թէ նա յայտնուեցաւ որ մեր մեղքերը վեր առնէ. և նորանում
6 մեղք չկայ։ Ամեն ով որ նորանում ճնում է՝ չէ մեղանչում. և ամեն ով որ մեղանչում է, չէ տե-
սել նորան և ոչ էլ ճանաչել նո-
7 րան։ Մանկունք, ոչ ոք ձեզ չի խաբէ. նա որ արդարութիւն է անում, արդար է, ինչպէս նա էլ
8 արդար է։ Ե- նա որ մեղք է ա-
նում, սատանայից է. վասն զի սատանան հէնց սկզբից մեղանչում է, նորա համար յայտնուե-
ցաւ Աստուծոյ Որդին, որ սատա-
9 նայի գործքերը քանդէ։ Ամեն ով որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ անում. վասն զի նորա սերմն
նորանում ճնում է, և չէ կարող մեղանչել, վասն զի Աստուածա-
10 նից է ծնուած։ Սորանով են յայտնի Աստուծոյ Որդիքը և սատանայի որդիքը.

Ամեն ով որ արդարութիւն չէ անում, նա Աստուածանից չէ, և ոչ էլ նա՝ որ իր եղբօրը չէ սի-
11 րում։ Վասն զի սա է պատուիրանքն, որ սկզբից լսեցիք, որ
12 իրար սիրենք։ Ոչ թէ այնպէս ինչպէս որ Կայէնն էր չարից էր և իր եղբօրն սպաննեց. և ինչո՞ւ հա-
մար սպաննեց նորան, որովհետև իր գործերը չար էին և իր եղբօրը
13 արդար։ Մի զարմանար, եղբայրք,
14 եթէ աշխարհքս ատէ ձեզ։ Մենք գիտենք որ մահից ի կեանք փոխուեցանք. վասն զի եղբայրներին
սիրում ենք. բայց ով որ չէ սի-
րում եղբօրը, մնում է մահուան
մէջ։ Ամեն ով որ իր եղբօրը ա- 15
տում է, մարդասպան է. և գի-
տէք որ ամեն մարդասպան յաւի-
տենական կեանք չունի հաստատ-
ուած իրանում։ Սորանով գիտա- 16
ցինք [Քրիստոսի] սէրը, որ նա իր
անձը տուաւ մեզ վերայ. և մենք
պարտենք մեր եղբարց վերայ դնել
մեր անձերը։ Ով որ այս աշ- 17
խարհքի ապրանքն ունենայ, և
տեսնէ իր եղբայրը կարօտ ի բան,
և իր գութը փակէ նորանից, ի՞նչ-
պէս Աստուծոյ սէրը բնակած կ'լի-
նի նորանում։ Արդեակներ, չսի- 18
րենք խօսքով և ոչ էլ լեզուով,
այլ գործով և ճշմարտութիւնով։
Եւ սորանով ենք ճանաչում թէ 19
ճշմարտութիւնից ենք, և նորա
առջև ի հանդէս բերենք մեր սր-
տերը. Որ եթէ մեր սիրտը մեղադրէ 20
մեզ, այլ Աստուած մեր սրտից ա-
ւելի մեծ է և ամեն բան գիտէ։
Սիրելիներ, եթէ մեր սրտերը չմե- 21
ղադրեն մեզ, համարձակութիւն
ունինք առ Աստուած։ Եւ ինչ որ 22
խնդրենք կ'առնենք նորանից. վասն
զի նորա պատուիրանքները պա-
հում ենք, և նորա առջև հաճոյ
եղածները անում ենք։ Եւ սա է 23
նորա պատուիրանքը, որ հաւա-
տանք նորա Որդի Յիսուսի Քրիս-
տոսի անունին, և իրար սիրենք,
ինչպէս նա պատուիրանք տուաւ
մեզ։ Եւ նա որ նորա պատուի- 24
րանքները պահում է, մնում է նո-
րանում և նա սորանում. և սոր-
նից գիտենք թէ բնակում է մեզ-
նում՝ այն Հոգուց որ տուաւ մեզ։

ԳԼ. Դ

Սիրելիներ, ամեն հոգու մի հա- 1
ւատաք. այլ փորձեցէք հոգիները
թէ արդեօք Աստուածանից են.
վասն զի շատ սուտ մարգարէներ
են դուրս եկել աշխարհք։ Սորա- 2
նով ճանաչեցէք Աստուծոյ Հոգին.
ամեն հոգի որ խոստովանում է
Յիսուս Քրիստոսին մարմնով ե-
կած, Աստուածանից է։ Եւ ամեն 3
հոգի որ չէ խոստովանում Յիսուս
Քրիստոսին մարմնով եկած, Աստ-

ասածանից չէ. և նա ևեռի հոգին
է, որ լսեցիք թէ գալիս է, և
հիմա արդէն աշխարհքումն է։
4 Դուք Աստուածանից էք, որդ-
եակներ, և յաղթեցիք նորանց.
վասն զի աւելի մեծ է նա որ ձե-
զանումն է, քան թէ նա որ աշ-
5 խարհքիս մէջ է։ Նորանք աշ-
խարհքից են, նորա համար աշ-
խարհքից են խօսում, և աշխարհ-
6 քը լսում է նորանց։ Մենք Աստ-
ուածանից ենք. ով որ Աստու-
ծոյն ճանաչում է՝ լսում է մեզ,
ով որ Աստուածանից չէ, չէ լը-
սում մեզ. սորանից ենք ճանա-
չում ճշմարտութեան հոգին և
խաբէութեան հոգին։
7 Սիրելիներ, իրար սիրենք, վասն
զի սէրն Աստուածանից է. և ա-
մեն ով որ սիրում է Աստուա-
ծանից է ծնուած, և ճանաչում
8 է Աստուծոյն։ Նա որ չէ սիրում,
Աստուծոյն չէ ճանաչել. վասն
9 զի Աստուած սէր է։ Սորանով
Աստուծոյ սէրն երևեցաւ մեզա-
նում, որ Աստուած իր միածին
Որդուն ուղարկեց աշխարհք, որ
10 նորանով կեանք ունենանք։ Ա-
րանում է սէրն, որ ոչ թէ մենք
սիրեցինք Աստուծոյն, այլ որ նա
սիրեց մեզ, և ուղարկեց իր Որ-
դուն քաւութիւն մեր մեղքերի
11 համար։ Սիրելիներ, եթէ Աստ-
ուած այսպէս սիրեց մեզ, ապա
մենք էլ պէտք է իրար սիրենք։
12 Աստուծոյն երբէք մէկը չէ տե-
սել. եթէ իրար սիրենք Աստ-
ուած մեզանում է բնակում, և
նորա սէրը կատարեալ է մեզա-
13 նում։ Սորանով գիտենք, որ մենք
նորանում ենք բնակած և նա մե-
զանում. որ իր Հոգուցն տուաւ
14 մեզ։ Եւ մենք տեսանք և վկայում
ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց
15 աշխարհքի Փրկիչ լինելու։ Ով որ
դաւանէ թէ Յիսուս է Աստուծոյ
Որդին, Աստուած նորանում է
բնակում և նա Աստուածանում։
16 Եւ մենք ճանաչեցինք և հաւա-
տացինք այն սէրն, որ Աստուած
ունի մեզ վերայ. Աստուած սէր
է, և ով որ ճնում է սիրոյ մէջ,
Աստուծոյ մէջ է բնակում, և

Աստուած նորանում։ Սորանում 17
է սէրը կատարեալ մեզ հետ, որ
համարձակութիւն ունենանք դա-
տաստանի օրուայն. վասն զի ինչ-
պէս նա է, այնպէս էլ մենք ենք
այս աշխարհքումն։ Վախ չկայ 18
սիրոյ մէջ. այլ կատարեալ սէրը
հեռացնում է վախը. վասն զի վա-
խը տանջանք ունի. բայց նա որ վա-
խում է, կատարեալ չէ սիրոյ մէջ։
Մենք սիրենք նորան, որովհետև 19
առաջ նա սիրեց մեզ։ Եթէ մէկն 20
ասէ, թէ Սիրում եմ Աստուծոյն
և իր եղբօրն ատէ, նա ստախօս
է. վասն զի նա որ իր տեսած եղ-
բօրը չէ սիրում, Աստուծոյն որ
չէ տեսել ինչպէս կարող է սի-
րել։ Եւ այս պատուիրանքն ու- 21
նինք նորանից, թէ նա որ Աստու-
ծոյն սիրում է, իր եղբօրն էլ սիրէ։

ԳԼ. Ե

Ամեն ով որ հաւատում է թէ 1
Յիսուսն է Քրիստոսը, Աստուա-
ծանից է ծնուած. և ամեն ով որ
ծնողին սիրում է, նորանից ծըն-
ուածին էլ սիրում է։ Սորանով 2
ենք ճանաչում թէ Աստուծոյ որ-
դիներին սիրում ենք, երբոր սի-
րում ենք Աստուծոյն, և նորա 3
պատուիրանքները պահում։ Վասն
զի սա է Աստուծոյ սէրը որ նո-
րա պատուիրանքները պահենք. և
նորա պատուիրանքներն ծանր չեն։
Վասն զի ամեն ով որ Աստուա- 4
ծանից է ծնուած յաղթում է աշ-
խարհքին. և սա է յաղթութիւ-
նըն, որ աշխարհքին յաղթեց,
այսինքն մեր հաւատքը։ Եւ ո՞վ 5
է որ յաղթում է աշխարհքին,
եթէ ոչ նա, որ հաւատում է, թէ
Յիսուսն Աստուծոյ Որդին է։
Սա է որ եկաւ ջրով և արիւ- 6
նով Յիսուս Քրիստոսն. ոչ թէ մի-
այն ջրով, բայց ջրով և արիւնով.
և Հոգին է վկայողը. վասն զի Հո- 7
գին է ճշմարտութիւնը։ Վասն
զի երեք են որ երկնքումն են,
[Հայրը և Բանը և Սուրբ Հոգին.
և այս երեքը մի են։ Եւ երեք են 8
որ երկրումը վկայում են.] Հոգին,
և ջուրը, և արիւնը. և այս երե-

9 քը միտքան են։ Եթէ մարդկանց
վկայութիւնն ընդունում ենք, Աս-
տուծոյ վկայութիւնն աւելի մեծ
է. վասն զի սա է Աստուծոյ վը-
կայութիւնն, որ վկայեց իր Որ-
10 դու մասին։ Ով որ հաւատում
է Աստուծոյ Որդուն, վկայութիւ-
նըն ունի իր անձնումը. ով որ չէ
հաւատում Աստուծոյն, ստախօս
է արել նորան. վասն զի չհաւա-
տաց այն վկայութեանն, որ Աստ-
ուած վկայեց իր Որդու մասին։
11 Եւ սա է վկայութիւնն, որ Աստ-
ուած յաւիտենական կեանք տը-
ուաւ մեզ. և այս կեանքը նորա
12 Որդու մէջ է։ Ով որ Որդին ունի,
նա կեանքն ունի. և ով որ Աս-
տուծոյ Որդին չունի, կեանքը
չունի։
13 Ա՛յս բաները գրեցի ձեզ՝ Աս-
տուծոյ Որդու անունին հաւա-
տացեալներիդ, որ գիտենաք
թէ յաւիտենական կեանք ունիք
14 Եւ սա է այն համարձակութիւնն
որ ունինք դէպի նորան, թէ ինչ
որ նորա կամաց պէս խնդրում
15 ենք, լսում է մեզ։ Եւ եթէ գի-
տենք թէ լսում է մեզ, ինչ որ
խնդրում ենք, գիտենք որ ստ-
նում ենք մեր խնդրուածքներն, որ
խնդրեցինք նորանից։
16 Եթէ մէկը տեսանէ իր եղբօրը որ
մեղանչել է ոչ-պէտ մեղքով որ
դէպի մահ չէ, թող խնդրէ, և
Աստուած կեանք կ'տայ նորան ոչ-
պէտ նորան որ մեղանչել է ոչ թէ
դէպի մահ. կայ մեղք որ մինչև
չափ է, նորա համար ես չեմ ա-
սում որ խնդրես։ 17 Ամեն անիրա-
ւութիւն մեղք է. և կայ մեղք
որ մինչև չափ չէ։
18 Գիտենք որ ամեն ով որ Աստ-
ուածմանից է ծնուած, մեղք չէ
գործում, բայց նա որ Աստուա-
ծմանից է ծնուած, իր անձը պա-
հում է, և չարը չէ մօտենում
նորան։ 19 Գիտենք որ Աստուածմա-
նից ենք, և բոլոր աշխարհքը չա-
րութեան մէջ է կեցում։ 20 Եւ գի-
տենք որ Աստուծոյ Որդին եկաւ
և մեզ միտք տուաւ, որ ճշմարի-
տը ճանաչենք. և ճշմարտումն ենք,
այսինքն նորա Որդի Յիսուս Քրիս-
տոսումն, նա է ճշմարիտ Աստ-
ուածը և յաւիտենական կեանքը։
Որդեակներ, պահեցէք ձեր անձ-
նները կուռքերից։ Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

1 Երէցը, քնտրեալ Կիւրիոսիդ, և
քո որդիներին, որոնց ես սիրում
եմ ճշմարտութեամբ, (և ոչ միայն
ես, այլ այն ամենքն էլ որ ճշմար-
2 տութիւնը ճանաչել են։) Ա՛յն
ճշմարտութեան պատճառով որ
մեզանում մնում է, և մեզ հետ
3 կ'լինի յաւիտեան։ Ձեզ հետ լինի
շնորհք, ողորմութիւն, խաղա-
ղութիւն Աստուած Հօրից, և
Տէր Յիսուս Քրիստոսից՝ Հօր
Որդուց, ճշմարտութեամբ և
սիրով։
4 Շատ ուրախացայ որ քո որդի-
ներից գտայ որ ճշմարտութեա-
նով են գնում, ինչպէս որ հրա-
5 ման առինք Հօրից։ Եւ հիմա ա-
ղաչում եմ քեզ, Կիւրիոս, ոչ
իբր թէ մի նոր պատուիրանք եմ
գրում քեզ, այլ այն որ սկզբից
6 ունէինք, որ իրար սիրենք։ Եւ
սա է սէրն, որ նորա պատու-
իրանքներին համեմատ գնանք. և
սա է պատուիրանքն, որ ինչպէս
լսեցիք սկզբից՝ այնպէս գնաք։
7 Վասն զի շատ մոլորեցուցիչներ
դուրս եկան աշխարհք որ չեն դա-
ւանում Յիսուս Քրիստոսին մարմ-
նով եկած. նա է մոլորեցուցիչը
8 և Նեռը։ Զգոյշ կացէք ձեր անձ-
ներին որ չկորցնենք այն որ վաս-
տակեցինք. այլ որ բոլոր վարձք
9 առնենք։ Ամեն ով որ յանցանք

է գործում, և չէ կենում Քրիստոսի վարդապետութեան մէջ, Աստուած չունի. ով որ կենում է Քրիստոսի վարդապետութեան մէջ, նա ունի Որդուն էլ Հօրն էլ։ 10 Եթէ մէկը ձեզ մօտ գայ և այս վարդապետութիւնը չբերէ, մի ընդունիք նորան ձեր տունը, և բարև մի տաք նորան։ 11 Վասն զի ով որ բարև տայ նորան, մասնակից կ'լինի նորա չար գործքերին։

Շատ բան ունէի ձեզ գրելու, 12 բայց չկամեցայ թղթով և թանաքով ձեզ գրել. այլ յոյս ունիմ գալ ձեզ մօտ, և բերանէ բերան խօսիլ, որ մեր ուրախութիւնը կատարեալ լինի։ Բարև են տալիս 13 քեզ քո ընտրեալ քրոջ որդիքը։ Ամէն։

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

1 Երէցը, սիրելի Գայիոսիդ, որին ես սիրում եմ ճշմարտութիւնով։
2 Սիրելի, աղօթք եմ անում որ ամեն բանի մէջ յաջող և առողջ լինիս, ինչպէս քո անձը յաջող
3 է, վասն զի շատ ուրախացայ երբոր եղբայրքն եկան, և քո ճշմարտութիւնը վկայեցին, ինչպէս որ դու ճշմարտութեան մէջ գնում ես։
4 Սրանից աւելի մեծ ուրախութիւն չունիմ, որ լսում եմ թէ իմ որդիները ճշմարտու-
5 թեան մէջ են գնում։ Սիրելի, հաւատարիմ ես գործում այդ՝ ինչ որ անում ես եղբայրներին և
6 օտարականներին. Որոնք վկայեցին քո սիրոյ համար եկեղեցու առջև, որ լաւ կ'անես եթէ նորանց Աստուծոյ արժանաւոր կերպով
7 ճանապարհ գցես։ Վասն զի նորա անունի համար դուրս եկան առանց մի բան առնելու հեթանոսներից։
8 Արդ պէտք է մենք ընդունինք այսպիսիներին, որ գործակից լինինք ճշմարտութեանը։
9 Ես գրեցի եկեղեցուն. բայց Դիոտրեփէսը որ ուզում է նորանց միջումը առաջինը լինել, մեզ չէ ընդունում։ Սորա համար եթէ 10 գամ նորա գործքերը կ'յիշեմ որ չար խօսքերով շատախօսութիւն է անում մեզ վերայ, և սորանով էլ չբաւականացած՝ ոչ ինքն է ընդունում եղբայրներին, և նորանից էլ որ ուզում են ընդունել, արգելում է, և եկեղեցուց հանում։ Սիրելի, չարին նմանող մի 11 լինիր, այլ բարոյն. ով որ բարի է գործում Աստուածանից է, և ով որ չարիք է գործում Աստուածոյն չէ տեսել։ Դեմետրիոսը վկա- 12 յութիւն ունի ամենից և նոյն իսկ ճշմարտութիւնից էլ, և մենք էլ վկայում ենք. և գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է։

Շատ բան ունէի քեզ գրելու, 13 բայց չեմ կամենում թանաքով և գրիչով գրել քեզ։ Բայց յոյս ունիմ շուտով քեզ տեսնել, և բե- 14 րանէ բերան կ'խօսինք։ Խաղաղու- 15 թիւն քեզ։ Բարև են տալիս քեզ սիրելիքը. բարև տուր մեր սիրելիներին յանուանէ։

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

1 Յուդայ Յիսուսի Քրիստոսի ծառայ, և Յակոբայ եղբայր. Ա-
ռաւած Հօրից սրբուած, և Յիսուս
Քրիստոսումն պահուած կանչե-
2 ուածներիդ. Ողորմութիւն և խա-
ղաղութիւն և սէր շատանայ ձեր
վերայ։
3 Սիրելիներ, որովհետև ամեն
ջանք արի որ գրեմ ձեզ մեր հա-
սարակաց փրկութեան համար,
հարկ եղաւ ինձ որ գրեմ ձեզ և
յորդորեմ, որ մրցիք սրբերին մի-
անգամ աւանդուած հաւատքովը
4 վասն զի մի քանի մարդիկ ներս
սրծան, որոնք առաջուց հա-
տատուած էին այս դատաս-
տանի համար, ամբարիշտներ, որ
մեր Աստուծոյ շնորհքն անառա-
կութեան դարձրին. և ուրանում
են այն միայն Իշխանին, (Ա-
տուծոյն) և մեր Տէր Յիսուս Քրիս-
5 տոսին։ Իակ ես կամենում եմ յի-
շեցնել ձեզ, որ արդէն այս բանը
գիտէք, թէ Տէրը ժողովրդին
փրկեց Եգիպտոսի երկրից. և
յետոյ չհաւատացողներին կորց-
6 րեց։ Եւ այն հրեշտակներին որ
իրանց իշխանութիւնը չպահեցին,
այլ իրանց բնակութիւնը թողին,
յաւիտենական կապանքներով
խաւարի մէջ պահեց մեծ օրուայ
7 դատաստանի համար։ Ինչպէս
Սոդոմը և Գոմորը և նորանց շուր-
ջի քաղաքները, հէնց սորանց
կերպով պոռնկելով և ուրիշ մարմ-
նոյ եռանից գնալով օրինակի հա-
մար մեր առջևը դրուած են,
յաւիտենական կրակի դատաս-
8 տանն ընդունելով։ Եւ նմանա-
պէս էլ սորանք, որ ցնորուած
լինելով մարմինը պղծում են, տէ-
րութիւններին անարգում են, և
9 փառքը հայհոյում են։ Եւ Մի-
քայէլ հրեշտակապետն, երբոր
սատանայի հետ վիճելով պատա-
խան էր տալիս Մովսէսի մարմնոյն
համար, չհամարձակեց հայհոյան-
քի դատաստան անել, բայց ա-
սաց՝ Տէրը քեզ պատժէ։ Իակ ա- 10
րանք այն բաներն որ չեն իմա-
նում, հայհոյում են. և ինչ որ
էլ անխօս անասունի պէս բնա-
կանապէս գիտեն, նորանցում ա-
պականւում են։ Վայ նորանց, 11
որ կայէնի ճանապարհովը գնա-
ցին, և Բաղաամի մոլորութիւ-
նովը վարձքին նաւերուեցան, և
Կորխայ հակառակութեան պէս
կորան։ Սորանք ֆօյ-լո-վէ-աֆ 12
ժայռեր են ձեր սիրոյ խնջոյքնե-
րումը, որ աներկիւղ միասին ու-
տել խմելիս, իրանց անձները են
արածեցնում։ Անջուր ամպեր են
քամիներից տատանուած, պտղա-
կորոյս անպտուղ ծառեր, երկու
անգամ մեռած արմատախիլ ե-
ղած. Ծովու կատղած ալիքներ, 13
որ իրանց անձերի ամօթն են
փրփրեցնում. մոլար աստղեր, ո-
րոնց պահւում է յաւիտեան խա-
ւարի մութը։
Ենովքն էլ, որ եօթներորդն է 14
Ադամից, սորանց համար մար-
գարէացաւ և ասաց. Ահա Տէրը
եկաւ իր բիւրաւոր սուրբերովը, Որ 15
դատաստան անէ ամենին, և նո-
րանց ամբարիշտներին յանդիմա-
նէ իրանց արած բոլոր ամբարիշտ
գործքերի համար. և բոլոր այն
խիստ էօ-վէրէ համար, որ ամբա-
րիշտ մեղաւորները նորա դէմ խօ-
սեցան։ Սորանք տրտնջողներ և 16
փսփսացողներ են, որ իրանց անձնա-
կան ցանկութիւնների պէս են գը-
նում. և նորանց բերանը ամբար-
տաւան բաներ է խօսում. երես
են տեսնում շահի համար։ Բայց 17
դուք, սիրելիներ, յիշեցէք մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի առաք-
եալներից առաջուց ասած խօսքե-
րը։ Վասն զի ասում էին ձեզ, 18
թէ վերջի ժամանակներում ծաղր
անող մարդիկ կ'լինին, որ իրանց
ամբարիշտ ցանկութեանց հետից
կ'գնան։

19 Սորանք են որ Ղոկումի հեռացնում են իրանց, շնչաւորներ որ
20 Հոգի չունին, բայց դուք, սիրելիներ, ձեր անձները ձեր սուրբ
հաւատքի վերայ շինեցէք Սուրբ
21 Հոգովը, աղօթք անելով, Որ ձեր անձները Աստուծոյ սիրոյ մէջ պահէք, սպասելով մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողորմութեանը յաւիտենական կենաց համար,
22 Եւ մի քանիսին ողորմեցէք խրատ-
23 րութիւն անելով, Եւ մի քանիսին վախով ապրեցրէք կրակից յափրչտակելով. ատելով այն պատմուճանն էլ որ մարմնից աղտոտուած է։

24 Եւ Նորան որ կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել իր փառաց առջև անբիծ
25 ցնծութիւնով. Ա՛ն մէկ իմաստուն Աստուծոյն և մեր Փրկչին (Յիսուս Քրիստոսով) փառք և մեծութիւն, զօրութիւն և իշխանութիւն, (բոլոր գարերից առաջ) և հիմա և ամեն յաւիտեանների համար. Ամէն։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած տուաւ իր ծառաներին ցոյց տալու, ինչ որ շուտով պիտի լինի, և իմացրեց իր հրեշտակի ձեռովն ուղարկե-
2 լով իր Յօհաննէս ծառային. Որ վկայեց Աստուծոյ խօսքին և Յիսուսի Քրիստոսի վկայութեանը,
3 որ տեսաւ։ Երանելի են այս մարգարէութեան խօսքերը կարդացողը և լսողները, և որանում գրուածները պահողները. վասն զի ժամանակը մօտեցել է։
4 Յօհաննէս, եօթը եկեղեցիներիդ, որ Ասիայումն էք, շնորհք ձեզ և խաղաղութիւն Նորանից որ է. և որ էր, և որ գալու է, և այն եօթը Հոգիներից, որ նորա աթոռի առջև են.
5 Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայից, որ մեռելներից անդրանիկը՝ և երկրի թագաւորների իշխանն է. Նորան որ մեզ սիրեց և մեր մեղքերից արձակեց մեզ
6 իր արիւնովն, Եւ մեզ թագաւորներ և քահանաներ արաւ Աստուծոյ և իր Հօր համար. Նորան փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

7 Ահա գալիս է ամպերով. և ամեն աչք կ'տեսնէ Նորան, և նորանք որ խոցեցին Նորան. և Նորա վերայ կոծ կ'անեն երկրի ամեն ազգերը. Այո, Ամէն։
8 Ես եմ Ալֆան և Օմեղան (ակիզբը և վերջը) ասում է Տէրը, Նա որ է և որ էր և որ գալու է, Ամենակալը։
9 Ես՝ Յօհաննէս ձեր եղբայրը և հաւատար ընկեր նեղութեան և արքայութեան և Յիսուսի Քրիստոսի համբերութեան, Պատմուա ասուած կղզուումն էի Աստուծոյ խօսքի համար, և Յիսուսի Քրիս-
10 տոսի վկայութեան համար։ Ես կիրակի օրը եղայ Հոգուով. և իմ ետևից մի մեծ ձայն լսեցի ինչպէս փողի ձայն, որ ասում էր. Ես եմ
11 Ալֆան և Օմեղան, առաջինը և վերջինը, Ես ինչ որ տեսնում ես գրիր մի գրքի մէջ, և ուղարկիր այն եօթն եկեղեցիներին որ Ասիայումն են՝ Եփեսոս, Զմիռնիայ, և Պերգամոն, և Թիւատիրա, և Սարդէս, և Փիլադելփիայ և Լաւոդիկէայ։ Ես գար-
12 ձայ այն ձայնը տեսնելու որ ինձ հետ խօսում էր, և երբոր գարձայ եօթը ոսկի ճրագակալ տե-
13 սայ. Եւ այն եօթը ճրագակալների մէջում Մէկ Որդի մարդոյ

նման, պճղնաւոր պատմուճան
հագած, և ատինքների մօտ ոսկի
14 գօտի կապած։ Եւ նորա գլուխը
և մազերը ճերմակ բուրդի և
ձիւնի պէս սպիտակ էին, և նո-
րա աչքերը կրակի բոցի պէս։
15 Եւ նորա ոտները կարմրած պղնե-
ձի պէս իբրև հնոցի մէջ կրակ ե-
ղած, և նորա ձայնը շատ ջրերի
16 ձայնի պէս։ Եւ իր աջ ձեռքումը
եօթն աստղեր ունէր, և նորա
բերանիցը սրած երկբերան սուր
էր դուրս գալիս, և նորա երեսն
ինչպէս արեգակը որ ճառագայ-
17 թում է իր զօրութեամբը։ Եւ
երբոր տեսայ նորան, մեռածի
պէս ընկայ նորա ոտների առջև.
և իր աջ ձեռն ինձ վերայ դրաւ
և ասաց ինձ. Մի վախենար, ես
18 եմ Առաջինը և Վերջինը, Եւ
կենդանին. և ես մեռած էի, և
ահա կենդանի եմ յաւիտեանս
յաւիտենից, ամէն. և ունիմ դը-
ժոխքի և մահի բանալիքները։
19 Գրիր ինչ որ տեսանում ես, ինչ որ
է, և ինչ որ նորանից յետոյ լինելու
20 է։ Այս եօթն աստղերի խորհուր-
դըն որ իմ աջ ձեռի մէջ տեսար,
և այն եօթը ոսկի ճրագակալները.
այն եօթն աստղերը եօթը եկեղեց-
ների հրեշտակներն են, և այն ե-
օթը ճրագակալները եօթը եկեղե-
ցիներն են։

ԳԼ. Բ

1 Եփեսացոց եկեղեցու գրիր. Սա
է ասում այն եօթն աստղերն իր
աջ ձեռքում ունեցողը, որ եօթն
ոսկի ճրագակալների մէջ մեն է
2 գալիս. Գիտեմ քո գործքերը և
քո աշխատութիւնը և քո համ-
բերութիւնը. և որ չարերին չես
կարողանում համբերել, և փոր-
ձեցիր նորանց որ առաքեալ են
ձևանում, և չեն, և գտար որ
3 սուտ են։ Եւ դեղ-ի-ննեչ կրե-
ցիր և համբերութիւն ունիս, և
իմ անունի համար աշխատեցիր,
4 և չթուլացար։ Բայց քեզ դեմ
— ունիմ, որ քո առաջի սէրը
5 թողիր։ Արդ յիշիր, Ե՞րտեղից
վայր ընկար, և ղջացիր, և ա-
ռաջի գործքերն արա. ապա թէ
ոչ՝ կ'գամ շուտով քեզ մօտ, և
քո ճրագակալը կ'շարժեմ իր տե-
ղիցը եթէ չապաշխարես։ Բայց 6
այս բանն ունիս, որ Նիկողայե-
ցիների գործքերն ատում ես, ո-
րոնք ես էլ ատում եմ։ Ով որ 7
ականջ ունի, թող լսէ ինչ որ
Հոգին ասում է եկեղեցիներին. Ով
որ յաղթում է նորան կենաց
փայտիցն ուտել կ'տամ, որ Աս-
տուծոյ դրախտի մէջ է։

Եւ Զմիւռնացոց եկեղեցու հրեշ- 8
տակին գրիր. Սա է ասում Ա-
ռաջինը և Վերջինը որ մեռեալ
էր, և կենդանացաւ։ Գիտեմ քո 9
գործքերը և նեղութիւնը և աղ-
քատութիւնը. բայց դու հա-
րուստ ես. և գէրեմ նորանց հայ-
հոյանքը որ ասում են թէ իրանք
Հրէայ են և չեն, այլ սատանայի
ժողովք են։ Բնաւ մի վախենար 10
այն բաներից որ կրելու ես. ահա
բանսարկուն ձեզանից բանտի մէջ
է գցելու, որ փորձուիք, և նե-
ղութիւն կ'ունենաք տասն օր.
հաւատարիմ եղիր մինչև ի մահ,
և կենաց պսակը կ'տամ քեզ։
Ով որ ականջ ունի թող լսէ ինչ 11
որ Հոգին ասում է եկեղեցինե-
րին. ով որ յաղթում է, երկ-
րորդ մահից չի վնասուիլ։

Եւ Պերգամոյի եկեղեցու հրեշ- 12
տակին գրիր. Սա է ասում սրած
երկսայրի սուրն ունեցողը։ Գի- 13
տեմ քո գործքերը, և թէ որ
տեղ ես բնակում, ուր որ սա-
տանայի աթոռն է. և իմ ա-
նունը պահում ես, և իմ հա-
ւատքը չուրացար այն օրերումն,
որ իմ Անտիպաս հաւատարիմ
վկան սպանուեցաւ ձեր մէջ. ուր
որ սատանան է բնակում։ Բայց 14
քեզ դէմ քիչ բաներ ունիմ. որ
այդ տեղ Բաղաամի վարդապե-
տութիւնը պահողներ ունիս որ
Բաղակին սովորեցրեց, գայթակ-
ղութիւն դնել Իսրայէլի որդոց
առջև, որ նորանք կռքի մսատաղ
ուտեն և պոռնկութիւն անեն։
Այսպէս դու էլ Նիկողայեցինե- 15
րի վարդապետութիւնը պահողներ
ունիս, որ ես ատում եմ։ Ա- 16

պաշխարիր, ապա թէ ոչ՝ կ'գամ քեզ մօտ շուտով, և կ'պատերազմիմ նորանց հետ իմ բերանի 17 սրովը։ Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. Ով որ յաղթում է այն թաքցրած մանանայից պտղ տել կ'տամ նորան. և սպիտակ խիճ կ'տամ նորան. և այն խիճի վերայ մի նոր անուն գրուած, որ ոչ ոք չէ գիտում, բայց նա որ առնում է։

18 Եւ Թիւատիրայի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում Աստուծոյ Որդին, որի աչքերը կրակի բոցի պէս են, և նորա ոտները կարմրած պղնձի նման։ 19 Գիտեմ քո գործքերը, և սէրը և քո ծառայութիւնը, և հաւատքը, և քո համբերութիւնը, և քո գործերը, և որ վերջիններն աւելի են քան թէ առաջինն։ 20 Բայց քեզ դէմ քիչ բաներ ունիմ. որ յեզաբէլ կնկանը թոյլ ես տալիս որ իրան մարգարէուհի է ասում, և իմ ծառաներին սովորեցնում և մոլորեցնում է, որ պոռնկութիւն անեն և կռքի մսատաղ ուտեն։ 21 Եւ նորան ժամանակ տուի որ ապաշխարէ իր պոռնկութիւնից, և չապաշխարեց։ 22 Ահա ես նորան անկողինի մէջ կ'գցեմ, և նորա հետ շնացողներին էլ մեծ մեծ նեղութիւնների մէջ. եթէ չապաշխարեն իրանց գործքերից։ 23 Եւ նորանց որդիքը մահով կ'սպանեմ. և բոլոր եկեղեցիները կ'ճանաչեն որ ես եմ երիկամունքները և սրտերը քննողը. և կ'տամ ձեզ ամեն մէկիդ իր գործերի համեմատ։ 24 Իսկ ասում եմ ձեզ և մնացածներին որ Թիւատիրացի էք, որ այս վարդապետութիւնը չունիք, և որ սատանայի խորութիւնները չճանաչեցիք, ինչպէս ասում են. Ձեզ վերայ ուրիշ ծանրութիւն չեմ գցիլ։ 25 Բայց այն որ ունիք պահեցէք մինչև որ ես կ'գամ։ 26 Եւ ով որ յաղթում է և իմ գործքերը պահում մինչև վերջը, նորան իշխանութիւն կ'տամ ազգերի վերայ. 27 Եւ կ'հովուէ նորանց երկաթէ գաւազանով, և բրուտի ամանի պէս կ'փշրէ, ինչպէս ես էլ իմ Հօրից ընդունեցի. 28 և կ'տամ նորան առաւօտեան աստղը։ 29 Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին։

ԳԼ. Գ

1 Եւ Սարդէսի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում Աստուծոյ եօթը Հոգիները, և եօթն աստղերն ունեցողը. Գիտեմ քո գործքերը, որ անուն ունիս թէ կենդանի ես, բայց մեռած ես։ 2 Արթուն եղիր, և հաստատիր ուրիշներին որ մեռնելու մօտ են. վասն զի քո գործքերը կատարեալ չգտայ Աստուծոյ առջև։ 3 Յիշիր թէ ինչպէս ընդունեցիր և լսեցիր. և պահիր և ապաշխարիր. ապա թէ չարթնանաս՝ կ'գամ քեզ վերայ գողի պէս. և չես իմանալ թէ որ ժամում քեզ մօտ կ'գամ։ 4 Բայց մի քիչ անուններ ունիս Սարդէսի մէջն էլ, որ իրանց հանդերձները չկեղտոտեցրին. և նորանք սպիտակներով մեն կ'գան ինձ հետ, վասն զի արժանի են։ 5 Ով որ յաղթում է, նա սպիտակ հանդերձներ կ'հագնէ. և նորա անունը կենաց գրքիցը չեմ ջնջիլ. և կ'դաւանեմ նորա անունն իմ Հօր առջև և նորա հրեշտակների առջև։ 6 Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին։

7 Եւ Փիլադելփիայի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ասում Սուրբը ճշմարիտը, որ Դաւթի բանալիքներն ունի. որ բանում է և ոչ ով չէ փակում, և փակում է և ոչ ով չէ բանում։ 8 Գիտեմ քո գործքերը. ահա քո առջև դռ բացուած դուռը դրի, և նորան ոչ ով կարող չէ փակել, վասն զի քիչ զօրութիւն ունիս, և իմ խօսքը պահեցիր, և անունս չուրացար։ 9 Ահա ես տալիս եմ սատանայի ժողովքիցը, որ իրանց համար ասում են թէ Հրէայ են և չեն, այլ սուտ են ասում, ահա կ'անեմ նորանց, որ կ'գան քո

ոաների առջև և երկրպագութիւն
կ'անեն, և կ'ճանաչեն թէ ես սի-
10 րեցի քեզ։ Որովհետև իմ համբե-
րութեան խօսքը պահեցիր, ես
էլ քեզ կ'պահեմ այն փորձու-
թեան ժամից, որ գալու է այս
աշխարհքի վերայ, որ փորձէ երկ-
րի երեսի վերայ բնակողներին։
11 Ահա գալիս եմ շուտով. բռնիր
այն որ ունիս, որ ոչ ով չառնէ քո
12 պսակը։ Ով որ յաղթում է սիւն
կ'անեմ նորան իմ Աստուծոյ տա-
ճարումը, և այլ ևս դուրս չի գնալ.
և նորա վերայ կ'գրեմ իմ Աստու-
ծոյ անունը, և իմ Աստուծոյ քա-
ղաքի անունը, այն նոր Երուսա-
ղէմի անունը որ երկնքից է իջ-
նում իմ Աստուածանիցը, և իմ
13 նոր անունը։ Ով որ ականջ ունի
թող լսէ ինչ որ Հոգին ասում է
եկեղեցիներին։

14 Եւ Լաւոդիկեացոց եկեղեցու
հրեշտակին գրիր. Սա է ասում
Ամէնը, հաւատարիմ և ճշմարիտ
վկան, Աստուծոյ արարածնե-
15 րի Սկիզբը։ Գիտեմ քո գործ-
քերը որ ոչ ցուրտ ես և ոչ տաք.
ա՛հ թէ ցուրտ լինէիր կամ տաք։
16 Ուրեմն որովհետև գաղջ ես
և ոչ տաք և ոչ ցուրտ, քեզ պի-
17 տի փսխեմ իմ բերանիցը. Վասն
զի ասում ես, թէ Ես հարուստ
եմ և մեծացայ, և ոչ բանի կա-
րօտ չեմ. և չես գիտում թէ դու
թշուառ, և ողորմելի, և աղքատ,
18 և կոյր, և մերկ ես։ Ես խրատ
եմ տալիս քեզ, ինձանից կրա-
կում փորձուած ոսկի առ, որ
հարստանաս, և սպիտակ հան-
դերձներ՝ որ հագնիս, որ քո մեր-
կութեան ամօթը չերևի. և դեղ
19 դիր աչքերիդ որ տեսանես։ Ես ո-
րոնց որ սիրում եմ յանդիմա-
նում եմ, և խրատում եմ. ու-
րեմն ջանք արա և ապաշխարիր։
20 Ահա ես դրան առջև կանգնած
եմ և թակում եմ. եթէ մէկը լսէ
իմ ձայնը և դուռը բանայ, կ'մըտ-
նեմ նորա մօտ և ընթրիք կ'անեմ
21 նորա հետ, և նա ինձ հետ։ Ով
որ յաղթում է կ'տամ նորան,
որ ինձ հետ նստի իմ աթոռի վե-
րայ, ինչպէս ես էլ յաղթեցի և
նստեցի իմ Հօր հետ նորա աթո-
ռի վերայ։ Ով որ ականջ ունի 22
թող լսէ ինչ որ Հոգին ասում է
եկեղեցիներին։

ԳԼ. Դ

Եւ սորանից յետոյ տեսայ, և 1
ահա մի բացուած դուռն երկն-
քում, և այն առաջի ձայնը, որ
լսեցի փողի պէս որ խօսում էր
ինձ հետ, ասաց. Վեր ելիր այս
տեղ, և ցոյց տամ քեզ ինչ որ
լինելու է սորանից յետոյ։ Եւ 2
շուտով եղայ Հոգում. և ահա մի
աթոռ կար երկնքումը. և աթոռի
վերայ մէկը նստած։ Եւ նստողը 3
յասպիս և սարդիոն քարի երե-
ւոյթի նման էր. Եւ աթոռի չորս 4
կողմովը ծիածան կար զմրուխտի
երևոյթի նման. և աթոռի չորս
կողմովը քսան և չորս աթոռներ,
և այն աթոռների վերայ քսան և
չորս երէցներ նստած՝ սպիտակ
հանդերձներ հագած, և իրանց
գլխներին ոսկի պսակներ։ Եւ 5
աթոռիցը փայլատակներ և որո-
մունք և ձայներ էին դուրս գա-
լիս. և եօթը ջահեր վառուելիս
բորբոքուած աթոռի առջև, ո-
րոնք Աստուծոյ Հոգիներն են։ Եւ 6
աթոռի առջև ապակեայ ծով
կար ակնվանում նման, և աթոռի
մէջ և աթոռի չորս կողմովը չորս
կենդանիք՝ առաջից և ետից լիքն
աչքերով։ Եւ առաջի կենդանին 7
առիւծի նման էր, և երկրորդ կեն-
դանին՝ եզի նման, և երրորդ կեն-
դանին մարդու նման երես ունէր,
և չորրորդ կենդանին թռչող ար-
ծուի նման։ Եւ չորս կենդան- 8
ների իւրաքանչիւրն վեց թև ու-
նէին, իրանց չորս կողմովը և ներ-
սեանց լիքն էին աչքերով. և հան-
գստութիւն չունէին գիշեր և գի-
շեր ասելով. Սուրբ, Սուրբ, Սուրբ
Տէր Աստուած ամենակարող, որ
էր, և որ է, և որ գալու է։ Եւ 9
երբոր այն կենդանիները փառք,
և պատիւ, և գոհութիւն են տա-
լիս աթոռի վերայ նստողին որ
կենդանի է յաւիտեան յաւիտե-
նից, Քառան և չորս երէցները ընկ- 10

նուամ են աթոռի վերայ նստողի առջև, և երկրպագուամ նորան, որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից. և իրանց պսակները գըցուամ են աթոռի առջև և ասուամ.
11 Արժանի ես, Տեր, որ առնես փառքը, և պատիւը, և զօրութիւնը. վասն զի ստեղծեցիր ամեն բաները և քո կամենալովը կան և ստեղծուեցան։

ԳԼ. Ե

1 Եւ աթոռի վերայ նստողի ձեռումը մի գիրք տեսայ, որ ներսևանց և դրսևանց գրուած
2 էր, եօթն կնքով կնքուած։ Եւ մի զօրաւոր հրեշտակ տեսայ որ մեծ ձայնով քարոզուամ էր. Ո՞վ է արժանի բանալ այս գիրքը և սորա կնիքները լուծել։
3 Եւ ոչ ով ոչ երկինքումը և ոչ երկրի վերայ և ոչ երկրի ներքևումն, չէր կարողանուամ այն գիրքը բանալ, և
4 ոչ էլ նայել նորա մէջ։ Եւ ես շատ լաց էի լինուամ, որ ոչ ով չ'գտնուեցաւ արժանի այն գիրքն բանալու և կարդալու և ոչ նորա
5 մէջ նայելու։ Եւ երէցներից մէկն ասաց ինձ. Լաց մի լինիր, ահա յաղթեց առիւծը որ Յուդայի ցեղից է՝ Դաւթի Արմատը, որ գիրքը բանայ և նորա եօթը կը-
6 նիքները լուծէ։ Եւ տեսայ, և ահա այն աթոռի մէջ և չորս կենդանիների մէջ և երէցների մէջ մի Գառն կանգնած մորթուածի նման, որ եօթն եղջիւր ուներ և եօթն աչք, որ Աստուծոյ եօթը Հոգիքն են, որ ուղարկ-
7 ուամ են բոլոր երկիրը։ Եւ նա եկաւ և գիրքն առաւ աթոռի վե-
8 րայ նստողի աջ ձեռիցը։ Եւ երբ որ գիրքն առաւ, չորս կենդանիները և քսան և չորս երէցները քնկնուամ էին Գառի առջև. ամեն մէկը ունէին քնարներ և ոսկի բուրվառներ խնկով լիքը, որ սրբոց աղօթքն է։ Եւ նոր երգ են
9 երգուամ և ասուամ. Արժանի ես առնելու այդ գիրքը և դորա կնիքները բանալու, վասն զի մորթուեցար, և քո արիւնովը մեզ

գնեցիր Աստուծոյ համար ամեն ցեղից և լեզուից և ժողովրդից և ազգից. Եւ մեր Աստուծոյ հա- 10
մար մեզ թագաւորներ և քահանաներ արիր, և երկրի վերայ թագաւորութիւն կ'անենք։ Եւ 11
տեսայ, և շատ հրեշտակների ձայն լսեցի աթոռի և չորս կենդանիների և երէցների չորս կողմովը. և նորանց համարն էր բիւրք բիւրոց և հազարք հազարաց. Որ մեծ ձայնով ասուամ է- 12
ին. Արժանի է մորթուած Գառը առնելու և զօրութիւնը, և հարստութիւնը, և իմաստութիւն, և կարողութիւն, և պատիւ, և փառք, և օրհնութիւն։ Եւ ամեն ստեղծուած, որ երկրի- 13
քումն է, և երկրի վերայ, և երկրի տակ, և ծովումը, և նորանք ամենքն որ նորա մէջ են, լսեցի որ ասուամ էին. Աթոռի վերայ նստողին և Գառին լինի օրհնութիւնը, և փառքը, և կարողութիւնը յաւիտեան յաւիտենից։
Եւ չորս կենդանիներն ասուամ է- 14
ին, Ամէն. և քսան և չորս երէցները ընկան և երկրպագութիւն արին նորան որ կենդանի է յաւիտեան յաւիտենից։

ԳԼ. Զ

Եւ տեսայ որ Գառը այն կնիք- 1
ներից մէկը բացաւ, և այն չորս կենդանիների մէկիցը լսեցի որ որոտմունքի ձայնի պէս ասուամ էր. Եկ և տես։ Եւ տեսայ, և ահա 2
մի սպիտակ ձի, և նորա վերայ նստողը մի աղեղ ուներ. և մի պսակ տրուեցաւ նորան, և դուրս եկաւ յաղթելով և յաղթելու համար։

Եւ երբոր երկրորդ կնիքը բա- 3
ցաւ, երկրորդ կենդանիցը լսեցի որ ասուամ էր. Եկ և տես։ Եւ մի 4
ուրիշ ձի դուրս եկաւ կարմիր. և նորա վերայ նստողին տրուեցաւ որ խաղաղութիւնը վեր առնէ երկրիցը, և որ իրար մորթեն. և մի մեծ սուր տրուեցաւ նորան։

Եւ երբոր երրորդ կնիքը բա- 5
ցաւ, երրորդ կենդանիցը լսեցի որ ասուամ

էր. Եկ և տես. և տեսայ և ահա մի ևս ձի, և նորա վերայ նստողը մի կշռաք ունէր իր ձեռաւմը: 6 Եւ ձայն կենդանիների միջիցը մի ձայն լսեցի որ ասում էր. Մի կապիճ ցորենը մի դենարի, և երեք կապիճ գարին մի դենարի, և ձէթի և գինուն վնաս չտաս:

7 Եւ երբոր չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կենդանուս ձայնը լսեցի որ ասում էր. Եկ և տես: 8 Եւ տեսայ, և ահա մի դեղնականաչ ձի, և նորա վերայ մի նստող՝ անունը Մահ, և Դժոխքը գնում էր նորա ետևից. և իշխանութիւն տրուեցաւ նորանց՝ աշխարհքի չորրորդ բաժնի վերայ սրով և սովով և մահով և երկրի գազաններովն սպանել:

9 Եւ երբոր հինգերորդ կնիքը բացաւ, տեսայ սեզանի ներքև նորանց հոգիները որ մորթուած էին Աստուծոյ խօսքի համար և այն վկայութեան համար որ ունէին, 10 Որ մեծ ձայնով աղաղակում էին և ասում. Մինչև երբ, ով սուրբ Տէր և ճշմարիտ, չես դատում, և մեր արիւնի վրէժը չես առնում երկրի վերայ բնակողներից: 11 Եւ նորանց իւրաքանչիւրին սպիտակ հանդերձներ տրուեցան, և ասացուեցաւ նորանց, որ տակաւին մի քիչ ժամանակ հանգիստ առնեն, մինչև որ նորանց ծառայակիցները և նորանց եղբայրները էլ կատարուին որ նորանց պէս սպանուելու են:

12 Եւ տեսայ, երբոր վեցերորդ կնիքը բացաւ, և ահա մեծ շարժ եղաւ, և արեգակը սևացաւ մազէն քուրձի պէս, և լուսինն 13 արիւնի պէս եղաւ: Եւ երկնքի աստղերը թափուեցան երկրի վերայ ինչպէս թզենին իր խակ պտուղը թափում է՝ սաստիկ քամուց շարժուած: 14 Եւ երկինքը տեղից քաշվում էր գալարուող գրքի պէս. և բոլոր լեռներն ու կղզիները իրանց տեղից 15 շարժուեցան: Եւ երկրին թագաւորները և մեծամեծները և հարուստները և հազարապետները և զօրաւորները և ամեն ծառայ և ամեն ազատ թաքցրին իրանց անձերը սրբերի և լեռանց ժայռերի մէջ, 16 և ասում էին լեռանց և ժայռերին. Վայր ընկէք մեզ վերայ, և ծածկեցէք մեզ աթոռի վերայ նստողի երեսից, և Գառի բարկութիւնից. 17 Վասն զի նորա բարկութեան մեծ օրը եկել է, և ով կարող է կենալ:

ԳԼ. Է

1 Եւ սորանից յետոյ տեսայ չորս հրեշտակ՝ կանգնած երկրի չորս անկիւնումը, և երկրի չորս քամին բռնած, որ քամի չփչէ երկրի վերայ, ոչ էլ ծովի վերայ, և ոչ մի ծառի վերայ: 2 Եւ մի ուրիշ հրեշտակ տեսայ, որ դուրս էր գալիս արևելքից, և կենդանի Աստուծոյ կնիքը ունէր, և մեծ ձայնով աղաղակեց այն չորս հրեշտակներին որոնց իշխանութիւն տրուեցաւ երկրին և ծովին վնասելու, և ասում էր. 3 Վնաս մի տայք ոչ երկրին, ոչ ծովին, և ոչ էլ ծառերին, մինչև որ մեր Աստուծոյ ծառաների վերայ կնիք դնենք նորանց ճակատներումը: 4 Եւ կնքուածների համարը լսեցի հարիւր քառասուն և չորս հազար կնքուած Իսրայէլի որդոց ամեն ցեղերից: 5 Յուդայի ցեղից տասներկու հազար կնքուած. Ռուբենի ցեղից տասներկու հազար կնքուած. Գադի ցեղից տասներկու հազար կնքուած. 6 Ասերի ցեղից տասներկու հազար կնքուած. Նեփթաղիմի ցեղից տասներկու հազար կնքուած. Մանասէի ցեղից տասներկու հազար կնքուած. 7 Շմաւոնի ցեղից տասներկու հազար կնքուած. Ղեւիի ցեղից տասներկու հազար կնքուած. Իսաքարի ցեղից տասներկու հազար կնքուած. 8 Զաբուղոնի ցեղից տասներկու հազար կնքուած. Յովսէփի ցեղից տասներկու հազար կնքուած. Բենիամինի ցեղից տասներկու հազար կնքուած:

9 Եւ սորանից յետոյ տեսայ, և ահա մի շատ ժողովուրդ որ ոչ

ով չէր կարող համարել, ամեն ազգից և ցեղերից և ժողովուրդներից և լեզուներից, կանգնած աթոռի առջև և Գառի առջև, և ապիտակ հանդերձներ հագած, և իրանց ձեռներումն արմաւենիներ. 10 և աղաղակում էին բարձր ձայնով և ասում. Փրկութիւնը մեր Աստուծոյն, որ նստում է 11 աթոռին վերայ, և Գառին: Եւ բոլոր հրեշտակները կանգնել էին աթոռի և երէցների և չորս կենդանիների չորս կողմովը, և ընկնում էին երեսների վերայ աթոռի առջև և երկրպագում էին 12 Աստուծոյն, Ասելով. Ամէն. օրհնութիւնը և փառքը և իմաստութիւնը և գոհութիւնը և պատիւը և կարողութիւնը և զօրութիւնը յԱստուծոյ մերում յաւիտեան յաւիտենից. Ամէն: Եւ ե- 13 րէցներից մէկը պատասխանելով ասաց ինձ. Սորանք որ ապիտակ հանդերձներ են հագել՝ ո՞վ են և 14 կամ ո՞րտեղից են եկել: Եւ ասացի նորան. Տէր, դու գիտես. և ասաց ինձ. Սորանք են որ գալիս են այն մեծ նեղութիւնից, և իրանց հանդերձները լուացին և ապիտակացրին Գառի արիւնով: 15 Նորա համար Աստուծոյ աթոռի առջև են, և պաշտում են նորան ցերեկ և գիշեր նորա տաճարի մէջ. և աթոռի վերայ նստողը կ'բնակէ նորանց մէջ. 16 Այլ ևս ոչ կ'սովին և ոչ կ'ծարաւին, և չի ընկնիլ նորանց վերայ ոչ արևը և ոչ մի տաքու- 17 թիւն, վասն զի Գառը՝ որ աթոռի մէջ է, կ'հովուէ նորանց և կ'առաջնորդէ նորանց դէպի ջրերի կենդանի աղբիւրներ. և Աստուած կ'սրբէ ամեն արտասուքը նորանց աչքերից:

ԳԼ. Ը

1 Եւ երբ որ եօթներորդ կնիքը բացաւ, լռութիւն եղաւ երկնքում կէս ժամի չափ:

2 Եւ տեսայ այն եօթը հրեշտակները որ Աստուծոյ առջև կանգնած էին. և եօթը փող տրուեցաւ նո- 3 րանց: Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ կ'անգնեց սեղանի առջև, և ոսկի խնկանոց ունէր. և շատ խունկ տրուեցաւ նորան, որ բոլոր սրբերի աղօթքների հետ մատուցանէ այն ոսկի սեղանի վերայ որ աթոռի առջևն էր: Եւ վեր եկաւ ծուխը 4 խնկերի սրբոց աղօթքների հետ հրեշտակի ձեռից Աստուծոյ առջևը: Եւ հրեշտակն այն խնկանոցն 5 առաւ և լցրեց սեղանի կրակից, և գցեց երկրի վերայ, և ձայներ և որոտմունքներ և փայլատակներ և շարժ եղաւ: Եւ այն եօթը հրեշ- 6 տակներն, որ եօթը փողերն ունէին, իրանց պատրաստեցին որ փչեն:

Եւ առաջի հրեշտակը փող փչեց, և եղաւ կարկուտ և կրակ արիւնով խառնուած և ընկաւ երկրի վերայ. և երկրի երրորդ մասը այրուեցաւ, և ծառերի երրորդ մասը այրուեցաւ, և բոլոր կանաչ խոտերը այրուեցան:

Եւ երկրորդ հրեշտակը փող փչեց, և իբրև մի մեծ լեառն կրակով բորբոքուած ընկաւ ծովի մէջ, և ծովի երրորդ մասը արիւն դարձաւ: Եւ ծովի մէջի շունչ ունեցող արարածների երրորդ մասը մեռաւ, և նաւերի երրորդ մասը փճացաւ:

Եւ երրորդ հրեշտակը փող փչեց, մի մեծ աստղ ընկաւ երկնքիցը ջամբարի պէս բորբոքուած, և ընկաւ գետերի երրորդ մասի և ջրերի աղբիւրների վերայ: Եւ աստղի անունը Օշինդր էր. և ջրերի երրորդ մասը օշինդր դարձաւ և շատ մարդիկ մեռան ջրերիցը, վասն զի դառնացել էին:

Եւ չորրորդ հրեշտակը փող փչեց, և վիրաւորուեցաւ արեգակի երրորդ մասը, և լուսնի երրորդ մասը, և աստղերի երրորդ մասը. որ նորանց երրորդ մասը խաւարուի. և ցերեկը երրորդ մասը լոյս չտայ, և գիշերն էլ նմանապէս:

Եւ տեսայ, և լսեցի մի հրեշտակ որ երկնքի միջովը թռչում էր և մեծ ձայնով ասում. Վա՛յ, վա՛յ, վա՛յ նորանց որ բնակել են

երկրի վերայ, այն երեք հրեշտակների փողի ձայներից, որք փչելու են։

ԳԼ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակը փողը փչեց. և տեսայ մի աստղ եր երկնքից ընկել երկրի վերայ. և անդունդի գրի բանալիքը տրուեցաւ նորան, 2 և անդունդի գուրը բացաւ, և գուրից ծուխը դուրս էր գալիս մեծ հնոցի ծխի պէս. և արեգակը և օդը խաւարեցան գրի ծխից։ 3 Եւ ծուխից մարախներ էին դուրս գալիս երկրի վերայ. և նոցա իշխանութիւն տրուեցաւ ինչպէս որ երկրի կարիճներն իշ- 4 խանութիւն ունին։ Եւ նորանց ասուեցաւ, որ երկրի խոտին վնաս չտան, և ոչ մի խոտ, և ոչ մի ծառ, բայց միայն այն մարդկանց, որ Աստուծոյ կնիքը չունին իրանց ճակատների վերայ։ 5 Եւ տրուեցաւ նորանց, որ չսպանեն նորանց, այլ հինգ ամիս չարչարեն նորանց. և նորանց չարչարանքը կարիճի խայթոցի պէս էր 6 երբոր մի մարդու կծում է։ Եւ այն օրերում մարդիկ մահը կը խնդրեն և չեն գտնիլ նորան. և կ'ցանկանան մեռնել և մահը կը 7 փախչի նորանցից։ Եւ մարախների նմանութիւնը նման էր ձիերի որ պատրաստուած են պատերազմի համար, և նորանց գլխների վերայ իբրև պսակներ ոսկու նման. և նորանց երեսները մարդկանց երեսների նման. 8 և մազերը ունէին կանանց մազերի պէս. և նորանց ատամները առիւծի ա- 9 տամների նման էին։ Եւ զրահներ ունէին ինչպէս երկաթէ զրահներ. և նորանց թևերի ձայնը նման էր շատ ձիանց կառքերի ձայնի որ 10 վազում են պատերազմի։ Եւ ա- գիներ ունէին կարիճների նման, և խայթոցներ կային նորանց ա- գիներում. և նորանց իշխանութիւն էր հինգ ամիս մարդկանց 11 չարչարել։ Եւ իրանց վերայ թա- գաւոր ունէին անդունդի հրեշ-

տակը. և նորա անունը եբրայեցերէն Աբադդոն և յունարէն նորա անունն էր Ապողլիոն։ Մէկ 12 վայն անցաւ, ահա տակաւին երկու վայը գալիս են ետրանցից յետոյ։

Եւ վեցերորդ հրեշտակը փողը 13 փչեց. և մէկ ձայն լսեցի ոսկի սեղանի չորս եղջիւրներից որ Աստուծոյ առջև էին, Որ ասում էր 14 վեցերորդ հրեշտակին որ փողն ունէր. Արձակիր այն չորս հրեշտակներն որ Եփրատ մեծ գետի վերայ կապուած են։ Եւ այն չորս 15 հրեշտակներն արձակուեցան, որ պատրաստուած էին այն ժամի և օրուայ և ամսուայ և տարուայ համար, որ մարդկանց երրորդ բաժինը սպանեն։ Եւ նորանց ձիա- 16 ւոր զօրքի համարը երկու բիւրք բիւրոց էր, և լսեցի նորանց համարը։ Եւ այսպէս տեսայ ձիանքը 17 տեսիլքի մէջ, և նորանց վերայ նստողներն ունէին հրեղէն և յակինթեղէն և ծծմբեղէն զրահներ, և ձիանց գլուխներն առիւծի գլուխների նման. և նորանց բերանից կրակ և ծուխ և ծծումբ է դուրս գալիս։ Եւ այս երեքից 18 մարդկանց երրորդ բաժինը մեռաւ, այսինքն կրակից և ծխից և ծծմբից, որ նորանց բերանից դուրս էր գալիս։ Վասն զի նո- 19 րանց զօրութիւնն իրանց բերանում է, վասն զի նորանց պոչերն օձի նման են որ գլուխներ ունէին և նորանցով վնասում էին։ Եւ մնացեալ մարդիկը որ չմեռան 20 այս վէրքերից, չապաշխարեցին իրանց ձեռաց գործքերից, որ չերկրպագեն դևերին և ոսկէ և արծաթէ, և պղնձէ և քարէ և փայտէ կուքերին, որ ոչ տեսնել կարող են, և ոչ լսել, և ոչ գնալ։ Եւ չապաշխարեցին իրանց մար- 21 դասպանութիւններից, և ոչ էլ իրանց կախարդութիւններից, և ոչ էլ իրանց պոռնկութիւնից, և ոչ իրանց գողութիւններից։

---

*Կորուստ

ԳԼ· Ժ

1 Եւ մի ուրիշ զօրաւոր հրեշտակ տեսայ երկինքիցը վայր գալիս, և ամպ հագած և գլխին ծիածան. և նորա երեսը արեգակի նման. և նորա ոտները կրակի սիւնի պէս։
2 Եւ իր ձեռքումը մի փոքր գիրք ունէր բացած, և իր աջ ոտը դրաւ ծովի վերայ, և ձախը հողի
3 վերայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց ինչպէս առիւծն գոռում է. և երբոր աղաղակեց, այն եօթն որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին։
4 Եւ երբոր եօթն որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին, պիտի գրելէի. և ձայն լսեցի երկընքիցն որ ասում էր. Կնքիր այն եօթն որոտմունքը որ խօսեցին, և
5 սորանք մի գրեր։ Եւ այն հրեշտակն որ տեսայ ծովի վերայ և ցամաքի վերայ կանգնած. իր աջ ձեռը դէպի երկինքը բարձրացրեց,
6 Եւ երդուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանիովը, որ ստեղծեց երկինքը և ինչ որ նորանումն է, և երկիրը և ինչ որ նորանում կայ, և ծովը և ինչ որ նորանում
7 է. Թէ այլ ժամանակ չկայ։ Բայց եօթներորդ հրեշտակի ձայնի օրերումն երբոր փողը կ'փչէ, Աստուծոյ խորհուրդն էլ կ'կատարուի, ինչպէս աւետարանեց իր ծառայ մարգարէներին։
8 Եւ այն ձայնն որ երկնքիցը լսեցի դարձեալ խօսեց ինձ հետ և ասաց. Գնա առ այն բաց գրքոյկը, որ ծովի և ցամաքի վերայ կանգնած հրեշտակի ձեռին է։
9 Եւ ես գնացի հրեշտակի մօտ և ասացի նորան. Տուր ինձ այդ գրքոյկը. և նա ասաց ինձ. Առ և կեր սորան, և կ'դառնանայ փորումդ, բայց բերանումդ քաղցր
10 կ'լինի մեղրի պէս։ Եւ գրքոյկն առի հրեշտակի ձեռիցը և կերայ նորան. և բերանումս քաղցր էր մեղրի պէս. և երբոր կերայ նո-
11 րան, դառնացաւ փորումս։ Եւ ասաց ինձ. Պէտք է դու դարձեալ մարգարէանաս ժողովուրդների և ազգերի և լեզուների և շատ թագաւորների վերայ։

ԳԼ· ԺԱ

Եւ ինձ մի եղէգ տրուեցաւ գաւազանի նման. և հրեշտակը կանգնած էր և ինձ ասում էր. Վեր կաց և չափիր Աստուծոյ տաճարը և սեղանը և նորանում երկրպագողներին։ Եւ գաւիթը, որ տաճարիցը դուրս է, դուրս գցիր և մի չափիր. վասն զի նա հեթանոսներին է տրուած. և սուրբ քաղաքը կոխ կ'տան քառասուն և երկու ամիս։ Եւ իմ երկու վկաներին կ'տամ, և հազար երկու հարիւր և վաթսուն օր կ'մարգարէանան քուրձ հագած։ Սորանք են այն երկու ձիթենիքը և երկու ճրագակալները, որ երկրի Աստուծոյ առջև կանգնած են։ Եւ եթէ մէկը կամենայ նորանց չնաս ել, կրակ է դուրս գալիս նորանց բերանիցը և լափում է նորանց թշնամիներին. և եթէ մէկը կամենայ չնաս ել նորանց՝ այսպէս պիտի սատկէ։ Սորանք իշխանութիւն ունին երկինքը փակելու որ անձրև չգայ նորանց մարգարէութեան օրերումը. և իշխանութիւն ունին ջրերի վերայ նորանց արիւն դարձնելու, և երկիրն ամեն կերպ պատուհասներով հարուածելու քանի անգամ որ կամենան։ Եւ երբոր իրանց վկայութիւնը կ'կատարեն, այն գազանն որ անդունդից դուրս եկող գազանը կռիւ կ'տայ նորանց հետ, և կ'յաղթէ նորանց և կ'սպանէ նորանց։ Եւ նորանց դիերը ընկած կ'մնան այն մեծ քաղաքի հրապարակումն, որի անունը հոգևորապէս Սոդոմ և Եգիպտոս է կոչվում. որ տեղ մեր Տէրն էլ խաչուեցաւ։ Եւ կ'տեսանեն ժողովուրդներից և ցեղերից և լեզուներից և ազգերից նորանց դիերը երեք օր և կէս, և թող չեն տալ որ նորանց դնեն դերեզմաններում։ Եւ երկրի վերայ բնակողները կ'ուրախանան և կ'խնդան. և իրար ընծաներ կ'ուղարկեն. վասն զի այս երկու մարգարէքը չարչարեցին երկրի վերայ բնակողներին։

Եւ երեք և կէս օրից յետոյ Աստուածմանից կենդանի հոգի եկաւ

մեռաւ նորանց մէջ, և իրանց տա-
քերի վերայ կանգնեցին. և մեծ
վախ ընկաւ նորանց տեռնողների
12 վերայ: Եւ մեծ ձայն լսեցի(ն) եր-
կընքիցը որ ասում էր նորանց.
վեր եկէք այս տեղ. և վեր եկան
երկինքն ամպով. և նորանց թըշ-
13 նամիները տեսան նորանց: Եւ
նոյն ժամուն մեծ շարժ եղաւ,
և քաղաքի տասներորդ բաժինը
կործանուեցաւ, և այն շարժուն
եօթն հազար մարդիկ սպաննուե-
ցան. և միւսները մեծ վախով
բռնուեցան, և փառք տուին եր-
14 կընքի Աստուծոյն: Երկրորդ վայն
անցաւ, և երրորդ վայն գալիս է
շուտով:

15 Եւ եօթներորդ հրեշտակը փողը
փչեց, և մեծ ձայներ եղան եր-
կընքումն որ ասում էին. Աշ-
խարհքի թագաւորութիւնները
մեր Տիրոջը և նորա Քրիստոսինը
եղան. և կ'թագաւորէ յաւիտե-
16 ւանս յաւիտենից: Եւ քսան և
չորս երէցները որ Աստուծոյ աո-
ջև իրանց աթոռների վերայ նըս-
տած էին, իրանց երեսների վերայ
ընկան և երկրպագեցին Աստու-
17 ծոյն, ասելով. Գոհանում ենք
քեզանից, Տէր Աստուած Ամե-
նակալ, որ էիր և ես, (և որ գա-
լու ես) որ քո մեծ զօրութիւնն
18 առիր և թագաւորեցիր: Եւ ազ-
գերը բարկացան, և եկաւ քո բար-
կութիւնը, և մեռելների ժամա-
նակը որ դատուին. և որ վարձքը
տաս քո ծառայ մարգարէներին և
սրբերին, և քո անունից վախեցող-
ներին՝ փոքրներին և մեծերին, և
երկիրն ապականողներին ապա-
կանես:

19 Եւ Աստուծոյ տաճարն որ եր-
կընքումն էր բացուեցաւ, և երե-
ւեցաւ Աստուծոյ տապանակը իր
տաճարումը. և եղան փայլատակ-
ներ և ձայներ և որոտմունքներ, և
շարժ և մեծ կարկուտ:

ԳԼ. ԺԲ

1 Եւ մի մեծ նշան երեւեցաւ եր-
կընքումը. մի կին՝ արեգակին իր
վերայ առած. և լուսինը նորա
ոտների տակ. և նորա գլխի վե-
րայ տասներկու աստղերի պսակ:
2 Եւ յղի լինելով՝ աղաղակում էր
երկունք քաշելով և չարչարուե-
լով որ ծնի:

3 Եւ մի ուրիշ նշան երեւեցաւ եր-
կընքումը. և ահա մի մեծ վիշապ՝
կրակի պէս կարմիր. որ եօթը գը-
լուխ ունէր և տասն եղջիւր, և
նորա գլխների վերայ եօթը թագ.
4 Եւ նորա պոչին քաշում էր երկըն-
քի աստղերի երրորդ բաժինը, և
նորանց գցեց երկրի վերայ. և վի-
շապը կանգնած էր այն կնկան
առջև որ պիտի ծնէր, որ երբոր
5 ծնէ, կուլ տայ նորա զաւակը: Եւ
մի արու զաւակ ծնաւ, որ պիտի
բոլոր ազգերին երկաթէ գաւա-
զանով հովուէ. և նորա որդին
յափշտակուեցաւ Աստուծոյ մօտ
6 և նորա աթոռի մօտ: Եւ կինը
փախաւ անապատը, ուր Աստ-
ուածանից պատրաստուած տեղ
ունէր, որ այնտեղ կերակրեն նո-
րան հազար երկու հարիւր և վաթ-
սուն օր:

7 Եւ պատերազմ եղաւ երկնքու-
մը. Միքայէլը և նորա հրեշտակ-
ները պատերազմեցին վիշապի դէմ.
և պատերազմեց վիշապը և իր զօր-
քերը: 8 Եւ չկարացին դէմ կենալ,
և ոչ էլ տեղ գտնուեցաւ նորանց
համար երկնքումը: 9 Եւ վար գըց-
ուեցաւ մեծ վիշապը՝ այն առաջի
օձը, որ Բանսարկու և սատանայ
է կոչւում, այն բովանդակ աշ-
խարհքը մոլորեցնողը վար գցուե-
ցաւ երկրի վերայ և իր հրեշտակ-
ներն էլ նրան հետ վար գցուեցան:
10 Եւ մեծ ձայն լսեցի որ ասում էր
երկնքումը. Հիմա փրկութիւնը և
զօրութիւնը և թագաւորութիւնը
եղաւ մեր Աստուծոյն, և իշխա-
նութիւնը եղաւ նորա Օծեալին,
վասն զի վար գցուեցաւ մեր եղ-
բայրների չարախօսը, որ խօսում
էր նորանցից Աստուծոյ առջև ցե-
րեկ և գիշեր: 11 Եւ նորանք յաղթե-
ցին նորան՝ Գառի արիւնովը և նո-
րա վկայութեան խօսքովը. և չսի-
րեցին իրանց հոգին մինչև ի մահ:
12 Սորա համար ուրախացէք, ով եր-
կինք, և որ բնակած էք նորա-

նում. վայ երկրին և ծովին, (և նորանցում բնակողներին) վասն զի հանապարկուն վայր իջաւ ձեզ մօտ, որ մեծ բարկութիւն ունի, գիտենալով, որ քիչ ժամանակ ունի։

13 Եւ երբոր տեսաւ վիշապը, թէ վայր գցուեցաւ երկրի վերայ, ընկաւ այն կնկան հետևից որ արու
14 զաւակը ծնաւ։ Եւ այն կնկանն երկու մեծ արծուի թև տրուեցաւ, որ թռչի անապատն՝ իր տեղը. ուր որ կերակրվում է մի ժամանակ, և ժամանակներ և
15 կէս ժամանակ օձի երեսից։ Եւ օձն իր բերանից գետի պէս ջուր թափեց այն կնկան հետևից, որ
16 նորան ընկղմէ։ Եւ երկիրն օգնեց կնկանը, և երկիրն իր բերանը բացաւ և այն գետն կուլ տուաւ որ վիշապն իր բերանից թափեց։
17 Եւ վիշապը բարկացաւ այն կնկան վերայ, և գնաց պատերազմ անելու նորա միւս զաւակների հետ, որ Աստուծոյ պատուիրանքները պահում են, և Յիսուսի (Քրիստոսի) վկայութիւնն ունին։
18 Եւ ծովի աւազի վերայ կանգնեց(ի)։

ԳԼ. ԺԳ

1 Եւ տեսայ ծովից մի գազան դուրս գալիս, որ եօթը գլուխ ունէր և տասն եղջիւր, և նորա եղջիւրների վերայ տասը պսակ, և նորա գլխների վերայ հայհոյու-
2 թեան անուն։ Եւ այն գազանն որ տեսայ ինձու նման էր, և նորա ոտները արջի ոտների նման, և նորա բերանն առիւծի բերանի նման. և վիշապը տուաւ նորան իր զօրութիւնը և իր աթոռը և
3 մեծ իշխանութիւն։ Եւ տեսայ նորա գլխներից մէկը մեռնելու չափ խոցուած. և նորա մահի վերքը ողջացաւ. և բոլոր երկիրը զարմացաւ այն գազանի ետևից։
4 Եւ երկրպագեցին այն վիշապին, որ իշխանութիւն տուաւ այն գազանին, և երկրպագեցին գազանին ասելով. Ո՞վ է այս գազանի նման. կամ ո՞վ է կարող դորա հետ պատերազմել։ Եւ նորան 5
տրուեցաւ՝ մի բերան մեծ մեծ բաներ և հայհոյանք խօսող և իշխանութիւն տրուեցաւ նորան քառասուն և երկու ամիս էր ա-ւ-ձն անելու։ Եւ իր բերանը բացաւ 6
Աստուծոյ դէմ հայհոյանքով, որ հայհոյէ նորա անունը և նորա խորանը, և երկնքումը բնակողներին։ Եւ նորան է-ւ-ձն տրուեցաւ որ սրբերի հետ պատերազմ անէ և նորանց յաղթէ. և իշխանութիւն տրուեցաւ նորան ամեն ցեղի և լեզուի և ազգի վերայ։ Եւ կ'երկրպագեն նորան երկրի վերայ բոլոր բնակողները, որոնց անուանները գրուած չեն գառի կենաց գրքի մէջ որ աշխարհքի սկզբից հետէ մորթուած է։
Եթէ մէկն ականջ ունի թող լսէ։ 9
Եթէ մէկը գերութեան քաշէ, 10
գերութեան պիտի քաշուի. եթէ մէկը սրով սպանէ, պիտի սրով սպանուի. այս տեղ է սրբերի համբերութիւնը և հաւատքը։

Եւ տեսայ միւրիշ գազանդուրս 11
գալիս երկրիցը, և երկու եղջիւր ունէր գառնի նման. բայց խօսում էր վիշապի նման։ Եւ այն 12
առաջի գազանի բոլոր իշխանութիւնը բանեցնում էր նորա առջեւ. եւ ա-ւ-ձն էր անում, որ երկիրը և նորա վերայ բնակողները երկրպագեն այն առաջի գազանին որի մահի վերքը ողջացել էր։ Եւ 13
մեծ նշաններ է անում, որ երկնքից կրակ էլ է վայր բերել տալիս երկրի վերայ մարդկանց առջեւ։
Եւ մոլորեցնում է երկրի վերայ 14
բնակողներին այն նշաններով որ տրուած էին նորա ձեռքը, որ գործէ գազանի առջեւ, ասելով երկրի բնակողներին որ պատկեր շինեն այն գազանին որ սրի վերքն ունէր և ապրեց։ Եւ տրուեցաւ 15
նորան, որ հոգի տայ գազանի պատկերին, որ պատկերը խօսի էլ. և անէ էլ՝ որ նորանք որ չերկրպագեն գազանի պատկերին սպանուին։ Եւ ստիպում է ամենքին՝ 16
փոքրներին և մեծամեծներին, հարուստներին և աղքատներին, ազատներին և ծառաներին, որ

Նորանց դրօշմ տայ նորանց ալ
ձեռուընէն կամ նորանց ճակատու-
17 մէն ։ Եւ որ ոչ ոք չկարենայ դնել
կամ ծախել բացի նորանից, որ
գազանի դրօշմը կամ նորա անու-
նըն ունի կամ նորա անունին հա-
18 մարը ։ Աստ տեղ է իմաստութիւ-
նը, ով որ միտք ունի թող գա-
զանի թիւը համարէ. վասն զի
մարդու թիւ է, եւ նորա թիւը
վեց հարիւր վեցասուն եւ վեց է ։

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսայ եւ ահա Գառը կանգ-
նած էր Սիօն լեռան վերայ, եւ
նորա հետ հարիւր քառասուն եւ
չորս հազար հոգի, որ [նորա
անունը եւ] նորա Հօր անունը
գրած ունէին իրանց ճակատների
2 վերայ ։ Եւ ձայն լսեցի երկնքից՝
շատ ջրերի ձայնի պէս, եւ մեծ
որոտմունքների ձայնի պէս. եւ
քնարածողների ձայնի պէս լսեցի,
3 որ իրանց քնարներն ածում էին
Եւ երգում էին մի նոր երգ ա-
թոռի առջեւ եւ չորս կենդանի-
ների առջեւ եւ երէցների առջեւ.
եւ ոչ ոք չէր կարող ուսանել այն
երգը բացի այն հարիւր քառա-
սուն եւ չորս հազարներից, որ
4 երկրից փրկուել էին ։ Սորանք են
որ կանանց հետ չխառնակուեցան,
վասն զի կոյս են. սորանք են որ
Գառի հետից գնում են ուր որ
գնայ. սորանք փրկուեցան մարդ-
կանցից Աստուծոյն եւ Գառին
5 էրբ ևրախայրի ։ Եւ նորանց բե-
րանումը նենգութիւն չգտնուե-
ցաւ, վասն զի անարատ են (Ա-
ստուծոյ աթոռի առջեւ ։)
6 Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ
թռչելիս երկնքի մէջ, որ յաւի-
տենական աւետիք ունէր որ աւե-
տարանէր երկրի վերայ բնակողնե-
րին, եւ ամեն ազգի եւ ցեղի եւ
7 լեզուի եւ ժողովուրդի ։ Եւ մեծ
ձայնով ասում էր. Վախեցէք
Աստուածանից, եւ փառք տուէք
նորան. վասն զի նորա դատաստա-
նի ժամը եկաւ. եւ երկրպագէ-
ցէք երկինքը եւ երկիրը եւ ծովը եւ
Ջրերի աղբիւրները Ստեղծողին ։

Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ 8
նորա ետեւից ասելով. Ընկաւ ըն-
կաւ Բաբիլօն մեծ քաղաքը, վասն
զի իր պոռնկութեան բարկու-
թեան գինուցը խմեցրեց բոլոր ազ-
գերին. Եւ մի երրորդ հրեշտակ 9
եկաւ նորանց ետեւից մեծ ձայնով
ասելով. Ով որ երկրպագութիւն
է անում գազանին եւ նորա պատ-
կերին եւ դրօշմ ընդունում իր ճա-
կատի կամ իր աջ ձեռի վերայ,
Ա.յնպիսին Աստուծոյ սրտմտու- 10
թեան բաժակից պիտի խմէ, որ
անխառն ածուած է նորա բար-
կութեան բաժակի մէջ. եւ պիտի
տանջուի կրակի եւ ծծմբի մէջ
սուրբ հրեշտակների եւ Գառի
առջեւ ։ Եւ նորանց տանջանքի 11
ծուխը վեր է ելլում յաւիտեանս
յաւիտենից. եւ հանգիստ չունեն
ցերեկ եւ գիշեր նորանք որ երկրը-
պագեցին գազանին եւ նորա պատ-
կերին. եւ ով որ էլ ընդունում է
նորա անունի դրօշմը ։ Աստեղ է 12
սրբերի համբերութիւնը. այստեղ
են Աստուծոյ պատուիրանքները եւ
Յիսուսի հաւատքը պահողները ։

Եւ երկնքից մի ձայն լսեցի որ 13
ասում էր ինձ. Գրիր, Երանելի
են այն մեռելները որ Տէրումն են
ննջում այսուհետեւ. այո, Հոգին
ասում է որ իրանց աշխատանքի-
ցը հանգիստ կառնեն, եւ նորանց
գործքերը գնում են նորանց ե-
տեւից ։

Եւ տեսայ, եւ ահա մի սպի- 14
տակ ամպ, եւ ամպի վերայ ծէր
նստած Որդոյ մարդոյ նման, որ
իր գլխի վերայ ոսկի պսակ, եւ իր
ձեռումը սուր գերանդի ունէր ։

Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս ե- 15
կաւ տաճարիցը, որ մեծ ձայնով
աղաղակում էր ամպի վերայ նըս-
տողին. Ուղարկիր քո գերանդին
եւ հնձիր. որովհետեւ քո ժամա-
նակն եկաւ հնձելու, վասն զի եր-
կրի հունձքը հասել է ։ Եւ ամպի 16
վերայ նստողը վոյր գցեց իր գե-
րանդին երկրի վերայ, եւ երկիրը
հնձուեցաւ ։

Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս ե- 17
կաւ տաճարիցը որ երկինքումն է,
որ սա էլ սուր գերանդի ունէր ։

18 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս ե-
կաւ սեղանիցը որ իշխանութիւն
ունէր կրակի վերայ, եւ մեծ ա-
ղաղակով գոչեց առ դեբանդին
ունեցողին ասելով. Ածարկիը քո
սուր դեբանդին եւ երկրի այգու
ողկոյզները քաղիր, վասն զի նորա
19 խաղողը հասել է: Եւ հրեշտակն
իր դեբանդին գցեց երկրի վերայ,
եւ երկրի այգու Խ-ՂՂԸ քաղեց,
եւ գցեց Աստուծոյ բարկութեան
20 մեծ հնձանի մէջ: Եւ հնձանը
կոխուեցաւ քաղաքիցը դուրս, եւ
դուրս եկաւ արիւնը հնձանիցը
մինչեւ ձիերի սանձը հազար եւ
վեց հարիւր ասպարէզի չափ:

ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսայ մի ուրիշ մեծ եւ զար-
մանալի նշան երկինքումը, եօթը
հրեշտակ որ վերջի եօթը պատու-
հասներն ունէին. որովհետեւ Ա-
ստուծոյ բարկութիւնը նորանցով
2 կատարուեցաւ: Եւ տեսայ իբրեւ
ապակեղէն ծով կրակով խառ-
նուած. եւ նորանց որ յաղթում
են գազանին եւ նորա պատկերին
եւ նորա գրոշմին եւ նորա ա-
նունի թուոյն, որ կանգնած էին
ապակեղէն ծովի վերայ, եւ Ա-
3 ստուծոյ քնարներն ունէին: Եւ
երգում էին Աստուծոյ ծառայ
Մովսէսի երգը եւ Գառնի երգը,
ասելով. Մեծ եւ զարմանալի են
քո գործքերը, Տէր Աստուած Ա-
մենակալ, արդար եւ ճշմարիտ
են քո ճանապարհները, ով սրբե-
4 րի թագաւոր: Ո՞վ է որ քեզանից
չվախենայ, ով Տէր, եւ քո ա-
նունը չփառաւորէ. վասն զի մի-
այն դու ես սուրբ. վասն զի բո-
լոր ազգերը կ'գան եւ քո առջեւ
երկրպագութիւն կ'անեն, որով-
հետեւ քո իրաւունքները յայտ-
նուեցան:
5 Եւ ասրանից յետոյ տեսայ, եւ
ահա բացուեցաւ վկայութեան
6 խորանի տաճարը երկինքումը: Եւ
դուրս եկան տաճարիցը այն եօթը
հրեշտակները որ այն եօթը պա-
տուհասներն ունէին, մաքուր եւ
պայծառ կտաւ հագած, եւ ըս-
տինքներին ոսկէ գօտիներ
կապած: Եւ այն չորս կենդանի- 7
ներից մէկն այս եօթը հրեշտակ-
ներին եօթը ոսկի սկաւառակ որ-
ուսւ՝ յաւիտեանս յաւիտենից
կենդանի Աստուծոյ բարկութիւ-
նովը լիքը: Եւ տաճարը սրբուեցաւ 8
Աստուծոյ փառքից եւ նորա զօ-
րութիւնից ելած ծուխովը. եւ ոչ
ոք կարող չէր մտնել տաճարը,
մինչեւ որ այն եօթը հրեշտակների
եօթն պատուհասները կատարուին

ԳԼ. ԺԶ

Եւ մեծ ձայն լսեցի տաճարիցը 1
որ ասում էր այն եօթը հրեշտակ-
ներին. Գնացէք եւ Աստուծոյ բար-
կութեան սկաւառակները թա-
փեցէք երկրի վերայ:
Եւ առաջինը գնաց եւ իր սկա- 2
ւառակը թափեց երկրի վերայ, եւ
չարաչար պալարներ եղան այն
մարդկանց վերայ, որ գազանի
դրոշմն ունէին եւ նորա պատկերին
երկրպագում էին:
Եւ երկրորդ հրեշտակն իր 3
սկաւառակը թափեց ծովը, եւ
արիւն դարձաւ մեռածի Ը-ՂՒ-Ն
նման. եւ ամեն կենդանի հոգի
ստակեց որ ծովումն էր:
Եւ երրորդ հրեշտակն իր սկա- 4
ւառակը թափեց գետերի եւ ջրերի
աղբիւրների մէջ եւ արիւն եղաւ:
Եւ ձայն լսեցի ջրերի հրեշտակից 5
որ ասում էր. Արդար ես, Տէր,
որ ես եւ էիր եւ սուրբ՝ որ այս
դատաստաններն արիր: Վասն զի 6
սրբերի եւ մարգարէների արիւնը
թափեցին. նորա համար էլ ար-
իւն տուիր նորանց խմելու, վասն
զի արժան են: Եւ մի ուրիշը լսե- 7
ցի սեղանիցը որ ասում էր. Այո,
Տէր Աստուած Ամենակալ, ճշմա-
րիտ եւ արդար են քո դատաս-
տանները:
Եւ չորրորդ հրեշտակն իր սկա- 8
ւառակը թափեց արեգակի վերայ:
Եւ տրուեցաւ նորան որ մարդ- 9
կանց խորշակահար անէ կրակով.
եւ խորշակահար եղան մարդիկ
սաստիկ տաքով եւ հայհոյեցին
Աստուծոյ անունը որ այս պատու-

հաներէն վերայ իշխանութիւն ունի. եւ չապաշխարեցին որ փառք տան նորան։
10 Եւ հինգերորդ հրեշտակն իր ակաւառակն թափեց գազանին աթոռի վերայ. եւ նորա թագաւորութիւնը խաւարած եղաւ. եւ իրանց լեզուները ծամում էին
11 տանջանքից. եւ երկնքի Աստուծոյն հայհոյեցին իրանց ցաւերի և պալարների պատճառով. եւ չապաշխարեցին իրանց գործքերից։
12 Եւ վեցերորդ հրեշտակն իր ակաւառակը թափեց մեծ գետ՝ Եփրատի վերայ, եւ նորա ջուրը ցամաքեց որ արեւելքի թագաւորների ճանապարհը պատրաստուի։ 13 Եւ տեսայ՝ վիշապի բերանից եւ գազանի բերանից եւ սուտ մարգարէի բերանից երեք պիղծ հոգի էին դուրս գալիս
14 գորտերի նման։ Վասն զի նորանք դեւերի ոգիք են, որ նշաններ են անում, նորանք գնում են երկրի եւ բովանդակ աշխարհքի թագաւորների մօտ որ նորանց ժողովեն Ամենակարող Աստուծոյ այն մեծ
15 օրուայ պատերազմի համար։ Ահա գալիս եմ գողի նման, երանի նորան որ արթուն է, եւ իր հանդերձները պահում է. որ մերկ մնան չգայ, եւ նորա ամօթանքը
16 չտեսանեն. Եւ ժողովից նորանց այն տեղ որ Եբրայեցերէն Արմագեդոն է կոչւում։
17 Եւ եօթներորդ հրեշտակն իր ակաւառակը թափեց օդի վերայ. եւ մեծ ձայն դուրս եկաւ երկնքի տաճարից եւ աթոռից որ ա-
18 սում էր. Եղաւ, Եւ եղան ձայներ եւ փայլատակներ եւ որոտմունք, եւ մեծ շարժ եղաւ որ այնպիսի չէր եղած քանի որ մարդիկ երկրի վերայ են՝ այնպիսի
19 մեծ շարժ էր. Եւ մեծ քաղաքը երեք կտոր եղաւ, եւ ազգերի քաղաքները վայր ընկան. եւ մեծ Բաբելոնը յիշուեցաւ Աստուծոյ առջեւ, որ իր բարկութեան գինու բաժակը նորան տայ
20 Եւ ամեն կղզի փախաւ, եւ լեռներ չգտնուեցան։ 21 Եւ երկնքից աղաներ մեծ մեծ կարկուտ էր իջնում մարդկանց վերայ, եւ մարդիկ հայհոյեցին Աստուծոյն այն կարկտի հարուածի համար, վասն զի աստիկ մեծ է նորա պատուհասը։

ԳԼ. ԺԷ

Եւ այն եօթ ակաւառակներն ունեցող եօթ հրեշտակներից մէկն եկաւ եւ խօսեց ինձ հետ ասելով. Ելի քեզ ցոյց տամ այն մեծ պոռնկի գատաստանը, որ այն շատ ջրերի վերայ նստում է, Որի հետ պոռնկացան երկրի թագաւորները եւ երկրի բնակիչները նորա պոռնկութեան գինովից արբեցան։ Եւ ինձ տարաւ հոգով մի անապատ. եւ տեսայ մի կին՝ նստած կարմիր գազանի վերայ՝ լիքն հայհոյութեան անուններով որ եօթը գլուխ ունէր եւ տասը եղջիւր։ Եւ այն կինը որ ծիրանի եւ կարմիր էր հագած, եւ ոսկով եւ պատուական ակունքներով եւ մարգարիտներով զարդարուած մի ոսկի բաժակ ունէր իր ձեռքումը, լիքը գարշելութիւններով իր պիղծ պոռնկութիւնով, Եւ նորա ճակատումը գրուած էր մի անուն՝ խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկների եւ երկրի գարշելիների մայրը։ Եւ տեսայ այն կինը արբած արիւնով եւ Յիսուսի վկաների արիւնով. եւ երբոր տեսայ նորան, մեծ զարմանքով զարմացայ։ Եւ հրեշտակն ասաց ինձ. Ինչո՞ւ համար զարմացար. ես ասեմ քեզ այդ կնկան խորհուրդը, եւ այն գազանինը, որ նորան վեր է առել, որ եօթը գլուխը ունի եւ տասը եղջիւրը։ Գազանը, որ տեսար, կար եւ չկայ, եւ դժոխքից է դուրս գալու եւ կորուստն է գնալու, եւ կ'զարմանան երկրի վերայ բնակողները որոնց անունները գրուած չեն կենաց գրքի մէջ աշխարհքի սկզբից հետէ, երբոր տեսանեն այդ գազանը որ կար, եւ չկայ, թէեւ է։ Ահա տեղ է այն միտքը որ իմաստութիւն ունի. այն եօթը գլուխը եօթն լեռներ են որ կինը

նորանց վերայ նատած է. եւ եօթը
10 թագաւորներ են. Հինգը ընկան,
եւ մէկը կայ, միւսը դեռ չէ եկել.
եւ երբոր գայ մի քիչ ժամանակ
11 պետք է Ջնայ։ Եւ այն գազանն որ
կար եւ չկայ, նա էլ ութերորդն է
եւ այն եօթնից է, եւ կորուստն
12 է գնում, Եւ այն տասն եղջիւրն որ
տեսար, տասը թագաւորներ են.
որոնք դեռ թագաւորութիւն չեն
առել, այլ թագաւորի պէս իշխա-
նութիւն են առնում մէկ ժամ
13 այն գազանի հետ։ Սորանք մէկ
կամք ունին, եւ իրանց զօրու-
թիւնը եւ իշխանութիւնը կ'տան
14 գազանին։ Սորանք պատերազմ
կ'անեն Գառի հետ, եւ Գառը
կ'յաղթէ նորանց, վասն զի տէ-
րանց Տէր է, եւ թագաւորների
թագաւոր. եւ նորանք որ նորա
հետ են, կոչուած, ընտրուած եւ
15 հաւատացեալ են։ Եւ ասաց ինձ.
Ա՛յդ ջրերն, որ տեսար ուր որ
պոռնիկը նստած է, ժողովուրդ-
ներ են, եւ բազմութիւններ եւ
16 ազգեր եւ լեզուներ։ Եւ տասն
եղջիւրն, որ տեսար, գազանի
վերայ, նորանք կ'ատեն պոռնկին,
եւ նորան ամայի եւ մերկ կ'անեն,
եւ նորա միսերը կ'ուտեն եւ կը-
17 րակով կ'այրեն նորան։ Վասն զի
Աստուած դրաւ նորանց սրտերի
մէջ որ նորա կամքն անեն, եւ
միակամ լինին, եւ իրանց թա-
գաւորութիւնը տան գազանին
մինչեւ որ Աստուծոյ խօսքերը կա-
18 տարուին։ Եւ կինն, որ տեսար,
այն մեծ քաղաքն է, որ թագա-
ւորութիւն ունի երկրի թագա-
ւորների վերայ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ սորանից յետոյ տեսայ մի
հրեշտակ երկնքիցը վայր գալիս.
որ մեծ իշխանութիւն ունէր, եւ
երկիրը լուսաւորուեցաւ նորա
2 փառքիցը։ Եւ զօրութեամբ ա-
ղաղակեց մեծ ձայնով եւ ասաց.
Ընկաւ ընկաւ մեծ Բաբիլոնը,
եւ եղաւ դեւերի բնակութիւն եւ
ամեն պիղծ հոգու արգելանոց,
եւ ամեն անասուրբ եւ ատելի թռ-

չունի վանդակ։ Վասն զի նորա 3
պոռնկութեան բարկութեան գի-
նուցը խմեցին բոլոր ազգերը, եւ
երկրի թագաւորները նորա հետ
պոռնկուեցան. եւ երկրի վաճա-
ռականները նորա զեղխութեան
զօրութիւնիցը հարստացան։ Եւ 4
մի ուրիշ ձայն լսեցի երկնքիցը որ
ասում էր. Դուրս եկէք դորանից
ով իմ ժողովուրդ, որ մասնակից
չլինիք դորա մեղացը, եւ որ դորա
պատուհասիցը չընդունիք։ Վասն 5
զի դորա մեղքերը հասան մինչեւ
երկինքը, եւ Աստուած յիշեց դո-
րա անիրաւութիւնները։ Հատու- 6
ցուցէք սրէք դորան ինչպէս դա
հատուցում տուաւ ձեզ, եւ եր-
կուապատիկ տուէք դորան իր գոր-
ծերի չափովը. այն բաժակը որ
դա լցրեց, լցրէք դորա համար
երկուապատիկ։ Եւ որչափ որ իրան 7
փառաւորեց եւ զեղխացաւ, այն-
չափ տանջանք եւ սուգ տուէք
դորան. վասն զի իր սրտումն ա-
սում է. Թագուհի եմ նստած, և
այրի չեմ, եւ բնաւ սուգ չեմ
տեսնել։ Նորա համար մէկ օրում 8
պիտի գան դորա վերայ իր հար-
ուածները՝ մահ, և սուգ, և սով,
եւ կրակով կ'այրուի, վասն զի զո-
րաւոր է Տէր Աստուածը՝ դորա
դատաստանն անողը։ Եւ լաց եւ 9
կոծ կ'անեն դորա վերայ երկրի
թագաւորները որ դորա հետ պոռ-
նըկուեցան եւ զեղխութիւն ա-
րին. երբոր կ'տեսնեն դորա այրե-
ուելու ծուխը, Հեռու կանգնած 10
դորա տանջանքի վախիցը, և կ'ա-
սեն. Վա՛յ վա՛յ քեզ, մեծ քա-
ղաքդ Բաբիլոն, զօրաւոր քաղաք,
որ մէկ ժամում եկաւ քո դատաս-
տանը։ Եւ երկրի վաճառականնե- 11
րը ողբ եւ սուգ կ'անեն նորա վե-
րայ, վասն զի այլ եւս ոչ ոք չէ
առնում նորանց ապրանքը, Ոսկու 12
եւ արծաթի եւ պատուական ա-
կունքների եւ մարգարիտի եւ բե-
հեզի եւ ծիրանի եւ սկեթելի եւ
որդան կարմիրի ապրանքը, և ա-
մեն խնկէ փայտը եւ ամեն փղոս-
կրեայ անօթը, եւ ամեն սղնիւ
փայտից եւ պղնձից եւ երկաթից
եւ մարմարիոնից շինած անօթը,

13 Եւ կինամոնը եւ խունկերը եւ
իւղը եւ կնդրուկը եւ գինին եւ
ձէթը, եւ նաշիհը եւ ցորենը եւ
արջառներն ու ոչխարները. եւ
ձիանքն եւ կառքերը, եւ մարմին-
14 ները եւ մարդկանց հոգիները: Եւ
քո հոգու ցանկացած պտուղները
գնաց քեզանից, եւ ամեն շքեղ
եւ լուսափայլ վայելչութիւնները
գնաց քեզանից, եւ այլ եւս բնաւ
15 չես գտնել նորանց: Եւ այս բա-
ների վաճառականները, որ նորա-
նից հարստացան հեռուից կ'կանգ-
նեն նորա տանջանքի վախից լաց
16 եւ սուգ անելով, կասեն. Վա՛յ
վա՛յ մեծ քաղաք որ բեհեզ եւ
ծիրանի եւ ոսկեան կարմիր էիր
հագած, եւ ոսկով եւ սղնիւ
քարերով եւ մարգարիտով զար-
17 դարուած: Վասն զի մէկ ժամի
մէջ այդչափ մեծութիւնը աւե-
րակ եղաւ. եւ ամեն նաւավար և
այն ամենքն որ նաւով գնում են
տեղ տեղ, եւ նաւաստիները եւ
նորանք որ ծովումն են գործում,
18 հեռուից կանգնեցին, Եւ աղա-
ղակում էին նորա այրուելու ծու-
խը տեսնելով եւ ասում. Ո՞րն է
19 նման այս մեծ քաղաքին: Եւ հող
ցանեցին իրանց գլխների վերայ,
եւ մեծ ձայնով աղաղակեցին լաց
եւ սուգ անելով եւ ասացին.
Վա՛յ վա՛յ մեծ քաղաք որ նորա-
նում հարստացան բոլոր ծովի վե-
րայ նաւեր ունեցողները նորա
պատուականութիւնից. վասն զի
մէկ ժամի մէջ աւերակ դարձաւ:
20 Ուրախ եղիք նորա վերայ, երկինք
եւ սուրբ առաքեալք եւ մարգա-
րէք, վասն զի Աստուած ձեր դա-
տաստանը դատեց դորա վերայ:
21 Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մի
քար առաւ մեծ ջաղացաքարի
պէս եւ ձգեց ծովի մէջ ասելով.
Այսպէս ուժով պիտի վայր ընկնի
Բաբելոն մեծ քաղաքը, եւ այլ
22 եւս չգտնուի: Եւ քնարերգների,
եւ երաժիշտների եւ սրնգահար-
ների, եւ փողահարների ձայնը
այլ եւս պիտի չլսուի քո միջումը
եւ այլ եւս ոչ մի արուեստական
բնաւ չգտնուիլ քեզմնում. եւ
փեսայի եւ հարսի ձայնը այլ եւս
բնաւ չի լսուիլ քեզմնում. վասն
զի քո վաճառականները երկրի մե-
ծամեծներն էին. քո կախարդու-
թիւնովը մոլորուեցան բոլոր ազ-
գերը: Եւ նորանում գտնուեցաւ 23
մարգարէների եւ սրբերի եւ երկ-
րի վերայ բոլոր սպանուածների
արիւնը:

ԳԼ. ԺԹ

Եւ սորանից եւս լսեցի շատ 1
բազմութեան մեծ ձայնի պէս ի
նոյն երկինքումը որ ասում էր. Ա-
լէլուիա, փրկութիւնը և փառքը
և պատիւը և զօրութիւնը մեր
Տէր Աստուծոյն: Վասն զի ճըշ- 2
մարիտ և արդար են նորա դա-
տաստանները. որովհետև այն մեծ
պոռնիկը դատեց իր պոռնկութիւ-
նովը, և իր ծառաների արիւնի
վրէժն առաւ նորա ձեռիցը: Եւ 3
երկրորդ անգամ ասացին, Ալէ-
լո՛ւիա. և նորա ծուխը բարձրա-
նում էր յաւիտեանս յաւիտենից:
Եւ քսան և չորս երէցները և չորս 4
կենդանիները վայր ընկան և եր-
կրպագեցին Աստուծոյն որ աթո-
ռի վերայ նստած էր և ասացին.
Ամէն, ալէլո՛ւիա: Եւ աթոռիցը 5
մի ձայն դուրս եկաւ ասելով. Օրհ-
նեցէք մեր Աստուծոյն, ով նորա
բոլոր ծառաներ, եւ նորանից վա-
խեցողներ, փոքրներ և մեծեր: Եւ 6
լսեցի մի մեծ բազմութեան ձայնի
և շատ ջրերի ձայնի պէս, ասե-
ւիկ որոտմունքի ձայնի նման թէ
նոյն. որ ասում էր. Ալէլո՛ւիա,
վասն զի Ամենակալ Տէր Աս-
տուածը թագաւորեց: Խնդանք և 7
ուրախ լինինք, և փառքը տանք
նորան. վասն զի եկաւ Գառի հար-
սանիքի ընթրիքին կան-
չուածները. և ասաց ինձ. Սորանք
Աստուծոյ ճշմարիտ խօսքերն են:
Եւ ես ընկայ նորա ոտքերի առջև 10
որ երկրպագանեմ նորան, և ա-

ատց ինձ. Զգույշ կաց, մի՛ անէր. ծառայակից եմ քեզ և քո եղբայրներին, որ Յիսուսի Քրիստոսի վկայութիւնն ունին. Տէր Աստուծոյն երկրպագիր. վասն զի Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է։

11 Եւ տեսայ երկինքը բացուած, և ահա մի սպիտակ ձի, և նա որ նորա վերայ նստած էր, կոչւում էր Հաւատարիմ և ճշմարիտ, և արդարութիւնով է դատաստան անում և պատերազմում։ 12 Եւ նորա աչքերը կրակի բոցի պէս, և նորա գլխի վերայ շատ պսակներ. և անուն ունէր գրած, որ ոչ ով չէր գիտում 13 բայց միայն ինքն։ Եւ իր վերայ հանգերձ էր հագած արիւնով ներկուած, և նորա անունն Աստուծոյ Բան է կոչւում։ 14 Եւ երկնքի զօրքերը նորա ետևից գնում էին սպիտակ ձիանց վերայ սպիտակ և մաքուր բեհեզ հագած։ 15 Եւ նորա բերանիցը գուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. և ինքը կովում է նորանց երկաթէ գաւազանով. և ինքը կոխում է Ամենակարող Աստուծոյ բարկութեան և սրտմտութեան գինու հնձանը։ 16 Եւ իր հանդերձի վերայ, և իր ազդրի վերայ գրած էր անունը, ԹԱԳԱՒՈՐԱՑ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՏԷՐԱՆՑ ՏԷՐ։

17 Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ որ կանգնած էր արեգակի վերայ, և մեծ ձայնով աղաղակեց ասելով ամեն թռչուններին որ երկնքի մէջ թռչում են. Եկէք հաւաքուեցէք մեծ Աստուծոյ ընթրիքին. 18 Որ ուտէք թագաւորների մարմինները, և հազարապետների մարմինները և հզօրների մարմինները և ձիերի և նորանց վերայ նստողների մարմինները, և ամենի մարմինները՝ ազատների և ծառաների, մեծերի և փոքրների։

19 Եւ տեսայ գազանը և երկրի թագաւորները և նորանց զօրքերը մեկ տեղ ժողովուած որ պատերազմ անեն ձիան վերայ նստողի հետ 20 և նորա զօրքերի հետ։ Եւ գազանը բռնուեցաւ, և նորա հետ սուտ մարգարէն էլ որ նշանները էր անում նորա առջև, որոնցով մոլորեցրեց նորանց որ գազանի դրոշմն առին, և նորանց էլ որ երկրպագեցին նորա պատկերին. և երկուսն էլ կենդանի կենդանի գցուեցան կրակի լիճի մէջ որ ծծմբով այրւում է։ 21 Եւ մնացեալները սպանուեցան ձիուն վերայ նստողի սրիցը, որ նորա բերանիցը դուրս էր գալիս. և բոլոր թռչունները կշտացան նորա մարմիններիցը։

ԳԼ. Ի

1 Եւ տեսայ մի հրեշտակ վայր գալիս երկնքիցը, որ գժոխքի բանալին ունէր, և մի մեծ շղթայ իր ձեռումը։ 2 Եւ բռնեց այն վիշապին այն առաջի օձին որ է սատանան և սատանան, և կապեց նորան հազար տարի։ 3 Եւ գցեց նորան անդունդի մէջ, և փակեց և կնիք դրաւ նորա վերայ որ էլ չի մոլորեցնէ ազգերին, մինչև որ հազար տարին լրանայ. և նորանից յետոյ պէտք է որ նա մի քիչ ժամանակ արձակուի։

4 Եւ տեսայ աթոռներ, և նորանց վերայ նստեցին. և դատաստութիւն տրուեցաւ նորանց, և նորանց հոգիքը որ գլխատուել էին Յիսուսի վկայութեան համար և Աստուծոյ խօսքի համար, և նորանց որ չերկրպագեցին գազանին և ոչ էլ նորա պատկերին, և ոչ էլ դրոշմը ընդունեցին իրանց ճակատի և ոչ էլ իրանց ձեռի վերայ, և սորանք կենդանացան և Քրիստոսի հետ թագաւորութիւն արին հազար տարի. 5 իսկ մեռելների մնացեալները չկենդանացան, մինչև որ հազար տարին լրանայ։ Սա առաջի յարութիւնն է։ 6 Երանելի և սուրբ է, որ բաժին ունի առաջի յարութեան մէջ. սորանց վերայ իշխանութիւն չունի երկրորդ մահը. այլ Աստուծոյ և Քրիստոսի քահանայք կ'լինին, և նորա հետ կ'թագաւորեն հազար տարի։

7 Եւ երբոր հազար տարին կ'լրա-

նայ՝ կ'արձակուի աստուծոյ իր բանտիցը. և դուրս կ'գնայ որ մնայ երեցին այն ազգերը, որ երկրի չորս անկիւնուն են, և Գոգը և Մագոգը, որ հաւաքէ նորանց պատերազմի, որոնց թիւը ծովի ասպի չափ է։ Եւ վեր գնացին երկրի լայնութեան վերայ, և արբերի բանակը և սիրելի քաղաքը շրջապատեցին։ Եւ երկնքիցը կրակ իջաւ Աստուածանից և լափեց նորանց. և բանատարկուն որ նորանց մոլորեցնուեր էր գցուեցաւ կրակի և ծծմբի լիճը, ուր որ էին գազանը և սուտ մարգարէն։ Եւ կ'չարչարուին գիշեր և ցերեկ յաւիտեանս յաւիտենից։

Եւ տեսայ մի սպիտակ մեծ աթոռ, և նորա վերայ նստողին, որի երեսից երկինքը և երկիրը փախան. և տեղ չգտնուեցաւ նոցա համար։ Եւ տեսայ մեռելները մեծ և փոքր կանգնած աթոռի առջև. և գիրքեր բացուեցան, և մի ուրիշ գիրք էլ բացուեցաւ, որ է կենաց գիրքը, և մեռելները դատուեցան այն գրքերումի գրուածներից իրանց գործքերի համեմատ։ Եւ ծովն իր մէջի մեռելները տուաւ, և մահը և դժոխքը իրանց մէջի մեռելները տուին. և ամեն մէկին իրանց գործքերի համեմատ դատուեցան։ Մահը և դժոխքը գցուեցան կրակի լճի մէջ. սա երկրորդ մահն է։ Եւ եթէ մէկը գրուած չգտնուեցաւ կենաց գրքի մէջ, կրակի լճի մէջ գցուեցաւ։

ԳԼ. ԻԱ.

Եւ տեսայ նոր երկինք և նոր երկիր. վասն զի առաջի երկինքը և երկիրն անցաւ. և էլ ծով չկայ։ Եւ ես՝ Յովհաննէս տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղէմը վայր գալիս Աստուածանից երկնքիցը պատրաստուած ինչպէս մի զարդարուած հարս իր մարդու համար։ Եւ մի մեծ ձայն լսեցի երկնքիցն, որ ասում էր. Ահա Աստուծոյ խորանը մարդկանց հետ, և նա կ'բնակէ նորանց հետ, և նորանք կ'լինին նորան ժողովուրդ, և ինքն Աստուած նորանց հետ կ'լինի նորանց Աստուած։ Եւ կ'ջնջէ Աստուած բոլոր արտասուքը նորանց աչքերիցը. և մահն այլ ևս չէ լինիլ, ոչ սուգ, և ոչ աղաղակ. և ոչ ցաւ այլ ևս չէ լինիլ, վասն զի առաջինները անցան։ Եւ ասեց ինձ. Գրիր. վասն զի այս խօսքերը ճշմարիտ և հաւատարիմ են։ Եւ ինձ ասաց. Եղաւ. ես եմ Ալֆան և Օմեղան. սկիզբը և վերջը. ես ձրի կ'տամ ծարաւին կենաց ջրի աղբիւրիցը։ Ով որ յաղթէ, ամեն կ'ժառանգէ. և ես կ'լինիմ նորան Աստուած, և նա կ'լինի ինձ որդի։ Իսկ վախկոտներին և անհաւատներին, և պիղծերին և մարդասպաններին և պոռնիկներին, և կախարդներին և կռապաշտներին և ամեն ստախօսներին բաժինը այս լճումը կ'լինի որ կրակով և ծծմբով վառուած է։ Սա է երկրորդ մահը։

Եւ այն եօթը հրեշտակներից մէկը, որ եօթը սկաւառակն ունէին վերջի եօթը, պատուհասներով լիացած, ինձ մօտ եկաւ, խօսեց ինձ հետ և ասաց. Եկ ցոյց տամ քեզ այն հարսը, որ Գառի կինն է։ Եւ տարաւ տարաւ ինձ հոգով մի մեծ և բարձր լեռան, և ինձ ցոյց տուաւ այն մեծ քաղաքը՝ սուրբ Երուսաղէմը, որ վայր էր գալիս Աստուածանից երկնքիցը։ Եւ Աստուծոյ փառքն ունէր. և նորա լուսաւորութիւնը պատուական սկուռնքի նման ինչպէս բիւրեղացած յասպիս քար։ Որ մեծ և բարձր պարիսպ ունէր, և տասներկու հրեշտակ, և նորանց վերայ անուններ էին գրուած որ իսրայէլի որդոց տասներկու ցեղերի անուններն են։ Արևելքից երեք դուռ, հիւսիսից երեք դուռ, հարաւից երեք դուռ, և արևմուտից երեք դուռ։ Եւ քաղաքի պարիսպը տասներկու հիմունք ունէր, և նորանց վերայ գառի տասներկու առաքելոց տասներկու անուններըն

15 Եւ ինձ հետ խօսողը մի ոսկի ե-
ղէգ ունէր, որ չափէ քաղաքը,
և նորա դռները, և նորա պա-
16 րիսպը. Եւ քաղաքը քառակուսի
էր, և նորա երկայնութիւնն այն-
չափ է որչափ նորա լայնութիւնը,
և չափեց քաղաքը եղէգովը, և
նորա չափը տասներկու հազար
ստադիէ, նորա երկայնութիւնը
և լայնութիւնը և բարձրութիւնը
17 հաւասար է: Եւ նորա պարիսպը
չափեց հարիւր և քառասուն և
չորս կանգուն, մարդու չափով
18 որ հրեշտակինն է: Եւ նորա պա-
րիսպի շինուածքը յասպիս էր
էր. և քաղաքը մաքուր ոսկի էր
19 իստակ ապակու նման: Եւ քա-
ղաքի պարսպի հիմունքը զար-
դարուած էին ամեն տեսակ թան-
կագին քարերով. առաջին հիմը յաս-
պիս, երկրորդը շափիղայ, երրոր-
դը քաղկեդոն. չորրորդը զմրուխտ,
20 Հինգերորդը եղնգնաքար, վեցե-
րորդը սարդիոն, եօթներորդը ոս-
կեքար, ութերորդը բիւրեղ, ին-
ներորդը տոպազիոն, տասներորդը
քրիսոպրասոս, տասնեւմեկերորդը
յակինթ, տասներկուերորդը ամե-
21 թիստ: Եւ տասներկու դուռը տաս-
ներկու մարգարիտից՝ ամեն մէկ
դուռը մէկ մարգարիտից. և քա-
ղաքի հրապարակը մաքուր ոսկի
22 ինչպէս թափանցիկ ապակի: Եւ
տաճար չտեսայ նորա մէջ, վասն զի
Տէր Աստուած Ամենակալը և Գառն
23 է նորա տաճարը: Եւ քաղաքը
ոչ արեգական և ոչ լուսնի պէտք
չունէր, որ լոյս տան նորա մէջ.
վասն զի Աստուծոյ փառքը լու-
սաւորում էր նորան, և նորա
24 ճրագը Գառն էր: Եւ փրկեալ-
ների ազգերը նորա լուսովը պիտի
գնան. և երկրի թագաւորները
իրանց փառքը և պատիւը կ'բե-
25 րեն նորա մէջ: Եւ նորա դռները
չեն փակուիլ ցերեկը, վասն զի
26 գիշեր չի լինիլ այն տեղ: Եւ ազ-
գերի փառքը և պատիւը կ'բերեն
27 նորա մէջ: Եւ բնաւ չի մտնիլ նորա
մէջ ոչ մի անմաքրութիւն անող և
պղծութիւն և սուտ գործող,
բայց միայն նորանք որ Գառի կե-
նաց գրքի մէջ գրուած են:

ԳԼ. ԻԲ

Եւ ցոյց տուաւ ինձ մի մաքուր 1
գետ, կենդանի ջրի ակնվանու-
ման փայլուն, որ դուրս էր գալիս
Աստուծոյ և Գառի աթոռից: Եւ 2
նորա հրապարակի մէջտեղը և գե-
տի այս կողմին և այն կողմին կե-
նաց ծառ էր, որ տասներկու
տեսակ պտուղ էր բերում. ամեն մէկ
ամիս տալիս էր իր պտուղը. և
այն ծառի տերևը հեթանոսներին
բժշկում էր: Եւ այլ ևս նզովք 3
բնաւ չի լինիլ. և Աստուծոյ և
Գառի աթոռը նորանում կ'լինի.
և նորա ծառաները կ'պաշտեն նո-
րան: Եւ նորա երեսը կ'տեսանեն, 4
և նորա անունը նորանց ճակատ-
ների վերայ: Եւ գիշեր չի լինիլ 5
այնտեղ, և ճրագի և արեգակի
լոյս պէտք չէր նորանց. վասն զի
Տէր Աստուածը լուսաւորում է
նորանց, և կ'թագաւորեն յաւիտ-
եանս յաւիտենից:

Եւ ասաց ինձ. Այս խօսքերը 6
հաւատարիմ և ճշմարիտ են. և
Տէրը՝ սուրբ մարգարէից Աստու-
ծըն իր հրեշտակն ուղարկեց որ
իր ծառաներին ցոյց տայ այն որ
շուտով պիտի լինի: Ահա շուտով 7
գալիս եմ. երանի նորան որ այս
գրքի մարգարէութեան խօսքերը
պահում է:

Եւ ես Յովհաննէս՝ այս բաները 8
լսող և տեսնողս, և երբոր լսեցի
և տեսայ, ընկայ որ երկրպագեմ
այն հրեշտակի ոտքերի առջև, որ
այս բաները ցոյց էր տալիս ինձ:
Եւ ինձ ասաց. Զգուշացիր. մի 9
անիր. վասն զի ես ծառայակից
եմ քեզ և քո եղբայր մարգարէ-
ների և այս գրքի մարգարէու-
թեան խօսքերը պահողների. Աս-
տուծոյն երկրպագիր: Եւ ասաց 10
ինձ. Մի կնքիր այս գրքի մարգա-
րէութեան խօսքերը. վասն զի ժա-
մանակը մօտ է: Անիրաւութիւն 11
գործողը թող էլ անիրաւանայ, և
կեղտոտը թող էլ կեղտոտուի, և
արդարը թող էլ արդարանայ, և
սուրբը թող էլ սրբուի: Եւ ահա 12
շուտով գալիս եմ և իմ վարձքն
ինձ հետ, որ ամեն մէկին կ'հա-

տուցանեմ ինչպէս իր գործքը կը
13 լինի, Ես եմ Ալֆան և Օմեգան, սկիզբն և վերջն, առաջինն և վերջինն։
14 Երանելի են նորա պատուիրանքները պահողները, որ նորանցը կ'լինի իշխանութիւնը կենաց ծառի վերայ, և քաղաքի դռնովը
15 ներս կ'մտնեն։ Բայց դուրսն են շները և կախարդները և պոռնիկները և սպանողները և կռապաշտները. և ամեն սուտ սիրողն ու գործողը։
16 Ես Յիսուս իմ հրեշտակն ուղարկեցի որ վկայէ ձեզ այս բաները եկեղեցիների մասին. ես եմ Դաւթի արմատը և ցեղը և առաւօտեան պայծառ աստղը։
17 Եւ Հոգին և հարսն ասում են. Եկ և լսողն ասէ, Եկ. և նա որ ծարաւ է՝ թող գայ, և նա որ կամենում է՝ թող առնէ կենաց ջուրը ձրի։
18 Վասն զի ես վկայում եմ ամենին որ լսում է այս գրքի մարգարէութեան խօսքերը. եթէ մէկը բան աւելացնէ սորանց վերայ, Աստուած կ'աւելացնէ նորա վերայ այն պատուհասները որ այս գրքումը գրուած են։
19 Եւ եթէ մէկն այս գրքի մարգարէութեան խօսքերիցը բան պակասեցնէ, Աստուած կ'պակասեցնէ նորա բաժինը կենաց գրքիցը, և սուրբ քաղաքիցը, և այս գրքում գրուածներիցը։
20 Այս բաներին վկայողը ասում է. Այո. ես շուտով գալիս եմ։ Ամէն։ Եկ, Տէր Յիսուս
21 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը լինի ձեր ամենների հետ. Ամէն։

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿԱԿ

Էջ	Սու-	Տո-	Սխա-	Ո՞ւղիղ
44	ք.	45	*Նրանից*	*Նորանից*
47	ք.	42	*Հեռնց*	*Հէնց*
91	ք.	33	*Ձեղի*	*ցեղի*
98	ք.	2	*ազօթք*	*աղօթք*
101	Ա.	34	*ամփոխ*	*ամբոխ*
116	Ա.	25	*Երուսաղաէմացիներից*	*Երուսաղէմացիներից*
152	ք.	11	*եվ*	*էվ*
159	ք.	11	*առջևնին*	*առջև*
232	ք.	10	*Հեռնց*	*Հէնց*

U.K

20 n .

a - k - 1

ՀՀ Ազգային գրադարան
NL0159806

ՀՀ Ազգային գրադարան
NL0028074